

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

*Ըստ ճշգրիտ թարգմանության նախնեաց մերոց՝ ՚ի հեղինականն
հաւատարմագոյն բնագրէ՝ ՚ի հայկականս բարբառ:*

Նորոգապէս ՚ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ,
համեմատութեամբ այլևայլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք
բնաբանին:

Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, ՚ի
միաբանութենէ Մեծին Մխիթարայ րաբունապետի և առաջին արքայի:

Տպագրեալ հրամանաւ Տ.Տ. Ստեփաննոսի Ազոնց աստուածապատիւ
արհիեպիսկոպոսի և առաջնորդի ուխտին սրբոյն Ղազարու:

1805 ՚ի Վանետիկ: ՌՄԾԴ

՚ի գործարանի Սրբոյն Ղազարու:

ՆԱԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՐԾԱՆՕՂՍ

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆՍ գանձարան աստուածեղէն անքննին
խորհրդոց, և յայտարար կամաց նորին բարեհաճութեան, նախ առաջին
որպէս արդարև ընտրեալ սեպհական ժողովրդեան, աւանդեցաւ
Երբայականն ազին Աբրահամեան սերնդոց, ՚ի նոցին հարազատ
բարբառ դրոշմեալ ՚ի գիր: Քանզի զհիմն սորայս գծագրութեան եղեալ
նախամարգարէն Մովսէս, զկնի նորին հետզհետէ շարունակեալ յաւելին
՚ի նոյն Իսրայէլեան տոհմի իմաստունք և մարգարէք ՚ի դարս
իւրաքանչիւր. որոց միանգամ թելադիր եղև Աստուած ՚ի միտս նոցա՝
մատենագրել. ո՛չ զառ նոսին ևեթ եղեալ յայտնութիւնս ապագայիցն, որ
են Սարգարելութիւնք, այլ և զԽրատականսն՝ յառաջնորդութիւն ուղի՛ղ
քաղաքավարութեան, և զՊատմական կարգի անցս դիպուածոց ազգի
իւրեանց՝ իսկզբանէ մինչև ցկատարած ընդ հայրախնամ
առաջնորդութեամբ աջոյն Բարձրելոյ: Որով զբովանդակ
զաստուածային մատենագրութիւնս՝ յերիս յայտոսիկ իմանամք
զլխաւորեալ տարազս բանից: Այսու սարասիւ ցորչափ լոյս
աստուածգիտութեանն՝ յԵրբայականն ազին սեպհականեալ լուսաւորէր,
համբուն և Աստուածաշունչ մատեանս ՚ի միակ նոցին հայրենի բարբառ
ամփոփեալ պահեցաւ ՚ի յոլով դարս, որպէս գանձ թաքուցեալ
յանարժանից անտի յարտաքին հեթանոսական ազգաց: Այլ իբրև
մերձեցաւ ժամանակն, յորում ՚ի խնամոց վերին տնտեսութեանն պարտ

էր լուսոյ աւետարանին յընդհանուր ազինս ընդ ոլորտս տիեզերաց ճառագայթեալ ծաւալել, գալստեամբ ասեմ Մեսիային Քրիստոսի, որ նոյն ինքն նպատակն էր բանից սրբոյ մատենագրութեանն, այնուհետև՝ ըստ աւանդելոյ նախնի հաւատարիմ պատմաբանից, անկանէր ՚ի սիրտ Պտղոմէոսի Փիղադելփեայ արքայի Եգիպտացոց, որ ՚ի ժամանակի անդ կազմէր զիւրն հոյակապ մատենարան, խնդիր առնել և երրայական մատենից: Եւ նմին իրի յղեալ առ Եղիազարոս քահանայապետ հրէից, ընկալաւ ՚ի նմանէ՝ որպէս ասեմ, եւթանասուն և երկու բանիբուն ռաբունիս հրէից, քաջավարժս երկաքանչիւր բարբառոյ, որք ՚ի բնիկ իւրեանց յեբրայականէն յեղին ՚ի հելլենականն զողջոյն զԱստուածաշունչ գիրս, կամ լաւ ևս ասել, որքան ինչ միանգամ առ նովին ժամանակօք ՚ի կանոնի անդ հրէից՝ որպէս հաւատարիմ Աստուածաշունչ աւանդ՝ ընկալեալ և պատուեալ էր ՚ի նոցանէ: Թողում աստանօր մի ըստ միոջէ յառաջ բերել՝ որ ինչ յաղագս եղանակի կատարման թարգմանութեանս այսորիկ պատմի ՚ի գիրս Արիստէոսի, վասն որոյ բազմապատիկ և պէսպէս են կարծիք մատենագրաց: Բ. Արդ՝ սոյն այս հելլենականս թարգմանութիւն սուրբ մատենից, որ առեալ զանուանակոչութիւնն յեւթանասուն և երկու թարգմանչաց անտի՝ յարանունաբար յորջորջեցաւ՝ *Եւթանասնից*, վասն իւրոյ ճշգրիտ հաւատարմութեանն և անստերիւր ուղղութեանն, ՚ի սկզբան անդ առ իմաստունս հրէից, և յետ այնորիկ յընդհանուր եկեղեցիս քրիստոնէից՝ սկսեալ յառաքելոց անտի՝ այնչափ ՚ի յարգի եղեալ պատուեցաւ, մինչ զի և ՚ի բազմաց իսկ վարդապետաց արևելեայց և արևմտեայց իբրև իսկական Աստուածաշունչ պատգամ ՚ի Հոգւոյն Սրբոյ թելադրեալ՝ քարոզեցաւ: Եւ այսպէս՝ իրաւամբք նաև քան զառաջիկայ եբրայական սկզբնագիրն նախամեծար համարեցաւ. մի՛ սակս անստոյգ հանգամանաց գրչութեան բարբառոյն այնորիկ, որոյ ճշգրիտ վերծանութիւնն կեղակարծելի մնայ յետնոց. և միւս ևս՝ վասն հետզհետէ աղաւաղութեան նորին. ո՛չ միայն յանհմտութենէ և ՚ի վրիպմանէ գրչաց, որպէս սովոր է լինել. այլև բազում ուրեք ՚ի չարամտութենէ նոցին իսկ հրէից, այլայլելով յայն վայրս որք նպաստ բերէին քրիստոնէական դաւանութեանն: Այլ զլիով հարցաքննութեանն զայսոցիկ փաստս՝ ունի տեսանել ուղղադատ բանասէրն ՚ի ճառս այնոցիկ, որոց օրինաւոր գլխովք յանձին կալեալ է անաչառաբար ջատագով լինել ճշմարտութեանն, զպատճառանս հրէաշունչ հակառակորդացն նանրացուցեալ. որք ՚ի բաղդատութիւն մատուցեալ զհելլենական օրինակս ՚ի հնութենէ ժամանակի խանգարեալս և այլայլեալս՝ ընդ եբրայականին, այնմ ասեմ՝ ըստ որում յետոյ փոխագրեցաւ նորահնար կետանշանիւք՝ որք Մասորեթեանքն անուանին, և ո՛չ սակաւ տարբերութիւնս նշմարեալ ՚ի նոսա, ժպրիեցան ըստգտանել զԵւթանասունսն զրպարտութեամբ յանդգնութեան և թանձր տգիտութեան: Ուր ընդհակառակն՝ Եւթանասունքն այնորիկ, որոց և ժամանակ կենաց ո՛չ ձգի աւելի քան զհարիւր յիսուն ամ՝ յետ Եզրայ, (այն որ ՚ի կարգի եդ զսկզբնագիրն եբրայական.) զոլով ինքեանք բնածին եբրայեցիք, որով և տեղեկագոյնք ընդաբոյս բարբառոյ իւրեանց, և որպէս հմտագոյնք ընտրեալք ՚ի քահանայապետէն յայս

գործառնութիւն. ապաքէն անհամեմատ առաւելութեամբ ունէին գերազանցել, քան որ բազմօք յետոյ՝ յայլոց ազգաց և ՚ի լեզուաց մուրացիկ հմտութեամբ Մասորեթեանն ասացեալ երբայական դպրութեան եղեն աշակերտ: Ոչինչ կարի աննման այսոցիկ և վաղուրեմն յերկրորդ դարու անդ քրիստոնէութեան՝ երևեցան Ակիւղաս, Թէոդիտոն, և Սիմաքոս, որք յայլ և այլ հերձուածողական աղանդս տարաբերեալ, և հուսկ ուրեմն ՚ի հրեութիւն շրջեալ, և ՚ի նմին աշակերտեալք երբայականն բարբառոյ, ձեռնամուխ եղեն իւրաքանչիւր ՚ի նորանոր հելլենական թարգմանութիւնս, այսու՝ որպէս պատմեն, կամեցեալ իմն նպաստ մատուցանել աղանդոց իւրեանց: Յաւել՝ ՚ի սոսա և զայլ կցկտուր թարգմանութիւնս այլոց ոմանց, որք տեսեալ զայլայլութիւն օրինակաց Եւթանասնից, հնարեցան ուղղագրել զնոյն յերբայականն, որպիսիս ասեն լինել զերիքովեանն, և զՆիկոպօլսեան յորջորջեալ թարգմանութիւնս. զորոց չէ՛ տեղւոյս յերկարել:

գ. Բայց արդարև՝ որպէս ասացաք, ՚ի միջոցս բազում դարուց օրինակաց յօրինակս ածանցեալ և այս սքանչելի գաղափար թարգմանութեան Եւթանասնից՝ կէս մի յանհոգութենէ և կէս մի յանհմտութենէ նոցին իսկ գրչաց, որպէս սովոր է հանդիպիլ, սպրդեցան և ՚ի սմա ո՛չ սակաւ այլայլութիւնք և երևելի աղաւաղութիւնք: Վասն այսորիկ յիրաւի՝ այսպիսի արկածից խնամով իմն կամեցեալ դարման մատուցանել Որոզինէս՝ յերրորդ դարու անդ, խորհեցաւ կազմել զՎեցիջեան մատեան իւր, թո՛ղ զքառիջեանն և զութիջեանն, և այլն, զորոց և պէսպէս են կարծիք: Եւ զայս վեցիջեան յայս կերպարան ասեն յօրինել նմա. յառաջին էջս մատենին կարգեաց զերբայական բնագիրն՝ բուն իսկ նոցին նշանագրովք. յերկրորդ էջսն՝ զնոյն երբայականն բնագիր հելլեն տառիւք ձևացեալ. յերրորդն՝ զթարգմանութիւն Ակիւղասայ. ՚ի չորրորդն՝ զթարգմանութիւն Սիմաքոսի, ՚ի հինգերորդն՝ զթարգմանութիւնն որ յանուն Եւթանասնից յածեր յայնմ ժամանակի. և ՚ի վեցերորդն՝ զթարգմանութիւնն Թէոդիտոնի: Սակայն զասացեալ օրինակ Եւթանասնից՝ ո՛չ սոսկապէս որպէս եօխտն այնպէս փոխագրեաց, այլ յաւելուածով և կրճատութեամբ ըստ համեմատութեան երբայականին, այսպիսի իմն եղանակաւ. զի ուր միանգամ պակասեր ինչ երբայականէ անտի՝ ելից ՚ի թարգմանութեանցն Սիմաքոսի կամ Ակիւղասայ, և յաճախութեամբ իսկ ՚ի Թէոդիտոնէ, որպէս զհարոյ յաւետ համաձայն թուէին նոքին բնագրին երբայեցւոց, դրոշմեալ հանդէպ նոցին աստեղանիչ այսպիսի #: Իսկ ուր ուրեք առաւելեալ գտաներ յօրինակն Եւթանասնից՝ բառ կամ բան քան զերբայականն, թողեալ որպէս և էրն, որոշեաց զայնս բրգածև ասացեալ նշանաւս ? կամ ?. առ ճշգրիտ հաւատարմութեամբ զանազանելոյ զնուագութիւն և զառաւելութիւն օրինակին Եւթանասնից՝ և բնագրին երբայեցւոց իւրումն ժամանակի: Եւ յայնմ հետէ իսկ՝ առ սակաւ սակաւ խափանեալ այլոց հելլենական թարգմանութեանց, հանդերձ նորայարդար թարգմանութեամբն Ղուկիանու վկային, և Իսիքոսի ասացեալ ուղղագրութեանցն՝ որ յետ այնորիկ երևեցան. այս վեցիջեանս օրինակ Եւթանասնից քան զամենեսին նախամեծար համարեալ, որպէս գլխովին անթերի և հաւատարմագոյն գաղափար սուրբ մատենից՝ ընկալեալ եղև

յամենեցունց: Մանաւանդ առ ժամանակօք Մեծին Կոստանդինոսի՝ ձեռնարկութեամբ քաջահմուտն Եւսեբեայ Կեսարացոյ. որոյ առեալ հրաման 'ի մեծէ ինքնակալէն. (որպէս գրէ նա ինքն 'ի վարս նորին. գիրք. Դ գլ. ԼԶ. ԼԷ.) զընտիր պատճէն Եւթանասնից ըստ վեցիջեանց գաղափարի ընկալեալ յարկեղաց գրոց Պամփիլեայ վկային, հոգացաւ յիսուն թուով օրինակս 'ի մատենէ անտի տալ գծագրել յար և նման ճշգրիտ և անվրէպ գրչութեամբ՝ պաճուճագարդեալս 'ի մագաղաթի. և բարձեալ զնոսա յերկուս սայլս՝ յղեաց 'ի Կոստանդնուպօլիս թագաւորեալ քաղաք՝ ըստ պատուիրանի նորին ինքնակալի: Դ. Ապա՝ 'ի խնամոց Բարձրելոյն առ հինգերորդ դարու բարգաւաճեալ ուսման իմաստից 'ի մերումս Դայաստան աշխարհի, սատարութեամբ ճառագայթաւէտ լուսաւորաց ազգիս՝ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, առաջին փոյթ եղև նոցա բազմաշխատ հայթիայթանօք յօրինուած գրոց հայկականս բարբառոյ, առ 'ի զթարգմանութիւն աստուածային մատենից անսայթաք կատարելոյ, որպէս ցուցանէ պատմութիւնն: Յայն սակս 'ի ձեռնարկել նոցին երկրորդ անգամ կատարելագոյն թարգմանութեան 'ի հելլենականն բարբառոյ, 'ի բաց թողեալ զառաջինն զոր սկսեալն էին առնել յասորի օրինակաց. իբրև դէպ եղև նմին իրի 'ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպօլիս առաքել զաշակերտս իւրեանց 'ի խնդիր ընտրելագոյն հելլենական գաղափարի. 'ի Մաքսիմիանոսէ պատրիարգէ ժամանակին աւանդեցաւ 'ի ձեռս մերոց դեսպանաց, ըստ գրելոյ Խորենացոյն, Գ. 63. *Ստոյգ օրինակ գրոց*: Չոր և պատմելով Կորիւն՝ ասէ. *Չաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն.. գային երևելով յաշխարհին Չայոց*. Ապաքէն 'ի պատմութենէ թարգմանութեան Սուրբ Գրոց առ մեզ, (զորմէ գրեցին աշակերտք՝ նոյն և գործակիցք բազմերախտ թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ,) գրեթէ աներկբայ ունիմք իմաստասիրել լինելոյ այնմ 'ի հաւատարմագունէն 'ի հելլենական գաղափարս, որ 'ի հինգերորդ դարու անդ նախամեծար յածէր 'ի թագաւորեալ քաղաքին, յոյր սակս Խորենացին և Կորիւն կոչեն զնոյն՝ *Ստոյգ և Չաստատուն օրինակ*: Այլ եթէ սոյն այս էր ածանցեալն 'ի վեցիջեան օրինակէ անտի Որոգինեայ, զոր 'ի բագում պատճէնս յղեաց Եւսեբի 'ի Կոստանդնուպօլիս, որպէս 'ի վերոյ ցուցաք. իբր ակներև հաւաստեն մեզ հետք Որոգինեան աստեղանշանացն և բրգածևաց՝ որ 'ի գրչագիրս մեր երկին այսօր. ըստ որում իմանամք զգուշութեամբ նշանակեալ 'ի թարգմանչաց անտի մերոց 'ի հայկականս՝ որպէս զհարդ և գտին 'ի հելլենական գաղափարի իւրեանց: Չորս և մեք յառաջիկայդ խնամով նշանակեցաք յիւրաքանչիւր վայրս՝ համեմատ մերումս գաղափարի. զանց արարեալ զբրգածևօքն, զոր արտաքոյ մերումս ունէին այլ երկուք 'ի գրչագրաց մերոց 'ի գիրս ինչ: Թէպէտ և 'ի վերայ այսր ամի անտեղի էր մեզ կարծել, եթէ այնչափ և այնոքիկ միայն՝ զորս ըստ տեղեաց տեղեաց նշմարենք յառաջիկայ գրչագիրս մեր, իցեն Որոգինեան նշանագրութիւնք ճշգրտիւ դրոշմեալք: Քանզի ո՛չ միայն 'ի հայկական մատեանս մեր, այլև 'ի նոյն 'ի հելլենականն՝ օրինակաց յօրինակս փոխագրեալ 'ի միջոցս բագում դարուց՝ 'ի պակասութենէ աշալուրջ խնամոց գրչաց, յոլովս այլայլեցան այն նշանք. կամ զմին փոխանակ միւսոյ դնելով, կամ առաւելութեամբ

նշանակելով ուր ո՛չ պարտն էր, և կամ իսպառ զանց առնելով զկարևորօքն. ըստ որում քա՛ջ ունին ՚ի վերայ հասանել քննիչք այսպիսեաց, որով ըստ ասացելոցս՝ հաւասարապէս ընդ երկբայութեամբ անկանին նաև նշանագրութիւնքն այնոքիկ՝ որ ՚ի հելլենական գրչագիրս երկին այսօր:

Այլ արդ՝ դառնալով մեր անդրէն ՚ի նպատակ բանիցս՝ որ գիտականս թարգմանութենէ. ՚ի դէ՛պ էր արդեօք յառաջիկայ պատեհութիւնս ըստ արժանւոյն երկար գովեստիւ ՚ի ներբողումն նորին պատաղել, ՚ի պէսպէս զլիսոց յառաջ բերեալ զգերագանցութեանցն նորա զվարկ, եթէ պատշաճ չափաւորութիւն նախաբանութեան մատենիս ո՛չ ստիպէր զմեզ ա՛յլուր ընդարձակ ճառիւ հատուցանել. շատացեալ առ այժմ ասել, եթէ երանելի թարգմանիչք մեր քաջ հմտացեալք և ՚ի հելլենականն, որպէս է տեսանել յարդեանց վաստակոց նոցա, զայսպիսի ընտրելագոյն գաղափար յանդիման ունելով, այնուհետև փոյթ յամծին կալան յեղուլ զայն ՚ի հայկականս բարբառ՝ զլիսովին խնամով և զգուշութեամբ ըստ ճիշդ կանոնաց հաւատարմութեան, զոր օրինակ պահանջէր կարևոր գործոյն հանգամանք, մինչև գոգցես՝ բառ առ բառ և ոճ առ ոճ պատշաճեցուցեալ, ըստ որում առ այս ո՛չ սակաւ օժանդակէր, նաև մերձաւորութիւն հայկականս սովորութեան ասից ընդ հելլենականին, որպէս ՚ի բարդութիւնս անուանց և ՚ի շարամանութիւնս ձայնից, և այլն ևս: Այլ և ՚ի վերայ այսորիկ՝ չքնաղ և վայելչաբան յօրինուածով ընտիր հայկաբանութեամբ՝ այնպէս անվթար յերկրեցին ՚ի մերս հայրենի բարբառ, մինչև համարձակիմ ասել, զի եթէ ՚ի նմա զբառ ինչ կամ զգրախտեց մի կամիցի ոք փոփոխել, կամ յաւելուլ և կամ նուազեցուցանել, արդարև չմարթի առանց խանգարելոյ զսքանչելի ներդաշնակութիւն շարագրութեանն՝ յայն ձեռնամերձ լինել: Ասացելոցս ճշմարտութեան ՚ի վերայ հասեալ վկայեցին նաև այնոքիկ ՚ի հնախնդիր հմտացելոց անտի այլալեզու կրոպացւոց. որոց միանգամ դէպ եղև ըստ կարի տեղեկանալ հայկականս դպրութեան. և դոյզն մի առեալ զճաշակ մերումս թարգմանութեան, *Չաւատարիմ աւանդ թարուցեալ ՚ի հայկական բարբառ*, համարեցան զնա. և սքանչացեալ՝ *Դշխոյ համօրէն թարգմանութեանց Սուրբ Գրոց*, իշխեցին կարդալ զնոյն, ՚ի սակս պէսպէս մասանց կատարելութեանցն. զորոց զբանսն մի ըստ միոջէ աստանօր ՚ի մեջ առնուլ՝ ո՛չ ներեն հանգամանք սղութեան յառաջաբանիս: Ուր զի և յաւէտ զարմանալին այն է, զի զայսպիսի գերագանց կարծիս հաստատեցին սոքա զթարգմանութենէս մերմէ, ո՛չ ունելով ՚ի ձեռին գիտատարիմ ինչ գրչագիր գաղափար, այլ հանդիպեալք և եթ տպագիր օրինակին Ոսկանայ. զորոյ և զբազմապատիկ խանգարմունսն ինքնին իմաստասիրեալք, ո՛չ սակաւ մեղադրութիւնս ըստ արժանեաց գիտացին ածել ՚ի վերայ անուսումն և ձեռներէց համարձակութեանց նորա: Ե. Վասն այսորիկ ՚ի պահանջել պիտոյից չորրորդ տպագրութեամբ ՚ի լոյս ընծայելոյ Աստուածաշունչ մատենիս յերկրորդումս աստ ՚ի մերս գործարանէ. յայս նուազ առընթեր ունելով զայլ և այլ գրչագիր օրինակս, և ՚ի նոսին քա՛ջ նկատեալ զանբաւ աղաւաղութիւնս Ոսկանեանն օրինակի, ապաքէն անտեղի իմն թուէր զնոյն վերստին ՚ի տիպ արձանացուցանել. մանաւանդ զի և անձուկ փափաքանաց բազմաց

ուղղախոս բանասիրաց մերոց, տեսանելոյ զհայկականս
Աստուածաշունչ մաքրեալ նորայարդար տպագրութեամբ՝ ի
հաւատարիմ գրչագրաց անտի, ՚ի վաղուց հետէ առ այս յորդորագոյնս
զմեզ պատրաստէր: Նմին իրի յակնարկութենէ աստուածապատիւ Վեհիս՝
իմունս յանձնեալ չափաւորութեան այսմ փոյթ ունել, որում անդատին ՚ի
մատաղ տիոցս յամենայն պարապմունս սիրելի էր անձանձիր ՚ի նոյն
դեգերումն. այնուհետև ձեռն ՚ի գործ արկի յուսով վերին
օգնականութեանն ՚ի գլուխ տանել զոր երկնեալն էի: Եւ որպէս պարտն է՝
հիմն հաստատութեան զգուշալի գործոյս եղեալ զճգրիտ և
զանխարդախ հաւատարմութիւն, ոչինչ բնաւին կամեցաք այլայլել ՚ի
մէնջ՝ կամ ըստ բերման նախադասութեան, և կամ ըստ իրիք
ակնածութեան. որպէս սովորեցան անցեալ դարու տպագրապետք կամ
ժանօթարարք մատենից, իմաստախոհութեամբ իմն ձեռն մխել ՚ի
գրութիւնս նախնեաց՝ ուղղագրութեան կարծեօք. այլ գլխովին
անկեղծութեամբ յար և նման գրչագիր գաղափարաց ջանացաք գործել
զտիպ օրինակի առաջիկայիս: Բայց զի հանդերձ անվթար
հաւատարմութեամբն զոր խոստանամք, նաև ըստ կարի սակաւ
վրիպակօք գլխաւորեցի այս մերս գործառնութիւն. որովհետև և նոցին
իսկ գրչագրաց գրեթէ անհնար է զերծ լինել ՚ի մարդկօրէն թերութեանց՝
ըստ յաւետ կամ նուազ սխալանաց գրութեան. յայն սակս նախամեծար
արարեալ ՚ի նոսա զընտրելագոյնն հնութեամբ և ուղղագրութեամբ,
եղաք մեր յանդիման կէտ նպատակի, զչափաւոր վրիպակս գրութեան
սորին ՚ի համաձայն ուղղաբանութենէ այլոց յարդարելով: Այսքանեաւ
շատացեալ առ այժմ՝ մինչև կատարելագոյնն և ևս քան զսոյն, զուղեալ
արդեօք յանկեան ուրեք՝ ՚ի յաջողութենէ ժամանակին ՚ի վեր երևեսցի:
Վասն այսորիկ կարևոր է մեզ այսուհետև՝ նախ առաջին ժանօթս տալ
վասն գրչագիր օրինակաց մերոց, և զորպիսութենէ տպագրութեանն
Ոսկանայ, և ապա զեղանակէ մերունս առաջիկայիս:

Չանգամանք գրչագիր օրինակաց, և Ոսկանեան տպագրութեան:

ա. Առաջինն ՚ի գրչագիրս՝ զոր և ընտրեցաք մեզ տիպ գաղափարի, էր ՚ի
սկիզբն չորեքտասաներորդ դարու առ ԶԿԸ թուականաւ գրեալ՝ ՚ի մեծ
քառածալ ասացեալ գիրս՝ երկիջեան, բոլորագիր, ամբողջ ծայրէ ՚ի ծայր
առանց ինչ պակասութեան թերթից՝ ՚ի մագաղաթ: Մատեանս՝ թեպէտ
ըստ արտաքնոյն էր պարզ առանց պաճուճագարդ նկարուց և
պատկերաց, և ո՛չ երևելի ինչ վայելչութեամբ տառից գծագրեալ. այլ
միակերպ և անսայթաք գրչութեամբն ըստ ուղիղ առողանութեանն՝ տայր
ցոյց լինելոյ այնմ գործ հմուտ և արուեստաւոր գրչի. որով և
գերազանցէր գրեթէ քան զամենայն գրչագիր մատեանս յածեալս առ
մեօք: Բայց ՚ի վեր քան զբնաւս՝ ըստ հաւատարմութեան մասին, որ
յայսպիսիս յաւետ խնդրելին է, գրիչս մեր ցուցանէր ունել զնոյն բազում
առաւելութեամբ. ըստ որում տեսանեմք զի ՚ի շեղիլն ըստ բերման ՚ի
գաղափարէն իւրմէ՝ դարձեալ քերելով յարմարէր. և յոլովակի ՚ի նոյն իսկ
՚ի վրիպակսն և ՚ի թերութիւնս գաղափարին, դատարկ թողեալ ՚ի
միջոցին՝ արտաքոյ ՚ի լուսանցս գրէր զուղիղն, և ՚ի տարակուսականս՝
չակերտիւ նշանակէր, և այլ ևս այսպիսի զգուշաւոր հաւատարմութեան

ցոյցք. գորոց և ըստ իւրաքանչիւր վայրի փոյթ կալաք ակնարկել 'ի ծանօթութիւնսն: Յիշատակարանք գրչին 'ի մատենիս, ըստ նախնի սովորութեան՝ 'ի վեց տեղիս էին դրոշմեալ. յորս երևելիքն. Մի՛ յաւարտ մարգարէութեանն՝ եզեկիէլի, այսպէս. «Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտեան: Ես մեղաւորս Յոհանէս՝ ըստ կարի զփափաքս իմ լցի՛ յանկ ելանելովս. և այս՝ եղև ներելովն Աստուծոյ. զի յանարժանէս թերևս արժանաւոր այս գործ եղև յանկեալ. և զայս ո՛չ ասեմ վասն գեղապաճոյճ շարագրութեանցս, այլ վասն ազնիւ աւրինակիս, զոր սուրբ և երանեալ վարդապետին Գէորգեա ձեռացն շարահիւսեալք էին: Աղաչեմ զժառանգաւորս, ևս և զհանդիպաւորս ներեցէ՛ք սղալմանս 'ի սա, և սիրով ուղղեցէ՛ք, և միոյ Տէր ողորմի արժանի՛ արարէք զողորմելի գրիչս Յոհ՛. և զծն՛ իմ, և զեղբ՛: Աւարտի սա՛ 'ի մայիսի Ժ և 'ի Ե-ն: Դարձեալ 'ի վախճան գործոց առաք՛: Զմեղաւորս Յոհանէս և զծնաւուն իմ և զեղբարս յիշեցէ՛ք 'ի մեղաց թողութիւն, աստուածասէր ընթերցաւորք, և մի՛ մեղադրէք, զի այսչափ էր կար իմ: ՉԿԸ»: Այս յիշատակարանք թպէտ յայտ առնեն զանուն գրչին հանդերձ թուականան, բայց զանց արարեալ զայլ ևս կարևոր հանգամանօք՝ յերկբայս թողուն զմեզ գիտել ինչ լիագոյն՝ զպատուական գաղափարէս: Այլ սակայն 'ի նշանաց ինչ 'ի նմա՝ մարթ է մեզ կարծիս առնուլ եթէ 'ի Կիլիկիա լեալ իցէ գրութիւն սորա, 'ի ձեռնագրէ անտի, որպէս ասի՝ Գէորգայ վարդապետի: Իսկ թէ ո՛ր ոք արդեօք իցէ այն Գէորգ, առ այժմ չունիմ ստուգութեամբ հաստատել ինչ զնմանէ. քանզի 'ի դարս դարս բազում եղեն Գէորգ անուն վարդապետք, որպէս է տեսանել 'ի նախնի պատմագիրս մեր և 'ի յիշատակարանս մատենից. և դեռևս արտաքոյ այսր ո՛չ ուրեք հանդիպեցաք Գէորգեայ ումեք՝ որ յառանձին կազմութիւն օրինակի Աստուածաշունչ գրոց իցէ աշխատասիրեալ, որպէս ակնարկի 'ի վերոգրեալ բանսդ: Սոյն այս ձեռնագիր օրինակ Յովհաննու գրչի եղև բուն գաղափար՝ որպէս ասացաք, մերունս առաջիկայ տպագրութեան: Իսկ որ միանգամ յայլոց գրչագրաց զոր ունեալք՝ ձեռնտու եղեն այսմ գաղափարի 'ի ստուգաբանութիւն կամ յուղղագրութիւն. և 'ի լրումն թերութեանցն, են յետագայքդ: Վասն որոյ Երկրորդ օրինակն էր շղագիր, կամ որպէս ասի՝ նօտրագիր աջողածեռն գրեալ 'ի վերայ փայլուն թղթոյ, և սա թուէր իմն ճշդիւ ընդօրինակեալ յառաջնոյ անտի, նաև յոլովակի ըստ վրիպանացն իսկ, որ և գրեթէ բառ առ բառ զնոյն յիշատակագիրս ունէր 'ի նոյն վայրս՝ զորս 'ի վերոյ յառաջ բերաք, փոխեալ միայն զանունն Յոհանէս 'ի Ֆատլալահ, կամ Ֆատլալայ, և զանց առնելով զբանն, *գոր սուրբ և երանեալ վարդապետին Գէորգեա* և այլն. և 'ի միումն դնէր զթուական գրութեանն՝ Ռ.Ղ. առանց յիշելոյ զտեղին՝ որպէս առաջինն: Եւ այս է գրչագիրն. զոր ուրեք ուրեք 'ի ծանօթութիւնսն յիշեմք անուանելով՝ Ընդօրինակող մատենիս:

Երրորդ գրչագիր օրինակն 'ի փոքր քառածալ գիրս 'ի մագաղաթի երկիջեան բոլորագիր գրեալ՝ անպաճոյճ 'ի նկարուց, էր 'ի տեղիս տեղիս պակասաւոր, յորմէ հատեալ և 'ի բաց հանեալ էին թերթք. թերևս առ իսպառ անհետ առնելոյ զյիշատակարան գրչութեանն, որով և անթուական մնացեալ էր մատեանն, որպէս տեսանենք հանդիպեալ

այսպիսի արկածից նաև այլոց գրչագիր մատենից: Գրութիւնս սորա թէպէտ և վայելուչ միակերպ՝ ըստ արուեստի էր յերիւրեալ, բայց ո՛չ գերծ ՚ի բազում սխալանաց և ՚ի թերութեանց: Ըստ արտաքինն երևութի կարծիս իմն արդեօք տայր սա յաւետ հնութեան քան զառաջինն, եթէ նովին գրչաւ չէր դրոշմեալ ՚ի լուսանցս գրոց թուագիր գլխակարգութեանց ըստ համեմատութեան լատինականին. նշանակելով այսպէս. *Ֆռ. ա. Ֆռ. բ.* ևն. և ՚ի սկզբունս գրոցն. *Ֆռանգուն համարն ՚ի յայս գլուխս Խ կամ Իէ.* և այլն. յորմէ մարթ է իմաստասիրել՝ թէ գրութիւն նորա լեալ իցէ ՚ի Կիլիկիա՝ համեմատութեամբ լատինական մատենից. երանի՛ թէ ըստ գլխակարգութեանցն միայն՝ առանց ինչ այլայլութեանց բնաբանին: Այս մատեան ևեթ յամենայն գրչագիրս մեր առաւելապէս համաձայնէր ընդ գաղափարին Ոսկանայ, մանաւանդ յերիս գիրսն Սողոմոնի՝ յԱռակսն, ՚ի Ժողովողն, և յերգսն, որպէս զի ՚ի սոսա բաղդատեալ ընդ այլոց՝ թուին իմն այլ և այլ թարգմանութիւնք: Չորրորդ և Դինգերորդ գրչագիրք ՚ի մագաղաթի բոլորագիր գրեալք, ոսկեգօծ գլխագրովք, և խիտ առ խիտ գունագոյն նկարուք զարդարեալ, էին ածանցեալք յօրինակէն Ղազարու Բաբերդացւոյ. որպէս յայտ առնէր յառաջաբանութիւնն և վերջաբան ոտանաւորն նորին արձանագրեալ ՚ի նոսա. որ առ ՌԿԸ թուականաւս ՚ի քաղաքն Իլվով ՚ի Լեհաստան յօրինեաց զգաղափար Աստուածաշունչ մատենին իւրոյ: Քանզի նախանձ բերեալ սորա ընդ լատինականին՝ բազում աշխատութեամբ յարմարեաց ըստ այնմ օրինակի կրկին ցուցակս անուանց և բանից պարունակելոց ՚ի Սուրբ Գիրս՝ այբուբենական կարգաւ. մի՛ ըստ նախնի գլխաթուոց. և երկրորդ՝ ըստ գլխակարգութեանց և մանր համարատանց Լատինացւոց, վասն որոյ և առ ՚ի գիւտ նոցին՝ բաց յառաջնոյ յաւել նշանակել ՚ի լուսանցս և զլատինականն: Ուր ո՛չ համարձակիմ երաշխաւոր լինել և սմա՝ ուրեք ուրեք նաև բնաբանին անհուպ լինելոյ: Զսկզբնագիր նորին դէպ եղև ինձ տեսանել ՚ի նմին քաղաքի, և զայլ և այլ օրինակս նորա ՚ի կողմանս Բոլոնացւոց աշխարհին, յորմէ և սփռեցան արտաքոյ ՚ի բազում տեղիս: Յայն սակս և գրիչ առաջնոյն ՚ի վերոյ ասացելոցս, որ փառաւորագոյնն էր և հարստագոյն ըստ զարդարանաց՝ ասի ՚ի յիշատակարանին լինել՝ տէր Գասպար երէց, որ ծախիւք տէր Խաչատուր արեղայի գրեաց ՚ի թուին ՌՂԷ. յերկրին Պարսկաստանի ՚ի Ժողովն Գազկեցւոց: Իսկ զմիւսն գրեաց Մարկոս ոմն առ ՌՃԶ թուականաւ, որոյ պակասեալ վերջին թղթոյ յիշատակարանին, անգիտելի մնայ տեղին հանդերձ այլ ևս հանգամանօք: Գրուած երկոցունցս՝ որպէս ասացաք, թէպէտ են վայելչակերպ ըստ արտաքնոյն՝ բայց բազմօք նուազեալ յարուեստէ. մանաւանդ երկրորդն՝ որ և լին է անհամար սխալանօք: Յորս և զարմանալ գոյր ընդ այն. զի ուր երկոքին սոքա որպէս յարտաքին գծագրութիւնս զարդուց, նոյն և ՚ի բանսն ՚ի բազում տեղիս այնպէս համաձայնէին իրերաց նաև ՚ի վրիպակսն իսկ, մինչև թուէին կամ ՚ի միմեանց՝ և կամ ՚ի մի և ՚ի նոյն աղբերէ անընդմիջապէս փոխագրեալ. սակայն ուրեք ուրեք, և երբեմն յամբողջ իսկ գիրս գլխովին տարբերէին յիրերաց, մերթ ընդ միում և մերթ ընդ այլումն ՚ի գրչագրաց համաձայնելով. որպէս և յոլովակի իսկ ընդ մերունս առաջիկայ օրինակիս:

Վեցերորդ օրինակն էր ըստ կարի չափաւոր ուղղագրութեամբ, և վայելչագոյն ոսկեգօծ նկարուք 'ի մագաղաթի գրեալ 'ի Կոստանդնուպօլիս, ձեռամբ Ակնեցի Յակոբ դպրի առ ՌՂԲ թուականաւ: Գրութիւն սորա էր յաւետ անսայթաք գրեթէ քան զամենայն նորագիր օրինակս. որ և առաւելապէս քան զայլս համեմատ ընթանայր ընդ մերումս զաղափարի 'ի բազում գիրս: Եթէ 'ի լուսանցս սորին չէին յաւելեալ և զլխահամարք Լատինացւոց՝ թէև առանց թուոյ տանց, կարծիս տայր մատեանս 'ի հնագոյն յանձեռամերձ և 'ի հաւատարիմ գրչագրէ լինելոյ ընդօրինակեալ:

Եւթներորդ գրչագիր օրինակին յիշատակարանն ցուցանէր գրեալ առ ՌճԵ թուականութեամբ 'ի պետս Պէլլորդատցի Աբրահամու, 'ի Լեհացի Յովհաննէս դպրէ. այլ թէ ո՛ւր ուրեք՝ չէ՛ յայտ, զի ո՛չ նշանակեալ էր ինչ 'ի նմա զայսմանէ: Այս բոլորագիր մատեան թէպէտ ըստ արտաքին երևութին 'ի վերայ մագաղաթի գրեալ՝ ոսկեգօծ զլխագրովք և վայելուչ նկարուք էր զարդարեալ, սակայն չէ՛ր զերծ 'ի վրիպակաց, նաև ուրեք ուրեք յարատոյ անհաւատարմութեան՝ մանաւանդ 'ի Նոր Կտակարանի. ուր 'ի համաձայնելն գրչին զզլխակարգութիւնս ընդ լատինականին՝ երևէր ձեռն մխել և 'ի բնաբանն. զորօրինակ այն՝ որ 'ի Ա Յովհ. Ե 6. զորմէ ունիս տեսանել անդանօր 'ի կարգին: 'Ի սմա յաճախութեամբ նշմարէին հետք վերոյիշատակեալ Որոգինեան աստեղանշանացն և բրզածևաց, որպէս և 'ի յերրորդ գրչագիրն անթուական. թէպէտ և բազմօք տարբերէին յիրերաց 'ի բանսն, և յեղանակ գրչութեանն:

Ութերորդ գրչագիրն մասնական՝ սկսեալ 'ի գրոցն Յոբայ մինչև ցաւարտ՝ հանդերձ թղթովք առաքելոց, է՛ր գրեալ բոլորագիր 'ի թուղթ բամբակեայ, յԱլէքսիանէ քարտուղարէ Տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի: Սա 'ի տեղիս տեղիս անսովոր տարբերութեամբքն որոշէր յայլոց օրինակաց, բայց ոչինչ առաւելութիւն ցուցանէր այնու: Զպակասութիւն այսր օրինակի՝ լցուցանեն այլևս մասնաւոր հին և նոր գրչագիրք 'ի կատարումն թուոյս. որք և ուրեք ընդ միում՝ և մերթ ընդ այլում 'ի վերոյասացեալ օրինակաց համաձայնէին: Յաւել՝ 'ի սոսա և զօրինակս ճաշոց ասացեալ գրոց. յորոց ունէաք առընթեր հնագոյն ամբողջ գրչագիրս չորս:

Աստէն ըստ կարգի իններորդ օրինակ մարթ է համարել զգրչագիր զաղափարն՝ զոր 'ի կի՛ր առ Ոսկան 'ի տպագրութիւն: Այս մատեան թէպէտ ըստ հանգամանաց՝ տեղւոյ և ժամանակի, և թէ՛ յո՛ւմմէ և յո՛յր պէտս գրեցաւ՝ անգիտելի է մեզ, ո՛չ ունելով զբունն իսկ 'ի ձեռին. սակայն համեմատելով մեր զնորին օրինակն յՈսկանեան տպագրութեան անդ՝ ընդ վերոյիշատակեալ գրչագրաց մերոց, չերևի ընտրելագոյն ինչ զաղափար՝ ո՛չ ըստ հմուտ գրչութեանն, և ո՛չ ըստ այլոց մասանց անվթարութեան. բազմօք նմանեալ՝ որպէս ասացաք, երրորդ գրչագիր օրինակին մերոյ. ըստ որում և 'ի փորձ մատուցեալ՝ ունի ստուգել մտադի՛ր քննողն 'ի ծանօթութիւնս տարբերութեանց օրինակաց. որով և զսմանէ գուշակենք գրեալ 'ի Կիլիկիա իբր 'ի վերջն չորեքտասաներորդ դարու: Իսկ զոր կարծեցին ոմանք լինել այնմ թագաւորական օրինակ՝ իբր 'ի պէտս Յեթնոյ արքայի գրեալ, որով և յաչս պարզամտաց ոմանց նախամեծար պատուէր ազնուութեամբ, թուի թէ վերջին յիշատակարանն ոտանաւոր նորա պատճառս ետ այսպէս համարելոյ նոցա. որովհետև

ոչինչ յիշէ Ոսկան զայսմանէ, որպէս և ո՛չ զայլ ևս հանգամանաց բնաւ այնմ գաղափարի: Պատմէ արդեօք ՚ի յիշատակագրի իւրում Ջաքարիաս առաջնորդ Ամատունեաց՝ աշակերտ Սովսէսի Դ կաթողիկոսի, եթէ իւր ստացեալ իցէ ՚ի Կարին զայսպիսի մատեան՝ թագաւորական ոտանաւորաւ, և յղեալ յԱրագածոտն ՚ի վանս իւր ՚ի պահեստ. այլ չի՞ք ստուգութիւն հաստատելոյ՝ թէ սա այն իցէ:

Այսոքիկ ինն ամբողջ գրչագիր օրինակք զորս ունեաք առընթեր՝ էին ըստ մասին Յին Կտակարանաց. իսկ Նոր Կտակարանացն օրինակաց թիւ՝ հանդերձ գծագրելովքն ընդ Յնոյն միահետ, Աւետարանագրացն միայն՝ ընդ ամբողջ և ընդ մասնական կամ թերատ՝ հասանէր գրեթէ ՚ի համար երեսնից, և Գործոց և Թղթոցն առաքելոց՝ չորեքտասան. զորոց բացատրել մի ըստ միոջէ զանց առնենք յառաջիկայդ, զանգիտեալ յանչափաւորն երկարածութենէ բանիցս:

բ. Յայս վայր յառաջ բերեալ զհանգամանաց գրչագիր օրինակաց Աստուածաշունչ մատենիցն՝ զորս վարեցաք ՚ի կազմութիւն առաջիկայիս, մատիցուք այժմ ՚ի ծանօթութիւն տպագրելոցն: Արդ՝ թողեալ զմասնական տպագրութիւնս Սաղմոսարանաց, որք սկսեալ յամէ 1565. տպագրեցան ՚ի զանազան տեղիս, ՚ի Յռոմ, յԻվով, ՚ի Վենետիկ, և այլն. ապաքէն ըստ ամբողջութեանն՝ զառաջինն ունիմք զտպագրութիւնն Ոսկանայ վարդապետի Երևանեցոյ: Քանզի նա ինքն ըստ իւրումն ասելոյ՝ հրամանաւ Տեառն Յակոբայ կաթողիկոսի, այնու միովն գրչագիր օրինակաւ եկեալ յարևմուտս, և յետ բազմադէմ հանդիպմանց հաստատեալ տպագրատուն հայկական ՚ի յԱմսդելոտամ քաղաք Յոլանտացոց, յամի 1666. տպագրեաց զառաջին Աստուածաշունչ հայկականս բարբառոյ, ՚ի մեծ քառածալ ասացեալ գիրս՝ վայելչագոյն տառիւք՝ քան զոր մինչև ցայնժամ ՚ի զանազան կողմանս էին փորագրեալ հայերէն այբուբենք ՚ի սակս տպագրութեան: Վասն այսորիկ ՚ի հրատարակիլ մատենին զառաջինն անդ յարևելս, ո՛չ սակաւ գովասանութեամբ ընկալեալ եղև ՚ի պարզամտաց ազգիս՝ հայեցեալ ՚ի վայելչութիւն տառիցն և ՚ի մաքրութիւն տպագրութեանն, և մանաւանդ ՚ի դիւրագնութիւն ծախուցն՝ համեմատութեամբ գրչագիր մատենից ՚ի ստացումն. որով և անուն Ոսկանայ պատուեալ ծաւալեցաւ յազգիս՝ որպէս բազմերախտ աշխատաւորի և մեծիմաստ վարդապետի. այլ արդեամբք զհակառակ նմին կարծիս ժառանգեաց յաչս իմաստնագունից, որոց զարտաքին հանգամանս տպագրութեանն ո՛չ արհամարհեալ, ՚ի ներքինն գիտացին յառել զտեսանելիս մտացն: Բայց թիւ այսպիսեաց նուագագոյն գոլով առ նովին ժամանակաւ, և անյաջողութեամբ արգելեալք զլաւագոյն փորձոյ բուռն հարկանել. առ սակաւ սակաւ այնպէս սովորեալ վարժեցան նովաւ, մինչ զի կամեցեալ տպագրել յետ այնորիկ զսուրբ մատեանսն ըստ մասին կամ ըստ բոլորին՝ հեշտեալ իմն ՚ի նմանէ առեալ փոխագրեցին. որպէս է տեսանել զՍաղմոսարանս և զՆոր Կտակարանս՝ յետ այնորիկ տպագրեալս: Ընդ որս և Թադէոս երէց, որ յամին 1686, զառաջինն տպագրեաց ՚ի Վենետիկ զճաշոց գիրսն, ո՛չ սակաւ աշխատութեամբ կարծեն յարմարեալ զայնչափ ընթերցուածսն՝ ըստ Ոսկանեանն գաղափարի՝ աղաւաղեալ զթագաւորականն ազնիւ օրինակ, որուն ասէ հանդիպիլ յաջողութեամբ

Տեառն:

Նմին իրի և երկրորդ անգամ հարկ եղեալ տպագրութեան ողջոյն Աստուածաշունչ մատենին, ազգական նորին Ոսկանայ՝ Պետրոս ոմն Լադինացի անուանեալ, ունելով առ ձեռն պատրաստ զգործիս տպագրական պիտոյից, յար և նման ամենևին օրինակի իւրումն նախնոյն, բայց մանրագիր և անմաքուր՝ տպագրեաց յամին 1705. ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի թաղն Պէկօղլի:

Իսկ յետ ժամանակաց՝ մերս բազմարդիւն Մխիթար Աբբահայր տեսեալ զնուագութիւն երկուց այսոցիկ տպագրութեանց յազգի մերում, որով դժուարագիւտ և մեծագին եղեալ մատեանն, անկարամայր և ինքն ՚ի պէտս աշակերտաց իւրումն դպրատան չափաւոր ծախիւք ստանալ, խորհեցաւ միւսանգամ տպագրութեամբ այնմ դարման մատուցանել: Եւ զի պակասէին առ նմա հայկական գրչագիր օրինակք առ ուղղագրութիւն վրիպանացն՝ զորս ծանեաւ յՈսկանեան օրինակի անդ. վասն այնորիկ առ ժամն ըստ մարթելոյ հայթհայթեալ զուղղագրութիւն նոցին ՚ի լուսանցս, առեալ ՚ի լատին թարգմանութենէ անտի եւթնալեզուեան մատենին Փարիզու, (որ դեռևս ՚ի յարգին էր ՚ի ժամանակին.) և ինչ ինչ որ անտանելի թուեցաւ նմա՝ նաև ՚ի բնաբանին մուծեալ. այսպիսի իմն դուգնաքեայ այլայլութեամբ՝ ըստ այնմ Ոսկանեան օրինակի՝ վայելչագոյն և յաւէտ պայծառ յօրինուածով զարդուց, գործակցութեամբ ձեռնասուն աշակերտաց իւրոց՝ երրորդ անգամ ՚ի լոյս ընծայեաց զԱստուածաշունչ մատեանն՝ ՚ի Վենետիկ յամին 1733:

գ. Այլ քանզի և հիմն Մխիթարեանս այսորիկ տպագրութեան եղև Ոսկանեանն. ապաքէն ոչինչ աւելի քան զնորայն գերազանցութիւն մարթ էր ունել սմա ըստ հարազատութեանն, այլ տակաւին մնային նոյն թերութիւք՝ որ ինչ ՚ի յաղբիւրն անդ: Ջի նա ինքն Ոսկան, որպէս յարդեանց անտի գործոց իւրոց ունիմք իմաստասիրել, (ըստ որում տեսանենք արարեալ նորա նաև ՚ի տպագրութիւնս այլոց գործոց նախնեաց մերոց, շարակնոցին ասեմ՝ և հասարակաց աղօթից. որոց առաջին և ընտրելագոյն տպագրութիւնն ձախողակի վիճակեցաւ ՚ի ձեռս նորա.) նախ՝ զլիտովին անճաշակ գոլով ճշգրիտ հայկաբանութեան, ըստ բերման ժամանակին՝ յորում կարի իմն նուագեալ էր դպրութիւն հայկականս քերթողութեան յազգի մերում. և երկրորդ՝ նա ևս անտեղեակ ուսմանց գիտութեան իմաստասիրականին, որով և կանոնաց ուղիղ դատման. զայսպիսի զգուշալի գործառնութիւն յանձին կալեալ, ո՛չ միայն ըստ քերթողական արուեստին ձեռներեց եղև այլայլել զսքանչելի յօրինուած շարագրութեանն ՚ի մասունս բանի, և ՚ի համաձայնութիւնս անուանց, այլովքն հանդերձ. այլ և ըստ առաջնորդութեան միամիտ նախադատութեանց իւրոց հնարեցաւ իմն ուղղաբանել զհայկական բնաբանն ՚ի լատինական Վուկաթա ասացեալ թարգմանութենէ անտի. անգիտացեալ ապաքէն՝ եթէ մերս յառաջ գայ ՚ի հելլենականն աղբերէ եւթանասնից, զորօրինակ և տեսաք ՚ի վեր անդր. և Վուկաթայն Լատինացոց՝ յերբայականն օրինակէ, յորս անբաւ տարբերութիւնք են ՚ի միջի. զորոց չէ՛ տեղոյս հարցաքննել: Բայց արդարև ըստ միում կողման ևեթ ստգտանելի առնէր զանձն, եթէ գէթ ճշդիւ ամենայն ուրեք յաջողէր

նմա առնել զհերն կարծեցեալ ուղղաբանութիւնս, սակայն առաւելու զամբաստանութիւն անծին յայն իսկ, զի ըստ հաճոյից իմն երկի բերիլ անխտիր, ո՛չ պահելով զմիօրինակ կանոն յամենայնի ըստ երկուց ևս եղանակաց փոփոխութեան՝ զոր ասացաք: Որով Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձևացաւ խառնարան այլ և այլ թարգմանութեանց՝ հելլենականին և լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ: Թողուն և զոր ողջոյն գիրս Սիրաքայ՝ և չորրորդ եզրայ՝ հանդերձ թողով ինչ երեմիայ մարգարէի, իբրև ամբողջական մասունս՝ թարգմանեալ ՚ի լատինականէն՝ իւրովն իսկ թերուսումն հմտութեամբ բարբառոյն այնորիկ, յաւել ՚ի մերս՝ խուժադուժ հայկաբանութեամբ. օրինակ իմն իբրև կապերտ քրծոյ առ կերպասիւ ագուցեալ, մինչ զի և երեկեան համբակն Արամեանս դպրութեան մարթի որոշումն զանազանութեան առնել ՚ի նոսա: Վասն որոյ և իրաւամբք անընդունելի եղեալ վայրապար աշխատութիւն նորա՝ պախարակեալ լինէր ՚ի մտաւոր բանասիրաց իւրոյ ժամանակին. թէպէտ՝ և ինքն զայրացեալ, որպէս ակնարկէ ուրեք, կոչէ զնոսա, *Սուտակասպասս*, և *բարձրայօժ իմաստակա*: Այն զի՝ ընդ հակառակն՝ ըստ ուղիղ բանի խոհականութեան, զմի միայն գրչագիր գաղափար Աստուածաշունչ մատենի ունելով ՚ի ձեռին, և այն՝ ո՛չ գերծ ՚ի բազմապատիկ սխալանաց, որպէս և ինքն վկայէ ՚ի վերջաբանին, ՚ի ստիպել հարկի տպագրութեանն՝ պարտ էր ամենայն հաւատարմութեամբ ընդօրինակել ՚ի նմանէ, նաև եթէ մարթ ինչ է ասել՝ ըստ յայտնի վրիպանացն իսկ ՚ի գրչաց հանդիպեալ, և զուղիղն երևեալ ինքեան՝ արտաքոյ բնաբանին ՚ի լուսանցսն անդ նշանակել, մինչև այլևս ճշգրտագիր օրինակ ժամանակաւ ՚ի յայտ եկեալ՝ մարթասցի ուղղել զնորին վրիպակս:

Եղանակ կազմութեան առաջիկայ տպագրութեանս

ա. Յասացելոցս զտարադէպ հանգամանաց տպագրութեանն Ոսկանայ՝ յայտ յանդիման երևեալ անհրաժեշտ կարևորութիւն նորակերտ տպագրութեանս, մնայ մեզ անդ ժանօթս տալ բարենախաճ վերծանողաց մերունս՝ զեղանակէ սորին ձեռնարկութեան. զոր ըստ ճշգրիտ կանոնաց հաւատարմութեան գուն գործեցաք կատարել յազնուագոյն գրչագիր գաղափարէ անտի, զորմէ լիով ասացաք ՚ի վեր անդր: Արդ՝ նախ առաջին զնոյն թիւ և զկարգ պահեցաք գրոցն՝ ըստ որում և ՚ի գաղափարի մերում գտաք՝ համաձայն այլոց բազմաց հնագոյն օրինակաց. և վասն այսորիկ իսկ ո՛չ խղճեցաք արտաքոյ կարգի թողուլ զգիրսն Սիրաքայ, զոր թէպէտ իբր երեք ՚ի նորագիր օրինակաց, այսինքն՝ չորրորդն, հինգերորդն, և ութերորդն ունէին՝ սոսկապէս գրեալ առանց սովորական նախադրութեան և ցանկի գլխոց, բայց այլք ընդ մերունս իսպառ զանց առնէին զնովաւ: Եւ արդարև կամեցեալ մեր հետագօտել զհանգամանաց այնր գրոց՝ զոր այսօր ունինք ՚ի հայկականս, բաց ՚ի հատընտիր իմն եղանակաւ թարգմանութենէ նորա՝ բաղդատեալ ընդ յունականին, նաև կարի զանազանութիւն տեսանեմք ոճոյ շարագրութեանն յայլոց նմանատիպ գրոց անտի՝ զոր արարին նախնի թարգմանիչք մեր, մինչ զի և ո՛չ նոցին կրտսերագոյն

աշակերտաց համարձակելի է մեզ ընծայել. բայց կարծել եթ բազմօր
յետոյ՝ ի նուաղութեան ասեմ ընտիր հայկաբանութեան հայթիայթեալ իցե
թարգմանութեան նորա. և հուսկ ուրեմն ՚ի յետին ժամանակս ՚ի
համեմատութիւն կանոնին Լատինացւոց՝ ՚ի բարենախանձ գրչաց անտի
մուծեալ ՚ի հայկականս: Ուր և առ այսպիսի նորակերտութեան նորին
ապացոյց՝ չէ՛ ինչ անտեղի գա՛յն ևս իմանալ, իբր զի ՚ի ցուցակս
եկեղեցական պաշտամանց մերոց, որոյ վերջին կարգաւորութիւն եղև
յերկրտասաներորդ դարու, ո՛չինչ ընթերցուած ՚ի Գրոցն Սիրաքայ
նշանակեալ երևի, որպէս գրեթէ յայլ ամենայն գրոց Յին Կտակարանաց
առեալ է, բաց յոմանց սակաւուց՝ սակս ո՛չ յարմարելոյ բանիցն, և բաց ՚ի
Յայտնութենէն Յովհաննու՝ ՚ի նորն, զորոյ զթարգմանութենէն՝ ևս ՚ի մերս՝
կասկածիմ ո՛չ անցանել հնութեամբ քան զութերորդ դարն, և յետոյ
ուրեմն յարեալ ՚ի կանոնն, ըստ որում ունին գնոյն ամենայն գրչագիր
օրինակք՝ որ այսօր երևին առ մեօք:

Իսկ թէ զհարդ այս անցք հանդիպեցան Գրոցն Սիրաքայ, որպէս և
յայտնութեանն Յովհաննու. ինձ այսպէս թուի անշուշտ՝ (զոր և ոչինչ
պատճառանօք մարթ է ստերիւրել՝ թիւրս խորհելով զհաւատարմութենէ
աստուածարեալ հարցն մերոց,) եթէ թարգմանիչք մեր ո՛չ ունելով
զնոսին ՚ի հելլենական գաղափարի իւրեանց յորմէ թարգմանէինն,
արտաքոյ մնացին նոքին. և յետոյ, որպէս ասացաք՝ յայլոց թարգմանեալ
՚ի յայտ եկին առ մերս, որով և ՚ի միջին դարու վարդապետաց մերոց
ուրեք ուրեք ՚ի վկայութիւն ածան: Այլ Սիրաքն, ո՛չ երբէք եղաւ ՚ի
նախնեաց անտի ՚ի բովանդակութեան կանոնի մերոյ, այլ արտաքոյ
պատուեցաւ. որպէս և կանոն ժողովոյն Սիոնի կաթուղիկոսի ՚ի Պարտաւ՝
յութերորդ դարու անդ, յետ թուելոյ զգիրս Յին Կտակարանաց, յաւելու.
*Եւ արտաքուստ պատգամաւորեսցի առ ՚ի յուսուցանելոյ զձեր
մանկունս... Սիրաքայ իմաստութիւն:* Ըստ որում և տեսանեմք իսկ, զի
մեծ մասն օրինակաց նորին՝ կա՛մ գլխովին առանձինն են գրեալ, և կամ
մասնաւորապէս ընդ առակացն Սողոմոնի՝ իբրև համատեսակ
խրատական պատգամս: Իսկ զոր քերթողահայրն մեր ՚ի Գիրս պիտոյից.
Ա 2. յառաջ բերէ վկայութիւն ՚ի Սիրաքայ, ա՛յն է ըստ հելլենական
սկզբնագրին, որպէս անդանօր նշանակեալ ենք. որ ո՛չ երևի ՚ի
յառաջիկայ հայկական օրինակս. որով և անդրէն հաստատի մերս
պատճառ: Բաց ՚ի գրոցն Սիրաքայ՝ նաև զԹուղթ Երեմիայի, զոր Ոսկան
կարգեալ ունի ՚ի վերջ գրոցն Բարուքայ, մեք գլխովին արտաքոյ թողաք,
որովհետև ոչինչ ՚ի հետոց նորին նշարեալ տեսաք երբէք ՚ի գրչագիրս
մեր: Ըստ այսմ օրինակի ՚ի բաց բարձաք նաև զողջոյն հատուածս
բանից կամ զպարբերութիւնս՝ յընթացս իւրաքանչիւր գրոց, յորս Ոսկան՝
և կամ այլ ոք ՚ի յետին գրչաց պակասաւոր համարեալ զմերս՝ ՚ի ներքս
մուծեալ էին ՚ի լատինականէն, թէպէտ յառաջ բերեալ և գնոսին
նշանակեցաք ՚ի ծանօթութիւնսն: Որպէս ըստ թուոյն՝ զոր ասացաք,
նոյնգունակ և ըստ կարգի մասնաւոր գրոցն համաձայնեցաք գրչագիր
օրինակաց, ըստ որում ունէին և հելլենական հաւատարմագոյն
օրինակք: Վասն որոյ ոչինչ գոյ զարմանալ և ՚ի շփոթումն պաշարիլ ուշիմ
վերծանողի մատենիս, ՚ի տեսանելն և յայսմ զտարբերութիւն մերումս՝
յօրինակէ անտի Ոսկանայ, զոր մինչև ցարդ վարէր միամիտ

սովորութեամբ. զի նա ինքն ըստ բնաբանիցն՝ համայն և զգիրսն հնարեցաւ դասակարգել համեմատ լատինականին: Քանզի՛ ՚ի Յին Կտակարանին եդ նախ զմեծ մարգարէութիւնս այլով իմն կարգաւ, և ապա զփոքունս. և ՚ի նորն՝ զԹուղթսն կաթուղիկեայս յետ Պաւղոսեան Թղթոց, և ՚ի սոսա զԵբրայեցին յետ ամենեցուն: Ուր ո՛չ գիտաց ակնածել նաև ՚ի սովորութիւն հասարակաց աղօթից Յայաստանեայցս եկեղեցւոյ. յորս նախնիք մեր համեմատ կանոնի Աստուածաշունչ մատենին զոր վարէին, ՚ի կարգաւորութեան անդ առաքելական ընթերցուածոց, սկսեալ ՚ի զատկէ Յարութեանն, (ուստի և սկիզբն առնու եկեղեցական ամն մերոյս պաշտաման) սահմանեցին նախ զԹուղթսն կաթուղիկեայս, և ապա զՊաւղոսեանսն՝ ընդ ողջոյն շրջաբերութիւն ամին մինչև ցառաջիկայ Աղուհացն. որպէս յայտ իսկ է հմուտ պաշտօնէից եկեղեցւոյ:

բ. Երկրորդ՝ ՚ի դէպ իսկ և շահաւէտ վարկաք դնել զյառաջաբանս կամ զնախադրութիւնս, և զցանկս գլխոց իւրաքանչիւր գրոց Յին և Նոր Կտակարանաց, հանդերձ նոցին համեմատեալ թուագրովք որ ՚ի լուսանցս անդ բնաբանին. ըստ որում ունէին կարգեալ առհասարակ ամենայն գրչագիր օրինակք. զորս իբր աւելորդս և անպիտանս՝ արհամարհեալ զանց արար Ոսկան, որպէս գրէ ՚ի վերջաբանութեան իւրում: Զբազմահմուտ հեղինակ բանիցս՝ ըստ մասին Յին Կտակարանաց, ապաքէն ՚ի Յայկազանց անտի մերոց արժան էր համարել, նկատեալ ՚ի վայելուչ հայկաբան արտադրութիւն շարագրութեանն՝ հանդերձ այլ ևս սեպհական ինչ նշանօք, եթէ չէր ՚ի վեր երևեալ ՚ի նոր թարգմանութեան Ասորոց յԵթանասնիցն օրինակաց. զոր և հաստատեն եղեալ յԵթներորդ դարուն ՚ի հելլենական գաղափարէ. որոյ ընտրելագոյն գրչագիր օրինակի յաջողեցաւ և ինձ ականատես լինել յԱմբրոսեանն գրատան ՚ի Մեդիոլան: Քանզի գրչագիրս այս՝ ըստ իմս դատման, իբր ՚ի ԺԳ դարու գրեալ կիսամասնեայ, որ պարունակէր զիմաստնական և զմարգարէական գիրս ևեթ, ՚ի սկիզբն անցնիւր գրոց ունէր կարգեալ զցանկ գլխոց, որ գրեթէ բառ առ բառ համեմատէր ընդ մերումս. այլ պակասէին ՚ի նոսա նախադրութիւնք՝ որ անթերի յամենայն գիրս գտանին առ մեզ: Արդ՝ այս նախադրութիւնք և ցանկք գլխոց, զորս ամբողջաբար ունին ամենայն գրչագիրք մեր. եթէ ըստ ասացելումս՝ ո՛չ են նախագիծ գրութեամբ յօրինեալ ՚ի մերս հայկական բարբառ, սակայն հարագատ հայկաբանութեամբն որ նշմարի ՚ի նոսին, կարծիս իմն տան՝ եթէ ՚ի նոցին իսկ ՚ի թարգմանչաց անտի մերոց զոյգ ընդ Աստուածաշունչ բնաբանիցն յեղեալ են ՚ի մեզ. ունելով թերևս ՚ի յառաջադրեալն իւրեանց հելլենական գաղափարի: Թեպէտ և զարմանք մեծ այն են. զի ո՛չ գտանին նոքին ՚ի հելլենական գրչագիրս մինչև ցարդ ՚ի յայտ եկեալս, որ յայլ և այլ մատենարանս ևրոպիոյ գանձեալ պահին. յորս յԱղէքսանդրեանն ևեթ, որպէս ասեն՝ տեսանին ՚ի լուսանցս բնաբանիցն ՚ի հնութենէ զերծեալ հետք թուահամարոյ գլխոց՝ որք ուրեք ուրեք համեմատին մերումս բաժանման: Նմին իրի և անծանօթ գտան ՚ի սոցանէ մատենագիրք Եւրոպացւոց՝ անտեղեակք մերումս դպրութեան, մինչև ցիրատարակումն Մարգարէութեանն Դանիելի հանդերձ ցանկով գլխոց ՚ի լատին բարբառ՝ ՚ի վերոյասացեալ Ասորի մատենէ անտի,

տպագրեալ 'ի Մեդիոլան յամին 1788. և 'ի թարգմանչէ գործոյն հեղինակ այնց գլխակարգութեանց կարծեցաւ լինել Եւսեբիոս Կեսարացի: Ուր ապաքէն և մեզ ո՛չ էր տարադէպ նոյնգունակ իմաստասիրել, եթէ և 'ի մերս պակասէին նախադրութիւնք. քանզի 'ի նոսա ակներև ցուցանի, թէ մատենագիր նոցին հանդերձ գլխակարգութեամբքն, (յորս չի՞ք զանազանութիւն ոճոյ արտադրութեանն,) այլ որ է՝ յետոյ ժամանակաւ քան զԵւսեբիոս, որ 'ի Քրոնիկոնէ նորին ուրեք ուրեք վկայութիւնս 'ի մէջ ածէ՝ յանուանէ յիշելով զնա. որպէս է տեսանել 'ի նախադրութիւնս Եսթերայ, Յուդթայ, և Ա Մակաբայեցոց: Այլ և 'ի սմա յիշատակելով զյառաջաբանիցն Գրոց Դատաւորաց և Թագաւորութեանց արարեալ յիրմէ, գրեթէ աներկբայ տայ մեզ համարել՝ եթէ համօրէն նախադրութիւնք և ցանկք գլխոց Յին Կտակարանաց՝ այնմ միոյ մատենագրի են գործ. բայց թէ ո՛րք արդեօք նա՝ և յորո՛ւմ դարու ծաղկեալ, չունիմք առ այժմ ասել՝ ո՛չ ստուգութեամբ և ո՛չ 'ի կարծ գուշակմամբ: Ըստ պայմանի գրոց Յին Կտակարանացն՝ համաձայն գրչագիր օրինակաց մերոց՝ եղաք և զՆոր Կտակարանացն զնախադրութիւնս և զցանկս առ իւրաքանչիւր գիրս. որպէս զնախադրութիւնս չորից ակետարանացն, որք կարծին լինել Պամփիլեայ վկային, և կամ Եւսեբեայ Կեսարացոյ: Նաև զսկզբունս գլխոց ակետարանաց՝ համաձայնութեամբ չորիցն միանգամայն՝ թուահամարով նշանակեալ. զորմէ և հաւանեալ են լինել ուրուականն այն Ամմոնի Աղէքսանդրացոյ. զոր կատարելագոյն ևս ձևացոյց ներհունն Եւսեբի, ըստ որում գրէ 'ի ծանուցումն կանոնաց իւրումն Յամաբարբառի: Նոյնգունակ կարգեցաք և զյառաջաբանս և զցանկս գլխոց՝ Գործոց և Թղթոցն առաքելոց՝ արարեալս յԵւթադէայ անտի բանիբուն վարդապետէ. որ ըստ ակնարկելոյ 'ի բանս իւր՝ երևի ծաղկեալ 'ի միջոցին հինգերորդ դարու. այլ թէ յորո՛ւմ կողման, և ո՛վ այնք յորոց 'ի խնդրոյ բերաւ յայսպիսի աշխատասիրութիւնս, ընդ երկբայութեամբ է: Այլ 'ի վերայ այսր ամենայնի առ 'ի չծանրաբեռնելոյ առաւելապէս զբովանդակութիւն մատենիս, շատացաք այնոքիւք զորս և եղաք. զգուշացեալ յառաւելն յաճախել՝ պատճառս իմն տալ շփոթման վերծանողաց մերոց: Վասն այսորիկ ո՛չ զոր միանգամ գտաք գրուածս յօրինակի մերում՝ անխտիր եղաք 'ի կարգին. այլ ինչ ինչ թողաք արտաքոյ. որպէս՝ 'ի Յին Կտակարանի զանց արարաք զկրկնակ նախադրութեամբք 'ի գիրս ինչ. և ևս՝ զօրհնութեամբք կանոնաց Սաղմոսարանին, և զհամառօտ պատմութեամբք մարգարէից. իսկ 'ի Նորն՝ զկանոնօք համաբարբառին Եւսեբեայ՝ յակետարանսն, և զցուցակօք ընթերցուածոց և վկայութեանց 'ի Թուղթս առաքելոց՝ հանդերձ այլովք. զորոց և մի ըստ միոջէ յիւրաքանչիւր վայրի ո՛չ դանդաղեցաք ծանուցանել: Բայց զի մի՛ և յայսմ պատճառէ արտաքոյ մնասցեն ինչ ինչ և 'ի պիտանեաց անտի, որոց պակասութիւնն թերևս անկատարութիւն իմն բերէր գործոյս, յայն սակս պատշաճ վարկաք 'ի վախճան մատենիս իբր յաւելուած այսպիսի մնացորդաց առնել, կարգելով 'ի նմա և որ արտաքոյ մերումն գաղափարի յայլ գրչագիրս գտանէին. յորս գլխաւորն էր Գիրքն Սիրաքայ, որ 'ի կանոնին Լատինացոց ընդ այլ սրբամատեան գրուածս աներկբայաբար

պատուեալ է. և այլքն ըստ կարգի. զորոց յայտ առնէ անդանօր նախակարգել ծանուցումն գնոցանէ:

գ. Երրորդ՝ ունելով մեր առ ընթեր գյաճախութիւն գրչագիր օրինակաց, որպէս 'ի վերոյ ցուցաք, վասն այն առ 'ի կատարելագոյն հանգամանօք 'ի լոյս ընծայելոյ զառաջիկայ գործառնութիւնս, ո՛չ շատացաք ևեթ ըստ մարթելոյ ուղղագրել նոքօք զառաջի եղեալս օրինակ 'ի վրիպանաց գրչին՝ ուր ուրեք 'ի մարդկայինս պայմանէ սխալեալ տեսաք. այլ և բաց 'ի ճշգրիտ ծանօթութեանց զեղանակէ գրչութեան նորին, պատշաճ դատեցաք նա ևս զտարբերութիւնս այլոց օրինակաց առ նմին մերձ դնել՝ 'ի պէտս մերոց ուսումնասիրաց, որոց դէպ լինի 'ի զանազան առիթս վարել զսուրբ մատեանս, որով իբր միով հայեցիւք յանդիման ունին համեմատեալ տեսանել զայլ և այլ օրինակս: Զորս և այսպիսի իմն կարգաւ որոշեալ նշանակեցաք: Նախ՝ ուր միանգամ ըստ ասացելոցս, գյայտնի երևեալ վրիպակս գրչին մերոյ ուղղագրեցաք 'ի միաբան դրութենէ այլ ամենայն գրչագիր օրինակաց, անդանօր առ 'ի ցոյց հաւատարմութեան, միանգամայն և յառաւել զգուշութիւն՝ կամեցեալ առաջի առնել և զվրիպակսն զայնոսիկ, եղաք. *Յօրինակին՝ *այսպէս*, կամ *այնպէս*): Երկրորդ՝ փոյթ կալեալ ծանուցանել և զորս 'ի լուսանցս մերումս օրինակի էին նշանակեալ 'ի նմին գրչէ՝ տարբերութիւնք ինչ այլոց օրինակաց, անդէն որպէս զհարդ գտաք համաձայն առ մեօք եղելոց՝ 'ի կարգի բնաբանին գրեալ, յայտ արարաք դնելով. *Ի լուս՝. *այսպէս*, կամ *այնպէս*, համաձայն ոմանց, կամ բազմաց 'ի բնաբ՝): Այլ 'ի լուսանցս նշանակելոց աստի՝ որք բացատրութիւնք ևեթ էին բառից, կամ տարբերութիւնք թարգմանութեանց, սոսկապէս եղաք առանց յաւելլուածոյ:

Իսկ զտարբերութիւնս այլոց գրչագիր օրինակաց՝ յառաւել դիւրութիւն, 'ի չորս կարգս պատշաճ թուեցաւ որոշել՝ ըստ այսմ եղանակի: Նախ՝ ուր գտաք կէս մի յօրինակաց, և մերթ՝ նաև երկուք տարբերեալ 'ի մերմէս, և մնացեալքն համեմատ մերումս. անդէն նշանակեցաք. *Ոմանք *այսպէս*, կամ *այնպէս*): Եւ յայս տեսակ էին մեծ մասն տարբերութեանց: Երկրորդ՝ յորս բազմաթիւ օրինակք քան զկէսն՝ միաբան ունէին այլազգ 'ի մերմէս, որպէս զի՝ ընդ մերումս մնալ երկուց, և մերթ՝ նաև միոյ, ըստ առաւելութեան կամ նուազութեան թուոյ նոցին, յայնժամ եղաք.

*Բազումք *այսպէս*, կամ *այնպէս*): Երրորդ՝ ուր առ հասարակ ամենայն օրինակք որ առ մեօք՝ համեմատ իրերաց միաբան ունէին այլազգ 'ի մերմէս, անդանօր նշանակեցաք. *Այլք *այսպէս*, կամ *այնպէս*):

Յայսպիսիս արժան էր արդեօք այլայլել զբնաբան մեր, կասկածեալ զվրիպանաց գրչին, եթէ վասն բազմապատիկ պատշաճողութեանց ո՛չ առաջի եղեալ էր մեր կէտ նպատակի զմի միայն ընտրելագոյն գաղափար, ուղղագրեալ ևեթ զնոյն 'ի յայտնի վրիպակաց գրչին: Թո՛ղ զի և ուրեք ուրեք առանձնական տարբերութիւն մերումս՝ զկատարելագոյնն ունի տեղի քան զայլոցն ամենեցուն, որպէս յայտ է որոց մատչին 'ի հետազօտութիւն հելլենական ընթերցուածոց: Եւ ևս՝ գուցէ ունելով մեր առընթեր և զայլ գրչագիր օրինակս, մարթ էր տեսանել և յայնոսիկ վայրս զհամաձայնութիւն սորին ընդ նոսա, և այնպէս չերևէր ինքն միայնակ առանձնախօս: Զորրորդ՝ ո՛չ անպատկան վարկաք բազում ուրեք և

զտարբերութիւնս մի միայն օրինակի՝ որ շեղէր յայլոց ամենեցուն, 'ի մեջ բերեալ նշանակել, *Օրինակ մի՝ *այսպէս*, կամ *այնպէս*): Մի՝ զի այսպիսի տարբերութիւնք երևէին երբեմն 'ի հնագոյն՝ և յընտիր համարեալ գրչագիրս. զորոց զյիշատակս ևս կամեցաք անկորուստ պահել, զի 'ի յայտնիլ թերևս և այլոց նման օրինակաց՝ հարցաքննութեամբ նոցին՝ ստուգեսցի ճշմարտութիւնն: Եւ դարձեալ այլ ուրեք՝ առ 'ի հմտութիւն վերծանողին, քաջ 'ի միտ առնուլ՝ եթէ յուրվ անգամ տարբերութիւնք 'ի գրչագիրս հանդիպեալք՝ ո՛չ միայն յառաջ գան 'ի տարտամութենէ և 'ի թիւր սովորութենէ ընդօրինակողաց, այլ և 'ի կամակար յանդգնութենէ նոցին, որք ուղղագրութեան մտօք ձեռնամուխ լինին ըստ քմաց իւրեանց այլայլել: 'Ի սոյն պատճառ գլխաւորաբար փոյթ եղև մեզ յառաջ բերել և զտարբերութիւնս Ոսկանայ. առ 'ի յապացոյց վերոյասացելոցս զնմանէ փոքր 'ի շատէ: Վասն որոյ 'ի նշանակելն մեր՝ լոկ. *Ոսկան *այսպէս*, և այլն. իմանամք ցուցանել, եթէ նա ինքն միայն զարտուղեալ յամենայն գրչագիր օրինակաց, մերթ առ 'ի համաձայնութիւն լատինականին, և մերթ 'ի վերածումն նորահնար կանոնաց հայկական քերթողութեան՝ հնարեցաւ ուղղաբանել ըստ այնմ օրինակի: Ուր զայս ևս յու՛շ առնել ուսումնասիրին՝ ո՛չ դանդաղիմք, եթէ ո՛չ առհասարակ զհամօրէն տարբերութիւնս այլոց օրինակաց խոստանամք 'ի սմա առաջի առնել, այլ ըստ մեծագոյն մասին. որպէս զի արտաքոյ մնալ սակաւուցն պիտանեաց, որք 'ի տեսութենէ մերմէ ականայ վրիպեցան. և այնոցիկ՝ զորովք տիրապէս զանց արարաք, աներկբայ ծանուցեալ զնոցին վրիպականութիւնս 'ի թերութեանցն գրչաց ձևացեալ: դ. Այլ 'ի վերայ ասացելոցս ամենայնի՝ ոչինչ տարադէպ վարկաք, իբր հակառակ ինչ գործելով մերս խոստաբանեալ ճշգրիտ հաւատարմութեան, ձեռնամուխ լինել 'ի յայլայլութիւն նիւթական գրուածոց մատենիս՝ ըստ երից այսոցիկ գլխոց: Առաջին՝ զի առ յաւէտ հեշտընկալ առնելոյ զնոյն այժմեանս մերասեր ուսումասիրաց. մանաւանդ զի մի՛ յամենայնի նորակերպ փոփոխութեամբ՝ որով մինչև ցարդ վարժեալն էին, վայրապար դժկամակութեան առաւելապէս պատճառս տացուք այնոցիկ՝ որոց սակաւ է հմտութիւն 'ի գրուածս նախնեաց. յառաջիկայդ յետին դարու սովորութեան զհետ երթեալ վարեցաք զնշանագիրն (*օ*), 'ի հասարակ ասացեալ անուանս. բաց յանսովորից ոմանց, զորօրինակ, *օր*, *օրէնք*, *օրհնել*, և այլն. յորս օրինակ մեր ըստ նախնի յարմարադրութեան ունէր յամենայնի զերկբարբառս (*աւ*), գրեալ՝ *աւր*, *աւրէնք*, *աւրհնել*, և այլն: Այլ 'ի յատուկ անուանս, որք յայլ ազգաց 'ի մեզ փոխագրեցան, ապաքէն անտեղի համարեցաք այսմ յետամուտ սովորութեան զիջանել, թէև զառաջինն անդ անախորժ հնչեսցէ 'ի լսելիս այլազգ սովորելոցն. վասն որոյ և ո՛չ խղճեցաք դնել ըստ գրչագիր օրինակաց մերոց, *Աւնան*, *Աւգոստոս*. *Սաւղոս*, *Պաւղոս*, և այլն: Նոյնպէս և զանուանս՝ *ելթն*, *ևդ*. *զևդ*. կամ *զեաւդ*, *այևր*, *թևր*, *հարևր*, *մևս*, *արդևք*, և այլն. զորս ըստ իւրաքանչիւր վայրաց համաձայնեցաք օրինակի մերում:

Երկրորդ՝ 'ի կետադրութեան մասին ո՛չ ըստ ամենայնի զհետ չոգաք մերումս օրինակի. քանզի ո՛չ էր ամենայն ուրեք միակերպ կանոնաւ կետադրեալ. այլ երբեմն՝ մանաւանդ թէ յողջոյն գիրս ինչ յաճախեալ

ունէր զկետադրութիւնն. և այլ ուրեք՝ նաև 'ի կարևորսն զանց առնէր. զնման պարբերութիւնս բանի՝ 'ի նմին վայրի մերթ ստորակետիւ, մերթ միջակետիւ, և մերթ վերջակետիւ անխտիր յանգէր. նմին իրի պատշաճ թուեցաւ մեզ ըստ կարի յամենայն տեղիս միապէս կետադրել, բաց յայնցանէ որք զհմաստ բանին կարէին այլայլել, յորս զգուշացաք ձեռնամերձ լինել: Նոյնգունակ և զշեշտանշանս 'ի վերայ բառից ո՛չ էր միակերպ եղեալ. այլ 'ի գիրս ինչ կարի յաճախէր, և յայլս ոմանս իսպառ նուազեցուցանէր. յորս մեք ըստ պատշաճին՝ զաւելորդսն բարձաք, և զպակասորդն յայլուստ լցուցաք. մանաւանդ յայնս՝ որք ունին նպաստել ուղիղ վերծանութեան, որով և բացայայտութեան նոցին իսկ իմաստիցն: Ուր զարմանալի իմն թուի, համաձայնութեամբ գրեթէ առ հասարակ ամենայն գրչագրաց՝ շեշտանշանն 'ի վերայ անուանց առաքելոց յաւետարանագրի անդ՝ ըստ հելլենական առոգանութեանն եղեալ, *Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս*, և այլն. արտաքոյ մերունս հայկական սովորութեան, ըստ որում ուսաք 'ի բազմավանկ անուանս շեշտել զվերջինն, գրելով, *Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս*, և այլն: Երրորդ կարևոր վարկաք զհւրաքանչիւր գիրս Աստուածաշունչ մատենիս ըստ լատինական գլխակարգութեանց և համարատանց որոշեալ բաժանել. զորօրինակ ունէին և ածանցեալքն 'ի գաղափարէն Ղազարու Բաբերդացոյ՝ 'ի գործածութիւն ցանկիցն յարմարեալ. և բաց 'ի նոցանէ նաև այլք՝ ըստ գլխակարգութեան մասին և եք: Քանզի այսպիսի մանրամասն բաժանումն բնաբանից Սուրբ Գրոց մեծապէս բերին 'ի դիւրութիւն՝ որոց կամիցին 'ի վար արկանել զնոսա յիւրաքանչիւր պէտս, առ 'ի անյապաղ որոնել և գտանել, և պատրաստաբար նշանակել 'ի նմանէ զոր խնդրեն: Նմին իրի և 'ի սկզբան ուրեմն ձևացեալ միանգամ 'ի վերայ Վուկաթա անուանեալ թարգմանութեան Լատինացոց, յետ այնորիկ ցանգ անայլայլելի պահեցաւ նոյն տրոհումն, մինչև նա ևս 'ի հրատարակումն տպագրութեամբ՝ երբայական և հելլենական բնագրաց, զոր 'ի գրչագիր մատենից խոստացան բնաւին հաւատարմութեամբ կատարել: Ե. Այսպիսի տարագու 'ի լոյս ածեալ զհարազատ հայկականս թարգմանութիւն Աստուածաշունչ մատենիս՝ ըստ ընտրելագոյն օրինակին, յուսամք մերոցս ուղղադատ բանասիրաց ընդունելի ընծայեցուցանել զմերս աշխատասիրութիւն, մանաւանդ թէ՛ 'ի դէպ իսկ պատշաճել նոցին բազմակարօտ բաղձանաց. և կարեկից արգահատութեամբ ներումն գտանել, եթէ 'ի բերմանէ մարդկայինս պայմանի ականայ պակասեալ իցէ մեր 'ի հոգաբարձութեան մեծի գործոյս՝ շեղելով երբէք 'ի յառաջադրեալ նպատակէս, զոր խոստացաք ճշգրիտ 'ի գլուխ տանել: Զորոյ զվաստակս կամակար յանձն առեալ յօգուտ և 'ի պարծանս մերոյին ազգիս, որպէս արդարև հաւատարիմ աւանդապահք հոյակապ ժառանգութեանն՝ թողեալ 'ի բարեացապարտ մերոցն Նախնեաց, զնոյն անդրէն ողջ և անվթար, ըստ մարթելոյն սրբեալ յեկանուտ այլայլութեանց և յարատաւորութեանց՝ բերինք նուիրել 'ի նոցանէ յաջորդեալ մանկանց, 'ի յիշատակ յաւիտենական՝ 'ի փառս Բարձրելոյն:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԾՆԵՂՈՑ

Ջսուրբ և զաստուածային գիրս Ծննդոցս՝ գրեաց նախամարգարէն Մովսէս որ ՚ի տանէն Աբրահամու Ղևտացի: Սա ՚ի ժամանակս յեգիպտոս ծառայութեանն Իսրայէլի, արժանի՛ եղև յԱստուծոյ շնորհաց մարգարէութեան. և ՚ի Յոզուոյն Աստուծոյ վարդապետեալ՝ ուսաւ զհանգամանս լինելութեան արարածոցս, և զայլո՛ց հնագունից իրաց զորս պատմէ ՚ի Գիրս յայս: Եւ քանզի սա՛ է առաջին մարգարէ. և սա՛ ա՛ռ գրով օրէնս յԱստուծոյ. և սա՛ առաջին գրեաց գիրս աստուածեղէնս: Սակս այսոցիկ առցուր ՚ի մէջ զթուեցեալն ծերունեացն: Նախ՝ թէ զհինչ է մարգարէութիւն. և յինչ պատճառս տուաւ մարգարէութիւն. և թէ զհինչ պէտք էին գրոյ, և գրով օրէնս տալոյ Աստուծոյ: Եւ ապա խնդրել զպատճառս գրելոյ Ծննդոց գրոցս, և զհետևեալսն ըստ կարգի: Արդ՝ է՛ մարգարէութիւն, անյայտից իրաց գիտութիւն. ո՛չ միայն ապագայից՝ այլ և անցելոց և մերձակայից: Եւ տեսակք մարգարէութեան, է՛ որ բանիւ, և է՛ որ իրօք: Բանիւն, կանխասացութիւնք, և պատմութիւնք, և օրէնսդրութիւնք. և իրօքն, որպէս խո՛յն, ձե՛ռնն, ջո՛ւրն, գաւազա՛նն: Եւ պատճառք տալոյ՝ մարգարէութեան. նախ զի ողորմեալ՝ Աստուծոյ մարդկան ե՛տ զմարգարէութիւն, իբր զհայրենի բարիս զոր ունէր Ադամ, դարձուցեալ յորդիս նորա: Երկրորդ՝ զի լուծցէ զխաբէութիւնս դիւաց, որք խաբէին զմարդիկ, իբրու՝ թէ ունին ինքեանք նախագիտութիւն. որ միայն Աստուծոյ է, և որոց նա՛ յայտնէ. որ են մարգարէքն: Երրորդ՝ զի զփրկութիւնն որ Քրիստոսիւ լինելո՛ց էր՝ կանուխ գուշակեցցեն մարդկան: Իսկ պատճառ գրով օրէնս տալոյն. զի առաջնոցն՝ առանց գրոյ ետ օրէնս և պատուէրս Աստուած. Ադամայ՝ չուտել ՚ի գիտութեան ծառոյն. տանն Սեթայ՝ չխառնել ընդ տունն Կայենի. տանն Նոյի՝ չուտել զարիւն կենդանւոյ. Աբրահամու զթլփատութիւնն: Իսկ ՚ի ձեռն Մովսիսի գրով. նախ զի այնոքիկ ո՛չ բազում ինչ, այլ պարզք էին և մեկինք. իսկ այսոքիկ տասն գլխաւորք, և այլ բազում ևս մասնաւորք, զորս ո՛չ էր կարողութիւն առանց գրոյ ՚ի մտի պահել. և ապա՝ զի ՚ի հեռանալ մարդկան յերեսացն Աստուծոյ, հարկ լինէր գրով օրէնս առաքել: Իսկ պատճառ Ծննդոց գրոցս՝ է՛ այս. զի մոլորեալ մարդկան յԱստուծոյ, ոմանք ասացին ո՛չ բնաւ գոլ Աստուած. և այլք զտարերս աստուածս ասացին. և զաշխարիս ոմանք ինքնե՛ղ ասացին. և այլք զնիւթն մշտնջենաւոր և անսկզբնակից Աստուծոյ, ուստի առեալ ասեն Աստուծոյ արար՝ զաշխարիս: Ուրացան և զնախախնամելն Աստուծոյ զաշխարիս՝ ասելով թէ ըստ պատահման բերի ամենայն: Ջայսպիսի մոլորութիւնս ուղղել կամելով՝ գրեա՛ց ՚ի Գիրս յայս, թէ եղական է աշխարիս և սկզբնաւոր, և թէ Աստուած արար զաշխարիս, ո՛չ ՚ի հիւլէէ, այլ բանիւ յոչէից գոյացոյց զերկինս և զերկիր և զայլն ամենայն: Նոյն ինքն արար և զմարդն ՚ի պատկեր իւր, և եղ ՚ի դրախտին, որ ո՛չ պահեաց զպատուէրն Աստուծոյ. այլ խաբեցաւ յօձէն, յանցեաւ և ել ՚ի դրախտէն յայս թշուառական կենցաղս: Եւ ՚ի վերայ մեծաց տրտմութեանցն որ եհաս նմա, վշտացաւ և այնո՛ւ, զի անդրանիկ որդին սպան զկրցերն, և սուգ մեծ հասոյց ծնողացն. և ինքն անիծիւք դատի՛ւր յԱստուծոյ: Եւ թէ ՚ի բազմանալ մարդկանն աճեցին չարիք, զորս ջրհեղեղաւ դատեցաւ Աստուած. պահելով սերմն կրկին աճման մարդկան գտունն Նոյի. յորոց

’ի բազմանալն դարձեալ՝ բաժանեաց զլեզուս նոցա առ աշտարակաւն: Յետոյ ’ի ծննդոցն Սենայ աստուածապաշտութեամբ յայտնեալ Աբրահամ երթայ զհետ հրամանին Աստուծոյ ’ի Քաղղեացւոցն առ Քանանացիս. և հարիւրամենի եղեալ ծնաւ զԻսահակ, և Իսահակ զՅակոբ, որոյ երթեալ ’ի Խառան դառնայ կանամբք և որդուվք՝ ժառանգէ զԻսահակ: Իսկ որդին Յակոբայ Յովսէփ նենգեալ ’ի յեղբարցն վաճառի յեգիպտոս, և փառաւորի մեկնութեամբ երազոցն փարաւոնի: Եւ ’ի պատճառս սովոյն իջանէ Յակոբ ամենայն տամբն յեգիպտոս, կերակրի ’ի Յովսէփայ, և վախճանի՝ անդէն: Վախճանի ապա և Յովսէփ և եղբարք նորա: Չայս ամենայն պատմէ գիրք Ծննդոցս, որդի ’ի հօրէ զծնունդս ժամանակագրութեամբ, յելիցն Ադամայ ’ի դրախտէն մինչև ցմահն Յովսէփու, որ են ազգք ԻԴ. և ժամանակք ամաց ըստ իւթանասնիցն. ՎՇԽԱ:

Գլուխք Ծննդոցն

- ա. Աստուածխօսութիւն վեցօրեայ արարչագործելոյն Աստուծոյ զաշխարհս, և դնելոյ ’ի դրախտին զմարդն:
- բ. Վասն խաբելոյ օձին զկինն, և յանցանաց մարդոյն, և պատուհաս կրելոյն:
- գ. Ծնունդն Կայենի, և վասն սպանելոյ զեղբայրն պատուհաս նորին. և ազգահամար տան նորա մինչև ցելքն ազգս:
- դ. Ծննդաբանութիւն հանդերձ ժամանակագրութեամբ տանն Սեթայ մինչև ցնոյ. յորում և վասն հսկայիցն:
- ե. Հրաման առնու Նոյ՝ կազմել զտապանն, որով ապրի ’ի ջրհեղեղէն ինքն և տուն իւր:
- զ. Պատարագէ Նոյ Աստուծոյ. և ընդունի օրէնս և ուխտս յԱստուծոյ:
- է. Անիծանի Քանան վասն կատակելոյն զՆոյ:
- ը. Ծնունդք երից որդւոցն Նոյի՝ եւթանասուն և երկուց ազգաց. յորում և թէ ո՞ առաջին թագաւորեաց:
- թ. Շինուած աշտարակին, և բաժանել լեզուացն, և սփռել ազգացն ընդ ամենայն երկիր:
- ժ. Ազգահամար ժամանակագրութեամբ որդւոցն Սենայ մինչև ցԱբրահամ:
- ժա. Ելն Աբրահամու ’ի Քաղղեացւոց, և գալն ’ի Միջագետս և բնակել ’ի Խառան. և գնալն անտի հանդերձ Ղովտաւ զհետ խոստմանն Աստուծոյ ’ի Քանան, և վասն սովոյն իջանել յեգիպտոս:
- ժբ. Պատժէ Աստուած զփարաւոն վասն Սառայի. և դառնայ Աբրահամ անդրէն ’ի Քանան:
- ժգ. Վասն կռուոյ հովուացն մեկնի Ղովտ յԱբրահամէ, և եկեալ բնակէ ’ի Սոդոմ:
- ժդ. Երկրորդութիւն խոստմանն Աստուծոյ առ Աբրահամ տալ նմա զերկիրն, և բնակելն նորա ’ի Մամբրէ:
- ժե. Գերի՝ Ղովտ ընդ Սոդոմացիս ’ի Քոդդոգոմորեանց. որոց զհետ մտեալ Աբրահամ յաղթէ՝ և դարձուցանէ զաւարն գերեաւն:
- ժզ. Մեծ քան զԱբրահամ գոլով Մելքիսեղէկ՝ օրհնէ զԱբրահամ, և առնու հաս զտասանորդսն:

ժէ. Չորեքկնի խոստումնն Աստուծոյ առ Աբրահամ. և պատարագօքն գուշակէ նմա զվիշտս որդւոցն յեգիպտոս, և սահմանէ զժամանակ ելիցն: Ժը. Թէ ծնաւ Աբրահամ զԻսմայէլ յԱգարայ աղախնոյ յութուն և վեց ամի տիոցն իւրոց:

ժթ. Մեծարի Աբրահամ յԱստուծոյ յորջորջմամբ անուանն, և հրամանաւ Աստուծոյ թլփատի՛ ինքն և իւրքն ամենայն:

ի. Երևի՛ նմա Աստուած երկու հրեշտակօք՝ ի կերպարանս արանց, և ընկալեալ զհիւրոյթսն, հաստատէ զաւետիս ծննդեանն Սահակայ՝ ի նմին տարւոջ:

իա. Կործանի՛ Սոդոմ, և Ղովտ զերծեալ ՚ի լեռնն՝ ծնանի ՚ի դստերացն զՄովսբ և զԱմոն:

իբ. Յափշտակէ Աբիմելէք Փղշտացի զՍառա, և ՚ի սպառնալեացն Աստուծոյ զարհուրեալ՝ հանդերձ թոշակօք ևս տայ ՚ի բաց:

իգ. Կատարի աւետիքն Աստուծոյ, զի ծնաւ Սառա զԻսահակ իննսնամեցի գոլով, և Աբրահամ հարիւրամեցի:

իդ. Խրատուն Սառայի ՚ի բաց արծակէ Աբրահամ զաղախինն որդւովն ՚ի Փառան:

իե. Երդնու Աբրահամ Աբիմելէքայ ՚ի Ջրհորն երդման, և հաստատէ եւթն որոջօքն ի՛ւր գոլ զՋրհորն, որ և կարդայ զԱստուած՝ Աստուած յաւիտենական:

իզ. Փորձի՛ Աբրահամ, և ընտի՛ր գտեալ պատարագան, ընդունի զխոստումն զաւակին իւրոյ Քրիստոսի, յորմէ օրհնին ամենայն ազգք երկրի:

իէ. Սերունդք Նաքովրայ եղբօր Աբրահամու, յորոց և Ռեբեկա:

իը. Մեռանի Սառա ՚ի Քեբրոն. և գնէ Աբրահամ զագարակն Եփրոնի. յորում է այրն կրկին, ուր և թաղէ ՚ի նմա զՍառա:

իթ. Առաքէ Աբրահամ զժառայն ՚ի Խառան, և առնու զղուստրն Բաթուելի զՌեբեկա՝ կի՛ն որդոյ իւրում Սահակայ:

Աբրահամ ծնանի և այլ ևս որդիս ՚ի Քետտուրայ. և ինքն ՚ի բարւոք ծերութեան մեռանի, և թաղի յայրի անդ կրկնուն:

լա. Սերունդք Իսմայելի որդւոյ Յագարու, և մահ նորին:

լբ. Վաթսնամեցի գոլով Իսահակ՝ ծնաւ զՅակոբ և զԵսաւ. և զի վաճառեաց Եսաւ ընդ կերակրոյ զանդրանկութիւնն իւր Յակոբայ ընդ երդմամբ:

լգ. Խոստումն և զգուշութիւն յԱստուծոյ առեալ Իսահակ՝ բնակէ ՚ի մէջ Գերերացւոց. և Աբիմելէք զգուշացուցանէ զիւրսն վասն Ռեբեկայ. ուր և հարիւրաւոր գտեալ զգարին Իսահակ՝ հալածի՛ յազգէն:

լդ. Պեղէ զխցեալ ջրհորսն, և զնո՛րսն. ընդ որոյ զրկեալ ՚ի Փղշտացւոցն. և ապա անդորրեալ՝ երդնուն միմեանց Սահակ և Աբիմելէք:

լե. Խրատու մօրն առնու Յակոբ զօրհնութիւնն ՚ի հօրէն, որոյ անարժան գտեալ Եսաւայ՝ ոխալով սպառնայր սպանանել զՅակոբ:

լզ. Պատուէր առեալ Յակոբ ՚ի հօրէն գնալ ՚ի Խառան. և հասեալ ՚ի Բեթել հանդիպի տեսլեանն Աստուծոյ. և օծեալ զարծանն՝ ուխտէ զտասանորդսն տալ Աստուծոյ:

լէ. Հասեալ ՚ի Միջագետս ՚ի դաշտին, և պատահեալ Ռաքելայ՝ բանայ զջրհորն, և արբուցեալ զխաշիմսն մտանէ ՚ի տուն Ղաբանու:

լը. Չորեքտասան ամ ծառայեալ՝ առնու զդստերսն Ղաբանու երկու նաժշտօքն, ՚ի խորհուրդ երկուց ժողովրդոցն Քրիստոսի:

լթ. Ծնեալ ՚ի կանանցն որդիս մետասան, մեծանայ և ընչիւք, և հրամանաւ Աստուծոյ դառնայ գնալ առ հայրն Իսահակ գա՛ղտ ՚ի Լաբանայ:

խ. Գողանայ Յոաքէլ զկուռսն. և պնդի Լաբան զհետ Յակոբայ. և խափանեալ յԱստուծոյ նենգել Յակոբայ, աջ խաղաղութեան տուեալ դառնայ անդրէն յետս:

խա. Ընդ առաջ լինին Յակոբայ հրեշտակք Աստուծոյ, այլ կասկածեալ նորա յԻսաւայ առաքէ նմա պատարագս. և քաջալերեալ յերկիւղէն ժուժկալելովն ընդ Աստուծոյ և Իսրայել կոչմամբն. պատահեալ ապա Իսաւայ յուղարկէ սիրով:

խբ. Հասեալ Իսրայել ՚ի Սիկիմ ստացաւ զագարակն Եմովրայ հարիւր ոչխարաց:

խգ. ՚ի պատճառս դստերն Յակոբայ թլփատին Սիկիմացիք. և զնախատանաց աղջկանն զվրէժ ՚ի սուր և յաւար վարեցեալք տուժին:

խդ. Ուստի խրախուսեալ Իսրայել յԱստուած՝ որ ա՛հ արկ ՚ի վերայ բնակչաց երկրին, կորուսանէ զսնոտի աստուածսն:

խե. Մխիթարէ Աստուած զԻսրայել վասն Դեբովրայ, և տայ նմա վստահութիւն մեծութեան. ուստի իւղեալ կրկնակի զարձանն՝ Տուն Աստուծոյ կոչէ զտեղին:

խզ. Մերձ յեփրաթա հասեալ՝ դժուարածին եղեալ Յոաքէլի մեռա՛ւ, և անդէն թաղեցաւ:

խէ. Ելանէ Ռոբէն յանկողինս հօրն, ընդ որում խիթայր Յակոբ մինչ ՚ի մահ: Աստ թո՛ւէ զերկոտասան որդիսն Յակոբայ. և թէ մեռաւ Սահակ ՚ի Մամբրէ՝ այն է Քեբրոն:

խը. Ծնունդք Իսաւայ՝ թագաւորք և իշխանք ՚ի նմանէ, որք կորուսին զՔոռեցին ԻԸ ազգ, և ինքեանք բնակեցին ՚ի Սէիր:

խթ. Թէ վասն երազոցն նախանձ կրեալ յեղբարցն Յովսէփ՝ վաճառի յեգիպտոս:

ծ. Չարք գոլով որդիքն Յուդայ մեռան ՚ի Տեառնէ. իսկ Թամարայ յղացեալ ՚ի Յուդայէ ծնանի երկուս:

ծա. Թէ ՚ի վաւաշ տիկնոջէն զրպարտեալ Յովսէփ և մտեալ ՚ի բանտ, մեկնէ զերագս ծառայիցն փարաւոնի:

ծբ. Մեկնէ՛ ապա և զփարաւոնի զերագսն, և իշխանացեալ ժողովէ ցորեան վասն սովոյն. և ծնանի որդիս:

ծգ. Եկին եղբարքն Յովսէփայ զցորեանոյ. և ՚ի կրկին դարձին ծանօթս տուեալ նոցա, յղեաց զհօրէն և զբոլոր տանէն վասն կարեաց սովոյն:

ծդ. Իջեալ Յակոբ յեգիպտոս եւթանասուն և հինգ ոգւով, և օրհնեալ զփարաւոն, ծերատածի ամենայն որդւովքն ՚ի Յովսէփայ:

ծե. Թէ ստացաւ Յովսէփ զերկիրն հանդերձ բնակչօքն փարաւոնի՝ բաց ՚ի քրմացն:

ծզ. Մերձ ՚ի վախճան եղեալ Յակոբայ օրհնէ զորդիսն Յովսէփու. մեծարեալ զկրցերն ՚ի խորհուրդ նորոյս. և զՍիկիմ Յովսէփու սեպիականեալ:

ծէ. Օրհնէ ՚ի ժամ մահուն զորդիսն իւր մարգարէութեամբ. և խնդրէ ՚ի

Յովսեփայ թաղել զինքն 'ի գերեզմանին Աբրահամեանց 'ի Քեբրոն. զոր և արար նմա:

ծը. Մխիթարտ Յովսեփ զկասկած եղբարցն. և ինքն զերիս ծնունդս Եփրեմի տեսեալ, մարգարեանայ վասն ելիցն. ևս և վասն ոսկերաց իւրոց պատուիրեալ վախճանի 'ի փառս Աստուծոյ:

ԾՆՈՒՆՂՔ*

1

Գլուխ Ա

¹Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: ²Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խաւար 'ի վերայ անդնդոց. և Յոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջուրց: ³Եւ ասաց Աստուած. Եղիցի՛ լոյս: Եւ եղև լոյս: ⁴Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի՛ է: Եւ մեկնեաց Աստուած 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին: ⁵Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ, և զխաւարն կոչեաց գիշեր: Եւ եղև երեկոյ՝ և եղև վաղորդայն՝ օր մի: ⁶Եւ ասաց Աստուած. Եղիցի՛ հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնել 'ի մէջ ջուրցդ և ջուրց: Եւ եղև այնպէս: ⁷Եւ արար Աստուած զհաստատութիւնն: Եւ անջրպետեաց Աստուած 'ի մէջ ջրոյն որ 'ի ներքոյ հաստատութեանն, և 'ի մէջ ջրոյն որ 'ի վերոյ հաստատութեանն*: ⁸Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն երկին: Եւ ետես Աստուած զի բարի է: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր երկրորդ*: ⁹Եւ ասաց Աստուած. Ժողովեսցի՛ն ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի, և երևեսցի ցամաքն: Եւ եղև այնպէս. և ժողովեսցան ջուրքն, որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողովս իւրեանց. և երևեսցաւ ցամաքն: ¹⁰Եւ կոչեաց Աստուած զցամաքն երկիր. և զժողովս ջուրցն կոչեաց ծովս: Եւ ետես Աստուած զի բարի է: ¹¹Եւ ասաց Աստուած. Բղխեսցէ՛ երկիր բանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. և ծառ պտղաբեր՝ ամնել պտուղ ըստ ազգի իւրում. որոյ սերմն իւր 'ի նմին ըստ ազգի 'ի նմանութիւն 'ի վերայ երկրի: Եւ եղև այնպէս*: ¹²Եւ եհան երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմն որ է 'ի վերայ ամենայն երկրի. և փայտ պտղաբեր ամնել պտուղ՝ որոյ սերմն իւր 'ի նմին ըստ ազգի 'ի վերայ երկրի: Եւ ետես Աստուած զի բարի է*: ¹³Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր երրորդ: ¹⁴Եւ ասաց Աստուած. Եղիցի՛ն լուսաւորք 'ի հաստատութեան երկնից, 'ի լուսաւորութիւն 'ի վերայ երկրի. և մեկնել 'ի մէջ տուրնջեան, և 'ի մէջ գիշերոյ. և եղիցին 'ի նշանս, և 'ի ժամանակս, և յաւուրս, և 'ի տարիս: ¹⁵Եւ եղիցին 'ի լուսաւորութիւն 'ի հաստատութեան երկնից ծագել յերկիր. և եղև այնպէս: ¹⁶Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ

* Վերնագիր գրոցս Ծննդոց պակասեր յօրինակի մերում. որպէս և յայլս՝ բաց յոմանց որք ունէին՝ Գիրք Ծննդոց, կամ Գիրք Արարածոց: Իսկ մեք առեալ 'ի նշանակելոցն 'ի ստորին կողմ իւրաքանչիւր իջիցն օրինակի մերոյ, եղաք յառաջիկայդ՝ Ծնունդք. համեմատ վերնագրաց այլոց յաջորդ գրոցն:

* Ոմանք. Եւ արար Աստուած զհաստատութիւն. և ան՝.. 'ի մէջ ջրոյն որ էր 'ի ներքոյ:

* Յոմանս պակասի. Երկին. և ետես Աստուած զի բարի է:

* Ի լուսանց մերումս դնի՝ Ջբանջար խոտոյ. համաձայն այլոց 'ի բնաբանի:

* Ոմանք յաւելուն. Սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է 'ի վերայ:

յիշխանութիւն տուրնջեան, և զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ. և զաստեղս: ¹⁷Եւ ե՞ղ զնոսա Աստուած՝ ՚ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր*։ ¹⁸Եւ իշխել տուրնջեան և գիշերոյ, և մեկնել ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին: Եւ ետես Աստուած զի բարի է: ¹⁹Եւ եղև երեկոյ և եղև վաղորդայն, օր չորրորդ: ²⁰Եւ ասաց Աստուած. Զանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թևաւորս ՚ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից: Եւ եղև այնպէս: ²¹Եւ արար Աստուած կէտս մեծամեծս, և զամենայն շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց. և զամենայն թռչունս թևաւորս ըստ ազգի: Եւ ետես Աստուած զի բարի՛ են*։ ²²Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. Աճեցէ՛ք և բազմացարու՛ք և լցէ՛ք զջուրսդ որ ՚ի ծովս. և թռչունքդ բազմացի՛ն ՚ի վերայ երկրի: ²³Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր հինգերորդ: ²⁴Եւ ասաց Աստուած. Զանցէ՛ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և սողունս, և գազանս երկրի ըստ ազգի: Եւ եղև այնպէս: ²⁵Եւ արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի, և զանատունս ըստ ազգի, և զամենայն սողունս երկրի ըստ ազգի իւրեանց: Եւ ետես Աստուած զի բարի՛ են: ²⁶Եւ ասաց Աստուած. Արասցու՛ք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցեն ձկանց ծովու. և թռչնոց երկնից, և անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի*։

Ա ²⁷Եւ արար Աստուած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա. արու և էգ արար զնոսա: ²⁸Եւ օրհնեաց զնոսա Աստուած՝ և ասէ. Աճեցէ՛ք և բազմացարու՛ք և լցէ՛ք զերկիր. և տիրեցէ՛ք դնա. և իշխեսցէ՛ք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամենայն անասնոց. և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի: ²⁹Եւ ասաց Աստուած. Ահաւաղիկ ետու՛ ձեզ զամենայն խոտ սերմանելի՝ սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է ՚ի վերայ ամենայն երկրի. և ամենայն փայտ որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ, ձե՛զ լիցի ՚ի կերակուր*։ ³⁰Եւ ամենայն գազանաց երկրի. և ամենայն թռչնոց երկնից. և ամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի՝ որ ունիցի շունչ կենդանի. և ամենայն խոտ դալար ՚ի կերակուր: Եւ եղև այնպէս: ³¹Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, և ահա բարի՛ են յոյժ: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր վեցերորդ:

2

Գլուխ Բ

¹Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա: ²Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զամենայն զգործս իւր՝ զոր արար: Եւ հանգեալ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար*։ ³Եւ օրհնեաց Աստուած զօրն եւթներորդ, և սրբեաց զնա. զի ՚ի նմա՛ հանգեալ յամենայն

* *Ոմանք.* Լուսատու լինել երկրի:

* *Ոմանք.* Եւ զամենայն թռչուն թևաւոր ըստ ազ՛:

* *Ոսկան.* Եւ իշխեսցէ ձկանց ծովու:

* *Յայլս պակասի.* Սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. որ է ՚ի վերայ: *Այլք.* Եւ զամենայն փայտ որ:

* *Յայլս պակասի.* Վեցերորդի զամենայն զգործս իւր:

գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Աստուած*։ ⁴Այս է զիր արարածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար Աստուած զերկինս և զերկիր*։ ⁵Եւ զամենայն բանջար վայրի՝ մինչև լեալ էր ՚ի վերայ երկրի, և զամենայն խոտ վայրի մինչև բուսեալ էր, զի չև ևս էր տեղացեալ # Տեառն Աստուծոյ ՚ի վերայ երկրի. և մարդ չէր՝ որ գործէր զերկիր*։ ⁶Բայց աղբիւր ելանէր յերկրէ՝ և ոռոգանէր զամենայն երեսս երկրի։ ⁷Եւ ստեղծ # Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի։ ⁸Եւ տնկեաց Աստուած զդրախտն յեդեն ընդ արևելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ*։ ⁹Եւ բուսոյց ևս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ՚ի տեսանել, և քաղցր ՚ի կերակուր. և զծառն կենաց ՚ի մէջ դրախտին, և զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ և չարի։ ¹⁰Եւ գետ ելանէր յեդենայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ՚ի չորս առաջս։ ¹¹Անուն միումն Փիսովն. նա՛ է որ պատէ զամենայն երկիրն Եփլատայ, անդ ուր ոսկին է. ¹²և ոսկի երկրին այնորիկ ազնիւ. և անդ է սուտակն և ակն դահանակ*։ ¹³Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն. նա՛ պատէ զամենայն երկիրն Եթովպացւոց։ ¹⁴Եւ գետն երրորդ՝ Տիգրիս, նա՛ է որ երթայ յանդիման Ասորեստանի։ Եւ գետն չորրորդ Եփրատես։ ¹⁵Եւ ա՛ռ Տէր Աստուած զմարդն զոր արար, և եդ զնա ՚ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել։ ¹⁶Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ՝ և ասէ. Յամենայն ծառոց որ է ՚ի դրախտիդ՝ ուտելով կերիցես, ¹⁷բայց ՚ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի՝ մի՛ ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ՝ մահու՛ մեռանիցիք։ ¹⁸Եւ ասաց Տէր Աստուած. Ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա։ ¹⁹Եւ ստեղծ ևս Տէր Աստուած զամենայն գազանս վայրի, և զամենայն թռչունս երկնից. և ա՛ծ զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա։ Եւ ամենայն շնչոյ կենդանւոյ զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է նորա*։ ²⁰Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց, և ամենայն թռչնոց երկնից, և ամենայն գազանաց վայրի. բայց Ադամայ ո՛չ գտաւ օգնական նման նմա։ ²¹Եւ արկ Տէր Աստուած թմբրութիւն ՚ի վերայ Ադամայ, և ցնջեաց. և ա՛ռ մի ՚ի կողից նորա՝ և ելից ընդ այնր մարմին։ ²²Եւ շինեաց Տէր Աստուած զկողն զոր ա՛ռ յԱդամայ ՚ի կին, և ա՛ծ զնա առ Ադամ։ ²³Եւ ասէ Ադամ. Ա՞յս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմոյ. սա՛ կոչեսցի կին, զի յառնէ՛ իւրմէ առաւ*։ ²⁴Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր՝ և զմայր իւր, և երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ։ ²⁵Եւ եղիցին երկուքն ՚ի մարմին մի։ Եւ էին երկոքեան մերկ՝ Ադամ և կին իւր, և ո՛չ ամաչէին։

3

Գլուխ Գ

* Ոմանք. Զօրն եւթներորդի, և սր՞:

* Ի լուսանց մերումս ՚ի վերայ՝ յաւուր յորում, նշանակի՝ յորժամ եղև։

* Ոմանք. Տեղացեալ Տէր Աստուած ՚ի վերայ երկ՞:

* Ոմանք. Եւ տնկեաց Տէր Աստուած զդրախտն Եդեն ընդ։

* Ոմանք. Եւ անդ է սուտակ և ակն դահ՞: Ուր Ոսկան. և անդ է ակն սուտակ։

* Օրինակ մի. Այն է անուն նոցա։

* Ի լուս՞. ոլորակ բառիս՝ ա՞յս այժմիկ. նշանակի երկարիւ. ա՛յս այժ՞: Ոմանք. Ի մարմնոյ իմմէ։

Բ¹ Եւ օձն էր իմաստնագոյն քան զամենայն զազանս որ ՚ի վերայ երկրի զոր արար Տէր Աստուած: Եւ ասէ օձն ցկինն. Ջի^օ է զի ասաց Աստուած թէ յամենայն ծառոց որ իցեն ՚ի ներքս ՚ի դրախտի այդո՛ւ մի՛ ուտիցէք: ²Եւ ասէ կինն ցօձն. ՚Ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցո՛ւք: ³Բայց ՚ի պտղոյ ծառոյն, որ է ՚ի մէջ դրախտին, ասաց Աստուած՝ մի՛ ուտիցէք ՚ի նմանէ, և մի՛ հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանիցիք: ⁴Եւ ասէ օձն ցկինն. Ո՛չ եթէ մահու մեռանիցիք: ⁵Ձի գիտէր Աստուած թէ յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ, բանայցեն անք ձեր, և լինիցիք իբրև զաստուածս, ճանաչել զբարի՛ և զչար: ⁶Եւ ետես կինն՝ զի բարի՛ էր ծառն ՚ի կերակուր, և հաճո՛յ անցաց հայելոյ, և գեղեցիկ՝ ՚ի տեսանել: Եւ ա՛ն ՚ի պտղոյ նորա, եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և կերան՝: ⁷Եւ բացան անք երկոցունց, և զհտացին զի մե՛րկ էին. և կարեցին տերևս թզենոյ, և արարին իւրեանց սփածանելիս: ⁸Եւ լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ՚ի դրախտի անդ՝ ընդ երեկս, և թաքեան Ադամ և կին իւր յերեսաց Տեառն Աստուծոյ՝ ՚ի մէջ ծառոց դրախտիմ՝: ⁹Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ, և ասէ ցնա. Ո՞ւր ես: ¹⁰Եւ ասէ. Լուայ՛ զձայն քո ՚ի դրախտի աստ՝ և երկեայ. քանզի մե՛րկ էի՝ և թաքեայ: ¹¹Եւ ասէ ցնա. Ո՞ պատմեաց քեզ թէ մե՛րկ ես. բայց եթէ ՚ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ՝ անտի և եթ չուտել, կերա՞ր արդևք ՚ի նմանէ: ¹²Եւ ասէ Ադամ. Կինս զոր ետուր ընդ իս՝ սա՛ ետ ինձ ՚ի ծառոյ անտի և կերայ՝: ¹³Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. # Ձի՞նչ զործեցեր զայդ: Եւ ասէ կինն. Օձն խաբեաց զիս, և կերայ: ¹⁴Եւ ասէ Տէր Աստուած ցօձն. Փոխանակ զի արարեր դու զայն, անիծեալ լիջիր դու յամենայն անասնոց և յամենայն զազանաց երկրի. ՚ի վերայ լանջաց և որովայնի քոյ գնացես, և հո՛ղ կերիցես զամենայն աւուրս կենաց քոց: ¹⁵Եւ եդից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ, և ՚ի մէջ զաւակի քոյ և ՚ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քո՛ւմ գլխոյ, և դու սպասեսցես նորա՛ զարշապարի: ¹⁶Եւ ցկինն ասէ. Բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո և զհեծութիւնս քո. տրտմութեամբ ծնցես որդիս. և առ այր քո դարձ քո, և նա՛ տիրեսցէ քեզ: ¹⁷Եւ ցԱդամ ասէ. Փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ, և կերար ՚ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, և կերար ՚ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո. տրտմութեամբ կերիցես գնա զամենայն աւուրս կենաց քոց: ¹⁸Փո՛ւշ և տատասկ բուսուցէ՛ քեզ. և կերիցես զբանջար վայրի: ¹⁹Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր և ՚ի հող դարձցիս: ²⁰Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա՛ է մայր ամենայն կենդանեաց: ²¹Եւ արար Տէր Աստուած Ադամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս, և զգեցո՛յց զնոսա: ²²Եւ ասէ Տէր Աստուած. Ահա Ադամ եղև իբրև զմի ՚ի մէջ՝ զիտել զբարի և զչար: Եւ արդ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ՚ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան: ²³Եւ եհան արձակեաց գնա Տէր Աստուած ՚ի դրախտէ անտի փափկութեան՝ զործել՝ զերկիր ուստի առաւ: ²⁴Եւ եհան զԱդամ, և բնակեցո՛յց յանդիման դրախտին փափկութեան. և հրամայեաց քերոբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց:

* Ոմանք. ՚Ի պտղոյ նորա և եկեր:

* Ոմանք. Ջձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ՚ի դր՞: և օրինակ մի. զձայն գալոյ:

* Ոմանք. Անտի միայն չուտել, կերա՞ր:

* Այլք. Եւ արար Աստուած Ադամայ:

Գլուխ Դ

Գ ¹Եմո՛ւտ Ադամ առ Եւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ զԿային. և ասէ. Ստացա՛յ մարդ Աստուծո՛վ*։ ²Եւ յաւել ծնանել զեղբայր նորա զՅաբէլ։ Եւ եղև Յաբէլ հովիւ խաշանց, և Կային գործէր զերկիր։ ³Եւ եղև յետ աւուրց՝ եբեր Կային ՚ի պտղոյ երկրի պատարա՛գ Աստուծոյ*։ ⁴Ա՛ծ և Յաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և ՚ի պարարտաց նոցա։ Եւ հայեցաւ Աստուած յԱբէլ և ՚ի պատարագս նորա*։ ⁵Եւ ՚ի Կային և ՚ի զոհս նորա ո՛չ նայեցաւ։ Եւ տրտմեցաւ Կային յոյժ, և խոնարհեցան անկան երեսք իւր*։ ⁶Եւ ասէ Տէր Աստուած ցԿային. Ընդէ՞ր տրտմեցար, կամ ընդէ՞ր խոնարհեցան անկան երեսք քո։ ⁷Ո՛չ ապաքէն եթէ ուղիղ մատուցանես, և ուղիղ ո՛չ բաժանես՝ մեղա՛ր. լո՛ւռ լեր, առ քե՛զ լիցի դա՛րձ նորա, և դո՛ւ տիրեսցես նմա։ ⁸Եւ ասէ Կային ցՅաբէլ եղբայր իւր. Եկ երթիցուք ՚ի դաշտ։ Եւ եղև իբրև չոզան ՚ի դաշտ անդր, յարեաւ Կային ՚ի վերայ Աբիլի եղբոր իւրոյ և սպան զնա։ ⁹Եւ ասէ Տէր Աստուած ցԿային. Ո՞ւր է Յաբէլ եղբայր քո։ Եւ նա ասէ. Չգիտեմ. միթէ պահապա՞ն իցեմ եղբորն իմոյ*։ ¹⁰Եւ ասէ Աստուած. Չի՞նչ գործեցեր զայդ. գոչունն արեան եղբոր քո բողոքէ՛ առ իս յերկրէ։ ¹¹Եւ արդ՝ անիծեալ լիջիր դու ՚ի վերայ երկրի, որ եբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբոր քոյ ՚ի ձեռաց քոց։ ¹²Ձի գործիցես զերկիր՝ և ո՛չ յաւելցէ տալ քեզ զգորուքիւն իւր. երերեալ և տատանեալ եղիցես ՚ի վերայ երկրի*։ ¹³Եւ ասէ Կային ցՏէր Աստուած. Մե՛ծ է պատիժ իմ քան զթողուլդ զիս։ ¹⁴Եթէ հանես զիս այսօր յերեսաց երկրէ, և յերեսաց քոց թաքեայց. և լինիցիմ երերեալ և տատանեալ յերկրի. և եղիցի ամենայն որ գտանիցէ զիս՝ սպանցէ՛ զիս։ ¹⁵Եւ ասէ ցնա Տէր Աստուած. Ո՛չ այդպէս։ Ամենայն որ սպանանէ զԿային, եւթն վրէժս լուծցէ։ Եւ եդ Տէր Աստուած նշան ՚ի Կային՝ չսպանանել զնա ամենայնի որ գտանիցէ զնա։ ¹⁶Եւ ել Կային յերեսաց Աստուծոյ. և բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման Եդեմայ*։ ¹⁷Եմո՛ւտ Կային առ կին իւր, և յղացաւ և ծնաւ զԵնոք։ Եւ շինէր քաղաք, և դնէր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ Ենոքայ*։ ¹⁸Եւ եղև որդի Ենոքայ Գայերիդադ։ Եւ Գայերիդադ ծնաւ զՄայիէլ։ Եւ Մայիէլ ծնաւ զՄաթուսաղա։ Եւ Մաթուսաղա ծնաւ զՂամէք։ ¹⁹Եւ ա՛ռ իւր Ղամէք երկուս կանայս. անուն միունն Ադդա, և անուն երկրորդին Սէլլա։ ²⁰Եւ ծնաւ Ադդա զՅովբէլ. նա՛ է հայր այնոցիկ որ բնակեալ են ՚ի վրանս խաշնարածաց։ ²¹Եւ անուն եղբոր նորա Յովբադ։ Նա՛ է հայր՝ որ եցոյց զերգս և զքնարս*։ ²²Եւ Սէլլա ծնաւ զԹոբէլ, և էր ճարտարապետ դարբին՝ պղնձոյ և երկաթոյ. և քոյր Թովբելայ Նոյեմայ*։ ²³Եւ ասէ Ղամէք ցկանայս իւր ցԱդդա և ցՍէլլա. Լուարո՛ւք ձայնի իմուն կանայք Ղամէքայ, և ո՛ւնկն դիք բանից իմոց. զի այր սպանի ՚ի

* Ոմանք. Եւ Եմուտ Ադամ.. և յղացաւ ծնաւ։

* Ոմանք. ՚ի պտղոյ երկրին պատարագ։

* Ոմանք. Յայեցաւ Աստուած ՚ի Յաբէլ և ՚ի։

* Ոմանք. Ոչ հայեցաւ... անկան երեսք նորա։

* Ոմանք յաւելուն. Պահապա՞ն իցեմ ես եղբոր իմոյ։

* Այլք. Ձի գործեցես։

* Ոսկան. Յերեսաց Տեառն։

* Ոմանք. Եւ Եմուտ Կային.. և շինէ քաղաք։ Յայլս պակասի. Որդւոյ իւրոյ Ենոքայ։

* Ոսկան. Նա էր հայր որ։

* Ոմանք. Եւ քոյր Թովբելայ Նեեմայ։

վէրս ինձ, և երիտասարդ՝ ՚ի հարուածս ինձ: ²⁴Ձի թէ եւթն անգամ վրէժք խնդրիցին ՚ի Կայենէ. ապա և ՚ի Ղամեքայ եւթանասնեկին եւթն*:

Դ ²⁵Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ որդի. և անուանեաց զանուն նորա Սէթ #. ասէ. Ձի յարոյց ինձ Աստուած զաւակ այլ փոխանակ Զաբիլի զոր սպանն Կային*:

²⁶Եւ Սեթայ եղև որդի, և անուանեաց զանուն նորա Էնո՛վս. նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ:

5

Գլուխ Ե

¹Այս է գիր արարածոց մարդկան. յաւուր յորում արար Աստուած զԱդամ. ըստ պատկերի՝ Աստուծոյ ստեղծ զնա. ²արու և էգ արար զնոսա, և օրհնեաց զնոսա. և անուանեաց զանուն նոցա Ադամ, յաւուր յորում արար զնոսա: ³Եկեաց Ադամ ամս երկերի՛ւր և երեսուն. և ծնաւ ըստ կերպարանաց իւրոց և ըստ պատկերի իւրում. և անուանեաց զանուն նորա Սէթ*:

⁴Եւ եղեն աւուրք Ադամայ յետ ծնանելոյ նորա զՍէթ՝ ամք եւթնհարկր. և ծնաւ ուստերս և դստերս*:

⁵Եւ եղեն ամենայն աւուրք Ադամայ զորս եկեաց, ամք ինն հարկր և երեսուն, և մեռաւ: ⁶Եւ եկեաց Սէթ ամս երկերի՛ւր և հինգ, և ծնաւ զԵնովս: ⁷Եւ եկեաց Սէթ յետ ծնանելոյ նորա զԵնովս՝ ամս եւթնհարկր և եւթն. և ծնաւ ուստերս և դստերս: ⁸Եւ եղեն ամենայն աւուրք Սէթայ, ամք ինն հարկր և երկոտասան, և մեռաւ: ⁹Եւ եկեաց Ենովս ամս հարկր և իննըսուն, և ծնաւ զԿայնայն: ¹⁰Եւ եկեաց Ենովս յետ ծնանելոյ նորա զԿայնայն՝ ամս եւթնհարկր և տասն և հինգ, և ծնաւ ուստերս և դստերս*:

¹¹Եւ եղեն ամենայն աւուրք Ենովսայ՝ ամք ինն հարկր և հինգ, և մեռաւ: ¹²Եւ եկեաց Կայնայն ամս հարկր և եւթանասուն, և ծնաւ զՄադադայէլ*:

¹³Եւ եկեաց Կայնայն յետ ծնանելոյ նորա զՄադադայէլ, ամս եւթնհարկր և քառասուն, և ծնաւ ուստերս և դստերս*:

¹⁴Եւ եղեն ամենայն աւուրք Կայնայնայ՝ ամք ինն հարկր և տասն, և մեռաւ: ¹⁵Եւ եկեաց Մադադայէլ ամս հարկր և վաթսո՛ւն և հինգ, և ծնաւ զՅարեդ: ¹⁶Եւ եկեաց Մադադայէլ յետ ծնանելոյ նորա զՅարեդ՝ ամս եւթնհարկր և երեսուն. և ծնաւ ուստերս և դստերս: ¹⁷Եւ եղեն ամենայն աւուրք Մադադայէլի՝ ամք ութ հարկր և իննսուն և հինգ, և մեռաւ: ¹⁸Եւ եկեաց Յարեդ ամս հարկր և վաթսուն և երկու, և ծնաւ զԵնոք: ¹⁹Եւ եկեաց Յարեդ յետ ծնանելոյ նորա զԵնոք՝ ամս ութ հարկր. և ծնաւ ուստերս և դստերս: ²⁰Եւ եղեն ամենայն աւուրք Յարեդի՝ ամք ինն հարկր վաթսուն և երկուք, և մեռաւ: ²¹Եւ եկեաց Ենոք ամս հարկր վաթսուն և հինգ, և ծնաւ զՄաթուսադա: ²²Եւ հաճո՛յ եղև Ենոք Աստուծոյ յետ ծնանելոյ նորա զՄաթուսադա՝ ամս երկերիւր: Եւ ծնաւ ուստերս և դստերս*:

²³Եւ եղեն ամենայն աւուրք Ենոքայ՝

* Ոմանք. Ապա և ՚ի Ղամեքէ:

* Ոմանք. Եւ Եմուտ Ադամ:

* Ոմանք. Եւ ծնաւ որդի ըստ կերպարանի և ըստ պատկերի իւ՛ր:

* Ոմանք. ՉՍէթ ամս եւթն հարիւր: Ուր Ոսկան. ՉՍէթ՝ ամք ութն հարիւր:

* Այլք. Եւթն հարիւր և հնգետասան:

* Ոմանք. ՉՄադադիէլ:

* Ոմանք. ՉՄադադիէլ:

* Երկու օրհնակք և եթ համաձայնք իրերաց՝ աստէն յաւելուն. Յետ ծնանելոյ նորա զՄաթուսադայ, և եկաց Ենովք ամս երկերիւր:

ամբ Երեք հարկը և վաթսուը և հինգ: ²⁴Եւ հաճո՛յ եղև Ենոք Աստուծոյ. և ո՛չ ուրեք գտանէր, զի փոխեա՛ց զնա Աստուած: ²⁵Եւ եկեաց Մաթուսաղա ամս հարիւր ութսուն և եւթն, և ծնաւ զՂամէք: ²⁶Եւ եկեաց Մաթուսաղա յետ ծնանելոյ նորա զՂամէք՝ ամս եւթնհարկը ութսուն և երկու. և ծնաւ ուստերս և դստերս*: ²⁷Եւ եղեն ամենայն աւուրք Մաթուսաղայի զորս եկեաց, ամբ իննհարկը վաթսուն և ինն, և մեռաւ: ²⁸Եւ եկեաց Ղամէք ամս հարկը ութսուն և ութ. և ծնաւ որդի. ²⁹և անուանեաց զանուն նորա Նո՛յ. ասէ՛ սա՛ հանգուցէ զմեզ ՚ի գործոց մերոց և ՚ի տրտմութեանց ձեռաց մերոց, և յերկրէ զոր անեծ Տէր Աստուած: ³⁰Եւ եկեաց Ղամէք յետ ծնանելոյ նորա զՆոյ՝ ամս հինգհարկը և վաթսուն և հինգ, և ծնաւ ուստերս և դստերս: ³¹Եւ եղեն ամենայն աւուրք Ղամէքայ՝ ամբ եւթն հարիւր յիսուն և երեք, և մեռաւ: ³²Եւ էր Նոյ ամաց հինգ հարիւրից, և ծնաւ Նոյ երիս որդիս. զՍէմ, զՔամ, և զՅաբէք*:

6

Գլուխ Զ

¹Եւ եղև իբրև սկսաւ մարդիկն բազմանալ ՚ի վերայ երկրի. և դստերք ծնան նոցա*: ²Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: ³Եւ ասէ Տէր Աստուած. Մի՛ մնասցէ ոգի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան. վասն լինելոյ դոցա մարմին: Եւ եղիցին աւուրք դոցա ամբ հարիւր քսան: ⁴Եւ սկայք էին ՚ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ: Եւ յետ այնորիկ իբրև մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերսն մարդկան, և ծնան իւրեանց որդիս. նոքա էին սկայքն որ յաւիտեանից ա՛րք անուանիք*: ⁵Եւ իբրև ետես Տէր Աստուած եթ բազմացան չարիք մարդկան ՚ի վերայ երկրի. և ամենայն ոք խորհէր ՚ի սրտի իւրում խնամո՛ւ վ ՚ի չարիս զամենայն աւուրս: ⁶Եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ՚ի վերայ երկրի. և մտախո՛հ եղև ՚ի սրտի իւրում: ⁷Եւ ասէ Տէր Աստուած. Ձնջեցի՛ց զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրի, ՚ի մարդոյ մինչև յանասուն. և ՚ի սողնոց մինչև ՚ի թռչունս երկնից. զի բարկացայ՝ զի արարի զնոսա*: ⁸Բայց Նոյ եզիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ:

Ե ⁹Եւ այս են ծնունդք Նոյի: Նոյ՝ ա՛յր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում. և հաճո՛յ եղև Նոյ Աստուծոյ: ¹⁰Եւ ծնաւ Նոյ երիս որդիս. զՍէմ, զՔամ, զՅաբէք: ¹¹Եւ ապականեցաւ երկիր առաջի Աստուծոյ, և լցաւ երկիր անիրաւութեամբք: ¹²Եւ ետես Տէր Աստուած զերկիր, և էր ապականեալ. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ՚ի վերայ երկրի: ¹³Եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ. Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ. զի լցաւ երկիր անիրաւութեամբք ՚ի նոցանէ. և ահա ես ապականեցի՛ց զնոսա՛ և զերկիր: ¹⁴Արդ՝ արա՛ դու քեզ տապան ՚ի չորեքկուսի փայտից, խո՛րշս խորշս գործեսցես զտապանն. և նաւի՛ւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ: ¹⁵Եւ այսպէս

* *Ի լուս՝* ՚ի եւթն հարկը ութսուն և եր՛, *նշանակի՝* ՊԲ. այսինքն՝ ութ հարիւր երկու. *համաձայն ոմանց՝ ՚ի բնաբ՝*:

* *Ոսկան.* Ամաց հինգ հարիւրոց:

* *Ոսկան.* Իբրև սկսան մար՛:

* *Ոսկան.* Հսկայք էին ՚ի վերայ եր՛:

* *Ոսկան.* Ձնջեցից զմարդն զոր արարի: *Ոմանք.* Ձոր արարի յերեսաց երկրէ:

արասցես զտապանն. յերեքհարկր կանգնոյ զերկայնութիւն տապանին, և ՚ի յիսուն կանգնոյ զլայնութիւնն, և յերեսուն կանգնոյ զբարձրութիւնն: ¹⁶Քաղելով գործեսցես զտապանն, և ՚ի մի՛ կանգուն կատարեսցես զնա ՚ի վերուստ. և զդուրս տապանին ՚ի կողմանէ՛ արասցես: Ներքնատունս և միջնատունս. և վերնատունս գործեսցես ՚ի նմա*։ ¹⁷Եւ ահա ես ածից ջրհեղեղ ջրոյ ՚ի վերայ երկրի, ապականել՛ զամենայն մարմին յորում է շունչ կենդանի ՚ի ներքոյ երկնից. և ինչ որ իցէ ՚ի վերայ երկրի՝ սատակեսցի: ¹⁸Եւ եղից զուխտ իմ ընդ քեզ. և մտցես ՚ի տապանն. դու՛ և որդիք քո, և կին քո, և կանայք որդւոց քոց ընդ քեզ: ¹⁹Եւ յամենայն անասնոց և յամենայն գազանաց և յամենայն մարմնոյ. երկու երկու յամենայնէ մուծցես ՚ի տապանն բուծանել ընդ քեզ. արու և էգ լինիցին: ²⁰Յամենայն հաւուց թռչնոց ըստ ազգի, և յամենայն անասնոց ըստ ազգի. և յամենայն սողնոց երկրի ըստ ազգի իւրեանց. երկու՛ երկու յամենայնէ մտանիցեն առ քեզ կերակրել ընդ քեզ արո՛ւ և էգ*։ ²¹Եւ դու առնուցուս քեզ յամենայն կերակրոց զոր ուտիցէք, և ժողովեսցես դու առ քեզ. և եղիցի քե՛զ և նոցա կերակուր*։ ²²Եւ արար Նոյ զամենայն զոր պատուիրեաց նմա Տէր Աստուած. նոյնպէս և արար*։

7

Գլուխ Է

¹Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ. Մուտ դու և ամենայն տուն քո ՚ի տապանդ. զի զքե՛զ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ՝ #: ²Եւ յամենայն անասնոց սրբոց մո՛յծ ընդ քեզ եւթն եւթն արո՛ւ և էգ, և յամենայն անասնոց որ ո՛չ են սուրբ, երկու՛ս երկուս արու և էգ: ³Եւ ՚ի թռչնոց երկնից սրբոց՝ եւթն եւթն արու և էգ. և ՚ի թռչնոց որ ո՛չ սուրբ են՝ երկու երկու արո՛ւ և էգ, բուծանել զաւակ ՚ի վերայ ամենայն երկրի: ⁴Եւ այլևս եւթն օր, և ածից ես անձրև ՚ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և ջնջեցի՛ց զամենայն հասակ զոր արարի յերեսաց՝ երկրի: ⁵Եւ արար Նոյ զամենայն, զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած: ⁶Նոյ՛ էր ամաց վեց հարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև ՚ի վերայ երկրի: ⁷Եւ եմուտ Նոյ և որդիք իւր, և կին նորա, և կանայք որդւոց նորա ընդ նմա ՚ի տապանն վասն ջուրցն հեղեղի: ⁸Եւ ՚ի թռչնոց սրբոց, և ՚ի թռչնոց որ ո՛չ սուրբ էին. և յամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի*, ⁹երկու երկու մտին առ Նոյ ՚ի տապան անդր՝ արու և էգ, որպէս պատուիրեաց նմա Տէր Աստուած*։ ¹⁰Եւ եղև յետ եւթն աւուր, և ջուր ջրհեղեղին եղև ՚ի վերայ երկրի: ¹¹Յամին վեցհարիւրորդի կենացն Նոյի. յեւթներորդում ամսեանն ՚ի քսան և եւթն ամսոյն. և պատառեցան ամենայն աղբիւրք անդնոց # բազմաց. և սահանք երկնից

* *Յօրինակին պակասէր.* Կատարեսցես զնա՛ ՚ի վերուստ: *Ոմանք.* Եւ միջատունս:

* *Ոսկան.* Մտանիցեն առ քեզ զի կեցցեն: Եւ դու:

* *Ոսկան.* Մտանիցեն առ քեզ զի կեցցեն: Եւ դու:

* *Ոմանք.* Ջոր միանգամ պատուիրեաց նմա:

* *Ոմանք.* Եւ ասէ Աստուած ցնոյ:

* *Ոմանք յաւելուն.* Որ ո՛չ սուրբ էին և յանասնոց սրբոցն, և յանասնոց որ ո՛չ սուրբ են. և յամենայն սողնոց:

* *Ոմանք.* Մտին առ Նոյ ՚ի տապանն անդ:

բացան*։ ¹²Եւ եղև անծրև 'ի վերայ երկրի զքառասուն տիւ, և զքառասուն գիշեր։
¹³Յաւուր յայնմիկ եմուտ Նոյ. Սէմ, Քամ, Յաբեթ. որդիք Նոյի, և կին Նոյի, և երեք
կանայք որդւոց նորա ընդ նմա 'ի տապան անդր։ ¹⁴Նոբա և ամենայն գազանք
ըստ ազգի, և ամենայն անասուն ըստ ազգի իւրեանց, և ամենայն սողուն
շարժուն 'ի վերայ երկրի ըստ ազգի իւրեանց։ Եւ ամենայն հաւ թռչուն ըստ
ազգի իւրում*, ¹⁵մտին առ Նոյ 'ի տապան անդր երկու երկու յամենայն մարմնոյ
յորում է շունչ կենդանի*։ ¹⁶Եւ որ մտանէինն՝ արու և էջ յամենայն մարմնոյ
մտանէին, որպէս պատուիրեաց Աստուած Նոյի։ ¹⁷Եւ փակեաց Տէր Աստուած
արտաքոյ նորա զտապանն։ Եւ եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն
գիշեր 'ի վերայ երկրի։ Եւ բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն. և
բարձրացաւ յերկրէ։ ¹⁸Եւ զօրանայր ջուրն և բազմանայր յոյժ 'ի վերայ երկրի։ Եւ
շրջէր տապանն 'ի վերայ ջրոց։ ¹⁹Եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ 'ի վերայ
երկրի և ծածկէր զամենայն լերինս բարձունս որ էին 'ի ներքոյ երկնից։
²⁰Յնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն 'ի վեր. և ծածկեաց զամենայն
լերինս։ ²¹Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն 'ի վերայ երկրի, թռչնոց և
անասնոց և գազանաց. և ամենայն սողուն զեռուն 'ի վերայ երկրի, և ամենայն
մարդ։ ²²Եւ ամենայն որ ունէր շունչ կենդանի յըռնգունս իւր. և ամենայն որ ինչ
էր 'ի վերայ ցամաքի մեռաւ։ ²³Եւ ջնջեաց զամենայն հասակ որ էր 'ի վերայ
երեսաց երկրի, 'ի մարդոյ մինչև յանասուն. 'ի սողնոց մինչև 'ի թռչունս երկնից.
և ջնջեցան յերկրէ։ Եւ մնաց միայն Նոյ և որ ընդ նմա էին 'ի տապանի անդ*։ ²⁴Եւ
բարձրացաւ ջուրն 'ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն։

8

Գլուխ Ը

¹Եւ յիշեաց Աստուած զՆոյ և զամենայն գազանս, և զամենայն անասունս, և
զամենայն թռչունս որ էին ընդ նմա 'ի տապանի անդ. և ած Աստուած հողմ 'ի
վերայ երկրի, և դադարեաց ջուրն։ ²Եւ խցան աղբիւրք անդընդոց, և սահանք
երկնից. և արգելաւ անծրև յերկնից։ ³Եւ զիջանէր տակաւ, երթայր ջուրն և
թուլանայր յերկրէ և նուազէր ջուրն յետ հարիւր և յիսուն աւուր*։ ⁴Եւ նստաւ
տապանն յելթներորդում ամսեանն 'ի քսան և եւթն ամսոյն 'ի լերինս
Արարատայ*։ ⁵Եւ ջուրն երթայր և նուազէր մինչև 'ի տասներորդ ամիսն։ Իսկ
յամսեանն մետասաներորդի, որ օր առաջին էր ամսոյն՝ երևեցան գլուխք
լերանց։ ⁶Եւ եղև յետ քառասուն աւուր երաց Նոյ զպատուհան տապանին զոր
արար։ ⁷Եւ արձակեաց զազաւն, և ել. և անդրէն ո՛չ դարձաւ մինչև ցամաքել
ջրոյն յերկրէ*։ ⁸Եւ արձակեաց զաղաւնին զհետ նորա տեսանել թէ ցածուցեա՞լ

* Ոսկան. Յերկրորդում ամսեանն 'ի քսան և։

* Ոմանք. Սողուն շարժուն ըստ ազգի իւրեանց 'ի վերայ։ *Յօրինակին պակասէր.* Եւ ամենայն *հաւ* թռչուն։

* Ոսկան. Յորում էր շունչ կեն։

* Այլք. Եւ 'ի սողնոց մինչև։

* Ոսկան. Եւ թողանայր յերկրէ։

* Ոմանք. 'ի լերինս Արարատայ։ և ոմանք. Արարատայ։

* Այլք. Մինչև ցցամաքել ջրոյն։

իցէ ջուրն յերեսաց երկրի*։ ⁹Եւ չգտեալ աղաւնւոյն հանգիստ ոտից իւրոց՝ դարձաւ անդրէն առ նա՝ ՚ի տապան անդր. զի ջուր դեռ ունէր զամենայն երեսս երկրի։ Եւ ձգեաց զձեռն և ընկալաւ զնա, և առ զնա անդրէն առ իւր՝ ՚ի տապան անդր*։ ¹⁰Եւ դադարեաց ևս աւուրս եւթն, և դարձաւ արծակեաց զաղաւնին ՚ի տապանէ անտի*։ ¹¹Եւ դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս, և ունէր տերև ձիթենւոյ շիղ՝ ՚ի բերան իւրում. և գիտաց Նոյ, թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ*։ ¹²Եւ դադարեաց աւուրս եւթն ևս, և դարձեալ արծակեաց զաղաւնին։ Եւ ո՛չ ևս յաւելաւ դառնալ առ նա*։ ¹³Եւ եղև ՚ի վեցհարիւրորդի և ՚ի միո՛ւմ ամի կենաց Նոյի, յամսեանն առաջնում որ օր մի էր ամսոյն, նուազեաց ջուրն յերեսաց երկրի։ Եւ եբաց Նոյ զձեղուն տապանին զոր արար #։ Եւ ետես զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի*։ ¹⁴Իսկ յամսեանն եւթներորդի, որ օր քսան և եւթն էր ամսոյն՝ ցամաքեցաւ երկիր*։ ¹⁵Եւ խօսեցաւ Տէր Աստուած ընդ Նոյի և ասէ. ¹⁶Ե՛լ ՚ի տապանէ այտի, դու և կին քո, և որդիք քո, և կանայք որդւոց քոց ընդ քեզ։ ¹⁷Եւ ամենայն զազանք որ են ընդ քեզ, և ամենայն մարմին ՚ի թռչնոց մինչև ցանասունս. և զամենայն սողո՛ւն զեռուն երկրի հա՛ն ընդ քեզ, և զեռասցեն ՚ի վերայ երկրի։ Եւ աճեցէ՛ք և բազմացարուք ՚ի վերայ երկրի։ ¹⁸Եւ ե՛լ Նոյ. և կին նորա և որդիք նորա, և կանայք որդւոց նորա ընդ նմա։ ¹⁹Եւ ամենայն զազան, և ամենայն սողո՛ւն շարժուն, և ամենայն թռչուն յերկրէ ըստ ազգի իւրեանց, ելին ՚ի տապանէ անտի։

Ձ ²⁰Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ։ Եւ առ յամենայն անասնոց սրբոց, և յամենայն թռչնոց սրբոց, և եհան ողջակէզ ՚ի վերայ սեղանոյն*։ ²¹Եւ հոտոտեցաւ Տէր Աստուած ՚ի հոտ անուշից։ Եւ ասէ Տէր Աստուած, ածեալ զմտաւ. ո՛չ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Ձի միտք մարդկան հաստատեալ են ՚ի խնամս չարի ՚ի մանկութենէ իւրմէ։ Արդ՝ ո՛չ ևս յաւելից հարկանել զամենայն մարմին կենդանի որպէս արարի*։ ²²Այսուհետև զամենայն աւուրս երկրի՝ սե՛րմն և հուճնք, ցո՛ւրտ և տօթ, ամա՛ռն և զարուն, զտիւ և զգիշեր մի՛ դադարեցեն։

9

Գլուխ Թ

¹Եւ օրինեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա. և ասէ ցնոսա. Աճեցէ՛ք և բազմացարուք և լցէ՛ք զերկիր և տիրեցէ՛ք դմա։ ²Եւ ա՛հ և երկիւղ ձեր եղիցի ՚ի վերայ ամենայն զազանաց երկրի. և ՚ի վերայ ամենայն թռչնոց երկնից, և ՚ի վերայ ամենայն զեռնոց երկրի, և ՚ի վերայ ամենայն ձկանց ծովու. զորս ընդ ձեռա՛մբ ձերով ետու։ ³Եւ ամենայն զեռուն որ է կենդանի, ձե՛զ լիցի ՚ի

* Ոմանք. Յերեսաց երկրէ։

* Ոմանք. Անդրէն առ Նոյ ՚ի տա՛ւ. և ձգեաց զձեռն իւր և ընկա՛ւ։

* Ոմանք. Եւ դարձեալ արծակեաց։

* Ոմանք. Շիւղ ՚ի բերանի իւրում։

* Ոմանք. Եւ ո՛չ ևս յաւել դառ՛։

* Ոմանք. Եւ եղև յետ վեցհարիւրորդի և... յերեսաց երկրէ։

* Ոմանք. Իսկ յամսեանն երկրորդի։

* Ոմանք. Եւ եհան ողջակէզս ՚ի վերայ սեղանոյն։

* Ոմանք. Ձի միտք մարդոյ հաստատեալ են։

կերակուր. իբրև զբանջար խոտոյ ետո՛ւ ձեզ զամենայն: ⁴Բայց զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: ⁵Քանզի և զձե՛ր արիւն շնչոյ խնդրեցից, ՚ի ձեռաց ամենայն գազանաց խնդրեցից զնա, և ՚ի ձեռաց մարդոյ. ՚ի ձեռաց առն զշունչ արեան եղբօր իւրոյ խնդրեցից՝: ⁶Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի՛ արիւն նորա: Չի՛ ՚ի պատկե՛ր Աստուծոյ արարի ես զմարդն: ⁷Այլ դուք աճեցէ՛ք և բազմացարո՛ւք՝ և լցէ՛ք զերկիր, և բազմացարո՛ւք ՚ի վերայ դորա: ⁸Եւ խօսեցա՛ւ Տէր Աստուած ընդ Նոյի, և ընդ որդիս նորա որ ընդ նմա էին՝ և ասէ. ⁹Եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ, և ընդ զաւակի ձերում յետ ձեր: ¹⁰Եւ ընդ ամենայն շնչոյ կենդանւոյ որ ընդ ձե՛զ են, ՚ի թռչնոց և յանասնոց և յամենայն գազանաց երկրի # որ ընդ ձեզ. և յամենեցունց որ ելին ՚ի տապանէ անտի, և ամենայն անասնոց երկրի: ¹¹Եւ հաստատեցի՛ց զուխտ իմ ընդ ձեզ. և ո՛չ ևս մեռանիցի ամենայն մարմին ՚ի ջրհեղեղէ. և ո՛չ ևս եղիցի ջրհեղեղ ջուրց ապականել զամենայն երկիր՝: ¹²Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ. Այս է նշան ուխտին զոր ես տաց ընդ իս և ընդ ձեզ, և ՚ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ որ է՛ ընդ ձեզ, յազգս յաւիտենից՝: ¹³Ձաղեղն իմ եղից յամպս, և եղիցի ՚ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր՝: ¹⁴Եւ եղիցի ՚ի գումարել ինձ զամպս ՚ի վերայ երկրի, երևեսցի աղեղն իմ յամպս: ¹⁵Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդ իս և ընդ ձեզ, և ՚ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ յամենայն մարմին. և ո՛չ ևս եղիցի ջրհեղեղ ՚ի սատակել զամենայն մարմին: ¹⁶Եւ եղիցի աղեղն իմ յամպս. և տեսից, յիշե՛լ զուխտն յաւիտենական ՚ի մէջ իմ և ՚ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ յամենայն մարմնի որ է ՚ի վերայ երկրի՝: ¹⁷Եւ ասէ Աստուած ցնոյ. Այս է նշան ուխտին զոր ուխտեցի ես ընդ իս և ընդ ձեզ, և ՚ի մէջ ամենայն մարմնոյ որ է ՚ի վերայ երկրի՝: ¹⁸Եւ էին որդիք Նոյի որ ելին ՚ի տապանէ անտի. Սեմ, Քամ, Յաբեթ. Քամ էր հա՛յր Քանանու: ¹⁹Երեք տոբա էին որդիք Նոյի, և ՚ի նոցանէ՛ սփռեցան ընդ ամենայն երկիր:

Է ²⁰Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ զերկիր գործել. և տնկեաց այգի՛: ²¹Եւ արբ ՚ի գինւոյն և արբեցաւ. և մերկացա՛ւ ՚ի տան իւրում: ²²Եւ ետե՛ս Քամ հայր Քանանու զմերկութիւն հօր իւրոյ, և ել պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ: ²³Եւ առեալ Սեմա՛յ և Յաբեթի հանդերձ, եղին ՚ի վերայ թիկանց երկոցուն, և գնացին յետս յետս, և ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց. և զերեսս իւրեանց յետս ընդդէմ ունէին, և զմերկութիւն հօրն իւրեանց ո՛չ տեսին: ²⁴Եւ սթափեցա՛ւ Նոյ ՚ի գինւոյ անտի իւրմէ, և գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր՝: ²⁵Եւ ասէ. Անիծեալ Քանան մանուկ, և եղիցի ծառայ եղբարց իւրոց: ²⁶Եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած, Աստուած Սեմայ, և եղիցի Քանան ծառայ նորա: ²⁷Ընդարձակեսցէ՛ Աստուած Յաբեթի, և բնակեսցէ ՚ի տան Սեմայ. և եղիցի Քանան ծառայ նոցա: ²⁸Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին՝ ամս երեքհարիւր յիսուն: ²⁹Եւ եղեն ամենայն աւուրք Նոյի, ամբ իննհարկր և յիսուն. և մեռաւ:

* Ոմանք. Ջշունչ եղբօր իւրոյ խնդրեցից:

* Ոմանք. Եւ ո՛չ ևս մեռցի ամենայն:

* Ոմանք յաւելուն. Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ և ցորդիս նորա, այս է:

* Ոմանք. Եւ եղիցին նշանակ յա՛:

* Ոմանք. Յամենայն մարմնոյ որ է ՚ի վերայ եր՛:

* Ոմանք. Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ:

* Ոմանք. Ջինչ արար ընդ նմա որդին իւր:

Գլուխ Ժ

Ը ¹Եւ այս են ծնունդք որդւոցն Նոյի. Սէն, Քամ, Յաբեթ. և ծնան նոցա որդիք յետ ջրհեղեղին: ²Որդիք Յաբեթի. Գամեր, և Մագովգ, և Մադա, և Յաւան, և Ելիսա, և Թոբէլ, և Մոսոք, և Թիրաս: ³Եւ որդիք Գամերայ՝ Ասքանա՛զ. և Ռիփաթ, և Թորգոնա՛: ⁴Եւ որդիք Յաւանայ՝ Եղիսա և Թարսիս. Կիտացիք, և Ռոդացիք՛: ⁵Եւ ՚ի սոցանէ՛ մեկնեցան կղզիք ազգաց յերկրի իւրեանց. իւրաքանչի՛ր ըստ լեզուս յա՛զգս իւրեանց և ՚ի տոհմս իւրեանց: ⁶Եւ որդիք Քամայ՝ Քո՛ւշ, և Մեստրեմ, Փո՛ւղ, և Քանան: ⁷Եւ որդիք Քուշայ Սաբա, և Եւիլա, և Սաբաթա, և Ռեգմա, և Սաբակաթա: Եւ որդիք Ռեգմայ, Սաբա և Յուդադան՛: ⁸Եւ Քուշ ծնաւ զՆեբրովթ. նա՛ սկսաւ լինել հսկայ ՚ի վերայ երկրի՛: ⁹Եւ նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ. վասն այնորիկ ասեն, իբրև զՆեբրովթ սկայ առաջի Տեառն Աստուծոյ: ¹⁰Եւ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբելովն. և Որէգ, և Աքադ. և Քաղանէ յերկրին Սենայար: ¹¹Յերկրէն յայնմանէ ե՛լ Ասուր, և շինեաց զՆինուէ, և զԻրբովթ քաղաք. և զՔաղան. ¹²և զԴասեման ՚ի մէջ Նինուէի՛ և ՚ի մէջ Քաղանայ, այն է քաղաք մեծ: ¹³Եւ Մեստրեմ ծնաւ զԼուդիիմացիս, և զՍենիիմացիս և զՍաղբիիմացիս. և զՅեփթադիիմացիս՛. ¹⁴և զՊատրոսոնիիմացիս, և զՔաղսոնիիմացիս, ուստի ելին Փղշտացիք. և զԿափթորիմացիս՛: ¹⁵Եւ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր, և զՔետացին: ¹⁶Եւ զՅեբուսացին, և զԱմովրիացին, և զԳերգեսացին, ¹⁷և զԽևացին, և զԱրուակացին, և զԱմիմացին, ¹⁸և զԱրագիոնացին, և զՍամարացին, և զԱմաթացին: Եւ յետ այնորիկ սփռեցան ազգք Քանանացւոց: ¹⁹Եւ եղեն սահմանք Քանանացւոց, ՚ի Սիդոնէ մինչև ՚ի գալ՛ ՚ի Գերարա և ՚ի Գազա. մինչև ՚ի գալ՛ ՚ի Սոդոմ և ՚ի Գոմոր, և յԱդամա՛ և ՚ի Սեբոյիմ մինչև ՚ի Լասա: ²⁰Սոքա՛ են որդիք Քամայ յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց, յաշխարհս իւրեանց, և ՚ի տոհմս իւրեանց: ²¹Եւ Սենայ ծնան որդիք և նորա, հօրն ամենայն որդւոցն Եբերայ, եղբօրն Յաբեթի երիցու՛: ²²Որդիք Սենայ. Էլամ և Ասուր, Արփաքսադ և Լուդ, և Արամ: ²³Եւ որդիք Արամայ. Յուս, և Էմուդ, և Գադեր, և Մոսոք: ²⁴Եւ Արփաքսադ ծնաւ զՍաղա. և Սաղա ծնաւ զԵբեր՛: ²⁵Եւ Եբերայ ծնան երկու որդիք. անուն միոյն Փաղէկ. զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր: Եւ անուն եղբօր նորա Յեկտան: ²⁶Եւ Յեկտան ծնաւ զԷլմովդադ, և զՍաղէք, և զԱսարմովդ, և զՅարաք: ²⁷Եւ զՅոդորամ, և զԵգէլ, և զԴէկլա, ²⁸և զԳեբադ, և զԱբիմէլ, և զՍաբեի, ²⁹և զՈւփիր, և զԵւիդ՛ա, և զՅոբաբ: Ամենեքեան սոքա որդիք Յեկտանայ՛: ³⁰Եւ եղև բնակութիւն նոցա ՚ի Մասեաց մինչև ՚ի գալ՛ ՚ի Սովփերա լեառնն արևելեայց: ³¹Սոքա՛ են որդիք Սենայ յազգս իւրեանց, ըստ

* Ոմանք. Ասքանաս և Ռիփաթ:

* Ոմանք. Կիտիացիք և ու՛:

* Ոմանք. Սաբա և Իդա. և Սեբակաթա:

* Յօրինակին աստէն միայն գրի՝ Ծնաւ զՆեբրաւթ:

* Յօրինակին. Եւ Մեստրիմ ծնաւ:

* Այլք. ՉՔասողովնիիմացիս, ուստի:

* Ոմանք. Որդիք. և նա է հայր ամենայն որդւոցն Եբե՛:

* Երկու օրինակք և եթ համաձայնք իրերաց յաւելուն աստանօր. Եւ Արփաքսադ ծնաւ զԿայնան. և Կայնան ծնաւ զՍաղա. և Սաղա:

* Յօրինակին. Որդիք Յեկտանայ:

լեզուս իւրեանց, յաշխարհս իւրեանց և ՚ի տոհմս իւրեանց: ³²Այս են ազգք որդւոց Նոյի ըստ ծնունդս իւրեանց ըստ տոհմս իւրեանց: Եւ ՚ի սոցանէ սփռեցան կղզիք ազգաց ՚ի վերայ երկրի յետ ջրհեղեղին:

11

Գլուխ ԺԱ

Թ ¹Եւ էր ամենայն երկիր՝ լեզու մի՝, և բարբառ մի՝ ամենեցուն: ²Եւ եղև ՚ի խաղալն նոցա յարևելից, գտին դա՛շտ մի յերկիրն Սենաար, և բնակեցան անդ՝: ³Եւ ասեն այր ցընկեր իւր. Եկա՛յք արկցուք աղիւս, և թոճեսցու՛ք զայն հրով: Եւ եղև նոցա աղիւսն ՚ի տեղի՛ քարի, և կուպր ՚ի տեղի՛ շաղախոյ: ⁴Եւ ասեն եկա՛յք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչև յերկինս. և արասցուք մեզ անուն յառա՛ջ քան զսփռել ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի: ⁵Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն և զաշտարակն զոր շինէին որդիք մարդկան՝: ⁶Եւ ասէ Տէր. Ահա՛ ազգ մի՛ և լեզու մի՛ ամենեցուն, և զայդ սկսան գործել: Եւ արդ՝ ո՛չինչ պակասի ՚ի նոցանէ, զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել՝: ⁷Եկա՛յք իջցուք և խառնակեսցու՛ք անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: ⁸Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, և դադարեսցին ՚ի շինելոյ զքաղաքն և զաշտարակն: ⁹Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Խառնակութիւն. զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի. և անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի՝:

Ժ ¹⁰Եւ ա՛յս են ծնունդք Սեմայ: Սեմ որդի հարիւրեմեան էր յորժամ ծնաւ զԱրփաքսադ յերկրորդուն ամի յետ ջրհեղեղին՝: ¹¹Եւ եկեաց Սեմ յետ ծնանելոյ նորա զԱրփաքսադ՝ ամս հինգհարիւր. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ¹²Եւ Արփաքսադ եկեաց ամս հարիւր երեսուն և հինգ, և ծնաւ զՍաղա: ¹³Եւ եկեաց Արփաքսադ յետ ծնանելոյ նորա զՍաղա ամս երեքհարկր և երեսուն. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ¹⁴Եւ եկեաց Սաղա ամս հարիւր երեսուն, և ծնաւ զԵբեր: ¹⁵Եւ եկեաց Սաղա յետ ծնանելոյ նորա զԵբեր ամս երեքհարիւր երեսուն. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ¹⁶Եւ եկեաց Եբեր ամս հարիւր երեսուն և չորս, և ծնաւ զՓաղէկ: ¹⁷Եւ եկեաց Եբեր յետ ծնանելոյ նորա զՓաղէկ, ամս երկերիւր և եւթանասուն. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ¹⁸Եւ եկեաց Փաղէկ ամս հարիւր երեսուն և չորս, և ծնաւ զՌազաւ: ¹⁹Եւ եկեաց Փաղէկ յետ ծնանելոյ նորա զՌազաւ՝ ամս երկերիւր ինն. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ²⁰Եւ եկեաց Ռազաւ ամս հարիւր երեսուն և երկու. և ծնաւ զՍերուք: ²¹Եւ եկեաց Ռազաւ յետ ծնանելոյ նորա զՍերուք՝ ամս երկերիւր եւթն. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ²²Եւ եկեաց Սերուք ամս հարիւր երեսուն, և ծնաւ զՆաքովր: ²³Եւ եկեաց Սերուք յետ ծնանելոյ նորա զՆաքովր՝ ամս երկերիւր, և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ²⁴Եւ եկեաց Նաքովր ամս եւթանասուն և ինն, և ծնաւ զԹարա: ²⁵Եւ եկեաց Նաքովր յետ ծնանելոյ նորա զԹարա՝ ամս

* Այլք. Յերկրին Սենաար:

* Ոմանք. Ջոր շինեսցին որդիք մար՝:

* Յայլս պակասի. Գործել. և արդ ո՛չ ինչ պա՛:

* Ոմանք. Կոչեցաւ անուն նորա Բաբել. զի անդ խառն՝:

* Ոմանք. Որդի հարիւրամեան էր:

հարիւր քսան և երկու. և ծնաւ ուստերս և դստերս, և մեռաւ: ²⁶Եւ եկեաց Թարա ամս եւթանասուն, և ծնաւ զԱբրահմ, և զՆաքովր, և զԱռան: ²⁷Այս են ծնունդք Թարայի: Թարա ծնաւ զԱբրահմ, և զՆաքովր, և զԱռան: Եւ Առան ծնաւ զՂովտ: ²⁸Եւ մեռաւ Առան առաջի Թարայի հօր իւրոյ, յերկրին յորում ծնաւ, յաշխարհին Քաղդեացոց: ²⁹Եւ առին Աբրահմ և Նաքովր իւրեանց կանայս. անուն կնոջն Աբրահմու՝ Սարա, և անուն կնոջն Նաքովրայ՝ Մեղքայ, դուստր Առանայ, հօր Մեղքայ, և հօր՝ Յէսքայ*: ³⁰Եւ էր Սարա ամուլ և ոչ ծնանէր:

ԺԱ ³¹Եւ առ Թարա զԱբրահմ զորդի իւր, և զՆաքովր զորդի իւր, և զՂովտ որդի Առանայ որդւոյ իւրոյ. և զՍարա զնու իւր զկին Աբրահմու որդւոյ իւրոյ, և եհան զնոսա յաշխարհէն Քաղդեացոց երթալ յերկիրն Քանանացոց. և եկին մինչև ցիւառան, և բնակեցին անդ*: ³²Եւ եղեն ամենայն աւուրք Թարայի ՚ի Խառան, ամբ երկերևր և հինգ. և մեռաւ Թարա ՚ի Խառան:

12

Գլուխ ԺԲ

¹Եւ ասէ Աստուած ցԱբրահմ. Ել դու յերկրէ քունմէ և յազգէ քունմէ և ՚ի տանէ հօր քոյ, յերկիր՝ զոր ցուցից քեզ*: ²Եւ արարից զքեզ յազգ մեծ. և օրհնեցից զքեզ, և մեծացուցից զանուն քո. և եղիցես օրհնեալ: ³Եւ օրհնեցից զօրհնիչս քո, և զանիծիչս քո անիծից. և օրհնեսցին ՚ի քեզ ամենայն ազգք երկրի*: ⁴Եւ գնաց Աբրահմ որպէս և խօսեցաւ ընդ նմա Աստուած. երթայր ընդ նմա և Ղովտ: Եւ Աբրահմ էր ամաց եւթանասուն և հնգից յորժամ ել ՚ի Խառանէ: ⁵Եւ առ Աբրահմ զՍարա զկին իւր, և զՂովտ զեղբօրորդի իւր, և զամենայն զինչս իւրեանց զոր ստացան, և զամենայն ոգիս զոր ստացան ՚ի Խառան. և ելին գնալ յերկիրն Քանանացոց. և եկին յերկիրն Քանանու: ⁶Եւ շրջեցաւ Աբրահմ յերկիրն ընդ երկայնութիւն նորա մինչև ՚ի տեղին ՚ի Սիւբէն, ՚ի կաղնին բարձր. բայց Քանանացիք բնակեալ էին յայնժամ յերկիրն: ⁷Եւ երևեցաւ Տէր Աբրահմու, և ասէ ցնա. Զաւակի՛ քում տաց զերկիրս զայս: Եւ շինեաց անդ Աբրահմ սեղան Տեառն որ երևեցաւ նմա*: ⁸Եւ մեկնեցաւ անտի ՚ի լեառն ընդ արևելս ՚ի Բեթէլ. և եհար անդ զխորան իւր ՚ի Բեթէլ, յանդիման ծովուն՝ և Անգէի ընդ արևելս: Եւ շինեաց անդ սեղան Տեառն, և կոչեաց յանուն Տեառն: ⁹Զուեաց Աբրահմ, և գնաց բնակեցաւ յանապատի: ¹⁰Եւ եղև սով յերկրին, և էջ Աբրահմ յեգիպտոս բնակել անդ պանդխտութեամբ, զի զօրացաւ սով յերկրին: ¹¹Եւ եղև իբրև մերձեցաւ Աբրահմ մտանել յեգիպտոս, և ասէ ցՍարա ցկին իւր. Գիտեն զի կին գեղեցիկ ես դու: ¹²Արդ եղիցի եթէ տեսանիցեն Եգիպտացիքն, և ասիցեն թէ կին նորա՛ է սա. և սպանանիցեն զիս, և զքեզ ապրեցուցանիցեն: ¹³Ասացես եթէ քոյր նորա եմ. զի բարի՛ լիցի ինձ վասն քո, և կեցցէ՛ անձն իմ յաղագս քո: ¹⁴Եւ եղև իբրև եմուտ Աբրահմ յեգիպտոս, և տեսեալ Եգիպտացոցն զկինն զի գեղեցիկ էր յոյժ: ¹⁵Տեսին զնա և իշխանքն փարաւոնի, և զովեցին զնա առաջի փարաւոնի. և տարան զնա ՚ի տուն փարաւոնի: ¹⁶Եւ Աբրահմու բարիս առնէին վասն նորա. և

* Ոմանք. Եւ անուն կնոջն Աբրահմ:

* Յօրհնակին. Եւ Նաքովր զորդի իւր:

* Ոսկան. Եւ ՚ի տանէ հօր քո, և եկ յերկիր:

* Ի լուս. Եւ զանիծիչս քո անիծեցից:

* Ոմանք. Եւ երևեցաւ Աստուած Աբրահմ:

եղեն նորա խաշինք, անդեայք, և էշք. ծառայք և աղախնայք. ջորիք, և ուղտք:
ԺԲ ¹⁷Եւ պատժեա՛ց Աստուած զփարաւովն պատժօք մեծամեծօք և չարօք, և
զտուն նորա, վասն Սարայի կնոջն Աբրամու* : ¹⁸Կոչեաց փարաւովն զԱբրամ, և
ասէ ցնա. Զի՞նչ գործեցեր զայդ ընդ իս, զի ո՛չ պատմեցեր եթէ կին քո է* :
¹⁹Ընդէ՞ր ասացեր թէ քոյր իմ է, և առի զդա ինձ կնութեան. և արդ աւանիկ կին
քո առաջի քո. ա՛ռ և գնա ՚ի բաց: ²⁰Եւ պատուէր ետ արանց վասն Աբրամու,
յուղարկել զնա և զկին նորա, և զամենայն որ ինչ էր նորա. և զՂովտ ընդ նմա* :

13

Գլուխ ԺԳ

¹Եւ ե՛լ Աբրամ յեգիպտոսէ, ինքն և կի՛ն իւր և ամենայն որ ինչ էր նորա, և Ղովտ
ընդ նմա յանապատն: ²Եւ Աբրամ էր մեծատուն յոյժ, անասնով և արծաթով և
ոսկւով: ³Եւ գնաց անդրէն ուստի եկն յանապատն մինչև ցԲեթէլ, մինչև ցտեղին
ուր էր խորան նորա զառաջինն, ընդ Բեթէլ և ընդ Անգէէ՛ ⁴ի տեղի սեղանոյն, զոր
արար անդ զառաջինն. և կարդա՛ց անդ Աբրամ զանուն Տեառն Աստուծոյ:

ԺԳ ⁵Եւ Ղովտայ որ երթեա՛լն էր ընդ Աբրամու, էր արջառ և ոչխար և անասուն:
⁶Եւ ո՛չ բաւէր նոցա երկիրն բնակելոյ ՚ի միասին. զի էին նոցա ստացուածք
բազումք, և ո՛չ կարէին բնակել ՚ի միասին* : ⁷Եւ եղև մարտ ՚ի մէջ հովուաց
խաշանցն Աբրամու, և ՚ի մէջ հովուաց խաշանցն Ղովտայ: Եւ Քանանացիքն և
Փերեզացիքն յայնժամ բնակեալ էին յերկրին: ⁸Ասէ Աբրամ ցՂովտ. Մի՛ լիցի
կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո. զի արք եղբարք եմք
մեք. ⁹ո՞չ աւաղիկ երկիրդ ամենայն առաջի քո է, մեկնեա՛ց յինէն. եթէ դու
յահեակ՝ ես յա՛ջ. եթէ դու յաջ՝ ես յահեակ՝ : ¹⁰Ամբարձ Ղովտ զաչս իւր և ետես
զամենայն կողմանս Յորդանանու, զի ամենայն յուռթի՛ էր. մինչչև՝ կործանեալ
էր Աստուծոյ զՍողոմ և զԳոմոր, իբրև զդրախտ Աստուծոյ էր, և իբրև զերկիրն
Եգիպտացւոց՝ մինչև ՚ի գալ ՚ի Ջորրա* : ¹¹Եւ ընտրեաց իւր Ղովտ զամենայն
կողմանս Յորդանանու. և չուեաց Ղովտ յարևելից, և մեկնեցան իւրաքանչի՛ւր
յեղքօրէ իւրմէ: ¹²Եւ Աբրամ պանդխտեցաւ յերկրին Քանանացւոց. և Ղովտ
նստաւ ՚ի քաղաքի միում կողմանցն, և բնակեցաւ ՚ի Սողոմ: ¹³Եւ մարդիկն
Սողոմացւոց չա՛րք և մեղաւորք էին առաջի Աստուծոյ յոյժ:

ԺԴ ¹⁴Եւ ասէ՛ Աստուած ցԱբրամ յետ մեկնելոյն Ղովտայ ՚ի նմանէ. Հայեա՛ց
աչօք քովք և տե՛ս ՚ի տեղւոջէ յայդմանէ յորում դո՛ւ ես, ՚ի կողմանէ հիւսւտոյ և
հարաւոյ, յարևելից և ՚ի ծովու* . ¹⁵Ոչ զամենայն երկիրդ զոր տեսանես դու, քե՛զ
տաց զդա և զաւակի քուն մինչև յաւիտեան* : ¹⁶Եւ արարից զզաւակ քո իբրև
զաւազ երկրի. եթէ կարիցէ՞ որ թուել զաւազ երկրի՝ ապա և քո՛ զաւակ ընդ թիւ
մտցէ: ¹⁷Եւ արդ՝ արի շրջեա՛ց ընդ երկիրդ յերկայնութիւն դորա և ՚ի լայնութիւն

* Ոմանք. Մեծամեծօք և չարօք:

* Ոմանք. Ոչ պատմեցեր ինձ եթէ:

* Ոմանք. Եւ զամենայն զոր ինչ էր նորա:

* Այլք. Երկիրն՝ բնակել ՚ի միասին:

* Ոմանք. Ոչ ահաւաղիկ երկիրդ:

* Ոմանք. Մինչև ՚ի գալ ՚ի Սեգովր:

* Ոմանք. Եւ յարևելից և ծովու:

* Բազումք. Ջոր տեսանես՝ քեզ տաց:

դորա #, զի քե՛զ տաց զդա: ¹⁸Եւ չո՛ւ արարեալ Աբրամու, եկն բնակեցաւ առ կաղնուոցն Մամբրէի, որ է՛ ՚ի Քեբրոն: Եւ շինեաց անդ սեղան Տեառն Աստուծոյ:

14

Գլուխ ԺԴ

ԺԵ ¹Եւ եղև ՚ի թագաւորութեանն Ամարփաղայ արքայի Սենարայ, Արիովք արքայ Սեղճասարայ, և Քոդողագոմոր արքայ Ելամայ, և Թարգաղ արքայ ազգաց. ²Ետուն պատերա՛զմ ընդ Բաղակայ արքայի Սոդոմացւոց, և ընդ Բարսայ արքայի Գոմորացւոց, և ընդ Սենայ արքայի Ադամացւոց. և ընդ Սիմորայ արքայի Սեբոյիմացւոց. և ընդ թագաւորին Բաղակայ, այն ինքն է Սեգովր*: ³Ամենեքեան սոքա՝ գումարեցան ՚ի ձորն աղի, որ է՛ ծո՛վ աղտից: ⁴Ձերկոտասան ամ ՚ի ծառայութեան կացեալ էին Քոդողագոմորայ. և յերեքտասաներորդուն ամին ապստամբեցին*: ⁵Եւ յամին չորեքտասաներորդի՝ եկն Քոդողագոմոր և թագաւորքն որ ընդ նմա, և կոտորեցին զսկայսն որ յԱստարովք Կառնայի՛ն էին, և զազգս հօօրս որ ընդ նոսա. և զՍովմացիսն ՚ի Շաւէ քաղաքին նոցա: ⁶Եւ զՔոռացիսն որ ՚ի լերինս Սէիրայ, մինչև ցԲևեկնի՛ ձորոյն որ է յանապատի անդ*: ⁷Եւ դարձան եկին յաղբերն դատաստանի. այն ինքն է՛ Կադէս, և կոտորեցին զամենայն իշխանս Ամաղեկայ. և զԱմովրհացին զբնակեալն յԱսասանթամար*: ⁸Եւ ե՛լ արքայ Սոդոմացւոց և արքայ Գոմորացւոց, և արքայ Ադամացւոց, և արքայ Սեբոյիմացւոց, և արքայ Բաղակայ որ է Սեգովր, և ճակատեցան ընդ նոսա ՚ի պատերազմ ՚ի ձորն աղտից*: ⁹Ընդ Քոդողագոմորայ արքայի Ելամայ, և ընդ Թարգաղայ՝ արքայի ազգաց, և Ամարփաղայ արքայի Սենարայ, և Արիովքայ արքայի Սեղճասարայ. չորք թագաւորք՝ ընդ հնգից: ¹⁰Եւ ՚ի ձորն Աղտից ջրհորք, ջրհորք նաւթի: Եւ փախեաւ արքայ Սոդոմացւոց և արքայ Գոմորացւոց, և անկան անդր. և մնացեալքն փախեան ՚ի լեռնակողմն*: ¹¹Եւ առին զամենայն աւար Սոդոմացւոց և Գոմորացւոց, և զամենայն համբարս նոցա՝ և զնացին: ¹²Առին և զՂովտ զեղբօրորդին Աբրամու, և զհնչս նորա, և երթային. քանզի բնակեալ էր ՚ի Սոդոմ*: ¹³Եւ եհան ոմն ՚ի զերծելոց անտի, և պատմեաց Աբրամու յայնկոյս կացելոյ. և նա էր բնակեալ առ կաղնեաւն Մամբրէի Ամովրհացւոյն՝ եղբօրն Էսքողայ՝ և եղբօրն Աւնանայ, որ էին դաշնաւորք Աբրամու*: ¹⁴Եւ իբրև լուաւ Աբրամ թէ գերի՛ վարեցաւ եղբայրն իւր Ղովտ. համարեցաւ զընդոյծինսն իւր երեքհարիւր և ութ և տասն*: ¹⁵Եւ այնդեցաւ զկնի նոցա գիշերի, ինքն և ծառայք իւր. և եհար զնոսա մինչև ցՔոբաղ, որ է ՚ի ձախմէ Դամասկոսի: ¹⁶Եւ դարձոյց զամենայն աւարն Սոդոմացւոց. և զՂովտ զեղբայր իւր, և զամենայն

* Ոմանք. Այս ինքն է Սեգովր:

* Բազումք. Գոդողագոմորայ:

* Ոմանք. Մինչև ցբևեկն ՚ի ձորոյն:

* Ոմանք. Եւ զբնակեալսն յԱսասն:

* Յօրինակին. Եւ արքայ Սեբոյիմաց:

* Յօրինակին պակասէր. Եւ արքայ Գոմորացւոց:

* Ոմանք. Եւ զհնչս նորա և զհօտ. քանզի բնա:

* Ոմանք. Ամովրհացւոցն.. որ էին դաշնակիցք Աբրամ:

* Ոմանք. Գերի վարեցաւ եղբօր որդին իւր Ղովտ: Յօրինակին՝ թուագրով այսպէս գրի. 3 և ժԸ:

ստացուածս նորա դարձոյց. և գկանայս և զժողովուրդն: ¹⁷Եւ ել արքայ Սողոմոնացոց ընդ առաջ նորա՝ յետ դառնալոյ նորա ՚ի կոտորածէ Քողողզոնորայ, և թագաւորացն որ ընդ նմա էին ՚ի ձորն Շաւէ՝ այն ինքն է դաշտ թագաւորաց*:

ԺՁ ¹⁸Եւ Մելքիսեդեկ արքայ Շաղեմայ եհան հաց և գինի. քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ*։ ¹⁹Եւ օրհնեաց զԱբրամ և ասէ. ²⁰Օրհնեալ է Աբրամ յԱստուծոյ Բարձրելոյ որ արար զերկինս և զերկիր. օրհնեալ է Աստուած Բարձրեալ որ մատնեաց ՚ի ձեռս քո զթշնամիս քո: Եւ ետ նմա տասանորոս յամենայնէ: ²¹Եւ ասէ արքայ Սողոմոնացոց ցԱբրամ. Տո՛ւր ցիս զմարդիկդ, և զաւարդ քե՛զ առ: ²²Եւ ասէ Աբրամ ցարքայն Սողոմոնացոց. Ձգեմ զձեռն իմ առ Աստուած Բարձրեալ որ արար զերկինս և զերկիր, ²³եթէ ՚ի շաղամաթէ միոջէ մինչև ՚ի խրացս մի կօշկաց առից ես յամենայնէ որ ինչ քո՛ իցէ. զի մի՛ ասիցես թէ ես մեծացուցի զԱբրամ: ²⁴Բայց որչափ ինչ կերան մանկտիդ. և մասն արանցդ որ եկին ընդ իս. Աւնան և Եսքող, և Մամբրէ. նոքա առցեն զբաժին իւրեանց:

15

Գլուխ ԺԵ

ԺԵ ¹Յետ բանիցս այսոցիկ եղև Բան Տեառն առ Աբրամ ՚ի տեսլեան գիշերի, և ասէ. Մի՛ երկնչիր Աբրամ, ե՛ս վերակացու եղեց քեզ. և վարձք քո բազում եղիցին յոյժ*։ ²Եւ ասէ Աբրամ. Տէր՝ Տէր, զի՞նչ արասցես ինձ, զի ես կորնչիմ անորդի: Եւ որդի Մասեկայ ընտոճնի իմոյ. այն է Եղիազար Դամասկացի*։ ³Եւ ասէ Աբրամ. Որովիետև ինձ ո՛չ ետուր զաւակ, ընտոճինն իմ ժառանգեսցէ զիս: ⁴Եւ վաղվադակի ձայն Աստուծոյ եղև առ նա և ասէ. Ո՛չ ժառանգեսցէ զքեզ դա, այլ որ ելանէն ՚ի քէն՝ նա՛ ժառանգեսցէ զքեզ*։ ⁵Եւ եհան զնա արտաքս՝ և ասէ ցնա. Յայեաց ընդ երկինս, և թուեա՛ զաստեղս, եթէ կարիցե՞ս թուել զնոսա: Եւ ասէ ցնա. Այնպէս եղիցի զաւակ քո: ⁶Եւ հաւատաց Աբրամ Աստուծոյ, և համարեցաւ նմա յարդարութիւն: ⁷Եւ ասէ ցնա. Ե՛ս եմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յաշխարհէն Քաղդեացոց, տալ քեզ զերկիրդ զայդ ՚ի ժառանգութիւն*։ ⁸Եւ ասէ Աբրամ. Տէր Տէր՝ ի՞նչ գիտացից եթէ ժառանգիցեմ զսա: ⁹Եւ ասէ ցնա. Ա՛ն դու ինձ երինջ երեմեան, և քօշ երեմեան, և խոյ երեմեան, և տատրակ, և աղաւնի: ¹⁰Եւ ա՛ռ զամենայն զայն, և յօշեաց զնոսա ընդ մէջ, և եդ զնոսա դէմ ընդ դէմ միմեանց. և զթռչունսն ո՛չ յօշեաց: ¹¹Եւ իջանէին թռչունք ՚ի վերայ յօշելոյ անդամաթուին նոցա: Եւ նստեր առ նոքօք Աբրամ: ¹²Եւ մօտ ընդ մուտս արևուն թըմբրութիւն անկանէր ՚ի վերայ Աբրամու. և ահա՛ ա՛հ խաւարին հասանէր ՚ի վերայ նորա*։ ¹³Եւ ասացա՛ւ առ Աբրամ. Գիտելո՛վ գիտասջի՛ր. զի պանդո՛ւխտ եղիցի զաւակ քո յերկիր որ ո՛չ իւր իցէ. և ծառայեցուցեն զնոսա և

* Ոմանք. Այն ինքն էր դաշտ:

* Ոմանք. Արքայ Սաղեմայ եհան:

* Ի տեսլեան և ասէ:

* Ոսկան. Տէր Տէր զի՞նչ տացես ինձ. զի:

* Այլք. Եթէ կարասցես թուել զնոսա:

* Ոմանք. Ջերկիրդ զայդ ՚ի ժառանգել զդա:

* Ոմանք. Եւ ահ խաւարին հա՛:

չարչարեցեն, և տառապեցուցեն զնոսա ամս չորեքհարիւր: ¹⁴Բայց զազգն որուն ծառայեցեն՝ դատեցայց ես: Եւ յետ այնորիկ ելցեն այսր բազում ստացուածովք: ¹⁵Եւ դու երթիցես առ հարս քո խաղաղութեամբ, սնեալ՝ ի բարւոք ծերութեան: ¹⁶Եւ ի չորրորդուն ազգի դարձցին այսրէն. քանզի չն՝ ևս լցեալ է մեղք Ամովրհացուցն մինչև ցայժմ: ¹⁷Եւ իբրև արևն ի մուտս լինէր, բո՛ցք հատանէին, և ահա հնո՛ց ծխեալ. և ճառագայթք հրոյ անցանէին ընդ մէջ անդամո՛ցն յօշելոյ* : ¹⁸Յաւուր յայնմիկ եդ Տէր ուխտ ընդ Աբրամու, և ասէ. Ջաւակի՛ քուն տաց զերկիրդ զայդ, ի գետոյն Եգիպտացուց մինչև ի գետն մեծ Եփրատ: ¹⁹ԶԿինեցիս, և զԿենեզացիս, և զԿեդոնացիս, ²⁰և զՔետացիս, և զՓերեզացիս, և զՌափիմացիս, ²¹և զԱմովրհացիս, և զՔանանացիս, և զԳերզեսացիս, և զՅերուսացիս:

16

Գլուխ ԺԶ

ԺԸ ¹Եւ Սարա կին Աբրամու ո՛չ ծնանէր նմա: Եւ էր նորա աղջիկ մի Եգիպտացի որոյ անուն էր Ազար* : ²Եւ ասէ Սարա ցԱբրամ յերկիրն Քանանացուց. Որովհետև արգել զիս Տէր ի ծնանելոյ, արդ՝ մո՛ւտ առ աղջիկդ իմ զի արարից ինձ որդի՛ ի դմանէ: Եւ ունկնդիր եղև Աբրամ ձայնի Սարայի* : ³Եւ ա՛ռ Սարա կին Աբրամու զԱզար Եգիպտացի զաղախին իւր, յետ տասն ամի բնակելոյ Աբրամու յերկիրն Քանանացուց, և ետ զնա Աբրամու առն իւրում կնութեան* : ⁴Եւ եմուտ առ Ազար, և յղացաւ: Իբրև ետես թէ յղի է՝ արհամարհեցա՛ւ տիկինն իւր # յաչս նորա* : ⁵Եւ ասէ Սարա ցԱբրամ. Բո՛ւռն է ինձ ի քէն. ես ետու զաղախինն իմ ի գիրկս քո. և արդ՝ իբրև ետես թէ յղացաւ, արհամարհեցայ՝ ես յաչս նորա. դա՛տ արասցէ Աստուած ընդ իս և ընդ քեզ: ⁶Եւ ասէ Աբրամ ցՍարա. Ահաւանիկ աղախին քո ի ձեռս քո, արա՛ նմա զինչ հաճոյ է առաջի աչաց քոց: Եւ չարչարեաց զնա Սարա. և փախեա՛ւ յերեսաց նորա* : ⁷Եգիտ զնա հրեշտակ Տեառն յաղբար ջուրց յանապատի անդ. յաղբարն որ ի ճանապարհին Սուրայ է: ⁸Եւ ասէ ցնա հրեշտակ Տեառն. Ազար՝ աղախին Սարայի, ուստի՞ զաս կամ յո՞ երթաս: Եւ ասէ. Յերեսաց Սարայի տիկնոջ իմոյ փախուցեալ եմ ես: ⁹Ասէ ցնա հրեշտակն Տեառն. Դարձիր առ տիկին քո՝ և հնազանդ լեր ընդ ձեռամբ նորա: ¹⁰Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն. Բազմացուցանելով բազմացուցից զգաւա՛կ քո, և անթիւ լիցի ի բազմութենէ: Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն. ¹¹Ահաւադիկ դու յղի իսկ ես. և ծնցես որդի, և կոչեսցես զանուն նորա Իսմայէլ. զի լուաւ Տէր տառապանաց քոց: ¹²Եւ նա եղիցի այր վայրագ. ձեռք նորա յամենեսին, և ձեռք ամենեցուն ի նա. և յանդիման ամենայն եղբարց իւրոց բնակեսցէ: ¹³Եւ կարդաց Ազար զանուն Տեառն որ խօսեցաւ ընդ նմա, և ասէ. Դո՛ւ ես Աստուած որ հայեցար յիս: Քանզի ասաց եթէ յանդիման իսկ տեսի զայն, որ երևեցաւն ինձ: ¹⁴Վասն այնորիկ կոչեաց ջրիո՛րն՝ ջրիո՛ր այնորիկ զոր յանդիմանն տեսի. և

* Ոմանք. Եւ անցանէին ընդ մէջ:

* Յօրինակին պակասէր. Եւ էր նորա աղջիկ մի:

* Այլք. Յերկիրն Քանանացուց:

* Այլք. Յերկիրն Քանանացուց: Այլք. Ջազար զԵգիպտացի:

* Ոմանք. Եւ իբրև ետես եթէ յղի է:

* Ոմանք. Զինչ և հաճոյ է առա՛:

ահա է՛ այն ընդ Կաղէս և ընդ Բարադ*։ ¹⁵Եւ ծնաւ Ագար Աբրամու որդի, և կոչեաց զանուն որդւոյն իւրոյ որ ծնաւ նմա Ագար՝ Իսմայէլ։ ¹⁶Եւ Աբրամ էր ամաց ութսուն և վեցից, յորժամ ծնաւ նմա Ագար զԻսմայէլ։

17

Գլուխ ԺԷ

ԺԹ ¹Եւ եղև Աբրամ ամաց իննըսուն և ինունց։ Եւ երևեցաւ Տէր Աստուած Աբրամու և ասէ ցնա. Ե՛ս եմ Աստուած քո, հաճո՛յ լեր առաջի իմ, և լեր անարա՛տ։ ²Եւ եղից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ, և բազմացուցից զքեզ յո՛յժ յոյժ*։ ³Եւ անկա՛ւ Աբրամ ՚ի վերայ երեսաց իւրոց։ Եւ խօսեցաւ ընդ նմա Աստուած ⁴և ասէ. Եւ իմ ահաւաղիկ ուխտ ընդ քեզ. և եղիցես հայր բազմութեան ազգաց։ ⁵Եւ ո՛չ կոչեսցի այսուհետև անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրաա՛մ, զի հայր ազգաց բազմաց եղի զքեզ*։ ⁶Եւ աճեցուցից զքեզ յոյժ, և եղից զքեզ յազգս. և թագաւորք ՚ի քէ՛ն ելցեն։ ⁷Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ, և ՚ի մէջ զաւակի քոյ յետ քո յազգս իւրեանց յուխտ յաւիտենական. լինել քեզ Աստուած և զաւակի քում յետ քո։ ⁸Եւ տաց քե՛զ և զաւակի քում զերկիրս զայս, յորում բնակես պանդխտութեամբ. զամենայն երկիրդ Քանանացւոց ՚ի ժառանգութիւն յաւիտենական. և եղէց նոցա Աստուած*։ ⁹Բայց դու զուխտ իմ պահեսցես, և զաւակ քո յետ քո յազգս իւրեանց*։ ¹⁰Եւ այս է ուխտ իմ, զոր պահեսցես ընդ իս և ընդ քեզ, և ՚ի մէջ զաւակի քո յետ քո յազգս իւրեանց։ ¹¹Թլփատեսցի՛ ձեր ամենայն արու, և թլփատեսցիք զմարմին անթլփատութեան ձերոյ. և եղիցի նշանա՛կ ուխտին ընդ իս և ընդ ձեզ։ ¹²Եւ մանուկ՝ ութօրեայ թլփատեսցի ձեր, ամենայն արու յազգս ձեր. ընտոծինն և արծաթագինն, և յամենայն օտարածնէ որ ո՛չ իցէ ՚ի զաւակէ քումմէ, թլփատելո՛վ թլփատեսցի ընտոծին տան քոյ և արծաթագին քո։ ¹³Եւ եղիցի ուխտ իմ ՚ի վերայ մարմնոյ ձերոյ յուխտ յաւիտենական։ ¹⁴Արուն անթլփատ՝ որ ո՛չ թլփատեսցէ զմարմին անթլփատութեան իւրոյ յաւուր ութերորդի, սատակեսցի՛ անձնն այն յազգէ իւրմէ. զի ցրեաց զուխտ իմ։ ¹⁵Եւ ասէ Աստուած ցԱբրաամ. Եւ Սարայի կնոջ քո ո՛չ կոչեսցի անուն նորա Սարա, այլ Սարրա՛ եղիցի անուն նորա։ ¹⁶Եւ օրհնեցից զնա. և տաց քեզ ՚ի նմանէ որդի՛, և օրհնեցից զնա, և եղիցի յազգս, և թագաւորք ազգաց ՚ի նմանէ եղիցին։ ¹⁷Անկա՛ւ Աբրաամ ՚ի վերայ երեսաց իւրոց և ծիծաղեցաւ. և խօսեցաւ ՚ի սրտի իւրում և ասէ. Թէ հարիւրամենի՝ որդի՞ լինիցի. և Սարրա՛ իննըսնամեայ ծնանիցի*։ ¹⁸Եւ ասէ Աբրաամ ցԱստուած. Իսմայէլս այս կեցցէ՛ առաջի քո։ ¹⁹Եւ ասէ Աստուած ցԱբրաամ. Այո՛։ Ահա Սարրա կին քո ծնցի քեզ որդի. և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա ուխտ յաւիտենական, և ընդ զաւակի նորա յետ նորա*։ ²⁰Եւ վասն Իսմայելի ահա լուայ՛ քեզ. և օրհնեցից զնա, և աճեցուցից

* Ի լուս՝. ՚ի վերայ. Եւ ընդ Բարադ, նշանակի՝ Փառան։

* Յօրինակին պակասէր. Ընդ իս և ընդ քեզ։

* Ոմանք. Բազմաց եղից զքեզ։

* Ոմանք. Յորում բնակեալ ես պան՝։

* Ոմանք. Եւ զաւակի քո յետ քո։

* Ոմանք. ՅԱբրաամ. այո, ահա Սարրա։ Ոսկան յաւելու. Որդի. և կոչեսցես զանուն նորա Իսահակ. և հաստ՝։

զնա և բազմացուցից զնա յոյժ. և երկոտասան ազգ ծնցի, և տաց զնա յա՛զգ մեծ՝: ²¹Բայց զուխտ իմ հաստատեցի՛ց ընդ Սահակայ, զոր ծնցի քեզ Սարրա ՚ի ժամանակի յայսմիկ ՚ի միւսում տարւոջ: ²²Եւ վախճանեաց զխօսելն ընդ նմա. և վերացաւ Աստուած յԱբրաամէ: ²³Եւ ա՛ռ Աբրաամ զԻսմայէլ զորդի իւր, և զամենայն ընտոծինս իւր, և զամենայն զարծաթագինս իւր, և զամենայն արու արանց որ էին ՚ի տան Աբրաամու. և թլփատեաց զմարմին անթլփատութեան նոցա ՚ի ժամանակի աւուրն այնորիկ, որպէս խօսեցաւ ընդ նմա Աստուած՝: ²⁴Եւ Աբրաամ էր ամաց իննըսուն և ինունց ՚ի ժամանակի յորում թլփատեաց զմարմին անթլփատութեան իւրոյ: ²⁵Եւ Իսմայէլ որդի նորա երեքտասանամեայ էր՝ յորժամ թլփատեաց զմարմին անթլփատութեան իւրոյ: ²⁶Ի ժամանակի աւուրն այնորիկ թլփատեցաւ Աբրաամ և Իսմայէլ որդի նորա. ²⁷և ամենայն արք տան նորա: Եւ ընտոծինք և արծաթագինք որ էին յազգաց օտարաց՝ թլփատեաց զնոսա:

18

Գլուխ ԺԸ

Ի ¹Եւ երևեցաւ նմա Աստուած առ կաղնեաւն Մամբրէի, մինչ դեռ նստէր առ դուրս խորանի՛ իւրոյ ՚ի մէջօրէի: ²Ամբարձեալ զաչս իւր և ետես. և ահա արք երեք կային ՚ի վերոյ քան զնա: Եւ իբրև ետես՝ ընթացա՛ւ ընդ առաջ նոցա ՚ի դրանէ խորանին իւրոյ. և երկիր եպագ ՚ի վերայ երկրի և ասէ. ³Տէր՝ եթէ զտի շնորհս առաջի քո՝ մի՛ զանց առներ ՚ի ծառայէ քումմէ: ⁴Այլ առից սակաւ մի ջուր, և լուսացեն զոտս ձեր, և զովասջիք ընդ ծառովս՝: ⁵Եւ առից հաց՝ և կերիջիք, և ապա երթիջիք զճանապարհս ձեր. փոխանակ զի դարձարուք առ ծառայ ձեր: Եւ ասէ. Այդպէս արա՛, որպէս ասացերդ՝: ⁶Եւ պնդեցաւ Աբրաամ ՚ի խորանն առ Սարրա, և ասէ ցնա. Փութա՛ թրեա՛ գրիւս երիս ալեր նաշիոյ, և արա՛ նկանս՝: ⁷Եւ յանդեայ ընթացաւ Աբրաամ, և ա՛ռ որթ մի մատաղ և բարի, և ետ ցպատանին, և փութացո՛յց վաղվաղակի հասուցանել: ⁸Եւ ա՛ռ կոզի և կաթն, և զորթն զոր հասոյց, և եղ առաջի նոցա, և կերան. և նա կայր առաջի նոցա ընդ ծառովն: ⁹Եւ ասէ ցնա. Ո՞ւր է Սառա կին քո: Նա պատասխանի ետ և ասէ. Ահաւանիկ ՚ի խորանի՛ անդ է՝: ¹⁰Եւ ասէ. Դարձեալ եկից առ քեզ ՚ի ժամանակի յայսմիկ ՚ի սոյն աւուրս, և ունիցի որդի Սառա կին քո: Եւ Սարրա՝ ո՛ւնկն դներ առ դրան խորանին. քանզի յետոյ նորա կայր: ¹¹Եւ Աբրաամ և Սարրա ծերացեալք էին և անցեալք զաւուրբք: Եւ պակասեալ էր ՚ի Սառայէ լինել ՚ի կանանց օրինի: ¹²Ծիծաղեցաւ Սառա ընդ միտս՝ և ասէ. Որ ինչ ցայժմ ո՛չ եղև ինձ, ա՛րօր լինիցի. և տէր իմ ծերացեալ է: ¹³Եւ ասէ Տէր ցԱբրաամ. Զի՞՞ է զի ծիծաղեցաւ Սառա ընդ միտս իւր՝ և ասէ. թէ արդարև ծնանիցի՞մ. զի ահա ես պառաւեալ եմ: ¹⁴Միթէ տկարանայցէ՞ առ ՚ի յԱստուծոյ բան: Ի ժամանակի յայսմիկ դարձայց առ քեզ ՚ի սոյն աւուրս, և եղիցի Սառայի որդի: ¹⁵Ժխտեաց Սառա և ասէ, թէ. Ո՛չ

* Ոմանք. Եւ օրհնեցի զնա, և աճե՛:

* Ոմանք. Ի ժամանակի աւուրն այնմիկ:

* Ոմանք. Այլ առցի սակաւ մի ջուր, և:

* Այլք. Եւ ասեն. Այդպէս արա՛:

* Ոմանք. Եւ արա՛ նկանակս:

* Այլք. Եւ ասեն ցնա. Ո՛ւր է Սարրա:

ծիծաղեցայ: Քանզի երկեա՛ւ: Եւ ասէ. Ո՛չ այդպէս. այլ ծիծաղեցա՛ր*: ¹⁶Եւ
յարուցեալ անտի արանցն հայեցան ընդ երեսս Սողոմացւոց և Գոմորացւոց: Եւ
Աբրաամ երթա՛յր ընդ նոսա յուղարկել զնոսա: ¹⁷Եւ ասէ Տէր. Միթէ թաքո՞ւստ ինչ
իցէ յԱբրաամէ ծառայէ իմնէ զոր ինչ գործելոց եմ: ¹⁸Այլ Աբրաամ լինելով լինիցի
յա՛զգ մեծ և ՚ի բազում. և օրհնեսցին ՚ի նա ամենայն ազգք երկրի՞*: ¹⁹Քանզի
գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց և տան իւրոյ յետ իւր, պահել
զճանապարհս Տեառն, և առնել՝ զարդարութիւն և զիրաւունս: Եւ ածցէ՛ Տէր
Աստուած ՚ի վերայ Աբրաամու զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա:

Իւ ²⁰Եւ ասէ Տէր. Աղաղակ Սողոմացւոց և Գոմորացւոց յաճախեա՛ց, և մեղք
նոցա մեծացան յոյժ: ²¹Արդ իջեալ տեսից եթէ ըստ աղաղակին նոցա որ յիսն
հասանէ՝ վճարիցե՞ն. ապա թէ ո՛չ զի գիտացից՞*: ²²Եւ դարձեալ անտի արանցն
եկին ՚ի Սողոմ: Եւ Աբրաամ կա՛յր առաջի Տեառն: ²³Եւ մատուցեալ Աբրաամ
ասէր. Միթէ կորուսանիցե՞ս զարդարն ընդ ամպարշտին, և լինիցի արդարն
իբրև զամպարիշտն՞: ²⁴Եթէ իցեն յիսուն արդար ՚ի քաղաքի, կորուսանիցե՞ս
զնոսա. և ո՞չ ներեսցես ամենայն տեղեացն վասն յիսուն արդարոյն եթէ իցեն ՚ի
նմա: ²⁵Քա՛ւ լիցի քեզ առնել զայն բան, սպանանել զարդարն ընդ ամպարշտի,
և լինիցի արդարն իբրև զամպարիշտն: Քա՛ւ լիցի քեզ որ դատիս զամենայն
երկիր, մի՛ արասցես զայն դատաստան: ²⁶Եւ ասէ Տէր. Եթէ գտցի ՚ի Սողոմ
յիսուն արդար ՚ի քաղաքի անդ, թողացուցի՞ց ամենայն տեղեացն վասն նոցա:
²⁷Պատասխանի ետ Աբրաամ և ասէ. Այժմ սկսայ խօսել ընդ Տեառն. բայց ես
հո՛ղ եմ և մոխիր: ²⁸Եթէ պակաս իցեն քան զյիսուն արդար հնգի՛ւ չափ,
կորուսանիցե՞ս վասն հնգիցն զամենայն քաղաքն: Եւ ասէ. Ո՛չ կորուսից՝ եթէ
գտցի անդ քառասուն և հինգ: ²⁹Եւ յաւել՝ ևս խօսել ընդ նմա՝ և ասէ. Իսկ եթէ
գտցի անդ քառասուն: Եւ ասէ. Ո՛չ կորուսից վասն քառասնիցն: ³⁰Եւ ասէ. Միթէ
իցե՞ ինչ Տէր եթէ խօսիցիմ. իսկ եթէ գտցի անդ երեսո՞ւն: Եւ ասէ. Ո՛չ կորուսից՝
եթէ գտցի անդ երեսուն: ³¹Եւ ասէ. Որովհետև կալայ խօսել ընդ Տեառն, թէ գտցի
անդ՝ քա՞ն: Եւ ասէ. Ո՛չ կորուսից վասն քսանիցն: ³²Եւ ասէ. Միթէ իցե՞ ինչ Տէր
եթէ խօսեցայց ևս մի՛ւս անգամ. եթէ գտցի անդ՝ տա՞սն: Եւ ասէ. Ո՛չ կորուսից
վասն տասանցն՞: ³³Եւ գնա՛ց Տէր իբրև լռեաց ՚ի խօսելոյ անտի ընդ Աբրաամու.
և Աբրաամ դարձա՛ւ ՚ի տեղի իւր:

19

Գլուխ ԺԹ

¹Եւ եկին երկու հրեշտակքն ՚ի Սողոմ ընդ երեկս. և Ղովտ նստէր առ դրան
Սողոմացւոցն: Իբրև ետես Ղովտ՝ յարեաւ ընդ առաջ նոցա, և երկիր եպագ ՚ի
վերայ երեսաց իւրոց յերկիր՝ և ասէ. ²Ահաւասիկ ես՝ տեա՛րք, եկա՛յք ՚ի տուն
ծառայի ձերոյ, հանգերո՛ւք, և լուացից զոտս ձեր, և կանխեալ ընդ առաւօտս
երթիջիք զճանապարհի ձեր: Եւ ասեն. Ո՛չ. այլ ՚ի քաղաքամիջի աստ ազգուք՞:

* Ոմանք. Ոչ այդպէս է. այլ:

* Ոմանք. Լինելով եղիցի յազգ:

* Այլք. Եւ արդ իջեալ տե՛:

* Ոմանք. Ջարդարն ընդ ամբարիշտս:

* Այլք. Եթէ գտանիցի անդ տասն:

* Ոմանք. Ահաւանիկ ես.. ընդ առաւօտն երթի՞:

³Եւ բռնադատեաց զնոսա յոյժ. և խոտորեցան առ նա, և մտին ՚ի տուն նորա. և արար նոցա ընթրիս. և բաղարջ եփեաց նոցա՝ և կերան: ⁴Մինչ չև՝ ՚ի քուն մտեալ էր նոցա, և արք քաղաքին Սողոմաւոց պատեցին զտունն յերիտասարդաց մինչև ցօերս, ամենայն ժողովուրդն ՚ի միասին: ⁵Եւ կոչէին արտաքս զՂովտ, և ասեն ցնա. Ո՞ւր են արքն որ մտին առ քեզ գիշերի. ա՛ժ զնոսա առ մեզ զի գիտասցուք զնոսա՞: ⁶Եւ ել առ նոսա Ղովտ՝ արտաքոյ դրանն, և զդուռն ձգեաց զկնի իւր: ⁷Եւ ասէ ցնոսա. Քա՛ւ լիցի ձեզ եղբարք, մի՛ գործէք զայդ չարիս: ⁸Են իմ երկու դստերք որ զայր ո՛չ գիտեն, հանից զնոսա առ ձեզ, և արարէք ընդ նոսա որպէս հաճոյ իցէ ձեզ, բայց միայն արանցդ այդոցիկ մի՛ ինչ մե՛ղ առնիցէք. որովհետև մտին ընդ յարկաւ գերանաց իմոց՞: ⁹Եւ ասեն. ՚ի բա՛ց կաց. մտեր բնակել պանդխտութեամբ. միթէ և դատաստա՞ն ևս դատել: Այժմ և զքե՛զ ևս չարչարեսցուք առաւել քան զնոսա: Եւ բռնադատէին զայրն զՂովտ յոյժ, և մերձ էին զդուռն խորտակել՞: ¹⁰Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց կորզեցին յինքեանս զՂովտ ՚ի տուն անդր, և զդուրս տանն փակեցին: ¹¹Եւ զարսն որ առ դուրս տանն կային հարին կուրութեամբ ՚ի փոքուէ մինչև ցմեծն. և լքան խնդրել զդուրսն: ¹²Եւ ասեն արքն ցՂովտ. Է՞ որ քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք, կամ այլ որ քո՝ իցէ՞ ՚ի քաղաքի աստ. հա՛ն զնոսա ՚ի տեղոջէ յայսմանէ՞: ¹³Ձի կործանելոց ենք զքաղաքս զայս. զի բարձրացա՛ւ աղաղակ սոցա առաջի Տեառն, և առաքեաց զմեզ Տէր սատակել՝ զսա՞: ¹⁴Ել Ղովտ և խօսեցաւ ընդ փեսայս իւր որ առնլոց էին զդստերս նորա. և ասէ. Արի՛ք՝ ելէ՛ք ՚ի տեղոջէ աստի յայսմանէ, զի սատակէ՛ Տէր զքաղաքս: Եւ թուէր ծաղր առնել յաչս փեսայից իւրոց: ¹⁵Եւ իբրև եղև առաւօտ, փութացուցանէին հրեշտակքն զՂովտ՝ և ասէին. Արի՛ առ զկին քո և զերկուս դստերս քո զոր ունիս, և ել աստի, զի մի՛ և դու՛ կորնչիցիս ընդ անօրէնութիւն քաղաքիդ՞: ¹⁶Եւ նորա խռովեցան: Եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա, և զձեռանէ կնոջ նորա, և զձեռանէ երկուց դստերաց նորա. զի խնայեաց Տէր ՚ի նա: Եւ հանին զնա, և եդին արտաքոյ քաղաքին: ¹⁷Եւ եղև իբրև հանին զնոսա արտաքս, ասեն. Ապրեցո՛՛ զանձն քո, մի՛ դառնայցես յետս, և մի՛ կայցես յամենայն կողմանս աշխարհիդ. գերծիր՛ ՚ի լեառն, զուցէ՛ ընդ նոսա ըմբռնիցիս: ¹⁸Եւ ասէ Ղովտ ցնոսա. Աղաչեմ Տէր՞, ¹⁹որովհետև եգիտ ծառայ քո ողորմութիւն առաջի քո, և մե՛ծ արարեր զարդարութիւն քո, զոր առնես յիս ապրել անձին իմոյ. և արդ ես ո՛չ կարեմ գերծանել ՚ի լեառն, զուցէ՛ հասանիցեն ինձ չարիքն, և մեռանիցիմ՞: ²⁰Ահա քաղաքս այս մերձ է անկանել ՚ի նա, որ է փոքրիկ, անդ ապրեցայց, և չէ՛ փոքր, և կեցցէ անձն իմ վասն քո: ²¹Եւ ասէ ցնա. Ահաւասիկ արարի մեծարանս երեսաց քոց. և ՚ի բանիդ յայդմիկ չկործանել զքաղաքն վասն որոյ խօսեցար: ²²Եւ արդ՝ փութա՛՛ գերծանել ՚ի նա. զի ո՛չ կարեմ առնել իրս ինչ մինչև անկանիցիս անդր. վասն այնորիկ կոչեաց զանուն քաղաքին այնորիկ Սեգովր: ²³Արեգակն ծագեաց յերկիր, և Ղովտ եմուտ ՚ի Սեգովր: ²⁴Եւ

* Այլք. Եւ ասէին ցնա:

* Ոսկան. Մի՛ ինչ մեղս առնիցէք:

* Այլք. Չդուրսն խորտակել:

* Ոմանք. Է որ քո անդ փեսայ: Ոսկան. Այլ որ որ քո իցէ:

* Ոմանք. Ձի կորուսանելոց ենք մեք զքաղաքս:

* Այլք. Ընդ անօրէնութիւնս քա՞:

* Ոսկան. Աղաչեմ տեարք իմ:

* Ոմանք. Գուցէ հասանիցէ ինձ չարիք:

Տէր տեղաց' ՚ի Սողոմ և ՚ի Գոմոր ծըծումբ և հուր ՚ի Տեառնէ յերկնից*։ ²⁵Եւ կործանեաց զքաղաքսն զայնոսիկ, և զամենայն կողմանսն, և զամենայն բնակիչս քաղաքացն, և զամենայն բոյս երկրին։ ²⁶Եւ դարձաւ կինն Ղովտայ յետս, և եղև արծան աղի։ ²⁷Եւ կանխեալ Աբրաամ ընդ առաւօտն ՚ի տեղին ուր կայր առաջի Տեառն։ ²⁸Եւ հայեցաւ յերեսս Սողոմացւոց և Գոմորացւոց, և յամենայն երեսս երկրի գաւառին. և ետես և ահա ելանէր բոց երկրին իբրև մրրիկ հնոցի։ ²⁹Եւ եղև ՚ի սատակել Տեառն զամենայն զքաղաքսն զայնոսիկ շուրջ զբնակութեամբն, յիշեաց Աստուած զԱբրաամ, և եհան արծակեաց զՂովտ ՚ի միջոյ կործանմանն, ՚ի կործանել Տեառն զքաղաքսն յորս բնակեալ էր ՚ի նոսա Ղովտ*։ ³⁰Եւ ել Ղովտ ՚ի Սեգովրայ, և նստէր ՚ի լերինն, և երկոքին դստերք նորա ընդ նմա. քանզի երկեալ բնակել ՚ի Սեգովր. և բնակեաց յայրի անդ, ինքն և երկոքին դստերք նորա ընդ նմա։ ³¹Եւ ասէ երեցն ցկրցերն. Զայր մեր ծերացեալ է, և չի՞ք ոք յերկրի որ մտանիցէ առ մեզ, որպէս օրէն է ամենայն երկրի*։ ³²Եւ արբուսցո՛ւք հօր մերում զինի, և ննջեսցո՛ւք ընդ նմա, և յարուսցուք ՚ի հօրէ մերմէ զաւակ*։ ³³Եւ արբուցին հօրն իւրեանց զինի ՚ի զիշերին յայնմիկ. և եմուտ երեցն ննջեաց ընդ հօրն իւրում զզիշերն զայն. և ո՛չ գիտէր ՚ի ննջելն նորա և ՚ի յառնել։ ³⁴Եւ եղև ՚ի վաղիւ անդր, և ասէ երեցն ցկրտսերն. Ահա ննջեցի՛ ես երեկ ընդ հօր իմում, արբուսցո՛ւք նմա զինի և ՚ի զիշերիս յայսմիկ. և մուտ ննջեա՛ ընդ նմա. և յարուսցո՛ւք զաւակ ՚ի հօրէ մերմէ։ ³⁵Եւ արբուցին և յայնմ զիշերի զինի հօրն իւրեանց. և եմուտ կրտսերն և ննջեաց ընդ հօրն իւրում. և ո՛չ գիտէր ՚ի ննջելն նորա և ՚ի յառնել։ ³⁶Եւ յղացան երկոքին դստերքն Ղովտայ ՚ի հօրէն իւրեանց։ ³⁷Եւ ծնաւ երեցն որդի, և կոչեաց զանուն նորա Սովաբ. ասէ, ՚ի հօրէ՛ իմմէ. նա՛ է հայր Սովաբացւոց մինչև ցայսօր ժամանակի։ ³⁸Ծնաւ և կրցերն որդի՝ և կոչեաց զանուն նորա Ամման. ասէ, որդի ազգի իմոյ. նա՛ է հայր Ամոնացւոց մինչև ցայս օր ժամանակի*։

20

Գլուխ Ի

ԻԲ ¹Եւ չուեաց անտի Աբրաամ յերկիրն հարաւոյ, և բնակեցաւ ընդ Կադէս և ընդ Սուր. և պանդխտեցաւ ՚ի Գերարայ։ ²Եւ ասաց Աբրաամ վասն Սառայի կնոջ իւրոյ թէ քոյր իմ է։ Եւ առաքեաց Աբիմելէք արքայ Գերեարացւոց, և ա՛ռ զՍարրա*։ ³Եւ եկն Աստուած առ Աբիմելէք ՚ի տեսլեան # զիշերոյ, և ասէ. Ահա մեռանի՛ս վասն կնոջդ զոր առեր, զի կին՝ առնակին է։ ⁴Բայց Աբիմելէք ո՛չ մերձեցաւ ՚ի նա։ Եւ ասէ. Տէր, զազգ մի զանգէտ և զարդար՝ կորուսանիցե՞ս։ ⁵Ոչ ապաքէն նա՛ ասաց ցիս քոյր իմ է, և սա՛ ասաց ցիս եղբայր իմ է, և ես սրբութեամբ սրտի՝ և արդարութեամբ ձեռաց արարի զայս։ ⁶Եւ ասէ ցնա Աստուած ՚ի տեսլեանն. Ես գիտացի՛ զի սրբութեամբ սրտի արարեր դու զայդ. և

* Ոմանք. Եւ Տէր տեղեաց ՚ի Սո՛ւ։

* Այլք. Զքաղաքսն շուրջ զբնա՛։

* Անունս՝ կրտսեր, արտաքոյ սովորականին՝ յօրինակի մերում ուրեք ուրեք գրեալ էր՝ կրցեր, ըստ որում և մեր եղաք համաձայն իւրաքանչիւր տեղեաց։

* Այլք. Եկ և արբուսցուք։

* Ոմանք. Զանուն նորա Ամոն։

* Այլք. Կնոջն իւրոյ... արքայ Գերարացւոց։

խնայեցի ես ՚ի քեզ չմեղանչել քեզ յիս. վասն այնորիկ ո՛չ ետու թոյլ քեզ մերձենալ ՚ի դա*։ ⁷Բայց արձակեա՛ զկինդ յա՛յր իւր. զի այր մարգարէ է, և արասցէ աղօթս վասն քո և կեցցես: Ապա թէ ո՛չ տացես, գիտեա՛ զի մեռանիս դու և ամենայն որ ինչ քո է*։ ⁸Եւ կանխեաց Աբիմելէք ընդ առաւօտն՝ և կոչեաց զամենայն զծառայս իւր, և խօսեցաւ զամենայն բանս զայստսիկ յականջս նոցա: Եւ զահի՛ հարան ամենայն մարդիկն յոյժ: ⁹Եւ կոչեաց Աբիմելէք զԱբրաամ, և ասէ ցնա. Չի՞նչ գործեցեր դու զայդ ընդ մեզ. միթէ մեղա՞ք ինչ քեզ՝ զի ածեր ՚ի վերայ իմ և ՚ի վերայ թագաւորութեան իմոյ մեղս մեծամեծս. գործ զոր ո՛չ ոք գործէ՝ գործեցեր ընդ իս: ¹⁰Եւ ասէ Աբիմելէք ցԱբրաամ. Չի՞նչ տեսեալ արարեր զբանդ զայդ: ¹¹Եւ ասէ Աբրաամ. Չի ասացի՞ թէ զուցէ ո՛չ զուցէ աստուածպաշտութիւն ՚ի տեղւոջս յայսմիկ. և զիս սպանանիցեն վասն կնոջդ իմոյ: ¹²Բայց արդարն՝ քո՛յր իմ է ՚ի հօրէ և ո՛չ ՚ի մօրէ. և եղև ինձ կին: ¹³Եւ եղև յորժամ եհան զիս Աստուած ՚ի տանէ հօր իմոյ, և ես ասացի ցդա. զայս արդարութիւն արասցես ընդ իս. յամենայն տեղիս ուր և երթիցուք, ասասջիր զինէն թէ եղբայր իմ է*։ ¹⁴Եւ ա՛ռ Աբիմելէք հազար սատեր, և արջառ և ոչխար, ծառայս և աղախնայս, և ետ Աբրաամու. և ետ ցնա զՍառա զկին իւր: ¹⁵Եւ ասէ Աբիմելէք ցԱբրաամ. Ահաւասիկ երկիրդ իմ առաջի քո, ուր հաճոյ իցէ քեզ բնակեա՛ց՝: ¹⁶Եւ ցՍառա ասէ. Ահա ետու հազար սատեր եղբօր քում, այն եղիցի քեզ ՚ի պատիւ երեսաց քոց, և ամենայն կանանց որ ընդ քեզ են. և զամենայն արդար խօսեսցիս*։ ¹⁷Եւ եկաց յաղօթս Աբրաամ առ Աստուած. և բժշկեաց զԱբիմելէք և զկին նորա, և զաղախնայս նորա, և ծնանէին*։ ¹⁸Չի փակելով փակեաց Տէր արտաքուստ զամենայն արգանդ ՚ի տան Աբիմելիքայ վասն Սառայի կնոջ Աբրաամու:

21

Գլուխ ԻԱ

ԻԳ ¹Եւ Տէր յայց ել Սառայի որպէս և ասաց. և արար Տէր Սառայի՝ որպէս և խօսեցաւ: ²Եւ յղեցաւ և ծնաւ Սառա Աբրաամու որդի ծերութեան. ըստ ժամանակին որպէս և խօսեցաւ ընդ նմա Աստուած*։ ³Եւ կոչեաց Աբրաամ զանուն որդւոյ իւրոյ զոր ծնաւ նմա Սառա՝ Իսահակ: ⁴Եւ թլփատեաց Աբրաամ զԻսահակ զորդի իւր յաւուր ութերորդի, որպէս և պատուիրեաց նմա Տէր Աստուած: ⁵Եւ Աբրաամ հարկրամեան էր յորժամ եղև նմա Իսահակ որդի իւր: ⁶Եւ ասէ Սառա. Ծաղր արար զիս Աստուած. զի որ և լսիցէ՝ ուրախ լինիցի ընդ իս*։ ⁷Եւ ասէ. Ո՛վ պատմեսցէ Աբրաամու եթ սնուցանիցէ մանուկ՝ Սառա. զի ծնայ որդի՛ ՚ի ծերութեան իմում*։ ⁸Եւ աճեաց մանուկն, և հատուցաւ ՚ի ստեղծ. և

* Ոմանք. Ոչ ետու թոյլ մերձենալ:

* Ոմանք. Ապա թէ ո՛չ տայցես.. և ամենայն ինչ որ քո է:

* Ոմանք. Չայդ արդարութիւն:

* Ոմանք. Ահաւաղիկ երկիրդ իմ առա՛:

* Այլք. Արդար խօսիցիս:

* Յօրինակին. Եւ եկեաց յաղօթս:

* Ոմանք. Եւ յղացաւ ծնաւ Սար՛:

* Ոմանք. Ծաղր արարեր զիս Աստուած.. ուրախ լիցի ընդ իս:

* Ոմանք. Եթ սնուցանէ մա՛:

արար Աբրահամ ուրախութիւն մեծ յաւուր յորում հատուցաւ ՚ի ստենէ Իսահակ որդի իւր*:

Ի 7⁹ Եւ տեսեալ Սառայի զորդին Ագարայ Եգիպտացոյ՝ որ եղև Աբրահամու, զի խաղայր ընդ Իսահակայ որդւոյ իւրում, և ասէ ցԱբրահամ. ¹⁰Ի բաց հան զաղախինդ և զորդի դորա. զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ իմում Իսահակայ: ¹¹Եւ խի՛ստ թուեցաւ բանն առաջի Աբրահամու վասն որդւոյ նորա: ¹²Եւ ասէ Աստուած ցԱբրահամ. Մի՛ ինչ խիստ թուեսցի առաջի քո վասն մանկանն և վասն աղախնոյն: Չամենայն զոր զինչ ասիցէ քեզ Սառա՝ լուր ձայնի նորա. զի Սահակաւ կոչեսցի քեզ զաւակ: ¹³Բայց զորդի աղախնոյդ արարից յա՛զգ մեծ, զի սերմն քո՛ է՛: ¹⁴Յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն՝ և ա՛ռ հաց և տիկ ջրոյ և ետ ցԱգար, և ե՛ր յուս նորա զմանուկն, և արձակեաց զնա: Եւ երթեալ մոլորեալ շրջէր յանապատի անդ առ Ջրհորովն երդման*։ ¹⁵Եւ նուազեաց ջուր ՚ի տկէ անտի. և ընկէ զմանուկն ՚ի ներքոյ միոյ եղևին ծառոյ: ¹⁶Եւ երթեալ նստաւ յանդիման նորա ՚ի բացեայ իբրև վտաւանաւ. զի ասէր՝ թէ ո՛չ տեսից զմահ որդւոյն իմոյ. և նստէր յանդիման նորա: Չայն բարձեալ մանկանն լայր*։ ¹⁷Եւ լուաւ Աստուած ձայնի մանկանն ՚ի տեղւոջն ուր էր: Եւ կոչեաց Աստուած զԱգար յերկնից՝ և ասէ ցնա. Չի՞նչ է այդ Ագար, մի՛ երկնչիր. զի լուաւ Աստուած ձայնի որդւոյ քոյ ՚ի տեղւոջէ այտի ուր է*։ ¹⁸Արի ա՛ռ զմանուկն քո, և զօրացո՛ զնա ձեռամբ. զի յազգ մեծ արարից զնա: ¹⁹Եւ եբաց Աստուած զաչս նորա, և ետես ջրհոր ջրոյ կենդանոյ. և չոգաւ ելից զտիկն ջրով և արբոյց մանկանն: Եւ էր Աստուած ընդ մանկանն. ²⁰և աճեաց, և եղև աղեղնաւոր: ²¹Եւ բնակէր յանապատին Փառանու. և ա՛ռ նմա մայր նորա կին յերկրէն Եգիպտացոց:

Ի Ե ²²Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ խօսեցաւ Աբիմելէք, և Ոքոզաթ տաճարապետ նորա, և Փիքաւղ սպարապետ զօրաց նորա. և ասեն ցԱբրահամ. Աստուած ընդ քե՛զ է յամենայնի զինչ և գործես*։ ²³Արդ՝ երդուիր ինձ յԱստուած չմեղանչել ինձ, և մի՛ զաւակի իմում, և անուան իմոյ. այլ ըստ արդարութեանն զոր արարի ընդ քեզ՝ արասցես ընդ իս, և երկրիս յորում բնակեալ ես ՚ի սմա*։ ²⁴Եւ ասէ Աբրահամ. Ե՛ս երդնում: ²⁵Եւ յանդիմանեաց Աբրահամ զԱբիմելէք՝ վասն ջրհորոյն ջրոց զորս հանին ծառայքն Աբիմելէքայ*։ ²⁶Եւ ասէ ցնա Աբիմելէք. Ո՛չ գիտացի ո՛ր արար զայն իրս, և դու ո՛չ պատմեցեր ինձ. և իմ ո՛չ էր լուեալ՝ բայց այսօր: ²⁷Եւ ա՛ռ Աբրահամ արջառս և ոչխարս՝ և ետ Աբիմելէքայ. և եդին երկոքին ուխտ ընդ միմեանս. ²⁸և կացոյց Աբրահամ եւթն որոջ ոչխարաց միայն: ²⁹Եւ ասէ Աբիմելէք ցԱբրահամ. Չի՞նչ են այս եւթն որոջք ոչխարաց զորս կացուցեր միայն: ³⁰Եւ ասէ. Չայդ եւթն որոջս առցես յինէն, զի եղիցի ինձ ՚ի վկայութիւն, թէ ե՛ս փորեցի զջրհորդ զայդ: ³¹Վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ Ջրհոր՝ երդման*։ ³²զի ա՛նդ երդուան երկոքին միմեանց, և անդ եդին ուխտ առ

* Ոմանք. ՚ի ստենէ Իսահակ որդի նորա:

* Ոմանք. Բայց և զորդի աղախնոյն:

* Ոմանք. Եւ ետ յուս նորա զմա՛:

* Ոմանք. Երթեալ նստէր յանդիման նորա ՚ի բացէ:

* Ոսկան ՚ի լուա՛. Եւ կոչեաց իրեշտակ Աստուծոյ զԱգար:

* Ոմանք. Եւ խօսեցաւ Աբիմելէք. և ասէ ցԱբրա՛:

* Ոմանք. Արդ երդուիր դու ինձ: *Ի լուս՛. Եւ մի՛ անուան իմոյ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:*

* Ոմանք. Վասն ջրհորոցն ջուրց զորս:

* Ոմանք. Չանուն տեղւոյն այնորիկ՝ Ջրհոր Բերսաբէ:

Ջրհորին երդման: Յարեաւ Արիմելէք և Ոքոզաթ տաճարապետ նորա, և Փիգաւղ սպարապետ զօրաց նորա. և դարձան անդրէն յերկիրն Փղշտացւոց: ³³Եւ տնկեաց Աբրաամ տունն առ Ջրհորովն երդման. և կարդաց անդ զանուն Տեառն, Աստուած յաւիտենական: ³⁴Եւ պանդխտեցաւ Աբրաամ յերկիրն Փղշտացւոց աւուրս բազումն:

22

Գլուխ ԻԲ

ԻՋ ¹Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, փորձեա՛ց Աստուած զԱբրաամ՝ և ասէ ցնա. Աբրաամ Աբրաամ: Եւ նա՛ ասէ. Ա՛ւասիկ եմ: ²Եւ ասէ ցնա. Ա՛ռ դու զորդիդ քո սիրելի զոր սիրեցեր զԻսահակ, և գնա՛ դու յերկիր բարձր, և հանցես զդա անդ յողջակեզ՝ ՚ի վերայ միոյ լեռանց յորոց ասացից քեզ: ³Եւ յարեաւ Աբրաամ ընդ առաւօտն, համետեաց զէշ իւր. և ա՛ռ ընդ իւր երկուս ծառայս. և զԻսահակ զորդի իւր. և պատառեաց փայտ յողջակեզ՝ և յարեաւ գնա՛ց. և եկն ՚ի տեղին զոր ասաց նմա Աստուած: ⁴Եւ յաւուրն երրորդի համբարձ Աբրաամ զաչս իւր # և ետես զտեղին ՚ի հեռաստանէ: ⁵Եւ ասէ Աբրաամ ցպատանիս իւր. Նստարո՛ւք դուք այդր հանդերձ իշովդ. և ես և պատանեակդ երթիցուք մինչև ցանդր, և երկիր պագցուք և դարձցուք առ ձեզ: ⁶Եւ ա՛ռ Աբրաամ զփայտ ողջակիզին, և եդ ՚ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ. և առ ՚ի ձեռն զսուրն և զհուրն. և զնացին երկոքեան ՚ի միասին*: ⁷Եւ ասէ Իսահակ ցԱբրաամ հայր իւր. Զայր: Եւ նա ասէ. Զի՞ է ո՛րդեակ: Եւ նա ասէ. Ահա հուր՝ և ահա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակեզ*: ⁸Եւ նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակեզ ո՛րդեակ: Գնացին երկոքեան ՚ի միասին, ⁹և եկին ՚ի տեղին զոր ասաց նմա Աստուած: Անդ շինեաց սեղան Աբրաամ. և եդ ՚ի վերայ զփայտն: Եւ կապեաց զԻսահակ զորդի իւր, և եդ զնա ՚ի սեղան ՚ի վերայ փայտին*: ¹⁰Եւ ձգեաց Աբրաամ զձեռն առնուլ զսուրն և զգնուլ զորդին իւր: ¹¹Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից՝ և ասէ. Աբրաամ Աբրաամ: Եւ նա ասէ ցնա. Ա՛ւասիկ եմ: ¹²Եւ ասէ. Սի՛ մխեր զձեռն քո ՚ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղա՛ծ ես դու յԱստուծոյ, և ո՛չ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ: ¹³Զամբարձ Աբրաամ զաչս իւր և ետես, և ահա խոյ մի կախեա՛լ կայր զծառոյն սաբեկայ զեղջերաց: Եւ զնա՛ց Աբրաամ առ զխոյն, և եհան զնա յողջակեզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ: ¹⁴Եւ կոչեաց Աբրաամ զանուն տեղւոյն այնորիկ Տէր ետես. զի ասիցեն ցայսօր ՚ի լերինս յայսմիկ Տէր երևեցաւ*: ¹⁵Եւ կոչեաց հրեշտակ Տեառն զԱբրաամ երկիցս անգամ յերկնից՝ և ասէ. ¹⁶Յանձն իմ երդուայ՝ ասէ Տէր, փոխանակ զի արարե՛ր դու զբանդ զայդ, և ո՛չ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ. ¹⁷այո՛ օրհնելով օրհնեցի՛ց զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զգաւակ քո որպէս զաստեղս երկնից բազմութեամբ. և որպէս զաւազ առ ավին ծովու. և ժառանգեսցէ՛ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց*: ¹⁸Եւ

* Ոմանք. Ջանուն Տեառն Աստուծոյ յաւիտենական:

* Ոմանք. Ի ձեռն զհուրն և զսուրն:

* Ոմանք. ՅԱբրաամ ցհայր իւր:

* Այլք. Ի սեղանն ՚ի վերայ փայտին:

* Ոմանք. Ի լերինն յայսմիկ Տէր:

* Ոմանք. Իբրև զաստեղս երկ՛ւ. և իբրև զաւազ:

օրհնեսցի՛ն 'ի զաւակի քուն ամենայն ազգք երկրի. փոխանակ զի լուս'ր ձայնի ինուն: ¹⁹Պարծա՛ւ Աբրաամ առ պատանիսն իւր, և յարուցեալ գնացին 'ի միասին 'ի Ջրհորն երդման. և բնակեցաւ Աբրաամ առ Ջրհորովն երդման*:

ԻԷ ²⁰Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, պատմեցաւ Աբրաամու, թէ ահա ծնաւ Սեղ'քա և նա՛ որդիս Նաքովրայ եղբօր քուն: ²¹ԶՈվք զանդրանիկն նորա, և զԲաւ գեղբայր նորա, և զԿամուէլ հայր Ասորոց, ²²և զՔասադ, և զԱզաւ, և զՓաղղաս, և զՅետդափ, և զԲաթուէլ* . ²³և Բաթուէլ ծնաւ զՌեբեկա: Ո՛ւթ սոքա որդիք՝ զորս ծնաւ Սեղ'քա Նաքովրայ եղբօր Աբրաամու: ²⁴Եւ հա՛րճն նորին որոյ անուն էր Ռեմա, ծնաւ և նա զՏաբել, և զԳասմ, և զՏոքոս, և զՍովքա*:

23

Գլուխ ԻԳ

ԻԸ ¹Եւ եղեն կեանք Սառայի հարիւր և քսան և եւթն ամ: ²Եւ մեռաւ Սառա 'ի քաղաքի Աբրոկա՛ 'ի ձորն, այն ինքն է Քեբրոն յերկրին Քանանացոց: Եւ եկն Աբրաամ կոծե՛լ զՍառա և սո՛ւզ առնուլ: ³Եւ յարեաւ Աբրաամ 'ի մեռելոյն իւրմէ, և խօսեցաւ ընդ որդիսն Քետեայ՝ և ասէ*. ⁴Պանդուխտ և նժդեհ եմ ես 'ի միջի ձերում. արդ՝ տուք ինձ ստացուած գերեզմանի ընդ ձեզ և թաղեցից զմեռեալս իմ: ⁵Պատասխանի ետուն որդիքն Քետայ Աբրաամու՝ և ասեն. ⁶Ո՛ւնկն դիր մեզ Տէր, թագաւոր յԱստուծոյ ես 'ի միջի մերում, յընտի՛ր շիրմաց մերոց թաղեա՛ զմեռեալն. զի ո՛չ ոք 'ի մէնջ արգելու 'ի քէն զշիրիմս*: ⁷Յարեա՛ւ Աբրաամ երկիր եպագ ժողովրդեան երկրին որդւոցն Քետայ*: ⁸Եւ խօսեցաւ ընդ նոսա Աբրաամ՝ և ասէ. Եթէ յօժար իցէք 'ի մտի ձերում թաղել զմեռեալդ իմ յերեսաց ինոց, ո՛ւնկն դիք ինձ, և խօսեցարու՛ք վասն իմ ընդ Եփրոնի որդւոյ Սահառայ*, ⁹և տացէ ինձ զայրն կրկին, որ է 'ի վիճակի ազարակի իւրոյ, արծաթոյ՝ որչափ և արծան իցէ. տացէ՛ զնա ինձ 'ի միջի ձերում 'ի ստացուած բնակաց: ¹⁰Եւ Եփրոն նստեր 'ի մէջ որդւոցն Քետայ: Պատասխանի՛ ետ Եփրոն Քետացի Աբրաամու՝ և ասէ. Լո՛ւ 'ի լու որդւոցն Քետայ, և ամենեցուն որ մտանէին ընդ դուռն քաղաքի նորա: ¹¹Եւ ասէ. Յի՛ս դարձ Տէր. և ո՛ւնկն դիր ինձ. զազարակն ետու քեզ, և զայրն որ 'ի նմա տա՛ց քեզ առաջի ամենայն քաղաքակցաց ինոց ետու քեզ թաղել զմեռեալն քո*: ¹²Եւ երկիր եպագ Աբրաամ առաջի ամենայն ժողովրդեան երկրին. ¹³և խօսեցաւ ընդ Եփրոնի յականջս ժողովրդեան երկրին, և ասէ. Որովհետև անսացեր ինձ, ո՛ւնկն դիր ինձ. տա՛ց քեզ արծաթ ընդ ազարակին, ա՛ռ յինէն և թաղեցից անդ զմեռեալս: ¹⁴Պատասխանի ետ Եփրոն Աբրաամու՝ և ասէ ցնա. ¹⁵Ո՛չ տեր իմ. լուայ թէ գետինն չորեքհարկր սատեր արծաթոյ է, ընդ իս և ընդ քեզ զի՞նչ է այն. բայց դու թաղեա՛ զմեռեալն քո*: ¹⁶Եւ իբրև լուաւ Աբրաամ

* Ոմանք. Եւ բնակեաց Աբրաամ առ Ջրհորին երդ՞:

* Ոմանք. Եւ զՔազադ և զԱսաւ:

* Այլք. Որոյ էր անուն Ռեեմայ:

* Ոմանք. 'Ի մեռելոյ անտի իւրմէ:

* Այլք. Թաղեա՛ զմեռեալդ քո: Յօրհնակին պակասէր. Ձի ո՛չ ոք 'ի մէնջ արգե՞:

* Ոմանք. Եւ երկիր եպագ ժո՞:

* Յօրհնակին պակասէր. Վասն իմ ընդ Եփրոնի:

* Այլք. Թաղեա՛ զմեռեալն քո:

* Ոմանք. Չորեքհարիւր սատերի ար՞:

յեփրոնէ, կշռեա՛ց զարժաթն Եփրոնի, զոր խօսեցաւն յականջս որդւոցն Քետայ, չորեքհարիւր սատեր արժաթոյ ընտրոյ վաճառականաց*։ ¹⁷Եւ հաստատեցա՛ւ ազարակն Եփրոնի, որ է՛ առ կրկնով այրիւն յանդիման Մամբրէի, ազարակն և այրն որ է՛ ՚ի նմա. և ամենայն ծառատունկ որ է յազարակի անդ, շուրջ յամենայն սահմանս նորա*, ¹⁸ի ստացուածս Աբրաամու առաջի որդւոցն Քետայ, և որ մտանէին ընդ դուռն քաղաքի նորա։ ¹⁹Եւ յետ այնորիկ թաղեաց Աբրաամ զՍառա զկին իւր ՚ի կրկնումն այրի ազարակին, որ է յանդիման Մամբրէի. այն է Քեբրոն յերկրին Քանանացւոց։ ²⁰Եւ հաստատեցա՛ւ ազարակն և այրն որ է՛ ՚ի նմա՝ Աբրաամու, ՚ի ստացուածս շիրմաց յորդւոցն Քետայ։

24

Գլուխ ԻԴ

¹Եւ Աբրաամ ծերացեալ էր և անցեալ զաւուրբք. և Տէր օրհնեաց զԱբրաամ ամենայնիւ*։

ԻԹ ²Եւ ասէ Աբրաամ ցժառայն իւր ցերէց տան իւրոյ, ցիշխան ամենայն ընչից նորա. Դի՛ր զձեռն քո ընդ երանօք իմովք*. ³և երդմնեցուցից զքեզ ՚ի Տէր, յԱստուած երկնից, և յԱստուած երկրի, զի մի՛ առցես կին որդւոյ իմում Իսահակայ ՚ի դստերաց Քանանացւոց յորոց միջի ե՛ս բնակեմ*։ ⁴Այլ յերկիրն իմ ուստի ելեալ եմ երթիցես, և ՚ի տուն իմ. և առցես դու անտի՛ կին որդւոյ իմում Իսահակայ։ ⁵Ասէ ցնա ծառայն. Գուցէ՛ կինն ո՛չ կամիցի զալ ընդ իս յերկիրս յայս, դարձուցանելով դարձուցի՞ց զորդի քո յերկիրն ուստի ելեր։ ⁶Եւ ասէ Աբրաամ. Ջգո՛յշ լեր, մի՛ դարձուցանիցես զորդի իմ անդր։ ⁷Տէր Աստուած երկնից, և Աստուած երկրի, որ ա՛ռ զիս ՚ի տանէ հօր իմոյ, և յերկրէն ուստի ծնեալ էի, որ խօսեցա՛ւն ընդ իս՝ և երդուաւ ինձ և ասէ. Ջաւակի՛ քում տաց զերկիրդ զայդ. նա՛ առաքեսցէ զիրեշտակ իւր առաջի քո. և առցես անտի կին որդւոյ իմում Իսահակայ։ ⁸Ապա թէ ո՛չ կամիցի կինն զալ ընդ քեզ յերկիրս յայս, քաւեա՛լ լիջիր դու յերդմանէդ յայդմանէ։ Բայց միայն զորդեակդ իմ մի՛ դարձուցանիցես անդր։ ⁹Եւ ե՛դ ծառայն Աբրաամու զձեռն իւր ընդ երանօք տեառն իւրոյ՝ և երդուա՛ւ նմա վասն բանիս այսորիկ*։ ¹⁰Եւ ա՛ռ ծառայն տասն ուղտ յուղտուց տեառն իւրոյ՝ և զնա՛ց. և յամենայն բարութեանց տեառն իւրոյ ընդ իւր։ Եւ յարեաւ զնա՛ց ՚ի Միջագետս ՚ի քաղաքն Նաքովրայ. ¹¹և նստոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս յորժամ ջրուորն ելանէր։ Եւ ասէ*. ¹²Տէր Աստուած տեառն իմոյ Աբրաամու՝ յաջողեա՛ առաջի իմ այսօր. և արա՛ ողորմութիւն ընդ տեառն իմում Աբրաամու։ ¹³Աւասիկ ես կամ ՚ի վերայ աղբեր ջրոյս, և դստերք բնակչաց քաղաքիս ելանեն հանել ջուր։ ¹⁴Եւ եղիցի կոյս մի որում ես ասացից, թէ խոնարհեցո՛ զսափորդ քո զի արբից, և ասէ զիս՝ ա՛րբ, և ուղտուցդ քոց և՛ս արբուցից մինչև դադարեսցին յըմպելոյ, զայն

* Ոմանք. Կշռեաց Աբրաամ զարժաթն։

* Այլք. Որ էր յազարակի անդ։

* Այլք. Էր ծերացեալ և անց՛։

* Ոմանք. Ընդ երանօք իւրովք։

* Ոմանք. ՚Ի դստերաց աստի Քանանաց՛. յորոց միջի ես բնակեալ եմ։

* Ոմանք. Ընդ երանօք Աբրաամու տեառն։

* Յօրինակին. Յորժամ ջրուորն ելանէր։

պատրաստեցեր ծառային քուն Իսահակայ. և այնո՛ւ գիտացից թէ արարեր ողորմութիւն տեառն իմուն Աբրաամու*։ ¹⁵Եւ եղև մինչչև՛ կատարեալ էր նորա զխօսան ՚ի մտի իւրուն, և ահա Ռեբեկա եկն ել, որ ծնեալն էր Բաթուելի որդւոյ Մեղքեայ կնոջ Նաքովրայ եղբօր Աբրաամու. և ունէր սափոր յո՛ւս իւր։ ¹⁶Եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք յոյժ. կոյս՝ զոր այր ո՛չ գիտէր։ Եջ յաղբերն, և ելից զսափորն իւր և ել*։ ¹⁷Ընթացա՛ւ ծառայն ընդ առաջ նորա և ասէ. Արբո՛ ինձ սակաւ մի ջուր ՚ի սափորոյ այտի։ ¹⁸Եւ նա ասէ. Ա՛րբ տէր։ Եւ փութացաւ իջոյց զսափորն ՚ի վերայ բազկաց իւրոց. և արբոյց նմա՝ ¹⁹մինչև դադարեաց յըմպելոյ։ Եւ ասէ. Եւ ուղտուց քոց հանից ջուր մինչև ամենեքեան արբցեն։ ²⁰Եւ փութացաւ թափեաց զսափորն յաւազանն, և ընթացաւ դարձեալ ՚ի ջրհորն հանել. և եհան ջուր ամենայն ուղտուց նորա։ ²¹Եւ այրն միտ դնէր նմա, և լուռ կայր ՚ի միտ առնուլ. եթէ աջողեա՞ց Տէր զճանապարհ նորա՝ և թէ ոչ։ ²²Եւ եղև իբրև դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ, և առ այրն գինդս ոսկիս մի մի ըստ դահեկանի ծուղոյ՞ոյ, և երկուս ապարանջանս ՚ի ձեռս նորա. ՚ի տասն դահեկանէ ձոյլ նոցա։ ²³Եւ եհարց զնա՝ և ասէ. Ո՞յր դուստր ես դու, պատմեա՛ ինձ թէ իցե՞ ՚ի տան քուն մեզ տեղի յիջավանաց*։ ²⁴Եւ ասէ ցնա. Դուստր Բաթուելի՛ եմ ես որդւոյ Մեղքեայ զոր ծնաւ Նաքովրայ։ ²⁵Եւ ասէ ցնա. Եւ յարդ և խոտ շատ է մեր, և տեղի իջավանաց։ ²⁶Խնդա՛ց այրն, և երկիր ետագ Աստուծոյ, ²⁷և ասէ. Օրհնեալ Տէր Աստուած տեառն իմոյ Աբրաամու. որ ո՛չ վրիպեցոյց զարդարութիւն իւր և զճշմարտութիւն ՚ի տեռնէ իմմէ. և ինձ յաջողեաց Տէր ՚ի տան եղբօր տեառն իմոյ*։ ²⁸Եւ ընթացաւ աղջիկն պատմեաց ՚ի տան մօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ*։ ²⁹Եւ Ռեբեկայ՝ էր եղբայր որուն անուն էր Ղաբան։ Եւ ընթացաւ Ղաբան առ այրն արտաքս յաղբերն, ³⁰իբրև ետես զգինդսն և զապարանջանսն ՚ի ձեռսն քեռ իւրոյ. և զի լուա՛ւ զբանսն յՌեբեկայ քեռէ իւրմէ՝ որ ասէր, թէ այսպէս ինչ խօսեցաւ ընդ իս այրն. և եկն առ այրն, մինչ կայր ՚ի վերայ ուղտուց իւրոց առ աղբերն. ³¹և ասէ ցնա. Ե՛կ մո՛ւտ ՚ի տուն օրհնեալ Տեառն. զի՞ կաս արտաքոյ, զի ես պատրաստեցի տուն և տեղի ուղտուցոյ։ ³²Եմո՛ւտ այրն ՚ի տուն անդր, և իջոյց ուղտուցն։ Եւ ետուն յարդ և խոտ ուղտուցն, և ջուր լուանալոյ ոտից նորա, և ոտից նոցա որ ընդ նմայն էին*։ ³³Եւ եղին հա՛ց առաջի նոցա ուտել։ Եւ նա ասէ. Ո՛չ կերայց մինչև խօսեցայց զբանս իմ։ Եւ ասեն՝ խօսեա՛ց։ ³⁴Եւ ասէ. Ծառայ Աբրաամու եմ ես. ³⁵և Տէր օրհնեաց զտէր իմ յոյժ, և բարձրացա՛ւ. և ետ նմա արջառ և ոչխար, և արծաթ և ոսկի, ծառայս և աղախնայս, ուղտս և էշս։ ³⁶Եւ ծնաւ Սառա՝ կին տեառն իմոյ որդի մի տեառն իմուն յետ ծերութեան իւրոյ. և նմա՛ ետ զամենայն ինչ որ էր նորա։ ³⁷Եւ երդմնեցոյց զիս տէր իմ՝ և ասէ. Ո՛չ առցես կին որդւոյ իմուն Իսահակայ ՚ի դստերաց աստի Քանանացւոց, յորոց միջի ե՛ս պանդխտեալս եմ յերկրի սոցա. ³⁸այլ ՚ի տուն հօր իմոյ երթիցես և ՚ի տոհմ իմ, և առցես անտի՛ կին որդւոյ իմուն։ ³⁹Եւ ես ասացի ցտէրն իմ. Գուցէ՛ ո՛չ գայցէ կինն ընդ իս։ ⁴⁰Եւ ասէ ցիս. Տէր Աստուած իմ որուն հաճոյ եղէ առաջի նորա, նա՛ առաքեսցէ զիրեշտակ իւր ընդ

* Այլք. Եւ ասացէ ցիս արբ. մինչև դադարեցեն։

* Ոմանք. Կոյս՝ որ գայր ո՛չ գիտէ։ *Յօրինակին պակասէր.* Եւ ելից զսափորն *իւր* և ել։ *Յօրինակին.* Եջ յաղբերն։

* Այլք. Տեղի իջավանաց։

* Ոմանք. Ի տեառնէ իմմէ, և ինձ.. ՚ի տանէ եղբօր տեառն իմոյ։

* Ոմանք. Պատմեաց ՚ի տան հօր իւրոյ։

* Ոսկան. Եւ իջոյց յուղտուցն։

քեզ, և յաջողեցէ՛ զճանապարհս քո. և առցես կին որդւոյ իմում յազգէ իմմէ, և ՚ի տանէ հօր իմոյ: ⁴¹Եւ յայնժամ քաւեալ լիցիս ՚ի նզովից աստի իմոց. յորժամ երթիցես ՚ի տոհմ իմ՝ և ո՛չ տացեն, քաւեալ լիցես յերդմանէ աստի իմմէ՛: ⁴²Եւ իբրև եկի այսօր յաղբերն՝ ասեմ. Տէր Աստուած տեառն իմոյ Աբրաամու, եթէ յաջողեցեր ինձ զճանապարհս իմ, զոր ե՛ս այժմիկ եկեալ եմ՝. ⁴³ահաւասիկ ես հասեալ կամ ՚ի վերայ աղբեր ջրոյս, և դստերք մարդկան քաղաքիս ելանեն տանել ջուր. և եղիցի կոյս ցոր ես ասացից՝ թէ արբո՛ ինձ սակաւ մի ջուր ՚ի սափորոյդ քունմէ՛, ⁴⁴և ասացէ ցիս՝ թէ արբ, և ուղտուցդ ևս քոց հանից ջուր, այն է կին զոր պատրաստեաց Տէր ծառայի իւրում Իսահակայ. և այնու գիտացից թէ արարեր զողորմութիւն ընդ տեառն իմում Աբրաամու: ⁴⁵Եւ եղև մինչև իմ կատարեալ էր զԽօսս ՚ի մտի իմում, անդէն վաղվաղակի ելանէր Ռեբեկա՝ և ունէր սափոր յուս իւր. էջ յաղբերն՝ և եհան ջուր: Եւ ասեմ ցնա արբո՛ ինձ: ⁴⁶Եւ փութացեալ իջոյց զսափորն յինքենէ՛ և ասէ. Արբ դու, և ուղտուցդ ևս քոց արբուցից: Եւ արբի. և ուղտուցն իմոց արբոյց: ⁴⁷Եւ հարցի ցնա՝ և ասեմ. Ո՞ր դուստր ես դու՝ պատմեա՛ ինձ: Եւ նա ասէ. Դուստր Բաթուելի՛ եմ ես՝ որդւոյ Նաբովրայ զոր ծնաւ նմա Մեղքա: Եւ եղի զի՛նդս յականջս նորա, և ապարանջանս ՚ի ձեռս նորա. և խնդացի՛. ⁴⁸և երկիր պագի Տեառն. և օրհնեցի զՏէր Աստուած տեառն իմոյ Աբրաամու, որ յաջողեաց ինձ ՚ի ճանապարհի աստ ճշմարտութեան. առնուլ զդուստր եղբօր տեառն իմոյ որդւոյ նորա: ⁴⁹Արդ՝ եթէ առնէք դուք շնորհս և արդարութիւն առ տէրն իմ, պատմեցէ՛ք ինձ. ապա թէ ոչ՝ ցուցէ՛ք ինձ զի դարձայց յա՛ջ կամ յահեակ: ⁵⁰Պատասխանի ետուն Դաբան և Բաթուել՝ և ասեն. Ի՛նչ Տեառնէ՛ ել իրդ այդ. և մեք ո՛չ կարենք հակառակ ինչ չար ասել բարւոյ: ⁵¹Ահաւաղիկ Ռեբեկա առաջի քոյ, ա՛ռ և գնա. և եղիցի կին որդւոյ տեառն քոյ՝ որպէս և խօսեցաւ Տէր: ⁵²Եւ եղև իբրև լուաւ ծառայն Աբրաամու զբանս նոցա, երկիր եպագ Տեառն: ⁵³Եւ եհան ծառայն անօթս ոսկւոյ և անօթս արծաթոյ, և հանդերձս, և ետ Ռեբեկայ. և ետ ընծայս եղբարց նորա և մօրն: ⁵⁴Կերան և արբին նա՛, և արքն որ ընդ նմա էին. և ննջեցին: Եւ յարուցեալ ՚ի վաղորդայն անդր՝ ասէ. Արձակեցէ՛ք զիս զի երթայց առ տէր իմ: ⁵⁵Եւ ասեն եղբարք նորա և մայրն. Կացցէ՛ կոյսն առ մեզ իբրև աւուրս տասն, և ապա՛ երթիցէ: ⁵⁶Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ խափանէք զիս. զի Տէր աջողեաց զճանապարհս իմ. արձակեցէ՛ք զիս զի երթայց առ տէրն իմ՝: ⁵⁷Եւ ասեն եղբարք նորա. Կոչեսցուք զաղջիկն, և հարցցուք ՚ի բերանոյ նորա: ⁵⁸Կոչեցին զՌեբեկա՝ և ասեն ցնա. Երթա՛ս ընդ առնս ընդ այսմիկ: Եւ նա ասէ. Երթա՛մ: ⁵⁹Եւ յուղարկեցին զՌեբեկա զքոյրն իւրեանց, և զինչս նորա. և զծառայն Աբրաամու, և որ ընդ նմայն էին՝: ⁶⁰Եւ օրհնեցին զՌեբեկա՝ և ասեն ցնա. Քոյր մեր եղիցես ՚ի հազարս և ՚ի բերս. և ժառանգեցէ՛ զաւակ քո զքաղաքս թշնամեաց քոց: ⁶¹Յարուցեալ Ռեբեկա և նաժիշտք իւր, ելին յուղտսն և գնացին ընդ առն: Եւ առեալ ծառային զՌեբեկա՝ գնաց՛: ⁶²Եւ Իսահակ յանապատի անդ առ Ջրհորովն տեսլեան բնակէր յերկրին ՚ի կողմ հարաւոյ՝: ⁶³Եւ ել Իսահակ

* *Ոմանք յերկոսիս ևս տեղիս ունին. Քաւեալ լիցես: Ուր ոմանք. Ի՛նչ նզովից աստի իմոյ:*

* *Ոմանք. Ջոր ես այժմ եկեալ եմ:*

* *Ոմանք. Ելանեն հանել ջուր:*

* *Ոմանք. Ջի Տէր յաջողեաց զճանապարհի իմ:*

* *Ոմանք յաւելուն. Եւ զինչս նորա. և զդայեկ նորա. և զծառայն Աբրաամու:*

* *Ոմանք. ՋՌեբեկա՝ և գնաց:*

* *Ոմանք. Եւ Իսահակ շրջէր յանապատի անդ առ Ջրհորով տեսլեանն բնակէր:*

զբօսանել 'ի դաշտին ընդ երեկս. ամբարձ գաչս իւր՝ և ետես՝ զի գային ուղտք տասն*։ ⁶⁴Ամբարձեալ գաչս իւր և Ռեբեկա ետես զԻսահակ, էջ վաղվաղակի յուղտուէ անտի*։ ⁶⁵և ասէ ցճառայն. Ո՞վ է այրն որ գայ 'ի դաշտին ընդ առաջ մեր: Եւ ասէ ծառայն. Նա՛ է տէրն իմ: Եւ նորա ամեալ ձորձս արկա՛ւ զիւրև: ⁶⁶Եւ պատմեաց ծառայն Իսահակայ զամենայն զխօսան զոր արար: ⁶⁷Եւ եմուտ Իսահակ 'ի տուն Սառայի մօր իւրոյ, և ա՛ռ զՌեբեկա, և եղև նորա կին. և սիրեաց զնա. և մխիթարեցաւ Իսահակ վասն Սառայի մօր իւրոյ:

25

Գլուխ ԻԵ

Լ ¹Եւ յաւելլ Աբրաամ առնուլ կին որում անուն էր Քետտուրա*։ ²Եւ ծնաւ նմա զԷնրան, և զՅեկտան, և զՄադան, և զՄադիան, և զԵսբոկ, և զՍովիւէ*։ ³Եւ Յեկտան ծնաւ զՍաբա, և զԹեման, և զԴադան: Եւ եղեն որդիք Դադանայ, Ռագուէլ, և Նաբդէլ, և Ասուրիիմ, և Ղատուսիիմ, և Ղովոմիմ: ⁴Եւ որդիք Մադիամու, Գեփար, և Ափեր, և Ենոք, և Աբիգա, և Եդրագա: Ամենեքեան սոքա էին որդիք Քետտուրայ: ⁵Եւ ե՛տ Աբրաամ զամենայն ինչս իւր Իսահակայ՝ որդւոյ իւրում: ⁶Եւ որդւոց հարճիցն իւրոց որ էին Աբրաամու, ե՛տ Աբրաամ պարզնս. և արձակեաց զնոսա յԻսահակայ որդւոյ իւրոյ մինչդեռ ինքն կենդանի էր՝ ընդ արևելս յերկիրն արևելից: ⁷Եւ ա՛յս են ամք աւուրց կենացն Աբրաամու զորս եկեաց, հարիւր եւթանասուն և հինգ ամ*։ ⁸Եւ պակասեալ Աբրաամու մեռաւ՝ 'ի բարւոք ծերութեան, ալևորեալ և լի՛ աւուրքք. և յաւելլաւ առ ժողովուրդ իւր: ⁹Եւ թաղեցին զնա Իսահակ և Իսմայէլ որդիք նորա, յայրի՛ անդ՝ 'ի կրկնում յագարակին Եփրոնի որդւոյ Սահառայ Քետացւոյ. որ է յանդիման Մամբրէի. ¹⁰ագարակն և այրն զոր ստացաւ Աբրաամ յորդւոցն Քետայ: Ա՛նդ թաղեցին զԱբրաամ և զՍառա կին նորա: ¹¹Եւ եղև յետ մահուանն Աբրաամու, օրհնեաց Աստուած զԻսահակ զորդի նորա: Եւ բնակեցաւ Իսահակ առ Ջրհորի՛ տեսլեանն:

ԼԱ ¹²Եւ ա՛յս են ծնունդք Իսմայելի որդւոյ Աբրաամու, զոր ծնաւ Ագա՛ր Եգիպտացի Աբրաամու՝ աղախինն Սառայի: ¹³Եւ ա՛յս են անուանք որդւոցն Իսմայելի. ըստ անուանց ազգացն նորա: Անդրանիկն Իսմայելի Նաբեովթ և Կեդար, և Աբդէլ, և Մաբսամ, ¹⁴և Մասմա, և Իդումա, և Մասէ, ¹⁵և Քողդադ, և Թեմա, և Յետուր, և Նափէս, և Կեդմա: ¹⁶Սոքա են որդիք Իսմայելի, և ա՛յս են անուանք նոցա՝ 'ի հանգրուանս իւրեանց, և 'ի խորանս իւրեանց, երկոտասան իշխանք նոցա ըստ ազգաց իւրեանց*։ ¹⁷Եւ ա՛յս են ամք կենաց Իսմայելի, հարիւր երեսուն և եւթն ամ. և պակասեալ մեռաւ, և յաւելլաւ յազգ իւր: ¹⁸Եւ բնակեցաւ յԵփլայ մինչև ցՍուր որ է յանդիման Եգիպտոսի, մինչև 'ի գալ յԱսորեստանեայս. յանդիման ամենայն եղբարց իւրոց բնակեցաւ*։

* Ոսկան. Ջբօսնուլ 'ի դաշտին:

* Օրհնակ մի. Յուղտէ անտի: Իսկ Ոսկան. Յուղտու անտի:

* Ոմանք. Առնուլ իւր կին.. Քետտուրա:

* Ոմանք. Եւ զՅեկտան.. և զՅեսբոկ:

* Յօրհնակին. Ջորս եկեաց ճՅԵ ամ:

* Այլք. Եւ այս անուանք են:

* Ոմանք. Եւ բնակեցաւ յԻւզայ մինչև ցՍուր:

ԼԲ ¹⁹Եւ ա՛յս են ծնունդք Իսահակայ որդւոյ Աբրաամու. Աբրաամ ծնաւ զԻսահակ: ²⁰Եւ էր Իսահակ ամաց քառասնից յորժամ ա՛ռ զՌեբեկա զդուստր Բաթուելի Ասորւոյ, որ էր ՚ի Միջագետաց Ասորւոց, զքոյր Լաբանու Ասորւոյ ի՛ւր ՚ի կնութեան: ²¹Եւ աղաչէր Իսահակ զՏէր վասն Ռեբեկայ կնոջ իւրոյ՝ զի ամուլ էր: Եւ լուա՛ւ նմա Աստուած. և յղեցաւ Ռեբեկա կին նորա*²²Եւ խաղային մանկունք ՚ի նմա: Եւ ասէ՛ եթէ այսպէս լինիցի ինձ, ընդէ՞ր իցէ ինձ այս: Եւ գնա՛ց հարցանել ՚ի Տեառնէ*²³Եւ ասէ ցնա Տէր. Երկու՛ ազգք են յարգանդի քում, և երկու՛ ժողովուրդք յորովայնէ քումնէ՛ զատցին. և ժողովուրդ զժողովրդեամբ ելևե՛լ առնիցէ, և երեցն կրտսերոյն ծառայեսցէ*²⁴Եւ իբրև լցան նորա աւուրք ծնանելոյ. և էին երկու՛ որդիք յորովայնի նորա: ²⁵Եւ եկն ե՛լ որդին անդրանիկ շառագոյն ամենևին՝ իբրև զմորթ թա՛ւ, և անուանեաց զանուն զորա Եսա՛ւ. և ապա ե՛լ եղբայր նորա, և ձեռն նորա ունէր զգարշապարէ Եսաւայ. և կոչեաց զանուն նորա Յակոբ*²⁶Եւ Իսահակ էր ամաց վաթսնի՛ց՝ յորժամ ծնաւ զնոսա Ռեբեկա: Եւ աճեցին մանկունքն: ²⁷Եւ էր Եսաւ՝ այր հմո՛ւտ որսոյ վայրա՛գ. և Յակոբ՝ այր առանց պաճուճանաց ընտասուն: ²⁸Եւ սիրեաց Իսահակ զԵսաւ, զի որս նորա կերակուր էր նմա. և Ռեբեկա սիրէր զՅակոբ*²⁹Եւ էր եփեալ Յակոբայ թա՛ւ. և եկն Եսաւ ՚ի դաշտէ՛ նքթեալ: ³⁰Եւ ասէ Եսաւ ցՅակոբ. Տո՛ւր ինձ ճաշակել ՚ի շիկաթանէ՛դ յայդմանէ, զի նքթեալ եմ: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Եդոմ: ³¹Եւ ասէ Յակոբ ցԵսաւ. Վաճառեա՛ ինձ այսօր զանդրանկութիւնս քո: ³²Եւ ասէ Եսաւ. Ահաւասիկ ես երթա՛մ ՚ի վախճանել, և առ իմէ՞ իցեն ինձ այն անդրանկութիւնք*³³Եւ ասէ ցնա Յակոբ. Երդուի՛ր ինձ այսօր: Եւ երդուա՛ւ նմա: Եւ վաճառեաց Եսաւ զանդրանկութիւնս իւր Յակոբայ: ³⁴Եւ Յակոբ ետ Եսաւայ հա՛ց և թան ոսպնեայ. կերա՛ւ և արբ, և յարեաւ զնա՛ց: Եւ անարգեաց Եսաւ զանդրանկութիւնն*:

26

Գլուխ ԻԶ

ԼԳ ¹Եւ եղև սով յերկրին. թո՛ղ զառաջին սովն որ եղև ՚ի ժամանակս Աբրաամու: Եւ չոգաւ Իսահակ առ Աբիմելէք արքայ Փղշտացւոց ՚ի Գերարա: ²Եւ երևեցաւ նմա Տէր և ասէ. Մի՛ իջաներ յԵգիպտոս, այլ բնակեա՛ դու յերկիրդ յորում ասացի քեզ: ³Եւ պանդխտեաց յերկրիս յայսմիկ. և եղէ՛ց ընդ քեզ, և օրհնեցից զքեզ. զի քեզ և զաւակի՛ քում տաց զամենայն զերկիրս զայս. և հաստատեցից զերդումն իմ զոր երդուայ Աբրաամու հօր քո*⁴Եւ բազմացուցի՛ց զզաւակ քո իբրև զաստեղս երկնից. և տա՛ց զաւակի քում զամենայն զերկիրս զայս. և օրհնեսցին ՚ի զաւակի քում ամենայն ազգք երկրի. ⁵Վոխսանակ զի լուաւ Աբրաամ հայր քո ձայնի իմում, և պահեաց զիրամանս իմ և զպատուիրանս իմ, և զիրաւունս իմ, և զօրէնս իմ: ⁶Եւ բնակեցաւ Իսահակ ՚ի մէջ Գերերացւոց: ⁷Եւ

* Ոմանք. Եւ յղացաւ Ռեբեկա:

* Այլք. Եւ խաղացին մանկունքն ՚ի:

* Ոմանք. Յորովայնէ քում զատ՛:

* Ոմանք. Եւ սիրէր Իսահակ զԵսաւ: Յօրհնակին. Կերակուր է նմա:

* Ոմանք. Եւ առ իմ իցեն ինձ այն:

* Ոմանք. Եւ անարգեաց.. զանդրանկութիւնս իւր: Եւ ոմանք՝ զանդրանկութիւնսն:

* Ոմանք. Աբրաամու հօր քում:

հարցին արք տեղւոյն զՌեբեկայ կնոջէ նորա. և ասէ՝ քոյր իմ է, քանզի երկեալ ասել թէ կին իմ է. թէ զուցէ սպանանիցեն զնա արք տեղւոյն վասն Ռեբեկայ. զի գեղեցիկ էր երեսօք: ⁸Եւ եղև անդ բազում ժամանակս: Եւ կարկառաւ Աբիմելէք արքայ Փղշտացւոց ընդ պատուհան, և ետես զԻսահակ զի խաղայր ընդ Ռեբեկայ կնոջ իւրուն: ⁹Կոչեաց Աբիմելէք զԻսահակ՝ և ասէ ցնա. Ուրեմն կին քո էր, և ընդէ՞ր ասացեր թէ քոյր իմ է: Ասէ ցնա Իսահակ. Քանզի ասացի՝ թէ զուցէ մեռանիցին վասն նորա: ¹⁰Ասէ ցնա Աբիմելէք. Ընդէ՞ր արարեր զայդ ընդ մեզ. սակաւիկ միւս ևս մտեալ էր ուրումն յազգէ իմմէ առ կին քո. և ածէիր ՚ի վերայ մեր անգիտութիւն: Եւ պատուիրեաց Աբիմելէք ամենայն ժողովրդեան իւրուն և ասէ. ¹¹Ամենայն որ հարկանիցի ընդ այդ ընդ այդ, կամ ընդ կին դորա՝ մահու պարտական լիցի: ¹²Եւ սերմանեաց սերմ Իսահակ յերկրին յայնմիկ, և եգիտ ՚ի տարւոջն յայնմիկ հարիւրաւոր զգարին: Եւ օրհնեաց զնա Տէր: ¹³Եւ բարձրացաւ այրն. և երթայր յառաջադէմ և մեծանայր, մինչև եղև մեծ յոյժ: ¹⁴Եւ եղև նորա անասուն ոչխարի և արջառոյ, և արմտիք բազում: Եւ նախանձեցան ընդ նմա Փղշտացիքն*: ¹⁵Եւ զամենայն ջրհորս զոր փորեցին ծառայք նորա ՚ի ժամանակսն Աբրաամու հօր նորա, խցին Փղշտացիքն և լցին զնոսա հողով: ¹⁶Եւ ասէ Աբիմելէք ցԻսահակ. Երթ գնա ՚ի մէնջ, զի կարի զօրաւորագոյն քան զմեզ եղեր*: ¹⁷Եւ զնաց անտի Իսահակ, և բնակեցաւ ՚ի ձորն Գերերացւոց. և անդ բնակեաց:

ԼԴ ¹⁸Եւ դարձեալ Իսահակ փորեաց զջրհորսն ջրոց, զոր փորեցին ծառայքն Աբրաամու հօր նորա, և խցին զայն Փղշտացիքն յետ մահուանն Աբրաամու հօր նորա. և եղև նոցա անուանս ըստ անուանցն զոր անուանեաց նոցա Աբրաամ հայր իւր*: ¹⁹Եւ փորեցին ծառայքն Իսահակայ ՚ի ձորն Գերերացւոց, և զտին անդ ջրհոր ջրոյ կենդանոյ: ²⁰Եւ մարտնչէին հովիւքն Գերերացւոց ընդ հովիւսն Իսահակայ. և ասէին՝ եթէ իւրեանց իցէ ջրհորն. և կոչեաց զանուն ջրհորոյն Ջրկունն. քանզի զրկէին զնա*: ²¹Չուեաց անտի և փորեաց միւս ևս ջրհոր ջրոյ: Հակառակէին և վասն այնորիկ ևս: Եւ կոչեաց զանուն նորա Թշնամութիւն: ²²Չուեաց անտի և փորեաց այլ ջրհոր, և ոչ մարտնչէին վասն այնր. և կոչեաց զանուն նորա Անդորրութիւն. ասէ՝ զի այժմ ընդարձակեաց մեզ Տէր, և աճեցոյց զմեզ յերկրի: ²³Եւ ել անտի ՚ի Ջրհորն երդման: ²⁴Եւ երևեցաւ նմա Տէր ՚ի գիշերին յայնմիկ՝ և ասէ. Ես եմ Աստուած հօր քոյ, մի՛ երկնչիր. զի ընդ քեզ եմ, և օրհնեցից զքեզ, և բազմացուցից զգաւակ քո վասն Աբրաամու հօր քոյ: ²⁵Եւ շինեաց անդ սեղան և կարդաց անդ զանուն Տեառն: Եւ եհար անդ զխորան իւր: Փորեցին ծառայքն Իսահակայ անդ ջրհոր*: ²⁶Եւ Աբիմելէք չոգաւ առ նա ՚ի Գերարա, և Ոքոզաթ տաճարապետ նորա, և Փիքաւղ սպարապետ զօրաց նորա: ²⁷Եւ ասէ ցնոսա Իսահակ. Ձի՞ եկիք առ իս, զի դուք ատեցէք զիս՝ և հալածեցէք ՚ի ձէնջ: ²⁸Եւ ասեն. Տեսանելով տեսաք՝ զի էր Տէր ընդ քեզ. և ասենք՝ եղիցի դա՛շն ընդ միմեանս, ընդ մեզ և ընդ քեզ. և դիցուք ընդ քեզ ուխտ ²⁹չառնել ինչ մեզ չար. որպէս և մեք ոչինչ մեղաք քեզ. և զոր օրինակ արարաք քեզ բարի՝ և արձակեցաք զքեզ խաղաղութեամբ. և արդ դու օրհնեալ ՚ի Տեառնէ ես: ³⁰Եւ արար նոցա խրախութիւն. կերան և արբին: ³¹Եւ յարուցեալ ՚ի

* Ոմանք. Եւ եղեն նորա անա՛:

* Ոմանք. Ձի կարի զօրագոյն:

* Ոմանք. Ջոր անուանեաց զնոսա Աբրաամ:

* Ոմանք. Թէ իւրեանց իցէ ջրւրն... քանզի զրկեցին զնա:

* Այլք. Եւ կարդաց զանուն Տեառն:

վաղիւ անդր երդուան այր ընկերի իւրում. և արձակեա՛ց զնոսա Իսահակ, և զնացին ՚ի նմանէ ողջութեամբ: ³²Եւ եղև յաւուր յայնմիկ եկին ծառայքն Իսահակայ՝ և պատմեցին նմա վասն ջրհորոյն զոր փորեցին, թէ ո՛չ գտաք ջուր*:
³³Եւ կոչեաց զնա երդումն: Վասն այնորիկ է անուն քաղաքին այնմիկ Ջրհոր երդման մինչև ցայսօր ժամանակի*:

Լէ ³⁴Եւ էր Եսաւ անաց քառասնից, և առ իւր կին զՅուդիթ դուստր Բէերայ Քետացւոց, և զՄասեմայ դուստր Ելովմայ Խևացւոյ*:
³⁵Եւ դառնացուցանէին զԻսահակ և զՌեբեկա:

27

Գլուխ ԻԷ

¹Եւ եղև իբրև ծերացաւ Իսահակ, և վատեցին աչք նորա ՚ի տեսանելոյ. կոչեաց զԵսաւ զորդի իւր զերեց՝ և ասէ ցնա. Ո՛րդեակ իմ: Եւ նա ասէ ցնա. Ահաւասիկ ե՛ս*:
²Եւ նա ասէ ցնա. Ահաւասիկ ես ծերացեալ եմ, և ո՛չ գիտեմ զօր վախճանի իմոյ:
³Արդ՝ ա՛ն դու զգործի քո զաղեղն և զկապարճս, և ել՝ ՚ի դաշտ. և որսա՛ ինձ որս*.
⁴և արա՛ ինձ խորտիկս որպէս և ե՛ս սիրեմ. և բե՛ր մատո՛ ինձ՝ զի կերայց. և օրհնեսցէ՛ զքեզ անձն իմ մինչ չև՝ մեռեալ իցեմ:
⁵Եւ լուաւ Ռեբեկա զի խօսէր Իսահակ ընդ որդւոյ իւրում: Գնաց Եսաւ ՚ի դաշտ որսալ՝ որս հօր իւրում:
⁶Եւ խօսեցաւ Ռեբեկա ընդ Յակոբայ որդւոյ իւրում՝ և ասէ. Ահա լուայ ես ՚ի հօրէ քումն՝ զի խօսէր ընդ եղբօր քում՝ և ասէր.
⁷Բե՛ր ինձ որս և արա ինձ խորտիկս զի կերայց և օրհնեցից զքեզ առաջի Տեառն՝ մինչ չև՝ մեռեալ իցեմ:
⁸Եւ արդ՝ որդեակ իմ լո՛ւր ինձ՝ որպէս ե՛ս պատուիրեմ քեզ:
⁹Գնա՛ դու ՚ի դաշտն, և ա՛ն ինձ անտի երկուս ուլս փափուկս և ընտիրս, և արարից զնոսա խորտիկս հօր քում որպէս և սիրէ:
¹⁰Եւ մատուցես հօր քում և կերիցէ. զի օրհնեսցէ զքեզ հայր քո՝ մինչ չև՝ մեռեալ իցէ:
¹¹Եւ ասէ Յակոբ ցՌեբեկայ մայր իւր. Եղբայր իմ Եսաւ, այր՝ թա՛ւ է, և ես լէ՛րկ.
¹²Գուցէ՛ շօշափիցէ՛ զիս հայր իմ. և լինիցիմ առաջի նորա իբրև արհամարհոտ, և ածիցեմ ՚ի վերայ իմ անէծս և ո՛չ օրհնութիւն*:
¹³Եւ ասէ ցնա մայրն իւր. Յի՛մ վերայ անէծք այն ո՛րդեակ. բայց միայն լո՛ւր ձայնի ինում և ե՛րթ ա՛ծ ինձ*:
¹⁴Գնա՛ց՝ և ա՛ն ած մօր իւրում: Եւ արար խորտիկս՝ որպէս և սիրէր հայր նորա:
¹⁵Եւ առեալ Ռեբեկայ զպատմութեանն ազնիւ որդւոյ իւրոյ երիցու որ կայր առ նմա ՚ի տան, զգեցոյց Յակոբայ որդւոյ իւրում կրցերոյ:
¹⁶Եւ զուլենիսն ազոյց ՚ի բազուկս նորա, և ՚ի վերայ մերկոյ պարանոցի նորա:
¹⁷Եւ ետ զխորտիկն և զհացն զոր արար ՚ի ձեռս Յակոբայ որդւոյ իւրոյ:
¹⁸Եւ տարաւ հօր իւրում և ասէ. Հա՛յր իմ: Եւ նա ասէ. Աւասիկ եմ: Եւ ասէ. Ո՞վ ես դու ո՛րդեակ:
¹⁹Եւ ասէ Յակոբ ցհայրն. Ե՛ս եմ Եսաւ՝ անդրանիկն քո, արարի՛ որպէս և խօսեցար ընդ իս, արի՛ նիստ և կե՛ր յորսոյ իմնէ. զի օրհնեսցէ զիս անձն քո:
²⁰Եւ ասէ

* Ո՛մանք. Եւ պատմեցին նմա... թէ գտաք ջուր:

* Ո՛մանք. Եւ կոչեաց զնա առատութիւն. վասն այնորիկ է:

* Յօրհնակին պակասէր. ՁՅուդիթ դուստր Բէերայ: Ո՛մանք. Բէերայ Քետացւոյ և զՄասեմաթ դուս՛:

* Ո՛մանք. Եւ ասէ ցնա ահաւասիկ եմ:

* Ո՛մանք. Եւ ել ՚ի դաշտին և որսա՛:

* Ո՛մանք. Եւ ո՛չ օրհնութիւնս:

* Այլք. Անէծքն այն ո՛րդ՛:

Իսահակ ցորդին իւր. Ձի՞ք է զի վաղվաղակի գտեր ո՛րդեակ: Եւ նա ասէ. Որպէս պատրաստեաց Տէր Աստուած առաջի իմ: ²¹Եւ ասէ Իսահակ ցՅակոբ. Մօ՛տ եկ՝ և շօշափեցից զքեզ որդեակ, եթէ դո՛ւ իցես որդի իմ Եսաւ՝ թէ ոչ: ²²Մատեա՛ւ Յակոբ առ Իսահակ հայր իւր, և շօշափեաց զնա՝ և ասէ. Ձայնդ՝ ծայն Յակոբայ, և ձեռքդ՝ ձեռք Իսաւայ: ²³Եւ ո՛չ ծանեաւ զնա. զի էին ձեռք նորա իբրև զծեռսն Իսաւայ եղբօր իւրոյ թա՛ւ: Եւ օրհնեաց զնա ²⁴և ասէ. Դո՛ւ ես որդի իմ Եսաւ: Եւ նա ասէ. Ե՛ս եմ: ²⁵Եւ ասէ. Մատո՛ր ինձ՝ և կերայց յորսոյ քունմէ ո՛րդեակ, զի օրհնեսցէ զքեզ անձն իմ: Ա՛ռ մատոյց նմա՝ և կերաւ. և եբեր նմա զհնի՝ և արբ՝: ²⁶Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր. Մօ՛տ եկ և համբուրեա՛ր զիս որդեակ: ²⁷Եւ մատեաւ համբուրեաց զնա: Եւ ա՛ռ զհոտ հանդերձից նորա. և օրհնեաց զնա՝ և ասէ. Ահա՛՛ հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիո՛յ զոր օրհնեաց Տէր: ²⁸Եւ տացէ քեզ Աստուած ՚ի ցօղոյ երկնից՝ և ՚ի պարարտութենէ երկրի, և բազմութիւն ցորենոյ և զինւոյ: ²⁹Եւ ծառայեսցեն քեզ ազգք. և երկիր պագցեն քեզ իշխանք. և եղիցես տէ՛ր եղբօր քում, և երկիր պագցեն քեզ որդիք հօր քոյ. որ անիծանիցէ զքեզ՝ անիծեալ լիցի. և որ օրհնեսցէ զքեզ՝ օրհնեալ: ³⁰Եւ եղև յետ դադարելոյն Իսահակայ յօրհնելոյ անտի զՅակոբ զորդի իւր. իբրև էլ Յակոբ յերեսաց Իսահակայ հօր իւրոյ. և եկն Եսաւ եղբայր նորա յորսոյ: ³¹Արար և նա՛ խորտիկս, և մատոյց հօր իւրում. և ասէ ցհայր իւր. Յարիցէ՛ հայր իմ, և կերիցէ յորսոյ որդւոյ իւրոյ՝ զի օրհնեսցէ՛ զիս անձն քո: ³²Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր. Ո՞վ ես դու: Եւ նա ասէ. Ե՛ս եմ որդին քո անդրանիկ Եսաւ: ³³Եւ զարմացաւ Իսահակ զարմացումն մեծ յոյժ. և ասէ. Իսկ այն ո՞վ էր որ որսացաւ ինձ որս՝ և եբեր մատոյց. և կերայ յամենայնէ մինչ չև՝ քո եկեալ էր. և օրհնեցի՛ զնա և եղիցի օրհնեալ՝: ³⁴Եւ եղև իբրև լուաւ Եսաւ զբանսն Սահակայ հօր իւրոյ. աղաղակեաց ՚ի ծայն մեծ դառնացեալ յոյժ. և ասէ ցհայրն իւր. Օրհնեա՛ արդ՝ և զի՛ս հայր: ³⁵Եւ ասէ ցնա. Եկն եղբայր քո նենգութեամբ և ա՛ռ զօրհնութիւնս քո: ³⁶Եւ նա ասէ. Յիրաւի՛ կոչեցաւ անուն նորա Յակոբ. զի այս երկիցս խաբեաց զիս. ա՛ռ զանդրանկութիւնն իմ, և արդ՝ ա՛ռ զօրհնութիւնս իմ: Եւ ասէ Եսաւ ցհայր իւր. Եւ ո՛չ մի՞ ինչ օրհնութիւն թողեր ինձ հայր: ³⁷Պատասխանի ետ Իսահակ՝ և ասէ ցԵսաւ. Որովհետև տէ՛ր արարի զնա քեզ. և զամենայն եղբարս քո արարի նմա ծառայս. ցորենով և զինւով հաստատեցի զնա. քեզ զի՞նչ արարից որդեակ՝: ³⁸Ասէ Եսաւ ցհայրն իւր. Միթէ՛ մի՞ օրհնութիւն իցէ քո՛ հայր. օրհնեա՛ և զիս հայր: Եւ իբրև ստրջացաւ Իսահակ. ամբարձ զծայն իւր Եսաւ և ելաց: ³⁹Պատասխանի ետ Իսահակ հայր նորա և ասէ ցնա. Ահա՛ ՚ի պարարտութենէ երկրի եղիցի բնակութիւն քո, և ՚ի ցօղոյ երկնից ՚ի վերուստ՝. ⁴⁰և սրով քով կեցցես. և եղբօր քում ծառայեսցես. և եղիցի յորժամ քակեսցես և լուծցես զլուծ նորա ՚ի պարանոցէ քունմէ: ⁴¹Եւ պահէր Եսաւ ո՛խս Յակովբայ վասն օրհնութեանցն զոր օրհնեաց զնա հայր իւր. և ասէր Եսաւ ՚ի մտի # իւրում. Մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ, զի սպանից զՅակոբ զեղբայր իմ՝: ⁴²Ա՛զդ եղև Ռեբեկայ բանքն Եսաւայ որդւոյ իւրոյ երիցու. և յղեաց կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ՝ և ասէ ցնա. Ահա Եսաւ եղբայր քո սպառնայ

* Ոմանք. Առմատոյց նմա:

* Այլք. Իսկ այն ո՞վ է որ որսա՞: Ոմանք. Եւ եբեր մատոյց ինձ, և:

* Ոմանք. Եւ զամենայն եղբարս նորա արա՞:

* Ի լուս՞. Ահա ՚ի պարարտութեան. համաձայն ոմանց՝ ՚ի բնար՞: Ոսկան յաւելու. ՚ի վերուստ եղիցի օրհնութիւն քո:

* Այլք. Վասն օրհնութեանն զոր օրհ՞:

սպանանել՝ զքեզ*։⁴³ Արդ՝ լուր որդեակ ձայնի իմում, և արի գնա՛ ՚ի Միջագետս առ Ղաբան եղբայր իմ ՚ի Խառան։⁴⁴ Եւ բնակեսցես ընդ նմա աւուրս բազումս, մինչև անցցէ՛ սրտմտութիւն բարկութեան եղբոր քո ՚ի քէն։⁴⁵ Եւ մոռասցի՛ զոր ինչ արարեր նմա. և ապա առաքեցից կոչեցից զքեզ անտի. գուցէ՛ անգաւակիցի՛մ յերկոցունց ՚ի ձէնջ ՚ի միում աւուր:

ԼԶ ⁴⁶Եւ ասէ Ռեբեկա ցիսահակ. Չանծրացեալ է անծն իմ ՚ի դստերաց որդւոց Քետայ. եթէ առնուցու Յակոբ կին ՚ի # դստերաց անտի Քետայ, ՚ի դստերաց երկրիս այսորիկ. ընդէ՞ր իցէ ինձ կեալ*:

28

Գլուխ ԻԸ

¹Կոչեաց առ ինքն Իսահակ զՅակոբ. օրհնեաց զնա, և պատուիրեաց նմա և ասէ. Մի՛ առնուցու կին ՚ի դստերաց աստի Քանանացւոց: ²Այլ արի գնա՛ ՚ի Միջագետս Ասորւոց, ՚ի տուն Բաթուելի հօր մօր քո. և ա՛ռ անտի քեզ կին ՚ի դստերաց Ղաբանու եղբոր մօր քոյ: ³Եւ Աստուած իմ օրհնեսցէ՛ զքեզ, և աճեցուցէ՛ զքեզ, և բազմացուցէ՛ զքեզ, և եղիցես ՚ի ժողովս ազգաց: ⁴Եւ տացէ քեզ զօրհնութիւնն Աբրաամու հօր իմոյ, քե՛զ և զաւակի քում յետ քո. ժառանգել քեզ զերկիր պանդխտութեան քոյ՝ զոր ե՛տ Աստուած Աբրաամու: ⁵Եւ արձակեաց Իսահակ զՅակոբ, և զնաց ՚ի Միջագետս Ասորւոց առ Լաբան որդի Բաթուելի Ասորւոյ, եղբայր Ռեբեկայ, մօր Յակոբայ և Եսաւայ*: ⁶Եւ իբրև ետես Եսաւ եթէ օրհնեաց Իսահակ զՅակոբ, և զնաց ՚ի Միջագետս Ասորւոց առնուլ իւր անտի կին. և յօրհնելն զնա պատուիրեաց և ասէ. Մի՛ առնուցու կին ՚ի դստերաց աստի Քանանացւոց: ⁷Եւ ունկնդի՛ր եղև Յակոբ հօր և մօր իւրում. և զնաց ՚ի Միջագետս Ասորւոց: ⁸Եւ ետես Եսաւ եթէ չա՛ր թուին դստերք Քանանացւոցն առաջի Սահակայ հօր իւրոյ. ⁹զնաց Եսաւ առ Իսմայել, և առ զՄայելէթ դուստր Իսմայելի որդւոյ Աբրաամու՝ զքոյր Նաբեութայ ՚ի վերայ այլոց կանանց իւրոց՝ իւր կնութեան*: ¹⁰Եւ ել Յակոբ ՚ի Ջրհորոյ անտի երդման, և զնաց ՚ի Խառան: ¹¹Եւ հասեալ ՚ի տեղի մի՛ և ննջեաց անդ. քանզի արևն ՚ի մուտս էր, և ա՛ռ ՚ի քարանց տեղւոյն և ե՛ղ ընդ սնարս իւր, և ննջեաց ՚ի տեղւոջն յայնմ*: ¹²Եւ ետես տեսիլ: Եւ ահա սանդուղք, հաստատեալ յերկրի, որոյ զլուխ իւր հասանէր մինչև յերկինս: Եւ հրեշտակք Աստուծոյ ելանէին և իջանէին ընդ նա*: ¹³Եւ Տէր հաստատեալ կայր ՚ի նմա: Եւ ասէ. Ե՛ս եմ Տէր Աստուած Աբրաամու հօր քոյ, և Աստուած Սահակայ. մի՛ երկնչիր. զի զերկիրդ յորում դո՛ւդ ննջեցեր, քե՛զ տաց զդա և զաւակի քում: ¹⁴Եւ եղիցի զաւակ քո իբրև զաւա՛զ երկրի: Եւ ընդարձակեսցի ՚ի ծովակողմն և ընդ արևելս. և ընդ հիւսւսի և ընդ հարաւ: Եւ օրհնեսցին ՚ի քեզ ամենայն ազգք երկրի՝ և ՚ի զաւակի քում: ¹⁵Եւ ես ահաւասիկ ընդ քե՛զ եմ պահել զքեզ յամենայն ճանապարհս քո՝ յոր և գնասցես: Եւ դարձուցից զքեզ յերկիրս յայս. զի ո՛չ թողից զքեզ մինչև արարից

* Ոճանք. Ազդ եղեն Ռեբեկայ:

* Ոճանք. Եւ ընդէ՞ր իցէ ինձ:

* Ոճանք. Եղբոր Ռեբեկայ, մօր յա՛:

* Ոճանք. Ջրոյր Նաբեութայ. կամ՝ Նաբեութայ.. իւր ՚ի կնութեան:

* Այլք. Եւ եհաս ՚ի տեղի մի՛ և ննջ՛:

* Այլք. Որոյ զլուխն հասանէր յերկինս:

զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ*։¹⁶Եւ զարթեալ Յակոբ ՚ի քնոյ անտի իւրմէ՝ և ասէ. Տէր է ՚ի տեղուքս յայսմիկ, և ես ո՛չ գիտէի։¹⁷Ձախի՛ հարաւ՝ և ասէ. Ահեղ իմն է տեղիս այս. և ո՛չ է սա՛ եթէ ո՛չ տուն Աստուծոյ. և այս է դուռն երկնից*։¹⁸Եւ յարեաւ Յակոբ ընդ առաւօտն, և ա՛ռ զվէմն զոր եղ ընդ սնարս իւր. և կանգնեաց զնա արծան. և արկ ևղ ՚ի գլուխ նորա։¹⁹Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղոյն այնորիկ Տո՛ւն Աստուծոյ. և յառաջ անուն էր քաղաքին այնորիկ Ուլմաւուս*։²⁰Եւ ուխտեաց Յակոբ ուխտ՝ և ասէ. Եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս, և ապրեցուսցէ զիս ՚ի ճանապարհիս յայսմիկ զոր ես երթամ, և տացէ ինձ հա՛ց ուտելոյ և հանդերձ զգեմլոյ,²¹և դարձուսցէ զիս ողջութեամբ ՚ի տուն հօր իմոյ, և եղիցի ինձ Տէր յԱստուած.²²և վէմս զոր կանգնեցի արծան, եղիցի ինձ Տո՛ւն Աստուծոյ. և յամենայնէ զոր տացես ինձ, տա՛ց քեզ տասանորդս*։

29

Գլուխ ԻԹ

ԼԷ¹Եւ զոտս իւր ամբարձեալ Յակոբայ զնա՛լ յերկիրն արևելից, առ Լաբան որդի Բաթուելի Ասորոյ, եղբայր Ռեբեկայ՝ մօր Յակոբայ և Եսաւայ։²Եւ հայեցաւ և ահա ջրհոր մի ՚ի դաշտի անդ. և էին անդ երեք հօտք խաշանց մակաղեալք ՚ի նմա, և ՚ի ջրհորոյն յայնմանէ՛ արբուցանէին զխաշինսն. և վէմ մի մեծ կայր ՚ի վերայ բերանոյ ջրհորոյն։³Եւ անդր ժողովէին ամենայն հօտք, և տապալէին զվէմն ՚ի բերանոյ ջրհորոյն, և տային ջուր խաշանցն. և կափուցանէին զվէմն ՚ի բերան ջրհորոյն՝ անդրէն ՚ի տեղի իւր։⁴Եւ ասէ ցնոսա Յակոբ. Եղբարք՝ ուստի՞ էք դուք։ Եւ նոքա ասեն. Ի՛ Խառանէ՛ ենք։⁵Ասէ ցնոսա. Գիտէ՞ք դուք զԼաբան զորդի Նաքովրայ։ Եւ նոքա ասեն՝ Գիտենք։⁶Ասէ ցնոսա. Ո՞ղջ իցէ։ Եւ նոքա ասեն. Ո՞ղջ է։ Եւ ահա Ռաքէլ դուստր նորա գայր ընդ խաշինսն։⁷Եւ ասէ Յակոբ. Դեռ աւուր շատ կայ. չն՛ ևս է ժամ խաշանցդ ժողովելոյ. արբուցէք խաշանցդ, և երթայք արածեցէք*։⁸Եւ նոքա ասեն. Չէ՛ հնար՝ թէ մինչ ո՛չ ժողովեսցին ամենայն հովիւք, և տապալեսցեն զվէմդ ՚ի բերանոյ ջրհորոյդ. և արբուցանիցենք խաշանցս։⁹Մինչդեռ նա ընդ նոսա խօսէր, ահա Ռաքէլ դուստր Լաբանու գայր ընդ խաշինս հօր իւրոյ. քանզի նա՛ արածէր զխաշինս հօր իւրոյ*։¹⁰Եւ եղև իբրև ետես Յակոբ զՌաքէլ դուստր Լաբանայ եղբօր մօր իւրոյ #. և զխաշինս Ղաբանայ եղբօր մօր իւրոյ։ Եւ մատուցեալ Յակոբ տապալեսցոյց զվէմն ՚ի բերանոյ ջրհորոյն, և արբոյց խաշանցն Ղաբանու եղբօր մօր իւրոյ*։¹¹Եւ համբուրեաց Յակոբ զՅոնաթէլ. և ծայն եբարձ և ելաց։¹²Եւ պատմեաց Յակոբ Ռաքէլայ թէ եղբայր հօր նորա է, և որդի Ռեբեկայ։ Եւ ընթացաւ պատմեաց հօր իւրուն ըստ բանիցս այսոցիկ։¹³Եւ եղև իբրև լուաւ Լաբան զանուն Յակոբայ որդւոյ քեռ իւրոյ, ընթացաւ ընդառաջ նորա, գի՛րկս արկ և համբուրեաց զնա. և տարաւ զնա ՚ի տուն իւր։ Եւ պատմեաց Լաբանու զամենայն զբանս զայսոսիկ։

* Այլք. Եւ ես աւասիկ ընդ քեզ եմ։ Յօրինակին պակասէր. Չամենայն ինչ զոր խօսեցայ։

* Ոմանք. Ահեղ իմն է տեսիլս այս։

* Ոմանք. Քաղաքին այնորիկ՝ Աւղովմաւուս։ Եւ ոմանք. այնորիկ՝ Լուգա։

* Ոմանք. Չոր կանգնեցի յարծան։

* Ոսկան. Դեռ օր շատ կայ։

* Ոմանք յաւելուն. Ընդ խաշինս Լաբանու հօր իւր։

* Ոմանք. Ի բերանոյ ջրհորին, և ար։

14Եւ ասէ ցնա Լաբան. Յոսկերա՛ցս իմոց, և ՚ի մարմնոցս իմոց ես դու: Եւ է՛ր ընդ նմա ամսօրեայ մի ժամանակ:

ԼԸ 15Եւ ասէ Լաբան ցՅակոբ. Ձի՞ եղբայր իմ ես դու, ո՛չ ծառայեսցես ինձ ձրի. յայտ արա ինձ զինչ իցեն վարձք քո: 16# Եւ Լաբանայ էին երկու դստերք. անուն երիցուն Լիա, և անուն կրտսերոյն Ռաբէլ*։ 17Եւ աչք Լիայ՝ գիջագոյնք. բայց Ռաբէլ բարի՛ էր տեսլեամբ և գեղեցիկ երեսօք*։ 18Եւ սիրեաց Յակոբ զՌաբէլ: Եւ ասէ. Ծառայեցից քեզ եւթն ամ վասն Ռաբելայ դստեր քոյ կրտսերոյ: 19Եւ ասէ ցնա Լաբան. Լա՛ւ իցէ քե՛զ տալ զնա, քան տալ զնա առն օտարի. բնակեա՛ դու ընդ իս: 20Եւ ծառայեաց Յակոբ վասն Ռաբելայ ամս եւթն. և էին յաչս նորա իբրև աւուրք սակա՛ւք, քանզի սիրէր զնա: 21Եւ ասէ Յակոբ ցԼաբան. Տո՛ւր ինձ զկին իմ, լցեալ են աւուրք, զի մտից առ նա: 22Եւ ժողովեաց Լաբան զամենայն արս տեղւոյն, և արար հարսանիս: 23Եւ եղև երեկո՛յ՝ առեալ Լաբանու զԼիա դուստր իւր տարաւ առ Յակոբ. և եմուտ առ նա Յակոբ: 24Եւ ետ Լաբան զԶելփա զաղախին իւր նաժի՛շտ դստեր իւրում Լիայ: Եւ իբրև այգ եղև, և ահա Լիա էր*։ 25Եւ ասէ Յակոբ ցԼաբան. Ընդէ՞ր զորձեցեր զայս. ո՛չ վասն Ռաբելի ծառայեցի քեզ. ընդէ՞ր խաբեցեր զիս*։ 26Ասէ Լաբան. Չե՛ն օրէնք աշխարհի մերում տալ նախ զկրտսերն քան զերեց*։ 27Արդ կատարեա՛ եւթն ևս ամ ընդ նորա. և տաց քեզ և զնա՝ փոխանակ վաստակոցն զոր վաստակեսցես ինձ զեւթն ամ ևս այլ*։ 28Արա՛ր այնպէս Յակոբ. և կատարեաց եւթն ևս ամ ընդ նորա: Եւ ետ նմա Լաբան զՌաբէլ դուստր իւր կնութեան: 29Եւ ետ Լաբան Ռաբելի դստեր իւրում զԲալլայ զաղախին իւր նաժի՛շտ: 30Եւ եմուտ առ Ռաբէլ, և սիրեաց զՌաբէլ քան զԼիա. և ծառայեաց նմա այլ ևս եւթն ամ:

ԼԹ 31Իբրև ետես Տէր, եթէ ատելի՛ է Լիա, եբա՛ց զարգանդ նորա. բայց Ռաբէլ ամուլ էր: 32Եւ յղացաւ Լիա, և ծնաւ որդի Յակոբայ. և կոչեաց զանուն նորա Ռոբէն. ասէ՛ զի ետես Տէր զտառապանս իմ. արդ՝ սիրեսցէ՛ զիս այր իմ*։

33Յղացաւ դարձեալ Լիա՝ և ծնաւ երկրորդ որդի Յակոբայ և ասէ՛ զի լուաւ Տէր եթէ ատեցեալ եմ, և յաւել ինձ զսա. և կոչեաց զանուն նորա Շնաւոն: 34Եւ յղացաւ՝ և ծնաւ որդի. և ասէ, արդ առ ի՛ս եղիցի այր իմ, զի ծնայ նմա երիս որդիս. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Ղևի*։ 35Եւ յղացաւ դարձեալ, ծնաւ որդի. և ասէ, զայս միւսանգամ գոհացայց զՏեառնէ. և կոչեաց զանուն նորա Յուդա: Եւ եկա՛ց ՚ի ծննդոց:

30

Գլուխ Լ

1Իբրև ետես Ռաբէլ եթէ ո՛չ ծնաւ որդի Յակոբայ, նախանձեցաւ Ռաբէլ ընդ

* Ոմանք. Եւ անուն կրտսերին Ռա՛:

* Այլք. Եւ աչք Լիայի գիջա՛:

* Յօրինակին. Ձելփա զաղախին:

* Ոմանք. Ձի՛նչ զորձեցեր զայս:

* Ոմանք. Չեն օրէնք յաշխարհի մե՛. քան զերեցն:

* Յօրինակին պակասէր. Եւ տաց քեզ և զնա:

* Յօրինակի մերում՝ ՚ի գիրս յայս՝ աստի սկսեալ ամենայն ուրեք միապէս գրի անունս՝ Ռոբէն, ուր այլք սովորաբար ունին Ռուբէն, և երբեմն Ռոբէն:

* Ոմանք. Եւ յղացաւ ևս և ծնաւ որդի:

քեռն իւրուն, և ասէ ցՅակոբ. Տո՛ւր ինձ որդիս, ապա թէ ոչ՝ մեռանիմ: ²Բարկացաւ Յակոբ Ռաքելայ և ասէ ցնա. Միթէ փոխանակ Աստուծո՞յ իցեն ես, որ արգել գպտուղ որովայնի քոյ՝: ³Եւ ասէ Ռաքել ցՅակոբ. Իսկ անանիկ աղախինն իմ Բալլա, մո՛ւտ առ նա՝ և ծնցի՝ ի վերայ ծնգաց իմոց. և արարից և ես որդիս ՚ի նմանէ՞: ⁴Եւ ետ նմա զԲալլա զաղախին իւր կնութեան: Եւ եմուտ առ նա Յակոբ: ⁵Եւ յղացաւ Բալլա նաժիշտն Ռաքելայ, և ծնաւ որդի Յակոբայ: ⁶Եւ ասէ Ռաքել. Իրա՛ւ արար ինձ Աստուած. և լուա՛ւ ձայնի իմուն, և ետ ինձ որդի. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Դան: ⁷Եւ յղացաւ դարձեալ Բալլա նաժիշտն Ռաքելայ. և ծնաւ որդի երկրորդ Յակոբայ: ⁸Եւ ասէ Ռաքել. Օգնեաց ինձ Աստուած, զի գումարեցայ ընդ քե՛ռն իմուն և յաղթեցի: Եւ կոչեաց զանուն նորա Նեփթաղիմ: ⁹Իբրև ետես Լիա եթէ եկաց ՚ի ծննդենէ, առ զՁելփա զնաժիշտ իւր և ետ Յակոբայ կնութեան: ¹⁰Յղացաւ Ձելփա նաժիշտն Լիայ, և ծնաւ որդի Յակոբայ: ¹¹Եւ ասէ Լիա. Առ ի՛ն բախտ իմ. և անուանեաց զանուն նորա Գադ: ¹²Յղացաւ Ձելփա նաժիշտն Լիայ, և ծնաւ որդի երկրորդ Յակոբայ՝: ¹³Եւ ասէ Լիա. Երանելի՛ եմ ես. զի երանիցեն ինձ կանայք: Եւ կոչեաց զանուն նորա Ասեր, մեծութիւն՝: ¹⁴Գնաց Բոբէն յաւուրս հնձոց ցորենոյ, և եգիտ խնձոր մանրագորաց յանդի, և եբեր զայն առ Լիա մայր իւր: Ասէ Ռաքել ցԼիա քոյր իւր. Տո՛ւր ինձ ՚ի մանրագորաց որդւոյ քոյ: ¹⁵Եւ ասէ Լիա. Ո՞չ իցէ քեզ շատ զի առեր զայրն իմ. միթէ և զմանրագորս որդւոյ իմոյ առնուցուս: Եւ ասէ Ռաքել. Ո՛չ այդպէս է. ննջեսցէ՛ ընդ քեզ զայս գիշեր՝ փոխանակ մանրագորաց որդւոյ քոյ: ¹⁶Եւ իբրև եմուտ Յակոբ յանդէ ընդ երեկս. ել Լիա ընդ առաջ նորա և ասէ. Առ ի՛ն մտցես այսօր. քանզի ՚ի վարձու կալայ զքեզ՝ փոխանակ մանրագորաց որդւոյ իմոյ: Եւ ննջեաց ընդ նմա զայն գիշեր՝: ¹⁷Եւ լուաւ Աստուած Լիայ: Յղացաւ՝ և ծնաւ Յակոբայ որդի հինգերորդ: ¹⁸Եւ ասէ Լիա. Ետ ինձ Աստուած զվարձս իմ, փոխանակ զի ետու զաղախինն իմ առն իմուն: Եւ կոչեաց զանուն նորա Իսաքար, որ է վարձ: ¹⁹Եւ յղացաւ մի՛ւսանգամ Լիա. և ծնաւ որդի վեցերորդ Յակոբայ: ²⁰Եւ ասէ Լիա. Պարգևեաց ինձ Աստուած պարզա՛ բարի. յայսմ հետէ սիրեսցէ՛ զիս այր իմ. զի ծնայ նմա որդիս վեց: Եւ անուանեաց զանուն նորա Ջաբոդոն՝: ²¹Եւ յետ այսորիկ ծնաւ դուստր. և կոչեաց զանուն նորա Դինա՝: ²²Եւ յիշեաց Աստուած զՌաքել. և լուաւ նմա Աստուած, և եբաց զարգանդ նորա: ²³Եւ յղացաւ՝ և ծնաւ որդի Յակոբայ. և ասէ Ռաքել, եհա՛ն յինէն Աստուած զնախատինս իմ: ²⁴Եւ կոչեաց զանուն նորա Յովսէփ. ասէ՛ յաւելցէ՛ ինձ Աստուած որդի՛ մես ևս: ²⁵Եւ եղև իբրև ծնաւ Ռաքել զՅովսէփ, ասէ Յակոբ ցԼաբան. Արձակեա՛ զիս զի երթայց՝ ՚ի տեղի իմ և յերկիր իմ: ²⁶Եւ տո՛ւր զկանայս և զմանկունս իմ, վասն որոց ծառայեցի քեզ՝ զի գնացի՛ց. զի դու ինքնի՛ն իսկ գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ՝: ²⁷Ասէ ցնա Դաբան. Եթէ գտի շնորիս առաջի քո. հնայեցի զի օրհնեաց զիս Աստուած յոտին քուն:

* Ոմանք. Միթէ փոխան Աստուծոյ իցեն:

* Այլք. ՅՅակոբ. Աւանիկ աղա՛:

* Ոմանք. Եւ յղացաւ Ձելփա նաժ... և ծնաւ ևս որդի:

* Ոմանք. Ձի երանեսցեն զիս կա՛ւ. Ասեր, որ է մեծութիւն:

* Յօրհնակին պակասէր. Եւ իբրև եմուտ յա՛: Ոմանք. Քանզի ՚ի վարձու կալայ զքեզ այսօր:

* Այլք. Եւ կոչեաց զանուն նորա Ջաբո՛ւ:

* Այլք. Եւ յետ այնորիկ ծնաւ:

* Ոմանք. Եւ տո՛ւր զկանայս իմ և զման՛:

28Եւ ասէ Լաբան. Յայտ արա ինձ զվարձս քո յինէն՝ և տայց: 29Ասէ ցնա Յակոբ. Դու գիտես որչափ ինչ ծառայեցի քեզ. և ո՞րչափ խաշն էր քո առ իս. սակաւիկ ինչ էր յառաջ քան զիս, 30և աճեաց ՚ի բազմութիւն. և օրհնեաց զքեզ Տէր Աստուած յոտին իմում. և արդ ես ե՞րբ առնիցեմ ինձ տուն: 31Եւ ասէ ցնա Լաբան. Չի՞նչ տաց քեզ: Եւ ասէ ցնա Յակոբ. Մի՛ ինչ տար ինձ, բայց զայս և եթ բանս արասցես ինձ: Դարձեալ արածեցից զխաշինս քո՝ և պահեցից: 32Եւ անցցեն այսօր ամենայն խաշինքդ առաջի քո. և զատո՛ ՚ի միմեանց զամենայն ոչխար զխայտախարի՛ և զգորշ. և զամենայն արօտական զհամակ յօդեաց: Եւ ամենայն խայտախարիւն յօդեաց և սպիտակն յայծեաց եղիցին վարձք*: 33Եւ երևեսցի արդարութիւն իմ ՚ի վաղիւ օր՝ թէ գո՛ն իմ վարձք առաջի քո: Ամենայն որ ո՛չ իցէ խայտ և պիսակ յայծեաց, և գորշախայտ յօդեաց, ՚ի գողօնս համարեալ լիցի ինձ*: 34Եւ ասէ ցնա Լաբան. Եղիցի՛ ըստ բանի քում: 35Եւ զատոյց յաւուր յայնմիկ զքաղս կապոյտս և զպիսակս, և զամենայն այծս կապոյտս և զպիսակս, և զամենայն սպիտակս ՚ի նոցանէ, և զամենայն համակս յօդեաց, ետ ՚ի ձեռն որդւոցն իւրոց*. 36և մեկնեցոյց ճանապարհ երից աւուրց՝ ընդ մէջ նոցա և ընդ մէջ Յակոբայ. և Յակոբ արածէր զխաշինսն Լաբանու զմնացեալս: 37Եւ ա՛ռ Յակոբ գաւազան՝ շէր դալար և ընգուզի և սաւսւոյ, և կեղևեաց զնոսա Յակոբ, և եղև սպիտակ. և էքերծ զդալարն ՚ի գաւազանացն. և երևէր ՚ի գաւազանսն սպիտակն զոր քերծոյր՝ նկարէ՛ն*: 38Եւ դներ զգաւազանսն զոր քերծոյր՝ յաւազանս ջրարբից ջրոյն. զի իբրև գայցեն խաշինքն ըմպել ջուր՝ հանդէպ գաւազանացն զկծիցին յորժամ գայցեն ըմպել ջուր*: 39Եւ զկծէին խաշինքն ՚ի գաւազանսն, և ծնանէին խաշինքն գորշախայտս և պիսակս և խայտախարիւս: 40Եւ զորոջսն ուրոյն զատանէր Յակոբ, և կացուցանէր յանդիման մաքեացն. և զխոյ կապոյտ, և զամենայն գորշախայտն յօդեաց. և զատանէր իւր հօտս առանձինն. և ո՛չ խառնէր զնոսա ՚ի խաշինս Լաբանու: 41Եւ լինէր յորժամ զկծէին խաշինքն ՚ի խառնսն, և յղենային, դներ Յակոբ զգաւազանսն յանդիման խաշանցն յաւազանսն, առ ՚ի զկծելոյ նոցա ըստ գաւազանացն*: 42Եւ յորժամ ծնանէին խաշինքն՝ ո՛չ դներ: Եւ լինէր աննշանն Լաբանու, և նշանաւորն Յակոբայ: 43Եւ մեծացաւ այրն յոյժ յոյժ, և եղև նորա ոչխար և արջառ յոյժ, ծառայք և աղախնայք, ուղտք և էշք*:

31

Գլուխ ԼԱ

1Եւ լուաւ Յակոբ զբանս որդւոցն Լաբանու՝ զի ասէին, եթէ ա՛ռ Յակոբ զամենայն ինչս հօր մերոյ. և ՚ի հօր մերոյ ընչից արար իւր զայն ամենայն

* *Ոմանք.* Եւ զամենայն արօտ արօտական.. և ամենայն խայտախարիւն և պիսակն յայծեաց: *Ոսկան.* Եղիցին վարձք իմ:

* *Ոմանք.* ՚ի վաղիւ անդր՝ թէ գոն:

* *Ոմանք.* Եւ զպիսակս և զամենայն սպիտակս ՚ի նոցանէ. և զամենայն այծս կապոյտս և պիսակս, և զամենայն զհամակս յօդեաց ետ ՚ի ձեռս:

* *Ոսկան.* Գաւազան շէրտ դալար ընկուզի: *Այլք.* Չդալարն ՚ի գաւազանաց անտի:

* *Ոմանք.* Ջրարբից ջուրցն:

* *Ոմանք.* Եւ յղանային, դներ յա՛:

* *Այլք.* Եւ ծառայք և աղախ՛:

փառս: ²Եւ ետես Յակոբ զերեսս Լաբանու, և ահա՝ ո՛չ էին ընդ նմա որպէս
յերեկն և յեռանդ*: ³Եւ ասէ Տէր Աստուած ցՅակոբ. Դարձի՛ր յերկիր հօր քոյ և
յազգ քո. և եղէց ընդ քեզ: ⁴Եւ յղեաց Յակոբ, և կոչեաց զՌաբէլ և զԼիա՝ ՚ի դաշտ
անդր՝ ուր էին խաշիներն*: ⁵Եւ ասէ ցնոսա. Տեսանեմ ես զերեսս հօր ձերոյ, զի ո՛չ
են ընդ իս որպէս յերեկն և յեռանդ: Եւ Աստուած հօր իմոյ է՛ր ընդ իս: ⁶Եւ դուք
ինքնի՛ն գիտէք զի յամենայն զօրութենէ իմմէ ծառայեցի հօր ձերում: ⁷Եւ հայր
ձեր ընդհարաւ ընդ իս, և փոխեաց զվարձս իմ զտասն բժացդ. և ո՛չ ետ նմա
Աստուած առնել ինձ չար: ⁸Եթէ ասիցէ, նկարէնքդ եղիցին քո վարձք, ամենայն
խաշիներս նկարէնս ծնանին: Եւ եթէ ասիցէ թէ սպիտակքդ եղիցին քո վարձք,
ամենայն խաշիներս սպիտակս ծնանին*: ⁹Եւ եհան Աստուած զամենայն խաշիներս
հօր ձերոյ՝ և ետ ինձ: ¹⁰Եւ լինէր յորժամ զվճէին խաշիներն, տեսանէի աչօք իմովք
յերազի, և ահա քա՛ղք և խոյք ելանէին՝ ՚ի վերայ մաքեաց և այծից. պիսակք և
խայտախարիւք և գորշախայտք: ¹¹Եւ ասէ ցիս հրեշտակ Աստուծոյ՝ ՚ի տեսլեան.
Յակոբ: Եւ ես ասեմ. Ձի՞՞ է*: ¹²Եւ ասէ. Հայեաց աչօք քովք, և տես զքաղսն և
զխոյս որ ելանեն ՚ի մաքիսն և յայծս. զհարդ պիսակք և գորշախայտք և
խայտախարիւք են: Քանզի տեսի որչափ ինչ առնէր ընդ քեզ Լաբան*: ¹³Եւ եմ
Աստուած որ երևեցայ քեզ ՚ի տեղուջն Աստուծոյ. ուր օժեր ինձ զարձանն, և
եղիր ուխտս: Եւ արդ՝ արի՛՛ ել յերկրէս յայսմանէ, և ե՛րթ յերկիր ծննդեան քոյ, և
եղէց ընդ քեզ*: ¹⁴Պատասխանի ետուն Ռաբէլ և Լիա՝ և ասեն ցնա. Միթէ գո՞՞ջ ևս
մեր այսուհետև բաժին և ժառանգութիւն ՚ի տան հօր մերոյ: ¹⁵Ո՛չ ապաքէն իբրև
զօտարոտիս համարեալ ենք նմա. զի վաճառեաց զմեզ՝ և եկեր ուտելով
զարծաթ մեր: ¹⁶Ամենայն մեծութիւն և փառք զոր եհան Աստուած ՚ի հօրէ մերմէ,
մե՛զ եղիցի՝ և որդւոց մերոց: Արդ զոր ինչ ասաց քեզ Աստուած՝ արա՛:

Խ ¹⁷Յարեաւ Յակոբ՝ ա՛ռ զկանայս իւր և զմանկունս իւր, և եհան զնոսա
յուղտս: ¹⁸Եւ խաղացոյց զամենայն զինչս իւր և զամենայն ստացուածս իւր զոր
արար ՚ի Միջագետս Ասորոց՝ երթալ առ Սահակ հայր իւր յերկիրն
Քանանացոց: ¹⁹Եւ Լաբան երթեալ էր ՚ի կտուրս խաշանց իւրոց: Եւ գողացաւ
Ռաբէլ զկուռս հօր իւրոյ. ²⁰և գողացաւ Յակոբ զսիրտ Լաբանու աներոյ իւրոյ՝
չպատմել նմա թէ գնայցէ*: ²¹Եւ գնաց ինքն և ամենայն որ ինչ ի՛ւր էր: Եւ
յարուցեալ անց ընդ գետ՝ և դիմեաց ՚ի լեանն Գաղաադու: ²²Ա՛գդ եղև Լաբանու
Ասորոյ յաւուրն երրորդի, եթէ գնաց Յակոբ: ²³Եւ առեալ զեղբարս իւր ընդ իւր,
պնդեցաւ զկնի նորա ճանապարհ զեւթն աւուր, և եհաս նմա ՚ի լերինն
Գաղաադու: ²⁴Եւ եկն Աստուած առ Լաբան Ասորի՝ ՚ի տեսլեան գիշերոյ՝ և ասէ
ցնա. Ձգո՛՛յ լեր անձին քում, զուցէ խօսիցիս ընդ Յակոբայ անզգամութեամբ: Եւ
եհաս Լաբան Յակոբայ: ²⁵Եւ Յակոբ եհար զխորան իւր ՚ի լերինն: Եւ Լաբան
կացոյց զեղբարս իւր ՚ի լերինն Գաղաադու: ²⁶Եւ ասէ Լաբան ցՅակոբ. Ընդէ՞ր
արարեր զայդ, ընդէ՞ր գաղտագնաց եղեր յինէն, և գողացա՛ր զիս. և վարեցեր
զդստերս իմ իբրև զգերեալս սրոյ: ²⁷Եւ եթէ ազդ արարեալ էր ինձ, առաքէի զքեզ
ուրախութեամբ, և արուեստականօք թմբկաց և քնարաց: ²⁸Եւ չէի՞՞ արդևք

* *Յօրինակին պակասէր.* Ոչ էին ընդ նմա որպէս:

* *Այլք.* Ուր խաշիներն էին:

* *Ոմանք.* Եթէ ասիցէ եթէ նկա՛:

* *Ոմանք.* Եւ ասէր ցիս հրեշտակ:

* *Ոմանք.* Որչափ ինչ առնէ ընդ քեզ:

* *Ոմանք.* Եւ արդ արի՛՛ և ել:

* *Ոսկան.* Ի՛ չպատմել նմա թէ:

արժանի համբուրել զորդեակս իմ՝ և զդստերս իմ: Եւ արդ՝ անմտութեամբ արարեր: ²⁹Եւ այժմ ձեռնհաս էի առնել քեզ չար, բայց Աստուած հօր քոյ երեկ սասաց ցիս. Չգոյ՛շ լեր գուցէ խօսիցիս ընդ Յակոբայ անգգամութեամբ* : ³⁰Եւ արդ՝ գնացեալ երթաս, զի ցանկանալով ցանկացեալ ես երթալ ՚ի տուն հօր քոյ: Եւ ընդէ՞ր գողացար զաստուածսն իմ: ³¹Պատասխանի ետ Յակոբ՝ և ասէ ցԼաբան. Քանզի երկեայ: Ասացի թէ գուցէ հանիցես զդստերս քո յինէն, և զամենայն ինչ զիմ: ³²Եւ ասէ Յակոբ. Առ որում գտցես զաստուածսն քո, մի՛ կեցցէ առաջի եղբարցս մերոց: Եւ արդ՝ ծանիր ինչ ՚ի քոց ընչից առիս, և առցես: Եւ ո՛չ ծանեալ առ նմա և ո՛չ ինչ: Եւ ո՛չ զհտէր Յակոբ՝ թէ Ռաքելայ կնոջ իւրոյ գողացեալ էր զնոսա* : ³³Եւ մտեալ Լաբան յուզէր ՚ի տան Յակոբայ. # և ՚ի տան Լիայ, և ՚ի տան երկոցուն հարճիցն, և ո՛չ գտանէր. և ելեալ ՚ի տանէ անտի Լիայ՝ եմուտ ՚ի տուն Ռաքելի: ³⁴Իսկ Ռաքել առեալ զկուռսն եդ ընդ ուղտու պատատաւ, և նստաւ ՚ի վերայ նոցա: Եւ յուզեաց Լաբան զամենայն տաղաւարն և ո՛չ եգիտ* : ³⁵Եւ նա ասէ ցհայր իւր. Մի՛ ինչ ծանր թուեսցի քեզ տէր. ո՛չ կարեմ յոտն յառնել առաջի քո, քանզի ՚ի կանանց օրէնս են: Եւ յուզեաց Լաբան զամենայն տունն՝ և ո՛չ եգիտ զկուռսն: ³⁶Բարկացաւ Յակոբ և կազեր ընդ Լաբանու: Պատասխանի ետ Յակոբ և ասէ ցԼաբան. Չի՞նչ վնաս է իմ, կամ զի՞նչ յանցանք են իմ, զի պնդեցար զհետ իմ, ³⁷և յուզեցեր զամենայն զինչս իմ. զի՞նչ գտեր յամենայն ընչից քոց ՚ի տան իմում: Դի՛ր առաջի եղբարցս իմոց՝ և եղբարց քոց, և յանդիմանեսցեն ՚ի մէջ մեր երկոցունց* : ³⁸Այս քսան ամ է զի էի՛ ընդ քեզ. ոչխարք քո և այծիք՝ ո՛չ ստերջացան. և զխոյս մաքեաց քոց ո՛չ կերայ* : ³⁹Չգազանաբեկն ո՛չ բերի առ քեզ, այլ ե՛ս յանձնէ տուժէի. զգողունի տըւնջեան, և զգողօնի գիշերոյ* : ⁴⁰Չցերեկ այրեալ լինէի ՚ի տօթոյ, և զցայգ ՚ի ցրտոյ. հատեալ էր քուն յաչաց իմոց: ⁴¹Այս քսան ամ է ՚ի տան քում էի. զչորեքտասան ամ փոխանակ դստերաց քոց վաստակեցի, և զվեց ամ ՚ի խաշինս քո. և խաբեցեր զիս ՚ի վարձս տասն բժացս: ⁴²Եւ թէ ո՛չ Աստուած հօր իմոյ Աստուած Աբրահամու, և երկաղն Իսահակայ էր ընդ իս, այժմ թերևս ունայն իսկ արձակէիր զիս: Այլ զտառապանս իմ և զվաստակս ձեռաց իմոց ետես Աստուած, և յանդիմանեաց զքեզ երեկ* : ⁴³Պատասխանի ետ Լաբան՝ և ասէ ցՅակոբ. Դստերքդ՝ դստերք իմ են, և ուստերքդ՝ ուստերք իմ են, և խաշինքդ՝ խաշինք իմ են. և ամենայն ինչ զոր դու տեսանես՝ իմ է, և դստերացդ իմոց: Եւ արդ զի՞նչ արարից դոցա այսօր՝ կամ որդւոց դոցա զոր ես ծնայ: ⁴⁴Բայց արդ՝ եկ ուխտ դիցուք ե՛ս և դու. և եղիցի ՚ի վկայութիւն ընդ իս և ընդ քեզ: Եւ ասէ ցնա. Ահա ո՛չ ոք է ՚ի միջի մերում. բայց Աստուած վկայ ընդ իս և ընդ քեզ: ⁴⁵Եւ առեալ Յակոբայ վէն, կանգնեաց արձան: ⁴⁶Եւ ասէ ցեղբարսն իւր. Կուտեցէ՛ք քարինս: Եւ կուտեցին քարինս և արարին բլուր, և կերան և արբին անդ ՚ի վերայ բլրոյն: ⁴⁷Եւ կոչեաց զնա Լաբան Կարկան վկայութեան. և Յակոբ կոչեաց զնա Կարկան վկայ* : ⁴⁸Եւ ասէ ցնա Լաբան. Բլուրս այս վկայ ընդ իս և ընդ քեզ

* Այլք. Ասաց ցիս, ասէ զգոյ՛շ:

* Ոմանք. Առ ում գտցես զաստ... ՚ի քո ընչից առ իս:

* Այլք. Իսկ Ռաքելի առեալ զկուռն*:

* Յօրհմակին պակասէր. ՚ի մէջ մեր երկոցունց:

* Ոմանք. Եւ այծիք քո ո՛չ ստերջեցան:

* Ոմանք. Ոչ բերէի առ քեզ.. զգողօնի տունջեան և զգողօնս գիշ*:

* Ոմանք. Եթէ ո՛չ Աստուած հօր իմոյ:

* Ոսկան յաւելու. Կարկան վկայ. իւրաքանչիւր ըստ յատկութեան լեզուի իւրոյ:

այսօր: Եւ կոչեաց զնա Լաբան Բլուր վկայութեան, և Յակոբ կոչեաց զնա Բլուր վկայ: Եւ ասէ Լաբան ցՅակոբ. Բլուրս այս և արծանս այս՝ զոր կանգնեցի ընդ իս և ընդ քեզ. վկայ է բլուրս այս, վկայ է արծանս այս: Վասն այնորիկ կոչեցաւ անուն բլրոյն Վկայութիւն*, ⁴⁹և Տեսիլն զորմէ ասաց՝ թէ տեսցէ Աստուած ընդ իս և ընդ քեզ. զի մեկնիմք ընկեր՝ յընկերէ: ⁵⁰Եթէ վշտացուցես զդատերս իմ. եթէ առցես կանայս առ դատերօք իմովք: Զգո՛յշ լեր զի ո՛չ ոք է ընդ մեզ որ տեսանէ. # Աստուած լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ: ⁵¹Եւ ասէ Լաբան ցՅակոբ. Ահա կարկառս այս՝ և ահա արծանս, զոր հաստատեցաք, ընդ իս և ընդ քեզ ⁵²Եղիցի վկայ կարկառս, և վկայ արծանս. զի ո՛չ ես անցից ըստ կարկառս, և մի՛ դու անցանիցես ըստ բլուրս՝ և ըստ արծանս ըստ այս՝ չարութեամբ*: ⁵³Աստուած Աբրահամու և Աստուած Նաքովրայ եղիցի դատաւոր՝ ի միջի մերում, Աստուած հարց նոցա: Եւ երդուաւ Յակոբ յերկնդ հօր իւրոյ Իսահակայ: ⁵⁴Եւ եզեն Յակոբ զենլիս ՚ի լերինն, և կոչեաց զեղբարս իւր ուտել հաց. կերան և արբին, և ագան ՚ի լերին անդ: ⁵⁵Եւ յարուցեալ Լաբան ՚ի վաղիւ անդր համբուրեաց զորդիս իւր և զդատերս իւր, և օրհնեաց զնոսա, և զնա՛ց. դարձ արարեալ Լաբանայ ՚ի տեղի իւր*:

32

Գլուխ ԼԲ

¹Եւ Յակոբ զնաց զճանապարհս իւր:

ԽԱ Եւ հայեցեալ ետես զբանակ Աստուծոյ բանակեալ. և ընդ առաջ եղեն նմա հրեշտակք Աստուծոյ: ²Եւ ասէ Յակոբ իբրև ետես զնոսա. այս բանակ Աստուծոյ է: Եւ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Բանակս: ³Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս յառաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր յերկիրն ՚ի Սէիր, յաշխարհն Եդոմայ, ⁴պատուէր ետ նոցա և ասէ. Այսպէս ասասցիք տեսառն իմում Եսաւայ. թէ այսպէս ասէ ծառայ քո Յակոբ: Ընդ Լաբանայ կեցի և յամեցի մինչև ցայժմ: ⁵Եւ եղեն իմ արջառ և ոչխար և էջք, ծառայք և աղախնայք. և առաքեցի պատմել տեսառն իմում Եսաւայ՝ զի գտցէ ծառայ քո շնորհ առաջի քո*: ⁶Եւ դարձեալ հրեշտակացն առ Յակոբ՝ ասեն. Չոգա՛ք առ Եսաւ եղբայր քո. և գայ ընդ առաջ քո, և չորք հարիւր այր ընդ նմա*: ⁷Չահի՛ հարաւ Յակոբ. և տարակուսեալ էր. և զատոյց զժողովուրդն որ ընդ նմա էր. և զարջառ և զոչխար և զուղտս՝ յերկուս բանակս: ⁸Եւ ասէ Յակոբ. Եթէ եկեսցէ Եսաւ յառաջին բանակն և հարցէ զնա, ապրեսցի՛ երկրորդ բանակն: ⁹Եւ ասէ Յակոբ. Աստուած հօր իմոյ Աբրահամու, և Աստուած հօր իմոյ Իսահակայ, Տէր որ ասացեր ցիս թէ երթ յերկիր ծննդեան քո՝ և բարի՛ արարից քեզ: ¹⁰Չեն՛ բաւական ամենայն արդարութեան՝ և ճշմարտութեանն զոր արարեր ընդ ծառայի քում. զի ցուպ ՚ի ձեռն անցի ընդ այս Յորդանան. և արդ՝ աւասիկ եղէ յերկուս բանակս*: ¹¹Եւ արդ՝ ապրեցո՛ զիս ՚ի ձեռաց եղբօր իմոյ Եսաւայ. զի զահի հարեալ են ես ՚ի նմանէ. գուցէ՛ եկեալ

* Ոմանք. Բլուրս այս վկայ է ընդ իս... ահա բլուրս այս և արծանս այս:

* Ոմանք. Ըստ արծանս ըստ այսմիկ չար՝:

* Յօրհնակին պակասէր. Համբուրեաց զորդիս իւր և զդատերս իւր:

* Այլք. Շնորհս առաջի քո:

* Այլք. Եւ չորեք հարիւր այր:

* Ոմանք. Զի ցուպ ՚ի ձեռին անցի:

հարկանիցէ՛ զիս մայր առ մանկան*։ ¹²Եւ դու ասացեր՝ թէ բարի արարից քեզ, և եղից զգաւակ քո իբրև գաւազ ծովու որ ո՛չ թուեսցի ՚ի բազմութենէ։ ¹³Եւ ննջեաց անդ զայն գիշեր։ Եւ ա՛ռ յորոց ածերն ձեռամբ իւրով պատարագս։ Եւ առաքեաց Եսաւայ եղբօր իւրուն. ¹⁴այծս երկերիւր, քաղս քսան, մաքիս երկերիւր, խոյս՝ քսան. ¹⁵ուղտս ծնեալս կոզմամբք հանդերձ՝ երեսուն. կովս քառասուն, ցուլս տասն, էշս քսան, և մտրուկս տասն*։ ¹⁶Եւ ետ ՚ի ձեռս ծառայից իւրոց. հօտս հօտս առանձինն։ Եւ ասէ ցծառայսն իւր. Երթայք դուք յառաջ քան զիս, և բացագոյնս ՚ի միմեանց տանիցիք հօտս ՚ի հօտից։ ¹⁷Պատուիրեաց առաջնոյն՝ և ասէ. Եթէ պատահիցէ քեզ Եսաւ եղբայր իմ, և հարցանիցէ թէ ո՞ր ես՝ և յո՞ երթաս, և ո՞ր է այդ որ առաջի քո երթայ. ¹⁸և ասացես, թէ ծառայի՛ քոյ Յակոբայ պատարագք են, զոր առաքեաց տեառն իւրուն Եսաւայ. և ինքն զկնի՛ մեր գայ*։ ¹⁹Պատուիրեաց առաջնունն և երկրորդին և երրորդի. և ամենեցուն որ երթային յառաջ զհետ խաշանցն՝ ասէր. Ըստ բանիս ըստ ա՛յսմիկ խօսեսցիք ընդ Եսաւայ, յորժամ գտանիցէք զնա. ²⁰և ասասցիք, ահա ծառայ քո Յակոբ գա՛յ զհետ մեր։ Քանզի ասաց՝ թէ ցածուցի՛ց զերեսս նորա պատարագօքդ որ երթան առաջի. և ապա՛ տեսից զերեսս նորա, թերևս արասցէ՛ մեծարանս երեսաց իմոց։ ²¹Եւ երթային յառաջ ընծայքն քան զնա. և ինքն ննջեաց զայն գիշեր անդէն ՚ի բանակին*։ ²²Եւ յարուցեալ ՚ի նմին գիշերի՛ ա՛ռ զերկուս կանայսն, և զերկուս աղախնայսն, և զմետասան որդիս իւր, և անց ընդ հունն Յոբովայ*։ ²³Եւ ա՛ռ անցոյց զնոսա ընդ ձորն, և զամենայն ինչ որ իւր էր։ ²⁴Եւ մնաց Յակոբ միայն։ Եւ մարտեաւ այր մի ընդ նմա մինչև ցառաւօտ։ ²⁵Եւ իբրև ետես թէ ո՛չ յաղթ նմա, բո՛ւռն եհար զամուլաջլէ զըստի նորա և ընդարմացոյց զամուլաջիլ զըստին Յակոբայ ՚ի կռուելն իւրուն ընդ նմա*։ ²⁶Եւ ասէ ցնա. Արձակեա՛ զիս քանզի ա՛յգ եղև։ Եւ նա ասէ. Ո՛չ արձակեցից զքեզ՝ եթէ ո՛չ օրհնեսցես զիս։ ²⁷Եւ նա ասէ ցաւ. Չի՞նչ անուն է քո։ Եւ սա ասէ ցնա. Յակոբ։ ²⁸Եւ ասէ ցաւ. Յայսմ հետէ ո՛չ կոչեսցեն զանուն քո Յակոբ, այլ Իսրայել՝ եղիցի անուն քո. զի ժուժկալեցեր ընդ Աստուծոյ. և ընդ մարդկան զօրաւոր լիցիր։ ²⁹Եհա՛րց Յակոբ՝ և ասէ. Պատմեա՛ ինձ զանուն քո։ Եւ ասէ. Չի՞ հարցանես զանուանէ իմմէ։ Եւ օրհնեաց զնա անդ։ ³⁰Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տեսիլ Աստուծոյ. զի տեսի զԱստուած դէմ յանդիման, և ապրեցաւ անձն իմ*։ ³¹Եւ ծագեաց նմա արև իբրև անց Տեսիլն Աստուծոյ։ Եւ նա կաղայր երթայր ՚ի զըստէ անտի։ ³²Վասն այնորիկ ո՛չ ուտեն որդիքն Իսրայելի զամուլաջիլն՝ զոր ընդարմացոյց, որ է ՚ի վերայ տախտակի զըստին, մինչև ցայսօր։ Չի բո՛ւռն եհար զտախտակէ զըստին Յակոբայ, և ընդարմացոյց զամուլաջիլ նորա։

Գլուխ ԼԳ

* Այլք. Եւ ապրեցո՛ զիս ՚ի ձե՛։

* Բազումք. Ուղտս ծնեալ կոզմ*։

* Ոմանք. Տեառն իմուն Եսաւայ։

* Այլք. Յառաջագոյն ընծայքն քան։

* Ոմանք. Ընդ հունն Յակոբայ։

* Ոմանք. Թէ ո՛չ յաղթեաց նմա։

* Օրհնակ մի. Տեղւոյն այնորիկ՝ Փանուէլ տեսիլ Աստուծոյ։

¹Ձաչս իւր 'ի վեր եբարծ Յակոբ և ետես, և ահա եսաւ եղբայր իւր գայր, և ընդ նմա արք չորեքհարիւր: Եւ բաշխեաց Յակոբ զմանկունսն 'ի Լիա՝ և Ռաբէլ, և յերկուս աղախնայս՝: ²Եւ արար զերկուս աղախնայսն և զորդիս նոցա առաջի, և զԼիա և զորդիս նորա զԿնի, և զՌաբէլ և զՅովսէփ հո՛ւսկ յետոյ: ³Եւ ինքն անց յառաջ քան զնոսա, և երկիր եպագ եւթն անգամ 'ի վերայ երկրի՝ մինչև մերձենալ առ եղբայրն իւր: ⁴Եւ ընթացաւ Եսաւ ընդ առաջ նորա. զի՛րկս արկ նմա և համբուրեաց, և անկաւ 'ի վերայ պարանոցի նորա և համբուրեաց զնա. և լացին երկոքեան: ⁵Եւ հայեցեալ 'ի վեր ետես զկանայսն և զմանկունս, և ասէ. Դոքա՞ զի՞նչ են քո: Եւ նա ասէ. Մանկունք իմ են, որովք ողորմեցաւ Աստուած ծառայի քում: ⁶Եւ մատեան աղախնայքն և որդիք նոցա, և երկիր պագին նմա: ⁷Եւ մատեաւ Լիա և որդիք իւր՝ և երկիր պագին նմա. յետոյ մատեաւ Յովսէփ և Ռաբէլ՝ և երկիր պագին նմա՝: ⁸Եւ ասէ. Չի՞նչ էր այն ամենայն չու՝ որ ինձ դիպեցաւ: Եւ նա ասէ. Չի գտցէ ծառայ քո շնորհս առաջի քո: ⁹Եւ ասէ Եսաւ. Կայ և իմ շատ՝ եղբայր՝ քեզ լիցի քոյդ: ¹⁰Եւ ասէ Յակոբ. Մի՛ այդպէս. եթէ գտի շնորհս առաջի քո՝ ընկալ զընծայսն 'ի ձեռաց իմոց. քանզի այնպէս տեսի զերեսս քո՝ որպէս ոք տեսանիցէ զերեսս Աստուծոյ: Եւ զուարթասցիս ընդ իս՝: ¹¹Եւ ա՛ռ զօրհնութիւնս իմ, զոր մատուցի քեզ. զի ողորմեցաւ ինձ Աստուած. և է՛ իմ ամենայն ինչ: Եւ բռնադատեաց զնա. և ա՛ռ: ¹²Եւ ասէ. Չուեսցո՛ւք զնասցո՛ւք՝ և երթիցուք զուղորդն՝: ¹³Եւ ասէ ցնա. Տէր իմ ինքնին գիտէ, զի մանկունքս մատաղ են. և ոչխարի, և արջառոյ ծնունդ արծակեալ է. և եթէ մի օր ստիպեմ զդոսա, մեռանին ամենայն խաշինքդ: ¹⁴Այլ յառաջեսցէ՛ տէր իմ քան զծառայ իւր. և ես ըստ կարի՛ և ըստ պարապոյ ճանապարհիդ առաջի իմ, և ըստ կազդուրել մանկանց իմոց խաղացից, մինչև եկից առ տէր իմ 'ի Սէիր՝: ¹⁵Եւ ասէ Եսաւ. Իսկ թողից առ քեզ 'ի ժողովրդեմէ աստի՝ որ ընդ իս են: Եւ նա ասէ. Ընդէ՛ր է ինձ այդ. շատ է զի գտի շնորհս առաջի քո տէր: ¹⁶Եւ դարձաւ յաւուր յայնմիկ Եսաւ ընդ ճանապարհս իւր 'ի Սէիր: ¹⁷Եւ Յակոբ չուեաց՝ 'ի Խորանս և արար իւր անդ տունս, և խաշանց իւրոց արար դադարս. վասն այնորիկ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Խորանս:

ԽԲ ¹⁸Եւ եկն Յակոբ 'ի Սաղէմ քաղաք Սիկիմացոց, որ է յերկրին Քանանացոց՝ իբրև եկն 'ի Միջագետաց Ասորոց, և բնակեցաւ յանդիման քաղաքին: ¹⁹Եւ ստացաւ զվիճակ անդին ուր եհար զԽորան իւր՝ յեմովրայ հօրէ Սիւբեմայ հարիւր ոչխարի: ²⁰Եւ շինեաց անդ սեղան, և կարդաց զԱստուած Իսրայէլի:

34

Գլուխ ԼԴ

ԽԳ ¹Եւ ե՛լ Դինա դուստր Լիայ՝ զոր ծնաւ Յակոբայ, 'ի զնին դստերաց աշխարհին: ²Եւ ետես զնա Սիւբեմ որդի Եմովրա Քոռեցի, որ իշխանն էր երկրին. և ա՛ռ զնա, և ննջեաց ընդ նմա. և տառապեցոյց զնա: ³Եւ ո՛ւշ եղեալ

* *Յօրինակին թուագրով.* Եւ ընդ նմա արք նորա:
 * *Ոմանք.* Եւ յետոյ մատեաւ Ռաբէլ և Յովսէփ:
 * *Ոմանք.* Եւ զուարթասցի ընդ իս:
 * *Ոմանք.* Եւ երթիցուք զուղորդ:
 * *Ոմանք.* Ըստ կազդուրելոյ ման՝:

Դիմայի դստերն Յակոբայ՝ սիրեաց զկոյսն, և խօսեցաւ ըստ մտաց կուսին: ⁴Եւ խօսեցաւ Սիւքեմ ընդ Եմովրայ հօր իւրոյ՝ և ասէ. Ա՛ն դու ինձ զաղջիկս զայս կնութեան*։ ⁵Եւ լուաւ Յակոբ եթէ պղծեաց որդի Եմովրայ զԴիմա զդուստր իւր։ Եւ որդիք նորա էին ՚ի խաշիմս ՚ի դաշտի. լո՛ւռ եղև Յակոբ մինչև եկին նոքա*։ ⁶Եւ ե՛լ Եմովր հայր Սիւքեմայ առ Յակոբ խօսել ընդ նմա։ ⁷Եկին և որդիքն Յակոբայ ՚ի դաշտէ։ Իբրև լուան ստրջացա՛ն արքն, և տրտմութիւն էր նոցա յոյժ. զի խայտառակութիւն արար յԻսրայէլի, մտանելով առ դուստրն Յակոբայ. և ո՛չ այնպէս վճարիցի։ ⁸Եւ խօսեցաւ ընդ նոսա Եմովր՝ և ասէ. Սիւքեմ որդի իմ սիրեաց ոգւով չափ զդուստրն ձեր. արդ՝ տո՛ւք զնա նմա կնութեան, ⁹և արարէ՛ք ընդ մեզ խնամութիւն. զդստերս ձեր տո՛ւք մեզ, և զդստերս մեր առէ՛ք որդւոց ձերոց։ ¹⁰Եւ բնակեցէ՛ք ՚ի միջի մերում. և երկիրդ ահա ընդարձակ է առաջի ձեր, և բնակեցէ՛ք՝ և շահեցարո՛ւք ՚ի դմա. և ստացարուք ստացուածս ՚ի դմա։ ¹¹Եւ ասէ Սիւքեմ ցհայր նորա և ցեղբարս նորա. Գտի՛ց շնորհս առաջի ձեր. և զոր ինչ ասիցէ՛ք՝ տացո՛ւք։ ¹²Յաճախեցէ՛ք յոյժ զվարձանս և զօժիտս. և տա՛ց որչափ և ասիցէ՛ք. և տո՛ւք ինձ զաղջիկն զայն կնութեան։ ¹³Պատասխանի ետուն որդիքն Յակոբայ՝ Սիւքեմայ և Եմովրայ հօր նորա նենգութեամբ՝ և ասեն ցնոսա. վասն զի պղծեցին զԴիմա քոյր նոցա։ Եւ ասեն Շմաւոն և Ղևի եղբարք Դիմայ՝ որդիքն Լիայ. ¹⁴Ո՛չ կարենք առնել զայդ բան. տալ զքոյր մեր ա՛ռն անթլիատի. քանզի նախատի՛նք են մեզ. ¹⁵բայց այսո՛ւ նմանեսցուք ձեզ, և բնակեսցուք ՚ի միջի ձերում, եթէ լինիցիք և դո՛ւք իբրև զմեզ՝ ՚ի թլիատել ձեզ զամենայն արու։ ¹⁶Եւ տացուք զդստերս մեր ձեզ, և ՚ի դստերաց ձերոց առցուք մեզ կանայս. և բնակեսցո՛ւք առ ձեզ, և եղիցուք իբրև ա՛զգ մի։ ¹⁷Ապա թէ ո՛չ լսիցէք մեզ թլիատել, առեալ զդստերս մեր ՚ի բա՛ց գնասցուք։ ¹⁸Եւ հաճո՛յ թուեցաւ բանքն առաջի Եմովրայ, և առաջի Սիւքեմայ որդւոյ Եմովրայ*։ ¹⁹Եւ ո՛չ յամեաց պատանին առնել զբանն. զի յոյժ հարեալ էր ՚ի սէր դստերն Յակոբայ։ Եւ նա՛ էր պատուականագոյն քան զամենեսեան՝ որ ՚ի տան հօր նորա էին։ ²⁰Եւ եկին Եմովր և Սիւքեմ որդի նորա ՚ի դուռն քաղաքին իւրեանց. և խօսեցան ընդ ա՛րս քաղաքին իւրեանց՝ և ասեն. ²¹Որեա՛րն այն խաղաղութեամբ են ընդ մեզ. արդ բնակեսցեն յերկրիս, և շահեսցին ՚ի սմա. զի երկիրս ընդարձակ է առաջի նոցա. զդստերս նոցա առցուք մե՛զ կանայս, և զդստերս մեր տացուք նոցա*։ ²²Բայց միայն՝ այսո՛ւ նմանեսցեն մեզ որեարն՝ բնակել ընդ մեզ լինել ազգ մի. ՚ի թլիատել մեզ զամենայն արու, որպէս նոքայն թլիատեալ են։ ²³Եւ ինչք նոցա և անասուն նոցա և չորքոտանի նոցա ո՞չ ապաքէն մեր լինիցի. բայց այնու և եթ նմանեսցուք նոցա, և բնակեսցեն ՚ի միջի մերում։ ²⁴Եւ լուան Եմովրայ և Սիւքեմայ որդւոյ նորա ամենեքին որ ելանէին ընդ դուռն քաղաքին իւրեանց. և թլիատեցին զմարմին անթլիատութեան իւրեանց ամենայն արու, ամենեքին որ ելանէին ընդ դուռն քաղաքի նորա*։ ²⁵Եւ եղև յաւուրն երրորդի մինչ դեռ էին նոքա ՚ի ցաւսն, առին երկու որդիքն Յակոբայ, Շմաւոն և Ղևի եղբարք Դիմայ՝ իւրաքանչիւր զսուր իւր, և մտին ՚ի քաղաքն կազմութեամբ, և կոտորեցին

* *Ոմանք.* Ընդ Եմովրայ հօր իւրում։

* *Այլք.* ԶԴիմա զդուստր նորա։

* *Այլք.* Եւ հաճոյ թուեցան բանքն։

* *Ոսկան.* Արքն այնոքիկ խաղաղութեամբ են։ և (22). Նմանեսցին մեզ արքն բնակիլ ընդ մեզ։

* *Ոմանք.* Ընդ դուռն քաղաքի նոցա։ Եւ *ոմանք.* քաղաքի իւրեանց։

զամենայն արու*։ ²⁶Եւ զեմովր և զՍիւքեմ զորդի նորա սպանին 'ի սուր սուսերի, և առին զԴինա 'ի տանէ Սիւքեմայ՝ և ելին*։ ²⁷Եւ որդիքն Յակոբայ մտին 'ի վերայ վիրաւորացն, և առին աւար զքաղաքն, յորում պղծեցին զԴինա զքոյրն նոցա։ ²⁸Վարջառ և զոչխար և զէջ նոցա՝ որ էին 'ի քաղաքին, և որ ինչ 'ի բացի էր՝ առին*։ ²⁹Եւ զամենայն մարդագերի նոցա, և զամենայն զկահ և զկարասի նոցա, և զկանայս նոցա գերեցին։ Եւ յափշտակեցին որ ինչ էր 'ի քաղաքին՝ և որ ինչ 'ի տունս։ ³⁰Եւ ասէ Յակոբ ցՇմաւոն և ցՂևի. Ատելի՛ արարէք զիս, երևել անզգամ ամենայն բնակչաց երկրիս 'ի մէջ Քանանացւոց և Փերեզացւոց. և ես սակաւաւոր եմ թուով. արդ՝ եթէ ժողովիցին 'ի վերայ իմ և հարկանիցեն զիս, սատակելով սատակիցի՞մ և ես, և տուն իմ*։ ³¹Եւ ասեն. Իսկ զիա՞րդ. զի իբրև զբո՞զ մի քարշեցին զքոյրն մեր*։

35

Գլուխ ԼԵ

ԽԴ ¹Եւ ասէ Աստուած ցՅակոբ. Արի անց 'ի տեղին 'ի Բեթէլ. և անդ բնակեսցես. և արասցես անդ սեղան Աստուծոյ որ երևեցաւն քեզ 'ի փախչելն քո յերեսաց Եսաւայ եղբոր քոյ*։ ²Եւ ասէ Յակոբ ցընտանիսն իւր, և ցամենեսին որ ընդ նմա էին. 'Ի բաց առէք զաստուածոս ստարոտիս որ ընդ ձե՛զ են 'ի միջոյ ձերմէ, և սրբեցարո՛ւք. և փոխեցէ՛ք զպատմութեանս ձեր*։ ³Եւ յարուցեալ ելցո՛ւք 'ի Բեթէլ, և արասցուք անդ սեղան Աստուծոյ. որ լուաւ ինձ յաւուր նեղութեան, որ էր ընդ իս. և ապրեցոյց զիս 'ի ճանապարհին՝ զոր գնացի*։ ⁴Եւ ետուն ցՅակոբ զաստուածոս ստարոտիս որ էին 'ի ձեռս նոցա, և զգինոս որ յականջս իւրեանց։ Եւ ծածկեաց զնոսա Յակոբ 'ի ներքոյ բեկնոյն 'ի Սիկիմ, # և կորոյս զնոսա մինչև ցայսօր ժամանակի։ ⁵Եւ չուեաց Իսրայէլ 'ի Սիկիմայ. և եղև ա՛հ Աստուծոյ 'ի վերայ քաղաքացն որ շուրջ զնովաւ. և ո՛չ ելին զհետ որդւոցն Իսրայէլի։ ⁶Եւ եկն Յակոբ 'ի Լուզ՝ որ է յերկրին Քանանացւոց, այն ինքն է Բեթէլ, ինքն և ամենայն ժողովուրդն որ ընդ նմա*։ ⁷Եւ շինեաց անդ սեղան. և կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Բեթէլ. զի անդ երևեցաւ նմա Աստուած 'ի փախչել նորա յերեսաց Եսաւայ եղբոր իւրոյ*։

ԽԵ ⁸Եւ մեռա՛ւ Դէբովրա դայեկն Ռեբեկայ, և թաղեցաւ 'ի ներքոյ Բեթելայ ընդ կաղնեաւն. և կոչեաց զանուն նորա Կաղնի՛ սգոյ*։ ⁹Եւ երևեցաւ Աստուած Յակոբայ՝ մինչդեռ անդ էր 'ի Լուզ. յորժամ եկն 'ի Սիջագետաց Ասորոց։ Եւ օրհնեաց զնա Աստուած։ ¹⁰Եւ ասէ ցնա Աստուած. Անուն քո Յակոբ՝ ո՛չ ևս

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղև յաւուրն։

* *Յօրինակին պակասէր.* Եւ զեմովր և։

* *Ոմանք.* Եւ զարջառ և զոչխար։

* *Այլք առանց հարցական ուղորակի.* Սատակիցիմ ես և տուն իմ։

* *Ոմանք.* Իսկ զիարդ իբրև զբոզ քարշիցեն զքոյրն մեր։

* *Ոմանք.* Արի՛ և ել 'ի տեղին 'ի Բեթէլ։

* *Ոմանք.* Որ ընդ նմայն էին։

* *Ոմանք.* Որ էրն ընդ իս։ Եւ ոմանք. որ է ընդ իս։ *Ուր Ոսկան.* Յաւուր նեղութեան իմոյ, որ է ընդ իս։

* *Այլք.* 'Ի Լուզա՝ որ է յերկրին։

* *Ի լուս՝ 'ի վերայ՝* Բեթէլ, *նշանակի՝* հզօր։

* *Այլք.* Դայեակն Ռեբեկայ։

կոչեացի Յակոբ, այլ Իսրայէլ եղիցի անուն քո: Եւ կոչեաց զանուն նորա Իսրայէլ: ¹¹Եւ ասէ ցնա Աստուած. Ես եմ Աստուած քո բաւական. աճեսցի՛ր և բազմասցի՛ր. ազգք և ժողովուրդք ազգաց եղիցին ՚ի քէն, և թագաւորք յերանաց քոց ելցեն* . ¹²և զերկիրդ զոր ետու Աբրաամու և Սահակայ՝ քե՛զ տաց զդա, քե՛զ եղիցի, և զաւակի քում յետ քո տաց զերկիրդ զայդ: ¹³Եւ վերացաւ ՚ի նմանէ Աստուած ՚ի տեղւոջէն՝ ուր խօսեցաւ ընդ նմա: ¹⁴Եւ կանգնեաց Յակոբ արձան ՚ի տեղւոջն ուր խօսեցաւ ընդ նմա, արձան քարեղէն. և նուիրեաց ՚ի նմա նուէրս. և արկ ՚ի վերայ նորա ևղ*: ¹⁵Եւ կոչեաց զանուն տեղւոյն ուր խօսեցաւ ընդ նմա Աստուած՝ Բեթէլ:

ԽԶ ¹⁶Եւ չուեաց ՚ի Բեթելայ: Եւ եղև իբրև մերձեցաւ ՚ի Քաբրաթա երկիր, մտանել յեփրաթա, ծնաւ Ռաբէլ: ¹⁷Եւ դժուարածին եղև ՚ի ծննդեանն. և եղև ՚ի վշտանալն նորա ՚ի ծննդեանն, և ասէ ցնա ծնուցիչն. Քաջալերեաց՝ զի և այդ ևս քո ո՛ւստր է: ¹⁸Եւ եղև ընդ հանել ոգւոցն, քանզի մեռաւ, կոչեաց զանուն նորա Որդի վշտաց իմոց. և հայրն կոչեաց զնա Բենիամին*: ¹⁹Մեռաւ Ռաբէլ և թաղեցաւ ՚ի ճանապարհին Եփրաթայ. այն իսկ է Բեթղա՛հէն: ²⁰Եւ կանգնեաց Յակոբ արձան ՚ի վերայ շիրմին նորա, այն է արձան շիրմի Ռաբելայ մինչև ցայսօր ժամանակի:

ԽԷ ²¹Եւ չուեաց Իսրայէլ և էհար զխորան իւր յայնկոյս աշտարակին Գադերայ: ²²Եւ եղև իբրև բնակեաց Իսրայէլ յերկրին յայնմիկ. զնաց Ռոբէն՝ և ննջեաց ընդ Բալլայ հարճի հօր իւրոյ. լուաւ Իսրայէլ՝ և չար թուեցաւ առաջի նորա: Եւ էին որդիք Յակոբայ երկուտասանք: ²³Որդիք Լիայ՝ անդրանիկ Յակոբայ՝ Ռոբէն. Շնաւոն. Ղևի. Յուդայ. Իսաքար. Ջաբոդոն: ²⁴Եւ որդիք Բալլայ նաժշտի Ռաբելայ՝ Ռան, և Նեփթաղիմ: ²⁵Եւ որդիք Ջելփա նաժշտին Լիայ՝ Գադ և Ասեր: ²⁶Եւ որդիք Ռաբելի՝ Յովսէփ և Բենիամին: Այս են որդիք Յակոբայ. որ եղեն նմա ՚ի Միջագետս Ասորոց: ²⁷Եւ եկն Յակոբ առ Իսահակ հայր իւր ՚ի Մամբրէ՝ ՚ի քաղաք դաշտին. այն է Քեբրոն, յերկրին Քանանացոց, ուր պանդխտեցան Աբրաամ և Իսահակ: ²⁸Եւ եղեն ամենայն աւուրք Իսահակայ՝ զոր եկեաց. ամք հարիւր ութսուն: ²⁹Եւ պակասեալ Իսահակայ մեռաւ, և յաւելաւ յազգ իւր. ծերացեալ և լի՛ աւուրքք: Եւ թաղեցին զնա Եսաւ և Յակոբ որդիք իւր:

36

Գլուխ ԼԶ

ԽԸ ¹Եւ այս են ծնունդք Եսաւայ. նա՛ է Եդոն: ²Եւ ա՛ռ իւր Եսաւ կանայս ՚ի դստերաց Քանանացոց. զԱդդա զդուստր Ելոնայ Քետացոյ. և զՈլիբամա դուստր Անայի՝ որդւոյ Սեբեգոնի իսկացոյ*: ³Եւ զԲասեմաթ զդուստր Իսմայելի՛ զքոյր Նաբեութայ: ⁴Եւ ծնաւ Ադդա Եսաւայ զեղիփագ: Եւ Բասեմաթ ծնաւ

* Ոմանք. Ազգք և ժողովք ազգաց:

* Ոսկան. Ուր խօսեցաւ ընդ նմա Աստուած:

* Ոմանք. Եւ հայրն կոչեաց զանուն նորա Բենիամին:

* Ոմանք. Եւ երկու որդիք Ջելփայ: Աստանօր յօրինակաց ոմանք՝ յետ որդւոցն Լիայ դնեն զՌաբելին. ապա զԲալլայն, և յետոյ զՋելփայն: Իսկ ոմանք յետ Լիայ և Ռաբելի՛ զՋելփայն, և հուսկ յետոյ զԲալլայն:

* Ոմանք. ՋԱդա զդուստր Ելովնայ.. զՈլիբամա զդուստր:

զՌագուէլ: ⁵Եւ Ողիբամա ծնաւ զՅէուս, և զԵզդոմ, և զԿորիս: Սոքա են որդիք Եսաւայ, որ եղեն նմա յերկրին Քանանացոց*:

⁶Եւ ա՛ռ Եսաւ զկանայս իւր, և զուստերս և զդստերս իւր, և զամենայն մարդիկ տան իւրոյ, և զամենայն ինչս և զանասուն. և զամենայն ինչ զոր ստացաւ՝ և զոր արար յերկրին Քանանացոց. և զնա՛ց յերկրէն Քանանացոց յերեսաց Յակոբայ եղբօր իւրոյ:

⁷Զի էին բազում ինչք նոցա՝ ՚ի միասին բնակելոյ. և ո՛չ կարէր երկիրն պանդխտութեան հանդարտել նոցա ՚ի բազմութենէ ընչից իւրեանց:

⁸Եւ բնակեցաւ Եսաւ ՚ի լերինն Սէիր: Եսաւ՝ որ նա՛ ինքն է Եդոմ:

⁹Եւ ա՛յս են ծնունդք Եսաւայ՝ հօրն Եդոմայեցոց, ՚ի լերինն Սէիր:

¹⁰Եւ ա՛յս են անուանք որդւոցն Եսաւայ. Եղիփազ որդի Ադդայի կնոջ Եսաւայ: Եւ Ռագուէլ՝ որդի Բասեմաթայ կնոջ Եսաւայ*:

¹¹Եւ եղեն որդիք Եղիփազայ, Թեման, Ովմար, Սովփար, Գոթամ, և Կենէզ*:

¹²Եւ Թամար էր հարճ Եղիփազու որդւոյ Եսաւայ. և ծնաւ Եղիփազու զԱմադէլ: Սոքա են որդիք Ադդայի կնոջ Եսաւայ:

¹³Եւ ա՛յս են որդիք Ռագուէլի, Նաքովթ, Չարեհ, Ամնա, և Մեզա, սոքա՛ են որդիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ*:

¹⁴Եւ ա՛յս են որդիք Ողիբամայ դստեր Անայի որդւոյ Սեբեզոնի կնոջ Եսաւայ: Եւ ծնաւ Եսաւայ զՅէուս, և զԵզդոմ. և զԿորիս*:

¹⁵Սոքա են իշխանք՝ որդիք Եսաւայ: Որդիք Եղիփազու անդրանկանն Եսաւայ. իշխան Թեման, իշխան Ովմար, իշխան Սովփար, իշխան Կենէզ, ¹⁶իշխան Կորիս, իշխան Գոթամ, իշխան Ամադէլ: Սոքա են իշխանք Եղիփազու յերկրին Եդոմայեցոց. սոքա են որդիք Ադդայի*:

¹⁷Եւ ա՛յս են որդիք Ռագուէլի որդւոյ Եսաւայ. իշխան Նաքովթ, իշխան Չարեհ, իշխան Ամնա, իշխան Մոզէ: Այս են իշխանք Ռագուէլի յերկրին Եդոմայ: Սոքա են որդիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ:

¹⁸Եւ ա՛յս են որդիք Ողիբամայ կնոջ Եսաւայ. իշխան Յէուս. իշխան Յեզդոմ. իշխան Կորիս: Այս են իշխանք Ողիբամայ դստեր Անայի կնոջ Եսաւայ*:

¹⁹Եւ ա՛յս են իշխանք նոցա. և ա՛յս են որդիք Եդոմայ: ²⁰Եւ ա՛յս են որդիք Սէիրայ Քոռացոյ որ բնակեալ էր ՚ի Սէիր. Ղովտան, Սեբաղ, Սեբեզոն, Անա*, ²¹Դեսոն. և Ասեր՝ և Ռիսոն: Սոքա են իշխանք Քոռեցոյն, որդւոյ Սէիրայ յերկրին Եդոմայ*:

²²Եւ եղեն որդիք Ղովտանայ. Քոռի, և Եմման. և քոյր Ղովտանայ՝ Թամնա:

²³Եւ սոքա են որդիք Սոբոդայ. Գաղոմ, և Մանաքաթ, և Գեբաղ, և Սովփար, և Աւնան:

²⁴Եւ ա՛յս են որդիք Սեբեզոնի. Այիէ, և Աւնան. ա՛յս Աւնան է որ եգիտ զաղբիւրն յանապատի՝ մինչ արածէր զէշսն Սեբեզոնի հօր իւրոյ*:

²⁵Եւ ա՛յս են որդիք Անայի՝ Դեսոն, և Ողիբամա դուստր Անայի: ²⁶Եւ ա՛յս են որդիք Դեսոնայ. Ամադան, և Եսբան, և Յեթրան, և Քառան: ²⁷Եւ ա՛յս են որդիք Ասերայ. Բաղի՛ան, և Ջուկան. Ոսնիկան, և Ուկան: ²⁸Եւ ա՛յս են որդիք Ռիսոնի. Ովս, և Առան: ²⁹Եւ ա՛յս են իշխանք Քոռայ. իշխան Ղովտան, իշխան Սովբաղ, իշխան Սեբեզոն, իշխան Անա. ³⁰իշխան Դեսոն. իշխան Ասեր.

* *Ոմանք.* Եւ զՅեզդոմ:

* *Ոմանք.* Որդի Ադա կնոջ... որդի Բասեմաթայ:

* *Ոմանք.* Սովփար, Գոթոմ, *կամ* Գոթեն:

* *Ոսկան.* Սամնա և Մեզա:

* *Ոմանք.* Եւ զՅեզդոմ:

* *Յօրինակին պակասէր. Իշխան Կորիս. իշխան Գո՞: Ոմանք յաւելուն.* Սոքա են որդիք Ադայի կնոջ Եսաւայ:

* *Ոմանք յաւելուն.* Անայի կնոջ Եսաւայ. *Այս են որդիք Եսաւայ:*

* *Ոմանք.* Որ բնակեալ էր յերկրին Ղովտան, Սովբաղ *կամ* Նեբաղ Սեբեզոն:

* *Ոմանք.* Իշխանք Քոռացոյն.. յերկրէն Եդովմայ:

* *Ոմանք.* Եւ Ովնան. այս Ովնան է որ:

իշխան Ռիսոն: Այս են իշխանք Քոռայ. ՚ի պետութիւնս իւրեանց յերկրին յեդոմայ: ³¹Եւ այս են թագաւորք որ թագաւորեցին յերկրին Եդոմայեցոց, մինչ չն՝ թագաւորեալ էր թագաւոր յԻսրայէլի*: ³²Եւ թագաւորեաց յեդոմ Բաղակ որդի Սեպփովրայ. և անուն քաղաքի նորա Դէննաբա: ³³Եւ մեռաւ Բաղակ: Եւ թագաւորեաց ընդ նորա Յոբաբ որդի Չարեհի ՚ի Բոսորայ*: ³⁴Եւ մեռաւ Յոբաբ: Եւ թագաւորեաց ընդ նորա Ասոմ յերկրի Թամանացոց*: ³⁵Եւ մեռաւ Ասոմ: Եւ թագաւորեաց ընդ նորա Ադադ որդի Բարադայ, որ կոտորեաց զՄադիան ՚ի դաշտին Մովաբացոց. և անուն քաղաքի նորա Գեթէն: ³⁶Եւ մեռաւ Ադադ: Եւ թագաւորեաց ընդ նորա Սամադա Մասեկայ*: ³⁷Եւ մեռաւ Սամադա: Եւ թագաւորեաց ընդ նորա Սաւուդ յԻսրայէլայ՝ որ առ Գետեզերն*: ³⁸Եւ մեռաւ Սաւուդ: Եւ թագաւորեաց ընդ նորա Բադ՚ղայեմոն որդի Ոքոբորայ: ³⁹Եւ մեռաւ Բադ՚ղայեմոն որդի Ոքոբորայ: Եւ թագաւորեաց ընդ նորա Ադադ որդի Բարադայ. և անուն քաղաքի նորա Փոգով. և անուն կնոջ նորա Սետաբէլ դուստր Մատեթայ, որդույ Մագովբայ*: ⁴⁰Այս են անուանք որդւոցն Եսաւայ, և իշխանացն Եսաւայ յազգս իւրեանց. ըստ տեղիս իւրեանց յաշխարհս իւրեանց, և ՚ի տոհմս իւրեանց ըստ անուանց նոցա: Իշխան Թամանա, իշխան Ղովտան, իշխան Յեթաթ, ⁴¹իշխան Ողիբամասա, իշխան Յեղայ, իշխան Փեմոն, ⁴²իշխան Կենէգ, իշխան Թեման. իշխան Մագար. ⁴³իշխան Մագեդէլ. իշխան Չարոյին: Սոքա՝ են իշխանք Եդոմացոց ըստ բնակութեան յերկրի ստացուածոց իւրեանց: Եւ այս է Եսաւ հայր Եդոմայ*:

37

Գլուխ ԼԷ

ԽԹ ¹Եւ բնակէր Յակոբ յերկրի ուր պանդխտեցաւ հայր նորա, յերկրին Քանանացոց: ²Եւ այս են ծնունդք Յակոբայ: Յովսէփ եւթնուտասնամեայ էր, մինչ արածեր եղբարքքն հանդերձ խաշինս. և էր կրտսեր ընդ որդիսն Բալլայ, և ընդ որդիսն Չելփայ կանանց հօր իւրոյ: Եւ բերէին համբաւ չա՛ր զՅովսէփայ առ Իսրայէլ հայրն իւրեանց*: ³Բայց Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր. քանզի որդի ծերութեան նորա էր: Եւ արար նմա պատմուճան ծաղկեայ: ⁴Իբրև տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա. և ո՛չ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ: ⁵Եւ ետես երազ Յովսէփ՝ և պատմեաց եղբարց իւրոց. և յաւելին ևս ատել զնա: ⁶Եւ ասէ ցնոսա. Լուարո՛ւք զերազն զոր տեսի: ⁷Թուէր եթէ որայ կապէաք ՚ի դաշտի միում: Եւ կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղղորդ. և դարձան որայքն ձեր, և պագին երկիր իմուն որայոյն*: ⁸Եւ ասեն ցնա եղբարքն

* Ոմանք. Եւ այս թագաւորք են.. մինչ չն թագաւոր թագաւորեալ էր յԻսրայէլի:

* Ոմանք. Եւ թագաւորեաց ընդ նմա Յովբաբ:

* Ոմանք. Ասովմ յերկրէ Թեման՝:

* Ոսկան. Սամադա ՚ի Մասեկայ:

* Ոմանք. Սաւուդ յԻսրայէլայ, որ առ Գետեզերն:

* Ոմանք. Սետաբէլ դուստր Մատեթայ:

* Այլք. Սոքա են իշխանք Եդովմայեցոց:

* Ոմանք. Յովսէփ եւթն և տասնամ՝:

* Ոմանք. Պագին երկիր իմոյ որայիցն:

իւր. Միթէ թագաւորելո՞վ թագաւորեսցե՞ս ՚ի վերայ մեր, կամ տիրելո՞վ տիրեսցե՞ս մեզ: Եւ յաւելին և՛ս ատել զնա վասն երազոցն նորա. և վասն բանիցն նորա*: ⁹Եւ ետես մե՛ւս ևս երազ. և պատմեաց իօր իւրում և եղբարց իւրոց: Եւ ասէ. Ահա տեսանէի մե՛ւս ևս այլ երազ: Որպէս թէ արեգակնդ և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ: ¹⁰Սաստեաց նմա հայրն իւր՝ և ասէ. Չի՞նչ է երազն զոր տեսեր: Արդ՝ գալով գայցենք ե՛ս և մայր քո՝ և եղբարք քո, և երկի՞ր պագանիցենք քեզ: ¹¹Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր. բայց հայրն պահէր զբանսն: ¹²Եւ գնացին եղբարք նորա արածել զխաշինս իօրն իւրեանց ՚ի Սիւքեմ: ¹³Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Ո՞չ աւանիկ եղբարք քո արածեն զխաշինսն ՚ի Սիւքեմ. ե՛կ առաքեցից զքեզ առ նոսա: ¹⁴Եւ ասէ ցնա. Ահաւասիկ ե՛ս: Ասէ ցնա Իսրայէլ. Ե՛րթ տես եթէ ո՞ղջ իցեն եղբարքն քո՝ և խաշինք, և բեր ինձ զրոյց: Եւ առաքեաց զնա ՚ի ծործորոյն Քեբրոնի. եկն ՚ի Սիւքեմ. ¹⁵և եգիտ զնա այր մի մուրեալ ՚ի դաշտին: Եհարց ցնա այրն՝ և ասէ. Չի՞նչ խնդրես: ¹⁶Եւ նա ասէ. Չեղբարսն իմ խնդրեմ. պատմեա՛ ինձ ո՛ւր արածիցեն: ¹⁷Եւ ասէ ցնա այրն. Բարձին աստի. և լուայ զի ասէին, երթիցուք ՚ի Դովթայիմ: Եւ գնաց Յովսէփ զհետ եղբարց իւրոց. և եգիտ զնոսա ՚ի Դովթայիմ: ¹⁸Տեսին զնա եղբարքն յառաջագոյն ՚ի հեռաստանէ, մինչ չե՛ մօտ եկեալ էր առ նոսա. խորհո՛ւրդ վատ ՚ի մէջ առին սպանանել զնա*: ¹⁹Եւ ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր. Ահա երագատեսն գա՛յ. ²⁰Եկայք սպանցուք զնա, և ընկեսցուք ՚ի մի ՚ի գբոց աստի, և ասացուք եթէ զագան չա՛ր եկեր զնա. և տեսցուք զի՞նչ լինիցին երագքն նորա: ²¹Իբրև լուաւ Ռոբէն, կորզեաց զնա ՚ի ձեռաց նոցա. ²²և ասէ. Մի՛ հարցուք զդա յոգի: Եւ ասէ ցնոսա Ռոբէն. Մի՛ հեղցուք արիւն. այլ արկէ՛ք զդա ՚ի գուր մի յանապատի աստ. և ձեռն մի՛ արկանէք ՚ի նա: Չի թափիցէ զնա ՚ի ձեռաց նոցա, և հասուցանիցէ զնա առ հայր իւր*: ²³Եւ եղև իբրև եկն Յովսէփ առ եղբարսն իւր, մերկացին զպատմուճանն նորա ծաղկեայ ՚ի նմանէ. ²⁴և առին ընկեցին զնա ՚ի գուրն: Եւ գուրն ունայն էր. և ջուր ո՛չ գոյր ՚ի նմա: ²⁵Եւ նստան ուտել զհացն: Չաչս ՚ի վեր բարձեալ տեսին, և ահա ճանապարհորդք Իսմայելացիք գային ՚ի Գաղաադէ. և ուղտք նոցա լի՛ էին խնկովք ստաշխամբ և ռետնիւ. և երթային իջուցանել յեգիպտոս: ²⁶Եւ ասէ Յուդա ցեղբարսն իւր. Չի՞նչ օգուտ է եթէ սպանանիցենք զեղբայրն մեր. և թաքուցանիցենք զարիւն նորա. ²⁷եկայք վաճառեսցուք զնա Իսմայելացւոցն. և ձեռք մեր մի՛ շաղախեսցին ՚ի նմա. զի եղբայր և մարմին մեր է: Եւ լուան նմա եղբարքն իւր: ²⁸Եւ անցանէին արք Մադիանացիք՝ վաճառականք: Եւ ձգեցին հանին զՅովսէփ ՚ի գբոյ անտի, և վաճառեցին զՅովսէփ Իսմայելացւոցն քսան դահեկանի: ²⁹Եւ իջուցին զՅովսէփ յեգիպտոս: Դարձաւ Ռոբէն ՚ի գուրն. և ո՛չ եգիտ զՅովսէփ ՚ի գբի անդ: ³⁰Պատառեաց զհանդերձս իւր. և դարձաւ առ եղբարսն իւր՝ և ասէ. Պատանեակն չէ՛ անդ, և ես արդ՝ յո՞ երթայց: ³¹Եւ առեալ զպատմուճանն Յովսէփայ՝ զենին ուլ այծեաց, և թաթաւեցին զպատմուճանն յարեանն: ³²Եւ առաքեցին զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայրն իւրեանց, և ասեն. Չայդ գտա՛ք. ծանի՛ր եթէ որդւո՞յ քոյ իցէ պատմուճանդ եթէ ոչ*: ³³Եւ ծանեաւ զնա՝ և ասէ. Պատմուճանս որդւո՞յ իմոյ է. զագան չա՛ր եկեր զնա.

* *Յօրինակին պակասէր.* վասն երազոցն նորա, և վասն բանիցն նորա:

* *Ոմանք.* Եւ տեսին զնա եղ՛:

* *Այլք.* Այլ արկէք զնա ՚ի գուր: *Ոսկան յաւելու.* Արկանէք ՚ի նա: *զայս ասէր* զի թափիցէ զնա:

* *Ոմանք.* Իցէ պատմուճանդ՝ և եթէ ոչ:

գազան յափշտակեաց զՅովսէփ: ³⁴Եւ պատառեաց զհանդերձս իւր, և քուրձ զգեցաւ ՚ի վերայ միջոյ իւրոյ. և սուգ ուներ ՚ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս: ³⁵Եւ ժողովեցան ամենայն ուստերք նորա՝ և # ամենայն դատերք նորա. և եկին մխիթարել զնա, և ո՛չ կամէր մխիթարել. ասէ՛ զի իջի՛ց ես սովին սգով առ որդի իմ ՚ի դժոխս. և ելա՛ց զնա հայրն իւր՝: ³⁶Իսկ Մադիանացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս Պետափրեայ ներքինւոյ դահճապետի փարաւոնի:

38

Գլուխ ԼԸ

Ծ ¹Եւ եղև ՚ի ժամանակի յայնմիկ, էջ Յուդա յեղբարց իւրոց, և չոգաւ առ ոմն Ռդոդոմացի որուն անուն էր Իրաս: ²Եւ ետես անդ Յուդա զդուստր առն Քանանացւոյ, որուն անուն էր Շաւա. և ա՛ռ զնա իւր կին. և եմուտ առ նա՝: ³Յղացաւ և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա՝ Էր՝: ⁴Յղացաւ դարձեալ և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա Աւնան՝: ⁵Եւ յաւել դարձեալ ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա Սելւովմ. և նա էր ՚ի Քասքի յորժամ ծնաւ զնոսա: ⁶Եւ ա՛ռ Յուդա կին էրայ՝ անդրանկին իւրուն, որուն անուն էր Թամար: ⁷Եւ եղև է՛ր՝ անդրանկին Յուդայ՝ չար առաջի Տեառն. և սպան զնա Աստուած: ⁸Եւ ասէ Յուդա ցԱւնան. Մո՛ւտ առ կին եղբոր քոյ, և ամուսնացիս ընդ նմա. և յարուցես զաւակ եղբոր քում: ⁹Իբրև գիտաց Աւնան թէ ո՛չ լինի նմա զաւակն. լինէր յորժամ մտանէր առ կին եղբոր իւրոյ, հեղոյր զսերմն յերկիր, չտա՛լ զաւակ եղբորն իւրում՝: ¹⁰Եւ չա՛ր թուեցաւ առաջի Աստուծոյ գործն զոր արար, և սպան և զնա ևս՝: ¹¹Եւ ասէ Յուդա ցԹամար նու իւր. Նի՛ստ այրի ՚ի տան հոր քոյ՝ մինչև եղիցի մեծ Սելւովմ որդի իմ: Ձի ասէր՝ թէ գուցէ և նա ևս մեռանիցի որպէս և եղբարքն նորա: Գնաց Թամար՝ և նստաւ ՚ի տան հոր իւրոյ՝: ¹²Բազմացան աւուրքն. և մեռաւ դուստրն Շաւայ՝ կին Յուդայ: Մխիթարեցաւ Յուդա՝ և գնաց ՚ի կտուրս խաշանց իւրոց, ինքն և Իրաս հովիւ իւր Ռդոդոմացի ՚ի Թամնա՝: ¹³Ա՛զդ եղև Թամարայ նուոյ նորա՝ և ասեն. Ահա սկեսրայր քո ելանէ ՚ի Թամնա՝ կտրել զխաշինս իւր: ¹⁴Եւ եհան զհանդերձս այրութեան իւրոյ յինքենէ. արկաւ տեռ՝ և զարդարեցաւ. և նստաւ առ դրան Ենանու յանցս Թամնայ. զի ետես եթէ մե՛ծ եղև Սելւովմ. և նա ո՛չ տայր զնա նմա կին՝: ¹⁵Իբրև ետես զնա Յուդա՝ համարեցաւ թէ բո՛զ իցէ. քանզի ծածկեալ էր զերեսս իւր՝ և ո՛չ ծանեաւ զնա: ¹⁶Խտտորեցաւ առ նա ՚ի ճանապարհէ անտի՝ և ասէ. Թո՛յլ տուր ինձ մտանել առ քեզ: Ձի ո՛չ ծանեաւ թէ նուն նորա իցէ: Եւ նա ասէ. Ձի՞՞նչ տացես ինձ եթէ մտանիցես առ իս: ¹⁷Եւ ասէ. Ես տաց ածել քեզ ուլ այծեաց ՚ի խաշանց ինոց: Եւ նա ասէ. Թէ տաս

* Ոմանք. Այլ ասէ՛ զի իջից ես սովին:

* Ոմանք. Որուն անուն էր Սաւա:

* Ոմանք. Եւ յղացաւ և ծնաւ: Ոսկան. Որ յղացաւ և ծն՛:

* Այլք. Եւ յղացաւ դարձեալ:

* Ոմանք. Եւ իբրև գիտաց Աւնան եթէ:

* Ոմանք. Եւ սպան զնա ևս:

* Ոմանք. ՅԹամար ցնու իւր:

* Ոմանք. Դուստրն Սաւայի կին:

* Ոմանք. Ոչ տայր նմա զնա կին:

գրաւական մինչև տացես ածել: ¹⁸Եւ նա ասէ. Ջի՞նչ գրաւական տաց քեզ: Եւ ասէ. Ջմատանիդ և զգինդդ, և զգաւազանդ որ ՚ի ձեռնին քում: Եւ եմուտ առ նա. և յղացաւ ՚ի նմանէ*, ¹⁹և յարեաւ զնաց: Եւ եհան ՚ի բաց զձորձն իւր յինքենէ. և զգեցաւ զհանդերձն այրութեան իւրոյ*: ²⁰Եւ առաքեաց Յուդա ուլ այժեաց ՚ի ձեռն հովուին իւրոյ Ողորդմացոյ առնուլ զգրաւականն ՚ի կնոջէ անտի, և ո՛չ եգիտ զնա: ²¹Եհարց զարս տեղւոյն և ասէ ցնոսա. Ո՞ւր է բոզն որ էր յեման ՚ի վերայ ճանապարհիս: ²²Եւ ասեն. Չէր աստ ուրեք բոզ: Եւ դարձաւ առ Յուդա, և ասէ. Ո՛չ գտի: Եւ արք տեղւոյն ասեն՝ թէ չի՞ք աստ բոզ: ²³Ասէ Յուդա. Նմա՛ լիցի այն. այլ զի մի՛ ծաղր կացցուք, ես ետու տանել զուլդ, և դու ո՛չ գտեր: ²⁴Եւ եղև յետ երից ամսոց, ա՛զդ եղև Յուդայ և ասեն. Պոռնկեցա՛ւ նու քո Թամար, և ահա յղի է ՚ի պոռնկութենէ: Եւ ասէ Յուդա. Հանէ՛ք զնա արտաքս, և այրեսցի*: ²⁵Եւ մինչդեռ տանէին զնա, առաքեաց առ սկեսրայրն իւր՝ և ասէ. Յառնէ՛ ոյր այդ գրաւականք են՝ յղի են ես: Եւ ասէ. Ծանի՛ր, ո՞յր իցէ մատանիդ՝ գինդդ՝ և գաւազանդ*: ²⁶Ծանեաւ Յուդա՛ և ասէ. Արդարացեալ է նա քան զիս. զի ո՛չ ետու զնա որդւոյ իմում Սելոմայ. և ո՛չ ևս յաւել գիտել զնա: ²⁷Եւ եղև իբրև ծնանէր. և էին երկու որդիք յորովայնի նորա: Եւ եղև ՚ի ժամանակի ծննդեան նորա, մին յառաջագոյն եհան զձեռն իւր. և ա՛ռ ծնուցիչն՝ կապեաց կարմիր ՚ի ձեռնին նորա. ²⁸և ասէ. Նախ սա՛ եկեսցէ: ²⁹Իբրև ամփոփեաց զձեռն անդրէն. եկն՝ ել վաղվադակի եղբայր նորա: Եւ նա ասէ. Ջի՞նչ է զի խրամատեցաւ վասն քո ցանգ: Եւ կոչեաց զանուն նորա Փարէս: ³⁰Եւ յետոյ եկն ել եղբայր նորա, յորոյ ձեռնին կապեալ էր զկարմիրն: Եւ կոչեաց զանուն նորա՝ Ջարա՛*:

39

Գլուխ ԼԹ

ԾԱ՛ 1Եւ զՅովսէփի իջուցին յԵգիպտոս, և զնեաց զնա Պետափրէս ներքինի՛ փարաւոնի դահճապետ, այր Եգիպտացի ՚ի ձեռաց Իսմայելացւոցն. որք իջուցին զնա անդր*: ²Եւ էր Տէր ընդ Յովսէփայ. և էր այր աջողակ: Եւ եղև ՚ի տան տեառն իւրոյ յԵգիպտոս: ³Իբրև գիտաց տէրն նորա՝ թէ Տէր ընդ նմա՛ է. և զամենայն զինչ և առնէր՝ Տէր յաջողէր ՚ի ձեռս նորա: ⁴Եւ եգիտ Յովսէփ շնորհս առաջի տեառն իւրոյ. զի հաճո՛յ էր նմա: Եւ կացոյց զնա ՚ի վերայ տան իւրոյ. և զամենայն ինչ որ ի՛ւր էր՝ ետ ՚ի ձեռս Յովսէփայ: Եւ եղև յետ կացուցանելոյ զնա ՚ի վերայ տան իւրոյ՝ և ՚ի վերայ ամենայն իրիք որ ինչ էր նորա: ⁵Եւ օրհնեաց Տէր զտուն Եգիպտացւոյն վասն Յովսէփայ: Եւ եղև օրհնութիւն Տեառն ՚ի վերայ ամենայն ընչից նորա ՚ի տան և յանդի: Եւ եթող զամենայն որ ինչ ի՛ւր էր՝ ՚ի ձեռս Յովսէփայ*: ⁶Եւ ո՛չ գիտէր զամենայն որ ինչ կայր ՚ի տան իւրում, բայց միայն զհացն զոր ուտէր: Եւ էր Յովսէփ ազնիւ երեսօք, և զեղեցիկ տեսլեամբ յոյժ: ⁷Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, և արկ կին տեառն իւրոյ զաչս իւր ՚ի վերայ

* Ոմանք. Եւ նա ասէ. Ջմատանիդ և զգինտդ:

* Յօրհնակին պակասէր. Եւ յարեաւ զնաց, և եհան:

* Ոմանք. Ազդ եղև Յուդայի... արտաքս զի այրեսցի:

* Այլք. Եւ գինդդ և գաւա՛:

* Ոմանք. Յորոյ ձեռն:

* Ոմանք. Ներքինին փարաւոնի դահճապետի:

* Ոմանք. Եւ եթող զամենայն ինչ որ իւր էր:

Յովսեփայ. և ասէ ցնա՝ քունեա՛ ընդ իս*։ ⁸Եւ նա ո՛չ կամեցաւ։ Եւ ասէ ցկին տեառն իւրոյ. Չի եթէ տէր իմ ո՛չ ճանաչէ ինչ ՚ի տան իւրում վասն իմ. ⁹և զամենայն ինչ ետ ՚ի ձեռս իմ. և չի՞ք ինչ ՚ի տան աստ որ մե՛ծ է քան զիս. և չի՞ք ինչ զատեալ յինէն բաց ՚ի քէն՝ զի տիկին նորա ես. և զի՞արդ ամնիցեմ զբանդ զայդ զչա՛ր և զմեծ, և մեղանչիցեմ առաջի Աստուծոյ*։ ¹⁰Եւ եղև իբրև խօսէր ընդ Յովսեփայ օրըստօրէ, և ո՛չ անսայր քունել ընդ նմա, և ո՛չ հուպ լինել։ ¹¹Եւ եղև օր ինչ այնպիսի. մտեալ Յովսեփի ՚ի տունն գործել զգործ ինչ իւր. և ո՛չ ոք էր անդ յընտանեաց անտի ՚ի ներքս. ¹²բուռն ետար զձորձոց նորա և ասէ. Ննջեա՛ ընդ իս։ Եւ նորա թողեալ զձորձս իւր ՚ի ձեռս նորա, և փախեալ էլ արտաքս*։ ¹³Եւ եղև իբրև ետես եթէ եթող զձորձս իւր ՚ի ձեռս նորա և փախեալ էլ արտաքս*։ ¹⁴Կոչեաց զընտանիս տանն՝ և ասէ. Տեսէ՛ք, զի ած մեզ ծառայ Եբրայեցի, խա՛ղ առնել զմեզ. եմուտ առ իս և ասէ, ննջեա՛ ընդ իս. և ես աղաղակեցի ՚ի ծայն բարձր։ ¹⁵Եւ իբրև լուաւ թէ մեծաբարբա՛ռ աղաղակեցի, եթող զձորձս իւր առ իս՝ և փախեալ էլ արտաքս։ ¹⁶Եւ եդ զձորձսն առ իւր՝ մինչև եկն տէրն ՚ի տուն իւր. և խօսեցաւ ընդ նմա ըստ բանիցս այսոցիկ, ¹⁷և ասէ. Եմուտ առ իս ծառայն Եբրայեցի զոր ածեր մեզ՝ խա՛ղ առնել զիս. և ասէ ցիս՝ ննջեա՛ ընդ իս*։ ¹⁸Իսկ իբրև լուաւ թէ բարձրացուցի՛ զբարբառ իմ և աղաղակեցի. եթող զձորձս իւր յիս, և փախեալ էլ արտաքս։ ¹⁹Եւ եղև իբրև լուաւ տէրն նորա զբանս կնոջն իւրոյ՝ զոր խօսեցաւ ընդ նմա և ասէ, թէ ա՛յսպէս արար ընդ իս ծառայն քո, բարկացաւ սրտմտմութեամբ։ ²⁰Եւ ա՛ռ տէրն Յովսեփայ՝ արկ զնա ՚ի բանտ. ՚ի տեղի ուր կալանաւորքն արքունի կապեալ կային ՚ի բանտին։ ²¹Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, և արկ զնովաւ ողորմութիւն, և ետ նմա շնորհս առաջի բանտապետին։ ²²Եւ ետ բանտապետն զբանտն ՚ի ձեռս Յովսեփայ, և զամենայն կալանաւորսն որ էին ՚ի բանտի անդ. և զամենայն որ ինչ գործէին անդ, նա՛ էր որ գործէր*։ ²³Եւ ո՛չ ինչ զիտէր բանտապետն զբանտին վասն նորա. զի ամենայն ՚ի ձեռս Յովսեփայ էր. քանզի Տէր էր ընդ նմա. և զոր ինչ գործէր նա՝ Տէր յաջողէր ՚ի ձեռս նորա։

40

Գլուխ Խ

¹Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, յանցեալ տակառապետ արքային Եգիպտացւոց, և մատակարար տեառն նոցա արքային Եգիպտացւոց։ ²Եւ բարկացաւ փարաւոն ՚ի վերայ երկոցուն ներքինեացն իւրոց. և ՚ի վերայ տակառապետին, և ՚ի վերայ մատակարարին*։ ³Եւ եդ զնոսա ՚ի բանտի առ դահճապետին. յայնմ բանտի տեղւոջ ուր Յովսեփն կայր։ ⁴Եւ յանձն արար զնոսա դահճապետն Յովսեփայ. և կայր նոցա ՚ի սպասու։ Եւ էին աւուրս ինչ ՚ի բանտի անդ։ ⁵Եւ տեսին երազ երկոքին. զիւրաքանչիւր երազ ՚ի միում գիշերի։

* Ոմանք. Եւ ասէ ցնա. Ննջեա՛ ընդ իս։

* Բազումք. Բայց ՚ի քէն՝ զի կին նորա ես։

* Ոմանք. Փախեալ և էլ։

* Ոմանք. Փախեալ և էլ։

* Ոմանք. Եւ ասէ ցիս՝ քունեա՛ ընդ իս։

* Ոմանք. Եւ զամենայն կապանաւորսն որ էին.. և զամենայն զոր ինչ գործէին անդ։

* Այլք. Յայնմ բանտի ՚ի տեղւոջ։

Տեսիլ երազոյ տակառապետին և մատակարարին որ էին արքային
 Եգիպտացւոց, մինչ էին ՚ի բանտի անդ: ⁶Եմո՛ւտ առ նոսա Յովսէփ ընդ
 առաւօտն. և ետես զնոսա՝ և էին խռովեալք: ⁷Եհարց ցներքինիսն փարաւոնի որ
 էին ընդ նմա ՚ի բանտի անդ առ տեառն նորա՝ և ասէ. Ընդէ՞ր տրտում են երեսք
 ձեր այսօր: ⁸Եւ նոքա ասեն ցնա. Երա՛գ տեսաք, և ո՛չ ոք իցէ որ մեկնիցէ զնա: Եւ
 ասէ ցնոսա Յովսէփ. Ոչ ապաքէն ՚ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա.
 պատմեցէք ինձ*: ⁹Եւ պատմեա՛ց տակառապետն զերազն իւր Յովսէփայ՝ և ասէ.
 Թուէր ինձ ՚ի տեսլեան իմում, ո՛րք մի առաջի իմ: ¹⁰Եւ յորքն երե՛ք ուռք՝ կանա՛չք
 յոյժ. և ունէր երիս ողկոյզս հասեալս ողկոյզ խաղողոյ*: ¹¹Եւ բաժակն
 փարաւոնի ՚ի ձեռին իմում: Առնուի՛ զխաղողն, և ճմլէի ՚ի բաժակն # փարաւոնի,
 և տայի զբաժակն ՚ի ձեռս փարաւոնի: ¹²# Եւ ասէ ցնա Յովսէփ. Այս է
 մեկնութիւն նորա. երեք ուռքն, երեք աւուրք են: ¹³Այլ ևս երեք աւուրք, և
 յիշեսցէ փարաւոն զիշխանութիւնն քո, և անդէն ՚ի նմին տակառապետութեան
 քում կացուցէ զքեզ. և տացես զբաժակն փարաւոնի ՚ի ձեռս նորա, ըստ
 առաջնոյ իշխանութեանն քո՝ որպէս և էիր տակառապետ*: ¹⁴Այլ զիս յիշեսցիր
 յորժամ բարի լինիցի քեզ. և արասցես ինձ ողորմութիւն. և յիշեսցես զիս
 առաջի փարաւոնի. և հանցես զիս ՚ի բանտ աստի յայսմանէ: ¹⁵Ձի գողացան զիս
 գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց. և աստ՝ ինչ ո՛չ արարի. և արկին զիս ՚ի
 տուն գբոյս այսորիկ*: ¹⁶Իբրև ետես մատակարարն թէ ուղիղ մեկնեաց, ասէ
 ցՅովսէփ. Եւ ես տեսանէի յերազի, թուէր ինձ թէ երիս խանս նաշիւոյ ունէի ՚ի
 գլուխ իմում*: ¹⁷Եւ ՚ի վերնում խանին յամենայնէ զոր ուտէր արքայ փարաւոն՝
 գործ մատակարարաց. և թռչունք ուտէին զնա ՚ի խանէ անտի՝ որ էր ՚ի վերայ
 գլխոյ իմոյ: ¹⁸Պատասխանի ետ Յովսէփ՝ և ասէ ցնա. Այս է մեկնութիւն նորա.
 երեք խանքն՝ երեք աւուրք են: ¹⁹Յետ երից աւուրց բարձցէ՛ փարաւոն զգլուխ
 քո ՚ի քէն, և կախեսցէ՛ զքեզ զփայտէ. և կերիցեն թռչունք երկնից զմարմին քո ՚ի
 քէն: ²⁰Եւ եղև յաւուրն երրորդի, օր ծննդոց էր փարաւոնի, և առնէր
 ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց: Եւ յիշեաց զիշխանութիւն
 տակառապետին, և զիշխանութիւն մատակարարին ՚ի մէջ ծառայից իւրոց: ²²Եւ
 կացոյց զտակառապետն անդէն յիշխանութեան իւրում. և ե՛տ զբաժակն ՚ի ձեռս
 փարաւոնի: ²³Եւ զմատակարարն կախեաց զփայտէ, որպէս և մեկնեացն
 Յովսէփ*:

ԾԲ ²⁴Եւ ո՛չ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա:

41

Գլուխ ԽԱ

¹Եւ եղև յետ երկուց ամաց աւուրց, ետես փարաւոն երա՛գ: Թուէր թէ կայցէ
 յեզր գետոյ*: ²Եւ ահա որպէս թէ ՚ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք գեղեցիկ

* Այլք. Եւ ո՛չ ոք է որ մեկն՝... ՚ի ձեռն Աստուծոյ իցէ: *Ոսկան յաւելու.* Որ մեկնիցէ զնա մեզ:
 * Բագոււմք. Եւ յորքն երեք ուռք:
 * Ոմանք. Որպէս և էիրն տակառա՛:
 * Ոմանք. Գողացան զիս յերկրին Եբր՛: Այլք. Եւ աստ ոչինչ արարի:
 * Բագոււմք. Եւ թուէր ինձ.. ունէի ՚ի գլուխ իմ:
 * Ոմանք. Որպէս մեկնեաց նմա Յովսէփ:
 * Այլք. Թէ կայցէ առ եզեր գետոյն:

տեսանելով, և ընտիրք մարմնով, և արածէին ՚ի խաղի անդ: ³Եւ այլ ևս եւթն երինջք ելանէին յետ նոցա ՚ի գետոյ անտի. զագիրք տեսանելով. և վտիտք մարմնով. և արածէին առ այլ երնջովքն առ եզեր գետոյն*:

⁴Եւ ուտէին եւթն երինջքն զագիրք տեսլեամբ և վտիտք մարմնովք, զեւթն երինջս գեղեցիկս տեսլեամբ և զընտիրս: Ջարթեալ փարաւոն. ⁵և անդրէն ՚ի քուն եմուտ: Եւ ետես երազ երկրորդ. և ահա եւթն հասկ ելանէին ՚ի միում փնջի՝ ընտիրք և գեղեցիկք: ⁶Եւ ահա եւթն այլ հասկք սինք և խորշակահարք ելանէին յետ նոցա*:

⁷Եւ կլանէին եւթն հասկքն սինք և խորշակահարք զեւթն հասկսն՝ զընտիրս և զատորս: Ջարթեալ փարաւոն, և էր երազ*:

⁸Եւ եղև առաւօտ, և խռովեցաւ անձն նորա: Եւ առաքեաց կոչեաց զամենայն երազահանսն Եգիպտոսի, և զամենայն իմաստունս նորա, և պատմեաց փարաւոն զերազն իւր: Եւ ո՛չ ոք էր որ մեկնէր զերազն փարաւոնի: ⁹Եւ խօսեցաւ տակառապետն առաջի փարաւոնի՝ և ասէ. Ջյանցանս իմ յիշեցուցանե՛մ այսօր: ¹⁰Բարկացա՛ւ փարաւոն ծառայից իւրոց. և եդ զմեզ ՚ի բանտի ՚ի տա՛ն դահճապետին. զիս՝ և զմատակարարն: ¹¹Եւ տեսաք երկորքին երազ ՚ի միում գիշերի՝ ե՛ս և նա. և իւրաքանչիւր ըստ երազոյ իւրում տեսանէաք*:

¹²Եւ էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ՝ Եբրայեցի, ծառայ դահճապետին. և պատմեցաք նմա: ¹³Եւ մեկնեաց մեզ զերազսն մեր # առն ըստ իւրաքանչիւր երազոյ մեկնեաց: Եւ եղև որպէս մեկնեացն մեզ, նո՛յնպէս և պատահեաց. ինձ գալ հասանել յիշխանութիւն. և նմա՝ կախել զփայտէ:

¹⁴Առաքեաց փարաւոն և կոչեաց զՅովսէփ: Եւ հանին զնա ՚ի բանտէ անտի. և փորքեցին զհերս նորա, և փոխեցին զպատմուճան նորա. և եկն առաջի փարաւոնի: ¹⁵Եւ ասէ փարաւոն զՅովսէփ. Երա՛զ տեսի՝ և չի՞ք ոք որ մեկնէ զնա. բայց ես լուայ զքէն, ասեն՝ եթէ լսես զերազս՝ մեկնե՛ս: ¹⁶Պատասխանի ետ Յովսէփ՝ և ասէ ցփարաւոն. Առանց Աստուծոյ ո՛չ լինի պատասխանի փրկութեան փարաւոնի*:

¹⁷Խօսեցա՛ւ փարաւոն ընդ Յովսէփայ՝ և ասէ. Թուեր ՚ի տեսլեան իմում, եթէ կայի յեզեր գետոյ*. ¹⁸և որպէս թէ ՚ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք ընտիրք մարմնովք և գեղեցիկ տեսանելով, և արածէին ՚ի խաղի անդ: ¹⁹Եւ ահա այլ ևս եւթն երինջք ելանէին զկնի նոցա ՚ի գետոյ անտի, դժընդա՛կք և զագիրք տեսանելով յոյժ, և վտիտք մարմնովք. որպիսի ո՛չ տեսի յամենայն երկրիս Եգիպտացւոց զագրագոյնս քան զնոսա*:

²⁰Եւ ուտէին եւթն երինջքն վտիտք և զագիրք զեւթն երինջսն զառաջինս՝ զգեղեցիկսն և զընտիրս: ²¹Եւ մտանէին յորովայն նոցա, և ո՛չ երևէին. և երեսք նոցա զագիրք իբրև զառաջինն: Ջարթեալ, և դարձեալ ննջեցի: ²²Եւ տեսանէի մի՛ւսանգամ յերազի. որպէս թէ եւթն հասկ ելանէին ՚ի միում փնջի՝ լիք և գեղեցիկ: ²³Եւ այլ եւթն հասկ # ապականեալք, ազազունք և խորշակահարք, ելանէին մօտ առ նոսա: ²⁴Եւ կլանէին եւթն հասկքն ազազունք և խորշակահարք՝ զեւթն հասկսն զգեղեցիկս և զատորս: Եւ պատմեցի երազահանացն, և ո՛չ ոք էր որ մեկնէր ինձ: ²⁵Եւ ասէ Յովսէփ ցփարաւոն. Երազն փարաւոնի մի է. զոր ինչ Աստուած առնելոց է՝ եցոյց փարաւոնի: ²⁶Եւթն երինջքն գեղեցիկք՝ եւթն ամ են. և եւթն

* *Ոմանք.* Եւ ահա այլ ևս եւթն.. տեսլեամբք և վտիտք մար՝.. առ եզեր գետոյն:

* *Ի լուս՝.* Այլ հասկք ոսինք. *համաձայն բազմաց ՚ի բնար՝:*

* *Ոմանք.* Եւ կլանէին ոսինքն զեւթն հասկսն:

* *Ոմանք.* Եւ տեսաք երկորքեանս երազ... ես և նա, իւրա՛:

* *Այլք.* Ոչ լինիցի պատասխանի:

* *Այլք.* Առ եզր, *կամ՝* առ եզեր գետոյ:

* *Ոմանք.* ՚Ի գետոյ անտի՝ ժանդք և զագիրք՝ տեսա՛:

հասկն գեղեցիկք՝ եւթն ամ են: Երազն փարաւոնի մի՛ է: ²⁷Եւ եւթն երինջքն
 տգեղք և վտիտք որ ելանէին զհետ նոցա, եւթն ամ են. և եւթն հասկքն ոսինք և
 խորշակահարք. լիցի գեւթն ամ սով* ²⁸Բանն զոր ասացի փարաւոնի՝ այն է.
 զոր ինչ Աստուած առնելոց է, եցոյց փարաւոնի: ²⁹Ահա ամք եւթն եկեցեն
 բազո՛ւն լիութեան յամենայն երկիրս Եգիպտացոց: ³⁰Եւ յետ այնորիկ եկեցտ
 եւթն ամ սովոյ, և մոռացին զլիութիւնն յամենայն երկիրս Եգիպտացոց. և
 սպառեցտ սովն գերկիր*: ³¹Եւ ո՛չ ծանիցի լիութիւնն յերեսաց սովոյն որ գայց
 յետ այնորիկ. քանզի սաստիկ լինիցի յոյժ: ³²Այլ վասն կրկնելոյ երազոյն
 փարաւոնի երկիցս անգամ. զի ճշմարիտ է բանն առ ՚ի յԱստուծոյ, և փութացի
 Աստուած առնել զնա*: ³³Եւ արդ՝ տե՛ս. խնդրեա՛ այր մի իմաստո՛ւն և
 խորհրդական փարաւոնի. և կացուցես զնա ՚ի վերայ երկրիս Եգիպտացոց:
³⁴Եւ արասցէ՛, և կացուցտ գործակալս փարաւոնի ՚ի վերայ երկրիս: Եւ
 հինգերորդեացեն զարմտիս երկրիս Եգիպտացոց զեւթն ամացն լիութեան*:
³⁵Եւ ժողովեցեն զամենայն կերակուրս զեւթն ամացն բարեաց եկելոց: Եւ
 ժողովեցի՛ ցորեան ընդ ձեռամբ փարաւոնի. և կերակուրք ՚ի քաղաքս
 պահեսցին: ³⁶Եւ եղիցի կերակուրքն պահեալ երկրիս յեւթն ամս սովոյն որ
 լինիցին յերկրիս Եգիպտացոց. և մի՛ սատակեցի երկիրս ՚ի սովոյ: ³⁷Եւ հաճոյ
 թուեցաւ բանքն առաջի փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից իւրոց*: ³⁸Եւ
 ասէ փարաւոն ցամենայն ծառայս իւր. Միթէ գտանիցե՞մք այր այնպիսի՝ որ
 ունիցի զոգի Աստուծոյ յանձին իւրում: ³⁹Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ. Որովհետև
 եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն. չի՞ք այր իմաստնագոյն և խորհրդական
 քան զքեզ: ⁴⁰Դո՛ւ լիցիս ՚ի վերայ տան իմոյ. և բերանոյ՛ քում հնազանդ լիցի
 ամենայն ժողովուրդ իմ. բայց միայն աթոռո՛վս ՚ի վերոյ եղէց ե՛ս քան զքեզ: ⁴¹Եւ
 ասէ փարաւոն ցՅովսէփ. Ահաւասիկ կացուցի զքեզ այսօր ՚ի վերայ երկրիս
 Եգիպտացոց: ⁴²Եւ հանեալ փարաւոնի զմատանին իւր ՚ի ձեռանէ իւրմէ՛ եդ ՚ի
 ձեռին Յովսէփայ. և զգեցոյց նմա պատմուճան բեհեզեայ, և ա՛րկ մանեակ ոսկի
 ՚ի պարանոց նորա: ⁴³Եւ եհան զնա յերկրորդ կառս իւր. և քարո՛գ կարդայր
 առաջի նորա: Եւ կացոյց զնա ՚ի վերայ երկրին Եգիպտացոց: ⁴⁴Եւ ասէ
 փարաւոն ցՅովսէփ. Ահաւասիկ ես փարաւոն. առանց քո ո՛չ որ համբարծցէ
 զձեռս իւր և զոտս իւր ՚ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացոց: ⁴⁵Եւ կոչեաց
 փարաւոն զանուն Յովսէփայ՝ Փսոմփթոմփանէ: Եւ ետ նմա զԱսանէթ դուստր
 Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի կնութեան: Եւ ել Յովսէփ յերեսաց
 փարաւոնի*: ⁴⁶Եւ էր Յովսէփ ամաց երեսնից յորժամ ընծայեցաւ առաջի
 փարաւոնի արքային Եգիպտացոց: Ել Յովսէփ յերեսաց փարաւոնի, և շրջեցաւ
 ընդ ամենայն Եգիպտոս: ⁴⁷Եւ արար երկիրն յեւթն ամս լիութեանն արդի՛ւնս:
⁴⁸Եւ ժողովեաց զամենայն կերակուրս ամացն իւթանց, յորս է՛ր լիութիւնն
 յերկրին Եգիպտացոց: Եւ համբարեաց կերակուրս ՚ի քաղաքս. զկերակուր
 դաշտաց քաղաքին որ շուրջ զնովաւ: ⁴⁹Եւ համբարեաց ՚ի նմա: Եւ ժողովեաց
 Յովսէփ զցորեան իբրև զաւազ ծովու բազում յոյժ. մինչև ո՛չ կարէր համարել.

* *Ոմանք.* Տգեղք և վատիտք:

* *Ոմանք.* Եւ յետ այնորիկ եկեցեն:

* *Ոմանք.* Զի ճշմարիտ իցէ բանն:

* *Ոսկան.* Գործակալս փարաւոն ՚ի վերայ երկ՛:

* *Ոմանք.* Եւ հաճոյ թուեցան բա՛:

* *Յօրինակին պակասէր.* փարաւոն զանուն Յովսէփայ Փս՛:

քանզի ո՛չ գոյր թիւ*։ ⁵⁰Եւ եղեն Յովսէփու երկու որդիք մինչ չև՛ եկեալ էր եւթն ամացն սովոյ. զորս ծնաւ նմա Ասանէթ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի*։ ⁵¹Եւ կոչեաց Յովսէփ զանուն անդրանկանն Մանասէ. զի ասէ՝ թէ մոռացո՛յց ինձ Աստուած զամենայն զվիշտս իմ, և զամենայն վիշտս հօր իմոյ։ ⁵²Եւ զանուն երկրորդին կոչեաց Եփրեմ, զի ասէ՝ թէ աճեցոյց զիս Աստուած յերկրի տառապանաց իմոց։ ⁵³Եւ անցին եւթն ամք լիութեանն, որ եղեն յերկրին Եգիպտացւոց*։ ⁵⁴Եւ սկան գալ եւթն ամք սովոյն. որպէս ասաց Յովսէփ։ Եւ եղև սով յամենայն երկրին. զի յամենայն երկրին Եգիպտացւոց ո՛չ գտանէր հաց*։ ⁵⁵Եւ սովեցաւ ամենայն երկիրն Եգիպտացւոց։ Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն առ փարաւոն վասն հացի։ Եւ ասէ փարաւոն ցամենայն Եգիպտացիսն. Երթա՛յք առ Յովսէփ, և զոր ինչ ասիցէ ձեզ արասցի՛ք։ ⁵⁶Եւ էր սո՛վ ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի։ Եւ եբաց Յովսէփ զամենայն շտեմարանս ցորենոյ. և վաճառէր ամենայն Եգիպտացւոցն։ Եւ սաստկացաւ սովն յամենայն երկիրն Եգիպտացւոց։ ⁵⁷Եւ ամենայն աշխարհք գային յԵգիպտոս գնել ՚ի Յովսէփայ. զի զօրանա՛յր սովն ընդ ամենայն երկիր*։

42

Գլուխ ԽԲ

ԾԳ ¹Եւ ետես Յակոբ եթէ գո՛յ վաճառ յերկրին Եգիպտացւոց, ասէ Յակոբ ցորդիսն իւր. Ընդէ՞ր հեղգայք*։ ²Ահա լսեմ թէ գո՛յ ցորեան յԵգիպտոս. իջէ՛ք անդր, և զնեցէ՛ք մեզ սակաւ մի կերակուր, զի կեցցուք՝ և մի՛ մեռցուք։ ³Եւ իջին եղբարքն Յովսէփու տասներին՝ գնել ցորեան յԵգիպտոս*։ ⁴Եւ զԲենիամին զեղբայրն Յովսէփայ ո՛չ արձակեաց # Յակոբ ընդ եղբարսն. քանզի ասէր թէ գուցէ պատահիցէ նմա հիւանդութիւն։ ⁵Եւ եկին որդիքն Իսրայէլի գնել ընդ ա՛յլ երթևեկսն. քանզի էր սո՛վ յերկրին Քանանացւոց։ ⁶Եւ Յովսէփ էր իշխան երկրին. և նա՛ վաճառէր ամենայն ժողովրդեան երկրին։ Եւ եկեալ եղբարքն Յովսէփայ երկիր պագանէին ՚ի վերայ երեսաց խոնարի յերկիր։ ⁷Եւ իբրև ետես Յովսէփ զեղբարսն իւր, ծանեա՛ւ. և օտարանայր ՚ի նոցանէ, և խօսեցաւ ընդ նոսա խստագոյնս. և ասէ. Ուստի՞՞ գայք։ Եւ նոքա ասեն յերկրէն Քանանացւոց գնել կերակուրս։ ⁸Ծանեա՛ւ Յովսէփ զեղբարսն իւր, և նոքա ո՛չ ծանեան զնա։ ⁹Եւ յիշեաց Յովսէփ զերազն իւր զոր ետես։ Եւ ասէ ցնոսա. Լրտե՛սք էք դուք, և դիտե՛լ զել և զմուտ աշխարհիս եկեալ էք*։ ¹⁰Եւ նոքա ասեն. Ո՛չ տէր։ Ծառայք քո եկեալ ենք գնել կերակուրս։ ¹¹Ամենեքին մեք որդիք ենք ա՛ռն միոյ. արք խաղաղութեան ենք, և չե՛ն ծառայք քո լրտեսք։ ¹²Ասէ ցնոսա. Ո՛չ. այլ զել և զմուտ երկրիս եկեալ էք տեսանել*։ ¹³Եւ նոքա ասեն. Երկոտասան եղբայր ենք

* Ոմանք. Մինչև ո՛չ կարէր համբարել. քանզի։

* Ոմանք. Եւ եղև Յովսէփայ երկու։

* Ոմանք. Որ եղև յերկրին Եգիպ*։

* Ոմանք յաւելուն. Եւ եղև սով յամենայն երկրին Եգիպտացւոց։

* Ոմանք. Եւ ամենայն աշխարհն գային։

* Ոմանք. Եթէ գոյ ցորեան յերկրին Եգիպտացւոց։

* Բազումք. Տասներինք գնել ցորեան յԵգիպտոս։

* Այլք. Ջերազսն իւր զոր ետես։

* Ոմանք. Ջել և զմուտ աշխարհիս եկ՛։

ծառայք քո՝ որդիք անն միոյ յերկրին Քանանացոց. և կրտսերն առ հօր իւրում է այսօր. և մևսն չէ՝ ի միջի: ¹⁴Ասէ ցնոսա Յովսէփ. Այդ իսկ է զոր ասացի, թէ լրտեսք էք*. ¹⁵և դովին յայտ արարէք: Երդուեալ յարևն փարաւոնի, ո՛չ ելանէք աստի՝ եթէ ո՛չ եկեսցէ եղբայրն ձեր կրտսեր այսր: ¹⁶Արդ՝ առաքեցէք զմի ոք՝ ի ձէնց և ածցէ զեղբայրն ձեր. և դուք կացէք ՚ի դիպահոց մինչև յայտնի՝ լիցին բանք ձեր եթէ արդար խօսիցիք և թէ ոչ. ապա թէ ոչ՝ երդուեալ յարևն փարաւոնի թէ ո՛չ լրտեսք էք դուք*: ¹⁷Եւ եդ զնոսա ՚ի բանտի զերիս աւուրս: ¹⁸Եւ ասէ ցնոսա Յովսէփ յաւուրն երրորդի. Չայս արարէք՝ և ապրէք. զի և ես յԱստուծոյ երկիւղած եմ: ¹⁹Եթէ արք խաղաղութեան էք՝ եղբայր մի ՚ի ձէնց աստ մնասցէ ՚ի բանտի. և դուք տարայք զվաճառ ցորենոյ ձերոյ: ²⁰Եւ զեղբայրն ձեր կրտսեր ածէք առ իս. և հաւատարիմ լինիցին բանք ձեր. ապա թէ ոչ՝ մեռանիք: Արարին այնպէս: ²¹Եւ ասէ իւրաքանչիւր ցեղբայր իւր. Այո՛, քանզի ՚ի մեղս եմք վասն եղբօր մերոյ. զի արհամարհեցաք զնեղութիւն ոգւոց նորա յորժամ աղաչէրն զմեզ, և ո՛չ լուսք նմա. վասն այնորիկ եկն ՚ի վերայ մեր այս նեղութիւն*: ²²Պատասխանի ետ Ռոբէն՝ և ասէ ցնոսա. Ո՞չ խօսեցայ ընդ ձեզ՝ և ասեմ, թէ մի՛ մեղանչէք մանկանդ. և ո՛չ լուարուք ինձ. և ահա՝ արիւն նորա խնդրի՛: ²³Եւ նոքա ո՛չ գիտէին թէ լսէր Յովսէփ. զի թարգման կայր ՚ի միջի: ²⁴Եւ անցեալ մեկուսի ՚ի նոցանէ՝ ելա՛ց Յովսէփ: Եւ եկն միւսանգամ առ նոսա, և խօսեցաւ ընդ նոսա: ²⁵Եւ ա՛ռ ՚ի նոցանէ զՇմաւոն, կապեաց առաջի նոցա: Եւ ետ հրաման Յովսէփ լնուլ զամանս նոցա ցորենով. և դնել զարծաթն իւրաքանչիւր ՚ի քրծի իւրում. և տալ նոցա պաշար ՚ի ճանապարհ. և եղև նոցա այնպէս: ²⁶Եւ նոցա բարձեալ իւրաքանչիւր իշոյ՝ զնացին անտի: ²⁷Եւ լուծեալ միոյ զքուրծ իւր տալ կերակուր զրաստու իւրում # յիջավանին, և ետես զծրար արծաթոյն իւրոյ զի կայր ՚ի բերան քրծի իւրոյ*: ²⁸Ասէ ցեղբարսն իւր. Դարձուցաւ ինձ այսրէն արծաթն, և ահա աստէ՛ն կայ ՚ի քրծի իմում: Եւ զարմացան միտք նոցա. և խռովեցան ընդ միմեանս՝ և ասեն. Չի՞նչ է այս զոր արար ընդ մեզ Աստուած: ²⁹Եւ եկին առ Յակոբ հայրն իւրեանց յերկրին Քանանու. և պատմեցին նմա զամենայն ինչ որ անց ընդ նոսա՝ և ասեն. ³⁰Խօսեցաւ այրն տէր երկրին ընդ մեզ խստագոյնս, և եդ զմեզ ՚ի բանտի իբրև զլրտես երկրին*: ³¹Եւ ասեմք ցնա արք խաղաղութեան եմք. և չեմք լրտեսք*: ³²Երկոտասան եղբայր եմք որդիք հօր միոյ. մին՝ չէ՛ ՚ի միջի, և կրտսերն այժմ ընդ հօր մերում է յերկրին Քանանացոց*: ³³Ասէ ցմեզ այրն տէր երկրին. Այսո՛ւ գիտացից թէ արք խաղաղութեան էք. եթէ զեղբայր մի ձեր աստ առ իս թողուցուք, և զվաճառս ցորենոյ ՚ի տունս ձեր առեալ տանիցիք*: ³⁴Եւ զեղբայրն ձեր կրտսեր ածիցէք առ իս. և գիտացից եթէ չէք լրտեսք, այլ արք խաղաղութեան էք. և զայս ևս եղբայր տա՛ց ձեզ. և յերկրի աստ առնիցէք վաճառ: ³⁵Եւ եղև ՚ի թափելն նոցա զքուրծս իւրեանց, և կայր իւրաքանչիւր ուրուք ծրար արծաթոյ ՚ի քրծի իւրեանց: Եւ իբրև տեսին զծրար արծաթոյ

* Ոմանք. Չոր ասացի ձեզ եթէ լր՞:
 * Ոմանք. Մինչ յայտ լինիցին բանք:
 * Ոմանք. Եւ ասեն իւրաքանչիւրոք ցեղը՞:
 * Այլք. Յիջավանին, ետես զծրար:
 * Բազումք. Իբրև լրտեսս երկրին:
 * Ոմանք յաւելուն. Արք խաղաղութեան եմք մեք՝ և չեմք:
 * Այլք. Որդիք հօր մերոյ. մին՝ չէ՛:
 * Ոմանք. Եւ ասէ.. այդու գիտացից եթէ արք.. և զվաճառդ ցո՞:

իւրեանց, ինքեանք և հայրն իւրեանց, երկեան յոյժ: ³⁶Եւ ասէ ցնոսա Յակոբ հայրն իւրեանց. Ջիս՝ անորդի՛ արարէք. Յովսէփ չէ՛ ՚ի միջի. Շմաւոն՝ չէ՛ ՚ի միջի. և զԲենիամի՞ն ևս առնուցուք: Յի՞մ վերայ եկն այս ամենայն: ³⁷Խօսեցաւ Ռոբէն ընդ իօր իւրում և ասէ. Ձերկոսին զորդիսն իմ սպանջի՛ր, եթէ ո՛չ ածից զդա առ քեզ. տո՛ւր զդա յիմ ձեռն. և ե՛ս ածից զդա առ քեզ՝: ³⁸Եւ նա ասէ. Ո՛չ իջանէ որդի իմ ընդ ձեզ. զի եղբայր սորա մեռաւ. և սա միայն մնացեալ է. և դէ՛պ լինիցի սմա հիւանդանալ ՚ի ճանապարհին զոր երթայցէք. և իջուցանիցէք զձերութիւնս իմ տրտմութեանք ՚ի դժոխս:

43

Գլուխ ԽԳ

¹Եւ սովն և՛ս քան զևս սաստկանայր ՚ի վերայ երկրին: ²Եւ եղև իբրև սպառեցին ուտել զցորեանն զոր բերին յերկրէն Եգիպտացոց, ասէ ցնոսա հայրն իւրեանց. Դարձեալ երթայք զնեցէ՛ք սակաւ մի կերակուր: ³Խօսեցաւ ընդ նմա Յուդա՛ և ասէ. Վկայութեամբ եդ ընդ մեզ վկայութիւն այրն՝ և ասէ. Մի՛ տեսանիցէք զերեսս իմ, եթէ ո՛չ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ՛: ⁴Արդ՝ եթէ արձակես զեղբայրդ մեր ընդ մեզ՝ իջցուք և զնեսցուք կերակուրս: ⁵Ապա թէ ո՛չ արձակես զեղբայրդ մեր ընդ մեզ, ո՛չ երթիցուք. զի այրն խօսեցաւ ընդ մեզ՝ և ասէ. Մի՛ տեսանիցէք զերեսս իմ՝ եթէ ո՛չ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ՛: ⁶Եւ ասէ Իսրայէլ. Ջի՞նչ չարիս հասուցէք ՚ի վերայ իմ. զի՞ պատմեցէք առնն թէ գուցէ ձեր եղբայր: ⁷Եւ նորա ասեն. Հարցանելով էհարց զմէնչ այրն, և զազգէ մերմէ, և թէ տակաւին կենդանի՞ իցէ հայրն ձեր, և եթէ իցէ՞ ձեր եղբայր. և պատմեցաք նմա ըստ հարցանելոյն նորա. միթէ գիտեա՞ք թէ ասելոց է ցմեզ՝ ածէք զեղբայրն ձեր՝: ⁸Ասէ Յուդա ցԻսրայէլ հայրն իւր. Արձակեա՛ ընդ իս զպատանեակդ, և յարուցեալ զնասցուք. զի կեցցուք և մի՛ մեռցուք, և մե՛ք և դու, և ստացուածք մեր՝: ⁹Ես առնում զդա յերաշխի. ՚ի ձեռնաց իմոց խնդրեսցիր զդա. եթէ ո՛չ ածից զդա և կացուցից առաջի քո, յանցաւոր եղէց զամենայն աւուրս՝: ¹⁰Ջի եթէ ո՛չ էաք յամեալ, արդ՝ երկի՛ցս իսկ դարձեալ էր այսրէն՝: ¹¹Ասէ ցնոսա Իսրայէլ հայրն իւրեանց. Եթէ այդպէս իցէ, արարէ՛ք զայդ: Առէ՛ք ՚ի պողոյ երկրիս յամանս ձեր, և տարայք առնն պատարագս. ռետին, և մեղր, և խունկ, և ստաշխն, և բւեկն, և ընկոյզ՝: ¹²Եւ արձաթ կրկին առէք ՚ի ձեռս ձեր. զարձաթն որ դարձաւ յամանս ձեր՝ տարայք ընդ ձեզ. գուցէ ընդ խա՛բս ինչ իցէ՛: ¹³Եւ զեղբայրդ ձեր առէ՛ք, և արի՛ք իջէ՛ք առ այրն: ¹⁴Եւ Աստուած իմ տացէ ձեզ շնորիս առաջի առնն, և արձակեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմևս, և զԲենիամին: Բայց ես՝ որպէս անգաւակեցայ անգաւակեցայ՝: ¹⁵Եւ առեալ արանցն զպատարագսն, և արձաթ

* Ոմանք. Տո՛ւր զդա ՚ի ձեռս իմ:

* Ոմանք. Եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ եղիցի:

* Ոմանք. Ապա թէ ո՛չ արձակեսցես:

* Այլք. Թէ ասելոց իցէ ցմեզ:

* Այլք. Ասէ Յուդա ցԻսրայէլ ցհայրն իւր:

* Ոմանք. Եթէ ո՛չ ածից առ քեզ զդա, և:

* Ոմանք. Ջի թէ չէաք յամեալ:

* Ոմանք. Եւ խունկս և ստաշխին:

* Ոմանք. Եւ զարձաթն որ դարձաւ:

* Ամենայն զրչագիր օրինակք մեր համաձայն բնագրի եօթանասնից՝ յայսմ վայրի

կրկին՝ ի ձեռս իւրեանց, և զԲենիամին. յարուցեալ իջին յԵգիպտոս, և կացին յանդիման Յովսեփայ: ¹⁶Իբրև ետես զնոսա Յովսեփ, և զԲենիամին եղբայր իւր, ասէ ցիազարապետ տանն իւրոյ. Տար զարսդ ՚ի տուն, և զե՛ն զենլիս և պատրաստեա՛. զի ընդ ՚ս ուտելոց են արքդ այդոքիկ ՚ի միջօրեի՛: ¹⁷Եւ արար այրն որպէս և ասաց Յովսեփ. և տարա՛ւ զարսն ՚ի տուն Յովսեփայ: ¹⁸Եւ տեսեալ արանցն եթէ տարան զնոսա ՚ի տուն Յովսեփայ, ասեն. Վասն արծաթոյն որ դարձաւ յամանս մեր զառաջինն, մտանենք անդր, առ ՚ի խուզելո՛յ զմեզ. արկանել՛ ՚ի վերայ մեր, և առնուլ զմեզ ՚ի ծառայս, և զէշս մեր՛: ¹⁹Մատուցեալ առ այրն՝ վերակացո՛ւ տանն Յովսեփայ, ²⁰խօսեցան առ դրանն՝ և ասեն. Աղաչենք զքեզ տէր. իջաք զառաջինն զնել կերակուրս: ²¹Եւ եղև իբրև հասաք յիջավանս, և բացաք զամանս մեր. և արծաթ իւրաքանչիւր յամանի՛ իւրում էր. արդ՝ զարծաթն այսրէն կշռով դարձուցաք, և աւասիկ ՚ի ձեռին մերում է՛: ²²Եւ այլ արծաթ բերաք ընդ մեզ, զնել կերակուրս. և ո՛չ գիտենք ո՛վ եղ զարծաթն յամանս մեր: ²³Ասէ՛ ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ՝ մի՛ երկնչիք: Աստուածն ձեր և հարցն ձերոց՝ եղ ձեզ զգանձս յամանս ձեր. այլ իմ զձեր արծաթն առեալ, և հաճեալ եմ: Եւ եհան առ նոսա զՇմաւոն: ²⁴Եւ տարաւ ՚ի ներքս այրն զորեարն ՚ի տուն Յովսեփայ, և բերին ջուր լուանա՛լ զոտս նոցա. և ետ կերակուր գրաստուց նոցա՛: ²⁵Եւ նոքա պատրաստեցին զպատարագսն մինչ չև՝ եկեալ էր Յովսեփ ՚ի միջօրեին. քանզի լուան թէ անդ ճաշակելոց է: ²⁶Եմո՛ւտ Յովսեփ ՚ի տուն. և մատուցին նմա զընծայսն զոր ունէին ՚ի ձեռս իւրեանց՝ ՚ի տան անդ. և երկիր պագին նմա ՚ի վերայ երեսաց իւրեանց յերկիր: ²⁷Եհարց զնոսա և ասէ. Զիա՞րդ կայք: Եւ ասէ ցնոսա. Թէ ո՞ղջ իցէ հայրն ձեր ծերունի, զորմէ ասացէք թէ տակաւին կենդանի՛ է: ²⁸Եւ նոքա ասեն. Ո՛ղջ է ծառայ քո հայր մեր, տակաւին կենդանի՛ է: Եւ ասէ. Օրհնեալ է այրն այն յԱստուծոյ: Եւ խոնարհեցան երկիր պագին նմա: ²⁹Ամբարձ զաչս իւր՝ և ետես զԲենիամին զեղբայր իւր զհամամայր՝ և ասէ. Ա՞յդ է եղբայրն ձեր կրտսեր՝ զորմէ ասացէք աճել առ իս: Եւ ասէ. Աստուած ողորմեսցի քեզ որդեակ: ³⁰Եւ խռովեցա՛ւ Յովսեփ՝ և զալարէին աղիք նորա ՚ի վերայ եղբօրն իւրոյ. և խնդրէր լալ: Մտեալ ՚ի սենեակ անդր ելաց. ³¹և լուացեալ զերեսս իւր՝ ել. պնդեաց զանձն, և ասէ. Արկէ՛ք հաց: ³²Եւ արկին նմա՛ միայնոյ՝ և նոցա իւրաքանչի՛ւր ումեք, և Եգիպտացւոցն որ ճաշէին ընդ նմա՛ իւրաքանչի՛ւր առանձինն. զի ո՛չ կարէին Եգիպտացիքն ուտել հաց ընդ Եբրայեցիսն, քանզի զարշելի՛ էին Եգիպտացւոցն: ³³Նստաւ առաջի նորա անդրանիկն՝ ըստ երիցութեան իւրում, և կրտսերն՝ ըստ կրտսերութեան իւրում. և զարմացեալ էին արքն իւրաքանչիւր ընդ եղբօր իւրում՛: ³⁴Եւ առին իւրեանց մասունս ՚ի նմանէ. և մեծացաւ մասն Բենիամինի քան զմասունս ամենեցուն հինգապատիկ քան զնոցայն: Արբին՝ և արբեցան ընդ նմա՛:

կրկնեն զբառս՝ անգաւակեցայ:
 *Ոճանք յաւելուն. Արքդ այդոքիկ հաց ՚ի միջօրեի:
 *Ոճանք. Մտանենք մեք անդր:
 *Ոճանք. Յամանի մերում էր... և ահաւասիկ ՚ի ձե՛:
 *Ոսկան. Այրն զնոսա ՚ի տուն Յօսեփայ:
 *Յօրհնակին. Եւ կրտսերսն ըստ կրտ՛:
 *Ոճանք. Զինգապատիկ քան զնո՛:

Գլուխ ԽԴ

¹Եւ հրաման ետ Յովսէփի հազարապետին իւրում՝ և ասէ. Լցէք զամանս արանցն կերակրով որչափ և կարիցեն բառնալ. և դի՛ք զարծաթն իւրաքանչիւր՝ ի բերան ամանոյ իւրոյ: ²Եւ զսկիհն իմ արծաթի դիջիք յամանի՝ կրտսերոյն, և զգինս ցորենոյ նորա: Եւ եղև ըստ բանին Յովսէփայ՝ որպէս և ասաց: ³Եւ իբրև առաւօտ եղև՝ արծակեցան արքն, ինքեանք և է՛շք իւրեանց: ⁴Եւ իբրև ելին ըստ քաղաքն, և չէին մեկնեալ ՚ի բաց, ասէ Յովսէփ ցհազարապետն իւր. Արի՛ անդեաց զհետ արանցն, և հասցէ՛ս նոցա. և ասացես. Ձի՞ է զի հատուցէք չար փոխանակ բարեաց*. ⁵Ընդէ՞ր գողացայք զսկիհն արծաթի. ո՞չ այն էր որով ընպէր տէրն իմ, և նովաւ ինքն հմայելով հմայէր. արդ՝ չար գործեցէք՝ զոր արարէքդ: ⁶Եւ իբրև եգիտ զնոսա, ասէ՝ ըստ բանիցս այսոցիկ: ⁷Եւ նոքա ասեն ցնա. Ընդէ՞ր խօսիցի տէր այդպիսի բանս. քա՛ւ լիցի ծառայից քոց առնել ըստ բանիդ այդմիկ*: ⁸Ձի եթէ զարծաթն զոր գտաք յամանս մեր՝ դարձուցաք առ ձեզ յերկրէն Քանանացւոց. զիա՞րդ գողանայաք ՚ի տանէ տեառն քոյ արծաթ կամ ոսկի*: ⁹Եւ արդ՝ առ որում գտցի ՚ի ծառայից քոց սկիհն՝ մեռցի՛. և մեք եղիցուք տեառն մերում ծառայք: ¹⁰Եւ նա ասէ. Այդպէս եղիցի որպէս ասացէքդ. առ որում գտցի սկիհն՝ եղիցի իմ ծառայ. և դուք անպարտք լինիցիք: ¹¹Եւ փութացան իջուցին զբեռն իւրաքանչիւր ՚ի գետին. և բացին իւրաքանչիւր զաման իւր: ¹²Եւ յուզեաց, սկսեալ յերիցուէն մինչև եկն կատարեաց ՚ի կրտսերն. և եգիտ զսկիհն յամանի Բենիամինի: ¹³Եւ պատահեցին զհանդերձս իւրեանց. և եղին իւրաքանչիւր զբեռն իւր ՚ի վերայ իշոյ իւրոյ, և դարձան ՚ի քաղաքն: ¹⁴Եւ եմուտ Յուդա և եղբարք իւր առ Յովսէփ, մինչդեռ անդէն էր. և անկա՛ւ առաջի նորա ՚ի վերայ երկրի: ¹⁵Ասէ ցնոսա Յովսէփ. Ձի՞նչ են իրքդ զոր արարէք. ո՛չ գիտէք թէ հմայելով հմայէ՛ այդ որ իբրև զիս է*: ¹⁶Ասէ Յուդա. Ձի՞նչ տացուք պատասխանի տեառն՝ կամ զի՞նչ խօսիցիմք, կամ զո՞ր իրաւունս ցուցանիցեմք: Եգիտ Աստուած զյանցանս ծառայից քոց. արդ՝ աւասիկ կամք ծառայք տեառն մերոյ. և մե՛ք, և առ որում և սկիհն գտաւ*: ¹⁷Եւ նա ասէ. Քա՛ւ լիցի ինձ առնել զբանդ զայդ: Այրն առ որում սկիհն գտաւ՝ նա՛ եղիցի իմ ծառայ. և դուք ելէ՛ք ողջութեամբ առ հայրն ձեր: ¹⁸Մատուցեալ առ նա Յուդա՝ և ասէ. Աղաչեմ տէր, խօսեսցի՛ ծառայ քո բան մի առաջի քոյ. մի՛ բարկացիս ծառայի քում, զի դու ես յետ փարաւունի տէր: ¹⁹Դու հարցեր ցճառայս քո՝ և ասացեր, եթէ կայցէ՞ ձեր հայր կամ եղբայր*: ²⁰Եւ մեք ասեմք տեառն. Կա՛յ մեր հայր ծերացեալ, և մանուկ մի կրտսեր՝ որդի՛ ծերութեան նորա, և եղբայր նորա մեռա՛ւ. և նա միայն մնաց մօր իւրոյ, և հայրն սիրէ՛ զնա: ²¹Եւ ասացեր ցճառայս քո, իջուցէ՛ք զնա առ իս՝ և խնամարկեցից՝ նմա: ²²Եւ ասացաք ցտէր. Ո՛չ կարէ մանուկն թողուլ զհայր իւր. ապա թէ թողուցու զհայրն իւր՝ մեռանի: ²³Եւ դու ասացեր ցճառայս քո. եթէ ո՛չ իջանիցէ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ՝ մի՛ յաւելուցուք տեսանել զերեսս իմ: ²⁴Եւ եղև իբրև ելաք մեք առ ծառայ քո հայր մեր, պատմեցաք նմա զբանս տեառն մերոյ: ²⁵Եւ ասէ հայրն մեր. Երթայք դարձեալ՝ զմեցէ՛ք մեզ սակաւ մի

* *Ոմանք.* Եւ ասացես ցնոսա. Ձի՞ է:

* *Այլք.* Եւ արդ՝ չար գործե՛:

* *Ոսկան.* Ընդէ՞ր խօսիցի տէր մեր այդ՞:

* *Ոմանք.* Գողանայաք ՚ի տան տեառն քո:

* *Ոմանք.* Ոչ գիտէիք եթէ հմայ՞:

* *Այլք.* Եւ առ որում սկիհն գտաւ:

* *Բազումք.* Յճառայս քո և ասես, եթէ:

կերակուր*։ ²⁶Եւ մեք ասացաք՝ եթէ ո՛չ կարենք իջանել անդր, եթէ ո՛չ եղբայրդ մեր կրտսեր իջանիցէ ընդ մեզ, և ասպա՛ իջանիցենք. զի ո՛չ կարենք տեսանել զերեսս առնն, եթէ եղբայրդ մեր կրտսեր ընդ մեզ ո՛չ իցէ։ ²⁷Եւ ասէ՛ ցմեզ ծառայ քո հայր մեր. Դուք ինքնի՛ն գիտէք՝ զի երկուս ծնաւ ինձ կին իմ*։ ²⁸մին՝ ե՛լ յինէն և ասացէք թէ գազանակու՛ր եղև. և ո՛չ ևս տեսանեմ զնա մինչև ցայժմ։ ²⁹Արդ՝ եթէ զսա՛ ևս առնուցուք յերեսաց իմոց, և պատահիցէ սմա հիւանդութիւն ՚ի ճանապարհի, իջուցանէ՛ք զժերութիւնս իմ տրտմութեամբ հանդերձ ՚ի դժոխս։ ³⁰Եւ արդ՝ եթէ երթայցենք առ ծառայ քո հայր մեր՝ և պատանեակս չիցէ՛ ընդ մեզ. և նորա՛ ոգին կախեալ կայ զդորա ոգւոյդ։ ³¹Եւ լինիցի իբրև ո՛չ տեսանիցէ ընդ մեզ զմանուկը՝ վախճանիցի՛. և իջուցանիցեն ծառայք քո զժերութիւն ծառայի քոյ հօր մերոյ չարչարանօք հանդերձ ՚ի դժոխս։ ³²Ձի ծառայի քոյ առեալ է յերաշխի՛ զմանուկը ՚ի հօրէ իւրմէ. ասեմ, եթէ ո՛չ ածից զդա առ քեզ՝ և կացուցից առաջի քո, յանցաւոր եղէց առ հայր իմ զամենայն աւուրս։ ³³Եւ արդ՝ կացից ե՛ս ծառայ քո փոխանակ մանկանդ ստրուկ տեառն իմոյ. և պատանեակդ ելցէ՛ ընդ եղբարս իւր. ³⁴քանզի զիա՞րդ ելանիցեն առ հայրն իմ, եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ։ Ձի մի՛ տեսից զչարիսն որ գտանիցեն զհայրն իմ*։

45

Գլուխ ԽԵ

¹Եւ ո՛չ կարաց Յովսէփ ժոյժ ունել առաջի ամենեցուն՝ որ շուրջ զնովան կային. այլ ասէ. Զանէ՛ք զամենեսին արտա՛քս յինէն։ Եւ չկայր ևս որ անդ առ նմա՛ յորժամ ե՛տ ծանօթս եղբարց իւրոց։ ²Եւ ձայն բարձեալ լալով հանդերձ՝ մինչ լուան Եգիպտացիքն. և ա՛զդ եղև ՚ի տուն փարաւոնի։ ³Ասէ՛ Յովսէփ ցեղբարսն իւր. Ե՛ս եմ Յովսէփ. արդարև տակաւին կենդանի՞ է հայր իմ։ Եւ ո՛չ կարէին եղբարք նորա տալ նմա պատասխանի. զի խռովեցան յերեսաց նորա*։ ⁴Ասէ՛ Յովսէփ ցեղբարսն իւր. Սօ՛տ եկայք առ իս։ Եւ չոգան մօտ։ Եւ ասէ. Ե՛ս եմ Յովսէփ եղբայրն ձեր, զոր դուք վաճառեցէք յԵգիպտոս։ ⁵Բայց մի՛ ինչ տրտմիք. և մի՛ խիստ թուեսցի ձեզ զի վաճառեցէք զիս այսր. քանզի ՚ի փրկութիւն առաքեաց զիս Աստուած առաջի ձեր*։ ⁶Ձի այս երկրորդ ա՛մ է սովոյս ՚ի վերայ երկրի. և ա՛յլ ևս հի՛նգ ամ յորս ո՛չ լինիցի վար, ⁷և ո՛չ հուճճք։ Եւ զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ՚ի թողլո՛յ ձեզ զաւակ յերկրի. և կերակրել զձեր մնացորդս մեծամեծս։ ⁸Եւ արդ՝ ո՛չ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ Աստուած. և արա՛ր զիս հայր փարաւոնի, և տէր ամենայն տան նորա, և իշխան ամենայն երկրիս Եգիպտացւոց։ ⁹Արդ՝ փութացեալ ելէ՛ք առ հայրն իմ և ասացէք ցնա. Ա՛յսպէս ասէ որդին քո Յովսէփ։ Արար զիս Աստուած տէր ամենայն երկրիս Եգիպտացւոց. արդ՝ ե՛կ էջ առ իս. և մի՛ հեղգար։ ¹⁰Եւ բնակեսցես յերկրիս Գեսեն, յԱրաբիա. և եղիցես մօտ առ իս. դո՛ւ և որդիք քո՝ և որդիք որդւոց քոց, և ոչխար քո, և արջա՛ռ քո, և որ ինչ քո՛ իցէ*։ ¹¹Եւ կերակրեցի՛ց զքեզ աստ. զի ա՛յլ

* Ոմանք. Սակաւ մի մեզ կերակուր։

* Ոմանք. Դուք իսկ գիտէք, զի եր՛։

* Ոմանք. Ելանիցեն առ հայրն, եթէ։

* Ոմանք. Կենդանի՞ իցէ հայր իմ։

* Ոմանք. Ձի մի՛ խիստ թուեսցի ձեզ։

* Ոմանք. Յերկրիս Գեսեն յԱրաբաւք։

ևս հինգ ամ կայ սովոյս. զի մի՛ սատակիցիս դու և որդիք քո, և ամենայն ստացուածք քո*։ ¹²Ահաւասիկ աչք ձեր տեսանեն, և աչք Բենիամինի եղբոր իմոյ տեսանեն, զի բերան իմ խօսի ընդ ձեզ։ ¹³Արդ պատմեցէ՛ք իմ իմոյ զամենայն զփառս իմ, որ են յեգիպտոս. և որչափ ինչ տեսանէք դուք։ Եւ փութացեալ իջուցէ՛ք զհայրն իմ այսր*։ ¹⁴Եւ անկեալ ՚ի վերայ պարանոցին Բենիամինի եղբոր իւրոյ ելա՛ց, և Բենիամին ելա՛ց ՚ի վերայ պարանոցի նորա։ ¹⁵Եւ համբուրեաց զամենայն եղբարս իւր, և ելա՛ց ՚ի վերայ նոցա։ Յետ այնորիկ խօսեցան եղբարք նորա ընդ նմա։ ¹⁶Եւ հնչեաց համբաւն ՚ի տուն փարաւոնի, և ասեն. Եկին եղբարք Յովսէփու։ Ուրախ եղև փարաւոն և ծառայք նորա։ ¹⁷Ասէ փարաւոն ցՅովսէփ. Ասա՛ ցեղբարս քո. այսպէս արարէք. լցէ՛ք զբեռինս ձեր՝ և երթա՛յք յերկիրն Քանանացոց։ ¹⁸Եւ առեալ զհայր ձեր և զստացուածս ձեր՝ եկեսցի՛ք առ իս. և տաց ձեզ յամենայն բարութեանցս Եգիպտացոց. և կերիջիք զուղիւղ երկրիս*։ ¹⁹Եւ տո՛ւր զայս հրաման. տացես առնուլ յերկրես Եգիպտացոց սայլս, մանկանց և կանանց ձերոց. և առեալ զհայրն ձեր ածիցէք։ ²⁰Եւ մի՛ ազահիցեն աչք ձեր ՚ի կահ ձեր. զի բարութիւն ամենայն երկրիս Եգիպտացոց ձե՛զ լիցի*։ ²¹Եւ արարին այնպէս որդիքն Իսրայէլի, և ետ նոցա Յովսէփ սայլս՝ ըստ բանիցն փարաւոնի արքայի. և ետ նոցա պաշար ՚ի ճանապարհ։ ²²Եւ ամենեցուն ետ կրկին պատմուճանս. և Բենիամինի ետ երեք հարիւր դահեկան, և հինգ պատմուճանս փոխանակաւ*։ ²³Եւ իւրում ետ տանե՛լ նոյնպէս։ Եւ տասն իշոյ բեռինս յամենայն բարութեանց Եգիպտացոց. և տասն ջորի նպարակաւոր #, և կերակուր իւրն իւրում ՚ի ճանապարհ։ ²⁴Եւ արձակեաց զեղբարս իւր՝ և գնացին։ Եւ ասէ ցնոսա. Մի՛ զայրանայցէք ինչ ՚ի ճանապարհի։ ²⁵Ելին յեգիպտոսէ, և չոզան յերկիրն Քանանացոց առ Յակոբ հայրն իւրեանց։ ²⁶Եւ պատմեցին նմա, և ասեն. Որդի քո Յովսէփ կենդանի՛ է. և նա՛ է իշխան ամենայն երկրին Եգիպտացոց։ Եւ զարմացաւ ՚ի միտս իւր Յակոբ. զի ո՛չ հաւատայր նոցա։ ²⁷Եւ խօսեցան ընդ նմա զամենայն ինչ՝ զոր ասաց Յովսէփ։ Եւ իբրև ետես զսայլսն զոր առաքեաց Յովսէփ առնուլ գնա, արժարձեցաւ ոգին Յակոբայ իւր նոցա։ ²⁸Եւ ասէ Իսրայէլ. Մե՛ծ է ինձ՝ եթէ արդարև տակաւին կենդանի՛ իցէ որդի իմ Յովսէփ. Երթա՛յց տեսից գնա մինչ չն՝ մեռեալ իցեմ։

46

Գլուխ ԽՁ

¹Չուեաց Իսրայէլ ինքն՝ և ամենայն որ ինչ ի՛ւր էր. և եկն ՚ի Ջրհորն երդման. և մատոյց պատարագ Աստուծոյ իւր իւրոյ Իսահակայ։

ԾԴ ²Խօսեցաւ Աստուած ընդ Իսրայէլի ՚ի տեսլեան գիշերոյ. և ասէ. Յակոբ՝ Յակոբ։ Եւ նա՛ ասէ. Ո՞վ ես։ ³Ասէ. Ե՛ս եմ Աստուած հարցն քոց. մի՛ երկնչիր իջանել յեգիպտոս, զի յազգ մե՛ծ արարից զքեզ անդ*։ ⁴Ե՛ս իջից ընդ քեզ

* Ոմանք. Եւ կերակրեցից զձեզ անդ։

* Ոմանք. Զոր իմում զամենայն... և որչափ ինչ տեսէք։

* Ոմանք. Եւ կերիջիք զուղիւղ, կամ՝ զուղեղ երկր։

* Ոմանք. Ամենայն Եգիպտացոցս ձեր լինիցի։

* Ոմանք. Ետ հինգ հարիւր դահեկան, և հինգ պատմուճան։

* Ոմանք. Արարից զքեզ անդ։

յեգիպտոս, և ես հանից զքեզ ՚ի սպառ. և Յովսէփ դիցէ զձեռս իւր ՚ի վերայ աչաց քոց: ⁵Յարեա՛ւ Յակոբ ՚ի Ջրհորոյ անտի երդման. և առին որդիքն Իսրայէլի զՅակոբ հայրն իւրեանց. և զկազմա՛ծ, և զկանա՛յս իւրեանց, ՚ի սայլսն զոր առաքեաց Յովսէփ առնուլ զնա: Եւ առեալ զինչս իւրեանց. ⁶և զամենայն ստացուածս զոր ստացան յերկրին Քանանացւոց, մտին յեգիպտոս Յակոբ և ամենայն զաւակ նորա ընդ նմա: ⁷Որդիք նորա, և որդիք որդւոց նորա ընդ նմա. դստերք նորա, և դստերք դստերաց նորա: Եւ զամենայն զաւակ իւր ած յեգիպտոս: ⁸Եւ այս են անուանք որդւոցն Իսրայէլի որ մտին յեգիպտոս: Յակոբ և որդիք իւր: Անդրանիկ Յակոբու՝ Ռոբէն: ⁹Եւ որդիք Ռոբինի՝ Ենոք, և Փաղ՛ղ՛ուս, Սարսոն, և Քարմի: ¹⁰Եւ որդիք Շմաւոնի՝ Յամուէլ, և Յամին, և Ահովդ, և Յաքին, և Սահառ, և Սաւուղ որդի Քանանացւոյն: ¹¹Եւ որդիք Ղևեայ՝ Գեթսոն, և Կահաթ, և Մերարի*: ¹²Եւ որդիք Յուդայի՝ Էր, և Աւնան, և Սելոփմ, և Փարէս, և Ջարա: Եւ մեռան Էր և Աւնան յերկրին Քանանացւոց: Եւ եղեն որդիք Փարեսի՝ Ասրոփմ, և Յամուէլ: ¹³Եւ որդիք Իսաքարայ՝ Թովղա, և Փուդ, և Յասուբ, և Ջամամ: ¹⁴Եւ որդիք Ջաբուղոնի՝ Մերեդ, և Աղղոն, և Էլլ: ¹⁵Սոքա են որդիք Լիայ՝ զոր ծնաւ Յակոբ ՚ի Միջագետս Ասորոց, և զԴինա դուստր նորա: Ամենայն ոգիք ուստերք և դստերք երեսուն և երեք*: ¹⁶Եւ որդիք Գադայ՝ Սափոն, և Մեգիս, և Սաւնիա, և Թաւսոբամ, և Այեդիս, և Արոյէլիս, և Արիէլիս: ¹⁷Եւ սոքա են որդիք Ասերայ՝ Յեմնա, և Յէուսա, և Յէուլ, և Բարիա, և Սարա քոյր նոցա: Եւ որդիք Բարիայ՝ Քոբոր, և Մեղ՛քիէլ*: ¹⁸Սոքա են որդիք Ջելփայ, զոր ետ Լաբան Լիայ դստերն իւրում, որ ծնաւ զսոսա Յակոբայ, վեշտասան որդիս: ¹⁹Եւ որդիք Ռաքելայ կնոջ Յակոբայ՝ Յովսէփ, և Բենիամին: ²⁰Եւ եղեն որդիք Յովսէփայ յերկրին Եգիպտացւոց, զորս ծնաւ նմա Ասանէթ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի. զՄանասէ և զԵփրեմ: Եւ եղեն որդիք Մանասէի զոր ծնաւ նմա հարճն Ասորի, զՄաքիր. և Մաքիր ծնաւ զԳադաադ: Եւ որդիք Եփրեմի եղբօրն Մանասէի՝ Սուտադաամ, և Տաամ. և որդի Սուտադաամայ, Եղեն: ²¹Եւ որդիք Բենիամինի՝ Բաղ՛ա, և Բոքոր, և Ասբէ. և եղեն որդիք Բաղայ՝ Գէրա, և Նէէման, և Անաքիս, և Ռովս, և Մամփիմ, և Ոփիմին: Եւ Գեերա ծնաւ զԱրադ*: ²²Սոքա են որդիք Ռաքելի՝ զոր ծնաւ Յակոբայ. ամենայն ոգիք ութ և տասն*: ²³Եւ որդիք Դանայ՝ Ասոմ: ²⁴Եւ որդիք Նեփթաղեմի՝ Ասիէլ, և Գովնի, և Աստար, և Սիլիմ: ²⁵Սոքա են որդիք Բալլայ՝ զոր ետ Լաբան Ռաքելի դստեր իւրում. և ծնաւ զսոսա Յակոբայ. ամենեքին ոգիք եւթն*: ²⁶Եւ ամենայն ոգիք որ մտին ընդ Յակոբայ յեգիպտոս, որ ելեալ էին յերանաց նորա, առանց կանանց որդւոցն Յակոբայ, ամենայն ոգիք վաթսուն և վեց: ²⁷Եւ որդիք Յովսէփայ որ եղեն նմա յեգիպտոս, ոգիք երկու: Եւ ամենայն ոգիք տանն Յակոբու՝ որ մտին յեգիպտոս եւթանասուն և հինգ*: ²⁸Եւ զՅուդա յառաջագոյն առաքեաց առ Յովսէփ, զա՛լ նմա ընդ առաջ զՔաջաց քաղաքաւն, յերկիրն Ռամեսա. և ինքն եկն յերկիրն Գեսեմ*: ²⁹Կազմեաց Յովսէփ զկառս իւր, և ել ընդ առաջ Իսրայէլի հօր իւրոյ,

* Ոմանք. Գերսոն և Կահաթ:

* Այլք. Ջոր ծնաւ Յակոբայ ՚ի մի՛:

* Այլք. Յեմնա, և Յեսուա, և:

* Ոմանք. Եւ Բոքոր և Սաքիէ:

* Ոմանք. Ամենայն որդիք ութ և տասն:

* Ոմանք. Ամենեքին որդիք եւթն:

* Ոմանք. Յեգիպտոս, որդիք երկու:

* Ոմանք. Ի՛ գալ նմա ընդ առաջ:

զՔաջաց քաղաքան: Եւ իբրև յանդիման եղև նմա՝ անկա՛ւ ՚ի վերայ պարանոցի նորա, և ելաց ՚ի լալիւն մեծ: ³⁰Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Մեռայց այսուհետև. որովհետև տեսի գերեսս քո՝ զի տակաւին կենդանի՛ ես: ³¹Եւ ասէ Յովսէփ ցեղբարս իւր՝ և ցտուն հօր իւրոյ. Երթայց պատմեցի՛ց փարաւունի, եթէ եղբարք իմ և տուն հօր իմոյ որ էին յերկիրն Քանանացւոց, եկին առ իս՛: ³²Եւ արք հովիւք են, և արք խաշնադարմանք են, և զանասուն, և զարջառ, և զամենայն ինչ իւրեանց ածին այսր: ³³Արդ՝ եթէ կոչիցէ զձեզ փարաւուն՝ և ասիցէ, զի՞նչ գործ է ձեր. ³⁴ասասջիք եթէ արք խաշնադարմանք ենք ծառայք քո՝ ՚ի մանկութենէ մինչև ցայժմ. և մեք և հարք մեր, զի բնակիցէք յերկիրն Գեսեն: Զի զարշելի՛ է Եգիպտացւոց՝ ամենայն հովիւ խաշանց՛:

47

Գլուխ ԽԵ

¹Եւ եկեալ Յովսէփ պատմեաց՝ փարաւունի, և ասէ. Դայր իմ և եղբարք, և խաշինք և արջառ նոցա, և ամենայն որ ինչ նոցա, եկին յերկրէն Քանանացւոց. և ահա են ՚ի Գեսեն՛: ²Եւ յեղբարց անտի իւրոց ա՛ռ ընդ իւր հինգ այր. և կացոյց զնոսա առաջի փարաւունի՛: ³Եւ ասէ փարաւուն ցեղբարսն Յովսէփու. Զի՞նչ գործ է ձեր: Եւ նոքա ասեն ցփարաւուն. Դովիւք խաշանց են ծառայք քո, և մեք և հարք մեր: ⁴Եւ ասեն ցփարաւուն. Պանդխտանալ եկաք յերկիրս յայսմիկ. զի ո՛չ գոյր ճարակ խաշանց ծառայից քոց, քանզի սաստկացա՛ւ սովն յերկիրն Քանանացւոց. և արդ՝ բնակեսցուք ծառայք քո յերկիրն ՚ի Գեսեն՛: ⁵Եւ խօսեցաւ փարաւուն ընդ Յովսէփու՝ և ասէ. Դայր քո և եղբարք քո եկին առ քեզ: ⁶Ահա՛ երկիրս Եգիպտացւոց առաջի քո՛ է. ՚ի բարւո՛ք երկիր բնակեցո՛ զհայր քո և զեղբարս քո. և բնակեսցեն յերկիրն Գեսեն՛: Ապա թէ գիտես եթէ իցեն ՚ի նոսա արք զօրաւորք, կացո՛ զնոսա իշխանս ՚ի վերայ իմոց խաշանց՛: ⁷Եւ ած Յովսէփ զՅակոբ զհայր իւր, և կացոյց առաջի փարաւունի: Եւ օրհնեաց Յակոբ զփարաւուն: ⁸Եւ ասէ փարաւուն ցՅակոբ. Քանի՞ են ամք աւուրց կենաց քոց: ⁹Եւ ասէ Յակոբ ցփարաւուն. Աւուրք կենաց ամաց իմոց զորս պանդխտեցայ՝ հարիւր և երեսուն՝ ամ է. սակա՛ւք և դժուարինք եղեն աւուրք ամաց կենաց իմոց. և ո՛չ հասին յաւուրս ամաց կենաց հարց իմոց, զոր աւուրս պանդխտեցան: ¹⁰Եւ օրհնեաց Յակոբ զփարաւուն՝ և ել ՚ի նմանէ: ¹¹Եւ բնակեցոյց Յովսէփ զհայրն իւր և զեղբարս իւր, և ետ նոցա բնակութիւն յերկիրն Եգիպտացւոց ՚ի բարւո՛ք երկրի. յերկիրն Ռամեսսա. որպէս հրամայեաց փարաւուն: ¹²Եւ տայր Յովսէփ ռոճիկս հօրն և եղբարց իւրոց. և ամենայն տան հօր իւրոյ ցորեան ըստ բերան: ¹³Եւ կերակուր ո՛չ գոյր յամենայն երկրին, զի սաստկացա՛ւ սովն յոյժ. և նուաղեաց երկիրն Եգիպտացւոց և երկիրն Քանանացւոց ՚ի սովոյ անտի: ԾԵ ¹⁴Եւ ժողովեաց Յովսէփ զամենայն արծաթ գտեալ յերկրին Եգիպտացւոց՝ և յերկրին Քանանացւոց, ընդ ցորենոյն զոր վաճառէր. և տայր նոցա կերակուրս: Եւ տարաւ Յովսէփ զամենայն արծաթն ՚ի տուն փարաւունի: ¹⁵Եւ

* Այլք. Որ էին յերկրին Քա՛:

* Ոմանք. Քանզի զարշելի է Եգիպ՛:

* Ոմանք. Եկն յերկրէն Քանա՛:

* Զօրինակին պակասէր. Եւ կացոյց զնոսա առաջի փա՛:

* Ոմանք. Ի բարիոք երկրի բնա՛:

նուազեաց արծաթ յերկրէն Եգիպտացւոց, և յերկրէն Քանանացւոց: Եկին ամենայն Եգիպտացիքն առ Յովսէփ՝ և ասեն. Տո՛ւր մեզ հաց, և ընդէ՞ր մեռանիմք առաջի քո. զի պակասեաց արծաթ՝: ¹⁶Ասէ ցնոսա Յովսէփ. Ածէ՛ք զանասունս ձեր, և տաց ձեզ հաց փոխանակ անասնոց ձերոց, եթէ պակասեաց արծաթ: ¹⁷Եւ ածին զանասունսն առ Յովսէփ, և ետ նոցա Յովսէփ հաց. փոխանակ ձիո՛յ, և փոխանակ ոչխարի, և փոխանակ արջառոյ, և փոխանակ իշոյ. և կերակրեաց զնոսա հացիւ, փոխանակ ամենայն անասնոց նոցա յամին յայնմիկ: Ե՛լ այն ամ՝, ¹⁸և եկին առ Յովսէփ յերկրորդ ամին՝ և ասեն ցնա. Գուցէ՛ սատակիցիմք ՚ի տեռնէ մերմէ. եթէ արծաթ էր՝ պակասեաց, և եթէ խաշինք և ստացուածք՝ առ քե՛զ են տէր. և չէ՛ ինչ մնացեալ մեր առաջի տեառն, բայց միայն անձիմք և երկիրս մեր՝: ¹⁹Արդ՝ զի մի՛ մեռանիցիմք առաջի քո և մեք, և երկիրս աւերիցի. ստացի՛ր զմեզ և զերկիրս մեր փոխանակ հացի. եղիցո՛ւք մեք և երկիրս մեր ծառայք փարաւոնի: Տո՛ւր սերմն զի սերմանեսցուք, և կեցցուք՝ և մի՛ մեռցուք. և երկիրս մի՛ աւերեսցի՝: ²⁰Եւ ստացաւ Յովսէփ զամենայն երկիրն Եգիպտացւոց փարաւոնի. քանզի վաճառեցին Եգիպտացիքն զերկիրն իւրեանց փարաւոնի. զի սաստկացաւ ՚ի վերայ նոցա սովն: Եւ եղև երկիրն փարաւոնի: ²¹Եւ զժողովուրդն ծառայեցոյց իւր ՚ի ստրուկ, ՚ի ծագաց սահմանացն Եգիպտոսի մինչև ՚ի ծագս նորուն՝: ²²Բաց յերկրէ քրմացն, զի ո՛չ ստացաւ զնոսա Յովսէփ. քանզի տալով տա՛յր պարգևս քրմացն փարաւոնի. և ուտէին զպարգևսն զոր տայր նոցա փարաւոն. վասն այնորիկ ո՛չ վաճառեցին զերկիրն իւրեանց: ²³Ասէ Յովսէփ ցամենայն Եգիպտացիսն. Ահա ստացա՛յ զձեզ այսօր և զերկիր ձեր փարաւոնի. առէ՛ք ձեզ սերմանս, և սերմանեցէք զերկիրդ. ²⁴և եղիցին արդիւնք դորա: Եւ տաջիք զհինգերորդ մասն փարաւոնի. և չորք մասունքն ձեր եղիցին, ՚ի սերմն երկրիդ, և ՚ի կերակուր ձեզ՝ և ամենայն ընտանեաց ձերոց, և ՚ի կերակուր տղայոց ձերոց: ²⁵Եւ ասեն. Կեցուցեր զմեզ գտաք շնորհս առաջի տեառն մերոյ. և եղիցուք ծառայք փարաւոնի: ²⁶Եւ եղև նոցա օրէնս Յովսէփ մինչև ցայսօր յերկրին Եգիպտացւոց՝ հինգերորդէ՛լ փարաւոնի. բաց յերկրէ քրմացն որ չէր փարաւոնի:

ԾԶ ²⁷Եւ բնակեաց Իսրայէլ յերկրին Եգիպտացւոց յերկրին ՚ի Գեսեն. և ժառանգեցին ՚ի նմա, և աճեցին և բազմացան յոյժ՝: ²⁸Եւ եկաց Յակոբ յերկրին Եգիպտացւոց ամս եւթն և տասն: Եւ եղեն աւուրք Յակոբայ ամաց կենաց նորա՝ հարիւր և քառասուն և եւթն ամ՝: ²⁹Եւ մերձեցան աւուրք Իսրայէլի մեռանելոյ. և կոչեաց զորդի իւր զՅովսէփ՝ և ասէ ցնա. Եթէ զտի շնորհս առաջի քո, դի՛ր զձեռն քո ընդ երանօք իմովք. և արացես ՚ի վերայ իմ ողորմութիւն և ճշմարտութիւն, չթաղել զիս յեգիպտոս: ³⁰Այլ ննջեցից ընդ հարսն իմ. և բարձցեն զիս յեգիպտոսէ, և թաղեսցեն զիս ՚ի գերեզմանի՛ նոցա: Եւ նա ասէ. Ես արարից ըստ բանի քում: ³¹Եւ ասէ. Երդուի՛ր ինձ: Եւ երդուաւ նմա: Եւ երկի՛ր եպագ Իսրայէլ ՚ի վերայ գլխոյ գաւազանի իւրոյ:

* Ոմանք. Արծաթ յերկրին Եգիպտացւոց և յերկրին Քանանաց՝:

* Յօրինակին կրկնի. Յամին յամին յայնմիկ:

* Ոմանք. Յերկրորդ ամի անդ:

* Ոմանք. Եւ երկիրս մեր աւերեսցի. ստա՛:

* Այլք. Իւր ՚ի ստրուկս:

* Յօրինակին պակասէր. Եւ բնակեաց Իսրայէլ յերկրին Եգիպտացւոց. յերկրին ՚ի Գեսն՝:

* Ոմանք. Եւ եկեաց յա՛: Ոսկան. Եւ եղեն աւուրք ամաց կենաց նորա:

Գլուխ ԽԸ

¹Եւ եղև յետ բանիցս այսոցիկ՝ ա՛զդ եղև Յովսեփայ՝ եթէ Յակոբ հայրն քո նեղեալ է: Եւ առեալ Յովսեփայ զերկուս որդիսն իւր # ընդ իւր, զՄանասէ և զԵփրեմ, եկն առ Յակոբ: Ա՛զդ եղև Յակոբայ՝ և ասեն*.²Ահա որդի քո Յովսեփ գա՛յ առ քեզ: Եւ զօրացաւ Իսրայէլ՝ և նստաւ ՚ի մահիծս: ³Եւ ասէ Յակոբ ցՅովսեփ. Աստուած իմ երևեցաւ ինձ ՚ի Լուզ՝ յերկրին Քանանացւոց. օրհնեաց զիս*.⁴և ասէ. Ահա ես աճեցուցի՛ց զքեզ, և բազմացուցի՛ց զքեզ, և արարից զքեզ ՚ի ժողովս ազգաց. և տաց քե՛զ զերկիրս զայս ՚ի ժառանգութիւն յաւիտենական*:⁵Արդ՝ երկու որդիք քո որ եղեն յեգիպտոս, մինչ չև՝ եկեալ էր իմ յեգիպտոս՝ ի՛նձ են, Եփրեմ և Մանասէ. իբրև զԲոթէ՛նն և զՇմաւոն եղիցին ինձ: ⁶Եւ ա՛յլ ծնունդք զոր ծնանիցիս յետ այսորիկ՝ քե՛զ եղիցին. յանուն եղբարց իւրեանց կոչեսցին ՚ի նոցա՝ ժառանգութիւնս: ⁷Եւ ես յորժամ գայի ՚ի Միջագետաց Ասորոց, մեռա՛ւ մայր քո Ռաքէլ յերկրին Քանանացւոց. ՚ի մերձենա՛լ ինձ յասպարէզ երկրին Քաբրաթայ, ՚ի գալն յեփրաթայ. և թաղեցի զնա յերկրի ասպարիսին. ա՛յն է Բեթլ՝ ահէմ*:⁸Իբրև ետես Իսրայէլ զորդիսն Յովսեփու՝ ասէ. Զի՞նչ են սոքա քո: ⁹Ասէ Յովսեփ ցհայրն իւր. Որդիք իմ են զոր ետ ինձ Աստուած աստ: Եւ ասէ Յակոբ. Մատո՛ առ իս զդոսա, զի օրհնեցի՛ց զդոսա: ¹⁰Եւ աչք Իսրայէլի ծանրացեալ էին ՚ի ծերութենէ անտի. և ո՛չ կարէր տեսանել: Եւ մատոյց զնոսա առ նա. և համբուրեաց զնոսա, և ՚ի գի՛րկս իւր առ զնոսա*:¹¹Եւ ասէ Իսրայէլ ցՅովսեփ. Ահա յերեսաց քոց ո՛չ կարօտ եղէ. և եցո՛յց և՛ս ինձ Աստուած զգաւակ քո: ¹²Եւ եհան զնոսա Յովսեփի ՚ի ծնգաց նորա. և երկիր պագին նմա ՚ի վերայ երեսաց իւրեանց յերկիր: Եւ առեալ Յովսեփայ զերկուս որդիսն իւր. ¹³զԵփրեմ ընդ աջմէ, ՚ի ձախմէ Իսրայէլի. և զՄանասէ ՚ի ձախմէ՛ յաջմէ՛ Իսրայէլի. մատոյց զնոսա առ նա*:¹⁴Եւ ձգեալ Իսրայէլի զաջ ձեռն իւր՝ արկ զգլխովն Եփրեմի, և նա՛ էր կրտսեր. և զձախն զգլխովն Մանասէի, և փոփոխեաց զձեռնս, զի Մանասէ էր անդրանիկ*:¹⁵Եւ օրհնեաց զնոսա և ասէ. Աստուած, որուն հաճոյ եղեն հարքն իմ առաջի նորա Աբրաամ և Իսահակ. Աստուած որ կերակրէ զիս ՚ի մանկութենէ իմմէ մինչև ցայսօր. ¹⁶հրեշտակն որ փրկեաց զիս յամենայն չարեաց. օրհնեսցէ՛ զմանկունս զայսոսիկ, և կոչեսցի ՚ի սոսա անուն իմ և անուն հարց իմոց, Աբրաամու և Սահակայ. և օրհնեսցին ՚ի բազմութիւն յո՛յժ ՚ի վերայ երկրի*:¹⁷Եւ տեսեալ Յովսեփայ եթէ ա՛րկ հայրն զաջ իւր զգլխովն Եփրեմի, ծա՛նր թուեցաւ նմա. և օգնեաց Յովսեփ ձեռին հօրն իւրոյ, հանել զնա ՚ի գլխոյն Եփրեմի՝ ՚ի գլուխն Մանասէի: ¹⁸Ասէ Յովսեփ ցհայրն իւր. Ո՛չ այդպէս է հայր. քանզի սա՛ է անդրանիկ. դի՛ր զաջ ձեռն քո ՚ի վերայ գլխոյ սորա*:¹⁹Եւ ո՛չ կամեցաւ հայրն նորա, այլ ասէ. Գիտե՛մ որդեակ գիտե՛մ. և

* Ոմանք. Եւ եկն առ Յակոբ:

* Ոմանք. ՚ի Լուզ երկրին Քա՛:

* Ոմանք. Եւ ասէ ցիս. Ահա ես աճե՛:

* Ոմանք. Եւ թաղեցին զնա յերկրի:

* Ոմանք. Ծանրացեալ էր ՚ի ծերութենէ:

* Ոմանք. Ընդ աջմէ ՚ի ձախ Իսրայէլի:

* Ոմանք. Զի Մանասէ էր անդրանիկն:

* Ոմանք. Եւ կոչեսցի ՚ի նոսա անուն իմ:

* Այլք. Դի՛ր զաջ քո ՚ի վերայ գլխոյ:

դա՛ եղիցի ՚ի ժողովուրդ, և դա՛ բարձրացի. այլ եղբայրս դորա կրտսեր՝ եղիցի մե՛ծ քան զդա. և զաւակ սորա եղիցի ՚ի բազմութիւն ազգաց: ²⁰Եւ օրհնեաց զնոսա յաւուր յայնմիկ՝ և ասէ. ՚ի ձե՛զ օրհնեսցի Իսրայէլ: Ասացեն, թէ արացէ զքեզ Աստուած իբրև զԵփրեմ և զՄանասէ: Եւ եդ զԵփրեմ յառաջ քան զՄանասէ*: ²¹Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Ես աւասիկ մեռանի՛մ և Աստուած եղիցի ընդ ձեզ, և դարձուցէ՛ զձեզ յերկիր հարցն ձերոց: ²²Եւ Ես Ետու քեզ զՍիկիմ սեպհական. արտաքոյ եղբարց քոց, զոր առի ՚ի ձեռաց Ամովրիացւոցն սրո՛վ իմով և աղետամբ:

49

Գլուխ ԽԹ

Ծէ ¹Կոչեաց Յակոբ զորդիսն իւր և ասէ. ժողովեցարո՛ւք, զի պատմեցից ձեզ ինչ որ պատահիցէ ձեզ ՚ի վախճանի աւուրց: ²Ժողովեցարո՛ւք և լուարո՛ւք որդիք Յակոբայ. լուարո՛ւք Իսրայէլի հօր ձերուն: ³Ռոբէն անդրանիկ իմ. դո՛ւ զօրութիւն իմ և սկիզբն որդւոց իմոց: Խստութեամբ գնացեր. և խստութեամբ յանդիմանութեամբ թշնամանեցեր*: ⁴Իբրև զջուր մի՛ եռացիս. զի Ելէր յանկողինս հօր քոյ, յայնժամ պղծեցեր զանկողինս յոր Ելէր*: ⁵Շմաւոն և Ղևի եղբարք. կատարեցին զանհրաւութիւն ՚ի կամաց իւրեանց: ⁶Ի խորհուրդս նոցա մի՛ մտցէ անձն իմ, և ՚ի ժողովս նոցա ո՛չ հաճեսցին միտք իմ. զի սրտմտութեամբ իւրեանց սպանին զարս, և ցանկութեամբ իւրեանց կարթակոտոր արարին զցուլս: ⁷Անիծեալ սրտմտութիւն նոցա՝ զի յանդուգն էր, և ոխութիւն նոցա՝ զի խի՛ստ էր. բաժանեցից զնոսա ՚ի մէջ Յակոբայ. և ցրուեցից զնոսա ՚ի մէջ Իսրայէլի*: ⁸Յո՛ւդա՝ զքեզ օրհնեսցեն եղբարք քո: Չեռն քո ՚ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր քոյ*: ⁹Կորի՛ւն առիծու Յո՛ւդա. ՚ի շառաւեղէ՛ Ելէր որդեակ իմ, Ելէր բազմեցար, ննջեցեր իբրև զառևճ, և իբրև զկորիւն առիծու. ո՛ յարուցանէ զնա*: ¹⁰Սի՛ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա. մի՛նչև եկեսցէ նա որոյ ի՛ւրն է հանդերձեալքն. և նա՛ է ակնկալութիւն հեթանոսաց*: ¹¹Կապեսցէ՛ զորթոյ գլաւանակ իւր, և զգնդակէն գլաւանակ իշոյն. լուացէ՛ զինուով զպատմութեան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձս իւր: ¹²Ձուարթագին են աչք նորա ՚ի զինւոյ. և սպիտակ ատամունք իւր քան զկաթն: ¹³Ձաբողոն՝ յեզերս ծովու բնակեսցէ, և ինքն նաւահանգիստ նաւաց. և ձգեսցի մի՛նչև ՚ի Սիդոն*: ¹⁴Իսաքար՝ բարւոյ՛ ցանկացաւ, հանգուցեալ ՚ի մէջ վիճակաց. ¹⁵տեսեալ զհանգիստն զի գեղեցիկ էր, և զերկիրն՝ զի պարարտ էր, եդ զուս իւր յաշխատել. և եղև այր արդիւնարար: ¹⁶Դան՝ դատեսցէ զժողովուրդ իւր իբրև զմի՛ այր ՚ի մէջ Իսրայէլի. ¹⁷և եղիցի Դան՝ օձ դարանակալ

* Ոմանք. Իբրև զԵփրեմն և իբրև զՄանասէ:

* Այլք. Եւ խստութեամբ յանդգնութեամբ թշնամանէ՛:

* Ոմանք. Պղծեցեր զանկողինս յոր ե՛:

* Օրհնակ մի. Բաժանեցին զնոսա ՚ի մէջ յա՛:

* Այլք. Չեռք քո ՚ի վերայ թիկանց:

* Ոմանք. Ննջեցեր որպէս զառիծ.. ո՛ յարուցանիցէ զնա:

* Ի լուս՝. Իշխան ՚ի Յուդայ. համաձայն բազմաց ՚ի բնաբ՝: Ուր Ոսկան. Սի՛նչև եկեսցեն նմա հանդերձեալքն:

* Ոմանք. Ձաբողոն յեզեր ծովուց բնա՛.. մի՛նչև ցՍիդոն:

ի ճանապարհի, հարկանել զգարչապար երիվարի. և ընկենուլ զհեծեալն յետս,
¹⁸և մնալ փրկութեան Տեան: ¹⁹Գաղ` հինի ելցէ. և ինքն ելցէ հինի զհետ նոցա*:
²⁰Ասերայ` պարարտ հաց իւր. և ինքն տացէ կերակուր իշխանաց: ²¹Նեփթաղիմ
 ծառ բարձրացեալ, աճեցուցանել արմտօք, զգեցուցանել արմտօք
 զգեղեցկութիւն: ²²Որդեակ աճեցեալ Յովսէփ. որդեակ` աճեցեալ նախանձելի.
 որդեակ իմ մատաղ առ իս դարձի՛ր. զոր բանսարկուքն բամբասէին, ²³և
 դատափետ առնէին: Եւ ռխանային ընդ նմա ա՛րք աղեղանց. ²⁴և փշրեցան
 զօրութեանք աղեղունք իւրեանց, և լուծան ջիւք բազկաց նոցա ձեռանք Յօզիմ
 Յակոբայ: Անտի՛ որ զօրացոյց գիսրայել, ²⁵յԱստուծոյ հօրն քոյ, և օգնեաց քեզ
 Աստուած իմ. և օրհնեաց զքեզ յօրհնութիւն երկնից ՚ի վերուստ. և զօրհնութիւն
 երկրի՛ լի՛ ամենայնիւ. վասն օրհնութեանց ստեանց և արգանդի*
²⁶օրհնութեանց հօր քոյ և մօր քոյ. որ զօրացան քան զօրհնութիւնս լերանց
 մշտնջենաւորաց, և քան զօրհնութիւնս բլրոց յաւիտենականաց. եղիցին ՚ի
 վերայ գլխոյ Յովսէփու, և ՚ի վերայ գլխոց եղբարցն որոց առաջնորդեաց*:
²⁷Բենիամին` գա՛յլ յափշտակօղ, զայգո՛ւնն դեռևս ուտիցէ. և առ երեկս
 բաշխեսցէ կերակուրս: ²⁸Ամենեքեան սոքա որդիք Յակոբայ` ազգք
 երկոտասան. և այս է զոր խօսեցաւ ընդ նոսա հայրն իւրեանց, և օրհնեաց
 զնոսա: Իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրում* ²⁹օրհնեաց զնոսա: Եւ
 պատուիրեաց նոցա, և ասէ ցնոսա. Ես յաւելո՛ւմ առ ժողովուրդ իմ: Թաղեցէ՛ք
 զիս ընդ հարս իմ յայրի անդ` որ է յագարակին Եփրոնի Քետացոյ. յայրին # որ
 յանդի անդ է ՚ի կրկնում, ³⁰յանդիման Մամբրէի յերկրին Քանանացոյ՝ զոր
 ստացաւ Աբրաամ յԵփրոնէ Քետացոյ ՚ի ստացուածս շիրմի*:
³¹Անդ թաղեցին զԱբրաամ և զՍառա կին նորա: Անդ թաղեցին զԻսահակ և զՌեբեկա կին նորա:
 Անդ թաղեցին զԼիա ՚ի ստացուածի ագարակին և այրին որ է ՚ի նմա առ ՚ի
 յորդւոցն Քետայ: ³²Եւ դադարեաց Յակոբ ՚ի պատուիրելոյ որդւոցն իւրոց: Եւ
 առեալ զոտսն իւր անդէն ՚ի մահիճսն` պակասեաց. և յաւելաւ առ ժողովուրդ
 իւր*:

50

Գլուխ Ծ

¹Եւ անկեալ Յովսէփայ ՚ի վերայ երեսաց հօր իւրոյ ելա՛ց զնա, և համբուրեաց
 զնա*:
²Եւ հրաման ետ Յովսէփ ծառայից իւրոց դիագարդաց, պատել զհայրն
 իւր: ³Եւ պատեցին դիապատիկքն գիսրայել: Եւ լացին զնա աւուրք քառասուն,
 զի այնպէս թուէին աւուրք թաղելոց: Եւ սո՛ւզ առ վասն նորա Եգիպտոս աւուրս
 եւթանասուն*:
⁴Եւ իբրև անցին աւուրք սգոյն. խօսեցաւ Յովսէփ ընդ իշխանսն
 փարաւոնի, և ասէ. Եթէ գտի՛ շնորհս առաջի ձեր, խօսեցարո՛ւք ընդ փարաւոնի

* Ի լուս՝. Գաղ հինի ելցէ. համաձայն ոմանց ՚ի բնաք՝:

* Ոսկան. Աստուած հօր քո օգնեաց քեզ, և Աստուած իմ օրհնեաց զքեզ:

* Յօրհնակին պակասէր. Եւ ՚ի վերայ գլխոց եղբարցն:

* Ոմանք. Ամենեքին սոքա ազգք Յակոբայ երկոտասանք:

* Այլք. Չոր ստացաւ Աբրաամ զայրն յԵփրոնէ:

* Ոմանք. Անդրէն ՚ի մահիճս իւր.. և յաւելաւ ՚ի ժողովուրդ իւր:

* Այլք. Եւ անկեալ Յովսէփ ՚ի վերայ եր՝:

* Այլք. Եւ լցան նորա աւուրք քառա՛:

և ասացէք. ⁵Չայր իմ երդմնեցոյց զիս և ասէ. Ահաւասիկ ես մեռանիմ. ՚ի շիրմի անդ զոր փորեցի ես ինձ յերկրին Քանանացւոց, անդ թաղեսցես զիս. արդ՝ ելեա՞լ թաղեցից զհայր իմ, և եկի՞ց: ⁶Եւ ասէ փարաւոն. Ե՛լ թաղեա՛ զհայր քո, որպէս և երդմնեցոյց զքեզ: ⁷Եւ ե՛լ Յովսէփ թաղել զհայր իւր. ելին ընդ նմա և ամենայն ծառայք փարաւոնի, և ծերք տան նորա, և ամենայն ծերք երկրին Եգիպտացւոց: ⁸Եւ ամենայն համօրէն տուն Յովսէփայ, և եղբարք նորա. և ամենայն հայրենի բնակութիւն նորա: Եւ զազգատոհմ և զոչխար և զարջառ թողին յերկրին ՚ի Գեսեն: ⁹Ելին ընդ նմա և կառք և հեծեալք, և եղեն բանակ մե՛ծ յոյժ: ¹⁰Եւ հասին ՚ի կալն Ատադայ, որ է յայնկոյս Յորդանանու. և կոծեցան զնա անդ կոծ մե՛ծ՝ և սաստիկ յոյժ: Եւ արար հոր իւրում սուգ զելքն օր: ¹¹Տեսին բնակիչք երկրին Քանանացւոց զսուգն ՚ի կալն Ատադայ, և ասեն. սուգ մե՛ծ է Եգիպտացւոց. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Սո՛ւգ Եգիպտոսի. որ է յայնկոյս Յորդանանու: ¹²Եւ արարին նմա այնպէս որդիքն Իսրայէլի, որպէս պատուիրեաց նոցա: ¹³Բարձին զնա, և թաղեցին զնա անդ. և տարան զնա որդիքն իւր յերկրին Քանանացւոց. և թաղեցին յայրին կրկնում, զոր ստացաւ Աբրաամ ՚ի ստացուածս շիրմի յեփրոնէ Քետացոյ՝ յանդիման Մամբրէի*: ¹⁴Եւ դարձաւ Յովսէփ յեգիպտոս, ինքն և եղբարք իւր, և ամենեքին որ ելեալ էին ընդ նմա թաղել զհայրն նորա:

ԾԸ ¹⁵Իբրև տեսին եղբարքն Յովսէփայ թէ մեռաւ հայրն նոցա. ասեն. Գուցէ ո՛խս ունիցի ընդ մեզ Յովսէփ, և հատուցանիցէ մեզ հատուցումն զամենայն չարեացն զոր անցուցաք ընդ նմա*: ¹⁶Եկին առ Յովսէփ և ասեն ցնա. Չայր քո երդմնեցոյց զմեզ մինչ չև՝ վախճանեալ էր նորա. ¹⁷ասէ. Ա՛յսպէս ասասջիք ցՅովսէփ. թողցէ՛ս դոցա զյանցանս և զմեղս իւրեանց. զի չարի՛ս անցուցին ընդ քեզ: Եւ արդ՝ ներեա՛ յանցանաց ծառայից Աստուծոյ հօր քոյ: Եւ ելաց Յովսէփ վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նմա: ¹⁸Եւ եկեալ առ նա եղբարցն իւրոց՝ անկան առաջի նորա և ասեն. Ահաւասիկ մեք ծառայք քո ենք: ¹⁹Եւ ասէ ցնոսա Յովսէփ. Մի՛ երկնչիք քանզի և ես Աստուծոյ եմ: ²⁰Դուք՝ խորհեցարուք զինէն ՚ի չարութիւն. և Աստուած խորհեցաւ վասն իմ ՚ի բարութիւն. որպէս եղև իսկ յաւուրս յայսմիկ, զի կերակրեցի ժողովուրդ բազում: Եւ ասէ ցնոսա*. ²¹Մի՛ երկնչիք՝ ե՛ս կերակրեցի զձեզ՝ և զտունս ձեր: Եւ մխիթարեաց զնոսա, և սփոփեաց զսիրտս նոցա: ²²Եւ բնակեաց Յովսէփ յեգիպտոս, ինքն և եղբարք իւր, և ամենայն համօրէն տուն հօր իւրոյ: Եւ եկեաց Յովսէփ ամս հարիւր տասն. և ետես Յովսէփ զորդիս Եփրեմի մինչև յերրորդ ազգ: Եւ որդիք Մաքիրայ որդւոյ Մանասէի ծնան յերանս Յովսէփու: ²³Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր՝ և ասէ. Ես՝ աւասիկ մեռանիմ: Այցելութեամբ այց արասցէ ձեզ Աստուած, և հանցէ զձեզ յերկրէս յայսմանէ յերկիրն զոր երդուաւ Աստուած տալ հարցն մերոց Աբրաամու Սահակայ և Յակոբայ: ²⁴Եւ երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէլի՝ և ասէ. Յայցելութեանն յորում այց արասցէ ձեզ Աստուած՝ հանջիք և զի՛մ ոսկերս աստի ընդ ձեզ*: ²⁵Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց. և թաղեցին զնա, և եղին զնա ՚ի տապանի յեգիպտոս*:

* Այլք. Յերկիրն Քանանացւոց:

* Այլք. Չոր անցուցաք ընդ նա:

* Ոմանք. Որպէս և եղև իսկ յա՛:

* Ոմանք. Յորում այց առնիցէ ձեզ:

* Ոմանք. Եւ եղին ՚ի տապանի:

Կատարեցաւ Ծնունդս^{*}

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԼԻՑ

Գիրք Ելիցս՝ նախապատիւ գոլ ասի առ հրեայսն քան զամենայն գիրս, վասն մեծամեծ բարեացն որ եղև նոցա յԱստուծոյ՝ ի ժամանակի անդ, զոր և պատմեն Գիրքս այս: Որոյ պատճառն է այսպէս և ըստ այսմ օրինակի: Եկեալ հասեալ էր ժամանակն, զի ըստ խոստմանն Աստուծոյ առ Աբրահամ, արձակեսցէ զհրեայսն ի ծանր լծոյ Եգիպտացւոցն: Ձի ի մերձեցալ ժամանակի Ելիցն Իսրայէլի, առաւել խստացաւ Ամենովփոքիս փարաւոն տանջելով զԻսրայէլ, և հեղձուցանելով ի գետ զմանկունս նոցա: Ի ժամանակի անդ, զի էր յետ մահուն Յովսեփայ ամք ԿԵ ԾՆԱՒ Մովսէս: Ընկեցաւ ի գետ, և հանաւ ի ջրոյն խնամօքն Աստուծոյ. և զարգացեալ յայտնեաց զսէրն առ իւր ազգայինսն, սպանանելով զԵգիպտացիսն որ զրկէր զԻսրայէլացիսն. և դաւաճանեալ յիւրայոցն՝ փախչէր ի Մադիամ: Ուր և աստուածայնոյ յայտնութեանն հանդիպեալ առաքիւր յԱստուծոյ հանել զԻսրայէլ յԵգիպտոսէ: Որոյ եկեալ և մեծամեծ հարուածովք տանջեալ զԵգիպտոս. զենոյր զգատիկն ի տիպ Քրիստոսի. և ծովահեղձ արարեալ զփարաւոն Քենքերես, անցոյց զԻսրայէլ ընդ ծովն, և եհան յանապատն ի Սին. առաջնորդեալ հրով և ամպով, և կերակրեալ մանանայիւ: Պարտէր զԱմադէկ: Ածէր անդ ապա Յոթոր զորդիսն Մովսիսի, որք թուեցան յՂևտացիսն: Եւ յետ յիսուն աւուր զկնի Ելիցն խօսեցաւ Աստուած ընդ ժողովրդեանն զտասն պատգամսն զԼիաւորս, և այլ իրաւունս մասնաւորս զորս գրեաց Մովսէս, և սրկեաց զարիւն ողջակիզացն զգրովքն և զԻսրայէլիւ: Եւ ապա ել Մովսէս ի լեռն հանդերձ Յեսուաւ, և եմուտ յամպն միայն, ուր էր Աստուած՝ զքառասուն օր. և ա՛ռ յԱստուծոյ զհանգամանս խորանին և զերկուս տախտակսն. զոր և իջեալ խորտակեաց վասն չարեաց նոցա զի արարին կուռս: Կոփեաց այլ տախտակս, և ել դարձեալ առ Տէր. յորում գրեաց Աստուած զառաջին տասնեակն, և լուսաւորեցան երեսքն Մովսիսի. էջ և ա՛ռ զնիւթ խորանին զոր կազմեցին Բեսելիէլ և Եղիաբ զեւթն ամիս: Եւ կանգնեաց զխորանն ի սկիզբն առաջնում ամսեանն, յերկրորդում ամի Ելիցն յԵգիպտոսէ, յայտ է յետ միոյ ամի ի սկիզբն երկրորդին, յորոյ վերայ իջին փառքն Աստուծոյ ամպով: Եւ ունի Գիրք Ելիցս պատմութիւն ժամանակի ճիշտ ամաց:

Գլուխք Ելիցն

^{*} Ի վախճան գրոցս ոմանք ունին՝ Կատարեցաւ Գիրք Ծննդոցս: Եւ ոմանք՝ Արարածքս կատարեցաւ. ըստ որում և յիւրաքանչիւր էջս թղթոցն ստորագրեն սորա, մերթ՝ Ծնունդք, և մերթ՝ Արարածք: Յօրինակի մերում յաւարտ Ծննդոցս՝ որպէս և յաջորդ գրոցն հետզհետէ մինչև ցգիրս Գռութայ՝ էին պատշաճեալ ոտանաւոր բանք ինչ. թերևս յընդօրինակողէ մատենիս յօրինեալք, ռամկական իմն իմաստիւք ի յոճ ստորին շարագրութեան. զորով զանց արարաք:

ա. Թուէ զսակաւութիւն մտելոցն յԵգիպտոս, որք ըստ խոստմանն Աստուծոյ աճեցին յանթիւ բազմութիւն:

բ. Թէ յետ վախճանին Յովսեփայ՝ նեղէին Եգիպտացիքն զԻսրայէլ՝ ի շինուածս քաղաքաց և ՚ի գործս դաշտաց:

գ. Թէ հրաման ետ փարաւոն մանկաբարձացն սպանանել ՚ի ծնունդսն զարուսն Իսրայէլի, յորմէ վրիպեալ՝ հրամայեաց զծնեալ արուսն ՚ի գե՛տ ընկենուլ:

դ. Վասն ծննդեանն Մովսիսի և գետընկեց լինելոյ, և հանելոյ զնա դստերն փարաւոնի:

ե. Ձի սպան Մովսէս զգրկիչ Եգիպտացին, և ընդ այնր դաւաճանս կրեալ յիւրայոցն, փախեալ ՚ի Մադիամ:

զ. Ուր և առ ջրհորի անդ առաքինացեալ՝ չեթող զրկել հովուացն զդստերսն Յազուելայ քրմի. և սմին վասն փեսայացեալ քրմին՝ ծնանիւր որդիս:

է. Թէ լուալ Աստուած զբողոք չարչարանացն Իսրայէլի, և յայտնեալ Մովսիսի ՚ի Քորէբ հրով՝ ասէ ե՛րթ հան զժողովուրդն, և ես եղեց ընդ քեզ:

ը. Հրաման առնու Մովսէս ասել առ ժողովուրդն թէ՛ որ է՛ն Աստուածն Աբրաամու առաքեաց զիս առ ձեզ:

թ. Հրաման առնու և առ փարաւոն զարժանն:

ժ. Ձի ՚ի վերայ երից նշանացն, այս է՝ գաւազանին, և գունափոխութեան ձեռինն, և որակութեան ջրոյն. զի դեռ հրաժարէր, զԱհարոն ևս տայ նմա ՚ի գործակցութիւն:

ժա. Ձի ՚ի զնալ նորա սպառնացաւ հրեշտակն, մինչև դարձոյց անդրէն զկինն և զորդիսն:

ժբ. Հրամանաւ Աստուծոյ զայ Ահարոն ընդ առաջ Մովսիսի, և մտեալ նոցա ՚ի ժողովուրդն առնէ նշանս Մովսէս, և ուրախ եղև ժողովուրդն:

ժգ. Մտանեն առ փարաւոն հրամանաւ Աստուծոյ, և նա ըմբոստանայ, և ծանրացուցանէ զչարչարանսն Իսրայէլի:

ժդ. Բողոքեաց ժողովուրդն դառնապէս, և Մովսէս դարձաւ առ Տէր, և եկն ՚ի Տեառնէ խոստմամբ, և ո՛չ անսաց նմա ժողովուրդն կարճամիտ:

ժե. Կնքէ հաւաստեալ թէ անվրէպ կատարի հրաման ելիցն Իսրայէլի ՚ի ձեռն Մովսիսի և Ահարոնի՝ որք ՚ի տանէն Ղևեայ: Եւ ՚ի տարակուսելն դեռ Մովսիսի, Աստուած ևս դնէ զնա փարաւոնի, զօրանալ նշանօք և հանել զԻսրայէլ:

ժզ. Որպէս թուեաց զազգն նախ վասն ստուգութեան, թուէ և զժամանակ տիոցն Մովսիսեանց. որոց հրաման տայ Տէր առ փարաւոն գործել սքանչելիս:

ժէ. Դառնայ յօձ գաւազանն Մովսիսի, և կլանէ զառաջօք օձակերպ գաւազանս կախարդացն՝ ՚ի նշանակ կորստեան նոցա:

ժը. Սկիզբն առնէ տանջել զԵգիպտոս, և դարձուցանէ զջուրսն յարիւն՝ վասն արեանց անմեղ տղայոցն զորս հեղծուցին ՚ի գետն:

ժթ. Երկրորդ տանջանք գո՛րտն, զի զազիրք և բորբոսեալք էին չարեօք:

ի. Երրորդ հարուած մո՛ւնն՝ խոշտանգիչ՝ մանրածնունդ բարուց, և կըծուակիծ բանից նոցին:

իա. Չորրորդ հարուած շանաճանճն, շնաբարոյ կնամուլեացն:

իբ. Հինգերորդ՝ մա՛հ անասնոցն, անբանաբար յոխորտացելոցն:

իգ. Վեցերորդ հարուած, եռացեալ կեղն խաղաւարտ՝ խայտառակիչ դիւթականն չար խորհրդոց:

իդ. Եւթն հարուած, կարկուտն հրախառն, ամբարտաւան ցրտացելոցն 'ի սիրոյն Աստուծոյ:

իե. Ութերորդ պատուհաս՝ մարախն ապականիչ պտղոց՝ զայլոց արարս յափշտակողացն:

իզ. Իններորդ խաւարն թանձրամած, կռփիչ խաւարելոցն կռամուլութեամբ. և հրաւէր նոցին հանդերձեալ անլոյծ խաւարին:

իէ. Զրաման առնու Մովսէս պատուէր տալ որդւոցն Իսրայէլի 'ի տասներորդում աւուր ամսեանն առաջնոյ պատրաստել զոչխարն 'ի զատիկ, այլովք ևս նշանօքն 'ի խորհուրդ Փրկչին:

իը. Թէ ըստ հրամանին Տեառն պատուիրեաց Մովսէս 'ի չորեքտասան աւուր ամսոյն զենուլ զզատիկն. և շաղախել արեամբն զսեամս դրանցն. զոր և արարին այնպէս:

իթ. Տասներորդ հարուած, մահ անդրանկացն Եգիպտացւոց, յորմէ զարհուրեալ փարաւոն հրաման ետ ելանել որդւոցն Իսրայէլի:

լ. Թէ ելին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ գիշերի առանց խնորոյ, կողոպտեալ զԵգիպտացիսն: Ել և խառնիճաղանճ բազում յօտար ազգաց ընդ նոսա:

լա. Պատուիրէ զի անթլփատն մի՛ կերիցէ զգառն զատկին, որպէս և չն՝ ևս մկրտեալն զհոգևոր գառինն Աստուծոյ:

լբ. Զգուշացուցանէ դարձեալ 'ի խնորոյ, և հաստատէ զօրէնս զատկին. և խնդրէ ինքեան զանդրանիկս մարդոյ և զանասնոց:

լգ. Թէ եբարձ Մովսէս զոսկերսն Յովսէփու: Եւ զի սեամբ հրոյ և ամպոյ առաջնորդէր նոցա Աստուած ընդ ճանապարհս Կարմիր ծովուն:

լդ. Թէ ել փարաւոն զհետ Իսրայէլի պատրաստութեամբ կառաց և զօրաց, յորոց զարհուրեալ Իսրայէլ. և պաշտպանեալ նոցա Աստուծոյ՝ անջրպետեաց ամպովն 'ի մէջ երկոցունց, և հրամայեաց Մովսիսի բաժանել զծովն, ընդ որ էանց Իսրայէլ:

լե. Մտեալ Եգիպտացիք զհետ նոցա հեղձան 'ի ջուրսն, որպէս բանսարկուն 'ի գետ Յորդանիս սուրբ աւազանին:

լզ. Թէ մեծ փրկութեամբն հաւատաց Իսրայէլ, և երգեաց Աստուծոյ զօրհնութիւնս յաղթականս:

լէ. Զի քաղցրացոյց փայտիւ զդառն ջուրս Մեռային. որպէս Քրիստոսիւ և խաչին զբնութիւնս:

լը. Եկին յեղիմ. ուր երկոտասան աղբերքն և արմաւենիք՝ 'ի ցոյց խորհրդոյ, թէ յետ դառն վշտաց հասանէ մխիթարութիւն: Եւս և 'ի տիպ երկոտասան և եւթանասուն սուրբ առաքելոցն վարդապետութեան:

լթ. 'Ի հնգետասաներորդ աւուր երկրորդի ամսեանն տրտնջեցին, և ետ նոցա Տէր զլորամարզն և զմանանայն չափով ըստ աւուր աւուր:

խ. Սկիզբն օրինադրութեան աւուրն շաբաթու:

խա. Զրամայէ լնուլ չափովն զմանանայն 'ի սափոր ոսկի, և դնել 'ի պահեստի 'ի յիշատակ սքանչիցն, և 'ի խորհուրդ Կուսին:

խբ. Զասեալք յՌափիդիմ տրտնջեցին վասն ջրոյ. և ետ նոցա ջուր 'ի վիմէն հարմամբ զաւազանին:

խգ. Եկն Ամաղէկ պատերազմել ընդ Իսրայէլի, և տարածմամբ ձեռացն

Մովսիսի յաղթահարեցաւ:

խդ. Եկն Յոթոր աներն Մովսիսի 'ի լուր սքանչելեացն. և հաւատացեալ՝
անդէն զոհս Աստուծոյ մատոյց:

խե. Թէ խրատուն Յոթորայ լուեալ, կարգեաց Մովսէս հազարապետս և
հարիւրապետս դատել՝ զԻսրայէլ:

խզ. Յետ յիսուն աւուր ելիցն նոցա, տայ Աստուած օրէնս զտասն
պատգամսն և այլ մասնաւորս:

խե. Թէ 'ի տեսիլ արհաւրացն զարհուրեցաւ ժողովուրդն, որով կրկին
զգուշացուցանէ 'ի կռամուրթնէ քանդակեալ նկարուց: Եւ սեղան
հողեղէն կամ յանտաշ քարանց իւր առնել պատուիրէ, յոր ո՛չ ոք ելցէ. 'ի
խորհուրդ ողջս պահելոյ զշինուածս բնութեան:

խը. Յաւելու և զայս, զի յետ վեց ամի արծակեցեն զծառայս Եբրայեցի.
'ի խորհուրդ ազատելոյն զմեզ Քրիստոսի զկնի վե՛ց դարուն:

խթ. Եւ թէ ոք զդուստր իւր վաճառէ, և թէ ո՛չ հաճեսցի ընդ նա որ գնեացն:
ծ. Օրէնք վասն կամաւոր և ակամայ սպանողաց:

ծա. Օրէնք հարկանողաց զծնողս:

ծբ. Մարդագողն մահու սպանցի:

ծգ. Բամբաստողն ծնողացն սպանցի՛:

ծդ. Հարկանողն զընկեր՝ ըստ չափոյ զանին տուժեսցի՛:

ծե. Սպանողն զծառայ իւր՝ սպանցի՛. բայց թէ մի օր կամ երկու կեցցէ՝ մի՛
սպանցի:

ծզ. Վասն որ զկին յղի հարցէ. թէ սաղմն աննկար ելցէ կամ թէ նկարեալ:

ծէ. Վասն որ հարկանէ զակն կամ զատամն ծառայի:

ծը. Վասն թէ ցուլ հարեալ զոք սպանցէ, և թէ գիտէր տէրն նորա կամ ոչ:

ծթ. Թէ անասուն 'ի հոր կամ 'ի ջրհոր անկցի:

կ. Թէ ցուլ զցուլ հարեալ սպանցէ:

կա. Որ արջառ կամ ոչխար գողացի:

կբ. Թէ ոք զգողն 'ի հատանելն զտուն սպանցէ, թէ գիշերի կամ թէ 'ի
տունջեան:

կգ. Որ զայլոյ անդ կամ զայգի արածել տայցէ:

կդ. Թէ ոք զանդս հրդեհիցէ:

կե. Վասն յաւանդ տուեալ գրոհից, թէ մեռցի կամ գողացի կամ գերի՛
առցի:

կզ. Վասն 'ի վարձու առնելոյ իրիք:

կէ. Թէ ոք խաբեսցէ զկոյս զոչ խօսեալ:

կը. Ձկախարդս սպանանել:

կթ. Ձանասնագէտս սպանանել:

հ. Ձդիցապաշտս սպանանել թէ Իսրայէլացի իցէ:

հա. Ձպանդուխտ չնեղել:

հբ. Ձայրիս և զորբս չզգուել:

հգ. Չտալ զարծաթ վաշխի:

հդ. Չգրաւել զպարտականին:

հե. Չհայիոյել զիշխանս, զորս և աստուածս ասէ. կամ զկուռս իսկ:

հզ. Չպտուղս կալոյ և զհնձանի ո՛չ հատանել:

հէ. Յութերորդ աւուրն նուիրել զանդրանիկս անասնոց:

հը. Չզազանաբեկն ո՛չ ուտել:

հթ. Ձեռամբաւ սուտ չընդունել:
ծ. Մի կցորդել չարաց:
ծա. Սուտ չվկայել:
ծբ. Ձդատաստան մի թիւրել:
ծգ. Ձմուլորեալ և զանկեալ անասուն թշնամույն՝ անտես ո՛չ առնել:
ծդ. Մի՛ առնուլ կաշառս իրաւանց:
ծե. Մի՛ նեղել զպանդուխտն:
ծզ. Ձի յամն շաբաթու բերք այգեացն և ծառոց՝ և տնանկաց ևս լինիցի:
ծէ. Հանգչել յաւուր շաբաթու:
ծը. Ձանուանս դից ո՛չ յիշել:
ծթ. Ձերիս տօնս յանդիման լինել երախայրեօք եռանձնեայ Տէրութեանն:
դ. Չզոհել՝ ի վերայ խմորոյ, և վասն ճարպոյ և երախայրեաց. և չեփել զգառն՝ ի կաթն մօր իւրոյ:
դա. Ի պահելն զհրամանն՝ պաշտպանել խոստանայ ազգին յերեսաց Քանանացւոցն՝ հրեշտակաւ և պիծակօք:
դբ. Կոչէ ընդ Մովսիսի ի թիկունս լերինն և զԱհարոն որդւովք և եւթանասուն ծերովքն:
դգ. Ի պատմելն Մովսիսի զհրամանն Աստուծոյ՝ յանձն առ ժողովուրդն լսել և առնել:
դդ. Գրեալ Մովսիսի զօրէնսն, շինէ սեղան, և կանգնէ վէմն երկոտասան:
դե. Երիտասարդքն հանեն զողջակէզս. զորոց արիւնն խառնեալ ջրով, սրսկէ զգրովքն և զժողովրդեամբն:
դզ. Հրաւիրեալք յառաջ և սրբեալք ելանեն Մովսէս և Ահարոնեանք, և եւթանասուն ալևորօքն, և ընդ ոտինն Աստուծոյ տեղեալ տեսանեն զի կայր ակն շափիղա:
դէ. Կոչի Մովսէս ի վեր յայլում աւուր առնուլ զտախտակս օրինացն. և յանձնեալ զժողովուրդն Ահարոնի և Ովրայ՝ ինքն ելանէ հանդերձ Յիսուսի, և մտեալ ի մէզն առ Աստուած՝ մնայ անդէն զիս տիւ և զիս գիշեր:
ը. Անդ իսկ ցուցանէ նմա Աստուած զձև խորանին իմանալապէս, և հրամայէ առնել զայն ըստ օրինակին յասացեալ նիւթոցն:
ըթ. Տայ նախ զհանգամանս չափոյ տապանակին զքաւութեանն և զքրովքէիցն. ուր և դնել հրամայէ զտախտակսն ի տապանակին:
ժ. Առնել հրամայէ սեղան զխնկոցն և զկահս նորին. զխնկաղացն ուր աղային զխունկսն, և զայլսն ևս:
ժա. Սեղան երեսաց հացին զառաջաւոր սեղանն է, զոր հինգկանգնեան ասէ յառնելն:
ժբ. Ի տաղանդէ միոյ ոսկւոյ զաշտանակն և զճրագունսն առնել հրամայէ:
ժգ. Խորան առնել տասնփեղկեան, և նուարտան՝ որ է ծածկոյթ մագեղէն. և այլ ծածկոյթ ի կարմիր մորթոց. և աստի անտի սիւնս Խ. և երկու սիւնս յանկեան, և վեց ի թիկանց, ընդ ամենայն Խ և Ը:
ժդ. Եւ վարագոյր ծածկոյթ տապանակին ի վերայ սեանց չորից:
ժե. Դնել ասէ արտաքոյ այսր վարագուրի զսեղան հացին ի կողմն հիւսւոյ, և զաշտանակն ի հարաւակողմն, և զսեղան խնկոցն:
ժզ. Եւ այս արտաքին խորանիս վարագոյր առնել ի վերայ սեանց հնգից:

ՃԷ. Եւ ՚ի դուռն խորանին զպղնձի սեղանն զողջակիզաց:
ՃՂ. Շուրջ զխորանաւն պարսպածն՝ առագաստ առնել, հարիւր կանգուն ընդ հարաւ, և հարիւր ընդ հիւսւսի, և յիսուն ընդ արևելս, և յիսուն ընդ արևմուտս:
ՃՔ. Ի ձիթոյ ձիթենեաց լուցցէ Ահարոն զճրագունսն յերեկորեայ մինչև ցառաւօտն:
ՃԺ. Առնել հրամայէ պատմուճան Ահարոնի ցածղունսն, յոսկոյ և ՚ի ծիրանոյ ՚ի պատիւ փառաց. թո՛ղ զբեհեզեայ պատմուճանն, որով ՚ի սուրբն սրբոց մտանէր:
ՃԺա. Ի սոցուն նիւթոց և զվակասն ուսանոց, յորոյ ուսոցն վերայ երկու ականք զընրդխտեայք՝ յանդիմանութիւնն և ճշմարտութիւնն:
ՃԺբ. Վահանակն անօսր կտաւեայ ՚ի լանջսն և ՚ի թիկունս. և մանուածոյքն վերջք չուանք հիւսուածու կապել զվահանակն ընդ ուսովք և ընդ անթովք:
ՃԺգ. Ի տախտակն դատաստանի՝ որ է կրծանոցն, ընդելուզանել ասէ զականսն երկոտասանս. իսկ վահանակն զոր աստ ասէ, կամ նոյն է զոր նախ ասաց, կամ երկու տախտակ այլ է ՚ի թիկանց և ՚ի լանջաց, պնդել զվակասն զի մի՛ զերծանիցի:
ՃԺդ. Վտաւակն ներքնա՛կ է. կապուտակ անդերձ է, պճղնաւոր ՚ի ներքոյ վակասին ունելով ՚ի ստորոտս զանկակս և նռնաձևս:
ՃԺե. Թիթեղնն ոսկի թերթ անօսր ՚ի խոյր գլխոյն ՚ի վերայ ճակատուն:
ՃԺզ. Յիշէ դարձեալ զպատմուճանն բեհեզեղէն:
ՃԺէ. Չապարաւշն վերին գօտի ասեն զանթովքն ՚ի վերայ պճղնաւոր պատմուճանին. և կամար՝ բուն գօտին ՚ի վերայ միջոյն. և անդրավարտիքն ՚ի ցոյցս ողջախոհութեան: (Իսկ Յուդիթն զապարաւշն ՚ի ճակատ կապել ասէ. այլ այն զարդ կանացի է:)
ՃԺը. Նուէրք քահանայանալոյ Ահարոնի և որդւոց նորա. զորս լուացեալ ջրով, և զգեցուցեալ մատուցէ զողջակէզսն, և արեամբ և իւղով օճցին հանդերձի՛ւք քահանայութեանն:
ՃԺթ. Ի խոյէ անտի կատարման՝ զերբուճն մա՛սն առնել Մովսիսի, յօրինակ՝ զսկիզբն և զկատարումն ամենիցն անդամոց բաժին Աստուծոյ նուիրել:
Ճի. Ի մասնէ քահանայիցն մի՛ կերիցէ օտար՝ որ չէ՛ գործակից քահանայութեանն:
Ճիա. Սեղանն ևս սրբել ասէ, որ սրբէ զի վերայ եղեալսն ՚ի տիպ Քրիստոսի:
Ճիբ. Երկուս գառինս, զմին առաւօտու և զմիւսն երեկոյի՛. երեկոյին՝ այժմուցս խորհուրդ Քրիստոսի, և առաւօտուն՝ հանդերձելոցն. ուր և անդ՝ նա՛ ինքն է վայելքն մեր:
Ճիգ. Սեղանն խնկոց որի՛շ է՝ յորմէ խնկաղա՛ցն ասաց, զի անդ աղացեալն աստ լինէր պահեցեալ: Ուր և միանգամ քահանայապետն ՚ի տարուջ քաւէր:
Ճիդ. Հրամայէ ՚ի քսանամենից առնուլ զկէս երկդրամեան հա՛ս Տեառն:
Ճիե. Աւագանն առ ՚ի լուանալ ՚ի խորհուրդ նորոյս, առանց որոյ լուացման զգործս և զգնացս՝ ո՛չ մտցէ որ յարքայութիւն:
Ճիզ. Նիւթք իւղոյն օծութեան խորհուրդ չորի՛ց առաքինութեանց. և

օտարի ո՛չ տալն ՚ի զգուշութիւն, զանուն քրիստոնէութեան և
առաքելական պատուոյ մի՛ տալ անարժանիցն:
Ճիւ. Եւ չորք խունկքն ցամաք ծխելոյ ՚ի հուր, անուշահո՛տ վարս զկնի
օծմանն:
Ճիւ. Ցուցելոց ահա նիւթոցն և կահից կոչէ Աստուած հանճարիչս
զԲեսելիէլ Ովրեանց Յուդայեան, և զԵղիաբ ՚ի ցեղէն Դանայ:
Ճիւ. Զգուշացուցանէ ևս վասն զշաբաթն պատուելոյ:
Ճլ. Տայ Մովսիսի զտախտակսն զաստուածագիրս:
Ճլա. Թէ ժողովուրդն կուտեալ ՚ի վերայ Ահարոնի արարին ո՛րթ, և
կռապաշտեցին:
Ճլբ. Ազդ արար Աստուած Մովսիսի զանօրինել ժողովրդեանն:
Ճլգ. Թէ աղաչեալ Մովսիսի ցածեալ Տէր ՚ի ցասմանէն:
Ճլդ. Իջեալ Մովսէս ՚ի լեռնէն, և վասն մեծ չարեացն նոցա խորտակեաց
իսկոյն զտախտակսն:
Ճլե. Այրեաց զորթն զայն և խարտեաց և արկ ՚ի վտակն ըմպել ՚ի պատիժ
երկրպագողաց նորին շնացելոց:
Ճլզ. Կշտամբէ զԱհարոն ընդ այնր. և նա ցուցանէ զյանդգնութիւն խիստ
ժողովրդեանն պատճա՛ռ որթուն:
Ճլէ. Զրամանան Մովսիսի մատչին Ղևտացիքն սրով առնուլ վրէժս
յերկրպագուաց որթուն. և առնուն ընդ այնր օրհնութիւն
քահանայութեան:
Ճլը. Ցուցանէ Մովսէս ժողովրդեանն զմեծութիւն մեղաց առնելեաց
որթուն. և ինքն դարձեալ աղաչէ զՏէր ընդ մեղաւորացն:
Ճլթ. Զառնէմ անպարտ ասէ թէ ո՛չ զղջացին. թէպէտ ներէ առժամայն. և
առաջնորդել նմա հրամայէ. զորս և հարկանէ ապա՝ սատակմամբ առ
սակաւ սակաւ:
Ճխ. Զրեշտակ տալ առաջնորդ նոցա ասէ և ո՛չ ինքն. և կշտամբէ
զխստասրտութիւնն և զսուգն կերպարանօք, և զգուշացուցանէ դարձեալ
զնոսա:
Ճխա. Թէ խորանն Մովսիսի կոչեցաւ խորան վկայութեան. զի չն՛ ևս եր
կազմեալ բուն խորանն:
Ճխբ. Խնդրէ Մովսէս տեսանել զԱստուած իսկութեամբ, և լսէ՝ թէ զյետոյս
փառաց ինոց ցուցից քեզ:
Ճխգ. Զրաման առեալ Մովսիսի կոփէ երկուս քարեղէն տախտակս. և
առեալ ելանէ ՚ի լեռանն. ուր իջեալ առ նմա Տէր ՚ի ծերպ վիմին՝
տիրական անուամբ զնա մեծարէ. ուստի զօրացեալ կարդաց
զխորհրդական անուանսն ՚ի վերայ Աստուծոյ. և հայցեաց դարձեալ
զերթալն Աստուծոյ ընդ նոսա:
Ճխդ. Լնո՛ւ Աստուած զհայցուածս նորա, սքանչելեօք մերժել
զՔանանացին, և զգուշացուցանէ զժողովուրդն ՚ի կրկին պոռնկութենէ,
զի Աստուած նախանձոտ է, և ո՛չ ներէ:
Ճխե. Պատուիրէ դարձեալ վասն տօնի բաղարջակերացն:
Ճխզ. Զրամայէ դարձեալ՝ զի իւր իսկ տացեն զանդրանիկսն ամենայն:
Ճխէ. Յիշէ դարձեալ վասն շաբաթու և վասն տօնի եւթներորդացն, և
տաղաւարահարաց. և երիցս ՚ի տարւոջ յանդիման լինել ինքեան
ընծայիւք:

ՃԻՐ. Մի՛ զենցես զգոհս իմ՝ ի վերայ խմորոյ: Թուի թէ՛ ի խմորոտ աման
զարիւնն չառնուլ:

ՃԻՔ. Ձառաջինս արմտեացն՝ ի տուն Տեառն նուիրել:

ՃԺ. Մի՛ եփել զգառն ի կաթն մօր իւրոյ:

ՃՃԱ. Ի՛ լրումն երկրորդի այսմ քառասնեկիս՝ հրամայէ Աստուած
Մովսիսի գրել զպատգամսն յուղղութիւն ժողովրդեանն. զոր և ինքն
Աստուած գրեաց զառաջին տասնեակն՝ ի տախտակսն երկրորդս
քարեղէնս:

ՃՃԲ. Ձի փառաւորեցան երեսքն Մովսիսի, ի լրումն խոստմանն Աստուծոյ
թէ հրաշս նոր գործեցից. ուստի և վասն ո՛չ կարելոյ նոցա հայել՝
արկանէր քօղ զերեսօք իւրովք:

ՃՃԳ. Երկրորդեաց նոցա զհրամանս օրինացն, և հրամայեաց բերել
զնիւթսն ի կազմել խորանին:

ՃՃԴ. Թէ յօժարութեամբ յաճախեաց ժողովուրդն ի բերել զնիւթսն
ասացելս. զորս և տան ի ձեռս Բեսելիելի և Եղիաբու:

ՃՃԵ. Թէ գործեցին զփեղկս խորանին, և զամենայն կազմած նորին. և
զվարագոյրսն:

ՃՃԶ. Ձի արար զտապանակն ըստ ցուցելում օրինակին, և զքաւութիւնն և
զքերոբսն:

ՃՃԷ. Ձառաջաւոր սեղանն աստ՝ խնկոցն է. զի և զկահս նորին զհե՛տ բերէ
զխնկաղացն և զայլսն:

ՃՃԸ. Ձի արար զաշտանակն ոսկի՝ ձոյլ՝ կահիւքն:

ՃՃԹ. Սեղանն ոսկի հինգ կանգնեան՝ զառաջաւորն է, յորոյ վերայ հացն
երեսաց յառաջին արմտեաց դնիւր:

ՃԿ. Ձի արար զեղն սուրբ օծութեան, և զխունկսն ծխելոյ:

ՃԿԱ. Արար զսեղանն պղնձապատ որ է ողջակիզացն, ի բուրուառացն
Կորխեանց՝ զոր ի Թի՛ւսն ասէ:

ՃԿԲ. Իսկ և զաւազանն ի հայելեաց կանանց պահողաց:

ՃԿԳ. Արար զառագաստն ի բարձրութիւն կանգունս հնգետասան. իսկ
զդրանն առագաստ՝ կանգունս քսան:

ՃԿԴ. Միահամուռ թուէ զկշիռ ոսկւոյ և զարծաթոյ, և զթիւ համարոյ
ժողովրդեանն զանցելոցն ի հանդիսի, որք և պատրաստեցին իսկ
զնիւթսն:

ՃԿԵ. Արարին զպատմուճանն և զվակասն, և զտախտակն զականակապ:

ՃԿԶ. Ե՛ւս և զպատմուճանն վտաւակ պճղնաւոր, զանկակօք և
նռնաձկիւք:

ՃԿԷ. Ե՛ւս և զպատմուճանն բեհեզեղէն, զապարաւշն զխոյրն, և զոսկի
թիթեղնն ի խոյրն ժապաւինեալ:

ՃԿԸ. Ձի կատարեալ զգործն ամենայն բերին առաջի Մովսիսի, և
օրհնեաց զնոսա Մովսէս:

ՃԿԹ. Ձի հրամայեաց Աստուած Մովսիսի կանգնել զխորանն ի մուտ
ամսոյն առաջնոյ, և օճանել զնա և զամենայն կահ նորա, և զվարոն և
զորդիս նորա յօճումն քահանայութեան:

ՃԻ. Կանգնեաց Մովսէս զխորանն ըստ հրամանի Տեառն, և ծածկեաց
զնա ամպն, և լի՛ եղև խորանն փառօքն Տեառն:

Գլուխ Ա

Ա ¹Ա՛յս են անուանք որդւոցն Իսրայէլի մտելոցն յեգիպտոս հանդերձ Յակոբաւ հարբն իւրեանց. իւրաքանչիւր ըստ համօրէն տանց իւրեանց մտանէին: ²Ռոբէն. Շնաւոն. Ղևի. Յուդա. ³Իսաքար. Չաբուղոն. և Բենիամին: ⁴Ղան. և Նեփթաղիմ. Գադ. և Ասեր: ⁵Եւ էին ամենայն ոգիք ելեալք ՚ի Յակոբայ, եւթանասուն և հինգ ոգի. և Յովսէփ էր յեգիպտոս: ⁶Վախճանեցաւ Յովսէփ՝ և ամենայն եղբարք նորա, և ամենայն ազգն այն: ⁷Եւ որդիքն Իսրայէլի աճեցին և յոռացան. բազմանային և զօրանային յոյժ. զի բազմացուցանէր զնոսա երկիրն*:

Բ ⁸Եկաց այլ թագաւոր՝ որ ո՛չ գիտէր զՅովսէփ*։ ⁹Եւ ասէ ցազգն իւր. Ահա ազգ որդւոցն Իսրայէլի մե՛ծ է զօրութեամբ, և զօրանա՛յ քան զմեզ: ¹⁰Արդ՝ եկայք հնարեսցուք ինչ նոցա. գուցէ՝ բազմանայցեն. և յորժամ դիպեսցի մեզ պատերազմ, յաւելուցուն և նոքա ՚ի թշնամիսն. և մարտուցեալ ընդ մեզ, ելանիցեն՝ յերկրէ աստի: ¹¹Եւ կացո՛յց ՚ի վերայ նոցա գործավարս, զի չարչարեսցեն զնոսա ՚ի գործ: Եւ շինեցին քաղաքս ամուրս փարաւոնի, զՓիդոն, և զՌամեսէ, և զՈվմ՝ որ է Արեգ քաղաք*։ ¹²Եւ որչափ ճնշէին զնոսա, այնչափ առաւել՝ բազմանային և զօրանային յոյժ: ¹³Եւ գարշեցուցանէին Եգիպտացիքն զորդիսն Իսրայէլի: Եւ յաղթահարէին Եգիպտացիք զորդիսն Իսրայէլի բռնութեամբ: ¹⁴Եւ կեղէին զկեանս նոցա ՚ի գործ խիստ կաւոյ և աղիւսարկի, և յամենայն գործ դաշտաց. ըստ ամենայն գործոյ իւրեանց՝ որով ծառայեցուցանէին զնոսա բռնութեամբ:

Գ ¹⁵Եւ խօսեցաւ արքայն Եգիպտացւոց ընդ ծնուցիչսն Եբրայեցւոց. ընդ միում որում անուն էր Սեփոփրա, և անուն երկրորդին Փուա*։ ¹⁶Եւ ասէ. Յորժամ ծնուցանիցէք զկանայս Եբրայեցիս, և իցեն մերձ ՚ի ծնունդս. թէ արու՛ իցէ՝ սպանջիք զնա, և թէ եգ՝ ապրեցուցանիջիք: ¹⁷Եւ երկեան ծնուցիչքն յԱստուծոյ. և ո՛չ արարին՝ որպէս և հրաման ետ նոցա արքայն Եգիպտացւոց. և ապրեցուցանէին զարուսն: ¹⁸Կոչեաց արքայն Եգիպտացւոց զծնուցիչսն՝ և ասէ ցնոսա. Ձի՞ է զի արարէք զիրսն զայնոսիկ և ապրեցուցէք զարուս: ¹⁹Եւ ասեն ծնուցիչքն ցփարաւոն. Ո՛չ իբրև զկանայս Եգիպտացիս են Եբրայեցիքն. քանզի նախ ծնանին մինչ չև՝ մտեալ առ նոսա մանկաբարձաց: Եւ ծնանէին: ²⁰Եւ բարի առնէր Աստուած մանկաբարձացն: Եւ բազմանայր յոյժ ժողովուրդն, և զօրանայր յոյժ: ²¹Յորմէհետէ երկեան մանկաբարձքն յԱստուծոյ, արարին իւրեանց տունս*։ ²²Յրաման ետ փարաւոն ամենայն ժողովրդեան իւրում, և ասէ. Չամենայն արու որ ծնանիցի Եբրայեցւոց, ՚ի գետ ընկեսջիք, և զամենայն եգ՝ ապրեցուցանիջիք*։

* Ոսկան. Աճեցին և յուռացան:

* Ոմանք. Որ ո՛չ ճանաչէր զՅովսէփ:

* Ոմանք. Եւ զՌամեսէ և զՈվմ:

* Ոմանք. Ընդ միումն... Սեփոփրա:

* Ոսկան. Երկեան մանկաբարձքն՝ և արարին իւ՛ն:

* Ոմանք. Որ ծնանի Եբրայ՛ն:

Գլուխ Բ

Դ ¹Եւ էր անդ ոմն յազգէ Ղևեայ, որ ա՛ռ իւր կին ՚ի դստերաց անտի Ղևեայ: ²Եւ յղացաւ ՝ ծնաւ արու: Եւ տեսանէին զնա կայտա՛ռ. և թաքուցին զնա ամիսս երիս: ³Եւ իբրև ո՛չ ևս կարէին թաքուցանել, ա՛ռ մայրն նորա տապանակ պրտուեայ, և ծեփեաց զնա կարածիւթով. և ե՛ր ՚ի նմա զմանուկն, և ընկէ՛ց զայն ՚ի խաղ մի առ ասփն գետոյն: ⁴Եւ դիտէր քոյրն նորա ՚ի հեռաստանէ, տեսանել թէ զի՞նչ անցք անցանիցեն ընդ նա: ⁵Եւ իջեալ դուստրն փարաւոնի լուանալ ՚ի գետն. և նաժիշտք նորա շրջէին առ գետովն: Եւ տեսեալ զտապանակն ՚ի խաղի անդ, առաքեաց զնաժիշտ մի առնուլ զնա՛: ⁶Եբաց՝ և ետես զմանուկն. և լայր մանուկն ՚ի տապանակի անդ: Խանդաղատեցաւ զնովաւ դուստրն փարաւոնի, և ասէ. ՚ի մանկա՞նց Եբրայեցւոց է դա: ⁷Եւ ասէ քոյրն նորա ցղուստրն փարաւոնի. Կամի՞ս զի կոչեցից քեզ կին մի դայեակ ՚ի Յեբրայեցւոց անտի. և սնուցանիցե՛ք քեզ զմանուկդ: ⁸Ասէ դուստրն փարաւոնի. Ե՛րթ: Գնաց աղջիկն և կոչեաց զմայր մանկանն: ⁹Եւ ասէ ցնա դուստրն փարաւոնի. Ա՛ռ զմանուկդ, և սնո՛ ինձ զդա. և ես տաց քեզ զվարձս քո: Եւ ա՛ռ կինն զմանուկն՝ և սնոյց զնա: Եւ իբրև հաստատեցաւ մանուկն, աժ զնա առ դուստրն փարաւոնի, ¹⁰և եղև նմա յորդեգիրս: Եւ անուանեաց զանուն նորա Մովսէ՛ս. ասէ. ՚ի ջրոյ՛ անտի հանի զդա:

Ե ¹¹Եւ եղև յետ աւուրց բազմաց, իբրև եղև մե՛ծ Մովսէս, ե՛լ առ եղբարս իւր որդիսն Իսրայէլի, հայեցեալ ՚ի չարչարանս նոցա. ետես այր մի Եգիպտացի, զի հարկանէր զոմն Եբրայեցի յեղբարց իւրոց՝ յորդոցն Իսրայէլի: ¹²Չայեցեալ յա՛յս կոյս յայն կոյս՝ ո՛չ զոք տեսանէր. եհա՛ր զԵգիպտացին, և ծածկեաց զնա ընդ աւազով: ¹³Եւ ելեալ յերկրորդում աւուր, տեսանէր երկուս արս Եբրայեցիս ընդ միմեանս մարտուցեալս. և ասէ ցայրն որ զրկէրն. Ընդէ՞ր հարկանես զընկերդ՝: ¹⁴Եւ նա ասէ. Ո՞ կացոյց զքեզ # այր իշխան և դատաւոր ՚ի վերայ մեր. եթէ սպանանե՞լ զիս կամիցիս որպէս երէկ սպաներ զԵգիպտացին: Չահի՛ հարաւ Մովսէս՝ և ասէ, թէ. Այնպէս յայտնի՛ եղև բանն՝: ¹⁵Եւ լուաւ փարաւոն զբանն, և խնդրէր սպանանել զՄովսէս: Եւ փախեաւ Մովսէս յերեսաց փարաւոնի, և բնակեաց յերկրին Մադիամու:

Ձ Եւ եկեալ յերկրին Մադիամու՝ նստաւ առ ջրհորի միում: ¹⁶Եւ քրմին Մադիամացւոց էին դստերք եւթն, որ արածէին զխաշինս հօրն իւրեանց, և եկեալ էին հանել ջուր, մինչև լցին զաւազանսն, արբուցանել խաշանց հօրն իւրեանց՝: ¹⁷Եւ եկեալ ա՛յլ հովիւք՝ մերժեցին զնոսա ՚ի բաց: Յարուցեալ Մովսէս թափեաց զնոսա. և եհան նոցա ջուր, և արբոյց զխաշինս նոցա: ¹⁸Եւ եկին առ Յռագուէլ հայրն իւրեանց: Եւ նա ասէ ցնոսա. Ձի՞ է զի յարևու եկիք այսօր՝: ¹⁹Եւ նոքա ասեն. Այր մի Եգիպտացի փրկեաց զմեզ ՚ի հովուաց անտի. և եհան ջուր և արբոյց խաշանց մերոց: ²⁰Եւ նա ասէ ցղստերսն իւր. Եւ ո՛ւր է, ընդէ՞ր թողէք

* Ոսկան. Առաքեաց զնաժիշտն առնուլ:

* Ոմանք. Եւ ասէ ցայն որ զրկ՛:

* Ոմանք. Ձքեզ յայր իշխան... որպէս և երէկ սպա՛:

* Ոմանք. Մինչ լցին զաւազանն:

* Ոմանք. Ձի՛ է, յարևի եկիք այսօր:

զայրն. արդ՝ կոչիցէք զնա՝ զի կերիցէ հաց*։ ²¹Եւ բնակեցաւ Մովսէս առ առնն, և ետ զՍեպփովրա դուստր իւր Մովսիսի կնութեան։ ²²Յղացաւ կինն՝ և ծնաւ որդի. և անուանեաց զանուն նորա Մովսէս՝ Գերսամ. ասէ՝ զի պանդուխտ եմ ես յօտար երկրի։

Է ²³Եւ յետ աւուրց բազմաց մեռաւ թագաւորն Եգիպտացոց. և տառապէին որդիքն Իսրայէլի՝ ի գործոյ անտի, և աղաղակէին ՚ի վեր։ Եւ ել աղաղակ նոցա առաջի Աստուծոյ՝ ՚ի գործոյ անտի*։ ²⁴Եւ լուաւ Աստուած հեծութեան նոցա։ Եւ յիշեաց Աստուած զուխտ իւր որ ընդ Աբրաամու և Սահակայ և Յակոբայ*։ ²⁵Եւ հայեցաւ Աստուած յորդիսն Իսրայէլի. և ծանուցաւ նոցա*։

3

Գլուխ Գ

¹Եւ Մովսէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ՝ քրմին Մադիանացոց. և աս զխաշինսն յանապատ. և եկն ՚ի լեառնն Աստուծոյ ՚ի Քորէբ*։ ²Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ՚ի միջոյ մորենոյ։ Եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, և ո՛չ այրէր մորենին։ ³Եւ ասէ Մովսէս. Անցեալ տեսի՞ց զտեսիլն զայն մեծ, զի՞ է՝ զի ո՛չ այրի մորենին*։ ⁴Իբրև ետես Տէր եթէ մերձեմա՛յ տեսանել, կոչեաց զնա Տէր ՚ի միջոյ մորենոյն, ասէ. Մովսէս Մովսէս։ Եւ նա ասէ. Չի՞ է։ ⁵Եւ ասէ. Մի՛ մերձեմար այսր. լո՛յժ զկօշիկս քո՝ յոտից քոց. զի տեղիդ յորում կա՛ն դու ՚ի դմա՝ երկիր սո՛ւրբ է։ ⁶Եւ ասէ ցնա. Ես եմ Աստուած հօր քոյ, Աստուած Աբրաամու. և Աստուած Սահակայ. և Աստուած Յակոբայ։ Եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ*։ ⁷Եւ ասէ Տէր ցՄովսէս. Տեսանելո՛վ տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս. ⁸և լուայ աղաղակի նոցա ՚ի գործավարացն իւրեանց, զի գիտե՛մ զվիշտս նոցա. և իջի փրկել զնոսա ՚ի ձեռաց Եգիպտացոցն, և հանել զնոսա յերկրէն յայնմանէ, և տանել զնոսա յերկիրն բարի՝ և յընդարձակ. յերկիր՝ որ բոլխէ զկաթն և զմեղր. յերկիրն Քանանացոց, և Քետացոց, և Ամովրիացոց, և Փերեզացոց, և Խնացոց, և Գերզեսացոց, և Յերուսացոց։ ⁹Եւ արդ՝ աւասիկ աղաղակ որդւոցն Իսրայէլի հասեալ է առ իս, և տեսի ես զնեղութիւնն՝ զոր նեղեն զնոսա Եգիպտացիքն։ ¹⁰Եւ արդ՝ ե՛կ առաքեցից զքեզ առ փարաւոն արքայ Եգիպտացոց, և հանցեն զժողովուրդ իմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացոց։

Ը ¹¹Եւ ասէ Մովսէս ցԱստուած. Ո՞վ եմ ես՝ զի երթայցեմ առ փարաւոն արքայ Եգիպտացոց, և հանիցեմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացոց*։ ¹²Եւ ասէ. Ես եղեց ընդ քեզ. և այս եղիցի քեզ նշան թէ ես առաքեցի զքեզ հանել զժողովուրդ իմ յԵգիպտոսէ, պաշտեսջիք զԱստուած ՚ի լերինս յայսմիկ։ ¹³Եւ

* Այլք. Արդ կոչեցէք զնա։

* Ոմանք. Եւ աղաղակեցին ՚ի վեր։ Ոսկան. Առաջի Տեառն...։

* Ոսկան. և լուաւ Տէր...։

* Ոսկան. Եւ հայեցաւ Տէր։

* Ոմանք. Յոթորոյ աներոյ իւրոյ։

* Բազումք. Չտեսիլն մեծ զայն.. զի ո՛չ այրիցի։

* Ոսկան. Հայիլ առաջի Տեառն։

* Ոմանք. Եւ հանցեն զորդիսն Իսրայէլի։

ասէ Մովսէս ցԱստուած. Ահա ես երթեալ առ որդիսն Իսրայէլի, ասիցեն ցնոսա. Աստուած հարցն ձերոց առաքեաց զիս առ ձեզ. և հարցանիցեն զիս՝ թէ զի՞նչ անունն է նորա, զի՞նչ ասացից ցնոսա*։ ¹⁴Եւ ասէ Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած որ է՛ն: Եւ ասէ. Այսպէս ասացես ցորդիսն Իսրայէլի, որ է՛ն առաքեաց զիս առ ձեզ: ¹⁵Եւ ասէ դարձեալ Աստուած ցՄովսէս. Այսպէս ասացես ցորդիսն Իսրայէլի: Տէր Աստուած հարցն ձերոց, Աստուած Աբրաամու, և Աստուած Սահակայ, և Աստուած Յակոբայ, առաքեաց զիս առ ձեզ: Այս է անունն իմ յաւիտենական, և յիշատակ ազգաց յազգս: ¹⁶Արդ՝ երթեալ ժողովեսցես զժերակոյտ որդւոցն Իսրայէլի, և ասացես ցնոսա: Տէր Աստուած հարցն ձերոց երևեցաւ ինձ. Աստուած Աբրաամու, և Աստուած Սահակայ, և Աստուած Յակոբայ՝ և ասէ. Այցելութեամբ այց արարից ձեզ. և որ ինչ անցք անցին ընդ ձեզ յեգիպտոս*, ¹⁷և ասեն. Յանից զձեզ յերկրէ չարչարանաց Եգիպտացւոցն, յերկիրն Քանանացւոց, և Քետացւոց, և Ամովրիացւոց, և Փերեզացւոց, և Գերզեսացւոց, և Խևացւոց, և Յերուսացւոց. յերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր: Թ ¹⁸Եւ լուիցեն ձայնի քում: Եւ մտցես դու, և ծերակոյտ որդւոցն Իսրայէլի առ փարաւոն արքայ Եգիպտացւոց, և ասացես ցնա. Տէր Աստուած Եբրայեցւոց կոչէ՛ զմեզ առ ինքն. արդ՝ երթիցուք մեք երից աւուրց ճանապարհ յանապատ. զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում*: ¹⁹Եւ ես գիտեմ, եթէ ո՛չ թողուցու զձեզ արքայն Եգիպտացւոց զնալ, եթէ ո՛չ հզօր ձեռամբ: ²⁰Եւ ձգեալ զձեռն իմ հարից զԵգիպտոս ամենայն սքանչելեօք իմովք՝ զոր արարից ՚ի նոսա. և ասպա արձակեսցէ զձեզ: ²¹Եւ տաց շնորհս ժողովրդեան իմոյ առաջի Եգիպտացւոցն. և յորժամ ելանիցէք, մի՛ ելանիցէք դատարկք*: ²²Այլ խնդրեսցէ կին ՚ի դրացւոյ և յերդակցէ իւրմէ անօթս ոսկւոյ և անօթս արծաթոյ, և հանդերձս. և զարդարեսցիք զուստերս և զդաստերս ձեր. և դաւաճանեսցիք զԵգիպտացիսն:

4

Գլուխ Դ

Ժ ¹Պատասխանի ետ Մովսէս՝ և ասէ. Եթէ չհաւատայցեն ինձ, և ո՛չ լուիցեն ձայնի իմում, քանզի ասիցեն, թէ չի՛ք երևեալ քեզ Աստուծոյ. զի՞նչ ասացից ցնոսա*։ ²Ասէ ցնա Տէր. Ձի՞նչ է այդ որ ՚ի ձեռին քում է: Եւ նա ասէ. Գաւազան: ³Եւ ասէ. Ընկեա՛ զդա ՚ի գետին: Եւ ընկէց զնա ՚ի գետին: Եւ եղև օձ, և փախեաւ Մովսէս ՚ի մմանէն: ⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ձգեա՛ զձեռն քո՝ և բո՛ւռն հար զտտանէն: Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր, և բուռն եհար զտտանէն. և եղև գաւազան ՚ի ձեռին նորա: ⁵Ձի հաւատացեն քեզ՝ թէ երևեալ է քեզ Տէր Աստուած հարցն նոցա. Աստուած Աբրաամու, և Աստուած Սահակայ, և Աստուած Յակոբայ: ⁶Ասէ ցնա դարձեալ Տէր. Արկ զձեռն քո ՚ի ծոց քո: Եւ արկ զձեռն իւր ՚ի ծոց իւր, և եհան զնա ՚ի ծոցոյ իւրմէ, և եղև ձեռն նորա բորոտ իբրև զծիւն: ⁷Եւ ասէ ցնա. Արկ զձեռն քո ՚ի ծոց քո: Եւ արկ զձեռն իւր ՚ի ծոց իւր: Եւ եհան զնա ՚ի ծոցոյ իւրմէ, և դարձեալ անդրէն ՚ի նոյն հաստատեցաւ ՚ի գոյն

* *Յօրինակին.* Ահա ես երթալ առ որ՞:

* *Ոմանք.* Այց արարի ձեզ:

* *Ոմանք.* Եւ ասացես ցնոսա. Տէր Աստուած:

* *Ոմանք յաւելուն.* Առաջի *արքային* Եգիպտացւոց:

* *Այլք.* Եթէ ո՛չ հաւատայցեն ինձ:

մարմնոյ իւրոյ: ⁸Եթէ ո՛չ հաւատայցեն քեզ՝ և ո՛չ լուիցեն ձայնի առաջնոյ նշանին, հաւատասցեն քեզ ձայնի երկրորդի՝ նշանիդ: ⁹Եւ եղիցի եթէ ո՛չ հաւատասցեն երկոցունց նշանացոյ աշոցիկ, և ո՛չ լուիցեն ձայնի քում, առցես դու ՚ի ջրոյ գետոյն՝ և հեղցես ՚ի ցամաքի. և եղիցի ջուրն՝ զոր առնուցուս ՚ի գետոյն, արիւն ՚ի ցամաքին*:

¹⁰Եւ ասէ Մովսէս ցՏէր. Աղաչե՛մ զքեզ Տէր, չե՛մ բաւական, որպէս թէ յերեկէ և յեռանտէ, և ո՛չ յորմէհետէ սկսար խօսել ընդ ծառայի քում. զի նրբաձայն և ծանրալեզու՛ եմ ես*:

¹¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ո՛վ ետ բերան մարդոյ, կամ ո՛վ արար զխուլն և զհամր, զականին և զկոյր, ո՛չ ապաքէն ե՞ս Աստուած: ¹²Եւ արդ՝ ե՛րթ, և ե՛ս բացից զբերան քո. և խելամո՛ւտ արարից զքեզ՝ զոր պա՛րտ իցէ խօսել: ¹³Եւ ասէ. Աղաչե՛մ զքեզ Տէր. ա՛ն քեզ ՚ի ձեռն զայլ ոք զօրաւոր՝ զոր առաքիցես: ¹⁴Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ՚ի վերայ Մովսիսի՝ և ասէ. Ո՞չ աւանիկ կայ Ահարոն եղբայր քո Ղևտացի. գիտեմ զի խօսելով խօսեսցի նա ընդ քեզ: Եւ ահա նա ելցէ ընդ առաջ քո, և ՚ի տեսանելն զքեզ բերկրեսցի՝ ՚ի միտս իւր: ¹⁵Եւ խօսեսցիս ընդ նմա, և տացես զպատգամս իմ ՚ի բերան նորա. և ես բացից զբերան քո և զբերան նորա, և խելամո՛ւտ արարից զձեզ՝ զի՞նչ առնիցէք: ¹⁶Եւ նա՛ խօսեսցի առ ՚ի քէն ընդ ժողովրդեանն: Եւ նա եղիցի քեզ բերան. և դու եղիցես նմա յաստուածակոյս կողմանէ*:

¹⁷Եւ զգաւազանդ որ դարձաւ յօձ՝ առցես ՚ի ձեռին քում, որով արասցես նշանս: ¹⁸Գնա՛ց Մովսէս՝ և դարձաւ առ Յոթոր աներ իւր՝ և ասէ ցնա. Դարձայց և երթայց առ եղբարս իմ որ յեգիպտոս, և տեսից, թէ տակաւին կենդանի՞ իցեն: Եւ ասէ Յոթոր ցՄովսէս. Ո՛ղջ երթ:

ԺԱ ¹⁹Եւ յետ աւուրցն բազմաց այնոցիկ վախճանեցա՛ւ արքայն Եգիպտացոց: Եւ ասէ Տէր ցՄովսէս ՚ի Մադիամ. Գնա՛ և երթ յեգիպտոս, զի մեռան ամենայն արք որ խնդրէին զանձն քո: ²⁰Եւ առեալ Մովսիսի զկին իւր և զմանկունս # իւր, և եհան զնոսա ՚ի գրաստս, և դարձաւ յեգիպտոս: Ա՛ն Մովսէս զգաւազանն որ յԱստուծոյ՝ ՚ի ձեռին իւրում*:

²¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Յերթալդ քո և ՚ի դառնալդ յեգիպտոս. տեսցի՛ր զամենայն նշանս զոր ետու ՚ի ձեռս քո՝ արասցես առաջի փարաւոնի. և ես խստացուցից զսիրտ նորա, և ո՛չ արձակեսցէ զժողովուրդ իմ*:

²²Եւ դու ասասցես ցփարաւոն. Այսպէս ասէ Տէր. Որդի անդրանիկ իմ Իսրայէլ: ²³Ասացի՛ ցքեզ՝ արձակեա՛ զժողովուրդ իմ, զի պաշտեսցեն զիս. ապա թէ ո՛չ կամիցիս արձակել զդա, ե՛ս եմ ապաքէն որ սպանանիցեմ զորդի քո զանդրանիկ: ²⁴Եւ եղև ՚ի ճանապարհի յիջավանս, պատահեաց նմա հրեշտակ Տեառն, և խնդրէր սպանանել՝ զնա: ²⁵Եւ առեալ Սեպփովրայի գայլախազ, թլփատեաց զանթլփատութիւն որդւոյն իւրոյ. և անկեալ առ ոտս նորա՝ ասէ. Ահա եկա՛ց արիւն թլփատութեան մանկան իմոյ: ²⁶Եւ գնաց հրեշտակն ՚ի նմանէ. քանզի ասաց եթէ՛ Եկաց արիւն թլփատութեան մանկան իմոյ:

ԺԲ ²⁷Եւ ասէ Տէր ցԱհարոն. Ե՛րթ ընդ առաջ Մովսիսի յանապատն: Եւ գնաց և պատահեաց նմա ՚ի լերինն Աստուծոյ. և համբուրեաց զնա: ²⁸Եւ պատմեաց Մովսէս Ահարոնի զամենայն պատգամսն, որ առաքեաց զնա Տէր. և զամենայն

* Ոմանք. Առցես ջուր ՚ի գետոյն՝ և հեղ՛... ՚ի գետոյ անտի՝ արիւն ՚ի ցա՛:

* Ոմանք. Որպէս թէ յերեկ և յեռանտ:

* Այլք. Եւ նա եղիցի քո բերան:

* Յօրինակին պակասէր. Եւ զմանկունս իւր, և եհան:

* Ոմանք. Յերթալդ քում: Ի լուս՛. Եւ ո՛չ արձակիցէ զժողովուրդն. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:

նշանսն զոր պատուիրեաց նմա*։²⁹Գնացին Մովսէս և Ահարոն և ժողովեցին զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի։³⁰Եւ խօսեցաւ Ահարոն զամենայն պատգամսն՝ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի. և արար նշանս առաջի ժողովրդեանն*։³¹Եւ հաւատաց ժողովուրդն և ուրախ եղև, զի արար Աստուած այց որդւոցն Իսրայէլի. և զի հայեցաւ՝ ՚ի նեղութիւն նոցա։ Խոնարհեցաւ ժողովուրդն՝ և երկիր եպագ։

5

Գլուխ Ե

ԺԳ ¹Եւ ապա մտին Մովսէս և Ահարոն առաջի փարաւոնի, և ասեն ցնա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Արձակեա՛ զժողովուրդ իմ, զի արասցեն ինձ տօն յանապատի։²Եւ ասէ փարաւոն. Ո՞վ է նա, որում լուայց ձայնի նորա արձակել զորդիսն Իսրայէլի։ Ո՛չ գիտեմ զՏէրն՝ և զԻսրայէլ ո՛չ արձակեմ։³Եւ ասեն ցնա. Աստուածն Եբրայեցւոց կոչեաց զմեզ առ ինքն. արդ՝ երթիցուք երից աւուրց ճանապարհ յանապատն, զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում. զուցէ պատահիցէ մեզ մահ կամ սպանումն*։⁴Եւ ասէ ցնոսա արքայն Եգիպտացւոց. Ընդէ՞ր դու Մովսէս և Ահարոն խափանէք զժողովուրդն ՚ի գործոյ իւրեանց. երթայք յիւրաքանչիւր գործ իւր*։⁵Եւ ասէ փարաւոն. Ահա բազմանայ յոյժ ժողովուրդն յերկրիս. արդ՝ մի՛ հանդարտեցուցուք զնոսա ՚ի գործոյ։⁶Եւ հրամայեաց փարաւոն յաւուր յայնմիկ գործավարաց ժողովրդեանն, և դպրաց նորա, ասէ. ⁷Մի՛ ևս յաւելուցուք տալ յարդ ժողովրդեանն յաղիւսարկութիւն, որպէս յերէկն և յեռանտ. ինքեանք երթիցեն և ժողովեցեն իւրեանց յարդ։⁸Եւ զսակ աղիւսարկին որպէս գործէին հանապազ՝ արկէք ՚ի վերայ նոցա. մի՛ հատանիցէք ինչ անտի. զի դատարկացան, և վասն այնորիկ աղաղակեն և ասեն. Երթիցուք զոհեսցուք Աստուծոյ մերում։⁹Ծանրասցի՛ գործ մարդկանն, և այնմ հոգասցեն. և մի՛ հոգասցեն ՚ի բանս տարապարտս։¹⁰Եւ ստիպէին զնոսա գործավարք ժողովրդեանն՝ և դպիրք նորա. և խօսէին ընդ ժողովրդեանն և ասէին. Այսպէս ասէ փարաւոն. Ո՛չ ևս տաց ձեզ յարդ. ¹¹դուք ձեզէն երթայք ժողովեցէք ձեզ յարդ՝ ուստի և գտանիցէք. զի ո՛չ թողասցի ձեզ ՚ի սակէն ձերմէ՛ և ո՛չ ինչ*։¹²Եւ սփռեցաւ ժողովուրդն ընդ ամենայն երկիրն Եգիպտացւոց ժողովել եղէգն՝ առ ՚ի յարդ։¹³Եւ գործավարքն ստիպէին զնոսա և ասէին. Բովանդակեցէք զգործն ձեր ըստ հանապազորդ սակին, որպէս մինչ յարդն տային ձեզ։¹⁴Եւ տանջեցան դպիրք ազգի որդւոցն Իսրայէլի, որ կային ՚ի վերայ նոցա՝ ՚ի վերակացուացն փարաւոնի։ զի ասէին, թէ ընդէ՞ր ո՛չ բովանդակեցէք զսակ աղիւսոյն ձերոյ որպէս յերէկն և յեռանտ՝ և զայսր աւուրդ*։¹⁵Եւ մտեալ դպրաց որդւոցն Իսրայէլի՝ բողոք կալան առաջի փարաւոնի և ասեն. Ընդէ՞ր առնես այսպէս ընդ ծառայս քո։¹⁶Յարդ ո՛չ տան ծառայից քոց, և զաղիւսն հրամայեն մեզ գործել. և ահա ծառայք քո ՚ի տանջանս են. բուն առնես

* Ոմանք. Պատգամս Տեառն զոր առա՛:

* Ոմանք. Ջոր խօսեցաւ Աստուած ընդ։

* Ոմանք. Եւ ասէ ցնա. Աստուածն Եբր՛:

* Ոմանք. Խափանեցէք զժողովուրդն։

* Ոմանք. Ջի ո՛չ թուլասցի ձեզ։

* Ոմանք. Ջսակ աղիւսոցն ձերոյ։

ժողովրդեան քում: ¹⁷Եւ ասէ ցնոսա. Դատարկ էք պարապորդ էք. վասն այնորիկ ասէք. Երթիցուք զոհեսցուք Աստուծոյ մերում: ¹⁸Արդ՝ երթայք գործեցէք. քանզի յարդ ո՛չ որ տայ ձեզ: և զսակ աղիւսոյն բովանդակ տայցէք: ԺԴ ¹⁹Տեսանէին դպիրք որդւոցն Իսրայէլի զանձինս իւրեանց՝ ՚ի չարչարանս՝ և ասէին. Ո՛չ որ թողու մեզ զսակ հանապազորդ աղիւսաթուին: ²⁰Պատահեցին Մովսիսի և Ահարոնի, զի գային հանդէպ նոցա ելեալք յերեսաց փարաւոնի: ²¹Եւ ասեն ցնոսա. Տեսցէ՛ Աստուած, և դատեսցի զձեզ. զի գարշեցուցէք զհոտ մեր առաջի փարաւոնի, և առաջի ծառայից նորա. տա՛լ սուր ՚ի ձեռին նորա կոտորել զմեզ*: ²²Դարձաւ Մովսէս առ Տէր՝ և ասէ. Տէր, ընդէ՞ր չարչարեցեր զժողովուրդն քո. և ընդէ՞ր առաքեցեր զիս: ²³Եւ յորմէ հետէ մտի առ փարաւոն խօսել յանուն քո, չարչարեաց զժողովուրդն: և փրկելով ո՛չ փրկեցեր զժողովուրդ քո:

6

Գլուխ Զ

¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Այժմ տեսցէ՛ս զինչ արարից ընդ փարաւոն. զի հօզր ձեռամբ արձակեսցէ զդոսա, և բարձրացեալ բազկաւ հանցէ զդոսա յերկր իւրմէ: ²Խօսեցաւ Աստուած ընդ Մովսիսի, և ասէ ցնա. Ե՛ս եմ Տէր. ³և երևեցայ Աբրահամու Սահակայ և Յակոբայ. Աստուած նոցա եմ, և անուն իմ Տէր. և ո՛չ յայտնեցի նոցա*: ⁴Եւ հաստատեցի զուխտ իմ առ նոսա. տա՛լ նոցա զերկիրն Քանանացւոց՝ ուր պանդխտեցան*: ⁵Եւ ես լուայ հեծութեան որդւոցդ Իսրայէլի զոր Եգիպտացիք ծառայեցուցանեն. և յիշեցի զուխտն ձեր: ⁶Ե՛րթ խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի, և ասասցես. Ե՛ս եմ Տէր. և հանից զձեզ ՚ի բռնութենէ Եգիպտացւոց, և փրկեցից զձեզ ՚ի ծառայութենէ դոցա, և ապրեցուցից զձեզ բարձր բազկաւ և մեծամեծ դատաստանօք*: ⁷Եւ առից զձեզ ինձ ՚ի ժողովուրդ. և եղէց ձեզ Աստուած. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր Աստուած ձեր, որ հանեմ զձեզ յերկրէ Եգիպտացւոց*: ⁸Եւ տարայց զձեզ յերկիրն՝ յոր ձգեցի զձեռն իմ տալ զնա Աբրահամու Սահակայ և Յակոբայ. և տաց զնա ձեզ վիճակաւ, զի ե՛ս եմ Տէր: ⁹Խօսեցաւ Մովսէս այնպէս ընդ որդիսն Իսրայէլի. և ո՛չ անսացին նմա ՚ի կարճմտութենէ, և ՚ի խիստ գործոյն*:

ԺԵ ¹⁰Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹¹Մուտ խօսեաց ընդ փարաւոնի արքային Եգիպտացւոց. զի արձակեսցէ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց: ¹²Խօսեցաւ Մովսէս առաջի Տեառն՝ և ասէ. Ահա որդիքն Իսրայէլի ո՛չ լուան ինձ. և զի՞արդ լսիցէ ինձ փարաւոն. և ես չեմ խօսող որ: ¹³Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի. և ե՛տ նոցա հրաման առ որդիսն Իսրայէլի, և առ փարաւոն արքայ Եգիպտացւոց. հանել զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց: ¹⁴Եւ այս են նահապետք տանց ազգաց նոցա. որդիք Ռուբինի անդրանկանն Իսրայէլի. Ենոք, և Փաղ՛ղ՛ուս. Սարսոն, և Քարմի: այս ցեղ՝

* Այլք. Սուր ՚ի ձեռն նորա կոտորել:

* Ոմանք. Եւ անուն իմ Տէր է. և ոչ:

* Ոմանք. Եւ հաստատեցի զուխտ իմ:

* Ոսկան. ՚ի բռնաւորութենէ Եգիպտացի:

* Ոմանք. Հանեմ զձեզ ՚ի բռնութենէ Եգիպտացի:

* Ոսկան. Այսպէս ընդ որդիսն Իսրայէլի:

Ռուբինի*։ ¹⁵Եւ որդիք Շմաւոնի. Յամուէլ, և Յամին, և Ահովր, և Յաքին, և Սահառ, և Սաւուղ որ ՚ի Փիւնիկեցւոյ անտի էր։ այս ցեղք են որդւոցն Շմաւոնի։ ¹⁶Եւ այս անուանք են որդւոցն Ղևեայ, ըստ ազգս իւրեանց. Գեթսովն, Կահաթ, և Մերարի։ և ամբ կենաց Ղևեայ հարիւր երեսուն և եւթն ամ*։ ¹⁷Եւ այս են որդիք Գեթսոնի. Ղոբենի, և Սեմէի. տունք նահապետաց նոցա։ ¹⁸Եւ որդիք Կահաթու. Ամրամ, և Սահառ, և Քեբրոն, և Ոզիէլ. և ամբ կենաց Կահաթու, հարիւր և երեսուն և երեք ամ։ ¹⁹Եւ որդիք Մերարեայ. Մոովղի և Մովսի. այս են տունք նահապետաց Ղևեայ ըստ ազգաց իւրեանց։ ²⁰Եւ ա՛ռ Ամրամ զՅովքաբէթ դուստր եղբօր հօր իւրոյ իւր ՚ի կնութեան։ և ծնաւ նմա զԱհարոն, և զՄովսէս, և զՄարիամ քոյր նոցա. և ամբ կենաց Ամրամայ հարիւր և երեսուն և եւթն ամ։ ²¹Եւ որդիք Սահառայ. Կորիս, և Նագեր, և Ջեքրի*։ ²²Եւ որդիք Ոզիէլայ. Միսայէլ, և Եղիսափան, և Սեթրի։ ²³Եւ ա՛ռ Ահարոն զԵղիսաբէթ դուստր Ամինադաբայ զքոյր Նաասոնի իւր կնութեան. և ծնաւ նմա զՆաբադ, և զԱբիուդ, և զԵղիազար, և զԻթամար։ ²⁴Եւ որդիք Կորիսայ. Ասիր, և Եղկանայ, և Բիասափ. սոքա են ազգք Կորիսայ*։ ²⁵Եւ Եղեազար Ահարոնեան ա՛ռ ՚ի դստերաց անտի Փուտիէլի իւր կնութեան, և ծնաւ նմա զՓենէէս։ այս են իշխանք նահապետաց Ղևտացւոցն ըստ ազգս իւրեանց։ ²⁶Եւ այս Ահարոն և Մովսէս, ցորս ասաց Աստուած՝ հանել զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց հանդերձ զօրութեամբ իւրեանց։ ²⁷Եւ սոքա՛ են որ վիճէին ընդ փարաւոնի արքային Եգիպտացւոց, հանել զորդիսն Իսրայէլի յԵգիպտոսէ։ այս է Մովսէս և Ահարոն։ ²⁸Յաւուր յորում խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յերկրին Եգիպտացւոց։ ²⁹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Ե՛ս եմ Տէր. խօսեաց ընդ փարաւոնի արքային Եգիպտացւոց զամենայն ինչ զոր ասեմ քեզ։ ³⁰Եւ ասէ Մովսէս առաջի Տեառն. Ահաւասիկ ես նրբաձայն եմ. և զիա՞րդ լսիցէ ինձ փարաւոն։

7

Գլուխ Է

¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահա ետու զքեզ Աստուած՝ փարաւոնի. և Ահարոն եղբայր քո եղիցի քեզ մարգարէ։ ²Դու խօսեսցիս ընդ նմա զամենայն ինչ՝ զոր պատուիրեմ քեզ։ և Ահարոն եղբայր քո խօսեսցի՛ ընդ փարաւոնի, արձակել զորդիսն Իսրայէլի յերկրէ իւրմէ։ ³Եւ ես խստացուցից զսիրտն փարաւոնի. զի յաճախեցից զնշանս իմ և զարուեստս յերկրիդ Եգիպտացւոց*։ ⁴Եւ ո՛չ լուիցէ ձեզ փարաւոն։ և արկից՝ զձեռն իմ յԵգիպտոս. և հանից հանդերձ զօրութեամբ իմով զժողովուրդ իմ, զորդիսն Իսրայէլի յերկրդ Եգիպտացւոց, մեծա՛ւ վրէժխնդրութեամբ։ ⁵Եւ ծանիցեն Եգիպտացիքն, թէ ես եմ Տէր. և ձգեցից զձեռն իմ յԵգիպտոս, և հանից զորդիսն Իսրայէլի ՚ի միջոյ նոցա։ ⁶Եւ արարին Մովսէս և Ահարոն. որպէս և պատուիրեաց նոցա Տէր, նո՛յնպէս և արարին։

ԺՁ ⁷Եւ Մովսէս էր ամաց ութսնից. և Ահարոն էր որդի ամաց ութսուն և երից, յորժամ խօսեցան ընդ փարաւոնի։ ⁸Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ

* Ոմանք. Նախապետք տանց.. Ասրոն և Քարմի.. Ռուբենի է։

* Յօրհինակին թուագրով այսպէս դնի. 6ԼԷ ամ. և ՚ի համար 20. 6 և ԼԷ։

* Ոմանք. Եւ Նաբեզ և Ջեքրի։

* Ոմանք. Եւ որդիք Կորիսայ՝ Սաիր, և։

* Ի լուս՝. Եւ յաճախեցից զնշանս. համաձայն այլոց ՚ի բնար՝։

Ահարոնի՝ և ասէ. ⁹Եթէ խօսեսցի ընդ ձեզ փարաւոն՝ և ասասցէ. Տո՛ւք մեզ նշան կամ արուեստ, ասասցես ցԱհարոն եղբայր քո. Ա՛ն դու զգաւազանդ, և ընկեա՛ զդա՝ ՚ի գետին առաջի փարաւոնի և ծառայից նորա, և եղիցի վիշա՛պ*:

ԺԷ ¹⁰Մտին Մովսէս և Ահարոն առաջի փարաւոնի, և արարին այնպէս, որպէս պատուիրեաց նոցա Տէր: Եւ ընկէց Ահարոն զգաւազանն առաջի փարաւոնի և առաջի ծառայից նորա, և եղև վիշապ: ¹¹Եւ կոչեաց փարաւոն զհմաստունս Եփպտացւոց և զկախարդս. և արարին գէտքն Եփպտացւոց կախարդութեամբ իւրեանց նոյնպէս: ¹²Եւ ընկէ՛ց իւրաքանչիւրոք զգաւազան իւր և եղեն վիշապք: և եկո՛ւլ գաւազանն Ահարոնի զգաւազանս նոցա: ¹³Եւ կարծրացա՛ւ սիրտն փարաւոնի, և ո՛չ լուաւ նոցա՝ որպէս խօսեցաւ Տէր:

ԺԸ/ա ¹⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Կարծրացեալ է սիրտն փարաւոնի չարձակել զժողովուրդն*: ¹⁵Ե՛րբ առ փարաւոն ընդ առաւօտն. ահա նա ելանէ ՚ի ջուրն. և կացցե՛ս հանդէպ նորա առ եզերք գետոյն. և զգաւազանն որ դարձաւ յօձ՝ առցես ՚ի ձեռին քուն*: ¹⁶Եւ ասասցես ցնա. Տէր Աստուած Եբրայեցւոց առաքեա՛ց զիս առ քեզ՝ և ասէ. Արձակեա՛ զժողովուրդ իմ զի պաշտեսցեն զիս յանապատի. և ահա ո՛չ լուար ինձ մինչև ցայժմ: ¹⁷Այսպէս ասէ Տէր. Այլ դո՛ւ գիտասցես՝ թէ ե՛ս եմ Տէր. ահաւասիկ ես հարկանեմ գաւազանաւս որ ՚ի ձեռին իմուն է՝ զջուր գետոյդ, և դարձցի յարի՛ւն*: ¹⁸Եւ ձկունք որ ՚ի գետ այդր են, սատակեսցին, և նեխեսցի գետդ. և ո՛չ կարասցեն Եփպտացիք ըմպել ջուր ՚ի գետոյ այտի*: ¹⁹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ասա՛ ցԱհարոն. Ա՛ն զգաւազանդ և ձգեա՛ զձեռն քո ՚ի վերայ ջրոցդ Եփպտոսի, և ՚ի վերայ գետոց նոցա. և ՚ի վերայ լճաց նոցա, և ՚ի վերայ խաղից նոցա, և ՚ի վերայ ջրակուտաց նոցա. և եղիցի արի՛ւն: Եւ եղև արիւն յամենայն երկրին Եփպտացւոց, ՚ի փայտս և ՚ի քարինս: ²⁰Եւ արարին Մովսէս և Ահարոն՝ որպէս և պատուիրեաց նոցա Տէր. և վերացուցեալ զգաւազանն իւր՝ եհար՝ զջուր գետոյն առաջի փարաւոնի և առաջի ծառայից նորա: և դարձոյց զամենայն ջուրս գետոյն յարիւն*: ²¹Եւ ձկունք որ ՚ի գետ անդր էին՝ սատակեսցան, և նեխեսցաւ գետն. և ո՛չ կարէին Եփպտացիքն ըմպել ջուր ՚ի գետոյ անտի: և էր արի՛ւն յամենայն երկրին Եփպտացւոց*: ²²Եւ արարին այնպէս և գէտքն Եփպտացւոց կախարդութեամբն իւրեանց: և խստացաւ սիրտն փարաւոնի և ո՛չ լուաւ նոցա՝ որպէս ասաց Տէր*: ²³Դարձաւ փարաւոն և եմուտ ՚ի տուն իւր, և ո՛չ հաստատեաց զմիտս իւր և ո՛չ այնու՛ ևս: ²⁴Եւ փորեցին ամենայն Եփպտացիքն շուրջ զգետով ջուր ըմպելոյ. և ո՛չ կարէին ըմպել ջուր ՚ի գետոյն*: ²⁵Եւ լցան աւուրք եւթն յետ հարկանելոյ Տեառն զգետն:

8

Գլուխ Ը

* Ոսկան յաւելու. Կամ արուեստ ՚ի Տեառնէ: Ոմանք. ՅԱհարոն ցեղբայր քո:

* Այլք. Ծանրացեալ է սիրտն փարա՛:

* Այլք. Առ եզեր գետոյն:

* Բազումք. Այդու գիտասցես:

* Յօրինակին պակասէր. Սատակեսցին. և նեխեսցի գետդ. և ոչ:

* Բազումք. Եւ արարին այնպէս Մովսէս և:

* Ոմանք. Որ ՚ի գետ անդր էին:

* Ոմանք. Եւ արարին նոյնպէս և:

* Բազումք. Ջուր ՚ի գետոյ անտի:

ԺԹ/բ ¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մո՛ւտ առ փարաւոն՝ և ասասցէս ցնա. Այսպէս ասէ Տէր. Արձակեա՛ր զժողովուրդ իմ, զի պաշտեսցեն զիս: ²Ապա թէ ո՛չ կամիս դու արձակել. ահա ես հարի՛ց զամենայն սահմանս քո գորտիւ: ³Եւ բղխիցէ գետդ գորտ. և ելեալ մտանիցեն ՚ի տունս քո, և ՚ի շտեմարանս սենեկաց քոց, և ՚ի գահոյս քո, և ՚ի տունս ծառայից քոց, և ժողովրդեան քո. և ՚ի թոնիրս քո, և ՚ի զանգուածս քո*: ⁴Եւ ՚ի վերայ քո, և ՚ի վերայ ժողովրդեան քո, և ՚ի վերայ ծառայից քոց ելանիցեն գորտքն: ⁵Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ասա՛ ցԱհարոն եղբայր քո. Չգեա՛ ձեռամբ քո զգաւազանդ քո ՚ի վերայ գետոյն, և ՚ի վերայ ջրադարձից, և ՚ի վերայ խաղից. և հանցես գորտ ՚ի վերայ երկրիդ Եգիպտացւոց*: ⁶Եւ ձգեա՛ց Ահարոն զձեռն իւր ՚ի վերայ ջրոց Եգիպտացւոցն, և եհան գորտ: Ե՛լ գորտն և ծածկեաց զերկիրն Եգիպտացւոց: ⁷Արարին նոյնպէս և գէտքն Եգիպտացւոց կախարդութեամբքն իւրեանց. և հանին գորտ յերկիրն Եգիպտացւոց*: ⁸Կոչեա՛ց փարաւոն զՄովսէս և զԱհարոն՝ և ասէ. Աղօ՛թս արարեք առ Տէր, և ՚ի բա՛ց արասցէ զգորտս յինէն՝ և ՚ի ժողովրդենէ իմնէ. և արձակեցի՛ց զժողովուրդդ, և զոհեսցեն Տեառն: ⁹Եւ ասէ Մովսէս ցփարաւոն. Ժամ դիր ինձ, առ ե՞րբ արարից աղօթս վասն քո, և ծառայից քոց՝ և ժողովրդեան քոյ. սատակել զգորտդ ՚ի քէն և ՚ի ժողովրդենէ քունմէ, և ՚ի տանց ձերոց. բայց միայն ՚ի գե՛տ անդր մնասցեն: ¹⁰Եւ նա ասէ. Առ վաղի՛ւ: Եւ սա ասէ. Որպէս ասացերդ եղիցի՛. զի գիտասցես եթէ չի՛ք այլ ոք բա՛ց ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ*: ¹¹Եւ բարձցին գորտքդ ՚ի քէն և ՚ի տանց քոց, և ՚ի ծառայից քոց, և ՚ի ժողովրդենէ քունմէ, բայց միայն ՚ի գե՛տ անդր մնասցեն*: ¹²Եւ ելին Մովսէս և Ահարոն ՚ի փարաւոնէ: և աղաղակեաց Մովսէս առ Տէր՝ վասն ժամադրութեան գորտոյն, որպէս ժամադիր եղև փարաւոնի: ¹³Եւ արար Տէր՝ որպէս և ասացն Մովսէս. և սատակեցաւ գորտն ՚ի տանց և ՚ի սրահից և յանդոց: ¹⁴Եւ ժողովեցին զնոսա կոյտս կոյտս. և նեխեցաւ երկիրն: ¹⁵Իբրև ետես փարաւոն թէ եղև դիւրութիւն, ծանրացաւ սիրտ նորա. և ո՛չ լուաւ նոցա՝ որպէս և խօսեցաւ Տէր:

Ի/գ ¹⁶Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ասա՛ ցԱհարոն, թէ ձգեա՛ ձեռամբ քով զգաւազանդ և հա՛ր զհող երկրիդ. և եղիցի մո՛ւն ՚ի մարդ և յանասուն, և յամենայն երկիրդ Եգիպտացւոց*: ¹⁷Եւ արարին այնպէս. ձգեաց Ահարոն ձեռամբ իւրով զգաւազանն և եհա՛ր զհող երկրին: և եղև մո՛ւն ՚ի մարդ և յանասուն, և յամենայն հող երկրին Եգիպտացւոց: ¹⁸Արարին նոյնպէս և գէտքն Եգիպտացւոց կախարդութեամբքն իւրեանց հանել մուն, և ո՛չ կարէին: և եղև մուն ՚ի մարդ և յանասուն*: ¹⁹Եւ ասեն գէտքն ցփարաւոն. Մա՛տն Աստուծոյ է այդ: Եւ խստացաւ սիրտն փարաւոնի. և ո՛չ լուաւ նոցա՝ որպէս և խօսեցաւ Տէր:

ԻԱ/դ ²⁰Եւ ասէ Տէր ցՄովսէս. Կանխեա՛ ընդ առաւօտն և կա՛ց առաջի փարաւոնի. և ահա նա ելանէ ՚ի ջուր անդր: և ասասցես ցնա. Այսպէս ասէ Տէր. Արձակեա՛ր զժողովուրդ իմ զի պաշտեսցեն զիս: ²¹Ապա թէ ո՛չ կամիցիս արձակել զժողովուրդ իմ. Ահա ե՛ս առաքեմ ՚ի վերայ քո՝ և ՚ի վերայ ծառայից քոց, և ՚ի վերայ ժողովրդեան քոյ, և ՚ի վերայ տանց ձերոց շանաճանճ: և լցցին տունք

* Այլք. Եւ բղխեսցէ գետդ:

* Ոմանք. Չեռամբ քով.. ՚ի վերայ գետոցն:

* Այլք. Եւ հանին գորտ յերկիրն Եգիպ՛:

* Ոմանք. Եթէ չիք այլ Աստուած բաց ՚ի:

* Ոմանք. Գորտք ՚ի քէն.. ՚ի գետ անդ մնասցեն:

* Ոսկան. Եւ յամենայն հող երկրի Եգիպտաց՛:

* Ոսկան. Հանել մուն, և ո՛չ կարացին: և եղև մունն:

Եգիպտացւոց շանաճանճիւ. և երկիրն յորում իցեն 'ի նմա: ²²Եւ սքանչելի՛ արարից յաւուրն յայնմիկ գերկիրն Գեսեմ, յորում ժողովուրդն իմ իցէ. և մի՛ լիցի անդ շանաճանճ. զի գիտասցես թէ ե՛ս եմ Տէր. Տէր ամենայն երկրի: ²³Եւ տաց խտրոց՝ 'ի մէջ ժողովրդեան իմոյ՝ և 'ի մէջ ժողովրդեան քոյ: և վաղիւ եղիցին շանաճանճոյ այդ՝ 'ի վերայ երկրիդ՝: ²⁴Եւ արար Տէր այնպէս. և եկն շանաճանճ բազում 'ի տունս փարաւոնի, և 'ի տունս ծառայից նորա. և յամենայն երկիրն Եգիպտացւոց: և սատակեցաւ երկիրն 'ի շանաճանճէ անտի: ²⁵Եւ կոչեաց փարաւոն զՄովսէս և զԱհարոն, և ասէ. Երթայք զոհեցէք Տեառն Աստուծոյ ձերում աստէն 'ի սմի՛ն երկրիս: ²⁶Եւ ասէ Մովսէս. Չէ՛ մարթ այդմ լինել եթէ զգարչելիս Եգիպտացւոց զոհիցենք Տեառն Աստուծոյ մերում: քանզի եթէ զոհիցենք զգարչելիս Եգիպտացւոց առաջի նորա, քարկո՛ծ առնեն զմեզ՝: ²⁷Այլ երթիցուք երեքօրեայ ճանապարհ յանապատ, և զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում, որպէս և ասաց մեզ Տէր: ²⁸Եւ ասէ փարաւոն. Ե՛ս արձակեմ զձեզ, և զոհեսցիք Տեառն Աստուծոյ ձերում յանապատի. այլ մի՛ ուրեք հեռի ձգիցիք երթալ: և արդ՝ աղօթս արարէք վասն իմ առ Տէր: ²⁹Եւ ասէ Մովսէս. Ես ելից՝ 'ի քէն, և աղօթս արարից առ Աստուած, և փարատեսցէ՛ շանաճանճոյ՝ 'ի փարաւոնէ, և 'ի ծառայից իւրոց, և 'ի ժողովրդենէ իւրմէ՝ վաղիւ: բայց մի՛ ևս խաբեսցէ փարաւոն առ 'ի չարձակելոյ զժողովուրդդ զոհել Տեառն՝: ³⁰Ել Մովսէս 'ի փարաւոնէ. և եկաց յաղօթս առ Աստուած: ³¹Եւ արար Տէր՝ որպէս և ասացն Մովսէս. և փարատեաց շանաճանճն 'ի փարաւոնէ, և 'ի ծառայից նորա, և 'ի ժողովրդենէ նորա. և ո՛չ մնաց և ո՛չ մի: ³²Եւ ծանրացոյց փարաւոն զսիրտ իւր 'ի ժամանակին յայնմիկ. և ո՛չ կամեցաւ արձակել զժողովուրդն՝:

9

Գլուխ Թ

ԻԲ/Ե ¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մո՛ւտ առ փարաւոն և ասացես ցնա. Ա՛յսպէս ասէ Տէր Աստուածն Եբրայեցւոց արձակեա՛ զժողովուրդ իմ զի պաշտեսցեն զիս: ²Ապա թէ ո՛չ կամիս արձակել զժողովուրդ իմ, այլ տակաւին ունիցիս զդա: ³Ահա ձեռն Տեառն եղիցի 'ի խաշինս քո որ 'ի դաշտի են, և 'ի ձիս, և յէշս և յուղտս, և յարջառ, և յոչխար՝ մահո՛ւ մեծաւ յոյժ: ⁴Եւ արարից ե՛ս սքանչելիս 'ի մէջ խաշանցն Եգիպտացւոց, և 'ի մէջ խաշանցն Իսրայէլի. և ո՛չ ծախեսցի յամենայն որդւոցն Իսրայէլի կռիւնչն: ⁵Եւ ժամանակեաց Աստուած և ասէ. Վաղիւ արասցէ քեզ Տէր զբանդ զայդ՝ 'ի վերայ երկրիդ՝: ⁶Եւ արար Տէր զբանն զայն 'ի վաղիւ անդր: և սատակեցաւ ամենայն անասուն Եգիպտացւոցն. բայց յանասնոց որդւոցն Իսրայէլի ո՛չ ծախեսցաւ՝ և ո՛չ ինչ: ⁷Իբրև ետես փարաւոն, թէ ո՛չ ծախեսցաւ յանասնոց որդւոցն Իսրայէլի և ո՛չ ինչ. ծանրացաւ սիրտ նորա, և ո՛չ արձակեաց զժողովուրդն:

ԻԳ/Գ ⁸Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. Առէ՛ք դուք լի՛ ձեռօք

* Այլք. Եւ վաղիւ եղիցի նշանդ այդ՝ 'ի վերայ եր՝:

* Բազումք. Առաջի նորա, քարկոծեն զմեզ:

* Այլք. Առ 'ի չարձակել զժողո՛:

* Բազումք. Չսիրտ իւր և 'ի ժամանակի յայն՝: Ոսկան յաւելու. Արձակել զժողովուրդն Տեառն:

* Այլք. Վաղիւ արասցէ Տէր զբա՛:

ծերովք մոխիր հնոցի, և ցանեսցէ՛ զայն Մովսէս ընդ երկինս առաջի փարաւոնի՝ և առաջի ծառայից նորա. ⁹և եղիցի փոշի՝ ընդ ամենայն երկիրդ Եգիպտացւոց: Եւ եղիցի՝ ՚ի մարդ և յանասուն կէ՛ղ, և եռացեն խաղաւարտք ՚ի մարդ և յանասուն յամենայն երկիրդ Եգիպտացւոց՝: ¹⁰Եւ առին զմոխիր հնոցին առաջի փարաւոնի. և ցանես՝ զայն Մովսէս ընդ երկինս: և եղև կէ՛ղ և խաղաւարտք եռացեալք ՚ի մարդ և յանասուն: ¹¹Եւ ո՛չ կարէին կախարդքն կալ առաջի Մովսիսի վասն կեղոյն. քանզի եղև կեղն և ՚ի կախարդսն, և յամենայն երկիրն Եգիպտացւոց: ¹²Եւ խստացոյց Տէր զսիրտն փարաւոնի, և ո՛չ լուաւ նոցա՝ որպէս և ասաց Տէր ցՄովսէս:

Ի՛ր/է՛ ¹³Եւ ասէ Տէր ցՄովսէս. Կանխեա՛ ընդ առաւօտն, և կա՛ց առաջի փարաւոնի, և ասացես ցնա. Այսպէս ասէ Տէր Աստուած Եբրայեցւոց, արձակեա՛ զժողովուրդ իմ զի պաշտեսցեն զիս: ¹⁴Քանզի յայսմ ժամանակի առաքեցից ես զամենայն պատահարս ՚ի սիրտ քո՝ և ծառայից քոց և ժողովրդեան քոյ. զի գիտացես թէ չի՞ք ոք իբրև զիս յամենայն երկրի: ¹⁵Քանզի ձգեալ զձեռն իմ հարի՛ց զքեզ՝ և զժողովուրդ քո մահուամբ, և սատակեսցի՛ս յերկրէ: ¹⁶Եւ վասն այնորիկ պահեսցար, զի ՚ի քե՛զ ցուցից զզօրութիւն իմ. և զի պատմեսցի՛ անուն իմ ընդ ամենայն երկիր: ¹⁷Եւ դու՝ տակաւին թևարկե՛ս զժողովրդեամբ իմով չարչարե՞լ զդոսա: ¹⁸Եւ ես ահա տեղացի՛ց վաղիւ յայսմ ժամու կարկուտ սաստիկ յոյժ. որպիսի ո՛չ եղև յԵգիպտոս յօրէ յորմէ հաստատեցաւ մինչև ցայսօր: ¹⁹Եւ արդ՝ փութա՛ ժողովել զանասուն քո, և որ ինչ իցէ քո ՚ի դաշտի: զի ամենայն մարդ և անասուն որ գտցի ՚ի դաշտի՝ և ո՛չ մտցէ ՚ի տուն, անկցի ՚ի վերայ նոցա կարկուտն՝ և սատակեսցէ՛: ²⁰Որ միանգամ երկեա՛ւ ՚ի բանէ Տեառն ՚ի ծառայիցն փարաւոնի, ժողովեաց զծառայս իւր և զանասուն ՚ի տուն՝: ²¹Եւ որ ոչն անսաց ՚ի միտս իւր բանիցն Տեառն, եթող # զծառայս իւր՝ և զանասուն իւր ՚ի դաշտի՝: ²²Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ձգեա՛ զձեռն քո յերկինս. և եղիցի կարկուտ ՚ի վերայ երկրիդ Եգիպտացւոց ՚ի վերայ մարդկան և անասնոյ, և ՚ի վերայ ամենայն բանջարոյ որ է ՚ի դաշտի երկրիդ Եգիպտացւոց՝: ²³Եւ ձգե՛աց Մովսէս զձեռն իւր յերկինս. և ե՛տ Տէր բարբառս և կարկուտ. և ընթանայր հուր ընդ երկիրն: և տեղեաց Տէր կարկուտ ՚ի վերայ ամենայն երկրին Եգիպտացւոց՝: ²⁴Էր կարկուտ և հո՛ւր բորբոքեալ ՚ի մէջ կարկտին: և կարկուտն սաստիկ էր յոյժ. որպիսի ո՛չ եղև յամենայն երկրին Եգիպտացւոց, յորմէ հետէ եղեալ էր ՚ի վերայ նորա ազգ: ²⁵Եհա՛ր կարկուտն յամենայն երկիրն Եգիպտացւոց զամենայն որ ինչ էր ՚ի դաշտի՝ ՚ի մարդոյ մինչև յանասուն. և զամենայն բանջար որ ՚ի դաշտի էր՝ եհա՛ր կարկուտն. և զամենայն փայտ որ ՚ի դաշտս՝ մանրեաց: ²⁶Բայց յերկիրն Գեսեմ, ուր էին որդիքն Իսրայէլի՝ ո՛չ եղև կարկուտ: ²⁷Եւ առաքեալ փարաւոնի կոչեաց զՄովսէս և զԱհարոն՝ և ասէ ցնոսա. Մեղա՛յ. այսուհետև Տէր արդա՛ր է. և ես՝ և ժողովուրդ իմ ամպարիշտ: ²⁸Կացէ՛ք յաղօթս վասն իմ առ Տէր՝ և դադարեսցեն ՚ի լինելոյ ձայնքն Աստուծոյ, և կարկուտն և հուր. և արձակեցի՛ց զձեզ, և ո՛չ ևս յաւելուցուք մնալ՝: ²⁹Եւ ասէ

* Այլք. Փոշի յամենայն երկիրդ Եգիպտո՛ւ:

* Բազումք. Ի վերայ նոցա կարկուտն:

* Ոմանք. Եւ զանասունս ՚ի տուն:

* Յօրինակին պակասէր. Եւ զանասուն իւր ՚ի դաշտի:

* Ոմանք. Որ է ՚ի դաշտի յերկրիդ:

* Այլք. Եւ տեղաց Տէր կար՝:

* Ոմանք. Ի լինելոյ ձայնք նոցա, և կար՝:

ցնա Մովսէս. Այժմ իբրև ելի՛ց ըստ քաղաքս, ձգեցի՛ց զձեռս իմ առ Աստուած. և ձայնքն դադարեցեն, և կարկուտն և անձրևն ո՛չ ևս լիցի. զի ծանիցես թէ Տեառն է երկիր: ³⁰Եւ դու և ծառայք քո՝ գիտեն՛ թէ չև՛ ևս երկերուք ՚ի Տեառնէ Աստուծոյ՝: ³¹Կտաւն և գարին հարաւ. զի գարին յոճ կայր, և կտաւն սերմանացեալ էր: ³²Եւ ցորեանն և հաճար ո՛չ հարան. զի անագան էին: ³³Եւ ել Մովսէս ՚ի փարաւոնէ արտաքս քան զքաղաքն, և ձգեաց զձեռն իւր առ Տէր. և դադարեցին ձայնքն և կարկուտն. և անձրևն ո՛չ ևս կաթեաց յերկիր: ³⁴Իբրև ետես փարաւոն եթէ դադարեաց անձրևն և կարկուտ և ձայնքն, յաւել ՚ի մեղանչել. և ծանրացոյց զսիրտ իւր և զծառայից իւրոց: ³⁵Եւ խստացաւ սիրտն փարաւոնի՝ և ո՛չ արձակեաց զորդիսն Իսրայէլի՝ որպէս խօսեցաւ Տէր ՚ի ձեռն Մովսիսի:

10

Գլուխ Ժ

ԻԵ/ը ¹խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Մո՛ւտ առ փարաւոն՝ զի ե՛ս խստացուցի զսիրտ նորա և զսիրտ ծառայից նորա. զի կարգաւ եկեսցեն նշանքն իմ ՚ի վերայ նոցա: ²Որպէս զի պատմիցէք յականջս որդւոց ձերոց, և որդւո՛ց որդւոց ձերոց, ո՛րչափ խաղացի ես ընդ Եգիպտացիսդ. և զնշանս իմ զոր արարի ՚ի նոսա. և ծանիջիք՝ թէ ե՛ս եմ Տէր: ³Մտին Մովսէս և Ահարոն առաջի փարաւոնի, և ասեն ցնա. Ա՛յսպէս ասէ Տէր Աստուածն Եբրայեցւոց. Մինչև յե՞օր որ ո՛չ կամիցիս ամաչել յինէն, արձակեա՛ զժողովուրդ իմ զի պաշտեսցեն զիս: ⁴Ապա թէ ո՛չ կամիցիս դու արձակել զժողովուրդ իմ, ահաւասիկ ես ածի՛ց ՚ի սոյն ժամու վաղիւ մարախ սաստիկ ՚ի վերայ ամենայն սահմանաց քոց՝: ⁵Եւ ծածկեսցէ՛ զամենայն երեսս երկրիդ, և ո՛չ կարիցես տեսանել զերկիր: և կերիցէ՛ զամենայն նշխարսն զոր եթող ձեզ կարկուտն. և կերիցէ՛ զամենայն փայտ բուսեալ ձեզ ՚ի վերայ երկրի՝: ⁶Եւ լցցին տունք քո, և տունք ծառայից քոց. և ամենայն տունք յամենայն երկրիդ Եգիպտացւոց. զոր ո՛չ երբէք տեսին հարք ձեր, և ո՛չ հաւք նոցա, յորմէ օրէ եղեն յերկրի մինչև ցայսօր: և խոյս տուեալ՝ ել ՚ի փարաւոնէ՛: ⁷Ասեն ցնա ծառայքն փարաւոնի. Մինչև ե՞օր իցէ մեզ խոչոյ այդ. արձակեա՛ զմարդիկն՝ զի պաշտեսցեն զՏէր Աստուած իւրեանց. եթէ զհտե՞լ կամիցիս՝ զի կորեա՛ւ Եգիպտոս: ⁸Եւ դարձուցին զՄովսէս և զԱհարոն առ փարաւոն. և ասէ ցնոսա. Երթայք պաշտեցէ՛ք զՏէր Աստուած ձեր. բայց ո՞վ և ո՞վ իցեն որ երթայցեն: ⁹Եւ ասէ Մովսէս. Երիտասարդօք հանդերձ՝ և ծերովք մերովք երթիցուք. ուստերօք և դաստերօք մերովք. արջառով և ոչխարով մերով երթիցուք. զի տօ՛ն է Տեառն Աստուծոյ մերոյ: ¹⁰Եւ ասէ ցնոսա. Եղիցի՛ այդպէս. Տէր ընդ ձեզ. քանզի արձակե՛մ զձեզ, միթէ և զստացուա՞ծս ձեր: Տեսանէ՞ք զի չարիք կան ՚ի ձեզ: ¹¹Մի՛ այդպէս. այլ երթիցեն ա՛րք և եթ, և պաշտեսցեն զԱստուած. քանզի զայդ իսկ խնդրէիք դուք: Եւ հանին զնոսա յերեսաց փարաւոնի: ¹²Եւ ասէ Տէր ցՄովսէս. Չգեա՛ զձեռն քո ՚ի վերայ երկրիդ Եգիպտացւոց, և ելցէ մարախ ՚ի վերայ երկրիդ Եգիպտացւոց, և կերիցէ զամենայն բանջար երկրիդ. և զամենայն պտուղ ծառոց զոր եթող կարկուտն:

* Ոմանք. Գիտեն զի չև ևս եր՛:

* Ոմանք. ՚ի սոյն ժամ վաղիւ:

* Ոմանք. Եւ ո՛չ կարիցեն տեսանել զերկիրն: և կերիցէ զամենայն զնշխարն:

* Ոմանք. Եւ ո՛չ հարք նոցա յորմէ օրէ:

¹³Եւ ամբարձ Մովսէս զձեռն իւր յերկինս. և ա՛ծ Տէր հողմ հարաւոյ յերկիր զտիւն ամենայն՝ և զգիշերն ամենայն: իբրև առաւօտ եղև, և հողմ հարաւոյ ա՛ռ զմարախն, ¹⁴և եհան յամենայն երկիրն Եփրատացւոց. և դադարեցոյց ՚ի վերայ ամենայն սահմանացն Եփրատացւոց: Յառաջ քան զայն ո՛չ եղև այնպիսի մարախ. և յետ այնորիկ ո՛չ եղև այնպիսի: ¹⁵Եւ ծածկեա՛ց զամենայն երեսս երկրին. և ապականեցաւ երկիրն. և եկեր զամենայն բանջար երկրին. և զամենայն պտուղ ծառոց, ուր մնաց ՚ի կարկտէ անտի. և ո՛չ մնաց կանաչ, ո՛չ ՚ի ծառս և ո՛չ յամենայն բանջար դաշտի յամենայն երկրին Եփրատացւոց* : ¹⁶Եւ փութացաւ փարաւոն կոչել զՄովսէս և զԱհարոն, և ասէ. Մեղա՛յ առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ և ձեզ: ¹⁷Արդ՝ ներեցէ՛ք այսմ ևս յանցանաց իմոց. և աղաչեցէ՛ք առ Տէր Աստուած ձեր, և փարատեսցէ՛ յինէն զմարախս զայս: ¹⁸Եւ ել Մովսէս ՚ի փարաւոնէ. և եկաց յաղօթս առ Աստուած: ¹⁹Եւ դարձոյց Տէր հողմ սաստիկ ՚ի ծովէ, և ա՛ռ զմարախն և ամաց ՚ի ծովն Կարմիր. և ո՛չ մնաց մարախ յամենայն երկիրն Եփրատացւոց* : ²⁰Եւ խստացոյց Տէր զսիրտն փարաւոնի, և ո՛չ արձակեաց զորդիսն Իսրայէլի:

ԻԶ/թ ²¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Չգեա՛ զձեռն քո յերկինս. և եղիցի խաւար ՚ի վերայ երկրիդ Եփրատացւոց. խաւար՝ շօշափելի: ²²Չգեաց Մովսէս զձեռն իւր յերկինս. և եղև խաւար և մէզ և մութ ՚ի վերայ ամենայն երկրին Եփրատացւոց զերիս աւուրս: ²³Եւ ո՛չ ոք տեսանէր զեղբայր իւր զերիս աւուրս: և ո՛չ ոք յարեաւ յանկողնոյ իւրմէ զերիս աւուրս: բայց ամենայն որդւոցն Իսրայէլի լո՛յս էր յամենայն բնակութիւնս իւրեանց* : ²⁴Եւ կոչեաց փարաւոն զՄովսէս և զԱհարոն և ասէ ցնոսա. Երթա՛յք պաշտեցէ՛ք զՏէր Աստուած ձեր, բայց զարջառ և զոչխար ձեր աստէ՛ն թողէք. և այլ աղիսդ ձեր՝ երթիցեն ընդ ձեզ: ²⁵Եւ ասէ Մովսէս. Նա և դո՛ւ ևս տացես մեզ ողջակէզս և զոհս՝ զոր առնիցենք Տեառն Աստուծոյ մերում: ²⁶Այլ մեր անասո՛ւն իսկ երթիցէ ընդ մեզ, և ո՛չ թողուցումք և ո՛չ կճղակ մի. քանզի ՚ի նոցանէ՛ առնուցումք պաշտել զՏէր Աստուած մեր. և մեք ո՛չ զիտենք զինչ մատուցանիցենք Տեառն Աստուծոյ մերում մինչև անդր հասանիցենք: ²⁷Եւ խստացոյց Տէր զսիրտն փարաւոնի. և ո՛չ կամեցաւ արձակել զնոսա: ²⁸Եւ ասէ փարաւոն. ՚Ի բա՛ց գնա յինէն. զգո՛յշ լեր անձին քում. մի՛ ևս յաւելուցուս տեսանել զերեսս իմ. զի յորում աւուր երևիս դու ինձ՝ մեռանիս* : ²⁹Եւ ասէ Մովսէս. Ասացեր՝ ո՛չ ևս երևեցայց երեսաց քոց:

11

Գլուխ ԺԱ

¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Այլ մևս ևս հարուածս ածից ՚ի վերայ փարաւոնի և ՚ի վերայ Եփրատոսի. և ապա՛ արձակեսցէ զձեզ աստի. այլ յորժամ արձակեսցէ զձեզ, ամենևին հանցէ զձեզ աստի* : ²Արդ՝ խօսեաց գաղտ յականջս ժողովրդեանն, և խնդրեսցեն իւրաքանչի՛ւր ոք յընկերէ իւրմէ, և կին ՚ի դրացւոյ իւրմէ անօթս ոսկեղէնս և անօթս արծաթեղէնս, և հանդերձս: ³Եւ ետ Տէր շնորհս

* Այլք. Ծառոց, որ մնաց ՚ի կար՝. յամենայն երկիրն Եփրատացւոց:

* Ոմանք. Եւ ամայաց ՚ի ծովն Կար՝:

* Այլք. Եւ ո՛չ յարեաւ ոք յանկողն: Ուր ոմանք. Յանկողնէ իւրմէ:

* Ոմանք. Երևեսցիս դու ինձ:

* Այլք. Ամենևին հանիցէ զձեզ:

ժողովրդեան իւրում առաջի Եգիպտացւոցն. և ետուն նոցա ՚ի զարդ: Եւ այրն Մովսէս մեծարոյ՝ եղև յոյժ առաջի Եգիպտացւոցն, և առաջի փարաւոնի, և առաջի ամենայն ծառայից նորա. և յաչս ժողովրդեանն*։ ⁴Եւ ասէ Մովսէս. Այսպէս ասէ Տէր. Չհասարակ գիշերաւ ե՛ս մտից ՚ի մէջ Եգիպտոսի։ ⁵Եւ սատակեցի՛ց զամենայն անդրանիկ յերկրէդ Եգիպտացւոց, յանդրանկէ անտի փարաւոնի որ նստի յաթոռ նորա, մինչև ցանդրանիկ աղախնոյն որ կայցէ առ երկանս, և մինչև ցանդրանիկ ամենայն անասնոց*։ ⁶Եւ եղիցի աղաղակ մեծ յամենայն երկրիդ Եգիպտացւոց. որպիսի ո՛չ եղև, և ո՛չ ևս յաւելուցու լինել նոյնպիսի։ ⁷Եւ ՚ի մէջ ամենայն որդւոցն Իսրայէլի ո՛չ կռնչեսցէ և ո՛չ շուն մի լեզուաւ իւրով, և ո՛չ ՚ի մարդոյ մինչև յանասուն. զի գիտացես ո՞րչափ ինչ սքանչելիս արասցէ՛ Տէր ՚ի մէջ Եգիպտացւոցդ՝ և ՚ի մէջ Իսրայէլի։ ⁸Եւ իջցեն ամենայն ծառայքս քո այսոքիկ առ իս. և երկիր պագցեն ինձ և ասասցեն. Ե՛լ դու և ամենայն ժողովուրդ քո, որում դուդ առաջնորդես. և ապա՛ ելից։ ⁹Եւ ել Մովսէս ՚ի փարաւոնէ լի՛ բարկութեամբ։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ո՛չ լուիցէ ձեզ փարաւոն, զի յաճախեցից զնշանս և զարուեստս յերկրիդ Եգիպտացւոց*։ ¹⁰Եւ Մովսէս և Ահարոն արարին զամենայն նշանս և զարուեստս զայսոսիկ յերկրին Եգիպտացւոց առաջի փարաւոնի։ Եւ խստացոյց Տէր զսիրտն փարաւոնի, և ո՛չ կամեցաւ արձակել զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց։

12

Գլուխ ԺԲ

Իէ՛ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացւոց, և ասէ. ²Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ։ ³Խօսեա՛ց ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի և ասասցես. ՚Ի տասներորդում ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգաց իւրեանց. ոչխար ըստ երդ։ ⁴Եւ եթէ սակաւք իցեն ՚ի տանն, որպէս թէ չիցեն բաւական լինել ոչխարին՝ առցէ՛ ընդ իւր զդրացի իւր և զընկեր իւր ըստ մարդաթուի. իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն*։ ⁵Ոչխար կատարեալ՝ արու, տարևոր, անարատ լիցի ձեզ։ յօդեաց և յայծեաց առնուցուք. ⁶և եղիցի ձեզ պահեալ մինչև ՚ի չորս և ՚ի տասն աւուր ամսոյս այսորիկ։ և զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի ընդ երեկս։ ⁷և առցեն յարեմէ անտի և դիցեն ՚ի վերայ երկուց սեմոցն և բարաւորին տանցն յորս ուտիցեն զնա ՚ի նոսա։ ⁸Եւ կերիցեն զմիսն ՚ի գիշերիս յայսմիկ խորովեալ հրով. և բաղարջ ընդ եղիգի կերիցեն*։ ⁹Եւ ո՛չ ուտիցէք ՚ի նոցանէ հում, և ո՛չ պախ եփեալ ջրով. այլ խորովեալ հրով. զգլուխն ոտիւքն հանդերձ, և զփորոտին նորա։ ¹⁰Եւ ո՛չ թողուցուք ՚ի նմանէ յայգ. և ոսկր մի՛ բեկանիցէք ՚ի նմանէ։ և որ ինչ մնայցէ ՚ի նմանէ յայգ՝ հրով այրեսցիք։ ¹¹Եւ այսպէս ուտիցէք, գօտիք ձեր ընդ մէջս, և կօշիկք ձեր յոտս, և ցուպ ձեր ՚ի

* Ոսկան. Մեծարու եղև յոյժ։

* Այլք. Եւ սատակեցի ամենայն անդրանիկ յերկրին. Ուր ոմանք. յերկրէն եգ՞։

* Ոմանք յաւելուն. Չնշանս իմ և զար՞։

* Ոսկան. Եւ եթէ սակաւ իցէ ՚ի տանն, որպէս թէ չիցէ բա՞։

* Ոմանք. Բաղարջ ընդ եղեգի կե՞։

ծեռին: փութանակի ուտիցէք, զի գատիկ Տեառն է*։ ¹²Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպտացւոց ՚ի գիշերիս յայսմիկ, և հարից զամենայն անդրանիկ երկրիդ Եգիպտացւոց ՚ի մարդոյ մինչև յանասուն: և յամենայն դիսն Եգիպտացւոց արարից վրէժխնդրութիւն, զի ես եմ Տէր*։ ¹³Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ՚ի վերայ տանց՝ յորս ուտիցէք դուք անդ: և տեսից զարիւնդ և ապրեցուցից զձեզ. և ո՛չ լինիցին ՚ի ձեզ հարուածք ՚ի սատակել՝ յորժամ հարկանիցեն յերկրիդ Եգիպտացւոց*։ ¹⁴Եւ եղիցի ձեզ արիւնդ այդ ՚ի յիշատակ, և տօնեցէք զդա՝ տօն Տեառն յազգս ձեր. օրէն յաւիտենական տօնեցէք զդա: ¹⁵Ձեւթն օր բաղարջ ուտիցէք, յառաջնմէ իսկ օրէ անտի՝ անհետ առնիջիք զխմոր ՚ի տանց ձերոց: ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի՝ անձն այն յիսրայէլէ: ¹⁶Յառաջնմէ օրէն մինչև յօրն եւթներորդ. և օրն եւթներորդ նուիրեալ եղիցի ձեզ սո՛ւրբ. զամենայն գործ սպասու մի՛ գործիցէք ՚ի նմա, բայց միայն որ գործիցի ամենայն անձին՝ այն միայն գործեսցի ձեզ*։ ¹⁷Եւ պահեսջիք զպատուիրանս իմ զայս, զի յաւուր յայսմիկ հանից զգօրութիւն ձեր յերկրս Եգիպտացւոց. և առնիցէք զօրս զայս յազգս ձեր օրէն յաւիտենական: ¹⁸Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ. յերեկորեայ բաղարջ ուտիցէք, մինչև ցքսան և մի օր ամսոյն ցերեկոյ: ¹⁹Ձեւթն օր մի՛ գտցի խմոր ՚ի տունս ձեր. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի՝ անձն այն յիսրայէլէ: յեկաց և ՚ի բնակաց երկրին* ²⁰խմորեալ մի՛ ուտիցեն. յամենայն բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ*։

ԻԸ ²¹Եւ կոչեաց Սովսես զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի. և ասէ ցնոսա. Երթա՛յք առէք ձեզ ոչխար ըստ ազգս ձեր, և զենջիք ՚ի գատիկ*։ ²²Եւ առնուցուք մշտիկ զոպայի թաթաւեալ յարեան որ առ դրօքն իցէ, և սրսկեսջիք զբարաւորան և զերկոքումբք սենովքն յարենէ անտի որ առ դրօքն. բայց դուք մի՛ ելանիցէք իւրաքանչիւր ընդ դուռն տան իւրոյ մինչև ցառաւօտ*։ ²³Եւ անցցէ Տէր հարկանել զԵգիպտացիսդ: Եւ տեսանիցէ զարիւնն որ ՚ի վերայ բարաւորին և ՚ի վերայ երկուց սենոց, և զանց առնիցէ Տէր զդրօքն. և ո՛չ տայցէ թոյլ սատակչին մտանել ՚ի տունս ձեր և հարկանել: ²⁴Եւ պահեսջիք զբանս զայս՝ օրէն յաւիտենական քե՛զ և որդւոց քոց, մինչև ցյաւիտեան*։ ²⁵Եւ եթէ մտանիցէք յերկիրն զոր տացէ ձեզ Տէր՝ որպէս և խօսեցան, պահեսջիք զպաշտօնդ զայդ: ²⁶Եւ եղիցի եթէ ասիցեն ցձեզ որդիք ձեր. Չի՞նչ է պաշտօնս այս ձեզ. ²⁷ասասջիք նոցա, եթէ զո՛հ գատիկ Տեառն է այս. յորժամ պահեաց զտունս որդւոցն Իսրայէլի յԵգիպտոս. մինչ հարկանէր զԵգիպտացիսն, և զտունս մեր ապրեցոյց: Եւ խոնարհեցաւ ժողովուրդն՝ և երկիծր եպագ: ²⁸Եւ գնացեալ որդիքն Իսրայէլի արարին որպէս պատուիրեաց Տէր Սովսիսի և Ահարոնի, նոյնպէս և արարին:

* Այլք. Եւ ցուպք ձեր ՚ի ձե՛ն:

* Ոմանք. Անդրանիկ՝ յերկրիդ Եգ՝:

* Ոմանք. Յորս իցէք դուք անդ:

* Ոմանք. Յառաջնմէ օրէ անտի մինչև ցօրն եւթներորդ նուիրեալ եղի՞ն:

* Ոմանք. Անձն այն ՚ի ժողովրդենէ Իսրայէլի, յեկաց և ՚ի բնակչաց երկ՞:

* Ոմանք. Խմորեալ մի՛ ուտիցես: Ուր Ոսկան. մի՛ ուտիցէք:

* Ոմանք. Ըստ ազգաց ձերոց:

* Ոմանք. Իւրաքանչիւր ըստ դրունս տան իւրոյ:

* Ոմանք. Եւ պահեսջիք զբանս զայս օրէն քեզ և: *Յօրինակին՝ բառքս մինչև ցյաւիտեան, կարմրադեղով նշանակի: զորովք ոմանք իսպառ զանց առնեն:*

ԻԹ/Ժ²⁹ Եւ եղև ՚ի հասարակ գիշերի՝ և Տէր եհար զամենայն անդրանիկս յերկրին Եգիպտացւոց. յանդրանկանէ՛ անտի փարաւոնի որ նստէր յաթոռ նորա, մինչև յանդրանիկ գերւոյն որ կայր ՚ի վիրապի. և զամենայն անդրանիկ անասնոց*։³⁰ Եւ յարեաւ փարաւոն գիշերայն, ի՛նքն և ամենայն ծառայք իւր, և ամենայն Եգիպտացիք. և եղև աղաղակ մեծ յամենայն երկրին Եգիպտացւոց. զի ո՛չ գոյր տուն յորում ո՛չ գոյր մեռեալ ՚ի նմա*։³¹ Եւ կոչեաց փարաւոն զՄովսէս և զԱհարոն գիշերայն, և ասէ ցնոսա. Արիք և ելէք ՚ի ժողովրդենէ իմմէ. և դուք և որդիքն Իսրայէլի, երթա՛յք պաշտեցէք զՏէր Աստուած ձեր. որպէս ասացէք։³² Եւ զարջառ և զոչխար ձեր առեալ զնացէք՝ որպէս և ասացէք. բայց և զիս օրհնեցէք։³³ Եւ բռնադատէին Եգիպտացիքն զժողովուրդն փութանակի՛ հանել զնոսա յերկրէ անտի. քանզի ասէին՝ թէ ամենեքեան իսկ մեռանիմք։

Լ³⁴ Եւ ա՛ն ժողովուրդն զհայսն իւրեանց մինչ չև՛ խմորեալ էր. զգանգուածս իւրեանց ծրարեալ ՚ի կտաւս իւրեանց՝ ՚ի վերայ ուսոց իւրեանց։³⁵ Եւ որդիքն Իսրայէլի արարին որպէս և հրաման ետ նոցա Մովսէս. և խնդրեցին յԵգիպտացւոցն անօթս ոսկեղէնս և անօթս արծաթեղէնս, և հանդերձս։³⁶ Եւ ետ Տէր շնորհս ժողովրդեան իւրում առաջի Եգիպտացւոցն, և ետուն նոցա ՚ի զարդ՝ և կողոպտեցին զԵգիպտացիսն։³⁷ Եւ չուեցին որդիքն Իսրայէլի յՌամեսսայ ՚ի Սոկրովթ, վեց հարիւր հազար այր հետևակ, թո՛ղ զայլ աղխ՛։³⁸ Եւ խառնիճաղանճ բազում ել ընդ նոսա. և արջառ և ոչխար և անասուն բազում յոյժ։³⁹ Եւ եփեցին զհայսն զոր հանին յԵգիպտոսէ, նկանս բաղարջս, քանզի ո՛չ խմորեցաւ. զի հանին զնոսա Եգիպտացիքն՝ և ո՛չ կարէին մնալ, և ո՛չ պաշար արարին իւրեանց ճանապարհին*։⁴⁰ Եւ բնակութիւն որդւոցն Իսրայէլի զոր բնակեցին յերկրին Եգիպտացւոց և յերկրին Քանանացւոց, ինքեանք և հարք իւրեանց. անք չորեք հարիւր և երեսուն։ Եւ եղև յետ չորեքհարիւր և երեսուն ամի,⁴¹ յաւուր յայնմիկ ելին ամենայն զօրութիւնք Տեառն յերկրէն Եգիպտացւոց⁴² գիշերի. որ է յառաջապահեստ Տեառն հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. այն գիշեր յառաջապահեստ Տեառն լինել ամենայն որդւոցն Իսրայէլի յազգս նոցա։

ԼԱ⁴³ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. Այս է օրէն զատկի. ամենայն այլազգի մի՛ կերիցէ ՚ի նմանէ։⁴⁴ Եւ զամենայն ծառայ ուրուք և զարծաթագին թլփատեսցեն, և ապա՛ կերիցէ ՚ի նմանէ*։⁴⁵ Պանդուխտն և վարձկանն մի՛ կերիցէ ՚ի նմանէ։⁴⁶ Ի տան միում կերիցի. և մի՛ հանիցէք ՚ի մսոյ անտի արտաքս քան զտունն։ և Ոսկր մի՛ բեկանիցէք ՚ի նմանէ։⁴⁷ Ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի առնիցեն զայն*։⁴⁸ Ապա թէ մերձենայցէ առ ձեզ եկամուտ՝ և առնիցէ զգատիկն Տեառն, թլփատեսցեն զամենայն արու մանուկ նորա, և ապա՛ մերձեսցի առնել զնա և եղիցի իբրև զբնակ երկրին։ ամենայն անթլփատ մի՛ կերիցէ ՚ի նմանէ*։⁴⁹ Օրէն՝ մի և նոյն կացցէ բնակին և եկին՝ որ զայցէ մերձենալ ՚ի ձեզ։⁵⁰ Եւ արարին ամենայն որդիքն Իսրայէլի՝ որպէս

* Ոմանք. Եւ զամենայն անդրանիկ անասնոյ։

* Յօրինակին. Յորում ո՛չ գոյ մեռ՛։

* Ոմանք. Ի Յռամեսայ ՚ի Սոքրովթ։ Յօրինակին՝ վեց հարիւր հազար այր, կարմրադեղով նշանակի։

* Ոմանք. Եւ ո՛չ կամէին մնալ, և։

* Ոմանք. Եւ զամենայն ծառայս ուրուք, և։

* Ոմանք. Առնիցէ զայն։

* Այլք. Թլփատեսցես զամենայն ա՛։

պատուիրեաց Տէր Մովսիսի և Ահարոնի, նոյնպէս և արարին*։ ⁵¹Եւ եղև յաւուր յայնմիկ՝ եհան Տէր զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց հանդերձ զօրութեամբ իւրեանց։

13

Գլուխ ԺԳ

ԼԲ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Սրբեա՛ դու ինձ զամենայն անդրանիկս նախծին որ բանայ զամենայն արգանդ՝ ի մէջ որդւոցն Իսրայէլի. ՚ի մարդո՛յ մինչև յանասուն՝ քանզի ի՛ն է*։ ³Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն. Յիշեսջի՛ք զօրս զայս յորում ելէք յեգիպտոսէ՛ ՚ի տանէ ծառայութեան. զի հզօ՛ր ձեռամբ եհան զձեզ Տէր աստի. և ո՛չ ուտիցէք խմորուն*։ ⁴Ձի յայսմ աւուր ելէք դուք յամսեանս կանխոց*։ ⁵Եւ եղիցի յորժամ եթէ տանիցի զքեզ Տէր Աստուած քո յերկրին Քանանացւոց, և Քետացւոց, և Ամովրիացւոց, և Խևացւոց, և Յեբուսացւոց, և Փերեզացւոց և Գերգեսացւոց. զոր երդուա՛ւ հարցն քոց տալ քեզ, երկիր որ բոխէ՛ զկաթն և զմեղր. և արասցէ՛ս զպաշտօնս զայս յամսեանս յայսմիկ*։ ⁶Ձեւթն օր բաղարջ կերիջի՛ք. և յաւուրն եւթներորդի տօ՛ն Տեառն։ ⁷Բաղարջ կերիջիք. զեւթն օր ո՛չ երևեսցի առ քեզ խմորուն. և ո՛չ եղիցի խմոր յամենայն սահմանս քո։ ⁸Եւ պատմեսցես որդւոյ քում յաւուր յայնմիկ և ասասցես. Վասն այնորիկ արար ինձ Տէր Աստուած. մինչ ելանէի յեգիպտոսէ։ ⁹Եւ եղիցի քեզ նշան՝ ՚ի ձեռին քում, և յիշատակ առաջի աչաց քոց. զի լինիցին օրէնք Տեառն ՚ի բերան քում. զի հզօր ձեռամբ եհան զքեզ Տէր յեգիպտոսէ*։ ¹⁰և պահեսջիք զօրէնս զայս ՚ի ժամանակաց ՚ի ժամանակս, և աւուրց յաւուրս*։ ¹¹Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր Աստուած քո յերկիրն Քանանացւոց՝ որպէս երդուաւ քեզ և հարցն քոց. և տացէ զնա քեզ. ¹²զատուցէ՛ս Տեառն զամենայն արու որ բանայ զարգանդ. և զամենայն որ բանայ զարգանդ յանդէոց և յանասնոց քոց որ լինիցի քեզ. արուքն սո՛ւրբ Տեառն լինիցին։ ¹³Եւ զամենայն որ բանայցէ զարգանդ իշոյ, փոխանակեսցես ընդ ոչխարի. և եթէ ո՛չ փոխանակեսցես, փրկեսցէ՛ս զնա. զամենայն անդրանիկս որդւոց քոց փրկեսցէ՛ս։ ¹⁴Եւ եթէ հարցանիցէ զքեզ որդին քո յետ այտորիկ և ասիցէ՛ թէ զի՞նչ է այդ. ասասցէ՛ս ցնա. Ձի հզօր ձեռամբ եհան զմեզ Տէր յերկրէն Եգիպտացւոց ՚ի տանէ ծառայութեան։ ¹⁵Յորժամ խստացաւ փարաւոն չարձակել զմեզ. կոտորեաց Տէր զամենայն անդրանիկս յերկիրն Եգիպտացւոց. յանդրանկէ մարդոյ մինչև ցանդրանիկս անասնոյ։ Վասն այնորիկ ես մատուցանեմ Տեառն զամենայն արու որ բանայ զարգանդ. և զամենայն անդրանիկս որդւոց ինոց փրկեսցի՛ց*։ ¹⁶Եւ եղիցի նշան՝ ՚ի վերայ ձեռին քոյ. և անշարժ առաջի աչաց քոց.

* Այլք. Նոյնպէս արարին։

* Ոմանք. Ձամենայն անդրանիկ նախծին.. ՚ի մէջ որդւոցդ Իսրայէլի։

* Այլք. Եհան զմեզ Տէր աստի։

* Ոմանք. Աւուր ելանէք դուք յամսեան կանխոյ։

* Ոմանք. Եթէ տանիցէ.. յերկիրն Քանա՛ն։

* Բազումք. Եւ եղիցի քեզ ՚ի նշան ՚ի վերայ ձեռին քո։

* Ոմանք. ՚Ի ժամանակէ ժամանակս և յաւուրց աւ՛։

* Ոմանք. Յանդրանկանէ մարդոյ մինչև յանդրանիկ.. վասն այտորիկ ես։

քանզի հզօր ձեռանք եհան զմեզ Տէր յերկրէն Եգիպտացւոց*:

ԼԳ ¹⁷Եւ իբրև արծակեաց փարաւոն զժողովուրդն. ո՛չ առաջնորդեաց նոցա Աստուած ընդ երկիրն Փղշտացւոց, ընդ կարծոյ ճանապարհն. քանզի ասաց Աստուած, թէ գուցէ զանգիտիցէ ժողովուրդն՝ յորժամ տեսանիցէ զպատերազմն, և դառնայցէ՛ յԵգիպտոս: ¹⁸Եւ պատեաց ած Աստուած զժողովուրդն ընդ ճանապարհ անապատին՝ առ Կարմիր ծովուն: Եւ ՚ի հինգերորդ ազգի ելին որդիքն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց*:¹⁹Եւ ա՛ռ Մովսէս զոսկերսն Յովսեփու ընդ իւր. քանզի երդմնեցո՛յց Յովսեփ զորդիսն Իսրայէլի, և ասէ. Եթէ այցելութեամբ ա՛յց արասցէ ձեզ Տէր, հանջի՛ք զոսկերս իմ աստի ընդ ձեզ: ²⁰Եւ չուեալ որդւոցն Իսրայէլի ՚ի Սոկքովթայ, բանակեցան յՌթոմ առ անապատին*:²¹Եւ Աստուած առաջնորդէր նոցա ցերեկ՝ սեանք ամպոյ. ցուցանել նոցա զճանապարհն. և զցայգ՝ սեանք հրոյ, լուսատու՛ լինել նոցա ՚ի գնալն՝ զցայգ և զցերեկ*:²²Եւ ո՛չ պակասէր սիւն ամպոյն ՚ի տուէ, և սիւն հրոյն ՚ի գիշերի. առաջի ամենայն որդւոցն Իսրայէլի*:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի, և դարձցին բանակեսցին դէմ յանդիման Յանգրուանին. ընդ Մագդովդ և ընդ ծովն. հանդէպ Բեէղսեպփոնեայ. յանդիման նոցա բանակեսցիս առ ծովեզերքն*:³Եւ ասասցէ փարաւոն զորդւոցդ Իսրայէլի թէ մոլորեա՛լ են յերկրին, քանզի պատեաց զնոսա անապատն: ⁴Եւ ես խստացուցի՛ց զսիրտն փարաւոնի և պնդեսցի զհետ դոցա: ⁵Եւ փառաւորեցայ՛ց ՚ի փարաւոն և յամենայն զօրս նորա. և ծանիցեն ամենայն Եգիպտացիքն թէ ե՛ս եմ Տէր: Եւ արարին ա՛յնպէս:

ԼԴ ⁶Եւ ա՛զդ եղև արքային Եգիպտացւոց եթէ փախեաւ ժողովուրդն: Եւ շրջեցաւ սիրտն փարաւոնի՝ և ծառայից իւրոց ՚ի վերայ ժողովրդեանն, և ասեն. Ձի՞նչ գործեցաք զայն զի արծակեցաք զորդիսն Իսրայէլի, զի մի՛ ծառայեսցեն մեզ: ⁷Եւ հանդերձեաց փարաւոն զկառս իւր. և տարաւ ընդ իւր զամենայն ժողովուրդն իւր. և ա՛ռ վեցհարիւր կառս ընտիրս, և զամենայն երիվարս Եգիպտացւոց, և սպառազէնս ՚ի վերայ ամենեցուն*:⁸Եւ խստացոյց Տէր զսիրտն փարաւոնի արքային Եգիպտացւոց, և պնդեցաւ զհետ որդւոցն Իսրայէլի. և որդիքն Իսրայէլի ելանէին բարձրացեալ ձեռամբ: ⁹Եւ պնդեցան Եգիպտացիքն զհետ նոցա, և գտին զնոսա բանակեալս առ ծովեզերքն. և ամենայն երիվարք՝ և կառք փարաւոնի, և հեծեալք նորա և զօրք նորա յանդիման Յանգրուանին. հանդէպ Բեէղսեպփոնայ: ¹⁰Եւ եհաս մօտ փարաւոն: Եւ համբարձեալ որդւոցն Իսրայէլի զաչս իւրեանց տեսանէին՝ զի բանակեցան Եգիպտացիքն ՚ի թիկանց

* *Բագու՛մք.* Չմեզ Տէր յԵգիպտոսէ:

* *Ոմանք.* Եւ պատեաց ած Տէր Աստուած զժո՛ւ:

* *Ոմանք.* ՅՌթոմ առ անապատաւն:

* *Ոմանք.* Յուցանելով նոցա զճա՛:

* *Ոմանք.* Առաջի ամենայն ժողովրդեանն:

* *Այլք.* Բեէղսեպփոնեայ:

* *Յօրինակին՝ անունս* Երիվար, *ուրեք ուրեք ՚ի գիրս յայս և ՚ի յաջորդս՝ գրեալ էր* երիւար. *զոր մեք յամենայնի միապէս եղաք ըստ սովորականին.*

նոցա, և երկեան յոյժ: ¹¹Եւ բողոքեցին որդիքն Իսրայէլի առ Տէր: Եւ ասեն ցՄովսէս. Իբրև թէ ո՞չ գոյին գերեզմանք յերկրին Եգիպտացոց. հաներ զմեզ սպանանե՞լ յանապատի աստ. զի՞նչ գործեցեր զայս ընդ մեզ, զի հաներ զմեզ յԵգիպտոսէ՞: ¹²Ո՞չ այս այն բանք են՝ զոր խօսեցաք ընդ քեզ յերկրին Եգիպտացոց, թէ թո՛յլ տուր մեզ զի ծառայեսցուք Եգիպտացոցն. զի լա՛ւ էր մեզ ծառայել Եգիպտացոցն, քան մեռանել յայսմ անապատի: ¹³Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն. Քաջալերեցարո՛ւք, պի՛նդ կացէք. և տեսանիցէք զփրկութիւն ՚ի Տեառնէ զոր արասցէ ձեզ այսօր. զի զոր օրինակ տեսէք զԵգիպտացիսն այսօր, ո՛չ ևս յաւելուցուք տեսանել զնոսա յաւիտեանս ժամանակաց: ¹⁴Տէր տայ պատերազմ ընդ ձեր, և դուք լռեցէ՛ք: ¹⁵Եւ ասէ Տէր ցՄովսէս. Չի՞՞ զոչես առ իս. խօսեաց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և չուեսցեն: ¹⁶Եւ դու ա՛ռ զգաւազանդ քո. և ձգեա՛ զձեռն քո ՚ի վերայ ծովուն և սպառեա՛ զնա. և մտցեն որդիքն Իսրայէլի ՚ի մէջ ծովուն ընդ ցամաք՞: ¹⁷Եւ ահա ես խստացուցի՛ց զսիրտն փարաւոնի, և զԵգիպտացոցն ամենեցուն, և մտցեն զկնի դոցա: Եւ փառաւորեցայ՛ց ես ՚ի փարաւոն և յամենայն զօրս նորա, և ՚ի կառս նորա և յերիվարս նորա: ¹⁸Եւ ծանիցեն ամենայն Եգիպտացիքն՝ թէ ե՛ս եմ Տէր. ՚ի փառաւորել իմում ՚ի փարաւոն՝ և ՚ի կառս նորա և յերիվարս նորա: ¹⁹Եւ ամբարձա՛ւ հրեշտակն Աստուծոյ որ երթայր առաջի բանակի որդւոցն Իսրայէլի. և չոգաւ զկնի նոցա. և վերացաւ սիւն ամպոյն յերեսաց նոցա, և եկաց ՚ի թիկանց նոցա: ²⁰Եւ եմուտ ՚ի մէջ բանակի Եգիպտացոցն, և ՚ի մէջ բանակի Իսրայէլացոցն, և եղև խաւար և մեզ. և անց գիշերն. և ո՛չ խառնեցան ընդ միմեանս զամենայն գիշերն: ²¹Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ՚ի վերայ ծովուն. և դարձո՛յց անդրէն զծովն բռնութեամբ հողմոյ հարաւոյ զամենայն գիշերն. և արա՛ր զծովն ցամաք. և պատառեցաւ ջուրն: ²²Եւ մտին որդիքն Իսրայէլի ՚ի մէջ ծովուն ընդ ցամաք: Եւ եղև ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա, և ընդ ահեկէ իւրեանց՞:

ԼԵ ²³Պնդեցան Եգիպտացիքն՝ և մտին զկնի նոցա, ամենայն երիվարք փարաւոնի, և կառք նորա, և հեծեալք նորա ՚ի մէջ ծովուն՞: ²⁴Եւ եղև յառաւօտին պահուն, հայեցա՛ւ Տէր ՚ի բանակն Եգիպտացոց սեամբ հրոյ և ամպոյ. և խռովեաց զբանակն Եգիպտացոցն՞. ²⁵և կապեաց զանիւս կառաց նոցա, և վարէր զնոսա բռնութեամբ: Ասեն Եգիպտացիքն. Փախիցո՛ւք յերեսաց Իսրայէլի. զի Տէր պատերազմի վասն նոցա ընդ Եգիպտացիսս: ²⁶Եւ ասէ Տէր ցՄովսէս. Չգեա՛ զձեռն քո ՚ի վերայ ծովուդ, և կարկատեսցի՛ անդրէն ջուրդ. և ծածկեսցէ՛ զԵգիպտացիսդ, և զկառս դոցա և զհեծեալս իւրեանց: ²⁷Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ՚ի վերայ ծովուն, և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ՚ի տեղի իւր: և Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն: և թօթափեաց Տէր զԵգիպտացիսն ՚ի մէջ ծովուն՞: ²⁸Եւ դարձուցեալ զջուրսն, ծածկեաց զկառս և զհեծեալս, և զամենայն զօրութիւն փարաւոնի. որ մտեալ էին զհետ նոցա ՚ի ծով անդր. և ո՛չ մնաց ՚ի նոցանէ և ո՛չ մի՞: ²⁹Եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն. և ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա և ընդ ահեկէ իւրեանց: ³⁰Եւ

* *Ոմանք.* Հանել զմեզ սպանանել յանա՛:

* *Այլք.* ՚ի վերայ ծովուն, և պատառեա՛ զնա: *Ոմանք.* Ընդ մէջ ծովուն ընդ ցամաք:

* *Ոմանք.* Որդիքն Իսրայէլի ՚ի մէջ ծովուն.. և ընդ ահեկէ նոցա:

* *Ոմանք.* Եւ պնդեցան Եգիպ՞:

* *Ոմանք.* Յառաւօտուն պահ՞:

* *Ոմանք.* Յերեսաց ջրոցն:

* *Ոմանք.* Եւ ո՛չ մնացին ՚ի նոցանէ և ոչ:

ապրեցոյց Տէր զԻսրայէլ յաւուր յայնմիկ ՚ի ձեռաց Եգիպտացոցն:

ԼԶ ³¹Եւ ետես Իսրայէլ զԵգիպտացիսն մեռեալս առ ափն ծովուն: Եւ ետես Իսրայէլ զձեռն մեծ զոր արար Տէր ընդ Եգիպտացիսն. և երկեալ ժողովուրդն ՚ի Տեառնէ. և հաւատացին յԱստուած՝ և ՚ի Մովսէս ծառայ նորա:

15

Գլուխ ԺԵ

¹Յայնժամ երգեաց Մովսէս՝ և որդիքն Իսրայէլի զօրհնութիւնս զայս Աստուծոյ, և ասեն. Օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ. Ձերիվարս և զհեծեալս նոցա ընկէ՛ց ՚ի ծով. ²օգնական ընդունելի իմ Տէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն: Սա՛ է իմ Աստուած և փառաւոր արարից զսա: Աստուած հօր իմոյ՝ և բա՛րձր արարից զսա՛: ³Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր անուն նորա: ⁴Ձկառս փարաւոնի՝ և զգօրութիւնս նորա ընկէ՛ց ՚ի ծով. զընտիրս հեծելոց և զսպառազէս. ընկղմեցան ՚ի ծով Կարմիր՛: ⁵Խորք ծածկեցին զնոսա. ընկլան յանդունդս իբրև զվէմս: ⁶Աջ քո Տէր փառաւորեալ է զօրութեամբ իւրով, աջ քո Տէր խորտակեաց զթշնամին: ⁷Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս, առաքեցեր զբարկութիւն քո, և եկեր զնոսա իբրև զեղէգն: ⁸Եւ հողմով սրտմտութեամբ քով պատառեցան ջուրք. պաղեցան որպէս պարիսպ ջուրք. պաղեցան ալիք ՚ի մէջ ծովուն՛: ⁹Ասա՛ց թշնամին. Հալածեցից և հասից, բաժանեցից զաւարն, և լցուցի՛ց ՚ի նոցանէ զանձն իմ: Սատակեցից սրով իմով. տիրեցէ՛ նոցա ձեռն իմ: ¹⁰Առաքեցեր զհողմն քո, և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան որպէս կապար ՚ի ջուրս սաստիկս: ¹¹Ո՞վ իցէ նման քեզ յաստուածս Տէր. և կան ո՞վ նմանիցէ քեզ փառաւորեալդ ՚ի սուրբս: Սքանչելի փառօք՝ որ առնես զնշանս. ¹²ձգեցեր զաջ քո՝ և եկուլ զնոսա երկիր: ¹³Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քուն, այսմ զոր փրկեցեր: Մխիթարեցեր զօրութեամբ քով ՚ի բանակետղ սրբութեան քոյ. ¹⁴լուան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչս Քանանացոց՛: ¹⁵Յայնժամ տազնապեցան դատաւորք Եդովմայ, և իշխանք Մովաբացոց: Կալաւ զնոսա դողումն, հալեցան ամենայն բնակիչք Քանանացոց: ¹⁶Անկցի ՚ի վերայ նոցա ա՛հ և երկիւղ. մեծութեամբ բազկի քոյ քարասցին: Մինչև անցցէ ժողովուրդ քո Տէր. մինչև անցցէ՛ ժողովուրդ քո այս զոր ստացար: ¹⁷Տարեալ տնկեսցես զնոսա ՚ի լեառն ժառանգութեան քոյ, ՚ի պատրաստութիւն բնակութեան քոյ: Չոր արարեր Տէր սրբութիւն. Տէր զոր պատրաստեցին ձեռք քո. ¹⁸Տէր թագաւոր յաւիտեան. և յաւիտեանս և և՛ս՛: ¹⁹Ձի մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նորա ՚ի ծով. և աճ ՚ի վերայ նոցա Տէր զջուրս ծովուն. և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն: ²⁰Եւ ա՛ռ Մարիամ մարգարէ քոյրն Ահարոնի զթմբուկն ՚ի ձեռին իւր. և ելին ամենայն կանայք զհետ նորա թմբկօք և պարուք՛: ²¹Եւ յառաջէր Մարիամ և ասէր. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք փառաւորեալ է.

* Ոճանք. Եւ փառաւորեցից զսա:

* Ոսկան. Ընկղմեաց ՚ի ծով Կարմիր:

* Ոճանք. Սրտմտութեան քո բաժանեցան ջուրք. պաղեցան իբրև պա՛:

* Ոճանք. Կալան զբնակիչս փղշտացոց:

* Ոճանք. Տէր թագաւորէ յաւի՛:

* Այլք. Ձթմբուկն ՚ի ձեռն իւր:

Ձերիվարս և զհեծեալս ընկե՛ց ՚ի ծով՝:

ԼԷ ²²Եւ խաղացո՛յց Մովսէս զորդիսն Իսրայէլի ՚ի Կարմիր ծովէ անտի. և ած զնոսա յանապատն ՚ի Սո՛ւր: Եւ զնացին երեքօրեայ ճանապարհ յանապատի անդ. և ո՛չ գտանէին ջուր ըմպելոյ: ²³Եկին ՚ի Մեռա, և ո՛չ կարէին ըմպել ջուր ՚ի Մեռայն. քանզի դա՛ռն էր. վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ՝ Դառնութիւն: ²⁴Եւ տրտնջեա՛ց ժողովուրդն զՄովսիսէ և ասեն. Ջի՞նչ արբցուք: ²⁵Աղաղակեաց Մովսէս առ Տէր: և եցոյց նմա Տէր փայտ: և արկ զայն ՚ի ջուրն, և քաղցրացա՛ւ ջուրն: Եւ անդ եղ նմա իրաւունս և դատաստանս. և անդ փորձեաց զնա, ²⁶և ասէ. Եթէ լսելո՛վ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քում, և զհաճոյս առաջի նորա արասցես, և ունկնդի՛ր լիցիս պատուիրանաց նորա. և պահեսցես զամենայն իրաւունս նորա. զամենայն զախտն զոր ածի ՚ի վերայ Եգիպտացւոցն, ո՛չ ածից ՚ի վերայ քո. զի ե՛ս եմ Տէր որ բժշկեմ զքեզ:

ԼԸ ²⁷Եւ եկին յԱղիմ. և էին անդ երկոտասան աղբեր ջուրց, և եւթանասուն ծառ արմաւենեաց. և անդ բնակեցան առ ջրովն՝:

16

Գլուխ ԺԶ

¹Չուեցին յեղիմայ, և եկին ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի յանապատն ՚ի Սին, որ է ընդ Եղիմ և ընդ Սինա՛:

ԼԹ Եւ յաւուր հինգետասաներորդի յերկրորդի ամսոյն ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացւոց. ²տրտնջեա՛ց ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի զՄովսիսէ և զԱհարոնէ յանապատի անդ: ³Եւ ասեն ցնոսա որդիքն Իսրայէլի. Լա՛ւ էր թէ մեռեալ էաք հարուածովքն ՚ի Տեառնէ յերկրին Եգիպտացւոց. մինչ նստէաք առ կաթսայ մսոյն, և ուտէաք հաց յագ. քան հանէք զմեզ յանապատս յայս, սպանանե՛լ զամենայն ժողովուրդս ՚ի սովոյ՝: ⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահա ես տեղացի՛ց ձեզ հաց յերկնից. և ելցե՛ ժողովուրդ իմ և ժողովեցեն զօրըստօրէն, զի փորձեցից զնոսա՝ եթէ զնայցե՞ն յօրէնս իմ, թէ ոչ: ⁵Եւ եղիցի յաւուրն վեցերորդի, պատրաստիցեն զոր ինչ բերիցենն. և եղիցի կրկին քան զայն, զոր օրըստօրէն ժողովիցեն: ⁶Եւ ասեն Մովսէս և Ահարոն ցամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի. Ընդ երեկոյս գիտասօժիք՝ եթէ Տէր եհան զձեզ յերկրէն Եգիպտացւոց. ⁷և առաւօտուց տեսիք զփառսն Տեառն. ՚ի լսել նորա զտրտունջ ձեր զԱստուծոյ. այլ մեք ո՛վ եմք զի տրտնջէք զմէնջ: ⁸Եւ ասէ Մովսէս. Ի տալ ձեզ Տեառն ընդ երեկոյս մի՛ս ուտելոյ. և ընդ առաւօտս հաց յագ. վասն լսելոյ Տեառն զտրտունջ ձեր զոր դուք տրտնջեցէք զմէնջ. քանզի մեք ո՞վ եմք. զի ո՛չ զմէնջ է տրտունջդ ձեր, այլ զԱստուծոյ: ⁹Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Ասա՛ ցամենայն ժողովուրդ որդւոցդ Իսրայէլի. Մատերո՛ւք առաջի Տեառն, քանզի լուաւ զտրտունջ ձեր: ¹⁰Մինչդեռ խօսէր Ահարոն ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, դարձան յանապատն. և ահա՛ փառք Տեառն երևեցան ամպով: ¹¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹²Լուա՛յ զտրտունջ որդւոցդ Իսրայէլի. արդ՝ խօսեա՛ց ընդ դոսա՛ և ասացես. Ընդ երեկոյս մի՛ս կերիջիք, և

* Ոմանք. Ձի փառօք է փառաւո՛:

* Բազումք. Եւ եկին յեղիմ.. և անդ բանակեցան առ ջր՝: Ուր յօրհնակին. Եւ եկն յԱղիմ:

* Ոմանք. Եւ յաւուրն հնգետա՛ ... ամսեանն ելա՛:

* Ոմանք. Մինչև նստէաք առ կատսայս:

ընդ առաւօտս հացի՛ւ յագեսցիք. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր Աստուած ձեր*։ ¹³Եւ եղև ընդ երեկոյսն, և ել լորամարգին և ծածկեաց զբանակն։ ¹⁴Եւ եղև ընդ առաւօտն՝ ընդ արկանել ցօղոյն շուրջ զբանական. և ահա՛ ՚ի վերայ երեսաց անապատին՝ մանր իբրև զգինձ, սպիտակ իբրև զեղեամն ՚ի վերայ երկրին*։ ¹⁵Իբրև տեսին զայն որդիքն Իսրայէլի, ասեն այր ցընկեր. Ջի՞նչ է այս։ Քանզի ո՛չ գիտէին զինչ իցէ։ Եւ ասէ ցնոսա Մովսէս. Այդ է հացն զոր ետ ձեզ Տէր ուտելոյ*։ ¹⁶Եւ այս բան է՝ զոր պատուիրեաց ձեզ Տէր. ժողովեցէք ՚ի դմանէ իւրաքանչիւր ըստ բաւականի՛ իւրում. չափով ըստ գլուխ. ըստ թւոյ անձանց ձերոց, ըստ իւրաքանչիւր ըստ վրանս ձեր ժողովեցէք։ ¹⁷Եւ արարին այնպէս որդիքն Իսրայէլի. և ժողովեցին, որ շատ և որ սակաւ։ ¹⁸Եւ չափեցին չափովն։ Որոյ շատն էր՝ ո՛չ յաւելաւ. և որոյ սակաւն էր՝ ո՛չ պակասեաց։ Իւրաքանչիւր ըստ բաւականի՛ իւրում ժողովեցին։ ¹⁹Եւ ասէ ցնոսա Մովսէս. Մի՛ ոք թողուցու այտի յայգ։ ²⁰Եւ ո՛չ լուան Մովսիսի. այլ թողին ոմանք ՚ի նմանէ յայգ, և եռաց ՚ի նմա որդն, և նեխեցաւ։ Եւ դառնացաւ ՚ի նոսա Մովսէս։ ²¹Եւ քաղէին այգուն այգուն իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում. և իբրև արևն ջեռնոյր՝ հալէր։ ²²Եւ եղև յաւուրն վեցերորդի ժողովեցին զպէտսն կրկին՝ երկուս չափս առ մի՛ մի։ և մտին ամենայն իշխանք ժողովրդեանն և պատմեցին Մովսիսի։

Իս ²³Ասէ ցնոսա Մովսէս. Այս բան է զոր խօսեցաւ Տէր. Շաբաթ՝ հանգիստ՝ սուրբ Տեառն վաղիւ։ որ ինչ եփելոց էք՝ եփեցէք, և որ ինչ հասուցանելոց էք՝ հասուցէք. և զամենայն զաւելորդն թողուցուք յամանս մինչև ցառաւօտ*։ ²⁴Եւ թողին ՚ի նմանէ յայգ. որպէս հրամայեաց նոցա Մովսէս. և ո՛չ նեխեցաւ, և ո՛չ եղև ՚ի նմա որդն*։ ²⁵Եւ ասէ Մովսէս. Կերայք զայդ այսօր. քանզի շաբաթ Տեառն է այսօր. ո՛չ գտանէք այսօր զայդ ՚ի դաշտի։ ²⁶Չվեց օր ժողովեցէք զայդ. և յաւուրն եւթներորդի շաբաթ. ո՛չ լինիցի ՚ի նմա*։ ²⁷Եւ եղև յաւուրն եւթներորդի՝ ելին ոմանք ՚ի ժողովրդենէ անտի քաղել՝ և ո՛չ գտին։ ²⁸Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մինչև յե՞րբ ո՛չ կամիք լսել պատուիրանաց իմոց և օրինաց։ ²⁹Տեսէք զի Տէր ետ ձեզ զօրս զայս շաբաթ. վասն այնորիկ ինքն ետ ձեզ յաւուրն վեցերորդի հաց՝ երկուց աւուրց։ Նստարուք իւրաքանչիւր ՚ի տունս ձեր. և մի՛ ոք ելանիցէ ՚ի տեղւոջէ իւրմէ յաւուրն եւթներորդի։ ³⁰Եւ շաբաթացաւ ժողովուրդն յաւուրն եւթներորդի։ ³¹Եւ անուանեցին որդիքն Իսրայէլի զանուն նորա Ման։ և նա՛ էր իբրև զսերմն զնձոյ՝ սպիտակ. և համ նորա իբրև զխորիսխ մեղու*։

Իս ³²Եւ ասէ Մովսէս. Այս բան է՝ զոր հրաման ետ Տէր. Լցէք լի չափով զմանանայդ յաման մի. և պահեցէք յազգս ձեր. զի տեսանիցէք զհացդ զոր կերայք դուք յանապատի աստ. ՚ի ժամանակի իբրև եհան զձեզ Տէր յերկրէն Եգիպտացոց։ ³³Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Ա՛ռ սափոր մի ոսկի, և արկցէ՛ս ՚ի նա լի չափովդ մանանայ, և դիցես զնա առաջի Աստուծոյ ՚ի պահեստ յազգս ձեր*։ ³⁴որպէս հրաման ետ Տէր Մովսիսի։ Եւ եդ զայն Ահարոն առաջի Վկայութեանն ՚ի պահեստ։ ³⁵Եւ որդիքն Իսրայէլի կերան զմանանայն զքառասուն ամ մինչև եկին

* Այլք. Արդ՝ խօսեաց ընդ նոսա՝ և։

* Ոմանք. ՚ի վերոյ երեսաց անա՞։

* Այլք. Ասեն ընկեր ցընկեր. Ջինչ է։

* Յօրինակին. Ջաւելորդն թողցուք յամանս։

* Ոմանք. Եւ ո՛չ եղև ՚ի նա որդն։

* Ոմանք. Շաբաթ է, ո՛չ լինիցի։

* Ոմանք. Ջանուն նորա մանանայ։

* Ոմանք. Եւ դիցես զդա առաջի Աստուծոյ։

ի շէն երկիրն, զմանանայն ուտէին. մինչև հասին ՚ի կողմն Փիւնիկեցոց*։ ³⁶Եւ չափն էր տասներորդ երից գրուաց։

17

Գլուխ ԺԷ

ԽԲ ¹Եւ չուեաց ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի ՚ի Սինն անապատ, ըստ բանակս իւրեանց բանիւ Տեառն։ և բանակեցան յՌափիդիմ։ Եւ ո՛չ գոյր ջուր ըմպել ժողովրդեան*։ ²Եւ բամբասէր ժողովուրդն զՄովսէս և ասէին. Տո՛ւր մեզ ջուր զի արբցուք։ Եւ ասէ ցնոսա Մովսէս. Ձի՞՞ բամբասէք զիս. և զի՞՞ փորձէք զՏէր։ ³Եւ ծարաւեաց անդ ժողովուրդն ՚ի ջրոյ։ և տրտնջեաց ժողովուրդն զՄովսէս, և ասեն. Ընդէ՞ր հաներ զմեզ յեգիպտոսէ, կոտորել՝ զմեզ և զորդիս մեր, և զխաշինս մեր ՚ի ծարաւոյ*։ ⁴Եւ բողոքեաց Մովսէս առ Տէր և ասէ. Ձի՞՞նչ արարից ժողովրդեանս այսմիկ. սակաւիկ մնա ևս, և քարկո՛ծ առնիցեն զիս։ ⁵Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ե՛րթ առաջի ժողովրդեանդ, և ա՛ռ ընդ քեզ ՚ի ծերոց ժողովրդեանդ. և զգաւագանն քո որով հարեր զգետն՝ ա՛ռ ՚ի ձեռին քում, և երթիցես*։ ⁶Եւ ես հասեալ կայցեմ անդ յառաջագոյն քան զքեզ ՚ի վերայ վիմին ՚ի Քորէբ։ և հարցես զվեմն և ելցէ՞ ՚ի նմանէ ջուր, և արբցէ՞ ժողովուրդդ։ Եւ արա՛ր այնպէս Մովսէս առաջի որդւոցն Իսրայէլի։ ⁷Եւ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ՝ Փորձութիւն, և Բամբասանս. վասն բամբասանաց որդւոցն Իսրայէլի, և վասն փորձելոյ նոցա զՏէր և ասելոյ, եթէ իցէ՞ ՚ի մեզ Տէր՝ և եթէ ոչ։

ԽԳ ⁸Եկն Ամաղէկ, և տայր պատերազմն ընդ Իսրայէլի յՌափիդիմ։ ⁹Եւ ասէ Մովսէս ցՅեսու. Ընտրեա՛ դու քեզ արս զօրաւորս, և ելեալ տացես պատերա՛զմ ընդ Ամաղէկայ առ վաղիւ։ և ահա ես եկեալ կայցեմ ՚ի վերայ գլխոյ բլրոյն, և գաւազանն Աստուծոյ ՚ի ձեռին իմում։ ¹⁰Եւ արար Յեսու որպէս ասաց նմա Մովսէս. և ճակատեցա՛ւ յանդիման Ամաղէկայ։ և Մովսէս և Ահարոն՝ և Ովր՝ ելին ՚ի գլուխ բլրոյն։ ¹¹Եւ լինէր յորժամ ամբառնայր Մովսէս զձեռս իւր, զօրանայր Իսրայէլ. և յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր, զօրանայր Ամաղէկ։ ¹²Եւ ծանրէին ձեռքն Մովսէսի. և առեալ վէն դնէին ընդ նովաւ, և նստէր ՚ի վերայ նորա. և Ահարոն և Ովր հաստատէին զձեռս նորա, մի աստի և մի անտի. և լինէին ձեռքն Մովսէսի հաստատեալք մինչև ցմտանել արեգականն։ ¹³Եւ եհար Յեսու զԱմաղէկ՝ և զամենայն զօրս նորա կոտորմամբ սրոյ։ ¹⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Գրեա՛ զայդ առ ՚ի յիշատակ ՚ի զիրս։ և տո՛ւր յականջս Յեսուայ. զի ջնջելով ջնջեցից զյիշատակ Ամաղէկայ յերկրէ ՚ի ներքոյ երկնից*։ ¹⁵Եւ շինեաց Մովսէս սեղան Տեառն. և անուանեաց զանուն նորա՝ Տէր ապաւեն իմ*։ ¹⁶և ասէ. Ձի ծածուկ ձեռամբ Տեառն պատերազմի Տէր ընդ Ամաղէկայ ազգաց յազգս։

18

* Ոմանք. ՚ի շէն երկրին, զմա՛:

* Ոսկան. Ջուր ըմպելոյ ժողո՛:

* Ոմանք. Եւ տրտնջեաց անդ ժողովուրդն:

* Յօրինակին պակասէր. ՚ի ձեռին քում, և երթիցես. և ես:

* Ոմանք. Ձյիշատակս Ամաղէկայ:

* Յօրինակին՝ Տէր ապաւեն իմ, կարմրադեղով նշանակի:

Գլուխ ԺԸ

ԽԴ ¹Եւ լուաւ Յոթոր քուրմ Մադիամու աներ Մովսիսի զամենայն զոր արար Տէր ընդ Մովսիսի, և յիսրայէլի ժողովրդեան իւրում. զի եհան Տէր զիսրայէլ յեգիպտոս: ²Եւ ա՛ն Յոթոր աներ Մովսիսի զՍեպփոփրա զկին Մովսիսի՝ յետ թողլոյն զնա. ³և զերկուս որդիս նորա. յորոց միումն անուն էր Գերսամ, ասէ՛ Պանդուխտ էի յօտար երկրի՛. ⁴և անուն երկրորդին՝ Եղիազար. ասէ՛ Աստուած հօր իմոյ օգնական իմ, և ապրեցոյց զիս ՚ի ձեռաց փարաւոնի: ⁵Եւ եկն Յոթոր՝ աներ Մովսիսի և որդիք նորա և կին նորա առ Մովսէս յանապատն, ուր բնակեալ էր ՚ի լերինն Աստուծոյ: ⁶Ա՛զդ եղև Մովսիսի և ասեն. թէ ահա աներ քո Յոթոր՝ գայ առ քեզ, և կին քո և երկու որդիք քո ընդ նմա: ⁷Ե՛լ Մովսէս ընդառաջ աներոյն իւրոյ, և երկի՛ր եպագ նմա և համբուրեաց զնա: և ողջոյն ետուն միմեանց ՚ի խաղաղութիւն. և տարաւ զնոսա ՚ի խորանն: ⁸Եւ պատմեաց Մովսէս աներոյն իւրոյ զամենայն զոր արար Տէր ընդ փարաւոն և ընդ Եգիպտացիսն վասն Իսրայէլի, և զամենայն աշխատութիւնս որ եղև նոցա ՚ի ճանապարհի, և զի ապրեցոյց զնոսա Տէր՝: ⁹Եւ զարմացաւ Յոթոր ՚ի վերայ ամենայն բարեացն զոր արար նոցա Տէր. և զի ապրեցոյց զնոսա ՚ի ձեռաց Եգիպտացւոցն և ՚ի ձեռաց փարաւոնի: ¹⁰Եւ ասէ Յոթոր. Օրհնեա՛լ է Տէր՝ որ ապրեցոյց զդոսա ՚ի ձեռաց Եգիպտացւոցն՝ և ՚ի ձեռաց փարաւոնի. օրհնեալ է Տէր զի փրկեաց զժողովուրդդ ՚ի ներքուստ ձեռինն Եգիպտացւոց: ¹¹Արդ՝ գիտեմ թէ մեծ է Տէր քան զամենայն աստուածս: վասն այնորիկ զի բռնանային ՚ի վերայ դոցա: ¹²Եւ ա՛ն Յոթոր աներն Մովսիսի ողջակէզս և զոհս Աստուծոյ: և զնացին Մովսէս և Ահարոն և ամենայն ծերքն Իսրայէլի՝ ուտել հա՛ց ընդ աներոյն Մովսիսի առաջի Տեառն:

ԽԵ ¹³Եւ եղև ՚ի վաղիւ անդր, նստա՛ւ Մովսէս դատե՛լ զժողովուրդն. և կա՛յր ամենայն ժողովուրդն շուրջ զՄովսիսիւ, յայգուէ մինչև ցերեկոյ՝: ¹⁴Եւ տեսեալ Յոթորայ զամենայն ինչ զոր առներ ժողովրդեանն, և ասէ. Զի՞նչ է բանդ այդ զոր առնես ժողովրդեանդ. ընդէ՞ր դու նստիս միայն, և ամենայն ժողովուրդդ կայ շուրջ զքև յառաւօտէ մինչև ցերեկոյ՝: ¹⁵Եւ ասէ Մովսէս ցաներն իւր. Քանզի գա՛յ ժողովուրդդ առիս, խնդրե՛լ իրաւունս յԱստուծոյ: ¹⁶Յորժամ լինիցի ինչ դոցա հակառակութիւն, զա՛ն առիս. և ես ընտրեմ ՚ի մէջ իւրաքանչի՛ւր ուրուք. և իմացուցանեմ դոցա զիրամանն Աստուծոյ և զօրէնս նորա՝: ¹⁷Եւ ասէ ցնա աներն Մովսիսի. Ո՛չ է ուղիղ բանդ զոր առնես. ¹⁸անհնարին տանջանօք տանջիս դու՝ և ամենայն ժողովուրդ որ է ընդ քեզ: ծա՛նր է քեզ բանդ այդ. ո՛չ կարես միայն առնել՝: ¹⁹Բայց արդ՝ լու՛ր ինձ, և տաց քեզ խրատ. և եղիցի Աստուած ընդ քեզ: Լե՛ր դու ժողովրդեանդ առ ՚ի յԱստուծոյ, և տարցիս դու զբանս դոցա առ Աստուած: ²⁰Եւ դիցես դոցա վկայութիւն զիրամանացն Աստուծոյ և զօրինաց նորա. և ցուցցես դոցա ճանապարհս յորս գնայցեն, և զգործս զոր գործիցեն: ²¹Եւ դու տե՛ս քեզ յամենայն ժողովրդենէդ արս զօրաւորս՝ աստուածապա՛շտս. արս արդարակորովս, որ ատիցեն զիպարտութիւն. և կացուցես զնոսա ՚ի վերայ դոցա հազարապե՛տս, և

* Ոճանք. Յորոց միւսումն անուն:

* Ոճանք. Աներոյն իւրում զամենայն ինչ զոր:

* Ոճանք. Յառաւօտէ մինչև ցերեկոյ:

* Ոճանք. Զոր առնես դու ժողո՞ւ:

* Այլք. Զիրամանս Աստուծոյ և զօրէնս նորա:

* Այլք. Եւ ամենայն ժողովուրդդ որ է:

հարիւրապէ՛տս, և յիսնապէ՛տս, և տասնապէ՛տս: ²²Եւ դատեսցին զժողովուրդդ յամենայն ժամ. և զբան ինչ մեծ, առ քե՛զ հասուցանիցեն. և զփոքր ինչ դատաստան՝ ինքեանք դատեսցին. և թեթևացուցեն ՚ի քէն, և եղիցին քեզ օգնականք՝: ²³Եթէ զայս բան արասցես, զօրացուցէ՛ զքեզ Աստուած. և կարասցես տոկա՛լ. և ամենայն ժողովուրդդ երթիցէ ՚ի տեղի իւր խաղաղութեամբ՝: ²⁴Եւ լուաւ Մովսէս ձայնի աներոյն իւրոյ. և արար զամենայն որ միանգամ ասաց նմա՝: ²⁵Եւ ընտրեաց Մովսէս յամենայն Իսրայէլէ արս զօրաւորս. և արար զնոսա ՚ի վերայ նոցա հազարապետս, և հարիւրապետս, և յիսնապետս, և տասնապետս. ²⁶և դատէին զժողովուրդն յամենայն ժամ: Բայց զբան ինչ մեծ հասուցանէին առ Մովսէս. և զամենայն բան թեթև՝ ինքեանք դատէին: ²⁷Եւ արձակեաց Մովսէս զաներն իւր, և զնա՛ց յերկիր իւր:

19

Գլուխ ԺԹ

ԽՁ ¹Յամսեանն երրորդի ելանելոյ որդւոցն Իսրայէլի յերկրէն Եգիպտացոց. յաւուրն յայնմիկ եկին յանապատն Սինայ՝: ²Չուեցին յԻսրայէլիմայ, և եկին յանապատն Սինայի. և բանակեցան յանապատի անդ. և բանակեցաւ Իսրայէլ անդ հանդէ՛պ լերինն: ³Եւ Մովսէս ել ՚ի լեառնն Աստուծոյ: և կոչեաց զնա Աստուած ՚ի լեռնէ անտի և ասէ. Ա՛յսպէս ասասցես տանն Յակոբայ, և պատմեսցես որդւոցն Իսրայէլի: ⁴Դուք ձեզէ՛ն տեսէք՝ որչափ ինչ արարի ընդ Եգիպտացիսն. և առի զձեզ իբրև ՚ի վերայ թևո՛ց արծուոյ՝ և յարեցի՛ զձեզ առ իս՝: ⁵Եւ արդ՝ եթէ լսելով լուիցէք ձայնի իմում, և պահիցէք զուխտն իմ, եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց. զի ի՛մ է ամենայն երկիր՝. ⁶և դուք եղիջիք ինձ ՚ի թագաւորութիւն, և ՚ի քահանայութիւն՝ և յազգ սուրբ: զայս բանս խօսեսցիս ընդ որդիսն Իսրայէլի: ⁷Եկն Մովսէս և կոչեաց զձերս ժողովրդեանն. և ե՛ր առաջի նոցա զամենայն բանս զայսոսիկ զոր պատուիրեաց նմա Աստուած: ⁸Պատասխանի ետ ժողովուրդն միահամուռ, և ասեն. Ջամենայն ինչ զոր ասաց Աստուած՝ արասցուք և լուիցուք: Եւ տարաւ Մովսէս զպատգամս ժողովրդեանն առ Աստուած: ⁹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահաւասիկ ե՛ս եկից առ քեզ սեամբ ամպոյ, զի լուիցէ՛ ժողովուրդն մինչ ես ընդ քե՛զ խօսիցիմ. և հաւատասցեն քեզ յաւիտեան: Եւ պատմեաց Մովսէս զբանս ժողովրդեանն առ Տէր՝: ¹⁰Եւ ասէ Տէր ցՄովսէս. Է՛ջ՝ դի՛ր վկայութիւն ժողովրդեանն, և սրբեա՛ զնոսա այսօր և վաղիւ, և լուսացեն զձորձս իւրեանց: ¹¹Եւ պատրաստեսցին աւուրն երրորդի. զի յաւուրն երրորդի իջցէ՛ Տէր յանդիման ամենայն ժողովրդեանդ ՚ի լեառնդ Սինա: ¹²Եւ զատուցես զժողովուրդդ շուրջ՝ և ասասցես. Ջգո՛յշ կացէք անձանց յելանելոյ ՚ի լեառնն և

* Այլք. Եւ թեթևացուցեն ՚ի:

* Յօրինակին՝ ՚ի բնաբանի գրեալ՝ զօրացուցէ քեզ Աստուած, ՚ի լուսանցսն ուղղագրէ՛ զքեզ. համաձայն այլոց.

* Ոմանք. Ջամենայն զոր միանգամ ասաց:

* Ոմանք. Յամսեանն երկրորդի ելա՛... յանապատն ՚ի Սինայ:

* Ոմանք. Ի վերայ թևոյ արծուեաց:

* Յօրինակին պակասէր. Եղիջիք դուք ինձ ժողո՛:

* Ոմանք. Ջբանս ժողովրդեանն առ Տեառն:

մերձենալոյ առ նա. զի ամենայն որ մերձեսցի՝ ի լեռնն՝ մահո՛ւ սատակեսցի՝
¹³Մի՛ մերձեսցի ՚ի նա ձեռն. քանզի քարա՛մբք քարկոծեսցի և նետիւք
խոցոտեսցի: Եթէ անասուն իցէ և եթէ մարդ՝ մի՛ կեսցէ: այլ յորժամ ձայնքն և
փողն և ամպն վերասցի ՚ի լեռնէ անտի՝ ելցեն նոքա ՚ի լեռնն*:¹⁴Եւ էջ Մովսէս ՚ի
լեռնէ անտի առ ժողովուրդն, և սրբեաց զնոսա. և լուացին զձորձս իւրեանց:
¹⁵Եւ ասէ ցժողովուրդն. Պատրա՛ստ լերուք. զերիս աւուրս ՚ի կանայս մի՛
մերձենայք: ¹⁶Եւ եղև յաւուրն երրորդի ընդ առաւօտսն. ձայնք և
փայլատակունք և ամպ միգախառն ՚ի վերայ լերինն Սինայի լինէին. և ձայն
փողոյն հնչէր մեծածայն: Եւ զարհուրեցաւ ամենայն ժողովուրդն որ էր ՚ի
բանակի անդ: ¹⁷Եւ եհան Մովսէս զժողովուրդն ընդ առաջ Աստուծոյ ՚ի բանակէ
անտի. և կացոյց շուրջ զստորոտով լերինն Սինայի: ¹⁸Եւ լեռնն Սինա ծխէր առ
հասարակ. քանզի իջեալ կայր Աստուած ՚ի վերայ նորա հրով. և ելանէր ծուխ
նորա իբրև զծուխ հնոցի: և զարհուրեցաւ ամենայն ժողովուրդն յոյժ*. ¹⁹քանզի
հասանէին ձայնք փողոցն ՚ի բաց, յառաջեալք և սաստկացեալք յոյժ: Մովսէս
խօսէր և Աստուած տա՛յր նմա ձայն*: ²⁰Եւ է՛ջ Տէր ՚ի լեռնն Սինա, ՚ի գլո՛ւխ
լերինն: և կոչեաց Տէր զՄովսէս ՚ի գլո՛ւխ լերինն. և ել անդր Մովսէս: ²¹Եւ
խօսեցաւ Աստուած ընդ Մովսիսի և ասէ. է՛ջ, դի՛ր վկայութիւն ժողովրդեանդ.
գուցէ՛ մերձենայցեն հայել առ Աստուած, և անկանիցին բազումք ՚ի նոցանէ: ²²Եւ
քահանայքն որ մերձենան առ Աստուած՝ սրբեսցին. գուցէ՛ սատակիցէ ՚ի
նոցանէ Տէր*: ²³Եւ ասէ Մովսէս ցԱստուած. Ո՛չ կարէ ժողովուրդն ելանել ՚ի
լեռնն Սինա. զի դու ինքնին ուխտեցեր մեզ՝ և ասացեր. թէ զաստուցենս
զլեռնս և սրբեսցես զդա: ²⁴Եւ ասէ ցնա Տէր. Ե՛րթ է՛ջ, և ել այսրէն դո՛ւ և
Ահարոն ընդ քեզ. բայց քահանայքն և ժողովուրդն մի՛ ժտեսցին ելանել առ
Աստուած, գուցէ՛ սատակիցէ ՚ի նոցանէ Տէր: ²⁵Է՛ջ Մովսէս առ ժողովուրդն՝ և ասէ
ցնոսա:

20

Գլուխ Ի

¹Խօսեցաւ Տէր զամենայն զպատգամս զայսոսիկ՝ և ասէ.

ա. ²Ե՛ս եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց ՚ի տանէ
ծառայութեան: ³Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բա՛ց յինէն*:⁴ Մի՛ արասցես
դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս ՚ի վեր, և որ ինչ
յերկիր ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի*:⁵ Մի՛ երկիրպագանիցես
նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա. զի ե՛ս եմ Տէր Աստուած քո՝ Աստուած
նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց, յերիս և ՚ի չորս ազգս
ատելեաց իմոց: ⁶Եւ առնեմ զողորմութիւն ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց, և
ոյք պահեն զիրանանս իմ: գ. ⁷Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քոյ ՚ի

* Ոսկան. Եւ զաստուցեալ ժողովուրդն շուրջ և: Այլք. Եւ մերձենալոյ ՚ի նա:

* Ոմանք. Վերասցին ՚ի լեռնէ անտի՝ ելանիցեն նոքա ՚ի լեռնն:

* Ոմանք. Եւ ելանէր ծուխ նոցա իբրև:

* Այլք. Ձայնքն փողոյն ՚ի բաց առաջացեալք և:

* Յօրինակին պակասէր. Եւ քահանայքն:

* Այլք. Մի՛ եղիցին քեզ աստուածք:

* Ոմանք. Ըստ ամենայնի նմանութեան... ՚ի վեր է, և որ ինչ յերկրի:

վերայ սնուտեաց. զի ո՛չ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա՝ ի վերայ սնուտեաց*։ 8Յիշեսցի՛ր զօրն շաբաթուց սրբել՝ զնա։ 9Զվեց օր գործեսցես, և արասցես զամենայն գործս քո։ 10Յաւուրն եւթներորդի շաբաթ՝ Տեառն Աստուծոյ քում, մի՛ գործեսցես ՚ի նմա զամենայն գործ քո դո՛ւ և ուստր քո և դուստր քո, ծա՛ռայ քո, և աղախին քո. ե՛զն քո և էջ քո, և ամենայն անասուն քո. և ե՛կն քո և պանդուխտն քո որ ՚ի քեզ*։ 11Զի զվեց օր արար Տէր Աստուած զերկինս և զերկիր, և զծով և զամենայն որ ՚ի նոսա, և հանգեաւ յաւուրն եւթներորդի. վասն այնորիկ օրինեաց Տէր զօրն եւթներորդ, և սրբեաց զնա։ 12Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. զի քեզ բարի՛ լինիցի, և զի երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին բարութեան՝ զոր Տէր Աստուած տացէ քեզ*։ 13Մի՛ սպանաներ։ 14Մի՛ շնար։ 15Մի՛ գողանար։ 16Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ։ 17Մի՛ ցանկանար տան ընկերի քոյ, և մի՛ անդոյ նորա։ Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի՛ ծառայի նորա, և մի՛ աղախնոյ նորա, և մի՛ եզին նորա, և մի՛ իշոյ նորա, և մի՛ ամենայն անասնոյ նորա. և մի՛ ամենայնի զինչ ընկերի քոյ իցէ։

Խէ 18Եւ ամենայն ժողովուրդն տեսանէր զձայնն և զճառագայթսն, և զբարբառ փողոյն և զլեռանն ծխեալ։ Զահի՛ հարաւ ամենայն ժողովուրդն, և խորշեցան. եկաց ՚ի հեռաստանէ*։ 19Եւ ասեն ցՄովսէս. Դո՛ւ խօսեաց ընդ մեզ՝ և լուիցո՛ւք. և մի՛ խօսեսցի ընդ մեզ Աստուած՝ զուցէ՛ մեռանիցիմք։ 20Եւ ասէ ցնոսա Մովսէս. Քաջալերեցարո՛ւք. զի վասն փորձելոյ զձեզ եկն առ ձեզ Աստուած. որպէս զի լինիցի երկի՛ւղ նորա ՚ի ձեզ, զի մի՛ մեղանչիցէք։ 21Եւ կայր ժողովուրդն ՚ի հեռաստանէ։ Եւ Մովսէս եմուտ ՚ի մէզն ուր է՛ր Աստուած։ 22Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ա՛յսպէս ասասցես՝ դու տանդ Յակոբայ, և պատմեսցես որդւոցդ Իսրայէլի։ Դուք ձեզէ՛ն տեսէք, զի յերկնից խօսեցայ ընդ ձեզ։ 23Մի՛ առնիցէք ձեզ աստուածս ոսկեղէնս և աստուածս արծաթեղէնս։ 24Սեղան՝ հողեղէն արասցի՛ք ինձ, և մատուսցի՛ք ՚ի նմա զողջակէզս ձեր, և զփրկութիւնս ձեր, զոչխարս ձեր, և զարջառս ձեր. յամենայն տեղիս ուր անուանեցից զանուն իմ անդ. և եկից առ քեզ և օրհնեցից՝ զքեզ։ 25Ապա թէ սեղան ՚ի քարանց առնիցես ինձ, մի՛ շինեսցես ինձ զնոսա կոփածոյս. քանզի զձեռին գործին քո մերձեցուցեր ՚ի նա, և պղծեալ է*։ 26Մի՛ ելանիցես ընդ աշտիճանս ՚ի սեղան իմ, զի մի՛ մերկասցին առականք քո ՚ի վերայ նորա*։

21

Գլուխ ԻԱ

1Եւ այս իրաւունք են զոր դիցես առաջի նոցա։

ԽԸ 2Եթէ զնեսցես ծառայ երբայեցի, զվեց ան՝ ծառայեսցէ քեզ. և յամին

* *Յօրինակին*. Սրբեսցէ Տէր զայնոսիկ, որ առնուցու։

* *Այլք*. Եւ պանդուխտն որ ՚ի քեզ։

* *Այլք*. Զոր Տէր Աստուած քո տացէ քեզ։

* *Ոմանք*. Զձայնն և զճառագայթսն, և զբարբառ։

* *Յօրինակին ՚ի բնաբանի կրկին չակերտիւ այսպէս գրեալ, զձեռին <գործին> ՚ի լուս՝ նշանակի ՚ի մէջ բերել. քո. ուր մեք համաձայն այլոց եղաք գործին քո։*

* *Ոմանք*. Զի մերկասցին, ըստ որում զառաջինն երկի գրեալ և ՚ի բնաբան օրինակի մերում, և յետոյ նովին ձեռանք յաւելեալ է ՚ի վերայ՝ մի։

եւթներորդի՝ գնասցէ ազա՛տ ձրի՝: ³Թէ ինքն միա՛յն մտեալ իցէ՝ միա՛յն գնասցէ. և եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ՝ ելցէ և կինն ընդ նմա: ⁴Ապա թէ տէրն իւր տացէ նմա կին, և ծնանիցի նմա ուստերք և դստերք, կինն և որդիք՝ տեառն նորա եղիցին. և նա միա՛յն ելցէ՝: ⁵Ապա թէ պատասխանի տուեալ ասիցէ ծառայն. Սիրեցի՛ զտէր իմ, և զկին իմ, և զորդիս իմ. և ո՛չ գնամ յազատութիւն. ⁶տարցի՛ զնա տէրն իւր յատեան Աստուծոյ. և ապա մատուցէ զնա առ սեամս դրանն, և ծակեցցէ՛ զունկն նորա հերեամբ, և ծառայեցցէ՛ նմա յաւիտեան՝:

ԽԹ ⁷Իսկ եթէ վաճառեցցէ ոք զդուստր իւր յաղախնութիւն, մի՛ գնասցէ որպէս ելանիցեն աղախնայք: ⁸Եթէ ո՛չ լինիցի հաճոյ յաչս տեառն իւրոյ՝ որում հաստատեցաւն, փրկեցցէ՛ զնա. բայց յա՛զգ օտար՝ չէ՛ իշխան վաճառել, զի անարգեաց զնա՝: ⁹Ապա թէ որդւոյ իւրում հաստատեցցէ զնա, ըստ օրինաց դստերաց արասցէ նմա՝: ¹⁰Ապա թէ առ նովաւ ա՛յլ առնուցու. զօրէնն և զհանդերձ նորա և զմերձաւորութիւն մի՛ հատցէ ՚ի նման: ¹¹Ապա թէ զերիս զայսոսիկ ո՛չ առնիցէ նմա, ձրի՛ իսկ ելցէ առանց արծաթոյ:

Ծ ¹²Եւ եթէ հարցէ՛ ոք զոք՝ և մեռանիցի, մահո՛ւ մեռցի և նա՝: ¹³Իսկ որ ո՛չ կամաւ՝ այլ Աստուած մատնեաց ՚ի ձեռս նորա, տացի՛ նմա տեղի ուր փախիցէ սպանօղն: ¹⁴Իսկ եթէ մտաբերիցէ ոք յընկեր իւր սպանանել զնա նենգութեամբ՝ և փախիցէ, և ՚ի սեղանո՛յ իմնէ առնուցուս զնա և սպանանիցես:

ԾԱ ¹⁵Որ հարկանէ զհայր իւր, կամ զմայր իւր, մահո՛ւ մեռցի:

ԾԲ ¹⁶Որ ոք գողացի յորդուցն Իսրայէլի՝ և վաճառեցցէ զնա, և գտցի առ նմա, մահո՛ւ մեռցի:

ԾԳ ¹⁷Որ բամբասեցցէ զհա՛յր իւր՝ կամ զմայր իւր, մահո՛ւ մեռցի:

ԾԴ ¹⁸Եթէ կագիցեն արք երկու, և հարկանիցէ ոք ՚ի նոցանէ զընկեր իւր քարի՛ւ կամ բռնցի. և ո՛չ մեռանիցի, այլ դնիցի ՚ի մահիճս՝: ¹⁹Եթէ յառնիցէ այրն և շրջիցի արտաքոյ ՚ի ցայոյ, անպարտ լիցի որ եհարն. բայց զխափանածո՛յ նորա՝ և զբժշկութեանն տուժեցի՝:

ԾԵ ²⁰Եթէ ոք հարցէ զծառայ իւր՝ կամ զաղախին իւր զաւազանաւ, և մեռցի՛ ՚ի ձեռաց նորա, դատաստանա՛ւ վրէժխնդրութիւն լիցի՝: ²¹Բայց թէ մի օր՝ կամ երկուս կեցցէ, մի՛ խնդրեցցի վրէժն. զի զինք արծաթոյ իւրոյ են:

ԾԶ ²²Իսկ եթէ կռուիցին արք երկու, և հարկանիցեն զկին յղի և ելանիցէ սաղմնն աննկար, կէս վնասու տուժեցցի. որչափ ինչ արկանիցէ նմա ա՛յր կնոջն, և տացէ աղաչելով: ²³Ապա թէ կերպարանեալ իցէ. տացէ անձն ընդ անձին. ²⁴ա՛կն ընդ ա՛կան, ատա՛մն ընդ ատա՛ման, ձե՛ռն ընդ ձեռի՛ն, ո՛տն ընդ ոտի՛ն, ²⁵խարա՛ն ընդ խարա՛նի, վէ՛ր ընդ վիրի. հարուա՛ծ ընդ հարուա՛ծոյ:

ԾԷ ²⁶Իսկ եթէ հարցէ՛ ոք զակն ծառայի իւրոյ, կամ զակն աղախնոյ իւրոյ, և կուրացուցցէ, արձակեցցէ զնոսա ազա՛տս փոխանակ ական նոցա՝: ²⁷Եւ եթէ զատամն ծառայի իւրոյ, կամ զատամն աղախնոյ թափեցցէ, արձակեցցէ ազա՛տ

* *Ի լուս՝*. Եւ ծնանիցի նմա ուստերս և դստերս, *համաձայն այլոց ՚ի բնաբ՝*:

* *Այլք*. Չունկն նորա հերամբ:

* *Ոմանք*. Որում հաստեցաւն:

* *Ոմանք*. Որդւոյ իւրում հաստեցցէ զնա:

* *Այլք*. Եթէ հարցէ ոք:

* *Բազումք*. Եթէ կագիցին արք եր՛:

* *Յօրինակին*. Եւ շրջիցի արտաքոյ ՚ի սայոյ:

* *Ոմանք*. Եւ մեռցի ՚ի ձեռանէ նորա:

* *Ոմանք*. Իսկ եթէ ոք հարցէ.. և կուրացուցանէ, ար՛:

փոխանակ ատաման նոցա*:

ԾԸ ²⁸Իսկ եթէ հարցէ ցուլ զայր կամ զկին, և մեռանիցին, ցուլն՝ քարկոծ լիցի, և միս նորա մի՛ կերիցի. և տէր ցլուն անպարտ լիցի: ²⁹Ապա թէ ցուլն հարկանօղ իցէ յերեկն և յեռանտն, և բողոքեալ իցէ տեառն նորա, և նորա չիցէ՛ ՚ի միջոյ բարձեալ. և սպանանիցէ զայր կամ զկին, ցուլն քարկոծ լիցի, և տէր ցլուն առ նմին մեռցի: ³⁰Իսկ եթէ փրկանք անկանիցին ՚ի վերայ նորա, տացէ՛ փրկանս ընդ անձին իւրում, ըստ ամենայնի՛ որչափ ինչ արկանիցեն նմա գին: ³¹Եւ եթէ զուստր կամ զդուստր հարկանիցէ, ըստ նմին օրինակի արասցեն նմա: ³²Իսկ եթէ զծառայ՝ կամ զաղախին հարկանիցէ ցուլն, երեսուն կրկին սատեր արծաթոյ տացէ տեառն նոցա. և ցուլն քարկոծ լիցի*:

ԾԹ ³³Իսկ եթէ բացցէ ոք հոր, կամ փորեցէ ջրհոր, և ո՛չ խփանիցէ զնա, և անկանիցի անդ արջառ՝ կամ էշ. ³⁴տէր հորոյն տուժեցի արծաթ, և տացէ տեառն նորա. և շաղիղն նորա՛ լիցի:

Կ ³⁵Իսկ եթէ հարցէ ցուլ ուրուք զցուլ ընկերի իւրոյ՝ և մեռցի. վաճառեցեն զցուլն կենդանի, և բաժանեցեն զգինս նորա, և զցուլն սպանեալ՝ բաժանեցեն: ³⁶Ապա թէ յերեկն և յեռանտն գիտէին զցուլն, և բողոքեալ իցէ տեառն նորա, և նորա չիցէ՛ ՚ի միջոյ բարձեալ զնա, տուժեցի՛ ցուլ ընդ ցլուն, և սպանեալն նորա լիցի*:

22

Գլուխ ԻԲ

ԿԱ ¹Իսկ եթէ գողասցի ոք արջառ կամ ոչխար, և սպանցէ՛ կամ վաճառեցէ, իհնգ արջառ ընդ արջառոյն տուժեցի. և չորս ոչխար ընդ ոչխարին:

ԿԲ ²Իսկ եթէ յական գտանիցի գող. և խոցեալ մեռցի, չէ՛ այն նմա ՚ի սպանութիւն*։ ³Ապա թէ արևն ՚ի վերայ նորա ծագիցէ, մահապարտ է, փոխարէն մեռցի: ապա թէ ո՛չ ինչ գտանիցի նորա, վաճառեցի՛ փոխանակ գողութեանն իւրոյ: ⁴Իսկ եթէ ըմբռնեցի, և գտցի՛ ՚ի ձեռին նորա գողօնն՝ յարջառոյ և յիշոյ մինչև ցոչխար՝ կրկին տուժեցի:

ԿԳ ⁵Եթէ արածիցէ ոք զանդ՝ կամ զայգի, և թոյլ տայցէ խաշին իւրում արածել զանդ այլոց, յիւրմէ՛ անդոյ անտի տուժեցի ըստ արդեանն: Ապա թէ զամենայն իսկ զանդն արածիցէ, զընտիր կողմն անդոյ իւրոյ, և զընտիր այգւոյ իւրոյ տուժեցի:

ԿԴ ⁶Իսկ եթէ ելանիցէ հուր, և գտանիցէ փուշ, և ընդ նմին այրիցէ զկալ՝ կամ զօրան կամ զանդ, տուժելով տուժեցի որոյ զիրդեհն հանեալ իցէ:

ԿԵ ⁷Իսկ եթէ ոք տացէ ընկերի իւրում արծաթ, կամ այլ ինչ կարասի զիւր յաւանդ, և գողանայցի՛ ՚ի տանէ առնն. եթէ գտցի՛ որ գողացաւն, կրկին տուժեցի*։ ⁸Ապա եթէ ո՛չ գտցի որ գողացաւն, մատիցէ տէր տանն առաջի Աստուծոյ, և երդուիցի, եթէ իւր չէ՛ նենգեալ ամենկին զաւանդ ընկերի իւրոյ. ⁹ըստ ամենայն վնասակար բանի, յարջառոյ՝ և յիշոյ՝ և յոչխարէ, և ՚ի հանդերձէ,

* Այլք. Արծակեցէ ազատս:

* Ոմանք. Կրկին սատեր արծաթ տացէ:

* Ոմանք. Եւ տեառնն չիցէ ՚ի միջոյ բարձեալ... ցուլ ընդ ցլոյ:

* Այլք. Եւ խոցեալ մեռանիցի:

* Ոմանք. Եւ գողանայցէ ՚ի տանէ:

և յամենայն կորստենէ որում վնասակար առնիցեն: Որ զինչ իցէ՝ առաջի Աստուծոյ եկեսցէ դատաստան երկոցուն. և որ ոք ՚ի նոցանէ ըմբռնեսցի ՚ի ձեռն Աստուծոյ, կրկին տուժեսցի ընկերի իւրում: ¹⁰Եւ եթէ տացէ ոք ընկերի իւրում էջ, կամ եզն, կամ ոչխար, կամ այլ ինչ անասուն ՚ի պահեստ, և բեկցի՝ կամ մեռցի՝ կամ գերի վարեսցի, և ո՛չ ոք գիտասցէ. ¹¹Երդունն Աստուծոյ լիցի ՚ի մէջ երկոցուն, եթէ նենգանօք ինչ չիցէ՝ գնացեալ ամենևին ընդ ականդ ընկերին իւրոյ. ապա յանձն առցէ տէր նորա. և մի՛ տուժեսցի*:

¹²Իսկ եթէ գողութեամբ գողանայցի ՚ի նմանէ, տուժեսցի՝ տեսնն նորա: ¹³Ապա թէ գազանաբէկ լինիցի, ածցէ վկայ ՚ի գէշ անդր. և մի՛ տուժեսցի:

ԿԶ ¹⁴Իսկ եթէ ոք խնդրեսցէ անօք յընկերէ՛ իւրմէ, և բեկցի՝ կամ մեռցի, կամ գերի՛ գնացէ, և տէր նորա չիցէ՛ ընդ նմա, տուժելով տուժեսցի: ¹⁵Ապա թէ տէր նորա ընդ նմա իցէ՛ ո՛չ տուժեսցի: ապա թէ ՚ի վարձու առեալ իցէ, ընդ վարձուց իւրոց եղիցի նմա:

ԿԷ ¹⁶Իսկ եթէ ոք խաբեսցէ՛ զկոյս զո՛չ խօսեալ՝ և ննջեսցէ ընդ նմա, վարձանօք վարձեսցի զնա իւր կնութեան*:

¹⁷Եւ եթէ ո՛չ առնուցու յանձն հայր նորա տալ զնա նմա կնութեան, տուժեսցի արծաթ հօր նորա որպէս իցեն վարձանք կուսից:

ԿԸ ¹⁸Զկախարդս մի՛ ապրեցուցանիցէք:

ԿԹ ¹⁹Ձամենայն որ խառնակիցի ընդ անասուն, մահու սպանանիջիք:

Ղ ²⁰Որ դից զոհէ՛ սատակեսցի, բայց միայն Տեսնն*:

ՂԱ ²¹Ձպանդուխտն՝ մի՛ չարչարիցէք՝ և մի՛ նեղէք զնա, զի և դուք պանդուխտք էիք յերկրին Եգիպտացւոց*:

ՂԲ ²²Ձամենայն զայրի՛ և զորք՝ մի՛ չարչարիցէք: ²³Ապա թէ չարչարելով չարչարիցէք զնոսա, և բողոք բարձեալ աղաղակիցեն առիս, լսելով լուայց աղաղակի նոցա: ²⁴Եւ բարկացայց սրտմտութեամբ և կոտորեցից զձե՛զ սրով. և եղիցին կանայք ձեր այրիք, և մանկունք ձեր ո՛րբք:

ՂԳ ²⁵Եւ եթէ արծաթ փոխ տայցես եղբօր քում, որ աղքատ իցէ՛ առ քեզ, մի՛ ձեպեսցես զնա. և մի՛ արկանիցես նմա տոկոսիս*:

ՂԴ ²⁶Եւ եթէ գրաւեսցես զբաճկոն ընկերի քոյ, նախ քան զմտանել արևու դարձուցես՝ անդրէն: ²⁷Ձի այն է վերարկու նորա, և այն է հանդերձ առականաց նորա որով ննջիցէ: և եթէ բողոքիցէ առիս՝ լուայց նմա. քանզի ողորմած եմ:

ՂԵ ²⁸Ձաստուածս քո մի՛ բամբասիցես: և զիշխան ժողովրդեան քոյ մի՛ հայիոյեսցես*:

ՂԶ ²⁹Ձպտուղ կալոյ քոյ և զհնձանի մի՛ հատանիցես: Ձանդրանիկս որդւոց քոց ի՛նձ տացես:

ՂԷ ³⁰Նոյնպէս արասցես զարջառ քո, և զոչխար քո, և զէջ քո: զեւթն օր՝ եղիցի ընդ մարք իւրով, և յաւուրն ութերորդի՛ տացես՝ զնա ինձ:

ՂԸ ³¹Եւ մարդք սո՛ւրբք լինիջիք ինձ, զի ես եմ Տէր Աստուած ձեր: Ձմիս գազանաբեկին ՚ի բացի՝ մի՛ ուտիցէք, այլ շան ընկեսջիք*:

* *Ոմանք.* ՚ի միջի երկոցուն:

* *Ոսկան.* Խաբեսցէ զկոյս խօսեալ:

* *Ոմանք.* Որ դից զոհիցէ, սատա՛:

* *Այլք.* Եւ մի՛ նեղիցէք զնա:

* *Ոսկան յաւելու.* Որ աղքատ իցէ և *բնակեսցի* առ քեզ:

* *Ոմանք.* Եւ զիշխանս ժողովրդեան քո մի՛:

* *Յայլս պակասի.* Լինիջիք ինձ. *զի ես եմ Տէր Աստուած ձեր: Ոմանք.* Ձմիս

Գլուխ ԻԳ

ՅԹ ¹Եւ համբաւ սուտ՝ մի՛ ընդունիցիս՝:

Ձ Մի՛ հաւանիցիս ընդ անիրաւի՝ լինել վկայ անիրաւ:

ՁԱ ²Մի՛ յօժարեսցիս ընդ բազումս՝ ՚ի չարիս:

ՁԲ Մի՛ յաւելուցուս ՚ի բազմութիւն միտել ընդ բազումս առ ՚ի խոտորելոյ՝
զիրաւունս: ³Եւ մի՛ ողորմեսցիս տնանկին՝ ՚ի դատաստանի:

ՁԳ ⁴Եւ եթէ պատահեսցիս եզին թշնամւոյ քոյ, կամ իշոյ նորա մոլորելոյ,
դարձուցես և հասուցես՝ զնա առ նա՝: ⁵Եւ եթէ տեսանիցես զգրաստ ընկերի
քոյ՝ անկեալ ընդ բեռամբ, մի՛ զանց առնիցես զնովաւ, այլ յարուցես՝ զնա ընդ
նմա:

ՁԴ ⁶Մի՛ խոտորիցես զիրաւունս տնանկին՝ ՚ի դատաստանի իւրում:
⁷Յամենայն՝ ՚ի զո՛ւր բանէ՝ ՚ի բաց լինիցիս. և զարդարն և զանպարտն մի՛
սպանանիցես. և զամպարիշտն մի՛ ապրեցուցանիցես վասն կաշառաց՝. ⁸և
կաշառ՝ մի՛ առնուցուս. զի կաշառ կուրացուցանէ՝ զաչս համարձակահայեաց, և
ապականէ՝ զբանս արդարս՝:

ՁԵ ⁹Եւ զպանդուխտն մի՛ նեղես. քանզի ճանաչէ՞ք դուք զանձինս
պանդխտաց. զի և դուք պանդուխտք էիք յերկրին Եգիպտացւոց՝:

ՁԶ ¹⁰Ձվե՛ց ամ սերմանեսցես զերկիր քո, և ժողովեսցես՝ զարմտիս նորա: ¹¹Եւ
յամին եւթներորդի թողութիւն արասցես, և հանգուցես՝ զնա: և կերիցեն
տնանկք ազգի քոյ. և զմնացեալն ՚ի նոցանէ կերիցեն գազանք վայրի. այսպէս
արասցես զայգի քո և զձիթենի քո՝:

ՁԷ ¹²Ձվե՛ց օր գործեսցես զգործ քո. և յաւուրն եւթներորդի հանգիցէ՛ եզն քո և
է՛շ քո, և հանգիցէ՛ որդի աղախնոյ քոյ և պանդխտին:

ՁԸ ¹³Ձամենայն զոր ասացի ձեզ՝ պահեսցի՞ք. և զանուն աստուածոց օտարաց
մի՛ յիշիցէք. և մի՛ լուիցի ՚ի բերանոյ ձերմէ:

ՁԹ ¹⁴Երի՛ս ժամանակս ՚ի տարւոջ արասցի՞ք ինձ տօնս: ¹⁵Ձտօն
բաղարջակերացն պահեսցիք. զեւթն օր բաղարջ կերիցիք, որպէս
պատուիրեցի ձեզ ըստ ժամանակի ամսոյն կանխոց. զի ՚ի նմա՛ ելէք դուք
յերկրէն Եգիպտացւոց: ո՛չ երևեսցիս առաջի իմ դատարկածեռն: ¹⁶Եւ զտօն
ամարայնոյ առաջնոյ արմտեաց քոց արասցես զգործոց քոց, որ ինչ վարեալ
իցէ յանդի քում: Եւ զտօն կատարածի ելից տարւոյն, ՚ի ժողովել գործոց քոց
յանդէ: ¹⁷Երի՛ս ժամանակս ՚ի տարւոջ յանդիման լիցի ամենայն արու քո առաջի
Տեառն Աստուծոյ:

Ղ ¹⁸Եւ մի՛ զոհեսցես ՚ի վերայ խմորոյ զարիւն զոհից քոց: և մի՛ ազգի ճարպ

զազանաբեկին ՚ի բացէ՛ մի՛ ու՛:

* Այլք. Եւ զհամբաւ սուտ:

* Ի լուս՝. Եւ եթէ պատահիցես, *համաձայն այլոց ՚ի բնաբ՝*:

* Ոմանք. Վասն կաշառի: և ոմանք. Վասն կաշառոց:

* Այլք. Չաչս համարձակահայեաց:

* Այլք. Եւ զպանդուխտն մի՛ նեղիցես:

* Ոմանք. Այնպէս արասցես զայգին քո:

տօնի իմոյ մինչև ցառաւօտ*։ ¹⁹Չպտուղս առաջին արմտեաց քոց բերցես ՚ի տուն Տեառն Աստուծոյ քո։ Եւ մի՛ եփեսցես զգառն ՚ի կաթն մօր իւրոյ։

ՂԱ ²⁰Եւ ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, զի պահեսցէ զքեզ ՚ի ճանապարհի։ որպէս զի տարցի՛ զքեզ յերկիրն, զոր պատրաստեցի քեզ։ ²¹Չգո՛յշ լեր անձին քում և լուիցես, և մի՛ անհաւան լինիցիս նմա. զի ո՛չ խորշեսցի ՚ի քէն. քանզի անուն իմ ՚ի վերայ նորա է*։ ²²Եւ եթէ լսելով լուիցես ձայնի իմում, և արասցես զամենայն զոր ինչ ասացի քեզ, եղէց թշնամի՛ թշնամեաց քոց. և հակառակ կացից հակառակորդաց քոց։ ²³Չի երթիցէ հրեշտակ իմ առաջնորդել քեզ. և տարցի՛ զքեզ առ Անովրիացին, և Քետացի, և Փերեզացի, և Քանանացի, և Գերգեսացի, և Խևացի, և Յեբուսացի. և սատակեցի՛ց զնոսա*։ ²⁴Մի՛ պագանիցես երկիր աստուածոց նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա. և մի՛ առնիցես ըստ գործոց նոցա, այլ քակելով քակեսցես զնոսա, և մանրելով մանրեսցես զարձանս նոցա։ ²⁵Եւ պաշտեսցես զՏէր Աստուած քո. և օրհնեցի՛ց զհաց քո և զջուր քո, և դարձուցից ՚ի ձէնջ զախտ։ ²⁶Եւ մի՛ եղիցի անսերմ և անուլ յերկրի քում. զթիւ աւուրց քոց լցուցի՛ց։ ²⁷Եւ զա՛հ իմ առաքեցից առաջնորդել քեզ. և զարհուրեցուցի՛ց զամենայն ազգս յորս մտանիցես ՚ի նոսա։ Եւ տաց զամենայն հակառակորդս քո փախստակա՛նս։ ²⁸Եւ առաքեցից առաջի քո զպիժակ. և մերժեսցէ՛ զԱնովրիացին, և զԽևացին, և զՔանանացին, և զՔետացին յերեսաց քոց*։ ²⁹Եւ ո՛չ մերժեցից զնոսա յերեսաց քոց ՚ի միում ամի. զի մի՛ երկիրն անապատ լինիցի, և բազմանայցեն ՚ի վերայ քո գազանք երկրին։ ³⁰Առ սակաւ սակա՛ւ մերժեցից զնոսա ՚ի քէն. մինչև աճեսցես և ժառանգեսցես զերկիր*։ ³¹Եւ եղից զսահմանս քո ՚ի Կարմիր ծովէ մինչև ՚ի ծովն Փղշտացւոց. և յանապատէն մինչև ցգետն մեծ Եփրատ։ և մատնեցից ՚ի ձեռս ձեր զբնակիչս երկրին. և մերժեցից զնոսա ՚ի քէն*։ ³²Եւ դու՛ մի՛ դնիցես ընդ նոսա, և ընդ դի՛ս նոցա ուխտ։ ³³Եւ մի՛ բնակեսցեն յերկրի քում, զի մի՛ յանցուցանիցեն զքեզ առիս։ զի եթէ ծառայեսցես դի՛ց նոցա, նոքա՛ լիցին քեզ ՚ի գայթազդութիւն*։

24

Գլուխ ԻԴ

ՂԲ ¹Եւ ասէ ցՄովսէս. Ե՛լ առ Տէր, դու՛ և Ահարոն, և Նաբադ և Աբիուդ՝ և եւթանասուն այր ՚ի ծերոցն Իսրայէլի։ և երկի՛ր պագցեն Տեառն ՚ի հեռաստանէ*։ ²Եւ մերժեսցի Մովսէ՛ս միայն առ Աստուած. և նոքա մի՛ մերժեսցին։ բայց ժողովուրդն մի՛ ելցէ ընդ նոսա։

ՂԳ ³Եւ եմուտ Մովսէս և պատմեաց ժողովրդեանն զամենայն պատգամս

* *Ի լուս՛*. Եւ մի՛ զոհիցես. *համաձայն այլոց ՚ի բնաբ՛*։

* *Ոմանք*. Եւ լուիցես նմա, և մի՛ անհա՛։

* *Բազումք*. Հրեշտակ իմ առաջնորդ քեզ։

* *Ոմանք*. Եւ զՔետացին ՚ի քէն։ Եւ ո՛չ մերժե՛։

* *Ոմանք*. Եւ ժառանգեսցես զերկիրն։

* *Ոմանք*. Մինչև ՚ի գետն մեծ Եփրատ։

* *Բազումք*. Նոքին լինիցին քեզ ՚ի գայթազ՛։

* *Յօրինակի մերում ամենայն ուրեք՝ որպէս գրեթէ և յամենայն գրչագիր օրհնակս՝ այս անուն որդւոյ Ահարոնի միշտ գրի՛ Նաբադ, և ոչ՝ Նադաբ, որպէս ունի Ոսկան.*

Աստուծոյ, և զամենայն իրաւունս: Պատասխանի ետ ամենայն ժողովորդն ՚ի մի ձայն՝ և ասեն. Ջամենայն պատգամս զոր խօսեցաւ Տէր՝ արասցուք և լուիցուք:

ՂԴ ⁴Եւ գրեաց Մովսէս զամենայն զպատգամսն Տեառն: Եւ կանխեալ Մովսիսի ընդ առաւօտն, շինեաց սեղան՝ ՚ի ստորոտ լերինն. և երկոտասան վէճ՝ կանգնեաց ըստ երկոտասան ազգացն Իսրայէլի*:

ՂԵ ⁵Եւ առաքեաց զերիտասարդս որդւոցն Իսրայէլի, և հանին ողջակէզս, և զոհեցին զոհս փրկութեան Աստուծոյ ո՛րթս: ⁶Եւ առեալ Մովսիսի զկէ՛ս արեանն արկ ՚ի խառնելիսն. և զկէ՛ս արեանն եհեղ առաջի սեղանոյն: ⁷Եւ առեալ զգիր ուխտին ընթերցաւ յականջս ժողովորդեանն: Եւ ասեն. Ջամենայն զոր խօսեցաւ Տէր՝ արասցուք և լուիցուք: ⁸Եւ առեալ Մովսիսի զարիւնն, ցանեաց զժողովորդեամբն՝ և ասէ. Ահա այս արիւն է ուխտին զոր ուխտեաց Տէր ընդ ձեզ վասն ամենայն բանիցս այսոցիկ:

ՂԶ ⁹Եւ ելին Մովսէս և Ահարոն, և Նաբադ և Աբիուդ՝ և եւթանասունք ՚ի ծերոցն Իսրայէլի. ¹⁰և տեսին զտեղին ուր կայր Աստուած Իսրայէլի. և ընդ ոտիւք նորա իբրև զգործած աղիւսոյ շափիղայ. և իբրև զտեսիլ հաստատութեան երկնից սրբութեամբ*:

¹¹Եւ յընտրելոցն Իսրայէլի ո՛չ ծախեցաւ և ո՛չ մի. և երևեցան ՚ի տեղւոցն Աստուծոյ. և կերան և արբին:

ՂԷ ¹²Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ե՛լ առիս ՚ի լեառնն, և անդ լինիջիր: և տա՛ց քեզ տախտակս քարեղէնս և օրէնս և պատուիրանս զորս գրեցի, լինել նոցա օրէնսդիր: ¹³Յարեաւ Մովսէս և Յետու պաշտօնեայ նորա, և ելին ՚ի լեառնն Աստուծոյ: ¹⁴Եւ ասէ ցճերսն. Դադարեցէ՛ք այդր մինչև դարձցուք առ ձեզ: և ահա Ահարոն և Ովր ընդ ձե՛զ են: Եթէ ուրուք դատաստան ինչ լինիցի, երթիցեն առ նոսա*:

¹⁵Եւ ել Մովսէս ՚ի լեառնն. և ծածկեաց ամպն զլեառնն: ¹⁶Եւ իջին փառքն Աստուծոյ ՚ի լեառնն Սինա. և ծածկեաց զնա ամպն զվեց օր: Եւ կոչեաց Տէր զՄովսէս յաւուրն եւթներորդի ՚ի միջոյ ամպոյն*:

¹⁷Եւ տեսիլ փառացն Տեառն իբրև զուր բորբոքեալ ՚ի վերայ գլխոյ լերինն՝ յանդիման որդւոցն Իսրայէլի: ¹⁸Եւ եմո՛ւտ Մովսէս ՚ի մէջ ամպոյն, և ել ՚ի լեառնն. և է՛ր Մովսէս ՚ի լերին անդ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր:

25

Գլուխ ԻԵ

ՂԸ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ²Ասացես ցորդիսն Իսրայէլի. և առէք ինձ պտուղ ՚ի նոցանէ, որոց հաճոյ թուեսցի ՚ի սիրտս իւրեանց և առնուցուք զպտուղս ինձ: ³Եւ այս է պտուղն զոր առնուցուք ՚ի նոցանէ. ոսկի, և արծաթ, և պղինձ, ⁴և կապուտակ, և ծիրանի. և կարմիր կրկին, և բեհեզ մանեալ. և մազ այծեաց. ⁵և մորթս խոյոց կարմիր ներկեալ. և մորթս կապուտակեալս. և փայտս անփուտս: ⁶Եւ ևղ լուսոյ. և խունկս յևղ օծման՝ և ՚ի հանդերձանս խնկոց. ⁷և ականս սարդիոնս. և ականս գրոյ ՚ի գործ վակասին. և զպճղնաւորն: ⁸Եւ արասցեն ինձ սրբութիւն, և երևեցայց ՚ի ձեզ: ⁹Եւ արասցեն ինձ ըստ ամենայնի

* Ոսկան. Եւ երկոտասան վէճս:

* Ոմանք. Երկնից սրբութեան:

* Այլք. Եւ եթէ ուրուք դատ՝:

* Ոմանք. Եւ ծածկեաց զնոսա ամպն:

զոր ցուցից քեզ 'ի լերինն. օրինակ խորանի՝ և օրինակ ամենայն սպասուց նորա. ¹⁰և այսպէս արասցես:

ՂԹ Արասցես տապանակ վկայութեան յանփուտ փայտից: յերկուց կանգնոց և 'ի կիսոյ զերկայնութիւն նորա, և 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զլայնութիւն նորա, և 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զբարձրութիւն նորա: ¹¹Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով ներքոյ, և արտաքոյ օճցես զնա: և արասցես 'ի նմա ծնօտս ոսկիս շո՛ւրջ շրջանակաւ*: ¹²Եւ ձուլեսցես 'ի նմա չորս օղամանեակս ոսկիս. և դիցես 'ի չորեցունց կողմանց նորա երկուս օղամանեակս 'ի միոջէ կողմանէ. և երկուս օղամանեակս 'ի միւսմէ կողմանէ*: ¹³Եւ արասցես լծակս յանփուտ փայտից. և պատեսցես զնոսա ոսկւով: ¹⁴Եւ ագուսցես զլծակսն՝ յօղամանեակսն 'ի կողմանս տապանակին, բառնալ՝ նոքօք զտապանակն: ¹⁵Ձի յօղամանեակս տապանակի կտակարանացն կայցեն լծակքն, անշարժք անդստին 'ի նմանէ: ¹⁶Եւ դիցես 'ի տապանակին զվկայութիւնսն զոր ես տաց քեզ: ¹⁷Եւ արասցես զքաւութիւնն խնկակալ յոսկւոյ սրբոյ: յերկուց կանգնոց և 'ի կիսոյ զերկայնութիւն նորա, և 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զլայնութիւն նորա: ¹⁸Եւ արասցես երկուս քրոբէս ոսկիս ճախարակեալս. և դիցես զնոսա 'ի վերայ երկոցունց կողմանց քաւութեանն: ¹⁹Եւ լինիցին քրոբէքն՝ մի 'ի միոջէ կողմանէ, և մի 'ի միւսմէ՝ կողմանէ քաւութեանն: ²⁰Եւ արասցես երկուս քրոբէս 'ի վերայ երկոցունց կողմանց նորա: Եւ իցէ քրոբէիցն տարածեալ զթևս իւրեանց 'ի վերուստ. և հովանի՝ ունիցին թևօք իւրեանց 'ի վերայ քաւութեանն. և երեսք նոցա յանդիման միմեանց, զի 'ի քաւութիւնն հայեսցին երեսք քրոբէիցն: Եւ դիցես զքաւութիւնն 'ի վերայ տապանակին 'ի վերո՛ւստ կողմանէ: ²¹Եւ դիցես 'ի տապանակի անդ զվկայութիւնսն զոր ես տաց քեզ: ²²Եւ յայտնեցայց քեզ անտի. և խօսեցայց ընդ քեզ 'ի վերուստ 'ի քաւութենէ անտի. 'ի միջոյ երկուց քրոբէիցն, որ իցեն 'ի վերայ տապանակին վկայութեան, ըստ ամենայնի զոր պատուիրեցի քեզ առ որդիսն Իսրայէլի*:

Եւ ²³Եւ արասցես սեղան յանփուտ փայտից. յերկուց կանգնոց զերկայնութիւն նորա, և 'ի կանգնոյ զլայնութիւն նորա, և 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զբարձրութիւն նորա: ²⁴Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով. և արասցես նմա ծնօտս ոսկիս շրջանակաւ շուրջանակի: ²⁵Եւ արասցես նմա պսակ ուղկեան շուրջանակի: և արասցես պսակին ծնօտս շուրջանակաւ շուրջանակի: ²⁶Եւ արասցես նմա չորս օղամանեակս ոսկիս. և դիցես զօղամանեակսն 'ի չորեսին կողմանսն, որ իցեն չորեցունց ոտից նորա, ²⁷'ի ներքոյ պսակին. և եղիցին օղամանեակքն լամբք լծակացն, բառնալ՝ նոքօք զսեղանն: ²⁸Եւ արասցես զլծակսն յանփուտ փայտից, և պատեսցես զնոսա ոսկւով սրբով. և բարձցի՝ նոքօք սեղանն: ²⁹Եւ արասցես զխնկաղացսն և զտուփս նորա, և զճաշակս, և զնուիրանոցս նորա, որովք նուիրեսցես. յոսկւոյ սրբոյ արասցես զայն*:

Եւ ³⁰Եւ դիցես 'ի վերայ սեղանոյ՝ հացիներեսաց յանդիման իմ հանապազորդ*:

* Այլք. Եւ արասցես նմա ծնօտս ոսկիս:

* Այլք. Եւ ձուլեսցես նմա չորս:

* Այլք. Ձոր պատուիրեցից քեզ:

* Ոմանք. Ձխնկաղայսն և զտուփս... 'ի յոսկւոյ սր՛:

* Յօրինակին յետ հացիներեսաց 'ի կարգի դատարկ տեղի թողեալ, 'ի լուսանցս նշանակի 'ի ներքս բերել՝ հաց, և ընթերնուլ համաձայն ոմանց. հացին երեսաց հաց յանդի՛:

6Բ ³¹Եւ արասցես աշտանակ յոսկոյ սրբոյ. ճախարակեայ գործեսցես զաշտանակն. զի բունն, և ստեղունքն, և սկահքն, և գնդակքն, և շուշանքն՝ անդատին՝ ի նմանէ իցէ՞: ³²Վեց ստեղունք արծակեալք ՚ի կողմանց նորա. երեք ստեղունք աշտանակին ՚ի միոջէ՝ կողմանէ. և երեք ստեղունք աշտանակին ՚ի միւսմէ՝ կողմանէ: ³³Եւ երեք սկահաձևք ընկուզազարդք յօրինեալք ՚ի միում ստեղանն. և գնդակ և շուշան. և երեք սկահաձևք ընկուզազարդք յօրինեալք ՚ի միւսում ստեղանն. և գնդակ և շուշան. նոյնպէս վեցեցունց ստեղանցն արծակելոց յաշտանակէ անտի՞: ³⁴Եւ յաշտանակի անդ չորք սկահաձևք ընկուզազարդք յարդարեալք. և գնդակք և շուշանք նորա: ³⁵Գնդակ ՚ի ներքոյ երկուց ստեղանցն անդատին ՚ի նմանէ, և գնդակ ՚ի ներքոյ երկուց ևս ստեղանցն անդատին ՚ի նմանէ. նոյնպէս արասցես վեցեցունց ստեղանցն արծակելոց յաշտանակէ անտի: ³⁶Զի գնդակք նոցա և ստեղունք անդատին ՚ի նմանէ՝ իցեն. համակ ճախարակեայ ՚ի միոջէ ոսկոյ սրբոյ: ³⁷Եւ արասցես նմա ճրագարանս եւթն. և դիցես զճրագարանսն ՚ի վերայ աշտանակին. և տայցեն լոյս ՚ի միոջէ կողմանէ երեսաց նորա: ³⁸Եւ զբազմակալս նորա, և զնեցունկսն արասցես յոսկոյ սրբոյ. ³⁹ի տաղանդէ՝ միոյ յոսկոյ սրբոյ արասցես զայն ամենայն սպաս՞: ⁴⁰Զգոյշ լեր որպէս ցուցաւ քեզ օրինակ ՚ի լերինն՝ արասցես:

26

Գլուխ ԻԶ

6Գ ¹Եւ արասցես խորան տասնփեղկեան: ՚ի բեհեզոյ մանելոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանոյ, և ՚ի կարմրոյ կրկնելոյ: քերթը՝ գործ անկուածոյ գործեսցես զնոսա: ²Երկայնութիւն միոյ փեղկին ՚ի քսանկուք կանգնոյ, և լայնութիւն ՚ի չորից կանգնոց փեղկի միոյ լինիցի: չափ՝ նոյն եղիցի ամենայն փեղկիցն: ³Հինգ փեղկ ընդ միմեանս կցեալ. և հինգ ևս այլ ընդ միմեանս խառնեալ: ⁴Եւ արասցես ճարմանդս կապուտակեայս առ եզերք միոյ փեղկին ՚ի միոջէ կողմանէ ՚ի խառնուածսն: նոյնպէս արասցես և առ եզերք արտաքնոյ փեղկին, երկրորդի՝ խառնուածոյն: ⁵Յիսուն ճարմանդ արասցես միում փեղկի. և յիսուն ճարմանդ արասցես ՚ի կողմանէ փեղկին ըստ երկրորդի խառնուածոյն. դէմ ընդդէմ միմեանց խառնիցն իւրաքանչիւր ճարմանդքն: ⁶Եւ արասցես յիսուն օղս ոսկիս՝ և խառնեսցես զփեղկսն ընդ միմեանս աղխիւքն. և եղիցի խորան մի: ⁷Եւ արասցես վերնափեղկս մագեղէնս նուարտան խորանին, մետասան փեղկ գործեսցես զնոսա: ⁸Երկայնութիւն միոյ փեղկի՝ լինիցի յերեսուն կանգնոյ. և լայնութիւն միոյ փեղկի ՚ի չորից կանգնոց: չափ՝ նոյն եղիցի մետասանեցունց փեղկիցն: ⁹Եւ խառնեսցես ընդ միմեանս զհինգ փեղկն ՚ի միասին, և զվեց փեղկն ՚ի միասին: և կրկնեսցես զվեցերորդ փեղկն առաջոյ

* *Ի լուս՞*. Եւ սկահակքն. *համաձայն ոմանց ՚ի բնար՞*:

* *Յօրինակին*. Ի միում սեղանն.. ՚ի միւսում սեղանն:

* *Ոմանք*. Եւ զբազմակալս նորա:

* *Յօրինակին պակասէր*. Արասցես *զայն* ամենայն:

* *Ոմանք*. Եղիցի ամենայն փեղկացն:

* *Այլք*. Իւրաքանչիւր խառնիցին ճարմանդքն: *կամ* խառնիցին իւրա՞:

* *Ի լուս՞*. Յիսուն աղխս ոսկիս. *համաձայն բազմաց ՚ի բնար՞*:

* *Ոմանք*. Մետասանեցունց փեղկացն:

կողմանէ խորանին: ¹⁰Եւ արասցես ճարմանդս յիսուն առ եզերք միոյ փեղկին 'ի մէջ խառնուածոյն: և յիսուն ճարմանդ արասցես առ եզերք փեղկին երկրորդի՝ խառնուածոյն*: ¹¹Եւ արասցես օղս պղնձիս յիսուն, և խառնեսցես զօղսն ընդ ճարմանդսն. և կցեսցես զփեղկսն՝ և եղիցին մի: ¹²Եւ դիցես զաւելորդ փեղկին 'ի ներքոյ խորանին. կիսով փեղկին աւելորդաւ մնացելով ծածկեսցես զապարումս փեղկից խորանին յետոյ կողմանէ*, ¹³կանգնաւ՝ յայսմ կողմանէ, և կանգնաւ՝ յայնմ կողմանէ. յաւելորդէ երկայնութեան փեղկից խորանին. և եղիցի ծածկել զապարումս խորանին աստի անտի: ¹⁴Եւ արասցես զվիժակս խորանին 'ի շիկակարմիր մորթոց խոյոց: և ծածկելիս 'ի կապուտակ մորթոյ 'ի վերուստ*: ¹⁵Եւ արասցես զսիւնակս խորանին յանփուտ փայտից ¹⁶կանգնաւորս. 'ի տասն կանգոյ գերկայնութիւն միոյ սիւնակին առնիցես: և 'ի միոջէ կանգոյ և 'ի կիսոյ ¹⁷զթանձրութիւն և զլայնութիւն միոյ սիւնակին: Եւ երկուս սփռիչս միում սիւնակի, ագուցեալ ընդ միմեանս. այնպէս արասցես ամենայն սիւնակաց խորանին: ¹⁸Եւ արասցես քսան սիւնակս խորանին 'ի հիւսուոյ կողմանէ: ¹⁹Եւ քառասուն խարիսխս արծաթիս արասցես քսանեցունց սեանց: երկու խարիսխք առ մի սիւն յերկոցունց կողմանց. և երկու խարիսխք առ մի սիւն յերկոցունց կողմանց խորանին*: ²⁰Եւ յերկրորդէ կողմանէ խորանին ընդ հարաւ քսան սիւն. ²¹և քառասուն խարիսխք նոցա արծաթիք. երկու խարիսխք առ մի սիւն յերկոցունց կողմանց: ²²Եւ յետուստ խորանին 'ի ծովակողմն կուսէ արասցես վեց սիւն: ²³Եւ երկու սիւնս արասցես յանկիւնս խորանին 'ի թիկանց կողմանէ*: ²⁴Եւ եղիցին հասարակ 'ի ներքուստ: Եւ ըստ նմին օրինակի լինիցին զոյգք խոյակաց նորա 'ի մի խառնուած: նոյնպէս արասցես երկոցունց անկեանցն կանգնաւորս*: ²⁵Եւ եղիցին ութ սիւն. և խարիսխք նոցա արծաթիք՝ վեշտասան խարիսխք: երկու խարիսխք առ մի սիւն յերկոցունց կողմանց նորա. և երկու սարիսխք առ մեւս ևս սիւն*: ²⁶Եւ արասցես նիգս յանփուտ փայտից. հինգ նիգ առ մի սիւն 'ի միոջէ՝ կողմանէ խորանին, ²⁷և հինգ նիգ առ մեւս ևս սիւն յերկրորդ կողմանէ խորանին. և հինգ նիգ առ մի սիւն 'ի թիկանց խորանին ընդ ծովակողմն*: ²⁸Եւ նիգ մի 'ի մէջ սեանցն թափանցանց՝ 'ի միոջէ կողմնէ՝ 'ի միւս կողմն: ²⁹Եւ զսիւնսն պատեսցես ոսկով. և արասցես օղս ոսկիս՝ յորս ագուցանիցես զնիգսն: և պատեսցես զնիգսն ոսկով*: ³⁰Եւ կանգնեսցես զխորանն վկայութեան՝ ըստ օրինակին որ ցուցաւ քեզ 'ի լերինն*:

ՃԴ ³¹Եւ արասցես վարագոյր 'ի կապուտակէ՝, և 'ի ծիրանւոյ, և 'ի կարմրոյ

* *Յօրինակին մերում միայն՝ աստի սկսեալ՝ ճարմանդն գրի ևս ճարմանդ, ըստ որում և մէք եղաք:*

* *Ոմանք. Ջաւելորդ փեղկիցն... կիսով փեղկին:*

* *'ի լուս՝. Մորթոյ խոյոց. համաձայն այլոց 'ի բնաբ՝:*

* *Յօրինակին. Եւ քսան խարիսխս ար՝: 'ի լուս՝. Երկու սարիսխք առ:*

* *Բազունք յայսմ վայրի կրկնեն զվերոյասացեալսն ըստ այսմ օրինակի. 'ի թիկանց կողմանց: Ձգոյշ լեր. և յետուստ խորանին 'ի ծովակողմն կուսէ արասցես վեց սիւն. երկու սիւնս արասցես յանկիւնս խորանին 'ի թիկանց կողմանէ. և եղիցին հա՝:*

* *Ոմանք. Ձոյգ 'ի խոյակացն:*

* *Յօրինակին պակասէր. Առ մի սիւն յերկ՝: 'ի լուս՝. Եւ երկու խարիսխք. համաձայն այլոց 'ի բնաբ՝:*

* *Ոմանք. Եւ հինգ նիգ առ մի սիւն յերկրորդ կողմն:*

* *Ոմանք. Ագուցանիցեն զնիգսն, և պատեսցեն:*

* *Ոմանք. Ձխորանն ըստ օրինակին. 'ի լերին անդ, կամ անդր:*

մանելոյ, և ՚ի բեհեզոյ՝ նիւթելոյ: գործ անկուածոյ գործեսցես զնա քերա՛ւր: ³²Եւ դիցես զնա ՚ի վերայ չորեցունց անփուտ և ոսկիապատ սեանցն. և խոյակք նոցա ոսկիք. և խարիսխք նոցա արծաթիք* ³³Եւ ձգեսցեն զվարագոյրն սիւնէ ՚ի սիւն: Եւ տարցիս ՚ի ներքս քան զվարագոյրն զտապանակ վկայութեանն. և անջրպետիցէ՝ ձեզ վարագոյրն ՚ի մէջ սրբութեանն, և ՚ի մէջ սրբութեան սրբութեանցն: ³⁴Եւ ծածկեսցեն վարագուրաւն զտապանակ վկայութեանն ՚ի սրբութիւն սրբութեանցն:

ՃԵ ³⁵Եւ դիցես զսեղանն արտաքոյ վարագուրին: և զաշտանակն յանդիման սեղանոյն, ՚ի կողմանէ խորանին ընդ հարաւ: և զսեղանն դիցես ՚ի կողմանէ խորանին ընդ հիւսւսի:

ՃԶ ³⁶Եւ արասցես սրահակ դրան խորանին. ՚ի կապուտակէ՛, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ. գործ նկարակերպ: ³⁷Եւ արասցես վարագուրին հինգ սիւնակ յանփուտ փայտից. և օճցես զնոսա ոսկւով: Եւ խոյակք նորա ոսկիք. և ձուլեսցես նոցա հինգ խարիսխ պղնձի*:

27

Գլուխ ԻԷ

ՃԸ ¹Եւ արասցես սեղան յանփուտ փայտից. ՚ի հինգ կանգնոյ զերկայնութիւն նորա, և ՚ի հինգ կանգնոյ զլայնութիւն: չորեքկուսի՛ լինիցի սեղանն, և յերից կանգնոց զբարձրութիւն նորա: ²Եւ արասցես զեղջևրս նորա ՚ի վերայ չորեցունց անկեանց իւրոց. զի անդստին ընտրեալ իցեն եղջևրքն: և պատեսցեն զնա պղնձով* ³Եւ արասցես պսակ սեղանոյն: և զնուարտան նորա: և զտաշտան: և զմսահանսն: և զկրակարանսն: և զամենայն սպասն արասցես պղնձի* ⁴Եւ արասցես նմա գահաւորակ, վանդակակերպ պղնձի: և արասցես գահաւորակին չորս օղամանեակս պղնձիս ՚ի չորեցունց կողմանէ: ⁵Եւ դիցես զնոսա ընդ գահաւորակաւ սեղանոյն ՚ի ներքոյ: և եղիցի գահաւորակն մինչև ՚ի մէջ սեղանոյն: ⁶Եւ արասցես լծակս սեղանոյն, լծակս յանփուտ փայտից: և պատեսցես զնոսա պղնձով. ⁷և արկցես զլծակսն ընդ օղսն: և եղիցին լծակքն յերկոցունց կողմանց սեղանոյն՝ առ ՚ի բառնալոյ զնա* ⁸Խոր, տախտակամածս արասցես զնա. ըստ օրինակին որպէս ցուցաւ քեզ ՚ի լերինն. այնպէս արասցես զնա*:

ՃԹ ⁹Եւ արասցես սրահ ՚ի խորանին ՚ի կողմ հարաւոյ. և զառագաստ սրահին ՚ի բեհեզոյ մանելոյ. հարիւր կանգուն յերկայնութիւն միոյ կողմանն*, ¹⁰և սիւնք նոցա քսան, և խարիսխք նոցա պղնձիք քսան, և օղք նոցա և խոյակք նոցա արծաթիք: ¹¹Նոյնպէս և ՚ի կողմանն որ ընդ հիւսւսի՝ առագաստքն հարիւր կանգուն յերկայնութիւն. և սիւնք նոցա պղնձիք քսան, և սարիսխք նոցա

* Ոմանք. Չորեցունց սեանց անփուտ և ոսկիապատացն:

* Այլք. Յանփուտ փայտէ... և խոյակք նոցա ոսկիք:

* Ոմանք. Եւ պատեսցես զնոսա պղնձ*:

* Ի լուս՝. Եւ զնուարտ նորա:

* Այլք. Առ ՚ի բառնալ զնա:

* Ոմանք յաւելուն. Քեզ ՚ի լերին անդ:

* Այլք. Սրահ խորանին ՚ի կողմն:

պղնձիք քսան. և խոյաւոյք նոցա. և խոյակք սեանցն պատեալ արծաթով՝: ¹²Եւ ՚ի լայնութիւն սրահին ընդ ծովակողմն առագաստք ՚ի յիսուն կանգնոյ. սիւնք նոցա տասն, և խարիսխք նոցա տասն: ¹³Եւ ՚ի լայնութիւն առաջին սրահին՝ որ ընդ արևելս առագաստք ՚ի յիսուն կանգնոյ. սիւնք նոցա տասն, և խարիսխք նոցա տասն՝: ¹⁴Եւ ՚ի հնգետասան կանգնոյ բարձրութիւն առագաստիցն ՚ի միոջէ կողմանէ. սիւնք նոցա երեք, և խարիսխք նոցա երեք: ¹⁵Եւ յերկրորդում կողմանն՝ հնգետասան կանգուն առագաստից ՚ի բարձրութիւն. սիւնք նոցա երեք, և խարիսխք նոցա երեք: ¹⁶Եւ դրան սրահին վարագոյր՝ քսան կանգուն ՚ի բարձրութիւն, ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ՝ նիւթելոյ. նկարէն յասղնագործաց: և սիւնք նոցա չորք, և խարիսխք նոցա չորք՝: ¹⁷Ամենայն սիւնք սրահին շուրջանակի արծաթապատք, և խոյակք նոցա արծաթիք, և սարիսխք նոցա պղնձիք: ¹⁸Եւ երկայնութիւն սրահին հարիւր առ հարիւր. և լայնութիւն յիսուն առ յիսուն. և բարձրութիւն հնգետասան կանգուն. ՚ի բեհեզոյ մանելոյ. և խարիսխք նոցա պղնձիք՝: ¹⁹Եւ ամենայն կա՛հ խորանին, և ամենայն գործի նորա, և ամենայն ցի՛ցք սրահին՝ պղնձիք:

ՃԹ ²⁰Եւ դու պատուիրեա՛ որդւոցն Իսրայէլի. և առցեն քեզ ձէ՛ք ՚ի ձիթենեաց, պարզ, սուրբ, խակակութ, ՚ի լոյս. զի եղիցի ճրագ հանապազորո՞ ²¹ի խորանին վկայութեան, արտաքոյ վարագուրի ուխտին: Եւ լուցանիցէ զնա Ահարոն և որդիք իւր յերեկորեայ մինչև ցառաւօտ առաջի Տեառն. օրէն յաւիտենական յազգս ձեր առ ՚ի յորդւոցն Իսրայէլի՝:

28

Գլուխ ԻԸ

ՃԺ ¹Եւ դու մատուցես առ քեզ զԱհարոն գեղբայր քո. և զորդիս նորա ընդ նմա՝ յորդւոցն Իսրայէլի, քահանայանա՛լ ինձ. զԱհարոն, և զՆաբադ, և զԱբիուդ, և զԵղիազար, և զԻթամար՝ զորդիս Ահարոնի: ²Եւ արասցես պատմուճան սո՛ւրբ Ահարոնի եղբօր քում, ՚ի պատիւ և ՚ի փառս: ³Եւ դու խօսեսցի՛ս ընդ ամենայն իմաստունս մտօք, զորս լցուցի՛ց հոգւով իմաստութեան: Եւ արասցես պատմուճան սուրբ՝ Ահարոնի ՚ի սրբութիւն, որովք քահանայանայցէ՛ ինձ՝: ⁴Եւ ա՛յս օրինակ պատմուճանացն՝ զոր առնիցեն. զպճղնաւորն, և զվակաս՝ զուսովք և զլանջօք. և զպատմուճանն բեհեզեայ. և խոյր. և կամար: և արասցեն պատմուճան սո՛ւրբ՝ Ահարոնի եղբօր քում, և որդւոց նորա քահանայանա՛լ ինձ: ⁵Եւ առցեն նոքա ոսկի, և կապուտակ, և ծիրանի, և կարմիր մանեալ, և բեհե՛զ: ⁶Եւ արասցեն զվակասն յոսկւո՛յ սրբոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ. գո՛րծ ոստայնի նկարակերպ: ⁷Երկու վակասք ընդ միմեանս խառնեալք, և եղիցին ՚ի վերայ երկոցո՛ւնց կողմանց

* *Ոմանք.* Եւ խարիսխք նոցա պղնձիք քսան, և խոյաւոյք նոցա և խարիսխք սեանցն, և խարիսխք պատեալ ար՝: *Ուր օրինակ մի փոխանակ խոյաւոյք՝ դնէ աւոյք:*

* *Ոսկան փոխանակ այսր համարոյ ունի. Նոյնով լայնութեամբ սրահին, որ հայի ընդ արևելս՝ յիսուն կանգնոյ եղիցին:*

* *Ոմանք.* Յասղանագործաց:

* *Ոմանք.* Եւ բարձրութիւն հինգ կան՝:

* *Ոմանք.* Եւ լուցանիցէ զնոսա Ահարոն և որդիք նորա.. յառաւօտ:

* *Այլք.* Եւ արասցեն պատմուճան:

նորա հաստատեալք: ⁸Եւ գործ վակասին՝ որ իցէ ՚ի վերայ նորա. ըստ նմին օրինակի գործ անդասին ՚ի նմանէ լինիցի. յոսկոյ սրբոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ: ⁹Եւ առցես երկուս ականս զընրո՛ւխտս, և գրեսցես ՚ի նոսա զանուանս որդւոցն Իսրայէլի. ¹⁰զվեց անուն նոցա ՚ի միում ական. և զայլն ևս վեց՝ յերկրորդում ականն. ըստ ազգս իւրեանց. ¹¹գործ ճարտարութեան ականագործաց. քանդակ կնքոյ քանդակեցես զերկոսին ականսն. ըստ անուանց որդւոցն Իսրայէլի. տպաւորեալս և քանդակեալս ոսկով արասցես զնոսա*:

¹²Եւ դիցես զերկուս ականսն ՚ի վերայ ուսոց վակասին. զի լինիցին ականքն յիշատակ որդւոցն Իսրայէլի: և բառնայցէ՛ Ահարոն զանուանս որդւոցն Իսրայէլի առաջի Տեառն, ՚ի վերայ երկուց ուսոց իւրոց՝ ՚ի յիշատակ վասն նոցա*:

ԵժԲ ¹³Եւ արասցես վահանակս յոսկոյ սրբոյ: ¹⁴Եւ արասցես երկուս վերջս յոսկոյ սրբոյ. մանուածոյս ծաղկեալս՝ գործ հիւսկէն. և դիցես զվերջսն մանուածոյս ՚ի վերայ երկոցուն վահանակացն ¹⁵առ վտաւակօքն նոցա առաջոյ կողմանէ:

ԵժԳ Եւ արասցես զտախտակն դատաստանաց գործ նկարակերպ. ըստ ձևոյ վակասին արասցես զնա. յոսկոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ*:

¹⁶Եւ արասցես զնա չորեքանկունի՛, թգաւ յերկայնութիւն, և թգաւ ՚ի լայնութիւն: ¹⁷Եւ ընդելուզցես ՚ի նմա ընդելուզածս, ըստ չորեքկարգեան ականց: Կարգս ականց, Առաջին՝ զընրո՛ւխտ, և սարդիոն, և տպազիոն. կարգ մի*:

¹⁸Եւ Կարգն երկրորդ՝ կարկեհան, և շափիղա, և յասպիս: ¹⁹Եւ Կարգն երրորդ՝ գոճազմ, և ականտ, և սուտակ: ²⁰Եւ Կարգն չորրորդ՝ յակինթ, և բիւրեղ, և եղունգն: ընդելուզեալ, յոսկի կապեալ՝ յիւրաքանչիւր կարգս կայցեն: ²¹Եւ եղիցին ականքն յանուանց որդւոցն Իսրայէլի երկոտասան. ըստ անուանց նոցա գրեալք քանդակաւ իւրաքանչիւր ըստ անուան իւրում լինիցին. ըստ ազգացն երկոտասանից: ²²Եւ արասցես տախտակ մի հիւսկէն վերջիւք. գործ շղթայագործ յոսկոյ սրբոյ: ²³Եւ արասցես ՚ի վերայ տախտակին երկուս օղս ոսկիս. և դիցես զերկուս օղսն ոսկիս ՚ի վերայ երկուց ծայրից տախտակին: ²⁴Եւ դիցես զերկու շղթայագործսն ոսկիս ՚ի վերայ երկոցուն օղոցն առ ծայրիւք տախտակին: ²⁵Եւ զերկուս ծայրս երկուց շղթայագործիցն տացես ՚ի վերայ երկոցունց մած. և դիցես ՚ի վերայ թիկանց վակասին ՚ի ճակատ երեսաց նորա: ²⁶Եւ արասցես երկուս օղս ոսկիս, և տացես զնոսա ՚ի վերայ երկուց ծայրից տախտակին, առ եզերքն որ իցէ հանդէպ վակասին ՚ի ներքոյ կողմանէ: ²⁷Եւ արասցես երկուս օղս ոսկիս, և տացես զնոսա ՚ի վերայ երկուց ուսոց վակասին ՚ի ներքոյ կողմանէ՝ յանդիման միմեանց միաբան. և զաղխս նորա ՚ի վերայ մենքենայից վակասին: ²⁸Եւ պինդ ունիցին զտախտակն յօղոց նորա՝ մինչև ցօղս վակասին, ՚ի նիւթոյ կապուտակէ. զի իցէ ՚ի վերայ մենքենայից վակասին. և մի՛ զերծանիցի տախտակն ՚ի վակասէ անտի: ²⁹Եւ առցէ Ահարոն զանուն որդւոցն Իսրայէլի ՚ի վերայ տախտակի դատաստանին՝ ՚ի լանջս իւր, ՚ի մտանել իւրում ՚ի սրբութիւնն ՚ի յիշատակ հանապազորդ առաջի Աստուծոյ*:

³⁰Եւ դիցես ՚ի վերայ տախտակին դատաստանի զվերջսն շղթայագործս՝ յերկոցունց

* *Ոմանք.* Ոսկով արասցես զնա:

* *Բազումք.* Ականք յիշատակի որդի՛:

* *Ի լուս՝.* Առ վակասան նոցա: *Ոմանք.* Ըստ ձևոյ հասակին ար՛:

* *Ի լուս՝.* Ընդելուզուածս. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:*

* *Ոմանք.* Զանուանս որդւոցն Իսրայէլի:

կողմանց տախտակին դիցես: և զերկուս վահանակսն դիցես 'ի վերայ երկուց ուսոց վակասին յերեսաց կողմանէ 'ի ներքուստ: Եւ դիցես 'ի վերայ տախտակին դատաստանի զՅանդիմանութիւնն և զԳշմարտութիւն. և եղիցի 'ի վերայ լանջա՛ցն Ահարոնի յորժամ մտանիցէ 'ի սրբութիւնսն առաջի Տեառն: և տարցի Ահարոն զդատաստանս որդւոցն Իսրայէլի 'ի վերայ լանջաց իւրոց առաջի Տեառն հանապազ:

Եւ Գ՛ 31 Եւ արասցես վտաւակս պճղնաւորս համա՛կ կապուտակ. 32 և զօձիսն գրապանա՛ւ արարեալ, բոլորա՛կ ձևեսցես շուրջանակի՝ զորժ անգուածոյ: և զխառնուածսն անկեալ անդստին 'ի նմանէ. զի մի՛ արատիցի: 33 Եւ արասցես առ ստորոտով՝ վտաւակացն 'ի ներքոյ կողմանէ՝ իբրև նռնաձևս ծաղկեալս, 'ի կապուտակէ և 'ի ծիրանւոյ, և 'ի կարմրոյ մանելոյ, և 'ի բեհեզոյ նիւթելոյ առ ստորոտով վտաւակացն շուրջանակի. և տեսիլ նորա նռնաձև, և զանգակս ոսկիս 'ի մէջ նոցա շուրջանակի՝: 34 Զանգակս ոսկի և նռնաձև՝ ծաղկեալ առ ստորով վտաւակացն շուրջանակի: 35 Եւ եղիցի 'ի վերայ Ահարոնի յորժամ պաշտիցէ՝ հնչիւն բարբառոյ 'ի մտանել իւրում 'ի սրբութիւնն առաջի Տեառն, և յելանել նորա՝ զի մի՛ մեռանիցի:

Եւ ԺԵ՛ 36 Եւ արասցես թիթեղն յոսկւոյ սրբոյ. և քանդակեսցես 'ի նմա քանդակ կնքոյ՝ Սրբութիւն Տեառն: 37 Եւ դիցես զնա՝ 'ի վերայ կապուտակին մանելոյ. և եղիցի խուրին յերեսաց կողմանէ՝ 38 'ի վերայ ճակատուն Ահարոնի: Եւ բարձցէ Ահարոն զմեղս նուիրացն, որչափ ինչ նուիրիցեն որդիքն Իսրայէլի, ըստ ամենայն տրոց սրբութեանցն իւրեանց. և եղիցի 'ի վերայ ճակատուն Ահարոնի հանապազ յընդունելութիւն նոցա առաջի Տեառն:

Եւ ԺԶ՛ 39 Եւ զպճղնաւոր պատմուճանն 'ի բեհեզոյ:

Եւ ԺԷ՛ Եւ արասցես ապարաւշս բեհեզեղէնս. և կամար՝ զորժ նկարակերպ: 40 Եւ որդւոցն Ահարոնի արասցես պատմուճանս, և կամարս, և խոյս. 'ի պատիւ և 'ի փառս: 41 Եւ զգեցուցես՝ զայն Ահարոնի եղբօր քում, և որդւոց նորա ընդ նմա: Եւ օձցես՝ զնոսա. և լցցես՝ զձեռս նոցա. և սրբեսցես՝ զնոսա՝ զի քահանայացին ինձ: 42 Եւ արասցես նոցա անդրավարտիս կտաւեայս. ծածկել զառականս մարմնոց իւրոց, միջովք չափ և բարձիւք չափ՝: 43 Եւ ունիցի զայն Ահարոն և որդիք նորա, յորժամ մտանիցեն 'ի խորանն վկայութեան. կամ յորժամ մերձենայցեն 'ի սեղանն սրբութեան պաշտել: և մի՛ աժիցեն 'ի վերայ իւրեանց մեղս՝ զի մի՛ մեռանիցին: օրէն յաւիտեանական նմա և զաւակի իւրում յետ նորա՝:

29

Գլուխ ԻԹ

Եւ ԺԸ՛ 1 Եւ այն ինչ է զոր առնիցես նոցա, և սրբեսցես զնոսա քահանայանալ նոցա ինձ: Առցես զուարակ մի յանդոյ. և խոյս երկուս անարատս: 2 և պանս բաղարջս, և շօթս բաղարջս զանգեալ իւղով. և քաքարս բաղարջս օձեալ իւղով, նաշի՛հ ցորենոյ զանգեալ իւղով արասցես զայն: 3 Եւ դիցես 'ի վերայ

* Ոմանք. Եւ զանգակք ոսկիք 'ի մէջ:

* Ի լուս՝. Եւ եղիցի 'ի խուրին յեր՝: Ուր ոմանք. Եւ եղիցին խուրին:

* Ի լուս՝. Անդրավարտիս կտաւի. համաձայն ոմանց 'ի բնաբ՝: Ոմանք. Մարմնոյ իւրեանց:

* Ոմանք. Եւ մի՛ աժցեն 'ի վերայ:

խանի միոյ. և մատուցես զայն խանիւն, և զգուարակն, և զերկու խոյսն: ⁴Եւ զԱհարոն և զորդիս նորա մատուցես ՚ի դուռն խորանին վկայութեան. և լուսացես զնոսա ջրով: ⁵Եւ առեալ զպատմութեանսն զգեցուցես Ահարոնի եղբօր քում. և զպարեգօտս պճղնաւորս ՚ի վերայ ներքնակացն. և զվական. և զտախտակն. և պնդեսցես զտախտակն ընդ վական: ⁶Եւ դիցես զխոյնն ՚ի վերայ գլխոյ նորա. և դիցես զթիթեղնն սուրբ ՚ի վերայ խուրին: ⁷Եւ առցես յիւղոյ անտի օծման, և արկցես ՚ի գլուխ նորա, և օծցես զնա: ⁸Եւ զորդիս նորա մատուցես, և զգեցուցես նոցա պատմութեանսն. և ածցես նոցա կամարս #. ⁹Ահարոնի և որդւոց նորա. և ածցես նոցա ապարաւշս. և եղիցի նոցա այն ինձ ՚ի քահանայութիւն յաւիտեական: և կատարեսցես զձեռս Ահարոնի և զձեռս որդւոց նորա: ¹⁰Եւ մատուցես զգուարակն առ դուռն խորանին վկայութեան. և դիցես Ահարոն և որդիք նորա զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ զուարակին առաջի Տեառն, առ դրան խորանին վկայութեան*: ¹¹Եւ սպանցես զգուարակն առաջի Տեառն, առ դրան խորանին վկայութեան: ¹²Եւ առցես յարեմէ զուարակին, և դիցես ՚ի վերայ եղջերաց սեղանոյն մատամբ քով. և զայլն ամենայն արիւն ցանեսցես առ յատակաւ սեղանոյն: ¹³Եւ առցես զամենայն ճարպ թաղանթոյ քաղղղին, և զլերդաբոյթն, և զերկուս երիկամունսն ճարպովին, դիցես ՚ի վերայ սեղանոյն: ¹⁴Եւ զմիս զուարակին և զմորթ նորա, և զապաւառն այրեսցես արտաքոյ բանակին. զի այն իսկ է վասն մեղաց: ¹⁵Եւ զխոյն զմի՝ առցես. և դիցես քահանայքն որդիքն Ահարոնի զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ խոյնն*. ¹⁶Եւ զենցես զխոյն: և առեալ զարիւն նորա հեղցես շուրջ զսեղանովն: ¹⁷Եւ զխոյն յօշեսցես անդամ անդամ, և լուսացես զփորոտին և զոտս նորա ջրով. և դիցես ՚ի վերայ յօշուածոյն, հանդերձ զլխով նորա: ¹⁸Եւ հանցես բովանդակ զխոյն ՚ի վերայ սեղանոյն յողջակեզ Տեառն ՚ի հոտ անուշից. զոհ Տեառն է*: ¹⁹Եւ առցես զխոյն զերկրորդ. և դիցես Ահարոն և որդիք նորա զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ խոյնն: ²⁰Եւ սպանցես զխոյն: Եւ առցես յարեմէ նորա, և դիցես ՚ի վերայ բլթակի աջոյ ունկանն Ահարոնի. և ՚ի վերայ բլթակի աջոյ ունկան որդւոց նորա. և ՚ի վերայ ծայրից ձեռին նորա աջոյ, և ՚ի վերայ ծայրից աջոյ ոտին նորա. և ՚ի վերայ աջուց բլթակաց ականջաց որդւոց նորա. և ՚ի վերայ ծայրից աջոյ ձեռաց նոցա. և ՚ի վերայ ծայրից աջոյ ոտից նոցա: և հեղցես զարիւնն շուրջ զսեղանովն*: ²¹Եւ առցես յարեմէն որ ՚ի վերայ սեղանոյն իցէ, և յիւղոյ օծութեանն, և ցանեսցես ՚ի վերայ Ահարոնի և ՚ի վերայ պատմութեանի նորա. և ՚ի վերայ որդւոց նորա, և ՚ի վերայ պատմութեանաց որդւոց նորա ընդ նմա. և սրբեսցի՝ ինքն և պատմութեան իւր. և որդիք նորա, և պատմութեանք որդւոց նորա ընդ նմա: և զարիւն խոյնն ցանեսցես շուրջ զսեղանովն: ²²Եւ առցես ՚ի խոյն անտի զճարպն և զդնակն և զճարպ թաղանթոյ քաղղղին, և զլերդաբոյթն և զերկուս երիկամունսն ճարպովին. և զերին աջոյ. զի այն է կատարումն: ²³Եւ պան մի, և շօթ մի իւղով զանգեալ. և քաքար մի ՚ի

* *Ոմանք.* ՚ի վերայ ներքնակացն. և:

* *Այլք.* Առ դրան խորանին:

* *Այլք.* Եւ դիցես Ահարոն և որդիք նորա զձեռս:

* *Յօրինակին ՚ի կարգի անդ դատարկ տեղի թողեալ, ՚ի լուս.* նշանակի ՚ի ներքս բերել՝ զոհ Տեառն է. *համաձայն այլոց. ըստ որում և մեք յաւելաք:*

* *Յօրինակին պակասէր.* Աջոյ ոտին նորա. և ՚ի վերայ աջուց բլթակաց ականջաց որդւոց նորա, և ՚ի վերայ ծայրից:

խանէ անտի բաղարջացն եղելոցն առաջի Տեառն*։ ²⁴Եւ դիցես զայն ամենայն 'ի վերայ ձեռացն Ահարոնի, և 'ի վերայ ձեռաց որդւոց նորա. և նուիրեսցես զայն նուէր առաջի Տեառն: ²⁵Եւ առցես 'ի ձեռաց նոցա, և հանցես 'ի սեղանն ողջակիզաց 'ի հոտ անուշից առաջի Տեառն. զի պտուղ Տեառն է:

ԾԺԹ ²⁶Եւ առցես զերբուծն 'ի խոյէ անտի կատարման, որ է Ահարոնի. և նուիրեսցես զայն նուէր առաջի Տեառն. և եղիցի քեզ 'ի մասն: ²⁷Եւ սրբեսցես զերբուծն 'ի նուէր, և զերի՛ նուիրին որ նուիրիցի: Եւ որ ինչ հանիցի 'ի խոյէն ²⁸կատարման յԱհարոնէ և յորդւոց նորա, և եղիցի Ահարոնի և որդւոց նորա օրէն յաւիտեանական առ 'ի յորդւոցն Իսրայէլի. զի այն է նոցա հաս: Եւ եղիցի նուէր յորդւոցն Իսրայէլի 'ի զենլեաց փրկութեանց իւրեանց, նուէր նոցա Տեառն: ²⁹Եւ պատմուճանն սրբութեան որ է Ահարոնի, եղիցի որդւոց նորա յետ նորա, օծանել զնոսա նոքօք, և կատարել նոքօք զձեռս նոցա: ³⁰Ձեւթն օր զգեճուցու զայն քահանայն որ փոխանակ նորա կայցէ յորդւոց իւրոց. որ մտանիցէ 'ի խորանն վկայութեան պաշտել 'ի սրբութիւնսն:

ԾԻ ³¹Եւ զխոյն կատարման առցես. և եփեսցես զմիս նորա 'ի սրբում տեղւոջ. ³²և կերիցեն՝ Ահարոն և որդիք նորա զմիս խոյին. և զպանսն որ 'ի խանի անդ, առ դրան խորանին վկայութեան կերիցեն զայն*, ³³որովք սրբեցանն՝ 'ի կատարել զձեռս նոցա և սրբել զնոսա: օտարազգի՛ ոք՝ մի՛ կերիցէ 'ի նոցանէ՝ զի սրբութիւնք են: ³⁴Ապա թէ մնայցէ 'ի մտոյ զոհին կատարման, և 'ի հացէ անտի յայգ՝ այրեսցեն զնշխարն հրով. և մի՛ կերիցի, զի սրբութիւն Տեառն է: ³⁵Եւ արասցես Ահարոնի և որդւոց նորա այսպէս, ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցի քեզ: Ձեւթն օր կատարեսցեն զձեռս նոցա: ³⁶Եւ զզուարակն զվասն մեղաց՝ արասցեն յաւուրն սրբութեան*:

ԾԻԱ Եւ մաքրեսցեն զսեղանն, սրբել քեզ 'ի վերայ նորա. օծցեն զնա առ 'ի սրբել զնա ³⁷զեւթն օր: մաքրեսցեն զսեղանն և սրբեսցես զնա. և եղիցի սեղանն սուրբ սրբոյն. ամենայն որ մերձեսցի 'ի սեղանն՝ սրբեսցի:

ԾԻԲ ³⁸Եւ այս ինչ իցէ զոր առնիցես 'ի վերայ սեղանոյն: երկուս գառնին տարևորս անարատս՝ առ օր 'ի վերայ սեղանոյն յաճախութեամբ. զի պտուղ յաճախութեան է: ³⁹Ձմի գառնն առնիցես ընդ առաւօտս, և զերկրորդ գառնն՝ առնիցես ընդ երեկոյս: ⁴⁰Եւ տասանորդ նաշիոյ՝ մզեալ իւղով թրմեալ. և զչորրորդ դորակի գինւոյ՝ նուէր առ մի գառնն*: ⁴¹Եւ զգառնն երկրորդ, արասցես ընդ երեկոյս՝ ըստ առաւօտին զոհին, և ըստ նորին նուիրին առնիցես նմա 'ի հոտ անուշից ⁴²պտուղ Տեառն: զոհ յաճախութեան յազգս ձեր, առ դրան խորանին վկայութեան առաջի Տեառն: որովք ծանուցայց քեզ անդ խօսել ընդ քեզ: ⁴³Եւ ծամանակեցի՛ց անդ որդւոցն Իսրայէլի, և սրբեցայց փառօք իմովք*.

⁴⁴և սրբեցից զխորանն վկայութեան և զսեղանն: Եւ զԱհարոն և զորդիս նորա սրբեցի՛ց ինձ 'ի քահանայութիւն: ⁴⁵Եւ անուանեցայց յորդիսն Իսրայէլի. և եղէց նոցա Աստուած: ⁴⁶Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր Աստուած նոցա. որ հանի զնոսա յերկրէն Եգիպտացւոց, անուանել նոցա՝ և լինել նոցա Տէր Աստուած:

* Ոմանք. Բաղարջոցն եղելոց:

* Այլք. Կերիցեն զնոսա, (33) որովք սր՛: Ուր Ոսկան յաւելու. կերիցեն զնոսա, զի լիցի հաճոյական զոհ, որովք:

* Ոմանք. 'ի սրբել քեզ.. և օծցես զնա առ 'ի սրբելոյ:

* Ոմանք. Եւ զչորրորդ դորակի, և նուէր ըստ չորրորդ դորակի գինւոյ առ մի գառն:

* Ոսկան. Եւ սրբեսցի սեղանն փառօք իմօք:

Գլուխ L

ՃԻԳ ¹Եւ արասցես սեղան խնկակալ խնկոց յանփուտ փայտից*։ ²Եւ արասցես զնա կանգնաւ յերկայնութիւն, և կանգնաւ ՚ի լայնութիւն, չորեքկուսի՛ լինիցի. և յերկուց կանգնոց բարձրութիւն նորա. և եղջերք իւր անդստին ՚ի նմանէ՛ լինիցին*։ ³Եւ պատեսցես զնա ոսկով սրբով. զվանդակն նորա և զկողմանս շուրջանակի, և զեղջերս նորա. և արասցես նմա պսակ ոսկի շուրջանակաւ շուրջանակի*։ ⁴Եւ երկուս օղս ոսկիս սուրբս արասցես ընդ շուրջանակաւ պսակի նորա յերկոցունց կողմանց. ⁵և արասցես յերկոսին անկիւնս նորա. և եղիցին լծակք օղալամբացն բառնալ զնա նոքօք։ ⁶Եւ արասցես զլծակսն յանփուտ փայտից, և պատեսցես զնոսա ոսկով։ ⁷Եւ դիցես զնա յանդիման վարագորին, որ իցէ առաջի տապանակին վկայութեան, ընդդէմ վկայութեանն՝ որ իցէ առ վկայութեամբքն, որովք երևեցայց քեզ անդ։ ⁸Եւ արկցէ ՚ի վերայ նորա Ահարոն խո՛ւնկս հանդերձեալ՝ աղացեալ մանր իբրև զփոշի. ընդ առաւօտս առաւօտս, յորժամ զճրագսն հանդերձիցէ. ծխեսցէ խո՛ւնկ ՚ի վերայ նորա։ ⁹Եւ յորժամ լուցանիցէ Ահարոն զճրագսն երեկորին, ծխեսցէ ՚ի վերայ նորա խո՛ւնկս յաճախութեան հանապազորդ առաջի Տեառն յազգս իւրեանց։ ¹⁰Եւ ո՛չ հանիցէք ՚ի վերայ նորա խո՛ւնկ օտար, և պտուղս, և զոհս, և նուէրս մի՛ նուիրիցէք ՚ի վերայ նորա։ ¹¹Եւ քաւեսցէ՛ Ահարոն ՚ի վերայ եղջերաց նորա միանգամ ՚ի տարուջ՝ յարեմէ առ ՚ի վասն մեղացն սրբութեան և քաւութեան. մի անգամ ՚ի տարուջ սրբեսցէ զնա յազգս նոցա, զի սրբութիւն սրբութեանց Տեառն է*։

ՃԻԴ ¹²Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. Եթէ ունիցիս զհամար որդւոցն Իսրայէլի ՚ի հանդիսի իւրեանց։ և տացեն իւրաքանչիւր փրկանս ընդ անձին իւրոյ Տեառն՝ ըստ հանդիսին իւրեանց. և մի՛ լինիցի ՚ի նոսա մա՛հ ՚ի հանդիսի անդ իւրեանց։ ¹³Եւ այս ինչ է զոր տացեն որք անցանիցեն ՚ի հանդիսի անդ. զկէս երկդրամենին, որ իցէ ըստ սրբութեան երկդրամենին. քսան դանգ է երկդրամեանն. և կէս երկդրամենին եղիցի հաս Տեառն։ ¹⁴Ամենայն որ անցանիցէ ՚ի հանդիսի անդ՝ ՚ի քսան ամենից և ՚ի վեր՝ տացեն հաս Տեառն. ¹⁵մեծատունն՝ մի՛ յաւելցէ. և տնանկն՝ մի՛ պակասեցուցէ ¹⁶ի կիսոյ երկդրամենին ՚ի տալ անդ զհաս Տեառն յորդւոցն Իսրայէլի, առնել քաւութիւն՝ վասն անձանց ձերոց։ Եւ առցես զարծաթ հասին յորդւոցն Իսրայէլի, և տացես զնա ՚ի գործ խորանին վկայութեան. և եղիցի որդւոցն Իսրայէլի յիշատակ առաջի Տեառն, քաւել վասն անձանց նոցա*։

ՃԻԵ ¹⁷Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁸Արա՛ աւազան պղնձի, և զխարիսիս նորա պղնձի առ ՚ի լուանալոյ ՚ի նմա։ և դիցես զնա ընդ խորանն վկայութեան և ընդ սեղանն. և արկցես ՚ի նա ջուր։ ¹⁹Եւ լուասցեն Ահարոն և որդիք նորա ՚ի նմանէ զձեռս և զոտս իւրեանց, ²⁰յորժամ մտանիցեն ՚ի խորանն վկայութեան՝ լուասցին ջրով՝ և մի՛ մեռանիցին. կամ յորժամ մերձենայցեն ՚ի սեղանն պաշտել, և հանել զողջակէզսն Տեառն, լուասցեն զձեռս և զոտս

* *Ոմանք.* Սեղան խնկեայ խնկոց։

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղջերք իւր անդստի։

* *Յօրինակին.* Եւ պատեսցես զնա ոսկով։

* *Ի լուս.* Յարեմէ որ առ ՚ի վասն մե։

* *Յօրինակին պակասէր.* ՚ի տալ անդ զհաս Տեառն։

իւրեանց՝ ²¹զի մի՛ մեռանիցին: Եւ եղիցի նոցա օրէն յաւիտեանական. նմա՛ և որդւոց նորա յետ նորա՛:

Եւ ²²Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի, ²³և ասէ. Եւ դու ա՛ռ քեզ խունկս անուշունս. ծաղիկ ընտիր զմըռնեմեաց հինգ հարիւր սիկղ. և կինամոմոն զանոյշ, զկէս այնորիկ երկերիւր և յիսուն. և զխունկեղէզն զանոյշ երկերիւր և յիսուն՝: ²⁴և հիրիկ հինգ հարիւր սիկղ ըստ սրբութեանն. և ևղ ձիթեմեաց հիմեմեաւ միով՝: ²⁵Եւ արասցես զայն ևղ յօծումն սրբութեան. ևղ եփեալ ըստ արուեստի իւղագործաց. ևղ յօծումն սրբութեան լինիցի: ²⁶Եւ օձցե՛ս ՚ի նմանէ զխորանն վկայութեան, և զտապանակ վկայութեանն. ²⁷և զսեղանն և զամենայն զկահ նորա: և զաշտանակ և զամենայն զկահ նորա. և զսեղանն խնկոց. ²⁸և զսեղանն ողջակիզաց, և զամենայն զկահ նորա. և զաւազանն, և զյատակս նորա՛: ²⁹Եւ սրբեսցե՛ս զնոսա. և եղիցի սրբութիւն սրբութեանց. ամենայն որ մերձեմայցէ ՚ի նոսա՝ սրբեսցի՛: ³⁰Եւ զԱհարոն և զորդիս նորա օձցե՛ս և սրբեսցե՛ս զնոսա ինձ ՚ի քահանայութիւն: ³¹Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեսցի՛ս և ասասցես. Եւղ յօծումն օծութեան սրբոյ եղիցի ձեզ յազգս ձեր: ³²Ի մարմին մարդոյ՝ ո՛չ օժանիցի. և ըստ այդմ հանդերձանի ո՛չ առնիցէք ձեզ այդպիսի, զի սո՛ւրբ է, և ՚ի սրբութիւն եղիցի ձեզ: ³³Որ ոք առնիցէ այդպիսի. և որ ոք տացէ՛ ՚ի դմանէ այլազգւոյ, սատակեսցի՛ ՚ի ժողովրդենէ իւրմէ՛:

Եւ ³⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ա՛ռ դու քեզ խունկս անուշունս. ստաշխն, և եղունգն, և զքաղբանն զանոյշ, և զկնդրուկն զերևելի. զի հասարակ առ հասարակ լինիցին: ³⁵Եւ արասցե՛ս զայն խունկս եփեալս. զորձ իւղագործաց հանդերձանի. զորձ մաքուր ՚ի սրբութիւն: ³⁶Եւ աղայցե՛ս ՚ի նոցանէ մանր. և դիցես ՚ի նմանէ յանդիման վկայութեանցն ՚ի խորանին վկայութեան. ուստի երևեսցայց քեզ անտի. զի ՚ի սրբութիւն սրբութեանց եղիցի ձեզ խո՛ւնկս այն զոր առնիցէք՝: ³⁷Ըստ այնմ հանդերձանի մի՛ առնիցէք ձեզ խունկս. զի սրբութիւն Տեառն եղիցի ձեզ: ³⁸Այր ոք որ առնիցէ ըստ այսմ օրինակի՝ առնուլ հո՛տ ՚ի նմանէ, կորիցէ՛ ՚ի ժողովրդենէ իւրմէ՛:

31

Գլուխ ԼԱ

Եւ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ²Ահաւաղիկ յանուանէ՛ կոչեսցեալ է իմ զԲեսէլիէլ զՈւրիեան, զորդի Ովրայ յազգէ Յուդայ՝: ³Եւ լցուցի՛ց զնա աստուածօղէն Յոգուով իմաստութեան, և հանճարոյ և գիտութեան ամենայն գործոյ, ⁴խելամո՛ւտ լինել, և ճարտարապետել: Գործել զոսկին և զարծաթ և զպղինձ. ⁵զկապուտակն, և զծիրանին, և զկարմիրն մանեալ. և զականակապն

* Այլք. Եւ ազգաց նորա յետ նորա:

* Յօրինակին. Եւ երկերիւր և:

* Օրինակ մի. Ի ձիթեմեաց դորակաւ միով:

* Ի լուս՝. Եւ զամենայն զկահ նոցա:

* Այլք. Եւ աղասցես ՚ի նոցանէ:

* Այլք. Առնիցէ ըստ այնմ օրինակի:

* Յօրինակին. Ձորդի Ամովրայ յազգէ Յու՛: Այլք. Կոչեսցեալ իմ զԲեսէ՛... (3) Եւ լցուցի զնա:

ի լրութիւն գործոյն. և զհիւսնութիւն փայտից, գործել ըստ ամենայն գործոյ*:
6Եւ ես ահա ետու զնա, և զեղիաք զԱքիսամայ յազգէ Դանայ. և ՚ի սիրտ
ամենայն իմաստնոյ ետու զիմաստութիւն, և արասցեն զամենայն զոր
միանգամ պատուիրեցի քեզ: 7Զխորանն վկայութեան. և զտապանակ
կտակարանացն. և զքաւութիւնն որ ՚ի վերայ նորա. և զամենայն զսպաս
խորանին. և զգոհանոցսն. 8և զսեղանն և զամենայն զկահ նորա. և
զաշտանակն սուրբ և զամենայն զկահ նորա. և զսեղան խնկոցն. 9և զսեղան
ողջակիզացն և զամենայն զկահ նորա. և զաւազանն և զխարիսխ նորա*. 10և
զպատմուճանս պաշտամանն. և զհանդերձս սրբութեանն զԱհարոնի
քահանայի. և զպատմուճանս որդւոց նորա ՚ի քահանայանալ ինձ*. 11և զկն
օծութեան և զխունկս հանդերձանաց սրբութեանն: Եւ զամենայն զոր միանգամ
պատուիրեցի քեզ՝ արասցեն:

6ԻԹ 12Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. 13Եւ դու խօսեաց ընդ որդիսն
Իսրայէլի՝ և ասասցես. Ձգոյ՛ջ կացէք պահելոյ զշաբաթս իմ. զի նշանակ է ընդ
իս և ընդ ձեզ յազգս ձեր. զի ծանիջիք թէ ես եմ Տէր որ սրբեմ զձեզ. 14և
պահեսցիք զշաբաթս, զի սրբութիւն է այն Տեառն, և ձեզ: Որ պղծեսցէ զնա՝
մահով մեռցի. ամենայն որ գործիցէ ՚ի նմա գործ, սատակեսցի՝ անձնն այն ՚ի
միջոյ ժողովրդեան իւրոյ*: 15Չվեց՝ օր գործեսցես գործ. և յաւուրն եւթներորդի
շաբաթ հանգստեան սրբութիւն Տեառն. ամենայն որ գործեսցէ գործ յաւուր
շաբաթով՝ մահով մեռցի: 16Եւ պահեսցեն որդիքն Իսրայէլի զշաբաթս, առնել
զնոսա յազգս ձեր. ո՛ւխտ յաւիտեանական 17ընդ իս և ընդ որդիսն Իսրայէլի:
Նշանակ իմ է յաւիտեանական. զի զվեց օր արար Աստուած զերկինս և զերկիր, և
յաւուրն եւթներորդի դադարեաց և հանգեաւ*:

6Լ 18Եւ ետ Մովսիսի՝ իբրև դադարեաց ինքն ՚ի խօսից իւրոց ՚ի լերինն Սինա,
զերկուս տախտակսն վկայութեան, տախտակս քարեղէնս գրեալս մատամբն
Աստուծոյ*:

32

Գլուխ ԼԲ

6ԼԱ 1Եւ տեսեալ ժողովրդեանն՝ թէ յամեաց Մովսէս իջանել ՚ի լեռնէ անտի.
կուտեցաւ ժողովուրդն ՚ի վերայ Ահարոնի՝ և ասեն ցնա. Արի՛ և արա՛ մեզ
աստուածս՝ որ առաջնորդեսցեն մեզ. զի այրն այն Մովսէս որ եհան զմեզ
յեգիպտոսէ, ո՛չ գիտեմք զի՞ եղև նմա: 2Եւ ասէ ցնոսա Ահարոն. Կողոպտեցէք
զգինդս ոսկիս յակընջաց կանանց ձերոց, և ուստերաց և դստերաց ձերաց, և
բերէք առ իս: 3Եւ կողոպտեաց ամենայն ժողովուրդն զգինդս ոսկիս յակընջաց
կանանց իւրեանց, և բերին առ Ահարոն*: 4Եւ ընկալաւ ՚ի ձեռաց նոցա: և
ծուլեաց զայն քանդակագործով, և արար ո՛րթ ծուլածոյ: Եւ ասեն. Այս եմ

* Այլք. Եւ զկապուտակն և:

* Այլք. Եւ զաւազանն և զխա՛:

* Ոմանք. ԶԱհարոնի զքահանային:

* Այլք. Եւ որ պղծեսցէ զնա:

* Ոմանք. Արար Տէր զերկին և:

* Յօրինակին. Եւ ետ Մովսի՝ իբրև:

* Այլք. Յականջաց իւրեանց. և բերին:

աստուածք քո Իսրայէլ, որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացոց: ⁵Եւ իբրև ետես Ահարոն՝ շինեաց սեղան առաջի նորա: Եւ քարո՛գ կարդաց Ահարոն՝ և ասէ. Տօն Տեառն առ վաղիւ: ⁶Եւ կանխեալ ՚ի վաղիւ անդր եհան ողջակէզս, և մատոյց զո՛հս փրկութեան. Եւ նստաւ ժողովուրդն յուտել և յըմպել, և յարեան ՚ի խաղալ:

ՃԼԲ ⁷Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Գնա՛ էջ դու աստի վաղվաղակի, զի անօրինեցաւ ժողովուրդն քո՝ զոր հաներ յերկրէն Եգիպտացոց. ⁸անցին վաղվաղակի զճանապարհաւն՝ զոր պատուիրեցեր նոցա. արարին իւրեանց ո՛րթ ձուլածոյ, և երկի՛ր պագին նմա, և զոհեցին նմա և ասեն. Այս են աստուածք քո Իսրայէլ, որ հանին զքեզ յեգիպտոսէ՛:

ՃԼԳ ⁹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Տեսի՛ զժողովուրդն զայն, և ահա ժողովուրդ խստապարանո՛ց է: ¹⁰Եւ արդ՝ թո՛յլ տուր ինձ, և բարկացեալ սրտմտութեամբ ինով ՚ի նոսա սատակեցից զնոսա. և արարից զքեզ յագգ մեծ: ¹¹Եւ աղաչեաց Մովսէս առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ՝ և ասէ. Ընդէ՞ր Տէր բարկանաս սրտմտութեամբ քով ժողովրդեան քում, զոր հաներ յերկրէն Եգիպտացոց զօրութեամբ մեծաւ և բարձր բազկաւ: ¹²Գուցէ՛ խօսիցին Եգիպտացիքն՝ ուստի հաներն զմեզ. և ասիցեն. Առ չարութեան եհան զնոսա, կոտորել զնոսա ՚ի լերինն, և ջնջել զնոսա յերկրէ: Դադարեա՛ ՚ի բարկութենէ սրտմտութեան քոյ, և ցածի՛ր ՚ի չարեաց ժողովրդեան քոյ՛: ¹³Յիշեա՛ դու զԱբրաամ և զԻսահակ և զՅակոբ զժառայս քո. որոց երդուար յանձն քո, խօսեցար ընդ նոսա և ասես. և առաւել բազմացուցից զգաւակ ձեր, իբրև զաստեղս երկնից բազմութեամբ: և զամենայն երկիրն զոր ասացեր տալ զաւակի նոցա, կալցի՛ն զնա յաւիտեան՛: ¹⁴Եւ ցածեաւ Տէր ՚ի չարեացն, զոր ասաց առնել ժողովրդեանն իւրում:

ՃԼԴ ¹⁵Եւ դարձաւ Մովսէս՝ էջ ՚ի լեռնէ անտի, և երկու տախտակքն վկայութեան ՚ի ձեռս նորա: տախտակք քարեղէնք, գրեալք յերկուց կողմանց աստի և անտի գրեալք: ¹⁶Եւ տախտակքն՝ զո՛րծ Աստուծոյ էին. և գիրն՝ Գիր Աստուծոյ դրոշմեալ ՚ի տախտակսն՛: ¹⁷Եւ լուեալ Յեսուայ զձայն ժողովրդեանն աղաղակելոյ, ասէ ցՄովսէս. Չայն պատերազմի է ՚ի բանակին՛: ¹⁸Եւ ասէ Մովսէս. Ո՛չ է ձայն նահատակաց զօրութեան, և ո՛չ է բարբառ նահատակաց քաջութեան. այլ ձայն յանգգայելոց ՚ի գինւոյ լսեմ ես: ¹⁹Եւ իբրև մերձեցաւ ՚ի բանակ անդր, և ետես զորթն և զպարաւորսն, բարկացաւ սրտմտութեամբ Մովսէս. ընկէ՛ց ՚ի ձեռաց իւրոց զտախտակսն երկոսին, և խորտակեաց զնոսա առ ստորոտով լերինն՛:

ՃԼԵ ²⁰Եւ առեալ զորթն զոր արարին՝ այրեաց հրով. և խարտեաց զնա մանր, և ցանեաց ՚ի վերայ ջրոցն և արբոյճ որդւոցն Իսրայէլի:

ՃԼԶ ²¹Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Չի՞նչ արար քեզ ժողովուրդդ, զի ածեր ՚ի վերայ դոցա զանհնարին զմեղսդ: ²²Եւ ասէ Ահարոն ցՄովսէս. Մի՛ բարկանար սրտմտութեամբ՝ տէ՛ր իմ. զի դու ինքնին գիտես զյանդգնութիւն ժողովրդեանդ. ²³զի ասացին թէ արա՛ մեզ աստուածս որ առաջնորդեսցեն մեզ. զի այրն այն Մովսէս՝ որ եհան զմեզ յեգիպտոսէ, ո՛չ գիտեմք զի՞ եղև նմա: ²⁴Եւ ասեն զնոսա.

* Այլք. Որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացոց:

* Յայլս պակասի. Եգիպտացիք՝ ուստի հաներն զմեզ. և ասիցեն:

* Այլք. Եւ զամենայն զերկիրն զայն զոր աս՛:

* Ոմանք. Եւ գիրն գրեալ Աստուծոյ, գր՛:

* Այլք. Ի բանակի անդ: (18) Եւ ասէ. Ոչ է ձայն... և ո՛չ բարբառ նա՛:

* Այլք. Բարկացեալ սրտմտութեամբ:

* Յօրինակին. Գիտես զանդգնութիւն:

Եթէ իցէ ուրուք ոսկի, կողոպտեցէ՞ք և բերէ՞ք առ իս: Եւ ետուն ցիս, և ընկեցի զայն ՚ի հուր, և ել ո՛րթոյ այդ՝:

ՃԼԷ ²⁵Եւ ետես Մովսէս եթէ յանցեալ ժողովուրդն. քանզի յանցոյց զնոսա Ահարոն յոտնահարութիւն թշնամեաց իւրեանց՝: ²⁶Եւ եկաց Մովսէս առ դրան բանակին՝ և ասէ. Որ ոք Տեառն իցէ՝ առիս մատիցէ: Հասանէին առ նա ամենայն որդիքն Ղևեայ: ²⁷Եւ ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Դի՞ք իւրաքանչիւր զսուր իւր յազդեր իւրում. անցէ՞ք և այսրէ՛ն դարձարուք դրանէ ՚ի դուռն բանակիդ. և կոտորեցէ՞ք իւրաքանչիւր զեղբայր՝ և իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զներձաւոր իւր՝: ²⁸Եւ արարին որդիքն Ղևեայ որպէս և ասաց Մովսէս: և անկան ՚ի ժողովրդենէ անտի յաւուր յայնմիկ, ոգիք իբրև երեք հազարք այր՝: ²⁹Եւ ասէ ցնոսա Մովսէս. Լցէ՞ք զձեռս ձեր այսօր Տեառն, և իւրաքանչիւր յորդի իւր, և իւրաքանչիւր յեղբայր իւր, տալ ՚ի վերայ ձեր այսօր օրհնութիւն:

ՃԼԸ ³⁰Եւ եղև ՚ի վաղիւ անդր, ասէ Մովսէս ցժողովուրդն. Դուք մեղայք զմեղսդ զայդ զմեծ, բայց ես արդ՝ ելի՛ց առ Աստուած, զի ցածուցից վասն մեղաց ձերոց: ³¹Դարձաւ Մովսէս անդրէն առ Տէր և ասէ. Աղաչե՛ն զքեզ Տէր. մեղաւ ժողովուրդն այն մեղս անհնարինս. և արարին իւրեանց աստուածս ոսկեղէնս: արդ՝ եթէ թողուս նոցա զմեղս իւրեանց՝ թո՛ղ. ³²ապա թէ ոչ՝ ջնջեա՛ և զիս ՚ի դպրութենէ քունմէ յոր գրեցեր՝:

ՃԼԹ ³³Եւ ասէ Տէր ցՄովսէս. Եթէ ոք մեղաւ առաջի իմ, ջնջեցից զնա ՚ի դպրութենէ իմմէ: ³⁴Բայց արդ՝ ե՛րթ էջ և առաջնորդեա՛ ժողովրդեանն այնմիկ ՚ի տեղին՝ յոր ասացի քեզ: Եւ ահա հրեշտակ իմ երթիցէ առաջի երեսաց քոց: Բայց յաւուր յորում այց արարից, ածի՛ց ՚ի վերայ նոցա զմեղս իւրեանց՝: ³⁵Եւ եհար Տէր զժողովուրդն վասն առնելոյ նոցա զորթն՝ զոր արար Ահարոն:

33

Գլուխ ԼԳ

ՃԽ ¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Երթ ել աստի, դու և ժողովուրդն քո զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց, յերկիրն զոր երդուայ Աբրաամու՝ և Սահակայ՝ և Յակոբայ. ասեմ. Ջաւակի՛ ձերում տաց զնա: ²Եւ առաքեցից առաջի երեսաց քոց զհրեշտակ իմ. և մերժեսցէ՛ զՔանանացին, և զԱմովրիացին, և զՔետացին, և զՓերեզացին, և զԳերզեսացին, և զԻսլացին, և զՅերուսացին՝, ³և տարցի՛ զքեզ յերկիրն որ բոխտ զկաթն և զմեղր: Բայց ես ո՛չ ելից ընդ ձեզ, վասն խստապարանոց լինելոյ ժողովրդեանդ. զի մի՛ սատակիցե՛մ զքեզ ՚ի ճանապարհի՛: ⁴Եւ լուեալ ժողովրդեանն զբանն զայն չար, սուգ առին սգաւորք

* Այլք. Եւ բերէք, և ետուն ցիս:

* Այլք. Յոտնահարութիւն թշնամեաց:

* *Յօրինակին պակասէր. Դարձարուք դրանէ՛ ՚ի դուռն բա՛:*

* *Ամենայն գրչագիր օրհնակք մեր համաձայն բնագրաց Յունաց և Եբրայեցւոց՝ յայսմ վայրի ունին, երեք հազարք այր: Ուր Ոսկան առեալ ՚ի լատին օրհնակէ յաւելմամբ դնէ, քսան և երեք հազար այր:*

* Այլք. Ջնջեա՛ զիս ՚ի դպ՛:

* Ոսկան. Ի տեղին՝ զոր ասացի:

* *Յօրինակին աստէն և ստորև ուրեք ուրեք՝ Յերուսացին, գրի և՛ Երուսացի:*

* Այլք. Եւ տարայց զքեզ յերկիր.. ո՛չ ելից ընդ քեզ:

#. և ո՛չ ա՛ն այր զգարդ զանձամբ*։ ⁵Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ասա՛ դու ցորդիսն Իսրայէլի. Դուք ժողովուրդ խստապարանոց էք. զգո՛յշ լերուք գուցէ և ա՛յլ ևս հարուած ածիցեն՝ ՚ի վերայ ձեր, և սատակիցեն՝ զձեզ։ և արդ՝ մերկացարո՞ւք զպատմուճանս փառաց ձերոց, և զգարդ քո՛ ՚ի քէն. և ցուցի՛ց զինչ առնիցեն՝ քեզ*։ ⁶Եւ մերկացան որդիքն Իսրայէլի զգարդ իւրեանց, և զպատմուճանս իւրեանց ՚ի Քորէբ լերին*։

ՃԻԱ ⁷Եւ առեալ Մովսիսի զխորան իւր՝ եհար արտաքոյ բանակին, մեկուսի՛ ՚ի բանակէ անտի. և կոչեցաւ այն՝ խորան վկայութեան։ Եւ լինէր ամենայն ոք որ խնդրէ՛ր ինչ ՚ի Տեառնէ, ելանէր ՚ի խորանն վկայութեան արտաքոյ բանակին։ ⁸Եւ յորժամ երթայր Մովսէս ՚ի խորանն՝ կայր ամենայն ժողովուրդն դէտակնկալեալ իւրաքանչիւր ուրուք առ դուրս խորանի իւրոյ։ հայէին ընդ Մովսէս մինչ երթայր մտանէր ՚ի խորանն*։ ⁹Եւ յորժամ մտանէ՛ր Մովսէս ՚ի խորանն, իջանէր սի՛ն ամպոյն և կայր առ դուրս խորանին, և խօսէր Տէր ընդ Մովսիսի։ ¹⁰Եւ տեսանէր ամենայն ժողովուրդն զսի՛ն ամպոյն որ կայր առ դուրս խորանին. և կային ամենայն ժողովուրդն յոտն, և երկի՛ր պագանէին իւրաքանչիւր առ դուրս խորանի իւրոյ։ ¹¹Եւ խօսէ՛ր Տէր ընդ Մովսիսի դէ՛մ յանդիման. որպէս ոք զի խօսիցի ընդ բարեկամի իւրում. և դառնայր ՚ի բանակ անդր։ Բայց պաշտօնեայ նորա Յեսու որդի Նաւեայ ո՛չ ելանէր ՚ի խորանէ անտի։

ՃԻԲ ¹²Եւ ասէ Մովսէս ցՏէր. Ահա ասե՛ս ցիս. Յան՝ զժողովուրդդ զայդ. և դու ո՛չ ցուցեր ինձ զո՞ առաքիցես ընդ իս։ և դու՝ ցի՛ս ասացեր՝ թէ ճանաչե՛մ զքեզ քան զամենեսին, և ունիս շնորհս յինէն։ ¹³Արդ՝ եթէ գտի շնորհս առաջի քո՝ ցոյց ինձ զանձն քո յայտնապէս, զի գիտացից՝ թէ ի՞նչ գտեալ է իմ շնորհս առաջի քո. և զի ծանեայց թէ ժողովուրդս քո այս՝ յա՛զգ մեծ լինիցի*։ ¹⁴Եւ ասէ. Ե՛ս ինքնին երթայց առաջի քո, և զետեղեցի՛ց զքեզ։ ¹⁵Եւ ասէ ցնա. Եթէ ո՛չ դու ինքնին երթայցես ընդ մեզ, մի՛ հաներ զմեզ աստի*։ ¹⁶Եւ զիա՞րդ յայտ լինիցի, եթէ արդարև գտի շնորհս առաջի քո, և ե՛ս ե՛ւ ժողովուրդս քո։ այլ յերթալն քո ընդ մեզ՝ փառաւորեսցուք, և ե՛ս և ժողովուրդս քո, քան զամենայն ազգս որ իցեն ՚ի վերայ երկրի։ ¹⁷Եւ ասէ Տէր ցՄովսէս. Եւ զայդ ևս զքո բան զոր ասացեր՝ արարի՛ց. քանզի գտե՛ր շնորհս առաջի իմ. և ճանաչե՛մ զքեզ քան զամենեսեան։ ¹⁸Եւ ասէ. Տո՛յց ինձ զփառս քո։ ¹⁹Եւ ասէ. Ե՛ս անցից առաջի քո փառօք իմովք. և կոչեցից յանուն Տեառն առաջի քո. և ողորմեցայց որում ողորմեցայց, և գթացայց յորս գթացայց։ ²⁰Եւ ասէ. Ո՛չ կարես տեսանել զերեսս իմ. զի ո՛չ տեսանէ մարդ զերեսս իմ, և ապրի*։ ²¹Եւ ասէ Տէր. Ահա՛ տեղի մի առաջի իմ. և կացցե՛ս ՚ի վերայ վիմին. ²²յորժամ անցանիցեն փառքն իմ. և եղից զքեզ ՚ի ծերպ վիմին. և ծածկեցի՛ց զքեզ ձեռամբ իմով մինչև անցի՛ց ես։ ²³Եւ բարձի՛ց զձեռն իմ ՚ի քէն, և ապա տեսցես զյետո՛յսն իմ. բայց երե՛սք իմ քեզ մի՛ երևեսցին։

* Այլք. Սուգ առին սգաւորօք։

* Յօրինակին պակասէր. Եւ այլ ևս հարուած։ Այլք յաւելուածով. Ես ցուցից քեզ զինչ առնելոց են քեզ։

* Ոմանք. ՚ի Քորէբ լեռնէ։

* Այլք. Եւ հայէին ընդ Մով՛։

* Ոմանք. Գտեալ իցէ իմ շնորհս։ և ոմանք. գտեալ իցեն շն՛։

* Այլք. Մի՛ հաներ զիս աստի։ Եւ զիարդ յայտնի լինիցի։

* Ի լուս՛. Եւ ապրէ. համաձայն ոմանց ՚ի բնար՛։

Գլուխ ԼԴ

ԾեսԳ ¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Կոփեա՛ դու քեզ երկո՛ւս տախտակս քարեղէնս ըստ առաջին տախտակացն, և ե՛լ առ իս ՚ի լեառնն. և գրեցի՛ց ՚ի վերայ տախտակացն զպատգամսն՝ որ էին յառաջին տախտակսն զոր խորտակեցերն: ²Եւ ՚ի պատրաստ առ վաղիւ, և ելանիցես ընդ առաւօտս ՚ի լեառնն Սինա. և մնասցես ինձ անդ ՚ի վերայ գլխոյ լերինն: ³Եւ մի՛ ոք ելանիցէ ընդ քեզ, և մի՛ ոք երևեսցի ամենակին ՚ի լերինն. և արջա՛ռ և ոչխար՝ մի՛ արածեսցին մօտ ՚ի լեառնն: ⁴Եւ կոփեա՛ց երկուս տախտակս քարեղէնս, ըստ օրինակի առաջին տախտակացն. և կանխեալ Մովսիսի ընդ առաւօտն՝ ել ՚ի լեառնն Սինա, որպէս հրամայեաց նմա Տէր: և ա՛ռ Մովսէս ընդ իւր զերկուս տախտակսն քարեղէնս՝: ⁵Եւ էջ Տէր ամպով, և կա՛յր յանդիման նորա անդ: և կոչեա՛ց յանուն Տեառն՝: ⁶Եւ անց Տէր առաջի նորա: և կարդաց Տէր Աստուած՝ գթա՛ծ և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ: ⁷Որ պահէ՛ զարդարութիւն, և առնէ զողորմութիւն ՚ի հազար ազգս: բառնա՛յ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս և զմեղս. և ո՛չ անպարտ առնէ զպարտաւորն. ածէ՛ զանիրաւութիւնս հարց՝ որդւոց և յորդիս որդւոց՝ մինչև յերիս և ՚ի չորս ազգս՝: ⁸Եւ երագեաց Մովսէս խոնարհ երկիր եպագ, ⁹և ասէ. Եթէ գտի շնորհս առաջի քո Տէր երթիցէ՛ ընդ մեզ Տէր. զի ժողովուրդս խստապարանո՛ց է. և բարձցես դու զանօրէնութիւնս և զմեղս մեր. և եղիցուք մեք քո՛:

ԾեսԴ ¹⁰Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահա ե՛ս դնեմ ընդ քեզ ուխտ առաջի ամենայն ժողովրդեան քոյ. և արարից սքանչելիս որ ո՛չ եղեն յամենայն երկրի, և յամենայն ազգս. և տեսցէ՛ ամենայն ժողովուրդդ՝ յորս ե՛ս դու ՚ի մէջ դոցա զգործս Տեառն. զի զարմանալիք իցեն զոր ե՛սս արարից ձեզ՝: ¹¹Ձգո՛յշ լեր դու ամենայնի, զոր միանգամ պատուիրեցի քեզ այսօր: ահաւասիկ ես մերժեմ յերեսաց ձերոց զԱմնովրհացին, և զՔանանացին, և զՔետացին, և զՓերեզացին, և զԻսլացին, և զԳերզեսացին, և զՅեբուսացին՝: ¹²Ձգո՛յշ լեր անձին քում, գուցէ՛ դնիցես ուխտ ընդ բնակիչս երկրին, յորում դու մտանելոց ես ՚ի նոսա. գուցէ լինիցի ձեզ զայթազողութիւն՝: ¹³Ձբագինս նոցա կործանեսցիք, և զարձանս նոցա՝ փշրեսցիք, և զանտառս նոցա՝ կտտորեսցիք, և զդրօշեալս դից նոցա՝ հրով այրեսցիք: ¹⁴Եւ մի՛ պագանիցէք երկիր աստուածոց օտարաց. զի Տէր Աստուածդ անուն նախանձելի՛ է. Աստուած նախանձոտ է՝: ¹⁵Գուցէ՛ դնիցես ուխտ ընդ բնակիչս երկրին, և պռնկիցին զկնի դից նոցա, և զոհիցեն աստուածոց նոցա. և կոչիցեն զքեզ՝ և ուտիցես ՚ի զոհից նոցա: ¹⁶Եւ առնուցուս ՚ի դստերաց նոցա ուստերաց քոց. և ՚ի դստերաց քոց՝ տացես ուստերաց նոցա.

* *Ոմանք.* Առաջնոցն. և կանխեալ:

* *Ոսկան.* Եւ կոչեաց զանուն Տեառն:

* *Յօրինակին յետ*՝ ՚ի հազար ազգս, *դատարկ տեղի թողեալ ՚ի կարգին, ՚ի լուսանցսն նշանակի ՚ի ներքս բերել*, սիրելեաց իւրոց. *զոր սակաւք ունին ՚ի բնաբանի. վասն որոյ և մեք զանց արարաք յաւելուլ: Այլք.* Ածէ զանօրէնութիւնս հարց յորդիս, և յորդւոց յորդիս, մին՝:

* *Ոմանք.* Ի միջի դոցա.. զի զարմա՛: *Յօրինակին պակասէր.* Արարից ձեզ:

* *Այլք.* Միանգամ ես պատուիրեմ քեզ:

* *Այլք.* Յոր դու մտանիցես ՚ի նոսա:

* *Այլք.* Աստուածոյ օտարի: *Յօրինակին պակասէր.* Աստուած նախանձոտ է:

և պռնկիցին դստերք քո զկնի նոցա, և պռնկեցուցանիցեն զուստերս քո զկնի դի՛ցն իւրեանց*։ ¹⁷Եւ աստուածս ձուլածոյս՝ մի՛ առնիցես քեզ։

ՃԻՏ ¹⁸Ձուօն բաղարջակերաց պահեսցես. զելթն օր բաղարջ կերիցես որպէս պատուիրեցի քեզ, ՚ի ժամանակի իւրում յամսեանն կանխոց. զի յամսեանն կանխոց ելեր յեգիպտոսէ։

ՃԻԶ ¹⁹Ամենայն արու որ բանայ զարգանդ՝ ի՛նձ լիցի, և ամենայն արուք անասնոյ քոյ*, ²⁰անդրանիկն արջառոյ, և անդրանիկն ոչխարի։ և զանդրանիկն իշոյ՝ փրկեսցես գառամբ. ապա թէ ո՛չ փրկեսցես զնա՝ զգի՛նս նորա տայցես։ Ձամենայն անդրանիկս որդւոց քոց փրկեսցես։ Եւ ձեռնունայն առաջի իմ՝ մի՛ երևեսցիս*։

ՃԻԷ ²¹Ձվե՛ց օր գործեսցես. և յաւուրն եւթներորդի հանգիցես. և ՚ի սերմանս և ՚ի հունձս՝ հանգիցես։ ²²Եւ տօն եւթներորդաց արասցես ինձ, իսկզբանէ՛ հնձոց ցորենոյ։ և զտօն արմտեաց ամփոփելոյ՝ յընդմիջել տարւոյն*։ ²³Երի՛ս ժամանակս ՚ի տարւոջ երևեսցի ամենայն արու մանուկ քո առաջի Տեառն Աստուծոյ Իսրայէլի։ ²⁴Քանզի մերծեցի՛ց զազգսն յերեսաց քոց. և ընդարձակեցից զսահմանս քո, և ո՛չոք իցէ որ ակն դնիցէ երկրին քում, յորժամ ելանիցես երևել առաջի Տեառն Աստուծոյ քոյ յերիս ժամանակս ՚ի տարւոջն*։

ՃԻԸ ²⁵Մի՛ զենուցուս ՚ի վերայ խմորելոյ զարիւն զոհից իմոց. և մի՛ ելանիցէ յայգ զենո՛ւմն տօնի զատկի։

ՃԻԹ ²⁶Ձառաջին արմտիս երկրի քոյ՝ տարցիս ՚ի տուն Տեառն Աստուծոյ քոյ։

ՃԾ Մի՛ եփեսցես զգառն ՚ի կաթն մօր իւրոյ։

ՃԾԱ ²⁷Եւ ասէ Տէր ցՄովսէս. Գրեա՛ դու քեզ զպատգամսդ զայդոսիկ. զի այդո՛ւ բանիւ դնիցեն ուխտ ընդ քեզ՝ և ընդ իս Իսրայէլ*։ ²⁸Եւ էր Մովսէս առաջի Տեառն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. հաց ո՛չ եկեր, և ջուր ո՛չ արբ. և գրեաց ՚ի վերայ տախտակացն զբանս ուխտի՝ զտասն պատգամացն։

ՃԾԲ ²⁹Մինչդեռ իջանէր Մովսէս ՚ի լեռնէն Սինայ, և երկոքին տախտակքն ուխտի ՚ի ձեռս Մովսիսի էին։ և յիջանել իւրում ՚ի լեռնէ անտի, ո՛չ գիտէր Մովսէս եթէ փառաւորեալ իցէ տեսիլ զունոյ երեսաց նորա ՚ի խօսել նորա ընդ նմա։ ³⁰Եւ ետես Ահարոն և ամենայն որդիքն Իսրայէլի զՄովսէս. և էր փառաւորեալ տեսիլ զունոյ երեսաց նորա. և երկեան մերծեմալ ՚ի նա*։ ³¹Եւ կոչեաց զնոսա Մովսէս. և դարձան առ նա Ահարոն և ամենայն իշխանք ժողովրդեանն. և խօսեցաւ Մովսէս ընդ նոսա։ ³²Եւ ապա մերծեցան առ նա ամենայն որդիքն Իսրայէլի։ և պատմեաց նոցա զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա Տէր ՚ի լերինն Սինայ։ ³³Եւ իբրև դաղարեաց ՚ի խօսելոյ անտի ընդ նոսա. արկ պատրուակ զերեսօք իւրովք*։ ³⁴Իբրև մտանէր Մովսէս առաջի Տեառն խօսել ընդ նմա, մերկանայր զպատրուակն մինչև այսրէն ելանելոյ։ և իբրև ելանէր՝ խօսէր ընդ ամենայն որդիսն Իսրայէլի զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր։ ³⁵Եւ տեսանէին որդիքն

* *Ի լուս՝* Եւ մի առնուցուս... մի՛ տացես ուս՛։

* *Ոմանք.* Ամենայն որ բանայ զար՛։

* *Յօրինակին բառս՝* ձեռնունայն. *կարմրադեղով նշանակի.*

* *Այլք.* Իսկզբան հնձոց։

* *Օրինակ մի.* Տեառն Աստուծոյ Իսրայէլի. երիս ժամանակս։

* *Ոմանք.* Դնեն ընդ. և *ոմանք՝* դնիցի, *Իսկ առ այլս ամենեսին պակասի.* և ընդիս *Իսրայէլ։*

* *Յօրինակին բանս.* Էր փառաւորեալ տեսիլ զունոյ երեսաց նորա. *կարմրադեղով նշանակի.*

* *Յօրինակին բառս* պատրուակ, *կարմ՛ նշա՛։*

Իսրայելի գերեսն Մովսիսի զի փառաւորեալ էր տեսիլ գունոյ երեսաց նորա. և արկանէր Մովսէս պատրուակ ՚ի վերայ երեսաց իւրոց, մինչև անդրէն մտանելոյ և խօսելոյ ընդ նմա*:

35

Գլուխ ԼԵ

ԾԾԳ ¹Եւ ժողովեաց Մովսէս զամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի՝ և ասէ ցնոսա. Այս բանք են զոր ասաց Տէր առնել զնոսա: ²Չվեց օր գործեսցեն զգործ. յաւուրն եւթներորդի հանգիցես. շաբաթ սուրբ է, հանգիստ Տեառն: ամենայն որ գործեսցէ ՚ի նմա, սատակեսցի: ³Մի՛ լուցցի հուր յամենայն բնակութեան ձերում յաւուր շաբաթուց. զի ես են Տէր: ⁴Եւ խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի՝ և ասէ. Այս պատգամ է՝ զոր պատուիրեաց Տէր՝ և ասէ. ⁵Առէ՛ք ՚ի ձեզց հա՛ս Տեառն. ամենայն ոք զիարդ և յօժարեսցէ ՚ի սրտի իւրում, բերցէ պտուղ Տեառն: ոսկի. արծաթ. պղինձ, և կապուտակ*. ⁶և ծիրանի. և կարմիր կրկին մանեալ. և բեհեզ միւթեալ. և մագ այծեաց: ⁷և մորթս խոյոց կարմիր ներկեալ. և մորթս կապուտակեալս, և փայտս անփուտս: ⁸և ևղ լուսոյ. և խունկս իւղոյ օծման. և խունկս հանդերձանաց: ⁹Եւ ականս սարդիոնս և ականս զմրուխտս և ականս ՚ի գիր վակասին. և զպճղնաւորն: ¹⁰Եւ ամենայն որ իմաստուն իցէ սրտիւ ՚ի ձեզ, եկեալ գործեսցէ՛ զամենայն ինչ՝ զոր պատուիրեաց Տէր: ¹¹Ձխորանն, և զնուարտանս իւր, և զվիժակս նորա, և զգահաւորակս նորա, և զտախտակս նորա. և զպարզունակս նորա, և զսինակս նորա, և զխարիսխս նորա*: ¹²Եւ զտապանակն վկայութեան, և զլծակս նորա, և զքաւութիւնն, և զվարագոյրն, և զառագաստ սրահին, և զսինակս նորա, և զականսն զմրուխտս, և զխունկսն, և զևղն օծման*: ¹³Եւ զսեղանն, և զամենայն զկահ նորա, և զհովանոցս սեղանոյն, և զլծակս նորա, և զամենայն զկահ նորա: և զհացն երեսաց: ¹⁴և զաշտանակն լուսոյ, և զամենայն զկահ նորա, և զճրագարանս նորա, և զևղն լուսոյ: ¹⁵Եւ զսեղանն խնկոց, և զլծակս նորա, և զևղն օծութեան, և զխունկսն հանդերձանաց, և զվարագոյր դրան խորանին: ¹⁶և զսեղանն ողջակիզաց, և զվանդակս նորա զպղնձիս, զլծակս նորա, և զամենայն զկահ նորա: Եւ զաւազանն, և զխարիսխս նորա, ¹⁷և զառագաստ սրահին, և զսինակս նորա, և զխարիսխս նորա: ¹⁸Եւ զսրահակ դրան սրահին, և զցիցս խորանին, և զցիցս սրահին, և զապարումս նոցա: ¹⁹և զպատմուճանսն որովք պաշտիցեն ՚ի սրբութեանն. և զպատմուճանսն սուրբս՝ Ահարոնի քահանայի. և զպատմուճանս քահանայութեան որդւոցն Ահարոնի*:

ԾԾԴ ²⁰Եւ ել ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի առ ՚ի Մովսիսէ: ²¹Եւ բերին իւրաքանչիւր որպէս և յօժարէին սիրտք իւրեանց. և որոց զիարդ և կամ եղև անձանց իւրեանց. բերէին նուէրս Տեառն յամենայն գործս՝ խորանին վկայութեան. և յամենայն միւթս նորա. և յամենայն պատմուճանս

* Այլք. Եւ տեսին որդիքն Իսրայելի: *Ուր ոմանք.* Չերեսսն:

* *Ոմանք.* Չիարդ յօժարեսցէ ՚ի:

* *Ոմանք.* Եւ զգահակս նորա. և զտախտակս նորա, և զմիգս նորա, և զսիւ*:

* *Ոմանք.* Եւ զվարագոյրսն և զառագաստս:

* Այլք. Եւ զպատմուճանսն սուրբս:

սրբութեանցն*։ ²²Եւ բերին արք ՚ի կանանց, ամենայն ոք որպէս և միտք իւր վարէին. Ականս, և գինդս, և մատանիս, և ծամակալս, և կշտապանակս, և զամենայն անօթս ոսկեղէնս. և ամենայն արք որ և էին, բերին նուէրս ոսկոյ Տեառն*։ ²³Եւ ամենայն այր առ որում գտանէր կապուտակ, և ծիրանի, և կարմիր մանեալ, և բեհեզ. և մազ այծեաց. և մորթս խոյոց կարմիր ներկեալ. և մորթս կապուտակեալս։ ²⁴Բերէին ամենայն, որ նուիրէր նուէրս։ արծաթ և պղինձ բերէին զնուէրսն Տեառն. և ամենայն առ որում գտանէր փայտ անփուտ՝ յամենայն գործ կահին, բերէին։ ²⁵Եւ ամենայն կին՝ իմաստուն մտօք նիւթր ձեռօք իւրովք. և բերէր մանեալ՝ զկապուտակն, և զծիրանի, և զկարմիրն ներկեալ, և զբեհեզն։ ²⁶Եւ ամենայն կանայք որ յօժարէին ՚ի միտս իւրեանց, մանէին իմաստութեամբ զմազ այծեացն։ ²⁷Եւ իշխանքն բերէին ականս զընրուխտս. և ականս ՚ի նիւթ վակասին և տախտակին. ²⁸և զհանդերձանս խնկոցն. և զկղն լուսոյ, և զկղն օծութեան։ ²⁹Եւ ամենայն այր և կին, որոց յօժարէին միտք իւրեանց, մտանէին գործել զամենայն գործն՝ զոր պատուիրեաց Տէր գործել։ և ՚ի ձեռն Մովսէսի բերէին որդիքն Իսրայէլի զնուէրսն Տեառն։ ³⁰Եւ ասէ Մովսէս ցորդիսն Իսրայէլի. Տեսէ՞ք զի կոչեաց Աստուած յանուանէ զԲեսելիէլ զՈւրիեան՝ զորդի Ովրայ յազգէ Յուդայ*։ ³¹և ելի՛ց զնա աստուածեղէն Յոգուով իմաստութեան, և հանճարով և գիտութեամբ յամենայնի։ ³²ըստ ամենայն գործոյ ճարտարապետել ճարտարութեամբ. գործել զոսկին և զարծաթն՝ և զպղինձ*։ ³³Եւ քանդակել զականսն, և զգործել զփայտն, և առնել զամենայն գործ իմաստութեան, և խելամտել. զի ե՛տ ՚ի սիրտ նորա զիմաստութիւն*։ ³⁴Եւ Եղիաբայ որդւոյ Աքիսամայ յազգէ Դանայ։ ³⁵զորս ելի՛ց մտօք իմաստութեան, խելամտել, գործել զամենայն գործ սրբութեանն. զոստայնանկութիւն, և զնկարու, կապուտակաւն, և ծիրանեաւն, և կարմրովն ներկելով, և բեհեզով. անկանել գործել զամենայն գործ ճարտարութեան նկարակերտաց*։

36

Գլուխ ԼԶ

¹Եւ արարին Բեսելիէլ, և Եղիաբ, և ամենայն այր իմաստուն մտօք, որում տուաւ ՚ի Տեառնէ իմաստութիւն և գիտութիւն, խելամուտ լինել, գործել զամենայն գործ տարագու սրբութեանն. ըստ ամենայնի որպէս և հրամայեաց Տէր*։ ²Եւ կոչեաց Մովսէս զԲեսելիէլ և զԵղիաբ, և զամենեսին որ ունէին իմաստութիւն ՚ի սրտի. որոց ետ Աստուած հանճար ՚ի սիրտս նոցա։ Եւ զամենեսին որ կամակար մտօք կամէին մերձեմալ ՚ի գործն, և կատարել*։ ³Եւ

* Ոմանք. Բերին նուէրս Տեառն... պատմուճանս սրբութեանն։

* Ոմանք. Բերէին նու՞։

* Ոմանք. ՁԲեսելիէլ զՈվրեան զորդի։

* Այլք. ճարտարապետութեամբ, զոր՞։

* Ի լուս՞. Ի սիրտ նոցա զիմ՞։ համաճայն ոմանց ՚ի բնար՞։

* Ոսկան. Չոր ելից մտօք իմաստ՞։ Ոմանք. Կապուտակեաւն. և ոմանք. կապուտակին և ծիրան՞։ Ուր օրհնակ մի. Եւ զնկարակերտակին և զծիրանեաւն։

* Ոսկան. Եւ արար Բեսելիէլ, և ե՞։

* Ոմանք. Մերձեմալ ՚ի գործն և խատարել։

առին ՚ի Մովսիսէ զամենայն նուէրսն՝ զոր բերին որդիքն Իսրայէլի յամենայն գործ տարազու սրբութեանն առնել զայն: և ինքեանք ևս ընդունէին զնուէրսն ՚ի նուիրաբերացն ընդ առաւօտս առաւօտս*։ ⁴Եւ զայի՛ն ամենայն իմաստունք՝ որ գործէին զգործ սրբութեանն, իւրաքանչիւր ըստ տարազու իւրում, զոր ինքեանք գործէին: ⁵Իսօսեցան ընդ Մովսիսի և ասեն. Կարի՛ յաճախէ բերել ժողովուրդդ քան զբաւական տարազու պիտոյից գործոյն, զոր հրամայեաց Աստուած առնել: ⁶Եւ հրամայեաց Մովսէս քարո՛գ կարդալ ՚ի բանակին, և ասել. Այր կամ կին՝ մի՛ ևս գործեսցեն ՚ի պտուղ սրբութեանն: և ապա արգելաւ ժողովուրդն ՚ի բերելոյ. ⁷և զգործեալն իւրեանց բերէին յամենայն կազմած գործոյն գործել զայն. և դադարեցին:

⁸Եւ գործէր ամենայն իմաստուն սրտիւ ընդ գործաւորսն զգործ խորանին տա՛սնփեղկեան, ՚ի բեհեզոյ մանելոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ կրկնելոյ: քերոբ գործ անկուածոյ գործէին: ⁹Երկայնութիւն միոյ փեղկին ՚ի քսան և յութ կանգնոյ, և լայնութիւն ՚ի չորից կանգնոց միոյ փեղկի. չափ նոյն էր ամենեցունց փեղկիցն: ¹⁰և կցեալ զհինգ փեղկն ընդ միւս հինգ փեղկին, և զհինգն ևս փեղկ կցեալ ընդ այլում հնգի*։ ¹¹Եւ արար ճարամանդս կապուտակեայս առ եզերք միոյ փեղկին* ¹²ի կողմանէ առ ՚ի խառնուածս. նոյնպէս արար և առ եզերք արտաքնոյ փեղկին, երկրորդի խառնուածոյն: ¹³Յիսուն ճարամանդ արար միոյ փեղկի. և յիսուն ճարամանդ արար ՚ի կողմանէ փեղկին ըստ երկրորդի խառնուածոյն, առ ՚ի խառնելոյ իւրաքանչիւր ճարամանդացն ընդ միմեանս: Եւ արար օղս ոսկիս յիսուն. և խառնեաց զփեղկսն ընդ միմեանս օղիւքն. և եղև խորան մի: ¹⁴Եւ արար փեղկս մագեղէնս ծածկիչս խորանին. մետասան փեղկ արար զնոսա: ¹⁵Երկայնութիւն միոյ փեղկի յերեսուն կանգնոյ. և լայնութիւն միոյ փեղկի ՚ի չորից կանգնոց: չափ նոյն էր մետասանեցունց փեղկիցն. ¹⁶և կցեաց զհինգ փեղկն ՚ի միասին, և զվեց փեղկն ՚ի միասին: ¹⁷Եւ արար յիսուն ճարամանդ առ եզերք փեղկին՝ որ ՚ի մէջ խառնուածոցն. և արար յիսուն ևս ճարամանդ առ եզերք փեղկին երկրորդի խառնուածոյն. ¹⁸և արար օղս պղնձիս յիսուն. և կցեաց զխորանն՝ զի լինիցի մի: ¹⁹Եւ արար զվիժակս խորանին ՚ի մորթոց խոյոց կարմիր ներկելոց. և զարտախուրակսն ՚ի կապուտակէ ՚ի վերոյ կողմանէ*: ²⁰Եւ արար զերկուս սիւնս խորանին յանփուտ փայտից կանգնաւորս: ²¹Ի տասն կանգնոյ զերկայնութիւն միոյ սեան. և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զթանձրութիւն և զլայնութիւն միոյ սեան. ²²և երկուս սփռիչս առ մի մի սիւն խառնեալ ընդ միմեանս. նոյնպէս արար ամենայն սեանց խորանին: ²³Եւ արար զսիւնս խորանին. քսան սիւն՝ ՚ի հարաւոյ կողմանէ, և քառասուն խարիսխ արծաթի՝ սեանցն քսանեցունց. ²⁴երկուս խարիսխս առ մի սիւն յերկոցունց կողմանց. և երկու խարիսխս առ մեկ ևս սիւն յերկոցունց կողմանց: ²⁵Եւ յերկրորդ կողման խորանին ընդ հիւսւսի արար քսան սիւն*, ²⁶և քառասուն խարիսխ արծաթի. երկու խարիսխս առ մի սիւն, և երկու խարիսխս առ մեկ ևս սիւն: ²⁷Եւ ՚ի թիկանց խորանին ընդ ծովակողմ արար վեց սիւն. ²⁸և երկու սիւնս արար յանկիւնս խորանին յետուստ

* Ոմանք. Յամենայն ՚ի գործ տարազուն:

* Յօրինակին պակասէր. Ընդ միւս հինգ փեղկին: Ոսկան. Փեղկս կցեալք ընդ այլոց հնգից:

* Այլք. ճարամանդս կապուտակեայս առ ե՛:

* Այլք. ՚ի մորթոյ խոյոց:

* Ոմանք. Եւ յերկրորդում կողման:

կողմանէ: ²⁹Եւ էին հասարակ ՚ի ներքուստ. և ըստ նմին օրինակի հասարակ էին ՚ի գլխոյ կողմանէ, ՚ի մի խառնուած. նոյնպէս արար և երկոցունց սեանցն՝ որ յանկիւնսն: ³⁰Եւ էին ո՛ւթ սիւն, և խարիսխ նոցա արծաթիք, վեշտասան խարիսխք, երկու խարիսխք առ մի սիւն, և երկու խարիսխք առ մի սիւն: ³¹Եւ արար պարզունակս յանփուտ փայտից, հինգ առ մի սիւն ՚ի միոջէ կողմանէ խորանին*: ³²և հինգ ևս պարզունակ առ միւս սիւն՝ յերկրորդ կողմանէ խորանին. և հինգ պարզունակ առ միւս սիւն ՚ի թիկանց խորանին ընդ ծովակողմն: ³³Եւ արար զմիջին պարզունակն թափանցանց ՚ի մէջ սեանցն ՚ի կողմանէ ՚ի կողմն: ³⁴Եւ զերկուս սիւնսն պատեաց ոսկւով. և զերկուս օղանանեակսն նոցա արար ոսկիս, յորս մտանիցեն պարզունակքն. և պատեաց զպարզունակսն ոսկւով: ³⁵Եւ արար վարագոյր ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ. գործ անկուածոյ գործեաց զնա քերոք: ³⁶Եւ ե՛ղ զայն ՚ի վերայ չորից սեանցն յանփուտ փայտից ոսկիապատաց. և խոյակք նոցա ոսկիք, և չորք խարիսխք նոցա արծաթիք*: ³⁷Եւ արար զվարագոյր դրան խորանին վկայութեան ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ, գործ անկուածոյ քերոք: ³⁸Եւ զսիւնս նոցա հինգ, և զօղս նոցա. և պատեաց զխոյակս նոցա ոսկւով. և խարիսխք նոցա պղնձիք հինգ*:

37

Գլուխ ԼԵ

Եւ ¹Եւ արար Բեսելիէլ զտապանակն յանփուտ փայտից. յերկուց կանգնոց և ՚ի կիսոյ զերկայնութիւն նորա. և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զլայնութիւն նորա. և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զբարձրութիւն նորա: և պատեաց զնա ոսկւով սրբով ներքոյ և արտաքոյ*: ²և արար նմա ծնօտս ոսկիս շուրջանակի: ³Եւ ձուլեաց նմա չորս օղանանեակս ոսկիս ՚ի չորեցունց կողմանց նորա. երկուս օղանանեակս ՚ի միոջէ կողմանէ, և երկուս օղանանեակս ՚ի միւսմէ կողմանէ, և ագոյց լծակացն: ⁴Եւ արար լծակս յանփուտ փայտից, և պատեաց զնոսա ոսկւով: ⁵Եւ ագուցին զլծակսն յօղանանեակսն ՚ի կողմանց տապանակին, բառնալ զնա նոքօք: ⁶Եւ արարին զքաւութիւնն ՚ի վերուստ տապանակին յոսկւոյ սրբոյ. յերկուց կանգնոց և ՚ի կիսոյ զերկայնութիւն նորա, և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զլայնութիւն նորա: ⁷Եւ արար երկուս քերովքէս ոսկիս, ճախարակեալս գործեաց զնոսա՝ յերկուց կողմանց քաւութեանն: ⁸Քերոք մի ՚ի վերայ միոյ գլխոյ քաւութեանն. և քերոք մի ՚ի վերայ երկրորդի գլխոյ քաւութեանն, անդստին ՚ի քաւութենէ անտի արար զերկոսին քերոքսն, յերկոցունց ծայրից նորա: ⁹Եւ էր քերովքէիցն տարածեալ զթևս իւրեանց ՚ի վերուստ. և հովանի՝ ունէին թևօք իւրեանց ՚ի վերայ քաւութեանն. և երեսք քերոքէիցն հանդէպ միմեանց ՚ի վերայ քաւութեանն:

Եւ ¹⁰Եւ արար զսեղանն զառաջաւոր յոսկւոյ սրբոյ. և ձուլեաց նմա չորս օղանանեակս ոսկիս. երկուս ՚ի միոջէ կողմանէ, և երկուս յերկրորդ կողմանէ. և

* Ի լուս՝. Եւ արար նիզս յանփ՝:

* Այլք. Փայտից յոսկիապատաց:

* Այլք. Եւ զօղս նոցուն, և:

* Այլք. ՚ի ներքոյ և արտաքոյ:

ագոյցս, բառնալ գնա ագուցիւքն: Եւ զագոյցս տապանակին և զսեղանոյն արար յանփուտ փայտից. և պատեաց գնոսս ոսկւով. յերկուց կանգնոց զերկայնութիւն նորա, և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զլայնութիւն նորա. և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ զբարձրութիւն նորա*։ ¹¹Եւ պատեաց գնա ոսկւով սրբով. և արար նմա ծնօտս ոսկիս շուրջանակի: ¹²Եւ արար նմին պսակ ուղկեան շուրջանակի. և արար ծնօտս ոսկիս պսակին նորա շուրջանակի: ¹³Եւ արար նմա չորս օղամանեակս ոսկիս. և եդ զօղամանեակսն ՚ի չորս կողմանս, որ էին չորեցունց ոտից նորա*։ ¹⁴Ի ներքոյ պսակին. և եղեն օղամանեակքն ագոյցք լծակացն առ ՚ի բառնալոյ զսեղանն: ¹⁵Եւ արար երկուս լծակս յանփուտ փայտից. և պատեաց գնոսս ոսկւով առ ՚ի բառնալ զսեղանն*։ ¹⁶Եւ արար զկահ սեղանոյն. զխնկադացս նորա, և զարիւնակալս նորա, և զճաշակս նորա, և զնուիրանոցսն՝ որովք նուիրիցեն՝ յոսկւոյ սրբոյ:

ԾԾԸ ¹⁷Եւ արար զաշտանակն լուսոյ՝ ձոյլ ոսկի, զբունն. և զստեղունսն յերկոցունց կողմանց նորա. և ՚ի ստեղանցն շառաւիղք ընտրեալք առ միմեանս երեք ՚ի միոջէն, և երեք ՚ի միւսմէն հաւասարք միմեանց: և զլուսակալս նոցա՝ որ են ՚ի ծայրսն ընկուզազարդս անդստին ընտրեալս: Եւ զբազմակալսն ՚ի նոսս. զի եղիցին ճրագարանքն ՚ի վերայ նոցա. և զբազմակալն զեւթներորդ՝ որ ՚ի գլուխ լուսակալին. որ ՚ի վերայ բուն իսկ գլխոյն ՚ի վերուստ ձոյլ՝ համակ ոսկի: Եւ զեւթն ճրագարանսն որ ՚ի վերայ նորա ոսկիս. և զունելիս նորա ոսկիս. և զյարդարիչս նորա ոսկիս յոսկւոյ սրբոյ. ճախարակեայ գործեաց զաշտանակն, զբունն, և զստեղունս նորա. և զսկահաձևսն և զգնդակսն և զշուշանսն անդստին ՚ի նմանէ*։ ¹⁸Վեց ստեղունք արծակեալք ՚ի կողմանց նորա. երեք ստեղունք արծակեալք ՚ի միոջէ կողմանէ աշտանակին. և երեք ստեղունք յերկրորդ կողմանէ աշտանակին: ¹⁹Եւ երեք սկահաձևք ընկուզազարդք յօրինեալք ՚ի միում ստեղան, և զնդակ և շուշան: և երեք սկահաձևք ընկուզազարդք յօրինեալք ՚ի միում ևս ստեղան, և զնդակ և շուշան: Այսպէս վեցեցունց ստեղանցն արծակելոց յաշտանակէ անտի: ²⁰Եւ ՚ի բուն աշտանակին չորք սկահաձևք ընկուզազարդք յօրինեալք. և զնդակք նորին և շուշանք: ²¹Եւ զնդակ մի ընդ երկու ստեղամբքն. անդստին ՚ի նմին. վեցեցունց ստեղանցն արծակելոց ՚ի նմանէ: ²²Գնդակք նոցա և ստեղունք իւրեանց անդստին ՚ի նմին, բովանդակ ճախարակեայ ՚ի միոջէ՝ յոսկւոյ սրբոյ: ²³Եւ արար զճրագարանս նորա եւթն. և զունելիս, և զյարդարիչս նորա յոսկւոյ սրբոյ: ²⁴Ի տաղանդէ միոյ ոսկւոյ սրբոյ արար զնա՝ և զամենայն զկահ նորա:

ԾԾԹ ²⁵Աս՝ արար զսեղանն ոսկիապատ յանփուտ փայտից, ՚ի հինգ կանգնոյ զերկայնութիւն նորա, և ՚ի հինգ կանգնոյ զլայնութիւն նորա, չորեքկուսի. և յերից կանգնոց զբարձրութիւն նորա, և զեղջերս նորա անդստին ՚ի նմանէ*։ ²⁶Եւ պատեաց գնա ոսկւով սրբով. և զյարկս նորա, և զկողմանս նորա շուրջանակի, և զեղջերս նորա: ²⁷Եւ արար նմա ծնօտս ոսկիս շուրջանակի. և երկուս օղամանեակս ոսկիս ընդ ծնօտիւք նորա առ ՚ի կողմանէ ընդ երկոքունքք

* Ի լուս՝. Բառնալ գնոսս ագու՝ համաձայն այլոց ՚ի բնար՝:

* Ի լուս՝. Որ էին ՚ի չորեցունց:

* Այլք. Առ ՚ի բառնալոյ զսե՝:

* Այլք. Եւ զբազմակալսն ՚ի նոսս.. և զբազմակալսն զեւթն: Ի լուս՝. Զի իցեն ճրագա՝. համաձայն այլոց ՚ի բնար՝: Այլք. Եւ զշուշանս նորա անդստին.. (18) Վեց ստեղն արծակեալ ՚ի կողմանց նորա. երեք ստեղունք ՚ի միոջէ:

* Զօրինակին պակասէր. Զերկայնութիւն նորա, և ՚ի:

կողմամբք նորա՝ յագոյցս լծակացն, առ ՚ի բառնալոյ զնա նոքօք*։²⁸Եւ արար զլծակսն յանփուտ փայտից, և պատեաց զնոսա ոսկւով։

ՃԿ²⁹Սա՛ արար զլղն օծութեան զսուրբ, և զհանդերձանս խնկոցն. գործ մաքուր իւղագործաց։

38

Գլուխ ԼԸ

ՃԿԱ¹Եւ արար զսեղանն պղնձապատ ՚ի բուրուառացն պղնձեաց՝ որ էին ՚ի ձեռս արանցն ապստամբաց հանդերձ ժողովրդեամբն Կորխայ, յանփուտ փայտից. ՚ի հինգ կանգնոյ զերկայնութիւն նորա, և ՚ի հինգ կանգնոյ զլայնութիւն նորա. չորեքկուսի. և յերից կանգնոց բարձրութիւն նորա։²Արա՛ր և զեղջևարս նորա ՚ի վերայ չորեցունց անկեանց նորա. անդստին ՚ի նման էին եղջևարք նորա, և պատեաց զնոսա պղնձով*։³Սա՛ արար զամենայն կահ սեղանոյն, զխարիսխսն, և զբլշակն, և զտաշտսն, և զմսահանսն, և զբուրուառսն։ և զամենայն կահս նորա արար պղնձի*։⁴Սա՛ արար զգահաւորակս սեղանոյն. գործ վանդակագործ պղնձի՝ ՚ի բուրուառացն. ՚ի ներքուստ մինչև ցմէջս. ⁵Ե՛ղ ՚ի նմա չորս օղամանեակս պղնձիս ՚ի չորեցունց կողմանց գահաւորակի սեղանոյն՝ ագոյցս նգացն*։⁶Եւ արար զլծակսն յանփուտ փայտից, և պատեաց զնոսա պղնձով։⁷Եւ ագուցին զլծակսն յօղամանեակսն ՚ի կողմանս սեղանոյն, բառնալ զսեղանն նոքօք։ բովանդակ տախտակամած գործեաց զնա*։

ՃԿԲ⁸Եւ արար զաւազանն պղնձի, և զխարիսխս նորա պղնձի, ՚ի հայելեաց կանանց ուխտաւորաց. որք պահեցին պահս առ դրան խորանին վկայութեան, յաւուր յորում եհար զխորանն*։

ՃԿԳ⁹Եւ արար զսրահն որ հայեր ընդ հարաւ. և զառագաստ սրահին ՚ի բեհեզոյ մանելոյ հարիւր առ հարիւր։¹⁰Եւ սիւնք նոցա քսան, և խարիսխք նոցա պղնձիք քսան. և զարդք սեանցն և խոյակք նոցա արծաթիք*։¹¹Եւ ընդ կողմն հիւսւոյ հարկր առ հարկր. և սիւնք նոցա քսան, և խարիսխք նոցա պղնձիք քսան. և զարդք սեանցն և դրուազք նոցա արծաթիք։¹²Եւ ընդ ծովակողմն սրահք ՚ի յիսուն կանգնոյ. և սիւնք նոցա տասն, և խարիսխք նոցա տասն. և զարդք սեանցն և դրուազք նոցա արծաթիք։¹³Եւ ընդ կողմն արևելից ՚ի յիսուն կանգնոյ։ Եւ առագաստքն ¹⁴ի հնգետասան կանգնոյ ՚ի թիկանց. և սիւնք նոցա երեք, և խարիսխք նոցա երեք։¹⁵Եւ յերկորդ թիկունսն առ դրամբք սրահին, սրահք ՚ի հնգետասան կանգնոյ. և սիւնք նոցա երեք, և խարիսխք նոցա երեք։¹⁶Ամենայն սրահք խորանին շուրջանակի ՚ի բեհեզոյ մանելոյ. ¹⁷և խարիսխք նոցա պղնձիք. և դրուազք սեանցն և խոյակք նոցա արծաթիք, և խոյակք նոցա արծաթապատք, և սիւնքն արծաթապատք։¹⁸և ամենայն սիւնք սրահակին։ Եւ

* Ոմանք. Առ ՚ի կողմն... նորա ՚ի յագոյցս լծակացն։

* Այլք. ՚ի վերայ չորեցունց անկեանց իւրոց.. և պատեաց զնոսա պղ՞։

* Յօրինակին պակասէր. Նորա արար պղնձի։

* Այլք. Եւ եղ նմա չորս օղա՞։

* Ոսկան յաւելու. Գործեաց զնա ՚ի ներսն ունայն.։

* Ոսկան. Եւ հայելեաց կա՞։

* Ի լուս՞. Եւ դրուազք նոցա արծաթիք։

սրահակք դրան սրահին, գործ նկարակերպ ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ. և ՚ի բեհեզոյ նիւթելոյ. ՚ի քսան կանգնոյ երկայնութիւն, և ՚ի հնգետասան կանգնոյ բարձրութիւն, և լայնութիւն հասարակ ըստ առագաստից սրահին*։ ¹⁹Եւ սիւնք նոցա չորք, և խարիսխք նոցա պղնձիք չորք՝ և խոյաւորք նոցա արծաթիք չորք. և խոյակք նոցա արծաթապատք. ²⁰և ամենայն ցիցք սրահին և խորանին շուրջանակի պղնձիք։ ²¹Եւ այս էր պայման խորանին վկայութեան. որպէս հրաման ետ Մովսիսի կազմել զպաշտօնն Ղևտացւոցն ՚ի ձեռն Իթամարայ որդւոյ Ահարոնի քահանայի։ ²²Եւ Բեսելիէլ Ուրիեան որդի Ովրայ յազգէ Յուդայ արա՛ր որպէս հրաման ետ Տէր Մովսիսի*։ ²³Եւ ապա Եղիաք Աքիսամայ յազգէ Դանայ. որ ճարտարապետէր զոստայնանկութիւն, և զասղնագործութիւն, և զնկարակերտութիւն. ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ*։

Եւ ²⁴Ամենայն ոսկւոյն՝ որ գործեցաւ ՚ի գործն, ըստ ամենայն գործոյ սրբութեանն, եղև կշիռ ոսկւոյն նուիրացն քսան և ինն տաղանդ, և եւթն հարիւր և երեսուն սկիղ՝ ըստ սրբութեան սկեղն*։ ²⁵Եւ արծաթոյ նուէրք՝ յանցելոց արանց ժողովրդեանն ՚ի հանդիսի՝ հարևր տաղանդ, և հազար և եւթն հարևր և եւթանասուն և հինգ սիկղ՝ ըստ սրբութեան սկեղն. դրան մի առ գլուխ՝ կէս սկեղ ըստ սրբութեան սկեղն. ամենայն որ անցանէր ՚ի հանդիսի անդ ՚ի քսանամենից և ՚ի վեր, վեց հարևրհազար և երեք հազարք և հինգ հարևր և յիսուն*։ ²⁶Եւ եղև հարևր տաղանդ արծաթոյն՝ ՚ի ձոյլ հարևր խոյակաց խորանին, և ՚ի խոյակս վարագուրին. հարևր տաղանդ՝ ²⁷ի հարևր խոյակ. տաղանդ մի առ խոյակ։ ²⁸Եւ զհազար և զեւթն հարևր և զեւթանասուն և հինգ սիկղն, գործեաց ՚ի խոյաւորս սեանցն, և պատեաց ոսկւով զխոյակս նոցա, և զարդարեաց զնոսա։ ²⁹Եւ պղինձ նուիրացն՝ եւթանասուն տաղանդ, և երկու հազար և չորք հարևր սիկղ։ ³⁰Եւ արարին անտի զխարիսխս դրան խորանին վկայութեան. և զսեղանն պղնձի, և զգահաւորակ սեղանոյն պղնձի, և զամենայն սպաս սեղանոյն, ³¹և զխարիսխս սրահին շուրջանակի. և զխարիսխս դրան սրահին. և զամենայն ցիցս խորանին, և զամենայն ցիցս սրահին շուրջանակի. և զապարումսն ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ։

39

Գլուխ ԼԹ

Եւ ¹Եւ արար պատմութեանս պաշտամանն, պաշտել նոքօք ՚ի սրբութեանն։ և արար պատմութեան սրբութեանցն որ իցեն Ահարոնի քահանայի. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի։ ²Եւ արարին զվական յոսկւոյ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ*։ ³Եւ հատանէին թիթղունս ոսկիս. թելս թելս անկանել ընդ կապուտակին՝ և ընդ ծիրանւոյն, և ընդ կարմրոյ մանելոյ, և ընդ բեհեզոյ նիւթելոյ. գործ անկուածոյ վակասի

* Ոմանք. Եւ ամենայն սիւնք սրահին։ Այլք. Գործ նկարակերպ ՚ի կապուտակէ։

* Ոմանք. Եւ Բեսելիէլ Ովրեան որդի Ովրայի.. և արար։

* Այլք. Եւ զասղնագործութիւն։

* Ոմանք. Ամենայն ոսկին որ գործեցաւ.. ամենայն գործոյ սրբութեանցն։

* Ի լուս՝. Եւ վեցհարիւր և յիսուն։

* Ոմանք. Եւ արարին զվտաւական յոսկ՝։

գործեցին զնա*, ⁴խառնեալ յերկոցունց կողմանց ընդ միմեանս հիւսկէն. գործ անկուածոյ ՚ի միմեանս: ՚ի նոյն ⁵և ՚ի նմանէ գործեցին ըստ իւրում գործուածոյ, յոսկւոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ. որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի: ⁶Եւ գործեաց զերկոսին ականսն զընրուխտս՝ ժապաւիմեալս և ընդելուզեալս ոսկւով, քանդակեալս և մածեալս ՚ի քանդակ կնքոյ. յանուանց որդւոցն Իսրայէլի: ⁷Եւ հաստատեաց զնա ՚ի վերայ ուսոց վակասին, ականս յիշատակի որդւոցն Իսրայէլի. որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի: ⁸Եւ արար զտախտակն գործ անկուածոյ նկարակերպ ըստ գործոյ վակասին, յոսկւոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ: ⁹Չորեքկուսի, և կրկին գործեաց զտախտակն. թզաւ յերկայնութիւն և թզաւ ՚ի լայնութիւն: ¹⁰Եւ անկանէր ընդ նմին անկուած ականակապ չորեքկարգեան ականց: Կարգն առաջին՝ սարդիոն, և տպագիոն, և զընրուխտ, կարգ մի: ¹¹Եւ կարգն երկրորդ, կարկեհան, և շափիղա, և յասպիս: ¹²Եւ կարգն երրորդ, սուտակ, և գոճազմ, և ակատ: ¹³Եւ կարգն չորրորդ, ոսկեակն, և եղունգն, և բիւրեղ. պատեալ և ընդելուզեալ ոսկւով: ¹⁴Եւ ականքն ըստ անուանց որդւոցն Իսրայէլի էին. երկուտասանք յանուանց նոցա գրեալք և քանդակեալք. ըստ իւրաքանչիւր անուանց ազգացն երկուտասանից*: ¹⁵Եւ արարին ընդ տախտակաւն վերջս փողփողեալս ՚ի վերայ երկուց օղոցն. գործ հիւսկէն յոսկւոյ սրբոյ: ¹⁶Եւ արարին երկու վահանակս ոսկիս, և երկուս օղս ոսկիս. և եղին զերկու օղսն ոսկիս յերկոսին առաջս տախտակին*: ¹⁷Եւ եղին զվերջսն փողփողեալս ՚ի վերայ երկուց օղոցն յերկոսին կողմանս տախտակին. և յերկոսին խառնուածսն զերկուս վերջս փողփողեալս. և եղին ՚ի վերայ երկուց վահանակացն, և զնոսա եղին ՚ի վերայ ուսոց վակասին ¹⁸դէմ յանդիման յերեսաց կողմանէ: Եւ արարին երկուս օղս ոսկիս, և եղին ՚ի վերայ երկոցունց թևոցն ՚ի ծայրս տախտակին, ՚ի գլուխ թիկանց վակասին ՚ի ներքոյ կողմանէ: Եւ արարին երկուս օղս ոսկիս, և եղին ՚ի վերայ երկոցունց ուսոց վակասին ՚ի ներքոյ կողմանէ յերեսաց նորա՝ ըստ վերնոյ խառնուածոյն անկուածոյ վակասին: ¹⁹Եւ պնդեցին զտախտակն յօղից նորա մինչև ցօղս վակասին, խառնեալ ընդ միմեանս, ՚ի կապուտակէ. հիւսեալս ընդ միմեանս յանկուած վակասին, զի մի՛ զերծանիցի տախտակն ՚ի վակասէ անտի. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:

ՃԿԶ ²⁰Եւ արարին զվտաւակն ՚ի վերայ վակասին, գործ անկուածոյ համակ կապուտակ*. ²¹և օձիք վտաւակացն անդէն ՚ի նորին ՚ի միջի անկուածոյ հիւսկէն՝ գրապանաւ օձիքն շուրջանակի անքակ: ²²Եւ արարին առ ստորոտով վտաւակացն իբրև ծաղկեալս նռնաձևս ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, և ՚ի բեհեզոյ նիւթելոյ: ²³Եւ արարին զանգակս յոսկւոյ սրբոյ. և եղին զզանգակսն ՚ի մէջ նռնաձևացն առ ստորոտով վտաւակացն շուրջանակի. ²⁴ի մէջ նռնաձևացն զանգակս ոսկիս և նռնաձև. զանգակ և նռնաձև, առ ստորոտով վտաւակացն շուրջանակի ՚ի սպասս պաշտամանն.

* Այլք. Թիթղունս ոսկւոյն, թելս:

* Այլք. Եւ մածուցեալս ՚ի քանդակ:

* Ի լուս՝. Չորրորդ. յակինթ և եղունգն:

* Այլք. Ազգացն երկուտասանեցունց:

* Ի լուս՝. Եւ արարին երկու օղս ոսկիս: *Յօրինակին պակասէր. Վահանակս ոսկիս. և երկուս օղս ոսկիս, և եղին:*

* Ի լուս՝. ՚ի վերայ. Եւ արարին զվտաւակն, *նշանակի՝* ներքնակ: *Ուր այլք. Զվտաւակսն:*

որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի:

ՃԿԷ ²⁵Եւ արարին պատմուճանս բեհեզեղէնս գործ անկուածոյ, Ահարոնի և որդւոց նորա: ²⁶Եւ զապարաւշսն ՚ի բեհեզոյ. և զխոյրն ՚ի բեհեզոյ: ²⁷Եւ զանդրավարտիսն տաբատ ՚ի նիւթոյ բեհեզոյ: ²⁸Եւ զկամարս նոցա ՚ի բեհեզոյ նիւթելոյ, և ՚ի կապուտակէ, և ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ, գործ նկարուց. զորօրինակ հրամայեաց Տէր Մովսիսի*: ²⁹Եւ արարին զթիթեղն ոսկի նուէր սրբութեանն յոսկւոյ սրբոյ. և գրեցին ՚ի նմա գիր դրոշմեալ քանդակաւ, Սրբութիւն Տեառն*: ³⁰Եւ եղին առ կապուտակեայ ժապաւիճեալն. զի կացցէ ՚ի խուրին ՚ի վերոյ կողմանէ. զոր օրինակ հրամայեաց Տէր Մովսիսի*:

ՃԿԸ ³¹Եւ կատարեցաւ ամենայն գործ խորանին՝ յարկի վկայութեան: և արարին որդիքն Իսրայէլի ըստ ամենայնի որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի, նոյնպէս և արարին: Եւ զաւելորդ զոսկի նուիրացն՝ արարին կահ պաշտելոյ նոքօք առաջի Տեառն: ³²Եւ բերին զպատմուճանսն առ Մովսէս ՚ի խորանն. և գյարկն՝ և զամենայն զկահ նորա. զառանցսն և զտախտակս նորա. և զպարզունակս նորա. և զսիւնակս նորա. և զխարիսխս նորա*: ³³Եւ զմաշկսն. և զնորթս խոյոց ներկեալս կարմրով. և զվիժակսն կապուտակեայս: ³⁴Եւ զսրահակն որ ծածկէր զտապանակ կտակարանացն. և զլծակսն. ³⁵Եւ զքաւութիւնն. և զսեղանն զառաջաւոր, և զամենայն զկահ նորա. և զհացն երեսաց: ³⁶Եւ զաշտանակն սուրբ. և զճրագարանս նորա, և զճրագունսն այրելոյ՝ և զամենայն կահ նորա. և զկողն լուսոյ: ³⁷Եւ զսեղանն ոսկի. և զկողն օծութեան. և զխունկսն հանդերձանաց: ³⁸Եւ զսրահակս դրանն, և զխորանն. ³⁹Եւ զսեղանն պղնձի՝ և զլծակս նորա, և զամենայն կահ նորա. և զաւազանն, և զխարիսխս նորա՝ և զառագաստ սրահին, և զսիւնակս նորա, և զխարիսխս նորա*: ⁴⁰Եւ զվարագոյր դրան խորանին, և զդրան սրահին. և զապաւանդակս նորա, և զցիցս նորա. և զամենայն զկահ խորանին յարկի վկայութեանն: ⁴¹Եւ զպատմուճանսն պաշտաման պաշտել ՚ի սրբութիւնսն. և զպատմուճան սրբութեանն որ իցեն Ահարոնի քահանայի. և զպատմուճանս որդւոցն նորա ՚ի քահանայութիւն*: ⁴²Ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեաց Տէր՝ Մովսիսի. նոյնպէս և արարին որդիքն Իսրայէլի զամենայն զկազմածն: ⁴³Եւ ետես Մովսէս զամենայն գործն. և էր գործեալ ըստ օրինակին՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի, նոյնպէս և արարին. և օրինեաց զնոսա Մովսէս*:

40

Գլուխ Խ

ՃԿԹ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Յամսեանն առաջնուն յամսամտի ամսոյն, կանգնեսցեն զխորանն գյարկ վկայութեանն: ³Եւ դիցեն՝

* Այլք. Գործ նկարու, կամ նկարուն:

* Այլք. Դրոշմեալ քանդակի:

* Բազումք. Ձի կայցէ ՚ի խուրին:

* Ի լուս՝. Եւ զտախտակս նորա և զնիզս նորա, համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Այլք. Եւ զսիւնս նորա և զխարիսխս նորուն:

* Ոմանք. Եւ զսիւնս նորա:

* Ի լուս՝. Եւ զպատմուճանսն սուրբ պաշտել: Ուր այլք. Պաշտել ՚ի սրբութեանն:

* Ոսկան. Հրամայեաց Աստուած Մօս՝:

անդ զտապանակն վկայութեան. և ծածկեսցես զտապանակն վարագուրաւն*:
⁴Եւ տարցիս ՚ի ներքս զսեղանն, և յօրինեսցես զհացն ՚ի վերայ նորա. և տարցիս ՚ի ներքս զաշտանակն, և դիցես ՚ի վերայ նորա զճրագարանսն*:
⁵Եւ դիցես զսեղանն ոսկի՝ արկանել խունկս առաջի տապանակի վկայութեանն: և ձգեսցես զպատրուակ վարագուրին ՚ի դրան խորանին վկայութեան*:
⁶Եւ դիցես զսեղանն ողջակիզացն՝ առ դրան խորանին յարկի վկայութեանն: և օճցես շուրջ զխորանն. և զամենայն ինչ որ ՚ի նմա իցեն՝ սրբեսցես շուրջանակի:
⁷Եւ դիցես զաւազանն ընդ խորանն վկայութեան՝ և ընդ սեղանն. և արկցես անդ ջուր*:
⁸Եւ օճցես զսրահն շուրջանակի. և ձգեսցես զսրահակ դրան սրահին: ⁹Եւ առցես զլոյս օճութեան՝ և օճցես զխորանն՝ և զամենայն որ ինչ ՚ի նմա է. և սրբեսցես զնա, և զամենայն կահ նորա. և եղիցին սրբութիւնք*:
¹⁰Եւ օճցես զսեղանն ողջակիզաց՝ և զամենայն կահ նորա: ¹¹և սրբեսցես զսեղանն, և եղիցի սեղանն՝ սուրբ սրբութեանց: և օճցես զաւազանն, և զխարիսխս նորա, և սրբեսցես զնա: ¹²Եւ մատուցես զԱհարոն և զորդիս նորա ՚ի դուռն խորանին վկայութեան. և լուսացես զնոսա ջրով: ¹³Եւ զգեցուցես Ահարոնի զպատմութեանն սուրբ. և օճցես զնա, և սրբեսցես զնա, և քահանայացի՝ ինձ: Եւ մատուցես զորդիս նորա, և զգեցուցես նոցա պատմութեան. և օճցես զնոսա զորօրինակ օճեր զհայրն նոցա, և քահանայացին ինձ. և եղիցի նոցա օճումն քահանայութեան յաւիտեան յազգս նոցա*:

ՃԶ ¹⁴Եւ արար Մովսէս ըստ ամենայնի, զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր, նոյնպէս և արար*:
¹⁵Եւ եղև յամսեանն առաջնում յամի երկրորդի էլանելոյ նոցա յերկրէն Եգիպտացոց, յամսամտին, կանգնեցաւ խորանն: ¹⁶Եւ կանգնեաց Մովսէս զխորանն, և եղ զխարիսխս նորա, և կանգնեաց զսիւնս նորա. և եղ ՚ի վերայ զխոյակս նորա: ¹⁷և պարզեաց զպարզունակս նորա. և տարածեաց զվերնափեղկսն ՚ի վերայ խորանին. Եւ արկ զվիժակս խորանին ՚ի վերայ նորա ՚ի վերուստ: և յօրինեաց զարտախուրակս նորա. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի: ¹⁸Եւ ա՛ռ զվկայութիւնսն՝ և եղ ՚ի տապանակի անդ. և եղ զնիզսն ընդ տապանակաւն. և եղ զքաւութիւնն ՚ի վերայ տապանակին ՚ի վերուստ: ¹⁹Եւ տարաւ ՚ի ներքս զտապանակն ՚ի խորանն. և ձգեաց զպատրուակ վարագուրին, և ծածկեաց զտապանակն վկայութեան՝ զորօրինակ հրամայեաց Տէր Մովսիսի: ²⁰Եւ եղ զսեղանն ՚ի խորանին վկայութեան ՚ի հիւսւսոյ կողմանէ խորանին, արտաքոյ վարագուրին ՚ի խորանին*:
²¹Եւ յօրինեաց ՚ի վերայ նորա զհացն երեսաց առաջի Տեառն, զորօրինակ հրամայեաց Տէր Մովսիսի: ²²Եւ եղ զաշտանակն ՚ի խորանին վկայութեան յանդիման սեղանոյն, ՚ի հարաւոյ կողմանէ խորանին: ²³Եւ եղ զճրագարանսն ՚ի վերայ նորա առաջի Տեառն, զորօրինակ հրամայեաց Տէր Մովսիսի: ²⁴Եւ եղ զսեղանն ոսկի ՚ի խորանին վկայութեան՝ յանդիման

* *Բագոււնք.* Վարագուրին:

* *Այլք յաւելումն.* ՚ի վերայ նորա զճրագարանս նորա:

* *Այլք.* Որ ՚ի նմա է սրբեսցես:

* *Բագոււնք.* Եւ արկցեն անդ:

* *Այլք.* Եւ զամենայն ինչ որ ՚ի նմա է:

* *Ի լուս՝.* Յօժումն քահանայութեան. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

* *Ոսկան, աստի սկսեալ մինչև ՚ի վերջ գլխոյն դնէ՝* պատուիրեաց կամ հրամայեաց Աստուած, *ուր ամենայն զոչագիր օրինակք համաձայն մերումս ունին՝* Տէր:

* *Այլք.* Վարագուրի խորանին:

վարագուրին. ²⁵և արկ խուճկն ՚ի վերայ նորա ՚ի խնկոցն հանդերձանաց, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի. ²⁶և ձգեաց զսրահակ դրան խորանին: ²⁷Եւ եղ զսեղանն ողջակիզաց առ դրան խորանին յարկի վկայութեանն. և եհան ՚ի վերայ նորա ողջակէզս և զոհս, որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: ²⁸Եւ եղ զաւազանն ընդ խորանն վկայութեան և ընդ սեղանն, և արկ ՚ի նա ջուր. ²⁹զի լուսացեն ՚ի նմանէ Մովսէս և Ահարոն, և որդիք նորա զձեռս և զոտս իւրեանց, ³⁰յորժամ մտանիցեն ՚ի խորանն վկայութեան, կամ յորժամ մերձենայցեն ՚ի սեղանն պաշտել: և լուանային ՚ի նմանէ, որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի: ³¹Եւ կանգնեաց զսրահին շուրջ զխորանաւն և զսեղանաւն. և ձգեաց զսրահակ դրան սրահին: և կատարեաց Մովսէս զամենայն զգործն*: ³²Եւ ծածկեաց ամպն զխորանն վկայութեան. և լի՛ եղև փառօք Տեառն խորանն: ³³Եւ ո՛չ կարէր Մովսէս մտանել ՚ի խորանն վկայութեան, զի ծածկեաց զնա ամպն, և լի՛ եղև խորանն փառօք Տեառն: ³⁴Յորժամ վերանայր ամպն ՚ի խորանէ անտի, չուէին որդիքն Իսրայէլի հանդերձ ամենայն աղխիւ իւրեանց: ³⁵Եւ եթէ ո՛չ վերանայր ամպն ո՛չ չուէին մինչև ցօրն վերանալոյ: ³⁶Զի ամպն Տեառն էր ՚ի վերայ խորանին ՚ի տուէ. և հո՛ւր կայր ՚ի վերայ նորա ՚ի գիշերի. առաջի ամենայն որդւոցն Իսրայէլի, յամենայն ՚ի չուս իւրեանց*:

Կատարեցաւ Ելքս*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂԵՒՏԱԿԱՆԻՆ

Ղևտական գիրքս՝ վայելչապէս զկնի ելիցն կարգեցաւ. զի յե՛տ կանգնելոյ խորանին, վասն քահանայիցն և քահանայագործութեան պատարագացն որ ՚ի նմա ունի օրինադրութիւն: Եւ է՛ պատճառ Ղևտացւոց քահանայութեանն այս: Յանօրինել ցեղիցն Իսրայէլի երկրպագութեամբ որթուն, ազգն Ղևեայ ո՛չ հեռացան մտօք յԱստուծոյ, և ո՛չ երկրպագեցին որթուն: Իբրև էջ Մովսէս ՚ի լեռնէն՝ փախեան ՚ի նմանէ անօրինեալքն. կոչեաց Մովսէս և ասէ. Որ Տեառն էք՝ առ ի՛ս մատիք: Եւ հասին առ նա Ղևտացիքն. որոց հրամայեաց, և առին զվրէժն Աստուծոյ յանօրինելոցն. և հրամայեաց Աստուած Մովսիսի կարգել զտունն Ղևեայ ՚ի քահանայութիւն: Որոց առաջին՝ Ահարոն մե՛ծ քահանայ և որդիք նորա ՚ի տանէն Կահաթու քահանայք. և այլ որդիքն Կահաթու, և տունն Գեթսունի և Մերարեայ՝ յՂևտացիս սպասաւորս. որք ունէին զնկարագրութիւն նորոյ քահանայութեանս: Իսկ պատճառ պատարագացն, նախ՝ զի այնու հեռացին ՚ի կռոց՝ և յարեսցին յԱստուած: Եւ ապա ՚ի խորհուրդ Քրիստոսի և նոր պատարագիս: Ունի գիրքս այս և զօրինադրութիւն ուտելեաց և չուտելեաց կենդանեաց, և զսրբութեան բորոտաց, սերմնակաթաց, և այսպիսեաց: Ե՛ւս և

* Ոմանք. Եւ զսեղանովն:

* Այլք. Առաջի ամենայն տանն Իսրայէլի:

* Ի վախճան գրոցս ոմանք դնեն՝ Կատարեցան Ելք՝ և ոմանք՝ Կատարեցաւ Գիրք Ելիցս:

պատուհասք պէսպէս մեղաց, և զհանգամանս տօնից, և զմահ այնորիկ որ զԱնունն անէժ. և վասն յիսներորդ ամին որ է յորելեան, վասն վաճառուց և խոստմանց Տեառն, և տասանորդաց: Եւ ունի Ղևտական գիրքս պատմութիւն ժամանակի ամսոյ միոյ:

Գլուխք Ղևտականին

ա. Զրամայէ Աստուած Մովսիսի զօրինակ մատուցման ողջակիզացն: որ յարջառոց, որ յոչխարաց, ՚ի թռչնոց, ՚ի նաշիւոյ, ՚ի թոնրի եփելոյ, ՚ի տապակէ, ՚ի կասկարայից:

բ. Ձայս ամենայն աղիւ յաղել, և անխմոր. իսկ զմեղրեալ և զխմորեալ պտուղ տացեն քահանայիցն. այլ ՚ի սեղանն մի՛ ելցէ: Բայց մուրկն փխրեալ, որ է եղի՛ խանձեալ:

գ. Ի զոհէ փրկութեանն պտուղ Տեառն, թէ յարջառոց իցէ, թէ յօղեաց, թէ յայծեաց:

դ. Վասն չուտելոյ զարիւն և զճարպ:

ե. Թէ վասն ականայ մեղաց քահանայապետին զուարակ մատուցի, յորոյ արեւնէն տարցի ՚ի ներքս ՚ի սրբութիւնն, և զճարպն և զմասունսն ՚ի սեղանն ողջակիզաց. և զմիսն և զմորթն և զապաւառն այրեսցեն ՚ի տեղի մոխրակուտին:

զ. Թէ ամենայն ժողովուրդն մեղիցէ յանգէտս, նմանապէս մատուցի զուարակ, և այրեսցի արտաքոյ: Իշխանն մեղուցեալ ականայ, մատուցէ նոխա՛զ: Ժողովրդականն մեղուցեալ ականայ, մատուցէ ալոջ կամ ոչխար:

է. Զրամայէ չիրաժարել ումեք զճշմարիտն վկայել յի՛րս զոր ետես:

ը. Մերձեցեալն ՚ի մեռելոտի, և որ երդմամբ ինչ ուխտեաց չար առնել՝ և կամ բարի, և ո՛չ կատարեաց. որոջաւ կամ տատրակօք կամ նաշիւով քաւեսցին:

թ. Որ ականայ խափանէ զտէրունիս՝ հատուցէ լիով զգլուխն, և ՚ի հինգ մասնէն զմին ևս ՚ի վերայ: և խոյի՛ւ քաւեսցի:

ժ. Թէ ընդ զրկանաց զոք՝ զգլուխն և զհինգերորդն ևս հատուցէ, և խոյի՛ւ քաւի:

ժա. Ձի մի՛ շիջցի հուր սեղանոյն. ըստ որում զՅոգին մի՛ շիջուցանէք: Եւ զի քահանայն պատմութեանն հանցէ զընծայսն ՚ի սեղանն:

ժբ. Ի զոհէ նաշիւոյ մասն քահանային. զոր բաղարջ կերիցեն արուք քահանային:

ժգ. Ի տանէն Ահարոնի հանապազորդ պատարագ իւղով զանգեալ նաշիի, այգուն և երեկոյն. և զոհ քահանային մի՛ կերիցի, զի ողջակէ՛զ է:

ժդ. Թէ զվասն մեղացն զոր վերոյ՛ ասաց՝ ՚ի սրահին կերիցեն արուք քահանային սուրբք: և զի յոր ինչ մերձեսցի ՚ի նմանէ սրբի. զոր լուանալ և քերել ասէ զգուշութեամբ: Ձոր վասն այսր իսկ և Անգէոս մարգարէ կշտամբէ զքահանայսն զկնի դարձին: Նոյն օրինակ կերիցեն և զխոյն որ վասն յանցանաց:

ժե. Ձի մորթ ողջակիզի փրկութեանն զոր վերոյ՛ ասաց, զորոյ չէ՛ր օրէն այրել զմորթն, քահանային լիցի: Եւ զոհ եփեալ ՚ի թոնրում և ՚ի կասկարայս՝ քահանային: և միս զոհի զոհութեանն քահանային լիցի, և

յայգ մի՛ թողցի:

ժգ. Ձի կամաւոր զոհն կերիցի և ՚ի վաղիւն, այլ ո՛չ և յերրորդն աւուր:
ժէ. Անսուրբն որ կերիցէ ՚ի զոհէ փրկութեանն՝ կորիցէ: Որպէս առ մեք,
դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ:

ժը. Ճարպ մեռելուտոյ՝ ՚ի փոկ և ՚ի կաշի առցի ՚ի գործ, այլ ո՛չ յուտել.
որպէս մեռեալն ոգւով ՚ի պէտս աշխարհի՝ այլ ո՛չ յԱստուծոյ:

ժթ. Որ ուտէ զարիւն՝ կորիցէ:

ի. ՚Ի զոհէ փրկութեանն մասն Ահարովնի և որդւոց նորա:

իա. Ձի հանդերձեալ է ասել վասն պտղոցն Տեառն, զոր մատուցէ
Ահարոն և որդիք նորա յաւուր օծմանն իւրեանց:

իբ. Հրաման առնու Մովսէս օծանել զԱհարոն և զորդիս նորա,
եկեղեցացուցեալ զժողովուրդն:

իգ. Ձի օծ նախ զսեղանն և զխորանն և զԱհարոն որդւովքն, իւղով և
ապա արեամբ, և մատոյց զպատարագսն վասն նոցա, և ա՛ռ զերբուծն ՚ի
խոյէն կատարման: և պատուէր ետ նոցա չմեկնել ՚ի դրանէ խորանին
զեւթն օր:

իդ. Միանգամ Մովսէս մատոյց պատարագ, որպէս և Քրիստոս, որ և
աւանդեաց թէ՛ Ձայս արարէք. և Մովսէս՝ յԱհարոն և յորդիսն աւանդեաց.
Մատո՛ւ ասէ պատարագ ընդ անձին և ընդ ժողովրդեանն: Եւ ընդ օրհնելն
զժողովուրդն՝ էջ հուր ՚ի Տեառնէ և եկեզ զպատարագն, զոր չէր օրէն
չիջուցանել:

իե. Թէ Նաբադ և Աբիուդ օտար հուր մատուցեալ՝ մեռան. զորս
ժողովրդեան լա՛լ Մովսէս հրամայեաց, բայց Ահարոնի և որդւոցն ո՛չ, ՚ի
պատիւ օծմանն:

իզ. Պատուէր տայ քահանայիցն՝ ո՛չ ըմպել զինի ՚ի մտանել ՚ի խորանն,
թերևս՝ յայս պատճառ մեռան Նաբատեանք:

իէ. Մեծարեաց Մովսէս զԱհարոն և զորդիսն ուտել զբաժինն իւրեանց, և
զնոխագն զոր վասն մեղաց. և զի այրեցեալ էր զայն, բարկացաւ Մովսէս
թէ ուտել պարտ էր և քաւել զմեղս ժողովրդեանն: Եւ ցածոյց զնա
Ահարոն, թէ առ երկիւղի ո՛չ կերան: Բայց տես զի առաջին պատարագն
որ վասն մեղաց ժողովրդեանն էր՝ ո՛չ կերաւ. և ո՛չ քաւեցան ապա մեղք
որթուն:

իը. Թէ զո՞րս սրբէ ուտել յանասնոց ՚ի նշանակ բանաւորաց: զի կճղակն՝
անսայթաք վարուց, և որոճն բանի՝ սո՛ւրբք են:

իթ. Թէ զո՞րս ՚ի ջրայնոց. զի թեք՝ առաքինութեան, և թեփք՝ ծածկոյթ
պատկառանաց՝ սո՛ւրբք են:

լ. ՚Ի թռչնոց զորս պի՛ղծս ասէ՝ նշանակք են ամբարտաւանից, և
յափշտակողաց և խաւարասէր մարդկան:

լա. ՚Ի զեռուն թռչնոց չորս ազգս մարախոյ, զորս սրբէ ուտել, անյայտ
առաքինութեանց նման:

լբ. Վասն զեռնոց (թռչնոց) որք ՚ի չո՛րս ոտս գնան, նշանակ ստորաքարշ
վարուց ՚ի չա՛ր սովորոյթս կապեալք, պիղծք իբրև զմկունս:

լգ. Վասն փայտեղէն կամ խեցեղէն պղծեալ անօթոյ:

լդ. Վասն պղծեալ կերակրոց:

լե. Վասն ջրհորոց, և վասն սերմանց:

լզ. Չմերձենալ ՚ի մեռելուտի, և զգուշանալ ՚ի զեռնոց պղծոց:

լէ. Սուրբք լերուք զի ես սուրբ եմ:

լը. Իրաւունք սրբութեան կնոջ որ արու կամ էգ ծնցի:

լթ. Վասն այլ և այլ նշանաց բորոտութեան սրբելոյ կամ պղծելոյ:

խ. Վասն բորոտութեան գլխոյ կամ մորուաց, և վասն կնտութեան և ճեղութեան:

խա. Վասն տըձնութեան բորոտի, և պղծութեան:

խբ. Վասն ասուեայ և կտաւեայ անդերծից բորոտութեան:

խգ. Իրաւունք սրբութեան բորոտի յառաջնուն և յեւթներորդուն աւուրն.

խորհրդական նուիրօք ՚ի տիպ Քրիստոսի:

խդ. Վասն բորոտելոյ տան և պղծելոյ, և սրբութեան նորին:

խե. Վասն պղծութեան սերմնակաթի, և յոր ինչ մերձեսցի. և վասն սրբելոյ նորին:

խզ. Վասն որ յերագս հոսի, կամ ընդ կնոջ լինի:

խէ. Վասն կնոջ եւթնօրեայ բղխման դաշտանի: և վասն տեռատեսի պղծութեան կամ սրբութեան:

խը. Չի ՚ի տօնի քաւութեանն միայն մտցէ քահանայապետն ՚ի ներքսագոյն սրբութիւնն:

խթ. Չի ՚ի տօնի քաւութեանն արկցեն վիճակս երկուց նոխազաց զենլոյ և արծակելոյ, ՚ի խորհուրդ միութեան Տեառն Քրիստոսի:

ծ. Օրինակ քաւելոյ զսրբութիւնն և զժողովուրդն, և արծակելոյ զնոխազն:

ծա. Թէ զգուարակն և զնոխազն որոց արեամբն սրբեցաւ խորանն, այրեսցեն արտաքոյ բանակին, ՚ի խորհուրդ Յիսուսի արտաքոյ դրանն չարչարելոյ:

ծբ. Վասն պատուոյ աւուրն քաւութեան, ՚ի տասներորդուն աւուր եւթներորդի ամսոյն:

ծգ. Թէ յարիւնահեղս համարեալ է, որ առնէ զոհ կամ ողջակէզ արտաքոյ դրան խորանին:

ծդ. Վասն չուտելոյ զարիւն, և վասն զարիւն որսոց ընդ հողով ծածկելոյ:

ծե. Վասն որ զմեռելոտի կամ զգազանաբէկ կերիցէ:

ծզ. Չորիցս կրկնելով զԵ՛ս եմ Տէր Աստուածն ՚ի բա՛ց տանի զնոսս յեգիպտական ազգաշաղախ պղծութենէ. յերից կողմանց ազգակցութեան ՚ի վե՛ր և ՚ի խոնարհ և յառ ՚ի կողմ:

ծէ. Յառաջին աստիճանին ըստ առ ՚ի վեր կուսէ. սաստէ չխայտառակել պղծութեամբ առ իրեարս. առաջին ազգին, այսինքն՝ դուստր առ հայր, կամ որդի առ մայր, կամ խորթ առ մօրու: Դարձեալ ՚ի նոյն ազգ և յաստիճան ըստ ՚ի խոնարհ կուսէ չխայտառակել հօր զորդւոյ կին, այսինքն՝ զհւր հարսն, կամ զկնոջ իւրոյ դուստր, որ է զհւր խորթ:

ծը. Իսկ յերկրորդ ազգին և աստիճանին՝ ըստ առ ՚ի կողմն կուսէ.

չապականել զհւր քոյր. թէ և յայլ մօրէ իցէ, ՚ի տան ծնեալ կամ արտաքոյ ՚ի հարճէ հօր. կամ զխորթ հօրն իւրոյ, որ է հօրն կնոջ դուստր, կամ զեղբօր կին. կամ զհւր կնոջ քոյր: Ե՛ւս ՚ի նոյն աստիճանի ըստ ՚ի խոնարհ կուսէ, մի՛ խայտառակել զհւրն թոռնիայ, որ է իւր որդւոյ կամ դստեր դուստր. կամ զհարսին դուստր՝ զորդւոյ կնոջ, որ է որդւոյն խորթ. կամ զխորթուն դուստր:

ծթ. Իսկ յերրորդ ազգի և յաստիճանի ըստ առ ՚ի կողմն կոյս՝ չմտանել առ

իւր հօրաքոյր կամ մօրաքոյր կամ հօրեղբօր կին: Իսկ ՚ի խոնարհ կողմն
չմտանել առ իւր խորթուն թոռնիայն կամ առ հարսին թոռնիայ:
կ. Չմտանել առ ապարահ: և ո՛չ առ կին ընկերի:
կա. Ուժգին սաստիւ, չտալ զդատերս ՚ի պոռնկութիւն, և զվարձն նուիրել
կռոց. և ո՛չ ՚ի կնութիւն հեթանոս իշխանի:
կբ. Ձգուշանալ ՚ի մահուչափ մեղաց. յարուամոլութենէ և
յանասնագիտութենէ:
կգ. Սուրբք եղերութք՝ զի ես սուրբ եմ:
կդ. Երկնչել ՚ի ծնողաց:
կե. Պահել զշաբաթ:
կզ. Չյարել ՚ի կուռս:
կէ. Ի զոհէ փրկութեանն, յօրն և յերկրորդն ուտել, և յերրորդն ո՛չ:
կը. Ի հունձս իւր և ՚ի կութս մի՛ առնել հասկաքաղ, և ո՛չ ճռաքաղ, այլ
տնանկին թողուլ:
կթ. Չգողանալ:
հ. Չերդնուլ սուտ:
հա. Չզրկել զոք:
հբ. Առ օրին տալ զվարձս վարձկանին:
հգ. Ձհամր և զկոյր չզգուել:
հդ. Չառնուլ ակն ՚ի դատաստանի:
հե. Մի՛ նենգել զոք, և մի՛ յօժարել ՚ի մահ ուրութ:
հզ. Մի՛ ատել զոք՝ այլ յանդիմանել:
հէ. Չառնուլ վրէժ, և չպահել ոխս:
հը. Սիրել զընկերն իբրև զանձն:
հթ. Չտալ զանասունս յօտարախառնս:
ծ. Ձայգի՛ այլ և այլ չվարել, որ է՝ առ կին՝ մի՛ անբնական մտանել:
ծա. Չորձս երկդիմիս մի՛, որ է նշանակ հերձուածոյ:
ծբ. Վասն քաւութեան որ պղծէ զաղախիսն ուրութ:
ծգ. Ձերեամ մի՛ ուտել ՚ի նորահաս տնկոց, այլ ՚ի չորրորդն ամի:
ծդ. Չզոհել ՚ի լերինս:
ծե. Մի՛ հմայել զօր և զլուսին, կամ զթռիչս և զկռիչս հաւուց:
ծզ. Ցըցունս վարսից, ծամս կամ խոպոպիս մօրուաց չառնել:
ծէ. Վէտս ասղնածեծս մի՛ առնել:
ծը. Չկապել գիրս ինչ զբազկաց:
ծթ. Չտալ զդուստր ՚ի պոռնկոց, կամ հարսն կամ ծառայ հեթանոսի:
դ. Երկիրդիւ պահել զշաբաթս:
դա. Չյարել ՚ի վիուկս:
դբ. Պատուել զժերս:
դգ. Երկնչել յԱստուծոյ:
դդ. Չնեղել զեկն:
դե. Սիրել զընկերն իբրև զանձն:
դզ. Արդարս լինել ՚ի դատս, ՚ի չափս, ՚ի կշիռս:
դէ. Դարձեալ սաստէ չտալ զսերմ, որ է զաւակ իւր՝ հեթանոսի:
դը. Դարձեալ սաստէ չյարել ՚ի գէտս:
դթ. Անարգօղն հօր՝ և մօր՝ մեռցի:
ճ. Շնացօղքն՝ մահու սպանցին:

ճա. Խորթ առ մօրու մտեալ՝ մահով մեռցին:
ճբ. Առ կին որդւոյ մտեալն՝ մահով սպանցին:
ճգ. Արուագէտքն՝ մահով մեռցին:
ճդ. Ձղուստր և զմայր առօղքն՝ այրեսցին հրով:
ճե. Անասնամեղն՝ սպանցի:
ճզ. Առ քոյր մտեալն՝ սպանցին:
ճէ. Առ ապարահ մտեալն՝ սպանցին:
ճը. Առ հօրաքոյր մտեալն՝ սպանցին:
ճթ. Առ քեռւոյ կին մտեալն՝ սպանցին:
ճժ. Առ կին եղբօր մտեալն՝ սպանցին:
ճժա. Չյարել 'ի վիուկս:
ճժբ. Քահանային մի՛ վայրապար պղծել 'ի դի մեռելոյ, և մի՛ խզել զհերս:
ճժգ. Վասն կնոջ առնելոյ քահանայի. և վասն դստեր քահանայի պոռնկեցելոյ:
ճժդ. Քահանայապետն բնաւին 'ի դի մի՛ պղծիցի, և ո՛չ 'ի հօր: Եւ կին կոյս առցէ:
ճժե. Որ արատ կալցի 'ի մարմին՝ մի՛ քահանայասցի. այլ 'ի հասիցն կերիցէ:
ճժզ. Քահանայ որ չիցէ սուրբ, 'ի սրբութեանցն մի՛ կերիցէ մինչև սրբեսցի:
ճժէ. Որ չիցէ Ղևտացի՝ մի՛ կերիցէ, և ո՛չ վարձկան քահանային. բայց ընտոծինն և արծաթագինն կերիցեն:
ճժը. Դուստր քահանայի այլոյ տուեալն մի՛ կերիցէ, բայց այրին անդրէն դարձեալ 'ի տուն հօրն:
ճժթ. Որ 'ի հասիցն կերիցէ յանգէտս, զգլուխն և զհնգեակն հատուցէ:
ճի. Ձարատաւորս յանասնոց ո՛չ նուիրել, և ո՛չ 'ի ձեռաց հեթանոսի:
ճիա. Յութերորդ օրէն և յառաջ ապա՛ նուիրել զծնունդս արջառոց և զոչխարաց:
ճիբ. Չմայր և զծնունդն իւր 'ի միում աւուր մի՛ զենուլ 'ի նուէր:
ճիգ. Չզոհ զոհութեանն 'ի նմին աւուր ուտել, և ո՛չ թողուլ յայգ:
ճիդ. Տօնիցն առաջին՝ շաբաթն յաճախ. և երկրորդ՝ զատիկն. երրորդ՝ պենտակոստն. չորրորդ՝ քաւութեանն. հինգ՝ տաղաւարահարքն:
ճիե. Չբոլոր գիշերն ճրագունքն ո՛չ շիջցին:
ճիզ. Երկոտասան բաղարջ դնել 'ի սեղանն՝ 'ի շաբաթ ցշաբաթ:
ճիէ. Քարկոծել տայ զայն որ անէծ գԱնունն:
ճիը. Մարդասպանն սպանցի:
ճիթ. Որ անասուն սպանցէ՝ անձն ընդ անձին հատուցէ:
ճլ. Որ խեղիցէ զոք՝ խեղիցեն զինքն, ակն ընդ ական և ատամն ընդ ատաման:
ճլա. Ամն եւթներորդ՝ հանգիստ, և մի՛ գործեսցի՝ անդ կամ այգի:
ճլբ. Ամն յիսներորդ՝ հանգստեան և թողութեան. յորում 'ի տօնի քաւութեանն փողէին ազդեցութեան: Եւ զի վաճառեալքն առ տեարսն դարձցին:
ճլգ. Յանգամանք տանց վաճառելոց 'ի քաղաքս պարսպաւորս, կամ յագարակս, կամ 'ի քաղաքս Ղևտացոց:
ճլդ. Չտալ փոխ տոկոսեօք:
ճլե. Արձակել զծառայ Եբրայեցի յեւթն ամին:

ՃԼԳ. Չառնել աստուածս ձեռագործս:

ՃԼԷ. Խոստանայ բարիս թէ կայցեն յօրէնսն, ապա թէ ոչ՝ սաստկապէս սպառնայ զգերելն ՚ի Բաբելոն, և խոստանայ զդարձն:

ՃԼԸ. Գինք անձանց որոց նուիրեն զինքեանս Տեառն, կամ զանասուն կամ զգետին:

ՃԼԹ. Թէ որ զոր նուիրեաց Տեառն գնել իւր կամեսցի, յաւելցէ ՚ի գինն և զհինգերորդ ևս մասնն. իսկ թէ վաճառեսցէ զանոն զոր փրկեաց՝ չէ՛ վաճառն հաստատուն, ՚ի թողութեան ամի՝ Տեառն լիցի:

ՃԽ. Ամենայն ընչից տասանորդ՝ Տեառն լիցի. յորոց թէ զպտուղս ինչ գնել կամիցի նուիրողն, և զհինգերորդ ևս մասնն յաւելցէ ՚ի գինսն: Իսկ զսուրբ անասնոց տասանեակս, ո՛չ փրկել գնովք, և ո՛չ փոխանակել այլով:

ՂԵՏԱԿԱՆ

1

ԳԼՈՒԽ Ա

Ա ¹Եւ կոչեաց Տէր զՄովսէս, և խօսեցաւ ընդ նմա ՚ի խորանէ անտի վկայութեան՝ և ասէ. խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի, և ասասցես ցոյսա: ²Այր որ ՚ի ձէնջ եթէ մատուցանիցէ պատարագ Տեառն ՚ի խաշանց, յարջառոց կամ յոչխարէ՛ մատուցանիցէք զպատարագս ձեր՝: ³Եթէ ողջակէ՛զ իցէ պատարագն նորա յարջառոց, արու անարատ մատուցէ, առ դուրս խորանին վկայութեան ածցէ՛ զնա, ընդունելութիւն ՚ի նմանէ՛ առ ՚ի քաւելոյ առաջի Տեառն: ⁴Եւ դիցէ՛ զձեռն իւր ՚ի վերայ գլխոյ ընծային՝ յընդունելութիւն նմա, առ ՚ի քաւելոյ վասն անծին իւրոյ: ⁵Եւ սպանցեն զզուարակն առաջի Տեառն. և մատուցեն քահանայքն որդիքն Ահարոնի զարիւնն. և հեղցեն շուրջ զսեղանովն որ կայցէ առ դրան խորանին վկայութեան: ⁶Եւ մորթեսցեն զողջակէզն. և անդամ անդամ յօշեսցեն զնա: ⁷Եւ դիցեն որդիքն Ահարոնի քահանայքն հո՛ւր ՚ի վերայ սեղանոյն. և կուտեսցեն փայտ ՚ի վերայ հրոյն: Եւ դիցեն որդիքն Ահարոնի քահանայքն ⁸զանդամաթիւն և զգլուխն, և զճարպն ՚ի վերայ փայտին որ կայցէ ՚ի վերայ հրոյն որ է ՚ի # սեղանն*: ⁹Եւ զփորոտին և զոտսն լուսացեն ջրով. և դիցեն քահանայքն զամենայն ՚ի վերայ սեղանոյն. զի ողջակէ՛զ զոհի է ՚ի հոտ անուշից Տեառն: ¹⁰Ապա թէ յոչխարաց իցէ պատարագն Տեառն, ՚ի գառանց և յուլոց ողջակէզ, արու անարատ մատուցանիցէ զնա: ¹¹Եւ դիցէ զձեռն իւր ՚ի վերայ գլխոյ նորա. և սպանցեն զնա ՚ի կողմանց սեղանոյն ընդ հիւսւսի, առաջի Տեառն. և հեղցեն զարիւնն որդիքն Ահարոնի քահանայք շուրջ զսեղանովն*: ¹²Եւ յօշեսցեն զնա անդամ անդամ. և զգլուխ նորա և զճարպ դիցեն քահանայքն ՚ի վերայ փայտին և հրոյ՝ որ ՚ի վերայ սեղանոյն իցէ*: ¹³Եւ զփորոտին և զոտսն լուսացեն ջրով. և մատուցէ քահանայն զամենայն, և դիցէ՛ ՚ի վերայ սեղանոյն. զի ողջակէզ զոհի է ՚ի հոտ անուշից Տեառն: ¹⁴Իսկ եթէ

* Ոմանք. Պատարագ Աստուծոյ ՚ի խաշանց, յարջառոյ:

* Ոմանք. Ի վերայ հրոյ սեղանոյն: և ոմանք. ՚ի վերայ հրոյ ՚ի սեղանի անդ:

* Ոմանք. Եւ դիցէ զձեռս իւր ՚ի:

* Այլք. Եւ դիցեն զայն քահանայքն ՚ի վերայ:

ի թռչնոց մատուցանիցէ յողջակէ՞զ պատարագս Տեառն, ՚ի տատրակաց կամ յաղաւնեաց տարցի զպատարագն իւր: ¹⁵Եւ մատուցէ զնա քահանայն առ սեղանն. և խառեսցէ՛ զգլուխ նորա. և դիցէ՛ քահանայն ՚ի վերայ սեղանոյն, և քամեսցէ՛ զարիւնն առ յատակաւ սեղանոյն: ¹⁶Եւ կորզեսցէ՛ զարմկունսն թեօքն հանդերձ. և հանցէ՛ զնա առ սեղանովն ՚ի տեղի մոխրակուտին*։ ¹⁷Եւ ջախջախեսցէ՛ զայն ՚ի թևոցն. և ՚ի բաց մի՛ զատուցէ. և դիցէ զայն քահանայն ՚ի սեղանն ՚ի վերայ փայտին և հրոյ. զի ողջակէ՞զ զոհի է՛ ՚ի հոտ անուշից Տեառն:

2

Գլուխ Բ

¹Եւ անձն որ՞ եթէ մատուցանիցէ պատարագ Տեառն, նաշի՛հ լիցի պատարագն նորա. և արկցէ զնովաւ եւղ, և դիցէ ՚ի վերայ նորա կնդրուկ. զի զո՛հ է*։ ²Եւ տարցի զայն առ քահանայսն որդիս Ահարոնի. և լցեալ զձեռն իւր ՚ի նաշիւոյ անտի իւղովն հանդերձ, և զամենայն զկնդրուկն նորա, և դիցէ քահանայն զյիշատակ նորա ՚ի վերայ սեղանոյն զո՛հ ՚ի հոտ անուշից Տեառն*։ ³Եւ նշխարն ՚ի զոհէ անտի՝ Ահարոնի և որդւոց իւրոց եղիցի. սրբութիւն սրբութեանց ՚ի զոհից անտի Տեառն*։ ⁴Ապա թէ մատուցանիցէ պատարագ զո՛հ եփեալ ՚ի թոնրի. պատարագ Տեառն ՚ի նաշիւոյ՝ պանս բաղարջս, ՚ի նաշիւոյ զանգեալ իւղով, և քաքարս բաղարջս օժեալ իւղով: ⁵Իսկ եթէ զո՛հ ՚ի տապակէ իցէ պատարագն քո. նաշի՛հ զանգեալ իւղով, բաղարջ լինիցի. ⁶և բրդեսցես՝ զայն պատառս պատառս. և արկցես ՚ի վերայ նոցա եւղ. զի զո՛հ Տեառն է: ⁷Ապա թէ զո՛հ ՚ի կասկարայից իցէ պատարագն քո, նաշի՛հ իւղով գործեսցի. ⁸և մատուցես զզոհն զոր առնիցես ՚ի նոցանէ Տեառն. և տարցի՛ս առ քահանայն: Եւ մատուցեալ քահանայն առ սեղանն, ⁹հանցէ՛ ՚ի զոհէն զառ ՚ի յիշատակէ նորա. և դիցէ քահանայն ՚ի վերայ սեղանոյն ընծայ անուշութեան Տեառն է*։ ¹⁰Եւ որ մնայցէ ՚ի զոհէ անտի, Ահարոնի՛ և որդւոց նորա լինիցի. սրբութիւն սրբութեանց ՚ի զոհիցն քոց*։

Բ ¹¹Չամենայն զոհ զոր մատուցանիցէք Տեառն, ո՛չ առնիցէք խմորուն: Չամենայն խմորուն, և զամենայն մեղրեալ՝ մի՛ մատուցանիցէք ՚ի նոցանէ պտուղ ՚ի զոհ Տեառն: ¹²Պատարագ պտղոյ մատուցանիցէք զայն Տեառն. բայց ՚ի սեղանն մի՛ ելանիցէ ՚ի հոտ անուշից Տեառն: ¹³Եւ ամենայն պատարագ զոհից ձերոց աղիւ Տեառն յաղեսցի. մի՛ պակասեցուցանիցէք զա՛ղ ուխտին Աստուծոյ ՚ի զոհից ձերոց. ընդ ամենայն պատարագս ա՛ղ մատուցանիցէք: ¹⁴Իսկ եթէ յառաջին արմտեաց մատուցանիցես պատարագ Տեառն, մուրկ նոր փխրեալ և մաքրեալ՝ Տեառն, մատուցես՝ զոհ զառաջնոց արմտեաց քոց: ¹⁵Եւ արկցես զնովաւ եւղ, և դիցես ՚ի վերայ նորա կնդրուկ, զի զո՛հ է*։ ¹⁶Եւ հանցէ՛ քահանայն զառ յիշատակէ նորա ՚ի մրկէ անտի հանդերձ իւղովն, և զամենայն

* Այլք. Եւ հանցէ զայն առ սե՛... (17) ՚ի թևոցն. բայց մի՛ զատուցէ:

* Ի լուս՝. Պատարագ զոհ Տեառն:

* Ոմանք. Չոհ հոտ անուշից Տեառն:

* Այլք. Եւ որդւոց իւրոց լիցի:

* Ոմանք. Ընծայ անուշութեան Տեառն է:

* Այլք. Ահարոնի և որդւոց իւրոց լիցի:

* Այլք. Եւ արկցես ՚ի նոսա զեւղ:

Կնդրուկ նորա զի պտուղ Տեառն է*:

3

Գլուխ Գ

Գ ¹Ապա թէ զոհ փրկութեան իցէ պատարագ նորա Տեառն, եթէ յարջառոց մատուցանիցէ, եթէ արո՛ւ իցէ, և եթէ է՛գ իցէ, զանարատն մատուցէ առաջի Տեառն: ²Եւ դիցէ զձեռս իւր ՚ի վերայ գլխոյ՝ պատարագին. և սպանցէ՛ զնա առ դրան խորանին վկայութեան. և հեղցեն որդիքն Ահարոնի քահանայք զարիւնն ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն շուրջանակի: ³Եւ մատուցէ ՚ի զոհէն փրկութեան պտուղ Տեառն. զճարպ թաղանթ քաղրթին, և զամենայն ճարպ փորոտւոյն* . ⁴և զերկուս երիկամունսն և զճարպն որ ՚ի նոսա, որ առ մսանամբքն իցեն և զլերդաբոյթն երիկամամբքն հանդերձ կորզեսցեն* : ⁵Եւ հանցեն զայն որդիքն Ահարոնի քահանայք ՚ի սեղանն յողջակէ՛զ ՚ի վերայ փայտին և հրոյն, պտուղ անուշից Տեառն: ⁶Ապա թէ յօդեաց իցէ պատարագ նորա զոհ փրկութեան Տեառն. արու կամ էգ, անարատ մատուցէ զայն: ⁷Իսկ եթէ զա՛ռն մատուցանիցէ զպատարագն իւր, մատուցէ՛ զնա առաջի Տեառն. ⁸և դիցէ զձեռն իւր ՚ի վերայ գլխոյ՝ պատարագին իւրոյ, և սպանցէ՛ զնա առ դրան խորանին վկայութեան. և հեղցեն որդիքն Ահարոնի քահանայք զարիւնն շուրջ զսեղանովն: ⁹Եւ մատուցեն ՚ի զոհէն փրկութեան պտուղ Տեառն, զճարպն և զմսանն անարատ*, ¹⁰հանդերձ զըստօքն հանցէ ՚ի նմանէ. և զճարպ թաղանթ քաղրթին, և զամենայն ճարպ փորոտւոյն, և զերկուս երիկամունսն և զճարպն որ ՚ի նոսա որ առ մսանամբքն, և զլերդաբոյթն հանդերձ երիկամամբք* ¹¹կորզեալ՝ հանցէ՛ քահանայն ՚ի սեղանն հո՛տ անուշից պտուղ Տեառն: ¹²Իսկ եթէ յայծեաց իցէ պատարագն իւր, մատուցէ՛ առաջի Տեառն. ¹³և դիցէ զձեռն իւր ՚ի վերայ գլխոյ նորա. և սպանցեն զնա առ դրան խորանին վկայութեան առաջի Տեառն. և հեղցեն որդիքն Ահարոնի քահանայք զարիւնն շուրջ զսեղանովն: ¹⁴Եւ հանցեն ՚ի նմանէ պտուղ Տեառն զճարպն զթաղանթ քաղրթին, և զամենայն զճարպ փորոտւոյն. ¹⁵և զերկուս երիկամունսն, և զճարպն ՚ի նոսա՝ որ առ մսանամբքն. և զլերդաբոյթն երիկամամբքն հանդերձ կորզեսցէ* . ¹⁶և հանցէ քահանայն ՚ի սեղանն պտուղ ՚ի հոտ անուշից Տեառն* .

Դ Ձամենայն ճարպ Տեառն՝ ¹⁷օրէն յաւիտենական յազգս ձեր, յամենայն բնակութեան ձերուն. զամենայն ճարպ և զամենայն արիւն մի՛ ուտիցէք:

4

Գլուխ Դ

Ե ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի, և

* Ոմանք. Եւ հանցէ քահանայն զայն յիշատակէ նորա ՚ի մրկաց:

* Այլք. Եւ մատուցեն ՚ի զո՛:

* Այլք. Եւ զճարպն ՚ի նոսա.. իցէ:

* Ի՛լուս՝. Ձճարպն և զմկանն անա՛:

* Այլք. Եւ զերկոսին երի՛.. և զճարպն ՚ի նոսա:

* Ոմանք. Որ ընդ մսանամբքն:

* Ոսկան. Ամենայն ճարպ Տեառն եղիցի: (17) Օրէն յաւիտենա՛:

ասասցես. Անձն եթէ մեղիցէ առաջի Տեառն ականայ, յամենայն հրամանաց Տեառն, յորոց ո՛չ է արժան առնել՝ և առնիցէ՛ ինչ՝ ՚ի նոցանէ՛: ³Եթէ քահանայապետն օծեալ մեղանչիցէ առ ՚ի զժողովուրդն յանցուցանելոյ, մատուցէ՛ վասն մեղաց իւրոց զոր մեղաւ՝ զուարակ՝ յանդուոյ անարատ Տեառն՝ վասն մեղաց: ⁴Եւ ածցէ՛ զզուարակն ՚ի դուռն խորանին վկայութեան առաջի Տեառն. և դիցէ զծեռս իւր ՚ի վերայ գլխոյ զուարակին առաջի Տեառն. և սպանցեն՝ զզուարակն առաջի Տեառն*։ ⁵Եւ առեալ քահանային օծելոյ կատարելոյ ՚ի ձեռս իւր յարենէ զուարակին, և տարցի՛ զայն ՚ի խորանն վկայութեան: ⁶Եւ թացցէ քահանայն զմատն իւր յարեանն. և ցանեսցէ՛ յարենէ անտի եւթն անգամ մատամբն իւրով առաջի Տեառն, առ վարագուրաւն սրբութեան: ⁷Եւ դիցէ՛ քահանայն յարենէ զուարակին ՚ի վերայ եղջերաց սեղանոյ խնկոցն հանդերձանաց առաջի Տեառն՝ որ իցէ ՚ի խորանին վկայութեան: Եւ զամենայն արիւն զուարակին հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց, որ կայցէ առ դրան խորանին վկայութեան: ⁸Եւ զամենայն ճարպ զուարակին մեղաց կորզեսցէ՛ ՚ի նմանէ, և զճարպ թաղանթ քաղրթին, և զամենայն ճարպ փորոտւոյն. ⁹և զերկանուսն երկոսին. և զճարպն որ ՚ի նոսա որ առ մսանամբքն, և զլերդաբոյթն երկանամբքն հանդերձ կորզեսցէ: ¹⁰Չոր օրինակ առնուցու ՚ի զուարակէ զոհի փրկութեանն, և հանցէ՛ քահանայն ՚ի սեղանն ողջակիզաց: ¹¹Եւ զմորթ զուարակին և զամենայն մարմին նորա, հանդերձ գլխովն և ոտիւքն. և քաղրթաւն, և ապաւառաւն. ¹²հանցեն ողջոյն զզուարակն արտաքոյ բանակին ՚ի տեղի մի սուրբ, ուր զմոխիրն հեղուցուն. և այրեսցեն զնա ՚ի վերայ փայտի հրով. ՚ի վերայ մոխրակուտին այրեսցի:

Ձ ¹³Ապա թէ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի տգիտանայցէ ականայ. և մոռանայցի՛ բանն յաչաց ժողովրդեանն. և առնիցեն ինչ մի յամենայն պատուիրանաց Տեառն որ ո՛չ առնիցի, և յանցանիցեն*։ ¹⁴և յայտնիցի նոցա մեղքն որ մեղան նովաւ. մատուցէ՛ ժողովուրդն զուարակ անարատ յանդուոց վասն մեղաց. և ածցեն զնա ՚ի դուռն խորանին վկայութեան*։ ¹⁵Եւ դիցեն ծերք ժողովրդեանն զծեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ զուարակին առաջի Տեառն. և սպանցեն զզուարակն առաջի Տեառն: ¹⁶Եւ տարցի՛ քահանայն օծեալ յարենէ զուարակին ՚ի խորանն վկայութեան. ¹⁷և թացցէ՛ քահանայն զմատն իւր յարեան զուարակին, և ցանեսցէ՛ եւթն անգամ առաջի Տեառն, յանդիման վարագուրին սրբութեան*։ ¹⁸և դիցէ՛ յարենէ անտի քահանայն ՚ի վերայ եղջերաց սեղանոյն խնկոցն հանդերձանաց. որ կայցէ առաջի Տեառն ՚ի խորանին վկայութեան: Եւ զամենայն զարիւնն հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց, որ է՛ առ դրան խորանին վկայութեան: ¹⁹Եւ զամենայն ճարպն կորզեսցէ ՚ի նմանէ՛ և հանցէ՛ ՚ի սեղանն*։ ²⁰Եւ արասցէ՛ զուարակին՝ զոր օրինակ արար զուարակին մեղաց, նոյնպէս արասցէ և նմա. և քաւեսցէ՛ վասն նոցա քահանայն, և թողցին նոցա

* *Ոմանք.* Յորոց չէ արժան: և *ոմանք.* չիցէ արժան:

* *Ի բազումս պակասի.* Առաջի Տեառն. և *սպանցեն զզուարակն առաջի Տեառն:* Եւ առեալ քա՛:

* *Յօրինակին ՚ի կարգի անդ պակասէր.* ժողովուրդ որդւոցն Իսրայէլի տգի՛: *այլ ՚ի լուսանցսն նշանակի ՚ի ներքս առնուլ, համաձայն այլոց ՚ի բնար՛: Այլք.* Անգիտանայցէ ականայ:

* *Այլք.* Յանդուոյ վասն մեղացն. և ածցէ զնա:

* *Այլք.* Չմատն իւր յարենէ զուա՛:

* *Այլք.* Եւ զամենայն զճարպն կոր՛:

մեղքն*։ ²¹Եւ հանցեն զգուարակն ողջոյն արտաքոյ բանակին, և այրեսցեն զգուարակն. զոր օրինակ այրեցին զառաջին զուարակն, զի վասն մեղաց ժողովրդեանն է։ ²²Եւ եթէ իշխանն մեղիցէ, և արասցէ մի ինչ ՚ի պատուիրանաց Տեառն Աստուծոյ՝ որ ո՛չ առնիցի, և յանցանիցէ ականայ. ²³և յայտնեսցի նմա մեղք զոր մեղաւ. մատուցէ՛ զպատարագն իւր նոխա՛գ յայծեաց՝ արու անարատ*։ ²⁴և դիցէ զծեռս իւր ՚ի վերայ գլխոյ նոխագին, և սպանցեն զնա ՚ի տեղւոջ ուր սպանանիցեն զողջակէզսն առաջի Տեառն. քանզի մեղաց է*։ ²⁵Եւ առցէ քահանայն յարենէ անտի մեղացն՝ մատամբ իւրով և դիցէ՛ ՚ի վերայ եղջերաց սեղանոյն ողջակիզաց։ Եւ զամենայն զարիւն նորա հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյ ողջակիզացն*։ ²⁶և զամենայն զճարպ նորա հանցէ՛ ՚ի սեղանն, իբրև զճարպ զոհի փրկութեանն. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն ՚ի մեղացն իւրոց, և թողցի՛ նմա*։ ²⁷Եւ եթէ մեղիցէ անձն ականայ ՚ի ժողովրդենէ երկրին. յառնել՛ նմա մի ինչ յամենայն պատուիրանացն Տեառն՝ որ ո՛չ առնիցի, և յանցանիցէ. ²⁸և յայտնեսցին նմա մեղքն զոր մեղաւ. մատուցէ՛ զպատարագ իւր՝ ալո՛ջ անարատ վասն մեղացն զոր մեղաւ։ ²⁹Եւ դիցէ զծեռս իւր ՚ի վերայ գլխոյ նորա. և սպանցեն զալոջն վասն մեղացն, ՚ի տեղւոջ ուր սպանանիցեն զողջակէզսն։ ³⁰Եւ առցէ քահանայն յարենէ մեղացն՝ մատամբ իւրով, և դիցէ՛ ՚ի վերայ եղջերաց սեղանոյն ողջակիզաց. և զամենայն արիւն նորա հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյ ողջակիզացն*։ ³¹Եւ զամենայն զճարպն կորզեսցէ՛ զոր օրինակ կորզիցի ճարպ յողջակիզէ փրկութեանն. և հանցէ՛ զայն քահանայն ՚ի սեղանն՝ ՚ի հոտ անուշից Տեառն. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն, և թողցի՛ նմա։ ³²Եւ եթէ ոչխար՝ մատուցանիցէ զպատարագն իւր, է՛գ՝ անարատ մատուցէ զնա. ³³և դիցէ զծեռն իւր ՚ի վերայ գլխոյ նորա որ վասն մեղացն իցէ. և սպանցեն զնա ՚ի տեղւոջն՝ ուր սպանանիցեն զողջակէզսն։ ³⁴Եւ առեալ քահանային յարենէ այնր՝ որ վասն մեղացն իցէ՛ մատամբն իւրով, և դիցէ՛ ՚ի վերայ եղջերաց սեղանոյ ողջակիզացն. և զամենայն արիւն նորա հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց։ ³⁵Եւ զամենայն զճարպ նորա կորզեսցէ՛ զոր օրինակ կորզիցի ճարպ ոչխարին փրկութեան. և դիցէ զայն քահանայն ՚ի վերայ սեղանոյն յողջակէզ Տեառն. և քաւեսցէ՛ վասն նոցա քահանայն ՚ի մեղացն զոր մեղաւ, և թողցի՛ նմա*։

5

Գլուխ Ե

Է ¹Եւ եթէ մեղիցէ՛ անձն, և լուիցէ զբարբառ երդման երդմնեցուցանելոյ, և նա իցէ վկայ, կամ թէ ետես, կամ թէ իրագէտ իցէ, և ո՛չ հանցէ ՚ի վեր, մեղս

* *Ոմանք.* Եւ թողցի նոցա մեղքն։

* *Այլք.* Եւ յայտնեսցին նմա մեղքն... զպատարագն իւր ՚ի նոխագաց յայծ՝։ *Յօրինակին պակասէր.* Յայծեաց *արու* ան՝։

* *Յօրինակին.* Ուր սպանիցեն։ *Այլք.* Յորում սպանանիցեն զող՝։ *Ոսկան.* Քանզի վասն մեղաց է։

* *Այլք.* Եւ առցէ և դիցէ քահանայն յա՞ն։

* *Ոմանք.* Ի մեղաց անտի իւրոց։

* *Այլք.* Յարենէ նորա մատամբ իւ՞ն։

* *Այլք.* Կորզի ճարպ ոչխարին... ՚ի մեղաց անտի զոր մեղաւ։

ընկալցի*:

Ը ²Եւ անձն որ մերձեսցի յի՛րս պղծութեան, կամ ՚ի մեռելոտի, կամ ՚ի գազանաբեկ, կամ ՚ի պիղծ ինչ. կամ ՚ի մեռելոտիս անասնոց պղծոց, կամ ՚ի մեռելոտիս սողնոց պղծոց. և անցանիցէ՛ զնովաւ: և ինքն պղծիցի և յանցանիցէ. ³կամ մերձենայցէ ՚ի պղծութիւնս մարդոյ կամ յամենայն պղծութիւնս նորա, յոր թէ մերձեցեալ պղծիցի. և մոռացօնք լինիցին նմա. և յետ այնորիկ ՚ի վերայ հասանիցէ և յանցեալ իցէ*։ ⁴Եւ անձն որ ուխտիցէ չա՛ր ինչ առնել, կամ բարի. ըստ ամենայնի զոր ինչ ուխտիցէ մարդ երդման՝մբ չափ. և մոռանայցի այն յաչաց նորա. և ապա ՚ի վերայ հասանիցէ, և մեղանչիցէ միով իւիք ՚ի նոցանէ. ⁵և խոստովան լինիցի զմեղսն՝ զոր մեղաւ: ⁶Մատուցէ՛ վասն յանցանացն իւրոց՝ զոր յանցեալ Տեառն. և վասն մեղացն զոր մեղաւ, է՛գ յօդեաց որոջ, կամ ալո՛ջ մի յայծեաց վասն մեղացն. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն ՚ի մեղաց անտի. և թողցին նմա մեղքն: ⁷Ապա թէ չիցէ՛ ձեռնհաս՝ լինել բաւական ոչխարաւ, մատուցէ վասն մեղացն զոր մեղաւ, երկուս տատրակս կամ երկուս ձագս աղանեաց. մին վասն մեղացն, և մին՝ յողջակէ՛գ*. ⁸ածցէ առ քահանայն: Եւ տարցի՛ ՚ի ներքս քահանայն նախ՝ զվասն մեղացն, և խառեսցէ՛ քահանայն զգլուխն յուլանէն՝ և մի՛ հատցէ*. ⁹և ցանեսցէ՛ յարենէ անտի այնր որ վասն մեղացն իցէ՛ զորմով սեղանոյն. և զմնացեալ արիւնն քամեսցէ՛ առ յատակաւ սեղանոյն. քանզի վասն մեղաց է: ¹⁰Եւ զերկրորդն արասցէ յողջակէ՛գ որպէս և օրէն իցէ. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն ընդ մեղացն զոր մեղաւ, և թողցի՛ նմա: ¹¹Եւ եթէ ո՛չ գտանիցին ընդ ձեռամբ նորա զոյգք տատրակաց՝ կամ երկու ձագք աղանեաց, բերցէ զպատարագն իւր վասն որոյ մեղաւն՝ զտասանորդ գրուի միոյ նաշիի վասն մեղացն. և եւղ մի՛ արկցէ ՚ի նա, և կնդրուկ՝ մի՛ դիցէ ՚ի վերայ նորա, զի վասն մեղաց է: ¹²Եւ տարցի զայն առ քահանայն. և առեալ քահանային ՚ի նմանէ լի՛ ափով զառ ՚ի յիշատակէն նորա, դիցէ ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն Տեառն. քանզի վասն մեղաց է: ¹³Եւ քաւեսցէ՛ վասն նորա քահանայն զմեղսն զոր մեղաւ՝ որով իւիք և իցէ ՚ի նոցանէ. և թողցի՛ նմա. և մնացեալն քահանային եղիցի իբրև զգոհ նաշիւոյ:

Թ ¹⁴Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁵Անձն՝ որ եթէ վրիպեսցի և մեղիցէ ակամայ ՚ի սրբութեանց անտի Տեառն. մատուցէ վասն յանցանացն իւրոց Տեառն խո՛յ անարատ յօդեաց՝ զնո՛ց արծաթոյ ՚ի յիսուն սկեղէ՛ ըստ սրբութեան սկեղն*, ¹⁶վասն որոյ յանցուցեալն իցէ: Եւ զոր մեղաւն ՚ի սրբութիւնսն, հատուցէ՛, և զհինգերորդ ևս մասնն յաւելցէ ՚ի նոյն. և տացէ՛ ցքահանայն. և քաւեսցէ՛ ՚ի նմանէ քահանայն խոյիւն որ վասն յանցանացն իցէ, և թողցի նմա: ¹⁷Եւ անձն՝ որ մեղիցէ, և արասցէ մի ինչ յամենայն պատուիրանաց Տեառն զոր չիցէ՛ պարտ առնել, և ո՛չ իմանայցէ, և յանցանիցէ, և ընդունիցի մեղս*։ ¹⁸Ածցէ՛ խո՛յ անարատ ՚ի խաշանց զնոց արծաթոյ վասն յանցութեանն՝ առ քահանայն. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն վասն անգիտութեանն զոր անգիտացաւ՝ և ինքն ո՛չ գիտէր, և թողցի նմա. ¹⁹քանզի յանցեալ յանցութիւն յանցանաց առաջի Տեառն:

* Յայլս պակասի. երդման երդմնեցուցանելոյ. Այլք. Եթէ ո՛չ հանցէ ՚ի վեր:

* Այլք. ՚ի վերայ հասանիցէ և յանցանիցէ:

* Ոմանք. Աղանուոյ, մի վասն մեղաց, և մի յող՛:

* Այլք. Յուլանէ անտի. և մի՛:

* Ոմանք. Անձն որ թէ վրիպիցի:

* Ոմանք. Յամենայն ՚ի պատուիրանաց:

Գլուխ Զ

Ժ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Ա՜ճճն ոք եթէ մեղիցէ, և արհամարհելով արհամարհեաց զպատուիրանս Տեառն. և ստեսցէ՛ ընկերի իւրում. եթէ յաւանդի, եթէ՛ ՚ի զովոդութեան, և եթէ՛ ՚ի յափշտակութեան, և եթէ վնասեսցէ՛ ինչ ընկերի իւրում*։ ³Եւ եթէ եգիտ կորուստ ինչ՝ և ժխտիցէ՛ ՚ի վերայ նորա. և երդնուցու սուտ վասն միոյ իրիք՝ յամենայնէ զոր և առնիցէ մարդ ⁴առ ՚ի մեղանչելոյ նորա նոքօք։ Եւ եղիցի յորժամ մեղանչիցէ և յանցանիցէ, հատուցէ՛ զյափշտակութիւնն՝ զոր յափշտակեաց, ⁵կամ զվնասն զոր վնասեաց, կամ զաւանդն զոր աւանդեցաւ նմա, կամ զկորուստն զոր եգիտ յամենայն իրաց, վասն որոյ երդուաւ սուտ։ Տուժեսցի զգլուխն. և զհինգերորդ մասն յաւելցէ՛ ՚ի նոյն. և ոյր իցէ՛ հատուցէ՛ նմա յաւուր յորում յանդիմանեսցի։ ⁶Եւ ընդ յանցանաց իւրոց մատուցէ Տեառն խոյ՝ անարատ ՚ի հօտից՝ գնոց արծաթոյ, վասն որոյ յանցեաւն։ ⁷Եւ քաւեսցէ՛ վասն նորա քահանայն առաջի Տեառն. և թողցի՛ նմա վասն միոյ իրիք յամենայնէ զոր արար և յանցեալ նա։

ԺԱ ⁸Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁹Պատուէ՛ր տուր Ահարոնի և որդւոց նորա՝ և ասասցես. Այս օրէն է ողջակիզին, վասն այրելոյ նորա ՚ի վերայ սեղանոյն զամենայն գիշերն մինչև ցառաւօտ. և հուր սեղանոյն որ այրիցի ՚ի վերայ նորա՝ մի՛ շիջցի։ ¹⁰Եւ զգեցցի քահանայն պատմուճան կտաւի. և անդրավարտիս կտաւիս զգեցցի ՚ի վերայ մարմնոյ իւրոյ, և հանցէ զընծայս ողջակիզին ՚ի վերայ սեղանոյն՝ զոր հուրն ծախիցէ. և դիցէ առ ընթեր սեղանոյն*։ ¹¹Եւ մերկասցի՛ զպատմուճանն իւր, և զգեցցի այլ պատմուճան. և հանցէ զողջակէզն արտաքոյ բանակին ՚ի տեղի՛ սուրբ։ ¹²Եւ հուրն որ այրիցի ՚ի վերայ սեղանոյն մի՛ շիջցի. և այրեսցէ ՚ի վերայ նորա քահանայն փայտ ընդ առաւօտս. և դիցէ՛ ՚ի վերայ նորա զողջակէզսն, և դիցէ՛ ՚ի նմա զճարպ փրկութեանն. ¹³և հո՛ւր հանապազ այրեսցի ՚ի վերայ սեղանոյն՝ և մի՛ շիջցի։

ԺԲ ¹⁴Եւ այս օրէն է զոհին՝ զոր մատուցանիցեն որդիքն Ահարոնի քահանայքն առաջի Տեառն յանդիման սեղանոյն։ ¹⁵Առցէ ափով իւրով ՚ի նաշիւոյ զոհին հանդերձ իւղով նորա և կնդրկաւն որ իցէ ՚ի վերայ զոհին. և հանցէ ՚ի սեղանն պտուղ ՚ի հո՛տ անուշից յիշատակ նորա Տեառն։ ¹⁶Եւ զմնացեալն ՚ի նմանէ կերիցէ Ահարոն և որդիք նորա. բաղարջ կերիցի ՚ի սուրբ տեղուջ. ՚ի սրահի՛ խորանին վկայութեան կերիցեն զնա։ ¹⁷Ո՛չ եփեսցի խմորեալ. մա՛սն ետու զայն նոցա ՚ի պտղոցն Տեառն. սրբութիւնք սրբութեանց են։ Որպէս վասն մեղացն իցէ, նոյնպէս և վասն յանցանացն. ¹⁸ամենայն արու քահանայիցն կերիցեն զայն. օրէն յաւիտենական յազգս ձեր ՚ի պտղոցն Տեառն. ամենայն որ մերձեսցի ՚ի նոսա՝ սրբեսցի*։

ԺԳ ¹⁹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁰Այս է պատարագ Ահարոնի և որդւոցն նորա՝ զոր մատուցանիցեն Տեառն յաւուր յորում օժանիցես զնա։ Զտասանորդ գրուի միոյ նաշիւոյ զո՛հ հանապազորդ. զկէս նորա՝ այգո՛ւն, և

* Այլք. Արհամարհիցէ զպատուիրանս։

* Այլք. Եւ հանցէ ՚ի սեղանոյն՝ զոր։

* Այլք. Կերիցեն զնա.. ՚ի պտղոյ անտի Տեառն։

զկէս նորա երկունն՝²¹ ի տապակի իւղով զանգեալ գործեսցի: Եւ մատուցէ զայն մաքրեալ զո՛հ ՚ի պատառոյ. զո՛հ ՚ի հոտ անուշից Տեառն: ²²Քահանայն օծեալ՝ փոխանակ նորա յորդուց իւրոց առցէ՛ զայն, օրէն՝ յաւիտենական Տեառն ամենկին կատարեսցի՝: ²³Եւ ամենայն զոհք քահանային ողջակէ՛զ լինիցի, և մի՛ ուտիցի:

ԺԴ ²⁴Խօսեցաւ Տէր ընդ Սովսիսի՝ և ասէ. ²⁵Խօսեա՛ց ընդ Ահարոն և ընդ որդիս նորա՝ և ասացես. Այս օրէն իցէ վասն մեղացայոյն. ՚ի տեղուջ ուր սպանանիցեն զողջակէզն, սպանանիցեն և զվասն մեղացն առաջի Տեառն. սրբութիւն սրբութեանց է՝: ²⁶Քահանայն որ մատուցանիցէ զայն, կերիցէ. ՚ի սուրբ տեղուջ կերիցէ, ՚ի սրահի խորանին վկայութեան: ²⁷Ամենայն որ մերծենայցէ ՚ի միս նորա՝ սրբեսցի՛. և յոյր ձորձոց վերայ սրսկեսցի ՚ի նման՝ արիւն՝ լուսացի՛ ՚ի սուրբ տեղուջ՝: ²⁸Եւ յանօթ կաւեղէն յորում եփեսցի, փշրեսցի՛. և եթէ ՚ի պղնձի անօթ եփեսցի՛, քերեսցէ՛ զնա՝ և ջրով ողողեսցէ: ²⁹Ամենայն արու քահանայիցն կերիցէ՛ զայն. սրբութիւն սրբութեանց է Տեառն: ³⁰Եւ յամենայն վասն մեղաց յորոց մտանիցէ յարեցն նոցա ՚ի խորանն վկայութեան քաւե՛լ ՚ի սրբութիւնսն՝ մի՛ կերիցի, այլ հրով՛ ալրեսցի:

7

Գլուխ Է

¹Եւ այս օրէն իցէ խոյին՝ որ վասն յանցանացն իցէ. զի սրբութիւն սրբութեանց է՝: ²Ի տեղուջ ուր սպանանիցեն զողջակէզսն, սպանցեն և զխոյն յանցանաց առաջի Տեառն. և զարիւնն հեղցէ՛ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց շուրջանակի՝: ³Եւ զամենայն ճարպ նորա առցէ, և զմկանն. և զճարպ թաղանթ քաղորթին. և զամենայն ճարպ փորոտւոյն՝. ⁴և զերիկամունսն զերկոսին. և զճարպն որ ՚ի վերայ նոցա առ մսանամբքն. և զլէրդաբոյթն երիկամամբքն հանդերձ կորզեսցէ՛: ⁵Եւ հանցէ զայն քահանայն ՚ի սեղանն պտուղ Տեառն՝ զի վասն յանցանաց է: ⁶Ամենայն արու քահանայիցն կերիցեն զայն. ՚ի սուրբ տեղուջ կերիցեն զայն, քանզի սրբութիւն սրբութեանց է՝: ⁷Որպէս զվասն մեղացն՝ նոյնպէս զվասն յանցանացն. օրէն՝ մի և նոյն կացցէ նոցա. և քահանայն որ քաւիցէ նովաւ՝ նմա՛ լիցի՝:

ԺԵ ⁸Եւ քահանայն՝ որ մատուցանիցէ զողջակէզս ինչ մարդոյ, մորթ ողջակիզին զոր մատուցանիցէ՝ նմա՛ լիցի՝: ⁹Եւ ամենայն զոհ որ գործիցի ՚ի թոնրի. և ամենայն որ գործիցի ՚ի կասկարայս՝ կամ ՚ի տապակի, քահանային՝ որ մատուցանիցէ զայն՝ եղիցի: ¹⁰Եւ ամենայն զոհ զանգեալ իւղով՝ և որ չիցէ

* Այլք. Եւ զկէս նորա երեկունն:

* Այլք. Յորդուց իւրոց արասցէ զայն:

* Այլք. Խօսեաց ընդ Ահարոնի և: *՚ի լուս՝*. Վասն մեղուցելոյն: ՚ի տեղուջ. *համաձայն սակաւուց ՚ի բնար՝*: Այլք. Սպանցեն և զվասն մեղացն:

* Ոմանք. Եւ յոյր ձորձոյ վերայ.. լուսացէ՛ ՚ի սուրբ տեղուջ: Եւ անօթ կաւեղէն:

* Այլք. Օրէն է խոյին:

* Այլք. Սեղանոյն շուրջանակի:

* Ոմանք. Եւ զմկանն, և զամենայն զճարպ:

* Յօրինակին պակասէր. Կերիցեն զայն. *՚ի սուրբ տեղուջ կերիցեն զայն*. քանզի:

* Այլք. Նոյնպէս և զվասն յանցանացն:

* Այլք. Նմա եղիցի: Եւ ամենայն զոհ:

զանգեալ, ամենեցուն որդւոցն Ահարոնի իւրաքանչիւր ումեք եղիցի հասարակաց*։ ¹¹Այս օրէն է զոհիցն փրկութեան՝ զոր մատուցանիցեն Տեառն։ ¹²Իսկ եթէ վասն զոհութեան մատուցանիցէ զայն. մատուցէ՛ վասն զոհի զոհութեանն պանս բաղարջս՝ ՚ի նաշիւոյ զանգեալ իւղով, և քաքարս բաղարջս օծեալ իւղով, և նաշիի զանգեալ իւղով. շօթիւք բաղարջ ¹³հացիւ մատուցէ՛ զպատարագն իւր, ՚ի վերայ զոհին զոհութեան և փրկութեան. և մատուցէ մի՛ ինչ յամենայն պատարագաց իւրոց նուէր Տեառն. ¹⁴և այն քահանային որ հեղուցու զարիւնն՝ փրկութեան եղիցի։ Եւ մի՛ս զոհին զոհութեան փրկութեան՝ նորին լինիցի*։ ¹⁵յորում աւուր պատարագիցի՝ կերիցի. և մի՛ թողուցուն ՚ի նմանէ յայգ։

ԺԶ ¹⁶Եւ եթէ կամա՛ւ որ ուխտս մատուցանիցէ Տեառն զպատարագն իւր. յաւուր յորում մատուցանիցէ զոհն՝ կերիցի, և ՚ի վաղիւն. և մնացեալն ՚ի մսոյ զոհին* ¹⁷մինչև յօրն երրորդ՝ հրով այրեսցի։ ¹⁸Ապա թէ ուտելով ուտիցի ՚ի մսոյ զոհին փրկութեան իւրոյ յաւուրն երրորդի. մի՛ լինիցի ընդունելի մատուցանելեացն, և մի՛ համարեսցի նմա այն. քանզի ապախտ և պղծութիւն է. և անձն՝ որ կերիցէ ՚ի նմանէ, մեղս առնիցէ*։ ¹⁹Եւ միս՝ որ մերձեսցի յամենայն պղծութիւնս, մի՛ կերիցի, այլ հրով այրեսցի. ամենայն սո՛ւրբ կերիցէ զմիսն։

ԺԷ ²⁰Եւ անձն՝ որ կերիցէ ՚ի զոհէ փրկութեանն որ իցէ Տեառն. և պղծութիւն նորա ՚ի նմա՝ իցէ, կորիցէ՛ անձն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ։ ²¹Եւ անձն՝ որ մերձեսցի յամենայն իրս պղծութեան. ՚ի պղծութիւնս մարդոյ՝ կամ յանասնոց պղծոց, կամ յամենայն զարշելի՛ պղծոց, և կերիցէ ՚ի մսոյ զոհին փրկութեան որ իցէ Տեառն, կորիցէ անձնն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ*։

ԺԸ ²²Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²³Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի և ասասցես. Չամենայն ճարպ զարջառոյ և զղչխարի և զայծեաց մի՛ ուտիցէք։ ²⁴Եւ ճարպ մեռելոտոյ և զազանաբեկաց՝ լինիցի յամենայն զործ. բայց ՚ի կերակուր՝ մի՛ ուտիցի*։ ²⁵Եւ ամենայն որ ուտիցէ ՚ի ճարպոյ անասնոց. զոր մատուցանիցէք պտուղ Տեառն, կորիցէ՛ անձն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ։

ԺԹ ²⁶Չամենայն արիւն մի ուտիցէք յամենայն բնակութիւնս ձեր, ՚ի թռչնոց և յամենայն անասնոց։ ²⁷Ամենայն անձն որ կերիցէ արիւն՝ կորիցէ՛ ՚ի ժողովրդենէ իւրմէ։

Ի ²⁸Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁹Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Որ մատուցանիցէ զոհ փրկութեան Տեառն. ածցէ՛ զպատարագն իւր Տեառն ՚ի զոհէ փրկութեան իւրոյ։ ³⁰Չե՛ռք նորա մատուցեն պտուղ Տեառն. զճարպ երթոյն, և զլերդաբոյթն երիկամամբքն հանդերձ մատուցէ զնել առաջի Տեառն*։ ³¹և հանցէ՛ զայն քահանայն ՚ի սեղանն։ Եւ եղիցի երբուն Սահարոնի և որդւոց նորա. ³²և զերին զաջոյ՝ տայցէք հա՛ս քահանային ՚ի զոհից փրկութեան ձերոյ։ ³³Որ մատուցանիցէ զարիւնն փրկութեան և զճարպն առ ՚ի յորդւոցն Սահարոնի, նորա՛ լիցի երին աջոյ ՚ի մասն։ ³⁴Չի զերբուն վերադրաց և

* Այլք. Որդւոցն Իսրայէլի իւրաքանչիւր... հասարակ։ (11) Այս օրէն։

* Այլք. Փրկութեան լինիցի։

* Այլք. Մատուցանիցէ զզոհն՝ կերիցի. և ՚ի վաղիւ անդր մնացեալն ՚ի մսոյ։ *Ոսկան.* Մնացեալն ուտիցի ՚ի մսոյ։

* *Ոսկան.* Ապա թէ որ.. ուտիցէ։ Այլք. ՚ի նմանէ, մեղս առցէ։

* Այլք. Յամենայն զարշելիս պիղծս։

* *Ոմանք.* Մեռելոտոց... ՚ի կերակուր մի՛ ուտիցէք։

* Այլք. Եւ զլերդաբոյթն մատուցէ։

զերին նուիրաց՝ առի՛ ես յորդուցն Իսրայէլի՝ ՚ի զոհիցն փրկութեան ձերոյ. և ետու զայն Ահարոնի քահանայի և որդուց նորա. օրէն յաւիտենական յորդուցն Իսրայէլի:

ԻԱ ³⁵Այս օծումն է Ահարոնի և որդուց նորա ՚ի պտղոցն Տեառն. յաւուր յորում մատուցանէր զնոսա Տեառն. որպէս պատուիրեաց Տէր տա՛լ նոցա*, ³⁶յաւուր յորում օծ զնոսա յորդուցն Իսրայէլի. օրէն յաւիտենական յազգս նոցա: ³⁷Այս օրէն է ողջակիզացն, և զոհից, և վասն մեղացն, և վասն յանցանաց, և վասն կատարմանն, և զոհին փրկութեան: ³⁸Որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի՝ ՚ի լէրինն Սինայ. յաւուր յորում պատուիրեաց Տէր որդուցն Իսրայէլի, մատուցանել զպատարագս իւրեանց առաջի Տեառն յանապատին Սինայ:

8

Գլուխ Ը

ԻԲ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ*. ²Ա՛ռ զԱհարոն և զորդիս նորա, և զպատմուճանս նոցա և զելոն օծութեան. և զզուարակն զվասն մեղաց, և զխոյսն զերկոսին, և զխանն բաղարջաց. ³և զամենայն ժողովուրդն եկեղեցացուցես՝ ՚ի դուռն խորանին վկայութեան: ⁴Եւ արար Մովսէս՝ որպէս հրամայեաց նմա Տէր. և եկեղեցացոյց զժողովուրդն ՚ի խորանն վկայութեան:

ԻԳ ⁵Եւ ասէ Մովսէս զժողովուրդն. Այս բան է զոր պատուիրեաց Տէր առնել: ⁶Եւ մատոյց Մովսէս զԱհարոն և զորդիս նորա. և լուաց զնոսա ջրով. ⁷և զզեցոյց Ահարոնի զպատմուճանն, և ած ընդ մէջ նորա զկամարն, և արկ զնովաւ զվտաւակսն, և եդ՝ ՚ի վերայ նորա զվակասն. ⁸և խառնեաց ՚ի նմա ըստ գործուածոյ վակասին. և պնդեաց զնա ՚ի նմա. և եդ՝ ՚ի վերայ նորա զտախտակն, և եդ՝ ՚ի վերայ տախտակին զՅանդիմանութիւնն և զճշմարտութիւն: ⁹Եւ եդ՝ ՚ի վերայ զլխոյ նորա զխոյրն. և եդ՝ ՚ի վերայ խուրին յերեսաց կողմանէ զթիթեղնն ոսկի զնուիրեալն և զսուրբ. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: ¹⁰Եւ առեալ Մովսիսի յիւղոյն օծութեան՝ ցանեաց՝ ՚ի վերայ սեղանոյն եւթն անգամ*. ¹¹և օծ զսեղանն, և սրբեաց զնա, և զամենայն սպաս նորա: Եւ զաւազանն և զխարիսխս նորա. և սրբեաց զնոսա. և օծ զխորանն և զամենայն ինչ որ ՚ի նմա, և սրբեաց զնա*: ¹²Եւ արկ Մովսէս յիւղոյն օծութեան ՚ի գլուխն Ահարոնի և օծ զնա, և սրբեաց զնա: ¹³Եւ մատոյց Մովսէս զորդիսն Ահարոնի և զզեցոյց նոցա զպատմուճանսն. և ած ընդ մէջ նոցա զկամարսն, և եդ՝ նոցա զխոյրսն. որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի: ¹⁴Եւ մատոյց Մովսէս զզուարակն զվասն մեղացն. և եդին Ահարոն և որդիք նորա զձեռս իւրեանց ՚ի վերայ զլխոյ զուարակին մեղաց և սպան զնա. ¹⁵և ա՛ռ Մովսէս յարեմէ անտի, և եդ՝ ՚ի վերայ եղջերաց սեղանոյն շուրջանակի մատամբ իւրով. և սրբեաց զսեղանն. և զարիւնն եհեղ առ յատակաւ սեղանոյն: ¹⁶Եւ սրբեաց զնա առնել քաւութիւն ՚ի վերայ նորա. և ա՛ռ զամենայն զճարպ փորոտւոյն, և զլէրդարոյթն և զերկոսին զերիկամունսն, և զամենայն ճարպն որ ՚ի վերայ նոցա, և եհան

* Այլք. ՚ի պտղոց անտի Տեառն... զնոսա որպէս և պատ՛:

* Յօրինակին պակասէր. Տէր ընդ Մովսիսի:

* Այլք. Ցանեաց ՚ի վերայ սեղանոյն:

* Յօրինակին. Եւ սրբեաց զնա և օծ. այլ ՚ի լուս՛. ուղղագրեալ դնի՝ զնոսա, համաձայն այլոց ՚ի բնաբ՛:

Մովսէս ՚ի սեղանն: ¹⁷Եւ զգուարակն՝ և զկաշի նորա, և զմիսն և զապաւառն այրեաց հրով արտաքոյ բանակին. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի*: ¹⁸Եւ մատոյց Մովսէս զխոյն որ յողջակէզ. և եղին Ահարոն և որդիք նորա զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ խոյին. ¹⁹և սպան Մովսէս զխոյն. և եհեղ զարիւնն շուրջ զսեղանովն. ²⁰և զխոյն յօշեաց անդամ անդամ. և ա՛ռ Մովսէս զգլուխն և զանդամաթիւն, և զճարպն և զքաղիթն և զոտսն, ²¹և լուաց ջրով: Եւ եհան Մովսէս զխոյն ողջոյն ՚ի սեղանն՝ ողջակէզ ՚ի հոտ անուշից Տեառն, քանզի պտուղ Տեառն է. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի*: ²²Եւ մատոյց Մովսէս զխոյն երկրորդ՝ զխոյն կատարման, և եղին Ահարոն և որդիք նորա զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ խոյին. ²³և սպանին զնա: Եւ ա՛ռ Մովսէս յարենէ նորա, և եղ ՚ի վերայ բլթակի աջոյ ունկանն Ահարոնի, և ՚ի վերայ ծայրի աջոյ ձեռին նորա, և ՚ի վերայ ծայրի աջոյ ոտին նորա: ²⁴Եւ մատոյց Մովսէս զորդիսն Ահարոնի. և եղ Մովսէս յարենէ անտի ՚ի վերայ բլթակաց աջուց ականջաց նոցա, և ՚ի վերայ ծայրից աջուց ձեռաց նոցա, և ՚ի վերայ ծայրից աջուց ոտից նոցա. և եհեղ Մովսէս զարիւնն շուրջ զսեղանովն*: ²⁵Եւ ա՛ռ զճարպն և զմկանն. և զճարպն որ ՚ի վերայ քաղթին, և զլերդաբոյթն, և զերիկամունսն զերկոսին. և զճարպն որ ՚ի վերայ նոցա, և զերին աջոյ*: ²⁶Եւ ՚ի խանէն կատարման որ կայր առաջի Տեառն, ա՛ռ պան մի բաղարջ, և պան մի յիւղոյ անտի, և եղ ՚ի վերայ ճարպոյն և ՚ի վերայ երւոյն աջոյ. ²⁷և եղ զամենայն ՚ի վերայ ձեռացն Ահարոնի, և ՚ի վերայ ձեռաց որդւոց նորա. և մատոյց զայն նուէր առաջի Տեառն: ²⁸Եւ ա՛ռ զայն Մովսէս ՚ի ձեռաց նոցա, և եհան ՚ի սեղանն յողջակէզ կատարման, որ է ՚ի հոտ անուշից պտուղ Տեառն. որպէս պատուիրեաց Տէր: ²⁹Եւ առեալ Մովսիսի զերբուժն՝ եհան նուէր առաջի Տեառն ՚ի խոյէ անտի կատարման. և եղև Մովսիսի ՚ի մասն, որպէս և պատուիրեաց Տէր Մովսիսի*: ³⁰Եւ առեալ Մովսիսի յիւղոյն օծութեան, և յարենէն որ ՚ի վերայ սեղանոյն՝ ցանեաց զԱհարոնի և զպատմուճանօք նորա, և զորդւովք նորա՝ և զպատմուճանօք նոցա. ³¹և սրբեաց զԱհարոն և զպատմուճանս նորա. և զորդիս նորա և զպատմուճանս որդւոց նորա ընդ նմա: Եւ ասէ Մովսէս ցԱհարոն և ցորդիս նորա. Եփեցէք զմիսդ ՚ի սրահի խորանին վկայութեան ՚ի սուրբ տեղւոջ, և ա՛նդ ուտիցէք զայն. և զպանսն որ ՚ի խանի կատարմանն իցեն. զոր օրինակ հրամայեաց ինձ Տէր՝ և ասէ. Ահարոն և որդիք նորա կերիցեն զայն*: ³²Եւ զնշխար հացի և մսոյ՝ հրով այրեսցիք: ³³Եւ ՚ի դրանէ խորանին վկայութեան մի՛ ելանիցէք զեւթն օր. մինչև յօրն լրման աւուրց կատարմանն ձերոյ. զի զեւթն օր լցցէ զձեռս ձեր. ³⁴որպէս և արարն յաւուրն յայնմիկ. որպէս պատուիրեաց Տէր առնել, առ ՚ի քաւելոյ վասն ձեր: ³⁵Եւ առ դրան խորանին վկայութեան նստիցիք զեւթն օր, զցայձ և զցերեկ. և պահեսցիք զպահպանութիւնս Տեառն զի մի՛ մեռանիցիք. զի այնպէս պատուիրեաց ինձ Տէր: ³⁶Եւ արար Ահարոն և որդիք նորա զամենայն զբանս՝ զոր պատուիրեաց Տէր Մովսիսի:

* *Բազումք.* Որպէս և հրամայ՝:

* *Այլք.* Ողջակէզ որ ՚ի հոտ անուշից. քանզի պտուղ:

* *Ի լուս՝.* Բլթակաց աջուց ականջաց նոցա:

* *Ի լուս՝.* Զճարպն և զմսանն:

* *Այլք.* Զերբուժն, և եհան:

* *Բազումք.* Կատարմանն իցէ, զոր օ՛:

Գլուխ Թ

Ի Դ¹ Եւ եղև յաւուրն ութերորդի. կոչեաց Մովսէս զԱհարոն և զորդիս նորա և զծերակոյտն Իսրայէլի. և ասէ Մովսէս ցԱհարոն*² Առ դու քեզ զուարակ մի յանդույ վասն մեղաց. և խոյ յողջակէզ անարատ. և մատո՛ զնոսա առաջի Տեառն: ³Եւ ընդ ծերակոյտ որդւոցն Իսրայէլի խօսեսցիս և ասասցես. Առէ՛ք դուք ձեզ նոխագ մի յայծեաց վասն մեղաց. և խոյ, և զուարակ, և գառն տարևոր, յողջակէզ անարատ*⁴ Եւ զուարակ և խոյ, յողջակէզ փրկութեան առաջի Տեառն. և զո՛հ նաշիի գանգեալ իւղով. զի այսօր երևեսցի Տէր ՚ի միջի ձերուն: ⁵Եւ առի՛ն որպէս և հրամայեաց Մովսէս առաջի խորանին վկայութեան. և մատեան ամենայն ժողովուրդքն, և կացին առաջի Տեառն: ⁶Եւ ասէ Մովսէս. Այս բան է՝ զոր ասաց Տէր առնել, և երևեսցին ՚ի ձեզ փառք Տեառն: ⁷Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Մատի՛ր առ սեղանն, և արա՛ զվասն մեղացն քո, և զողջակէզն քո. և քաւեա՛ վասն քո և տան քո: Եւ արա՛ զպատարագս ժողովրդեան քոյ, և քաւեա՛ վասն նոցա. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: ⁸Եւ մատեաւ Ահարոն առ սեղանն, և սպան զզուարակն զվասն մեղացն իւրոց: ⁹Եւ մատուցին որդիքն Ահարոնի զարիւնն առ նա. և եթաց զմատն իւր յարեանն. և ե՛ղ ՚ի վերայ եղջերաց սեղանոյն. և զարիւնն եհեղ առ յատակաւ սեղանոյն*¹⁰ և զճարպն և զերիկամունսն, և զլերդաբոյթն, զվասն մեղացայոյն եհան ՚ի սեղանն, որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի*¹¹ Եւ զմիսն և զկաշին այրեցին հրով արտաքոյ բանակին*¹² Եւ սպան զողջակէզն. և մատուցին որդիքն Ահարոնի զարիւնն առ նա. և եհեղ շուրջ զսեղանովն: ¹³Եւ զողջակէզն մատուցին առ նա անդամ անդամ, և զգլուխն. և եղ ՚ի վերայ սեղանոյն: ¹⁴Եւ լուաց զքաղիթքն և զոտսն ջրով, և եղ ՚ի վերայ ողջակիզին ՚ի սեղանն: ¹⁵Եւ մատուցին զպատարագ ժողովրդեանն. և ա՛ռ զնոխագն զվասն մեղաց ժողովրդեանն. և սպան զնա իբրև գառաջինն: ¹⁶Եւ մատոյց զողջակէզն, ¹⁷և արար զնա որպէս և օրէ՛ն էր. և մատոյց զզոհն, և ելից զձեռս ՚ի նմանէն, և ե՛ղ ՚ի վերայ սեղանոյն՝ ուրոյն յառաւօտին ողջակիզէն: ¹⁸Եւ սպան զզուարակն և զխոյն զոհի փրկութեան ժողովրդեանն. և մատուցին որդիքն Ահարոնի զարիւնն առ նա. և եհեղ զայն շուրջ զսեղանովն: ¹⁹Եւ զճարպն որ ՚ի զուարակէն և ՚ի խոյէն, և զմկանն. և զճարպ թաղանթ քաղիթին. և զերկոսին երիկամունսն ճարպովին, և զլերդաբոյթն և զերբուծն*²⁰ Եւ եղին զճարպն ՚ի վերայ երթօցն. և հանին զճարպն հանդերձ երթովքն. և եղին զճարպն ՚ի վերայ սեղանոյն: ²¹Եւ զերբուծսն և զերին աջոյ նուիրեաց նուէ՛ր առաջի Տեառն, որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: ²²Եւ ամբարձեալ Ահարոնի զձեռս իւր ՚ի վերայ ժողովրդեանն՝ և օրհնեաց զնոսա. և էջ արար զվասն մեղացն, և զողջակէզսն և զփրկութեանն: ²³Եւ մտին Մովսէս և Ահարոն ՚ի խորանն վկայութեան, և ելեալ անտի օրհնեցին զամենայն ժողովուրդն: Եւ երևեցան փառք Տեառն ամենայն ժողովրդեանն: ²⁴Եւ ել հուր ՚ի Տեառնէ, և եկեր զամենայն որ ինչ կայր ՚ի վերայ սեղանոյն.

* Ոսկան. Եւ եղև յաւուրն եօթներորդի:

* Այլք. Եւ ընդ ծերակոյտսն Իսրայէլի խօ՛ւ:

* Այլք. Չմատն յարեանն:

* Ոսկան. Չվասն մեղաց եհան ՚ի:

* Յօրհնակին պակասէր. Այրեցին հրով արտաքոյ բա՛:

* Այլք. Եւ զլերդաբոյթն: (20) Եւ եղին զճարպն:

գողջակեզն, և զճարպն. և ետես ամենայն ժողովուրդն, և զարհուրեցան անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց*:

10

Գլուխ Ժ

ԻԵ ¹Եւ առեալ երկուց որդւոցն Ահարոնի, Նաբադայ և Աբիուդայ զհւրաքանչիւր բուրուառ՝ եղին ՚ի նոսա հուր, և արկին խո՛ւնկս, և մատուցին առաջի Տեառն հուր օտար. զոր ո՛չ հրամայեաց նոցա Տէր*։ ²Եւ ե՛լ հուր ՚ի Տեառնէ և եկեր զնոսա. և մեռան առաջի Տեառն։ ³Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Այս է զոր ասաց Տէր. ասէ. ՚ի մերձաւորս իմ սրբեցայց, և առաջի ամենայն ժողովրդեան իմոյ փառաւորեցայց։ Եւ ստրջացաւ Ահարոն*։ ⁴Եւ կոչեաց Մովսէս զՄիսադայի և զԵ՛ղիսափան զորդիս Եզիելի, զորդիս հօրեղբօր Ահարոնի, և ասէ ցնոսա. Մատի՛ք և բարձէ՛ք զեղբարս ձեր, հանդերձ պատմուճանօքն իւրեանց յերեսաց սրբութեանցո՛ր արտաքոյ քան զբանակն*։ ⁵Մատեան և բարձին զնոսա՝ հանդերձ պատմուճանօքն իւրեանց արտաքոյ բանակին. զորօրինակ ասաց Մովսէս։ ⁶Եւ ասէ Մովսէս ցԱհարոն, և ցեղիագար, և ցԻթամար որդիսն նորա մնացեալս. Չզլուխս ձեր մի՛ ապախուրէք, և զհանդերձս ձեր մի՛ պատառէք, զի մի՛ մեռանիցիք. և ՚ի վերայ ժողովրդեանդ լինիցի բարկութիւն։ Բայց եղբարք ձեր և ամենայն տունդ Իսրայէլի՝ լացցեն զհրայրեացսն որ այրեցան ՚ի Տեառնէ։ ⁷Եւ ՚ի դրանէ խորանիդ վկայութեան մի՛ ելանիցէք, զի մի՛ մեռանիցիք. զի եւլն օծութեան որ ՚ի Տեառնէ՝ ՚ի վերայ ձեր է։ Եւ արարին ըստ բանին Մովսիսի։

ԻԶ ⁸Խօսուեցաւ Տէր ընդ Ահարոնի՝ և ասէ. ⁹Գինի՝ և ցքի՝ մի՛ ըմպիցէք դու և որդիք քո ընդ քեզ՝ յորժամ մտանիցէք ՚ի խորանն վկայութեան, կամ յորժամ մերձենայցէք ՚ի սեղանն. զի մի՛ մեռանիցիք. օրէն յաւիտենական յազգս ձեր. ¹⁰զատե՛լ ՚ի մէջ սրբոց և պղծոց, և ՚ի մէջ պարկեշտից՝ և անպարկեշտից*։ ¹¹Եւ իմացուցանել Իսրայէլի զամենայն զօրէնս՝ զոր խօսեցաւ Տէր ընդ նոսա ՚ի ձեռն Մովսիսի։

ԻԷ ¹²Եւ ասէ Մովսէս ցԱհարոն, և ցեղիագար և ցԻթամար ցորդիս նորա ցմնացեալս. Առէ՛ք զզոհն մնացեալ ՚ի պտղոց անտի Տեառն, և կերայք բաղարջ առաջի սեղանոյն. զի սրբութիւն սրբութեանց է*։ ¹³Եւ կերիջիք զայն ՚ի սուրբ տեղւոջ. զի օրէն քեզ լինիցի այն, և օրէն որդւոց քոց ՚ի պտղոցն Տեառն. զի այնպէս հրամայեալ է ինձ Տեառն*։ ¹⁴Եւ զերբուժ նուիրին, և զերի հասին կերիջիք ՚ի սուրբ տեղւոջ դու՝ և որդիք քո և տուն քո ընդ քեզ. զի օրէն քեզ է այն, և օրէն որդւոց քոց տուաւ՝ ՚ի զոհից փրկութեան որդւոցն Իսրայէլի*։ ¹⁵Չերին հասի՝ և զերբուժ նուիրի ՚ի վերայ ընծայից ճարպոյն, մատուցեն նուեր

* Այլք. Եւ եկեր որ ինչ կայր... և զարհուրեցաւ, և անկան։ *Յօրինակին*. հուրն կարմրադեղով նշանակի։

* *Յօրինակին*. Նաբաթայ և Աբիութայ։ *Ուր* և՛ հուր օտար կարմրով է. որպէս և ՚ի յաջորդ համարին՝ հուր, և *յես այնորիկ բանն*՝ ՚ի մերձաւորս իմ սրբեցայց։

* Այլք. Ամենայն ժողովրդեանն փառաւորեցայց։

* *Ի լուս*՝ Չմիսադայի։ Այլք. Որդիս Ոզիելի։

* Այլք. Չատանել ՚ի մէջ սրբոց։

* *Յօրինակին*. Յորդիս նոցա զմնացեալս։

* Այլք. ՚ի պտղոց անտի, զի որպէս հրամայեալ է ինձ Տեառն։ Չերբուժ զնուի՛։

* *Յօրինակին պակասէր*. Եւ որդիք քո և տուն քո ընդ քեզ։

նուիրել առաջի Տեառն. և եղիցի քե՛զ և որդւոց քոց և դստերաց քոց ընդ քեզ՝
օրէն յաւիտենական. զորօրինակ հրամայեաց Տէր Մովսիսի*։ ¹⁶Եւ գնոխազն
զվասն մեղաց խնդրելով խնդրեաց Մովսէս. և այն՝ էր այրեցեալ։ Եւ բարկացաւ
Մովսէս եղիագարու և Իթամարայ որդւոցն Ահարոնի մնացելոց՝ ¹⁷և ասէ. Ընդէ՞ր
ո՛չ կերայք զայն՝ ՚ի սուրբ տեղւոջ. զի սրբութիւն սրբութեանց է. և զայն ետ ձեզ
ուտել. զի բառնայցէք զմեղս ժողովրդեանն. և առնիցէք քաւութիւն վասն նոցա
առաջի Տեառն*։ ¹⁸Քանզի ո՛չ եմուտ յարենէ նորա՝ ՚ի սրբութիւնն յանդիման
երեսացն ՚ի ներքս։ Արդ՝ կերայք զնա՝ ՚ի սուրբ տեղւոջ՝ զորօրինակ հրամայեցաւ
ինձ։ ¹⁹Խօսեցաւ Ահարոն ընդ Մովսիսի՝ և ասէ. Չի թէ այսօր մատուցին զվասն
մեղացն իւրեանց պատարագ, և զողջակէզս իւրեանց առաջի Տեառն. և
այսպիսի անցք անցին ընդ իս, և ուտիցե՞մ այսօր զվասն մեղացն, գուցէ
չլինիցի՝ հաճոյ առաջի Տեառն*։ ²⁰Եւ լուաւ Մովսէս՝ և հաճոյ թուեցաւ նմա։

11

Գլուխ ԺԱ

Ի՞նչ ¹խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²Խօսեցարու՛ք ընդ
որդիսդ Իսրայէլի՝ և ասացէ՛ք. Այս անասունք են զոր ուտիցէք յամենայն
անասնոց որ են ՚ի վերայ երկրի։ ³Չամենայն անասուն թաթափերձ և
կճղակաւոր, որոյ յերկուս բաժանեալ իցեն թաթքն և որոճիցէ, յանասնոց՝ զայն
կերիցիք։ ⁴Բայց յայնցանէ մի՛ ուտիցէք, որք որոճիցեն և կճղակափերձ ո՛չ իցեն։
Ուղտ զի որոճայ և թաթն ո՛չ բաժանի, պի՛ղծ իցէ նա ձեզ*։ ⁵Եւ նապաստակ զի
որոճայ և թաթն ո՛չ բաժանի՝ պի՛ղծ իցէ նա ձեզ։ ⁶Եւ ճագար զի որոճայ և թաթն
ո՛չ բաժանի՝ պի՛ղծ իցէ նա ձեզ։ ⁷Եւ խոզ՝ զի թաթափերձ է՝ և կճղակս ունի՝ և
որոճայ ո՛չ, պի՛ղծ իցէ նա ձեզ*։ ⁸Ի մսոյ նոցա մի՛ ուտիցէք, և ՚ի գէշ նոցա մի՛
մերձենայցէք. քանզի պի՛ղծ իցէ ձեզ այն։

Ի՞նչ ⁹Եւ այս է զոր ուտիցէք՝ յամենայնէ որ ՚ի ջուրս իցեն։ Ամենայնի որոյ իցեն
թևք և թեփ՝ ՚ի ջուրս և ՚ի ծովս և ՚ի վտակս, զայնս ուտիցէք*։ ¹⁰Եւ ամենայնի որոյ
ո՛չ իցեն թևք և թեփ՝ ՚ի ջուրս և ՚ի ծովս և ՚ի վտակս, մի՛ ուտիցէք, յամենայնէ զոր
ջուրքն բղխիցեն, և յամենայն շնչոյ կենդանւոյ որ ՚ի ջուրս. քանզի պի՛ղծ է այն,
պի՛ղծ լինիցի ձեզ*։ ¹¹Ի մսոց նոցա մի՛ ուտիցէք, և ՚ի մեռելոց նոցա գարշեսփիք։
¹²Չի ամենայնի որոց ո՛չ իցեն թևք և թեփ՝ որ ՚ի ջուրս իցեն, պի՛ղծ իցէ ձեզ այն։

Լ ¹³Եւ այս իցեն ՚ի թռչնոց՝ յորոց գարշիցիք, և ո՛չ ուտիցի՝ այլ պի՛ղծ իցէ ձեզ։
Արծուի, և պասկուճ, և գետարծուի, ¹⁴և անգղ, և ցին, և որ ինչ նման իցէ նոցա,
¹⁵և ագռաւ, և որ ինչ նման իցէ նմա, ¹⁶և ջայլեամն, և բու, և որոր, և որ ինչ նման
իցէ նոցա*, ¹⁷և բազէ, և որ ինչ նման իցէ նմա. և հաւապատիր, և հողամաղ*, ¹⁸և

* Այլք. ՚ի վերայ ընծայիցն ճարպոց։

* Ի լուս՝. Ոչ կերայք զվասն մեղացն ՚ի սուրբ տեղւոջ. համաձայն այլոց ՚ի բնար՝։ Այլք.
Եւ զայն ետու ձեզ։

* Այլք. Չվասն մեղացն իւրեանց, և զողջակէզս իւրեանց։

* Այլք. Չի որոճայ և կճղակն ո՛չ բաժա՛ն։

* Ոմանք. Եւ խոզ.. և ո՛չ որոճայ։

* Այլք. Եւ ՚ի ծովս և ՚ի վտակի։

* Այլք. Եւ յամենայնէ շնչոյ կենդանի։

* Ոմանք. Եւ ջայլամն, և բու։

* Ոսկան. Եւ հաւապատիր։

քաջահաւ, և սոխակ, և հաւալուսն, և կարափ*, ¹⁹և արագիլ, և քարարդ, և որ ինչ նման իցէ նոցա. և յոպոպ, և չիղջ*:

ԼԱ ²⁰Եւ ամենայն զեռուն թռչուն՝ որ գնայցէ ՚ի չորս, պիղծ լիցի ձեզ*: ²¹Այլ զայն ուտիցէք ՚ի զեռնոց թռչնոց որ գնայցեն ՚ի չորս. որոյ իցեն կարթք ՚ի վերոյ քան զոտսն. ոստոստել նոքօք յերկր: ²²Եւ այս իցեն զոր ուտիցէք ՚ի նոցանէ զջորեակդ, և որ ինչ նման է նմա. և զխարագուլ, և որ ինչ նման է նմա. և զմարախ, և որ ինչ նման է նմա. և զօձամարտ, և որ ինչ նման իցէ նմա*:

ԼԲ ²³Ամենայն զեռուն թռչնոց, որ իցեն չորք ոտք, պիղծ իցէ ձեզ, մի՛ նոքօք պղծիցիք*. ²⁴Ամենայն որ մերձենայցէ ՚ի մեռեալ նոցա՝ պիղծ լինիցի մինչև ցերեկոյ: ²⁵Եւ ամենայն որ բառնայցէ զմեռեալ նոցա՝ լուսացէ՛ զձորձս իւր, և պիղծ լիցի մինչև ցերեկոյ: ²⁶Յամենայն անասնոց որ կճղակահերձ իցէ և մագիլս սփռիցէ, և որոճիցէ ոչ՝ պիղծ լիցի ձեզ այն ամենայն. և որ մերձեսցի ՚ի մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մինչև ցերեկոյ*: ²⁷Եւ ամենայն որ գնայցէ ՚ի ձեռս իւր, յամենայն զազանաց որ գնայցէ ՚ի չորս, պիղծ լիցի ձեզ այն. ամենայն որ մերձեսցի ՚ի մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մինչև ցերեկոյ: ²⁸Եւ որ բառնայցէ ՚ի մեռելոյ նոցա, լուսացէ՛ զձորձս իւր, և պիղծ լիցի մինչև ցերեկոյ. զի այն ամենայն պիղծ իցէ ձեզ: ²⁹Եւ այս իցէ ձեզ պիղծ յամենայն սողնոց՝ որ սողին ՚ի վերայ երկրի. աքիս, և մուկն, և տիտեռն, յոստին*, ³⁰և մկնաքիս, և գետնառնծ, և կովադիաց, և մողէզ, և խլուրդ*: ³¹Այս ամենայն պիղծ իցէ ձեզ յամենայն սողնոց որ սողին ՚ի վերայ երկրի. ամենայն որ մերձեսցի ՚ի մեռեալ նոցա՝ պիղծ լիցի ձեզ մինչև ցերեկոյ*: ³²Եւ յամենայնի յորոյ վերայ անկանիցի ՚ի մեռելոյ նոցա՝ պիղծ լիցի:

ԼԳ Յամենայն փայտեղէն անօթոյ, կամ ՚ի հանդերձէ, կամ ՚ի մաշկէ, կամ ՚ի քրձէ. ամենայն անօթ յորում զործ ինչ զործիցի ՚ի նմա, ՚ի ջուր թացցի՝ և պիղծ լիցի մինչև ցերեկոյ, և ապա սուրբ լիցի*: ³³Եւ ամենայն անօթ խեցեղէն, յոր անկանիցի ինչ ՚ի նոցանէն. և որ ինչ ՚ի ներքս կայցէ, պիղծ լիցի, և զայն բեկանիցիք:

ԼԴ ³⁴Եւ ամենայն կերակուր որ ուտիցի, և անկանի ՚ի վերայ նորա ՚ի ջրոյ անտի՝ պիղծ լիցի. և ամենայն ըմպելի որ ըմպիցի յամենայն ամանի՝ պիղծ լիցի*: ³⁵Եւ յամենայն յոր ինչ անկանիցի ՚ի մեռելոյ նոցա՝ պիղծ լիցի: Եւ թոնիրք և կասկարայք՝ քակեսցին. քանզի պղծեալ են, և պիղծք իցեն ձեզ:

ԼԵ ³⁶Բաց յաղբերաց ջրոց, և ՚ի ջրհորոց, և ՚ի ջրակուտաց. որ սուրբ լինիցին ձեզ: Եւ ամենայն որ մերձենայցէ ՚ի պղծութիւնս շնչոյ մեռելոյ նոցա, պիղծ լիցի*: ³⁷Իսկ եթէ անկանիցի ինչ ՚ի մեռելոյ նոցա ՚ի վերայ ամենայն սերման

* Այլք. Եւ կարապ:

* Ոմանք. Եւ քարարդ... և չեղջ:

* Այլք. Եւ ամենայն զեռուն թռչնոց... պիղծ եղիցի ձեզ:

* Այլք. Եւ այս իցէ զոր ուտիցէք: Ոմանք. Եւ զխարագուլս, և որ ինչ:

* Ոմանք. Որոյ: Իսկ ոմանք. որոց իցեն չորք ոտք:

* Ոմանք. Եւ մագիլս սփռիցի:

* Այլք. Որ սողիցին ՚ի վերայ:

* Այլք. Կովադիայ և մողէզ, և:

* Այլք. Այն ամենայն պիղծ իցէ ձեզ.. որ սողիցին.. պիղծ լիցի մինչև ցե՛:

* Այլք. Կամ ՚ի հանդերձոյ: Յօրինակին. Գործիցի նմա, ՚ի ջուր:

* Ոմանք. Եւ անկանիցի ՚ի վերայ:

* Բազումք. Բայց յաղբերաց:

սերմանելոյ, որ սերմանիցի. սո՛ւրբ լիցի: ³⁸Ապա թէ հեղուցու ջուր 'ի վերայ ամենայն սերման, և անկանիցի ինչ անդր 'ի մեռելոց նոցա, անսո՛ւրբ լիցի ձեզ*:

ԼԶ ³⁹Եւ եթէ մեռանիցի ինչ յանասնոց որ ձեզ ուտելի են, որ մերձենայցէ 'ի մեռեալ նոցա՝ պի՛ղծ լիցի մինչև ցերեկոյ*:⁴⁰Եւ որ բառնայցէ 'ի մեռելոյ նոցա՝ լուսացէ՛ զձորձս իւր, և պի՛ղծ լիցի մինչև ցերեկոյ*:⁴¹Եւ ամենայն սողուն որ սողի 'ի վերայ երկրի, պի՛ղծ լիցի ձեզ, և մի՛ կերիցի: Ամենայն որ սողի 'ի վերայ որովայնի իւրոյ.⁴² և ամենայն որ գնայցէ 'ի չորս, մինչև ցամենայն բազմոտանիս, յամենայն զեռնոց՝ որ զեռայցեն 'ի վերայ երկրի, մի՛ ուտիցէք. զի պի՛ղծ է այն ձեզ:⁴³Եւ մի՛ գարշեցուցանիցէք զանձինս ձեր ամենայն սողնովք, որ սողիցին 'ի վերայ երկրի. և մի՛ պղծիցիք նոքօք, և մի՛ լինիցիք անսուրբ նոքօք:

ԼԷ ⁴⁴Եւ եմ Տէր Աստուած ձեր. և սրբիջի՛ք՝ և սո՛ւրբք լինիջիք. զի Սուրբ եմ ես Տէր Աստուած ձեր. և մի՛ պղծիցէք զանձինս ձեր ամենայն զեռնովք՝ որ շարժիցին 'ի վերայ երկրի:⁴⁵Ձի եւս եմ Տէր Աստուած, որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացուց լինել ձեզ Աստուած, և եղիջիք սո՛ւրբք՝ զի ես սուրբ եմ*:⁴⁶Այս օրէն լինիցի վասն անասնոց՝ և թռչնոց և ամենայն շնչոյ որ շրջիցի 'ի ջուրս, և ամենայն շնչոյ որ շրջիցի 'ի վերայ երկրի:⁴⁷Որոշել 'ի մէջ սրբոյն և 'ի մէջ անսրբոյն. և խելամո՛ւտ առնել զորդիսդ Իսրայէլի 'ի մէջ ուտելեացն կենդանածնաց. և 'ի մէջ չուտելեացն անասնոց*:

12

Գլուխ ԺԲ

ԼԸ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասացես ցնոսա. Կի՛ն ոք՝ եթէ սերմ առցէ և ծնանիցի արու. պի՛ղծ լիցի զելթն օր, ըստ աւուրց զատանելոյ դաշտանին իւրոյ պի՛ղծ լիցի:³Եւ յաւուրն ութերորդի թլփատեսցէ՛ զմարմին անթլփատութեան նորա:⁴Եւ զերեսուն և զերիս աւուրս նստցի՛ 'ի սրբութեան արեան իւրոյ: Յամենայն ինչ սուրբ՝ նա մի՛ մերձենայցէ. և 'ի սրբութիւնն մի՛ մտցէ. մինչև լցցին աւուրք սրբութեան նորա*:⁵Ապա թէ է՛գ ծնանիցի՝ պի՛ղծ լիցի զելթն օր ըստ դաշտանին. և զվաթսուն և զվեց օր նստցի՛ 'ի սուրբ արեանն իւրում*:⁶Եւ յորժամ լնուցուն աւուրք սրբութեան նորա 'ի վերայ ուստերն՝ կամ դստերն, աճցէ՛ գառն տարևոր յողջակէզս, և զոյզս աղաւնւոյ կամ տատրակի վասն մեղաց 'ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն.⁷ և մատուցէ՛ առաջի Տեառն. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն, և սրբեսցէ՛ զնա յաղբերէ արեան նորա: Այս օրէն իցէ այնորիկ՝ որ ծնանիցին արու կամ է՛գ*:⁸Ապա թէ ո՛չ գտանիցէ ձեռն նորա բաւական լինել զառամբ՝ առցէ՛ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղաւնեաց, զմին

* Այլք. Անդր 'ի մեռելոյ նոցա:

* Բազումք. Որ ձեր ուտելի են:

* Ոսկան յաւելու. Եւ որ ուտիցէ 'ի նմանէ, և որ բառ՝: Այլք. Եւ պղծեալ լիցի մինչև:

* Բազումք. Լինել ձեր Աստուած:

* Յօրինակին վրիպանօք գրեալ էր. 'ի մէջ ուստերացն կենդանածնաց:

* Այլք. Նստցի 'ի վերայ սրբոյ արեան:

* Ի լուս՝ կրկնի. Պի՛ղծ լիցի զելթն օր, և զելթն օր ըստ դաշ՝:

* Ոմանք. Այնոցիկ որ: և այլք. Որ ծնանիցի արու:

յողջակէ՞՞ և զմևսն վասն մեղաց. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն, և սրբեսցի՛:

13

Գլուխ ԺԳ

ԼԹ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²Մարդոյ ուրուք եթէ լինիցի՝ ՚ի մորթ մարմնոյ իւրոյ նշան սաւոյ, կամ պալար, կամ պաղպաջ, և լինիցի՝ ՚ի մորթ մարմնոյ նորա արած բորոտութեան, եկեսցէ՛ առ Ահարոն քահանայ. կամ առ մի յորդուց նորա քահանայից: ³Եւ տեսցէ՛ քահանայն զարածն, ՚ի մորթ մարմնոյ նորա, և կամ թէ մազ արածին՝ ՚ի սպիտակ դարձեալ իցէ, և տեսիլ արածին զնստագոյն իցէ քան զմորթ մարմնոյն, արած բորոտութեան է. և տեսցէ՛ քահանայն և պղծեսցէ՛ զնա՞: ⁴Ապա թէ պաղպաջն սպիտակ իցէ՝ ՚ի մորթ մարմնոյ նորա, և զնստագոյն չիցէ՛ տեսիլ նորա քան զմորթն, և մազն ՚ի սպիտակ չիցէ՛ դարձեալ, և ինքն շլագոյն իցէ, զատուսցէ՛ քահանայն զարածն զելթն օր: ⁵Եւ տեսցէ՛ քահանայն յաւուրն եւթներորդի, եթէ կայցէ նոյնպէս արածն առաջի նորա, և չիցէ՛ փոխեալ արածն ՚ի մորթն, զատուսցէ՛ զնա քահանայն այլ ևս աւուրս եւթն: ⁶Եւ տեսցէ՛ քահանայն յաւուրն եւթներորդի մե՛ւս անգամ. և ահա շլագոյն իցէ արածն, և յայլ գոյն չիցէ՛ փոխեալ մորթն, սրբեսցէ՛ զնա քահանայն. զի նշան ինչ է այն. և լուսացէ՛ զձորձս իւր և եղիցի սուրբ՞: ⁷Ապա թէ շրջելով շրջեսի նշանն ՚ի մորթն, յե՛տ տեսանելոյ զնա քահանային և սրբելոյ. և երևեսցի մե՛ւս անգամ քահանային, և տեսցէ՛ քահանայն, և ահա այլագունեալ իցէ նշանն ՚ի մորթն ⁸պղծեսցէ՛ զնա քահանայն՝ զի բորոտութիւն է: ⁹Եւ արած բորոտութեան եթէ լինիցի մարդոյ, եկեսցէ՛ առ Ահարոն քահանայ՞, ¹⁰և տեսցէ՛ քահանայն, և ահա պալար սպիտակ իցէ՝ ՚ի մորթն. և մազն նորա ՚ի սպիտակ դարձեալ իցէ, և յառողջ և ՚ի կենդանի մարմնոյ ՚ի պալար՝ ¹¹բորոտութիւն հնացեալ իցէ՝ ՚ի մորթ մարմնոյ նորա. պղծեսցէ՛ զնա քահանայն, և զատուսցէ՛ զնա՞ զի պիղծ է՞: ¹²Ապա թէ սփռելով սփռեսցի բորոտութիւնն ընդ մորթն. և ծածկեսցէ՛ բորոտութիւնն զամենայն մորթ իրանացն, ՚ի գլխոյ մինչև ցոտս, ըստ ամենայն տեսոյ քահանային՞: ¹³Եւ տեսանիցէ՛ քահանայն, և ահա ծածկեսց բորոտութիւնն զամենայն մորթ մարմնոյն, սրբեսցէ՛ քահանայն զարածն. քանզի ամենայն ՚ի սպիտակ դարձաւ, սուրբ է: ¹⁴Եւ յորում աւուր երևեսցի՝ ՚ի նմա մարմին կենդանի, պղծեսցի: ¹⁵Եւ տեսցէ՛ քահանայն զմարմինն կենդանի. և պղծեսցէ՛ զողջ մարմինն. և պիղծ լիցի՝ քանզի բորոտութիւն է: ¹⁶Ապա թէ անդրէն հաստատեսցի մարմինն ո՞ղջ, և դարձցի ՚ի սպիտակ. ¹⁷եկեսցէ՛ առ քահանայն. և տեսցէ՛ զնա քահանայն. և ահա դարձեալ իցէ արածն նորա ՚ի սպիտակ, սրբեսցէ՛ քահանայն զարածն՝ քանզի սուրբ է՞: ¹⁸Եւ մարդոյ եթէ լինիցի՝ ՚ի մորթ մարմնոյ նորա կե՛ղ, և ողջասցի՞. ¹⁹և

* *Յօրինակին վրիպակաւ գրեալ էր.* Մարդոյ աւուրք եթէ լինիցի ՚ի:

* *Այլք.* Եւ յայլագոն չիցէ... ՚ի մորթն... և լուսացեալ զձորձս իւր եղիցի սուրբ:

* *Ոմանք.* Բորոտութեան. և որ լինիցի մարդ, եկես՞:

* *Ոմանք.* Յնացեալ է ՚ի մորթ:

* *Բազումք.* Չամենայն մորթ իրանացն: *Յօրինակին.* Ի գլխոյ մինչև զոտս:

* *Այլք.* Եւ տեսանիցէ զնա քա՞:

* *Այլք.* Լինիցի ՚ի մորթ նորա կեղ:

եղիցի՝ի տեղի կեղոյն սպիտակ փայլուն, լսնացեալ կամ կարմրացեալ. և երևեսցի քահանային*։ ²⁰Եւ տեսանիցէ քահանայն, և ահա խորագոյն իցէ տեղին քան զմորթն, և մազն ՚ի սպիտակ դարձեալ իցէ, պղծեսցէ՛ զնա քահանայն. զի բորոտութիւն է ընդ կեղոյն բորբոքեալ*։ ²¹Իսկ եթէ տեսանիցէ քահանայն և չիցէ ՚ի նմա մազ սպիտակ. և ո՛չ խորագոյն իցէ քան զմարմինն, և ինքն շլագոյն իցէ. զատուսցէ՛ զնա քահանայն զելթն օր։ ²²Եթէ սփռեսցի ընդ մորթն, պղծեսցէ՛ զնա քահանայն. զի արած բորոտութեան ընդ կեղոյն բորբոքեցաւ*։ ²³Ապա թէ անդէն ՚ի տեղւոջն կացցէ փայլիւնն՝ և ո՛չ տարածանիցի, սպի՛ կեղոյն է. սրբեսցէ՛ զնա քահանայն։ ²⁴Եւ մարմնոյ եթէ լինիցի ՚ի մորթ նորա այրեցած հրոյ, և լինիցի ողջացեալ մորթ նորա յայրեցածէ անտի. և լինիցի տեղի այրեցածին փայլուն կամ պաղպաջ սպիտակ, կամ կարմրացեալ, կամ լսնացեալ. ²⁵և տեսանիցէ զնա քահանայն, և ահա փոխեալ իցէ մազն ՚ի սպիտակ ՚ի փայլուն. և տեսիլ նորա զիջագոյն իցէ քան զմորթն, բորոտութիւն է ընդ այրեցածին բորբոքեալ. և պղծեսցէ՛ զնա քահանայն՝ զի արած բորոտութեան է։ ²⁶Եւ եթէ տեսանիցէ քահանայն, և ահա՝ չիցէ ՚ի նմա փայլիւն ինչ՝ կամ մա՛զ սպիտակ, և ո՛չ զնստագոյն քան զմորթն, բայց շլագոյն իցէ. զատուսցէ՛ զնա քահանայն զելթն օր։ ²⁷Եւ տեսցէ՛ զնա քահանայն յաւուրն եւթներորդի, եթէ սփռելով սփռեալ իցէ արածն ընդ մորթն, պղծեսցէ՛ զնա քահանայն. զի արած բորոտութեան է ընդ այրեցածին բորբոքեալ*։ ²⁸Եւ եթէ ՚ի նմին տեղւոջ կացցէ փայլիւնն, և ո՛չ սփռեսցի ընդ մորթն. և ինքն շլագոյն իցէ, սպի՛ այրեցածոյն է. սրբեսցէ՛ զնա քահանայն՝ զի դրոշմն այրեցածոյն է։

Իս ²⁹Եւ առն կամ կնոջ, եթէ լինիցի արած բորոտութեան ՚ի գլուխ՝ կամ ՚ի մօրուս, և տեսանիցէ քահանայն զարածն, ³⁰և ահա տեսիլ նորա զնստագոյն իցէ քան զմորթն. և ՚ի նմա մա՛զ աղուամազ խարտեշացեալ, պղծեսցէ՛ զնա քահանայն. քանզի հարած է, բորոտութիւն գլխոյ է, կամ բորոտութիւն մօրուաց։ ³¹Եւ եթէ տեսանիցէ քահանայն զարած հարածոյն. և ահա չիցէ՛ տեսիլն զնստագոյն քան զմորթն, և ո՛չ մա՛զ խարտեշացեալ ՚ի նմա. զատուսցէ՛ քահանայն զարած հարածին զելթն օր։ ³²Եւ տեսանիցէ՛ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի, և ահա չիցէ՛ տարածեալ հարածն ընդ մորթն. և մազ խարտեշացեալ չիցէ ՚ի նմա, և ո՛չ տեսիլ հարածոյն զնստագոյն իցէ քան զմորթն՝ ³³զերծցէ՛ զնա. բայց զհարածն մի՛ զերծցէ. և զատուսցէ՛ քահանայն զարածն զելթն օր կրկին անգամ։ ³⁴Եւ տեսանիցէ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի. և ահա չիցէ սփռեալ արածն ընդ մորթն յետ գերծանելոյն զնա. և տեսիլ հարածոյն չիցէ՛ զնստագոյն քան զմորթն, սրբեսցէ՛ զնա քահանայն. և լուացեալ զձործս իւր՝ եղիցի սուրբ*։ ³⁵Ապա թէ սփռելով սփռեսցի հարածն ընդ մորթն յետ գերծելոյն զնա և տեսանիցէ քահանայն, և ահա սփռեալ իցէ հարածն ընդ մորթն*։ ³⁶մի՛ դարմանեսցէ զնա քահանայն վասն խարտեաշ մագոյն զի պի՛ղծ է։ ³⁷Իսկ եթէ կացցէ ՚ի տեղւոջ հարածն ՚ի մորթն, և մազ թո՛ւխ

* Ի լուս՝. Եւ եղիցի ՚ի սպի կեղոյն։

* Այլք. Եւ ահա տեսիլն խորագոյն քան զմարմին իցէ, և մազն։

* Այլք. Քանզի արած բորոտութեան... (23) և ո՛չ տարածեսցի, սպի կե՛։

* Այլք. Եւ տեսցէ քահանայն.. սփռեալ իցէ ընդ մորթն.. արած բորոտութեան է ընդ կեղոյն բորբոքեալ։

* Այլք. Սփռեալ հարածն ընդ մոր՝։

* Այլք. Եւ տեսանիցէ զնա քահանայն։

եկեսցէ 'ի նմա, ողջացաւ հարածն սո՛ւրբ է. և սրբեսցէ զնա քահանայն*։ ³⁸Եւ անն կամ կնոջ եթէ լինիցի 'ի մորթ մարմնոյ իւրոյ փայլուն ինչ՝ փայլածիւն լսնացեալ, ³⁹և տեսանիցէ քահանայն. և ահա 'ի մորթ մարմնոյ նորա փայլիւն փայլածուն՝ լսնացեալ. թեփունկ է տարածեալ 'ի մորթ մարմնոյ նորա. սո՛ւրբ է*։ ⁴⁰Եւ եթէ մաշտեսցի գլուխ ուրուք՝ կունտ է, սո՛ւրբ է։ ⁴¹Եւ եթէ յերեսաց կողմանէ մաշտիցի գլուխ նորա, ճեղ է՝ սո՛ւրբ է։ ⁴²Ապա թէ լինիցի 'ի կնտութեան նորա կամ 'ի ճեղութեան արած սպիտակ կամ կարմրացեալ, բորոտութիւն թաքուցեալ է 'ի կնտութեան նորա կամ 'ի ճեղութեան։ ⁴³Եւ տեսանիցէ զայն քահանայն, և ահա տեսիլ արածին սպիտակ իցէ, կամ կարմրագոյն 'ի կնտութեան նորա, կամ 'ի ճեղութեան, իբրև գտեսիլ բորոտութեան 'ի մորթ մարմնոյ նորա. ա՛յր բորոտեալ է՝ պի՛ղծ է, պղծելով պղծեսցէ՝ զնա քահանայն. զի 'ի գլուխ իւրում է արածն իւր։

ԽԱ ⁴⁴Եւ բորոտ յորում իցէ արած, ⁴⁵հանդերձ նորա քակեալ լիցի, և գլուխ նորա մե՛րկ, և զբերան իւր պատեսցէ՛. և պի՛ղծ կոչեսցի ⁴⁶զամենայն աւուրս որչափ իցէ 'ի նմա արածն, պի՛ղծ եղիցի. և պիղծ է, մեկնեալ նստցի, և արտաքոյ բանակի՛ն եղիցի բնակութիւն նորա։

ԽԲ ⁴⁷Եւ ձորձ յորում լինիցի արած բորոտութեան եթէ 'ի ձորձ ասուի, եթէ 'ի ձորձ կտաւի, ⁴⁸եթէ յառէջ, եթէ 'ի թեզան, եթէ 'ի կտաւիս, և եթէ յասուիս. եթէ 'ի մորթ, և եթէ յամենայն մաշկ գործոյ*։ ⁴⁹և լինիցի արած կանաջացեալ կամ կարմրացեալ՝ 'ի մորթ կամ 'ի հանդերձ. կամ յառէջ կամ 'ի թեզան, կամ յամենայն մորթ գործոյ, կամ յանօթ ինչ. արած բորոտութեան իցէ. և ցուցցէ՛ քահանային*։ ⁵⁰Եւ տեսցէ քահանայն զարածն, և զատուցէ՛ քահանայն զարածն զեւթն օր։ ⁵¹Եւ տեսցէ՛ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի. եթէ սփռեալ իցէ արածն ընդ ձորձն, կամ ընդ առէջ, կամ ընդ թեզան, կամ ընդ կտաւիս, կամ ընդ ասուիս, կամ ընդ մորթ. ըստ ամենայնի որպէս և գործիցի մորթ 'ի գործ, բնակ բորոտութեան է արածն։ Պի՛ղծ է. ⁵²և այրեսցէ՛ զձորձն եթէ առէջ իցէ՛ եթէ թեզան, յասուեաց կամ 'ի կտաւեաց, կամ յամենայն մաշկեղէն նիւթոյ, յորում իցէ արածն. քանզի բնակ բորոտութեան է՝ հրո՛վ այրեսցի*։ ⁵³Ապա թէ տեսանիցէ քահանայն՝ և ահա չիցէ՛ սփռեալ հարածն ընդ հանդերձն, կամ ընդ առէջն, կամ ընդ թեզանն, կամ ընդ ասրն, կամ ընդ կտաւն, կամ ընդ ամենայն անօթ մաշկեղէն*։ ⁵⁴հրաման տացէ քահանայն, և լուսացեն յորում իցէ արածն. և զատուցէ՛ քահանայն զարածն զեւթն օր երկիցս անգամ*։ ⁵⁵Եւ տեսցէ քահանայն յետ լուսնալոյ զարածն. եթէ չիցէ՛ ինչ փոխեալ տեսիլ արածին. և ո՛չ սփռեալ իցէ արածն, պի՛ղծ է, հրո՛վ այրեսցի. զի հաստատեալ է 'ի հանդերձն, կամ յառէջն, կամ 'ի թեզան*։ ⁵⁶Եւ եթէ տեսանիցէ քահանայն՝ և շլագոյն իցէ հարածն յետ լուսնալոյն զնա, պատառեսցէ՛ զայն 'ի հանդերձէ անտի, կամ 'ի մորթոյ, կամ յառիջէ, կամ 'ի թեզանոյ։ ⁵⁷Ապա թէ դարձեալ երևեսցի 'ի

* Այլք. Կայցէ... հարածն, և մազ։

* Ոսկան. Թէ փուք է տարածեալ։ Այլք. 'ի մորթ մարմնոյ իւրոյ։

* Ոմանք. եթէ յառէջ, եթէ։

* Այլք. Արածն կանաջացեալ։

* Ի լուս՝. Մաշկեղէն անօթոյ, համաձայն ոմանց 'ի բնաբ՝։

* Այլք. Եւ չիցէ սփռեալ արածն... կամ ընդ ասրն և ընդ կտաւ։

* Ոմանք. Զեւթն օր երկիցս անգամ։

* Ի լուս՝. Սփռեալ տեսիլ արածին։ Այլք. եթէ չիցէ փոխեալ... արածն։ հրով այրեսցի... 'ի հանդերձին։

հանդերձին, կամ յառէջ, կամ ՚ի թեզան, կամ յամենայն անօթ մաշկեղէն,
բորոտութիւն բորբոքեալ է. հրով այրեսցի յորում իցէ արածն, եթէ հանդերձ իցէ,
և եթէ առէջ, եթէ թեզան,⁵⁸ և եթէ ամենայն անօթ մաշկեղէն: որ լուանայցի՝ և
ելանիցէ ՚ի նմանէ արածն, կրկին լուասցի՝ և սուրբ լիցի: ⁵⁹Այս օրէն իցէ արածի
բորոտութեան ասուեալ հանդերձի, կամ կտաւոյ, կամ առիջոյ, կամ թեզանոյ,
կամ ամենայն մաշկեղէն անօթոյ, ՚ի սրբել կամ ՚ի պղծել զնա՝:

14

Գլուխ ԺԴ

ԽԳ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Այս օրէն լիցի բորոտի՝ յաւուր յորում
սրբեսցի. ածցի՝ առ քահանայն՝: ³Եւ ելցէ քահանայն արտաքոյ բանակին. և
տեսցէ քահանայն, և ահա բժշկեալ իցէ արած բորոտութեանն ՚ի բորոտէ
անտի՝: ⁴Հրաման տացէ քահանայն, և առցեն ՚ի սրբելոյն երկուս հաւս
կենդանիս սուրբս, և փայտ եղևնեայ, և կարմիր մանեալ, և զոպա: ⁵Եւ հրաման
տացէ քահանայն, և սպանցեն զմի հաւն յանօթ խեցեղէն ՚ի վերայ ջրոյ
կենդանոյ: ⁶Եւ զհաւն կենդանի առցէ, և զփայտն եղևնեայ, և զկարմիրն
մանեալ, և զզոպայն, և թացցէ զնոսա և զհաւն կենդանի՝ յարիւն հաւուն
սպանելոյ ՚ի վերայ ջրոյն կենդանոյ: ⁷Եւ ցանեսցէ ՚ի վերայ սրբելոյն ՚ի
բորոտութենէ եւթն անգամ, և սրբեսցէ զնա. և արծակեսցէ՝ զհաւն կենդանի ՚ի
դաշտ: ⁸Եւ լուասցէ սրբեալն զձորձս իւր, և գերծեսցէ՝ զամենայն զմազ իւր. և
լուասցի ջրով, և սուրբ լիցի. և ապա՝ մտցէ ՚ի բանակն, և լիցի արտաքոյ տան
իւրոյ զեւթն օր՝: ⁹Եւ յաւուրն եւթներորդի գերծցէ՝ զամենայն զմազ իւր, և
զգլուխ և զմօրուս և զյօնս. և զամենայն զմազ իւր գերծցէ. և ողողեսցէ
զհանդերձս իւր, և լուասցէ՝ զմարմին իւր ջրով, և սուրբ լիցի: ¹⁰Եւ յաւուրն
ութերորդի առցէ՝ երկուս գառինս անարատս տարևորս, և որոջ մի անարատ
տարևոր, և երիս տասանորդս մաշիւոյ ՚ի զոհ իւղով զանգեալ, և ճաշակ մի
իւղոյ: ¹¹Եւ կացուսցէ քահանայն որ սրբիցէն, զայրն որ սրբիցին, և զայն՝ առաջի
խորանին վկայութեան: ¹²Եւ սպանցէ քահանայն զմի գառնն. և մատուսցէ՝ զնա
վասն յանցանաց, և զճաշակն իւղոյ. և նուիրեսցէ զայն նուէր առաջի Տեառն՝:
¹³Եւ սպանցէ զգառնն զմնս ՚ի տեղւոջն ուր սպանանիցեն զողջակէզն և զվասն
մեղացն ՚ի սուրբ տեղւոջ. զի որպէս որ վասն մեղացն իցէ, նոյնպէս և որ վասն
յանցանացն իցէ. և եղիցի քահանային. զի սրբութիւն սրբութեանց է: ¹⁴Եւ առցէ
քահանայն յարենէ այնր՝ որ վասն յանցանացն իցէ. և դիցէ քահանայն յարենէ
անտի ՚ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, և ՚ի վերայ ծայրի
աջոյ ձեռնին նորա, և ՚ի վերայ ծայրի աջոյ ոտին նորա: ¹⁵Եւ առեալ քահանային
՚ի ճաշակէ անտի իւղոյն, արկցէ՝ ՚ի ձախոյ ձեռնին քահանային՝: ¹⁶Եւ թացցէ
քահանայն զմատն իւր աջոյ յիւղոյ անտի՝ որ իցէ ՚ի ձախոյ ձեռնին իւրում. և
ցանեսցէ՝ մատամբ իւրով եւթն անգամ առաջի Տեառն: ¹⁷Եւ զմնացեալ եւղն ՚ի

* Ի լուս՝. Ասուեաց հանդերձի:

* Այլք. Այս օրէն եղիցի բո՝:

* Այլք. Եւ տեսանիցէ քահանայն:

* Այլք. Եւ գերծցէ զամենայն:

* Ոմանք. Եւ առցէ քահանայն զմի գառն:

* Այլք. Ի ձախոյ ձեռն քահանային:

ձեռին իւրում դիցէ քահանայն 'ի վերայ բլթակի աջոյ ունկան՝ այնորիկ որ սրբելոցն իցէ. և 'ի վերայ ծայրի աջոյ ձեռին նորա. և 'ի վերայ ծայրի աջոյ ոտին նորա, 'ի տեղւոջ արեանն յանցանաց* : ¹⁸Եւ զմնացեալ իւղն 'ի ձեռին քահանային, դիցէ քահանայն 'ի վերայ գլխոյ սրբեցելոյն, ¹⁹և քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն: Եւ արասցէ քահանայն զվասն մեղացն. և քաւեսցէ քահանայն վասն այնորիկ՝ որ սրբելոցն իցէ 'ի մեղաց իւրոց: Եւ ապա սպանցէ քահանայն զողջակէզն, ²⁰և հանցէ քահանայն զողջակէզն և զգոհն առաջի Տեառն 'ի սեղանն. և քաւեսցէ վասն նորա քահանայն, և սրբեսցի: ²¹Եւ եթէ աղքատ իցէ, և չգտանիցէ ձեռն իւր. առցէ գառն մի վասն յանցանաց զոր յանցեալն 'ի նուէ՛ր առ 'ի քաւելոյ վասն նորա. և զտասանորդ նաշիւոյ իւղով զանգեալ 'ի զո՛հ, և ճաշակ մի իւղոյ* : ²²Եւ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղաւնեաց. որչափ ինչ եգիտ ձեռն նորա. և եղիցի մին՝ վասն մեղաց. և մին՝ յողջակէզ* : ²³Եւ տարցի զայն յաւուրն ութերորդի առ քահանայն, առ 'ի սրբելոյ զնա առ դրան խորանին վկայութեան առաջի Տեառն: ²⁴Եւ առեալ քահանայն զգառնն զվասն յանցանացն, և զճաշակն իւղոյ. և դիցէ՝ նուէ՛ր առաջի Տեառն: ²⁵Եւ սպանցէ զգառնն զվասն յանցանացն. և առցէ քահանայն յարեմէ՛ անտի՝ որ վասն յանցանացն իցէ, և դիցէ 'ի վերայ բլթակի աջոյ ունկան սրբեցելոյն, և 'ի ծայրի աջոյ ձեռին նորա, և 'ի ծայրի աջոյ ոտին նորա* : ²⁶Եւ յիւղոյ անտի արկցէ քահանայն 'ի ձախու ձեռին իւրում*, ²⁷և ցանեսցէ քահանայն մատամբն աջոյ յիւղոյ անտի՝ որ իցէ 'ի ձախու ձեռին իւրում եւթն անգամ առաջի Տեառն: ²⁸Եւ դիցէ քահանայն յիւղոյ անտի որ իցէ 'ի ձեռին իւրում, 'ի վերայ բլթակի աջոյ ունկան սրբեցելոյն, և 'ի վերայ ծայրի աջոյ ձեռին նորա, և 'ի վերայ ծայրի աջոյ ոտին նորա, 'ի տեղւոջ արեանն որ վասն յանցանացն իցէ: ²⁹Եւ զմնացեալ եւղն որ իցէ 'ի ձեռին քահանային, արկցէ 'ի գլուխ սրբեցելոյն. և քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն: ³⁰Եւ արասցէ զմի 'ի տատրակաց անտի կամ 'ի ձագուցն աղաւնեաց՝ ըստ ընչին զոր եգիտ ձեռն իւր*. ³¹զմին՝ վասն մեղաց, և զմին ողջակէզ առաջի Տեառն հանդերձ զոհիւն. և քաւեսցէ քահանայն վասն սրբեցելոյն առաջի Տեառն: ³²Այս օրէն իցէ յորում իցէ արած բորոտութեան, և ոյր ո՛չ գտանիցի 'ի ձեռին բաւական լինելոյ 'ի սրբութիւն իւր:

ԽԴ ³³Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ³⁴Յորժամ մտանիցէք յերկիրն Քանանացւոց՝ զոր ե՛ս տաց ձեզ 'ի ստացուածս. և տայցեն արած բորոտութեան 'ի տունս երկրին ստացուածոց ձերոց* : ³⁵Եւ զայցէ՛ որոյ տունն իցէ, և պատմիցէ քահանային՝ և ասիցէ, թէ Արած իմն երևեցաւ 'ի տան իմում: ³⁶Զրաման տացէ քահանայն թափել՝ զտունն, մինչչև՝ մտեալ իցէ քահանային տեսանել զտունն, և մի՛ պղծեսցէ քահանայն զամենայն ինչ որ 'ի տանն կայցէ. և ապա մտցէ քահանայն որոնել զտունն* : ³⁷Եւ տեսանիցէ քահանայն զարածն յորմս տանն, զնստագոյնս, կանաջս կամ կարմրացեալս. և տեսիլ նորա

* Այլք. Եւ 'ի ծայրի աջոյ ձեռն. և 'ի ծայրի աջոյ ոտին:

* Ոմանք. Եւ ո՛չ գտանիցէ ձեռն:

* Այլք. Չագս աղաւնւոյ... եգիտ ձեռն իւր. և եղիցի:

* Ոմանք. Աջոյ ունկան սրբացելոյն:

* Այլք. 'ի ձախոյ ձեռն քահանային: և:

* Այլք. Չոր եգիտ 'ի ձեռին իւրում... (31) և զմին ողջակէզ հանդերձ զո՛հ:

* Այլք. 'ի ստացուած... երկրին ստացուածոյ ձերոյ:

* Այլք. Եւ պղծեսցէ քահանայն զամենայն:

զնստագոյն իցէ քան զորմոցն*։ ³⁸Եւ ելեալ քահանայն 'ի տանէ անտի 'ի դուռն տանն, զատուցէ՛ քահանայն զտունն զեւթն օր։ ³⁹Եւ եկեսցէ դարձեալ քահանայն յաւուրն եւթներորդի. և տեսանիցէ զտունն, եթէ սփռեալ իցէ արածն տանն ընդ որմս տանն։ ⁴⁰Հրաման տացէ քահանայն, և քակեսցեն զքարինսն յորս արածն իցէ. և հանցեն զնոսա արտաքոյ քաղաքին 'ի տեղի անսուրբ։ ⁴¹Եւ քերեսցեն զտունն 'ի ներքոյ շուրջանակի. և հանցեն զքերուածն արտաքոյ քաղաքին 'ի տեղի անսուրբ*։ ⁴²Եւ առցեն այլ քարինս քերածոյս, և դիցեն փոխանակ այնց քարանց. և այլ հող առցեն և ծեփեսցեն զտունն։ ⁴³Եւ եթէ անդրէն կրկնեսցի՝ արածն, և երկեսցի՝ 'ի տանն յետ զքարինսն քակելոյ, և զտունն քերելոյ և միւսանգամ ծեփելոյ. ⁴⁴մտցէ քահանայն և տեսցէ՛ թէ սփռեալ իցէ արածն ընդ տունն, բնակ բորոտութիւն է՝ 'ի տանն, պիղծ է*։ ⁴⁵Քակեսցեն զտունն, և զփայտ նորա, և զքարինս նորա, և զամենայն հող տանն. և հանցեն արտաքոյ քաղաքին 'ի տեղի անսուրբ։ ⁴⁶Եւ որ մտանիցէ՛ 'ի տունն զամենայն աւուրս զատանելոյ նորա, պիղծ լիցի մինչև ցերեկոյ։ ⁴⁷Եւ որ ննջիցէ՛ 'ի տան անդ՝ լուսացէ՛ զձորձս իւր, և պիղծ լիցի մինչև ցերեկոյ։ և որ կերիցէ՛ 'ի տանն՝ լուսացէ՛ զձորձս իւր, և պիղծ լիցի մինչև ցերեկոյ։ ⁴⁸Եւ եթէ եկեալ մտանիցէ քահանայն և տեսանիցէ. և ահա չիցէ՛ սփռեալ արածն ընդ որմս տանն յետ ծեփելոյ զտունն, սրբեսցէ քահանայն զտունն, զի բժշկեցա՛ւ արածն*։ ⁴⁹Եւ առցէ՛ առ 'ի սրբելոյ զտունն երկուս հաւս կենդանիս սուրբս, և փայտ եղևնեայ, և կարմիր մանեալ, և զոպայ. ⁵⁰և սպանցէ զմի հաւն յաման խեցեղէն 'ի վերայ ջրոյ կենդանոյ։ ⁵¹Եւ առցէ զփայտն եղևնեայ, և զկարմիրն մանեալ, և զզոպայն, և զհաւն կենդանի. և թացցէ՛ զնոսա յարեան հաւուն սպանելոյ 'ի վերայ ջրոյ կենդանոյ. և ցանեսցէ՛ նոքօք զտամբն եւթն անգամ։ ⁵²Եւ սրբեսցէ՛ զտունն արեամբ հաւուն, և ջրովն կենդանեալ, և հաւուն կենդանեալ, և փայտիւն եղևնեալ, և զոպայիւն, և կարմրովն մանելով*։ ⁵³և արձակեսցէ՛ զհաւն կենդանի արտաքոյ քաղաքին՝ 'ի դաշտ. և քաւեսցէ՛ վասն տանն և մաքրեսցի՛, և սուրբ եղիցի։ ⁵⁴Այս օրէն լիցի ըստ ամենայն արածոյ և բորոտութեան. և հարածի*, ⁵⁵և բորոտութեան հանդերձի, և տան, ⁵⁶և սալոյ, և պալարի, և պաղպաջոյ ⁵⁷նշանակելոյ, թէ յորում աւուր պղծիցի, և յորում աւուր սրբիցի։ Այս օրէն լիցի բորոտութեան։

15

Գլուխ ԺԵ

ԽԵ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²Խօսեալց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցեն սքոսա. Առն ուրուք առն՝ եթէ լինիցի ծորունն 'ի մարմնոյ իւրմէ, ծորունն իւր պիղծ է*։ ³Եւ այս օրէն լինիցի սրբութեան նորա. որոյ ծորիցէ՛ սերմն 'ի մարմնոյ իւրմէ, կամ թէ հալիցի մարմին իւր 'ի ծորելոյն.

* Ոմանք. Կանաչս կարմրացեալս։

* Այլք. Եւ քերեսցեն զնա 'ի ներ... և հեղցեն զքերուածն ար՝։

* Ոմանք. Բնակ բորոտութեան է՝ 'ի տանն։

* Ոմանք. Արածն ընդ տունն, և սրբեսցէ քահանայն։

* Բազումք. Եւ փայտիւն եղևնով և զո՞։

* Այլք. Ըստ ամենայն արածոյ բորոտութեան։

* Այլք. Առն որոյ լինիցի ծորունն 'ի մարմնոյ իւրոյ... պիղծ իցէ։

պղծութիւն իւր 'ի նմա՛ է զամենայն աւուրս ծորելոյ մարմնոյ իւրոյ, կամ թէ հալիցի մարմին նորա 'ի ծորելոյ անտի. պղծութիւն մարմնոյ է այն*։ ⁴Ամենայն անկողին յորում ննջեսցէ սերմնակաթն՝ պի'ղծ լիցի. և ամենայն յորոյ վերայ նստցի՝ պի'ղծ լիցի*։ ⁵Եւ մարդ որ մերձեսցի յանկողին նորա՝ ողողեսցէ՝ զձործս իւր, և լուսացի՝ ջրով, և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ*։ ⁶Եւ որ նստցի 'ի վերայ անօթոյ՝ յորում նստեալ իցէ սերմնակաթին, ողողեսցէ՝ զհանդերձս իւր և լուսացի՝ ջրով. և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ*։ ⁷Եւ որ մերձեսցի 'ի մարմին սերմնակաթին, ողողեսցէ՝ զձործս իւր, և լուսացի՝ ջրով. և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ⁸Եւ եթէ թուք սերմնակաթին հասանիցէ 'ի սուրբն, ողողեսցէ՝ զհանդերձս իւր, և լուսացի՝ ջրով. և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ*։ ⁹Եւ ամենայն համէ՛տ իշոյ՝ յորոյ վերայ նստցի սերմնակաթն, պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ¹⁰Եւ ամենայն որ մերձեսցի յամենայն որ ինչ 'ի ներքոյ՝ նորա իցէ, պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ¹¹Եւ յոր ինչ մերձեսցի՝ սերմնակաթն, և զձեռս իւր ո՛չ լուանայցէ ջրով, ողողեսցէ՝ զհանդերձս իւր, և լուսացէ՝ զմարմին իւր ջրով. և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ¹²Եւ անօթ խեցեղէն՝ յոր թէ մերձեսցի սերմնակաթն, փշրեսցի՛. և ամենայն անօթ փայտեղէն լուսացի՝ ջրով, և եղիցի սուրբ։ ¹³Եւ եթէ սրբեսցի սերմնակաթն՝ 'ի բղխմանէ՛ իւրմէ, համարեսցի՛ իւր եւթն օր՝ 'ի սրբութիւն իւր. և ողողեսցէ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով կենդանեալ. և եղիցի սուրբ*։ ¹⁴Եւ յաւուրն ութերորդի առցէ երկուս տատրակս, կամ երկուս ձագս աղաւնեաց. և տարցի զայն առաջի Տեառն 'ի դուռն խորանին վկայութեան. և տացէ՛ ցքահանայն։ ¹⁵Եւ արասցէ քահանայն զմին վասն մեղաց, և զմին՝ յողջակէգ։ և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն առաջի Տեառն 'ի բղխմանէ անտի նորա։

ԽՁ ¹⁶Եւ այր ոք՝ յորմէ ելանիցէ արութիւն սերման, լուսացէ՛ զամենայն մարմին իւր ջրով. և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ¹⁷Եւ ամենայն հանդերձ և մաշկ, յորոյ վերայ հասանիցէ արութիւն սերման, լուսացին ջրով. և պի'ղծ լիցին մինչև ցերեկոյ։ ¹⁸Եւ կին ընդ որում հարկանիցի այր՝ արութեամբ սերման. լուսացին ջրով, և պի'ղծ լիցին մինչև ցերեկոյ։

ԽԵ ¹⁹Եւ կին՝ որոյ բղխիցէ արիւն. և լինիցի բղխումն արեան նորա 'ի մարմնի իւրում, զեւթն օր եղիցի 'ի դաշտանի իւրում*։ ²⁰Ամենայն որ հարկանիցի ընդ նա, պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ²¹Եւ ամենայն յորոյ վերայ ննջեսցէ 'ի դաշտանին իւրում. և ամենայն յորոյ վերայ նստցի՝ պի'ղծ լիցի մինչև յերեկոյ*։ ²²Եւ ամենայն որ մերձենայցէ յանկողին նորա, ողողեսցէ՝ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով, և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ²³Եւ ամենայն որ մերձենայցէ յամենայն անօթ յորոյ վերայ նստցի նա. ողողեսցէ՝ զհանդերձս իւր, և լուսացի՝ ջրով, և պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ ²⁴Եւ եթէ տակաւին յանկողնին իւրում իցէ, կամ թէ 'ի վերայ անօթոյ իրիք յորոյ վերայ նստեալ իցէ, 'ի մերձենալ ուրուք 'ի նա՝ պի'ղծ լիցի մինչև ցերեկոյ։ Եւ եթէ ննջելով ոք ննջեսցէ ընդ նմա, և պղծութիւն նորա 'ի

* 'Ի լուս'։ Լիցի պղծութեան նորա, որոյ ծո՛ւ։

* Այլք. Պիղծ եղիցի, և ամենայն յորոյ վերայ նստցիցի։

* Ոսկան. Ողողեսցէ զձեռս իւր։

* Ոմանք ուրեք ուրեք դնեն, սերմանակաթն, սերմանակաթին։

* Յօրինակին. Եւ եթէ թուք.. հանիցէ 'ի սուրբն։ Ոմանք. Ողողեսցէ զձործս իւր։

* Յօրինակին պակասէր. Ձհանդերձս իւր, և լուսացէ։

* Ոսկան. 'Ի մարմնի իւրում, եթն օր որոշեսցի։ Ամենայն որ։

* Այլք. Նստցի՝ պիղծ լիցի. և ամենայն որ մերձենայ յան՞։

նմա՝ իցէ, պի՛ղծ լիցի զեւթն օր. և ամենայն անկողին յորոյ վերայ և ննջիցէ՝ պի՛ղծ լիցի մինչև ցերեկոյ: ²⁵Եւ կին՝ որ բղխիցէ բղխումն արեան զաւուրս բազումս. ո՛չ ՚ի ժամանակի դաշտանի իւրոյ. եթէ բղխիցէ յետ դաշտանին իւրոյ. ամենայն աւուրք բղխման պղծութեան իւրոյ, այնպէս իցեն իբրև զաւուրս դաշտանին իւրոյ. և եղիցի պի՛ղծ: ²⁶Եւ ամենայն անկողին՝ յորում ննջեսցէ զամենայն աւուրս բղխման իւրոյ, ըստ անկողնի դաշտանին իւրոյ լիցի անսուրբ: և ամենայն անօթ յորոյ վերայ նստցի՝ պի՛ղծ լիցի ըստ պղծութեան աւուրց դաշտանին իւրոյ* ²⁷Ամենայն որ մերձեսցի ՚ի նա՝ պի՛ղծ լիցի, և ողողեսցէ՝ զձործս իւր, և լուսացէ՝ զմարմին իւր ջրով. և պի՛ղծ լիցի մինչև ցերեկոյ: ²⁸Ապա թէ սրբեսցի ՚ի բղխմանէ անտի, համարեսցի իւր աւուրս եւթն, և ապա՝ սրբեսցի: ²⁹Եւ յաւուրն ութերորդի առցէ իւր երկուս տատրակս կամ երկուս ձագս աղաւնեաց. և տարցի զայն առ քահանայն ՚ի դուռն խորանին վկայութեան: ³⁰Եւ արասցէ քահանայն զմին վասն մեղաց, և զմին յողջակեզ. և քաւեսցէ վասն նորա քահանայն առաջի Տեառն ՚ի բղխմանէ անտի պղծութեանն իւրոյ* ³¹Եւ զգուշագոյնս առնիցէք զորդիսն Իսրայէլի ՚ի պղծութեանց իւրեանց. և ո՛չ մեռանիցին վասն անսրբութեան իւրեանց, առ ՚ի պղծելոյ նոցա զխորանն իմ որ է ՚ի նոսա: ³²Այս օրէն իցէ սերմնակաթին: և եթէ ելանիցէ յունեթէ արութիւն սերման, առ ՚ի պղծելոյ նովաւ, ³³և տեռատեսի ՚ի դաշտանի իւրում, և սերմնակաթին ՚ի բղխման իւրում. արուին և իգի, և առն որ ննջիցէ ընդ դաշտանի:

16

Գլուխ ԺԶ

ԽԸ ¹Խօսեսցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Յետ վախճանելոյ որդւոցն Ահարոնի, ՚ի մատուցանել նոցա հուրն օտար առաջի Տեառն, և սատակել* ²Եւ ասէ Տէր ցՄովսէս. Խօսեա՛ց ընդ Ահարոնի եղբօր քում. և մի՛ մտցեն յամենայն ժամ ՚ի սրբութիւնն ՚ի ներքս քան զվարագոյրն յանդիման քաւութեանն, որ է ՚ի վերայ տապանակի վկայութեանն. և ո՛չ մեռանիցի. զի ամպով երևեսցայց ՚ի վերայ քաւութեանն: ³Եւ ապա՝ մտանիցէ Ահարոն ՚ի սրբութիւնն՝ զուարակաւ յանդույ վասն մեղաց, և խոյիւ յողջակեզ: ⁴Եւ պատմուճան կտաւի սրբեալ՝ զգեցցի, և անդրավարտի՛ս կտաւիս ունիցի յանդամս իւր. և գօտի կտաւի՛ ածցէ ընդ մէջ իւր, և խոյր կտաւի եդեալ ՚ի գլուխ, զի հանդերձ սրբութեան է. և լուսացէ՝ ջրով զամենայն մարմին իւր, և զգեցցի զնոսա*:

ԽԹ ⁵Եւ ՚ի ժողովրդեան որդւոցն Իսրայէլի առցէ երկուս նոխագս յայծեաց վասն մեղաց, և խոյ մի յողջակեզ: ⁶Եւ մատուցէ Ահարոն զզուարակն զվասն մեղաց իւրոց. և քաւեսցէ վասն իւր, և վասն տան իւրոյ: ⁷Եւ առցէ երկուս նոխագս և կացուսցէ զնոսա առաջի Տեառն առ դրան խորանին վկայութեան: ⁸Եւ արկցէ Ահարոն ՚ի վերայ երկուց նոխագացն վիճակս՝ վիճակ մի Տեառն, և վիճակ մի արծակելոյ. ⁹և մատուցէ Ահարոն զնոխագն՝ յորոյ վերայ իցէ վիճակն

* Այլք. Յորոյ վերայ ննջիցէ զամենայն.. բղխմանն իւրոյ... լինիցի անսուրբ:

* Այլք. ՚ի բղխմանէ պղծութեան նորա:

* Այլք. Նոցա զհուրն օտար Տեառն, և սա՛:

* Այլք. Եւ գօտի կտաւի ածեալ:

արծակելոյ*¹⁰ և կացուսցէ զնա առաջի Տեառն կենդանի. քաւել՝ նովաւ՝ առ արծակելոյ զնա յարծակումն, և թողլոյ զնա յանապատ: և առցէ նոխազն յինքն զանօրէնութիւնս նոցա՝ յանկոխն:

Ծ¹¹ Եւ մատուցէ Ահարոն զգուարակն զվասն մեղաց զիւրն. և քաւեսցէ վասն իւր և վասն տան իւրոյ: և սպանցէ զգուարակն զվասն մեղաց զիւրն: ¹² Եւ առցէ լի՝ բուրուառաւ կայծակունս հրոյ ՚ի սեղանոյ անտի, որ է առաջի Տեառն. և լցցէ՝ զծնոս իւր խնկով հանդերձանացն մանր աղացելով. և տարցի ՚ի ներքս քան զվարագոյրն: ¹³ Եւ դիցէ զխունկն ՚ի վերայ հրոյն առաջի Տեառն. և ծածկեսցէ՝ ծուխ խնկոյն զքաւութիւնն որ իցէ՝ ՚ի վերայ վկայութեանցն. և ո՛չ մեռանիցիք: ¹⁴ Եւ առցէ՝ յարենէ զուարակին, և ցանեսցէ մատամբ իւրով ՚ի վերայ քաւութեանն ընդ կողմն արևելից ընդդէմ քաւութեանն. և ցանեսցէ՝ եւթն անգամ յարենէ անտի մատամբ իւրով: ¹⁵ Եւ սպանցէ՝ զնոխազն զվասն մեղաց, որ վասն ժողովրդեանն իցէ առաջի Տեառն. և տարցի՝ յարենէ անտի ՚ի ներքս քան զվարագոյրն. և արասցէ զարիւն նորա զոր օրինակ արար զարիւն զուարակին. և ցանեսցէ զարիւն նորա ՚ի վերայ սեղանոյն յանդիման քաւութեանն: ¹⁶ Եւ քաւեսցէ՝ զսրբութիւնսն ՚ի պղծութեանց որդւոցն Իսրայէլի, և յանիրաւութեանց նոցա, և վասն ամենայն մեղաց նոցա: Եւ ա՛յսպէս արասցէ ՚ի խորանին վկայութեան, ստացելոյ ՚ի նոսա ՚ի մէջ պղծութեանց նոցա: ¹⁷ Եւ ամենևին մարդ ո՛չ լինիցի ՚ի խորանին վկայութեան ՚ի մտանել նորա և քաւել ՚ի սրբութեանն մինչև ելանիցէ: և քաւեսցէ վասն իւր և վասն տան իւրոյ, և վասն ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի: ¹⁸ Եւ ելցէ՝ ՚ի սեղանն որ առաջի Տեառն, և քաւեսցէ՝ ՚ի վերայ նորա: և առցէ՝ յարենէ զուարակին և յարենէ նոխազին, և դիցէ ՚ի վերայ եղջերաց սեղանոյն շուրջանակի*¹⁹ Եւ ցանեսցէ՝ յարենէ անտի մատամբ իւրով ՚ի վերայ նորա եւթն անգամ, և մաքրեսցէ՝ զնա, և սրբեսցէ՝ զնա ՚ի պղծութեանց որդւոցն Իսրայէլի*²⁰ Եւ վախճանեսցէ՝ առ ՚ի քաւելոյ զսրբութիւնն, և զխորանն վկայութեան և զսեղանն: և վասն քահանայիցն սրբեսցէ: Եւ մատուցէ զնոխազն կենդանի. ²¹ և դիցէ Ահարոն զծնոս իւր ՚ի վերայ գլխոյ նոխազին կենդանւոյ. և խոստովան լիցի ՚ի վերայ նորա զամենայն անօրէնութիւնս որդւոցն Իսրայէլի, և զամենայն անիրաւութիւնս նոցա, և զամենայն զմեղս նոցա: և դիցեն զնոսա ՚ի վերայ գլխոյ նոխազին կենդանւոյ. և արծակեսցէ՝ ՚ի ձեռն առն պատրաստելոյ՝ յանապատ: ²² Եւ առցէ նոխազն յանձն իւր զանօրէնութիւնս նոցա՝ յերկիր անկոխ. և արծակեսցէ զնոխազն յանապատ: ²³ Եւ մտցէ՝ Ահարոն ՚ի խորանն վկայութեան, և մերկասցի՝ զպատմութեանն կտաւի. զոր զգենոյր ՚ի մտանելն իւրում ՚ի սրբութիւնն. և դիցէ զայն անդ: ²⁴ Եւ լուսացէ՝ զմարմին իւր ջրով ՚ի տեղւոջն սրբութեան. և զգեցցի՝ զպատմութեանն իւր. և ելեալ արասցէ զողջակէզն իւր և զողջակէզ ժողովրդեանն և քաւեսցէ վասն իւր և վասն տան իւրոյ, և վասն ժողովրդեանն, որպէս վասն քահանայիցն: ²⁵ Եւ զճարպն որ վասն մեղացն իցէ՝ հանցեն ՚ի սեղանն: ²⁶ Եւ որ արծակէ զնոխազն նուիրեալ յարծակումն, ողողեսցէ՝ զծործս իւր, և լուսացէ՝ զմարմին իւր ջրով. և ապա՝ մտցէ ՚ի բանակն*:

ԾԱ²⁷ Եւ զգուարակն որ վասն մեղաց, և զնոխազն զվասն մեղաց, որոց

* Այլք. Յորոյ վերայ իցէ վիճակն ար:՝ *Ոսկան յաւելուածով ունի այսպէս*. Յորոյ վերայ իցէ *վիճակ Տեառն: Իսկ յորոյ վերայ* վիճակն արծակելոյ, (10) և կա՞:

* *Ոսկան*. Եւ յորժամ ելցէ ՚ի սեղանոյն որ առաջի:

* *Բազումք*. Յարենէ անտի ՚ի վերայ նորա մատամբ իւ՞:

* Այլք. Եւ որ արծակիցէ զնոխազն ուխտեալ. *ըստ որում նշանակի և ՚ի լուս*՞:

արիւնն մուծաւ քաւել՝ ՚ի սրբութեանն, հանցեն արտաքոյ բանակին և այրեսցեն զնոսա հրով, և զմորթ նոցա և զմիս նոցա, և զապաւառ նոցա: ²⁸Եւ որ այրիցեն զնոսա, ողորդեսցէ՛ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով. և ապա՛ մտցէ ՚ի բանակն: ²⁹Եւ եղիցի ձեզ այն՝ օրէն՝ յաւիտենական:

ԾԲ Յամսեանն եւթներորդի ՚ի տասն ամսոյն, լլկեսջի՛ք զանձինս ձեր. և զամենայն գործ մի՛ գործիցէք. բնակն, և պանդուխտն որ եկեալ յեցեալ իցէ ՚ի ձեզ՝: ³⁰Զի յաւուր յայնմիկ լինիցի քաւութիւն վասն ձեր, առ ՚ի սրբելոյ զձեզ յամենայն մեղաց ձերոց առաջի Տեառն. և սրբեսջի՛ք, ³¹զի շաբաթ շաբաթուց է: Եւ եղիցի ձեզ այն հանգիստ. և լլկեսջի՛ք զանձինս ձեր, զի օրէն յաւիտենական է յազգս ձեր՝: ³²Եւ քաւեսցէ՛ քահանայն զոր օժանիցեն, և զորոյ կատարիցեն զձեռս նորա քահանայանա՛լ յետ հօր իւրոյ. և զգեցցի զպատմուճանն կտաւի զպատմուճանն սո՛ւրբ. ³³և քաւեսցէ՛ զսրբութիւն սրբութեանցն. և զխորանն վկայութեան, և զսեղանն. և քաւեսցէ՛ վասն քահանայիցն, և վասն ամենայն ժողովրդեանն քաւեսցէ: ³⁴Եւ եղիցի ձեզ այն՝ օրէն յաւիտենական քաւել՝ վասն որդւոցն Իսրայէլի յամենայն մեղաց նոցա: մի՛ անգամ ՚ի տարւոջ առնիցի. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:

17

Գլուխ ԺԷ

ԾԳ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց դու ընդ Ահարոնի և ընդ որդիս նորա՝ և ընդ ամենայն որդիսն Իսրայէլի, և ասասցես ցնոսա. Այս բան է զոր պատուիրեաց Տէր՝ և ասէ. ³Այր ոք այր՝ յորդւոցն Իսրայէլի. որ սպանանիցէ արջառ, կամ ոչխար, կամ այծ ՚ի բանակի. և որ ոք սպանանիցէ արտաքոյ բանակին. և ՚ի դուռն խորանին վկայութեան ո՛չ ածիցէ զայն, առ առնելոյ զնա յողջակէզ վասն փրկութեան Տեառն ընդունելի ՚ի հո՛տ անուշից: Եւ որ սպանանիցէ արտաքոյ՝: ⁴և ՚ի դուռն խորանին վկայութեան ո՛չ ածիցէ առ ՚ի մատուցանելոյ պատարագ Տեառն, յանդիման խորանին վկայութեան Տեառն: Յարիւն համարեսցի մարդոյն այնմիկ, որպէս թէ արիւն եհեղ՝ սատակեսցի՛ անձն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ: ⁵Որպէս զի ածիցեն որդիքն Իսրայէլի զզոսս իւրեանց՝ զոր ինքեանք սպանանիցեն ՚ի դաշտս, և մատուցեն առաջի Տեառն ՚ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն. և զենուցուն զնոսա զենումն փրկութեան Տեառն: ⁶Եւ հեղցէ՛ քահանայն զարիւնն առ սեղանովն յանդիման Տեառն, առ դրան խորանին վկայութեան. և հանցեն զճարպն ՚ի հո՛տ անուշից Տեառն՝: ⁷Եւ ո՛չ ևս զոհեսցեն զզոսս իւրեանց սնտտեաց՝ զորոց զիես ինքեանք պոռնկէին. օրէն յաւիտենական եղիցի ձեզ յազգս ձեր: ⁸Եւ ասասցես ցնոսա. Մա՛րդ ոք մարդ՝ յորդւոցն Իսրայէլի, և յորդւոց եկաց յեցելոց ՚ի ձեզ. որ առնիցէ ողջակէզ կամ զոհ. ⁹և ՚ի դուռն խորանին վկայութեան ո՛չ ածցէ առնել զնա Տեառն. սատակեսցի՛ մարդն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ՝:

ԾԴ ¹⁰Եւ մա՛րդ ոք մարդ յորդւոցդ Իսրայէլի, կամ յեկաց յեցելոց ՚ի ձեզ. որ

* Այլք. Որ յեցեալ իցէ ՚ի ձեզ: (30) Յաւուրն յայնմիկ:

* Այլք. Այն ՚ի հանգիստ... յաւիտենական է: (32) Եւ քաւեսցէ:

* Բազումք. Ընդունել ՚ի հոտ անուշից:

* Ոմանք. Եւ հանցէ զճարպն:

* Այլք. Ոչ ածիցէ առնել:

ուտիցէ զամենայն արիւն. հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ անձինն որ ուտիցէ զարիւնն. և կորուսի՛ց զնա ՚ի ժողովրդեցն իւրմէ: ¹¹Ձի շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է. և ես ետու ձեզ զայն ՚ի սեղանն, քաւել՛ վասն անձանց ձերոց. զի արիւն նորա փոխանակ անձին սորա քաւեսցէ* : ¹²Վասն այնորիկ ասացի ցորդիսն Իսրայէլի. Ամենայն անձն ՚ի ձէնջ՝ արիւն մի՛ կերիցէ. և եկն՝ որ եկեալ յեցեալ իցէ ՚ի ձեզ՝ արիւն մի՛ կերիցէ: ¹³Եւ մա՛րդ ոք մարդ՝ յորդուցն Իսրայէլի, կամ յեկաց յեցելոց ՚ի ձեզ. որ որսայցէ ո՛րս երէ ինչ կամ թռչուն որ ուտիցի, հեղցէ՛ զարիւն նորա և ծածկեսցէ՛ հողով: ¹⁴Ձի շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է: Եւ ասացի ցորդիսն Իսրայէլի. Չարիւն ամենայն մարմնոյ մի՛ ուտիցէք, զի շունչ ամենայն մարմնոյ արիւն իւր է: ամենայն որ ուտիցէ զայն՝ սատակեսցի:

ԾԵ ¹⁵Եւ ամենայն անձն որ ուտիցէ զմեռելոտի կամ զգազանաբեկ, յամենայն եկա՛ց կամ ՚ի պանդխտաց, ողողեսցէ՛ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր, և պի՛ղծ լիցի մինչև ցերեկոյ. և ապա սուրբ լիցի* : ¹⁶Եւ եթէ ո՛չ ողողեսցէ զհանդերձս իւր, և ո՛չ լուսացէ զմարմին իւր ջրով, ընկալցի՛ զանօրէնութիւնս յանձն իւր:

18

Գլուխ ԺԸ

ԾՁ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասացես ցնոսա. Ես եմ Տէր Աստուած ձեր. ³ըստ ամենայն գնացից երկրին Եգիպտացւոց յորում պանդխտեցարուք՝ մի՛ առնիցէք: ըստ գնացից երկրին Քանանացւոց յոր ե՛ս տարայց զձեզ՝ մի՛ առնիցէք. և ըստ օրինաց նոցա մի՛ գնայցէք* : ⁴Չիրաւունս իմ առնիջի՛ք, և զիրամանս իմ պահեսջի՛ք, զնալ ՚ի նոսա: Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր* : ⁵Եւ պահեսջի՛ք զամենայն հրամանս իմ, և զամենայն զիրաւունս իմ, և արասջի՛ք զնոսա: զոր արարեալ մարդոյ՝ կեցցէ՛ նոքօք. Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

ԾԷ ⁶Մա՛րդ ոք մարդ՝ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեսցի՛ յայտնել զառականս նորա. զի ե՛ս եմ Տէր: ⁷Չառականս հօր քոյ, և զառականս մօր քոյ մի՛ յայտնեսցես՝ զի մա՛յր քո է. մի՛ յայտնեսցես զառականս նորա: ⁸Չառականս կնոջ հօր քոյ մի՛ յայտնեսցես. զի առականք մօր քում եմ* :

ԾԸ ⁹Չառականս քեռ քոյ՝ թէ առ ՚ի հօրէ՛ իցէ կամ առ ՚ի մօրէ՛ ՚ի տան ծնեալ կամ արտաքոյ, մի՛ յայտնեսցես զառականս նորա: ¹⁰Չառականս դստեր ուստեր քո, կամ զդստեր դստեր քոյ՝ մի՛ յայտնեսցես զառականս նոցա. զի առականք քո եմ* : ¹¹Չառականս դստեր կնոջ հօր քոյ մի՛ յայտնեսցես. զի համհօրեայ քոյ՛ր քո է. մի՛ յայտնեսցես զառականս նորա:

ԾԹ ¹²Չառականս հօրաքեռ քոյ մի՛ յայտնեսցես. զի ընտանի՛ հօր քոյ է: ¹³Չառականս մօրաքեռ քո մի՛ յայտնեսցես. զի ընտանի՛ մօր քոյ է: ¹⁴Չառականս

* *Բազումք.* Փոխանակ անձին նորա քաւեսցի:

* *Ի լուս՝.* Յամենայն բնակաց կամ ՚ի պանդխտաց:

* *Այլք.* Եւ ըստ գնացից երկրին Քանա՛:

* *Այլք.* Չիրաւունս իմ արասջիք:

* *Այլք.* Չի առականք հօր քում եմ:

* *Այլք.* Յայտնեսցես զառականս նորա:

հօրեղբօր քոյ մի՛ յայտ տեսցես, և առ կին նորա մի՛ մտանիցես. զի ազգական քո է՝: ¹⁵Ձառականս նուոյ՛ քոյ մի՛ յայտնեսցես. զի կին որդւոյ՛ քոյ է. մի՛ յայտնեսցես զառականս նորա: Եւ զդուստր ուստեր՛ նորա, կամ զդուստր դստեր նորա մի՛ առնուցուս յայտնել զառականս նորա. զի ընտանի՛ են քո. ամպարշտութիւն է՝: ¹⁶Ձառականս կնոջ եղբօր քո մի՛ յայտնեսցես. զի առականք եղբօր՛ քում են: ¹⁷Ձառականս կնոջ և զդստեր իւրոյ մի՛ յայտնեսցես: Ջղուստր ուստեր նորա՝ և զդուստր դստեր նորա մի՛ առնուցուս յայտնել զառականս նոցա. զի ընտանի՛ քո են. ամպարշտութիւն է: ¹⁸Կին առ քեռք իւրով մի՛ առնուցուս նախանձընդդէմ, յայտնել զառականս նորա, առ նովաւ կենդանւոյն՝:

Կ ¹⁹Եւ առ կին՝ ի դաշտանի պղծութեան իւրոյ մի՛ մտանիցես՝ յայտնել զառականս նորա՝: ²⁰Եւ առ կին ընկերի քոյ մի՛ տացես զարութիւն սերման քոյ, առ ՚ի պղծելոյ ընդ նմա՝:

ԿԱ ²¹Եւ ՚ի սերմանէ քումնէ մի՛ տացես ծառայել իշխանի, և մի՛ պղծեսցես զանուն իմ սուրբ. զի ես եմ Տէր:

ԿԲ ²²Եւ ընդ արուի մի՛ մտանիցես զմուտ կանացի, զի պղծութիւն է այն: ²³Եւ յամենայն անասուն ո՛չ տացես զարութիւն սերման քոյ առ ՚ի պղծելոյ ընդ նմա: Եւ կին՝ մի՛ կացցէ առաջի ամենայն անասնոյ մտաբերել ՚ի նա. զի գարշելի՛ է այն: ²⁴Եւ մի՛ պղծիցիք այնու ամենայնիւ. զի այնու ամենայնիւ պղծեցան ազգքն, զոր ե՛ս մերժեցից յերեսաց ձերոց. ²⁵և եղև գարշելի երկիրն, և հանդէս արարի անօրէնութեանց նոցա ՚ի նմանէ. և տաղտկացաւ երկիրն ՚ի բնակչաց իւրոց՝: ²⁶Եւ պահեցէք զօրէնս իմ, և զամենայն հրամանս իմ. և մի՛ առնիցէք յամենայն պղծութեանցն այնոցիկ, բնակն, և եկն, և պանդո՛ւխտն որ ՚ի ձեզ իցէ: ²⁷Ձի զայն ամենայն պղծութիւնս արարին մարդիկ երկրին, որ էին անդ յառաջ քան զձեզ. և պղծեցաւ երկիրն: ²⁸Ձի մի՛ տաղտկանայցէ և ձկք երկիրն՝ ՚ի պղծել ձեր զնա. որպէս տաղտկացաւ ազգօքն՝ որ էին յառաջ քան զձեզ՝: ²⁹Ձի ամենայն մարդ որ արասցէ յամենայն պղծութեանցն այնոցիկ, սատակեսցին անձինքն՝ որ առնիցեն զայն՝ ՚ի միջոյ ժողովրդեան իւրեանց: ³⁰Եւ պահեսցիք զպահպանութիւնս իմ. զի մի՛ առնիցէք յամենայն պղծութեան օրինացն՝ որ գործեցան յառաջ քան զձեզ. և մի՛ պղծիցիք նոքօք, զի ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

19

Գլուխ ԺԹ

ԿԳ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՛ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայելի՛ և ասացես՛ս ցնոսա. Սո՛ւրբ եղերուք. զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր՝:

* *Ի լուս՝*. Հօրեղբօր քոյ մի՛ յայտնեսցես. *համաձայն այլոց ՚ի բնաբ՝*:

* *Այլք*. Ձառականս նոցա, զի ընտանիք են քո:

* *Ոմանք*. Առ քերք իւրով մի: *Ի լուս՝*. Ձառականս նոցա առ:

* *Ոմանք*. Եւ առ կին դաշտանի:

* *Այլք*. Եւ ՚ի կին ընկերի քո:

* *Այլք*. Ամիրաւութեան նորա ՚ի նմանէ:

* *Ոսկան յաւելու*. *Արդ զգուշացարուք*, զի մի՛ տաղտկանայցէ:

* *Այլք*. Խօսեաց ընդ ժողովրդեան որդւոցն Իսրայելի և ասաս՝:

ԿԴ ³Իւրաքանչիւր 'ի հօրէ և 'ի մօրէ իւրմէ երկնչիցի'ք:

ԿԵ Եւ զշաբաթս իմ պահեսցի'ք. զի ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

ԿԶ ⁴Մի՛ երթայցէք զհետ կռոց. և աստուածս ձուլածոյս մի՛ առնիցէք ձեզ. ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

ԿԷ ⁵Եւ եթէ զոհիցէք զոհ փրկութեան Տեառն, զընդունելի՛ս ձեր զոհեսցիք:

⁶Յաւուր յորում մատուցանիցի՝ կերիցի՛, և 'ի վաղիւ անդր. և եթէ մնասցէ մինչև ցօրն երրորդ՝ հրով այրեսցի՛: ⁷Ապա թէ ուտելով ուտիցի յաւուրն երրորդի, անզո՛հ է, մի՛ ընկալցի. ⁸և որ ուտիցէ զայն՝ մե՛ղս առցէ. զի զսրբութիւն Տեառն պղծեաց, և սատակեսցին անձիմքն որ ուտիցեն՝ 'ի ժողովրդենէ իւրեանց:

ԿԸ ⁹Եւ 'ի հնձել հնձողաց ձերոց զհունձս երկրին ձերոյ, մի՛ սպառիցէք զհունձս անդոց ձերոց մօտ հնձելով. և զանկեալն 'ի հնձոց քոց մի՛ ժողովեսցես: ¹⁰Եւ զայգի քոյ ճռաքաղ մի՛ առնիցես: և պտղաքաղ այգւոյ մի՛ լինիցիս: տնանկին և պանդխտի՝ թողուցուս զայն. ե՛ս եմ Տէր Աստուած ձեր՛:

ԿԹ ¹¹Մի՛ զողանայցէք. և մի՛ ստիցէք. և մի՛ զրպարտիցէք իւրաքանչիւր զընկեր իւր:

Ղ ¹²Եւ մի՛ երդնուցուք սուտ յանուն իմ. և մի՛ պղծիցէք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ. ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

ՂԱ ¹³Մի՛ զրկեսցես զընկեր քո, և մի՛ յափշտակեսցես.

ՂԲ Մի՛ ազցին վարձք վարձկանին առ քեզ մինչև ցառաւօտ՛:

ՂԳ ¹⁴Զհամրն մի՛ զզուիցես. և առաջի կուրին գայթազողութիւն մի՛ դնիցես. և երկնչիցիս 'ի Տեառնէ Աստուծոյ քումմէ:

ՂԴ Ե՛ս եմ Տէր Աստուած քո: ¹⁵Անիրաւութիւն 'ի դատաստանի մի՛ առնիցես. և ակն աղքատի մի՛ առնուցուս. և մի՛ երեսաց աչառիցես հարստի.

արդարութեամբ դատեսցի՛ս զընկեր քո:

ՂԵ ¹⁶Եւ նենգութեամբ ընդ ազգի քում մի՛ գնայցես. և յարիւն ընկերի քոյ մի՛ յօժարիցես:

ՂԶ Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր. ¹⁷մի՛ ատեսցես զեղբայր քո 'ի մտի քում:

Յանդիմանութեամբ յանդիմանեսցես զընկեր քո, և մի՛ ընդունիցիս վասն նորա զմեղս:

ՂԷ ¹⁸Մի՛ խնդրեսցէ վրեժ ձեռն քո. և ընդ որդւոց ժողովրդեան քոյ ոխս՝ մի՛ ունիցիս:

ՂԸ Եւ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. զի ե՛ս եմ Տէր՛. ¹⁹զօրէնս իմ պահեսցի՛ր:

ՂԹ Զանասուն քո յօտարախառնս մի՛ խառնեսցես:

Ձ Եւ զայգի քո՝ մի՛ վարեսցես այլ և այլ:

ՁԱ Զձորձս երկդիմիս գարշելիս՝ մի՛ արկանիցես զքև՛:

ՁԲ ²⁰Եթէ ոք ննջեսցէ ընդ կնոջ արութեամբ սերման. և նա՝ իցէ աղախին պահեալ առն, և փրկանօք չիցէ՝ փրկեալ, և ազատութեամբ չիցէ՝ ազատեալ. հարց և փորձ լիցի նոցա. և մի՛ մեռանիցին՝ զի չիցէ՝ ազատեալ: ²¹Եւ մատուցէ ընդ յանցանաց իւրոց Տեառն առ դրան խորանին վկայութեան խոյ՛ յանցանաց. ²²և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն խոյի՛ն յանցանաց առաջի Տեառն վասն

* Այլք. Յորում մատուցանիցէք, կե՛:

* Այլք. Եւ յայգիս քո ճռա՛.. այգւոյ քոյ մի՛ լինիցիս.. թողցես զայն:

* Այլք. Եւ մի՛ ազցին վարձք:

* Այլք. Եւ մի՛ խնդրեսցէ:

* Այլք. Եւ զձորձս երկդիմիս գար՛:

մեղացն զոր մեղաւ. և թողցի նմա մեղքն՝ զոր մեղաւ:

ՉԳ ²³Եւ յորժամ մտանիցէք յերկիրն՝ զոր Տէր Աստուած տացէ ձեզ, և տնկիցէք զամենայն փայտ ուտելի, սրբեսջի՛ք զպղծութիւն նորա. և պտուղ նորա զերեամ պիղծ լիցի ձեզ, և մի՛ կերիցի: ²⁴Եւ յամին չորրորդի եղիցի ամենայն պտուղ նորա սուրբ, օրհնեալ՝ Տեառն. ²⁵և յամին հինգերորդ կերիցի՛ք զպտուղ նորա. յաւելուած ձեզ լինիցին բերք նորա:

ՉԴ Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր* . ²⁶ի վերայ լերանց մի՛ ուտիցէք:

ՉԵ Եւ մի՛ հմայիցէք. և մի՛ հաւահարց՝ և մի՛ հաւազէտք լինիցիք*:

ՉԶ ²⁷Ցցունս ՚ի վարսից գլխոց ձերոց մի՛ առնիցէք. և մի՛ ապականիցէք զտեսիլ մօրուաց ձերոց:

ՉԷ ²⁸Եւ վէտս ՚ի վերայ ուլոյ մի՛ առնիցէք ՚ի մարմնս ձեր:

ՉԸ Եւ գիր կտեալ մի՛ առնիցէք ՚ի ձեզ:

ՉԹ Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր* : ²⁹Մի՛ պղծիցես զդուստր քո պոռնկեցուցանելով գնա. զի մի՛ պոռնկեցի երկիրն, և լցցի՛ երկիրն անիրաւութեամբ*:

Ղ ³⁰Չաբաթս իմ պահեսջի՛ք, և ՚ի սրբութեանց իմոց երկնչիցի՛ք, զի ե՛ս եմ Տէր:

ՂԱ ³¹Չհետ վիկաց՝ մի՛ երթայցէք, և ՚ի գէտս մի՛ յարիցիք պղծել նոքօք:

ՂԲ Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր. ³²առաջի ալեաց յառնիցես, և պատուեսցես զերեսս ձերոյն,

ՂԳ Եւ երկնչիցի՛ս յԱստուծոյ քումմէ. ե՛ս եմ Տէր Աստուած քո:

ՂԴ ³³Եւ եթէ յարեսցի առ ձեզ եկ՝ յերկրին ձերում, մի՛ նեղիցէք զնա: ³⁴Իբրև զբնակն ձեր լինիցի ձեզ՝ և եկն յարեալ ՚ի ձեզ:

ՂԵ Եւ սիրեսցես զնա իբրև զանձն քո. զի պանդուխտք եղերուք և դո՛ւք յերկրին Եգիպտացոց. ե՛ս եմ Տէր Աստուած ձեր:

ՂԶ ³⁵Մի՛ առնիցէք անիրաւութիւն ՚ի դատաստանի, ՚ի չափս և ՚ի կշիռս, և ՚ի զոյգս: ³⁶Չոյգք արդարք, և չափք արդարք, և կշիռք արդարք, և կապիճ արդար լիցի ձեզ: Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր՝ որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացոց* : ³⁷Եւ պահեսջի՛ք զամենայն զօրէնս իմ, և զամենայն զիրամանս իմ. և արասջի՛ք զնոսա՝ զի ե՛ս եմ Տէր Աստուած:

20

Գլուխ Ի

ՂԷ ¹Խօսեցա՛ւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Եթէ ոք յորդուցդ Իսրայէլի՝ կամ յեկաց պանդխտացդ Իսրայէլի, տացէ զսերմն իւր իշխանի՝ մահով մեռցի. և ազգք երկրին քարկո՛ծ արասցեն զնա քարամբք* : ³Եւ ես հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ մարդոյն այնորիկ. և կորուսի՛ց զնա ՚ի ժողովրդենէ իւրմէ. զի ե՛տ ՚ի սերմանէ իւրմէ իշխանին պղծել

* Այլք. Եւ յամին հինգերորդի.. լիցին:

* Ոսկան. Մի՛ ուտիցէք զմիս ընդ արեան, ՚ի վերայ լե՛:

* Ի լուս՝. Եւ վէտս ՚ի վերայ սգոյ մի՛ առ՝. համաձայն այլոց ՚ի բնար՝. Ի լուս՝. Եւ գիր գրեալ մի՛ առն՝:

* Այլք. Երկիրն անօրէնութեամբ:

* Բազումք. Լինիցի ձեր:

* Այլք. Կամ յեկելոց պանդխտացն:

զարբութիւնս իմ. և զարշեցուցանել զանուն սրբեցելոցն իմոց*։ ⁴Ապա թէ ակնածելով ակնածիցեն բնակիչք երկրին աչօք իւրեանց յառնէն յայնմանէ. ՚ի տալ նորա զսերմն իւր իշխանին՝ չսպանանել զնա, ⁵հաստատեցի՛ց զերեսս իմ ՚ի վերայ առնն այնորիկ, և ՚ի վերայ ազգի նորա, և կորուսի՛ց զնա և զամենայն միաբանեալսն ընդ նմա՝ առ ՚ի պոռնկեցուցանելոյ զնոսա ընդ իշխանին՝ ՚ի միջոյ ժողովրդեան իւրեանց։

ՂԸ ⁶Եւ անձն որ երթիցէ զհետ վիկայ՛ց կամ գիտայ՛ց, պոռնկել զկնի նոցա. հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ անձինն այնորիկ, և կորուսի՛ց զնա ՚ի ժողովրդենէ իւրմէ*։ ⁷Եւ սրբեսջի՛ք. և եղիջիք սուրբք, զի սուրբ են ես Տէր Աստուած ձեր։ ⁸Եւ պահեսջի՛ք զիրամանս իմ, և արասջի՛ք զնոսա. ես եմ Տէր Աստուած ձեր՝ որ սրբեմ զձեզ։

ՂԹ ⁹Մարդ որ մարդ՝ որ հայիոյեսցէ զհայր իւր կամ զմայր իւր՝ մահով մեռցի. զհայր իւր և զմայր իւր, թէ բամբասիցէ՝ մահապարտ է*։

Ճ ¹⁰Եւ այր որ թէ շնասցի ընդ առնակնոջ, կամ շնայցէ ընդ կնոջ ընկերի իւրոյ, մահով մեռցին, և շնացողն և շնացեալն*։

ՃԱ ¹¹Եւ այր որ՝ որ ննջիցէ ընդ կնոջ հօր իւրոյ, զառականս հօր իւրոյ յայտնեաց. մահով մեռցին երկոքին, զի ամպարշտեցան, և մահապարտք են։

ՃԲ ¹²Եւ եթէ ննջեսցէ որ ընդ նուոյ՛ իւրում, մահով մեռցին երկոքին. զի ամպարշտեցան, և մահապարտք են։

ՃԳ ¹³Եւ այր որ եթէ ննջեսցէ ընդ արուի զգործ կանացի. պղծութիւն գործեցին, մահով մեռցին երկոքին՝ զի մահապարտք են։

ՃԴ ¹⁴Եւ այր որ որ առնուցու զկին և զմայր նորա, անօրէնութիւն է, հրով այրեսցեն զնա՝ և զնոսա. և մի՛ լինիցի ՚ի ձեզ անօրէնութիւն։

ՃԵ ¹⁵Եւ այր որ՝ որ տացէ զարութիւն իւր յանասուն՝ մահով մեռցի. և զանասունն սպանջի՛ք*։ ¹⁶Եւ կին՝ որ մատչիցի յամենայն անասուն պղծել նմա ՚ի նմանէ, սպանանիջի՛ք զկինն և զանասունն. մահով մեռանիցին՝ զի մահապարտք են*։

ՃԶ ¹⁷Եւ այր որ՝ որ առնուցու զքոյր իւր զառ ՚ի հօրէ՝ կամ զառ ՚ի մօրէ, և տեսանիցէ զառականս նորա, և նա տեսանիցէ զառականս նորա՝ նախատի՛նք են. սատակեսցին յերեսաց որդւոց ազգին իւրեանց. զի զառականս քե՛ռ իւրոյ յայտնեաց. ընկալցին զմեղս իւրեանց*։

ՃԷ ¹⁸Եւ այր՝ որ ննջիցէ ընդ կնոջ դաշտանի, և յայտնեսցէ զառականս նորա, զի զաղբար արեան նորա յայտնեաց, և սա՛ յայտնեաց զբղխումն արեան իւրոյ, սատակեսցին երկոքեան յազգէ իւրեանց։

ՃԸ ¹⁹Եւ զառականս հօրաքեռ քոյ և զմօրաքեռ քոյ՝ մի՛ յայտնեսցես. զի զընտանութեան առականս յայտնեցին, զմեղս իւրեանց տարցին, և անորդի՛ք մեռցին։

ՃԹ ²⁰Եւ մարդ որ՝ որ ննջիցէ ընդ կնոջ քեռւոյ իւրոյ, զառականս քեռւոյ իւրոյ յայտնեաց. զմեղս իւրեանց ընկալցին, և անորդի՛ք մեռցին։

* Այլք. Չանուն սրբեցելոցն իմոց։

* Ոմանք. Պոռնկել զհետ նոցա։

* Այլք. Կամ զմայր իւր թէ բամբասեսցէ։

* Ի լուս՝. Եւ շնացողն և շնա՞. համաձայն այլոց ՚ի բնաբ՞։

* Այլք. Եւ զանասունն սպանանիջիք։

* Ի լուս՝. Եւ զկինն և զանա՞. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞։

* Ոմանք. Չառականս սորա՛ նախա՞։

Եւ 21 Եւ մարդ որ՝ որ առնուցու զկին եղբոր իւրոյ՝ պղծութիւն է. զառականս եղբոր իւրոյ յայտնեաց, անորդի՛ք մեռցին:

Եւ 22 Եւ պահեսջի՛ք զամենայն հրամանս իմ, և զամենայն իրաւունս իմ, և արասջի՛ք զնոսա. և ո՛չ տաղտկասցի ձեք երկիրն յոր ես տարայց զձեզ բնակել ՚ի նմա: 23 Եւ մի՛ զնայցէք ըստ օրինաց ազգացն զոր մերժեցի՛ց ես ՚ի ձեռնջ. զի զայն ամենայն արարին, և գարշեցայ ես ՚ի նոցանէն. 24 և ասացի ցձեզ. Դուք ժառանգեցէք զերկիրն զայն, և ես տաց ձեզ զնա ՚ի ստացուած. երկիր որ բղխէ զկաթն և զմեղր: Ես եմ Տէր Աստուած ձեր՝ որ մեկնեցի զձեզ յամենայն ազգաց. 25 և զատուսջի՛ք զանձինս ձեր ՚ի մէջ անասնոց՝ սրբոց և անսրբոց, և ՚ի մէջ թռչնոց՝ սրբոց և անսրբոց. և մի՛ պղծէք զանձինս ձեր անասնովք և թռչնովք, և ամենայն սողնովք երկրի. զոր ես զատուցի ձեզ ՚ի պղծութիւն* : 26 Եւ եղիջի՛ք ինձ սուրբք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր. որ զատուցի՛ զձեզ յամենայն ազգաց լինել ինձ* : 27 Եւ այր կամ կին՝ որ լինիցի վիճակ կամ գետ, մահու մեռցի. քարամբք քարկոծեցէք զնոսա՝ զի մահապարտք են* :

21

Գլուխ ԻԱ

Եւ 1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Խօսեաց ընդ որդիսդ Ահարոնի ընդ քահանայս՝ և ասացես ցոռսա. զի մի՛ պղծիցին յոգիս ազգի իւրեանց. 2 կամ յընտանի՛ կամ ՚ի դրացի իւրեանց: այլ կամ ՚ի հայր, կամ ՚ի մայր, կամ յուստերս, կամ ՚ի դստերս, կամ յեղբայր, 3 կամ ՚ի քոյր, կամ ՚ի դուստր մերձաւոր իւր՝ զոր առն չիցէ տուեալ՝ նոքօք պղծիցին: 4 Եւ մի՛ պղծեսցին վայրապար ՚ի ժողովրդեան իւրում ՚ի պղծութիւն իւրեանց* : 5 Եւ մի՛ գերծուցուն զգլուխս իւրեանց ՚ի վերայ մեռելոյ ՚ի կնտութիւն: և զտեսիլ մօրուաց մի՛ գերծուցուն. և ՚ի մարմինս իւրեանց վէտս մի՛ հատանիցեն: 6 Չի սուրբ լինիցին Տեառն Աստուծոյ իւրեանց: և մի՛ գարշեցուցեն զանուն Աստուծոյ իւրեանց. զի զոհսն Տեառն պատարագ Աստուծոյ իւրեանց նոքա՝ մատուցանեն: և եղիցին սուրբք* :

Եւ 7 Կին պոռնիկ և պղծեալ՝ մի՛ առնուցուն. և զկին հանեալ յառնէ իւրմէ մի՛ առնուցուն. զի սուրբ է Տեառն Աստուծոյ իւրում, 8 և սրբեսցէ՛ զանձն. զի զպատարագն Տեառն Աստուծոյ ձերոյ նա՝ մատուցանէ. սուրբ եղիցի. զի սուրբ եմ ես Տէր՝ որ սրբեմ զնոսա: 9 Եւ դուստր ա՛ռն քահանայի՝ եթէ ՚ի պոռնկութեան պղծիցի, զանուն հօր իւրոյ բամբասեաց՝ հրով այրեսցի:

Եւ 10 Եւ քահանայն մեծ՝ յեղբարց իւրոց. յորոյ վերայ գլխոյն արկեալ իցէ զելզն օծութեան. և կատարեալ զձեռս նորա զգենո՛ւլ զպատմութեանն, զգլուխս իւր մի՛ ապախուրեսցէ, և զհանդերձս իւր մի՛ պատառեսցէ*. 11 և յանձն վախճանեալ մի՛ մտցէ. ՚ի հայր իւր կամ ՚ի մայր իւր մի՛ պղծիցի: 12 Եւ ՚ի սրբութեանց անտի մի՛ ելանիցէ. և մի՛ պղծեսցէ զսրբութիւն Աստուծոյ իւրոյ. զի սուրբ ելզն օծութեան որ յԱստուծոյ ՚ի վերայ նորա է. զի ես եմ Տէր: 13 Եւ կին

* Այլք. Եւ մի՛ պղծիցէք զանձինս: Յօրինակին. Չոր ես զատուցի զձեզ ՚ի:

* Այլք. Չի սուրբ եմ ես Տէր Աստուած:

* Այլք. Կին, յորոց լինիցի վիճակ:

* Ոմանք. ՚ի պղծութեան իւրեանց:

* Այլք. Լինիցին Աստուծոյ իւրե՛... զի զոհն Տեառն:

* Բազումք. Յորոյ վերայ ՚ի գլխոյն անկեալ է զիւզն օծ՝:

կոյս յազգէ իւրմէ առնուցու. ¹⁴զայրի և զհանեալ, և զպոռնիկ, մի՛ առնուցու. այլ կոյս յազգէ՛ իւրմէ առնուցու կին: և մի՛ պղծեսցէ զանուն իմ: ¹⁵և մի՛ պղծեսցէ զսերմն իւր ՚ի ժողովրդեան իւրում. զի ե՛ս եմ Տէր՝ որ սրբեմ զնա:

Եժէ ¹⁶Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁷Խօսեա՛ց ընդ Ահարոնի՝ և ասասցես. Ա՛յր ոք՝ յազգէ քումմէ՝ յամենայն ազգս ձեր յորում իցէ՛ արատ, մի՛ մատիցէ մատուցանել պատարագ Աստուծոյ իւրոյ. ¹⁸զի ամենայն այր՝ յորում իցէ արատ՝ մի՛ մատիցէ: Այր կաղ, կամ կոյր, կամ կարծունջ, կամ ակընջատ*.
¹⁹կամ այր ձեռնբեկ, կամ ոտնբեկ, ²⁰կամ սապատողն, կամ շիլ, կամ պտղակն. կամ այր յորում իցէ քոս, կամ քաղցկեղ, կամ միորձի*:
²¹Ամենայն այր յորում իցէ արատ, ՚ի զաւակէ Ահարոնի քահանայի, մի՛ մերձեսցի մատուցանել զոս Աստուծոյ քում. զի արատ գոյ ՚ի նմա: և զպատարագսն Աստուծոյ մի՛ մատչիցի մատուցանել. զի պատարագքն Աստուծոյ՝ սրբութիւնք սրբութեանց են: ²²Ի սրբութեանց անտի կերիցէ. ²³բայց ՚ի վարագոյրն մի՛ մերձեսցի, և առ սեղանն մի՛ մատիցէ, զի արատաւոր է: և մի՛ պղծեսցէ զսրբութիւն Աստուծոյ իւրոյ, զի ե՛ս եմ Տէր որ սրբեմ զնոսա: ²⁴Եւ խօսեցաւ Մովսէս ընդ Ահարոնի և ընդ որդիս նորա, և ընդ ամենայն որդիսն Իսրայէլի*:

22

Գլուխ ԻԲ

ԵժՁ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Ասասցէ՛ս ցԱհարոն և ցորդիս նորա, և զգոյ՛ջ լինիցին սրբութեանց՝ որդւոցն Իսրայէլի. և մի՛ պղծեսցեն զանուն իմ սուրբ՝ զորս նոքայն սրբեն ինձ, զի ե՛ս եմ Տէր: ³Ասասցէ՛ս ցնոսա. յազգս ձեր ամենայն այր՝ յամենայն զաւակէ ձերմէ որ մերձենայցէ ՚ի սրբութիւնսն, որ սրբիցեն որդիքն Իսրայէլի Տեառն, և պղծութիւն իւր ՚ի նմա՝ իցէ, սատակեսցի՛ անձնն այն յերեսաց ինոց, զի ե՛ս եմ Տէր: ⁴Եւ այր ոք՝ ՚ի զաւակէ Ահարոնի քահանայի, թէ բորոտ՝ կամ սերմնակաթ իցէ՝ ՚ի սրբութեանց անտի մի՛ կերիցէ մինչև սրբեսցի: Եւ որ մերձեսցի յամենայն պղծութիւնս ոգւոյ, կամ այր յորմէ ելանիցէ՛ արութիւն սերման. ⁵կամ որ մերձենայցէ յամենայն սողուն պիղծ՝ զոր պղծիցեն, կամ ՚ի մարդ որով պղծիցեն զնա ըստ ամենայն պղծութեան նորա: ⁶Անձն որ մերձենայցէ՛ ՚ի նա՝ պիղծ լիցի մինչև ցերեկոյ: և մի՛ կերիցէ ՚ի սրբութեանց անտի, եթէ ո՛չ լուանայցէ զմարմին իւր ջրով*. ⁷և մտանիցէ արեգակն. սուրբ լիցի, և ասպա՛ կերիցէ ՚ի սրբութեանց անտի. զի հա՛ց նորա է այն: ⁸Չմեռելոտի և զգազանաբեկ մի՛ ուտիցէ, պղծել՝ նմա նոքօք. զի ե՛ս եմ Տէր: ⁹Եւ պահեսցեն զպահպանութիւնս իմ, զի մի՛ ընդունիցին վասն նոցա մեղս. և մեռանիցին վասն այնորիկ՝ եթէ պղծիցեն զնոսա. զի ե՛ս եմ Տէր որ սրբեմ զնոսա:

Եժէ ¹⁰Եւ ամենայն օտարագգի՝ մի՛ կերիցէ զսրբութիւնսն: պանդուխտ քահանային և վարձկանն՝ մի՛ կերիցեն ՚ի սրբութեանցն: ¹¹Բայց թէ քահանայն ստասցի ոգի ստացուածով արծաթոյ՝ նա՛ կերիցէ ՚ի հացից անտի նորա. և

* Այլք. Առնուցու կին: (15) Եւ մի՛ պղծեսցէ զսերմն իւր ՚ի ժո՛ւ:

* Այլք. Ականջատ:

* Այլք. Կամ քարցկեղ:

* Ի լուս՝. Եւ խօսեցաւ զայս Մովսէս:

* Այլք. Որ մերձենայցէ ՚ի նա, պիղծ:

ընտոծինք նորա՝ կերիցեն՝ ՚ի հացից անտի նորա:

ԵԺԸ ¹²Եւ դուստր անն քահանայի, եթէ լինիցի անն այլազգւոյ, նա ՚ի պտղոյ սրբութեանցն մի՛ կերիցէ: ¹³Եւ դուստր անն քահանայի, եթէ լինիցի այրի, կամ հանեալ. և զաւակ ո՛չ իցէ նմա, և դառնայցէ անդրէն ՚ի տուն իւր հայրենի, ըստ մանկութեան իւրում ՚ի հացից անտի հօր իւրոյ կերիցէ՛. և ամենայն այլազգի՝ մի՛ կերիցէ ՚ի նոցանէ՛:

ԵԺԹ ¹⁴Եւ մարդ՝ որ յանգէտս կերիցէ զսրբութիւնսն, յաւելցէ՛ ՚ի նոյն զիինգերորդ մասնն. և տացէ զսրբութիւնն ցքահանայն. ¹⁵և մի՛ պղծեսցեն զսրբութիւնս սրբութեանցն որդւոցն Իսրայէլի, զոր զատուցին նոքա Տեառն՝: ¹⁶Եւ ածիցեն ՚ի վերայ իւրեանց անօրէնութիւն յանցանաց, ուտելով իւրեանց զսրբութիւնսն սրբութեանցն. զի ե՛ս եմ Տէր՝ որ սրբեմ զնոսա:

ԵԻ ¹⁷Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁸Խօսեաց ընդ Ահարոնի և ընդ որդիս նորա, և ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի՝ և ասացես զնոսա. Ա՛յր ոք՝ յորդւոցն Իսրայէլի, կամ յեկացն յարեցելոց ՚ի նոսա ՚ի մէջ Իսրայէլի. որ մատուցանիցէ զպատարագս իւր ըստ ամենայն խոստովանութեանց իւրեանց: կամ ըստ ամենայն կամաց իւրեանց՝ զոր ինչ մատուցանիցեն Տեառն յողջակե՛զ՝ ¹⁹ընդունելի առ ՚ի ձէնջ, արու՛ անարատ յանդւոց և յօդեաց և յայծեաց. ²⁰զամենայն արատաւորն մի՛ մատուցանիցեն Տեառն. զի ո՛չ լիցի ընդունելի առ ՚ի ձէնջ: ²¹Եւ այր՝ որ մատուցանիցէ զպատարագս իւր ըստ ամենայն խոստովանութեան իւրեանց, կամ ըստ ամենայն կամաց իւրեանց զո՛հ փրկութեան Տեառն, ուխտեալ ուխտ, կամ ըստ կամաց կամ ՚ի տօնս ձեր, յանդւոց կամ յօդեաց, անարատ լինիցի ընդունելութիւն. ամենայն արատ մի՛ լիցի ՚ի նմա: ²²Ձկոյրն, կամ զկաղն, կամ զբէկն, կամ զլեզուատ, կամ զմարմառոտ, կամ զքոսոտ, կամ զերքոյնոտ, մի՛ մատուցանիցեն զայն Տեառն, և յողջակե՛զ՝ ո՛չ տայցէք ՚ի նոցանէ՛ ՚ի սեղան Տեառն՝: ²³Ձարջառ և զոչխար՝ զակընջատ, կամ զկրճատ՝ քե՛զ արասցես ՚ի զենլիս. և յուխտ քո մի՛ լիցի ընդունելի՛: ²⁴Ձթաղամաւորն, և զմալեալն, և զքածաւարոտն, և զհատեալն, մի՛ մատուցանիցես Տեառն. և յերկրի ձերում մի՛ առնիցէք՝: ²⁵Եւ ՚ի ձեռանէ այլազգւոյն մի՛ մատուցանիցէք զպատարագս Աստուծոյ ձերոյ, յամենայնէ յայնպիսեաց անտի. զի խեղութիւնք և արատք են ՚ի նոսա. և ո՛չ լինիցի այն ընդունելի առ ՚ի ձէնջ:

ԵԻԱ ²⁶Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁷Արջառ կամ ոչխար կամ այծ՝ յորժամ ծնանիցին, կացցէ՛ զեթն օր ընդ մարբն. և յօրէն ութերորդէ և անդր ընդունելի՛ լիցի ՚ի պատարագ ընծայ Տեառն:

ԵԻԲ ²⁸Ձարջառ և զոչխար՝ և զծնունդս իւրեանց՝ մի՛ մատուցանիցէք ՚ի միում աւուր՝:

ԵԻԳ ²⁹Եւ եթէ զոհեսցես զզոհ զոհութեան Տեառն. զընդունելիսն առ ՚ի ձէնջ զոհեսցիք: ³⁰Ի նմին՝ աւուր կերիցի, և մի՛ թողուցուք ՚ի մսոյ անտի յա՛յգ, զի ե՛ս

* Ոմանք. Եւ զաւակ ո՛չ իցէ նորա:

* Այլք. Սրբութեանցն Իսրայէլի, զոր:

* Այլք. Այր ոք այր յորդւոցն.. յարեցելոց ՚ի նոսա: Ոմանք. խոստովանութեան իւրոյ.. կամաց իւրոց:

* Այլք. Կամ զորքինոտ՝ մի՛ մատու՛:

* Այլք. Արասցես զենլիս, և յուխտ քո մի լինիցին:

* Ոմանք. Ձթաղամաւորն, և զմալեալն:

* Ի լուս՝. Մի՛ սպանանիցէք ՚ի միում աւուր. համաձայն այլոց ՚ի բնաբ՛:

են Տէր: ³¹Եւ պահեսջի՞ք զպատուիրանս իմ, և արասջի՞ք զնոսա. զի ես եմ Տէր:
³²Եւ մի՛ պղծիցէք զանուն իմ սուրբ՝ զի ես եմ Տէր. և սրբեցայց ՚ի մէջ որդւոցն
Իսրայէլի: Ե՛ս եմ Տէր որ սրբեմ զձեզ, ³³որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացոց
լինել ձեր Աստուած. ե՛ս եմ Տէր:

23

Գլուխ ԻԳ

ԳԻԴ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և
ասասցես ցնոսա. Տօ՛նս Տեառն զոր առնիցէք, կոչեցեալք և սուրբք՝ այնք իցեն
իմ տօնք*։ ³Չվկեց օր գործեսցես զգործ. յաւուրն եւթներորդի, /ա./ Շաբա՛թ՝
հանգիստ անուանեալ սուրբ Տեառն. զամենայն գործ մի՛ գործիցէք, զի շաբա՛թ
Տեառն է, յամենայն բնակութեան նոցա*։ ⁴Որ այն են տօնք Տեառն: և նոքա
անուանեալք են սուրբք զորս անուանիցէք ՚ի տօնս նոցա: ⁵Յառաջնուն
ամսեանն ՚ի տասն և ՚ի չորս ամսոյն ՚ի մէջ երեկորեացն /բ./ Չատիկ Տեառն. ⁶և
յաւուրն հնգետասաներորդի նորին ամսոյ՝ տօ՛ն բաղարջակերաց Տեառն, զեւթն
օր բաղարջ կերիցիք: ⁷Եւ օրն առաջին անուանեալ՝ սուրբ եղիցի ձեզ.
զամենայն գործ սպասաւորութեան մի՛ առնիցէք: ⁸Եւ մատուցիք ողջակէ՛զս
Տեառն. զեւթն օր՝ և օրն եւթներորդ՝ սուրբ կոչեցեալ լիցի ձեզ. զամենայն գործ
սպասաւորութեան մի՛ գործիցէք*։ ⁹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ.
¹⁰Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Յորժամ մտանիցէք յերկիրն զոր
ես տա՛ց ձեզ. իբրև հնձիցէք զհունձս նորա, բերիցէ՞ք զորայն զպտուղ հնձոց
ձերոց առ քահանայն*։ ¹¹և հանցէ՛ զորայն առաջի Տեառն յընդունելութիւն առ ՚ի
ձէնջ: Եւ ՚ի վաղիւ անդր յաւուրն առաջնուն հանցէ՛ զայն քահանայն*։ ¹²Եւ
արասցէ՛ յաւուրն յորում մատուցանիցէ զորայն, ոչխա՛ր անարատ տարևոր
յողջակէ՛զ Տեառն. ¹³և զզոհն իւր երկուս տասանորդս նաշիւոյ զանգելոյ իւղով,
զո՛հ Տեառն ՚ի հոտ անուշից Տեառն. և նուէ՛ր նորա չորրորդ մասն դորակի
գինւոյ*։ ¹⁴և պա՛ն մի: Եւ զամենայն մուրկ փխրեալ մի՛ ուտիցէք մինչև յաւուրն
յորում մատուցանիցէք պատարագ Տեառն Աստուծոյ ձերոյ. օրէն յաւիտենական
յազգս ձեր. յամենայն բնակութեան ձերում*։ ¹⁵Եւ համարեսջիք ձեզ ՚ի վաղուէ՛
շաբաթուն յօրէ յօրմէ մատուցանիցէք զորայ ուխտին, եւթն եւթներորդս
բովանդակ թուիցես ¹⁶մինչև ցվաղիւն յետին եւթներորդին թուիցէք. /գ./ Յիսուն
օր, և մատուցանիցէք զո՛հ նոր Տեառն*։ ¹⁷Ի բնակութենէ ձերմէ մատուցանիցէք
պանս նուիրի. երկուս պանս յերկուց տասանորդաց լինիցի պա՛ն մի. խմորեալք
եփեսցին յառաջնոց արդեանց քոց Տեառն*։ ¹⁸Եւ մատուցանիցէք ընդ հացիցն
եւթն որոջ անարա՛տ տարևորս, և զուարակ մի յանդուց, և խոյս երկուս

* *Ոմանք.* Տօն Տեառն. և *ոմանք.* Տունք Տեառն զոր.. իմ տունք:

* *Ոսկան ՚ի լուս.* Յամենայն բնակութեան ձերում:

* *Յօրինակին պակասէր.* Ողջակէզս Տեառն *զեւթն օր.* և օրն:

* *Այլք.* Եւ ասասցես ցնոսա. յորժամ... տաց ձեզ. և հնձիցէք զհունձ*:

* *Այլք.* Անդր աւուրն առաջնոյ:

* *Այլք.* Ի նաշիոյ զանգելոյ իւ՛ն:

* *Այլք.* Մինչև յօրն յորում:

* *Բազումք.* Եւ մատուցէք զո՛հ նոր:

* *Այլք.* Արդեանց Տեառն:

անարատս: և եղիցին յողջակէ՛զ Տեառն. և զոհք նոցա և նուէրք նոցա՝ զո՛հ ՚ի հոտ անուշից Տեառն: ¹⁹Եւ առնիցէք նոխագ մի՛ յայծեաց վասն մեղաց, և երկուս գառննս տարևորս ՚ի զոհ խաղաղականաց ²⁰ընդ պանից առաջնոց արմտեացն: Եւ նուիրեսցէ՛ զայն քահանայն նուէ՛ր ընդ պանից առաջնոց արմտեացն յանդիման Տեառն. հանդերձ երկու՛ գառամբքն սրբեսցին Տեառն. քահանային որ մատուցանիցէ զայն՝ եղիցին*²¹: Եւ կոչեսցիք զօրն զայն անուանեալ և կոչեսցեալ օր Աստուծոյ, սո՛ւրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք ՚ի նմա. օրէն յաւիտենական եղիցի յազգս ձեր յամենայն բնակութեան ձերում*²²: Եւ յորժամ հնձիցէք զհունձս երկրի ձերոյ. մի՛ առ հասարակ զնշխար հնձոց անդին քոյ ՚ի հնձել քում ամփոփեսցես. և զանկեալն ՚ի հնձոցն քոց մի՛ ժողովեսցես. այլ աղքատին և պանդխտին քում թողուցուս զայն. զի ե՛ս եմ Տէր Աստուած ձեր*²³: Խօսեսցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁴Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասասցես. Յամսեան եւթներորդի՝ որ օր մի իցէ ամսոյն, եղիցի ձեզ հանգի՛ստ. Յիշատակ փողոց՝ կոչեսցեալ սուրբ Տեառն: ²⁵Չամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք, և մատուցանիցէք ողջակէ՛զ Տեառն: ²⁶Խօսեսցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁷Ի տասներորդում աւուր՝ ամսոյն եւթներորդի, որ օրն /դ./ Քաւութեան է, կոչեսցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ. և խոնարհեցուսջիք զանձինս ձեր յիններորդէ օրէ ամսեան յերեկորեայ. և մատուցիք ողջակէ՛զս Տեառն*²⁸: Չամենայն գործ մի՛ գործիցէք յաւուրն յայնմիկ, զի օր՝ քաւութեան է նա ձեզ. քաւե՛լ վասն ձեր առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ: ²⁹Ամենայն անձն որ ո՛չ խոնարհեսցի յաւուրն յայնմիկ, սատակեսցի՛ ՚ի ժողովրդենէ իւրմէ: ³⁰Եւ ամենայն անձն որ գործիցէ գործ յաւուր յայնմիկ, կորիցէ՛ անձն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ: ³¹Չամենայն գործ՝ մի՛ գործիցէք. օրէն յաւիտենական եղիցի յազգս ձեր, յամենայն բնակութեան ձերում: ³²Շաբաթ շաբաթուց եղիցի ձեզ. և խոնարհեցուսջիք զանձինս ձեր յիններորդէ օրէ ամսեանն յերեկորեայ մինչև ցերեկոյն. շաբաթացուսջիք զշաբաթս ձեր*³³: Խօսեսցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ³⁴Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Ի՛ հնգետասաներորդի աւուր ամսեանն եւթներորդի տօն /ե./ Տաղաւարահարաց զեւթն օր Տեառն*³⁵: Եւ օրն առաջին կոչեսցեալ սո՛ւրբ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք: ³⁶Ձեւթն օր մատուցանիջիք ողջակէ՛զս Տեառն. և օրն եւթներորդ կոչեսցեալ, սո՛ւրբ եղիցի ձեզ, և մատուցանիցէք ողջակէ՛զ Տեառն. քանզի ե՛լք են. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք: ³⁷Ա՛յս են տօնք Տեառն՝ զորս կոչիցէք կոչեսցեալ սո՛ւրբս, առ ՚ի մատուցանելոյ ընծայս Տեառն, զողջակէ՛զս և զզոհս իւրեանց, և նուէ՛րս օրըստօրէ ³⁸առանց շաբաթուց Տեառն. և առանց ընծայիցն ձերոց, և առանց ամենայն ուխտիցն ձերոց, և առանց կամայականաց ձերոց՝ զոր տայցէք Տեառն: ³⁹Եւ ՚ի հնգետասաներորդում աւուր ամսոյն եւթներորդի՝ յորժամ բովանդակիցէք զարդիւնս երկրին, տօնեսցիք Տեառն զեւթն օր. յաւուրն առաջնում հանգի՛ստ, և յաւուրն եւթներորդի հանգի՛ստ*⁴⁰: Եւ

* Այլք. Մատուցանիցէ զնոսա, եղի՛:

* Այլք. Անուանեալ կոչեսցեալ սուրբ եղիցի ձեզ:

* Այլք. Անդոյն քոյ.. և զանկեալն հնձոցն քոց մի՛ ժողովիցես... և պանդխտին թողուցուս:

* Այլք. Յիններորդ օրէն յերեկորեայ:

* Այլք. Յիններորդ, կամ յիններորդէ ամսեանն յերեկորեայն:

* Ոսկան. Տաղաւարահարաց է:

* Այլք. Տօնեսցիք զեւթն օր... և յաւուրն ութերորդի հանգիստ:

առնուցուք ձեզ յաւուրն առաջնում պտուղս զգեղեցիկ ծառոց, և կողերս յարմաւենեաց, և ոստս ՚ի տերևախիտ ծառոց և յուռեաց, և զոստս հագնեաց ՚ի ձերոց. ուրախ լինել առաջի Տեառն զելքն օր*։ ⁴¹Եւ տօնեսջիք զնա տօն Տեառն զելքն օր տարւոյն. օրէն յաւիտենական յազգս ձեր, յամսեանն եւթներորդի՝ տօնեսջիք զնա։ ⁴²Ի տաղաւարս բնակեսջիք զելքն օր. ամենայն բնակքն Իսրայէլի բնակեսցեն ՚ի տաղաւարս*։ ⁴³Ղի գիտասցեն ամենայն ազգք ձեր, թէ ՚ի տաղաւարս բնակեցուցի զորդիսդ Իսրայէլի ՚ի հանել ինձ զնոսա յերկրէն Եգիպտացոց. Ես եմ Տէր Աստուած ձեր։ ⁴⁴Եւ պատմեաց Մովսէս զտօնս Տեառն որդւոցն Իսրայէլի։

24

Գլուխ ԻԴ

Եիտ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Պատուիրեա՛ որդւոցն Իսրայէլի. և առցեն քեզ եւդ ձիթենեաց սուրբ խակակուրթ ՚ի լոյս. և այրիցի ճրագ հանապազորդ*։ ³Արտաքոյ վարագուրին ՚ի խորանին վկայութեան. և լուցցէ՛ զայն Ահարոն և որդիք նորա, յերեկորեայ մինչև ցառաւօտ առաջի Տեառն անպակաս. օրէն յաւիտենական յազգս ձեր։ ⁴Ի վերայ աշտանակին սրբոյ այրիցէք զճրագունսն առաջի Տեառն մինչև ցառաւօտ։

Եի՛՛՛ ⁵Եւ առնուցուք նաշի՛հ, և առնիցէք զայն՝ երկոտասան պան. յերկուց տասանորդաց լինիցի պան մի։ ⁶Եւ դնիցէք զնոսա երկուս նուէրս. վեց պան զմի նուէր ՚ի վերայ սեղանոյն սրբոյ առաջի Տեառն։ ⁷Եւ դիցես ՚ի վերայ նուիրին կնդրուկ սուրբ՝ և աղ. և եղիցին ՚ի հաց յիշատակի զառաջաւոր Տեառն*։ ⁸Յաւուրն շաբաթուց դնիցէք առաջի Տեառն, հանապազորդ յորդւոցն Իսրայէլի ուխտ յաւիտենական*։ ⁹Եւ եղիցի Ահարոնի և որդւոցն նորա, և կերիցեն զայն ՚ի սուրբ տեղոջ. զի սրբութիւն սրբութեանց է այն նմա ՚ի զոհաւորացն Տեառն՝ օրէն յաւիտանական։

Եիտ ¹⁰Եւ ել որդի կնոջ Իսրայէլացոյ, և նա՛ւ էր որդի անն Եգիպտացոյ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի, և կռուեցան ՚ի բանակին։ Որ յԻսրայէլացոյ անտի էր. և այր մի Իսրայէլացի, ¹¹և անուանեալ կնոջն Իսրայէլացոյ զԱնունն՝ և անէծ. և ածին զնա առ Մովսէս. և անուն մօր նորա Սաղամիթ՝ դուստր Դաբրեայ, յազգէ Դանայ*։ ¹²Եւ արկին զնա ՚ի պահ, դատել հրամանաւ Տեառն*։ ¹³Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁴Յանէ՛ք զայրն որ անէծն՝ արտաքոյ բանակին. և դիցեն որք լուան՝ զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ նորա, և քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդն*։ ¹⁵Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեսցիս և ասասցես ցնոսա. Այր ոք այր՝ որ անիծանիցէ զԱստուած, մեղս ընկալցի. ¹⁶Ղի անուանեաց զանուն Տեառն՝ մահու մեռցի. քարընկէցութեամբ քարկոծ

* *Յօրինակին.* Յագնեաց ձերոց, ուր՝: *Յօրինակին պակասէր.* Տեառն զելքն օր:

* *Յօրինակին կրկնի.* Բնակքն Իսրայէլի: *Ուր ոմանք ունին միայն,* բնակիչքն Իսրայէլի:

* *Այլք.* Ձեւդ ՚ի ձիթենեաց.. զի այրիցի:

* *Ոմանք.* Կնկրուկ սուրբ:

* *Այլք.* Յօրն շաբաթուց դնի՛:

* *Այլք.* Ձանունն անէծ. և ածին:

* *Այլք յաւելուն.* Դատել զնա հրամա՛:

* *Այլք.* Յանէ՛ք զայն որ անէծն:

արասցեն զնա ամենայն ժողովուրդն. եթէ պանդոկստ իցէ՝ և եթէ բնակ, յանուանել նորա զանուն Տեառն, սատակեսցի՝:

ՃԻԸ ¹⁷Եւ մարդ որ՝ որ հարկանիցէ զամենայն անձն մարդոյ՝ և մեռանիցի, մահո՛ւ մեռանիցի և նա՛:

ՃԻԹ ¹⁸Եւ որ հարկանէ զանասուն, անձն ընդ անձին տուժեսցի:

ՃԼ ¹⁹Եւ եթէ խեղիցէ՛ որ զընկեր իւր. որպէս արարն՝ նոյնպէս արասցի նմա՛: ²⁰Բեկո՛ւմն ընդ բեկման, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման. որպէս առնիցէ որ զխեղութիւն՝ նոյնպէս հատուցցի նմա: ²¹Եւ որ հարկանէ զմարդ՝ և մեռանիցի, մահո՛ւ մեռանիցի և նա՛: ²²Իրաւունք՝ մի և նոյն կացցեն, եկին, և բնակին. զի ե՛ս եմ Տէր Աստուած ձեր: ²³Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, և հանին զայրն որ անէժն՝ արտաքոյ բանակին. և քարկոծ արարին զնա ամենայն ժողովուրդն քարամբք. և որդիքն Իսրայէլի արարին՝ որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի:

25

ԳԼՈՒԽ ԻԵ

ՃԼԱ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ ՚ի լերինն Սինայ՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասասցես ցնոսա. եթէ մտանիցէք յերկիրն զոր ես տա՛ց ձեզ, և հանգչիցի՛ երկիրն զոր տաց ձեզ. զի շաբաթ Տեառն է: ³Չվե՛ց ամ վարեսցես զանդ քո, և զվե՛ց ամ յատցես զայգի քոյ, և ժողովեսցես զպտուղ նորա. ⁴յամին եւթներորդի շաբաթ հանգի՛ստ եղիցի երկրին. զի շաբաթ Տեառն է. զանդ քո ո՛չ վարեսցես, և զայգի քո ո՛չ յատցես. ⁵և զինքնեակն անդոյ քոյ որ գայցէ՝ ո՛չ հնձեսցես, և զխաղող սրբութեանն քոյ ո՛չ կթեսցես. զի ան՝ հանգստեան է այն երկրին: ⁶Եւ եղիցի շաբաթ երկրին ձերոյ, կերակուր՝ ձե՛զ, և ծառային քում, և աղախնոյ՝ քում, և վարձկանին քում, և պանդխտին յեցելոյ ՚ի քեզ. ⁷և անասնոյ քում, և զազանաց որ իցեն յերկրին քում. եղիցի ամենայն բերն նորա՝ ՚ի կերակուր:

ՃԼԲ ⁸Եւ թուեսցես դու քեզ եւթն հանգիստ ամաց, և եւթն ամ եւթնեկին. և եղիցին եւթն եւթներորդքն ամաց՝ քառասուն և ինն ամ: ⁹Եւ ա՛զդ առնիցէք բարբառով փողոյ յամենայն երկրին ձերում, յամսեանն եւթներորդի՝ որ օր տասն իցէ ամսոյն. յաւուրն քաւութեան ա՛զդ արասջիք փողով ընդ ամենայն երկիրն ձեր՛: ¹⁰Եւ սրբեսջիք զամն յիսներորդ տարւոյն, և քարոզեսջիք թողութիւն ՚ի վերայ երկրին՝ ամենայն բնակչաց նորա. զի տարի թողութեան եղիցի ձեզ այն ազդեցութիւն: Եւ դարձցի՛ իւրաքանչիւրոք ՚ի ստացուածս իւր, և իւրաքանչիւրոք յա՛զգ իւր երթիցէ. ¹¹զի թողութեան ազդեցութիւն է այն: Ամն յիսներորդ՝ եղիցի ձեզ տարեկան. մի՛ սերմանիցէք, և մի՛ հնձիցէք զինքնեակս նորա՝ որ ելանիցեն. և մի՛ կթիցէք զսրբեցեալս նորա. ¹²զի թողութեան ազատութիւն է, սուրբ լինիցի ձեզ. ՚ի դաշտաց կերիջիք զարմտիսն նորա՛: ¹³Յամին ազդեցութեան թողութեան նորա՝ դարձցի՛ իւրաքանչիւրոք ՚ի

* Այլք. Եւ մարդ որ հարկանիցէ:

* Այլք. եթէ խեղեսցէ որ:

* Այլք. Գարկանիցէ զմարդ... մահո՛ւ մեռցի և նա:

* Բազումք. Յամսեանն եւթներորդում:

* Այլք. Չի թողութեան ազդեցութիւն է սուրբ լիցի ձեզ:

ստացուած իւր: ¹⁴Ապա թէ վաճառեսցէ որ վաճառ ընկերի իւրում, և ստացի յընկերէ իւրմէ, մի՛ նեղեսցէ այր զընկեր իւր: ¹⁵Ըստ թուոյ ամացն յետ ազդեցութեանն. ստացի յընկերէ իւրմէ ըստ թուոյ ամաց արմտեացն վաճառեսցի քեզ. ¹⁶Ըստ յաճախելոյ արմտեացն յաճախեսցէ զստացուածս իւր. և ըստ պակասելոյ ամացն պակասեսցուցէ զստացուածսն իւր. զի ըստ թուոյ արդեանցն վաճառեսցէ զնա քեզ: ¹⁷Մի՛ նեղեսցէ այր զընկեր իւր: Եւ երկնչիցիս ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ. ես եմ Տէր Աստուած ձեր: ¹⁸Եւ արասջի՛ք զամենայն իրաւունս իմ, և զամենայն դատաստանս իմ. և պահեսջի՛ք և արասջի՛ք զնոսա. և բնակեսջի՛ք յերկրին յուսով: ¹⁹Եւ տացէ՛ երկիրն զբերս իւր, և կերիջի՛ք ցլա՛գ. և բնակեսջի՛ք ՚ի նմա վստահութեամբ: ²⁰Ապա թէ ասիցէ՛ք ՝ զի՞նչ կերիցուք յամին եւթներորդի յայնմիկ, եթէ ո՛չ սերմանիցենք՝ և ո՛չ ժողովիցենք զարմտիս մեր: ²¹Առաքեցի՛ց զօրհնութիւն իմ ՚ի ձե՛զ յամին վեցերորդի. և արասցէ զարդիւնս իւր երի՛ց ամաց. ²²և սերմանեսջի՛ք յամին ութերորդի. և կերիջի՛ք զհին արդեանցն մինչև ցամն իններորդ. մինչև զայցեն արմտիք նորա, կերիջի՛ք հին ՚ի հնոյ: ²³Եւ երկիրն ո՛չ վաճառեսցի ՚ի հաստատութիւն. զի ի՛մ է երկիրն. քանզի պանդուխտք և մոզե՛հ էք դուք առաջի իմ: ²⁴Եւ ըստ ամենայն երկրին կալուածոյ ձերոյ՝ փրկանս տաջիք երկրին: ²⁵Եւ եթէ աղքատացի եղբայր քո որ ընդ քե՛զ իցէ, և վաճառեսցէ՛ ՚ի կալուածոց իւրոց. և եկեսցէ մերձաւորիչն՝ որ մերձաւոր իցէ նորա, և փրկեսցէ՛ զվաճառ եղբօր իւրոյ: ²⁶Ապա թէ չիցէ՛ ուրուք մերձաւորիչ, և ձեռնհաս իցէ. և գտանիցի նմա բաւական փրկանացն իւրոց. ²⁷և համարիցի զամս վաճառին իւրոյ, և հատուցէ կարողն ա՛ռնն որում վաճառեաց նմա, և դարձցի՛ ՚ի կալուածս իւր: ²⁸Ապա թէ ո՛չ գտցի ՚ի ձեռին նորա բաւականն՝ առ ՚ի հատուցանելոյ նմա. եղիցի վաճառ նորա այնն որ ստացաւն զնա մինչև յամն թողութեան. և ելցէ՛ յամին թողութեան, և դարձցի՛ անդրէն ՚ի կալուածս իւր: **ԵԼԳ** ²⁹Եւ եթէ վաճեռեսցէ որ տո՛ւն բնակութեան ՚ի պարսպաւոր քաղաքի. եղիցին փրկանք նորա մինչև ՚ի կատարել տարւոյն աւուրցն վաճառի նորա. օրաթուի՛ լինիցին փրկանք նորա: ³⁰Ապա թէ ո՛չ փրկիցի՛ մինչև լնուցու նորա տարին ողջոյն, հաստատեսցի՛ տունն որ իցէ ՚ի պարսպաւոր քաղաքի հաստատութեամբ ստացողին իւրոյ յազգս իւր. և ելցէ ՚ի թողութեանն*: ³¹Իսկ տո՛ւնք, որ յաւանս իցեն, որոց պարիսպ ո՛չ իցէ շուրջանակի, ընդ անդս երկրի համարեսցին, և հանապա՛զ ընդ փրկանօք լիցին. և ՚ի թողութեանն ելցեն*: ³²Եւ ՚ի քաղաքս Ղևտացւոց տունք, որ ՚ի քաղաքս կալուածոց նոցա իցեն, ընդ փրկանօք լինիցին հանապազ որ ՚ի մէջ Ղևտացւոցն իցէ: ³³Եւ որ որ փրկեսցէ ՚ի Ղևտացւոց անտի, ելցէ վաճառ տանց քաղաքաց կալուածոցն նոցա ՚ի թողութեանն. զի տունք քաղաքացն Ղևտացւոցն կալուածք նոցա են այն ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի: ³⁴Եւ ազարակք զատուցեալք ՚ի քաղաքս նոցա՝ մի՛ վաճառեսցին. զի կալուած յաւիտենական է այն նոցա: **ԵԼԴ** ³⁵Եւ եթէ աղքատանայցէ եղբայր քո և տկարանայցէ ձեռօք՝ առ քե՛զ պատսպարեսցես զնա, իբրև զե՛կն և զպանդուխտն. և կեցցէ՛ եղբայրն քո՝ որ ընդ քեզն իցէ: ³⁶Մի՛ առնուցուս ՚ի նմանէ վաճիս և տոկոսիս. և երկնչիցիս ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, զի ես եմ Տէր, և կեցցէ՛ եղբայր քո ընդ քեզ: ³⁷Չարձաթ քո մի՛ տացես նմա ընդ տոկոսեօք, և զկերակուր քո մի՛ տացես նմա

* *Ի լուս՝* Ըստ յաճախելոյ ամացն. *համաձայն այլոց ՚ի բնաբ՝*: *Ի լուս՝*. Պակասելոյ արմտեացն պակաս: *Այլք*. Վաճառեսցէ նա քեզ:

* *Ի լուս՝* Եւ մի՛ ելցէ ՚ի թողութեանն:

* *Այլք*. Ոչ գուցէ շուրջանակի.. ընդ փրկանօք լինիցին:

ընդ շարիատի: ³⁸Ես եմ Տէր Աստուած ձեր, որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացոց, տալ ձեզ զերկիրն Քանանացոցն, առ ՚ի լինելոյ ձեր Աստուած: Եւ ³⁹Եւ եթէ տնանկասցի՝ եղբայր քո որ ընդ քեզ՝ և վաճառեսցի՝ քեզ, մի՛ ծառայեսցէ քեզ զծառայութիւն ստրկի՝, ⁴⁰իբրև զվարձկան: Իբրև զպանդոխտ եղիցի քեզ. մինչև յամն թողութեան գործեսցէ առ քեզ: ⁴¹Եւ ելցէ՝ ՚ի թողութեանն ինքն և որդիք իւր ընդ իւր, և դարձցի՝ յազգ իւր, և ՚ի հայրենի՝ կալուածս իւր երթիցէ: ⁴²Չի ծառայք իմ եմ նոքա զորս և հանի յերկրէն Եգիպտացոց. մի՛ վաճառեսցին ՚ի վաճառ ստրկի. ⁴³և մի՛ տառապեցուցես զնա ընդ աշխատութեամբ. և երկնչիցիս ՚ի Տեառնէ Աստուծոյ քունմէ: ⁴⁴Եւ ծառայ՝ կամ աղախին որչափ և լինիցին քեզ յազգացն՝ որ շուրջ զքնն իցեն, ՚ի նոցանէ ստասցի՛ք. ⁴⁵և յորդոց պանդխտացն՝ որ ՚ի միջի՛ ձերուն իցեն, ՚ի նոցանէ՛ ստանայցէք, և յազգականաց՝ նոցա որչափ ինչ լինիցին յերկիրն ձերուն՝ եղիցին ձեզ ՚ի կալուածս. ⁴⁶և բաժանեսցի՛ք զնոսա որդոց ձերոց յետ ձեր, և եղիցին ձեզ ստրուկք յաւիտեան: Բայց յեղբարց ձերոց յորդոցն Իսրայէլի՝ իւրաքանչի՛ւր ոք զեղբայր իւր մի՛ տառապեցուցանիցէք աշխատութեամբ: ⁴⁷Եւ եթէ բաւական իցէ ձեռն եկին և պանդխտին որ առ քեզ իցէ. և չբաւորեալ եղբայր քո վաճառեսցի եկին կամ պանդխտի որ առ քեզ իցէ՝ անդէն ծնելոյ պանդխտին: ⁴⁸Յետ վախճանելոյն նորա փրկանք լինիցին նմա. մի՛ ոք՝ որ և իցէ յեղբարց իւրոց՝ փրկեսցէ՛ զնա՝. ⁴⁹եղբայր հօր՝ կամ որդի հօրեղբօր փրկեսցէ զնա. կամ ոք յընտանեաց մարմնոյ իւրոյ ՚ի ցեղէ՛ իւրմէ փրկեսցէ զնա: Ապա թէ ի՛ւր իսկ զձեռամբ իցէ՛ ինքնին փրկեսցէ զանձն. ⁵⁰և համարեսցի՛ ընդ ստացողին իւրոյ, յամէ անտի յորմէ վաճառեցաւ նա մինչև ցամն թողութեան. և եղիցի արծաթ գնոց նորա իբրև վարձկանի. ամ յամէ որչափ իցէ՛ ընդ նմա՝: ⁵¹Եւ եթէ աւելի՛ ևս քան զայն ամս կայցէ, տացէ՛ զփրկանս իւր յարծաթոյ ստացուածոյն իւրոյ: ⁵²Եւ եթէ սակաւ ինչ կայցէ յամաց անտի մինչև ցամն թողութեան. համարեսցի՛ իւր ըստ ամացն իւրոց, և տացէ զփրկանս իւր ⁵³իբրև զվարձկան ամ յամէ, որչափ և իցէ՛ ընդ նմա. և մի՛ տառապեցուցանիցէ զնա աշխատութեամբ առաջի քո՝: ⁵⁴Ապա թէ ո՛չ փրկեսցէ զնա ըստ այսմ օրինակի, ելցէ՛ յամին թողութեան, ինքն և որդիք իւր ընդ նմա. ⁵⁵զի իմ եմ որդիքն Իսրայէլի ստրուկք. ծառայք իմ եմ, զորս հանի յերկրէն Եգիպտացոց:

26

Գլուխ ԻԶ

¹Ես եմ Տէր Աստուած ձեր:

Եւ ²Մի՛ առնիցէք ձեզ ձեռագործս կամ դրօշեալս. և մի՛ կանգնիցէք ձեզ արծառն. և մի՛ քարկոթող դնիցէք յերկրի ձերուն երկիր պագանել նմա. Ես եմ Տէր Աստուած ձեր:

Եւ ³Եւ զառաքաթս իմ պահեսցի՛ք, և ՚ի սրբութեանց իմոց երկնչիցի՛ք. զի ես եմ Տէր: ⁴Եթէ ըստ հրամանաց իմոց զնայցէք, և զպատուիրանս իմ պահիցէք, և առնիցէք զնոսա՝ Տաց՝ ձեզ անձրև ՚ի ժամանակի իւրուն. ⁵և երկիրն տացէ՛

* Այլք. Տնանկեսցի եղբայր քո առ քեզ:

* Ոսկան. Մի ոք որ երկիցի յեղ՛:

* Այլք. Յորում վաճառեցաւ նմա մին՛:

* Ի լուս՛. Աշխատութեամբ առաջի Տեառն. համաձայն ոմանց ՚ի բնաք՛:

զարմտիս իւր. և ծանօք դաշտաց տացեն զպտուղս իւրեանց: ⁵Եւ հասցեն ձեր կալք ՚ի կուօս, և կուօք ՚ի սերմանս հասանիցեն ձեր. և կերիջիք զհաց ձեր ցյա՛գ, և բնակեսջիք անհոգութեամբ յերկրին ձերում: ⁶Եւ տաց խաղաղութիւն յերկրին ձերում. և պատերազմ մի՛ անցցէ ընդ երկիր ձեր. և ննջիցէք, և ո՛չ որ իցէ որ զարհուրեցուցանիցէ զձեզ. և կորուսի՛ց զգազանս չարս յերկրէ ձերմէ: ⁷Եւ հալածեցից զթշնամիս ձեր, և անկանիցին առաջի ձեր սպանմամբ: ⁸Եւ հալածիցեն ՚ի ձէնջ հինգք զհարիւրս. և հարիւրք ՚ի ձէնջ հալածեսցեն զբէւրս, և անկանիցին թշնամիք ձեր առաջի ձեր սրով: ⁹Եւ հայեցայց ՚ի ձեզ. և աճեցուցի՛ց զձեզ, և բազմացուցի՛ց զձեզ. և հաստատեցի՛ց զուխտ իմ ՚ի ձեզ: ¹⁰Եւ կերիջիք զհին՝ և զհնո՛յ հին. և զհինն յերեսաց նորոյն հանիջիք ՚ի բաց: ¹¹Եւ հաստատեցի՛ց զուխտ իմ ՚ի ձեզ. և ո՛չ զարշեսցի անձն իմ ՚ի ձէնջ. ¹²և գնացի՛ց ՚ի ձեզ, և եղէ՛ց ձեր Աստուած. և դուք եղիջիք ինձ ՚ի ժողովուրդ: ¹³Եւ եմ Տէր Աստուած ձեր՝ որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց, մինչ էիք դուք ծառայք. և խզեցի՛ զկապանս լծոյն ձերոյ, և ածի զձեզ համարձակութեամբ: ¹⁴Ապա թէ ո՛չ լսիցէք ինձ, և ո՛չ առնիցէք զամենայն հրամանս իմ զայսոսիկ, ¹⁵այլ հեստիցէք սոցա. և յիրաւանց իմոց տաղականայցեն անձինք ձեր, առ ՚ի չառնելո՛յ ձեզ զամենայն զպատուիրանս իմ, և ցրելո՛յ զուխտն իմ: ¹⁶Արարից նոյնպէս և ես ձեզ. հաստատեցից ՚ի վերայ ձեր տազնապաւ տարակուսանս, զքո՛ս և զդալուկն. որ՝ սորեցուցանիցեն զաչս ձեր, և հաչիցէք յանձինս ձեր. և սերմանիջիք ՚ի սնոտիս զսերմանիս ձեր. և զայն հակառակորդք ձեր կերիցեն: ¹⁷Հաստատեցի՛ց զբրեսս իմ ՚ի ձեզ. և անկանիջիք առաջի թշնամեաց ձերոց. և հալածեսցեն զձեզ ատելիք ձեր. և լինիջիք փախստեայք առանց ուրուք հալածելոյ զձեզ: ¹⁸Եւ եթէ տակաւին ո՛չ լսիցէք ինձ՝ յաւելից խրատել զձեզ եւթնպատիկ ՚ի վերայ մեղացն ձերոց: ¹⁹Եւ խորտակեցից զհպարտութիւն ամբարտաւանութեանց ձերոց. և արարից ձեզ զերկինս երկաթի՛, և զերկիր ձեր իբրև պղնձի: ²⁰Եւ եղիցի ընդունայն զօրութիւնդ ձեր. և մի՛ տացէ երկիր ձեր զսերմանիս իւր, և մի՛ ծառ վայրաց տացէ զպտուղ իւր: ²¹Եւ եթէ տակաւին գնայցէք դուք խտտորնակս, և ո՛չ կամիցիք լսել ինձ. յաւելի՛ց ձեզ հարուածս եւթնպատիկ ըստ անօրէնութեան ձերում: ²²Եւ առաքեցից ՚ի վերայ ձեր գազանս չարս երկրի, և կերիցեն զձեզ, և սատակեսցեն զանասունս ձեր: և նուազունս արարից զձեզ. և կուրացին ճանապարհք ձեր: ²³Ապա թէ այնո՛ւ ևս ո՛չ խրատիցիք. այլ տակաւին խտտորնակս գնայցէք ընդ իս. ²⁴գնացի՛ց և ես ընդ ձեզ բարկութեամբ խտտորնակս. և հարի՛ց զձեզ եւթնպատիկ փոխանակ մեղաց ձերոց: ²⁵Եւ սատակեցի՛ց զձեզ սրով, խնդրել զվրէժ ուխտին: և թէ ամբանայցէք

* Այլք. Եւ հասանիցեն ձեր կալք... հասանիցեն և կերիջիք:

* Այլք. Խաղաղութիւն յերկրին ձեր... մի՛ անցցէ յերկիր ձեր:

* Այլք. Եւ հալածեսջիք զթշ՛:

* Ի լուս՛. Հինգք՝ զհազար:

* Ոմանք. Ձուխտ իմ ընդ ձեզ:

* Ոմանք. Եւ եղէ՛ց ձեզ Աստուած... ինձ ժողովուրդ:

* Այլք. Եւ ես Տէր Աստուած ձեր, որ հա՛:

* Այլք. Տաղականայցեն ան՛:

* Ոմանք. Ջրոս և զդալուկն: Ոսկան. Հաչիցիք յան՛. և օրինակ մի. Հաչիցէ զանձինս ձեր: Այլք. Եւ սերմանեսջիք ՚ի սնոտ՛:

* Յօրինակին բանս՝ զերկինս երկա՛. կար՛. նշ՛:

* Այլք. Երկիր ձեր զսերմանիս ձեր:

'ի քաղաքս ձեր, և առաքեցից մահ 'ի ձեզ. և մատնեսցիք 'ի ձեռս թշնամեաց: ²⁶Ի
 նեղել զձեզ ռոճկաւ հացի, եփեսցեն տա՛սն կին զհացն ձեր 'ի միում թոնրի, և
 տացեն զհացն ձեր կշռո՛վ. և կերիջիք և մի՛ յագիջիք: ²⁷Եւ եթէ այնու ո՛չ ևս
 լուիցէք ինձ. այլ գնայցէք ընդ իս խոտորնակս՝. ²⁸և ե՛ս գնացից ընդ ձեզ
 բարկութեամբ խոտորնակս: Եւ խրատեցի՛ց զձեզ եւթնպատիկ ըստ մեղաց
 ձերոց՝. ²⁹և կերիջիք զմարմինս ուստերաց և դստերաց ձերոց՝, ³⁰և կործանեցի՛ց
 զարձանս ձեր. և աւերեցի՛ց զփայտեղէն ձեռագործս ձեր. և արկից զդիս ձեր
 զդիակամբք կռոց ձերոց. և զարշեսցի՛ անձն իմ 'ի ձէնջ: ³¹Եւ արարից զքաղաքս
 ձեր աւերակս, և թափո՛ւր արարից զսրբութիւնս ձեր. և ո՛չ հոտոտեցայց 'ի հոտ
 զոհից ձերոց: ³²Եւ աւերեցի՛ց զերկիրն ձեր. և զարմասցի՛ն ընդ նա թշնամիքն
 ձեր, որ բնակեալ իցեն 'ի նմա: ³³Եւ ցրեցի՛ց զձեզ ընդ ազգս. և սատակեսցէ՛
 զձեզ սուրն եկեալ 'ի վերայ. և եղիցի երկիրն ձեր աւերակ, և քաղաքքն ձեր
 թափո՛ւրք՝: ³⁴Յայնժամ հաճեսցի՛ երկիրն ընդ շաբաթս իւր զամենայն աւուրս
 աւերածոյն իւրոյ, ³⁵և դուք եղիջիք յերկրին թշնամեաց ձերոց յերկիր օտար:
 Յայնժամ շաբաթասցի՛ երկիրն ձեր, և հաճեսցի ընդ շաբաթս իւր զամենայն
 աւուրս աւերածոյն իւրոյ. և շաբաթասցի զշաբաթսն զոր ո՛չ շաբաթացաւ 'ի
 շաբաթս ձեր, 'ի ժամանակի յորում բնակէիքն 'ի նմա՝: ³⁶Եւ 'ի վերայ մնացելոցն
 'ի ձէնջ ածից դողո՛ւմն 'ի սիրտս նոցա յերկրին թշնամեաց իւրեանց. և
 հալածեսցէ՛ զնոսա ձայն տերևոյ խարխափելոյ. և փախիցեն որպէս փախչիցին
 'ի պատերազմէ. և անկանիցին առանց ուրուք հալածելոյ՝: ³⁷Եւ թողցէ՛ եղբայր
 զեղբայր իւր իբրև 'ի պատերազմի՝ առանց ուրուք զհետ մտանելոյ. և ո՛չ
 կարիցէք ընդդէմ դառնալ թշնամեաց ձերոց՝: ³⁸Եւ կորնչիցիք 'ի մէջ ազգաց. և
 կերիցէ՛ զձեզ երկիրն թշնամեաց ձերոց: ³⁹Եւ մնացեալքն 'ի ձէնջ սատակեսցին
 վասն մեղաց իւրեանց յերկրի՝ թշնամեաց իւրեանց. և վասն մեղաց հա՛րց
 իւրեանց՝ որ ընդ նոսա մաշեսցին՝: ⁴⁰Եւ խոստովան լիցին զմեղս իւրեանց և
 զհա՛րց իւրեանց, զի յանցեան, և արհամարհեցին զիս: և զի գնացին առաջի իմ
 խոտորնակս՝. ⁴¹և ես գնացից ընդ նոսա բարկութեամբ խոտորնակս, և
 կորուսի՛ց զնոսա յերկրի թշնամեաց իւրեանց: յայնժամ ամաշեսցէ՛ սիրտ նոցա
 անթլփատ. և յայնժամ հաճեսցին ընդ մեղս իւրեանց: ⁴²Եւ յիշեցի՛ց զուխտն
 Յակոբայ, և զուխտն Իսահակայ, և զուխտն Աբրահամու յիշեցի՛ց. և զերկիրն
 յիշեցից: ⁴³Եւ երկիրն լքցի՛ 'ի նոցանէ: յայնժամ ընկալցի երկիրն զշաբաթս իւր,
 յաւերել նորա վասն նոցա. և նոքա ընկալցին զանօրէնութիւնս իւրեանց.
 փոխանակ զի զիրաւունս իմ արհամարհեցին, և 'ի հրամանաց ինոց
 տաղտկացաւ անձն նոցա: ⁴⁴Եւ ես՝ մինչդեռ էին յերկրի թշնամեացն իւրեանց, ո՛չ
 արարի զնոսա անտես. և ո՛չ տաղտկացայ նոքօք առ 'ի սատակելոյ զնոսա՝
 ցրել զուխտ իմ որ ընդ նոսա. զի ե՛ս եմ Տէր Աստուած նոցա՝: ⁴⁵Եւ յիշեցի՛ց

* Այլք. Այնու ևս ո՛չ լսիցէք ինձ: *Յօրինակին*. Այլ գնացէք ընդ իս:

* *Ոմանք*. Եւթնպատիկ վասն մեղաց:

* Այլք. Ուստերաց ձերոց, և զմարմինս դստերաց ձերոց կերիջիք:

* Այլք. Եւ ցրուեցից զձեզ:

* Այլք. Երկիրն, և հաճեսցի... աւերածին իւրոյ:

* Այլք. Որպէս որ փախչիցին:

* *Ոմանք*. Ուրուք զհետ մտելոյ:

* Այլք. Հարց նոցա.. մաշիցին:

* Այլք. Լինիցին զմեղս... և զի գնային:

* Այլք. Ոչ անտես արարի զնոսա:

զառաջին ուխտն նոցա, յորժամ հանի զնոսա յերկրէն Եգիպտացոց ՚ի տանէ ծառայութեան. առաջի ամենայն ազգաց լինել նոցա Աստուած. զի ես եմ Տէր: Այս եմ իրաւունք և հրամանք՝ և օրէնք, զոր ետ Տէր ՚ի մէջ իւր՝ և ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի ՚ի լերինն Սինայ ՚ի ձեռն Մովսիսի:

27

Գլուխ ԻԷ

ՃԼԸ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասացե՛ս ցնոսա. Որ ոք ուխտեսցէ ուխտս, տա՛լ զգինս անձին իւրոյ Տեառն. ³Եղիցին զհնք արուի ՚ի քսանամենից մինչև ցվաթսնամեանս. եղիցի զհնք նորա յիսուն երկդրամեան արծաթոյ ըստ սրբութեան սկեղն*. ⁴և իգին՝ լիցին զհնք՝ երեսուն երկդրամեան: ⁵Ապա թէ ՚ի հինգամենից մինչև ցքսան ամսն լինիցին՝ զհնք արուին՝ քսան երկդրամեան, և իգին՝ տասն երկդրամեան*: ⁶Եւ յամսօրէից մինչև ցհինգեմեանս՝ եղիցի արուին՝ հինգ երկդրամեան արծաթոյ, և իգին՝ երեք երկդրամեանք արծաթոյ*: ⁷Ապա թէ ՚ի վաթսնամենից և ՚ի վեր իցէ. եթէ արու իցէ, եղիցին զհնք նորա հնգետասան երկդրամեան արծաթոյ. և իգին՝ տասն երկդրամեան: ⁸Ապա թէ աղքատ իցէ ՚ի գնոցն. կացցէ՛ առաջի քահանային, և հատցէ՛ նմա քահանայն զին: և որչափ ինչ ՚ի կարի իցէ ՚ի ձեռին ուխտաւորին՝ արկցէ՛ նմա զինս քահանայն: ⁹Եւ եթէ յանասնոց մատուցանելեա՛ց Տեառն իցէ պատարագն. որչափ ինչ տացէ ՚ի նոցանէ Տեառն սուրբ լիցի. ¹⁰և մի՛ փոխանակեսցէ զլաւն ընդ յոռւոյն, և մի՛ գյոռին ընդ լաւին: ապա թէ փոխանակելով փոխանակեսցէ զայն անասուն ընդ անասնոյ, եղիցի և այն փոխանակն սուրբ*: ¹¹Ապա թէ յամենայն անասնոց անսրբո՛ց իցէ՛ յորոց ո՛չ մատչիցի պատարագ Տեառն. կացուցէ՛ զանասունն առաջի քահանային. ¹²և արկցէ՛ նմա զինս քահանայն ՚ի մէջ լաւին և յոռւոյն. և որպէս զհարդ արկցէ՛ նմա զինս քահանայն՝ այն կացցէ: ¹³Իսկ եթէ փրկելով փրկեսցէ զնա. և զհինգերորդ մասն զնո՛ց նորա յաւելցէ ՚ի նոյն: ¹⁴Եւ մարդ ոք՝ որ սրբեսցէ զտուն իւր սրբութիւն Տեառն, արկցէ՛ նմա զինս քահանայն ՚ի մէջ լաւին և յոռւոյն. և որպէս զհարդ արկցէ՛ նմա զինս քահանայն, նոյն կացցէ: ¹⁵Ապա թէ որ սրբեացն զնա՝ փրկեսցէ՛ զտուն իւր, յաւելցէ՛ և զհինգերորդ մասն արծաթոյ գնոց նորա ՚ի նոյն. և նմա՛ իսկ եղիցի*: ¹⁶Եւ եթէ յանդոյ կալուածոց իւրոց սրբեսցէ ոք ինչ Տեառն, եղիցին զհնք նորա ըստ սերման իւրում. քռի՛ միոջ գետնոյ եղիցի յիսուն երկդրամեան արծաթոյ: ¹⁷Եւ եթէ յամէ թողութեանն սրբեսցէ զանդն իւր. ըստ գնոցն որչափ ինչ իցեն, կացցէ: ¹⁸Ապա թէ յետ թողութեանն սրբեսցէ զանդն իւր. համարեսցի՛ նմա քահանայն զարծաթն յայլ ևս ամսն՝ մինչև ցտարին թողութեան. և հատցէ՛ փոքր ինչ ՚ի գնոց անտի նորա:

ՃԼԹ ¹⁹Ապա թէ փրկեսցէ զանդն որ սրբեացն զնա, յաւելցէ՛ զհինգերորդ մասն արծաթոյ ՚ի զինս իւր. և նորա՛ իսկ լիցի: ²⁰Ապա թէ ոք փրկեսցէ զանդն իւր, և

* Այլք. եղիցին զհնք նորա:

* Այլք. Մինչև ցքսանամեանս:

* Այլք. Եւ յամսօրէն կամ յամսօրէն մինչև ցհինգամեանն:

* Այլք. Եւ այն և փոխանակն սուրբ:

* Այլք. Յաւելցէ զհինգերորդ արծաթոյ գնոցն ՚ի նոյն, և նմին:

վաճառեց՝ զանդն իւր այլո՛ւմ մարդոյ. մի՛ ևս փրկեսցի* .²¹այլ եղիցի անդն ելեալ՝ ՚ի թողութեանն սուրբ Տեառն, իբրև գերկիր մի գատուցեալ՝ քահանայի՛ն եղիցի ՚ի կալուած: ²²Ապա թէ յանդոյ զոր գնեալ իցէ, և չիցէ՝ յիւրոց կալուածոց՝ սրբեսցէ Տեառն, ²³հաշուեսցի՛ ընդ նմա քահանայն ՚ի գնոցն մինչև ցտարին թողութեան. և տացէ զգինսն յաւուր յայնմիկ սրբութիւն Տեառն: ²⁴Եւ յամին թողութեան դարձցի անդն՝ անդրէն առ ա՛յրն յորմէ ստացեալ իցէ. որոյ իւր իսկ էր կալուած երկրին: ²⁵Եւ ամենայն գինքն եղիցին ըստ սրբութեան կշռոցն. քսան դանգ լիցի երկդրամեանն: ²⁶Եւ ամենայն անդրանիկ որ ծնանիցի ՚ի խաշանց քոց՝ Տեառն լիցի. և մի՛ ոք փրկեսցէ զայն. եթէ արջա՛ռ իցէ, և եթէ ոչխար՝ Տեառն լիցի* : ²⁷Եւ եթէ ՚ի չորքոտանեաց անսրբոց՝ փրկիցէ՝ ըստ գնոց իւրոց. զհինգերորդ մասն ՚ի նոյն յաւելցէ՝ և նորի՛ն լիցի: ապա թէ ո՛չ փրկեսցի՝ վաճառեսցի՛ ըստ գնոց իւրոց: ²⁸Ամենայն նուէր՝ զոր նուիրեսցէ ոք Տեառն՝ յամենայնէ որ ինչ իւր իցէ ՚ի մարդոյ մինչև յանասուն, և յանդոյ մինչև ցկալուածս իւր, մի՛ դարձցի անդրէն՝ և մի՛ փրկեսցի: ամենայն նուէր՝ սուրբ սրբութեանց լիցի Տեառն* : ²⁹Ամենայն նուէր՝ որ նուիրիցի ՚ի մարդկանէ, մի՛ փրկեսցի, այլ մահու՛ մեռանիցի:

Եւ ³⁰Ամենայն տասանորդ յերկրէ՝ ՚ի սերմանեաց երկրին, և ՚ի պտղոց ծառոց՝ Տեառն է ՚ի սրբութիւն Տեառն: ³¹Եւ եթէ փրկելով ոք փրկեսցէ զտասանորդ իւր, զհինգերորդ մասն յաւելցէ ՚ի նոյն, և նորի՛ն լիցի: ³²Եւ ամենայն տասանորդ՝ արջառոյ և ոչխարի, և ամենայն տասանորդ որ մտանիցէ ընդ թուով գաւազանի՝ սրբութիւն Տեառն լիցի* : ³³Մի՛ լիցի խտիր ընդ բարին և ընդ յոռին. և մի՛ փոխանակեսցես զբարին ընդ յոռւոյ. ապա թէ փոխանակելով՝ փոխանակեսցես. ե՛ւ նա ե՛ւ փոխանակն իւր եղիցին սուրբ՝ և մի՛ փրկեսցի: ³⁴Ա՛յս են պատուիրանք՝ զոր պատուիրեաց Տէր Սովսիսի առ որդիսն Իսրայէլի ՚ի լերինն Սինայի:

Կատարեցաւ Ղևտականս

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՌՑ

Որպէս որ նախ քան զթիւսս նախակարգեալ մատեանքս յիրէն (ի գործոյն) առին զանուանսն, Ծնունդքն, և Ելքն, և Ղևտականն, վասն լինելոյ՝ գոյիցս, և ելիցն Իսրայէլի յԵգիպտոսէ, և վասն քահանայիցն ՚ի տանէն Ղևեայ. այսպէս և Թիւքս յիրէն ընկալաւ զանուն: Չի յետ կանգնելոյ խորանին, հրամայեաց Աստուած թուել զժողովուրդն ըստ ցեղից, ՚ի քսանամենից մինչև ցյիսնեմեանս. զոր և յԵ՛լսն յիշեաց վասն հասի կիսոյ երկդրամենին, թերևս զանդ հրամայեալն՝ ա՛ստ կատարէ: Բայց ո՛չ ՚ի դերև՝ ելանէ այսու խոստումն առ Աբրահամ անթիւ լինել գաւակի նորա, զի ո՛չ զամենայն հասակ, և ո՛չ զկանայս, այլ զմիջինն և

* Այլք. Չանդն այլում մարդոյ.. ևս փրկեսցէ:

* Ոմանք. Եւ մի ոք սրբեսցէ զայն:

* Այլք. Մինչև ՚ի կալուածս:

* Այլք. Գաւազանի ՚ի սրբութիւն:

Եթ զգինուորականն թուէ: Նախ՝ զի զխնամսն իւր ցուցցէ, թէ ո՞րչափ աճեցոյց զնոսա՝ ՚ի մէջ վշտացն յեգիպտոս՝ և ապա ՚ի զգուշութիւն միջին հասակին, զի Աստուծոյ կացցէ՝ ՚ի հարկի: Բայց այս թիւ՝ յետ անկանելոյ վասն որթուն երից հազարացն է. որ յելելոց անտի վեցհարիւր հազարացն: Իսկ զՂևտացիսն որիչ թուէ յամսօրէից. և սահմանէ նոցա զգործ խորանին: Ասէ՛ և զնաւակատիս խորանին: Եւ զի աստ յերկրորդունս ամի ելիցն կամէր մուծանել զնոսա յերկիրն խոստացեալ. և առաքեաց լրտեսս զի քաջալերեսցին մտանել. այլ զի վատասրտեալ դարձան յեգիպտոս, զերեսուն և ութ ամ ևս յածեցոյց զնոսա յանապատի անդ. զի մեռցին գիտօղքն զիրս Եգիպտացւոցն. մինչև լցաւ յելիցն քառասուն ամ: Ի՛ք քառասներորդի ամին յառաջնում ամսեանն մեռաւ Մարիամ. և ՚ի հինգերորդի ամսեանն մեռաւ Ահարոն: Եւ ապա առին զերկիրն Սեհունի և զԲասան: Եւ հասեալք առ Մովսէս եկն Բաղամ, և խօսեցաւ զոր ինչ խօսեցաւն: Եւ յետ վճարման իրացն Բաղամու՝ հրամայեաց դարձեալ թուել զԻսրայէլ: Եւ ապա ետ հրաման Մովսիսի վախճանելոյ: Ունի Գիրք Թուոցս՝ պատմութիւն ժամանակի երեսուն և ինն ամաց:

Գլուխք Թուոց

ա. Հրաման առնու Մովսէս հանդերձ իշխանօքն առնուլ զհամար զօրացն Իսրայէլի, ՚ի քսանամենից և ՚ի վեր՝ բաց յՂևտացւոցն:

բ. Կացուցանէ զՂևտացիսն բարձօղս խորանին և կահից նորուն, և զցեղսն երիս երիս ՚ի չորից կողմանց ՚ի բացեայ նշանօք ազգացն:

գ. Տայ՝ զՂևտացիսն պաշտօնեայս Ահարոնի, և առնուլ ասէ յամսօրէից և ՚ի վեր զհամար երից որդւոցն Ղևեայ, և բաժանէ զգործս իւրաքանչիւրցն ՚ի խորանին:

դ. Առնու զթիւ անդրանկացն Իսրայէլի. և փոխանակ ընդ նոցա ի՛ւր զՂևտացիսն յամսօրէից, անձն ընդ անձին. և ընդ աւելորդաց անդրանկացն Իսրայէլի զհինգ զերկդրամեանն, և տայ ցԱհարոն:

ե. Տայ՝ զպատիւ քահանայութեանն տանն Ահարոնի, և խնկարկուս տապանակին և սեղանոցն զԱհարոն և զորդիս իւր, և զայլ որդիսն Կահաթու բարձօղս այսոցիկ: Իսկ բարձօղս փեղկից խորանին՝ զունդն Գեթսոնի, և սեանցն և խոյակացն՝ զունդն Մերարեայ:

զ. Վասն զբորոտսն և զնմանսն արտաքոյ պահել բանակին:

է. Ձի զզրկանս, զգլուխն և զհնգեակն հատուցեն ՚ի տեսրսն կամ ՚ի քահանայսն:

ը. Վասն կնոջ զորմէ կասկածէ այրն շնացեալ գոլ, թէ իցէ կամ չիցէ, տա՛լ զերդունն՝ նզովին ջրով:

թ. Ձի մի՛ արբցէ ուխտաւորն գինի կամ զնմանսն, և նուէրք ՚ի կատարման ուխտին:

ժ. Օրհնութիւն քահանային զոր տայր ժողովրդեանն:

ժա. Ի՛ նաւակատիս խորանին ընծայք երկոտասան իշխանաց ցեղիցն, և խօսելն Աստուծոյ ՚ի միջոյ քրորէիցն:

ժբ. Վասն լուցման ճրագաց աշտանակին:

ժգ. Սրբէ զՂևտացիսն սրկմամբ ՚ի գործ սարկաւագութեան՝ ՚ի քսանամենից մինչև ցյիսնամեանսն:

ժդ. Հրամայե՛լ առնել զգատիկն 'ի չորեքտասան ամսեանն առաջնոյ: Իսկ որք չիցենն սուրբք՝ յերկրորդում ամսեանն 'ի չորեքտասանն:

ժե. Զի հրամանաւ Տեառն չուեսցեն կամ բանակեսցին, 'ի վերանալ կամ 'ի ծածկել ամպոյն զխորանն:

ժզ. Փողս կռածոյս արծաթիս փողել, զի հաւաքեսցին, և ազդեցութեան, զի ընթացին բանակքն չորեքին, 'ի պատերազմունս. և յամսամուտս 'ի վերայ զոհիցն. 'ի տիպ առաքելոցն փողոց, և հրեշտակայնոյն 'ի Տեառն գալուստն:

ժէ. Վերացաւ ամպն, և չուեսցին ըստ հրամանի ազդեցող փողոյն 'ի Սինայե՛ 'ի Փառան:

ժը. Մեծարէ՛ Մովսէս զՅոբաբ զաներ իւր երթալ ընդ ինքեանս, և լինել քահանայ կամ աւագ:

ժթ. Թէ՛ 'ի չուել նոցա, յառաջագոյն երիւք աւուրբք երթայր տապանակն, և ամպն ունէր հովանի:

ի. Տրտնջեաց ժողովուրդն, և պատժեցաւ հրով 'ի կոչեցեալն Հրայրեացս: Իա. Ցանկացան մտոյ, և խնդրեաց Մովսէս լնուլ զցանկութիւն նոցա, և տալ ինքեան օգնական. և ետ զեւթանասուն ծերսն, և զլորամարզն՝ ամսօրեայ. և հարուածեաց զնոսա, և 'ի թաղելոյն կոչեցաւ տեղին՝ Գերեզման ցանկացողաց. յահ և յերկիւղ մեզ 'ի դժոխոց:

իբ. Բորոտի Մարիամ վասն բամբասանացն զՄովսիսէ: զայժմուցս առ մեզ սաստն Աստուծոյ նկարագրելով:

իգ. Թէ՛ 'ի զանգիտեցուցիչ բանից լրտեսացն՝ յեգիպտոս դառնալ կամէին, ընդ որ բարկացեալ Աստուծոյ վճռեաց նոցա թէ՛ մտցեն 'ի հանգիստն, բայց որդիք նոցա, և Քաղէբ և Յեսու:

իդ. Ելին պատերազմել ընդ Ամաղեկայ, և պարտեցան վասն չլինելոյ ընդ նոսա Տեառն զոր ցասուցին:

իե. Օրինադրէ՛ զիրաւունս ողջակիզացն նաշիւով և գինւով, ընդ գառին, ընդ խոյի և ընդ զուարակի: Չառ մեզ կենդանի բանաւոր զոհից նուէրս նշանակելով: զմեսեղին ուղիղ աղօթիւքն խնկանուէր, ընդ սրբոյ Խաչեցարին հզօր և անմահ Գառինն Աստուծոյ:

իզ. 'Ի խմորեալ հացից՝ զառաջին նկանակն հա՛ս Տեառն տալ հրամայե՛: Իէ. Եթէ՛ ամենայն ժողովուրդն ականայ յանցանիցէ, զուարակ մի յողջակէզ, և նոխազ մի վասն մեղաց: Իսկ ընդ միոյ անձին ականայի՝ ալոջ մի:

իը. Կամակար մտօք մեղուցեալն՝ մահու մեռցի:

իթ. Քարկոծել տայ զկրկտաքաղն 'ի շաբաթու, յահ և յերկիւղ ամենայն արհամարհողաց:

լ. Ծո՛պս ասղանիս առնել 'ի տտունս հանդերձիցն, նշանակ յիշման զպատուիրանսն:

լա. Խուժանն Կորխայ և Դաթանայ յարեան 'ի վերայ Մովսիսի և Ահարոնի, և կորեան չարաչար:

լբ. Հրամայե՛ զբուրուառսն պղնձիս զայրեցելոցն առնել ծածկոյթ սեղանոյն, յիշատակ յանցուցելոցն, և 'ի սոսկումն ապագայիցն:

լգ. Տրտնջեաց ժողովուրդն զՄովսիսէ՝ իբրև թէ յանձնէ՛ պատժեաց զժողովն Կորխայ, և անկան ընդ այնր չորեքտասան հազարք, մինչև Ահարոն խնկարկեալ քաւեաց:

լդ. Հրամայե՛լ առնուլ գաւազանս ըստ անուանց ցեղիցն, վասն ընտրութեան քահանայութեան. և ծաղկեցաւ գաւազանն Ահարոնի: Լե. Տա՛յ գ՛լևտացիսն ՚ի պաշտօն Ահարոնի պահել զխորանն, բայց մի՛ ՚ի սեղանն մերձենալ:

լզ. Շնորհէ Ահարոնի և որդւոց նորա զհաս նուիրացն և զոհից, և զնախապտուղս արմտեացն համարձակէ ուտել ուստերաց և դստերաց տանն Ահարոնի. և զանդրանիկս անասնոց և զփրկանս անդրանկաց ժողովրդեանն:

լէ. Ջտասանորդս մտից ժողովրդեանն տա՛յ Ղևտացւոցն. և սմին վասն ո՛չ տայ նոցա վիճակ կալուածոց երկրի. զի Տէր է բաժին նոցա:

լը. Ի՛ մտից անտի տասանորդացն՝ տացեն Ղևտացիքն տասանորդս տանն Ահարոնի:

լթ. Ձմոխիր այրեցելոյ կարմիր երնջուն՝ ունել ՚ի պահեստ առ ՚ի սրսկունն սրբութեան. նկարելով զսրբարար չարչարանսն Քրիստոսի:

խ. Մերձեցելոցն ՚ի դի, կամ յոսկր մեռելոյ, սրբել սրսկմամբ մոխրոյն, յերրորդ և յեւթներորդ աւուր հրամայե՛:

խա. Մեռաւ Մարիամ ՚ի Կադէս. և ՚ի տրտնջել ժողովրդեանն ընդ ջրոյ, հրաման առեալ Մովսէս հարկանէ զվէմն երկիցս, և ապա ել ջուրն: Վասն որոյ մեղադրին Մովսէս և Ահարոն. և կոչեցաւ տեղին՝ Ջուր բամբասանաց:

խբ. Խնդրեաց Մովսէս ճանապարհ ընդ Եդոմ, և նա ո՛չ ետ, այլ ել պատերազմել. յորմէ խոյս տուեալ Իսրայէլ եկն ՚ի Հովր լեռան:

խգ. Ա՛նդ մեռաւ Ահարոն, և մինչդեռ ՚ի սուգ էր ժողովուրդն՝ եկն պատերազմել Քանանացին, և նգովեաց զնա Իսրայէլ:

խդ. Տրտնջեցին վասն մանանային, և յօձիցն բազումք սատակեցան, մինչև կանգնեաց զօճն պղնձի ՚ի տիպ Քրիստոսի:

խե. Ջբազում օթևանօք անցեալ եկին ՚ի ջրհորն մեծ ՚ի ձորն Առնովմայ. ուր և նուագեցին Աստուծոյ ՚ի վերայ ջրհորոյն մեծի:

խզ. Խնդրեաց Իսրայէլ ճանապարհ ընդ սահմանս Սեհոնի, և նա ո՛չ ետ. եհար զնա Իսրայէլ, և ա՛ռ զամենայն սահմանս նորա: ուր և առակարկուք վա՛յ կարդան Մովսէս: Առ և զթագաւորութիւնն Ովգայ զԲասանաստանն:

խէ. Եկն ժողովուրդն մօտ ՚ի Յորդանան, և կոչեաց Բաղակ զԲաղամ անիծանել զԻսրայէլ. որ և յօրհնելն զԻսրայէլ մարգարեացաւ ևս զՔրիստոսէ՝ թէ ծագեսցէ Աստղն Յակոբայ: Եւ ապա ՚ի ձեռն չար խրատու՝ գայթաղութիւն նիւթեաց Իսրայէլի, ուր և անկան քսան և չորք հազարք: Խը. Ա՛նդ առաքինացեալ Փեննէս խոցեաց զՋամբրի, և տուաւ նմա ուխտ քահանայութեան: և ասաց Տէր առնուլ վրէժս ՚ի Մադիանացւոց:

խթ. Հրամայե՛ դարձեալ թուել զԻսրայէլ, որոց տալոց էր զերկիրն ՚ի ժառանգութիւն բա՛ց յՂևտացւոցն:

ծ. Գա՛ն դստերք Սաղպաադու խնդրել ժառանգութիւն, և հրամայեաց զարժանն վասն ժառանգութեանց:

ծա. Հրամայե՛ Մովսիսի ելանել ՚ի Նաբաւ լեռան և վախճանել. բայց նախ ձեռնադրել զՅեսու առաջնորդ Իսրայէլի:

ծբ. Պատուէր տայ զհանապազորդ նուիրացն, զառաւօտուց և զերեկօրեայ գառանց, և զշաբաթուց և զամսամտից. ևս և զգլխաւոր

տօնից, զՋատկի զՊենտակոստի, զՔաութեան, զՏաղաւարահարաց:
 ծգ. Հրամայէ զի զոր ուխտէ ոք հատուցէ. բայց թէ այրն կամ հայրն
 չտացեն թոյլ՝ մի՛ հատուցէ:
 ծդ. Առին վրեժ՝ ՚ի Մադիանայ, սպանին զհինգ թագաւորսն, և զԲաղաամն,
 և ետուն յաւարէն հաս Տեառն և Ղևտացւոցն:
 ծե. Խնդրեցին ՚ի Մովսիսէ Գաղ և Ռուբէն ՚ի կալուած գերկիրն Սեհոնի և
 Ովգայ, և ետ. պատուիրեալ երթալ նոցա ընդ ինն ցեղիցն յառաջապահ
 նիզակակից՝ մինչև նուաճեսցեն զերկիրն ընդ ձեռամբ:
 ծզ. Բանակետոք Իսրայէլի յեգիպտոսէ մինչև ցեզրն Յորդանանու
 յանդիման Երեքոյի:
 ծէ. Հրամայէ զի ՚ի մտանելն յերկիր անդր կործանեսցեն զկուռսն և
 զբազինս:
 ծը. Ծրագրէ զեզերս աշխարհին զոր ժառանգելոց էին՝ ըստ լայնութեան և
 երկայնութեան:
 ծթ. Անուանք իշխանացն, որ ժառանգեցուցանելոց են նոցա գերկիրն:
 կ. Հրամայէ զի տացեն Ղևտացւոցն ՚ի կալուած զքաղաքսն ապաստանի,
 յորս անկեալ ապրեսցի ականայ սպանօղն:
 կա. Թէ զի՞նչ խնդրեցին իշխանք ցեղին Մանասէի ՚ի պատճառս
 դստերացն Սաղապադու, և թէ զի՞նչ օրինադրեցաւ վասն
 ժառանգութեան:

ԹԻՒՔ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ յանապատին Սինայի, ՚ի խորանն
 վկայութեան, ՚ի միտն ամսեանն երկրորդի. յամին երկրորդի ելանելոյ նորա
 յերկրէն Եգիպտացւոց. ²ասէ՛. ²Առէ՛ք զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն
 Իսրայէլի, ըստ ազգս: ըստ տանց նահապետաց, ըստ թուոց յանուանէ՝ ըստ
 գլխոցն նոցա՛. ³ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանիցէ
 ՚ի զօրսդ Իսրայէլի, հանդէս առնել նոցա հանդերձ զօրութեամբ իւրեանց: դու և
 Ահարոն առնիցէք նոցա հանդէս՛: ⁴Եւ ընդ ձե՛զ լիցին իւրաքանչիւր ըստ ցեղի,
 իւրաքանչիւր իշխան, ըստ տանց նահապետաց լինիցին: ⁵Եւ այս են անուանք
 արանցն՝ որ յանդիման լինիցին ընդ ձեզ: Ռուբինի՝ Եղիսուր որդի Սաղիւրայ:
⁶Շմաւոնի՝ Սաղամիէլ որդի Սուրիսադայի: ⁷Յուդայի՝ Նաասոն որդի
 Ամինադաբայ: ⁸Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի Սովգարայ: ⁹Չաբուղոնի՝ Եղիար
 որդի Քելլոնայ: ¹⁰Որդւոցն Յովսեփայ, Եփրեմի՝ Եղիսամայ որդի Եմիուդայ:
 Մանասէի՝ Գամաղիէլ որդի Փադասուրայ: ¹¹Բենիամինի՝ Աբիդան որդի
 Գեդէոնի: ¹²Դանայ՝ Աբիեզեր որդի Միսադանայ: ¹⁵Նեփթաղիմայ՝ Աբիրէ որդի

* Այլք. ՚ի խորանին վկայութեան:

* Այլք. Ըստ գլխոյ նոցա:

* Այլք. ՚ի հանդէս առնել նոցա:

* Յօրինակին աստ և ստորև. գլ. Բ 20. գրի՝ Որդի Փառասուրայ:

Ենանայ: ¹⁴Փաղայ՝ Եղիասփան որդի Ռագուէլի: ¹³Ասերայ՝ Փագիէլ որդի Եքրանայ*:

¹⁶Սոքա՝ Են անուանիք ժողովրդեանն. իշխանք ցեղիցն ըստ նահապետաց հազարապետք Իսրայէլի: ¹⁷Եւ առին Սովսէս և Ահարոն զարսն զայնոսիկ՝ որք յանուանէն կոչեցան. ¹⁸և զամենայն ժողովուրդն ժողովեցին՝ ի միում ամսեանն երկրորդի, յամին երկրորդի: Եւ մտին ՚ի հանդէս ըստ ազգաց իւրեանց, ըստ նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ՚ի քսանամենից և ՚ի վեր. ամենայն արու ըստ գլխոց իւրեանց. ¹⁹որպէս հրամայեաց Տէր Մովսիսի. և մտին ՚ի հանդէս յանապատին Սինայ: ²⁰Եւ եղեն որդիք Ռուբինի՝ անդրանկանն Իսրայէլի, ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայնի որ ելանէր ՚ի զօրսն Իսրայէլի. հանդէս նոցա ²¹յազգէն Ռուբինի, քառասուն և վեց հազար և հինգ հարիւր: ²²Եւ որդւոցն Շմաւոնի ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլուխս իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրս Իսրայէլի հանդէս նոցա* ²³ի ցեղէն Շմաւոնի, յիսուն և ինն հազար և երեք հարիւր: ²⁴Եւ որդւոցն Յուդայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրս հանդէս նոցա ²⁵ի ցեղէն Յուդայ՝ եւթանասուն և չորք և հազարք և վեց հարիւր: ²⁶Եւ որդւոցն Իսաքարայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայնի որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա ²⁷ի ցեղէն Իսաքարայ, յիսուն և չորք հազարք և չորեքհարիւր: ²⁸Եւ որդւոցն Չաբուղոնի, ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա ²⁹ի ցեղէն Չաբուղոնի, յիսուն և եւթն հազար և չորեքհարիւր: ³⁰Եւ որդւոցն Յովսեփայ՝ որդւոց Եփրեմի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց նոցա, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա* ³¹ի ցեղէն Եփրեմի, քառասուն հազար և հինգհարիւր: ³²Եւ որդւոցն Մանասէի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց իւրեանց, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա ³³ի ցեղէն Մանասէի, երեսուն և երկու հազար և երեք հարիւր: ³⁴Եւ որդւոցն Բենիամինի՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա ³⁵ի ցեղէն Բենիամինի, երեսուն և հինգ հազար և չորեքհարիւր: ³⁸Եւ որդւոցն Դանայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի զօրու

* (13) (14) (15) Այլք դնեն նախ՝ Ասերայ, ապա՝ Փաղայ, և յետոյ՝ Նեփթաղիմայ:

* Այլք. Ըստ գլխոց իւրեանց.. ամենայն արու որ ելանէր ՚ի զօրս հանդէս նոցա:

* Ոմանք. Ըստ թուոյ անուանց նոցա:

հանդէս նոցա* 39ի ցեղէն Դանայ, վաթսուն և երկու հազարք և եւթն հարկը: 42Եւ որդւոցն Նեփթաղիմայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից և ՚ի վեր, ամենայնի որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա 43ի ցեղէն Նեփթաղիմայ, յիսուն և երեք հազարք և չորեքհարիւր: 36Եւ որդւոցն Գադայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից և ՚ի վեր, ամենայնի որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա 37ի ցեղէն Գադայ, քառասուն և հինգ հազար և վեց հարիւր և յիսուն: 40Եւ որդւոցն Ասերայ՝ ըստ ազգս իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ թուոյ անուանց նոցա, ըստ գլխոց իւրեանց, ամենայն արու՝ ի քսանամենից և ՚ի վեր, ամենայնի որ ելանէր ՚ի զօրու հանդէս նոցա 41ի ցեղէն Ասերայ, քառասուն և մի հազար և չորեքհարիւր*: 44Ա՛յս է հանդէս՝ զոր արարին Մովսէս և Ահարոն և իշխանքն Իսրայէլի, երկուտասան իշխանք. ա՛յր մի ըստ միում ազգի, ըստ ցեղից տանց նահապետաց իւրեանց էին: 45Եւ եղև ամենայն հանդէս որդւոցն Իսրայէլի հանդերձ զօրու իւրեանց ՚ի քսանամենից և ՚ի վեր, ամենայն որ ելանէր ՚ի պատերազմ ՚ի միջոյ Իսրայէլի*: 46Եւ եղեն ամենայն անցեալքն ՚ի հանդիսին վեց հարիւր հազար, և երեք հազար և վեց հարկը և յիսուն: 47Բայց Ղևտացիքն ՚ի ցեղէ ազգի իւրեանց ո՛չ անցին ՚ի հանդիսի ընդ որդիսն Իսրայէլի:

Բ 48Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. 49Տեսջի՛ր զազգն Ղևեայ մի՛ խառնեցես ընդ նոսա ՚ի հանդէս, և զհամար նոցա մի՛ առնուցուս ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի*. 50և կացուցես զՂևտացիսն ՚ի վերայ խորանին վկայութեան, և ՚ի վերայ ամենայն կահի նորա, և ՚ի վերայ ամենայնի որ ինչ է ՚ի նմա: Եւ նոքա՛ բարձցեն զխորանն, և զամենայն կահ նորա. և նոքա՛ պաշտեցեն ՚ի նմա. և շո՛ւրջ զխորանան բանակեսցին*: 51Եւ ՚ի չուել խորանին՝ իջուցեն զնա Ղևտացիքն, և ՚ի բանակել խորանին կանգնեցեն զնա Ղևտացիքն. և այլազգի որ մերձեսցի ՚ի նա՛ մեռցի: 52Եւ բանակեսցին որդիքն Իսրայէլի ա՛յր ըստ իւրաքանչիւր կարգի, և ա՛յր ըստ իւրաքանչիւր նահապետութեան հանդերձ զօրու՛ իւրեանց*: 53Բայց Ղևտացիքն բանակեսցին շուրջ զխորանան՝ վկայութեան յանդիման Տեառն. և ո՛չ լինիցին մեղք ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի. և պահեսցեն Ղևտացիքն զպահպանութիւն խորանին վկայութեան*: 54Եւ արարին որդիքն Իսրայէլի ըստ ամենայնի, որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի և Ահարոնի նո՛յնպէս և արարին:

2

* Յայլ օրինակս այս չորք նահապետութիւնք այլազգ կարգաւ դնին. այսինքն՝ յետ ցեղին Բենիամինի՝ ցեղն Գադայ, ապա՝ Դանայ, յետոյ՝ Ասերայ. և զկնի՝ Նեփթաղիմայ. ըստ որոց համեմատին և թուահամարքն որ ըստ առաջին տպագրութեանց:

* Ի լուս՝. Եւ մի հազար և հինգ հարիւր, համաձայն այլոց ՚ի բնար՝:

* Այլք. Որ ելանէր տալ պատերազմ:

* Այլք. Մի՛ խառնիցես... ՚ի մէջ որդւոցդ Իսրայէլի:

* Այլք. Որ ինչ է ՚ի նմա: Նոքա բարձցեն:

* Ոմանք. Եւ բանակեսցեն:

* Ոմանք. Բնակեսցին շուրջ:

Գլուխ Բ

¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Սովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²Այր իւրաքանչիւր՝ զհետ նշանի գնդի իւրոյ գնասցեն, ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ բանակաց իւրեանց բանակեսցին որդիքն Իսրայէլի*։ ³Եւ որ յառաջագոյնն բանակեսցին յարևելից կողմանէ՝ ցեղ բանակին Յուդայ իցէ՝ հանդերձ զօրուն իւրեանց, և իշխան որդւոցն Յուդայ Նաասոն՝ որդի Ամինադաբայ. ⁴և զօրք նորա անցեալք ՚ի հանդիսի, եւթանասուն և չորք հազարք և վեց հարիւր։ ⁵Եւ որք բանակիցեն զհետ նոցա՝ ցեղն Իսաքարայ իցէ, և իշխան որդւոցն Իսաքարայ, Նաթանայէլ որդի Սեգիովրայ*։ ⁶և զօրք նորա անցեալք ՚ի հանդիսի՝ յիսուն և չորք հազար և չորեք հարիւր։ ⁷Եւ բանակեսցին առ նոքօք ցեղն Ջաբուղոնի, և իշխան որդւոցն Ջաբուղոնի Եղիաբ որդի Քելլոնի. ⁸և զօրք նորա անցեալք ՚ի հանդիսի՝ յիսուն և եւթն հազար և չորեքհարիւր։ ⁹Ամենեքեան անցեալք ՚ի հանդիսի բանակին Յուդայ, հարիւր և ութսուն և վեց հազար և չորեքարև, հանդերձ զօրուն իւրեանց յառաջագոյն չուեսցեն։ ¹⁰Գունդ բանակին Ռուբինի ընդ հարաւակողմն, և զօրն նոցա. և իշխան որդւոցն Ռուբինի, Եղիսուր որդի Սեդիուրայ. ¹¹և զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի՝ քառասուն և վեց հազար և հինգ հարիւր։ ¹²Եւ բանակեսցին առ նովաւ ցեղն Շմաւոնի. և իշխան որդւոցն Շմաւոնի Սաղամիէլ որդի Սուրիսաղայի. ¹³և զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի՝ յիսուն և ինն հազար և երեք հարիւր*։ ¹⁴Եւ բանակեալք առ նովաւ ցեղն Գադայ. և իշխան որդւոցն Գադայ, Եղիաբ որդի Ռագուէլի. ¹⁵և զօր նորա անցեալք ՚ի հանդիսի քառասուն և հինգ հազար և վեց հարիւր և յիսուն։ ¹⁶Ամենեքեան անցեալք ՚ի հանդիսի ցեղին Ռուբինի, հարիւր յիսուն և մի հազար և չորեքհարիւր և յիսուն, հանդերձ զօրուն իւրեանց երկրորդք չուեսցեն*։ ¹⁷Եւ խաղասցէ խորանն վկայութեան և բանակ Ղատացւոցն ՚ի մէջ բանակացն, որպէս բանակեցին՝ նոյնպէս չուեսցեն, իւրաքանչիւր զհետ միմեանց ըստ պետութեան։ ¹⁸Եւ գունդ բանակին Եփրեմի ընդ ծովակողմն հանդերձ զօրուն իւրեանց. և իշխան որդւոցն Եփրեմի՝ Եղիսամա որդի Սեմիուդայ. ¹⁹և զօրն նոցա անցեալք ՚ի հանդիսի, քառասուն հազար և հինգ հարիւր*։ ²⁰Եւ որ բանակեցին զհետ նոցա՝ ցեղն Մանասէի իցէ. և իշխան որդւոցն Մանասէի՝ Գամաղիէլ որդի Փաղասուրայ. ²¹և զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի՝ երեսուն և երկու հազար և երեք հարիւր։ ²²Եւ որ բանակիցեն զհետ նոցա՝ գունդն Բենիամինի իցէ. և իշխան որդւոցն Բենիամինի, Աբիդան որդի Գեղեոնի. ²³և զօր նորա անցեալք ՚ի հանդիսի, երեսուն և հինգ հազար և չորեքհարիւր։ ²⁴Ամենեքին անցեալք ՚ի հանդիսի բանակին Եփրեմի, հարիւր և ութ հազար և երկերիւր, հանդերձ զօրուն իւրեանց՝ երրորդ չուեսցեն*։ ²⁵Եւ գունդ բանակին Դանայ ընդ հիւսիսի հանդերձ զօրուն իւրեանց. և իշխան որդւոցն Դանայ՝ Աբիեզեր որդի Միսաղայի*։ ²⁶և զօր նորա անցեալք ՚ի հանդիսի, վաթսուն և երկու հազարք և եւթն հարիւր։ ²⁷Եւ որ բանակեսցին զհետ նորա ա՛զգն Ասերայ իցէ. և իշխան որդւոցն Ասերայ Փաքիէլ որդի Եթրանայ. ²⁸և զօր նորա անցեալք ՚ի հանդիսի,

* Յայլս պակասի. Գնդի իւրոյ գնասցեն, ըստ տանց։

* Այլք. Նաթանայէլ որդի Սեգովրայ։

* Ոմանք. Եւ զօր նոցա անցեալք։

* Ոսկան. Եւ ամենայն զօրք նորա անցեալք ՚ի հանդէս ՚ի ցեղին։

* Այլք. Եւ զօրն նորա անցեալք ՚ի։

* Այլք. Երրորդք չուեսցեն։

* Այլք. Որդի Ամիսաղայի։

քառասուն և մի հազար և հինգ հարիւր: ²⁹Եւ որ բանակեսցին զհետ նորա ցեղն Նեփթաղիմայ իցէ. և իշխան որդւոցն Նեփթաղէմի՝ Աթիրէ որդի Ենանայ. ³⁰և զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի՝ յիսուն և երեք հազարք և չորեքհարիւր: ³¹Ամենեքեան անցեալք ՚ի հանդիսի բանակին Դանայ, հարիւր յիսուն և եւթն հազար և վեց հարիւր. հանդերձ զօրուն իւրեանց յետոյ՝ չուեսցեն ըստ գունդս իւրեանց*: ³²Այս է հանդէս որդւոցն Իսրայէլի. ըստ տանց նահապետաց իւրեանց. ամենայն հանդէս բանակացն հանդերձ զօրօք իւրեանց. վեց հարիւր հազար, և երեք հազար և վեց հարիւր և յիսուն*: ³³Բայց Ղևտացիքն ո՛չ անցին ընդ նոսա ՚ի հանդիսի. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի: ³⁴Եւ արարին որդիքն Իսրայէլի զամենայն՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի՝ այնպէս բանակէին ըստ գունդս իւրեանց, և այնպէս չուէին իւրաքանչիւր զհետ ցեղից իւրեանց ըստ տանց նահապետաց իւրեանց:

3

Գլուխ Գ

Գ ¹Եւ այս ազգ են Ահարոնի, յաւուր յորում խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ՚ի լերինն Սինայի*: ²Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի քահանայի. անդրանիկ՝ Նաբադ և Աբիուդ, Եղիազար, և Իթամար*: ³Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի քահանայիցն օծելոց. զորոց կատարեցին զծեսս իւրեանց քահանայանալ: ⁴Եւ վախճանեցան Նաբադ և Աբիուդ առաջի Տեառն՝ մինչ մատուցանէին զհո՛ւրն օտար առաջի Տեառն յանապատին Սինայի, և որդիք ո՛չ էին նոցա. և քահանայացան Եղիազար և Իթամար ընդ Ահարոնի ընդ հօրն իւրեանց: ⁵Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁶Առ զազգն Ղևտայ, և կացուսցեն զնոսա առաջի Ահարոնի քահանայի, և պաշտեսցեն զնա: ⁷Եւ պահեսցեն զպահպանութիւնս նորա, և զպահպանութիւնս որդւոցն Իսրայէլի առաջի խորանին վկայութեան գործել զգործ խորանին: ⁸Եւ պահեսցեն զամենայն սպաս խորանին վկայութեան, և զպահպանութիւնս որդւոցն Իսրայէլի, և զամենայն գործ խորանին: ⁹Եւ տացես զՂևտացիսն Ահարոնի եղբօր քուն և որդւոցն նորա քահանայից. հատուցունն տուեալ լիցին նոքա յորդւոցն Իսրայէլի*: ¹⁰Եւ զԱհարոն և զորդիս նորա կացուսցեն ՚ի վերայ խորանին վկայութեան և պահեսցեն զպահպանութիւնն իւրեանց. և զամենայն ինչս սեղանոյն, և որ ինչ ՚ի ներքս քան զվարագոյրն ից: և այլազգի որ մերձենայցէ՝ մեռցի*: ¹¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹²Եւ ես ահա առի՛ զՂևտացիսն ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի փոխանակ ամենայն անդրանկան որ բանայ զարգանդ ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի. փրկանք նոցա լիցին. և եղիցին ինձ Ղևտացիքն: ¹³Զի ի՛ն է ամենայն անդրանիկ. յաւուր յորում հարի՛ զամենայն անդրանիկ յերկրին Եգիպտացւոց, սրբեցի՛ ինձ զամենայն անդրանիկս

* *Ի լուս՝* Ամենեքին անցեալք. *համաձայն այլոց ՚ի բնար՝* Այլք. ՚ի բանակին Դանայ, հարիւր և յիսուն:

* *Ոսկան.* Հանդերձ զօրուն իւրեանց:

* *Այլք յաւելուն.* Ազգ են Ահարոնի և Մովսիսի:

* *Այլք.* Ահարոնի անդրանկան:

* *Այլք.* Տուեալ իցեն նոքա որդւոցն Իսրայէլի:

* *Այլք.* Եւ պահեսցեն զքահանայութիւնն.. և զամենայն ինչ զսեղանոյն... ՚ի ներքոյ քան:

Իսրայելի ՚ի մարդոյ՝ մինչև յանասուն. ի՛ն լիցին՝ զի ե՛ս եմ Տէր: ¹⁴Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանապատին Սինայի՝ և ասէ՛. ¹⁵Չանդէ՛ս արա որդւոցն Ղևեայ. ըստ տանց նահապետաց իւրեանց, ըստ գունդս իւրեանց, ըստ ազգս իւրեանց, ամենայն արուի՝ յամսօրեից և ՚ի վեր առնիցէք հանդէս: ¹⁶Եւ արարին նոցա հանդէս Մովսէս և Ահարոն, ըստ բարբառոյ Տեառն՝ որպէս և հրամայեաց նոցա Տէր: ¹⁷Եւ սոքա՛ են որդիք Ղևեայ ըստ անուանց իւրեանց, Գեթսոն, Կահաթ, և Մերարի: ¹⁸Եւ այս են անուանք որդւոցն Գեթսոնի, ըստ գունդս իւրեանց. Ղոբենի, և Սեմէի: ¹⁹Եւ որդիք Կահաթու ըստ գունդս իւրեանց, Ամրամ, և Սահառ, Քեբրոն, և Ոզիէլ: ²⁰Եւ որդիք Մերարեայ ըստ գունդս իւրեանց, Մոուլի, և Մուսի: ²¹Սոքա՛ են գունդք Ղևտացւոց ըստ տանց նահապետաց իւրեանց. Գեթսոնի, գունդն Ղոբենեայ, և գունդն Սեմեայ. սոքա են գունդք Գեթսոնի, ²²և հանդէս նոցա ըստ թուոյ ամենայն արուի, յամսօրեից և ՚ի վեր, հանդէս նոցա. եւթն հազար և հինգ հարիւր: ²³Եւ այս գունդք Գեթսոնի՝ յետոյ խորանին ընդ ծովակողմն բանակեսցին: ²⁴Եւ իշխան տան՝ նահապետաց գնդին Գեթսոնի՝ Եղիսափան որդի Գեիդայ: ²⁵Եւ պահպանութիւն որդւոցն Գեթսոնի ՚ի խորանին վկայութեան: ²⁶Խորանն և արտախուրակք և նուարտանք խորանին վկայութեան, և առագաստք սրահին, և վարագոյրք դրան խորանին. և այլ ևս ասելորդ ամենայն գործոյն նոցա: ²⁷Եւ Կահաթու՝ գունդ մի Ամրամայ, և գունդ մի Սահառայ, և գունդ մի Քեբրոնի, և գունդ մի Ոզիէլի. սոքա են գունդք Կահաթու: ²⁸Ըստ թուոյ ամենայն արուի յամսօրեից և ՚ի վեր, ութ հազար և երեք հարիւր. որ պահիցեն զպահպանութիւն սրբութեանցն: ²⁹Եւ գունդք որդւոցն Կահաթու բանակեսցին ՚ի կողմանէ՛ խորանին ընդ հարաւ: ³⁰Եւ իշխան տան՝ նահապետաց գնդին Կահաթու, Եղիսափան որդի Ոզիէլի: ³¹Եւ պահպանութիւն նոցա՝ տապանակն, և սեղանն, և աշտանակն, և զոհանոցքն, և կահք սրբութեանցն որովք պաշտէինն, և սրկապանն, և ամենայն գործի նոցա: ³²Եւ իշխան ՚ի վերայ իշխանացն Ղևտացւոցն, Եղիազար որդի Ահարոնի քահանայի կացցէ՛, պահել՝ զպահպանութիւնս սրբութեանցն: ³³Եւ Մերարեայ գունդն Մոողեայ. և գունդն Մուսեայ. սոքա՛ են գունդք Մերարեայ, և հանդէս նոցա՝ ³⁴ըստ թուոյ ամենայն արուի յամսօրեից և ՚ի վեր, վեց հազար և երկերիւր: ³⁵Եւ իշխան տան՝ նահապետաց գնդին Մերարեայ, Սուրիէլ որդի Աբիքեայ, ՚ի կողմանէ՛ խորանին բանակեսցին ընդ հիւսիսի, ³⁶և հանդէս նոցա: Եւ պահպանութիւն որդւոցն Մերարեայ, խոյակք խորանին և նիգք նորա, և սիւնակք նորա՝ խարիսխք նորա, և ամենայն կահք նոցուն, և գործի նոցուն, ³⁷և սիւնք սրահին շուրջանակի, և խարիսխք նոցա, և ցիցք նոցա, և ապաւանդակք նոցա: ³⁸Եւ որ բանակիցին յանդիման խորանին վկայութեան յարևելից կողմանէ՛ Մովսէս և Ահարոն իցեն, և որդիք նորա, պահեսցեն զպահպանութիւնս սրբութեանցն ՚ի պահպանութիւնս որդւոցն Իսրայելի, և այլազգի որ մերձենայցէ ՚ի նա՝ մեռցի: ³⁹Ամենայն հանդէս Ղևտացւոցն որոց արարին հանդէս Մովսէս և Ահարոն բանիւ Տեառն. ըստ գունդս իւրեանց,

* *Յօրինակին պակասէր.* Տէր ընդ Մովսիսի:

* *Այլք.* Որդի Գեեդայ:

* *Այլք.* Ամենայն գործոյն նորա:

* *Ոսկան յաւելու.* Գունդք Կահաթու թուելք ըստ անուանց իւրեանց:

* *Այլք.* Եւ ամենայն կահ նոցուն, և գործի նոցին:

* *Ոսկան յաւելու.* Եւ որք յանդիման խորանին բանակիցին, որք բանա՞: *Այլք.* Որ մերձենայցէ մեռցի:

ամենայն արու՝ յամսօրէից և ՚ի վեր, քսան և երկու հազարք:

Դ ⁴⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Զանդէս արա ամենայն անդրանկան արուի ամենայն որդւոցն Իսրայէլի յամսօրէից և ՚ի վեր. և կա՛լ գթիւ նոցա յանուանէ՝: ⁴¹Եւ առցեն՝ զՂևտացիսն ի՛նձ, զի ե՛ս եմ Տէր. փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի. և զանասուն Ղևտացւոցն, փոխանակ անդրանկաց անասնոց որդւոցն Իսրայէլի: ⁴²Եւ արա՛ր Մովսէս հանդէս որպէս պատուիրեաց Տէր, ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի: ⁴³Եւ եղեն ամենայն արուք անդրանիկք որդւոցն Իսրայէլի, ըստ թւոյ յանուանէ յամսօրէից և ՚ի վեր, ՚ի հանդիսէ անտի նոցա, քսան և երկու հազարք և երկերիւր և եւթանասուն և երեք*։ ⁴⁴Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁴⁵Ա՛ռ զՂևտացիսն փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի. և զանասուն Ղևտացւոցն փոխանակ անասնոց նոցա. և եղիցին ի՛նձ Ղևտացիքն. զի ե՛ս եմ Տէր: ⁴⁶Եւ զփրկանս զերկերիւրոց և զեւթանասնից և զերիցն աւելորդաց քան զՂևտացիսն, յանդրանկաց որդւոցն Իսրայէլի* ⁴⁷առցես հինգ սիկղ ըստ զլուխ ըստ սրբութեան երկդրամնին. առցես քսան դանգ՝ առ սիկղ. ⁴⁸և տացես զարծաթն Ահարոնի և որդւոցն նորա, փրկանս ընդ աւելորդացն ՚ի նոցանէ: ⁴⁹Եւ ա՛ռ Մովսէս զարծաթն զփրկանս աւելորդացն ՚ի նոցանէ ՚ի փրկանս Ղևտացւոցն*, ⁵⁰յանդրանկաց որդւոցն Իսրայէլի. և ա՛ռ զարծաթն հազար և երեք հարիւր և վաթսուն և հինգ սիկղ ըստ սրբութեան սկեղն: ⁵¹Եւ ետ Մովսէս զփրկանս աւելորդացն Ահարոնի՝ և որդւոց նորա ըստ բանի Տեառն. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:

4

Գլուխ Դ

Ե ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²Կա՛լ գթիւ զլիսոց որդւոցն Կահաթու ՚ի միջոյ որդւոցն Ղևեայ, ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց՝ ³ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցլիսնամեանս. ամենայն որ մտանիցէ ՚ի սպաս գործել զամենայն գործ ՚ի խորանին վկայութեան: ⁴Եւ ա՛յս իցէ գործ որդւոցն Կահաթու ՚ի միջոյ որդւոցն Ղևեայ. ըստ գունդս իւրեանց, ըստ տանց նահապետացն ՚ի խորանին վկայութեան՝ սրբութիւն սրբութեանցն*։ ⁵Եւ մտցէ՛ Ահարոն և որդիք իւր յորժամ խաղայցէ բանակն. և իջուցեն զվարագոյրն հովանոց, և ծածկեսցեն նովաւ զտապանակ վկայութեանն, ⁶և դիցեն ՚ի վերայ նորա զնուարտանն մաշկեղէն զկապուտակ, և արկցեն զնովաւ ձո՛րծ համակ կապուտակ ՚ի վերուստ կողմանէ, և ագուցեն զլծակսն: ⁷Եւ ՚ի վերայ զառաջաւորի սեղանոյն արկցեն հանդերձ համակ ծիրանի. և զափսէսն, և զտուփսն, և զճաշակսն, և զնուիրանոցսն որովք նուիրեսցեն. և հա՛ցքն հանապազորդք ՚ի վերայ նորա կացցեն. ⁸և արկցեն զնովաւ հանդերձ կարմիր, և ծածկեսցեն զնա մաշկեղէն նուարտանաւ կապուտակաւ, և ագուցեն ՚ի նմա զլծակսն: ⁹Եւ առցեն հանդերձ կապուտակ,

* Այլք. Արուի յորդւոցն Իսրայէլի:

* Այլք. Ամենայն արուք որդւոցն Իսրայէլի:

* Զօրինկին պակասէր. Եւ զեւթանասնից:

* Այլք. Աւելորդացն ՚ի փրկանս:

* Այլք. Սրբութիւնք սրբութեանցն:

և ծածկեսցեն զաշտանա՛կն լուսոյ՝ և զերկոսի՛ն ճրագարանսն նորա, և զունելիս նորա, և զբազմակալս նորա, և զամենայն ամանս իւղոյն որովք պաշտեսցենն* .
¹⁰և արկցեն զնա և զամենայն կա՛հ նորա ՚ի նուարտան մաշկեղէն կապուտակ. և դիցեն զնա ՚ի վերայ լծակացն: ¹¹Եւ զսեղանն ոսկի ծածկեսցեն հանդերձի կապուտակաւ, և արկցեն ՚ի վերայ նորա նուարտան մաշկեղէն կապուտակ, և ազուսցեն ՚ի նմա զլծա՛կս նորա: ¹²Եւ առցեն զամենայն զկա՛հ պաշտամանն՝ որովք պաշտիցեն ՚ի սրբութիւնսն, և արկցեն՝ ՚ի հանդերձս կապուտակս. և ծածկեսցեն զայն մաշկեղէն նուարտանաւ կապուտակաւ. և դիցեն ՚ի վերայ լծակացն*: ¹³Եւ զնուարտանն դիցեն ՚ի վերայ սեղանոյն. և ծածկեսցեն զնա հանդերձի համա՛կ ծիրանեալ*. ¹⁴և դիցեն ՚ի վերայ նորա զսպա՛սն որովք պաշտիցեն ՚ի վերայ նորա, և զբուրուառս, և զմսահանս, և զտաշտսն, և զծածկիչսն և զամենայն սպաս սեղանոյն. և արկցեն ՚ի վերայ նորա նուարտան մաշկեղէն կապուտակ. և անցուցեն ընդ՝ նա զլծակսն: ¹⁵Եւ առցեն հանդերձ ծիրանի և ծածկեսցեն զաւազանն, և զխարիսխս նորա. և արկցեն զնովաւ մա՛շկ կապուտակ, և դիցեն ՚ի վերայ լծակացն: Եւ կատարեսցեն Ահարոն և որդիք նորա ծածկել զսրբութիւնսն, և զամենայն կա՛հ սրբութեանն ՚ի չուել բանակին. և ապա՛ մտցեն որդիքն Կահաթու բառնալ, և մի՛ մերձեսցին ՚ի սրբութիւնսն՝ զի մի՛ մեռանիցին: Չայն բառնայցեն որդիք Կահաթու ՚ի խորանէ անտի վկայութեան: ¹⁶Եւ ոստիկան Եդիագար որդի Ահարոնի քահանայի. զւղն լուսոյ, և զխունկսն հանդերձանաց, և զգոհն հանապազորդ. և զւղն օծութեան, և զհանդերձ ամենայն խորանին և որ ինչ ՚ի նմա. և որ ՚ի սրբութեանն, և յամենայն սրբութիւնսն*: ¹⁷Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ¹⁸Մի՛ սատակիցէք զզունդն Կահաթու ՚ի միջոյ Ղևտացւոցն. զայս ինչ արասջիք նոցա, և կեցցեն և մի՛ մեռանիցին ¹⁹ի մերձանալ նոցա ՚ի սրբութիւն սրբութեանցն. Ահարոն և որդիք նորա մտցեն ՚ի ներքս, և կարգեսցեն զնոսա իւրաքանչիւր ըստ բեռին իւրում*. ²⁰և մի՛ մտցեն վայրապար տեսանել զսրբութիւն սրբութեանցն, զի մի՛ մեռանիցին*: ²¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²²Կա՛լ դու զհամար որդւոցն Գեթսոնի, ըստ անուանց նահապետաց իւրեանց, ըստ զնդից իւրեանց* ²³ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցյիսնամեանս, և արասցես նոցա հանդէս. ամենայն որ մտանիցէ ՚ի սպաս, գործել զգործ խորանին վկայութեան: ²⁴Այս իցէ սպասաւորութիւն զնդին Գեթսոնի, ՚ի մտանել ՚ի հարկ և ՚ի բառնալ. ²⁵և բարձցեն զվերնափեղկս խորանին, և զխորանն վկայութեան, և զարտախուրակս նորա, և զնուարտանս նորա կապուտակեայս որ ՚ի նմա ՚ի վերո՛ւստ կողմանէ. և զվարագոյր խորանին վկայութեան*, ²⁶և զառագաստ սրահին, և որ ինչ ՚ի վերայ խորանին վկայութեան. և զապարումսն, և զամենայն կահ սպասուն որովք պաշտիցենն: ²⁷Եւ արասցեն ըստ բերանոյ Ահարոնի և որդւոց նորա. եդիցի սպասաւորութիւն որդւոցն Գեթսոնի ըստ ամենայն սպասաւորութեան իւրեանց, և ըստ ամենայն գործոց իւրեանց. և

* *Ոմանք.* Եւ զբազմակակալս... իւղոյն, որովք պաշտիցեն:

* *Ի լուս՝.* Եւ արկցեն զնովաւ ՚ի հան՝:

* *Այլք.* Համակ ծիրանուով:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ Եւ ոստիկան. *նշանակի՝* եպիսկոպ: *Այլք.* Եւ զւղն օծութեան:

* *Ի լուս՝.* Ըստ կարգի իւրում, *համաձայն այլոց ՚ի բնաբ՝:*

* *Այլք.* Եւ մի մտանիցեն:

* *Այլք.* Ըստ տանց նահապետաց իւր՝:

* *Այլք.* Եւ զնուարտանն կապուտակեայ:

արասջիք նոցա հանդէս յանուանէ, և ամենայնի որ ինչ բառնայցի ՚ի նոցանէ: ²⁸Այս իցէ սպասաւորութիւն որդւոցն Գեթսունի ՚ի խորանին վկայութեան, և պահպանութիւն նոցա ՚ի ձեռն Իթամարայ որդւոյ Ահարոնի քահանայի: ²⁹Եւ որդւոցն Մերարեայ ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, արասջիք նոցա հանդէս*, ³⁰ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր, մինչև ցյիսնամեանս՝ արասջիք նոցա հանդէս. ամենայն որ մտանիցէ ՚ի սպաս գործոյ խորանին վկայութեան: ³¹Եւ այս իցէ պահպանութիւնք բեռանցն որ բառնայցին ՚ի նոցանէ, ըստ ամենայն գործոց նոցա ՚ի խորանին վկայութեան. զխոյակս խորանին և զնիգս, և զսիւնակս նորա, և զխարիսխս նորա. և զվարագոյրն, և զխարիսխս նորա. և զսիւնս նոցա*. ³²Եւ զվարագոյր դրան խորանին. և զսիւնս սրահին շուրջանակի, և զխարիսխս նոցա. և զսիւնս վարագուրին դրան սրահին, և զխարիսխս նոցա, և զցիցս նոցա, և զապաւանդակս նոցա, և զամենայն կահ նոցա, և զամենայն սպաս նոցա: Եւ յանուանէ հանդէս առնիցէք նոցա. և ամենայն կահի պահպանութեան որ բառնայցի ՚ի նոցանէ: ³³Այս իցէ սպասաւորութիւն գնդի որդւոցն Մերարեայ, յամենայն ՚ի գործս իւրեանց ՚ի խորանին վկայութեան՝ ՚ի ձեռն Իթամարայ որդւոյ Ահարոնի քահանայի: ³⁴Եւ արարին հանդէս Մովսէս և Ահարոն և իշխանքն Իսրայէլի որդւոցն Կահաթու ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց՝ ³⁵ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցյիսնամեանս, ամենայն որ մտանէր ՚ի սպաս, և գործէր գործ ՚ի խորանին վկայութեան. ³⁶և եղև նոցա հանդէս ըստ գնդից իւրեանց, երկու հազար և եւթն հարկը և յիսուն: ³⁷Այս է հանդէս գնդին Կահաթու. ամենայն որ մտանէր ՚ի սպաս խորանին վկայութեան. որպէս և արարին հանդէս Մովսէս և Ահարոն բանիւ Տեառն ՚ի ձեռն Մովսիսի*: ³⁸Եւ անցին ՚ի հանդիսի որդիքն Գեթսունի ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց՝ ³⁹ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցյիսնամեանս, ամենայն որ մտանէր պաշտել և գործել գործ ՚ի խորանին վկայութեան. ⁴⁰և եղև հանդէս նոցա ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, երկու հազար և վեց հարկը և երեսուն: ⁴¹Այս է հանդէս գնդի որդւոցն Գեթսունի, ամենայն որ պաշտէր ՚ի խորանին վկայութեան, որոց արարին հանդէս Մովսէս և Ահարոն, ըստ բանի Տեառն ՚ի ձեռն Մովսիսի: ⁴²Անցին ՚ի հանդիսի և գունդք որդւոցն Մերարեայ՝ ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց՝ ⁴³ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցյիսնամեանս. ամենայն որ մտանէր պաշտել ՚ի գործ խորանին վկայութեան. ⁴⁴և եղև հանդէս նոցա ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց, երեք հազար և երկերիւր: ⁴⁵Այս է հանդէս գնդի որդւոցն Մերարեայ. որոց արարին հանդէս Մովսէս և Ահարոն ըստ բանի Տեառն ՚ի ձեռն Մովսիսի: ⁴⁶Ամենեքին անցեալք ՚ի հանդիսի, որոց արարին հանդէս Մովսէս և Ահարոն և իշխանքն Իսրայէլի Ղևտացւոցն, ըստ գնդից իւրեանց, ըստ տանց նահապետաց իւրեանց՝ ⁴⁷ի քսան և ՚ի հինգ ամենից և ՚ի վեր մինչև ցյիսնամեանս. ամենայն որ մտանէր ՚ի գործ սրբութեանցն, և ՚ի գործ կրելեաց խորանին վկայութեան. ⁴⁸եղեն անցեալք ՚ի հանդիսի ութ հազար և հինգ հարիւր և ութսուն՝ ըստ բանի Տեառն: ⁴⁹Արար նոցա հանդէս Տէր ՚ի ձեռն Մովսիսի. այր ըստ առնէ ՚ի վերայ գործոյ իւրեանց, ՚ի վերայ բեռանցն զոր ինքեանք բառնային. և անցին ՚ի հանդիսի՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:

* Այլք. Արասջիք հանդէս:

* Այլք. Եւ զխարիսխս նոցա, և զսիւնս:

* Այլք. ՚ի սպաս ՚ի խորանն վկ:

Գլուխ Ե

Ձ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ՝. ²Յրաման տուր որդւոցն Իսրայէլի, և արձակեսցեն ՚ի բաց զամենայն բորոտ ՚ի բանակէ անտի, և զամենայն սերմնակաթ, և զամենայն պղծեալ յոգի, ³յարուէ մինչև ցեգ. արձակեսցէք ՚ի բաց ՚ի բանակէ անտի. և մի՛ պղծեսցեն զբանակս իւրեանց՝ յոր Ե՛սդ իջանեն: ⁴Եւ արարի՛ն այնպէս որդիքն Իսրայէլի, և արձակեսցին զնոսա ՚ի բաց ՚ի բանակէ անտի, որպէս խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի, այնպէս արարին որդիքն Իսրայէլի:

Է ⁵Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁶Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Ա՛յր կամ կի՛ն, որ ոք արասցէ յամենայն մարդկեղէն մեղաց, և արհամարհելով արհամարհիցէ՝ և յանցանիցէ անձնն այն, ⁷խոստովան լիցի զմեղս իւր զոր արար. և հատուցէ ընդ յանցանացն զգլուխն, և զհինգերորդ ևս մասն նորա յաւելցէ՛ ՚ի նոյն, և տացէ՛ այնմ որում յանցեալն: ⁸Ապա թէ չիցէ՛ ոք առնն մերձաւորիչ հատուցանել նմա զյանցանաց նորա. և ընդ յանցանացն որ ինչ ընծայիցի Տեառն, այն քահանայի՛ն եղիցի. բաց ՚ի խոյէ քաւութեանն՝ որով քաւիցէ վասն իւր: ⁹Եւ ամենայն պտուղ ըստ ամենայնի որ սրբիցի յորդուցն Իսրայէլի՝ զոր ինչ մատուցանիցեն Տեառն, քահանայի՛ն եղիցի՝: ¹⁰Եւ յիւրաքանչիւր սրբելոց անտի, նորա՛ լիցին. և ա՛յր ոք որ տացէ քահանային՝ նորա լիցի՛:

Ը ¹¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹²Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես ս ցոյսա. Առն ուրուք առն՝ եթէ յանցանիցէ կին իւր՝ և արհամարհիցէ զնա՝. ¹³և ննջեսցէ՛ ոք ընդ նմա արութեամբ սերման. և վրիպիցի յաչաց առն իւրոյ՝ և թաքուցանիցէ. և նա պղծեալ իցէ, և վկայ ո՛չ գուցէ զնմանէ, և յղի ո՛չ իցէ: ¹⁴Եւ հասանիցէ ՚ի վերայ առն նորա ոգի նախանձու. և նախանձ բերիցէ ընդ կնոջ իւրում, և նա՛ ո՛չ իցէ պղծեալ. կամ հասանիցէ ՚ի վերայ նորա ոգի՛ նախանձու, և նախանձ բերիցէ ընդ կնոջ իւրում. և նա՛ իցէ՛ պղծեալ: ¹⁵Ածցէ՛ այրն զկին իւր առ քահանայն՝ և մատուցէ՛ վասն նորա քահանայն պատարագ, զտասներորդ գրուի ալեր գարեղէն, և և՛ մի՛ արկցէ ՚ի նա, և կնդրուկ՝ մի՛ դիցէ ՚ի վերայ նորա. զի զոհ նախանձաւորութեան է: զո՛հ յիշատակի, զո՛հ յիշատակելոյ զմեղս՝ ¹⁶մատուցէ քահանայն, և կացուցէ՛ զկինն առաջի Տեառն: ¹⁷Եւ առցէ՛ քահանայն ջուր սուրբ կենդանի խեցեղէն ամանաւ. և ՚ի հողոյ անտի որ իցէ առ յատակաւ խորանին վկայութեան՝ առեալ քահանայն արկցէ՛ ՚ի ջուրն՝: ¹⁸Եւ կացուցէ՛ քահանայն զկինն առաջի Տեառն. և մերկացուցէ՛ զգլուխ կնոջն, և տացէ՛ ՚ի ձեռս նորա զզոհ յիշատակին, զզո՛հ նախանձաւորութեանն. և ՚ի ձեռին քահանային կացցէ ջուրն յանդիմանութեան մզովին այնորիկ, ¹⁹և երդմնեցուցէ՛ զնա քահանայն՝ և ասասցէ՛ ցկինն. Եթէ չիցէ՛ ննջեցեալ ընդ քեզ առն, եթէ չիցես յանցուցեալ և պղծեալ առ արամբ քով, քաւեալ լիջիր ՚ի ջրոյոյ:

* *Ոմանք.* Եւ խօսեցաւ Տէր:

* *Ոսկան.* Քահանայիցն եղիցի:

* *Ոմանք.* Ի սրբելոց անտի նորա լինիցի: *Այլք.* Նորա՛ լինիցին.. նորա լինիցի:

* *Ոմանք.* Եւ արհամարհելով արհամարհիցէ զնա:

* *Այլք.* Ջտասանորդ: *Ոմանք.* գրուին ալիւր գա՛.. մի՛ արկանիցէ:

* *Ոմանք.* Եւ տացէ քահանայն ջուր սուրբ:

յանդիմանութեան նզովիդ այդորիկ: ²⁰Ապա թէ յանցուցեալ իցես առ արամբ քով, կամ պղծեալ իցես. և տուեալ իցէ ուրուք զարութիւն իւր ՚ի քեզ, առանց առն քոյ: ²¹Եւ երդմնեցուցէ քահանայն զկինն՝ երդմամբ նզովիս այսորիկ. և ասասցէ քահանայն ցկինն. Տացէ՛ զքեզ Տէր ՚ի նզովս և յերդումն ՚ի մէջ ժողովրդեան քոյ, ՚ի տալ Տեառն զբարձս քո ՚ի քակտումն, և զորովայն քո յուռուցումն* . ²²և մտցէ ջուրս նզովեալ յորովայն քո, ուռուցանել զմէջ քո, և քակել զբարձս քո. և ասասցէ՛ կինն. Եղիցի՛ եղիցի: ²³Եւ գրեսցէ՛ քահանայն զնզովս զայսոսիկ ՚ի մատենի. և լուսացէ՛ ՚ի ջուրն յանդիմանութեան նզովիցն* . ²⁴և տացէ ըմպել կնոջն զջուրն յանդիմանութեան նզովից. և մտցէ՛ ՚ի նա ջուրն յանդիմանութեան նզովեալ: ²⁵Եւ առցէ՛ քահանայն ՚ի ձեռանէ կնոջն զզոհ նախանձաւորութեանն, և դիցէ՛ զզոհն առաջի Տեառն. և մատուցէ՛ առ սեղանն: ²⁶Եւ առցէ՛ բռամբ քահանայն ՚ի զոհէ յիշատակին նորա, և հանցէ զայն ՚ի սեղանն. և ապա՛ արբուցէ կնոջն զջուրն յանդիմանութեան: ²⁷Եւ եղիցի եթէ պղծեալ իցէ՛ և ծածկելով ծածկեալ իցէ յառնէն նորա. և մտանիցէ ՚ի նա ջուրն յանդիմանութեան նզովեալ. ուռուցէ՛ զորովայն նորա, և քակեսցին բարձք նորա. և եղիցի կինն ՚ի նզովս ՚ի մէջ ժողովրդեանն իւրոյ* : ²⁸Ապա թէ չիցէ պղծեալ կինն՝ և սուրբ իցէ, քաւեալ լիցի՛ և ընկալցի՛ սերմն: ²⁹Այս օրէն իցէ նախանձաւորութեան, որոյ յանցուցեալ իցէ կին՝ որ առնակին իցէ և պղծիցի. ³⁰կամ այր յորոյ վերայ հասանիցէ ոգի նախանձու, և ՚ի նախանձ մտանիցէ ընդ կնոջ իւրում: Կացուցէ՛ զկինն առաջի Տեառն, և արասցէ՛ նմա քահանայն ըստ ամենայն օրինիս այսորիկ. ³¹և քաւեալ լիցի այրն ՚ի մեղաց անտի. և կինն ընկալցի զմեղս իւր:

6

Գլուխ Զ

Թ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ* . ²Խօսեալց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Այր կամ կին, որ մե՛ծ ինչ ուխտս ուխտեսցէ սրբել զարութիւն Տեառն. ³ի գինւոյ և ՚ի ցքւոյ սրբեսցի. և զբացախ ցքւոյ մի՛ արբցէ, և զխաղող նորա և զչամիչ մի՛ կերիցէ: ⁴Ձամենայն աւուրս ուխտին իւրոյ յամենայնէ զինչ և լինիցի յորթոյ, զգինի, ՚ի չամչոյ մինչև ցթինն մի՛ կերիցէ* ⁵զամենայն աւուրս սրբութեանն: և սրբիչ մի՛ ածիցէ զգլխով իւրով. մինչև լցցին աւուրքն զորս ուխտեաց Տեառն՝ սուրբ կացցէ, աճեցուցեալ զվարսս մագոյ գլխոյ իւրոյ* , ⁶զամենայն աւուրս ուխտին իւրոյ Տեառն: Յոգի վախճանեալ մի՛ մտցէ ⁷ի հօր, և ՚ի մօր, յեղբօր և ՚ի քեռ. մի՛ պղծեսցի նքօք ՚ի մահու նոցա. զի ուխտ Տեառն ՚ի վերայ գլխոյ նորա է. ⁸զամենայն աւուրս ուխտին իւրոյ սուրբ կացցէ Տեառն: ⁹Եւ եթէ յանկարծ մեռանիցի ոք ՚ի վերայ նորա, առժամայն պղծեսցի գլուխ ուխտի նորա. և գերծցէ՛ զգլուխ իւր յաւուր յորում սրբիցի. և յաւուրն եւթներորդի

* Ոմանք. Ջբարձս քո ՚ի քակումն:

* Ոմանք. Ձնզովս զայս ՚ի մատենի:

* Ոմանք. Ի նզովս ժողովրդեան իւրոյ:

* Ոմանք. Եւ խօսեցաւ Տէր:

* Յօրինակին. Մինչև ցթինն մի՛ կերիցէ:

* Ոմանք. Ձվարսս գլխոյ իւրոյ:

գերծցի* .¹⁰ և յաւուրն ութերորդի ածցէ երկուս տատրա՛կս, կամ երկուս ձագս աղաւնեաց առ քահանայն ՚ի դուռն խորանին վկայութեան: ¹¹ Եւ արասցէ քահանայն զմին վասն մեղաց, և զմին յողջակե՛զ. և քաւեսցէ՛ վասն նորա քահանայն ընդ մեղացն զոր մեղաւ յոգի. և սրբեսցէ՛ զգլուխ իւր յաւուր յայնմիկ. ¹² զի յայնմ աւուր սրբեաց Տեառն զաւուրս ուխտին իւրոյ: Եւ ածցէ գառն մի տարևոր վասն յանցանացն. և աւուրքն առաջինք անհամարք լիցին. զի պղծեցա՛ւ զլուխ ուխտի նորա: ¹³ Եւ այս օրէն իցէ ուխտաւորին, յաւուր յորում կատարիցէ զաւուրս ուխտին իւրոյ. ածցէ՛ ՚ի դուռն խորանին վկայութեան. ¹⁴ և մատուցէ զպատարագն իւր Տեառն, գառն մի տարևոր անարատ յողջակե՛զ, և որոջ մի տարևոր անարատ վասն մեղաց, և խո՛յ մի անարատ ՚ի փրկութիւն. ¹⁵ և խան մի բաղարջաց նաշիւոյ. և պանս զանգեալ իւղով, և քաքարս բաղարջս օծեալս իւղով, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց* : ¹⁶ Եւ մատուցէ քահանայն առաջի Տեառն, և արասցէ՛ զվասն մեղացն նոցա. և զողջակե՛զն նորա, ¹⁷ և զխոյն արասցէ՛ զոհ փրկութեան Տեառն ՚ի վերայ խանին բաղարջոյ: և արասցէ քահանայն զգոհն նորա, և զնուէրս նորա: ¹⁸ Եւ գերծցէ՛ ուխտաւորն առ դրան խորանին վկայութեան զգլուխ ուխտին իւրոյ. և դիցէ՛ զմագն ՚ի հուրն որ ՚ի վերայ զոհին փրկութեան* : ¹⁹ Եւ առցէ քահանայն զերին եփեալ ՚ի խոյն անտի. և պան մի բաղարջ ՚ի խանէն, և քաքար մի բաղարջ, և դիցէ քահանայն ՚ի վերայ ձեռաց ուխտաւորին, յետ գերծելոյ նորա զգլուխն իւր* . ²⁰ և մատուցէ զայն քահանայն ընծայ՝ առաջի Տեառն, և եղիցի սուրբ: քահանային եղիցի ՚ի վերայ երբօնյն նուիրի, և ՚ի վերայ երւոյն հասի: և ապա արբցէ ուխտաւորն զինի: ²¹ Այս օրէն իցէ ուխտաւորի որ ուխտիցէ ոք Տեառն, և զպատարագ իւր վասն ուխտից. թո՛ղ զայն որ ինչ գտանիցէ ձեռն իւր. ըստ կարի՛ ուխտին իւրոյ՝ զոր ուխտիցէ ըստ օրինի սրբութեան Տեառն:

Ժ ²² Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²³ Խօսեաց՝ ընդ Ահարոնի և ընդ որդիս նորա և ասասցես. Այսպէս օրհնեսցիք զորդիսդ Իսրայէլի. և ասասցիք նոցա. ²⁷ և դիցեն զանուն իմ ՚ի վերայ որդւոցն Իսրայէլի, և ե՛ս օրհնեցից զնոսա* .

²⁴ Օրհնեսցէ՛ զքեզ Տէր՝ և պահեսցէ՛ զքեզ, ²⁵ և երևեցուցէ՛ զերեսս իւր ՚ի քեզ, և ողորմեսցի՛ քեզ. ²⁶ ամբարձցէ Տէր զերեսս իւր ՚ի քեզ, և տացէ քեզ խաղաղութիւն:

7

Գլուխ Է

ԺԱ ¹ Եւ եղև յաւուր յորում կատարեաց Մովսէս առ ՚ի կանգնելոյ զխորանն. և օծ զնա և զամենայն սպասս նորա. և զգոհանոցսն և զամենայն սպասս նորա. և օծ զնոսա և սրբեաց զնոսա* : ² Եւ մատուցին իշխանքն Իսրայէլի՝ երկոտասան

* *Ի լուս՝ յաւելու. Պղծեցի ոգի նորա և գլուխ: համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

* *Յօրինակին. Եւ պան մի բաղարջաց:*

* *Ոմանք. Որ իցէ ՚ի վերայ զոհին:*

* *Յօրինակին. Եւ պանն բաղարջ: Ոմանք. Յետ գերծելոյ նորա:*

* *Ամենայն գրչագիր օրհնակք մեր յետ բանից 23 համարոյն ունին զբանս 27ին. Եւ դիցեն զանուն իմ և այլն: Բաց յոսկանայ՝ որ դնէ զնոյն ՚ի վախճանի ըստ կարգի լատինական թուահամարոյն:*

* *Այլք. Եւ զգոհանոցն, և զամենայն:*

իշխան տանց նահապետաց նոցա. նոքա՛ էին իշխանք ցեղիցն, և նոքա՛ կային ՚ի վերայ ոստիկանութեանն՝: ³Եւ մատուցին զընծայս իւրեանց առաջի Տեառն: վե՛ց սայլս զարդարեալս, և եզինս երկոտասանս. սայլ մի յերկուց իշխանաց, և զուարակ յիւրաքանչիւր ունեքէ. և ածի՛ն առաջի խորանին: ⁴Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁵Ա՛ռ զայդ ՚ի դոցանէ, և եղիցին ՚ի գործ սպասաւորութեան խորանին վկայութեան. և տացե՛ս զայդ ցՂևտացիսն, իւրաքանչիւր ըստ իւրո՛ւմ սպասաւորութեան: ⁶Եւ առեալ Մովսիսի զսայլսն և զեզինսն ե՛տ ցՂևտացիսն: ⁷Սայլս երկուս և եզինս չորս՝ ե՛տ ցորդիսն Գեթսունի ըստ սպասաւորութեանն իւրեանց: ⁸Եւ սայլս չորս և եզինս ութ՝ ետ ցորդիսն Մերարեայ ըստ սպասաւորութեան իւրեանց, ՚ի ձեռն Իթամարայ որդւոյ Ահարոնի քահանայի: ⁹Եւ ցորդիսն Կահաթու ո՛չինչ ետ. զի զսպասաւորութիւն սրբութեանց սրբութեանցն ունէին, և յուսս իւրեանց բառնային՝: ¹⁰Եւ մատուցին իշխանքն ՚ի նաւակատիս սեղանոյն, յաւուր յորում օծ զնա. և բերին իշխանքն զընծայս իւրեանց առաջի սեղանոյն: ¹¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մի մի իշխան, մի մի օր մատուցեն զընծայս իւրեանց ՚ի նաւակատիս սեղանոյն:

ա. ¹²Եւ մատուցանէր զընծայս իւր յաւուրն առաջնում Նաասոն որդի Ամինադաբայ՝ իշխան ցեղին Յուդայ, ¹³մատոյց զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ ՚ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի՝ յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՛ նաշիւով զանգելով ընդ իւղոյ ՚ի զոհ՝: ¹⁴Տուփ մի ոսկի ՚ի տասն դահեկանէ լի՛ խնկով. ¹⁵զուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ¹⁶նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ¹⁷և ՚ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարևորս հինգ: Ա՛յս ընծայ Նաասոնի որդւոյ Ամինադաբայ:

բ. ¹⁸Եւ յաւուրն երկրորդի մատոյց Նաթանայէլ որդի Սովգարայ՝ իշխան ցեղին Իսաքարայ. ¹⁹և մատոյց զընծայս իւր: Կոնք մի արծաթի ՚ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի՝ յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքեան լի նաշիւով զանգելով ընդ իւղոյ ՚ի զոհ: ²⁰Տուփ մի ՚ի տասն դահեկանէ լի խնկով. ²¹զուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ. ²²նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ²³և ՚ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարևորս հինգ: Ա՛յս ընծայ Նաթանայէլի որդւոյ Սովգարայ:

գ. ²⁴Եւ յաւուրն երրորդի, իշխան որդւոցն Ջաբուղոնի, Եղիաբ որդի Քելլոնի, ²⁵զընծայսն իւր: Կոնք մի արծաթի ՚ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՛ նաշիւով զանգելով ընդ իւղոյ ՚ի զոհ՝: ²⁶Տուփ մի ՚ի տասն դահեկանէ լի՛ խնկով. ²⁷զուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ²⁸նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ²⁹և ՚ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարևորս հինգ: Ա՛յս ընծայ Եղիաբու որդւոյ Քելլոնի:

դ. ³⁰Եւ յաւուրն չորրորդի իշխան որդւոցն Ռուբինի՝ Եղիսուր որդի Սեդիուրայ,

* Ոմանք. Եւ մատուցին... երկոտասան իշխանաց նահապետաց նոցա:

* Ոմանք. Ձի զսպասաւորութիւն սրբութեանց նուիրին յուսս իւրեանց բառ՝:

* Ոմանք. Եւ տաշտ մի արծա՛:

* Առ իւրաքանչիւր հատուած բանիցս ՚ի համարս 25. 31. 37. 43. 49 և այլն. Ոսկան միայն յաւելու՛. Մատոյց. զոր միաբան ամենայն օրինակք զօրութեամբ թողուն իմանալ, միանգամ և եթ եղեալ ՚ի սկզբան ՚ի համարն 13: Յօրինակին պակասէր. Ջանգելով ընդ իւղոյ:

³¹զընծայս իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ի զոհ: ³²Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի՝ խնկով.

³³զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ³⁴և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ³⁵և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Եղիսուրայ որդւոյ Սեդիուրայ:

Ե. ³⁶Եւ յաւուրն հինգերորդի՝ իշխան որդւոցն Շմաւոնի, Սաղամիէլ՝ որդի Սուրիսադայի, ³⁷զընծայս իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելոյ ընդ իւղոյ՝ի զոհ*:

³⁸Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի՝ խնկով. ³⁹զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ. ⁴⁰և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ⁴¹և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Սաղամիէլի որդւոյ Սուրիսադայի:

զ. ⁴²Եւ յաւուրն վեցերորդի՝ իշխան որդւոցն Գադայ, Եղիսափան որդի Ռագուելի ⁴³զընծայս իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ի զոհ*:

⁴⁴Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի՝ խնկով. ⁴⁵զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁴⁶և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ⁴⁷և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Եղիսափանայ որդւոյ Ռագուելի:

է. ⁴⁸Եւ յաւուրն եւթներորդի իշխան որդւոցն Եփրեմի, Եղիսամա որդի Սեմիուդայ, ⁴⁹զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ի զոհ*:

⁵⁰Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի՝ խնկով. ⁵¹զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁵²նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ⁵³և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ՝ Եղիսամայ որդւոյ Սեմիուդայ*:

ը. ⁵⁴Եւ յաւուրն ութերորդի՝ իշխան որդւոցն Մանասէի, Գամաղիէլ որդի Փադասուրայ ⁵⁵զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ի զոհ*:

⁵⁶Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի խնկով. ⁵⁷զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁵⁸և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ⁵⁹և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ, նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Գամաղիէլի որդւոյ Փադասուրայ*:

թ. ⁶⁰Եւ յաւուրն իններորդի իշխան որդւոցն Բենիամինի. Աբիդան որդի Գեթսոնի, ⁶¹զընծայս իւր: Կոնք մի արծաթի՝ի հարիւր և յերեսուն կշռորդէ. տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝ նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ի զոհ*:

⁶²Տուփ մի՝ի տասն դահեկանէ լի խնկով. ⁶³զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁶⁴և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. ⁶⁵և՝ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ,

* Այլք. Ջանգելով ընդ իւղոյ:

* Ոմանք համաձայն մերումս օրինակի, աստանօր ունին՝ Որդի Փառասուրայ:

* Ոմանք համաձայն մերումս օրինակի, աստանօր ունին՝ Որդի Փառասուրայ:

նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Աբիդանայ որդւոյ Գեթսունի:
Ժ. ⁶⁶Եւ յաւուրն տասներորդի իշխան որդւոցն Դանայ՝ Աբիեգեր որդի
Ամիսադայի, ⁶⁷զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ ի հարիւր և յերեսուն կշռորդէ.
տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի
նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ ի զոհ*:⁶⁸Տուփ մի՝ ի տասն դահեկանէ լի՝ խնկով.
⁶⁹զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁷⁰և նոխագ մի
յայծեաց վասն մեղաց. ⁷¹և՝ ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ,
նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Աբիեգերայ՝ որդւոյ
Ամիսադայի:

ժա. ⁷²Եւ յաւուրն մետասաներորդի իշխան որդւոցն Ասերայ՝ Փագիէլ որդի
Եքրանայ*, ⁷³զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ ի հարիւր և յերեսուն կշռորդէ.
տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝
նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ ի զոհ:⁷⁴Տուփ մի՝ ի տասն դահեկանէ լի՝ խնկով.
⁷⁵զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁷⁶և նոխագ մի
յայծեաց վասն մեղաց. ⁷⁷և՝ ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ,
նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Փագիէլի որդւոյ Եքրանայ:

ժբ. ⁷⁸Եւ յաւուրն երկուտասաներորդի՝ իշխան որդւոցն Նեփթաղիմայ՝ Աբիրան
որդի Էնանայ, ⁷⁹զընծայսն իւր: Կոնք մի արծաթի՝ ի հարիւր և յերեսուն կշռորդէ.
տաշտ մի արծաթի յեւթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի՝
նաշիւով զանգելով ընդ իւղոյ՝ ի զոհ:⁸⁰Տուփ մի՝ ի տասն դահեկանէ լի՝ խնկով.
⁸¹զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառն մի տարևոր յողջակէզ, ⁸²նոխագ մի
յայծեաց վասն մեղաց. ⁸³և՝ ի զոհ փրկութեան երինջս երկուս, խոյս հինգ,
նոխագս հինգ, որոջս տարևորս հինգ: Այս ընծայ Աբիրանայ որդւոյ Էնանայ:
⁸⁴Այս է օրէն նաւակատեաց սեղանոյն յաւուրն յորում օծ գնա, յիշխանաց
որդւոցն Իսրայէլի: Կոնք արծաթիք երկուտասան. տաշտք արծաթիք
երկուտասան. տուփք երկուտասան. ⁸⁵ի հարիւր և յերեսուն սկեղէ կոնք մի.
յեւթանասուն սկեղէ տաշտ մի: Ամենայն արծաթ սպասուցն՝ երկու հազար և
չորեքհարիւր սիկղ ըստ սրբութեան սկեղն: ⁸⁶Տուփք ոսկիք երկուտասանք լի՝
խնկով: ամենայն ոսկի տփոցն՝ հարիւր և քսան դահեկան: ⁸⁷Եւ ամենայն արջառ
յողջակէզ. զուարակք երկուտասանք. խոյք երկուտասանք. գառինք տարևորք
անարատք երկուտասան. և զոհք նոցա և նուէրք նոցին. և նոխագք յայծեաց
վասն մեղաց երկուտասանք. ⁸⁸և ամենայն արջառք՝ ի զոհ ողջակիզին
երկուտասանք. երինջք քսան և չորս, խոյք վաթսուն, նոխագք վաթսուն, որոջք
տարևորք անարատք վաթսուն: Այս են նաւակատիք սեղանոյն յետ կատարելոյ
զծեռս նոցա*, ⁸⁹ի մտանելն Սովսիսի՝ ի խորանն վկայութեան խօսել ընդ նմա:
Եւ լուան զբարբառն Տեառն՝ ի խօսելն ընդ նմա՝ ի վերուստ՝ ի քաւութենէ անտի՝
ի միջոյ երկուց քերովբէիցն որ էին՝ ի վերայ տապանակին վկայութեան, ի միջոյ
երկուց քերովբէիցն, և խօսեր ընդ նմա*:

8

* Ոմանք. Աբեգեր որդի ա՛:

* Ոմանք. Փագիէլ որդի Եքրանայ:

* Յօրինակին պակասէր. խոյք վաթսուն. նոխագք վաթսուն, որոջք: Ոմանք. Յետ
կատարելոյ զծեռս նորա:

* Ոմանք. ՚ի քաւութենէ անտի՝ ՚ի միջոյ երկուց քերովբէիցն, և խօսեր ընդ նմա:

Գլուխ Ը

ԺԲ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեաց ընդ Ահարոնի և ասասցես ցնա. Յորժամ դնիցես զճրագունսն՝ ՚ի միոջէ կողմանէ երեսաց աշտանակին, լուցանիցին եւթանքին ճրագարանքն: ³Եւ արար այնպէս Ահարոն. ՚ի միոջէ կողմանէ հանդէպ աշտանակին էլոյց զճրագարանս նորա. որպէս հրամայեաց Տէր Մովսիսի: ⁴Եւ այս է կազմած աշտանակին. ձոյլ ոսկի բուն նորա. և շուշանք նորա ձոյլ համակ, ըստ օրինակին որպէս եցոյց Տէր Մովսիսի՝ այնպէս արարին զաշտանակն*:

ԺԳ ⁵Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁶Ա՛ռ դու զՂևտացիսն ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի և սրբեսցես զնոսա. ⁷և այսպէս արասցես նոցա զսրբութիւնն իւրեանց: Ցանեսցես զնոքօք ջո՛ւր սրբութեան. և ածցի ածելի՝ ՚ի վերայ ամենայն մարմնոց նոցա, և լուսացեն զձործս իւրեանց, և սո՛ւրբք եղիցին: ⁸Եւ առցես զուարակ մի յանդուոյ, և ըստ նմին զո՛հ նաշիի զանգեալ իւղով: և առցես ո՛րթ տարևոր յանդուոյ վասն մեղաց. ⁹և տարցիս զՂևտացիսն առաջի խորանին վկայութեան, և ժողովեսցես զամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի. ¹⁰և մատուցեն զՂևտացիսն առաջի Տեառն. և դիցեն որդիքն Իսրայէլի զձեռս իւրեանց ՚ի վերայ Ղևտացւոցն*: ¹¹Եւ զատուցէ՛ Ահարոն զՂևտացիսն ՚ի հատուցումն առաջի Տեառն յորդւոցն Իսրայէլի. և եղիցին զգործ զգործ խորանին առաջի Տեառն: ¹²Եւ Ղևտացիքն դիցեն զձեռս իւրեանց ՚ի վերայ զլխոյ զուարակացն. և արասցես զմին վասն մեղաց, և զմին յողջակէ՛զ Տեառն քաւե՛լ վասն նոցա: ¹³Եւ կացուցես զՂևտացիսն առաջի Տեառն, և առաջի Ահարոնի, և առաջի որդւոց նորա. և տացես զնոսա հատուցումն առաջի Տեառն: ¹⁴Եւ զատուցես զՂևտացիսն ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի, և եղիցին ի՛նձ: ¹⁵Եւ ապա՝ մտցեն Ղևտացիքն զգործել զգործ խորանին վկայութեան. և սրբեսցես զնոսա, և տացես զնոսա հատուցումն առաջի Տեառն*. ¹⁶Գի հատուցումն հատուցեալ են նոքա ինձ ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի. փոխանակ ամենայն անդրանկաց որ բանան զամենայն արգանդ յորդւոցն Իսրայէլի. առի զնոսա ինձ: ¹⁷Չի ի՛ն է ամենայն անդրանիկ որդւոցն Իսրայէլի, ՚ի մարդոյ՝ մինչև յանասուն. յաւուր յորում հարի զամենայն անդրանիկ յերկրին Եգիպտացւոց, և սրբեցի զնոսա ինձ, ¹⁸և առի՛ զՂևտացիսն փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայէլի: ¹⁹Եւ ետու զՂևտացիսն հատուցումն տուեալս՝ Ահարոնի և որդւոց նորա ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի, զգործել զգործ որդւոցն Իսրայէլի ՚ի խորանին վկայութեան. և քաւե՛լ վասն որդւոցն Իսրայէլի մերձենալով ՚ի սրբութիւնսն: ²⁰Եւ արարին Մովսէս և Ահարոն, և ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի Ղևտացւոցն՝ որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Ղևտացւոցն, նոյնպէս և արարին նոցա որդիքն Իսրայէլի: ²¹Եւ սրբեցան Ղևտացիքն, և լուացին զհանդերձս, և ետուն զանձինս Ահարոնի ՚ի հատուցումն առաջի Տեառն. և քաւեա՛ց վասն նոցա Ահարոն սրբել զնոսա*: ²²Եւ ապա՝ մտին Ղևտացիքն պաշտել զպաշտօն իւրեանց ՚ի խորանին վկայութեան, առաջի Ահարոնի և առաջի որդւոց նորա. որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Ղևտացւոցն. նոյնպէս և արարին նոցա: ²³Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²⁴Այս ինչ է որ վասն Ղևտացւոցն իցէ. ՚ի քսան և հինգ ամենից և ՚ի վեր, մտցեն

* Այլք. Եւ այս էր կազմած: Ոմանք. Այնպէս արար զաշտա՛ն:

* Այլք. Եւ մատուցես զՂև՛:

* Ոմանք. Եւ սրբեսցես զնոսա հատուցումն:

* Ոմանք. Ահարոնի հատուցումն:

գործել՝ ի խորանին վկայութեան. ²⁵և ՚ի յիսնամենից՝ ՚ի բաց կացցեն ՚ի պաշտամանէ անտի՝ և ո՛չ ևս գործեսցեն. ²⁶և պաշտեսցէ եղբայր նորա ՚ի խորանին վկայութեան. պահել պահեսցէ զպահպանութիւնս, բայց գործ ինչ՝ մի՛ գործեսցէ. այնպէս արասցես Ղևտացւոցն ՚ի պահպանութիւնս իւրեանց:

9

Գլուխ Թ

ԺԴ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանապատին Սինայի, յամին երկրորդի ելանելոյ նոցա յեգիպտոսէ յամսեանն առաջնում և ասէ. ²Ասա՛ և արասցեն որդիքն Իսրայէլի զգատիկն ՚ի ժամանակի իւրում. ³ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն առաջնոյ, արասցեն զայն ընդ երեկս. ըստ ժամանակս. ըստ օրինի իւրում, ըստ պայմանի՝ իւրում առնիցեն զնա՛: ⁴Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի առնել զգատիկն, ⁵ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն յանապատին Սինայի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի՝ այնպէս արարին որդիքն Իսրայէլի: ⁶Եւ եկին արք՝ որ ո՛չ էին սուրբ ուղով մարդոյ. և ո՛չ կարէին առնել զգատիկն յաւուր յայնմիկ*. ⁷և մատեան առաջի Մովսիսի և Ահարոնի յաւուր յայնմիկ, և ասեն ցնոսա արքն այնոքիկ. Մեք անսուրբք եմք յոգի մարդոյ. արդ՝ մի՛ յետնեսցուք ՚ի մատուցանելոյ պատարագ Տեառն ՚ի ժամանակի իւրում ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի: ⁸Ասէ ցնոսա Մովսէս. Կացէ՛ք այդր, և լուայց՝ թէ զի՞նչ տացէ հրաման Տէր վասն ձեր: ⁹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ¹⁰Խօսեաց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես. Մա՛րդ ոք մարդ՝ որ լինիցի անսուրբ յոգի մարդոյ. և կամ թէ՛ ՚ի հեռի ճանապարհի ոք իցէ ՚ի ձէնջ յազգս ձեր. արասցէ զգատիկն Տեառն ¹¹յամսեանն երկրորդի. ՚ի չորեքտասաներորդում աւուր ընդ երեկս արասցէ՛ զնա բաղարջով և եղեգով կերիցէ զնա*. ¹²և մի՛ թողուցուն ինչ՝ ՚ի նմանէ յայգ. և ոսկր մի՛ բեկանիցեն ՚ի նմանէ. ըստ օրինի զատիկն արասցեն զնա: ¹³Եւ մարդ ոք՝ որ սուրբ իցէ, և ՚ի հեռաւոր ճանապարհի ոչ իցէ, և հեղգացի՛ առնել զգատիկն, սատակեսցի՛ անձն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ: զի զպատարագ Տեառն ո՛չ մատոյց ՚ի ժամանակի իւրում. զմեղս իւր ընկալցի մարդն այն: ¹⁴Եւ եթէ յարեսցի ՚ի ձեզ եկ ոք յերկրին ձերում, և առնիցէ զգատիկն Տեառն, ըստ օրինակի՛ զատիկն՝ և ըստ պայմանի՛ իւրում արասցէ զնա: Օրէն՝ մի և նոյն կացցէ ձեզ, եկին և բնակի երկրին:

ԺԵ ¹⁵Եւ յաւուրն յորում կանգնեցաւ խորանն, ծածկեաց՝ ամպ զխորանն և զտունն վկայութեան. և ընդ երեկս լինէր ՚ի խորանին իբրև զտեսիլ՝ հրոյ մինչև ցառաւօտ: ¹⁶Այնպէս լինէր հանապազ. ամպ ծածկէր զնա ՚ի տուէ, և տեսիլ հրոյ ՚ի գիշերի: ¹⁷Եւ յորժամ վերանայր ամպն ՚ի խորանէ՛ անտի, ապա՛ չուէին որդիքն Իսրայէլի. և ՚ի տեղուջ յորում զտեղի՛ առնոյր ամպն՝ անդ բանակէին որդիքն Իսրայէլի: ¹⁸Յրամանա՛ւ Տեառն բանակէին որդիքն Իսրայէլի, և հրամանաւ Տեառն չուէին: ¹⁹Չամենայն աւուրս յորս հովանի՛ ունիցի ամպն ՚ի վերայ խորանին, բանակեսցին որդիքն Իսրայէլի. և յորժամ ձգիցի ամպն ՚ի վերայ խորանին աւուրս բազումս, պահեսցեն որդիքն Իսրայէլի զպահպանութիւն

* Ոմանք. Պայմանի իւրում առնիցեն զայն:

* Ոմանք. Չգատիկն յաւուր յայնմիկ: (7) Եւ ասեն ցնոսա արքն այնոքիկ:

* Այլք. Եւ եղեգով կերիցեն զնա:

Տեառն և մի՛ չուեսցեն*։ ²⁰Եւ եղիցի յորժամ հովանի՛ ունիցի ամպն զաւուրս թուով՝ ՚ի վերայ խորանին. ըստ բանի՛ Տեառն բանակեսցեն, և ըստ բանի՛ Տեառն չուեսցեն։ ²¹Եւ եղիցի յորժամ լինիցի ամպն յերեկորեայ մինչև ցառաւօտ, և եթէ վերանայցէ ամպն ընդ առաւօտն. չուեսցեն զցերեկ կամ զցայգ. և եթէ ո՛չ վերասցի ամպն՝ ո՛չ չուեսցեն։ ²²Եւ եթէ ամսօրեայ ժամանակ յաճախիցէ ամպն, և հովանի լիցի ՚ի վերայ նորա, բանակեսցեն որդիքն Իսրայէլի՝ և մի՛ չուեսցեն. ²³զի ըստ հրամանի՛ Տեառն չուեսցեն, և զպահպանութիւնս Տեառն պահեսցեն հրամանա՛ւ Տեառն ՚ի ձեռն Մովսիսի։

10

Գլուխ Ժ

ԺՁ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ*։ ²Արա՛ դու քեզ երկուս փողս կռածոյս, արծաթի՛ս արասցես զնոսա. և եղիցին քեզ ա՛զդ առնելոյ ժողովրդեանն, և չուելո՛յ բանակացն։ ³Եւ հարկանիցեն փող նոքօք, և ժողովեսցի՛ ամենայն ժողովուրդն՝ ՚ի դուռն խորանին վկայութեան։ ⁴Եւ եթէ ՚ի միումն հարկանիցեն փող՝ եկեսցեն առ քեզ իշխանքն զօրավարքն Իսրայէլի*։ ⁵Եւ հարջի՛ք փող ազդեցութեան, և չուեսցեն բանակքն բանակեալք ընդ արևելս։ ⁶Եւ հարկանիցէք զերկրորդ փողն ազդեցութեան, և չուեսցեն բանակքն բանակեալք ընդ հարաւ։ Եւ հարկանիցէք զերրորդ փողն ազդեցութեան, և չուեսցեն բանակքն բանակեալք ընդ ծովակողմն։ Եւ հարկանիցէք զչորրորդ փողն ազդեցութեան, և չուեսցեն բանակքն բանակեալք ընդ հիւսւսի. ազդեցութեան փող հարկանիցեն ՚ի չուելն իւրեանց։ ⁷Եւ յորժամ ժողովիցէք զժողովուրդն՝ և հարկանիցէք փող՝ և ո՛չ ազդեցութեան։ ⁸Եւ որդիքն Ահարոնի քահանայք հարցեն փող, և եղիցի ձեզ օրէն յաւիտենական յազգս ձեր։ ⁹Եւ եթէ ելանիցէք ՚ի պատարագմ յերկրի ձերում, ընդդիմակացացն որ կայցեն ձեզ հակառակ, ազդեսցի՛ք փողով և յիշատակեսցի՛ք առաջի Տեառն. և ապրիցէք ՚ի թշնամեացն ձերոց*։ ¹⁰Եւ յաւուրս ուրախութեան ձերոյ, և յամսագլու՛խս ձեր հարկանիցէք փող. և ՚ի վերայ ողջակիզացն, և ՚ի վերայ զոհիցն փրկութեանց ձերոց. և եղիցի ձեզ յիշատակ առաջի Տեառն ձերոյ. Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր*։

ԺԷ ¹¹Եւ եղև յամին երկրորդի յամսեանն երկրորդի՝ որ օր քսան էր ամսոյն՝ վերացա՛ւ ամպն ՚ի խորանէն վկայութեան*։ ¹²Եւ չուեցին որդիքն Իսրայէլի հանդերձ աղխի՛ւքն իւրեանց յանապատէն Սինայի. և եկաց ամպն յանապատին Փառանու*։ ¹³Եւ չուեցին որդիքն Իսրայէլի ըստ բանի Տեառն ՚ի ձեռն Մովսիսի։ ¹⁴Եւ չուեցին նախ գունդք բանակի որդւոցն Յուդայ յառաջագոյն զօրուն իւրեանց. և ՚ի վերայ զօրացն նոցա Նաասոն որդի Ամինադաբայ։ ¹⁵Եւ ՚ի վերայ

* Ոմանք. Ձամենայն աւուրս զորս հովանի։

* Ոմանք. Եւ խօսեցաւ Տէր։

* Ոսկան. Իշխանքն և զօրավարքն։

* Ոմանք. Ընդդիմակացացն որ։

* Այլք. Առաջի Աստուծոյ ձերոյ։

* Այլք. Յամսեանն երկրորդում։

* Ոմանք. Փառանայ։ (13) Եւ չուեցին նախ ըստ բանի Տեառն.. (14) Եւ չուեցին գունդք բա՛ւ։

զօրաց որդւոցն Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի Սովգովրայ*։ ¹⁶Եւ ՚ի վերայ զօրու ցեղի որդւոցն Ջաբուղոնի՝ Եղիաբ որդի Քելլոնի։ ¹⁷Եւ իջուցանէին զխորանն, և չուէին. որդիքն Գեթսունի և որդիքն Մերարեայ բառնային զխորանն։ ¹⁸Եւ չուէին գունդք բանակի որդւոցն Ռուբինի հանդերձ զօրուն իւրեանց. և ՚ի վերայ զօրու նոցա Եղիսուր որդի Սեդիուրայ. ¹⁹և ՚ի վերայ զօրու ցեղի որդւոցն Շմաւոնի՝ Սաղ՝ամիէլ որդի Սուրիսադայի։ ²⁰Եւ ՚ի վերայ զօրու ցեղի որդւոցն Գադայ Եղիսափան որդի Ռագուելի։ ²¹Եւ չուեսցեն որդիքն Կահաթու բարձեալ զսրբութիւնսն. և կանգնեսցեն զխորանն մինչև այլքն հասանիցեն։ ²²Եւ չուեսցեն գունդք բանակին Եփրեմայ հանդերձ զօրուն իւրեանց. և ՚ի վերայ զօրու նոցա Եղիսամա որդի Սեմիուդայի*։ ²³և ՚ի վերայ զօրու ցեղի որդւոցն Մանասէի՝ Գամադիէլ՝ որդի Փադասուրայ. ²⁴և ՚ի վերայ ցեղի որդւոցն Բենիամինի Աբիդան որդի Գեդեոնի։ ²⁵Եւ չուեցին գունդք բանակի որդւոցն Դանայ յետո՛յ քան զամենայն բանակսն հանդերձ զօրուն իւրեանց. և ՚ի վերայ զօրու նոցա Աքիեզեր որդի Ամիսադայի. ²⁶և ՚ի վերայ ցեղի որդւոցն Ասերայ Փագեէլ որդի Եքրանայ*։ ²⁷և ՚ի վերայ ցեղի որդւոցն Նեփթադիմայ Աքիրան որդի Ենանայ*։ ²⁸Այս են զօրք որդւոցն Իսրայէլի. և չուեցին հանդերձ զօրուն իւրեանց։

ԺԸ ²⁹Եւ ասէ՛ Սովսէս ցՅոբաբ որդի Ռագուելի Մադիանացի ցաներն Սովսիսի. Ահա մեք չուեմք ՚ի տեղին զոր ասաց Տէր տա՛լ զնա մեզ. եկ ընդ մեզ, և բարի՛ արասցուք քեզ. զի Տէր խոստացաւ բարութիւնս Իսրայէլի*։ ³⁰Եւ նա ասէ. Ո՛չ երթայց անդր, այլ յերկիրն իմ և յա՛զգն իմ զնացից։ ³¹Եւ ասէ ցնա. Մի՛ թողուր զմեզ. քանզի էիր ընդ մեզ յանապատին. և եղիցես ընդ մեզ ծե՛ր։ ³²Եւ եղիցի թէ երթայցես ընդ մեզ, և լինիցին բարութիւնքն զոր ինչ արասցէ մեզ Տէր բարի, արասցու՛ք և քեզ։

ԺԹ ³³Եւ չուեցին ՚ի լեռնէ անտի Տեառն երեքօրեայ ճանապարհ. և տապանակ ուխտին Տեառն յառաջագո՛յն քան զնոսա երթայր երեքօրեայ՝ ճանապարհաւ, դիտել նոցա հանգիստ։ ³⁵Եւ եղև ՚ի չուել տապանակին՝ ասէ՛ Սովսէս. Արի՛ Տէր՝ և ցրուեսցին թշնամիք քո, փախիցեն ամենայն ատելիք քո*։ ³⁶Եւ ՚ի դադարելն ասէ. Դարձի՛ր Տէր ՚ի հազարաւորս և ՚ի բիւրաւո՛րս Իսրայէլի։ ³⁴Եւ ամպն հովանի՛ ունէր ՚ի վերայ նոցա ՚ի տուէ ՚ի չուել նոցա ՚ի բանակէ անտի*։

11

Գլուխ ԺԱ

Ի ¹Եւ ժողովուրդն տրտնջէր չարաչա՛ր առաջի Տեառն. և լուաւ Տէր և բարկացաւ սրտմտութեամբ։ Եւ բորբոքեցաւ ՚ի նոսա հո՛ւր ՚ի Տեառնէ. և եկեր զմասն ինչ բանակին։ ²Եւ աղաղակեաց՝ ժողովուրդն առ Սովսէս, և յաղօթս

* Ոմանք. Եւ ՚ի վերայ զօրուց որդւոցն։

* Ոմանք. Եւ չուեցին գունդք։ Այլք. Որդի Սեմիուդայ։

* Ոմանք. Եւ ՚ի վերայ զօրու ցեղի։

* Ոմանք. Եւ ՚ի վերայ զօրու ցեղի։

* Ոսկան. Ցաներն իւր. ահա։ Ոմանք. Ասաց Տէր. Տաց զնա ձեզ։

* Ոսկան. Ատելիք քո յերեսաց քոց։

* Ամենայն օրինակք բաց յՈսկանայ՝ զբանս 34 համարոյն ունին աստէն յետ 36 համարոյ։

եկաց Մովսէս առ Տէր. և դադարեաց հուրն: ³Եւ կոչեցաւ անուն տեղւոյն
այնորիկ Զրայրեաց. զի բորբոքեցաւ ՚ի նոսա՝ հուրն ՚ի Տեառն:

Իւ ⁴Եւ խառնադանճն որ էր ՚ի միջի նոցա ցանկացան ցանկութիւն. և նստեալ
լային որդիքն Իսրայէլի՝ և ասէին. Ո՞ տացէ մեզ մի՛ս ուտելոյ*. ⁵զի յիշեցաք
զձո՛ւկնն զոր ուտէաք յեգիպտոս ձրի՛, և զսեխն, և զմեղրապոպ, և զպրասն, և
զսոխն և զխստոր*. ⁶և արդ՝ աւասիկ նքողեալ են անձինք մեր. և ո՛չ ուրեք՝ բայց
միայն ՚ի մանանայն են աչք մեր: ⁷Եւ մանանայն էր իբրև զտերմն զնձոյ սպիտակ.
և տեսիլ նորա իբրև զտեսիլ սառին. ⁸և շրջէր ժողովուրդն և քաղէին, և աղային
յերկանի, և լետուին յանգանի, և եփէին ՚ի պուտան, և ամնէին նկանս. և էր
քաղցրութիւն նորա իբրև զխորիսխ իւղոյ և մեղու: ⁹Եւ յորժամ իջանէր ցօղ ՚ի
բանակն զցայգ, իջանէր և մանանայն ՚ի վերայ նորա: ¹⁰Լուաւ Մովսէս զլալիւն
նոցա ըստ զնդից իւրեանց, զհւրաքանչիւր առ դրան վրանի իւրոյ. և
բարկացաւ սրտմտութեամբ Տէր յոյժ. և առաջի Մովսիսի չա՛ր թուեցաւ*: ¹¹Եւ
ասէ Մովսէս ցՏէր. Ընդէ՞ր Տէր չարչարեցեր զժառայս քո, և հի՞մ ո՛չ գտի շնորհ
առաջի քո, արկանել զինև զբարկութիւն ժողովրդեանս այսորիկ*. ¹²միթէ ե՞ս
յղացայ զամենայն ժողովուրդս զայս, կամ թէ՛ ե՞ս ծնայ զսոսա, զի ասէս ցիս թէ՛
Ա՛ռ զդա ՚ի գո՛գ քո, որպէս առնուցու դայեակ զստնդիաց, տանել յերկիրն զոր
երդուար հարցն նոցա*: ¹³Եւ արդ՝ ուստի՞ է ինձ միս՝ տալ ամենայն
ժողովրդեանս այսմիկ. զի լա՛ն զինև և ասեն. Տո՛ւր մեզ միս զի կերիցուք*: ¹⁴Ո՛չ
կարեն ես միայն կրեր զժողովուրդս զայս. զի ծանրագոյն քան զիս է բանդ*: ¹⁵Եթէ
այդպէս առնիցես ընդ իս՝ սպան իսկ զիս եթէ հաճոյ իցէ քեզ. եթէ գտի
շնորհս և ողորմութիւն առ ՚ի քէն, զի մի՛ տեսից զչարչարանս իմ: ¹⁶Եւ ասէ Տէր
ցՄովսէս. Ժողովեա՛ ինձ եւթանասուն այր ՚ի ծերոցն Իսրայէլի. զոր դո՛ւ զիտես
եթէ նոքա՛ իցեն ծերագոյնք ժողովրդեանն, և ընտիրք նոցա. և հանցես զնոսա ՚ի
խորանն վկայութեան, և կացցեն անդ ընդ քեզ: ¹⁷Եւ իջից անդր և խօսեցայց
ընդ քեզ, և առից ՚ի Զոգուոյդ որ ՚ի քեզ է և արկից զնքօք. և բարձցեն ընդ քեզ
զյանդգնութիւն ժողովրդեանդ այդորիկ. և ո՛չ կրեսցես զդոսա դու միայն*: ¹⁸Եւ
ցժողովուրդն ասացես. Սրբեցարո՛ւք առ վաղիւ՝ և կերիջիք միս. զի լացէք
առաջի Տեառն՝ և ասացէք. Ո՛ ջամբեսցէ մեզ միս. զի լա՛ւ էր մեզ յեգիպտոս: Եւ
տացէ՛ ձեզ Տէր միս ուտելոյ, և կերիջիք միս: ¹⁹Ո՛չ զմի օր ուտիցէք, և ո՛չ զերկուս.
և ո՛չ զհինգ օր, և ո՛չ զտասն, և ո՛չ զքսան օր. ²⁰այլ զամսօրեայ աւուրս ուտիցէք.
մինչև ելանիցէ ընդ ռընգո՛ւնս ձեր. և եղիցի ձեզ ՚ի դառնութիւն. զի հեստեցէք
Տեառն որ է ՚ի միջի ձերում, և լացէք առաջի նորա, և ասէիք՝ Ընդէ՞ր էր մեզ
ելանել յեգիպտոս*: ²¹Եւ ասէ Մովսէս. Վեցիարիւր հազար հետևակաց է
ժողովուրդն՝ յորոց միջի են ես. և դու ասես մի՞ս տաց նոցա, և կերիցեն

* *Ոսկան ՚ի լուս*: Եւ խառնիճադանճն որ: *Այլք*. Որ էր ՚ի մեջ նոցա: *Ոմանք*. Ցանկացաւ
ցանկութիւն:

* *Բազումք*. Եւ զսոխ և զխստոր:

* *Ոմանք*. Ձլալիւն նոցա ըստ զնացից իւրե՛ն:

* *Այլք*. Ոչ գտի շնորհս առաջի քո:

* *Ոմանք*. Ծնայ զնոսա... որպէս առնու դայեակ:

* *Ոմանք*. Ուստի իցէ ինձ միս:

* *Այլք*. Ես միայն կրել զժողովուրդս:

* *Յօրինակին*. Ձանդգնութիւն ժողովրդեանդ:

* *Ոմանք*. Էր մեզ ելն յեգիպտոս:

ամսօրեայ ժամանակ*.²² միթէ արջան և ոչխա՞ր սպանանիցի՝ և բաւական լինիցի նոցա, կամ թէ ամենայն ձուկն ծովու ժողովիցի՝ և բաւական լինիցի նոցա*:²³ Եւ ասէ Տէր ցՄովսէս. Միթէ ձեռն Տեառն չիցէ՞ բաւական. այժմ տեսանիցես եթէ հասանիցէ՞ ՚ի վերայ քո բանս իմ՝ եթէ ոչ*:²⁴ Եւ ել Մովսէս և խօսեցաւ ընդ ժողովրդեանն զպատգամս Տեառն. և ժողովեաց եւթանասուն այր ՚ի ծերոց ժողովրդեանն, և կացոյց զնոսա շուրջ գխորանան: ²⁵ Եւ էջ Տէր ամպով, և խօսեցաւ ընդ Մովսիսի, և ան ՚ի Զոգւոյն որ ՚ի նմա, և արկ զեւթանասուն արամբքն զծերովք: Եւ իբրև հանգեալ Զոգին ՚ի վերայ նոցա, և մարգարեացան ՚ի բանակին, և այլ ո՛չ ևս յաւելին*:²⁶ Եւ մնացին երկու արք ՚ի բանակին. անուն միունն Ելդադ, և անուն երկրորդին Մովդադ, և հանգեալ ՚ի վերայ նոցա Զոգին. և նոքա էին ՚ի գրելոց անտի՝ և ո՛չ եկին ՚ի խորանն,²⁷ և մարգարեացան ՚ի բանակին: Եւ ընթացեալ պատանի մի՝ պատմեաց Մովսիսի՝ և ասէ ցնա. Ելդադն և Մովդադն մարգարեացան ՚ի բանակին*:²⁸ Պատասխանի տուեալ Յեսուսայ որդւոյ Նաւեայ պաշտօնէին Մովսիսի ընտրելոյ՝ և ասէ. Տէր Մովսէս, արգել զնոսա*:²⁹ Եւ ասէ ցնա Մովսէս. Մի՛ արկաներ դու ինձ նախանձուկս. և ո՞ տայր զամենայն ժողովուրդս Տեառն մարգարէս. յորժամ տայր Տէր զԹոգին իւր ՚ի վերայ նոցա:³⁰ Եւ գնաց Մովսէս ՚ի բանակն, ինքն և ծերքն Իսրայէլի:³¹ Եւ ել հողմ ՚ի Տեառնէ և խաղացոյց յայս կոյս զլորամարզին ՚ի ծովէն. և անկալ՝ զբանակաւն, աւուր գնաց աստի, և աւուր գնաց անտի՝ շուրջ զբանակաւն, իբրև ցերկուս կանգունս յերկրէ*:³² Եւ յարուցեալ ժողովուրդն զտիւն ողջոյն, և զգիշերն ողջոյն. և զտիւն ողջոյն ՚ի վաղիւ անդր, ժողովեցին զլորամարզին. որ սակաւ ժողովեաց՝ տասն քոռ. և սպանին և ապխտեցին իւրեանց ապուխտս ապուխտս շուրջ զբանակաւն*:³³ Մինչդեռ միսն յատամունս նոցա էր՝ յառաջ քան զպակասելն, և Տէր բարկացալ ժողովրդեանն, և եհար Տէր զժողովուրդն հարուածս մեծամեծս յոյժ*:³⁴ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Գերեզմանք ցանկութեան. զի անդ թաղեցին զժողովուրդն ցանկացօղ: Եւ ՚ի Գերեզմանացն ցանկութեան չուեաց ժողովուրդն յԱսերովք:

12

Գլուխ ԺԲ

ԻԲ ¹Եւ բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս վասն կնոջն Եթեովպացւոյ՝ զոր ան Մովսէս. զի կին Եթեովպացի՛ առ. ²և ասեն թէ՝ Ընդ Մովսիսի միա՞յն խօսեցաւ Տէր. ո՛չ ապաքէն և ընդ մե՞զ խօսեցաւ. և լուալ Տէր*:³ Եւ այրն Մովսէս հե՛զ էր յոյժ քան զամենայն մարդիկ՝ որ էին ՚ի վերայ երկրի:⁴ Եւ ասէ Տէր

* Ոսկան. Ամսօրեայ ժամանակաւ:

* Զօրինակին՝ ձուկն ծովու կարմրադեղով նշանակի:

* Ոմանք. Այժմ գիտացես եթէ հասանիցէ... և թէ ոչ:

* Ոմանք. Ոչ ևս յաւելին. (26) մնացին երկու արք ՚ի բանակի անդ. ան՛:

* Ոմանք. Եւ Մովդադ մարգարեանան ՚ի:

* Զօրինակի մերում և եթ՝ աստանօր անուն Յեսուսայ որդւոյ Նաւեայ, գրի՝ Յեսուս, Յեսուսայ, ըստ յունականին:

* Ոմանք. Զլորամարզին ՚ի ծովէ անտի:

* Ոմանք. Ապուխտ ապուխտս: Զոր Ոսկան ունի միանգամ և եթ:

* Զօրինակին. Յառաջ քան զպակասելն: Ոմանք. Զարուածս մեծ յոյժ:

* Այլք. Եւ ասեն. Միթէ ընդ Մովսիսի:

նոյնժամայն՝ ցՄովսէս և ցԱհարոն և ցՄարիամ. ելէք դուք երեքին՝ ի խորանն վկայութեան: Եւ ելին երեքին՝ ի խորանն վկայութեան: ⁵Եւ էջ Տէր սեամբ ամպոյ, և եկաց առ դրան խորանին վկայութեան. և կոչեցան Ահարոն և Մարիամ, և ելին երկուքեան: ⁶Եւ ասէ ցնոսա Տէր. Լուարո՛ւք բանից իմոց. եթէ լինիցի՝ մարգարէ՝ ի ձէնջ Տեառն, տեսլեա՛մբ երևեցայց նմա, և երագով խօսեցայց ընդ նմա: ⁷Ո՛չ այնպէս որպէս ծառայն իմ Մովսէս՝ որ յամենայն տան իմում հաւատարիմ է. ⁸բերան ՚ի բերան խօսեցայց ընդ նմա, երեսօք և ո՛չ առակօք. և զփառսն Տեառն ետես. և ընդէ՞ր ո՛չ երկերուք բամբասել զծառայն իմ Մովսէս: ⁹Եւ եղև բարկութիւն սրտմտութեան Տեառն ՚ի վերայ նոցա՝ և զնացին: ¹⁰Եւ ամպն վերացաւ ՚ի խորանէ անտի. և ահա Մարիամ բորոտեալ էր իբրև զծիւն. և հայեցաւ Ահարոն ընդ Մարիամ, և ահա՝ բորոտեալ էր: ¹¹Եւ ասէ Ահարոն ցՄովսէս. Խնդրե՛մ ՚ի քէն տեր, մի՛ ածեր ՚ի վերայ մեր մեղս. զի անգիտացա՛ք, և քանզի մեղաք՝ ¹²մի՛ լինիցի հանգոյն մահու, իբրև զվիժած որ ելանիցէ յարգանդէ մօր՝ և ուտիցէ զկէս մարմնոյ նորա՞: ¹³Եւ աղաղակեաց Մովսէս առ Տէր՝ և ասէ. Խնդրե՛մ ՚ի քէն Աստուած, բժշկեա՛ զնա: ¹⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Եթէ հօր իւրոյ քթանելով քթեալ էր ընդ երեսս նորա՝ չամաչէ՞ր զեւթն օր. մեկնեսցի՞ զեւթն օր արտաքոյ բանակին՝ և ապա՛ մտցէ: ¹⁵Եւ զատուցաւ Մարիամ արտաքոյ բանակին զեւթն օր. և ժողովուրդն ո՛չ չուեաց՝ մինչև սրբեցա՛ւ Մարիամ:

13

Գլուխ ԺԳ

¹Եւ ապա՛ չուեաց ժողովուրդն յԱսերովթայ, և բանակեցաւ յանապատին Փառանու:

ԻԳ ²Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ՞. ³Առաքեա՛ արս՝ և լրտեսեսցեն զերկիրն Քանանացոց, զոր են տաց որդւոցն Իսրայէլի ՚ի կալուածս. այր մի՝ ըստ ցեղի, ըստ տանց նահապետաց իւրեանց առաքեսցես զնոսա՝ զամենայն գլխաւորս ՚ի նոցանէ: ⁴Եւ առաքեաց զնոսա Մովսէս յանապատէն Փառանու՝ ըստ բանին Տեառն. ամենեքին արք գլխաւորք էին նոքա յորդւոցն Իսրայէլի՞: Եւ այս են անուանք նոցա: ⁵Յեղին Ռուբինի, Սաղամիէլ որդի Աքուրայ: ⁶Յեղին Շմաւոնի, Սափատ որդի Սուրեայ: ⁷Յեղին Յուդայ, Քաղէբ որդի Յեփոնեայ: ⁸Յեղին Իսաքարայ, Գաղամ որդի Յովսեփայ: ⁹Յեղին Եփրեմայ, Ասէս որդի Նաւեայ: ¹⁰Յեղին Բենիամինի, Փաղտի որդի Ռափուայ: ¹¹Յեղին Չաբուղոնի, Յուդիէլ որդի Սուդիայ: ¹²Յեղին Յովսեփայ՝ որդւոցն Մանասէի, Գադլէ որդի Սուսայ: ¹³Յեղին Դանայ, Ամիէլ որդի Գամայի: ¹⁴Յեղին Ասերայ, Սաթուր որդի Միքայէլի: ¹⁵Յեղին Նեփթաղիմայ, Աբի որդի Յաբիայ: ¹⁶Յեղին Գադայ, Գուդիէլ որդի Մակքեայ: ¹⁷Ա՛յս անուանք են արանցն՝ զոր առաքեաց Տէր լրտեսել զերկիրն Քանանացոց. և անուանեաց Մովսէս զանուն Ասեայ որդւոյ Նաւեայ՝ Յեսու: ¹⁸Եւ առաքեաց զնոսա Մովսէս յանապատէն Փառանու լրտեսել զերկիրն Քանանացոց, և ասէ ցնոսա. Ելէք ընդ անապատդ, և ամբարձայք ՚ի լեառնն,

* Ոմանք. Զի անգիտացաք. քանզի մեղաք. և ոմանք. Եւ մեղաք:

* Ոմանք. Զկէս մարմնոց նոցա:

* Ոմանք. Եւ խօսեցաւ Տէր ընդ:

* Ոմանք. Յանապատին Փարանու՝ ըստ բա՛:

¹⁹Ա տեսչիք զերկիրն զի՞նչ իցէ. և զժողովուրդն որ նստի 'ի նմա, եթէ զօրաւորագո՞յն իցէ՝ թէ անաւագ, եթէ սակա՞ւք իցեն՝ եթէ բազումք՞: ²⁰Եւ զի՞նչ իցէ երկիրն յորում նոքա բնակեալ իցեն, եթէ բարի՞ իցէ՝ եթէ չար. և զի՞նչ իցեն քաղաքքն յորս նոքա բնակեալ են. պարսպաւո՞րք են՝ եթէ անպարիսպք՞. ²¹և զի՞նչ իցէ երկիրն, պարա՛րտ իցէ՝ եթէ տկար. եթէ իցէ՞ 'ի նմա ծառատունկ՝ եթէ ոչ. և ժրասչի՞ք առջի՞ք 'ի պտղոյ երկրին: Եւ աւուրք զարնայնոյ՝ էին աւուրքն խայծուածոյ խաղողոյ: ²²Եւ ելեալ լրտեսեցին զերկիրն յանապատն Սինայ մինչև ցՐոռք 'ի մուտս Եփրաթայ. ²³Ելին ընդ անապատն՝ և եկին մինչև ցԹերրոն. և անդ Աքիման, և Սէսի, և Թաղամի, և ազգքն Ենակայ. և Քերրոն եւթն ամաւ յառաջագոյն շինեալ էր քան զՏայանիս Եգիպտացոց: ²⁴Եւ եկին մինչև ցՁորն ողկուզոյ, և լրտեսեցին զնա. և հատին անտի ո՛ւռ որթոյ, և ողկոյզ մի խաղողոյ 'ի նմա, և բարձին զնա լծակօք՝ և 'ի նռանէ՛ և 'ի թզոյ: ²⁵Եւ անուանեցին զանուն տեղւոյն՝ Չո՛ր ողկուզոյ. վասն ողկուզին զոր հատին անտի որդիքն Իսրայէլի: ²⁶Եւ դարձան անդրէն որդիքն Իսրայէլի լրտեսեալ զերկիրն յետ աւուրք քառասնից. ²⁷և եկեալ հասին առ Մովսէս և առ Ահարոն, և առ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի յանապատն Փարան Կադէս. և ետուն նոցա զրոյց և ամենայն ժողովրդեանն: Եւ ցուցին զպտուղ երկրին՝, ²⁸և պատմեցին նոցա, և ասեն ցնա. Չոգա՞ք յերկիր յոր առաքեցեր զմեզ, երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր. և այս է պտուղ նորա՞: ²⁹Բայց ազգն սաստիկ էր որ բնակեալ էին 'ի նմա. և քաղաքք ամուրք և պարսպաւորք և մեծամեծք յոյժ. և զազգն Ենակայ տեսա՛ք անդ: ³⁰Եւ Ամադէկ բնակեալ էր յերկրին ընդ հարաւակողմն. և Քետացին և Խևացին և Յերուսացին և Ամովրիացին բնակեալ էին առ լերամբքն, և Քանանացին՝ առ ծովեզերքն և առ Յորդանանաւ՞: ³¹Լռեցո՛յց Քաղէր զժողովուրդն 'ի Մովսիսէ, և ասէ ցնոսա. Ո՛չ այդպէս է. այլ ելանելով՝ ելցուք և ժառանգեսցուք զնա. զի կարօղ ենք յաղթել նոցա: ³²Եւ արքն որ ընդ նմա երթեալ էին՝ ասէին. Ո՛չ ելցուք, քանզի ո՛չ կարենք երթալ 'ի վերայ ազգին, զի զօրագոյն քան զմեզ է յոյժ՞: ³³Եւ զարհուրեցուցին երկրաւն զոր լրտեսեցին՝ զորդիսն Իսրայէլի՝ և ասեն. Ընդ երկիրն ընդ որ մե՛ք անցաք լրտեսել զնա, երկիր՝ մարդածախ է բնակչաց իւրոց. և զամենայն զազգն զոր տեսաք 'ի նմա՝ արք յաղթահասակք են. ³⁴տեսաք անդ՝ և սկայս, և էաք յաչս նոցա իբրև մարախ՞:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ ձայն բարձին ամենայն ժողովուրդն, և ելա՛ց ազգն զգիշերն զայն ողջոյն. ²և տրտնջեա՛ց ժողովուրդն զՄովսիսէ և զԱհարոնէ ամենայն որդւովքն Իսրայէլի: Եւ ասէ ցնոսա ամենայն ժողովուրդն. Լա՛ւ էր եթէ մեռեալ էաք յերկրին

* *Ոմանք.* Եթէ զօրագոյն իցէ՝ թէ անա՞:
 * *Ոմանք.* Պարսպաւորք իցեն՝ եթէ:
 * *Այլք.* Եւ հասեալ եկին առ Մովսէս և.. Փառան Կադէս:
 * *Ոմանք.* Յերկիր որ բղխէ.. այս է պտուղ սորա:
 * *Ոմանք.* Եւ ամենայն Ամադէկ բնա՞:
 * *Ոմանք.* Ասեն. Ոչ ելցուք:
 * *Ոմանք.* Եւ սկայք... իբրև զմարախ:

Եգիպտացւոց. կամ թէ աստէն յանապատի՝ աստ իսկ մեռանէաք* .³ և ընդէ՞ր տանիցի զմեզ Տէր յերկիրն յայն անկանել մեզ պատերազմաւ. և կանայք մեր և որդիք մեր լինիցին ՚ի յափշտակութիւն. և արդ լա՛ւ իցէ մեզ դառնալ անդրէն յեգիպտոս: ⁴Եւ ասէ այր ցընկեր. Արասցո՛ւք զօրավար, և դարձցո՛ւք յեգիպտոս: ⁵Եւ անկան Մովսէս և Ահարոն ՚ի վերայ երեսաց իւրեանց առաջի ամենայն որդւոցն Իսրայէլի*: ⁶Բայց Յեսու որդի Նաւեայ, և Քաղէբ որդի Յեփոնեայ ՚ի լրտեսաց երկրին՝ պատառեցին զհանդերձս իւրեանց, ⁷և խօսեցան ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի՝ և ասեն. Երկիր զոր մեք լրտեսեցաք՝ երկիր բարի՛ է յոյժ. ⁸Եթէ հաճեսցի՛ միայն ընդ մեզ Աստուած, և տարցի յերկիրն յայն, և տացէ զնա մեզ. երկիր է՝ որ բոխէ զկա՛թն և զմեղր*: ⁹Բայց ՚ի Տեառնէ միայն ապստամբք մի՛ լինիցիք, և ՚ի ժողովրդենէ երկրին մի՛ երկնչիջիք. քանզի կերակո՛ւր մեր են: Չի մեկնեցաւ ՚ի նոցանէ Տէր և ընդ մե՛զ է Տէր. մի՛ զանգիտիցէք ՚ի նոցանէ*: ¹⁰Եւ ասաց ամենայն ժողովուրդն քարկոծել զնոսա քարամբք. և փառքն Տեառն երևեցան ամպով ՚ի վերայ խորանին վկայութեան յանդիման ամենայն որդւոցն Իսրայէլի: ¹¹Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մինչև յե՞րբ բարկացուցանէ զիս ժողովուրդդ. և մինչև յե՞րբ ո՛չ հաւատան ինձ ամենայն նշանօք զոր արարի ՚ի մեջ նոցա*: ¹²Թո՛յլ տուր ինձ՝ և հարի՛ց զդոսա մահուամբ, և կորուսի՛ց զդոսա. և զքեզ և զտո՛ւն հօր քոյ արարից յա՛զգ մեծ և ՚ի բազում քան զայդ: ¹³Եւ ասէ Մովսէս ցՏէր. Իսկ արդ՝ լսիցեն Եգիպտացիքն՝ եթէ դու հաներ զօրութեամբ քո մեծաւ զժողովուրդս զայս ՚ի նոցանէ. ¹⁴այլ և ամենայն բնակիչք երկրիս այսորիկ լսիցեն՝ թէ դո՛ւ Տէր ՚ի ժողովրդեանս յայսմիկ ես՝ որ դէ՛մ յանդիման երևիս դու Տէր. և ամպ քո կա՛յ ՚ի վերայ դոցա. և սեամբ ամպոյ երթան դու առաջի դոցա ՚ի տուէ, և սեամբ հրոյ ՚ի գիշերի*. ¹⁵և սատակիցես զժողովուրդս քո զայս՝ իբրև զայր մի: Եւ խօսեցին ազգքն որ լուան զանուանէ քումմէ, և ասիցեն. ¹⁶Վասն զի ո՛չ կարէր տանել Տէր զժողովուրդն զայն՝ յերկիրն զոր երդուաւ նոցա, արկ զնոսա տապա՛ստ յանապատի անդ*: ¹⁷Եւ արդ բարձրասցի՛ ձեռն քո Տէր, որպէս խօսեցար և ասացեր. ¹⁸թէ՛ Տէր երկայնամի՛տ է և բազում ողորմ և ճշմարիտ, բառնայ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս և զմեղս, և սրբելով ո՛չ սրբէ զպարտաւորն. հասուցանել զմեղս հարանց յորդիս մինչև յերիս և ՚ի չորս ազգս*: ¹⁹Թո՛ղ զմեղս ժողովրդեան քոյ, ըստ մեծի ողորմութեան քում. որպէս ներեցեր դոցա յեգիպտոսէ մինչև ցա՛յժմ*: ²⁰Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ներեցի՛ց դոցա ըստ բանի քում. ²¹բայց կենդանի՛ եմ ես, և կենդանի՛ է անուն իմ. և լցցեն փառք Տեառն զամենայն երկիր: ²²Չի ամենայն արք որ տեսին զփառսն իմ, և զնշանս զոր արարի ես յեգիպտոս և յանապատիս յայսմիկ, և փորձեցին զիս՝ այս տասն անգամ, և ո՛չ լուան ձայնի իմում, ²³թէ տեսանիցեն զերկիրն զոր երդուայ հարցն նոցա. այլ որդիք նոցա որ են աստ ընդ իս՝ որ ո՛չ գիտեն զչար կամ զբարի, ամենայն մանուկ տխմար՝ նոցա՛ տաց

* *Ոմանք.* Ամենայն որդւովն Իսրայէլի. և *ոմանք.* Ամենայն որդիքն Իսրայէլի:

* *Ի լուս՝.* Առաջի ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի:

* *Ոմանք.* Ընդ մեզ Տէր Աստուած, և տարցի:

* *Ոմանք.* Մի՛ զանգիտէք ՚ի նոցանէ:

* *Այլք.* Արարի ՚ի միջի նոցա:

* *Ոսկան.* Որոց դէմ յանդիման ե՛ս:

* *Ոմանք.* Ոչ կարէր Տէր տանել... և արկ զնոսա տա՛ս:

* *Ի լուս՝.* Հատուցանել զմեղս հա՛ս. ուր այլք ունին՝ հատուցանէ:

* *Ոմանք յաւելուն.* Եւ արդ թո՛ղ զմեղս ժո՛ւ:

զերկիրն. և ամենեքին որ բարկացուցին զիս՝ ո՛չ տեսցեն զնա*։ ²⁴Բայց Քաղէք ծառայ իմ յորում եղև հոգի ա՛յլ, և եկն զհետ իմ. տարա՛յց զնա յերկիրն՝ յոր ենուտ. և զաւա՛կ նորա ժառանգեսցէ զնա։ ²⁵Եւ Ամաղէկ և Քանանացին բնակեալ են ՚ի ձորն. բայց դուք վաղիւ դարձարո՛ւք և չուեցէք յանապատն ընդ ճանապարհ Կարմիր ծովուն։ ²⁶Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²⁷Մինչև յե՞րբ զժողովուրդդ զայդ զչա՛ր կրիցեմ, և դոքա տրտնջեն առաջի իմ։ Զտրտունջ որդւոցն Իսրայէլի որ տրտնջեն զձէնջ՝ լուայ։ ²⁸Արդ՝ ասասցես ցնոսա. Կեդանի՛ եմ ես ասէ Տէր, եթէ ո՛չ որպէս խօսեցայք յականջս իմ, նո՛յնպէս արարից ձեզ*։ ²⁹յանապատի՛ս յայսմիկ անկցին ոսկերք ձեր, և ամենայն հանդէս ձեր, և մտեալքն ՚ի ձէնջ ՚ի համար՝ ՚ի քսանամենից և ՚ի վեր որ տրտնջեցին զինէն. ³⁰թէ՛ մտցեն յերկիրն՝ յոր համբարձի զձեռն իմ բնակեցուցանել զձեզ ՚ի նմա. բայց Քաղէք՝ որդի Յեփոնեայ, և Յեսու Նաւեան*։ ³¹Եւ զորդիսն զորմէ ասացէք թէ ՚ի յափշտակութիւն լինիցին, տարա՛յց զնոսա յերկիրն. և ժառանգեսցեն զնա, յորմէ դո՛ւքն յափրացարուք։ ³²Եւ ոսկերք ձեր անկցին աստէ՛ն յանապատիս*։ ³³և որդիք ձեր ճարակեսցին յանապատի աստ՝ ամս քառասուն, և բարձցեն զպոռնկութիւն ձեր, մինչև մաշեսցին ոսկերք ձեր յանապատի աստ։ ³⁴Ըստ թուոյ աւուրցն քառասնից. օ՛ր ընդ տարւոյ ընդունիցիք զմեղս ձեր զքառասուն ամ, և ծանիջիք զսրտմտութիւն բարկութեան իմոյ։ ³⁵Ե՛ս Տէր խօսեցայ. եթէ ո՛չ արարից ժողովրդեանդ այդմիկ չարի յարուցելոյ ՚ի վերայ իմ. յանապատի՛ աստ ծախիցին, և աստէ՛ն մեռանիցին։ ³⁶Եւ արքն զորս առաքեաց Մովսէս լրտեսել զերկիրն, և եկեալ բամբասեցին զնմանէ առ ժողովրդեանն, հանել համբա՛ւ չար զերկրէն. ³⁷մեռան արքն այնոքիկ՝ որ հանին համբաւ չա՛ր զերկրէն, չարաչա՛ր հարուածովք առաջի Տեառն։ ³⁸Եւ Յեսու՛ որդի Նաւեայ՝ և Քաղէք որդի Յեփոնեայ միայն ապրեցան յարանցն յայնցանէ որ երթեալ էին լրտեսել զերկիրն։

Ի՛դ ³⁹Եւ խօսեցաւ Մովսէս զպատգամս զայս առ ամենայն որդիսն Իսրայէլի, և սո՛ւգ առ ժողովուրդն յոյժ. ⁴⁰և կանխեալ ընդ առաւօտն ելին ՚ի գլուխ լերինն. և ասեն. Ահաւասիկ կամք մեք՝ ելցուք ՚ի տեղին զոր ասաց Տէր՝ զի մեղաք։ ⁴¹Եւ ասէ Մովսէս. Ընդէ՞ր անցէք զբանիւ Տեառն՝ և ո՛չ աջողեսցի ձեզ*։ ⁴²մի՛ ելանէք՝ զի ո՛չ է Տէր ընդ ձեզ, և անկանիցիք առաջի թշնամեաց ձերոց. ⁴³զի Ամաղէկ և Քանանացին են անդ առաջի ձեր, և անկանիցիք սրով. փոխանակ զի դարձայք յետս և հետեսցէք Տեառն, և ո՛չ լինիցի Տէր ընդ ձեզ։ ⁴⁴Եւ անսաստեալ ելին ՚ի գլուխ լերինն. բայց տապանակ կտակարանացն Տեառն՝ և Մովսէս ո՛չ շարժեցան ՚ի բանակէ անտի։ ⁴⁵Եջ Ամաղէկ և Քանանացին՝ որ բնակեալ էր ՚ի լերինն. և հարին զնոսա, և կոտորեցին զնոսա մինչև ց՜երմա։ ⁴⁶Եւ դարձան անդրէն ՚ի բանակն։

15

Գլուխ ԺԵ

* Ի լուս՞. եթէ թէ տեսանիցեն զերկիրն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞*։

* Ոմանք. Արդ արասցես նոցա։

* Այլք. Թէ մտանիցեն յերկիրն։

* Ոմանք. Եւ ոսկերքն ձեր անկանիցին։

* Ոմանք. Ընդէ՞ր անցէք դուք զբանիւ։

Ի՛Ե ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ՛. ²Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես՝ ցոսա. Յորժամ մտանիցէք յերկրին բնակութեան ձերոյ զոր ե՛ս տաց ձեզ՝. ³և առնիցէք ողջակէզ Տեառն՝ և ողջընծայ ՚ի զոհ, մեծացուցանել զուխտն կամ զկաման, կամ ՚ի տօնս ձեր առնել հո՛տ անուշից Տեառն, եթ յարջառոյ՛ն և եթ ՚ի հօտից՝. ⁴Եւ բերցէ որ մատուցանիցէ զպատարագն իւր Տեառն, զոհ նաշիւոյ զտասանորդ գրուին՝ զանգեալ իւղով չորրորդաւ դորակին. ⁵և գինի ՚ի նուէր զչորրորդ դորակին առնիցէք, ըստ զոհին կամ ըստ ողջակիզին, առ գա՛ռն մի այնչափ առնիցես ընծայ ՚ի հոտ անուշից Տեառն՝. ⁶Եւ խոյին՝ յորժամ առնիցես զնա յողջակէզ կամ ՚ի զոհ, արասցես զզոհ նաշիւոյն, երկուս տասանորդս զանգեալ իւղով երկրորդի՛ւ դորակին. ⁷և գինի ՚ի նուէր զերկրորդ դորակին մատուցանիցէք ՚ի հո՛տ անուշից Տեառն: ⁸Ապա թէ յարջառոց՝ առնիցէք յողջակէզ կամ ՚ի զոհ, մեծացուցանել զուխտն ՚ի փրկութիւն Տեառն՝, ⁹մատուցէ ըստ զուարակին զո՛հ նաշիւոյ՝ երիս տասանորդս զանգեալ իւղով կիսով դորակին. ¹⁰և գինի ՚ի նուէր՝ կէ՛ս դորակին, ընծայ ՚ի հո՛տ անուշից Տեառն: ¹¹Այնպէս առնիցես ¹²միում զուարակին, կամ միում խոյին, կամ միում գառինն, յօդեաց կամ յայծեաց ըստ թուոյ նոցա, որպէս գինչ առնիցէք՝ նոյնպէս արասջիք միումն ըստ իւրաքանչիւր թուոց նոցա՝. ¹³ամենայն բնակն նոյնպէս արասցէ. նոյնպիսի ընծայս մատուցանել ՚ի հոտ անուշից Տեառն՝: Եւ եթ եկ ոք յարեսցի ՚ի ձեզ յերկրին ձերում, որ լինիցի առ ձեզ յազգս ձեր, արասցէ ընծայ ՚ի հոտ անուշից Տեառն: ¹⁴Որպէս դուքն առնիցէք՝ նոյնպէս առնիցէ և եկն, և ժողովուրդն Տեառն: ¹⁵Օրէն մի և նոյն կացցէ ձե՛ր և եկացն՝ որ յարիցին ՚ի ձեզ. օրէն յաւիտեանական յազգս ձեր. որպէս և դուքն իցէք, և եկն լինիցի առաջի Տեառն՝. օրէն մի և նոյն կացցէ, և իրաւունք մի և նոյն լինիցին՝ ձե՛ր և եկին որ յեցեալ իցէ ՚ի ձեզ:

Ի՛Զ ¹⁶Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁷Խօսեա՛ց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասասցես ցոսա. ¹⁸Ի մտանել ձեր յերկիրն յոր ե՛ս տարայց զձեզ, ¹⁹և եղիցի յորժամ ուտիցէք դուք ՚ի հացէ երկրին, առջիք հա՛ս ՚ի նուէր Տեառն զառաջին զանգուածոյ ձերոյ. ²⁰և տարջի՛ք զհա՛ց հասին Տեառն, զատուսջի՛ք զայն Տեառն որպէս զհա՛սն ՚ի կալոյ. ²¹նոյնպէս և զայն զատուցանիցէք՝ զառաջին զանգուածոյն ձերոյ. և տաջիք Տեառն հա՛ս յազգս ձեր:

Ի՛Է ²²Իսկ յորժամ յանցանիցէք, և ո՛չ առնիցէք զամենայն զպատուիրանս զայսոսիկ՝ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի. ²³որպէս հրաման ետ ձեզ Տէր ՚ի ձեռն Մովսիսի, յօրէ յորմէ հրաման ետ ձեզ Տէր և յառ յապա՛ ժամանակս յա՛զգս ձեր: ²⁴Եւ եղիցի եթ յաչաց ժողովրդեանն վրիպիցի՛ ականայ ինչ, արասցէ ժողովուրդն զուարակ մի յանդուոյ անարա՛տ յողջակէզ ՚ի հո՛տ անուշից Տեառն. և զո՛հ ըստ նմին, և նուէ՛ր ըստ նմին պայմանի, և նոխագ մի յայծեաց վասն

* *Ոմանք.* Եւ խօսեցաւ Տէր:

* *Ոմանք.* Եւ ասասցես ցոսա... յերկիրն բնա՛:

* *Ոմանք.* Ձուխտ կամ... թէ յարջառոց և ե՛:

* *Ոմանք.* Առ գառն միայն չափ առնիցես:

* *Ոմանք.* Մեծացուցանել զուխտսն:

* *Այլք.* Իւրաքանչիւր թուոյ նոցա:

* *Յօրինակին.* Ամենայն բանակին նոյնպէս արասցէ:

* *Ոմանք.* Եւ յեկացն որ յարեսցին ՚ի ձեզ. օրէն մի յաւիտեանական.. որպէս և դուք իցէք, նոյնպէս և եկն:

* *Ոմանք.* Եւ տաջիք Տեառն զհաց հասին:

մեղաց*։ ²⁵Եւ քաւեսցէ քահանայն վասն ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի. և թողցի՛ նոցա՝ զի ականայ է։ Եւ նոքա մատուցեն զպատարագն իւրեանց ընծայ՝ Տեառն. վասն մեղաց իւրեանց առաջի Տեառն յաղագս ականայիցն իւրեանց*։ ²⁶և թողցի՛ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի. և եկին յեցելոյ՝ ՚ի ձեզ. զի ամենայն ժողովրդեանն է ականայն։ ²⁷Եւ եթէ մի՛ անձն մեղիցէ ականայ, մատուցէ ալո՛ջ մի տարևոր վասն մեղաց. ²⁸և քաւեսցէ՛ քահանայն ՚ի վերայ անձին ականայեցելոյ և մեղուցելոյ առաջի Տեառն ականայ, քաւել՛ վասն նորա*։ ²⁹Բնակին որդւոցն Իսրայէլի, և եկին յեցելոյ՝ ՚ի նոսա, օրէն մի և նո՛յն կացցէ որ ինչ առնիցէ՛ ոք ականայ*։

ԻԸ ³⁰Եւ անձն՝ որ առնիցէ ձեռամբ հպարտութիւն ՚ի բնակաց կամ յեկաց, բարկացոյց նա զԱստուած, սատակեսցի՛ անձնն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ*։ ³¹Ձի զբանն Տեառն խոտեաց, և զպատուիրանս նորա ցրեաց. ջնջելո՛վ ջնջեսցի անձնն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ՝ զի մեղք նորա ՚ի նմա՛ են։

ԻԹ ³²Եւ էին որդիքն Իսրայէլի յանապատի անդ. և գտին այր մի որ քաղէր փայտ յաւուր շաբաթու։ ³³Եւ մատուցին զնա որք գտինն զի քաղէր փայտ յաւուր շաբաթու՝ առ Մովսէս և Ահարոն, և առ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայէլի*։ ³⁴Եւ ետուն զնա ՚ի պահ. զի ո՛չ ընտրեցին թէ զի՞նչ առնիցեն նմա*։ ³⁵Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Մահո՛ւ մեռցի այրն, քարամբք քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդն։ ³⁶Եւ հանին զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին. և քարկոծեցին զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի։

Լ ³⁷Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ*։ ³⁸Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասասցեն ս նոսա, զի արասցեն իւրեանց ծո՛պս ՚ի տըտունս հանդերձից իւրեանց յա՛զգս իւրեանց. և դնիցէք ՚ի վերայ ծոպից տըտնոցն ասղանի՛ կապուտակ։ ³⁹Եւ լինիցի այն ձեզ ՚ի ծոպսն, և տեսանիցէք զայն, և յիշիցէք զամենայն զպատուիրանս Տեառն առնել զնոսա. և ո՛չ խոտորիցիք զկնի մտաց և աչաց ձերոց, որով դուքն պոռնկիք զկնի նոցա*։ ⁴⁰Ձի յիշիցէք և առնիցէք զամենայն զպատուիրանս իմ. և եղիջիք սուրբք Աստուծոյ ձերում*։ ⁴¹Քի են եմ Տէր Աստուած ձեր՝ որ հանի զձեզ յերկրէն եգիպտացւոց լինել ձեզ Աստուած. են եմ Տէր Աստուած ձեր*։

16

Գլուխ ԺԶ

ԼԱ ¹Եւ խօսեցաւ Կորիս՝ որդի Սահառայ որդւոյ Կահաթու որդւոյ Ղևեայ. և

*Ոմանք. Եւ զոհ նմին, և նուէր ըստ նուիրին պայմանի, և նոխագ մի։

*Ոմանք. Եւ նոքա մատուցին զպատարագն... յաղագս Տեառն ականայիցն իւ՛ր։

*Ոմանք. ՚ի վերայ անձինն ականայացելոյ։

*Յօրինակին. Որ ինչ առ իցէ ոք ականայ։

*Ոմանք. Ձեռամբ հպարտութեան.. բարկացոյց նա զՏէր. և սատակեսցի։

*Ոմանք. Առ Մովսէս և առ Ահարոն։

*Ոմանք. Եթէ զինչ առնիցեն զնա։

*Ոմանք. Եւ խօսեցաւ Տէր ընդ։

*Ոմանք. Ձկնի մտաց ձերոց և աչաց ձերոց, որով դուքն պոռնկիք։

*Ոմանք. Եւ լինիջիք սուրբք Աստուծոյ։

*Այլք. Լինել ձեր Աստուած։

Դաթան և Աբիրոն որդիք Եղիաբայ որդւոյ Ռուբինի, և Աւնան որդի Փաղեթայ որդւոյ Ռուբինի. ²և կացին հակառակ Մովսիսի. և երկերիւր և յիսուն այր յորդուցն Իսրայէլի գլխաւորք ժողովրդեանն՝ խորհրդականք խորհրդոց, և արք անուանիք: ³Կուտեցան ՚ի վերայ Մովսիսի և Ահարոնի՝ և ասեն. Շա՛տ լիցի ձեզ. զի ամենայն ժողովուրդն և ամենեքեան սո՛ւրբք են. և Տէր ՚ի միջի նոցա. և արդ՝ ընդէ՞ր ճոխացեալ էք ՚ի վերայ ժողովրդեանդ Տեառն: ⁴Եւ լուեալ Մովսիսի՝ անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց*. ⁵և խօսեցաւ ընդ Կորխայ և ընդ ամենայն ժողովրդեան նորա, և ասէ. Յա՛յց ել և ծանեաւ Աստուած զիւրսն, և զսուրբս, և մերձեցոյց առ ինքն. և զոր ո՛չն ընտրեաց՝ ո՛չ մերձեցոյց առ ինքն: ⁶Արդ զա՛յս արարէք. առէք ձեզ զբուրուառս ձեր. Կորխ և ամենայն ժողովուրդ իւր. ⁷և դիք ՚ի նոսա հուր, և արկէք ՚ի նոսա խունկ՝ առաջի՛ Տեառն ՚ի վաղիւ. և եղիցի այր զոր ընտրեսցէ Տէր՝ նա՛ է սուրբ. շա՛տ լիցի ձեզ որդիք Ղևեայ*: ⁸Եւ ասէ Մովսէս ցԿորխ. Լուարո՛ւք ինձ որդիք Ղևեայ. ⁹միթէ փո՞քր ինչ իցէ ձեզ այդ. զի զատոյց զձեզ Աստուած Իսրայէլի ՚ի ժողովրդեանէ իւրմէ, և մերձեցոյց զձեզ առ ինքն պաշտել՝ զպաշտօն խորանին Տեառն. և կա՛լ առաջի ժողովրդեանն պաշտել զնա*. ¹⁰և մերձեցոյց զքեզ առ ինքն, և զամենայն եղբարս քո զորդիսն Ղևեայ ընդ քեզ. և քահանայանա՞լ ևս խնդրես*: ¹¹Եւ այդպէս դո՛ւ և ժողովուրդ քո գումարեալ էք զԱստուծոյ. և Ահարոն ո՞վ է զի տրտնջէք զնմանէ*: ¹²Եւ առաքեաց Մովսէս կոչել զԴաթան և զԱբիրոն զորդիսն Եղիաբու. և ասեն. Ո՛չ եկեսցուք. ¹³միթէ փո՞քր իցէ այն՝ զի հաներ զմեզ յերկրէն որ բղխէր զկաթն և զմեղր, սպանանել զմեզ յանապատի աստ. և արդ՝ սաստե՞ս ևս մեզ. և դո՞ւ ես իշխան*. ¹⁴միթէ՛ յերկի՞րն որ բղխէր զկաթն և զմեղր՝ տարար զմեզ. և ետուր մեզ անդ ժառանգութիւն անդոց և այգեաց. եթէ զա՛չս մեր բրեսցես՝ ո՛չ եկեսցուք առ քեզ: ¹⁵Եւ ծանրացասումն եղև յոյժ, և ասէ ցՏէր. Մի՛ հայիր ՚ի զո՛հսն նոցա. զի զցանկալի ինչ ուրուք ՚ի նոցանէ ես ո՛չ առի, և ո՛չ զոք ՚ի նոցանէ չարչարեցի: ¹⁶Եւ ասէ Մովսէս ցԿորխ. Սրբեա՛ զժողովուրդ քո, և եղիջիք պատրաստք առաջի Տեառն՝ դու և Ահարոն առ վաղիւ. ¹⁷և առէք իւրաքանչիւր զբուրուառ իւր, և դիջիք ՚ի վերայ նոցա խո՛ւնկս. և մատուցիք առաջի Տեառն իւրաքանչիւր զբուրուառ իւր. զերկերիւր և գլխուն բուրուառսն. և դո՛ւ և Ահարոն զիւրաքանչիւր բուրուառ իւր*: ¹⁸Եւ եղին ՚ի նոսա հուր, և արկին ՚ի նոսա խունկ, և կացին առ դրան խորանին վկայութեան Մովսէս և Ահարոն: ¹⁹Եւ կուտեաց ՚ի վերայ նոցա Կորխ զամենայն ժողովուրդն իւր ՚ի դո՛ւն խորանին վկայութեան. և երևեցան փառք Տեառն ամենայն ժողովրդեանն: ²⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ²¹Սեկնեցարո՛ւք ՚ի միջոյ ժողովրդեանդ այդորիկ, և սատակեցի՛ց զդոսա միանգամայն: ²²Անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ և ասեն. Աստուած Աստուած հոգւոց և ամենայն մարմնոյ. եթէ մի մարդ մեղաւ, ՚ի վերայ ամենայն ժողովրդե՞անդ զայցէ բարկութիւն Տեառն: ²³Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ²⁴Խօսեա՛ց ընդ ժողովրդեանն և ասացես.

* Ոճանք. Եւ լուաւ Մովսէս. և անկաւ:

* Ոճանք. Առաջի Տեառն առ վաղիւ:

* Ոճանք. Եւ կալ առաջի ամենայն ժողովրդեան:

* Յօրինակին. Եւ մերձեցոյց զձեզ: Ոճանք. Ջքեզ առ իւր.. քո և զորդիս Ղևեայ ընդ: Այլք. Եւ քահանայանա՞լ ևս խնդրէք:

* Ոճանք. Ո՞վ իցէ զի տրտնջէք զնմանէ:

* Օրինակ մի.. Սաստե՞ս ևս զմեզ:

* Ոճանք. Եւ զերկերիւր և գլխուն բուր՝... իւրաքանչիւր զբուր՝:

Չատարո՛ւք շուրջ զժողովրդեամբդ Կորխայ և Դաթանայ և Աբիրոնի*։ ²⁵Եւ յարեաւ Մովսէս և գնաց առ Դաթան և Աբիրոն, և գնացին ընդ նմա ամենայն ծերքն Իսրայէլի։ ²⁶Եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն և ասէ. Մեկնեցարո՛ւք ՚ի վրանաց արանց խստասրտացդ այդոցիկ, և մի՛ մերձենայցէք յինչ ՚ի դոցա. զի մի՛ կորնչիցիք ընդ ամենայն մեղս դոցա*։ ²⁷Եւ մեկնեցան ՚ի ժողովրդենէն Կորխայ շուրջ զնոքօք. և Դաթան և Աբիրոն ելին կային առ դրան վրանաց իւրեանց, և կանայք նոցա և մանկունք իւրեանց՝ և ա՛ղխն իւրեանց*։ ²⁸Եւ ասէ Մովսէս. Այսո՛ւ գիտասջիք, եթէ Տէր առաքեաց զիս գործե՛լ զամենայն գործս զայսոսիկ. և եթէ ո՛չ յինէ՛ն ինչ է՞. ²⁹Եթէ ըստ մահո՛ւ ամենայն մարդկան մեռանիցին դոքա, կամ ըստ հանդիսի ամենայն մարդկան լինիցի հանդէս նոցա. ապա զիս Տէր ո՛չ առաքեաց*։ ³⁰Այլ թէ նորանշան ինչ ցուցցէ Տէր, և բացեալ երկրի զբերան իւր կլանիցէ զդոսա, և զտունս դոցա, և զամենայն ինչ որ դոցա՛ իցէ. և իջանիցեն կենդանւոյն ՚ի դժոխս, գիտասջիք՝ եթէ բարկացուցին արքդ այդոքիկ զՏէր*։ ³¹Եւ իբրև դադարեաց ՚ի խօսելոյ զբանս զայսոսիկ. պատառեցան երկիր ՚ի ներքոյ նոցա, ³²և բացա՛ւ երկիր և եկուլ զնոսա՝ և զտունս նոցա. և զմարդիկն որ էին ընդ Կորխայ և զանասունս նոցա։ ³³Եւ իջին նոքա և որ ինչ է՛ր նոցա կենդանւոյն ՚ի դժոխս. և ծածկեաց զնոսա երկիրն. և կորեան ՚ի միջոյ ժողովրդեանն։ ³⁴Եւ ամենայն Իսրայէլ որ շուրջ զնոքօք էր՝ փախեան ՚ի ձայնէ նոցա. զի համարէին թէ գուցէ կլանիցէ և զնոսա՛ երկիրն։ ³⁵Եւ ել հուր ՚ի Տեառնէ՝ և եկեր զերկերիւր և զյիսուն այրն՝ որ մատուցանէին զխունկսն*։

ԼԲ ³⁶Եւ ասէ Տէր ցՄովսէս և ցեղիազար ցորդին Ահարոնի ցքահանայ*.
³⁷Բարձէ՛ք զբուրուառսդ պղնձիս ՚ի միջոյ այրեցելոցդ, և զհո՛ւրդ օտար ցրուեսցես ՚ի բաց. զի սրբեցան ³⁸բուրուառքդ մեղաւորացդ այդոցիկ յոգիս իւրեանց։ Եւ արասցես զայդ դրուագս կռածոյս նուարտանս սեղանոյն. զի մատուցան առաջի Տեառն և սրբեցան. և եղիցին ՚ի նշանակ որդւոցն Իսրայէլի։ ³⁹Եւ ա՛ռ Եղիազար որդի Ահարոնի քահանայի զբուրուառսն պղնձիս՝ զորս մատուցին այրեցեալքն, և արար դրուագս սեղանոյն ⁴⁰յիշատակ որդւոցն Իսրայէլի. զի մի՛ մերձենայցէ այլազգի ոք՝ որ չիցէ՛ ՚ի զաւակէ Ահարոնի դնել խունկս առաջի Տեառն. զի մի՛ լինիցի իբրև զԿո՛րխ և զխուժան նորա. որպէս խօսեցաւ Տէր ՚ի ձեռն Մովսիսի*։

ԼԳ ⁴¹Եւ տրտնջեցին որդիքն Իսրայէլի ՚ի վաղի՛ւ անդր զՄովսիսէ և զԱհարոնէ, և ասեն. Դո՛ւք կոտորեցէք զժողովուրդն Տեառն։ ⁴²Եւ եղև ՚ի կուտել ժողովրդեանն ՚ի վերայ Մովսիսի և Ահարոնի, դիմեցին ՚ի խորանն վկայութեան, և զնոսա՛ ծածկեաց ամպն. և երևեցան փառքն Տեառն։ ⁴³Եւ կացին Մովսէս և

* *Ոմանք.* խօսեաց դու ընդ ժողովրդ՝: *Օրինակ մի.* Չատացարուք շուրջ զժողո՛րդ։
 * *Յօրինակին պակասէր.* ՚ի վրանաց արանց խստասրտացդ: *Ուր Ոսկան ունի* խստացդ:
 * *Այլք.* Ելին և կային:
 * *Բազունք.* Չամենայն զգործս զայսոսիկ:
 * *Ոմանք.* Կամ թէ ըստ հանդիսին.. հանդէս դոցա:
 * *Ոմանք յաւելուածով ունին զբանս.* Նոր նշան ինչ ցուցանիցէ.. զբերան իւր և կլանիցէ.. և զտունս դոցա, և *զխորանս դոցա,* և զամենայն ինչ որ:
 * *Ոսկան.* Եւ զյիսուն արսն:
 * *Ոմանք.* ՅՄովսէս. Ասա՛ և ցեղիազար ցորդին Ահարոնի ցքահանայն զի բար՛: *Ուր Ոսկան.* Ահարոնի քահանայի:
 * *Բազունք.* ՚ի յիշատակ որդւոցն Իսրայէլի:

Ահարոն յանդինան խորանին վկայութեան: ⁴⁴Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ. ⁴⁵Մեկնեցարո՛ւք ՚ի միջոյ ժողովրդեանդ այդորիկ՝ և սատակեցի՛ց զդոսա միանգամայն: Եւ անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց: ⁴⁶Եւ ասէ Մովսէս ցԱհարոն. Ա՛ռ դու զբուրուառն, և դիցես ՚ի նմա հուր ՚ի սեղանոյ անտի, և արկ ՚ի նա խունկ, և տա՛ր վաղվաղակի ՚ի բանակն, և քաւեցես վասն նոցա. քանզի ել բարկութիւն ՚ի Տեառնէ, և սկսաւ սատակել զժողովուրդն*: ⁴⁷Եւ ա՛ռ Ահարոն որպէս խօսեցաւ ընդ նմա՛ Մովսէս. և ընթացաւ ՚ի ժողովուրդ անդր, և ահա սկսեալ էր սատակումն ՚ի ժողովրդեանն: Եւ արկ գխունկն, և քաւեաց վասն ժողովրդեանն. ⁴⁸և եկաց ՚ի մէջ մեռելո՛ց և կենդանեաց. և դադարեաց սատակումնն: ⁴⁹Եւ եղեն մեռելալք ՚ի սատակմանն չորեքտասան հազար և եւթն հարիւր. թո՛ղ զմեռեալսն վասն Կորխայ*: ⁵⁰Եւ դարձաւ Ահարոն առ Մովսէս ՚ի դուռն խորանին վկայութեան, և դադարեաց սատակումնն:

17

Գլուխ ԺԷ

ԼԴ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի, և առցես ՚ի նոցանէ գաւազանս ըստ տանց նահապետաց իւրեանց, յամենայն իշխանաց իւրեանց. ըստ տանց ազգաց իւրեանց, երկոտասան գաւազան. և զիւրաքանչի՛ւր անուն գրեսցես ՚ի վերայ գաւազանի իւրոյ: ³Եւ զանունն Ահարոնի գրեսցես ՚ի վերայ իւրոյ՝ գաւազանի. և իցէ գաւազան մի՛ ըստ ցեղի՛ց Իսրայէլի՝ զոր ՚ի տանց նահապետաց իւրեանց տացեն*. ⁴և դիցես զնոսա ՚ի խորանին վկայութեան՝ որովք երևեցայց քեզ անդ*: ⁵Եւ եղիցի մարդոյ զոր ընտրեցից՝ գաւազանն իւր ծաղկեսցի՛. և բարձի՛ց յինէն զտրտունջ որդւոցն Իսրայէլի զոր տրտնջեն նոքա զձե՛նք*:

⁶Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, և ետո՛ւն ցնա ամենայն իշխանքն նոցա զգաւազանս իւրեանց. գաւազան միոյ իշխանի ըստ տանց նահապետաց իւրեանց. երկոտասան գաւազան. և գաւազանն Ահարոնի ՚ի մէջ գաւազանացն նոցա: ⁷Եւ եդ Մովսէս զգաւազանսն առաջի Տեառն ՚ի խորանին վկայութեան: ⁸Եւ եղև ՚ի վաղիւ անդր մտին Մովսէս և Ահարոն ՚ի խորանն վկայութեան: Եւ ահա դալարացաւ գաւազանն Ահարոնի ՚ի տանն Ղևեայ, և արձակեաց շառաւի՛ղ, և ծաղկեաց ծաղիկ, և երևեցոյց ընկոյ՛զ*: ⁹Եւ եհան Մովսէս զգաւազանսն յերեսաց Տեառն առ ամենայն որդիսն Իսրայէլի, և տեսին. և ա՛ռ իւրաքանչիւրոք զգաւազան իւր*: ¹⁰Եւ ասէ Տէր ցՄովսէս. Դի՛ր զգաւազանդ Ահարոնի առաջի վկայութեանցն ՚ի պահեստ, ՚ի նշանակ որդւոցն անհնազանդից. և դադարեսցէ տրտնջիւն դոցա յինէն՝ և մի՛ մեռանիցին*: ¹¹Եւ

* Ոսկան. Եւ դի՛ր ՚ի նմա հուր:

* Զօրհնակին պակասէր. Թող զմեռեալսն վասն Կորխայ. այլ ՚ի լուս՝. նշանակի ՚ի ներքս առնուլ, համաձայն այլոց:

* Ոմանք. ՚ի վերայ գաւազանի իւրոյ.. ըստ ցեղի ցեղի զոր ՚ի տանց նահապետաց իւրեանց տացես:

* Ոմանք. Որովք երևեցայց անդ քեզ:

* Ոմանք. Գաւազանն իւր ծաղկեսցէ:

* Ոմանք. ՚ի վաղիւ անդր՝ և մտին... ՚ի տան Ղևեայ. և արձակեաց շառաւեղս:

* Ոմանք. Իւրաքանչիւր զգաւազանս իւր:

* Ոմանք. Տրտնջիւն նոցա յինէն:

արարին Մովսէս և Ահարոն, որպէս հրաման ետ Տէր Մովսիսի՝ նոյնպէս և արարին: ¹²Եւ խօսեցան որդիքն Իսրայէլի ընդ Մովսիսի՝ և ասեն. Ահաւասիկ սատակի՛նք, կորնչի՛նք, ծախի՛նք* . ¹³ամենայն որ մերձենայ ՚ի խորանն վկայութեան Տեառն, մեռանի՛ . մինչև ՚ի սպառ մեռանիցի՞նք:

18

Գլուխ ԺԸ

ԼԵ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի՝ և ասէ. Դո՛ւ և որդիք քո, և տուն նահապետութեան քոյ ընդ քեզ առնուցուք զմեղս սրբութեանցն. և դո՛ւ և որդիք քո առնուցուք զմեղս քահանայութեան ձերոյ: ²Եւ զեղբարս քո զգե՛ղն Ղևեայ զգո՛ւնդ հօր քոյ մատուցես առ քեզ, և յաւելցին ՚ի քեզ. և պաշտեսցեն զքեզ: Եւ դու և որդիք քո ընդ քեզ, յանդիման խորանին վկայութեան. ³և պահեսցեն զպահպանութիւնս քո, և զպահպանութիւնս խորանին վկայութեան. բայց ՚ի սպասն իմ ՚ի սուրբ՝ և ՚ի սեղանն մի՛ մերձեսցին, զի մի՛ մեռանիցին. և նոքա, և դուք՝: ⁴Եւ յաւելցին ՚ի քեզ, և պահեսցեն զպահպանութիւնս խորանին վկայութեան, ըստ ամենայն պաշտաման խորանին. և օտարազգի մի՛ մերձեսցի առ քեզ: ⁵Եւ պահեսցիք զպահպանութիւնս սրբութեանցն, և զպահպանութիւնս սեղանոյն. և ո՛չ ևս լինիցի բարկութիւն յորդիսն Իսրայէլի: ⁶Եւ ես՝ առի՛ զեղբարս ձեր զՂևտացիս ՚ի միջոյ որդւոցն Իսրայէլի՝ փոխանակս տուեալ Տեառն. պաշտել՝ զպաշտօն խորանին վկայութեան: ⁷Եւ դու և որդիք քո ընդ քեզ պահեսցիք զքահանայութիւն ձեր ըստ ամենայն պայմանի սեղանոյն, և զներքին կողմն վարագորին. և պաշտեսցիք զպաշտօն քահանայութեան ձերոյ. և այլազգին որ մերձենայցէ՛ մեռցի՞:

ԼԶ ⁸Խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի՝ և ասէ. Ես ահաւասիկ ետո՛ւ ձեզ զպահեստ պտղոց իմոց. յամենայն նուիրելոցն ինձ յորդւոցն Իսրայէլի՝ քե՛զ ետու զայն ՚ի պատիւ, և որդւոց քոց յետ քո, օրէն յաւիտենական: ⁹Եւ այս եղիցի ձեզ ՚ի նուիրելոց սրբութեանցն ընծայից, յամենայն պատարագաց նոցա, և յամենայն զոհիցն նոցա, և յամենայնէ առ ՚ի յանցանացն նոցա, և յամենայնէ առ ՚ի մեղաց նոցա, զոր տայցեն ինձ յամենայն սրբութեանցն՝ քե՛զ լիցի և որդւոց քոց՝: ¹⁰Ի սրբութիւն սրբութեանցն կերիջիք զամենայն. ամենայն արու ուտիցէ՛ զայն. դո՛ւ և որդիք քո՝ զի սրբութիւնք եղիցին քեզ՝: ¹¹և այն եղիցի ձեզ ՚ի պտղոյ տրոցն նոցա, յամենայն նուիրաց որդւոցն Իսրայէլի, քե՛զ ետու զայն. և ուտերաց և դատերաց քոց ընդ քեզ, օրէն յաւիտենական. ամենայն սուրբ ՚ի տան քում կերիցէ՛ զայն: ¹²Եւ զամենայն պտուղ իւղոյ, և զամենայն պտուղ գինւոյ՝ և ցորենոյ՝ զոր տացեն Տեառն զպտուղ իւրեանց. քե՛զ ետու զայն ամենայն: ¹³Եւ առաջինք արմտեաց երկրին իւրեանց զոր մատուցեն Տեառն՝ քե՛զ լիցին. և ամենայն սուրբ ՚ի տան քում կերիցէ՛ զայն: ¹⁴Եւ ամենայն նուիրեալն յորդւոցն Իսրայէլի քե՛զ լիցի: ¹⁵Եւ ամենայն որ բանայ զարգանդ՝ յամենայն մարմնոյ, զոր

* Ոմանք. որդիքն Իսրայէլի, և ասեն ցՄովսէս. Ահաւասիկ:

* Ոմանք. ՚ի սպասն իմ ՚ի սրբութիւն՝ և ՚ի սեղանն իմ մի՛ մերձ:

* Ոմանք. Պահեսցիք զպահպանութիւնս ձեր ըստ ամենայն.. և պաշտեսցէք զպաշտօն:

* Ոմանք. Ընծայից նոցա, յամենայն պա՛:

* Ոմանք. ՚ի սրբութեան սրբութեանցն կերի՞... զի սրբութիւն եղիցի քեզ: Այլք յաւելուն. Կերիջիք զայն ամենայն. ամենայն արու:

մատուցանիցեն Տեառն՝ ի մարդոյ մինչև յանասուն՝ քե՛զ լիցի. այլ փրկելով փրկեսցես զանդրանիկս մարդկան. և զանդրանիկս անասնոց անսրբոց փրկեսցես. ¹⁶և փրկանք նորա յամսօրէից և ՚ի վեր, և զին նորա հինգ սիկղ ըստ սրբութեան սկեղն, որ է քսան դանգ: ¹⁷Բայց զանդրանիկս արջառոց, և զանդրանիկս օդեաց, և զանդրանիկս այծեաց, ո՛չ փրկեսցես՝ զի սո՛ւրբ են. և զարիւն նոցա հեղցես առ սեղանովն. և զճարպն հանցես ընծայ ՚ի հոտ անուշից Տեառն. ¹⁸և միսն եղիցի քո՛, որպէս երբո՛ւծ նուիրին՝ և երին աջոյ քե՛զ լիցի*:¹⁹Չամենայն ինչ հա՛ս ՚ի սրբութեանցն զոր հանցեն Տեառն որդիքն Իսրայէլի՝ քե՛զ ետու և որդւոց քոց, և ուստերաց և դստերաց քոց ընդ քեզ, օրէ՛ն յաւիտենական. քանզի ո՛ւխտ ադի՛ է առաջի Տեառն. քե՛զ և զաւակի քում յետ քո: ²⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի՝ և ասէ. Յերկրի նոցա՝ մի՛ ժառանգեսցես. և բաժին քո ընդ նոսա՝ մի՛ լիցի. զի ե՛ս եմ բաժին քո և ժառանգութիւն ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի:

Լէ ²¹Եւ որդւոցն Ղևեայ՝ ահա ետո՛ւ զամենայն տասանորդս Իսրայէլի ՚ի ժառանգութիւն. և փոխանակ պաշտաման նոցա զոր նոքայն պաշտիցեն ՚ի խորանին վկայութեան*.²²և մի՛ ևս մերձեսցին որդիքն Իսրայէլի ՚ի խորանն վկայութեան ընդունել զմեղս մահաբերս: ²³Եւ պաշտեսցէ՛ Ղևտացին զպաշտօն խորանին վկայութեան, և նոքա՛ առցեն զմեղս նոցա. օրէ՛ն յաւիտենական յազգս իւրեանց ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի. և մի՛ ժառանգեսցեն ժառանգութիւն*:²⁴Չտասանորդս որդւոցն Իսրայէլի՝ զոր զատուցեն Տեառն հաս, ետո՛ւ Ղևտացւոցն ՚ի ժառանգութիւն. վասն այսորիկ ասացի նոցա թէ՛ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի՝ մի՛ ժառանգեսցեն վիճակ*:

ԼԸ ²⁵Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ*.²⁶Ընդ Ղևտացիսն խօսեսցիս՝ և ասասցես ցնոսա. Եթէ առնուցուք յորդւոցն Իսրայէլի տասանորդս զոր ետու ձեզ, հանիցէ՛ք և դուք անտի հա՛ս Տեառն, զտասանորդն ՚ի տասանորդէ. ²⁷և համարեսցի ձեզ հասն ձեր իբրև զցորեան ՚ի կալոյ, և իբրև զպտուղ ՚ի հնձանէ: ²⁸Ա՛յնպէս և դուք հանիցէք ՚ի հասից անտի Տեառն, յամենայն տասանորդաց ձերոց՝ զոր առնուցուք յորդւոցն Իսրայէլի, և տայցէք ՚ի նոցանէ հա՛ս Տեառն. Ահարոնի քահանայի. ²⁹յամենայն տրոցն ձերոց հանիցէք հա՛ս. և յամենայն պտղոց զնուիրեալն ՚ի նմանէ: ³⁰Եւ ասասցես ցնոսա. Յորժամ հանիցէք զպտուղն ՚ի նմանէ, համարեսցի Ղևտացւոցն իբրև զարդի՛ւնս ՚ի կալոյ, և իբրև զպտուղ ՚ի հնձանէ: ³¹Եւ կերիջիք զայն յամենայն տեղւոջ, դո՛ւք և տո՛ւնք ձեր. զի վարձ ձեր է այն, փոխանակ պաշտամանցն ձերոց ՚ի խորանին վկայութեան: ³²Եւ մի՛ առնուցուք վասն այնոցիկ մեղս. և յորժամ հանիցէք զպտուղն ՚ի նմանէ զսրբութիւն որդւոցն Իսրայէլի. ո՛չ պղծիցէք՝ զի մի՛ մեռանիցիք*:

19

Գլուխ ԺԹ

* *Ոմանք.* Որպէս և երբուծ նուիր*:

* *Ոմանք.* Փոխանակ պաշտմանցն նոցա, զոր նոքա պաշ*:

* *Ոմանք.* Ղևտացին ինքն զպաշ*:
Եւ ոմանք. Եւ պաշտեսցեն Ղևտացիքն զպաշ*:

* *Ոմանք.* Ձի զտասանորդս որդւոցն:

* *Ոմանք.* Եւ խօսեցաւ Տէր.. (26) Եւ ընդ Ղևտացիսն խօ*:

* *Ոմանք.* Չսրբութիւնսն որդւոցն Իսրայէլի: *՚Ի լուս.* Ո՛չ պղծիցի, զի մի՛. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*:*

ԼԹ ¹Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի՝ և ասէ*։ ²Այս որոշումն է օրինացն՝ զոր պատուիրեաց Տէր Մովսիսի՝ և ասէ. Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի՝ և առցեն առ քեզ երինջ մի կարմիր անարատ, յորում ո՛չ գուցէ բիծ ինչ, և ո՛չ իցէ մտեալ ընդ լծով*։ ³Եւ տացես զնա ցեղիագար քահանայ. և հանցեն զնա արտաքոյ բանակին՝ ՚ի տեղի սուրբ. և սպանցեն զնա առաջի նորա։ ⁴Եւ առցէ՛ Եղիագար յարենէ նորա, և ցանեսցէ՛ յանդիման խորանին վկայութեան յարենէ նորա եւթն անգամ. ⁵և այրեսցեն զնա առաջի նորա. և մորթ նորա, և մի՛ս նորա, և արի՛ն նորա հանդերձ ապաւառաւ նորա այրեսցի*։ ⁶Եւ առցէ քահանայն փայտ եղևնեայ, և զոպա, և կարմիր. և արկցեն ՚ի մէջ այրեսցածի երընջուն։ ⁷Եւ ողողեսցէ զհանդերձս իւր քահանայն, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով, և ապա՛ մտցէ ՚ի բանակն. և անսուրբ լիցի քահանայն մինչև ցերեկոյ։ ⁸Եւ որ այրիցէն զնա, ողողեսցէ՛ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով, և անսուրբ լիցի մինչև ցերեկոյ։ ⁹Եւ ժողովեսցէ ա՛յր սուրբ զմոխիր երընջուն, և կուտեսցէ՛ արտաքոյ բանակին՝ ՚ի սուրբ տեղւոջ. և եղիցի ժողովրդեան որդւոցն Իսրայէլի ՚ի պահեստ ջուր սրսկման՝ զի սրբութիւն է։ ¹⁰Եւ լուսացէ՛ զմարմին իւր որ ժողովիցէ զմոխիր երընջուն, և ողողեսցէ՛ զհանդերձս իւր. և անսուրբ լիցի մինչև ցերեկոյ. և եղիցի ժողովրդեան որդւոցն Իսրայէլի և եկացն յեցելոց ՚ի նոսա, օրէ՛ն յաւիտենական*։

Խ ¹¹Եւ որ մերձենայցէ ՚ի մեռեալ անձին մարդոյ, անսուրբ լիցի զեւթն օր*։ ¹²և սրբեսցի՛ նա յաւուրն երրորդի՝ և յաւուրն եւթներորդի, և ապա՛ սուրբ լիցի. ապա թէ ո՛չ սրբեսցի յաւուրն երրորդի և յաւուրն եւթներորդի, մի՛ լիցի սուրբ։

¹³Ամենայն որ մերձենայցէ ՚ի մեռեալ անձն ՚ի մարդոյ որ մեռանիցի, և ո՛չ սրբեսցի՛ զխորանն Տեառն պղծեաց. սատակեսցի՛ անձնն այն յԻսրայէլէ. զի ջուրն սրսկման ո՛չ սրսկեցաւ ՚ի վերայ նորա, անսուրբ է զի պղծութիւն իւր ՚ի նմա՛ է*։ ¹⁴Եւ այս օրէն իցէ մարդոյ որ մեռանիցի ՚ի տան. ամենայն որ մտցէ ՚ի տունն, և որ ինչ կայցէ ՚ի տանն, անսուրբ լիցին զեւթն օր. ¹⁵և ամենայն աման՝ բաց որ ո՛չ իցէ խփեալ կամ սերեկեալ, պի՛ղծ լիցի*։ ¹⁶Եւ ամենայն որ մերձենայցէ ընդ երեսս դաշտի ՚ի վիրաւոր կամ ՚ի մեռեալ՝ կամ յոսկր մարդոյ կամ ՚ի գերեզման, պի՛ղծ լիցի զեւթն օր։ ¹⁷Եւ առցեն պղծելոյն ՚ի մոխրոյ այրեսցելոյն սրբութեան. և արկցեն ՚ի վերայ նորա ջո՛ւր յամանի. ¹⁸և առցեն զոպա՛, և թացցէ ՚ի ջուրն ա՛յր սուրբ, և ցանեսցէ՛ զտամբն, և զկահիւն, և զամանովքն, և զանձամբքն որ իցեն անդ. և զմերձեցելովքն յոսկր մարդոյ, կամ ՚ի վիրաւոր, կամ ՚ի մեռեալ, կամ ՚ի գերեզման*։ ¹⁹Եւ ցանեսցէ սուրբն զպղծովն՝ յաւուրն երրորդի և յաւուրն եւթներորդի. և սրբեսցի՛ յաւուրն եւթներորդի. և ողողեսցէ զհանդերձս իւր, և լուսացէ՛ զմարմին իւր ջրով. և անսուրբ լիցի մինչև ցերեկոյ։ ²⁰Եւ մարդ՝ որ պղծիցի և ո՛չ սրբեսցի, սատակեսցի անձնն այն ՚ի ժողովրդենէ իւրմէ. զի զսրբութիւնն Տեառն պղծեաց, և ջուր սրսկման ո՛չ սրսկեցաւ զնովաւ, անսուրբ է. ²¹և եղիցի ձեզ այն օրէն յաւիտենական։ Եւ որ

* Ոմանք. Եւ Խօսեցաւ.. (2) Այս որոշումն է օրինին, զոր... և առցեն քեզ երինջ։

* Յօրինակին բառս կարմիր՝ կարմրադեղով նշանակի։

* Ոմանք. Ապաւառաւն իւրով այրեսցի։

* Ոմանք. Եւ ժողովեսցէ զմարմին երնջոյն։

* Ի լուս՝. Ի մեռեալ անձն մարդոյ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝։

* Ոսկան. Ի մեռեալ անձն մարդոյ։ Ոմանք. Ձի պղծութիւն նորա ՚ի նմա է։

* Ոմանք. Աման. բայց որ չիցէ խփ՝։

* Ոսկան. Եւ առցէ զոպայ։

սրսկէ զջուրն սրսկման լուասցէ՝ զծործս իւր. և որ մերձենայցէ՝ ի ջուրն սրսկման, անսո՛ւրբ լիցի մինչև ցերեկոյ*։ ²²Եւ յամենայն ինչ յոր մերձենայցէ պղծեալն, անսո՛ւրբ լիցի մինչև ցերեկոյ. և անձն որ մերձենայցէ՝ ի նա, անսո՛ւրբ լիցի մինչև ցերեկոյ*։

20

Գլուխ Ի

ԽԱ ¹Եւ եկին որդիքն Իսրայէլի ամենայն ժողովրդեամբն յանապատն Սինայի, յառաջնուն ամսեանն. և բանակեցաւ ժողովուրդն ի Կադէս: Եւ վախճանեցաւ անդ Սարիամ, և անդ թաղեցաւ: ²Եւ ո՛չ գոյր անդ ջուր ըմպելոյ ժողովրդեանն. և կուտեցան ի վերայ Մովսիսի և Ահարոնի*։ ³Ա բամբասեաց ժողովուրդն զՄովսէս և ասեն. Լա՛ւ էր թէ մեռեալ էաք ի կորստեան եղբարց մերոց առաջի Տեառն: ⁴Եւ ընդէ՞ր ածէք զժողովուրդս Տեառն յայս անապատ կոտորել զմեզ՝ և զանասուն մեր*։ ⁵Ա ընդէ՞ր հանէք զմեզ յերկրէն Եգիպտացոց, զա՛լ ի տեղիս յայս չար. ի տեղի ուր ո՛չ սերմն սերմանի, և ո՛չ սեխենիք, և ո՛չ այգիք, և ո՛չ նռնենիք, և ո՛չ ջուր գոյ ըմպելոյ: ⁶Եւ մտին Մովսէս և Ահարոն յերեսաց ժողովրդեանն ի դուռն խորանին վկայութեան, և անկա՛ն ի վերայ երեսաց իւրեանց: Եւ երևեցան փառքն Տեառն ի վերայ նոցա: ⁷Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁸Ա՛ռ դու զգաւազանն, և եկեղեցացո՛ր զժողովուրդն, դո՛ւ և Ահարոն եղբայր քո. և բարբառեսջի՛ք ի վերայ վիմին յանդիման նոցա, և տացէ՛ զջուրս իւր. և հանջիք նոցա ջուր ի վիմէ անտի. և արբուսջի՛ք ժողովրդեանն և անասնո՛ց նոցա: ⁹Եւ ա՛ռ Մովսէս զգաւազանն յանդիման Տեառն՝ որպէս հրամայեաց նմա Տէր: ¹⁰Եւ ժողովեցին Մովսէս և Ահարոն զժողովուրդն հանդէպ վիմին: Եւ ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ անհաւանք. միթէ՛ ի վիմէ՞ս յայսմանէ հանիցենք ձեզ ջուր: ¹¹Եւ ամբարձեալ Մովսիսի զձեռն իւր, եհար զվէմն երկի՛ցս անգամ. և ել ջուր բազում. և արբ ժողովուրդն և անասուն նոցա*։ ¹²Եւ ասէ Տէր ցՄովսէս և ցԱհարոն. Փոխանակ զի ո՛չ հաւատացէք դուք ինձ, սո՛ւրբ առնել զիս առաջի որդւոցն Իսրայէլի. վասն այդորիկ ո՛չ տանիցիք դուք զժողովուրդդ յերկիրն՝ զոր ետու՛ւ դոցա*։ ¹³Ա՛յն է Ջուր բամբասանաց. զի բամբասեցին որդիքն Իսրայէլի առաջի Տեառն. և սրբեցա՛ւ ի նոսա*։

ԽԲ ¹⁴Եւ առաքեաց Մովսէս հրեշտա՛կս ի Կադէսայ առ արքայն Եդոմայ՝ և ասէ. Ա՛յսպէս ասէ եղբայր քո Իսրայէլ. Դու ինքնին գիտես զամենայն աշխատութիւնս որ գտին զմեզ. ¹⁵և ո՛րպէս իջին հարքն մեր յԵգիպտոս. և պանդխտեցաք յԵգիպտոս աւուրս բազումս, և չարչարեցին զմեզ Եգիպտացիքն, և զհարսն մեր, ¹⁶և բողոքեցաք առ Տէր. և լուա՛ւ Տէր ձայնի մերուն, և առաքեալ հրեշտակ եհան զմեզ յԵգիպտոսէ. և արդ՝ ե՛մք մեք ի Կադէս քաղաքի, ի կողմն մի ի սահմանաց

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղիցի ձեզ այն օրէն: *Այլք.* Եւ որ սրսկիցէ զջուրն:

* *Ոմանք.* Ամենայն ինչ որ մերձենայցէ ի պղծեալն:

* *Ոմանք.* Ջուր անդ ժողովրդեանն ըմպելոյ:

* *Ոմանք.* Ձժողովուրդս Տեառն յանապատ:

* *Ոմանք* Մովսէսի զձեռն իւր ի վեր, եհար:

* *Ոմանք.* Ձժողովուրդն.. զոր ետու նոցա:

* *Յօրինակին բանս՝* այն է Ջուր բամբասանաց. *կարմրով նշանակի:*

քոց*։ 17Եւ արդ՝ անցցուք ընդ երկիրս քո. և ո՛չ անցցուք ընդ անդս քո, և ո՛չ ընդ այգիս քո, և ո՛չ արբցուք ջուր ՚ի ջրհորոց քոց. ճանապարհ զարքունի՝ գնասցուք. ո՛չ խտտորեսցուք յաջ կամ յահեակ, մինչև անցցուք ըստ սահմանս քո։ 18Եւ ասէ ցնա Եդոմէ. Մի՛ անցցես ընդ իս. ապա թէ ոչ պատերազմաւ ելից ընդդէմ քո*։ 19Եւ ասեն ցնա որդիքն Իսրայէլի. Առ լերամբոյ անցցուք. և եթէ արբցուք ՚ի ջրոյ քունմէ ես և խաշինք իմ, տացուք քեզ զգինս. արդ՝ ո՛չինչ են իրբոյ, անցցուք առ լերամբոյ*։ 20Եւ նա ասէ. Ո՛չ անցցես ընդ իս։ Եւ ել Եդոմ ընդդէմ նոցա ծանր ամբոխիւ և հզօր ձեռամբ։ 21Եւ ո՛չ կամեցաւ Եդոմ տա՛լ անց Իսրայէլի ընդ սահմանս իւր. և խոյս ետ Իսրայէլ ՚ի նմանէ։ 22Եւ չուեցին ՚ի Կադէսայ, և եկին որդիքն Իսրայէլի ամենայն ժողովրդեամբն ՚ի Յովր լեառն։ ԽԳ 23Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի ՚ի Յովր լերինն, ՚ի սահմանս երկրին Եդովմայեցոց՝ և ասէ. 24Յաւելցի՛ Ահարոն առ ժողովուրդ իւր, զի մի՛ մտցէ յերկիրն զոր ետու որդւոցն Իսրայէլի. քանզի բարկացուցէք զիս ՚ի վերայ Ջուրցն բամբասանացն*։ 25Ա՛ռ դու զԱհարոն՝ և զԵղիազար զորդի նորա. և հան զնոսա ՚ի Յովր լեառն յանդիման ամենայն ժողովրդեանն. 26և մերկացո՛ւ յԱհարոնէ զպատմութեան նորա, և զգեցուցես Եղիազարո՛ւ որդւոյ նորա. և Ահարոն յաւելեալ մեռցի՛ անդ։ 27Եւ արար Մովսէս որպէս և հրամայեաց նմա Տէր, և եհան զնա ՚ի Յովր լեառն առաջի ամենայն ժողովրդեանն։ 28Եւ մերկացոյց յԱհարոնէ զհանդերձս նորա, և զգեցոյց զնոսա Եղիազարո՛ւ որդւոյ նորա։ 29Եւ մեռաւ Ահարոն ՚ի գլուխ լերինն. և իջին Մովսէս և Եղիազար ՚ի լեռնէ անտի։ 30Եւ ետես ամենայն ժողովուրդն թէ վախճանեցաւ Ահարոն. և լացին զԱհարոն զերեսուն օր ամենայն տունն Իսրայէլի*։

21

Գլուխ ԻԱ

1Եւ լուաւ Քանանիս արքայ Արադայ՝ որ բնակեալ էր առ անապատաւն. եթէ եկն Իսրայէլ զճանապարհն Աթարինայ. և ետ պատերազմ ընդ Իսրայէլի. և ա՛ռ ՚ի նոցանէ գերի*։ 2Եւ ուխտեաց Իսրայէլ ուխտ Տեառն՝ և ասէ. Եթէ մատնեսցե՞ս ընդ ձեռամբ իմով զազգն զայն, նզովեցի՛ց զնա և զքաղաքս նորա։ 3Եւ լուաւ Տէր ձայնի Իսրայէլի, և մատնեաց զՔանանացին ՚ի ձեռս նորա. և նզովեաց զնա և զքաղաքս նորա. և կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Նզովս*։

ԽԴ 4Եւ չուեալ ՚ի Յովր լեռնէ ընդ ճանապարհ Կարմիր ծովուն, պատեցան զԵդոմաւ. և յոգնեցաւ ժողովուրդն ՚ի ճանապարհին*։ 5և բամբասեաց ժողովուրդն զԱստուած և զՄովսէս՝ և ասեն. Ընդէ՞ր հաներ զմեզ յԵգիպտոս կոտորել զմեզ յանապատիս յայսմիկ. զի ո՛չ գոյ հաց և ո՛չ ջուր. և անձինք մեր

* Այլք. ՚ի կողմն մի սահմանաց քոց։

* Ոմանք. Եւ ասէ ցնա Եդոմ. Մի՛ անցանիցես ընդ իս։

* Ոմանք. Եւ եթէ արբցուք ՚ի ջրհորոյ քունմէ...տացուք քեզ գինս։

* Այլք. Ձի մի՛ մտցէք յերկիրն։ *Յօրինակին պակասէր*. Քանզի բարկացուցէք զիս ՚ի վերայ ջուր՝։

* Այլք. Ձերեսուն օր ամենայն։

* Ոմանք. Եւ լուաւ Քանանացին արքայն Արադայ։

* Օրինակ մի ՚ի լուս՝. Յորմա, այս է նզովս. *զոր Ոսկան դնէ ՚ի բնաբ՝*։

* Ոմանք. Եւ յոգնեցան ժողովուրդն։

տաղտկացեալ են ՚ի սնոտի հացէս: ⁶Եւ առաքեաց Տէր ՚ի ժողովուրդն օձս կոտորիչս, և հարկանէին զժողովուրդն. և մեռաւ ժողովուրդ բազում յորդոցն Իսրայէլի: ⁷Եւ եկին առ Մովսէս և ասեն. Մեղա՛ք՝ զի խօսեցաք չար զՏեառնէ և զքէն. արդ՝ կա՛ց յաղօթս առ Տէր, և բարձցէ ՚ի մէնջ զօձսդ: Եւ եկա՛ց Մովսէս յաղօթս առ Տէր վասն ժողովրդեանն: ⁸Եւ ասէ Տէր ցՄովսէս. Արա՛ դու քեզ օձ, և դիցես զնա ՚ի վերայ նշանակի. և եղիցի յորժամ հարկանիցէ օձ զմարդ, ամենայն օձահար որ տեսանիցէ զնա՝ կեցցէ: ⁹Եւ արար Մովսէս օձ պղնձի, և կացոյց զնա ՚ի վերայ նշանակին. և լինէր՝ յորժամ հարկանէր օձ զմարդ, հայէր ընդ օձն պղնձի, և կեայր*:

ԽԵ ¹⁰Եւ չուեցին որդիքն Իսրայէլի և եկին բանակեցան յԱբովք*: ¹¹Եւ չուեալ յԱբովքայ բանակեցան յԱքեղգայի յայնկոյս անապատին՝ որ է՝ յանդիման Մովաբայ յարևելից կողմանէ: ¹²Անտի չուեցին՝ և բանակեցան ՚ի ձորն Զարեգ: ¹³Անտի՛ չուեալ բանակեցան յայնկոյս Առնովնայ յանապատին, առ ելիւք սահմանացն Ամովրիացւոց. քանզի Առնովն սահման է Մովաբացւոց. ընդ Մովաբացին և ընդ Ամովրիացին*: ¹⁴Վասն այնորիկ ասի ՚ի գրի. Պատերազմ Տեառն՝ Զովգ հրձիգ արար և զձորն Առնովնայ, ¹⁵և հաստատեաց զձորսն բնակեալս յԱրոյեր, և առ ընթեր կայ սահմանացն Մովաբու*: ¹⁶Եւ անտի քան զնա Զրիորն. այն է՝ ջրիորն զորմէ ասաց Տէր ցՄովսէս. ժողովեա՛ զժողովուրդն և տաց նոցա ջուր ընպելոյ: ¹⁷Յայնժամ օրհնեաց Իսրայէլի զօրհնութիւնս զայս ՚ի վերայ ջրիորոյն: Նուագեցէ՛ք նմա ¹⁸զջրիորն զոր իշխանք փորեցին, և տաշեցին զնա թագաւորք ազգաց ՚ի թագաւորութեան իւրեանց՝ և ՚ի տիրել իւրեանց: Եւ ՚ի ջրիորոյ անտի ՚ի Մանթանին. ¹⁹և ՚ի Մանթանինայ ՚ի Մանայէլ. և ՚ի Մանայէլէ ՚ի Բամովք: ²⁰Եւ ՚ի Բամովքայ յԱնայէն, որ է ՚ի դաշտին Մովաբայ, ՚ի կատարէ՛ կոփածուին՝ որ հայի ընդ անապատն:

ԽԶ ²¹Եւ առաքեաց Մովսէս հրեշտակս առ արքայն Ամովրիացւոց բանիւք խաղաղութեան՝ և ասէ. ²²Անցցուք ընդ երկիր քո. զճանապարհայն զնասցուք. ո՛չ խտտորեսցուք յանդս և ո՛չ յայգիս. և ո՛չ արբցուք ջուր ՚ի ջրիորոց քոց. ճանապարհ զարքունի՛ զնասցուք մինչև անցցուք ընդ սահմանս քո*: ²³Եւ ո՛չ ետ Սեհոն անցանել Իսրայէլի ընդ սահմանս իւր. և ժողովեաց Սեհոն զամենայն ժողովուրդն իւր. և ել տա՛լ պատերազմ ընդ Իսրայէլի յանապատին. և եկն ՚ի Սիասար և ե՛տ պատերազմ ընդ Իսրայէլի: ²⁴Եւ եհա՛ր զնա Իսրայէլ կոտորմամբ սրոյ, և տիրեցին երկրի նորա յԱռնովնայ մինչև ցՅաբովկ. մինչև ցորդիսն Ամմոնայ. զի Յազեր է սահման որդւոցն Ամմոնայ: ²⁵Եւ ա՛ռ Իսրայէլ զամենայն քաղաքսն զայնոսիկ, և բնակեցաւ Իսրայէլ յամենայն քաղաքս Ամուրիացւոց: Յեսերոն և յամենայն արուարձանեայս նորա. ²⁶քանզի Եսերոն էր քաղաք Սեհոնի արքայի Ամովրիացւոց. և նա՛ նախ ետ պատերազմ ընդ արքային Մովաբու, և ա՛ռ զամենայն երկիրն նորա յԱրոյերայ մինչև ցԱռնոն: ²⁷Վասն այնորիկ ասեն առակարկուք. Եկայք յԵսերոն զի շինեցաւ, և հանդերձեցաւ քաղաքն Սեհոնի*. ²⁸զի հո՛ւր ել յԵսերոնայ՝ և բո՛ց ՚ի քաղաքէն Սեհոնի, և եկեր մինչև ցՄովաբ. և լափեաց զարձանս Առնովնայ: ²⁹Վայ՛ քեզ Մովաբ. կորեար

* *Յօրինակին բանս՝* Օձ պղնձի, և կացոյց զնա. *կարմրով նշանակի:*

* *Ոմանք.* Բանակեցան յՈբովք:

* *Ոմանք.* Եւ անտի չուեալ:

* *Այլք.* Զձորսն բնակեալս յեր, որ:

* *Այլք.* Ոչ խտտորեսցուք ո՛չ յան՝... մինչև անցցուք ըստ սահմա՛:

* *Ոմանք.* Ասեն ամենայն առարկուք:

ժողովուրդ Քամովսայ. և մատնեցան ուստերք նոցա ՚ի փախուստ, և դստերք նոցա ՚ի գերութիւն թագաւորին Ամովրհացոց* .³⁰ և զաւակ նոցա սատակեցի՛ յեսերոնէ մինչև ցԴերոն. և կանայք նոցա բորբոքեցան հրով ՚ի վերայ Մովաբու* :³¹ Եւ բնակեաց Իսրայէլ յամենայն քաղաքս Ամուրհացոց: ³² Եւ առաքեաց Մովսէս լրտեսել զԱզեր. և առին զնա և զաւանս նորա, և հանին զԱմուրհացին որ բնակեալ էր ՚ի նմա* :³³ Եւ կրկնեցան ելին ընդ ճանապարհն ՚ի Բասան: Եւ ել Ո՛վդ թագաւոր Բասանու ընդդէմ նոցա, և ամենայն ժողովուրդ նոցա ՚ի պատերազմ յեդրային* :³⁴ Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մի՛ երկնչիր ՚ի նմանէ, զի ՚ի ձեռս քո մատնեցի զնա՛ և զամենայն ժողովուրդն նորա, և զամենայն երկիր նորա. և արասցես ընդ նա՝ որպէս արարեր ընդ Սեհոն արքայ Ամովրհացոց՝ որ բնակեալ էր յեսերոն* :³⁵ Եւ եհար զնա և զորդիս նորա, և զամենայն ժողովուրդն նորա. մինչև ամենակին չմնալոյ ՚ի նոցանէն ապրեալ: Եւ ժառանգեցին զերկիրն նոցա:

22

Գլուխ ԻԲ

ԽԵ ¹Եւ չուեալ որդւոցն Իսրայէլի բանակեցան յարևմտից Մովաբու առ Յորդանանաւ յանդիման Երիքովի* :² Եւ տեսեալ Բաղակայ՝ որդւոյ Սեպփովրայ զամենայն զոր արար Իսրայէլ ընդ Ամովրհացին, ³երկեալ Մովաբ յոյժ ՚ի ժողովրդենէ անտի, զի բազում էին. և զանգիտեաց Մովաբ յերեսաց որդւոցն Իսրայէլի: ⁴ Եւ ասէ Մովաբ ցծերակոյտն Մադիամու. Արդ՝ լիզանէ՛ ժողովուրդս այս զամենայն որ շուրջ զմեք են, որպէս լիզանէ արջառ զդեղ դալար ՚ի դաշտի: Եւ Բաղակ որդի Սեպփովրայ էր արքայ Մովաբու ՚ի ժամանակի յայնմիկ* :⁵ Եւ առաքեաց հրեշտակս առ Բաղասան որդի Բեովրայ՝ առ Փաթուրն. որ էր առ գետեզերք երկրին որդւոց ազգին իւրոյ. կոչել զնա և ասել. Ահա՛ ա՛զգ ել յեգիպտոսէ, և ծածկեաց զերեսս երկրի. և նստի՛ սա մօտ առ իս* :⁶ Եւ արդ՝ ել անէ՛ծ դու ինձ զժողովուրդս զայս. զի զօրագոյն քան զիս է՛ սա. թերևս կարասցուք հարկանել ՚ի սոցանէ, և հանի՛ց զսա յերկրէ ինմէ. քանզի գիտեմ թէ զոր օրհնես դու՝ օրհնեալ է, և զոր անիծանես՝ անիծեալ* :⁷ Եւ գնացին ծերակոյտն Մովաբու և ծերակոյտն Մադիամու, և ըղձութիւնք ՚ի ձեռս նոցա. եկին առ Բաղասան, և ասացին նմա զպատգամսն Բաղակայ: ⁸ Եւ ասէ ցնոսա. Ազարո՛ւք աստ զայս գիշեր, և արարից ձեզ պատասխանի՛ իրացդ, ինչ զոր Տէր խօսեցցի ընդ իս: Եւ ազան իշխանքն Մովաբու առ Բաղասանու: ⁹ Եւ եկն Աստուած առ Բաղասան և ասէ ցնա. Զի՞՞ են արքդ այդոքիկ առ քեզ: ¹⁰ Եւ ասէ Բաղասան ցԱստուած. Բաղակ որդի Սեպփովրայ արքայ Մովաբու առաքեաց

* Ոմանք. Կորեալ ժողովուրդ:

* Ոմանք. Եւ կանայք ևս նոցա բորբոք* :

* Ոմանք. ԶՅազեր, և ա՛ռ զնա և զա՛* :

* Այլք. ժողովուրդն նորա ՚ի պատ* :

* Ոմանք. Մատնեցից զնա... և արասցես ընդ նմա որպէս... որ բնակեալ են յեսերոն:

* Այլք. Եւ չուեցին որդիքն Իսրայէլի բանա՞ւ. առ Յորդանանաւ:

* Ոմանք. Զամենայնսն որ... որպէս զի լիզանիցէ արջառ զդալար ՚ի դաշ* :

* Ոմանք. Երկրին այնորիկ որդւոց ազ* :

* Ոմանք. Եւ հանից զսոսա յերկրէ... և զոր անիծանես անիծեալ են:

զդոսա առ իս և ասէ. ¹¹Ահա ա՛զգ ել յեգիպտոսէ և ծածկեաց զերեսս երկրի, և նստի՛ սա մօտ առ իս. արդ՝ ե՛կ անէ՛ծ դու զսոսա ինձ, թերևս կարացից հարկանել զսա՝ և հանից զսա յերկրէ իմնէ: ¹²Եւ ասէ Աստուած ցԲաղասամ. Մի՛ երթար ընդ նոսա, և մի՛ անիծանիցես զժողովուրդն՝ քանզի օրհնեալ է: ¹³Եւ յարուցեալ Բաղասամ ընդ առաւօտն, ասէ ցիշխանսն Բաղակայ. Գնացէ՛ք անդրէն առ տէրն ձեր. զի ո՛չ թողու զիս Աստուած գալ ընդ ձեզ՝: ¹⁴Եւ յարուցեալ իշխանքն Մովսարու եկին առ Բաղակ՝ և ասեն. Ո՛չ կամեցաւ Բաղասամ գալ ընդ մեզ: ¹⁵Եւ յաւել առաքել՝ Բաղակ իշխանս բազումս և պատուականագոյնս քան զնոսա: ¹⁶Եկին առ Բաղասամ, և ասեն ցնա. Այսպէս ասէ Բաղակ Սեպփովրեան. Աղաչե՛մ զքեզ՝ մի՛ դանդաղիցիս գալ առ իս. ¹⁷զի պատուելով պատուեցի՛ց զքեզ, և զոր ինչ ասիցես արարի՛ց քեզ. և արդ՝ ե՛կ անէ՛ծ ինձ զժողովուրդս զայս: ¹⁸Պատասխանի ետ Բաղասամ և ասէ ցիշխանսն Բաղակայ. Եթէ տացէ ինձ Բաղակ լի՛ տամբ իւրով արծաթ և ոսկի, ո՛չ կարացից անցանել զբանիւ Տեառն Աստուծոյ, առնել զնա փոքր կամ մեծ մտօք իմովք: ¹⁹Եւ արդ՝ ազերու՛ք դուք աստ զգիշերս զայս. և գիտացի՛ց զի՛նչ յաւելցէ Տէր խօսել ընդ իս: ²⁰Եւ եկն Աստուած առ Բաղասամ՝ ՚ի գիշերին՝ և ասէ ցնա. Եթէ կոչել՝ զքեզ եկեալ են արքոյ այդոքիկ, արի՛ երթ զկնի դոցա. բայց զբանն զոր ես խօսեցայց ընդ քեզ՝ զայն արասցես՝: ²¹Եւ յարուցեալ Բաղասամ ընդ առաւօտն հանդերձեաց զէջ իւր, և զնա՛ց ընդ իշխանսն Մովսարու: ²²Եւ բարկացաւ սրտմտութեամբ Աստուած ընդ երթալն նորա. և եկաց հրեշտակ Աստուծոյ լինել՝ նմա բանսարկու. և նա հեծեալ էր ՚ի վերայ իշոյ իւրոյ, և երկո՛ւ պատանիք նորա ընդ նմա՝: ²³Եւ տեսեալ իշոյն զհրեշտակ Աստուծոյ զի կայր նմա ընկիճեալ ՚ի ճանապարհին, և սուսեր մե՛րկ ՚ի ձեռին իւրում, խուսեաց էջն ՚ի ճանապարհէն՝ և երթայր ընդ դաշտն. և եհար գաւազանաւ զէջն ուղղել՝ զնա ՚ի ճանապարհն՝: ²⁴Եւ եկաց հրեշտակն Աստուծոյ յառուամէջս այգեացն. և էր ցանգ աստի՝ և ցանգ անտի: ²⁵Եւ տեսեալ իշոյն զհրեշտակն Աստուծոյ՝ նեղեաց զինքն ընդ որմնն և ճմլեաց զոտն Բաղասամու. և յաւել ևս հարկանել զնա՝: ²⁶Եւ յաւել հրեշտակն Աստուծոյ երթալ կալ ՚ի նեղ տեղւոջ. ուստի ո՛չ գոյր խուսել յա՛ջ կամ յահեակ: ²⁷Եւ տեսեալ իշոյն զհրեշտակն Աստուծոյ, նստաւ ընդ Բաղասամու. և բարկացաւ Բաղասամ, և եհար զէջն գաւազանաւ՝: ²⁸Եւ եբա՛ց Աստուած զբերան իշոյն, և ասէ ցԲաղասամ. Զի՞նչ արարի քեզ զի հարեր զիս այս երի՛ցս անգամ: ²⁹Եւ ասէ Բաղասամ ցէջն. Փոխանակ զի խա՛ղ արարեր զիս. և եթէ է՛ր սուր ՚ի ձեռին իմում, արդ և խոցեալ էր իմ զքեզ: ³⁰Եւ ասէ էջն ցԲաղասամ. Ո՞չ ես այն էջ եմ քո՝ յորում հեծանէի՛ր ՚ի մանկութենէ քումնէ մինչև ցայսօր ժամանակի. միթէ յուլանալով յուլացայ՞՞ ինչ երբէք առնել քեզ այսպէս: Եւ նա ասէ. Ո՛չ: ³¹Եւ եբա՛ց Աստուած զաչս Բաղասամու, և ետես զհրեշտակն Տեառն ընկիճեալ նմա ՚ի ճանապարհին, և սուսեր մե՛րկ ՚ի ձեռին իւրում. և անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ նմա: ³²Եւ ասէ ցնա հրեշտակն Աստուծոյ. Ընդէ՞ր հարեր դու զէջն՝ այս երի՛ցս անգամ. և ահա ելի՛ ես ՚ի բանսարկութիւն քեզ, զի ո՛չ է ճանապարհոյ քո ուղիղ առաջի իմ. ³³և տեսեալ զիս իշոյն՝ խուսափեաց յինէն այս երի՛ցս անգամ. և եթէ

* Ոմանք. Ընդ առաւօտն և ասէ:

* Ոմանք. Բայց զբան զոր ես:

* Ոմանք. Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ընդ երթալ նորա:

* Ոմանք. Զի կայր ընդ նմա ընկի՛... էջն ՚ի ճանապարհէ անտի, և եր՞:

* Ոմանք. Զհրեշտակն Տեառն... ընդ որմն, և ճմլեաց զոտնն:

* Ոմանք. Իշոյն զհրեշտակ Տեառն:

չէր խուսափեալ յինէն, արդ՝ իմ զքեզ սպանեալ էր, և զդա ապրեցուցեալ: ³⁴Եւ ասէ Բաղասան ցիրեշտակն Տեառն. Մեղայ՛. զի ո՛չ գիտէի՝ թէ դու ինձ ընկիծեալ կայցես ՚ի ճանապարհիս. և արդ՝ եթէ չիցէ՛ քեզ հաճոյ՝ դարձայց անդրէն: ³⁵Եւ ասէ հրեշտակն Աստուծոյ ցԲաղասան. Երթ դու ընդ արսդ ընդ այդոսիկ. բայց բանի զոր ես ասացից քեզ, այնմ զգոյշ լինիջիր խօսելոյ: Եւ գնաց Բաղասան ընդ իշխանսն Բաղակայ՛: ³⁶Եւ լուեալ Բաղակայ եթէ գայ Բաղասան, ե՛լ նմա ընդ առաջ ՚ի քաղաքն Մովաբու՝ որ է ՚ի սահմանս Ամնոնայ յեզեր միում սահմանացն: ³⁷Եւ ասէ Բաղակ ցԲաղասան. Ո՛չ առաքեցի առ քեզ կոչել զքեզ. ընդէ՞ր ո՛չ գայիր առիս. որպէս թէ ո՞չ էի արդէք կարօղ պատուել զքեզ՛: ³⁸Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Ահաւասիկ եկի՛ առ քեզ. արդ՝ կարօ՞ղ իցեն խօսել բան ինչ, բայց եթէ զոր արկանիցէ Աստուած ՚ի բերան իմ գայն խօսեցայց: ³⁹Եւ գնաց Բաղասան ընդ Բաղակայ, և եկն ՚ի քաղաքս հանգրուանացն: ⁴⁰Եւ եզեն Բաղակ զարջառ և ոչխար, և առաքեաց Բաղասանու և իշխանացն որ ընդ նմա էին: ⁴¹Եւ իբրև այգ եղև, առեալ ընդ իւր Բաղակայ զԲաղասան եհան գնա յարձանն Բահաղու. և եցոյց նմա անտի գնասն ինչ ժողովրդեանն՛:

Գլուխ ԻԳ

¹Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Շինեա՛ ինձ աստ եւթն բազին, և պատրաստեա՛ դու ինձ աստ՝ եւթն զուարակ և եւթն խոյ: ²Եւ արար Բաղակ որպէս և ասաց նմա Բաղասան. և եհան զուարակ և խոյ ՚ի բազինն: ³Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Կայց ՚ի վերայ զոհիդ քո, և ես երթայց՝ թերևս յայտնեսցի՛ ինձ Աստուած ընդ առաջ ելեալ. և բան զոր ցուցցէ ինձ՝ պատմեցից՝ քեզ: Եւ եկաց Բաղակ ՚ի վերայ զոհին իւրոյ: Եւ գնաց Բաղասան հարցանել զԱստուած: ⁴Եւ երթայր ուղղորդ. և երևեցաւ Աստուած Բաղասանու. և ասէ Բաղասան. Եւթն բազին պատրաստեցի, և հանի զուարակ և խոյ ՚ի բազին մի՛: ⁵Եւ արկ Աստուած բան ՚ի բերան Բաղասանու, և ասէ. Դարձի՛ր առ Բաղակ, և այսպէս խօսեսցիս: ⁶Եւ դարձաւ առ նա. և նա կայր ՚ի վերայ ողջակիզացն իւրոց. և ամենայն իշխանքն Մովաբացուց ընդ նմա: ⁷Եւ եղև Յոզի Աստուծոյ ՚ի վերայ նորա, և ամբարձեալ զառակս իւր՝ ասէ. ՚ի Միջագետաց կոչեաց զիս Բաղակ արքայ Մովաբացուց, ՚ի լերանցն արևելից, և ասէ. Եկ նզովեա՛ դու ինձ զՅակոբ. և եկ անէ՛ծ ինձ զԻսրայէլ՛: ⁸Զի՞նչ նզովեցից՝ զոր ո՛չ նզովէ Տէր. կամ զի՞նչ անիծեցից՝ զոր ո՛չ անիծանէ Տէր. ⁹զի ՚ի լերանց տեսի գնա, և ՚ի բլրոց յառաջագոյն հայեցայ ՚ի նա. և ահա ժողովուրդ բնակեսցէ առանձինն, և ընդ ազգս մի՛ համարեսցի՛: ¹⁰Ո՛ճ ճշգրտեաց զգաւակն Յակոբայ, և ո՛ համարեսցի զգունդսն Իսրայէլի. մեռցի՛ անձն իմ ընդ անձինս արդարոցն, և եղիցի գաւակ իմ իբրև զգաւակ նոցա: ¹¹Եւ ասէ Բաղակ ցԲաղասան. Զի՞նչ գործեսցեր ընդ իս. յանիծանել թշնամեաց կոչեցի

* Ոմանք. Եւ ասէ հրեշտակն Տեառն... զգոյշ լինիջիր ՚ի խօսելոյ:

* Ոմանք. Թէ ո՛չ ևս արդէտք կարող էի պատու՛:

* Ոմանք. Եւ առեալ ընդ իւր բա՛:

* Ոմանք. Եւ ասէ ցնա Բաղասան:

* Յօրինակին պակասէր. Կոչեաց զիս Բաղակ:

* Ոմանք. Զի ՚ի լերանց տեսից գնա... հայեցայց ՚ի նա:

զքեզ, և դու օրհնեցեր օրհնութի՞ւն*։ ¹²Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Ո՛չ ապաքէն զինչ արկանիցէ Աստուած ՚ի բերան իմ՝ զայն զգուշացայց խօսել։ ¹³Եւ ասէ ցնա Բաղակ. Ե՛կ դարձեալ ընդ իս յա՛յլ տեղի, ուստի ո՛չ տեսանիցես զնա. այլ զմասն ինչ ՚ի նմանէ տեսանիցես. և զամենեսեան ո՛չ տեսանիցես, և անէ՛ծ ինձ զնա անտի։ ¹⁴Եւ ա՛ռ զնաց զնա յագարակս դիտանոցին, ՚ի կատար կոփածոյին, և շինեաց անդ եւթն բագին, և եհան զուարակ և խո՛յ ՚ի բագինն։ ¹⁵Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Կա՛ց ՚ի վերայ զոհիդ քոյ, և ես երթայց հարցանե՛լ զԱստուած։ ¹⁶Եւ ընդ առաջ եղև Աստուած Բաղասանու, և արկ բան ՚ի բերան նորա. և ասէ. Դարձի՛ր անդրէն առ Բաղակ, և այսպէս խօսեսցիս*։ ¹⁷Եւ դարձաւ առ նա. և նա կայր ՚ի վերայ ողջակիզին իւրոյ, և ամենայն իշխանքն Մովսէսացոց ընդ նմա։ Եւ ասէ ցնա Բաղակ. Ջի՞նչ խօսեսցաւ Տէր*։ ¹⁸Եւ ամբարձեալ զառակս իւր՝ ասէ. Արի՛ Բաղակ և լուր. ո՛ւնկն դիր վկայդ որդիդ Սեպփովրայ. ¹⁹ո՛չ իբրև զմարդ է Աստուած ՚ի զարթնուլ, և ո՛չ իբրև զորդի մարդոյ ՚ի սպառնալ, դու ասացեր թէ ո՛չ արասցէ, խօսեսցի և ո՛չ կացուցէ։ ²⁰Ահա՛ յօրհնե՛լ առեալ եմ. օրհնեցից և ո՛չ դարձուցից։ ²¹Ո՛չ լիցի աշխատութիւն ՚ի Յակոբ, և մի՛ երևեսցի վաստակ ՚ի մէջ Իսրայէլի։ Տէր Աստուած նորա ընդ նմա՛. փառաւորութիւնք իշխանաց ՚ի նմա. ²²և Աստուած որ եհան զնոսա յեգիպտոսէ՛ իբրև փառք միեղջերու ՚ի վերայ նորա*։ ²³Ձի ո՛չ գոն հմայք ՚ի Յակոբ՝ և ո՛չ ըղձութիւնք ՚ի մէջ Իսրայէլի. ըստ ժամանակի պատմեսցի Յակոբայ՝ և Իսրայէլի զինչ կատարելոց իցէ Աստուած*։ ²⁴Ահա ժողովուրդն իբրև զկորիւն առիւծու յարիցէ, իբրև զառնձ նագեսցի. և ո՛չ ննջիցէ մինչև կերիցէ ո՛րս, և զարիւն վիրաւորաց արբցէ*։ ²⁵Եւ ասէ Բաղակ զԲաղասան. Մի՛ անիծանելով անիծաներ ինձ զնա, և մի՛ օրհնելով օրհնեսցես զնա։ ²⁶Պատասխանի՛ ետ Բաղասան և ասէ ցԲաղակ. Ո՞չ խօսեսցայ ընդ քեզ բանս՝ և ասեմ, թէ՛ Ջոր ինչ խօսեսցի ընդ իս Աստուած՝ զայն արարից*։ ²⁷Եւ ասէ Բաղակ ցԲաղասան. Ե՛կ տարայց զքեզ յայլ տեղի՝ թերևս հաճո՛յ լիցի Աստուծոյ, և անիծանիցես ինձ զնոսա անտի։ ²⁸Եւ տարաւ Բաղակ զԲաղասան ՚ի կատարն Փոզովրայ՝ որ ձգի յանապատն*։ ²⁹Եւ ասէ Բաղասան ցԲաղակ. Շինեա՛ ինձ աստ եւթն բագին, և պատրաստեա՛ ինձ աստ եւթն զուարակ և եւթն խոյ։ ³⁰Եւ արար Բաղակ որպէս և ասաց նմա Բաղասան, և եհան զուարակ և խոյ ՚ի բագինն։

24

Գլուխ ԻԴ

¹Եւ տեսեալ Բաղասանու թէ բարուք թուի առաջի Տեառն օրհնել զԻսրայէլ, ո՛չ չոգաւ ըստ սովորութեանն ընդ առաջ հմայիցն, դարձոյց զերեսս իւր

* Ոմանք. Օրհնեցեր օրհնութեամբ։

* Ոմանք. Բան ՚ի բերան Բաղասանու, և ասէ։

* Ոմանք. Ջի՛նչ խօսեսցաւ Աստուած։

* Ոմանք. Եհան զնոսա յերկրէն յեգիպտոսէ։ *Օրհնակ մի՛ աստ և ստորև զլ. ԻԴ 8.* Իբրև փառք միեղջերույ ՚ի վերայ նորա։ *Յորս Ոսկան.* միեղջերուի ՚ի վերայ։

* Ոմանք. Ոչ գոյն հմայք.. ըղձութիւն։

* Ոմանք. Եւ իբրև զառիւծ նագեսցէ։

* Ոմանք. Ո՛չ խօսեսցայց ընդ քեզ բանս և ասեմ. Ջոր ինչ։

* Ոմանք. Ի կատարն Փոզովրայ՝ յոր ձգի յանա՛։

յանապատն: ²Եւ ամբարձեալ Բաղասմու զաչս իւր ետես զԻսրայէլ բանակեալ ըստ ցեղից ցեղից. և եղև Յոզի Աստուծոյ ՚ի վերայ նորա. ³և ամբարձեալ զառակս իւր՝ ասէ. Ասէ՛ Բաղասմ որդի Բեովրայ*. ⁴ասէ այրն ճշմարտապէս. որ զտեսիլ Աստուծոյ ետես ՚ի քուն աչօք իւրովք բացօք*: ⁵Իբրև զի գեղեցիկ են տունք քո Յակոբ և խորանք քո Իսրայէլ. ⁶իբրև զանտաճս հովանաւորս, և իբրև զբուրաստանս առ գետովք, և իբրև զխորանս զոր կանգնեաց Տէր, և իբրև զմայրս ՚ի գնացս ջուրց: ⁷Եւ ելցէ՛ այր ՚ի զաւակէ նորա, և տիրեսցէ՛ ազգաց բազմաց. և բարձրասցի՛ քան զՈվգայ թագաւորութիւն նորա. և աճեսցէ՛ թագաւորութիւն նորա*: ⁸Աստուած առաջնորդեաց՝ նմա յեգիպտոսէ. իբրև փառք միեղջերու ՚ի վերայ նորա. կերիցէ՛ զազգս թշնամեաց իւրոց, և զպարարտութիւն նոցա ուղղածու՛ծ արասցէ. և նետիւք իւրովք նետածի՛գ լիցի ՚ի թշնամիս: ⁹Եւ բազմեալ հանգեալ իբրև զառևձ, և իբրև զկորիւն առի՛ծու. և ո՛յ յարուցանիցէ զնա. օրհնիչք քո՝ օրհնեսցի՛ն, և անիծիչք քո՝ անիծցի՛ն: ¹⁰Եւ բարկացաւ Բաղակ Բաղասմու, և ծափ զծափի հարկանէր. և ասէ Բաղակ ցԲաղասմ. Անիծանել զթշնամիս իմ կոչեցի զքեզ, և ահա օրհնելով օրհնեսցէ՛ր զնա՝ այս երիցս անգամ: ¹¹Եւ արդ՝ փախի՛ր դու ՚ի տեղի քո. ասացի պատուել զքեզ, և վրիպեցո՛յց զքեզ Տէր ՚ի փառաց: ¹²Եւ ասէ Բաղասմ ցԲաղակ. Ո՞չ և ընդ հրեշտակսն քո զոր առաքեսցեր առ իս՝ խօսեցայ և ասացի*. ¹³Թէ տացէ ինձ Բաղակ լի՛ տամք իւրով արծաթ և ոսկի, ո՛չ կարիցեմ անցանել զբանիւ Տեառն, առնել զնա չար կամ բարի յանձնէ իմնէ. այլ զոր ինչ ասիցէ Աստուած՝ զայն խօսեցայց*: ¹⁴Եւ արդ՝ ահա զնա՛ն ՚ի տեղի իմ: Ե՛կ տաց քեզ խրատ, թէ զի՛նչ առնելոց է ժողովուրդն այն ընդ ժողովուրդ քո ՚ի վախճանի աւուրց: ¹⁵Եւ ամբարձեալ զառակս իւր՝ ասէր. Ասէ՛ Բաղասմ որդի Բեովրայ. ասէ այրն ճշմարտապէս*. ¹⁶որ լուաւ զպատգամս Աստուծոյ, և հմո՛ւտ է զիտութեան Բարձրելոյ. և զտեսիլ Աստուծոյ ետես ՚ի քուն աչօք իւրովք բացօք*: ¹⁷Յուցից նմա՝ և ո՛չ այժմ. երանեցից, և ո՛չ ՚ի մօտոյ: Ծագեսցէ՛ Աստղն Յակոբայ, և յարիցէ ա՛յր յԻսրայէլէ, և հարցէ՛ զիշխանս Սովաբայ. և առցէ աւա՛ր զամենայն որդիս Սեթայ*: ¹⁸Եւ եղիցի նմա Եղոմ ժառանգութիւն Եսաւայ թշնամոյ իւրոյ. և Իսրայէլ արար զօրութեամբ*. ¹⁹և յարիցէ այր ՚ի Յակոբայ, և կորուսցէ զապրեալսն ՚ի քաղաքէ անտի: ²⁰Եւ տեսեալ զԱմադէկ, ամբարձեալ զառակս իւր՝ ասէ. Գլո՛ւխ ազգաց Ամադէկ, և զաւակ նոցա կորիցէ: ²¹Եւ տեսեալ զԿիմեցիւն, ամբարձեալ զառակս իւր՝ ասէ. Յոգօ՛ր է բնակութիւն քո. և թէ դիցես ՚ի քարանձաւս զբոյն քո՛, ²²և թէ լիցի ՚ի Բեովր բոյն խարդախութեան քոյ, Ասորեստանեայք գերեսցեն*: ²³Եւ ամբարձեալ զառակս իւր ասէ. Ո՛ր ոք կեցցէ յորժամ դնիցէ զայն Աստուած, ²⁴և ելցէ ՚ի ձեռաց Կիտացւոց, և չարչարեսցեն զԱսուր. և չարչարեսցեն

* Ոմանք. Ջառակս իւր ասէր. Ասէ Բա՛:

* Այլք. Ասէ այրն ճշմարտատես որ:

* Այլք. Քան զԳովգայ թագաւորութիւն նորա:

* Ոմանք. Ոչ ևս ընդ հրեշտակսն քո:

* Ոմանք. Ոսկի և արծաթ, ո՛չ կարացից անցա՛... առնել զայն չար կամ:

* Այլք. Ասէ այրն ճշմարտատես:

* Ոմանք. Ջպատգամս Տեառն Աստուծոյ:

* Օրհնակ մի. Ծագեսցէ աստղ ՚ի Յակոբայ, և ելցէ այր յԻսրայէլէ:

* Ոմանք. Եղովմ ՚ի ժառանգութիւնն:

* Ոմանք. Եթէ և դիցես ՚ի քարանձաւս:

* Ոմանք. Ի Բեովր բոյն քո խարդախութեան ա՛:

զեբրայեցիս. և ինքեանք միանգամայն կորիցեն: ²⁵Եւ յարուցեալ Բաղասան դարձաւ գնաց ՚ի տեղի իւր. և Բաղակ գնաց ընդ իւր կողմն:

25

Գլուխ ԻԵ

¹Եւ բանակեցաւ Իսրայել ՚ի Սատտիմ. և պղծեցաւ ժողովուրդն պոռնկել ընդ դստերսն Մովսթու: ²Եւ կոչեցին գնոսա ՚ի զոհս կռոց իւրեանց, և եկեր ժողովուրդն ՚ի զոհից նոցա, և երկիր պագին կռոց նոցա: ³Եւ նուիրեցաւ Իսրայել Բէլփեգովրայ. և բարկացաւ սրտմտութեամբ Տէր ՚ի վերայ Իսրայելի: ⁴Եւ ասէ Տէր ցՄովսթու. Առ զամենայն իշխանս ժողովրդեանդ, և առակեա՛ զդոսսա առաջի Տեառն յանդիման արեգական. և դարձցի սրտմտութիւն բարկութեան Տեառն յԻսրայել: ⁵Եւ ասէ Մովսթու ցցեղսն Իսրայելի. Կոտորեցէք իւրաքանչիւր զընտանի իւր զնուիրեալ Բէլփեգովրայ:

ԽԸ ⁶Եւ ահա այր Իսրայելացի, զայր ածէր զեղբայր իւր առ կին Մադիանացի յանդիման Մովսիսի, և յանդիման ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի. և նոքա լային առ դրան խորանին վկայութեան: ⁷Եւ տեսեալ Փենեէսի որդւոյ Եղիազարու որդւոյ Ահարոնի քահանայի, յարեաւ ՚ի միջոյ ժողովրդեանն, և առեալ զեղարդն ՚ի ձեռն իւր, ⁸և եմուտ զհետ առնն Իսրայելացւոյ ՚ի հնոցն, և խոցեաց զերկոսին զայրն Իսրայելացի՝ և զկինն ընդ արգանդ իւր. և դադարեաց հարուածն յորդւոցն Իսրայելի: ⁹Եւ եղեն մեռեալքն ՚ի հարուածոցն յայնցանէ քսան և չորք հազարք: ¹⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹¹Փենեէս՝ որդի Եղիազարու, որդւոյ Ահարոնի քահանայի, ցածոյց զսրտմտութիւն իմ յորդւոցն Իսրայելի, ՚ի նախանձեցուցանել ինձ զնախանձ իմ ՚ի նոսա. և ո՛չ սատակեցից զորդիսդ Իսրայելի նախանձու իմով: ¹²Եւ արդ՝ այսպէս ասասցես. Ահա ես տայնմա ուխտ խաղաղութեան. ¹³և եղիցի նմա և զաւակի՛ նորա յետ նորա ուխտ քահանայութեան յաւիտենական. փոխանակ զի քինախնդիր եղև Աստուծոյ իւրում. և քաւեաց վասն որդւոցն Իսրայելի: ¹⁴Եւ անուն առն Իսրայելացւոյ հարելոյ որ հարաւ ընդ կնոջն Մադիանացւոյ՝ Ջամբրի որդի Սաղովմայ, իշխան տան ազգի որդւոցն Շմաւոնի: ¹⁵Եւ անուն կնոջն Մադիանացւոյ հարելոյ՝ Քազբի, դուստր Սուրայ իշխանի ազգին Ամովթայ՝ տան նահապետութեան Մադիանու: ¹⁶Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁷Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի՝ և ասասցես. Թշնամեցայք ընդ Մադիանացիսն, և հարկանիցէք զնոսա. ¹⁸զի թշնամի՛ են նոքա ընդ ձեզ նենգութեամբ. որ նենգեցին զձեզ Փոզորաւ, և Քազբեաւ դստերք իշխանին Մադիանու քերքն իւրեանց հարելով յաւուրն հարուածոց վասն Փոզովրայ:

* Ոմանք. Իսրայել ՚ի Սատտիմ:

* Ոմանք. Եւ նուիրեցաւ Իսրայել Բէլփեգովրայ:

* Ոմանք. Արեգականն.. բարկութիւն սրտմտութեան Տեառն:

* Ոմանք. Փենեէսի. Փենեէս:

* Ոմանք. ՚ի հարուածոյն յայնցանէ:

* Ոմանք. Փենեէսի. Փենեէս:

* Յօրհիմակին. Եւ արդ՝ այսպէս արասցես, ահա:

* Ոմանք. Ուխտ քահանայութեանն:

* Ոմանք. Քասբի, դուստր Սուրայ իշխան ազգին Ոմովթայ:

Գլուխ ԻԶ

¹Եւ եղև յետ հարուածոցն:

ԽԹ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ընդ Եղիազարու քահանայի՝ և ասէ. ²Կա՛լ զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, ՚ի քսանամեանց և ՚ի վեր. ըստ տանց նահապետաց իւրեանց, ամենայն որ ելանիցէ յԻսրայէլէ տալ պատերազմ: ³Եւ խօսեցան Մովսէս և Եղիազար քահանայ, յՌաբով Մովաբու առ Յորդանանաւ յանդիման Երեքոյի՝ և ասեն* . ⁴Ի քսանամեանց և ՚ի վեր, որպէս հրաման ետ Տէր Մովսիսի. դու և որդիքն Իսրայէլի ելեալք յեգիպտոսէ ⁵կազմեցարո՛ւք: Ռուբէն անդրանիկն Իսրայէլի. և որդիք Ռուբինի, Ենոք, և գունդն Ենոքայ. Փալլուս, և գունդն Փալլուսայ. Քարմի, և գունդն Քարմեայ: ⁶Ասրոն, և գունդն Ասրոնայ* : ⁷Սոքա եւ գունդք Ռուբինի. և եղև հանդէս նոցա. քառասուն և երեք հազարք եւթն հարիւր և երեսուն* : ⁸Եւ որդիք Փալլուսայ Եղիաբ. ⁹և որդիք Եղիաբու՝ Յամուէլ, և Դաթան և Աբիրոն. սոքա էին անուանիք ժողովրդեանն. և սոքա եւ՝ որ յարեան ՚ի վերայ Մովսիսի և Ահարոնի ՚ի ժողովրդեանն Կորխայ յարուցելոց հակառակ Տեառն* , ¹⁰և բացեալ երկրի զբերան իւր եկո՛ւլ զնոսա, և զԿորխ՝ մահուամբ ժողովրդեանն իւրոյ. յորժամ եկեր հուր զերկերիւր և գլխունսն. և եղեն ՚ի նշաւակ* : ¹¹Եւ որդիքն Կորխայ ո՛չ մեռան: ¹²Եւ որդիք Շմաւոնի. և գունդք որդւոցն Շմաւոնի, Յամուէլ, և գունդ մի Յամուէլի. Յամին, և գունդ մի Յամինայ. Յաքին, և գունդ մի Յաքինայ. ¹³Չարա, և գունդ մի Չարայի. Մաւուլ, և գունդ մի Մաւուլայ* : ¹⁴Այս եւ գունդք Շմաւոնի ՚ի հանդիսի իւրեանց, քսաններկու հազարք և երեք հարիւր* : ¹⁵Եւ որդիք Յուդայ՝ Էր, և Աւնան, և Սելոն, և Փարէս, և Չարա. և մեռան՝ Էր և Աւնան յերկրին Քանանացւոց: ¹⁶Եւ եղեն որդիք Յուդայի ըստ գնդից իւրեանց. Սելոն, և գունդ մի Սելոնայ. Փարէս, և գունդ մի Փարէսի. Չարա, և գունդ մի Չարայի: ¹⁷Եւ եղեն որդիք Փարէսի. Ասրոն, և գունդ մի Ասրոնի. Յամուէլ, և գունդ մի Յամուէլի: ¹⁸Սոքա՛ եւ գունդք Յուդայ ըստ հանդիսի իւրեանց. եւթանասուն և վեց հազար և հինգ հարիւր: ¹⁹Եւ որդիք Իսաքարու՝ ըստ գնդից իւրեանց. Թովլայ, և գունդ մի Թովլայի. Փուա, և գունդ մի Փուայի. ²⁰Յասուր, և գունդ մի Յասուրայ. Ամրան, և գունդ մի Ամրանայ* : ²¹Սոքա՛ եւ գունդք Իսաքարու ՚ի հանդիսի իւրեանց. վաթսուն և չորք հազարք և երեք հարիւր* : ²²Եւ որդիք Չաբուլոնի՝ ըստ գնդից իւրեանց. Սարեդ, և գունդ մի Սարեդայ. Ալլոն, և գունդ մի Ալլոնի. Ադէլ, և գունդ

* *Յօրինակին.* ՅՌովթնովաբ. և ՚ի լուս՝. Մովաբու: Ուր օրինակ մի ունի՝ յՌաբով Մովաբ: Անունս Երիքով, ՚ի գիրս Թուոց և Երկրորդ Օրինաց, նաև բազում ուրեք ՚ի գիրս Յեսուայ, յօրինակի մերում համաձայնութեամբ այլոց ևս գրչագրաց գրեալ էր՝ Երեքոյ կամ Երիքոյ, Երեքոյի. ըստ որում և մեք համեմատեցաք առ իւրաքանչիւր տեղիս:

* *Ոմանք.* Եւ գունդն Ասրամայ:

* *Ոսկան.* Եւ երեք հազարք և չորս, և երեսուն:

* *Այլք.* Յարուցելոյ հակառակ Տեառն:

* *Ոմանք.* Մահուամբ իւրով ժողովրդեամբն... զերկերիւրսն և գլխ՝:

* *Ոմանք.* փոխանակ Մաւուլայ ունին, Մաւուդ. և գունդ մի Մաւուդայ:

* *Օրինակ մի.* Ի հանդիսէ իւրեանց. քսան և երկու հազար և երկերիւր:

* *Ոմանք.* Յասուր և գունդ մի Յասուրայ:

* *Ոմանք.* Վաթսուն և չորք հազար և երկերիւր:

մի Աղէլայ: ²⁷Սոքա՛ են գունդք Ջարուղոնի՝ ի հանդիսէ իւրեանց. վաթսուն հազար և հինգ հարիւր: ¹⁵Եւ որդիք Գադայ՝ ըստ գնդից իւրեանց. Սափոն, և գունդ մի Սափոնայ. Անգի, և գունդ մի Անգեայ. Սունի, և գունդ մի Սունեայ. ¹⁶Ազենի, և գունդ մի Ազենեայ. Ադդի, և գունդ մի Ադդեայ. ¹⁷Արուադի, և գունդն Արուադեայ. Արիէլ, և գունդ մի Արիէլի*։ ¹⁸Սոքա՛ են գունդք որդւոցն Գադայ՝ ի հանդիսի իւրեանց. քառասուն և չորք հազարք և հինգ հարիւր: ⁴⁴Եւ որդիքն Ասերայ՝ ըստ գնդից իւրեանց. Յամին, և գունդ մի Յամինայ. Յեսու, և գունդն Յեսուայ. Բարա, և գունդ մի Բարայի: ⁴⁵Քոբեր, և գունդ մի Քոբերայ. Մելքիէլ, և գունդն Մելքիէլի*։ ⁴⁶Եւ անուն դստերն Ասերայ՝ Սարա: ⁴⁷Սոքա՛ են գունդք Ասերայ՝ ի հանդիսէ իւրեանց. քառասուն և երեք հազարք և վեց հարիւր: ²⁸Եւ որդիք Յովսեփայ ըստ գնդից իւրեանց՝ Մանասէ և Եփրեմ*։ ²⁹Եւ որդիք Մանասէի. Մաքիր, և գունդ մի Մաքիրայ. և Մաքիր ծնաւ զԳաղաադ. Գաղաադ, և գունդ մի Գաղաադու: ³⁰Եւ որդիք Գաղաադու. Աքիեզեր, և գունդ մի Աքիեզերայ. Քեղէզ, և գունդ մի Քեղեզեայ. ³¹Եսրիէլ, և գունդ մի Եսրիէլի. Սիւքեմ, և գունդ մի Սիւքեմայ. ³²Սիմայի, և գունդ մի Սիմայեայ. Ոփեր, և գունդ մի Ոփերայ*։ ³³Եւ Սաղպաադայ որդւոյ Ոփերայ ո՛չ եղեն ուստերք, այլ դստերք. և անուն դստերացն Սաղպաադայ. Մաադա, և Նուա, և Էզդա, և Մեղքա, և Թերսա*։ ³⁴Այս գունդք Մանասէի ի հանդիսէ իւրեանց. յիսուն և երկու հազարք և եւթն հարիւր: ³⁵Եւ այս են որդիք Եփրեմայ. Սուտադա, և գունդ մի Սուտադայի. Տանաք, և գունդ մի Տանաքայ: ³⁶Սոքա՛ են որդիք Սուտադայի. Եղեն, և գունդ մի Եղենայ: ³⁷Այս գունդք Եփրեմայ ի հանդիսէ իւրեանց. երեսուն և երեք հազարք և հինգ հարիւր: Սոքա՛ են գունդք Յովսեփայ ըստ գնդից իւրեանց*։ ³⁸Եւ որդիք Բենիամինի ըստ գնդից իւրեանց. Բալէ, և գունդ մի Բալեայ. Ասբեր և գունդ մի Ասբերայ. Յաքերան, և գունդ մի Յաքերանայ*։ ³⁹Սափան, և գունդ մի Սափանայ: ⁴⁰Եւ եղեն որդիք Բալեայ. Ադար և Նոյեման, և գունդ մի Նոյեմանեայ: ⁴¹Այս որդիք Բենիամինի, ըստ գնդից իւրեանց ի հանդիսէ իւրեանց. երեսուն և հինգ հազար և հինգ հարիւր*։ ⁴²Եւ որդիք Դանայ՝ ըստ գնդից իւրեանց. Սամի, և գունդ մի Սամեայ. այս են գունդք Դանայ ըստ գնդից իւրեանց: ⁴³Ամենայն գունդք Սամեայ ըստ հանդիսի իւրեանց, վաթսուն և չորք հազարք և վեց հարիւր: ⁴⁸Եւ որդիք Նեփթաղիմայ՝ ըստ գնդից իւրեանց. Ասէլ, և գունդ մի Ասէլի. Գաւնի, և գունդ մի Գաւնեայ. ⁴⁹Յասեր, և գունդ մի Յասերայ. Մելլեմ, և գունդ մի Մելլեմայ*։ ⁵⁰Այս գունդք Նեփթաղիմայ ի հանդիսէ իւրեանց, քառասուն հազար և երեք հարիւր*։ ⁵¹Այս է հանդէս որդւոցն Իսրայէլի. վեց հարիւր հազար, և հազար մի. և եւթն հարիւր և երեսուն: ⁵²Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁵³Դոցա՛ բաժանեսցի երկիրն ժառանգել ըստ թւոյ անուանց. ⁵⁴ըստ բազմաց՝ բազմացուսցես՝ զժառանգութիւնն. և ըստ սակաւուց՝ սակաւացուսցես

* Ոմանք. Եւ գունդն Արիէլի:

* Ոմանք. Եւ գունդ մի Մելքիէլի:

* Բազումք. Եւ որդիք Յովսեփայ Մանասէ և Եփ*:

* Յօրինակին. Եւ գունդն Ոփերայ:

* Այլք. Եւ անուանք դստերացն:

* Այլք. Երեսուն և երկու հազարք, և հինգ հար*:

* Ոմանք. Ասիբեր և գունդ մի Ասիբերեայ, Յաքիրան:

* Ոմանք. Այս են որդիք Բե*:

* Ոմանք. Յեսսեր, և գունդ մի Յեսսերայ:

* Ոսկան. Քառասուն և հինգ հազար և երեք հարիւր:

զժառանգութիւնն իւրեանց. իւրաքանչիւր որպէս և անցին ՚ի հանդիսի՝ տացի՝ ժառանգութիւնն իւրեանց*։ ⁵⁵Վիճակօք ժառանգեսցի երկիրն, ըստ անուանց, ըստ ցեղից նահապետաց իւրեանց ժառանգեսցեն*։ ⁵⁶Վիճակաւ բաժանեսցեն զժառանգութիւն նոցա ՚ի մէջ բազմաց և սակաւուց։ ⁵⁷Եւ որդիքն Ղևեայ ըստ գնդից իւրեանց. Գեթսոն, և գունդ մի Գեթսոնի. Կահաթ, և գունդ մի Կահաթու. Մերարի, և գունդ մի Մերարեայ*։ ⁵⁸Սոքա՛ և գունդք որդւոց Ղևեայ. գունդ մի Ղուբինի, և գունդ մի Քեբրոնի. և գունդ մի Կորխ. և գունդ մի Մուսի։ Եւ Կահաթ ծնաւ զԱմրամ*։ ⁵⁹և անուն կնոջ նորա Յովքաբեթ՝ դուստր Ղևեայ. որ ծնաւ զսոսա Ղևեայ յեգիպտոս. և ծնաւ Ամրամայ զԱհարոն, և զՄովսէս, և զՄարիամ քոյր նոցա։ ⁶⁰Եւ ծնան Ահարոնի Նաբադ և Աբիուդ, Եղիազար և Իթամար*։ ⁶¹Եւ մեռան Նաբադ և Աբիուդ, ՚ի մատուցանել իւրեանց զհուրն օտար առաջի Տեառն յանապատին Սինայի։ ⁶²Եւ եղեն ՚ի հանդիսէն իւրեանց քսան և երեք հազարք. ամենայն արու յամսօրէից և ՚ի վեր. քանզի ո՛չ անցին ՚ի հանդիսի ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի, զի ո՛չ էր նոցա տուեալ վիճակ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի։ ⁶³Եւ այս է հանդէս Մովսիսի և Եղիազարու քահանայի. որ արարին հանդէս որդւոցն Իսրայէլի յԹաբուօ Մովսիսու առ Յորդանանու՝ յանդիման Երեքոյի*։ ⁶⁴Եւ ընդ նոսա մի այր ո՛չ գոյր յանցելոցն ՚ի հանդիսի ՚ի Մովսիսէ և յԱհարոնէ՝ զոր արարին հանդէս որդւոցն Իսրայէլի յանապատին Սինայի*։ ⁶⁵Քանզի ասաց զնոցանէ Տէր՝ թէ մահու՛ մեռանիցին յանապատին, և ո՛չ մնաց ՚ի նոցանէ և ո՛չ մի. բայց Քաղէբ որդի Յեփոնեայ, և Յեսու որդի Նաւեայ։

27

Գլուխ ԻԷ

Ծ ¹Եւ մատեան դստերքն Սաղպաադու որդւոյ Ոփերայ, որդւոյ Գաղաադու, որդւոյ Մաքիրայ, ՚ի գնդէն Մանասէի որդւոցն Յովսեփայ. և այս են անուանք նոցա. Մաաղա, և Նուա, և Եզղա, և Մեղքա, և Թերսա։ ²Կացին առաջի Մովսիսի և առաջի Եղիազարու քահանայի և առաջի իշխանացն, և առաջի ամենայն ժողովրդեանն ՚ի դրան խորանին վկայութեան՝ և ասեն*։ ³Հայր մեր մեռաւ յանապատի անդ. և նա ո՛չ էր ՚ի մէջ ժողովրդեանն գումարելոց առաջի Տեառն ՚ի ժողովրդեանն Կորխայ, որ վասն մեղաց իւրոց մեռաւ. և որդիք՝ ո՛չ եղեն նորա*։ ⁴Եւ արդ՝ մի՛ ջնջեսցի անուն հօր մերոյ ՚ի միջոյ ցեղի իւրոյ՝ վասն զի ո՛չ գոյր նորա որդի. տո՛ւք մեզ ժառանգութիւն ՚ի մէջ եղբարց հօր մերոյ։ ⁵Եւ մատոյց Մովսէս զդատաստան նոցա առաջի Տեառն։ ⁶Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ⁷Ուղիղ խօսեցան դստերքն Սաղպաադու. տալով տացեն նոցա կալուածս ժառանգութեան ՚ի մէջ եղբարց հօր իւրեանց, և դիցես զվիճակ հօրն իւրեանց

* Ոմանք. Եւ ըստ սակաւաց սակաւա՛։

* Ոմանք յաւելուն. Ըստ անուանց իւրեանց ըստ ցեղից։

* Յօրինակին. Եւ գունդմ Կահաթու։

* Ոմանք. Գունդ մի Ղոբենի.. և գունդ մի Կորխայ։

* Ոմանք. Եւ ծնաւ Ահարոնի... և Եղիազար։

* Ոմանք. Առ Յորդանանաւ՝ յանդիման Երիքովի։

* Ոմանք. Յանցանելոցն ՚ի հանդիսի... որ արարին հանդէս։

* Ոմանք. Ի՛ դուռն խորանին վկ՛։

* Ոմանք. Եւ որդիք ո՛չ եղեն նորա։

զնորք*։⁸ Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեցիս և ասացես. Այր որ՝ եթէ մեռանիցի, և ուստր ո՛չ գուցէ նորա, տացէ՛ զժառանգութիւն իւր դստեր իւրում.⁹ և եթէ ո՛չ գուցէ նորա դուստր, տաջի՛ք զժառանգութիւն նորա եղբոր իւրում։¹⁰ Եւ եթէ ո՛չ գուցեն նորա եղբարք, տաջի՛ք զժառանգութիւն նորա հօրեղբոր իւրում*։¹¹ և եթէ ո՛չ գուցեն եղբարք հօր նորա, տաջի՛ք զժառանգութիւնն ընտանոյ մերձաւորի նորա. ՚ի ցեղէ՛ն նորա ժառանգեսցէ զնորայն. և եղիցի ա՛յդ որդւոցն Իսրայէլի իրաւունք դատաստանի, որպէս հրաման ետ Տէր Մովսիսի*։

ԾԱ¹² Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ե՛լ դու ՚ի լեառնն որ յայնկոյս է՝ ՚ի լեա՛ռն ՚ի Նաբաւ՝ և տե՛ս զերկիրն Քանանացւոց զոր ե՛ս տաց որդւոցն Իսրայէլի ՚ի կալուած.¹³ Եսցես՛ս զնա՝ և յաւելցիս առ ժողովուրդ քո և դո՛ւ, որպէս յաւելաւ Ահարոն եղբայր քո ՚ի Յովր լերինն։¹⁴ Վասն՛ զի անցէք զբանիւ իմով յանապատին ՚ի Սին. ՚ի հակառակել ժողովրդեանն առ ՚ի սուրբ առնելոյ զիս. և ո՛չ արարէք զիս սուրբ ՚ի վերայ ջրոցն յանդիման նոցա. այ՛ն է Ջուր հակառակութեան յանապատին ՚ի Սին*։¹⁵ Եւ ասէ Մովսէս ցՏէր. ¹⁶Տեսցէ՛ Տէր Աստուած հոգւոց և ամենայն մարմնոյ՝ ա՛յր ՚ի վերայ ժողովրդեանս այսորիկ, ¹⁷որ ելանիցէ առաջի սոցա, և որ հանիցէ և մուծանիցէ զսոսա. և մի՛ լինիցի ժողովուրդս Տեառն իբրև զոչխար՝ որոց ո՛չ իցէ հովիւ*։¹⁸ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. Ա՛ռ դու քեզ զՅեսու որդի Նաւեայ՝ զայր յորում գո՛յ Յոզի, և դիցես զձեռս քո ՚ի վերայ նորա*։¹⁹ և կացուցես զնա յանդիման Եղիազարու քահանայի. և պատուիրեսցես վասն նորա յանդիման նոցա*։²⁰ և տացես ՚ի փառաց քոց ՚ի վերայ նորա, զի լուիցեն նմա որդիքն Իսրայէլի։²¹ Եւ կացցէ առաջի Եղիազարու քահանայի, և հարցցեն ՚ի նմանէ զիրաւունս յայտնութեանց առաջի Տեառն. ըստ բանի բերանոյ նորա ելանիցեն, և ըստ բանի բերանոյ նորա մտանիցեն. ինքն և որդիքն Իսրայէլի միաբան, և ամենայն ժողովուրդն*։²² Եւ արար Մովսէս որպէս պատուիրեաց նմա Տէր. և առեալ զՅեսու կացոյց առաջի Եղիազարու որդւոյ Ահարոնի քահանայի, և առաջի ամենայն ժողովրդեանն.²³ և եղ զձեռս իւր ՚ի վերայ նորա, և արար զնա յանձն՝ որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի։

28

Գլուխ ԻԸ

ԾԲ¹ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Պատուիրեա՛ որդւոցն Իսրայէլի, և ասացես ցնոսա. Չպատարագս իմ և զդահմունս իմ, և զընծայս իմ ՚ի հոտ անուշից՝ զգուշասցիք մատուցանել ՚ի տօնս իմ*։³ Եւ ասացես զնոսա. Ա՛յս են ընծայք զոր մատուցանիցէք Տեառն. գառինս երկուս անարատս հանապազ

* Ոմանք. կալուած ժառանգութեան։

* Ոմանք. Յօրեղբոր իւրում։

* Ոմանք. ՚ի լեառն Նաբաւու կամ Նաբու։

* Ոմանք. ՚ի վերայ ջրոյն յանդիման նոցա։

* Ոմանք. ժողովուրդս իբրև զոչխարս, որոց։

* Ոմանք. Ա՛ռ դու առ քեզ զՅեսու։

* Օրինակ մի յաւելու. Եւ պատուիրեսցես նմա յանդիման ամենայն ժողովրդեանն. և պատուիրեսցես վասն նորա յանդիման։

* Ոմանք. Եւ կացցեն առաջի Եղիազա՛։

* Ոմանք. Եւ զդահմունս իմ, և զընծայս։

յողջակէ՞զ անպակաս. ⁴զմի գառնն արասցեն ընդ առաւօտս, և գերկորդ գառնն արասցես ընդ երեկոյս: ⁵Եւ արասցես տասանորդ գրուի նաշիի զանգեալ իւղով մզելով՝ չորրորդաւ դորակի*, ⁶ողջակէ՞զ անպակասութեան. որպէս լինէր՝ ի լերինն Սինայի, ՚ի հո՛տ անուշից Տեառն*: ⁷Եւ նուէր նորուն չորրորդ դորակին առ մի գառն ՚ի սրբութեանն. և նուիրեսցեն զնուէրն ընպելի Տեառն: ⁸Եւ զգառնն երկորդ արասցես ընդ երեկոյս. ըստ զոհին իւրում և ըստ նուիրին իւրում արասցիք ՚ի հո՛տ անուշից Տեառն: ⁹Եւ յաւուրն շաբաթուց մատուցիք երկուս գառինս տարևորս անարատս, և երկուս տասանորդս նաշիւոյ զանգելոյ իւղով ՚ի զոհ. ¹⁰և զնուէր ողջակիզին շաբաթուց ՚ի շաբաթս, և ՚ի վերայ հանապազորդ ողջակիզին, և զնորուն նուէր*: ¹¹Եւ յամսամուտս մատուցիք ողջակէզս Տեառն, զուարակս երկուս յանդւոյ, և խոյ մի. գառինս տարևորս եւթն*. ¹²և երիս տասանորդս նաշիւոյ զանգելոյ իւղով առ զուարակ մի. և երկուս տասանորդս նաշիւոյ զանգեալ իւղով առ խոյ մի. ¹³և տասանորդ նաշիւոյ զանգեալ իւղով առ գառն մի, ՚ի հո՛տ անուշից ընծայ Տեառն*: ¹⁴Եւ նուէր նոցա կէս դորակին գինւոյ լիցի առ զուարակ մի, և երրորդ դորակին լիցի առ խոյ մի, և չորրորդ դորակին լիցի առ գառն մի. այս ողջակէզք իցեն ամիս յամսոյ՝ յամիսս տարւոյն*: ¹⁵Եւ նոխա՞զ մի յայծեաց Տեառն, վասն մեղաց իւրեանց ՚ի վերայ հանապազորդ ողջակիզին առնիցի, և նուէրն նորա: ¹⁶Եւ յամսեանն առաջնում, ՚ի չորեքտասաներորդում աւուր ամսեանն՝ զատի՛կ տեառն. ¹⁷և ՚ի հնգետասաներորդում աւուր նորուն ամսոյ՝ տօն. զեւթն օր բաղարջ կերիցիք. ¹⁸և օրն առաջին կոչեցեալ սո՛ւրբ լիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք*: ¹⁹Եւ մատուցիք ողջակէզս և ընծայս Տեառն. զուարակս երկուս յանդւոյ, և խոյ մի. գառինս տարևորս անարատս եւթն: ²⁰Եւ զո՛հ նոցա, նաշիի զանգեալ իւղով՝ երիս տասանորդս առ զուարակ մի. և երկուս տասանորդս առ խոյ մի. ²¹և տասանորդ տասանորդ արասցես առ գառն մի եւթանեցունց գառանցն*. ²²և նոխա՞զ մի յայծեաց վասն մեղաց, քաւել՝ վասն նոցա. ²³թո՛ղ զհանապազորդ առաւօտին ողջակէզն, որ է ողջակէզ յաճախութեան: ²⁴Ձայս ըստ այսմ օրինակի արասցիք աւուր աւուր՝ զեւթն օր, պատարագ ողջակէզ ՚ի հոտ անուշից Տեառն. ՚ի վերայ հանապազորդ ողջակիզին առնիցէք զնուէր նորին*: ²⁵Եւ օրն եւթներորդ կոչեցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք ՚ի նմա: ²⁶Եւ յաւուրն նուիրեաց յորժամ մատուցանիցէք զոհ Տեառն զեւթներորդացն, կոչեցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք*: ²⁷Եւ մատուցիք ողջակէզս ՚ի հոտ անուշից Տեառն. զուարակս երկուս յանդւոյ և խոյ մի, գառինս տարևորս անարատս եւթն: ²⁸Եւ զո՛հ նոցա նաշիի զանգեալ իւղով երե՛ք տասանորդք առ

* *Ոմանք.* Չորրորդ դորակի:

* *Ոմանք.* Որպէս լինին ՚ի լերինն Սինայ:

* *Ոմանք.* Ողջակիզին ՚ի զոհ շաբաթուց ՚ի շաբաթս ՚ի վերայ:

* *Ոմանք յաւելուն.* Տարևորս անարատս եւթն:

* *Ոմանք.* Ի զոհ անուշից ընծայ Տեառն:

* *Ոմանք.* Եւ չորրորդ դորակին գինւոյ լիցի:

* *Ոմանք.* Եւ օրն առաջին սուրբ կոչեցեալ եղիցի ձեզ... մի՛ գործիցէք ՚ի նմա:

* *Ոսկան.* Եւ տասանորդ տասանորդի:

* *Ոմանք.* Աւուր յաւուր: *Կամ՝* աւուր զաւուր... առնիցէք զնուէրն նուիրին:

* *Օրինակ մի միայն՝ հուպ մերումս դնէ՝* յաւուրն նուիրաց. *իսկ այլք ունին՝* նորեաց: *Ոմանք յաւելուն.* Մի՛ գործիցէք ՚ի նմա:

զուարակ մի, և երկու տասանորդք առ խոյ մի, ²⁹և տասանորդ տասանորդ առ գառն մի, եւթանեցունց գառանցն* ³⁰և նոխազ մի յայծեաց վասն մեղաց, քաւել վասն ձեր. թո՛ղ զհանապազորդ ողջակէզն, ³¹և զզոհս նոցա զոր առնիցէք, և զնուէրս նոցա. և անարա՛տք լինիցին ձեզ:

29

Գլուխ ԻԹ

¹Եւ յամսեանն եւթներորդի որ օր մի իցէ ամսոյն, կոչեցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք. օ՛ր նշանակելոյ եղիցի ձեզ* ²Եւ արասջիք ողջակէզս ՚ի հոտ անուշից Տեառն. զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառինս տարևորս անարատս եւթն*. ³և զո՛հ նոցա նաշիի զանգեալ իւղով, երի՛ս տասանորդս առ զուարակ մի, և երկուս տասանորդս առ խոյ մի. ⁴և տասանորդ տասանորդ առ գառն մի եւթանեցունց գառանցն*. ⁵և նոխազ մի յայծեաց վասն մեղաց՝ քաւել վասն ձեր: ⁶Թո՛ղ զողջակէզն ամսամտիցն, և զոհք նոցա, և նուէրք իւեանց ըստ պայմանի՛ իւրեանց ՚ի հոտ անուշից Տեառն: ⁷Եւ ՚ի տասներորդի նորին ամսոյ, կոչեցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ, և լլկեսջիք զանձինս ձեր. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք: ⁸Մատուսջիք ողջակէզս ՚ի հոտ անուշից ընծայս Տեառն. զուարակ մի յանդւոյ, խոյ մի, գառինս տարևորս անարատս եւթն. ⁹և զոհ նոցա նաշիի զանգեալ իւղով, երիս տասանորդս առ զուարակ մի, և երկուս տասանորդս առ խոյ մի, ¹⁰և տասանորդ տասանորդ առ գառն մի, եւթանեցունց գառանցն. ¹¹և նոխազ մի յայծեաց վասն մեղաց՝ քաւել վասն ձեր. թո՛ղ զվասն մեղացն և քաւութեան, և զողջակէզսն հանապազորդս՝ և զզոհս նորա. և զնուէր նորին ըստ պայմանի իւրում ՚ի հոտ անուշից ընծայ՝ Տեառն: ¹²Եւ յաւուրն հնգետասաներորդի նորին եւթներորդի ամսոյ, կոչեցեալ սո՛ւրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք, և տօնեսջիք զնա տօն Տեառն զեւթն օր*: ¹³Եւ մատուսջիք ողջակէզս ընծայս ՚ի հոտ անուշից Տեառն: Յաւուրն առաջնում զուարակս յանդւոյ երեքտասան. խոյս երկուս. գառինս տարևորս չորեքտասան, անարա՛տք լինիցին. ¹⁴և զոհք նոցա նաշիի զանգեալ իւղով, երիս տասանորդս առ զուարակ մի, երեքտասանեցունց զուարակացն. և երկուս տասանորդս առ խոյ մի, երկոցունց խոյոցն*. ¹⁵և տասանորդ տասանորդ առ մի մի գառն չորեքտասանեցունց գառանցն. ¹⁶և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. թո՛ղ զհանապազորդ ողջակէզս և զզոհս և զնուէրս նոցա: ¹⁷Եւ յաւուրն երկրորդի զուարակս երկուտասան, խոյս երկուս, գառինս տարևորս անարատս չորեքտասան. ¹⁸և զոհք նոցա՝ և նուէրք զուարակին, և խոյոցն, և գառանցն՝ ըստ թուո՛յ նոցա և ըստ պայմանի իւրեանց*. ¹⁹և նոխազ մի յայծեաց վասն

* Ոսկան. Եւ տասանորդ տասանորդի:

* Ոմանք ՚ի բնաբանի ունին՝ Օր շաբաթոյ, կամ շաբաթելոյ եղիցի ձեզ. և ՚ի լուսանցս դնեն՝ օր նշանակոյ:

* Բազումք. Եւ արասջիք ողջակէզս ՚ի հոտ:

* Ոմանք. Եւ տասանորդս տասանորդս առ:

* Ոմանք. Եւ յաւուրն հնգետասաներորդում նորին եւթն:

* Ոմանք. Երեքտասանորդս առ զուարակ մի՝ երեքտասանեցունց զուարակացն, և եր՞:

* Ոմանք. Եւ նուէրք զուարակացն և խոյոց:

մեղաց. թո՛ղ զհանապազորդ ողջակէզն, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց*:
²⁰Եւ յաւուրն էրրորդի զուարա՛կս մետասան, և խոյս երկուս. գառինս տարևորս
անարատս չորեքտասան. ²¹և զոհ նոցա և նուէր զուարակացն, և խոյոցն, և
գառանց, ըստ թուոյ նոցա*. ²²և քօշ մի յայծեաց վասն մեղաց. թո՛ղ
զհանապազորդ ողջակէզս նոցա, և զնուէրս իւրեանց*:
²³Եւ յաւուրն չորրորդի զուարակս տասն, և խոյս երկուս. գառինս տարևորս
անարատս չորեքտասան. ²⁴և զոհք նոցա և նուէրք զուարակացն, և խոյոցն, և գառանց,
ըստ թուոյ նոցա և ըստ պայմանի իւրեանց. ²⁵և նոխազ մի յայծեաց վասն մեղաց.
թո՛ղ զհանապազորդ ողջակէզսն, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց:
²⁶Եւ յաւուրն հինգերորդի զուարակս ինն, և խոյս երկուս, որոջս տարևորս
անարատս չորեքտասան. ²⁷և զոհք նոցա և նուէրք զուարակացն և խոյոց, և գառանց,
ըստ թուոյ նոցա, և ըստ պայմանի իւրեանց*. ²⁸և նոխազ մի յայծեաց վասն մեղաց.
թո՛ղ զհանապազորդ ողջակէզսն, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց:
²⁹Եւ յաւուրն վեցերորդի զուարակս ութ, խոյս երկուս, գառինս տարևորս
անարատս չորեքտասան. ³⁰և զոհք նոցա և նուէրք զուարակացն, և խոյոց, և գառանց,
ըստ թուոյ նոցա, և ըստ պայմանի իւրեանց. ³¹և նոխազ մի յայծեաց վասն մեղաց.
թո՛ղ զհանապազորդ ողջակէզսն, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց:
³²Եւ յաւուրն եւթներորդի զուարակս եւթն, խոյս երկուս, գառինս տարևորս
անարատս չորեքտասան, ³³և զոհք նոցա, և նուէրք զուարակացն, և խոյոց, և
գառանց, ըստ թուոյ նոցա, և ըստ պայմանի իւրեանց. ³⁴և նոխազ մի յայծեաց
վասն մեղաց. թո՛ղ զհանապազորդ ողջակէզսն. և զգոհս նոցա, և զնուէրս
իւրեանց:
³⁵Եւ յաւուրն ութերորդի ե՛լք լիցին ձեզ. զամենայն գործ
սպասաւորութեան մի՛ գործիցէք ՚ի սմա:
³⁶Եւ մատուցիք ողջակէզս ՚ի հո՛տ
անուշից ընծայս Տեառն, զուարակ մի, խոյ մի, գառինս տարևորս
անարատս եւթն. ³⁷և զոհք նոցա և նուէրք զուարակին, և խոյի, և գառանց
ըստ թուոյ նոցա՝ և ըստ պայմանի իւրեանց. ³⁸և նոխազ մի յայծեաց վասն մեղաց.
թո՛ղ զհանապազորդ ողջակէզսն, և զգոհս նոցա, և զնուէրս իւրեանց:
³⁹Ձա՛յս առնիցէք ՚ի տօնս ձեր Տեառն. թո՛ղ զուխտսն ձեր, և զողջակէզսն
ձեր, և զկամայականսն ձեր, և զգոհսն ձեր, և զնուէրսն ձեր, և զփրկութիւնսն
ձեր*:

30

Գլուխ L

ԾԳ ¹Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի՝ որպէս պատուիրեաց Տէր
Մովսիսի: ²Եւ խօսեցաւ Մովսէս ընդ իշխանս որդւոցն Իսրայէլի՝ և ասէ. Այս բան
է՛ զոր հրամայեաց Տէր*. ³Այր ոք այր՝ եթ ուխտիցէ ուխտ Տեառն, կամ
երդնուցու երդումն սահմանաւ, կամ սահմանիցէ ինչ վասն անձին իւրոյ, մի՛
արասցէ ապախտ զբան իւր. այլ զամենայն ինչ որ ելանիցէ ՚ի բերանոյ իւրմէ՛

* Ոսկան. Զհանապազորդ ողջակէզսն, և:

* Ոսկան յաւելու. Ըստ թուոյ նոցա, և ըստ պայմանի իւրեանց:

* Ոմանք յաւելուն. Ողջակէզս և զգոհս նոցա և զնուէրս իւ՞:

* Ոմանք. Եւ նուէրք զուարակաց նոցա և խոյոց:

* Ոմանք. Եւ զփրկութիւնսն ձեր:

* Ոմանք. Այս բան է զոր հրաման ետ Տէր:

արասցէ*։ ⁴Եւ եթէ կի՛ն ոք՝ ուխտիցէ ուխտ Տեառն, կամ սահմանիցէ սահման ինչ ՚ի տան հօր իւրոյ ՚ի մանկութեան իւրում։ ⁵Եւ լսիցէ հայր նորա զուխտս նորա, և զսահմանս նորա զոր սահմանեաց զանձնէ իւրմէ, և լռեսցէ նմա հայր նորա, կացցեն ամենայն ուխտք նորա. և ամենայն սահմանքն զոր սահմանեաց զանձնէ իւրմէ՝ հաստատեսցին նմա*։ ⁶Եւ եթէ ո՛չ առնուցու յանձն հայր նորա՝ յաւուր յորում լսիցէ զամենայն ուխտս նորա, և զսահմանսն զոր սահմանեաց զանձնէ իւրմէ, մի՛ կացցեն. և Տէր անպարտ արասցէ զնա, զի ո՛չ առ յանձն հայր նորա։ ⁷Ապա թէ լինելով լինիցի աճն, և ուխտք իւր ՚ի նմա՛ իցեն ըստ ուխտելոյ շրթանց իւրոց, զոր սահմանեաց զանձնէ իւրմէ։ ⁸Եւ լսիցէ այրն նորա, և լռիցէ նմա յաւուր յորում լսիցէ, այնպէս կացցեն ամենայն ուխտք նորա, և սահմանքն նորա՝ զոր սահմանեաց զանձնէ իւրմէ, հաստատեսցին։ ⁹Ապա թէ ո՛չ առնուցու յանձն այր նորա՝ յաւուր յորում լսիցեն, ամենայն ուխտքն նորա և ամենայն սահմանքն զոր սահմանեաց զանձնէ իւրմէ, մի՛ հաստատեսցին. զի այրն ո՛չ առ յանձն. և Տէր անպարտ արասցէ զնա*։ ¹⁰Եւ ուխտք այրո՛յ կամ հանելոյ, զոր ուխտիցէ զանձնէ իւրմէ՝ հաստատեսցին նմա։ ¹¹Ապա թէ ՚ի տան առն իւրոյ իցեն ուխտք նորա, կամ սահմանն զոր սահմանիցէ երդմամբ զանձն իւրմէ. ¹²Եւ լսիցէ այր նորա և լռիցէ նմա, և առնուցու նմա յանձն, կացցեն ամենայն ուխտք նորա. և ամենայն սահմանք նորա՝ զոր սահմանեաց զանձնէ իւրմէ՝ հաստատեսցին նմա*։ ¹³Եւ եթէ խափանելով խափանեսցէ՛ այրն նորա՝ յորում աւուր լսիցէ զամենայն ինչ որ ելանիցէ ՚ի շրթանց նորա՝ ըստ ուխտի՛ց նորա և ըստ սահմանացն նորա զանձնէ իւրմէ, մի՛ հաստատեսցի նմա. զի այր նորա զանցո՛յց. և Տէր անպարտ արասցէ զնա։ ¹⁴Ձամենայն ուխտ, և զամենայն երդումն կապոյ առ լլկելոյ՛ զանձն, այր նորա հաստատեսցէ նմա, և այր նորա զանցուցէ*։ ¹⁵Եւ եթէ լռելով լռեսցէ նմա. օրըստօրէ հաստատեսցէ՛ նմա զամենայն ուխտսն իւր, և զսահմանսն կացուցէ՛ նմա. վասն զի լռեաց նմա յաւուրն յորում լուաւ*։ ¹⁶Եւ եթէ զանցուցանելով զանցուցէ՛ այրն նորա յետ աւուրն յորում լուաւ, ընկալցի՛ զմեղս իւր։ ¹⁷Այս իրաւունք են զոր պատուիրեաց Տէր Մովսիսի, ընդ այր և ընդ կին իւր. ընդ հայր և ընդ դուստր իւր՝ ՚ի մանկութեանն ՚ի տան հօր իւրոյ*։

31

Գլուխ ԼԱ

ԾՂ 1Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ*։ ²Ա՛ռ զվրէժ որդւոցդ Իսրայէլի ՚ի Մադիանացւոցն. և ասպա յաւելցիս ՚ի ժողովուրդ քո*։ ³Եւ խօսեցաւ Մովսէս ընդ ժողովրդեանն՝ և ասէ. Վառեցէ՛ք ՚ի ձէնջ արս՝ ճակատել առաջի Տեառն ՚ի վերայ

* Ոմանք. Այր որ ուխտիցէ ուխտ Տեառն.. և սահմանիցէ:

* Ոմանք. Եւ լռեսցէ նմա հայրն, կացցեն ամենայն... հաստատեսցի նմա:

* Ոսկան. Յաւուր յորում լսիցին ամենայն: Ոմանք. Այրն ո՛չ առ նմա յանձն:

* Ոմանք. Եւ լռեսցէ, կամ լռեսցի նմա. և ոմանք. և լուիցէ նմա:

* Ոմանք. Առ ՚ի լլկելոյ զանձն:

* Ոմանք. Եւ զսահմանսն իւր կացուցէ նմա:

* Ոմանք. յաւելու. Ընդ հայր և ընդ մայր, և ընդ դուստր իւր ՚ի մանկութեան ՚ի տան:

* Այլք. Եւ խօսեցաւ Տէր:

* Ոմանք. ՚ի Մադիանացւոց անտի:

Մադիամու. հատուցանել զվրժ՝ ՚ի Տեառնէ Մադիամու*.⁴ Կազար այր ՚ի ցեղէ, յամենայն ցեղիցն Իսրայէլի, առաքեցէք տալ պատերազմ: ⁵Եւ համարեցան ՚ի հազարաւորացն Իսրայէլի հազար այր ՚ի ցեղէ. երկուտասան հազար վառեալ ՚ի պատերազմ: ⁶Եւ արձակեաց զնոսա Մովսէս, հազար այր ՚ի ցեղէ հանդերձ զօրու իւրեանց. և զՓենէէս որդի Եղիազարու որդւոյ Ահարոնի քահանայի, և զսպասն սրբութեան, և փողքն ազդեցութեան ՚ի ձեռս նոցա*:⁷ Եւ ճակատեցան ընդդէմ Մադիանացւոցն. որպէս և հրամայեաց Տէր Մովսիսի: Եւ կոտորեցին զամենայն արու*,⁸ և զթագաւորսն Մադիանացւոց կոտորեցին հանդերձ վիրաւորօք նոցա. և զԵւին, և զՍուր, և զԲոկոն, և զՈւր, և զՌոբոք, զհինգ թագաւորս Մադիամու. և զԲաղասան որդի Բեովրայ սպանին սրով, հանդերձ վիրաւորօք նոցա: ⁹Եւ զկանայս Մադիամու, և զաղիսն նոցա, և զանասուն նոցա, և զամենայն ստացուածս նոցա, և զզօրս նոցա առին յաւարի*:¹⁰ Եւ զամենայն քաղաքս նոցա տամբք իւրեանց, և զաւանս նոցա հրձիգ արարին.¹¹ և առին զամենայն աւար նոցա. և զամենայն կապուտ նոցա ՚ի մարդոյ մինչև յանասուն: ¹²Եւ ածին առ Մովսէս և առ Եղիազար քահանայ, և առ ամենայն որդիսն Իսրայէլի, զգերին և զկապուտ և զաւար բանակին յՌաբովթ Մովաբ, որ է յանդիման Երեքոյի առ եզերք Յորդանանու: ¹³Եւ ելին Մովսէս և Եղիազար քահանայ, և ամենայն իշխանք ժողովրդեանն ընդ առաջ նոցա արտաքոյ բանակին: ¹⁴Եւ բարկացաւ Մովսէս ՚ի վերայ ոստիկանաց զօրուն՝ հազարապետաց և հարիւրապետաց, եկելոց ՚ի ճակատէ պատերազմին: ¹⁵Եւ ասէ ցնոսա Մովսէս. Ընդ՞ որ ապրեցուցէք զամենայն էգ.¹⁶ զի նոքա՛ էին որդւոցն Իսրայէլի ըստ բանիցն Բաղասանու, առ ՚ի վրիպեցուցանելոյ, և արհամարհելոյ զբան Տեառն վասն Փոգովրայ. և եղև հարուած ՚ի ժողովրդեանն Տեառն: ¹⁷Եւ արդ՝ կոտորեցէք զամենայն արու յամենայն աղիսիդ. և զամենայն կին որոյ գիտացեալ է զարութիւն արուի՝ կոտորեցէք*:¹⁸ Եւ զամենայն զաղիս կանանց, որ ո՛չ իցէ գիտացեալ զարութիւն արուի՝ ապրեցուցէք*:¹⁹ Եւ դուք բնակեցարուք արտաքոյ բանակին զԵւթն օր. ամենայնի որոյ սպանեալ իցէ և մերձեալ ՚ի վիրաւոր, սրբեսցի՛ յաւուրն երրորդի, և յաւուրն եւթներորդի. դուք և գերիդ ձեր*:²⁰ Եւ ամենայն հանդերձ, և ամենայն անօթ մաշկեղէն, և ամենայն գործ մազագործ, և զամենայն կահ փայտակերտ սրբեսցիք*:²¹ Եւ ասէ Եղիազար քահանայ ցարս զօրուն եկելոց ՚ի ճակատէ պատերազմին. Այս իրաւունք օրինի են զոր հրամայեաց Տէր Մովսիսի: ²²Բա՛ց յոսկւոյ և յարծաթոյ, և ՚ի պղնձոյ, և յերկաթոյ, և ՚ի կապարոյ, և յանագէ.²³ ամենայն որ անցանէ ընդ հուր՝ և սրբեսցի՛. այլ և ջրովն սրսկման սրբեսցի. և ամենայն որ ո՛չ անցանիցէ ընդ հուր, լուանայցի ջրով*.²⁴ Լուասջիք զհանդերձս յաւուրն եւթներորդի, և սո՛ւրբք լինիջիք. և ապա մտանիցէք ՚ի բանակն: ²⁵Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ.²⁶ Ա՛ռ զհամար աւարի գերութեանդ ՚ի մարդոյ մինչև յանասուն. դու և Եղիազար

* *Ի լուս՝* Հատուցանել զվրժ ՚ի Տեառնէ, *համաձայն այլոց ՚ի բնաբ՝*:

* *Ոմանք.* Եւ զսպասն սրբութեան:

* *Բազումք.* Որպէս և հրամայեաց Տէր:

* *Ոսկան.* Եւ զամենայն անասուն նոցա:

* *Ոմանք.* Յորոյ գիտացեալ իցէ զա՛: *Ուր Ոսկան.* Զզօրութիւն արուի:

* *Ոմանք.* Որոց չիցէ գիտացեալ:

* *Այլք.* Եւ դուք բնակեցարուք արտաքոյ:

* *Ի լուս՝* Եւ ամենայն կահ մազագործ, *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*:

* *Բազումք.* Եւ լուանայցէ ջրով:

քահանայ, և իշխանք նահապետաց ժողովրդեանդ. ²⁷և բաժանեցէք զաւարդ ՚ի մէջ պատերազմողացդ ելելոցդ ՚ի պատերազմ. և ՚ի մէջ ամենայն ժողովրդեանդ: ²⁸Եւ առջիք հաս Տեառն յամենայն արանց պատերազմողաց երթելոց ՚ի պատերազմ. ոգի՛ մի՛ ՚ի հինգ հարիւրոց՝ ՚ի մարդոյ և յանասնոյ, և յարջառոյ և յոչխարէ և յայծեաց* . ²⁹և զկէ՛ս նոցա առնուցուս, և տացես՝ Եղիազարու քահանայի զպտուղսն Տեառն: ³⁰Եւ ՚ի կիսոյ որդւոցն Իսրայէլի առցես մի ՚ի յիսնէ, ՚ի մարդոյ և յանասնոյ յարջառոյ և յոչխարէ և յիշոյ, և յամենայն անասնոյ. և տացես զայն Ղևտացւոցն որ պահիցեն զպահպանութիւնս խորանին Տեառն* : ³¹Եւ արարին Մովսէս և Եղիազար քահանայ՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի: ³²Եւ եղև աւելորդ աւարին զոր ածին յաւարի արքն պատերազմօղք. յոչխարաց վեց հարկը հազար, և եւթանասուն և հինգ հազար. ³³և արջառ՝ եւթանասուն և երկու հազարք. ³⁴և էշք՝ վաթսուն և մի հազար. ³⁵և ոգիք մարդկան՝ ՚ի կանանց որ ո՛չ գիտէին զարութիւն առն, ամենայն ոգիք՝ երեսուն և երկու հազարք* : ³⁶Եւ եղև կէ՛ս աւարին երթելոցն ՚ի պատերազմ ՚ի թուոյ ոչխարացն՝ երեք հարկը և երեսուն հազար, և եւթն հազար և հինգ հարիւր* : ³⁷Եւ եղև հասն Տեառն յոչխարէ, վեց հարկը և եւթանասուն և հինգ* . ³⁸և արջառ երեսուն և վեց հազար, և հաս Տեառն եւթանասուն և երկու. ³⁹և էշք՝ երեսուն հազար և հինգ հարկը, և հասն Տեառն վաթսուն և մի. ⁴⁰և ոգիք մարդկան՝ վեշտասան հազար, և հասն ՚ի նոցանէ Տեառն երեսուն և երկու ոգիք: ⁴¹Եւ ետ Մովսէս զհասն Տեառն զնուէրն Աստուծոյ Եղիազարո՛ւ քահանայի. որպէս հրաման ետ Տէր Մովսիսի. ⁴²զհասարակած որդւոցն Իսրայէլի, զորս բաժանեաց Մովսէս յարանցն պատերազմողաց* : ⁴³Եւ եղև հասարակած ՚ի ժողովրդենէ անտի. յոչխարէ՝ երեք հարկը և երեսուն հազար, և եւթն հազար և հինգ հարկը. ⁴⁴և արջառ՝ երեսուն և վեց հազար. ⁴⁵և էշք՝ երեսուն հազար և հինգ հարկը. ⁴⁶և ոգիք մարդկան՝ վեշտասան հազար: ⁴⁷Եւ ա՛ռ Մովսէս ՚ի հասարակածէ որդւոցն Իսրայէլի. մի ՚ի յիսնէ, ՚ի մարդոյ և յանասնոյ. և ետ զայն Ղևտացւոցն որ պահէին զպահպանութիւն խորանին Տեառն. որպէս հրաման ետ Տէր Մովսիսի: ⁴⁸Եւ մատեան առ Մովսէս ամենայն վերակացուք հազարապետութեան զօրուն, հազարապետք և հարիւրապետք, ⁴⁹և ասեն ցՄովսէս. Ծառայք քո կալան զհամար արանց պատերազմողաց առ ՚ի մէնջ, և ո՛չ ծախեցաւ ՚ի նոցանէ և ո՛չ մի. ⁵⁰և բերաք մատուցանել ընծայ Տեառն, այր՝ որոյ գտանիցի ոսկի մեհեանդ, կամ ապարանջանք, և մատանի, և կշտապանակ, և փողոշուկ ընդելուզեալ. քաւել՝ վասն մեր առաջի Տեառն: ⁵¹Եւ առին Մովսէս և Եղիազար քահանայ զոսկին ՚ի նոցանէ, զամենայն անօթ գործեալ*, ⁵²զոր եղև ամենայն ոսկի հասին զոր հանին Տեառն. վեշտասան հազար և եւթն հարկը և յիսուն սիկը՝ ՚ի հազարապետաց անտի*. ⁵³և արք պատերազմօղք որ ածին աւար, իւրաքանչի՛ր ումեք: ⁵⁴Եւ առին Մովսէս և Եղիազար քահանայ զոսկին, ՚ի հազարապետաց անտի, և ՚ի հարկապետաց, և տարան ՚ի խորանն

* Ոմանք. Երթալոց ՚ի պատերազմ... ՚ի հինգ հարիւրոյ:

* Ոմանք. Զպահպանութիւնս ՚ի խորանին Տեառն:

* Զօրինակին. Ի կանանց զոր ո՛չ գիտէին:

* Ոմանք. Երեքհարիւր երեսուն և եւթն հազար, և՛:

* Ոմանք. Եւթանասուն և հինգ հազար:

* Ոմանք. Զհասարակաց որդւոց Իսրայէլի: Այլք. Արանցն պատերազմողաց:

* Ոմանք. Ի նոցանէ, և զամենայն անօթ գործեալ:

* Ոսկան. Որ եղև ամենայն ոսկի: Ուր օրինակ մի. Եւ եղև ամենայն ոսկի:

վկայութեան. յիշատակ առ ՚ի յորդոցն Իսրայէլի առաջի Տեառն:

32

Գլուխ ԼԲ

Օ՛՛Ե 1Եւ անասուն բազում էր որդոցն Իսրայէլի, որդոցն Ռուբինի, և որդոցն Գադայ զեղեալ յոյժ. և տեսին զերկիրն Յազերայ, և զերկիրն Գադաադու. և էր տեղին տեղի խաշանց*: 2Եւ մատուցեալ որդիքն Ռուբինի և որդիքն Գադայ՝ ասեն ցՄովսէս և ցեղիագար քահանայ, և ցիշխանս ժողովրդեանն: 3Ատարովթ, և Դեբոն, և Յազեր, և Նեմբրա, և Եսեբոն, և Էլէալէթ, և Սեբամա, և Նաբաւ, և Բեան*. 4Երկիրն զոր մատնեաց Տէր առաջի որդոցն Իսրայէլի, երկիր՝ անասնոց է. և ծառայից քոց խաշինք են*: 5Եւ ասեն. Եթէ գտաք շնորհս առաջի քո, տացի՛ երկիրն այն ծառայից քոց ՚ի կալուած. և մի՛ անցուցաներ զմեզ ընդ Յորդանան*: 6Եւ ասէ Մովսէս ցորդիսն Գադայ և ցորդիսն Ռուբինի. Եղբարք ձեր երթայցեն ՚ի պատերազմ, և դուք նստիցի՞ք աստ: 7Եւ ընդէ՞ր խտտորեցուցանէք զսիրտ որդոցն Իսրայէլի չանցանել յերկիրն՝ զոր Տէր տալոց է նոցա*: 8Ո՛չ այդպէս արարին հարքն ձեր՝ յորժամ առաքեցի զնոսա ՚ի Կադէսբառնեայ դիտել զերկիրն: 9Եւ ելին ՚ի Ձորն ողկուզի, և դիտեցին զերկիրն. և զանգիտեցուցին զսիրտս որդոցն Իսրայէլի, զի մի՛ մտանիցեն յերկիրն զոր ետ նոցա Տէր: 10Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր յաւուր յայնմիկ, և երդուաւ՝ և ասէ. 11Մի՛ տեսցեն արք որ ելին յեգիպտոսէ՝ ՚ի քսանամենից և ՚ի վեր, որ գիտիցեն զչար և զբարի. զերկիրն զոր երդուայ տալ Աբրաամու և Սահակայ և Յակոբայ. զի ո՛չ եկին զիետ իմ*. 12Բայց Քաղէբ՝ որդի Յեփոնեայ զատուցեալն, և Յեսու որդի Նաւեայ, զի եկին զկնի Տեառն*: 13Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր ՚ի վերայ Իսրայէլի, և յածեցոյց զնոսա յանապատին անս քառասուն. մինչև սատակեցաւ ամենայն ազգն որ արարին զչարիս առաջի Տեառն: 14Եւ արդ՝ դուք յարուցեալ էք փոխանակ հարց ձերոց, ժողովք մարդկան մեղաւորաց, յաւելո՛ւ միւսանգամ ՚ի սրտմտութիւն բարկութեան Տեառն ՚ի վերայ Իսրայէլի*: 15Ձի դարձեալ էք ՚ի նմանէ, յաւելու միւսանգամ լքանել նմա զձեզ յանապատ. և անօրինիք յամենայն ժողովուրդս յայս*: 16Եւ մատեան առաջի նորա՝ և ասեն. Դադարս ոչխարաց մերոց շինեսցուք՝ և անասնոց մերոց, և քաղաքս աղխից մերոց. 17և մեք վառեսցուք առաջի Տեառն, առաջապա՛հք երթիցուք որդոցն Իսրայէլի, մինչև հանցուք զնոսա յիրաքանչիւր տեղի. և բնակեսցէ աղխն մեր ՚ի քաղաքս պարսպաւորս վասն բնակչաց երկրիս: 18Եւ ո՛չ դարձցուք ՚ի տունս

* Ոմանք. Որդոցն Իսրայէլի, Ռուբինի և որդոցն Գադայ... և տեսեալ զերկիրն Յազերայ... և տեղին էր տեղի խաշանց:

* Ոմանք. Եւ Նաբրա.. և Եղեաթէլ. և Սեմաբա:

* Ոմանք. Երկիր անասնասնոյց է:

* Ոմանք. Ձմեզ ըստ Յորդանան:

* Օրինակ մի. Խտտորեցուցանիցէք զմիտս որդոցն Իսրայէլի:

* Յօրինակին. Մի՛ մտցեն արք որ ելին:

* Յօրինակին՝ աստ և այլ ուրեք ուրեք եղեալ էր. Քաղէբ որդի Յեփոնեայ: Ոմանք. Ձի եկին զկնի իմ:

* Ոմանք. ՚ի բարկութիւն սրտմտութեան Տեառն:

* Ոմանք. Ձձեզ յանապատի աստ:

մեր՝ մինչև բաժանեցին որդիքն Իսրայելի զհրաքանչիւր ժառանգութիւն*։¹⁹ Եւ ո՛չ ևս ժառանգեսցուք ՚ի մէջ նոցա յանցիցն Յորդանանու և անդր. զի ունինք զվիճակս մեր յայս կոյս Յորդանանու յարևելից*։²⁰ Եւ ասէ ցնոսա Մովսէս. Եթէ առնիցէք ըստ բանիդ ըստ այդմիկ. եթէ վառիցիք առաջի Տեառն ՚ի պատերազմ*։²¹ և անցցէ՛ ձեր ամենայն վառեալ ընդ Յորդանան առաջի Տեառն, մինչև սատակիցի թշնամին նորա առաջի նորա*,²² և նուաճեսցի երկիրն առաջի Տեառն, և ապա՛ դառնայցէք, քաւեալ լիջիք առաջի Տեառն և յԻսրայէլէ. և եղիցի երկիրս այս ձեզ ՚ի կալուած՝ առաջի Տեառն։²³ Ապա թէ ո՛չ առնիցէք այդպէս, յանցաւոր գտանիցիք առաջի Տեառն. և ծանիջիք զմեղս ձեր՝ յորժամ հասանիցեն ձեզ չարիք*։²⁴ Եւ շինեսջիք դուք ձեզ քաղաքս աղխին ձերոյ, և դադարս խաշանց ձերոց. և որ ինչ ել ՚ի բերանոյ ձերմէ առնիցէք։²⁵ Եւ խօսեցան որդիքն Ռուբինի և որդիքն Գադայ ընդ Մովսիսի՝ և ասեն. Արասցեն ծառայք քո՝ որպէս հրամայեաց մեզ տէրդ մեր.²⁶ աղխ մեր և կանայք մեր և ամենայն անասուն մեր՝ կացցեն ՚ի քաղաքս Գադաադու.²⁷ և ծառայք քո անցցեն վառեալք և կազմեալք առաջի Տեառն ՚ի պատերազմ, որպէս և տէ՛րդ ասէ։²⁸ Եւ յանդիման արար նոցա Մովսէս զեղիագար քահանայ, և զՅեսու որդի Նաւեայ, և զիշխանս նահապետաց ցեղիցն Իսրայելի։²⁹ Եւ ասէ ցնոսա Մովսէս. Եթէ անցցեն որդիքդ Ռուբինի և որդիքդ Գադայ ընդ ձեզ ըստ Յորդանան, ամենայն վառեալ ՚ի պատերազմ առաջի Տեառն, և տիրեցէք երկրին, տաջիք դոցա զերկիրն Գադաադու ՚ի կալուածս*։³⁰ Ապա թէ ո՛չ անցցեն ընդ ձեզ վառեալք ՚ի պատերազմ առաջի Տեառն, անցուսջիք զաղխս դոցա և զկանայս դոցա, և զանասուն դոցա յառաջագոյն քան զձեզ յերկիրն Քանանացւոց. և ժառանգեսցեն ընդ ձեզ յերկիրն Քանանացւոց։³¹ Պատասխանի ետուն որդիքն Ռուբինի և որդիքն Գադայ՝ և ասեն. Ձոր ինչ ասէ տէրդ ցճառայս իւր՝ արասցուք*։³² Մեք անցցուք վառեալք յերկիրն Քանանացւոց, և տաջիք մեզ կալուածս յայս կոյս Յորդանանու*։³³ Եւ ետ Մովսէս որդւոցն Գադայ և որդւոցն Ռուբինի՝ և կիսոյ ցեղին Մանասէի որդւոցն Յովսեփայ, զթագաւորութիւնն Սեհոնի արքային Ամովրիացւոց, և զթագաւորութիւնն Ովգայ արքային Բասանու. զերկիրն և զքաղաքս սահմանօք իւրովք, և զքաղաքս երկրին շուրջանակի։³⁴ Եւ շինեցին որդիքն Գադայ զԴեբոն, և զԱստարովք,³⁵ և զԱրոեր, և զԵսոփար, և զՅազեր*։³⁶ և բարձրացուցին զնոսա. և զՆամրան, և զԲաւթառան, քաղաքս անուրս, և դադարս հօտից*։³⁷ Եւ որդիքն Ռուբինի շինեցին զԵսեբոն, և զԵղիեղէթ, և զԿարիեթան*։³⁸ և զԲեղմոն, շուրջ

* Ոսկան համաձայն միում օրինակի. Մինչև բաժանեցեն որդիքն:

* Ոմանք. ՚ի միջի նոցա յանցիցն յոր՛:

* Ոմանք. եթէ արասցէք ըստ բա՛:

* Օրինակ մի. Թշնամին նորա յերեսաց նորա:

* Ոմանք. Առնիցէք այնպէս. յանցաւոր գտանիջիք: Ուր Ոսկան յաւելու. Առաջի Տեառն. և ծանիջիք Տեառն. և ծանիջիք զմեղս:

* Ոմանք յաւելուն. Եւ տիրիցէք երկրին առաջի ձեր, տաջիք:

* Ոմանք. Ձոր ինչ ասաց տէրդ:

* Ոմանք յաւելուն. Մեք անցցուք վառեալք առաջի Տեառն յերկիրն քա՛. յայնկոյս Յորդանանու:

* Այլք. Եւ զԱրոեր և զԱսովփար: Ոսկան յաւելուածով ունի. Եւ զԱրոեր. զԱտրօթ.

զԱսովփար, և զՅազեր, Յօգրէհայ:

* Ոմանք. Եւ զԲաւթառան, քաղաքս:

* Ոմանք. Եւ զԵղիեղէն, և զԿարիեթան:

ամրացուցեալս, և զԱբբամայ. և անուանեցին ըստ անուանց իւրեանց
 գանուանս քաղաքացն՝ զոր շինեցին*։ ³⁹Եւ գնաց որդի Մաքիրայ որդւոյ
 Մանասիի՝ ի Գաղաադ՝ և ա՛ռ զնա, և կորոյս զԱմովրիացին որ բնակեալ էր ՚ի
 նմա*։ ⁴⁰Եւ ետ Սովսէս զԳաղաադ Մաքիրայ որդւոյ Մանասիի. և բնակեցաւ անդ։
⁴¹Եւ Յայիր Մանասեան չոգաւ՝ ա՛ռ զքաղաքս նոցա, և անուանեաց զնոսա
 Աւանս Յայիրայ։ ⁴²Եւ Նաբաւ զնա՛ց՝ և ա՛ռ զԿանաթ և զաւանս նորա, և
 անուանեաց զնոսա Նաբաւթ ըստ անուան իւրոյ*։

33

Գլուխ ԼԳ

ԾՁ ¹Եւ ա՛յս են բանակետոյք որդւոցն Իսրայէլի՝ յորմէ հետէ ելին յերկրէն
 Եգիպտացւոց հանդերձ զօրուն իւրեանց ՚ի ձեռն Սովսիսի և Ահարոնի*։ ²Եւ
 գրեաց Սովսէս զչո՛ւս նոցա, և զբանակետոյս իւրեանց բանիւ Տեառն. և ա՛յս են
 բանակետոյք զնացից նոցա*։ ³Չուեցին յՌամեսսեայ յամսեանն առաջնում, ՚ի
 հնգետասաներորդում աւուր՝ ամսոյն առաջնոյ. զայգոյ զատկին ելին որդիքն
 Իսրայէլի բարձրացեալ ձեռամբ առաջի ամենայն Եգիպտացւոցն. ⁴և
 Եգիպտացիքն թաղեցին զամենայն մեռեալսն ՚ի նոցանէ, զորս կոտորեաց Տէր
 զամենայն անդրանիկս յերկրին Եգիպտացւոց. և ՚ի դի՛ս նոցա արար
 վրէժսնդրութիւն Տէր*։ ⁵և չուեալ որդւոցն Իսրայէլի յՌամեսսեայ բանակեցան ՚ի
 Սոկրովթ։ ⁶Եւ չուեալ ՚ի Սոկրովթայ՝ բանակեցան ՚ի Բովթան, որ է մասն ինչ
 անապատին։ ⁷Չուեցին ՚ի Բովթանայ, և բանակեցան առ բերանովն Եպիրովթայ,
 որ է յանդիման Բեւլսեփոնայ, և բանակեցան հանդէպ Մակրովղայ*։ ⁸Չուեցին
 հանդէպ Եպիրովթայ, և անցին ընդ մէջ ծովուն յանապատն, և զնացին նոքա
 երեքօրեայ ճանապարհ ընդ անապատն, և բանակեցան զԴառն աղբերքքն։
⁹Չուեցին ՚ի Դառն աղբիրացն՝ և եկին յեղի՛մ. և էին յեղի՛մ երկոտասան ակն
 ջրոց, և եւթանասուն ծառ արմաւենեաց. և բանակեցան ա՛նդ առ ջրովն։
¹⁰Չուեցին յեղի՛մայ, և բանակեցան զափամբ Կարմիր ծովուն։ ¹¹Չուեցին ՚ի
 Կարմիր ծովէն, և բանակեցան յանապատին ՚ի Սին*։ ¹²Չուեցին ՚ի Սին
 անապատէն, և բանակեցան ՚ի Յոափա*։ ¹³Չուեցին ՚ի Յոափայ, և բանակեցան
 յելուն։ ¹⁴Չուեցին յելի՛մայ, և բանակեցան յՌափիդին. և ո՛չ գոյր ջուր ըմպելոյ
 ժողովրդեանն*։ ¹⁵Չուեցին յՌափիդիմայ, և բանակեցան յանապատն ՚ի Սինայ*։
¹⁶Չուեցին յանապատէն Սինայ, և բանակեցան ՚ի Գերեզմանս ցանկութեան։
¹⁷Չուեցին ՚ի Գերեզմանացն ցանկութեան, և բանակեցան յԱսերովթ։ ¹⁸Չուեցին

* Ոսկան յաւելու. Եւ զՆէթօ և զԲէլլմօն։

* Ոսկան. Եւ զնացին որդիք Մաքիրայ.. և առին.. և կորուսին։

* Ոմանք. Նաբովթ. ըստ անուան իւ՛ր։

* Ոմանք. Եւ այս են բանակեալք որդւոցն Իսրայէլի։

* Ոմանք. Եւ զբանակետոյն. կամ՝ բանակետոյք իւրեանց։

* Այլք. Եւ Եգիպտացիքն թաղէին զամենայն մեռ՛։

* Ոմանք յօրինակաց ՚ի բոլոր առաջիկայ համարագլուխս. Չուեցին, յաւելուն. Եւ. մինչև
 ցհամարն 48։

* Ոմանք. Յանապատն ՚ի Սին։

* Ոմանք. Եւ չուեցին ՚ի Սինայ անա՛պատ։ Կամ՝ ՚ի Սինն անապատէ։

* Ոսկան. Եւ բանակեցան յՌափիդին։

* Ոմանք. Եւ չուեցին յՌափիդիմայ... յանապատին Սինա։

յԱսերովթայ, և բանակեցան յՌաթամա: ¹⁹Չուեցին յՌաթամայ, և բանակեցան յՌեմոնփարէս: ²⁰Չուեցին յՌեմոնփարեսայ, և բանակեցան ՚ի Ղերոնա: ²¹Չուեցին ՚ի Ղերոնայ, և բանակեցան ՚ի Ղեսա: ²²Չուեցին ՚ի Ղեսայէ, և բանակեցան ՚ի Մակէղ՛ղաթ: ²³Չուեցին ՚ի Մակէղ՛ղաթայ, և բանակեցան ՚ի Սովփար*: ²⁴Չուեցին ՚ի Սովփարայ, և բանակեցան ՚ի Քարադաթ: ²⁵Չուեցին ՚ի Քարադաթայ, և բանակեցան ՚ի Մակելովթ: ²⁶Չուեցին ՚ի Մակելովթայ, և բանակեցան ՚ի Կատտաաթ*: ²⁷Չուեցին ՚ի Կատտաաթայ, և բանակեցան ՚ի Կարաաթ*: ²⁸Չուեցին ՚ի Կարաաթայ, և բանակեցան ՚ի Մատեկա: ²⁹Չուեցին ՚ի Մատեկայ, և բանակեցան ՚ի Սելմոնա: ³⁰Չուեցին ՚ի Սելմոնայ, և բանակեցան ՚ի Մասուրութ: ³¹Չուեցին ՚ի Մասուրութայ, և բանակեցան ՚ի Բանեա: ³²Չուեցին ՚ի Բանեայ, և բանակեցան ՚ի Լերինն Գադգադ: ³³Չուեցին ՚ի Լեռնէ անտի Գադգադայ, և բանակեցան յԵտեբաթա: ³⁴Չուեցին յԵտեբաթայ, և բանակեցան յԵբրոն: ³⁵Չուեցին յԵբրոնայ, և բանակեցան ՚ի Գասիոնգաբեր*: ³⁶Չուեցին ՚ի Գեսիոնգաբերայ, և բանակեցան յանապատին ՚ի Սին*: ³⁷Չուեցին ՚ի Սինն անապատէ. և բանակեցան յանապատին Փարանու, այն է Կադէս: Չուեցին ՚ի Կադէսայ, և բանակեցան ՚ի Յովր Լերինն, մերձ առ երկրաւն Եդոմայ*: ³⁸Եւ Ել Ահարոն քահանայ ՚ի Լեռնն հրամանաւ Տեռնն և մեռաւ անդ. ՚ի քառասներորդի ամի Ելանելոյ որդւոցն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց. յամսեանն հինգերորդի՝ որ օր մի էր ամսոյն: ³⁹Եւ Ահարոն էր հարկը և քսան և երից ամաց յորժամ մեռաւ ՚ի Յովր Լերինն: ⁴⁰Եւ լուաւ Քանանէս արքայ Արադայ, և ինքն բնակեալ էր յերկրին Քանանացւոց, յորժամ մտանէին որդիքն Իսրայէլի, և ետ պատերազմ ընդ Իսրայէլի, և ա՛ռ ՚ի նոցանէ գերի*: ⁴¹Չուեցին ՚ի Յովր Լեռնէ, և բանակեցան ՚ի Սելմոնա: ⁴²Չուեցին ՚ի Սելմոնայ, և բանակեցան ՚ի Փենով: ⁴³Չուեցին ՚ի Փենովայ, և բանակեցան յՌովթ: ⁴⁴Չուեցին յՌովթայ, և բանակեցան ՚ի Գայի՝ յայն կոյս սահմանացն Մովաբու: ⁴⁵Չուեցին ՚ի Գայեայ, և բանակեցան ՚ի Ղեմոնգադ: ⁴⁶Չուեցին ՚ի Ղեմոնգադայ, և բանակեցան ՚ի Գեղմոնդէրաթէմ: ⁴⁷Չուեցին ՚ի Գեղմոնդէրաթէմայ, և բանակեցան ՚ի Լերինն Սաբարիմ յանդիման Նաբաւայ*: ⁴⁸Չուեցին ՚ի Լերանցն Նաբաւայ, և բանակեցան յարևմտից Մովաբու առ Յորդանանաւ յանդիման Երեքոյի: ⁴⁹Եւ բանակեցան զՅորդանանաւ ՚ի մէջ Եսեմովթայ. մինչև ցՄեղսատով յարևմտից Մովաբու:

Ծէ ⁵⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յարևմտից Մովաբու առ Յորդանանաւ յանդիման Երեքոյի՝ և ասէ*. ⁵¹Խօսեաց ընդ որդիսդ Իսրայէլի՝ և ասացես ցոյսա. Դուք ահաւադիկ անցանէք ընդ Յորդանանան յերկրին Քանանացւոց*. ⁵²Եւ

* Ոմանք. Եւ բանակեցան ՚ի Սիփար:

* Ի Կատտաթայ. (27) ՚ի Կատտաթայ:

* Օրինակ մի. Ի Տարաթ: (28) Եւ չուեցին ՚ի Տարաթայ և բանակեցան ՚ի Մատեկ:

* Օրինակ մի. Յեբրոնեայ... ՚ի Գեսիոնգաբեր:

* Ոսկան յաւելու. ՚ի Սին՝ որ է Կադէս:

* Ոմանք. Մերձ առ երկրին Եդովմայ:

* Ոմանք. Եւ լուաւ Քանանիս ար՛ք: Յայլս պակասի. Մտանէին որդիքն Իսրայէլի: Եւ ետ պատերազմ ընդ Իսրայէլի, և ա՛ռ ՚ի նոցանէ գերի:

* Ոսկան. Եւ բանակեցան ՚ի Սաբարիմ:

* Ոմանք. ՁՅորդանանու ՚ի մէջ Եսեմովթայ:

* Ոմանք. Յարևմուտս Մովաբու առ Յորդանանու:

* Այլք. Յերկիրն Քանանացւոց:

կորուսչի՞ք զամենայն բնակիչս երկրին յերեսաց ձերոց. և կործանեսչի՞ք զդիտանոցս երկրի նոցա. և զամենայն կուռս ձուլածոյս նոցա կորուսչի՞ք. և զամենայն զարծանս նոցա՝ բառնայցէ՞ք ՚ի միջոյ՞*։ ⁵³Եւ կորուսչի՞ք զբնակիչս երկրին, և բնակեսչի՞ք դուք ՚ի նմա. զի ձե՛զ ետու զերկիրն նոցա ՚ի վիճակ, ⁵⁴ըստ ցեղից ձերոց, ըստ բազմաց՝ բազմացուցանիչի՞ք զկալուածս իւրեանց. և ըստ սակաւուց՝ սակաւացուսչի՞ք զկալուածս իւրեանց։ Որպէս ելանիցէ՞ յանուն ուրուք՝ անդ լինիցի. ըստ ցեղից՝ նահապետութեան ձերոյ ժառանգեսչի՞ք*։ ⁵⁵Եւ եթէ ո՛չ կորուսանէք զբնակիչս երկրին յերեսաց ձերոց, եղիցին զոր թողուցուքն ՚ի նոցանէ՝ խո՛չ յական ձերում, և նե՛տք ՚ի կողս ձեր. և եղիցին ձեզ թշնամի՞ք յերկրին յորում դուք բնակիցէք*։ ⁵⁶և եղիցի որպէս խորհէի առնել նոցա՝ արարից ձե՛զ*։

34

Գլուխ ԼԴ

ԾԸ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ²Պատուիրեա՛ որդւոցն Իսրայէլի՝ և ասասցեն սնոսա. Դուք մտանէք յերկիրն Քանանացուց, և այն լիցի ձեզ ՚ի ժառանգութիւն. երկիրն Քանանու հանդերձ սահմանօք իւրովք*։ ³Եւ եղիցի ձեզ կողմն ընդ հարաւ ՚ի Սինն անապատէ մինչև մօտ յեդոմ. և եղիցին ձեզ սահմանքն որ ընդ հարաւ իցեն, ՚ի մասնէ Ադի ծովուն յարևելից կողմանէ*։ ⁴Եւ պատիցին սահմանքն ձեր ՚ի հարաւոյ ընդ սարն Ակրաբինայ, և անցցեն յենակ, և եղիցին ելք նորա ընդ հարաւոյ կողմն Կադէսբառնեայ. և ելցեն յաւանն Արադայ, և անցցեն յԱսեմոն*։ ⁵Եւ պատիցին սահմանքն յԱսեմոնայ ձորոյն Եգիպտացուց. և եղիցին ելք նորա ընդ ծովն*։ ⁶և սահմանք ծովուն ձե՛զ լիցին. ծովն մեծ սահման իցէ. և այն լիցին ձեզ սահմանք ծովուն։ ⁷Եւ այս լիցին ձեզ սահմանք ընդ կողմն հիւսւսոյ. ՚ի մեծէ՛ ծովէն չափեսչիք ձեզ զլեռնլեռնայն*։ ⁸և ՚ի լեռնէ անտի չափեսչիք զնոյն մինչև ՚ի մուտս Եմաթայ. և եղիցին ելք նորա սահմանք Արադաքոյ*։ ⁹և ելանիցէ առ սահմանօքն Եփրոնայ. և եղիցին ելք նորա Ասիռնայիդ. այն լիցին ձեզ սահմանք ՚ի հիւսւսոյ*։ ¹⁰Եւ չափեսչիք ձեզ սահմանս յարևելից, յԱսիռնայիդայ ցՍեպփամար. ¹¹և իջանիցեն սահմանքն ՚ի Սեպփամարայ ցԲեդայ, յարևելից կողմանէ աղբերացն. և իջցեն սահմանքն ՚ի Բեդայ մինչև ցծովն Քենարայ յարևելից կողմանէ. ¹²և իջանիցեն սահմանքն մինչև ցՅորդանան. և ելք նորա լիցին ծովն Ադի. այն ամենայն երկիր լինիցի ձեզ, և սահմանք նորա շուրջանակի*։ ¹³Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն

* *Ոմանք.* Կուռս ձուլածոյս նոցա կործանեսչիք։

* *Օրհնակ մի.* Բազմացուցանիցէք... սակաւացուցանիցէք... ըստ ցեղից ցեղից նահապէ՛։

* *Ոմանք.* Եթէ ո՛չ կորուսանիցէք։

* *Ոմանք.* Որպէս խորհեցայ առնել նոցա։

* *Ոմանք.* Դուք մտանիցէք.. և այն լինիցի ձեզ... երկրին Քանա՛։

* *Ոմանք.* Եւ եղիցի ձեզ սահմանն ընդ հարաւ։

* *Ոմանք.* Ելք նորա ընդ հարաւակողմն։

* *Ոմանք.* Եւ պատեսցեն զսահմանքն յԱսիմովնայ... ելք նորա ՚ի ծովն։

* *Այլք.* Չեզ զլեռն լեռնայն։

* *Ոմանք.* Սահմանքն Արադաքայ։

* *Ոմանք.* Ելք նորա Ասիռնային։

* *Ոմանք.* Լինիցին մինչև ցծովն Ադի։

Իսրայելի՝ և ասէ. Այս է երկիրն զոր ժառանգիցէք զսա վիճակաւ. որպէս հրաման ետ Տէր տալ՝ զնա ինն ցեղիցն, և կիսոյ ցեղին Մանասէի: ¹⁴Վասն զի ա՛ն ցեղ որդւոցն Ռուբինի և ցեղ որդւոցն Գադայ՝ ըստ տանց նահապետաց իւրեանց. ¹⁵և կէս ցեղին Մանասէի զվիճակս իւրեանց յայնկոյս Յորդանանու յանդիման Երեքոյի՝ ՚ի հարաւոյ ընդ կողմն արևելից՝:

ԾԹ ¹⁶Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁷Այս անուանք են արանցն՝ որ ժառանգեցուցանիցեն ձեզ զերկիրն. Եղիազար քահանայ, և Յեսու Նաւեան. ¹⁸և մի մի իշխան ՚ի ցեղէ առնուցուք ժառանգեցուցանել ձեզ զերկիրն: ¹⁹Եւ այս անուանք են արանց: Տեղին Յուդայ՝ Քաղէբ որդի Յեփոնեայ: ²⁰Տեղին Շմալոնի, Սաղամիէլ որդի Եմիուդայ: ²¹Տեղին Բենիամինի, Ելդադ որդի Քասդովդայ: ²²Տեղին Դանայ, իշխան Բակքիր որդի Եզդայ: ²³Որդւոցն Յովսեփայ, ցեղի որդւոցն Մանասէի իշխան, Անիէլ որդի Սուփիդայ՝: ²⁴Տեղի որդւոցն Եփրեմի իշխան, Կամուէլ որդի Սաբաթայ: ²⁵Տեղին Չաբուղոնի իշխան, Եղիսափան որդի Փառնաքայ: ²⁶Տեղին որդւոցն Իսաքարայ իշխան, Փաղտիէլ որդի Ոզիայ՝: ²⁷Տեղի որդւոցն Ասերայ իշխան, Աքիովր որդի Սելովմայ՝: ²⁸Տեղին Նեփթաղիմայ իշխան, Փադայէլ որդի Մեուդայ: ²⁹Սոքա՛ են որոց հրաման ետ Տէր բաժանել որդւոցն Իսրայելի զերկիրն Քանանացուց:

35

Գլուխ ԼԵ

Կ ¹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յարևմուտս Մովաբու՝ առ եզերք Յորդանանու յանդիման Երեքոյի՝ և ասէ. ²Յրաման տուր որդւոցն Իսրայելի. և տացեն Ղևտացուցն ՚ի վիճակաց կալուածոց իւրեանց քաղաքս բնակութեանց, և բուրաստանս շուրջ զքաղաքօք իւրեանց տացեն Ղևտացուցն՝: ³Եւ եղիցին նոցա քաղաքք բնակութեան. և զատուցեալքն նոցա եղիցին խաշանց նոցա, և ամենայն չորքտանեաց նոցա: ⁴Եւ արուարձանք քաղաքացն զորս տայցէք Ղևտացուցն ՚ի պարսպէ քաղաքին. և արտաքոյ քաղաքին երկուս հազարս կանգունս շուրջանակի՝: ⁵Եւ չափեսջի՛ք արտաքոյ քաղաքին, յարևելից կողմանէ երկուս հազարս կանգունս. և ընդ ծովակողմն երկուս հազարս կանգունս. և ընդ կողմն հիւսիսի՝ երկուս հազարս կանգունս. և ընդ կողմն հարաւոյ՝ երկուս հազարս կանգունս. և քաղաքք ՚ի մէջ այնորիկ լինիցի ձեզ. և զարուարձանս քաղաքացն՝: ⁶Եւ զքաղաքսն զորս տայցէք Ղևտացուցն զվեց քաղաքս ապաստանից զոր տայցէք՝ փախչել անդր սպանողին. և այնու

* Ոսկան յաւելուածով. Եւ կիսոյ ցեղին Մանասէի զվիճակս իւրեանց: Երկու ցեղ և կէսն առին ՚ի կալուած ինքեանց յայնկոյս: Ոմանք. ՚ի հարաւոյ ընդ կողմն արևմտից:

* Ոմանք. Անիէլ որդի Սուփիդայ:

* Ոմանք. Փողտիէլ որդի Ոզայի:

* Ոմանք. Որդի Սելեմայ:

* Ոմանք. Փագեէլ որդի Միուդայ:

* Յօրինակին. Եւ բուրաստան շուրջ:

* Ոմանք. ՚ի պարսպաւոր քաղաքին և արտա՝: Այլք. Եւ արտաքոյ պարսպին երկուս հազարս կան՝:

* Ոմանք. Յարևելից կողմն.. և ընդ կողմն հիւսիսոյ.. և ընդ ծովակողմն.. և ընդ կողմն հարաւոյ:

քառասուն և երկուս քաղաք*։ ⁷Ընդ ամենայն քաղաքս քառասուն և ութ քաղաք տայցէք Ղևտացոցն. և զնոսա՝ և զբուրաստանս իւրեանց։ ⁸Եւ զքաղաքս՝ զոր տայցէք՝ ՚ի կալուածոց որդւոցն Իսրայէլի. ՚ի բազմաց՝ բազումս, և ՚ի սակաւուց՝ սակաւս. ըստ իւրաքանչիւր ժառանգութեան զոր ժառանգիցեն, տացեն ՚ի քաղաքաց անտի Ղևտացոցն։ ⁹Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի՝ և ասէ. ¹⁰Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէլի՝ և ասացես ցնոսա. Դուք աւադիկ անցանէ՛ք ընդ Յորդանան յերկիրն Քանանացոց, ¹¹և գատուջի՛ք ձեզ քաղաքս, որ լինիցին ձեզ ապաստանաց՝ փախչել անդ սպանողին։ Ամենայն որ հարկանիցէ զանձն ուրուք ականայ՝, ¹²եղիցին ձեզ քաղաքք ապաստանի ՚ի մերձաւորէ արեանն. և մի՛ մեռանիցի սպանողն՝ մինչև անցցէ առաջի ժողովրդեանն ՚ի դատաստանի*։ ¹³Եւ քաղաքքն զոր տայցէք՝ վե՛ց քաղաքք ապաստանի լինիցին ձեզ*։ ¹⁴Երիս քաղաքս տաջիք յայն կոյս Յորդանանու, և երիս քաղաքս տաջիք յերկիրն Քանանացոց։ ¹⁵Եւ եղիցի այն ապաւինութիւն որդւոցն Իսրայէլի, եկին և պանդխտի ՚ի միջի ձերում. և եղիցին քաղաքքն այնոքիկ ապաստանք, փախչել անդր ամենայնի որ հարկանիցէ զանձն ուրուք ականայ*։ ¹⁶Եւ եթէ երկաթեղէն անօթով ոք հարկանիցէ՝ և սպանանիցէ զնա, սպանօղ է. մահո՛ւ մեռցի սպանօղն։ ¹⁷Եւ եթէ բռնաքարաւ որով մեռանիցի՝ ոք հարկանիցէ զնա և մեռանիցի, սպանօղ է. մահո՛ւ մեռցի սպանօղն*։ ¹⁸Եւ եթէ փայտեղէն անօթով ՚ի ձեռանէ որով մեռանիցի ոք՝ հարկանիցէ զնա և մեռանիցի, սպանօղ է. մահո՛ւ մեռցի սպանօղն*։ ¹⁹Մերձաւոր արեանն սպանցէ՛ զսպանօղն. յորժամ պատահեսցէ նմա սպանցէ՛ զնա։ ²⁰Եւ եթէ առ թշնամութեան մղեսցէ զնա. և ձգեսցէ նմա զամենայն անօթ խարդախութեամբ՝ և մեռանիցի*։ ²¹Կամ առ քինալ հարկանիցէ զնա ձեռամբ իւրով և մեռանիցի, մահո՛ւ մեռցի որ եհարն. սպանօղ է, մահո՛ւ մեռցի որ սպանանիցէն. մերձաւոր արեանն սպանցէ՛ զսպանօղն ՚ի պատահելն նորա նմա*։ ²²Ապա թէ վրիպակաւ՝ և ո՛չ առ թշնամութեան մղեսցէ զնա, և ձգեսցէ նմա զամենայն անօթ և ո՛չ խարդախութեամբ. ²³Կամ զամենայն քար որով մեռանիցի, և ո՛չ գիտութեամբ հարկանիցէ զնա՝ և մեռանիցի. և նա ո՛չ էր նորա թշնամի, և ո՛չ խնդրէր չար առնել նմա*։ ²⁴Պատեսցի՛ ժողովուրդն ՚ի մէջ հարկանելեացն, և ՚ի մէջ մերձաւորի արեանն ըստ դատաստանացս այսոցիկ. ²⁵և ապրեցուսցէ՛ ժողովուրդն զսպանօղն ՚ի մերձաւորէ արեանն։ Եւ յուղարկեսցէ՛ զնա ժողովուրդն անդրէն ՚ի քաղաքն ապաստանի յոր ապաւինեալն էր. և բնակեսցէ անդ մինչև մեռանիցի քահանայն մեծ զոր օծին իւղովն սրբութեան։ ²⁶Եւ եթէ ելանելով ելանիցէ սպանօղն ըստ սահմանս քաղաքին յոր ապաւինեալն էր*։ ²⁷և գտցէ զնա մերձաւոր արեանն արտաքոյ սահմանաց քաղաքին ապաստանի իւրոյ, սպանցէ՛ մերձաւոր արեանն

* *Օրինակ մի կրկնէ.* Քառասուն և երկուս՝ քառասուն և երկուս քաղաքս. և ընդ ամենայն։

* *Ոմանք.* Փախչել անդր սպա՛ւ։

* *Ոմանք.* Մինչև կացցէ կամ կայցէ, առաջի ժողովրդ՛ը։

* *Ոմանք.* Չվեց քաղաք ապաստանի լինիցի ձեզ։

* *Ոմանք.* Եւ եղիցին այն ապա՛... և պանդխտին ՚ի միջի ձերում եղիցին քա՛ւ։

* *Ոմանք.* Մահու մեռանիցի սպա՛ւ։

* *Ոմանք.* Մահու մեռանիցի սպա՛ւ։

* *Ոմանք.* Չամենայն անօթ խարդախութեան։

* *Ոմանք.* Կամ առ ՚ի քինալ հար՛... սպանցէ զնա զսպանողն։

* *Ոմանք.* Կամ զամենայն քարով, որով մե՛... և նա չէր նորա թշնամի։

* *Ոմանք.* Յոր ապաւինեցաւն։

զսպանօղն. և մի՛ լիցի մահապարտ*։ ²⁸Վասն այնորիկ ՚ի քաղաքի ապաստանին իւրոյ բնակեսցէ՝ մինչև մեռանիցի քահանայն մեծ. և յե՛տ մեռանելոյ քահանային մեծի, դարձցի՛ անդրէն սպանօղն յերկիր կալուածոց իւրոց*։ ²⁹Եւ եղիցի այս ձեզ յիրաւունս դատաստանի յա՛զգս ձեր, յամենայն բնակութեան ձերում։ ³⁰Ամենայն որ հարկանիցէ զանձն. վկայի՛ւք սպանցեն զսպանօղն. և մի՛ միայն վկայ՝ մի՛ վկայեսցէ սպանանելոյն զանձն։ ³¹Եւ փրկանս ընդ անձին ՚ի սպանողէն՝ որ մահապարտ իցէ, մի՛ առնուցուք. այլ մահու՛ մեռանիցի*։ ³²Եւ մի՛ առնուցուք փրկանս վասն փախչելոյ ՚ի քաղաքն ապաստանի, առ միւսանգամ բնակելոյ յերկրին, մինչև մեռանիցի քահանայն մեծ։ ³³Եւ մի՛ շաղախիցէք զերկիրն. և ո՛չ քաւիցի երկիրն յարեմէն հեղլոյ ՚ի վերայ նորա, եթէ ո՛չ արեանքն հեղլով։ ³⁴Եւ մի՛ պղծիցէք զերկիրն յորում բնակիցէք ՚ի նմա. յորում ե՛ս բնակեցայց ՚ի միջի ձերում. զի ե՛ս եմ Տէր Աստուած ձեր, որ բնակիցեմ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի*։

36

Գլուխ ԼԶ

ԿԱ ¹Եւ մատեան իշխանք ցեղի որդւոցն Գաղաադու որդւոյ Մաքիրայ՝ որդւոյ Մանասէի ՚ի ցեղէ որդւոցն Յովսեփու. և խօսեցան առաջի Մովսիսի, և առաջի եղիագարու քահանայի, և առաջի իշխանաց տանց մահապետաց որդւոցն Իսրայէլի, ²և ասեն. Տեառնդ մերում հրաման ետ Տէր, տալ՝ զերկիրն ժառանգութեան վիճակ որդւոցն Իսրայէլի, և տեառնդ հրաման ետ Տէր՝ տալ ժառանգութիւն դստերացն Սաղպաադու եղբօր մերում։ ³Եւ արդ՝ եթէ լինիցին միում ցեղիցն Իսրայէլի կանայք. և բառնայցէ՞ վիճակ նոցա ՚ի կալուածոց հօրն իւրեանց. և յաւելուցու ՚ի ժառանգութիւն այնր ցեղի որոց լինիցին կանայք. և ՚ի վիճակէ ժառանգութեան մերոյ բառնայցէ*։ ⁴և եթէ լինիցի թողութիւն որդւոցն Իսրայէլի, յաւելուցու ժառանգութիւն նոցա ՚ի ժառանգութիւն ցեղի, որոց լինիցին կանայք. և ՚ի ժառանգութենէ ցեղի ազգիս մերոյ բառնայցէ ժառանգութիւն նոցա։ ⁵Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն Իսրայէլի հրամանաւ Տեառն՝ և ասէ. առ այն զոր ասաց ցնա ցեղ որդւոցն Յովսեփայ։ ⁶Այս բան է զոր հրաման ետ Տէր դստերացն Սաղպաադու, և ասէ. Որոց հաճոյ թուեսցի յաչս նոցա՝ եղիցին նոքա կանայք. բայց ՚ի ցեղէ հօրն իւրեանց եղիցին կանայք։ ⁷Եւ մի՛ փոխեսցի ժառանգութիւն որդւոցն Իսրայէլի ցեղէ ՚ի ցեղ. զի յիրաքանչիւր ժառանգութիւն հայրենի ցեղի իւրոյ յարիցեն որդիքն Իսրայէլի*։ ⁸Եւ ամենայն օրիորդ մերձաւոր ժառանգութեան ՚ի ցեղից որդւոցն Իսրայէլի միում ունեք յազգականէ հօր իւրոյ լինիցի կին. զի մերձաւորեցուսցեն որդիքն Իսրայէլի զիրաքանչիւր հայրենի ժառանգութիւն իւր*։ ⁹Եւ մի՛ փոխեսցի վիճակ ՚ի ցեղէ

* *Բազումք.* Եւ մի՛ լինիցի մահապարտ։

* *Այլք.* Ի քաղաքի ապաւի՛նին իւրոյ բնա՛։

* *Ոմանք.* Որ մահապարտ է, մի՛ առնու՛։

* *Ոմանք.* Տէր Աստուած, որ բնակեմ ՚ի մէջ որդւոցդ։

* *Ոմանք.* Միում ՚ի ցեղիցն Իսրայէլի... ՚ի կալուածոց հարց մերոց. և յաւելուցու։ *Ոմանք առանց հարցական ուղորակի ունին զբառքս,* բառնայցէ։ *Յորս Ոսկան դնէ՝* բառնայցի։

* *Ոմանք.* Ի ցեղէ ՚ի ցեղ.. ՚ի հայրենի ցեղին իւրոյ։ *Այլք.* Ցեղի իւրոյ յարեսցին որդ՛։

* *Յօրինակին գրի՝* աւրւորդ. և ՚ի լուս՛. *նշանակի՝* աւրիորդ. *համաձայն այլոց։* *Օրինակ*

յա՛յլ ցեղ. այլ իւրաքանչիւր յի՛ւր ժառանգութիւն յարիցեն որդիքն Իսրայէլի*:
¹⁰Եւ որպէս հրաման ետ Տէր Մովսիսի, ա՛յնպէս արարին դստերքն Սաղպաադու:
¹¹Եւ եղեն Թերսա, և Եզղ՛ա, և Մեղ՛քա, և Նուա, և Մաադա, դստերքն
Սաղպաադու՝ հորեղբարց որդւոց իւրեանց կանայք: ¹²Ի ցեղէն Մանասէի
որդւոցն Յովսեփայ եղեն կանայք. և եղեն ժառանգութիւնք նոցա յազգատոհմի
հօրն իւրեանց:
¹³Ա՛յս են պատուիրանք և իրաւո՛ւնք և դատաստա՛նք զոր պատուիրեաց Տէր ՚ի
ձեռն Մովսիսի, յարևմուտս Մովաբու, առ եզերք Յորդանանու յանդիման
Երեքոյի:

Կատարեցաւ Թիւքս*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

Ա՛յս է պատճառ գրոցս որ կոչի Երկրորդունն օրինաց: Մերձ ՚ի վախճան
հասեալ Մովսիսի, զի երկու ևս ամիս պիտի առ ՚ի լրումն քառասուն
ամաց առաջնորդութեան նորա յելից անտի: Վասն որոյ զգուշանայ
ժողովրդեանն զի մի՛ մեղկեալ թուլացին յօրինացն. և զի մեռան
առաջինքն, որոց իբրև հասնոց տուան օրէնքն. արդ զի մի՛ տհասքն
օտար համարեսցին ինքեանց զօրէնսն, երկրորդէ զամենայն օրէնսն
վերջնոցն, որք ժառանգելոց էին զերկիրն. զի ՚ի պատճառս երկրորդիս՝ և
նախագրելոցն ևս զգուշացին: Սկսեալ ապա յանցի՛ցն նոցա ընդ ծովն
մինչև յամն քառասներորդ ՚ի մո՛ւտ մետասաներորդ ամսոյն, երկրորդէ
զպատմութիւն ժամանակին և զօրէնսդրութիւնն: Յորում բազում ինչ
մարգարեանայ վասն Քրիստոսի: Եւ վասն առաւել զգուշութեան կարգէ
նոցա օրհնութիւնս ՚ի պահելն, և անէծս ցաւագինս ՚ի յանցանելն, զի
դիւրաւ դիմեսցեն յաւետարանն: Գրեաց և իւրաքանչիւր ցեղիցն
օրհնութիւնս մարգարեականս. յանձնեաց զժողովուրդն Յեսուայ, և ել ՚ի
լեառնն Նաբաւ Մովաբու, և վախճանեցաւ: Եւ ունի գիրքս չափ
ժամանակի երկուց ամսոց, յորս զանցելոց քառասուն ամացն
երկրորդեաց զպատմութիւնս: Իսկ բովանդակ հինգ գիրքս Մովսիսի՝ ունի
չափ ժամանակի՝ յելիցն ՚ի դրախտէն ցվախճանն Մովսիսի ՎՉԻՉ ամ:

Գլուխք Երկրորդ օրինաց

ա. Երկրորդելով մեկնէ Մովսէս զօրէնսն՝ որպէս տղայոց. և ցուցանէ թէ
զքառասուն ամ յամելն յանապատին՝ ինքեանք իսկ արարին. զի Տէր

մի. Մի՛ ունեք յազգականէ հօր իւրոյ... զիւրաքանչիւր զհայրենի:

** Այլք. Յարեսցին որդիքն Իսրայէլի:*

** Ի վախճանի ոմանք դնեն՝ Կատարեցաւ գիրք Թուոցս:*

Աստուած մեր վաղուրեմն ասաց ՚ի Քորեր, թէ մտէք ժառանգեցէք
զերկիրն զոր երդուայ տալ զնա ձեզ ՚ի կալուած:
բ. Յիշեցուցանէ՛ ևս զի առ ՚ի հանգիստ և ՚ի զգուշութիւն նոցա կարգեաց
զհազարապետսն:
գ. ՚Ի նոսա հանէ զպատճառս առաքման լրտեսացն. և թէ
զանգիտեցուցչացն լուայք, և տրտնջեցէք զԱստուծոյ, և բարկացաւ Տէր
և ասաց՝ թէ՛ մտջիք ՚ի հանգիստն:
դ. Թէ զի բարկացուցէք զՏէր. և կամեցայք ապա ելանել ժառանգել
զերկիրն, պարտեցայք յԱմովրհացուցն, զի չէր Տէր ընդ ձեզ:
ե. Թէ յետ երեսուն և ութ ամի լրտեսացն իրաց, ասաց Տէր դառնալ
մտանել յերկիր անդր. այլ մի՛ գրգռել յանցանելն ընդ եդոմ կամ ընդ
Մովաբայ:
զ. Թէ մատնեաց Տէր ՚ի ձեռս նոցա զԱեհոն և զՈվզ, և ժառանգեցոյց
զերկիր նոցա Ռուբինի և Գադայ:
է. Թէ հրամայեաց նոցուն երկուց և կիսոյ ցեղին՝ առաջապահս վառել
առաջի Յետուայ՝ յայնկոյս Յորդանանու, մինչև զետեղեսցի երկիրն ընդ
ձեռամբ:
ը. Ըղծալի՛ կամելով առնել նոցա զերկիրն, աղաչեցի ասէ զՏէր մտանել ՚ի
լեռն Սիոն, և անտե՛ս արար զիս Տէր վասն ձեր:
թ. Յօրէնսն ասէ չյաւելուլ ինչ կամ հատանել. այլ պահել ՚ի գովեստ և ՚ի
շահ անձանց:
ժ. Յիշեցուցանէ զահեղ երևումնն Աստուծոյ յօրն եկեղեցւոյ. և պատուիրէ
չառնել կուռս ձեռագործս:
ժա. Մեծացուցանէ՛ ևս զերախտիսն, թէ Ի՛նձ բարկացաւ Տէր չմտանել
յերկիրն, և դուք մտանէք ժառանգել. արդ՝ զգո՛յճ լերուք՝ զի Աստուած
հուր ծախիչ է:
ժբ. Համառօտէ զերախտիսն Աստուծոյ առ նոսա յեգիպտոսէ և յառաջ:
ժգ. Չատոյց զերիս քաղաքսն յայնկոյս Յորդանանու՝ յապաւինութիւն
ականայ սպանչաց:
ժդ. Երկրորդէ յականջս նոցա զտասն պատգամսն. և զգուշացուցանէ
սիրել զՏէր Աստուած, զի Տէր մի՛ է, և երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ՝ զի
նախանձո՛տ է:
ժե. Մի՛ փորձեսցես զՏէր Աստուած քո, և զհաճոյսն առաջի նորա
արացես, զի քեզ բարի է:
ժզ. Չառնել խնամութիւն ընդ Քանանացին, այլ փշրել զարծանս նոցա:
ժէ. Օրհնութիւնս խոստանայ ՚ի պահելն զպատուիրանսն:
ժը. Չիաստանաւ մերժել ասէ զազգսն առ սակաւ սակաւ, զի մի՛
թափուրեսցի երկիրն, և զազանք ՚ի նմա բազմացին:
ժթ. Յիշեցուցանէ զսքանչելիս անապատին, որով վստահ առնէ մուծանել
զնոսա յերկիրն բարի: Եւ անտ կայ՝ թէ Ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ:
ի. Հայեաց յանձն քո, մի՛ հպարտացիս, զի Տէր Աստուած քո՝ հուրն
ծախիչ սատակէ զթշնամիս քո: Աստ յիշէ զառաջին քառասնեակ
պահոցն, և թէ վասն որթոյն զոր մեղայք բարկացաւ ձեզ Տէր սատակել,
ուստի զահի հարեալ եմ, և դողամ:
իա. Յիշեցուցանէ զկրկին աշխատութիւնն երկրորդն քառասնեակի, և թէ
լուաւ ինձ Տէր և ո՛չ սատակեաց զձեզ:

իբ. Երկնչել պատուիրէ նոցա 'ի Տեառնէ, որով ժառանգել մարթասցեն գերկիրն:

իգ. Զգուշանալ պատուիրէ 'ի դից. և խօսել յօրէնսն և խոկալ 'ի նմին, այլ և 'ի վերայ սեմո՛ցն ևս գրել զնոյն:

իդ. Օրհնութիւնս և անէծս դնէ՝ 'ի լսելն կամ 'ի չլսել. և հրամայէ կարդալ զայն 'ի Գեբաղ և 'ի Գարիգին:

իե. Փշրել հրամայէ զարձանս և զդրոշեալս ազգացն:

իզ. 'Ի միում տեղուոջ մատուցանել ասէ զողջակէզսն, 'ի մի աստուածպաշտութիւն զնոսա ժողովելով:

իէ. Արիւն մի՛ ուտել ասէ, զի ուտէին հեթանոսք զարիւն, և մի՛ զոհել զմարդ:

իը. Մի՛ լսել երազահանաց որք խտորեցուցանեն զքեզ յԱստուծոյ, և ո՛չ եղբօր կամ հեռաւորի. այլ քարկոծեսցին ուր և գտանիցին:

իթ. 'Ի վերայ մեռելոց մի՛ ցտել կամ ճակատ հարկանել:

լ. Թէ ո՞րք են սուրբք և կամ պիղծք յանասնոց՝ 'ի ջրայնոց. կամ յօղականաց:

լա. Զմեռելոտին՝ պանդուխտ այլազգւոյն տա՛լ ասէ, կամ վաճառել: Այլ 'ի նորս կանոնք զայս ո՛չ հրամայեն, զի պիղծ են գինքն սոցա:

լբ. Մի՛ եփել զգառն 'ի կաթն մօր իւրոյ:

լգ. Դատուցանել զամենայն տասանորդս յետ երից ամաց, մինչև սրբեսցի խորհրդով երիցն:

լդ. 'Ի յիսներորդ ամին՝ թողութիւն առնել եղբօրն պարտուց, և մի՛ կծկել զձեռն առ 'ի չտալոյ փոխ եղբօրն 'ի մերձեմալ ամին թողլոյ:

լե. Յեւթներորդում ամի արձակել զԵբրայեցի ծառայն թշակօք, որ թէ չելանէ՝ ծակեսցի ականջն հերեամբ:

լզ. Նուիրել ասէ յԵրուսաղէմ զնախծինս հօտից, իսկ զարատաւորսն յամենայն քաղաքս զենուլ, և ուտել սրբոց և պղծոց:

լէ. Վասն պատուոյ երից մեծամեծ տօնիցն:

լը. Օրինադրէ դատաւորաց առանց կաշառոց դատել:

լթ. Զտնկել անտառս մերձ առ սեղանն:

խ. Զնուիրել Տեառն զարատաւոր անասուն:

խա. Երկուք և երեք վկայիւք մեռցի՛ մահապարտն, և բարձէ՛ք զչարն 'ի միջոյ:

խբ. Զմեծ ինչ դատաստան՝ քահանայք դատեսցին. և ո՛չ հաւանեալքն սպանցին:

խգ. Մի՛ զայլազգի՝ այլ զԻսրայէլացի կացուցես իշխան, որում առ իւր ունել զգիրս զայս ասէ:

խդ. Դաս քահանային 'ի զենլեաց ժողովրդեանն:

խե. Զդիւթել կամ կախարդել. զի մարգարէ՛ յարուսցէ ձեզ Տէր:

խզ. Երիս ևս քաղաքս զատուցանել ասէ յապաստան ականմայ սպանչաց:

խէ. Զկամօք սպանօղն սպանցեն:

խը. Զյափշտակել զսահման ընկերին:

խթ. Երկուք և երիւք վկայիւք սպանցի մահապարտն:

ծ. Որո՛ց պարտ է երթալ 'ի պատերազմ, և որո՞ց դառնալ:

ծա. Օրինակ պաշարելոյ զքաղաքս թշնամեաց:

ծբ. Զպղծագործ Քանանացիսն ո՛չ ապրեցուցանել:

ծգ. Թէ գտցի սպանեալ 'ի դաշտի՝ և չգիտիցեն զսպանօղն:
ծդ. Չխառնակել ընդ գերեալ կանայս մինչև ածցէ 'ի տուն ըստ օրինի:
ծե. Վասն պատուելոյ զանդրանիկս, 'ի խորհուրդ անդրանկութեան
Եկեղեցւոյ:
ծզ. Քարկոծել կամ խաչել ասէ զանառակ որդի, և թաղել զխաչեալսն
նախ քան զմուտս արևուն:
ծէ. Չմոլորեալ և զընդ բեռամբ անկեալ գրաստ եղբօրն՝ յարուցանել:
ծը. Վասն պատշաճ զգեստուց արանց և կանանց, 'ի խորհուրդ ողջ
պահելոյ զսահման բնութեանս:
ծթ. Չառնուլ զմայրն և զձագս հաւուց:
կ. Պատուա՛րս դնել շուրջ զտանեօք:
կա. Չվարել այլ և այլ զայգի, 'ի խորհուրդ կնոջ՝ մանաւանդ յղւոյ:
կբ. Չվարել եզամբ և իշով. որ է չհաղորդել սրբոյն ընդ պղծում:
կգ. Այլայլախառն չզգենուլ. սուրբն զվարս պղծոց:
կդ. Ծո՛պս առնել՝ նշան անմոռացութեան:
կե. Որ բամբասէ զկին իւր 'ի շնութիւն՝ նախ քան զառնուլն զնա:
կզ. Սպանանել զշնացեալսն:
կէ. Վասն խօսեցելոյ և պղծելոյ կուսի 'ի դաշտի կամ 'ի քաղաքի, և վասն
ո՛չ խօսեցելոյ:
կը. Չմտանել առ մօրու:
կթ. Վասն կրճատելոց, և վասն պոռնկորդեաց:
հ. Մերժէ զվնոնացին և զՄովաբացին:
հա. Վասն եկաց Եգիպտացւոց և Եդոմայեցւոց:
հբ. Սուրբ պահել զբանակն 'ի բնական աղտեղութենէ, ցի՛ցս զգօտեալ
կրելով:
հգ. Չմատնել զծառայ՝ 'ի չար տեռնէ փախուցեալ:
հդ. Չպոռնկիլ և չնուիրիլ դիւաց:
հե. Գարշելի՛ ասէ զոլ զվարձս շնութեան:
հզ. Հրաժե՛շտ տայ 'ի վաշխից:
հէ. Չեղեալ ուխտն չյապաղել:
հը. Յարտ և յայգի այլոց մտեալ՝ ուտել միայն, և ո՛չ ամանել:
հթ. Ո՛չ կարէ՝ գրով արձակեալ կին և այլում եղեալ, 'ի մեռանել վերջնոյ
առնն դառնալ յառաջինն:
ձ. Նորոգ փեսայացեալն մի՛ ելցէ 'ի պատերազմ:
ձա. Չգրաւել զերկուս երկանաքարս:
ձբ. Մարդագողն մահու սպանցի:
ձգ. Բորոտն արտաքոյ բանակին լիցի:
ձդ. Դարձուցանել զգրաւն նախ քան զմուտս արևուն:
ձե. Չվարձս վարձկանին՝ 'ի նմին աւուր վճարել, նախ քան զմուտս
արևուն:
ձզ. Մի՛ մեռցի հայր ընդ մեղաց որդւոյ:
ձէ. Չզգուել զորբս. և չգրաւել զտնանկս:
ձը. Չառնել հասկաքաղ, ո՛չ ճռաքաղ և ո՛չ պտղաքաղ:
ձթ. Քառասուն անգամ հարկանել զարժանին գանի, և այլ ո՛չ:
ղ. Չկապել զցռուկ եզին կալոտոյ:
ղա. Կենդանի եղբայրն՝ առցէ զկին անզաւակ եղբօր մեռելոյ, ապա թէ ո՛չ՝

տուն բոկացելոյ կոչեսցի:

դբ. Կին որ թէ՛ ի թափել զայր իւր զեկաւորեաց մարտակցին կալցի՝ կտրեսցի ձեռնն:

դգ. Կշիռք և չափք արդար լինիցին:

դդ. Չանուն Ամաղեկայ ջնջել ասէ, որ կատարեցաւ ՚ի ձեռն Մուրթքի, յահ և յերկիւղ խակագործաց:

դե. Առաջին պտղովքն ելանել ասէ ՚ի տեղի անուանն Աստուծոյ, և գոհանալ վասն բերոց երկրին:

դզ. Յերկրորդուն ամին կրկին տասանորդս տալ, զմին Ղևտացւոց և զմասն աղքատաց:

դէ. Ի վերայ բռեալ քարեայ սեղանոյ գրել ասէ զբանս օրինացն, զի ընթերցեալ ուսցին հեթանոսք յանցանելն ընդ հունն Յորդանանու:

դը. Կարգէ անէծս և օրհնութիւնս ընթեռնուլ յերկուս լերինսն՝ ՚ի լուր ամենայն ազգին. կամ զարհուրել յանիծիցն կամ փափագել օրհնութեանցն. և կարի աղիտաւոր առնէ զանէծս: Եւ աստ կայ այն, թէ զկեանս քո տեսցես կախեալ զփայտէ:

դթ. Համառօտէ զամենայն բարիսն Աստուծոյ առ նոսա յեգիպտոսէ և յառաջ. և զգուշացուցանէ և զո՛չ ևս ծնեալսն ՚ի դից պաշտելոյ՝ խառնելով նզովս:

ճ. Ահեղ ցուցանէ զաստն Աստուծոյ ՚ի յանցուցեալսն և կորուսիչս. և յոյս օրհնութեան տայ ՚ի զղջանալն. խրատեալ յօրինացս, որ ո՛չ են հեռի, այլ ՚ի սիրտս և յանձին:

ճա. Յայտ առնէ Մովսէս՝ զի յետ իւր՝ Յեսուայ՝ յանձնի ժողովուրդն, զոր և յորդորէ քաջալերելով:

ճբ. Գրեալ զօրէնս տայ՝ յաւանդ ցքահանայսն ընթեռնուլ յականջս ժողովրդեանն:

ճգ. Էջ Տէր ամպով տալ հրաման Յեսուայ. և գուշակեաց Մովսիսի զոր ինչ առնելոց էր ժողովուրդն. և հրամայեաց գրել զօրհնութիւնսն ՚ի վկայութիւն անօրինելոցն ՚ի գտանել զնոսա չարեացն իւրեանց:

ճդ. Քաջալերեալ Մովսիսի զՅեսու՝ գրեաց զօրհնութիւնսն ՚ի մատեան, և ետ ՚ի պահեստ յՂևտացիսն:

ճե. Հրաման առեալ Մովսիսի ելանել ՚ի լեառն՝ տեսանել զերկիրն և վախճանել. և նախ քան զելանելն յառաջեաց օրհնեաց զԽորայէլ միահամուռ. և ըստ ցեղից ցեղից՝ բաց ՚ի Շմաւոնէ:

ճզ. Ել Մովսէս ՚ի լեառն Նաբաւ. ետես զերկիրն զոր ունելոց էր Խորայէլ. և վախճանեցաւ:

ճէ. Զի եկաց Յեսու փոխանակ Մովսիսի առաջնորդ ժողովրդեանն:

ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ*

* Բազումք համեմատ մերումս ունին զվերնագիր գրոցս, բաց յոմանց որք դնեն՝ Երկրորդ օրինացն:

Գլուխ Ա

Ա՛ՄԴ յս են պատգամք՝ զոր խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն Իսրայէլի յայնկոյս Յորդանանու յանապատին յարևմուտս՝ մերձ ՚ի ծովն Կարմիր, ՚ի մէջ Փառանտիփողայ, և Ղոբանայ, և Յանգրուանացն և Ոսկեկայ*,²մետասանօրեայ՝ ճանապարհ ՚ի Քորեբայ ցլեա՛ռն Սէիր մինչև ցԿադէսբառնեայ՝:³Եւ եղև ՚ի քառասներորդում ամի, յամսեանն մետասաներորդում, որ օր մի՛ էր ամսոյն: Խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն որդիսն Իսրայէլի. ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա Տէր առ նոսա.⁴յետ հարկանելո՛յ զՍեռոն արքայ Անովրիացոց զբնակեալն յեսերոն, և զՈվգ՝ արքայ Բասանու զբնակեալն յԱտարովք և յեդրային.⁵յայն կոյս Յորդանանու յերկրին Մովաբու. սկսաւ Մովսէս մեկնել՝ զօրէնս զայսոսիկ՝ և ասէ.

⁶Տէր Աստուած մեր խօսեցաւ ընդ մեզ ՚ի Քորեբ՝ և ասէ. Շա՛տ լիցի ձեզ բնակելո՛ւ ՚ի լերինս յայսմ*. ⁷դարձարուք և չուեցէ՛ք դուք աստի, և մտանիցէք ՚ի լեռոնն Անովրիացոց, և առ ամենեսին որ շուրջ բնակեալ իցեն զԱրաբացուվք ՚ի լերինս և ՚ի դաշտս, ընդ հարաւ և ընդ ծովեզրն Քանանացոց, և յաներն Լիբանանու՝ մինչև ցգե՛տն մեծ ցգետն Եփրատ: ⁸Տեսէ՛ք զի ահա մատնեցի առաջի ձեր զերկիրն, մտէ՛ք ժառանգեցէ՛ք զերկիրն՝ զոր երդուայ ես հարցն ձերոց, Աբրահամու և Սահակայ և Յակոբայ. տա՛լ նոցա և զաւակի նոցա յետ նոցա զերկիրն՝ որ բոխտ զկաթն և զմեղր:

Բ⁹Եւ խօսեցայ ընդ ձեզ ՚ի ժամանակին յայնմիկ՝ և ասեմ. ¹⁰Ո՛չ կարեմ միայն հանդարտել ձեզ. Տէր Աստուած մեր բազմացոյց զձեզ. և ահաւասիկ է՛ք դուք այսօր իբրև զաստեղս երկնից բազմութեամբ*:¹¹Տէր Աստուած հարցն մերոց յաւելցէ՛ ՚ի ձեզ ևս քան որչափ էրդ հազարապատիկ, և օրհնեսցէ՛ զձեզ՝ որպէս և խօսեցաւ ընդ ձեզ: ¹²Եւ զի՞արդ կարիցեմ միայն կրել զաշխատութիւն ձեր, և զաղիսս ձեր, և զհակառակութիւնս ձեր: ¹³Արդ՝ տո՛ւք ՚ի ձէնջ ձեզ արս իմաստունս, և խորհրդականս, և հանճարեղս ՚ի վերայ ցեղից ձերոց. և կացուցի՛ց ՚ի վերայ ձեր իշխանս ձեզ: ¹⁴Եւ պատասխանի՛ տուեալ ասացէք ցիս. Բարու՛ք է բանդ զոր խօսեցար առնել*:¹⁵Եւ առի՛ ՚ի ձէնջ զցեղապետսն, արս իմաստունս և հանճարեղս, և խորհրդականս. և կացուցի զնոսա ՚ի վերայ ձեր, առաջնորդս, հազարապետս, և հարիւրապետս, և յիսնապետս, և տասնապետս, և ատենադպիրս դատաւորացն ձերոց: ¹⁶Եւ պատուիրեցի դատաւորացն ձերոց ՚ի ժամանակին յայնմիկ՝ և ասեմ. Լուարո՛ւք ատենի ՚ի մէջ եղբարց ձերոց. և դատեցարո՛ւք արդարութեամբ ՚ի մէջ առն և եղբօր իւրոյ. և ՚ի մէջ եկին իւրոյ*. ¹⁷և մի՛ առնուցուս ակն ՚ի դատաստանի, ըստ փոքուն և ըստ մեծին դատիցիս. և մի՛ խորշիցիս յերեսաց մարդոյ. զի դատաստանն Աստուծոյ է. և բան ինչ որ ծանրագոյն քան զձեզ իցէ, հասուջի՛ք առ իս՝ և լուայց*:¹⁸Եւ պատուիրեցի ձեզ ՚ի ժամանակին յայնմիկ զամենայն բանս՝ զոր առնիցէք:

*Ոմանք. ՚ի մէջ Փառարանտա փողեայ և Ղոբոնայ: Ոմանք. Փառարանտիփողայ. և ոմանք. Փառարանա փողեայ: Ոսկան. Եւ Ղոբանայ և Ասերօբայ, և Յանգրուանացն Ոսկեկայ:

*Ոմանք. Յլեռոն Սուր մինչև:

*Ոմանք. ՚ի լերինս յայսմիկ, կամ՝ յայսոսիկ:

*Ոմանք. Եւ ահաւաղիկ էք դուք:

*Ոմանք. Եւ պատասխանի ետուք ինձ և ասացէք. Բարիոք է:

*Ոմանք. Լուարո՛ւք ատենն ՚ի մէջ:

*Ոմանք. Եւ ըստ մեծին դատեսցիս:

Գ ¹⁹Եւ չուեալ ՚ի Քորեբայ շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մե՛ծ և ընդ ահագին, զոր դո՛ւք իսկ տեսէք, զճանապարհ լերինն Անովրհացւոց. որպէս պատուիրեաց Տէր Աստուած մեր մեզ, և եկաք մինչև ցԿաղէսբառնեայ: ²⁰Եւ ասացի ցձեզ. Եկայք մինչև ցլեառն Անովրհացւոց՝ զոր Տէր Աստուած մեր տացէ՛ ձեզ* . ²¹տեսէ՛ք՝ զի Տէր Աստուած մեր մատնեաց առաջի երեսաց ձերոց զերկիրն. ելէ՛ք և ժառանգեցէ՛ք՝ որպէս ասաց Տէր Աստուած հարցն մերոց ձեզ. մի՛ երկնչիցիք՝ և մի՛ զանգիտիցէք: ²²Եւ մատեայք առ իս ամենեքեան՝ և ասացէք. Առաքեսցուք յառաջագոյն քան զմեզ արս, և դիտեսցեն մեզ զերկիրն. և պատմեսցեն մեզ զհանգամանս ճանապարհին ընդ որ ելանիցենք անդր, և զքաղաքացն յորս մտանիցենք: ²³Եւ հաճո՛յ թուեցաւ առաջի իմ բանն. և առի ՚ի ձէնց երկոտասան այր, այր մի ըստ ցեղի՛* : ²⁴Եւ զնացին ելին ՚ի լեառնն, և հասին մինչև ՚ի Ձո՛րն ողկուզի, և լրտեսեցին զնա. ²⁵և առին ՚ի ձեռս իւրեանց ՚ի պտղոյ երկրին, և իջին առ մեզ՝ և բերին մեզ գրո՛յց. ասեն. Բարի՛ է երկիրն՝ զոր Տէր Աստուած տալոց է մեզ* : ²⁶Եւ ո՛չ կամեցայք ելանել, և հեստեցէք բանին Տեառն Աստուծոյ մերոյ* . ²⁷և տրտնջեցէք ՚ի վրանս ձեր և ասացէք. Առ ատելութեան Տեառն եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, մատնել՝ զմեզ ՚ի ձեռս Անովրհացւոց, սատակել զմեզ. ²⁸արդ՝ յո՞՞ ելանիցենք: Եւ եղբարք ձեր զանգիտեսցուցին զսիրտս ձեր՝ և ասեն. Ազգ մե՛ծ և բազում, և զօրագոյն քան զմեզ, և քաղաքք մեծամեծք և պարսպաւորք մինչև յերկինս. այլ և որդիս սկայից տեսաք մեր անդ* : ²⁹Եւ ասացի ցձեզ. Մի՛ զանգիտիցէք և մի՛ զարհուրիք ՚ի նոցանէ՛* . ³⁰Տէր Աստուած մեր որ երթայ առաջի երեսաց ձերոց, նա՛ տայ պատերազմ ընդ նոսա փոխանակ ձեր. ըստ ամենայնի զոր արա՛ր ձեզ յերկրին Եգիպտացւոց առաջի աչաց ձերոց* . ³¹և յանապատիս յայսմիկ զոր տեսէք. զի սնո՛յց զքեզ Տէր Աստուած քո, որպէս սնուցանիցէ որ զորդի իւր, ըստ ամենայն ճանապարհին զոր գնայցէք՝ մինչև եկիք ՚ի տեղիս յայս* : ³²Եւ ՚ի բանիս յայսմիկ ո՛չ հաւատացէք Տեառն Աստուծոյ մերոյ* , ³³որ երթայ առաջի ձեր ՚ի ճանապարհիդ, ընտրել ձեզ զտեղին. առաջնորդել ձեզ հրո՛վ ՚ի գիշերի, ցուցանել ձեզ ճանապարհ ընդ որ գնայցէք. և ամպով ՚ի տուէ՛* : ³⁴Եւ լուաւ Տէր զձայն բանիցն ձերոց. և բարկացեալ երդուաւ՝ և ասէ՛* . ³⁵Թէ՛ տեսանիցէ որ յարանդոյ յայտցանէ զերկիրն բարի՛ զոր երդուայ տա՛լ հարցն նոցա, ³⁶բայց Քաղէբ որդի Յեփոնեայ, նա՛ տեսցէ զնա. և նմա՛ տաց զերկիրն յոր եհաս և որդւոցն նորա, վասն յարելոյ նորա ՚ի Տէր: ³⁷Եւ ինձ բարկացաւ Տէր վասն ձեր՝ և ասէ. Եւ դու մի՛ մտցես անդր* . ³⁸այլ Յեսու որդի Նաւեայ սպասաւոր քո, նա՛ մտցէ անդր. զնա՛ զօրացո, զի նա՛ ժառանգեսցուցէ զնա Իսրայէլի: ³⁹Եւ ծնունդք և որդիք ձեր զորոց ասացէք թէ յափշտակութիւն

* *Ոմանք.* Տէր Աստուած մեր տացէ մեզ:

* *Ոմանք.* Առաջի իմ բանքն:

* *Ոմանք.* Ձոր Տէր Աստուած մեր տա՛:

* *Ոմանք.* Տեառն Աստուծոյ ձերում:

* *Ոմանք.* Եւ արդ յո՞՞ ելանի՞... մինչև ցերկինս:

* *Ոմանք.* Մի՛ զանգիտէք և մի՛ զարհուրիցիք:

* *Ոմանք.* Առաջի աչաց մերոց:

* *Բազումք.* ճանապարհին զոր գնացէք:

* *Ի լուս՛.* Տեառն Աստուծոյ մերոյ, *համաձայն բազմաց. յորս և ոմանք՝* ձերում:

* *Ոմանք.* Եւ ցուցանել ձեզ հրով զճանապարհն ընդ:

* *Ոսկան.* Եւ լուաւ Աստուած զձայն: *Յօրինակին.* Եւ բարձացեալ երդուաւ:

* *Ոսկան.* Եւ ինձ բարկացաւ Աստուած:

լինիցին, և ամենայն մանուկ մատաղ որ ո՛չ գիտիցէ այսօր զբարի և զչար, նոքա՛ մտցեն անդր. և նոցա՛ տաց զնա, և նոքա ժառանգեսցեն զնա՝: ⁴⁰Եւ դուք դարձարուք և չուեցէք յանապատն ընդ ճանապարհ Կարմիր ծովուն:

Դ ⁴¹Եւ պատասխանի ետուք ինձ և ասացէք. Մեղա՛ք առաջի Տեառն Աստուծոյ մերոյ. ելցու՛ք մեք՝ տացուք պատերազմ, որպէս պատուիրեա՛ց մեզ Տէր Աստուած մեր. և առեալ իւրաքանչիւր զգործի պատերազմի իւրոյ՝ զունարեցայք ելէք ՚ի լեառնն: ⁴²Եւ ասէ ցիս Տէր. Ասա՛ ցնոսա. Մի՛ ելանէք և մի՛ մարտնչիք՝ զի չեն՝ ընդ ձեզ, զուցէ՛ խորտակիցիք առաջի թշնամեաց ձերոց՝: ⁴³Եւ խօսեցայ ընդ ձեզ՝ և ո՛չ լուարուք ինձ, և անցէք զբանիւ Տեառն. և անաստեցէք ելէք ՚ի լեառնն: ⁴⁴Եւ ելեալ Ամովրհացին՝ որ բնակեալն էր ՚ի լերինն յայնմիկ ընդդէմ ձեր՝ հալածեա՛ց զձեզ, որպէս պատիցի մեղու, և խոցուտեցին զձեզ ՚ի Սէիրայ մինչև ց՜երմա՝: ⁴⁵Եւ նստեալ լայիք առաջի Տեառն. և ո՛չ լուաւ Տէր ձայնի ձերում, և ո՛չ անսաց ձեզ: ⁴⁶Եւ նստայք ՚ի Կադէս աւուրս բազումս. որչափ աւուրս երբեմն նստայք անդր:

2

Գլուխ Բ

¹Եւ դարձաք չուեցաք յանապատն ընդ ճանապարհ Կարմիր ծովուն. զոր օրինակ խօսեցաւ Տէր ընդ իս. և պատեցաք զՍէիր լեռամբ աւուրս բազումս՝:

Ե ²Եւ ասէ ցիս Տէր. ³Շա՛տ լիցի ձեզ պատել զլեռամբդ. արդ՝ դարձարուք ընդ կողմն հիւսւսոյ: ⁴Եւ ժողովրդեանդ պատուէր տուր՝ և ասացես. Դուք աւադիկ անցանէք առ սահմանօք եղբարց ձերոց՝ որդւոց Եսաւայ, որ բնակեալ են ՚ի Սէիր. և երկնչիցին ՚ի ձէնջ: ⁵Եւ զգուշանայցէք յոյժ. մի՛ գրգռիցիք ընդ նոսա ՚ի պատերազմ, զի ո՛չ տաց ձեզ յերկրէ նոցա՝ և ո՛չ քայլ մի ոտին. քանզի վիճակաւ ետու Եսաւայ զլեառնն Սէիր՝: ⁶Կերակուրս զնեսջիք ՚ի նոցանէ և կերիջիք. և ջուր չափով արծաթոյ առջիք ՚ի նոցանէ՝ և արբջիք: ⁷Ձի Տէր Աստուած մեր օրհնեաց զքեզ յամենայն գործս ձեռաց քոց: Ծանի՛ր զիարդ անցեր ընդ անապատն մե՛ծ և ահագին. ահա քառասուն ամ Տէր Աստուած քո ընդ քե՛զ է. և ո՛չ իւիք կարօտեցար՝: ⁸Եւ անցա՛ք առ եղբարքք մերովք որդւովքն Եսաւայ բնակելովքն ՚ի Սէիր, առ ճանապարհաւն Արաբացւոց յեղոմայ, և ՚ի Գասիոնգաբերայ: Եւ դարձեալ անցաք ընդ ճանապարհ անապատին Մովաբու՛: ⁹և ասէ ցիս Տէր. Մի՛ թշնամանիցէք ընդ Մովաբացիսն, և մի՛ գրգռիցէք ընդ նոսա ՚ի պատերազմ. զի ո՛չ տաց ձեզ յերկրէն նոցա ՚ի վիճակ. քանզի որդւոցն Դովտայ՝ ետու զՍէիր ՚ի ժառանգութիւն՝: ¹⁰Եւ Ոմմի՛նքն նախ բնակեալ էին ՚ի նմա՝ ա՛զգ մեծ և բազում և հզօր, որպէս Ենակինք ¹¹ընդ Ռափայինսն

* Այլք. Թէ ՚ի յափշտակութիւն լինիցին:

* Ոմանք. Մի՛ ելանիցէք... զուցէ սատակիցիք առա՛:

* Ոմանք. Եւ հալածեաց զձեզ, որպէս պատիցէ:

* Ոսկան. Եւ դարձեալ չուեցաք յա՛:

* Ոմանք. Մի՛ գրգռիցէք ընդ նոսա պատերազմ:

* Յօրինակին. Օրհնեաց զյամենայն գործս: Ոմանք. Մեծ և ընդ ահագին... և ո՛չ իւիք կարօտացար:

* Ոմանք. Առ եղբարքք ձերովք... Արաբացւոց յեղոմայ, և ՚ի Գասի՛:

* Ոմանք. Մի՛ թշնամիցիք. կամ՝ մի՛ թշնամանիցիք... ընդ նոսա պատերազմ... յերկրէն նոցա վիճակ:

համարիցին, նոյնպէս և նոքա իբրև զԵնակինս. և Մովսէսիք անուանեն զնոսա Ոմմինս: ¹²Եւ ՚ի Սէիր նախ բնակեալ էր Քոռեցին. և որդիքն Եսաւայ կորուսին զնոսա, և սատակեցին զնոսա յերեսաց իւրեանց, և բնակեցան փոխանակ նոցա. զոր օրինակ արար Իսրայէլ զերկիր ժառանգութեան իւրոյ՝ զոր ետ նոցա Տէր*։ ¹³Եւ արդ՝ արի՛ք չուեցէ՛ք և անցէ՛ք ընդ ձորն Ջարեղ*։ ¹⁴Եւ աւուրք որչափ անկան մեզ ՚ի գնալն մեզ ՚ի Կադէսբառնեայ, մինչև անցա՛ք ընդ ձորն Ջարեղ, երեսուն և ութ ամ. մինչև անկա՛ւ ամենայն ազգ արանց պատերազմողաց ՚ի բանակէ անտի, որպէս երդուաւ նոցա Աստուած*։ ¹⁵Եւ ձեռն Աստուծոյ էր ՚ի վերայ նոցա սատակել զնոսա ՚ի բանակէն մինչև անկան*։ ¹⁶Եւ եղև իբրև անկան ամենայն արք պատերազմօղք մեռեալք ՚ի միջոյ ժողովրդեանն, ¹⁷խօսեցա՛ւ Տէր ընդ իս՝ և ասէ. ¹⁸Դու անցանես այսօր առ սահմանօք Մովսէսի ՚ի Սէիր. ¹⁹և մօտ հասանիցէք յորդիսն Ամոնայ, մի՛ թշնամանիցիք ընդ նոսա, և մի՛ գրգռիցէք ընդ նոսա պատերազմ. զի ո՛չ տաց ձեզ զերկիր որդւոցն Ամոնայ ՚ի վիճակ. քանզի որդւոցն Ղովտայ՝ ետու զնոսա վիճակաւ*։ ²⁰Երկիր որ Ռափնայ համարեսցի. քանզի նախ՝ Ռափայի՛նք բնակէին ՚ի նմա. և Ամոնացիք անուանեն զնոսա Ջոմզոմինս*, ²¹ազգ մեծ և բազում և զօրաւոր իբրև զԵնակինսն. և կորոյս զնոսա Տէր յերեսաց նոցա. և ժառանգեցին և բնակեցին փոխանակ նոցա: ²²Որպէս արար որդւոցն Եսաւայ բնակելոց ՚ի Սէիր, զորօրինակ սատակեաց Տէր զՔոռեցին յերեսաց նոցա, և ժառանգեցին և բնակեցին փոխանակ նոցա մինչև ցայսօր*։ ²³Եւ Խնացիքն որ բնակեալ էին յԱսիրովք մինչև ցԳազայ. և Գամիրքն որ ելեալ էին ՚ի Գամրաց՝ սատակեցին զնոսա, և բնակեցան փոխանակ նոցա*։

Ձ ²⁴Արդ՝ արի՛ք չուեցէ՛ք և անցէ՛ք ընդ ձորն Ամոնվայ. ահա մատնեցի՛ ՚ի ձեռս քո զՍեհոն արքայ Եսեբոնայ զԱմովրիացի. և զերկիր նորա սկսիր ժառանգել. և գրգռել ընդ նմա պատերազմ*։ ²⁵Յօրէ յայսմանէ սկսիր տալ զահ և զերկիր քո առաջի ամենայն ազգաց որ են ՚ի ներքոյ երկնից. զի որք լսիցեն զանուանէ քումմէ՛ խռովեսցին, և երկու՛նք կալցին զնոսա յերեսաց քոց: ²⁶Եւ առաքեցի հրեշտակս յանապատէն Կեդմովթայ առ Սեհոն արքայ Եսեբոնայ բանիւք խաղաղութեան, և ասեմ. ²⁷Անցի՛ց ընդ երկիր քո, զճանապարհայն գնացից. ո՛չ խոտորեցայց յաջ և ո՛չ յահեակ: ²⁸Կերակուր՝ արծաթոյ՝ վաճառեսցես ինձ և կերայց. և ջուր՝ արծաթոյ՝ վաճառեսցես ինձ և արբից. բայց զի ոտիւք և եթ անցից. ²⁹որպէս արարին ինձ որդիքն Եսաւայ բնակեալքն ՚ի Սէիր, և Մովսէսիքն բնակեալք յԱրոէր. մինչև անցի՛ց ընդ Յորդանան յերկիրն զոր Տէր Աստուած տացէ՛ մեզ*։ ³⁰Եւ ո՛չ կամեցաւ Սեհոն արքայ Եսեբոնայ անցանել մեզ առ նովաւ. զի խստացոյց Տէր Աստուած մեր զոգի նորա, և կարծրացոյց զսիրտ

* Ոմանք. Ջոր ետ նոցա Աստուած:

* Ոմանք. Եւ անցէք ՚ի ձորն Ջարեղ:

* Ոմանք. ՚ի գնալն մեր ՚ի Կադէսբառն:

* Այլք. Եւ ձեռն Տեառն էր ՚ի վերայ:

* Ոմանք. Մի՛ թշնամիցիք... և մի՛ գրգռիցիք ընդ նոսա ՚ի պատերազմ:

* Ոմանք. Որ Ռափանայ. կամ՝ Ռափայան համարեսցին... Անուանեն զնոսա Ջոմմինս:

* Ոմանք. Այնպէս արար որդւոցն Եսաւայ:

* Ոմանք. Որ ելանէին ՚ի Գամրաց:

* Ոսկան. Ջգրգռել ընդ նմա:

* Ոմանք. Ջոր Տէր Աստուած տալոց է մեզ:

նորա՝ զի մատնեցի ՚ի ձեռս քո յաւուրն յայնմիկ*։ ³¹Եւ ասէ ցիս Տէր. Ահա՛ սկսեալ եմ մատնել առաջի երեսաց քոց զՍեհոն արքայ Եսեբոնի զԱմովրիացի՝ և զերկիրն նորա. սկսի՛ր վիճակաւ ժառանգել զերկիրն նորա։ ³²Եւ ել Սեհոն արքայ Եսեբոնի ընդդէմ մեր, ինքն և ժողովուրդ իւր պատերազմաւ ՚ի Սիասար. ³³և մատնեաց զնոսա Տէր Աստուած մեր ՚ի ձեռս մեր. և հարա՛ք զնա և զորդիս նորա, և զամենայն ժողովուրդ նորա*։ ³⁴և յաղթեցա՛ք ամենայն քաղաքացն ՚ի ժամանակին յայնմիկ. և սատակեցա՛ք զամենայն քաղաքս նորա մի ըստ միոջէ, և զկանայս նոցա, և զմանկունս իւրեանց. և ո՛չ թողաք ՚ի նոցանէ ապրեալ։ ³⁵Բայց զի զխաշի՛նսն ածաք յաւարի, և զկապուտ քաղաքացն զոր առաք յԱրոտերայ. ³⁶որ է՛ առ եզերք ձորոյն Առնովնայ. և զքաղաքն որ է ՚ի ձորն, մինչև ցսահմանս Գաղաադու. և ո՛չ էր քաղաք որ ապրեցաւ ՚ի մէջ. այլ զամենայն մատնեաց Տէր Աստուած մեր ՚ի ձեռս մեր*։ ³⁷Բայց յերկիր որդւոցն Ամոնայ յոր ո՛չ մերձեցաք՝ զամենայն արուարձանս ձորոյն Յաբովկայ, և զամենայն քաղաքսն լեռնականս՝ որպէս պատուիրեաց մեզ Տէր Աստուած մեր*։

3

Գլուխ Գ

¹Եւ դարձա՛ք ելաք ընդ ճանապարհն Բասանու. և ել Ովգ արքայ Բասանու ընդդէմ մեր. ինքն և ամենայն ժողովուրդ նորա պատերազմաւ ՚ի Սեդրային։ ²Եւ ասէ ցիս Տէր. Մի՛ երկնչիցիս ՚ի նմանէ. զի ՚ի ձեռս քո մատնեցի զնա, և զամենայն ժողովուրդ նորա, և զամենայն երկիր նորա. և արասցես նմա որպէս արարեր Սեհոնի՝ արքայի Ամովրիացւոց՝ որ բնակեալ էր յԵսեբոն։ ³Եւ մատնեաց զնա Տէր Աստուած մեր ՚ի ձեռս մեր. եւ զՈվգ արքայ Բասանու, և զամենայն ժողովուրդն նորա. և հարա՛ք զնա մինչ ո՛չ թողուլ նմա զաւակ։ ⁴Եւ յաղթեցա՛ք ամենայն քաղաքացն նորա ՚ի ժամանակի յայնմիկ. և ո՛չ էր քաղաք՝ զոր ո՛չ առաք ՚ի նոցանէ. վաթսուն քաղաք զամենայն շուրջ զգաւառան Արբովկայ թագաւորին Ովգայ ՚ի Բասան*։ ⁵ամենայն քաղաքք ամուրք բարձրապարիսպք, դրամբք և դռնափակօք. թո՛ղ ցքաղաքսն արձակաքաղաքս Փերեզացւոց բազումս յոյժ։ ⁶Եւ սատակեցաք զնոսա՝ որպէս արարաք զՍեհոն արքայ Եսեբոնի. և սատակեցաք զամենայն քաղաքս մի ըստ միոջէ, և զկանայս և զմանկունս. և ո՛չ թողաք մազապուր. ⁷և զամենայն զանասուն և զկապուտ քաղաքացն ածաք մեզ յաւար*։ ⁸Եւ առա՛ք ՚ի ժամանակի յայնմիկ զերկիրն ՚ի ձեռաց երկուց թագաւորացն Ամովրիացւոց. որ էին յայնկոյս Յորդանանու, յԱռնովնայ մինչև ցԱհերմոն։ ⁹Եւ Փիւնիկեցիք անուանեցին զԱհերմոնն Սանիովր. և Ամովրիացին անուանեաց զնա Սանիր*։ ¹⁰Ամենայն քաղաքք Միսովրայ, և ամենայն Գաղաադ, և ամենայն Բասան, մինչև ցեղքա, և

* Ոմանք. ՚ի ձեռս քո յաւուրս յայսմիկ։

* Այլք. Եւ մատնեաց զնա Տէր։

* Ոմանք. ՚ի ձորն, և մինչև ցսահ՝... զոր ապրե՛ն։

* Ոմանք. Բայց երկիրն որդւոցն Ամով՝... ձորոյն Յարբովկայ. կամ՝ Յաբովկայ։

* Յորինակին չակերտիւ նշանակի անունս՝ Արբովկայ, զոր ոմանք գրեն՝ Արգովբայ։

* Ոմանք. Ածաք մեզ յաւարի։

* Ոմանք. ՁԱհերմոնն՝ Անիովր։

ցեղրային. քաղա՛քք թագաւորութեան էին Ովգայ ՚ի Բասան*։ ¹¹Զի Ովգ միայն արքայ Բասանու մնա՛ց յՌափայնոց անտի. և գահոյք նորա գահոյք երկաթիք. և ահա է այն յամրոցի՛ որդւոցն Ամոնայ՝ ինն կանգուն երկայնութիւն նորա և չորք կանգուն լայնութիւն նորա, սկայի՛ց կանգնով։ ¹²Եւ զերկիրն զայն ժառանգեցաք ՚ի ժամանակի յայնմիկ, յԱրոտերայ որ է առ եզերք ձորոյն Առնովնայ։ Եւ զկէս ձորոյն Գաղաադու և զքաղաքս նորա ետու Ռուբինի և Գադայ*։ ¹³և զաւելորդն Գաղաադու և զամենայն Բասան՝ զթագաւորութիւնն Ովգայ՝ ետու կիսոյ ցեղին Մանասէի. և զամենայն գաւառն Արբովկայ, և զամենայն Բասանն, որ երկիր Ռափայնոցն համարիցի*։ ¹⁴Եւ Յայիր՝ որդի Մանասէի ա՛ռ զամենայն գաւառն Արբովկայ մինչև ցահմանս Գարգասեայ և Ոմքատեայ. և անուանեաց զնա յիւր անուն, զԲասան՝ Առովթիւր, մինչև ցայսօր ժամանակի*։ ¹⁵Եւ Մաքիրայ ետու զԳաղաադ. ¹⁶և Ռուբինի և Գադայ ետու ՚ի Գաղաադէ, մինչև ՚ի ձորն Առնովնայ, ընդ մէջ ձորոյն սահման մինչև ցԱրբով, ձորն սահման որդւոցն Ամոնայ*։ ¹⁷և Արաբիա, և Յորդանան սահման է նմա ՚ի Քենէրեթայ մինչև ցծովն Արաբիայ ծովն Ադի. յԱսեղովթայ յարևելից Փասգայ*։

Ե ¹⁸Եւ պատուիրեցի՛ ձեզ ՚ի ժամանակին յայնմիկ՝ և ասեմ. Տէր Աստուած մեր ետ ձեզ զերկիրս զայս ՚ի վիճակ. վառեցարուք անցէք առաջի եղբարց ձերոց՝ որդւոցն Իսրայէլի ամենայն զօրաւոր*։ ¹⁹Բայց կանայք ձեր և մանկունք ձեր, և անասուն ձեր, գիտե՛մ զի անասուն բազում է ձեր, բնակեցեն ՚ի քաղաքս ձեր՝ զոր ետու ձեզ, ²⁰մինչև զետեղեսցէ Տէր Աստուած մեր զեղբարս ձեր, որպէս և զձե՛զ. զի ժառանգեսցեն և նոքա զերկիրն՝ զոր Տէր Աստուած մեր տացէ նոցա յայնկոյս Յորդանանու. և դարձջիք այսրէն յիւրաքանչիւր ժառանգութիւն իւր՝ զոր ետու ձեզ։ ²¹Եւ Յեսուայ պատուիրեցի ՚ի ժամանակին յայնմիկ՝ և ասեմ. Ա՛չք ձեր իսկ տեսին զամենայն զոր արար Տէր Աստուած քո ընդ երկուս թագաւորսն ընդ այնոսիկ. նոյնպէս արասցէ Տէր ընդ ամենայն թագաւորութիւնս՝ յորոց վերայ դիմեսցես դու. ²²մի՛ զանգիտիցէք. զի Տէր Աստուած մեր ինքնին պատերազմեսցի փոխանակ ձեր*։

Ը ²³Եւ աղաչեցի զՏէր Աստուած ՚ի ժամանակին յայնմիկ՝ և ասեմ. ²⁴Տէր՝ Տէր, դո՛ւ սկսար ցուցանել ծառայի քում զսաստկութիւն քո և զզօրութիւն քո, զձեռն հզօր և զբազուկ բարձր. քանզի ո՞վ է Աստուած յերկինս կամ յերկրի՝ որ առնիցէ որպէս դու արարեր ըստ զօրութեան քում։ ²⁵Արդ՝ անցեա՞լ տեսից զերկիրն բարի՝ որ է յայնկոյս Յորդանանու, զլեա՛ռնն բարի զերկրորդն Լիբանան*։ ²⁶Եւ անտե՛ս արար զիս Տէր վասն ձեր, և ո՛չ լուաւ ինձ. և ասէ ցիս Տէր. Շա՛տ լիցի քեզ՝ մի՛ ևս յաւելուցուս խօսել զբանդ զայդ։ ²⁷Ե՛լ ՚ի կատար կոփածոյիդ, և հայեցեալ աչօք քովք ընդ ծովակողմն, և ընդ հիւսիսի, և ընդ հարաւ, և ընդ արևելս, տես՛ս աչօք քովք. քանզի ո՛չ անցանիցես ընդ այդ Յորդանան։ ²⁸Եւ

* Ոսկան. Մինչև ցԱելքայ։

* Ոմանք. Եւ զերկիրն զայն ժառանգեցէք ՚ի։

* Օրինակ մի. Որ է երկիր Ռափայ ՚ի նոյն համարիցի։

* Ոմանք. Գաւառն Արգովթայ մինչև ՚ի սահմանսն Գարգասեայ և Ասքատեայ... զԲասան Առովթիւ։

* Ոմանք. Մինչև ցձորն Առնովնի, ընդ մէջ։ Ոմանք. Չորն որ է սահման որդ՛։

* Ոմանք. Եւ Արաբայ, և Յորդանան սահման առ ՚ի Քանարաթայ, կամ Քենարաթայ։

* Ոմանք. Առաջի երեսաց եղբարց ձերոց։

* Ոմանք. Զի Տէր Աստուած ձեր ինքնին։

* Ոմանք. Եւ զերկրորդն զԼիբանան։

պատուիրեա՛ Յեսուայ և զօրացուցե՛ս զնա, և մխիթարեսցե՛ս զնա. զի նա՛ անցցէ առաջի ժողովրդեան իմոյ այդորիկ. և նա՛ ժառանգեսցուցէ դոցա զերկիրն զոր տեսեր: ²⁹Եւ նստա՛ք ՚ի հովիտսն մերձ ՚ի տունն Փոզովրայ*:

4

Գլուխ Դ

Թ ¹Եւ այժմ Իսրայէլ՝ լո՛ւր իրաւանց և դատաստանաց, զոր ես ուսուցանեմ քեզ այսօր առնել. զի կեցջիք, և մտանիցէք ժառանգել զերկիրն՝ զոր Տէր Աստուած մեր տացէ ձեզ*։ ²Մի յաւելուցուք ինչ ՚ի բանն՝ զոր ես պատուիրեմ ձեզ, և մի՛ հատանիցէք ՚ի նմանէ. պահեսջիք զիրամանս Տեառն Աստուծոյ մերոյ զոր ե՛ս պատուիրեմ ձեզ*։ ³Աչք ձեր տեսին՝ զոր ինչ արա՛ր Տէր ընդ Բելփեգովր. զի ամենայն մարդ որ չոգաւ զհետ Բելփեգովրայ՝ սատակեաց զնա Տէր Աստուած մեր ՚ի ձէնջ։ ⁴Բայց դուք՝ որ յարեցայք ՚ի Տէր Աստուած ձեր, կենդանի՛ էք դուք ամենեքեան յաւուրս յայսմիկ։ ⁵Տեսէ՛ք զի ուսուցի ձեզ զիրաւո՛ւնս և զդատաստանս՝ որպէս պատուիրեաց ինձ Տէր առնել զայն յերկրին յորում դուք մտանիցէք ժառանգել զնա*։ ⁶Եւ պահեսջի՛ք և արասջի՛ք. զի այ՛ն է իմաստութիւն ձեր և հանճար առաջի ամենայն ազգացն, որ լսիցեն զամենայն իրաւունս զայսոսիկ և ասիցեն. Ահա ժողովուրդ իմաստո՛ւն և հանճարե՛ղ ա՛զգս այս մեծ։ ⁷Քանզի ո՞վ իցէ ազգ մեծ՝ որոյ իցէ Աստուած մօտ ՚ի նոսա. որպէս Տէր Աստուած մեր յամենայնի՝ որովք կարդասցուք առ նա*։ ⁸և ո՞ր ազգ մեծ՝ որոյ իցեն իրաւունք և դատաստանք արդարք, ըստ ամենայնի իրաւանցս այսոցիկ՝ զոր ե՛ս տամ այսօր առաջի ձեր*։

Ժ ⁹Հայեաց՛ ՚ի քեզ և զգո՛յշ լեր անձին քում յոյժ. մի՛ մոռանայցես զամենայն բանս զայսոսիկ՝ զոր տեսին աչք քո. և մի՛ մերժեսցին ՚ի սրտէ քումմէ զամենայն աւուրս կենաց քոց. և խելամո՛ւտ արասցես որդւոց քոց, և որդւո՛ց որդւոց քոց*։ ¹⁰Չօրն յորում կացէք դուք ՚ի Քորէբ առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ յաւուրն եկեղեցւոյ. յորժամ ասաց ցիս Տէր, թէ. Եկեղեցացւո՛ առիս զժողովուրդդ, և լուիցեն զպատգամս իմ զոր ուսուցից երկնչե՛լ յինէն զամենայն աւուրս՝ որչափ կենդանի՛ իցեն դոքա ՚ի վերայ երկրի, և ուսուցեն՝ զորդիս իւրեանց*։ ¹¹Եւ մատուցեալ կայիք դուք առ ստորոտով լերինն. և լեառնն բորբոքէր հրով մինչև յերկինս, և խաւար և մէգ և մառախո՛ւղ էր*։ ¹²Եւ խօսեցաւ Տէր ընդ ձեզ ՚ի միջոյ հրոյն. զձայն պատգամացն լուարուք դուք, և նմանութիւն ինչ ո՛չ տեսէք. բայց միայն զբարբա՛ռն։ ¹³Եւ պատմեաց՝ ձեզ զուխտն իւր զոր պատուիրեաց ձեզ առնել, զտա՛նսն պատգամսն. և գրեաց զնոսա ՚ի վերայ երկուց քարեղէն տախտակաց։ ¹⁴Եւ պատուիրեաց ինձ ՚ի ժամանակին յայնմիկ՝ ուսուցանել

* Ոմանք. Եւ նստայք ՚ի հովիտսն:

* Ոմանք. Եւ այժմ լո՛ւր Իսրայէլ: Այլք. Եւ մտանիցէք ժառանգիցէք զեր՛:

* Ի լուս՛. Պահեսջիք զպատուիրանս Տեառն Աստուծոյ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:

* Բազումք. Յոր դուք մտանիցէք:

* Ի լուս՛. Որոյ իցէ ՚ի նմա Աստուած մօտ ՚ի նոսա. համաձայն բազմաց ՚ի բնաբ՛:

* Այլք. Ըստ ամենայնի օրինացս այսո՛:

* Ոմանք. Չամենայն զբանս զայսոսիկ՝ զոր տեսին աչք ձեր, և մի՛:

* Ոմանք. Յորում ասաց ցիս Տէր՝ թէ եկեղեցացո՛... զոր ուսցին երկնչել... որչափ և կենդա՛:

* Ոմանք. Առ ստորոտ լերինն... մինչև ցերկինս:

իրաւունս ձեզ և դատաստանս. և առնել՝ ձեզ զնոսա յերկրին յոր դուք մտանիցէք ժառանգել՝ զնա: ¹⁵Եւ զգուշացարո՛ւք յոյժ անձանց ձերոց. զի նմանութիւն ինչ ո՛չ տեսէք յաւուրն յայնմիկ՝ յորում խօսեցաւ ընդ ձեզ Տէր՝ ի Քորէբ լերինն՝ ի միջոյ՛ հրոյն*։ ¹⁶Մի՛ անօրինիցիք, և առնիցէք ձեզ դրօշեալս նմանութիւն ամենայն պատկերի. նմանութիւն արուական կամ իգական*։ ¹⁷Նմանութիւն ամենայն անասնոց՝ որ իցեն յերկրի. նմանութիւն ամենայն հաւու թռչնոյ, որ թռչիցին՝ ի ներքոյ երկնից*։ ¹⁸Նմանութիւն ամենայն սողնոց՝ որ սողին ի վերայ երկրի. նմանութիւն ամենայն ձկանց՝ որ իցեն ի ջուրս ի ներքոյ երկրի*։ ¹⁹Եւ մի՛ հայեցեալ ընդ երկինս տեսանիցես զարեգակն և զլուսին և զաստղս, և զամենայն զարդ երկնից, և մոլորեալ երկիր պագանիցես նոցա, և պաշտիցես զնոսա. զոր բաժանեաց Տէր Աստուած ամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից. ²⁰և զձեզ ա՛ռ ի ձեռն Աստուած, և եհան զձեզ յերկաթեղէն հնոցէն յեգիպտոսէ, լինել նմա ժողովուրդ վիճակա՛ւ, որպէս և յաւուր յայսմիկ*։

ԺԱ ²¹Եւ Տէր բարկացաւ ինձ վասն բանիցն ասացելոց ի ձէնջ, և երդուաւ զի մի՛ անցից ընդ այդ Յորդանան. և զի մի՛ մտանիցեմ յերկիրն՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւն: ²²Եւ արդ՝ ես աւասիկ մեռանիմ յերկրիս յայսմիկ, և ո՛չ անցանեմ ընդ Յորդանան. բայց դուք անցանէք և ժառանգէք զերկիրն բարի: ²³Զգո՛յշ լերուք զուցէ մոռանայցէք զուխտն Տեառն Աստուծոյ մերոյ՝ զոր ուխտեաց ընդ ձեզ, և առնիցէք ձեզ դրօշեալ նմանութիւն յամենայնէ՛ յորոց պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո*։ ²⁴Զի Տէր Աստուած քո հո՛ւր ծախիչ է. Աստուած նախանձո՛տ: ²⁵Եւ եթէ ծնանիցիս որդիս, և զորդիս որդւոց քոց, և յամիցէք յերկրին. և անօրինիցիք, և առնիցէք դրօշեալ նմանութիւն ամենայնի. և առնիցէք չա՛ր առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ բարկացուցանել՝ զնա: ²⁶Ունիմ ձեզ վկայս այսօր զերկինս և զերկիր, զի կորստեամբ կորնչիցիք յերկրէն, յոր դուք անցանէք ընդ Յորդանան ժառանգել՝ զնա. և ո՛չ բազմացուցանիցէք զժամանակս աւուրց ի վերայ նորա. այլ սատակելով սատակեսչիք*։ ²⁷Եւ ցրուեսցէ՛ Տէր զձեզ ընդ ամենայն ազգս. և մնայցէք սակաւք թուով ի մէջ ազգացն՝ յորս տարցի զձեզ Տէր անդր: ²⁸Եւ պաշտիցէք անդ զաստուածս օտարս զձեռագործս մարդկան. զփայտեղէնս և զքարեղէնս. որք ո՛չ տեսանիցեն և ո՛չ լսիցեն, և ո՛չ ուտիցեն, և ո՛չ հոտոտիցեն: ²⁹Եւ խնդրիցէք անդ զՏէր Աստուած ձեր. և գտանիցէք յորժամ խնդրիցէք զնա յամենայն սրտէ՛ ձերմէ, և յամենայն անձմէ՛ ձերմէ, ի նեղութեան ձերում*։ ³⁰և գտանիցեն զքեզ ամենայն բանքս այսօրիկ ի վախճանի աւուրց: Եւ դարձցիս դու առ Տէր Աստուած քո, և լուիցես ձայնի նորա. ³¹զի Աստուած ողորմած է, ո՛չ թողցէ զքեզ և ո՛չ սատակեսցէ զքեզ. և ո՛չ մոռացի զուխտ հարցն քոց, զոր երդուաւ նոցա*։

ԺԲ ³²Չարցէք զաւուրսն զառաջինս զեղեալս յառաջագոյն քան զձեզ. յօրէ յորմէ հաստատեաց Աստուած զմարդ ի վերայ երկրի. ի ծագաց երկրի մինչև ի

* *Ոմանք.* Յոյժ վասն անձանց ձերոց:
 * *Ոմանք.* Մի՛ անօրինիցէք... դրօշեալ նմանութիւն ամենայն:
 * *Ոմանք.* Որ իցեն ի վերայ երկրի... հաւու թռչնոց:
 * *Այլք.* Որ սողիցին ի վերայ երկրի:
 * *Ոմանք.* Որպէս յաւուրս յայսմիկ:
 * *Ոմանք.* Զգո՛յշ կացէք զուցէ մո՛ւ:
 * *Ոմանք.* Զոր դուքն անցանիցէք:
 * *Ոմանք.* Եւ խնդրիցէք անդ... և գտանիցէք զնա յորժամ:
 * *Ոմանք.* Եւ ո՛չ թողցէ... զոր խոստացաւ նոցա:

ծագս երկնից, եթէ եղեա՞լ իցէ ըստ բանիս մեծի այսորիկ. եթէ ազդեա՞լ իցէ լուր այսպիսի* .³³Եթէ լուեա՞լ իցէ ազգի զձայն Աստուծոյ կենդանւոյ բարբառելոյ՝ ՚ի միջոյ հրոյ. որպէս լուա՛ր դու՝ և կեցեր. ³⁴Եթէ յօժարեա՞լ իցէ Աստուծոյ մտանել առնուլ իւր ա՛զգ ՚ի միջոյ ազգի, փորձութեամբ և նշանօք և արուեստիւք և պատերազմաւ, հօգ՛ր ձեռամբ և բա՛րձր բազկաւ, և մեծամե՛ծ տեսլեամբք. ըստ ամենայնի զոր արա՛ր Տէր Աստուած մեր յեգիպտոս՝ յանդիման քո՛ իսկ տեսանելով* :³⁵Ձի գիտասցես թէ Տէր նա՛ է Աստուած, և չի՛ք այլ ոք բա՛ց ՚ի նմանէ* :³⁶Յերկնից լսելի եղև բարբառ նորա խրատել զքեզ. և յերկրի եցո՛յց քեզ զհուր իւր զմեծ, և զպատգամս նորա լուար ՚ի միջոյ հրոյ, ³⁷վասն սիրելոյ նորա զհարսն քո: Եւ ընտրեաց զգաւակ նոցա յետ նոցա զձեզ քան զամենայն ազգս. և եհան զձեզ ինքնի՛ն զօրութեամբ իւրով մեծաւ յեգիպտոսէ* .³⁸սատակել քեզ զազգս մեծամեծս և հօրագո՛յնս քան զքեզ յերեսաց քոց. տանել զքեզ և տա՛լ քեզ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն. որպէս ունի՛ս իսկ այսօր: ³⁹Եւ ծանիցեն՝ս այսօր և դարձցիս մտօք. զի Տէր Աստուած քո՛ նա՛ է Աստուած յերկինս ՚ի վեր և յերկիր ՚ի խոնարհ. և չի՛ք այլ ոք բաց ՚ի նմանէ: ⁴⁰Եւ պահեսցեն՝ս զիրաւունս նորա, և զպատուիրանս նորա զոր ե՛ս պատուիրեմ քեզ այսօր, զի բարի լինիցի քեզ և որդւոց քոց յետ քո. և երկայնակեաց լինիցիս յերկրին՝ զոր Տէր Աստուած տացէ քեզ զամենայն աւուրս* :

ԺԳ ⁴¹Յայնժամ զատոյց Մովսէս երիս քաղաքս յայնկոյս Յորդանանու յարևելից կողմանէ, ⁴²վիսխչել՝ անդր սպանողին, որ ոք սպանանիցէ զընկեր իւր և ո՛չ զփտութեամբ. և ինքն ո՛չ ատեայր զնա յերէկն և յեռանդ, անկցի՛ ՚ի մի ՚ի քաղաքացն այնոցիկ՝ և կեցցէ: ⁴³ՁԲոսոր յանապատին, ՚ի դաշտին յերկրին Ռուբինի. և զՌամովթ ՚ի Գաղաադ զԳաղայ. և զԳաւղովն ՚ի Բասան զՄանասէի* :

ԺԴ ⁴⁴Եւ այս օրէն է՝ զոր ե՛դ Մովսէս առաջի որդւոցն Իսրայէլի: ⁴⁵Եւ այս են վկայութիւնք և իրաւունք և դատաստանք, զոր խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի յելանել՝ նոցա յերկրէն Եգիպտացւոց. ⁴⁶յայն կոյս Յորդանանու. ՚ի ձորն որ է մերձ ՚ի տունն Փեգովրայ. յերկրին Սեհոնի արքայի Անովրիացւոց՝ որ բնակեալ էր յեսեբոն. զորս եհա՛ր Մովսէս և որդիքն Իսրայէլի յելանել իւրեանց յերկրէն Եգիպտացւոց* :⁴⁷Եւ ժառանգեցին՝ս զերկիրն նոցա. և զերկիր Ովգայ թագաւորին Բասանու. զերկրո՛ց թագաւորացն Անովրիացւոց՝ որ էին յայն կոյս Յորդանանու ընդ արևելս* .⁴⁸յԱրոեբայ՝ որ է՝ առ եզե՛րք ձորոյն Առնովմայ, մինչև ցլեառնն Սեհոնի՝ որ է՝ առ Յերմոն* :⁴⁹Ձամենայն զԱրաբիա՝ որ է յայնկոյս Յորդանանու ընդ արևելս, մինչև ցծո՛վն Արաբացւոց ՚ի ներքոյ Ասեղովթայ կոփածոյին:

5

* *Ի լուս՝* Աստուած զմարդ յերկրի. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝*: Ոմանք. Եւ ՚ի ծագաց երկրէ. *կամ՝* երկնից մինչև ՚ի ծագս երկրի:
 * *Ոսկան*. Եթէ յօժարեալ լիցի Աստուծոյ:
 * *Ոմանք*. Թէ նա է Տէր Աստուած, և:
 * *Այլք*. Եւ եհան զքեզ ինքնին զօ՛ւ:
 * *Ոմանք*. Ձի երկայնակեաց լինիցիս յերկրին... Տէր Աստուած քո:
 * *Ոմանք*. Ի դաշտային երկրին Ռու՛ւ:
 * *Ոմանք*. Որ էր մերձ ՚ի տունն Փոգովրայ:
 * *Ոմանք*. Ձերկիր նորա. և զերկիր:
 * *Այլք*. Սեհոնի, որ է՝ Ահերմոն:

Գլուխ Ե

¹Եւ կոչեաց Մովսէս զամենայն Իսրայէլ՝ և ասէ ցնոսա. Լուր Իսրայէլ զիրաւունս և զդատաստանս՝ զոր ես խօսիմ յականջս ձեր յաւուր յայսմիկ. և ուսջիք զնոսա, և զգոյշ լիջիք առնել զնոսա*։ ²Տէր Աստուած մեր ուխտեաց ձեզ ուխտ ՚ի Քորէբ*։ ³Ո՛չ եթէ հարցն ձերոց ուխտեաց Տէր զուխտն զայն, այլ ձե՛զ. և դուք ամենեքին կենդանի՛ եք այսօր։ ⁴Ու՛ն յանդիման խօսեցաւ Տէր ընդ ձեզ ՚ի լերինն ՚ի միջոյ հրոյն*։ ⁵Ես կացի՛ ՚ի մէջ Տեառն և ձեր ՚ի ժամանակին յայնմիկ, պատմել ձեզ զպատգամսն Տեառն. զի զարհուրեցայք յերեսաց հրոյն՝ և ո՛չ ելէք ՚ի լեառնն։ Ասէ՛*։ ⁶ա. Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացոց ՚ի տանէ՛ ծառայութեան*։ ⁷բ. Մի՛ լինիցին քեզ աստուածք օտարք առաջի աչաց իմոց. ⁸և մի՛ առնիցես դու քեզ դրօշեալ, և մի՛ զնմանութիւն ամենայնի՝ որ ինչ յերկինս ՚ի վեր, և որ ինչ յերկրի ՚ի խոնարհ, և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի*։ ⁹մի՛ երկիրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա. զի ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձո՛տ. հատուցանեմ զնեղս հարանց որդւո՛ց իւրեանց, յերիս և ՚ի չորս ազգս ատելեաց իմոց. ¹⁰և առնեմ զողորմութիւն ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց, և որոց պահիցեն զիրամանս իմ*։ ¹¹գ. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քոյ ՚ի վերայ սնոտեաց. զի ո՛չ սրբեսցէ Տէր Աստուած քո զայն, որ առնուցու զանուն նորա ՚ի վերայ սնոտեաց։ ¹²դ. Զգուշասջի՛ր աւուրն շաբաթու սրբել զնա. որպէս և պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո*։ ¹³Զվե՛ց օր զործեսցես՝ և արասցես զամենայն զործ քո*։ ¹⁴Յաւուրն եւթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քոյ. մի՛ գործեսցես ՚ի նմա զամենայն զործ քո, դո՛ւ և ո՛ւստր քո և դո՛ւստր քո, և ծառայ քո և աղախին քո. ե՛զն քո և է՛շ քո, և ամենայն անասուն քո. և եկն որ ՚ի ներքոյ դրանց քոց. զի հանգիցէ ծառայն քո և աղախին քո որպէս և դո՛ւ. ¹⁵և յիշեսցես՝ դու զի ծառայ էիր յերկրին Եգիպտացոց. և եհան զքեզ Տէր Աստուած քո անտի հօօ՛ր ձեռամբ և բարձր բազկաւ. վասն այսորիկ պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո պահել զօրն շաբաթուց և սրբել զնա։ ¹⁶ե. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո, որպէս պատուիրեաց զքեզ Տէր Աստուած քո. զի բարի՛ լինիցի քեզ. և երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ*։ ¹⁷է. Մի՛ շնայցես։ ¹⁸զ. Մի՛ սպանանիցես։ ¹⁹ը. Մի՛ զողանայցես։ ²⁰թ. Մի՛ վկայիցես զընկերէ քումմէ վկայութիւն սուտ*։ ²¹ժ. Մի՛ ցանկանայցես կնոջ ընկերի քոյ. և մի՛ ցանկանայցես տան ընկերի քոյ, և մի՛ անդոյ նորա, և մի՛ ծառայի նորա, և մի՛ աղախնոյ նորա. և մի՛ եզին նորա, և մի՛ իշոյ նորա, և մի՛ ամենայն անասնոյ նորա. և մի՛ ամենայնի զինչ ընկերի՛ քոյ իցէ։ ²²Չա՛յս պատգամս խօսեցաւ Տէր ընդ

* *Ոմանք.* Եւ զգոյշ լինիջիք առնելոյ։

* *Ոմանք.* Ուխտեաց քեզ. *կամ՝* ձեզ։

* *Ի բազումս պակասի.* Ընդ ձեզ ՚ի լերինն ՚ի միջոյ հրոյն։

* *Ոմանք.* Եւ ես կայի ՚ի մէջ Տեառն։

* *Ոմանք.* Յերկրէն յեգիպտոսէ։

* *Ոմանք.* Յամենայնի որ ինչ յերկինս... և որ ինչ յերկրի ՚ի խո՛ն։

* *Ոմանք.* Ողորմութիւն ՚ի հազար ամս սի՛... և որոց պահեն. *կամ՝* պահեսցեն։

* *Ոմանք.* Զգուշասջիք աւուրն շաբաթուց։

* *Ոմանք.* Զամենայն զգործս քո. (14) և յաւուրն եւթներ՛։

* *Այլք.* Որպէս պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո։ *Ուր օրինակ մի.* Որպէս պատուիրեաց զքեզ։ *Ոմանք.* Եւ զի երկայնակեաց լինի՛։

* *Ոմանք.* Մի՛ վկայեսցես։

ժողովրդեանն ձերում ՚ի լերինն ՚ի միջոյն հրոյն. ուր խաւարն և մէգ և մառախոլն էր, մեծաւ բարբառով, և ո՛չ ևս յաւել. և գրեաց զնոսա ՚ի վերայ երկուց քարեղէն տախտակացն՝ և ետ ցիս: ²³Եւ եղև իբրև լուայք զբարբառն ՚ի միջոյն հրոյն, և լեան բորբոքեալ էր հրով. և մատուցեալ առ իս իշխանաց ցեղիցն ձերոց և ծերակուտին ձերոյ, ասէին*.

²⁴Ահա եցոյց մեզ Տէր Աստուած զփառս իւր և զմեծութիւն իւր, և զբարբառ նորա լուայք ՚ի միջոյն հրոյ: Յաւուր յայսմիկ տեսաք՝ եթէ խօսիցի Աստուած ընդ մարդոյն և կեցցէ*:

²⁵Եւ արդ՝ մի՛ մեռցուք. զի մի՛ սատակեսցէ զմեզ հուրս այս մեծ. եթէ յաւելուցո՛ւմք մեք լսել զձայն Տեանն Աստուծոյ մերոյ միւսանգամ, և մեռանիցի մք:

²⁶Ձի ո՞ ոք մսեղի իցէ որ լուաւ զձայն Աստուծոյ կենդանոյ բարբառելոյ ՚ի միջոյն հրոյ որպէս մեքս՝ և կեցցէ*:

²⁷Մատի՛ր դու, և լու՛ր՝ զոր ինչ ասիցէ Տէր Աստուած մեր, և դո՛ւ խօսեսցիս ընդ մեզ զամենայն ինչ զոր խօսիցի Տէր Աստուած մեր ընդ քեզ. և լուիցու՛ք և արասցուք:

²⁸Եւ լուաւ Տէր զբարբառ բանիցն ձերոց խօսելոյ ընդ իս, և ասէ ցիս Տէր. Լուայ՛ զբարբառ բանից ժողովրդեանն զոր խօսեցան ընդ քեզ: Ուղի՛ղ խօսեցան զամենայն*, ²⁹ո՛ տացէ լինել այնպէս սրտից նոցա ՚ի նոսա, երկնչել յինէն, և պահել զպատուիրանս իմ զամենայն աւուրս. զի բարի՛ լինիցի նոցա և որդւո՛ց նոցա յաւիտեան*:

³⁰Արդ՝ երթ ասա՛ ցնոսա. Դարձարու՛ք դուք ՚ի տունս ձեր: ³¹Եւ դո՛ւ աստ կաց առ իս, և խօսեցայց ընդ քեզ զպատուիրանս և զիրաւունս, և զդատաստանս զոր ուսուցանիցեն նոցա. և արասցեն յերկրին՝ զոր ես տաց նոցա ՚ի ժառանգութիւն*:

³²Ձգո՛յ լերուք առնելոյ. որպէս պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո. և մի՛ խտորիցիս յաջ և մի՛ յահեակ*, ³³ըստ ամենայն ճանապարհին՝ զոր պատուիրեաց քեզ Տէր Աստուած մեր զնալ. զի հանգուսցէ՛ զքեզ՝ և բարի՛ արասցէ քեզ. և երկայնօրեայք լինիցիք յերկրին զոր ժառանգիցէք*:

6

Գլուխ Զ

¹Եւ այս են պատուիրանք և իրաւունք և դատաստանք՝ զոր պատուիրեաց ձեզ Տէր Աստուած մեր, ուսուցանել զձեզ՝ առնել այնպէս յերկրին յոր դուք մտանիցէք ժառանգել*:

²Ձի երկնչիցիք ՚ի Տեանն Աստուծոյ մերմէ, պահել զամենայն իրաւունս նորա, և զպատուիրանս նորա զոր ես պատուիրեմ ձեզ այսօր. դո՛ւ և որդի՛ք քո, և որդի՛ք որդւոց քոց, զամենայն աւուրս կենաց քոց. զի երկայնօրեայք լինիցիք*:

³Եւ լու՛ր Իսրայել և զգո՛յ լեր առնելոյ. զի բարի՛ լինիցի քեզ, և բազմանայցէք յոյժ, որպէս խոստացաւ Աստուած հարցն քոց տալ քեզ զերկիրն որ բղխէ զկաթն և զմեղր: Այս են իրաւունք և դատաստանք՝

* Ոմանք. Իշխանք ցեղիցն ձերոց:

* Ոմանք. Լուայք ՚ի միջոյն հրոյ յաւուր յայնմիկ:

* Ոմանք. Ձի ո՛ ոք որ մսեղի իցէ, որ լու՛:

* Ոմանք. Եւ լուաւ Տէր Աստուած զբարբառ:

* Ոմանք. Այնպէս լինել սրտի նոցա... և պահել զամենայն պատուիրանս:

* Ոմանք. Ձոր ուսուցանիցեն նոցա, և արասցես յերկրին:

* Ոմանք. խտորեսցիս մի՛ յաջ և մի՛:

* Ոմանք. Եւ երկայնակեաց լինիցիք:

* Ոմանք. Առնել այսպէս յերկիրն յոր դուք:

* Ոմանք. Ձի երկայնակեացք լինից՛:

զոր պատուիրեաց Մովսէս որդւոցն Իսրայէլի յանապատին, յելանել նոցա յերկրէն Եգիպտացոց*։⁴ Լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է։⁵ և սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումն, և յամենայն անձնէ քումն, և յամենայն զօրութենէ քումն։⁶ Եւ եղիցին պատգամքս այսոքիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ ի սրտի՛ քում և յանձին քում*։⁷ և իմացուցես զայս որդւոց քոց. և խօսեսցիս սոբօք, ՚ի նստել՝ ՚ի տան, և ՚ի գնալ՝ ՚ի ճանապարհի, և ՚ի ննջել և ՚ի յառնել։⁸ Եւ արկցես զսոսա նշան՝ ՚ի ձեռին քում. և եղիցի անշարժ առաջի աջաց քոց*։⁹ և գրեսցես զնոսա ՚ի վերայ սեմոց տանց քոց, և ՚ի դրունս քո*։¹⁰ Եւ եղիցի յորժամ տանիցի գրեզ Տէր Աստուած քո յերկիրն զոր երդուաւ Տէր հարցն քոց Աբրահամու, և Սահակայ, և Յակոբայ տալ՝ քեզ քաղաքս մեծամեծս և գեղեցիկս զոր ո՛չ շինեցեր։¹¹ Եւ տունս լի՛ ամենայն բարութեամբք զոր ո՛չ լցեր, և ջրհորս փորեալս զոր ո՛չ փորեցեր. և այգիս և ձիթենիս զորս ո՛չ տնկեցեր,¹² և ուտիցես և յագիցիս*։¹³ Զգոյշ լինիջիր անձին քում. գուցէ՛ մոռանայցես զՏէր Աստուած քո, որ եհան գրեզ յերկրէն Եգիպտացոց ՚ի տանէ՛ ծառայութեան։ Ի Տեառնէ Աստուծոյ քումնէ երկիցես, և գնա միայն պաշտեսցես, և ՚ի նա՛ յարեսցիս, և յանուն նորա երդնուցու*։¹⁴ Մի՛ երթայցեք զհետ աստուածոց օտարաց, և զհետ աստուածոց ազգացն որ շուրջ զձեք իցեն*։¹⁵ Զի Աստուած նախանձո՛տ, Տէր Աստուած քո ՚ի միջի քում. գուցէ՛ բարկացեալ սրտմտիցի Տէր Աստուած քո սատակել՝ գրեզ յերեսաց երկրէ*։

ԺԵ ¹⁶Մի՛ փորձեսցես զՏէր Աստուած քո՝ որպէս փորձեցեք ՚ի Փորձութեանն։¹⁷ Պահելով պահեսցես զպատուիրանս Տեառն Աստուծոյ քոյ, զվկայութիւնս և զիրաւունս զոր պատուիրեաց քեզ։¹⁸ և արասցես զբարին և զհաճոյսն առաջի Տեառն Աստուծոյ քոյ. զի քեզ բարի՛ լինիցի, և մտցես և ժառանգեսցես զերկիրն բարի՛ զոր երդուաւ Տէր հարցն մերոց*։¹⁹ Կալածել զամենայն թշնամիս յերեսաց քոց, որպէս և խօսեցաւ*։²⁰ Եւ եղիցի յորժամ հարցանիցէ՛ ցրեզ վաղիւ որդին քո և ասիցէ. Զի՞նչ են վկայութիւնքն և իրաւունք և դատաստանք՝ զոր պատուիրեաց Տէր Աստուած մեր մեզ*։²¹ Եւ ասացես ցորդին քո. Ծառայք էաք փարաւոնի յԵգիպտոս, և հան զմեզ Տէր Աստուած անտի հօր ձեռամբ և բարձր բազկաւ*։²² և ե՛տ Տէր նշանս և արուեստս մեծամեծս և չարաչարս յերկրին Եգիպտացոց, ՚ի փարաւոն և ՚ի տո՛ւն նորա առաջի մեր. ²³և զմեզ եհան անտի, զի աճցէ ա՛յսր՝ տալ՝ մեզ զերկիրս զայս զոր երդուաւ տալ՝ հարցն մերոց։²⁴ Եւ պատուիրեաց մեզ Տէր առնել՝ զամենայն իրաւունս զայսոսիկ. երկնչել՝ ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ, զի բարի՛ լիցի մեզ զամենայն աւուրս. զի կեցցուք

* *Ոմանք.* Որպէս խօսեցաւ Աստուած հարցն։

* *Ոմանք.* Եւ եղիցին քեզ պատ՛։

* *Ոմանք.* Եւ արկցես զնոսա... և եղիցին ան՛։

* *Ոմանք.* Եւ գրեսցես զսոսա ՚ի վերայ։

* *Ոմանք.* Եւ յագեցիս. *կամ՝* յագիցես։

* *Յայլս պակասի.* Եւ գնամիայն պաշտեսցես։

* *Ոմանք.* Մի՛ երթայցես զհետ։

* *Օրինակ մի.* Բարկացեալ սրտմտիցէ։

* *Ոմանք.* Եւ արասցես զհաճոյն և զբարի... զի քեզ բարի լիցի։

* *Ոմանք.* Որպէս և խօսեցաւ Տէր։

* *Յօրինակին պակասէր.* Զինչեն վկայութիւնքն։ *Ոմանք.* Հարցանիցէ ցրեզ վա՛... պատուիրեաց մեզ Տէր Աստուած մեր։

* *Օրինակ մի յաւելու.* Եւ բարձր բազկաւ, և մեծամեծ տեսլեամբք։

որպէս և այսօր*։ ²⁵Եւ ողորմութիւն եղիցի մեզ, եթէ զգուշացուք առնել զամենայն պատուիրանս զայսոսիկ առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, որպէս և պատուիրեաց մեզ։

7

Գլուխ Է

ԺՁ ¹Եւ եթէ տարցի զքեզ Տէր Աստուած քո յերկիրն՝ յոր դու մտանիցես ժառանգել, և բարձցէ՝ զազգսն մեծամեծս և զբազումս յերեսաց քոց։ ԶՔետացին, և զԳերգեսացին, և զԱնովրհացին, և զՔանանացին, և զՓերեզացին, և զԻսլացին, և զՅերուսացին. եւթն ազգս մեծամեծս և զօրագոյնս քան զձեզ*։ ²Եւ մատնեսցէ՝ զնոսա Տէր Աստուած քո ՚ի ձեռս քո. հարցես զնոսա, և եղծանելով եղծցես զնոսա. մի՛ դնիցես ընդ նոսա ուխտ, և մի՛ ողորմեսցիս նոցա։ ³Եւ մի՛ առնիցէք խնամութիւն ընդ նոսա. զդուստր քո մի՛ տացես ուստեր նորա, և զդուստր նորա մի՛ առնուցուս ուստեր քում*։ ⁴Գի մի ապստամբեցուցանիցէ զորդին քո յինէն, և պաշտիցէ զաստուածս օտարս. և բարկացի՛ սրտմտութեամբ Տէր ՚ի ձեզ, և սատակեսցէ՝ զձեզ վաղվադակի*։ ⁵Այլ այսպէս արասջիք նոցա. զբազինս նոցա կործանեսջիք, և զարձանս նոցա փշրեսջիք, և զանտառս նոցա կտորեսջիք, և զդրօշեալս նոցա այրեսջիք հրով։ ⁶Զի ժողովուրդ սուրբ ես դու Տեառն Աստուծոյ քում. և զքեզ ընտրեաց Տէր Աստուած քո, լինել նմա ժողովուրդ սեպհական քան զա՛զգս ամենայն որ ՚ի վերայ երեսաց երկրի։ ⁷Ո՛չ զի բազում էք դուք քան զամենայն ազգս, հաճեցաւ Տէր ընդ ձեզ՝ և ընտրեաց զձեզ. զի դուք սակաւոր էք քան զամենայն ազգս*։ ⁸Այլ վասն սիրելոյ զձեզ Տեառն, և պահելոյ՝ զերդուննն զոր երդուաւ հարցն ձերոց, եհան զձեզ Տէր հօր ձեռամբ և բարձր բազկաւ. և փրկեաց զձեզ ՚ի տանէ ծառայութեան, ՚ի ձեռաց փարաւոնի արքային Եգիպտացոց*։ ⁹Եւ ծանիցես զի Տէր Աստուած քո նա՛ է Աստուած, Աստուած հաւատարիմ։ Որ պահէ զուխտ և զողորմութիւն սիրելեաց իւրոց, և որոց պահեն զպատուիրանս նորա ՚ի հազար ազգս*։ ¹⁰Եւ հատուցանէ ատելեաց իւրոց յանդիման սատակել զնոսա. և ո՛չ յամեցուցէ յատելեաց, այլ յանդիման հատուցէ նոցա*։

ԺԷ ¹¹Եւ պահեսցես զպատուիրանս և զիրաւունս և զդատաստանս՝ զոր ես պատուիրեմ քեզ առնել*։ ¹²Եւ եղիցի յորժամ լուիցէք զամենայն իրաւունս զայսոսիկ, և պահիցէք և առնիցէք զնոսա, պահեսցէ՛ քեզ Տէր Աստուած քո զուխտն և զողորմութիւն՝ որպէս երդուաւ հարցն մերոց*։ ¹³Եւ սիրեսցէ՛ զքեզ և օրհնեսցէ՛ զքեզ, և բազմացուցէ՛ զքեզ. և օրհնեսցէ՛ զծնունդս որովայնի քոյ՝ և

* *Ոմանք.* Որպէս և այսօրս։

* *Ոմանք.* Յոր դու մտանելոց ես ժառանգել գնա. և բարձցէ։ *Այլք.* Եւ զօրագոյնս քան զքեզ։

* *Ոսկան.* Եւ մի՛ առնիցես զխնամութիւն։

* *Ոմանք.* Եւ սատակեսցէ զքեզ։

* *Ոմանք.* Զի ո՛չ եթէ բազում էք դուք։ *Այլք.* Զի դուք սակաւաւոր էք։

* *Ոմանք.* Եւ եհան զմեզ Տէր։

* *Ոմանք.* Եւ Տէր Աստուած, Աստուած հաւա՛։

* *Ոմանք.* Յամեցուցէ ատելեաց, այլ յանդիման հատուցանէ նոցա։

* *Ոմանք.* Եւ պահեսցես զպատուիրանս։

* *Ոմանք.* Եւ եղիցի քեզ յորժամ լսիցէք... և առնիցէք զնոսա։

զպտուղ երկրի քոյ. և զգորեան քո, և զգինի քո, և զկղ քո. զանդեայս արջառոց քոց, և զհօտս ոչխարաց քոց, յերկրին զոր երդուաւ Տէր հարցն քոց տալ՝ զնա քեզ: ¹⁴Օրինեալ լիցիս դու քան զազգս ամենայն. մի՛ լիցի՛ ՚ի ձեզ ամուլ, և անծնունդ, և մի՛ յանասուն քո* . ¹⁵և բարձցէ՛ ՚ի քէն Տէր զամենայն ախտ, և զամենայն ցաւս չարաչարս եգիպտացւոցն զորս տեսերն և զորս գիտացեր. և մի՛ ածցէ՛ զնոսա՛ ՚ի վերայ քո, այլ ածցէ՛ զնոսա՛ ՚ի վերայ թշնամեաց քոց, և ՚ի վերայ ամենայն ատելեաց քոց* : ¹⁶Եւ կերիցես զամենայն զկապուտ ազգացն՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ. և մի՛ խնայեսցէ՛ ակն քո ՚ի նոսա, և ո՛չ պաշտեսցես զդիս նոցա. զի խո՛չ է այն քեզ:

ԺԸ ¹⁷Ապա թէ ասիցես ՚ի մտի քում. զի բազում է ազգն այն քան զիս, զիա՞րդ կարացից սատակել զնոսա: ¹⁸Մի՛ երկնչիցիս ՚ի նոցանէ. յիշելով յիշեսցես զոր ինչ արար Տէր Աստուած քո ընդ փարաւոն և ընդ ծառայս նորա, և ընդ ամենայն եգիպտացիսն. ¹⁹զփորձանս մեծամեծս զոր տեսին աչք քո. զնշանս և զարուեստս մեծամեծս, զձեռնն հզօր՝ և զբազուկն բարձր. որպէս եհան զքեզ Տէր Աստուած քո անտի, նո՛յնպէս արասցէ Տէր Աստուած մեր ընդ ամենայն ազգսն յորոց դու երկնչիցիս յերեսաց նոցա: ²⁰Եւ զձիաստացն առաքեսցէ Տէր Աստուած քո ՚ի նոսա, մինչև սատակեսցին մնացորդքն և թաքուցեալքն ՚ի քէն* : ²¹Մի՛ զանգիտիցես յերեսաց նոցա. զի Տէր Աստուած քո ՚ի միջի՛ քում է, մեծ և հզօր. ²²և ծախեսցէ՛ Տէր Աստուած քո զազգսն զայնոսիկ յերեսաց քոց առ սակաւ սակաւ: Ո՛չ կարացես սատակել զնոսա վաղվադակի. զի մի՛ լիցի երկիրն աւերակ, և բազմանայցեն ՚ի վերայ քո գազանք անապատի* : ²³Եւ մատնեսցէ՛ զնոսա Տէր Աստուած քո ՚ի ձեռս քո, և կորուսցէ՛ զնոսա կորստեամբ մեծաւ. մինչև սատակեսցէ զնոսա* : ²⁴Եւ մատնեսցէ՛ զթագաւորս նոցա ՚ի ձեռս ձեր. և կորուսջի՛ք զանուն նոցա ՚ի տեղւոջէն յայնմանէ. և մի՛ ոք կացցէ ընդդէմ քո, մինչև սատակեսցես զնոսա* : ²⁵Չորոշեալ դից նոցա այրեսցես իրով, և մի՛ ցանկանայցես արծաթոյ և ոսկւոյ ՚ի նոցանէ, և մի՛ առնուցուս քեզ. և մի՛ յանցանիցես նովաւ. զի գարշելի՛ է այն Տեառն Աստուծոյ քում* : ²⁶Եւ մի՛ տանիցիս զգարշելին ՚ի տուն քո, և լինիցիս ՚ի նգովս իբրև զնոյն. այլ գարշելով՝ գարշեսցես, և պղծելով պղծեսցես զնոսա՝ զի նզովեալ է* :

8

Գլուխ Ը

ԺԹ ¹Ամենայն պատուիրանաց զոր ես պատուիրեմ ձեզ այսօր, զգո՛յշ լինիջիք առնելոյ. զի կեցցէք և բազմապատիկք լինիցիք, և մտանիցէք ժառանգիցէք զերկիրն զոր երդուաւ Տէր հարցն մերոց* : ²Եւ յիշեսցես զամենայն ճանապարհն

* *Ոմանք.* Մի՛ լինիցի քեզ անծնունդ, և մի՛ ամուլ, և մի՛ յանասունս քո:

* *Ոմանք.* Չամենայն ախտս և զամենայն:

* *Ոմանք.* Եւ զձիաստանացն առա՞:

* *Ոմանք.* Չի մի՛ լինիցի երկիրն... գազանք յանապատի:

* *Յօրինակին պակասէր.* Մեծաւ...մինչև սատակես՞:

* *Ոմանք.* Եւ կորուսջիք զանուանս նոցա:

* *Այլք.* Չորոշեալս դից նոցա:

* *Ոսկան.* Այլ գարշելով գարշեսցիս:

* *Յօրինակին պակասէր.* Չգոյշ լինիջիք առնելոյ, զի կեց՞: *Ոմանք.* Չի կեցջիք... և մտանիցէք ժառանգել:

զոր անձ զքեզ Տէր ընդ անապատն. զի լլկեսցէ զքեզ՝ և փորձիցէ՝ զքեզ, և ճանաչիցէ թէ զինչ կայցէ՝ ՚ի սրտի քում, եթէ պահեսցես զպատուիրանս նորա և թէ ոչ*։ ³Եւ չարչարեաց զքեզ, և սովաբեկ արար զքեզ, և կերակրեաց զքեզ մանանային զոր ոչ գիտէիր, և ոչ գիտէին հարքն քո. զի յայտ արասցէ քեզ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ՝ ՚ի բերանոյ Աստուծոյ՝ կեցցէ մարդ*։ ⁴Յանդերձք քո՝ ոչ մաշեցան ՚ի քէն, և ոտք քո ոչ փապարեցին զայն ամս քառասուն։ ⁵Եւ ծանիցես ՚ի սրտի քում. թէ որպէս այր ոք՝ որ խրատէ զորդի իւր, այնպէս Տէր Աստուած քո խրատեսցէ զքեզ։ ⁶Եւ պահեսցես զպատուիրանս Տեառն Աստուծոյ քոյ. գնալ ՚ի ճանապարհս նորա, և երկնչել ՚ի նմանէ։ ⁷Ձի Տէր Աստուած քո տարցի զքեզ յերկիրն բարի և յաղթ. ուր վտակքն ջրոց, և աղբերք անդնդոց բղխեն ընդ դաշտս և ընդ լերինս*։ ⁸Երկիր ցորենոյ, և գարւոյ, և գինւոյ, այգեաց և նոննեաց. երկիր ձիթենեաց, իւղոյ և մեղու. ⁹Երկիր՝ յորում ոչ աղքատութեամբ կերիցես զհաց քո, և ոչ կարօտանայցես իմիք ՚ի նմա։ Երկիր՝ որոյ քարինք իւր երկաթ, և ՚ի լեռանց նորա հատանիցես պղինձ*։ ¹⁰Եւ կերիցես և յագիցիս. և օրհնեսցես զՏէր Աստուած քո ՚ի վերայ երկրին բարութեան զոր ետ քեզ։

Ի ¹¹Յայեաց յանձն քո. գուցէ՝ մոռանայցես զՏէր Աստուած քո, չպահել զպատուիրանս նորա և զդատաստանս և զիրաւունս նորա՝ զոր ետ քեզ պատուիրեն։ ¹²Գուցէ՝ յորժամ ուտիցես և յագիցիս, և տունս գեղեցիկս շինեսցես, և բնակեսցես ՚ի նոսա. ¹³և բազմանայցէ արջառ և ոչխար քո. և յաճախիցէ քեզ արծաթ և ոսկի, և ամենայն ինչ որ քո՝ իցէ՝ բազմանայցէ*։ ¹⁴Կարտանայցես ՚ի սրտի քում, և մոռացիս զՏէր Աստուած քո՝ որ եհան զքեզ յերկրէն Եգիպտացւոց ՚ի տանէ ծառայութեան. ¹⁵և անձ զքեզ ընդ անապատն մեծ և ընդ ահագին. ուր օձն խածանէր, և կարիճ. և ծարաւ, և ոչ գոյր ջուր. և եհան քեզ յապառաժ վիմէ աղբեր ջուրց*։ ¹⁶Որ կերակրեաց զքեզ մանանային յանապատին, զոր ոչ գիտէին հարքն քո. զի չարչարեսցէ՝ զքեզ, և փորձեսցէ՝ զքեզ. և բարի արասցէ քեզ ՚ի վախճանի քում։ ¹⁷Մի՛ ասիցես ՚ի սրտի քում, թէ զօրութիւն իմ, և ուժգնութիւն ձեռն իմոյ արար ինձ զզօրութիւնս զայս մեծ*։ ¹⁸Այլ յիշեսցես զՏէր Աստուած քո. զի նա՛ տայ քեզ ոյժ առնել զօրութիւն. զի հաստատեսցէ՝ զուխտն իւր զոր երդուաւ հարցն քոց, որպէս և այսօր։ ¹⁹Եւ եղիցի եթէ մոռանալով մոռացիս զՏէր Աստուած քո. և երթայցես զհետ աստուածոց օտարաց, և պաշտիցես զնոսա, և երկիր պագանիցէք նոցա. ունիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր, զի կորստեամբ կորնչիցիք*։ ²⁰Որպէս և ազգքն զորս Տէր կորուսցէ յերեսաց ձերոց, այնպէս կորնչիցիք. փոխանակ զի ոչ լուարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ*։

* *Ոսկան յաւելու՝* Եան զքեզ Տէր զամս քառասուն ընդ անա՛:

* *Ոմանք.* Յայտ արասցէ քեզ Տէր, եթէ ոչ հա՛: *Այլք.* Ոչ հացիւ միայն կեայ մարդ: *Եւ այս բան յօրինակին կարմրով նշանակի:*

* *Ոմանք.* Ձի Տէր Աստուած քո նա տարցի... ՚ի բարի և ՚ի յաղթ:

* *Ոմանք.* Ոչ աղքատութեամբ ուտիցես զհաց քո:

* *Ոմանք.* Արջառ քո և ոչխար քո:

* *Ոմանք.* Աղբիր ջրոյ. *կամ՝* ջրոց:

* *Ոմանք.* Ձգօրութիւնն զայն մեծ:

* *Ոմանք.* Պաշտեսցես զնոսա, և երկիր պագցես նոցա, ունիմ վկայ ձեզ այսօր: *Յօրինակին պակասէր.* Եւ զերկիր, *զի* կորստեամբ:

* *Ոմանք.* Ձորս Տէր կացուցէ յերեսաց:

Գլուխ Թ

¹Լուր Իսրայել. դու անցանէն այսօր ընդ Յորդանան մտանել ժառանգել զազգսն մեծամեծսն և զգօրագոյնս քան զձեզ. և քաղաքս մեծամեծսն և պարսպեալս մինչև յերկինս*.
²Գժողովուրդն մեծ և զբազում և զյաղթանդան, զորդիսն Ենակայ զոր դու իսկ գիտես. և լուար եթէ՝ ո՛վ կացցէ ընդդէմ որդւոցն Ենակայ:
³Եւ ծանիցես այսօր՝ զի Տէր Աստուած քո նա՛ ինքն երթայցէ առաջի քո, որ Յուրն ծախիչ է. նա՛ սատակեսցէ զնոսա, և նա՛ կործանեսցէ զնոսա առաջի երեսաց քոց. և սատակեսցէ՛ զնոսա և կորուսցէ՛ զնոսա վաղվադակի. որպէս և ասաց քեզ Տէր:
⁴Մի՛ ահիցես ՚ի սրտի քում ՚ի ծախել զնոսա Տեառն Աստուծոյ քոյ՝ յառաջոյ քումնէ՛, թէ՛ վասն արդարութեան իմոյ ած զիս Տէր ժառանգել զերկիրս զայս բարի. զի ո՛չ վասն արդարութեան քոյ՝ այլ վասն ամպարշտութեան ազգացն այնոցիկ սատակեսցէ զնոսա Տէր Աստուած քո՝ յառաջոյ քումնէ՛:
⁵Քանզի ո՛չ վասն արդարութեան քոյ, և ո՛չ վասն անբծութեան սրտի քոյ մտանես ժառանգել զերկիր նոցա, այլ վասն անօրէնութեան ազգացն այնոցիկ Տէր Աստուած քո սատակեսցէ՛ զնոսա յերեսաց քոց. և զի հաստատեսցէ զուխտն զոր երդուաւ Տէր հարցն մերոց Աբրահամու և Սահակայ և Յակոբայ*:
⁶Եւ ծանիցես այսօր զի ո՛չ վասն արդարութեան քոյ Տէր Աստուած քո տացէ քեզ զերկիրն բարի ժառանգել. զի ժողովուրդ խստապարանոց ես:
⁷Յիշեա՛ մի՛ մոռանայցես ո՞րչափ բարկացուցեր զՏէր Աստուած քո յանապատին. յօրէ յօրմէ ելէք յերկրէն Եգիպտացւոց, մինչև եկիք ՚ի տեղիս յայս, խեռութեամբ վարէիք ՚ի տեառնակողմն կոյս:
⁸Եւ ՚ի Քորէբ՝ բարկացուցէք զՏէր, և բարկացաւ Տէր սատակել զձեզ.
⁹Ելանելն իմուն ՚ի լեառն առնուլ զտախտակսն քարեղէնս, զտախտակսն ուխտին զոր ուխտեա՛ց Տէր ընդ ձեզ: Եւ եղէ ՚ի լերինն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. հաց ո՛չ կերայ և ջուր ո՛չ արբի*.
¹⁰Եւ ետ ինձ Տէր զերկոսին տախտակսն քարեղէնս, գրեալս մատամբն Աստուծոյ. և ՚ի նոսա գրեալ էին ամենայն պատգամքն՝ զոր խօսեցաւ Տէր ընդ ձեզ ՚ի լերինն յաւուրն եկեղեցւոյ:
¹¹Եւ եղև յետ քառասուն աւուր տուրնջեան և քառասուն գիշերոյ, ե՛տ ինձ Տէր զերկուս տախտակսն քարեղէնս, տախտակս ուխտի*.
¹²Եւ ասէ ցիս Տէր. Արի՛ էջ վաղվադակի աստի, զի անօրինեցաւ ժողովուրդն քո զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց. անցին անդրէն զճանապարհաւն զոր պատուիրեցեր նոցա, և արարին իւրեանց ձուլածոյս*:
¹³Եւ ասէ ցիս Տէր. Խօսեցայ ընդ քեզ մի՛անգամ և երկիցս՝ և ասեմ. Տեսի՛ զժողովուրդդ զայդ, և ահա ժողովուրդ խստապարանոց է:
¹⁴Թո՛յլ տուր ինձ սատակել զդոսա, և ջնջեցի՛ց զանուն դոցա ՚ի ներքոյ երկնից. և արարից զքեզ

* Ոսկան. Եւ զօրագոյնս քան զքեզ: Ոմանք. Եւ պարսպաւորս մինչև ցերկինս:

* Ոմանք. Ձնոսա Տեառն Աստուծոյ քում... ած զիս Տէր Աստուած ժա՛:

* Ոմանք. Ձուխտ իւր զոր երդու՛:

* Ոմանք. Առնուլ զտախտակսն քարեղէն, զտախտակս ուխտի զոր:

* Յայլս պակասի. Յետ քառասուն աւուր տուրնջեան: Ոմանք. Եւ ետ ինձ Տէր զերկոսին տախտակս:

* Այլք. Անցին արդէն զճանապարհաւն:

յագգ մե՛ծ և ՚ի հզօր՝ և ՚ի բազում, առաւել քան զայդ*։ ¹⁵Եւ դարձեալ իջի ՚ի լեռնէ անտի, և լեռնն բորբոքէր հրով, և երկու տախտակքն յերկոսին ՚ի ձեռս իմում*։ ¹⁶Եւ տեսեալ եթէ մեղայ՞ք առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, և արարէք ձեզ ձուլածոյս, և անցէք զճանապարհաւն զոր պատուիրեաց Տէր. ¹⁷և առեալ զերկոսին տախտակսն ՚ի ձեռաց իմոց, խորտակեցի՞ յանդիման ձեր։ ¹⁸Եւ աղաչեցի առաջի Տեառն կրկին անգամ իբրև զառաջինն, զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. հաց ո՛չ կերայ և ջուր ո՛չ արբի. վասն ամենայն մեղաց ձերոց զոր մեղայք, առնել զչա՛ր առաջի Տեառն Աստուծոյ մերոյ. բարկացուցանել զնա. ¹⁹և զահի՛ հարեալ եմ վասն բարկութեանն և սրտմտութեանն. զի բարկացա՛ւ Տէր ՚ի վերայ ձեր սատակել զձեզ. և լուաւ ինձ Տէր ՚ի ժամանակի յայնմիկ*։ ²⁰Եւ Ահարոնի բարկացա՛ւ Տէր յոյժ սատակել զնա. և արարի աղօթս և վասն Ահարոնի ՚ի ժամանակի յայնմիկ։ ²¹Եւ զմեղսն ձեր զոր արարէք զորթն, առի և այրեցի զնա հրով. և կոտորեցի և խորտակեցի զնա յոյժ, մինչև եղև մանր իբրև զփոշի, և ընկեցի զփոշին ՚ի վտակն որ իջանէր ՚ի լեռնէ անտի։ ²²Եւ ՚ի Յրայրեացսն, և ՚ի Փորձութեանն, և ՚ի Գերեզմանս ցանկութեանն բարկացուցէք զՏէր Աստուած ձեր*։ ²³Եւ յորժամ առաքեաց զձեզ Տէր ՚ի Կադէսբառնեայ, ասէ. Ելէք ժառանգեցէք զերկիրն զոր տալոց եմ ձեզ. հեստեցէք բանին Տեառն Աստուծոյ ձերոյ, և ո՛չ հաւատացէք նմա, և ո՛չ լուարուք ձայնի Տեառն*։ ²⁴Գի հեստեալ կայիք ՚ի տեառնակողմանն, յօրէ յորմէ ծանուցաւ ձեզ*։

ԻՎ ²⁵Եւ աղաչեցի առաջի Տեառն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, զորս աղաչեցին. քանզի ասաց Տէր սատակել զձեզ. ²⁶և կացի յաղօթս առ Տէր՝ և ասեմ. Տէր Տէր, թագաւոր աստուածոց. մի՛ սատակեր զժողովորդ քո և զբաժին քո՝ զոր փրկեցեր զօրութեամբ քո մեծաւ. զորս հաներ յեգիպտոսէ զօրութեամբ քո մեծաւ, և կարօղ ձեռամբ, և բարձր բազկաւ*։ ²⁷Յիշեա՛ դու զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ՝ զճառնայս քո, որոց երդուար քև. մի՛ հայիր ՚ի խստութիւն ժողովրդեանդ այդորիկ, և յամպարշտութիւնս և ՚ի մեղս դոցա*։ ²⁸Գուցէ՛ խօսիցին բնակիչք երկրին ուստի հաներ զմեզ, և ասիցեն. Առ ՚ի չկարելոյ Տեառն տանել զնոսա յերկիրն զոր խոստացաւ նոցա, և առ ատել զնոսա Տեառն՝ եհան զնոսա կոտորել զնոսա յանապատին*։ ²⁹Եւ սոքա ժողովորդ քո և ժառանգութիւն քո՝ զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց զօրութեամբ քո մեծաւ՝ և բարձր բազկաւ։

10

Գլուխ Ժ

* Ոմանք. Եւ հզօր և բազում և առաւել քան զդա։

* Ոմանք. Յերկոսին ձեռին իմում։

* Ոմանք. Եւ ՚ի ժամանակի յայնմիկ։

* Ոմանք. Բարկացուցէք զՏէր Աստուած մեր։

* Ոմանք. Եւ ասէ. Ելէք ժառանգ... զի հեստեցէք բանին։

* Ոմանք. Կայիք տեառնակողմանն։

* Ոմանք. Տէր Աստուած թագաւոր աստուա՛ւ։

* Ոմանք. ժողովրդեանդ այդմիկ։

* Ոմանք. Առ ՚ի չկամելոյ Տեառն տանել... սատակել զնոսա յանապատի։

¹Ի ժամանակին յայնմիկ ասաց ցիս Տէր. Կոփեա՛ դու քեզ երկուս տախտակս քարեղէնս իբրև գառաջինսն, և ե՛լ ՚ի լեառնն. և արասցես դու քեզ տապանակ փայտեղէն. ²և գրեցի՛ց ՚ի տախտակսն զնոյն պատգամս՝ որ էին յառաջին տախտակսն զորս դո՛ւն խորտակեցեր. և դիցես զնոսա ՚ի ներքս ՚ի տապանակին: ³Եւ արարի տապանակ յանփուտ փայտից. և կոփեցի երկուս տախտակս քարեղէնս իբրև գառաջինսն. և ելի՛ ՚ի լեառնն, և երկու տախտակքն յերկոսին ՚ի ձեռս իմում*։ ⁴Եւ գրեաց՝ յերկոսին տախտակսն ըստ առաջին գրոյն զտասն պատգամսն զոր խօսեցաւ ընդ ձեզ Տէր ՚ի լերինն ՚ի միջոյ հրոյն. և ետ զնոսա ցիս Տէր: ⁵Եւ դարձայ՝ իջի ՚ի լեռնէ անտի, և եդի զտախտակսն ՚ի ներքս ՚ի տապանակին. և էին անդ որպէս և պատուիրեաց ինձ Տէր: ⁶Եւ որդիքն Իսրայէլի չուեցին ՚ի Բերովթայ որդւոցն Յակիմայ ՚ի Սադիայ. և անդ մեռաւ Ահարոն և անդրէն թաղեցաւ. և քահանայացաւ Եղիազար որդի նորա ընդ նորա*։ ⁷Անտի չուեցին ՚ի Գադգադ, և ՚ի Գադգադայ յետակայ՝ յերկիր վտակաց ջուրց: ⁸Յայնմ ժամանակի զատոյց Տէր զցեղն Ղևեայ բառնալ զտապանակ ուխտին Տեառն, կա՛լ առաջի Տեառն՝ պաշտել և աղօթս մատուցանել յանուն նորա մինչև ցա՛յսօր*։ ⁹Վասն այնորիկ ո՛չ գոյ Ղևտացւոցն բաժին և ժառանգութիւն ՚ի մէջ եղբարց իւրեանց. զի Տէր ինքնին է մասն և ժառանգութիւն նոցա՝ որպէս և ասաց նոցա*։ ¹⁰Եւ ես կացի ՚ի լերինն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. և լուաւ ինձ Տէր ՚ի ժամանակին յայնմիկ. և ո՛չ կամեցաւ սատակել զձեզ: ¹¹Եւ ասէ ցիս Տէր. Գնա՛ չուեա՛ առաջի ժողովրդեանդ այդորիկ. և մտցեն և ժառանգեսցեն զերկիրն զոր երդուայ հարցն դոցա տա՛լ դոցա*։

ԻԲ ¹²Եւ արդ՝ Իսրայէլ, զի՞նչ խնդրէ ՚ի քէն Տէր Աստուած քո. այլ երկնչե՛լ ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ. և զնա՛լ յամենայն ճանապարհս նորա, և սիրել զնա. և պաշտել զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ*։ ¹³և պահել զպատուիրանս Տեառն Աստուծոյ քոյ, և զիրաւունս նորա՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, զի բարի՛ լիցի քեզ: ¹⁴Ահաւասիկ Տեառն Աստուծոյ քո երկինք՝ և երկնի՛ց երկինք, և երկիր և ամենայն որ է՝ ՚ի նոսա*։ ¹⁵Բայց ընդ հարսն ձեր յառաջագոյն հաճեցաւ Տէր սիրել զնոսա, և ընտրեաց զզաւակ նոցա յետ նոցա զձե՛զ քան զազս ամենայն ըստ աւուրս ըստ այսմիկ: ¹⁶Եւ թլփատեցէ՛ք զխստասրտութիւն ձեր, և զպարանոցս ձեր մի՛ ևս խստացուցանէք. ¹⁷զի Տէր Աստուած մեր, նա՛ է Աստուած աստուծոց՝ և Տէր տերանց. Աստուած մե՛ծ և հզօր և ահաւոր. որ ո՛չ աչառի երեսաց, և ո՛չ առնու կաշառ*։ ¹⁸Առնէ իրաւունս եկին և որբո՛յ և այրո՛յ. սիրէ՛ զնժղեհն, տա՛լ նմա հաց և հանդերձ*։ ¹⁹Եւ սիրեցէ՛ք զպանդուխտն, զի և դուք պանդուխտք էիք յերկրին եգիպտացւոց: ²⁰Ի Տեառնէ Աստուծոյ քումմէ երկիցե՛ս, և զնա՛ պաշտեսցես, և ՚ի

* *Ոմանք.* Յերկոսին ՚ի ձեռին իմում:

* *Այլք.* Որդւոցն Յակիմայ ՚ի Սադայի... և անդէն թաղեցաւ:

* *Ոմանք.* Եւ կալ առաջի նորա պաշտել:

* *Ոմանք.* Բաժին ժառանգութեան ՚ի մէջ... ինքնին է ժառանգութիւն նոցա:

* *Ոմանք.* Գնա՛ չուեա՛ դու առա՛... հարցն նոցա տալ նոցա:

* *Ոմանք.* Յամենայն ՚ի ճանապարհս նորա:

* *Ոմանք.* Տեառն Աստուծոյ քո են երկինք:

* *Ոմանք.* Աչառի յերեսաց: *Ոսկան.* աչառէ երեսաց:

* *Ոմանք.* Եւ առնէ իրաւունս:

նա՛ յարեսցիս, և յանո՛ւն նորա երդնուցուս*։ ²¹Ձի նա՛ է պարծանք քո, և նո՛յն Աստուած քո, որ արա՛ր ՚ի քեզ զմեծամեծսն և զփառաւորս՝ զոր տեսին աչք քո։ ²²Եւթանասուն ոգւովք իջին հարքն քո յԵգիպտոս, և արդ ահա արա՛ր զքեզ Տէր Աստուած քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ։

11

Գլուխ ԺԱ

¹Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո. և պահեսցես՝ զպահպանութիւնս նորա, և զիրաւունս նորա, և զպատուիրանս նորա, և զդատաստանս նորա զամենայն աւուրս կենաց քոց։ ²Եւ ծանիջի՛ք այսօր, եթէ ո՛չ վասն որդւոց քոց՝ որք ո՛չ գիտեն և ո՛չ տեսին զխրատ Տեառն Աստուծոյ քոյ. և զմեծամեծս նորա, զձեռն հզօր, և զբազուկ բարձր. ³զնշանս նորա և զարուեստս՝ զոր արար ՚ի մէջ Եգիպտոսի, ՚ի փարաւոն արքայ Եգիպտացւոց, և յամենայն երկիր նորա*։ ⁴Եւ զոր ինչ արա՛ր ընդ զօրսն Եգիպտացւոց. զկառս նոցա և զերիվարս իւրեանց. ո՞րպէս ծփեաց զջուրս Կարմիր ծովուն ՚ի վերայ երեսաց նոցա, ՚ի յարձակել նոցա զկնի մեր. կորոյս զնոսա Տէր մինչև ցա՛յսօր ժամանակի. ⁵և զոր ինչ արա՛ր ձեզ յանապատի անդ, մինչև եկիք ՚ի տեղիս յայս։ ⁶Եւ զոր ինչ արար ընդ Դաթան և ընդ Աբիրոն՝ ընդ որդիս Եղիաբու որդւոյ Ռուբինի, որոց բացեալ երկիր զբերան իւր եկո՛ւլ զնոսա, և զտունս նոցա, և զվրանս նոցա. և զամենայն ինչս նոցա ընդ նոսա ՚ի միջոյ ամենայն Իսրայէլի*։ ⁷Ձի ձե՛ր իսկ աչք տեսին զամենայն զգործս Տեառն զմեծամեծս զոր արար ՚ի ձեզ մինչև ցայսօր*։ ⁸Եւ պահեցէ՛ք զամենայն պատուիրանս նորա զոր ե՛ս պատուիրեմ ձեզ այսօր. զի կեցէք և բազմապատիկք լինիցիք. և մտանիցէք ժառանգիցէ՛ք զերկիրն, յոր դուք անցանէք ընդ Յորդանան ժառանգել զնա*։ ⁹Ձի երկայնօրեայք լինիցիք ՚ի վերայ երկրին զոր երդուաւ Տէր հարցն ձերոց տա՛լ նոցա, և զաւակի՛ նոցա յետ նոցա, երկիր՝ որ բոխտ զկաթն և զմեղր։ ¹⁰Քանզի երկիրն յոր մտանելոց էք ժառանգել զնա, ո՛չ իբրև զերկիրն Եգիպտացւոց է՝ ուստի ելէք դուք անտի. յորժամ սերմանեն սերմանս, և ոռոգանեն ոտիւք իբրև զպարտեզ բանջարոյ*։ ¹¹Այլ երկիրն յոր դուք մտանելոց էք ժառանգել, երկիր լեռնային և դաշտական է. յանձրևոյ երկնից ըմպէ ջուր. ¹²երկիր՝ զոր Տէր Աստուած քո դարմանէ զնա, հանապա՛զ աչք Տեառն Աստուծոյ քոյ ՚ի վերայ նորա, իսկզբանէ տարւոյն մինչև ցկատարո՛ւմն տարւոյն*։

ԻԳ ¹³Եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ե՛ս պատուիրեմ քեզ այսօր, սիրել՛ զՏէր Աստուած քո և պաշտել՛ զնա յամենայն սրտէ քումնէ, և յամենայն անձնէ քումնէ։ ¹⁴Տացէ՛ անձրև երկրին ձերուն ՚ի ժամանակի իւրում զկանո՛ւխ և զանագան. և ժողովեսցես զգորեան քո և զգինի

* Ոմանք. երկնչիցիս. կամ՝ երկնչիցես։

* Ոմանք. Եւ զնշանս նորա և զգործս նորա զոր արար ՚ի մէջ Եգիպտոսի ՚ի փարաւոն արքային եզ՝։

* Այլք. Որոց բացեալ երկրի զբե՛ն։

* Ոմանք. Ձոր արար ձեզ մինչև։

* Ոսկան. Ձի կեցցիք և բազ՛... և ժառան՛։

* Ոմանք. Դուք անտի, որ յորժամ... և ոռոգանեն ոտիւք... իբրև զպարտեզս։

* Ոմանք. Տէր Աստուած քո դարմանէ զքեզ հանա՛։

քո և զևր քո* .¹⁵ և տացէ խոտ յանդս քո անասնոյ քում. և կերիցես և յագեսցիս:
¹⁶Չայեցարո՛ւք յանձինս ձեր, գուցէ՛ յուլանայցեն սիրտք ձեր և յանցանիցէք, և պաշտիցէք զաստուածս օտարս. և երկիր պագանիցէք նոցա* :¹⁷ Եւ սրտմտեալ բարկանայցէ Տէր՝ ՚ի վերայ ձեր, և արգելուցո՛ւ զերկինս՝ և ո՛չ լինիցի անձրև, և երկիր ո՛չ տացէ զպտուղ իւր. և կորնչիցի՛ք արագ արագ յերկրէն բարութեան՝ զոր ետ ձեզ Տէր: ¹⁸Եւ դիջիք զբանս զայս ՚ի սիրտս ձեր, և յանձինս ձեր, և արկջիք զնոսա նշանս ՚ի ձեռս ձեր. և եղիցին անշարժ առաջի աչաց ձերոց* :
¹⁹Եւ ուսուսջի՛ք որդւոց ձերոց խօսել զսոսա ՚ի նստել ՚ի տան, և ՚ի գնալ ՚ի ճանապարհի, և ՚ի ննջել և ՚ի յառնել: ²⁰Եւ գրեսջի՛ք զնոսա ՚ի վերայ սեմոց տանց ձերոց և ՚ի դրունս ձեր* .²¹ զի բազմօրեայք լինիցիք, և աւուրք որդւոց ձերոց ՚ի վերայ երկրին՝ զոր երդուաւ Տէր հարցն քոց տալ քեզ, ըստ աւուրց երկնից ՚ի վերայ երկրի: ²²Եւ եղիցի եթէ լսելով լուիցէք ամենայն պատուիրանացս այսոցիկ՝ զոր ես պատուիրեմ ձեզ այսօր առնել, սիրել զՏէր Աստուած քո. գնալ ՚ի ճանապարհս նորա՝ և յարել ՚ի նա: ²³Մերժեսցէ՛ Տէր զագգսն զայնոսիկ յերեսաց ձերոց, և ժառանգեսջի՛ք զագգս մեծամեծս և հզօրագոյնս քան զձեզ* :
²⁴Ամենայն տեղի ուր կոխիցեն գնացք ոտից ձերոց՝ ձե՛զ լիցին. յանապատ անտի մինչև ցմներն Լիբանանու. և ՚ի գետոյն մեծ՝ գետոյն Եփրատայ մինչև ցծովն արևմտից եղիցին սահմանք ձեր* : ²⁵Եւ ո՛չ ոք դառնայցէ ընդդէմ ձեր, զահ և զերկիւղ ձեր արկցէ Տէր Աստուած ձեր ՚ի վերայ երեսաց ամենայն երկրին զոր կոխիցէք, որպէս խօսեցաւ ընդ ձեզ Տէր* :
Ի՛հ ²⁶Եւ ես ահաւասիկ տամ այսօր առաջի ձեր օրհնութիւնս և անէօս.
²⁷Օրհնութիւն՝ եթէ լսիցէք պատուիրանաց Տեառն Աստուծոյ ձերոյ՝ զոր ես պատուիրեմ ձեզ այսօր: ²⁸Եւ անէօս՝ եթէ ո՛չ լուիցէք պատուիրանաց Տեառն Աստուծոյ ձերոյ, զոր ես պատուիրեմ ձեզ այսօր. և մոլորիցիք ՚ի ճանապարհէն զոր ես պատուիրեցի ձեզ, երթալ պաշտել զաստուածս օտարս՝ զորս ո՛չ ճանաչիցէք: ²⁹Եւ եղիցի յորժամ տարցի զքեզ Տէր Աստուած քո յերկիրն յոր անցանես ընդ Յորդանան ժառանգել զնա. և տացես դու զօրհնութիւնն ՚ի լերինն Գարիզին, և զանէօս ՚ի լերինն Գեբաղ* : ³⁰Ոչ ապաքէն յայն կոյս Յորդանանո՛ւ է այն՝ յետոյ ճանապարհին արևմտից յերկիրն Քանանացւոց. որոյ նիստն ընդ արևմուտս է մերձ ՚ի Գողգաղ, առ կաղնեան բարձու* : ³¹Եւ դուք անցանէք ընդ Յորդանան մտանել ժառանգել զերկիրն՝ զոր Տէր Աստուած տալո՛ց է քեզ ՚ի ժառանգութիւն զամենայն աւուրս. և ժառանգեսջի՛ք զնա՝ և բնակեսջի՛ք ՚ի նմա* :
Ի՛ե ³²Եւ զգուշասջի՛ք առնել զամենայն հրամանս նորա, և զդատաստանս զայսոսիկ զոր ես տամ առաջի ձեր այսօր:

* *Ոմանք.* Եւ տացէ... երկրին ձերոյ:

* *Ոմանք.* Յուլանայցէ սիրտ ձեր:

* *Ոմանք.* Ջսոսա նշան ՚ի ձեռս ձեր:

* *Այլք.* Եւ գրեսջիք զսոսա ՚ի:

* *Ոմանք.* Մերժեսցէ Տէր զամենայն ագգսն... և հզօրագոյնս քան:

* *Ոմանք.* Ուր հասանիցեն զնացք ոտ... և ՚ի գետէ մեծ՝ ՚ի գետոյն Եփրատայ:

* *Ոմանք.* Եւ զահ և զերկիւղ ձեր... որպէս և խօսե՛:

* *Ոմանք.* Յոր անցանիցես ընդ Յոր... ՚ի լերինն Գարեզին:

* *Ոմանք.* Ընդ արևմուտսն է մերձ ՚ի Գողգողն:

* *Ոմանք.* Տալոց է ձեզ ՚ի ժառանգ՝:

զնա իբրև զջուր: ¹⁷Մի՛ ժտիցես ուտել ՚ի քաղաքս քո գտասանորդս ցորենոյ քոյ և զգինոյ քոյ և զհլոյ քոյ, զանդրանիկս արջառոյ քոյ և զոչխարի. և զամենայն ուխտ զոր ուխտիցէք, և զխոստովանութիւնս ձեր, և զպտուղս ձեռաց ձերոց*:

¹⁸Այլ առաջի Տեառն Աստուծոյ քոյ կերիցես զայն՝ ՚ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած՝ իւր. դո՛ւ և ուստր քո և դուստր քո, ծառայն քո և աղախին քո, և եկն որ ՚ի քաղաքս քո. և ուրախ լինիցիս առաջի Տեառն Աստուծոյ քոյ ՚ի վերայ ամենայնի՝ յոր մխիցես զձեռն քո: ¹⁹Զգո՛յշ լեր անձին քում, զուցէ՛ թողուցու զՂևտացին զամենայն ժամանակս քո՝ որչափ և կեցցես ՚ի վերայ երկրին:

Ի՛է ²⁰Եւ եթէ ընդարձակեսցէ Տէր Աստուած քո զսահմանս քո որպէս և խոստացաւ քեզ, և ասիցես թէ կերայց միս. եթէ ցանկանայցէ անձն քո ուտել միս, ըստ ամենայն ցանկութեան անձին քոյ կերիցես միս*:

²¹Ապա թէ հեռագոյն իցէ ՚ի քէն տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր ՚ի վերայ նորա. և զենուցո՛ւս յարջառոյ քումնէ և յոչխարէ քումնէ՝ յորոց տացէ՛ քեզ Աստուած. զոր օրինակ պատուիրեցի քեզ, կերիցես ՚ի քաղաքս քո ըստ ցանկութեան անձին քոյ*:

²²որպէս ուտիցի այծեամն և եղջերու, այնպէս կերիցես և զայն. անսուրբն ՚ի քեզ և սուրբն նոյնպէս կերիցես*:

²³Զգո՛յշ լեր չուտելոյ զարիւն, զի արիւն նորա է՝ շունչ իւր. մի՛ ուտիցես շունչ ընդ մտոյ*:

²⁴յերկիր հեղուցու զնա իբրև զջուր. ²⁵և մի՛ ուտիցես զնա. զի բարի՛ լինիցի քեզ, և որդւոց քոց յետ քո. եթէ արասցես զբարին և զհաճոյ առաջի Տեառն Աստուծոյ քոյ*:

²⁶Բայց զսրբութիւնսն քո որ լինիցին քեզ, և զուխտսն քո զոր ուխտիցես. առեալ եկեսցես ՚ի տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո ի՛ւր. կոչել զանուն իւր ՚ի վերայ նորա: ²⁷Եւ արասցես զողջակէզսն քո, զմիսն հանցես ՚ի վերայ սեղանոյ Տեառն Աստուծոյ քոյ. և զարիւն զոհիցն հեղուցու առ յատակաւ սեղանոյն Տեառն Աստուծոյ քոյ. և զմիսն կերիցես*:

²⁸Զգո՛յշ լեր և լուր. և արասցես զամենայն զբանս զոր ես պատուիրեմ քեզ. զի բարի՛ լինիցի քեզ, և որդւոց քոց յաւիտեան. և արասցես զբարին և զհաճոյն առաջի Տեառն Աստուծոյ քոյ*:

²⁹Եւ եթէ սատակեսցէ Տէր Աստուած քո զազգսն յերեսաց քոց. յորում դու մտանելոց ես ժառանգել զերկիր նոցա. և ժառանգեսցես զնոսա, և բնակեսցես յերկրի նոցա*:

³⁰Զգո՛յշ լեր անձին քում, զուցէ՛ խնդրիցես երթալ զհետ նոցա յետ սատակելոյ զնոսա յերեսաց քոց. մի՛ քննիցես զդիս նոցա՝ և ասիցես. Չիա՞րդ առնիցեն ազգքս այսոքիկ դիցն իւրեանց՝ զի և ես արարից Տեառն: ³¹Մի՛ առնիցես նոյնպէս Տեառն Աստուծոյ քում. զի զգարչելիսն զոր ատեալ Տէր՝ արարին դիցն իւրեանց. զի զուստերս իւրեանց և զդստերս իւրեանց՝ այրեն հրով դիցն իւրեանց*:

³²Ամենայն բանի զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ զգուշանայցես առնելոյ. մի՛ յաւելուցու ՚ի նա, և մի՛ հատանիցես ՚ի

* *Ոմանք.* Եւ զոչխարի քո, և զամենայն ուխտս:

* *Ոմանք.* Անձն քո ուտելոյ միս:

* *Ոմանք.* Յորոց տացէ քեզ Տէր Աստուած:

* *Յօրինակին.* Եւ եղջերու. այնպէս կերիցես:

* *Ոմանք.* Զգո՛յշ լեր ՚ի չուտելոյ զարիւն... մի՛ ուտիցի շունչ ընդ մտոյ: *Ուր Ոսկան.* Զշունչ մտոյ:

* *Ոմանք.* Եթէ առնիցես զբարին և զհաճոյն:

* *Ոմանք.* Չեղցես առ յատակաւ:

* *Ոմանք.* Զոր ես պատուիրեմ ձեզ, զի բարի լիցի քեզ:

* *Այլք.* Յոր դու կամ՝ դուն մտա՛:

* *Այլք.* Եւ զդստերս այրեն:

նմանէ:

13

Գլուխ ԺԳ

ԻԸ ¹Եւ եթէ յամենիցէ՝ ՚ի միջի քում մարգարէ կամ երագահան՝ երագոց, և տացէ քեզ նշան կամ արուեստ*.² և լինիցի նշանն կամ արուեստն զոր խօսեցաւ առ քեզ, և ասիցէ երթիցուք պաշտեսցուք զաստուածս օտարս՝ զորս ո՛չ ճանաչիցէք*.³ Մի՛ լսիցէք բանից մարգարէին այնորիկ, կամ երագահանին երագոց. զի փորձէ՛ զքեզ Տէր Աստուած ճանաչել, թէ սիրիցէ՞ք զՏէր Աստուած մեր յամենայն սրտէ՛ ձերմէ՛ և յամենայն անձնէ՛ ձերմէ՛*.⁴ Ձկնի Տեառն Աստուծոյ ձերոյ երթիցիք, և ՚ի նմանէ երկնչիցիք, և զպատուիրանս նորա պահեսցիք, և ձայնի՛ նորա լուիցիք, և ՚ի նա՛ յարեսցիք*.⁵ Եւ մարգարէն այն կամ երագահանն երագոց՝ մեռցի՛. զի խօսեցաւ ապստամբեցուցանել՝ զքեզ ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ՛ որ եհան զքեզ յերկրէն Եգիպտացւոց, որ փրկեացն զքեզ յերկրէն ծառայութեան. մերժել՝ զքեզ ՚ի ճանապարհէն՝ զոր պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո գնալ ընդ նա. և բարձցէ՛ս զչարն ՚ի միջոյ ձերմէ՛*.⁶ Եւ եթէ աղաչեսցէ զքեզ եղբայր քո առ ՚ի հօրէ կամ առ ՚ի մօրէ քումմէ, կամ ուստր քո, կամ դուստր քո, կամ կին ծոցոյ քոյ, կամ բարեկամ հանգոյն անձին քոյ, գա՛ղտ և ասիցէ. Երթիցուք պաշտեսցուք զաստուածս օտարս, զորս ո՛չ ճանաչիցես դու և հարք քո.⁷ Եւ աստուծո՛ց ազգացն որ շուրջ զձեք իցեն, ՚ի մերձաւորացն քոց կամ ՚ի հեռաւորաց, ՚ի ծագաց երկրին մինչև ՚ի ծագս երկրին*.⁸ Մի՛ հաւանիցիս նմա, և մի՛ լուիցես նմա, և մի՛ խնայեսցէ ակն քո ՚ի նա, և մի՛ գթասցիս ՚ի նա, և մի՛ ծածկեսցես զնա*.⁹ Պատմելով պատմեսցես զնմանէ. ձեռք քո նախ լիցին ՚ի նա սպանանել զնա, և ապա՛ ձեռն ամենայն ժողովրդեանն*.¹⁰ և քարկոծեսցեն զնա քարամբք և մեռցի. զի խնդրեաց ապստամբեցուցանել զքեզ ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ. որ եհան զքեզ յերկրէն Եգիպտացւոց ՚ի տանէ ծառայութեան:¹¹ Եւ լուեալ ամենայն Իսրայէլի զարհուրեսցի՛. և ո՛չ ևս յաւելուցուն առնել ըստ բանին այնորիկ չարի ՚ի միջի ձերում*.¹² Եւ եթէ լսիցես ՚ի միում ՚ի քաղաքացն՝ զորս Տէր Աստուած քո տացէ քեզ բնակել անդ. ասել*.¹³ Եթէ ելին արք անօրէնք ՚ի մէնջ. և ապստամբեցուցին զամենայն բնակիչս քաղաքին իւրեանց. և ասեն. Երթիցուք և պաշտեսցուք զաստուածս օտարս՝ զորս ո՛չ գիտիցէք.¹⁴ և քննեսցէ՛ս և հարցանիցէ՛ս և յուզեսցես յոյժ. և ահա ստո՛յգ և հաւաստեալ իցէ բանն, և եղեալ իցէ զարշուքիւնն ՚ի ձեզ*.¹⁵ Կտորրելով կտորրեսցիք զամենայն բնակիչս երկրին այնորիկ կտորրմամբ սրոյ. և նզովելով նզովեսցիք զնա, և զամենայն ինչ որ ՚ի նմա, և զանասուն նոցա ՚ի բերան սրոյ:¹⁶ Եւ զամենայն

* Ոճանք. Քեզ նշանս կամ արուեստս:

* Ոճանք. Եւ ասէ երթիցուք և պաշ՛:

* Այլք. Ձի փորձէ զձեզ Տէր Աստուած:

* Ոճանք. Լուիցիք, և ՚ի նա յաւելցիք:

* Ոճանք. Գնալ ընդ նա:

* Ոճանք. Ի մերձաւորաց նոցա կամ ՚ի հե՛:

* Ոճանք. Եւ ձեռն քո նախ լիցի ՚ի նմա:

* Ոճանք. Ըստ բանիդ այնորիկ չար ՚ի միջի ձե՛:

* Ոճանք. Ի քաղաքաց քոց զորս... տալոց է քեզ բնակել անդ և ասել:

* Այլք. Եւ քննեսցես և հարցես:

կապուտ նորա ժողովեսցես յելս նորա. և այրեսցես հրով զքաղաքն, և զամենայն զաւար նորա համօրէն առաջի Տեառն Աստուծոյ քո. և եղիցի աւերակ յաւիտեան, և ո՛չ ևս շինեսցի*։ ¹⁷Եւ մի՛ կռուիցի ՚ի ձեռին քուն ՚ի նզովից նորա. զի դարձցի՛ Տէր ՚ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ. և տացէ քեզ ողորմութիւն, և ողորմեսցի՛ քեզ և բազմացուցէ՛ զքեզ. զոր օրինակ երդուաւ Տէր հարցն քոց*։ ¹⁸Եթէ լսիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել զամենայն պատուիրանս նորա, զոր ես քեզ պատուիրեմ այսօր. առնել զբարին և զհաճոյ առաջի Տեառն Աստուծոյ քոյ*։

14

Գլուխ ԺԴ

¹Զի որդիք էք դուք Տեառն Աստուծոյ ձերոյ։

Ի՞նչ Սի՛ ցտիցիք, և մի՛ հարկանիցէք զճակատ ՚ի վերայ մեռելոյ*։ ²Զի ժողովուրդ ես դու սո՛ւրբ Տեառն Աստուծոյ քոյ. և զքե՛զ ընտրեաց Տէր Աստուած քո լինել նմա ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց որ ՚ի վերայ երեսաց երկրի*։

Լ ³Սի՛ ուտիցէք զամենայն գարշելիս։ ⁴Այս անասունք են զորս ուտիցէք. արջառ, և ոչխար ՚ի հօտից, և նոխազ յայծեաց*, ⁵զեղջերու և զայծեամն, և զգոմէ՛շ և զխարթուզ, և զայծաքաղ, և զյամոյր, և զանալութ*։ ⁶և զամենայն անասուն զթաթահերձ, և զկճղակաբաշխ, և զորոճո՛ղ յանասնոց ուտիցէք։ ⁷Եւ զայն մի՛ ուտիցէք որ որոճեն, և թաթահե՛րձ՝ և կճղակաբաշխ ո՛չ իցեն։ Ուղտ, և նապաստակ, և ճագար, զի որոճեն, և կճղակաբաշխ ո՛չ են, անսո՛ւրբք իցեն նոքա ձեզ. ⁸և խոզ, զի թաթահերձ և կճղակաբաշխ է, և որոճէ ոչ, անսո՛ւրբք իցէ նա ձեզ. ՚ի մտոյ նոցա մի՛ ուտիցէք, և ՚ի մեռեալ նոցա մի՛ մերձենայցէք։ ⁹Եւ այս են զոր ուտիցէք յամենայնէ՛ որ ՚ի ջուրս են. ամենայնի որոյ իցեն թևք և թեփ, ուտիցէք։ ¹⁰Եւ ամենայնի որոյ ո՛չ իցեն թևք և թեփ մի՛ ուտիցէք. անսո՛ւրբք իցեն նոքա ձեզ։ ¹¹Չամենայն հաւ սուրբ ուտիցէք։ ¹²Եւ այս է զոր ո՛չ ուտիցէք ՚ի նոցանէ. զարծուի, և զկորճ, և զանգղ*, ¹³և զգետարծուի, և զցիւն, և որ ինչ նման է նոցա. ¹⁴և զորի, և որ ինչ նման իցէ նմա. ¹⁵և զջայլամն, և զբու, և զճայ, ¹⁶և զարագիլ, և զփոր, և զհողամաղ*, ¹⁷և զքաջահաւ, և զտխակ, և զագռաւ, ¹⁸և զհաւալուսն, և զքաղադր, և որ ինչ նման է նոցա, և զյոպոպ, և զչիղջ*։ ¹⁹Եւ ամենայն սողուն ՚ի թռչնոց անսո՛ւրբք լիցի ձեզ. և մի՛ ուտիցէք ՚ի նոցանէ։ ²⁰Եւ զամենայն թռչուն սո՛ւրբ՝ կերիջիք։

Լ և ²¹Եւ զամենայն մեռելոտի մի՛ ուտիցէք. այլ պանդխտին որ է ՚ի քաղաքս քո տացես զնա՝ և կերիցէ, կամ վաճառեսցես ստարոտոյն. զի ժողովուրդ սո՛ւրբ

* *Ոմանք.* Կապուտ նոցա ժողովեսցես յելս նոցա։

* *Ոմանք.* Եւ մի՛ կռուեսցի ՚ի ձեռն։

* *Ոմանք.* Եւ զհաճոյն. *կամ՝* զհաճոյսն առաջի։

* *Ոմանք.* Սի՛ ցտիցէք և մի՛ հարկանիցէք։

* *Ոմանք.* Լինել քեզ նմա ժողովուրդ։

* *Ոմանք.* Այս անասունք են զոր ուտիցէք։

* *Ոմանք.* Եւ զայծաքաղ և զյամոյր։

* *Բազումք.* Եւ զանկղ։

* *Ոմանք.* Եւ զհողոմաղ։

* *Ոմանք.* Եւ զքարադր. և *ոմանք.* քաղադր։

ես դու Տեառն Աստուծոյ քո,*:

ԼԲ Մի՛ եփեսցես զգառն՝ ի կաթն մօր իւրոյ:

ԼԳ ²²Տասանորդս տասանորդեսցես յամենայն արմտեաց սերմանց քոց, զարմտիս անդոց քոց ամ ըստ ամէ*։ ²³Եւ կերիցես զայն առաջի Տեառն Աստուծոյ քոյ՝ ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր ի վերայ նորա, անդ մատուցես զտասանորդս ցորենոյ քոյ, և զգինւոյ քոյ, և զհւղոյ քոյ, և զանդրանիկս արջառոյ քոյ, և զոչխարի քոյ. զի ուսցիս երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ զամենայն աւուրս։ ²⁴Ապա թէ հեռի՛ իցէ ՚ի քէն ճանապարհն, և ո՛չ կարիցես տանել զայն. վասն զի հեռի՛ իցէ ՚ի քէն տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր անդ։ Չի օրհնեաց զքեզ Տէր Աստուած քո. ²⁵վաճառեսցես զայն արծաթոյ, և առցես զարծաթն ՚ի ձեռին քում, և երթիցես ՚ի տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո. ²⁶և տայցես զարծաթն ընդ ամենայնի որում ցանկանայցէ անձն քո, արջառոյ, կամ ոչխարի, կամ գինւոյ, կամ ցըւոյ, կամ ամենայնի որում ցանկանայցէ անձն քո. և կերիցես անդ առաջի Տեառն Աստուծոյ քոյ. և ուրախ լինիցիս դու և ուստր քո*, ²⁷և Ղևտացին որ ՚ի քաղաքս քո, մի՛ թողուցուս զնա, զի ո՛չ գոյ նորա բաժին և ո՛չ ժառանգութիւն ընդ քեզ*։ ²⁸Յետ երից ամաց հանիցես զամենայն տասանորդս արմտեաց քոց, և յամին յայնմիկ դիցես զայն ՚ի քաղաքս քո*։ ²⁹և կերիցէ՛ Ղևտացին, քանզի ո՛չ գոյ նորա բաժին և ժառանգութիւն ընդ քեզ. և եկն, և որբ, և այրի ՚ի քաղաքս քո, կերիցեն և յագեսցին. զի օրհնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս քո զոր առնիցես*։

15

Գլուխ ԺԵ

ԼԴ ¹Յեւթն եւթներորդ ամի արասցես թողութիւն*։ ²Եւ այս իցէ հրաման թողութեանն. թողցես զամենայն պարտս քո զոր պարտիցի քեզ ընկեր քո. և մի՛ պահանջիցես յընկերէ և յեղբօրէ քումմէ. զի թողութիւն կոչեսցեալ է Տեառն Աստուծոյ քոյ։ ³Յօտարոտւոյն պահանջիցես որ ինչ իցէ քո առ նմա. բայց եղբօրն քում թողութիւն արասցես զպարտուցն քոց։ ⁴Եւ մի՛ լինիցի ՚ի միջի քում կարօտեալ. զի օրհնելով օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յերկրին՝ զոր Տէր Աստուած քո տալոց է քեզ ՚ի ժառանգութիւն ժառանգել զնա։ ⁵Եւ եթէ լսելով լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել և առնել զամենայն պատուիրանս զոր ես պատուիրեմ քեզ այսօր*։ ⁶զի Տէր Աստուած քո օրհնեաց զքեզ, որպէս և խոստացաւ քեզ. և տացես փոխ ազգաց բազմաց, և դու ո՛չ առնուցուս փոխ. և

* Ոմանք. Որ ՚ի քաղաքս քո. և ոմանք. որ իցէ ՚ի քաղաքս քո:

* Ոմանք. Չտասանորդս տասանորդեսցես:

* Ոմանք. Եւ տացես զարծաթն... և կերիցես զայն առաջի Տեառն Աստուծոյ քո... և ուստր քո, և դուստր քո, և Ղև*:

* Ոմանք. Չի ո՛չ գոյր նոցա բաժ*:

* Ոմանք. Չանցես զամենայն տասա*:

* Յօրհնակին պակասէր. Յամենայն գործս քո զոր առնիցես:

* Ոմանք. Յեւթներորդ ամի արասցես:

* Ոմանք. Լուիցէր ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ. կամ՝ ձերոյ. պահել... պատուիրանս նորա զոր ես:

տիրեսցես ազգաց բազմաց, և քեզ մի՛ տիրեսցեն՝: ⁷Եւ եթէ լինիցի՛ ՚ի միջի քում կարօտեալ յեղբարց քոց, ՚ի միում ՚ի քաղաքաց քոց յերկրին զոր տացէ քեզ Տէր Աստուած քո. մի՛ դարձուցանիցես զսիրտ քո, և մի՛ կծկիցես զձեռն քո յեղբորէ քումնէ կարօտելոյ՝: ⁸Այլ ընդարձակելով՝ արձակեսցես նմա զձեռն քո, և տալով տացես նմա փոխ որչափ և խնդրիցէ ՚ի կարօտութեան իւրում՝: ⁹Զգո՛յշ լեր անձին քում, զուցէ լինիցի բա՛ն ծածուկ անօրէնութեան ՚ի սրտի քում. և ասիցես. Մերձ է ամն եւթներորդ՝ ամն թողութեան. և չարակնեսցէ՛ ակն քո ՚ի վերայ եղբոր քո կարօտելոյ, և ո՛չ տայցես նմա. և բողոքեսցէ զքէն առ Տէր. և լինիցին քեզ այն մե՛ղք մեծամեծք՝: ¹⁰Այլ պարգևելով՝ պարգևեսցես նմա, և տալով տացես նմա փոխ՝ որչափ և պիտո՛յ իցէ. և մի՛ տրտմիցիս ՚ի սրտի քում զկնի տրոցն քոց նմա. զի վասն բանին այնորիկ օրհնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն ՚ի գործս քո. և յամենայնի յոր ինչ և մխեսցես զձեռն քո. ¹¹զի ո՛չ պակասէ կարօտեալ յերկրէ: Վասն այնորիկ ես պատուիրեմ զբանս զայս և ասեմ. Ընդարձակելով արձակեսցես զձեռն քո յաղքատ և ՚ի տառապեալ եղբայր քո որ իցէ յերկրին քում՝:

Լէ ¹²Եւ եթէ վաճառեսցի քեզ եղբայր քո Եբրայեցի, կամ կին Եբրայեցի, ծառայեսցէ քեզ զվեց ամ. և յամին եւթներորդի արձակեսցես զնա ազա՛տ ՚ի քէն: ¹³Եւ յորժամ արձակեսցես զնա, ո՛չ արձակեսցես զնա ունայն. ¹⁴այլ հանդերձելով հանդերձեսցես զնա յոչխարաց քոց. ՚ի ցորենոյ քումնէ, և ՚ի հնձանէ քումնէ. որպէս և օրհնեաց զքեզ Տէր Աստուած քո՝ տացես նմա՝: ¹⁵Եւ յիշեսցես, զի և դու ծառայ էիր յերկրին Եգիպտացոց. և փրկեաց զքեզ Տէր Աստուած քո անտի. վասն այսորիկ ես պատուիրեմ քեզ առնել զբանս զայս՝: ¹⁶Ապա թէ ասիցէ ցքեզ. Ո՛չ ելանեմ ՚ի քէն. զի սիրեա՛ց զքեզ և զտուն քո. զի բարի՛ իցէ նմա առ քեզ. ¹⁷առցես հերիւն, և ծակեսցես զունկն նորա ՚ի վերայ սեւոց դրանն, և եղիցի քեզ ստրուկ յաւիտեան. և զաղախին քո նոյնպէս արասցես՝: ¹⁸Եւ մի՛ խիստ թուեսցի առաջի քո յորժամ արձակեսցես զնոսա ազա՛տս ՚ի քէն. զի ամի ամի վարձուք վարձկանի ծառայեաց քեզ զվեց ամ. և օրհնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայնի զինչ և գործեսցես՝:

ԼԶ ¹⁹Զամենայն անդրանիկս որ ծնանիցին յանդէայս քո և ՚ի հօտս քո, զարուսն ՚ի նոցանէ սրբեսցես Տեառն Աստուծոյ քում: Ո՛չ գործեսցես անդրանկաւ եզին քոյ, և մի՛ կտրեսցես զանդրանիկս հօտից քոց՝: ²⁰Ամ յամէ կերիցես զնա առաջի Տեառն ՚ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո, դո՛ւ և տուն քո: ²¹Եւ եթէ արատաւո՛ր իցէ, կամ կաղ, կամ կոյր, և կամ ամենայն արատ չա՛ր զինչ և զուցէ՛ ՚ի նմա, մի՛ զենցես զնա Տեառն Աստուծոյ քում՝. ²²այլ ՚ի

* *Ոմանք.* Զի Տէր Աստուած քո օրհնեսցէ զքեզ:

* *Ոմանք.* Զոր Տէր Աստուած քո տալոց է քեզ:

* *Ոմանք.* Ընդարձակեսցես. *կամ՝* ընդարձակեսցիր նմա... խնդրեսցէ ՚ի կարօ՞:

* *Ոմանք.* Այն ՚ի մեղք մեծամեծք:

* *Ոմանք.* Ընդարձակելով ընդարձակեսցես զձեռն քո յեղբայր քո աղքատն և ՚ի կարօտեալն որ իցեն յերկրի քում:

* *Յօրինակին.* Այլ հանդերձով հանդերձեսցես: *Այլք.* Եւ ՚ի ցորենոյ քումնէ:

* *Այլք.* Վասն այնորիկ ես պա՞:

* *Ոմանք.* Ի վերայ սեւոց դրացն:

* *Ոմանք.* Ամի յամի վարձուք վարձկանի... յամենայնի որ զինչ և գոր՞:

* *Յօրինակին կրկնի.* Զօտից հօտից քոց:

* *Ոմանք.* Մի՛ զենցես զնա առաջի Տեառն Աստուծոյ քում:

քաղաքս քո կերիցես զնա. անսուրբն 'ի քեզ՝ և սուրբն նոյնպէս կերիցեն, իբրև զայծեանն կամ զեղջերու: ²³Բայց զարիւն մի՛ ուտիցես, յերկիր հեղուցուս զնա իբրև զջուր*:

16

Գլուխ ԺԶ

ԼԷ ¹Զգուշասցի՛ր ամսոյն կանխոց, և արասցես զատի՛կ Տեառն Աստուծոյ քոյ. զի յանսեանն կանխոց ելէք յեգիպտոս 'ի գիշերի*: ²Եւ զենցես զգատիկն Տեառն Աստուծոյ քում. ոչխարս և արջառս, 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր անդ: ³Մի՛ ուտիցէք ընդ նմա խմորուն, զելթն օր քաղա՛րջ կերիցես ընդ նմա, հա՛ց չարչարանաց. քանզի տագնապաւ ելէք յեգիպտոս. զի յիշիցէք դուք զօրն ելից ձերոց յերկրէն Եգիպտացոց՝ զամենայն աւուրս կենաց ձերոց*: ⁴Եւ մի՛ ևս երևեսցի 'ի քեզ խմոր յամենայն սահմանս քո զելթն օր. և մի՛ ազցի 'ի մսոյն զոր զենուցուս յերեկորեայ յաւուրն առաջնոյ ցայգ*: ⁵Եւ մի՛ ժտեսցիս զենուլ զգատիկն 'ի միում 'ի քաղաքաց քոց՝ զորս Տէր Աստուած քո տացէ քեզ*. ⁶այլ 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր 'ի նմա, անդ զենցես զգատիկն առ երեկս ընդ արևմուտս, 'ի ժամանակին յորում ելէր յեգիպտոս: ⁷Եփեսցես և խորովեսցես, և կերիցես 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո. և դարձցիս 'ի վաղիւն երթիցես 'ի տուն քո: ⁸Չվե՛ց օր կերիցես քաղաք, և յաւուրն եւթներորդի ելք տօն Տեառն Աստուծոյ քոյ. մի՛ գործեսցես 'ի նմա զամենայն գործ, բայց որ ինչ գործիցի՛ անձին*: ⁹Եւթն եւթներորդս համարեսցիս քեզ, 'ի սկսանելոյ մանկաղի քոյ յոճ, սկսանիցիս համարել եւթն եւթներորդս*. ¹⁰և արասցես տօն եւթներորդաց Տեառն Աստուծոյ քում, որչափ կարօ՛ղ իցէ ձեռն քո ըստ ինչին զոր տացէ քեզ՝ որպէս զհարդ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո: ¹¹Եւ ուրախ լիցիս առաջի Տեառն Աստուծոյ քոյ, դո՛ւ և ուստր քո և դուստր քո, ծառայ քո, և աղախին քո. և Ղևտացին որ 'ի քաղաքս քո. և եկն և որբն և այրին որ 'ի ձեզ. 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած անուանել զանուն իւր անդ: ¹²Եւ յիշեսցես զի ծառայ էիր յերկրին Եգիպտացոց. և զգուշասցիս և արասցես զպատուիրանս զայսոսիկ: ¹³Տօն տաղաւարահարաց արասցես զելթն օր. 'ի ժողովել քեզ 'ի կալոյ քումնէ և 'ի հնձանէ քումնէ: ¹⁴Եւ ուրախ լիցիս 'ի տօնի քում. դո՛ւ և ուստր քո և դուստր քո, ծառայ քո և աղախին քո. և Ղևտացին, և եկն և որբն և այրին որ իցեն 'ի քաղաքս քո*: ¹⁵Չեւթն օր տօնեսցես Տեառն Աստուծոյ քում, 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո 'ի նմա: Եւ եթէ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն արմտիս քո, և յամենայն գործս ձեռաց քոց, և լինիցիս ուրախ: ¹⁶Չերիս ժամանակս 'ի տարւոջ յանդիման լիցի ամենայն արու

* *Ոմանք.* Մի՛ ուտիցէք, յերկիր հեղուցուք:

* *Ոսկան.* Զգուշասցի՛ր ամսոյն կանխոյ:

* *Այլք.* Զի յիշեցէք զօրն ելից ձերոց:

* *Այլք.* Եւ մի՛ երևեսցի 'ի քեզ: *Բազումք.* Յաւուրն առաջնոյ յայգ:

* *Ոմանք.* Եւ մի՛ ժտեսցիս կամ՝ ժտիցես... 'ի միում քաղաքաց քոց:

* *Ոսկան.* Ելք տօնի Տեառն Աստուծոյ քո:

* *Ոմանք.* Մանգաղի քոյ:

* *Ոմանք.* Եւ ուրախ լիցիս 'ի:

քո՝ առաջի Տեառն Աստուծոյ քոյ՝ ի տեղուոջն զոր ընտրեսցէ Տէր: Ի տօնի՝ քաղարջակերացն. և ի տօնի՝ եւթներորդացն. և ի տօնի տաղաւարահարացն. և ո՛չ երևեսցիս առաջի Տեառն Աստուծոյ քում ունայնաձեռն* . 17 Իւրաքանչիւր ըստ կարի՝ ձեռաց իւրոց՝ ըստ օրհնութեան Տեառն Աստուծոյ քո զոր ե՛տ քեզ՝ :

ԼԸ 18 Դատաւորս և ատենադպի՛րս կացուսցես յամենայն քաղաքս քո՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ՝ ըստ ցեղի՛ց. և դատեսցեն զժողովուրդն դատաստան արդար* . 19 և մի՛ աչառիցեն երեսաց. և մի՛ առնուցուն կաշառս: Քանզի կաշառ՝ կուրացուցանէ՝ զաչս իմաստնոց. և ապականէ զբանս արդարոց* :

20 Արդարութեամբ արասցես զիրաւունս, զի կեցէք, և մտանիցէք ժառանգել զերկիրն զոր Տէր Աստուած տացէ ձեզ* :

ԼԹ 21 Մի՛ տնկեսցես քեզ անտառս զամենայն փայտի առ սեղանով Տեառն Աստուծոյ քոյ* : 22 Եւ մի՛ արասցես ինչ քեզ ձաւնի: Եւ մի՛ կանգնեսցես քեզ արձան զոր ատեսց Տէր Աստուած քո* :

17

Գլուխ ԺԷ

Խ 1 Եւ մի՛ զոհիցես Տեառն Աստուծոյ քում արջառ կամ ոչխար՝ յորում իցէ արատ ինչ, ըստ ամենայն արատաւոր բանի. զի պի՛ղծ է այն առաջի Տեառն Աստուծոյ քոյ* :

ԽԱ 2 Եւ եթէ գտցի ի միջի քում, ի միում ի քաղաքացն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ, ա՛յր կամ կին՝ որ առնիցէ զչա՛ր առաջի Տեառն Աստուծոյ քոյ, անցանել զուխտիւ նորա* . 3 և երթեալ պաշտիցեն զաստուածս օտարս, և երկիր պագանիցեն նոցա. Արեգական, կամ լուսնի, կամ ամենայնի որ իցէ ի զարդուէ երկնից. զորս ո՛չ հրամայեցի 4 և պատմեցի քեզ. և քննեսցես յոյժ, և ահա ճշմարտիւ լեալ իցէ բանն, և եղեալ իցէ պղծութիւնն այն ի մէջ Իսրայէլի* : 5 Զանցես զայրն զայն, կամ զկին՝ որ արարին զբանն չար, ի դրունս ձեր. և քարկոծեցէք զնոսա քարամբք և մեռցի՛ն* : 6 Երկուք և երիւք վկայիւք մեռցի որ մեռանիցին, և մի՛ մեռցի միով վկայի* : 7 Եւ ձեռն վկայիցն եղիցի նախ ի նա սպանանել՝ զնա, և ապա՝ ձեռն ամենայն ժողովրդեանն. և բարձցես զչարն ի միջոյ ձերմէ* :

* Այլք. Աստուծոյ քո ունայնաձեռն:

* Ոմանք. Ըստ կարի ձեռաց ձերոց:

* Ոմանք. Յամենայն ի քաղաքս քո:

* Յօրհնակին ի բնաբանի անդ զրեալ՝ ապանէ. ի լուս՝. նշանակի ի մէջ առնուլ՝ այպանէ. կամ համաձայն այլոց՝ ապականէ, որպէս և եղաք:

* Ոմանք. Արդարութեամբ վարեսցես զիրաւունս. զի կեցցէք... ժառանգեցէք զերկիրն... տացէ քեզ:

* Ոմանք. Անտառ ամենայն փայտի:

* Ոմանք. Եւ մի արասցես ինչ ձաւնի:

* Ոմանք. Առաջի Տեառն Աստուծոյ քում:

* Օրհնակ մի. Անցանելով զուխտիւ նորա:

* Ոսկան. Եւ պատմեսցի քեզ, և քն՝:

* Ոմանք. Ձնոսա քարամբք, և սատակեսցին:

* Ոմանք. Երկու և երիւք վկայի... որ մեռանիցի:

* Ոմանք. Եղիցի նախ ի նա սպա՛ն:

ԽԲ ⁸Եւ եթէ վրիպեսցէ՝ ՚ի քէն բան՝ ՚ի դատաստանի, ՚ի մէջ արեան և արեան. և ՚ի մէջ դատաստանի և դատաստանի, և ՚ի մէջ գրգռութեան և գրգռութեան, և ՚ի մէջ հակառակութեան և հակառակութեան. բան՝ դատաստանի ՚ի քաղաքս քո. և յարուցեալ ելցես՝ ՚ի տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր անդ՝: ⁹Եւ երթայցես առ քահանայսն Ղևտացիս, և առ դատաւորն որ լինիցի յաւուրսն յայնոսիկ. և քննեալ պատմեսցեն քեզ զդատաստանն՝: ¹⁰Եւ արասցես ըստ հրամանին զոր պատմեսցեն քեզ որք ՚ի տեղւոյն իցեն՝ զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո. և զգուշասջի՛ր յոյժ առնել ըստ ամենայնի որպէս օրինադրեսցի քեզ. ¹¹ըստ օրինացն և ըստ դատաստանի զոր ասասցեն քեզ՝ արասցես. և մի՛ խոտորեսցիս ՚ի բանէն զոր պատմեսցեն քեզ, մի՛ յաջ և մի՛ յահեակ: ¹²Եւ մարդ որ՝ որ առնիցէ հպարտութեամբ առ ՚ի չլսելոյ քահանային՝ որ կայցէ պաշտել յանուն Տեառն Աստուծոյ քոյ. կամ դատաւորին որ իցէ յաւուրսն յայնոսիկ՝ մեռցի՛ մարդն այն. և բարձցես՝ զչարն ի սրայելէ: ¹³Եւ ամենայն ժողովորդեանն լուեալ երկիցէ՛, և մի՛ ևս ամպարշտեսցի:

ԽԳ ¹⁴Եւ եթէ մտանիցես յերկիրն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ, և ժառանգեսցես զնա, և բնակեսցես ՚ի նմա. և ասիցես. Կացուցի՛ց ՚ի վերայ իմ իշխան որպէս և այլ ազգք որ շուրջ զինն են: ¹⁵Կացուցանելով կացուցես ՚ի վերայ քո իշխան՝ զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո. յեղբարց քոց կացուցես քեզ իշխան. և մի իշխեսցես կացուցանել քեզ զայր օտար որ չիցէ՛ եղբայր քո՝. ¹⁶զի մի՛ յաճախեսցէ իւր երիվարս, և մի՛ դարձուցէ զժողովուրդն յեզիպտոս. զի Տէր ասաց, թէ՛ Մի՛ ևս յաւելուցուք դառնալ ընդ նոյն ճանապարհ: ¹⁷Եւ մի՛ յաճախեսցէ իւր կանայս, զի մի խոտորեսցի սիրտ նորա. և արծաթ և ոսկի մի՛ կարի յաճախեսցէ իւր: ¹⁸Եւ եղիցի յորժամ նստցի յիշխանութեան իւրում, գրեսցես նմա զերկրորդումն օրինացս այսոցիկ ՚ի մատենի՝ ¹⁹և ՚ի քահանայիցն Ղևտացւոց լիցի՛ առ նմա. և ընթերցցի՛ զսա զամենայն աւուրս կենաց իւրոց. զի ուսցի՛ երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ քումնէ, պահել զամենայն պատուիրանս զայսոսիկ, և առնել զիրաւունս զայսոսիկ՝: ²⁰Ձի մի՛ հպարտանայցէ սիրտ նորա ՚ի վերայ եղբարց իւրոց, զի մի՛ անցանիցէ զպատուիրանօքս յաջ կամ յահեակ. զի երկայնակեաց լիցի յիշխանութեան իւրում, ի՛նքն և որդիք իւր ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի:

18

Գլուխ ԺԸ

ԽԴ ¹Եւ մի՛ լինիցի քահանայիցն Ղևտացւոց որդւոցն Ղևեայ բաժին և ժառանգութիւն ընդ որդւոցն Իսրայէլի: Երախայրի՛քն Տեառն վիճակ նոցա. զայն կերիցեն՝. ²և վիճակ մի՛ լիցի նոցա ՚ի մէջ եղբարց իւրեանց. զի Տէր է վիճակ նոցա. որպէս ասաց նոցա: ³Եւ այս են իրաւունք քահանային ՚ի

* *Օրինակ մի.* Եւ բան դատաստանի ՚ի քա՛:

* *Ոմանք.* Եւ երթիցես առ քահանայսն Ղևտացիս:

* *Ոմանք.* Որ ո՛չ իցէ եղբայր քո:

* *Այլք.* Յորժամ նստիցի:

* *Ոմանք.* Եւ առ ՚ի քահանայիցն... լինիցի ընդ նմա. և ընթերցցի զնա... ՚ի Տեառնէ Աստուծոյ քումնէ զամենայն աւուրս:

* *Այլք.* ժառանգութիւն ընդ Իսրայէլի:

ժողովրդենն անտի, որք զենուցուն զենլիս. եթէ արջառ իցէ, և եթէ ոչխար, տացէ քահանային զերին և զօնօտսն և զխաղցոցն*։ ⁴Եւ զպտուղս ցորենոյ քոյ, և զգինւոյ քոյ, և զհւղոյ քոյ. և զպտուղ կտրոց խաշանց քոց տացես նոցա. ⁵զի զնա՛ ընտրեաց Տէր յամենայն ցեղիցն քոց կալ առաջի Տեառն Աստուծոյ քոյ, պաշտել և օրհնել յանուն նորա. նա՛ և որդիք իւր զամենայն աւուրս*։ ⁶Ապա թէ եկեսցէ Ղևտացին՝ ՚ի մի ՚ի քաղաքացն քոց յամենայն որդւոցն Իսրայէլի, ուր իցէ ինքն բնակեալ. և եկեսցէ՛ ըստ ցանկութեան անձին իւրոյ, ՚ի տեղին զոր ընտրեսցէ Տէր. ⁷պաշտել զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ. իբրև զամենայն եղբարսն իւր Ղևտացիս որ կացցեն անդ առաջի Տեառն Աստուծոյ*, ⁸կերիցէ՛ զմասնն հասեալ, բայց իւրաքանչիւր յազգական վաճառին*։

Խե ⁹Եւ եթէ մտանիցես յերկիրն զոր Տէր Աստուած տացէ քեզ. մի՛ ուսանիցիս առնել ըստ զարշելեաց ազգացն այնոցիկ։ ¹⁰Մի՛ գտանիցի ՚ի քեզ՝ որ ածիցէ զուստր իւր կամ զդուստր իւր զբոցով. և դիւթիցէ դիւթութիւն, և հմայիցէ, և հաւահարց լինիցի. ¹¹և կախարդիցէ կախարդանօք, և վիուկ, և նշանագէտ լինիցի առ ՚ի զմեռեալս հարցանելոյ*։ ¹²Քանզի պի՛ղծ է Տեառն ամենայն որ առնէ զայն. զի վասն այսպիսի զարշելեաց սատակեսցէ զնոսա Տէր ՚ի քնն։ ¹³Կատարեալ լինիցիս առաջի Տեառն Աստուծոյ քոյ. ¹⁴զի ազգքն այնոքիկ զորս դո՛ւ ժառանգելոց ես, նոքա՛ հմայից և դիւթութեանց անսան. բայց քեզ ո՛չ այնպէս ետ հրաման Տէր Աստուած քո։ ¹⁵Մարգարէ՛ յեղբարց քոց իբրև զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո, նմա՛ լուիջիք* ¹⁶ըստ ամենայնի՝ զոր խնդրեսցեր ՚ի Տեառնէ Աստուծոյ քումնէ. ՚ի Քորէբ յաւուրն եկեղեցւոյ, ասէիք. Ո՛չ ևս յաւելուցումք լսել զձա՛յն Տեառն Աստուծոյ մերոյ. և զհո՛ւրդ զայդ զմեծ ո՛չ ևս տեսցուք, զի մի՛ մեռանիցիմք։ ¹⁷Եւ ասէ ցիս Տէր. Ուղի՛ղ է ամենայն ինչ զոր խօսեցան։ ¹⁸Մարգարէ՛ յարուցից նոցա յեղբարց իւրեանց իբրև զքեզ, և տա՛ց զպատգամս իմ ՚ի բերան նորա, և խօսեսցի՛ ընդ նոսա որպէս և պատուիրեսցից նմա։ ¹⁹Եւ մարդ՝ որ ո՛չ լուիցէ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ե՛ս խնդրեսցից զվրէժ ՚ի նմանէ*։ ²⁰Բայց մարգարէն, եթէ ամպարշտեսցի խօսել յանուն իմ բան ինչ զոր ես ո՛չ հրամայեցի խօսել. և կամ թէ խօսիցի յանուն աստուածոց օտարաց, մեռցի՛ մարգարէն այն։ ²¹Ապա թէ ասիցէք ՚ի սրտի. Չիա՞րդ գիտասցուք զբանն զոր ո՛չ խօսեցաւ Տէր*։ ²²Ձոր ինչ խօսիցի մարգարէն յանուն Տեառն և ո՛չ լինիցի բանն և ո՛չ դիպիցի, այն բան է զոր ո՛չ խօսեցաւ Տէր. ամպարշտութեամբ խօսեցաւ մարգարէն, մի՛ թողուցուք նմա։

Գլուխ ԺԹ

* *Ոմանք.* Են իրաւունք քահանայից։ *Այլք.* Եւ զխախացոցն։ *Ուր օրհնակ մի՝* զխախացոցն։
 * *Ոմանք.* Եւ օրհնել զանուն նորա։
 * *Ոսկան.* Պաշտեսցէ զանուն Տեառն։ *Ոմանք.* Առաջի Տեառն Աստուծոյ քո։
 * *Ի լուս՝.* Յազգական վաճառէն. *համաձայն այլոց ՚ի բնար՝.*
 * *Ոմանք.* Եւ վիուկ և նշա՛։
 * *Յօրհնակին՝* Մարգարէ. *կարմրադեղով նշանակի։ Ոմանք.* Յեղբարց ձերոց... և նմա լուիցուք (16) ըստ ամենայնի զոր։ *Ուր ոմանք զկէտն դնեն յետ լուիջիք։*
 * *Ոմանք.* Ձոր ինչ խօսեսցի մարգարէն։
 * *Ոմանք.* Ապա թէ ասիցէք ՚ի սրտի ձերում։

ԽԶ ¹Եւ եթէ սատակեցէ Տէր Աստուած քո զազգսն՝ զորոց Տէր Աստուած տացէ քեզ զերկիրն նոցա. և ժառանգեսցես զնա, և բնակեսցես ՚ի քաղաքս և ՚ի տունս նոցա*.
²Երիս քաղաքս զատուցես քեզ ՚ի միջոյ երկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ:
³Նկատեսցես քեզ զճանապարհն, և ընդ երիս բաժանեսցես քեզ զսահմանս երկրին քոյ. զոր բաժանեսցէ քեզ Տէր Աստուած քո. և եղիցի անդ ապաստան ամենայն սպանողի*:
⁴Այս սահման եղիցի ամենայն սպանողի որ փախչիցի անդ՝ և ապրեսցի: Որ ոք հարկանիցէ զընկեր իւր ականայ. և նա՛ ո՛չ ատեայր զնա յերէկն և յեռանդ*.
⁵Եւ որ ոք մտանիցէ ընդ ընկերի իւրում ՚ի մայրի հարկանել փայտ. և ամբառնայցէ զծեռն իւր փայտատաւն հարկանել փայտ, և անկանիցի երկաթն ՚ի մեղեխէ՛ անտի, և դիպիցի՛ ընկերին և մեռանիցի, փախիցէ՛ նա, և անկցի ՚ի մի ՚ի քաղաքացն այնոցիկ և կեցցէ*:
⁶Զի մի՛ պնդեսցի մերձաւոր արեանն զկնի սպանողին, մինչդեռ այրիցի սիրտ նորա. և հասանիցէ նմա՝ եթէ հեռագոյն իցէ ճանապարհն, և հարկանիցէ՛ զանձն նորա. և նմա չէ՛ դատաստան մահու. զի ո՛չ ատեայր զնա յերէկն և յեռանդն*:
⁷Վասն այնորիկ ես պատուիրեմ քեզ զբանս զայս՝ և ասեմ. Երիս քաղաքս զատուցես քեզ:
⁸Եւ եթէ ընդարձակեսցէ քեզ Տէր Աստուած քո զսահմանս քո որպէս և երդուաւ Տէր հարցն քոց. և տացէ քեզ Տէր զամենայն երկիրն՝ զոր խոստացաւ տալ հարցն քոց.
⁹Եւ եթէ լուիցես առնել զամենայն պատուիրանս զայսոսիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել՛ զՏէր Աստուած քո, և զնա՛լ յամենայն ճանապարհս նորա զամենայն աւուրս: Եւ յաւելցես քեզ այլ ևս երիս քաղաքս յայնս յերիսն.
¹⁰Եւ մի՛ հեղցի արիւն անպարտ յերկրին քում, զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ՚ի ժառանգութիւն. և մի՛ ոք լիցի ՚ի միջի քում պարտական արեան:

ԽԷ ¹¹Եւ եթէ լինիցի այր որ ատիցէ՛ զընկեր իւր, և դարան գործիցէ նմա, և յարիցէ ՚ի վերայ նորա, և հարկանիցէ զանձն նորա և մեռցի. և փախչիցի ՚ի մի ՚ի քաղաքացն այնոցիկ*.
¹²առաքեսցեն ծերակոյտ քաղաքի նորա և առցեն զնա անտի, և մատնեսցեն զնա ՚ի ձեռս մերձաւորի արեանն և մեռցի*:
¹³Եւ մի՛ խնայեսցէ ակն քո ՚ի նա. և սրբեսցես զարիւն անպարտ ՚ի միջոյ Իսրայէլի, և բարի՛ լիցի քեզ*:

ԽԸ ¹⁴Սի՛ փոխեսցես զսահմանս ընկերի քոյ՝ զոր հաստատեսցին հարք քո ՚ի ժառանգութեան քում, զոր ժառանգեսցես յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ՚ի ժառանգութիւն:

ԽԹ ¹⁵Ո՛չ հաստատեսցի մի վկայ վկայել զմարդոյ ըստ ամենայն պաիրատութեան, և ըստ ամենայն յանցանաց, և ըստ ամենայն մեղաց զոր մեղանչէ: Ի՛ բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի՛ ամենայն բան*:
¹⁶Եւ եթէ կացցէ յառաջ սո՛ւտ վկայ զմարդոյ, և չարախօսեսցէ զնմանէ անպարտութիւն ինչ. ¹⁷կացցեն երկոքին արքն որոց հակառակութիւնն իցէ, առաջի Տեառն, և առաջի քահանայիցն և առաջի դատաւորացն որ իցեն

* *Ոմանք.* Եւ ժառանգեսցես զնոսա:
 * *Յօրինակին պակասէր.* Նկատեսցես քեզ զճանապարհն:
 * *Ոմանք.* Այս հրաման եղիցի ամենայն: *Ուր ոմանք.* Այս սահմանք եղիցի... որ փախչիցի անդր և ապրեսցէ:
 * *Ոմանք.* Եւ ամբարձցէ զծեռն:
 * *Ոմանք.* Եւ նմա չէր դատաս*:
 * *Յօրինակին.* Ի՛ քաղաքն այնոցիկ: *Ուր ոմանք.* Եւ մեռանիցի. և փախչիցէ:
 * *Ոմանք.* Զարիւն անպարտ յիսրայէլէ:
 * *Ոմանք.* Մեղաց զոր մեղանչիցէ:

յաւուրսն յայնոսիկ. ¹⁸և քննեսցեն դատաւորքն ճշմարտութեամբ. և ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն. և եկաց հակառակ եղբոր իւրուն. ¹⁹արասջիք նմա որպէս խորհեցաւ չար առնել ընկերի իւրուն. և բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ': ²⁰Եւ այլոցն լուեալ՝ զահի հարկանիցին, և մի՛ ևս յաւելուցուն առնել ըստ բանին այնմիկ չարի 'ի միջի ձերուն. ²¹մի՛ խնայեսցէ ակն քո 'ի նա: Անձն ընդ անձին. ակն ընդ ական. ատամն ընդ ատաման. ձեռն ընդ ձեռին. ոտն ընդ ոտին:

20

Գլուխ Ի

Ծ ¹Եւ եթէ ելանիցես 'ի պատերազմ 'ի վերայ թշնամեաց քոց. և տեսանիցես երկվարս և հեծեալս, և ազգ բազում քան զքեզ. մի՛ երկնչիցիս 'ի նոցանէ, զի Տէր Աստուած քո ընդ քեզ է՝ որ եհան զքեզ յերկրէն Եգիպտացոց* : ²Եւ եղիցի յորժամ մերձենայցես 'ի պատերազմ. մատուցեալ քահանայն խօսեսցի ընդ ազգիմ*. ³և ասասցէ ցնոսա. Լո՛ւր Իսրայէլ, դուք դիմեալ երթայք այսօր 'ի պատերազմ աւադիկ 'ի վերայ թշնամեաց ձերոց. մի՛ լքանիցին սիրտք ձեր, և մի՛ երկնչիցիք. և մի՛ զարհուրիցիք, և մի՛ խուսիցէք յերեսաց նոցա*. ⁴զի Տէր Աստուած մեր երթայ առաջի ձեր ընդ ձեզ, տալ պատերազմ վասն ձեր ընդ թշնամիս ձեր, ապրեցուցանել զձեզ: ⁵Եւ խօսեսցին դպիրքն ընդ ժողովրդեանն, և ասասցեն. Այր որ՝ որոյ շինեալ իցէ տուն նորաշէն, և ո՛չ իցէ արարեալ նմա նաւակատիս, գնասցէ և դարձցի 'ի տուն իւր. գուցէ՛ մեռանի 'ի պատերազմի, և այլ այր առնիցէ նմա նաւակատիս*: ⁶Եւ այր որ՝ որոյ տնկեալ իցէ այգի, և չիցէ ուրախ լեալ 'ի նմանէ, գնասցէ և դարձցի՝ անդրէն 'ի տուն իւր. գուցէ՛ մեռանիցի 'ի պատերազմի, և այլ այր ուրախ լինիցի 'ի նմանէ*: ⁷Եւ այր որ՝ որոյ խօսեալ իցէ կին, և չիցէ՛ առեալ զնա, գնասցէ և դարձցի 'ի տուն իւր. գուցէ՛ մեռանիցի 'ի պատերազմի, և այլ այր առնուցու զնա*: ⁸Եւ յաւելցեն դպիրքն խօսել ընդ ժողովրդեանն՝ և ասասցեն. Այր որ որ երկնչիցի, և վատասիրտ սրտիւ իցէ, գնասցէ՛ և դարձցի 'ի տուն իւր. զի մի՛ զանգիտեցուցէ զսիրտ եղբոր իւրոյ իբրև զիրմ*: ⁹Եւ եղիցի յորժամ դադարեսցեն դպիրքն 'ի խօսելոյ ընդ ժողովրդեանն, կացուցեն իշխանս զօրուն առաջնորդս ժողովրդեանն:

ԾԱ ¹⁰Եւ եթէ մերձենայցես 'ի քաղաք տալ պատերազմ ընդ նմա, կոչեսցես զնոսա 'ի խաղաղութիւն: ¹¹Եւ եղիցի եթէ տայցեն խաղաղութեան պատասխանի, և բացցեն քեզ, եղիցի ամենայն ժողովուրդն որ գտանիցին 'ի նմա հարկատուք և հնազանդեալք քեզ*: ¹²Ապա թէ ո՛չ հնազանդեսցին քեզ, և արասցեն ընդ քեզ պատերազմ, պաշարեսցես զնա*. ¹³և մատնեսցէ՛ զնա Տէր

* *Ոմանք.* Խորհեցաւ առնել չար եղբոր իւրուն, և բարձջիք զչարն:

* *Ոմանք.* Եւ ազգք բազում քան զքեզ:

* *Ոմանք.* Ընդ ազգիդ. (3) և ասասցէ ցնոսա. Լո՛ւր:

* *Ոմանք.* Եւ մի՛ խռովիցիք յերեսաց նոցա:

* *Ոմանք.* Որ շինեալ իցէ տուն: *Այլք.* Գուցէ մեռանիցի 'ի պատերազմի:

* *Ոմանք.* Տնկեալ իցէ նմա այգի:

* *Ոմանք.* Եւ դարձցի անդրէն 'ի տուն իւր... և այլ այր առնիցէ զնա:

* *Յօրինակին պակասէր.* գնասցէ և դարձ: *Ոմանք.* Եւ դարձցի անդրէն 'ի տուն:

* *Ոմանք.* Որ գտանիցի 'ի նմա... և հնազանդեալ քեզ:

* *Ոմանք.* Պաշարեսցես զնոսա:

Աստուած քո 'ի ձեռս քո. և հարցես զամենայն արու նորա կոտորմամբ սրոյ*.
14բաց 'ի կանանց և 'ի կահուէ և յամենայն անասնոյ. և զամենայն ինչ զինչ և
գտանիցի 'ի քաղաքին, և զամենայն աղխ՝ առցես քեզ յաւարի. և կերիցես
զամենայն զաւար թշնամեաց քոց՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ: 15Նոյնպէս
արասցես ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս, որ ոչ 'ի քաղաքաց
ազգացն այնոցիկ իցեն:

ԾԲ 16Բայց 'ի քաղաքաց ազգացն այնոցիկ՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ
զերկիր նոցա 'ի ժառանգութիւն, մի՛ ապրեցուցանիցէք 'ի նոցանէ զամենայն
շնչաւոր, 17այլ նգովելով նգովեսչիք զնոսա. զՔետացին, և զԱմովրիացին, և
զՔանանացին, և զՓերեզացին, և զԽևացին, և զՅեբուսացին, և զԳերզեսացին.
զոր օրինակ պատուիրեաց Տէր Աստուած քո*. 18զի մի՛ ուսուցանիցեն ձեզ առնել
զամենայն գարշելութիւնս իւրեանց, զոր արարին դիցն իւրեանց. և մեղանչիցէք
առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ*: 19Եւ եթէ նստեալ պաշարեսցես զքաղաք՝
աւուրս բազումս մարտնչել ընդ նմա յառնուլ զնա, մի՛ հարկանիցես
զծառատունկ նորա արկանելով 'ի նմա երկաթ. այլ կերիցես 'ի նմանէ, և զնա
մի՛ հարկանիցես. միթէ մա՞րդ իցէ ծառատունկն որ յանդի անդ իցէ՝ մտանել
յերեսաց քոց 'ի պատնէշ*: 20Այլ զփայտ զոր գիտիցես թէ չիցէ պտղաբեր, զայն
հարցես և կոտորեսցես. և շինեսցես պատնէշ շուրջ զքաղաքաւն որ տայցէ ընդ
քեզ պատերա՛զմ մինչև մատնեսցի:

21

Գլուխ ԻԱ

ԾԳ 1Եւ եթէ գտանիցի վիրաւոր յերկրի քում զոր Տէր Աստուած քո տացէ քեզ
ժառանգել, և անկեալ դնիցի 'ի դաշտի. և ոչ գիտիցեն զայն որ խոցեացն զնա*.
2Ելցէ՛ ձերակոյտն քո, և դատաւորքն քո, և չափեսցեն շուրջ զվիրաւորաւն
զվայրս քաղաքացն: Եւ եղիցի քաղաք որ հո՛ւպ իցէ 'ի վիրաւորն*. 3առցէ
ձերակոյտ քաղաքին այնորիկ երինջ մի յարջառոց՝ որ ընդ գործ չիցէ՛ մտեալ, և
լուծ չիցէ՛ ձգեալ. 4և իջուսցեն ձերակոյտ ժողովրդեանն զերինջն 'ի ձո՛ր մի
ապառաժ ուր չիցէ՛ գործեալ, և ոչ սերմանեալ. և կարթակոտոր արասցեն
զերինջն 'ի ձո՛ր անդր*: 5Եւ մատիցեն քահանայքն Ղևտացիք՝ զի զնոսա՛
ընտրեաց Տէր Աստուած քո կա՛լ առաջի իւր և օրինել՝ յանուն նորա. և ըստ
բերանոյ՝ նոցա վճարեսցի ամենայն հակառակութիւն և ամենայն գրգռութիւն*:
6Եւ ամենայն ձերակոյտ քաղաքին այնորիկ որ հո՛ւպ իցէ 'ի վիրաւորն,
լուսացեն՝ զձեռս իւրեանց 'ի վերայ զլխոյ երնջուն կարթահարելոյ 'ի ձորն*. 7և

* *Յօրինակին պակասէր.* Տէր Աստուած քո 'ի ձեռս քո:

* *Ոմանք.* Պատուիրեաց քեզ Տէր:

* *Ոմանք.* Չամենայն գարշութիւնս իւրեանց... Տեառն Աստուծոյ մերոյ:

* *Ոմանք.* Արկանելով 'ի նա երկաթ: *Այլք.* Միթէ մա՞րդ իցէ: *Ի լուս.*՝ Մա՞րդ իցի
ձեռատունկն. *համաձայն բազմաց 'ի բնար*՝:

* *Ոմանք.* Ժառանգել. անկեալ 'ի դաշտի:

* *Ոմանք.* Որ հուպ իցէ 'ի վերաւորաւն... (3) և 'ի լուծ չիցէ ձգեալ:

* *Ոմանք.* Յապառաժ, որ չիցէ՛ գործեալ:

* *Յօրինակին.* Եւ ըստ բերանոյ նորա վճա՞:

* *Ոմանք.* Քաղաքին այնորիկ եկեսցեն, որ հուպ իցէ 'ի վիրաւորն, և լուսա՞: *Եւ ոմանք.* որ
հուպ իցեն... 'ի վերայ երնջոյն:

պատասխանի տուեալ ասասցեն. Ձեռք մեր ո՛չ հեղին զարիւնս զայս, և աչք մեր ո՛չ տեսին. ⁸քաւեա՛ զժողովուրդ քո զԻսրայէլ, զոր փրկեցեր Տէր. զի մի՛ եկեացտ արիւնս անպարտ ՚ի վերայ ժողովրդեան քոյ Իսրայէլի. և քաւեսցի՛ ՚ի նոցանէ արիւնն. ⁹և բարձցեն՝ դու զարիւնն անպարտ ՚ի ձէնջ:

ԾԴ Եւ եթէ արասցես զբարին և զհաճոյ առաջի Տեառն Աստուծոյ քոյ:

¹⁰Եւ եթէ ելանիցես ՚ի պատերա՛զմ ՚ի վերայ թշնամեաց քոց, և մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ՚ի ձեռս քո, և աւարեսցես զաւար նոցա՛, ¹¹և տեսանիցես յաւարին՝ կին գեղեցիկ տեսաւեամբ, և ցանկասցի՛ս նմա. և առցես զնա քեզ կնութեան՛. ¹²և տարցիս զնա ՚ի տուն քո, և գերծցես զգլուխ նորա. ¹³և սրբեսցես զըղընգունս նորա, և հանցես զհանդերձ գերութեան նորա. և նստցի ՚ի տան քում, և լացցէ զհայր և զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ. և ապա՛ մտցես առ նա, և բնակեսցես ընդ նմա. և եղիցի կին քո՛: ¹⁴Եւ եղիցի եթէ ո՛չ հաճեսցիս ընդ նա, արձակեսցես զնա ազա՛տ. և վաճառելով մի՛ վաճառեսցես զնա արծաթոյ. և մի՛ անարգեսցես զնա՝ քանզի լլկեցեր զնա՛:

ԾԵ ¹⁵Եւ եթէ լինիցին ա՛ռն միում երկու կանայք. և լինիցի ՚ի նոցանէ մին սիրելի և մասն ատելի. և ծնանիցին նմա որդիս՝ սիրելին և ատելին, և լինիցի որդի անդրանիկ ատելւոյն՛. ¹⁶և եղիցի յաւուր յորում ժառանգեցուցանիցէ՛ որդւոց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անդրանկացուցանել զորդի սիրելւոյն, անտես արարեալ զորդի ատելւոյն զանդրանիկ՛. ¹⁷այլ զանդրանիկ ատելւոյն ծանիցէ տալ նմա կրկին յամենայնէ որ ինչ գտանիցի նորա. զի նա՛ է սկիզբն որդւոց նորա, և նմա ա՛նկ է անդրանկութիւնն:

ԾԶ ¹⁸Եւ եթէ իցէ ուրուք որդի խե՛ռ և անզգամ, և ո՛չ լսիցէ ձայնի հօր և մօր իւրոյ. և խրատիցեն զնա՝ և ո՛չ անսայցէ նոցա. ¹⁹կալցին զնա հայր և մայր նորա, և տարցին զնա առ ծերակոյտ քաղաքին իւրեանց, և ՚ի դուռն տեղւոյն իւրեանց՛. ²⁰և ասասցեն ցարս քաղաքին իւրեանց. Որդի՛ս մեր այս՝ խե՛ռ է և անզգամ, և ո՛չ լսէ ձայնի մերում. հանկանակող է և արբշիռ՛: ²¹Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին նորա քարամբք՝ և մեռցի. և բարձջի՛ք զչարն ՚ի միջոյ ձերմէ. և լուեալ այլոցն՝ զահի՛ հարկանիցին: ²²Եւ եթէ հասանիցեն ումեք մեղք մահապարտութեան՝ և մեռանիցի, կախեսջի՛ք զնա զփայտէ. ²³և մի՛ ազանիցի մարմին նորա ՚ի փայտին. այլ թաղելով թաղեսջի՛ք զնա ՚ի նմին աւուր: Զի անիծեալ յԱստուծոյ է ամենայն՝ որ կախիցի զփայտէ. և մի՛ պղծիցէք զերկիրն՝ զոր Տէր Աստուած քո տացէ՛ քեզ ՚ի ժառանգութիւն՛:

22

Գլուխ ԻԲ

* *Ոմանք.* Եւ յաւարեսցես զաւար:

* *Ոմանք.* Կին գեղեցիկ տեսանելով:

* *Ոմանք.* Զեղնգունս. և *ոմանք.* զըղընգունս: *Այլք.* Եւ եղիցի քո կին:

* *Ոմանք.* Մի՛ վաճառեսցի ընդ արծա՛:

* *Ոմանք.* Երկու կանայք, մին ՚ի նոցանէ սիրելի, և մին ատելի:

* *Ոմանք.* Ժառանգեցուցէ... և մի՛ իշխեսցէ:

* *Ոմանք.* Հայրն և մայրն իւր, և:

* *Ոմանք.* Հարկանող է և արբշիռ. և *ոմանք.* հարկանակող է:

* *Ոմանք.* Զի անիծեալ Աստուծոյ է որ կախիցի:

ԾԷ ¹Գուցէ՛ տեսեալ զարջառ և զոչխար եղբօր քո մոլորեալս ՚ի ճանապարհի, և անտես՝ առնիցես զնոսա, այլ դարձուցանելով դարձուցես՝ զնոսա և ածցես առ եղբայր քո*։ ²Ապա թէ չիցէ մօտ եղբայրն քո առ քեզ, և ո՛չ ճանաչիցես զնա. ժողովեսցես զնոսա ՚ի տուն քո. և եղիցին առ քեզ, մինչև խնդրեսցէ զնոսա եղբայր քո, և տացես ցնա*։ ³Նո՛յնպէս արասցես զէշ նորա, նո՛յնպէս արասցես զհանդերձ նորա, նո՛յնպէս արասցես և զամենայն կորուստ եղբօր քոյ. որ ինչ կորնչիցի ՚ի նմանէ և գտանիցես՝ մի՛ իշխեսցես անտես առնել զայն։ ⁴Գուցէ տեսանիցես զէշ եղբօր քոյ, կամ զեզն նորա անկեալ ՚ի ճանապարհի, և զանց առնիցես զնոքօք. այլ յարուցանելով յարուցես՝ ընդ նմա։

ԾԸ ⁵Մի՛ եղիցի հանդերձ առնացի զկանամբք. և մի՛ զգեցցի այր զգեստ կանացի. զի պի՛ղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն որ առնէ զայն։

ԾԹ ⁶Եւ եթէ դիպեսցիս բունոյ հաւուց առաջի քո ՚ի ճանապարհի, եթէ ՚ի ծա՛ռ և եթէ ՚ի գետնի, ձագուց կամ ձուոց, և մայրն ջեռեալ նստցի ՚ի վերայ ձագուցն կամ ձուոց. մի՛ առնուցուս զմայրն հանդերձ որդւովքն*։ ⁷Արձակելով արձակեսցես զմայրն, և զորդիսն առցես՝ քեզ. զի բարի՛ լիցի քեզ, և բազմօրեայ լինիցիս ՚ի վերայ երկրի*։

Կ ⁸Եւ եթէ շինեսցես տուն նորաշէն. արասցես պաա՛կ շուրջ զտանեօքն. և մի՛ սպանումն գործեսցես ՚ի տան քում, զի մի՛ անկանիցի որ անկանելոցն իցէ ՚ի նմա*։

ԿԱ ⁹Մի՛ վարեսցես զայգի քո այլ և այլ. զի մի՛ սրբեսցին արմտիքն և սերմնն զոր սերմանիցես ընդ բերից այգւոյն քո։

ԿԲ ¹⁰Մի՛ վարեսցես զէշ և զեզն ՚ի միասին*։

ԿԳ ¹¹Մի՛ զգենուցուս այլայլախառն, զասր և զկտաւ ՚ի միասին։

ԿԴ ¹²Ծո՛պս մանուածոյս արասցես ՚ի վերայ չորեցունց տտնոց հանդերձից քոց, զոր և զգենուցուս*։

ԿԵ ¹³Եւ եթէ առնուցու ոք կին՝ և ամուսնացի ընդ նմա, և ատեսցէ զնա, ¹⁴և դիցէ ՚ի վերայ պատճառս բամբասական բանից. և անուն չա՛ր հանիցէ զնմանէ՝ և ասիցէ. Ջկինս զայս առի, և մերձեցեալ ՚ի սա ո՛չ գտի զկուսութիւն սորա*։ ¹⁵Եւ առեալ հայր և մայր աղջկանն, հանցեն՝ զկուսութիւնս աղջկանն առ ծերակոյտն ՚ի դուռն*։ ¹⁶և ասացէ հայր աղջկանն ցծերակոյտն. Ջդուստրս իմ զայս ետու ա՛ռնդ այդմիկ կնութեան. ¹⁷և ատեցեալ զսա՝ դնէ ՚ի վերայ պատճառս բամբասաւոր բանից՝ և ասէ. Ո՛չ գտի զկուսութիւն դստեր քո, և ահա՛ւասիկ կուսութիւնք դստեր իմոյ. և բացցեն զհանդերձն առաջի ծերոց քաղաքին այնորիկ*։ ¹⁸Եւ առցէ ծերակոյտ քաղաքին այնորիկ զայրն զայն, և խրատեսցեն զնա. ¹⁹և տուժեսցեն ՚ի նմանէ հարկս սիկդ. և տացեն՝ հօր աղջկանն, փոխանակ

* Ոմանք. Ջարջառ կամ զոչխար... դարձուցանիցես զնոսա։

* Յօիմակին. ժողովեսցես զնա ՚ի։

* Ոսկան. եթէ ՚ի ծառոյ և եթէ ՚ի։

* Ոմանք. Եւ զորդիսն առցես առ քեզ։

* Ոմանք. Ջի մի՛ անկցի որ անկանելոցն իցէ ՚ի նմանէ։

* Ոմանք. Ջեզն և զէշ ՚ի միասին։

* Ոմանք. Չորեցունց տտանց հան՞։

* Ոմանք. Եւ դիցէ ՚ի վերայ նորա պատճառս... և մերձեալ ՚ի սա։

* Ոմանք. Եւ առեալ հօր և մօր աղջկանն։

* Ոմանք. Եւ ատեալ զսա... պատճառս բամբասական բանից, ասէ... առաջի ծերոց ժողովրդեանն։

զի եհան անուն չար զկուսէն Իսրայէլացոյ. և նորին լիցի կին. և մի՛ իշխեսցէ արծակել զնա զամենայն ժամանակս: ²⁰Ապա թէ ճշմարիտ իցէ բանն, և ո՛չ գտցին կուսութիւնք աղջկանն*. ²¹հանցեն զաղջիկն առ դուրս հօր իւրոյ, և քարկոծ արասցեն զնա արք քաղաքին իւրոյ՝ և մեռցի. զի արար անգգամութիւն՝ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի, պռոնկել ՚ի տան հօր իւրոյ. և բարձջի՛ք զչարն ՚ի ձէնջ՛:

ԿԶ ²²Եւ եթէ գտցի այր շնացեալ ընդ առնակնոջ, սպանջի՛ք զերկոսեան. զայրն շնացեալ ընդ կնոջն՝ և զկինն. և բարձջի՛ք զչարն յԻսրայէլէ:

ԿԷ ²³Եւ եթէ եղիցի աղջիկ կոյս խօսեցեալ առն. և գտանիցէ զնա այր ոք՝ ՚ի քաղաքի և ննջեսցէ ընդ նմա. ²⁴հանջի՛ք զերկոսին ՚ի դուռն քաղաքին իւրեանց, և քարկոծեսցեն զնոսա քարամբք և մեռցին. զաղջիկն՝ զի ո՛չ բողոքեաց ՚ի քաղաքին, և զայրն՝ որ լլկեաց զկին ընկերի իւրոյ. և բարձջի՛ք զչարն ՚ի միջոյ ձերմէ՛: ²⁵Ապա թէ ՚ի դաշտի գտցէ այր զաղջիկ ոք՝ խօսեալ առն, և բռնաբար ննջեսցէ ընդ նմա. սպանջի՛ք զայրն որ ննջեաց ընդ նմա. ²⁶և աղջկանն մի՛ ինչ առնիցէք. զի ո՛չ է աղջկանն վնաս մահու. զի որպէս յառնիցէ մարդ ՚ի վերայ ընկերի իւրոյ՝ և սպանանիցէ զնա, այնպէս է իրն. ²⁷զի ՚ի բացի՛ եգիտ զնա. և բողոքեաց աղջիկն խօսեալ, և ո՛չ ոք էր որ օգնէր նմա: ²⁸Եւ եթէ գտանիցէ ոք զաղջիկ կոյս՝ որ չիցէ՛ խօսեալ առն, և բռնաբար ննջեսցէ ընդ նմա. ²⁹տացէ այրն որ ննջեաց ընդ նմա՝ հօր աղջկանն յիսուն երկդրամեան արծաթոյ, և նորա՛ լիցի կին. և մի՛ իշխեսցէ արծակել զնա զամենայն ժամանակս իւր՛:

ԿԸ ³⁰Մի՛ առցէ այր զկին հօր իւրոյ, և մի՛ յայտնեսցէ զծածուկս հօր իւրոյ:

23

Գլուխ ԻԳ

ԿԹ ¹Մի՛ մտցէ մալեալն և կրճատեալն յեկեղեցի Աստուծոյ: ²Մի՛ մտցէ պռոնկորդի յեկեղեցի Աստուծոյ՛:

Ճ ³Մի՛ մտցէ Ամոնացի և Մովաբացի յեկեղեցի Տեառն, մինչև ցտասն ազգ մի՛ մտցեն յեկեղեցին Տեառն, և մինչև ցյաւիտեան՛: ⁴Վասն զի ո՛չ ելին ընդ առաջ ձեր հացիւ և ջրով ՚ի ճանապարհի ելանելոյն ձերոյ յեգիպտոսէ: Եւ զի ՚ի վարձո՛ւ կալան վասն քո զԲաղասամ որդի Բեովրայ ՚ի Միջագետաց անիծանել զքեզ. ⁵և ո՛չ կամեցաւ Տէր Աստուած քո լսել Բաղասամու, և դարձոյց Տէր Աստուած քո զանէծսն յօրհնութիւնս. զի սիրեաց զքեզ Տէր Աստուած քո: ⁶Մի՛ խօսեսցիս ընդ նոսա խաղաղութեամբ զամենայն աւուրս քո մինչև ցյաւիտեան:

ՃԱ ⁷Մի՛ գարշեցուցանիցես զեդոմայեցին, զի եղբայր քո է: Մի՛ գարշեցուցանիցես զեգիպտացին, զի պանդուխտ էիր յերկրի նորա՛: ⁸Եթէ

* *Ոմանք.* Ապա եթէ ճշմարտեսցի բանն:

* *Յօրինակին պակասէր.* Եւ քարկոծ արասցեն զնա արք: *Ուր ոմանք.* և քարկոծեսցեն զնա:

* *Յօրինակին պակասէր.* Եւ քարկոծեսցեն զնոսա քար՝: *Ուր ոմանք.* Եւ քարկոծեսցին քարամբք:

* *Ոմանք.* Արծակել զնա զամենայն աւուրս իւր:

* *Ոսկան յաւելու.* Յեկեղեցի Տեառն մինչև ՚ի տասն ազգն:

* *Ոմանք.* Յեկեղեցի Տեառն. և մինչև յաւիտեան:

* *Ոմանք.* Զի պանդուխտ եղեր յերկ՛:

լինիցին նորա որդիք՝ յերրորդ ազգի՝ մտցեն յեկեղեցի Տեառն:

ՅԲ⁹ Եւ եթէ ելանիցես ՚ի պատերազմի բանակել՝ ՚ի վերայ թշնամեաց քոց, զգոյշ լինիջիր յամենայն բանէ չարէ՝: ¹⁰Եթէ իցէ ՚ի քեզ այր՝ որ չիցէ սուրբ ՚ի ցայգութեան բղխմանէ, ելցէ՛ արտաքոյ բանակին, և մի՛ մտցէ ՚ի բանակն՝: ¹¹ և ընդ երեկսն լուսացէ՛ զմարմին իւր ջրով, և ընդ մտանել արևուն մտցէ՛ ՚ի բանակն՝: ¹² Եւ տեղի յայտ լիցի քեզ արտաքոյ բանակին, և ելցես դու արտաքս՝: ¹³ և ցի՛ց լինիցի զգօտոյ քումնէ. և եղիցի յորժամ նստիցիս արտաքս, փորեցես նովաւ, և ածեալ ծածկեսցես զաղտեղութիւն քո: ¹⁴ Ձի Տէր Աստուած քո շրջի ընդ բանակն քո փրկել զքեզ, և մատնել զթշնամիս քո առաջի երեսաց քոց. և եղիցի բանակն քո սուրբ, և ո՛չ երևեսցի ՚ի միջի քում աղտեղութիւն իրացն. և դառնայցէ՛ ՚ի քէն՝:

ՅԳ¹⁵ Մի՛ մատնեսցես զծառայ տեառն իւրում, որ յաւելուցու ՚ի քեզ ՚ի տեառնէ իւրմէ. ¹⁶ ընդ քե՛զ բնակեսցէ՛ և ընդ քե՛զ գետեղեսցի յամենայն տեղոջ ուր և հաճոյ իցէ նմա. և մի՛ նեղիցէք զնա:

ՅԴ¹⁷ Մի՛ լինիցի բո՛զ ՚ի դստերաց Իսրայէլի. և մի՛ պոռնիկ յուստերաց Իսրայէլի: Մի՛ լինիցի ձաւնի ՚ի դստերաց Իսրայէլի, և մի՛ նուիրեալ ոք յուստերաց Իսրայէլի:

ՅԵ¹⁸ Մի՛ տարցիս զկապէնս պոռնկի. և մի՛ զշան սխուրս ՚ի տուն Աստուծոյ քոյ յամենայն ուխտս. զի պի՛ղծ են առաջի Աստուծոյ քո երկոքեան՝:

ՅԶ¹⁹ Մի՛ տացես եղբօր քում արծաթ վաշխիւ. և մի՛ զկերակուր շարիատիւ, և մի՛ տոկոսեօք. ²⁰ զամենայն ինչ փոխ տայցես օտարին՝ և եղբօր քում. զի օրհնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն ՚ի գործս քո ՚ի վերայ երկրին՝ յոր մտանելո՛ց ես ժառանգել զնա՝:

ՅԷ²¹ Եւ եթէ ուխտիցես ուխտ Տեառն Աստուծոյ քում, մի՛ յամեսցես հատուցանել զայն. զի պահանջելով պահանջեսցէ Տէր Աստուած քո ՚ի քէն. և լինիցի քեզ ՚ի մեղս՝: ²² Ապա թէ ո՛չ կամիցիս ուխտել՝ չլինիցի քեզ մեղք: ²³ Որ ինչ ելանէ ընդ շրթունս քո, զգոյշ լինիջիր և արասցես որպէս ուխտեցեր Աստուծոյ քում, զտուրսն զոր խոստացար բերանով քով՝:

ՅԸ²⁴ Եւ եթէ մտանիցես ՚ի հունձս ընկերի քոյ, քաղեսցես ձեռօք քովք զհասկն. և մանգաղ մի՛ արկանիցես յո՛ճ ընկերի քոյ: ²⁵ Եւ եթէ մտանիցես յայգի ընկերի քոյ, կերիցես խաղող մինչև ցյազել անձին քոյ. բայց յամանս մի՛ ամանայցես՝:

24

Գլուխ ԻԴ

*Ոմանք. Ելանիցես ՚ի պատերազմ ՚ի բանակել:

*Ոմանք. ՚ի քեզ արու որ չիցէ սուրբ ՚ի ցանկութեան բղխ՝:

*Ոմանք. Եւ ընդ արևու մտցէ ՚ի բանակն:

*Ոմանք. Լինիցի քո արտաքոյ բա՛:

*Ոմանք. Եւ մատնել զթշնամին քո:

*Ոմանք. Եւ մի՛ զշանսխուրս ՚ի տան Աստուծոյ քո... զի պիղծ է առա՛: Այլք. Առաջի Տեառն Աստուծոյ քո երկո՛:

*Ոմանք. Ձամենայն ինչ զոր փոխ տայցես:

*Ոմանք. Ուխտեսցես ուխտս... զի մի պահանջելով պա՛:

*Ոմանք. Եւ արասցես ուխտ զոր ուխտեցեր:

*Ոմանք. Բայց յաման մի յամանայցես: Ուր Ոսկան. մի՛ ամանեսցես:

ՅԹ ¹Եւ եթէ առնուցու ոք կին, և մտանիցէ առ նա. և եղիցի եթէ ո՛չ գտցէ շնորհս առաջի նորա, զի եգիտ ՚ի նմա ի՛րս անարգութեան, գրեսցէ՛ նմա զի՛ր ապահարզանի և տացէ՛ ՚ի ձեռս նորա, և արծակեսցէ՛ զնա ՚ի տանէ իւրմէ՛: ²Եւ եթէ զնացեալ լինիցի ա՛ռն այլում՝. ³և ատիցէ զնա այրն վերջին, գրեսցէ՛ նմա զի՛ր մեկնելոյ, և տացէ՛ ՚ի ձեռս նորա. և արծակեսցէ զնա ՚ի տանէ իւրմէ: Ապա թէ մեռանիցի՛ այրն նորա վերջին՝ որ ա՛ռ զնա կնութեան. ⁴մի՛ կարասցէ այրն առաջին որ արծակեսաց զնա՝ դառնալ առնուլ զնա իւր կնութեան, յետ պղծելոյն նորա. զի պիղծ է այն առաջի Տեառն Աստուծոյ քոյ. և մի՛ պղծեք զերկիրն՝ զոր Տէր Աստուած տացէ ձեզ ՚ի ժառանգութիւն՝:

Չ ⁵Եւ եթէ առնուցու ոք կին նորոգ, մի՛ մտցէ ՚ի պատերազմ. և մի՛ անկցին ՚ի վերայ նորա՝ և մի՛ ինչ իրք. այլ անպարտ լիցի ՚ի տան իւրում. և ուրախ արասցէ զկին իւր զոր առ՝:

ՉԱ ⁶Մի՛ գրաւեսցես զվերին և զներքին երկան. զի զոգի՛ս գրաւէ այնպիսիմ՝:

ՉԲ ⁷Եթէ ըմբռնեսցի ա՛յր ոք մարդագող յեղբարց իւրոց յորդուցն Իսրայէլի, և բռնաբարեալ վաճառեսցէ զնա. մեռցի՛ զողն, և բարձջի՛ք զչարն ՚ի միջոյ ձերմէ:

ՉԳ ⁸Զգոյ՛շ լեր անձին քում յարածէ բորոտութեան. զգոյ՛շ լինիջիր՝ առնել ըստ ամենայն օրինին զոր պատմիցեն ձեզ քահանայքն Ղևտացիք. զորօրինակ պատուիրեցի ձեզ զգուշանալ առնելոյ՝: ⁹Յիշեցէ՛ք՝ զոր ինչ արար Տէր Աստուած քո ընդ Սարիամ ՚ի ճանապարհի ելանոյն ձերոյ յեգիպտոսէ:

ՉԴ ¹⁰Եւ եթէ պարտելո՛վ պարտիցի ընկեր քո զինչ և իցէ, մի՛ մտանիցես ՚ի տուն նորա գրաւել ինչ գրաւ. ¹¹այլ արտաքոյ կայցես. և այրն առ որում պարտքն քո իցեն՝ հանցէ՛ զգրաւն քո արտաքս: ¹²Եւ եթէ աղքատ իցէ այրն, մի՛ ազցի ընդ գրաւաւն իւրով. ¹³դարձուցանելո՛վ դարձուցես զգրաւ նորա ընդ մտանել արևու. և ննջեսցէ՛ հանդերձին իւրով, և օրինեսցէ՛ զքեզ. և եղիցի քեզ յողորմածութիւն առաջի Տեառն Աստուծոյ քոյ՝:

ՉԵ ¹⁴Մի՛ զլասցիս զվարձս տնանկին՝ և զկարօտելոյ յեղբարց քոց, կամ յեկաց քաղաքաց քոց՝. ¹⁵նոյն օրին հատուցես զվարձս նորա. և մի՛ մտանիցէ արեգակն ՚ի վերայ այնորիկ, զի տնանկ է, և այն է յոյս նորա. և մի՛ բողոք հարկանիցէ զքէն առ Տէր. և մի՛ լինիցի այն քեզ ՚ի մեղս՝:

ՉԶ ¹⁶Մի՛ մեռցին հարք ընդ որդուց. և մի՛ որդիք մեռանիցին ընդ հարց. իւրաքանչիւրոք ՚ի մեղս իւր մեռանիցի՝:

ՉԷ ¹⁷Մի՛ խտտորիցես զիրաւունս զեկին, և զորքոյ, և զայրոյ. և մի՛ գրաւեսցես զձորձս այրւոյն. ¹⁸քանզի ծառայ էիր դու յերկրին Եգիպտացուց, և փրկեաց զքեզ Տէր Աստուած քո անտի. վասն այնորիկ ես պատուիրեմ քեզ առնել զբանս զայս:

ՉԸ ¹⁹Եւ եթէ հնձեսցես զհունձս յանդի քում, և մոռացի որայ՛ յանդի քում, մի՛

* Այլք. Եթէ ո՛չ գտանիցէ շնորհս: Ոմանք. ՚ի նմա իրս անօրէնութեան. գրես:

* Ոմանք. Եւ թէ զնացեալ առն այլում. (3) և ատեսցէ զնա այրն:

* Այլք. Եւ մի պղծիցէք զերկիրն, զոր:

* Ոմանք. Եւ որ անկանիցին ՚ի վերայ նորա, և մի ինչ իրք:

* Օրինակ մի. Մի գրաւեսցես զվերին և զներքին երակն. զի:

* Ոմանք. Զգոյշ լինիցիս առնելոյ... զոր պատմեսցեն քեզ:

* Ոմանք. Զգրաւ նորա ընդ մուտս արևու:

* Ոմանք. Կամ յեկաց աղքատաց քոց:

* Ոմանք. Եւ լինիցի այն քեզ ՚ի մեղս:

* Ոմանք. Մեռանիցին ընդ հարանց... ՚ի մեղս իւրում մեռցի:

դառնայցես անդրէն առնուլ զնա, աղքատին, և եկին, և այրւո՛յ, և որբո՛յ եղիցի այն. զի օրհնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն ՚ի գործս ձեռաց քոց: ²⁰Եւ եթէ կթեսցես զայգի քոյ, մի՛ ճռաքաղ առնիցես զկնի քո. եկին, և որբոյ, և այրւո՛յ եղիցի այն. և յիշեսցես զի ծառայ էիր յերկրին Եգիպտացւոց. վասն այնորիկ ես պատուիրեմ քեզ առնել զբանս զայս:՝ ²¹Եւ եթէ կթեսցես ձէթ, մի՛ դարձցիս անդրէն պտղաքաղ առնել զկնի քո. եկին, և որբոյ, և այրւո՛յ եղիցի այն: ²²Եւ յիշեսցես զի և դու ծառայ էիր յերկրին Եգիպտացւոց. վասն այնորիկ ես պատուիրեմ քեզ առնել զբանս զայս:

25

Գլուխ ԻԵ

ՁԹ ¹Եւ եթէ լինիցի հակառակութիւն ՚ի մէջ մարդկան, մատիցեն յատեան և դատեսցին. և արդարացուցեն զարդարն, և պարտաւորեսցեն զամպարիշտն:՝ ²Եւ եղիցի եթէ արժանի իցէ զանի ամպարիշտն, նստուցեն զնա առաջի դատաւորացն, և հարցեն զնա առաջի նոցա ըստ ամպարշտութեան նորա՝ ³թուով քառասուն. և այլ մի՛ յաւելուցուն. ապա թէ յաւելուցուն հարկանել զնա աւելի՛ քան զայն, անարգութիւն լիցի եղբորն քում առաջի քո:

Ղ ⁴Մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտոյ:

ՂԱ ⁵Եւ եթէ բնակեսցեն եղբարք ՚ի միասին, և մեռանիցի մի ոք ՚ի նոցանէ, և զաւակ ո՛չ իցէ նորա. մի՛ լինիցի կին մեռելոյն արտաքոյ ա՛ռն ումեք՝ որ մերձաւոր չիցէ՛ նորա. այլ եղբայր ա՛ռն իւրոյ մտցէ առ նա, և առցէ զնա ի՛ւր կնութեան. և բնակեսցէ ընդ նմա՝. ⁶և եղիցի մանուկն որ ծնանիցի՝ հաստատեալ յանուն վախճանելոյն. և մի՛ ջնջեսցի անուն նորա յԻսրայէլէ: ⁷Ապա թէ ո՛չ կամիցի այրն առնուլ զկին եղբոր իւրոյ, ելցէ՛ կինն ՚ի դո՛ւմն անդր առ ծերակոյտն՝ և ասասցէ. Ո՛չ կամի եղբայր առն իմոյ կանգնել զանուն եղբոր իւրոյ ՚ի մէջ Իսրայէլի: ⁸Եւ կոչեսցեն զնա ծերակոյտ քաղաքին իւրոյ, և խօսեսցին ընդ նմա. և նա կացցէ և ասիցէ. Ոչ կամիմ առնուլ զդա: ⁹Եւ մատուցեալ կին եղբոր նորա առաջի ծերոցն, հանցէ զկօշիկ մի յոտանէ նորա. և թքցէ ընդ երեսս նորա, և պատասխանի՛ տուեալ ասասցէ. Ա՛յսպէս արասցեն առն, որ ո՛չ շինիցէ զտուն եղբոր իւրոյ: ¹⁰Եւ կոչեսցի անուն նորա ՚ի մէջ Իսրայէլի Տո՛ւն բոկացելոյ:

ՂԲ ¹¹Եւ եթէ կռուեսցին արք ընդ միմեանս, այր ընդ եղբօ՛ր իւրում. և մատուցեալ կին միոյ ՚ի նոցանէ թափել զայր իւր ՚ի ձեռաց այնորիկ որ հարկանիցէ՛ն զնա, և ձգեալ զձեռն բո՛ւմն հարկանիցէ զերկուորեաց նորա՝. ¹²հատցեն զձեռն, և մի՛ խնայեսցէ ՚ի նա ակն քո՝:

ՂԳ ¹³Մի՛ լինիցի յամանի քում կշիռ և կշիռ, մեծ կամ փոքր: ¹⁴Եւ մի՛ լինիցի ՚ի տան քում չափ և չափ, մեծ կամ փոքր: ¹⁵Կշիռ ստո՛յգ և արդար՝ եղիցի քեզ. և չափ ստոյգ և արդար եղիցի քեզ. զի բազմօրեայ՝ եղիցիս ՚ի վերայ երկրին զոր

* Ոմանք. Մի՛ ճռաքաղ առնիցես զայգի քո, եկին:

* Եւ պարտաւորեսցուն զամ՝:

* Ոմանք. եթէ արժան իցէ... նստուցանեն զնա:

* Ոմանք. եղբարք քո ՚ի միասին... արտաքս յառն ումեք:

* Օրհնակ մի. Որ հարկանիցէ զնա:

* Այլք. Գատանիցես զձեռն:

Տէր Աստուած քո տացէ քեզ 'ի ժառանգութիւն*։ ¹⁶Ձի պի'ղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն որ առնէ զայն, և ամենայն որ առնէ զանիրաւութիւն։

ՂԴ ¹⁷Յուշ լիցի քեզ զոր արարն քեզ Ամաղէկ 'ի ճանապարհի ելանելոյն քոյ յեգիպտոսէ։ ¹⁸Վի'արդ ընդդէմ եկաց քեզ 'ի ճանապարհին և կրճատեաց զվերջն քո, և զաշխատեալսն զկնի քո, և դու քաղցեալ և աշխատեալ էիր. և ո՛չ երկեալ յԱստուծոյ*։ ¹⁹Եւ եղիցի յորժամ հանգուցանիցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն թշնամեաց քոց որ շուրջ զքե՛զ իցեն յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ վիճակաւ 'ի ժառանգութիւն, ջնջեսցես զանուն Ամաղէկայ 'ի ներքոյ երկնից, և մի՛ մոռասցիս։

26

Գլուխ ԻԶ

ՂԵ ¹Եւ եղիցի եթէ մտանիցես յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ 'ի ժառանգութիւն և ժառանգեսցես զնա, և բնակեսցես 'ի նմա*։ ²Առցես զառաջինս պտղոց զերկրին քոյ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ. և արկես 'ի կողոփ. և գնասցես 'ի տեղին՝ զոր ընտրեսցէ Տէր Աստուած անուանել զանուն իւր անդ*։ ³Եւ երթիցես առ քահանայն, որ կայցէ յաւուրսն յայնոսիկ, և ասասցես ցնա. Գոհանամ այսօր զՏեառնէ Աստուծոյ իմնէ, զի մտի յերկիրն զոր երդուաւ Տէր հարցն մերոց տալ մեզ։ ⁴Եւ առցէ՛ քահանայն զկողոփն 'ի ձեռաց քոց. և դիցէ՛ զնա առաջի սեղանոյն Տեառն Աստուծոյ քոյ։ ⁵Եւ պատասխանի տուեալ, ասասցես առաջի Տեառն Աստուծոյ քոյ. Ձստորիս եթող հայր իմ և էջ յեգիպտոս, և պանդխտեցաւ անդ սակաւ ինչ թուով, և եղև անդ յաճօ մեծ. և բազմացաւ անդ յո՛յժ յոյժ*։ ⁶և չարչարեցին զմեզ Եգիպտացիք, լլկեցին զմեզ և եղին 'ի վերայ մեր զորժ խստութեան։ ⁷Եւ աղաղակեցաք առ Աստուած հարցն մերոց. և լուաւ ձայնի մերում, և ետես զտառապանս մեր և զաշխատութիւն մեր, և զնեղութիւն*։ ⁸և եհան զմեզ Տէր յեգիպտոս ինքնին՝ զօրութեամբ մեծաւ, և հզօր ձեռամբ, և բարձր բազկաւ, և մեծամեծ տեսլեամբք, և նշանօք և արուեստիւք. ⁹և ած զմեզ 'ի տեղիս յայս. և ե՛տ մեզ զերկիրս զայս. երկիր՝ որ բղիւժ զկաթն և զմեղր։ ¹⁰Եւ արդ աւասիկ բերի՛ զպտուղ արդեանց երկրին զոր ե՛տ ինձ Տէր, երկիր՝ որ բղիւժ զկաթն և զմեղր։ Եւ երկիր՝ պագցես անդ առաջի Տեառն Աստուծոյ քոյ. ¹¹և ուրախ լիցիս անդ յամենայն բարութիւնսն՝ զոր ետ քեզ Տէր Աստուած քո, և տա՛ն քում. դու և Ղևտացին և պանդուխտն որ 'ի քեզ։

ՂԶ ¹²Եւ եթէ կատարեսցես տասանորդել զամենայն տասանորդս երկրի քոյ. յամին երկրորդի կրկին տասանորդեսցիս Ղևտացւոյն, և եկին, և որբոյ, և այրւոյ. և կերիցեն 'ի քաղաքս քո և յագեսցին*։ ¹³Եւ ասասցես առաջի Տեառն Աստուծոյ քոյ. Սրբեցի՛ 'ի բաց զսրբութիւնսն 'ի տանէ իմնէ. և ետու զայն Ղևտացւոյն, և եկին, և որբոյ, և այրւոյ, ըստ ամենայն պատուիրանաց Տեառն Աստուծոյ՝ զոր

* Ոճանք. Ստոյգ և արդար լինիցի քեզ... բազմօրեայ լինիցիս 'ի վերայ։

* Ոճանք. Եւ կրճատեաց զվերջսն քո։

* Այլք. Եթէ մտանիցես յերկիրն զոր։

* Ոճանք. Տէր Աստուած քո անուանել զա՛ւ։

* Ոճանք. Եթող հայր մեր և էջ յե՛։

* Այլք. Եւ լուաւ Տէր ձայնի մերում... և զնեղութիւնս մեր։

* Օրինակ մի. Յամին երկրորդի յամենայնէն կրկին տասանորդեսցես Ղևտացւոյն։

պատուիրեալ էր ինձ. ո՛չ անցի զպատուիրանաւ քով և ո՛չ մոռացայ*. ¹⁴և ո՛չ կերայ ՚ի վիշտս ՚ի նոցանէ. և ո՛չ ընծայեցի ՚ի նոցանէ պղծոյն. և ո՛չ ետու ՚ի նոցանէ մեռելոյ: Լուա՛յ ձայնի Տեառն Աստուծոյ իմոյ. և արարի՛ որպէս պատուիրեցեր ինձ: ¹⁵Արդ՝ հայեաց՛ ՚ի սրբոյ բնակութենէ քումնէ յերկնից, և օրհնեա՛ զժողովուրդ քո զԻսրայէլ, և զերկիրն զոր ետուր նոցա. որպէս երդուար հարցն մերոց, տա՛լ մեզ զերկիր որ բոխտ զկաթն և զմեղր*: ¹⁶Յաւուր յայնմիկ պատուիրեաց մեզ Տէր Աստուած մեր առնել զամենայն իրաւունս զայսոսիկ, և զդատաստանս. և պահեսցի՛ք և արասցի՛ք զոսա յամենայն սրտէ ձերմէ, և յամենայն անձմէ ձերմէ*: ¹⁷ՉՏէր Աստուած քո ընտրեա՛ այսօր լինել քեզ Աստուած, և զնասցի՛ք ՚ի ճանապարհս նորա, և պահեսցի՛ք զիրաւունս և զդատաստանս նորա՝ լսել ձայնի նորա: ¹⁸Եւ Տէր ընտրեաց զքեզ այսօր լինել նմա ժողովուրդ սեպհական՝ որպէս և խոստացաւ քեզ. պահել զամենայն պատուիրանս նորա. ¹⁹և լինել քեզ ՚ի վե՛ր քան զամենայն ազգս. որպէս արար զքեզ անուանի և բարգաւաճ և փառաւոր՝ լինել քեզ ժողովուրդ սո՛ւրբ Տեառն Աստուծոյ քում. որպէս և խոստացաւ քեզ*:

27

Գլուխ ԻԷ

ՂԵ ¹Եւ պատուիրեաց Մովսէս և ծերակոյտն Իսրայէլի՝ և ասեն. Պահեցէ՛ք զամենայն պատուիրանս զոր ես պատուիրեմ ձեզ այսօր: ²Եւ եղիցի յաւուր յորում անցանիցես ընդ Յորդանան, յերկիրն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ. և կանգնեսցես անդ քարինս մեծամեծս, և բռեսցես զնոսա բռով*: ³Եւ գրեսցես ՚ի վերայ քարանցն զամենայն պատգամս օրինացս այսոցիկ, յորժամ անցանիցէք ընդ Յորդանան, ՚ի ժամանակի իբրև մտանիցէք յերկիրն՝ զոր Տէր Աստուած հարցն ձերոց տացէ՛ քեզ, երկիր որ բոխտ զկաթն և զմեղր. որպէս խոստացաւ Տէր Աստուած հարց քոց տա՛լ քեզ*: ⁴Եւ եղիցի յորժամ անցանիցէք ընդ Յորդանան, կանգնեսցի՛ք զքարինս զայնոսիկ զոր ես պատուիրեմ ձեզ այսօր՝ ՚ի լերինն Գեբաղ, և բռեսցի՛ք զնոսա բռով: ⁵Եւ շինեսցես անդ սեղան Տեառն Աստուծոյ քոյ. սեղան ՚ի քարանց. և մի՛ հպեսցի ՚ի նոսա երկաթ*. ⁶բոլորակ վիճօք շինեսցես զսեղանն Տեառն Աստուծոյ քոյ. և հանցես ՚ի վերայ նորա ողջակէզս Տեառն Աստուծոյ քում: ⁷Եւ զենցես անդ զենումն փրկութեան Տեառն Աստուծոյ քում. և կերիցես և յագեսցիս անդ. և ուրախ լիցիս առաջի Տեառն Աստուծոյ քոյ. ⁸և գրեսցես ՚ի վերայ քարանցն զամենայն զօրէնս զայսոսիկ յայտնապէս յոյժ:

ՂԸ ⁹Եւ խօսեցաւ Մովսէս, և քահանայքն՝ և Ղևտացիք՝ ընդ ամենայն Իսրայէլի և ասեն. Լո՛ւռ լեր և լո՛ւր Իսրայէլ: Յաւուր յայսմիկ եղեր ժողովուրդ Տեառն Աստուծոյ քոյ. ¹⁰և լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ. և արասցես զամենայն

* *Յօրինակին.* Սրբեսցի ՚ի բաց զսրբութիւնսն:

* *Ոմանք.* Որպէս երդուար հարց նոցա:

* *Ոմանք.* Պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո առնել:

* *Ոմանք.* Որպէս և խօսեցաւ քեզ:

* *Ոմանք.* Յորում անցանիցէք:

* *Ոմանք.* Տացէ ձեզ երկիր որ... որպէս խօսեցաւ Տէր Աստուած հարցն քոց քեզ:

* *Ոմանք.* Սեղան Տեառն Աստուծոյ քում... և մի՛ հպեսցես ՚ի նոսա եր՛:

պատուիրանս նորա և զիրաւունս նորա՝ զոր է՛ս պատուիրեն՝ քեզ այսօր: ¹¹Եւ պատուիրեաց՝ Մովսէս ժողովորդեանն յաւուր յայնմիկ՝ և ասէ. ¹²Սոքա՛ կացցեն օրհնել զժողովուրդն՝ ՚ի լերինն Գարիզին, յորժամ անցանիցէք ընդ Յորդանան: Շնաւոն. Ղևի. Յուդայ. Իսաքար. Յովսէփ. և Բենիամին* : ¹³Եւ սոքա՛ կացցեն ՚ի վերայ անիծիցն ՚ի լերինն Գեբաղ: Ռուբէն. Գադ. Ասեր. Ջաբուղոն. Դան. և Նեփթաղին: ¹⁴Եւ պատասխանի տուեալ Ղևտացւոցն՝ ասիցեն մեծածայն ամենայն Իսրայէլի: ¹⁵Անիծեալ լիցի մարդն, որ արասցէ դօշտալս և ձուլածոյ. զի պիղծ է Տեառն ձեռագործ ճարտարի, և դնիցէ զնա ՚ի թաքստեան: Եւ պատասխանի տուեալ ժողովորդեանն, ասասցեն՝ եղիցի* : ¹⁶Անիծեալ որ անարգեսցէ զհայր իւր կամ զմայր իւր: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ¹⁷Անիծեալ որ խտորիցէ զիրաւունս՝ եկին և որբոյ և այրոյ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ¹⁸Անիծեալ՝ որ փոխեսցէ զսահմանս ընկերի իւրոյ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ¹⁹Անիծեալ՝ որ մոլորեցուցէ զկոյրն ՚ի ճանապարհի: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²⁰Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ կնոջ հօր իւրոյ. զի յայտնեաց զաներևոյթս հօր իւրոյ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²¹Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ ամենայն անասնոյ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²²Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ քե՛ռ իւրում, որ առ ՚ի հօրէ իցէ, կամ առ ՚ի մօրէ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²⁴Անիծեալ՝ որ հարկանիցէ զընկեր իւր նենգութեամբ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²⁵Անիծեալ՝ որ առնուցու կաշառ հարկանել զանձն արեան արդարոյ: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* : ²⁶Անիծեալ ամենայն մարդ որ ո՛չ կացցէ յամենայն բանս օրինացս այսոցիկ՝ առնել զսոսա: Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի* :

28

Գլուխ ԻԸ

¹Եւ եղիցի եթէ լսելով լուիցէք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ, զգուշանալ և առնել զամենայն պատուիրանս նորա, զոր էս պատուիրեն՝ ձեզ այսօր, տացէ զքեզ Տէր Աստուած քո ՚ի վեր քան զամենայն ազգս երկրի* . ²և եկեսցեն ՚ի վերայ քո ամենայն օրհնութիւնքս այսոքիկ. և գտցեն զքեզ, եթէ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ: ³Օրհնեալ լիցիս դու ՚ի քաղաքի, և օրհնեալ յանդի: ⁴Օրհնեալ լիցին ծնունդք որովայնի քոյ, և արարք երկրի քոյ, անդեայք արջառոց քոց, և հօտք ոչխարաց քոց: ⁵Օրհնեալ լիցին շտեմարանք քո, և համբարք քո: ⁶Օրհնեալ լիցիս դու յելանել և ՚ի մտանել քում: ⁷Մատնեսցէ՛ Տէր Աստուած քո զքշնամիս քո և զհակառակորդս քո խորտակեալս առաջի երեսաց քոց. ընդ մի ճանապարհ ելցեն առ քեզ, և ընդ եւթն ճանապարհ փախիցեն յերեսաց քոց:

* Ոմանք. ՚ի լերինն Գարեզին:

* Ոմանք. Ձի պիղծ է առաջի Տեառն ձե՛:

* Բազումք. Որ խտորեսցէ զի՛:

* Ոմանք. Ձկոյրն ՚ի ճանապարհէ:

* Ոսկան աստանօր յաւելու համար 23երրորդը.. Անիծեալ որ ննջիցէ ընդ զոքանչի իւրոյ. և ասասցէ ամենայն ժողովուրդն եղիցի:

* Ոմանք. Անիծեալ որ հարկանէ. կամ՝ հարցէ զընկեր իւր:

* Օրհնակ մի. Այսօր, և տարցէ զքեզ Տէր:

⁸Առաքեցէ՛ք Տէր 'ի վերայ քո օրհնութիւն, 'ի շտեմարանս քո, և յամենայն ինչ ուր մխեսցես զձեռն քո 'ի վերայ երկրին՝ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ*:

⁹Կանգնեցէ՛ զքեզ Տէր Աստուած քո իւր ժողովուրդ սո՛ւրբ. որպէս երդուաւ հարցն քոց. եթէ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ, և գնասցես 'ի ճանապարհս նորա*.

¹⁰և տեսցեն ամենայն ազգք երկրի զի անուն Տեառն կոչեցեալ է 'ի վերայ քո. և երկիցեն 'ի քէն: ¹¹Եւ բազմացուցէ՛ զքեզ Տէր Աստուած քո 'ի բարութիւնս, ծննդեանք որովայնի քոյ, և արդեանքք երկրի քոյ, և ծննդեանքք խաշանց քոց. 'ի վերայ երկրին զոր երդուաւ Տէր հարցն քոց տա՛լ քեզ, ըստ աւուրց երկնից 'ի վերայ երկրի*:

¹²Բացցէ՛ քեզ Տէր զգանձսն բարութեան իւրոյ զերկինս, տալ անձրև՝ 'ի ժամանակի իւրում երկրին քոյ, օրհնել՝ զամենայն գործս ձեռաց քոց. և տացես փոխ ազգաց բազմաց, և դու ո՛չ առնուցուս փոխ. ¹³և իշխեսցես ազգաց բազմաց, և քեզ՝ մի՛ իշխեսցեն: Զաստատեցէ՛ զքեզ Տէր Աստուած քո 'ի գլուխ և ո՛չ 'ի վերջ. և եղիցիս 'ի վեր, և ո՛չ 'ի խոնարհ. եթէ լուիցես պատուիրանաց Տեառն Աստուծոյ քոյ, զոր ես պատուիրեմ քեզ այսօր պահել և առնել: ¹⁴Եւ ո՛չ անցանիցես զամենայն բանիւք զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ ո՛չ յաջ և ո՛չ յահեակ. երթալ զհետ աստուածոց օտարաց պաշտել զնոսա: ¹⁵Եւ եղիցի եթէ ո՛չ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել և առնել զամենայն պատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, եկեսցեն 'ի վերայ քո անէծքս այսօրիկ՝ և հասցեն քեզ*:

¹⁶Անիծեալ լիջիր դու 'ի քաղաքի, և անիծեալ յանդի: ¹⁷Անիծեալ շտեմարանք քո և համբարք քո: ¹⁸Անիծեալ ծնունդք որովայնի քոյ և արդիւնք երկրի քոյ, և անդեանք արջառոց քոց, և հօտք ոչխարաց քոց: ¹⁹Անիծեալ լիջիր դու 'ի մտանել՝ և անիծեալ յելանել: ²⁰Առաքեցէ՛ քեզ Տէր զնուագութիւն և զկարօտութիւն. և ծախս 'ի վերայ ամենայնի յոր մխեսցես զձեռն քո, և զոր ինչ առնիցես. մինչև սատակեցէ՛ զքեզ Տէր, մինչև կորուսցէ՛ զքեզ վաղվադակի վասն չարութեան գնացից քոց՝ զի թողեր դու զիս: ²¹Խանձեցուցէ՛ Տէր 'ի քեզ մահ, մինչև սատակեցէ՛ զքեզ Տէր յերկրէն յոր դու մտանելոց ես ժառանգել զնա*:

²²Զարցէ՛ զքեզ Տէր տարակուսանօք, և քերմամբ, և սարսռով, և խեթիւք, և երկիւղիւ, և խորշակաւ, և գունով. և հալածեսցեն զքեզ մինչև կորուսցեն զքեզ*:

²³Եւ եղիցին 'ի վերայ գլխոյ քոյ երկինք պղնձի՛, և երկիր 'ի ներքոյ քո երկաթի*:

²⁴Տացէ՛ Տէր զանձրև երկրի քոյ փոշի՛. և հո՛ղ յերկնից իջցէ՛ 'ի վերայ քո. մինչև սատակեցէ՛ զքեզ և կորուսցէ՛ զքեզ*:

²⁵Տացէ՛ զքեզ Տէր 'ի պարտութիւն առաջի թշնամեաց քոց. ընդ մի ճանապարհ ելցես 'ի վերայ նոցա, և ընդ եւթն ճանապարհ փախիցես յերեսաց նոցա. և եղիցիս ցրուեալ ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի. ²⁶և եղիցին մեռեալք ձեր կերակո՛ւր թռչնոց երկնից և գազանա՛ց երկրի. և ո՛չ ոք իցէ որ ընդօստուցանիցէ: ²⁷Զարցէ՛ զքեզ Տէր կեղով Եգիպտացւոցն, և թանջիւք, և զայրացեալ քոսով՝ և մնով. զի մի՛ կարասցես բժշկել: ²⁸Զարցէ՛ զքեզ Տէր յիմարութեամբ, և շլացութեամբ, և ապշութեամբ

* *Ոմանք.* Ուր մխիցեն զձեռն քո 'ի վերայ:

* *Ոմանք.* Չայնի Տեառն Աստուծոյ քո:

* *Ոմանք.* Ծննդովք որովայնի քո... 'ի վերայ երկրին:

* *Ոմանք.* Եւ պահել և առնել:

* *Ոմանք.* Խանձեցուցէ Տէր 'ի քեզ մահ:

* *Օրհնակ մի.* Եւ սարսռով և խեթիւք և կեղիւ և խոր՛:

* *Յօրինակին բառքս.* Պղնձի, երկաթի. *կարմրով նշանակին:*

* *Ոմանք.* Տացէ քեզ Տէր զանձրև եր՛:

մտաց. ²⁹և խարխափեսցեն 'ի մէջօրէի որպէս խարխափիցէ կոյր 'ի խաւարի: Եւ եթէ ո՛չ ուղղեսցես զճանապարհս քո, եղիցիս յայնժամ զրկեալ և յափշտակեալ զամենայն աւուրս. և ո՛չ որ իցէ որ օգնիցէ քեզ*: ³⁰Առնուցուս կին՝ և այլ այր հանիցէ զնա 'ի քէն. շինեսցես տուն՝ և մի՛ բնակեսցես 'ի նմա. տնկեսցես այգի՝ և մի՛ կթեսցես զնա: ³¹Արջառ քո՝ սպանեալ առաջի քո, և մի՛ կերիցես 'ի նմանէ. էշ քո՝ յափշտակեալ 'ի քէն, և մի՛ դարձցի առ քեզ. ոչխար քո՝ մատնեալ թշնամեաց քոց, և ո՛չ որ իցէ որ օգնիցէ քեզ: ³²Ուստերք քո և դստերք քո՝ մատնեալք ազգի օտարի, և աչք քո կրկոցեալ հայիցին 'ի նոսա, և ո՛չ հասանիցէ ձեռն քո: ³³Չբերս երկրի քոյ, և զամենայն վաստակս քո կերիցէ՛ ազգ, զոր դու ո՛չ գիտիցես: Եւ եղիցես զրկեալ և խորտակեալ զամենայն աւուրս*. ³⁴և եղիցես յիմարեալ վասն տեսլեանց աչաց քոց՝ զոր տեսանիցես: ³⁵Հարցէ՛ զքեզ Տէր չարաչար կեղով 'ի ծունկս և 'ի սրունս. և ո՛չ կարասցես բժշկել 'ի թաթից ոտից քոց մինչև ցգլուխ քո: ³⁶Տարցի՛ զքեզ Տէր և զիշխանսն զոր կացուցես 'ի վերայ քո՝ յազգ որ ո՛չ գիտիցես դու՝ և ո՛չ հարք քո. և պաշտեսցեն անդ զաստուածս օտարս, զփայտեղէնս և զքարեղէնս*. ³⁷և եղիցես յառա՛կ և 'ի ցոյց և 'ի զրոյց 'ի մէջ ամենայն ազգաց՝ յոր տանիցի զքեզ Տէր անդր: ³⁸Սերմն բազում հանցես յանդի, և սակա՛ւ ժողովեսցես. զի կերիցէ զայն մարախ*: ³⁹Այգի՛ս տնկեսցես և զործեսցես, և զինի ո՛չ արբցես, և մի՛ ուրախ լիցիս 'ի նմանէ. զի կերիցէ զայն՝ ո՛րդն: ⁴⁰Եւ եղիցին ձիթենիք յամենայն սահմանս քո, և իւղով ո՛չ օծցիս, զի թափեսցին ձիթենիքն քո: ⁴¹Ուստերս, և դստերս ծնցիս, և ո՛չ լինիցին քո. քանզի երթիցեն 'ի գերութեան*: ⁴²Ձամենայն ծառատունկ քո և զարդի՛նս երկրի քոյ հարցէ՛ թրթուր: ⁴³Եկն որ 'ի քեզ իցէ, ելցէ քան զքեզ վեր՝ 'ի վեր, և դու իջցես վայր 'ի վայր*. ⁴⁴Նա տացէ՛ քեզ փոխ, և դու ո՛չ տացես նմա փոխ. նա՛ եղիցի գլուխ, և դու եղիցիս վերջ: ⁴⁵Եւ եկեսցեն 'ի վերայ քո անէծքս այսոքիկ, և հալածեսցեն զքեզ. և հասցեն քեզ մինչև սատակեսցեն զքեզ, և մինչև կորուսցեն զքեզ. զի ո՛չ լուար ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել զպատուիրանս նորա և զիրաւունս նորա զոր պատուիրեաց քեզ: ⁴⁶Եւ եղիցին 'ի քեզ նշանք և արուեստք, և 'ի զաւակի քում մինչև ցյաւիտեան. ⁴⁷փոխանակ զի ո՛չ պաշտեսցեր զՏէր Աստուած քո ուրախութեամբ և ճշմարիտ սրտիւ. վասն բազմութեանդ ամենեցուն* ⁴⁸պաշտեսցես զթշնամիս քո՝ զորս առաքեսցէ 'ի վերայ քո Տէր, 'ի սով և 'ի ծարաւ և 'ի մերկութիւն՝ և 'ի նուազութեան ամենայնի. և դիցէ անուր երկաթի 'ի պարանոցի քում մինչև սատակեսցէ՛ զքեզ*: ⁴⁹Ածցէ՛ 'ի վերայ քո ազգ 'ի հեռաստանէ՛ 'ի ծագաց երկրի իբրև զխոյանալ արծուոյ. ազգ՝ զորոյ ո՛չ լսիցես զձայն նորա*. ⁵⁰ազգ՝ ժպի՛րի երեսօք. որ ո՛չ աչառիցէ երեսաց ծերոց, և ո՛չ ողորմեսցի տղայոյ*. ⁵¹և կերիցէ՛ զծնունդս խաշանց քոց, և

* Այլք. Եւ եղիցիս յայնժամ:

* Ոմանք. Կերիցէ ազգ օտար զոր դու:

* Ոմանք. Եւ զիշխանս քո զոր կացուցես:

* Ոմանք. Սերմն բազում ցանիցես յանդի:

* Այլք. Երթիցեն 'ի գերութիւն:

* Ի լուս՝. Ի վայր 'ի վայր. համաձայն ոմանց՝ 'ի բնաբ՝: Ուր ոմանք. 'ի վեր 'ի վեր... 'ի վայր 'ի վայր:

* Ոսկան. Վասն բազմութեան իրաց ամենեցուն:

* Ոմանք. Եւ 'ի մերկութեան և 'ի:

* Ոմանք. Ի ծագաց երկրէ... լուիցես զձ՝:

* Ոմանք. Եւ ո՛չ ողորմիցի տղայոց:

զարդի՛նս երկրի քոյ. և ո՛չ թողուցու քեզ ցորեան, գինի՛, ե՛ւղ, զանդեա՛յս արջառոց քոց, և զհօ՛տս ոչխարաց քոց, մինչև կորուսցե՛ զքեզ: ⁵²Եւ նեղեսցե՛ զքեզ յամենայն քաղաքս քո, մինչև կործանեսցին պարիսպք քո բարձրացեալք և ամուրք՝ յորս դուն յուսացեալ իցես յամենայն երկրին քում. և նեղեսցե՛ զքեզ յամենայն քաղաքս քո՝ զորս ետ քեզ Տէր Աստուած քո՞: ⁵³Եւ կերիցես՝ զճնունդս որովայնի քոյ. զմիս ուստերաց քոց և զդաստերաց քոց՝ զոր ետ քեզ Տէր, յանձկութեան քում և ՚ի նեղութեան քում, որով նեղեսցե՛ զքեզ թշնամին քո: ⁵⁴Գիրգն որ ՚ի քեզ և փափուկն յոյժ, չարակնեսցե՛ յեղբայր իւր և ՚ի կին ծոցոյ իւրոյ, և ՚ի մնացեալ որդիսն՝ որ մնայցեն մնա՞, ⁵⁵տա՛լ միում ՚ի նոցանէ ՚ի մարմնոյ որդւոց իւրոց յորոց ուտիցե՛. վասն չմնացելոյն մնա ինչ. յանձկութեանն քում և ՚ի նեղութեան, որով նեղիցեն զքեզ թշնամիքն քո յամենայն քաղաքս քո՞: ⁵⁶Եւ գիրգն որ ՚ի քեզ և փափուկն յոյժ, որոյ ո՛չ իցե՛ ոտին իւրոյ առեալ զփո՛րձ գնալոյ ՚ի վերայ երկրի վասն փափկութեան իւրոյ և գրգութեան, չարակնեսցե՛ յայր ծոցոյ իւրոյ. և զուստրն իւր, և զդուստր՞: ⁵⁷Եւ զա՛ղտն ելեալ ՚ի միջոյ իւրմէ, և զճնունդն զոր ծնանիցի՝ խորովեսցե՛ ՚ի նոցանէ՝ և կերիցե՛. և վասն նուազութեանն յամենայնէ թաքուսցե՛ յանձկութեանն և ՚ի նեղութեանն. որով նեղիցե՛ զքեզ թշնամին յամենայն քաղաքս քո: ⁵⁸Եւ եթե՛ ո՛չ լուիցե՛ք առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ, զգրեալս ՚ի գիրս յայսմիկ, երկնչե՛լ ՚ի պատուական և ՚ի սքանչելի՛ անուանէ Տեառն Աստուծոյ քոյ. ⁵⁹Նորանշան արասցե՛ Տէր զհարուածս քո, և զհարուածս զաւակի քոյ, զհարուածս մեծամեծս և զարմանալիս, և զցաւս չարաչարս և զկարևորս: ⁶⁰Եւ աճցե՛ ՚ի վերայ քո զամենայն ախտս չարաչարս զեգիպտացւոցն՝ յորմէ սոսկայի՛րն յերեսաց նոցա, և մխեսցին՝ ՚ի քեզ՞: ⁶¹Եւ զամենայն հիւանդութիւնս. և զամենայն հարուածս գրեալս ՚ի գիրս օրինացս այսոցիկ, աճցե՛ Տէր ՚ի վերայ քո՝ մինչև սատակեսցե՛ զքեզ: ⁶²Եւ մնասջիք թուով սակալք. փոխանակ զի էիք դուք իբրև զաստեղս երկնից բազմութեամբ. և ո՛չ լուարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ՞: ⁶³Եւ եղիցի որպէս ուրախ եղև ՚ի ձեզ Տէր բարի՛ առնել ձեզ, և բազմացուցանել զձեզ, նոյնպէս ուրախ լինիցի Տէր ՚ի ձեզ՝ սատակել զձեզ. և բարձջի՛ք յերկրէն յոր մտանելոց էք ժառանգել զնա: ⁶⁴Եւ ցրուեսցե՛ զքեզ Տէր Աստուած քո ընդ ամենայն ազգս, ՚ի ծագա՛ց երկրի մինչև ՚ի ծագս երկրի. և ծառայեսցես՝ զանդ աստուածոց օտարաց, փայտից և քարանց՝ զորս ո՛չ գիտէիր դու և հարք քո: ⁶⁵Այլև յազգսն յայնոսիկ ո՛չ հանգուսցե՛ զքեզ, և ո՛չ լինիցի կայ թաթից ոտից քոց. և տացե՛ քեզ անդ սի՛րտ տրտմեալ, և աչս սորեալս, և անձն հարեալ: ⁶⁶Եւ եղիցին կեանք քո կախեալ առաջի աչաց քոց, և զարհուրեսցի՛ս զցայգ և զցերեկ. և ո՛չ հաւատասցեն կենացն քոց՞: ⁶⁷Ընդ առաւօտս ասիցես թէ՛ Ե՞րբ լինիցի երեկոյ. և ընդ երեկոյս ասիցես թէ՛ Ե՞րբ լինիցի առաւօտ, ՚ի զարհուրանա՛ց սրտի քոյ զոր երկնչիցիս, և ՚ի տեսլեանց աչաց քոց զոր տեսանիցես: ⁶⁸Եւ դարձուսցե՛ զքեզ Տէր անդրէն յեգիպտոս նաւօք հազարաւոր

* *Ոմանք.* Յուսացեալ իցես յամենայն քաղաքս քո և յամենայն երկրին քում, զոր Տէր Աստուած քո ետ քեզ, նեղեսցե՛ զքեզ:

* *Ոսկան.* Որդիսն՝ որք իցեն ՚ի մնա:

* *Բազումք.* Վասն չմնալոյն մնա ինչ:

* *Ոսկան.* Եւ յուստրն իւր և ՚ի դուստր:

* *Ոմանք.* Յերեսաց նորա և մերձեսցին ՚ի քեզ:

* *Այլք.* Չայնի Տեառն Աստուծոյ ձերոյ:

* *Ոմանք.* Եւ եղիցի կեանք քո: *Այլք.* Եւ ո՛չ հաւատասցես կենաց:

զօրօք. և ընդ ճանապարհ ընդ նոյն՝ ո՛չ յաւելեցուք տեսանել զնա. և վաճառեսցի՛ք անդ թշնամեաց ձերոց՝ ՚ի ծառայս և յաղախնայս. և ո՛չ որ իցէ որ զնիցէ՝:

29

ԳԼՈՒԽ ԻԹ

¹Այս բանք են ուխտին զոր պատուիրեաց Տէր Մովսիսի. հաստատել որդւոցն Իսրայէլի յերկրին Մովաբու. թո՛ղ զայն ուխտ՝ զոր ուխտեաց նոցա ՚ի Քորէք:
ՂԹ ²Եւ կոչեաց Մովսէս զամենայն որդիսն Իսրայէլի՝ և ասէ՝ ցնոսա. Դուք ձեզէն տեսէք զամենայն ինչ զոր արար Տէր յեգիպտոս առաջի ձեր, ընդ փարաւոն և ընդ ծառայս նորա, և ընդ ամենայն երկիր նորա՝: ³Չփորձանսն մեծամեծս՝ զոր տեսին աչք ձեր. զնշանսն և զարուեստս մեծամեծս զայնոսիկ, զձեռն հզօր, և զբազուկ բարձր: ⁴Եւ ո՛չ ետ ձեզ Տէր Աստուած ձեր սի՛րտ գիտելոյ, և աչս տեսանելոյ. և ականջս լսելոյ մինչև ցայսօր. ⁵և աժ զձեզ զքառասուն ամ ընդ անապատն: Ո՛չ հնացան ձորձք ձեր, և ո՛չ մաշեցան կօշիկք յոտից ձերոց: ⁶Հաց ո՛չ կերայք, և զինի և ցքի ո՛չ արբէք. զի ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած ձեր. ⁷և եկիք մինչև ՚ի տեղիս այս: Եւ ել Սեհոն թագաւոր Եսեբոնայ, և Ովգ թագաւոր Բասանու ընդդէմ մեր պատերազմաւ. և հարա՛ք զնոսա՝, ⁸և առա՛ք զերկիր նոցա. և ետու զնա ՚ի ժառանգութիւն Ռուբինի և Գադայ և կիսոյ ցեղին Մանասէի: ⁹Եւ զգուշասցի՛ք առնել զամենայն բանս ուխտիս այսորիկ. զի իմանայցէ՛ք զամենայն զոր առնիցէք: ¹⁰Դուք կայք աւաղիկ այսօր ամենեքեան առաջի Տեառն Աստուծոյ ձերոյ. ցեղապէ՛տք ձեր, և ծերակոյտ ձեր, և դատաւո՛րք ձեր, և ատենադպիրք ձեր, և ամենայն այր Իսրայէլի, ¹¹և կանայք ձեր, և որդիք ձեր, և եկն որ ՚ի միջի ձերում բնակէ. և ՚ի փայտակոտորէ՛ ձերմէ մինչև ցջրբէր ձեր՝: ¹²Յանցանել ձեր զուխտիւ Տեառն Աստուծոյ ձերոյ, և զնզովիւք նորա զոր Տէր Աստուած քո ուխտէ՛ քեզ այսօր՝. ¹³զի կացուցէ զքեզ իւր ժողովուրդ, և նա եղիցի քեզ Աստուած՝ որպէս և ասաց. և զոր օրինակ երդուաւ հարցն քոց՝ Աբրահամու և Սահակայ և Յակոբու: ¹⁴Եւ ո՛չ ձեզ միայն ուխտեմ ես զուխտս զայս, և զնզովս զայսոսիկ, ¹⁵այլ և որոց աստ ընդ մեզ իցեն այսօր առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, և որոց չիցեն ընդ մեզ այսօր: ¹⁶Չի դուք ինքնին գիտէք՝ որպէս բնակեցայք յերկրին Եգիպտացոց, և ո՞րպէս անցաք ընդ մէջ ազգացն. ընդ որս անցէք դուք՝. ¹⁷և տեսէք զգարչելիս նոցա և զկո՛ւռս իւրեանց, զփայտն և զքար, զարծա՛թն և զոսկի. որ է՛ առ նոսա: ¹⁸Մի՛ որ իցէ ՚ի ձեռն այր կամ կին, կամ ա՛զգ, կամ ցեղ՝ որոյ միտք իւր խտտորեալ իցեն ՚ի Տեառնէ Աստուծոյ իւրմէ, երթալ պաշտել զդիս ազգացն

** Յօրինակին՝ թերևս առ մերձաւորութեան ձայնիցս ՚ի մեզ Նաւ և Անիւ. վրիպանօք գրեալ էր՝ յեգիպտոս անուաւք. ուր այլ ամենայն օրինակք մեր, բաց ՚ի միոյն որ զանց առնէ, համաձայն յունական օրինակաց ունին Նաւօք. որպէս և եղաք:*

** Ոմանք. Ձեզէն տեսէք աչօք ձերովք զամենայն ինչ:*

** Ոմանք. Ընդդէմ ձեր պատերազմաւ:*

** Ոմանք. Որ ՚ի միջի բանակին ձերում, ՚ի փայտակոտորէ:*

** Այլք. Տեառն Աստուծոյ քո: Ուր ոմանք. Եւ յանցանել քո զուխտիւն Տեառն Աստուծոյ քո... զոր Տէր Աստուած քո ուխտեաց քեզ. զի:*

** Յօրինակին. Անցաք ընդ մէջ զազանացն, ընդ որս անցէք:*

այնոցիկ*:

Ճ Մի՛ ոք իցէ՛ ՚ի ձէնց արմատ՝ ՚ի վեր բուսեալ դառնութեան և դաժանութեան.
19 և եղիցի եթէ լուիցէ՛ զպատգամս նզովիցս այսոցիկ, և խոկասցի՝ ՚ի սրտի
իւրում՝ և ասիցէ. Քաւութիւնք եղիցին ինձ. զի եթէ ես ըստ մոլորութեան սրտի
իմոյ գնայցեմ. զի մի՛ կորուսանիցէ՛ մեղաւորն զանմեղն: 20 Եւ ո՛չ հաճեսցի
Աստուած ներել նմա. այլ յայնժամ բորբոքեսցի՛ բարկութիւն նորա, և նախանձ
նորա՝ ՚ի մարդն յայն. և հասցեն՝ նմա ամենայն նզովք ուխտիս այսորիկ, գրեալք
՚ի գրի օրինացս այսոցիկ. և ջնջեսցէ՛ Տէր զանուն նորա՝ ՚ի ներքոյ երկնից. 21 և
զատուցէ՛ զնա Տէր ՚ի չարիս յամենայն որդւոցն Իսրայէլի. ըստ ամենայն
նզովից՝ ուխտիս գրելոյ՝ ՚ի գիրս օրինացս այսոցիկ*։ 22 Եւ ասիցեն ազգքն միւս՝ և
որդիքն ձեր որ յարիցեն յե՛տ ձեր, և օտարոտին որ գայցէ յերկրէ հեռաստանէ՝
տեսանիցեն զհարուածս երկրին այնորիկ. և զախտս նոցա զոր առաքեաց Տէր
՚ի վերայ նոցա. 23 զծրծումբն և զա՛ղն այրեցեալ, յամենայն՝ ՚ի հող նորա մի՛
սերմանեսցի և մի՛ բուսցի, և մի՛ ելցէ՛ ՚ի վերայ նորա ամենայն դեղ դալար:
Որպէս կործանեցան Սողոմ և Գոմոր, Ադամա՛ և Սեբոյիմ, զորս կործանեաց Տէր
սրտմտութեամբ և բարկութեամբ: 24 Եւ ասացեն ամենայն ազգքն. Ընդէ՞ր արար
Տէր այնպէս երկրին այնմիկ, զի՞նչ իցէ սրտմտութիւն մեծ բարկութեանն
այնորիկ: 25 Պատասխանի՛ տացեն և ասացեն. Չի թողին զուխտն Աստուծոյ
հա՛րց իւրեանց, զոր ուխտեաց հարցն նոցա, յորժամ եհա՛ն զնոսա յերկրէն
Եգիպտացւոց*։ 26 և գնացեալ պաշտեցին զաստուածս օտարս, և երկիր պագին
նոցա զոր ո՛չն ճանաչէին, և ո՛չ բաժանեաց նոցա: 27 Եւ բարկացաւ Տէր
սրտմտութեամբ ՚ի վերայ երկրին այնորիկ, ածել՝ ՚ի վերայ նորա ըստ ամենայն
նզովից ուխտիս գրելոյ՝ ՚ի մատենի օրինացս այսոցիկ*։ 28 Եւ եբարձ գնոսա Տէր
յերկրէ իւրեանց, բարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ մեծա՛ւ յոյժ. և
մերժեաց գնոսա յերկիր օտար մինչև ցայժմ*։ 29 Ծածուկքն Տեառն Աստուծոյ
մերում, և յայտնիքն մե՛զ և որդւոց մերոց յաւիտեան՝ առնել զամենայն
պատգամս օրինացս այսոցիկ:

30

Գլուխ L

1 Եւ եղիցի եթէ հասանիցէ՛ ՚ի վերայ քո ամենայն պատգամքս այսոքիկ. կամ
օրհնութիւնք կամ անէծք զորս ետու առաջի երեսաց քոց, և կալցիս ՚ի սրտի քո
ընդ ամենայն ազգսն ուր ցրուեսցէ զքեզ Տէր անդ*։ 2 Եւ դարձցիս առ Տէր
Աստուած քո. և լուիցես ձայնի նորա ըստ ամենայնի զոր ես պատուիրեմ քեզ
այսօր, յամենայն սրտէ քումնէ և յամենայն անձնէ քումնէ, 3 և բժշկեսցէ՛ Տէր
զմեղսն քո, և ողորմեսցի՛ քեզ: Եւ դարձեալ ժողովեսցէ՛ զքեզ յամենայն ազգաց՝

* Ոմանք. Ի Տեառնէ Աստուծոյ մերմէ, երթալ:

* Ոմանք. Ի չարիս ՚ի վերայ ամենայն որդւոց Իսրայէլի... գրելոյ ՚ի գիրս օրինաց
այսոցիկ:

* Ոմանք. Տեառն Աստուծոյ հարց իւրեանց:

* Ոմանք. Ուխտիս գրեալս ՚ի մա՛:

* Յօրինակին պակասէր. Եւ սրամտութեամբ և զայրացմամբ մեծաւ:

* Ոմանք. Թէ հասանիցեն ՚ի վերայ քո... և ընկալցի սիրտ քո: Բազումք. Եւ ընկալցիս ՚ի
սիրտ քո:

ուր ցրուեացէ զքեզ Տէր անդր*։ ⁴Եթէ իցէ ցրումն քո՝ ի ծագաց երկրի մինչև ի ծագս երկրի, և անտի՛ ժողովեացէ զքեզ Տէր Աստուած քո։ ⁵և անտի՛ առցէ զքեզ Տէր Աստուած քո, և ածցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յերկիրն զոր ժառանգեցին հարք քո. և ժառանգեցենս զնա՝ և բարի՛ եղիցի քեզ, և բազմապատիկ արասցէ զքեզ քան զհարս քո։ ⁶Եւ պարուրեացէ՛ Տէր զսիրտ քո և զսիրտ զաւակի քոյ. սիրել զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումնէ և յամենայն անձն քումնէ. զի կեցցես դու՛ և զաւակ քո։ ⁷Եւ տացէ Տէր Աստուած քո զնզովս զայս ՚ի թշնամիս քո, և յատելիս քո որք հալածեցինն զքեզ։ ⁸Եւ դու դարձցիս և լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ. և արասցես զպատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր։ ⁹Եւ աճեցուցէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն զործս ձեռաց քոց, ծննդովք որովայնի քոյ, և արդեամբք երկրի քոյ, և ծննդովք անասնոց քոց։ Զի դարձցի՛ ՚ի քեզ Տէր Աստուած քո ուրախ լինել քև ՚ի բարութիւնս՝ որպէս ուրախ եղև հարբքն քովք։ ¹⁰Եթէ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, պահել և առնել զամենայն պատուիրանս նորա և զիրաւունս նորա, և զդատաստանս նորա, զգրեալս ՚ի գրի օրինացս այսոցիկ. եթէ դարձցիս առ Տէր Աստուած քո յամենայն սրտէ քումնէ՛ և յամենայն անձնէ քումնէ՛։ ¹¹Զի պատուիրանքս այս՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, ո՛չ ծանրաբեռն ինչ է, և ո՛չ հեռի՛ ՚ի քէն։ ¹²Ո՛չ յերկինս՝ թէ ասիցես. Ո՛վ ելանիցէ մեզ յերկինս և առնուցու զնա՛ և լուիցուք և արասցուք*։ ¹³Եւ ո՛չ յայնկոյս ծովու է, թէ ասիցես. Ո՛վ անցանիցէ յայնկոյս ծովու՝ և առնուցու առ մեզ զնա, և լսելի արասցէ մեզ՝ և արասցուք*։ ¹⁴Մերձ է բանն առ քեզ յոյժ, ՚ի բերան քո և ՚ի սրտի՛ քում, և ՚ի ձեռս քո՛ է առնել զնա*։ ¹⁵Ահաւասիկ ետու այսօր առաջի երեսաց քոց զկեանս և զմահ, զբարի՛ և զչար։ ¹⁶Եւ եթէ լուիցես պատուիրանաց Տեառն Աստուծոյ մերոյ՝ զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զՏէր Աստուած քո. զնալ ՚ի ճանապարհս նորա, պահել զիրաւունս և զպատուիրանս նորա, և զդատաստանս նորա, կեցցէք և բազումք լինիցիք. և օրինեացէ՛ զքեզ Տէր Աստուած քո յամենայն երկրին յոր մտանելո՛ց ես ժառանգել զնա*։ ¹⁷Եւ եթէ փոխեսցի սիրտ քո, և ո՛չ լուիցես, և մոլորեալ երկիր պագանիցես աստուածոց օտարաց, և պաշտեսցես զնոսա. ¹⁸պատմեն քեզ այսօր, զի կորստեանք կորնչիցիք. և ո՛չ լինիցիք բազմօրեայք ՚ի վերայ երկրին՝ յոր դուք անցանէք ընդ Յորդանան ժառանգել զնա*։ ¹⁹Ունիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր. զկեանս և զմահ ետու առաջի երեսաց ձերոց, զօրհնութիւնս և զանէծս. և ընտրեա՛ զկեանս, զի կեցցես դու և զաւակ քո. ²⁰սիրել զՏէր Աստուած քո, և լսել ձայնի նորա, և ունել զնմանէ. զի այն են կեանք քո, և երկայնութիւն աւուրց քոց. բնակել յերկրին զոր երդուաւ Տէր հարցն քոց. Աբրահամու՛ և Սահակայ և Յակոբայ՝ տա՛լ նոցա։

31

* Այլք. Ուր ցրուեաց զքեզ Տէր։

* Ոմանք. ՚ի գիրս օրինացս այսոցիկ։

* Ոմանք. Ոչ է յերկինս՝ եթէ ա՛։

* Ոմանք. Ով ելանիցէ յայնկոյս ծո՛... և լսելիս արաս՛։ Այլք. Առնուցու մեզ զնա։

* Օրինակ մի. Մերձ է առ քեզ բաժինն յոյժ, ՚ի բերան։

* Ոմանք. Տեառն Աստուծոյ քո զոր ես... զնալ յամենայն ՚ի ճանապարհս նորա... զիրաւունս նորա և... յոր մտանիցես ժառանգել։

* Ի լուս՛. Պատուիրեմ քազ այսօր, զի. *համաձայն բազմաց ՚ի բնաբանի։ Ոմանք. Յոր դուք անցանիցէք ընդ Յոր՛*։

Գլուխ LU

ՃԱ ¹Եւ կատարեաց Մովսէս խօսել զամենայն զբանս զայսոսիկ առ ամենայն որդիսն Իսրայէլի: ²Եւ ասէ ցնոսա. Զարիւր և քսան ամաց եմ ես այսօր, և ո՛չ ևս կարեմ ելանել և մտանել. քանզի Տէր ասաց ցիս, թէ ո՛չ անցանիցես ընդ այդ Յորդանան: ³Տէր Աստուած քո երթայ առաջի երեսաց քոց. նա՛ սատակեցտ զագգսն զայնոսիկ յերեսաց քոց, և ժառանգեսցես՝ս գնոսա. և Յետո՛ւ երթայ առաջի երեսաց քոց՝ որպէս խօսեցաւ Տէր*⁴Եւ արասցէ Տէր ընդ նոսա որպէս արար ընդ Սեհոն և ընդ Ուզ, ընդ երկոսին թագաւորսն Ամփրիացոց որ էին յայնկոյս Յորդանանու, և ընդ երկիր նոցա.⁵որպէս սատակեցաք գնոսա: Եւ մատնեսցէ՛ գնոսա Տէր առաջի ձեր. և արասջիք ընդ նոսա որպէս պատուիրեցի՝ ձեզ: ⁶Քա՛ջ լեր և զօրացի՛ր, մի՛ երկնչիր և մի՛ զանգիտեր, և մի՛ զարիւրեսցիս յերեսաց նոցա. զի Տէր Աստուած քո ինքնի՛ն է որ երթայցէ յառաջագոյն ընդ ձեզ՝ ՚ի միջի ձերում. ո՛չ թողցէ զքեզ՝ և ո՛չ ընդ վայր հարկանիցէ՛: ⁷Եւ կոչեաց Մովսէս զՅետու՝ և ասէ ցնա առաջի ամենայն Իսրայէլի. Քա՛ջ լեր և զօրացի՛ր. քանզի դո՛ւ մտանելոց ես առաջի երեսաց ժողովրդեանդ այդորիկ, յերկիրն զոր երդուաւ Տէր հարցն ձերոց տալ նոցա. և դո՛ւ ժառանգեսցուցես գնոսա: ⁸Եւ Տէր որ երթալո՛ց է ընդ քեզ, ո՛չ թողցէ զքեզ, և ո՛չ ընդ վայր հարցէ. մի՛ երկնչիր և մի՛ զանգիտեր՝:

ՃԲ ⁹Եւ գրեաց Մովսէս զամենայն բանս օրինացս այսոցիկ ՚ի մատենի. և ետ զայն ցքահանայսն ցորդիսն Ղևեայ, որ բառնայի՛ն զտապանակ ուխտին Տեառն, և ցօերս որդւոցն Իսրայէլի: ¹⁰Եւ պատուիրեաց նոցա Մովսէս յաւուր յայնմիկ և ասէ. Յետ եւթն ամի ժամանակի տարւոյն թողութեան ՚ի տօնի տաղաւարահարացն, ¹¹ի գումարել ամենայն Իսրայէլի յանդիման լինելոյ առաջի Տեառն Աստուծոյ քոյ, ՚ի տեղուքն զոր ընտրեսցէ Տէր ընթեռնուցո՛ւք զօրէնս զայս առաջի Իսրայէլի յականջս նոցա*, ¹²Եկեղեցուցեալ զժողվուրդն, զա՛րս և զկանայս և զմանկունս, և զեկն որ ՚ի քաղաքս ձեր. զի լուիցեն, և ուսանիցին երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ. և ուսցին առնել զամենայն պատգամս օրինացս այսոցիկ: ¹³Եւ որդիք նոցա որ ո՛չ գիտիցեն, լուիցեն և ուսցին երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ զամենայն աւուրս՝ որչափ և կեցցեն նոքա ՚ի վերայ երկրին՝ յոր դուք անցանելոց էք ընդ Յորդանան ժառանգել զնա:

ՃԳ ¹⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահա մերձեցան աւուրք մահուան քոյ. կոչեա՛ զՅետու՝ և կացէ՛ք առաջի դրան խորանին վկայութեան, և հրաման տաց նմա: Եւ գնացին Մովսէս և Յետու ՚ի խորանն վկայութեան, և կացին ՚ի դրան խորանին վկայութեան*: ¹⁵Եւ էջ Տէր սեամբ ամպոյ, և եկաց առ դրան խորանին վկայութեան. և եկաց սիւն ամպոյն առ դրան խորանին: ¹⁶Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ահաւասիկ դու ննջեսցես ընդ հարս քո. և յարուցեալ ժողովուրդդ այդ պոռնկեսցի՛ զիետ աստուածոց օտարաց երկրին յոր մտանիցէ դա՛ ՚ի նոսա, և թողուցուն զիս. և ցրիցեն զուխտն իմ զոր ուխտեցի ընդ դոսա*: ¹⁷Եւ բարկացայց դոցա սրտմտութեամբ յաւուր յայնմիկ, և լքի՛ց զդոսա, և դարձուցի՛ց զերեսս իմ ՚ի դոցանէ, և եղիցին կերակո՛ւր թշնամեաց, և զոցեն

* Ոմանք. Եւ Յետու որ երթայ առա՛:

* Ոմանք. Որ երթայ յառաջագոյն քան զձեզ... ո՛չ թողցէ զձեզ և ո՛չ ընդ:

* Ոմանք. Եւ ո՛չ ընդ վայր հարկանիցէ:

* Ոմանք. Յանդիման լինելով առաջի:

* Ոմանք. Եւ կացին առ դրան խո՛:

* Ոմանք. Ահաւաղիկ դու ննջես՝... յերկրին յոր մտա՛... և ցրուիցեն զուխտն... ընդ նոսա:

զդոսա չարի՛ք բազումք և նեղութիւնք. և ասացեն յաւուր յայնմիկ. Քանզի չէ՛ Տէր Աստուած մեր ընդ մեզ, գտին զմեզ չարիքս այսոքիկ: ¹⁸Եւ ես դարձուցանելով՝ դարձուցից զերեսս իմ՝ ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ. վասն ամենայն չարեացն զոր արարին. զի դարձան յաստուածս օտարոտիս* : ¹⁹Եւ արդ՝ գրեցէ՛ք զբանս օրհնութեանս այսորիկ, և ուսուսջի՛ք զդա որդւոցն Իսրայէլի, և արկջի՛ք զդա ՚ի բերան նոցա. զի եղիցի ինձ օրհնութիւնդ այդ՝ ՚ի վկայութիւն ՚ի մէջ որդւոցդ Իսրայէլի. ²⁰քանզի տարայց զդոսա յերկիրն բարի զոր երդուայ հարց նոցա, երկիր որ բոխէ զկաթն և զմեղր, և կերիցեն և լցեալ յագեսցին. և դառնայցեն յաստուածս օտարոտիս, և պաշտիցեն զնոսա, և զայրացուցանիցեն զիս. և ցրիցեն զուխտն իմ զոր ուխտեցի նոցա*. ²¹և ընդդէմ կացցէ նոցա օրհնութիւնդ այդ՝ յանդիման լինել վկայ. և մի՛ մոռասցի ՚ի բերանոց նոցա, և ՚ի բերանոյ զաւակի նոցա. քանզի գիտեմ զչարութիւն նոցա զոր արարին աստ այսօր, յառաջ քան զտանելն իմ զնոսա յերկիրն բարութեան զոր երդուայ հարցն նոցա*: ²²Եւ գրեա՛ց Մովսէս զօրհնութիւնս զայս յաւուր յայնմիկ, և ուսոյց զսա որդւոցն Իսրայէլի:

ՃԴ ²³Եւ պատուիրեաց Մովսէս Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ և ասէ. Քա՛ջ լեր՝ և զօրացիր. զի դու տանելոց ես զորդիսն Իսրայէլի յերկիրն զոր խոստացաւ տալ նոցա Տէր, և նա եղիցի ընդ քեզ: ²⁴Եւ իբրև կատարեա՛ց Մովսէս գրել զամենայն զբանս օրինացս այսոցիկ ՚ի մատենի մինչև իսպառ. ²⁵և պատուիրեաց Ղևտացւոցն որ կրէին զտապանակ ուխտին Տեառն. ասէ. ²⁶Առեալ զմատեան օրինացդ այդոցիկ՝ դնիցէ՛ք ՚ի կողմանէ տապանակի ուխտին Տեառն Աստուծոյ մերոյ. և եղիցի՛ անդ ընդ քեզ ՚ի վկայութիւն*: ²⁷Ձի ես գիտեմ զիեստութիւն քո և զխիստ պարանոց քո. զի մինչդեռ ես ընդ ձեզ կենդանի՛ եմ այսօր, դառնացուցիչք էք աստուածակողմանն, ո՞րպէս ո՛չ ապաքէն և յետ մահուան իմոյ*: ²⁸Արդ՝ ժողովեցէ՛ք առ իս զցեղապետս և զծերս ձեր, և զդատաւորս ձեր, և զատենադպիրս ձեր. զի խօսեցայց յականջս նոցա զամենայն զբանս զայսոսիկ. և կալայց ձեզ վկայ՝ զերկինս և զերկիր: ²⁹Քանզի գիտեմ եթէ յետ վախճանի իմոյ անօրինելով՝ անօրինիցէք, և խտորիցիք ՚ի ճանապարհէն զոր պատուիրեցի ձեզ. և պատահիցեն ձեզ չարիքն ՚ի վախճանի աւուրց. քանզի արնիցէք չար առաջի Տեառն, բարկացուցանել զնա գործովք ձեռաց ձերոց*: ³⁰Եւ խօսեցաւ Մովսէս յականջս ամենայն եկեղեցւոյն Իսրայէլի զբանս օրհնութեանս այսորիկ մինչև ՚ի սպառ:

32

Գլուխ ԼԲ

¹Նայեցարովք երկինք և խօսեցայց, և լուիցէ՛ երկիր զպատգամս բերանոյ իմոյ: ²Ակնկալեսցի՛ իբրև զանձրև բարբա՛ռ իմ. և իջցէ՛ իբրև զցօղ պատգամք իմ.

* *Յօրինակին պակասէր.* Ձերեսս իմ՝ ՚ի նոցանէ:

* *Յօրինակին.* Եւ ցրեցին զուխտն իմ:

* *Այլք.* Յերկիրն բարութեան:

* *Ոմանք.* Եւ եղիցի այդ ընդ քեզ ՚ի վկայ՝:

* *Ոմանք.* Ձի ես գիտեմ... և զխստապարանոց քո: *Ուր յօրինակին պակասէր. Որպէ՛ս ո՛չ ապաքէն և յետ. բայց ՚ի լուս՝. նշանակի ՚ի մէջ առնուլ. համաձայն այլոց ՚ի բնաբ՝:*

* *Ոմանք.* Թէ յետ վախճանելոյն իմոյ:

իբրև զանձրևն ՚ի վերայ սիզոյ, և իբրև զտեղատարա՛փ ՚ի վերայ խոտոյ. ³զի զանունն Տեառն կարդացի. տո՛ւք օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝:

⁴Աստուած որոյ ճշմարիտ են գործք նորա. և ամենայն ճանապարհք նորա իրաւամբք: Աստուած հաւատարիմ է և ո՛չ գոյ ՚ի նմա անիրաւութիւն. արդար և անարատ է Տէր՝: ⁵Մեղան՝ և ո՛չ նմա որդիք արատոյ, ա՛զգ թի՛ւր և խոտորեալ:

⁶Չա՞յդ Տեառն հատուցանէք այդպէս, ժողովուրդ յիմար՝ և ո՛չ իմաստուն. ո՞չ նա է Հայրն որ ստացաւ զքեզ, արար զքեզ և հաստատեաց զքեզ՝: ⁷Յո՛ւշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից. իմացարուք զամսն ազգաց յազգս. հարց ցհարսն քո՝ և պատմեսցեն քեզ. և ցօերս քո՝ և ասացեն քեզ: ⁸Յորժամ բաժանեաց Բարձրեալն զազգս ամենայն. որպէս սփռեաց զորդիսն Ադամայ: Կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ որդւոց Աստուծոյ: ⁹Եղև բաժին Տեառն ժողովուրդ իւր Յակոբ, և վիճակ ժառանգութեան իւրոյ Իսրայէլ՝: ¹⁰Բաւական եղև նմա յանապատի, ՚ի ծարա՛ւ տօթոյ յանջրդի պաշտպանեաց զնա. և խրատեաց և պահեաց զնա իբրև զբի՛բ ական՝. ¹¹իբրև զարծուի ՚ի ծածկել զքոյն իւր, և ՚ի ձագս իւր գթացաւ. տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա. և բարձեալ բերէր զնա ՚ի վերայ միջնողանց իւրոց՝: ¹²Տէր միայն ածեր զնոսա, և ո՛չ գոյր ընդ նոսա աստուած օտար՝: ¹³Եհան զնոսա ՚ի զօրութիւն երկրի. կերակրեաց զնոսա արդեամբք անդաստանաց. դիեցոյց մեղր ՚ի վիմէ, և ե՛ւղ յապառաժ վիմէ՝: ¹⁴Կոզի կովուց և կաթն մաքեաց, հանդերձ ճարպով գառանց խոյոց որդւոց ցլո՛ւց և նոխազաց. ընդ ճարպոյ երիկամանց ցորենոյ, և զարիւն խաղողոյ ըմպէին գինի: ¹⁵Եկեր Յակոբ՝ և յագեցաւ, յօրացաւ և յանկուշեաց սիրելին. գիրացաւ ստուարացաւ և լայնացաւ, և եթող զՏէր Աստուած զԱրարիչ իւր. և ապստամբեաց յԱստուծոյ փրկչէ իւրմէ՝: ¹⁶Բարկացուցին զիս օտարոտովք, և զարշէլեօք իւրեանց դառնացուցին զիս: ¹⁷Չոհեցին դիւաց և ո՛չ Աստուծոյ. դից զորս ո՛չ գիտէին, նորք և առժամայնք եկեալ, զորս ո՛չ գիտէին հարք ձեր: ¹⁸Թողեր զԱստուած՝ որ ծնաւ զքեզ, մոռացար զԱստուած զկերակրիչն քո՝: ¹⁹Ետե՛ս Տէր՝ և նախանձեցաւ, և սրտմտեցաւ վասն բարկութեան ուստերաց և դստերաց իւրոց. ²⁰և ասաց. Դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ, և ցուցից նոցա զինչ լինելոց իցէ ՚ի վախճանի աւուրց. զի ազգ թիւր են, որդիք՝ յորս ո՛չ զոն հաւատք: ²¹Նորա նախանձեցուցին զիս չաստուածովք, և բարկացուցին զիս կռո՛վք իւրեանց. և ես նախանձեցուցից զնոսա չազգա՛ւ, և անմիտ ժողովրդեամբ բարկացուցից զնոսա՝:

²²Ձի հո՛ւր բորբոքեալ է ՚ի բարկութենէ իմմէ. այրեսցէ՛ մինչև ՚ի դժոխս ներքինս. կերիցէ՛ զերկիր և զարմտիս նորա. բորբոքեսցէ՛ զհիմունս լերանց: ²³Կուտեցի՛ց ՚ի նոսա չարիս, և զնե՛տս իմ սպառեցի՛ց ՚ի նոսա: ²⁴Մաշեալք սովով և

* *Ոմանք.* Ձի զանունն Տեառն կարդացի: *Ուր ոմանք.* Կարդացուք և տուք:

* *Ոմանք.* Որոյ ճշմարտութիւն են գործք նորա:

* *Ոմանք.* Չայդ ամենայն հատուցանէք... ո՛չ է նա հայր քո որ:

* *Ոմանք.* Եւ եղև բաժին Տեառն:

* *Ոմանք.* Եւ խրատեաց զնա. և:

* *Ոմանք.* Եւ եբարձ զնոսա ՚ի վերայ միջնողաց իւրոց:

* *Բազումք.* Ընդ նոսա աստուածս օտարս:

* *Ոմանք.* Դիեցոյց նոցա մեղր ՚ի:

* *Ոմանք.* Անկուշեաց. *և ոմանք՝* անգուշեաց սիրելին:

* *Ոմանք.* Թողեր զՏէր Աստուած որ:

* *Ոմանք.* Ձնոսա չազգաւ, և ազամբ անմտիւ բարկացուցից:

կերակրով թռչնոց. լա՛րս առանց բժշկութեան, և ժանիս գազանաց առաքեցից
 ՚ի նոսա, սրտմտութեամբ քարշե՛լ գնոսա ընդ երկիր: ²⁵Արտաքո՛ւստ
 անգաւակեցտ գնոսա սուր, և ՚ի շտեմարանաց երկե՛ղ. գերիտասարդն
 հանդերձ կուսի՛ւն. և գստնդիացն հանդերձ հաստատելով ծերով*: ²⁶Ասացի բա՛մ
 ցրեցից գնոսա. դադարեցուցի՛ց ՚ի մարդկանէ գլխատակս նոցա. ²⁷թէ ո՛չ վասն
 բարկութեան թշնամեաց, զի մի՛ երկայնակեացք լինիցին. և զի մի՛ բարձրացին
 հակառակորդքն, և ասիցեն, թէ՛ Ձեռն մեր բարձր՝ և ո՛չ Տէր արար զայս
 ամենայն: ²⁸Ձի ազգ խորհրդակորո՛յս են. և ո՛չ գոյ ՚ի նոսա իմաստութիւն. ²⁹և ո՛չ
 խորհեցան ՚ի միտ առնուլ զայս. արդ ընկալցին առ յապա ժամանակս*:
³⁰Ձիա՞րդ հալածեցտ մի զհազարս, և երկուք շարժեցեն զբերս. եթէ ո՛չ
 Աստուած վաճառեաց գնոսա*: ³¹Ձի ո՛չ են իբրև զԱստուած մեր աստուածք
 նոցա. և թշնամիք մեր վատախորհու՛րդք: ³²Ձի յորթո՛յ Սողոմա՛յ է որթ նոցա, և
 ուռ նոցա ՚ի Գոմորայ: Խաղող նոցա խաղող լեղի՛, և ողկոյզ նոցա դառնութիւն*.
³³սրտմտութիւն վիշապաց գինի նոցա. և սրտմտութիւն իժից առանց
 բժշկութեան: ³⁴Ո՞չ ապաքէն այս ամենայն ժողովեալ է առ իս, և կնքեալ կայ ՚ի
 գանձի իմում: ³⁵Յաւուր վրէժխնդրութեան հատուցից, ՚ի ժամանակի յորում
 սխալեցի՛ր ոտն նոցա. զի մերձ է օր բարկութեան նոցա, և հասեալ
 պատրաստեալ կայ ձեզ՛: ³⁶Ձի դատեցտ Տէր զժողովուրդ իւր. և ՚ի ծառայս իւր
 մխիթարեցի. զի ետես գնոսա լուծեալս և լքեալս և մատնեալս ՚ի գերութիւն:
³⁷Եւ ասաց Տէր. Ո՞ւր են աստուածք նոցա, յորս յուսացեալ էին ՚ի նոսա. ³⁸զորոց
 զճա՛րպ զոհից նոցա ուտէիք, և ըմպէիք զգինի նուիրաց նոցա. յարիցեն
 օգնեցեն ձեզ, և եղիցին ձեր թիկունք: ³⁹Տեսէ՛ք տեսէ՛ք զի ե՛ս եմ, և չի՛ք այլ ոք
 բաց յինէն. ե՛ս սպանանեմ և ե՛ս կեցուցանեմ, հարկանեմ և բժշկեմ, և ո՛չ ոք իցէ
 որ հանիցէ ՚ի ձեռաց իմոց*: ⁴⁰Ձի ամբարձից յերկինս զձեռս իմ, և երդուա՛յց յաջ
 իմ, և ասացից. Կենդանի՛ եմ ես յաւիտեան: ⁴¹Ձի սրեցից իբրև զփայլակն
 զսուսեր իմ, և կալցի՛ զդատաստանաց ձեռն իմ, և հատուցի՛ց վրէժս թշնամեաց
 իմոց. և ատելեաց իմոց հատուցից: ⁴²Արբեցուցի՛ց զնետս իմ յարեմէ, և սուր իմ
 կերիցէ՛ միս յարեմէ վիրաւորաց գերութեան ՚ի գլխոց իշխանաց թշնամեաց:
 Ուրախ լերուք երկինք հանդերձ նովաւ, և երկիր պազցեն նմա ամենայն որդիք
 Աստուծոյ*: ⁴³Ուրախ լերուք ազգք ընդ ժողովրդեան նորա, և զօրացուցեն զնա
 ամենայն հրեշտակք Աստուծոյ. զի խնդրի՛ վրէժ արեան որդւո՛ց նորա. և
 խնդրեցէ՛ վրէժ՝ և հատուցէ՛ դատաստանս թշնամեաց, և ատելեացն
 հատուցէ. և սրբեցէ՛ Տէր գերկիր ժողովրդեան իւրոյ: Եւ գրեաց Մովսէս
 զօրհնութիւնս զայս յաւուր յայնմիկ, և ուսո՛յց զսա որդւոցն Իսրայէլի*: ⁴⁴Եւ
 եմուտ Մովսէս ՚ի ժողովուրդն, և խօսեցաւ զամենայն բանս օրինացս այսոցիկ
 յականջս ժողովրդեանն, ինքն և Յեսու որդի Նաւեայ: ⁴⁵Եւ կատարեաց Մովսէս
 խօսել ընդ ամենայն Իսրայէլի. ⁴⁶և ասէ ցնոսա. Ձգո՛յ՜ լերուք սրտիւք ձերովք
 ամենայն բանիցս այսոցիկ, զորոց ե՛ս դնեմ վկայութիւն ընդ ձեզ այսօր. զոր

* Ոճանք. Եւ սանդիայն հանդերձ:

* Ոճանք. Առնուլ. զայս ընկալցին առ ՚ի յապա ժամանակս:

* Ոճանք յաւելուն. Աստուած վաճառեաց գնոսա. և Տէր մատնեաց գնոսա:

* Ոճանք. Եւ ոստ նոցա ՚ի Գոմորայ:

* Բազումք. Յորում սխալեցտ ոտն նոցա: Ոճանք. Ձի մերձ է օր կորստեան նոցա:

* Ոճանք. Որ հանիցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց:

* Ոճանք. Եւ արբեցուցից զնետս... և թշնամեաց Տեառն: Այլք. Եւ գերութեան:

* Ոճանք. Եւ զօրացուցին զնա:

պատուիրիցէ՛ք որդւոց ձերոց, պահե՛լ և առնե՛լ զամենայն բանս օրինացս այսոցիկ: ⁴⁷Չի ո՛չ եթէ բան ինչ ընդունայն իցէ ձեզ. զի սա՛ է կեանք ձեր. և վասն այսր բանի երկայնօրեայք լինիցիք ՚ի վերայ երկրի՝ յոր դուք անցանէք ընդ Յորդանան ժառանգե՛լ զնա՛:

Ճե ⁴⁸Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ՚ի նմին աւուր՝ և ասէ. ⁴⁹Ե՛լ դու ՚ի լեառն Նաբարի ՚ի լեառն Նաբաւ, որ է յերկրին Մովաբու յանդիման Երեքոյի. և տե՛ս զերկիրն զոր ե՛ս տաց որդւոցն Իսրայէլի ՚ի կալուածս՛: ⁵⁰Եւ վախճանեաց անդէն ՚ի լերինն յոր ելանիցես, և յաւելի՛ր ՚ի ժողովուրդ քո, զորօրինակ մեռաւ Ահարոն եղբայր քո ՚ի Յո՛վր լերինն, և յաւելա՛ւ առ ժողովուրդ իւր. ⁵¹Ֆոխանակ զի հեստեցէք բանի իմոյ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի ՚ի վերայ ջո՛ւրցն Յակառակութեան ՚ի Կադէս՝ յանապատին ՚ի Սին. զի ո՛չ սրբեցէք զիս ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի՛: ⁵²Յանդիման տեսցես զերկիրն՝ և անդր մի՛ մտանիցես:

33

Գլուխ ԼԳ

¹Այս է օրհնութիւն զոր օրհնեաց Մովսէս այրն Աստուծոյ զորդիսն Իսրայէլի յառաջ բան զվախճանելն իւր. ²և ասէ. Տէր ՚ի Սինայէ՛ եկեսցէ, և երևեցաւ մեզ ՚ի Սէիրայ, և փութացաւ ՚ի լեռնէն Փառանու. բիւրաւորօքն ՚ի Կադէսայ, յաջմէ նորա հրեշտակք իւր ընդ իւր. ³և խնայեաց ՚ի ժողովուրդ իւր. և ամենայն սրբեալք ՚ի ներքոյ ձեռին քոյ, և նոքա ընդ քե՛ն: ⁴Եւ ընկալաւ ՚ի պատգամաց նորա օրէնս, զոր պատուիրեաց մեզ Մովսէս, զժառանգութիւն ժողովոյն Յակոբայ. ⁵և եղիցի իշխան ՚ի մէջ սիրեցելոյն, գումարելոց իշխանաց ժողովրդոց, հանդերձ ցեղի՛ւքն Իսրայէլի՛: ⁶Կեցցէ՛ Ռուբէն և մի՛ մեռցի, և եղիցի բազմաւոր թուով: ⁷Եւ զայս ասէ զՅուդայէ. Լո՛ւր Տէր ձայնի Յուդայի. և ՚ի ժողովուրդ նորա եկեսցես. և ձեռք նորա ընտրեսցեն նմա. և օգնական ՚ի թշնամեաց եղիցես նմա: ⁸Եւ զՂևեայ ասէ. Տո՛ւք Ղևեայ գյայտութիւն նորա, և զճշմարտութիւն նորա ա՛ռնն անարատի. զորս փորձեցին փորձանօք, և բամբասեցին զնա ՚ի վերայ ջրոցն Յակառակութեան՛: ⁹Որ ասէր ցհայր իւր և ցմայր իւր, թէ՛ Ո՛չ տեսի զքեզ. և զեղբարս իւր ո՛չ ծանեաւ, և զորդիս իւր ո՛չ գիտաց. զգուշացաւ բանից քոց, և զուխտ քո պահեաց՛: ¹⁰Պատմեսցեն զիրաւունս քո Յակոբայ, և զօրէնս քո Իսրայէլի. դիցեն խունկս ՚ի բարկութեան քում հանապազ ՚ի վերայ սեղանոյ քոյ: ¹¹Օրհնեա՛ Տէր զօրհնութիւն նորա, և ընկալ՛ զգործս ձեռաց նորա. խորտակեա՛ զմէջս ՚ի վերայ յարուցելոց թշնամեաց նորա. և ատելիք նորա մի՛ կանգնեսցին՛: ¹²Եւ զԲենիամինէ ասէ. Սիրեցեալն ՚ի Տեառնէ բնակեսցէ յուսով, և Աստուած հովանի՛ լիցի նմա զամենայն աւուրս. և ՚ի մէջ ուսոց նորա հանգեալ՛: ¹³Եւ զՅովսեփայ ասէ.

* Ոմանք. Յոր դուք անցանիցէք:

* Ոմանք. ՚ի լեառնն Աբարին: Բազումք. Եւ ՚ի լեառն Նաբաւ:

* Ոմանք. Բանին իմուն ՚ի մէջ որդի՛:

* Ոմանք. ՚ի մէջ սիրելոյն գումարելոյ իշխանաց և ժողո՛:

* Ոմանք. Ջյայտութիւնս նորա:

* Ոմանք. Որ ասէ ցհայր իւր... և զեղբայր իւր ո՛չ ծա՛:

* Այլք. Օրհնեա՛ Տէր զգորութիւն նորա:

* Ոմանք. Եւ Տէր հովանի լիցի նմա:

Յօրհնութեան Տեառն երկիր նորա, ՚ի ժամանակաց երկնից և ՚ի ցօղոյ, և յանդնդոց աղբիւրաց ՚ի ներքուստ. ¹⁴ի ժամանակի արդեանց արեգական փոփոխմանց, և ՚ի գումարելոյ առ միմեանս ամպոց. ¹⁵ի գագաթանց լերանց իսկզբան, և ՚ի գլխոց բլրոց մշտնջենաւորաց* : ¹⁶Եւ ըստ ժամանակի՝ երկրի լրութեան, և ընդունելութիւնք երևեցելոյն ՚ի մորենուջն եկեացեն ՚ի վերայ գլխոյն Յովսեփայ և ՚ի վերայ գագաթան փառաւորելոյն ՚ի մէջ եղբարց* : ¹⁷Անդրանիկ ցլու գեղ նորա, և եղջերք միեղջերոյ եղջերք նորա. խեթկեսցէ՛ նոքօք զազգս միանգամայն մինչև ցճա՛ս երկրի. այս են բիրաւորք Եփրեմի. և սոքա՛ հազարաւորք Մանասէի* : ¹⁸Եւ զՋաբուղոնէ ասէ. Ուրախ լեր Ջաբուղոն յե՛լս քո: Եւ զԻսաքարայ ասէ. ՚Ի բնակութիւնս նոցա ազգք սատակեսցին, ¹⁹և անդր կոչեսցիք և զոհեսցիք զո՛հ արդարութեան. զի զմեծութիւն ծովու դիեցուսցէ՛ քեզ. և զշահավաճառաց առ ծովեզեր բնակելոց* : ²⁰Եւ զԳադայ ասէ. Օրհնեա՛լ որ ընդարձակեաց Գադայ, հանգեաւ իբրև զառնձ. և խորտակեաց՝ զբազուկս, և զիշխանս, ²¹և ետես զիշխանութիւն իւր. զի անդ բաժանեցաւ երկիր իշխանաց ժողովրդովք հանդերձ ազգապետօք ազգաց ցեղիւքն Իսրայէլի, զարդարութիւն Տեառն արար, և զդատաստան իւր ընդ Իսրայէլի: ²²Եւ զԴանայ ասէ. Դան՝ կորիւն առիծու, և յարձակեսցի՛ ՚ի Բասանայ: ²³Եւ զՆեփթաղիմայ ասէ. Նեփթաղիմ յագո՛ւրդ ընդունելութեանց, և լցցի՛ օրհնութեամբ ՚ի Տեառնէ, և զծո՛վ և զհարա՛ւ ժառանգեսցէ: ²⁴Եւ զԱսերայ ասէ. Օրհնեա՛լ յորդոց Ասեր, և եղիցի ընդունելութիւն եղբարց, և մխեսցէ յե՛ւղ զոտն իւր. ²⁵և երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նորա. ըստ աւուրց քոց և զօրութիւն քո: ²⁶Ո՛չ գոյ իբրև զԱստուած սիրեցելոյն, որ ելանէ յերկինս օգնականն քո, և մեծամեծարն հաստատութեան*. ²⁷և ծածկոյթ Աստուծոյ իշխանութեանն. և ՚ի զօրութենէ բազկաց մշտնջենաւորաց. և մերժեսցէ՛ յերեսաց քոց զթշնամին, և ասացէ թէ կորի՛ր: ²⁸Եւ բնակեսցէ Իսրայէլ յուսով առանձինն յերկրին Յակոբայ, ՚ի մէջ ցորենոյ և զինւոյ. և երկինք՝ նմա համբարակ ցօղոյ*: ²⁹Երանեա՛լ ես դու Իսրայէլ, ո՛՛նմանեսցէ քեզ ժողովուրդ ընտրեալ ՚ի Տեառնէ. պաշտպանեսցէ՛ քեզ օգնականն քո, և սո՛ւր պարծանք քո. և եկեսցեն թշնամիք քո, և դո՛ւ ելցես ՚ի վերայ պարանոցի նոցա* :

34

Գլուխ ԼԴ

Եւ ¹Եւ ե՛լ Մովսէս յԱրաբո՛վթ Մովաբայ, ՚ի լեառն Նաբաւ, ՚ի կատարն Փոզովրայ, որ է յանդիման Երեքոյի. և եցոյց նմա Տէր զամենայն երկիրն Գաղաադու մինչև ցԴան*. ²և զամենայն երկիրն Նեփթաղիմայ, և զամենայն

* Ոմանք. Եւ ՚ի գագաթան լերանց սկիզբն, և գլխոց բլրոց:

* Այլք. Երևելոյն: Ուր օրհնակ մի. Երևելոյն իմոց ՚ի մորենուջն:

* Ի լուս՛. Միեղջերուի, համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:

* Ոմանք. Եւ զշահս վաճառաց առ ծովեզերքն բնա՛:

* Ոմանք. Եւ մեծամեծարն հաստատութիւն:

* Ոմանք. Նմա համարակ ցօղեսցէ:

* Ոմանք. Եւ երանեալ ես... և Տէր պարծանք քո. եկեսցեն:

* Ոմանք. Յոբաբովթ Մովաբայ ՚ի լեառնն... և եցոյց նմա Աստուած: Ի լուս՛. Գաղաադու մինչև ցԾայրան. համաձայն բազմաց ՚ի բնաբ՛:

երկիրն Եփրեմի, և Մանասէի, և զամենայն երկիրն Յուդայ մինչև ցժովն վերջին.
³և զանապատն, և շուրջ զԵրեքոյիւ, և զքաղաքսն Արմաւենեաց մինչև ցՍեգովր:
⁴Եւ ասէ Տէր ցՄովսէս. Այս է երկիրն զոր երդուայ Աբրահամու և Սահակայ և
Յակոբայ՝ և ասեմ. Ձաւակի՛ քուն տաց զդա. ցուցի՛ աչաց քոց, և անդր մի՛
մտցես*։ ⁵Եւ վախճանեցաւ Մովսէս ծառայ Տեառն յերկրին Մովաբու ըստ բանի
Տեառն*։ ⁶Եւ թաղեցին զնա ՚ի Գայի մերձ ՚ի տունն Փոզովրայ. և ո՛չ ոք գիտաց
զգերեզման նորա մինչև ցայսօր*։ ⁷Եւ Մովսէս էր ամաց հարկր և քսանից ՚ի
վախճանելն իւրում. և ո՛չ վատեցին աչք նորա, և ո՛չ խորշոմեցան ծնօտք նորա:
⁸Եւ լացին որդիքն Իսրայէլի զՄովսէս յՌաբովթ Մովաբու առ Յորդանանու
յանդիման Երեքոյի աւուրս երեսուն. և կատարեցան աւուրք սգոյ լալեացն
Մովսիսի:

Ճէ ⁹Եւ Յեսու որդի Նաւեայ՝ լցաւ հոգւով իմաստութեամբ. զի ե՛ղ Մովսէս
զծեռն իւր ՚ի վերայ նորա. և հնազանդեցան նմա որդիքն Իսրայէլի, և արարին
որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի*։ ¹⁰Եւ ո՛չ ևս եկաց մարգարէ յԻսրայէլի իբրև
զՄովսէս, այր զոր ծանեաւ Տէր դէմ յանդիման*։ ¹¹ամենայն նշանօք և
արուեստիւք զոր առաքեաց Տէր առնել յերկրին Եփայտացւոց, ՚ի փարաւոն և ՚ի
ծառայս նորա, և յամենայն երկիր նորա զնշանս մեծամեծս*։ ¹²զծեռն հզօր և
զբազուկ բարձր՝ զոր արար Մովսէս առաջի որդւոցն Իսրայէլի:

Կատարեցաւ Երկրորդունն օրինացս*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑ ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՒՅ ՆԱԲԵԱՅ

Յեսու որդի Նաւեայ ՚ի ցեղէն Եփրեմի, աշակերտ Մովսիսի: Եւ քանզի
մեծամեծ գործս վճարեաց Մովսէս և ազատեաց զԻսրայէլ յԵփայտոսէ,
արգելաւ նա ՚ի հասուցանելոյ ժողովուրդն յերկիրն խոստացեալ. զի մի՛
կարծիցէ ժողովուրդն զնմանէ թէ Աստուած ոմն իցէ, և մոլորեալ ՚ի
պաշտօն առցեն զնա, և լինիցի կռապաշտութիւն փոխանակ
աստուածապաշտութեան. վախճանեցաւ նա իբրև զմարդ: Եւ զի մի՛ յետ
նորա անիշխան մնացէ ժողովուրդն, հրամանաւ Տեառն ձեռնադրեաց
փոխանակ իւր զՅեսու: Որ և տարաւ ժառանգեցոյց ժողովրդեանն
զերկիրն խոստացեալ. որով և օրինակ իսկ եղև Քրիստոսի. որ յետ
դադարման օրինացն, որ ո՛չ կարաց հասուցանել զմարդիկ ՚ի
հանգիստն, կոչեաց զամենայն աշխատեալսն ՚ի մեղաց և ասէ. Եկայք առ

* Այլք. Եւ անդր մի՛ մտանիցես:

* Ոմանք. Մովսէս ծառայն Աստուծոյ յերկ՛:

* Բազումք. Փոզովրայ: Ուր ոմանք յաւելուն. մերձ ՚ի տունն Փոզովրայ երկրին Մովաբու,
և ո՛չ ոք:

* Ոմանք. Որպէս պատուիրեաց Աստուած Մով՛:

* Ոմանք. Մարգարէ Իսրայէլի այր՝ զոր ծանեաւ դէմ յանդիման:

* Ոմանք. Ձոր առաքեաց Աստուած... և յամենայն ծառայս նորա:

* Ի վախճան գրոցս ոմանք դնեն՝ Կատարունն երկրորդ օրինացն. և ոմանք՝
Կատարեցաւ երկրորդ օրէնքս:

իս՝ և ես հանգուցից զձեզ: Այլ և առաքեաց զլրտեսսն ՚ի նշանակ առաքելոցն. դարձոյց զգետն, ՚ի խորհուրդ բնութեանս. կործանեաց՝ զԵրիթով, յօրինակ դժոխոց. ապրեցոյց զՌախաբ՝ ՚ի դէմս եկեղեցւոյ. և այլ բազում իրօք եղև նա օրինակ Քրիստոսի. զորս մի ըստ միոջէ՝ ՚ի զլխոց գրոց աստի ուսանիմք: Եւ ունի պատմութիւնս Յեսուայ, զժամանակս առաջնորդութեան նորա ՚ի վերայ Իսրայէլի, ամս քսան և եւթն, և թուի՝ պատմագրաց գրել զԳիրս Յեսուայ վասն ասելոյն, թէ՛ Ոչ աւանիկ գրեալ է այս ՚ի գիրս Ուղղութեան:

Գլուխք գրոց Յեսուայ որդւոյ Նաւեայ

ա. Յանձն առնէ Աստուած Յեսուայ զԻսրայէլ. և վստահ առնէ յաղթել Քանանու, բայց թէ զգուշացի զօրէնսն պահել:
բ. Հրամայէ Յեսու պատրաստել պաշար ՚ի մանանայէն. զի յանցանելն ընդ Յորդանան պարապ լիցին տեսանել զսքանչելիսն:
գ. Վառէ զգունդն Ռուբինի յառաջապահ, զի մի՛ բեկցի սիրտ եղբարցն իւրեանց չգնալովն:
դ. Առաքէ զլրտեսսն ՚ի քաջալերս ժողովրդեանն, և ՚ի փրկութիւն տանն Րահաբու, և ՚ի նշանակ մտին՝ հեթանոսաց քարոզութեամբ խաչին և արեանն Քրիստոսի:
ե. Բանակեցան առ Յորդանան ա՛հ արկանել Քանանացւոցն, չմարտնչել՝ և կորնչել. և ՚ի պատիւ տապանակին որ առաջնորդէր նոցա, ՚ի տիպ Քրիստոսի նորս Իսրայէլի. բայց արձակ հրամայէ կալ ժողովրդեանն:
զ. Բաժանեցաւ գետն ՚ի խրախոյս ժողովրդեանն, և յա՛հ Քանանացւոցն. ՚ի տիպ դարձի ՚ի դրախտն, և կորստեան չարաց. և երկոտասան քարինքն առան ՚ի ջուրցն, ՚ի յիշատակ հրաշիցն՝ և ՚ի տիպ առաքելոցն, և որք սուգանն ՚ի ջուրսն ՚ի նշանակ մեղաց:
է. Լո՛ւան ազգքն զբաժանել գետոյն՝ և յիմարեցան. բայց յանդգնեցան մարտնչել ըստ փարաւոնի, և կորեան ՚ի Յեսուայ:
ը. Գայլախազիւ թլփատեաց զԻսրայէլ՝ զի դիւրաւ ողջանայ, և զի խստութիւն նոցա օրինօքն թլփատեսցի. և ՚ի տիպ դրոշմելոյն զմեզ Յիսուսի Հոգւովն. և բառնալոյ զնախատինս ծառայութեան մեղացն:
թ. Արարին զգատիկն. և արգելաւ մանանայն, զի մի՛ անարգեսցի՝ որպէս ՚ի հարցն նոցա:
ժ. Երևեցաւ հրեշտակն սուսերբ օգնել Իսրայէլի, և լուծանել ասաց զկօշիկն, և հնձան հարկանել զՔանանացիսն. և զի սրբեսցուք յաղտեղի իրաց զոր կոխեն կօշիկք:
ժա. Շրջապատեն զԵրիթով զվեց օր. և զի ո՛չ հնազանդեցան պաշարեալքն՝ լուծին զշաբաթն յառաջին պատերազմին, զի միշտ պատերազմեսցուք ընդ դևս. և զի յաղաղակել նոցա անկան պարիսպքն, ՚ի նշանակ քակման դժոխոցն. և զի մնաց տունն Ռահաբու նշանաւն. զի ՚ի վերջին քակտելն աշխարհիս, ո՛չ սասանին դրոշմեալքն խաչիւն:
ժբ. Ապրեցոյց Յեսու զՌահաբ վասն հաւատոցն, և նզովեաց զԵրիթով ՚ի փորձ ընտրութեան Իսրայէլի, զի յաղթեսցուք ազահութեան. սրբեաց Տեառն զարծաթ և զոսկի տասանորդս՝ ՚ի նշանակ հաւատոց և սո՛ւրբ վարուց:

ժգ. Անէ՛ծ որ շինէ՛ գերիքով, զի առաջին յանդգնեցաւ ՚ի մարտ, և այն յե՛տ ներելոյն գեւթն օր. զի մեք մի՛ արհամարհեսցուք զներելովն Աստուծոյ, և մի՛ շինեսցուք զմեղս:

ժդ. Գողացաւ Աքար ՚ի նուիրելոցն Տեառն, ընդ որոյ պարտեցաւ Իսրայէլ. անտես եղև Յեսու մինչև ցերեկոյ՝ զի զղջասցի Աքար. սպառնացաւ վիճակաւն և ներեաց զգիշերն. իբրև յանդիմանեցաւ, կորեաւ իւրայովքն՝ որպէս Սափիրեանքն՝ յահ և յերկևղ մեզ ա՛յժմ և յետոյ:

ժե. Դարանակալ լինի ՚ի վերայ Գայեայ՝ յուսու՛մն հնարից պատերազմի. ազդէ Յեսու կանգնելով նիզակին զժամ յաղթութեանն, և զթագաւորեալ մեղսն կախէ խորհրդով խաչին:

ժզ. Գրեաց զօրէնսն ՚ի վերայ բռեալ սեղանոյն՝ զի ուսցին հեթանոսք. ընթերցաւ զօրհնութիւնն և զանձսն, նոցա և մեզ յերկևղ և ՚ի փափաքումն:

ժէ. Ժամադիր եղեն Քանանացիք մարտնչել ընդ Յեսուայ. այլ Գաբաւոնացիք անձնատուր եղեալ ապրեցան հնարիւք, յօրինակ դիմելո՛ց յԱստուած:

ժը. Կուտեցան հնգեքին թագաւորքն ջնջել զԳաբաւոն. զի Սատանայ ցասնու զղջացելոց. խնդրեցին նոքա փրկիչ զՅեսու, որոց օգնեալ վանեաց զմարտուցեալսն սրով, և քարէ կարկտիւ:

ժթ. Արգել զարեգակն և զլուսին. զի ցուցցէ զտկարութիւն պաշտելեացն հեթանոսաց. նկարելով և զնշանսն որ եղև ՚ի լուսաւորսն յօր խաչին Քրիստոսի:

ի. Սպան զհինգ թագաւորսն և կախեաց զփայտից, և զայլս բազումս զլեռնայինս և զդաշտայինս, կոտորեաց զքսան և ինն թագաւորսն, և ա՛ռ զաշխարհս նոցա:

իա. Խնդրեաց Քաղէբ զերկիրն խոստացեալ նմա. և առին Յուդա և Եփրեմ, և կէս ցեղին Մանասէի զբաժին ժառանգութեան իւրեանց:

իբ. Եկեղեցացաւ ժողովուրդն ՚ի Սելով, և կանգնեցին անդ զխորանն վկայութեան ՚ի վիճակն Եփրեմի, և բաժանեաց զմնացեալ երկիրն եւթն ևս ցեղիցն:

իգ. Չի ետուն Դևտացւոցն յամենայն ցեղիցն քառասուն և ո՛ւր քաղաքս ապաստանի:

իդ. Բնակեաց Յեսու ՚ի Թամնասաքար. և զի հանգոյց Տէր ըստ խոստմանն իւրում զԻսրայէլ:

իե. Օրհնեաց Յեսու զՌուբինեանսն, և արձակեաց թոշակօք ՚ի վիճակս իւրեանց. և պատուիրեաց նոցա զգուշանալ օրինացն Տեառն:

իզ. Շինեցին Ռուբինեանքն սեղան ՚ի վիճակն իւրեանց. ընդ որոյ հարցեալք՝ պատասխանեցին թէ ՚ի վկայութիւն որդւոց մերոց կանգնեցաք, առ ՚ի չմերժելոյ որդւոց ձեր զմերս ՚ի զՏէր պաշտելոյ:

իէ. Ծերացեալ Յեսուայ, ժողովեաց զԻսրայէլ առաջի Տեառն. և յիշեցոյց նոցա լիով զերախտիսն Աստուծոյ՝ յԱբրահամէ մինչև ցայն վայր. և զգուշացոյց նոցա պաշտել զՏէր. և երկրորդեալ նոցա զխոստումն պաշտելոյ զՏէր, գրեաց՝ և կանգնեաց վէ՛մ ՚ի վկայութիւն:

իը. Թէ վախճանեցաւ Յեսու, և զի թաղեցին ընդ նմա զսուրսն քարեղէնս. նշանակեալ թէ ՚ի մեռանելն Յիսուսի խափանեալ անյայտ լինի մարմնաւոր թլփատութիւնն:

իթ. Վասն թաղման ոսկերացն Յովսեփու, և վասն մահուն Եղիազարու քահանայի, և Փենեիտի որդւոյ նորա:
Լ. Ամբաստանութիւն կռապաշտելոյն Իսրայէլի, և մտանելոյն ընդ ծառայութեամբ:

ԳԻՐՔ ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՈՅ ՆԱԻԵԱՅ*

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ եղև յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի Տեառն, խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի, և ասէ. ²Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան՝ դու և ամենայն ժողովուրդ քո յերկրին զոր ես տաց որդւոցն Իսրայէլի*: ³Յամենայն տեղիս յոր հասանիցեն զնացք ոտից ձերոց ձե՛զ տաց զնա, որպէս խօսեցայ ընդ Մովսիսի*. ⁴զանապատն, և զԼիբանաներն, մինչև ցգետն մեծ ցգետն Եփրատ. զամենայն երկիրն Քետացւոց, մինչև ցծովն վերջին, ՚ի մտիցն արևու՝ ձե՛զ լիցին սահմանքն. ⁵և ո՛չ ոք կացցէ ընդդէմ ձեր զամենայն աւուրս կենաց քոց: Եւ որպէս էի ընդ Մովսիսի, նոյնպէս եղէց և ընդ քեզ. և ո՛չ թողից զքեզ՝ և ո՛չ անտես արարից զքեզ. ⁶զօրացի՛ր և քա՛ջ լեր. զի դո՛ւ բաժանեսցես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն զոր երդուայ հարցն քոց տա՛լ դոցա*: ⁷Արդ զօրացի՛ր և քաջ լեր յոյժ, պահե՛լ և առնել ըստ ամենայն պատուիրանացն որպէս պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի՛ խտտորիցիս ՚ի նոցանէ յա՛ջ կամ յահեակ, զի խելամուտ լիցիս ամենայնի զինչ և զործեսցես*: ⁸Եւ մի՛ մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ՚ի բերանոյ քումմէ, և խոկասցես ՚ի դոսա՛ ՚ի տուէ և ՚ի գիշերի. զի իմացիս առնել զամենայն գրեալսդ՝ ՚ի դմա. և ապա՛ աջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո, և ապա՛ խելամուտ լինիցիս*: ⁹Ահա պատուիրեմ քեզ. զօրացի՛ր և քա՛ջ լեր. մի՛ զանգիտիցես. և մի՛ երկնչիցիս. զի ընդ քե՛զ է Տէր Աստուած քո յամենայն տեղիս ուր և երթայցես*:

Բ ¹⁰Եւ պատուիրեաց Յեսու դպրաց ժողովրդեանն՝ և ասէ. Մտէ՛ք ՚ի մէջ բանակի ժողովրդեանդ, և հրաման տուեալ ժողովրդեանդ ասացէ՛ք*.

¹¹Պատրաստեցէ՛ք ձեզ # պաշար. զի այլ ևս երեք աւուրք, և անցանէ՛ք դուք ընդ այդ Յորդանան, մտանել ունել զերկիրն զոր Տէր Աստուած հարցն ձերոց տացէ՛

* *Չվերնագիր գրոցս բազումք ունին համենատ մերումս, բաց ՚ի միոջէ որ դնէ՝ Յեսու Նաւեայ. և միւս այլ՝ Գիրք Յեսու:*

* *Ոմանք.* Անցցես ընդ Յորդանանու, և ամենայն: *Եւ ոմանք.* Անցցես դու ընդ այդ Յոր՝. զոր ես տամ որդ՛: *Այլք.* Յերկիրն զոր ես տաց:

* *Ոմանք.* Ուր հասանիցեն... ձեզ տաց զնոսա, որպէս:

* *Ոմանք.* Հարցն ձերոց՝ տալ նոցա:

* *Այլք.* Ըստ ամենայն օրինացն, որպէս: *Ոմանք.* Եւ մի՛ խտտորիցիս ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Եւ մի՛ մերժեսցի գիր օրինացս... զի իմացես առնել: *Այլք.* Եւ խոկասցես ՚ի դա ՚ի տուէ:

* *Ոմանք.* Ամենայն ուրեք ուր և երթայցես:

* *Ոմանք.* Եւ հրաման տուք ժողովրդեանդ և ասացէք:

ծեզ 'ի ժառանգութիւն՝:

Գ ¹²Եւ ընդ Ռուբինի և ընդ Գադայ և ընդ կիսոյ ցեղին Մանասէի խօսեցաւ Յեսու և ասէ. ¹³Յիշեցէ՛ք զբանն Տեառն զոր պատուիրեաց ձեզ Մովսէս ծառայ նորա՝ և ասէ. Տէր Աստուած ձեր զետեղեցոյց զծեզ, և ետ ձեզ զերկիրս զայս՝. ¹⁴Կանայք ձեր և մանկունք ձեր և անասունք ձեր՝ բնակեցեն յերկիրս զոր ետ ձեզ # Մովսէս յայսկոյս # Յորդանանու: Բայց դուք զինեալք անցանիցէ՛ք յառաջագոյն քան զեղբարս ձեր, և ամենայն զօրաւոր # զօրութեամբ, և լինիցիք նոցա մարտակիցք՝. ¹⁵մինչև զետեղեցուցէ՛ Տէր Աստուած ձեր զեղբարս ձեր որպէս և զծե՛զդ. և ժառանգեսցեն և նոքա՛ զերկիրն՝ զոր Տէր Աստուած ձեր տացէ՛ նոցա. և դառնայցէք յիրաքանչիւր ժառանգութիւն. և ժառանգեցէ՛ք զնա՝ զոր ետ ձեզ Մովսէս ծառայ Տեառն յայսկոյս Յորդանանու յարևելից՝: ¹⁶Եւ պատասխանի տուեալ ասեն ցՅեսու. Չամենայն զոր միանգամ պատուիրես մեզ արասցո՛ւք՝. ¹⁷և յամենայն տեղիս ուր առաքիցես զմեզ՝ երթիցո՛ւք. և ըստ ամենայնի որպէս լսեաք Մովսիսի՝ # նոյնպէս լուիցուք և քեզ: Բայց միայն Տէր Աստուած մեր եղիցի ընդ քեզ՝ որպէս է՛ր ընդ Մովսիսի՝. ¹⁸և այր որ անհնազանդ իցէ քեզ՝ և ո՛չ լսիցէ բանից քոց, որպէս ինչ և հրաման տացես նմա՝ մեռցի՛. բայց միայն զօրացիր և քա՛ջ լեր՝:

2

Գլուխ Բ

Դ ¹Եւ առաքեաց Յեսու որդի Նաւեայ՝ ի Սատիմայ երկուս երիտասարդս լրտեսել զերկիրն գաղտ. և ասէ. Ելէ՛ք լրտեսեցէք զերկիրն և զերիքով՝: Եւ գնացեալ երկուց երիտասարդացն եկին յերիքով. և մտեալ ՚ի տուն կնոջ պռնկի՝ միոջ՝ որուն անուն էր Ռահաբ. և անդ կալան օթեվանս՝: ²Ա՛գդ եղև թագաւորին Երիքովայ #, և ասեն. Ահա արք մտեալ են այսր զցայգս յորդոնցն Իսրայէլի լրտեսել զերկիրս՝: ³Եւ առաքեաց թագաւորն Երիքովայ՝ և ասէ ցՌահաբ. Հա՛ն այսր զարսդ մտեալսդ առ քեզ՝ որ եկին ՚ի տուն քո զցայգ, զի լրտեսել # զամենայն երկիրս եկին: ⁴Եւ առեալ կնոջն զերկոսին արսն թաքոյց զնոսա. և խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Մտին առ իս արք, և ես ո՛չ գիտէի ուստի՛ իցեն՝. ⁵և ընդ առնուլ դրանն ընդ աղջամուղջս առաւօտին ելին արքն արտաքս՝ և ո՛չ գիտեմ յո՛ գնացին. պնդեցարո՛ւք ստեպ զհետ նոցա՝ թերևս հասանիցէք նոցա՝: ⁶Եւ եհան զնոսա ՚ի տանիս, և թաքոյց զնոսա ընդ խրձամբք կտաւոյ՝ զոր

* *Ոմանք.* Եւ անցանիցէք ընդ Յորդանան:

* *Ոմանք.* Չոր խօսեցաւ ձեզ Մովսէս ծառայ Տեառն և ասէ:

* *Ոմանք.* Յայն կոյս Յորդանանու:

* *Ոմանք.* Մինչև զետեղեսցէ... Տէր Աստուած ձեր տացէ... յայնկոյս Յորդա՛ն:

* *Ոմանք.* Չամենայն զոր ինչ միանգամ:

* *Ոմանք.* Ուր և առաքեսցես... որպէս և լսեաք Մովսիսի, տոյնպէս և լու՛:

* *Այլք.* Անհնազանդ լիցի քեզ: *Ոմանք.* Որպէս թէ ինչ հրաման տայցես նմա:

* *Ոմանք.* Եւ ասէ. Ելէ՛ք տեսէք զերկիրն... և մտին ՚ի տուն... էր Ռահաբ:

* *Յօրինակին պակասէր.* Մտեալ են այսր:

* *Ոմանք.* Եւ առաքեալ կնոջն զերկոսին:

* *Ոմանք.* Եւ ընդ առնել դրանն ընդ աղջամուղջն առաւօտուն: *Յօրինակին պակասէր.* Ելին արքն արտաքս:

դիզեալ էր իւր 'ի տանիս*։ ⁷Եւ պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու 'ի հո'ւնն, և դուռն փակեցան։ Եւ եղև իբրև ելին խնդրակքն զհետ նոցա. ⁸և մինչչև 'ի քուն մտեալ էր նոցա, ել ինքն առ նոսա 'ի տանիսն, և ասէ ցնոսա. ⁹Գիտեմ զի ետ ձեզ Տէր զերկիրս. քանզի անկաւ ա'ի ձեր 'ի վերայ մեր, # և զի հաշեցան ամենեքեան որ բնակեալ էին յերկիրս յայսմիկ յերեսաց ձերոց*։ ¹⁰Քանզի լուաք թէ ցամաքեցոյց Տէր զծովն Կարմիր յերեսաց ձերոց, յեւանելն ձեր յեգիպտոսէ, և զոր ինչ արարէք ընդ երկուս թագաւորսն Ամովրիացոց, որ էին յայնկոյս Յորդանանու ընդ Սեհոնի և ընդ Ովգայ՝ զոր սատակեցէք*։ ¹¹Եւ իբրև լուաք մեք՝ զարհուրեցաք սրտիւք մերովք, և ո'չ ևս գոյ շունչ յումեք 'ի մէնջ յերեսաց ձերոց. զի Տէր Աստուած ձեր՝ նա՛ է Աստուած յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ*։ ¹²Եւ արդ՝ երդուարովք ինձ 'ի Տէր Աստուած. զի առնեմ ձեզ ողորմութիւն. և արասջիք և դո'ւք ողորմութիւն տան հօր իմոյ. և տո'ւք # ինձ նշան ճշմարիտ. ¹³և ապրեցուցէք զտուն հօր իմոյ, և զմայր իմ և զեղբարս իմ և զքորս իմ, և զամենայն որ ինչ իցեն նոցա. և փրկեսջիք զանձն իմ 'ի մահուանէ*։ ¹⁴Եւ ասեմ ցնա արքն. Անձի'նք մեր փոխանակ ձեր 'ի մահ, # եթէ ո'չ պատմիցէք զբանս զայս զմէնջ։ Եւ նա ասէ. Եղիցի յորժամ մատնեսցէ՛ ձեզ Տէր զքաղաքս, արասջիք ընդ իս ողորմութիւն և ճշմարտութիւն*։ ¹⁵Եւ կախեաց ցնոսա չուանաւ ընդ պատուհանն. քանզի տուն նորա 'ի պարսպի'ն էր՝ և ինքն բնակեալ էր 'ի պարսպի'ն*։ ¹⁶Եւ ասէ ցնոսա. Ձլեռն լեռնայն գնասջիք, զի մի՛ պատահեսցեն ձեզ խնդրակքն. և թաքիջիք անդ զերիս աւուրս, մինչև դարձցին խնդրակքն յետոյ՝ ձերմէ. և ապա՛ երթիջիք զճանապարհն ձեր*։ ¹⁷Եւ ասեմ արքն ցնա. Քաւեալ՝ եմք մեք յերդմանէդ՝ # զոր երդմնեցուցեր զմեզ. ¹⁸ահա մեք մտանիցեմք 'ի մա'սն ինչ քաղաքիդ, և դու դնիցես նշանակ զլարդ կարմիր, և կապեսցեն զպատուհանէդ ընդ որ զմե'զ իջուցեր, և զհայր քո և զմայր քո և զեղբարս քո, և զամենայն տուն հօր քո ժողովեսցես առ քե'զ 'ի տունս յայս*։ ¹⁹Եւ եղիցի ամենայն որ ելանէ 'ի տանէ քումմէ արտաքս՝ ինքն եղիցի անձին իւրում պարտական. և մեք քաւեալ լիցուք յերդմանէդ քումմէ յայդմանէ. և որ միանգամ լինիցին ընդ քե'զ 'ի տան քում, մեք լիցուք պարտականք՝ # եթէ ձեռն ուրուք մերձեսցի 'ի նա*։ ²⁰Ապա թէ ոք մեղանչեսցէ մեզ, և յայտնեսցեն զբանս մեր զայսոսիկ, քաւեալ լիցուք յերդմանէդ քումմէ յայդմանէ*։ ²¹Եւ ասէ. Եղիցի՛ ըստ բանիդ՝ ձերում, նոյնպէս եղիցի։ Եւ արձակեաց ցնոսա և գնացին։ Եւ կապեաց նշան կարմիր 'ի պատուհանի'ն*։ ²²և գնացին և եկին 'ի լեռնակողմն, և կացին անդ զերիս աւուրս, մինչև դարձան խնդրակքն. և յուզեցին խնդրակքն զամենայն ճանապարհն՝ և ո'չ գտին։ ²³Եւ դարձան երկոքին երիտասարդքն և

* *Ոմանք.* Եւ նա եհան ցնոսա 'ի տա՛ն։

* *Ոմանք.* Եւ զի ափշեցան ամենեքեան։

* *Ոմանք.* Ընդ Սեհովն և ընդ Ովգ զորս սատակեցէքն։

* *Ոմանք.* Եւ ո'չ ևս գոյր շունչ յումեք։

* *Այլք.* Որ ինչ իցէ նոցա։

* *Ոմանք.* Պատմեսցիք զբանս զայս 'ի մէնջ... Տէր Աստուած զքաղաքս։

* *Ոմանք.* Տուն նորա ընդ պարսպի'ն էր։ *Եւ ոմանք.* 'ի պարիսպն էր... բնակեալ էր 'ի պարիսպն։

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա. Ձլեռնայն գնասջիք... 'ի յետոյ ձերմէ։

* *Օրինակ մի.* Եւ դիցես նշան զլեարդ կարմիր. և կապես՛։

* *Յօրինակին պակասէր.* Եւ *եղիցի* ամենայն որ։ *Ոմանք.* Որ ելանիցէ 'ի տանէ յայսմանէ։

* *Ոմանք.* Ապա եթէ մեղանչիցէ ոք։

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա եղիցի ըստ։

իջին 'ի լեռնէ անտի, և եկին յա՛յն կոյս. և հասին առ Յեսու որդի Նաւեայ, և պատմեցին զամենայն անցսն որ անցին ընդ նոսա՞. ²⁴և ասեն ցՅեսու՝ թէ մատնեա՛ց Տէր Աստուած 'ի ձեռս մեր զամենայն երկիրն, և զարհուրեցան ամենայն բնակիչք երկրին 'ի մէնջ:

3

Գլուխ Գ

Ե ¹Եւ կանխեա՛ց Յեսու ընդ առաւօտն. և չուեցին 'ի Սատիմայ և եկին մինչև ցՅորդանան, ինքն և ամենայն որդիքն Իսրայէլի. և բանակեցան անդ յառաջ քան զանցանելն: ²Եւ եղև յետ երից աւուրց, անցին դպիրքն ընդ բանակն, ³և պատուիրեցին ժողովրդեանն և ասեն. Յորժամ տեսանիցէք զտապանակ ուխտին Տեառն Աստուծոյ ձերոյ, և զքահանայսն մեր, և զՂևտացիսն որ բարձեալ ունիցին զնա՞ # և դուք խաղասջիք 'ի տեղեաց ձերոց և զնասջիք զհետ նորա՞: ⁴Բայց հեռագոյն լինիցի ընդ ձեզ և ընդ նոսա՞ որչափ կանգունք երկուց հազարաց, զտեղի՛ առնուցուք և ո՛չ մերձենայցէք 'ի նա. զի գիտիցէք զճանապարհն ընդ որ երթայցէք. զի ո՛չ էք երթալոց զճանապարհ երեկին և եռանդի՞: ⁵Եւ ասէ Յեսու ցժողովուրդն. Սրբեցարուք առ վաղիւ. զի վաղիւ արասցէ ձեզ Տէր սքանչելիս՞: ⁶Եւ խօսեցան Յեսու ընդ քահանայսն՝ և ասէ. Առէ՛ք զտապանակ ուխտին Տեառն, և զնացէ՛ք յառաջագոյն առաջի ժողովրդեանն: Եւ բարձին քահանայքն զտապանակ ուխտին Տեառն՝ և երթային առաջի ժողովրդեանն:

Զ ⁷Եւ ասէ Տէր ցՅեսու. Յաւուր յայսմիկ սկիզբն արարից բարձրացուցանել զքեզ առաջի ամենայն որդւոցն Իսրայէլի. զի ծանիցեն թէ որպէս էի՛ ընդ Մովսիսի, նոյնպէս եղէց և ընդ քեզ՞: ⁸Եւ արդ՝ պատուիրեա՛ քահանայիցն որ բառնան զտապանակ ուխտին՝ և ասասցեն. Յորժամ մտանիցէք յեզր ջրոյն Յորդանանու, կացջիք 'ի ներքս 'ի Յորդանան: ⁹Եւ ասէ Յեսու ցորդիսն Իսրայէլի. Մատերուք այսր և լուարուք զպատգամս Տեառն Աստուծոյ մերոյ՞: ¹⁰Եւ ասէ Յեսու. Այնո՛ւ գիտասջիք եթէ Տէր կենդանի՛ է 'ի ձեզ. և սատակելով սատակեսցէ՛ յերեսաց ձերոց՝ զՔանանացին, և զՔետացի, և զԽևացի, և զՓերեզացի, և զԳերզեսացի, և զԱմովրիացի, և զՅերուսացի՞. ¹¹ահաւասիկ տապանակ ուխտին Տեառն ամենայն երկրի անցանէ # առաջի ձեր ընդ Յորդանան՞: ¹²Եւ արդ՝ յառաջ կալարուք 'ի ձէնջ արս երկոտասան յորդուոց Իսրայէլի, այր մի յիրաքանչիւր ցեղէ՞. ¹³և եղիցի իբրև մխիցին ոտք քահանայիցն կրելեաց զտապանակ ուխտին Տեառն ամենայն երկրի 'ի ջուրն Յորդանանու, պակասեսցէ՛ ջուրն որ իջանէ 'ի վերուստ, կացցէ՛ իբրև

* Ոմանք. Եւ անցին յայնկոյս, և ելին առ Յեսու որ՞:

* Ոմանք. Տեառն Աստուծոյ մերոյ... դուք խաղաս՞:

* Ոմանք. Լիցի ընդ ձեզ և ընդ նա՞ որչափ... ընդ որ երթիցէք. կամ՝ զնայցէք: Օրինակ մի. Չճանապարհ երեկոյին և առաւօտին:

* Ոմանք. Ձի 'ի վաղիւ արասցէ 'ի ձեզ Տէր:

* Ոմանք. Յաւուրս յայսմիկ... զի ծանիցես:

* Ոմանք. Չպատգամս Տեառն Աստուծոյ մերոյ:

* Ոմանք. Այսու գիտասջիք եթէ... զՔետացին և զՔանանացին:

* Ոմանք. Տեառն Աստուծոյ մերոյ ամենայն երկրի անցցէ առաջի:

* Ոմանք. Յառաջ կալարուք ինձ 'ի:

զկարկառակոյտ մի*։ ¹⁴Եւ եղև իբրև չուեաց ժողովուրդն ՚ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան. և քահանայքն բարձին զտապանակ ուխտին Տեառն առաջի ամենայն ժողովրդեանն։ ¹⁵Եւ իբրև մտանէին քահանայքն որ կրէին զտապանակ ուխտին ՚ի Յորդանան, և ոտք քահանայիցն կրելեաց տապանակին մխեցան յեզր ջրոյն Յորդանանու, և Յորդանան լցեալ զայր դարիւ և դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ*։ ¹⁶Եւ կացին ջուրքն որ իջանէին ՚ի վերուստ՝ միաձոյլք, անջրպետեալք, հեռացեալք յոյժ # յոյժ. յԱդամիտէս քաղաքէ՝ որ է մասն Կարիաթարիմայ. և որ իջանէինն՝ իջին ՚ի ծովն Արաբացոց ՚ի ծովն Աղի, մինչև ՚ի սպառն նուազելոյ. և ժողովուրդն կայր յանդիման Երեքոյի*։ ¹⁷Եւ կացին քահանայքն որ կրէին զտապանակ ուխտին Տեառն ՚ի վերայ ցամաքի ՚ի մէջ Յորդանանու պատրաստութեամբ։ Եւ ամենայն որդիքն Իսրայէլի անցին ընդ ցամաք, մինչև վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան։

4

Գլուխ Դ

¹Եւ իբրև վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան. Խօսեցաւ Տէր ընդ Յեսու և ասէ*։ ²Առեալ քեզ ՚ի ժողովրդենէ անտի արս երկոտասան, այր մի յիւրաքանչիւր ցեղէ*, ³հրաման տուր նոցա և ասացես. Առէ՛ք դուք ձեզ այտի ՚ի միջոյ Յորդանանու յոտնատեղեաց քահանայիցդ պատրաստական քարինս երկոտասան, և տարջի՛ք ընդ ձեզ. և դիջի՛ք ՚ի մէջ բանակին ձերոյ՝ ուր բանակիջիք զայս գիշեր*։ ⁴Եւ կոչեաց Յեսու արս երկոտասան ՚ի փառաւորաց որդւոցն Իսրայէլի՝ մի յիւրաքանչիւր ցեղէ, ⁵և ասէ ցնոսա Յեսու. Մատերո՛ւք առաջի իմ յանդիման Տեառն ՚ի մէջ Յորդանանու, և առեալ բարձցեն անտի իւրաքանչիւրք քար մի ՚ի վերայ ուսոց իւրոց ըստ թւոյ ցեղիցն Իսրայէլի*։ ⁶Գի լինիցին նոքա ձեզ կալ ՚ի նշանակ հանապազորդ. գի յորժամ հարցանիցէ՛ ցքեզ առ վաղիւ որդին քո և ասիցէ. Չի՞նչ են քարինքս այսոքիկ ձեզ*, ⁷պատմեսցեն դու որդւոյն քում և ասիցես, թէ՛ Չի պակասեաց զետն Յորդանան յերեսաց տապանակի ուխտին Տեառն ամենայն երկրի՝ մինչ անցանէ՛ր ընդ Յորդանան, նուազեաց ջուրն # Յորդանանու. և եղիցին ձեզ քարինքս այսոքիկ ՚ի յիշատակ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի, մինչև ցլաւիտեան*։ ⁸Եւ արարին որդիքն Իսրայէլի որպէս պատուիրեաց Տէր Յեսուայ. և առեալ երկոտասան քարինս ՚ի միջոյ Յորդանանու՝ որպէս և հրաման ետ Տէր Յեսուայ ՚ի վախճանի անցանելոյ որդւոցն Իսրայէլի. և տարան զնոսա ընդ իւրեանս ՚ի

* Ոմանք. Իբրև մխեսցին. կամ՝ մխեսցի: Օրինակ մի. Կացցէ իբրև զնոր կարկառակոյտ սեանն:

* Ոմանք. Եւ իբրև մտին անդ քահանայքն... իբրև աւուրս հնձոց ցո՛ւ:

* Ոմանք. Որ է մասն ինչ Կարիաթարիմայ:

* Այս բան առաջին համարոյ. Եւ իբրև վախճա՛ւ. որ է կրկնութիւն վերջին համարոյ նախընթաց գլխոյ՝ պակասի յայլ ամենայն օրինակս: Այլք. Ընդ Յեսուայ և ասէ:

* Այլք. Ի ժողովրդենէ այտի արս:

* Ոմանք. Ուր բնակիցիք զայս գի՛:

* Ոմանք. Եւ առեալ բարձէք անտի... ՚ի վերայ ուսոց ձերոց:

* Ոմանք. Կալ ՚ի նշան հանապազորդ:

* Ոմանք. Քարինքն այնոքիկ ՚ի յիշատակ:

բանակն և եղին զնոսա անդ*։ ⁹Եւ կանգնեաց Յեսու այլ ևս երկոտասան քարինս անդէն ՚ի Յորդանան, ՚ի տեղոջ ուր կացին ոտք քահանայիցն որ կրէին զտապանակ ուխտին Տեառն. և են անդ մինչև ցայսօր ժամանակի։ ¹⁰Եւ կացին անդ քահանայքն որ բարձեալ ունէին զտապանակ ուխտին Տեառն # ՚ի մէջ Յորդանանու՝ մինչև վախճանեաց Յեսու զամենայն զոր պատուիրեաց Տէր Յեսուայ պատմել ժողովրդեանն՝ ըստ ամենայնի զոր պատուիրեաց Սովսէս Յեսուայ. և փութացաւ ժողովուրդն՝ և անց*։ ¹¹Եւ եղև իբրև վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել, անց և տապանակ ուխտին Տեառն, և երկոտասան քարինքն առաջի նոցա։ ¹²Անցին և որդիքն Ռութինի և Գադայ՝ և կէս ցեղին Սամաւի կազմեալք առաջի որդւոցն Իսրայէլի, որպէս պատուիրեաց նոցա Սովսէս*։ ¹³Չորք բարք վառեալք ՚ի կռիւ, անցին առաջի Տեառն ՚ի պատերազմ ընդ Երիքով քաղաքի։ ¹⁴Յաւուր յայնմիկ աճեցոյց Տէր զՅեսու առաջի ամենայն ազգին Իսրայէլի. և երկնչէին ՚ի նմանէ որպէս երկնչէին ՚ի Սովսիսէ՝ որչափ ժամանակս և եկաց։ ¹⁵Եւ խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ՝ և ասէ. ¹⁶Հրաման տուր քահանայիցդ՝ որ բարձեալ ունին զտապանակ ուխտին վկայութեան՝ ելանել ՚ի Յորդանանէ։ ¹⁷Եւ հրաման ետ Յեսու քահանայիցն և ասէ. Ելէք ՚ի Յորդանանէ*։ ¹⁸Եւ եղև իբրև ելին քահանայքն որ բարձեալ ունէին զտապանակ ուխտին Տեառն ՚ի միջոյ Յորդանանու, և եղին զոտսն քահանայքն ՚ի ցամաքի, դիմեաց ջուրն Յորդանանու ՚ի տեղի իւր, և գնայր որպէս յերեկն և յեռանդ ընդ ամենայն ատակս նորա*։ ¹⁹Եւ ել ժողովուրդն ՚ի Յորդանանէ ՚ի տասներորդում աւուր ամսոյն առաջնոյ. և բանակեցան որդիքն Իսրայէլի ՚ի Գադգաղա յարևելից կողմանէ Երիքովի*։ ²⁰Եւ զերկոտասան քարինսն զոր առին ՚ի Յորդանանէ, կանգնեաց Յեսու ՚ի Գադգաղա։ ²¹Եւ ասէ ցորդիսն Իսրայէլի. Յորժամ հարցանիցեն որդիքն ձեր առ վաղիւ և ասասցեն՝ Ձի՞նչ են քարինքս այսոքիկ. ²²պատմեսցիք որդւոցն ձերոց թէ՛ Յամաքաւ անց Իսրայէլ ընդ Յորդանան, ²³ի ցամաքեցուցանել Տեառն Աստուծոյ մերոյ զջուրսն Յորդանանու յերեսաց նոցա մինչև անցին։ ²⁴Որպէս արար Տէր Աստուած մեր ընդ ծովն Կարմիր, զոր ցամաքեցոյց Տէր Աստուած մեր առաջի մեր մինչև անցաք*։ ²⁵զի ծանիցեն ամենայն ազգք երկրի՝ թէ զօրութիւն Տեառն զօրաւոր է. և զի դուք պաշտիցէք զՏէր Աստուած մեր զամենայն ժամանակս*։

5

Գլուխ Ե

Է ¹Եւ եղև իբրև լուան ամենայն թագաւորք Ամովրիացւոց, որ էին յայն կոյս Յորդանանու առ ծովեզերքն. և թագաւորքն Փիւնիկեցւոց որ առ ծովեզերքն. եթէ ցամաքեցոյց Տէր Աստուած զՅորդանան գետ առաջի որդւոցն Իսրայէլի

* Ոմանք. Եւ արարին այնպէս որդի*։

* Այլք. Եւ կային անդ քա՞... զտապանակ ուխտին ՚ի մէջ Յոր՞։

* Այլք. Եւ որդիքն Գադայ և կէս։

* Յօրհնակին պակասէր. Եւ հրաման ետ։

* Ոմանք. ՚ի մէջ Յորդանանու... և գայր որպէս յերեկն և յեռ՞... յատակս նորա։

* Ոմանք. Աւուր ամսեան առաջնոյ։

* Բազումք. Տէր Աստուած մեր մինչև անցաք։

* Ոմանք. ՁՏէր Աստուած ձեր զամենայն ժամա՞։

յանցանելն նոցա, հաշեցան սիրոք նոցա և զարհուրեցան, և ո՛չ գոյր ՚ի նոսա իմաստութիւն և ո՛չ մի՝ յերեսաց որդւոցն Իսրայէլի*:

Ը ²Ընդ այնու՛ ժամանակաւ ասէ Տէր ցՅեսու. Արա՛ դու քեզ սուր ՚ի գայլախա՛զ վիմէ՛ և նստեալ թլփատեսցես զորդիսն Իսրայէլի կրկնակի*։ ³Եւ արա՛ր իւր Յեսու սո՛ւրս քարեղէնս գայլախազեայս, և թլփատեա՛ց զորդիսն Իսրայէլի ՚ի տեղոջ՝ որ կոչէր Բլո՛ւր անթլփատից*։ ⁴Եւ զոր օրինակ յապաւեաց Յեսու զորդիսն Իսրայէլի որ էին ՚ի ճանապարհի անդ, որ բնաւ չէին թլփատեալք յելելոցն յեգիպտոստ, զամենեսեան թլփատեա՛ց Յեսու: Եւ այս ժողովուրդ է զոր թլփատեաց Յեսու. ամենայն ժողովրդեանն ելելոց յեգիպտոստ զարու՛ մանուկ. քանզի ամենայն արք # պատերազմողք մեռան յանապատին անդէն ՚ի # ճանապարհին, յելանելն իւրեանց յերկրէն Եգիպտացոց*։ ⁵# զի թլփատեալք էին ամենայն ժողովուրդն որ ելին, և ամենայն # ժողովուրդն որ ծնան յանապատին ՚ի ճանապարհին # ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացոց*։ ⁶Քանզի զքառասուն և զերկուս ամս շրջեցաւ Իսրայէլ յանապատին Աբդարեայ. վասն որոյ անթլփատք էին բազումք ՚ի պատերազմողացն ելելոց յերկրէն Եգիպտացոց՝ որք անհնազանդեցան պատուիրանացն Աստուծոյ: Որոց և սահմանեաց Տէր չտեսանել զերկիրն զոր երդուաւ հարցն նոցա տալ նոցա. զերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր*։ ⁷Եւ փոխանակ նոցա տարաւ զորդիս նոցա՝ զոր թլփատեաց Յեսու. քանզի անթլփատք էին. վասն լինելոյ նոցա անթլփատս ՚ի ճանապարհին*։ ⁸Եւ իբրև թլփատեցաւ ամենայն ազգն, հանդարտութիւն կալեալ նստան անդէն ՚ի բանակին մինչև ողջացան*։ ⁹Եւ ասէ Տէր ցՅեսու. Յաւուր յայսմիկ բարձի՛ զնախատինս Եգիպտացոց ՚ի ձէնջ: Եւ կոչեաց զանուն տեղոյն այնորիկ Գաղգաղա՛ մինչև ցայսօր. ¹⁰և անդ բանակեցան որդիքն Իսրայէլի:

Թ Եւ արարին որդիքն Իսրայէլի զգատիկն ՚ի չորեքտասաներորդուն՝ աւուր ամսոյն յերեկորեայ, յարևելից Երիքովի ՚ի դաշտի անդ*։ ¹¹և կերան ՚ի ցորենոյ երկրին զայգոյ բաղա՛րջ և նորի*։ ¹²Յաւուր յայնմիկ պակասեաց մանանայն, յետ ուտելոյ նոցա ՚ի ցորենոյ երկրին. և ո՛չ ևս գտանէր որդւոցն Իսրայէլի մանանայ. և ժողովեցին զպտուղ երկրին Փիւնիկեցոց ՚ի տարւոջն յայնմիկ*։

Ժ ¹³Եւ եղև մինչ էր Յեսու յերիքով, ամբարձեալ զաչս իւր ետես՛, զի կայր առաջի նորա ա՛յր, և սուսեր մե՛րկ ՚ի ձեռին նորա. և մատուցեալ Յեսուայ՝ ասէ ցնա. Սե՞ր ես՝ թէ՛ ՚ի թշնամեաց մերոց: ¹⁴Եւ նա ասէ ցնա. Ես զօրավար եմ զօրու

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղև իբրև լուսն: *Ոմանք.* Յորդանանու և առ ծովեզերին, և թագաւորքն Փիւ՛... հաշեցան միտք նոցա և զար՛:

* *Ոմանք.* Ընդ այն ժամանակս... սուրս ՚ի գայլախազ յապառաժ վիմէ, և:

* *Ոմանք.* Ի տեղոջն ուր կոչէր:

* *Ոմանք.* Որ բնաւ իսկ ո՛չ էին թլփատեալ յելիցն յեգիպ՛: Եւ այս ժողովուրդ էր զոր... յելանելն իւրեանց յեգիպտոստ:

* *Օրինակ մի յաւելու.* Յերկրէն Եգիպտացոց՝ *թլփատեցան:* *Ուր Ոսկան.* Ոչ թլփատեցան:

* *Ոմանք.* Չտեսանել նոցա զերկիրն, զոր երդուաւ Տէր հարցն:

* *Ոմանք.* Եւ փոխանակ նոցա կացոյց զորդիս:

* *Ոմանք.* Եւ իբրև թլփատեցան ամենայն ազգքն, հանդարտութիւն կալան նստեալ անդրէն ՚ի բանակն:

* *Օրինակ մի.* Յարևմտից Երիքովի ՚ի:

* *Ոմանք.* Ի ցորենոյ անտի երկրին զայգոյ զատկին բաղարջ և:

* *Յօրինակին պակասէր.* Երկրին. և ո՛չ ևս: *Օրինակ մի.* Փիւնիկեց՛. ՚ի տեղոջն յայնմիկ:

Տեառն, և այժմ եկի՝¹⁵ Եւ անկա՛ւ Յեսու ՚ի վերայ երեսաց իւրոց և երկի՛ր եպագ, և ասէ ցնա. Տէր զի՞նչ հրաման տացես ծառայի քում: ¹⁶Եւ ասէ զօրավարն Տեառն ցՅեսու. Լո՛յժ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս՝ սո՛ւրբ է: Եւ արա՛ր այնպէս՝:

6

Գլուխ Զ

ԺԱ ¹Եւ երիբով փակեա՛լ և ամրացեալ էր յերեսաց որդւոցն Իսրայէլի, և ո՛չ ոք ելանէր ՚ի նմանէ, և ո՛չ ոք մտանէր: ²Եւ ասէ Տէր ցՅեսու. Ահա ե՛ս տամ ՚ի ձե՛ռս քո զերիբով՝ և զթագաւորն որ ՚ի նմա, և զզօրաւորս զօրութեամբ՝: ³Բայց դու՛ ա՛ծ պատեա՛ զնովաւ զամենայն մարտիկս շուրջանակի յրբելինա՛ն, ՚ի լսել ձեզ զձայն եղջեր փողոյ. և եղիցի իբրև հարկանիցէք զփողն՝ պատեսչի՛ք զքաղաքն ամենայն արբ պատերազմողք շուրջ զքաղաքաւն մի՛ անգամ. այսպէս առնիցէ՛ք զվե՛ց օր՝: ⁴Եւ եւթն քահանայ առցեն զելթնափո՛ղսն եղջերեայս յրբելեան առաջի տապանակին: Եւ յաւուրն եւթներորդի պատեսչիք զքաղաքն եւթն անգամ. և քահանայքն հարցեն զփողսն եղջերեայս՝. ⁵և աղաղակեսցեն առհասարակ ամենայն ժողովուրդն. և յաղաղակելն նոցա կործանեսցին ինքնին պարիսպք քաղաքին ՚ի ներքո՛յ նոցա. և մտցէ ամենայն ժողովուրդն դիմեալ իւրաքանչի՛ւր հանդէպ երեսաց իւրոց ՚ի քաղաքն: ⁶Եւ եմուտ Յեսու որդի Նաւեայ առ քահանայսն՝ և ասէ ցնոսա. Առէ՛ք զտապանակ ուխտին, և եւթն քահանայք՝ առցեն եւթն փող եղջերեայ յրբելեան առաջի տապանակին Տեառն: ⁷Եւ խօսեցա՛ւ ընդ նոսա և ասէ. Պատուէ՛ր տուք ժողովրդեանն անցանել պատել զքաղաքն. և մարտիկքն երթիցեն վառեա՛լք առաջի տապանակին Տեառն: ⁸Եւ եղև իբրև պատուիրեաց ժողովրդեանն. և եւթներքին քահանայքն որ ունիցին եւթն փողս նուիրականս, անցցեն նոյնպէս առաջի Տեառն՝ և ազդեսցեն ուժգին. և տապանակ ուխտին Տեառն երթիցէ՛ զիեստ նոցա՝. ⁹և մարտիկքն երթիցեն առաջի՛, և քահանայքն՝ և որ հարկանիցեն զփողսն եղջերեայս, վերջապա՛հք զկնի՛ տապանակին Տեառն, հարկանելով զփողսն եղջերեայս երթիցեն՝: ¹⁰Եւ ժողովրդեանն պատուէ՛ր ետ Յեսու և ասէ. Մի՛ աղաղակիցէք, և մի՛ ոք լուիցէ զբարբառ ձեր, և մի՛ ելանիցէ բան ՚ի բերանոյ ձերմէ, մինչև յօրն յորում ինքն ա՛զդ արասցէ աղաղակելոյ, և ապա՛ աղաղակեսչիք: ¹¹Եւ շո՛ւրջ եկեալ տապանակի ուխտին Տեառն զքաղաքաւն, զնա՛ց անդրէն ՚ի բանակն՝ և անդ ագաւ: ¹²Եւ յաւուրն երկրորդի յարեա՛ւ Յեսու ընդ առաւօտն. և բարձին քահանայքն զտապանակն Տեառն: ¹³Եւ եւթն քահանայքն առին եւթն փողս նուիրականս, և երթային առաջի Տեառն. և քահանայքն հարին զփողսն. և այլ ևս ամբոխն ամենայն. և զնացին դարձեալ

* Ոմանք. Եւ ես զօրավար եմ:

* Ոմանք. Եւ արար այնպէս Յեսու:

* Ոմանք. Եւ զթագաւորս նորա որ ՚ի նմա:

* Օրինակ մի. Ձամենայն պարիսպ շուրջանակի, յրբելեան լսել ձեզ:

* Այլք. Առցեն զելթն փողսն եղջեր՝:

* Ոմանք. Ձտապանակ ուխտին Տեառն:

* Ոմանք. Եւ եւթներքին քահանայքն ունէին եւթն:

* Ոմանք. Ձկնի տապանակի ուխտին Տեառն:

անդրէն 'ի բանակն. և ապա մտանէին մարտիկքն, և ա՛յլ ևս ամբոխն զկնի տապանակի ուխտին Տեառն. և երթային և հարկանէին զփողսն եղջերեայս*:¹⁴ Եւ պատեցին զքաղաքն յաւուրն երկրորդի միանգամ 'ի մօտոյ. և գնացին դարձեալ անդրէն 'ի բանակն: Այնպէս արարին զվեց օր:¹⁵ Եւ եղև յաւուրն եւթներորդի, յարեան ընդ ե՛լս առաւօտուն և պատեցին զքաղաքն ըստ նմին օրինակի եւթն անգամ*.¹⁶ Եւ եղև յեւթներորդո՛ւմ նուագի պատելոյն, հարին քահանայքն զփողսն. և ասէ Յեսու ցորդիսն Իսրայէլի. Ա՛րդ աղաղակեցէ՛ք, քանզի մատնեաց Տէր 'ի ձեռս մեր զքաղաքս: ¹⁷ Եւ եղիցի քաղաքն նզովեալ, ինքն և ամենայն որ ինչ 'ի նմա իցէ 'ի Տեառնէ զօրութեանց. բայց զԼահաբ պոռնիկ ապրեցուցի՛ք, զնա և զամենայն որ ինչ իցէ 'ի տան նորա, զի թաքո՛յց զհրեշտակսն զոր արձակեցաք*:¹⁸ Այլ դուք զգո՛յ՜ լինիջիք 'ի նզովիցն. գուցէ՛ ցանկացեալք առնուցուք ինչ դուք 'ի նզովից անտի. և առնիցէք զբանակ որդւոցդ Իսրայէլի 'ի նզովս, և ջնջիցէք զնեզ*:¹⁹ Ամենայն ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ եղիցի սո՛ւրբ Տեառն, 'ի զանձ Տեառն մտցէ: ²⁰ Եւ աղաղակեա՛ց ժողովուրդն, և հարին քահանայքն զփողսն. իբրև լուաւ ժողովուրդն զձայն փողոյն՝ աղաղակեաց ամենայն ժողովուրդն առ հասարակ մե՛ծ և ուժգին աղաղակաւ. և անկա՛ւ պարիսպն շուրջանակի. և ել ամենայն ժողովուրդն 'ի քաղաքն իւրաքանչիւր հանդէպ իւր. և առին զքաղաքն*.²¹ Եւ նզովեցին զնա, և որ ինչ էր 'ի քաղաքին յառնէ մինչև ցկին, և յերիտասարդէ մինչև ցժեր, և յարջառոյ մինչև ցոչխար, և ցէշ, արկի՛ն 'ի բերան սրոյ*:

ԺԲ ²² Եւ ցերկո՛ւս երիտասարդսն որ լրտեսեցին զերկիրն՝ ասէ՛ Յեսու. Ստէ՛ք 'ի տուն կնոջն պոռնիկի, և հանէ՛ք զնա անտի, և զամենայն ինչ որ նորա իցէ՝ որպէս և երդուա՛յք նմա*:²³ Եւ մտի՛ն երկու երիտասարդքն որոց լրտեսեալ էր զքաղաքն՝ 'ի տուն կնոջն, և հանին զԼահաբ պոռնիկ, և զհայր նորա և զմայր նորա. և զեղբարս նորա, և զամենայն որ ինչ էր նորա, և զամենայն ազգատոհմն նորա. և կացուցին զնա արտաքոյ բանակին Իսրայէլի*:²⁴ Եւ քաղաքն այրեցա՛ւ հրով և ամենայն ինչ որ 'ի նմա էր. բա՛ց յոսկւոյ և յարծաթոյ և 'ի պղնձոյ և յերկաթոյ, զոր ետուն 'ի զանձ Տեառն մուծանել: ²⁵ Եւ զԼախաբ պոռնիկ, և զտուն նորա հայրենի, և զամենայն ինչ որ սորա՛ էր ապրեցոյց Յեսու. և բանակեցաւ 'ի մէջ Իսրայէլի մինչև ցայսօր ժամանակի. վասն զի թաքոյց զլրտեսսն զոր առաքեաց Յեսու յաւուր յայնմիկ լրտեսել զերիքով*:

ԺԳ ²⁶ Եւ նզովեաց Յեսու յաւուր յայնմիկ զերիքով և ասէ. Անիծեալ լիցի մարդն առաջի Տեառն, որ կանգնեսցէ և շինեսցէ զքաղաքն զերիքով. անդրանկաւ իւրով դնել զհիմունս նորա, և կրտսերաւ իւրով կանգնեսցէ զդրունս պարսպի նորա: Եւ այնպէս արար Ազան Բեթէլացի, Աբիրոնաւ անդրանկա՛ւ իւրով եղ

* *Յօրինակին պակասէր.* Եւ երթային և հար՞:

* *Ոմանք.* Յարեան ընդ ել առաւօ՞:

* *Ոմանք.* Որ ինչ իցէ 'ի նմա, զի թաք՞:

* *Ոմանք.* Արդ դուք զգոյ՜ լի՞... որդւոցն Իսրայէլի:

* *Ոմանք.* Մեծաւ ուժգին աղաղ՞: *Յօրինակին պակասէր.* Ամենայն ժողովուրդն 'ի քաղաքն, իւրա՞:

* *Յօրինակին պակասէր.* Եւ յերիտա՞... և յարջառոյ:

* *Ոմանք.* Ասէ ցնոսա Յեսու... և զայլ ինչ որ նորա իցէ:

* *Ոմանք.* Եւ զամենայն ինչ որ նորա էին:

* *Ոմանք.* Որ նորա էր, ապրե՞: *Բազումք.* Եւ բնակեցաւ 'ի մէջ Իսրայէլի:

զհիմունս նորա, և Ձերծելով կրտսերով իւրով կանգնեաց զդրունս նորա*։²⁷ Եւ էր Տէր ընդ Յեսուայ, և էր անուն նորա ընդ ամենայն երկիր։

7

Գլուխ Է

ԺԴ¹ Եւ յանցեան որդիքն Իսրայէլի յանցանս, և գողացան ՚ի նզովից անտի. և ա՛ն Աքար որդի Քարմեայ՝ որդւոյ Չարայի՝ ՚ի ցեղէ Յուդայ՝ ՚ի նզովից անտի. և բարկացաւ սրտմտութեամբ Տէր որդւոցն Իսրայէլի։² Եւ առաքեաց Յեսու արս յերիքովէ ՚ի Գայի՝ # որ է յանդիման Բեթէլայ, և ասէ ցնոսա. Լրտեսեցէք զԳայի։ Եւ ելին արքն և լրտեսեցին զԳայի։³ Եւ դարձան առ Յեսու և ասեն. Մի՛ ելցէ ամենայն ժողովուրդս, այլ իբրև երկու՛ հազարք կամ երեք հազարք արանց ելցեն՝ և պաշարեսցեն զքաղաքն. մի՛ տանիր անդ զամենայն ժողովուրդն՝ զի սակաւք են*։⁴ Եւ ելին անդր ՚ի ժողովրդենէն իբրև երեք հազարք և փախեան յերեսաց արանցն Գայեայ.⁵ Եւ կոտորեցին ՚ի նոցանէ արք Գայեայ արս՝ երեսուն և վեց. և հալածեցին զցնոսա ՚ի դրանէն մինչև խորտակեցին զցնոսա. և վիրաւորեցին ՚ի գառիվայրին. և պակասեցաւ սիրտ ժողովրդեանն և եղեն իբրև զջուր*։⁶ Եւ պատառեաց Յեսու զհանդերձս իւր, և անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի տապանակին Տեառն մինչև ցերեկոյ, ի՛նքն և ծերքն Իսրայէլի. և արկին հո՛ղ զգլխովք իւրեանց*։⁷ Եւ ասէ Յեսու. Աղաչե՛մ զքեզ Տէր Տէր. ընդէ՞ր իսկ բնաւ անցանելով անցոյց ծառայ քո զժողովուրդս զայս ընդ Յորդանան, մատնել զսոսա Ամովրիացւոցն՝ և կորուսանել զմեզ. լա՛ւ էր թէ անդէն զետեղեալ և բնակեալ էաք առ եզերք Յորդանանու*։⁸ Յի՛ս Տէր. և արդ զի՞նչ արարից՝ որովհետև կորացոյց Իսրայէլ զպարանոց իւր առաջի թշնամեաց իւրոց*։⁹ Եւ լուեալ Քանանացւոցն և ամենայն բնակչաց երկրին պատեսցեն զմեզ և սատակեսցեն յերկրէ. և զի՞նչ արասցես զանուն քո մեծ*։¹⁰ Եւ ասէ Տէր ցՅեսու. Յո՛տն կաց, զի՞նչ անկեալ կաս ՚ի վերայ երեսաց քոց*։¹¹ մեղաւ ժողովուրդն, և անց զուխտիւ իմով զոր ուխտեցի նոցա. և գողացան և առին ՚ի նզովիցն, ստեցին, և արկին յամանս իւրեանց*։¹² Եւ ո՛չ ևս կարիցեն որդիքն Իսրայէլի կալ առաջի թշնամեաց իւրեանց. այլ դարձուցեն զպարանոցս առաջի թշնամեաց իւրեանց՝ զի եղեն ՚ի նզովս. և ո՛չ ևս յաւելից լինել ընդ ձեզ, եթէ ո՛չ բառնայցէք զնզովս զայդ ՚ի միջոյ ձերմէ։¹³ Արի՛ սրբեա՛ զժողովուրդդ, և արասցես սրբել առ վաղիւ. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Նզովք են ՚ի ձեզ Իսրայէլ. ո՛չ կարիցէք կալ առաջի թշնամեաց ձերոց, մինչև բառնայցէք զնզովսն ՚ի ձենջ*։¹⁴ Եւ ժողովեսցիք ամենեքեան ընդ

* Ոմանք. Աբիւրաւ անդրանկաւ... զդրունս պարսպի նորա։

* Ոմանք. Եւ ասեն ցնա. Մի՛ ելցէ։

* Ոմանք. Եւ պակեաւ սիրտ ժողո՞ւ։

* Ոմանք. Եւ պատառեաց Յեսու զպատմուճան իւր... ինքն և ծերակոյտն Իսրայէլի. և։

* Ոմանք. Ձժողովուրդս քո ՚ի Յորդանան, մատնել զսա Ամուրի... եթէ անդէն զետեղեալ էաք և բանակեալ առ։

* Ոմանք. Ձի՛նչ ևս արարից։ Յօրինակին ՚ի բնաբանի պակասէր. Ձպարանոց իւր։ Այլ ՚ի լուս՞. նշանակի ՚ի ներքս բերել համաձայն այլոց։

* Ոմանք. Ընդէ՛ր անկեալ կաս ՚ի։

* Ոմանք. Ձոր ուխտեցի առ նոսա։

* Ոմանք. Սրբել զժողովուրդն առ ՚ի վաղիւ... Տէր Աստուածն Իսրայէլի։ Յօրինակին. Մինչ

առաւօտն ըստ ցեղից ձերոց. և եղիցի ցեղն՝ զոր ցուցցէ Տէր, մատուցի՞ք ըստ տոհմից. և զտոհմն՝ զոր յանդիմանեցէ Տէր, մատուցի՞ք ըստ տանց. և տուն՝ զոր յանդիմանեցէ Տէր, մատուցի՞ք ըստ արանց. ¹⁵և որ յանդիմանեցի՞ ՚ի նզովսն, այրեցի՞ ինքն հրով՝ և ամենայն տուն իւր, և ամենայն ինչ որ նորա իցէ. զի անց զուխտիւն Տեառն, և արար անօրէնութիւն ՚ի մէջ Իսրայէլի՞: ¹⁶Եւ կանխեաց Յեսու ընդ առաւօտն, և մատոյց զժողովուրդն ըստ ցեղիցն իւրեանց, և յանդիմանեցաւ ցեղն Յուդայի. ¹⁷և մատուցաւ ցեղն Յուդայի ըստ տոհմից, և յանդիմանեցաւ տունն Չարայի. և մատուցաւ տոհմն Չարայի ըստ արանց, և յանդիմանեցաւ Չամբրի՞: ¹⁸և մատուցաւ տուն նորա ըստ արանց, և յանդիմանեցաւ Աքար որդի Քարմեայ, որդւոյ Չամբրեայ, որդւոյ Չարայի, ՚ի ցեղէն Յուդայ: ¹⁹Եւ ասէ Յեսու ցԱքար. Որդեալ իմ, տո՛ւր փառս այսօր Տեառն Աստուծոյ Իսրայէլի, և տո՛ւր խոստովանութիւն, և պատմեա՛ ինձ զինչ զործեցեր. և մի՛ թաքուցաներ յինէն: ²⁰Պատասխանի ետ Աքար և ասէ ցՅեսու. Արդարև ե՛ս մեղայ առաջի Տեառն Աստուծոյ Իսրայէլի. զայս ինչ և զայս զործեցի՞: ²¹Ես յաւարին ամղան մի նկարէն գեղեցիկ, և երկերիւր երկդրամեան արծաթոյ, և լէզու մի ոսկի՝ որոյ յիսուն երկդրամեան էր ձոյլ նորա. և ցանկացեալ նոցա առի՞. և ահաւանիկ թաքուցեալ կայ ընդ հողով ՚ի վրանի իմում. և արծաթն թաքուցեալ կայ ՚ի ներքոյ նոցա: ²²Եւ առաքեաց Յեսու հրեշտակս արս և ընթացան ՚ի վրանն ՚ի բանակն. և անդ թաքուցեալ կայր ՚ի վրանի նորա. և արծաթն ՚ի ներքոյ նոցա՞: ²³Իսկ ինչ զայն ՚ի վրանէ անտի և բերին առ Յեսու և առ ծերսն Իսրայէլի՝ և եղին առաջի Տեառն: ²⁴Եւ ան Յեսու զԱքար զորդի Չարայի, և եհան զնա ՚ի ձորն Աքովրայ, և զուստերս նորա և զդստերս նորա, և զարջառ նորա, և զէջ նորա, և զամենայն զոչխարս նորա, և զվրանս նորա, և զամենայն ինչս նորա. և ամենայն Իսրայէլ ընդ նմա. և ած զնա յեմակն Աքովրայ՞: ²⁵Եւ ասէ Յեսու. Ընդէ՞ր սատակեցեր զմեզ. սատակեցէ՞ զքեզ Տէր ըստ աւուրս ըստ այսմիկ: Եւ քարկոծեցին զնա ամենայն Իսրայէլ քարամբք, և այրեցին զնոսա հրով. և քարկոծեցին զնոսա քարամբք. ²⁶և կուտեցին ՚ի վերայ նոցա կարկառ մեծ քարանց մինչև ցայսօր. և դադարեաց Տէր ՚ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ. վասն այնորիկ անուանեաց զնա Եմակ Աքովրայ մինչև ցայսօր՞:

8

Գլուխ Ը

բառնայցէք:

* *Ի բազումս պակասի.* Հրով. և ամենայն տուն իւր:

* *Ոմանք.* Եւ մատուցաւ ըստ տոհմիցն Յուդայի, և յանդիմանեցաւ տունն Չարայի, և մատուցաւ տունն Չարայի ըստ արանց, և յանդիմանեցաւ տունն Չամբրի. և մատուցաւ տունն նորա ըստ արանց: *Իսկ այլ ոմանք.* Եւ յանդիմանեցաւ տոհմն Չարայի, և մատուցաւ տոհմն Չարայի ըստ տանց, և յանդի՞:

* *Օրինակ մի.* Արդարև խոստորեցայ առաջի Տեառն Աստուծոյ Իսրայէլի՞ զայս ինչ և զայս ինչ զոր՞:

* *Ոմանք.* Եւ այն թաքուցեալ կայր... ՚ի ներքոյ նորա:

* *Ոմանք.* Ի ձորն Եսթրաօնայ: *Այլք.* Եւ ած զնոսա յեմակն: *Ուր ոմանք ունին՝* յեմակ Եսթրաօնայ: *Իսկ ՚ի լուս՞.* մերումս ՚ի վերայ Եմակ, *նշանակի՞* ծործոր:

* *Ոմանք.* Ի բարկութենէ սրտմտութեան... զնա Եմակ Եսթրաօնայ:

ԺԵ ¹Եւ ասէ Տէր ցՅեսու. Մի՛ երկնչիր և մի՛ զանգիտիցես. ա՛ռ դու ընդ քեզ զամենայն արս պատերազմողս, և յարուցեալ ելցես ՚ի Գայի. ահա ե՛ս տամ ՚ի ձեռս քո զթագաւորն Գայեայ և զժողովուրդ նորա, և զքաղաք նորա և զերկիր նորա* ²և արասցես ընդ Գայի և ընդ թագաւորն նորա, զոր օրինակ արարեր ընդ երիքով և ընդ թագաւորն նորա. և զաւար նորա և զանասուն նորա ածցես յաւարի. և կացուսցես քեզ դարանամուտս քաղաքին զկնի նորա: ³Եւ յարեա՛ւ Յեսու՝ և ամենայն ժողովուրդն պատերազմող, ելանել ՚ի Գայի. և ընտրեաց Յեսու երեսուն հազար արանց զօրաւորս զօրութեամբ, և առաքեաց զնոսա զցայգ* ⁴Եւ պատուիրեաց նոցա և ասէ. Տեսէ՛ք, զի դուք դարանամուտք լինիցիք յետուստ քաղաքին, և մի՛ կարի հեռի լինիցիք ՚ի քաղաքէն. և կացջիք պատրաստք ամենեքին* ⁵և ես և ամենայն ժողովուրդն որ ընդ իս՝ մօտեսցու՛ք ՚ի քաղաքն. և եղիցի յորժամ ելանիցեն բնակիչքն Գայեայ ընդդէմ մեր իբրև զառաջինն, փախիցու՛ք յերեսաց նոցա. ⁶և իբրև ելցեն զկնի մեր, մեկնեսցուք զնոսա ՚ի քաղաքէ անտի. և ասիցեն թէ փախեա՛ն յերեսաց մերոց իբրև զառաջինն* ⁷Եւ իբրև փախիցուք յերեսաց նոցա, դուք յարիջի՛ք ՚ի դարանէ անտի, և մտջի՛ք ՚ի քաղաքն, և հարջի՛ք զքաղաքն. և տացէ՛ զնոսա Տէր Աստուած Իսրայէլի ՚ի ձեռս մեր* ⁸Եւ եղիցի յորժամ առնուցուք զքաղաքն, այրեսջի՛ք զնա հրով. ըստ այսմ օրինակի առնիցիք՝ ահա պատուիրեցի՛ ձեզ՝ ⁹Եւ առաքեաց զնոսա Յեսու, և զնացին ՚ի դարանն, և մտին ղօղեցան ՚ի մէջ Բեթելայ և ՚ի մէջ Դանայ ՚ի ծովակողմանէն Գայեայ. և ազա՛ւ Յեսու զայն գիշեր ՚ի մէջ ժողովրդեանն: ¹⁰Եւ կանխեալ Յեսու ընդ առաւօտն արար հանդէս ժողովրդեանն. և ե՛լ ինքն և ծերքն Իսրայէլի առաջի ժողովրդեանն ՚ի վերայ Գայեայ: ¹¹Եւ ամենայն զօր պատերազմող ելին ընդ նոսա, և զնացին ելին եկին հանդէպ քաղաքին յարևելից կողմանէ, և դարանամուտք քաղաքին ՚ի ծովակոյս կողմանէ, և բանակեցան ՚ի հիւսւսոյ Գայեայ. և ձո՛ր ընդ մէջ նոցա և Գայեայ* ¹²Եւ ա՛ռ հինգ հազար արանց, և եմոյծ զնոսա ՚ի դարան՝ ընդ Բեթա՛ւն և ընդ ծովն Գայեայ* ¹³և արկ զժողովուրդն և զամենայն բանակն ՚ի հիւսւսոյ քաղաքին, և վերջ նոցա ՚ի ծովակողմն քաղաքին. և անց Յեսու զգիշերն զայն ընդ մէջ ձորոյն* ¹⁴Եւ եղև իբրև ետես թագաւորն Գայեայ, փութացաւ կանխեաց և ել ընդդէմ նոցա. և արք քաղաքին երթային հանդէպ նոցա ՚ի պատերազմ. ինքն և ամենայն ժողովուրդ իւր ՚ի ժամանակին յանդիման Արաբայ. և ինքն ո՛չ

* *Ոմանք.* Եւ ահա ետու ՚ի ձեռս քո զթագա՛:

* *Ոմանք.* Հազար արանց՝ արս զօրաւորս զօրութեամբ:

* *Ոմանք.* Լինիք յետոյ քաղաքին:

* *Յօրինակին պակասէր.* Եւ իբրև ել՛:

* *Ոմանք.* Եւ տացէ զնա Տէր:

* *Ոմանք.* Այրեսջիք զքաղաքն հրով. ըստ այնմ բանի առնիցիք. ահա:

* *Ոմանք.* Ելին ընդ նմա: *Յօրինակին.* Եւ դարանամուտ քաղաքին: *Բանս.* Եւ ձոր ընդ մէջ նոցա և Գայեայ, *յամենայն օրինակս որ առ մեօք պակասի. և ՚ի մերունս ՚ի լուսանցսն գրեալ, չակերտիւ նշանակի ՚ի ներքս առնուլ, ըստ որում այլուստ ևս ստուգեալ եղաք ՚ի բնաբանի:*

* *Յօրինակին՝ անունս* Բեթաւն, *զատաբար այսպէս գրեալ էր,* Բեթ աւն. *զոր թերևս վրիպական կարծեցեալ գրիչն ակնարկէ անդէն ՚ի ներքս բերել զվանկս ել. և առնել Բեթելաւն. որպէս ունին ոմանք ՚ի գրչագրաց մերոց, շեղեալ ՚ի Յունական օրինակաց ոմանց, որք դնեն համեմատ մերունս՝* Բեթաւն:

* *Ի բազումս պակասի.* ՚ի հիւսւսոյ քաղաքին. *Եւ վերջ նոցա ՚ի ծովակողմն քաղաքին.* և անց:

գիտէր եթէ դարան գործեալ իցէ նմա յետուստ քաղաքին*։ ¹⁵Իբրև ետես Յեսու՝ դարձա՛ւ անդրէն ընդ կրուկն, և ամենայն Իսրայէլ յերեսաց նոցա փախտան ընդ ճանապարհ անապատին*։ ¹⁶Եւ ստիպեաց ամենայն ժողովուրդ երկրին երթա՛լ զհետ նորա. և պնդեցան երթալ զկնի որդւոցն Իսրայէլի. և նոքա մեկնեցան ՚ի քաղաքէ անտի*։ ¹⁷Եւ ո՛չ մնաց ՚ի Գայի և ՚ի Բեթէլ՝ որ ո՛չ պնդեցաւ զհետ Իսրայէլի. և թողին զքաղաքն ՚ի բա՛ց, և յարձակեցան զհետ Իսրայէլի*։ ¹⁸Եւ ասէ Տէր ցՅեսու. Չգեա՛ զձեռն քո գայիսոնաւո՞ր որ ՚ի ձեռին քում ՚ի վերայ քաղաքին, զի ՚ի ձեռն քո մատնեցի զնա. և դարանակալքն ելցեն վաղվաղակի ՚ի տեղւոջէ իւրեանց։ Եւ ձգեա՛ց Յեսու զգայիսոնն և զձեռն իւր ՚ի վերայ քաղաքին*։ ¹⁹Եւ դարանակալքն յարեան վաղվաղակի ՚ի տեղւոջէ իւրեանց՝ և ելին իբրև ձգեաց զձեռնն, և մտին ՚ի քաղաքն՝ և առին զնա. և փութացեալ այրեցին զքաղաքն հրով*։ ²⁰Եւ հայեցեալ բնակչացն Գայեայ ՚ի թիկունս իւրեանց, տեսանէին զի ելանէ՛ր ծուխ քաղաքին մինչև յերկինս. և ո՛չ ևս ուրեք գոյր նոցա փախուստ՝ ա՛յսր կամ անդր. և ժողովուրդն որ թաքուցեալ էր յանապատն՝ յարեան ՚ի վերայ հետամտացն։ ²¹Եւ Յեսու և ամենայն ժողովուրդն իբրև տեսին թէ առին դարանակալքն զքաղաքն, և զի ելանէ՛ր ծուխ քաղաքին մինչև յերկինս. դարձան անդրէն ընդ կրուկն, և հարին զարսն Գայեայ*։ ²²Եւ նոքա ելին ՚ի քաղաքէ անտի ընդ առաջ նոցա, և եղեն ՚ի մէջ բանակին. նոքա անտի, և սոքա աստի՝ և հարին զնոսա մինչև չմնալոյ ՚ի նոցանէ ապրեալ և փախստական*։ ²³Եւ զթագաւորն Գայեայ ձերբակալ արարին կենդանւոյն, և ածին առ Յեսու։ ²⁴Եւ իբրև դադարեցին որդիքն Իսրայէլի ՚ի կոտորելոյ զամենայն Գայացիս, զորս ՚ի դաշտս, զորս ՚ի լերինս զառիվայրին մինչև հալածեցին զնոսա. և անկան ամենեքին ՚ի սո՛ւր սուսերի մինչև ՚ի սպառ։ Եւ դարձա՛ւ Յեսու ՚ի Գայի, և եհա՛ր զնա սրով սուսերի*։ ²⁵Եւ եղեն անկեալք յաւուր յայնմիկ յառնէ մինչև ցկին՝ երկոտասան հազար, ամենայն բնակիչքն Գայեայ։ ²⁶Եւ Յեսու ո՛չ դարձոյց զձեռն իւր զոր ձգեաց գայիսոնան՝ մինչև նզովեա՛ց զամենայն բնակիչսն Գայացւոց. ²⁷բա՛ց յանասնոյ և յաւարէ քաղաքին զոր աւարեցին որդիքն Իսրայէլի ըստ հրամանի՝ Տեառն՝ որպէս հրամայեաց Տէր Յեսուայ։ ²⁸Եւ այրեա՛ց Յեսու զքաղաքն հրով և արար զնա բլու՛ր հողոյ՝ անշէն յաւիտեան մինչև ցայսօր։ ²⁹Եւ զթագաւորն Գայեայ կախեա՛ց զերկճիւղ փայտէ. և էր ՚ի վերայ փայտին կախեալ մինչև ցերեկոյ. և ընդ մտանել արեգականն հրամայեաց Յեսու և իջուցին զնա ՚ի փայտէ անտի, և ընկեցին զնա ՚ի գո՛ւբ առ դրան քաղաքին. և կուտեցին ՚ի վերայ նորա կարկառ քարանց մինչև ցայսօր*։

ԺՁ ³⁰Յայնժամ շինեաց Յեսու սեղան Տեառն Աստուծոյ Իսրայէլի ՚ի լերինն Գեբաղ ³¹որպէս պատուիրեա՛ց Սովսես ծառայ Տեառն որդւոցն Իսրայէլի. զոր

* Այլք. Յանդիման Արաբիայ. կամ՝ Արաբեայ։

* Այլք. Անդրէն ընդ կրուկն։

* Այլք. Երթալ զհետ նոցա։

* Ոմանք. Եւ ո՛չ ոք մնաց ՚ի Գայի։

* Օրինակ մի. Չգեա՛ զձեռն քո ՚ի Գայի գեղարդեամբդ... քում է ՚ի վերայ քա՛... և դարանեալքն ելցեն։

* Ոմանք. Այրեցին զնա հրով։

* Ոմանք. Անդրէն ՚ի կրուկ... զարս։

* Ոմանք. Եւ հալածեցին զնոսա մինչև։

* Բազումք. Մինչ ուր հալածեցին զնոսա։ Ոմանք. Եւ եհար զնոսա սրով սու՛։

* Ոմանք. Ձերկճոյի փայտեայ։ Եւ ոմանք. Ձերկու ճեղ փայտէ։

օրինակ գրեալ է յօրէնսն Մովսիսի. Սեղան յողջոց քարանց՝ յորս ո՛չ մերձեալ իցէ երկաթ. և անդ եհան ողջակէզ Տեառն և զո՛հ փրկութեան: ³²Եւ գրեա՛ց Յեսու ՚ի վերայ քարանցն զերկրորդունն օրինաց զօրէնսն Մովսիսի, զոր գրեաց առաջի որդւոցն Իսրայէլի: ³³Եւ ամենայն Իսրայէլ, և ծերք նոցա և դատաւորք նոցա՝ և դպիրք նոցա, երթային աստի անտի հանդէպ տապանակին. և քահանայքն Ղևտացիք բարձին զտապանակ ուխտին Տեառն, և եկն և բնակ: Եւ էին կէսք ՚ի նոցանէ մերձ ՚ի լեառն Գարիզին, և կէսք ՚ի նոցանէ մերձ ՚ի լեառն Գեբաղ. որպէս պատուիրեաց Մովսէս ծառայ Տեառն, օրինել՝ նախ զժողովուրդն*: ³⁴Եւ ապա՛ ընթերցաւ զամենայն բանս օրինացս այսոցիկ, զօրհնութիւնս և զանէ՛ծս՝ ըստ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի: ³⁵Եւ ո՛չ էր բան յամենայնէ զոր պատուիրեաց Մովսէս Յեսուայ՝ զոր ո՛չ ընթերցաւ Յեսու յականջս ամենայն եկեղեցւոյն Իսրայէլի, արանց և կանանց և մանկանց, և եկա՛ցն յեցելոցն յԻսրայէլ:

9

Գլուխ Թ

ԺԷ ¹Իբրև լուան ամենայն թագաւորքն Ամովրիացւոց որ յայնկոյս Յորդանանու՝ որ լեռնայինք և որ դաշտայինք, և որ յամենայն ծովեզեր ծովուն մեծի. և որք առ Լիբանաներքն, և Քետացիքն՝ և Ամովրիացիք՝ և Գերգեսացիք՝ և Քանանացիք՝ և Փերեզացիք՝ և Խևացիք՝ և Յերուսացիք* . ²Եկին ՚ի միասին տալ պատերազմ ընդ Յեսուայ և ընդ Իսրայէլի՝ ամենեքին առ հասարակ: ³Եւ բնակիչքն Գաբաւոնի լուան զոր ինչ արար Յեսու ընդ Երիքով և ընդ Գայի. ⁴արարին նոքա խորամանկութեամբ՝ # եկեալք պաշարովք և պատրաստութեամբ. առին քուրձս հնացեալս ՚ի վերայ ուսոց իւրեանց, և տիկս գինւոյ հնացեալս և պատառատունս կարկատեալս* . ⁵և անկանուրդք կօշկաց նոցա՝ հողաթափք իւրեանց հնացեալք և կարկատեալք յոտս իւրեանց. և հանդերձք իւրեանց հնացեալք զանձամբք իւրեանց. և հաց պաշարի իւրեանց չորացեալ և ճրճեկեր* . ⁶և եկին առ Յեսու ՚ի բանակն Իսրայէլի ՚ի Գաղգաղա: Եւ ասեն ցՅեսու և ցամենայն Իսրայէլ. Յերկրէ՛ հեռաստանէ եկեալ եմք, և արդ՝ դի՛ք ընդ մեզ ուխտ: Եւ ասեն որդիքն Իսրայէլի ցՔոռացին. ⁷Տե՛ն՝ զուցէ՛ առ իս բնակեալ իցես, և զիա՛րդ դնենք ընդ քեզ ուխտ* : ⁸Եւ ասեն ցՅեսու. Ծառայք քո եմք: Եւ ասէ ցնոսա Յեսու. Ուստի՞ էք դուք, և ուստի՞ եկեալ էք: ⁹Եւ ասեն ցնա. Յերկրէ՛ հեռաստանէ յոյժ եկին ծառայք քո յանուն Տեառն Աստուծոյ քոյ. զի լուաք զանուն նորա, և զոր ինչ արար ընդ Եգիպտոս, ¹⁰և զոր ինչ արար ընդ երկուս թագաւորսն Ամովրիացւոց որ էին յայնկոյս Յորդանանու, ընդ Սեհոն թագաւորն Եսերոնի, և ընդ Ովգ թագաւորն Բասանու՝ որ բնակեալ էր յԱստարովք և յԵդրային: ¹¹Եւ խօսեցան ընդ մեզ ծերքն մեր, և ամենայն բնակիչք երկրին մերոյ և ասեն. Առէ՛ք ձեզ պաշար ճանապարհի՛ և երթայք ընդ

* Օրինակ մի. Եւ եկին և բնակեալ էին կէսք ՚ի նոցանէ մերձ ՚ի:

* Յօրինակին պակասէր. Եւ որ յամենայն ծո՛ւ... և Ամովրիացիք և Գերգեսացիք:

* Ոմանք. Եւ արարին նոքա խորամանկութիւն... ՚ի պատառատունս և կարկատունս:

* Այլք. Անկարուրդք. կամ՝ անկարուրդս: Ոմանք. Պաշարոյ իւրեանց հնացեալ չորացեալ և ճիճեկեր:

* Ոմանք. Գուցէ աստ բնակեալ իցես, և զիարդ դնիցենք ընդ քեզ:

առաջ նոցա, և ասասցիք ցնոսա. Ծառայք ձեր ենք, և արդ դի՛ք ընդ մեզ ուխտ. ¹²զի զհա՛ցս զայս մեր, ջերմ առաք պաշար ՚ի տանց մերոց յաւուր յորում ելաք ՚ի տանց մերոց և եկաք առ ձեզ. և արդ՝ չորացաւ և եղև ճրճեկեր. ¹³և տիկքս զոր լցաք գինւով՝ նորք էին՝ և պատառեցան, և ձորձք մեր և կօշիկք մաշեցան, ՚ի բազում երկայն ճանապարհէն՝: ¹⁴Եւ առին իշխանքն զպաշար նոցա՝ և զՏէր ո՛չ հարցին՝: ¹⁵Եւ արար ընդ նոսա խաղաղութիւն Յեսու. և ուխտեաց նոցա ուխտ ապրեցուցանել զնոսա. և երդուան նոցա իշխանք ժողովրդեանն: ¹⁶Եւ եղև յետ երից աւուրց զհետ ուխտելոյ նոցա զուխտն, լուան եթէ մօտաւորք են, և անդէն առ նոսա՝ բնակեն: ¹⁷Չուեցին որդիքն Իսրայէլի՝ և ելին ՚ի քաղաքս նոցա յաւուրն երրորդի. և քաղաքք նոցա էին Գաբաւոն և Կեփիրոն և Բերովթ, և քաղաքք յԱրիմայ՝: ¹⁸Եւ ո՛չ մարտեան ընդ նոսա որդիքն Իսրայէլի. քանզի երդուան նոցա ամենայն իշխանք ժողովրդեանն ՚ի Տէր Աստուած Իսրայէլի. և տրտնջեցին ամենայն ժողովուրդն զիշխանացն: ¹⁹Եւ ասեն ամենայն իշխանքն ցամենայն ժողովուրդն. Մեք երդուա՛ք նոցա ՚ի Տէր Աստուած Իսրայէլի, և ո՛չ կարենք ստել նոցա: ²⁰Արդ՝ զայս արասցուք նոցա ապրեցուցանել զնոսա, և ստասցուք զնոսա. և մի՛ եկեսցէ ՚ի վերայ մեր բարկութիւն վասն երդմանն զոր երդուաք նոցա: ²¹Եւ ասեն ցնոսա իշխանքն. Կեցցեն, և լինիցին փայտաբերք և ջրակիրք ամենայն ժողովրդեանդ. և եղեն փայտակոտորք և ջրաբերք՝ որպէս և ասացին նոցա իշխանքն՝: ²²Եւ կոչեաց զնոսա միահամուռ Յեսու, և խօսեցաւ ընդ նոսա և ասէ. Ընդէ՞ր խաբեցէք զիս և ասացէք՝ հեռի՛ ենք ՚ի ձէնջ յոյժ, և դուք գաւառականք էք բնակչացս որ ՚ի միջի մերում՝: ²³Եւ արդ՝ անիծեալք էք. և մի՛ պակասեսցէ ՚ի ձէնջ ծառայ փայտակոտոր և ջրկիր ինձ՝ և Աստուծոյ իմում՝: ²⁴Պատասխանի ետուն և ասեն ցՅեսու. Ազդեցութեամբ ա՛զդ եղև մեզ, զոր ինչ հրամայեաց Տէր Աստուած քո Մովսիսի ծառայի իւրոյ, տալ ձե՛զ զերկիրս զայս, և սատակել զմեզ և զամենայն բնակիչս սորա յերեսաց ձերոց. և երկեաք յոյժ վասն անձանց մերոց յերեսաց ձերոց, և արարա՛ք զիրն զայն՝: ²⁵Եւ արդ աւասիկ ենք ընդ ձեռամբ ձերով. որպէս հաճոյ է ձեզ և որպէս կամիք առնել՝ արարէ՛ք: ²⁶Եւ արարին նոցա այնպէս. և ապրեցոյց զնոսա Յեսու յաւուր յայնմիկ ՚ի ձեռաց որդւոցն Իսրայէլի, և ո՛չ կոտորեցին զնոսա: ²⁷Եւ կացոյց զնոսա յաւուր յայնմիկ փայտակոտորս և ջրակիրս ամենայն ժողովրդեանն՝ և սեղանոյն Աստուծոյ մինչև ցայսօր ժամանակի. և ՚ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր՝:

10

Գլուխ Ժ

* *Ոմանք.* Ի բազում երկար ճանապարհ:

* *Ոմանք.* Ջպաշարս նոցա:

* *Ոմանք.* Ի Գաբաւովն և Կեփիրան. *կամ՝* Կետա և Բերովթ և քաղաք յԱրիսա. *կամ՝* յԱմիրայ:

* *Ոմանք.* Կացցեն և լինիցին... և ջրկիրք ամենայն ժողովրդն... և եղեն նոցա փայտակոտորք և ջրբերք:

* *Ոմանք.* Բնակչաց որ ՚ի միջի մերում:

* *Ոմանք.* Եւ ջրաբեր ինձ և Աստուծոյ:

* *Բազումք.* Եւ սատակել զամենայն բնա՞:

* *Ոմանք.* Եւ կացոյց զնոսա Յեսու... և ջրկիրս:

ԺԸ ¹Եւ իբրև լուաւ Ադոնիբեզել թագաւորն Երուսաղէմի, թէ ա՛ռ Յեսու զԳայի, և սատակեա՛ց զնա. զոր օրինակ արար ընդ Երիքով և ընդ թագաւորն նորա, նոյնպէս արար ընդ Գայի և ընդ թագաւոր նորա. և զի անձնատո՛ւրք եղեն բնակիչք Գաբաւոնի առ Յեսու և առ Իսրայէլ՝ և եղեն ՚ի մէջ նոցա*.

²Չարհուրեցան յանձինս իւրեանց յոյժ. քանզի գիտէին թէ քաղաք մե՛ծ է Գաբաւոն որպէս զմի ՚ի մայրաքաղաքաց թագաւորացն. քանզի նա մե՛ծ էր քան զԳայի, և ամենայն արք նորա զօրաւորք*:

³Եւ առաքեաց Ադոնիբեզել արքայ Երուսաղէմի առ Ելամ արքայ Քերրոնի, և առ Քերամ արքայ Յերիմութայ, և առ Յեփիէ արքայ Լաքիսայ, և առ Դաբիր արքայ Ոդոդոմայ, և ասէ*.

⁴Եկա՛յք ելէ՛ք առ իս և օգնեցէ՛ք ինձ. և տացուք պատերա՛զմ ընդ Գաբաւոնի. զի անձնատո՛ւրք եղեն առ Յեսու և առ որդիսն Իսրայէլի:

⁵Եւ գումարեցան և ելին հինգ թագաւորքն Յերուսաղոց. թագաւորն Երուսաղէմի, և թագաւորն Քերրոնի, և թագաւորն Յերիմութայ, և թագաւորն Ղաքիսայ, և թագաւորն Ոդոդոմայ. ինքեանք և ամենայն ժողովուրդ նոցա, և նստան զԳաբաւոնիս և պաշարեցին զնա*:

⁶Եւ առաքեցին բնակիչք Գաբաւոնի առ Յեսու ՚ի բանակն Իսրայէլի ՚ի Գաղզաղա՝ և ասեն. Մի՛ թողացուցես զձեռն քո ՚ի ծառայից քոց, ե՛լ առ մեզ վաղվաղակի և ապրեցո՛՛ զմեզ, և օգնեա՛ մեզ. զի ժողովեա՛լ են ՚ի վերայ մեր ամենայն թագաւորք Ամովրիացոց որ բնակեալ են ՚ի Լեռնակողմանն:

⁷Եւ ել Յեսու ՚ի Գաղզաղայ, ինքն և ամենայն զօրն պատերազմօղ ընդ նմա. և ամենայն որ կարող էր զօրութեամբ:

⁸Եւ ասէ Տէր ցՅեսու. Մի՛ երկնչիցիս ՚ի նոցանէն, զի ՚ի ձեռնս քո մատնեցից զնոսա. և ո՛չ ժուժկալեսցէ ՚ի նոցանէ և ո՛չ մի ոք առաջի ձեր*:

⁹Եւ եհաս ՚ի վերայ նոցա Յեսու յանկարծակի՛ զցայզն ամենայն՝ եկեալ ՚ի Գաղզաղայ:

¹⁰Եւ զարհուրեցո՛յց զնոսա Տէր յերեսաց Իսրայէլի. և երե՛կ զնոսա բեկումն մե՛ծ ՚ի Գաբաւոն. և հալածեցին զնոսա ընդ ճանապարհ զառիվայրին Բեթորոնայ, և կոտորեցին զնոսա մինչև յԱզելայ և ցՄակետայ*:

¹¹Եւ ՚ի փախչելն նոցա յերեսաց որդոցն Իսրայէլի ընդ զառիվայրն Բեթորոնայ, Եւ Տէր արկ ՚ի վերայ նոցա քարինս կարկտի յերկնից մինչև ցՅազելայ. և եղեն բազումք այնոքիկ որ մեռան ՚ի քարանց կարկտին, քան զայնոսիկ զորս կոտորեցին որդիքն Իսրայէլի սրով պատերազմի*:

ԺԹ ¹²Յայնժամ խօսեցաւ Յեսու ընդ Տեառն՝ յաւուր յորում մատնեա՛ց Տէր Աստուած զԱմովրիացին ընդ ձեռամբ որդոցն Իսրայէլի. ՚ի ժամանակին յորում խորտակեաց զնոսա ՚ի Գաբաւոն, և խորտակեցան յերեսաց Իսրայէլի: Եւ ասէ Յեսու. Կացցէ՛ արեգակն հանդէպ Գաբաւոնի և լուսին հանդէպ ձորոյն Եղոնայ*:

¹³Եւ կացին արեգակն և լուսին ՚ի կայի՛ իւրեանց. մինչև էառ Աստուած զվրէժ ՚ի թշնամեաց նոցա: Ո՞չ ապաքէն գրեա՛լ է այս ՚ի գիրս Ուղղութեան. Եւ եկա՛ց արեգակն ՚ի մէջ երկնից, և ո՛չ խաղաց ընդ արևմուտս, մինչև ցկատարո՛ւմն աւուր միոյ*:

¹⁴Եւ ո՛չ եղև այսպիսի օր, ո՛չ յառաջ և ո՛չ յետոյ # Լսել Աստուծոյ

* Այլք. Եւ եղեն ՚ի միջի նոցա:

* Ոմանք. Եւ զարհուրեցան:

* Ոմանք. Եւ առ Փերիմ արքայ Յերիմութայ... և առ Գաբիր արքայ Եգղովայ:

* Ոմանք. Եւ նստան ընդ Գաբաւոնիս և պա՛:

* Ոմանք. ՚ի նոցանէ, զի ՚ի ձեռնս քո մատնեցի զնոսա:

* Յօրինակին. Բեթորոնայ:

* Յօրինակին. Բեթորոնայ:

* Ոմանք. Յաւուր յայնմիկ յորում մատնեաց:

* Ոմանք. Մինչև ա՛ռ Տէր վրէժս ՚ի թշնամեաց իւրեանց:

ծայնի մարդոյ. զի Տէր պատերազմեցաւ խառն ընդ Իսրայէլի: ¹⁵Եւ դարձաւ Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա՝ ի բանակն ՚ի Գաղգադա:

Ի ¹⁶Եւ փախեան հնգեքին թագաւորքն այնոքիկ՝ և թաքեան ՚ի յայրին ՚ի Մակետայ: ¹⁷Եւ ա՛զդ եղև Յեսուայ՝ և ասեն. Գտան հինգ թագաւորքն թաքուցեալք ՚ի յայրի անդ՝ ՚ի Մակետայ: ¹⁸Եւ ասէ Յեսու. Թաւալեցուցէ՛ք վէմս մեծամեծս ՚ի բերան այրին, և կացուցէ՛ք ՚ի վերայ նոցա արս պահել՝ զնոսա՞. ¹⁹բայց դուք մի՛ դադարէք ՚ի պնդելոյ զհետ թշնամեաց ձերոց. և հասէ՛ք ՚ի վերջս նոցա, և մի՛ տայք թոյլ մտանել ՚ի քաղաքս իւրեանց. քանզի մատնեաց զնոսա Տէր Աստուած՝ ՚ի ձեռս մեր՞: ²⁰Եւ եղև իբրև դադարեաց Յեսու և ամենայն որդիքն Իսրայէլի ՚ի կոտորելոյ զնոսա կոտորո՛ւմն մեծ յոյժ մինչև ՚ի սպառ. և ապրեալքն որ ապրեցան ՚ի նոցանէ՛ մտին ՚ի քաղաքս ամուրս: ²¹Եւ դարձա՛ւ ամենայն ժողովուրդն ՚ի բանակն առ Յեսու ՚ի Մակեդայ ողջանդամք, և ո՛չ ոք կռնչեաց յորդուցն Իսրայէլի լեզուաւ իւրով: ²²Եւ ասէ Յեսու. Բացէք զայրն և հանէ՛ք առ իս զհնգեսին թագաւորսն յայրէ անտի: ²³Եւ արարին այնպէս. և հանին առ նա զհնգեսին թագաւորսն յայրէ անտի, զթագաւորն Երուսաղէմի, և զթագաւորն Քերթոնի, և զթագաւորն Յերիմութայ, և զթագաւորն Ղաքիսայ, և զթագաւորն Ոդողոմայ՞: ²⁴Եւ իբրև հանին զնոսա առ Յեսու. և կոչեաց Յեսու զամենայն Իսրայէլ և զյառաջամարտիկս երթալ ընդ նմա. և ասէ ցնոսա. Մատի՛ք յառաջ՝ և դի՛ք զոտս ձեր ՚ի վերայ պարանոցաց նոցա. և մատուցեալ եդին զոտս իւրեանց ՚ի վերայ պարանոցաց նոցա՞: ²⁵Եւ ասէ ցնոսա Յեսու. Մի՛ երկնչիք ՚ի նոցանէ՛ և մի՛ զանգիտիցէք, քաջացարո՛ւք և զօրացարո՛ւք, զի այսպէս արասցէ Տէր ընդ ամենայն թշնամիս ձեր՝ ընդ որս դո՛ւք մարտնչիցիք՞: ²⁶Եւ կոտորեաց զնոսա Յեսու, և կախեաց զնոսա հնգեսին զփայտից. և կային կախեալ զփայտիցն մինչև ցերեկոյ՞: ²⁷Եւ եղև ընդ արևմուտն, հրամայեաց Յեսու և իջուցին զնոսա ՚ի փայտիցն. և ընկեցին յայրն յորս փախուցեալ անկեալ էին. և թաւալեցուցին քարինս մեծամեծս ՚ի վերայ այրին մինչև ցայսօր ժամանակի՞: ²⁸Եւ զՄակետա առին յաւուր յայնմիկ, և կոտորեցին զնա սրով սուսերի. և զթագաւորն նոցա, և սատակեցին զնա՞ # և զամենայն շնչաւոր որ ՚ի նմա. և ո՛չ ոք մնաց ՚ի նմանէ ապրեալ և փախուցեալ. և արար ընդ թագաւորն Մակեդայ, զոր օրինակ արար ընդ թագաւորն Երիքովի՞: ²⁹Եւ գնաց Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա ՚ի Մակեդայէ ՚ի Ղերբնա. և պաշարեցին զՂերբնա, ³⁰և մատնեաց զնա Տէր ՚ի ձեռս Իսրայէլի. և ա՛ռ զնա, և զթագաւոր նորա, և կոտորեաց զնա սրով սուսերի, և զամենայն շնչաւոր որ ՚ի նմա. և ո՛չ մնաց ՚ի նմանէ և ո՛չ մի ապրեալ և փախստական. և արար ընդ թագաւորն նորա՝ զոր օրինակ արար ընդ թագաւորն Երիքովի՞: ³¹Եւ գնաց Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա ՚ի Ղերբնայէ

* *Օրինակ մի.* ՚ի վերայ նոցա պահապանս պահել զնոսա... (19) Եւ հասէք ՚ի վերայ նոցա:

* *Բազումք.* Եւ մի՛ տայք նոցա թոյլ:

* *Յօրինակին պակասէր.* Եւ արարին:

* *Այլք.* Եւ զյառաջամարտիկս երթեալս ընդ նմա:

* *Ոմանք.* Այլ քաջացարուք... զի այդպէս ար՞:

* *Ոմանք.* Ձնոսա զհնգեսին Յեսու... և կացին կա՞:

* *Այլք.* Եւ եղև ընդ արևմուտսն:

* *Ոմանք.* Եւ զթագաւորն նորա... ՚ի նմա ապրեալ... զոր օրինակ արարին ընդ թագաւորն Երիքովի:

* *Այլք.* Եւ ո՛չ մնաց ՚ի նմա, և ո՛չ մի... և արարին... զոր օրինակ արարին:

ի Ղաքիս, և նստաւ զնովաւ և պաշարեաց զնա. ³²և մատնեաց Տէր զՂաքիս ՚ի ձեռս Իսրայէլի, և ա՛ռ զնա յաւուրն երկրորդի, և կոտորեաց զնա բերանով սրոյ, և սատակեաց զնա, զոր օրինակ արար ընդ Ղեբնան: ³³Յայնժամ ել եղամ արքայ Գազերայ օգնել Ղաքիսայ. և եհար զնա Յեսու սրով սուսերի # և զգօրս նորա մինչև չմնալ ՚ի նոցանէ ապրեալ և փախստական* : ³⁴Եւ չուեաց Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա ՚ի Ղաքիսայ յՈդոդամ, և նստաւ զնովաւ և պաշարեաց զնա. և մատնեաց զնա Տէր ՚ի ձեռս Իսրայէլի, ³⁵և ա՛ռ զնա յաւուր յայնմիկ, և կոտորեաց զնա սրով սուսերի, և զամենայն շնչաւոր որ ՚ի նմա յաւուր յայնմիկ կոտորեցին, զոր օրինակ արարին ընդ Ղաքիս: ³⁶Եւ չուեաց Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա յՈդոդոմայ ՚ի Քեբրոն, և նստաւ զնովաւ*, ³⁷և առին զնա, և հարին զնա բերանով սուսերի. և զթագաւորն նորա, և զամենայն շնչաւոր որ ՚ի նմա, և ՚ի նմա ո՛չ ոք էր ապրեալ. և արարին ընդ նմա որպէս արարին ընդ Ոդոդամ. և սատակեցին զնա և զամենայն շնչաւոր, և զամենայն ինչ որ ՚ի նմա: ³⁸Եւ դարձաւ Յեսու և ամենայն Իսրայէլ ՚ի Դաբիր, և նստեալ զնովաւ, ³⁹առին զնա և զթագաւորն նորա, և զամենայն զօրս նորա. և հարին զնա բերանով սրոյ, և սատակեցին զնա և զամենայն շնչաւոր որ ՚ի նմա. և ո՛չ թողին և ո՛չ մի ապրեալ. զոր օրինակ արարին ընդ Քեբրոն նոյնպէս արարին ընդ Դաբիր և ընդ թագաւորն նորա. և որպէս արարին ընդ Ղեբնա և ընդ թագաւորն նորա: ⁴⁰Եւ եհար Յեսու զամենայն երկիրն լեռնական և զՆագեր, և զդաշտականսն, և զՎսեդովթ և զամենայն թագաւորս նորա. և ո՛չ եթող ՚ի նմանէ ապրեալ, և զամենայն շնչաւոր սատակեցին ՚ի նմանէ. զոր օրինակ պատուիրեաց Տէր Աստուած Իսրայէլի*: ⁴¹Եւ կոտորեաց զնոսա Յեսու, ՚ի Կադէսբառնեայ մինչև ցԳազա. և զամենայն երկիրն Գոսոմայ մինչև ցԳաբաւոն. ⁴²և զամենայն թագաւորսն նոցա. և զերկիր նոցա ա՛ռ Յեսու միանգամայն. զի Տէր Աստուած Իսրայէլի համագունդ կռուէր ընդ Իսրայէլի: ⁴³Եւ դարձաւ Յեսու և ամենայն Իսրայէլ ընդ նմա ՚ի բանակն ՚ի Գաղգաղայ:

11

Գլուխ ԺԱ

¹Իբրև լուաւ Յաբին արքայ Սուրայ, առաքեաց առ Յոբաբ արքայ Մառոնայ, և առ արքայն Սեմերոնի, և առ արքայն Աքիփայ*. ²և առ թագաւորս մեծի Սիդոնայ ՚ի լեռնայինսն, և յՌաբաթ հանդէպ Քեներթայ: Եւ ՚ի դաշտայինն, և ՚ի Նաբեթովր, և ՚ի ծովեզերեայս* ³Քանանացիս յարևելից կողմանէ. ՚ի ծովեզերեայսն Ամովրիացւոց, և ՚ի Քետացիս, և ՚ի Փերեզացիս, և Յերուսացիս որ ՚ի լերինն, և ՚ի Խևացիսն որ ընդ Ահերմոնիւ ՚ի Մասեփայ: ⁴Եւ ելին ինքեանք և թագաւորք իւրեանց ընդ նոսա. և զօր բազում իբրև զաւագ առ ափն ծովու բազմութեամբ, և երիվարք և կառք բազում յոյժ. ⁵գումարեցան ամենայն թագաւորքն այնոքիկ և եկին ՚ի միասին. և բանակեցան միանգամայն առ ջրովն Մառոնայ տալ պատերազմ ընդ Իսրայէլի: ⁶Եւ ասէ Տէր ցՅեսու. Մի՛ երկնչիր

* Ոմանք. Մինչև չմնալոյ ՚ի նոցանէ:

* Այլք. Եւ նստան զնովաւ:

* Օրինակ մի. Եւ զՆասեովթ և զամենայն թագ... սատակեաց ՚ի նմանէ:

* Ոմանք. Արքայ Ասովրայ... Մեռոնայ:

* Ոմանք. Եւ առ թագաւորն մեծի Սիդոնի: Այլք. Եւ ՚ի Նաբեթովր:

յերեսաց նոցա, զի վաղիւ ՚ի սո՛յն ժամու մատնեցի՛ց ես զամենեսեան զնոսա վանեալս առաջի որդւոցն Իսրայէլի. զերիվարս նոցա կարթակոտորս արասցես, և զկառս նոցա այրեսցեն հրով*։ ⁷Եւ եկն Յեսու և ամենայն զօրն պատերազմօղ ընդ նմա, ՚ի վերայ նոցա ՚ի ջուրն Մառոնայ յանկարծօրէն. և անկան ՚ի վերայ նոցա ՚ի լեռնակողմանն։ ⁸Եւ մատնեա՛ց զնոսա Տէր ընդ ձեռամբ Իսրայէլի. և կոտորեալ զնոսա արարին հալածական մինչև ցնեծն Սիդոն, և մինչև ցՄասրեփովթմայիմ, և մինչև ցղաշտն Մասեփայ ընդ արևելս. և կոտորեա՛ց զնոսա մինչև չմնալոյ ՚ի նոցանէ ապրեալ*։ ⁹Եւ արա՛ր ընդ նոսա Յեսու որպէս պատուիրեաց նմա Տէր. զերիվարս նոցա կարթակոտորս արար, և զկառս նոցա այրեա՛ց հրով։ ¹⁰Եւ դարձա՛ւ Յեսու ՚ի ժամանակին յայնմիկ, և ա՛ռ զԱսովր և զթագաւորն նորա, և սպան զնա. զի Ասովր էր նախիշխան ամենայն թագաւորութեանցն այնոցիկ*։ ¹¹Եւ կոտորեցին զամենայն շնչաւոր որ ՚ի նմա սրո՛վ սուսերի, և սատակեցին զամենեսին. և ո՛չ մնաց ՚ի նմա շնչաւոր։ Եւ զԱսովր այրեցին հրով. ¹²և զամենայն քաղաքս թագաւորութեանցն այնոցիկ, և զթագաւորս նոցա ա՛ռ Յեսու, և կոտորեաց զնոսա սրով սուսերի, և սատակեաց զնոսա. զոր օրինակ հրամայեա՛ց նոցա Մովսէս ծառայ Տեառն։ ¹³Այլ զամենայն քաղաքս հողացուցեալս ՚ի նոցանէ ո՛չ այրեաց Իսրայէլ, բայց միայն զԱսուր զոր այրեաց Յեսու*։ ¹⁴Եւ զամենայն կապուտ նորա և զամասուն առին իւրեանց յաւարի որդիքն Իսրայէլի. բայց զնոսա զամենեսին սատակեցին սրով սուսերի մինչև կորուսին զնոսա, և ո՛չ թողին ՚ի նոցանէ և ո՛չ մի շնչաւոր*։ ¹⁵Զոր օրինակ հրամայեաց Տէր Մովսիսի ծառայի իւրում. և որպէս պատուիրեաց Մովսէս Յեսուայ՝ նո՛յնպէս արար Յեսու. և ո՛չ անց և ո՛չ զիւիք յամենայնէ զոր պատուիրեաց նմա Մովսէս։ ¹⁶Եւ ա՛ռ Յեսու զամենայն երկիրն զայն, զլեռնակողմնն, և զամենայն երկիրն Նագբթ, և զամենայն երկիրն Գոսոմ, և զղաշտայինն և զարևմտեայն, և զլեառնն Իսրայէլի, և զհովիտս նորա որ առ լերամբն. ¹⁷ի լեռնէն Աքեղայ և ցելսն Սուրայ, մինչև ցԲաաղգադ. և զղաշտայինն Լիբանանու առ ոտամբն Ահերմոնի. և զթագաւորս նոցա. զամենեսին ա՛ռ և կոտորեաց*։ ¹⁸Եւ աւուրս բազո՛ւմս արար Յեսու ընդ ամենայն թագաւորսն ընդ այնոսիկ պատերազմ։ ¹⁹Եւ ո՛չ էր քաղաք զոր ո՛չ մատնեաց Տէր որդւոցն Իսրայէլի, բաց ՚ի Խևացուցն որ բնակեալ էր ՚ի Գաբաւոն. զամենեսին ա՛ռ պատերազմաւ։ ²⁰Ձի ՚ի Տեառնէ կարծրանային սիրտք նոցա պատահել պատերազմաւ Իսրայէլի՝ զի սատակեցին. և մի՛ տացի նոցա ողորմութիւն, այլ զի սատակեցին որպէս խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի։ ²¹Եւ եկն Յեսու ՚ի ժամանակին յայնմիկ՝ և սատակեա՛ց զԵնակիմսն, ՚ի լեռնակողմն Քեբրոնի, և Դաբիրայ, և յԱնովբայ՝ և յամենայն լեռնէն Իսրայէլի, և յամենայն լեռնէն Յուդայ, հանդերձ քաղաքօ՛ք նոցա. և սատակեաց զնոսա Յեսու*, ²²և ո՛չ մնաց

* Այլք. Սի՛ երկիցես յերեսաց նոցա։

* Ոմանք. Արարին զնոսա հալածականս մինչև ցծովն Սիդոն, և մինչև ցՄասրեփովթմացիս։

* Ոմանք. Եւ զթագաւորն նորա սպան հրով. և զի Ասովր էր նախ իշխան ՚ի վերայ թագաւորութեանցն այնոցիկ։

* Բազումք. ՚Ի սոցանէ ո՛չ այր՝։ Եւ ոմանք. Զողացուցեալս նոցա ո՛չ այրեաց ՚ի նոցանէ Իսրայէլ, բայց միայն զԵսովր։

* Յօրինակին պակասէր. Կապուտ նորա։

* Ի լուս՝. Եւ ցելսն Սէիրայ. համաձայն ոմանց ՚ի բնաք՝։

* Ոմանք. ՚Ի լեռնակողմանն Քեբրոնի։

յենակիմացն յորդուցն Իսրայէլի, բայց միայն ՚ի Գազա, և ՚ի Գէթ, և յԱսեղովթ մնացին*։ ²³Եւ ա՛ռ Յեսու զամենայն երկիրն որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի. և ետ Յեսու ժառանգութիւն Իսրայէլի վիճակաւ ըստ ցեղից նոցա. և դադարեաց երկիրն պատերազմել*։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ ա՛յս են թագաւորք՝ զորս կոտորեաց Մովսէս և որդիքն Իսրայէլի, և ժառանգեցին զերկիրն նոցա յա՛յնկոյս Յորդանանու յարևմտից կողմանէ, ՚ի ձորոյն Առնովնայ մինչև ցլեա՛ռնն Ահերմոն, և զամենայն զԱրաբա յարևելից կողմանէ։ ²ԶՍեհոն թագաւոր Ամովրիացւոց որ բնակեալ էր յԵսեբոն, և տիրէր յԱրոտրայ մինչև ցձորն Առնովնայ՝ յեզերք ձորոյն, և զկէսն Գաղաադու մինչև ցհեղեղատն Յաբովկայ. սահմանք որդուցն Ամոնայ*։ ³և Արաբա մինչև ցձովն Քէներեթայ, և ընդ արևելս մինչև ցձովն Աղի, յարևելից ընդ ճանապարհն Ասեմովթայ. և ՚ի Թեմանայ որ է ընդ Ասեղովթաւ ՚ի Փասգայնէ*։ ⁴Եւ սահմանք Ովգայ արքայի Բասանու՝ որ մնացեալ էր ՚ի սկայից անտի. որ բնակեալ էր յԱստարովթ և յԵդրային. ⁵իշխան ՚ի Լեռնէն Ահերմոնի և ՚ի Սեղքայ. և զամենայն Բասան մինչև ՚ի սահմանս Գէտուրայ, և Սաքաթի, և զկէս Գաղաադու սահմանացն Սեհոնի արքայի Եսեբոնայ։ ⁶Եւ Մովսէս ծառայ Տեառն և որդիքն Իսրայէլի հարին զնոսա. և ետ զայն Մովսէս ծառայ Տեառն ՚ի ժառանգութիւն Ռուբինի և Գադայ, և կիսոյ ցեղին Մանասէի։ ⁷Եւ ա՛յս են թագաւորք Ամովրիացւոց զորս կոտորեաց Յեսու և որդիքն Իսրայէլի յա՛յնկոյս Յորդանանու՝ առ ծովեզերքն Գաղաադու ՚ի դաշտին Լիբանանու մինչև ցլեառնն Աղովկայ յելսն Սէիրայ։ Եւ ետ զնա Յեսու ցեղիցն Իսրայէլի ՚ի ժառանգութիւն ըստ վիճակաց նոցա*։ ⁸ի Լերինն և ՚ի դաշտի, և յԱրաբա, և յԱսեղովթ, և յանապատին և ՚ի Նագթբ. զՔետացին, և զԱմովրիացին, և զՔանանացին, և զՓերեզացին, և զԽևացին, և զԳերգեսացին, և զՅեբուսացին։ ⁹Զթագաւորն Երիքովայ # զմի. զթագաւորն Գայեայ որ մերձ ՚ի Բեթէլ # զմի*։ ¹⁰Զթագաւորն Երուսաղէմի # զմի. զթագաւորն Քերոնի # զմի։ ¹¹Զթագաւորն Յերիմովթայ # զմի. զթագաւորն Ղաթիսայ # զմի։ ¹²Զթագաւորն Եզղոնի # զմի. զթագաւորն Գազերայ # զմի։ ¹³Զթագաւորն Ղաթիրայ # զմի. զթագաւորն Գեսեմայ # զմի*։ ¹⁴Զթագաւորն Յերմեայ # զմի. զթագաւորն Աբերայ # զմի*։ ¹⁵Զթագաւորն Ղորնայ # զմի. զթագաւորն Ողողոմայ # զմի։ ¹⁶Զթագաւորն Մակեդայ # զմի*։ ¹⁷Զթագաւորն Թափուայ # զմի. զթագաւորն Ոփերայ # զմի։ ¹⁸Զթագաւորն

* Ոմանք. Եւ ո՛չ մնաց Ենակիմացի որդուցն Իսրայէլի... և յԱսեղովթ մնացին։

* Ոմանք. Երկիրն պատերազմելոյ. կամ՝ պատերազմեալ։

* Այլք. Չեզերք ձորոյն։

* Ոմանք. Եւ Արաբիա մինչև ցձովն Քէներեթայ ընդ արևելս, և մինչև ցձովն Արաբիա ծովն Աղի յարևմտից ընդ ճանապարհն Արիմովթայ։

* Այլք. Եւ ետ զնոսա Յեսու ցե՛ր։

* Ոմանք. Որ է մերձ ՚ի Բեթէլ։

* Յօրինակին. Զթագաւորն Ղամիրայ զմի։ Ուր ոմանք ունին՝ Գադերայ։

* Ոմանք. Զթագաւորն Ադերայ զմի։

* Ոսկան յաւելու. Զթագաւորն Մակե՛... Զթագաւորն Բեթէլ զմի։

Նափեկայ # զմի. զթագաւորն Ասովրայ # զմի*: ²⁰Զթագաւորն Սամրոնայ # զմի. զթագաւորն Մառովնայ # զմի. զթագաւորն Ասքափայ # զմի: ²¹Զթագաւորն Թանաքայ # զմի. զթագաւորն Մակեդոնայ # զմի: ²²Զթագաւորն Կեդեսայ # զմի. զթագաւորն Յեկնոմայ զՔերմեդայն # զմի: ²³Զթագաւորն Դովրայ զՆափեդովրայ # զմի. զթագաւորն Գեդիմայ զԳեդգեդայն # զմի: ²⁴Զթագաւորն Թերայ # զմի: Ամենեքեան սոքա թագաւորք քսանկինն*:

13

Գլուխ ԺԳ

¹Եւ Յեսու ծերացեալ և անցեալ զաւուրքք: Եւ ասէ Տէր ցՅեսու. Դու ծերացեալ ես և անցեալ զաւուրքք. և երկիր բազում մնացեալ է 'ի ժառանգութենէ: ²Եւ այս է երկիրն մնացեալ. ամենայն սահմանք Փղշտացոց. Գեսուրի*. ³և Քանանացին, Յանձին՝ անտի ընդդէմ Եգիպտոսի մինչև 'ի սահմանս Ակկարոնի, ընդ աջմէ՝ Քանանացոյն համարի հնգից թագաւորացն Փղշտացոց. Գազացոյն, և Ազովտացոյն, և Ասկադոնացոյն, և Գեթացոյն, և Ակկարոնացոյն. և Խևացոյն 'ի Թենանայ* ⁴Եւ ամենայն երկիրն Քանանացոյն, Գազայ, և Սիդոնացիք մինչև ցՅափեկա մինչև ցսահմանս Ամովրիացոյն*. ⁵և զամենայն երկիրն Արաբա 'ի Փղշտացոց՝ և զամենայն Լիբանան յելիցն արևու, 'ի Գաղգաղայ՝ առ ոտամբ լերինն Ահերմոնի մինչև ցնուտս Եմաթայ*. ⁶ամենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմնն, 'ի Լիբանանէ մինչև 'ի Մասերեփի Թովթմայիմ: Եւ զամենայն Սիդոնացիս. Ես սատակեցից զնոսա յերեսաց որդւոցն Իսրայէլի. բայց դու բաժանեա՛ զնոսա 'ի ժառանգութիւն Իսրայէլի. որպէս պատուիրեցի քեզ*: ⁷Եւ արդ՝ բաժանեա՛ զերկիրս զայս 'ի ժառանգութիւն ինն ցեղիցն, և կիսոյ ցեղին Մանասէի. 'ի Յորդանանէ մինչև ցծովն մեծ ընդ կողմն արևմտից՝ տացես զնա. և ծովն մեծ սահմանեսցէ: ⁸Եւ երկու ցեղիցն՝ և կիսոյ ցեղին Մանասէի՝ որ են ընդ Ռուբինի և ընդ Գադայ # որ առին զժառանգութիւն իւրեանց զոր ետ Մովսէս յայնկոյս Յորդանանու յարևելից. բաժանեաց նոցա Մովսէս ծառայ Տեառն, ⁹յԱրոներայ՝ որ է առ եզերք հեղեղատին Առնովնայ, և զքաղաքն որ է 'ի մէջ ձորոյն, և զամենայն Սիսովր, 'ի Մեդաբայ մինչև ցԴեբոն. ¹⁰զամենայն քաղաքսն Սեհոնի արքայի Ամովրիացոց որ թագաւորեաց յեսերոն, մինչև ցսահմանս որդւոցն Ամոնայ. ¹¹և զԳաղաադայիսն, և զսահմանս Գեսուրայ, և զՄաքաթայ, և զամենայն լեռնն Ահերմոն. և զամենայն Բասանաստան մինչև ցՍեղքա*: ¹²Եւ զամենայն թագաւորութիւնն Ովգայ 'ի Բասան, որ թագաւորեաց յԱստարովթ և

* Ոմանք. Զթագաւորն Ափեկայ զմի... (20) զթագաւորն Սամովրայ զմի... զթագաւորն Նազգարայ զմի. և այլն: Ուր Ոսկան յաւելեալ համար 19 դնէ. Զթագաւորն Մադօն զմի. զթագաւորն Ասորրայ զմի:

* Ոմանք. Զթագաւորն Թերսայ զմի:

* Ոմանք. Փղշտացոց, Գեսսերինն:

* Ի լուս՝ Զնգից նախարարացն Փղշտաց՝: Ուր ոմանք ունին 'ի բնաբանի՝ թագաւորացն և նախարարացն: Եւ ոմանք լրկ՝ նախարարաց Փղշտացոցն:

* Այլք. Եւ ամենայն երկիրն Քանա՛:

* Այլք. Եւ զամենայն երկիրն Գաբայ:

* Ոմանք. Որ բնակեալ իցէ զլեռամբն 'ի Լիբա՛: Բազումք. 'ի Մասերեփովթմայիմ: Այլք. Բայց դու բաշխեա՛ զնոսա 'ի ժա՛:

* Ոմանք. Եւ զսահմանս Գեսարայ. և ոմանք՝ Գեսգուրայ:

յեղրային. նա՛ մնաց ՚ի մնացորդաց սկայիցն. և եհար զնա Մովսէս՝ և սատակեաց: ¹³Եւ ո՛չ սատակեցին որդիքն Իսրայէլի զԳետուրի, և զՄաքաթի, և զՔանանացին. և բնակէր թագաւորն Գետուրայ և Մաքաթայ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի մինչև ցայսօր: ¹⁴Բայց ցեղին Ղևեայ ո՛չ տուաւ բաժին և ժառանգութիւն. զի Տէր Աստուած Իսրայէլի է՝ նոցա ժառանգութիւն՝ որպէս ասաց նոցա Տէր: Եւ այս են բաժինք զոր բաժանեաց Մովսէս որդւոցն Իսրայէլի, յՌաբովթ Մովաբ յայնկոյս Յորդանանու յանդիման Երեքոյի: ¹⁵Եւ ետ Մովսէս ըստ ցեղին Ռուբինի և ըստ տոհմից նոցա. ¹⁶և եղեն սահմանք նոցա յԱրոնայ՝ որ կայ յանդիման ձորոյն Առնովնայ, և քաղաքն ՚ի ձորն Առնովնայ, և ամենայն Միսովր. և Մեդաբայ* ¹⁷մինչև ցԴեբոն. և զամենայն քաղաքս նոցա որ են ՚ի Միսովր, և զԴեբոն, և զԲամովթբայա՛ղ. և զտունս Բաւլմովթայ. ¹⁸և զՅասա, և զԿեդմովթ, և զՄեփայաթ. ¹⁹և զԿարիաթեմ, և զՍեբամա, և զՍարթ, և զՍիովր ՚ի լերինն Ենակայ*. ²⁰և զԲեթփագովր. և զԱսեդովթփասգայ, և զԲեթսիմովթ, և զամենայն քաղաքս Միսովրայ: ²¹Եւ զամենայն թագաւորութիւնն Սեհոնի արքայի Ամովրիացւոց, որ թագաւորեաց յԵսեբոն. զոր եհար Մովսէս, զնա՛ և զիշխանս Մադիամու, զԵւի, և զԲոկոն, և զՍուր, և զՈւր, և զՌովթ. և զիշխանս Պարասիոնացն զբնակեալս յերկրին*: ²²Եւ զԲաղաամ Բեովրեան զհարցուկն, կոտորեցին որդիքն Իսրայէլի սրով ՚ի միտն վայրկեանի: ²³Եւ եղեն սահմանքն Ռուբինի Յորդանան սահման: Այս է ժառանգութիւն որդւոցն Ռուբինի ըստ տոհմից իւրեանց, քաղաքք և աւանք նոցա: ²⁴Եւ ետ Մովսէս որդւոցն Գադայ ըստ տոհմից իւրեանց. ²⁵և եղեն նոցա սահմանք Յազերայ, և ամենայն քաղաքք Գադաադու. և կէս երկրի որդւոցն Ամովնայ մինչև ցԱրոնէր որ է յանդիման Արաբայ*. ²⁶և յԵսեբոնայ մինչև ցԶոռամովթ՝ առ Մասփայիւ. և Բոտանիմ, և Մանայեմ մինչև ցսահմանս Դաբիրայ: ²⁷Եւ յեմակն և Բեթարամ, և Բեթնամրա, և Սովթով, և Սափոն. և զայլ ևս թագաւորութիւնն Սեհոնի արքայի Եսեբոնայ. Յորդանան սահման է. մինչ ցեզր ծովուն Քենեթթայ, յայնկոյս Յորդանանու յարևելից*: ²⁸Այս է ժառանգութիւն որդւոցն Գադայ ըստ տոհմից իւրեանց. ըստ քաղաքաց նոցա՝ և ագարակք նոցին: ²⁹Եւ ետ Մովսէս կիսոյ ցեղին Մանասէի. և եղև կիսոյ ցեղի որդւոցն Մանասէի, ըստ տոհմից իւրեանց: ³⁰Եւ եղեն սահմանք նոցա ՚ի Մանայեմայ, և ամենայն Բասան. և ամենայն թագաւորութիւնն Ովգայ արքայի Բասանու, և ամենայն աւանք Յայիրայ, որ են ՚ի Բասանաստանի. վաթսուն քաղաք*. ³¹և կէս Գադաադու, և յԱստարովթ, և յԵղրային, քաղաքք թագաւորութեանն Ովգայ ՚ի Բասանաստանի: Եւ տուան որդւոցն Մաքիրայ որդւոյ Մանասէի, և կիսոյ որդւոցն Մանասէի ըստ տոհմից իւրեանց*: ³²Սոքա՛ են զորս ժառանգեցոյց Մովսէս յայնկոյս Յորդանանու յՌաբովթ Մովաբ յայնմ կողմանէ Յորդանանու հանդէպ Երիթոյի յարևելից: ³³Եւ ցեղին Ղևեայ ո՛չ ետ Մովսէս ժառանգութիւն. զի Տէր Աստուած Իսրայէլի ինքնին է ժառանգութիւն նոցա՝ որպէս խօսեցաւ ընդ նոսա:

* *Ոմանք.* Եւ Միգաբայ (17) մինչև ցԵսեբոն:

* *Ոմանք.* Եւ զԿարիաթարիմ, և զՍեբամ... ՚ի լերին Ենակիմայ:

* *Ոմանք.* Պարսիոնացն. բնակեալս յերկ՝. և *ոմանք*՝ Պարիսոնացւոց զբնա՛:

* *Օրինակ մի.* Մինչև Արուր, որ է յանդիման Ռաբբայ:

* *Ի լուս՝.* Ի վերայ յեմակն՝ *նշանակի՝* ծործոր. *զոր ոմանք ՚ի ներքս առեալ գրեն.* Եւ ՚ի ծործորն յեմակն: *Ուր օրինակ մի ունի.* Եւ ցԱմեկն Թիւթարիմ և Բեթարամ:

* *Ոմանք.* Սահմանք նոցա ՚ի Մայեմիմայ:

* *Ոմանք.* Եւ կիսոյ ցեղին որդւոցն Մանասէի ըստ տոհմիցն Իսրայէլի:

Գլուխ ԺԴ

¹Եւ սոքա՛ են որ ժառանգեցուցին որդւոցն Իսրայէլի յերկրին Քանանացւոց, որոց ժառանգեցուցին: Եղիազա՛ր քահանայ, և Յեսու Նաւեան, և իշխանք նահապետութեան ցեղից որդւոցն Իսրայէլի: ²Եւ վիճակօք ժառանգեցուցին. զոր օրինակ պատուիրեաց Տէր ՚ի ձեռն Յեսուայ, իննեցունց ցեղիցն, և կիսոյ ցեղին: ³Քանզի ետ Մովսէս ժառանգութիւն երկուց ցեղիցն և կիսոյ ցեղին յայնկոյս Յորդանանու: Եւ Ղևտացւոցն ո՛չ ետ ժառանգութիւն ՚ի մէջ նոցա՛: ⁴Ձի էին որդիքն Յովսեփու երկու ցեղք, Մանասէ և Եփրեմ. և ո՛չ տուաւ բաժին յերկրին Ղևտացւոցն, այլ քաղաքք բնակելոյ, և զատուցեալս ըստ նոցին, խաշանց նոցա. ⁵զոր օրինակ պատուիրեաց Տէր Մովսիսի, նոյնպէս արարին որդիքն Իսրայէլի՝ և բաժանեցին զերկիրն:

Իւ ⁶Եւ մատեան որդիքն Յուդայ առ Յեսու ՚ի Գաղգաղայ. և ասէ ցնա Քաղէբ Յեփոնեայ Կենեզեան. Դու ինքնին գիտես զբանն՝ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի առնն Աստուծոյ՝ վասն իմ և վասն քո ՚ի Կաղէբառնեա՛. ⁷զի քառասնամեայ էի ես, յորժամ առաքեաց զիս Մովսէս ծառայ Տեառն ՚ի Կաղէբառնեայ լրտեսել՝ զերկիրն. և բերաք նմա զրոյց ըստ մտաց նորա՛: ⁸Բայց եղբարքն իմ որ ելին ընդ իս՝ թիւրեցին զմիտս ժողովրդեանն. բայց ես յաւելայ՝ երթալ զհետ Տեառն Աստուծոյ իմոյ: ⁹Եւ երդուաւ Մովսէս յաւուր յայնմիկ և ասէ. Յերկիրն յոր հասեր՝ քե՛զ լիցի ՚ի ժառանգութիւն և որդւոց քոց յաւիտեան. զի յաւելար երթալ զհետ Տեառն Աստուծոյ իմոյ՛: ¹⁰Եւ արդ կերակրեաց զիս Տէր որպէս ասաց՝ այս ամք քառասներորդ հինգերորդ է՝ յորմէ հետէ խօսեցաւ Տէր զբանս զայս ընդ Մովսիսի. և շրջեցաւ Իսրայէլ յանապատին: Եւ արդ աւասիկ են ես այսօր ամաց ութսուն և հնգից. ¹¹և կարո՛ղ են այսօր՝ որպէս յորժամ առաքեաց զիս Մովսէս, նոյնպէս և արդ կարօղ են մտանել և ելանել ՚ի պատերազմ: ¹²Եւ այժմ խնդրեմ ՚ի քէն զլեառնն զայն՝ որպէս ասաց Տէր յաւուր յայնմիկ. զի դու ինքնին լուար զբանս զայս յաւուր յայնմիկ. և արդ աւանիկ ենակի՛նք են անդ, և քաղաքք ամուրք և մեծամեծք. արդ եթէ Տէր ընդ իս է՝ սատակեցից զնոսա որպէս ասաց ինձ Տէր՛: ¹³Եւ օրհնեաց զնա Յեսու. և ետ զՔերրոն Քաղէբայ որդւոյ Յեփոնեայ Կենեզացւոյ ՚ի ժառանգութիւն: ¹⁴Վասն այնորիկ եղև Քերրոն Քաղէբայ որդւոյ Յեփոնեայ Կենեզացւոյ ՚ի ժառանգութիւն. վասն երթալոյ նորա զհետ հրամանի Տեառն Աստուծոյ Իսրայէլի՛: ¹⁵Եւ անուն Քերրոնի էր յառաջ քաղաք՝ Արբոկ. նա՛ էր մայր քաղաքաց ենակիմանցն. և երկիրն դադարեաց ՚ի պատերազմ՛:

* *Ոմանք.* Երկուցունց ցեղիցն և կի՛:

* *Յօրինակին.* Առ Յեսու ՚ի Գաղաաղ. և ասէ ցնա Քաղէբ:

* *Ոմանք.* Ձի քառասուն ամաց էի:

* *Ոմանք.* Յերկիրն զոր հասեր:

* *Բազումք.* Որպէս և ասաց ինձ Տէր:

* *Յօրինակին.* Որդւոյ Յօփոնեայ:

* *Ոմանք յաւարտ 15 համարիս.* ՚ի պատերազմէ, *յաւելուն զբանս զայս.* Եւ Ադամ մեծն ննջեալ ՚ի մէջ սկայիցն:

Գլուխ ԺԵ

¹Եւ եղեն սահմանք ցեղից որդւոցն Յուդայ, ըստ տոհմի իւրեանց ՚ի սահմանացն Եդոմայեցւոց, ՚ի Սինն անապատէ մինչև ՚ի Կադէս*, ²ըստ հարաւակողմն. և եղեն նոցա սահմանք ՚ի հարաւոյ մինչև յեզր ծովուն Աղւոյ, ՚ի սարոյն որ իջանէ ՚ի հարաւակողմն*, ³և անցանեն մինչև ՚ի գառ ՚ի վայրին Ակրաբիմայ, և պատին զՍինաքաւ, և վերանան ՚ի հարաւոյ ցԿադէսբառնեա, և ելանեն ՚ի Յովն, և ձգին առ Ադդարաւ, և պատին առ արևմտիւքն Կադէսայ*. ⁴և երթան ցԱսեմոնա, և հանեն մինչև ցձորն Եգիպտացւոց. և եղիցին նորա ելք սահմանացն ընդ ծովակողմն: Այս են նոցա սահմանք ՚ի հարաւոյ*: ⁵Եւ սահմանք յարևելից ամենայն ծովն Աղի, մինչև ցեզրն Յորդանանու: Եւ սահմանք նոցա ըստ հիւսւսի. ՚ի սարոյ ծովուն և յեզերէ Յորդանանու. ⁶հասանեն սահմանքն ՚ի Բէթազդա, և շրջին առ հիւսւսով ցԲէթարաբու, և վերանան սահմանքն առ Բեովն վիմաւ որդւոցն Ռուբինի. ⁷և ելանեն սահմանքն առ չորրորդ մասամբ ձորոյն Աքովրայ. և ընդ հարաւակողմն, և իջանեն ՚ի Գադգադ, որ է հանդէպ մատուցին Եդոմիմա, և ընդ հարաւակողմն. և հասանէ սահմանն ՚ի ջուր Արեգ աղբեր. և եղիցին նոցա ելք, աղբերն Ռովգեղայ*. ⁸և ելանեն սահմանքն ՚ի ձոր որդւոցն Ենովմայ ՚ի թիկանց Յերուսայ ՚ի հարաւոյ, այն է Երուսաղէմ. և հասանեն սահմանքն ՚ի գլուխ լերինն՝ որ է հանդէպ ձորոյն Ենովմայ ՚ի ծովակոյս կողմանէ՝ որ է յեզեր երկրին Ռափայնոց ընդ հիւսւսի*: ⁹Եւ հանէ սահմանն ՚ի գլխոյ լերինն յաղբեր ջրոյն Ափովթայ, և հատանէ լեռնն Եփրեմի ՚ի Գայի. և հանէ սահմանն ՚ի Բաադ. այն է քաղաք Յարիմայ*: ¹⁰Եւ պատի սահմանն ՚ի Բաադայ ընդ ծովակողմն Ասարես ՚ի լեռնն Սէիր, և պատի զթիկամբք քաղաքին Յարիմայ ՚ի հիւսւսոյ. այն է Քասդոն. և իջուցանէ յԱրեգ քաղաք, և անցանէ ՚ի հարաւ. ¹¹և հատանէ սահմանն ՚ի թիկանց Ակկարոնի ընդ հիւսւսի. և հանեն սահմանքն ՚ի Սարքայովմայ, և անցանեն առ լեռամբ երկրին Բաադայ, և հատանեն ցԱբնեդ. և եղիցին ելք սահմանաց նոցա ընդ ծովակողմն*. ¹²և զսահման նոցա ՚ի ծովէ՝ ծովն մեծ գատանէ: Այս են սահմանք որդւոցն Յուդայ շուրջանակի, ըստ տոհմից իւրեանց: ¹³Եւ Քադէբայ որդւոյ Յեփոնեայ ետ բաժին ՚ի մէջ որդւոցն Յուդայ հրամանաւ Աստուծոյ. և ետ նմա Յեսու զքաղաքն Արբոկ, զմայր քաղաքացն Ենակայ, այն է Քեբրոն*: ¹⁴Եւ սատակեաց զնոսա անտի Քադէբ որդի Յեփոնեայ, զերիս որդիսն Ենակայ, զՍուսի, զԹովմայի, և զԱքիման, զԾնունդս Ենակայ: ¹⁵Եւ ել անտի Քադէբ ՚ի

* Այլք. Սահմանք ցեղի... ըստ տոհմից: Ոմանք. ՚ի սահմանացն Սիդոնացւոցն:

* Այլք. Ընդ հարաւակողմն, և եղեն:

* Ի լուս՝ ՚ի գառ ՚ի վերին Ակրաբի՝. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Ի լուս՝. Եւ ելանեն ՚ի Յովն, և ձգին. ուր ոմանք ունին. ՚ի Յովն:

* Ոմանք. Եւ երթան յԱսեմոնայ... և եղիցին նորա ելք սահ՝:

* Ոմանք. Յանդէպ մատուցին Ռոմիմայ:

* Այլք. Եւ հանեն սահմանքն ՚ի գլուխ:

* Ի լուս՝. Եւ հատանէ սահմանն. ուր ոմանք ունին՝ հասանէ: Ոմանք. Ջրոյն Նափոնայ, և հասանէ ՚ի լեռնն Եփրեմի ՚ի Գայի: Ի լուս՝. Եւ հանէ լեռն ՚ի Բաադ. այն է:

* Ոմանք. Եւ հասանէ սահմանն... և հանեն սահմանքն ՚ի Սաքարոնայ... և հասանեն ցԱբէլ. կամ՝ յԱբնադ:

* Ոմանք. Արբոկ, որ է մայր քա՝:

վերայ բնակչացն Դաբիրայ. և անուն Դաբիրայ՝ էր յառաջագոյն քաղաք
 Նամակաց*։ ¹⁶Եւ ասէ Քաղէբ. Որ ոք առջէ զքաղաքն Նամակաց, և տիրեսցէ նմա,
 տաց նմա զԱսքա դուստր իմ կնութեան։ ¹⁷Եւ ա՛ն զնա Գոթոնիէլ որդի Կենեզի,
 եղբայր Քաղէբայ կրտսեր. և ե՛տ նմա զԱսքա դուստր իւր կնութեան*։ ¹⁸Եւ եղև
 յերթալն նորա խորհեցաւ ընդ նա՝ և ասէ. Խնդրեցի՛ց ՚ի հօրէ իմմէ ազարակ. և
 աղաղակեաց յիշոյ անտի։ Եւ ասէ ցնա Քաղէբ. Չի՞ է քեզ*։ ¹⁹Եւ ասէ ցնա. Տո՛ւր
 ինձ օրհնութիւն. զի յերկիր Նագեբ ետուր զիս, տո՛ւր ինձ Գողաթմայիմ։ Եւ ետ
 նմա Քաղէբ զԳողաթն վերին՝ և զԳողաթն ներքին*։ ²⁰Այս է ժառանգութիւն ցեղի
 որդւոցն Յուդայ՝ ըստ տոհմից իւրեանց։ ²¹Եւ եղեն նոցա քաղաքք. քաղաք
 առաջին ցեղի որդւոցն Յուդայ ՚ի սահմանս Եդոմայ յանապատին։ Կասբէղ՝, և
 Եդրայիւն և Յագուր*։ ²²և Կինա, և Դեննա, և Ադադա. ²³և Կադէս, և Իթնանգիփ*.
²⁴և Տէլէմ, և Բաադովթ. ²⁵և քաղաքն Ասերոն, այն է Ասովր*։ ²⁶Ամամ, և Սամաս, և
 Մովղադա. ²⁷և Ասերգադդա, և Բեթփաղէթ. ²⁸և Ասարսուդա, և Բերսաբէէ. և
 աւանք նոցա, և ազարակք նոցա։ ²⁹Բաադա, և Աւիմ, և Ասեմ. ³⁰և Եղթովղադ, և
 Քուդ, և Երմա*, ³¹և Սիկեղէկ, և Մադեբենա, և Սանսաննա. ³²և Ղամովթ, և Սեղէմի,
 և Ռեմոն. քաղաքք քսանկինն՝ և աւանք նոցա*։ ³³Ի դաշտավայրս, Եսթաուդ, և
 Սարաա, և Ասնա. ³⁴և Ռամոն, և Ջանով, և Ադիաթեմ, և Ենայիմ*, ³⁵և Յերիմութ, և
 Ոդդամ, և Ներմա, և Սոքով, և Ազեկա. ³⁶և Սարգարիմ, և Գադերա. և ազարակք
 նոցա. քաղաքք չորեքտասանք և աւանք նոցա։ ³⁷Սենան, և Ադասա, և
 Մակգադգադ, ³⁸և Գադաան, և Մասփա, և Յեքթրայեղ. ³⁹և Ղաքիս, և Բազկաթ, և
 Ազդոմ, ⁴⁰և Քարբա, և Ղամաս, և Քասդոմ, ⁴¹և Գադերովթ, և Բեթղազոն և Նովմա,
 և Մակեդդա. քաղաքք վեշտասան և աւանք նոցա։ ⁴²Ղեբնա, և Աթեր*, ⁴³և
 Յեփթա, և Ասեննա, և Նեսիթ, ⁴⁴և Կէիդա, և Աքեզիթ, և Մարեսա, և Եղէմովմ.
 քաղաքք ի՛նն և աւանք նոցա։ ⁴⁵Ակկարոն, և աւանք նորա, և ազարակք նորա.
⁴⁶և յԱկկարոնէ յեմէն, և ամենայն արուարձանք Ազդարովղայ. և աւանք նոցա և
 ազարակք նոցա*։ ⁴⁷Գազա, և աւանք նորա և ազարակք նորա, մինչև
 ցիւղեղատն Եգիպտոսի. և ծովն մեծ զատուցանէ։ ⁴⁸Եւ ՚ի լեռնավայրսն՝ Սափիր,
 և Յեթեր, և Սովքով. ⁴⁹և Դեննա. և լեռոնն Ահերմոն. և քաղաքն Նամակաց. այն է
 Դաբիր. ⁵⁰և Անովթ, և Եսթեմով, և Անիմ. ⁵¹և Գոսոմ, և Քիդուոն, և Գեդոն. քաղաքք
 մետասան, և աւանք նոցա։ ⁵²Երեբ, և Եսան. և Երումա. ⁵³և Յանոււմ, և Բեթթա
 Փուէ, և Ափակա*. ⁵⁴և Քամմատա. և քաղաքքն Արբոկ. այն է Քեբրոն, և Սիովր.
 քաղաքք ի՛նն, և աւանք նոցա։ ⁵⁵Մաւոն, և Քերմէղ, և Ջիփ, և Յետտա. ⁵⁶և
 Յեզրայեղ, և Յեկտա, և Ջանովաեկիմ*, ⁵⁷և Գարաա, և Թամնա. քաղաքք ի՛նն, և

* *Ոմանք.* Քաղաք Նամակայ։ (16) Ջքաղաքն Նամակայ. *կամ*՝ Ամակայ։
 * *Ոմանք.* Եղբայր Քաղէբայ կրտսերի... զԱսքա դուստր կնութեան նորա։
 * *Ոմանք.* Խորհեցաւ ընդ նոսա և ասէ։ *Այլք.* Եւ ասէ ցնա... Չի՞ է քեզ։
 * *Ոմանք.* Չի յերկիրն Ազեբ ետուր... զԳովղաթմայիմ։
 * *Ոմանք.* Եւ եղեն նոքա քաղաքք... Կասպսեղ, և Եդ՞։
 * *Ոսկան յաւելուածով.* Եւ Կադէս և Ասօր, և Իթնամ։ Չիփ, և Տէլէմ. *ուր ոմանք*՝ Իթնագիփ։
 * *Ոսկան յաւելու.* Ասերոն, Կարիօթ, Էսրօն, այն է Ա՞։
 * *Ոմանք.* Եւ Ելթովղա և Քսիդ, և Եր՞։
 * *Ոսկան.* Եւ Սէլէմի, և Այիմ, և Ռեմոն։ *Ուր ոմանք.* Եւ Սէլէիմ։
 * *Ոմանք.* Եւ Ռամէն և Ջանով։
 * *Ոսկան.* Եւ Աթեր և Ասան։
 * *Ոմանք.* Արուարձանք Ասդովթայ։
 * *Ոմանք.* Եւ Բեթփափուէ, և Ափա։
 * *Ոմանք.* Եւ Յեզրայեղ և Յեկդամ, և Ջանովաեկիմ։ *Ուր Ոսկան.* և Ջանովա։ Էկիմ. (57) և

աւանք նոցա: ⁵⁸Աղուղ, և Բեթսուր, և Գեդովր, ⁵⁹և Մարովթ, և Բեթանովթ, և Եղթեկեն. քաղաքք վեց, և աւանք նոցա: Թեկով, և Եփրաթա. այն է Բեթղ'ահէն, և Բագովր, և Ետամ, և Կուղովն, և Տատամի, և Սովրէս, և Կարէն, և Գաղղին, և Բեթեր, և Մանորով. քաղաքք մետասան, և աւանք նոցա*: ⁶⁰Կարիաթբաաղ. նա՛ է քաղաք Յարիմայ, և Արաբա. քաղաքք երկու, և աւանք նոցա, և ագարակք իւրեանց: ⁶¹Բեթբարգիս, և Բեթարաբա, և Մաղովն, և Սովքովա*. ⁶²և Նեբսան. և քաղաքք աղտիցն, և Ենգաղիս. քաղաքք եւթն, և աւանք նոցա*: ⁶³Եւ Յերուսացին բնակեալ էր յերուսաղէն, և ո՛չ կարացին որդիքն Յուդայ մարտնչել ընդ նոսա. և բնակեցան Յերուսացիքն ընդ որդիսն Յուդայ յերուսաղէն մինչև ցայսօր*:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ եղեն որդւոցն Յովսեփայ սահմանք, ՚ի Յորդանանէ հանդէպ Երիքոյի, ՚ի ջրոյ անտի որ հանդէպ Երիքոյի, յարևելից ընդ անապատն. և ամբառնան յերիքովէ ՚ի լեռնակողմ անապատին ՚ի Բեթեղղուզ*. ²և ելանէ ՚ի Բեթեղղուզայ, և անցանեն առ սահմանօքն Արքիատարովթայ: ³Եւ ելանեն ընդ ծովակողմն ՚ի սահմանսն Յեփաղթայ, մինչև ցսահմանս Բեթորոնայ ներքնոյ, և մինչև ցԳազեր. և եղիցին ելք նոցա ընդ ծովակողմն*. ⁴և ժառանգեցին որդիքն Յովսեփայ՝ Եփրեմ և Մանասէ: ⁵Եւ եղեն սահմանք որդւոցն Եփրեմայ ըստ տոհմից իւրեանց. և եղեն սահմանք ժառանգութեան նոցա, յարևելից՝ Աստարովթ, և Ադար, մինչև ցԲեթորոնն վերին, և ցԳազեր*. ⁶և անցանեն սահմանքն ընդ ծովակողմն ՚ի Մաքովթ ՚ի հիւսւսոյ. և պատիցի սահմանն ընդ արևելս ՚ի Թենաթսելով. և անցանէ յարևելից առ Յանովա*. ⁷և իջցէ Յանովայ յԱստարովթ, և ՚ի Նաարաթա. և աւանք նոցա: Եւ անցցեն առ Երիքոյի, և հանցեն ՚ի Յորդանան*. ⁸և ՚ի Թափուեայ անցցեն սահմանքն ՚ի ծովակողմն ՚ի հեղեղատն Կանայ. և եղիցին ելք նորա ՚ի ծովակողմն: Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Եփրեմի ըստ տոհմից իւրեանց: ⁹Եւ քաղաքքն զատուցեալք որդւոցն Եփրեմի, ՚ի մէջ ժառանգութեան որդւոցն Մանասէի. և ամենայն քաղաքք և աւանք նոցա: ¹⁰Եւ ո՛չ կորոյս Եփրեմ զՔանանացին բնակեալ ՚ի Գազեր. և բնակէր Քանանացին ՚ի մէջ Եփրեմայ մինչև ցայսօր: Մինչև ել

Գարաա. Գիրիա. և Թամնա. քաղաքք մետասան. և աւանք նոցա:

* *Ոմանք.* Եւ Տովրէս և Կարեն:

* *Ոմանք.* Բեթգարգիս... և Մագովն. և Մանայ և Սովքովայ:

* *Օրինակ մի.* Եւ Նեբրան, և քաղաք աշտիցն, և Ենգաղի:

* *Ոմանք.* Որդիք Իսրայելի մարտնչել ընդ նոսա:

* *Ի բազումս պակասի.* Երիքոյի, ՚ի ջրոյ անտի որ հանդէպ Երիքոյի. յարևելից: *Ոմանք.* Եւ ամբառնայր ՚ի յերիքովէ ՚ի լեռնակողմ:

* *Ի լուս՝.* Եւ ելանեն ընդ լեռնակողմն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Ոսկան.* Ելք նոցա ընդ ձախակողմն:

* *Ոմանք.* Յարևելից Ատարովթ. *կամ՝* Աթարովթ: *Ի լուս՝.* Եւ ցԳազար. *ուր ոմանք՝* և ցԳազերայ:

* *Այլք.* Ի Մաքովթ ՚ի հիւս՝: *Բագունք.* Ի Թենաթսելով. և *օրինակ մի՝* ՚ի Թարենաթսելով, և անցցէ յարևելից:

* *Բագունք.* Յանովայ յԱտարովթ. *կամ՝* յԱմտարովթ:

փարաւոն արքայ Եգիպտացոց և ա՛ն զքաղաքն՝ և այրեաց զնա հրով. և զՔանանացին և զՓերեզացին զքնակեալն՝ ՚ի Գազեր խոտեաց. և ետ զնա փարաւոն պաշտական դստեր իւրում. և եղեն ծառայք հարկատուրք*:

17

Գլուխ ԺԷ

¹Եւ եղեն սահմանք ցեղի որդւոցն Մանասէի. զի նա՛ էր անդրանիկ Յովսեփայ, Մաքիրայ՝ անդրանկանն Մանասէի հօր Գաղաադու, քանզի այր պատերազմօղ էր, Գաղաադայինն ՚ի Բասանաստան*։ ²Եւ եղև այլոց որդւոցն Մանասէի, ըստ տոհմից իւրեանց, որդւոցն Աքիեզերայ, և որդւոցն Քեղկեայ, և որդւոցն Երիէղեայ, և որդւոցն Եքէմայ, և որդւոցն Սեմիրայեայ, և որդւոցն Ոփերայ: Սորա՛ են որդիք Մանասէի որդւոյ Յովսեփայ արու՛րք ըստ տոհմից իւրեանց*։ ³Եւ Սաղ՛պաադայ որդւոյ Ոփերայ, որդւոյ Գաղաադու, որդւոյ Մաքիրայ, որդւոյ Մանասէի, ո՛չ գոյին նորա ուստերք, այլ դստերք: Եւ այս են անուանք դստերացն Սաղ՛պաադայ. Մաադա, և Նուա, և Էգդա, և Մեղ՛քա, և Թերսա: ⁴Կացին առաջի Եղիազարու՝ քահանայի, և առաջի Յեսուայ որդւոյ Նաւեայ, և առաջի իշխանացն՝ և ասեն. Աստուած պատուիրեաց ՚ի ձեռն Մովսիսի տա՛լ մեզ ժառանգութիւն ՚ի մէջ եղբարց մերոց: Եւ տուա՛ւ նոցա ժառանգութիւն հրամանաւ Տեառն ՚ի մէջ եղբարց հօր իւրեանց: ⁵Եւ ել վիճակ Մանասէի դաշտն Ղաբեկայ, և Գաղաադի, և Բասանա, որ է յա՛յնկոյս Յորդանանու*։ ⁶Զի դստերք որդւոց Մանասէի ժառանգեցին վիճակ ՚ի մէջ եղբարց իւրեանց. և երկիրն Գաղաադու եղև որդւոցն Մանասէի մնացելոցն: ⁷Եւ եղեն սահմանք որդւոցն Մանասէի, յԱսերմաքովթայ, որ է հանդէպ Սեքեմայ, և երթան սահմանքն ցՅամին, և ցԱսեր՝ յադբերն թափթովթայ. Մանասէի եղիցի երկիր թափթովթայ*։ ⁸և թափթովթա ՚ի սահմանս Մանասէի որդւոցն Եփրեմայ: ⁹Եւ իջանեն սահմանքն ՚ի ձորն Կանայի ընդ հարաւակողմն հանդէպ ձորոյն Յայիրայ. և բնեկնին Եփրեմայ ՚ի մէջ քաղաքին Մանասէի: Եւ սահմանք Մանասէի ընդ հիւսւսի ցհեղեղատն. և եղիցին նորա ելք ծովն*, ¹⁰ի հարաւակողմն կուսէ Եփրեմայ, և ՚ի հիւսւսոյ Մանասէի. և եղիցի ծովն սահման նոցա. և յԱսեր յա՛ր՝ իցեն ՚ի հիւսւսոյ կողմանէ. և յԻսաքար՝ յարևելից կողմանէ*։ ¹¹Եւ եղիցի Մանասէ ընդ Իսաքա՛ր և ընդ Ասեր: Բեթսան, և աւանք նոցա. և Ամբղան և դստերք նորա. բնակիչք Ենդովրայ, և աւանք նորա. և բնակիչք Մակեդոդվայ, և աւանք նորա. և բնակիչք Տանաքայ, և աւանք նորա. և երրորդ Նափեթայ, և աւանք նորա*։ ¹²Եւ ո՛չ կարացին որդիք Մանասէի սատակել զքաղաքսն զայնոսիկ. և սկսաւ

* *Օրինակ մի.* Եւ զքնակեալս ՚ի Գազեր խոցոտեաց, և ետ: *Ոմանք.* Պատտական. *կամ՝* պաշատական. *և ոմանք՝* Պաշտատական: *Ուր ևս՝ ոմանք.* Ծառայք հարկատուրք. *և ոմանք՝* Հարկաւորք:

* *Ոմանք.* Անդրանիկ Մանասէի... և Գաղաազինն և Բասանաստանի:

* *Ոմանք.* Եւ որդւոցն Սիքեմայ, և որդւոցն Սեմիրայ:

* *Ոմանք.* Վիճակն Մանասէի ՚ի դաշտն Ղաբեկայ ՚ի Գաղաադի ՚ի Բանանայ, որ է:

* *Բազումք.* ՅԱսերմաքովթայ, որ է հանդէպ Սիմեայ. *կամ՝* Սեքեմայ: *Յօրինակին պակասէր.* Եւ երթան սահ՛:

* *Ոմանք.* Եւ իջեն սահ՛... ձորոյն Յայիրայի և Բնեկնին Եփրեմի... ընդ հիւսիսոյ հեղեղատն:

* *Ոմանք.* Եւ յԱսեր յարիցեն. *կամ՝* յարեցին:

* *Ոմանք.* Եւ երրորդն Ադեթայ, և Ա՛:

Քանանացին բնակել յերկրին յայնմիկ: ¹³Եւ եղև իբրև յաղթահարեցին որդիքն Իսրայելի, արարին զՔանանացին հնազանդս. բայց սատակելով ո՛չ սատակեցին զնոսա: ¹⁴Ընդդէմ դարձան որդիք Յովսեփայ Յեսուայ՝ և ասեն. Ընդդէմ ժառանգեցուցեր մեզ մի ժառանգութիւն և մի վիճակ. և ես ժողովուրդ բազում եմ. և Աստուած օրհնեաց զիս: ¹⁵Ասէ ցնոսա Յեսու. Եթէ ժողովուրդ բազում ես դու, ե՛լ յանտառն՝ և սրբեա՛ դու քեզ զերկիրն, զՓերեզացիսն և զՌափայիսն. եթէ նե՞ղ իցէ քեզ լեառնդ Եփրեմի: ¹⁶Եւ ասեն որդիքն Յովսեփայ. Չէ՛ մեզ բաւական լեառնն Եփրեմայ. և անդ ընտիր ընտիրք երիվարաց, և զէն ամենայն Քանանացւոյն բնակելոյ յերկրի իմում ընդ իս. ՚ի Բեթսան և յաւանս նորա, և ՚ի ձորն Յեզրայելի: ¹⁷Եւ խօսեցաւ Յեսու ընդ որդիսն Յովսեփայ, ընդ Եփրեմի՝ և ընդ Մանասէի՝ և ասէ. Թէ ժողովուրդ բազում ես դու, և զօրութիւն բազում ունիս. մի՛ լիցի քեզ մի վիճակ. ¹⁸անտա՛ռն եղիցի քեզ, զի անտա՛ռ է և սրբեսցես զնա. և եղիցին քե՛զ ելք նորա յորժամ սատակեսցես զՔանանացին. զի թպտո և երիվարք ընտիրք իցեն նորա, և զօրագոյն քան զքեզ իցէ, դո՛ւ յաղթահարեսցես զնա:

18

Գլուխ ԺԸ

ԻԲ ¹Եւ եկեղեցացաւ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի ՚ի Սելով, և կանգնեցին անդ զխորանն վկայութան. և երկիրն նուաճեցաւ ՚ի նոցանէ: ²Եւ մնացին որդիքն Իսրայելի՝ և ո՛չ ժառանգեցին եւթն ցեղն: ³Եւ ասէ ցնոսա Յեսու. Մինչև յե՞րբ մեղկիցէք չմտանել ժառանգել զերկիրն զոր ետ ձեզ Տէր Աստուած հարցն մերոց: ⁴Տո՛ւք ինձ երիս արս ՚ի ցեղէ, և առաքեցից զնոսա, և յարուցեալ անցանիցեն ընդ երկիրն, և գրեսցեն զնա առաջի իմ՝ թէ ո՞րպէս պարտ իցէ բաժանել զնա: Եւ եկին առ նա. ⁵և բաժանեաց նոցա եւթն մասն: Յուդայ կացցէ նոցա սահման ՚ի հարաւոյ. և որդիքն Յովսեփայ կացցեն ՚ի սահմանս իւրեանց ՚ի հիւսւոյ: ⁶Եւ դուք բաժանեցէք զերկիրն եւթն բաժին՝ և բերէք առ իս այսր. և հանից ձեզ վիճակ աստ առաջի Տեառն Աստուծոյ: ⁷Ձի ո՛չ գոյ ընդ ձեզ բաժին որդւոցն Ղևեայ. զի քահանայութիւն Տեառն է բաժին նորա. և Գադ, և Ռուբէն, և կէս ցեղին Մանասէի առին զժառանգութիւն իւրեանց յայնկոյս Յորդանանու յարևելս՝ զոր ե՛տ նոցա Մովսէս ծառայ Տեառն: ⁸Եւ յարուցեալ արքն զնացին: Եւ պատուիրեաց Յեսու արանցն երթելոց աշխարհադիտել զերկիրն. և ասէ. Անցէ՛ք զնացէ՛ք և աշխարհադիտեցէ՛ք զերկիրն, և եկեսցիք առ իս այսր. և հանից ձեզ վիճակս առաջի Տեառն ՚ի Սելով: ⁹Եւ զնացին արքն և շրջեցան ընդ

* Ոմանք. Ձի ես ժողովուրդ բազում եմ:

* Ոմանք. Եւ զէնք ամենայն Քանանացւոց բնակեցի յերկրի իմում ընդ իս ՚ի Բեթսան և յաւանակուրայ ՚ի ձորն Յեզրայելի: *Յօրինակին պակասէր.* Եւ յաւանս նորա:

* Ոմանք. Յորժամ կտորես զՔանանացին... ընտիրք իցեն նոցա... յաղթահարեսցես նմա:

* Ոմանք. Մինչև յերբ մեղկիցիք:

* Ոմանք. Տո՛ւք ՚ի ձէնջ երիս արս... անցցեն ընդ եր՛... որպէս պարտ է բա՛:

* Ոմանք. Կացցէ նոցա մասն ՚ի հարաւոյ:

* Ոմանք. Առաջի Տեառն Աստուծոյ մերոյ:

* Ոմանք. Ձի ո՛չ է ընդ ձեզ բաժին... յարևելից. զի ետ նոցա Մով՛:

* Ոմանք. Երթալոց աշխարհադիտել... և ելջիք առ իս այսր:

երկիրն, և աշխարհադիտեցին՝ զերկիրն, և տեսին զնա. և գրեցին ըստ քաղաքաց իւրեանց եւթն բաժին՝ ՚ի մատենի. և բերին առ Յեսու ՚ի բանակն ՚ի Սեղով: ¹⁰Եւ արկ նոցա Յեսու վիճակ ՚ի Սեղով առաջի Տեառն, և բաժանեաց անդ զերկիրն որդւոցն Իսրայէլի՝ ըստ բաժանմանց իւրեանց: ¹¹Եւ ել նախ վիճակն Բենիամինի ըստ տոհմից իւրեանց. և էին սահմանք վիճակի նոցա ՚ի մէջ Յուդայ՝ և ՚ի մէջ որդւոցն Յովսեփայ* : ¹²Եւ եղեն սահմանք նոցա ՚ի հիւսւսոյ Յորդանանու. և ամբարձցին սահմանքն ՚ի հարաւոյ Երեքոյի ընդ հիւսւսի, և ամբարձցին ՚ի լեառնն ընդ ծովակողմն. և եղիցին նորա ելք Մաբդարայինն Բեթաւան. ¹³և անցցեն անտի սահմանքն Ղուզայ, ՚ի թիկանց Ղուզայ ՚ի հարաւոյ կողմանէ, այն է Բեթէղ՝. և իջցեն սահմանքն ցԱստարովթ Ադարայ ՚ի լեռնակողմն, որ է ՚ի հարաւոյ Բեթորոնայ ներքնոյ: ¹⁴Եւ անցցեն սահմանքն և պատեսցեն առ եզերքն որ հայի ընդ ծով ՚ի հարաւոյ, ՚ի լեռնէն որ հանդէպ Բեթորոնի է ընդ հարաւոյ. և եղիցին նորա ելք ՚ի Կարիաթբաաղ. այն է Կարիաթբարիմ քաղաք որդւոցն Յուդայ. և այն է եզր ընդ ծովակողմն*, ¹⁵և եզր ընդ հարաւ յեզերէ Կարիաթբաաղայ. և անցանեն սահմանքն ՚ի Գային, և ելցեն յաղբար ջրոցն Նափթովայ* : ¹⁶Եւ իջցեն սահմանքն յեզր լերինն՝ որ է յանդիման հովտացն որդւոցն Ենովմայ, որ է մասն Ենակայ՝ Ռափայնոցն ՚ի հիւսւսի. և իջցեն ՚ի Գայի Ենովմայ ՚ի թիկանց Յեբուսայ ՚ի հարաւոյ. և իջցեն յաղբարն Ռովզեղայ: ¹⁷Եւ հատցեն ընդ հիւսւսի, և անցցեն յաղբարն ՚ի Բեթսամիւս*, ¹⁸և պատեսցին առ Գալիլովթաւ. որ է հանդէպ գառիվերին Եղովմինեայ. և իջցեն ՚ի վէմն Բաան, որդւոյ Ռուբինի, և անցցեն ՚ի թիկանց Բեթարաբա ՚ի հիւսւսոյ. և իջցեն յԱրաբիա*. ¹⁹և իջցեն սահմանքն ՚ի թիկանց Բեթագղայ ՚ի հիւսւսոյ ծովու. և եղիցին ելք սահմանացն ՚ի սար ծովուն Աղոյ ՚ի հիւսւսոյ, և յեզր Յորդանանու ՚ի հարաւոյ: ²⁰Այս են սահմանք նոցա ՚ի հարաւոյ, և Յորդանան գատուցանէ ՚ի կողմանէ արևելից: Այս է ժառանգութիւն որդւոցն Բենիամինի. և սահմանք նոցա շուրջանակի ըստ տոհմից իւրեանց: ²¹Եւ եղեն քաղաքք ցեղի որդւոցն Բենիամինի ըստ տոհմից իւրեանց: Յերիքով, և Բեթագղա, և Ամենգասիմ*, ²²և Բեթարաբայ, և Սեմարիմ, և Բեթէղ՝. ²³և Աւիմ, և Ափար, և Արփա*. ²⁴և Կարեն, և Քափերամին, և Գաբաա*. ²⁵Քաղաքք երկոտասան և աւանք նոցա: ²⁶Գաբաւոն, և Ռամմա, և Բերովթ, ²⁷և Մասփա, և Կեփիրա, և Ամուսա, ²⁸և Ռէկէն, և Յերփայէլ, և Թարաղա. ²⁹և Սելաղէփ, և Յեբուս՝ այն է Երուսաղէն. և Գաբաաթ. և քաղաքն Արեն. քաղաքք երկոտասան, և աւանք նոցա: Այս է ժառանգութիւն որդւոցն Բենիամինի ըստ տոհմից իւրեանց* :

19

* *Ոմանք.* Եւ ել վիճակն նախ ցեղին Բենիա՝... և ելին սահմանքն վիճակի նոցա:

* *Օրինակ մի.* Առ եզամբքն որ հայի ընդ:

* *Օրինակ մի.* Յաղբար ջրոյն Նափնեայ:

* *Ոմանք.* Յաղբարն ՚ի Սամիր:

* *Ոմանք.* Եւ պատեսցեն առ Գալիլովթայ... ՚ի վէմն Բաան որդւոցն Ռուբ՝: *Ոսկան յաւելու.* Եւ իջցեն ՚ի Արաբայ: (19) *Անտի անցցէ* սահմանքն:

* *Յօրինակին.* Յեղից որդւոցն Բե՝... և ՚ի Բեթագղա: *Ոմանք.* Եւ Բեթագղա, և Ամենկասիս:

* *Ոմանք.* Եւ Ասփար, և Ափրա:

* *Ոմանք.* Եւ Կարիմ, *կամ*՝ Կարեն:

* *Բազումք.* Եւ Գաբաաթ և Քաղաքնարեն քաղաքք: *Ոսկան.* Քաղաքք չորեքտասանք:

Գլուխ ԺԹ

¹Եւ ել երկրորդ վիճակն Շմաւոնի ցեղի որդւոցն Շմաւոնի ըստ տոհմից իւրեանց. և եղև ժառանգութիւն նոցա ՚ի մէջ վիճակի որդւոցն Յուդայի: ²Եւ եղև վիճակ նոցա, Բերսաբէէ, և Սաբէէ, և Մովղադա, ³և Ասերսուադ, և Բաթուդ, և Բովղա, և Ասոմ, ⁴և Էդթուդաադ, և Երմա. ⁵և Սիկեդա, և Բեթան, և Մարքաբովթ, և Ասերսուսիմ*. ⁶և Բեթղաբաթ. և ագարակք նոցա. քաղաքք երկուտասան, և աւանք նոցա: ⁷Ային, և Ռեմոն, և Եթեր և Ասան. քաղաքք չորք, և աւանք նոցա: ⁸Եւ ամենայն ագարակք շուրջ զքաղաքաւն այնոքիւք, մինչև զԲաադեթ Բերանմովթ, ՚ի մուտս Յամաթայ ընդ հարաւ: Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Շմաւոնի ըստ տոհմից իւրեանց*. ⁹ի վիճակին Յուդայ ժառանգութիւն ցեղի որդւոցն Շմաւոնի. քանզի եղև բաժին որդւոցն Յուդայ մե՛ծ քան զնոցայն. և ժառանգեցին որդիքն Շմաւոնի ՚ի մէջ վիճակի նոցա*: ¹⁰Եւ ել երրորդ վիճակն Զաբուդոնի, ըստ տոհմից իւրեանց: Եւ եղեն սահմանք ժառանգութեան նոցա մինչև ցՍարդիթ. ¹¹սահմանք նոցա ծովն, և Մարադա. և հասցեն ցԳաբասաթ. և հանդիպեցին ձորոյ՝ որ է հանդէպ Յեկնամայ*. ¹²և դարձցին ՚ի Սարիդա դէմ յանդիման յարևելից Բեթսամեայ, ՚ի սահմանս Քասադովթ Բոթորայ, և անցցեն ՚ի Ղաբարաթ. և ամբարձցին առ Յաբազայի: ¹³Եւ անտի պատիցին հանդէպ ընդ արևելս ձգեալ ՚ի քաղաքն Կատասիմ. և անցցեն յՌեմմոն, յԱմաթարիման Նուայ*. ¹⁴և պատեցին զսահմանօքն հիւսւսոյ ցեկանթովն. և եղիցին ելք նոցա ՚ի Գայի՝ Յեփթայեղի*. ¹⁵և ընդ Կատտամաթ, և ընդ Նաադովդ, և ընդ Սեմրոն, և ընդ Յադեդա, և ընդ Բեթղահէմ. քաղաքք երկուտասան և աւանք նոցա: ¹⁶Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Զաբուդոնի ըստ տոհմից իւրեանց քաղաքք նոցա և աւանք իւրեանց*: ¹⁷Եւ Իսաքարայ ել չորրորդ վիճակն. որդւոցն Իսաքարու ըստ ազգականութեան իւրեանց: ¹⁸Եւ եղեն սահմանք նոցա, Յեզրայեղ՝, և Աքասեդովթ, և Սոււնամ, ¹⁹և Ափերեմ, և Սիան, ²⁰և Ռամաթ, և Ենդանիմ, և Ռեմաթ, և Անարեթ, ²¹և Ռաբբովթ, և Կեսիոն, և Այեմէս, և Ռեմաթ, և Ենգադիս, և Ենգադիա, և Բեթմասեմ*. ²²և կցեցին սահմանքն ՚ի Թաբովթ և ՚ի Կասիմ ընդ ծովակողմն, և ՚ի Բեթսամիւս. և եղիցին ելք սահմանաց նոցա Յորդանան. քաղաքք վեշտասան և աւանք նոցա*: ²³Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Իսաքարու ըստ տոհմից իւրեանց. քաղաքք և ագարակք իւրեանց: ²⁴Եւ ել վիճակն հինգերորդ ցեղի որդւոցն Ասերայ ըստ տոհմից իւրեանց: ²⁵Եւ եղեն սահմանք նոցա, Քեղկաթ, և Ողղի, և Բատնէ, և Աքսափ*, ²⁶և Ամաթ, և Մասադ. և կցեցի ՚ի Կարմեղ՝ ընդ ծովակողմն. և Սիովր, և ՚ի Բաղանայէ*. ²⁷և դարձցին յարևելից կողմանէ ՚ի Բեթբազովսայ, և կցեցի ՚ի Զաբուդոն և ՚ի Գայի,

* *Ոմանք.* Եւ Բեթեմ, և Մայրաբովթ:

* *Ի լուս՝.* Ի մուտս Յարեմաթայ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

* *Ոմանք.* Բաժին ցեղի որդւոցն Յու՝:

* *Ոսկան.* Եւ ել սահման նոցա ծովն: *Ոմանք.* ՅԱբասաթ. *ոմանք՝* ցՍաբասաթ. *և ոմանք՝* ցՂաբասաթ: *Իսկ օրինակ մի.* Ռաբարասաթ... հանդէպ եկ Յեմամեայ:

* *Ոսկան.* յԱմաթարիմ. Աննուայ:

* *Բազոււնք.* Զիւսիսոյ ցեկնաթովն. *ուր օրինակ մի՝* ցեղն Նաթոն:

* *Յօրինակին.* Ըստ տոհմի իւր՝:

* *Ոմանք.* Եւ Ռամաթ... Եննադա և Բեդփամէս:

* *Ոմանք.* Ի Բեդբերովթ և ՚ի Սատիմ:

* *Ոմանք.* Եւ Ողիոող և Քեղկաթ: *Ոսկան յաւելլու.* Եւ Աքսափ, *և Ալամեւէք:*

* *Ոմանք.* Եւ ՚ի Սիովր և ՚ի Ղաբանայէ:

յեփթայիեղի, ընդ հիւսւսի. և մտցեն սահմանքն ՚ի Սափաթա Բեթամեկ. և գնասցեն ընդ սահմանակիցս Անայեղի, և անցցեն ՚ի Քարովդ, յաիեկէ կողմանէ*, 28և յԱքրան, և յՌովբ, և յԱմնովն, և ՚ի Կանայի մինչև ՚ի Սիդոն մեծ: 29Եւ դարձցին սահմանքն յՌամա մինչև ցքաղաք ամրոցին Տիրացւոց. և դարձցին սահմանքն ՚ի Սովսա. և եղիցին ելք նորա ծովն. և վիճակն Ջիփայ*. 30և Ամմա, և Ափեկա, և Ռաւովբա. քաղաքք քսան և երկու, և աւանք նոցա: 31Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Ասերայ ըստ տոհմից իւրեանց. քաղաքք նոցա և աւանք իւրեանց: 32Եւ Նեփթաղիմայ ել վիճակն վեցերորդ. որդւոցն Նեփթաղիմայ ըստ տոհմից իւրեանց: 33Եւ եղեն սահմանք նոցա. Մեդեփ, և Մայեղովն, և Բերսանայիմ, և Արսոէ, և Նագեբ, և Յաբնեղ. մինչև ցՂակու. և եղեն ելք նոցա Յորդանան*: 34Եւ դարձցին սահմանքն ՚ի ծովն Ազանովթ Թաբովր, և անցցեն անտի ՚ի Կովկ. և կցեսցին ՚ի հարաւոյ Ջաբուղոնի և Ասերայ. կցեսցին ՚ի ծովակողմն Յուդայ, և Յորդանան յարևելից կողմանէ: 35Եւ քաղաքք պարսպաւորք Տիրացւոց. Տիրոս, և Ամաթ, և Ռեկկաթ, և Քեներեթ*. 36և Ադամի, և Ռամմա, և Ասովր. 37և Կադէս, և Եդրային, և Ակնասովր, 38և Յարովն. և Մակդաղիէղ. Ովրամ, և Բեթանաթ, և Թասմուս. քաղաքք ինն և տասն, և ազարակք նոցա*: 39Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Նեփթաղիմայ. ըստ տոհմից իւրեանց, քաղաքք և աւանք նոցա*: 40Եւ ցեղի որդւոցն Դանայ ըստ տոհմից իւրեանց, ել վիճակն եւթներորդ: 41Եւ եղեն սահմանք ժառանգութեան նոցա. Սարաա՛ և Եսթաւուղ*. 42և Սաղաբին, և Յեթթա, և Թամմա, 43և Եղթեկով, և Բաադովթ. 44և Բանեբարակ. և քաղաքք Սամէս, և Յաաղոն, 45և Եղոն, և Ակկարոն. և Գաբաթոն, և Յութ, 46և Գեթրեմոն. և ՚ի ծովէն Բազէից, և Բակրովնա. սահման մերձ Յոպպէ*: 47Եւ ել սահման որդւոցն Դանայ ՚ի նոցանէն: Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Դանայ ըստ տոհմից իւրեանց, քաղաքք և աւանք նոցա: Եւ ո՛չ ջնջեսցին որդիքն Դանայ զԱմովրիացին զնեղիչն իւրեանց ՚ի լերինն. և ո՛չ թողուին զնոսա Ամովրիացիքն իջանել ՚ի հովիտսն. և նեղէին ՚ի նոցանէ զսահմանս բաժնի իւրեանց: Եւ զնացին որդիքն Դանայ և ետուն պատերազմ ընդ Ղեսեմայ, և առին զնա, և հարին զնա սրով սուսերի. և ժառանգեսցին զնա. և բնակեսցին ՚ի նմա. և անուանեսցին զՂեսեմ, Դան, ըստ անուան հորն իւրեանց*: 48Այս է ժառանգութիւն ցեղի որդւոցն Դանայ ըստ ազգականութեան իւրեանց. քաղաքքս այսոքիկ և ազարակք իւրեանց*: 49Եւ վախճանեսցին ժառանգել զերկիրն ըստ սահմանաց իւրեանց: Եւ Ամովրիացին տևեաց բնակել յեղոմ, և ՚ի Սաղամիմ. և ծանրացաւ ձեռն եփրեմի ՚ի վերայ նոցա. և եղեն նոցա ՚ի հարկատուս. և զնացին նկատել զերկիրն ըստ սահմանաց նոցա: Եւ ետուն որդիքն Իսրայէլի ժառանգութիւն Յեսուայ որդւոյ Նաւեայ ՚ի մէջ իւրեանց*

* *Ոմանք.* ՚ի Բեթթագոնայ... և անցցեն ՚ի Քաղովդ:

* *Ի լուս՝* Եւ վիճակն Ակգիփայ: *Ուր ոմանք.* ՚ի ծովն. և ՚ի վիճակէն Ակգիփայ:

* *Բազոււթ.* Եւ Արսէ և Նագեբ:

* *Ոսկան.* Պարսպաւորք, Ասեղիմ. Տիրոս. և Ա՛:

* *Ոսկան.* Մակդաղիէլ, Ամօր և Բե՛:

* *Յօրիմակին պակասէր.* ժառանգութիւն *ցեղի* որդ՛:

* *Յօրիմակին.* Սարաա՛ և Եսթաւուղ:

* *Օրիմակ մի.* Սահման մերձ յերակ ՚ի Յոպպէ:

* *Ոմանք.* Քաղաքք և աւանք իւրեանց:

* *Ոմանք.* Ըստ ազգակցութեան իւրեանց: *Յօրիմակին.* Քաղաքքս այսոքիկ և ազա՛:

* *Ոմանք.* ՚ի Յելով և ՚ի Սաղամիմ... կատարել զերկիրն ըստ սահ՛:

⁵⁰հրամանաւ Տեառն. և ետուն նմա զքաղաքն՝ զոր խնդրեաց զԹամնաթսարա՝ որ է՝ ՚ի լերինն Եփրեմայ. և շինեաց զքաղաքն՝ և բնակեցաւ ՚ի նմա*։ ⁵¹Այս են բաժինք՝ զորս բաժանեաց Եղիազար քահանայ, և Յեսու Նաւեան, և իշխանք նահապետութեանց ցեղիցն Իսրայէլի, վիճակօքն ՚ի Սելով առաջի Տեառն առ դրան խորանին վկայութեան. և գնացին նկատել զերկիրն*։

20

Գլուխ Ի

ԻԳ ¹Խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ՝ և ասէ. Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի, և ասացես*։ ²Տո՛ւք զքաղաքս ապաստանացն զորոց խօսեցայ ընդ ձեզ ՚ի ձեռն Մովսիսի. ³ապաստան սպանողի՝ որ սպանանէ զանձն ականայ՝ յանգէտս, և եղիցին ձեզ քաղաքք ապաստանի. և մի՛ մեռցի սպանողն ՚ի մերձաւորէ արեանն, մինչև կացցէ առաջի ժողովրդեանն յատենի*։ ⁴և փախիցէ՝ ՚ի մի՛ ՚ի քաղաքացն այնոցիկ. և կացցէ ՚ի մուտս դրան քաղաքին, և խօսեսցի յականջս ծերոց քաղաքին այնորիկ զբանս իւր։ Եւ ժողովեսցեն զնա ժողովուրդն առ ինքեանս, և տացեն նմա տեղի, և բնակեսցէ ընդ նոսա։ ⁵Եւ եթէ երթայցէ մերձաւոր արեանն զկնի նորա, մի՛ մատնեսցեն զսպանողն ՚ի ձեռս նորա. քանզի յանգէտս եհար զընկերն իւր, և ո՛չ ատեայր զնա յերէկն և յեռանդ։ ⁶Եւ բնակեսցէ ՚ի քաղաքին յայնմիկ մինչև կացցէ առաջի ժողովրդեանն յատենի, մինչև մեռանիցի քահանայն մեծ՝ որ իցէ յաւուրսն յայնոսիկ. և ապա՝ դարձցի սպանողն և եկեսցէ ՚ի տեղի՛ իւր՝ և ՚ի տուն իւր, և ՚ի քաղաքն ուստի փախեաւ*։ ⁷Եւ զատուցին զԿադէս ՚ի Գալիլեա՝ ՚ի լերինն Նեփթալիմայ. և զՍիւքեմ ՚ի լերինն Եփրեմայ։ Եւ զքաղաքն Արբոկ՝ այն է Քեբրոն ՚ի լերինն Յուդայ։ ⁸Եւ յայնկոյս Յորդանանու յարեւելից Երեքոյի։ Եւ ետուն զԲոսոր յանապատին ՚ի դաշտի, ՚ի ցեղէն Ռուբինի. և զՌամովթ ՚ի Գադաադ, ՚ի ցեղէն Գադայ. և զԳովղան ՚ի Բասանաստան ՚ի ցեղէն Մանատի*։ ⁹Այս են քաղաքք հոյակապք ամենայն որդւոցն Իսրայէլի, և եկին՝ յեցելոյ՝ ՚ի նոսա. փախչել անդր ամենայնի որ հարկանիցէ զանձն ականայ, զի մի՛ մեռանիցի ՚ի ձեռաց մերձաւորի արեանն, մինչև կացցէ առաջի ժողովրդեանն յատենի*։

21

Գլուխ ԻԱ

¹Եւ մատեան նահապետք որդւոցն Ղևեայ առ Եղիազար քահանայ, և առ Յեսու Նաւեան, և առ նահապետս տոհմից ցեղից որդւոցն Իսրայէլի*։ ²և

* Ոսկան. Հրամանաւ Տեառն ետուն նմա։

* Ոմանք. Բաժինք զորս ժառանգեցոյց Եղիազար քահանայ։

* Ոմանք. Եւ խօսեցաւ... խօսեաց ցորդիսդ Իսրայէլի։

* Ոմանք. Որ սպանանիցէ... առաջի ամենայն ժողո՞ր։

* Ոմանք. Եւ մնացէ ՚ի քաղաքին յայնմիկ մինչև։

* Յօրինակին. Եւ զԴովղան ՚ի Բասանաս*։

* Օրինակ մի. Այն է քաղաքք խոյակապք։

* Յօրինակին պակասէր. Նահապետս տոհմից ցեղից։ Ուր ոմանք. տոհմից ՚ի ցեղիցն Իսրայէլի։

խօսեցան ընդ նոսա՝ ի Սեղ՝ ով յերկրին Քանանացւոց՝ և ասեն. Յրաման ետ Տէր ՚ի ձեռն Մովսիսի՝ տալ մեզ քաղաքս բնակելոյ, և զանդաստանս նոցա անասնոց մերոց: ³Եւ ետուն որդիքն Իսրայէլի Ղևտացւոցն ՚ի ժառանգութիւն իրամանաւ Տեառն, զքաղաքսն զայնոսիկ և զանդաստանս նոցա: ⁴Եւ ել վիճակ տոհմին Կահաթու. և եղեն որդւոցն Ահարոնի քահանայիցն Ղևտացւոց, ՚ի ցեղէն Յուդայ և ՚ի ցեղէն Շմաւոնի, և ՚ի ցեղէն Բենիամինի, վիճակաւ՝ քաղաքք երեքտասանք: ⁵Եւ այլոց որդւոցն Կահաթու մնացելոց՝ յազգականութենէ ցեղին Եփրեմայ, և ՚ի ցեղէն Դանայ, և ՚ի կիսոյ ցեղին Մանասէի, վիճակաւ քաղաքք տասն: ⁶Եւ որդւոցն Գեթսոնի յազգականութենէ ցեղին Իսաքարայ՝ և ՚ի ցեղէն Ասերայ, և ՚ի ցեղէն Նեփթալիմայ, և ՚ի կիսոյ ցեղին Մանասէի ՚ի Բասան, վիճակաւ քաղաքք երեքտասան: ⁷Եւ որդւոցն Մերարեայ ըստ տոհմից իւրեանց, ՚ի ցեղէն Ռուբինի, և ՚ի ցեղէն Գադայ, և ՚ի ցեղէն Ջաբուղոնի, վիճակաւ քաղաքք երկուտասան: ⁸Եւ ետուն որդիքն Իսրայէլի Ղևտացւոցն զքաղաքսն զայնոսիկ և զանդաստանս նոցա զոր օրինակ պատուիրեաց Տէր Մովսիսի, վիճակաւ: ⁹Եւ ետ ցեղ որդւոցն Յուդայ, և ցեղ որդւոցն Շմաւոնի, և ցեղ որդւոցն Բենիամինի զքաղաքսն զայնոսիկ, և կոչեցան յանուն* ¹⁰և յազգ որդւոցն Ահարոնի, ՚ի տոհմէ Կահաթու որդւոցն Ղևեայ. զի նոցա ել նախ վիճակն: ¹¹Եւ ետուն նոցա զԿարիաթարբոկ զմայր քաղաքացն Ենակայ, այն է՝ Քեբրոն ՚ի լեառնն Յուդայ, և զանդաստանս շուրջ զնովա*, ¹²և զազարակս նորա, և զաւանս նորա. զոր ետ Յեսու Քաղերայ որդւոյ Յեփոնեայ ՚ի կալուած*: ¹³Եւ որդւոցն Ահարոնի քահանայից, ետուն քաղաքք ապաստանի սպանողի, զՔեբրոն, և զգատուցեալսն ՚ի նա. և զԴեբնա, և զգատուցեալսն ՚ի նա. ¹⁴և զՅեթեր, և զգատուցեալսն ՚ի նա. և զՅեսթեմով, և զգատուցեալսն ՚ի նա*. ¹⁵և զԱղոն, և զգատուցեալսն ՚ի նա. և զԴաբիր, և զգատուցեալսն ՚ի նա. ¹⁶և զԱյին, և զգատուցեալսն ՚ի նա. և զՅետտա, և զգատուցեալսն ՚ի նա. և զԲեթսամիւս, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքք ինն, յերկուց ցեղիցն այնոցիկ: ¹⁷Եւ ՚ի ցեղէն Բենիամինի. զԳաբաւոն, և զգատուցեալսն ՚ի նա. ¹⁸և զԱնաթովթ, և զգատուցեալսն ՚ի նա. և զԱղմոն, և զգատուցեալսն ՚ի նա. և զԳաբեէ՝ և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս չորս*: ¹⁹Ամենայն քաղաքք որդւոց Ահարոնի քահանայից, քաղաքք երեքտասանք, և անդաստանք նոցա*: ²⁰Եւ տոհմից որդւոցն Կահաթու Ղևտացւոցն՝ մնացելոց յորդւոցն Կահաթու. և եղեն քաղաքք սահմանաց նոցա, ²¹ի ցեղէն Եփրեմայ: Եւ ետուն նոցա քաղաքք ապաստանի սպանողի, զՍիւքեմ, և զգատուցեալսն ՚ի նա ՚ի լերինն Եփրեմայ. և զԳազեր, և զգատուցեալսն ՚ի նա*. ²²և զԿարսեմ, և զգատուցեալսն ՚ի նա. և զվերին Բոթորոն, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքք չորք*: ²³Ի ցեղէն Դանայ. զԵղթեկով, և զգատուցեալսն ՚ի նա. և զԳեթթովն, և զգատուցեալսն ՚ի նա*. ²⁴և զՅաղոն, և զգատուցեալսն ՚ի նա. և զԳեթթեմոն, և

* Ոմանք. Քաղաքք երեքտասան:

* Ոսկան. Եւ կոչեցան յանուանէ: (10) Եւ ազգ որդւոցն:

* Ոմանք. ՚ի լերինն Յուդայ:

* Ոմանք. Եւ ետ Յեսու Քաղեր:

* Ոմանք. Եւ զՅեսթովմ:

* Բազումք. Եւ զՍաղմոն:

* Ոմանք. Երեքտասանք. և աւանք նոցա:

* Ոմանք. Եւ եղեն նոցա քաղաքք ապաս:

* Ոմանք. Եւ զԿարայեմ... և զվերինն Բեթորովն:

* Ոմանք. Եւ ՚ի ցեղէն Դանայ, զԵղթեմով... և զԳեթթեմոն:

զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս չորք: ²⁵Եւ կիսոյ ցեղին Մանասէի. զԹանաք, և զգատուցեալսն ՚ի նա. և զԲեթսան, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս երկուս*:

²⁶Ընդ ամենայն՝ քաղաքս տասն, և զգատուցեալսն ՚ի նոսա. տոհմի որդւոցն Կահաթու, մնացելոց: ²⁷Եւ որդւոցն Գեթսոնայ, ազգականացն Ղևտացւոց, ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի քաղաքս զատուցեալս սպանողաց. զԳովղան ՚ի Բասանաստանի, և զգատուցեալսն ՚ի նա. և զԲենետարա, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս երկուս: ²⁸Ի ցեղէն Իսաքարայ. զԿեսիոն, և զգատուցեալսն ՚ի նա. և զԴաբրաթ, և զգատուցեալսն ՚ի նա*.

²⁹և զԵրիմովթ, և զգատուցեալսն ՚ի նա. և զաղբերն Նամակաց, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս չորս*:

³⁰Ի ցեղէն Ասերայ. զՄասաաղ, և զգատուցեալսն ՚ի նա. և զԱբդոն, և զգատուցեալսն ՚ի նա*.

³¹և զՔեղկաթ, և զգատուցեալսն ՚ի նա. և զՌովբ, և զգատուցեալսն ՚ի նա. քաղաքս չորս*:

³²Եւ ՚ի ցեղէն Նեփթաղիմայ, քաղաքս զատուցեալս սպանողի. զԿադէս ՚ի Գալիլեայ, և զգատուցեալսն ՚ի նա. զԵմաթդովր, և զգատուցեալսն ՚ի նա. և զՆոյեմոն, և զգատուցեալսն ՚ի նմա. քաղաքս երիս:

³³Ընդ ամենայն քաղաքս Գեթսոնի ըստ տոհմից իւրեանց քաղաքս երեքտասան, և զատուցեալք նոցա*:

³⁴Եւ տոհմի որդւոցն Մերարեայ այլոցն Ղևտացւոց: ՚ի ցեղէն որդւոցն Զաբուղոնի. զՅեկնամ, և զանդաստանս նորա. զԿադէս, և զանդաստանս նորա. զԿարթա, և զանդաստանս նորա*.

³⁵զԴեմնա, և զանդաստանս նորա. զՆաաղովղ, և զանդաստանս նորա. քաղաքս հինգ*:

³⁶Եւ յայնկոյս Յորդանանու ՚ի հանդիպէ Երեքոյի: ՚ի ցեղէն Ռուբինի քաղաքս ապաստանի սպանողի. զԲոսոր յանապատին Միսովրայ, և զանդաստանս նորա. և զՅազեր, և զանդաստանս նորա*.

³⁷զԿեդսոն, և զանդաստանս նորա. զՄասփա, և զանդաստանս նորա. քաղաքս չորս:

³⁸Եւ ՚ի ցեղէն Գադայ՝ քաղաքս ապաստանի սպանողի. զՌամովթ ՚ի Գադաաղ, և զանդաստանս նորա. զՄանայամ, և զանդաստանս նորա*.

³⁹զԵսեբոն, և զանդաստանս նորա. և զԱզեր, և զանդաստանս նորա.

⁴⁰ընդ ամենայն քաղաքս չորս: Ամենայն քաղաքք որդւոցն Մերարեայ, ըստ տոհմից իւրեանց մնացելոց ՚ի ցեղէն Ղևեայ. և եղեն սահմանք նոցա քաղաքք երկոտասան:

⁴¹Ընդ ամենայն քաղաքք Ղևտացւոցն ՚ի մէջ կալուածոց որդւոցն Իսրայէլի քառասուն և ո՛ւթ քաղաք, և անդաստանք նոցա շուրջ զքաղաքօքն այնոքիւք.

⁴²քաղաքք և անդաստանք շուրջ զքաղաքօքն. նոյնպէս ամենեցունց քաղաքացն այնոցիկ: Եւ վախճանեաց Յեսու բաժանել զերկիրն սահմանօք իւրովք:

Ի Դ Եւ ետուն որդիքն Իսրայէլի բաժին Յեսուայ ըստ սահմանի Տեառն՝ ետուն մնա զքաղաքն զոր խնդրեաց՝ զԹամնասաքար ՚ի լերինն Եփրեմայ. և շինեաց

* *Ոմանք.* Եւ ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի:

* *Ոմանք.* Եւ ցեղին Իսաք... զԿեսովն:

* *Օրինակ մի.* Եւ զաղբիւրն Ամեկայ:

* *Այլք.* Եւ ՚ի ցեղէն Ասերայ:

* *Ոմանք.* Եւ զՌովբ. կամ՝ զՌովր:

* *Բազումք.* Եւ զատուցեալք նոցին:

* *Ոմանք.* Եւ տոհմից որդւոց Ղևտացւոցն Մերարեայ, ՚ի ցե՛: *՚ի բազումս պակասի.*

ԶԿադէս և զանդաստանս նորա: *Ուր օրինակ մի ունի՝* զԿեսդէս, և զանդաս՞. և

զԿարաթա... և զԿադաովթ. և զանդ՞:

* *Ոսկան.* Քաղաքս չորս:

* *Ոմանք.* Ի հանդիպէ անտի Երիքովի:

* *Ոմանք.* Եւ զՄասնամ, և զան՞: *Յօրինակին.* Եւ զանդաստանս նոցա:

Յեսու զքաղաքն և բնակեցաւ 'ի նմա: Եւ ա՛ն Յեսու զսուրն քարեղէն որով թլփատեաց զորդիսն Իսրայէլի, զելեալս 'ի ճանապարհի անապատին. քանզի ո՛չ թլփատեցան յանապատի անդ. և եդ զնոսա 'ի Թամնասաքար* : ⁴³Եւ ե՛տ Տէր Իսրայէլի զամենայն երկիրն զոր երդուաւ տալ՝ հարցն նոցա, և ժառանգեցին զնա, և բնակեցին 'ի նմա: ⁴⁴Եւ հանգոյց զնոսա Տէր շուրջանակի՝ որպէս երդուաւ հարցն նոցա. և ո՛չ ոք յարեաւ ընդդէմ նոցա 'ի թշնամեաց իւրեանց. զի զամենայն թշնամիս նոցա մատնեաց Տէր 'ի ձեռս նոցա. ⁴⁵և ո՛չ սխալեցաւ բան մի յամենայն բանից բարեաց, զոր խօսեցաւ Տէր որդւոցն Իսրայէլի. այլ ամենայն ինչ եղև:

22

Գլուխ ԻԲ

Ի Ե ¹Յայնժամ կոչեաց Յեսու զորդիսն Ռուբինի, և զորդիսն Գադայ, և զկէս ցեղին Մանասէի*, ²և ասէ ցնոսա. Դուք ձեզէն լուարուք զամենայն ինչ զոր պատուիրեաց ձեզ Մովսէս ծառայ Տեառն. և ունկնդիր եղէք բարբառոյ իմոյ ըստ ամենայնի զոր պատուիրեցի ձեզ*, ³և ո՛չ թողէք զեղբարս ձեր զայնչափ աւուրս. և՛ս աւելի մինչև ցայսօր ժամանակի, պահեցէք զպատուիրանս Տեառն Աստուծոյ ձերոյ: ⁴Եւ արդ՝ հանգոյց Տէր Աստուած մեր զեղբարս ձեր՝ որպէս և ասաց նոցա. բայց արդ դարձեալ երթայք 'ի տունս ձեր՝ յերկիր կալուածոց ձերոց, զոր ետ ձեզ Մովսէս ծառայ Տեառն յայնկոյս Յորդանանու*: ⁵Այլ զգո՛յշ լինիջիք յոյժ, առնելոյ զպատուիրանսն և զօրէնսն զոր պատուիրեաց մեզ Մովսէս ծառայ Տեառն. սիրել՝ զՏէր Աստուած մեր՝ և զնալ յամենայն ճանապարհս նորա, պահել՝ զպատուիրանս նորա, և յարի՛լ 'ի նա, և պաշտել՝ զնա յամենայն սրտէ ձերմէ՝ և յամենայն անձնէ ձերմէ*: ⁶Եւ օրհնեաց զնոսա Յեսու և արձակեաց զնոսա՝ և զնացին 'ի տունս իւրեանց: ⁷Եւ կիսոյ ցեղին Մանասէի ետ Մովսէս 'ի Բասանաստան, և կիսոյն ետ Յեսու ընդ եղբարս նոցա առ ծովեզերքն: Եւ յորժամ արձակեաց զնոսա Յեսու 'ի տունս իւրեանց, և օրհնեաց զնոսա*, ⁸և խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Ընչի՛ւք բազմօք երթիցեն 'ի տունս իւրեանց. և անասուն բազում յոյժ, և արծաթ և ոսկի, և պղինձ և երկաթ, և հանդերձ բազում յոյժ. բաժանեցան աւար 'ի թշնամեաց ընդ եղբարս իւրեանց*:

ԻԶ ⁹Եւ դարձան և զնացին որդիքն Ռուբինի, և որդիքն Գադայ, և կէս ցեղին Մանասէի յորդւոցն Իսրայէլի, 'ի Սելուվայ յերկրէն Քանանացւոց, երթալ յերկիրն Գադաադու. յերկիր կալուածոց իւրեանց զոր ժառանգեցին հրամանաւ Տեառն 'ի ձեռն Մովսիսի*: ¹⁰Եւ եկին 'ի Գալիլովք Յորդանանու, որ է յերկրին Քանանու, և շինեցին որդիքն Ռուբինի, և որդիքն Գադայ, և կէս ցեղին Մանասէի, սեղան

* Այլք. Եւ ետուն... բաժին Յեսուայ ըստ հրամանի Տեառն: Բազումք. Եւ ա՛ն Յեսու զսուրսն քարեղէնս:

* Ոմանք. Ձամենայն որդիսն Ռուբինի և:

* Յօրինակին պակասէր. Բարբառոյ իմոյ ըստ:

* Ոմանք. Արդ դարձարուք երթայք:

* Ոմանք. Պատուիրեաց ձեզ... սիրել զՏէր Աստուած ձեր:

* Ոմանք. 'Ի Բասան. և կիսոյ ցեղին ետ Յեսու ընդ եղբարսն նորա:

* Օրհնակ մի. Բաժանեցին յաւարի թշնամեաց իւրեանց ընդ:

* Ոմանք. 'Ի Սելով յերկրին Քանա՛:

առ եզերք Յորդանանու. սեղան՝ մե՛ծ տեսանելով՝: ¹¹Եւ լուան որդիքն Իսրայելի՝
 և ասեն. Եթէ ահա շինեցին որդիքն Ռուբինի, և որդիքն Գադայ, և կէս ցեղին
 Մանասէի՝ սեղան ՚ի սահմանս երկրին Քանանացոց ՚ի Գալիլով Յորդանանու,
 յայնկոյս որդւոցն Իսրայելի. ¹²և լուան որդիքն Իսրայելի: Եւ ժողովեցան որդիքն
 Իսրայելի ՚ի Սելով, ելանել տալ ընդ նոսա պատերազմ: ¹³Եւ առաքեցին որդիքն
 Իսրայելի առ որդիսն Ռուբինի, և առ որդիսն Գադայ, և առ կէս ցեղին Մանասէի
 ՚ի Գադաադ, զՓենէէս զորդի Եղիազարու որդւոյ Ահարոնի քահանայի. ¹⁴և
 տասն այր յիշխանացն ընդ նմա, մի մի իշխան ՚ի նահապետացն, յամենայն
 ցեղիցն Իսրայելի. իշխանք տանց նահապետաց էին հազարապետք Իսրայելի:
¹⁵Եւ եկին առ որդիսն Ռուբինի, և առ որդիսն Գադայ, և առ կէս ցեղին Մանասէի
 ՚ի Գադաադ, խօսեցան ընդ նոսա՝ և ասեն. ¹⁶Այսպէս ասէ ամենայն ժողովուրդն
 Տեառն. Ձի՞նչ են յանցանքդ այդոքիկ՝ զոր յանցեայք առաջի Տեառն Աստուծոյ
 Իսրայելի, դառնալ յետս ՚ի Տեառնէ, շինել ձեզ սեղան. և լինել ձեզ ապստամբ ՚ի
 Տեառնէ Աստուծոյ մերմէ՛: ¹⁷Միթէ փո՞քր իցեն մեզ մեղքն Փեգովրայ՝ զի ո՛չ ենք
 սրբեալ ՚ի նմանէ մինչև ցայսօր, և եղեն հարուածք ՚ի վերայ ժողովրդեանն
 Տեառն՝. ¹⁸և դուք դարձայք այսօր ՚ի Տեառնէ. և եղիցի թէ ապստամբիցէք այսօր
 ՚ի Տեառնէ. և լինիցի վաղիւ բարկութիւն ՚ի վերայ ամենայն Իսրայելի: ¹⁹Եւ արդ՝
 եթէ փո՞քր իցէ ձեզ երկիր կալուածոց ձերոց, անցէք յերկիր կալուածոց Տեառն,
 ուր հարեալ է խորանն Տեառն. և ժառանգեցէք ՚ի միջի մերում. և մի՛ լինիք
 ապստամբք ՚ի Տեառնէ. և մի՛ ՚ի մէնջ ապստամբէք. վասն շինելոյ ձերոյ սեղան
 արտաքոյ քան զսեղան Տեառն Աստուծոյ մերոյ՝: ²⁰Ո՛չ ապաքէն Աքար՝
 Ջարայեան յանցեալ յանցանս ՚ի նզովից անտի, և ՚ի վերայ ամենայն
 ժողովրդեանն Իսրայելի եղև բարկութիւն. և նա միայն էր, միթէ ինքն միայն
 մեռաւ յիւրում ՚ի մեղսն: ²¹Պատասխանի ետուն որդիքն Ռուբինի և որդիքն
 Գադայ և կէս ցեղին Մանասէի, խօսեցան ընդ հազարապետսն՝ և ասեն՝.
²²Աստուած, Աստուած է Տէր. և Աստուած Աստուած ինքնին գիտէ. և Իսրայել
 ինքնին գիտասցէ. եթէ վասն ապստամբութեան ինչ յանցեա՞ք առաջի Տեառն,
 մի՛ ապրեցուսցէ զմեզ յաւուրս յայսմիկ. ²³և եթէ շինեցաք մեզ սեղան
 ապստամբելոյ ՚ի Տեառնէ մերմէ, հանել ՚ի վերայ նորա զո՛հ ողջակիզաց. կամ
 եթէ առնել ՚ի վերայ նորա զո՛հ փրկութեան, Տէր ինքնին խնդրեսցէ՛: ²⁴Այլ վասն
 երկիւղի՛ արարաք զայս. ասենք՝ Գուցէ՛ խօսեսցին որդիքն ձեր ընդ որդիսն մեր
 և ասիցեն, թէ զի՞ կայ ձեր և Տեառն Աստուծոյ Իսրայելի՞: ²⁵Եւ սահման եդ Տէր՝
 ընդ մեզ և ընդ ձեզ որդիք Ռուբինի և որդիք Գադայ՝ զՅորդանան. և չի՞ք ձեր
 բաժին ՚ի Տեառնէ. և օտարացուցանիցեն որդիք ձեր զորդիսն մեր՝ զի մի՛
 պաշտիցեն զՏէր՝: ²⁶Եւ ասացաք առնել այսպէս. շինել զսեղանս զայս, ո՛չ վասն
 ողջակիզաց, և ո՛չ վասն զոհից. ²⁷այլ զի իցէ սա ՚ի վկայութիւն ընդ մեզ և ընդ

* *Ոմանք.* ՚ի Գալիլով. Յորդա՞... յերկիրն Քանանացոց, երթալ յերկիրն Գադաադու. և շինեցին որ՞:

* *Յօրինակին.* Դառնալ յետ ՚ի Տեառնէ: *Ուր ոմանք.* դառնալ այսօր յետս ՚ի Տեառնէ շինել ձեզ սեղան. և եղիցի եթէ ապստամբիցէք այսօր ՚ի Տեառնէ Աստուծոյ ձերմէ:

* *Ոմանք.* Իցէ մեզ մեղքն Փոգովրայ, զոր ո՛չ ենք... մինչև ցայս վայր:

* *Ի բազումս պակասի.* Տեառն. *ուր հարեալ է խորանն Տեառն:*

* *Ոմանք.* Ընդ հազարապետսն Իսրայելի և ասեն:

* *Ոմանք.* ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ:

* *Ոմանք.* Ասէաք. Գուցէ խօսի՞:

* *Ոմանք.* Եւ չիք ձեր բաժին ՚ի Տեառնէ:

ծեզ. և ընդ որդիս մեր յե՛տ մեր. պաշտե՛լ զպաշտօն Տեառն առաջի նորա, ընծայի՛ւք մերովք, և պատարագօք մերովք՝ և զոհիւք փրկութեանց մերոց. և ո՛չ ասասցեն որդիք ձեր ցորդիս մեր վաղիւ, թէ ո՛չ գոյ ձեզ բաժին ՚ի Տեառնէ՛: ²⁸Եւ ասացաք թէ լինիցի երբէք՝ և խօսեսցին ընդ մեզ՝ կամ ընդ ազգս մեր վաղիւ. և ասիցեն, թէ տեսէք զնմանութիւն սեղանոյ Տեառն՝ զոր արարին հարքն մեր. ո՛չ վասն ողջակիզաց և ո՛չ վասն զոհից, այլ վկայութիւն ընդ մեզ և ընդ ձեզ, և ՚ի մէջ որդւոց մերոց՝: ²⁹Այլ քա՛ւ լիցի մեզ ապստամբել ՚ի Տեառնէ՛ այսօր, առ ՚ի շինելոյ մեզ սեղան զոհից կամ ողջակիզաց, կամ զոհից փրկութեան, արտաքո՛յ քան զսեղան Տեառն Աստուծոյ մերոյ՝ որ է առաջի խորանի նորա: ³⁰Եւ իբրև լուան Փենէտ քահանայ, և ամենայն իշխանք ժողովրդեանն, և հազարապետքն Իսրայէլի որ էին ընդ նմա զբանսն, զոր խօսեցան որդիքն Ռուբինի և որդիքն Գադայ և կէս ցեղին Մանասէի, հաճո՛յ թուեցաւ նոցա՛: ³¹Եւ ասէ Փենէտ որդի Եղիազարու քահանայ Տեառն ցորդիսն Ռուբինի և ցորդիսն Գադայ և ցկէս ցեղին Մանասէի. Այսօր գիտացաք թէ ընդ մեզ է Տէր. զի ո՛չ յանցեայք առաջի Տեառն զյանցումնդ զայդ. զի ապրեցուցէք զորդիսն Իսրայէլի ՚ի ձեռաց Տեառն: ³²Եւ դարձան Փենէտ քահանայ որդի Եղիազարու, և իշխանք տոհմիցն՝ յորդւոցն Ռուբինի և յորդւոցն Գադայ և ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի, յերկրէն Գադաադու՝ յերկիրն Քանանու առ որդիսն Իսրայէլի, և ետո՛ւն նոցա զպատգամսն: ³³Եւ հաճո՛յ թուեցաւ բանն որդւոցն Իսրայէլի, և օրհնեցին զԱստուած որդւոցն Իսրայէլի. և խօսեցան ընդ որդիսն Իսրայէլի և ասեն. Մի՛ ևս ելանել ընդ նոսա ՚ի պատերազմ սատակել զերկի՛ր որդւոցն Ռուբինի և որդւոցն Գադայ և կիսոյ ցեղին Մանասէի. և բնակեցան ՚ի նմա՛: ³⁴Եւ անուանեաց Յեսու զսեղանն Ռուբինի և զԳադայ և զկէս ցեղին Մանասէի՝ և ասէ՛. Ձի վկայութիւն է ՚ի մէջ նոցա, թէ Տէր՝ Աստուած է նոցա՛:

Գլուխ ԻԳ

Իէ ¹Եւ եղև յետ աւուրցն բազմաց, յե՛տ հանգուցանելոյ Տեառն զԻսրայէլ յամենայն թշնամեաց նոցա շուրջանակի. և Յեսու ծերացեալ և անցեալ զաւուրբք՝: ²Կոչեաց Յեսու միանգամայն զամենայն որդիսն Իսրայէլի, և զծերակո՛յտս նոցա, և զիշխանս նոցա, և զդատաւորս նոցա, և զդպիրս նոցա, և ասէ ցնոսա. Ես ծերացայ և անցի՛ զաւուրբք՝. ³և դուք ձեզէ՛ն տեսէք զամենայն զոր արար Տէր Աստուած մեր ընդ ամենայն ազգսն՝ զոր եբարձ յերեսաց ձերոց. զի Տէր Աստուած ինքնի՛ն տայր պատերազմ ընդ ձեր՝: ⁴Եւ արդ տեսէ՛ք՝ զի թողի ձեզ զազգսն զմնացեալսն զայնոսիկ ՚ի ժառանգութիւն ըստ ցեղից ձերոց, ՚ի Յորդանանէ զամենայն ազգսն՝ զոր սատակեցին ՚ի ծովէն մեծէ՛ որ զաստուցանէ՛

* Այլք. Ոչ գոյ ձեր բաժին ՚ի:

* Ոմանք. Վկայութիւն է ընդ մեզ... որդւոց ձերոց: Ոմանք. Առ ՚ի շինել մեզ սեղան:

* Ոմանք. Եւ իբրև լուան Փենէ՛:

* Ոմանք. Մի՛ ևս ելանել առ նոսա ՚ի: Յօրհնակին. Եւ բնակեցան ՚ի նմա:

* Այլք. Եթէ Տէր Աստուած է նոցա:

* Ոմանք. Յամենայն թշնամեաց նորա շուր՝:

* Ոմանք. Ես ծերացեալ և անցեալ զաւ. և ոմանք՝ և անցայ զաւուրբք:

* Ոմանք. Պատերազմ ընդ ձեզ:

ի մտիցն արևու*։ ⁵Արդ՝ Տէր Աստուած մեր նա՛ սատակեցէ՛ գնոսա յերեսաց ձերոց մինչև կորիցեն. և արծակեցէ՛ ՚ի վերայ նոցա զգագանս վայրենիս՝ մինչև սատակեցէ՛ գնոսա, և զթագաւորս նոցա յերեսաց ձերոց. և ժառանգեսցի՛ք զերկիր նոցա՝ որպէս խօսեցաւ Տէր Աստուած մեր ընդ մեզ։ ⁶Արդ զօրացարո՛ւք յոյժ զգուշանալ և առնել՝ զամենայն գրեալս ՚ի գիրս օրինացն Մովսիսի. զի մի՛ խտորիցիք ՚ի նմանէ՛ յաջ կամ յահեակ. ⁷զուցէ՛ մտանիցէք յազգսն մնացեալս յայնոսիկ. և անուանք դից նոցա մի՛ անուանեսցի ՚ի միջի ձերում. մի՛ երդնուցուք ՚ի նոսա, և մի՛ պաշտիցէք գնոսա, և մի՛ երկիր պագանիցէք նոցա. ⁸այլ զհետ Տեառն Աստուծոյ մերոյ երթիջիք՝ որպէս արարէք մինչև ցայսօր. ⁹և սատակեաց գնոսա Տէր յերեսաց ձերոց, զազգս մեծամեծս և զհզօրս. և ո՛չ ոք եկաց ընդդէմ ձեր մինչև ցայսօր։ ¹⁰Մի ՚ի ձէնջ հալածեաց զհազարս. զի Տէր Աստուած ինքնի՛ն տայր պատերազմ ընդ ձեր, որպէս խօսեցաւ ընդ ձեզ*։ ¹¹Զգոյ՛շ լինիջիք յոյժ անձանց ձերոց, սիրել՝ զՏէր Աստուած ձեր*։ ¹²Ապա թէ դառնալո՛վ դառնայցէք, և յաւելուցուք յազգսն մնացեալս ՚ի ձէնջ, և խնամութիւնս առնիցէք ընդ նոսա, և խառնակիցիք դուք ընդ նոսա, և նորա՛ ընդ ձեզ*։ ¹³Գիտելո՛վ գիտասցիք, զի ո՛չ ևս յաւելուցու Տէր սատակել զազգսն զայնոսիկ յերեսաց ձերոց. և լինիցին ձեզ յորոգայթս և ՚ի գայթազդութիւնս. խո՛չ ՚ի գարշապարս ձեր, և նե՛տք յաչս ձեր, մինչև կորնչիցիք յերկրէս բարութեան զոր ե՛տ ձեզ Տէր Աստուած ձեր*։ ¹⁴Եւ ես՝ ահա երթամ՝ այսօր զճանապարհ որպէս ամենեքին որ են յերկրի. և ծանիջի՛ք յամենայն սրտէ՛ ձերմէ և յամենայն անձնէ՛ ձերմէ. զի ո՛չ վրիպեաց բան մի յամենայն բանից զոր խօսեցաւ Տէր Աստուած ձեր. այլ ամենայն ինչ ե՛կն եհաս ձեզ, և ո՛չ սխալեցաւ ՚ի նոցանէ բան մի*։ ¹⁵Եւ եղիցի՝ զոր օրինակ եկին ՚ի վերայ ձեր ամենայն բանք բարիք զոր խօսեցաւ Տէր վասն ձեր. նոյնպէս աճցէ Տէր ՚ի վերայ ձեր զամենայն բանս չարս, մինչև սատակեցէ՛ զձեզ յերկրէս բարութեան՝ զոր ետ ձեզ Տէր Աստուած ձեր, ¹⁶յանցանել ձեզ զուխտիւն Տեառն Աստուծոյ ձերոյ՝ զոր պատուիրեա՛ց ձեզ, և յերթալ պաշտել զաստուածս օտարս՝ և երկիր պագանել նոցա. և բարկանայցէ՛ ձեզ Տէր, և կորնչիջիք վաղվաղակի յերկրէս բարութեան՝ զոր ե՛տ ձեզ Տէր*։

24

Գլուխ ԻԴ

¹Եւ ժողովեա՛ց Յեսու զամենայն ցեղսն Իսրայէլի ՚ի Սելով. և կոչեաց զամենայն ծերսն Իսրայէլի, և զիշխանս նոցա, և զդպիրս նոցա, և զդատաւորս նոցա, և կացին առաջի Տեառն*։ ²Եւ խօսեցաւ Յեսու ընդ ամենայն ժողովորեանն՝ և ասէ. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Յայնկոյս Գետոյն

* *Ոմանք.* Զի թողի ՚ի ձեզ զազգսն։

* *Ոմանք.* Մի այր ՚ի ձէնջ հալածէր... զի Տէր Աստուած ձեր ինք*։

* *Ոմանք.* Եւ զգոյ՛շ լինիցիք. յոյժ։

* *Յօրինակին կրկնի.* մնացեալս մնացեալս։ *Օրինակ մի.* Եւ ժառանգիցէք դուք ընդ նոսա։

* *Օրինակ մի.* Յերկրէ սրբութեան զոր ետ ձեզ։

* *Օրինակ մի.* Եւ ահա ես երթամ... որպէս և ամենայն երկիր. և ծա՛*։

* *Ոմանք.* Եւ բարկանայցէ Տէր Աստուած ձեր, և կորն*։

* *Ոմանք.* Եւ կային առաջի Աստուծոյ։

պանդխտեցան հարքն ձեր յառաջագոյն. Թարա՝ հա՛յր Աբրահամու և հա՛յր Նաքովրայ, և պաշտեցին զաստուածս օտարս: ³Եւ առի՛ ես զհայր ձեր զԱբրահամ յայնմ կողմանէ Գետոյն, և առաջնորդեցի՛ նմա յամենայն երկրիդ Քանանացոց, և բազմացուցի՛ զգաւակ նորա. և ետու նմա զԻսահակ. ⁴և ետու Սահակայ զՅակոբ, և զԵսաւ. և ետու Եսաւայ զլեառնն Սէիր՝ ի Ժառանգութիւն: Եւ Յակոբ և որդիք նորա իջին յԵգիպտոս. և եղեն անդ յա՛զգ մեծ և ՚ի բազում և ՚ի հզօր, և չարչարեցին զնոսա Եգիպտացիքն*. ⁵և եհար Տէր զԵգիպտացիսն նշանօք և արուեստիւք՝ զոր արար ՚ի նոսա*. ⁶և ապա եհան զձեզ յԵգիպտոսէ. և մտք ՚ի ծովն, և պնդեցան Եգիպտացիքն զհե՛տ հարցն ձերոց կառօք և երիվարօք ՚ի ծովն Կարմիր: ⁷Եւ աղաղակեցա՛ք առ Տէր. և եդ զամպն և զմէզ ՚ի մէջ մեր և ՚ի մէջ Եգիպտացոցն. և ած ՚ի վերայ նոցա զծովն՝ և ծածկեաց զնոսա. և տեսին աչք մեր զոր արար Տէր ընդ երկիրն Եգիպտացոց. և էիք յանապատի անդ զաւուրս բազումս*: ⁸Եւ ած զձեզ յերկիրն Ամովրիացոց բնակելոց յա՛յնկոյս Յորդանանու, և ետուն ընդ ձեզ պատերա՛զմ. և մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս ձեր, և Ժառանգեցէք զերկիրն նոցա. և սատակեցէք զնոսա յերեսաց ձերոց: ⁹Եւ յարեաւ Բաղակ Սեպիովրայ արքայ Մովաբու և ետ պատերազմ ընդ Իսրայէլի. և առաքեաց կոչեաց զԲաղասան որդի Բեովրայ նգովել զձեզ*. ¹⁰և ո՛չ կամեցաւ Տէր Աստուած քո կորուսանել, և օրհնելով օրհնեա՛ց զձեզ, և ապրեցոյց զձեզ ՚ի ձեռաց նոցա. և մատնեաց զնոսա ՚ի ձեռս ձեր: ¹¹Եւ անցէք ընդ Յորդանան, և եկիք յերիքով. և պատերազմեցան ընդ ձեզ բնակիչք Երիքովի. Ամուրիացիսն և Քանանացիսն, և Փերեզացիսն, և Խևացիսն, և Յերուսացիսն, և Քետացիսն, և Գերգեսացիսն. և մատնեաց զնոսա ՚ի ձեռս մեր*: ¹²Եւ առաքեաց յառաջագոյն քան զմեզ զձիաստացսն, և մերժեաց զնոսա յերեսաց ձերոց. զերկոտասան թագաւորս Ամովրիացոց, ո՛չ սրով քով և ո՛չ աղեղամբ քով. ¹³և ետ ձեզ Տէր զերկիրս՝ յորում ո՛չ վաստակեցէք. և բնակեցէք ՚ի քաղաքս զոր ո՛չ շինեցէք, և յայգիս և ՚ի թգեմիս՝ զոր ո՛չ տնկեցէք դուք՝ և ուտէք: ¹⁴Եւ արդ՝ երկերու՛ք դուք ՚ի Տեառնէ. և պաշտեցէք զնա ուղղութեամբ և արդարութեամբ. և ՚ի բա՛ց արարէք զաստուածս օտարոտիս՝ զոր պաշտեցին հարք ձեր յա՛յնկոյս Գետոյն, և յԵգիպտոս. և պաշտեցէք զՏէր*: ¹⁵Ապա թէ ո՛չ իցէ ձեզ հաճոյ պաշտել զՏէր, ընտրեցէք այսօր թէ զո՞ պաշտիցէք. զաստուածս հարցն ձերոց որ յա՛յնկոյս Գետոյն էին, թէ՞ զաստուածս Ամովրիացոցն, յորոց դուք բնակեալ էք յերկրի նոցա: Այլ ես՝ և տուն իմ պաշտեմ զՏէր՝ զի սուրբ է*: ¹⁶Պատասխանի ետուն ժողովուրդն՝ և ասեն. Քա՛ւ լիցի մեզ թողուլ զՏէր Աստուած մեր՝ և պաշտել զաստուածս օտարս*. ¹⁷զի Տէր Աստուած մեր, նա՛ եհան զմեզ և զհարս մեր յերկրէն Եգիպտացոց ՚ի տանէ ծառայութեան, և արար մեզ զնշանս մեծամեծս զայնոսիկ. և պահեաց զմեզ յամենայն ճանապարհին յորում զնացաք, և յամենայն ազգս՝ ընդ որ անցաք: ¹⁸Եւ մերժեաց Տէր զԱմովրիացիսն և զամենայն

* *Ոմանք.* Եւ ետու նմա զաւակ զԻսահակ:

* *Ոսկան.* Եւ հարի զԵգիպ՛... զոր արարի ՚ի նոսա: Եւ ապա հանի զձեզ:

* *Ոմանք.* Եւ ետ զամպն... ՚ի մէջ ձեր... և տեսին աչք ձեր:

* *Յօրինակին պակասէր.* Սեպիովրայ արքայ Մո՛:

* Ի ձեռս ձեր... (12) քան զձեզ զձիաստացն:

* *Յօրինակին պակասէր.* Երկերու՛ք դուք ՚ի Տեառնէ:

* *Ոմանք.* Ընտրեցէք ձեզ այսօր եթէ զո՞ պաշտիցէք, զԱստուած հարցն ձե՛: *Յօրինակին.* Բնակեալ էիք յերկրի նոցա:

* *Ոմանք.* Պատասխանի ետ ժողովուրդն և ասէ:

ազգս բնակեալս յերկրին՝ յերեսաց մերոց: Այլ և մե՛ք պաշտեսցուք զՏէր. զի նա՛ է Աստուած մեր: ¹⁹Եւ ասէ Յեսու ցժողովորդն. Ո՛չ կարէք դուք պաշտել զՏէր՝ զի սուրբ է. և նա՛ նախանձեալ ո՛չ ներիցէ մեղաց և անօրէնութեանց ձերոց*.

²⁰Եւ յորժամ թողուցուք զՏէր, և պաշտիցէք զաստուածս օտարս. և հասեալ ՚ի վերայ չարչարիցէ զձեզ, և ծախեսցէ զձեզ փոխանակ բարեացն՝ զոր արար ձեզ: ²¹Եւ ասէ ժողովորդն ցՅեսու. Ո՛չ այդպէս, այլ զՏէր պաշտեսցուք: ²²Եւ ասէ Յեսու ցժողովորդն. Ահա դուք ձեզէ՛ն եղերուք վկայք անձանց ձերոց, զի դուք ընտրեցէք զՏէր պաշտել զնա: Եւ ասեն. Վկայ՝ ենք*: ²³Եւ ասէ. Արդ ՚ի բաց արարէք ՚ի ձե՛նց զաստուածս օտարոտիս, և ուղղեցէ՛ք զսիրտս ձեր առ Տէր Աստուած Իսրայէլի: ²⁴Եւ ասէ ժողովորդն ցՅեսու. ՁՏէր Աստուած մե՛ր պաշտեսցուք, և ձայնի՛ նորա լուիցուք: ²⁵Եւ ուխտեաց Յեսու ո՛ւխտ ընդ ժողովորդեանն յաւուր յայնմիկ. և ետ նմա օրէնս և դատաստանս ՚ի Սելլով առաջի խորանին Աստուծոյ Իսրայէլի: ²⁶Եւ գրեաց Յեսու գրանս զայսոսիկ՝ ՚ի զիրս օրինաց Աստուծոյ. և ա՛ռ վէ՛մ մեծ, և կանգնեաց զնա ՚ի ներքոյ բեկնոյն առաջի Տեառն*.

²⁷Եւ ասէ Յեսու ցամենայն ժողովորդն. Ահա վէ՛մս այս եղիցի ձեզ ՚ի վկայութիւն. զի սա լուաւ զամենայն խօսեցեալսն ՚ի Տեառնէ՛ զոր խօսեցաւ ընդ ձեզ այսօր. և եղիցի սա ձեզ ՚ի վկայութիւն աւուրց յետնոց՝ յորժամ ստիցէք Տեառն Աստուծոյ ձերուն: ²⁸Եւ արձակեաց Յեսու զժողովորդն, և զնա՛ց իւրաքանչիւր ՚ի տեղի իւր: ²⁹Եւ պաշտեաց Իսրայէլ զՏէր զամենայն աւուրս Յեսուայ, և զամենայն աւուրս ձերոցն որ ձգեցին զժամանակս ընդ Յեսուայ. որք և տեսի՛ն զամենայն գործս Տեառն՝ զոր արար յԻսրայէլ:

ԻԸ ³⁰Եւ եղև յետ այսորիկ մեռանել Յեսուայ որդւոյ Նաւեայ ծառայի Տեառն, հարիւր և տասն ամաց*. ³¹Եւ թաղեցին զնա առ սահմանօք ժառանգութեան իւրոյ ՚ի Թամնասաքար ՚ի լերինն Եփրեմայ ՚ի հիւսւսոյ լերինն Գայասու: Եւ անդ եղին ընդ նմա ուր թաղեցին զնա առ ՚ի յիշատակէ զսուրսն քարեղէնս, որով թլփատեաց զորդիսն Իսրայէլի ՚ի Գաղզաղա, յորժամ եհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ որպէս հրամայեաց Տէր. և անդ են մինչև ցայսօր ժամանակի*:

ԻԹ ³²Եւ զոսկերսն Յովսեփու հանին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ. և թաղեցին զնա ՚ի Սիկիմ, ՚ի բաժնի ագարակին զոր ստացաւ Յակոբ յԱմովրիացւոցն բնակելոցն ՚ի Սիկիմ, որոջաց հարիւրոց. և ետ զայն Յովսեփայ ՚ի բաժնի: ³³Եւ եղև յետ այսորիկ վախճանել Եղիազարու քահանայի որդւոյ Ահարոնի. և թաղեցաւ ՚ի Գաբաաթ Փենէէսի որդւոյ իւրուն, զոր ետ նմա ՚ի լերինն Եփրեմայ: Յաւուրսն յայնոսիկ առեալ որդւոցն Իսրայէլի զտապանակ ուխտին Աստուծոյ շրջեցուցանէին ընդ իւրեանս: Եւ քահանայացաւ Փենէէս փոխանակ Եղիազարու հօր իւրոյ, մինչև մեռալ՝ և թաղեցաւ յիւրումն Գաբաաթ:

Լ Եւ որդիքն Իսրայէլի զնացին յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, և յիւրաքանչիւր քաղաքս իւրեանց. և պաշտեցին որդիքն Իսրայէլի զԱստարտն և զԱստարովթ, և զաստուածս ազգացն որ շուրջ զնոքօք: Եւ մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս Եգլոնայ արքայի Մովաբու. և տիրեաց նոցա ամս ո՛ւթ և տասն*:

* *Ոմանք.* ՁՏէր Աստուած՝ զի սուրբ է:

* *Ոմանք.* Ձեզէն իսկ եղերուք:

* *Ոմանք.* Օրինաց Տեառն... վէմ մի մեծ:

* *Ոմանք.* Յետ այնորիկ մեռանելոյ Յեսուայ ծառայի Տեառն Աստուծոյ:

* *Յօրինակին.* Լերինն Եփրեմայ... զսուրն քարեղէնս. ուր *ոմանք*՝ զսուրն քարեղէն:

Ոմանք. Ձնոսա յԵգիպտոսէ, որպէս և հրա՛:

* *Ոմանք.* Ի Գաղայաղ Փենէէսի: Յաւուր յայնմիկ... զտապանակ ուխտին Տեառն:

Կատարեցաւ Յետու Նաւեայ*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՏԱԻՈՐԱՑ

Քանզի յետ մահուն Յետուայ և այլք կացին դատաւորք 'ի վերայ Իսրայէլի: Եր երբէք զի և այլազգիքն իշխէին նոցա. զի 'ի միջոցս ժամանակաց դատաւորացն 'ի կուռս դառնային հրէայք. և մատներ զնոսա Աստուած 'ի ձեռս այլազգեաց: Յորոց 'ի նեղելն դառնապէս՝ աղաղակէին առ Տէր, և յարուցանէր փրկիչս նոցա զդատաւորսն, որք պատերազմելով ընդ հեթանոսս՝ փրկէին զԻսրայէլ 'ի ձեռաց նոցա, նկարելով զճշմարիտ փրկիչն Քրիստոս որ փրկեաց զաշխարհս 'ի մեղաց: Նա՛ և այլ ևս բազում իրօք եղեն նոքա օրինակ Քրիստոսի. որպէս ցիցն յայելի վարսեալ 'ի ծամելիսն Սիսարայ. և կործանելն Գեդէոնի զսեղանն Բահաղու. և անձրնն 'ի վերայ Գզաթուն Ասուի. և քաջութիւնն Սամփսոնի, և այլն ևս: Պատմեն գիրքս այս յետ մահուանն Յետուայ մինչև ցմահն Սամփսոնի զժամանակս երեքտասան դատաւորացն, որք յետ մահուանն Յետուայ իշխեցին հրէից: Եւ 'ի միջոցսն զտիրելն այլազգեացն. որպէս յետ Յետուայ զՔուսարայ Ասորոյ. և յետ Գողոնիէլի՝ զԵզդովմայ Սովաբացոյ. և յետ Սամեգարայ՝ զՅաբինայ Քանանացոյ. յետ Բարակայ՝ զՍադիամու. և յետ զԱբդոնի՝ զայլազգիս զորս տանջեաց Սամփսոն: 'Ի սոյն գիրս մեղադրէ և զկռապաշտիլն ցեղին Դանայ. և զանդուզն լրբութիւն Բենիամինեանցն: Եւ ունի Գիրք Դատաւորացս չափ ժամանակի ըստ հրէից՝ ամս ՄՁԸ. իսկ իւթանասնիցն՝ չորեք հարկր և տասն. որում և Պողոս 'ի Գործսն ձայնակցի. յետ Յետուայ Ն և Ծ ամ լինել մինչև 'ի Սամուէլ մարգարէ. զի քառասուն ամ Յեղեայ 'ի վերայ չորեքհարիւր և տասանցն եղեալ, լնու զչորեքհարիւր և գլխունն: Եւ յայտ է ապա զի յայլ և յայլ պատմագրաց գրեցաւ Գիրքս այս ըստ աճման ժամանակին, և յետոյ 'ի մի բովանդակեցաւ:

Գլուխք գրոց Դատաւորացն

ա. Թէ յետ վախճանին Յետուայ ցեղն Յուդայ կալաւ զառաջնորդութիւնն. յորում և կրկնաբանէ զառ Յետուաւ եղելոց իրացն 'ի Քաղեբայ:
բ. Թէ զի ո՛չ սատակեցին զազգսն ըստ հրամանին Տեառն. և երևեցաւ հրեշտակն, և յանդիմանեաց զանօրէնութիւն նոցա, և լացին ընդ այնր առաջի Տեառն:
գ. Ամբաստանութիւն չարեաց նոցա, զի յետ մահուն Յետուայ յետս կացին յԱստուծոյ, և մատնեաց զնոսա Տէր 'ի ձեռս Քուսարայ արքայի Ասորոց, և փրկեաց զնոսա 'ի ձեռն Գողոնիէլի:

* Ի վախճանի՝ ոմանք. Կատարեցաւ Գիրք Յետուայ որդոյ Նաւեայ:

դ. Յաւելին 'ի չարիս և մատնեցան Եզդոմայ Մովաբացւոյ, և յարոյց Տէր զԱւովդ, որ սպան զԵզդոմ, և վանեաց զՄովաբ:

ե. Յետ նորա Սամեգար, որ սպան վեցհարիւր այր մաճի՛ւ արօրոյ:

զ. Մատնեցան Յաբինայ Քանանացւոյ, և եղև պատգամ Տեառն 'ի ձեռն Դեբովրայ առ Բարակ. և նա չոգաւ եհար զգօրսն Յաբինայ. սպանաւ և Յաբին. և օրհնեաց Դեբովրայ օրհնութիւնս Տեառն յաղթականս:

է. Նեղեաց զնոսա Մադիամ և յարեաւ Գեդէոն. նկարեաց զբարձունն կռապաշտութեանն. և 'ի նշան յաղթութեանն անձրևովն 'ի գեղմնն՝ զօրէնսն Աստուծոյ առ Յրէայսն, և զիջունն Բանին 'ի կոյսն և զանարատ ծնունդն. և ապա զգամաքիլ Յրէիցն, և զանձրևիլն աշխարհի: Այլ և սափորք՝ Յրէայքն երկաթեայ գաւազանաւ փշրեալք ըստ Դաւթի և Երեմիայ. յորոց և լոյս Երրորդութեանն փողովք առաքելոցն վանեաց զիշխանն աշխարհի: Այլ և 'ի խորտակիլ մարմնական գործոց՝ պայծառանայ յաղթութիւն հոգւոյ:

ը. Յետ մահուն Գեդէոնի Աբիմեղէք հարձոյ որդի նորա սպան զԵթանասուն եղբարսն իւր, և թագաւորեաց. և յետ սուղ աւուրց խնդրեցաւ 'ի նմանէ վրէժ, զի մանրեցաւ գլուխն և մեռաւ:

թ. Յետ նորա Թովղա:

ժ. Յետ նորա Յայիր:

ժա. Յետ նորա Յեփթայի, որ և զոհեաց զդուստրն, և Աստուած հրաշիւք՝ որպէս առ Աբրահամ ո՛չ խափանեաց, զի այլ ոք յայնպիսի ուխտ մի՛ ժպրհեսցի. կոտորեաց և զԵփրեմ վասն անպատեհ գոռոզութեանն:

ժբ. Յետ նորա Էսբրոն Բեթղահեմացի:

ժգ. Յետ նորա Էղոն Ջաբուղոնացի:

ժդ. Յետ նորա Ղաբդոն:

ժե. Ապա Սամփսոն, որ ուժեղ զօրութեամբն իւրով նկարէր զանչափ զօրութիւն Տեառն իւրոյ. և յաղթելովն 'ի կնոջէն, նկարէր զխոնարհիլն մարդկան առաջի մեղաց:

ժզ. Ամբաստանէ զՄիքեայ որ կանգնեաց զպատկեր կռոցն 'ի տուն իւր. զի ասաց ցմայր իւր թէ զարծաթն զոր գողացան 'ի քէն, և երդուար՝ զի թէ գտցի, արասցես անտի պատկեր ձուլածոյ. արդ՝ արծաթն առ ի՛ս է, ա՛ռ և արա պատկեր ըստ երդմանն, և օրհնեաց զնա մայրն զի ասաց թէ արա՛ պատկեր. արար և վակաս, և վարձեաց քուրմն զՂևտացին:

ժէ. Ամբաստանէ և զցեղէն Դանայ, զի առին զկուռսն 'ի տանէն Միքայ. որով և կռապաշտեցան՝ մինչև ցգերիլն 'ի Սաղմանասարայ:

ժը. Պոռնկեցաւ հարձ Ղևտացւոյն, և փախեաւ. և նա դարձոյց զնա. և եկն 'ի Գաբաա. իբրև լլկեցին զհարձն և մեռաւ. ժողովեցաւ Իսրայէլ 'ի վերայ Գաբաայ: Եւ զի վասն կռապաշտելոյն ո՛չ նախանձեցան՝ որ մե՛ծ էր, և վասն կնոջն իրաց նախանձեցան, թո՛յլ ետ Աստուած պատերազմել ընդ միմեանս, մինչև ա՛ռ ստուգութիւնն զվրէժ չարեացն միմեամբք՝ երկուց կողմանցն:

Իսկ զՀռութայ զիրսն, վճարմամբ իրացն, և մեկնութեամբք անուանցն, թէ կամիս՝ առցես 'ի պատահսն Աղամայ, և յելսն 'ի դրախտէն, և 'ի տեսչութիւնն Աստուծոյ առ նա՛ ծննդեամբն 'ի տանէն Դաւթի:

ՂԱՏԱԻՈՐՔ

Գլուխ Ա

Ա ¹Եւ եղև յետ վախճանելոյն Յեսուայ, հարցանէին որդիքն Իսրայէլի զՏէր՝ և ասէին. Ո՛ր էլցէ մեզ առ Քանանացին առաջնորդ՝ պատերազմել ընդ նմա՞: ²Եւ ասէ Տէր. Յուդայ՝ էլցէ. զի ետու զերկիրն ՚ի ձեռս նորա: ³Եւ ասէ Յուդայ ցՇմաւոն ցեղբայր իւր. Ե՛լ ընդիս ՚ի վիճակիս իմում, և տացուք պատերազմ ընդ Քանանացիսն. և եկից ես ընդ քեզ ՚ի քում վիճակին: Եւ գնաց ընդ նմա Շմաւոն՞: ⁴Եւ ե՛լ Յուդայ. և ե՛տ Տէր զՔանանացին և զՓերեզացին ՚ի ձեռս նորա. և եհա՛ր զնոսա ՚ի Բեզեկ տասն հազար արանց: ⁵Եւ գտին զԱդոնիբեզեկ ՚ի Բեզեկ, և ետուն պատերազմ ընդ նմա. և հարին զՔանանացին և զՓերեզացին: ⁶Եւ փախեաւ Ադոնիբեզեկ, և պնդեցան զիետ նորա, և հասին նմա. և կտրեցին զծայրս ձեռաց նորա, և զծայրս ոտից նորա՞: ⁷Եւ ասէ Ադոնիբեզեկ. Եւթանասուն թագաւորք ծայրակտուրք ձեռօք և ոտիւք էին, որ քաղէին զփշրանս ՚ի ներքոյ սեղանոյ իմոյ. արդ՝ որպէս արարի, նոյնպէս հատոյց ինձ Աստուած: Եւ ածին զնա յերուսաղէմ, և անդ մեռաւ՞: ⁸Եւ պատերազմէին որդիքն Յուդայ ընդ Երուսաղէմի, և առին զնա, և հարին զնա սրով սուսերի. և զքաղաքն այրեցին հրով՞: ⁹Եւ յետ այնորիկ իջին որդիքն Յուդայ պատերազմել ընդ Քանանացւոյն, բնակելոյ ՚ի լեռնակողման, և ՚ի հարաւ, և ՚ի դաշտավայրս՞: ¹⁰Եւ գնաց Յուդայ ՚ի վերայ Քանանացւոյն բնակելոյ ՚ի Քեբրոն, և ել Քեբրոն ընդդէմ. և էր անուն Քեբրոնի յառաջ՝ Կարիաթարբոկ Սեփեր. և հարին զՍեփ, և զԱքիման. և զԹողմի, զճնունդսն Ենակայ: ¹¹Եւ ելին անտի ՚ի վերայ բնակչացն Դաբիրայ, և անուն Դաբիրայ էր յառաջագոյն Քաղաք Նամակաց՞: ¹²Եւ ասէ Քաղէբ. Որ ոք հարցէ զքաղաք Նամակաց՝ և առցէ զնա, տաց նմա զԱսքա զդուստր իմ կնութեան: ¹³Եւ ա՛ռ զնա Գողոնիէղ՝ որդի Կենեզի եղբայր Քաղէբայ՝ կրտսեր քան զնա. և ետ նմա Քաղէբ զԱսքա զդուստր իւր կնութեան: ¹⁴Եւ եղև ՚ի գնալն նորա, յորդորեաց զնա Գողոնիէղ՝ խնդրել ՚ի հօրէ իւրմէ ագարակ. և տրտնջեաց՝ և աղաղակեաց յիշոյ անտի՝ և ասէ. Յերկիր հարաւոյ ետուր զիս: Եւ ասէ ցնա Քաղէբ. Չի՞ է քեզ: ¹⁵Եւ ասէ ցնա Ասքա. Տո՛ւր ինձ օրհնութիւն, զի յերկիր հարաւոյ ետուր զիս. և տացես ինձ զքօսանս ջրոց: Եւ ե՛տ նմա Քաղէբ ըստ սրտի նորա զքօսանս բարձանց, և զքօսանս հովտաց՞: ¹⁶Եւ որդիքն Յոբաբայ Կինեցւոյ աներոյն Մովսիսի, ելին ՚ի քաղաքէն Արմաւենեաց՝ առ որդիսն Յուդայ ՚ի յանապատն Յուդայ, որ է ՚ի հարաւոյ Յուդայ, առ գառիվայրին Արադայ. և գնացին բնակեցան առ ժողովրդեանն՞: ¹⁷Եւ գնաց Յուդայ ընդ Շմաւոնի եղբօր իւրոյ, և հարին զՔանանացին բնակեալ յԱփեթ. և նզովեցին զնա, և

* *Ոմանք.* Եւ ասեն. Ո՛վ էլցէ: *Ուր Ոսկան.* Հարցին որդիքն Իսրայէլի:

* *Ոմանք.* ՅՇմաւովն եղբայր... ընդ Քանանացւոյն, և եկից և ես:

* *Օրհնակ մի.* Եւ փախեաւ Ադոն ՚ի Բեզեկ... և կտտորեցին զծայրս:

* *Ոմանք.* Որպէս արարի ես, նոյնպէս հատոյց ինձ Տէր:

* *Ոսկան.* Եւ պատերազմեցան:

* *Ոմանք.* Եւ յետ այսորիկ... ընդ Քանանացւոյն, և ՚ի հարաւ և ՚ի դաշտավայրս, և որ բնակեալ էին ՚ի լեռնակողման:

* *Ոմանք.* Քաղաք Նամակայ:

* *Ոմանք.* Ըստ սրտի նորա զքօսանս ջրոյ, և զքօսանս բարձանց:

* *Ոմանք.* Եւ որդիքն Յոթորայ Կինե... առ ՚ի գառիվայրին... ընդ ժողովրդեանն:

սատակեցին զնա. և կոչեցին զանուն քաղաքին Սատակունմն*։ ¹⁸Եւ ո՛չ ժառանգեաց Յուդա զԳազա՛ և զսահմանս նորա, և զԱսկադոն և զսահմանս նորա, և զԱկկարոն և զսահմանս նորա. և զԱզովտոս և զանդաստանս նորա*։ ¹⁹Եւ էր Տէր ընդ Յուդայ, և ժառանգեաց զԼեառնն. զի ո՛չ կարացին ժառանգել զբնակիչս հովտացն. զի Ռեքաբ՝ զատոյ՛ց գնոսա. և կառք երկաթի՛ք էին նոցա*։ ²⁰Եւ ետուն Քաղեբայ զՔեբրոն՝ որպէս և Խօսեցաւ Մովսէս. և ժառանգեաց անտի # զերիս քաղաքս որդւոցն Ենակայ. և եբարձ անտի զերեսին որդիսն Ենակայ։ ²¹Եւ զՅեբուսացին զբնակեալն յերուսաղէմ ո՛չ ժառանգեցին որդիքն Բենիամինի. և բնակեաց Յեբուսացին ընդ որդիսն Բենիամինի յերուսաղէմ մինչև ցայսօր*։ ²²Եւ ելին որդիքն Յովսեփու, և ինքեանք՝ ՚ի Բեթէլ. և Տէր ընդ նոսա*։ ²³Եւ բանակեցան տունն Իսրայէլի ՚ի Բեթէղ՝. և անուն քաղաքին էր յառաց Լուզայ։ ²⁴Եւ տեսին պահապանքն զայր մի ելեալ ՚ի քաղաքէ անտի, կալան զնա՛ և ասեն. Յոյց մեզ զմուտ քաղաքիդ, և արասցուք ընդ քեզ ողորմութիւն*։ ²⁵Եւ եցոյց նոցա զմուտ քաղաքին, և հարին զքաղաքն սրով սուսերի. և զայրն և զազատոհմն իւր արձակեցին։ ²⁶Եւ գնա՛ց այրն յերկիրն ՚ի Քետիմ, և շինեաց անդ քաղաք, և կոչեաց զանուն նորա Լուզա. և այն է անուն նորա մինչև ցայսօր։ ²⁷Եւ ո՛չ ժառանգեաց Մանասէ զԲեթսան՝ որ է Սկիւթուպօլիս. և ո՛չ զդստերս նորա, և ո՛չ զանդաստանս նորա. և ո՛չ զԹանաք և զդստերս նորա։ Եւ ո՛չ զբնակիչսն Դովրայ. և ո՛չ զշուրջ բնակեալսն զնովաւ և ո՛չ զդստերս նորա. և ո՛չ զբնակիչս Բաղակայ, և ո՛չ զշուրջ բնակեալսն զնովաւ. և ո՛չ զդստերս նորա։ Եւ ո՛չ զբնակիչս Յեբղամայ, և ո՛չ զշուրջ բնակեալսն զնովաւ, և ո՛չ զդստերս նորա. և սկսաւ Քանանացին բնակել յերկիրն յայնմիկ՝։

Բ ²⁸Եւ եղև իբրև զօրացաւ Իսրայէլ, ե՛ր զՔանանացին ընդ հարկաւ, և բառնալով ո՛չ եբարձ զնա։ ²⁹Եւ Եփրեմ՝ ո՛չ եբարձ զՔանանացին զբնակեալն ՚ի Գազեր. և բնակեաց Քանանացին ՚ի մէջ նորա ՚ի Գազեր, և եղև նմա հարկատո՛ւ։ ³⁰Եւ Ջաբուղոն՝ ո՛չ եբարձ զբնակիչսն Կեդրոնի, և զբնակիչսն Ամանայ. և բնակեաց Քանանացին ՚ի մէջ նորա. և եղև նմա հարկատո՛ւ։ ³¹Եւ Ասեր՝ ո՛չ եբարձ զբնակիչսն Ակքովայ, և եղև նմա հարկատո՛ւ. և զբնակիչսն Դովրայ, և զբնակիչսն Սիդոնի, և զբնակիչսն Դալափայ, և զԱքազիփ, և զԵղ֊փա, և զԱփեկ, և զՌովբ*։ ³²և բնակեաց Ասեր ՚ի մէջ Քանանացւոյն բնակելոյն յերկիրն. քանզի ո՛չ կարացին բառնալ զնա։ ³³Եւ Նեփթաղիմ՝ ո՛չ եբարձ զբնակիչսն Բեթսամիւսայ, և ո՛չ զբնակիչսն Բեթանաթայ. և բնակեաց Նեփթաղիմ ՚ի մէջ Քանանացւոյն բնակելոյ յերկիրն. և բնակիչքն Բեթսամիւսայ և Բեթանաթայ եղեն նմա հարկատո՛ւք։ ³⁴Եւ նեղեաց Ամուրիացին զորդիսն Դանայ ՚ի լերինն.

* *Ոմանք.* Բնակեալ յեփեթ։

* *Ոսկան.* Եւ ժառանգեաց Յուդա զազգս, և զսահմանս նորա։

* *Ոմանք.* Երկաթիք էին նորա։

* *Յայլս պակասի.* Բենիամինի յերուսաղէմ մինչև ցայսօր։

* *Ոմանք.* Եւ էր Տէր ընդ նոսա։

* *Ոմանք.* Եւ կալան զնա և ասեն ցնա... զմուտ քաղաքիս։

* *Ոմանք.* ՋԳեթսան, որ է Իսկիւթովպողիս։ *Ուր Ոսկան.* ՋԲեթան, որ է։ *Առ որում պակասի.* Եւ ո՛չ զբնակիչս Բաղակայ... Եւ զբնակիչս Յեբղամայ, և այլն։ *Իսկ այլ օրինակ մի այլազգ ևս ունի զբանս՝ այսպէս.* ՋԲեթսան որպէս Կիւթուպօլիս. և ո՛չ զդստերս նորա. և ո՛չ զբնակիչս նորա. Ջովբայ, և ո՛չ զշուրջ բնակեալն նովաւ, և ո՛չ զդստերս նորա, և ո՛չ զբնակիչս Բաղակայ... և ո՛չ զբնակեալսն Մակեդոնայ, և ո՛չ շուրջ զբնակեալսն... և սկսաւ Քանա՛։

* *Ոմանք.* Ջբնակիչսն Աքովրայ... և զբնակիչսն Գաղափայ... և զՌովկ։

զի ո՛չ տայր նոցա թոյլ իջանել ՚ի հովիտսն*։³⁵ Եւ սկսաւ Ամուրհացին բնակել ՚ի լերինն Մուրտաստանի. ուր արջք և աղուէք ՚ի Մուրտաստանսն և ՚ի Սաղապին։ Եւ ծանրացաւ ձեռն Յովսէփայ ՚ի վերայ Ամուրհացւոյն. և եղեն նոցա հարկատուս*։³⁶ զի սահման Ամուրհացւոյն եղոմայեցին էր. ՚ի վերայ զառիվայրին Ակրաբիմայ ՚ի Վիմէն և ՚ի վեր*։

2

Գլուխ Բ

¹Եւ ել հրեշտակ Տեառն ՚ի Գաղգաղա ՚ի Լալե՛տղն, և ՚ի Բեթէղ՛, և ՚ի տունն Իսրայէլի, և ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր. Տէր եհան զձեզ յեգիպտոսէ, և աս՛ զձե՛զ յերկիրո՞ յոր երդուաւ հարցն ձերոց տալ ձեզ, և ասէ ցձեզ. Ո՛չ ցրեցից զուխտն իմ որ ընդ ձեզ յաւիտեան*։² Եւ մի՛ դնիցէք ուխտ ընդ բնակիչս երկրիդ այդորիկ, և մի՛ ընդ դիս նոցա, և մի՛ երկիրպագանիցէք նոցա. այլ զորոշեալս նոցա խորտակեսջի՞ք, և զսեղանս նոցա կործանեսջի՞ք. և ո՛չ լուարուք ձայնի իմում. քանզի արարէք զայն։³ Եւ ասացի թէ ո՛չ յաւելից փոխել զժողովուրդն զոր յաւելի սատակել, և ո՛չ բարձից զնոսա յերեսաց ձերոց. և եղիցին ձեզ ՚ի վտանկս. և դիք նոցա եղիցին ձեզ ՚ի գայթազղութիւն*։⁴ Եւ եղև իբրև խօսեցաւ հրեշտակն Տեառն զբանս զայսոսիկ առ ամենայն որդիսն Իսրայէլի. ամբարձին ժողովուրդքն զձայնս իւրեանց՝ և լացին*։⁵ և վասն այնորիկ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Լալօ՛նք. և զոհեցին անդ Տեառն։⁶ Եւ արձակեաց Յեսու զժողովուրդսն. և գնացին որդիքն Իսրայէլի յիւրաքանչիւր տուն իւր, և յիւրաքանչիւր ժառանգութիւն իւր՝ ժառանգել զերկիրն*։

⁷Եւ ծառայեաց ժողովուրդն Տեառն զամենայն աւուրս Յեսուայ, և զամենայն աւուրս ձերոցն, որ միանգամ երկայնակեացք եղեն ընդ Յեսուայ. որ զհտակ լեալ էին ամենայն մեծամեծ գործոցն Տեառն՝ զոր արար յԻսրայէլ*։⁸ Եւ վախճանեցաւ Յեսու որդի Նաւեայ ծառայ Տեառն. որդի հարիւր և տասն ամաց.⁹ և թաղեցին զնա ՚ի լերինն ժառանգութեան նորա, ՚ի Թամնաթարէ՛ս՝ ՚ի լերինն Եփրեմի ՚ի հիւսւսոյ լերինն Գայասու*։¹⁰ Եւ ամենայն ազգն այն յաւելան առ հարս իւրեանց։ Յարեաւ այլ ազգ որ ո՛չ ճանաչէին զՏէր, և ո՛չ զգործսն զոր արար ՚ի մէջ Իսրայէլի*։¹¹ Եւ արարին որդիքն Իսրայէլի չա՛ր առաջի Տեառն. և պաշտեցին զԲահաղիմ. ¹²և թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց, որ եհան զնոսա յերկրէն Եգիպտացոց, և գնացին զհետ աստուածոց օտարաց, աստուածոց ազգացն որ շուրջ զնոքօք, և երկիր պագին նոցա. և

* Ոմանք. Ձի ո՛չ ետ նոցա թոյլ։

* Ոսկան. ՚ի լերինն Բուրաստանի։ Ուր ոմանք. Մուրաստանի... ՚ի Մուրաստանն և ՚ի Սաղաբին... և եղև նոցա հարկատու։

* Ոմանք. Եղիմացին էր... Ակրաբիմայ և ՚ի Վիմէն։

* Ոմանք. Այսպէս ասէ Տէր, որ եհան... զոր երդուաւ տալ հարցն ձերոց. և ետ ձեզ և ասէ. Ո՛չ ցրե՛։

* Օրինակ մի. Եւ ասացի սատակել, և ո՛չ բարձ՛։

* Ոմանք. Ձամենայն զբանս զայսոսիկ առ։

* Ոմանք. Ի տուն իւր... ՚ի ժառանգ՛։

* Ոմանք. Մեծամեծաց գործոց Տեառն զոր արար Իսրայէլի. կամ՝ յԻսրայէլի։

* Ոմանք. ժառանգութեան որ ՚ի Թամնաթար, ՚ի լերինն Գայասու։

* Ոմանք յաւելուն. Եւ յարեաւ այլ ազգ յետ նոցա, որ ո՛չ ճանա՛։

բարկացուցին զՏէր. ¹³և թողին զնա և պաշտեցին զԲահաղ, և զԱստարտսն*:
¹⁴Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայէլի, և մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռնս
աւարառուացն, և աւերեցին զնոսա. և ետ զնոսա Տէր ՚ի ձեռնս թշնամեաց
իւրեանց շուրջանակի. և ո՛չ կարացին կալ ընդդէմ թշնամեաց իւրեանց
ամենեցունց՝ ընդ որս պոռնկեցան: ¹⁵Եւ ձեռն Տեառն է՛ր նոցա ՚ի չարութիւն՝
որպէս և խօսեցաւ Տէր, և որպէս երդուաւ Տէր, և նեղեաց զնոսա յոյժ: ¹⁶Եւ
յարոյց նոցա Տէր դատաւորս, և փրկեաց զնոսա Տէր ՚ի ձեռաց աւարառուաց
նոցա. սակայն և նոցա ո՛չ լուան. ¹⁷զի պոռնկեցան զհետ աստուածոց օտարաց,
և երկիր պագին նոցա. և բարկացուցին զՏէր. և խոտորեցան վաղվաղակի ՚ի
ճանապարհէն ընդ որ զնային հարք նոցա լսել պատուիրանաց Տեառն. և ո՛չ
արարին այնպէս*: ¹⁸Եւ յորժամ յարոյց նոցա Տէր դատաւորս. և է՛ր Տէր ընդ
դատաւորին. և փրկեաց զնոսա ՚ի ձեռաց թշնամեաց նոցա զամենայն աւուրս
դատաւորին. զի մխիթարեցաւ Տէր ՚ի հեծութենէ նոցա յերեսաց պաշարողացն
նոցա որ չարչարէին զնոսա: ¹⁹Եւ լինէր իբրև մեռանէ՛ր դատաւորն, դառնային
միւսանգամ եղծանել առաւել քան զհարս իւրեանց, երթալ զհետ աստուածոց
օտարաց, պաշտել զնոսա և երկիրպագանել նոցա. և ո՛չ ընկեցին ՚ի բաց
զարուեստս իւրեանց, և ո՛չ հատան ՚ի խիստ ճանապարհաց իւրեանց*: ²⁰Եւ
բարկացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայէլի և ասէ. Փոխանակ զի եթող ազգդ այդ
զուխտ իմ զոր պատուիրեցի հարց դոցա, և ո՛չ լուան ձայնի իմուն*. ²¹և ես ո՛չ
յաւելից բառնալ զայր յերեսաց նոցա, յազգացն զոր եթող Յեսու՛ւ որդի Նաւեայ:
²²Եւ եթող փորձել նովաւ զԻսրայէլ, եթէ զգուշանայցեն ճանապարհին Տեառն
զնալ ընդ նա, զոր օրինակ զգուշացան հարքն նոցա, և եթէ ո՛չ: ²³Եւ եթող Տէր
զազգսն զայնոսիկ, չբառնալ զնոսա վաղվաղակի. և ո՛չ մատնեաց զնոսա ՚ի
ձեռս Յեսուլայ:

3

Գլուխ Գ

¹Եւ այս ազգք են զորս եթող Յեսու փորձել նոքօք զԻսրայէլ. զամենեսին որ
ո՛չ գիտէին զամենայն պատերազմունս Քանանացոց. ²բայց վասն ազգաց
որդւոցն Իսրայէլի ուսուցանել նոցա պատերազմ. սակայն և որ յառաջագոյն
քան զնոսա էին՝ ո՛չ գիտէին*: ³Ձիհնգ նախարարութիւնս այլազգեաց. և
զամենայն Քանանացին. և զՍիդոնացին. և զԽևացին զբնակեալսն ՚ի Լիբանան
՚ի լեռնէն Բաղհերմոնեայ՝ մինչև ցԲաղովեմաթ*: ⁴Եւ եղև ՚ի փորձել նոքօք
զԻսրայէլ. գիտել եթէ լսիցեն պատուիրանացն Տեառն՝ զորս պատուիրեաց
հարցն նոցա ՚ի ձեռն Մովսիսի*: ⁵Եւ որդիքն Իսրայէլի բնակեցին ՚ի մէջ
Քանանացւոյն, և Քետացւոյն, և Ամուրիացւոյն, և Փերեզացւոյն, և Խևացւոյն, և

* Ոմանք. ՁԲահաղ և զաստուածսն:

* Ոմանք. Ընդ որ զնացին հարքն նոցա:

* Ոմանք. Եւ ո՛չ հատանէին ՚ի խիստ ճանապարհէն իւրեանց:

* Ոմանք. Պատուիրեցի հարց նոցա:

* Ոմանք. Եւ որ յառաջ քան զնոսա:

* Ոմանք. Մինչև ցՂաբովեմաթ: Ուր ոմանք. ՚ի լեռնէն Յերմոնայ մինչև ցԱբովեմաթ. կամ՝
ցԳաբովեմաթ:

* Ոմանք. Հարց նոցա Մովսէս:

Յերուսացւոյն, և Գերզեսացւոյն: ⁶Եւ առին զդստերս նոցա իւրեանց՝ ՚ի կանայս, և զդստերս իւրեանց ետուն ուստերաց նոցա. և պաշտեցին զդիս նոցա: ⁷Եւ արարին որդիքն Իսրայէլի չա՛ր առաջի Տեառն. և մոռացան զՏէր Աստուած իւրեանց, և պաշտեցին զԲահաղ՝ և զանտառսն*: ⁸Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայէլի, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս Քուսարսաթեմայ արքային Ասորոց Սիջագետաց. և ծառայեցին նմա անս ութ: ⁹Եւ աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր: Եւ յարոյց Տէր փրկիչ Իսրայէլի, և ետ նոցա զԳողոմիէլ որդի Կենեզայ, զեղբայր Քաղեբայ՝ կրտսեր քան զնա. ¹⁰Եւ լուաւ նոցա: Եւ եղև ՚ի նմա Յոզի Տեառն, և դատեաց զԻսրայէլ. և ել ՚ի պատերազմ ընդ Քուսարսաթեմայ. և մատնեաց Տէր ՚ի ձեռս նորա զՔուսարսաթեմ արքայ Ասորոց. և սաստկացաւ ձեռն նորա ՚ի վերայ Քուսարսաթեմայ: ¹¹Եւ դադարեաց երկիրն անս քառասուն. և մեռաւ Գողոմիէլ որդի Կենեզի:

Դ ¹²Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չա՛ր առաջի Տեառն. և զօրացոյց Տէր զԵզդոմ արքայ Մովաբու ՚ի վերայ Իսրայէլի. վասն առնելոյ նոցա չա՛ր առաջի Տեառն*: ¹³Եւ ժողովեաց ՚ի վերայ նոցա զամենայն որդիսն Ամոնայ, և զԱմաղէկ. և չոգաւ եհար զԻսրայէլ. և ժառանգեաց զքաղաքն Արմաւենեաց*: ¹⁴Եւ ծառայեցին որդիքն Իսրայէլի Եզդոմայ արքայի Մովաբու անս ութուտասն: ¹⁵Եւ աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր: Եւ յարոյց նոցա Տէր փրկիչ զԱւովդ որդի Գերեայ՝ զորդի ա՛ռն Յիմենեցւոյ, զերկոցունց ձեռաց աջողակն. և առաքեցին որդիքն Իսրայէլի ՚ի ձեռն նորա պատարագս Եզդոմայ արքայի Մովաբու*: ¹⁶Եւ արար իւր Աւովդ սուր երկսայրի թգաւ յերկայնութիւն, և եղ յաջո՛յ ազդեր իւրում ընդ տառատակաւն, և գնաց*: ¹⁷Եւ մատոյց զպատարագսն Եզդոմայ արքայի Մովաբու. և Եզդոմ էր այր յո՛յլ յոյժ: ¹⁸Եւ եղև իբրև վախճանեաց Աւովդ մատուցանել զպատարագսն, և արձակեաց զպատարագաբարձսն. ¹⁹և Եզդոմ դարձաւ ՚ի դրօշելոցն հանդերձ դագաղաւն: Եւ ասէ Աւովդ. Բանք ինչ են ինձ ընդ քեզ լռելեայն արքայ: Եւ ասէ Եզդոմ. Լո՛ւռ լեր: Եւ ասէ ցամենեսին. ՚ի բաց գնացէք: Եւ ելին արտաքս որ զնովաւն կային*. ²⁰և նա նստէր յամարանոցի ՚ի վերնատանն իւրում միայն առանձինն: Եւ ասէ Աւովդ. Պատգամն Աստուծոյ է իմ առ քեզ արքայ: Եւ յարեաւ Եզդոմ յաթոռոյն մերձ առ նա*: ²¹Եւ եղև ընդ յառնելն նորա, ձգեաց Աւովդ զձեռն իւր զձախ, և ա՛ն զսուրն յաջոյ ազդերէ իւրմէ, և եհար ՚ի կշտի Եզդոմայ*, ²²արկ և զերախակալն ևս զհետ վիրին. և արգել ճարպն զվիրաբերանն, զի ո՛չ ձգեաց ՚ի բաց զսուրն ՚ի կշտէ նորա*: ²³Եւ ել ՚ի պատշգամն, և անց ընդ վանդակապատսն, և փակեաց զդուրս վերնատանն ընդդէմ նորա և աղխեաց. և ինքն ել գնաց: ²⁴Եւ ծառայքն

* *Ոմանք.* Եւ որդիքն Իսրայէլի արարին չարիս առաջի Տեառն:

* *Օրինակ մի.* Ձեզդոմ արքայ Մո՞:

* *Ոմանք.* Եհար զամենայն որդիսն Իսրայէլի, և ժա՞:

* *Ոմանք.* Առն Յեմինացւոյ. և *ոմանք.* Յամինացւոյ... ձեռացն աջողակ... ՚ի ձեռս նորա պատա՞:

* *Ոմանք.* Եւ ա՛ն իւր սուր Աւովդ երկս՞... ազդերի իւրում ընդ տառտտակաւն. *կամ՞* տառիովկտաւն:

* *Ոմանք.* Դարձաւ ՚ի դրօշելոյն հանդերձ Գաղգաղաւն... բան ինչ են:

* *Ոմանք.* Նստէր յամարանոյ ՚ի վերնա՞. պատգամ Տեառն է իմ:

* *Օրինակ մի.* Եւ եհար զկշտի նորա, (22) և արկ զերախակալն ևս... և արգել ճարպովն զվիրաբերանն, և ո՛չ ձգ՞:

* *Յօրինակին պակասէր.* Ձի ո՛չ ձգեաց ՚ի բաց զսուրն:

նորա մտին՝ և տեսին. և ահա դուրք վերնատանն փակեալ էին. և ասեն. Գուցէ՛ յաթոռն նստիցի՝ ՚ի պէտս ՚ի սենեկին*։ ²⁵Եւ կացին մնացին ամաչեցեալք. և ահա ո՛չ ոք էր որ բանայր գդուրս վերնատանն. և առին զբանալին և բացին, և ահա տէրն իւրեանց անկեալ կայր մեռեալ ՚ի գետնի։ ²⁶Եւ Աւովդ զերծաւ ՚ի Սիրովթա՝ մինչ նոքա զաղմկան էին. և ո՛չ ոք էր որ փոյթ առնէր զնմանէ. և նա անց առ դօշեւոյն, և զերծաւ անկաւ ՚ի Սիրովթա*։ ²⁷Եւ եղև իբրև եկն Աւովդ յերկիրն Իսրայէլի, եհար փող ՚ի լերինն Եփրեմայ. և իջին ընդ նմա որդիքն Իսրայէլի ՚ի լեռնէ անտի. և ինքն առաջի նոցա։ ²⁸Եւ ասէ ցնոսա. Իջէ՛ք զկնի իմ, զի մատնեաց Տէր Աստուած մեր զթշնամիս մեր զՄովաբացիս ՚ի ձեռս մեր։ Եւ իջին զկնի նորա. և կալան նախ զանցս Յորդանանու ՚ի Մովաբայ, և ո՛չ թողին մարդոյ անցանել։ ²⁹Եւ հարին ՚ի Մովաբայ յաւուր յայնմիկ իբրև տասն հազար արանց զամենայն պատերազմօղս ՚ի նոցանէ, և զամենայն այր զօրութեան. և ո՛չ ապրեցաւ և ո՛չ մի այր։ ³⁰Եւ վանեցաւ Մովաբ յաւուր յայնմիկ ընդ ձեռամբ Իսրայէլի. և դադարեաց երկիրն ամս ութսուն. և դատեաց զնոսա Աւովդ մինչև մեռաւ։

Ե ³¹Եւ յետ նորա յարեաւ Սամեգար որդի Անաթայ. և եհար յայլազգեացն վեց հարիւր այր մաճով արօրոյ, և ա՛ռ յաւարի արջառ և ոչխար բազում յոյժ, թո՛ղ զորթս արջառոց. և փրկեաց նա զԻսրայէլ*։

4

Գլուխ Դ

¹Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չա՛ր առաջի Տեառն. և Սամեգար մեռաւ։
²Եւ մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս Յաբինայ արքայի Քանանացոց, որ թագաւորեաց յԱսովր. և իշխան զօրու նոցա Սիսարա. և ինքն բնակէր յԱրիսովթա՝ ազգաց*։ ³Եւ աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր. զի ինն հարիւր կառք երկաթիք էին նորա. և նա նեղէր զԻսրայէլ սաստիկ՝ ամս քսան։ ⁴Եւ Դեբովրա կին մարգարէ՝ կին Ղաբիդովթայ. նա՛ դատէր զԻսրայէլ ՚ի ժամանակին յայնմիկ։ ⁵Եւ ինքն բնակեալ էր ընդ արմաւենեաւն ՚ի մէջ Ռամայ և ՚ի մէջ Բեթելայ՝ ՚ի լերինն Եփրեմայ. և ելանէին որդիքն Իսրայէլի առ նա ՚ի դատաստան*։ ⁶Եւ առաքեաց Դեբովրա և կոչեաց զԲարակ զորդի Աբինէմայ ՚ի Կադեսայ Նեփթաղիմի, և ասէ ցնա. Ո՞չ ապաքէն հրաման ետ քեզ Տէր Աստուած Իսրայէլի, և երթիցես ՚ի լեռնն Թաբովր, և առցես ընդ քեզ տասն հազար արանց յորդոցն Նեփթաղիմայ, և յորդոցն Չաբուղոնի*, ⁷և տարցիս ընդ քեզ ՚ի հեղեղատն Կիսունի, ՚ի վերայ Սիսարայ իշխանի զօրուն Յաբինայ՝ և զօրաց նորա, և կառաց նորա, և մատնեցի՛ց զնա ՚ի ձեռս քո*։ ⁸Եւ ասէ ցնա Բարակ. Եթէ երթիցես ընդ իս՝ երթայ՛ց, և եթէ ո՛չ երթիցես ընդ իս՝ ո՛չ երթայ՛ց. քանզի ո՛չ գիտեմ զօրն յորում

* Ոմանք. Փակեալ կայր. և ասեն։

* Յօրինակին պակասէր. Ձերծաւ անկաւ ՚ի Սիրովթա։

* Յայլս պակասի. Վեց հարիւր այր մաճով արօրոյ. և ա՛ռ յաւարի արջառ և ոչխար բազում յոյժ. թո՛ղ զորթս։

* Ոմանք. Եւ ինքն բնակեալ էր յԱրիսովթա։

* Ոսկան. Ընդ արմաւենեաւն Դեբօրայ։

* Ոմանք. Ի Կիդեսայ Նեփթաղեմի։

* Ոմանք. Յաբինայ, և կառաց նորա, և բազմութեան նորա. և մատնե՛։

աջողեցցէ Տէր զհրեշտակ իւր ընդ իս: ⁹Եւ ասէ ցնա Դեբովրա. երթալո՛վ երթայց ընդ քեզ. բայց գիտասցիր, զի ո՛չ քո լիցի քաջութիւն ՚ի ճանապարհին զոր երթայցես. քանզի ՚ի ձեռն կնո՛ջ մատնեցցէ Տէր զՍիսարա: Եւ յարեաւ Դեբովրա, և գնաց ընդ Բարակայ ՚ի Կադիսայ: ¹⁰Եւ պատուէր ետ Բարակ Ջաբուղոնի և Նեփթաղիմի ՚ի Կադէս. և ելին զհետ նորա տասն հազար արանց. ե՛լ ընդ նմա և Դեբովրա: ¹¹Եւ մերձաւորք Կինեցւոյն մեկնեցան ՚ի Կինեայ յորդոյն Յոբաբայ աներոյն Սովսիսի. և եհա՛ր զխորան իւր առ կաղնեաւն հանգուցելոցն՝ որ է մերձ ՚ի Կադէս*: ¹²Եւ ա՛զդ եղև Սիսարայ եթէ ել Բարակ որդի Աբինէմայ ՚ի լեռնն թաբովր: ¹³Եւ գումարեաց Սիսարա զամենայն կառս իւր, ինն հարիւր կառս երկաթեղէնս. և զամենայն զօրն որ ընդ իւր յԱրիսովթայ ազգաց՝ ՚ի հեղեղատն Կիսոնի: ¹⁴Եւ ասէ Դեբովրա ցԲարակ. Արի՛ զի ա՛յս օր է՝ յորում մատնեաց Տէր զՍիսարա ՚ի ձեռս քո. զի ահա Տէր է առաջի քո: Եւ էջ Բարակ ՚ի լեռնէն թաբովրայ, և տասն հազար արանց զհետ նորա*: ¹⁵Եւ զարհուրեցոյ՛ց Տէր զՍիսարա, և զամենայն կառս նորա, և զամենայն բանակն նորա՝ սրո՛վ սուսերի առաջի Բարակայ: Եւ էջ Սիսարա ՚ի կառաց իւրոց, և փախեա՛ւ հետիո՛տս: ¹⁶Եւ Բարակ զհետ մտեալ երթայր զկնի կառացն, և զհետ բանակին մինչև յանտառն ազգաց. և անկա՛ւ ամենայն բանակն Սիսարայ սրով սուսերի. և ո՛չ մնաց և ո՛չ մի*: ¹⁷Եւ Սիսարա մեկնեցա՛ւ գնաց հետիո՛տս ՚ի խորանն Յայելի կնոջ Քաբերայ Կինեցւոյ. քանզի խաղաղութիւն էր ՚ի մէջ Յաբինայ արքայի Ասովրայ, և ՚ի մէջ տանն Քաբերայ Կինեցւոյ: ¹⁸Եւ ե՛լ Յայել ընդ առաջ Սիսարայ՝ և ասէ ցնա. Խոտորեաց առ իս տէր իմ խոտորեաց, և մի՛ երկնչիր: Եւ խոտորեցաւ առ նմա ՚ի խորանն. և ծածկեաց գնա ընդ փեղկիւք նորա*: ¹⁹Եւ ասէ ցնա Սիսարա. Արբո՛ ինձ սակաւ մի ջուր՝ զի ծարաւի՛ եմ: Եւ եբաց զտիկ կաթինն՝ և արբոյց նմա. և ծածկեաց զերեսս նորա*: ²⁰Եւ ասէ ցնա Սիսարա. Կա՛ց դու առ դրան խորանիդ, և եղիցի եթէ եկեցցէ ոք առ քեզ և հարցցէ և ասասցէ ոք ցքեզ. եթէ է՞ ոք այդր այր, ասասցես՝ թէ ո՛չ է: ²¹Եւ ծածկեաց գնա ընդ փեղկիւքն նորա: Եւ ա՛ռ Յայել կին Քաբերայ զցից խորանին, և կալա՛ւ զուռնն ՚ի ձեռին իւրում. և եմուտ մեղմով առ նա. և բախեաց զցիցն ընդ ծամելիս նորա՝ և վարսեաց ընդ գետինն. և նա տապալեցաւ ՚ի մէջ ոտից նորա, և եհան զոգի*: ²²Եւ ահա Բարակ պնդեա՛լ գայր զհետ Սիսարայի. և ել Յայել ընդ առաջ նորա և ասէ ցնա. Ե՛կ այսր և ցուցի՛ց քեզ զայրն զոր դու խնդրես: Եւ եմուտ առ նա. և ահա Սիսարա կայր անկեալ մեռեալ՝ և ցիցն ՚ի ծամելո՛ջ նորա*: ²³Եւ կորացոյց Տէր Աստուած յաւուր յայնմիկ զՅաբին արքայ Քանանացւոց առաջի որդւոցն Իսրայէլի: ²⁴Եւ ձեռն որդւոցն Իսրայէլի երթալո՛վ երթայր խստացեալ ՚ի վերայ Յաբինայ արքային Քանանացւոց՝ մինչև սատակեցան*:

5

* *Ոմանք.* Որդւոցն Յոբաբայ... առ կաղնեաւն հանգուցելոյն:

* *Բազումք.* Չի այսօր է՝ յորում:

* *Ոմանք.* Եւ ո՛չ մնաց մինչև ցմի:

* *Ոմանք.* Յայել ընդդէմ Սիսարայ, և ասէ ցնա. Մօտ եկ առ իս տէր իմ, և մի՛ երկնչիր: Եւ խոտորեցաւ, առ նա ՚ի:

* *Ոմանք.* Արբո՛ ինձ բաժակ մի ջուր զի ծա՛:

* *Բազումք.* Եւ եմուտ մեղմ առ նա: *Ոմանք.* Ընդ մէջ ոտից նորա:

* *Ոմանք.* Եւ ցուցից քեզ զՍիսարա զայրն զոր:

* *Ոմանք.* Մինչև սատակեցին գնոսա:

Գլուխ Ե

¹Եւ օրհնեաց Դեբովրա, և Բարակ որդի Աբինեեմայ յաւուր յայնմիկ՝ և ասեն. ²Ի սկսանել զօրավարացն Իսրայէլի, մտադիւրութեամբ ժողովրդեանն օրհնեցէք զՏէր: ³Լուարուք թագաւորք՝ և ունկնդիր լերուք նախարարք. եւ Տեառն երգեցից, և սաղմոս ասացից Աստուծոյ Իսրայէլի: ⁴Տէր յելանել քոյ՝ ի Սէիրայ, և ՚ի չուել քում յանդաստանացն Եղովմայ, երկիր շարժեցաւ և երկինք խռովեցան, և ամաք ցօղեցին ջուր: ⁵Լերինք շարժեցան յերեսաց Տեառն Ելովայ Սինայի, յերեսաց Տեառն Աստուծոյ Իսրայէլի: ⁶Յաւուրցն Սամեգարայ որդւոյ Անաթայ՝ ցաւուրս Յայելի, պակասեցին թագաւորք և գնացին ընդ շաւիղս, գնացին ընդ ճանապարհս կամակորս: ⁷Պակասեցին փարագունք բնակեալք ՚ի մէջ Իսրայէլի՝ պակասեցին, մինչև յարեաւ Դեբովրա, մինչև յարեաւ մայր Իսրայէլի: ⁸Յանկացան իբրև գարեղէն նկանակի աստուածոց օտարաց սնոտուց. յայնժամ պատերազմեցան քաղաքք իշխանաց. ծածկութեամբ նորոց գեղարդանց, քառասուն հազար այր ՚ի մէջ Իսրայէլի: ⁹Սիրտ իմ ՚ի վերայ կարգելոցն Իսրայէլի. զօրաւորք ժողովրդեանն օրհնեցէք զՏէր: ¹⁰Յեծեալք յերիվարս ՚ի մէջօրէի, և սպիտակաց. երթեալք յատեանս ատենակալաց: Տո՛ւք ձայն բարբառոյ, ¹¹նուագածուաց, ՚ի մէջ ցնծացելոց. անդ տացեն արդարութիւն Տեառն. զարդարութիւն զօրացոյց ՚ի մէջ Իսրայէլի. յայնժամ էջ ՚ի քաղաքս ժողովուրդ Տեառն: ¹²Ձարթիր զարթիր Դեբովրա. զարթո՛ զբիւրաւորս հանդերձ ժողովրդեամբ. զարթիր զարթիր խօսեաց երգովք: Ջօրացեալ յարիցես Բարակ. գերեսցես զգերութիւն քո՝ որդի Աբինեեմայ: ¹³Յայնժամ մեծացաւ զօրութիւն նորա: Տէր ընկրկեաց ինձ զզօրագոյնսն քան զիս: ¹⁴Ժողովուրդ Եփրեմայ պատժեաց զնոսա ՚ի հովիտսն. եղբայր քո Բենիամին՝ քոյին ժողովուրդ: Յինէն ՚ի Մաքիր իջին խուզարկուք. և ՚ի Ջաբուղոնէ զօրացուցիչք, գաւազանաւ պատմութեան դպրի: ¹⁵Եւ զօրավարք Իսաքարու ընդ Դեբովրայ՝ և ընդ Բարակայ. և ապա՝ Բարակ ՚ի հովիտսն տարածեաց զոտս իւր. ՚ի բաժինս Ռուբինի մեծամեծ ճշդութիւնք սրտի: ¹⁶Ընդէ՞ր նստիցին ՚ի մէջ Մոսփաթեմա. լսել զչաչիւնս տագնապողաց, անցանել ՚ի կողմն Ռուբինի: Մեծամեծ յարուցեալ կան հետազօտութիւնք սրտից: ¹⁷Գաղ՝ յայնկոյս Յորդանանու բնակեաց. և Դան՝ ընդէ՞ր բնաւ պանդխտիցիս ՚ի նաւս: Ասեր՝ բնակեաց առ ծովեզերք ծովուց, և ՚ի կիրճս նորա բնակեցէ: ¹⁸Ձաբուղոն՝ ժողովուրդ անձնանախատ ՚ի մահ. և Նեփթաղիմ ՚ի բարձունս ագարակի: ¹⁹Հասին թագաւորք՝ և ճակատեցան. յայնժամ տագնապեցան թագաւորք Քանանացուց ՚ի Թանաք ՚ի վերայ ջրոց Մակեդոնովայ: Չագահութիւն արծաթոյ ես ո՛չ առի: ²⁰Յերկնից՝ ճակատեցան

* *Ոմանք.* Յերեսաց Տեառն ելելոյ ՚ի Սինայէ:

* *Ոմանք.* Յաւուրս Սամագարայ... յաւուրս Յայել:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ փարագունք, *նշանակի՝* աւանք:

* *Ոմանք.* Օտարաց սնոտեաց... իշխանք քաղաքացն... նորոց գեղարդեանց:

* *Ոմանք.* ժողովրդեանդ օրհ:

* *Ոմանք.* Անդ տացեն օրհնութիւնս Տեառն... ՚ի քաղաքս ժողովրդեանն Տեառն:

* *Ոմանք.* Քոյին ժողովրդովք յինէն ՚ի Մաքիր իջին:

* *Ոմանք.* Մեծամեծ ճշգրտութիւնդ սրտի:

* *Ոմանք.* Պանդխտեցի ՚ի նաւս:

* *Ոմանք.* Հասին թագաւորք նոցա և: *Ի լուս՝.* Յայնժամ պատերազմեցան թագաւորք Քա՛. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

աստեղք՝ յիւրաքանչիւր յօրինուածոց, ետուն պատերազմ ընդ Սիսարայ:
²¹Յեղեղատն Կիսոնի մերժեաց զնոսա. հեղեղատն Կաղեսիմայ, հեղեղատն
Կիսոնի: Կոխեսցէ զնոսա անձն իմ. ²²ուրք իմ զօրասցի՝ զօրութեամբ: Յայնժամ
կարթակոտորք եղեն գարշապարք երիվարաց Մադդարովթայ. և հարթեսցեն
գարշապարք իմ զհպարտութիւնս զարհուրանաց նոցա*:²³Նզովեցէք զՄարովզ՝
ասէ հրեշտակն Տեառն, անիծանելով անիծեցէք զբնակիչս նորա. զի ո՛չ եկին
յօզնականութիւն Տեառն. օգնական Տէր՝ ի մէջ նահատակաց հզօրն*:
²⁴Օրհնեալ լիցի՝ ի կանանց Յայել կին Քաբերայ Կինեցոյ. օրհնեսցի՝ ի
կանանց ի խորանի իւրում*:²⁵Ջուր խնդրեաց, և ետ կաթն դաշխորանաւ
զօրաւորաց. մատոյց կոզի*:²⁶Չձեռն իւր ձախ ձգեաց՝ ի ցիցն, և զաջ իւր ի
սպառսպո՛ւռ ջախջախանս անպիտանացուցանել, և վախճանեցոյց զՍիսարա.
վարսեաց ընդ ծամելիս նորա, և անցոյց ցից ընդ գլուխ նորա, և սատակեաց:
²⁷Ի մէջ ոտից նորա անկաւ ծանրացեալ, և նիրհեցոյց ի մէջ ծնգաց իւրոց.
յորում կորացաւ մինչև զգետնեցաւ՝ անդ անկաւ չուառականն*:²⁸Մայրն
Սիսարայ հայեցեալ դէտ ակն ունէր ի վանդակապատ պատուհանէն. քանզի
տեսանէր զդարձեալսն ի Սիսարայ. վասն զի յետնեցան կառք նորա ի գալոյ,
ընդէ՞ր յամեցին հետք կառաց նորա:²⁹Կանայք իմաստունք իշխանաց նորա,
ետուն անդէն պատասխանի նմա՝ և ասեն. և ինքնին անձամբ անձին առնէր իւր
պատասխանի*:³⁰Ո՛չ գտանիցեն զնա աւարաբաշխք, առնել սէր բարեկամաց ի
գլուխ արանց. և եզէլ զաղիս նորա: Կապուտ երանգոցն Սիսարայ կապուտ
երանգոցն գոյնագոյն նկարուց, նարօտ պէսպէս նկարուց. այն էր պարանոցին
նորա կապուտ*:³¹Այսպէս կորիցեն ամենայն թշնամիք քո Տէր. և որք սիրիցենն
զնա՝ իբրև զելս արեգական ի զօրութեան նորա:³²Եւ դադարեաց երկիրն ամս
բառասուն:

6

Գլուխ 2

Է՛ Եւ արարին որդիքն Իսրայէլի չար առաջի Տեառն. և ետ զնոսա Տէր ի ձեռս
Մադիամու ամս եւթն. ²և զօրացաւ ձեռն Մադիամու ի վերայ Իսրայէլի: Եւ
արարին իւրեանց որդիքն Իսրայէլի յերեսաց Մադիամու գո՛նս ի լերինս, և
յայրս և յամուրս:³Եւ լինէր իբրև վարէր այր Իսրայէլի. ելանէր Մադիամ և
Ամադէկ և որդիքն արևելեայց հասանէին ի վերայ նոցա,⁴և բանակէին առ
նոքօք, և ապականէին զբերս երկրին մինչև ի մուտս Գազայ. և ո՛չ թողուին
դադար կենաց Իսրայէլի. ոչխար, և արջառ, և էջ*:⁵Չի ինքեանք և խաշինք
իւրեանց ելանէին, և զվրանս իւրեանց բերէին. և հասանէին իբրև զմարախ

* *Ոմանք.* Ոտն իմ զօրասցի:

* *Ոմանք.* Անիծէք զբն՝:

* *Ոմանք.* Օրհնեսցի ի կանայս Յայել:

* *Ոմանք.* Եւ մատոյց կաթն. դաշխորանաւ զօրաւորաց ետ կոզի:

* *Ոմանք.* Ընդ մէջ ոտից նորա... անդ անկաւ թշուառականն:

* *Այլք.* Ետուն անդդէն պատասխանի: *Ոմանք.* Պատասխանի և ասեն. Ինքն անձամբ:

* *Ոմանք.* Աւարաբաշխ առնել զսէր... և երզել զաղիս նորա: Կապուտակ երանգոցն
Սիսարայի կապուտակ երանգոցն գոյն գոյն նկարոյն... էր պարանոցի նորա ի
կապուտ:

* *Ոմանք.* Դադարս կենացն յԻսրայէլի:

բազմութեամբ. և ո՛չ գոյր թիւ նոցա, և ուղտուց իւրեանց. և հասանէին յերկիրն Իսրայէլի ապականել՝ զնա: ⁶Եւ աղքատացաւ Իսրայէլ յոյժ յերեսաց Մադիամու: Եւ աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր: ⁷Եւ եղև իբրև աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր վասն Մադիամու, ⁸և առաքեաց Տէր այր մարգարտ առ որդիսն Իսրայէլի՝ և ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ես եմ որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացուց, և կորզեցի զձեզ ՚ի տանէ ծառայութեան*. ⁹և փրկեցի զձեզ ՚ի ձեռաց Եգիպտացուցն, և ՚ի ձեռաց ամենայն նեղչաց ձերոց. և մերժեցի զնոսա յերեսաց ձերոց, և ետու ձե՛զ զերկիր նոցա: ¹⁰Եւ ասացի ցձեզ. Ես եմ Տէր Աստուած ձեր, մի՛ երկնչիք յաստուածոց Ամուրիացուցն, յորոց միջի դուք բնակեալ էք յերկրի նոցա. և ո՛չ լուարուք ձայնի իմուն: ¹¹Եւ եկն հրեշտակ Տեառն, և նստաւ ընդ կաղնեաւն՝ որ էր յԵփրա Յովասու հօր Եսրեայ, և Գեդէոն որդի նորա ծեծէր ցորեան ՚ի կալ, փախչել յերեսաց Մադիամու: ¹²Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն՝ և ասէ ցնա. Տէր ընդ քեզ հզօր զօրութեամբ: ¹³Եւ ասէ ցնա Գեդէոն. Յիս Տէր իմ. եթէ էր Տէր ընդ մեզ՝ ընդէ՞ր գտին զմեզ ամենայն չարիքս այսոքիկ. և ո՞ւր են ամենայն սքանչելիքն նորա զոր պատմեցին մեզ հարքն մեր՝ և ասեն. Ո՞չ ապաքէն յԵգիպտոսէ եհան զմեզ Տէր. և արդ՝ ընդէ՞ր մերժեաց զմեզ, և մատնեաց զմեզ ՚ի ձեռս Մադիամու: ¹⁴Եւ հայեցաւ ընդ նա հրեշտակն Տեառն, և ասէ ցնա. Եթէ զօրութեամբդ քով այդուիկ, և փրկեսցես զԻսրայէլ ՚ի ձեռաց Մադիամու. ո՞չ աւասիկ ես առաքեցի զքեզ: ¹⁵Եւ ասէ ցնա Գեդէոն. Յիս Տէր, ի՞նչ փրկեցից զԻսրայէլ. և ահա հազարաւորն իմ խոնարհագոյն է ՚ի մէջ Մանասէի. և ես կրտսեր եմ ՚ի տան հօր իմոյ: ¹⁶Եւ ասէ ցնա. Տէր ընդ քեզ. և հարցես զՄադիամ իբրև զայր մի: ¹⁷Եւ ասէ Գեդէոն. Եթէ գտի շնորհս առաջի աչաց քոց, արասցես ինձ նշան՝ եթէ դու խօսեսցիս ընդ իս*: ¹⁸Մի՛ զնասցես աստի՛ մինչև եկից առ քեզ, և բերից զգոհ իմ, և եղից առաջի քո: Եւ ասէ. Ես եմ, և նստայց աստ մինչև դարձցիս առ իս*: ¹⁹Եւ եմուտ Գեդէոն՝ և հասոյց ուլ մի յայծեաց, և արդու մի ալևր բաղարջ. և զմիսն եղ ՚ի վերայ խանի, և զարգանակն արկ ՚ի պոյտն. և եհան առ նա ընդ կաղնեաւն և երկիր եպագ*: ²⁰Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն. Ան դու զմիսդ՝ և զհացդ բաղարջ, և դիր ՚ի վերայ վիմին այնորիկ. և հե՛ղ զարգանակն: Եւ արար այնպէս*: ²¹Եւ ձգեաց հրեշտակն Տեառն զժայր գաւազանին որ ՚ի ձեռին իւրում, և հասոյց ՚ի միսն և ՚ի բաղարջսն. և բորբոքեցաւ հուր ՚ի վիմէ անտի, և եկեր զբաղարջսն. և հրեշտակն Տեառն զնաց յաչաց նորա*: ²²Եւ ետես Գեդէոն եթէ հրեշտակ Տեառն է. և ասէ Գեդէոն. Ա՛, ա՛, Տէր Տէր. զի տեսի զհրեշտակն Տեառն դէմ յանդիման: ²³Եւ ասէ ցնա Տէր. Խաղաղութիւն ընդ քեզ. մի՛ երկնչիր, ո՛չ մեռանիցիս: ²⁴Եւ շինեաց անդ Գեդէոն սեղան Տեառն. և կոչեաց զնա Խաղաղութիւն Տեառն մինչև ցայսօր: Եւ մինչդեռ ինքն անդէն էր, յԵփրա հօր իւրոյ Եսրեայ: ²⁵Եւ եղև ՚ի գիշերին յայնմիկ՝ և ասէ ցնա Տէր. Ա՛ն դու քեզ զեզն պարարակ հօր քոյ, և զեզն երկրորդ

* *Ոմանք.* Ասէ Տէր Աստուած ցԻսրայէլ. Ես եմ:

* *Յօրինակին.* Եւ ասացից ձեզ. Ես: *Ուր ոմանք.* ասացի ձեզ... յաստուածոց օտարաց Ամուրիաց՝:

* *Ոմանք.* Եւ ասէ ցնա Գեդէոն... եթէ դու ուխտեսցես ընդ իս. մի՛:

* *Ոմանք.* Եւ դիցի առաջի քո:

* *Յօրինակին.* Եւ հասոյց ցուլ մի յայծեաց: *Յօրինակին պակասեր.* Եւ զարգանակն *արկ* ՚ի պոյտն:

* *Ոմանք.* ՚ի վերայ վիմիդ այնորիկ, և հեղ զարգանակդ:

* *Ոմանք.* Եւ եկեր զմիսն և զբաղարջսն:

զելքնեմեան. և քակեսցես՝ զսեղանն Բահաղու որ է հօր քոյ, և կոտորեսցես՝ զանտառն որ զնովաւ. ²⁶և շինեսցես սեղան Տեառն Աստուծոյ քում, որ երևեցաւ քեզ՝ ի գլուխ լերինն Մանովգայ, ՚ի տեղոջ պատերազմին. և առցես զեզն զերկրորդ, և հանցես յողջակէ՛զ փայտիւք անտառին զոր կոտորեսցես: ²⁷Եւ ա՛ռ Գեղէնն երեքտասան այր ՚ի ծառայից իւրոց, և արա՛ր որպէս և խօսեցաւ ընդ նմա Տէր. և եղև իբրև երկեալ՝ ՚ի տանէ հօր իւրոյ՝ և յարանց քաղաքին առնէ՛լ ՚ի տուէ, արար գիշերի՛: ²⁸Եւ կանխեսցին արք քաղաքին ընդ առաւօտն, և ահա՛ կործանեալ սեղանն Բահաղու. և անտառն որ զնովաւ՝ կոտորեալ, և եզն պարարակ հանեալ ողջակէ՛զ ՚ի սեղանն շինեալ՝: ²⁹Եւ ասէ՛ն այր ցընկեր իւր. Ո՞ր արար զիրս զայս. և յուզէին՝ և քննէին, և ասէին թէ Գեղէնն որդի Յովասու արար զիրոջ զայդ՝: ³⁰Եւ ասէն արք քաղաքին ցՅովաս. Հա՛ն արտաքս զորդին քո՝ և մեռցի՛. զի կործանեաց զսեղանն Բահաղու, և կոտորեաց՝ զանտառն որ զնովաւ: ³¹Եւ ասէ Յովաս ցարսն ցյարուցեալս ՚ի վերայ նորա. Դո՞ւք այժմ դատիցիք վասն Բահաղու, և կամ դո՞ւք ապրեցուցանիցէք զնա. որ վնասեաց նմա մեռցի՛ մինչև ցառաւօտ. եթէ Աստուած իցէ՛ ինքն խնդրեսցէ զվրէժ անձին իւրոյ՝ զի կործանեցին զսեղանն նորա: ³²Եւ կոչեաց զնա յաւուր յայնմիկ Յերոբոաղ. և ասէ. Դատաստան Բահաղու. զի կործանեաց զսեղանն նորա՝: ³³Եւ ամենայն Մադիամ և Ամադէկ, և ամենայն որդիքն արևելեայց ժողովեցան՝ ՚ի միասին, և եկին բանակեցան ՚ի հովիտսն Յեզրայելի: ³⁴Եւ Հոգի Տեառն զօրացոյ՛ց զԳեղէնն. և եհար փո՛ղ եղջերեալն. և խրախոյս եբարձ Աբիեզեր զկնի նորա: ³⁵Եւ արծակեաց հրեշտակս՝ յԱսեր, և ՚ի Ջաբուղոն, և ՚ի Նեփթաղիմ. և ելին ընդ առաջ նորա՝: ³⁶Եւ ասէ Գեղէնն ցԱստուած. Եթէ փրկեսցես ձեռամբ իմով զԻսրայէլ՝ որպէս և խօսեցար՝: ³⁷Ահա դնեմ զգաթ մի ասուի ՚ի կալ. եթէ լինիցի անձրև ՚ի վերայ զգաթո՛ւն միայն, և ՚ի վերայ ամենայն երկրի ցամաքութիւն, գիտացից եթէ փրկեսցես ձեռամբ իմով զԻսրայէլ՝ որպէս և խօսեցար՝: ³⁸Եւ եղև այնպէս: Եւ կանխեաց Գեղէնն ընդ առաւօտն ՚ի վաղիւ անդր, և քամեաց զգաթն. և էջ ցօղ ՚ի զգաթէ անտի լի՛ կոնքիւ ջրոյ՝: ³⁹Եւ ասէ Գեղէնն ցԱստուած. Մի՛ բարկացի ցասումն քո ինձ, և խօսեցայց դարձեալ միւսանգամ. և փորձեցի՛ց միւսանգամ զգաթուն. և եղիցի միւսանգամ ցամաքութիւն ՚ի վերայ զգաթուն միայնոյ, և ՚ի վերայ ամենայն երկրի եղիցի անձրև՝: ⁴⁰Եւ արար Աստուած այնպէս ՚ի գիշերին յայնմիկ. և եղև ցամաքութիւն ՚ի վերայ զգաթուն միայնոյ. և ՚ի վերայ ամենայն երկրի եղև անձրև՝:

7

Գլուխ Է

-
- * Այլք. Եւ ահա կործանեալ էր սե՛: *Յօրինակին*. Եւ անտառն որ զնովաւ կործանեալ:
 - * Ոմանք. Եւ ասէ այր ցընկեր իւր. Ո՞վ ա՛:
 - * Ոմանք. Եւ կոչեաց զանունն նորա յաւուր յայնմիկ Յերոբոաղ. և այս է դատաստան Բա՛:
 - * Ոմանք յաւելուն. Եւ արծակեաց հրեշտակս *ընդ ամենայն Մանասէ, և զոչեաց և նա զհետ նորա. և արծակեաց հրեշտակս* յԱսեր և ՚ի Ջաբուղոն:
 - * Ոմանք. եթէ փրկելոց իցես... որպէս և խօսեցարն:
 - * Այլք. ՚ի վերայ զգաթուն միայնոյ:
 - * Ոմանք. Լի կոնք մի ջրով:
 - * Ոմանք. Եւ ասէ Գեղէնն ցՏէր... միւսանգամ ևս զգաթուն, և եղիցի ցամաքութիւն ՚ի վերայ:

¹Եւ կանխեաց Յերոբոաղ, նա՛ ինքն է Գեդէոն, և ամենայն զօրն ընդ նմա. և բանակեցան առ աղբերն Արեդայ. և բանակն Մադիամու և Ամադէկայ՝ էր նոցա ընդ հիւսւսոյ, ՚ի Գաբաաթամ որ ՚ի հովտի՛ անդ՝: ²Եւ ասէ Տէր ցԳեդէոն. Բազուն՛ է զօրդ որ ընդ քեզ է, առ ՚ի չմատնելոյ ինձ զՄադիամ ՚ի ձեռս դոցա. զուցէ պարծիցի ՚ի վերայ իմ Իսրայէլ՝ և ասիցէ, թէ ձեռն իմ փրկեաց զիս: ³Եւ ասէ ցնա Տէր. Խօսեա՛ յականջս ժողովրդեանդ, և ասացես. Ո՛ր ոք վատասիրտ իցէ՛ դարձցի՛. և դիմեցին ՚ի լեռնէն Գաղաադու, և դարձան ՚ի զօրուէն քսան և երկու հազարք. և մնացին տասն հազարք՝: ⁴Եւ ասէ Տէր ցԳեդէոն. Տակաւին բազուն՛ է զօրդ. իջո՛ զդոսա ՚ի ջուրն, և փորձեցի՛ց քեզ զդոսա անդ. և եղիցի զորմէ ասացից ցքեզ՝ եթէ դա՛ երթիցէ ընդ քեզ, նա՛ երթիցէ ընդ քեզ. և զամենայնէ զորմէ ասացից՝ թէ դա մի՛ երթիցէ ընդ քեզ, նա մի՛ երթիցէ ընդ քեզ՝: ⁵Եւ իջոյց զզօրն ՚ի ջուրն: Եւ ասէ Տէր ցԳեդէոն. Ամենայն որ լափիցէ լեզուաւ իւրով՝ ՚ի ջրոյ անտի իբրև զշուն, կացուցես՛ զնոսա ուրոյն. և ամենայն որ անկցի ՚ի վերայ ծնկաց իւրոց ընպել, կացուցես՛ զնոսա առանձինն: ⁶Եւ եղև թիւ ամենեցուն որ լափեցին ձեռամբ և լեզուով իւրեանց, երեք հարիւր այր. և մնացորդք ժողովրդեանն անկան ՚ի վերայ ծնկաց իւրեանց ընպել ջուր՝: ⁷Եւ ասէ Տէր ցԳեդէոն. Երեք հարիւր արամբքդ որ լափեցին զջուր՝ փրկեցի՛ց զձեզ. և տաց զՄադիամ ՚ի ձեռս քո. և ամենայն ժողովուրդդ երթիցէ՛ այր իւրաքանչիւր ՚ի տեղի իւր: ⁸Եւ առին զպաշար ժողովրդեանն ՚ի ձեռս իւրեանց, և զփողս նոցա զեղջերեայս. և զամենայն այր Իսրայէլի արձակեաց զայր ՚ի բնակութիւն իւր. և զերեքհարիւր այրն և եթ կալաւ. և բանակն Մադիամու՝ էին ՚ի ներքոյ նորա ՚ի հովիտսն: ⁹Եւ եղև ՚ի գիշերին յայնմիկ, և ասէ ցնա Տէր. Արի՛ էջ աստի վաղվադակի ՚ի բանակն, զի մատնեցի՛ զնա ՚ի ձեռս քո: ¹⁰Ապա թէ երկնչիցիս դու իջանել, էջ՛ նախ դու և պատանեակդ քո Փարա ՚ի բանակն՝. ¹¹և լուիցես եթէ զի՞նչ խօսիցին, և ապա՛ զօրասցին ձեռք քո, և իջցես՛ ՚ի բանակն: Եւ էջ ինքն և պատանեակն իւր ընդ նմա ՚ի մասն ինչ յիսներորդաց բանակին՝: ¹²Եւ Մադիամ և Ամադէկ, և ամենայն որդիքն արևելեայց բանակեալ էին ՚ի ծործորսն, իբրև զմարախ բազմութեամբ. և ուղտուց նոցա ո՛չ գոյր թիւ, այլ էին իբրև զաւազ առ եզերք ծովու բազմութեամբ: ¹³Եւ եմուտ Գեդէոն, և ահա այր պատմէր ընկերի իւրուն երա՛զ. Տեսի՛ ասէ երագ, և ահա նկանակ գարեղէն հոլովեալ ՚ի բանակս Մադիամու, և եկն մինչև ՚ի խորանն Մադիամու, և եհա՛ր զնա և կործանեաց. և անկաւ խորանն վերուստ ՚ի վայր: ¹⁴Պատասխանի ետ ընկերն նորա և ասէ. Ո՛չ է այն՝ եթէ ո՛չ սուրն Գեդէոնի որդւոյ Յովասու առն Իսրայէլացւոյ. մատնեաց Տէր ՚ի ձեռս նորա զՄադիամ՝ և զամենայն բանակս: ¹⁵Եւ եղև իբրև լուաւ Գեդէոն զպատմութիւն երագոյն՝ և զմեկնութիւն նորա, երկի՛ր եպագ Տեառն, և դարձաւ անդրէն ՚ի բանակն Իսրայէլի, և ասէ. Արի՛ք զի մատնեաց Տէր զբանակն Մադիամու ՚ի ձեռս մեր: ¹⁶Եւ բաժանեաց զերեք հարիւր այրն՝ յերիս առաջս. և ետ զփողսն եղջերեայս ՚ի ձեռս ամենեցունց, և ջահս ՚ի մէջ սափորոցն՝: ¹⁷Եւ

* *Ոմանք.* Եւ ամենայն զօր նորա ընդ նմա, և բանակեցան առ եզերքն յԱրեթայ... և Գաբայաթամ ուրէ հիւսիսոյ ՚ի հովտի անդ՝:

* *Ոմանք.* Վատասիրտ է՝ դարձցի, և դիմեցեսն... և մնացին տասն հազար այր:

* *Ոմանք.* Զդոսա անդր... զորմէ ես ասացից:

* *Ոմանք.* Եւ լեզուաւ իւրեանց:

* *Ոմանք.* Ապա թէ երկնչիս ՚ի բանակն մտանել, էջ նախ դու:

* Զօրասցի ձեռն քո... յիսներորդ բանա՞: *Ոսկան.* Եւ պատանեակն իւր Փարա ընդ նմա:

* *Բազունք.* Եւ ետ զփողսն... ամենեցուն:

ասէ ցնոսա. Ընդ ի՛ն հայեսցիք, և այնպէս արասցիք. ահա ես մտանեմ ՚ի մէջ բանակին, և եղիցի որպէս ե՛ս առնիցեմ, նոյնպէս և դուք արասցիք՝: ¹⁸Եւ հարի՛ց ես զփողն եղջերեայ, և ամենեքեան որ ընդ իս էք, հարջի՛ք և դուք զփողսն եղջերեայս, շուրջ զամենայն բանակաւն. և ասասցիք. Սո՛ւր Տեառն և Գեղէոնի: ¹⁹Եւ եմուտ Գեղէոն և հարիւր այր ընդ նմա ՚ի կողմն բանակին, իսկզբան միջնո՛յ պահուն. միայն զարթուցանելով զարթուցին զպահապանսն, և հարին զփողսն եղջերեայս, և թօթափեցին զսափորսն որ ՚ի ձեռս իւրեանց. ²⁰և հարին զփողսն եղջերեայս երեքին առաջքն, և խորտակեցին զսափորսն: Եւ առի՛ն ձախու ձեռամբք իւրեանց զջահսն, և աջու ձեռօք իւրեանց զփողսն հարկանել, և աղաղակեցին և ասեն. Սո՛ւր Տեառն և Գեղէոնի՛: ²¹Եւ կացին իւրաքանչիւր առանձինն շուրջ զբանակաւն. և ընթացաւ ամենայն բանակն՝ փող հարին և փախեան՝: ²²Եւ գոչեցին երեքհարիւրեքին փողքն եղջերեայք. և ե՛ր Տէր զսուր առն յընկե՛ր իւր՝ և յամենայն բանակն՝. ²³և փախեաւ ամենայն բանակն մինչև ցԲեթասետա, և մի՛ւս գունդն մինչև ցդարն Աբէղ՝մաուղայ, և ցՏաբէթ: Եւ գոչեանց այր Իսրայէլացի ՚ի Նեփթաղիմայ, և յԱսերայ, և յամենայն Մանասէէ, և զհետ մտին Մադիամու՛: ²⁴Եւ հրեշտակս արձակեաց Գեղէոն յամենայն սահմանս Եփրեմայ, և ասէ. Իջէ՛ք յառաջս Մադիամու, և կալարո՛ւք զկիրճս ջրոցն մինչև ցԲեթփարա և ցՅորդանան: Եւ գոչեաց ամենայն այր Եփրեմի, և կալան իւրեանց զանցս ջրոցն, մինչև ցԲեթփարա և ցՅորդանան: ²⁵Եւ կալան զերկու իշխանսն Մադիամու զՈրեր և զՋեր. և սպանին զՈրեր՝ ՚ի Սովորերբա՛, և զՋեր՝ սպանին յԱկերզիբա, և հալածեցին զՄադիամ, և զգլուխսն Ուրերայ և Ջերայ բերին առ Գեղէոն յայնմ կողմանէ Յորդանանու՛:

8

Գլուխ Ը

¹Եւ ասեն ցԳեղէոն այր Եփրեմի. Ջի՞նչ է բանդ այդ զոր արարեր ընդ մեզ. զի ո՛չ կոչեցեր զմեզ յորժամ երթայիր պատերազմել ընդ Մադիամու: Եւ վիճէին ընդ նմա սաստկագոյնս՝: ²Եւ ասէ ցնոսա. Արդ զի՞նչ ինչ արարի իբրև զձեզ. ո՞չ ապաքէն լաւագոյն է ճռաքաղութիւնդ Եփրեմի, քան զկուրսն Աբիեզերայ: ³Ի ձե՛ռս ձեր մատնեաց Տէր զիշխանս Մադիամու՝ զՈրեր և զՋեր. և զի՞նչ կարացի առնել իբրև զձեզ: Եւ ապա դադարեաց ոգի նոցա ՚ի նմանէ ՚ի խօսել նորա զբանս զայս՝: ⁴Եւ եկն Գեղէոն ՚ի Յորդանան, և անց ինքն և երեք հարևր արքն որ ընդ նմա պատրաստեալք և քաղցեալք՝: ⁵Եւ ասէ ցա՛րսն Սոքքովթայ. Տո՛ւք աւաղիկ հաց ՚ի կերակուր զօրուս այսմիկ որ ընդ իս, զի քաղցեալ եմ. և ես

* Ոմանք. Եւ ահա ես... առնիցիք:

* Ոմանք. Սուրն Տեառն և Գեղէոնի:

* Ոմանք. Իւրաքանչիւրոք առան՝:

* Ոմանք. Եւ ետ Տէր զսուր:

* Ոմանք. ՑԲեթասետայ, և միագունդ մինչև ցդարն... և գոչեցին այր Իսրայէլի ՚ի Նեփթաղիմայ:

* Ոմանք. Եւ կալան զերկուսեան իշ՛:

* Ոմանք. Եւ ասեն ցԳեղէոն Եփրեմացիքն:

* Ոմանք. Ոգի նորա ՚ի նոցանէ:

* Ոմանք. Պարտաստեալք և քաղց՛:

պնդեցայց զհետ Չեբէի և Սաղմանայ թագաւորացն Մադիամու*։ ⁶Եւ ասեն
 իշխանքն Սոքքովթայ. Մի՛ թէ ձեռն Չեբէի և Սաղմանայ իցէ ՚ի ձեռին քում, զի
 տացուք հաց զօրականիդ քում։ ⁷Եւ ասէ Գեդէն. Ո՛չ այդպէս, այլ ՚ի տալ՝ Տեառն
 զՉեբէի և զՍաղմանայ ՚ի ձեռս իմ. և ես քարշեցից զմարմինս ձեր փշովք
 անապատի և բորկոնիմալ*։ ⁸Եւ ել անտի ՚ի Փանուէղ՝, և խօսեցաւ ընդ նոսա
 նոյնպէս. և պատասխանի՛ արարին նմա արք Փանուէլայ, զոր օրինակ արարին
 նմա պատասխանի արք Սոքքովթայ։ ⁹Եւ խօսեցաւ Գեդէն ընդ արս Փանուէլի՛
 և ասէ. ՚Ի դառնալ իմում այսրէն խաղաղութեամբ, կործանեցից՝ զաշտարակդ
 զայդ*։ ¹⁰Եւ Չեբէի և Սաղմանա էին ՚ի Կարկար, և բանակ նոցա ընդ նոսա, իբրև
 հնգետասան հազար այր՝ ընդ ամենայն որ մնացեալ էին յամենայն բանակէ
 որդւոցն արևելից. և անկեալք էին հարիւր և քսան հազար արանց
 սուսերամերկաց։ ¹¹Եւ ել Գեդէն ընդ ճանապարհս վրանաբնակչացն յարևելից
 Նաբաէի, և հանդէպ Նաբեայ. և եհար զբանակն, զի ահա էր բանակն յանհո՛գս*։
¹²Եւ փախեան Չեբէէ և Սաղմանա, և պնդեցան զհետ նոցա. և ձերբակալ արար
 զերկուս թագաւորսն Մադիամու զՉեբէէ և զՍաղմանա, և զամենայն բանակ
 նոցա դղրդեցոյց*։ ¹³Եւ դարձաւ Գեդէն որդի Յովասու ՚ի պատերազմէն ՚ի
 զառիվայրէ՛ անտի Արեսայ*։ ¹⁴Եւ կալաւ պատանեակ մի յարանց Սոկքովթայ, և
 եհարց զնա. և գրեաց առ ինքն զիշխանսն Սոկքովթայ, և զծերս նորա
 եւթանասուն և եւթն այր։ ¹⁵Եւ եկն Գեդէն առ իշխանսն Սոկքովթայ, և ասէ
 ցնոսա. Ահա՛ւասիկ Չեբէէ և Սաղմանա, վասն որոց նախատեցէք զիս՝ և ասացէք.
 Միթէ ձեռն Չեբէի և Սաղմանայ այժմ ՚ի ձեռին քում իցէ, զի տացուք հաց արանց
 քոց նքթելոց*։ ¹⁶Եւ ա՛ռ զիշխանսն և զծերս քաղաքին, և փուշս յանապատէ, և
 զբորկոնիմն. և քարշեաց նոքօք զարսն Սոկքովթայ։ ¹⁷Եւ զաշտարակն
 Փանուէլի կործանեաց, և կոտորեաց զարս քաղաքին։ ¹⁸Եւ ասէ ցՉեբէէ և
 զՍաղմանա. Ո՞ւր են արքն զորս կոտորեցէք ՚ի Թաբովր։ Եւ ասեն. Որպէս դու,
 նոյնպէս և նոքա նման քեզ, և դու նման նոցա, իբրև զտեսիլ որդւոց
 թագաւորի*։ ¹⁹Եւ ասէ Գեդէն. Եղբար՛ք իմ և որդիք մօր իմոյ էին #։ Եւ երդուաւ
 նոցա և ասէ. Կենդանի՛ է Տէր, եթէ կենդանի պահեալ էր ձեր զնոսա, ո՛չ
 սպանանէի զձեզ։ ²⁰Եւ ասէ ցեթեր ցանդրանիկ իւր. Արի՛ սպան զդոսա։ Եւ ո՛չ
 եհան պատանեակն զսուր իւր, զի երկեալ՝ քանզի մանուկ էր։ ²¹Եւ ասեն Չեբէէ
 և Սաղմանա. Արի՛ և դու քեզէն պատահեա մեզ, զի ըստ առն՝ և զօրութիւն իւր։
 Եւ յարեալ Գեդէն և սպան զՉեբէէ և զՍաղմանա. և ա՛ռ զմանեակսն ՚ի
 պարանոցաց ուղտուց նոցա*։ ²²Եւ ասեն այր Իսրայէլի ցԳեդէն. Իշխեա՛ մեզ
 դու՛ և որդիք քո, և որդիք որդւոց քոց. զի փրկեցեր զմեզ ՚ի ձեռաց Մադիամու*։
²³Եւ ասէ ցնոսա Գեդէն. Ո՛չ իշխեցից ես ձեզ, և ո՛չ իշխեսցէ ձեզ որդի իմ. այլ

* Ոմանք. Այսորիկ որ ընդ իս է. զի։

* Ոմանք. Ոչ այդպէս է, այլ... փշովք անապատի բորկոնիմալ։

* Յօրինակին պակասէր. Ընդ արս Փանուէլի։

* Ոմանք. Եւ զի էր բանակն յանհոգս։

* Ոմանք. Եւ զամենայն իշխանս նոցա դղրդեցոյց։

* Յօրինակին. Ի՛ գառ ՚ի վայրէ անտի Ասերայ։ Ուր օրինակ մի. Անտի Առեսար։

* Ոմանք. Արանց քոց նքթելոց։

* Ոմանք. Եւ իբրև զտեսիլ որդւոյ թագա՛ւ։

* Ոմանք. Արի՛ դու քեզէն և պատահեաց։ Յօրինակին. Եւ սպան ըՉեբէէ և։

* Այլք. Եւ որդի քո, և որդի որդւոյ քոյ։

Տէր իշխեսցէ ձեզ*։ ²⁴Եւ ասէ ցնոսա Գեղէնն. Խնդրեցից 'ի ձէնջ հայցուածս ինչ, և տո՛ւք ինձ՝ առ այր գի՛նդ մի յաւարտ անտի. զի գինդք ոսկի՛ք էին նոցա, քանզի Իսմայէլացի՛ք էին։ ²⁵Եւ ասեն. Տալո՛վ տացուք։ Եւ տարածեցին զհանդերձս նորա. և ընկեցին անդր այր իւրաքանչիւր զգինդս ոսկիս զաւարի իւրոյ*։ ²⁶Եւ եղև կշիռ գնդացն ոսկեաց զոր խնդրեաց՝ հազար և եւթն հարիւր սիկղ ոսկւոյ, թո՛ղ զշնչանունսն և զմեհևանդս, և զպսակակա՛լս, և զծիրանի՛ս, և որ ինչ 'ի թագաւորսն Մադիամու. և թո՛ղ զմանեակս ոսկիս պարանոցաց ուղտու՛ց նոցա*։ ²⁷Եւ արար զայն Գեղէնն յեփո՛ղ, և հաստատեաց զայն 'ի քաղաքի՛ իւրում յեփրա. և պոռնկեցա՛ւ ամենայն Իսրայէլ զկնի նորա անդր. և եղև Գեղէննի և տան նորա 'ի գայթազդութիւն։ ²⁸Եւ վանեցա՛ւ Մադիամ առաջի որդւոցն Իսրայէլի, # և ո՛չ ևս յաւելին ամբառնալ զգլուխս իւրեանց. և դադարեաց երկիրն ամս քառասուն յաւուրս Գեղէննի։ ²⁹Եւ գնաց Յերոբոաղ որդի Յովասու, և բնակեաց 'ի տան իւրում։ ³⁰Եւ Գեղէննի էին եւթանասուն որդիք ելեալք յերանաց նորա. զի կանայք բազումք էին նորա. ³¹և հարճ նորա որ 'ի Սիկիմայ, ծնաւ նմա և նա՛ որդի. և ե՛ր անուն նմա Աբիմեղ՛էք*։ ³²Եւ մեռա՛ւ Գեղէնն որդի Յովասու 'ի բարու՛ք ծերութեան, և թաղեցա՛ւ 'ի գերեզմանի Յովասու հօր իւրոյ յեփրա հօրն Եսրեայ։

Ը ³³Եւ եղև իբրև մեռաւ Գեղէնն, դարձան որդիքն Իսրայէլի՝ և պոռնկեցան զհետ Բահաղիմայցն. և եղին զուխտ իւրեանց ընդ Բահաղուն Բերիթայ, լինել նոցա նմա յաստուած*։ ³⁴Եւ ո՛չ յիշեցին որդիքն Իսրայէլի զՏէր Աստուած իւրեանց որ փրկեաց զնոսա յամենայն թշնամեաց իւրեանց շուրջանակի։ ³⁵Եւ ո՛չ արարին ողորմութիւն ընդ տանն Յերոբոաղայ՝ որ նա՛ ինքն է Գեղէնն, ըստ ամենայն բարութեանն զոր արար ընդ Իսրայէլի՛։

9

Գլուխ Թ

¹Եւ գնաց Աբիմեղ՛էք որդի Յերոբոաղայ 'ի Սիկիմ առ եղբարս մօր իւրոյ, և խօսեցաւ ընդ նոսա, և ընդ ամենայն ազգատոհմի տան հօր մօր իւրոյ՝ և ասէ. ²Խօսեցարո՛ւք յականջս ամենայն արանց Սիկիմացւոց. ո՞ր լաւ իցէ ձեզ, իշխել ձեզ եւթանասուն արանց ամենայն որդւոցն Յերոբոաղայ, եթէ տիրել ձեզ առն միոջ. և յիշեցէք, զի ոսկր ձեր և մարմին ձեր ե՛մ ես*։ ³Եւ խօսեցան զնմանէ եղբարք մօր նորա՝ յականջս ամենայն արանց Սիկիմացւոց զամենայն բանս զայստսիկ. և միտեցա՛ւ սիրտ նոցա զկնի Աբիմեղ՛էքայ, զի ասացին թէ եղբայր մեր է։ ⁴Եւ ետուն նմա եւթանասուն արծաթոյ 'ի տանէ Բահաղու Բերիթայ ուխտին։ Եւ վարձեցա՛ւ նոքօք Աբիմեղ՛էք արս սրիկայս և զարհուրեցուցիչս, և

* Ոճանք. Այլ իշխեսցէ ձեզ Աստուած։

* Ոճանք. Ոսկիս յաւարտ իւրոյ։

* Օրհնակ մի. Սկեղ ոսկւոյ... թո՛ղ զթռչանունսն և զմեհև... 'ի թագաւորն Մադի... 'ի պարանոցաց ուղ՛։

* Ոճանք. Եւ եր անուն նորա Աբի՛։

* Ոճանք. Լինել նոցա աստուած։

* Յօրհնակին. Ընդ տանն Յերոբոաղայ։

* Ոճանք. Յականջս ամենայն Սիկիմեցւոց... ամենեցունց որդւոց։

գնացի՛ն զհետ նորա՛: ⁵Եւ եմուտ ՚ի տուն հօր իւրոյ յեփրա, և կոտորեա՛ց զեղբարս իւր, զորդիսն Յերոբոաղայ, արս եւթանասուն ՚ի վերայ վիմի միոյ: Եւ մնաց Յովաթամ որդի Յերոբոաղայ կրտսեր, քանզի թաքեալ: ⁶Եւ ժողովեցան ամենայն արք Սիկիմացւոց, և ամենայն տունն Մաաղոնայ, և չոգան թագաւորեցուցին զԱբիմեղէք ՚ի թագաւոր, առ կաղնու կռուոյն որ ՚ի Սիկիմայ: ⁷Եւ ա՛զդ եղև Յովաթամայ. ել գնաց և եկաց ՚ի վերայ գլխոյ Լերինն ՚ի Գարիգին. ամբարձ զձայն իւր և ելա՛ց, և ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ արք Սիկիմացւոց, և լուիցէ ձեզ Աստուած՛: ⁸Գնալո՛վ գնացին ծառք օժանել իւրեանց թագաւոր, և ասեն ցձիթենին. Թագաւորեա՛ ՚ի վերայ մեր: ⁹Եւ ասէ ցնոսա ձիթենին. Թողից զպարարտութիւն իմ յորոյ փառաւորեա՛ց զիս Աստուած և մարդիկ, և երթայցեն իշխել ծառո՞ց: ¹⁰Եւ ասեն ծառքն ցթգենին. Եկ թագաւորեա՛ ՚ի վերայ մեր: ¹¹Եւ ասէ ցնոսա թգենին. Թողեալ զքաղցրութիւն իմ, և զբերս բարութեան իմոյ, և երթայցեն իշխա՞ն լինել փայտի՞ց: ¹²Եւ ասեն ծառքն ցորթ. Եկ թագաւորեա՛ ՚ի վերայ մեր: ¹³Եւ ասէ ցնոսա որթ. Թողեալ զգինի իմ և զուրախութիւն Աստուծոյ և մարդկան, և երթայցեն իշխա՞ն լինել փայտի՞ց: ¹⁴Եւ ասեն ծառքն ցոժնիկ. Եկ թագաւորեա՛ ՚ի վերայ մեր: ¹⁵Եւ ասէ դժնիկ ցճառս. Թէ արդարև օժանիցէք զիս թագաւորել ՚ի վերայ ձեր. եկայք ծածկեցարո՛ւք ընդ հովանեաւ իմով. եթէ ո՞չ ելանիցէ հուր ՚ի դժնկէ աստի, և կերիցէ զեղևնափայտս Լիբանանու՛: ¹⁶Եւ արդ եթէ ճշմարտութեամբ և բովանդակութեամբ արարէք, և թագաւորեցուցէք զԱբիմեղէք. և թէ ո՞րպէս արարէք Յերոբոաղ և ընդ տուն նորա. և եթէ ըստ հատուցման ձեռին նորա արարէք նմա՛. ¹⁷որպէս ե՛տ պատերազմն հայր իմ փոխանակ ձեր, և ընկէց զանձն իւր յառաջ, և ապրեցո՛յց զձեզ ՚ի ձեռաց Մաղիամու. ¹⁸և դուք յարեայք ՚ի վերայ տան հօր իմոյ այսօր, և կոտորեցէք զորդիս նորա՝ արս եւթանասուն ՚ի վերայ վիմի միոյ. և թագաւորեցուցէք զԱբիմեղէք զորդի աղախնոյ նորա ՚ի վերայ արանց Սիկիմացւոց, զի եղբայր ձեր է: ¹⁹Եթէ ճշմարտութեամբ և բովանդակութեամբ արարէք ընդ Յերոբոաղայ և ընդ տան նորա յաւուրս յայսմիկ՝ օրհնեսցի՛ք դուք, և ուրախ լիջիք յԱբիմեղէք, և ուրախ լիցի և նա՛ ՚ի ձեզ: ²⁰Ապա թէ ոչ՝ ելցէ՛ հուր յԱբիմեղի՛քայ և կերիցէ՛ զարս Սիկիմացւոց, և զտունն Մաաղոնայ. ապա թէ ոչ՝ ելցէ՛ հուր յարանց Սիկիմացւոց և ՚ի տանն Մաաղոնայ և կերիցէ՛ զԱբիմեղէք: ²¹Եւ փախեալ Յովաթամ և զերծաւ, և գնաց ընդ ճանապարհն ՚ի Բերայ. և բնակեաց անդ յերեսաց Աբիմեղէքայ եղբօր իւրոյ: ²²Եւ իշխեաց Աբիմեղէք ՚ի վերայ Իսրայէլի ամս երիս: ²³Եւ առաքեա՛ց Աստուած ոգի չար ՚ի մէջ Աբիմեղի՛քայ, և ՚ի մէջ արանց Սիկիմացւոց. և արհամարհեցին արք Սիկիմացւոց զտունն Աբիմեղի՛քայ ²⁴ածել ՚ի վերայ նորա զանհրաւութիւն իւթանասնից որդւոցն Յերոբոաղայ. և հասուցանել զարիւն նոցա ՚ի վերայ Աբիմեղի՛քայ եղբօրն իւրեանց՝ որ կոտորեա՛ց զնոսա. և ՚ի վերայ

* Ոմանք. Եւ ՚ի վարձու կալաւ Աբիմեղէք նոքօք արս սրի՛:

* Ոմանք. Առ կաղնով կռուոյն որ ՚ի Սիկիմիս:

* Ոմանք. Լերինն որ ՚ի Գարիգին:

* Ոմանք. Յորս փառաւ. և ոմանք. զոր փառաւորեաց յիս Աստուած և:

* Ոմանք. Եւ երթիցեն իշխան լինել:

* Ոմանք. Եւ երթիցեն իշխան լինել:

* Ոմանք. Օժանէք զիս թագաւոր ՚ի վերայ ձեր:

* Ոմանք. Եւ ընդ տուն իւր:

* Ոմանք. Ընդ Յերոբոաղայ և ընդ որդիս նորա յաւուրս յայս՛... և ուրախ լիցի ՚ի ձեզ և նա:

արանց Սիկիմացւոց՝ զի զօրացուցին զձեռս նորա կոտորել՝ զեղբարս իւր*։ ²⁵Եւ գործեցին նմա դարան արք Սիկիմացւոց ՚ի վերայ գլխոց լերանց, և յափշտակեին զամենեսին որ անցանէին առ նոքօք ընդ ճանապարհն. և ազդեղն Աբիմեղ՚իքայ։ ²⁶Եւ եկն Գաաղ որդի Աբեղդայ և եղբարք նորա. և անցին ՚ի Սիկիմ, և վստահ եղեն ՚ի նա արք Սիկիմացւոց. ²⁷և ելին յանդաստանսն և կթեցին զայգիս իւրեանց, և հարին հնձանս, և արարին պարանցիկս, և մտին ՚ի տուն աստուածոյն իւրեանց. և կերան և արբին՝ և անիծին զԱբիմեղ՚էք։ ²⁸Եւ ասէ Գաաղ որդի Աբեղդայ. Ո՞ք է Աբիմեղ՚էք, և ո՞ք է որդին Սիքեմայ՝ զի ծառայեմք նմա. ո՞չ նա է որդի Յերոբոաղայ, և Ջեբուղ ծառայ իւր ոստիկան նորա, հանդերձ արամքք Եմովրայ հօր Սիքեմայ. և զի՞ է՝ զի ծառայիցեմք նմա։ ²⁹Եւ ո՞ք տայր զժողովուրդս զայս ՚ի ձեռս իմ, և փոխէի զԱբիմեղ՚էք. և ասէի զԱբիմեղ՚էք. Բազմացո՞ զգօրս քո՝ և ել ինձ*։ ³⁰Եւ լուաւ Ջեբուղ իշխան քաղաքին՝ զբանս Գաաղայ որդւոյ Աբեղդայ, և սրտմտեցաւ բարկութեամբ. ³¹և առաքեաց առ Աբիմեղ՚էք հրեշտակս պատարագօք՝ և ասէ. Ահաւասիկ Գաաղ որդի Աբեղդայ և եղբարք նորա եկին ՚ի Սիկիմ, և պաշարեն զքաղաքս ՚ի վերայ քո*։ ³²Արդ արի՛ զցայգ դու և զօրդ քո որ ընդ քեզ է, և դարանամուտ լեր յանդաստանին. ³³և եղիցի ընդ առաւօտսն ՚ի ծագել արեգականն, կանխեսցես և հասցես զքաղաքաւս. և ահա սա՛ և զօրս որ ընդ սմա՛ է ելանէ առ քեզ. և արասցես ընդ սա որպէս ինչ գտցէ՛ ձեռն քո*։ ³⁴Եւ յարեաւ Աբիմեղ՚էք և ամենայն զօրն որ ընդ նմա զցայգ. և մտին ՚ի դարանս զՍիկիմաւ չորք առաջք*։ ³⁵Եւ եղև ընդ առաւօտն, ել Գաաղ որդի Աբեղդայ՝ և եկաց ՚ի մուտս դրան քաղաքին։ Եւ յարեաւ Աբիմեղ՚էք և ամենայն զօրն որ ընդ նմա ՚ի դարանացն։ ³⁶Եւ ետես Գաաղ որդի Աբեղդայ զգօրն, և ասէ զՋեբուղ. Ահաւասիկ զօր իջանէ ՚ի գլխոյ լերանցն. և ասէ ցնա Ջեբուղ. Չստուեր լերանցն տեսանես դու իբրև զմարդիկ*։ ³⁷Եւ յաւել ևս խօսել Գաաղ և ասէ. Ահաւասիկ զօր իջանէ ընդ ծովակողմն առ պորտով երկրին. և առաջ մի ել ընդ ճանապարհ կաղնւոյն դիտանոցաց*։ ³⁸Եւ ասէ ցնա Ջեբուղ. Արդ՝ ո՞ւր է բերան քո որ ասէր, թէ ո՞վ է Աբիմեղ՚էք, զի ծառայեսցուք նմա. ո՞չ աւանիկ այն զօր է՝ զոր դուն աղարտէիր. արդ՝ ել տո՛ւր ընդ նմա պատերազմն*։ ³⁹Եւ ել Գաաղ առաջի արանցն Սիկիմացւոց, և մարտեաւ ընդ Աբիմեղ՚իքայ*։ ⁴⁰Եւ հալածեաց զնա Աբիմեղ՚էք. և փախեաւ յերեսաց նորա, և անկան վիրաւորք բազումք մինչև ցորունս քաղաքին*։ ⁴¹Եւ նստաւ Աբիմեղ՚էք յԱրիմ, և եհան Ջեբուղ զԳաաղ և զեղբարս նորա՝ զի մի՛ բնակեսցեն ՚ի Սիկիմ։ ⁴²Եւ եղև ՚ի վաղիւ անդր՝ և ել ժողովուրդն ՚ի դաշտն, և ա՛զդ եղև Աբիմեղ՚իքայ*։ ⁴³և առ զգօրն՝ և բաժանեաց յերիս առաջս, և եմուտ

* *Ոմանք.* Եւ հատուցանել ՚ի վերայ նոցա զարիւնն Աբիմեղ՚էքայ եղբօրն իւրեանց որ կոտորեաց զնոսա ՚ի վերայ արանց Սիկիմ. զի զօրացուցին զնա կոտորել։

* *Ոմանք.* Ջժողովս զայս... և ասէի ցնա բազմացո՞ք։

* *Ոմանք.* ՅԱբեղդայ և որդիք նորա եկին։

* *Ոմանք.* Եւ ահա զօրքս որ ընդ սմա... և արասցես ընդ նմա որպէս ինչ գտցի ՚ի ձեռս քո։

* *Ոմանք.* ՉՍիկիմաւ ՚ի չորս առաջս։

* *Յօրինակին.* Եւ ասէ Ջեբուղ. Ահաւա՛ւ։ *Ոմանք.* Ահաւասիկ զօր իջա՛ւ... զստուերս լերանց։

* *Ոմանք.* Առ պորտով լերինն, և առաջ մի զայր ընդ ճանա՛ւ։

* *Ոմանք.* Թէ ուր է Աբիմեղ՚էք զի ծառայես՞։

* *Ոմանք.* Եւ ել Գաաղ... և ետ ընդ նոսա պատերազմ. և հալածեաց։

* *Ոմանք.* Մինչև ցմուտս քաղաքին։

* *Ոմանք.* Եւ եր ժողովուրդն ՚ի դաշտն։

նովաւ ՚ի դարան. և ետես՝ և ահա զօր ելանէր ՚ի քաղաքէ անտի. և յարեալ ՚ի վերայ նոցա՝ և եհար զնոսա: ⁴⁴Եւ Աբիմեղէք և գունդքն որ ընդ նմա՝ ճակատեցան և կացին առ դրան քաղաքին. և երկու գունդք սփռեցան ՚ի վերայ ամենեցուն որ յանդաստանսն էին, և հարին զնոսա*: ⁴⁵Եւ Աբիմեղէք պատերազմէր ընդ քաղաքին զօրն զայն ողջոյն, և առին զքաղաքն, և զժողովուրդն որ ՚ի նմա կոտորեցին, և զքաղաքն կործանեցին՝ և աղարտ վարեցին: ⁴⁶Եւ լուան ամենայն արք աշտարակին Սիկիմացոց, և եկին յամրոց տանն Բեթել՝ Բերիթայ: ⁴⁷Եւ ա՛զդ եղև Աբիմեղէքայ՝ եթէ ժողովեցան ամենայն արք աշտարակին Սիկիմացոց: ⁴⁸Եւ ել Աբիմեղէք ՚ի լեառնն Սեղճոն, ինքն և ամենայն զօրն որ ընդ նմա. և ա՛ռ Աբիմեղէք տապար ՚ի ձեռն իւր, և կոտորեաց բեռն մի փայտի՝ և ա՛ռ զայն և եդ զայն ՚ի վերայ ուսոց իւրոց. և ասէ ցօրն իւր. Զինչ տեսանիցէք յիս որ առնիցեմ, արասջիք և դո՛ւք վաղվաղակի իբրև զիս*: ⁴⁹Կոտորեցին և նոքա իւրաքանչիւրոք ամենեքին բեռն մի փայտ, և բարձին և զնացին զհետ Աբիմեղէքայ. և եդին ՚ի վերայ ամրոցին, և այրեցին ՚ի վերայ նոցա զամրոցն հրով. և մեռան ամենայն արք աշտարակին Սիկիմացոց՝ իբրև հազար մի ընդ ա՛յր և ընդ կին*: ⁵⁰Եւ չոգաւ Աբիմեղէք ՚ի Թեբես, և նստաւ շուրջ զնովաւ. և ա՛ռ զնա*: ⁵¹Եւ աշտարակ մի էր հօր ՚ի մեջ քաղաքին. և փախեան անդր ամենայն արք և կանայք, և ամենայն գլխաւորք քաղաքին, և փակեցին ընդդէմ իւրեանց, և ելին ՚ի տանիս աշտարակին: ⁵²Եւ եկն Աբիմեղէք մինչև ցաշտարակն, և մարտեան ընդ նմա, և մերձեցաւ Աբիմեղէք ՚ի դուրս աշտարակին*: ⁵³Եւ ընկէ՛ց կին մի բեկոր երկանի ՚ի վերայ գլխոյ նորա, և մանրեաց զգագաթնն Աբիմեղէքայ*: ⁵⁴Եւ աղաղակեաց վաղվաղակի առ պատանեակն կապարճակիր իւր՝ և ասէ ցնա. Մերկեա՛ զսուր քո և սպան զիս. գուցէ՛ ասիցեն թէ կին սպան զնա: Եւ խոցեաց զնա պատանին իւր, և մեռաւ Աբիմեղէք: ⁵⁵Եւ ետես այր Իսրայէլացի՝ թէ մեռաւ Աբիմեղէք, զնացին այր իւրաքանչիւր ՚ի տեղի իւր: ⁵⁶Եւ դարձոյց Աստուած զչարիսն Աբիմեղէքայ ՚ի գլուխ իւր զոր արար հօր իւրուն կոտորելով զեւթանասուն եղբարսն իւր: ⁵⁷Եւ զամենայն չարիսն արանց Սիկիմացոց դարձոյց Աստուած ՚ի գլուխս նոցա. և եկին ՚ի վերայ նոցա անէ՛ծքն Յովաթամայ որդւոյ Յերոբոաղայ*:

10

Գլուխ Ժ

Թ ¹Եւ յարեաւ յետ Աբիմեղէքայ փրկել զԻսրայէլ, Թովղա որդի Փուայ. որդի հօր եղբօր նորա, այր յիսաքարայ. և նա բնակէր ՚ի Սամարիա, ՚ի լեռինն Եփրեմայ*: ²Եւ դատեաց զԻսրայէլ ամս քսան և երիս, և մեռաւ և թաղեցաւ ՚ի

* *Ոմանք.* Եւ գունդք նորա ընդ նմա ճակա՛ւ:

* *Ոմանք.* Եւ ամենայն զօր նորա ընդ նմա... տապար ՚ի ձեռն իւրուն... փայտ, և ա՛ռ զայն ՚ի վերայ ուսոց իւրոց:

* *Ոմանք.* Եւ նոքա ամենեքեան իւրաքանչիւր բեռն:

* *Յօրինակին.* Եւ չոգաւ... ՚ի Բեթես:

* *Ոմանք.* Մինչև յաշտարակն, և մարտեաւ ընդ նմա. և մերձեցաւ... մինչև ցորունս աշտարակին: *Յորս Ոսկան յաւելու.* Աշտարակին, *զի այրեցէ զնա հրով:*

* *Ոսկան.* Բեկտոր երկանի ՚ի վերայ:

* *Ոմանք.* Եւ զամենայն չարիս Սիկիմայ դարձոյց:

* *Ոմանք.* Եւ նա բնակեալ էր ՚ի Սամարիա:

Սամարիա:

Ժ³ Եւ յարեալ յետ նորա Յայի՛ր Գաղաադացի, և դատեաց զԻսրայէլ ամս քսան և երկուս: ⁴Եւ եղեն նորա որդիք՝ երեսուն և երկու, որ հեծանէին յերեսուն և երկու յովանակս. և երեսուն և երկու քաղաքք նոցա. և կոչեաց զնոսա ամանս Յայիրայ մինչև ցայսօր, որ են ՚ի Գաադադ: ⁵Եւ մեռա՛ւ Յայիր՝ և թաղեցաւ ՚ի Կամովն՝:

ԺԱ⁶ Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չա՛ր առաջի Տեառն, և պաշտեցին զԲահաղիմսն, և զԱստարովն, և զաստուածս Ասորոց, և զաստուածս Սիդոնայ, և զաստուածս Մովաբայ, և զաստուածս որդւոցն Ամոնայ, և զաստուածս այլազգեացն. և թողին զՏէր, և ո՛չ ծառայեցին նմա՛: ⁷Եւ սրտմտեցաւ բարկութեամբ Տէր Իսրայէլի, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս այլազգեացն, և ՚ի ձեռս որդւոցն Ամոնայ՝: ⁸Եւ խախտեցին խորտակեցին զորդիսն Իսրայէլի ՚ի ժամանակին յայնմիկ ամս ութուտասն զամենայն Իսրայէլացիս յայնկոյս Յորդանանու, յերկրի Ամովրիացւոցն ՚ի Գաղաադ՝: ⁹Եւ անցին որդիքն Ամոնայ ընդ Յորդանան տա՛լ պատերազմ ընդ Յուդայ և ընդ Բենիամին, և ընդ տանն Եփրեմայ. և նեղեցան որդիքն Իսրայէլի յոյժ: ¹⁰Եւ աղաղակեցին որդիքն Իսրայէլի առ Տէր՝ և ասեն. Մեղա՛ք քեզ, զի թողաք զԱստուածո՛ւ մեր՝ և պաշտեցաք զԲահաղիմսն: ¹¹Եւ ասէ Տէր ցորդիսն Իսրայէլի. Ո՞չ ապաքէն Եգիպտացիք և Ամուրիացիք, և որդիք Ամոնայ, և Մովաբ, և այլազգիք, ¹²և Սիդոնացիք, և Ամադէկ և Քանան՝ նեղեցին զձեզ, և աղաղակեցէք առ իս՝ և փրկեցի զձեզ ՚ի ձեռաց նոցա: ¹³Եւ դուք թողէք զիս՝ և ծառայեցէք աստուածոց օտարաց. վասն այնորիկ ո՛չ յաւելից փրկել զձեզ: ¹⁴Այլ երթա՛յք աղաղակեցէք առ աստուածսն զոր ընտրեցէք ձեզ. և նոքա՛ փրկեսցեն զձեզ ՚ի ժամանակի նեղութեանց ձերոց՝: ¹⁵Եւ ասեն որդիքն Իսրայէլի ցՏէր. Մեղա՛ք, արա՛ դու ընդ մեզ զամենայն, որ ինչ հաճոյ թուի առաջի քո. բայց Տէր՝ միայն ապրեցո՛ւ զմեզ յաւուր յայսմիկ՝: ¹⁶Եւ մերժեցին զաստուածսն օտարոտիս ՚ի միջոյ իւրեանց. և պաշտեցին զՏէր միայն. և ո՛չ հաշտեցաւ ընդ ժողովրդեանն. և յոգիս ապաստան եղև յաշխատութենէ Իսրայէլի՝: ¹⁷Եւ ելին որդիքն Ամոնայ, և բանակեցան ՚ի Գաղաադ. և ելին որդիքն Իսրայէլի, և բանակեցան ՚ի դիտանոցին: ¹⁸Եւ ասեն իշխանք ժողովրդեանն Գաղաադու՝ այր ցընկէր իւր. Այր որ սկիզբն առնիցէ պատերազմել ընդ որդիսն Ամոնայ, եղիցի գլուխս ամենայն բնակչացս Գաղաադու:

11

Գլուխ ԺԱ

¹Եւ Յեփթայէ Գաղաադացի, է՛ր այր հզօր զօրութեամբ, և նա որդի՛ կնոջ պոռնկի. և ծնաւ Գաղաադու զՅեփթայէ: ²Եւ ծնա՛ւ կինն Գաղաադու նմա որդիս.

* *Ոմանք.* Եւ թաղեցաւ ՚ի Կամովս:

* *Ոմանք.* Եւ թողին զՏէր Աստուած, և ոչ:

* *Բազումք.* ՚ի ձեռս այլազգեացն. և *ոմանք.* ՚ի ձեռս թշնամեացն:

* *Այլք.* Եւ խախտեցին և խորտա՛:

* *Ոմանք.* ՚ի ժամանակի նեղութեան ձերոյ:

* *Ոմանք.* Որ ինչ հաճոյ թուիցի քեզ. բայց միայն... յաւուրս յայսմիկ:

* *Ոմանք.* Յաշխատութենէ Իսրայէլ:

և հաստատեցան որդիք կնոջն, և մերժեցին զՅեփթայէ, և ասեն ցնա. Ո՛չ ժառանգեսցես ՚ի տան հօր մերոյ, զի որդի կնոջ պոռնկի՛ ես դու: ³Եւ փախեալ Յեփթայէ յերեսաց եղբարց իւրոց, և բնակեցաւ յերկիր ՚ի Տովբ. և ժողովէին առ Յեփթայէ արք սրիկայք. և ելանէին ընդ նմա՛: ⁴Եւ եղև յետ աւուրց, և պատերազմեցան որդիքն Ամոնայ ընդ Իսրայէլացիսն՛: ⁵Եւ եղև յորժամ ետուն պատերազմ որդիքն Ամոնայ ընդ Իսրայէլի՝ չոգան ծերք Գաղաադու առնուլ զՅեփթայէ յերկրէն Տովբայ՛: ⁶Եւ ասեն ցՅեփթայէ. Ե՛կ և եղիցիս մեզ ՚ի զօրավար. և տացուք պատերա՛զմ ընդ որդիսն Ամոնայ: ⁷Եւ ասէ Յեփթայէ ցճերսն Գաղաադու. Ո՞չ ապաքէն դուք ատեցէք զիս, և հանէք առաջի Տեառն ՚ի տանէ հօր իմոյ, և արձակեցէք զիս ՚ի ձէնջ. և արդ՝ զի՞ եկիք առ իս յորժամ նեղեցայքո՞ւ: ⁸Եւ ասեն ծերքն Գաղաադու ցՅեփթայի. Ո՛չ այդպէս է. այլ եկա՛ք առ քեզ, և երթիցեն ընդ մեզ, և տացուք պատերազմ ընդ որդիսն Ամոնայ. և եղիցիս մեզ ՚ի գլո՛ւխ ամենայն բնակչացս Գաղաադու: ⁹Եւ ասէ Յեփթայէ ցճերսն Գաղաադու. Եթէ դարձուցանիցէք զիս պատերազմել ընդ որդիսն Ամոնայ, և մատնեսցէ զնա Տէր առաջի իմ, ե՛ս եղէ՞ց իշխան՛: ¹⁰Եւ ասեն ծերքն Գաղաադու ցՅեփթայէ. Տէր կացցէ լսող ՚ի միջի մերում, եթէ ո՛չ ըստ բանի՞դ քուն նոյնպէս և արասցուք: ¹¹Եւ գնաց Յեփթայէ ընդ ծերսն Գաղաադու. և կացուցին զնա ժողովուրդն ՚ի վերայ իւրեանց գլո՛ւխ և առաջնորդ. և խօսեցաւ Յեփթայէ զամենայն զբանս իւր առաջի Տեառն ՚ի Սասեփա: ¹²Եւ առաքեաց Յեփթայէ հրեշտակս առ թագաւոր որդւոցն Ամոնայ՝ և ասէ. Ձի՞ կայ իմ և քո, զի եկեա՛լ ես առ իս պատերազմել յերկրի մերում: ¹³Եւ ասէ արքայ որդւոցն Ամոնայ ցհրեշտակսն Յեփթայեայ. Ընդէ՞ր ա՛ռ Իսրայէլ զերկիր իմ յելանել իւրում յեգիպտոսէ՛ յԱռնոնայ՝ մինչև ցԱրբոկ և մինչև ցՅորդանան. և արդ՝ դարձո՛ զնա առ իս խաղաղութեամբ՝ և զնացից: Եւ դարձան հրեշտակքն առ Յեփթայէ՛: ¹⁴Եւ յաւել լսա Յեփթայէ առաքել հրեշտակս առ արքայ որդւոցն Ամոնայ, ¹⁵և ասէ ցնա. Ա՛յսպէս ասէ Իսրայէլ և Յեփթայէ. Ո՛չ ա՛ռ Իսրայէլ զերկիրն Մովաբայ, և զերկիր որդւոցն Ամոնայ ¹⁶յելանել իւրեանց յեգիպտոսէ. այլ զնաց Իսրայէլ ընդ անապատն մինչև ցճովն Կարմիր, և եկն մինչև ցԿադէս. ¹⁷և առաքեաց Իսրայէլ հրեշտակս առ արքայ Եդոմայ՝ և ասէ. Թող՝ անցի՛ց ընդ երկիր քո: Եւ ո՛չ անսաց արքայն Եդոմայ. և առաքեաց առ արքայն Մովաբու, և ո՛չ կամեցաւ: Եւ նստաւ Իսրայէլ ՚ի Կադէս. ¹⁸և շրջեցաւ ընդ անապատն, և պատեցաւ զերկրան Եդոմայ, և զերկրան Մովաբայ. և եկն առ արևելիւք երկրին Մովաբու. և բանակեցաւ յա՛յնկոյս Առնոնայ, և ո՛չ մտին ՚ի սահմանս Մովաբու. քանզի Առնովն էր սահման Մովաբու՛: ¹⁹Եւ առաքեաց Իսրայէլ հրեշտակս առ Սեհոն արքայ Ամուրիացոց՝ թագաւոր Եսեբոնայ և Ամուրիացոց, և ասէ ցնա Իսրայէլ. Թող՝ անցի՛ց ընդ երկիր քո մինչև ցտեղի իմ: ²⁰Եւ ո՛չ կամեցաւ Սեհոն զԻսրայէլ անցանել ընդ

* Ոմանք. Յերկրին ՚ի Տովբ:

* Ոմանք. Ընդ Իսրայէլի:

* Ոմանք. Ընդ որդիսն Իսրայէլի:

* Ոմանք. Յեփթայէ ընդ ծերս Գաղայա՛... և արդ՝ զի՛ ելէք առ իս: Այլք. Եւ հանէք ՚ի տանէ հօր իմոյ:

* Ոմանք. Եւ մատնեսցէ զնոսա Տէր ա՛... և ես եղէց ձեզ իշխան:

* Յօրինակին. Հրեշտակ՝ առ թագաւոր: Ոմանք. Առ որդիսն Ամոնայ և առ թագաւորն իւրեանց և ասէ... յերկրի իմում:

* Ոմանք. ՅԱռնոնայ մինչև ցՅաբոկ:

* Ոմանք. Եւ բնակեցաւ յերկիրն Առն՛:

սահմանս իւր: Եւ ժողովեաց Սեհոն զամենայն ժողովուրդ իւր, և բանակեցաւ յԱսսա. և ետ պատերազմ ընդ Իսրայէլի: ²¹Եւ մատնեաց Տէր Աստուած Իսրայէլի զՍեհոն՝ և զամենայն ազգն նորա՝ ՚ի ձեռս Իսրայէլի. և եհար զնոսա, և ժառանգեաց Իսրայէլ զերկիր Ամուրիացւոցն բնակելոյն յերկրին յայնմիկ*:

²²Եւ ժառանգեաց Իսրայէլ զամենայն սահմանս Ամուրիացւոցն յԱմոնայ մինչև ցԱբրոն, և յանապատն մինչև ցՅորդանան*:

²³Եւ արդ Տէր Աստուած Իսրայէլի եբարձ զԱմուրիացին յերեսաց ժողովրդեան իւրոյ Իսրայէլի. և դո՞ւ ժառանգիցես զնա: ²⁴Ոչ ապաքէն զոր ժառանգեցոյց քեզ Քամովս աստուածն քո՝ զայն ժառանգեսցես. և զամենայն զոր ժառանգեցոյց Տէր Աստուած մեր յերեսաց ձերոց՝ զայն մե՞ք ժառանգեսցուք:

²⁵Իսկ արդ՝ միթէ լա՞ւ ինչ իցես դու քան զԲաղակ որդի Սեպփովրայ զարքայն Մովաբու. միթէ մարտի՞ւ մարտեաւ ընդ Իսրայէլի, կամ պատերազմաւ պատերազմեցա՞ւ ընդ նոսա. ²⁶ի բնակելն Իսրայէլի յեսեբոն և ՚ի դստերս նորա, և յԱրոյե՛ր և ՚ի դստերս նորա, և յամենայն քաղաքս որ առ եզերք Յորդանանու ամս երեք հարիւր. զի՞ է զի ո՛չ թափեցին զնոսա ՚ի ժամանակին յայնմիկ*:

²⁷Եւ ես ո՛չ ինչ մեղայ քեզ՝ և դու առնես ընդ իս չարութիւն, տալ ընդ իս պատերազմ: Դատեսցէ՛ Տէր որ դատելոցն է այսօր՝ ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի և ՚ի մէջ որդւոցն Ամոնայ: ²⁸Եւ ո՛չ անսաց արքայ որդւոցն Ամոնայ բանիցն Յեփթայեայ՝ զորս առաքեաց առ նա: ²⁹Եւ եղև ՚ի վերայ Յեփթայեայ Յոզի՛ Տեառն, և անց ընդ Գաղաադ և ընդ Մանասէ, և անց ընդ դիտանոցսն Գաղաադու, և ՚ի դիտանոցէն Գաղաադու յայնկոյս որդւոցն Ամոնայ: ³⁰Եւ ուխտեաց Յեփթայէ ուխտս Տեառն՝ և ասէ. Եթէ մատնելով մատնեսցես զորդիսն Ամոնայ ՚ի ձեռս իմ. ³¹և եղիցի որ ելանելով ելանիցէ ՚ի դրանց տան իմոյ ընդ առաջ իմ, ՚ի դառնալն ինում խաղաղութեամբ յորդւոցն Ամոնայ, եղիցի՞ զի մատուցի՞ց զնա Տեառն յողջակէ՞գ*:

³²Եւ անց Յեփթայէ առ որդիսն Ամոնայ պատերազմել ընդ նոսա. և մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս նորա. ³³և եհար զնոսա յԱրոտրայ մինչև ՚ի մո՛ւտս Սեմէննիթայ, քսան քաղաքք, մինչև ցՅաբէղ՝ այգեստանեացն՝ հարուածս մեծամեծս յոյժ. և վանեցան որդիքն Ամոնայ յերեսաց որդւոցն Իսրայէլի*:

³⁴Եւ եկն Յեփթայէ ՚ի Մասեփա ՚ի տուն իւր. և ահա դուստր իւր ելանէր ընդ առաջ նորա թմբկօք և պարուք. և նա էր միամօ՛ր սիրելի նորա, և ո՛չ գոյր նորա բաց ՚ի նմանէ ուստր կամ դուստր*:

³⁵Եւ եղև իբրև ետես զնա՝ պատառեաց զհանդերձս իւր և ասէ. Վա՛յ է ինձ դուստր իմ, ընկճեցեր զիս, խոչընդակն եղեր ինձ. զի ես բացի զբերան իմ վասն քո առ Տէր, և ո՛չ կարացից դարձուցանել*:

³⁶Եւ ասէ ցնա. Եթէ վասն իմ բացեր զբերան քո առ Տէր, արա՛ զիս որպէս ե՛լ ՚ի բերանոյ քումմէ. փոխանակ զի արար քեզ Տէր վրէժխնդրութիւն ՚ի թշնամեաց քոց յորդւոցն Ամոնայ: ³⁷Եւ ասէ ցհայր իւր. Արա՛ ինձ զբանս զայս, թողացո՛ ինձ զերկուս ամիսս, և երթայց շրջեցայց ընդ լերինս, և լացից զկուսութիւնս իմ. Ե՛ս և ընկերք իմ*:

³⁸Եւ ասէ ցնա. Ե՛րթ: Եւ արձակեաց զնա զերկուս ամիսս. և չոգա՛ւ ինքն և ընկերք իւր, և ելաց զկուսութիւն իւր ՚ի

* Ոմանք. Եւ ժառանգեաց Իսրայէլ զամենայն եր՞:

* Ոմանք. Ամովրիացւոյն... մինչև ցՅաբոկ:

* Այլք. ՚ի բնակելն Իսրայէլի յեսեբոն:

* Ոմանք. Տեառն յողջակէգս:

* Ոմանք. Եւ մինչև ցԱբէղ՝:

* Ոմանք. Եւ ահա դուստր նորա ելա՞... թմպօք և պարուք:

* Ոմանք. Ձի ընկճեցեր զիս:

* Ոմանք. Թողացո՛ ինձ զամիսս երկու... և ես և ընկե՞:

վերայ լերանց*։ ³⁹Եւ եղև յետ կատարելոյ երկուց ամսոցն, դարձաւ առ հայր իւր. և արար նովաւ զուխտն զոր ուխտեաց. և նա ո՛չ գիտէր զայր։ Եւ եղև ՚ի կրօնս ՚ի մէջ Իսրայէլի ողբալ՝ զդուստրն Յեփթայեայ*։ ⁴⁰աւուրց յաւուրս. ժողովէին դատերք Իսրայէլի՝ ողբալ՝ զդուստրն Յեփթայեայ Գաղաադացոյ չորս աւուրս ՚ի տարւոջ։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ ժողովեցան որդիքն Եփրեմի, և եկին ՚ի Սեփեմա. և ասեն ցՅեփթայէ. Զի՞ է զի ելեր պատերազմել ընդ որդիսն Ամոնայ, և զմեզ ո՛չ կոչեցեր երթալ ընդ քեզ. արդ՝ այրեսցո՛ւք հրով զտուն քո ՚ի վերայ քո*։ ²Եւ ասէ ցնոսա Յեփթայէ. Այր զրկեալ էի ես, և ժողովուրդ իմ. և որդիք Ամոնայ տառապեցուցանէին զիս յոյժ. և բողոք արկի առ ձեզ, և ո՛չ փրկեցէք զիս ՚ի ձեռաց նոցա։ ³Եւ տեսի զի ո՛չ ոք էր որ փրկէր, և եդի զանձն իմ ՚ի ձեռին իմում, և անցի առ որդիսն Ամոնայ. և մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս իմ. և արդ ընդէ՞ր ելէք առ իս յաւուր յայսմիկ մարտնչել ընդ իս*։ ⁴Եւ ժողովեաց Յեփթայէ զամենայն արս Գաղաադու՝ և տայր պատերազմ ընդ Եփրեմի. և հարին արքն Գաղաադու զԵփրեմ. զի ասացին ապրեալքն Եփրեմի, թէ դուք Գաղաադացիք ՚ի մէջ Եփրեմի և ՚ի մէջ Մանասէի՝ էք*։ ⁵Եւ կալաւ Գաղաադ զկիրճս Յորդանանու զԵփրեմի. և եղև իբրև ասացին ապրեալքն Եփրեմայ, թէ թո՛ղ անցցուք. ասեն ցնոսա արք Գաղաադու. Միթէ և դուք յԵփրեմէ՛ իցէք։ Եւ ասեն. Չենք ՚ի նոցանէ։ ⁶Եւ ասեն ցնոսա. Տո՛ւք մեզ նշան ինչ, և ասացէք. Հանկ հանկ։ Եւ ո՛չ յաջողեցան խօսել այնպէս. և կալան և կոտորեցին զնոսա յանցսն Յորդանանու. և անկան ՚ի ժամանակին յայնմիկ յԵփրեմէ քառասուն և երկու հազարք*։ ⁷Եւ դատեաց Յեփթայէ զԻսրայէլ ամս վեց. և մեռաւ Յեփթայէ Գաղաադացի՝ և թաղեցաւ ՚ի քաղաքի իւրում ՚ի Գաղաադ։

ԺԲ ⁸Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ Եսեբոն ՚ի Բեթղեհեմէ*։ ⁹Եւ եղեն նորա ուստերք երեսուն, և դատերք երեսուն տուեալ արտաքս. և երեսուն կին ած ուստերաց իւրոց արտաքուստ։ Եւ դատեաց զԻսրայէլ ամս եւթն. ¹⁰և մեռաւ Եսեբոն՝ և թաղեցաւ ՚ի Բեթղեհեմ։

ԺԳ ¹¹Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ՝ Էդոն Զաբուղոնացի ամս տասն։ ¹²Եւ մեռաւ Էդոն Զաբուղոնացի, և թաղեցաւ յԷդիմ յերկրին Զաբուղոնի։

ԺԴ ¹³Եւ դատեաց յետ նորա զԻսրայէլ, Աբդոն որդի Եդդեքայ Փարաթոնացի*։ ¹⁴Եւ եղեն նորա որդիք քառասուն. և երեսուն որդիք որդւոց նորա, որ հեծանէին իլութանասուն յաւանակս. և դատեաց զԻսրայէլ ամս ութ*։ ¹⁵Եւ մեռաւ Աբդոն

* *Ոմանք.* Եւ արձակեաց զնա զամիսս երկու... և լացին զկուսութիւն իւրեանց ՚ի վերայ լէ՛ն։

* *Ոմանք.* ՚ի կրօնս ՚ի մէջ Իսրայէլի, (40) աւուրց յաւուրս ժողովէին։

* *Ոմանք.* Զի՞ է զի չոգաւ պատերազմել։

* *Յորինակին պակասէր.* Զնոսա Տէր ՚ի ձեռս իմ։ *Ոմանք.* Յաւուրս յայսմիկ մար՛։

* *Ոմանք.* Եւ ՚ի մէջ Մանասէի էիք։

* *Ոմանք.* Եւ ասացէք թէ հասկ հասկ։

* *Ոմանք.* Եսեբոն ՚ի Բեթղեհեմի։

* *Ոմանք.* Որդի Եդդաքեայ Փարաթովնացոյ։

* *Ոմանք.* Յեւթանասուն յովանակս։

որդի եղի՞նքայ Փարաթոնացի. և թաղեցաւ յԵփրաթոն, յերկրի՛ Եփրեմայ՝ ի
լերինն Ամաղեկայ:

13

Գլուխ ԺԳ

¹Եւ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չար առաջի Տեառն. և մատնեաց զնոսա
Տէր ՚ի ձեռս այլազգեացն ամս քառասուն:

ԺԵ ²Եւ եղև այր մի ՚ի Սարաա՝ ՚ի ցեղէ՛ Դանայ, և անուն նորա Մանովէ. և կին
նորա ամուլ էր և ո՛չ ծնանէր: ³Եւ երևեցաւ հրեշտակ Տեառն կնոջն, և ասէ ցնա.
Ահաւադիկ դու ամուլ ես՝ և ո՛չ է քո ծնեալ, և յղացիս և ծնցիս որդի՛: ⁴Արդ՝
զգոյ՜ լեր՝ զուցէ՛ ըմպիցես գինի և օղի. և մի՛ ուտիցես զամենայն անսուրբ*. ⁵Գի
ահա յղացիս դու և ծնցիս որդի՛, և երկաթ մի՛ ելցէ ՚ի գլուխ նորա. զի
ուխտաւոր Աստուծոյ եղիցի մանուկն անդստին յորովայնէ. և նա՛ սկսցի փրկել
զԻսրայէլ ՚ի ձեռաց Փղշտացւոցն: ⁶Եւ եմուտ կինն և ասէ ցայր իւր, եթէ այր
Աստուծոյ եկն առ իս, և տեսիլ նորա իբրև զտեսիլ հրեշտակի Աստուծոյ երևելի՛
յոյժ. և հարցի ցնա՝ թէ ուստի՛ ես, և զանուն իւր ո՛չ պատմեաց ինձ*: ⁷Եւ ասէ ցիս.
Ահա յղացիս դու, և ծնցիս որդի. և արդ՝ մի՛ ըմպիցես գինի և օղի, և մի՛ ուտիցես
զամենայն անսուրբ. զի ուխտաւոր Աստուծոյ եղիցի մանուկն անդստին
յորովայնէ մօր իւրոյ մինչև ցօր մահուան իւրոյ: ⁸Եւ աղաչեաց Մանովէ զՏէր՝ և
ասէ. Յիս Տէր. այրն Աստուծոյ զոր առաքեցեր առ մեզ, եկեսցէ՛ դարձեալ առ մեզ
և լուսաւորեսցէ՛ զմեզ, թէ զի՞նչ արասցուք մանկանն որ ծնանիցի: ⁹Եւ լուաւ
Աստուած ձայնի Մանովէ: Եւ եկն հրեշտակն Աստուծոյ միւս անգամ առ կին
նորա մինչդեռ նստէր յանդի. և Մանովէ այր նորա չէր առ նմա: ¹⁰Եւ փութացաւ
կինն և ընթացաւ պատմեաց առն իւրում, և ասէ ցնա. Ահա երևեցաւ ինձ այրն
որ եկն առ իս յաւուր յայնմիկ: ¹¹Եւ յարեաւ զնաց Մանովէ զհետ կնոջ իւրոյ, և
եկն առ այրն, և ասէ ցնա. Եթէ դո՞ւ իցես այրն որ խօսիցիս ընդ կնոջն: Եւ ասէ
հրեշտակն. Ե՛ս եմ*: ¹²Եւ ասէ Մանովէ. Արդ զալով չափ բանին քոյոյ, զի՞նչ
լինիցին իրաւունք մանկանն և գործք նորա: ¹³Եւ ասէ հրեշտակն ցՄանովէ.
Յամենայնէ զոր ասացի կնոջդ՝ զգոյ՜ լինիցի*. ¹⁴Յամենայնէ որ ելանէ յորթոյ՝ մի՛
կերիցէ, և գինի և օղի մի՛ արբցէ, և զամենայն անսուրբ մի՛ կերիցէ. յամենայնէ՛
զոր պատուիրեցի նմա զգոյ՜ լինիցի*: ¹⁵Եւ ասէ Մանովէ ցհրեշտակն. Թո՛ղ
բռնադատեսցուք զքեզ, և արասցուք առաջի քո ո՛ւլ մի յայծեաց*: ¹⁶Եւ ասէ
հրեշտակն Տեառն ցՄանովէ. Եթէ բռնադատեսցես զիս՝ ո՛չ կերայց ՚ի հացից քոց,
և եթէ արասցես ողջակէզ՝ Տեառն մատուցես զնա. զի ո՛չ գիտաց Մանովէ թէ
հրեշտակ Տեառն իցէ*: ¹⁷Եւ ասէ Մանովէ ցհրեշտակն Տեառն. Զի՞նչ անուն է քեզ,

* Ոմանք. Ահաւասիկ... յղացես և ծնցես:

* Ոմանք. Եւ արդ զգոյ՜ լեր... գինի և ուղի:

* Ոմանք. Եթէ ուստի՛ իցես, և զա՛:

* Ոմանք. Որ խօսեցարն ընդ կնոջն:

* Ոմանք. Զոր ասացի ցկինդ. կամ՝ ցկինն:

* Ոմանք. Յամենայնէ որ ելանիցէ յորթոյ, մի՛ ուտիցէ:

* Ոմանք. Եւ ասէ... ցհրեշտակ Տեառն:

* Ոմանք. Ես ո՛չ կերայց ՚ի հա՛... և եթէ արասցես ուլ յողջակէզս և մատուցես:

զի յորժամ եկեսցէ բանն քո՝ փառաւորեսցո՛ւք զքեզ՝¹⁸ Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն. Ջի՞՞ հարցանես զանուանէ իմմէ, և նա է՛ սքանչելի: ¹⁹Եւ ա՛ռ Մանովէ զուլն այծեաց զգոհն, և մատոյց ՚ի վերայ վիմին՝ Տեառն սքանչելարարի. և Մանովէ և կին նորա հայէին՝: ²⁰Եւ եղև ընդ ամբառնալ բոցոյն ՚ի վերուստ ՚ի սեղանոյն յերկինս, ամբարձաւ հրեշտակն Տեառն բոցով սեղանոյն. և Մանովէ և կին նորա հայէին. և անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց յերկիր՝: ²¹Եւ ո՛չ ևս յաւել երևել հրեշտակն Տեառն Մանովէ և կնոջ նորա. յայնժամ գիտաց Մանովէ թէ հրեշտակ Տեառն է՝: ²²Եւ ասէ Մանովէ ցկինն իւր. Սահու՛ մեռանիցիմք զի զԱստուած տեսաք: ²³Եւ ասէ ցնա կին նորա. Եթէ կամեցեալ էր Տեառն սպանանել զմեզ, ո՛չ ընդունէր ՚ի ձեռաց մերոց զողջակէզն և զգոհն. և ո՛չ լուսաւորէր մեզ զայն ամենայն ընդ ժամանակս ժամանակս, և ո՛չ լսելի առնէր մեզ զայն՝: ²⁴Եւ ծնա՛ւ կինն որդի, և կոչեաց զանուն նորա Սամփսոն. և աճեաց մանուկն, և օրհնեաց զնա Տէր: ²⁵Եւ սկսաւ Յոգի Տեառն շրջել ընդ նմա ՚ի բանակին Դանայ, ՚ի մէջ Սարաա, և ՚ի մէջ Եսթաւուլայ:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ էջ Սամփսոն ՚ի Թամնաթա՝ և ետես կին մի ՚ի Թամնաթա՝ ՚ի դստերացն այլազգեաց, և հաճո՛յ թուեցաւ առաջի նորա. ²և ել պատմեաց հօր իւրում և մօր իւրում և ասէ. Կի՛ն մի տեսի ՚ի Թամնաթա ՚ի դստերացն այլազգեաց. և արդ առէ՞ք զնա ինձ կնութեան: ³Ասեն ցնա հայր և մայր իւր. Միթէ ո՛չ գուցէ ՚ի դստերաց եղբարց քոց՝ և յամենայն ժողովրդեան իմում կին, զի երթիցես դու առնուլ կին յայլազգեաց՝ անթլփատից: Եւ ասէ Սամփսոն ցհայր իւր. Ձնա՛ ած ինձ, զի նա՛ հաճոյ է աչաց իմոց՝: ⁴Եւ հայր նորա և մայր նորա ո՛չ գիտացին թէ ՚ի Տեառնէ է, զի հատուցումն խնդրիցէ նա յայլազգեացն. և ՚ի ժամանակին յայնմիկ այլազգիքն տիրէին Իսրայէլի: ⁵Եւ էջ Սամփսոն և հայր նորա և մայր իւր ՚ի Թամնաթա. և խոտորեցաւ Սամփսոն յայգեստանն Թամնաթայ, և ահա կորիւն մի առիւծուց զոչեաց ընդդէմ նորա՝: ⁶Եւ յաջողեցաւ ՚ի վերայ նորա Յոգի՛ Տեառն. և ճեղքեաց զնա իբրև զո՛ւլ մի այծեաց, և ո՛չ ինչ գոյր ՚ի ձեռին նորա. և ո՛չ պատմեաց հօր իւրում և մօր իւրում զոր արար: ⁷Եւ իջին խօսեցան ընդ կնոջն. և հաճո՛յ թուեցաւ առաջի Սամփսոնի: ⁸Եւ դարձաւ յետ աւուրց առնուլ զնա. և խոտորեցաւ տեսանել զգէջ առիւծուն, և ահա գունդ մեղուաց ՚ի բերան առիւծուն՝ և մե՛ղր. ⁹և ա՛ռ զայն ՚ի բերան իւր, և երթալով երթայր և ուտէր. չոզա՛ւ առ հայր իւր և առ մայր իւր, և ետ նոցա և կերան. և ո՛չ պատմեաց նոցա՝ թէ ՚ի

* *Յօրինակին.* Եւ ասէ Մանովէ զհրեշտակն Տեառն: *Բազումք.* Փառաւոր արասցուք զքեզ:

* *Ոմանք.* Ձուլն այծեաց և զգոհն... Տեառն սքանչելի արարի: *Յօրինակին.* Եւ Մանով և կին նորա հայ՝:

* *Ոմանք.* Ամբարձաւ և հրեշ՝:

* *Ոմանք.* Մանովէի և կնոջ նորա:

* *Ոմանք.* Եւ ո՛չ լուսաւորեալ էր մեզ զայն ընդ ժամա՛:

* *Ոմանք.* Եւ ասէ ցնա հայրն և մայրն... զի երթիցես դու երթալ առնուլ յայլազգեացն յանթլ՝:

* *Ոմանք.* Եւ հայր նորա և մայր նորա... կորիւն մի առիւծու. *կամ՝* առիւծոյ:

բերանոյ առիւծուն եհան զմեղրն*։ ¹⁰Եւ էջ հայր նորա առ կինն. և արար անդ Սամփսոն հարսանիս զեւթն օր. զի այնպէս առնէին երիտասարդք*։ ¹¹Եւ եղև ՚ի զարհուրե՛լ նոցա ՚ի նմանէ, կացուցին առ նա ընկերս երեսուն, և էին ընդ նմա*։ ¹²Եւ ասէ ցնոսա Սամփսոն. Արկից ձեզ առասպել, եթէ առեղծանելով եղծանիցէք զնա ինձ զեւթն օր խրախութեանս՝ # և գտանիցէք, տաց ձեզ երեսուն պաստառակալ և երեսուն պատմուճան հանդերձից*։ ¹³Ապա թէ ո՛չ կարիցէք առեղծանել ինձ. տաջի՛ք դուք ինձ երեսուն պաստառակալ և երեսուն պատմուճան հանդերձից։ Եւ ասեն ցնա. Արկ մեզ զառասպելն քո, և լուիցո՛ւք զնա։ ¹⁴Եւ ասէ ցնոսա։ Ի կերչէ՛ ե՛լ կերակուր, և ՚ի հզօրէ ել քա՛ղցր։ Եւ ո՛չ կարացին առեղծանել զառասպելն նորա զերիս աւուրս։ ¹⁵Եւ եղև յաւուրն չորրորդի, և ասեն ցկինն Սամփսոնի. Պատրեա՛ զայր քո՝ և պատմեսցէ քեզ զառասպելն, գուցէ՛ այրիցենք զքեզ և զտուն հօր քոյ. թէ աղքատացուցանե՞լ կոչեցեր զմեզ այսր*։ ¹⁶Եւ ելա՛ց կինն Սամփսոնի առ նա՝ և ասէ ցնա. Ատեցեր զիս և ո՛չ սիրեցեր զիս. զի զառասպելն զոր արկեր որդւոց ժողովրդեան իմոյ՝ ինձ ո՛չ պատմեցեր։ Եւ ասէ ցնա Սամփսոն. Ահա հօր և մօր իմոյ ո՛չ պատմեցի. և արդ՝ քե՞զ պատմիցեն*։ ¹⁷Եւ ելաց առ նա զեւթն օր՝ յորս էր խրախութիւնն. և եղև յաւուրն եւթներորդի պատմեա՛ց նմա՝ քանզի թախանձեա՛ց զնա. և նա պատմեաց որդւոց ազգին իւրոյ*։ ¹⁸Եւ ասեն ցնա արք քաղաքին յաւուրն եւթներորդի՝ յառաջ քան զմտանել արեգականն. Ջի՞նչ քաղցրագոյն քան զմեղր. կամ զի՞նչ հզօրագոյն քան զառնծ։ Եւ ասէ ցնոսա Սամփսոն. Եթէ ո՛չ ճնշեալ էր զերինջն իմ, ո՛չ գտանէիք զառասպելն իմ*։ ¹⁹Եւ յաջողեցաւ ՚ի վերայ նորա Յոզի Տեառն՝ և էջ յԱսկաղոն, և եհա՛ր անդ արս երեսուն. և առ ե՛տ զպատմուճանսն առեղծանելեաց առասպելին։ Եւ բարկացաւ սրտմտութեամբ Սամփսոն, և ե՛լ ՚ի տուն հօր իւրոյ։ ²⁰Եւ ամուսնացաւ կինն Սամփսոնի ընդ հացիրիցուն նորա՝ որ էր նորա ընկեր*։

15

Գլուխ ԺԵ

¹Եւ եղև յետ աւուրց, յաւուրս հնձո՛ց ցորենոյ, այց արար Սամփսոն կնոջ իւրուն, ածեալ ուլ մի յայծեաց. և ասէ. Ստից առ կին իմ ՚ի սենեակ։ Եւ ո՛չ եթող զնա հայրն նորա մտանել առ նա*։ ²Եւ ասէ հայրն նորա. Ասելով ասացի՝ թէ ատեցեր զնա, և ետու զնա ընկերի քում, ո՞չ աւանիկ քոյր նորա կրտսեր լաւագոյն է քան զնա. եղիցի սա՛ քեզ փոխանակ նորա։ ³Եւ ասէ Սամփսոն. Անպարտ եմ ես միանգամայն յայլազգեացդ. եթէ արարից ես ընդ դոսա

* Ոմանք. Թէ ՚ի փորոյ առիւծուն եհան զմեղրն։

* Ոմանք. Առ կին նորա. և արար անդ Սամփսոնի խրախութիւնս զեւթն օր։

* Ոմանք. Կացուցին առ նմա ընկերս երեսուն, և էր նա ընդ նոսա։

* Յօրինակին պակասէր. Եղծանիցէք զնա ինձ զեւթն։

* Ոմանք. Թէ աղքատացուցանել կամեցէք կոչել զմեզ այսր։

* Ոմանք. Կինն Սամփսոնի առ նմա, և ա՛... ահա հօր իմուն և մօր իմուն ո՛չ պատմեցի զնա։

* Ոմանք. Եւ ելաց առ նմա... յորս էր ՚ի խրա՛։

* Ոմանք. Ճնշեալ էր ինձ երինջն իմ։

* Ոմանք. Ընդ հաց երիցուն որ էր ընդ ընկեր։

* Յօրինակին պակասէր. Եւ ո՛չ եթող զնա հայրն։

չարութիւն*։ ⁴Եւ գնաց Սամփսոն, և կալաւ երեք հարիւր աղուէս. և ա՛ն ջահս, և կապեաց զնոսա ընդ միմեանս ձեռ ընդ ձեռ, և եդ զջահսն ՚ի մէջ երկուց ձեռո՛ցն, և կապեաց ՚ի միջոցին զջահսն. ⁵և ելոյց հո՛ւր ՚ի ջահսն, և արձակեաց յոճ այլազգեացն. և այրեաց զաւրանն, և գյառաջագոյն հնձեալսն ՚ի բարդից մինչև ցկանգնաւորն, և մինչև ցայգիս և ձիթենի՛ս*։ ⁶Եւ ասեն այլազգիքն. Ո՞ արար զայս։ Եւ ասեն. Սամփսոն փեսայ Թամնացոյն. զի եհան զկին նորա՝ և ետ ընկերի՛ նորա։ Եւ ելին այլազգիքն և այրեցին զտուն հօր նորա, և զկինն և զհայր նորա հրով։ ⁷Եւ ասէ ցնոսա Սամփսոն. Եթէ դո՛յն չափ ևս առնիցէք, սակայն ո՛չ հաճեցայց. այլ զվրէժ իմ իւրաքանչիւր ումեքէ՛ ՚ի ձէնջ խնդրեցից։ ⁸Եւ եհար զնոսա ՚ի սրաւնից մինչև ցերանս հարուածս մեծամեծս։ Եւ էջ բնակեցաւ առ հեղեղատաւն յայրին Ետեմայ*։ ⁹Եւ ելին այլազգիքն, և բանակեցան զՅուդայիւ, և անկան զեղճեաւ*։ ¹⁰Եւ ասէ ցնոսա այր Յուդայ. Ընդէ՞ր ելէք ՚ի վերայ իմ։ Եւ ասեն այլազգիքն. Կապել զՍամփսոն ելաք, և առնել ընդ նա զոր օրինակ արար ընդ մեզ*։ ¹¹Եւ իջին երեք հազարք ՚ի Յուդայ ՚ի ծակ վիմին Ետեմեայ. և ասեն ցՍամփսոն. Ո՞չ գիտես զի իշխեն մեզ այլազգիքն, և ընդէ՞ր արարեր զայն ընդ մեզ։ Եւ ասէ ցնոսա Սամփսոն. Որպէս արարին ընդ իս, նոյնպէս արարի՛ ընդ նոսա*։ ¹²Եւ ասեն ցնա. Կապել զքեզ իջաք, և մատնել ՚ի ձեռս այլազգեացն։ Եւ ասէ ցնոսա Սամփսոն. Երդուարո՛ւք ինձ դո՛ւք՝ չսպանանել զիս և տո՛ւք զիս նոցա. և դուք մի՛ երբէք պատահիցէք ինձ*։ ¹³Եւ երդուան նմա՝ և ասեն. Ո՛չ. այլ կապելով կապեսցո՛ւք զքեզ, և տացուք ՚ի ձեռս նոցա. բայց մահու ո՛չ սպանցուք զքեզ։ Եւ կապեցին զնա երեք կարովք նորովք, և հանին զնա ՚ի վիմէն*։ ¹⁴և եկն մինչև ցԾնօտն. և այլազգիքն աղաղակեցին և ընթացան ընդդէմ նորա։ Եւ յաջողեցաւ ՚ի վերայ նորա Յոգի Տեառն. և եղեն կարքն ՚ի բազուկս նորա իբրև զխժո՛ւժ՝ յորժամ ՚ի հո՛ւր հոտոտիցի, և հալեցան կապանքն ՚ի բազկաց նորա*։ ¹⁵Եւ եգիտ ծնօտ մի իշոյ ընկեցեալ. ձգեաց զձեռն իւր և առ զնա. և եհար նովաւ հազար այր։ ¹⁶Եւ ասէ Սամփսոն. Ծնօտի՛ւ իշոյ ջնջելով ջնջեցի՛ց զնոսա, զի ծնօտիւ իշոյ կոտորեցի հազար այր։ ¹⁷Եւ եղև իբրև կատարեաց զխօսելն, ընկէ՛ց զծնօտն ՚ի ձեռանէ իւրմէ. և կոչեաց զտեղին Կոտորած ծնօտի*։ ¹⁸Եւ ծարաւեցաւ յոյժ, և աղաղակեաց առ Տէր՝ և ասէ. Դո՛ւ յաջողեցեր ձեռամբ ծառայի՛ քո զփրկութիւնս զայս մեծ. և արդ մեռանիցի՛մք ՚ի ծարաւոյ, և անկանիցի՞մ ՚ի ձեռս անթլփատից։ ¹⁹Եւ եբաց Տէր զծակ ծնօտին, և ել ՚ի նմանէ ջուր, և արբ. և դարձաւ ոգի իւր առ ինքն և զովացաւ. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Աղբեր անուանեալ ծնօտի մինչև ցայսօր*։ ²⁰Եւ դատեաց զԻսրայէլ յաւուրս այլազգեացն ա՛մն քսան։

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա Սամփսոն։

* *Ոմանք.* Եւ այրեաց զորայն... ՚ի բարտից մինչև... և ցձիթենիս։

* *Ոմանք.* Ի սրնոց մինչև... և բնակեցաւ առ ջրհեղեղաւն յայրին Եմամայ։

* *Ոմանք.* Եւ բանակեցան առ Յուդայիւ։

* *Ոմանք.* Ելէք ՚ի վերայ մեր... զորօրինակ արար նա ընդ մեզ։

* *Այլք.* Երեք հազարք արանց Յուդայ։ *Ոսկան.* Ի ծագ վիմին Ետեմ։

* *Բազոււնք.* Եւ տուք զիս ցնոսա։

* *Ոմանք.* Երիւք կապովք նորովք։

* *Այլք.* Եւ եկն մինչև ցծնօտն։ *Ի լուս.* Եւ եղեն շխթայքն ՚ի բազուկս. *համաձայն ոմանց ՚ի բնար՝։ Ուր այլ ոմանք.* Եւ եղև կապքն ՚ի բա՛։

* *Ոմանք.* Եւ կոչեաց զտեղին զայն Կո՛։

* *Ոմանք.* Ոգի իւր առ ինքն և զօրացաւ. վասն այնորիկ անուանեաց զանուն նորա Աղբիւր ծնօտի մինչև։

Գլուխ ԺԶ

¹Եւ չոզա՛ւ Սամփսոն անտի՛ ՚ի Գազա, և ետես անդ կին մի պոռնիկ, և եմո՛ւտ առ նա: ²Եւ ա՛զդ եղև Գազացւոցն և ասեն. Եկեա՛լ է այսր Սամփսոն: Եւ պատեցին և դարանակա՛լ եղեն նմա զգիշերն ողջոյն առ դրան քաղաքին, և անշշունչ կացին զգիշերն ողջոյն, և ասեն. Ա՛ստ կացցուք մինչև ցառաւօտ, և սպանցու՛ք զնա՛: ³Եւ ննջեաց Սամփսոն մինչև ցմէ՛ջ գիշերոյն, և յարեաւ զմէջ գիշերաւն, և թափեաց զդրունս քաղաքին հանդերձ սեմովքն, և եբա՛րձ զնոսա հանդերձ նգովքն, և եդ ՚ի վերայ ուսոց իւրոց, և եհան զնոսա ՚ի գլուխ լերինն՝ որ է հանդէպ Քերրոնի. և ե՛դ զնոսա անդ՛: ⁴Եւ եղև յետ այսորիկ սիրեաց կի՛ն մի՝ առ եզերբ հեղեղատին Ովրեկայ. և անուն նորա Դալիլա: ⁵Եւ ելի՛ն առ նա նախարարք այլազգեացն՝ և ասեն. Պատրեա՛ զնա և տես՝ ի՞նչ իցէ զօրութիւն նորա մեծ, և կամ ի՞նչ կարասցուք նմա հնա՛ր գտանել և կապել զնա առ ՚ի տկարացուցանել զնա. և մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար և հարի՛ւր արծաթոյ՛: ⁶Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն. Պատմեա՛ ինձ, ի՞նչ իցէ զօրութիւն քո մեծ, և ի՞նչ կապիցիս առ ՚ի տկարացուցանելոյ զքեզ: ⁷Եւ ասէ ցնա Սամփսոն. Եթէ կապիցեն զիս եւթն ջլօք դալարովք չվտտելովք, տկարացայց և եղէց իբրև զմի ՚ի մարդկանէ: ⁸Եւ բերին առ նա նախարարքն այլազգեացն եւթն ջիլս դալարս անվտիտս. և նա կապեաց զնա նոքօք: ⁹Եւ դարան նստէր նմա ՚ի շտեմարանի. և ասէ ցնա. Այլազգի՛ք հասեալ են ՚ի վերայ քո Սամփսոն: Եւ խզեաց զջիլսն՝ զոր օրինակ խզիցի քուղ ՚ի թօթափելոյ յորժամ ՚ի հուր հոտոտիցի. և ո՛չ ծանուցաւ զօրութիւն նորա՛: ¹⁰Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն. Ահա խաբեցեր զիս և խօսեցար սուտ. զոնէ արդ պատմեա՛ ինձ, թէ ի՞նչ կապիցիս՛: ¹¹Եւ ասէ ցնա. Եթէ կապելով կապեցեն զիս եւթն կարովք նորովք, որովք չիցէ՛ գործեալ գործ. տկարացայց և եղէց իբրև զմի ՚ի մարդկանէ՛: ¹²Եւ ա՛ռ Դալիլա կա՛րս նորս, և կապեաց զնա նոքօք. և ասէ ցնա. Այլազգի՛ք հասեալ են ՚ի վերայ քո Սամփսոն: Եւ դարան նստէր նմա ՚ի շտեմարանի. և խզեաց զայն ՚ի բազկաց իւրոց իբրև զասղանի: ¹³Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն. Մինչև ցե՞որք խաբիցես զիս, և խօսիցիս ընդ իս սուտ. արդ՝ պատմեա՛ ինձ ի՞նչ կապիցիս: Եւ ասէ ցնա. Եթէ անկցես զեւթանեսին գիսակս գլխոյ իմոյ ընդ ազբին, և վարեցես ցցովք ընդ որմն՝ եղէց տկարացեալ իբրև զմի ՚ի մարդկանէ՛: ¹⁴Եւ ննջեցոյց զնա Դալիլա, և ա՛ռ զեւթանեսին գիսակս գլխոյ նորա հանդերձ ազբա՛նքն, և վարեաց ցցովք ընդ որմնն. և ասէ ցնա. Այլազգի՛ք հասեալ են ՚ի վերայ քո Սամփսոն: Եւ զարթեաւ ՚ի քնոյ իւրմէ, և կորզեաց զցիցսն հանդերձ ոստայնիւն

* Ոմանք. Եւ անշշունչ կային զգիշերն ող՛:

* Ոմանք. Սամփսոն մինչև ցկէս գիշերոյն:

* Ոմանք. Եւ ասեն ցնա... և տես՛ թէ ի՛նչ իցէ:

* Ոմանք. Այլազգիք հասին ՚ի վերայ քո... զօրութիւն իւր:

* Ոմանք. Եւ խօսեցար ընդ իս սուտ:

* Ոմանք. Եւթն կարիւք նորովք:

* Ոմանք. Եթէ արկցես զեւթա՛: *Յօրինակին պակասէր. Գլխոյ իմոյ ընդ ազբ՛: Ոմանք. Եւ վարեցես. կամ՝ վարիցես:*

և ազբամբն յորմոյ անտի. և ո՛չ ծանուցաւ զօրութիւն նորա*։ ¹⁵Եւ ասէ ցնա Դաւիլա. Ջիա՞րդ ասես՝ թէ սիրեցի զքեզ, և սիրտ քո չէ՛ ուղիղ ընդ իս, այս երիցս անգամ խաբեցեր զիս, և ո՛չ պատմեցեր ինձ թէ ի՞նչ իցէ զօրութիւն քո մեծ։ ¹⁶Եւ եղև իբրև վտանգեաց զնա բանիւք զգիշերն ողջոյն և թախանձեցոյ՛ց զնա, և պարտասեցոյց զնա մինչև ցմահ. ¹⁷պատմեաց նմա զամենայն ինչ՝ ՚ի սրտէ իւրմէ, և ասէ ցնա. Ածելի ո՛չ ելցէ ՚ի գլուխ իմ. զի ուխտաւոր Աստուծոյ եմ ես յորովայնէ մօր իմոյ. ապա թէ գերծուցում, մեկնեսցի՛ յինէն զօրութիւն իմ, և տկարացայ՛ց և եղէց իբրև զամենայն մարդիկ*։ ¹⁸Իբրև ետես Դաւիլա եթէ պատմեաց նմա զամենայն ինչ՝ ՚ի սրտէ իւրմէ, առաքեաց կոչեաց զնախարարս այլազգեացն՝ և ասէ. Ելէ՛ք միանգամայն, զի պատմեաց ինձ զամենայն ՚ի սրտէ իւրմէ։ Եւ ելին առ նա նախարարք այլազգեացն, և բերին զարծաթն ՚ի ձեռս իւրեանց*։ ¹⁹Եւ ննջեցոյց զնա ՚ի մէջ ծնգաց իւրոց. և կոչեաց վարսավիրայ, և եգերծ զելթանեսին գիսակս գլխոյ նորա. և սկսաւ թօշնել, և մեկնեցաւ ՚ի նմանէ զօրութիւն նորա*։ ²⁰Եւ ասէ Դաւիլա. Այլազգի՛ք հասեալ եմ ՚ի վերայ քո Սամփսոն։ Եւ զարթեալ ՚ի քնոյ իւրմէ, և ասէ. Ելի՛ց և արարից որպէս միշտն, և թօթափեցից։ Եւ նա ո՛չ գիտէր թէ Տէր մեկնեցաւ ՚ի նմանէ*։ ²¹Եւ կալան զնա այլազգիքն, և բրեցին զաչս նորա, և իջուցին զնա ՚ի Գազա, և կապեցին զնա երկաթի կապանօք. և աղայր ՚ի տան բանտին։ ²²Եւ սկսաւ մագ գլխոյ նորա բուսանել՝ յետ գերծելոյն։ ²³Եւ իշխանք այլազգեացն ժողովեցան զոհել զո՛հ մեծ Դագոնայ աստուծոյն իւրեանց, և ուրախ լինել. և ասէին. Մատնեաց աստուած մեր զՍամփսոն թշնամի մեր ՚ի ձեռս մեր*։ ²⁴Իբրև տեսին ժողովուրդն՝ օրհնէին զաստուածս իւրեանց. զի ասացին թէ մատնեաց աստուած մեր զթշնամիս մեր ՚ի ձեռս մեր. և զապականիչ երկրի մերում, որ յաճախեաց զվիրաւորս մեր*։ ²⁵Եւ եղև իբրև զուարթացան սիրտք իւրեանց, ասեն. Կոչեցէ՛ք զՍամփսոն ՚ի տանէ բանտին, և խաղ արասցէ առաջի մեր։ Եւ կոչեցին զՍամփսոն ՚ի տանէ բանտին, և խաղային նովաւ. և կացուցին զնա ՚ի մէջ երկուց սեանց*։ ²⁶Եւ ասէ Սամփսոն ցպատանին որ ունէր զձեռանէ նորա. Թո՛ղ տուր ինձ և զննեցի՛ց զսիւնս՝ յորոց վերայ տունս հաստատեալ կայ, և յեցայ՛ց ՚ի նոսա։ ²⁷Եւ տունն լի՛ էր արամբք և կանամբք. և անդ ամենայն նախարարք այլազգեացն. և ՚ի տանիսն իբրև երեք հազարք, արք և կանայք որ տեսանէին զխաղն Սամփսոնի։ ²⁸Եւ աղաղակեաց Սամփսոն առ Տէր՝ և ասէ. Տէր Տէր զօրութեանց յիշեա՛ զիս, և զօրացո՛ զիս զայս ևս մի նուագ Աստուած՝ և խնդրեցի՛ց զվրէժխնդրութիւն իմ փոխանակ երկուց աչաց իմոց յայլազգեաց աստի։ ²⁹Եւ բո՛ւռն եհար Սամփսոն զերկուց սեանցն միջնոց, յորոց վերայ տունն հաստատեալ կայր, և յեցաւ ՚ի նոսա՝ ՚ի մին աջո՛վ իւրով, և ՚ի միւսն ձախով իւրով*։ ³⁰Եւ ասէ Սամփսոն. Մեռցի՛ անձն իմ ընդ այլազգիսս։ Եւ շարժեաց

* *Ոսկան.* Եւ վարսեաց ցցովք։

* *Ոմանք.* Եւ պատմեաց նմա։ *Յօրինակին.* Ջոր ուխտաւոր Աստուծոյ եմ։ *Ուր ոմանք.* Վասն զի ուխտաւոր։

* *Օրինակ մի.* Ջամենայն սիրտ իւր... և ելին առ նա ամենայն նախար*։

* *Ոմանք.* Եւ կոչեաց զվարսավիրաց։

* *Օրինակ մի.* Այլազգիք յարուսցեն ՚ի վերայ քո Սամփ*։

* *Ոմանք.* Եւ իշխանք այլազգեացն սկսան զոհել... աստուածոց իւրեանց։

* *Ոմանք.* Եւ օրհնեցին զաստ... զթշնամին մեր ՚ի ձե*։

* *Ոմանք.* Կոչեսցուք զՍամփ... և խաղացէ առա... և խաղացին նովաւ։

* *Ոմանք.* Ջմիջնոցն, յորոց վերայ... և ՚ի մին ձախով իւ*։

գորութեամբ: Եւ անկա՛ւ տունն ՚ի վերայ ամենայն նախարարացն, և ՚ի վերայ ամենայն ժողովոյն որ ՚ի նմա. և էին մեռեալքն զորս մեռոյց Սամփսոն ՚ի մահուն իւրում, առաւել՛ քան զորս սպան ՚ի կենդանութեան իւրում*։ ³¹Եւ իջին եղբարք նորա և ամենայն տուն հօր նորա. և բարձին, և հանին թաղեցին զնա ՚ի մէջ Սարաայ և ՚ի մէջ յԵսթաւուղայ՝ ՚ի գերեզմանի Սանովայ հօր իւրոյ: Եւ նա դատեաց զԻսրայէլ ամս քսան:

17

Գլուխ ԺԷ

ԺԶ ¹Եւ եղև այր ՚ի լեռնէն Եփրեմայ, և անուն նորա Միքա՛: ²Եւ ասէ ցմայր իւր. Ջհազար և զհարիւր արծաթոյն զոր առեր առ քեզ, և երդուար՝ և ասես յականջս իմ թէ արծաթն առ իս է, ե՛ս առի զայն: Եւ ասէ մայր նորա. Օրհնեա՛լ լիցիս դու որդեակ իմ ՚ի Տեառնէ՛: ³Եւ դարձոյց անդրէն զհազար և զհարիւր արծաթն առ մայր իւր. և ասէ մայր նորա. Սրբելո՛վ սրբեցի զարծաթն Տեառն ՚ի ձեռանէ իմնէ, և առանձինն. առնել զորօշեալ և ձուլածոյ. և արդ՝ դարձուցից զնա առ քեզ*։ ⁴Եւ դարձոյց զարծաթն առ մայր իւր: Եւ ա՛ռ մայր նորա երկերի՛ւր արծաթոյ, և ե՛տ զայն ցձուլիչ. և արար զայն դրօշեալ և ձուլածոյ. և եղև ՚ի տան Միքայի*։ ⁵Եւ տուն Միքայի՝ նմա՛ տուն Աստուածոյ. և արար Եփոնդ, և թերա՛փ. և ելից զձեռս միոյ յորդոց իւրոց, և եղև նմա ՚ի քահանայ: ⁶Յաւուրսն յայնոսիկ ո՛չ գոյր թագաւոր Իսրայէլի. և այր իւրաքանչիւր զհաճո՛յս աչաց իւրոց առնէր*։ ⁷Եւ եղև պատանեակ մի ՚ի Բեթղ՛ահեմէ Յուդայ, յազգէ՛ տոհմին Յուդայի, և ինքն Ղևտացի՛. և բնակէր նա անդ: ⁸Եւ զնա՛ց այրն ՚ի քաղաքէ Բեթղ՛ահեմի Յուդայ պանդխտել՛ ուր և գտանիցէ. և եկն մինչև ցլեա՛ռնն Եփրեմի, և մինչև ցտո՛ւնն Միքայ, առնել զճանապարհ իւր: ⁹Եւ ասէ ցնա Միքա. Ուստի՞՞ գաս: Եւ ասէ ցնա. Ղևտացի՛ եմ ես ՚ի Բեթղ՛եհեմէ Յուդայ, և երթամ պանդխտանալ՝ ուր և գտանիցեմ*։ ¹⁰Եւ ասէ ցնա Միքա. Նիստ աստ առ իս, և լե՛ր ինձ ՚ի հայր և ՚ի քահանայ. և ես տա՛ց քեզ տա՛սն արծաթոյ՝ աւուրց յաւուրս, և զոյգս ձորձոց, և ռոճի՛կ որով կեցցես: Եւ չոգաւ Ղևտացին. ¹¹և սկսաւ պանդխտանալ առ առնն. և եղև նմա պատանեակն իբրև զմի՛ յորդոց նորա: ¹²Եւ ելից Միքա զձեռս Ղևտացւոյն, և եղև նմա պատանեակն ՚ի քահանայ, և էր ՚ի տան Միքայ: ¹³Եւ ասէ Միքա. Այժմ գիտացի՛ եթէ բարի՛ արար ինձ Տէր. զի եղև ինձ Ղևտացին ՚ի քահանայ*։ ¹⁴Յաւուրսն յայնոսիկ ո՛չ գոյր թագաւոր Իսրայէլի:

18

Գլուխ ԺԸ

* *Ոմանք.* Եւ ՚ի վերայ ամենայն ժողովրդեան. *կամ՝* ժողովրդոցն... Սամփսոն ՚ի մա՛:
* *Ոսկան.* Ջհազար և զվեց հարիւր: *Ոմանք.* Ես առի զնա:
* *Ոմանք.* Սրբելով սրբեցից զար՝... և առնել զդրօշեալ և զձու՛:
* *Ոմանք.* Եւ ետ զայն ցձուլիչսն:
* *Ոմանք.* Ջհաճոյսն իւր առնէր:
* *Ոմանք.* Եւ ասէ ցնա Ղևտացին ՚ի Բեթղեհե՛... երթամ:
* *Ոմանք.* Եւ ասէ Միքայ. Ո՛ գիտասցէ այժմ բարի արարեր ինձ Տէր. և եղև ինձ Ղևտացի ՚ի քահանայ:

ԺԵ ¹Եւ յաւուրսն յայնոսիկ ցեղն Դանայ խնդրէր իւր ժառանգութիւն բնակելոյ. զի ո՛չ եհաս նմա ցաւուրսն ցայնոսիկ ՚ի մեջ ցեղին Իսրայէլի ժառանգութիւն*:

²Եւ առաքեցին որդիքն Դանայ ՚ի տոհմից իւրեանց արս հինգ, այր ըստ ցեղի՝ իւրեանց որդիս զօրութեան ՚ի Սարաայ և յեսթաուլայ, լրտեսել զերկիրն, և հետազօտել զնա. և ասեն ցնոսա. Երթայք որոնեցէք զերկիրն: Եւ չոգան ՚ի լեռնն Եփրեմայ մինչև ցտունն Միքայ, և հանգեան անդ*:

³Եւ մինչդեռ էին նորա ՚ի տան Միքայ, ծանեան զծայն պատանեկին Ղևտացւոյ, և խտորեցան անդ. և ասեն ցնա. Ո՞ աժ զքեզ այսր, և զի՞նչ գործես դու աստ, և կամ զի՞նչ կայ քո աստ:

⁴Եւ ասէ ցնոսա. Այսպէս և այնպէս արար ինձ Միքա, և կալաւ զիս ՚ի վարձու, և եղէ նմա ՚ի քահանայ:

⁵Եւ ասեն ցնա. Աղէ՛ հա՛րց զԱստուած՝ և զհտասցուք եթէ յաջողեսցի՝ մեզ ճանապարհս մեր յոր երթամք*:

⁶Եւ ասէ ցնոսա քահանայն. Երթայք ՚ի խաղաղութիւն. առաջի Տեառն է ճանապարհ ձեր զոր երթայք:

⁷Եւ գնացին հնգեքին արքն, և չոգան ՚ի Լայիսա. և տեսին զժողովուրդն որ ՚ի նմա, որ բնակեալ նստէր յուսով, ըստ նմանութեան Սիդոնացւոցն հանդարտելոցն յուսով. և ո՛չ բաւական լինելոյ խօսել ումեք բան մի յերկրի գանձուցն ժառանգաւորի. քանզի հեռի էին ՚ի Սիդոնէ. և բանք ինչ ո՛չ գոյին նոցա ընդ Ասորիս:

⁸Եւ եկին հնգեքին արքն առ եղբարս իւրեանց ՚ի Սարաա և յեսթաուլ. և ասեն ցնոսա եղբարք իւրեանց. Զի՞նչ նստիք դուք*:

⁹Եւ ասեն. Արիք ելցուք ՚ի վերայ նոցա, զի մտա՛ք և շրջեցաք ընդ երկիրն մինչև ցԼայիսա, և տեսաք ժողովուրդ բնակեալ ՚ի նմա յուսով, հանգոյն Սիդոնացւոց, և հեռի՛ են ՚ի Սիդոնէ, և բանք ինչ ո՛չ գոյ նոցա ընդ Ասորիս. արի՛ք և ելցուք ՚ի վերայ նոցա. զի ահա տեսա՛ք զերկիրն, և բարի՛ է յոյժ. և դուք դադարեա՞լ կայք. և արդ է՞ր վատանայք երթալ մտանել ժառանգել զերկիրն*:

¹⁰Եւ եղիցի յորժամ երթայք, ունի՛ք զազգն յուլացեալ, և զերկիրն ընդարձակ. զի մատնեաց զնա Աստուած ՚ի ձեռս մեր. տեղի յորում ո՛չ գոյ պակասութիւն ամենայն բանի որ ինչ իցէ յերկրի*:

¹¹Եւ խաղացին անտի յազգականութենէ տոհմիցն Դանայ ՚ի Սարաայ և յեսթաուլայ, արք վեց հարիւրք վառեալք զինու պատերազմի.

¹²Եւ ելին բանակեցան ՚ի Կարիաթարիմ Յուդայ. վասն այնորիկ կոչեցաւ տեղին այն բանակետղ Դանայ մինչև ցայսօր. որ է ՚ի թիկանց Կարիաթարիմայ*:

¹³Եւ անցին անտի, և եկին մինչև ցլեառնն Եփրեմայ. և հասին մինչև ՚ի տունն Միքայի:

¹⁴Պատասխանի ետուն արքն հնգեքին որ երթեալ էին լրտեսել զերկիրն Լայիսա, և ասեն ցեղբարս իւրեանց. Եթէ գիտիցէ՞ք՝ զի ՚ի տունս յայտոսիկ եփուղ, և թերափ, և դրօշեալ, և ձուլածոյ. արդ գիտասաջիք զինչ արնիցէք*:

¹⁵Եւ խտորեցան անդ, և մտին ՚ի տուն պատանեկին Ղևտացւոյ, որ էր ՚ի տան Միքայ, և հարցին զողջունէ նորա:

¹⁶Եւ վեց հարիւր արքն վառեալք պատերազմական զինու իւրեանց արձանացեալք կային առ մուտս դրանն, որ

* *Ումանք.* Բնակութիւն ժառանգելոյ... նմա մինչև յաւուրսն յայնոսիկ:

* *Ումանք.* Որդւոցն զօրութեան... և չոգան ՚ի լեռնն Եփրեմայ մինչև:

* *Ումանք.* Հարց ցԱստուած. *կամ՝* Տեառն և զի՛... զճանապարհս մեր զոր երթամք:

* *Յօրինակին.* Եւ ասեն ցնա եղբարք իւ՛ն:

* *Ումանք.* Եւ հեռի էին ՚ի Սիդոնէ:

* *Ումանք.* Յորժամ երթայցէք ունիցիք զազգն յուսացեալ... մատնեաց զնոսա Աստուած ՚ի... ո՛չ գոյր պակասութիւն ամենայնի որ ինչ իցէ:

* *Ումանք.* Եւ բանակեցան ՚ի Կարիաթիմ:

* *Ոսկան.* Յայտոսիկ է եփուտ և: *Ուր օրինակ մի.* Զի էին ՚ի տունս յայտոսիկ եփուտ:

էին յորդուցն Դանայ*։ ¹⁷Եւ ելին հնգեքին արքն որ երթեալ էին լրտեսել զերկիրն. յարձակեցան և առին զդրօշեալն, և զբիւղն, և զթերափ, և զձուլածոյ. և քահանայն արձանացեալ կայր ՚ի մուտս դրանն. և վեց հարիւր արքն վառեալք պատերազմական զինու, ¹⁸և նոքա մտին ՚ի տունն Միքայ. և առին զդրօշեալն, և զբիւղն, և զթերափ, և զձուլածոյ: Եւ ասէ ցնոսա քահանայն. Չի՞նչ գործեցէք դուք*։ ¹⁹Եւ ասեն ցնա. Կարկեա՛, ավիբերան լեր, և եկ ընդ մեզ, և լեր մե՛զ ՚ի հայր և ՚ի քահանայ. միթէ լա՞ւ իցէ լինել քեզ քահանայ տան միոյ՝ առն, քան լինել քահանայ ցեղի՛ միոյ՝ և ազգի Իսրայէլի: ²⁰Եւ զուարթացաւ սիրտ քահանային. և ա՛ռ զբիւղն, և զթերափ, և զդրօշեալ, և զձուլածոյ, և եմո՛ւտ ՚ի մէջ զօրուն*։ ²¹Եւ դարձան և գնացին. և հարին համօրէն զտունն, և զստացուածն վայելչութեան նորա առաջի նոցա: ²²Եւ ՚ի հեռանալ նոցա ՚ի տանէ Միքայ. և ահա Միքա և արքն որ ՚ի տունս նորա ելին ընդ Միքայ, բողո՛ք բարձին և հասին որդուցն Դանայ*։ ²³Եւ դարձուցին զերեսս իւրեանց որդիքն Դանայ, և ասեն ցՄիքա. Չի՞ է քեզ, զի՞ աղաղակես: ²⁴Եւ ասէ Միքա. Չի զաստուածսն իմ զոր արարի ինձ՝ առէք և զքահանայն՝ և գնացէք. և զի՞նչ կայ այսուհետև ինձ. զի՞նչ է այդ զոր ասէք ցիս՝ թէ զի՞ աղաղակես*։ ²⁵Եւ ասեն ցնա որդիքն Դանայ. Մի՛ լուիցի ձայն քո զկնի մեր, գուցէ պատահիցեն քեզ արք դառնացեալք ոգուով, և դնիցեն զանձն քո և զանձն տան քոյ*։ ²⁶Եւ գնացին որդիքն Դանայ զճանապարհս իւրեանց: Եւ իբրև ետես Միքա, եթէ բռնագոյն քան զնա են, դարձա՛ւ ՚ի տուն իւր*։ ²⁷Եւ նոքա առին զոր ինչ արարն Միքա, և զքահանայն նորա, և չոգան ՚ի Լայիսա, ՚ի ժողովուրդն հանդարտացեալ և վստահացեալ յուսով. և հարին զնոսա սրով սուսերի, և զքաղաքն այրեցին*։ ²⁸Եւ ո՛չ ոք էր որ փրկէր. զի հեռի՛ էին ՚ի Սիդոնացուց, և բանք ինչ ո՛չ էին նոցա ընդ ումեք ՚ի մարդկանէ. և նա կայ ՚ի հովտի տանն Ռովբայ: Եւ շինեցին զքաղաքն՝ և բնակեցան ՚ի նմա*։ ²⁹և կոչեցին զանուն նորա Դան, ըստ անուան հօրն իւրեանց՝ որ եղև յԻսրայէլի. և էր անուն քաղաքին յառաջագոյն Դայիսա*։ ³⁰Եւ կանգնեցին իւրեանց որդիքն Դանայ զդրօշեալն Միքայ: Եւ Յովնաթան որդի Գեթսոնի որդւոյ Մանասէի, ինքն և որդիք իւր էին քուրմք ցեղին Դանայ, մինչև ցօ՛ր գերութեան երկրին*։ ³¹Եւ կարգեցին իւրեանց զդրօշեալն Միքայ, զամենայն աւուրս զորս էր տունն Աստուծոյ ՚ի Սելով*։

19

Գլուխ ԺԹ

ԺԸ ¹Եւ եղև յաւուրսն յայնոսիկ, և թագաւոր ո՛չ գոյր յԻսրայէլի: Եւ էր այր

* *Ոմանք.* Վառեալքն պատրաստական զինու իւրեանց արձանակացեալք կային:

* *Այլք.* Չի՞նչ գործէք դուք:

* *Ոմանք.* Եւ զուարթացաւ սիրտ:

* *Այլք.* ՚ի տունս նորա էին ընդ Միքայ: *Ուր ոմանք.* ՚ի տուն նորա էին ընդ Միքայի:

* *Ոմանք.* Եւ զինչ կայցէ այսու... և զինչ է այդ զոր ասացէք ցիս:

* *Յօրինակին.* Պատահիցեն մեզ: *Ոմանք.* Եւ դնիցես զանձն քո:

* *Ոմանք.* Թէ բռնագոյն քան զնա էին:

* *Ոմանք.* Եւ գնացին ՚ի Լայիսա, և ժողովուրդն հանդար՞:

* *Ոմանք.* Չի հեռի էր ՚ի Սիդոնաց... կայ ՚ի հովտի տան Ռովբայ. *կամ* Ռովբայ:

* *Ոմանք.* Որդի Գեթսոնի որդւոյ Մա՞:

* *Ոմանք յաւելուն.* Չդրօշեալն զոր արար Միքայ... էր տունն Տեառն ՚ի Սելով:

Ղևտացի պանդխտեալ ՚ի կողմանս լերինն Եփրեմի. և ա՛ռ իւր այրն կին հարճ ՚ի Բեթղահեմէ Յուդայ*։ ²Եւ սարտեալ ՚ի նմանէ հարճն իւր. և գնա՛ց ՚ի նմանէ ՚ի տուն հօր իւրոյ ՚ի Բեթղահեմ Յուդայ. և եղև անդ զերիս ամիսս։ ³Եւ յարուցեալ այրն չոգաւ զհետ նորա, խօսե՛լ ՚ի սիրտ նորա հաշտեցուցանել զնա ընդ իւր, և ածե՛լ միւսանգամ առ ինքն. և պատանի իւր ընդ իւր, և զոյգք իշոց. և չոգան մինչև ցտուն հօր նորա։ Իբրև ետես զնա հայր աղջկանն, ե՛լ ընդ առաջ նորա։ ⁴Եւ տարա՛ւ զնա ՚ի ներքս աներ իւր հայր աղջկանն, և նստա՛ւ առ նմա աւուրս երիս. և կերան և արբին և ննջեցին անդ։ ⁵Եւ եղև յաւուրն չորրորդի, կանխեցին ընդ առաւօտն, և յարեալ գնա՛լ. և ասէ հայր աղջկանն ցփեսայ իւր. Զաստատեա՛ զսիրտ քո պատառով միով հացիւ, և ապա՛ գնասցիք*։ ⁶Եւ նստան՝ կերան և արբին ՚ի միասին երկոքին։ Եւ ասէ հայր աղջկանն ցփեսայ իւր. Արդ՝ սկսեալ աստէ՛ն իսկ ագիր, և զուարթասցի՛ սիրտ քո*։ ⁷Եւ յարեալ այրն ՚ի գնալ. և բռնադատեաց զնա աներ իւր, և նստաւ, և անդէ՛ն ագաւ։ ⁸Եւ կանխեաց ընդ առաւօտն յաւուրն հինգերորդի ՚ի գնալ. ասէ հայր աղջկանն. Զաստատեա՛ զսիրտ քո հացիւ, և զբօսիր, մինչև շրջեսցի օրն։ Եւ կերան և արբին երկոքին*։ ⁹Եւ յարեալ այրն գնալ, ինքն և հարճն՝ և պատանին իւր. և ասէ ցնա հայր աղջկանն. Ահա դարձաւ օրս յերեսս, աստէ՛ն ագիր՝ և զուարթասցի՛ սիրտ քո, և կանխեսցիր վաղիւ ՚ի ճանապարհ քո, և երթիցես յարկս քո*։ ¹⁰Եւ ո՛չ կամեցաւ այրն ազանել անդ, այլ յարեալ և գնաց. և եկն եհաս մինչև ցհանդէպ Յեբուսայ, ա՛յն է Երուսաղէ՛մ. և ընդ նմա զո՛յգք իշոց համետելոց. և հարճն իւր ընդ նմա*։ ¹¹Եւ նոքա հանդէպ Յեբուսայ. և օրն խոնարհեցաւ յոյժ։ Ասէ պատանին ցտեր իւր. Եկ խտորեսցուք ՚ի քաղաքն Յեբուսացոց, և ազցուք ՚ի նմա։ ¹²Եւ ասէ ցնա տէր իւր. Ո՛չ խտորեսցուք ՚ի քաղաքս օտարոտոցս, յորում ո՛չ գուցէ յորդուցն Իսրայէլի, այլ անցցուք մինչև ցԳաբաա՛։ ¹³Եւ ասէ ցպատանին իւր. Ե՛կ մերձեսցուք ՚ի մի ուրեք ՚ի տեղեաց, և անդ ազցուք ՚ի Գաբաա կամ ՚ի Զռամա։ Եւ անցին զնացին*։ ¹⁴Եւ եմուտ նոցա արեգակն մերձ ՚ի Գաբաա, որ է Բենիամինի*։ ¹⁵Եւ խտորեցան անդր մտանել ազանել ՚ի Գաբաա. և եմուտ նստաւ ՚ի հրապարակի քաղաքին. և ո՛չ էր այր որ ժողովէր զնոսա ՚ի տուն իւր ազանել։ ¹⁶Եւ ահա այր մի ծեր, եմուտ ՚ի գործոյ իւրմէ յանդոյ անազանի. և այրն ՚ի լեռնէ Եփրեմայ, և ինքն պանդխտեալ էր ՚ի Գաբաա. և արք տեղւոյն՝ որդիք Բենիամինի*։ ¹⁷Եւ ամբարձեալ զաչս իւր ետես զայրն ուղևոր ՚ի մէջ հրապարակի՝ քաղաքին։ Եւ ասէ այրն ծեր. Յո՞վ երթաս՝ և ուստի՛ գաս*։ ¹⁸Եւ ասէ ցնա. Անցանեմք մեք ՚ի Բեթղեհեմէ Յուդայ, մինչև ցկողմանս լերինն Եփրեմայ. քանզի անտի՛ եմ ես. և չոգայ մինչև ցԲեթղեհեմ Յուդայ, և ՚ի տուն հօ՛ր իմոյ երթամ. և չիք այր որ ժողովիցէ զմեզ ՚ի տուն*։ ¹⁹Եւ յարդ՝ և խտտ կա՛յ իշոց մերոց,

* Ոմանք. Ոչ գոյր Իսրայէլի. և էր այր Ղևտացի պանդխտանալ ՚ի լերինն Եփրեմի։

* Ոմանք. Կանխեաց ընդ առաւօտն, և յարեալ։

* Ոմանք. Զայր աղջկանն ցայրն. Արդ։

* Ոմանք. Ասէ ցնա աներն իւր հայր աղջկանն... շրջեսցի օրս։

* Ոմանք. Եւ յարեալ այրն ՚ի գնալ... և կանխեսցիր վաղիւ զճանապարհս ծեր։

* Ոմանք. Մինչև հանդէպ Յեբուսայ։

* Ոմանք. Մերձեսցուք ՚ի միում ՚ի քաղաքաց և ազցուք ՚ի Գաբաա։

* Ոմանք. Արեգակն ՚ի Գաբաա. որ է մերձ ՚ի Բե՛։

* Ոմանք. Եւ այրն էր ՚ի լեռնէ Եփր՞։

* Ոմանք. Երթաս՝ կամ ուստի՛ գաս։

* Ոմանք. Եւ ասեն ցնա. Անցանիցեմք... այր որ ժողովեսցէ զիս։

և հաց և գինի ինձ և աղջկանդ և պատանւոյդ. և չէ՛ ինչ պակասութիւն ամենայն իրաց ծառայից քոց՝: ²⁰Եւ ասէ այրն ծեր. Խաղաղութիւն ընդ քեզ. ամենայն պակասութիւնդ քո զինն՝ բայց դու՝ ՚ի հրապարակիդ մի՛ ազանիցիս՝: ²¹Եւ տարա՛ւ զնա ՚ի տուն իւր, և արկ խոտ իշոցն. և լուացին զոտս նոցա, և կերան և արբին՝: ²²Եւ ՚ի զուարթանալ սրտից նոցա. Եւ ահա արք քաղաքին, արք՝ որդիք անօրինաց պատեցին զտունն և բախեցին զդուրսն, և խօսեցան ընդ առնն ծերոյ ընդ տեառն տա՛նն՝ և ասեն. Հա՛ն գայրդ մտեալ ՚ի տուն քո, զի գիտասցո՛ւք զդա՛: ²³Եւ ել առ նոսա այրն տէր տանն, և ասէ ցնոսա. Քա՛ւ լիցի ձեզ ե՛ղբարք, մի՛ ինչ անզգամէք յետ մտանելոյ առնդ այդորիկ ՚ի տուն իմ. մի՛ առնէք զանզգամութիւնդ գայրդ: ²⁴Ահաւասիկ դուստր իմ կոյս, և հա՛րճ նորա, հանից զնոսա արտաքս, և լլկեցէ՛ք զնոսա, և արարէ՛ք զնոսա՝ զինչ հաճո՛յ է յաչս ձեր. և առնս այսմիկ մի՛ առնէք ըստ անզգամութեան բանիդ այդորիկ՝: ²⁵Եւ ո՛չ կամեցան արքն անսալ: Եւ ա՛ռ այրն զհարճն իւր, և եհան զնա արտաքս. և գիտացին զնա, և լլկեցին զնա զգիշերն ողջոյն մինչև ցառաւօտ. և արձակեցին զնա ՚ի ծագել առաւօտուն՝: ²⁶Եւ ե՛կն կինն ընդ առաւօտսն, և անկաւ առ դրանդոյ դրան տան առնն, ուր է՛ր տէր նորա. և եհան զոգին՝: ²⁷Եւ յարեաւ տէր նորա ընդ առաւօտն, և եբա՛ց զդուրս տանն, և ել զնա՛լ զճանապարհս իւր, և ահա կինն հարճ նորա անկեալ կայր առ դրանն. և ձեռն իւր ՚ի վերայ դրանդոյն: ²⁸Եւ ասէ ցնա. Արի՛ և զնասցուք: Եւ ո՛չ ետ նմա պատասխանի՝ քանզի մեռեալ էր. և ա՛ռ եհան զնա յէշ, և յարեաւ այրն և չոգա՛ւ ՚ի տեղի իւր: ²⁹Իբրև եմուտ ՚ի տուն իւր, ա՛ռ սուր, և բուռն եհար զհարճէն իւրմէ, և յօշեաց զնա ըստ ոսկերաց իւրոց յերկոտասա՛ն մասն. և առաքեա՛ց զայն ընդ ամենայն ցեղսն Իսրայէլի՝: ³⁰Եւ եղև զի ամենայն որ տեսանէր՝ ասէր, թէ ո՛չ եղև, և ո՛չ երևեցաւ այսպէս յաւուրց ելանելոյ որդւոցն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց մինչև ցայսօր. արդ՝ առէ՛ք ձեզ վասն այդորիկ խորհուրդ, և խօսեցարո՛ւք՝:

Գլուխ Ի

¹Եւ ելին ամենայն որդիքն Իսրայէլի, և եկեղեցացա՛ւ ժողովուրդն իբրև զա՛յր մի ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէէ, և երկիրն Գաղաադու՝ առ Տէր ՚ի Մասեփա՛: ²Եւ եկաց կողմն ամենայն ժողովրդեանն, և ամենայն ցեղք Իսրայէլի յամենայն եկեղեցւոջ ժողովրդեանն Աստուծոյ. չորեք հարիւր հազար արանց սուսերամերկաց: ³Եւ լուան որդիքն Բենիամինի, եթէ ելին որդիքն Իսրայէլի ՚ի Մասեփա: Եւ ասեն որդիքն Իսրայէլի. Խօսեցարո՛ւք՝ թէ ո՞ւր եղև այսպիսի չարութիւն: ⁴Պատասխանի ետ այրն Ղևտացի՝ այր կնոջն սպանելոյ, և ասէ. ՚ի

* *Օրինակ մի.* Եւ յարդ և խոտ տայ իշոց:

* *Ոմանք.* Խաղաղութիւն ընդ ձեզ. ամենայն:

* *Ոմանք.* Եւ տարաւ զնոսա ՚ի:

* *Ոմանք.* Պատեցին զդուրսն և խօսեցան ընդ առնն... զայրդ զմտեալդ ՚ի տուն քո:

* *Ոմանք.* Եւ հանից զնոսա... և արարէք ընդ նոսա:

* *Ոմանք.* Եւ արձա՛. զնա ընդ ելանել առաւօտուն:

* *Ոմանք.* Եւ անկաւ ՚ի վերայ դրանդոյ դրան առն. որ էր տէր տան նորա, և:

* *Ոմանք.* Եւ առաքեաց զնա ընդ ամենայն. *կամ՝* յամենայն ցեղսն Իսրայէլի:

* *Ոմանք.* Թէ ո՛չ երևեցաւ, և ո՛չ եղև այնպէս յաւուրց:

* *Ոմանք.* Իբրև զմի այր ՚ի Դանայ մինչև:

Գաբաա Բենիամինի եկի ես և հարճ իմ ագանել: ⁵Եւ յարեան ՚ի վերայ իմ ա՛րք Գաբաացիք. և պատեցին շուրջ զինն գտունն զցայգ, և զի՛ս կամեցան սպանանել. և զհարճն իմ լլկեցին և հեղձուցին, և մեռաւ ^{*}: ⁶և առի զհարճն իմ և յօշեցի՛ զնա, և առաքեցի յամենայն սահմանս ժառանգութեան Իսրայելի. զի արարին վնաս մեծ և անզգամութիւն ՚ի մէջ Իսրայելի: ⁷Եւ ահաւասիկ մեք ամենեքեան որդիք Իսրայելի, տո՛ւք մեզ բան և խորհուրդ ^{*}: ⁸Եւ յարեա՛ւ ամենայն ժողովուրդն իբրև զայր մի, և ասեն. Ո՛չ մտցուք այր իւրաքանչիւր ընդ յարկաւ իւրով, և ո՛չ խտտորեսցուք այր իւրաքանչիւր ՚ի տուն իւր: ⁹Եւ արդ՛ ա՛յս բան է զոր արասցուք ընդ Գաբաա. ելցո՛ւք ՚ի վերայ նորա վիճակաւ: ¹⁰Բայց առցուք տա՛սն այր ՚ի հարիւրոց, յամենայն ցեղիցդ Իսրայելի, և հարիւր ՚ի հազարոց. և հազարս ՚ի բիւրուց. առնուլ պաշար զաւուրս բովանդակ երթողաց ՚ի Գաբաա Բենիամինի, ըստ ամենայն անզգամութեան զոր արարին ՚ի մէջ Իսրայելի ^{*}: ¹¹Եւ ժողովեցա՛ւ ամենայն Իսրայել իբրև զայր մի եկեալք ՚ի քաղաքաց ^{*}: ¹²Եւ առաքեցին ցեղքն Իսրայելի արս յամենայն ցեղն Բենիամինի՝ և ասեն. Ձի՞նչ է չարութիւնդ այդ եղեալ ՚ի միջի ձերում ^{*}: ¹³Եւ արդ տեսէ՛ք զարսն զամպարիշտս զԳաբաացիս զորդիսն Բելիարայ, և սպանցուք զնոսա, և բարձցուք զչարիսն յԻսրայելէ: Եւ ո՛չ կամեցան որդիքն Բենիամինի լսել ձայնի եղբարց իւրեանց որդւոցն Իսրայելի: ¹⁴Եւ ժողովեցան որդիքն Բենիամինի ՚ի քաղաքս իւրեանց ՚ի Գաբաա, ելանել ՚ի պատերազմ ընդ որդիսն Իսրայելի ^{*}: ¹⁵Եւ հանդէս արարին որդիքն Բենիամինի յաւուր յայնմիկ յիւրաքանչիւր քաղաքաց, քսան և հինգ հազար արանց սուսերամերկաց. թո՛ղ զբնակիչս Գաբաացւոց ^{*}, ¹⁶որ անցին ՚ի հանդիսի եւթն հարիւր այր երիտասարդք ընտիրք յամենայն ժողովրդենէն յերկոցունց ձեռացն աջողակք. ամենեքին նոքա պարսաւորք, որ ձգէին քարինս՝ և ՚ի մազէ ո՛չ վրիպէին ^{*}: ¹⁷Եւ ամենայն այր Իսրայելի անցին ՚ի հանդիսի, առանց որդւոցն Բենիամինի. չորեք հարիւր հազարք արանց սուսերամերկաց, ամենեքին նոքա արք պատերազմօղք: ¹⁸Եւ յարեան ելին ՚ի Բեթէլ. և հարցին զԱստուած և ասեն որդիքն Իսրայելի. Ո՞վ ելցէ մեզ առաջնորդ պատերազմել ընդ որդիսն Բենիամինի: Եւ ասէ Տէր. Յուդա՛յ ելցէ առաջնորդ ^{*}: ¹⁹Եւ յարեան որդիքն Իսրայելի ընդ առաւօտն՝ և բանակեցան զԳաբայաւ ^{*}: ²⁰Եւ ել այր Իսրայելացի պատերազմել ընդ Բենիամինի. և ճակատեցան ընդ նոսա ա՛յր Իսրայելի ՚ի պատերազմ առ Գաբայաւ ^{*}: ²¹Եւ ելին որդիքն Բենիամինի ՚ի քաղաքէն, և սատակեցին յԻսրայելէ քսան և երկու հազար արանց յաւուր յայնմիկ, և արկին տապաստ յերկիր ^{*}: ²²Եւ զօրացան դարձեալ այր Իսրայելացի՝

^{*} Ոմանք. Լլկեցին և հեղձուցաւ և մեռաւ:

^{*} Ոմանք. Եւ արդ ահաւասիկ մեք որդիք Իսրայելի, տուք ձեզ բան և:

^{*} Այլք. Եւ հարիւր ՚ի հազարաց: Ոմանք. Պաշար զօրուս բովանդակ երթողացն ՚ի:

^{*} Ոմանք. Եւ ժողովեցան ամենայն այր Իսրայելի իբրև զայր մի ՚ի քաղաքն եկեալք ՚ի քաղաքացն:

^{*} Ոմանք. Որ եղեալ է ՚ի միջի ձե՛ր:

^{*} Ոմանք. ՚ի քաղաքաց իւրեանց ՚ի Գաբաա՛:

^{*} Ոմանք. Ձբնակիչսն Գաբայայ, որ:

^{*} Ոմանք. Եւթն հարիւր այր երիտասարդք ընտիրք ամենայն ժողովրդենէն. Եւթն հարիւր արք ընտիրք յերկոցունց ձեռացն աջողակք... և ՚ի մազոյ ոչ:

^{*} Ոմանք. Ո՞վ ելցէ մեր առաջնորդ:

^{*} Ոմանք. Եւ բանակեցան ընդ Գաբաաւ:

^{*} Ոմանք. Եւ ել այր Իսրայելի:

^{*} Ոմանք. Արանց պատերազմողաց յաւուր յայնմիկ:

և յաւելին ճակատել՝ ՚ի պատերազմի ՚ի տեղոջ ուր ճակատեցան յաւուրն առաջնուն՝: ²³Եւ ելին որդիքն Իսրայելի և լացին առաջի Տեառն մինչև ցերեկոյ. և հարցին զՏէր՝ և ասեն. եթէ յաւելցո՞ւք մարտնչել ՚ի պատերազմ ընդ Բենիամինի եղբօր մերուն: Եւ ասէ Տէր. Ելէք ՚ի վերայ նոցա՞: ²⁴Եւ ելին որդիքն Իսրայելի ՚ի պատերազմ ընդ որդիսն Բենիամինի յաւուրն երկրորդի: ²⁵Եւ ել Բենիամին ընդդէմ նոցա ՚ի պատերազմ յաւուրն երկրորդի: Եւ սատակեաց միւսանգամ ՚ի ժողովրդենէ անտի ութ հազար արանց յերկիր՝ ամենեքեան նոքա սուսերածի՛գք՞: ²⁶Եւ ելին ամենայն որդիքն Իսրայելի և ամենայն ժողովուրդն՝ և եկին ՚ի Բեթէլ. և նստան լացին առաջի Տեառն, և պահեցին յաւուր յայնմիկ, և մատուցին ողջակէ՛զս փրկութեան առաջի Տեառն՞: ²⁷քանզի անդ էր տապանակ ուխտին Տեառն Աստուծոյ յաւուրսն յայնոսիկ: ²⁸Եւ Փենեէս որդի եղիազարու որդւոյ Ահարոնի, կայր առաջի նորա յաւուրսն յայնոսիկ: Եւ հարցին որդիքն Իսրայելի զՏէր, և ասեն. Յաւելցո՞ւք միւսանգամ ելանել ՚ի պատերազմ ընդ որդիսն Բենիամինի եղբօր մերուն՝ թէ դադարեսցուք: Եւ ասէ Տէր. Ելէք, և վաղիւ տա՛ց զնա ՚ի ձեռս ձեր՞: ²⁹Եւ եղին որդիքն Իսրայելի դարանակալս շուրջ զԳաբաաւ: ³⁰Եւ ելին որդիքն Իսրայելի ՚ի վերայ Բենիամինի յաւուրն երրորդի. և ճակատեցան զԳաբաաւ որպէս միանգամն և միւսանգամն: ³¹Եւ ելին որդիքն Բենիամինի ընդդէմ ժողովրդեանն, և ձգեցան ՚ի քաղաքէ անտի, և սկսան հարկանել ՚ի ժողովրդենէ անտի, որպէս միանգամն և միւսանգամն, առ ճանապարհօքն՝ որ մին ելանէր ՚ի Բեթէլ, և միւսն ելանէր ՚ի Գաբաա, և հարին յանդի անդ իբրև արս երեսուն յԻսրայէլէ՞: ³²Եւ ասեն որդիքն Բենիամինի. Կոտորելո՛ց են սոքա առաջի մեր իբրև զառաջինն: Եւ որդիքն Իսրայելի ասեն. Փախիցո՛ւք և մերժեսցուք զնոսա ՚ի քաղաքէն և ՚ի ճանապարհէն՞: ³³Եւ ամենայն այր Իսրայելի յարեան յիւրաքանչիւր տեղոջէ իւրմէ, և ճակատեցան ՚ի Բաալթամայ. և դարանակալքն Իսրայելի կռուէին ՚ի տեղոջէ իւրեանց յարևտից Գաբաա՞: ³⁴Եւ եկին հանդէպ Գաբաա տասն հազար արանց ընտրելոց յամենայն Իսրայէլէ. և ծանրացաւ պատերազմնն, և նոքա ո՛չ գիտէին թէ հասեալ են ՚ի վերայ նոցա չարիք: ³⁵Եւ վանեաց Տէր զԲենիամին առաջի որդւոցն Իսրայելի, և սատակեցին որդիքն Իսրայելի ՚ի Բենիամինէ յաւուր յայնմիկ քսան և հինգ հազար և հարի՛ւր այր. ամենեքին նոքա սուսերածի՛գք՞: ³⁶Իբրև տեսին որդիքն Բենիամինի՝ եթէ ՚ի պարտութիւն մատնեալ են, տեղի ետուն այր Իսրայէլեան Բենիամինի. զի յուսացեալ էին ՚ի դարանամուտսն որ էին զԳաբաաւ: ³⁷Եւ յարձակեցան դարանամուտքն՝ և հեղան զԳաբաաւ. և

* *Ոմանք.* Այր Իսրայելի, և յաւելան ճակատել ՚ի պատերազմ ՚ի նմին տեղոջ ուր ճա՛:
 * *Ոմանք.* Եւ հարցին ցՏէր... եթէ յաւելից պատերազմել ընդ Բենիամինի:
 * *Յօրինակին համաձայն այլոց գրչագիր օրինակաց թուագրով դնի.* ութ հազար արանց յերկիր: *Ոմանք.* Ամենեքեան սոքա արք սուսէ՛:
 * *Ոմանք.* Նստան և լացին: *Եւ ոմանք.* Եւ նստեալ լացին առաջի:
 * *Ոմանք.* Եւ ասեն եթէ յաւելից միւ՛: ... ելէք ես վաղիւ տաց:
 * *Այլք, ոմանք.* Հարկանել վիրաւորս ՚ի ժողովրդենէ: *Եւ ոմանք.* ՚ի ժողովրդենէ անտի վիրաւորս:
 * *Ոմանք.* Ձնոսա ՚ի քաղաքէն ՚ի ճանապարհս:
 * *Ոմանք.* Յարեաւ... ՚ի տեղոջէ իւրմէ... ՚ի Բաազամար:
 * *Ոմանք.* Յաւուրն յայնմիկ քսան և եւթն հազար և:
 * *Ոմանք.* Այր Իսրայելի տան Բենիամի... ՚ի դարանակալսն որ եղին. *կամ՝* եղեալ էին զԳաբայաւ:

մտին և հարին զքաղաքն ամենայն սրով սուսերի*։³⁸ Եւ ժամադրութիւն էր առն Իսրայէլի առ դարանակալսն՝ հրով հանել նոցա զբոց ծխոյ քաղաքին*։³⁹ Եւ դարձաւ այր Իսրայէլացի ՚ի պատերազմէն։ Եւ Բենիամին սկսաւ հարկանել վիրաւորս ՚ի դարանակալացն Իսրայէլի իբրև արս երեսուն. զի ասացին թէ վանելով վանին առաջի մեր այսօր իբրև զպատերազմն զառաջին*։⁴⁰ Եւ նշանակն ամբարձաւ յորդեալ ՚ի վերայ քաղաքին իբրև սիւն ծխոյ. և հայեցաւ Բենիամին ՚ի թիկունս իւր, և ահա ելանէր վախճան քաղաքին յերկինս*։⁴¹ Եւ այր Իսրայէլացի դարձաւ անդրէն, և տագնապեցաւ այր Բենիամինի. զի տեսին հասեալ ՚ի վերայ նոցա զչարիսն։⁴² Եւ խոյս ետուն յերեսաց առն Իսրայէլի ընդ ճանապարհ անապատին. և պատերազմն ժամանեաց նոցա. և որ ՚ի քաղաքացն ելանէին սատակէին զնոսա ՚ի մէջ իւրեանց*։⁴³ Եւ հարին զԲենիամին. և մտին զհետ նորա ՚ի Նուայ մինչև հանդէպ Գաբաայ, յարևելից կողմանէ*։⁴⁴ Եւ անկան ՚ի Բենիամինէ ութուտասն հազար արանց. ամենեքեան նոքա արք զօրաւորք*։⁴⁵ Եւ տեսեալ մնացորդացն փախեան յանապատն ապաստան ՚ի վէմն Ռեմոնայ. և ճաքա՛ղ արարին ՚ի նմանէ ՚ի ճանապարհին՝ հազարս հինգ արանց. և պնդեցան զհետ նոցա մինչև ցԳաղաադ, և հարին ՚ի Բենիամինէ երկուս հազարս արանց*։⁴⁶ Եւ եղեն ամենայն անկեալքն ՚ի Բենիամինէ քսան և հինգ հազար և հարիւր արանց սուսերամերկաց յաւուր յայնմիկ, ամենեքեան նոքա արք զօրութեան*։⁴⁷ Եւ խուսեալ մնացորդացն՝ փախեան յանապատն ապաստան ՚ի վէմն Ռեմոնայ՝ արք վե՛ց հարիւր. և նստան ՚ի վերայ Ռեմոնի չորս ամիս*։⁴⁸ Եւ այր Իսրայէլի դարձան ընդ կրուկն յորդոցն Բենիամինի. և հարին զնոսա սրով սուսերի ՚ի քաղաքէ կարգաւ մինչև ցանասուն, մինչև ցամենայն գտեալ յամենայն քաղաքս. և զքաղաքսն ապրեալս առաքեցին և այրեցին հրով*։

21

Գլուխ ԻԱ

¹Եւ այր Իսրայէլի երդուան ՚ի Մասեփաթ, և ասեն. Այր ոք ՚ի մէնջ մի՛ տացէ զդուստր իւր Բենիամինի կնութեան*։² Եւ եկին ամենայն ժողովուրդն ՚ի Մասեփայ ՚ի Բեթէլ. և նստան անդ մինչև ցերեկոյ առաջի Աստուծոյ. և

* *Ոմանք*. Եւ արձակեցան դարա՛:

* *Ոմանք*. Առ դարանամուտսն հրով հանել:

* *Ոմանք*. Եթէ վանելով անցին առաջի մեր իբրև զառաջինն:

* *Ոմանք*. Եւ նշանակն սկսաւ յորդել ՚ի վերայ... ՚ի թիկունս իւր, և տեսանէ զվախճան քաղաքին զի ելանէր յերկինս:

* *Ոմանք*. Առն Իսրայէլի զճանապարհ անապատին:

* *Ի լուս՛*. Ձիետ նորա ՚ի Նոմբայ մին՝. *համաձայն ոմանց ՚ի քնար՛*: Ուր ոմանք ևս. ՚ի Նուբայ:

* *Ոմանք*. Իբրև ութսուն հազար ար՛:

* *Ոմանք*. Ապաստանի ՚ի վէմն... արարին զնոսա ՚ի ճանապարհսն եւթն հազար արանց... և հարին ՚ի նմանէ երկուս հա՛:

* *Այլք*. Քսան և հինգ հազար արանց:

* *Այլք, ոմանք*. ՚ի վէմն. և *ոմանք*. ՚ի վիմին Ռեմոնայ չորս ամիս:

* *Ոմանք*. Դարձաւ ՚ի կրուկն յորդոցն:

* *Ոմանք*. ՚ի Մասեփա, և ասէ այր իւրաքանչիւր մի՛ տացէ... ՚ի կնութեան:

ամբարձին զծայնս իւրեանց և լացին լալիւն մեծ: ³Եւ ասեն. Ընդէ՞ր Տէր Աստուած Իսրայէլի՝ եղև այս յԻսրայէլ, բնաջինջ լինել այսօր յԻսրայէլէ ցեղի միոյ՝: ⁴Եւ եղև ՚ի վաղիւ անդր կանխեաց ժողովուրդն և շինեցին անդ սեղան, և մատուցին զողջակէզս փրկութեան: ⁵Եւ ասեն որդիքն Իսրայէլի. Ո՞վ է որ ո՛չ ել յայս եկեղեցի յամենայն ցեղիցն Իսրայէլի առ Տէր ՚ի Մասեփա. զի երդումն մեծ էր այնմ, որ ո՛չ ելանէր ՚ի Մասեփա. և ասէին թէ մահո՛ւ մեռցի՞: ⁶Եւ մխիթարեցան որդիքն Իսրայէլի ՚ի վերայ Բենիամինի եղբօր իւրեանց, և ասեն. Բարծա՛ւ այսօր ցեղ մի յԻսրայէլէ. ⁷և արդ զի՞նչ արասցուք մնացելոցն առանց կանանց, և մեք երդուաք ՚ի Տէր՝ չտա՛լ նոցա ՚ի դստերաց մերոց կանայս: ⁸Եւ ասեն. Ո՞րք մի ՚ի ցեղիցն Իսրայէլի որ ո՛չ ել առ Տէր ՚ի Մասեփա. և ահա չէ՛ր որք եկեալ Յաբիսայ Գաղաադու ՚ի բանակ եկեղեցւոյն՝: ⁹Եւ անց ՚ի հանդիսի ժողովուրդն. և ո՛չ գոյր անդ այր ՚ի տանէ Յաբիսայ Գաղաադու: ¹⁰Եւ առաքեցին անդր ժողովուրդն երկուտասան հազար արանց յորդոցն զօրութեան. և պատուիրեցին նոցա՝ և ասեն. Երթա՛յք և հարէ՛ք զբնակիչս Յաբիսայ Գաղաադու սրո՛վ սուսերի, և զկանայս և զժողովուրդ՝: ¹¹Եւ այս բան է զոր առնիցէք. զամենայն արու, և զամենայն կին՝ որ գիտիցէ զանկողինս արուի, նզովեսջիք: ¹²Եւ գտին ՚ի տանէ Յաբիսայ Գաղաադու չորեք հարիւր աղջիկ կոյս՝ որ ո՛չ գիտէին զայր յանկողինս արուի. և ածին զնոսա ՚ի բանակն ՚ի Սելով, որ է յերկրին Քանանու՞: ¹³Եւ առաքեաց ամենայն ժողովուրդն և խօսեցան ընդ որդիսն Բենիամինի՝ որ էին ՚ի վիմին Ռեմոնայ, և կոչեցին զնոսա ՚ի խաղաղութիւն՝: ¹⁴Եւ դարծա՛ւ Բենիամին ՚ի ժամանակին յայնմիկ առ որդիսն Իսրայէլի: Եւ ետուն նոցա կանայս զայնոսիկ՝ որ էին ՚ի կանանցն Յաբիսայ Գաղաադու. և հաճոյ թուեցաւ նոցա այնպէս՝: ¹⁵Եւ ժողովուրդն մխիթարեցաւ ՚ի վերայ Բենիամինի. զի արար Տէր խրամատութիւն ՚ի մէջ ցեղիցն Իսրայէլի՞: ¹⁶Եւ ասեն ծերք ժողովրդեանն. Չի՞նչ արասցուք և վասն այլոց անկանանցն. զի սատակեցաւ կին ՚ի Բենիամինէ՞: ¹⁷Եւ ասեն. Ժառանգութիւն զերծեա՛լ է ՚ի Բենիամինէ, և մի՛ ջնջեսցի ցեղն յԻսրայէլէ. ¹⁸և մեք ո՛չ կարենք տալ նոցա կանայս ՚ի դստերաց մերոց. զի երդուաք որդիք Իսրայէլի և ասենք, թէ անիծեա՛լ լիցի որ տացէ կին Բենիամինի՞: ¹⁹Եւ ասեն. Ահա տօն Տեառն է ՚ի Սելով աւուրց յաւուրս. որ է ՚ի հիւսւտոյ Բեթելայ, ընդ արևելս ճանապարհին որ հանէ ՚ի Բեթելայ ՚ի Սիկիմ, և ՚ի հարաւոյ Լիբանանու յեղ՛եբոնա՞: ²⁰Եւ պատուիրեցին որդոցն Բենիամինի՝ և ասեն. Երթա՛յք և դարանամո՛ւտ լերուք յայգեստանին. ²¹և յորժամ տեսանիցէք թէ ելանեն դստերք բնակչացն Սելովայ պա՛ր առեալ պարուք, ելջի՛ք յայգեստանեացն, և յափշտակեսջի՛ք այր իւրաքանչիւր կին՝ ՚ի դստերաց Սելովայ. և երթիջիք

* Ոմանք. եղև այս Իսրայէլի:

* Ոմանք. Որ ո՛չ ելանէր առ Տէր ՚ի Մասեփա:

* Ոմանք. Ո՞վ որք մի իցէ ՚ի ցեղիցն Իսրայէլի:

* Յօրինակին պակասէր. Անդր ժողովուրդն երկ՛:

* Ոմանք. Չայր և զանկողինս արուի:

* Ոմանք. Ընդ ամենայն որդիսն Բենի՞... ՚ի վիմեն Ռեմո՞... և կոչեցին զնա ՚ի խա՞:

* Ոմանք. Առ որդիսն Իսրայէլի ՚ի ժամանակին յայնմիկ, որ էին ՚ի կանանցն Յաբիսայ Գաղաադու, ետու զայնոսիկ նոցա ՚ի կանայս, և հաճոյ թուեցաւ այնպէս:

* Ոմանք. Չոր արար Տէր խրա՞:

* Ոմանք. Եւ վասն այլոց կանանցն:

* Ոմանք. Երդուաք որդիքս Իսրայէլի... եթէ անիծեալ լիցի որ տայցէ:

* Ոմանք. Եւ հարաւոյ ՚ի Լիբանանու յեսեբոնայ:

յերկիրն Բենիամինի*։²²Եւ եղիցի յորժամ գայցեն հարքն նոցա և եղբարքն նոցա դատել ընդ ձեզ, ասասցուք նոցա՝ թէ ողորմեցա՛ք նոցա. զի ո՛չ ա՛ն այր զկին իւր ՚ի պատերազմին, և ո՛չ դուք ետուք նոցա թէ յանցանք ինչ իցեն*։²³Եւ արարին այնպէս որդիքն Բենիամինի, և առին կանայս ըստ թուոյ իւրեանց, ՚ի պարաւորացն զորս յափշտակեցին. և գնացին և դարձան յիւրաքանչիւր ժառանգութիւնս իւրեանց, և շինեցին քաղաքս և բնակեցին ՚ի նոսա*։²⁴Եւ գնացին որդիքն Իսրայէլի ՚ի ժամանակին յայնմիկ այր յիւրաքանչիւր ցեղ իւր, և յազգատոհմ իւր. և ելին անտի այր յիւրաքանչիւր ժառանգութիւն իւր։ Յաւուրսն յայնոսիկ ո՛չ գոյր թագաւոր Իսրայէլի. և այր իւրաքանչիւր զհաճոյս աչա՛ց իւրոց առնէր*։

Կատարեցաւ Դատաւորքս*

ՆԱԽԱԴԴՐՈՒԹԻՒՆ ԶՈՒԹԱՅ

Պատճառ գրոցս Զռութայ։ ՚ի ժամանակս դատաւորացն Ելիմելէք ոմն Բեթղահեմացի ՚ի տանէ Փարիսի Յուդայեանց՝ Նոոմինաւ կնաւ իւրով և երկու որդւովք՝ վասն կարեաց սովոյ էջ առ Մովաբացիսն, և մեռաւ այրն անդէն։ Իսկ երկու որդիքն առին կանայս Մովաբացիս, և անուանք կանանցն՝ Որփա և Զռութ. մեռան անդէն և որդիքն։ Իբրև կամեցաւ մայր նոցա Նոոմին դառնալ ՚ի Բեթղահեմ, երթային և հարսուներն ընդ նմա. զորս յորդորեաց սկեսուրն դառնալ յազգ իւրեանց. և դարձաւ Որփա անդրէն։ Իսկ Զռութ գնաց զհետ սկեսրին. և եկին ՚ի Բեթղահեմ. և ետ գնա սկեսուրն մերձաւոր ազգականի առն իւրոյ Եղիմելիքայ, և անուն մերձաւորին՝ Բոսս, կանգնել զանուն մեռելոյ որդւոյն Նոոմինայ առնն Զռութայ՝ ըստ օրինացն. և ծնաւ Բոսս ՚ի Զռութայ զՈվբեդ, և նա զՅեսսէ, և Յեսսէ զԴաւիթ։ Արդ՝ զի սիրեաց Զռութ Մովաբացի խառնիլ յօրինեալ ազգն Աբրահամու, որպէս նախ քան զնա Թամար և Ռախաբ. և ետես Աստուած զհաւատս նորա, և արկ ՚ի սիրտն Բոսսայ առնուլ զնա կնութեան, և խառնել յազգն Յուդայ ՚ի նահապետս մարմնոյն Քրիստոսի։ Եւ նկարեաց նովաւ զառ Քրիստոս կոչումն հեթանոսաց։

ԶՈՒԹ*

* Ոմանք. ՚ի Սելովայ... Ելջիք յայգեստանէն, և այր իւրաքանչիւր առցէ իւր կին ՚ի դստերացն Սելովայ։

* Ոմանք. Զարք նոցա և կամ եղբարք նոցա։

* Ոմանք. Եւ շինեցին իւրեանց քաղաքս։

* Ոմանք. Եւ գնացին անտի որդիքն... այր իւրաքանչիւր ՚ի ցեղ իւր... զհաճոյն աչաց իւրոց առնէր։

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Գիրք Դատաւորաց։

* Ոմանք ունին վերնագիր. Գիրք Զռութայ։

Գլուխ Ա

¹Եւ եղև յետ այսորիկ յաւուրս դատելոյ դատաւորացն, եկն սով յերկիրն: Եւ գնաց այր ՚ի Բեթղեհեմէ Յուդայ՝ պանդխտանալ յագարակին Մովաբայ. ինքն և կին իւր, և երկու որդիք իւր՝: ²Եւ անուն առնն Եղիմեղէք, և անուն կնոջ նորա Նոոմին, և անուն երկուց որդւոց նորա՝ Մաաղոն, և Քեղղոն, Եփրաթացիք ՚ի ցեղէ՛ Յուդայ. չոգան յագարակն Մովաբու, և անդ էին՝: ³Եւ մեռաւ Եղիմեղէք այրն Նոոմինայ. և մնաց կինն և երկու որդիք նորա: ⁴Եւ առին իւրեանց կանայս Մովաբացիս. անուն միունն Որփա՛, և անուն երկրորդին Յուլթ. և բնակեցին անդ իբրև ամս տասն: ⁵Եւ մեռան անդ երկոքին, Մաաղոն և Քեղղոն. և մնաց կինն միայն յառնէ իւրմէ և յորդւոց իւրոց: ⁶Եւ յարեաւ ինքն և երկոքին նուանք նորա, և դարձան յագարակէն Մովաբայ. զի լուան թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրուն տալ նոցա հաց՝: ⁷Եւ ել ՚ի տեղւոջէն ուր էր, և երկոքին նուանք նորա ընդ նմա. և գնացին ճանապարհ դառնալ յերկիրն Յուդայ: ⁸Եւ ասէ Նոոմին ցերկոսին նուանս իւր. Երթայք դարձարուք յիւրաքանչիւր տուն հօր իւրոյ. և արասցէ ընդ ձեզ Տէր ողորմութիւն, որպէս արարէք ընդ մեռելսն և ընդ իս՝: ⁹Տացէ՛ ձեզ Տէր՝ և գտջիք հանգիստ իւրաքանչիւր ՚ի տան հօր իւրոյ: Եւ համբուրեաց գնոսա: Ամբարձին զձայնս իւրեանց և լացին՝, ¹⁰և ասեն ցնա. Ո՛չ այդպէս, այլ ընդ քեզ դարձուք ՚ի ժողովուրդ քո: ¹¹Եւ ասէ Նոոմին. Դարձարուք դատերք իմ. ընդէ՞ր գայցէք ընդ իս. միթէ դարձեալ որդիք իցեն յորովայնի իմուն, և լինիցին ձեզ յա՞րս՝. ¹²դարձարուք դատերք իմ և երթայք, զի ես ծերացեալ եմ, և չեմ լինելոյ առն. եթէ ասիցեն թէ կայցէ ինչ ինձ աղերս՝ և լինիցին առն աշխարհականացեալ և ծնանիցին որդիս՝. ¹³և նոցա՛ սպասիցէք մինչև զարգանայցեն, և ՚ի նոսա գրաւիցիք չլինել առն. մի՛ դատերք իմ. զի առաւել քան զձեզ դառնացեալ եմ, զի ել ընդ իս ձեռն Տեառն: ¹⁴Եւ ամբարձին զձայնս իւրեանց միւսանգամ, և լացին. և համբուրեաց Որփա զսկեսուր իւր, և դարձաւ ՚ի ժողովուրդ իւր. բայց Յոնթ գնաց զկնի նորա՝: ¹⁵Եւ ասէ Նոոմին ցՅուլթ. Ահա նէ՛ր քո դարձաւ ՚ի ժողովուրդ իւր՝ և առ աստուածս իւր, դարձի՛ր և դու զհետ միրին քոյ: ¹⁶Եւ ասէ Յուլթ. Մի՛ պատահեսցէ ինձ թողուլ զքեզ և դառնալ ՚ի քէն. զի ուր դո՛ւ երթայցես՝ երթայց, և ուր հանգչիցիս՝ հանգեայց, ժողովուրդ քո՝ ժողովուրդ իմ. և Աստուած քո՝ Աստուած իմ՝. ¹⁷և ուր մեռանիցիս՝ մեռայց, և անդ թաղեցայց. օնևօն արասցէ ինձ Տէր՝ և օնևօն յաւելցէ, բայց եթէ մա՛հ մեկնեսցէ ընդ իս և ընդ քեզ: ¹⁸Եւ իբրև ետես Նոոմին թէ պնդեալ է երթալ նա ընդ նմա, դադարեաց այնուհետև ՚ի խօսելոյ ընդ նմա: ¹⁹Եւ գնացին երկոքին մինչև գալ նոցա ՚ի Բեթղեհեմ: Եւ եղև ՚ի գալն նոցա ՚ի Բեթղեհեմ,

* *Ոմանք.* Յաւուրս դատաւորացն:

* *Ոսկան.* Եւ անուն կնոջ նորա Նոեմի: *Ոմանք.* Երկոցունց որդի... Եփրաթի ՚ի Բեթղեհեմէ Յուդայ:

* *Ոմանք.* Եւ երկոքին նուանք իւր... եթէ այց արար Տէր ժո՛ւ:

* *Ոմանք.* Իւրաքանչիւր ՚ի տուն:

* *Ոմանք.* Իւրաքանչիւրոք ՚ի տան առն իւրոյ... և ամբարձին:

* *Ոմանք.* Ընդէ՞ր գայցէք առ իս:

* *Ոմանք.* Վասն զի ես ծերա՛մ:

* *Ոմանք.* Եւ Յուլթ գնաց զհետ նորա:

* *Ոմանք.* Մի տացի թողուլ զքեզ:

հնչեաց ամենայն քաղաքն զնովաւ, և ասեն՝ թէ սա՞ իցէ Նոոմին*։ ²⁰Եւ ասէ ցնոսա. Մի՛ կոչէք զիս Նոոմին, այլ կոչեցէ՛ք զիս Դառնացեալ, զի դառնացոյց զիս Բաւականն յոյժ։ ²¹Լի՛ չոգայ, և ունայն դարձոյց զիս Տէր. և արդ՝ ընդէ՞ր կոչէք զիս Նոոմին, և Տէր նկո՛ւն արար զիս, և Բաւականն չարչարեաց զիս*։ ²²Եւ դարձան Նոոմին և Զուռ Սովաբացի նո՛ւ իւր ընդ նմա՝ գնացեալ յագարակէն Սովաբայ. և եկին ՚ի Բեթղեհէմ ՚ի սկի՛զբն հնձոց գարւոյ՛։

2

Գլուխ Բ

¹Եւ անդ էր այր ծանօթ առնն Նոոմինայ, և այրն հզօ՛ր զօրութեամբ. յազգէն եղիմեղիքայ, և անուն նորա Բոո՛ս. և ետ Նոոմինայ տո՛ւն այրութեան բնակելոյ ՚ի նմա։ ²Եւ ասէ Զուռ Սովաբացի ցՆոոմին. Երթայ՛ց յանդ և քաղեցի՛ց հասկս զհետ ուրուք, որոյ գտից շնորհս առաջի աչաց նորա։ Եւ ասէ ցնա. Ե՛րթ դուստր*։ ³Եւ գնաց։ Եւ երթեալ քաղէր հասկ յանդի զհետ հնձողացն. և դիպելով դիպեցաւ վիճակի անդին Բոոսայ՝ ազգականի՛ Եղեմեղիքայ*։ ⁴Եւ ահա Բոոս եկն ՚ի Բեթղահեմէ. և ասէ ցհնձօղս իւր. Տէր ընդ ձեզ։ Եւ ասեն ցնա. Օրհնեսցէ՛ զքեզ Տէր։ ⁵Եւ ասէ Բոոս ցպատանին իւր որ կայր ՚ի վերայ հնձողացն. Ո՞յր է աղջիկդ այր։ ⁶Պատասխանի ետ պատանին որ կայր ՚ի վերայ հնձողացն՝ և ասէ. Սովաբացի՛ աղջիկն է՝ որ դարձաւ ընդ Նոոմինայ յագարակէն Սովաբայ*։ ⁷Եւ ասէ. Թող քաղեցի՛ց և ժողովեցից հասկ ՚ի մէջ որայոց զհետ հնձողացդ. և եկն եկաց յառաւօտ մինչև ցայժմ, և ո՛չ դադարեաց՝ և ո՛չ սակաւիկ ինչ յանդիս։ ⁸Եւ ասէ Բոոս ցԶուռ. Լուա՞ր դուստր. մի՛ այլ ուրեք երթիցես քաղել հասկ յայլոց անդի, և մի՛ բնաւ ուրեք գնացես աստի. այլ աստէ՛ն իսկ յարեաց յաղջկունս իմ*։ ⁹և աչք քո յանդիս ուր և հնձեսցեն, և երթիցես զհետ նոցա. ո՞չ ապաքէն պատուէր ետու մանկտոյ իմուն չմերձեմալ ՚ի քեզ. և եթէ ծարաւեսցիս, երթիցես յամանսն և արբցես՝ ուստի հանիցեն ջուր մանկտիդ։ ¹⁰Եւ անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ յերկիր ՚ի խոնարհ, և ասէ. Ջի՞ է զի գտի շնորհս առաջի աչաց քոց ճանաչել զիս. և ես եմ կին մի օտար*։ ¹¹Պատասխանի՛ ետ Բոոս և ասէ ցնա. Պատմելով պատմեցաւ ինձ ամենայն ինչ զոր արարեր սկեսրի քուն յետ մահուան առնն քուն. և զհարդ թողեր զհայր քո և զմայր, և զերկիր ծննդեան քոյ. և եկիր ՚ի ժողովուրդ զոր ո՛չ գիտէիր յերեկ և յեռանտ։ ¹²Յատուցէ՛ քեզ Տէր ըստ վաստակոց քոց, և եղիցի լի՛ վարձք քո ՚ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլի, յոր դիմեցերն ապաստան լինել ընդ թևք նորա*։ ¹³Եւ նա՛ ասէ. Գտի՛ շնորհս առաջի աչաց քոց տէր. զի մխիթարեցեր զիս, և զի խօսեցար ՚ի սիրտ աղախնոյ քոյ. և ես եղէց իբրև զմի յաղախնաց քոց*։ ¹⁴Եւ

* Ոմանք. Ամենայն քաղաքն նովաւ և ասեն եթէ։

* Ոմանք. Ընդէ՞ր կոչիցէք զիս Նոովմին։

* Ոմանք. Եւ գնաց և ել յագարա՞... և եկն ՚ի Բեթղեհէմ, յիսկզբան։

* Այլք. Եւ քաղեցից հասկ զհետ։

* Ոմանք. Դիպեցաւ անդ վիճակ անդի Բոոսայ։

* Ոմանք. Սովաբացի է աղջիկն։

* Ոմանք. Լո՛ւր դուստր, մի՛ ուրեք երթայցես քաղել հասկ յանդի այլոց։

* Ոմանք. Եւ ասէ ցնա. Ջի՛ է զի։

* Այլք. Եւ եղիցին լի վարձք քո։

* Այլք. Յաղախնաց. կամ՝ յաղախնեաց քոց։

ասէ ցնա Բոսս. Ահա ժամ ճաշոյն է. մատիւր այսր և կէր 'ի հացէր, և թացցես զպատառ քո 'ի քացախիդ: Եւ նստաւ Զոութ 'ի կողմանէ հնձողացն. և խառնեաց նմա Բոսս փոխինդ. և եկէր և յագեցաւ. և եթող նշխար. ¹⁵և յարեաւ քաղել հասկ: Եւ պատուիրեաց Բոսս մանկտոյն իւրում, և ասէ. Այլ և 'ի մէջ որայոցն քաղիցէ. և մի' պատկառեցուցանէք զնա*. ¹⁶այլ և բառնալով բարձուսջիք, և արկանելով արկջիք առաջի նորա 'ի փոխնդոցն խառնելոց, և թոյլ տաջիք նմա և կերիցէ՝ և քաղիցէ հասկ. և մի' ինչ զգուհցէք զնա*: ¹⁷Եւ քաղեաց յանդին մինչև ցերեկոյ. և ծեծեաց զոր քաղեացն, և եղև արդո՛ւ մի գարոյ. ¹⁸և ա՛ռ՝ և եմուտ 'ի քաղաքն: Իբրև ետես սկեսուրն նորա զոր քաղեացն. և եհան Զոութ Ետ նմա 'ի նշխարէն՝ յորոյ յագեցաւն*: ¹⁹Ասէ ցնա սկեսուրն իւր. Ո՞ւր ժողովեցեր այսօր, և կամ ո՞ւր եղեր. եղիցի որ ծանեաւն զքեզ՝ օրհնեալ: Եւ պատմեաց Զոութ սկեսրին իւրոյ թէ ո՞ւր եղև. և ասաց զանուն առնն առ որում եղև այն օր՝ թէ Բոսս է*: ²⁰Ասէ Նոոմին ցնո՛ւ իւր. Օրհնեալ է նա 'ի Տեառնէ. զի ո՛չ պակասեցոյց զգութ իւր 'ի կենդանեաց և 'ի մեռելոց: Եւ ասէ ցնա Նոոմին. Մերձ է այրն 'ի մեզ, 'ի մերձաւորաց մերոց է: ²¹Եւ ասէ Զոութ ցսկեսուրն իւր. Իրաւ է. ասաց ցիս թէ յաղջկունսդ իմ յարեաց, մինչև վախճանեսցեն զիւնձսդ՝ որչափ իցեն իմ: ²²Եւ ասէ Նոոմին ցԶոութ նո՛ւ իւր. Բարի՛ է դուստր զի եղեր ընդ աղջկունս նորա, և մի' պատահիցէ որ քեզ յայլում անդի*: ²³Եւ յարեցաւ Զոութ յաղջկունսն Բոսսայ քաղել հասկ մինչև վախճանել հնձոցն գարեաց, և հնձոց ցորենոյ. և նստաւ առ սկեսրի իւրում:

3

Գլուխ Գ

¹Եւ ասէ ցնա Նոոմին սկեսուր իւր. Դո՛ւստր՝ խնդրեցից քեզ հանգիստ, զի բարի՛ լինիցի քեզ: ²Եւ արդ՝ ո՛չ ապաքէն Բոսս ծանօթ մեր է, որոյ էիր ընդ աղջկունս նորա. ահաւասիկ նա արկանէ կալ՝ 'ի գարոյ 'ի գիշերիս յայսմիկ. ³և դու լուսացիս և օժցիս, և արկցես զհանդերձ քո զքև՝ և ելցես 'ի կալն, և մի' տացես առնն ծանօթս մինչև վախճանեսցէ զուտել և զըմպել իւր*: ⁴Եւ եղիցի 'ի մտանելն նորա 'ի քուն, նշմարեսցես զտեղին ուր ննջիցէ. և երթիցես և բացցես յոտից կողմանէ՝ և ննջիցես. և նա պատմեսցէ քեզ զինչ առնելոց իցես*: ⁵Եւ ասէ ցնա Զոութ. Ջամենայն զոր ինչ ասացես ցիս՝ արարից: ⁶Էջ 'ի կալն, և արար ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա սկեսուրն իւր: ⁷Եկէր Բոսս և արբ՝ և զուարթացաւ սիրտ նորա, և չոգաւ ննջեաց առ եզերք գաղշին. և նա եկն գաղտ, և մերկացոյց յոտից կողմանէ՝ և ննջեաց*: ⁸Եւ եղև զհասարակածաւ գիշերոյ, զարիուրեցաւ այրն և խռովեցաւ. և ահա կինն ննջէր առ ոտիւք

* Ոմանք. Եւ յարեաւ 'ի քաղել:

* Ոմանք. Արկջիք նմա 'ի փոխնդ՝:

* Ոմանք. Ետ նմա 'ի նշխարաց յորոց:

* Յօրհնակին. Որ ծանեաւն քեզ:

* Ոմանք. Ձի ելեր ընդ աղջ՞. և մի որ պատահեսցէ քեզ:

* Ոմանք. Մինչև վախճանէ զուտել իւր և զըմպել:

* Ոմանք. Եւ երթայցես... և ննջեսցես:

* Ոմանք. Եւ զուարճացաւ սիրտ նորա, և չոգաւ ննջել առ եզեր գաղշին:

նորա*։ ⁹Եւ ասէ՛ Ո՞վ ես դու։ Եւ ասէ՛ Ե՛ս եմ Զոռութ աղախին քո, և արկցես դու զդրօշակ քո զաղախնով քով. զի մերձաւորի՛չ ես դու*։ ¹⁰Եւ ասէ՛ Բոոս. Օրհնեա՛լ ես դու՛ ՚ի Տեառնէ՛ Աստուծոյ դուստր, զի ազնուացուցեր դու զգութ քո զվերջինս քան զառաջինն. զի ո՛չ չոգար զհետ երիտասարդաց, զաղքատաց՝ կամ զմեծամեծաց։ ¹¹Եւ արդ՝ դուստր՝ մի՛ երկնչիւր. զամենայն զոր ինչ ասասցես ցիս արարի՛ց քեզ. քանզի գիտէ՛ ամենայն ցեղ ժողովրդեան իմոյ՝ թէ՛ կին զօրութեան ես դու*։ ¹²Եւ արդարև՝ ե՛մ ես մերձաւորի՛չ քո. բայց զոյ և այլ ևս մօտ մերձաւորի՛չ՝ մօտագոյն քան զիս*։ ¹³Ազի՛ր աստ զգիշերս զայս. և եղիցի այգուն, եթէ մերձաւորեցուցե՛ր զքեզ մերձաւորի՛չն՝ բարի՛ է. ապա թէ ո՛չ կամիցի մերձաւորեցուցանել զքեզ, ե՛ս մերձաւորեցուցից զքեզ՝ կենդանի՛ է Տէր. ննջեա՛ այդր մինչև ցառաւօտ*։ ¹⁴Եւ ննջեաց առ ոտս նորա մինչև ցառաւօտն։ Եւ յարեաւ կինն՝ մինչև ճանաչէր այր զընկեր իւր. և ասէ՛ Բոոս. Մի՛ ոք գիտասցէ՛ թէ կին ոք եկն առ իս՝ ՚ի կալս*։ ¹⁵Բե՛ր զմեկնոցդ որ ՚ի վերայ քո է՝ և կա՛լ աստ։ Եւ նա կալա՛ւ. և չափեաց վեց չափովն զարի, և ե՛ր ՚ի վերայ նորա, և եմուտ ՚ի քաղաքն. ¹⁶և չոգաւ Զոռութ առ սկեսուրն իւր։ Եւ նա ասէ՛. Չի՞՞ է դուստր։ Եւ պատմեաց նմա զամենայն ինչ զոր արար նմա այրն. ¹⁷և ասէ՛ ցնա. Չայս վեց չափ զարւոյ ետ ինձ՝ և ասէ՛. Չի մի՛ մտցես ունայնաձեռն առ սկեսուրն քո։ ¹⁸Եւ նա ասէ՛. Նիստ դու մինչև յա՛յտ լիցի մեզ. որպէս զի ո՛չ վրիպէ բանն. զի ո՛չ դադարէ այրն՝ թէ ո՛չ կատարէ սո՛յն օրին զբանն*։

4

Գլուխ Դ

¹Եւ Բոոս ե՛լ ՚ի դուռնն և նստա՛ւ անդ. և ահա անցանէր առ նովաւ մերձաւորի՛չն՝ զորմէ՛ խօսեցաւ Բոոս. և ասէ՛ ցնա Բոոս. Անց՝ նիստ աստ վայր մի և մնա՛։ Եւ նա անց նստա՛ւ*։ ²Եւ ա՛ռ Բոոս տասն այր ՚ի ծերոց քաղաքէն՝ և ասէ՛. Նստարո՛ւք աստ։ Եւ նստա՛ն*։ ³Եւ ասէ՛ Բոոս ցմերձաւորի՛չն. Չբաժին անդոյ որ է եղբօր մերոյ Եղիմեղի՛քայ՝ վաճառէ՛ Նոոմի՛ն. որ դարձեալն է յագարակէ՛ն Մովաբայ*, ⁴և ես ասացի՛ թէ յայտնեցի՛ց յունկն քո. արդ՝ ստացի՛ր առաջի սոցա որ նստինս, և առաջի ծերոց՝ ժողովրդեան իմոյ։ Արդ՝ եթէ մերձաւորեցուցանես՝ մերձաւորեցո՛ւ. ապա թէ ո՛չ մերձաւորեցուցանես, պատմեա՛ ինձ և գիտացից. զի ո՛չ գոյ բաց ՚ի քէն մերձաւորարար. և յե՛տ քո՝ ե՛ս եմ մերձաւորեցուցի՛չ*։ ⁵Եւ ասէ՛ Բոոս. Յաւուր ստանալոյ քոյ զագարակն ՚ի ձեռաց Նոոմի՛նայ, և ՚ի Զոռութայ Մովաբացւոյ կնոջ մեռելոյն. և զնա՛ պարտիս ստանալ և յարուցանել զանուն

* Ոմանք. Չհասարակածաւ գիշերոյն... և ահա կին ննջէր։

* Ոմանք. Եւ ասէ՛ ցնա ո՛վ ես... մերձաւորի՛չ իմ ես դու։

* Ոմանք. Եւ արդ՝ դու դուստր իմ, մի՛։

* Ոմանք. Բայց զոյ և այլ ևս մերձաւորի՛չ մօտա՛։

* Ոմանք. Աստ զայս գիշեր. և եղիցի այգունն... ապա թէ ո՛չ կամի մեր՞։

* Ի բազումս պակասի. Յառաւօտ. և ննջեաց առ ոտս նորա մինչև ցառաւօտն։

* Ոմանք. Յայտ լիցի քեզ՝ թէ որպէս ո՛չ վրիպէ... եթէ ո՛չ կատարեսցէ։

* Ոմանք. Եւ ահա ելանէր առ նա մերձաւորի՛չն։

* Այլք. Ի ծերոց քաղաքին, և ասէ՛։

* Ոմանք. Որ էր եղբօր մեր Եղիմէ՛։

* Բազումք. Ես եմ մերձաւորի՛չ։ Եւ ոմանք. Ես եմ. և մերձաւորեցուցից։

մեռելոյն ՚ի ժառանգութեան իւրում*։ ⁶Եւ ասէ մերձաւորիչն ցԲոսս. Ո՛չ կարեմ մերձաւորեցուցանել ես ինձ, գուցէ՛ եղծանիցեմ զժառանգութիւն իմ. մերձաւորեա՛ դու քե՛զ զմերձաւորութիւն իմ. զի ես ո՛չ կարեմ մերձաւորեցուցանել*։ ⁷Եւ այս օրէն էր յառաջագոյն ՚ի մէջ Իսրայէլի վասն մերձաւորութեան, և վասն գնելոյ առ ՚ի հաստատելոյ՝ զամենայն բան. բոկանայր այր զկօշիկ իւր, և տայր ցընկեր իւր՝ որ մերձաւորելոց էր զմերձաւորութիւն նորա. և այն լինէր ՚ի վկայութիւն ՚ի մէջ Իսրայէլի*։ ⁸Եւ ասէ մերձաւորիչն ցԲոսս. Ստացի՛ր դու քե՛զ զմերձաւորութիւն իմ։ Եւ բոկացաւ զկօշիկ իւր և ետ ցնա*։ ⁹Եւ ասէ Բոսս ցծերսն, և ցամենայն ժողովուրդն. Վկայք իմ էք դուք այսօր. զի ստացայ՝ զամենայն ինչս եղ՚իմեղ՛եքայ, և զամենայն ինչ որ է Քեղդոնայ և Մաաղոնայ ՚ի ձեռաց Նոոմիանայ*։ ¹⁰Նա՛ և զՅոնիք Մովաբացի զկին Մաաղոնայ ստացայ ինձ կնութեան, կանգնել զանուն մեռելոյն ՚ի ժառանգութեան իւրում. և մի՛ ջնջեսցի անուն մեռելոյն յեղբարց իւրոց՝ և ՚ի ցեղէ տեղոյ իւրոյ. և վկայք դուք էք այսօր։ ¹¹Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն ՚ի դրանն՝ և ասեն. Մեք ենք վկայք։ Եւ ծե՛րքն ասեն. Տաքէ՛ Տէր զկինն որ մտանէ ՚ի տուն քո՝ իբրև զՅոնիքէ՛ և իբրև զԼիա, որ շինեցին երկոքին զտունն Իսրայէլի. առնել զօրութիւն յեփրաթա, և կոչել անուն ՚ի Բեթղէեմ*։ ¹²Եւ եղիցի տուն քո իբրև զտո՛ւնն Փարիսի, զոր ծնաւ Թամար Յուդայի յայնմ զաւակէ, և տացէ քեզ Տէր որդի յաղջկանէդ յայդմանէ*։ ¹³Եւ ա՛ն Բոսս զՅոնիք, և եղև նմա ՚ի կնութեան. և եմո՛ւտ առ նա, և ետ նմա Տէր յղութիւն. և ծնաւ որդի։ ¹⁴Եւ ասեն կանայքն ցՆոոմին. Օրհնեա՛լ Տէր, որ ո՛չ քակեաց ՚ի քէն այսօր զմերձաւորիչն, անուանել զանուն քո ՚ի մէջ Իսրայէլի*։ ¹⁵Եւ եղիցի քեզ ՚ի դարձուցանել զոգի, և կերակրել զծերութիւն քո. զի՛ նո՛ւ քո որ սիրեաց զքեզ ծնաւ որդի՛ որ լաւ է քեզ քան զԵլթն որդի*։ ¹⁶Եւ ա՛ն Նոոմին զմանուկն՝ և եղ՛ ՚ի ծոց իւրում. և եղև նմա դայեակ։ ¹⁷Եւ կոչեցին անուն նմա դրացիքն՝ և ասեն. Ծնաւ որդի՛ Նոոմիանայ. և կոչեցին զանուն նորա Ուլբէդ. նա՛ է հայր Յեսսեայ հօր Դաւթի*։ ¹⁸Եւ այս են ծնունդք Փարիսի. Փարէս ծնաւ զԵսրո՛վմ. ¹⁹և Եսրովմ ծնաւ զԱրամ։ Արամ ծնաւ զԱմիմադաբ*։ ²⁰Ամիմադաբ ծնաւ զՆաասովմ. Նաասովմ ծնաւ զՍաղմոն։ ²¹Սաղմոն ծնաւ զԲոսս։ Բոսս ծնաւ զՈւլբէթ։ ²²Ուլբէթ ծնաւ զՅեսսէ։ Յեսսէ ծնաւ զԴաւիթ։

Կատարեցաւ Դոուք*

* *Ոմանք.* Ստանալոյ քեզ զագա՞... կնոջէ մեռելոյն. և վասն այսր պարտիս ստանալ յարուցանել մեռե՛ն։

* *Ոմանք.* Գուցէ զերծանիցեմ զժառ՞։

* *Ոմանք.* Վասն մերձաւորելոյ և վասն դնե՞ն։ *Յօրհիմակին.* Եւ տայ ցընկեր իւր։

* *Ոմանք.* Եւ բոկացաւ զկօշիկս։

* *Ոմանք.* Վկայք իմ երդուայք այսօր... որ էր Քեղդոնայ։

* *Ոմանք.* Պատասխանի ետուն... և ասեն ՚ի դրան. Մեք ենք։

* *Ոմանք.* Որպէս զտունն Փարեսի։

* *Ոմանք.* Օրհնեալ է Տէր։

* *Ի լուս՞.* Ծնաւ քեզ որդի, որ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞։* *Ոմանք.* Զի լաւ է քեզ քան զտասն որդի։

* *Ոմանք.* Դայր Յեսսէ՛ հայր Դաւթի։

* *Ոմանք.* Եւ Արամ... (20) և Ամիմադաբ... և Նաասովմ... Սաղ՞. և այլն։

* *Ի վախճանի ոմանք դնեն.* Կատարումն Դոուքայ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆՑՆ*

Սկիզբն գրոց Թագաւորութեանցս դեռնա զՅեղեայ պատմէ, որ է և նա՛ ՚ի կարգ դատաւորացն. և յետ Յեղեայ՝ Սամուէլ մարգարէ վերջին դատաւորացն. զի՛ ՚ի նմանէ խնդրեցին Յրեայքն թագաւոր. և օ՛ժ նոցա զՍաւուղ, և ապա զԴաւիթ: Այլ զի երբայեցիք յերկուս գիրս բաժանեն զգիրս Թագաւորութեանցս, և այլք ՚ի չորս, գտցես զայս ՚ի յառաջաբանի անդ հնոցն, զոր ես կարծեմ զոլ Որոգինի, որ յոյժ հմուտ էր երբայեցուցն: Իսկ զի ինքն Սամուէլ գրեաց զգիրս Առաջին Թագաւորութեանցս, Գիրք Սամուէլի կոչի սա. իսկ զերեք ևս այլն յայտ է զի այլք գրեցին, որպէս ՚ի Մնացորդսն ասի ՚ի ճառին Յովսափատու, թէ Յէու որդի Անանայ գրեաց զգիրս թագաւորացն Իսրայէլի, յայտ է զի և զՅուդայ: Բայց կարծելի է զի ո՛չ զբովանդակն, զի զիա՞րդ մարթ էր զամենայն թագաւորացն ժամանակս կեալ նմա. այլ զառ ՚ի յայլոց առաջնոցն գրեալս որիչ որիչ զթագաւորացն ՚ի մի ժողովեաց, և զիւրոյ ժամանակին ևս յաւել ՚ի նոյն. զի և Չորրորդ Թագաւորութեանցն ասի Երեմիայի գրեալ, և կարծելի է ո՛չ ամենայնն, այլ աւուրցն Յովսիայ. ուստի և Գիրքն իւր համաձայնի գրոց Չորրորդ Թագաւորութեանցն. որպէս և Գիրքս Եսայայ՝ պատմութեանն Եզեկիայ. և որպէս ասի ՚ի Մնացորդսն, զմնացեալ բանսն Սողոմոնի՝ գրեալ՝ Նաթանայ մարգարէի, և Աքիայ Սիլոմացուոյ: Յայտ եղև՝ զի յայլ և յայլ հոգեկիր իմաստնոց գրեցաւ Գիրքս այս, և յետոյ բովանդակեցաւ ՚ի մի: Եւ զի յետ մահուանն Սողոմոնի յերկուս բաժանեցաւ թագաւորութիւնն Իսրայէլի՝ ՚ի տունն Դաւթի և ՚ի տունն Եփրեմի. զո՛յգ ընդ միմեանս զերկուց ազգացն բերէ Գիրքս զկարգս թագաւորացն պատմութեան: Բազումք ՚ի տանէն Դաւթի որք իբրև զնա թագաւորք՝ յառաքինութիւնս իւրեանց նկարեցին զխորհուրդն Քրիստոսի: Եւ ունի Գիրք չորից զլիսոց թագաւորութեանցս պատմութիւն ժամանակի հինգ հարիւր և քառասուն և հինգ, կամ վաթսուն և հինգ ամաց. զի Յեղեայ ոմանք քսան ամ ասեն, և այլք քառասուն. յորոյ դատաւորելոյն մինչև ցգերութիւնն Երուսաղէմի ՚ի Բաբելացուցն, և ցիրկիզութիւն տաճարին պատմեն բնագիրքս այս:

Գլուխք Առաջին Թագաւորութեանցն

ա. Վասն Եղկանայ և երկուց կանանց նորա:

բ. Ծնունդն Սամուէլի աղօթիւք մօրն:

գ. Չի մատուցին զնա երեմեան առաջի Աստուծոյ:

* Ի գրչագիր օրինակս մեր յառաջ քան զայս նախադրութիւն գտանի և այլ՝ մակագրեալ, Յառաջաբան Նախակարգեալ Թագաւորութեանց. գործէ ակնարկի յառաջիկայդ լինել Որոգինեայ: Այլ քանզի պարունակութիւն բանիցն որ ՚ի նմա ձգի ՚ի վերայ անձնիւր գրոց Աստուածաշունչ մատենիս՝ քան թագաւորութեանցն առանձինն, յայնսակս զանցարարեալ դնել աստանօր, ՚ի դէպ համարիմ և զնոյն կարգել ՚ի վախճանի ընդ այլ ևս գրուածս գտեալս ՚ի գրչագիր Աստուածաշունչս մեր. այլուն պատեհազոյն ժամանակի թողեալ հետազօտել վասն մատենագրի նորին:

դ. Ձի նուիրեալ զնա Տեառն յանձն արարին Յեղեայ:
ե. Վասն երեքժանի մսահանացն:
զ. Ձի ո՛չ լսէին խրատու հօրն որդիքն Յեղեայ:
է. Պատգամ Տեառն առ Յեղի՝ բառնալ զտուն նորա:
ը. Սկիզբն յայտնելոյ բանին Տեառն առ Սամուէլ:
թ. Ձի խօսեցաւ Տէր բառնալ զքահանայութիւն տանն Յեղեայ:
ժ. Պարտիլն Իսրայէլի և գերիլ տապանակին:
ժա. Վասն ողնաբեկ մահուանն Յեղեայ:
ժբ. Յարուածք Ազովտայ և Դագոնայ՝ ի տապանակէն:
ժգ. Թէ զնոյնս տանջեալք այլազգիքն խորհին դարձուցանել զտապանակն:
ժդ. Թէ զհոնչախիսի նուիրօք արձակեցին զտապանակն:
ժե. Թէ եկն ինքնին տապանակն ՚ի Բեթսամիւս, և վասն հարուածոցն որ անդ:
ժզ. Ձի փոխեցաւ տապանակն ՚ի Կարիաթարիմ. և վասն աղօթիցն Սամուէլի, և ջրոյն զոր նուիրեաց Աստուծոյ:
ժէ. Ձի յաղօթս Սամուէլի որոտաց Տէր, և վանեաց զայլազգիսն առաջի Իսրայէլի:
ժը. Ձի թագաւոր խնդրեցին ՚ի Սամուէլէ:
ժթ. Ձի եցոյց նոցա Սամուէլ զհարկս թագաւորին:
ի. Ձի ել Սաւուղ ՚ի խնդիր կորուսեալ իշոցն:
իա. Եւ զի պատահեաց նմա Սամուէլ, որոյ և Տէր յայտնեալ էր վասն նորա:
իբ. Ձի հիւրընկալեաց Սամուէլ զՍաւուղ:
իգ. Թէ օճ զՍաւուղ, և զի հասին նմա տուեալ նշանքն ՚ի Սամուէլէ:
իդ. Թէ ժողովեաց զԻսրայէլ, և վիճակաւ թագաւորեցոյց նոցա զՍաւուղ:
իե. Թէ զհարոյ գունարեաց Սաւուղ զԻսրայէլ և յաղթեաց Ամոնացւոցն:
իզ. Ձի արարեալ նաւակատիս՝ օճ Սամուէլ զՍաւուղ:
իէ. Ձի արդար գտաւ Սամուէլ առ ժողովուրդն:
իը. Ձի կշտամբեաց նա զժողովուրդն ՚ի կողմանէ Տեառն, և ետ Տէր ձայնս ՚ի վկայութիւն բանիցն. և թէ զերկեամ մի եկաց միամիտ Սաւուղ:
իթ. Եհա՛ր Յովնաթան զայլազգիս, և նոքա գունարեցան դարձեալ:
լ. Թէ Սաւուղ ողջակեզ մատոյց, և կշտամբեաց զնա Սամուէլ:
լա. Թէ ծանրացան այլազգիքն ՚ի վերայ Իսրայէլի, և թէ անգէնք էին Իսրայէլացիք բաց ՚ի Սաւուղայ և Յովնաթանայ:
լբ. Թէ զհա՞րոյ Յովնաթան կապարճակրաւն դրոյցոյց զբանակս այլազգեացն:
լգ. Ուստի խրախուսեալ Սաւուղ, յարձակեցաւ զօրօքն, և վանեաց զայլազգիսն:
լդ. Ձի երդմնեցոյց Սաւուղ չուտել ինչ ունեք:
լե. Թէ սկսան ուտել արեամբ:
լզ. Ել վիճակ զի մեռցի Յովնաթան, և ո՛չ եթող ժողովուրդն:
լէ. Պատգամ Տեառն առ Սաւուղ՝ երթալ նգովել ջնջել զԱմաղէկ:
լը. Ձի ազահեաց Սաւուղ յաւարն Ամաղէկայ:
լթ. Ձի ինքնածե՛ռն ողջակիզէր Տեառն, և եհաս առ նա Սամուէլ:
լս. Ձի կշտամբեաց զնա սաստկագին:

խա. Պատճառս իմն կարկատե Սաւուղ, և փաղաքշէ՛ ևս. զոր անընկալ սպառնայ սաստկապէս. և սպանեալ զԱզազ գնաց՝ ՚ի Սաւուղայ:

խբ. Զրաման ապա առեալ յԱստուծոյ՝ օ՛ծ գԴաւիթ որդի Յեսսեայ:

խգ. Զի հալածէր Դաւիթ զդևն ՚ի Սաւուղայ:

խդ. Ժողովեցան այլազգիք ընդդէմ Իսրայէլի ՚ի պատերազմ:

խե. Թէ նախատէր Գողիադ զԻսրայէլ. և զի առաքեաց Յեսսէ գԴաւիթ ՚ի բանակն:

խզ. Զի խրախուսեաց Դաւիթ երթալ ընդդէմ այլազգւոյն:

խէ. Սպան Դաւիթ զԳողիադ, և վանեցան այլազգիքն, և նախանձեալ ընդ այն Սաւուղայ՝ ջանայր սպանանել գԴաւիթ:

խը. Զի նենգութեամբ փեսայացոյց գԴաւիթ ՚ի դստերս իւր, զի այնո՛ւ արկցէ զնա ՚ի սուր անթլփատիցն:

խթ. Ասաց Սաւուղ սպանանել գԴաւիթ, և խափանեաց զայն Յովնաթան:

ծ. Վրիպեաց ՚ի խոցելոյ գԴաւիթ, և յամառէր ՚ի նոյն, և փախոյց զնա Մեղքող պաճուճեալ հանդերձիւք:

ծա. Առ Սամուէլ զերծեալ Դաւթի՝ առաքէր Սաւուղ ընթռնել զնա. որոց երից դասուցն մարգարեացեալք. ապա և ինքն եկն անդ. և մարգարեանայր զկորուստն զիւր:

ծբ. Մուծանէ Դաւիթ զՅովնաթան յուխտ Տեառն, զուշակել նմա թէ արդարև ՚ի միտս չարս իցէ գԴաւթէ Սաւուղ:

ծգ. Տայ Յովնաթան նշանակս ազդել Դաւթի նոքօք զկանս Սաւուղայ:

ծդ. Բարկանայ Սաւուղ ՚ի վերայ Յովնաթանու վասն արձակելոյն Դաւթի:

ծե. Ա՛զդ արար Յովնաթան փքնաւն, և արձակեաց գԴաւիթ:

ծզ. Եկն Դաւիթ և ա՛ռ պաշար ՚ի քահանայէն, և ետես զայն Դովէկ Ասորի:

ծէ. Եկն Դաւիթ ՚ի Գէթ, և երկուցեալ՝ այլաձևեցաւ, և զերծաւ. և զհայր և զմայր իւր յանձնեաց յարքայն Մովաբայ:

ծը. Կոտորեաց Սաւուղ զքահանայսն վասն Դաւթի. և զերծաւ Աբիաթար և եկն առ Դաւիթ:

ծթ. Եհարց Դաւիթ ՚ի Տեառնէ երթալ փրկել զԿէիլա:

կ. Եկն Դաւիթ փրկեաց զԿէիլա, և դադարեաց անդ իւրայովքն, և Սաւուղ պատրաստէր պաշարել զնա անդ:

կա. Զի ել Դաւիթ և իւրքն, և զնացին անտի:

կբ. Ե՛լ Դաւիթ ՚ի լեառնն Զիփա, և եկն առ նա Յովնաթան և դարձաւ, և Զիփացիք գուշակեցին Սաւուղի գԴաւթէ:

կգ. Ե՛լ Սաւուղ պաշարել գԴաւիթ, և գուժկան հասեալ առ նա, դարձաւ անդրէն:

կդ. Ե՛լ դարձեալ Սաւուղ զհետ Դաւթի. և մտեալ Դաւիթ եհա՛տ զդրօշակ նորա, և մեկնեալ խօսեցաւ առ նա զարժանն, և երդմնեցոյց զնա Սաւուղ. և թէ մեռաւ Սամուէլ:

կե. Առաքեաց Դաւիթ առ Նաբադ հարցանել սիրով:

կզ. Զի անարգանօք դարձոյց նա զմանկտին Դաւթի:

կէ. Դիմեաց Դաւիթ բարկութեամբ ՚ի վերայ Նաբադայ, և յառաջեալ կնոջն ընծայիւք՝ ցածոյց գԴաւիթ:

կը. Թէ յետ սակաւ ինչ աւուրց մեռանի Նաբադ:

կթ. Եւ թէ ա՛ռ Դաւիթ զԱբիգեա կին նորա:

հ. Ետ Սաւուղ զդստերս իւր այլոց արանց, և ինքն զհետ մտեալ խնդրէր

զԴաւիթ. որոյ մտեալ 'ի վերայ նորա ա՛ռ զգեղարդն և զկուծն, և զերծեալ աղաղակեաց առ զօրսն:
 հա. Փաղաքչէ իմն Սաւուղ նենգաւ. այլ Դաւիթ Տեառն յանձնեալ զինքն՝ գնայ յինքեան:
 հբ. Եկեալ Դաւթի առ Անքուս 'ի Գէթ, և իւրովքն արամբք և աղխիւ նստի 'ի Սիկելեակ:
 հգ. Թէ ո՞ւր ուրեք արշաւէին Դաւթեանք, և զի հրաւիրեաց Անքուս զԴաւիթ զհետ իւր 'ի պատերազմ ընդ Իսրայէլի:
 հդ. Թէ զի խրատուն Սամուելի եբարձ Սաւուղ զվիուկսն, և զի Տէր դարձոյց զերեսս իւր 'ի նմանէ, դարձաւ նա խնդրեաց վիկաւն, և ել դնն 'ի նմանութիւն Սամուելի:
 հե. Ձի հասոյց վիուկն զորթն, և եդ առաջի Սաւուղայ ուտել:
 հզ. Ձի ո՛չ կամեցան իշխանք այլազգեացն գնալ ընդ նոսա Դաւթի ընդդէմ Իսրայէլի:
 հէ. Ձի յերրորդում աւուրն հասեալ Դաւթի 'ի Սիկելակ՝ եգիտ գերեալ զիւրեանցսն, և զհետ մտեալ եհաս:
 հը. Ձի թափեալ զգերին ամբողջ՝ դարձաւ յաղթութեամբ:
 հթ. Թէ առաքեաց բարեկամաց իւրոց մասունս յաւարտ անտի:
 ձ. Ձի պարտեցաւ Իսրայէլ 'ի պատերազմ անդր. և զի սպանաւ Սաւուղ և երեքին որդիք նորա:

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՋԻՆ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ այր մի էր յԱրիմաթեմայ, 'ի Սիփայ՝ 'ի լեռնէ Եփրեմի. և անուն նորա Եղկանա: Որդի Յերեմիելի, որդւոյ Յեղեայ որդւոյ Թովկեայ, 'ի Նասիբ Եփրեմի:
²Եւ էին նորա երկու կանայք. անուն միումն Աննա, և անուն երկրորդին՝ Փեննանա. և էին Փեննայի որդիք, և Աննայի ո՛չ գոյր որդի*: ³Եւ ելանէ՛ր այրն աւուրց յաւուրս 'ի քաղաքէ իւրմէ յԱրիմաթեմայ՝ երկի՛ր պագանել, և զոհել Տեառն Աստուծոյ զօրութեանց 'ի Սելով. և անդ Յեղի՝ և երկու որդիք նորա Ոփնի և Փեննես՝ քահանայք Տեառն*: ⁴Եւ եղև օ՛ր մի և զոհեաց Եղկանա. և ետ Փեննայի կնոջ իւրում, և ուստերաց նորա և դստերաց նորա մասունս. ⁵և Աննայի ետ մասն մի. զի ո՛չ գոյր նորա որդի: Բայց զԱննա՝ սիրէր Եղկանա՝ առաւել քան զՓեննանա. և Տէր փակեաց զարգանդ նորա. ⁶զի ո՛չ ետ նմա որդի, ըստ նեղութեան իւրում, և ըստ տրտմութեան անձին իւրոյ. և տրտմեալ էր վասն այնորիկ՝ զի փակեաց Տէր զարգանդ նորա առ 'ի չտալոյ նմա որդի*: ⁷Եւ այնպէս առնէր ամի ամի յելանելն նորա 'ի տուն Տեառն. և տրտմէ՛ր և լայր՝ և ո՛չ ուտէր*: ⁸Եւ ասէ ցնա Եղկանա այր իւր. Աննա: Եւ ասէ ցնա. Աւասիկ եմ տէր: Եւ ասէ

* Ոմանք. Եւ էին Փեննանայի որ՞... և Աննայի ո՛չ գոյին որդիք:

* Ոմանք. Եւ անդ էր Յեղի, և եր՞: Ուր Ոսկան. Եւ էին անդ Յեղի, և եր՞:

* Բազումք. Ձի ո՛չ ետ նմա Տէր որդի:

* Ոմանք. Եւ տրտմեալ էր և լայր՝ և:

ցնա. Ձի՞ք է քեզ զի լաս, և ընդէ՞ր ո՛չ ուտես, և ընդէ՞ր հարկանէ զքեզ սիրտ քո. ո՞չ լաւ եմ ես քեզ քան զտա՛սն որդի՞*:

Բ⁹ Եւ յարեա՛ւ Աննա յետ ուտելոյ նորա ՚ի Սելով. և եկաց առաջի Տեառն. և Յեղի քահանայ նստէ՛ր աթոռով առ սեամս տաճարին Տեառն: ¹⁰Եւ նա ցաւագին անձամբ եկաց յաղօթս առ Տէր. և ելաց լալով և ասէ. ¹¹Ա՛դոճայ Տէր, Ելովէ՛ Սաբաւովք. եթէ հայելով հայեսցի՛ս ՚ի տառապանս աղախնոյ քոյ, և յիշեսցես զիս. և տացես աղախնոյ քում զաւա՛կ առն, տաց զնա նուէ՛ր առաջի քո մինչև ցօր մահուան իւրոյ. և զինի և արբեցութիւն մի՛ արբցէ, և երկաթ մի՛ ելցէ ՚ի գլուխ նորա՞: ¹²Եւ եղև իբրև յաճախեաց կալ յաղօթս առաջի Տեառն. և Յեղի քահանայ միտ դնէր բերանոյ նորա. ¹³և նա խօսէ՛ր ՚ի սրտի իւրում, և շրթունք իւր ո՛չ շարժէին, և բարբառ իւր ո՛չ լինէր լսելի. և լուա՛ւ նմա Տէր: Եւ համարեցաւ զնա Յեղի արբեա՛լ. ¹⁴և ասէ ցնա պատանեակն Յեղեայ. Մինչև յե՞րբ կայցես յարբեցութեան, թափեա՛ ՚ի քէն զգինիդ քո, և զնա՛ յերեսաց Տեառն՞: ¹⁵Եւ պատասխանի ետ Աննա՝ և ասէ. Ո՛չ այդպէս տէր, այլ կին վշտագնեա՛լ եմ ես ոգւով, և զինի և արբեցութիւն ո՛չ է իմ արբեալ. և հեղո՛ւմ զանձն իմ առաջի Տեառն: ¹⁶Մի՛ համարիր զաղախին քո դուստր ժանտ, զի ՚ի բազում տրտմութենէ և ՚ի տխրութենէ իմմէ վարանեալ կամ մինչև ցայժմ՞: ¹⁷Ե՛տ նմա պատասխանի Յեղի՛ և ասէ. Ե՛րթ ՚ի խաղաղութիւն, և Աստուած Իսրայէլի տացէ՛ քեզ զամենայն խնդրուածս քո զոր խնդրեցեր ՚ի նմանէ: ¹⁸Եւ ասէ Աննա. Եգիտ աղախին քո շնորհս առաջի քո: Եւ զնաց կինն զճանապարհս իւր, և եմո՛ւտ ՚ի վանս իւր՝ և կերաւ ընդ առն իւրում, և խօսեցաւ, և երեսք իւր այլ ո՛չ ևս տխրեցան: ¹⁹Եւ կանխեսցին ընդ առաւօտն երկի՛ր պագին Տեառն, և զնացին զճանապարհս իւրեանց. և եմո՛ւտ Եղկանա ՚ի տուն իւր յԱրիմաթեմ. և մերձեցա՛ւ առ Աննա կին իւր: Եւ յիշեաց զնա Տէր, և յղացա՛ւ: ²⁰Եւ եղև ՚ի ժամանակի աւուրցն, և ծնաւ որդի՛, և կոչեաց զանուն նորա Սամուէլ՝ ասէ. Ձի՛ ՚ի Տեառնէ Աստուծոյ զօրութեանց խնդրեցի զսա՞:

Գ ²¹Եւ ել այրն Եղկանա և ամենայն տուն նորա զոհե՛լ ՚ի Սելով զգո՛հ աւուրցն. և զո՛ւխտս իւր, և զամենայն տասանորդս իւր տարա՛ւ: ²²Եւ Աննա՝ ո՛չ ել ընդ նմա. զի ասաց ցայ՛ր իւր, թէ մինչև ելցէ անդր մանուկս յորժամ հատուցի՛ց զսա ՚ի ստենէ. և յանդիման լիցի առաջի Տեառն, և նստցի՛ անդ մինչև ցյաւիտեան՞: ²³Եւ ասէ ցնա Եղկանա այր իւր. Արա՛ որ ինչ բարի՛ թուի առաջի աչաց քոց. նիստ աստէն մինչև հատուցես զդա ՚ի ստենէ. և Տէր հաստատեսցէ՛ որ ինչ ել ՚ի բերանոյ քումմէ: Եւ նստա՛ւ կինն և սնո՛յց զորդին իւր՝ մինչև հատոյց զնա ՚ի ստենէ՞: ²⁴Եւ ել ընդ նմա ՚ի Սելով երեմենեա՛ւ զուարակաւ, և պանի՛ք և արդուաւ նաշիւոյ, և սափորով զինւոյ. և մտի՛ն ՚ի տուն Տեառն ՚ի Սելով. և մանուկն ընդ նոսա՞. ²⁵և մատուցին առաջի Տեառն. և սպան հայրն նորա զգոհն՝ զոր առնէր աւուրց յաւուրս Տեառն:

* Ոմանք. Աւասիկ ես տէր:

* Ոմանք. Ելոյէ Սաբաւոթ:

* Ոմանք. Եւ ասէ ցնա մանուկն Յեղեայ:

* Ոմանք. Տրտմութենէ իմմէ վարանեալ, և կամ մին՞:

* Ոմանք. Եւ ասէ. Ձի՛ ՚ի Տեառնէ զօ՞:

* Ոսկան. Եւ ել այր նորա Եղ՞:

* Ոսկան. Ձդա ՚ի ստենէ:

* Ոսկան. Արա՛ որպէս ինչ բարի:

* Օրինակ մի. Երեմենաւ և զուարակաւ:

Դ Եւ մատոյց զմանուկն. և սպան զգուարակն վասն փրկութեան մանկանն:
²⁶Եւ մատոյց Աննա մայր մանկանն զմանուկն առ Յեղի, և ասէ. Յիս տէր իմ.
Կենդանի՛ է անձն քո. ես այն կինն եմ, որ կացի առաջի քո ընդ քեզ՝ ²⁷կալ
յաղօթս առ Տէր վասն մանկանս այսորիկ. և ետ Տէր զխնդրուածս իմ, զոր
խնդրեցի՛ ի նմանէ: ²⁸Եւ տա՛մ զդա փոխ Տեառն՝ զամենայն աւուրս որչափ և
կեցցէ. և եղիցի դա՝ փոխ Տեառն. և պագին երկի՛ր անդ Տեառն: Եւ յաղօթս եկաց
Աննա՝ և ասէ.

2

Գլուխ Բ

¹Չաստատեցա՛ւ սիրտ իմ ՚ի Տէր, և բարձրացաւ եղջեր իմ յԱստուած իմ.
ընդարձակեցաւ բերան իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէջ ՚ի
փրկութեան քում* : ²Ձի ո՛չ գոյ սուրբ իբրև զՏէր. և ո՛չ գոյ արդար՝ իբրև
զԱստուած մեր. և ո՛չ գոյ սուրբ բաց ՚ի քէն: ³Մի՛ պարծիք՝ և մի՛ խօսիք
զամբարտաւանս. և մի՛ ելցէ մեծաբանութիւն ՚ի բերանոյ ձերմէ. զի Աստուած
գիտութեանց Տէր, և Աստուած պատրաստէ զարուեստս իւր: ⁴Աղեղունք հզօրաց
տկարացան, և տկարք զգեցան զօրութիւն: ⁵Լցեալք հացի՛ւ նուաղեցին. և
քաղցեալք բնակեցան յերկրի. զի ամուլն ծնաւ եւթն, և բազմածինն նուաղեաց
յորդուց: ⁶Տէր մեռուցանէ և կեցուցանէ. իջուցանէ ՚ի դժոխս և հանէ: ⁷Տէր
աղքատացուցանէ և մեծացուցանէ. խոնարհեցուցանէ՛ և բարձրացուցանէ,
⁸կանգնէ յերկրէ զտնանկն, և յարուցանէ՛ զաղքատն յաղբակց. նստուցանել
զնոսա ընդ զօրաւորս ժողովրդեան. և աթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա* :
⁹Տայ՛ զուխտս ուխտաւորի. և օրհնեաց՛ զամս արդարոց. զի ո՛չ իւրով
զօրութեամբ զօրանայ այր հզօր. Տէր տկար առնէ զհակառակորդս իւր՝ Տէր
սուրբ է: Մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր. և մի՛ պարծեսցի հզօրն
՚ի զօրութիւն իւր. և մի՛ պարծեսցի մեծատունն ՚ի մեծութիւն իւր. այլ այնու՛
պարծեսցի՝ որ պարծիցին, իմանալ և ճանաչել զՏէր, և առնել զիրաւունս և
զարդարութիւն ՚ի մէջ երկրի* : ¹⁰Տէր ել յերկինս՝ և որոտաց, և ինքն դատի զծագս
երկրի՝ որ արդարն է. տայ՛ զօրութիւն թագաւորաց մերոց. և բարձրացուցէ՛
զեղջեր օծելոյ իւրոյ* : ¹¹Եւ թողին զնա անդ առաջի Տեառն, և զնացին
յկրիմաթեմ ՚ի տուն իւրեանց:

Ե Եւ մանուկն Սամուէլ՝ կայր ՚ի սպասու երեսաց Տեառն՝ առաջի Յեղեայ
քահանայի: ¹²Եւ որդիքն Յեղեայ քահանայի՝ որդիք ժանտք, և ո՛չ ճանաչէին
զՏէր: ¹³Եւ իրաւունք քահանային էին առ ՚ի ժողովրդեմէն՝ յամենայնէ որ զոհէր.
գայր մանուկ քահանային մինչդեռ եփէր միսն, և երեքժանի մսահան ՚ի ձեռին
իւրում. ¹⁴և արկանէր զայն յաւազան, կամ ՚ի սան մեծ պղնձի՝ կամ ՚ի պո՛յտն, և
զամենայն որ ինչ գայր ՚ի մսահանն՝ առնո՛յր իւր քահանայն: Ըստ այսմ
օրինակի՛ առնէին ամենայն Իսրայէլի որ գային զոհել ՚ի տուն Տեառն ՚ի Սելով* :
¹⁵Եւ մինչչև՛ ճարպն ճենճերեալ եր՝ գայր մանուկ քահանային, և ասէր ցայրն որ

* Ոմանք. Ուրախ եղէ ՚ի փրկութեան:

* Ոմանք. Նստուցանէ զնա ընդ զօ՛:

* Ոմանք. Ձուխտս ուխտաւորաց:

* Ոմանք. Եւ բարձր առնէ եղջիր:

* Ոմանք. Ամենայն որդուցն Իսրայէլի որ գային զոհել Տեառն ՚ի Սելով:

զոհերն. Տո՛ւր միս խորովելոյ քահանային, և ո՛չ առնում ՚ի քէն միս եփեալ ՚ի սանէ: ¹⁶Եւ ասէ՛ր այրն որ զոհէր. ճենճերեսցի՛ նախ ճարպն որպէս օրէն է, և ապա առցես քեզ յամենայնէ՛ որոց և ցանկասցի անձն քո: Եւ նա ասէր. Ո՛չ, բայց եթէ արդ տայցես. և եթէ ո՛չ տաս՝ ուժգին առից՝: ¹⁷Եւ էին այն մեղք մեծամեծք յոյժ մանկանցն առաջի Տեառն՝: ¹⁸Եւ Սամուէլ մանուկն պաշտէ՛ր առաջի Տեառն, արկեալ զհւրն եփուղ: ¹⁹Եւ կրկնոց փոքրիկ առնէ՛ր նմա մայրն իւր, և տանէ՛ր նմա աւուրց յաւուրս յելանել ընդ առն իւրում զոհել զզոհ աւուրցն: ²⁰Եւ օրհնեա՛ց Յեղի զեղկանա և զկին նորա, և ասէ. Հատուցէ՛ քեզ Տէր զաւակ ՚ի կնոջդ յայդմանէ փոխանակ փոխոյն զոր ետուր Տեառն: Եւ գնա՛ց այրն ՚ի տեղի իւր: ²¹Եւ այց արար Տէր Աննայի, և յղացա՛ւ և ծնա՛ւ ևս երիս ուստերս և երիս դստերս:

Ձ Եւ մեծացա՛ւ մանուկն Սամուէլ առաջի Տեառն: ²²Եւ Յեղի ծերացեալ էր յոյժ, և լսէ՛ր զամենայն ինչ զոր առնէին որդիք նորա ընդ որդիսն Իսրայէլի. և ո՞րպէս ննջեցուցանէին զկանայս ուխտաւորս առ դրան խորանին վկայութեան: ²³Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր առնէք ըստ բանին ըստ այնմիկ, զոր ե՛ս լսեմ բանս ՚ի բերանոյ ամենայն ժողովրդեանն Տեառն: ²⁴Մի՛ որդեակք, զի ո՛չ է բարուք լուրն զոր ե՛ս լսեմ, առ ՚ի չծառայելոյ ժողովրդեանն Աստուծոյ: ²⁵Ձի եթէ մեղանչելով մեղանչիցէ այր՝ ա՛ռն, կացցեն յաղօթս վասն նորա առ Տէր. և եթէ Տեառն մեղանչիցէ, ո՞վ կացցէ յաղօթս վասն նորա: Եւ ո՛չ լսէին ձայնի հօրն իւրեանց. զի կամելով կամէր Տէր եղծանել զնոսա՝:

Է ²⁶Եւ մանուկն Սամուէլ երթայր և մեծանայր #. և հաճո՛յ էր Աստուծոյ և մարդկան: ²⁷Եւ ե՛կն հրեշտակ Աստուծոյ առ Յեղի՛ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Յայտնելով յայտնեցայ ամենայն տան հօր քոյ մինչդեռ էին նոքա յերկրին եգիպտացուց ծառայք տա՛ն փարաւոնի. ²⁸և ընտրեցի զտուն հօր քոյ յամենայն զաւազանացն Իսրայէլի քահանայանալ ինձ, և ելանել առ սեղանն իմ, արկանել խո՛ւնկս, և կրել զեփուղն առաջի իմ. և ետու տան հօր քոյ զամենայն զառ ՚ի հրոյն որդւո՛ցն Իսրայէլի # ՚ի կերակուր: ²⁹Եւ ընդէ՞ր հայեցար ՚ի խո՛ւնկս իմ և ՚ի զոհս իմ ժպի՛րի ակամբ. և փառաւորեցեր զորդիսն քո քան զիս, օրհնելով զպտուղ ամենայն զոհիցն Իսրայէլի՝ որ է առաջի իմ՝: ³⁰Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ասացի թէ տո՛ւն քո և տուն հօ՛ր քոյ շրջեսցին առաջի իմ մինչև ցյաւիտեան. և արդ՝ ասէ Տէր. Քա՛ւ լիցի ինձ. այլ զփառաւորի՛չս իմ փառաւորեցի՛ց, և որ արհամարհէն զիս՝ անարգեսցի՞: ³¹Ահա աւուրք եկեսցեն, և սատակեցից զզաւակ քո, և զզաւակ տա՛ն հօր քոյ. և մի՛ եղիցի ծեր ՚ի տան քում: ³²Եւ հայեսցիս ստեպ # կողկողագին յամենայն բարութիւնս՝ # զոր արասցէ Տէր Աստուած Իսրայէլի. և մի՛ եղիցի ծեր ՚ի տան քում զամենայն աւուրս: ³³Եւ այր ո՛չ սատակեցից ՚ի սեղանոյ իմմէ, առ ՚ի սորելոյ աչա՛ց իւրոց, և մաշելոյ զա՛նձն նորա. և ամենայն մնացորդք տա՛ն քոյ անկցին սրով արանց՝: ³⁴Եւ այն նշանակ լիցի քեզ՝ որ եկեսցէ ՚ի վերայ երկոցուն որդւոցն քոց Ոփնեայ և Փենեհեսի. ՚ի միո՛ւն աւուր մեռցին երկոքեան:

* *Ոմանք.* Եւ ասէր ցայն որ զոհէրն:

* *Ոսկան յաւելու.* Առաջի Տեառն, զի արհամարհէին արքն զզոհ Տեառն:

* *Օրհնակ մի.* Տեառն մեղանչիցեն. ո՞վ կայցէ յա՞:

* *Ի լուս՝.* Առնելոյ զպտուղ ամենայն: *Ոմանք.* Պտուղ ամենայն զոհիցն Իսրայէլի, և առա՞:

* *Բազումք.* Վասն այսորիկ այսպէս:

* *Ոսկան.* Եւ այլ ո՛չ սատա՞: *Ոմանք.* Առ ՚ի սորելոյ աչաց իմոց:

³⁵Եւ յարուցից ինձ քահանայ հաւատարիմ. որ զամենայն ինչ ՚ի սրտի իւրում և յանձին իւրում արասցէ. և շինեցից նմա տուն հաւատարիմ. և շրջեսցի՝ առաջի օծելոյ իմոյ զամենայն աւուրս՝: ³⁶Եւ եղիցի՝ ամենայն որ մնայցէ ՚ի տան քում, եկեսցէ երկիր պագանել նմա դանգի՝ միոջ արծաթոյ #, և նկանակի՝ միոյ հացի. և ասիցէ. Ընկեա՛ զիս ՚ի տեղի մի քահանայութեան քոյ, զի կերայց հաց՝:

3

Գլուխ Գ

Ը ¹Եւ մանուկն Սամուէլ կայր ՚ի սպասու Տեառն առաջի Յեղեայ քահանայի: Եւ բան Տեառն պատուական էր յաւուրսն յայնսիկ. և ո՛չ գոյր տեսիլ որ գուշակէր: ²Եւ եղև յաւուր յայնմիկ ննջէր Յեղի ՚ի տեղոջ իւրում, և աչք նորա սկսան ծանրանալ, և ո՛չ կարէր տեսանել. ³և ճրագն Աստուծոյ չև՛ էր անցեալ. և Սամուէլ ննջէր ՚ի տաճարին Տեառն՝ ուր էր տապանակն Աստուծոյ՝: ⁴Եւ կոչեաց Տէր և ասէ. Սամուէլ՛ Սամուէլ: Եւ ասէ. Ա՛ւասիկ եմ՝: ⁵Եւ ընթացաւ առ Յեղի և ասէ. Ա՛ւասիկ եմ ես, զի՞ կոչեցեր զիս: Եւ ասէ. Ո՛չ կոչեցի զքեզ, դարձի՛ր անդրէն և ննջեա՛: Եւ դարձա՛ւ անդրէն և ննջեաց: ⁶Եւ յաւել Տէր մի՛ւս անգամ կոչել՝ և ասէ. Սամուէլ՛ Սամուէլ: Եւ յարեաւ Սամուէլ չոգաւ առ Յեղի երկրորդ անգամ և ասէ. Ա՛ւասիկ եմ, զի՞ կոչեցեր զիս: Եւ ասէ. Ո՛չ կոչեցի զքեզ ո՛րդեակ իմ, դարձի՛ր անդրէն՝ և ննջեա՛: ⁷Եւ Սամուէլ նախածանօթ էր Աստուծոյ. և չև՛ էր յայտնեալ էր նմա բան Տեառն՝: ⁸Եւ յաւել Տէր մի՛ւս անգամ կոչել զՍամուէլ յերրորդում նուագին. և յարեաւ չոգա՛ւ առ Յեղի՝ և ասէ. Ա՛ւասիկ եմ ես՝ զի՞ կոչեցեր զիս: Եւ իմացա՛ւ Յեղի՝ թէ Տէր կոչէ զմանուկն՝: ⁹Եւ ասէ Յեղի ցՍամուէլ. Դարձի՛ր անդրէն և ննջեա՛ որդեակ. և եղիցի եթէ կոչեսցէ զքեզ, ասասցես. Խօսեա՛ց Տէր, զի լուիցէ՛ ծառայ քո: Եւ զնաց Սամուէլ՛ և ննջեաց ՚ի տեղոջ իւրում: ¹⁰Եւ եկն Տէր եկաց ՚ի վերայ՝ և կոչեաց զնա, որպէս միանգամն և միւսանգամ. Սամուէլ՛ Սամուէլ: Եւ ասէ Սամուէլ. Խօսեա՛ց Տէր, զի լուիցէ՛ ծառայ քո՝:

Թ ¹¹Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Ահա՛ ես առնեմ զբանս իմ ՚ի մէջ Իսրայէլի. որպէս զի ամենայնի որ լսիցէ զնոսա՝ հնչեսցեն երկոքեան ականջք իւր: ¹²Յաւուր յայնմիկ յարուցից ՚ի վերայ Յեղեայ զամենայն ինչ զոր խօսեցայ ՚ի վերայ տան նորա. սկսայց և կատարեցից. ¹³որպէս պատմեցի՝ նմա, եթէ խնդրեցից վրէժ ՚ի տան նորա մինչև յաւիտեան. վասն անօրէնութեան որդւոց նորա, զի հայիոյէին զԱստուած որդիք նորա, և նա ո՛չ խրատէր զնոսա՝: ¹⁴Եւ ո՛չ այնպէս. այլ երդուայ տանն Յեղեայ, եթէ ո՛չ քաւեսցի անօրէնութիւն տանն Յեղեայ խնկովք և զոհիւք մինչև յաւիտեան: ¹⁵Եւ ննջեաց Սամուէլ մինչև ցառաւօտն. և կանխեաց ընդ առաւօտն, և երաց զդուրս տանն Տեառն. և Սամուէլ երկեա՛ւ պատմել զտեսիլն

* Այլք. Չամենայն ինչ որ ՚ի սրտի իմում, և յանձին իմում արասցէ:

* Ոսկան. Նմա վասն դանգի միոջ ար՝:

* Ոմանք. Եւ ճրագն Աստուծոյ չև էր յարդարեալ. և Սամուէլ:

* Ոմանք. Եւ ասէ. Ահաւասիկ ես:

* Ոմանք. Ահաւասիկ կամ, զի՞ կոչէ՛:

* Ի լուս՝. Նախ անծանօթ էր Աստուծոյ. համաձայն այլոց ՚ի բնաբ՝:

* Ոմանք. Յերրորդ նուագին... եթէ Տէր կոչեաց զնա՛:

* Օրհնակ մի. Խօսեցաւ Տէր, և լուիցէ՛ ծա՛:

* Ոմանք. Որպէս միանգամն և միւս ևս անգամն:

* Ոմանք. Վասն անիրաւութեան որդւոց... և նա ո՛չ սաստէր նոցա:

Չեղեայ*։ ¹⁶Եւ ասէ Չեղի ցՍամուէլ։ Սամուէլ որդեակ։ Եւ ասէ Աւասիկ ես։ ¹⁷Եւ ասէ Չի՞նչ է բանն խօսեցեալ ընդ քեզ մի՞ թաքուցաներ յինէն օ՞ն և օ՞ն արասցէ ընդ քեզ Աստուած, և օ՞ն և օ՞ն յաւելցէ՞ թէ թաքուցես յինէն բան մի յամենայն բանից խօսեցելոց յականջս քո*։ ¹⁸Եւ պատմեաց նմա Սամուէլ զամենայն բանսն, և ո՛չ թաքոյց ՚ի նմանէ։ Եւ ասէ Չեղի։ Տէր որ ինչ բարի է առաջի իւր ի՛նքն արասցէ*։ ¹⁹Եւ մեծացաւ Սամուէլ և էր Տէր ընդ նմա, և ո՛չ անկաւ յամենայն բանից նորա ՚ի գետին։ ²⁰Եւ գիտաց ամենայն Իսրայէլ ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէէ՝ թէ հաւատարիմ է Սամուէլ ՚ի մարգարես Տեառն։ ²¹Եւ յաւել Տէր գուշակել ՚ի Սելով, թէ յայտնեցաւ Տէր Սամուէլի ՚ի Սելով ըստ բանին Տեառն և հաւատարիմ եղև Սամուէլ լինել ՚ի մարգարէ Տեառն, յամենայն Իսրայէլի ՚ի ծագաց երկրին մինչև ՚ի ծագս։ Եւ Չեղի ծերացեալ էր յոյժ, և որդիք նորա երթային երթալով՝ և չա՛ր էր ճանապարհ նոցա*։

4

Գլուխ Դ

Ժ ¹Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ժողովէին այլազգիքն ՚ի վերայ Իսրայէլի և էլ Իսրայէլ ընդդէմ նոցա ՚ի պատերազմ, և բանակեցան յԱբինեզեր։ և այլազգիքն բանակեցան յԱփեկ*։ ²Եւ ճակատին այլազգիքն ընդդէմ Իսրայէլի, և խմբեցաւ պատերազմն՝ և պարտեցաւ այր Իսրայէլի յերեսաց այլազգեացն, և հարան ՚ի ճակատուն չորք հազարք արանց*։ ³Եւ եկն զօրն ՚ի բանակն։ Եւ ասեն ծերքն Իսրայէլի։ Ընդէ՞ր արդևք պարտեաց զմեզ Տէր այսօր առաջի այլազգեացն և առցուք առ մեզ ՚ի Սելովայ զտապանակ ուխտին Աստուծոյ մերոյ և ելցէ՞ ՚ի միջի մերուն, և փրկեսցէ՞ զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց*։ ⁴Եւ առաքեաց ժողովուրդն ՚ի Սելով, և առին անտի զտապանակ ուխտին Տեառն զօրութեանց որ նստի ՚ի քերովբէս։ և երկոքեան որդիքն Չեղեայ ընդ տապանակի ուխտին Աստուծոյ Ոփնի՛ և Փենեհէս գնացին։ ⁵Եւ եղև իբրև եկն տապանակ ուխտին Տեառն ՚ի բանակն, աղաղակեաց ամենայն Իսրայէլ մածածայն, և հնչեաց երկիրն։ ⁶Եւ լուան այլազգիքն զբարբառ աղաղակին և ասեն այլազգիքն։ Չի՞նչ է բարբառ մեծի՞ աղաղակին այնորիկ ՚ի բանակի Երրայեցւոցն։ Եւ գիտացին թէ տապանակն Տեառն եկն ՚ի բանակն։ ⁷Եւ երկեան այլազգիքն՝ և ասեն։ Ա՛յն Աստուածք նոցա եկին ՚ի բանակն և պրեցո՞ զմեզ Տէր այսօր։ Վա՛յ մեզ՝ զի ո՛չ եղև մեզ այսպիսի յերէկ և յեռանտ*։ ⁸Վա՛յ մեզ և ո՞ ապրեցուցէ զմեզ ՚ի ձեռաց Աստուծոցն հզօրացն այնոցիկ և այն Աստուածք են՝ որ հարին զեգիպտոս ամենայն հարուածովք, և յամենայն անապատին։ ⁹Քաջացարո՛ւք և լերո՛ւք արք՝ # ո՛ այլազգիք, զուցէ՛ ծառայիցէք Երրայեցւոցն՝

* Այլք. Եւ եբաց զդրունս տանն։

* Ոմանք. Ընդ քեզ Տէր... դո՛ւ յինէն բան... խօսելոց յականջս քո։

* Ոմանք. Տեառն որ ինչ բարի է ա՛։

* Ոմանք. Յամենայն Իսրայէլի... մինչև ցծագս երկրի։

* Ոմանք. Եւ էլ Իսրայէլ ընդ նոսա ՚ի պատերազմ... յԱբենեզեր։

* Այլք. ՚ի ճակատու անդ չորք հազ՞։

* Օրինակ մի. Ուխտին Տեառն Աստուծոյ մերոյ, և եղիցի ՚ի միջի մերուն և։ *Յօրինակին պակասէր.* ՚ի ձեռաց թշնամեաց։

* Ոմանք. Մեզ այդպիսի յերէկ և։

գոր օրինակ ծառայեցին ձեզ. լերո՛ւք ա՛րք և պատերազմեցա՛յք ընդ նոսա: ¹⁰Եւ պատերազմեցան ընդ նոսա. և փախեա՛ւ այր Իսրայէլի իւրաքանչիւր ՚ի յարկս իւրեանց. և եղեն հարուածք մեծամեծք յոյժ. և անկան յԻսրայէլէ երեսուն հազար դասուց. ¹¹և տապանակն Աստուծոյ առաւ. և երկոքին որդիքն Յեղեայ մեռան, Ոփնի և Փենեհէս:

ԺԱ ¹²Եւ ընթացաւ ա՛յր Յամինացի ՚ի բանակէ անտի, և ե՛կն ՚ի Սելուվ յաւուր յայնմիկ. և ձորձք իւր պատառեալք՝ # և հո՛ղ զգլխով իւրով*, ¹³և եկն. և ահա Յեղի նստէր աթոռով իւրով առ դրանն, և դիտէր զճանապարհն. զի էր սիրտ նորա տագնապեալ՝ վասն տապանակին Աստուծոյ: Եւ եմուտ այրն գոյժ արկանել ՚ի քաղաքին. և աղաղակեաց քաղաքն. ¹⁴և լուա՛ւ Յեղի զձայն աղաղակին՝ և ասէ. Ջի՞նչ է ձայն աղաղակին այնորիկ: Եւ այրն փութացաւ մտանել՝ և տալ գոյժ Յեղեայ: ¹⁵Եւ Յեղի էր ամաց իննըսուն և ութից. և աչք իւր վատեալ էին և ո՛չ տեսանէր. և ասէ՛ Յեղի ցարսն որ շուրջ կային զնովաւ. Ջի՞նչ է բարբառ աղաղակին այնորիկ*: ¹⁶Եւ այրն փութացեալ եմուտ առ Յեղի՝ և ասէ ցնա. Ես եմ որ եկի՝ ՚ի բանակէ՛ անտի. և ես եմ որ փախեայ՝ այսօր ՚ի պատերազմէն: Եւ ասէ. Ջի՞նչ գործ գործեցաւ որդեակ՝ պատմեա՛ ինձ: ¹⁷Պատասխանի ետ պատանին՝ և ասէ. Փախեա՛ւ այր Իսրայէլի յերեսաց այլազգեացն, և հարուածք մեծամեծք էին ՚ի ժողովրդեանն. և երկոքին որդիքն քո մեռան Ոփնի և Փենեհէս. և տապանակն Աստուծոյ առաւ*: ¹⁸Եւ եղև իբրև յիշեաց զտապանակն Աստուծոյ, անկա՛ւ Յեղի յաթոռոյն յետս առ դրանն, և բեկա՛ւ ողն նորա՝ և մեռաւ. զի այր ծէր էր և ծանրացեալ. և նա դատեաց զԻսրայէլ ամս քսան*: ¹⁹Եւ նո՛ւ նորա՝ կին Փենեհէսի յղի՛ էր մերձ ՚ի ծնունդս. իբրև լուաւ զգոյժն՝ եթէ առա՛ւ տապանակն Աստուծոյ, և թէ մեռաւ սկեսրայրն նորա՝ և ա՛յր իւր, ելաց՝ և ծնա՛ւ՝ զի պատեցան զնովաւ երկունք իւր. ²⁰և ՚ի ժամանակի իւրում մեռանէր: Եւ ասեն ցնա կանայքն՝ որ շուրջ զնովաւն կային. Մի՛ երկնչիր զի ո՛ւստր ծնար: Եւ ո՛չ ետ պատասխանի, և ո՛չ իմացաւ սիրտ նորա*: ²¹Եւ կոչեցին զճանուկն Վայ՛ Բարովթ, ՚ի վերայ տապանակին Աստուծոյ, և ՚ի վերայ սկեսրայրին նորա, և ՚ի վերայ առն իւրոյ*. ²²և ասեն. Բարձեալ են փառք Իսրայէլի՝ յառնուլ տապանակին Տեառն. և վասն մեռանելոյ սկեսրէին նորա, և առն իւրոյ*:

5

Գլուխ Ե

ԺԲ ¹Եւ այլազգիքն առին զտապանակն Աստուծոյ, և տարան զնա յԱբիներգերայ յԱզովտոն: ²Եւ առին այլազգիքն զտապանակն Տեառն՝ և տարան ՚ի տո՛ւն Դագոնայ, և կանգնեցին զնա առ Դագոնաւ: ³Եւ կանխեցին Ազովտացիքն ՚ի վաղիւ անդր, և մտին ՚ի տո՛ւն Դագոնայ. և տեսին զԴագոն

* Ոմանք. Այր Յամինացի:

* Ոմանք. Որ շուրջն կային:

* Ոմանք. Փախեաւ այր Իսրայէլ յերես: Այլք. Սեծամեծք եղեն ՚ի ժողովրդեանն:

* Ոմանք. Եւ նա դատեցաւ զԻսրայէլ:

* Ոսկան. Եւ ՚ի ժամանակի յորում մեռ՛:

* Ոմանք. Եւ ՚ի վերայ սկեսրէին նորա:

* Ոմանք. Եւ վասն սկեսրեայրին նորա մեռանելոյ, և առն իւրոյ:

կործանեալ՝ ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի գետին առաջի տապանակին Տեառն. և կանգնեցին գԴագոն, և կացուցին զնա ՚ի տեղւոջ իւրում: Եւ ծանրացաւ ձեռն Տեառն ՚ի վերայ Ազովտացւոցն՝ և չարչարեաց զնոսա, և եհար զնոսա յերաստանս իւրեանց, զԱզովտոն և զսահմանս նորա*։ 4Եւ եղև իբրև կանխեցին ընդ առաւօտն ՚ի վաղիւ անդր՝ և ահա Դագոն կործանեալ կայր ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի տապանակի ուխտին Տեառն. և գլուխն Դագոնայ, և երկոքին թաթ ռոտից նորա խորտակեալք և ցրուեալք ընդ մէջ գետինն. և երկոքին դաստակք ձեռաց նորա անկեալք զսեմովքն*։ 5Բայց միայն ողնայարն Դագոնայ մնացեալ էր. վասն այնորիկ ո՛չ կոխեն քուրմք Դագոնայ զսեմնս տանն Դագոնայ. և ամենայն որ մտանէ՝ ՚ի տուն Դագոնայ՝ զսեմնս տանն Դագոնայ յԱզովտոս մինչև ցախօր. այլ քայլելով քայլեն և անցանեն*։ 6Եւ ծանրացաւ ձեռն Տեառն ՚ի վերայ Ազովտայ. և ած ՚ի վերայ նոցա հարուածս յերաստանս, և եռացոյց մկոննս յանդս նոցա. և եղև շըշուկ մեծ մահու ՚ի քաղաքին:

ԺԳ 7Եւ տեսին արք Ազովտայ՝ թէ այնպէս է. ասեն. Ո՛չ նստցի տապանակն Աստուծոյ առ մեզ. զի ծանրացաւ ձեռն նորա ՚ի վերայ մեր, և ՚ի վերայ Դագոնայ Աստուծոյն մերոյ*։ 8Եւ առաքեցին ժողովեցին զամենայն նախարարս այլազգեացն առ ինքեանս, և ասեն. Չի՞նչ արասցուք տապանակին Աստուծոյ Իսրայէլի: Եւ ասեն Գեթացիքն. Փոխեսցի՛ տապանակն Աստուծոյ Իսրայէլի առ մեզ. և փոխեցաւ տապանակն Աստուծոյ ՚ի Գեթ: 9Եւ եղև յետ փոխելոյ նորա անդր, լինէր՝ ձեռն Տեառն ՚ի վերայ քաղաքին, և խռովութիւն մեծ յոյժ. և չարչարեաց զարս քաղաքին ՚ի փոքուէ մինչև ցմեծամեծս, և եհար զնոսա յերաստանս իւրեանց. և արարին Գեթացիքն իւրեանց երաստանս*։ 10Եւ առաքեցին զտապանակն Աստուծոյ յԱսկաղոն. և եղև ՚ի մտանել տապանակին Աստուծոյ յԱսկաղոն. զբողոք բարձին Ասկաղոնացիքն՝ և ասեն. Ընդէ՞ր դարձուցէք զտապանակն Աստուծոյ Իսրայէլի առ մեզ, սպանանել զմե՛զ և զժողովուրդս մեր: 11Եւ առաքեցին և ժողովեցին զամենայն նախարարս այլազգեացն, և ասեն. Առաքեցէ՛ք զտապանակն Աստուծոյ Իսրայէլի՝ և նստցի՛ ՚ի տեղւոջ իւրում, և մի՛ սպառեցէ զմեզ և զժողովուրդս մեր. զի եհաս շըշուկ մահու յամենայն քաղաքիս ծանրացեալ յոյժ. յորմէ հետէ եմո՛ւտ տապանակն Աստուծոյ Իսրայէլի անդր: 12Եւ կենդանիքն որ ո՛չ էին մեռեալ՝ հարան յերաստանս իւրեանց. և ել աղաղակ քաղաքին յերկինս:

6

Գլուխ Զ

1Եւ էր տապանակն Աստուծոյ յանդաստանին այլազգեաց զելթն ամիս. և եռացոյց յերկիր նոցա մուկն*։ 2Եւ կոչեցին այլազգիքն զքուրմսն, և զիղձսն, և

* Ոմանք. Առաջի տապանակին Աստուծոյ:

* Յօրինակին պակասէր. Եւ եղև իբրև կանխե՛: Ոսկան. Եւ ցրուեալք ընդ մէջ գետինն:

* Ոմանք. Ողնայարն Դագոնայ: Յայլս պակասի. Քուրմք Դագոնայ զսեմնս տանն Դագոնայ յԱզով՛:

* Այլք. Թէ այն այնպէս է:

* Այլք. Ի՛ փոքուէ մինչև ՚ի մեծա՛:

* Ոմանք. Եւ էր տապանակն Տեառն յանդաստա՛:

զգէտս իւրեանց՝ և ասեն. Չի՞նչ արասցուք տապանակին Տեառն, ցուցէ՛ք մեզ՝ ի՞նչ առաքեսցուք զնա՝ ի տեղի իւր՝:

ԺԴ Եւ ասեն. ³Եթէ առաքեցէք զտապանակն Աստուծոյ Իսրայէլի ուխտին Տեառն, մի՛ առաքէք զնա ունայն, այլ տալով տաջիք նմա զհարուածոցն, և ապա՝ բժշկեսջիք՝ և հաշտեսցի ընդ ձեզ. գուցէ՛ ո՛չ վերանայցէ ձեռն նորա ՚ի ձեռնը՝: ⁴Եւ ասեն. Չի՞նչ տայցեմք ընդ զանին նորա: Եւ ասեն. Ըստ թուոյ նախարարացն այլազգեաց. հինգ երաստանս ոսկիս արարէ՛ք, և հինգ մուկն ոսկի. զի հարուածք են ՚ի ձեզ, և յիշխանս ձեր, և ՚ի ժողովրդեանդ: ⁵Եւ արդ՝ արարէ՛ք զպատկերս երաստանաց ձերոց. և զնմանութիւն մկանց ձերոց, ապականչաց երկրին. և տու՛ք Տեառն փառս, զի թեթևացուցէ՛ զձեռն իւր ՚ի ձեռնը, և ՚ի դի՛ց ձերոց, և յերկրէ՛ ձերմէ: ⁶Եւ ընդէ՞ր ծանրացուցանէք զսիրտ ձեր, որպէս ծանրացոյց Եփայտոս և փարաւոն զսիրտս իւրեանց. ո՛չ ապաքէն յորժամ խաղաց նքօք, ապա՝ արծակեցին զնոսա՝ և զնացին՝: ⁷Եւ արդ՝ առէ՛ք և արարէք սայլ մի նոր, և երկուս երինջս անդրանկածինս առանց որդւոց, և լծեցէ՛ք զերինջսն ՚ի սայլին. և քեցեցէ՛ք զորդիսն ՚ի հետո՛ց նոցա ՚ի տուն: ⁸Եւ առէ՛ք զտապանակն Տեառն, և դի՛ք զնա ՚ի վերայ սայլին. և զանօթսն զոսկիս զոր տայցէ՛ք նմա ընդ զանին. և դիջիք ՚ի քուրձ արգոք ՚ի կողմանէ նորա, և առաքեսջիք զնա՝ և վարեսջիք զնա՝ և երթիցէ: ⁹Եւ տեսջիք եթէ ՚ի մո՛ւտս սահմանաց իւրոց երթիցէ ընդ Բեթսամիւս՝ նա՛ արար մեզ զչարհիսս մեծամեծս զայսոսիկ. ապա թէ ո՛չ՝ զհտասցուք եթէ ո՛չ ձեռն նորա եկն ՚ի վերայ մեր. այլ վրիպակ իմն գործեցաւ ՚ի մեզ: ¹⁰Եւ արարին այլազգիքն այնպէս, և առին երկուս երինջս անդրանկածինս՝ և լծեցին զնոսա ՚ի սայլին, և զորդիս նոցա արգելին ՚ի տան: ¹¹Եւ եղին զտապանակն Տեառն ՚ի վերայ սայլին, և զքուրձն արգոք, և զմկունսն ոսկիս. և զպատկերս երաստանաց իւրեանց՝: ¹²Եւ ուղղեցան երինջքն ընդ ճանապարհ մտիցն Բեթսամիւսայ, ընդ մի՛ շաւիղ երթային՝ և վաստակէին, և ո՛չ խոտորէին ո՛չ յաջ՝ և ո՛չ յահեակ. և նախարարք այլազգեացն երթային զհետ նորա մինչև ՚ի սահմանս Բեթսամիւսայ:

ԺԵ ¹³Եւ որ ՚ի Բեթսամիւսն էին՝ հնծէին հունձս ցորենոյ ՚ի հովիտսն. և ամբարձին զայն իւրեանց՝ և տեսին զտապանակն Տեառն, և ուրախ եղեն ընդ առաջ նորա՝: ¹⁴Եւ սայլն եմուտ յանդաստանն Ովսեայ Բեթսամիւսացոյ. և կանգնեցին անդ առ նովաւ վէ՛մ մի մեծ. և պատառեցին զփայտ սայլին, և զերինջսն հանին յողջակէզս Տեառն՝: ¹⁵Եւ Ղևտացիքն հանին զտապանակն Տեառն, և զքուրձն արգոք ընդ նմին, և զանօթսն ոսկիս որ ՚ի նմա. և եղին ՚ի վերայ վիմին մեծի: Եւ արք Բեթսամիւսայ մատուցին ողջակէզս, և զոհեցին զո՛հս յաւուր յայնմիկ Տեառն: ¹⁶Եւ հինգ նախարարքն այլազգեաց տեսանէին, և դարձան յԱկկարոն՝: ¹⁷Եւ երաստանքն ոսկիք՝ զոր ետուն այլազգիքն Տեառն՝ ընդ զանին, մին Ազովտայ՛ էր, և մին Գազայ՛, և մին Ասկաղոնի՛, և մին Գեթայ՛, և

* *Ոմանք.* Չի՞նչ արասցուք տապանակին Աստուծոյ:

* *Այլք.* Մի՛ առաքիցէք զնա ու՛:

* *Այլք.* Չսիրտս ձեր, որպէս ծան՝: *Ոմանք.* Եւ ապա արծակեաց զնոսա, և:

* *Այլք.* Չտապանակն Տեառն ՚ի սայլին:

* *Ոմանք.* Չտապանակն Աստուծոյ, ուրախ ե՛:

* *Յօրինակին, ՚ի բնաբ՝.* Եւ փատառեցին, *այլ ՚ի լուս՝.* պատառե՛:

* *Ի լուս՝.* Եւ դարձան յԱսկաղոն, *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝.* Յոր և յաւելուն ոմանք. յաւուր յայնմիկ:

մին Ակկարոնի*։ ¹⁸Եւ մկունքն ոսկիք՝ ըստ թուոյ ամենայն քաղաքացն այլազգեաց, հինգեցուն նախարարացն, յամուր քաղաքաց՝ մինչև ցաւանս Փերեզացւոյն, մինչև ցվեմն յորոյ վերայ եղին զտապանակ ուխտին Տեառն. մինչև ցա՛յսօր յանդին Ովսեայ՝ Բեթսամիւսացւոյ։ Եւ ո՛չ հաճեցան որդիքն Յեքոնեայ ընդ արս Բեթսամիւսացւոցն, զի տեսին զտապանակն Տեառն*։ ¹⁹Եւ եհար՝ ՚ի նոցանէ յիսուն հազար և եւթանասուն այր. և սու՛գ առ ժողովուրդն՝ զի եհար Տէր ՚ի ժողովրդեանն հարուածս մեծամեծս յոյժ*։ ²⁰Եւ ասեն արք Բեթսամիւսացիք. Ո՛ կարասցէ շրջել առաջի Տեառն Աստուծոյ սրբոյս այսորիկ. և արդ՝ առ ո՞՛ ելանիցէ տապանակ Տեառն ՚ի մէնջ։ ²¹Եւ առաքեցին հրեշտակս առ բնակիչս Կարիաթարիմայ՝ և ասեն. Դարձուցին այլազգիքն զտապանակն Տեառն, իջէք և հանէք զնա՝ առ ձեզ։

7

Գլուխ Է

ԺՁ ¹Եւ եկին արք Կարիաթարիմայ, և հանին անտի զտապանակ ուխտին Տեառն. և տարան զնա ՚ի տուն Ամինադարայ որ ՚ի բլրին. և զեղիագար որդի նորա սրբեցին պահել զտապանակ ուխտին Տեառն։ ²Եւ եղև յօրէ՛ յորմէ հետէ էր տապանակն ՚ի Կարիաթարիմ, բազմացան աւուրքն և եղեն ամք քսան. և հայեցաւ ամենայն տունն Իսրայէլի զկնի Տեառն*։ ³Եւ խօսեցաւ Սամուէլ ընդ ամենայն տանն Իսրայէլի՝ և ասէ. Թէ յամենայն սրտէ ձերմէ դարձեալ էք առ Տէր, ՚ի բա՛ց արարէք զաստուածսն օտարոտիս ՚ի միջոյ ձերմէ, և զանտա՛ռսն. և պատրաստեցէք զսիրտս ձեր առ Տէր, և ծառայեցէք նմա՛ միայն, և փրկեսցէ՛ զձեզ ՚ի ձեռաց այլազգեացն*։ ⁴Եւ ՚ի բա՛ց արարին որդիքն Իսրայէլի զԲահադիմսն, և զանտա՛ռսն Աստարովթայ, և ծառայեցին նմա՛ միայնոյ։ ⁵Եւ ասէ Սամուէլ. Ժողովեցէք զամենայն Իսրայէլ ՚ի Մասեփաթ, և կացից յաղօթս վասն ձեր առ Տէր։ ⁶Եւ ժողովեցան ՚ի Մասեփաթ. և հանին ջուր, և եհեղ յերկիր առաջի Տեառն. և պահեցին յաւուր յայնմիկ, և ասեն. Սեղա՛ք առաջի Տեառն։

ԺԷ Եւ դատեցաւ Սամուէլ զորդիսն Իսրայէլի ՚ի Մասեփաթ։ ⁷Եւ լուան այլազգիքն եթէ ժողովեցան որդիքն Իսրայէլի ՚ի Մասեփաթ, և ելին նախարարք այլազգեացն ՚ի վերայ Իսրայէլի. և լուան որդիքն Իսրայէլի և երկեան յերեսաց այլազգեացն։ ⁸Եւ ասեն որդիքն Իսրայէլի ցՍամուէլ. Մի՛ դադարեր ՚ի գոչելոյ վասն մեր առ Տէր Աստուած քո, և փրկեսցէ՛ զմեզ ՚ի ձեռաց այլազգեացն։ ⁹Եւ ա՛ռ Սամուէլ գա՛ռն մի դիեցիկ, և եհան զնա ողջակէզ Տեառն հանդերձ ամենայն ժողովրդեամբն. և գոչեաց Սամուէլ առ Տէր վասն Իսրայէլի. և լուան նմա Տէր*։ ¹⁰Եւ մինչդեռ մատուցանէր Սամուէլ զողջակէզն, մերձեցան այլազգիքն ՚ի պատերազմ ՚ի վերայ Իսրայէլի. և որոտաց Տէր մեծա՛ւ բարբառով յաւուր յայնմիկ ՚ի վերայ այլազգեացն, և շփոթեցան և անկան առաջի Իսրայէլի և ելին

* Զօրինակին պակասէր. Այլազգիքն Տեառն ընդ գա՛ն։

* Ի լուս՞. Եւ ո՛չ խնդացին որդիքն Յեքո՞. համաձայն ոմանց ՚ի բնար՞։

* Զօրինակին՝ համաձայն բազմաց թուագրով դնի. ԾՌ և 3 այր։

* Ոմանք. Եւ հայեցան ամենայն տունն։

* Այլք. Եւ ծառայեցէք նմա միայնոյ, և փր՞։

* Ոմանք. Գառն մի դիացիկ, և եհան զնա յողջակէզս։ Ուր ևս ոմանք. գառն մի գեղեցիկ։

արքն Իսրայելի՝ ի Մասեփաթ*։ ¹¹Եւ հալածեցին զայլազգիսն. և հարին զնոսա մինչև ՚ի ներքոյ Բեթքովրայ։ ¹²Եւ ա՛ռ Սամուէլ վէմ մի, և կանգնեաց ՚ի մէջ Մասեփայ և ՚ի մէջ Պաղեսայ. և կոչեաց զանուն նորա Աբենեզեր, վէմ օգնականի. և ասէ. Մինչև՛ ցայս վայր օգնեաց մեզ Տէր*։ ¹³Եւ կորացոյց Տէր զայլազգիսն. և ո՛չ ևս յաւելին ելանել ՚ի վերայ սահմանացն Իսրայելի։ Եւ եղև ձեռն Տեառն ՚ի վերայ այլազգեացն զամենայն աւուրս Սամուէլի։ ¹⁴Եւ դարձուցին զքաղաքսն զոր առին այլազգիքն յորդոցն Իսրայելի, և ետուն զնոսա անդրէն Իսրայելի, յԱսկաղոնէ մինչև ցԳէթ. և զսահմանս Իսրայելի հանին ՚ի ձեռաց այլազգեացն. և էր խաղաղութիւն ՚ի մէջ Իսրայելի և ՚ի մէջ Ամուրիացւոցն։ ¹⁵Եւ դատեաց Սամուէլ զԻսրայէլ զամենայն աւուրս կենաց իւրոց։ ¹⁶Երթայր ան յամէ, և պատէր զԲեթէլ, և զԳաղաա՛դ, և զՄասեփաթ. և դատէր զԻսրայէլ յամենայն սրբեալսն յայնոսիկ*։ ¹⁷Եւ դարձ իւր էր յԱրեմաթն. զի անդ էր տուն նորա. և անդ դատէր զԻսրայէլ. և շինեաց անդ սեղան Տեառն։

8

Գլուխ Ը

ԺԸ ¹Եւ եղև իբրև ծերացաւ Սամուէլ, կացոյց զորդիս իւր դատաւորս Իսրայելի։ ²Եւ այս են անուանք որդւոց նորա. անդրանկանն Յովէլ, և անուն երկրորդին Աբիա՛. դատաւորք ՚ի Բերսաբէէ*։ ³Եւ ո՛չ գնացին որդիք նորա զճանապարհս նորա, և թիրեցան զհետ զօշաքաղութան. և առնուին կաշառ և թիրէին զիրաւունս*։ ⁴Եւ ժողովեցան ամենայն արք Իսրայելի՝ և եկին առ Սամուէլ յԱրիմաթն, ⁵և ասեն ցնա. Դու անադիկ ծերացար, և որդիք քո ո՛չ գնան զճանապարհ քո. և արդ՝ կացո՛ ՚ի վերայ մեր թագաւոր դատել զմեզ որպէս և այլ ազգք։ ⁶Եւ չար թուեցաւ բանն յաչս Սամուէլի. զի ասացին թէ տուր մեզ թագաւոր դատել զմեզ. և յաղօթս եկաց Սամուէլ առ Տէր։ ⁷Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Լո՛ւր ձայնի ժողովրդեանդ, որպէս և խօսեցան ընդ քեզ. զի ո՛չ եթէ զքեզ անարգեցին, այլ զի՛ս մերժեցին չթագաւորել ՚ի վերայ նոցա*։ ⁸Ըստ ամենայն գործոց զոր արարին ընդ իս՝ յօրէ յորմէ հանի զնոսա յեգիպտոսէ մինչև ցայսօր. և թողին զիս և ծառայեցին աստուածոց օտարաց, նոյնպէս առնեն նոքա և ընդ քեզ։ ⁹Եւ արդ՝ լո՛ւր ձայնի նոցա. բայց դնելով դնիցես վկայութիւն նոցա, և պատմեսցես նոցա զիրաւունս թագաւորի՝ որ թագաւորեսցէ՛ նոցա։

ԺԹ ¹⁰Եւ խօսեցաւ Սամուէլ զամենայն պատգամս Տեառն առ ժողովրդեանն՝ որ խնդրեցին ՚ի նմանէ թագաւոր*, ¹¹և ասէ. Այս ինչ լիցին իրաւունք թագաւորին որ թագաւորեսցէ ՚ի վերայ ձեր. զուստերս ձեր առցէ, և արասցէ կառավարս և հեծեալս, և սուրհանդակս առաջի կառաց իւրոց. ¹²և կացուցէ զնոսա իւր հազարապետս, և հարիւրապետս. և հնձել զհո՛ւնձս նորա, և կթել զկուրս նորա, և առնել նմա զէ՛նս՝ և անօթս կառաց։ ¹³Եւ զդստերս ձեր առցէ՛

* Ոմանք. Եւ ելին արքն Իսրայելի ՚ի Մասեփաթայ։

* Ի լուս՝. Ի մէջ Մասեփայ և ՚ի մէջ Բեթսանայ հնոյ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝։

* Ոմանք. Եւ երթայր ան յամէ։

* Ոմանք. Անդրանիկն Յովէլ... դատաւորք ՚ի Բեթսաբէէ։

* Ի լուս՝. Զհետ վախճանի զօշաքաղութան։

* Ոմանք. Որպէս և խօսեցին ընդ քեզ։

* Ոմանք. Զամենայն զպատգամս։

յիւղագործս, և ՚ի խորտկարարս, և ՚ի հացեփեացս: ¹⁴Եւ զանդս ձեր, և զայգիս ձեր, և զձիթենիս ձեր զազնիւս՝ առցէ. և տացէ ստրկաց իւրոց*։ ¹⁵Եւ զսերմանս ձեր, և զայգիս ձեր տասանորդեսցէ, և տացէ ներքինեաց իւրոց, և ստրկաց իւրոց: ¹⁶Եւ զծառայս ձեր, և զաղախնայս ձեր, և զանդեայս ձեր զազնիւս, և զէշս ձեր՝ առցէ և տասանորդեսցէ՝ ՚ի գործ իւր: ¹⁷Եւ զհօտս ձեր տասանորդեսցէ. և դուք եղիջիք նմա ծառայք: ¹⁸Եւ աղաղակեսցիք յաւուր յայնմիկ յերեսաց թագաւորին ձերոյ՝ զոր ընտրեցէք ձեզ, և ո՛չ լուիցէ ձեզ Տէր յաւուրսն յայնոսիկ. զի դուք ձեզէն ընտրեցէք ձեզ թագաւոր: ¹⁹Եւ ո՛չ կամեցաւ ժողովուրդն լսել Սամուէլի. և ասեն ցնա. Ո՛չ այդպէս է, այլ թագաւորեսցէ՝ ՚ի վերայ մեր. ²⁰և եղիցուք և մեք իբրև զայլ ազգս, և դատեսցէ՛ զմեզ թագաւորն մեր, և ելցէ՛ առաջի մեր և պատերազմեսցի զպատերազմ մեր*։ ²¹Եւ լուա՛ւ Սամուէլ զամենայն բանս ժողովրդեանն. և խօսեցա՛ւ զնոսա յականջս Տեառն: ²²Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Լո՛ւր ձայնի նոցա՝ և թագաւորեցո՛ւ նոցա թագաւոր: Եւ ասէ՛ Սամուէլ ցարս Իսրայէլի. Երթիցէ՛ իւրաքանչիւրոք ՚ի քաղաք իւր*։

9

Գլուխ Թ

Ի ¹Եւ է՛ր այր մի յորդոնցն Բենիամինի՝ և անուն նորա Կիս, որդի Աքիելի, որդւոյ Արեգայ, որդւոյ Բեքովրաթայ, որդւոյ Ափիայ. որդւոյ ա՛ռն Յիմենացւոյ: Այր զօրաւոր*։ ²Եւ է՛ր նորա որդի, և անուն նորա Սաւուղ, այր բարի՝ և անձնեայ. և ո՛չ գոյր յորդիսն Իսրայէլի այր լա՛ւ քան զնա. ուսովք չափ ՚ի վեր բարձր էր քան զամենայն երկիրն*։ ³Եւ կորեան էչք հօրն Սաւուղայ: Ասէ՛ Կիս ցՍաւուղ ցորդի իւր. Ա՛ռ ընդ քեզ մի՝ ՚ի մանկանցդ, և արի՛ք երթայք խնդրեցէ՛ք զէշսն: և զնացին, և անցին ընդ լեառնն Եփրեմի: ⁴Եւ անցին ընդ լեառնն Սարիսայ, և ո՛չ գտին. և անցին ընդ երկիրն Սաղիմայ՝ և ո՛չ ուրեք էին, և անցին ընդ երկիրն Յեմինացւոյն՝ և ո՛չ գտին*։ ⁵Եւ իբրև եկին ՚ի Սիփ. ասէ Սաւուղ ցպատանեակն իւր որ ընդ նմա. Ե՛կ դարձցուք անդրէն, գուցէ՛ թողեալ հօր մերոյ զէշսն, և զմէնջ հոգասցէ: ⁶Եւ ասէ ցնա պատանին. Ահա ա՛յր Աստուծոյ է՛ ՚ի քաղաքիս յայսմիկ, այր փառաւոր, և զամենայն զոր ինչ խօսիցի՝ լինելով լինի. և արդ՝ երթիցուք անդր, զի պատմեսցէ մեզ զճանապարհս մեր՝ և զնասցուք*։ ⁷Եւ ասէ Սաւուղ ցպատանին որ ընդ նմա. Ահա երթայցենք, և զի՞նչ տանիցիմք առնն Աստուծոյ. զի հաց ևս պակասեաց յամանոց մերոց, և չի՛ք ինչ որ կայցէ ընդ մեզ աւելի տանել առնն Աստուծոյ: ⁸Եւ յաւել պատանին տալ պատասխանի Սաւուղայ՝ և ասէ. Ահա գտանի՛ ՚ի ձեռին իմուն չորրորդ սկեղ արծաթոյ, և տացես առնն Աստուծոյ. և պատմեսցէ՛ մեզ զճանապարհս մեր*։ ⁹Եւ յառաջ՝ ՚ի մէջ Իսրայէլի այսպէս ասէր իւրաքանչիւրոք՝ յորժամ երթայր հարցանել զԱստուած. Եկայք

* Ոմանք. Եւ զթզենիս ձեր զազնիւս: Յօրինակին պակասէր. Առցէ և տացէ:

* Ոմանք. Եւ դատեսցի զմեզ թագաւոր մեր:

* Ոմանք. Իւրաքանչիւր ՚ի քաղաք իւր:

* Ոմանք. Որդի Աքիելի որդւոյ Սաբեգայ. կամ՝ Ասեգայ... Յեմինացւոյ:

* Ոմանք. Բարձր էք քան զամենայն ժողովուրդն:

* Ոմանք. Եւ անցին ընդ երկիրն Սարիսայ:

* Այլք. Եւ զամենայն ինչ զոր խօսիցի:

* Ոմանք. Չորրորդ մասն սկեղ արծա՛:

երթից ուր ան տեսանօղն: Ձի մարգարէ՝ յառաջ տեսանօղ կոչէր ժողովուրդն*:

¹⁰Եւ ասէ՛ Սաւուղ ցպատանին իւր. Բարո՛ք է բանդ, եկ երթիցուք:

Ի՛վ եւ չոգան՝ ՚ի քաղաքն՝ ուր էր այրն Աստուծոյ. ¹¹և մինչդեռ ելանէին ընդ զան ՚ի վեր քաղաքին, գտին նոքա աղջկունս որ ելանէին հանել ջուր. և ասեն ցնոսա. Եթէ գուցէ՞ աստ տեսանօղ: ¹²Պատասխանի ետուն նոցա աղջկունքն՝ և ասեն. Գո՛յ, ահաւասիկ առաջի ձեր այրդ. արդ՝ արագեցէ՛ք # զի վասն աւուրս եկեալ է ՚ի քաղաքս. զի զո՛հ է այսօր ժողովրդեանն ՚ի Բամա*. ¹³յորժամ մտանիցէ՛ք ՚ի քաղաքդ, ապա՛ գտանիցէք զնա ՚ի քաղաքիդ, մինչչև՛ երթեալ իցէ նորա ՚ի Բամա ուտել. քանզի ո՛չ ուտէ ժողովուրդն մինչև՛ ՚ի մտանել նորա. զի նա՛ օրհնէ զգոհն, և ապա ուտեն կոչնականքն. և արդ ելէ՛ք զի վասն աւուրս գտանէք զնա այրդ*: ¹⁴Եւ ելին ՚ի քաղաքն. և իբրև մտին նոքա ՚ի քաղաքամէջն, և ահա Սամուէլ ել ընդ առաջ նոցա երթալ ՚ի Բամա: ¹⁵Եւ էր Տեառն յայտնեալ յունկն Սամուէլի աւուրք միով յառաջ քան զգալն Սաւուղայ առ նա. ¹⁶Եթէ վաղիւ ՚ի սոյն ժամ առաքեցից առ քեզ այր յերկրէն Բենիամինի, և օժցես զնա իշխան ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և փրկեսցէ զժողովուրդ իմ ՚ի ձեռաց այլազգեացն. զի հայեցայ՝ ՚ի տառապանս ժողովրդեան իմոյ, քանզի եհա՛ս գոչիւն նոցա առ իս* : ¹⁷Եւ Սամուէլ ետես զՍաւուղ. և Տէր ասէ ցնա. Ահա՛ւաղիկ է՛ այրն զորմէ ասացի քեզ եթէ նա՛ իշխեսցէ ժողովրդեան իմուն: ¹⁸Եւ մատեալ Սաւուղ առ Սամուէլ ՚ի մէջ քաղաքին և ասէ. Պատմեա՛ ինձ՝ ո՞ր տուն իցէ տեսանողին: ¹⁹Պատասխանի ետ Սամուէլ և ասէ ցՍաւուղ. Ե՛ս ինքնին իսկ եմ. ել՛ առաջի իմ ՚ի Բամա, և կերիցես ընդ իս այսօր. և արձակեցի՛ց զքեզ վաղիւ. և զամենայն ինչ որ ՚ի սրտի քո՛ւն է՛ պատմեցի՛ց քեզ: ²⁰Եւ վասն իշոցն երեքօրէից կորուսելոց մի՛ ինչ ածեր զմտաւ՝ քանզի գտեալ են. և ո՞յր իցեն վայելչութիւնք Իսրայէլի՝ եթէ ո՛չ քո և ամենայն տան հօր քոյ*: ²¹Պատասխանի՛ ետ Սաւուղ՝ և ասէ. Ո՞չ ապաքէն առն միոյ Յիմենացւոյ եմ ես՝ փոքր՛ւ գաւազանի ցեղին Իսրայէլի, և կրտսերոյ ցեղի յամենայն իշխանութենէ Բենիամինի. և ընդէ՞ր խօսեցար ընդ իս ըստ բանիդ ըստ այդմիկ*:

ԻԲ ²²Եւ առ Սամուէլ զՍաւուղ և զպատանին նորա, և տարաւ զնոսա ՚ի վանս իւր. և ետ նոցա տեղի ՚ի վերոյ՝ կոչնականացն իբրև զերեսուն արամբ: ²³Եւ ասէ Սամուէլ ցխոհակերն. Տո՛ւր ինձ զմասնն զոր ետու ցքեզ, զորմէ ասացի դնել զնա առ քեզ: ²⁴Եւ եփեաց խոհակերն զագդրն՝ և զթամբն որ զնովաւ. և եդ զայն առաջի Սաւուղայ: Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ահաւասիկ նշխար, դի՛ր զայդ առաջի քո՛ և կեր. զի վկայութիւն լիցի քեզ առ ՚ի ժողովրդոց, և կրծեսցես: Եւ եկեր Սաւուղ ընդ Սամուէլի յաւուր յայնմիկ: ²⁵Եւ էջ ՚ի Բամայ ՚ի քաղաքն: Եւ արկին անկողինս Սաւուղայ ՚ի տանիսն՝ և ննջեաց: ²⁶Եւ եղև ընդ ելանել առաւօտուն՝ կոչեաց Սամուէլ զՍաւուղ ՚ի տանեացն՝ և ասէ. Արի եկ՛ և արձակեցից զքեզ: Եւ յարեալ Սաւուղ և ել ինքն և Սամուէլ արտաքս*: ²⁷Եւ

* Այլք. Ձի զմարգարէ՛ յառաջ տեսա՛:

* Յօրինակին պակասէր. Ելանէին ընդ զա՛:

* Այլք. Ահաւաղիկ առաջի ձեր այրդ:

* Ոմանք. Ոչ ուտէր ժողովուրդն... գտանէք զնա անդր: *Ի լուս՛*. Եւ ապա ուտեն հիւրքն. *համաձայն ոմանց: Ուր Ոսկան*. Կոչնական հիւրքն:

* Ոսկան. Ի սոյն ժամու առա՛:

* Ոմանք. Մի՛ ինչ ածել զմտաւ:

* Ոմանք. Յամինացւոյ. և ոմանք. Յեմինացւոյ:

* Յօրինակին պակասէր. Եւ եղև ընդ ելա՛:

մինչդեռ իջանէին նոքա յեզր քաղաքին, ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ասա՛
ցպատանիդ՝ և անցցէ յառաջ քան զմեզ. և անց. և դու կացցես այսօր աստ՝ և
լուիցես զպատգամս Տեառն՝:

10

Գլուխ Ժ

ԻԳ ¹Եւ ան Սամուէլ զսրուական իւղոյ՝ և եհեղ՝ ՚ի գլուխ նորա. և համբուրեաց
զնա, և ասէ ցնա. Ո՛չ ապաքէն օծ զքեզ Տէր ՚ի վերայ ժառանգութեան իւրոյ
իշխան, և ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայէլի. և դո՛ւ իշխեսցես ժողովրդեան
Տեառն, և փրկեսցես զնա ՚ի ձեռաց թշնամեաց իւրոց շուրջանակի: Եւ այն
եղիցի քեզ նշանակ՝ եթէ Տէր օծ զքեզ*. ²Իբրև երթայցես այսօր յինէն՝ գտցես
երկուս արս առ գերեզմանաւն Զոաքելի՝ ՚ի լերինն Բենիամինի, զի մեծամեծս
վազիցեն, և ասիցեն ցքեզ. Գտան էջքն՝ յորոց դուն ՚ի խնդիր երթեալ էիր. և
թողեալ հօր քոյ զիրս իշոցն հոգայ՝ վասն ձեր. և ասէ. Ձի՞նչ արարից վասն
որդւոյ իմոյ*: ³Եւ երթիցես անտի ևս անդր, և հասցես մինչև ՚ի կաղնիսն
Դեբովրայ. և գտցես անդ երիս արս որ ելանիցեն առ Աստուած ՚ի Բեթէլ. միոյն
բարձեալ ո՛ւլս երիս, և միւսոյն բարձեալ երիս ամանս հացի, և միոյն բարձեալ
տիկ մի գինւոյ*. ⁴և հարցցեն զքէն ՚ի խաղաղութիւն. և տացեն քեզ երկուս
պտուղս հացի, և առցես ՚ի ձեռաց նոցա: ⁵Եւ ապա մտցես ՚ի բլուրն Աստուծոյ,
ուր է՝ գունդ այլազգեացն: Եւ եղիցի յորժամ մտանիցես ՚ի քաղաքն, դիպեսցիս
պարու՝ մարգարէից իջելոց ՚ի Բամայ. և առաջի նոցա սրի՛նգ, և թմբուկ, և փող, և
քնար. և ինքեանք մարգարէացեալք: ⁶Եւ խաղասցէ ՚ի վերայ քո Զոգի Տեառն, և
մարգարէացիս և դո՛ւ ընդ նոսա. և դարձցիս յայր յայլ: ⁷Եւ եղիցի յորժամ
գայցեն նշանքս այսօրիկ ՚ի վերայ քո, արասցես զամենայն ինչ զոր գտանիցէ
ձեռն քո՝ զի Աստուած ընդ քեզ է*: ⁸Եւ իջցես յառաջ քան զիս ՚ի Գաղզաղա. և
ահա ես իջի՛ց առ քեզ մատուցանել ողջակէզս և զոհս և խաղաղականս. զեւթն
օր դարդարեսցես մինչև եկի՛ց առ քեզ, և իմացուցի՛ց քեզ զոր ինչ առնիցես: ⁹Եւ
եղև ՚ի դարձուցանել զթիկունս իւր զնալոյ՝ ՚ի Սամուէլէ, շրջեաց նմա Աստուած
սիրտ այլ. և եկին հասի՛ն նմա ամենայն նշանքս յաւուր յայնմիկ: ¹⁰Եւ եկն անտի
՚ի բլուրն, և ահա պար մարգարէից ընդ առաջ նորա. և խաղաց ՚ի վերայ նորա
Զոգի Աստուծոյ, և մարգարէացաւ ՚ի մէջ նոցա*: ¹¹Եւ եղև իբրև ծանեան զնա
ամենեքին՝ որոց յերէկն և յեռանտ տեսեալ էր զնա, եթէ ահա և նա ՚ի մէջ
մարգարէիցն մարգարէանայր, ասէ ժողովուրդն իւրաքանչիւր ցընկեր իւր.
Ձի՞նչ է այդ որ եղև որդւոյ Կիսեայ, կամ թէ և Սաւուղ ընդ մարգարէս իցէ: ¹²Եւ
պատասխանի՛ ետ ոմն ՚ի նոցանէ և ասէ. Եւ ո՞վ է հայր նորա, եթէ ո՛չ Կիս. վասն
այնորիկ եղև յառակս, թէ՛ Եւ Սաւուղ ՚ի մարգարէս: ¹³Եւ վախճանեաց
զմարգարէանալն, և եկն ՚ի բլուրն: ¹⁴Եւ ասէ ընտանի նորա ցնա և ցժառայն
նորա. Յո՞ չոգայք: Եւ ասեն. Խնդրել՝ զէշսն. և իբրև տեսաք թէ չեն ուրեք՝ մտա՛ք

* Ոմանք. Եւ դու կաց այսօր:

* Ի լուս՝. Եւ առ Սամուէլ զկուսն իւղոյ: Ուր ոմանք ունին ՚ի բնաք՝. զկուսն սրուական ևղոյ:

* Ոմանք. Որոյ դուն ՚ի խն՝... և թողեալ հօր քո զիշոցն, հոգայ:

* Այլք. Եւ միոյն բարձեալ երիս ա՛... և միոյն բարձեալ տիկ մի:

* Ոմանք. Ձամենայն ինչ որ գտանիցէ:

* Այլք. Եւ մարգարէացաւ ՚ի միջի նոցա:

առ Սամուէլ*։ ¹⁵Եւ ասէ ընտանին ցՍաւուղ. Պատմեա՛ ինձ զի՞նչ ասա՛ց քեզ Սամուէլ։ ¹⁶Եւ ասէ Սաւուղ ցընտանին իւր. Պատմելո՛վ պատմեաց ինձ եթէ գտա՛ն էջքն։ Բայց զբան թագաւորութեանն ո՛չ եհան նմա ՚ի վեր, # զոր ասաց նմա Սամուէլ։

ԻԴ ¹⁷Եւ ժողովեա՛ց Սամուէլ զամենայն ժողովուրդն առ Տէր ՚ի Մասեփաթ*։ ¹⁸Եւ ասէ ցորդիսն Իսրայէլի. Այսպէս խօսեցաւ Տէր Աստուած Իսրայէլի, և ասէ. Ե՛ս եմ որ հանի զորդիսն Իսրայէլի յեգիպտոսէ. և փրկեցի զձեզ ՚ի ձեռաց փարաւոնի արքային Եգիպտացոց, և յամենայն թագաւորութեանց նեղչաց ձերոց։ ¹⁹Եւ դուք այսօր անարգեցէ՛ք զԱստուած, որ է փրկիչ ձեր յամենեցունց որ շուրջ զձե՛ւք եմ և նեղեն զձեզ. և ասացէ՛ք Ո՛չ այդպէս, այլ զի կացուցես ՚ի վերայ մեր թագաւոր։ Եւ արդ՝ կացէ՛ք առաջի Տեառն՝ ըստ իշխանութեանց ձերոց, և ըստ գաւազանաց ձերոց, և ըստ հազարաւորաց ձերոց։ ²⁰Եւ մատո՛յց Սամուէլ զամենայն գաւազանսն Իսրայէլի, և ել վիճակն գաւազանի՛ն Բենիամինի։ ²¹Եւ մատոյց զգաւազանն Բենիամինի ըստ ցեղից, և ելանէ՛ր վիճակն ցեղի՛ն Ամատտարեայ։ Եւ մատուցին զցեղն Ամատտարեայ ըստ արանց. և ելանէր վիճակն Սաւուղայ որդւո՛յ Կիսեայ. և խնդրէր զնա՝ և ո՛չ գտանէր*։ ²²Եւ եհարց միւսանգամ Սամուէլ զՏէր. Եւ եթէ գայցէ՞ այսր այրն։ Եւ ասէ Տէր. Աւաղիկ թաքուցեա՛լ է ընդ կարասեաւ*։ ²³Եւ ընթացաւ և ա՛ռ զնա անտի, և կացո՛յց զնա ՚ի մէջ ժողովրդեանն. և բարձրացաւ քան զամենայն ժողովուրդն թիկամբք չափ ՚ի վեր։ ²⁴Եւ ասէ Սամուէլ ցամենայն ժողովուրդն, եթէ՛ Տեսանիցէ՞ք զոր ընտրեացդ իւր Տէր, զի ո՛չ գոյ նման դորա յամենեսին ՚ի ձեզ։ Եւ ծանեան ամենայն ժողովուրդն և ասեն. Կեցցէ՛ արքայ։ ²⁵Եւ ասա՛ց Սամուէլ ժողովրդեանն զիրաւունս թագաւորին. և գրեա՛ց ՚ի մատենի, և ե՛ր առաջի Տեառն. և արձակեաց Սամուէլ զամենայն ժողովուրդն. և զնա՛ց իւրաքանչի՛ւրոք ՚ի տեղի իւր*։ ²⁶Եւ Սաւուղ զնա՛ց ՚ի տուն իւր ՚ի Գաբաա։ Եւ զնացի՛ն որդիք զօրութեան՝ զորոց գրգռեա՛ց Տէր՝ զսիրտս նոցա ընդ Սաւուղայ*։ ²⁷Եւ որդիք ժանտք ասէին, թէ ո՞ է սա՝ որ փրկիցէ զնեզ. և անարգեցին զնա՝ և ո՛չ բերին նմա պատարագս*։

11

Գլուխ ԺԱ

ԻԵ ¹Եւ եղև յետ ամսո՛յ միոյ աւուրց. ել Նաա՛ս Ամովնացի, և բանակեցաւ զՅաբիսաւ Գաղաադու։ Եւ ասեն ամենայն արք Յաբիսայ՝ ցՆաաս Ամովնացի. Ուխտեա՛ ընդ մեզ ուխտ, և ծառայեսցո՛ւք քեզ*։ ²Եւ ասէ ցնոսա Նաաս Ամովնացի.

* *Ի լուս՝* Եւ ասէ իօրեղբայր նորա ցնա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*: Ուր ոմանք. Եւ ասեն ընտանիքն նորա ցնա։

* *Ոսկան*. Եւ ժողովեալ Սամուէլ։

* *Ոմանք*. Ցեղին Մատտարայ։

* *Ի լուս՝* Եթէ կայցէ այսր այրն, *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*: *Ոմանք*. Ահաւանիկ թաքու՞։

* *Ի լուս՝* Ընդ կարասով. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*։

* *Ոմանք*. Եւ զնացին իւրաք՞։

* *Ոմանք*. Որդիքն զօրութեանց։

* *Ոսկան յաւելու*. Եւ ո՛չ բերին նմա պատարագս. *իսկ նա էր իբրև խուլ*։

* *Օրինակ մի*. Յետ ամաց միոյ աւ՞։ *Յօրինակին պակասէր*. Եւ ասեն *ամենայն* արք Յաբի՞։

Այնո՛ւ ուխտեցից ընդ ձեզ ուխտ, եթէ հանիցէ՛ք զամենայն ակն ձեր զաջոյ. և եղից նախատինս ՚ի վերայ ամենայն Իսրայէլի: ³Եւ ասեն արք Յաբիսայ ցՆասա. Թո՛յլ տուր մեզ աւուրս եւթն. և առաքեսցուք հրեշտակս յամենայն սահմանս Իսրայէլի, եթէ չիցէ՛ որ որ փրկիցէ զմեզ՝ ելցո՛ւք առ քեզ՝: ⁴Եւ եկին հրեշտակքն ՚ի Գաբաա առ Սաւուղ, և խօսեցան զբանսն յականջս ժողովորդեանն. և ամբարձի՛ն ժողովուրդն զձայնս իւրեանց և լացին: ⁵Եւ ահա Սաւուղ գա՛յր ընդ առաւօտն յանդոյ, և ասէ Սաւուղ. Ջի՞նչ իցէ զի լա՛յ ժողովուրդն: Եւ պատմեցին նմա զպատգամս որդւոցն Յաբիսայ: ⁶Եւ խաղա՛ց Յոզի Տեառն ՚ի վերայ Սաւուղայ իբրև լուաւ զբանսն զայնոսիկ. և սրտմտեցա՛ւ բարկութիւն նորա յոյժ՝: ⁷Եւ ա՛ռ երկուս եզինս և յօշեա՛ց զնոսա, և առաքեաց յամենայն սահմանս Իսրայէլի ՚ի ձեռն հրեշտակաց՝ և ասէ. Որ ոք ո՛չ ելանիցէ զհետ Սաւուղայ և զհետ Սամուէլի, ըստ այդմ օրինակի արասցեն զեզինս նորա: Եւ անկաւ ա՛հ Տեառն ՚ի վերայ ամենայն ժողովորդեանն Իսրայէլի. և խրախուսեցին իբրև զմի՛ այր: ⁸Եւ հանդէս արար նոցա ՚ի Բեզէկ. ամենայն այր Իսրայէլացի ելին վեց հարիւր հազար, և այր Յուդայ եւթանասուն հազար՝: ⁹Եւ ասէ ցհրեշտակսն եկեալս. Այսպէս ասասջիք ցարս Յաբիսայ Գաղաադու. Վաղի՛ւ եղիցի ձեզ փրկութիւն ընդ ջեռուցանել արեգականն: Եւ եկին հրեշտակքն ՚ի քաղաքն, և պատմեցին արանցն Յաբիսայ. և ուրախ եղեն: ¹⁰Եւ ասեն արք Յաբիսայ ցՆասա Ամոնացի. Վաղի՛ւ ելցուք մեք առ ձեզ, և արասջի՛ք ընդ մեզ որ ինչ հաճոյ իցէ առաջի ձեր: ¹¹Եւ եղև ՚ի վաղիւ անդր, և բաժանեաց Սաւուղ զժողովուրդն յերի՛ս առաջս. և մտին ՚ի մէջ բանակին յառաւօտին պահուն, և հարկանէին զորդիսն Ամոնայ մինչև ՚ի ջեռնո՛ւլ արևուն. և եղեն մնացեալքն ցրուեալք, և ո՛չ մնացին ՚ի նոցանէ երկո՛ւ ՚ի միասին: ¹²Եւ ասէ ժողովուրդն ցՍամուէլ. Ո՞վ է որ ասացն՝ թէ մի՛ թագաւորեսցէ մեզ Սաւուղ. տո՛ւր ՚ի ձեռս զարսն՝ և սպանցուք զնոսա՝: ¹³Եւ ասէ Սամուէլ. Մի՛ որ մեռցի յաւուր յայսմիկ. զի այսօր արար Տէր զփրկութիւն Իսրայէլի:

ԻՉ ¹⁴Եւ խօսեցաւ Սամուէլ ընդ ժողովորդեանն և ասէ. Երթիցո՛ւք ՚ի Գաղգաղա, և արասցուք նաւակատիս թագաւորութեան: ¹⁵Եւ չոգա՛ւ ամենայն ժողովուրդն ՚ի Գաղգաղա, և օժ անդ Սամուէլ զՍաւուղ ՚ի թագաւոր առաջի Տեառն ՚ի Գաղգաղա. և զոհեցին անդ զոհս խաղաղականս առաջի Տեառն. և ուրախ եղև անդ Սամուէլ և ամենայն ժողովուրդն յոյժ՝:

12

Գլուխ ԺԲ

ԻԷ ¹Եւ ասէ Սամուէլ ցամենայն արս Իսրայէլացիս. Ահաւասիկ լուայ ձայնի ձերում յամենայնի զոր ասացէք ինձ, և թագաւորեցուցի ձեզ թագաւոր. ²և արդ՝ աւաղիկ թագաւոր ելանէ առաջի ձեր. ես ծերացեալ եմ, երթայց նստայց. և որդիքդ իմ աւաղիկ են ՚ի միջի ձերում: Եւ ես շրջեցայ առաջի ձեր ՚ի

* *Յօրինակին պակասէր.* Արք Յաբիսայ ցՆասա, թոյլ: Ուր Ոսկան դնէ. ցնոսա, թոյլ:

* *Ոմանք.* Ջբանս զայսոսիկ:

* *Յօրինակին համաձայն ոմանց ըստ այսմ կերպի գրին թիւքս:* Ամենայն այր Իսրայէլացի ելին վեց Ռ... և այր Յուդայ եւթանասուն Ռ:

* *Ոմանք.* Ի ձեռս զարսն, և սպանցուք զնա:

* *Յօրինակին պակասէր.* Եւ ուրախ եղև անդ Սամուէլ:

մանկութենէ իմնէ մինչև ցայսօր, ահա՛ւասիկ կան ես*, ³տո՛ւք զինէն պատասխանի առաջի Տեառն և առաջի օծելոյ նորա: Եթէ զեզն ուրուք առի՛, կան զէջ ուրուք վարեցի՛, կան յաղթահարեցի՛ զոր ՚ի ձէնջ. կան թէ զրկեցի՛ ինչ զոր. յո՞յր ձեռաց առի հա՛ս, կան կօշիկս. տո՛ւք զինէն պատասխանի, և հատուցի՛ց ձեզ: ⁴Եւ ասեն ցՍամուէլ. Ո՛չ մեղար մեզ և ո՛չ զրկեցեր զմեզ, և ո՛չ նեղեցեր զմեզ, և ո՛չ առեր ՚ի ձեռա՛ց ուրուք և ո՛չ ինչ:

Ի՞նչ ⁵Եւ ասէ՛ Սամուէլ ցժողովուրդն. Վկայ լիցի Տէր ՚ի միջի մերուն, և վկայ օծեալս նորա այսօր յաւուր յայսմիկ. զի ո՛չ գտէք ՚ի ձեռին իմուն և ո՛չ ինչ: Եւ ասեն. Լիցի՛ վկայ*: ⁶Եւ խօսեցա՛ւ Սամուէլ ընդ ժողովրդեանն և ասէ. Վկայ լիցի Տէր՝ որ արար զՄովսէս և զԱհարոն, որ եհան զհարսն մեր յեգիպտոսէ: ⁷Եւ արդ՝ կացէ՛ք յառաջ՝ և դատեցայց զձեզ առաջի Տեառն. և պատմեցից ձեզ զամենայն արդարութիւնս զոր արար Տէր ՚ի միջի ձերուն, և ՚ի հարսն ձեր*. ⁸յորժամ եմուտ Յակոբ և որդիք նորա յեգիպտոս, և լլկեա՛ց զնոսա Եգիպտոս. և աղաղակեցին հարքն մեր առ Տէր, և առաքեաց Տէր զՄովսէս և զԱհարոն, և եհան զհարսն մեր յեգիպտոսէ, և բնակեցոյ՛ց ՚ի տեղուջս յայսմիկ: ⁹Եւ մոռացան զՏէր Աստուած իւրեանց. և մատնեաց զնոսա ՚ի ձեռս Սիսարայ զօրավարին Յաբինայ արքային Ասովրայ #, և ՚ի ձեռն այլազգեաց. և ՚ի ձեռս թագաւորին Մովաբայ, և պատերազմեցան ընդ նոսա՛: ¹⁰Եւ աղաղակեցին առ Տէր և ասեն. Մեղաք՝ զի թողաք զՏէր՝ և ծառայեցաք Բահաղիմայ՛ցն և անտառացն. և արդ՝ ապրեցո՛ զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց՝ և ծառայեցուք քեզ: ¹¹Եւ առաքեաց Տէր զՅերոբովադ, և զԲարակ, և զՅեփթայէ, և զՍամփսոն. և ապրեցոյց զձեզ ՚ի ձեռաց թշնամեաց ձերոց շուրջանակի, և բնակեցէք վստահութեամբ: ¹²Եւ տեսէք զի Նաաս Ամոնացի եկն ՚ի վերայ ձեր, և ասացէք. Ո՛չ այդպէս, այլ զի թագաւոր թագաւորեսցէ ՚ի վերայ մեր. և Տէր Աստուած մեր՝ թագաւոր մեր: ¹³Եւ արդ՝ աւաղիկ թագաւորդ զոր ընտրեցէք, և զոր խնդրեցէք. և ահա ե՛տ ձեզ Տէր թագաւոր*: ¹⁴Եթէ երկնչիցիք ՚ի Տեառնէ, և ծառայիցէք նմա, և լսիցէք ձայնի նորա՝ և ո՛չ հետտիցէք ՚ի բերանոյ Տեառն. և լինիցիք դուք և թագաւորն՝ որ թագաւորեսցէ ձեզ երթալ զկնի Տեառն, ո՛չ եղիցի ձեռն Տեառն ՚ի վերայ ձեր և ՚ի վերայ թագաւորին ձերոյ*: ¹⁵Ապա թէ ո՛չ լսիցէք ձայնի Տեառն, և հետտիցէք բերանոյ Տեառն, եղիցի ձեռն Տեառն ՚ի վերայ ձեր, և ՚ի վերայ թագաւորին ձերոյ: ¹⁶Եւ արդ՝ կացէ՛ք և տեսէ՛ք զբանս զայս մեծ, զոր արասցէ Տէր առաջի աչաց ձերոց: ¹⁷Ո՛չ ապաքէն հունձք ցորենոյ՛ են այսօր. կարդացից առ Տէր՝ և տացէ ձայնս և անձրևս, և զիտասջիք և տեսջիք՝ թէ մեծ է չարութիւն ձեր՝ զոր արարէք առաջի Տեառն խնդրել ձեզ թագաւոր: ¹⁸Եւ կարդաց Սամուէլ առ Տէր, և ետ Տէր ձայնս և անձրևս յաւուր յայսմիկ. ¹⁹և երկեա՛ւ ամենայն ժողովուրդն յոյժ ՚ի Տեառնէ՝ և ՚ի Սամուէլէ: Եւ ասէ՛ ամենայն ժողովուրդն ցՍամուէլ. Կա՛ց յաղօթս առ Տէր Աստուած քո վասն ծառայից քոց՝ և մի՛ մեռցուք. զի յաւելաք յամենայն մեղս մեր և ՚ի չարիս, և խնդրեցաք մեզ թագաւոր*: ²⁰Եւ ասէ Սամուէլ ցժողովուրդն. Մի՛ երկնչիք. դուք արարէք զայդ ամենայն չարիս. բայց մի՛

* Ոմանք. Եւ արդ աւասիկ թագաւոր:

* Ի լուս՝. Լիցի Տէր ՚ի միջի ձերուն. համաձայն ոմանց ՚ի բնաք՝:

* Ոմանք. Արդարութիւնս Տեառն զոր արար ՚ի միջի ձե՛:

* Այլք. Եւ ՚ի ձեռս այլազգեաց:

* Ոմանք. Աւասիկ թա՛... ահա ետ ձեզ:

* Այլք. Եւ ո՛չ հետտեցէք բերանոյ Տեառն:

* Ոմանք. Վասն ծառայից քոց՝ զի մի մեռ՝:

խոտորիցիք 'ի Տեառնէ, և ծառայեցէք Տեառն յամենայն սրտէ ձերմէ. ²¹և մի՛ երթայցէք զհետ ոչնչիցն, որ ո՛չ ինչ վճարեն, և ո՛չ փրկեն. քանզի չեն աստուածք* : ²²Ձի ո՛չ մերժեսցէ Տէր զժողովուրդ իւր վասն անուան իւրոյ մեծի. զի հեզութեամբ ա՛ռ զձեզ Տէր իւր ժողովուրդ: ²³Եւ ինձ քա՛ն լիցի մեղանչել Տեառն, հեղգա՛լ առ 'ի չառնելոյ աղօթս վասն ձեր. և ծառայեցէք Տեառն, և ցուցի՛ց ձեզ զճանապարհ զբարի՛ և զուղիղ* : ²⁴Բայց երկերո՛ւք 'ի Տեառնէ, և ծառայեցէք նմա ճշմարտութեամբ յամենայն սրտէ ձերմէ. քանզի տեսէք զմեծամեծսն զոր արար ընդ մեզ: ²⁵Եւ եթէ խարդախութեամբ խարդախիցէք, և դո՛ւք և թագաւոր ձեր սատակիցիք:

13

Գլուխ ԺԳ

¹Որդի տարևոր Սաւուղ 'ի թագաւորել իւրում, և երկո՛ւս ամս թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի:

Ի՞ծ ²Եւ ընտրեաց իւր Սաւուղ երիս հազարս՝ արս յարանցն Իսրայէլի. և էին ընդ նմա երկու հազարք 'ի Մաքմաս, և 'ի լերինն Բեթէլայ էին ընդ Յովնաթանու հազար 'ի Գաբաա Բենիամինի. և զմնացորդս ժողովրդեանն արծակեաց յիւրաքանչիւր բնակութիւնս: ³Եւ եհա՛ր Յովնաթան զՆասիբ այլազգի, որ էր 'ի բլրին. և լուան այլազգիքն: Եւ Սաւուղ փո՛ղ եհար ընդ ամենայն երկիրն՝ և ասէ, եթէ անգոսնեցին ծառայքն*: ⁴Եւ լուան ամենայն Իսրայէլ, ասեն եթէ եհա՛ր Սաւուղ զՆասիբ այլազգի. և յամօթ արար Իսրայէլ զայլազգիսն. և զոչեաց ժողովուրդն զհետ Սաւուղայ 'ի Գաղգաղա*: ⁵Եւ այլազգիքն ժողովեալ էին 'ի պատերազմ ընդ Իսրայէլի. և ելին 'ի վերայ Իսրայէլի երեսո՛ւն հազար կառաց, և վե՛ց հազար հեծելոց, և ժողովուրդն իբրև զաւա՛զ առ եզերք ծովու բազմութեամբ. ելին և բանակեցան 'ի Մաքմաս, յանդիման Բեթրովնայ ընդ հարաւ*: ⁶Եւ ետես այր Իսրայէլի եթէ անձո՛ւկ է նմա մերձենալ առ նա, և թաքեալ ժողովուրդն յայրս, և 'ի գոմս, և 'ի վեմս, և 'ի խորխորատս, և 'ի ջրհորս. ⁷և որ անցանելոցն էին ընդ Յորդանան՝ անցին յերկիրն Գադայ և Գաղաադու*:

Լ Եւ Սաւուղ դեռ անդէն ևս էր 'ի Գաղգաղա, և ամենայն ժողովուրդն թօթափեցան 'ի նմանէ: ⁸Եւ դադարեաց զելքն օր վկայութեանն՝ որպէս և ասաց Սամուէլ. և ո՛չ եկն Սամուէլ 'ի Գաղգաղա, և ցրուեցաւ ժողովուրդն իւր 'ի նմանէ: ⁹Եւ ասէ Սաւուղ. Մատուցէք զի արարից ողջակէզս և խաղաղականս: Եւ եհան զողջակէզսն: ¹⁰Եւ եղև իբրև կատարեաց մատուցանել զողջակէզսն, եկն Սամուէլ. և ել Սաւուղ ընդ առաջ նորա օրհնել զնա: ¹¹Եւ ասէ Սամուէլ. Ձի՞նչ գործեցեր: Եւ ասէ Սաւուղ. Ձի տեսի թէ ցրուեցաւ ժողովուրդ իմ յինէն, և դու ո՛չ եկիր որպէս ուխտեցեր 'ի վկայութեան աւուրցն. և այլազգիքն ժողովեցան 'ի Մաքմաս. ¹²և ասացի՝ թէ արդ իջանիցեն այլազգիքն 'ի վերայ իմ 'ի Գաղգաղա. և զերեսս Տեառն չէ՛ր աղաչեալ. ժտեցայ՝ և մատուցի զողջակէզսն: ¹³Եւ ասէ

* Ոմանք. Ձհետ ո՛չ ընչիցն... և ո՛չ փրկիցեն:

* Այլք. Ձճանապարհն զբարի:

* Ի լուս՝. եթէ անգոսնեցին երբայեցիքն:

* Այլք. Եւ լուաւ ամենայն Իսրայէլ. ասեն:

* Ոմանք. Առ եզր ծո՛ւ... և ելին և բա՛... Բեթրովնայ, կամ՝ Բեթերովնայ:

* Ոմանք. ժողովուրդն թօթափեցաւ 'ի նմանէ:

Սամուէլ ցՍաւուղ. Ի զո՛ր է քեզ, զի ո՛չ պահեցեր զպատուիրանն իմ զոր պատուիրեաց Տէր. զի այժմ հաստատեր Տէր զթագաւորութիւն քո ՚ի վերայ Իսրայէլի մինչև յաւիտեան. ¹⁴բայց արդ՝ մի՛ կացցէ թագաւորութիւն քո, խնդրեսցէ իւր Տէր ա՛յր ըստ սրտի իւրում. և տացէ զնա պատուիրանաւ յիշխան ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ. զի ո՛չ պահեցեր՝ զոր ինչ պատուիրեաց քեզ Տէր*:

¹⁵Եւ յարեա՛ւ Սամուէլ՝ և գնաց ՚ի Գաղգաղայ զճանապարհ իւր: Եւ մնացորդք ժողովրդեանն ելին զհետ Սաւուղայ ընդ առաջ պատերազմական ժողովրդեանն. և ՚ի հասանել նոցա ՚ի Գաղգաղա ՚ի Գաբաա՛ Բենիամինի:

ԼԱ Զանդէս արար Սաւուղ ժողովրդեանն գտելոյ ընդ նմա, իբրև վեց հարիւրո՛ց արանց՛: ¹⁶Եւ Սաւուղ՝ և Յովնաթան որդի նորա, և ժողովուրդն գտեալ ընդ նոսա՝ նստան ՚ի Գաբաա Բենիամինի. և այլազգիքն բանակեալ էին ՚ի Մաքմաս: ¹⁷Եւ ելանէր ապականիչն յանդէ այլազգեացն յերիս առաջս. առաջ մի՛ որ հայեր ընդ ճանապարհն Ոփերայ՝ յաղբերն Սոգովղ՛այ*. ¹⁸և առաջ մի ընդ ճանապարհն՝ որ հայեր ՚ի Բոթորոն. և առաջ մի՛ ընդ ճանապարհն որ հայեր ՚ի Գաբայէ յառեալ ՚ի Գայի Սաբայի՛ն անապատին*:

¹⁹Եւ դարբին երկաթոյ ո՛չ գտանէր յամենայն երկիրն Իսրայէլի. քանզի ասէին այլազգիքն եթէ գուցէ՛ առնիցեն Եբրայեցիքն սուսեր և գեղարդն*:

²⁰Եւ իջանէին ամենայն Իսրայէլացիքն յերկիրն այլազգեաց, թեթել իւրաքանչիւր զգերանդի՛ իւր և զգործի՛ իւր, և իւրաքանչիւր զփայտատ՛ իւր, և զմանգաղ՛ իւր: ²¹Եւ էին կուրք պատրաստ հնձելոյ. և կահին՝ երեք սկեղք էին խոփոյ և կացնոյ և մանգաղի յա՛րգ հանգոյն նմին*:

²²Եւ եղև յաւուրս պատերազմին որ ՚ի Մաքմաս. և ո՛չ գտանէր սուսեր և գեղարդն ՚ի ձեռին ամենայն ժողովրդեանն՝ որ էին ընդ Սաւուղայ՝ և ընդ Յովնաթանու որդւոյ նորա. և գտա՛ւ Սաւուղայ և Յովնաթանու որդւոյ նորա*:

²³Եւ ել ՚ի ճամբար այլազգեացն յա՛յնկոյս Մաքմասայ. և հոր իւրում ո՛չ եհան ՚ի վեր:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ եղև օր. և ասէ Յովնաթան որդի Սաւուղայ ցպատանին ցկապարճակիրն իւր. Ե՛կ անցցո՛ւք ՚ի կիրճս այլազգեացն յա՛յնկոյս: Եւ հոր իւրում ո՛չ պատմեաց*:

²Եւ Սաւուղ նստեր ՚ի գլուխ Բլրին ընդ նռնենեան ՚ի Մագովղ՛. և էին ընդ նմա իբրև վեց հարիւր այր ՚ի ժողովրդեանն*:

³Եւ Աքիա՝ որդի Աքիտովբայ եղբօր Քաբիելի. որդւոյ Փենեհեսի որդւոյ Ղևեայ քահանայի Աստուծոյ ՚ի Սելով՝ որ կրէր զեփուղն: Եւ ժողովուրդն ո՛չ գիտէր եթէ երթեալ իցէ Յովնաթան ⁴ի մէջ կրճին, ընդ որ խնդրէր անցանել Յովնաթան ՚ի ճամբար այլազգեացն ՚ի կիրճս.

* Ոմանք. Յիշխան ՚ի վերայ ժողո՛:

* Յօրինակին պակասէր. Զանդէս արար Սաւուղ:

* Ոմանք. Առաջ միոյ հայեր ընդ:

* Ոմանք. Որ հայեր ընդ Գաբայէ յառեալ:

* Ոմանք. Զգտանէր յամենայն երկրին:

* Ոմանք. Եւ կացնոյ և մանգաղոյ:

* Ոսկան յաւելու. Եւ գտաւ միայն Սաւուղայ և Յովնաթանու:

* Ոմանք. Ե՛կ և անցցուք ՚ի կիրճ:

* Այլք. Ի գլուխ Բլրոյն ընդ նռն՛:

և քարաժայռք յայսմ կողմանէ, և քարաժայռք յայնմ կողմանէ. անուն միունն Բազէս, և անուն միւսունն Սէնարա*։ ⁵Եւ ժայռ մի՝ ի հիւսւսոյ որ երթայր ընդ Մաքմաս, և միւս ևս ժայռ՝ որ երթայր ՚ի հարաւոյ ՚ի Գաբայէ

ԼԲ ⁶Եւ ասէ Յովնաթան ցպատանին ցկապարճակիրն իւր. Եկ անցցուք ՚ի կիրճս անթլփատիցն այնոցիկ. թերևս արասցէ ինչ մեզ Տէր. զի ո՛չ ինչ է խտիր Տեառն ապրեցուցանել բազմօք կամ սակաւուք։ ⁷Եւ ասէ ցնա կապարճակիրն իւր. Արա՛ զամենայն ինչ յոր և յօժարեսցէ սիրտ քո. ահաւասիկ ես ընդ քեզ եմ. որպէս սիրտ քո՝ սիրտ իմ*։ ⁸Եւ ասէ Յովնաթան. Ահաւասիկ մեք անցանենք առ արսն. և յափսիթերս երթիցուք առ նոսա*, ⁹Եթէ ասիցեն ցմեզ. ՚ի բա՛ց կացէք այտի մինչև պատմեսցուք ինչ ձեզ. զտեղի՛ կալցուք՝ և մի՛ ելցուք առ նոսա։ ¹⁰Ապա թէ ասիցեն. Ելէ՛ք առ մեզ. ելցուք, զի մատնեաց գնոսա Տէր ՚ի ձեռս մեր. ա՛յս լիցի մեզ նշանակ։ ¹¹Եւ մտի՛ն երկոքեան ՚ի կիրճս այլազգեացն. և ասեն այլազգիքն. Ահա եբրայեցիքն ելանեն ՚ի ծակուց իւրեանց՝ ուր թաքուցեալ էին*։ ¹²Եւ պատասխանի ետուն արք կրճացն՝ և ասեն ցՅովնաթան և ցկապարճակիրն. Ելէ՛ք առ մեզ՝ և ծանուցուք ձեզ բանս։ Եւ ասէ Յովնաթան ցկապարճակիրն իւր. Եկ զկնի իմ զի մատնեաց գնոսա Տէր ՚ի ձեռս Իսրայէլի։ ¹³Եւ ել Յովնաթան յափսիթերս, և կապարճակիրն նորա ընդ նմա. և հայեցան ընդդէմ Յովնաթանու, և եհա՛ր գնոսա. և կապարճակիրն տա՛յր ստեպ զհետ նորա։ ¹⁴Եւ եղեն առաջին հարուածքն զոր եհար գնոսա Յովնաթան և կապարճակիրն իւր՝ իբրև քսան արանց, նետի՛ւք և բռնաքարա՛մբք դաշտին*։ ¹⁵Եւ եղև խռովութիւն յանդին և ՚ի բանակին. և ամենայն ժողովուրդն որ ՚ի կիրճսն էին՝ և ապականիչքն զարհուրեցան, և ո՛չ կամէին աշխատել. և դղրդեցաւ երկիրն, և եղև ա՛հ ՚ի Տեառնէ*։

ԼԳ ¹⁶Եւ տեսին դէտքն Սաւուղայ ՚ի Գաբայ Բենիամինի, և ահա խռովեալ էր բանակն յա՛յսկոյս յայնկոյս։ ¹⁷Եւ ասէ Սաւուղ ցժողովուրդն որ ընդ նմա. Հանդէս արարէք և տեսէք՝ ո՞վ երթեալ իցէ ՚ի մէնջ։ Եւ հանդէս արարին, և ո՛չ գտանէր Յովնաթան և կապարճակիր նորա*։ ¹⁸Եւ ասէ Սաւուղ ցԱքիա. Մատո՛ գեփուդդ։ Քանզի նա՛ կրէր զգեփուդն. զի էր տապանակն Աստուծոյ յաւուր յայնմիկ առաջի Իսրայէլի։ ¹⁹Եւ եղև մինչդեռ խօսէր Սաւուղ ընդ քահանային, և աղաղակ ՚ի բանակին այլազգեաց երթալով երթայր և յաճախէր. և ասէ Սաւուղ ցքահանայն. Ամփոփեա՛ զձեռն քո*։ ²⁰Եւ ել Սաւուղ և ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, և եկին մինչև ցպատերազմն. և ահա եղև սո՛ւր ա՛ռն ՚ի վերայ ընկերի իւրոյ, և աղմուկ մե՛ծ յոյժ։ ²¹Եւ ծառայքն՝ որ էին ընդ այլազգիսն յերէկն և յեռանտն՝ որ ելեալ էին ընդ բանակին, դարձան անդրէն լինել ընդ Իսրայէլի, և ընդ Սաւուղայ և Յովնաթանու*։ ²²Եւ ամենայն Իսրայէլ որ թաքուցեալ էին ՚ի լերինն Եփրեմի, իբրև լուսն թէ փախեան այլազգիքն, խմբեցան և նոքա՛ ևս

* Ոսկան. ՚ի մէջ կրճին էր. ընդ որ։ Ոմանք. Անուն միունն Բեզէս։

* Յօրհնակին. Եւ որպէս սիրտ քո. բայց ՚ի վերայ և-ին չակերտիւ նշանակի արտաքս հանել, համաձայն այլոց։

* Յօրհնակին. Եւ յափսեթերս երթիցուք։

* Ոմանք. Որ թաքուցեալ էին։

* Ոմանք. Եւ բռնաքարօք դաշտին։

* Ոմանք. Որ ՚ի կրճին էր։

* Ոմանք. Ո՞վ երթեալ իցէ ՚ի։

* Ոմանք. Ամփոփեա՛ զձեռս քո։

* Ոմանք. Եւ ընդ Յովնաթանու։

զիտ նոցա ՚ի պատերազմ:

ԼԴ ²³Եւ փրկեաց Տէր յաւուր յայնմիկ զԻսրայէլ. և պատերազմն պատեցաւ զԲեթաւանաւ: ²⁴Եւ ամենայն ժողովուրդն էր ընդ Սաւուղայ իբրև տասն հազար արանց. և էր պատերազմ ցրուեալ ընդ ամենայն քաղաքսն ՚ի լերինն Եփրեմի: Եւ Սաւուղ անգիտացաւ անգիտութիւն յաւուր յայնմիկ. և նզովեաց զժողովուրդն՝ և ասէ. Անիծեալ լիցի մարդն՝ որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ. մինչև խնդրեցից վրէժ ՚ի թշնամեաց իմոց: Եւ ո՛չ ճաշակեաց ամենայն ժողովուրդն հաց՝. ²⁵և ամենայն երկիրն ճաշէր: Եւ անդ էր անտառ մեղուաց հանդէպ անդին, ²⁶և եմուտ զօրն ՚ի մեղուանոցն, և անցանէին քրթմնջելով. և չէր ոք որ դարձուցանէր զծեռն իւր ՚ի բերան իւր. քանզի երկեալ ժողովուրդն յերդմանէն Տեառն: ²⁷Եւ Յովնաթանու չէր լուեալ՝ թէ երդմնեցոյց հայր նորա զժողովուրդն, և կարկան զծագ գաւազանի իւրոյ որ ՚ի ձեռին իւրում, և եհար ՚ի խորիսխ մեղու. և դարձոյց զծեռն իւր ՚ի բերան իւր, և բացան աչք նորա: ²⁸Եւ պատասխանի ետ ոմն ՚ի զօրուէ՝ անտի և ասէ. Երդմնեցուցանելով երդմնեցոյց հայր քո զժողովուրդս՝ և ասէ. Անիծեալ լիցի այր որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ: Եւ լքաւ ժողովուրդն: ²⁹Եւ իբրև գիտաց Յովնաթան, ասէ. Կորոյս հայր իմ զերկիրս. զի թէ տեսին աչք իմ, վասն զի ճաշակեցի սակաւ մի ՚ի մեղուս յայսմանէ՝. ³⁰թէ ուտելով կերեալ էր այսօր ժողովրդեանն յաւարտ թշնամեաց իւրեանց զոր գտին՝ մեծամեծ հարուածս առնէին յայլազգիսն՝. ³¹Եւ եհար յաւուր յայնմիկ յայլազգեացն ՚ի Մաքմաս, և աշխատեցաւ ժողովուրդն յոյժ. ³²և յարձակեցաւ ժողովուրդն յաւարն.

ԼԵ Եւ ան ժողովուրդն զհօտս և զանդեայս և զճնունդս արջառոց, և սպանանէր ՚ի վերայ երկրի, և ուտէր ժողովուրդն հանդերձ արեամբն: ³³Ա՛զդ եղև Սաւուղայ և ասեն, թէ մեղաւ ժողովուրդն Տեառն. զի կերան արեամբ հանդերձ: Եւ ասէ Սաւուղ. Ի Գեթթամա անօրինեցայք. թաւալեցուցէք ինձ այսր վէմ մի մեծ՝. ³⁴Եւ ասէ Սաւուղ. Սփռեցայք ընդ ժողովուրդդ՝ և ասացէք ցրոսա՝ մատուցանել այսր զիրաքանչիւր արջառոց իւր, և զիրաքանչիւր ոչխար իւր, և սպանէք ՚ի վերայ դորա, և կերայք զդոսա. և մի՛ մեղանչէք Տեառն ուտելով հանդերձ արեամբ: Եւ մատոյց ժողովուրդն իւրաքանչիւր որ ՚ի ձեռին իւրում զցայգն. և սպանանէին անդ: ³⁵Եւ շինեաց անդ Սաւուղ սեղան Տեառն. զայն նախ սկսաւ Սաւուղ շինել սեղան Տեառն:

ԼԶ ³⁶Եւ ասէ Սաւուղ. Իջցո՛ւք զիտ այլազգեացն զցայգ, և յափշտակեցո՛ւք ՚ի նոցանն մինչև լուսասցի օր, և մի՛ թողուցուք ՚ի նոցանէ այր: Եւ ասեն ցնա. Զամենայն զոր ինչ հաճոյ թուի արաջի աչաց քոց՝ արա՛: Ասէ քահանայն. Մատիցուք աստ առ Աստուած՝. ³⁷Եւ եհարց Սաւուղ զԱստուած. Իջցո՛ւք զիտ այլազգեացն, եթէ մատնեցե՞ս զնոսա ՚ի ձեռս Իսրայէլի: Եւ ո՛չ արար նմա պատասխանի Տէր յաւուր յայնմիկ: ³⁸Եւ ասէ Սաւուղ. Մատուցէք այսր զամենայն ազգս Իսրայէլի, և գիտասջիք և տեսջիք՝ թէ վասն ո՞ր եղեն այսօր մեղքս այսոքիկ. ³⁹զի կենդանի՛ է Տէր որ փրկեաց զԻսրայէլ. զի թէ զՅովնաթանայ՝ որդւոյ իմոյ տացէ պատասխանի՝ մահով մեռցի: Եւ ո՛չ ոք էր որ

* Ի լուս՝. Իբրև ժՌ անանց: Ոմանք. Մինչև ցերեկոյ, և խնդրեցիս վրէժ ՚ի թշնամեաց:

* Ոմանք. Եւ եթէ տեսին աչք իմ:

* Ոմանք. Կերեալ էր այսր աւուր ժո՛ն:

* Ոմանք. Անօրինեցայք ՚ի Գեթթամայ:

* Այլք. Զիտ այլազգեացն զցայգս. և յափշտա՛... և մի՛ թողուք ՚ի նոցանէ այր:

տայր պատասխանի յամենայն ժողովրդեանն*։ ⁴⁰Եւ ասէ ցամենայն այր Իսրայէլի. Դուք լիջիք ՚ի ծառայութիւն, և ես և Յովնաթան որդի իմ եղիցուք ՚ի ծառայութիւն: Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ. Որ ինչ հաճո՛յ իցէ առաջի աչաց քոց՝ արա՞: ⁴¹Եւ ասէ Սաւուղ. Տէր Աստուած Իսրայէլի. զի՞ է զի ո՛չ ետուր պատասխանի ծառայի քում յաւուր յայնմիկ. եթէ յի՛ս իցեն այսօր, և եթէ ՚ի Յովնաթան յորդի իմ անօրէնութիւնք՝ տո՛ւր յայտնութիւն. և եթէ ՚ի ժողովրդեան քում Իսրայէլի իցէ անիրաւութիւն՝ տո՛ւր քաւութիւն: Եւ արկին վիճակս՝ Յովնաթանու՝ և Սաւուղայ՝ և ժողովրդեանն. և ել ժողովուրդն արտաքս՝: ⁴²Եւ ասէ Սաւուղ. Արկէ՛ք վիճակ ընդ իս և ընդ Յովնաթան որդի իմ. և որում հանցէ՛ Տէր զվիճակն՝ մեռցի: Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ. Մի՛ լիցի բանդ այր: Եւ ստիպեաց Սաւուղ զժողովուրդն. և արկին ընդ նա և ընդ Յովնաթան որդի նորա. և ել վիճակն Յովնաթանու: ⁴³Եւ ասէ Սաւուղ ցՅովնաթան. Պատմեա՛ ինձ զի՞նչ արարեր: Եւ պատմեաց նմա Յովնաթան և ասէ. Ծաշակելով ճաշակեցի ծայրիւ գաւազանին որ ՚ի ձեռին իմում սակա՛ւ մի մեղր, և ահա մեռանի՞մ ես՞: ⁴⁴Եւ ասէ ցնա Սաւուղ. Օ՛ն և օ՛ն արասցէ ինձ Աստուած՝ և օ՛ն և օ՛ն յաւելցէ, եթէ ո՛չ մահու՛ն մեռանիցիս այսօր: ⁴⁵Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ. Քա՛ւ լիցի եթէ մեռանիցի այսօր, որ արար զփրկութիւնս զայս մեծ Իսրայէլի. կենդանի՛ է Տէր՝ եթէ անկցի ՚ի հերոյ զլիտոյ նորա յերկիր. զի ժողովուրդս Աստուծոյ արար զմեղսս զայսոսիկ: Եւ եկաց ժողովուրդն յաղօթս առ Տէր վասն Յովնաթանու յաւուր յայնմիկ. և ո՛չ մեռաւ՞: ⁴⁶Եւ դարձա՛ւ Սաւուղ յայլազգեացն. և այլազգիքն գնացին ՚ի տեղիս իւրեանց:

Լէ ⁴⁷Եւ եհա՛ս Սաւուղայ թագաւորել, և վիճակեցա՛ւ ՚ի վերայ Իսրայէլի. և տայր պատերազմ շուրջ ընդ ամենայն թշնամիս իւր. և ընդ Սովաբայ, և ընդ որդիսն Ամոնայ. և ընդ որդիսն Եդոմայ, և ընդ Բեթովրայ, և ընդ թագաւորին Սուբայ, և ընդ այլազգիսն. և ուր շրջէր՝ փրկէր և առնէր զօրութիւնս սաստիկս: ⁴⁸Եւ եհար զԱմադէկ, և ապրեցոյց զԻսրայէլ ՚ի ձեռաց կոխողաց նորա՞: ⁴⁹Եւ էին որդիք Սաւուղայ. Յովնաթան, և Յեսսուր, և Մեղ՛քիսաւէ. և անուանք երկուց դստերաց նորա, անուն անդրանկանն Ներո՛թ, և անուն երկրորդին Մեղ՛քող: ⁵⁰Եւ անուն կնոջ նորա Աքինոան՝ դուստր Աքիմասայ. և անուն զօրավարին նորա Աբեններ, որդի Ներեայ որդւոյ ընտանւոյ Սաւուղայ: ⁵¹Եւ Կիս՝ հայր Սաւուղայ. և Ներ՝ հայր Աբեներայ. և որդիք Յամինայ որդւոյ Աբիելի երեսուն և ութ: ⁵²Եւ էր պատերազմ սաստիկ ընդ այլազգիսն զամենայն աւուրս Սաւուղայ: Եւ տեսեալ Սաւուղայ զամենայն զօրաւորս և զամենայն որդի զօրութեան, ժողովեաց զնոսա առ ինքն:

15

Գլուխ ԺԵ

* *Յօրինակին.* Ձի թէ Յովնաթանայ որդի՞:

* *Ոմանք այսպիսի օրինակաւ ունին զբանս զայս. Դուք լիջիք ՚ի մի կողմն, և ես և Յովնաթան որդի իմ եղիցուք ՚ի մի կողմն.* և ասէ ժողովուրդն:

* *Այլք.* Յաւուր յայսմիկ: *Ոմանք.* Եւ եթէ ՚ի Յովնաթանու որդւոյ իմում... Իսրայէլի իցէ անօրէնութիւն: *Յայլս պակասի.* Յովնաթանու, և Սաւուղայ, և ժողովրդեանն. և ել ժո՞:

* *Ոմանք.* Եւ ահա մեռանիմ ես:

* *Ոմանք.* Ձփրկութիւնս զայս մեծ յԻսրայէլի... արար զմեղսս զայս:

* *Ոմանք.* Ի՞ ձեռաց կոխողաց նորա:

¹Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Չիս առաքեաց Տէր օժանել զքեզ ՚ի թագաւոր ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայէլի. և արդ լուր ձայնի պատգամաց Տեառն՝:
²Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Արդ խնդրեցից զվրժ, զոր արար Ամաղէկ ընդ Իսրայէլի. զիա՞րդ պատահեաց նմա ՚ի ճանապարհի ելանելոյ նորա յեգիպտոսէ: ³Եւ արդ ե՛րթ և հարցես՝ զԱմաղէկ, և զՅարիմ, և զամենայն որ ինչ նորա իցէ. և մի՛ ապրեցուցանիցես ՚ի նոցանէ, և սատակեցես՝ զնա. և կորուսես՝ յառնէ մինչև ցկին, և ՚ի տղայոյ մինչև ցստնդիա՛ցն, և յարջառոյ մինչև ցոչխար, և յուղտուէ մինչև ցէ՛շ*:

ԼԸ ⁴Եւ հրաման ետ Սաւուղ ժողովրդեանն, և հանդէս արար նոցա յԱղիմ, չորեք հարկը հազար դասականաց, և երեսուն հազարաց դասականաց Յուդայ*:
⁵Եւ եկն Սաւուղ մինչև ցքաղաքս Ամաղէկայ. և դարանամուտ եղեն ՚ի հեղեղատին: ⁶Եւ ասէ Սաւուղ ցԿինեցին. Երթ խոյս տուր ՚ի միջոյ Ամաղէկացւոցն, զի մի՛ սատակեցից զքեզ ընդ նմա. և դու արարեր ողորմութիւն ընդ ամենայն որդիսն Իսրայէլի յելանելն նոցա յեգիպտոսէ: Եւ խոյս ետ Կինեցին ՚ի միջոյ Ամաղէկայ: ⁷Եւ եհար Սաւուղ զԱմաղէկ յելիլայ մինչև ՚ի Սուր, որ է հանդէպ Եգիպտոսի*. ⁸և կալաւ զթագաւորն Ամաղէկայ զԱզա՛գ կենդանւոյն. և զամենայն ազգն Յարիմայ կոտորեցին սրով սուսերի: ⁹Եւ ապրեցոյց Սաւուղ և ամենայն ժողովուրդն զԱզագ կենդանի. և զընտիրս խաշանց, և զանդուոց, և զկերակրոց, և զայգեաց, և զամենայն բարութեանց, և ո՛չ կամեցաւ սատակել զնոսա. և զամենայն գործ զանարգ և զարհամարհեալ սատակեցին:

ԼԹ ¹⁰Եւ եղև բա՛ն Տեառն առ Սամուէլ՝ և ասէ. ¹¹Ձղջացեա՛լ եմ, զի թագաւորեցուցի զՍաւուղ ՚ի թագաւոր. զի դարձա՛ւ յինէն յետս, և զբանս իմ ո՛չ պահեաց: Եւ տրտմեցաւ Սամուէլ: Եւ գոչեաց Սամուէլ առ Տէր զգիշերն ամենայն*:
¹²Եւ կանխեաց Սամուէլ՝ և գնաց ընդ առաջ Իսրայէլի, ընդ առաւօտն: Եւ ազդ եղև Սամուէլի՝ և ասեն. Եկն Սաւուղ ՚ի Կարմելոս և կանգնեաց իւր ձեռն, և դարձոյց զկառսն և էջ ՚ի Գաղգաղա: Եւ եկն Սամուէլ առ Սաւուղ. և ահա նա մատուցանէր ողջակէզս Տեառն զառաջինս աւարոյն զոր ա՛ծ յԱմաղէկայ: ¹³Եւ եկն Սամուէլ առ Սաւուղ, և ասէ ցնա Սաւուղ. Օրհնեա՛լ դու ՚ի Տեառնէ. կացուցի՛ զոր ինչ խօսեցաւ Տէր*:
¹⁴Եւ ասէ Սամուէլ. Եւ զի՞նչ է բարբառ հօտիդ այդոցիկ յականջս իմ, և բարբառ արջառոցդ զոր ես լսեմ*:
¹⁵Եւ ասէ Սաւուղ. ՅԱմաղէկայ ա՛ծի զայդ՝ զոր ապրեցոյց ժողովուրդդ, զընտիրս խաշանց և զարջառոց. զի զոհեցեն Տեառն Աստուծոյ քում. և զայլսն սատակեցի՛:

Խ ¹⁶Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Անսա՛ և պատմեցի՛ց քեզ զոր խօսեցաւ Տէր ընդ իս յայսմ գիշերի: Եւ ասէ ցնա. Խօսեաց: ¹⁷Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ո՞չ ապաքէն փո՛քր ես դու առաջի նորա զօրավար գաւազանի ցեղին Իսրայէլի. և օ՛ծ զքեզ Տէր՝ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի*. ¹⁸և առաքեաց զքեզ Տէր ՚ի

* *Յօրհնակին պակասէր.* Ես ասէ Սամուէլ ցՍաւուղ. Չիս ա՛:

* *Ոմանք.* Եւ մի՛ ապրեցուցանիցես ՚ի նմանէ... և յուղտէ մինչև:

* *Ի լուս՝.* Եւ հանդէս արար նոցա Գաղգաղ. *համաձայն ոմանց ՚ի բնար՝: Ոմանք՝: Չորեք* հարիւր հազար արանց դասականաց:

* *Ի լուս՝.* ՅԵլիլատայ մինչև. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

* *Յօրհնակին պակասէր.* Ոչ պահեաց. և տրտմեցաւ Սամուէլ: Եւ գոչ:

* *Ոսկան.* Եւ իբրև եկն Սամուէլ:

* *Ոմանք.* Բարբառ հօտիդ այդոցիկ յականջս:

* *Ոմանք.* Գաւազան ՚ի ցեղին Իսրայէլի:

ճանապարհ, և ասէ ցքեզ. Ե՛րթ և սատակեա՛ զմեղանչականն յիս զԱմաղէկ. և տացե՛ս ընդ նոսա պատերա՛զմ մինչև վախճանեսցես զնոսա.¹⁹ և ընդէ՞ր ո՛չ լուար ձայնի Տեառն, այլ յարձակեցա՛ր դիմե՛լ ՚ի վերայ աւարիդ. և արարեր չա՛ր առաջի Տեառն:

ԽԱ՝²⁰ Եւ ասէ՛ Սաւուղ ցՍամուէլ. Վասն լսելո՛յ իմոյ ձայնի ժողովրդեանն. և չոգայ՛ ՚ի ճանապարհն զոր առաքեաց զիս Տէր. և ածի՛ զԱզազ արքայ Ամաղէկայ, և զԱմաղէկ սատակեցի՛: ²¹Եւ ա՛ռ ժողովուրդս յաւարտ անտի հո՛տս և անդեայս զընտի՛րս սատակմանն առաջի Աստուծոյ զոհե՛լ ՚ի Գաղգաղա՛: ²²Եւ ասէ՛ Սամուէլ. Եթէ հաճո՞յ իցէ Տեառն ողջակէ՛զ և զոհ իբրև զԼսել ձայնի Տեառն. ահա լա՛ւ է ունկնդրութիւն քան զզոհ ընտիր, և հնազանդութիւն քան զճարպ խոյոց: ²³Ձի հմայք մե՛ղք են, և ցա՛ւս և աշխատութիւնս ածէ թերա՛փոյ ՚ի վերայ. զի արհամարհեցեր զբա՛ն Տեառն, արհամարհեսցէ՛ զքեզ Տէր՝ չլինե՛լ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի: ²⁴Եւ ասէ՛ Սաւուղ ցՍամուէլ. Մեղայ՛ զի անցի զբանիւ Տեառն, և զբանիւ քով. զի երկեայ՛ ՚ի ժողովրդեանն և լուայ՛ ձայնի նոցա: ²⁵Եւ արդ՛ բարձ զմեղս իմ, և դարձի՛ր ընդ իս, և պագից երկիր Տեառն Աստուծոյ քում: ²⁶Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ո՛չ դարձայց ընդ քեզ, զի արհամարհեցեր զբանն Տեառն. և արհամարհեսցէ՛ զքեզ Տէր չլինե՛լ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի՛: ²⁷Եւ դարձոյց Սամուէլ զերեսս իւր ՚ի գնալ. և բո՛ւնն եհար Սաւուղ զտոնո՛յ կրկնոցի նորա և պատառեաց զնա: ²⁸Եւ ասէ ցնա Սամուէլ. Պատառեաց Տէր թագաւորութիւնդ ՚ի ձեռաց քոց յԻսրայէլէ այսօր, և տացէ՛ զդա ընկերի քում լաւագունի՛ քան զքեզ: ²⁹Եւ բաժանեսցի Իսրայէլ ընդ երկու. և ո՛չ դարձցի, և ո՛չ զղջասցի Տէր. զի ո՛չ եթէ իբրև զմարդ է ՚ի զղջանալ. ինքնին սպառնասցի: ³⁰Եւ ասէ Սաւուղ. Մեղայ՛. այլ մեծարեա՛ զիս առաջի ծերոց ժողովրդեան իմոյ, և առաջի Իսրայէլի. և դարձի՛ր ընդ իս, և երկիր պագից Տեառն Աստուծոյ քում: ³¹Եւ դարձա՛ւ Սամուէլ զկնի Սաւուղայ, և երկիր եպագ Տեառն: ³²Եւ ասէ Սամուէլ. Մատուցէ՛ք առ իս զԱզա՛զ թագաւորն Ամաղէկայ: Եւ մատեա՛ւ առ նա Ազազ դողալով. և ասէ Ազազ եթէ այսպէս դա՛ռն իցէ մահ: ³³Եւ ասէ Սամուէլ ցԱզազ. Չորօրինակ որդեկոտոր արար սո՛ւր քո զկանայս, նո՛յնպէս որդեկոտոր լիցի ՚ի կանանց մայր քո: Եւ սպան Սամուէլ զԱզազ առաջի Տեառն ՚ի Գաղգաղա՛: ³⁴Եւ գնաց Սամուէլ յԱրիմաթեմ, և Սաւուղ ե՛լ ՚ի տուն իւր ՚ի Գաբաա: ³⁵Եւ ո՛չ ևս յաւել Սամուէլ տեսանել զՍաւուղ մինչև յօր մահուան իւրոյ. զի սո՛ւզ ունէր Սամուէլ ՚ի վերայ Սաւուղայ՛:

ԽԲ Եւ զղջացա՛ւ Տէր զի թագաւորեցոյց զՍաւուղ ՚ի վերայ Իսրայէլի:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Մինչև յե՞րթ սո՛ւզ առնուս ՚ի վերայ Սաւուղայ. և ես անարգեցի՛ զնա՝ չթագաւորել ՚ի վերայ Իսրայէլի. լից՛ զեղջեր քո իւղով, և ե՛կ առաքեմ զքեզ առ Յեսսէ՛ մինչև ցԲեթղեհէմ. զի տեսի ես յորդուցն նորա թագաւորել ինձ ՚ի թագաւոր: ²Եւ ասէ Սամուէլ. Չիա՞րդ երթայց. և լսիցէ Սաւուղ

* Ոճանք. Առաջի Տեառն Աստուծոյ:

* Յայլս պակասի. Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ո՛չ դար՛:

* Ոճանք. Որդեկոտոր լիցի ՚ի կանայս:

* Ոճանք. Մինչև ցօր մահուան:

և սպանանիցէ՛ զիս: Եւ ասէ Տէր. Ա՛ն դու ինձ երի՛նջ մի յարջառոց. և ասացես՝ զոհե՛լ Տեառն եկի՛*. ³Եւ կոչեսցես՝ զՅեսսէ՛ ՚ի զոհն. և ցուցի՛ց քեզ զինչ առնիցես. և օծցես՝ զոր ե՛ս ասացից քեզ: ⁴Եւ արա՛ր Սամուէլ զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա Տէր, և եկն ՚ի Բեթղահեմ. և զարհուրեցան՝ ծերք քաղաքին ՚ի պատահել նմա. և ասեն. Խաղաղութիւն իցէ մուտդ քո տեսանօղդ: ⁵Եւ ասէ. Խաղաղութիւն է. զոհե՛լ Տեառն եկի. սրբեցարուք և ուրախ լերուք ընդ իս այսօր: Եւ սրբեաց զՅեսսէ և զորդիս նորա, և կոչեաց՝ զնոսա ՚ի զոհն: ⁶Եւ եղև ՚ի մտանելն նոցա. ետես զեղիաք և ասէ. Այլ և առաջի՛ իսկ Տեառն օծեալ իւր՝: ⁷Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Սի՛ հայիր ընդ տեսիլ դորա, և մի՛ ՚ի մեծութիւն հասակի դորա. զի անարգեցի՛ զդա. զի ո՛չ եթէ որպէս տեսանիցէ մարդ՝ տեսանէ Աստուած. զի մարդ հայի յերեսս, և Աստուած հայի ՚ի սիրտս՝: ⁸Եւ կոչեաց Յեսսէ զԱմինադա՛ր, և անց առաջի Սամուէլի. և ասէ. Եւ ո՛չ զդա ընտրեաց Տէր՝: ⁹Եւ անցո՛յց Յեսսէ զՍամաա՛. և ասէ. Եւ ո՛չ զդա ընտրեաց Տէր: ¹⁰Եւ անցո՛յց Յեսսէ զԷթանեսին զորդիսն իւր առաջի Սամուէլի. և ասէ Սամուէլ ցՅեսսէ. Ո՛չ ընտրեաց ՚ի դոցանէ Տէր: ¹¹Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. Ա՞յ յոչափ են մանկտիդ: Եւ ասէ. Կայ՛ մնա՛ և սփռիկ և արածէ՛ խաշն: Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. Առաքեա՛ և ած զնա. զի ո՛չ բազմեսցուք մինչև ՚ի գա՛լ նորա այսր: ¹²Եւ առաքեաց և ած զնա. և նա էր կարմիր, և աչօք գեղեցիկ, և բարւո՛ք տեսանելով Տեառն: Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Արի՛ օ՛ծ գՐաւիթ, զի դա՛ է բարի՝: ¹³Եւ առ Սամուէլ զեղջևրն իւղոյ, և օ՛ծ զնա ՚ի մէջ եղբարց իւրոց: Եւ խաղաց Յոզի Տեառն ՚ի վերայ Դաւթի յօրէ՛ յայնմանէ և առ յապա. և յարեաւ Սամուէլ և զնաց յԱրիմաթեմ: ¹⁴Եւ Յոզի Տեառն վերացաւ ՚ի Սաւուդայ: Եւ խեղդէ՛ր զնա այս չար ՚ի Տեառնէ: ¹⁵Եւ ասեն ցնա ծառայքն իւր. Ահա այս չար ՚ի Տեառնէ խեղդէ՛ զքեզ. ¹⁶Խօսեսցին ծառայք քո առաջի քո, և խնդրեսցեն տեառն մերուն այր մի որ գիտիցէ երգել քնարաւ. և եղիցի ՚ի հասանել ՚ի վերայ քո այսոյն չարի որ յԱստուծոյ, երգեսցէ՛ քնարաւն և դէր լիցի քեզ, և հանգուսցէ՛ զքեզ: ¹⁷Եւ ասէ Սաւուղ ցծառայսն իւր. Տեսէ՛ք ինձ այր մի որ բարւո՛ք երգիցէ, և ածէ՛ք զնա առ իս: ¹⁸Պատասխանի՛ ետ մի ոմն ՚ի մանկտոյ նորա և ասէ. Ահա տեսի զորդի Յեսսեայ զԲեթղահեմացի. և գիտէ՛ սաղմոս, և այր իմաստուն, և այր պատերազմօղ. և այր հանճարե՛ղ, և ճարտարաբան. և այր գեղեցիկ տեսլեամբ, և Տէր ընդ նմա՛:

ԽԳ ¹⁹Եւ առաքեաց Սաւուղ հրեշտակս առ Յեսսէ, և ասէ. Առաքեա՛ առ իս զԴաւիթ որդի քո որ ՚ի հօտի՛ քում է: ²⁰Եւ առ Յեսսէ արդո՛ւ մի հացի, և տիկ մի զինւոյ, և ո՛ւլ մի յայծեաց, և առաքեաց ՚ի ձեռն Դաւթի որդւոյ իւրոյ Սաւուդայ: ²¹Եւ եմո՛ւտ Դաւիթ առ Սաւուղ, և կայր ՚ի սպասու առաջի նորա. և սիրեաց՝ զնա յոյժ, և եղև նորա կապարճակի՛ր: ²²Եւ առաքեաց Սաւուղ առ Յեսսէ և ասէ. Կացցէ՛ Դաւիթ առաջի իմ, զի եգիտ շնորհս առաջի աչաց իմոց՝: ²³Եւ լինէր յորժամ հասանէ՛ր այսն չար ՚ի վերայ Սաւուդայ, առնոյր Դաւիթ զքնարն և նուագէ՛ր ձեռամբ իւրով, և հանգուցանէ՛ր զՍաւուղ. և դիւրանայր նմա, և մեկնէ՛ր ՚ի նմանէ այսն չար:

* Ի բազումս պակասի. Ա՛ն դու ինձ երի՛նջ մի:

* Ոմանք. Եւ եղև ՚ի մտանելն նորա, ետես զեղ՛:

* Ոմանք. Որպէս տեսանէ մարդ տեսանիցէ Աստուած:

* Ոմանք. Եւ ո՛չ զդա ընտրեաց իւր Տէր:

* Ոսկան. Եւ բարւոք տեսլեամբ Տեառն:

* Ի լուս՛. Յեսսեայ զԲեթղահեմացւոյ. համաձայն ոմանց ՚ի բնար՛:

* Ի լուս՛. Կեցցէ Դաւիթ առաջի իմ:

Գլուխ ԺԷ

ԽԴ ¹Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց՝ ՚ի պատերազմ, և գումարեցան ՚ի Սոկքով Յրէաստանի. և բանակեցան ընդ Սոկքով և ընդ Ազեկայ յԱփեսդոմին*։ ²Եւ Սաւուղ և արք Իսրայէլի՝ ժողովեցան և նոքա ՚ի հովիտսն, և ճակատեցան ՚ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ ³Եւ այլազգիքն կային ՚ի վերայ լերինն յայնմ կողմանէ, և Իսրայէլ կայր ՚ի վերայ լերինն յայսմ կողմանէ, և հովիտն ՚ի մէջ նոցա*։

ԽԵ ⁴Եւ ել այր զօրաւոր ՚ի ճակատէ այլազգեացն՝ Գողիա՛դ անուն նորա ՚ի Գեթայ. բարձրութիւն նորա վե՛ց կանգուն և թզաւ. ⁵և սաղաւարտ ՚ի գլուխ նորա. և զրահս վերտս զգեցեալ. և կշիռ զրահից նորա հինգ հազար սիկդ, պղնձւոյ և երկաթոյ. ⁶և տնապանք պղնձի՛ք ՚ի վերայ բարձից նորա, և վահան պղնձի՛ ՚ի վերայ թիկանց նորա. ⁷և բուն գեղարդան նորա իբրև զստորի՛ ոստայնանկա՛ց. և տե՛զ նորա ՚ի վեց հարկը սկեղէ երկաթոյ. և զինակիր նորա առաջի՛ նորա երթայր։ ⁸Ե՛կն եկա՛ց. ծա՛յն ետ ՚ի ճակատն Իսրայէլի՝ և ասէ ցնոսա. Ընդէ՛ր ելանէք ճակատել ՚ի պատերազմ ընդդէմ մեր. ո՞չ ապաքէն ես այլազգի՛ եմ, և դուք եբրայեցիք ծառայք Սաւուղայ. ընտրեցէ՛ք դուք ձեզ այր մի և իջցէ՛ առ իս, ⁹եթէ կարասցէ կռուել ընդ իս և հարկանել զիս՝ եղիցուք մեք ձե՛զ ՚ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից և հարից զնա, եղիցիք դուք մեզ ՚ի ծառայս և ծառայեսցիք մեզ։ ¹⁰Եւ ասէ այլազգին. Ահաւասիկ ես նախատեցի՛ զճակատդ Իսրայէլի յաւուր յայսմիկ. տո՛ւք այր մի, և ես և նա՛ մենամարտեսցուք երկոքեան։ ¹¹Իբրև լուա՛ւ Սաւուղ և ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի՛ հարան և երկեան յոյժ*։ ¹²Եւ էր այր մի որդի առն Եփրաթացւոյ, և նա՛ ՚ի Բեթղահեմէ Յուդայ, և անուն նորա Յեսսէ՛. և էին նորա որդիք ո՛ւթ. և այրն յաւուրս Սաւուղայ ծերացեալ հասեալ յարս։ ¹³Եւ գնացին երեք որդիքն Յեսսեայ մեծագոյնք, երթեալ զհետ Սաւուղայ ՚ի պատերազմ. և անուանք որդւոց նորա երթելոց ՚ի պատերազմ. Եղիա՛բ անդրանիկն նորա, և երկրորդն նորա Ամինադա՛բ, և երրորդն նորա Սամաա՛*։ ¹⁴և Դաւիթ էր կրտսեր. և երեքին մեծագոյնքն երթեալ էին զհետ Սաւուղայ։ ¹⁵Եւ Դաւիթ գնացեալ դարձաւ ՚ի Սաւուղայ՝ արածել զոչխարս հօր իւրոյ, ՚ի Բեթղահեմ*։ ¹⁶Եւ մատուցեալ այլազգւոյն՝ կանխեալ և անագանեալ արձանանայր աւուրս քառասուն։ ¹⁷Եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ ցորդի իւր. Ա՛ռ դու եղբարց քոց զարդու՛ փոխնդոյս այսորիկ, և զտասն նկանակս զայսոսիկ, և պնդեա՛ ՚ի բանակն և տո՛ւր եղբարց քոց։ ¹⁸Եւ զտասն մաճառակս զկաթին՝ տացես հազարապետին. և տեսցես զողջոյն եղբարց քոց. և եթէ պէ՛տք ինչ իցեն նոցա, իմասցիս*։ ¹⁹Եւ Սաւուղ՝ և ամենայն այր Իսրայէլացի՝ էին ՚ի հովիտս Կաղնւոյն, պատերազմեալ ընդ այլազգիսն։ ²⁰Եւ կանխեալ Դաւիթ ընդ առաւօտն. և եթող զոչխարսն ՚ի տուարածականսն.

* *Ոմանք.* ՅԱփեսդոմին. և *ոմանք.* յԵփեսդովմին։

* *Ոմանք.* Յայնմ կողմանէ, և հովիտն ՚ի մէջ։

* *Բազումք.* Եւ երկեան յոյժ։ (12) Եւ ասէ Դաւիթ որդի առն Եփրաթա՛։

* *Ոմանք.* երթալոց ՚ի պատերազմն... և երրորդն Սամաա։

* *Ոմանք.* Եւ Դաւիթ գնացեալ էր ՚ի Սաւուղայ արա՛։

* *Ոմանք.* Եւ զտասն զմաճռակս կաթինդ տարցես հազարա՛։

ա՛ռ և գնաց՝ որպէս և հրամայեաց նմա Յեսսէ. և ե՛կն ՚ի տափարակն և ՚ի զօրն որ ելանէ՛ր ՚ի ճակատն: Եւ աղաղակեցին ՚ի պատերազմին* . 21 և ճակատեցան Իսրայէլացիքն և այլազգիքն հանդէպ միմեանց՝ ճակատ առ ճակատ: 22 Եւ եթո՛ղ Դաւիթ զկարասին յինքենէ ՚ի ձեռն վանապանին, և ընթացա՛ւ ՚ի ճակատն, և ե՛կն եհարց զողջունէ եղբարցն իւրոց: 23 Եւ մինչդեռ նա խօսէր՝ ահա այրն Յամինացի ելանէ՛ր, Գողիա՛դ անուն նորա, Փղշտացի ՚ի Գեթա՛յ՝ ՚ի ճակատուց այլազգեացն. և խօսեցա՛ւ ըստ նմին բանից. և լուա՛ւ Դաւիթ* : 24 Եւ ամենայն Իսրայէլ ՚ի տեսանել իւրեանց զայրն՝ փախեան յերեսաց նորա, և զարհուրեցան յոյժ: 25 Եւ ասէ այր Իսրայէլի, եթէ տեսանէ՛ք զայրն զայն որ ելանէ, զի նախատե՛լ ելանէ զԻսրայէլ. և եղիցի այր որ սպանանիցէ՛ զնա, մեծացուցէ՛ զնա արքայ՝ յոյժ մեծութեամբ, և զդուստր իւր տացէ նմա կնութեան. և զտուն հօր նորա արասցէ ազա՛տ ՚ի մէջ Իսրայէլի* :

ԽԶ 26 Եւ խօսեցա՛ւ Դաւիթ ընդ արսն որ շուրջ կային զնովաւ՝ և ասէ. Զի՞նչ առնիցէ առն որ հարկանիցէ զայլազգին զայն, և բառնայցէ՛ զնախատինս յԻսրայէլէ. զի զի՞նչ է այլազգին այն անթլփատ, զի նախատեաց զճակատս Աստուծոյ կենդանոյ* : 27 Եւ խօսեցա՛ւ ընդ նմա ժողովուրդն ըստ նմին բանից՝ և ասէ. Այնպէս արասցէ առն՝ որ սպանանիցէ զնա* : 28 Իբրև լուա՛ւ Եղիաբ եղբայր նորա երէց՝ զխօսել նորա ընդ արսն, բարկացա՛ւ սրտմտութեամբ Եղիաբ Դաւիթի՝ և ասէ. Ընդէ՞ր բնաւ իջեր այսր, և յո՞յր ձեռն թողեր զսակաւ ոչխարսն յանապատի՛ անդ. ես գիտե՛մ զհպարտութիւն քո՝ և զչարութիւն սրտի քոյ, զի վասն տեսանելոյ զպատերազմս իջեր* : 29 Եւ ասէ Դաւիթ. Եւ արդ՝ զի՞նչ արարի. ո՞չ ապաքէն բանք իցեն: 30 Եւ դարձաւ ՚ի նմանէ ՚ի մես կողմն և խօսեցա՛ւ ըստ նմին բանից. և ե՛տ նմա պատասխանի ժողովուրդն ըստ առաջնոյ բանիցն: 31 Եւ լո՛ւ եղեն բանքն զոր խօսեցաւ Դաւիթ, և պատմեցին առաջի Սաւուղայ. և ա՛ռ զնա առ ինքն* : 32 Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Մի՛ անկցի սիրտ տեառն իմոյ ՚ի վերայ իւր. ծառայ՝ քո երթիցէ՛ և մարտիցէ՛ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ: 33 Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. Գուցէ՛ ո՛չ կարիցես երթալ կռուել ընդ այլազգւոյն. զի դու մանուկ ես, և նա այր պատերազմող ՚ի մանկութենէ իւրմէ: 34 Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Արածէ՛ր ծառայ քո զխաշինս հօր իւրոյ, և յորժամ գա՛յր առևձ կամ արջ, և առնոյր ոչխար՝ ՚ի հօտէ անտի, 35 Ելանէի՛ զհետ նորա՝ և հարկանէի՛ զնա, և կորզէի՛ ՚ի բերանոյ նորա. և եթէ յառնէ՛ր ՚ի վերայ իմ, ունէի զփողի՛ց նորա՝ և հարկանէի՛ և սպանանէի զնա: 36 Զառևձ և զարջ սատակէ՛ր ծառայ քո, և եղիցի այլազգին անթլփատ իբրև զմի՛ ՚ի նոցանէն. և արդ՝ ո՞չ երթայց սատակեցից զնա, և բարձից այսօր զնախատինս յԻսրայէլէ. զի ո՞ք է այն անթլփատ՝ որ նախատեաց զբանակս Աստուծոյ կենդանոյ: 37 Եւ ասէ Դաւիթ. Տէր Աստուած՝ որ ապրեցոյց զիս ՚ի ձեռաց առիւծուն, և ՚ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուցէ զիս ՚ի ձեռաց այլազգւոյն անթլփատին այնորիկ: Եւ ասէ Սաւուղ. Ե՛րթ՝ և Տէր եղիցի ընդ քեզ: 38 Եւ զգեցոյց Սաւուղ Դաւիթ զվարապանակս իւր, և սաղաւարտ պղնձի ՚ի գլուխ նորա, և ագոյց նմա զրա՛հս: 39 Եւ աճ Դաւիթ զսուսեր իւր ընդ

* Ոմանք. ՚ի ճակատն. և աղաղակեցին ՚ի ճակատուն:

* Ոմանք. Եւ մինչդեռ նա ընդ նոսա խօսէր. և ահա այրն Ամինացի:

* Ոմանք. եթէ տեսանիցէք զայրն զայն, որ ելանիցէ:

* Ոմանք. Եւ զինչ է այլազգին:

* Այլք. Այնպէս արասցի առն: Ուր ոմանք. Ըստ նմին բանի:

* Ոմանք. Յոյր ՚ի ձեռն թողեր: Այլք. Զսակաւ ոչխարակսն յանա՛:

* Ոմանք. Եւ լուր եղեն բանքն:

մէջ 'ի վերայ վարապանակացն. և գթեաց' ՚ի գնալն մի անգամ և երկիցս. և ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ո՛չ կարեմ երթալ սոքօք՝ զի չե՛մ հմուտ: Եւ հանի՛ն զայն 'ի նմանէ՛*: ⁴⁰Եւ ա՛ն զցուպն իւր 'ի ձեռնին իւրում. և ընտրեաց իւր հի՛նգ քարինս ողորկս 'ի հեղեղատէն, և ե՛դ զնոսա 'ի հովուական մախաղին յոր սովո՛ր էր զքարն ժողովել, և զպա՛րսն 'ի ձեռնին իւրում. և մերձեցա՛ւ առ այրն այլազգի՛*: ⁴¹Եւ գնա՛յր գա՛յր այլազգին՝ և մերձենա՛յր առ Դաւիթ. և ա՛յր վահանակիր առաջի նորա: ⁴²Իբրև հայեցա՛ւ այլազգին և ետէ՛ս զԴաւիթ՝ արհամարհեաց զնա. զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ: ⁴³Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. Ձիա՞րդ, շո՛ւն եմ ես, զի ցպով և քարամբք գա՛ս 'ի վերայ իմ: Եւ ասէ Դաւիթ. Նա՛ և վատթա՛ր ևս ես քան զշուն: Եւ նզովեաց այլազգին զԴաւիթ դիօքն իւրովք՝: ⁴⁴Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. Ե՛կ առ իս և տաց զմարմին քո թռչնո՛ց երկնից՝ և գազանաց երկրի: ⁴⁵Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու գա՛ս 'ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարա՛ւ, և ես՝ գա՛մ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց ճակատուս Իսրայէլի՝ զոր նախատեսցեր այսօր: ⁴⁶Եւ փակեսցէ՛ զքեզ Տէր այսօր 'ի ձեռս իմ, և սպանի՛ց զքեզ. և առի՛ց զգլուխ քո 'ի քէն. և տաց զգէշ քո՝ և զդիակունս բանակի՛ այլազգեացդ յաւուր յայսմիկ թռչնո՛ց երկնից և գազանաց երկրի. և ծանիցէ՛ ամենայն երկիր՝ թէ գո՛յ Աստուած 'ի մէջ Իսրայէլի. ⁴⁷և ծանիցէ՛ ամենայն եկեղեցիս այս՝ թէ ո՛չ սրով և գեղարդեամբ փրկէ Տէր. զի Տեառն է պատերազմ, և մատնեսցէ՛ զձեզ Տէր 'ի ձեռս մեր՝: Խէ՛ ⁴⁸Եւ յարեա՛ւ այլազգին՝ և ե՛կն և մերձեցա՛ւ ընդդէմ Դաւիթի. և աճապարեաց Դաւիթ՝ և ընթացաւ 'ի ճակատն ընդդէմ այլազգւոյն: ⁴⁹Եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր 'ի մախաղն, և ա՛ն անտի քար մի, և պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն. և եմո՛ւտ քարն ընդ սաղաւարտն 'ի ճակատն, և անկա՛ւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր: ⁵⁰Եւ զօրացա՛ւ Դաւիթ քան զայլազգին պարսիւքն և քարին #, և եհա՛ր զայլազգին և սպան զնա. և սուր չէ՛ր 'ի ձեռնին նորա: ⁵¹Եւ ընթացա՛ւ Դաւիթ և հարաւ 'ի վերայ նորա, և ա՛ն զնորին սուսեր, և մերկաց զնա 'ի պատենից իւրոց, և սպան զնա և եհա՛տ զգլուխ նորա: Իբրև տեսին այլազգիքն թէ մեռա՛ւ զօրաւորն նոցա՝ փախեան՝*: ⁵²Եւ յարեան արք Իսրայէլի և Յուդայ, աղաղակեցին և յարձակեցան զհետ նոցա մինչև 'ի մուտս Գեթայ, և մինչև 'ի դրունս Ասկաղոնի: Եւ անկա՛ն վիրաւորք այլազգեացն զճանապարհայնն մինչև ցորունս Գեթայ և Ակկարոնի՛*: ⁵³Եւ դարձան այք Իսրայէլի ասպատակեալքն զհետ այլազգեացն, և կոխեցին զբանակս նոցա: ⁵⁴Եւ ա՛ն Դաւիթ զգլուխ այլազգւոյն, և երէր զնա յերուսաղէմ. և զգէն նորա ե՛դ 'ի վանս իւրում: ⁵⁵Եւ իբրև ետես Սաւուղ զԴաւիթ ելեալ ընդ դէմ այլազգւոյն, ասէ ցԱբեններ իշխան զօրուն. Ո՞յր որդի է պատանեակդ այդ Աբեններ: Եւ ասէ Աբեններ. Կենդանի՛ է անձն քո արքայ՝ թէ գիտիցեն: ⁵⁶Եւ ասէ արքայ. Յա՛րց թէ ո՞յր որդի իցէ պատանեակդ: ⁵⁷Եւ իբրև դարձաւ Դաւիթ 'ի հարկանելոյ զայլազգին, ա՛ն զնա Աբեններ՝ և աժ զնա առաջի Սաւուղայ. և գլուխ

* Այլք. Եւ աժ Դաւիթ զսուսեր իւր 'ի վերայ վարապանա՛: *Յօրինակին*. Եւ ասէ դաւիթ Սաւուղ:

* *Ոմանք*. Սովոր էր զքարինս ժողովելոյ. և զպարսսն. և *ոմանք*. և զպարան 'ի ձեռնին:

* *Ոմանք*. Շուն իցեն ես... զԴաւիթ դիովք իւրովք:

* *Ոմանք*. Եւ ծանիցէ եկեղեցիս այս ամենայն՝ եթէ:

* *Ոմանք*. Եւ մերկեաց զնա 'ի պա՛:

* *Ոմանք*. Ձճանապարհայն նմին մինչև 'ի դրունս Գեթայ և յԱկկարոն:

այլազգւոյն 'ի ձեռնն նորա* : 58Եւ ասէ ցնա Սաւուղ. Ո՞ր որդի ես՝ մանուկ դու: Եւ ասէ Դաւիթ. Որդի ծառայի՛ քո Յեսսեայ Բեթղաիեմացոյ:

18

Գլուխ ԺԸ

1Եւ եղև իբրև վախճանեաց զխօսելն ընդ Սաւուղայ, և ոգի Յովնաթանու կապեցա՛ւ ընդ ոգւոյն Դաւիթի. և սիրեաց՝ զնա Յովնաթան ըստ անձին իւրում: 2Եւ ա՛ռ զնա Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ. և ո՛չ ետ նմա դառնալ՝ 'ի տուն հօր իւրոյ: 3Եւ ուխտեաց ընդ նմա Յովնաթան ուխտ՝ առ 'ի սիրել զնա ըստ անձին իւրում: 4Եւ մերկացա՛ւ Յովնաթան զլաւդիկն որ զիւրև՝ և ետ զայն Դաւիթի, և զվարապանակս իւր՝ մինչև ցտուսեր իւր, և ցաղեղն իւր, և ցկամար իւր և ցկապարճս իւր* : 5Եւ երթայր Դաւիթ ամենայն ուրեք ուր և առաքէր զնա Սաւուղ, և իմաստնանայր. և կացոյց զնա Սաւուղ 'ի վերայ արա՛նց պատերազմի. և հաճո՛յ եղև առաջի աչաց ամենայն ժողովրդեանն. նա՛ և առաջի աչաց ծառայիցն Սաւուղայ: 6Եւ եղև 'ի մտանելն նոցա՝ իբրև դարձաւ Դաւիթ 'ի սպանանելոյ զայլազգին, ելի՛ն պարաւորք ընդ առաջ Դաւիթի յամենայն քաղաքացն Իսրայէլի երգել՝ պար առնուլ ընդ առաջ Սաւուղայ արքայի, թմբկօք և ուրախութեամբ և ծնծղայիւք: 7Եւ նուագէին կանայք խաղալիկք և ասէին. Եհար՛ Սաւուղ զհագարս՝ և Դաւիթ զբե՛րս: 8Եւ զչարեցա՛ւ Սաւուղ վասն բանից այնոցիկ՝ և ասէ. Դաւիթ ետուն զբերս, և ինձ ետուն զհագա՞րս. և արդ զի՞նչ իցէ պակաս նմա, բայց եթէ թագաւորութիւնս* : 9Եւ ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ՛ յայնմանէ՛ և առ յապա: 10Եւ եղև 'ի վաղիւ անդր՝ և հարաւ այս չար յԱստուծոյ 'ի վերայ Սաւուղայ, և մարգարեանայր 'ի մէջ տան իւրոյ, և Դաւիթ երգէր ձեռամբ իւրով՝ որպէս և հանապագն: Եւ գեղարդն 'ի ձեռնն Սաւուղայ: 11Եւ ասէ. Հարի՛ց կարեցից զԴաւիթ գեղարդամբս ընդ որմնն: Եւ ձգեաց Սաւուղ. և խոյս ետ յերեսաց նորա Դաւիթ երկիցս: 12Եւ երկեան՝ Սաւուղ յերեսաց Դաւիթի. զի Տէր էր ընդ նմա, և 'ի Սաւուղայ վերացեալ էր: 13Եւ 'ի բաց արար զնա Սաւուղ յիւրմէ, և կացոյց զնա իւր հագարապետ. և ելանէր և մտանէր առաջի ժողովրդեանն:

ԽԸ 14Եւ էր Դաւիթ խելամուտ յամենայն ճանապարհս իւր, և Տէր ընդ նմա: 15Եւ ետես Սաւուղ՝ թէ այնչափ իմաստուն է յոյժ, ակնածէր յերեսաց նորա* : 16Եւ ամենայն Իսրայէլ և Յուդայ սիրէր զԴաւիթ. զի նա՛ ելանէր և մտանէր առաջի երեսաց ժողովրդեանն: 17Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. Ահաւասիկ դուստր իմ երեց Մերովբ՝ տաց զնա քեզ կնութեան. բայց լեր դու ինձ յորդի՛ զօրութեան, և պատերազմեա՛ զպատերազմունս Տեառն: Քանզի ասաց Սաւուղ. Մի՛ եղիցի ձեռն իմ 'ի նա, այլ եղիցի 'ի նա ձեռն այլազգեացն* : 18Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ո՞վ եմ ես՝ և կամ կեանք ազգատոհմի հօր իմոյ 'ի մէջ Իսրայէլի, զի լինիցիմ փեսայ արքայի: 19Եւ եղև 'ի ժամանակի տալո՛յ զՄերովբ դուստր Սաւուղայ՝

* Ոմանք. Դարձաւ... 'ի սպանանելոյ զայլազգին:

* Յայլս պակասի. Եւ ցկամար իւր և ցկապարճս իւր:

* Այլք. Վասն բանին այնորիկ... և արդ զինչ պակաս է նմա:

* Ոմանք. եթէ այնչափ իմաստուն էր յոյժ:

* Այլք. Ահա դուստր իմ երեց: 'Ի լուս՛. Ներովբ: Ոմանք. Քանզի ասէր Սաւուղ. Մի՛:

Դաւթի, տուաւ նա Եդրիէլի՝ Սովլաթացոյ կնութեան*։ ²⁰Եւ սիրեաց Մեղքող՝ դուստր Սաւուղայ զԴաւիթ. և ա՛զդ եղև Սաւուղայ, և հաճո՛յ թուեցաւ բանն յաչս նորա. ²¹և ասէ Սաւուղ. Տաց զնա նմա կնութեան, և եղիցի նմա ՚ի գայթապողութիւն։ Եւ էր ՚ի վերայ Սաւուղայ ձեռն այլազգեացն։ Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. Երկոքո՛ւնքք փեսայասցիս դու ինձ այսօր։ ²²Եւ պատուիրեաց Սաւուղ ծառայից իւրոց և ասէ. Խօսեցարո՛ւք դուք լռելեայն ընդ Դաւթի և ասացէ՛ք. Ահա արքայ հաճեա՛լ է ընդ քեզ, և ամենայն արք նորա սիրե՛ն զքեզ, և արդ՝ փեսայացի՛ր դու արքայի։ ²³Եւ խօսեցան ծառայքն Սաւուղայ յականջս Դաւթի ըստ ամենայն բանիցս այսոցիկ։ Եւ ասէ Դաւիթ. Թեթե՛ւ իցէ յաչս ձեր փեսայանալ արքայի. և ես այր մի տառապեա՛լ եմ, և ո՛չ փառաւոր։ ²⁴Եւ պատմեցին Սաւուղի ծառայքն իւր ըստ բանիցս այսոցիկ զոր խօսեցաւ Դաւիթ*։ ²⁵Եւ ասէ Սաւուղ. Ա՛յսպէս ասասջիք ցԴաւիթ, եթէ ո՛չ կամի արքայ վարձանս, այլ հարե՛ւր անթլփատութիւն այլազգեաց, առնուլ վրէ՛ժ ՚ի թշնամեաց արքայի։ Եւ Սաւուղ խորհէր արկանե՛լ զնա ՚ի ձեռս այլազգեացն։ ²⁶Եւ պատմեցին Դաւթի ծառայքն Սաւուղայ զբանս զայսոսիկ. և հաճո՛յ թուեցաւ բանն յաչս Դաւթի՝ փեսայանալ արքայի. և չէին լցեալ աւուրք*։ ²⁷և յարեա՛լ Դաւիթ և գնաց ինքն և արք իւր, և եհա՛ր յայլազգեացն արս հարևր. և եբեր զանթլփատութիւնս նոցա, և ելի՛ց զնոսա առաջի արքայի. և փեսայացա՛ւ արքայի. և ետ Սաւուղ զՄեղքող՝ դուստր իւր նմա կնութեան*։ ²⁸Եւ ետես Սաւուղ և ծանեա՛ւ եթէ Տէր է ընդ նմա, և ամենայն Իսրայէլ սիրէր զնա*։ ²⁹և յաւել ևս ակնածել ՚ի Դաւթ։ Եւ եղև Սաւուղ թշնամութեամբ ընդ Դաւթի զամենայն աւուրս նորա*։ ³⁰Եւ ելին իշխանք այլազգեացն, և եղեն ՚ի բազում ժամանակաց ելք նոցա. և խելամո՛լտ էր Դաւիթ քան զամենայն ծառայսն Սաւուղայ. և պատուեցաւ անուն նորա յոյժ։

19

Գլուխ ԺԹ

ԽԹ ¹Եւ խօսեցա՛ւ Սաւուղ ընդ Յովնաթանայ որդւոյ իւրում, և ընդ ամենայն ծառայս իւր սպանանե՛լ զԴաւիթ։ ²Եւ Յովնաթան որդի Սաւուղայ հաճեալ էր ընդ Դաւթի յոյժ. և պատմեաց Յովնաթան Դաւթի և ասէ. Հա՛յր իմ խնդրէ սպանանել զքեզ. զգո՛յշ լեր վաղիւ ընդ առաւօտն. և թաքիջի՛ր, և նստիջի՛ր ՚ի թաքստեան*։ ³և ես ելի՛ց և կացից մօտ առ հօր իմում յանդիման, ուր և իցես դու անդ, և ես խօսեցայ՛ց վասն քո ընդ հօր իմում. և տեսից եթէ զի՛նչ իցէ և պատմեցից քեզ*։ ⁴Եւ խօսեցա՛ւ Յովնաթան վասն Դաւթի բանս բարիս ընդ Սաւուղայ հօր իւրում, և ասէ ցնա. Մի՛ մեղիցէ արքայ՝ ՚ի ծառայ իւր Դաւիթ, զի ո՛չ ինչ մեղաւ նա քեզ. և գործք նորա բարութեամբ են առ քեզ յոյժ։ ⁵Եւ եդ զանձն իւր ՚ի ձեռին իւրում, և

* Ոմանք. Եդրիէլի Սողոթացոյ։

* Այլք. Եւ պատմեցին նմա ծառայքն իւր։

* Ոմանք. Եւ չև էին լցեալ աւուրք։

* Ոմանք. Եւ ետ նմա Սաւուղ զՄեղքող։

* Ոմանք. Եւ ամենայն Իսրայէլ սիրէ զնա։

* Յայլս պակասի. Ջամենայն աւուրս նորա։

* Այլք. Հաճեալ էր ընդ Դաւթ յոյժ։

* Ոմանք. Յանդի ուր և իցես դու. և։

եհար զայլազգին. և արար փրկութիւն մեծ. և ամենայն Իսրայէլ տեսին և ուրախ եղեն. և ընդէ՞ր մեղանչիցես յարիւն արդար՝ սպանանել զԴաւիթ տարապարտուց*։ ⁶Եւ լուաւ Սաւուղ ձայնի Յովնաթանու, և երդուաւ Սաւուղ և ասէ. Կենդանի՛ է Տէր եթէ մեռանիցի։ ⁷Եւ կոչեաց Յովնաթան զԴաւիթ, և պատմեաց նմա Յովնաթան զամենայն բանս զայսոսիկ. և տարաւ Յովնաթան զԴաւիթ առ Սաւուղ, և էր առաջի նորա իբրև յերեկն և յեռանտ*։

⁸Եւ յաւել ևս լինել պատերազմ, և զօրացաւ Դաւիթ տա՛լ պատերազմ ընդ այլազգիսն. և եհար՝ ի նոցանէ հարուածս մեծամեծս յոյժ. և փախեան յերեսաց նորա*։ ⁹Եւ եղև ա՛յս չար ՚ի Տեառնէ ՚ի վերայ Սաւուղայ. և ինքն նստէ՛ր ՚ի տան, և գեղարդն ՚ի ձեռին նորա. և Դաւիթ երգէ՛ր ձեռօք իւրովք։ ¹⁰Եւ խնդրէր Սաւուղ հարկանել զգեղարդնն ընդ Դաւիթ և ընդ որմն. և խուսեաց յերեսաց Սաւուղայ, և եհար զգեղարդն յորմնն. և Դաւիթ ե՛լ գնաց և զերծաւ*։ ¹¹Եւ եղև ՚ի գիշերին յայնմիկ առաքեաց Սաւուղ հրեշտակս ՚ի տուն Դաւթի պահել զնա. զի սպանցէ զնա ընդ առաւօտն։ Եւ պատմեաց Դաւթի Մեղքող կին իւր՝ և ասէ. Եթէ ո՛չ ապրեցուցես զանձն քո ՚ի գիշերիս յայսմիկ՝ վաղիւ մեռանելո՛ց ես։ ¹²Եւ իջոյց Մեղքող զԴաւիթ ընդ պատուհանն, և փախեա՛ւ գնաց և ապրեաց*։ ¹³Եւ ա՛ռ Մեղքող պաճուճապատանս, և եղ ՚ի վերայ մահճացն. և լեարդ այծեաց և կծիկ մազոյ ե՛ր ՚ի սնարէ, և ծածկեաց զնա հանդերձիւ։ ¹⁴Եւ առաքեաց հրեշտակս Սաւուղ՝ ունել զԴաւիթ. և ասեն՝ թէ խօթ է*։ ¹⁵Եւ առաքեաց ՚ի վերայ Դաւթի դարձեալ և ասէ. Զանէ՛ք զնա մահճօքն առ իս՝ և սպանից զնա։ ¹⁶Եւ եկին հրեշտակքն, և ահա պաճուճապատանքն ՚ի վերայ մահճացն, և լեարդ այծեաց և կծիկ մազոյ ՚ի սնարսն։ ¹⁷Եւ ասէ Սաւուղ ցՄեղքող. Ընդէ՞ր այսպէս խաբեցեր զիս, և արձակեցեր զքշնամին իմ և ապրեցաւ։ Եւ ասէ Մեղքող ցՍաւուղ. Ի՛նքն ասաց թէ արձակեա՛ զիս, ապա թէ ո՛չ սպանանե՛մ զքեզ*։

¹⁸Եւ Դաւիթ փախեաւ և ապրեցաւ, և եկն առ Սամուէլ յԱրիմաթեն. և պատմեաց նմա զամենայն ինչ զոր արար նմա Սաւուղ։ Եւ գնացին Սամուէլ և Դաւիթ՝ և նստան ՚ի Նաւաթհռամա*։ ¹⁹Ա՛զդ եղև Սաւուղայ և ասեն. Ահա Դաւիթ ՚ի Նաւաթհռամայ՛ է։ ²⁰Եւ առաքեաց Սաւուղ հրեշտակս ունել զԴաւիթ. և տեսին զեկեղեցին մարգարէից մարգարեացելոց. և Սամուէլ կա՛յր ՚ի վերայ նոցա. և եղև ՚ի վերայ հրեշտակացն Սաւուղայ Զոգի՛ Աստուծոյ, և մարգարեացան և նոքա։ ²¹Եւ պատմեցա՛ւ Սաւուղայ. և յաւել Սաւուղ առաքել ա՛յլ հրեշտակս. և մարգարեացան և նոքա։ Եւ յաւել Սաւուղ առաքել ա՛յլ հրեշտակս, և մարգարեացան և նոքա*։ ²²Եւ բարկացա՛ւ սրտմտութեամբ Սաւուղ, և գնաց ինքն յԱրիմաթեն, և եկն մինչև ՚ի ջրհորն մեծ՝ որ ՚ի Սոկքով, և եհարց և ասէ. Ո՞ւր է Սամուէլ և Դաւիթ։ Եւ ասեն. Ի՛ Նաւաթհռամայ՛ է։ ²³Եւ գնաց անտի ՚ի Նաւաթհռամայ. և եղև ՚ի վերայ նորա Զոգի Աստուծոյ, և երթայր երթալով և

* Այլք. Եւ արար Տէր փրկութիւն մեծ։

* Ոմանք. Ձամենայն զբանս զայսոսիկ նմա... և էր առաջի նորա որպէս յերե՛։

* Ոսկան. Եւ եհար ՚ի հարուածս... ՚ի նոցանէ։

* Ոմանք. Եւ Դաւիթ ել և գնաց և զերծաւ։

* Ոմանք. Գնաց՝ ել և ապրեցաւ։

* Ոմանք. Եւ ասեն. Խօթէ։

* Զօրինակին պակասէր. Եւ ասէ Մեղքող ցՍաւուղ. Ինքն ա՛։

* Զօրինակին պակասէր. Եւ եկն առ Սամուէլ։

* Ոմանք. Եւ պատմեցաւ Սաւուղայ, և առաքեաց այլ։

մարգարեանայր, մինչև հասանել նմա՝ ՚ի Նաւաթիռամա՝: ²⁴Եւ մերկացաւ
զհանդերձ իւր ինքնին, և մարգարեացաւ առաջի նոցա. և անկաւ մերկ գտիւն
ողջոյն, և զգիշերն ամենայն. վասն այնորիկ ասէին՝ թէ և Սաւուղ ՚ի մարգարես:

20

Գլուխ Ի

ԾԲ ¹Եւ փախեալ Դաւիթ ՚ի Նաւաթալիռամայ, և եկն խօսեցաւ առաջի
Յովնաթանայ և ասէ. ²Զի՞նչ արարի, և զի՞նչ վնաս է իմ, և զի՞նչ մեղայ առաջի
հօր քոյ՝ զի խնդրէ՞ զանձն իմ՝: ³Եւ ասէ ցնա Յովնաթան. Քաւ քեզ, ո՛չ
մեռանիցիս. զի ահա ո՛չ առնէ հայր իմ բան մի մեծ կամ փոքր՝ զոր ո՛չ յայտնէ
յունկն իմ. և զիա՞րդ իցէ զի թաքուցանիցէ հայր իմ յինէն զբանդ զայդ. չէ՞
այդպէս: ⁴Պատասխանի ետ Դաւիթ և ասէ ցՅովնաթան. Գիտելով զիտ հայր քո
զի գտի շնորհս առաջի աչաց քոց, և ասէ թէ մի՛ գիտասցէ Յովնաթան՝ զուցէ ո՛չ
կանիցի. այլ կենդանի է Տէր և կենդանի՝ է անձն քո, զի որպէս ասացի՝ վճարեալ
է ընդ իս և ընդ հայր քո մինչև ցնահ: ⁵Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ. Զի՞նչ ցանկայ
անձն քո՝ և արարից քեզ: ⁶Ասէ Դաւիթ ցՅովնաթան. Ահա վաղիւ ամսամուտ է. և
ես նստելով ո՛չ նստայց ուտել հաց ընդ արքայի. և առաքեսցես զիս՝ և թաքեայց
՚ի դաշտի աստ մինչև ցերեկս աւուրն երրորդի՞: ⁷Եթէ առնելով առնիցէ այց
զինէն հայր քո, ասասցես եթէ հրաժարելով հրաժարեաց յինէն Դաւիթ երթալ
մինչև ցԲեթղ՛ահէն քաղաք իւր. զի զո՛հ աւուրց է անդ ամենայն ցեղին: ⁸Եթէ
ասասցէ բարւո՛ք է, խաղաղութիւն է ծառայի քում. ապա թէ խստի՛ւ տայցէ
պատասխանի՝ զիտասջի՛ր զի վճարեալ է չարութիւն առ ՚ի նմանէ՞: ⁹Եւ
արասցես ողորմութիւն ընդ ծառայի քում. զի յո՛ւխտ Տեառն մուծեր զծառայ քո
ընդ քեզ. և եթէ վնաս ինչ է ծառայի քում, դո՛ւ իսկ սպան զիս. և ընդէ՞ր
հասուցանիցես զիս առ հայր քո՞: ¹⁰Եւ ասէ Յովնաթան. Քաւ լիցի քեզ, զի եթէ
գիտելով զիտացից եթէ վճարեալ է չարութիւն առ ՚ի հօրէ իմն՝ գալ ՚ի վերայ քո՝
եթէ ո՛չ ՚ի քաղաքն իսկ քո պատմեցից քեզ՞: ¹¹Եւ ասէ Դաւիթ ցՅովնաթան. Ո՛ր
պատմեսցէ ինձ եթէ խստի՛ւ պատասխանի տացէ քեզ հայր քո: ¹²Եւ ասէ
Յովնաթան ցԴաւիթ. Ե՛րթ և մնա՛ յանդին: Եւ գնացին երկոքեան յանդն: ¹³Եւ ասէ
Յովնաթան ցԴաւիթ. Տէր Աստուած Իսրայէլի գիտէ՝ եթէ ո՛չ քննեցից զհայր իմ
զերեք ժաման, և եթէ բարի՛ ինչ իցէ զԴաւթ և եթէ չար՝ առաքեցի՛ց առ քեզ
յանդս: ¹⁴Օն և օ՛ն արասցէ Տէր Յովնաթանու, և օ՛ն և օ՛ն յաւելցէ, եթէ ո՛չ քննեցից
զչարութիւնն վասն քո, և յայտնեցի՛ց յունկն քո. և արձակեցի՛ց զքեզ՝ և երթիցես
՚ի խաղաղութիւն. և եղիցի Տէր ընդ քեզ՝ որպէս է՛ր ընդ հօր իմում: ¹⁵Եւ իցէ թէ
մինչդեռ ես կենդանի իցեմ, արասցես ընդ իս իսկ ողորմութիւն, և եթէ մահու
մեռանիցիմ, ¹⁶մի՛ բարձցես զողորմութիւն քո ՚ի տանէ իմն՝ մինչև ցյաւիտեան. և
եթէ ո՛չ ՚ի ջնջել Տեառն զթշնամիս Դաւթի զիւրաքանչիւրոք յերեսաց երկրէ.

* *Յօրինակին պակասէր.* Եւ երթայր *երթալով* և մարգարեա՞: *Ոմանք.* Եւ գնաց ՚ի Նաւաթ
Յռամայ... մինչև հասանել նորա ՚ի Նաւաթ Յռա՞:

* *Ոմանք.* Ի Նաւաթ Յռամայ, և ե՞:

* *Ոմանք.* Ի դաշտի անդ մինչև: *Այլք.* Մինչև ցընդերեկս աւ՞:

* *Այլք.* Եթէ ասասցէ թէ բար՞: *Ոմանք.* Խստիւ տայցէ քեզ պատասխանի:

* *Ոմանք.* Վնաս ինչ է ՚ի ծառայի քում:

* *Յօրինակին պակասէր.* Զի եթէ գիտելով:

16 գոցի՝ անուն Յովնաթանու՝ ՚ի տան Դաւթի. խնդրեսցէ՛ Տէր ՚ի ձեռաց թշնամեաց Դաւիթ:

ԾԳ 17 Եւ յաւել Յովնաթան երդմնեցուցանել զԴաւիթ առ սէր նորա. զի սիրեաց զանձն սիրելւոյն իւրոյ: 18 Եւ ասէ ցնա Յովնաթան. Վաղիւ ամսամուտ է, և խնդրեսցիս. 19 Քանզի խնդրեսցի աթոռ քո, և երեքօրեսցիս և երեկեսցես ՚ի տեղի քո՝ ուր թաքեարն յաւուրն գործոյ. և նստցիս առ երգաբաւդ այդուիկ*: 20 Եւ ես երեքկնեցից՝ փքնօք յորս ածել և ձգել յամատտարայն. 21 և արծակեցից զպատանեակն, և ասացից. Ե՛րբ գիտ զփքինն: Եւ եթէ ասելով ասացից ցպատանեակն. Ի՛ քէն և այսր է փքինն, և այսր առ զնա, եկեսջի՛ր. զի խաղաղութիւն է քեզ, և չեն ինչ բանք՝ կենդանի՛ է Տէր*: 22 Ապա թէ ասացից ցպատանին. Ի՛ քէն և անդր է փքինն, գնասջի՛ր՝ զի արծակեաց՝ զքեզ Տէր*. 23 և բանիցս զոր խօսեցաք՝ ե՛ս և դու, ահա Տէր լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ մինչև ցլախտեան: 24 Եւ թաքեա՛ւ Դաւիթ յանդին. և եհա՛ս ամսամուտն. և եմուտ արքայ ՚ի սենեակն ուտել հաց: 25 Եւ նստա՛ւ արքայ յաթոռ իւրում որպէս միանգամն և միւսանգամ աթոռով յորմայե՛ցն. և ժամանեաց Յովնաթան. և նստաւ Աբեմներ ՚ի կողմանէ՛ Սաւուղայ. և խնդրեցա՛ւ տեղին Դաւթի: 26 Եւ ո՛չ խօսեցաւ Սաւուղ և ո՛չ ինչ յաւուր յայնմիկ. քանզի ասաց թէ դէպք ինչ իցեն չլինելոյ սուրբ, և չիցէ՛ սրբեալ*:

ԾԴ 27 Եւ եղև ՚ի վաղիւ ամսամտին յաւուրն երկրորդի, խնդրեցա՛ւ տեղին Դաւթի, և ասէ Սաւուղ ցՅովնաթան որդի իւր. Ձի՞՞ է՝ զի ո՛չ եկն որդին Յեսսեայ երէկ և այսօր ՚ի սեղանս*: 28 Պատասխանի ետ Յովնաթան և ասէ ցՍաւուղ. Զրաժարեաց յինէն երթալ ՚ի Բեթղահէմ քաղաք իւր. 29 ասէ. Արծակեա՛ զիս՝ զի գոհ է ցեղին մերոյ ՚ի քաղաքին. և պատուիրեցին զիս եղբարք իմ. և արդ եթէ գտի շնորհս առաջի աչաց քոց՝ երթայց տեսից՝ զեղբարս իմ. վասն այնորիկ ո՛չ եկն ՚ի սեղան արքայի*: 30 Եւ բարկացա՛ւ Սաւուղ ՚ի վերայ Յովնաթանու՝ և ասէ ցնա. Աղճկորդի՛ անձնամատն, ես ո՛չ գիտեմ, զի դաշնաւոր ես դու որդւոյն Յեսսեայ՝ յամօթ քո, և յամօթ առականաց մօր քոյ*. 31 զի զամենայն աւուրս որչափ որդին Յեսսեայ կենդանի է՝ ո՛չ հաստատիցի թագաւորութիւն քո. արդ առաքեա՛ կա՛լ զպատանին՝ զի որդի մահու է նա*: 32 Պատասխանի ետ Յովնաթան Սաւուղայ հօր իւրում, և ասէ ցնա. Ընդէ՞ր մեռանիցի. զի՞նչ գործեաց: 33 Եւ վերացոյց Սաւուղ զգեղարդն ՚ի վերայ Յովնաթանու սպանանել զնա. և զիտաց Յովնաթան թէ վճարեալ է չարութիւն ՚ի հօրէ նորա՝ սպանանել զԴաւիթ: 34 Եւ դիմեաց Յովնաթան ՚ի սեղանոյ անտի արտա՛քս բարկութեամբ և սրտմտութեամբ. և ո՛չ եկեր յաւուրն երկրորդի ամսոյն հաց, զի բեկա՛ւ վասն Դաւթի. զի վճարեաց՝ վասն նորա հայրն իւր:

ԾԵ 35 Եւ եղև ընդ առաւօտն՝ ել Յովնաթան յանդն, որպէս ժամադի՛ր եղև Դաւթի ՚ի վկայութիւն. և մանուկ փոքրիկ ընդ նմա: 36 Եւ ասէ ցպատանեակն.

* Այլք. Եւ երեքօրեսցիս, և խնդրեսցիս, և եկեսցես ՚ի տեղի քո:

* Ոմանք. Գիտ զփքինն... և այսր է փքինն:

* Եւ անդր է փքինն:

* Ոմանք. Քանզի ասաց թէպէտ ինչ իցեն:

* Ի լուս՝. Երեկ և յեռանդ ՚ի սեղանս:

* Բազումք. Եւ պատուիրեցին յիս եղբ՛:

* Ոմանք. Եւ բարկացաւ Սաւուղ յոյժ ՚ի վերայ Յովնա՛: Ի լուս՝. Աղջկորդի. համաձայն բազմաց ՚ի բնաք՛:

* Բազումք. Ոչ հաստատեսցի:

Ընթա՛ գիտ գիքինն զոր ձգեցից: Եւ ընթացաւ պատանեակն. և նա ձգեա՛ց գիքինն, և եբեր զնա: ³⁷Եւ չոգաւ պատանեակն մինչև ցտեղի փքնին զոր ձգեաց Յովնաթան. և աղաղակեաց Յովնաթան զկնի պատանեկին և ասէ. 'Ի քէն և անդ է փքինն*: ³⁸Եւ աղաղակեաց Յովնաթան զկնի պատանեկին և ասէ. Փութացեալ արագեա՛ և մի՛ կացցես: Եւ քաղեա՛ց մանուկն Յովնաթանու գիքինսն և եբեր առ տէր իւր: ³⁹Եւ պատանեակն ո՛չ ինչ գիտէր՝ բա՛ց 'ի Յովնաթանայ և 'ի Դաւթ՝ զի գիտէին զբանն: ⁴⁰Եւ ետ Յովնաթան զգործին իւր ցպատանեակն, և ասէ ցպատանեակն իւր. Ե՛րբ մուտ 'ի քաղաքն: ⁴¹Եւ եմո՛ւտ պատանեակն: Եւ յարեաւ Դաւիթ յԵրզրայն, և անկա՛ւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և երկիր եպագ նմա երիցս անգամ, և համբուրեա՛ց իւրաքանչիւր զընկեր իւր, և ելա՛ց իւրաքանչիւր 'ի վերայ ընկերի իւրոյ մինչև ցմե՛ծ վախճան: ⁴²Եւ ասէ Յովնաթան ցԴաւիթ. Ե՛րբ 'ի խաղաղութիւն. և որպէս երդուաք մեք երկոքին յանուն Տեառն և խօսեցաք, Տէ՛ր լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ, և 'ի մեջ զաւակի իմոյ և 'ի մեջ զաւակի քոյ մինչև ցյաւիտեան: ⁴³Եւ յարեաւ Դաւիթ և զնա՛ց, և Յովնաթան եմո՛ւտ 'ի քաղաքն:

21

Գլուխ ԻԱ

ԾՁ ¹Եւ եկն Դաւիթ 'ի Նոմբա՝ առ Աքիմելէք քահանայ. և զարհուրեցա՛ւ Աքիմելէք 'ի պատահել նորա. և ասէ ցնա. Ջի՞՞ է զի դու միայն ես՝ և ո՛չ ոք է ընդ քեզ*: ²Եւ ասէ Դաւիթ ցԱքիմելէք քահանայ. Բան ինչ հրամայեալ է ինձ արքայի այսօր. և ասէ ցիս. Մի՛ ոք գիտասցէ զբանն վասն որոյ առաքեցի զքեզ, և վասն որոյ պատուիրեցի քեզ. և հրաման ետու մանկտւոյն 'ի տեղւոջն որ կոչի Աստուծոյ հաւատարմութիւն, փելմոնի ելմոնի*: ³Եւ արդ՝ եթէ իցէ 'ի ձեռին քում հինգ նկանակ հացի՝ տո՛ւր 'ի պէտս իմ, թէ ո՞րչափ և գտանիցի*: ⁴Պատասխանի ետ քահանայն Աստուծոյ և ասէ ցԴաւիթ. Ո՛չ կայ հա՛ց պիղծ ընդ ձեռամբ իմով, այլ հա՛ց սրբութեան. և եթէ իցեն զգուշացեալ մանկտին 'ի կանանց՝ կերիցեն: ⁵Պատասխանի ետ Դաւիթ քահանային՝ և ասէ. 'Ի կանանց մեկուսի՛ եմք յերեկէ և յեռանտէ, յելանել ինձ 'ի ճանապարհս սրբեցան և մանկտին. զի և ճանապարհս իսկ պիղծ է. և վասն այնորիկ այսօր սրբեցի զործովս իմով*: ⁶Եւ ետ նմա Աքիմելէք քահանայ՝ 'ի զառաջաւոր՝ հացէն. զի չգո՛յր անդ հաց, բա՛ց 'ի հացէն երեսաց, առեա՛լ յերեսաց Տեառն, դնել առաջի հաց ջերմ յաւուրն յորում առ զայն*: ⁷Եւ անդ էր մի 'ի ծառայիցն Սաւուղայ յաւուր յայնմիկ նեղեալ՝ նեսարա՛ւ առաջի Տեառն. և անուն նորա Դովե՛կ՝ Ասորի, արածէր զջորիս Սաւուղայ*: ⁸Եւ ասէ Դաւիթ ցԱքիմելէք, եթէ իցէ՞ աստ ընդ ձեռամբ քով զեղարդն կամ սուսեր. զի զսուսեր իմ և զկազմած իմ ո՛չ առի 'ի ձեռին իմում. քանզի բանն արքայի

* Ոմանք. Մինչև 'ի տեղի փքնին... 'ի քէն և անդ է փքնինն:

* Ոմանք. Աքիմելէք 'ի պատահման նորա:

* Ոսկան. ՅԱքիմելէք քահանայ Աստուծոյ: Ոմանք. Ինձ արքայ այսր... և հրաման ետ մանկտւոյն... Աստուծոյ հաւատարմութիւն 'ի փելմոնի: *Յօրինակին*. Փելմոնի ելմոնի:

* Ոմանք. եթէ իցեն 'ի ձե՛:

* Այլք. Եւ ասէ ցնա. 'Ի կանանց... այսօր սրբեցի զոր՝:

* Այլք. Ջի ո՛չ գոյր անդ... հաց ջերմ:

* Ոմանք. Յաւուր յայնմիկ 'ի ներսի խորանին առաջի Տեառն:

ստիպեա՛ց զիս: ⁹Եւ ասէ քահանայն. Ահա սուսերն Գողիադու այլազգւո՛յ Փղշտացւոյ՝ զոր սպանե՛ր ՚ի հովիտսն Ելայ. և այն պատեալ կայ ձորձով յետոյ վակասին. եթէ զայն առնուս ընդ քեզ՝ ա՛ռ, զի ո՛չ գոյ աստ՝ բա՛ց յայնմանէ: Եւ ասէ Դաւիթ. Զի՛ք իբրև զնա, տո՛ւր ցիս զայն: Եւ ետ նմա զայն:

Ծե ¹⁰Եւ յարեալ Դաւիթ և փախեալ յաւուր յայնմիկ յերեսաց Սաւուղայ, և եկն Դաւիթ առ Անքո՛ւս արքայ Գեթայ: ¹¹Եւ ասեն ծառայքն Անքուսայ ցնա. Ո՞չ սա՛ է Դաւիթ՝ թագաւոր երկրին. ո՞չ սմա նուագէին պարաւորքն և ասէին՝ Եհա՛ր Սաւուղ զհազարս, և Դաւիթ զբե՛ւրս: ¹²Եւ ե՛ր Դաւիթ զբանսն ՚ի սրտի իւրում, և երկեալ յոյժ յերեսաց Անքուսայ արքայի Գեթայ*. ¹³և այլակերպեաց առաջի նորա զերեսս իւր, և պատճառեցաւ յաւուր յայնմիկ. և կաքաւէ՛ր առ դուրս քաղաքին, և ծորեցուցանէր զլորձունս իւր ՚ի վերայ մօրուաց իւրոց, և յափսիթէրս խաղայր: ¹⁴Եւ ասէ Անքուս ցծառայս իւր. Ահա տեսէ՛ք զայրն՝ այսահար՝ և ընդէ՞ր մուծէք զնա առ իս. ¹⁵միթէ կարօ՞տ ինչ իցեմ ես այսահարօք, զի ածէք զդա այսահարել առաջի իմ. մի՛ մտցէ դա ՚ի տուն՝:

22

Գլուխ ԻԲ

¹Գնա՛ց անտի Դաւիթ՝ և եկն զերծա՛ւ յայրն Ողողոմայ. և լուան եղբարք նորա և ամենայն տուն հօր նորա, և իջին առ նա անդր՝: ²Եւ ժողովէին առ նա ամենայն վշտատե՛սք, և ամենայն պարտապա՛նք, և ամենայն ցաւագնեալք ոգւովք, և է՛ր նոցա զօրագլուխ. և էին ընդ նմա իբրև արք չորեքարևր: ³Եւ գնա՛ց անտի Դաւիթ ՚ի Մասեփաթ Մովաբայ. և ասէ ցարքայն Մովաբայ. Եղիցի հայր իմ և մայր իմ առ քեզ, մինչև գիտացից թէ զի՛նչ արասցէ ինձ Աստուած՝: ⁴Եւ աղաչեա՛ց զերեսս արքային Մովաբայ. և բնակեցին առ նմա զամենայն աւուրս մինչև է՛ր Դաւիթ յանձաւին*:

ԾԸ ⁵Եւ ասէ Գադ մարգարէ ցԴաւիթ. Մի՛ նստիր յանձաւիդ, այլ արի՛ և երթիցես յերկիրն Յուդայ: Գնա՛ց Դաւիթ և եկն նստաւ ՚ի քաղաքին Սարիթ: ⁶Եւ լուալ Սաւուղ եթէ յայտնեցաւ Դաւիթ և արքն որ ընդ նմա. և Սաւուղ նստէր ՚ի բլրին ՚ի ներքոյ հերկին որ ՚ի Բամա. և զեղարդնն ՚ի ձեռի՛ն իւրում. և ամենայն ծառայք նորա կային շուրջ զնովաւ*: ⁷Եւ խօսեցաւ Սաւուղ ընդ ծառայսն իւր որ կային շուրջ զնովաւ, և ասէ ցնոսա. Լուարո՛ւք որդիք Բենիամինի. թէ արդարև՝ ամենեցուն ձեզ տացէ՛ որդին Յեսսեայ անդս և այգեստանս, և զամենայն զձեզ առնիցէ հազարապե՛տս և հարիւրապե՛տս*. ⁸զի միաբանեալ կայք ՚ի վերայ իմ դուք ամենեքեան. և ո՛չ ոք էր որ յայտներ յունկն իմ ՚ի դնել՝ որդւոյն իմոյ ո՛ւխտ ընդ որդւոյն Յեսսեայ. և չի՛ք ոք ՚ի ձե՛նջ որում ցաւէ՛ր վասն իմ, և յայտներ յունկն իմ. զի յարոյց որդի իմ զծառայ իմ ՚ի վերայ իմ թշնամի՛, որպէս յաւուր յայսմիկ: ⁹Պատասխանի՛ ետ Դովեկ Ասորի, որ կայր ՚ի վերայ ջորուոցն Սաւուղայ, և ասէ.

* Ոմանք. Անքուսայ Գեթացւոյ:

* Յօրինակին պակասէր. Ինչ իցեմ ես այսա՛: Ոմանք. Դա ՚ի տուն իմ:

* Ոմանք. Եւ գնաց անտի Դաւիթ:

* Ոմանք. Եղիցին հայր իմ... եթէ զի՛նչ ա՛:

* Յօրինակին պակասէր. Մինչև էր Դաւիթ յան՝:

* Ոմանք. Եւ զեղարդն որ ՚ի ձեռին իւ՛:

* Այլք. Եւ զամենեսեան զձեզ առնիցէ:

Տեսի գորդին Յեսսեայ եկեալ 'ի Նոմբա՝ առ Աքիմելէք որդի Աքիտովբայ առ քահանայ*։ ¹⁰Եւ հարցանէր նա նմա 'ի Տեառնէ. և ետ նմա պաշար՝ և զսուսերն Գողիադու այլազգւոյ ետ նմա։ ¹¹Եւ առաքեաց արքայ կոչեաց զԱքիմելէք որդի Աքիտովբայ զքահանայ, և զամենայն որդիս հօր նորա զքահանայս որ էին 'ի Նոմբա. և եկին ամենեքին առ արքայ*։ ¹²Եւ ասէ Սաւուղ. Լո՛ւր որդի Աքիտովբայ։ Եւ ասէ. Ա՛ւսսիկ կամ, խօսեաց տէր։ ¹³Եւ ասէ ցնա Սաւուղ. Ձի՞ք է զի միաբանեցէք դու՛ և որդին Յեսսեայ հակառակ ինձ, տա՛լ նմա հաց և սուսեր, և հարցանել նմա յԱստուծոյ, և դնել զնա ինձ թշնամի, որպէս և յաւուր յայսմիկ*։ ¹⁴Պատասխանի ետ Աքիմելէք արքայի և ասէ. Եւ ո՞վ է յամենայն ծառայս քո հաւատարիմ իբրև գԴաւիթ, և փեսայ արքայի. և իշխան ամենայն հրամանի քոյ, և փառաւոր 'ի տան քում։ ¹⁵Եթէ ա՛յսր աւուր ինչ սկսեալ իցեն հարցանել նմա յԱստուծոյ. քա՛ւ մի՛ երբէք դիցէ արքայ 'ի վերայ ծառայի իւրոյ այդպիսի՛ բան, և 'ի վերայ տան հօր իմոյ. զի ո՛չ զիտէ ծառայ քո յամենայնի յայդմիկ բան մի մե՛ծ կամ փոքր։ ¹⁶Եւ ասէ Սաւուղ. Մահո՛ւ մեռցիս Աքիմելէք՝ դու՛ և ամենայն տուն հօր քոյ*։ ¹⁷Եւ ասէ արքայ ցտորհանդակսն որ կային շուրջ զնովաւ. Մատի՛ք և սպանէ՛ք զքահանայսն Տեառն, զի ձեռն նոցա ընդ Դաւթի է. զի գիտացին եթէ փախչի՛ նա՝ և ո՛չ յայտնեցին յունկն իմ։ Եւ ո՛չ կամեցան ծառայքն արքայի արկանել զձեռս իւրեանց, և մեղանչել 'ի քահանայսն Տեառն։ ¹⁸Եւ ասէ արքայ ցԴովեկ. Դարձի՛ր դու՛ և պատահեա՛ քահանայիցն Տեառն։ Եւ դարձաւ Դովեկ Ասորի, և կոտորեաց զքահանայսն Տեառն. և սպան յաւուր յայնմիկ երեք հարիւր և հինգ այր, զամենեսին որ կրէին զեփո՛ւղն կտաւի*։ ¹⁹Եւ զՆոմբա՛ քաղաք քահանայիցն եհար սրով սուսերի՝ յառնէ մինչև ցկին, 'ի տղայոյ մինչև ցստնդիաց. յարջառոյ և յիշոյ մինչև ցոչխար՝ բերանով սրոյ։ ²⁰Եւ ապրեցաւ որդի մի Աքիմելիքայ, որդւոյ Աքիտովբայ. և անուն նորա Աբիաթա՛ր, և փախեա՛ւ զհետ Դաւթի։ ²¹Եւ պատմեաց Աբիաթար Դաւթի եթէ կոտորեաց Սաւուղ զամենայն քահանայսն Տեառն։ ²²Եւ ասէ Դաւիթ ցԱբիաթար. Գիտէ՛ի յաւուր յայնմիկ եթէ Դովեկ Ասորի պատմելով պատմէ՛ Սաւուղայ. Ե՛ս եմ պարտական ոգւոց տան հօր քոյ. ²³Նի՛ստ առ իս՝ և մի՛ երկնչիր, զի ուր խնդրեցից զանձին իմոյ տեղի՛ խնդրեցից և քում անձին, զի պահեսցիս դու առ իս*։

23

Գլուխ ԻԳ

ԾԹ ¹Եւ ա՛զդ եղև Դաւթի և ասեն. Ահա այլազգիք պատերազմին ընդ Կեիլա, և յափշտակեցին զկալորայն*։ ²Եւ եհարց Դաւիթ 'ի Տեառնէ և ասէ, եթէ երթա՞յց և հարկանիցե՞մ զայլազգիսն զայնոսիկ։ Եւ ասէ Տէր ցԴաւիթ. Ե՛րթ և հարկանիցես զայլազգիսն, և փրկեսցես զԿեիլա*։ ³Եւ ասեն արք Դաւթի ցնա. Ահա մեք աստէն

* *Ի լուս՝* Դովեկ Եդոմայեցի, որ։

* *Ոմանք.* Եւ առաքեաց արքայ կոչել զԱ՛։

* *Այլք.* Ձի միաբանեցէք դուք և որ՞։ *Ոմանք.* Հարցանել նմա 'ի Տեառնէ։

* *Այլք.* Եւ ասէ արքայ Սաւուղ։

* *Յօրինակին թուագրով այսպէս գրի.* Երեք Գ և Ե այր։

* *Ոմանք.* Անձին իմուն տեղի։

* *Ոմանք.* Ահա այլազգիքն... և յափշտակեցին զկալարայն։

* *Այլք.* Եւ հարցես զայլազգիսն։

ի Յրեաստանի յերկիւղի՝ եմք, և զհա՞րոյ լինիցի եթէ երթիցեմք ՚ի Կեիլա յաւա՛ր այլազգեացն:

Կ ⁴Եւ յաւել՛ միւսանգամ Դաւիթ հարցանել՛ ՚ի Տեառնէ. և պատասխանի՛ ետ նմա Տէր՝ և ասէ ցնա. Արի՛ էջ ՚ի Կեիլա՝ զի ե՛ս մատնեցից զայլազգիսն ՚ի ձեռս քո: ⁵Եւ զնաց Դաւիթ և արքն որ ընդ նմա ՚ի Կեիլա, և մարտեաւ ընդ այլազգիսն. և փախեան յերեսաց նորա, և ա՛ռ զանասուն նոցա, և եհար ՚ի նոցանէ հարուածս մեծամեծս. և փրկեաց Դաւիթ զբնակիչսն Կեիլայ: ⁶Եւ եղև ՚ի փախչելն Աբիաթարայ որդւոյ Աքիմելիքայ առ Դաւիթ, և ինքն ընդ Դաւթի էջ ՚ի Կեիլա. և ունէր զեփուղն ՚ի ձեռին իւրում: ⁷Եւ ա՛զդ եղև Սաւուղայ եթէ եկն Դաւիթ ՚ի Կեիլա. և ասէ Սաւուղ. Վաճառեաց զնա Աստուած ՚ի ձեռս իմ. զի փակեցաւ մտեալ ՚ի քաղաք դրանց և դմնափակաց*: ⁸Եւ հրաման ետ Սաւուղ ամենայն ժողովրդեանն իջանել ՚ի պատերազմ ՚ի Կեիլա. ունել՛ զԴաւիթ և զարս նորա: ⁹Եւ գիտաց Դաւիթ զՍաւուղայ եթէ ո՛չ դադարէ ՚ի չարութենէ. և ասէ Դաւիթ ցԱբիաթար քահանայ. Մատո՛ զեփուղդ Տեառն: ¹⁰Եւ ասէ Դաւիթ. Տէր Աստուած Իսրայէլի, լսելով լուաւ ծառայ քո՝ թէ խնդրէ Սաւուղ գա՛լ ՚ի վերայ Կեիլայ, ապականել զքաղաքս վասն իմ. ¹¹Եթէ պաշարիցի՞. և եթէ իջանիցէ՞ այժմ ա՛յսր Սաւուղ՝ որպէս լուաւ ծառայ քո Տէր Աստուած Իսրայէլի՝ պատմեա՛ ծառայի քում: Եւ ասէ Տէր. Պաշարեսցի՛: ¹²Եւ ասէ Դաւիթ. Եթէ մատնեսցե՞մ զիս Կեիլացիքս և զա՛րս իմ ՚ի ձեռն Սաւուղայ: Եւ ասէ Տէր. Մատնեսցեն*:

ԿԱ ¹³Եւ յարեա՛ւ Դաւիթ, և արքն որ ընդ նմա իբրև չորեքարևր, ելի՛ն ՚ի Կեիլայ և զնացի՛ն յո և զնացի՛ն. և ա՛զդ եղև Սաւուղայ եթէ զերծա՛ւ Դաւիթ ՚ի Կեիլայ, և դադարեա՛ց յելանելոյ:

ԿԲ ¹⁴Եւ նստա՛ւ Դաւիթ յանապատին ՚ի Մասերե՛թ յանձուկսն, և նստէր ՚ի լերին անապատին Զիփայ ՚ի մռա՛յլ լերինն ՚ի մթին երկրին: Եւ խնդրէր զնա Սաւուղ զամենայն աւուրս, և ո՛չ մատնեաց զնա Տէր ՚ի ձեռս նորա*: ¹⁵Եւ ետես Դաւիթ եթէ ելանէ Սաւուղ խնդրել՛ զԴաւիթ. և Դաւիթ նստէր յանապատին ՚ի մռայլ լերինն Զիփայի՛ նորում*: ¹⁶Եւ յարեաւ Յովնաթան որդի Սաւուղայ, և չոգաւ առ Դաւիթ ՚ի նորն. և հաստատեաց զձեռս իւր ՚ի Տէր, ¹⁷և ասէ ցնա. Մի՛ երկնչիր, զի ո՛չ զոցէ զքեզ ձեռն Սաւուղայ հոր իմոյ. և դո՛ւ թագաւորեսցես ՚ի վերայ Իսրայէլի. և ե՛ս եղէց քո երկրորդ, և Սաւուղ հայր իմ գիտէ թէ ա՛յդպէս է: ¹⁸Եւ ուխտեցին ո՛ւխտ երկոքեան առաջի Տեառն: Եւ նստէր Դաւիթ ՚ի նորումն. և Յովնաթան զնաց ՚ի տուն իւր: ¹⁹Եւ ելի՛ն Զիփացիքն ՚ի մռայլ երկրէն առ Սաւուղ ՚ի բլուրն, և ասեն. Ո՞չ աւանիկ Դաւիթ թաքուցեալ է առ մեզ ՚ի Մասերա յանձուկս նորոյն ՚ի բլուրն եթէլատու ընդ աջմէ Յեսեմոնայ*: ²⁰Եւ արդ ըստ ամենայն ցանկութեան անձին արքայի իջցէ՛ իջանելով առ մեզ. քանզի փակեսցուք զնա ՚ի ձեռս արքայի՛: ²¹Եւ ասէ ցնոսա Սաւուղ. Օրհնեա՛լ էք դուք ՚ի Տեառնէ, զի ցաւեաց ձեզ վասն իմ: ²²Արդ երթա՛յք և ա՛յլ ևս կազմեցարուք, և դիտեցէ՛ք և տեսէ՛ք զտեղին ուր իցէ ոտն նորա. հասէ՛ք վաղվաղակի անդր ուր ասացէքն թէ է, գուցէ՛ խորամանգիցէ: ²³Եւ քննեսջի՛ք և տեսջի՛ք # յամենայն տեղեաց ուր թաքուցեալ իցէ, և դարձջի՛ք առ իս պատրաստութեամբ, և

* *Ի լուս՝* Եւ ասէ Սաւուղ. Մատնեաց զնա Աստուած ՚ի:

* *Այլք.* Իմ ՚ի ձեռս Սաւուղայ:

* *Ոմանք.* Ի մռայլ լերինն:

* *Ոմանք.* Եւ Դաւիթ նստէր յանտառին ՚ի մռայլ լե՛:

* *Ոմանք.* Ոչ աւասիկ... ՚ի Մասերա... ՚ի բլրին եթէլատու:

* *Ոմանք.* Ըստ ամենայն ցանկութեան արքայի... քանզի և փակեցին ՚ի ձեռս արքայի:

երթից ուր ընդ ձեզ. և եղիցի եթ իցէ յերկրին՝ խուզեցից զնա ամենայն հազարաորօք Յուդայ:

ԿԳ ²⁴Եւ յարեան և զնացին Ձիփացիքն յերեսաց Սաւուղայ. և Դաւիթ և արք նորա էին յանապատին Մառնայ առ երեկս ընդ աջմէ Յեսեմոնայ: ²⁵Եւ զնաց Սաւուղ և արք իւր խնդրե՛լ զԴաւիթ. և ա՛զդ արարին Դաւթի, և էջ ՚ի վէմն որ յանապատին Մառնայ. և լուաւ Սաւուղ՝ և պնդեցա՛ւ զհետ Դաւթի յանապատն Մառնայ: ²⁶Երթայր Սաւուղ և արք իւր՝ զայնս կողմն լերինն, և Դաւիթ և արք իւր առ ՚ի կողմն զայն կողմն լերինն. և եղև Դաւթի թաքստեամբ երթալ յերեսաց Սաւուղայ. և Սաւուղ և արք նորա պատեցան զԴաւթիւ և զարամբք նորա ունե՛լ զնոսա՛: ²⁷Եւ եկն հրեշտակ առ Սաւուղ և ասէ. Փութա ե՛կ այսր, զի արշաւեցին այլազգիք յերկիրս: ²⁸Եւ դարձա՛ւ Սաւուղ չպնդել զհետ Դաւթի, և չոգա՛ւ ընդդէմ այլազգեացն. վասն այնորիկ կոչեցաւ տեղին այն Վէ՛մ բաժանեալ:

24

Գլուխ ԻԴ

¹Եւ յարեա՛ւ Դաւիթ անտի և նստաւ յանձո՛ւկս Գադդայ:

ԿԴ ²Եւ եղև իբրև դարձա՛ւ Սաւուղ յայլազգեացն, ա՛զդ եղև նմա և ասեն. Ահաւանիկ Դաւիթ յանապատին Գադդայ՝ է: ³Եւ ա՛ռ ընդ իւր երիս հազարս արանց ընտրելոց յամենայն Իսրայէլէ, և զնաց խնդրե՛լ զԴաւիթ և զարս նորա, հանդէպ Ելիմայ որսո՛յն եղջերուաց՝. ⁴և եկն ՚ի պառակս հօտիցն որ առ ճանապարհաւն. և ա՛նդ էր այր մի՝ և եմո՛ւտ Սաւուղ հանգչել. և Դաւիթ և արք նորա նստէին ՚ի ներքնո՛ւմ այրիմ՝: ⁵Եւ ասեն արքն Դաւթի ցնա. Ահա այս օ՛ր է, զորմէ ասաց Տէր ցքեզ, մատնե՛լ զթշնամիս քո ՚ի ձեռս քո. և արասցես ընդ նա՛ որպէս և հաճո՛յ թուի յաչս քո: Եւ յարեաւ Դաւիթ և եհատ զտտուն լաւղկին Սաւուղայ զա՛ղտ: ⁶Եւ եղև յետ այնորիկ՝ զղջացոյց զԴաւիթ սիրտն իւր, զի եհատ զտտուն լաւղկի նորա: ⁷Եւ ասէ Դաւիթ ցարս իւր. Քա՛ւ լիցի ինձ ՚ի Տեառնէ, թէ արարից զբանդ զայդ տեառն իմուն՝ օժեւոյ Տեառն, միսե՛լ ՚ի նա զձեռս իմ. զի օժեալ Տեառն է նա: ⁸Եւ հաճեաց Դաւիթ զարսն իւր բանիւք, և ո՛չ ետ նոցա յառնե՛լ և սպանանել զՍաւուղ: Եւ Սաւուղ յարեա՛ւ յայրէ անտի և էջ ՚ի ճանապարհն: ⁹Եւ յարեաւ Դաւիթ զկնի նորա ել յայրէ անտի. և աղաղակեաց Դաւիթ զհետ նորա և ասէ. Տէր իմ արքայ: Եւ հայեցաւ Սաւուղ ՚ի թիկունս իւր. և անկա՛ւ Դաւիթ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և եպա՛զ նմա երկիր*։ ¹⁰Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ընդէ՞ր լսես բանից ժողովրդեանն որ ասեն թէ Դաւիթ խնդրե՛ զանձն քո. ¹¹ահա յաւուր յայսմիկ տեսին ա՛չք քո, ո՞րպէս մատնեաց զքեզ Տէր այսօր ՚ի ձեռս իմ յայրի անդ, և ո՛չ կամեցայ սպանանել զքեզ. և խնայեցի ՚ի քեզ, և ասացի թէ ո՛չ ձգեցից զձեռն իմ ՚ի տէր իմ. զի օժեալ Տեառն է նա: ¹²Եւ տե՛ս հայր իմ. ահա՛ տտուն լաւղկի քո ՚ի ձեռին իմուն. ե՛ս հատի զտտուն հանդերձի քոյ, և ո՛չ սպանի զքեզ. և ծանի՛ր և տե՛ս այսօր, զի ո՛չ գոյ ՚ի ձեռին իմուն չարութիւն, և ո՛չ արհամարհութիւն, և ո՛չ ամպարշտութիւն, և ո՛չ մեղայ ինչ քեզ. և դու պաշարես զանձն իմ առնուլ զնա: ¹³Դա՛տ արասցէ Տէր ընդ իս և ընդ քեզ.

* Ոճանք. Պատեցին զԴաւթիւ... յունել զնա:

* Ոճանք. Եւ զնացին խնդրել զԴա՛... հանդէպ Աղիմայ: Ուր Ոսկան. Ելիմաց որսոյն:

* Ոճանք. Զօտից նորա առ ճանապարհաւն, և էր անդ այր մի... և արք նորա անդ նս՛:

* Ոճանք. Ի թիկունս նորա, և անկաւ:

և առցէ՛ Տէր զվրժ իմ՝ ՚ի քէն, և ձեռն իմ մի՛ եղիցի ՚ի քեզ*։ ¹⁴Որպէս ասէ հին առասպելն. Յանօրէն ձեռաց ելցէ վնաս, և ձեռն իմ մի՛ եղիցի ՚ի քեզ։ ¹⁵Եւ արդ՝ զո՞յր հետ ելեալ ես արքայդ Իսրայէլի, և զո՞ հալածես. զհետ շան միոյ մեռելոյ՝ և զհետ լուոյ միոյ։ ¹⁶Եղիցի Տէր դատաւոր և իրաւարար ընդ իս և ընդ քեզ. տեսցէ՛ Տէր՝ և դատեսցի զդատաստանս իմ, և արասցէ ինձ իրաւունս ՚ի ձեռաց քոց։ ¹⁷Եւ եղև իբրև կատարեաց Դաւիթ խօսել զբանս զայսոսիկ ընդ Սաւուղայ, և ասէ Սաւուղ. Այդ քո՞ ձայն իցէ որդեալ իմ Դաւիթ։ Եւ ամբարձ Սաւուղ զձայն իւր և ելաց*։ ¹⁸Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. Դու արդար ես քան զիս. զի դու հատուցեր ինձ բարիս, և ես հատուցի քեզ չարիս։ ¹⁹Եւ դու պատմեսցեր ինձ այսօր զոր արարեր ինձ բարիս. և թէ ո՞րպէս փակեաց զիս Տէր այսօր ՚ի ձեռս քո՝ և ո՞չ սպաներ զիս*։ ²⁰Չի որպէս գտանէ ոք զթշնամիս իւր ՚ի նեղութեան, և արձակիցէ զնա բարեալ ընդ ճանապարհ, և Տէր հատուցէ նմա բարիս. որպէս դո՛ւ արարեր այսօր։ ²¹Եւ արդ զհտեմ զի թագաւորելո՛վ թագաւորեսցես, և հաստատեսցի՛ ՚ի ձեռս քո թագաւորութիւնն Իսրայէլի*։ ²²և արդ՝ երդուի՛ր ինձ ՚ի Տէր, զի մի՛ սատակեսցես զգաւակ իմ զկնի իմ, և մի՛ եղծցես զանուն իմ ՚ի տանէ՛ հօր իմոյ։ ²³Եւ երդուաւ Դաւիթ Սաւուղայ. և զնա՛ց Սաւուղ ՚ի տեղի իւր. և Դաւիթ և արք իւր եկին ՚ի Մասարայ յանձուկն*։

25

Գլուխ ԻԵ

¹Եւ մեռա՛ւ Սամուէլ. և ժողովեցան ամենայն Իսրայէլ և կոծեցան զնա. և թաղեցին զնա ՚ի տան իւրում յԱրիմաթեմ։

Կէ եւ յարեա՛ւ Դաւիթ և էջ յանապատն Մառնայ։ ²Եւ է՛ր այր մի ՚ի Մառն, և հօտք իւր ՚ի Կարմելոս. և այրն մեծատուն էր յոյժ. և նորա էին ոչխարք երեք հազարք, և այծք հազար. և եղեն կտուրք հօտիցն ՚ի Կարմելոս։ ³Եւ անուն նորա Նաբա՛ղ և անուն կնոջ նորա Աբիգեա. և կին նորա առա՛տ իմաստութեամբ և գեղեցիկ տեսլեամբ յոյժ. և այրն խիստ և չար խորհրդովք՝ և այր շնաբարոյ։ ⁴Եւ լուաւ Դաւիթ յաւուր յայնմիկ եթէ կտրէ Նաբաղ Կարմելացի զհօտս իւր, ⁵առաքեաց Դաւիթ մանկունս տասն, և ասէ Դաւիթ ցմանկունսն. Ելէ՛ք ՚ի Կարմելոս՝ և երթա՛յք առ Նաբաղ, և հարցէ՛ք յանուն իմ զողջունէ նորա*։ ⁶և ասասջիք՝ այսպէս ՚ի սոյն աւուրս ո՞ղջ իցես դու և տուն քո, և ամենայն որ ինչ քո ո՞ղջ լիցի։ ⁷Եւ արդ՝ աւասիկ լուայ եթէ կտուրք են հօտից քոց որ ընդ մե՛զ էին յանապատի աստ, և ո՞չ արգելաք զդոսա, և ո՞չ խուեցաք զդոսա և ո՞չ իւրք զամենայն աւուրս որչափ և էին ընդ մեզ ՚ի Կարմելոս։ ⁸Հարց ցմանկտիդ քո և պատմեսցեն քեզ։ Եւ գտցեն մանկունքդ շնորհս առաջի աչաց քոց, զի ՚ի բարի՛ աւուր եկին, արդ՝ տացես որչափ ինչ և գտցէ ձեռն քո ծառայից քոց, և որդւո՛յ քում Դաւիթ*։

* *Յօրինակին պակասէր.* Դատ արասցէ Տէր ընդ իս և ընդ քեզ։

* *Ոմանք.* խօսել զբանսս զայսոսիկ։

* *Ոմանք.* Այսօր եթէ որպէս փակեաց։

* *Ոմանք.* Թագաւորութիւնդ Իսրայէլի։

* *Բազումք.* ՚ի Մասարայ յանձուկն։

* *Ոմանք.* Եւ առաքեաց Դաւիթ։

* *Յօրինակին.* Հարց ցմանկտիտ քո։

ԿԶ ⁹Եւ եկին մանկուներն Դաւթի, և խօսեցան զբանսն ընդ Նաբաղայ, ըստ ամենայն բանիցն այնոցիկ յանուն Դաւթի: ¹⁰Ըմբոստացաւ, և ետ պատասխանի ծառայիցն Դաւթի և ասէ. Ո՛ր Դաւիթ, կամ ո՛ր որդին Յեսսեայ. բազմացեալ են այսօր ծառայք գնացականք իւրաքանչիւր յերեսաց տեառն իւրոյ: ¹¹Արդ առնուցում զհա՛ց իմ և զգինի՛ իմ և զգենլի՛ս իմ զոր զենի կտրողաց իմոց պատրուճակս, և տայցեն արանց զորս ո՞չ գիտիցեն ուստի իցեն: ¹²Եւ դարձան մանկուներն Դաւթի ՚ի ճանապարհ իւրեանց. և եկին պատմեցին Դաւթի ըստ բանիցն այնոցիկ:

ԿԷ ¹³Եւ ասէ Դաւիթ ցարսն իւր. Ածէ՛ք ընդ մէջ իւրաքանչիւր զսուր իւր: Եւ ածին ընդ մէջ այր իւրաքանչիւր զսուսեր իւր. ած ընդ մէջ և Դաւիթ զսուր իւր. և ելին զհետ Դաւթի իբրև արք չորեքարևր. և երկերիւրն ևս անդէն նստան առ կարասին: ¹⁴Եւ Աբիգեայ՝ կնոջ Նաբաղայ պատմեաց մի ոմն ՚ի մանկուոյ անտի և ասէ. Ահա առաքեաց Դաւիթ հրեշտակս յանապատէն օրհնել զտէր մեր, և նա՛ խուսեաց ՚ի նոցանէն՝. ¹⁵և արքն երախտաւոր էին մեզ յոյժ, և ո՛չ արգելին զմեզ, և ո՛չ իւրք խուեցին զմեզ որչափ եղեալք ընդ նոսա ՚ի բացի. ¹⁶և իբրև զպարիսպ էին մեզ զցայգ և զցերեկ՝ զամենայն աւուրսն որչափ էալք ընդ նոսա, և արածէալք զխաշինսն: ¹⁷Եւ արդ գիտասցես և տեսցես զինչ գործեսցես. զի վճարեալ է չարութիւն ՚ի վերայ տեառն մերոյ, և ՚ի վերայ ամենայն տան նորա. և նա՛ այր ժանտ է, և ո՛չ գոյ խօսել ընդ նմա՛: ¹⁸Եւ աճապարեաց Աբիգեայ, և ա՛ռ երկերիւր նկանակ, և երկուս ամանս գինւոյ, և հինգ ոչխար հասուցեալ, և հինգ արդու փոխնոյ, և կայք մի չամիչ, և պաղատիտս երկերիւր. և եղ՛ ՚ի վերայ իշոյ՛: ¹⁹Եւ ասէ ցմանկտին իւր. Երթա՛յք յառաջագոյն քան զիս, և ես գամ զկնի ձեր: Եւ առն իւրում Նաբաղայ ո՛չ եհան ՚ի վեր: ²⁰Եւ եղև ընդ ելանել նորա յէջն, և ընդ իջանել ընդ զանխուլ լերինն, և ահա Դաւիթ և արք նորա իջանէին ընդ առաջ նորա. և դիպեցաւ նոցա: ²¹Եւ ասէ Դաւիթ. Ձուր ուրեմն պահեցի զամենայն ինչ Նաբաղու յանապատի անդ. և ո՛չ խուեցալք առնուլ յամենայնէ որ ինչ էր նորա և ո՛չ ինչ. և հատոյց ինձ չար երախտեաց իմոց՛: ²²Օն և օն արասցէ Աստուած Դաւթի, և օն և օն յաւելցէ, եթէ թողից յամենայնէ Նաբաղու մինչև ցառաւօտն՝ որ զորմով միզիցէ: ²³Իբրև ետես Աբիգեայ զԴաւիթ՝ փութացաւ և վազեաց յիշոյն, և անկաւ առաջի Դաւթի ՚ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ նմա յերկիր #՛: ²⁴Եւ անկաւ առ ոտս նորա և ասէ. Յի՛ս տէր վնաս իմ. բայց խօսեցցի՛ աղախին քո յականջս քո, և լուիցես բանից աղախնոյ քոյ: ²⁵Մի՛ դիցէ տէր իմ զսիրտ իւր ՚ի վերայ առն ժանտի՛ Նաբաղայ. զի ըստ անուան նորա՛ և ինքն է. Նաբաղ անուն նորա՛ և անզգամութիւն ընդ նմա: Եւ ես աղախին քո ո՛չ տեսի զմանկուսնս քո զոր առաքեցեր: ²⁶Եւ արդ՝ կենդանի՛ է Տէր և կենդանի՛ է անձն քո. որպէս արգել զքեզ Տէր չգալ յարիւն անպարտ, այլ պահել զձեռն քո առ քեզ. և արդ՝ եղիցին իբրև զՆաբաղ թշնամիք քո՝ և որ խնդրիցեն տեառն իմոյ չարիս՛: ²⁷Եւ արդ՝ ա՛ռ զօրհնութիւնս զայս զոր եբեր աղախին քո տեառն իմում. և տացես մանկուոյդ որ կան առաջի տեառն իմում: ²⁸Եւ բարձ զվնաս աղախնոյ քոյ: Չի առնելով արասցէ Տէր տեառն իմում տուն հաւատարիմ. զի

* Այլք. Կնոջ Նաբաղու:

* Ոմանք. Եւ արդ գիտասցիր զինչ գոր՛... և նա այր ժանդ, և ո՛չ գոյ:

* Բազումք. Եւ եղ՛ ՚ի վերայ իշոց:

* Ոմանք. Ձամենայն ինչսն Նաբա՛... և հատոյց ինձ չար երախտեացն իմոց:

* Յօրինակին պակասեր. Եւ երկիր եպագ նմա յերկիր:

* Այլք. Տեառն իմում չարիս:

զպատերազմ տեառն իմոյ Տէր պատերազմի, և չարութիւն մի՛ երբէք գտցի ՚ի քեզ: ²⁹Եւ ո՛չ յարիցէ մարդ հալածել զքեզ, և խնդրել զանձն քո. և եղիցի անձն տեառն իմոյ ծրարեալ՝ ՚ի ծրարի՛ կենաց Տեառն Աստուծոյ. և զանձն թշնամեաց քոց պարսաքարեացես ՚ի մէջ պարսատկաց: ³⁰Եւ եղիցի յորժամ արասցէ Տէր տեառն իմուն զամենայն բարիս զոր խօսեցաւ ասել ՚ի վերայ քո, և տացէ զքեզ պատուիրանաւ առաջնորդ ՚ի վերայ Իսրայէլի. ³¹մի՛ լիցի պղծութիւն և գայթազողութիւն ՚ի սրտի տեառն իմոյ հեղուլ զարիւն արդար տարապարտուց, և պահեսցի՛ ձեռն տեառն իմոյ առ իւր. և բարի՛ արասցէ Տէր տեառն իմուն. և յիշեսցես զաղախին քո բարի՛ առնել նմա: ³²Եւ ասէ Դաւիթ ցԱբիգեա. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի որ առաքեացն զքեզ այսօր այսր ընդ առաջ իմ*. ³³և օրհնեալ բարք քո, և օրհնեալ լիցիս դու որ արգելեր զիս այսօր աստ չերթալ յարիւն, և պահել զձեռն իմ առ իս: ³⁴Բայց կենդանի՛ է Տէր Աստուած Իսրայէլի, որ արգել զիս այսօր յառնելոյ քեզ չարիս. զի թէ չէիր փութացեալ և եկեալ ընդ առաջ իմ. քանզի ասացի, թէ ո՛չ մնացէ Նաբաղայ մինչև ցլոյս առաւօտու որ զորմով միզիցէ*: ³⁵Եւ ա՛ռ Դաւիթ ՚ի ձեռաց նորա զամենայն ինչ զոր եբեր նմա. և ասէ ցնա. Ե՛լ ՚ի տուն քո խաղաղութեամբ. տես՛ զի լուայ ձայնի քում. և ակն առի երեսաց քոց:

ԿԸ ³⁶Եւ զնա՛ց Աբիգեա առ Նաբաղ. և էր խրախութիւն ՚ի տան նորա իբրև զխրախութիւն թագաւորի. և սիրտ Նաբաղու զուարճացեալ էր յինքեան, և ինքն արբեալ էր յոյժ. և ո՛չ պատմեաց նմա բան մի մեծ կամ փոքր մինչև ցլոյս առաւօտին*: ³⁷Եւ եղև ընդ առաւօտն, իբրև սթափեցաւ Նաբաղ ՚ի գինւոյ անտի, պատմեաց՝ նմա կինն իւր զբանս զայսոսիկ. և մեռաւ սիրտ նորա ՚ի նմա, և եղև իբրև զքար*: ³⁸Եւ եղեն իբրև աւուրք տասն, և եհար Տէր զՆաբաղ, և մեռաւ*: ³⁹Եւ լուաւ Դաւիթ եթէ մեռաւ Նաբաղ, և ասէ. Օրհնեալ Տէր Աստուած որ դատեաց զդատաստանս նախատանաց իմոց ՚ի ձեռաց Նաբաղայ, և զժառայ իւր ապրեցոյց ՚ի ձեռաց չարեաց, և զչարութիւն Նաբաղայ դարձոյց Տէր ՚ի գլուխ նորա:

ԿԹ Եւ առաքեաց Դաւիթ և խօսեցաւ ընդ Աբիգեա առնուլ զնա իւր կնութեան: ⁴⁰Եւ եկին ծառայքն Դաւթի առ Աբիգեա՝ ՚ի Կարմելոս, խօսեցան ընդ նմա և ասեն. Դաւիթ առաքեաց զմեզ առ քեզ առնուլ զքեզ իւր կնութեան: ⁴¹Եւ յարեալ երկիր եպագ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր և ասէ. Ահաւասիկ կայ՝ աղախին քո ՚ի ստրկութիւն լուանալոյ՝ զոտս ծառայից տեառն իմոյ: ⁴²Եւ փութացեալ յարեալ Աբիգեա, ել յէշ. և հինգ աղջիկ զնացին զհետ նորա, և չոգաւ զհետ ծառայիցն Դաւթի, և եղև նորա՝ կին*: ⁴³Եւ զԱբիգեայ զնա ա՛ռ Դաւիթ յեզրայելէ. և էին նորա երկոքեան կանայք:

Յ ⁴⁴Եւ Սաւուղ ետ զՄեղքող դուստր իւր զկին Դաւթի, Փաղտիելի որդւոյ Յեմեսսեայ Ռովմացւոյ:

26

* Այլք. Ջքեզ այսօր ընդ առաջ իմ:

* Այլք. Յառնելոյ քեզ չար. զի:

* Այլք. Խրախութիւն տան նորա իբրև... մինչև ցլոյս առաւօտուն:

* Ոմանք. Եւ մեռաւ սիրտ նորա, և նա եղև իբրև զքար:

* Ոմանք. Եւ եղև իբրև աւուրք:

* Ոմանք. Եւ քսան աղջիկ. և ոմանք. Եւթն աղջիկ:

Գլուխ ԻԶ

¹Եւ եկին Ձիփացիքն ՚ի մառայլէն առ Սաւուղ ՚ի բլուրն՝ և ասեն. Ահա Դաւիթ թաքուցեալ է առ մեզ ՚ի բլրին Եքեղատու՝ հանդէպ Յեսեմոնայ^{*}: ²Եւ յարեալ Սաւուղ էջ յանապատն Ձիփայ, և ընդ մնա երեք հազարք արանց ընտրելոց յԻսրայէլէ՝ խնդրել՝ զԴաւիթ յանապատին Ձիփայ: ³Եւ բնակեցաւ Սաւուղ ՚ի բլրին Եքեղատու հանդէպ Յեսեմոնայ ՚ի վերայ ճանապարհին: Եւ Դաւիթ մտէր յանապատին. իբրև ետես Դաւիթ թէ եկն Սաւուղ զկնի նորա յանապատն^{*}, ⁴առաքեաց Դաւիթ լրտեսս. և գիտաց եթէ եկեալ է Սաւուղ պատրաստութեամբ ՚ի Կեիլա: ⁵Եւ յարեալ Դաւիթ գաղտ և եկն ՚ի տեղին ուր մտէր Սաւուղ #. և ետես Դաւիթ զտեղին ուր մնջեաց Սաւուղ. և անդ Աբեններ որդի Ներեայ զօրավար նորա. և Սաւուղ մնջէր ՚ի պաղպաջունսն. և զօրն բանակեալ էր շուրջ զնովա: ⁶Պատասխանի ետ Դաւիթ և ասէ ցԱբիմէլէք Քետացի, և ցԱբեսսա՝ որդի Շարուիեայ եղբայր Յովաբայ, և ասէ. Ո՞ մտցէ ընդ իս առ Սաւուղ ՚ի բանակն: Եւ ասէ Աբեսսա. Ես մտից ընդ քեզ: ⁷Եւ մտին Դաւիթ և Աբեսսա ՚ի զօրն զցայգ. և ահա Սաւուղ մնջէր ՚ի պաղպաջունսն, և գեղարդն ցցեալ յերկրի ՚ի սնարից նորա. և Աբեններ և զօրն մնջէին շուրջ զնովա: ⁸Եւ ասէ Աբեսսա ցԴաւիթ. Փակեաց Տէր այսօր զթշնամիս քո ՚ի ձեռս քո. արդ հարից զսա գեղարդամբս յերկիր մի՛ անգամ և ո՛չ կրկնեցից: ⁹Եւ ասէ Դաւիթ ցԱբեսսա. Մի՛ հարկաներ զդա. զի ո՞վ իցէ որ ձգիցէ զձեռն իւր յօծեալ Տեառն և սրբիցի: ¹⁰Եւ ասէ Դաւիթ. Կենդանի է Տէր. բայց եթէ Տէր խրատեսցէ զդա. և կամ թէ օր իւր եկեսցէ և մեռցի. կամ թէ ՚ի պատերա՛զմ մտցէ և յաւելցի^{*}. ¹¹Քա՛ւ լիցի ինձ ՚ի Տեառնէ ձգել զձեռն իմ յօծեալ Տեառն. բայց արդ՝ ան զգեղարդնդ ՚ի սնարից դորա, և զկու՛ժ ջրոյդ, և զնասցուք ՚ի մեզ^{*}: ¹²Եւ առ Դաւիթ զգեղարդն և զկու՛ժ ջրոյն ՚ի սնարից նորա, և զնացին յինքեանս. և ո՛չ ոք էր որ տեսանէր, և ո՛չ որ գիտէր, և ո՛չ ոք էր որ յառնէր. զի ամենեքեան ՚ի քուն էին, քանզի թմբրութիւն ՚ի Տեառնէ անկաւ ՚ի վերայ նոցա: ¹³Եւ անց Դաւիթ յայն կողմն, և եկաց ՚ի վերայ զլխոյ լերինն ՚ի բացեայ, և բազում ճանապարհ էր ՚ի մէջ նոցա: ¹⁴Բարբառեցաւ Դաւիթ ՚ի զօրն, և խօսեցաւ ընդ Աբեններեայ և ասէ. Ո՞չ տաս պատասխանի Աբեններ: Եւ ասէ. Ո՛վ ես դու որ կոչես զիս առ արքայ: ¹⁵Եւ ասէ Դաւիթ ցԱբեններ. Ո՛չ ապաքէն այո քա՛ջ ես դու, և ո՞վ է իբրև զքեզ ՚ի մէջ Իսրայէլի. և ընդէ՞ր ո՛չ պահես զտէր քո զարքայ. զի եմուտ ոմն ՚ի զօրուէդ սպանանել զտէր քո զարքայ^{*}: ¹⁶Ձէ՛ բարի բանդ զոր արարեր. կենդանի է Տէր զի որդիք մահու՛ էք դուք՝ որ պահէք զտէր ձեր զարքայ զօծեալ Տեառն. և արդ աւասիկ գեղարդնն արքայի և կու՛ժ ջրոյն ո՞ւր է որ առ սնարս նորա կային^{*}:

ՅԱ ¹⁷Եւ ծանեալ Սաւուղ զձայնն Դաւիթի և ասէ. Այդ ձա՞յն քո է որդեակ իմ Դաւիթ: Եւ ասէ Դաւիթ. Ծառայ քո եմ տէր իմ արքայ: ¹⁸Եւ ասէ. Ընդէ՞ր է այդ տէր իմ, զի մտեալ ես զկնի ծառայի քոյ. զի՞ մեղայ, և զի՞ գտաւ յիս վնաս^{*}: ¹⁹Եւ արդ լուիցէ տէր իմ արքայ զբանս ծառայի՛ իւրոյ. եթէ Աստուծոյ շարժեալ է զքեզ ՚ի

^{*} Ոմանք. Եւ եկին Ձեփեցիքն ՚ի մառայլին:

^{*} Այլք. Եւ բանակեցաւ Սաւուղ ՚ի բլ՛:

^{*} Ոմանք. Եւ գեղարդն յեցեալ յերկրի ՚ի սնա՛: Այլք. Եւ զօր նորա մնջէին շուրջ:

^{*} Ոմանք. Բայց եթէ Տէր իւր խրատ՛:

^{*} Ոմանք. Ի սնարից նորա:

^{*} Ոսկան. Եմուտ ոմն ՚ի զօրուիդ:

^{*} Ոմանք. Ձարքայ զտէր ձեր:

^{*} Ոմանք. Եւ զի՞նչ գտաւ յիս վնաս:

վերայ իմ, ճենճերեսցի՝ զոհ քո. և եթէ որդւոց մարդկան՝ անհօծեալ լիցին դոքա առաջի Տեառն. զի մերժեցին զիս այսօր չհաստատել ինձ ՚ի ժառանգութեան Տեառն. ասեն. Ե՛րբ ծառայեա՛ աստուածոց օտարաց: ²⁰Եւ արդ՝ մի՛ անկցի արիւն իմ յերկիր առաջի երեսաց Տեառն, զի ելեալ է թագաւոր Իսրայելի խնդրել զանձն իմ, որպէս ընթանայցէ ագռաւ ընդ լերինս: ²¹Եւ ասէ Սաւուղ. Մեղա՛յ, դարձի՛ր որդեակ իմ Դաւիթ, զի ո՛չ արարից քեզ չար. փոխանակ զի պատուական է անձն իմ առաջի աչաց քոց. և ես յայսմ աւուր ժամանակի զրախնդի՛ր և յանցաւոր՝ եմ յոյժ*։ ²²Պատասխանի ետ Դաւիթ և ասէ. Ահաւասիկ գեղարդնն արքայի, անցցէ մի ոք ՚ի մանկտուոյդ և առցէ զսա: ²³Եւ Տէր հատուցէ իւրաքանչիւր ումեք ըստ արդարութեանց իւրոց և ըստ հաւատարմութեան. թէ ո՞րպէս մատնեաց զքեզ Տէր այսօր ՚ի ձեռս իմ. և ո՛չ կամեցայ ձգել զձեռն իմ յօծեալ Տեառն: ²⁴Եւ որպէս մեծացաւ անձն քո աստ այսօր առաջի աչաց իմոց, այնպէս մեծացի անձն իմ առաջի Տեառն. և ամրացուցէ՛ զիս, և ապրեցուցէ՛ զիս յամենայն նեղութենէ: ²⁵Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. Օրհնեալ՛ ես դու որդեակ իմ Դաւիթ, և առնելով արասցես, և զօրանալով զօրացիս: Եւ գնաց Դաւիթ զճանապարհ իւր. և Սաւուղ դարձաւ ՚ի տեղի իւր:

27

Գլուխ ԻԷ

ՉԲ ¹Եւ խօսեցաւ Դաւիթ ՚ի սրտի իւրում և ասէ. Արդ անկանիցին յաւուր միում ՚ի ձեռն Սաւուղայ. և չէ՛ ինձ բարի, եթէ ո՛չ դարձայց յերկիրն Փղշտացւոց. և եթէ իցէ խնդրեսցէ զիս Սաւուղ յամենայն սահմանս Իսրայելի՝ ապրեցայց ՚ի ձեռաց նորա*։ ²Եւ յարեաւ Դաւիթ, և անց ինքն և վեց հարիւր արքն որ ընդ նմա, և գնաց առ Անքուս որդի Մովաբայ՝ արքայ Գեթայ*։ ³Եւ նստաւ Դաւիթ ընդ Անքուսայ ՚ի Գեթ. ինքն և արք իւր՝ իւրաքանչիւր տամբ իւրով. և Դաւիթ և երկոքին կանայք իւր, Աբինովամ Յեզրայելացի և Աբիգեա կին Նաբաղայ Կարմելացւոյ: ⁴Եւ ա՛գդ եղև Սաւուղայ եթէ փախեաւ Դաւիթ ՚ի Գեթ, և ո՛չ ևս յաւել խնդրել զնա: ⁵Եւ ասէ Դաւիթ ցԱնքուս. Եթէ եգիտ ծառայ քո շնորհս առաջի աչաց քոց, տացես ինձ տեղի ՚ի միում քաղաքաց յանդս, և նստայց անդ. և ընդէ՞ր նստիցի ծառայ քո ՚ի թագաւորեալ քաղաքի ընդ քեզ*։ ⁶Եւ ետ նմա Անքուս յաւուր յայնմիկ զՍիկելակ. վասն այնորիկ եղև Սիկելակ արքայի Յրեաստանի մինչև ցայսօր: ⁷Եւ եղև թիւ աւուրցն զոր նստաւ Դաւիթ յանդի այլազգեացն՝ աւուրք չորից ամսոց*։

ՉԳ ⁸Եւ ելանէր Դաւիթ և արքն որ ընդ նմա էին, և ասպատակէին ՚ի վերայ ամենայն Գեսերացւոյն, և Գիգերացւոյն, և Ամաղեկացւոյն. և ահա բնակէր երկիրն ՚ի Գեղամսուրայ յապահովելոց պարսպաւորաց մինչև ցեգիպտոս: ⁹Եւ հարկանէր Դաւիթ զերկիրն, և ո՛չ ապրեցուցանէր զայր և զկին. և առնոյր հօտս և անդեայս, և էջս, և ուղտս, և հանդերձս. և դառնայր և գայր առ Անքուս: ¹⁰Եւ ասէր Անքուս ցԴաւիթ. Որո՞ւն կողման արշաւեցեր այսօր: Եւ ասէ Դաւիթ. ՚Ի

* Այլք. Ձի ո՛չ ինչ արարից քեզ չար:

* Ոմանք. ՚Ի ձեռս Սաւուղայ... և եթէ խնդրիցէ զիս Սաւ՛:

* Ոմանք. Անքուս որդի Մովաբայ:

* Ոմանք. ՚Ի թագաւորեալ քաղաքի քո ընդ քեզ:

* Բազումք. Թիւ աւուրցն զոր նստաւ: *Ի լուս*՝. Աւուրք երկուց ամաց:

կողմանս հարաւոյ Յրէաստանի, և ՚ի կողմանս Յերամեդի, և ՚ի կողմանս Կենեգայ*։ ¹¹Չայր և զկին ո՛չ ապրեցուցի ածել ՚ի Գէթ. ասեմ գուցէ ա՛զդ լինիցի զմէնջ ՚ի Գէթ, և ասիցեն թէ զա՛յս ինչ գործէ՛ Դաւիթ: Եւ ա՛յս իրաւունք էին նորա զամենայն աւուրս որչափ և նստա՛ւ Դաւիթ յանդի այլազգեացն: ¹²Եւ հաւատաց Անքուս Դաւթի յոյժ, և ասէ. Ամաչելով ամաչէ՛ ՚ի ժողովրդենէ իւրմէ յիսրայէլէ. և եղիցի ինձ ծառայ՛ յաւիտեան:

28

Գլուխ ԻԸ

¹Եւ եղև յաւուրսն յայնոսիկ՝ ժողովեցան այլազգիքն բանակօք իւրեանց ելանել պատերազմել ընդ Իսրայէլի. և ասէ Անքուս ցԴաւիթ. Գիտալով գիտասցես՝ զի ընդ ի՛ն ելանելոց ես ՚ի պատերազմ, դո՛ւ և արք քո*։ ²Եւ ասէ Դաւիթ ցԱնքուս. Ա՛յդպէս լիցի. արդ գիտասցես զինչ գործեսցէ ծառայ քո: Եւ ասէ՛ Անքուս ցԴաւիթ. Ա՛յդպէս լիցի. անձնապահապետ արարից զքեզ զամենայն աւուրս:

³Դ ³Եւ Սամուէլ մեռա՛ւ, և կոծեցան զնա ամենայն Իսրայէլ, և թաղեցին զնա ՚ի քաղաքին իւրում յԱրիմաթեմ: Եւ Սաւուղ եբարձ զվիուկս և զգէտս յերկրէ: ⁴Եւ գումարեցան այլազգիքն, և եկին բանակեցան ՚ի Սովման. և ժողովեաց Սաւուղ զամենայն այր Իսրայէլի, և բանակեցան ՚ի Գեղբուէ: ⁵Իբրև ետես Սաւուղ զբանակ այլազգեացն՝ երկեա՛ւ և զարհուրեցա՛ւ սիրտ նորա յոյժ: ⁶Եւ եհա՛րց Սաւուղ ՚ի Տեառնէ. և ո՛չ արար նմա պատասխանի Տէր երագո՛վք և գուշակութեամբք և մարգարէիւք*։ ⁷Եւ ասէ Սաւուղ ցծառայս իւր. Խնդրեցէ՛ք ինձ կին մի վիուկ, և երթայց առ նա և խնդրեցի՛ց նովաւ: Եւ ասեն ծառայքն նորա ցնա. Ահա է՛ կին մի վիուկ յԱյենդովր*։ ⁸Եւ ծպտեցաւ Սաւուղ, և զգեցաւ ա՛յլ հանդերձս. և զնաց ինքն և երկո՛ւ արք ընդ նմա, և եկին առ կինն զիշերի՛: Եւ ասէ ցնա. Դիւթեա՛ դու ինձ վիկաւդ, և հա՛ն ինձ զոր ե՛ս ասացից քեզ: ⁹Եւ ասէ կինն. Ահա դու ինքնին իսկ գիտես զոր ինչ արա՛ր Սաւուղ, ո՞րպէս սատակեաց զվիուկս և զգէտս յերկրէ. և արդ ընդէ՞ր որսաս զանձն իմ սպանանել զնա*։ ¹⁰Եւ երդուա՛ւ նմա Սաւուղ ՚ի Տէր և ասէ. Կենդանի՛ է Տէր, եթէ պատահեսցի՛ քեզ վնաս ՚ի բանիս յայսմիկ: ¹¹Եւ ասէ կինն. Ձո՞ հանից քեզ: Եւ ասէ. ՁՍամուէլ հան ինձ: ¹²Եւ ետես կինն զՍամուէլ, և աղաղակեաց ՚ի ձայն մեծ. և ասէ կինն ցՍաւուղ. Ընդէ՞ր խաբեցեր զիս և դու Սաւուղ ես: ¹³Եւ ասէ ցնա արքայ. Մի՛ երկնչիր, ասա զո՞ տեսեր: Եւ ասէ ցնա կինն. Աստուա՛ծս տեսանեմ ելեալս յերկրէ*։ ¹⁴Եւ ասէ ցնա. Ձի՞նչ գիտացեր: Եւ ասէ ցնա. Ա՛յր ուղղորդ ելեալ յերկրէ, և արկեալ զիւրև կրկնոց: Եւ ծանեա՛ւ Սաւուղ եթէ Սամուէլ է նա. և անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝ և եպա՛գ նմա երկիր*։ ¹⁵Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Ձի՞ լլկեցեր զիս

* Ոմանք. Արշաւեցէք այսօր. և ասէր Դաւիթ ցԱն՝:

* Ի լուս՝. Գիտելով գիտասցես. համաձայն բազմաց ՚ի բնաբ՝: Ուր օրինակ մի ունի. գիտելով զօրասցես, զի ընդ իս:

* Ոմանք. Երագովք և զգուշութեամբ, և մար՝:

* Բազումք. Ահա է կին մի վիուկ յԱյենդովր:

* Ոմանք. Սպանանել զսա:

* Ոմանք. Ասա՛ զոր տեսեր:

* Ոմանք. Այր ուղղորդեալ յերկրէ:

ելանել ինձ: Եւ ասէ Սաւուղ. Նեղեալ եմ յոյժ, և այլազգիք պատերազմին ընդ իս. և Աստուած հեռացաւ յինէն, և ո՛չ լուաւ ինձ՝ ո՛չ մարգարէիւք և ո՛չ երագովք. և արդ կոչեցի զքեզ ցուցանել ինձ զի՞նչ գործեցից՝: ¹⁶Եւ ասէ Սամուէլ. Ձի՞ հարցանես զիս. և Տէր հեռացաւ ՚ի քէն, և եղև ընդ ընկերի քում. ¹⁷և արար ընդ քեզ Տէր որպէս խօսեցաւ յիմ ձեռն. և պատառեսցէ՛ Տէր զթագաւորութիւնդ ՚ի ձեռաց քոց, և տացէ՛ զդա ընկերի քում Դաւթի. ¹⁸զի ո՛չ լուար ձայնի Տեառն, և ո՛չ արարեր զսրտմտութիւն բարկութեան նորա յԱմաղեկ. վասն այնր բանի արար քեզ Տէր զայդ յաւուր յայսմիկ: ¹⁹Եւ մատնեսցէ՛ Տէր զԻսրայէլ քև՝ հանդերձ ՚ի ձեռս այլազգեացն. և վաղիւ՝ դու և որդիք քո ընդ քեզ անկցին. և զբանակն Իսրայէլի տացէ՛ Տէր ՚ի ձեռս այլազգեացն: ²⁰Եւ փութացաւ Սաւուղ և անկաւ յոտնկելեաց ՚ի գետին. և զարհուրեցաւ յոյժ ՚ի բանիցն Սամուէլի, և զօրութիւն ո՛չ ևս գոյր ՚ի նմա. զի ո՛չ եկեր հաց զսիւն ողջոյն և զգիշերն ամենայն:

Դե ²¹Եւ եմուտ կինն առ Սաւուղ՝ և ետես զի տագնապեալ էր յոյժ, և ասէ ցնա. Ահա լուաւ աղախին քո ձայնի քում, և եդի զոգի իմ ՚ի ձեռին իմում, և ունկնդիր եղէ բանիցն զոր խօսեցար ընդ իս. ²²և արդ լուր և դու ձայնի աղախնոյ քոյ, և եդից առաջի քո պատառ մի հաց և կերիցես, և եդիցի քեզ զօրութիւն. զի երթիցես զճանապարհ քո՝: ²³Եւ ո՛չ կամեցաւ ուտել. և բռնադատեցին զնա ծառայքն իւր և կինն, և լուաւ ձայնի նոցա, և յարեաւ ՚ի գետնոյն, և նստաւ յաթոռ: ²⁴Եւ կնոջն սնուցեալ էր որթ մի ՚ի տան, և փութացաւ եզեն զնա. և ա՛ռ ալլար՝ թրեաց, և եփեաց բաղարջս. ²⁵և մատոյց առաջի Սաւուղայ, և առաջի ծառայից նորա, և կերան. և յարեան զնացին զգիշերն զայն:

29

Գլուխ ԻԹ

ԶՁ ¹Եւ ժողովեցին այլազգիքն զամենայն զբանակս իւրեանց յԱփեկ. և բանակեցաւ Իսրայէլ յԱյենդո՛վր Յեզրայելի՝: ²Եւ նախարարք այլազգեացն հարիւրաւորք և հազարաւորք. և Դաւիթ և արք իւր երթային յետոյ՝ ընդ Անքուսայ՝: ³Եւ ասեն նախարարք այլազգեացն. Ո՞ եմ դոքա որ անցանենդ: Եւ ասէ Անքուս ցնախարարս այլազգեացն. Ո՞չ դա է Դաւիթ ծառայ Սաւուղայ արքայի Իսրայելի. և այս՝ երկու՛ ամբ եմ զի առ մե՛զ է, և ո՛չ ինչ գտի ՚ի դմա յօրէ յօրմէ հետէ անկաւ ՚ի մեզ մինչև ցայսօր: ⁴Եւ խոժոռեցան նմա նախարարք այլազգեացն, և ասեն ցնա. Դարձո՛ զայրն, և երթիցէ՛ ՚ի տեղի իւր ուր կացուցեր զնա անդ. և մի՛ եկեսցէ ընդ մեզ ՚ի պատերազմ, և մի՛ լիցի դաւաճան բանակիս. և ի՞նչ հաճիցի դա ընդ Տեառն իւրում, եթէ ո՛չ գլխովք արանցդ այդոցիկ՝: ⁵Ո՞չ այդ Դաւիթ է, որուն նուագէին ՚ի պարըս. և ասէին, եթէ եհար Սաւուղ զհազարս և Դաւիթ զբերս: ⁶Եւ կոչեաց Անքուս զԴաւիթ, և ասէ ցնա. Կենդանի՛ է Տէր, զի ուղիղ և բարի՛ ես դու յաչս իմ, և մուտ քո և ել՝ ՚ի բանակի աստ ընդ իս. և ո՛չ գտի ՚ի քեզ չարութիւն յօրէ յօրմէ հետէ եկիր առ իս մինչև ցայսօր ժամանակի: Եւ յաչս նախարարացն ո՛չ թուիս դու բարւոք. ⁷և արդ դարձիր և երթ ՚ի

* Ոմանք. Եւ ո՛չ ևս լուաւ ինձ:

* Յօրինակին պակասէր. Եւ արդ լուր և դու ձայնի:

* Ոմանք. Ձամենայն զբանակս իւրե՛:

* Ոմանք. Հարիւրաւորք և հազարաւորք:

* Ոմանք. Եւ ի՞նչ հաճիցի դա ընդ Տեառն իմում, եթէ ո՛չ գլխով ա՛:

խաղաղութիւն, և ո՛չ արասցես չարութիւն յաչս նախարարաց այլազգեաց՝⁸ Եւ ասէ Դաւիթ ցԱնքուս. Զի՞նչ արարի քեզ. և զի՞նչ գտեր ՚ի ծառայի քում յօրէ յորմէ էի՛ առաջի քո մինչև ցայսօր. զի՞ ո՛չ զայցեմ պատերազմել ընդ թշնամիս տեառն իմոյ արքայի՛⁹ Պատասխանի՛ ետ Անքուս և ասէ ցԴաւիթ. Գիտեմ զի բարւո՛ք թուիս դու յաչս իմ իբրև զհրեշտակ Աստուծոյ. այլ նախարարք այլազգեացն ասեն. Մի՛ եկեսցէ ընդ մեզ ՚ի պատերազմ: ¹⁰Եւ արդ կանխեա՛ դու ընդ առաւօտն, դու և ծառայք տեառն քո որ եկեալ են ընդ քեզ, և երթայք ՚ի տեղին յորում կացուցի զձեզ. և բա՛ն ինչ յոռութեան մի՛ դիցես ՚ի սրտի քում, զի հաճո՛յ ես դու առաջի իմ. և վաղայարոյ՛ց լինիցիք ՚ի ճանապարհ և լուսասցի՛ ձեզ և գնասցիք՝^{*}

Զէ ¹¹Եւ կանխեաց Դաւիթ և արք իւր գնալ ընդ առաւօտն, և պահել զերկիր այլազգեացն. և այլազգիքն ելին պատերազմել ընդ Իսրայէլի՛^{*}:

30

Գլուխ L

¹Եւ եղև ընդ մտանել Դաւթի և արանց նորա ՚ի Սիկիլակ յաւուրն երկրորդի. և Ամաղէկ ասպատակեաց ՚ի հարաւակողմն, և ՚ի Սիկիլակ. և եհար զՍիկիլակ և այրեաց զնա հրով՝^{*}. ²և գերեաց զկանայս և զամենայն ինչ որ ՚ի նմա ՚ի փոքուէ՛ մինչև ցմեծ. և ո՛չ սպանին զայր և զկին, այլ գերեցին և զնացին զճանապարհս իւրեանց: ³Եւ եկն Դաւիթ և արք իւր ՚ի քաղաքն. և ահա այրեցեալ էր քաղաքն, և կանայք նոցա և ուստերք և դստերք իւրեանց գերեալք: ⁴Եւ ամբարձին Դաւիթ և արք նորա զձայնս իւրեանց և լացին, մինչև ո՛չ ևս գոյր ՚ի նոսա զօրութիւն լալոյ: ⁵Եւ երկոքին կանայքն Դաւթի գերեցան, Աքինովամ Յեզրայելացի, և Աբիգեա կին Նաբաղու Կարմելացոյ: ⁶Եւ նեղեցաւ Դաւիթ յոյժ. զի ասաց ժողովուրդն քարկոծել զնա. և զայրացեալ էր ոգի ամենայն ժողովրդեանն իւրաքանչիւր ՚ի վերայ ուստերաց և դստերաց իւրեանց: Եւ զօրացաւ Դաւիթ ՚ի Տէր Աստուած իւր՝^{*}. ⁷և ասէ Դաւիթ ցԱբիաթար քահանայ՝ որդի Աքիմելեքայ. Մատո՛ գեփուդդ: Եւ մատոյց Աբիաթար գեփուդն առ Դաւիթ: ⁸Եւ եհարց Դաւիթ ՚ի Տեառնէ, և ասէ. Պնդեցա՞յց զկնի գեղդուրայն այնորիկ, եթէ հասանիցե՞մ նոցա: Եւ ասէ ցնա Տէր. Պնդեաց և հասանելով հասանես, և թափելով թափեսցես՝^{*}: ⁹Եւ զնաց Դաւիթ և չորեքարևր արքն որ ընդ նմա, և եկին մինչև ցհեղեղատն Բոսորայ. և աւելորդքն զտեղի՛ առին՝^{*}: ¹⁰Եւ պնդեցաւ Դաւիթ չորեքարևր արամբք. և երկերիւր այր մնացին որք նստան յայնկոյս հեղեղատին Բոսորայ: ¹¹Եւ գտին այր մի Եգիպտացի յանդին և կալան զնա, և ածին առ Դաւիթ յանդն. և ետուն նմա հաց և կերաւ, և արբուցին նմա ջուր. ¹²և ետուն նմա կոտոր մի պաղատտաց, և երկուս չամչեայս՝ և կերաւ. և

^{*} Ոմանք. Դարձիր, և եթէ դու ՚ի խաղա՛:

^{*} Այլք. Յօրէ յորմէ էի: Ուր ոմանք. Յորմէ եկի առաջի:

^{*} Յօրինակին պակասէր. Դու ընդ առաւօտն, դու և ծառայք:

^{*} Ոմանք. Դաւիթ, ինքն և արք իւր... ելին ՚ի պատերազմել:

^{*} Այլք. Յաւուրն երրորդի:

^{*} Այլք. Զի զայրացեալ էր ոգի:

^{*} Ի լուս՝. ՚ի վերայ Գեղդուրայն, նշանակի՝ հինին:

^{*} Ոմանք. Եւ չորեքարիւր արք նորա ընդ նմա:

հաստատեցա՛ւ այնու ոգի նորա. քանզի չէ՛ր կերեալ հաց, և ո՛չ արբեալ ջուր գերիս տիւս և գերիս գիշերս: ¹³Եւ ասէ ցնա Դաւիթ. Ո՞յր ես դու, և ուստի՞ ես: Եւ ասէ պատանեակն. Եգիպտացի՛ եմ ես ծառայ առն Ամաղեկացոյ, և եթող զիս տէր իմ. զի նքողեցայ ես այս երրորդ օր. ¹⁴և մեք ասպատակեցաք ՚ի կողմանս հարաւոյ Քերեթայ, և ՚ի կողմանս Զրէաստանի, և ՚ի հարաւակողմ Քաղեբայ, և զՍիկիլակ այրեցա՛ք հրով*: ¹⁵Եւ ասէ ցնա Դաւիթ. Եթէ իջուցանիցե՞ս զիս ՚ի գեղդուրն յայն: Եւ ասէ ցնա Եգիպտացին. Երդու՛իր ինձ եթէ ո՛չ սպանցես զիս, և ո՛չ մատնեսցես զիս ՚ի ձեռս տեառն իմոյ, և իջուցից զքեզ ՚ի գեղդուրն: Եւ երդուաւ նմա*. ¹⁶և իջոյց զնա անդր: Եւ ահա նոքա ցրուեալ էին ընդ երեսս ամենայն երկրի, ուտէին և ընպէին. և տօնէին ամենայն աւարօքն մեծամեծօք, զոր առին յերկրէն այլազգեաց, և յերկրէն Յուդայ*: ¹⁷Եւ եհա՛ս ՚ի վերայ նոցա Դաւիթ. և եհար զնոսա Դաւիթ յելանելոյ արուսեկին մինչև ցերեկոյ՝ և ՚ի վաղի՛ւ անդր, և ո՛չ ապրեցաւ ՚ի նոցանէ այր. բայց միայն պատանեակք չորեքարևր հեծան յուղտս և փախեան՝:

ԶԸ ¹⁸Եւ թափեաց Դաւիթ զամենայն ինչ զոր առին Ամաղեկացիքն. և զերկոսին կանայս իւր թափեաց Դաւիթ: ¹⁹Եւ ո՛չ սխալեցաւ ՚ի նոցանէ ՚ի փոքուէ մինչև ցմեծ. և յուստերաց և ՚ի դստերաց, և յաւարէն մինչև ցամենայն ինչ զոր առին ՚ի նոցանէ՝ զամենայն ինչ դարձո՛յց Դաւիթ*: ²⁰Եւ ա՛ռ Դաւիթ զամենայն հօտս և զանդեայս, և տանէր առաջի աւարին. և աւարին անուն կոչէր՝ թէ այս աւար Դաւթի է՛: ²¹Եւ եկն Դաւիթ առ երկերիւրսն լքեալս յերթալոյ զկնի Դաւթի, և նստոյց զնոսա ՚ի հեղեղատին Բոսորայ. և ելին ընդ առաջ Դաւթի և ընդ առաջ զօրուն որ ընդ նմա. և մատեա՛ւ Դաւիթ առ զօրն, և եհարց զողջունէ նորա ՚ի խաղաղութիւն*: ²²Եւ պատասխանի ետուն նմա ամենայն արք ժանտք և անզգամք յարանց պատերազմողաց որք երթեալ էին ընդ Դաւթի, և ասեն. Եթէ զի ո՛չ եղեն հետամուտ ընդ մեզ, ո՛չ տացուք դոցա յաւարէ աստի զոր թափեցաք. բայց եթէ զհարաքանչիւր զկին և զորդիս առցեն և զնասցեն ՚ի բաց: ²³Եւ ասէ Դաւիթ. Մի՛ արասցի այդպէս եղբարք իմ, յետ մատնելոյ զնոսա մեզ Տեառն, և պահելոյ զմեզ. և մատնեաց Տէր ՚ի ձեռս մեր զգեղդուրն եկեալ ՚ի վերայ մեր. ²⁴և ո՞ անսասցէ բանիցդ ձերոց այդոցիկ, զի ո՛չ ինչ են ընդ հատ ՚ի ձեռք. քանզի ըստ մասին երթալոյն ՚ի պատերազմ, նոյնպէս եղիցի մասն վանապանին. ըստ նմին օրինակի բաժանեսցին*: ²⁵Եւ եղև յօրէ յայնմանէ և անդր՝ իբրև օրէնք և իրաւունք ՚ի մէջ Իսրայէլի մինչև ցայսօր:

ԶԹ ²⁶Եւ եկն Դաւիթ ՚ի Սիկիլակ. և առաքեաց յաւարէ անտի ծերոցն Յուդայ, և ընկերաց իւրոց, և ասէ. Այդ ձեզ օրհնութիւն յաւարէ թշնամեաց Տեառն, ²⁷որ ՚ի Բեթելդ էք, և յԴամաթ հարաւոյ, և որք յԵթեր*, ²⁸և յԱրոյեր, և որք յԵփթամովթ, և

* *Ոմանք.* Զարաւոյ Քերեթայ:

* *Ոսկան.* Երդուիր ինձ զի մի՛ սպան՞: *Ոմանք.* Եւ ո՛չ տացես զիս ՚ի ձեռս:

* *Այլք.* Ընդ երեսս ամենայն երկրին:

* *Ոմանք.* Յելանելոյ արօսեկին:

* *Ոմանք.* Ձամենայն դարձոյց Դաւիթ:

* *Յօրհնակին.* Թէ այս ա՛ւր Դաւթի է:

* *Բազումք.* Եւ մատեաւ Դաւիթ ՚ի զօրն, և ե՞:

* *Ոմանք.* Եւ ո՞ անսայցէ բանից... ո՛չ են ընդ հատ... երթելոյն ՚ի պատերազմ... մասն վանապանի:

* *Ոմանք.* Եւ Զոեմաթ հարաւոյ:

որք յեսթամա* .²⁹և որք յերաքել, և որք ՚ի քաղաքս Յերենելացւոյն, և որք ՚ի քաղաքս Կինեցւոյն. ³⁰որք ՚ի Յռամա, և որք ՚ի Բովրանս, և որք յԱմաթաք* .³¹և որք ՚ի Քեբրոն. և որք յամենայն տեղիս՝ ընդ որ շրջեցաւ Դաւիթ ինքն և արք իւր* :

31

Գլուխ ԼԱ

2¹Եւ այլազգիքն պատերազմէին ընդ Իսրայէլի. և փախեան արք Իսրայէլի յերեսաց այլազգեացն. և անկանէին վիրաւորք ՚ի լերինն Գեղբուա: ²Եւ հասին այլազգիքն ՚ի Սաւուղ և յորդիսն նորա, և հարին այլազգիքն զՅովնաթան և զԱմինադաբ և զՄելքիսաւէ՝ զորդիս Սաւուղայ. ³և ծանրացաւ պատերազմն ՚ի վերայ Սաւուղայ. և գտին զնա արք կորովիք աղեղնաւորք՝ և վիրաւորեցաւ ընդ կարաւանոսն ՚ի ներքս: ⁴Եւ ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր. Մերկեա՛ զսուր քո և խոցեա՛ զիս նովաւ. գուցէ՛ գայցեն անթլփատքն և խոցոտիցեն զիս, և խաղայցեն զինն: Եւ ոչ կամեցաւ կապարճակիրն՝ քանզի երկեաւ յոյժ. և ա՛ն Սաւուղ զսուսերն իւր և անկաւ՝ ՚ի վերայ նորա* : ⁵Իբրև ետես կապարճակիրն եթ մեռաւ Սաւուղ՝ անկաւ և նա ՚ի վերայ սուսերին իւրոյ և մեռաւ ընդ նմա* : ⁶Եւ մեռաւ Սաւուղ՝ և երեքեան որդիք նորա, և կապարճակիրն իւր. և ամենայն արք նորա յաւուր յայնմիկ ՚ի միասին: ⁷Եւ իբրև տեսին արք Իսրայէլի որ յայնկոյս հովտացն, և որ յայնկոյս Յորդանանու. եթ փախեան արք Իսրայէլի, և թէ մեռաւ Սաւուղ՝ և որդիք նորա, թողին զքաղաքս իւրեանց և փախեան. և ելին այլազգիքն և բնակեցան ՚ի նոսա* : ⁸Եւ եղև ՚ի վաղիւ անդր եկին այլազգիքն մերկացուցանել զդիակունսն. և գտին զՍաւուղ և զերիս որդիս նորա անկեալս ՚ի լերին Գեղբուայ. ⁹դարձուցին զնա, և մերկացուցին զհանդերձ նորա, և հատին զգլուխ նորա. և առաքեցին յերկիրն այլազգեաց շուրջանակի աւետաւորս ՚ի կուռս իւրեանց՝ և ՚ի ժողովուրդն: ¹⁰Եւ եղին զկարասին նորա յԱստարտիոնն, և զմարմինս նոցա կախեցին զպարսպէն Բեթսանայ* : ¹¹Եւ լուան զնոցանէն բնակիչք Յաբիսայ Գաղաադացւոց զոր ինչ արարին այլազգիքն ընդ Սաւուղ. ¹²և յարեան ամենայն այր զօրութեան, և զնացին զգիշերն ամենայն. և առին զմարմինն Սաւուղայ և զմարմինն Յովնաթանու որդւոյ նորա ՚ի պարսպէն Բեթսանայ, և բերին զնոսա Յաբիս. և այրեցին զնոսա անդ: ¹³Եւ առին զոսկերս նոցա և թաղեցին զնոսա ընդ անդիւն Յաբիսայ. և պահեցին զելքն օր* :

Կատարեցաւ Թագաւորութեանց Առաջին*

* Ոսկան. Յեփթամովթ. և որք յեփթամա:

* Ոմանք. ՚ի Բովրանս, և որք յԱթաք:

* Ոմանք. Դաւիթ ինքն և որք ընդ իւր:

* Ոմանք. Մերկա՛ զսուր քո:

* Յօրինակին պակասէր. Անկաւ և նա ՚ի վերայ սուսերին:

* Յօրինակին. Յորդանանու. և թէ փախեան արք Իսրայէլի... և բնակեցան ՚ի նոսա:

Ոմանք. Եւ բնակեցան ընդ նոսա:

* Ոմանք. Եւ եղին... յԱստարտովն:

* Ոմանք. Եւ թաղեցին զնոսա ընդ անդիւն Յաբիսայ:

* Ի վախճանի՝ ոմանք. Կատարումն Առաջին Թագաւորութեանց. և ոմանք. Կատարեցաւ

ԳԼՈՒԽՔ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ

- ա. Ձի սպան Դաւիթ զայրն որ ասաց՝ թէ ե՛ս սպանի զՍաւուղ:
- բ. Ողբք Դաւթի՝ի վերայ Սաւուղայ և Յովնաթանու:
- գ. Ձի օծին զԴաւիթ՝ի Քերթոն՝ի վերայ Յուդայ:
- դ. Ձի թագաւորեաց Յերուսթէ որդի Սաւուղայ՝ի վերայ մետասան ցեղիցն:
- ե. Կռիւն՝ի Գաբաւոն, ուր և սպանաւն Ասայել:
- զ. Ձի զօրանայր տունն Դաւթի:
- է. Տրտունջն Յերուսթեայ, և սպառնալիքն Աբեններեայ:
- ը. Ձի առաքեաց Աբեններ առ Դաւիթ՝ բանս ուխտի:
- թ. Ձի խօսեցաւ Աբեններ յականջս ամենայն Իսրայէլի վասն Դաւթի թագաւորել նմա:
- ժ. Մահն Աբեններեայ, և սուգն Դաւթի՝ի վերայ նորա:
- ժա. Ձի սպան Դաւիթ զսպանօղսն Յերուստեայ:
- ժբ. Ձի օծին զԴաւիթ՝ի վերայ ամենայն Իսրայէլի:
- ժգ. Ա՛ռ Դաւիթ զՍիօն, և արար ողորմութիւն կաղաց և կուրաց. և վասն որդւոց նորա:
- ժդ. Ձի խրամատեաց Տէր զայլազգիսն առաջի Դաւթի:
- ժե. Ձի դարձեալ եհար զայլազգիսն՝ի նշան անտառին:
- ժզ. Թէ մեռաւ Ոզա առ տապանակաւն, վասն որոյ խոտորեցոյց Դաւիթ զտապանակն՝ի տուն Աբեդարայ:
- ժէ. Ձի եհան Դաւիթ զտապանակն յերուսաղէմ՝ի խորանն զոր ինքն կազմեաց. և թէ անգոսնեաց Մեղքող զԴաւիթ:
- ժը. Ասաց Դաւիթ ցնաթան շինել տուն Աստուծոյ. և նա յորդորեաց զնա առանց Տեառն՝ի նոյն:
- ժթ. Պատգամ Տեռան առ Դաւիթ՝ թէ որդի քո շինեսցէ ինձ տուն, և ես եղէց նմա՝ի հայր, և նա եղիցի ինձ յորդի:
- ի. Գոհութիւն Դաւթի վասն այսր. և խնդրուածք վասն լնլոյ խոստմանն:
- իա. Կրկին հայցուած վասն այսոցիկ:
- իբ. Ձի տիրեաց Դաւիթ գետոյն Եփրատայ. և յաւարէ հեթանոսացն պատրաստեաց պղինձ յոյժ՝ի նիւթ կահից տաճարին:
- իգ. Սպան Դաւիթ զԱդրիազար. վասն որոյ առաքեաց նմա արքայն Անտիոքոս՝ անօթս ոսկեղէնս:
- իդ. Ձի արար Դաւիթ ողորմութիւն Մեմփիբոսթեայ որդւոյ Յովնաթանու:
- իե. Առաքեաց Դաւիթ մխիթարել զՅանան արքայ Ամոնայ. որոյ նախատեալ զհրեշտակսն Դաւթի վարձեաց զԱսորիս կռուել ընդ Դաւիթ:
- իզ. Ձի առաքինացան ընդդէմ նոցա Յովաբ և Աբեսա. և նոքա դարձեալ գումարեցան:
- իէ. Անդ առաքինացեալ Դաւթի, և թագաւորքն անձնատուրք ծառայք լինէին նմա:
- իը. Եմուտ Դաւիթ առ կինն Ուրիայ, ուստի յղացաւ կինն:

Գիրք Առաջին Թագաւորութեանցն: *Ըստ այսմ ունին տքա և՛ ի յաջորդ Գիրս Թագաւորութեանց:*

իթ. Եւ զի ՚ի պատերազմի անդ սպանաւ Ուրիա կամելո՛վ Դաւթի:
լ. Թէ զի՞նչ դիմօք խօսեցաւ Նաթան ընդ Դաւթի վասն կնոջն Ուրիայ:
լա. Ձի ՚ի վճռելն Դաւթի զիրացն, սաստկացաւ առ նա բանն Տեառն. և զի
յանձն առ Դաւիթ զմեղանսն և ապրեցաւ:
լբ. Վասն մահու մանկանն, և վասն ծննդեանն Սողոմոնի:
լգ. Չոգաւ Դաւիթ և ա՛ռ զԴաբաթ Ամոնացւոց, և եյերկա՛թեմ արկ
զգերեալսն անտի:
լդ. Չար խրատ ետ Յովնադաբ Ամոնի վասն Թամարայ:
լե. Ձի բռնադատեաց Ամոն զԹամար, և եղև ընդ նմա:
լզ. Ձի ել իրքն ՚ի վեր, և լուեալ Դաւթի բարկացաւ:
լէ. Ձի ընդ նախատանաց քեռն՝ սպան Աբեսողոմ զեղբայր իւր զԱմոն:
լը. Եւ զի փախեաւ Աբեսողոմ յերեսաց Դաւթի:
լթ. Ձի ՚ի ձեռն բանեղ կնոջն զարթոյց Յովաբ զկամս Դաւթի զոր ունէր
վասն Աբեսողոմայ:
խ. Ձի գիտաց Դաւիթ թէ ինքն Յովաբ եղ բանս ՚ի բերան կնոջն խօսել ընդ
Դաւթի զԱբեսողոմայ:
խա. Ձի հրամանաւ Դաւթի ա՛ծ Յովաբ զԱբեսողոմ յերուսաղէմ, և վասն
զեղոյ և հերաց նորա:
խբ. Ձի այրեաց Աբեսողոմ զվիճակ գարւոյն Յովաբայ, և գնացեալ
Յովաբայ եմոյծ գնա առ արքայ:
խգ. Ձի նենգութեամբ պատրէր Աբեսողոմ, և քարշէր յինքն զԿարայէլ:
խդ. Թէ խրատուն Աքիտոփելայ թագաւորեաց Աբեսողոմ:
խե. Ձի փախեաւ Դաւիթ յԱբեսողոմայ. և զի դարձոյց յետս զտապանակն.
և պատուիրեաց Սաղովկայ զուշակել ինքեան զգիարդն:
խզ. Ձի դարձոյց յետս զՔուսի, ցրել նմա զխորհուրդն Աքիտոփելայ: Եւ
զի եկն Սիբա պատանի Մեմփիբոսթայ պատարագօք ընդ առաջ Դաւթի:
խէ. Ձի անիծանէր Սեմէի զԴաւիթ. և նա չխստանայր:
խը. Եկն Աբեսաղոմ յերուսաղէմ, և եկն առ նա Քուսի բարեկամ Դաւթի:
խթ. Եւ զի խօսեցաւ Քուսի ըստ մտացն Աբեսաղոմայ:
ծ. Չար խրատն Աքիտոփելայ ննջել Աբեսաղոմայ ընդ հարճս հօրն. և
դժնեայ խորհուրդն նորա փութով հասանել սպանանել զԴաւիթ:
ծա. Ձի ցրեաց Քուսի զնենգաւոր խորհուրդն Աքիտոփելայ:
ծբ. Ձի առաքեաց զուշակեաց Քուսի ամրանալ Դաւթի. զոր գիտացեալ
Աքիտոփէլ խեղդամահ եղև:
ծգ. ՉԱմեսայի կացոյց Աբեսողոմ ՚ի տեղի Յովաբու. և թէ ո՛յք էին որ
կերակրեցին զԴաւիթ ՚ի փախչել անդ:
ծդ. Ձի պարտեցաւ զօրն Աբեսողոմայ ՚ի պատերազմի անդ առաջի
զօրացն Դաւթի:
ծե. Նշաւակեալ մահն հայրագեղծն Աբեսաղոմայ:
ծզ. Ձի դադարեցոյց Յովաբ զպատերազմնն, և վասն արձանին
Աբեսաղոմայ:
ծէ. Ձի եկն Քուսի առ Դաւիթ, և եսաց. Սպանաւեմ Աբեսաղոմ:
ծը. Ձի ողբաց Դաւիթ զԱբեսաղոմ, և խորշեցան ՚ի նմանէ զօրքն. և
մեծաբանեաց Յովաբ ՚ի վերայ Դաւթի, և նա յանձին կալաւ:
ծթ. Ձի եկն ցեղն Յուդայ և այլքն դարձուցանել զԴաւիթ ՚ի տուն իւր. և
կազմեցին զՅորդանան անցանել արքայի:

կ. Ձի անյիշաչար եղև Դաւիթ առ Սեմէի, թէպէտ զազանանայր Աբեսաա:
 կա. Թէ զի՞նչ փաղաքշեաց Մեմփիբոսթ առաջի Դաւթի:
 կբ. Թէ զի՞նչ խօսեցաւ Դաւիթ ընդ Բերզելեայ՝ որ կերակրեացն զնա:
 կգ. Եկին տասն ցեղքն Իսրայէլի և կռուէին ընդ արս Յուդայ իբրև
 արհամարհեալք:
 կդ. Ապստամբեաց Սաբէէ՝ ՚ի Դաւթ հանդերձ Իսրայէլի:
 կե. Վասն տասն հարձիցն. և զի առաքեաց Դաւիթ զԱմեսայի ժողովել
 զԻսրայէլ. և նա յամեաց:
 կզ. Չոգան Յովաբեանք զիեստ Սաբէի Բոքորեանց, և մահն Ամեսայայ ՚ի
 Յովաբայ:
 կէ. Խօսեցաւ կինն իմաստուն՝ և թափեաց զքաղաքն ՚ի Յովաբայ
 հատմամբ զլխոյն Սաբէի:
 կը. Յարագեցին սպանին Գաբաւոնացիք զորդիս Սաւուդայ. և լուաւ Տէր
 երկրին. և վասն պատերազմացն և սատակմանն Ռափայնոցն:
 կթ. Օրհնութիւն զոր օրհնեաց Դաւիթ զԱստուած որ փրկեաց զնա
 ամենայն ուրեք:
 հ. ԲԳովութիւնն իրաւանցն Աստուծոյ մարգարտութեամբ հանդերձ:
 հա. Վերջին բանք ՚ի Դաւթայ ասացեալք:
 հբ. Առաքինութիւնք քաջացն Դաւթի:
 հգ. Ձի նուիրեաց Դաւիթ Աստուծոյ զջուր ջրհորոյն Բեթղաիէմի:
 հդ. Անուանք զօրաւորացն Դաւթի նախաթուելովքն՝ երեսուն և եւթն:
 հե. Թէ գրգռեաց Տէր զԴաւիթ թուել զԻսրայէլ:
 հզ. Պատգամն Աստուծոյ առ Դաւիթ վասն երից պատժոցն, յորոց
 ընտրեաց զմահն Դաւիթ. և զի կանգնեաց սեղան Տեառն, և դադարեաց
 մահն յԻսրայէլէ:

ԹԱՎԱԻՐՈՒԹԵԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ եղև յետ մահուանն Սաւուդայ, և Դաւիթ դարձաւ ՚ի հարկանելոյ
 զԱմադեկ. և նստաւ Դաւիթ ՚ի Սիկելակ աւուրս երկուս: ²Եւ եղև յետ աւուրն
 երկրորդի, և ահա ա՛յր եհաս ՚ի բանակէ զօրուն Սաւուդայ, և հանդերձք իւր
 պատառեալք, և հո՛ղ զգլխով իւրով. և եղև ՚ի մտանել նորա առ Դաւիթ. անկա՛ւ
 յերկիր և երկի՛ր եպագ նմա՛: ³Եւ ասէ ցնա Դաւիթ. Ուստի՞ զաս դու: Եւ ասէ ցնա
 ՚ի բանակէն Իսրայէլի զերծեալ եմ ես: ⁴Եւ ասէ ցնա Դաւիթ. Ձի՞նչ զրո՛յց է
 պատմեա՛ ինձ: Եւ ասէ. Փախեաւ ժողովուրդն ՚ի պատերազմէն, և անկան
 բազումք ՚ի ժողովրդենէն և մեռան. և Սաւուդ և Յովնաթան մեռան: ⁵Եւ ասէ
 Դաւիթ ցպատանին որ պատմեաց նմա. Ձիա՞րդ գիտես եթէ մեռաւ Սաւուդ և
 Յովնաթան որդի նորա՞: ⁶Եւ ասէ պատանին որ պատմեաց նմա. Դիպելով
 դիպեցայ ՚ի լերինն Գեղբուա, և ահա Սաւուդ յեցեալ կայր ՚ի միզակն իւր. և

* Ոմանք. Այր եհաս ՚ի բանակէն Սաւուդայ:

* Ոմանք. Եթէ մեռան Սաւուդ և Յովնա՛:

ահա կառք և արխանք հեծելոց գունարեցան ՚ի նա: ⁷Եւ հայեցաւ ՚ի թիկունս իւր և ետես զիս, և կոչեաց զիս. և ասեմ անասիկ եմ ես: ⁸Եւ ասէ ցիս. Ո՞վ ես դու: Եւ ասեմ. Ամաղեկացի՛ եմ ես: ⁹Եւ ասէ ցիս. Արի՛ ՚ի վերայ իմ և սպան զիս. զի կալաւ զիս մո՛ւթ անհնարին. մինչ դեռ ամենայն շունչ իմ յիս է՛: ¹⁰Եւ յարեայ՛ ՚ի վերայ նորա և սպանի զնա. զի գիտէի թէ ո՛չ է ապրանաց, յետ անկանելոյն նորա. և առի զթագն ՚ի գլխոյ նորա, և զապարանջանս ՚ի բազկէ նորա, և բերի՛ զնոսա տեառն իմուն ասյր: ¹¹Եւ բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց և պատառեաց զնոսա. և ամենայն արք որ ընդ նմա պատառեցին զհանդերձս իւրեանց: ¹²Եւ կոծեցան և պահեցին և լացին մինչև ցընդերեկս ՚ի վերայ Սաւուղայ և Յովնաթանու որդւոյ նորա, և ՚ի վերայ ժողովրդեանն Յուդայ. և ՚ի վերայ տանն Իսրայէլի զի հարան սրով: ¹³Եւ ասէ Դաւիթ ցպատանին որ պատմեաց նմա. Ուստի՞ ես դու: Եւ ասէ. Որդի առն պանդխտի Ամաղեկացւոյ՛ եմ ես՛: ¹⁴Ասէ ցնա Դաւիթ. Եւ զիա՞րդ ո՛չ երկեար ձգել զձեռն քո ապականել զօծեալն Տեառն: ¹⁵Եւ կոչեաց Դաւիթ զմի ՚ի մանկտւոյն և ասէ. Մատի՛ր պատահեա դմա: Եւ եհար զնա և մեռաւ՛: ¹⁶Եւ ասէ ցնա Դաւիթ. Արիւն քո ՚ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն և ասէ, թէ ե՛ս սպանի զօծեալն Տեառն: Բ ¹⁷Եւ ողբաց Դաւիթ զողբս զայս ՚ի վերայ Սաւուղայ և ՚ի վերայ Յովնաթանու որդւոյ նորա. ¹⁸և ասաց Դաւիթ ուսուցանել որդւոցն Յուդայ # աղեղնաւորութիւն. և ասա գրեալ է ՚ի գիրս Ուղղութեան: ¹⁹Արձանացի՛ր Իսրայէլ, ՚ի վերայ բլրոցն ՚ի բարձունս քո վիրաւորաց. զիա՞րդ անկան զօրաւորքն: ²⁰Մի՛ պատմէք ՚ի Գէթ, և մի՛ տայք զայդ աւետիս յելս Ասկաղոնի. զի մի՛ երբէք ուրախ լիցին դատերք այլազգեացն, և մի՛ ցնծացեն դատերք անթլփատիցն՛: ²¹Լերինք Գեղբուայ, մի՛ իջցէ ՚ի ձեզ ցօղ. և մի՛ եկեսցէ ՚ի վերայ ձեր անձրև անդաստանք պտղոց, զի անդ ապականեցաւ ասպար զօրաւորաց. վահանն Սաւուղայ ո՛չ օծաւ իւղով: ²²Յարենէ՛ վիրաւորաց, և ՚ի ճարպոյ զօրաւորաց. աղեղն Յովնաթանու ո՛չ դարձաւ ունայն յետս. և սուրն Սաւուղայ ո՛չ ամփոփեցաւ դատարկացեալ՛: ²³Սաւուղ և Յովնաթան սիրելիք, և գեղեցիկք և վայելուչք. չմեկնեալք ՚ի կենդանութեան իւրեանց, և ո՛չ մեկնեցան ՚ի մահուան իւրեանց. թեթևագոյնք քան զարծուիս. զօրացան առաւել քան զառիժունս: ²⁴Դատերք Իսրայէլի լացէք ՚ի վերայ Սաւուղայ. լացէք ՚ի վերայ նորա որ զգեցուցանէր զձեզ կարմիրս՝ հանդերձ զարդուց ձերոց. որ արկանէր զարդս ոսկւոյ ՚ի վերայ հանդերձից ձերոց՛: ²⁵Ձիա՞րդ անկան զօրաւորքն ՚ի մէջ պատերազմի. Յովնաթան ՚ի վերայ բարձանց քոց վիրաւոր՛: ²⁶Յաւէ՛ ինձ ՚ի վերայ քո եղբայր իմ Յովնաթան. զեղեցկացար ինձ յոյժ. զարմանալի՛ եղև սէր քո ինձ քան զսէր կանանց: ²⁷Ձիա՞րդ անկան զօրաւորքն, և կորեան անօթքն պատերազմականք:

2

* Ոմանք. Մուքն անհնարին: *Ի լուս*՝. Ձի մինչդեռ ամենայն. *համաձայն բազմաց ՚ի բնաբ*՝:

* *Յօրինակին պակասէր*. Ուստի ես դու: *Եւ ասէ*. Որդի առն:

* Ոմանք. Ձմի ՚ի մանկտւոյն իւրոյ. և ասէ:

* *Յօրինակին պակասէր*. Եւ մի՛ տայք *զայդ* աւետ՛:

* Ոմանք. Աղեղնն Յովնաթան՝:

* *Այլք*. Ձգեցուցանէր ձեզ... զարդու ձերոյ. *կամ*՝ զարդուն ձերով:

* Ոմանք. ՚ի վերայ բարձանց քոց վիրաւորեցաւ:

Գլուխ Բ

Գ ¹Եւ եղև յետ այնորիկ և եհա՛րց Դաւիթ ՚ի Տեառնէ և ասէ. Եթէ ելանիցե՞մ ՚ի մի ՚ի քաղաքացն Յուդայ: Եւ ասէ ցնա Տէր. Ե՛լ: Եւ ասէ Դաւիթ. Յո՞ ելից: Եւ ասէ ՚ի Քերրոն: ²Եւ ե՛լ Դաւիթ ՚ի Քերրոն. և երկոքին կանայք նորա Աքինովամ Յեզրայելացի, և Աբիգեա կին Նաբաղու Կարմելացոյ: ³Եւ արքն զորս եհան Դաւիթ իւրաքանչիւր տամբ իւրով. և բանակէին ՚ի քաղաքին Քերրոնի*: ⁴Եւ եկին արք Յրէաստանի՝ և օծին անդ գԴաւիթ թագաւոր ՚ի վերայ տանն Յուդայ: Եւ պատմեցին Դաւթայ և ասեն, եթէ արք Յաբիսայ Գաղաադացոյ թաղեցին զՍաւուղ*: ⁵Եւ առաքեաց Դաւիթ իրեշտակս առ առաջնորդս Յաբիս Գաղաադացոց, և ասէ ցնոսա Դաւիթ. Օրհնեա՛լ էք դուք ՚ի Տեառնէ, զի արարէք դուք զգութն զայն ՚ի վերայ տեառն ձերոյ Սաւուղայ օծելոյ Տեառն, և թաղեցէ՛ք զնա և զՅովնաթան զորդի նորա*: ⁶Եւ արդ՝ արասցէ՛ Տէր ընդ ձեզ ողորմութիւն և ճշմարտութիւն. և ես հատուցից ձեզ ընդ բարութեանն այնորիկ զոր արարէք զբանն զայն*: ⁷Եւ արդ՝ զօրացին ձեռք ձեր, և լերուք յորդիս զօրութեան. զի մեռաւ տէրն ձեր Սաւուղ. և զիս օծ տունս Յուդայ ՚ի թագաւոր իւրեանց*:

Դ ⁸Եւ Աբեմներ որդի Ներեայ զօրավա՛ր Սաւուղայ ա՛ռ զՅերուսթէ զորդի Սաւուղայ, և տարաւ զնա ՚ի բանակն. ⁹և թագաւորեցո՛յց զնա ՚ի վերայ Գաղաադաստանի, և ՚ի վերայ Թասիրայ, և ՚ի վերայ Յեզրայելի, և ՚ի վերայ Եփրեմի, և ՚ի վերայ Բենիամինի, և ՚ի վերայ ամենայն Իսրայէլի: ¹⁰Եւ է՛ր ամաց քառասնից Յերուսթէ որդի Սաւուղայ յորժամ թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի, և երկուս ամս թագաւորեաց. բա՛ց ՚ի տանէն Յուդայ՝ որ էին զհե՛տ Դաւթի*: ¹¹Եւ եղեն աւուրք զորս թագաւորեաց Դաւիթ ՚ի Քերրոն ՚ի վերայ տանն Յուդայ՝ ամք եւթն և ամիսք վեց*:

Ե ¹²Եւ ե՛լ Աբեմներ որդի Ներեայ և ծառայք Յերուսթեայ որդոյ Սաւուղայ ՚ի բանակացն ՚ի Գաբաւոն: ¹³Եւ Յովա՛բ որդի Շարուհեայ և ծառայք Դաւթի ելին ՚ի Քերրոնէ, և դիպեցան միմեանց ՚ի վերայ աղբերն Գաբաւոնի. և նստան նոքա անտի՝ աղբերն Գաբաւոնի, և սոքա աստի*: ¹⁴Եւ ասէ Աբեմներ ցՅովաբ. Յարիցե՛ն մանկտիդ և խաղասցե՛ն առաջի մեր: Եւ ասէ Յովաբ. Յարիցե՛ն: ¹⁵Եւ յարեան, և անցին թուով ՚ի մանկանցն Բենիամինի երկոտասանք, և Յերուսթեայ որդոյ Սաւուղայ. և ՚ի մանկանցն Դաւթի երկոտասանք*. ¹⁶և կալան այր իւրաքանչիւր ձեռամբ զգլխոյ ընկերի իւրոյ, և սու՛ր ՚ի կողս ընկերի իւրոյ. և անդէն անկանէին և մեռանէին. և կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ Վիճա՛կ դաւաճանաց, որ է՛ ՚ի Գաբաւոն*: ¹⁷Եւ եղև պատերազմ խի՛ստ յոյժ յաւուր յայնմիկ. և պարտեցաւ Աբեմներ՝ և արք Իսրայէլի առաջի ծառայիցն Դաւթի: ¹⁸Եւ անդ էին երեք որդիքն Շարուհեայ. Յովաբ, և Աբեսսա, և Ասայէլ. և Ասայէլ թեթև էր ոտիւք իբրև զմի յայծեմանց ՚ի դաշտի: ¹⁹Եւ պնդեցաւ Ասայէլ զհետ

* Այլք. Եւ բնակէին ՚ի քաղաքին Քեր՞:

* Ոմանք. Թագաւորել ՚ի վերայ տանն Յուդայ:

* Ոմանք. Ձոր արարէք դուք զգու՞: Ոսկան. Օծելոյ Աստուծոյ:

* Ոմանք. Ձի արարէք զբանն զայն:

* Այլք. Իւրեանց ՚ի թագաւոր, կամ՝ թագաւոր:

* Ոմանք. Բայց ՚ի տանէն Յուդայ որ էին ընդ Դաւթի:

* Ոմանք. Ի Քերրոն, և ՚ի վերայ տանն Յուդայ:

* Ի լուս՞. Առ ջրբղխին Գաբաւոնի: Ուր ոմանք. Առ աղբերն Գաբա՞:

* Այլք. Երկոտասանք Յերուսթեայ որդոյ Սա՞:

* Ոմանք. Եւ սուր իւր ՚ի կողս ըն՞:

Աբեններեայ. և ո՛չ խոտորեցաւ երթալ յաջ և ո՛չ յահեակ ՚ի հետոց Աբեններեայ: ²⁰Եւ հայեցաւ Աբեններ ՚ի թիկունս իւր՝ և ասէ. Եթէ դո՞ւ իցես Ասայէլ: Եւ ասէ. Ե՛ս եմ: ²¹Եւ ասէ ցնա Աբեններ. խոտորեա՛ դու յաջ կամ յահեակ, և կա՛լ քեզ մի ՚ի մանկտուոյդ, և ա՛ռ դու քեզ զսպառազինութիւն նորա: Եւ ո՛չ կամեցաւ Ասայէլ խոտորել ՚ի հետոց նորա: ²²Եւ յաւե՛լ ևս Աբեններ ասել ցԱսայէլ. ՚Ի բա՛ց կաց յինէն, զի մի՛ հարից զքեզ ընդ գետին. և զիա՞րդ ամբարձից գերեսս իմ առ Յովաբ. և ո՞ւր լինիցի այն. դարձի՛ր առ Յովաբ եղբայր քո: ²³Եւ ո՛չ կամեցաւ թափել: Եւ եհար զնա Աբեններ նիզակաւն ընդ սնակո՛ւշտն, և ել նիզակն ընդ զիստ նորա, և անկաւ անդէն և մեռաւ ՚ի ներքոյ նորա: Եւ լինէ՛ր որ միանգամ գայր ցտեղին ցայն ուր անկա՛ւ Ասայէլ և մեռաւ՝ զտեղի՛ առնոյր: ²⁴Եւ պնդեցան Յովաբ և Աբեսսա զկնի Աբեններեայ. և արևն եմուտ. և նոքա մտին մինչև ցբլուրն Ամմանայ որ է յանդիման Գայեայ, ընդ ճանապարհ անապատին Գաբաւունի* : ²⁵Եւ ժողովեցան որդիքն Բենիամինի զկնի Աբեններեայ. և կացին ՚ի վերայ բլրոյ միոյ: ²⁶Եւ կոչեաց Աբեններ զՅովաբ և ասէ. Մի՞թէ իսպա՞ռ ուտիցէ սուր, կամ թէ ո՞չ գիտիցես զի դառնութիւն լինի վախճանն. մինչև ցե՞րբ ո՛չ ասիցես ժողովրդեանն դառնա՛լ ՚ի հետոց եղբարց իւրեանց: ²⁷Եւ ասէ Յովաբ. Կենդանի՛ է Տէր. զի եթէ քո չէ՛ր խօսեցեալ, յայգուէ՛ իսկ ելանէր ամբոխս իւրաքանչիւր զհետ եղբօր իւրոյ* : ²⁸Եւ փո՛ղ եհար Յովաբ, և մեկնեցան ժողովուրդն ամենայն, և ո՛չ ևս պնտեցան զհետ Իսրայէլի, և ո՛չ ևս յաւելին պատերազմել: ²⁹Եւ Աբեններ և արք նորա գնացին ընդ արևելս զգիշերն զայն ողջոյն. և անցին ընդ Յորդանան՝ և չոգան ընդ ամենայն ձգեալն. և եկին ՚ի բանակսն* : ³⁰Եւ Յովաբ դարձա՛ւ յԱբեններեայ, և ժողովեաց զամենայն ժողովուրդն: Եւ հանդէս եղև ծառայիցն Դաւթի որ կոտորեցան՝ ինն և տասն առն՝ և Ասայէլ. ³¹և ծառայքն Դաւթի հարին յորդուցն Բենիամինի, և յարանց Աբեններեայ երեք հարիւր և վաթսուն այր: ³²Եւ բարձի՛ն զԱսայէլ, և թաղեցին զնա ՚ի գերեզմանի հօր իւրոյ ՚ի Բեթղահեմ. և գնացին Յովաբ և արք նորա, և լուսացաւ նոցա ՚ի Քեբրոն* :

3

Գլուխ Գ

Ձ ¹Եւ է՛ր պատերազմ սաստիկ ՚ի մէջ տանն Սաւուղայ՝ և ՚ի մէջ տանն Դաւթի. և տունն Դաւթի երթա՛յր և զօրանայր, և տունն Սաւուղայ երթայր և տկարանայր: ²Եւ ծնան Դաւթի որդիք ՚ի Քեբրոն. անդրանիկ նորա՝ Ամմոն յԱքինոոնայ Յեզրայելացոյ* . ³և երկրորդ նորա՝ Դաւիա, յԱբիզեայ Կարմելացոյ. և երրորդն՝ Աբեսաղոն, ՚ի Մաաքեայ դստերէ Թողմեայ արքայի Գեսուրայ. ⁴և չորրորդ Ադոնիա, որդի Ազգիթայ. և հինգերորդն՝ Սափատիա, որդի Ամիտաղայ* . ⁵և վեցերորդն՝ Յեթրամ, յեզղաթայ կնոջէ Դաւթի: Սոքա՛ ծնունդք Դաւթի ՚ի

* Այլք. Մինչև ցբլուրն Ամ՝:

* Յօրինակին պակասէր. Չի եթէ քո չէր խօ՛ւ: Յօրինակին. Ելանէր ամբոխս իւր:

* Ի լուս՝. ՚ի վերայ Ձգեալն. նշանակի՝ անապատն: Ուր այլ ոմանք՝ եղեալ ՚ի բնաբ՝. ընդ ամենայն ձգեալսն. ՚ի լուս՝. նշանակեն՝ Յանապատն ձգեալ ՚ի գետով:

* Ոմանք. Յովաբ և արքն որ ընդ նմա, և լուսացաւ:

* Ոմանք. Եւ ծնան Դաւթայ որդի՞... և էր անդրանիկ նորա Ամնովն:

* Ոմանք. Որդի Ամելատայ:

Քերթոն*:

Է ⁶Եւ եղև ՚ի լինել պատերազմին ՚ի մէջ տանն Սաւուղայ և ՚ի մէջ տանն Դաւթի, և Աբեններ ունէր զտունն Սաւուղայ: ⁷Եւ Սաւուղայ էր հարճ մի, որում անուն էր Ռիսփա, դուստր Յուդայ: Եւ ասէ Յերուսթէ որդի Սաւուղայ ցԱբեններ* . ⁸Ընդէ՞ր մտանես դու առ հարճ հօր իմոյ: Եւ բարկացաւ Աբեններ յոյժ վասն բանին Յերուսթեայ, և ասէ ցնա Աբեններ. Միթէ շա՞ն գլուխ իցեմ ես՝ որ արարի ողորմութիւն այսօր ՚ի վերայ տանն Սաւուղայ հօր քոյ, և ՚ի վերայ եղբարց և ՚ի վերայ բարեկամաց, և ո՛չ եղէ անձնատու՛ր ՚ի տունն Դաւթի. և խնդրես յինէն այսօր վրէ՛ժ կնոջ միոյ* . ⁹Օ՛ն և օ՛ն արասցէ Աստուած Աբեններայ և օ՛ն և օ՛ն յաւելցէ նմա, եթէ ո՛չ որպէս երդուաւ Տէր Դաւթի, այնպէս արարից նմա.

¹⁰Բառնալով զթագաւորութիւնն Սաւուղայ, և կանգնել զթագաւորութիւնն Դաւթի ՚ի վերայ Իսրայէլի և ՚ի վերայ Յուդայ՝ ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէէ* : ¹¹Եւ ո՛չ ևս կարաց Յերուսթէ տալ պատասխանի Աբեններայ բան մի յերկիւղէն:

Ը ¹²Եւ առաքեաց Աբեններ հրեշտակս առ Դաւիթ ՚ի Թեսաղմու՛ն երկիր՝ առ ժամայն, և ասէ. Ուխտեա՛ ընդիս զուխտ քո, և ահա ձեռն իմ ընդ քե՛զ, դարձուցանել առ քեզ զամենայն տունն Իսրայէլի: ¹³Եւ ասէ Դաւիթ. Բարու՛ք է. ես ուխտեցի՛ց ընդ քեզ ուխտ, բայց բան մի ես խնդրեմ ՚ի քէն՝ մի՛ տեսցես զերեսս իմ, եթէ ո՛չ աճցես զՄեղքող դուստր Սաւուղայ ՚ի գալն քում տեսանել զերեսս իմ: ¹⁴Եւ առաքեաց Դաւիթ առ Յերուսթէ որդի Սաւուղայ հրեշտակս և ասէ. Տո՛ւր ցիս զկին իմ զՄեղքող, զոր առի ես ընդ հարի՛ւր անթլփատութեանց այլազգեացն* : ¹⁵Եւ առաքեաց Յերուսթէ՛ և ա՛ն զնա յառնէ իւրմէ Փաղ՛տիելէ որդւոյ Սելլայ: ¹⁶Եւ երթա՛յր այր նորա զհետ նորա և լա՛յր, մինչև ցԲարակիմ: Եւ ասէ ցնա Աբեններ. Ե՛րթ դարձի՛ր: Եւ դարձաւ՝:

Թ ¹⁷Եւ խօսեցաւ Աբեններ ընդ ծերս Իսրայէլի և ասէ. Երէ՛կ և եռա՛նտ խնդրէիք զԴաւիթ թագաւորել ՚ի վերայ ձեր. ¹⁸և արդ՛ արարէ՛ք, զի Տէր խօսեցաւ վասն Դաւթի և ասէ. Ձեռա՛նք ծառայի իմոյ Դաւթի փրկեցից զԻսրայէլ ՚ի ձեռաց այլազգեացն և ՚ի ձեռաց ամենայն թշնամեաց իւրեանց: ¹⁹Եւ խօսեցաւ Աբեններ յականջս Բենիամինի: Եւ զնաց Աբեններ խօսել յականջս Դաւթի ՚ի Քերթոն, զամենայն ինչ որ հաճո՛յ թուեցաւ յաչս Իսրայէլի, և յաչս ամենայն տանն Բենիամինի: ²⁰Եւ եկն Աբեններ առ Դաւիթ ՚ի Քերթոն, և ընդ նմա քսան այր. և արար Դաւիթ Աբեններեայ և արանցն որ ընդ նմա խրախութիւն: ²¹Եւ ասէ Աբեններ ցԴաւիթ. Յարեա՛յց և զնացից և ժողովեցից առ տէ՛ր իմ արքայ զամենայն Իսրայէլ, և ուխտեցից ընդ քեզ ուխտ. և թագաւորեսցեն՝ ՚ի վերայ ամենեցուն որոց ցանկա՛յ անձն քո:

Ժ Եւ առաքեաց Դաւիթ զԱբեններ, և զնաց խաղաղութեամբ* : ²²Եւ ահա ծառայք Դաւթի և Յովաբ եկին յասպատակէ, և աւա՛ր բազում ածին ընդ իւրեանս. և Յովաբ չէ՛ր ընդ Դաւթի ՚ի Քերթոն յորժամ արձակեաց զնա և զնաց խաղաղութեամբ: ²³Եւ Յովաբ և ամենայն զօրն նորա եկին. և ա՛զդ եղև Յովաբայ և ասեն. Եկն Աբեններ որդի Ներեայ առ Դաւիթ, և արձակեաց զնա՝ և զնաց

* Այլք. Սոքա ծնան, Դաւթի ՚ի Քերթոն:

* Այլք. Անուն էր Ռեսփա: *՚ի լուս՝*. Ռիսփա դուստր Յուդայ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*:

* Ոմանք. Շա՞ն գլուխ եմ ես:

* Այլք. Բառնալ զթագաւորութիւնն Սա՞:

* Ոմանք. Ընդ հարիւրոց անթլ՛:

* Յօրինակին պակասէր. Այր նորա *զհետ նորա* և լայր:

* Յօրինակին պակասէր. Եւ ժողովեցից *առ* տէր իմ:

խաղաղութեամբ: ²⁴Եւ եմուտ Յովաբ առ Դաւիթ արքայ և ասէ. Չի՞նչ գործեցեր զայդ, զի եկն Աբեններ առ քեզ. և ընդէ՞ր արծակեցեր զնա խաղաղութեամբ: ²⁵Եթէ ո՞չ գիտիցես զչարութիւն Աբեններեայ որդւոյ Ներեայ. զի խաբել զքեզ եկն, և իմանալ զմուտ և զել քո. և տեղեկանալ ամենայնի զինչ և գործիցես: ²⁶Եւ ել Յովաբ ՚ի Դաւթ, և արծակեաց հրեշտակս զկնի Աբեններեայ, և դարձուցին զնա ՚ի ջրհորոյ անտի Սէիրմայ. և Դաւիթ ո՞չ գիտէր: ²⁷Եւ դարձոյց զԱբեններ ՚ի Քերրոն. և խտտորեցոյց զնա Յովաբ ՚ի կողմանց դրանն խօսել ընդ նմա դաւաճանութեամբ. և եհար ընդ սնակուշտն և մեռաւ. վասն արեանն Ասայելի եղբոր Յովաբայ: ²⁸Եւ լուաւ Դաւիթ յետ այնորիկ և ասէ. Անպարտ եմ ես և թագաւորութիւն իմ ՚ի Տեառնէ մինչև ցյաւիտեան՝ յարենէն Աբեններեայ որդւոյ Ներեայ: ²⁹Չասցեն ՚ի գլուխ Յովաբայ և ՚ի վերայ ամենայն տան հօր նորա. և մի՛ պակասեսցէ ՚ի տանէն Յովաբայ սերմնակաթ, և բորոտ, և մուրօղ՝ որ շրջիցի ՚ի ցըպոյ, և սրամահ, և սովամահ: ³⁰Եւ Յովաբ և Աբեսա եղբայր նորա սպասէին Աբեններայ. փոխանակ զի սպան զեղբայր նոցա ՚ի Գաբաւոն ՚ի պատերազմին: ³¹Եւ ասէ Դաւիթ ցՅովաբ, և ցամենայն ժողովուրդն որ ընդ նմա. Պատառեցէք զհանդերձս ձեր, և զգեցարուք քուրձ. և կոծեցարուք առաջի Աբեններեայ: Եւ արքայ Դաւիթ երթայր զհետ դագաղացն. ³²և թաղեցին զԱբեններ ՚ի Քերրոն. և ամբարձ արքայ զձայն իւր և ելաց ՚ի վերայ գերեզմանի նորա. և ելաց ամենայն ժողովուրդն ՚ի վերայ Աբեններայ: ³³Եւ ա՛ռ ողբս արքայ ՚ի վերայ Աբեններայ, և ասէ. Մի թէ որպէս մեռանիցի՞ անզգամ, մեռաւ Աբեններ. եթէ ըստ մահուանն Նաբաղայ մեռաւ Աբեններ. ³⁴ձեռք քո ո՞չ կապեցան, և ոտք քո ո՞չ աղխեցան ՚ի շղթայս. և ո՞չ մատեար իբրև զՆաբաղ առաջի որդւոց անիրաւութեան և անկար. այլ որպէս անկանիցին առաջի անիրաւաց անկար: Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն լալ զնա*. ³⁵և եկն ամենայն ժողովուրդն տալ ընթրիս Դաւթ՝ մինչդեռ աւուր կայր: Եւ երդուաւ Դաւիթ և ասէ. Օ՛ն և օ՛ն արասցէ ինձ Աստուած՝ և օ՛ն և օ՛ն յաւելցէ, եթէ ո՞չ մտանիցէ արեգակն և ապա՛ ճաշակեցից հաց, և կամ զայլ ինչ ամենայն: ³⁶Եւ գիտաց ամենայն ժողովուրդն, և հաճոյ թուեցաւ առաջի նոցա ամենայն ինչ զոր արար արքայ առաջի ժողովրդեանն զբարութիւն: ³⁷Եւ գիտաց ամենայն ժողովուրդն և ամենայն Իսրայէլ յաւուր յայնմիկ՝ եթէ ո՞չ յարքայէ եղև սպանանել զԱբեններ որդի Ներեայ: ³⁸Եւ ասէ արքայ ցճառայսն իւր. Ո՞չ գիտէք եթէ առաջնորդ մե՛ծ անկաւ յաւուր յայսմիկ յԻսրայէլէ*. ³⁹և զի սա՛ ազգական է այսօր, և յարքայէ՛ կացուցեալ է. և արքդ այդոքիկ որդիք Շարուիեայ խստագոյնք քան զիս եմ. հատուցէ՛ Տէր չարին ըստ չարութեան իւրուն:

* Ոմանք. Արծակեցեր զնա, և զնաց խաղաղութեամբ:

* Ոսկան. ՚ի ջրհորոյ... Սէիրայ:

* Ոմանք. Սպան զԱսայել զեղբ՛:

* Ոմանք. Եւ ո՞չ մարտեար իբրև: *Ուր այս հատուած բանի.* Այլ որպէս անկանիցին առաջի անիրաւաց անկար. *պակասի առ Ոսկանայ համաձայն այլ միում զրջագրի. իսկ ՚ի մնացեալ չորս զրջագիրս յորս գտանի ՚ի բնաբանի միաձեռն գրեալ. ՚ի լուս՝ երկուց ՚ի նոցանէ նշանակի՛ սիմ. այսինքն է՝ ըստ Սիմաքոսի: Իսկ յօրինակի մերում յայսմ վայրի սկսեալ ՚ի 33 համարոյ. Եւ առ ողբս, մինչև ցայս բան, և ժողովեցան ամենայն, բովանդակ թուի քերեալ, և ՚ի նորոյ յարմարութեամբ գրեալ:*

* Ոմանք. Եւ ապա ճաշեցից հաց:

* Ոմանք. Անկաւ այսօր յԻսրայէլէ:

Գլուխ Դ

ԺԱ ¹Եւ լուա՛ն Յերուսթէ որդի Սաւուղայ եթէ մեռա՛ն Աբեններ ՚ի Քերրոն, լուծա՛ն ձեռք իւր. և ամենայն արք Իսրայէլի լքան: ²Եւ արք երկու գլխաւորք գնդիցն Յերուսթեայ որդւոյ Սաւուղայ, անուն միունն Բաանա, և անուն երկրորդին Ռիքաբ. որդիք Ռեմոնայ Բերովթացւոյ, յորդոցն Բենիամինի. զի և Բերովթ որդւոցն Բենիամինի ՚ի համարի՛ էր*: ³Եւ փախեան Բերովթացիքն ՚ի Գեթթայի. և էին անդ պանդխտացեալք մինչև ցայսօր: ⁴Եւ Յովնաթանու որդւոյ Սաւուղայ էր որդի մի հա՛շմ ոտիւք, որդի ամաց հնգից. և զնա ՚ի հասանել՝ գուժին Սաւուղայ և Յովնաթանու որդւոյ նորա, յեզրայելէ ա՛ն դայեակ իւր և փախեաւ. և եղև ընդ փութանա՛լն իւրում ՚ի գաղթել, անկաւ և կաղացաւ. և անուն նորա Մենփիբոսթէ*: ⁵Եւ գնացին որդիքն Ռեմոնայ Բերովթացւոյ՝ Ռեքաբ և Բաանա, և մտին ՚ի տօթաժամի՛ աւուրն ՚ի տուն Յերուսթեայ. և նա՛՝ ննջէր յանկողնի՛ ՚ի հասարակ աւուրն*. ⁶և բարապան տանն սրբէր ցորեան, և նիրհեաց և ՚ի քո՛ւն եմուտ. և Ռեքաբ և Բաանա եղբարք ղօղեցին, ⁷և մտին ՚ի տունն. և Յերուսթէ ննջէր ՚ի գահոյս իւրում ՚ի սենեկի. և հարի՛ն զնա և սպանին. և հատին զգլուխ նորա, և առին զգլուխն, և գնացին զճանապարհն արևելից զամենայն գիշերն. ⁸և բերին զգլուխն Յերուսթեայ առ Դաւիթ ՚ի Քերրոն. և ասեն ցարքայ. Ահա գլուխ Յերուսթեայ որդւոյ Սաւուղայ թշնամւոյ քոյ, որ խնդրէր զանձն քո. և Տէր ետ տեսա՞ն մերում արքայի վրէժխնդրութիւն ՚ի թշնամեաց իւրոց, որպէս յաւուր յայսմիկ ՚ի Սաւուղայ թշնամւոյ քումմէ՛ և ՚ի զաւակէ նորա: ⁹Եւ պատասխանի՛ ետ Դաւիթ Ռեքաբայ և Բաանայ եղբօր նորա՝ որդւոց Ռեմոնայ Բերովթացւոյ՝ և ասէ ցնոսա. Կենդանի՛ է Տէր որ փրկեաց զանձն իմ յամենայն նեղութենէ. ¹⁰զի որ պատմեաց ինձ թէ մեռաւ Սաւուղ, և նմա թուէր թէ աւետիս տայցէ առաջի իմ, կալա՛յ և սպանի՛ զնա ՚ի Սիկիլակ. որում օրէն էր ինձ տա՛լ աւետչեայ*: ¹¹Եւ արդ՝ ա՛րք չարք՝ սպանէք զայր արդար ՚ի տան իւրում յանկողնի. և արդ խնդրեցի՛ց զարիւն նորա ՚ի ձեռաց ձերոց, և սատակեցի՛ց զձեզ յերկրէ: ¹²Եւ հրաման ետ Դաւիթ մանկտւոյ իւրում, և սպանին զնոսա, և կտրեցին զձեռս և զոտս նոցա, և կախեցին ՚ի վերայ ջրղխին ՚ի Քերրոն. և զգլուխն Յերուսթեայ թաղեցին ՚ի գերեզմանի Աբեններեայ որդւոյ Ներեայ ՚ի Քերրոն:

Գլուխ Ե

ԺԲ ¹Եւ եկին ամենայն ցեղքն Իսրայէլի առ Դաւիթ ՚ի Քերրոն. խօսեցան և ասեն. Ահաւասիկ ոսկերք քո և մարմինք քո եմք: ²Եւ յերէկն և յեռանտ մինչ է՛ր Սաւուղ թագաւոր ՚ի վերայ մեր. դո՛ւ էիր որ մուծանէիր և հանէիր զԻսրայէլ. և ասա՛ց քեզ Տէր. Դո՛ւ հովուեսցես ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և դո՛ւ լիցիս յառաջնորդ ՚ի վերայ Իսրայէլի*: ³Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի առ արքայ ՚ի

* Ոմանք. Եւ արք երկու գլուխք գնդիցն Յե՛... Ռեքաբ... յորդւո՛ն:

* Այլք, ոմանք. Եւ եղև ՚ի փութալն. և ոմանք՝ ՚ի փախչելն իւրում ՚ի գաղթել:

* Ոմանք. Եւ մտին ՚ի տօթաժամի:

* Ոմանք. Զի որ պատմեացն ինձ եթէ... որում օրէնն էր ինձ:

* Ոմանք. Եւ ասէ քեզ Տէր. Դու... ժողովրդեան իմում Իսրայէլի:

Քեբրոն. և ուխտեաց ընդ նոսա ուխտ արքայ Դաւիթ ՚ի Քեբրոն առաջի Տեառն: Եւ օծին զԴաւիթ թագաւոր ՚ի վերայ ամենայն Իսրայէլի*: ⁴Որդի ամաց երեսնից Դաւիթ ՚ի թագաւորել իւրում. և քառասուն ան թագաւորեաց*: ⁵Եւթն ամ և վեց ամիս թագաւորեաց ՚ի Քեբրոն ՚ի վերայ Յուդայ. և երեսուն և երիս ամս թագաւորեաց ՚ի վերայ ամենայն Իսրայէլի և Յուդայ յերուսաղէմ:

ԺԳ ⁶Եւ չոգաւ Դաւիթ և արք նորա յերուսաղէմ առ Յեբուսացին բնակեալ յերկրին. և ասացաւ Դաւիթ՝ թէ ո՛չ մտցես դու այսր. քանզի ընդդէմ դարձան կոյրք և կաղք և ասեն. Սի՛ մտցէ այսր Դաւիթ: ⁷Եւ ա՛ռ Դաւիթ զՍիոն և զամրոց նորա. այն է քաղաք Դաւիթ: ⁸Եւ ասէ Դաւիթ յաւուր յայնմիկ. Ամենայն որ հարկանիցէ սրով զՅեբուսացին. և մատիցէ՛ սրով և ՚ի կաղս և ՚ի կոյրս և յատելիս անձին Դաւիթ. վասն այնորիկ ասեն. Կոյրք և կաղք մի՛ մտցեն ՚ի տուն Տեառն*: ⁹Եւ նստաւ Դաւիթ յամրոցին. և կոչեցաւ այն քաղաք Դաւիթ. և շինեաց զնա քաղաք Դաւիթ, շուրջանակի ծագէ ՚ի ծագ, և զտունն իւր: ¹⁰Եւ երթալով երթայր Դաւիթ և մեծանայր. և Տէր ամենակալ է՛ր ընդ նմա: ¹¹Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիրոսի հրեշտակս առ Դաւիթ, և փայտս եղևնեայ, և հիւսունս փայտից, և ճարտարապետս քարանց. և շինեցին տուն Դաւիթ*: ¹²Եւ գիտաց Դաւիթ եթէ հաստատեաց զնա Տէր թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի. և թէ բարձրացաւ թագաւորութիւն նորա վասն ժողովրդեան նորա Իսրայէլի: ¹³Եւ ա՛ռ ևս Դաւիթ կանայս և հարճս յերուսաղէմէ՛ յետ զնալոյ նորա ՚ի Քեբրոնէ. և եղեն Դաւիթ և այլ ևս ուստերք և դստերք*: ¹⁴Եւ այս են անուանք ծնելոց որդւոց նորա յերուսաղէմ. Սամաթ, Յեփթաթ, Նաթան, Գաղ՛ամաան*, ¹⁵Յեբաար, Թեմետուս, Էլփալատ, Նագեդ, Նափեկ*, ¹⁶Յեննաթա, Էղիսամիս, Բաղիգադ, Էղիփալէտ:

ԺԴ ¹⁷Եւ լուան այլազգիքն եթէ օծեալ է Դաւիթ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի, և ելին ամենայն այլազգիքն խնդրել զԴաւիթ: Եւ լուաւ Դաւիթ և էջ յամրոցն: ¹⁸Եւ այլազգիքն եկին հասին, և խառնեցան ՚ի հովիտս Տիտանացն*: ¹⁹Եւ եհարց Դաւիթ ՚ի Տեառնէ և ասէ. Եթէ ելի՞ց ՚ի վերայ այլազգեացն, և մատնեսցե՞ս զնոսա ՚ի ձեռս իմ: Եւ ասէ Տէր ցԴաւիթ. Ել. զի մատնելով մատնեցից զայլազգիսն ՚ի ձեռս քո: ²⁰Եւ եկն Դաւիթ ՚ի վերո՛ւստ խրամատիցն, և կոտորեաց անդ զայլազգիսն. և ասէ Դաւիթ. Տէր խրամատեաց զթշնամիս իմ առաջի իմ, որպէս խրամատիցին ջուրք. վասն այնորիկ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ ՚ի վերայ խրամատից: ²¹Եւ թողին անդ զաստուածս իւրեանց, և ա՛ռ զնոսա Դաւիթ և արքն որ ընդ նմա, և այրեցին զնոսա հրով*:

ԺԵ ²²Եւ յաւելին այլազգիքն մի՛ւս անգամ ելանել, և զումարեցան ՚ի հովիտս Տիտանացոց: ²³Եւ եհարց Դաւիթ ՚ի Տեառնէ և ասէ, եթէ ելի՞ց ՚ի վերայ այլազգեացն, և մատնեսցե՞ս զնոսա ՚ի ձեռս իմ: Եւ ասէ Տէր. Սի՛ ելաներ ընդդէմ նոցա, դարձիր ՚ի նոցանէն, և եկեսցես ՚ի թևէ նոցա մօտ ՚ի Լալօսնս. ²⁴և եղիցի

* Ոմանք. ՉԴաւիթ ՚ի թագաւոր ՚ի վերայ:

* Յօրինակին պակասէր. Ամաց երեսնից Դաւիթ ՚ի թա՛:

* Ոմանք. Որ հարկանիցէ զՅեբուսա՛... սրով ՚ի կաղսն և ՚ի կոյրս յատ՛:

* Ոմանք. Յրեշտակս առ Դաւիթ և փայտեղևնեայս:

* Այլք. Յետ զալոյ նորա ՚ի Քեբրոնէ:

* Ոմանք. Նաթան. և Գամաան:

* Ոմանք. Թեմետուս, Էղփաատ:

* Ամենայն օրինակք միաբան ունին. Եւ խառնեցան ՚ի հովի՛:

* Ոմանք. Եւ արք նորա ընդ նմա: Ուր առ բազումս պակասի. Որ ընդ նմա, և այրեցին զնոսա հրով:

յորժամ լսիցես զձայն շարժման անտառին Լալօնից՝ յայնժամ իջցես առ նոսա. քանզի յայնժամ ելցէ Տէր առաջի քո կոտորել՝ ի պատերազմի այլազգեացն: ²⁵Եւ արար Դաւիթ որպէս հրաման ետ նմա Տէր. և եհար զայլազգիսն ՚ի Գաբաւոնէ մինչև ցԳազերա*:

6

Գլուխ Զ

ԺԶ ¹Եւ ժողովեաց միւսանգամ Դաւիթ զամենայն երիտասարդս յիսրայէլէ իբրև իւթանասուն հազար: ²Եւ յարեաւ զնաց Դաւիթ՝ և ամենայն ժողովուրդ նորա ընդ նմա յիշխանացն Յուդայ՝ ՚ի զառիվերն ընդ որ ել տապանակն Աստուծոյ, յորոյ վերայ կոչեցաւ անուն Տեառն Աստուծոյ զօրութեանց, որ նստի ՚ի քերովբէս ՚ի վերայ նորա: ³Եւ եհան եղ զտապանակն Տեառն ՚ի վերայ սայլի նորոյ: ⁴Եւ աճ զնա ՚ի տանէ Ամինադաբայ բլրացոյ. և Ոզա՛ և եղբարք նորա որդիք Ամինադաբայ՝ վարէին զսայլն հանդերձ տապանակաւն, և եղբարք նորա երթային առաջի տապանակին: ⁵Եւ Դաւիթ և որդիքն Իսրայէլի խաղային առաջի տապանակին Տեառն՝ տաւղօք և նուագարանօք զօրութեանք, և երգովք, և քնարօք, և սրընգօք, և թմբկօք. և ծնծղայիւք, և փողովք*, ⁶և եկին մինչև ցկալն Ամինադաբայ: Եւ ձգեաց Ոզա զձեռն իւր ՚ի տապանակն Աստուծոյ ունել՝ զնա, և կալաւ զնա. զի թիրեաց զնա զուարակն յունելոյ՝ անտի զնա: ⁷Եւ բարկացաւ Տէր Ոզայ, և եհար զնա անդ Աստուած վասն յանդգնութեանն. և մեռաւ անդէն առ տապանակին Տեառն առաջի Աստուծոյ: ⁸Եւ տրտմեցաւ Դաւիթ՝ զի խրամատեաց Տէր խրամատութիւն յՈզա. և կոչեցաւ տեղին այն խրամատութիւն Ոզայ՝ մինչև ցայսօր*: ⁹Եւ երկեալ Դաւիթ ՚ի Տեառնէ յաւուր յայնմիկ և ասէ. Զիա՞րդ մտանիցէ առ իս տապանակդ Աստուծոյ: ¹⁰Եւ ո՛չ կամեցաւ Դաւիթ տանել առ ինքն զտապանակ ուխտին Տեառն ՚ի քաղաքն Դաւթի. և խտորեցոյ՛ց զնա Դաւիթ ՚ի տունն Աբեդոարայ Գեթացոյ*: ¹¹Եւ նստաւ տապանակն Տեառն ՚ի տան Աբեդոարայ Գեթացոյ ամիսս երիս: Եւ օրհնեաց Տէր զԱբեդոար և զամենայն տուն նորա: ¹²Եւ պատմեցին Դաւթի և ասեն. Օրհնեաց Տէր զտունն Աբեդոարայ՝ և զամենայն ինչ որ նորա վասն տապանակին Աստուծոյ*:

ԺԷ Եւ չոգաւ Դաւիթ և եհան զտապանակն Տեառն ՚ի տանէ Աբեդոարայ ՚ի քաղաք Դաւթի ուրախութեամբ: ¹³Եւ էին ընդ նմա որ բառնային զտապանակն՝ եւթն դաս պարուց, և սպանդ զուարակի և զառանց: ¹⁴Եւ Դաւիթ հարկանէր զտաւիդս նուագարանացն առաջի Տեառն. և էր Դաւիթ զգեցեալ պատմուճան հանդերձեալ*: ¹⁵Եւ Դաւիթ և ամենայն տունն Իսրայէլի հանին զտապանակն Տեառն հռչակաւ և ձայնի՛ւ փողոյ: ¹⁶Եւ եղև ՚ի հպել տապանակին ՚ի քաղաքն Դաւթի, և Մեղքող դուստր Սաւուղայ հայէր ընդ պատուհանն. և ետես զԴաւիթ արքայ զի կաքաւէր՝ և նուագէր զնուագարանսն առաջի Տեառն, անգոսնեաց

* *Բազումք.* Որպէս և հրաման ետ:

* *Ոմանք.* Խաղային առաջի Տեառն տաւղօք... և սրնկօք և քնարաւ:

* *Ոմանք.* Խրամատեաց Տէր ՚ի խրամատութիւն յՈզայ մինչև:

* *Ի լուս՝.* Աբեդոարայ Ղևտացոյ:

* *Ոմանք.* Եւ զամենայն ինչ նորա վասն տա՛:

* *Ի լուս՝.* Պատմուճան բեհեզեայ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

զնա՝ի սրտի իւրում: ¹⁷Եւ բերին՝ զտապանակն Տեառն, և եդին զնա՝ի տեղոջ իւրում՝ ի մէջ խորանին՝ զոր եհար նմա Դաւիթ: Եւ մատոյց Դաւիթ ողջակէ՛զս առաջի Տեառն՝ և խաղաղականս: ¹⁸Եւ իբրև կատարեաց Դաւիթ մատուցանել զողջակէզսն և զխաղաղականս, օրհնեաց՝ զժողովուրդն յանուն Տեառն զօրութեանց: ¹⁹Եւ բաշխեաց՝ ամենայն ժողովրդեանն, յամենայն զօրութեան Իսրայէլի՝ ի Դանայ մինչև ցԲերսաբէէ՛, յառնէ՛ մինչև ցկին, իւրաքանչի՛ւր ումեք բլիթ մի հացի, և պատառ մի՝ ի կասկարայից, և քաքար մի՝ ի տապակէ. և զնաց ամենայն ժողովուրդն իւրաքանչի՛ւրոք՝ ի տուն իւր՝: ²⁰Եւ դարձաւ Դաւիթ օրհնել զտուն իւր. և ել Մեղքող՝ դուստր Սաւուղայ ընդ առաջ Դաւթի, և օրհնեաց զնա և ասէ. Քանի՞՞ փառաւորեալ էր այսօր արքայ Իսրայէլի, որ հոլանեցաւ այսօր առաջի աղախնանց և ծառայից իւրոց, զոր օրինակ հոլանիցի՝ հոլանելով մի ոք՝ ի կաքաւչաց: ²¹Եւ ասէ Դաւիթ ցՄեղքող. Առաջի Տեառն կաքաւեցից. օրհնեալ է Տէր Աստուած, որ ընտրեաց զիս քան զհայր քո, և քան զամենայն տուն նորա. և կացոյց զիս քան զհայր քո և քան զամենայն տուն նորա. և կացոյց զի առաջնորդ՝ ի վերայ ժողովրդեան իւրոյ Իսրայէլի՞: ²²Եւ խաղացից և կաքաւեցից առաջի Տեառն, և հոլանեցայց սոյնպէս նս քան զևս. և եղեց անպիտան՝ յաչս քո. և ընդ աղախնայս ընդ որս ասացեր փառաւորել՝ փառաւորեցայց՝: ²³Եւ Մեղքողայ դստեր՝ Սաւուղայ ո՛չ եղև որդի մինչև ցօր մահուան իւրոյ:

7

Գլուխ Է

ԺԸ ¹Եւ եղև յորժամ նստաւ Դաւիթ ՚ի տան իւրում. և Տէր հանգոյց նմա յամենայն թշնամեաց իւրոց շուրջանակի՞: ²Եւ ասէ արքայ ցՆաթան մարգարէ. Ահաւասիկ ես բնակեալ եմ ՚ի տան եղևնափայտից, և տապանակն Աստուծոյ շրջիցի ՚ի մէջ խորանի՞: ³Եւ ասէ Նաթան ցարքայ. Չամենայն որ ինչ իցէ ՚ի սրտի քում, երթ և արա. զի Տէր ընդ քեզ է:

ԺԹ ⁴Եւ եղև ՚ի գիշերին յայնմիկ. եղև բան Տեառն առ Նաթան և ասէ. ⁵Երթ և ասա՝ ցճառայ իմ Դաւիթ. Այսպէս ասէ Տէր. Ո՛չ շինեսցես դու ինձ տուն բնակելոյ. ⁶զի ո՛չ բնակեցայ ՚ի տան՝ յօրէ յօրմէ հետէ հանի զորդիսն Իսրայէլի յեգիպտոսէ մինչև ցայս օր. և շրջէի յիջաւանի խորանաւ՝, ⁷ամենայն ուրեք ուր շրջէի ՚ի մէջ ամենայն Իսրայէլի, եթէ խօսելով խօսեցա՞յ երբէք ընդ միում ցեղի Իսրայէլի՝ ում և հրաման ետու հովուել՝ զժողովուրդ իմ զԻսրայէլ, ասել թէ ընդէ՞ր ո՛չ շինեցէք ինձ տուն եղևնափայտեայ՝: ⁸Եւ արդ՝ այսպէս ասացես ցճառայ իմ Դաւիթ. Այսպէս ասէ Տէր ամենակալ. Առի՛ ես զքեզ ՚ի վանաց հօտից, լինել քեզ

* Ոմանք. Յամենայն զօրութեանն Իսրայէլի: Այլք. Բլիթ մի հացի, և պա՞:

* Յոմանս պակասի այս կրկնութիւն բանի. Եւ կացոյց զիս քան զհայր քո և քան զամենայն տուն նորա:

* Ոմանք. Եւ հոլանեցայց նոյնպէս նս:

* Ոսկան. Յանգոյց զնա: Ուր ոմանք ՚ի բնաբանի եղեալ. Եւ Տէր ժառանգեցոյց նմա, ՚ի լուսանցսն նշանակեն՝ հանգոյց՝ և ծառայեցոյց:

* Ոմանք. Եւ տապանակն Աստուծոյ նստիցի ՚ի մէջ խո՞:

* Այլք. Եւ շրջէի յիջավանի:

* Ոմանք. Որում և հրաման ե՞:

յառաջնորդ՝ ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. ⁹և էի ընդ քեզ ամենայն ուրեք ուր և երթայիր. և սատակեցի զամենայն թշնամիս քո յերեսաց քոց. և արարի զքեզ անուանի՝ ըստ անուանց մեծամեծաց որ ՚ի վերայ երկրի*։ ¹⁰Եւ եղից տեղի ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և տնկեցի՛ց զնա. և բնակեսցէ՛ առանձինն. և մի՛ ևս հոգասցի, և ո՛չ ևս յաւելցէ որդի անօրէնութեան լլկել՛ զնա իբրև զառաջինն*։ ¹¹Եւ յաւուրցն յորոց կարգեցի դատաւորս ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և հանգուցի՛ց զքեզ յամենայն թշնամեաց քոց. և պատմեսցէ՛ քեզ Տէր զի շինեսցես նմա տուն։ ¹²Եւ եղիցի եթ լցցին աւուրք քո, և ննջեսցես ընդ հարս քո, յարուցի՛ց զգաւակ քո յե՛տ քո, որ եղիցի յորովայնէ քումմէ. և պատրաստեցից զարքայութիւն քո նմա՛. ¹³և նա՛ շինեսցէ տուն անուան իմոյ. և կանգնեցի՛ց զաթոռ նորա մինչև ցյաւիտեան։ ¹⁴Եւ եղէց նմա ՚ի հայր, և նա եղիցի ինձ յորդի. և եթէ եկեսցէ անիրաւութիւն նորա՝ յանդիմանեցի՛ց զնա, և խրատեցից զնա գաւազանաւ արանց, և տանջանօք որդւոց մարդկան. ¹⁵բայց զողորմութիւն ո՛չ մերժեցից ՚ի նմանէ, որպէս մերժեցի՛ յորոց մերժեցին առաջի երեսաց իմոց*։ ¹⁶Հաւատարիմ լիցի անուն նորա, և արքայութիւն նորա առաջի իմ մինչև ցյաւիտեան. և աթոռ նորա կացցէ՛ կանգուն առաջի իմ մինչև ցյաւիտեան։ ¹⁷Ըստ ամենայն բանիցս այսոցիկ, և ըստ ամենայն տեսլեանս այսորիկ, սո՛յնպէս խօսեցաւ Նաթան ընդ Դաւիթայ՝։

Ի ¹⁸Եւ եմո՛ւտ արքայ Դաւիթ և նստաւ առաջի Տեառն, և ասէ. Ո՞վ եմ ես Տէր իմ Տէր. և ո՞ տուն իմ, զի սիրեցեր զիս մինչև ցա՛յդ վայր. ¹⁹և ո՛չ փոքրկացայ սակաւիկ ինչ առաջի քո Տէր իմ Տէր. և խօսեցար վասն տան ծառայի քո յերկար. և այս է օրէն մարդոյ Տէր իմ Տէր։ ²⁰Եւ զի՞ ևս յաւելուցու Դաւիթ խօսել առ քեզ. և դու ինքնին գիտես զծառայ քո Տէր իմ Տէր։ ²¹Վասն ծառայի քո արարեր, և ըստ ամենայն սրտի քո արարեր զամենայն զմեծութիւնս զայս ծանուցանել ծառայի՛ քում, ²²վասն մեծացուցանելոյ զիս Տէր իմ Տէր։ Զի չի՞ք որ իբրև զքեզ, և չի՞ք Աստուած բաց ՚ի քէն ՚ի վերայ ամենայնի զոր լուք ակնջօք մերովք։ ²³Եւ ո՞վ է ազգ ՚ի վերայ երկրի իբրև զժողովուրդ քո զԻսրայէլ. որուն առաջնորդեաց Աստուած, փրկել իւր ժողովուրդ. դնել քեզ անուն, և առնել քեզ մեծութիւն և յայտնութիւն. մերժել քեզ յերեսաց ժողովրդեան քոյ զոր փրկեցեր դու քեզ յեգիպտոսէ, զա՛զգս և զբնակութիւնս. ²⁴և պատրաստեցեր դու քեզ զժողովուրդ քո զԻսրայէլ ՚ի ժողովուրդ մինչև ցյաւիտեան. և դո՛ւ Տէր՝ եղեր նոցա յԱստուած*։ ²⁵Եւ արդ՝ Տէր իմ, զբանն զոր խօսեցար վասն ծառայի քոյ և տան նորա, հաւատարմացո՛ մինչև յաւիտեան. և արա՛ որպէս և խօսեցար*։ ²⁶և մեծասցի անուն քո մինչև ցյաւիտեան։ Եւ արդ՝ Տէր ամենակալ, Աստուած ՚ի վերայ ամենայն Իսրայէլի. տուն ծառայի քոյ Դաւիթ եղիցի կանգուն առաջի քո. ²⁷զի դո՛ւ ես Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի։

ԻՎ Եւ արդ որպէս խօսեցար մեծասցի՛ անուն քո մինչև ցյաւիտեան՝ ասէ Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի. յայտնեցեր յունկն ծառայի քոյ և ասացեր, շինեցից քեզ տուն. վասն այնորիկ եգիտ ծառայ քո զսիրտ իւր՝ կալ առ քեզ

* *Յօրինակին*. Յերեսաց քո։

* *Ոմանք*. Որդի անիրաւութեան լլկել։

* *Ոմանք*. Բայց զողորմութիւն իմ ոչ... որ մերժեցի յորոց մերժե՛։ *Ուր օրինակ մի*. Որպէս մերժեցի որ ո՛չ մերժեցին առաջի ե՛։

* *Ոմանք*. Նաթան ընդ Դաւիթ։

* *Ոմանք*. Եւ դու Տէր եղեր նոցա Աստուած։

* *Ոմանք*. Հաւատարմացո՛ մինչև ցյաւիտեան։

յաղօթս զաղօթս զայսոսիկ*։ ²⁸Եւ արդ Տէր իմ Տէր, դո՛ւ ես Աստուած. և բանք քո եղիցին ճշմարիտ, և զոր խօսեցար վասն ծառայի քոյ զամենայն բարութիւնս զայս. ²⁹և արդ սկսի՛ր օրհնել զտուն ծառայի քո լինել առաջի քո յաւիտեան, զի դո՛ւ Տէր իմ Տէր խօսեցար. և յօրհնութենէ քունմէ օրհնեսցի՛ տուն ծառայի քոյ յաւիտեան:

8

Գլուխ Ը

ԻԲ ¹Եւ եղև յետ այսորիկ եհա՛ր Դաւիթ զայլազգիսն և վանեա՛ց զնոսա, և ա՛ռ Դաւիթ զզատուցեալսն ՚ի ձեռաց այլազգեացն: ²Եւ եհա՛ր Դաւիթ զՄովաբ. և չափեա՛ց զնոսա պարանօք, և գառացոյց զնոսա յերկիր. և եղեն երկու պարանքն սպանանելոյ, և երկու պարանքն ապրեցուցանելոյ. և եղև Մովաբ Դաւթի ՚ի ծառայս պատարագաբերս*։ ³Եւ եհար Դաւիթ զԱդրաազար զորդի Ռովամայ՝ զարքայ՝ Սուբայ, յերթա՛լ նորա արկանել զձեռն իւր ՚ի վերայ գետոյն Եփրատայ. ⁴և ա՛ռ զնորա Դաւիթ հազար կառս, և եւթն հազար հեծելոց, և քսան հազար հետևակաց. և քակեաց Դաւիթ զամենայն կառսն, և եթող իւր ՚ի նոցանէ հարիւր կառս: ⁵Եւ գա՛յր Ասորին ՚ի Դամասկոսէ օգնել Ադրաազարայ արքայի Սուբայ. և եհար Դաւիթ յԱսորւոցն քսան և երկու հազարս արանց. ⁶և եդ Դաւիթ պահակս յԱսորիս հանդէպ Դամասկոսի. և եղեն Ասորիք Դաւթի ՚ի ծառայս պատարագաբերս. և փրկեաց Տէր զԴաւիթ ամենայն ուրեք ուր և երթայր: ⁷Եւ ա՛ռ Դաւիթ զապարանջանսն ոսկիս որ էին ՚ի ծառայսն Ադրաազարո՛ւ արքայի Սուբայ՝ և եբէր յերուսաղէմ: Եւ ա՛ռ զայն Սաւսակիմ արքայ Եգիպտացւոց յելանել իւրում յերուսաղէմ յաւուրս Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի: ⁸Եւ ՚ի Մասբակայ ա՛ռ արքայ Դաւիթ յընտիր ընտիր քաղաքաց Ադրաազարայ պղինձ, որով արար Սողոմոն զծովն պղնձի, և զսիւնսն, և զաւազանսն, և զամենայն կահն:

ԻԳ ⁹Եւ լուաւ թովու արքայ Էմաթայ, եթէ եհա՛ր Դաւիթ զամենայն զօրն Ադրաազարայ*. ¹⁰և առաքեաց թովու գեղդուրա զորդի իւր առ արքայ Դաւիթ՝ հարցանել զխաղաղութենէ նորա. և օրհնեաց զնա՝ փոխանակ զի սատակեաց զԱդրաազար. զի այր՝ զո՛ռ պատերազմաւ էր նա ընդ թովայ, և հակառակ կայր նմա Ադրաազար. և ՚ի ձեռս նորա էին անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք, և անօթք պղնձիք: ¹¹Եւ սրբեաց զայն արքայ Դաւիթ Տեառն ընդ արծաթոյն և ընդ ոսկւոյն, զոր սրբեաց յամենայն պատերազմաց որոց յաղթեաց*. ¹²Եղովմայ, և ՚ի Մովաբայ, և յորդւոցն Ամոնայ, և յայլազգեացն, և յԱմաղեկայ, և յաւարէ Ադրաազարայ որդւոյ Ռովբայ արքայի Սուբայ. ¹³և արար Դաւիթ անուն: Եւ ՚ի դառնալ իւրում եհա՛ր Դաւիթ զԱսորիս ՚ի Գաբել՝ եմ յութուտա՛սն հազար*: ¹⁴Եւ եդ յեղոմ պահակապանս յամենայն Եդովմայեցիս, և եղեն ամենայն Եդովմայեցիք ծառայք արքայի:

* *Ոմանք.* Մեծասցի տուն քո մինչև յաւ՛:

* *Օրհնակ մի.* Եւ չափեաց զնոսա պարանօք, հաւասարեաց գետնին. և գառացոյց զնոսա յերկիր:

* *Ոմանք.* Եւ լուաւ թովուս արքայ Ե՛:

* *Յօրինակին պակասէր.* Սրբեաց զայն *արքայ* Դաւիթ:

* *Ոմանք.* ՁԱսորիս ՚ի Գաբբիղէմ:

Ի Դ Եւ փրկեաց Տէր գԴաւիթ ամենայն ուրեք ուր և երթայր: ¹⁵Եւ թագաւորեցոյց գԴաւիթ ՚ի վերայ ամենայն Իսրայէլի. և առնէր Դաւիթ իրաւունս և արդարութիւն ՚ի վերայ ամենայն ժողովրդեան իւրոյ: ¹⁶Եւ Յովաբ՝ որդի Շարուիեայ էր ՚ի վերայ զօրուն. և Յովսափատ որդի Աքիայ ՚ի վերայ յիշատակաց. ¹⁷և Սադովկ՝ որդի Աքիտովբայ, և Աքիմելէք որդի Աքիաթարայ քահանայք. և Ասա՝ դպրապետ. ¹⁸և Բանեա որդի Յովիդայեայ՝ խորհրդակից. և Քերեթին, և Ոփելեթին. և որդիք Դաւթի խոռապետք էին*:

9

Գլուխ Թ

¹Եւ ասէ Դաւիթ. Եթէ իցէ՞ որ մնացեալ ՚ի տանէն Սաւուղայ, և արարից ընդ նմա ողորմութիւն վասն Յովնաթանու*: ²Եւ ՚ի տանէն Սաւուղայ էր մանուկ մի. և անուն նորա Սիբա. և կոչեցին զնա առ Դաւիթ, և ասէ ցնա արքայ. Եթէ դո՞ւ իցես Սիբայն: Եւ ասէ. Ե՛ս եմ ծառայ քո: ³Եւ ասէ արքայ. Եթէ իցէ՞ որ մնացեալ ՚ի տանէ Սաւուղայ՝ և արարից ընդ նմա ողորմութիւն Աստուծոյ: Եւ ասէ Սիբա ցարքայ. Է՛ որդի մի Յովնաթանու հա՛շմ ոտիւք: ⁴Եւ ասէ արքայ. Ո՞ւր է նա: Եւ ասէ Սիբա ցարքայ. Ահա է՛ ՚ի տան Մաքիրայ որդւոյ Ամիելի Լադաբարացոյ*: ⁵Եւ առաքեաց արքայ Դաւիթ և ա՛ռ զնա ՚ի տանէ Մաքիրայ որդւոյ Ամիելի Դադաբարացոյ: ⁶Եւ եկն Մենփիբոսթ որդի Յովնաթանու որդւոյ Սաւուղայ առ արքայ Դաւիթ, և անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց՝ և երկի՛ր եպագ նմա: Եւ ասէ ցնա Դաւիթ. Մենփիբոսթ՞: Եւ ասէ. Աւասիկ եմ ծառայ քո: ⁷Եւ ասէ ցնա Դաւիթ. Մի՛ երկնչիր, զի առնելով արարի՛ց ընդ քեզ զողորմութիւն վասն Յովնաթանու հօր քոյ. և դարձուցից քեզ զամենայն անդս Սաւուղայ զհօր՝ հօր քոյ. և դու՛ ուտիցես հա՛ց հանապազ ՚ի սեղան իմում*: ⁸Եւ երկի՛ր եպագ Մենփիբոսթ և ասէ. Ո՞վ է ծառայ քո՝ զի հայեցար ՚ի շո՛ւն մի մեռեալ նմանօղ ինձ: ⁹Եւ կոչեաց արքայ զՍիբա զծառայ Սաւուղայ՝ և ասէ ցնա. Ջամենայն ինչ որ է՛ Սաւուղայ, և զամենայն որ տան նորա, ետո՛ւ որդւոյ տեառն քոյ. ¹⁰և գործեսցես դմա զերկիրն, դո՛ւ և որդիք քո, և ծառայք քո. և մուծցես ՚ի տուն տեառն քո հա՛ց, և կերիցեն զայն. և Մենփիբոսթ՝ որդի տեառն քոյ՝ կերիցէ հաց հանապազ ՚ի սեղան իմում: Եւ Սիբայի էին որդիք հնգետասան, և ծառայք քսան: ¹¹Եւ ասէ Սիբա ցարքայ. Ըստ ամենայնի զոր հրաման ետ տէր իմ արքայ ծառայի իւրում, այնպէս արասցէ ծառայ քո: Եւ Մենփիբոսթ ուտէ՛ր հաց ՚ի սեղանոյ Դաւթի՝ իբրև զմի յորդուցն արքայի: ¹²Եւ Մենփիբոսթայ էր որդի մի փոքրիկ, և անուն նորա Միբա. և ամենայն բնակութիւն տանն Սիբայի՝ ծառայք Մենփիբոսթայ: ¹³Եւ Մենփիբոսթ բնակէր յերուսաղէմ. զի հանապազ ՚ի սեղանոյ արքայի ուտէր. և ինքն էր կա՛ղ յերկուց ոտից իւրոց*:

10

*Ի լուս՞. ՚ի վերայ՝ Քերեթին և Ոփելեթին, *նշանակի՝* աղեղնաւորք և պարսաւորք:

*Յայլս պակասի. Եւ արարից... (3) և արարից:

*Ոսկան. Ամիելիւ Դաբարացոյ:

*Ի լուս՞. Քեզ զամենայն ինչս Սաւուղայ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:*

*Այլք. Յերկոցունց ոտից իւրոց:

Գլուխ Ժ

Ի՛նչ ¹Եւ եղև յետ այնորիկ՝ և մեռա՛ւ արքայ որդւոցն Ամոնայ, և թագաւորեաց Ամոն որդի նորա ընդ նորա*։ ²Եւ ասէ Դաւիթ. Արասցո՛ւք ողորմութիւն ընդ Ամոնայ որդւոյ Նասայ՝ զոր օրինակ արար հա՛յր նորա ընդ իս ողորմութիւն։ Եւ առաքեաց Դաւիթ մխիթարել զնա՝ ՚ի ձեռն ծառայից իւրոց վասն հօր իւրոյ. և չոգան ծառայքն Դաւթի յերկի՛ր որդւոցն Ամոնայ։ ³Եւ ասեն իշխանք որդւոցն Ամոնայ ցԱմոն տէրն իւրեանց. Միթէ փառաւորե՞լ ինչ զհայր քո առաջի քո առաքեաց առ քեզ Դաւիթ մխիթարիչս. ո՛չ, այլ զի որոնեացեն զքաղաքս, և դիտեցեն զսա. և լրտեսել զսա առաքեաց Դաւիթ զծառայս իւր առ քեզ։ ⁴Եւ կալա՛ւ զծառայսն Դաւթի, և եգե՛րծ զմօրուս նոցա, և կտրեա՛ց զգրաստս նոցա ՚ի միջոյ մինչև ցեզր, և արձակեա՛ց զնոսա*։ ⁵Եւ պատմեցին Դաւթի վասն արանցն. և առաքեաց Դաւիթ ընդ առաջ նոցա զի էին արքն անարգեալք յոյժ. և ասէ արքայ. Նստարո՛ւք յերիքով մինչև աճեսցեն մօրուք ձեր, և ապա՝ դարձջիք։ ⁶Եւ տեսին որդիքն Ամոնայ եթէ ամօ՞թ արարին ժողովրդեանն Դաւթի, առաքեցին որդիքն Ամոնայ՝ և ՚ի վարձո՛ւ կալան զԱսորիս Ռովբայ, և զԱսորիս Սուբայ՝ քսան հազար հետևակաց, և զարքայն Ամադեկայ հազար արամբք, և ՚ի Ստովբայ երկոտասան հազար արանց*։

Ի՛նչ ⁷Լուա՛ւ արքայ Դաւիթ, և առաքեաց զՅովաբ և զամենայն զօրն զօրաւոր։ ⁸Եւ ելին որդիքն Ամոնայ և ճակատեցան ՚ի պատերազմ առ դրան քաղաքին Ասորուց Սուբայ, և Ռովբ և Ստովբ՝ և Ամադէկ էին միայն յանդին։ ⁹Եւ ետես Յովաբ՝ եթէ եկին հասին ՚ի վերայ նորա առաջոյ և զկնի, ընտրեաց յամենայն երիտասարդաց Իսրայէլի, և ճակատեցոյց ընդդէմ Ասորուց. ¹⁰և զմնացորդս զօրուն ետ ՚ի ձեռս Աբեսայ եղբօր իւրոյ, և ճակատեցան ընդդէմ որդւոցն Ամոնայ։ ¹¹Եւ ասէ. Եթէ յաղթահարեսցեն զիս Ասորիքն, եղիջի՞ք ինձ ՚ի փրկութիւն. և եթէ որդիքն Ամոնայ յաղթահարեսցեն զքեզ՝ եղիցուք ապրեցուցանել զքեզ. ¹²քաջ լեր՝ և ժրասցո՛ւք ՚ի վերայ ժողովրդեան մերոյ՝ և ՚ի վերայ քաղաքաց Աստուծոյ մերոյ. և Տէր արասցէ զհաճոյն առաջի աչաց իւրոց։ ¹³Եւ մատեաւ Յովաբ և զօրն որ ընդ նմա ՚ի պատերազմ ընդ Ասորին. և փախեան Ասորիքն յերեսաց նորա*։ ¹⁴Եւ որդիքն Ամոնայ իբրև տեսին եթէ փախեան Ասորիքն, փախեան և նոքա յերեսաց Աբեսայ, և մտին ՚ի քաղաքն. և դարձաւ Յովաբ յորդւոցն Ամոնայ՝ և եկն յերուսաղէմ։

Ի՛նչ ¹⁵Իբրև ետես Ասորին եթէ պարտեցա՛ւ առաջի Իսրայէլի, գումարեցան ՚ի միասին։ ¹⁶Եւ առաքեաց Ադրաազար և ժողովեաց զԱսորիսն յայնմ կողմանէ Գետոյն ՚ի Քաղամակ. և եկին հասին՝ Ելամ և Սովբակ իշխանք զօրացն Ադրաազարայ յառա՛ջ քան զնա*։ ¹⁷Եւ ա՛զդ եղև Դաւթի. և ժողովեաց զամենայն Իսրայէլ և անց ընդ Յորդանան, և եհաս ՚ի Քաղամակ. և ճակատեցան Ասորիքն ընդդէմ Դաւթի տա՛լ ընդ նմա պատերազմ, ¹⁸և փախեան Ասորիքն յերեսաց Իսրայէլի։ Եւ կոտորեաց Դաւիթ յԱսորուցն եւթն հարիւր կառս, և քառասուն հազար հեծելոց, և զՍովբակ իշխան զօրուն նորա եհար, և մեռա՛ւ անդէն։ ¹⁹Իբրև տեսին ամենայն թագաւորք ծառայք Ադրաազարու՝ թէ պարտեցան

* Ի լուս՝. Եւ թագաւորեաց Ամոն որդի նորա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*։

* Երկու օրինակք և եթ ընդ Ոսկանայ դնեն. Եւ կտրեաց զգրատս նոցա։ *Իսկ այլ երեք ունին համեմատ մերումս՝* զգրատս։

* Ոսկան. Եւ ՚ի Իստովբայ... (8) և Իստովբ։

* Ոմանք. Եւ մարտեաւ Յովաբ։ *Այլք.* ՚ի պատերազմ ընդ Ասորիսն։

* Ոմանք. Յառաջ քան զնոսա։

առաջի Իսրայելի, անձնատուրք եղեն. և ուխտեցին ուխտ ընդ Իսրայելի, և ծառայեցին նոցա. և երկեան Ասորիքն այնուհետև ապրեցուցանել զորդիսն Ամոնայ:

11

Գլուխ ԺԱ

¹Եւ եղև ՚ի դառնալ տարւոյն ՚ի նոյն ժամանակ ելից թագաւորացն. և առաքեաց Դաւիթ զՅովաբ և զծառայս իւր ընդ նմա, և զամենայն Իսրայել. և սատակեցին զորդիսն Ամոնայ, և նստան զՌաբաթաւ. և Դաւիթ նստէր յերուսաղէմ:

ԻԸ ²Եւ եղև ընդ երեկս և յարեաւ Դաւիթ յանկողնէ իւրմէ, և զգնայր ՚ի վերայ տանեաց տան թագաւորին. և ետես ՚ի տանեացն կին մի լուացեալ, և կինն գեղեցիկ տեսլեամբ յոյժ*: ³Եւ առաքեաց Դաւիթ և խնդրեաց զկինն, և ասէ. Ո՞չ դա՛ է Բերսաբէ՛ դուստր եղիաբայ՝ կին Ուրիայ Քետացոյ: ⁴Եւ առաքեաց Դաւիթ հրեշտակս և ա՛ռ զնա, և եմո՛ւտ առ նա, և ննջեաց ընդ նմա. և նա էր սրբեալ ՚ի դաշտանէ իւրմէ. ⁵և դարձաւ ՚ի տուն իւր, և յղացաւ կինն, և առաքեաց պատմեաց Դաւթի՝ և ասէ. Յի՛ եմ ես*: ⁶Եւ առաքեաց Դաւիթ առ Յովաբ՝ և ասէ. Առաքեա՛ առ իս զՈւրիա Քետացի: Եւ առաքեաց Յովաբ զՈւրիա առ Դաւիթ: ⁷Եւ եկեալ Ուրիա եմուտ առ Դաւիթ. և եհարց Դաւիթ զողջունէ Յովաբայ, և զողջունէ զօրուն, և զողջունէ պատերազմին. և ասէ Ուրիա. Ողջոյն է: ⁸Եւ ասէ Դաւիթ ցՈւրիա. Արի՛ էջ ՚ի տուն քո և լուա՛ զոտս: Եւ ել Ուրիա ՚ի տանէ արքայի. և ել զկնի նորա պարգև՝ ՚ի ձեռանէ արքայի: ⁹Եւ ննջեաց Ուրիա առ դրանն արքայի ընդ ծառայսն նորա, և ո՛չ էջ ՚ի տուն իւր*: ¹⁰Եւ պատմեցին Դաւթի և ասեն, եթէ ո՛չ էջ Ուրիա ՚ի տուն իւր: Եւ ասէ Դաւիթ ցՈւրիա. Ո՞չ ՚ի ճանապարհէ եկեալ ես դու՛ ընդէ՞ր ո՛չ իջեր ՚ի տուն քո*: ¹¹Եւ ասէ Ուրիա ցԴաւիթ. Տապանակն Աստուծոյ և Իսրայել և Յուդա բնակեալ են ՚ի վրանս. և տէր իմ Յովաբ և ծառայք տեառն իմոյ՝ բնակեալ են ՚ի բացի՞, և ես մտանիցեմ ՚ի տո՞ւն իմ, ուտել և ըմպել և ննջել ընդ կնոջ իմունմ. և զիա՞րդ լինիցի այն. կենդանի՛ է անձն քո թէ արարից զբանդ զայդ*: ¹²Եւ ասէ Դաւիթ ցՈւրիա. Նիստ այսօր աստ, և վաղիւ արձակեցից զքեզ: Եւ նստան Ուրիա յերուսաղէմ յաւուր յայնմիկ. ¹³և ՚ի վաղիւ անդր կոչեաց զնա Դաւիթ. եկեր առաջի նորա՛ և արբ, և արբեցաւ. և ել անագանին՝ ննջեաց յանկողնի իւրունմ ընդ ծառայս տեառն իւրոյ, և ՚ի տուն իւր ո՛չ էջ:

ԻԹ ¹⁴Եւ եղև ընդ առաւօտն, և գրեաց Դաւիթ հրովարտակ առ Յովաբ, և առաքեաց Դաւիթ ՚ի ձեռն Ուրիայ. ¹⁵և գրեաց ՚ի հրովարտակին՝ և ասէ. Մատո՛ զՈւրիա ընդդէմ սաստկացեալ պատերազմին, և դարձջիք ընդ կրուկ ՚ի նմանէ, և հարցի և մեռցի*: ¹⁶Եւ եղև ՚ի պահել Յովաբայ զքաղաքն. և ետ զՈւրիա ՚ի

* Ոմանք. Եւ կինն գեղեցիկ էր տեսլեամբ:

* Ոսկան. Եւ առաքեալ պատմեաց:

* Այլք. Առ դրան տանն արքայի:

* Ոմանք. Ընդէր ո՛չ իջեր դու ՚ի տուն:

* Ի լուս՝. Բանակեալ են ՚ի բացի: Ոմանք. Տապանակն Տեառն և Իսրայել... և ննջել ընդ կնոջ իւրունմ... եթէ արարից:

* Ոմանք. Ընդ կրունկն ՚ի նմանէ:

տեղին՝ ուր գիտէր թէ արք զօրութեան էին անդ*։ ¹⁷Եւ ելին արք քաղաքին՝ ի պատերազմ ընդ Յովաբայ, և անկան ՚ի զօրուէ ծառայիցն Դաւթի՝ և մեռան, և Ուրիա Քետացի մեռաւ*։ ¹⁸Եւ առաքեաց Յովաբ և պատմեաց արքայի զամենայն զրոյց պատերազմին։ ¹⁹Ա պատուէր ետ հրեշտակին և աստ. ՚ի վախճանել քում զամենայն զրոյցս պատերազմիս խօսել ընդ արքայի, ²⁰և եղիցի եթէ ելցէ ցասունն արքայի, և ասասցէ ցթեզ՝ եթէ ընդէ՞ր մերձենայիք ՚ի քաղաքն մարտնչել. և ո՞չ գիտէիք եթէ ՚ի վերուստ ՚ի պարսպացն նետաձիգ լինին*։ ²¹Ո՞ եհար զԱբիմելէք զորդի Յերոբովադայ՝ որդւոյ Ներեայ. ո՞չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ՚ի վերայ նորա ՚ի վերուստ ՚ի պարսպէն, և մեռաւ ՚ի Թամասի. ընդէ՞ր մօտեցայք ՚ի պարիսպն. և ասասցես թէ և ծառայ՝ քո Ուրիա Քետացի մեռաւ*։ ²²Եւ չոգաւ հրեշտակն Յովաբայ առ արքայ յերուսաղէմ, և եհաւ և պատմեաց Դաւթի զամենայն ինչ զոր պատուիրեաց նմա Յովաբ զամենայն իրս պատերազմին։ Եւ բարկացաւ Դաւթ ՚ի վերայ Յովաբայ, և աստ ցհրեշտակն. Ընդէ՞ր մերձեցայք ՚ի քաղաքն մարտնչել. ո՞չ գիտէիք եթէ հարկանելոց էք ՚ի պարսպէն. ո՞ եհար զԱբիմելէք որդի Յերոբովադայ, ո՞չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ՚ի վերայ նորա ՚ի պարսպէն, և մեռաւ ՚ի Թամասի. ընդէ՞ր մերձենայիք ՚ի պարիսպն։ ²³Եւ աստ հրեշտակն ցԴաւթ. Զի ասպատակացան ՚ի վերայ մեր արք, և ելին առ մեզ արտաքս՝ և հասաք ՚ի վերայ նոցա մինչև ցդուռն քաղաքին*։ ²⁴Ա նետաձիգ եղեն աղեղնաւորքն ՚ի ծառայս քո ՚ի վերուստ ՚ի պարսպէ՛ անտի, և մեռան ՚ի ծառայից արքայի. և ծառայ՝ քո Ուրիա՝ Քետացի մեռաւ։ ²⁵Եւ աստ Դաւթ ցհրեշտակն. Այսպէս ասասցես ցՅովաբ. Մի՛ թուեսցի չա՛ր բանդ յաչս քո. զի երբեմն այսպէս ուտտ սուր, և երբեմն այնպէս. սաստկացո՛ զպատերազմն ընդ քաղաքիդ և կործանեսցես՝ ս գդա, և զօրացո՛ զանձն քո*։

Լ ²⁶Եւ իբրև լուաւ կինն Ուրիայ եթէ մեռաւ Ուրիա այր իւր, կոծեցաւ ՚ի վերայ առն իւրոյ։ ²⁷Իբրև անց սուգն, առաքեաց Դաւթ և ամփոփեաց զնա ՚ի տուն իւր. և եղև նմա կին, և ծնաւ նմա որդի։ Եւ չա՛ր թուեցաւ բանն՝ զոր արար Դաւթ յա՛չս Տեառն։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ առաքեաց Տէր զՆաթան մարգարտ առ Դաւթ. և եմուտ առ նա, և ասէ ցնա. Արք երկու՛ էին ՚ի քաղաքի միում. մին մեծատուն, և միւսն աղքատ։ ²Եւ մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ. ³և աղքատին և ո՛չ ինչ. բայց որոջ մի փոքր զոր ստացեալ և ապրեցուցեալ և սնուցեալ էր զնա, և հաստատեալ էր ընդ նմա, և ընդ որդիս նորա ՚ի միասին ՚ի հացէ՛ նորա ուտէր և ՚ի բաժակէ՛ նորա ըմպէր, և ՚ի ծո՛ց նորա ննջէր. և է՛ր նորա իբրև զղուստր*։ ⁴Եւ

* Ոսկան. Եւ եղ զՈւրիա ՚ի տե՛ն։

* Ոսկան. Եւ մեռաւ Ուրիա Քետա՛ւ։

* Ոմանք. Նետաձիգ լինէին։

* Յօրինակին. Ընդէր մօտեցայց ՚ի պա՛ւ։

* Այլք. Զի սաստկացան ՚ի վերայ մեր արք, և ելին։

* Ոմանք. Ուտտ սուր, և երբեմն այսպէս։

* Ոմանք. Ի հացէ անտի նորա ուտէր։

ե՛կն անցաւոր առ այրն մեծատուն. և խնայեաց առնուլ ՚ի հօտից իւրոց և յանդէո՛ց իւրոց առնել հիւրոյն անցաւորի եկելոյ առ նա. և էա՛ն զորոջ աղքատին և արար առնն եկելոյ կերակուր առ նա՛ :

ԼԱ ⁵Եւ բարկացաւ սրտմտութեամբ Դաւիթ յոյժ առնն. և ասէ Դաւիթ ցեաքան. Կենդանի՛ է Տէր զի որդի մահո՛ւ է այրն որ արար զայն. ⁶և զորոջն տուժեսցի եւթնպատիկ, փոխանակ առնելոյ զբանն զայն, վասն զի ո՛չ խնայեաց: ⁷Եւ ասէ Նաթան ցԴաւիթ. Դո՛ւ ես այրն որ արարեր զայն. այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ե՛ս եմ որ օծի զքեզ թագաւոր ՚ի վերայ ամենայն Իսրայէլի, և ես փրկեցի զքեզ ՚ի ձեռաց Սաուղայ. ⁸և ետո՛ւ քեզ զտուն տեառն քոյ, և զկանայս տեառն քո ՚ի ծո՛ց քո. և ետու քեզ զԻսրայէլ և զՅուդայ. և թէ սակա՛ւ իցէ, յաւելի՛ց քեզ դո՛յն չափ*. ⁹և ընդէ՞ր անարգեցեր զբանն Տեառն առնել չա՛ր առաջի աչաց նորա: ԶՈւրիա Քետացի հարե՛ր դու սրով, և զկին նորա առե՛ր դու քեզ կնութեան. և զնա սպանե՛ր սրով որդւոցն Ամոնայ: ¹⁰Եւ արդ՝ մի՛ հեռացի սուր ՚ի տանէ քումնէ մինչև ցյաւիտեան՝ փոխանակ զի անարգեցե՛ր զիս, և առեր զկինն Ուրիայ Քետացոյ լինել քեզ կնութեան: ¹¹Այսպէս ասէ Տէր. Ահա ես յարուցից ՚ի վերայ քո չարիս ՚ի տանէ՛ քումնէ. և առից զկանայս քո առաջի աչաց քոց, և տա՛ց ընկերի քում. և ննջեսցէ ընդ կանայս քո յանդիման արեգականս այսորիկ: ¹²Զի՛ դու արարեր զայդ ՚ի ծածուկ, և ես արարից զբանդ զայդ յանդիման ամենայն Իսրայէլի, և առաջի արեգականս այսորիկ: ¹³Եւ ասէ Դաւիթ ցեաքան. Մեղա՛յ Տեառն: Եւ ասէ Նաթան ցԴաւիթ. Եւ Տէր անցո՛յց զքև զմեղս քո՝ և մի՛ մեռցիս*: ¹⁴Բայց քանզի զայրացուցանելով զայրացուցեր զքշնամիս Տեառն բանիւն այնուիկ. որդին քո զոր ծնանելոց է քեզ՝ մահո՛ւ մեռցի*:

ԼԲ ¹⁵Եւ գնա՛ց Նաթան ՚ի տուն իւր. և եհար Տէր զմանուկն, զոր ծնաւ կինն Ուրիայ Դաւթի, և հիւանդացաւ: ¹⁶Եւ խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկանն, և պահեաց Դաւիթ պահս, և եմուտ անկա՛ւ ՚ի վերայ գետնոյ: ¹⁷Եւ յարեան ՚ի վերայ նորա ծառայք տանն յարուցանել զնա. և ո՛չ կամեր յառնել ՚ի գետնոյն, և ո՛չ եկեր ընդ նոսա հաց: ¹⁸Եւ եղև յաւուրն եւթներորդի մեռանել մանկանն. և երկեան ծառայքն Դաւթի պատմել նմա եթէ մեռաւ մանուկն. զի ասացին եթէ մինչդեռ կենդանի էր մանուկն՝ խօսեցա՛ք ընդ նմա՝ և ո՛չ լուաւ ձայնի մերում, և զիա՞րդ ասացուք նմա թէ մեռաւ մանուկն, և գործիցէ չարիս: ¹⁹Եւ ետես Դաւիթ եթէ շշնջեն ծառայք նորա. և իմացաւ Դաւիթ եթէ մեռա՛ւ մանուկն, և ասէ Դաւիթ ցճառայսն իւր, եթէ մեռեա՞լ իցէ մանուկն. և ասեն. Մեռա՛ւ: ²⁰Եւ յարեաւ Դաւիթ ՚ի գետնոյն, և լուացաւ, և օծաւ, և փոխեաց զհանդերձս իւր, և եմուտ ՚ի տունն Աստուծոյ, և երկիր եպագ նմա. և եմուտ ՚ի տուն իւր, և խնդրեաց հաց ուտել. և եղին առաջի նորա հաց՝ և եկեր: ²¹Եւ ասեն ցնա ծառայքն իւր. Զի՞նչ է բանդ այդ զոր արարեր վասն մանկանն. մինչդեռ կենդանին էր, պահէիր, և լայիր, և տքնէիր. և իբրև մեռաւ մանուկն՝ յարեա՛ր կերար և արբեր*: ²²Եւ ասէ Դաւիթ. Մինչդեռ կենդանի՛ էր մանուկն՝ պահէի և լայի. քանզի ասէի. Ո՞ գիտէ, ողորմեսցի Տէր, և կեցցէ մանուկն: ²³Արդ՝ որովհետև մեռա՛ւ մանուկն, ես ընդէ՞ր պահիցեն. միթէ կարօ՞ղ իցեն դարձուցանել զնա

* *Ի բազումս պակասի.* Կերակուր: *Իսկ օրինակ մի այսպէս ունի.* Եւ ա՛ն զորոջ աղքատին, արար առն եկելոյ առ նա կերակուր:

* *Բազումք.* Եւ եթէ սակաւ իցէ:

* *Ոմանք.* Եւ մի՛ մեռցես:

* *Այլք.* Որդին քո որ ծնանելոց է:

* *Ոմանք.* Մինչ կենդանի էր, պա՛:

այսրէն. Ես՝ առ նա՛ երթալոց Եմ, և նա առ իս ո՛չ դարձցի: ²⁴Եւ մխիթարեաց Դաւիթ զԲերսաբէ՛ ե գկին իւր. և Եմո՛ւտ առ նա և ննջեաց ընդ նմա. և յղացաւ և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա Սողոմոն. և Տէր սիրեաց զնա. ²⁵և առաքեաց ՚ի ձեռն Նաթանայ մարգարէի, և կոչեաց զանուն նորա Յեդէդի՛ վասն Տեառն՝:

ԼԳ ²⁶Եւ պատերազմեցաւ Յովաբ յընաբա՛թ որդւոցն Ամոնայ, և Եհաս յառնուլ զքաղաքն Թագաւորութեան՝: ²⁷Եւ առաքեաց Յովաբ հրեշտակս առ Դաւիթ և ասէ. Պատերազմեցայ ընդ Ռաբաթայ, և հասի յառնուլ զքաղաքս ջրոց՝. ²⁸և արդ ժողովեա՛ զմնացորդս ժողովորդեանդ, և բանակեսցի՛ս զքաղաքաւս, և առցես զսա. զի մի՛ Ես առից զքաղաքս՝ և կոչեսցի անուն իմ ՚ի վերայ սորա: ²⁹Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն ժողովորդն և չոգա՛ւ յՌաբաթ, և պատերազմեցաւ ընդ նմա և ա՛ռ զնա՞: ³⁰Եւ ա՛ռ զպսակն Մեղ՛քոմայ Թագաւորին նոցա ՚ի գլխոյ նորա. և կշիռ նորա տաղանդ մի ոսկւոյ, և ականց պատուականաց. և էր ՚ի գլուխ Դաւթի. և զառ քաղաքին՝ բազում յոյժ՝: ³¹Եւ զժողովորդն որ էր ՚ի նմա՝ Եհան արտաքս և արկ ընդ սղոցաւ՝ և ընդ քերանօք երկաթօք, և շրջեցուցանէր զնոսա աղիւսով. և այնպէս առնէր ընդ ամենայն քաղաքս որդւոցն Ամոնայ. և դարձաւ Դաւիթ և ամենայն զօրն յերուսաղէմ՝:

13

Գլուխ ԺԳ

ԼԴ ¹Եւ եղև յետ այնորիկ, և Աբիսողոմայ որդւոյ Դաւթի էր քոյր մի յոյժ գեղեցիկ տեսլեամբ, և անուն նորա Թամար. և սիրեաց զնա՝ Ամոն որդի Դաւթի՞. ²և նեղէր Ամոն՝ մինչև հիւանդանալ նմա վասն Թամարայ քեռ իւրոյ. զի կոյս էր նա. և ծանր էր յաչս Ամոնի առնել ինչ նմա: ³Եւ էր ընկեր Ամոնայ, և անուն նորա Յովնադաբ, որդի Սամայ եղբօր Դաւթի. և Յովնադաբ՝ այր իմաստուն յոյժ՝: ⁴Եւ ասէ ցնա. Ձի՞՞ է՝ զի այդպէս ծիրիս որդի արքայի այգուն այգուն՝ և ո՛չ պատմես ինձ: Եւ ասէ ցնա Ամոն. ՁԹամար՝ զքոյր Աբեսողոմայ եղբօր իմոյ սիրեն՝ Ես: ⁵Եւ ասէ ցնա Յովնադաբ. Ննջեա՛ ՚ի մահիծս քո և հիւանդացի՛ր, և մտցէ հայր քո տեսանել զքեզ. և ասացես ցնա. Մտցէ՛ Թամար քոյր իմ և արասցէ՛ ինձ խիւս. և արասցէ առաջի աչաց իմոց կերակուր, զի տեսից և կերայց ՚ի ձեռաց նորա՞:

ԼԵ ⁶Եւ անկաւ Ամոն և հիւանդացաւ. և Եմո՛ւտ արքայ տեսանել զնա. և ասէ Ամոն ցարքայ. Եկեսցէ՛ Թամար քոյր իմ առ իս, և արասցէ առաջի իմ կերակուր բլիթս, և կերայց ՚ի ձեռաց նորա: ⁷Եւ առաքեաց Դաւիթ առ Թամար ՚ի տուն և

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ Եդեդի, նշանակի՝ զգուանս, համաձայն ոմանց ՚ի բնաբ՝. զոր և ոմանք գրեն Եդդի:

* Ոմանք. ՅՌաբաթ:

* Ոմանք. ՅՌաբաթ:

* Ոմանք. ՅՌաբաթ:

* Ոմանք. Եւ զառ քաղաքին Եհան բազում յոյժ:

* Ոմանք. Եւ արկ ընդ սղոցաւ:

* Ամունս յամենայն գրչագիրս մեր ո՛չ գրի միապէս. այլ, մերթ՝ Աբիսողովմ. և մերթ՝ Աբեսողովմ, կամ՝ Աբեսողոմ. և երբեմն ևս՝ Աբեսաղոմ. ըստ որում առ իւրաքանչիւր տեղիս և մեր համենատեցաք օրինակի մերում: Ոմանք. Գեղեցիկ յոյժ տեսլեամբ:

* Ոմանք. Եւ անուն նմա Յովնադաբ:

* Ոմանք. Եւ տացէ ինձ խիւս:

ասէ. Երթ 'ի տուն Ամոնի եղբոր քոյ, և արա՛ նմա կերակուր: ⁸Եւ գնա՛ց Թամար 'ի տուն Ամոնի եղբոր իւրոյ, և նա անկեալ դներ. և ա՛ն հայս և թրեաց, և արար առաջի նորա բլիթս. և եփեաց զբլիթսն. ⁹և ա՛ն զտապակն և թափեաց առաջի նորա. և ո՛չ կամեցաւ ուտել: Եւ ասէ Ամոն. Զանէ՛ք զամենայն այր յինէն արտաքս: Եւ հանին արտաքս զամենայն այր 'ի նմանէ: ¹⁰Եւ ասէ Ամոն ցԹամար. Տա՛ր զխորտիկսդ 'ի սենեակն, և կերայ՛ց 'ի ձեռաց քոց: Եւ ա՛ն Թամար զբլիթսն զոր արար, և տարաւ Ամոնի եղբոր իւրում 'ի սենեակն, ¹¹և մատոյց նմա ուտել. և նա բուռն եհար զնմանէ և ասէ ցնա. Ե՛կ ննջեա՛ ընդ իս քո՛յր իմ: ¹²Եւ ասէ ցնա. Մի՛ եղբայր իմ, մի՛ տառապեցուցաներ զիս. զի ո՛չ գործի այդպիսի ինչ 'ի մէջ Իսրայէլի, և մի՛ առներ զայդ անզգամութիւն: ¹³Եւ ես յո՞ տանիցեմ զնախատիմս իմ. և դու լինիցիս իբրև զմի յանզգամաց 'ի մէջ Իսրայէլի. և արդ՛ խօսեաց ընդ արքայի, և ո՛չ արգելու զիս 'ի քէմ՛: ¹⁴Եւ ո՛չ կամեցաւ Ամոն լսել ձայնի նորա. և բռնահարեաց և բռնադատեաց զնա, և տառապեցոյց զնա, և ննջեաց ընդ նմա:

ԼԶ ¹⁵Եւ ատեաց զնա Ամոն ատելութիւն մե՛ծ յոյժ. զի մե՛ծ էր ատելութիւնն որ ատեաց զնա. և անհնարին վերջին աղէտքն քան զառաջին սէրն, զոր սիրեաց զնա. և ասէ ցնա Ամոն. Արի՛ և զնա՛: ¹⁶Եւ ասէ ցնա Թամար. Մե՛ծ են չարիքս այս քան զայն զոր արարեր ընդ իս, արծակելդ քո զիս: Եւ ո՛չ կամեցաւ Ամոն լսել ձայնի նորա: ¹⁷Եւ կոչեաց զպատանին իւր զվերակացու տանն իւրոյ, և ասէ ցնա. Զան՛ զդա յինէն արտաքս, և փակեա՛ զդուրսդ զկնի դորա՛: ¹⁸Եւ էր զնովաւ պարեգօտք ասղնագործք և կոճկէնք. զի այնպէս զգենուին դստերք թագաւորաց կոյսք զձործս իւրեանց. և եհան՛ զնա սպասաւորն արտաքս. և փակեաց զդուրսն զկնի նորա՛: ¹⁹Եւ ա՛ն Թամար մոխիր, և արկ զգլխով իւրով, և զպարեգօտսն կոճկէնս զոր զգեցեալ էր՝ պատառեաց. և եդ զձեռս իւր 'ի վերայ գլխոյ իւրոյ, և երթայր լալով և լայր՛: ²⁰Եւ ասէ ցնա Աբեսողոմ եղբայր նորա. Միթէ՛ Ամո՞ն եղբայր քո եղև ընդ քեզ. և արդ՛ քո՛յր իմ լուռ կաց, զի եղբայր քո է. մի՛ ածեր զմտաւ քով խօսել զբանդ զայդ: Եւ նստա՛ւ Թամար այրութեամբ 'ի տան Աբիսողոմայ եղբոր իւրոյ: ²¹Եւ լուա՛ւ արքայ զբանս զայսոսիկ՝ և բարկացաւ յոյժ, և ո՛չ տրտմեցոյց զոգի Ամոնայ որդւոյ իւրոյ՝ զի սիրէ՛ր զնա. զի անդրանի՛կ նորա էր:

ԼԷ ²²Եւ ո՛չ խօսեցաւ Աբեսողոմ ընդ Ամոնայ 'ի չարէ մինչև ցբարի. զի ատեայր Աբեսողոմ զԱմոն վասն բանին զոր տառապեցոյց զԹամար զքոյր նորա: ²³Եւ եղև յետ երեմոյ աւուրց, և էին կտուրք Աբեսողովմայ 'ի Բեթմարոն մերձ յԵփրեմ. և կոչեաց Աբեսողովմ զամենայն որդիս արքայի՛: ²⁴Եւ եկն Աբեսողոմ առ արքայ և ասէ ցնա. Ահաւանիկ կտուրք են ծառայի քում, երթիցէ՛ արքայ և ծառայք իւր ընդ ծառայի քում՛: ²⁵Եւ ասէ արքայ ցԱբեսողոմ. Մի՛ որդեակ իմ, մի՛ երթիցուք ամենեքեան մեք, և մի՛ ծանրացուք քեզ. և ստիպեաց զնա, և ո՛չ կամեցաւ երթալ, և օրհնեաց զնա: ²⁶Եւ ասէ Աբեսողովմ. Ապա թէ ո՛չ՝ զոնէ եկեսցէ՛ ընդ իս Ամոն եղբայր իմ: Եւ ասէ արքայ. Ընդէ՞ր երթիցէ ընդ քեզ Ամոն՛: ²⁷Եւ ստիպեաց

* Ոմանք. Եւ ես յո՞ տանիցիմ զնա՛:

* Բազումք. Արի՛ զնա՛:

* Ոմանք. Եւ փակեա՛ զդուրսդ զկնի նորա:

* Ոմանք. Ասղնագործք կոճկէնք... դստերք թագաւորի:

* Այլք. Եւ երթայր երթալով և լայր:

* Ոսկան. Յետ երեմեայ աւուրց... 'ի Բեթմարոն յԵփրեմ:

* Այլք. Կտուրք են ծառայի քոյ:

* Ոմանք. Եւ ասէ ցնա արքայ:

զնա Աբեսողոմ. և արձակեաց ընդ նմա զԱմոն, և զամենայն զորդիս արքայի: Եւ արար Աբեսողոմ խրախուփին ըստ խրախուփեան թագաւորի: ²⁸Եւ պատուէր ետ Աբեսողոմ մանկտուն իւրում և ասէ. Տեսէք, յորժամ զուարթասցի սիրտն Ամոնի՝ ի գինւոյ, և ասացից ձեզ հարէք զԱմոն՝ և սպանէք զնա. մի՛ երկնչիք. զի ո՛չ ապաքէն ե՞ս իցեմ՝ որ հրամայիցեմ ձեզ. քաջալերեցարո՛ւք և լերուք յորդիս զօրութեան*: ²⁹Եւ արարին մանկտին Աբեսողոմայ Ամոնի՝ որպէս հրամայեաց նոցա Աբեսողոմ. և յարեան ամենայն որդիք արքայի, և հեծան յիւրաքանչիւր ՚ի ջորւոջ իւրում, և փախեան*: ³⁰Եւ եղև մինչդեռ նոքա էին ՚ի ճանապարհին, գոյժ եկն առ Դաւիթ՝ և ասեն. Կոտորեաց Աբեսողոմ զամենայն որդիս արքայի, և ո՛չ եթող ՚ի նոցանէ և ո՛չ մի: ³¹Յարեա՛ւ արքայ՝ պատառեաց զհանդերձս իւր, և անկա՛ւ ՚ի վերայ գետնոյ. և ամենայն ծառայք նորա կային շուրջ զնովաւ պատառեալ զհանդերձս իւրեանց*: ³²Պատասխանի ետ Յովնադաբ որդի Սամայ եղբօր Դաւիթ՝ և ասէ. Մի՛ ասասցէ տէ՛ր իմ արքայ թէ ամենայն որդիք արքայի մեռան. զի Ամոն միայն մեռաւ. քանզի ՚ի բերան Աբեսողոմայ կայր, յօր յորմէ տառապեցոյց զԹամար զքոյր նորա. ³³և արդ՝ մի՛ դիցէ արքայ ՚ի սրտի իւրում զբանդ և ասասցէ, թէ ամենայն որդիքն արքայի մեռան. այլ զի Ամոն միայն մեռաւ*: ³⁴Եւ փախեաւ Աբեսողոմ. և եբարձ պատանին դէտն զաչս իւր և ետես, և ահա ժողովուրդ բազում գայր՝ ընդ ճանապարհին ՚ի նմանէ առ կողմամբ լերինն ընդ գառ ՚ի վայրն. և եկն դէտն պատմեաց արքայի՝ և ասէ. Տեսի՛ արս ՚ի ճանապարհին Որովնիմայ առ կողմամբ լերինն: ³⁵Եւ ասէ Յովնադաբ ցարքայ. Ահա որդիք արքայի եկին, ըստ բանի ծառայի քո նոյնպէս եղև*: ³⁶Եւ իբրև վախճանեաց զխօսելն, և ահա որդիքն արքայի եկին. և ամբարձին զճայնս իւրեանց և լացին. այլ և արքայ և ամենայն ծառայք իւր լացին լալի՛ն մեծ յոյժ: ԼԸ ³⁷Եւ Աբեսողոմ փախեաւ, և չոգաւ առ Թողմեւեմ՝ որդի Եմիուդայ արքայի Գեսուրայ՝ յերկիր Մաքուղայ. և սո՛ւգ առ Դաւիթ արքայ ՚ի վերայ որդւոյն իւրոյ զամենայն աւուրս: ³⁸Եւ Աբեսողոմ փախեաւ, և գնաց ՚ի Գեթսուր, և է՛ր անդ ամս երիս*: ³⁹Եւ դադարեաց արքայ Դաւիթ յելանելոյ ՚ի վերայ Աբեսողոմայ, քանզի մխիթարեցաւ ՚ի վերայ Ամոնայ որ մեռաւն:

Գլուխ ԺԴ

ԼԹ ¹Եւ իմացա՛ւ Յովաբ՝ որդի Շարուհեայ, եթէ է՛ սիրտ արքայի ՚ի վերայ Աբեսողոմայ. ²առաքեաց Յովաբ ՚ի Թեկուէ, և ա՛ռ անտի կին մի իմաստուն. և ասէ ցնա. Սո՛ւգ առ և զգեցի՛ր հանդերձ սգոյ. մի՛ օճանիցիս իւղով, և եղիցես իբրև զկին մի սգացեալ ՚ի վերայ բազմօրեայ մեռելոյ*: ³և եկեցես առ արքայ, և խօսեսցիս ընդ նմա ըստ բանիս ըստ այսմիկ: Եւ ե՛դ Յովաբ՝ բանս ՚ի բերան

* *Յօրինակին պակասէր. Եւ ասացից ձեզ հարէք: Բազումք. քաջացարո՛ւք և լերուք:*

* *Այլք. Եւ հեծան այր իւրաքանչիւր:*

* *Յօրինակին պակասէր. Ծառայք նորա կային շուրջ:*

* *Ոմանք. Ի սրտի քում զբանդ, և ասասցէ:*

* *Ոմանք. Նոյնպէս և եղև:*

* *Ոմանք. Եւ գնաց ՚ի Գեթսուրա. և լինէր անդ ամս երիս:*

* *Յօրինակին. Յոբաբ որդի Շարուհեայ:*

նորա*։ ⁴Եւ եմո՛ւտ կինն թեկուացի առ արքայ, և անկա՛ւ ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի գետին՝ և ասէ. Ապրեցո՛ր զիս արքայ ապրեցո՛ր*։ ⁵Եւ ասէ ցնա արքայ. Ձի՞՞ է քեզ։ Եւ նա ասէ. Կարի՛ իսկ տագնապ է՛ ինձ. կին մի այրի՛ եմ ես. մեռաւ այր իմ*։ ⁶և աղախնոյ քո երկու որդիք էին, մարտեան ընդ միմեանս երկոքեան յանդի. և ո՛չ ոք էր որ համոզէր ՚ի մէջ նոցա, և եհա՛ր մին զմիւս եղբայրն և սպան զնա։ ⁷Եւ ահա յարուցեալ է ամենայն ազգն ՚ի վերայ աղախնոյ քոյ. ասեն. Տո՛ւր զսպանողն եղբոր իւրոյ, և սպանցո՛ւք զնա փոխանակ անձին եղբոր իւրոյ, և բարձցո՛ւք զժառանգակալն քո. և շիջուցանիցեն զկայծակն իմ զմնացեալ, առ ՚ի չթողլոյ առն իմուն մնացորդ և անուն ՚ի վերայ երեսաց երկրի*։ ⁸Եւ ասէ արքայ. Երթ ողջամբ ՚ի տուն քո. և ես պատուիրեցից վասն քո։ ⁹Եւ ասէ կինն թեկուացի. Յի՛մ վերայ արքայ անօրէնութիւնն, և ՚ի վերայ տա՛ն հօր իմոյ. և արքայ և աթոռ իւր քաւեալ։ ¹⁰Եւ ասէ արքայ. Ո՞վ է որ խօսեսցի ընդ քեզ. և աճցես զնա առ իս՝ և ո՛չ ևս մերձեսցի առ քեզ։ ¹¹Եւ ասէ. Յիշեսցէ՛ արքայ զՏէր Աստուած իւր, ՚ի յաճախե՛լ մերձաւորի արեանն ապականել. մի՛ ջնջեսցեն զորդեակն իմ։ Եւ ասէ Դաւիթ. Կենդանի՛ է Տէր եթէ անկցի ՚ի հերոյ որդւոյ քոյ մա՛զ մի ՚ի գետին։

Խ ¹²Եւ ասէ կինն. Խօսեսցի՛ աղախին քո առաջի տեառն իմոյ արքայի բան մի։ Եւ ասէ. Խօսեաց։ ¹³Եւ ասէ կինն. Ընդէ՞ր խորհեցար այդպիսի ինչ ՚ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ. կամ թէ ՚ի բերանոյ արքայի՞՞ իցէ բանն այն վնասու՝ չդարձուցանել արքայի զմերժեալն յիւրմէ, ¹⁴զի մահո՛ւ մեռանիցի. և իբրև զշուր հեղեալ յերկիր ո՛չ ամփոփիցի. և ո՛չ առնուցու Աստուած զոգին. և խորհիցի ոք մերժել յինքենէ զմերժեալն։ ¹⁵Եւ արդ եկի՛ խօսել առ արքայի տեառն իմոյ զբանս զայս. զի տեսանիցէ զիս ժողովուրդն և ասիցէ՛ թէ աղախին քո խօսեցաւ ընդ արքայի, թերևս արասցէ՛ արքայ զբան աղախնոյ իւրոյ. ¹⁶զի լուիցէ՛ արքայ և փրկեսցէ զիս ՚ի ձեռաց առնն, որ խնդրէ ջնջել զիս՝ և զորդի իմ ՚ի ժառանգութենէ Աստուծոյ*։ ¹⁷Եւ ասէ կինն. Եղիցի բան տեառն իմոյ արքայի ՚ի զո՛հս. զի իբրև զհրեշտակ Աստուծոյ այնպէս է տէր իմ արքայ ՚ի լսել զբարի և զչար. և Տէր Աստուած քո եղիցի՛ ընդ քեզ։ ¹⁸Եւ պատասխանի ետ արքայ՝ և ասէ ցկինն. Մի՛ թաքուցաներ յինէն զբան զոր ես հարցից քեզ։ Եւ ասէ կինն. Խօսեսցի՛ տէր իմ արքայ*։ ¹⁹Եւ ասէ արքայ. Միթէ՛ ձեռն Յովաբայ՝ իցէ յամենայնի յայդմիկ ընդ քեզ։ Եւ ասէ կինն ցարքայ. Կենդանի՛ է անձն քո տէր իմ արքայ, եթէ իցէ յա՛ջ կամ յահեակ յամենայնէ զոր խօսեցաւ տէր իմ արքայ. զի ծառայ քո Յովաբ՝ նա՛ պատուիրեաց ինձ, և նա՛ եդ ՚ի բերան աղախնոյ քոյ զամենայն բանս զայսոսիկ*, ²⁰վասն բոլորելոյ յերեսաց բանիս այսորիկ՝ զոր արար ծառայ քո Յովաբ զբանս զայսոսիկ. և տէր իմ իմաստունն է ըստ իմաստութեան հրեշտակի Աստուծոյ՝ զիտե՛լ զամենայն ինչ որ յերկրի*։

ԽԱ ²¹Եւ ասէ արքայ ցՅովաբ. Ահաւասիկ արարի՛ քեզ ըստ բանի քում ըստ

* *Յօրինակին*. Յոբաբ որդի Շարուհեայ։

* *Ոմանք*. ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի գետնի։

* *Ոմանք*. Ձի՛ է ՚ի քեզ։

* *Այլք*. Եւ շիջուցանիցեն։

* *Այլք*. Ջնջել զիս և զորդի իմ։

* *Ոմանք*. Մի՛ թաքուցաներ բան յինէն... հարցից զքեզ։

* *Յօրինակին պակասէր*. Ձեռն Յովաբայ իցէ յամենայնի։

* *Ոմանք*. Վասն բոլորելոյ երեսաց։

այսմիկ. Ե՛րթ դարձո՛ւ, ա՛ծ զպատանեակն զԱբեսողոմ*։ ²²Եւ անկա՛ւ Յովաբ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և երկի՛ր եպագ նմա, և օրհնեաց զարքայ։ Եւ ասէ Յովաբ. Այսօ՛ր գիտաց ծառայ քո եթէ գտի շնորհս յաչս քո՝ տէ՛ր իմ արքայ զի արար տէր իմ արքայ զբան ծառայի իւրոյ։ ²³Եւ յարեաւ Յովաբ և գնա՛ց ՚ի Գեթսուր, և ած զԱբեսողոմ յերուսաղէմ։ ²⁴Եւ ասէ արքայ. Դարձցի՛ ՚ի տուն իւր, և զերեսս իմ մի՛ տեսցէ։ Եւ դարձա՛ւ Աբեսողոմ ՚ի տուն իւր, և զերեսս արքայի ո՛չ ետես։ ²⁵Եւ իբրև զԱբեսողոմ ո՛չ գոյր յամենայն Իսրայէլի, այր գեղեցիկ գովելի՛ յոյժ. ՚ի թաթից ոսից իւրոց մինչև ՚ի գլուխ իւր ո՛չ գոյր ՚ի նմա արատ։ ²⁶Եւ ՚ի փոքրել զհերս իւր՝ լինէր ՚ի սկսանելոյ աւուրց յաւուրս փոքրել, զի կարի՛ ծանրանայր ՚ի վերայ նորա. և յորժամ փոքրէր, կշռէ՛ր զհեր գլխոյ իւրոյ երկերիւր սիկղ ըստ արքունական սկեղ։ ²⁷Եւ ծնան Աբեսողոմայ երեք ուստերք՝ և դուստր մի և անուն նորա Թամար. և նա էր կի՛ն գեղեցիկ յոյժ տեսւեամբ. և եղև կին Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի, և ծնաւ նմա զԱբիա՛։

ԽԲ ²⁸Եւ նստա՛ւ Աբիսողոմ յերուսաղէմ աւուրս ամաց երկուց, և զերեսս արքայի ո՛չ ետես*։ ²⁹Եւ առաքեաց Աբեսողոմ առ Յովաբ յղե՛լ զնա առ արքայ, և ո՛չ կամեցաւ երթալ առ նա. և առաքեաց երկրորդ անգամ առ նա, և ո՛չ կամեցաւ երթալ։ ³⁰Եւ ասէ Աբեսողոմ ցճառայս իւր. Գիտէ՛ք զի վիճակ գետնոյ Յովաբայ լի՛ գարւով մօտ է առ իս, երթայք այրեցէ՛ք զնա հրով։ Եւ այրեցին ծառայքն Աբեսաղոմայ զվիճակն Յովաբայ հրով։ Եւ եկին ծառայքն Յովաբայ առ նա պատառեալ զհանդերձս իւրեանց՝ և ասեն. Այրեցի՛ն ծառայքն Աբեսաղոմայ զվիճակն հրով*։ ³¹Եւ յարեաւ Յովաբ և եկն առ Աբեսաղոմ ՚ի տուն՝ և ասէ ցնա. Ընդէ՞ր այրեցին ծառայք քո զվիճակն իմ հրով։ ³²Եւ ասէ Աբեսաղոմ ցՅովաբ. Յղեցի առ քեզ և ասեմ. Ե՛կ այսր յղեցից զքեզ առ արքայ, ասել՝ թէ ընդէ՞ր եկի ՚ի Գեթսուրայ. լա՛ւ էր ինձ տակաւին անդ լինել, քան ո՛չ տեսանել զերեսս արքայի. և թէ վնա՛ս ինչ կայցէ յիս՝ սպան՛ զիս։ ³³Եւ եմո՛ւտ Յովաբ առ արքայ՝ և պատմեաց նմա. և կոչեաց զԱբեսաղոմ. և եմո՛ւտ առ արքայ, և երկիր եպագ նմա, և անկա՛ւ ՚ի վերայ երեսաց իւրոց առաջի արքայի. և համբուրեաց արքայ զԱբեսաղոմ*։

15

Գլուխ ԺԵ

ԽԳ ¹Եւ եղև յետ այնորիկ, և արա՛ր Աբեսաղոմ կառս և երիվարս, և յիսուն այր սուրհանդակ առաջի իւր։ ²Եւ կանխէ՛ր Աբեսաղոմ և կայր առ ճանապարհի դրանն. և լինէր՝ ամենայն այր որոյ է՛ր դատ՝ զա՛լ առ արքայ ՚ի դատաստան, բարբառէ՛ր առ նա Աբեսաղոմ և ասէր ցնա. Յորմէ՞ քաղաքէ ես դու։ Եւ ասէր այրն. Ի՛ միոյ ՚ի ցեղիցն Իսրայէլի է ծառայ քո*։ ³Եւ ասէ ցնա Աբեսաղոմ. Ահա բանք քո բարի՛ եմ և դիւրինք, և որ ունկնդիր լինիցի քեզ՝ չիք առ ՚ի յարքայէ*։ ⁴Եւ ասէր Աբեսաղոմ. Ո՛ կացուցանէր զիս դատաւոր ՚ի վերայ երկրիս. և առ իս

* Այլք. Ըստ բանի քում ըստ այդմիկ։

* Ոմանք. Աւուրս ամաց երկուց։

* Այլք. Գիտէք զվիճակ գետնոյ։

* Ոմանք. ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի։

* Ոմանք. Եւ ասէ այրն. Ի՛ միոյ։

* Ոմանք. Եւ ասէր ցնա Աբե՛։

գայր ամենայն այր, որոյ էր հակառակութիւն և դատաստան, և առնէի՝ նմա իրաւունս*։ ⁵Եւ լինէր յորժամ մերձենայր առ նա այր երկի՛ր պագանել նմա, ձգէր զձեռն իւր և առ ի՛նքն մատուցանէր, և համբուրէր զնա*։ ⁶Եւ առնէր Աբեսաղոմ ըստ բանիս ըստ այսմիկ ամենայն Իսրայէլի եկելոյ ՚ի դատաստան առ արքայ. և յանկուցանէր յինքն Աբեսաղոմ զսիրտ ամենայն արանց Իսրայէլի*։

ԽԴ ⁷Եւ եղև ՚ի կատարել չորից ամաց, ասէ Աբեսաղոմ ցհայր իւր. Երթայց և հատուցից զուխտս իմ զոր ուխտեցի Տեառն ՚ի Քեբրոն. ⁸զի ուխտիւք ուխտեաց ծառայ քո մինչ էի ՚ի Գեթսուր յԱսորիս. ասեմ. Եթէ դարձուցանելով դարձուցէ զիս Տէր յերուսաղէմ, պաշտեցի՛ց զՏէր*։ ⁹Եւ ասէ ցնա արքայ. Երթ խաղաղութեամբ։ Եւ յարեա՛ւ զնաց ՚ի Քեբրոն։ ¹⁰Եւ առաքեաց Աբեսաղոմ պատուիրակս յամենայն ցեղս Իսրայէլի, և ասէ. ՚ի լսել ձեր զձայն եղջեր փողոյ, ասասջի՛ք եթէ թագաւորեաց թագաւոր Աբեսաղոմ ՚ի Քեբրոն*։ ¹¹Եւ ընդ Աբեսաղոմայ զնացին արք երկերիւր հրաւիրեալք. և երթային միամտութեամբ, և ո՛չ գիտէին ամենկին զգրոյցն։ ¹²Եւ առաքեաց Աբեսաղոմ և կոչեաց զԱքիտփէլ Թեկուացի խորհրդակից Դաւթի ՚ի քաղաք իւր ՚ի Գովղա՝ ՚ի զոհել իւրում զգոհան. և եղև ժողով սաստիկ. և ժողովուրդ բազում երթեալ ընդ Աբեսաղոմայ*։ ¹³Եւ եհաս գուժկան առ Դաւիթ և ասէ. Եղև սիրտ արանց Իսրայէլի զհետ Աբեսաղոմայ։

ԽԵ ¹⁴Եւ ասէ Դաւիթ ցամենայն ծառայս իւր որ ընդ նմա յերուսաղէմ. Արի՛ք և փախիցուք. զի ո՛չ գոյ մեզ փրկութիւն յերեսաց Աբեսաղոմայ. փութացարո՛ւք զնա՛լ, զի մի՛ արագիցէ՛ և հարկանիցէ զմեզ, և արկանիցէ ՚ի վերայ մեր չարիս. և հարկանիցէ զքաղաքս սրով սուսերի*։ ¹⁵Եւ ասեն ծառայքն արքայի՝ ցարքայ. Ըստ ամենայնի զոր և կամիցի տէր մեր արքայ՝ ահաւասիկ կա՛մք ծառայք քո։ ¹⁶Եւ ե՛լ արքայ և ամենայն տուն նորա ՚ի հետիոտս. և եթող արքայ տասն կին ՚ի հարձից անտի իւրոց պահել զտունն։ ¹⁷Եւ ել արքայ և ամենայն ծառայք նորա հետևակք, և կացին առ ձիթենույն որ յանապատի անդ։ ¹⁸Եւ ամենայն ծառայք նորա միըստմիոջէ անցանէին առ նովաւ. և ամենայն Քերեթին և Ոփելեթին. և ամենայն Գեթացիք վեց հարիւր այր եկեալ հետևակք ՚ի Գեթայ՝ անցանէին առաջի Դաւթի*։ ¹⁹Եւ ասէ արքայ ցեթթի Գեթացի. Ընդէ՞ր զայցես և դու՛ ընդ մեզ. դարձի՛ր անդրէն և բնակեա՛ ընդ արքայի, զի այր օտա՛ր ես դու. և խախտեցար ՚ի տեղւոջէ քումմէ՛ ՚ի Գեթայ՝ և եկիր. ²⁰և այսօր խախտիցեն զքեզ զնա՛լ ընդ մեզ. և ես երթայց յո՛ւ և երթալոց իցեն. բայց դու դարձի՛ր, և դարձո՛ զեղբարս քո ընդ քեզ. և արասցէ ընդ քեզ Տէր ողորմութիւն և ճշմարտութիւն։ ²¹Պատասխանի ետ Եթթի արքայի՝ և ասէ. Կենդանի՛ է Տէր, և կենդանի՛ է տէր իմ արքայ. զի ՚ի տեղւոջ ուր տէր իմ արքայ իցէ, և ՚ի մահու և ՚ի կեանս՝ անդ եղիցի և ծառայ քո։ ²²Եւ ասէ արքայ ցեթթի. Եկ անց ընդ իս։ Եւ անց Եթթի Գեթացի. և ամենայն ծառայք նորա, և ամենայն ամբոխ նորա ընդ նմա։ ²³Եւ ամենայն երկիրն լայր մեծածայն,

* *Ոմանք.* Հակառակութիւն ՚ի դատաստան։

* *Յօրինակին պակասէր.* Առ նա այր եր՛։

* *Այլք.* Չսիրտս ամենայն արանց։

* *Ոմանք.* Մինչ բնակէի ես ՚ի Գեթսուր յԱսորիս։

* *Ոմանք.* Եւ առաքեաց... դէտս պատուիրակս յամենայն։

* *Ոսկան.* Ժողովուրդ բազում երթայր։ *Ուր ոմանք.* Երթալ ընդ Ա՛։

* *Բազումք.* Չի մի՛ արագիցէ և հասանիցէ մեզ. և արկանիցէ ՚ի վերայ մեր։ *Եւ ոմանք.* Եւ հասանիցեն ՚ի վերայ մեր չարիք. և հար՛։

* *Ի լուս՛.* Եւ անցանէին առաջի արքայի. *համաձայն ոմանց ՚ի բնար՛։*

և ամենայն զօրն անցանէ՛ր ընդ հեղեղատն Կեդրոնի. անց և արքայ ընդ հեղեղատն Կեդրոնի. և ամենայն զօրն և արքայ երթային ընդ երեսս ճանապարհին անապատի: ²⁴Եւ ահա Սաղովկ և ամենայն Ղևտացիք ընդ նմա, բարձին զտապանակն ուխտին Տեառն ՚ի Բեթարա, և կացուցին զտապանակն Աստուծոյ. և ել ՚ի Բեթարա մինչև կատարեաց ամենայն ժողովուրդն անցանել ՚ի քաղաքէ անտի*: ²⁵Եւ ասէ արքայ ցՍաղովկ. Դարձո՛ զտապանակդ Աստուծոյ ՚ի քաղաք, և նստցի՛ ՚ի տեղւոջ իւրում. եթէ գտից շնորհս առաջի Տեառն՝ դարձուցէ՛ զիս, և ցուցցէ՛ ինձ զդա՝ և զվայելչութիւն դորա*.²⁶ապա թէ այնպէս ասասցէ ցիս թէ չե՛մ հաճեալ ընդ քեզ, ահաւասիկ կա՛մ, արասցէ ինձ որպէս հաճո՛յ իցէ առաջի աչաց նորա*:²⁷Եւ ասէ արքայ ցՍաղովկ քահանայ. Տեսէ՛ք. զի դու դառնաս խաղաղութեամբ ՚ի քաղաք, և Աքիմասս որդի քո, և Յովնաթան որդի Աբիաթարայ՝ երկոքին որդիք ձեր ընդ ձեզ.²⁸և ահա ես բանակիցիմ յՌաբովք անապատին, մինչև եկեսցէ զրո՛յց ՚ի ձէնջ՝ պատմել ինձ*:²⁹Եւ դարձուցին Սաղովկ և Աբիաթար զտապանակն յերուսաղէմ, և նստա՛ւ անդ:³⁰Եւ Դաւիթ ելանէ՛ր ընդ գառ ՚ի վերն Չիթենեաց, ելանէր և լա՛յր. և զգլուխ իւր ծածկեալ. և ինքն երթայր բո՛կ, և ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ զգլխով. այր իւրաքանչի՛ր ելանէին և լային: ³¹Ազդ եղև Դաւիթ՝ և ասեն. Եւ Աքիտոփել ընդ ժողովեալսն առ Աբեսողոմայ՝ է: Եւ ասէ Դաւիթ. Տրուեա՛ զխորհուրդն Աքիտոփելայ Տէր Աստուած իմ*:³²Եւ եհաս Դաւիթ ՚ի Յռովս՝ ուր եպագն երկիր Աստուծոյ*:

Ի՞նչ է և ահա ընդ առաջ նորա Քուսի Արաքացի բարեկամ Դաւիթ պատառեալ զպատմուճան իւր՝ և հո՛ղ ՚ի գլուխ նորա:³³Եւ ասէ ցնա Դաւիթ. Եթէ անցանիցես ընդ իս՝ բեռն լինիս ինձ.³⁴ապա թէ դարձցիս ՚ի քաղաք՝ ասասցես ցԱբեսաղոմ, եթէ անցին եղբարք քո. և արքայ կաթոզին էր զկնի ին, և անց հայր քո. և արդ՝ ծառայ քո՝ եմ արքայ, և թո՛ղ կացից առաջի քո. ծառայ հօր քոյ էի յայնժամ, և արդ քո՝ ծառայ եմ ես արքայ. և ցրեսցես յինէն զխորհուրդն Աքիտոփելայ:³⁵Եւ ահա ընդ քեզ Սաղովկ և Աբիաթար քահանայք. և եղիցի բան զոր լսիցես ՚ի տանէ արքայի՝ պատմեսցի՛ր Սաղովկայ և Աբիաթարու քահանայից:³⁶Եւ ահա ե՛ն ընդ նոսա երկոքեան որդիք իւրեանց, Աքիմասս որդի Սաղովկայ, և Յովնաթան որդի Աբիաթարայ. և առաքեսցի՛ք ՚ի ձեռն նոցա առ իս զամենայն բան զոր և լսիցէք:³⁷Եւ եմուտ Քուսի բարեկամ Դաւիթ ՚ի քաղաքն. և Աբեսողոմ մտանէր ՚ի քաղաքն:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ Դաւիթ անցեալ էր սակաւիկ ինչ ըստ Յռովս: Եւ ահա Սիբա պատանի Մենփիբոսթայ ընդ առաջ նորա. և զո՛յգք իշոց բեռնաւորաց, և ՚ի նոսա

* *Ոճանք.* Եւ կացուցին զտապանակն Տեառն:

* *Ոճանք.* Եթէ գտցի շնորհս առ՝:

* *Ոճանք.* Ապա թէ այնպէս ասասցէ ցիս եթէ չե՛մ... որպէս և հաճոյ:

* *Ոճանք.* Եւ ահա ես բանակիցիմ:

* *Ոճանք.* Տրեա՛ զխորհուրդն:

* *Ոճանք.* Ուր եպագ նա երկիր Աստուծոյ:

երկերիւր նկանակ, և հարկը չամչեայ, և հարիւր արմաւ, և մա՛ր մի գինւոյ*։ ²Եւ ասէ արքայ ցՍիբա. Չի՞նչ է այդ: Եւ ասէ Սիբա. Էջքդ նստելոյ արքայի, և հացդ և արմաւդ՝ ՚ի կերակուր մանկանցդ, և գինիդ՝ ըմպելի՛ լքելոցդ յանապատի աստ*։ ³Եւ ասէ արքայ. Ո՞ւր է որդի տեառն քոյ: Եւ ասէ Սիբա ցարքայ. Ահա նստի յերուսաղէմ. զի ասէ՛ Այսօր դարձուցեն ինձ տունն Իսրայէլի զթագաւորութիւն հօր իմոյ: ⁴Եւ ասէ արքայ ցՍիբա. Ահա քե՛զ լիցի ամենայն ինչ որ է Մենփիբոսթայ: Երկի՛ր եպագ Սիբա և ասէ. Գտի՛ շնորհս առաջի քո տէ՛ր իմ արքայ՝:

Խե՛ ⁵Եւ եկն արքայ Դաւիթ մինչև ցԲաւուրիմ, և ահա ելանէր անտի ա՛յր յազգականութենէ տանն Սաւուղայ, և անուն նորա Սենէի որդի Գերեայ, ելանելով՝ ելանէր և անիծանէր. ⁶և ձգէ՛ր քարինս Դաւթի, և ամենեցուն որոց ընդ արքայի Դաւթի. և ամենայն ժողովուրդն, և ամենայն զօրաւորք էին ընդ աջմէ և ընդ ահեկէ արքայի: ⁷Եւ այսպէս ասէր Սենէի յանիծանելն զնա. Ե՛լ ե՛լ այր արեանց՝ և ա՛յր անօրէն. ⁸դարձո՛յց ՚ի քեզ Տէր զամենայն արիւնս տանն Սաւուղայ. զի թագաւորեցեր փոխանակ նորա. և ետ Տէր զթագաւորութիւն քոյ ՚ի ձեռս Աբեսողոմայ որդւոյ քոյ. եցոյց քեզ զչարի՛ս քո. զի այր՝ արեանց ես դու: ⁹Եւ ասէ Աբեսսա որդի Շարուհեայ ցԴաւիթ. Ընդէ՞ր անիծանէ՛ այնպէս շուն մի մեռեալ զտէ՛ր իմ զարքայ, անցի՛ց և առից զգլուխ նորա*։ ¹⁰Եւ ասէ արքայ. Չի՞ կայ ի՛մ և ձեր որդիք Շարուհեայ. թո՛յլ տուք նմա, թո՛ղ անիծանէ՛ այնպէս. զի Տէր ասաց նմա անիծանել զԴաւիթ. և ո՞վ ասացէ թէ ընդէ՞ր արարեր այդպէս*։ ¹¹Եւ ասէ Դաւիթ ցԱբեսսա և ցամենայն ծառայս իւր. Ահաւանիկ որդի իմ որ ելեալ է յորովայնէ իմմէ խնդրէ՛ զանձն իմ, ո՞րչափ ևս որդին Յեմինայ. թո՛յլ տուք նմա և անիծցէ՛, զի Տէր ասաց նմա. ¹²թերևս տեսցէ Տէր զտառապանս իմ, և հատուցէ ինձ բարի՛ս փոխանակ անիծից նորա յաւուր յայսմիկ: ¹³Եւ երթայր Դաւիթ և արքն որ ընդ նմա զճանապարհն. և Սենէի երթայր մօտ առ նա ընդ կողաց լերինն, երթայր և անիծանէր, և քարինս ՚ի կողմանէ նորա ընկենոյր, և հո՛ղ ցանէր ՚ի վերայ*։ ¹⁴Եւ եկն արքայ և ամենայն զօրն որ ընդ նմա աշխատեալք, և հանգեան անդ:

ԽԸ ¹⁵Եւ Աբեսողոմ և ամենայն Իսրայէլ մտի՛ն յերուսաղէմ, և Աքիտովէլ ընդ նմա: ¹⁶Եւ եղև իբրև եկն Քուսի Արաքացի բարեկամ Դաւթի առ Աբեսողոմ, և երկիր եպագ նմա. և ասէ Քուսի ցԱբեսողոմ. Կեցցէ՛ արքայ*։

ԽԹ ¹⁷Եւ ասէ Աբեսողոմ ցՔուսի. Ա՞յդ գութ էր քո ընդ բարեկամին քում. և ընդէ՞ր ո՛չ չոգար ընդ բարեկամին քում: ¹⁸Եւ ասէ Քուսի ցԱբեսողոմ. Ո՛չ այդպէս է, այլ զհետ այնորիկ՝ զոր ընտրեաց Տէր, և ժողովուրդս այս՝ և ամենայն այր Իսրայէլի երթայց՝ և նորա՛ եղէց, և ընդ նմա՛ նստայց: ¹⁹Եւ երկրորդ անգամ ո՞ւմ ծառայիցեն ես, ո՞չ ապաքէն առաջի որդւոյ նորա. որպէս ծառայեցի առաջի հօր քում, նո՛յնպէս եղէց առաջի քո*։

* *Յօրինակին.* Պատանի Մենփոսթայ... և հարկը չամչեայ, և 6 արմաւ:

* *Ոմանք.* ՚ի կերակուր մանկտուրդ:

* *Ոմանք.* Ամենայն ինչ որ ինչ է Մենփի՛:

* *Ոմանք.* Եւ ասէ Աբեսսա որդի Շարուհեայ ցարքայ. Ընդէ՞ր:

* *Բազումք.* Թո՛ղ անիծցէ այնպէս. և *ոմանք.* թոյլ տուք նմա և անիծցէ այնպէս:

* *Ի լուս՛.* Առ նա ընդ կողեածաց լե՛. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:* Ուր *ոմանք* ևս. ընդ կողեաց:

* *Ի բազումս պակասի.* Առ Աբեսողոմ, և *երկիր եպագ նմա:*

* *Բազումք.* Որպէս ծառայեցի հօր քում:

Ծ ²⁰Եւ ասէ Աբեսողոմ ցԱբիտոփէլ. Առէք խորհուրդ ՚ի մէջ թէ զի՞նչ գործեսցուք:
²¹Եւ ասէ Աբիտոփէլ ցԱբիտողոմ. Մո՛ւտ առ հարճս հօր քո գորս եթող պահել
զտունն իւր, և լուիցէ ամենայն Իսրայէլ թէ յամօթ արարեր զհայր քո. և
զօրասցին ձեռք ամենեցուն որք են ընդ քեզ* : ²²Եւ հարին վրան Աբեսողոմայ ՚ի
տանիս, և եմուտ Աբեսողոմ առ հարճս հօր իւրոյ յանդիման ամենայն Իսրայէլի:
²³Եւ խորհուրդ Աբիտոփէլայ զոր խորհէր յաւուրսն առաջինս, որպէս թէ
հարցանիցէ որ բան յԱստուծոյ, այնպէս էր ամենայն խորհուրդն Աբիտոփէլայ,
և առ Դաւթի՛ և առ Աբեսողոմայ* :

17

Գլուխ ԺԷ

¹Եւ ասէ Աբիտոփէլ ցԱբեսողոմ. Ընտրեցի՛ց ինձ երկոտասան հազար արանց, և
յարեայց և պնդեցայց զհետ Դաւթի զգայգս, ²և հասի՛ց ՚ի վերայ նորա զգայգ. և
նա աշխատեալ է և լքեալ ձեռօք, և զարհուրեցուցից զնա, և փախիցէ՛ զօրն որ
ընդ նմա. և սպանից զարքայ միայն: ³Եւ դարձուցից զամենայն զօրն առ քեզ,
զոր օրինակ դառնայցէ հարսն առ այր իւր. բայց միայն զանձն միոյ՝ առն
խնդրիցես, և ամենայն զօրն եղիցի ՚ի խաղաղութեան* : ⁴Եւ ուղիղ թուեցաւ բանն
առաջի Աբեսողոմայ և առաջի ամենայն ծերոցն Իսրայէլի:

ԾԱ ⁵Եւ ասէ Աբեսողոմ. Կոչեցէ՛ք զՔուսի Արաքացի, և լուիցուք թէ զի՞նչ կացցէ
՚ի բերան նորա* : ⁶Եւ եմո՛ւտ Քուսի առ Աբեսողոմ, և խօսեցաւ Աբեսողոմ ընդ նմա
ըստ բանին այնորիկ՝ զոր խօսեցաւ Աբիտոփէլ. և ասէ թէ արասցո՛ւք ըստ բանի
նորա, ապա թէ ոչ՝ և դո՛ւ խօսեաց ինչ: ⁷Եւ ասէ Քուսի ցԱբեսողոմ. Ո՛չ է բարուք
խորհուրդն զոր խորհեցաւ Աբիտոփէլ այս անգամ: ⁸Եւ ասէ Քուսի. Դու ինքնի՛ն
գիտես զհայր քո և զարս նորա. զի կարի՛ զօրաւորք են յոյժ, և դառնացեալք
ոգուով իբրև զարջ մի որդէկոտոր ՚ի վայրի, և զայրացեալ ՚ի դաշտի. և հայր քո
այր պատերազմօղ, և ո՛չ տայ դու զօրուն*. ⁹և ահա ինքն ղօղեալ իցէ ՚ի միում ՚ի
բլրոց, կամ ՚ի միում ուրեք ՚ի տեղեաց. և եղիցի յանկանել ՚ի վերայ նոցա
զառաջինն հարկանիցէ, և լսիցէ՛ որ լսիցէ, և ասիցէ՝ թէ եղև խորտակումն
ժողովրդեանն որ զկնի Աբիտողոմայ: ¹⁰Քանզի և նա՝ այր զօրութեան է, որոյ
սիրտն իբրև զսիրտ առիւծու հաշելով հաշիցի. զի գիտէ ամենայն Իսրայէլ թէ
զօրաւոր է հայր քո, և որդիք զօրութեան որ ընդ նմայն են: ¹¹Ես այսպէս տամ
քեզ խրատ. ժողովելով ժողովեսցի ամենայն այր Իսրայէլի ՚ի Դանայ մինչև
ցԲերսաբէէ իբրև զաւագ առ եզր ծովու բազմութեանք. և քո՛ երեսք երթիցեն
առաջի նոցա*. ¹²և հասցո՛ւք ՚ի վերայ նորա ՚ի միում ՚ի տեղեաց ուր և
գտանիցենք զնա անդ. և պատեսցո՛ւք զնովաւ՝ որպէս իջանիցէ ցօղ ՚ի վերայ

* *Ոմանք.* Որ ընդ քեզ են:

* *Ոմանք.* Որպէս հարցանիցէ որք: *Ոսկան.* Աբիտոփէլայ, առ Դաւթի և առ Աբէ՛:

* *Այլք.* Միոյ առնն խնդրեսցես:

* *Այլք.* Եթէ զինչ կայցէ ՚ի բերան:

* *Յօրինակին պակասէր.* Են յոյժ և դառնացեալք ոգուով, իբրև: *Ուր ոմանք.* ոգուով են իբրև
զարջ: *Յօրինակին պակասէր.* Եւ ո՛չ տայ դու:

* *Յօրինակին փոխանակ.* Ես այսպէս, *դնի՛* Եւ այսպէս տամ քեզ խր՛: *Ոմանք.* Երթիցեն ՚ի
մէջ նոցա:

երկրի. և ո՛չ ապրեցուցուք զնորա և ո՛չ զոք*։ ¹³Ապա թէ՛ ՚ի քաղաք մտանիցէ՛ առցէ ամենայն Իսրայէլ քաղաքին այնմիկ պարանս, և քարշեսցուք զնոսա մինչև ցիեղեղատս. զի մի՛ մնասցէ անդ և մի՛ մի քար։ ¹⁴Եւ ասէ Աբեսողոմ և ամենայն այր Իսրայէլի. Քաջ է խորհուրդդ Քուսեայ Արաքացւոյ՝ քան զխորհուրդ Աքիտոփելայ։ Եւ Տէր ետ հրաման ցրել զքաջ խորհուրդն Աքիտոփելայ. զի ասցէ Տէր ՚ի վերայ Աբեսողոմայ զամենայն չարիսն։

ԾԲ ¹⁵Եւ ասէ Քուսի Արաքացի ցՍադովկ և ցԱբիաթա՛ր քահանայս. Չայս ինչ և զայս խրատ ետ Աքիտոփել Աբեսողոմայ՝ և ծերոց Իսրայէլի, և զայս ինչ և զայս՝ ե՛ս խորհեցայ։ ¹⁶Եւ արդ՝ առաքեցէ՛ք վաղվաղակի՝ և պատմեցէ՛ք Դաւթի և ասացէ՛ք. Մի՛ ազանիցիս զայս գիշեր յՌաբովթ անապատին, այլ փութասջի՛ր անցանել, գուցէ՛ կլանիցէ զարքայ և զամենայն ժողովուրդն որ ընդ նմա՛*։ ¹⁷Եւ Յովնաթան և Աքիմասս կային առ աղբերն Ռովգելայ, և չոգաւ աղախին մի և պատմեաց նոցա. և նոքա գնացին և պատմեցին զայս արքայի Դաւթի. զի ո՛չ կարէին մտանել երևել ՚ի քաղաքին։ ¹⁸Եւ ետես զնոսա պատանեակ մի, և պատմեաց Աբեսողոմայ. և չոգան երկո՛քին, և մտին ՚ի տուն անճ միոյ ՚ի Բաւուրիմ. և նորա էր գուր մի ՚ի տան, և մտին անդր*։ ¹⁹Եւ ան կինն՝ և կափոյց զխուփն ՚ի վերայ գբին, և ցամաքեցուցանէր ՚ի վերայ նորա արաբովթ. և ո՛չ ել բանն ՚ի վեր*։ ²⁰Եւ եկին ծառայքն Աբեսողոմայ առ կինն ՚ի տուն անդր, և ասեն. Ո՞ւր են Աքիմասս և Յովնաթան։ Եւ ասէ ցնոսա կինն. Անցին յայնկոյս ջրոյդ։ Եւ նոքա խնդրեցին զնոսա՝ և ո՛չ գտին, և դարձան յերուսաղէմ։ ²¹Եւ եղև յետ գնալոյն նոցա, ելին ՚ի գբոյն և չոգան՝ պատմեցին արքայի Դաւթի, և ասեն ցԴաւթ. Արիք և անցէ՛ք ըստ ջուրդ. զի զայս ինչ և զայս խորհեցաւ վասն ձեր Աքիտոփել։ ²²Եւ յարեա՛ւ Դաւթ՝ և ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, և անցին ընդ Յորդանան մինչև ՚ի լուսանալ առաւօտուն, մինչև ո՛չ մնալոյ և ո՛չ միոյ ուրուք՝ որ ո՛չ անց ընդ Յորդանան*։ ²³Եւ Աքիտոփել իբրև ետես թէ ո՛չ եղև խորհուրդն նորա, հանդերձեաց զէ՛շ իւր, և յարեաւ գնաց ՚ի տուն իւր ՚ի քաղաք, և հրաման ետ տան իւրում, և խեղդ արկ՝ և մեռաւ, և թաղեցա՛ւ ՚ի գերեզմանի հօր իւրոյ։

ԾԳ ²⁴Եւ Դաւթ եհան ՚ի Բանակս. և Աբեսողոմ անց ընդ Յորդանան՝ ինքն և ամենայն Իսրայէլ ընդ նմա։ ²⁵Եւ զԱմեսայի կացոյց Աբեսողոմ փոխանակ Յովաբայ ՚ի վերայ զօրուն. և Ամեսայի՝ որդի՛ էր առն որում անուն էր Յոթոր Յեգրայելացի. նա եմունտ առ Աբիգեայ դուստր Յեսսեայ՝ քոյր Շարուհեայ մօր Յովաբայ*։ ²⁶Եւ բանակեցաւ Աբեսողոմ և ամենայն Իսրայէլ յերկրին Գաղաադու։ ²⁷Եւ եղև իբրև եհան Դաւթ ՚ի Բանակսն, Վեսբի որդի Նաասայ յՌաբաթայ որդւոցն Ամոնայ և Մաքիր որդի Ամիէլի ՚ի Ղադաբարայ, և Բերգելի Գաղաադացի յՌոգելիմայ, ²⁸բերին անկողինս տասն, և օթոցս և սանս տասն, և անօթս բրտի, և ցորեան, և գարի, և ալկր, և փոխինդ, և ոլոռն, և ոսպն, ²⁹և մեղր, և կոզի, և պատրուճակս, և որթս դիեցիկս. և մատուցին Դաւթի և զօրուն որ ընդ

* Յօրինակին. ՚ի միում ՚ի տեղւեաց ուր և։ *Ոմանք.* Չնորա և զարանց նորա և ո՛չ զմի ոք։

* *Ոմանք.* Եւ զամենայն ժողովուրդ նորա ընդ նմա։

* *Ոմանք.* Եւ մտին ՚ի տուն մի ՚ի Բաւուրիմ։

* *Ի լուս՝ ՚ի վերայ՝* արաբովթ. *նշանակի՝* նուռն և պաղատիտ. և այլ *ոմանք* *նշանակեն.* բանջար։

* *Ոմանք.* Մինչև ցլուսանալ առա՛։

* *Օրինակ մի.* Դուստր Նաասայ քոյր Շա՛։

նմա՝ ուտել. զի էր զօրն քաղցեալ՝ և ծարաւի՝, և լքեալ յանապատի անդ՝:

18

Գլուխ ԺԸ

ԾԴ ¹Եւ հանդէս արար Դաւիթ զօրուն որ ընդ նմա, և կացոյց ՚ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս: ²Եւ առաքեաց Դաւիթ զերի՛ր մասն զօրուն ՚ի ձեռն Յովաբայ, և զերի՛ր մասն ՚ի ձեռն Աբեսսայ որդւոյ Շարուհեայ՝ եղբօր Յովաբայ, և զերի՛ր մասն ՚ի ձեռն Եթթայ Գեթացւոյ. և ասէ Դաւիթ զօրն. Ելանելով ելից և ես ընդ ձեզ: ³Եւ ասեն. Ո՛չ ելցես. զի եթէ փախչիցիմք, ո՛չ դիցեն ՚ի վերայ մեր զսիրտ. և եթէ կիսոյ՛ կես ՚ի մէնջ մեռանիցիմք՝ ո՛չ դիցեն ՚ի վերայ մեր զսիրտ. և դու իբրև զտասն հազար ՚ի մէնջ ես. և արդ լա՛ւ է թէ դու ՚ի քաղաքի իցես՝ զի լինիցիս մեզ յօգնականութիւն*։ ⁴Եւ ասէ ցնոսա արքայ. Որ ինչ հաճոյ՛ իցէ առաջի ձեր արարից: Եւ եկաց արքայ յե՛ց առ դրանն. և ամենայն զօրն ելանէր ըստ հարիւրաւորաց և ըստ հազարաւորաց: ⁵Եւ պատուէր ետ արքայ Յովաբայ և Աբեսսայ և Եթթայ՝ և ասէ. Խնայեսցի՛ք ՚ի պատանեակ իմ Աբեսողոմ: Եւ ամենայն զօրն լուաւ ՚ի պատուիրելն արքայի ամենայն իշխանացն վասն Աբեսողոմայ*։ ⁶Եւ ել ամենայն զօրն յանտառն ընդդէմ Իսրայէլի, և եղև կռիւ յանտառին Եփրեմայ: ⁷Եւ պարտեցաւ անդ զօրն Իսրայէլի առաջի ծառայիցն Դաւթի. և եղև խորտակումն մե՛ծ յաւուր յայնմիկ. և անկան քսան հազար արանց: ⁸Եւ եղև անդ պատերազմն՝ ցրուեալ ընդ ամենայն երեսս երկրին. և յաճախեաց անտառն ուտել ՚ի զօրուէն քան զորս եկեր սուրն յաւուրն յայնմիկ*։

ԾԵ ⁹Եւ դիպեցաւ Աբեսողոմ առաջի ծառայիցն Դաւթի. և Աբեսողոմ է՛ր հեծեալ ՚ի ջորուջ իւրում, և եմո՛ւտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ, և պատեցաւ գլուխ նորա ընդ կաղնեաւն, և կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր, և ջորին անց ՚ի ներքոյ նորա*։ ¹⁰Եւ ետես այր մի, և պատմեաց Յովաբայ և ասէ. Ահա տեսի զԱբեսողոմ կախեալ զկաղնւոյն: ¹¹Եւ ասէ Յովաբ ցայրն որ պատմեաց նմա. Եւ ահա տեսեր՝ և ընդէ՞ր ո՛չ հարեր զնա ընդ գետինն. և ես տայի՛ քեզ այսօր յիսուն սկեղ արծաթոյ՝ և սուսէր մի*։ ¹²Եւ ասէ այրն ցՅովաբ. Եթէ կշռելով իսկ առնուի ՚ի ձեռաց քոց հազար սիկղ արծաթոյ՝ ո՛չ ձգէի զձեռն իմ յորդի արքայի. զի յականջս մեր պատուիրեաց արքայ՝ քեզ և Աբեսսայ՝ և Եթթայ, և ասէ. Ձգոյ՛ջ լինիջիք պատանեկին Աբեսողոմայ*, ¹³մի՛ ինչ վնաս առնել անձին նորա. և ամենայն բան ո՛չ թաքչիցի յարքայէ, և դու կայցես ՚ի բացեայ: ¹⁴Եւ ասէ Յովաբ. Վասն այդորիկ իսկ անցից առաջի քո: Եւ ա՛ռ Յովաբ երիս նետս ՚ի ձեռին իւրում, և եհար զնոսա ՚ի սրտի Աբեսողոմայ մինչդեռ կենդանի՛ կայր ՚ի

* Ոմանք. Եւ որթս դիպցիկս:

* Ոմանք. Ձի եթէ փախչելով փախչիցիմք... ՚ի վերայ մեր սիրտ: Այլք. Ձի դու իբրև զտասն հա՛:

* Ոմանք. ՚ի պատանեակն Աբեսողոմ:

* Ոմանք. Ցրուեալ ընդ երեսս ամենայն դաշտին, և յաճ՛... ուտել ՚ի զօրուէն քան զորս եկեր սուրն ՚ի զօրուէն յա՛: Յօրինակին պակասէր. ՚ի զօրուէն քան զորս եկեր սուրն յաւուրն յայն՛:

* Ոմանք. Ընդ թաւ կաղնեաւն մե՛ծ:

* Ոմանք. Յիսուն սիկղ արծա՛:

* Այլք. Եթէ կշռով իսկ առնուի:

կաղնոջն: ¹⁵Եւ պատեցան տասն մանկունք ՚ի զինակրացն Յովաբայ, և հարին զԱբեսողոմ և սպանին զնա*:

ԾԶ ¹⁶Եւ եհար Յովաբ զփողն եղջերեայ, և դարձաւ զօրն որ ընդ նմա, զի մի՛ երթիցեն զհետ Իսրայէլի. զի խնայեաց Յովաբ ՚ի զօրն*: ¹⁷Եւ առ Յովաբ զԱբեսողոմ, և ընկէց զնա ՚ի վի՛հ մեծ յանտառին ՚ի խորին յոյժ. և ամենայն Իսրայէլ փախեան՝ այր իւրաքանչիւր ՚ի բնակութիւն իւր: ¹⁸Բայց Աբեսողոմ մինչդեռ կենդանի՛ էր՝ կանգնեաց իւր արձան. և կանգնեաց ՚ի Յաբին զարձանն ՚ի հովիտս քազաւորաց. քանզի ասաց թէ չի՛ք իւր որդի որ յիշիցէ զանուն նորա. և կոչեաց զարձանն յիւր անուն. և կոչեաց զնա ձեռն Աբեսողոմայ մինչև ցայսօր:

ԾԷ ¹⁹Եւ Աքիմասս՝ որդի Սադովկայ ասէ. Ընթացայց տարայց անտիս արքայի. զի արար նմա Տէր իրաւունս ՚ի ձեռաց թշնամեաց իւրոց: ²⁰Եւ ասէ ցնա Յովաբ. Ոչ ես դու այր անտեաց յաւուր յայսմիկ, և տացես անտիս յայլում անուր. բայց յաւուր յայսմիկ մի՛ տացես անտիս, քանզի որդի արքայի մեռաւ: ²¹Եւ ասէ ցՔուսի. Երթ պատմեա՛ արքայի զոր ինչ տեսեր: Եւ երկիր եպագ Քուսի Յովաբայ և ել: ²²Եւ յաւել ևս Աքիմասս որդի Սադովկայ և ասէ ցՅովաբ. Եւ զի՞նչ լինիցի եթէ ընթանայցեն և ես զկնի Քուսեայ: Եւ ասէ Յովաբ. Եւ ընդէ՞ր իցէ քեզ այն՝ եթէ ընթանայցես որդեակ իմ. այսր եկ, ոչ ինչ են քեզ անտիքն յօգուտ երթալոյ: ²³Եւ ասէ Աքիմասս. Զի՞նչ է՞ թէ ընթանայցեն: Եւ ասէ ցնա Յովաբ. Ընթա՛: Եւ ընթացաւ Աքիմասս ընդ ճանապարհն Կեքարայ՝ և անց զՔուսեալ*: ²⁴Եւ Դաւիթ նստէր ՚ի մէջ երկոցունց դրանցն. և զնաց դէտն ՚ի տանիս դրանն ՚ի պարիսպն. ամբարձ զաչս իւր և ետես, և ահա այր ընթանայր միայն հանդէպ իւր. ²⁵և աղաղակեաց դէտն և ա՛զդ արար արքայի: Եւ ասէ արքայ. Եթէ միայն է՛ անտիք են ՚ի բերան նորա: Եւ զալով զայր՝ և մերձենայր: ²⁶Եւ ետես դէտն մեւս ևս այր ընթացեալ. և աղաղակեաց դէտն ՚ի դուռն՝ և ասէ. Ահա մեւս ևս այր ընթանայ միայն: Եւ ասէ արքայ. Եւ նա՛ անտաւոր է: ²⁷Եւ ասէ դէտն. Տեսանեմ զընթացս առաջնոյն իբրև զընթացս Աքիմասսայ որդոյ Սադովկայ: Եւ ասէ արքայ. Այր բարի՛ է նա, և բարի՛ անտեօք գայ: ²⁸Եւ աղաղակեաց Աքիմասս և ասէ ցարքայ. Ողջո՛յն է: Եւ երկիր եպագ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և ասէ. Օրհնեալ է Տէր Աստուած քո, որ փակեաց զարս ատելիս քո որ ամբարձին զձեռս իւրեանց ՚ի վերայ տեսռն մերոյ արքայի: ²⁹Եւ ասէ արքայ, եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբեսողոմայ: Եւ ասէ Աքիմասս. Տեսի՛ խումբ մեծ ուստի առաքեացն Յովաբ ծառայ քո՝ արքայ զիս զծառայ քո, և ոչ զհտացի թէ զինչ իցէ անդ*: ³⁰Եւ ասէ արքայ. Դարձի՛ր և արձանացիր: Եւ դարձաւ և եկաց: ³¹Եւ եհաս Քուսի, և ասէ ցարքայ. Անտիք տեսռն իմոյ արքայի. զի արար քեզ Տէր իրաւունս այսօր ՚ի ձեռաց ամենայն յարուցելոց ՚ի վերայ քո: ³²Եւ ասէ արքայ ցՔուսի. Եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբեսողոմայ. և ասէ Քուսի. Եղիցին իբրև զմանուկն թշնամիք տեսռն իմոյ արքայի, և ամենայն յարուցեալք ՚ի վերայ քո ՚ի չարութիւն*:

ԾԸ ³³Եւ խռովեցաւ արքայ, և ել ՚ի վերնատուն դրանն և ելաց. և այսպէս ասէր ՚ի լալ իւրում. Որդեակ իմ Աբեսողոմ, Աբեսողոմ որդեակ իմ, ո՛ տայր զմահ իմ

* Այլք. Եւ պատեցան տասն մանուկ:

* Յօրինակին պակասէր. Եւ դարձաւ զօրն որ ընդ նմա: Ուր Ոսկան. Զօրն իւր ընդ նմա:

* Բազումք. Եւ ասէ. Զի՞նչ է՞ եթէ ընթա՛:

* Ոմանք. խումբք մեծ:

* Ոմանք. Մանկանն Աբեսողոմայ:

փոխանակ քո. Ե՛ս փոխանակ քո Աբեսողո՛մ որդեակ իմ, որդեակ իմ Աբեսողոմ:

19

Գլուխ ԺԹ

¹Եւ պատմեցա՛ւ Յովաբայ՝ և ասեմ. Ահաւանիկ արքայ լա՛յ և սգա՛յ ՚ի վերայ Աբեսողոմայ: ²Եւ եղև փրկութիւնն յաւուր յայնմիկ ՚ի սո՛ւգ ամենայն զօրուն. զի լուաւ զօրն յաւուր յայնմիկ, ասեմ թէ տրտմեցա՛ւ արքայ վասն որդւոյն իւրոյ: ³Եւ խորշէ՛ր զօրն յաւուր յայնմիկ մտանել՝ ՚ի քաղաքն, որպէս խորշիցի զօր ամաչեցեալ յորժամ փախչիցի ՚ի պատերազմէ: ⁴Եւ արքայ ծածկեաց զերեսս իւր, և կական բարձ ՚ի ձա՛յն մեծ՝ և ասէ. Որդեակ իմ Աբեսողոմ, Աբեսողոմ որդեակ իմ: ⁵Եւ եմո՛ւտ Յովաբ առ արքայ ՚ի տուն՝ և ասէ. Յամօ՞թ արարեր այսօր զերեսս ամենայն ծառայից քոց, որ ապրեցուցին զքեզ այսօր՝ և զանձինս ուստերաց և դստերաց քոց, և զանձինս կանանց և զհարճի՛ց քոց. ⁶սիրել զատելիս քո՝ և ատել զսիրելիս քո. և ուսուցեր այսօր՝ եթէ ո՛չ ինչ համարիս զիշխանս քո, և ո՛չ զծառայս քո. և ստուգեալ գիտեմ այսօր, զի եթէ Աբեսողոմ կենդանի՝ էր՝ մեք ամենեքեան մեռեալ էաք, և այն էր քեզ հաճոյ՝: ⁷Եւ արդ՝ յարուցեալ էլ և խօսեաց ՚ի սիրտս ծառայից քոց. զի ՚ի Տէր երդուեալ, եթէ ո՛չ ելանիցես այսօր, եթէ ագանիցի առ քեզ այր մի զգիշերս զայս. և գիտասջի՛ր յանձն քո, թէ չա՛ր լինիցի քեզ այն՝ քան զամենայն չարիս որ եկին ՚ի վերայ քո ՚ի մանկութենէ քումմէ մինչև ցայժմ: ⁸Եւ յարեա՛ւ արքայ և նստաւ ՚ի դրանն. և ամենայն զօրուն պատմեցին և ասեմ. Ահա արքայ նստի՛ առ դրանն: Եւ եմուտ ամենայն զօրն առաջի արքայի. և Իսրայէլ փախեա՛ւ այր իւրաքանչի՛ւր ՚ի բնակութիւն իւր:

ԾԹ ⁹Եւ ամենայն ժողովուրդն խղճէր յամենայն ցեղսն Իսրայէլի, և ասէին. Արքայ Դաւիթ փրկեա՛ց զմեզ յամենայն թշնամեաց մերոց, և նա՛ ապրեցոյց զմեզ ՚ի ձեռա՛ց այլազգեաց. և արդ՝ փախստական է յերկրես և ՚ի թագաւորութենէ իւրմէ, յԱբեսողոմայ. ¹⁰և Աբեսողոմ զոր օժա՛ք մեզ՝ մեռա՛ւ ՚ի պատերազմի. և արդ՝ դուք զի՞ լռեալ կայք ՚ի դարձուցանելոյ զարքայ. և պատգամ ամենայն Իսրայէլի եկն առ արքայ: ¹¹Եւ արքայ Դաւիթ առաքեա՛ց առ Սադոկ և առ Աբիաթար քահանայս՝ և ասէ. Խօսեցարուք ընդ ծերս Յուդայ և ասացէք. Ընդէ՞ր լինիք յետինք դարձուցանել զարքայ ՚ի տուն իւր: Եւ պատգամ ամենայն Իսրայէլի եկն առ արքայ: ¹²Եւ ասէ Դաւիթ ցցեղսն Յուդայ. Ոսկերք իմ և մարմինք իմ դուք՝ ընդէ՞ր լինիք յետինք դարձուցանել զարքայ ՚ի տուն իւր: ¹³Եւ ցլմեսայի ասասջիք. Ո՞չ ոսկր իմ և մարմին իմ ես դու, և արդ՝ օն և օն արասցէ ինձ Աստուած և օն և օն յաւելցէ, եթէ ո՛չ իշխան զօրուն լինիցիս առաջի իմ զամենայն աւուրս փոխանակ Յովաբայ: ¹⁴Եւ դարձո՛յց զսիրտ ամենայն Յուդայ իբրև զառն միոջ, և առաքեցին առ արքայ և ասեմ. Դարձի՛ր դու՝ և ամենայն ծառայք քո: ¹⁵Եւ դարձա՛ւ արքայ, և եկն մինչև ցՅորդանան: Եւ արք Յուդայ եկին ՚ի Գաղգաղայ՝ երթալ ընդ առաջ արքայի, և անցուցանել զարքայ ընդ Յորդանան: ¹⁶Եւ աճապարեա՛ց Սեմէի որդի Գերայ որդւոյ Յիմենայ

* *Ոմանք.* Եւ այն հաճոյ էր քեզ:

* *Բազումք.* Առ Սադոկ և Աբիաթար քահանայս:

* *Ի լուս՝.* Եւ ասէ Դաւիթ ցՅորդանան Յուդայ. ուր *ոմանք՝* ցցեղն:

* *Յօրինակին պակասէր.* Լինիցիս *առաջի իմ* զամենայն աւ:՝:

ի Բաւորիմայ, և էջ ընդ առն Յուդայ ընդ առաջ արքայի Դաւթի. ¹⁷և հազար այր ընդ նմա ՚ի Բենիամինէ, և Սիբա՝ պատանի տանն Սաւուդայ, և հնգետասանքին որդիք նորա ընդ նմա, և քսանքին ծառայք նորա ընդ նմա. և կազմեցին զՅորդանան առաջի արքայի: ¹⁸Եւ հարին սպասաւորութիւն անցուցանելոյ զարքայ. և անցին անցաւորք զարթուցանել զտունն արքայի, և առնել զողորմութիւն առաջի աչաց նորա:

Կ Եւ Սեմէի որդի Գերայ անկաւ՝ ՚ի վերայ երեսաց իւրոց առաջի արքայի՝ մինչ անցանէր ընդ Յորդանան*, ¹⁹և ասէ ցարքայ. Մի՛ համարեսցի տէր իմ արքայ՝ անօրէնութիւն. և մի՛ յիշեսցէ զոր ինչ յանցեալ ծառայ քո՝ յաւուր յորում ելանէր տէր իմ յերուսաղէմէ, դնել արքայի ՚ի սրտի իւրում*. ²⁰զի գիտաց ծառայ քո թէ մեղայ. և ահաւասիկ ես եկի այսօր յառաջագոյն քան զամենայն տունն Յովսեփայ, իջանել ընդ առաջ տեառն իմոյ արքայի: ²¹Եւ պատասխանի՛ ետ Աբեսսա որդի Շարուիեայ՝ և ասէ. Միթէ փոխանակ այնորիկ ո՞չ մեռանիցի Սեմէի, զի անէ՛ծ զօծեալ Տեառն: ²²Եւ ասէ Դաւիթ. Չի՞ կայ իմ և ձեր որդիք Շարուիեայ, զի ինիք դուք ինձ այսօր ՚ի դաւաճանութիւն. մի՛ ոք մեռցի այսօր այր յսրայէլէ. միթէ ո՞չ գիտիցեմ ես, զի այսօր թագաւոր եմ ես ՚ի վերայ Իսրայէլի*: ²³Եւ ասէ արքայ ցՍեմէի. Ո՛չ մեռցիս: Եւ երդուաւ նմա արքայ:

ԿԱ ²⁴Եւ Սեմփիբոսթ որդի Յովնաթանու՝ որդւոյ Սաւուդայ էջ ընդ առաջ արքայի. և ո՛չ էր դարմանեալ զոտս իւր, և ո՛չ էր հատեալ զեղընգունս իւր, և ո՛չ էր փոքրեալ զմօրուս իւր, և ո՛չ էր արարեալ զընչօք իւրովք, և ո՛չ էր լուացեալ զհանդերձս իւր, յօրէ յօրմէ հետէ գնաց արքայ՝ մինչև ցօրն յորում եկն նա խաղաղութամբ*: ²⁵Եւ եղև իբրև եմուտ յերուսաղէմ, ել ընդ առաջ արքայի. և ասէ ցնա արքայ. Չի՞ է՝ զի ո՛չ գնացեր ընդ իս Սեմփիբոսթ: ²⁶Եւ ասէ ցնա Սեմփիբոսթ. Տէ՛ր իմ արքայ. ծառայ իմ արհամարհեաց զիս, զի ասաց ծառայ քո ցնա՝ թէ կազմեա՛ ինձ էշ, և հեծայց ՚ի նա և գնացից ընդ արքայի. զի կա՛ղ է ծառայ քո: ²⁷Եւ զայրացոյց ընդ իս ծառայ քո զքեզ տէ՛ր իմ արքայ. և տէր իմ արքայ արար զբարին իւր առաջի իւր իբրև զհրեշտակ Աստուծոյ. և արդ՝ արա՛ որ ինչ բարի՛ է յաչս քո*. ²⁸զի ո՛չ էր ամենայն տուն հօր իմոյ՝ եթէ ո՛չ արք մահու տեառն իմոյ արքայի, և կարգեցեր զծառայ քո ընդ այնոսիկ որ ուտեն զսեղան արքայի. և արդ՝ զի՞նչ իրաւունք կա՛ն իմ այսուհետև բողոք ունել միւսանգամ առ արքայ: ²⁹Եւ ասէ ցնա արքայ. Չի՞՞ ևս խօսիս զբանս քո. ասացի թէ դո՛ւ և Սիբա բաժանեցէ՛ք զագարակն: ³⁰Եւ ասէ Սեմփիբոսթ ցարքայ. Չամենայն իսկ առցէ, որովհետև եկն արքայ խաղաղութամբ ՚ի տուն իւր:

ԿԲ ³¹Եւ Բերզելի Գաղաադացի էջ յԻոզելիմայ, և անցոյց զարքայ ընդ Յորդանան, յուղարկել զնա ՚ի Յորդանանէ: ³²Եւ Բերզելի՛ այր ծեր էր յոյժ, որդի ամաց ութսնից. և նա կերակրեաց զարքայ մինչ բնակէր ՚ի Բանակս. զի այր մե՛ծ էր յոյժ: ³³Եւ ասէ արքայ ցԲերզելի. Դու անցցե՛ս ընդ իս՝ և կերակրեցի՛ց զծերութիւն քո ընդ իս յերուսաղէմ: ³⁴Եւ ասէ Բերզելի ցարքայ. Քանի՞ ինչ իցեն աւուրք կենաց իմոց, զի ելանիցեմ ընդ արքայի յերուսաղէմ. ³⁵որդի ամաց ութսնից եմ ես այսօր, միթէ գիտիցե՞մ ինչ ՚ի մէջ բարւոյ և չարի. կամ թէ

* Ոճանք. Մինչև անցանէր ընդ:

* Ոճանք. Եւ մի՛ յիշեսցէ տէր իմ, զոր ինչ:

* Ոճանք. Իմ և ձեր որդի Շարու... միթէ ո՞չ գիտիցես զի այսօր: Այլք. Այսօր թագաւորեմ ես ՚ի վերայ Իսրայէլի:

* Ոճանք. Մինչև յօրն՝ յորում:

* Ոճանք. Արար զբարին առաջի իւր:

իմանայցէ՞ ծառայ քո զոր ուտեն, կամ զոր ըմպեն. կամ թէ լսիցե՞մ տակաւին զձայն գուսանաց և վարձակաց. և ընդէ՞ր լինիցի ծառայ քո բեռն տեառն իմոյ արքայի: ³⁶Սակա՛ւ ինչ անց ծառայ քո ըստ Յորդանան ընդ արքայի. և ընդէ՞ր հատուցանիցես ինձ արքայ զհատուցումնդ զայդ* . ³⁷Նստցի՛ ծառայ քո՝ և մեռցի՛ ՚ի քաղաքի՛ իւրում, և ՚ի գերեզմանի հօր և մօր իւրոյ. և ահա ծառայ քո Քամաամ անցցէ՛ ընդ տեառն իմում արքայի. և արա՛ նմա որ ինչ բարի՛ թուի առաջի աչաց քոց: ³⁸Եւ ասէ արքայ. Անցցէ՛ ընդ իս Քամաամ, և ես արարի՛ց նմա որ ինչ բարի իցէ առաջի աչաց իմոց. և զամենայն որ ինչ ակն ունիցիս յինէն՝ արարի՛ց թեգ:

ԿԳ ³⁹Եւ անց ամենայն ժողովուրդն ընդ Յորդանան, անց և արքայ. և համբուրեաց արքայ զԲերզելի, և օրհնեաց զնա. և դարձաւ ՚ի տեղի իւր: ⁴⁰Եւ անց արքայ ՚ի Գաղգաղայ, անց և Քամաամ ընդ նմա. և ամենայն ժողովուրդն Յուդայ անցին ընդ արքայի, և կէս ժողովրդեանն Իսրայէլի: ⁴¹Եւ ահա ամենայն այր Իսրայէլի եկին առ արքայ՝ և ասեն ցնա. Չի՞ է՝ զի գողացան զքեզ եղբարք մեր այր Յուդայ, և անցուցին զարքայ և զտուն իւր ընդ Յորդանան* : ⁴²Եւ պատասխանի՛ ետ այր Յուդայ՝ առն Իսրայէլի՝ և ասէ. Քանզի մերձաւոր իսկ է իմ արքայ. և ընդէ՞ր դժկամակ եղեր վասն բանիս այսորիկ. միթէ ուտելով կերա՞ք ինչ յարքայէ, կամ թէ պարզև՞ ետ մեզ, կամ թէ զբեռն ինչ եբա՞րձ զմեր* : ⁴³Պատասխանի ետ այր Իսրայէլացի առն Յուդայ՝ և ասէ. Տասն ձեռք իմ են յարքայի, և անդրանիկ ե՛ս եմ քան զձեզ. նա՛ և ՚ի Դաւթի՝ ե՛ս ՚ի վեր եմ քան զքեզ. և ընդէ՞ր այդպէս թշնամանեցեր զիս. և ո՛չ եղև ՚ի համարի բան իմ, նախ՝ ինձ դարձուցանել զարքայ առ իս: Եւ խստացա՛ւ բան ա՛ռն Յուդայ՝ քան զբան ա՛ռն Իսրայէլի* :

20

Գլուխ Ի

ԿԴ ¹Եւ անդ խրախուսեաց այր անօրէն, և անուն նորա Սաբեէ որդի Բոքորայ՝ այր Յեմինացի, փո՛ղ եհար եղջերաւ՝ և ասէ. Չի՞ք մեր մասն ՚ի Դաւթի, և ո՛չ ժառանգութիւն յորդին Յեսսեայ. չուեա՛ այր իւրաքանչիւր ՚ի բնակութիւն քո Իսրայէլ* : ²Եւ ել ամենայն Իսրայէլ ՚ի Դաւթ զկնի Սաբեեայ՝ որդւոյ Բոքորայ, և այր Յուդայ չոգան զհետ թագաւորին իւրեանց ՚ի Յորդանանէ մինչև ցերուսաղէմ:

ԿԵ ³Եւ եմուտ Դաւիթ ՚ի տուն իւր յերուսաղէմ, և ա՛ռ արքայ զտասն կանայս զհարճս իւր զոր եթող պահել զտունն, և ետ զնոսա ՚ի տո՛ւն պահեստի, և կերակրեաց զնոսա. և առ նոսա ո՛չ եմուտ. և էին նեղեալք, զի մինչև ցօր մահուան իւրեանց կեցին այրիք* : ⁴Եւ ասէ Դաւիթ ցԱմեսայի. Չայնեա՛ առ իս

* Ոսկան. Ծառայք քո ընդ Յորդա՛ն:

* Ոմանք. Այր Իսրայէլի եկն առ արքայ:

* Ոսկան. Այր Յուդայ տանն Իսրայէլի, և ասէ:

* Ոմանք. Եմ ես քան զքեզ, նա և Դաւթի. *կամ*՝ ՚ի Դաւթի՝ ես: *Յօրինակին*. Եւ ո՛չ եղև ՚ի համարի բան մի:

* Ոմանք. Եւ ո՛չ ժառանգութիւն յորդին Յեսսեայ, այր իւրա՛ն:

* *Յօրինակին պակասէր*. ՚Ի տուն *իւր* յերուսաղէմ: *Ուր ոմանք*. Եւ եմուտ Դաւիթ յերուսաղէմ:

զամենայն այր Յուդայ գերիս աւուրս, և դու այսր եկեսցես*։ ⁵Եւ զնաց Ամեսայի ձայնել զՅուդայ, և յամեաց ՚ի ժամանակէն զոր եղ նմա։

ԿԶ ⁶Եւ ասէ Դաւիթ ցԱբեսսա. Արդ՝ առնէ մեզ չար Սաբէտ որդի Բոքորայ վասն Աբեսողոմայ. արդ՝ ա՛ն դու ընդ քեզ զծառայս տեառն քոյ, և անդեա՛ց զհետ նորա. գուցէ գտանիցէ իւր քաղաքս ամուրս, և ածիցէ ստուերա՛ծս ՚ի վերայ աչաց մերոց։ ⁷Եւ ելին զհետ նորա Աբեսսա՛ և արք Յովաբայ, և Քերեթին և Ուիելթին, և ամենայն զօրաւորք, և ելին յերուսաղեմէ պնտել զհետ Սաբէտ որդւոյ Բոքորայ։ ⁸Եւ մինչդեռ էին նոքա առ վիմին մեծի որ ՚ի Գաբաւոն, և Ամեսայի եմուտ առաջի նոցա. և Յովաբ զգեցեալ էր վարապանակս զրահից. և ՚ի վերայ նորա սուսեր ընդ մէջ, ծպնեալ առ միջովն պատենիւք հանդերձ. և այն էր թերաքամեալ*։ ⁹Եւ ասէ Յովաբ ցԱմեսայի, եթէ ո՞ղջ իցես եղբայր. և կալաւ Յովաբ աջով ձեռամբն զմօրուացն Ամեսայայ համբուրել զնա։ ¹⁰Եւ Ամեսայի ո՛չ զգուշացաւ ՚ի սրոյն որ էր ՚ի ձեռին Յովաբայ. և եհար զնա նովաւ Յովաբ ընդ սնակուշտն, և վայթեցաւ որովայն նորա յերկիր, և ո՛չ կրկնեաց նմա. և մեռաւ Ամեսայի։ Եւ Յովաբ և Աբեսսա եղբայր իւր պնդեցան զհետ Սաբէտայ որդւոյ Բոքորեայ*։ ¹¹Եւ այր ոմն եկն եկաց ՚ի վերայ Ամեսայայ յերիտասարդացն Յովաբայ՝ և ասէ. Որ ոք սիրիցէ զՅովաբ կամ զԴաւիթ, երթիցէ՛ զհետ Յովաբայ և Աբեսսայ*։ ¹²Եւ Ամեսայի կայր թաթաւեալ յարեանն ՚ի մէջ ճանապարհին. և տեսեալ առնն եթէ զտեղի՛ առեալ կայ ամենայն զօրն, տապալեա՛ց զԱմեսայի ՚ի ճանապարհէն յանդն, և ընկէց ՚ի վերայ նորա հանդերձ. քանզի տեսանէր զամենայն ոք եկեալ կացեալ ՚ի վերայ նորա։ ¹³Եւ իբրև փոխեցաւ ՚ի ճանապարհէն, անցանէր ամենայն այր Իսրայէլի զհետ Յովաբայ անդել զհետ Սաբէտայ որդւոյ Բոքորեայ։

ԿԷ ¹⁴Եւ անց ընդ ամենայն ցեղսն Իսրայէլի յԱբել և ՚ի Բեթմաքա՝ և ամենայն ընտիր ընտիրքն ժողովեցան և եկին զհետ նորա։ ¹⁵Եւ հասին և պատեցին ՚ի վերայ նորա զԱբել և զԲեթմաքայ. և կուտեցին բլուր հողոյ հանդէպ քաղաքին, և կանգնեցաւ իբրև զպատուար. և ամենայն զօրն որ ընդ Յովաբայ եղծանէր կործանէր զպարիսպն։ ¹⁶Եւ աղաղակեաց կին մի իմաստուն ՚ի պարսպէն և ասէ. Լուարո՛ւք լուարո՛ւք, ասացէ՛ք ցՅովաբ. Մատի՛ր այսր և խօսեցայ՛ց ընդ քեզ։ ¹⁷Եւ մատեաւ առ նա. և ասէ կինն. եթէ դո՞ւ իցես Յովաբ։ Եւ ասէ. Ե՛ս եմ։ Եւ ասէ ցնա. Լո՛ւր բանից աղախնոյ քոյ։ Եւ ասէ Յովաբ. ՚ի լսել էկեալ եմ ես։ ¹⁸Եւ խօսեցաւ՝ և ասէ. Բան ճառէր յառաջինս. և ասէին. Հարցանելով հարցաւ յԱբել և ՚ի Դան. եթէ պակասեցուցե՞ն, եթէ ասպատակիցե՞ն, հաւատարիմք Իսրայէլի. հարցանելով հարցցեն յԱբել, և ապա թէ պակասեցուցանիցեն*։ ¹⁹Ե՛ս եմ խաղաղարար հաստատութեան Իսրայէլի, և դու խնդրես կոտորե՞լ զքաղաքս Իսրայէլի. ընդե՞ր ընկղմես զժառանգութիւն Տեառն։ ²⁰Պատասխանի ետ Յովաբ՝ և ասէ. Քա՛ւ լիցի ինձ, քա՛ւ լիցի թէ ընկղմեցից և ասպականեցից. ²¹ո՛չ այդպէս է բանդ. զի այր մի ՚ի

* Ոմանք. Եւ ասէ արքայ ցԱմեսայի... և դու այդր կաց։ *Նաև սոքա ՚ի լուս՝. նշանակեն ՚ի Սիմաքոսէ.* Կոչեա՛ դու առ իս զամենայն որդիսն Յուդայ յաւուր երրորդի, և դու այսր եկեսցես։

* *Ի լուս՝.* Եւ Յովաբ զգեցեալ էր վարապանակս զհանդերձս իւր. և ՚ի վերայ նորա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝.*

* Ոմանք. Ընդ սնակուշտսն. և վարեցաւ, *կամ՝* վայրթեցաւ որովայն։

* Ոմանք. Ձիետ Յովաբայ։ Եւ Ամե՛։

* Ոմանք. եթէ պակասեցին. եթէ ասպատակեցին. հաւատարիմք Իսրայէլի հարցանեն Յաբել՝։

լեռնէ Եփրեմի Սաբէէ անուն նորա որդի Բոքորեայ, համբարձ զձեռն իւր ՚ի վերայ արքայի Դաւթի. տո՛ւք ինձ զնա՛ միայն, և զնացի՛ց ՚ի քաղաքէ աստի: Եւ ասէ կինն ցՅովաբ. Ահա՛ գլուխ նորա ընկեցի՛ առ քեզ ընդ պարիսպա՛: ²²Եւ եմո՛ւտ կինն առ ամենայն ժողովուրդն, և խօսեցաւ ընդ ամենայն քաղաքին իմաստութեամբ իւրով հատանել զգլուխն Սաբէեայ որդւոյ Բոքորեայ. և հատին ընկեցին զնա առ Յովաբ. և փո՛ղ եհար եղջերեալն, և սփռեցան ՚ի քաղաքէն յայնմանէ այր իւրաքանչիւր ՚ի բնակութիւնս իւրեանց. և Յովաբ դարձաւ յերուսաղէն առ արքայ՝: ²³Եւ Յովաբ էր ՚ի վերայ ամենայն զօրուն Իսրայէլի. և Բանեա որդի Յովիդեայ ՚ի վերայ Քերեթայն և Ոփելեթայն. ²⁴և Ադոնիրամ ՚ի վերայ հարկաց. և Յովսափատ որդի Աքիլովթայ յիշատակաց՝. ²⁵և Սուդատ դպրապետ. և Սադովկ և Աբիաթար քահանայք. ²⁶և Իրա՛ս որ Յարիմն էր՝ քահանայ Դաւթի:

21

Գլուխ ԻԱ

ԿԸ ¹Եւ եղև սո՛վ յաւուրս Դաւթի զերիս ամս. ամ զամի՛ զկնի. և խնդրեաց Դաւթ յերեսաց Տեառն. և ասէ Տէր. Վասն Սաւուղայ և վասն արեանց տան նորա է՛ վնասոյ այդ, զի կոտորեաց զԳաբաւոնացիսն #՝: ²Եւ կոչեաց արքայ Դաւթ զԳաբաւոնացիսն, և ասէ ցնոսա. և Գաբաւոնացիքն չեն որդիք Իսրայէլի, այլ յարենէ Ամուրիացւոցն, և որդիքն Իսրայէլի երդուան նոցա. և խնդրեաց Սաւուղ հարկանել զնոսա, նախանձ առեալ վասն որդւոցն Իսրայէլի և Յուդայ՝: ³Եւ ասէ Դաւթ ցԳաբաւոնացիսն. Ձի՞ոնչ արարից ձեզ. և ի՞նչ քաւեցից, և օրհնիցէք զժառանգութիւն Տեառն: ⁴Եւ ասեն ցնա Գաբաւոնացիքն. Ո՛չ զոյ մեր արձաթ և ոսկի առ Սաւուղայ և ՚ի տան նորա. և ո՛չ պիտի մեզ այր սպանանել յԻսրայէլէ: Եւ նա ասէ. Եւ արդ՝ զի՞ոնչ ասէք զի արարից ձեզ՝: ⁵Եւ ասեն ցարքայ. Այր որ սպառեաց զմեզ և հալածեաց զմեզ, որ համարեցաւ սատակել զմեզ, զնա՛ ապականեսցուք. զի մի՛ կացցէ յամենայն սահմանս Իսրայէլի՝. ⁶տացին մեզ եւթն արք յորդոց նորա, և յարագեսցուք զնոսա Տեառն ՚ի Գաբաա Սաւուղայ ընտիրս Տեառն: Եւ ասէ արքայ. Ե՛ս տաց ձեզ: ⁷Եւ խնայեաց արքայ ՚ի Մենփիբոսթ որդի Յովնաթանու որդւոյ Սաւուղայ՝ վասն երդմանն Տեառն՝ որ ՚ի մէջ Յովնաթանու որդւոյ Սաւուղայ և ՚ի մէջ Դաւթի: ⁸Եւ ա՛ռ արքայ զերկուս որդիսն Ռեսփայ դստեր Այիայ զորս ծնաւ Սաւուղայ, զԵրմոնթի և զՅեբուսթէ. և զհնգեսին որդիսն Մերովթայ դստեր Սաւուղայ, զորս ծնաւ Եսդրիէլի որդւոյ Բերզելեայ Մովլաթացւոյ՝. ⁹և ետ զնոսա ՚ի ձեռս Գաբաւոնացւոցն. և յարագեցին

* *Յօրինակին.* Որդի Բոքորեայ: *Ոմանք.* Տուք ինձ զդա միայն:

* *Ի լուս՝.* Ի քաղաքէն առ ՚ի նմանէ. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:* Ուր ևս ոմանք ունին. ՚ի քաղաքէն առ ՚ի յայնմանէ:

* *Ոմանք.* Որդի Աքիլովթայ... և Սուդայ դպրապետ:

* *Ոմանք.* Ամ զամի կնի... և վասն արանց տան նորա է:

* *Յօրինակին պակասէր. Եւ կոչեաց արքայ Դաւթ զԳաբաւոնացիսն: Ոմանք.* Եւ որդիքն Իսրայէլի երդուան Աստուծոյ:

* *Ոմանք.* Եւ ո՛չ է պիտոյ մեզ այր սպա՛:

* *Ոմանք.* Այր որ համարեցաւ սա՛:

* *Ոմանք.* Ձերմոնթի և զՅեբուսթէ: *Բազումք.* Եւ զհնգեսին որդիսն Մեղքողայ դստեր Սա՛:

զնոսա՝ ի լերինն առաջի Տեառն. և անդ անկան եւթանքքին նոքա՝ ի միասին. և մեռան նոքա յաւուրս հնձոց, յառաջաւոր ՚ի սկզբան հնձոց գարեաց: ¹⁰Եւ ան Ռեսփայ դուստր Այիայ քուրձ և արկ ՚ի վերայ նոցա ՚ի վիմին իսկզբան հնձոց գարեաց, մինչև կաթեաց ՚ի վերայ նոցա ջուր յերկնից. և ո՛չ տայր թոյլ թռչնոց երկնից հանգչել ՚ի վերայ նոցա ՚ի տուէ, և ո՛չ գազանաց անապատի ՚ի գիշերի*:

¹¹Եւ պատմեցաւ Դաւթի զոր ինչ արար Ռեսփայ դուստր Այիայ՝ հարձ Սաւուղայ. և լքան. և եհաս ՚ի վերայ նոցա Դան որդի Յովասայ՝ ՚ի ծննդոց սկայից*:

¹²Եւ չոգաւ Դաւիթ և ան զոսկերսն Սաւուղայ, և զոսկերսն Յովնաթանու որդւոյ նորա յարանց Յաբիսայ Գաղաադու, որ գողացան զնոսա ՚ի հրապարակացն Բեթսանայ. զի արձանացուցին զնոսա անդ այլազգիքն՝ յաւուր յորում հարին զնոսա այլազգիքն ՚ի Գեղբուէ. ¹³և եհան անտի զոսկերսն Սաւուղայ՝ և զոսկերսն Յովնաթանու որդւոյ նորա. ժողովեաց և զյարագելոցն ¹⁴յերկրին Բենիամինի, ՚ի գերեզմանն որ է մերձ առ Կիս հայր նորա. և անդ թաղեցան. և արարին զամենայն ինչ զոր հրամայեաց արքայ. և լուան Լստուած երկրին յետ այնորիկ:

¹⁵Եւ եղև միւս անգամ պատերազմ այլազգեացն ընդ Իսրայէլի. և էջ Դաւիթ և ծառայք նորա ընդ նմա, և պատերազմեցան ընդ այլազգիսն. և լքան Դաւիթ:

¹⁶Եւ Աբեսա ՚ի Յեթբէ, որ էր ՚ի ծննդոցն Ռափայ. և կշիռ նիզակի նորա յերեքարկր սկեղէ կո՛ւռ պղնձոյ, և ինքն ուներ ընդ մէջ իւր թուր, և խորիէր հարկանել զԴաւիթ*:

¹⁷և օգնեաց Դաւթի Աբեսա որդի Շարուհեայ, և եհար զայլազգին և սպան զնա. յայնժամ երդուան արք Դաւթի՝ և ասեն, թէ ո՛չ ևս ելցես ընդ մեզ ՚ի պատերազմ, և ո՛չ շիջուցես զճրագդ Իսրայէլի:

¹⁸Եւ եղև յետ այնորիկ, եղև միւսանգամ պատերազմ ՚ի Գէթ ընդ այլազգիսն. յայնժամ եհար Սովբաք Ովսացի զՍեփտոն ՚ի ծննդոցն Ռափայ*:

¹⁹Եւ եղև միւսանգամ պատերազմ յիսրայէլ ընդ այլազգիսն. և եհար Էլեանան որդի Արիովգիմայ Բեթղահեմացոյ զԳողիադ Գեթացի. և փայտ նիզակի նորա իբրև զստորի ոստայնանկաց:

²⁰Եւ եղև միւսանգամ պատերազմ ՚ի Գէթ. և էր անդ այր մի անուն Մագուոն, և մատունք ձեռաց նորա և ոտից վեց վեց քսան և չորք թուով. և նա ծնաւ Ռափայ*:

²¹և նախատէր գիսրայէլ. և եհար զնա Յովնադաբ որդի Սամայ՝ եղբոր Դաւթի:

²²Չորեքին սոքա ծնան Ռափայ ՚ի տան ՚ի Գէթ. և անկան ՚ի ձեռս Դաւթի՝ և ՚ի ձեռս ծառայից նորա*:

22

Գլուխ ԻԲ

ԿԹ ¹Եւ խօսեցաւ Դաւիթ Տեառն զբանս օրհնութեանս այսորիկ՝ յաւուր յորում փրկեաց զնա Տէր ՚ի ձեռաց ամենայն թշնամեաց իւրոց, և ՚ի ձեռաց Սաւուղայ. ²և ասէ. Տէր վէ՛մ իմ և ամբողջին իմ, և փրկիչ իմ ինձ. ³Աստուած պահապան եղիցի ինձ. յուսացեալ եղէց ՚ի նա. վերակացո՛ւ իմ, և եղջևր փրկութեան իմոյ.

* *Յօրինակին.* Եւ ան Ռեսփայ դուստր:

* *Յօրինակին մերում համաձայն այլոց բազմաց ընդ մէջ* հարձ Սաւուղայ՝ և և լքան *դնի խաչանիչ չակերտ ինչ:*

* *Ոմանք.* Եւ Աբեսայ ՚ի Եթեայ, ՚ի ծննդոցն Ռաբայ:

* *Ոմանք.* Եհար Սովբայ Քովսացի:

* *Ոմանք.* Այր մի Մագուոն. կամ՝ Մագուիոն. ուր *Ոսկան.* ՚ի Մակդիոն:

* *Ոսկան.* ՚ի Ռափայ ՚ի տան Գէթայ:

պաշտպան իմ, և ապաւեն փրկութեան իմոյ. յանիրաւէ փրկեսցէ զիս Տէր*:
⁴Զօրհնեալն զՏէր կարդացից, և ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց: ⁵Զի
պաշարեցին զիս ջախջախանք մահու. ուղխք անօրէնութեան տագնապեցուցին
զիս: ⁶Երկունք մահու պատեցան զինն. ժամանեցին ինձ որոգայթք մահու: ⁷Ի
նեղութեան իմում կարդացից առ Տէր, և առ Աստուած իմ աղաղակեցից. և
լուիցէ՛ ինձ ՚ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի իմում. և աղաղակ իմ յականջս նորա*:
⁸Հայեցաւ և խռովեցաւ և շարժեցաւ երկիր, և հիմունք երկնից խռովեցան և
տապալեցան. զի բարկացաւ նոցա Տէր: ⁹Եւ ծուխ ՚ի բարկութենէ նորա, և հուր ՚ի
բերանոյ նորա կերիցէ. կայծակունք բորբոքեցան ՚ի նմանէ: ¹⁰Եւ խոնարհեցոյց
զերկինս և էջ, և մէզ ՚ի ներքոյ ոտից նորա: ¹¹Եւ և նստաւ ՚ի վերայ քրորէից, և
թռեաւ, և երևեցաւ ՚ի վերայ թևոց հողմոց: ¹²Եդ զխաւարն ծածկութիւն իւր, շուրջ
զնովաւ խորան իւր. և խաւար ջրոց թանձրացոյց զամպս օդոց*: ¹³Ի լուսոյն
առաջի նորա բորբոքեցան կայծակունք հրոյ*: ¹⁴Եւ որոտաց յերկնից Տէր, և
Բարձրեալն ետ զձայն իւր: ¹⁵Եւ առաքեաց զնետս իւր, և ցրուեաց զնոսա.
փայլատակեցոյց զփայլատակունս՝ և զարհուրեցոյց զնոսա. ¹⁶և երևեցան
յորդութիւնք ծովու. և յայտնեցան հիմունք տիեզերաց ՚ի սաստէ Տեառն, և ՚ի
շնչելոյ հողմոց բարկութեան նորա*: ¹⁷Առաքեաց ՚ի բարձանց և ա՛ռ զիս. ձգեաց
զիս ՚ի ջրոց բազմաց. ¹⁸կորզեաց զիս ՚ի բռնութենէ թշնամեաց իմոց, և
յատելեաց իմոց, զի սաստկացան քան զիս: ¹⁹Ժամանեցին ինձ աւուրք
նեղութեան իմոյ. եղև ինձ Տէր հաստատութիւն. ²⁰և եհան զիս յանդորր, և
ապրեցոյց զիս՝ զի հաճեցաւ ընդ իս. ²¹և հատոյց ինձ Տէր ըստ արդարութեան
իմում. և ըստ սրբութեան ձեռաց իմոց հատուցէ ինձ Տէր: ²²Զի պահեցի
զճանապարհս Տեառն, և ո՛չ անպարշտեցայց յԱստուծոյ իմմէ: ²³Զի ամենայն
իրաւունք նորա առաջի իմ են. և յարդարութեանց նորա ո՛չ հեռացայց: ²⁴Եւ եղէց
նմա անբիծ, և յառաջագոյն զգուշացայց յանօրէնութենէ իմմէ*: ²⁵Եւ հատուցէ՛
ինձ Տէր ըստ արդարութեան իմում. և ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի
աչաց նորա:

Հ ²⁶Ընդ սրբոյն սո՛ւրբ եղիցես, և ընդ ա՛ռն կատարելոյ կատարեսցիս. ²⁷և ընդ
ընտրելոյն ընտրեալ՝ եղիցես, և ընդ թիրելոյն թիրեսցիս: ²⁸Զի դու զժողովորդ
տնանկ՝ փրկեսցես, և զաչս անբարտաւանից խոնարհեցուցես. ²⁹զի դո՛ւ ես
ճրագ իմ Տէր. և դու Տէր լուսաւորեսցես ինձ զխաւար իմ: ³⁰Զի քև՝ ընթացայց
մինազինեալ. և Աստուծով իմով անցի՛ց ընդ պարիսպ*: ³¹Աստուած իմ հզօր.
որոյ անարատ է ճանապարհ իւր. բան Տեառն հզօր քննեալ, վերակացո՛ւ է
ամենայն ապաւինելոց իւրոց*: ³²Ո՛վ է հզօր բաց ՚ի քէն Տէր. և ո՛վ է հաստիչ բաց
յԱստուծոյ մերմէ: ³³Հզօ՛ր, զօրացուցանէ զիս զօրութեամբ. ձգեաց անարատ
զճանապարհս իմ*. ³⁴դնել՝ զոտս իմ իբրև զեղջերուաց. և ՚ի վերայ բարձանց

* Ոմանք. Աստուած իմ պահապան եղի՛: Այլք. Յանիրաւէ փրկեսցես զիս Տէր:

* Բազունք. Եւ լուիցէ ՚ի տաճարէ իւրմէ:

* Ոմանք. Եւ եդ զխաւար ՚ի ծածկութիւն:

* Ոմանք. Լոյս առաջի նորա. բոր՛:

* Ոմանք. Եւ ՚ի շնչել հողմոյ:

* Ոսկան. Եւ եղէ նմա... զգուշացայ յանօրէնութենէ:

* Ոսկան. Մենազինեալ. ուր ոմանք. միազինեալ:

* Ոսկան. Տէր Աստուած իմ հզօր:

* Այլք. Հզօր որ զօրացուցա՛:

կացուցանէ զիս*։ ³⁵Ուսուցանէ զձեռս իմ 'ի պատերազմ. և հաստատեաց աղեղն պղնձի զբազուկս իմ*։ ³⁶Եւ ետուն ինձ պաշտպանութիւն փրկութեան իմոյ. և հնազանդութիւն իմ յաճախեաց ինձ. ³⁷ընդարձակութիւն 'ի ներքոյ գնացից իմոց. և ո՛չ սասանեցան բարձք իմ։ ³⁸Հալածեցից զթշնամիս իմ և ապականեցից զնոսա, և ո՛չ դարձայց մինչև սպառեցից զնոսա։ ³⁹Խորտակեցի՛ց զնոսա՝ և մի՛ կանգնեցին. անկցին 'ի ներքոյ ոտից իմոց։ ⁴⁰Եւ զօրացուցես զիս զօրութեամբ 'ի պատերազմ. և կորացուցես 'ի ներքոյ իմ զյարուցեալսն 'ի վերայ իմ։ ⁴¹Եւ զթշնամիս իմ դարձուցես յետս յինէն, և զատելիս իմ կոտորեցեր*։ ⁴²Աղաղակեցեսն՝ և ո՛չ ոք իցէ որ օգնեսցէ. առ Տէր՝ և ո՛չ լուաւ նոցա։ ⁴³Եւ լեսի՛ զնոսա իբրև զհող երկրի. և իբրև զկաւ գռեհաց մանրեցից զնոսա։ ⁴⁴Եւ փրկեցես զիս 'ի կռուոյ ժողովրդոց, և պահեցես զիս 'ի գլուխ ազգաց։ Ժողովուրդ զոր ո՛չ գիտի՝ ծառայեաց ինձ*։ ⁴⁵և 'ի լուր ունկան լուան ինձ։ Որդիք օտարոտիք ստեցին ինձ*։ ⁴⁶որդիք օտարոտիք ընկեցին 'ի բաց. և սխալեցին 'ի պաշարման իւրեանց*։ ⁴⁷Կենդանի՛ է Տէր՝ և օրհնեալ է Պահապանն իմ. և բարձրացի՛ Աստուած իմ պահապան փրկութեան իմոյ։ ⁴⁸Հօգ՛ր Տէր որ առնէ զվրէժխնդրութիւն, խրատ՝ զժողովուրդս 'ի ներքոյ իմ։ ⁴⁹Եւ հանէ զիս 'ի թշնամեաց իմոց. և յարուցելոց 'ի վերայ իմ բարձրացուցէ՛ զիս. յառնէ անիրաւութեանց փրկեցես զիս*։ ⁵⁰Վասն այսորիկ գոհացայց զքէն՝ 'ի մէջ ազգաց Տէր, և անուան քում սաղմոս ասացից։ ⁵¹Մեծացուցանէ՛ զփրկութիւն թագաւորի, և առնէ ողորմութիւն օծելոյ իւրում Դաւթի՝ և զաւակի նորա մինչև ցլախտեան*։

23

Գլուխ ԻԳ

ՀԱ՛ 1Եւ այս են բանք Դաւթի վերջինք։ Հաւատարի՛մ Դաւթ որդի Յեսսեայ, և հաւատարի՛մ այր. զոր կացոյց Տէր յօծեալ Աստուծոյ 'ի վերայ Յակոբայ. և վայելուչ են երգք Իսրայէլի*։ ²Հոգի՛ Տեառն խօսեցաւ յիս, և բան նորա 'ի լեզուի իմում. ³ասէ Աստուած Իսրայէլի. ընդ իս իսկ խօսեցաւ Պահապանն Իսրայէլի. առակունն ասացի 'ի մարդ. ո՛վ է որ կալցի զերկիւղէ Տեառն և զԱստուծոյ*, ⁴ի լոյս առաւօտու։ Ծագեալ զարեգակն ընդ առաւօտս՝ և ո՛չ նուաղեաց 'ի լուսոյ. և իբրև անձրևոյ դալարոյ յերկրէ. ⁵զի ո՛չ եթէ այս տուն իմ է ընդ հզօրին Աստուծոյ։ Ուխտ յալիտենական եղ ինձ պատրաստական յամենայն ժամանակի պահել. զի ամենայն փրկութիւն իմ, և ամենայն կամք իմ Տէր։ Ձի մի՛ բողբոջեսցի ⁶անօրէնն. իբրև զփուշ մերժեալ են ամենեքին նորա՝ որ ո՛չ ձեռամբ

* *Ոմանք.* Ձոտս իմ որպէս զեղջերաց։
 * *Ոսկան.* Եւ հաստատեաց իբրև զաղե՛*։
 * *Այլք.* Դարձուցեր յետս։
 * *Ոմանք.* 'ի կռուոցն ժողովրդոց. և *ոմանք.* 'ի կռոյ ժո՛*։
 * *Ոմանք.* Որդիք օտարաց ստեցին ինձ, և 'ի լուր ականջաց լուան ինձ։
 * *'ի լուս՝.* Եւ սխալեցին 'ի պաշտամանց իւ՛. *համաձայն ոմանց 'ի բնաբ՝:* Ուր և *ոմանք.* 'ի պաշարմանց իւրեանց։
 * *Այլք.* Բարձրացուցես զիս։
 * *Ոմանք.* Ձփրկութիւն թագաւորի իւրոյ... մինչև յալիտեան։
 * *Ոմանք.* Եւ այս բանք են Դաւ՛... զի կացոյց Տէր յօծ՛*։
 * *Ոմանք.* Ձերկիւղ Տեառն և զԱստուծոյ։

առնուցուն* . 7և աշխատեսցի 'ի նոսա այր. և զամենայն երկաթ և զփայտ նիզակի հրով այրեսցէ. և բորբոքեսցին ամօթով իւրեանց* :

ՅԲ 8Այս անուանք են զօրավարացն Դաւթի. Յերուսթէ Քանանացի՝ իշխան երիր մասինն. Աքինոն Անոնացի, 'ի վերայ ութ հարիւրոց 'ի միում նուագի* : 9Եւ յետ նորա Եղէանան որդի իօրեղբօր նորա՝ որդի Սովսացւոյն, 'ի մէջ երից զօրավարացն Դաւթի. յՌեմա 'ի նախատել նորա զայլազգիս, ուր զունարեցան 'ի պատերազմ. 10և խրախուսեաց այր Իսրայէլի. և նա յարեաւ և եհար յայլազգեացն՝ մինչև մատգեցաւ ձեռն նորա սրովն. և արար Տէր փրկութիւն մեծ յաւուր յայնմիկ. և զօրն նստէր յետոյ նորա. բայց միայն 'ի կապուտն* : 11Եւ յետ նորա Սամաա որդի Սիսայ Արուկացի: Եւ ժողովեցան այլազգիքն 'ի Ծնօտն, և անդ էր վիճակ անդի լի՝ ոսպամբ. և զօրն փախեաւ յերեսաց այլազգեացն* . 12և արձանացաւ 'ի մէջ վիճակին, և ապրեցոյց զնա, և եհար զայլազգիսն. և արար Տէր փրկութիւն մեծ: 13Եւ իջին երեք յերեսնից, և իջին 'ի Կասովա առ Դաւիթ՝ յայրն Ողողումայ. զունդք այլազգեացն բանակեալ էին 'ի հովիտս Ռափայնոցն* . 14և Դաւիթ էր յայնժամ յամրոցին:

ՅԳ Եւ ճամբար այլազգեացն էր յայնժամ 'ի Բեթղահէմ: 15Եւ ցանկացաւ Դաւիթ՝ և ասէ. Ո՛ արբուցանէր ինձ ջուր 'ի ջրհորոյն Բեթղահէմի որ առ դրանն է: 16Եւ զունդք այլազգեացն էին 'ի Բեթղահէմ. և հատին երեք զօրավարք զբանակն այլազգեաց՝ և հանին ջուր 'ի ջրհորոյն Բեթղահէմի որ առ դրանն. և առին և եկին առ Դաւիթ. և ո՛չ կամեցաւ ընպէ՛լ զայն, այլ նուիրեաց զայն Տեառն* , 17և ասէ. Քա՛ւ լիցի ինձ Տէր առնել զայդ, եթէ զարիւն արանց երթելոց ոգւովք չափ՝ ընպիցեմ. և ո՛չ կամեցաւ ընպէ՛լ զայն: Զայն արարին երեք զօրավարքն* : 18Եւ Աբեսսա՝ եղբայր Յովաբայ որդի Շարուհեայ, ինքն իշխան 'ի մէջ երիցն. և նա՛ կանգնեաց զնիզակն իւր 'ի վերայ երեքարիւրոց վիրաւորաց. և նորա անուն* 19'ի մէջ երիցն յայնցանէ փառաւորեալ, և եղև նոցա իշխան. և մինչև յերիսն ո՛չ եհաս: 20Եւ Բանեա որդի Յովիդեայ որդի ա՛ռն զօրաւորի, որոյ բազում գործ գործեալ էր 'ի Կաբէէլա. և նա՛ եհար զերկուս որդիսն Ադրիէլի Սովաբացւոյ. և նա էջ և սպան զառնձն 'ի մէջ գրին յաւուր ձեան*. 21և նա՛ սպան զայրն երևելի՝ զայրն Եգիպտացի. և 'ի ձեռին Եգիպտացւոյն է՛ր նիզակ իբրև զփայտ կամրջի. և է՛ջ առ նա նիզակաւն, և յափշտակեաց զնիզակն 'ի ձեռաց Եգիպտացւոյն, և սպան զնա նորին նիզակաւ: 22Զայն արար Բանեա որդի Յովիդեայ. 23և նորա անուն 'ի մէջ երիցն զօրաւորաց. յերիցն փառաւորեալ, և առ երիսն ո՛չ հասանէր. և կարգեաց զնա Դաւիթ 'ի վերայ համբարաց իւրոց* :

ՅԴ Եւ այն անուանք են զօրաւորացն Դաւթի արքայի: 24Ասայէ՛լ եղբայր

* Ոսկան. Անօրէնքն իբրև:

* Ոմանք. Եւ աշխատիցին 'ի նոսա այր:

* Ոմանք. Ադինոն Ասովնայ 'ի վերայ ութ հարիւրոց վիրաւորաց 'ի մի՛:

* Ոմանք. Մինչև պարտեցաւ ձեռն նորա. բայց և սորա 'ի լուսանցս նշանակեն՝ մատգեցաւ:

* Ոմանք. Որդի Սիսայ Արուկացի:

* Ոսկան. Իջին երրորդ յերեսնից:

* Ոսկան. երրորդ զօրավարք. ուր ոմանք. զօրաւորք:

* Ոմանք. Առնել զայն... արանց երթալոց... երեք զօրաւորք:

* Ոսկան. Եւ նորա անուն (19) յերիսն: 'ի մէջ է՛:

* Յօրինակին. Գործեալ էր 'ի Բակէէլայ:

* Ոմանք. 'ի յերիցն փառաւորեալ:

Յովաբայ, նա՛ էր ՚ի մէջ երեսնիցն. Ելեանան որդի Ելիուդայ իօրեդօր նորա ՚ի Բեթղահէն: ²⁵Սամաա Ռուդացի: Սելլոն Կելովթացի* : ²⁶Ալլաս Փելլատացի: Իրաս՝ որդի Եսկաթայ թեկուացի: ²⁷Աբիեզեր Անաթովթացի՝ յորդուցն Ասովթացւոյն: ²⁸Ելլոն Աղիոյացի: Նոերէ Նետոփաթացի* : ²⁹Ալափ, որդի Փամփանայ: Անաովէ Նեփլաթացի: Եթթի, որդի Ռիբայ ՚ի Գաբաթայ որդուցն Բենիամինի Եփրաթացւոյ: ³⁰Ադդայի ՚ի ձորոյն Գովասայ: ³¹Աբիելթոն ՚ի դաշտավայրացն Ադդայի ՚ի Նաքալայ: Գասբիէ Լադաբարացի: Ասմոն Բարսամացի* : ³²Եղիաս Սալաբոնացի. որդի Ասանայ, Յովնաթան: ³³Սամնան Արովդացի: Եղիան, որդի Արեդայ Արաթիրացի* : ³⁴Աղ՚իփաղէթ, որդի Ասիբացւոյ՝ որդի Ամաքայ: Եղիաբ, որդի Աքիտոփելայ Գադամոնացւոյ* : ³⁵Ասարէ Կարմելացի: Տուուր Երքացի: ³⁶Գաղա, որդի Նաթանայ ՚ի զօրութենէ որդի Գաղաադայ* : ³⁷Էլիէ Ամմոնացի: Գելովրէ Բեքրովթացի, կապարճակիր Յովաբայ որդւոյ Շարուհեայ* : ³⁸Իրաս Յեթերացի: Գարէի՝ Բեթանացի* : ³⁹Ուրիա Քետացի. ընդ ամենայն երեսուն և եւթն: Այլք ՚ի հեղեղատէն Գադաբիելի որդւոյ Արաբովթացւոյն:

24

Գլուխ ԻԴ

Հէ ¹Եւ յաւել սրտմտութիւն Տեառն բորբոքել ՚ի վերայ Իսրայէլի. և գրգռեա՛ց զԴաւիթ ՚ի նոսա՝ և ասէ. Ե՛րթ թուեա՛ զԻսրայէլ՝ և զՅուդա՛: ²Եւ ասէ արքայ ցՅովաբ իշխան զօրուն որ ընդ նմա. Շրջեա՛ ընդ ամենայն ցեղսն Իսրայէլի՝ ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէ, և հանդէս արա ժողովորդեանդ. և գիտացից զթիւ դոցա: ³Եւ ասէ Յովաբ ցարքայ. Յաւելցէ՛ Տէր ՚ի ժողովուրդն որչափ ենն՝ հարիւր պատիկ. և տեսցեն աչք տեառն իմոյ արքայի. և տէր իմ արքայ ընդէ՞ր կամիցի զբանդ զայդ* : ⁴Եւ սաստկացաւ բանն արքայի առ Յովաբ՝ և առ իշխանս զօրուն. և ել Յովաբ և ամենայն իշխանք զօրութեան յերեսաց արքայի առնել հանդէս ժողովորդեանն Իսրայէլի: ⁵Եւ անցին ընդ Յորդանան, և պատեցան ընդ Արոնր յաջմէ քաղաքին, որ ՚ի մէջ ձորոյն Գաղայ և Եղէազարու* : ⁶և անցին ընդ Գաղաադ, և ՚ի Թաբասոն, և յԵսթան, և յԱդասէ. և հասին ՚ի Դան, և պատեցան զՍիդոնաւ* : ⁷և եկին ՚ի Մափսար Տիւրոսի. և յամենայն քաղաքս Խևացւոյն, և Քանանացւոցն: Եւ եկին ՚ի հարաւոյ կողմանէ ՚ի Յուդայ և ՚ի Բերսաբէ* : ⁸Եւ

* Ոմանք. Սամա Ռուդացի. Սեղդեմ, կամ՝ Սեղդոն Նեղովդացի:

* Ոմանք. Ելլոն Աղիայացի:

* Ոմանք. Գասբիէ Արաբարացի. Ասմոն Բարսամացի:

* Յօրինակին. Որդի Արեդայ Արաթիրա՛:

* Ոմանք. Որդի Ասիբացւոյ:

* Ոմանք. Գաղաա որդի Նա՛:

* Ոմանք. Եղիէ Ամմոնացի:

* Ոմանք. Իրաս Յեթիրացի. Գարէի Բեթթանացի:

* Ոմանք. Ե՛րթ թուեա զԻսրայէլ և ցՅուդա:

* Ոսկան. Յաւելցէ՛ Տէր Աստուած ՚ի ժո՛: Ոմանք. ՚ի ժողովուրդն որչափ եղեն: Այլք.

Հարիւրապատիկ:

* Ոմանք. Ընդ Արոյէր ընդ աջմէ քաղաքին:

* Այլք. Եւ յԵսթոն և յԱդասէ:

* Ոմանք. Յուդայ ՚ի Բերսաբէ:

շրջեցան ընդ ամենայն երկիրն. և եկին հասին ՚ի կատարել ինն ամսոց և աւուրց քսանից՝ յերուսաղէմ*։ ⁹Եւ ետ Յովաբ զհամար հանդիսի ժողովրդեանն արքայի. և եղև Իսրայէլի ութ հարկը հազար արանց զօրու սուսերամերկաց. և այր Յուդայ հինգ հարիւր հազար արանց մարտկաց*։

ՀԶ ¹⁰Եւ եհար գԴաւիթ սիրտն իւր յետ թուելոյ զժողովուրդն. և ասէ Դաւիթ ցՏէր. Մեղայ՝ յոյժ զոր արարին. և արդ՝ անցո՛ր զանօրէնութիւն ՚ի ծառայէ քունմէ. զի ընդունայնացայ՝ յոյժ*։ ¹¹Եւ յարեաւ Դաւիթ ընդ առաւօտն։ Եւ բան Տեառն եղև ՚ի վերայ Գադայ մարգարէի տեսանողի առ Դաւիթ՝ և ասէ*։ ¹²Երթ խօսեաց ընդ Դաւթի, և ասացես. Այսպէս ասէ Տէր. Երիս ինչս ասեմ ՚ի վերայ քո, ընտրեսցես քեզ մի ՚ի նոցանէ՝ և արարից քեզ զայն*։ ¹³Եւ եմուտ Գադ առ Դաւիթ, և պատմեաց նմա և ասէ ցնա. Ընտրեա՛ քեզ լինել, եթէ եկեսցէ սով զերիս ամս յերկիր քո. կամ զերիս ամիսս փախչել յերեսաց թշնամեաց քոց, և լինիցին հալածել զքեզ. կամ լինել զերիս աւուրս մա՛հ յերկրի քում. և արդ՝ ծանիր և տե՛ս, զի՞նչ պատասխանի տաց առաքչին իմոյ։ ¹⁴Եւ ասէ Դաւիթ ցԳադ. Վտանգ է ինձ յամենայն կողմանց յոյժ. բայց արդ՝ անկայց ՚ի ձեռս Տեառն. զի բազում են գթութիւնք նորա յոյժ, և մի՛ անկայց ՚ի ձեռս մարդոյ։ Եւ ընտրեաց իւր Դաւիթ զմա՛հն. և էին աւուրք հնծոց ցորենոյ*։ ¹⁵Եւ ետ Տէր մահ իսրայէլ յառաւօտէ մինչև ցճաշածամ. և սկսաւ սատակումն ՚ի ժողովրդեանն. և մեռաւ ՚ի ժողովրդենէ անտի ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէէ, եւթանասուն հազար արանց։ ¹⁶Եւ ձգեաց հրեշտակն Աստուծոյ զձեռն իւր յերուսաղէմ ապականել զնա. և մխիթարեցաւ Տէր ՚ի վերայ չարեացն. և ասէ ցհրեշտակն որ ապականէր զժողովուրդն. Շա՛տ է, արդ ամփոփեա՛ զձեռն քո։ Եւ հրեշտակն Տեառն կայր առ կալոյն Ուռնեայ Յեբրուսացոյ*։ ¹⁷Եւ ասէ Դաւիթ ցՏէր, իբրև ետես զհրեշտակն որ հարկանէր զժողովուրդն, ասէ. Ա՛ւասիկ կամ. Ե՛ս մեղայ, Ե՛ս հովիւս յանցեայ. և դոքա ոչխարքդ զի՞ արարին. եղիցի ձեռն քո յիս՝ և ՚ի տուն հօր իմոյ։ ¹⁸Եւ եկն Գադ առ Դաւիթ յաւուր յայնմիկ՝ և ասէ ցնա. Ե՛լ և կանգնեա՛ Տեառն սեղան ՚ի կալն Ուռնեայ Յեբրուսացոյ։ ¹⁹Եւ ել Դաւիթ ըստ բանին Գադայ, որպէս և պատուիրեաց նմա Տէր։ ²⁰Եւ խոնարհեցաւ Ուռնա իբրև ետես զարքայ, և զծառայսն նորա երթեալս առ նա. և ել առ նա և երկիր եպագ Տեառն ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ ²¹Եւ ասէ Ուռնա. Ձի՞ է զի եկն տէր իմ արքայ առ ծառայ իւր։ Եւ ասէ Դաւիթ. Գնել ՚ի քէն զկալս, շինել սեղան Տեառն. զի դադարեսցէ ապականութիւն ՚ի ժողովրդենէ*։ ²²Եւ ասէ Ուռնա ցԴաւիթ. Առցէ՛ և մատուցէ տէր իմ արքայ Տեառն, որպէս և հաճո՛յ իցէ առաջի աչաց նորա. ահաւասիկ եզինքս յողջակեզ. և անիւքդ և կահ եզանցդ ՚ի փայտ*։ ²³Չամենայն ետ Ուռնա արքայի. և ասէ Ուռնա ցարքայ. Տէր Աստուած քո օրհնեսցէ զքեզ։ ²⁴Եւ ասէ

* Ուճանք. ՚ի կատարել ինն ամսոյ և աւ՛։

* Օրհնակ մի. ժողովրդեանն առաջի արքայի։ *Յօրհնակին թուագրով դնի.* Յուդայ եճՌ արանց։

* Ուճանք. Ձոր արարի։

* Ուճանք. Մարգարէի և տեսանողի։

* Ուճանք. Եւ ընտրեսցես քեզ մի ՚ի նոցանէ։

* Ուճանք. Բայց անկեայց ՚ի ձեռս Տեառն։

* Ուճանք. Ձձեռս իւր յերուսաղէմ։... Ուռնայ Յեբրուսաց՝։ *Ուր օրհնակ մի.* կայր առ կալոյն Օնեայ Յեբու՛։ *Յօրհնակին.* Ուռնեայ Յեբ՛։

* Յօրհնակին պակասէր. Ձի՞ է զի եկն տէր։

* Ուճանք. Եւ ահաւասիկ եզինքս... և անիւքս և կահ։

արքայ ցնունա. Ո՛չ այդպէս՝ այլ գնելով գնեցի՛ց՝ ՚ի քէն՝ գնոց. և ո՛չ մատուցից Տեառն Աստուծոյ իմոյ ողջակէզս ձրի: Եւ գնեաց Դաւիթ զկալն, և զեզինսն արծաթոյ յիսուն սկեղ: ²⁵Եւ շինեաց անդ Դաւիթ սեղան Տեառն Աստուծոյ, և եհան ողջակէզս և խաղաղականս ՚ի վերայ նորա: Եւ յաւել Սողոմոն ՚ի սեղանն յետոյ՝ զի փոքր էր զառաջինն: Եւ լուաւ Տէր երկրին և արգելա՛ւ սատակումն յիսրայէլէ:

Կատարեցաւ Թագաւորութեանց Երկրորդ

ԳԼՈՒԽՔ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

- ա. Ձի ցուրտ ցաւով վտանգէր Դաւիթ. և զի ժուժկալ գտաւ առ Աբիսակ՝ փոխանակ Բերսաբեայ իրացն:
- բ. Ձի Ադոնիա անձամբ թագաւորել ջանայր:
- գ. Թէ զի՞նչ խրատ ետ Նաթան մարգարէ Բերսաբէի զՍողոմոնն, և կամ զի՞նչ խօսեցաւ ընդ Դաւթի:
- դ. Ձի հրամանաւ Դաւթի թագաւորեաց Սողոմոն, և նստաւ յաթոռն Դաւթի:
- ե. Ձի ձևով ուխտի արծակեաց Սողոմոն զԱդոնիա ՚ի տուն իւր:
- զ. Ձի պատուէր ետ Դաւիթ Սողոմոնի յաստուածայինս և ՚ի մարդկայինս. և ինքն ննջեաց ընդ հարս իւր:
- է. Թէ յո՞րպիսի պատճառս սպան Սողոմոն զԱդոնիա և զՅովաբ. և մերժեաց զԱբիաթար Իթամարեան, և կացոյց զՍադոկ Եդիազարեան:
- ը. Ձի ա՛ռ Սողոմոն զդուստրն փարաւոնի, և վասն շինուածոց և ողջակիզաց ՚ի կարճոյ:
- թ. Յիշէ աստ և վասն քաղաքացն զոր շինեաց յետ շինութեան տաճարին:
- ժ. Թէ յի՞նչպիսի պատճառս սպան Սողոմոն զՍեմէի որդի Գերեայ:
- ժա. Ձի հազար ողջակէզս մատոյց Սողոմոն ՚ի Գաբաւոն ՚ի վերայ սեղանոյն զոր արար Բեսելիէլ, որ կայր անդ առաջի խորանին զոր կանգնեաց Մովսէս:
- ժբ. Եւ երևեցաւ Տէր Սողոմոնի և ասէ. Խնդրեա՛ զոր ինչ կամիս: Եւ խնդրեաց զիմաստութիւն. և ետ նմա:
- ժգ. Ձի արար նա դատաստան ՚ի մէջ երկուց կանանցն:
- ժդ. Վասն իշխանացն և երկոտասան գործակալացն ՚ի վերայ Իսրայէլի, ամսոյ ամսոյ տալ ռոճիկ տանն Սողոմոնի. և վասն աւուր աւուր ծախիցն. և վասն կառաց և ծիոց նորա:
- ժե. Թէ իմաստնացաւ Սողոմոն քան զամենայն մարդիկ. և խօսեցաւ առակս և օրհնութիւնս, զփայտից զանասնոց և զձկանց:
- ժզ. Ձի օգնէր Քիրամ փայտիւ. և սկսաւ Սողոմոն շինել տուն Տեառն յանտաշ քարանց:
- ժէ. Թէ զի՞նչ խօսեցաւ Տէր ընդ Սողոմոնի ՚ի շինելն գտունն. և հանգամանք մանրապատում վասն շինուածոյ տաճարին, և վասն սեանցն և ծովուն. և վասն տան դստերն փարաւոնի:

ժը. Երկրորդելով բովանդակէ գաղնձեղէն զգործն. և յաւելու վասն ոսկի սեղանոցն և վասն աշտանակացն և այլոց կահիցն:

ժթ. Ձի տարաւ Սողոմոն ամենայն եկեղեցեալն Իսրայէլի զտապանակն ՚ի ներքս ՚ի Դաբիրն ընդ քրորէիւքն. ևս և զամենայն սպասս սրբութեան տաճարին, և հանին ողջակէզս:

ի. Ձի լցին փառք Տեառն զտունն ամպով, և թէ զի՞նչ խօսեցաւ Սողոմոն:

իա. Ձի օրհնեաց Սողոմոն զԱստուած Իսրայէլի որ ուխտեաց Դաւթի՝ թէ որդի քո Սողոմոնն շինեսցէ ինձ տուն:

իբ. Դարձեալ աղօթք Սողոմոնի առ Տէր վասն հաստատութեան աթոռոյն Դաւթի:

իգ. Խնդրուածք մարգարութեամբ վասն բնակելոյ Տեառն ՚ի տաճարին, և մարմնանալոյն Քրիստոսի. և վասն լսելոյ Տեառն ամենայն խնդրոյ աղօթից:

իդ. Թէ զհարդ օրհնեաց զՏէր յետ աղօթիցն. և յորդորեաց զժողովուրդն հաստատիլ յԱստուած:

իե. Ձի զաւուրս չորեքտասան արար տօն մեծ ամենայն բազմութեամբն Իսրայէլի, և նաւակատիս տաճարին:

իզ. Եւ երևեցաւ Տէր Սողոմոնի կրկին անգամ խոստմամբք և սպառնալեօք: Եւ զի Քիրամ օգնէր Սողոմոնի. և զի նաւք բերէին Սողոմոնի ոսկի:

իէ. Ձի եկն տիկինն Սաբա պատարագօք առ Սողոմոն:

իը. Վասն ոսկի նիզակացն և փղոսկրեայ աթոռոյն, և այլոց կահից և բազմութեան գանձուցն Սողոմոնի:

իթ. Թէ կնասէր գոլով Սողոմոնն յաճախեաց առնուլ իւր կանայս, որք հեռացուցին զնա յԱստուծոյ:

լ. Ձի խտորեցաւ Սողոմոն յԱստուծոյ զհետ գարշելեացն. և բարկացաւ Տէր պատառել զթագաւորութիւնն ՚ի տանէ նորա:

լա. Ձի յարոյց Տէր սատան Սողոմոնի զԱդէր Եդովմայեցի զփախուցեալն յեգիպտոս, և զՌասոն Դամասկացի:

լբ. Ձի Աքիա Սիլովացի խոստացաւ Յերոբովամայ Նաբատեանց զթագաւորութիւն տասն ցեղիցն Իսրայէլի, և նա յահէն Սողոմոնի փախեալ յեգիպտոս:

լգ. Թագաւորեաց Ռոբովամ, և խնդրեաց ժողովուրդն ՚ի նմանէ թեթևութիւն հարկին. և թէ զինչ խրատեցին զնա ծերքն. և կամ զի՞նչ մանկտին:

լդ. Ձի եթող Ռոբովամ զխորհուրդ ծերոցն՝ անմտութեամբ:

լե. Ձի վասն խիստ պատասխանւոյն ճեղքեցան տասն ցեղքն ՚ի նմանէ:

լզ. Եւ զի արհամարհեալ զնա՝ քարկոծեցին զհարկապետն նորա:

լէ. Ձի թագաւորեցոյց իւր Իսրայէլ զՅերոբովամ Նաբատեանց. և Ռոբովամ կազմէր պատերազմել:

լը. Ձի արգել Տէր զՌոբովամ չպատերազմել: Եւ զի արար Յերոբովամ զերկուս երինջսն ՚ի պաշտօն Իսրայէլի, և ինքն իսկ զոհէր:

լթ. Անդ հասեալ մարգարէն բանիւ Աստուծոյ պատառեաց զսեղանն, և զօսացոյց զծեռն Յերոբովամայ, և դարձաւ ինքն ՚ի գնալ:

լս. Ձի նենգեալ նմա մարգարէն ծեր որ ՚ի Բեթէլ դարձոյց զնա ուտել հաց. և ՚ի գնալն անդրէն եհեղձ զնա առևձ. և ծերն թաղեաց զնա: Եւ պատգամ

Տեառն բարկութեամբ 'ի ձեռն Աքիայ Սիլովմացոյ 'ի վերայ տանն Յերոբովամայ, և մահ նորա. և զի Նաբատ որդի նորա տիրեաց ընդ նորա:

խա. Ձի 'ի չարիս հատաւ Ռոբովամ. և յաւուրս նորա ել Սաւսակիմ Եգիպտացի յերուսաղէմ, և ա՛ռ զգանձս տաճարին:

խբ. Յուրուտասն ամին Յերոբովամայ թագաւորէ Աքիա, և գնաց նա 'ի մեղս հօր իւրոյ:

խգ. 'ի քսան ամին Յերոբովամայ թագաւորէ Ասա, և արար ուղղութիւն. և վարձեաց զարքայն Ասորոց ընդդէմ Բաասայ արքայի Իսրայէլի:

խդ. 'ի չորրորդ ամին Ասայի սպան Բաաս զՆաբատ, և թագաւորեաց ամս քսան և չորս. և արար չարիս. և 'ի քսան և ութ ամին Ասայի թագաւորեաց Եղա որդի Բաասայ ամս երկուս, և սպանաւ:

խե. Յերեսուն ամի Ասայի թագաւորեաց Ջամբրի աւուրս եւթն, և այրեաց զնա Ամրի, և թագաւորեաց ամս երկոտասան. և շինեաց զՍամարիա. և արար չարիս և մեռաւ:

խզ. Յերեսներորդ ութերորդ ամին Ասայի՝ թագաւորէ Աքաաբ որդի Ամրեայ, ամս քսան և երկուս. և շինեաց զԵրիքով:

խէ. Յաւուրս Աքաաբու փակեցան երկինք յանձրևոյ, և եկն Եղիա 'ի Սարեփթա, ուր և յարոյց զորդի կնոջն որ զնա ընկալաւ:

խը. Հրաման առ Եղիա, և պատահեալ Աքաաբու՝ հրամայեաց ժողովել զԻսրայէլ, և զմարգարէսն Յեզաբելայ 'ի Կարմելոս:

խթ. Թէ զիա՞րդ այսպանեաց զքուրմսն վասն անօգուտ զոհին:

ծ. Եւ թէ զիա՞րդ ինքն փառաւորեաց զԱստուած սուրբ պատարագաւն. և կոտորեաց զքուրմսն Բելայ:

ծա. Ձի յաղօթս Եղիայի եղև անձրև մեծ, և զի սպառնացաւ Յեզաբել սպանանել զԵղիա:

ծբ. Երկուցեալ Եղիայի. և կերակրեալ 'ի հրեշտակէ գնաց այնու զաւուրս քառասուն և եկն 'ի Քորեբ. և ամբաստան լեալ Տեառն զԻսրայէլէ, հրաման 'ի Տեառնէ առեալ եկն և կոչեաց զԵղիս:

ծգ. Արքայն Ասորոց պաշարեաց զՍամարիա, և բանիւ Տեառն ել Աքաաբ եւթն հազարօ՛քն, և յաղթեաց նմա:

ծդ. Կրկին անգամ յաղթեալ ըմբռնեաց զարքայն Ասորոց, և արձակեաց:

ծե. Ձի վասն այնր բանի գանել ետ զինքն մարգարէն, և բանիւ Տեառն սպառնացաւ 'ի վերայ Աքաաբու:

ծզ. Ձի 'ի պատճառս այգւոյն իւրոյ նենգ կրեալ 'ի Յեզաբելայ քարկոծեցաւ Նաբովթ. և թէ սգաց ընդ այնր Աքաաբ:

ծէ. Պատգամ վրիժուց 'ի Տեառնէ վասն այնր 'ի ձեռն Եղիայի առ տունն Աքաաբու:

ծը. Պատրաստեցան Աքաաբ և Յովսափատ արքայ Յուդայ պատերազմել ընդ Ռամաաթ Գաղաադու. և սուտ մարգարէքն քաջալերէին:

ծթ. Ըստ բանին Տեառն 'ի ձեռն Սիքիայ սպանաւ Աքաաբ 'ի պատերազմի անդ:

կ. Յամին չորրորդի Աքաաբու թագաւորեաց Յովսափատ որդի Ասայի ամս քսան և հինգ. արար ուղղութիւն և մեռաւ:

կա. Յամին եւթնուտասներորդի Յովսափատայ թագաւորեաց յԻսրայէլի

Ոքոզիա որդի Աքաաբու ամս երկուս, և արար չարիս, և մեռաւ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՐՐՈՐԴ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ արքայ Դաւիթ ծերացեալ և անցեալ զաւուրքք. և ծածկէին զնա հանդերձիւք, և ո՛չ ջեռնոյր: ²Եւ ասեն ծառայք նորա. Խնդրեսցեն տեառն մերոյ արքայի աղջիկ մի կոյս. և կացցէ՛ առաջի արքայի, և եղիցի դարմանել. և ննջեսցէ՛ ընդ նմա, և ջեռցի՛ տէր մեր արքայ: ³Եւ խնդրեցին աղջիկ մի գեղեցիկ յամենայն սահմանացն Իսրայէլի, և գտին զԱբիսակ Սոմնացի. և ածին զնա առ արքայ: ⁴Եւ է՛ր աղջիկն գեղեցիկ յոյժ, և ջեռուցանէր զարքայ՝ և պաշտէր զնա. և արքայ ո՛չ գիտաց զնա:

Բ ⁵Եւ Ադոնիա՛ որդի Ագիթայ ամբառնայր. ասէ. Ե՛ս թագաւորեցից: Եւ արար իւր կառս և հեծեալս, և յիսուն այր սուրհանդակս ընթանալ առաջի նորա: ⁶Եւ հայրն ո՛չ արգելոյր զնա. և ո՛չ երբէք ասէր, թէ ընդէ՞ր արարեր զայդ. և ինքն էր գեղեցիկ տեսանելով. և զնա՛ ծնաւ յետ Աբեսողոմայ: ⁷Եւ եղեն բա՛նք նորա ընդ Յովաբայ որդւոյ Շարուիեայ, և ընդ Աբիաթարայ քահանայի. և օգնէին Ադոնիայ: ⁸Եւ Սադովկ քահանայ, և Բանեա որդի Յովիդայեայ, և Նաթան մարգարէ, և Սենէի, և Ռէի. և որդիք զօրաւորք Դաւիթ՝ չէին զհետ Ադոնիայ: ⁹Եւ եզեն Ադոնիա ոչխարս և եզինս և գառինս՝ առ վիմին Ջոողեթայ. որ է մօտ յերկիրն Ռովգելայ. և կոչեաց զամենայն եղբարս իւր զորդիս արքայի, և զամենայն զարս Յուդայ զծառայս արքայի: ¹⁰Եւ զՆաթան մարգարէ՛ և զԲանեա, և զզօրաւորսն, և զՍողոմոն գեղբայր իւր ո՛չ կոչեաց:

Գ ¹¹Եւ խօսեցաւ Նաթան մարգարէ ընդ Բերսաբեայ մօր Սողոմոնի՝ և ասէ. Ո՞չ լուար զի թագաւորեաց Ադոնիա որդի Ագիթայ. և տէր մեր արքայ Դաւիթ ո՛չ գիտաց: ¹²Եւ արդ՝ ե՛կ տաց քեզ խրատ, և ապրեցուսցես զանձն քո, և զանձն որդւոյ քոյ Սողոմոնի: ¹³Երթ մուտ առ արքայ Դաւիթ, և խօսեսցիս ընդ նմա՝ և ասասցես. Ո՞չ դու տէ՛ր իմ արքայ երդուար աղախնոյ քում և ասացեր, թէ Սողոմոն որդի՛ քո թագաւորեսցէ յետ իմ, և նա՛ նստցի յաթոռ իմ. և այն զի՞նչ է զի թագաւորեաց Ադոնիա: ¹⁴Եւ ահա մինչդեռ դու՛ խօսիցիս անդ ընդ արքայի, ե՛ս մտից և լցից զբանս քո: ¹⁵Եւ եմուտ Բերսաբէ՛ առ արքայ՝ ՚ի սենեակն, և արքայ ծերացեալ էր յոյժ. և Աբիսակ Սոմնացի կայր ՚ի սպասու արքայի: ¹⁶Խոնարհեցաւ Բերսաբէ՛ և երկի՛ր եպագ արքայի: Եւ ասէ արքայ. Չի՞ է քեզ: ¹⁷Եւ նա ասէ. Տէ՛ր իմ արքայ, դու երդուար ՚ի Տէր Աստուած քո՝ աղախնոյ քում և ասացեր, թէ Սողոմոն որդի քո թագաւորեսցէ յետ իմ, և նա՛ նստցի յաթոռ իմ. ¹⁸և ահա Ադոնիա թագաւորեաց. և դու տէր իմ արքայ ո՛չ գիտացեր. ¹⁹և եզեն

* *Յօրինակի մերում որպէս և յայլ գրչագիրս, անունս՝ զառաջինն գրի՝ Որդի Յովիդայեայ. և ապա յընթացս անխտիր դնի նաև՝ որդի Յովիդայ:*

* *Այլք. Չամենայն զեղբարս իւր: Յօրինակին ընդ մէջ 9 և 10 համարոյ դնի խաչանիչ չակերտ ինչ. և ապա սկսանի. Եւ զՆաթան:*

* *Ոմանք. Եւ տէր իմ արքայ Դաւիթ:*

* *Ոմանք. Խօսեսցիս անդ ընդ արքայի. և ես մտից և լցից:*

արջառս և ոչխարս և գառինս բազումս, և կոչեաց զամենայն որդիս արքայի, և զԱբիաթար քահանայ, և զՅովաբ իշխան զօրուն. և զՍողոմոն զծառայ քո ո՛չ կոչեաց: ²⁰Եւ տէ՛ր իմ արքայ՝ աչք ամենայն Իսրայէլի՝ ՚ի քե՛զ եմ, պատմել նոցա թէ ո՛ր նստցի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ նորա. ²¹և եղիցի եթէ ննջեսցէ տէր իմ արքայ ընդ հարս իւր, և լինիցիմ ես և որդի իմ Սողոմոն վնասապարտք*։ ²²Եւ մինչդեռ նա խօսէ՛ր ընդ արքայի, եկն Նաթան մարգարէ. ²³և պատմեցաւ արքայի և ասեն. Աւասիկ Նաթան մարգարէ: Եւ եմո՛ւտ առաջի արքայի, և երկիր եպագ արքայի ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր: ²⁴Եւ ասէ Նաթան. Տէ՛ր իմ արքայ՝ դո՞ւ ասացեր եթէ Ադոնիա թագաւորեսցէ զկնի իմ, և նա՛ նստցի յաթոռ իմում. ²⁵զի էջ այսօր, և եզեն արջառս և ոչխարս և գառինս բազումս. և կոչեաց զամենայն որդիսն արքայի, և զիշխանս զօրուն, և զԱբիաթար քահանայ. և ահա ուտե՛ն և ընպէն առաջի նորա, և ասեն. Կեցցէ՛ արքայ Ադոնիա: ²⁶Եւ զի՛ս զծառայ քո, և զՍադոկ քահանայ՝ և զԲանեա որդի Յովիդայեայ, և զՍողոմոն զծառայ քո ո՛չ կոչեաց: ²⁷Եթէ՛ ՚ի ձեռն տեա՞ռն իմոյ արքայի եղև բանն այն. և ո՛չ ցուցեր ծառայի քում թէ ո՞ր նստցի յաթոռ տեառն իմոյ արքայի յետ նորա:

Դ ²⁸Պատասխանի ետ Դաւիթ արքայ՝ և ասէ. Կոչեցէ՛ք առ իս զԲերսաբէ: Եւ եմուտ առաջի նորա, և եկաց յանդիման նորա: ²⁹Եւ երդուաւ արքայ և ասէ. Կենդանի՛ է Տէր, որ փրկեաց զանձն իմ յամենայն նեղութենէ. ³⁰զի որպէս երդուայ ՚ի Տէր Աստուած Իսրայէլի՝ և ասեն, եթէ Սողոմոն որդի՛ քո թագաւորեսցէ յետ իմ, և նա՛ նստցի յաթոռ իմ փոխանակ իմ, եթէ ո՛չ այսպէս արարից յաւուր յայսմիկ*։ ³¹Եւ խոնարհեցաւ Բերսաբէ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և երկիր եպագ արքայի՝ և ասէ. Կեցցէ՛ տէր իմ արքայ Դաւիթ յաւիտեան: ³²Եւ ասէ արքայ Դաւիթ. Կոչեցէ՛ք առ իս զՍադոկ քահանայ՝ և զՆաթան մարգարէ, և զԲանեա որդի Յովիդայեայ: Եւ մտի՛ն առաջի արքայի: ³³Եւ ասէ ցնոսա արքայ. Առէ՛ք ընդ ձեզ զծառայս տեառն ձերոյ. և հեծուցէ՛ք զՍողոմոն զորդի իմ ՚ի ջորւոջն իմում, և իջուցէ՛ք զնա ՚ի Գեհոն: ³⁴Եւ օճցեն զնա անդ Սադոկ քահանայ՝ և Նաթան մարգարէ ՚ի թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի. և փո՛ղ հարէք եղջերեալն, և ասասցի՛ք. Կեցցէ՛ արքայ Սողոմոն: ³⁵Եւ ելջի՛ք զկնի նորա, և մտցէ և նստցի յաթո՛ռ իմում, և նա՛ թագաւորեսցէ ընդ իմ. և ե՛ս ետու հրաման լինել նմա առաջնորդ ՚ի վերայ Իսրայէլի և Յուդայ: ³⁶Եւ պատասխանի ետ Բանեա որդի Յովիդայեայ արքայի՝ և ասէ. Եղիցի՛ այդպէս. հաւատարմացուցէ՛ Տէր Աստուած տեառն իմոյ արքայի. ³⁷և որպէս է՛ր Տէր ընդ տեառն իմում արքայի, եղիցի՛ և ընդ Սողոմոնի. և մեծացուցէ՛ զաթոռ նորա քան զաթոռ տեառն իմոյ արքայի Դաւթի*։ ³⁸Եւ է՛ջ Սադոկ քահանայ, և Նաթան մարգարէ, և Բանեա որդի Յովիդայեայ, և Քերեթին և Ոփելեթին. և հեծուցին զՍողոմոն ՚ի ջորւոջն արքայի Դաւթի, և տարան զնա ՚ի Գեհոն: ³⁹Եւ ա՛ռ Սադոկ քահանայ զեղջերն իւրոյ ՚ի խորանէն և օճ զՍողոմոն. և եհար զփողն եղջերեայ, և ասէ ամենայն ժողովուրդն. Կեցցէ՛ արքայ Սողոմոն*։ ⁴⁰Եւ ել ամենայն ժողովուրդն զհետ նորա, և պա՛ր առեալ պարուք ուրախ լինէին մեծաւ ուրախութեամբ. և հնչեաց երկիրն ՚ի բարբառոյ նոցա*։ ⁴¹Եւ լուա՛ւ Ադոնիա և ամենայն բազմականք նորա, և կատարեցին նոքա զուտելն. և լուաւ Յովաբ զծայն

* Այլք. Իւր, լինիցիմ ես:

* Ոմանք. Եւ եթէ ո՛չ այդպէս արարից յաւուրս յայս՛:

* Ոմանք. Ընդ Տեառն իմոյ ար՛:

* Բազումք. Եւ ա՛ռ Սադոկ զեղջիրն իւ՛:

* Ոմանք. Ի բարբառոյ նորա:

եղջերոյն՝ և ասէ. Չի՞նչ է բարբառն որ հնչէ՞ ՚ի քաղաքին*։ ⁴²Եւ մինչդեռ նա խօսէր՝ ահա Յովնաթան՝ որդի Աբիաթարու քահանայի եհաս. և ասէ Ադոնիա. Մո՛ւտ՝ զի այր զօրութեան ես դու, և բարութիւնս անտարանես։ ⁴³Պատասխանի ետ Յովնաթան և ասէ ցԱդոնիա. Եւ կարի՛ իսկ քաջ. տէր մեր արքայ Դաւիթ թագաւորեցոյց զՍողոմոն. ⁴⁴և առաքեաց ընդ նմա արքայ զՍադովկ քահանայ, և զԼաթան մարգարէ, և զԲանեա որդի Յովիդայեայ, և զՔերեթին և զՈփելէթին. և հեծուցին զնա ՚ի ջորւոջն արքայի*, ⁴⁵և օծին զնա Սադովկ քահանայ և Լաթան մարգարէ ՚ի թագաւոր ՚ի Գեհոն. և ելին անտի ուրախութեամբ, և հնչեաց քաղաքն. և այն է բարբառն՝ զոր լուարուք*։ ⁴⁶Եւ նստա՛ւ Սողոմոն յաթոռն արքայութեան. ⁴⁷և մտին ծառայքն արքայի օրհնել զտէր մեր զարքայ Դաւիթ՝ և ասեն. Մեծացուցէ՛ Աստուած զանուն Սողոմոնի որդւոյ քոյ՝ քան զանուն քո, և մեծացուցէ՛ զաթոռ նորա քան զաթոռ քո։ Եւ երկի՛ր եպագ արքայ յանկողնէ իւրմէ՛։ ⁴⁸Եւ այսպէս ասաց արքայ. Օրհնեա՛լ է Տէր Աստուած Իսրայէլի՝ որ ետ ինձ այսօր ՚ի զաւակէ իմմէ նստել յաթոռ իմ. և աչք իմ տեսանեն։ ⁴⁹Եւ զարհուրեցան, և յարեան ամենայն կոչնականքն Ադոնիայ. և գնացին այր իւրաքանչիւր զճանապարհ իւր։

Ե ⁵⁰Եւ Ադոնիա երկեա՛ւ յերեսաց Սողոմոնի, և յարեաւ չոգաւ բո՛ւռն եհար զեղջերաց սեղանոյն։ ⁵¹Եւ ա՛գդ եղև Սողոմոնի՝ և ասեն. Ահա Ադոնիա երկեաւ յարքայէ Սողոմոնն՝ և ունի զեղջերաց սեղանոյն՝ և ասէ. Երդուիցի ինձ այսօր արքայ Սողոմոն, եթէ ո՛չ սպանցէ զծառայ իւր սրով։ ⁵²Եւ ասէ Սողոմոն. Եթէ լինիցի յորդի զօրութեան, ո՛չ անկցի ՚ի հերոյ նորա մագ մի ՚ի գետին. ապա թէ չարութիւն գտցի ՚ի նմա՝ մահո՛ւ մեռցի*։ ⁵³Եւ առաքեաց արքայ Սողոմոն, և իջոյց զնա ՚ի վերուստ ՚ի սեղանոյ անտի. և եմուտ երկի՛ր եպագ արքայի Սողոմոնի. և ասէ ցնա Սողոմոն. Ե՛րթ ՚ի տուն քո։

2

Գլուխ Բ

Ձ ¹Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ. և պատասխանի ետ Սողոմոնի որդւոյ իւրում, և ասէ. ²Ես երթամ զճանապարհ ամենայն երկրի. և դու զօրացիս և եղիցես յայր*։ ³և պահեսցես զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ քոյ, գնա՛լ ՚ի ճանապարհս նորա. և պահել զպատուիրանս նորա և զիրաւունս, և զդատաստանս և զվկայութիւնս նորա. զգրեալս յօրէնս Մովսիսի. զի ՚ի միտ առնուցուս զոր առնիցես, ըստ ամենայնի զոր պատուիրեսմ քեզ*։ ⁴Ձի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խօսեցաւ վասն իմ և ասէ. Եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց՝ և յամենայն անձնէ իւրեանց, ասէ՛ մի՛ սատակեսցի այր յաթոռոյ Իսրայէլի։ ⁵Եւ դու ինքնի՛ն գիտես, զոր ինչ արա՛ր ինձ Յովաթ որդի Շարուհեայ,

* *Ոմանք.* Եւ լուաւ Ադոնիա և ամենայն կոչնականք նորա։

* *Յօրինակին պակասէր.* Եւ հեծուցին զնա ՚ի ջոր՝։

* *Ոմանք.* Այն է... զոր լուաք։

* *Ոսկան.* Մեծացուցէ Տէր զանուն։ *Ոմանք.* Յընկողնէ իւրմէ։

* *Ոմանք.* Լինիցի որդի զօրութեան։

* *Ոմանք.* Եւ եղիցես այր։

* *Ոմանք.* Զգրեալն յօրէնս Մովսէսի։

և զոր ինչ արար ընդ երկուս իշխանս զօրաց Իսրայելի՝ ընդ Աբեճներ որդի Ներեայ, և ընդ Ամեսայի որդի Յեթերայ, և սպան զնոսա. և խնդրեաց զարիւն պատերազմի՝ ի խաղաղութեան. և ետ զարիւն անպարտ ՚ի կեանս իւրում, ՚ի մէջ իւր, և ՚ի կօշիկս ոտից իւրոց: ⁶Եւ արասցեն ըստ իմաստութեան քում. և ո՛չ իջուցես զալիս նորա խաղաղութեամբ՝ ի դժոխս: ⁷Եւ որդւոցն Բերզելեայ Գաղաադացւոյ արասցեն ողորմութիւն. և եղիցին ընդ այնոսիկ որ ուտիցեն ՚ի սեղանոյ քումմէ. զի այնպէս մերձեցան յիս ՚ի փախչելն իմում յերեսաց Աբեսողոմայ եղբօր քոյ: ⁸Եւ ահա ընդ քե՛զ է Սեմէի որդի Գերեայ որդւոյ Յեմինայ Բաւորիմացւոյ. և նա անէ՛ծ զիս անէ՛ծս ցաւագինս, յաւուր յորում գնացեալ երթայի ՚ի Բանակս. և նա էջ ընդ առաջ իմ ՚ի Յորդանան, և երդուայ նմա ՚ի Տէր՝ և ասեմ, եթէ ո՛չ սպանից զքեզ սրով*: ⁹Եւ մի՛ անպարտ առնիցես զնա, զի այր իմաստուն ես դու, զիտասջի՛ր որպէս առնիցես նմա. և իջուցես զալիս նորա արեամբ ՚ի դժոխս: ¹⁰Եւ ննջեա՛ց Դաւիթ ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի քաղաքի Դաւթի: ¹¹Եւ աւուրք զորս թագաւորեաց Դաւիթ ՚ի վերայ Իսրայելի՝ ամբ քառասուն. ՚ի Քերրոն թագաւորեաց ամս եւթն. և յերուսաղէմ թագաւորեաց ամս երեսուն և երիս: ¹²Եւ Սողոմոն նստաւ յաթոռ Դաւթի հօր իւրոյ՝ ամաց երկուտասանից, և պատրաստեցաւ թագաւորութիւն նորա յոյժ:

Է ¹³Եւ եմո՛ւտ Ադոնիա որդի Ազիթայ առ Բերսաբէէ մայր Սողոմոնի, և երկի՛ր եպագ նմա. և ասէ. Խաղաղութի՞ւն է մուտոյ քո: Եւ ասէ. Խաղաղութիւն է: ¹⁴Եւ ասէ. Բանք ինչ են իմ ընդ քեզ: Եւ ասէ. Խօսեա՛ց: ¹⁵Եւ ասէ ցնա. Դու ինքնի՛ն գիտես զի ի՛մ էր թագաւորութիւնն. և յի՛մ վերայ եղ ամենայն Իսրայէլ զերեսս իւր ՚ի թագաւոր. և դարձաւ թագաւորութիւնն, և եղև եղբօր իմում. զի ՚ի Տեառնէ եղև նմա*: ¹⁶Եւ արդ՝ խնդիր մի խնդրեմ ՚ի քէն, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն: Եւ ասէ ցնա Բերսաբէէ. Խօսեա՛ց*: ¹⁷Եւ ասէ ցնա. Ասացեն ցՍողոմոն արքայ, զի ո՛չ դարձուցէ զերեսս իւր ՚ի քէն. և տացէ՛ ինձ զԱբիսակ Սոմնացի կնութեան*: ¹⁸Եւ ասէ Բերսաբէէ. Բարւո՛ք է, ե՛ս խօսեցայց վասն քո ընդ արքայի: ¹⁹Եւ եմուտ Բերսաբէէ առ արքայ Սողոմոն խօսել ընդ նմա վասն Ադոնիայ. և յոտն եկաց արքայ ընդ առաջ նորա, և համբուրեաց զնա. և նստաւ յաթոռ իւրում, և եղաւ աթոռ մօրն արքայի, և նստաւ ընդ աջմէ նորա*. ²⁰և ասէ ցնա. Խնդիր մի փոքր խնդրեմ ես ՚ի քէն, մի՛ դարձուցանիցես զերեսս քո յինէն: Եւ ասէ արքայ. Խնդրեա՛ մայր իմ. զի ո՛չ դարձուցից զերեսս իմ ՚ի քէն: ²¹Եւ ասէ. Տացի՛ Աբիսակ Սոմնացի Ադոնիայ եղբօր քում կնութեան: ²²Պատասխանի ետ արքայ Սողոմոն և ասէ ցնայր իւր. Եւ ընդէ՞ր խնդրիցես զԱբիսակ Սոմնացի Ադոնիայ, այլ խնդրեա՛ նմա զթագաւորութիւնս. զի նա երէց եղբայր է քան զիս, և նորա՛ Աբիաթար քահանայ, և Յովաբ որդի Շարուիեայ սպարապետ և բարեկամ: ²³Եւ երդուաւ արքայ Սողոմոն ՚ի Տէր՝ և ասէ. Օ՛ն և օ՛ն արասցէ ինձ Աստուած՝ և օ՛ն և օ՛ն յաւելցէ՛ եթէ ո՛չ հակառակ անձին իւրոյ խօսեցաւ Ադոնիա զբանդ զայդ: ²⁴Եւ արդ՝ կենդանի՛ է Տէր, որ արար զիս և ե՛ր յաթոռ Դաւթի հօր իմոյ, և նա արար ինձ տուն որպէս և խօսեցաւ Տէր, եթէ ո՛չ այսօ՛ր իսկ մեռցի Ադոնիա: ²⁵Եւ առաքեաց արքայ Սողոմոն ՚ի ձեռն Բանեայ որդւոյ Յովիդեայ, և սպան զնա. և մեռաւ Ադոնիա յաւուր յայնմիկ: ²⁶Եւ ցԱբիաթար քահանայ ասէ արքայ. Ե՛րթ

* Այլք. Բաւորիմացւոյ: Ոմանք. Յանէծս ցաւագինս:

* Յօրինակին պակասէր. Ձերեսս իւր ՚ի թագաւոր:

* Ոմանք. Մի՛ դարձուցես զերեսս քո:

* Ոմանք. ՁԱբիսակ Սամնացի ՚ի կնութեան:

* Յօրինակին պակասէր. Առ արքայ Սողոմոն խօսել:

յԱնաթովք յագարակ քո, զի այր մահո՛ւ ես դու յաւուր յայսմիկ. և ո՛չ սպանից
զքեզ, զի կրեցեր զտապանակ ուխտին Տեառն առաջի հօր իմոյ. և զի
չարչարեցար ամենայն ուրեք՝ ուր չարչարեցաւ հայր իմ: ²⁷Եւ եհան Սողոմոն
զԱբիաթար՝ չլինել քահանայ Տեառն. առ ՚ի կատարելոյ բանին Տեառն զոր
խօսեցաւ ՚ի վերայ տանն Զեղեայ ՚ի Սելոյ: ²⁸Եւ լո՛ւր եհաս մինչև առ Յովաբ. զի
Յովաբ միտեալ էր զհետ Ադոնիայ, և ո՛չ միտեցաւ զհետ Սողոմոնի. և փախեաւ
Յովաբ ՚ի խորանն Տեառն, և բուռն եհար զեղջերաց սեղանոյն: ²⁹Եւ ա՛զդ եղև
Սողոմոնի՝ և ասեն, թէ փախեաւ Յովաբ ՚ի խորանն Տեառն. և ահա ունի
զեղջերաց սեղանոյն: Եւ առաքեաց Սողոմոն առ Յովաբ՝ և ասէ. Չի՞ եղև քեզ զի
փախեար ՚ի սեղանոյ: Եւ ասէ Յովաբ. Չի երկեայ յերեսաց քոց, և փախեայ առ
Տէր: Եւ առաքեաց Սողոմոն արքայ զԲանեա որդի Յովիդեայ և ասէ. Երթ սպա՛ն
զնա, և թաղեա՛ զնա՝: ³⁰Եւ չոգաւ Բանեա որդի Յովիդեայ առ Յովաբ ՚ի խորանն
Տեառն, և ասէ ցնա. Այսպէս ասէ արքայ. Ե՛լ այտի: Եւ ասէ Յովաբ. Չե՛լանե՛մ
քանզի աստէն մեռանիմ: Եւ դարձաւ Բանեա որդի Յովիդեայ, և խօսեցաւ ընդ
արքայի՝ և ասէ. Չայս ինչ խօսեցաւ Յովաբ, և զայս ինչ ետ պատասխանի: ³¹Եւ
ասէ ցնա արքայ. Երթ՝ և արա՛ նմա որպէս և ասացն, և սպան զնա, և թաղեա՛
զնա. և բարձցես այսօր զարիւնն զուր զոր եհեղ Յովաբ՝ յինէ՛ն և ՚ի տանէ հօր
իմոյ: ³²Դարձոյց Տէր զարիւն անիրաւութեան նորա ՚ի նորին գլուխ, որպէս
պատահեաց երկուց արանց արդարոց և քաջաց քան զնա, և սպան զնոսա
սրով. և հայր իմ ո՛չ գիտաց զարիւն նոցա. զԱբեցնէր որդի Ներեայ՝
զսպարապետն Իսրայէլի, և զԱմեսայի որդի Յեթերայ զսպարապետն Յուդայ:

³³Եւ դարձան արիւնք նոցա ՚ի գլուխ դորա, և ՚ի գլուխ զաւակի դորա
յաւիտեան. և Դաւթի և զաւակի իւրոյ և տան իւրոյ և աթոռոյ իւրոյ՝ եղիցի
խաղաղութիւն ՚ի Տեառնէ յաւիտեան: ³⁴Եւ ել Բանեա որդի Յովիդեայ, և
պատահեաց Յովաբայ և սպան զնա, և թաղեաց զնա ՚ի տան իւրում
յանապատին: ³⁵Եւ ետ արքայ զԲանեայ որդի Յովիդեայ փոխանակ նորա ՚ի
զօրավարութիւն. և թագաւորութիւնն ուղղէր յերուսաղէն. և զՍադոկ վ քահանայ
ետ արքայ փոխանակ Աբիաթարու՝ ՚ի քահանայ առաջի Տեառն:

Ը Եւ ետ Տէր Սողոմոնի հանճար և իմաստութիւն բազում յոյժ, և լայնութիւն
սրտի իբրև զաւա՛զ առ եզր ծովու. և բազմացա՛ւ հանճար Սողոմոնի քան
զամենայն որդւոց նախնեաց, և քան զիմաստնոց եգիպտացւոց: Եւ ա՛ռ
զդուստրն փարաւոնի, և աճ զնա ՚ի քաղաքն Դաւթի, մինչև կատարել նորա
զտունն իւր. և նախ զտունն Տեառն, և զպարիսպն Երուսաղէնի շուրջանակի,
զեւթն ամ արար և կատարեաց: Եւ էին Սողոմոնի եւթանասուն հազար
բեռնակրաց, և ութսուն հազար քարահատաց ՚ի լերինն: Եւ արար Սողոմոն
զծովն, և զմոյթսն, և զաւազանսն մեծամեծսն. և զսիւնսն. և զջրաբուխսն
սրահին. և զծովն պղնձի: Եւ շինեաց զբարձաւանդակն մահարձանօք, և
անջրպետեաց զքաղաքն Դաւթի: Եւ ապա դուստրն փարաւոնի ել ՚ի քաղաքէն
Դաւթի ՚ի տո՛ւն իւր զոր շինեաց նմա. և ապա շինեաց զբարձաւանդակն: Եւ
Սողոմոն մատուցանէր երիցս ՚ի տարւոջ ողջակէզս և խաղաղականս ՚ի վերայ
սեղանոյն զոր շինեաց Տեառն, և արկանէր խո՛ւնկս առաջի Տեառն. և
կատարեաց զտունն:

Թ Եւ այս են իշխանք որ կային ՚ի վերայ գործոյն Սողոմոնի. երեք հազար և
վեց հարիւր գործավարք ժողովրդեանն, որ գործէին զգործն: Եւ շինեաց՝

* Ոմանք. Չի փախեար ՚ի սեղան անդ:
* Ոմանք. Արիւնք նոցա ՚ի գլուխ նորա:

զԱսուր, և զՄակդոն, և զԱզեր, և զԲեթորոն վերին, և զԲալաաթ. բայց յե՛տ շինելոյն նորա զտունն Տեառն, և զպարիսպն Երուսաղեմի շուրջանակի, ապա՛ շինեաց և զքաղաքսն զայնոսիկ:

Ժ Եւ մինչդեռ կենդանի՝ էր Դաւիթ՝ պատուիրեաց Սողոմոնի, և ասէ. Ահա ընդ քե՛զ է Սեմէի որդի Գերեայ՝ որդի զաւակի Յեմինայ՝ ՚ի Քերրոնէ. նա անէ՛ծ զիս անէ՛ծս ցաւագինս յաւուր յորում զնացեալ երթայի ՚ի Բանակս: Եւ նա էջ ընդ առաջ իմ յափն Յորդանանու. և երդուա՛յ նմա ՚ի Տէր, թէ ո՛չ մեռցիս սրով. և արդ՝ մի՛ առնիցես զնա անպարտ. զի այր իմաստո՛ւն ես դու, և գիտասցե՛ս զինչ առնիցես նմա, և իջուսցես զալիս նորա արեամբ ՚ի դժոխս՝: ³⁶Եւ առաքեաց արքայ և կոչեաց զՍեմէի, և ասէ ցնա. Շինեա՛ դու քեզ տո՛ւն յերուսաղեմ, և նիստ անդ, և մի՛ ուրեք ելանիցես անտի. ³⁷և եղիցի յաւուր ելանելոյ քոյ՝ թէ անցանիցես ընդ հեղեղատն Կեդրոնի, գիտելով գիտասջիր զի մահո՛ւ մեռանիցիս, և արիւն քո ՚ի գլուխ քո եղիցի: Եւ երդուաւ նմա արքայ յաւուր յայնմիկ: ³⁸Եւ ասէ Սեմէի ցարքայ. Բարի՛ է բանդ զոր խօսեցար տէր իմ արքայ, այնպէս արասցէ ծառայ քո: Եւ նստաւ Սեմէի յերուսաղեմ ամս երիս: ³⁹Եւ եղև յետ երից ամաց՝ փախեան ծառայք երկու՝ Սեմեայ առ Անքուս՝ որդի Մաաքայ արքայ Գեթայ. և ա՛զդ եղև Սեմեայ և ասեմ. Ահա երկու ծառայք քո ՚ի Գէթ են՝: ⁴⁰Յարեաւ Սեմէի և հանդերձեաց զէջ իւր, և զնաց առ Անքուս խնդրել զծառայս իւր. և չոգաւ Սեմէի և ած զծառայսն իւր ՚ի Գեթայ՝: ⁴¹Եւ պատմեցաւ Սողոմոնի՝ ասեմ, թէ չոգաւ Սեմէի յերուսաղեմէ՝ ՚ի Գէթ՝ և դարձոյց զծառայս իւր: ⁴²Եւ առաքեաց արքայ և կոչեաց զՍեմէի՝ և ասէ ցնա. Ո՞չ երդմնեցուցի զքեզ ՚ի Տէր, և եդի քեզ վկայութիւն՝ և ասեմ. Յաւուր յորում ելանիցես յերուսաղեմէ՝ և երթայցես յաջ կամ յահեակ՝ գիտելով գիտասջիր զի մահո՛ւ մեռանիցիս. և ասացեր ցիս. Բարի՛ է բանդ զոր լուայ՝. ⁴³և արդ՝ զիա՞րդ է զի ո՛չ պահեցեր զերդումն Տեառն, և զպատուէրն զոր պատուիրեցի քեզ՝: ⁴⁴Եւ ասէ արքայ ցՍեմէի. Դու ինքնի՛ն գիտես զչարութիւն քո, զոր գիտէ սիրտ քո զոր արարեր ընդ Դաւթի հօր իմում. և հատոյց Տէր զչարիսն քո ՚ի գլուխ քո. ⁴⁵և արքայ Սողոմոն օրհնեա՛լ է, և աթոռ Դաւթի պատրաստ առաջի Տեառն յաւիտեան: ⁴⁶Չրաման ետ արքայ Սողոմոն Բանեայ որդւոյ Յովիդայեայ. և ել սպան զնա, և մեռաւ:

3

Գլուխ Գ

ԺԱ ¹Եւ ՚ի հաստատել թագաւորութեանն Սողոմոնի, խնամութիւն արար

** Ոսկան. Եւ եդ արքայ... և զթագաւորութիւնն ուղղէր: Աստանօր միջանկեալ բանս սկսեալ՝ Եւ ետ Տէր Սողոմոնի, մինչև՝ զալիս նորա արեամբ ՚ի դժոխս. որ է ըստ ընտիր օրհնակաց բնագրի եօթանասնից. երևի կարի իմն երկարածգել զհամարն 35. եղեալ համեմատութեամբ համարոցն լատինացւոց թարգմանութեան. յորում պակասին բանքս: Ոմանք. Մինչև ցկատարել նորա... և զպարիսպս Երուսաղեմի:... Եւ զսիւնսն և զջրաբուխից սրահին: Ժ (35) ՚ի լուս՝. Չաւակի Յեմինայ ՚ի Բաւորէ. ուր ոմանք. զաւակ ՚ի Յեմինայ ՚ի Քերրոն:... թէ ո՛չ մեռցի սրով:*

** Ոմանք. Առ Անքիս որդի:*

** Ոմանք. Առ Անքիս:*

** Օրհնակ մի. Եւ ասացեր. Բարի է բանդ զոր ասացեր ցիս:*

** Յօրհնակին պակասէր. Զիարդ է զի ո՛չ պահեցեր:*

Սողոմոն ընդ փարաւոնի արքային եգիպտացոց, և ա՛ռ զդուստր նորա՝ և ած՝ ՚ի քաղաք Դաւթի, մինչև կատարեաց շինել զտուն իւր՝ և զտուն Տեառն, և զպարիսպն Երուսաղէմի շուրջանակի: ²Սակայն ժողովուրդն արկանէին խունկս ՚ի վերայ բարձանց. զի ո՛չ շինեցաւ տուն անուան Տեառն մինչև ցաւուրսն ցայնոսիկ*:

³Եւ սիրեաց Սողոմոն զՏէր՝ զնա՛լ ըստ հրամանաց Դաւթի հօր իւրոյ, բայց ՚ի բարձունս և նա՛ զոհէր՝ և արկանէր խունկս: ⁴Եւ յարեա՛ւ զնա՛ց արքայ ՚ի Գաբաւոն զոհել անդ, զի նա առաւել բարձրագոյն և մե՛ծ էր. հազար ողջակէզ եհան Սողոմոն ՚ի վերայ սեղանոյն այնորիկ ՚ի Գաբաւոն:

ԺԲ ⁵Եւ երևեցաւ Տէր Սողոմոնի ՚ի քուն գիշերոյ. և ասէ Տէր ցՍողոմոն. Խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ: ⁶Եւ ասէ Սողոմոն. Դո՛ւ արարեր ողորմութիւն մեծ ընդ Դաւթի հօր իմոյ, որպէս և շրջեցաւ առաջի քո ճշմարտութեամբ և արդարութեամբ և ուղղութեամբ սրտի ընդ քեզ. և պահեցեր նմա զողորմութիւնս զայս մեծ՝ տա՛լ որդւոյ նորա նստել յաթոռ նորա՝ որպէս և յաւուր յայսմիկ: ⁷Եւ արդ՝ Տէր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո փոխանակ Դաւթի հօր իմոյ, և ե՛ս եմ մանուկ փոքր, և ո՛չ գիտեմ զել և զմուտ իմ. ⁸և ծառայ քո ՚ի մէջ ժողովրդեան քո է՝ զոր ընտրեցեր ժողովուրդ քո՝ բազում, անթիւ և անհամար ՚ի բազմութենէ*:

⁹Եւ տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամո՛ւտ լինել ՚ի մէջ բարւոյ և չարի. քանզի ո՞ կարիցէ դատել զայս ժողովուրդ քո զծանր: ¹⁰Եւ հաճո՛յ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան: ¹¹Եւ ասէ ցնա Տէր. Փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, և ո՛չ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, և ո՛չ խնդրեցեր քեզ մեծութիւն, և ո՛չ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց. այլ խնդրեցեր դու քեզ խելամո՛ւտ լինել լսելոյ զիրաւունս. ¹²ահա արարի՛ ըստ բանիդ քում. ահա ետո՛ւ քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ. իբրև զքեզ ո՛չ որ եղև յառաջ քան զքեզ, և յետ քո ո՛չ որ յարիցէ նմանօղ քեզ*:

¹³Եւ զոր ո՛չ ևս խնդրեցեր՝ ետո՛ւ քեզ, զմեծութիւն և զփառս, որպէս ո՛չ որ եղև նման քեզ ՚ի թագաւորս զամենայն աւուրս քո*:

¹⁴Եւ եթէ զնասցես ՚ի ճանապարհս իմ պահել զհրամանս իմ և զպատուիրանս իմ որպէս և զնա՛ց Դաւթի հայր քո, և բազմացուցի՛ց զաւուրս քո: ¹⁵Եւ զարթեաւ Սողոմոն՝ և ահա երա՛զ էր. և յարեա՛ւ եկն յԵրուսաղէմ, և եկաց առաջի սեղանոյն յանդիման տապանակի ուխտին Տեառն ՚ի Սիոն. և մատոյց ողջակէզս, և արար խաղաղականս, և արար խրախութիւն մե՛ծ իւր և ամենայն ծառայից իւրոց:

ԺԳ ¹⁶Յայնժամ երևեցան երկու կանայք պոռնիկք՝ արքայի, և կացին առաջի նորա: ¹⁷Եւ ասէ մի կինն. Յի՛ս տէր իմ. ե՛ս և կինս այս էաք ՚ի միում տան, և ծնայ ՚ի տանն. ¹⁸և եղև յաւուրն երրորդի ծնա՛ւ և կինս այս. և մեք առանձինն էաք, և ո՛չ որ գոյր ընդ մեզ ՚ի տանն՝ բա՛ց ՚ի մէջ յերկոցունց ՚ի տանն*:

¹⁹Եւ մեռաւ որդի սորա ՚ի գիշերի, քանզի ննջեաց ՚ի վերայ նորա. ²⁰և յարեաւ ՚ի հասարակ գիշերի, և ա՛ռ զմանուկն իմ ՚ի գրկաց իմոց. և աղախին քո ՚ի քո՛ւն էր, և ննջեցոյց զնա ՚ի ծո՛ց իւրում. և զորդին իւր զմեռեալ ննջեցոյց ՚ի ծո՛ց իմում*:

²¹Եւ յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զորդին իմ, և նա՛ էր մեռեալ. և

* Ոմանք. Մինչև յաւուրսն յայնոսիկ:

* Ոմանք. Եւ ժողովուրդ քո բազում, անթիւ:

* Ոմանք. Եւ յետ քո ո՛չ յարիցէ:

* Այլք. Եւ զոր ոչն ևս խնդրեցեր:

* Այլք. Բաց ՚ի մէջ երկոցունց:

* Ոմանք. Չմեռեալն ննջեցոյց ՚ի ծոց:

հայեցայ ընդ նա այգունն, և ահա չէր որդին իմ զոր ծնայ*։²² Եւ ասէ մես կինն. Ո՛չ, այլ որդի քո է մեռեալն, և որդի իմ կենդանին: Եւ մեսն ևս ասէր. Այլ որդի իմ կենդանին, և որդի քո մեռեալն.²³ և խօսեցան առաջի արքայի: Եւ ասէ ցնոսա արքայ. Դու ասես՝ թէ այս որդի իմ է՝ որ կենդանիս է, և որդի դորա մեռեալն. և դու ասես. Ո՛չ, այլ որդին քո մեռեալն, և որդին իմ կենդանին:²⁴ Եւ ասէ արքայ. Առէ՛ք առ իս զսուրն: Եւ բերին զսուրն առաջի արքայի:²⁵ Եւ ասէ արքայ. Կտրեցէ՛ք զմանուկն զստնդիաց զկենդանի յերկուս, և տո՛ւք զկեսն նորա դմա՛, և զկեսն նորա մմա:²⁶ Եւ պատասխանի ետ կինն՝ որոյ որդին կենդանի էր, և ասէ ցարքայ. քանզի խռովեցան աղիք նորա՝ ՚ի վերայ որդւոյն իւրոյ, և ասէ. Յի՛ս տէր. տո՛ւք մմա զմանուկն կենդանի՝ և մահու մի՛ սպանանէք զնա: Եւ մեսն ասէր. Մի՛ իմ լիցի՝ և մի՛ դորա, կտրեցէ՛ք ընդ մէջ*։²⁷ Պատասխանի ետ արքայ և ասէ. Տո՛ւք դմա զմանուկն կենդանի, որ ասաց թէ տո՛ւք զդա մմա՝ և մահու մի՛ սպանանէք զդա. մա՛ է մայր դորա*։²⁸ Եւ լուաւ ամենայն Իսրայէլ զդատաստանն զոր դատեցաւ արքայ, և զահի՛ հարան յերեսաց արքայի. զի տեսին թէ իմաստութիւն Աստուծոյ է՝ ՚ի մմա առնել իրաւունս*։

4

Գլուխ Դ

ԺԴ¹ Եւ էր արքայ Սողոմոնն թագաւորեալ՝ ՚ի վերայ Իսրայէլի: ² Եւ այս էին իշխանք նորա: Ազարիա որդի Սադովկայ՝ քահանայ: ³ Էլիարեփ, և Աքիա որդիք Սիսայ՝ դպիրք. և Յովսափատ՝ որդի Աքիլիդայ ՚ի վերայ յիշատակաց. ⁴ և Բանեա որդի Յովիդայեայ ՚ի վերայ զօրաց. և Սադովկ՝ և Աքիաթար քահանայք. ⁵ և Ազարիա որդի Նաթանայ ՚ի վերայ զործավարաց. և Ջաբութ՝ որդի Նաթանայ քահանայ բարեկամ արքայի*։ ⁶ և Աքիսար՝ էր հրամատար. և Էլիակո՝ հազարապետ. և Էլիափ որդի Սափայ շահապ. և Ադոնիրամ որդի Աբդովայ ՚ի վերայ հարկաց*։ ⁷ Եւ էին Սողոմոնի երկուտասան զործակալք ՚ի վերայ ամենայն Իսրայէլի, տա՛լ ռոճիկ արքայի և տան նորա մէն մի ամիս ՚ի տարւոջ: ⁸ Եւ այս են անուանք նոցա. Բէին որդի Ովրայ ՚ի լերինն Եփրեմի: ⁹ Մի՝ որդի Դակարայ ՚ի Մաքմաս, և ՚ի Սալաբիմ, և ՚ի Բեթսամիւս, և յԱյիլոմ մինչև ցԲեթանան: ¹⁰ Որդի Եսգայ՝ յԱրաբաւթն. նորա Սոքով և ամենայն երկիրն Ոփերայ: ¹¹ Որդի Աբինադաբայ և ամենայն Նեփադովր, որոյ Տափաթ դուստր Սողոմոնի՝ էր նորա կնութեան*։ ¹² Բաանա՝ որդի Այիլովթայ, զԹանաք և զՄաքդով, և զամենայն տունն Սանայ. որ առ Ելսարթսանաւ, ՚ի ներքոյ Եզրայէլի, և ՚ի Բեթսաինա մինչև

* Ոմանք. Ընդ նա այգոյն, և ահա:

* Ոմանք. Մի՛ սպանէք:

* Ոմանք. Մի՛ սպանէք:

* Ոսկան. Թէ իմաստութիւն Տեառն է ՚ի մմա:

* Ոմանք. Եւ զԱքիուդ որդի Նաթա՛:

* Յօրինակին բառս հրամատար. բաժանմամբ գրի հրամատար. չակերտ ՚ի միջի եղեալ, որով թերևս ակնարկէ գրիչն զվրիպակ զաղափարի իւրոյ ուղղել, յաւելեալ ՚ի միջոցին զվանկս ան, և առնել հրամանատար. համաձայն այլոց գրչագրաց մերոց յայսմ վայրի. թպէտ և ՚ի Դան. Զ 2, 4, 6. են ևս ոմանք որ ունին համեմատ մերունս օրինակի՝ հրամատար:

* Այլք. Որդւոյ Ամինադաբայ:

ցԱբէլմաուլա, և մինչև ցՄամբրալա*։ ¹³Եկմաալ որդի Գաբերայ յՌամովթ Գաղաադ. նորա Աւիովթ Յայիրայ որդւոյ Մանասէի՝ ի Գաղաադ. նորա վիճակն Երգաբա որ ՚ի Բասան. վաթսուն քաղաքք մեծամեծք պարսպաւորք պղնձանիգք*։ ¹⁴Այինադաբ որդի Ադդովայ ՚ի Մայենեն։ ¹⁵Աքինաս ՚ի Նեփթաղիմ. սա ա՛ռ զՄասենաթ դուստր Սողոմոնի կնութեան։ ¹⁶Բաանաս որդի Քուսեայ՝ յԱսեր և ՚ի Բաալովթ։ ¹⁷Յովսափատ որդի Փուարայ՝ յԻսաքար*։ ¹⁸Սենէի որդի Ելայ ՚ի Բենիամին։ ¹⁹Գաբեր որդի Արայի, յերկրին Գաղաադու. յերկրին Սեհոնի արքայի Անովրիացոց, և Ովգայ արքայի Բասանու. Նաբիփ յերկրին* ²⁰Յուդա։ Եւ Իսրայէլ բազում էր իբրև զաւազ առ եզր ծովու բազմութեամբ. ուտէին և ըմպէին և ուրախ լինէին*։ ²¹Եւ Սողոմոն՝ իշխան էր թագաւորութեանց, ՚ի գետոյ երկրին այլազգեաց մինչև ՚ի սահմանս Եգիպտոսի. բերէին պատարագս՝ և ծառայէին Սողոմոնի զամենայն աւուրս կենաց նորա։ ²²Եւ ա՛յս ռոճիկք էին Սողոմոնի ՚ի միում աւուր. երեսուն քոռ նաշիւոյ, և քառասուն քոռ ալեր գերմակոյ. ²³և տասն եզն ընտիր, և քսան կով արօտական, և հարիւր ոչխար. թո՛ղ զեղջերու և զայծեամն, և զընտիր ընտիր հաւուց պարարելոց։ ²⁴Չի էր իշխան ամենայնի յայնկոյս գետոյն՝ ՚ի Թափսայ մինչև ցԳազայ, ամենայն թագաւորութեանց յայնմ կողմանէ գետոյն. և էր նմա խաղաղութիւն յամենայն կողմանց շուրջանակի։ ²⁵Եւ բնակեալ էր Յուդա և Իսրայէլ վստահութեամբ. իւրաքանչիւրոք ընդ որթով և ընդ թզենեաւ իւրով. ուտէին և ըմպէին՝ ՚ի Դանայ մինչև ցԲերսաբէէ զամենայն աւուրս Սողոմոնի*։ ²⁶Եւ էին Սողոմոնի քառասուն հազար մատակ ծիոց ՚ի կառս, և երկուտասան հազար երիվարաց։ ²⁷Եւ տային այնպէս ռոճիկ գործակալքն արքայի Սողոմոնի. և զամենայն հրամանս սեղանոյն արքայի՝ զիւրաքանչիւր ամիս. և ո՛չ սխալէին բան մի։ ²⁸Նոյնպէս և զգարին և զյարդն երիվարացն՝ և կառամտացն, բերէին ՚ի տեղին ուր էր արքայ՝ իւրաքանչիւրոք ըստ սակի՝ իւրում։

ԺԵ ²⁹Եւ ե՛տ Տէր իմաստութիւն Սողոմոնի՝ և հանճար բազում յոյժ, և զեղումն սրտի իբրև զաւազ առ եզեր ծովու*։ ³⁰Եւ բազմացաւ իմաստութիւնն Սողոմոնի յոյժ, քան զհանճար ամենայն նախնեաց մարդկան, և քան զամենայն իմաստնոց Եգիպտոսի։ ³¹Եւ իմաստնացաւ քան զամենայն մարդիկ. և իմաստնացաւ քան զԳեթան Չարաացի, և զԵման, և զՔաղքաղ և զԴարդան՝ որդիս Մաւուլայ. և էր անուանի յամենայն ազգս շուրջանակի*։ ³²Եւ խօսեցաւ Սողոմոն երիս հազարս առակս. և էին օրհնութիւնք նորա հինգ հազար։ ³³Եւ խօսեցաւ զփայտից զեղևնափայտէն որ ՚ի Լիբանան, մինչև ցգոպայն որ յորմն Ելանէ. և խօսեցաւ զանասնոց, և զթռչնոց, և զձկանց*։ ³⁴Եւ գային ամենայն ազգք լսել զիմաստութիւնն Սողոմոնի և յամենայն թագաւորաց երկրի որ լսէին զիմաստութիւն նորա։

* *Ի լուս*՝ Որ առ Ելսարթսանայ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝: *Ոմանք*. Եւ ՚ի Բեթսանայ մինչև յԱբեղմաուլա, և մինչև ցՄեմբրաղայ։

* *Ոսկան*. Յարիրայ որդւոյ Մանա՛։

* *Այլք*. Փարուայ յԻսաքար։

* *Ոմանք*. Որդի Յուդայ ՚ի յերկրին... արքայի Բաանու և Նաբիփ յերկրին։

* *Ոմանք*. Առ եզեր ծովու։

* *Այլք*. Ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ։

* *Ոմանք*. Առ եզր ծովու։

* *Ոմանք*. Որդի Սամաւուլայ։

* *Ոսկան*. Մինչև ցոպայն որ։ *Ի լուս*՝. *՚ի վերայ* յորմն, *նշանակի*՝ պարիսպ։

Գլուխ Ե

ԺՁ ¹Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիրոսի զժառայս իւր առ Սողոմոն. քանզի լուաւ թէ զնա՝ օժին՝ ՚ի թագաւոր փոխանակ Դաւթի հօր իւրոյ. զի սիրէր Քիրամ զԴաւթ զամենայն աւուրս: ²Եւ առաքեաց Սողոմոն առ Քիրամ, և ասէ. ³Դու ինքնին գիտես զԴաւթ զհայր իմ զի ո՛չ կարաց շինել տուն անուան Տեառն Աստուծոյ իմոյ, յերեսաց պատերազմացն որ շուրջ էին զնովաւ, մինչև տալ Տեառն զնոսա ընդ ոտիւք նորա՝: ⁴Եւ արդ՝ ցածոյց Տէր Աստուած իմ շուրջ զինև, և ո՛չ գոյ վնասակար՝ և ո՛չ պատահար չար: ⁵Եւ ահա ես ասեմ շինել տուն անուան Տեառն Աստուծոյ իմոյ. որպէս խօսեցաւ Տէր Աստուած ընդ Դաւթի հօր իմուն, և ասէ. Որդի՛ քո զոր տաց փոխանակ քո յաթոռ քո՝ նա՛ շինեսցէ տուն անուան իմոյ: ⁶Եւ արդ՝ հրաման տուր, և հարցեն ինձ փայտ ՚ի Լիբանանէ. և ահա ծառայք իմ եղիցին ընդ ծառայս քո. և զվարձս ծառայութեան քո տաց քեզ՝ ըստ ամենայնի զոր և ասասցես. զի դու ինքնին գիտես, զի ո՛չ գոյ մեր այր որ գիտէ հարկանել փայտ իբրև զՍիդոնացիս՝: ⁷Եւ եղև իբրև լուաւ Քիրամ զբանս Սողոմոնի, ուրախ եղև յոյժ՝ և ասէ. Օրհնեալ Տէր Աստուած այսօր, որ ետ որդի իմաստուն Դաւթի ՚ի վերայ բազում ժողովրդեանն այնորիկ՝: ⁸Եւ առաքեաց Քիրամ առ Սողոմոն՝ և ասէ. Լուայ վասն ամենայնի զոր առաքեցեր առ իս. ես արարից զամենայն զկամս քո. եղևնափայտ և մայր ⁹իջուցեն ծառայք իմ ՚ի Լիբանանէ ՚ի ծով, և ես արարից զնոսա լաստ ՚ի ծովու՝ մինչև ցտեղի յոր առաքեսցես առ իս, և հանից յեզր, և դու առցես. և արասցես զկամս իմ տալ հաց տան իմոյ՝: ¹⁰Եւ տայր Քիրամ Սողոմոնի եղևնափայտս, և մայրս, և զամենայն զկամս նորա: ¹¹Եւ Սողոմոն տայր Քիրամայ քսան հազար քոռ ցորենոյ, և քսան հազար սափոր իւղոյ մզելոյ, զոր տայր Սողոմոն Քիրամայ ՚ի տարւոջ: ¹²Եւ ետ Տէր իմաստութիւն Սողոմոնի, որպէս և խօսեցաւ ընդ նմա. և էր խաղաղութիւն ՚ի մէջ Քիրամայ և ՚ի մէջ Սողոմոնի, և ուխտեցին ուխտ ՚ի մէջ իւրեանց: ¹³Եւ արկ արքայ Սողոմոն մարդահարկ յամենայն Իսրայէլ, և էր հարկն երեսուն հազար արանց: ¹⁴Եւ առաքէր զնոսա ՚ի Լիբանան տասն հազար յամսեան՝ փոխանակաւ կային ամիս մի ՚ի Լիբանան, և զերկուս ամիսս ՚ի տունս իւրեանց. և Ադոնիհրամ ՚ի վերայ հարկին: ¹⁵Եւ էին Սողոմոնի եւթանասուն հազար բեռնակրաց և ութսուն հազար քարահատաց ՚ի լերինն. ¹⁶թող զիշխանս կացուցեալս Սողոմոնի ՚ի վերայ գործոյն, երեք հազար և հինգ հարիւր ՚ի վերայ ժողովրդեանն որ գործէին զգործն: ¹⁷Եւ հրաման ետ արքայ և բերին վէմս մեծամեծս և քարինս պատուականս ՚ի հիմն տանն, և քարինս անտա՛շս, ¹⁸և տաշեցին որդիքն Սողոմոնի, և որդիքն Քիրամայ, և Բիբլացիքն. և պատրաստեցին զփայտն և զքար, զերիս ամս շինել զտունն՝:

* *Յօրինակին պակասէր.* Գիտես զԴաւթ զհայր իմ:

* *Ոմանք.* Եթէ ո՛չ գոյ մեր այր:

* *Ոմանք.* Օրհնեալ է Աստուած այսօր:

* *Այլք.* Չնոսա լաստս ՚ի ծովու:

* *Ոմանք.* Որ գործէին զգործն:

* *Ոմանք.* Եւ որդիքն Քիրամայ և Լիբացիքն. և պատ՛:

Գլուխ Զ

¹Եւ եղև յամին չորեքարիւորոդի և քառասներորդի ելանելոյ որդւոցն Իսրայէլի յեգիպտոսէ. յամին չորրորդի յամսեանն երկրորդի թագաւորելոյ արքայի Սողոմոնի՝ ի վերայ Իսրայէլի. շինէր զտունն Տեառն: ²Եւ տունն զոր շինեաց արքայ Սողոմոն Տեառն՝ վաթսուն կանգուն երկայնութիւն նորա, և քսան կանգուն լայնութիւն նորա, և քսան կանգուն բարձրութիւն նորա: ³Եւ կամարակա՛յ առաջի տանն՝ ի քսան կանգոնոյ երկայնութիւն նորա, հանդէպ բարձրութեան տանն, և ՚ի տասն կանգոնոյ լայնութիւն նորա, առաջի երեսաց տանն. և շինեաց զտունն և կատարեաց զնա: ⁴Եւ արա՛ր տանն պատուհանս հայեցիկս ծածուկս: ⁵Եւ ած զորմովք տանն պատուարս շուրջանակի՝ # առ որմովք տանն շուրջանակի տաճարին և դաբիրայն: Եւ արա՛ր կողմանոցս շուրջանակի: ⁶Կողմանոցին ներքոյ՝ ՚ի հինգ կանգոնոյ լայնութիւն նորա, և միջոյն վեց կանգոնոյ լայնութիւն, և երրորդին յեւթն կանգոնոյ լայնութիւն նորա. քանզի անջրպետութիւն ետ տանն շուրջանակի արտաքո՛ւստ կողմանէ տանն. զի մի՛ հարկանիցին ընդ որմս տանն: ⁷Եւ ՚ի շինել տանն՝ ապառա՛ժ և անգործ քարամբք շինեցաւ. և մո՛ւրճ և ամենայն ինչ երկաթի ո՛չ հնչեաց ՚ի շինել նորա: ⁸Եւ դուռն կողմանցն ՚ի ներքոյ աջո՛յ ուսոյ տանն, և ելանելի շուրջանակաւ ՚ի միջինն, և ՚ի միջոյն յերրորդ յարկն*: ⁹Եւ շինեաց զտունն, և կատարեաց զնա. և դրուագեաց՝ զտունն տախտակամածօք պահանգօք և յօրինուածովք եղևնափայտից*: ¹⁰Եւ շինեաց զկոզակս ամենայն տանն, ՚ի հինգ կանգոնոյ բարձրութիւն նորա, և պատեաց զկոզակսն եղևնափայտիւ:

ԺԷ ¹¹Եւ եղև բա՛ն Տեառն առ Սողոմոն՝ և ասէ. ¹²Ձտունդ զոր շինես դու՝ եթէ ըստ հրամանաց իմոց զնացես և զիրաւունս իմ արացես՝ և պահեսցես զամենայն պատուիրանս իմ զա՛լ զնոքօք, հաստատեցի՛ց զբան իմ ընդ քեզ, զոր խօսեցայ ընդ Դաւթի հօր քոյ*. ¹³և բնակեցայց ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի, և ո՛չ թողից զժողովուրդ իմ զԻսրայէլ: ¹⁴Եւ շինեաց Սողոմոն զտունն, և կատարեաց զնա: ¹⁵Եւ շինեաց զորմս տանն ՚ի ներքուստ յեղևնափայտից, ՚ի յատակէ տանն մինչև ցորմսն և մինչև ցգերանսն, և պատեաց շուրջանակի փայտի՛ւ ՚ի ներքուստ. և դրուագեաց ՚ի ներքոյ տանն կողմանոցօք մայրիւք: ¹⁶Եւ շինեաց քսան կանգուն ՚ի ծագէ որմոյն զմի կողմանոցն ՚ի յատակէ տանն մինչև ցիեծանսն: Եւ արա՛ր ՚ի ներքոյ կողմանէ նորա զդաբիրն ՚ի սրբութեան սրբութեանցն: ¹⁷Ի քառասուն կանգոնո՛յ էր տունն, տաճարն ներքին: ¹⁸Եւ դրուագեաց զտունն ՚ի ներքոյ եղևնափայտիւք զկամարսն և զկոզակս, և զդրօշուածս զամենայն յեղևնափայտից. և ո՛չ երևէր քարն* ¹⁹հանդէպ դաբիրայն ՚ի մէջ տանն ՚ի ներքուստ կողմանէ. պատրաստեաց դնել՝ անդ զտապանակ ուխտին Տեառն: ²⁰Եւ հանդէպ դաբիրայն քսան կանգուն յերկայնութիւն, և քսան կանգուն լայնութիւն, և քսան կանգուն բարձրութիւն նորա. և դրուագեաց զնոսա ոսկւով

* Ոմանք. Եւ միջոյն ՚ի վեց կանգոնոյ լայնութիւն:

* Այլք. Եւ դուռն կողմանոցին ՚ի ներքոյ... շրջանակաւ ՚ի միջ՞:

* Ոմանք. Պահանգօք և յօրինուա՞:

* Ոմանք. Եւ զհրամանս իմ արացես: Ոսկան. Գնալ զնոքօք, հաստատեցից զբանս իմ. ուր ոմանք. զբանն իմ:

* Ոմանք. Եւ զկամարսն, և զկո՞:

ծուլով: Եւ արար սեղան եղևնափայտեայ*։ ²¹Եւ դրուագեաց Սողոմոն զտունն ՚ի ներքուստ ոսկւով զտով. և հաստատեաց ոսկի բևեռօք հանդէպ դաբիրայն և պատեաց զնա ոսկւով։ ²²Եւ զամենայն տունն օծ ոսկւով մինչև ՚ի սպառ ամենայն տանն. և ամենայն ներքին կողման դաբիրայն՝ արար թիթղունս ոսկիս։ ²³Եւ արար ՚ի ներքս ՚ի դաբիրն երկուս քերովբէս ՚ի փայտից նոճից. ՚ի տասն կանգնոյ մեծութիւն միոյն՝ կշռով. ²⁴և ՚ի հինգ կանգնոյ թև՝ մի նորա, և ՚ի հինգ կանգնոյ թևն երկրորդ. տասն կանգուն թևէ՝ ՚ի թև թևոց նորա*։ ²⁵Նոյնպէս և երկրորդի քերոբէին միով չափով, մի բովանդակութիւն քրովբէիցն։ ²⁶Եւ բարձրութիւն միոյ քրովբէի ՚ի տասն կանգնոյ. նոյնպէս և երկրորդի քրոբէին։ ²⁷Եւ եդ զերկոսին քրոբէսն ՚ի մէջ տանն ներքնոյ, և տարածեաց զթևս նոցա. և հասանէր թև միոյն յորմն, և հասանէր թև քրոբէին երկրորդի՝ յորմն երկրորդ. և թևք նոցա ՚ի մէջ տանն հասանէին թևէ ՚ի թև. ²⁸և պատեաց զքրովբէսն ոսկւով։ ²⁹Եւ զամենայն որմս տանն շուրջանակի քանդակեալ գրեաց գրչաւ քերոբս և արմաւենիս, և դրօշուածս հայելիս ՚ի ներքսագոյնն և յարտաքինն*։ ³⁰Եւ զատակ տանն դրուագեաց ոսկւով զներքնոյն և զարտաքնոյն*։ ³¹Եւ դրաց դաբիրայն արար դուրս ՚ի փայտից գիոյ. և սեամս հնգեկինս*։ ³²Եւ երկուս դուրս ՚ի փայտից մայրից, և քանդակս ՚ի նոցանէ մածուցեալս քերոբս և արմաւենիս, և թիթղունս թռուցեալս, և պատեաց ոսկւով. և իջանէր ՚ի վերայ քրոբէիցն և արմաւենեացն ոսկին։ ³³Այնպէս արար դրաց տաճարին սեամս ՚ի փայտից գիոց չորեկինս*։ ³⁴Եւ երկոցունց դրանցն փայտս մայրս երկբացիկս, մի մի դուռն. և ծխնիք նոցա երկբացիկք։ ³⁵Եւ դուռն երկրորդ շրջանակաւ՝ դրօշեալ ՚ի նմա քերոբս և արմաւենիս, և թռուցեալ թիթղունս, և պատեալ ոսկւով իջանելով ՚ի վերայ յօրինուածոյն*։ ³⁶Եւ շինեաց զսրահն ներքին երեքկարգեանս յանտաշից, և պարիսպ զործեալ յեղևնափայտից*։ ³⁷Յամին չորրորդի արկ հիմն տանն Տեառն, յամսեանն Զիո՛ւ*։ ³⁸Երկրորդուն ամսեանն. և յամին մետասաներորդի յամսեանն ՚ի Բո՛ւլ. այն է ամիսն եւթներորդ. կատարեցաւ տունն ըստ ամենայն բանի նորա, և ըստ ամենայն յօրինուածոյն իւրոյ. և շինեաց զնա զեւթն ամ*։

7

Գլուխ Է

¹Եւ զիւր տունն շինեաց Սողոմոն զերեքտասան ամ, և կատարեաց զամենայն զտունն իւր։ ²Եւ շինեաց զտուն անտառին Լիբանանու՝ հարի՛ւր կանգուն երկայնութիւն, և յիսուն կանգուն լայնութիւն նորա, և երեսուն կանգուն բարձրութիւն նորա. և երից կարգաց սեանցն եղևնափայտից, և ո՛ւսք եղևնեայք

* Այլք. Եւ քսան կանգուն ՚ի լայնութիւն: Ուր ոմանք. ՚ի բարձրութիւն նորա:

* Ոմանք. Թև մի նորին:

* Ոմանք. Եւ դրուշուածս... և յարտաքինսն:

* Ոմանք. Եւ գյատակս տանն:

* Ոմանք. ՚ի փայտից գիոց. և սեամս հինգեքինս:

* Ոմանք. Արար և դրաց տաճարին... չորեքկինս:

* Այլք. Ոսկւով իջելով: Ուր ոմանք. ՚ի վերայ յօրինուածին:

* Ոմանք. Երեքկանգնեան յանտաշից, և:

* Ոսկան. Արկաւ հիմն տանն Տեառն:

* Ոմանք. Եւ յերկրորդուն ամսեան յամին մետասաներ... այն է ամիսն ութերորդ. կատարեցաւ:

ի վերայ սեանցն*.³ և էյարկ գտունն ՚ի վերայ կողմանոցա՛ց սեանցն. և թի՛ւ սեանցն քառասուն և հինգ, և հնգետասան կարգ*.⁴ Եւ պատուարք երեք, և անջրպետք առ անջրպետօք երեքկին: ⁵Եւ ամենայն դրունք, և ամենայն անջրպետք չորեքկուսի պատուարաւորք. և ՚ի դրանէ ՚ի դուռն երեքկին: ⁶Եւ զկամար սեանցն արար յիսուն կանգուն յերկայնութիւն, և երեսուն ՚ի լայնութիւն. զօդեալ կամարքն հանդէպ միմեանց. և սիւնքն և խարիսխք ՚ի դիմա՛ց կողմանէ կամարացն*.⁷ Եւ զկամար աթոռոցն ուր դատէ՛ր ՚ի կամարի ատենին, արար և յարկ եղևնափայտիւք ՚ի յատակէ մինչև ցյատակ*.⁸ Եւ տա՛ն նորա յորում նստցի՝ սրահ մի կամարակապ ըստ նմին գործոյ: Եւ տուն դատերն փարաւոնի զոր ա՛ռ Սողոմոն՝ ըստ նմին օրինակի, կամարակապ*.⁹ ամենայն ՚ի քարա՛նց պատուականաց. չափով յանկոփից կցեալ ընդ միմեանս յերկարաւոր ՚ի ներքոյ և արտաքոյ, ՚ի հիմանէ մինչև ցառաստաղն*.¹⁰ Եւ արտաքուստ ՚ի սրահին մեծի հաստատեալ քարամբք մեծամեծօք տասն կանգնէիւք և ութ կանգնէիւք.¹¹ և ՚ի վերուստ կողմանէ քարամբք պատուականօք ըստ նմին չափոյ անտաշիւք: Եւ եղևնափայտիւք ¹²զսրահն մեծ շուրջանակի երեքկանգնեանս յանտաշից. և կարգ մի մածուցեալ եղևնափայտիւ: Եւ շինեա՛ց զսրահ տանն Տեառն, զներքին կամարաց տան Տեառն հանդէպ տաճարին*:
 ԺԸ ¹³Եւ առաքեա՛ց արքայ Սողոմոն, ա՛ռ զՔիրամ ՚ի Տիւրոսէ՛, ¹⁴որդի կնոջ այրոյ, և նա է՛ր ՚ի ցեղէն Նեփթաղիմայ. և հա՛յր նորա այր Տիւրացի, ճարտարապետ պղնձոյ, և լի՛ արուեստիւ և իմաստութեամբ և գիտութեամբ, գործել զամենայն գործ պղնձոյ. և եմո՛ւտ առ արքայ Սողոմոն. և արար զամենայն զգործն: ¹⁵Եւ ձուլեաց զերկոսին սիւնսն կամարի տանն. ութ և տա՛սն կանգուն բարձրութիւն սեանն. և շուրջ զնովաւ չափ չորեքտասան կանգուն շուրջանակի թանձրութիւն սեանն. և ՚ի չորից մատանց մատնէ՛քն. նոյնպէս և երկրորդ սիւնն*.¹⁶ Եւ երկուս խոյակս արար տալ ՚ի վերայ գլխոց սեանցն ձո՛յլ պղնձիս. հինգ կանգուն բարձրութիւն միոյ խոյակին, և հինգ կանգուն բարձրութիւն երկրորդ խոյակին: ¹⁷Եւ արար երկուս վանդակս ծածկել զխոյակն, և արար երկուս ևս վանդակս ծածկել զերկրորդ խոյակն. զործ կախաղանաւ.¹⁸ և երկոցունց սեանցն նռնաձևս պղնձիս ՚ի վանդակապատսն, գործ կախաղանաւ, կարգ առ կարգ: Եւ ա՛յնպէս արար երկրորդի խոյակին* ¹⁹ի վերայ գլխոյ սեանցն, զործ շուշանագործ առ կամարաւ ՚ի չորից կանգնոց: ²⁰Եւ պատուար ՚ի վերայ երկոցունց սեանցն. և ՚ի վերուստ ՚ի կողմանոցաց խոյակին պատուար. և նռնաձևացն երկերիւր կարգ շուրջ զերկրորդի խոյակաւն: ²¹Եւ կանգնեաց զսիւնս կամարի տաճարին և կանգնեաց զմի սիւնն, և կոչեաց

* *Յօրինակին.* Եւ ուսք և ղևնեայք:

* *Բազումք.* Եւ արկ տունն ՚ի վերայ:

* *Ոմանք.* Եւ խարիսխք նոցա ՚ի դիմաց:

* *Ոմանք.* Աթոռոյն. որ դատէր ՚ի կա՛:

* *Ոմանք.* Յորում նստիցի... ըստ նմին կամարակապ:

* *Յօրինակի մերում գրիչն ՚ի վերայ առաջին այբ-ի բառիս* յերկարաւոր կրկին կետիւ նշանակեալ, թերևս ակնարկէ բառնալ զայն, և առնել յերկարաւոր, ըստ որում իմացաւ ընդօրինակող նորին. թէպէտ և ամենայն գրչագիրք մեր համաձայն այնպէս ունին որպէս և եղաք: *Ոմանք.* Մինչև ցառաստաղս:

* *Այլք.* Երեքկարգեանս յանտաշից, և:

* *Այլք.* Եւ առ զՔիրամ ՚ի Տիւ՛:

* *Ոմանք.* Սիւնսն ՚ի կամար տանն: *՚Ի լուս՛.* Մատանց մատնէքն:

* *Յօրինակին.* Կարգ առ գարգ:

զանուն նորա Յաքում. և կանգնեաց զսիւնն երկրորդ, և կոչեաց զանուն նորա Բող՝: ²²Եւ ՚ի վերայ գլխոյ սեանցն գործ շուշանագործ. և կատարեցաւ գործ սեանցն: ²³Եւ արար զծովն ձուլածոյ, տասն կանգուն շրթանէ ՚ի շուրթն, գործ բոլորչի՛ նոյնաձև. հինգ կանգուն բարձրութիւն նորա, և գոգեալք՝ երեսուն և երեք կանգնովք պատէին զնա շուրջանակի՛: ²⁴և նեցուկ ՚ի ներքոյ նորա՝ շուրջանակի պատէին զնա ՚ի տասն կանգնոյ շուրջանակի, երկու կարգ մութից ձուլեալք ՚ի ձուլին նորա հաստեալք՝: ²⁵Եւ երկոտասան եզն ՚ի ներքոյ ծովուն. երեքն հայէին ընդ հիւսւսի, և երեքն հայէին ընդ ծով, և երեքն հայէին ընդ հարաւ, և երեքն հայէին ընդ արևելս. և ծովն ՚ի վերայ նոցա ՚ի վերուստ կողմանէ. և ամենեցուն թիկունք ՚ի տունն: ²⁶Եւ թանձրութիւն նորա թզաւ և շուրթն նորա իբրև զգործ շրթան բաժակի. և բոյս շուշանի ՚ի վերայ նորա. և տանէր իբրև երկուս հազարս մարս՝: ²⁷Եւ արար զմենքենովթս տասն պղնձիս. հինգ կանգուն երկայնութիւն միոյ մենքենովթայ, և չորք կանգունք լայնութիւն նորա, և վեց կանգունք բարձրութիւն նորա՛: ²⁸Եւ այս գործ էր մենքենովթացն, խորշք խորշք ՚ի վերայ, և խորշք ՚ի մէջ առանցիցն: ²⁹Եւ ՚ի վերայ խորշից նոցա ՚ի մէջ առանցիցն, առնօք, և եզինք, և քերոբք. և ՚ի վերայ առանցիցն նոյնպէս. և ՚ի վերոյ և ՚ի ներքոյ առիւծուցն և եզանց՝ տեղիք գործ առ ՚ի թափ՝: ³⁰Եւ չորք անիւք պղնձիք միում մենքենովթայն, և առանցք պղնձիք. և ՚ի չորեցունց կողմանց նոցա ո՛ւսք նոցա ՚ի ներքոյ աւազանացն, # և ուսք ձուլեալք հանգոյնք մարդոյ առ ընթերակացք. ³¹և բերան նորա ՚ի ներքուստ ՚ի խոյակէն և ՚ի վեր կանգնաւ. և բերան նորա գործ բոլորչի. նոյնպէս ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ թանձրութիւն նորա: Եւ առ բերանով նորա ճախարակեայ հաստատուն չորեքկուսի՛ և ո՛չ բոլորչի. ³²և չորք անիւք ՚ի ներքոյ հաստատելոցն, և ձեռք յանիւսն, և ՚ի մենքենովթսն. և բարձրութիւն միոյ անուոյ ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ՝: ³³Եւ գործ անուոցն՝ իբրև զգործած անուոց կառաց, և ձեռք նոցա՝ և պարանոցք իւրեանց, և թիկունք իւրեանց, և ամենայն արար նոցա ձուլածոյ: ³⁴Եւ չորք ուսք ՚ի վերայ չորեցունց անկեանց միոյ մենքենովթայն. անդստին՝ ՚ի մենքենովթայն ուսք իւր: ³⁵Եւ ՚ի գլուխ մենքենովթայն կէս կանգնոյ մեծ բոլորակ շուրջ զնովաւ ՚ի վերայ գլխոյ մենքենովթայն. և սկիզբն ձեռաց նորա՝ և խորշք նորա անդստին ՚ի նմանէ: ³⁶Եւ բանային ՚ի սկիզբն ձեռաց նորա, և խորշք նորա քերոբք, և առիւծունք, և արմաւենիք կանգնեալք առ նովաւ. իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոց ՚ի ներքս և շուրջանակի՛: ³⁷Ըստ նմին օրինակի արար զամենայն զտասնեսին մենքենովթսն. մի պայման՝ և մի չափ՝ և մի օրինակ ամենեցուն: ³⁸Եւ արար տասն պուտնարդս պղնձիս. և ունէր պուտնարդ մի քառասուն սափոր ՚ի չորից կանգնոց պուտնարդ մի չափով. և պուտնարդ մի ՚ի վերայ միոյ մենքենովթայ՝ տասնեցունց մենքենովթացն՝: ³⁹Եւ եդ զմենքենովթսն հինգ՝

* *Ոմանք.* Եւ կոչեաց զանուն նորա Բողվ:

* *Այլք.* Երեսուն և երիւք կան՝:

* *Այլք.* Եւ նեցուկք ՚ի ներ՝... երկու կարգք մու՛:

* *Օրինակ մի.* Իբրև զշուրթ գործ բաժակի:

* *Այլք ՚ի բովանդակ յայս գլուխ և այլուր գրեթէ միշտ՝ ունին* մենքենովթս, մենքենովթացն, և այլն:

* *Ոմանք.* Գործ զառ ՚ի թափի:

* *Ոմանք.* Ի կանգնոյ և ՚ի կիսոյ կանգնոյ:

* *Ոմանք.* Եւ քերոբք և առիւծունք:

* *Ոմանք.* Եւ ՚ի չորից կանգնոց:

յուսոյ տանն յաջմէ, և զհինգն յուսոյ տանն ՚ի ձախմէ. և ծովն յուսոյ տանն ընդ աջմէ՝ ընդ արևելս ՚ի հարաւոյ կողմանէ: ⁴⁰Եւ արար Քիրամ զսանսն, և զջեռուցիչսն, և զտաշտսն. և կատարեաց Քիրամ առնել զամենայն գործն զոր արար արքայի Սողոմոնն ՚ի տան Տեառն*։ ⁴¹Սիւնս երկուս, և շրջանակս քանդակագործից սեանցն ՚ի վերայ գլխոյ սեանցն. երկուս երկուս վանդակապատս, ծածկել զերկոսին շրջանակսն քանդակագործացն որ էին ՚ի վերայ սեանցն*։ ⁴²Ղռնաձևսն զչորեքարիւր երկոցունց վանդակացն, երկու կարգ նռնաձևաց միոյ վանդակի, ծածկել շուրջ զերկոսին շրջանակս մենքենովթացն ՚ի վերայ երկոցունց սեանցն: ⁴³Եւ զմեքենովթսն՝ և զպուտնարդսն տասնեսին ՚ի վերայ մենքենովթացն. ⁴⁴և զծովն զմի. և զերկոտասանեսին եզինսն ՚ի ներքոյ ծովուն: ⁴⁵Եւ զսանսն, և զջեռուցիչսն զերեսին. և զտաշտսն. և զամենայն կահն զոր արար Քիրամ՝ արքայի Սողոմոննի ՚ի տունն Տեառն: Եւ սիւնք քառասուն և ութ տանն արքայի, և տանն Տեառն. զամենայն գործ զարքայի պատրաստեաց Քիրամ պղնձի համօրէն. և ո՛չ գոյր կշիռ պղնձոյն որով արար զամենայն գործսն զայնոսիկ ՚ի բազմութենէ անտի յոյժ. և ո՛չ գոյր չափ կշռոյ պղնձոյն փայլնոյ*։ ⁴⁶Առ ափն Յորդանանու ձուլեաց զայն արքայի, ՚ի թանձրութեան երկրին ՚ի մէջ Սուկքովթայ, և ՚ի մէջ Սիրարթամայ*։ ⁴⁷Եւ ետ արքայ Սողոմոնն յամենայն կահն, քանզի կարի՛ յոյժ էր բազմութեամբ. և ո՛չ գոյր թիւ պղնձոյն: ⁴⁸Եւ արար Սողոմոնն զամենայն կահն որ ՚ի տան Տեառն. զզոհանոցսն ոսկի. և զսեղանն յորոյ վերայ հա՛ցն պատարագի՝ ոսկի*։ ⁴⁹Եւ զաշտանակսն հինգ ընդ աջմէ, և հինգ ընդ ձախմէ հանդէպ դաբիրայն ՚ի զո՛ւտ ոսկոյ: Եւ զբազմակակսն, և զճրագունսն, և զյարդարիչսն ոսկիս*։ ⁵⁰և զդրանդսն, և զբեռսն, և զտաշտսն, և զսկաւառակսն, և զտուփսն ոսկիս զուտ. և զդրունս տանն ներքնոյ զսրբութեան սրբութեանցն. և զդրունս տանն տաճարին ոսկիս*։ ⁵¹Եւ բովանդակեցաւ ամենայն գործն զոր արար արքայ Սողոմոնն զտանն Տեառն:

ԺԹ Եւ տարաւ արքայ Սողոմոնն զսրբութիւնսն Դաւթի հօր իւրոյ, և զամենայն սրբութիւնս Սողոմոննի՝ զարծաթ և զոսկի և զկահ՝ ետ ՚ի գանձս տանն Տեառն*։

8

Գլուխ Ը

¹Յայնժամ եկեղեցացոյց արքայ Սողոմոնն զամենայն ծերս Իսրայէլի, հանդերձ ամենայն գլխօք գաւազանացն համբարձելոց հարց որդւոց Իսրայէլի առ արքայ Սողոմոնն ՚ի Սիոն, հանել զտապանակ ուխտին Տեառն ՚ի քաղաքէ Դաւթի՝ այս է Սիոն*։ ²Եւ եկեղեցացան առ արքայ Սողոմոնն ամենայն այր

* *Յօրինակին*. Եւ զտաշտսն: *Ոմանք*. Չոր արար արքայի Սողոմոննի:

* *Ոմանք*. Եւ շրջանս քանդակագոր՝... ՚ի վերայ գլխոց սեանցն:

* *Յօրինակին*. Եւ զտաշտսն: *Այլք*. Սողոմոննի ՚ի տանն Տեառն:

* *Ոսկան*. Չուլեաց զայն արքայ ՚ի թանձրութիւն երկրի: *Ոմանք*. Եւ ՚ի մէջ Սիրարթամայ:

* *Այլք*. Չզոհանոցն ոսկի:

* *Ոմանք*. Եւ զբազմակակսն:

* *Այլք*. Տանն ներքնոյ զսրբ: *Ոմանք*. Եւ զդրունս տաճարին ոսկի:

* *Ոսկան*. Եղ ՚ի գանձս տանն:

* *Ոմանք*. Ամենայն գաւազանացն համբարձեցելոց: *Ուր յօրինակին ՚ի վերայ հ-ի չակերտ եղեալ, ՚ի լուս՝ նշանակի՝* բ: *Ոսկան*. Այս է ՚ի Սիօնէ:

Իսրայելի, յամսեանն Անթանի՝ ամի տօնին, այն է ամիսն եւթներորդ*։ ³Եւ ելին ամենայն ծերք Իսրայելի, և բարձին քահանայքն զտապանակն. ⁴և հանին զտապանակն Տեառն, և զխորանն վկայութեան, և զամենայն սպասն սրբութեան որ ՚ի խորանին վկայութեան #. և հանին զայն քահանայքն և Ղևտացիք։ ⁵Եւ արքայ Սողոմոն և ամենայն ժողովուրդն Իսրայելի գումարեալք առ նա, հանդերձ նովաւ առաջի տապանակին. զենուին արջառս և ոչխարս անհամարս և անթիւս ՚ի բազմութենէ։ ⁶Եւ տարան ՚ի ներքս քահանայքն զտապանակ ուխտին Տեառն ՚ի տեղի՝ իւր, ՚ի դաբիր տանն սրբութեան սրբութեանցն՝ ընդ թևովք քրորեիցն. ⁷զի քրորեքն թռուցեալ թևովք ՚ի վերայ տեղոյ տապանակին, և ծածկեցին քրորեքն զտապանակն, և զսրբութիւնս նորա ՚ի վերուստ։ ⁸Եւ կային ՚ի վերայ սրբեցելոցն, և հայէին գլուխք սրբեցելոցն ՚ի սրբութեանց անտի հանդէպ դաբիրայն, և արտաքս ո՛չ երևէին. և եղեն անդ մինչև ցայսօր։ ⁹Եւ ո՛չ ինչ գոյր ՚ի տապանակին, բայց երկու տախտակքն քարեղէնք, տախտակք ուխտի, զորս եղ անդ Սովսէս ՚ի Քորէք. զորս ուխտեաց Տէր ընդ որդիսն Իսրայելի յելանել՝ նոցա յերկրէն Եգիպտացոց։

Ի ¹⁰Եւ եղև իբրև ելին քահանայքն ՚ի սրբութենէն, և ամպն ելից զտունն Տեառն. ¹¹և ո՛չ կարէր քահանայն կալ ՚ի սպասու յերեսաց ամպոյն. զի փառք Տեառն լցին զտունն*։ ¹²Յայնժամ ասէ Սողոմոն. Տէր ասաց հովանի լինել միզով։ ¹³Շինելով շինեցի քեզ տուն բնակութեան. հաստատութիւն աթոռոյ քում յաւիտեան։

Իւ ¹⁴Եւ դարձոյց արքայ զերեսս իւր, և օրհնեաց զամենայն Իսրայել. և ամենայն եկեղեցին Իսրայելի կայր։ ¹⁵Եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի այսօր. որ խօսեցաւ բերանով իւրով վասն Դաւթի հօր իմոյ. և ձեռօք իւրովք ելից՝ և ասէ*։ ¹⁶Յօրէ յորմէ հանի զժողովուրդ իմ զԻսրայել յԵգիպտոսէ, ո՛չ ընտրեցի ՚ի քաղաքի՝ միում ուրեք ՚ի գաւազանաց Իսրայելի շինել տուն՝ զի լինիցի անուան իմոյ. և ընտրեցի զԴաւթ լինել ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայելի*։ ¹⁷Եւ եղև ՚ի սրտի Դաւթի հօր իմոյ շինել տուն անուան Տեառն Աստուծոյ Իսրայելի. ¹⁸և ասէ Տէր ցԴաւթի հայր իմ. Փոխանակ զի եկն ՚ի սիրտ քո շինել տուն անուան իմոյ՝ բարւո՛ք արարեր, զի եղև ՚ի սրտի քում*։ ¹⁹բայց դու ո՛չ շինեսցես զտունն, այլ որդի՛ քո որ ելանէ յերանաց քոց՝ նա՛ շինեսցէ տուն անուան իմոյ*։ ²⁰Եւ կանգնեաց Տէր զբան իւր զոր խօսեցաւ. և կացի՛ ես փոխանակ Դաւթի հօր իմոյ, և նստայ յաթոռն Իսրայելի որպէս և խօսեցաւ Տէր. և շինեցի տուն անուան Տեառն Աստուծոյ Իսրայելի. ²¹և եղի անդ տեղի տապանակին, որ է ուխտն Տեառն զոր ուխտեաց Տէր ընդ հարսն մեր, ՚ի հանել նորա զնոսա յերկրէն Եգիպտացոց*։

ԻԲ ²²Եւ յարեալ Սողոմոն յերեսաց սեղանոյն Տեառն՝ առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայելի, և տարածեաց զձեռս իւր յերկինս, ²³և ասէ. Տէր Աստուած Իսրայելի. չի՛ք իբրև զքեզ Աստուած յերկինս ՚ի վեր և յերկիր ՚ի խոնարի՝ որ պահեցեր զուխտ և զողորմութիւն ծառայի քում գնացելոյ առաջի քոյ ամենայն

* Ոմանք. Անթանի ամ ՚ի տօնին։

* Այլք. Եւ ո՛չ կարէին քահանայքն կալ։

* Ոմանք. Օրհնեալ է Տէր Աստուած։

* Ոմանք. Ոչ ընտրեցի քաղաք ՚ի միում ուրեք գաւազանի Իսրայելի։

* Այլք. ՅԴաւթի հայր իմ։

* Բազումք. Որ ելանիցէ յերա՛։

* Այլք. Ուր է ուխտն Տեառն։

սրտիւ իւրով. ²⁴պահե՛լ ծառայի քում Դաւթի հօր իմոյ, զոր խոստացա՛ր նմա, և խօսեցար բերանով քով, և ծեռօք քովք կատարեցեր որպէս և յաւուր յայսմիկ: ²⁵Եւ ա՛րդ Տէր՝ Աստուած Իսրայէլի, պահեա՛ծ ծառայի քում Դաւթի հօր իմոյ, զոր խօսեցար նմա և ասացեր. Ո՛չ բարձցի քո այր յերեսաց իմոց որ նստիցի յաթոռ Իսրայէլի, միայն թէ զգուշացին որդիք քո ճանապարհաց իւրեանց գնալ առաջի իմ, որպէս և գնացեր դու առաջի իմ*:

ԻԳ ²⁶Եւ ա՛րդ Տէր՝ Աստուած Իսրայէլի, հաւատարիմ լիցի բանն քո զոր խօսեցար ծառայի քում Դաւթի հօր իմոյ, ²⁷թէ բնակիցե՞՞ Աստուած ընդ մարդկան որ ՚ի վերայ երկրի. եթէ երկինք՝ և երկնից երկինք չեն քեզ բաւական, արդ զիա՞րդ տունս զոր շինեցի: ²⁸Եւ արդ հայեա՛ց յաղօթս ծառայի քում, և ՚ի խնդրուածս իմ, Տէր Աստուած Իսրայէլի, լսե՛լ պաղատանաց աղօթից ծառայի քոյ որ կայ առաջի քո առ քեզ* . ²⁹Լինել բա՛ց աչաց քոց զցայգ և զցերեկ, ՚ի տեղուջս զորմէ ասացեր թէ եղիցի անուն իմ անդ, ՚ի լսել աղօթից զոր աղաչիցէ ծառայ քոյ ՚ի տեղուջս յայսմիկ # ՚ի տուէ և ՚ի գիշերի, և լուիցեն ձայնի ծառայի քոյ, և ժողովրդեան քո Իսրայէլի, զոր կայցեն յաղօթս ՚ի տեղուջս յայսմիկ* . ³⁰Եւ դու լուիցեն ՚ի տեղուջ բնակութեան քոյ յերկինս, և արասցեն և քաւեսցես, ³¹զոր ինչ ոք մեղիցէ ընկերի իւրում: Եւ եթէ առցէ ՚ի վերայ նորա անձս անիծանել զնա, և խոստովան լիցի առաջի սեղանոյ քոյ ՚ի տանս յայսմիկ, ³²և դու լուիցեն յերկնից, և արասցես և դատեսցիս զժողովուրդ քո զԻսրայէլ: Յանօրինել անօրինին, տա՛լ ըստ ճանապարհաց նորա ՚ի գլուխ նորա. և արդարացուցանել զարդարն. տա՛լ նմա ըստ արդարութեան նորա* : ³³Եւ ՚ի պարտել ժողովրդեան քո Իսրայէլի առաջի թշնամեաց, յորժամ մեղանչիցեն քեզ և դառնայցեն առ քեզ՝ և խոստովան լիցին անուան քում. և յաղօթս կայցեն, և աղաչիցեն առ քեզ ՚ի տանս յայսմիկ. ³⁴և դու լուիցեն յերկնից, և քաւեսցես զմեղս ժողովրդեան քոյ Իսրայէլի. և դարձուցեն զնոսա յերկիրս զոր ետուր հարց նոցա: ³⁵Եւ յարգելուլ երկնից՝ և ՚ի չլինել անձրևի, զի մեղուցեալ իցեն քեզ. և յաղօթս կացցեն ՚ի տեղուջս յայսմիկ, և խոստովան լինիցին անուան քում, և ՚ի մեղաց իւրեանց դառնայցեն, յորժամ նկո՛ւն առնիցես զնոսա* . ³⁶Լուիցեն յերկնից, և քաւեսցեն զմեղս ծառայից քոց և ժողովրդեան քոյ Իսրայէլի. զի ցուցցես նոցա ճանապարհ բարի գնալ ՚ի նա. և տացես անձրև յերկիր քո զոր ետուր ժողովրդեան քում ՚ի ժառանգութիւն: ³⁷Եւ սով՝ եթէ լինիցի յերկրի, կամ թէ մահ լինիցի, կամ թէ հրայրեացք, կամ դալուկն, կամ ջորեակ, կամ ժանգ եթէ լինիցի. և նեղիցէ զնա թշնամի իւր ՚ի միում քաղաքացն իւրոց. ամենայն պատահար և ամենայն ցաւ* : ³⁸Ամենայն աղօթք՝ և ամենայն խնդրուածք որ լինիցին ամենայն մարդոյ, ամենայն ժողովրդեան քոյ Իսրայէլի, որպէս զհարդ գիտիցեն իւրաքանչիւր զախտս սրտի իւրոյ, և տարածեսցէ զձեռս իւր ՚ի տանս յայսմիկ* . ³⁹Եւ դու՝ լուիցեն յերկնից ՚ի պատրաստ բնակութենէ քումմէ, և քաւեսցեն և արասցես. և տացես առն ըստ ամենայն ճանապարհաց իւրոց, որպէս և գիտիցես զսիրտ նորա. զի դու միայն գիտես

* Ոսկան. Որպէս և դու գնացեր. *իսկ յայլս չիք՝* դու:

* Ոմանք. Յաղօթս ծառայի քո:

* Ոմանք. Ձոր աղաչէ ծառայ քո:

* Ի լուս՝ Յերկնից. անցուցես և քաւեսցես և դատես՝. *համաձայն ոմանց ՚ի բնար՝*:

* Ոմանք. Եւ յաղօթս կայցեն:

* Այլք. Իւր ՚ի միում ՚ի քաղաքացն իւրոց:

* Ոսկան. Որպէս զհարդ գիտիցէ իւրա՞:

զսիրտ ամենայն որդւոց մարդկան. ⁴⁰զի երկիցեն 'ի քէն զամենայն աւուրս իւրեանց՝ որչափ և կեցցեն 'ի վերայ երեսաց երկրի, զոր ետուր հարց մերոց: ⁴¹Եւ օտարոտին որ ո՛չ իցէ 'ի ժողովրդենէ քումնէ Իսրայէլի, և նա եկեալ իցէ յերկրէ հեռաստանէ. ⁴²ուր և լսիցէ զանուանէ քումնէ մեծէ, և զծեռանէ քումնէ հզօրէ, և զբազկէ քումնէ ձգելոյ. և եկեսցէ և յաղօթս կացցէ 'ի տեղուջս յայսմիկ. ⁴³և դու լուիցես յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումնէ, և արասցես ըստ ամենայնի զոր և կարդասցէ առ քեզ օտարոտին. զի ծանիցեն ամենայն ազգք երկրի զանուն քո, և երկիցեն 'ի քէն որպէս և ժողովուրդ քո Իսրայէլ. և ծանիցեն զի անուն քո կոչեցեալ է 'ի վերայ տանս զոր շինեցի*': ⁴⁴Եւ եթէ ելանիցէ ժողովուրդ քո 'ի պատերազմ ընդ թշնամիս իւր՝ 'ի ճանապարհի յորմէ դարձուցես զնոսա. և կացցեն յաղօթս յանուն Տեառն 'ի ճանապարհի քաղաքիս զոր ընտրեցեր, և 'ի տանս զոր շինեցի անուան քում*. ⁴⁵և դու լուիցես յերկնից աղօթից նոցա և խնդրուածոց նոցա, և արասցես նոցա իրաւունս*.

⁴⁶Քանզի մեղանչեցին քեզ, զի չի՞ք մարդ որ ո՛չ մեղանչէ: Եւ եթէ ածցես 'ի վերայ նոցա, և մատնեսցես զնոսա առաջի թշնամեաց. և գերեսցեն զնոսա գերիչք իւրեանց յերկիր թշնամոյ՝ 'ի հեռաւոր կամ 'ի մօտաւոր*. ⁴⁷և դարձուցեն զսիրտս իւրեանց յերկիրն յոր գերեցան. և դառնայցեն և աղաչեսցեն զքեզ յերկիրն գերութեան իւրեանց. և ասիցեն. Մեղաք անօրինեցաք անիրաւեցաք. ⁴⁸և դարձցին առ քեզ յամենայն սրտէ իւրեանց, և յամենայն անձնէ իւրեանց՝ յերկիրն թշնամեաց իւրեանց յոր փոխեցեր զնոսա. և յաղօթս կացցեն առ քեզ վասն ճանապարհի երկրին իւրեանց զոր ետուր հարցն նոցա, և քաղաքիս զոր ընտրեցեր, և տանս զոր շինեցի անուան քում*. ⁴⁹և լուիցես յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումնէ աղօթից նոցա և խնդրուածոց նոցա, և արասցես նոցա իրաւունս. ⁵⁰և քաւեսցես զանիրաւութիւնս նոցա զոր մեղան քեզ. և ըստ ամենայն արհամարհանաց նոցա զոր արհամարհեցին զքեզ. և տացես զնոսա 'ի գթութիւն առաջի գերչաց իւրեանց, և գթասցիս 'ի նոսա. ⁵¹զի ժողովուրդ քո և ժառանգութիւն քո են՝ զորս հաներ յերկրէն Եգիպտացւոց 'ի միջոյ երկաթոյն հալոցաց: ⁵²Եւ եղիցին աչք քո և ականջք քո բաց 'ի խնդրուածս ծառայի քոյ. և 'ի խնդրուածս ժողովրդեան քո Իսրայէլի՝ լսել նոցա յամենայնի որովք և կարդայցեն առ քեզ: ⁵³Ձի դո՛ւ զատուցեր զնոսա քեզ 'ի ժառանգութիւն յամենայն ժողովրդոց երկրի. որպէս խօսեցար 'ի ձեռն Մովսիսի ծառայի քոյ՝ 'ի հանել զհարսն մեր յեգիպտոսէ Տէր Տէր:

Ի՞նչ Յայնժամ խօսեցաւ Սողոմոն վասն տանն իբրև կատարեաց շինել զնա. Ջարեգակն ծանեա՛ւ յերկինս. Տէր ասաց բնակել 'ի միգի: Շինեա՛ զտուն ին տուն վայելուչ բնակել 'ի նմա նորոգութեամբ: Ո՛չ աւանիկ գրեալ է այս 'ի գիրս Երգոց: ⁵⁴Եւ եղև իբրև կատարեաց Սողոմոն կա՛լ յաղօթս առ Տէր, զամենայն աղօթս զայս և զխնդրուածս. յարեա՛ւ յերեսաց սեղանոյն Տեառն ուր կայր 'ի գուճս 'ի վերայ ծնգաց իւրոց, և ձեռք իւր ընդ երկինս տարածեալ*. ⁵⁵և եկաց և օրհնեաց զամենայն եկեղեցին Իսրայէլի մեծածայն, և ասէ: ⁵⁶Օրհնեա՛լ է Տէր

* Ոմանք. Եւ տացես ըստ ամենայնի զոր:

* Ոմանք. Եւ 'ի ճանապարհի յորմէ դու դարձուցես:

* Այլք. Եւ լուիցես յերկնից:

* Ի լուս՝. Մեղանչեցին քեզ. համաձայն ոմանց՝ 'ի բնաբ՝: Ուր ոմանք. եթէ ածիցես 'ի վերայ... և գերիցեն զնոսա:

* Ոմանք. Ուր փոխեցեր զնոսա:

* Ոմանք. Ջամենայն զաղօթս զայս... կայր 'ի գուճ 'ի վերայ ծն՝:

այսօր, որ ետ հանգիստ ժողովրդեան իւրում Իսրայէլի ըստ ամենայնի զոր խօսեցաւ՝ ո՛չ վրիպեաց բան մի յամենայն բանից նորա բարեաց որովք խօսեցաւ՝ ՚ի ձեռն Մովսիսի ծառայի իւրոյ*։ ⁵⁷Եւ եղիցի Տէր Աստուած մեր ընդ մեզ՝ որպէս էր ընդ հարսն մեր, և մի՛ թողցէ զմեզ։ ⁵⁸այլ դարձուցէ զմեզ առ ՚ի չխտտորելոյ սրտից մերոց ՚ի նմանէ. գնա՛լ յամենայն ճանապարհս նորա, և պահել զամենայն պատուիրանս նորա, և զիրամանս նորա, և զիրաւունս նորա զորս պատուիրեաց հարցն մերոց*։ ⁵⁹Եղիցին բանքս իմ այսոքիկ որովք պաղատեցայ առաջի Տեառն Աստուծոյ մերոյ՝ մերձենա՛լ առ Տէր Աստուած մեր ՚ի տուէ և ՚ի գիշերի, առնել՝ իրաւունս ծառայի քում, և իրաւունս ժողովրդեան քում Իսրայէլի, զբան օրըստօրէ*։ ⁶⁰զի ծանիցեն ամենայն ժողովուրդք երկրի, զի Տէր՝ նա՛ է Աստուած, և չի՛ք այլ ոք։ ⁶¹Եւ եղիցին սիրտք մեր կատարեալք առ Տէր Աստուած մեր անարատութեամբ գնա՛լ ըստ հրամանաց նորա, և պահել զպատուիրանս նորա որպէս և յաւուր յայսմիկ։

ԻԵ ⁶²Եւ արքայ՝ և ամենայն որդիքն Իսրայէլի ընդ նմա՝ զոհեցին զոս առաջի Տեառն։ ⁶³Եւ զոհեաց արքայ Սողոմոն զո՛հս խաղաղականաց զորս զոհեաց Տեառն յարջառոց քսան և երկուս հազարս, և յոչխարաց հարիւր և քսան հազար։ Եւ արար նաւակատիս տանն Տեառն արքայ՝ և ամենայն որդիքն Իսրայէլի*։ ⁶⁴Յաւուր յայնմիկ սրբեաց արքայ զմիջոց սրահին որ հանդէպ տանն Տեառն. զի անդ արար զողջակէզսն և զպատարագսն, և զզոհսն, և զճարպսն խաղաղականաց. զի սեղանն պղնձի որ առաջի Տեառն կայր՝ փոքր էր, և ո՛չ կարէր ընդունել զողջակէզսն և զպատարագսն, և զզոհս խաղաղականաց*։ ⁶⁵Եւ արար Սողոմոն յաւուր յայնմիկ տօն, և ամենայն Իսրայէլ ընդ նմա եկեղեցի մեծ, ՚ի մտիցն Եմաթայ մինչև ցգետն Եգիպտացւոց՝ առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, ՚ի տանն զոր շինեաց՝ ուտելով և ըմպելով և ուրախ լինելով առաջի Տեառն Աստուծոյ մերոյ զելթն օր՝ # և զելթն օր, աւուրս չորեքտասան։ ⁶⁶Եւ յաւուրն ութերորդի արձակեաց զժողովուրդն. և օրհնեցին զարքայ և զնացին իւրաքանչիւր ՚ի բնակութիւնս իւրեանց, խնդութեամբ և սրտիւ զուարթութեամբ՝ ՚ի վերայ ամենայն բարեացն զոր արար Տէր Աստուած ծառայի՛ իւրում Դաւթի՝ և Իսրայէլի ժողովրդեան իւրում*։

9

Գլուխ Թ

¹Եւ եղև իբրև կատարեաց Սողոմոն շինել զտունն Տեառն, և զտունն արքայի. և զամենայն հանդերձանս Սողոմոնի զոր կամեցաւ առնել։

ԻԶ ²Եւ երևեցաւ Տէր Սողոմոնի երկրորդ անգամ, որպէս երևեցաւ նմա ՚ի Գաբաւոն։ ³Եւ ասէ ցնա Տէր. Լուա՛յ ձայնի աղօթից քոց և պաղատանաց զոր պաղատեցար առաջի իմ, արարի՛ քեզ ըստ ամենայն աղօթից քոց. սրբեցի՛

* Ոմանք. Օրհնեալ է Տէր Աստուած... զոր և խօսե՛լ։

* Ոմանք. Եւ դարձուցէ զմեզ առ ՚ի։

* Ի լուս՝. Մերձենալ մեզ առ Տէր Աստուած։

* Ոմանք. Ձոր զոհեաց Տեառն Աստուծոյ։

* Բազումք. Եւ զճարպ խաղաղականաց։

* Ոմանք. Եւ յօրն ութերորդի... զժողովուրդսն... և սրտի զուարթ... զոր արար Տէր Դաւթի ծա՛ն։

գտունն զոր շինեցեր դնել զանուն իմ անդ յաւիտեան. և եղիցին աչք իմ և սիրտ իմ անդ զամենայն աւուրս⁴: Եւ դու եթէ գնասցես առաջի իմ, որպէս գնաց Դաւիթ հայր քո սրբութեամբ սրտիւ և ուղղութեամբ՝ առնել ըստ ամենայնի զոր պատուիրեցի նմա, և զիրամանս իմ և զպատուիրանս իմ պահեսցես⁵ Կանգնեցի՛ց զաթոռ թագաւորութեան քոյ ՚ի վերայ Իսրայէլի յաւիտեան. որպէս խօսեցայ Դաւթի հօր քում և ասացի. Սի՛ պակասեսցէ քո այր առաջնորդ յԻսրայէլ⁶: Ապա թէ դառնալով դառնայցէք դուք և որդիք ձեր յինէն. և ո՛չ պահիցէք դուք զպատուիրանս իմ և զիրամանս իմ զոր ետ Մովսէս առաջի ձեր. և երթայցէք և ծառայիցէք աստուածոց օտարաց՝ և երկիր պագանիցէք նոցա, ⁷բարձի՛ց զԻսրայէլ յերկրէն զոր ետու նոցա: Եւ զտունդ զայդ զոր սրբեցի անուան իմոյ՝ ընկեցի՛ց յերեսաց իմոց. և եղիցի Իսրայէլ յապականութիւն և ՚ի խօսս ընդ ամենայն ժողովուրդս. ⁸և տունդ բարձրացեալ ՚ի գրոյցս. ամենայն որ անցանիցէ առ դովաւ՝ զարմասցի, և շըչեսցէ և ասասցէ. Ընդէ՞ր արար Տէր ա՛յսպէս երկրիս այսմիկ և տանս այսմիկ⁹: Եւ ասասցեն. Փոխանակ զի թողին զՏէր Աստուած իւրեանց որ եհան զհարս նոցա յեգիպտոսէ ՚ի տանէ ծառայութեան, և բուռն հարին զաստուածոց օտարաց, և երկիր պագին նոցա և ծառայեցին նոցա. վասն այնորիկ ած Տէր ՚ի վերայ դոցա զամենայն չարիսդ զայդոսիկ: Յայնժամ եհան Սողոմոն զդուստրն փարաւոնի ՚ի քաղաքէ Դաւթի ՚ի տունն իւր՝ զոր շինեաց իւր: ¹⁰Եւ եղև յաւուրսն յայնոսիկ յա՛նս քսան զոր շինեաց Սողոմոն զերկոսին տունսն՝ զտունն Տեառն և զտունն արքայի¹¹: Եւ Քիրամ արքայ Տիրոսի ձեռնտու էր Սողոմոնի, եղևնափայտիւք և փայտիւք մայրից, և ոսկւով, և ամենայն կամօք իւրովք: Յայնժամ ետ արքայ Սողոմոն Քիրամայ քսան քաղաք ՚ի Գալիլեա: ¹²Եւ ել Քիրամ ՚ի Տիրոսէ և չոգաւ ՚ի Գալիլեա տեսանել զքաղաքսն զոր ետ նմա Սողոմոն, և ո՛չ եղև նմա հաճոյ. ¹³և ասէ. Զի՞նչ են քաղաքքս այսոքիկ զոր ետուր ինձ եղբայր: Եւ կոչեաց զնոսա սահմանս իւր մինչև ցայսօր¹⁴: Եւ եբեր Քիրամ Սողոմոնի հարիւր և քսան տաղանդ ոսկւոյ: ¹⁵Եւ ա՛յս են հանդերձանք աւարին, զոր եհան արքայ Սողոմոն շինել զտունն Տեառն, և զտունն արքայի. և զՄելոն, և զբարձաւանդակսն, խնուլ զխրամս քաղաքի Դաւթի, և զԱսուր, և զՄայիդան, և զպարիսպն Երուսաղէմի, և զԵսեր, և զՄակեդոնով, և զԳազեր¹⁶, ¹⁶փարաւոնի արքայի Եգիպտացւոց. քանզի ել և ա՛ռ զԳազեր, և այրեաց զնա հրով. և զՔանանացին որ նստէր ՚ի քաղաքին՝ սպան, և ետ զնա պաշտատական դստեր իւրում կնոջ Սողոմոնի: ¹⁷Եւ շինեաց Սողոմոն զԳազեր, և զԲեթորոն զներքին. ¹⁸և զԲաղաթ, և զԹերմոթ յանապատի և յերկրի անդ. ¹⁹զամենայն քաղաքս բնակութեանց որ էին Սողոմոնի, և զքաղաքս կառաց, և զամենայն քաղաքս երիվարաց, և զհանդերձանս Սողոմոնի, զոր հանդերձեաց շինել յերուսաղէմ, և ՚ի Լիբանան, և յամենայն երկրին. ²⁰վասն չիշխելոյ նորա ամենայն ազգին մնացելոյ յԱմուրիացւոցն, և ՚ի Քետացւոց, և ՚ի Փերեզացւոց, և ՚ի Խևացւոց, և ՚ի

* *Ոմանք.* Արարից քեզ ըստ ամենայն:

* *Ոմանք.* Որպէս և գնաց հայր քո Դա՛ւ:

* *Ոմանք.* Քո այր յերեսաց իմոց առաջնորդ Իսրայէլի:

* *Ոմանք.* Որ անցանէ առ դովաւ:

* *Ոմանք.* Ամս քսան զոր:

* *Այլք.* Ձնոսա սահմանս մինչև ցայ՛:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ հանդերձանք, *նշանակի՝* սակ հարկի: *Ոմանք.* Ձխրամ քաղաքին Դաւ՛... և զՄայիդան և զպարիսպն Երուսաղէմի:

Քանանացւոց, և ՚ի Յերուսացւոց, և ՚ի Գերգեսացւոց, որ ո՛չ յորդւոցն Իսրայէլի էին*։ ²¹որդիք նոցա մնացեալք յետ նոցա յերկրին, զոր ո՛չ կարացին որդիքն Իսրայէլի սատակել. և արկ զնոսա Սողոմոն ընդ հարկօք ծառայութեան մինչև ցայսօր։ ²²Եւ յորդւոցն Իսրայէլի ո՛չ ետ Սողոմոն ՚ի հանդերձաւորութիւն. զի նոքա ա՛րք պատերազմօղք էին. և ծառայք նորա, և իշխանք նորա և սպառազէնք նորա, և հեծեալք նորա*։ ²³Եւ ա՛յս են իշխանք որ կային ՚ի վերայ գործոյն Սողոմոնի, հինգ հարիւր և յիսուն, որ ունէին զժողովուրդն որ գործէին զգործն*։ ²⁴Բայց դուստրն փարաւոնի ել ՚ի քաղաքէն Դաւթի ՚ի տունն իւր, զոր շինեաց նմա. յայնժամ շինեաց զՄելուն։ ²⁵Եւ հանէր Սողոմոն երիցս անգամ ՚ի տարուջ ողջակէզս և խաղաղականս ՚ի վերայ սեղանոյն զոր շինեաց Տեառն, և արկանէր խունկս առաջի Տեառն. և բովանդակեաց զտունն։ ²⁶Եւ արար նա՛ւ արքայ Սողոմոն ՚ի Գասիոնգաբեր, որ է մերձ յեղաթ՝ յեզեր վերջոյ ծովուն յերկրին Եդոմայ*։ ²⁷Եւ առաքեաց Քիրամ ընդ նաւսն ՚ի ծառայից իւրոց նաւորդս հմուտս նաւարկութեան ծովու ընդ ծառայս Սողոմոնի*։ ²⁸և չոգան ՚ի Սովփերա. և առին անտի ոսկի չորեքհարիւր և քսան տաղանտ, և բերին արքայի՛ Սողոմոնի։

10

Գլուխ Ժ

Իէ ¹Եւ տիկինն Սաբայ լուաւ զանուն Սողոմոնի՝ և զանուն Տեառն, և զիմաստութիւն Սողոմոնի. և եկն փորձել զնա առակօք։ ²Եւ եկն յերուսաղէմ զօրու ծանու յոյժ. և ուղտուք որ բարձեալ բերէին խունկս, և ոսկի բազում յոյժ, և ականս պատուականս. և եմուտ առ Սողոմոն, և խօսեցաւ ընդ նմա զամենայն ինչ որ էր ՚ի սրտի իւրում։ ³Եւ մեկնեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա, և ո՛չ էր բան սխալեալ յարքայէ զոր ո՛չ մեկնեաց նմա*։ ⁴Եւ ետես կինն զամենայն իմաստութիւնն Սողոմոնի, և զտունն զոր շինեաց*։ ⁵և զխորտիկսն Սողոմոնի. և զաթոռ ծառայից նորա, և զկարգ պաշտօնէից նորա, և զհանդերձանս նորա, և զնատռուակս նորա. և զողջակէզս նորա զոր մատուցանէր Տեառն, և յիմարեցաւ*։ ⁶Եւ ասէ ցարքայ Սողոմոն. Ճշմարիտ էր բանն զոր լուայ յերկրին իմում վասն բանից քոց՝ և վասն իմաստութեան քոյ. ⁷և ո՛չ հաւատայի խօսելեացն առ իս, մինչև ինձէն եկի՝ և տեսին աչք իմ. և ահա ՚ի կէս չէ՛ զոր պատմեցին ինձ իմաստութեանդ զոր յաւելէր և բարութեան, և ամենայն համբաւոյն զոր լսէին յերկրին իմում*։ ⁸Երանելի՛ են կանայք քո՝ և երանելի՛ ծառայք քո որ կան առաջի քո՝ և հանապազ լսեն զիմաստութիւն քո*։ ⁹Եւ եղիցի

* *Ոմանք.* ՅԱմուրիացւոյն և ՚ի Քետացւոյ, և այլն։ *Յօրհնակին պակասէր.* Եւ ՚ի Գերգեսացւոց։

* *Ի լուս՝.* Ոչ ետ Սողոմոն ՚ի ծառայութիւն. զի։

* *Ոմանք.* Եւ այս էին իշխանք որ։ *Այլք.* Որ գործէին ՚ի գործն։

* *Ոմանք.* ՚ի Գասիովնգաբեր, որ։

* *Ոմանք.* Արս նաւորդս հմուտ։

* *Յօրհնակին պակասէր.* Սխալեալ յարքայէ զոր ոչ։

* *Ոմանք.* Եւ ետես տիկինն զամենայն։

* *Ոմանք.* Եւ զարծաթ ծառայից նորա, և զկարգ։

* *Ոմանք.* Եւ ո՛չ հաւատացի խօսե՛... և ամենայն համբաւացն զոր լսէի։

* *Ոմանք.* Եւ երանելի են կա՛... լսեն զամենայն իմաստութիւն քո։

Տէր Աստուած քո օրհնեալ որ հաճեցաւ ընդ քեզ տալ զքեզ յաթոռդ Իսրայէլի վասն սիրելոյ Տեառն զԻսրայէլ հաստատել յաւիտեան. և կացոյց զքեզ արքայ՝ ՚ի վերայ նոցա, առնել իրաւունս և արդարութիւն յատեանս նոցա: ¹⁰Եւ ետ Սողոմոնի հարիւր և քսան տաղանտ ոսկոյ, և խունկս բազումս յոյժ, և ականս պատուականս. և ո՛չ էին եկեալ այնպիսի խունկք բազումք և անուշունք, զորս ետ տիկինն Սաբայ արքայի Սողոմոնի*։ ¹¹Եւ նաւն Քիրամայ որ բերէր ոսկի ՚ի Սովփերայ, եբեր ՚ի Սովփերայ փայտ անտաշ բազում յոյժ, և ականս պատուականս: ¹²Եւ արար արքայ զփայտսն անտաշս մո՛յթս տանն Տեառն, և տանն արքայի, և քնարս և տաւիղս երգեցողաց. և չէր եկեալ այնպիսի փայտ անտաշ յերկիրն, և ո՛չ երևեցաւ ուրեք մինչև ցայսօր: ¹³Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն Սաբայ զամենայն ինչ զոր կամեցաւ և զոր խնդրեաց, բաց յայնմանէ զորս տուեալ էր նորա ՚ի ձեռս արքայի Սողոմոնի. և դարձաւ և գնաց յերկիր իւր՝ ինքն և ամենայն ծառայք իւր*։ ¹⁴Եւ էր կշիռ ոսկոյն եկելոյ Սողոմոնի ՚ի միում տարւոջ վեց հարիւր և վաթսուն և վեց տաղանտ ոսկոյ*։ ¹⁵Յող զհարկացն կարգելոց, և զվաճառաց վաճառականաց, և զամենայն թագաւորաց այնր կողման, և նախարարաց երկրին:

ԻԸ ¹⁶Եւ արար արքայ Սողոմոն երեքարևր նիզակ ոսկի կռածոյ, և երեքարևր դահեկան ՚ի վերայ միոյ նիզակի. ¹⁷և երեքարևր զէն ոսկի կուռ, և երեք մանք ոսկի ՚ի մի զէն. և ետ զայն արքայ ՚ի տուն անտառին Լիբանանու*։ ¹⁸Եւ արար արքայ աթո՛ռ փղոսկրեայ մե՛ծ, և պատեաց զնա ոսկով փորձով. ¹⁹վեց աստիճան աթոռոյն, և դէմք եզանց ՚ի թիկանց կողմանէ աթոռոյն, և ձեռք աստի և անտի ՚ի վերայ աթոռոյն նստելոյ, և երկու առիւծունք կային առընթեր ձեռացն: ²⁰Եւ երկոտասան առնօք կային ՚ի վերայ վեցեցունց աստիճանացն աստի՝ և անտի. և ո՛չ եղև այնպիսի յամենայն թագաւորութեան*։ ²¹Եւ ամենայն կահ սպասու արքայի Սողոմոնի ոսկի՝ գործեալ. և աւազանք ոսկիք. և ամենայն կահ տան անտառին Լիբանանու ոսկով պատեալ. և ո՛չ գոյր արծաթ, քանզի ո՛չ էր համարեալ արծաթ յաւուրս Սողոմոնի՝ թէ իցէ՛ ինչ*։ ²²Ձի նա՛ւ Թարսսացի էր Սողոմոնի արքայի ՚ի ծովու ընդ նա՛ւս Քիրամայ, և յերեամ գայր արքայի նաւ ՚ի Թարսսէ, ոսկոյ և արծաթոյ, և ժանեաց փղաց. և կապկաց, և սիրամարգաց: ²³Եւ մեծացաւ Սողոմոն քան զամենայն թագաւորս երկրի, մեծութեամբ և իմաստութեամբ: ²⁴Եւ ամենայն թագաւորք երկրի խնդրէին տեսանել զերեսս Սողոմոնի, և լսել զիմաստութիւն նորա, զոր ետ Տէր ՚ի սիրտ նորա. ²⁵և նոքա բերէին իւրաքանչիւր զպատարագս իւրեանց, անօթս արծաթեղէնս և անօթս ոսկեղէնս, և հանդերձս. ստաշխն, և խունկս, և ձիս, և ջորիս, ամի ամի: ²⁶Եւ ժողովեաց Սողոմոն կա՛ռս և հեծեալս. և էին Սողոմոնի քառասուն հազար ձիք մատակք կառաց, և երկոտասան հազար երիվարաց. և եղ զնոսա ՚ի քաղաքս կառաց, և որ ընդ արքայի յերուսաղէմ: Եւ էր իշխան ամենայն թագաւորաց ՚ի Գետոյն մինչև ցայլազգիս, և մինչև ցասիմանս Եգիպտացւոց: ²⁷Եւ ետ արքայ զարծաթ և զոսկի յերուսաղէմ իբրև զքարինս, և զեղևնափայտ՝ իբրև

* Ոմանք. Եւ ո՛չ եկեալ էին այնպի՛:

* Ոմանք. Եւ զոր ինչ խնդր՝... ՚ի ձեռն արքայի Սո՛:

* Յօրինակին թուագրով այսպէս գրեալ է. վեց 6 և 42:

* Ոմանք. Եւ երեք հարիւր մանք ոսկոյ ՚ի մի զէն:

* Ոմանք. Եւ երկոտասան կորիւնքն կային ՚ի վերայ վեցե՛:

* Օրհնակ մի. Քանզի էր համարեալ արծաթ:

զմուլաթգենիս ՚ի դաշտի բազմութեամբ*։²⁸ Եւ ելք երիվարաց Սողոմոնի յեգիպտոսէ, և ՚ի Թեկուայ վաճառք արքայի. և առնուին ՚ի Թեկուայ գնովք. ²⁹և ելանէին ելք կառաց յեգիպտոսէ, փոխանակ արծաթոյ, և ձի ընդ հարիւր և յիսուն արծաթոյ. և նոյնպէս թագաւորաց ամենեցունց, Քետտիմայ, և թագաւորացն Ասորւոց որ ընդ ծովակողմն ելանէին:

11

Գլուխ ԺԱ

ԻԹ ¹Եւ արքայ Սողոմոնն էր իգասէր. և առ իւր կանայս օտարոտիս բազումս, և զդուստրն փարաւոնի, և Մովաբացիս, և Ամոնացիս, և Եդովմայեցիս, և Ասորիս, և Քետացիս, և Ամովրիացիս. ²և յազգացն յորոց վճարեաց Տէր որդւոցն Իսրայէլի չմտանել առ նոսա, և նոքա մի՛ մտցեն առ ձեզ. թէ զուցէ խտտորեցուցանիցեն զսիրտս ձեր զկնի կռոցն իւրեանց, ՚ի նոսա՛ յարեցաւ Սողոմոն սիրել՛*։ ³Եւ էին նորա կանայք տիկնայք՝ եւթն հարիւր, և հարճք՝ երեք հարիւր. և խտտորեցուցին կանայք նորա զսիրտ նորա:

Լ ⁴Եւ եղև ՚ի ժամանակի ծերութեանն Սողոմոնի, և կանայք նորա խտտորեցուցին զսիրտ նորա զհետ աստուածոց օտարաց. և ո՛չ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ իբրև զսիրտն Դաւթի հօր իւրոյ: ⁵Եւ գնաց Սողոմոն զհետ Աստարտայ գարշելոյ Սիդոնացւոց, և զհետ Մեղճոմայ գարշելոյ որդւոցն Ամոնայ*։ ⁶Եւ արար Սողոմոն չա՛ր առաջի Տեառն, և ո՛չ չոգաւ զհետ Տեառն իբրև զԴաւիթ զհայր իւր: ⁷Յայնժամ շինեաց Սողոմոն զբարձաւանդակն Քամովսայ կռոցն Մովաբու ՚ի լերինն հանդէպ Երուսաղեմի, և Մողճոմայ կռոց որդւոցն Ամովմայ, և Աստարտայ գարշելոյ Սիդոնացւոց*։ ⁸Եւ այնպէս արար ամենայն կանանց իւրոց օտարոտւոց. արկանէին խո՛ւնկս, և զոհէին կռոց իւրեանց: ⁹Եւ բարկացաւ Տէր Սողոմոնի, զի խտտորեցոյց զսիրտ իւր ՚ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլի որ երևեցաւ նմա երկի՛ցս. ¹⁰և պատուիրեաց նմա վասն բանին այնորիկ, ամենևին չերթա՛լ զհետ աստուածոց օտարաց, և պահել և առնել զոր պատուիրեաց նմա Տէր Աստուած: ¹¹Եւ ասէ Տէր ցՍողոմոն. Փոխանակ զի եղև այդ ընդ քեզ, և ո՛չ պահեցեր զիրամանսն իմ, և զպատուիրանս զոր պատուիրեցի քեզ՝ պատառելով պատառեցից զթագաւորութիւնդ ՚ի ձեռանէ քումնէ, և տաց զդա ծառայի՛ քում*։ ¹²Բայց ՚ի քո՛ աւուրս ո՛չ արարից զայն վասն Դաւթի հօր քոյ, այլ ՚ի ձեռանէ որդւոյ քոյ առի՛ց զդա: ¹³Սակայն զամենայն թագաւորութիւնդ ո՛չ առից. զաւազան մի տաց որդւոյ քում վասն Դաւթի ծառայի իմոյ, և վասն Երուսաղեմի քաղաքի զոր ընտրեցի:

ԼԱ ¹⁴Եւ յարոյց Տէր սատան Սողոմոնի զԱդեր զԵդովմայեցի ՚ի զաւակէ թագաւորութեանն Եդովմայեցւոց: ¹⁵Եւ եղև ՚ի սատակել Դաւթի զԵդոմ, յերթա՛լ Յովաբայ իշխանի զօրուն թաղել զվիրաւորսն. զի կտտորեցին զամենայն արու

* Այլք. ՚ի դաշտս բազմութեամբ:

* Ոմանք. Եւ յայլազգեաց յորոց վճարեաց Տէր յորդւոցն Իսրայէլի:

* Ոմանք. Եւ զհետ Մողճոմայ:

* Ոմանք. Եւ զհետ Մողճոմայ:

* Ոմանք. Զթագաւորութիւնդ քո ՚ի ձեռա՛:

յեղով*¹⁶ զի զվեց ամիս նստաւ անդ Յովաբ, և ամենայն Իսրայել յեղովմ, մինչև սատակեաց զամենայն արու եղովմայեցոց: ¹⁷Եւ փախեալ Աղեր՝ ինքն և ամենայն արք եղովմայեցիք՝ ՚ի ծառայից հօր նորա՝ և մտին յեգիպտոս. և Աղեր՝ մանուկ փոքր էր. ¹⁸և յարեան արքն ՚ի քաղաքէ անտի Սադիամու և եկին ՚ի Փարան, և առին ընդ իւրեանս արս ՚ի Փարանէ և եկին յեգիպտոս առ փարաւոն արքայ՝ Եգիպտացոց, և եմո՛ւտ Աղեր առ փարաւոն, և ետ նմա տուն, և կարգեաց նմա հաց, և ետ նմա գետին: ¹⁹Եւ եգիտ Աղեր շնորհս առաջի փարաւոնի յոյժ, և ետ նմա կին զքոյր կնոջ իւրոյ՝ զքոյր Թեկեմինայ զերեց: ²⁰Եւ ծնաւ քոյրն Թեկեմինայ Աղերայ զՔանեբաթ զորդի նորա, և սնոյց զնա Թեկեմինա ՚ի մէջ որդւոցն փարաւոնի. և էր Քանեբաթ ՚ի տան փարաւոնի ՚ի մէջ որդւոցն փարաւոնի: ²¹Եւ լուաւ Աղեր յեգիպտոս եթէ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր, և թէ մեռաւ Յովաբ իշխան զօրուն. և ասէ Աղեր ցփարաւոն. Արծակեա՛ զիս և դարձայց յերկիր իմ: ²²Եւ ասէ փարաւոն ցԱղեր. Չի՞նչ պակաս է քեզ առ իս՝ զի խնդրես երթալ յերկիր քո: Եւ ասէ ցնա Աղեր. Չի արծակելով արծակեսցես զիս. և դարձա՛ւ Աղեր յերկիր իւր: ²³Եւ յարոյց Տէր սատան Սողոմոնի զՌազոն զորդի Եղիադայ, որ փախեաւ յԱդրիազարայ արքայէ Սուբայ ՚ի տեառնէ իւրմէ*: ²⁴Եւ ժողովեցան առ նա արք, և էր իշխան գնդին, ՚ի կոտորել զնոսա Դաւթի. և գնաց ՚ի Դամասկոս՝ և նստան ՚ի նմա. և թագաւորեաց ՚ի Դամասկոս*: ²⁵Եւ եղև հակառակ Իսրայելի զամենայն աւուրս Սողոմոնի. այս է չարութիւն Աղերայ. և ծանրացասունն եղև Իսրայելի, և թագաւորեաց յերկիրն Եղովմայ*:

ԼԲ ²⁶Եւ Յերոբովամ որդի Նաբատայ Եփրաթացի ՚ի Սարիրայ, և անուն մօր նորա Սարուա կին այրի, և նա էր որդի կնոջ այրւոյ՝ ծառայ Սողոմոնի. և ամբարձ զձեռն իւր յարքայ*: ²⁷Եւ այն իրք էին զի վերացոյց զձեռն իւր յարքայ Սողոմոն: Եւ արքայ Սողոմոն շինեաց զբարձաւանդակն, և եխի՛ց զխրամ քաղաքին Դաւթի հօր իւրոյ*. ²⁸և այրն Յերոբովամ հզօր զօրութեամբ. իբրև ետես Սողոմոն զպատանեակն եթէ այր գործոյ է, կացոյց զնա ՚ի վերայ հարկաց բռնակրաց տանն Յովսեփայ: ²⁹Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ ել Յերոբովամ յերուսաղեմէ, և եգիտ զնա Աքիա Սիլոնացի մարգարէ ՚ի ճանապարհի, և մեկուսացոյց զնա ՚ի ճանապարհէն. և Աքիա զգեցեալ էր հանդերձ նոր. և երկորեան ՚ի դաշտին: ³⁰Եւ բո՛ւռն եհար Աքիա զհանդերձէն իւրմէ զնորոյ որ ՚ի վերայ իւր, և պատառեաց զնա յերկոտասան կապերոս*. ³¹և ասէ ցՅերոբովամ. Ա՛ռ դու քեզ զտասն կապերոսդ: Չի այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի. Ահա ես պատառեցից զթագաւորութիւնն ՚ի ձեռաց Սողոմոնի, և տայց քեզ զտասն զաւազանսն. ³²և երկու զաւազանքն եղիցին նորա՝ վասն Դաւթի ծառայի իմոյ, և վասն Երուսաղեմի քաղաքի զոր ընտրեցի յամենայն ցեղիցն Իսրայելի. ³³փոխանակ զի եթող զիս, և երկիր եպագ Աստարտայ զարշելոյ Սիդոնացոց, և Քամովսայ կռոց Մովաբայ, և Մող՛քովմայ զագրոտոյ որդւոցն Ամոնայ. և ո՛չ

* Ոմանք. Թաղելով զվիրաւորսն: Յօրինակին ՚ի բնաբանի դատարկ տեղի թողեալ՝ ՚ի լուս՝. նշանակի չակերտիւ ՚ի մէջ բերել՝ զի. և առնել՝ զի կոտորեցին. համաձայն այլոց ՚ի բնաբ*:

* Ոմանք. ՅԱդրաազարայ արքայէ:

* Այլք. Եւ գնացին ՚ի Դամասկոս:

* Այլք. Եւ թագաւորեաց յերկրին Եղո՛ւ:

* Ոմանք. Եփրաթացի ՚ի Սամիրայ:

* Ոմանք. Չի և արքայ Սողոմոն:

* Ոմանք. Եւ պատառեաց զայն եր՛:

զնաց՝ ՚ի ճանապարհս իմ առնել ուղղութիւն առաջի իմ, զճշմարտութիւնս և զդատաստանս իմ իբրև զԴաւիթ զհայր իւր*։ ³⁴Եւ ո՛չ առի զամենայն թագաւորութիւնն ՚ի ձեռանէ նորա. զի հակառակութեամբ կացից հակառակ նմա զամենայն աւուրս կենաց նորա. վասն Դաւթի ծառայի իմոյ զոր ընտրեցի, որ պահեաց զպատուիրանս իմ և զճշմարտութիւնս*։ ³⁵Եւ առի՛ց զթագաւորութիւնն ՚ի ձեռանէ նորա, և տա՛ց քեզ զտասն գաւազանսն. ³⁶և որդւոյ նորա տա՛ց զերկուս գաւազանսն, վասն մնալոյ ճրագի ծառայի իմուն Դաւթի զամենայն աւուրս առաջի իմ յերուսաղէմ քաղաքի զոր ընտրեցի դնել զանուն իմ անդ։ ³⁷Եւ զքեզ առից, և թագաւորեսցես որոց և ցանկասցի անձն քո. և դու եղիցես թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի։ ³⁸Եւ եղիցի եթէ պահեսցես զամենայն ինչ զոր ես պատուիրեմ քեզ, և զնասցես ՚ի ճանապարհս իմ, և արասցես ուղղութիւն առաջի իմ, զգուշանալ՝ պատուիրանաց իմոց և հրամանաց իմոց՝ որպէս արար Դաւիթ ծառայ իմ. և եղէ՛ց ընդ քեզ, և շինեցից քեզ տո՛ւն հաւատարիմ որպէս շինեցի Դաւթի. և տա՛ց քեզ զԻսրայէլ։ ³⁹Եւ չարչարեցից զգաւակն Դաւթի վասն այնորիկ. բայց ո՛չ զամենայն աւուրս։ ⁴⁰Եւ խնդրեաց Սողոմոն սպանանել զՅերոբովամ. և յարեաւ Յերոբովամ և փախեաւ յեգիպտոս առ Սաւսակիմ արքայ Եգիպտացոց. և էր յեգիպտոս մինչև մեռաւ Սողոմոն։ ⁴¹Եւ մնացորդք բանիցն Սողոմոնի, և ամենայն ինչ զոր արար, և ամենայն իմաստութիւն նորա, ո՞չ աւանիկ գրեալ է ՚ի գիրս բանից Սողոմոնի։ ⁴²Եւ աւուրք զորս թագաւորեաց Սողոմոն յերուսաղէմ ՚ի վերայ ամենայն Իսրայէլի ամբ քառասուն*։

ԼԳ ⁴³Եւ ննջեաց Սողոմոն ընդ հարս իւր, և թաղեցին զնա ՚ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ։ Եւ թագաւորեաց Ռոբովամ որդի նորա ընդ նորա։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ չոգաւ արքայ Ռոբովամ ՚ի Սիկիմ. զի ՚ի Սիկիմ գայր ամենայն Իսրայէլ թագաւորեցուցանել զնա։ ²Եւ եղև իբրև լուաւ Յերոբովամ որդի Նաբատայ, և ինքն էր տակաւին յեգիպտոս յորմէ հետէ փախեաւ յերեսաց արքայի Սողոմոնի, և դարձաւ Յերոբովամ յեգիպտոսէ. ³և առաքեցին և կոչեցին զնա։ Եւ եկն Յերոբովամ և ամենայն եկեղեցին Իսրայէլի. և խօսեցաւ ամենայն ժողովուրդն ընդ արքայի Ռոբովամայ՝ և ասեն. ⁴Յայր քո ծանրացոյց զանուր մեր, և դու թեթևացո՛ւ ՚ի խիստ ծանրութենէ հօր քոյ, և ՚ի ծանր անրոյ նորա զոր ես ՚ի վերայ մեր. և ծառայեսցո՛ւք քեզ*։ ⁵Եւ ասէ ցնոսաւ. Երթայք մինչև ցերիս աւուրս, և դարձջի՛ք առ իս։ Եւ զնացին։ ⁶Եւ խորհեցաւ արքայ Ռոբովամ ընդ ծերսն որ կային առաջի Սողոմոնի հօր նորա մինչդեռ կենդանի էր, և ասէ. Չիա՞րդ խորհի՛ք՝ և տացուք պատասխանի ընդ ժողովրդեանն*։ ⁷Եւ խօսեցան ընդ նմա՝ և ասեն. Եթէ յաւուր յայսմիկ լինիցիս ծառայ ժողովրդեանն այնմիկ՝ և ծառայեսցես նոցա, և անսասցես նոցա, և խօսեսցիս ընդ նոսա բանս բարիս, եղիցին քեզ ծառայք զամենայն աւուրս։ ⁸Եւ եթող զխորհուրդ ծերոցն զոր

* Ոմանք. Եւ զճշմարտութիւնս իմ, և։

* Ոսկան. Եւ ո՛չ առից զամենայն թագաւորութիւնն։

* Ոմանք. Իսրայէլի ամս քառասուն։

* Այլք. ՚ի խիստ ծառայութենէ հօր քո։ Ոսկան. Չոր եդ ՚ի վերայ մեր։

* Ոմանք. Սողոմոնի հօր իւրոյ։ Այլք. Եւ տացուք պատասխանի ժողովրդեանն։

խորհեցաւ ընդ նոսա, և խորհեցաւ ընդ մանկտին սնընդակիցս իւր՝ որ կային առաջի նորա*.⁹ և ասէ ցնոսա. Չի՞նչ տայք խրատ, և տա՛ց պատասխանի ժողովրդեանն՝ որ խօսեցան ընդ իս և ասեն. Թեթևացո՛ւ յանրոյն՝ զոր ետ հայր քո ՚ի վերայ մեր: ¹⁰Եւ խօսեցան ընդ նմա մանկտին սնընդակիցք իւր որ կային առաջի նորա՝ և ասեն. Ա՛յսպէս խօսեսցիս յականջս ժողովրդեանն՝ որ խօսեցան ընդ քեզ և ասեն. Հայր իմ ծանրացոյց զանուր մեր՝ և դու թեթևացո ՚ի մէնջ. ա՛յսպէս խօսեսցիս ընդ նոսա. Ծկոյթ իմ ստուար է քան զմէջ հօր իմոյ*.¹¹ և արդ՝ հայր իմ եղ ՚ի վերայ ձեր անուր ծանր, և ես յաւելի՛ց յանուրն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ զանիւք՝ և ես խրատեցի՛ց ձեզ քըքովք*:

ԼԴ ¹²Եւ եկն ամենայն Իսրայէլ առ արքայ Ռոբովամ յաւուրն երրորդի՝ որպէս խօսեցաւ ընդ նոսա արքայ և ասէ. Դարձջի՛ք առ իս յաւուրն երրորդի: ¹³Եւ պատասխանի՛ ետ արքայ ժողովրդեանն խստութեամբ. և եթող Ռոբովամ զխորհուրդս ծերոցն զոր խորհեցան ընդ նմա, ¹⁴և խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդեան մանկտոյն՝ և ասէ. Հայր իմ ծանրացոյց զանուր ձեր, և ես յաւելի՛ց յանուր ձեր. հայր իմ խրատէր զձեզ զանիւք, և ես խրատեցից զձեզ քըքովք*:

¹⁵Եւ ո՛չ լուաւ արքայ ժողովրդեանն, զի էր խտտորումն ՚ի Տեառնէ. զի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խօսեցաւ ՚ի ձեռն Աքիայ Սիլովնացւոյ, վասն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ*:

ԼԵ ¹⁶Իբրև տեսին ամենայն Իսրայէլ՝ եթէ ո՛չ լուաւ նոցա արքայ. պատասխանի ետ ժողովուրդն արքայի և ասէ. Չի՞նչ բաժին կայ մեր ընդ Դաւթի. և ո՛չ գոյ մեր ժառանգութիւն ընդ որդւոյ Յեսսեայ. պնդեա՛ց ՚ի բնակութիւնս քո Իսրայէլ. և արդ՝ դու արածեա՛ զտունն Դաւթի: Եւ զնաց Իսրայէլ ՚ի բնակութիւնս իւր*:¹⁷ Եւ որդւոցն Իսրայէլի որ նստէին ՚ի քաղաքս Յուդայ՝ թագաւորեաց Ռոբովամ:

ԼԶ ¹⁸Եւ առաքեաց արքայ Ռոբովամ զԱդոնիրամ հարկապետ՝ և քարկոծեցին զնա ամենայն Իսրայէլ քարամբք՝ և մեռաւ. և արքայ Ռոբովամ աճապարեաց ելանել ՚ի կառս իւր և փախչել յերուսաղէմ.¹⁹ և արհամարհեաց Իսրայէլ զտունն Դաւթի մինչև ցայսօր:

ԼԷ ²⁰Եւ եղև իբրև լուաւ ամենայն Իսրայէլ եթէ դարձաւ Յերոբովամ, առաքեցին և կոչեցին զնա ամենայն ժողովուրդն, և թագաւորեցուցին զնա ՚ի վերայ Իսրայէլի. և ո՛չ ոք էր զկնի տանն Դաւթի, բայց միայն ՚ի գաւազանէ՛ տանն Յուդայ և Բենիամինի:²¹ Եւ Ռոբովամ եմո՛ւտ յերուսաղէմ, և եկեղեցացոյց զժողովուրդն Յուդայ և զգաւազանն Բենիամինի՝ հարիւր և ութսուն հազար երիտասարդաց պատերազմողաց՝ պատերազմել ընդ տանն Իսրայէլի, դարձուցանել զթագաւորութիւնն Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի:

ԼԸ ²²Եւ եղև բան Տեառն առ Սամեա այր Աստուծոյ՝ և ասէ*.²³ Խօսեա՛ց ընդ Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի արքայի Յուդայ, և ընդ ամենայն տանն Յուդայ և Բենիամինի, և ընդ մնացորդս ժողովրդեանն՝ և ասասցես.²⁴ Այսպէս ասէ Տէր. Մի՛ ելանէք և մի՛ տայցէք պատերազմ ընդ եղբարս ձեր ընդ որդիսն Իսրայէլի, դարձցի՛ իւրաքանչիւրք ՚ի տուն իւր, զի յինէ՛ն եղև բանն այն: Եւ լուան բանի

* Ոմանք. Ընդ մանկտին ընդ սնընդակիցս:

* Ոմանք. Ծկոյթ իմ... քան զմէջս հօր իմոյ:

* Ոմանք. Հայր իմ խրատէր զձեզ:

* Ոմանք. Հայր իմ ծանրացոյց յանուր:

* Բազումք. Չի հաստատեսցէ՛ զոր խօ՞:

* Ոմանք. Բաժին կայ մեր և Դաւթի:

* Ոմանք. Առ Սեմեամ այր Աստուծոյ:

Տեառն, և դադարեցին յերթալոյ ըստ բանին Տեառն*։ ²⁵Եւ շինեաց Յերոբովամ զՍիկիմ ՚ի լերինն Եփրեմայ՝ և բնակէր ՚ի նմա. և ել անտի և շինեաց զՓանուէլ։ ²⁶Եւ ասէ Յերոբովամ ՚ի սրտի իւրում. Ահա արդ դառնայցէ թագաւորութիւնս իմ ՚ի տունն Դաւթի, ²⁷եթէ ելանիցէ ժողովորդս զոհել զոհս ՚ի տան Տեառն յերուսաղէմ. և դառնայցէ սիրտ ժողովորդեանս այսորիկ առ Տէր, և առ տէ՛ր իւրեանց Ռոբովամ արքայ Յուդայ. և սպանանիցեն զիս, և դառնայցեն առ Ռոբովամ արքայ Յուդայ։ ²⁸Եւ խորհեցաւ արքայ, և չոգաւ արար երկուս երինջս ոսկիս. և ասէ ցժողովորդն. Շա՛տ լիցի ձեզ ելանել յերուսաղէմ. ահա աստուածք քո Իսրայէլ՝ որ հանին զքեզ յերկրէն Եգիպտացոց*։ ²⁹Եւ եդ զմին ՚ի Դա՛մ և զմասն ՚ի Բեթէլ։ ³⁰Եւ եդ և բանն այն ՚ի մե՛ղս. և երթայր ժողովորդն առաջի երեսաց միոյն մինչև ցԴան։ ³¹Եւ արար տօնս ՚ի վերայ բարձանց. և արար քուրմս զմասն ինչ ժողովորդեանն որ ո՛չ էին ՚ի տանց Ղևեայ*։ ³²Եւ արար Յերոբովամ տօն յամսեանն ութերորդի՝ յաւուր հնգետասաներորդի նորին ամսոյ՝ ըստ տօնին որ յերկրին Յուդայ, և ել ՚ի սեղանն զոր արար ՚ի Բեթէլ՝ զոհել՝ երնջոցն զոր արար։ Եւ կացոյց ՚ի Բեթէլ քո՛ւրմս բարձանցն զոր արար*։ ³³Եւ ել ՚ի սեղանն զոր արար ՚ի Բեթէլ, որ օր հնգետասան էր ամսոյն ութերորդի ՚ի տօնին. ստեղծ ՚ի սրտէ իւրմէ. և արար տօնս որդւոցն Իսրայէլի. ել ՚ի սեղանն զոհել։

13

Գլուխ ԺԳ

ԼԹ ¹Եւ ահա ա՛յր Աստուծոյ եհաս ՚ի Յուդայ բանիւ Տեառն ՚ի Բեթէլ, և Յերոբովամ կա՛յր ՚ի վերայ սեղանոյն իւրոյ զոհել ՚ի վերայ։ ²Եւ կոչեաց զսեղանն բանիւ Տեառն՝ և ասէ. Սեղան սեղան. ա՛յսպէս ասէ Տէր. Ահա որդի ծնցի տան Դաւթի՝ Յովսիա՛ անուն նորա. և զոհեսցէ ՚ի վերայ քո զքո՛ւրմս բարձանցո՛ւ որ զոհեն ՚ի վերայ քո, և ոսկերս մարդկան այրեսցեն ՚ի վերայ քո*։ ³Եւ ե՛տ յաւուր յայնմիկ նշան՝ և ասէ. Ա՛յս նշան է զոր խօսեցաւ Տէր՝ և ասէ. Ահա սեղանո՛ւ պատառեցի, և հեղցի՛ պարարտութիւնո՛ւ որ ՚ի վերայ դորա։ ⁴Եւ եդ և իբրև լուաւ արքայ Յերոբովամ զբանս առնն Աստուծոյ բարբառելոյ ՚ի վերայ սեղանոյն որ ՚ի Բեթէլ՝ ձգեաց արքայ զձեռն իւր ՚ի սեղանոյ անտի և ասէ. Կալարո՛ւք զդա։ Եւ գօսացաւ ձեռն նորա՝ զի ձգեաց ՚ի նա, և ո՛չ կարաց դարձուցանել զնա առ ինքն*։ ⁵Եւ սեղանն պատառեցաւ՝ և հեղաւ պարարտութիւնն ՚ի սեղանոյ անտի, ըստ նշանին զոր ետ այրն Աստուծոյ բանիւ Տեառն*։ ⁶Եւ ասէ արքայ Յերոբովամ ցայրն Աստուծոյ. Աղաչեա՛ զերեսս Տեառն Աստուծոյ քոյ, և արա՛ աղօթս վասն իմ և դարձցի ձեռն իմ առ իս։ Եւ աղաչեաց այրն Աստուծոյ առաջի Տեառն, և դարձաւ ձեռնն արքայի առ նա, և եդ և իբրև զառաջինն։ ⁷Եւ խօսեցաւ արքայ ընդ առնն Աստուծոյ՝ և ասէ. Մո՛ւտ ընդ իս ՚ի

* Ոմանք. Եւ լուան բան ՚ի Տեառնէ, և դա՛:

* Ոմանք. Եւ չոգաւ արար երինջս երկուս ոսկիս:

* Բազումք. Եւ արար տունս ՚ի վերայ բարձանց: Ոմանք. Չմասն ինչ ՚ի ժողովորդեանն:

* Ոմանք. Տօնս յամսեանն ութեր՛:

* Յօրինակին՝ անունս Յովսիա, կարմրադեղով նշանակի:

* Այլք. Չեռն նորա՝ զոր ձգեաց ՚ի նա. և ոչ:

* Ոմանք. Այրն Աստուծոյ ըստ բանի Տեառն:

տուն՝ և ճաշեա՛, և տա՛ց քեզ պարգև*։⁸ Եւ ասէ այրն Աստուծոյ ցարքայ. Եթէ տացես ինձ զկէս տան քոյ, ո՛չ մտից ընդ քեզ. և ո՛չ կերայց հաց, և ո՛չ արբից ջուր ՚ի տեղուոջս յայսմիկ. ⁹զի այսպէս պատուիրեաց ինձ Տէր բանիւ և ասէ. Մի՛ ուտիցես հաց, և մի՛ ըմպիցես ջուր. և մի՛ գնասցես ընդ նոյն ճանապարհ, ընդ որ երթանայցես*։ ¹⁰Եւ գնաց զճանապարհ իւր. այլ ո՛չ ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկն՝ գնաց ՚ի Բեթելայ։

Խ ¹¹Եւ մարգարէ մի ծեր բնակեալ էր ՚ի Բեթել, և եկին որդիք նորա և պատմեցին նմա զամենայն գործսն զոր արար այրն Աստուծոյ յաւուր յայնմիկ ՚ի Բեթել, և զբանսն զոր խօսեցաւ ընդ արքայի. և դարձուցին զերեսս հօրն իւրեանց*, ¹²և խօսեցաւ ընդ նոսա հայրն նոցա և ասէ. Ընդ ո՞ր ճանապարհ գնաց։ Եւ ցուցին նմա որդիք նորա ընդ ճանապարհն ընդ որ գնաց այրն Աստուծոյ որ եկեալ էր ՚ի Յուդայ*։ ¹³Եւ ասէ ցորդիս իւր. Կազմեցէ՞ք զէշն։ Եւ կազմեցին նմա էշ. և ել ՚ի նա. ¹⁴և գնաց զհետ առնն Աստուծոյ, և եգիտ զնա նստեալ ընդ կաղնուովն. և ասէ ցնա. Եթէ դո՞ւ իցես այրն Աստուծոյ եկեալ ՚ի Յուդայ։ Եւ ասէ. Ե՛ս եմ։ ¹⁵Եւ ասէ ցնա. Ե՛կ ընդ իս ՚ի տուն, և կե՛ր հաց։ ¹⁶Եւ ասէ. Ո՛չ կարեմ դառնալ ընդ քեզ, և ո՛չ զալ ընդ քեզ. և ո՛չ կերայց հաց և ո՛չ արբից ջուր ՚ի տեղուոջս յայսմիկ. ¹⁷զի այնպէս հրաման տուեալ է ինձ բանիւ Տեառն և ասացեալ, թէ մի՛ ուտիցես անդ հաց, և մի՛ ըմպիցես ջուր. և մի՛ դառնայցես ընդ նոյն ճանապարհ ընդ որ երթայցես։ ¹⁸Եւ ասէ ցնա. Եւ ե՛ս մարգարէ եմ իբրև զքեզ. և հրեշտակ Տեառն խօսեցաւ ընդ իս և ասէ. Դարձո՛ւ զնա առ քեզ ՚ի տուն քո, և կերիցէ հաց և արբցէ ջուր։ Եւ ստեաց նմա։ ¹⁹Եւ դարձո՛յց զնա ընդ իւր, և եկեր հաց ՚ի տան նորա, և արբ ջուր։ ²⁰Եւ լինէր մինչդեռ նստէին նոքա ՚ի սեղանն, եղև բան Տեառն առ մարգարէն որ դարձոյց զնա*։ ²¹և խօսեցաւ ընդ առնն Աստուծոյ եկելոյ ՚ի Յուդայ՝ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի դառնացուցեր զբանն Տեառն, և ո՛չ պահեցեր զպատուէրն զոր պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո. ²²և դարձար՝ և կերար հաց, և արբեր ջուր ՚ի տեղուոջոյ յայդմիկ՝ զորմէ խօսեցաւ ընդ քեզ և ասէ. Մի՛ ուտիցես հաց՝ և մի՛ ըմպիցես ջուր. արդ մի՛ մտցէ մարմին քո ՚ի գերեզման հարց քոց։ ²³Եւ եղև յետ ուտելոյն նորա հաց և ըմպելոյ ջուր, հանդերձեաց է՛շ մարգարէին. և դարձաւ և գնաց. ²⁴և եգիտ զնա առնձ ՚ի ճանապարհին, և սպան զնա. և էր մարմին նորա ընկեցեալ ՚ի ճանապարհին, և էշն կայր առ նմա, և առնձն կայր առ մարմինն*։ ²⁵Եւ ահա արքանցաւորք տեսին մեռեալ ընկեցեալ ՚ի ճանապարհին, և առնձն կայր առ ընթեր մեռելոյն. և մտին և խօսեցան ՚ի քաղաքին՝ ուր մարգարէն ծեր բնակեալ էր*։ ²⁶Իբրև լուաւ, որ դարձոյցն զնա ՚ի ճանապարհէն, ասէ. Այն այրն Աստուծոյ է որ դառնացոյց զբանն Տեառն, և ետ զնա Տէր առիւծու և եբել զնա, և սպան զնա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ընդ նմա։ ²⁷Եւ խօսեցաւ ընդ որդիսն իւր և ասէ. Հանդերձեցէ՞ք զէշն։ Եւ հանդերձեցին. ²⁸և գնաց և եգիտ զմարմին նորա ընկեցեալ ՚ի ճանապարհին. և էշն և առնձն կային առ մարմինն. և ո՛չ եկեր առնձն զմարմին առնն Աստուծոյ, և ո՛չ եբել զէշն։ ²⁹Եւ ա՛ռ մարգարէն զմարմին

* Ոմանք. Եւ տաց քեզ պարգև։

* Այլք. Եւ մի՛ գնայցես ընդ նոյն։ Բազումք. Ընդ որ երթայցես։

* Ոմանք. Ծեր բնակէր ՚ի Բեթել։ Ուր օրինակ մի. գնացեալ էր ՚ի Բեթել։

* Ոսկան. Զճանապարհն ընդ որ գնած... որ եկեալ էր ՚ի Յուդայէ։

* Ոմանք. Եւ եղև բան Տեառն առ մար։

* Բազումք. Կայր առ մարմինն։

* Ոսկան. Տեսին զմեռեալն՝ ընկեցեալ։

առնն Աստուծոյ, և եդ զնա՝ ի վերայ իշոյն, և դարձոյց զնա և եկն ՚ի քաղաք մարգարէին ծերոյ կոծե՛լ և թաղել զնա.³⁰ և ցածո՛յց զդին նորա մարգարէն ՚ի թաղե՛լ զնա ՚ի գերեզմանի իւրում. և կոծեցան զնա և ասեն. Վայ՛ եղբայր: ³¹Եւ եղև յետ կոծելոյն զնա, խօսեցաւ ընդ որդիսն իւր և ասէ. Եթէ մեռանիցիմ ես, թաղեսցի՞ք զիս յայսմ գերեզմանի ուր թաղեցաւ այրս Աստուծոյ, առ ոսկերս դորա դիջիք զիս զի ապրեսցին ոսկերք իմ ընդ ոսկերս դորա.³² զի լինելով լինիցի՛ բանն զոր խօսեցաւ բանիւ Տեառն ՚ի վերայ սեղանոյն ՚ի Բեթէլ, և ՚ի վերայ տանց բարձանց որ ՚ի Սամարիա: ³³Եւ յետ բանիցս այսոցիկ ո՛չ դարձաւ Յերոբովամ ՚ի չարեաց իւրոց. և դարձաւ և արար ՚ի մասնէ ժողովրդեանն քո՛ւրմս բարձանց. որ կամէր լնոյր զծեռն իւր. և լինէր քո՛ւրմ բարձանց*:³⁴ Եւ եղև բա՛նն այն ՚ի մե՛ղս տանն Յերոբովամայ, և ՚ի սատակումն և յապականութիւն յերեսաց երկրին*:

14

Գլուխ ԺԴ

¹Ի ժամանակին յայնմիկ հիւանդացաւ Աքիա որդի Յերոբովամայ,² և ասէ Յերոբովամ ցկին իւր. Արի՛ և այլակերպեաց, և մի՛ գիտասցեն թէ դու կին Յերոբովամայ իցես, և երթիցես ՚ի Սելով. ահա անդ է Աքիա մարգարէ. նա՛ խօսեցաւ վասն իմ թագաւորել ՚ի վերայ ժողովրդեանս այսորիկ.³ և ա՛ռ ՚ի ձեռին քո ա՛ռնն Աստուծոյ հաց, և բլիթս որդւոց նորա, և չամիչ՝ և ստոման մի մեղու, և երթիցես առ նա. և պատմեսցէ քեզ զի՞նչ լինելոց իցէ մանկանն*:⁴ Եւ արա՛ր այնպէս կինն Յերոբովամու, և յարեաւ և զնաց ՚ի Սելով, և եմուտ ՚ի տուն Աքիայ. և այրն ծերացեալ ՚ի տեսանելոյ, և վատեալ աչք իւր ՚ի ծերութենէ իւրմէ:⁵ Եւ ասէ Տէր ցԱքիա. Ահա կինն Յերոբովամայ գայ հարցանել բան ՚ի քէն վասն որդւոյ իւրոյ, զի հիւանդ է. զայս ինչ և զայս ասասցես նմա*:⁶ Եւ եղև ՚ի մտանելն նորա, և ինքն յանձանօթս լինէր. և եղև իբրև լուաւ Աքիա զծայն ոտից նորա, ՚ի մտանելն նորա և ՚ի բանալ, ասէ. Մո՛ւտ կին Յերոբովամու. ընդէ՞ր իցէ այդ զի յանձանօթս լինիս. և ես եմ առաքեալ առ քեզ խստութեամբ*:⁷ Ե՛րթ և ասա՛ ցՅերոբովամ. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Փոխանակ զի բարձրացուցի զքեզ ՚ի միջոյ ժողովրդեանդ, և ետու զքեզ յառաջնորդ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի.⁸ և պատառեցի զթագաւորութիւնն ՚ի տանէն Դաւթի, և ետու զնա քեզ. և ո՛չ եղեր իբրև զծառայ իմ Դաւիթ որ պահեաց զպատուիրանս իմ, և եկն զկնի իմ ամենայն սրտիւ իւրով, առնել ուղղութիւն առաջի իմ.⁹ և չարացար առնել քան զամենեսին որ եղեն յառաջ քան զքեզ. և զնացեր և արարեր քեզ աստուածս օտարոտիս, և ձուլածոյս՝ բարկացուցանել զիս. և զիս ընկեցեր յետս ՚ի մարմնոյ քումմէ*:¹⁰ Վասն այսորիկ ես ածից չարիս ՚ի վերայ տանն Յերոբովամայ, և սատակեցի՛ց զՅերոբովամայ որ միգիցէ զորմով, կծկեալ և լքեալ ՚ի մէջ Իսրայէլի. և հաւաքեցից զհե՛տ տանն Յերոբովամայ, որպէս

* Ոմանք. Եւ արար ՚ի Սամասէ ժողովրդեանն քուրմս... լնոյր զծեռս իւր:

* Յօրինակին պակասէր. Եւ յապականութիւն:

* Ոմանք. Եւ ա՛ռ ՚ի ձեռն քո... և նա պատմեսցէ քեզ զի՞նչ լինելոց է մանկանն:

* Ոմանք. Ահա կին Յերոբովամու... զայս ինչ և զայս ինչ ասասցես:

* Յօրինակին պակասէր. Եւ ես եմ առաք՞:

* Ոմանք. Ի յետս ՚ի մարմնոյ քումմէ:

հաւաքիցի ադր մինչև սպառել զնա*։ ¹¹Ձդիակունս Յերոբովամու 'ի քաղաքի՝ կերիցեն շունք, և զմեռեալս յանդի՝ կերիցեն թռչունք երկնից. զի Տէր խօսեցաւ։ ¹²Եւ դու արի՛ զնա՛ 'ի տուն քո, և 'ի մտանել ոտից քոց 'ի քաղաքն՝ մեռցի՛ մանուկն. ¹³և կոծեսցին ամենայն Իսրայէլ, և թաղեսցեն զնա. զի նա միայն Յերոբովամայ մտցէ՛ 'ի գերեզման. զի գտաւ 'ի նմա բան բարի վասն Տեառն Աստուծոյ Իսրայէլի 'ի տան Յերոբովամայ*։ ¹⁴Եւ յարուսցէ Տէր իւր թագաւոր 'ի վերայ Իսրայէլի, որ հարցէ՛ գտուն Յերոբովամայ յաւուր յայսմիկ։ ¹⁵Եւ արդ զի՞նչ ևս. հարցէ Տէր զԻսրայէլ որպէս շարժի եղէգն 'ի ջուր, և խլեսցէ՛ Տէր զԻսրայէլ յերկրէս բարութեան յայսմանէ՛ զոր ետ հարց նոցա, և հոսեսցէ՛ զնոսա յայնկոյս Գետոյն. փոխանակ զի արարին իւրեանց անտա՛ռս բարկացուցանել զՏէր*։ ¹⁶և մատնեսցէ Տէր զԻսրայէլ վասն մեղացն Յերոբովամու, որ մեղաւ՝ և մեղոյց զԻսրայէլ։ ¹⁷Եւ յարեալ կինն Յերոբովամու, զնաց 'ի Սարիրա. և եղև իբրև եմուտ առաջի դրան տանն, մեռալ մանուկն*։ ¹⁸Եւ կոծեցան զնա, և թաղեցին ամենայն Իսրայէլ ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ 'ի ձեռն ծառայի իւրոյ Աքիայ մարգարէի։ ¹⁹Եւ մնացորդք բանից Յերոբովամայ, թէ ո՞րչափ պատերազմեցաւ, և ո՞րչափ թագաւորեաց. ահա գրեալ են 'ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։ ²⁰Եւ աւուրք զորս թագաւորեաց Յերոբովամ, ամբ քսան և երկու. և ննջեա՛ց ընդ հարս իւր։ Եւ թագաւորեաց Նաբա՛տ որդի նորա ընդ նորա։

ԽԱ ²¹Եւ Ռոբովամ որդի Սողոմոնի թագաւորեաց 'ի վերայ Յուդայ. որդի քառասուն և մի ամաց Ռոբովամ 'ի թագաւորել իւրուն, և եւթնութասն ամ թագաւորեաց յերուսաղէմ քաղաքի զոր ընտրեաց Տէր դնել զանուն իւր անդ, յամենայն ցեղիցն Իսրայէլի. և անուն մօր նորա Նաամա Ամանացի*։ ²²Եւ արար Ռոբովամ չա՛ր առաջի Տեառն. և նախանծեցաւ ընդ ամենայն զոր արարին հարք նորա, և ըստ մեղաց նոցա զոր մեղան*։ ²³և շինեցին նոքա իւրեանց բարձունս և անտառս 'ի վերայ ամենայն բլրոյ բարձու, և 'ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց*։ ²⁴Եւ նուէրք եղեն յերկրին, և արարին յամենայն գարշութեանց ազգացն զոր եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։ ²⁵Եւ եղև 'ի տարւոջն յորում թագաւորեաց Ռոբովամ ել Սաւսակին արքայ Եգիպտոսի 'ի վերայ Երուսաղէմի*։ ²⁶և ա՛ռ զամենայն զանձս տան Տեառն, և զզանձս տանն արքայի, և զնիզակս ոսկիս, զոր ա՛ռ Դաւիթ 'ի ձեռաց Ադրազարայ արքայի Սուբայ, և տարաւ յերուսաղէմ զամենայն զոր ա՛ռ. և ա՛ռ զզէնսն ոսկիս զոր արար Սողոմոն*։ ²⁷Եւ արար արքայ Ռոբովամ փոխանակ նոցա զէնս պղնձիս. և դիմեցին 'ի վերայ նոցա զօրագլուխք սուրհանդակացն որ պահէին զգրունս տանն արքայի*։ ²⁸Եւ լինէր յորժան մտանէր արքայ 'ի տունն Տեառն, բառնային

* Ոմանք. վասն այնորիկ... տանն Յերոբովամու։

* Ոմանք. Եւ կոծեսցին զնա... զի գտաւ 'ի նա բան բարի։

* Ոմանք. Ձոր ետ Տէր հարց նոցա։

* Այլք. Եւ զնաց 'ի Սարիրա։

* Յօրհնակին. Նաամա Ամանացի։ Ուր ոմանք. Նաամ։

* Ոմանք. Ձոր արարին հարք նոցա։

* Ոմանք. Եւ շինեցին և նոքա իւր՝։

* Ոմանք. Եւ եղև 'ի հինգերորդ տարւոջն յորում թագաւորեաց։

* Ոմանք. Ադրազարայ ար՝։

* Ոսկան. Եւ դիմեցին 'ի վերայ նորա զօ՞։

զայն սուրհանդակքն, և յեցուցանէին զնոսա՝ ՚ի տեղի թևէ սուրհանդակացն*:
29Եւ մնացորդք բանիցն Ռոբովամայ, և ամենայն ինչ զոր արար. ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ:

ԽԲ 30Եւ պատերա՛զմ էր ՚ի մէջ Ռոբովամայ և ՚ի մէջ Յերոբովամայ զամենայն աւուրս: 31Եւ ննջեաց Ռոբովամ ընդ հարս իւր և թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի. և անուն մօր նորա Նաամա՝ Ամմանացի: Եւ թագաւորեաց Աբիու որդի նորա ընդ նորա:

15

Գլուխ ԺԵ

1Եւ յամին ութուտասներորդի թագաւորութեանն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ, թագաւորէ՛ Աբիու որդի Ռոբովամայ ՚ի վերայ Յուդայ: 2Եւ երեք ամ թագաւորեաց ՚ի վերայ Երուսաղէմի. և անուն մօր նորա Մաաքա դուստր Աբեսողոմայ*:
3Եւ զնաց ՚ի մեղս հօր իւրոյ զոր արար առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ, և ո՛չ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ՝ իբրև զսիրտն Դաւթի հօր իւրոյ: 4Զի ՚ի ձեռն Դաւթի ե՛տ նմա Տէր Աստուած մնացորդ յերուսաղէմ. զի կացուցէ զորդիս նորա յետ նորա, և հաստատեցէ զերուսաղէմ. 5որպէս արար Դաւիթ ուղղութիւն առաջի Տեառն, և ո՛չ խտորեցաւ յամենայնէ զոր պատուիրեաց նմա զամենայն աւուրս կենաց իւրոց. բա՛ց ՚ի բանին Ուրիայ Քետացոյ*:
6Եւ պատերա՛զմ էր ՚ի մէջ Աբիայ և ՚ի մէջ Յերոբովամայ զամենայն աւուրս կենաց նորա: 7Եւ մնացորդք բանից Աբիայ՝ և ամենայն ինչ զոր արար, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ. և պատերա՛զմ էր ՚ի մէջ Աբիայ և ՚ի մէջ Յերոբովամայ:

ԽԳ 8Եւ ննջեաց Աբիու ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի քաղաքի Դաւթի. և թագաւորէ՛ Ասա որդի նորա ընդ նորա: 9Եւ յամի քսաներորդի Յերոբովամայ արքայի Իսրայէլի թագաւորէ Ասա ՚ի վերայ Յուդայ. 10և քառասուն և մի ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Մաաքա՝ դուստր Աբեսողոմայ: 11Եւ արար Ասա ուղղութիւն առաջի Տեառն իբրև զԴաւիթ հայր իւր*. 12և եբարձ զնուէրս յերկրէն, և ջնջեաց զամենայն խարդախութիւնսն զոր արարին հարք նորա: 13Եւ զՄաաքա զմայր իւր ՚ի բա՛ց արար ՚ի տիկնութենէ. քանզի արար ժողովս յանտառին իւրում. և կտտորեաց Ասա զամրոցս նորա, և այրեաց հրով ՚ի հեղեղատին Կեղրոնի*. 14սակայն զբարձունսն ո՛չ եբարձ. այլ սիրտ նորա կատարեալ էր ընդ Տեառն զամենայն աւուրս իւր*: 15Եւ եբեր զսիւնսն հօր իւրոյ, և զսիւնսն զիւր՝ եմո՛յծ ՚ի տուն Տեառն. արծաթ և ոսկի և անօթս: 16Եւ պատերա՛զմ էր ՚ի մէջ Ասայի և ՚ի մէջ Բաասայ արքայի Իսրայէլի զամենայն աւուրս նոցա: 17Եւ ել Բաաս արքայ Իսրայէլի ՚ի վերայ Յուդայ, և շինեաց

* *Ի լուս՝. ՚ի վերայ՝ ՚ի տեղի թևէ, նշանակի՝ Ակ. այսինքն՝ Ակիւղաս. սենեկի՝ սի. այսինքն՝ Սիմաքոս. ՚ի թեկուէ: Ուր ոմանք ունին ՚ի բնաբանի: Ի թև սուրհան՝. և օրինակ մի. Ի թևակ սուրհան՝:*

* *Յօրինակին թուագրով դնի այսպէս. Եւ Գ ամ թագաւորեաց. ուր ոմանք. և զԳ ամ թա՛:*

* *Ոմանք. Բայց ՚ի բանէն Ուրիայ Քե՛:*

* *Այլք. ԶԴաւիթ զհայր իւր:*

* *Յօրինակին պակասէր. Եւ զՄաաքա զմայր իւր ՚ի բա՛ց արար:*

* *Այլք. Բայց սիրտ նորա կատար՝:*

զՌամա, զի մի՛ լիցի մտանել և ելանել Ասայի արքայի Յուդայ: ¹⁸Եւ ա՛ռ Ասա զամենայն արծաթն և զոսկի գտեալ՝ ՚ի գանձս տանն Տեառն, և ՚ի գանձս տան թագաւորին, և ետ զայն՝ ՚ի ձեռս ծառայից իւրոց. և առաքեաց զնոսա Ասա արքայ առ որդին Ադերայ՝ որդւոյ Աբեներայիմայ որդւոյ Ազայելի արքայի Ասորոց բնակելոյ ՚ի Դամասկոս՝ և ասէ՛. ¹⁹Ուխտեա՛ ուխտ՝ ընդ ի՛ս և ընդ քեզ, և ՚ի մէջ հօր իմոյ և ՚ի մէջ հօր քոյ. ահաւասիկ առաքեցի քեզ պատարագ արծաթ և ոսկի, և լոյ՛ծ զուխտ քո որ ընդ Բաասայ արքայի Իսրայէլի, և գնասցէ՛ յինէն՝: ²⁰Եւ լուաւ որդի Ադերայ արքայի՝ Ասայի, և առաքեաց զիշխանսն իւր ՚ի քաղաքսն Իսրայէլի. և եհար զԱյիւն, և զԴան, և զԱբէլ, տանն Մաաքայ, և զամենայն զթեներէթ մինչև յամենայն երկիրն Նեփթաղիմայ՝: ²¹Եւ եղև իբրև լուաւ Բաասա, դադարեաց ՚ի շինելոյ զՌամա, և դարձաւ ՚ի Թերսայ: ²²Եւ արքայ Ասա պատուիրեաց ամենայն Յուդայ որ էին յենակիմ, զի առցեն զքարինսն Ռամայ և զփայտ նորա, զոր շինեաց Բաասա. և շինեաց նոքօք արքայ Ասա զամենայն բլուրն Բենիամինի և զդիտանոցսն՝: ²³Եւ մնացորդք բանիցն Ասայի և ամենայն զօրութիւն նորա, և ամենայն ինչ զոր արար, և քաղաքն զոր շինեաց, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ. բայց ՚ի ժամանակի ծերութեան իւրոյ ցաւեցին ոտք իւր՝: ԽԴ ²⁴Եւ ննջեա՛ց Ասա ընդ հարս իւր, և թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքին Դաւթի. և թագաւորէ Յովսափատ որդի նորա ընդ նորա՞: ²⁵Եւ Նաբատ որդի Յերոբովամայ թագաւորէ յԻսրայէլի, յամին երկրորդի Ասայի արքայի Յուդայ. և թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի ամս երկուս՝. ²⁶և արար չա՛ր առաջի Տեառն. և գնաց զճանապարհ հօր իւրոյ, և ՚ի մեղս իւր որովք յանցոյց զԻսրայէլ: ²⁷Եւ նստաւ զնովաւ Բաասա որդի Աքիայ ՚ի վերայ տանն Իսաքարու, և եհար զնա Բաասա ՚ի Գաբաթոն այլազգեաց. և Նաբատ և ամենայն Իսրայէլ նստին զԳաբաթոնաւ՝. ²⁸և սպան զնա Բաասա, յամին երկրորդի Ասայի արքայի Յուդայ՝ և թագաւորեաց ընդ նորա: ²⁹Եւ եղև իբրև թագաւորեաց, եհար զամենայն տունն Յերոբովամու. և ո՛չ թողոյր զամենայն շնչաւոր տանն Յերոբովամայ. մինչև սատակել զնա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ՚ի ձեռն ծառայի իւրոյ Աքիայ Սիլոնացւոյ՝, ³⁰վասն ամենայն մեղացն Յերոբովամայ՝ որ մեղաւ և յանցոյց զԻսրայէլ ՚ի զայրացուցանել իւրում, որովք զայրացոյց զՏէր Աստուած Իսրայէլի: ³¹Եւ մնացորդք բանից Նաբատայ, և ամենայն ինչ զոր արար, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի: ³²Եւ էր պատերազմ ՚ի մէջ Ասայի և ՚ի մէջ Նաբատայ արքայի Իսրայէլի զամենայն աւուրս նոցա: ³³Եւ յամին երրորդի Ասայի արքայի Յուդայ թագաւորէ Բաասա որդի Աքիայ ՚ի վերայ ամենայն Իսրայէլի ՚ի Թերսա ամս քսան և չորք՝:

* Ոմանք. Որդւոյ Աբեներայիմայ:

* Այլք. Ահաւադիկ առաքե՛:

* Ոմանք. Եւ եհար զԱյիւի և զԴան:

* Ոմանք. Եւ զդիտանոցն:

* Ոմանք. Ցաւեցին ոտիւք:

* Ոմանք. Եւ թագաւորեաց Յովսափատ:

* Ոսկան. Թագաւորէ Իսրայէլի յամին եր՛:

* Ոմանք. ՚ի Գաբաթոնսն այլազգեաց:

* Ոմանք. Չամենայն զտունն:

* Ոմանք. Եւ յամին եւթներորդի Ասայի արքայի: *Յօրինակին*. Բաասա որդի արքայի ՚ի վերայ ամենայն:

³⁴Եւ արար չա՛ր առաջի Տեառն. և գնաց զճանապարհ Յերոբովամայ որդւոյ Նաբատայ, և ՚ի մեղս նորա որպէս յանցոյց զԻսրայէլ:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ եղև բան Տեառն ՚ի ձեռն Յէուայ որդւոյ Անանիայի առ Բաասա՝ և ասէ*.
²Փոխանակ զի բարձրացուցի զքեզ յերկրէ, և ետու զքեզ առաջնորդ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և գնացեր զճանապարհն Յերոբովամայ, և յանցուցեր զժողովուրդ իմ զԻսրայէլ, բարկացուցանել զիս սնոտիւք իւրեանց.
³Ահա ես յարուցից զհետ Բաասայ և զհետ տան նորա. և տա՛ց գտուն քո իբրև գտունն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ: ⁴Որ մեռանիցի Բաասայ ՚ի քաղաքի՝ շո՛ւնք կերիցեն, և որ մեռանիցի՝ նորա ՚ի դաշտի՝ կերիցեն զնա թռչո՛ւնք երկնից:
⁵Եւ մնացորդք բանից Բաասայ, և ամենայն ինչ զոր արար, և զօրութիւնք նորա, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի: ⁶Եւ մնջեաց Բաասա ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի Թերսա. և թագաւորէ էլա որդի նորա ընդ նորա. յամի քսաներորդի Ասայի արքայի: ⁷Եւ ՚ի ձեռն Յէուայ որդւոյ Անանիայ մարգարէի խօսեցաւ Տէր ՚ի վերայ Բաասայ՝ և ՚ի վերայ տան նորա, զամենայն չարիսն զոր արար առաջի Տեառն ՚ի բարկացուցանել զնա գործովք ձեռաց իւրոց. առ ՚ի լինելոյ իբրև գտունն Յերոբովամայ, և վասն հարկանելոյ զնա.
⁸Յամին քսաներորդի և վեցերորդի արքայի Յուդայ: Եւ թագաւորեաց էլա որդի Բաասայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Թերսա ամս երկուս: ⁹Եւ ժողովեաց ՚ի վերայ նորա Չամրի ծառայ իւր իշխան կիսոյ սպառազինաց. և նա ըմպէր և արբեալ էր ՚ի տանն Արսայ հանդերձապետի ՚ի Թերսա*.
¹⁰Եւ եմուտ Չամրի, և եհար զնա և սպան, յամի քսաներորդի եւթներորդի Ասայի արքայի Յուդայ. և թագաւորեաց ընդ նորա*:
¹¹Եւ եղև ՚ի թագաւորել նորա՝ և նստել յաթոռն իւրում, եհար զամենայն տունն Բաասայ՝ և ո՛չ եթող նմա որ միզիցէ զորմով, և զմերձաւորս նորա և զբարեկամս նորա*:
¹²Եւ ջնջեաց Չամրի զամենայն տունն Բաասայ՝ ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ՚ի վերայ տանն Բաասայ ՚ի ձեռն Յէուայ մարգարէի*.
¹³Վասն ամենայն մեղացն Բաասայ՝ և էլայ որդւոյ նորա որ մեղաւ, և որպէս յանցոյց զԻսրայէլ, բարկացուցանել զՏէր Աստուած Իսրայէլի սնոտուովք իւրեանց:
¹⁴Եւ մնացորդք բանիցն էլայ, և ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի:
ԽԵ ¹⁵Յամի քսաներորդի եւթներորդի Ասայի արքայի Յուդայ, թագաւորեաց Չամրի աւուրս եւթն ՚ի Թերսա. և բանակն Իսրայէլի ՚ի Գաբաթոնի այլազգեաց.
¹⁶Եւ լուաւ ժողովուրդն ՚ի բանակի անդ՝ ասեն. Գումարեցաւ Չամրի և եհար զարքայն. և թագաւորեցուցին Իսրայէլի զԱմրի զօրավար զօրուն ՚ի վերայ Իսրայէլի յաւուր յայնմիկ ՚ի բանակին: ¹⁷Եւ ել Ամրի, և ամենայն Իսրայէլ ընդ

* *Ոմանք.* Որդւոյ Անայի առ Բա՛... (2) սնոտուովք իւրեանց:

* *Ոսկան.* Չամրի: *Ոմանք.* Չամրի ծառայ նորա: *Յօրինակին.* ՚ի տան Նարսա հանդ՝. ՚ի Թեսա: *Ուր ոմանք.* ՚ի վերայ տանն Արսայ:

* *Ոսկան.* Չամրի: *Ոմանք.* Եւ եհար զնա, և սպան զնա:

* *Ոմանք.* ՚ի թագաւորելն նորա և ՚ի նստել յա՛... որ միզէր զորմով:

* *Ոսկան.* Չամրի:

նմա՝ ի Գաբաթոնէ, և նստաւ զԹերսաւ*։¹⁸ Եւ եղև իբրև ետես Չամբրի թէ յամնուլ եղև քաղաքն՝ եմուտ ՚ի սենեակ մի տանն արքայի. և այրեաց ՚ի վերայ նորա զտունն արքայի հրով. և մեռաւ.¹⁹ Վասն մեղաց իւրոց զոր արար՝ առնել չա՛ր առաջի Տեառն. և գնաց զամենայն ճանապարհս Յերոբովամայ որդւոյ Նաբատայ, և ՚ի մե՛ղս նորա զոր արար որովք յանցոյց զԻսրայէլ*։²⁰ Եւ մնացորդք բանից Չամբրեայ՝ և խումբք նորա զոր խմբեցաւ, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։²¹ Յայնժամ բաժանեցա՛ւ ժողովուրդն Իսրայէլի, կէս ժողովորդեանն լինէր զհետ Թամնեայ՝ որդւոյ Գովնաթայ թագաւորեցուցանել զնա, և կէս ժողովորդեանն լինէր զկնի Ամրեայ*։²² Եւ յաղթահարեաց ժողովուրդն որ զկնի Ամրեայ, և պարտեցաւ ժողովուրդն որ զհետ Թամնեայ որդւոյ Գովնաթայ. և մեռաւ Թամնի, և Յովրամ եղբայր նորա ՚ի ժամանակի յայնմիկ. և թագաւորեաց Ամրի յետ Թամնեայ*։²³ Յամին երեսներորդի և առաջներորդի Ասայի արքայի Յուդայ, թագաւորէ՛ Ամրի ՚ի վերայ Իսրայէլի ամս երկուտասան. ՚ի Թերսա թագաւորեաց ամս վեց*։²⁴ Եւ ստացաւ Ամրի զլեառնն Սոմորոն՝ ՚ի Սամերայ տեռնէ լերինն երկուց տաղանտաց արծաթոյ. և շինեաց զլեառնն, և կոչեաց զանուն լերինն զոր շինեաց՝ յանո՛ւն Սամերեայ տեառն լերինն Սամիրոն*։²⁵ Եւ արար Ամրի չա՛ր առաջի Տեառն. և չարացաւ քան զամենայն եղեալս յառաջ քան զնա*։²⁶ Եւ գնաց զամենայն ճանապարհս Յերոբովամայ որդւոյ Նաբատայ, և ՚ի մեղս նորա որովք յանցոյց զԻսրայէլ ՚ի բարկացուցանել զՏէր Աստուած Իսրայէլի սնուտովք իւրեանց*։²⁷ Եւ մնացորդք բանից Ամրեայ՝ և ամենայն ինչ զոր արար, և զօրութիւն նորա զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։

ԽՁ²⁸ Եւ ննջեաց Ամրի ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի Սամարիա. և թագաւորեաց Աքաաբ որդի նորա ընդ նորա*։²⁹ Եւ Աքաաբ որդի Ամրեայ թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի. յամին երեսներորդի և ութերորդի Ասայի արքայի Յուդայ #, թագաւորեաց Աքաաբ որդի Ամրեայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս քսան և երկուս։³⁰ Եւ արար Աքաաբ որդի Ամրեայ չա՛ր առաջի Տեառն քան զամենեսեան որ յառաջ քան զնա էին։³¹ Եւ ո՛չ ինչ էր նմա ընդհատ՝ գնա՛լ ըստ մեղաց Յերոբովամայ որդւոյ Նաբատայ. և ա՛ռ կին զՅեզաբէլ դուստր Յովբաղայ արքայի Սիդոնացւոց. և գնաց և ծառայեաց Բահաղու՝ և երկի՛ր եպագ նմա։³² Եւ կանգնեաց սեղան Բահաղու ՚ի տան գարշելեաց նորա զոր շինեաց ՚ի Սամարիա։³³ Եւ արար Աքաաբ անտառ. և յաւել Աքաաբ առնել առ ՚ի բարկացուցանել զՏէր Աստուած Իսրայէլի, քան զամենայն թագաւորս Իսրայէլի եղեալս յառաջ քան զնա*։³⁴ Յաւուրս նորա շինեաց Աքիւլ Բեթլացի զերիքով.

* Ոմանք. Ընդ նմա ՚ի Գաբաթովնն։

* Յօրինակին պակասէր. Եւ ՚ի մեղս նորա զոր արար, որովք։ Ուր ոմանք. Եւ գնաց զճանապարհս Յերոբովամու... արար որպէս յանցոյց զԻսրայէլ։

* Ոմանք. Կէս ժողովորդեանն լինել զկնի Թամնեայ որդի*։

* Ոմանք. Որ էր զկնի Ամրեայ, և պարտեաց զժողովուրդն որ էր զհետ Թամնեայ։

* Այլք. Երեսներորդի և առաջներորդի։

* Ոմանք. Չլեառնն Սամերոն ՚ի Սամարեայ ՚ի տեառնէ լերինն։

* Ոմանք. Եղեալս յառաջագոյն քան։

* Ոմանք. Եւ գնաց յամենայն ճանապարհս։

* Ոմանք. Եւ թագաւորէ Աքաաբ որ*։

* Ոմանք. Առ ՚ի բարկացուցանելոյ։

Աբերոնաւ անդրանկա՛ւ իւրով արկ նմա հիմունս, և Սեգուբաւ կրսերաւ իւրով կանգնեաց զդրունս նորա. ըստ բանին Տեառն, զոր խօսեցաւ ՚ի ձեռն Յեսուայ որդւոյ Նաւեայ*:

17

Գլուխ ԺԷ

ԽԵ ¹Եւ ասէ եղիա մարգարէ ՚ի Թեգբեայ Գաղաադու ցԱքաաբ. Կենդանի՛ է Տէր Աստուած զօրութեանց Աստուած Իսրայէլի, որոյ կացի առաջի նորա, եթէ եղիցի յամսս յայսոսիկ ցօղ կամ անձրև, բայց եթէ բանիւ բերանոյ իմոյ*։ ²Եւ եղև բան Տեառն առ եղիա՝ և ասէ. ³Գնա՛ աստի ընդ արևելս՝ և թաքիցես ՚ի հեղեղատին Քոռաթու, որ է յանդիման Յորդանանու*։ ⁴և եղիցի ընպէլ քեզ ջո՛ւր ՚ի հեղեղատէն. և հրաման տաց ագռաւուց կերակրել զքեզ անդ*։ ⁵Եւ գնաց, և արար եղիա ըստ բանին Տեառն. և չոգաւ և նստաւ ՚ի հեղեղատին Քոռաթայ յանդիման Յորդանանու։ ⁶Եւ ագռաւք բերէին նմա հաց և միս ընդ առաւօտս, և հաց և միս ընդ երեկս. և ՚ի հեղեղատէն ընպէր ջուր*։ ⁷Եւ եղև յետ աւուրց, և ցամաքեցաւ հեղեղատն զի ո՛չ եղև անձրև ՚ի վերայ երկրի։ ⁸Եւ եղև բան Տեառն առ եղիա՝ և ասէ. ⁹Արի և գնա՛ ՚ի Սարեփթա Սիդոնացուց, և նստցես անդ. և ահա պատուիրեալ է իմ անդ կնոջ միոյ այրւոյ կերակրել զքեզ*։ ¹⁰Եւ յարեաւ գնաց ՚ի Սարեփթա ՚ի դուռն քաղաքին. և ահա անդ կին մի քաղէր փայտ. և աղաղակեաց զկնի նորա եղիա՝ և ասէ ցնա. Առ դու ինձ սակաւ մի ջուր ամանով՝ և արբից։ ¹¹Եւ գնաց բերել. և աղաղակեաց զիտն նորա եղիա և ասէ. Առցես ինձ պատառ մի հաց ՚ի ձեռնին քում։ ¹²Եւ ասէ կինն. Կենդանի՛ է Տէր Աստուած քո, եթէ գուցէ իմ նկանակ. բայց եթէ որչափ բռանբ մի ալևր ՚ի սափորի, և սակաւ մի ևղ ՚ի կամփսակի. և ահա քաղեն կրկուտս երկուս, և մտից արարից զայն ինձ և մանկանց իմոց. և կերիցուք զայն՝ և մեռցուք*։ ¹³Եւ ասէ ցնա եղիա. Քաջալերեաց մո՛ւտ և արա՛ ըստ բանի քում. այլ արասցես նախ ինձ անտի նկանակ մի փոքրիկ և բերցես ինձ. և ապա արասցես քեզ և մանկանց քոց։ ¹⁴Ձի ա՛յսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Սափոր ալևրն մի՛ պակասեսցէ, և կամփսակ իւղոյն մի՛ նուազեսցէ, մինչև յօր տալոյ Տեառն անձրև ՚ի վերայ երեսաց երկրի*։ ¹⁵Եւ գնաց կինն, և արար ըստ բանին եղիայի. և կերաւ սա և նա՝ և որդիք նորա. ¹⁶և յօրէ յայնմանէ սափոր ալևրն ո՛չ պակասեաց, և կամփսակ իւղոյն ո՛չ նուազեաց ըստ բանին Տեառն, զոր խօսեցաւ Տէր ՚ի ձեռն եղիայի*։ ¹⁷Եւ եղև յետ բանիցս այսոցիկ հիւանդացաւ որդի տիկնոջ տանն, և էր ախտ նորա սաստիկ յոյժ, մինչ ո՛չ մնաց ՚ի նմա շունչ։ ¹⁸Եւ ասէ ցեղիա. Ձի՞ կայ իմ և քո այրդ Աստուծոյ, մտե՛ր առ իս յիշատակել զանօրէնութիւնս իմ, և

* Ոմանք. Ձերիքով. Աբիրոնաւ... կրտսերով իւ՛:

* Ոմանք. ՚ի Թեսբեայ Գաղաա՛... յամսս յայս ցօղ:

* Ոմանք. ՚ի հեղեղատին Քոռաթայ:

* Ոմանք. Հրաման տամ ագռաւուց:

* Այլք. Եւ հաց և միս ընդ երեկոյս:

* Ոմանք. Կնոջ մի այրւոյ:

* Այլք. Եւ մտից և արարից: Ոմանք. Եւ կերիցուք զայն, և մի՛ մեռցուք:

* Ոմանք. Մինչև ցօր տալոյ Տեառն:

* Յայլս պակասի. Ձոր խօսեցաւ Տէր ՚ի ձե՛:

սպանանել զորդի իմ*։¹⁹Եւ ասէ Եղիա ցկինն. Տո՛ւր ցիս զորդիդ քո: Եւ ա՛ն զնա ՚ի գրկաց նորա, և եհան զնա ՚ի վերնատունն յորում ինքն նստէր, և արար զնա ՚ի կողմն ՚ի վերայ մահճաց իւրոց.²⁰Եւ աղաղակեաց Եղիա՝ և ասէ. Ո՛հ ինձ Տէր, որ վկայդ ես այրոյն առ որում ե՛ս բնակեալ եմ. դո՛ւ չարչարեցեր զորդի նորա մեռուցանել*։²¹Եւ փչեաց երիցս ՚ի մանուկն, և կարդաց զՏէր՝ և ասէ. Տէր Աստուած իմ, դարձցի՛ շունչ մանկանս ՚ի սա: Եւ եղև այնպէս.²²Եւ աղաղակեաց, և լուաւ Տէր ձայնի Եղիայի, և դարձաւ շունչ մանկանն ՚ի փո՛ր նորա՝ և կենդանացաւ:²³Եւ ա՛ն Եղիա զմանուկն՝ և իջոյց զնա ՚ի վերնատանէ՛ անտի ՚ի տունն և ետ ցմայր իւր. և ասէ Եղիա. Տե՛ս զի կենդանի՛ է որդիդ քո:²⁴Եւ ասէ կինն ցեղիա. Ահա ա՛րդ գիտացի եթէ այր Աստուծոյ ես դու. և բան Տեառն ճշմարիտ՝ է՛ ՚ի բերան քո:

18

Գլուխ ԺԸ

ԽԸ¹Եւ եղև յե՛տ աւուրց բազմաց՝ և բան Տեառն եղև առ Եղիա յամին երրորդի, և ասէ. Ե՛րթ և երևեաց Աքաաբու, և տա՛ց անձրև ՚ի վերայ երեսաց երկրի:²Եւ չոգաւ Եղիա երևել Աքաաբու. և սով սաստիկ էր ՚ի Սամարիա:³Եւ կոչեաց Աքաաբ Վբդիու զհազարապետ իւր. և Աբդիու երկիւղած էր ՚ի Տեառնէ յոյժ.⁴Եւ եղև ՚ի կոտորել Յեզաբելայ զմարգարտն Տեառն, և ա՛ն Աբդիու հարի՛ւր այր մարգարէ, և թաքոյց զնոսա յիսուն յիսուն յայրի՝ և կերակրեաց զնոսա հացիւ և ջրով*։⁵Եւ ասէ արքայ ցԱբդիու. Ե՛կ շրջեսցուք ընդ երկիրդ առ ամենայն աղբերքք ջրոց և առ հեղեղատօք, թերևս գտցո՛ւք խոտ և ապրեցուցուք զձիս և զջորիս, և ո՛չ սատակեսցին յանասնոց:⁶Եւ բաժանեաց իւրեանց զճանապարհն շրջել. Աքաաբ զնաց ընդ մի ճանապարհ միայն, և Աբդիու զնաց ընդ այլ ճանապարհ միայն*։⁷Եւ է՛ր Աբդիու ՚ի ճանապարհին. և եկն ել Եղիա ընդ առաջ նորա միայն, և աճապարեաց Աբդիու, անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց՝ և ասէ. Եթէ դո՞ւ իցես տէ՛ր իմ Եղիա:⁸Եւ ասէ Եղիա. Ե՛ս եմ. ե՛րթ ասա՛ ցտէր քո՝ թէ ահա՛ւասիկ Եղիա:⁹Եւ ասէ Աբդիու. Ձի՞նչ մեղայ, զի մատնես զճառայս քո ՚ի ձեռս Աքաաբու սպանանել զիս*։¹⁰Կենդանի՛ է Տէր Աստուած քո, եթէ իցէ ազգ կամ թագաւորութիւն ուր ո՛չ առաքեաց Տէր իմ խնդրել զքեզ. և ասեն թէ չէ՛ ուրեք. և այրեաց զթագաւորութիւնն և զաշխարհ նորա զի ո՛չ եգիտ զքեզ:¹¹Եւ արդ դու ասես, թէ ե՛րթ և պատմեա՛ տեառն քում թէ ահա՛ւասիկ Եղիա.¹²Եւ եղիցի թէ ես երթայցեմ ՚ի քէն, և Յոգի՛ Տեառն առնուցու զքեզ յերկիր զոր ո՛չ գիտիցեմ, և մտանիցեմ պատմել Աքաաբու, և ո՛չ գտանիցէ զքեզ, և սպանանիցէ զիս. և ծառայ քո երկիւղած է՛ ՚ի մանկութենէ իւրմէ*։¹³Եւ ո՛չ պատմեցաւ տեառն իմում զոր ինչ արարի ես ՚ի կոտորել Յեզաբելայ զմարգարտն Տեառն. թաքուցի ՚ի մարգարէիցն Տեառն հարիւր այր՝ յիսուն յիսուն այր յայրի՝ և կերակրեցի զնոսա հացիւ և ջրով:¹⁴Եւ արդ՝ դու ասե՛ս ցիս. Ե՛րթ և ասա՛ տեառն քում թէ ահա՛ւասիկ

* Յօրինակին. Մտել առ իս յիշա՛: Ոճանք. Յիշատակել զանհրաւութիւնս իմ:

* Այլք. Առ որում ես բնակեմ:

* Ոճանք. ՚ի կոտորել Յեզաբելի... ա՛ն Աբդիու:

* Ոսկան. Եւ Աքաաբ զնաց ընդ ճա՛:

* Ոճանք. Ձճառայ քո... սպանանել զնա:

* Բազումք. Երկիւղած է՛ ՚ի Տեառնէ ման՛:

Եղիա, և սպանանիցէ զիս*։ ¹⁵Եւ ասէ Եղիա. Կենդանի՛ է Տէր զօրութեանց, որոյ կացի առաջի նորա. զի այսօր երևեցայց նմա։ ¹⁶Եւ գնաց Աբդիու ընդ առաջ Աքաաբու՝ և պատմեաց նմա. և ընթացաւ Աքաաբ և գնաց ընդ առաջ Եղիայի։ ¹⁷Եւ եղև իբրև ետես Աքաաբ զԵղիա, ասէ Աքաաբ ցԵղիա. եթէ դո՞ւ իցես խանգարիչն Իսրայէլի։ ¹⁸Եւ ասէ Եղիա. Ես ո՛չ խանգարեմ զԻսրայէլ, այլ դո՞ւ և տուն հօր քո, ՚ի թողուլ ձեր զՏէր Աստուած ձեր՝ և երթալ զհետ Բահաղիմայցն*։ ¹⁹Եւ արդ առաքեա՛ ժողովեա՛ առ իս զամենայն Իսրայէլ ՚ի լեառն Կարմելոս, և զմարգարէսն Բահաղու զչորեքհարիւր և գլխուն, և զմարգարէսն ամօթոյ զչորեքհարիւր և գլխուն, և զմարգարէսն անտառաց զչորեքհարիւր. որ ուտեն զսեղանն Յեզաբելայ։

ԻսԹ ²⁰Եւ առաքեաց Աքաաբ ընդ ամենայն Իսրայէլ, և ժողովեաց զմարգարէսն ՚ի լեառնն Կարմելոս*։ ²¹Եւ մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն. և ասէ ցնոսա Եղիա. Մինչև ցե՞րք կաղայք յերկուս հետս. եթէ Տէր է Աստուած՝ երթայք զհետ նորա, և եթէ Բահաղն իցէ՝ երթայք զհետ նորա։ Եւ ո՛չ ետ ժողովուրդն նմա պատասխանի*։ ²²Եւ ասէ Եղիա ցժողովուրդն. Ե՛ս մնացեալ եմ մարգարէ Տեառն միայն, և մարգարէքն Բահաղու չորք հարիւր և յիսուն, և մարգարէք անտառին՝ չորեքարևր*։ ²³Տացին մեզ երկուս եզինս, և ընտրեսցեն իւրեանց զմին, և յօշեսցեն և դիցեն ՚ի վերայ փայտից, և հուր մի՛ դիցեն. և ես արարից զմեա եզնն, և եղից ՚ի վերայ փայտից, և հուր ո՛չ մատուցից*։ ²⁴Եւ կարդասցիք զանուն աստուածոցն ձերոց, և ես կոչեցից զանուն Տեառն Աստուծոյ իմոյ. և եղիցի աստուած՝ որ լուիցէ հրով՝ նա՛ է Աստուած։ Պատասխանի ետուն ամենայն ժողովուրդն՝ և ասեն. Բարի՛ է բանդ զոր խօսեցար։ ²⁵Եւ ասէ Եղիա ցմարգարէսն ամօթոյ. Ընտրեցէ՛ք դուք ձեզ զուարակ մի, և արարէ՛ք յառաջագոյն, քանզի դուք բազում էք. և կարդացէ՛ք զանուն աստուածոցն ձերոց, և հուր՝ մի՛ դնէք ՚ի վերայ։ ²⁶Եւ առին զզուարակն զոր ետ նոցա, և արարին. և կարդացին զանուն Բահաղու՝ յայգուէ մինչև ցհասարակ օր. և ասէին. Լո՛ւր մեզ Բահաղ՝ լո՛ւր մեզ։ Եւ ո՛չ գոյր բարբառ՝ և ո՛չ ունկնդրութիւն. և ընթանային շուրջ զսեղանովն զոր արարին*։ ²⁷Եւ եղև ՚ի մեջօրէին՝ և այպանեաց զնոսա Եղիա Թեզբացի և ասէ. Մեծածայն կարդացէք զի աստուած է՝ թերևս զքօսանք ինչ իցեն նմա, և միանգամայն թերևս առնիցէ հրաման, կամ թէ ՚ի քո՛ւն իցէ՛ և յառնիցէ։ ²⁸Եւ կարդային մեծածայն, և ցտէին ըստ օրինի իւրեանց սրով և զեղարդեամբք մինչև ցհեղուլ արեան ՚ի վերայ նոցա*։ ²⁹Եւ եղև իբրև մերձեցան յընդերեկսն, և մարգարէանային մինչև ցժամանակ մատուցանելոյ զոհին. և ո՛չ գոյր ձայն։ Եւ խօսեցաւ Եղիա Թեզբացի ընդ մարգարէս գարշելեացն՝ և ասէ. ՚ի բաց կացէք, արդ՝ ես արարից զողջակէզն իմ։ Եւ ՚ի բաց կացին՝ և զնացին։

Թ ³⁰Եւ ասէ Եղիա ցժողովուրդն. Մատերու՛ք առ իս։ Եւ մատեան ամենայն ժողովուրդն առ նա. և ողջացոյց զսեղանն Տեառն զկործանեալ։ ³¹Եւ ա՛ռ Եղիա երկուտասան քար՝ ըստ թւոյ ցեղիցն Իսրայէլի, որպէս խօսեցաւ Տէր ընդ նմա և

* Ոմանք. Ասես ցիս թէ երթ, և ա՛:

* Ոմանք. ՚ի թողուլ ձեզ զՏէր Աստուած:

* Ոմանք. ՚ի լեառնն ՚ի Կարմելոս:

* Յօրինակին պակասէր. Եւ ասէ ցնոսա Եղիա. Մինչև:

* Այլք. Եւ մարգարէք Բահաղու արք չորեք հար՛:

* Այլք. Տացեն մեզ երկուս:

* Ոսկան. Եւ արարին զանուն Բահաղու: Ոմանք. Եւ ո՛չ գոյր բարբառ և ունկնդրութիւն:

* Ոսկան. Յհեղուլ արեան ՚ի վերայ նորա:

ասէ. Իսրայէլ եղիցի անուն քո: ³²Եւ շինեաց զքարինսն յանուն Տեառն, և արար ծով՝ որ տանէր երկուց գրուաց սերմն շուրջ զսեղանով: ³³Եւ եղեզ զշերտսն՝ ՚ի վերայ սեղանոյն զոր արար, և յօշեաց զողջակեզն, և եղեզ ՚ի վերայ շերտիցն, և եղեզ ՚ի վերայ սեղանոյն: ³⁴և ասէ. Առէք ինձ չորս սափորս ջրոյ, և հեղէք ՚ի վերայ ողջակիզիդ և ՚ի վերայ շերտիցդ: Եւ ասէ. Կրկնեցէք: Եւ կրկնեցին: Եւ ասէ. Երեքկնեցէք: Եւ երեքկնեցին: ³⁵Եւ գնայր ջուրն շուրջ զսեղանովն, և զծովն լցին ջրով: ³⁶Եւ եղև ՚ի ժամու մատուցանելոյ պատարագին աղաղակեաց Եղիա յերկինս, և ասէ. Տէր Աստուած Աբրահամու և Սահակայ և Իսրայէլի. այսօր ծանիցեն եթէ դու ես Տէր Աստուած Իսրայէլի, և ես ծառայ քո. և ես արարի զգործս զայսոսիկ: ³⁷Լուր ինձ Տէր, լուր ինձ հրով. և ծանիցէ ժողովուրդս՝ թէ դու ես Տէր Աստուած, և դու դարձուցեր զսիրտ ժողովրդեանս այսորիկ յետս: ³⁸Եւ անկաւ հո՛ւր ՚ի Տեառնէ յերկնից, և եկեր զողջակեզն և զշերտսն, և զհողն և զջուրն որ ՚ի ծովուն լափեաց հուրն*։ ³⁹Իբրև ետես ամենայն ժողովուրդն՝ անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց և ասեն. Արդարև Տէր՝ նա՛ է Աստուած, Տէր նա՛ է Աստուած*։ ⁴⁰Եւ ասէ Եղիա ցժողովուրդն. Կալարուք զմարգարէսն Բահաղու, և մի՛ ոք ապրեսցի ՚ի նոցանէ: Եւ կալան զնոսա. և իջոյց զնոսա Եղիա ՚ի հեղեղատն Կիսունի և կոտորեաց զնոսա անդ*։

ԾԱ ⁴¹Եւ ասէ Եղիա ցԱքաաբ. Ե՛լ կե՛ր և ար՛բ, զի ոտնաձայն անձրևի է: ⁴²Եւ Ե՛լ Աքաաբ ուտել և ըմպել. և Եղիա ել ՚ի գլուխ լերինն Կարմելայ. և խոնարհեցաւ յերկիր, և եդ զերեսս իւր ՚ի մէջ ծնգաց իւրոց. ⁴³և ասէ ցպատանեակն իւր. Ե՛լ և հայեաց ընդ ճանապարհ ծովու: Ել և հայեցաւ պատանեակն, և ասէ. Ո՛չ ինչ է: Եւ ասէ Եղիա. Ա՛ղէ դու դարձիր եւթն անգամ: Եւ դարձաւ պատանեակն եւթն անգամ*։ ⁴⁴Եւ եղև յետ եւթներորդում նուագին, և ահա անպ մի փոքրիկ իբրև զթաթ առն՝ հանէր ջուր. և ասէ. Ե՛լ և ասա՛ ցԱքաաբ. Լծեա՛ զկառս քո և է՛ջ, զուցէ հասանիցէ քեզ անձրև*։ ⁴⁵Եւ եղև մինչ նա՛ այսր և անդր դառնայր՝ երկինք մթացան ամպովք և հողմով, և եղև անձրև՝ մեծ. և լայր և երթայր Աքաաբ յեզրայէլ: ⁴⁶Եւ ձեռն Տեառն եղև ՚ի վերայ Եղիայի, և պնդեաց զմէջ իւր և ընթացաւ առաջի Աքաաբու, մինչև մտանել յեզրայէլ*։

19

Գլուխ ԺԹ

¹Եւ պատմեաց Աքաաբ Յեզաբելայ կնոջ իւրուն զամենայն զոր արար Եղիա. և որպէս կոտորեաց զամենայն մարգարէսն սրով: ²Եւ առաքեաց Յեզաբել հրեշտակս առ Եղիա՝ և ասէ. Եթէ դու Եղիա՛ իցես, և ես Յեզաբել՛. օ՛ն և օ՛ն արասցեն ինձ աստուածքն՝ և օ՛ն և օ՛ն յաւելցեն, եթէ ո՛չ վաղիւ ՚ի սոյն ժամու եղի՛ց զանձն քո իբրև զանձն միոյ՛ ՚ի նոցանէ*։

ԾԲ ³Եւ երկեալ Եղիա՝ և յարեաւ զնաց առանձինն, և եկն ՚ի Բերսաբէլ յերկիրն

* Յայլս պակասի. Գուր ՚ի Տեառնէ յերկնից:

* Ոմանք. Անկանէին ՚ի վերայ երեսաց:

* Յօրինակին պակասէր. Եւ իջոյց զնոսա Եղիա՛ ՚ի հեղէն*։

* Այլք. Եւ ել և հայեցաւ:

* Ոմանք. Իբրև զթաթառն հանէր:

* Ոմանք. Եւ պնդեաց զմէջս իւր:

* Ոմանք. Եւ առաքեաց.. հրեշտակ առ Ե՛:

Յուդայ. և եթող անդ զպատանեակն իւր: ⁴Եւ ինքն գնաց յանապատ աւուր միոյ ճանապարհ, և չոգաւ և նստաւ ընդ բեկկնեալ. և խնդրեաց մահ անձին իւրոյ, և ասէ. Շահտ է արդ Տէր՝ ա՛ռ զոգի իմ յինէն Տէր. զի ո՛չ եմ ես լաւ քան զհարս իմ: ⁵Եւ ՚ի քուն եմուտ և ննջեաց ընդ տնկովն, և ահա ոմն մերձեցաւ ՚ի նա՝ և ասէ. Արի՛ և կե՛ր: ⁶Եւ հայեցաւ Եղիա, և ահա ՚ի սնարից նորա նկանակ հաճարոյ և կուժ ջրոյ, և յարեաւ եկեր և արբ. և դարձեալ ննջեաց*: ⁷Եւ դարձեալ հրեշտակն Տեառն երկրորդ անգամ մերձեցաւ առ նա՝ և ասէ ցնա. Արի կե՛ր, զի բազում է ՚ի քէն և անդր ճանապարհո՞ւ: ⁸Եւ յարեաւ՝ եկեր՝ և արբ, և գնաց զօրութեամբ կերակրոյն այնորիկ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, մինչև ցլեառնն Աստուծոյ ՚ի Քորէք. ⁹և եմուտ անդ յայրն՝ և դադարեաց: Եւ ահա բան Տեառն եղև առ նա՝ և ասէ. Ձի՞՞ ես դու աստ Եղիա: ¹⁰Եւ ասէ Եղիա. Նախանձեցայ զնախանձ Տեառն ամենակալի. զի թողին զքեզ որդիքն Իսրայէլի, զսեղանս քո կործանեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով. ես միայն մնացեալ եմ, և խնդրեմ զանձն իմ առնուլ զսա՞: ¹¹Եւ ասէ. Ելցես՝ դու վաղիւ՝ և կացցես ՚ի լերին անդ առաջի Տեառն: Եւ ահա՛ Տէր անցցէ, և հողմ մեծ ուժգին՝ որ զլերինս քակիցէ և զվնս խորտակիցէ առաջի Տեառն, և ո՛չ ՚ի հողմն Տէր. և յետ հողմոյն շարժումն, և ո՛չ ՚ի շարժմանն Տէր*. ¹²և յետ շարժմանն հուր, և ո՛չ ՚ի հուրն Տէր. և յետ հրոյն ձայն մեղմոյ օդոյ, և անդ Տէր*: ¹³Եւ եղև իբրև լուաւ Եղիա՝ ծածկեաց զերեսս իւր մաշկեկաւն. և ել և եկաց ՚ի ներքոյ այրին. և ահա բարբա՛ռ առ նա և ասէ. Ձի՞՞ ես դու աստ Եղիա: ¹⁴Եւ ասէ Եղիա. Նախանձեցայ՝ զնախանձ Տեառն ամենակալի, զի թողին զուխտ քո որդիքն Իսրայէլի, զսեղանս քո քակտեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով. ես միայն մնացեալ եմ, և խնդրեմ զանձն իմ առնուլ զնա: ¹⁵Եւ ասէ ցնա Տէր. Գնա՛ և դարձի՛ր զճանապարհ քո, և երթիցես զճանապարհ անապատին Դամասկեայ, և երթիցես և օժցես զԱզայէլ ՚ի թագաւոր Ասորոց: ¹⁶Եւ զՅէու որդին Ամեսսեայ ՚ի թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի. և զԵղիսեէ որդի Սափատայ յԱբելմաուլայ՝ օժցես ՚ի մարգարէ՛ փոխանակ քո: ¹⁷Եւ եղիցի՝ զապրեալն ՚ի սրոյ Ազայէլի՝ սպանցէ՛ Յէու. և զապրեալն ՚ի սրոյ Յէուայ՝ սպանցէ՛ Եղիսեէ. ¹⁸և թողցես դու յԻսրայէլէ եւթն հազար արանց զամենայն որոյ ո՛չ իցէ կրկնեալ ծունր Բահաղու, և զամենայն բերան որոյ ո՛չ իցէ պագեալ զնա՞: ¹⁹Եւ գնաց անտի, և եգիտ զԵղիսեէ որդի Սափատայ, և նա վարէ՛ր երկոտասան եզամբք, և զոյգք զոյգք եզանց առաջի նորա, և ինքն ՚ի վերայ երկոտասանիցն. և եհաս Եղիա առ նա, և ընկէ՛ց զմաշկեակն իւր ՚ի վերայ նորա. ²⁰և եթող Եղիսեէ զեզինսն, և ընթացաւ զհետ Եղիայի, և ասէ. Համբուրեցի՛ց զհայր իմ և զմայր իմ, և եկից զկնի քո: Եւ ասէ ցնա. Ե՛րթ՝ դարձի՛ր անդրէն. զի՞նչ առնելոց էր՝ արարի՛ քեզ*: ²¹Եւ դարձաւ ՚ի նմանէ. և ա՛ռ զգոյգս զոյգս եզանցն, և եգէն. և գործեօք եզանցն հասոյց զնոսա, և ետ ժողովրդեանն և կերան, և յարեաւ գնաց զհետ Եղիայի, և պաշտէր զնա՞:

* *Ոմանք.* Նկանակ հաճարի և կուժ... և դարձաւ ննջեաց:

* *Այլք.* Եւ դարձաւ հրեշտակն:

* *Այլք.* Չանձն իմ առնուլ զնա:

* *Ոմանք.* Որ զլերինս քակտիցէ:

* *Յայլս պակասի.* Չայն մեղմոյ օդոյ, և անդ Տէր:

* *Ոսկան.* Եւ թողից ինձ յԻսրայէլէ եօ՞:

* *Յայլս պակասի.* Ձի՛նչ առնելոց էր՝ արարի քեզ:

* *Այլք.* Եւ յարեաւ և գնաց զհետ:

Գլուխ Ի

ԾԳ ¹Եւ որդի Ադերայ՝ արքայ Ասորոց ժողովեաց՝ զամենայն զօրս իւր, և ել և նստաւ զՍամարեաւ, և երեսուն և երկու թագաւորք ընդ նմա, և ամենայն երիվարք և կառք ելին և նստան զՍամարեաւ, և տային պատերազմ ընդ նմա: ²Եւ առաքեաց հրեշտակս առ Աքաաբ արքայ Իսրայելի՝ ի քաղաքն, ³և ասէ ցնա. Այսպէս ասէ որդի Ադերայ. Արծաթ քո և ոսկի քո իմ է. և կանայք քո և որդիք քո գեղեցիկք՝ իմ են: ⁴Պատասխանի ետ արքայն Իսրայելի և ասէ. Որպէս խօսեցար տէր իմ արքայ, քո՛ եմ ես և ամենայն ինչ իմ: ⁵Եւ դարձան հրեշտակքն՝ և ասեն. Այսպէս ասէ որդի Ադերայ. Ես յղեցի զի զարծաթ քո և զոսկի քո՝ և զկանայս քո և զորդիս քո ցիս տացես*. ⁶զի վաղիւ՝ ի սոյն ժամու առաքեցից զծառայս իմ, և յուզեցեն զտուն քո և զտուն ծառայից քոց, և եղիցին ցանկալիք՝ ասաց նոցա, յոր արկանիցեն զծէռս իւրեանց՝ առցեն*: ⁷Եւ կոչեաց արքայն Իսրայելի զամենայն ծերակոյտս երկրին և ասէ. Գիտասջիք և տեսջիք՝ զի չարիս իմն խնդրէ նա, զի առաքեաց առ իս զուստերաց իմոց և զդստերաց իմոց. զարծաթ իմ և զոսկի իմ ո՛չ արգելի ՚ի նմանէ*: ⁸Եւ ասեն ցնա ծերքն՝ և ամենայն ժողովուրդն. Մի՛ լսեր և մի՛ յանձն առնուր*: ⁹Եւ ասէ ցիրեշտակս որդւոյն Ադերայ. Ասացէք ցտերն ձեր ցարքայ. Չամենայն ինչ զոր առաքեցեր առ ծառայ քո յառաջնուն նուազին՝ արարից, բայց զայդ բան ո՛չ կարեմ առնել: Եւ գնացին արքն՝ և դարձուցին նմա պատասխանի: ¹⁰Եւ առաքեաց առ նա որդին Ադերայ՝ և ասէ. Օն և օն արասցեն ինձ դիրքն և օն և օն յաւելցեն, եթէ բաւեսցէ հող Սամարեայ աղիւսովք հանդերձ, ամենայն զօրականի հետևակաց իմոց: ¹¹Եւ պատասխանի ետ արքայն Իսրայելի և ասէ. Շատ է արդ՝ մի՛ պարծեսցի կորն իբրև զուղիղն: ¹²Եւ եղև իբրև պատասխանի ետ նմա զբանս զայս. և ինքն ՚ի գինւոջ էր, և ամենայն թագաւորք որ ընդ նմա ՚ի խորանս. և ասէ ցծառայս իւր. Շինեցէք պատնէշ: Եւ եղին պատնէշ շուրջ զքաղաքաւն: ¹³Եւ ահա մարգարէ ոմն մատեաւ առ Աքաաբ արքայ Իսրայելի՝ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Եթէ տեսանիցես՝ զայն ամբոխ մեծ, ահա ես մատնեցից զնոսա այսօր ՚ի ձեռս քո. և գիտասցես՝ թէ ես եմ Տէր: ¹⁴Եւ ասէ Աքաաբ. Ի՞նչ: Եւ ասէ. Այսպէս ասէ Տէր. Մանկուով իշխանաց գաւառաց: Եւ ասէ Աքաաբ. Ո՞նախ գրգռեսցէ զպատերազմն: Եւ ասէ. Դո՛ւ: ¹⁵Եւ հանդէս արար ծառայից իշխանաց գաւառաց, և եղեն երկերիւր և երեսուն. և ապա հանդէս արար ամենայն ժողովրդեանն. և ամենայն որդւոց զօրութեան եւթն հազար արանց*. ¹⁶և ելանէր զմիջօրէիւ. և որդին Ադերայ ընդ գինի՝ մտեալ էր և արբեալ ՚ի Սոկքով, ինքն և երեսուն և երկու թագաւորքն օգնականք նորա: ¹⁷Եւ ելին նախ մանկունք իշխանաց գաւառացն. և առաքեցին առ որդին Ադերայ, և պատմեցին նմա և ասեն. Ա՛րք ելին ՚ի Սամարեայ: ¹⁸Եւ ասէ ցնոսա. Եթէ ՚ի խաղաղութիւն ելանիցեն՝ կալջիք զնոսա կենդանիս, և եթէ ՚ի պատերազմ ելանիցեն՝ կալջիք զնոսա կենդանիս: ¹⁹Եւ ելին ՚ի քաղաքէն մանկտի իշխանաց գաւառացն, և զօրն զկնի նոցա. ²⁰և

* Այլք. Եւ ամենայն ինչ իմ:

* Յայլս պակասի. Եւ զկանայս քո և զորդիս քո ցիս տա՛. ուր ոմանք. յիս տացես:

* Ոմանք. Վաղիւ ՚ի սոյն ժամ առաքե՛... և զտունս ծառայից:

* Այլք. Եւ կոչեաց արքայն Իսրայելի:

* Օրինակ մի. Եւ ասեն ցնա ծերք իմ և:

* Ոմանք. Որդւոց զօրութեանց:

եհար իւրաքանչիւրոք որում դիպեցաւ. և փախեան Ասորիքն, և հալածեաց զնոսա Իսրայէլ. և ապրեցաւ որդին Ադերայ՝ արքայ՝ Ասորոց հեծեալ ձիով՝ հանդերձ երիւք ոմամբք հեծելովք: ²¹Եւ ել արքայն Իսրայէլի, և ա՛ռ զերիվարս և զկառս, և եհար յԱսորոց հարուածս մեծամեծս: ²²Եւ մատեաւ մարգարէն առ արքայ Իսրայէլի, և ասէ ցնա. Ջօրացի՛ր և գիտա՛, և տե՛ս զինչ գործեսցես. զի ՚ի դարձի՛ տարուոյս այսորիկ որդի Ադերայ արքայ Ասորոց ելանելոց է ՚ի վերայ քո՛: ²³Եւ ծառայք արքային Ասորոց ասեն ցնա. Աստուած լերանց է Աստուածն Իսրայէլի, և ո՛չ Աստուած դաշտաց. վասն այնորիկ յաղթահարեցին զմեզ. եթէ տայցենք ընդ նոսա պատերազմ ՚ի դիւրի՝ յաղթենք նոցա՛: ²⁴Եւ զայն բան արասցես. ՚ի բա՛ց արա զթագաւորսն յիւրաքանչիւր տեղուջէ, և դի՛ր ընդ նոսա նախարարս՝. ²⁵և փոխանակեսցուք քեզ զօրս ընդ զօրացն որ անկան ՚ի քէն, և երիվարս ընդ երիվարացն, և կառս ընդ կառացն. և տացուք ընդ նոսա պատերազմ ՚ի դիւրոջ՝ և յաղթեսցուք նոցա: Եւ անսաց բարբառոյ նոցա, և արար այնպէս:

ԾԴ ²⁶Եւ եղև ՚ի դառնալ տարուոյն, հանդէ՛ս արար որդին Ադերայ՝ Ասորոց. և ել յԱփեկայ ՚ի պատերազմ ընդ Իսրայէլի՛: ²⁷Եւ որդիքն Իսրայէլի արարին հանդէս՝ և երկզնդեցան և հասին յառաջս նոցա. և ճակատեցան որդիքն Իսրայէլի ընդդէմ Ասորոցն իբրև երկու երամակք այծից. և Ասորիքն լցին զերկիրն: ²⁸Եւ մատեաւ այրն Աստուծոյ՝ և ասէ ցարքայն Իսրայէլի. Այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի ասացին Ասորիքն թէ Աստուած լերանց է Տէր Աստուած Իսրայէլի՝ և ո՛չ Աստուած դաշտաց. նա՛ տացէ զզօրն զայն զմեծ ՚ի ձեռս քո, և գիտասցես թէ ե՛ս եմ Տէր՛: ²⁹Եւ բանակեցան նոքա ընդդէմ սոցա զելթն օր. և եղև յաւուրն ութերորդի ընդխառնեցաւ պատերազմն. և եհար Իսրայէլ յԱսորոցն հարիւր հազար հետևակաց ՚ի միում աւուր՝. ³⁰և մնացեալքն փախեան յԱփեկայ ՚ի քաղաքն իւրեանց. և անկաւ պարիսպն ՚ի վերայ քսան և եւթն հազար արանց մնացելոց: Եւ որդին Ադերայ փախեաւ և եմուտ ՚ի տուն իւր սենեակ ՚ի սենեկէ: ³¹Եւ ասեն ցնա ծառայք իւր. Ահաւասիկ գիտենք զի թագաւորք տանն Իսրայէլի թագաւորք ողորմութեան են, արկցուք քուրծս զմիջովք մերովք. և չուանս ՚ի գլուխս մեր, և ելցուք առ արքայն Իսրայէլի. թերևս ապրեցուցէ զանձինս մեր: ³²Եւ զգեցան քուրծս ՚ի մէջս իւրեանց, և եղին չուանս ՚ի գլուխս իւրեանց. և ասեն ցարքայն Իսրայէլի. Ծառայ քո որդի Ադերայ ասէ. Կեցցէ՞ անձն իմ: Եւ ասէ. Եթէ տակաւին կենդանի իցէ՛ եղբայր իմ է՛: ³³Եւ արքն հմայեցին՝ և նուիրեցին՝ և քաղեցին զբանսն ՚ի բերանոյ նորա. և ասեն. Եղբայր քո որդի Ադերայ ա՛ստ է: Եւ ասէ. Մտէ՛ք՝ և ածէ՛ք զնա: Եւ ել առ նա որդին Ադերայ. և հանին զնա առ նա ՚ի կառսն՛: ³⁴Եւ ասէ ցնա. Ջքաղաքսն զոր ա՛ռ հայր իմ ՚ի հօրէ քումմէ՛ դարձուցի՛ց առ քեզ, և հանցես քեզ հարկս ՚ի Դամասկոս, որպէս եդ հայր իմ ՚ի Սամարիայ: Եւ ասէ. Եւ ես արձակեցի՛ց զքեզ ուխտիւ: Եւ եդ ընդ նմա ուխտ, և արձակեաց զնա:

* Ոմանք. Եւ գիտեա՛ և տե՛ս:

* Ոմանք. Թէ տացուք ընդ նոսա պա՛:

* Այլք. Եւ դի՛ր ընդ նոցա նախա՛:

* Ոմանք. Եւ ել յԱփեկայ պատերազմել ընդ Իսրայէլի:

* Ոմանք. Եւ գիտասցես թէ ես եմ Տէր:

* Այլք. Եւ եղև յաւուրն եւթներորդի:

* Ոմանք. Եւ զգեցան քուրծս զմէջս իւրեանց:

* Ոմանք. Եւ եղև առ նա որդին Ադէ՛:

ԾԵ ³⁵Եւ այր մի յորդոց մարգարէիցն ասէ ցընկեր իւր բանիւ Տեառն. Յայր զիս: Եւ ո՛չ կամեցաւ այրն հարկանել զնա: ³⁶Եւ ասէ ցնա. Փոխանակ զի ո՛չ լուար ձայնի Տեառն, ահա իբրև գնասցես յինէն՝ սպանցէ զքեզ առևժ: Եւ իբրև գնաց ՚ի նմանէ, եգիտ զնա առևժ՝ և սպան զնա: ³⁷Եւ եգիտ այլ այր և ասէ. Յայր զիս: Եւ եհար զնա այրն՝ եհար և ջաղջախեսաց: ³⁸Եւ չոգաւ մարգարէն՝ և եկաց առաջի արքայի ՚ի վերայ ճանապարհին, և կապեաց պատանաւ զաչս իւր*: ³⁹Եւ եղև իբրև անցանէր ընդ այն արքայ, և նա աղաղակեաց առ արքայ և ասէ. Ծառայ՝ քո ել ընդ զօրու ՚ի պատերազմի, և ահա այր մի աժ առ իս այր, և ասէ. Պահեա՛ զայրո՞ զայր, ապա թէ գերծանելով զերծցի, եղիցի՛ անձն քո ընդ անձին դորա, կամ տաղանտ մի արծաթոյ կշռեսցես: ⁴⁰Եւ եղև մինչ ծառայ քո այսր և անդր հայեր, և նա չէր ուրեք: Եւ ասէ արքայն Իսրայէլի ցնա. Ահա և այր յինէն կողմանէ դա՛ւ է, սպանե՞ր ուրեմն: ⁴¹Եւ փութացաւ ՚ի բա՛ց առ զպատանն յաչաց իւրոց. և ծանեաւ զնա արքայն Իսրայէլի՝ թէ ՚ի մարգարէից անտի է*: ⁴²Եւ ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի հաներ դու զայրն վնասակար ՚ի ձեռաց իմոց, եղիցի՛ անձն քո փոխանակ անձին նորա, և ժողովուրդ քո փոխանակ ժողովրդեան նորա*: ⁴³Եւ գնաց արքայն Իսրայէլի ՚ի տուն իւր տխրեալ և լքեալ, և եկն ՚ի Սամարիա:

21

Գլուխ ԻԱ

ԾԶ ¹Եւ եղև յետ բանիցս այսոցիկ, այգի՛ մի էր Նաբաւթայ Յեզրայելացոյ, մերձ առ կալ Աքաաբու արքայի Սամարեայ*: ²Եւ խօսեցաւ արքայ ընդ Նաբաւթայ՝ և ասէ. Տո՛ւր ինձ զայգին քո, և եղիցի ինձ ՚ի պարտեզ բանջարոյ, զի մերձ է ՚ի տուն իմ. և տաց քեզ այլ այգի լա՛ւ քան զնա. և եթէ հաճոյ իցէ առաջի քո, տաց քեզ արծաթ զինս այգոյ քոյ. և եղիցի ինձ ՚ի պարտեզ բանջարոյ*: ³Եւ ասէ Նաբաւթ ցարքայ. Քա՛ւ լիցի ինձ յԱստուծոյ իմնէ տա՛լ քեզ զժառանգութիւն հարց իմոց*: ⁴Եւ եկն Աքաաբ ՚ի տուն իւր տխրեալ՝ և լքեալ, վասն բանին զոր խօսեցաւ ընդ նմա Նաբովթ Յեզրայելացի, և ասէ. Ո՛չ տաց քեզ զժառանգութիւն հարց իմոց: Եւ ննջեաց ՚ի մահիճս իւր. և ծածկեաց զերեսս իւր, և ո՛չ եկեր հաց: ⁵Եւ եմուտ առ նա Յեզաբէլ կին իւր՝ և խօսեցաւ ընդ նմա և ասէ. Ձի՞ խռովեալ է ոգի քո՝ և ո՛չ ուտես հաց: ⁶Եւ ասէ ցնա. Ձի խօսեցայ ընդ Նաբաւթայ Յեզրայելացոյ՝ և ասեմ. Տո՛ւր ինձ զայգին քո ընդ արծաթոյ, և եթէ կամիս՝ տա՛ց քեզ այլ այգի փոխանակ նորա. և ասէ. Ո՛չ տաց քեզ զժառանգութիւն հարց իմոց: ⁷Եւ ասէ ցնա Յեզաբէլ կին իւր. Արդ ա՞յրպէս առնիցես զբազաւորութիւնդ ՚ի վերայ Իսրայէլի. արի՛ կեր հաց՝ և սթափեա՛ց. և ե՛ս տաց քեզ զայգին

* Ոմանք. Եւ կապեաց պատանեաւ զա՛:

* Ոմանք. ՚ի մարգարէից անտի է նա:

* Ոմանք. Եւ ժողովուրդ որ փոխանակ ժո՛:

* Օրինակ մի. Մերձ առ կալ արքունիս Աքայա՛: Եւ այլ օրինակ մի. Այգի արքունիս մի էր Նաբովթայ... մերձ առ կալ Աքաա՛: Ոսկան. Մերձ առ արքունիս կալ Աքա՛: Ուր համաձայն մերումս և այլ ոմանք՝ զանունս զառաջինն գրեն Նաբաւթ, և յետոյ՝ Նաբովթ. որպէս և մեք եղաք:

* Ոմանք. Յաճոյ իցէ առաջի աչաց քոց:

* Ոսկան. Քաւ լիցի ինձ ՚ի Տեառնէ իմնէ:

Նաբաւթայ Յեզրայելացոյ*։⁸ Եւ գրեաց հրովարտակ յանուն Աքաաբու, և կնքեաց մատանեաւ նորա. և առաքեաց զհրովարտակն առ ծերս և առ ազատս քաղաքին նորա, որ բնակեալ էին ընդ Նաբովթայ։⁹ Եւ գրեալ էր ՚ի հրովարտակին այսպէս. Պահեցէք պահս, և նստուցէք զՆաբովթ ՚ի գլուխ ժողովրդեանն։¹⁰ Եւ նստուցէք երկուս արս որդիս անօրինաց հանդէպ նորա, և վկայեսցեն զնմանէ՝ և ասասցեն, թէ օրհնեցեր զԱստուած՝ և զարքայ. և հանցեն զնա և քարկոծեսցեն, և մեռցի*։¹¹ Եւ արարին արք քաղաքին նորա ծերք և ազատք որ նստին ՚ի քաղաքին նորա՝ որպէս առաքեաց առ նոսա Յեզաբէլ, զորօրինակ գրեալ էր ՚ի հրովարտակսն։¹² Կարգեցին պահս, և նստուցին զՆաբաւթ ՚ի գլուխ ժողովրդեանն։¹³ Եւ եկին երկու արք՝ որդիք անօրինաց, և նստան հանդէպ նորա. և վկայեցին արքն ապստամբութեան զՆաբովթայ առաջի ամենայն ժողովրդեանն՝ և ասեն, թէ օրհնեաց Նաբովթ զԱստուած՝ և զարքայ. և հանին զնա արտաքոյ քաղաքին, և քարկոծեցին զնա քարամբք՝ և մեռաւ։¹⁴ Եւ առաքեցին առ Յեզաբէլ՝ և ասեն. Քարկոծեցաւ Նաբովթ՝ և մեռաւ։¹⁵ Եւ իբրև լուաւ Յեզաբէլ՝ թէ քարկոծեցաւ Նաբովթ՝ և մեռաւ. ասէ Յեզաբէլ ցԱքաաբ. Արի՛ ժառանգեա՛ զայգին Նաբովթայ Յեզրայելացոյ՝ զոր ո՛չ ետ քեզ ընդ արծաթոյ. զի ո՛չ է Նաբովթ կենդանի՝ քանզի մեռաւ*։¹⁶ Եւ եղև իբրև լուաւ Աքաաբ՝ թէ մեռաւ Նաբովթ Յեզրայելացի, պատառեաց զհանդերձս իւր՝ և քուրձ զգեցաւ։ Եւ եղև յետ այնորիկ, յարեաւ Աքաաբ՝ և էջ յայգին Նաբաւթայ Յեզրայելացոյ ժառանգել*։

Ծէ¹⁷ Եւ խօսեցաւ Տէր ընդ Եղիայի Թեզբացոյ՝ և ասէ. ¹⁸Արի՛ էջ ընդ առաջ Աքաաբու արքայի Իսրայէլի որ ՚ի Սամարիա. զի նա էջ յայգին Նաբովթայ ժառանգել զնա*։¹⁹ Եւ խօսեսցիս ընդ նմա՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր. Որպէս սպաներ և ժառանգեցեր, վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. ՚ի տեղուջ ուր լափեցին շունք և խոզք զարիւն Նաբովթայ, անդ լափեսցեն զարիւն քո, և բոզք լուսացին յարեան քում։²⁰ Եւ ասէ Աքաաբ ցեղիա. Եթէ գտեր զիս թշնամի իմ։ Եւ ասէ. Գտի՛. զի ՚ի զուր հպարտացար գործել չար առաջի Տեառն, առ ՚ի բարկացուցանելոյ զնա։²¹ Ահա ե՛ս ածից ՚ի վերայ քո չարիս. և բորբոքեցից զկնի քո, և սատակեցից զԱքաաբու՝ որ միզիցէ զորմով. և զնեղեալն և զլքեալն յիսրայէլէ*։²² Եւ տաց զտուն քո իբրև զտունն Յերոբովամու որդւոյ Նաբատայ, և իբրև զտունն Բայասայ որդւոյ Աքիայ, վասն բարկութեանցն որովք բարկացուցեր զիս՝ և յանցուցեր զԻսրայէլ*։²³ Եւ առ Յեզաբէլ խօսեցաւ Տէր՝ և ասէ. Շո՛ւնք կերիցեն զնա առ պարսպին Յեզրայելի։²⁴ Զմեռեալ Աքաաբու ՚ի քաղաքի՝ կերիցեն շունք. և զմեռեալ նորա ՚ի դաշտի՝ կերիցեն թռչունք երկնից։²⁵ Սակայն ՚ի զուր մեծամտեաց Աքաաբ առնել չար առաջի Տեառն. որպէս յիմարեցոյց զնա Յեզաբէլ կի՛ն իւր։²⁶ Եւ զարշացաւ յոյժ երթալ զհետ զարշելեացն՝ ըստ ամենայնի զոր արար Ամուրհացին, զոր սատակեաց Տէր

* Ոմանք. Այդպէս առնես զթագաւորութիւնդ։

* Ոմանք. Եւ հանցեն զնա, և սպանցեն և մեռցի։

* Այլք. Եւ եղև իբրև լուաւ։ Ոմանք. Զի չէ Նաբովթ կեն*։

* Ոմանք. Եւ յարեաւ Աքաաբ.. ժառանգել զնա։

* Այլք. Եւ նա էջ յայգի Նաբովթ։

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ որ միզիցէ զոր՝. նշանակի՝ ՚ի մարդոյ մինչև ցշուն։ Եւ ՚ի վերայ՝ եւ զնեղեալն, նշանակի՝ տալ զկապողն և զարծակեալն։

* Ոմանք. Որովք բարկացուցին զիս։

յերեսաց որդւոցն Իսրայէլի*։ ²⁷Եւ վասն բանին զի ստրջացաւ արքայ յերեսաց Տեառն, և երթայր լալով, և պատառեաց զպատմուծան իւր, և զգեցաւ քուրճ ՚ի վերայ մարմնոյ իւրոյ. և պահեաց և զգեցաւ քուրճ յաւուրն յորում սպան զՆաբովթ Յեզրայելացի, և գնայր կորակոր*։ ²⁸Եւ եղև բան Տեառն ՚ի ձեռն ծառայի իւրոյ Եղիայի վասն Աքաաբու, և ասէ Տէր. ²⁹Տեսե՞ր զի ստրջացաւ Աքաաբ յերեսաց իմոց. փոխանակ զի ակնկորեաց յերեսաց իմոց, ո՛չ ածից չարիս յաւուրս նորա. այլ յաւուրս որդւոյ նորա ածի՛ց չարիս ՚ի վերայ տան նորա:

22

Գլուխ ԻԲ

¹Եւ նստան զերեամ, և ո՛չ էր պատերազմ ՚ի մէջ Ասորւոց և ՚ի մէջ Իսրայէլի:

²Եւ եղև յամին երրորդի էջ Յովսափատ արքայ Յուդայ առ արքայ Իսրայէլի: ³Եւ ասէ արքայն Իսրայէլի ցճառայս իւր. Ո՞չ գիտէք եթէ մեր է Ռամաթ Գաղաադ. և մեք լռեալ կամք առնուլ զնա ՚ի ձեռաց արքային Ասորւոց: ⁴Եւ ասէ արքայ Իսրայէլի ցՅովսափատ. Ելցե՞ս ընդ մեզ յՌամաթ Գաղաադու ՚ի պատերազմ: Եւ ասէ Յովսափատ ցարքայն Իսրայէլի. Որպէս ե՛ս, նոյնպէս և դո՛ւ. և որպէս զօ՛րք իմ, զօ՛րք քո. և որպէս երիվարք իմ, երիվարք քո: ⁵Եւ ասէ Յովսափատ արքայ Յուդայ ցարքայն Իսրայէլի. Ադէ, հարցցուք այսօր զՏէր*։ ⁶Եւ ժողովեաց արքայն Իսրայէլի զամենայն մարգարէս իւր իբրև արս չորեքարևր. և ասէ ցնոսա արքայ. Երթա՞յց յՌամաթ Գաղաադու ՚ի պատերազմ, թէ զտեղի՛ կալայց: Եւ ասեն. Ե՛լ, և տալով տացէ՛ Տէր ՚ի ձեռս արքայի*։ ⁷Եւ ասէ Յովսափատ ցարքայն Իսրայէլի. Իցէ՞ որ արդևք աստ մարգարէ Տեառն՝ թէ չիցէ. և հարցցուք զՏէր նովաւ: ⁸Եւ ասէ արքայ Իսրայէլի ցՅովսափատ. Է՛ աստ այր մի հարցանել նովաւ զՏէր, և ես ատեցի զնա, զի ո՛չ խօսի զինէն բարի, այլ չար. Միքիա որդի Յենլեայ: Եւ ասէ Յովսափատ արքայ Յուդայ. Մի՛ ասացէ այդպէս արքայ*։ ⁹Եւ կոչեաց արքայ Իսրայէլի ներքինի մի և ասէ. Վաղվաղակի ա՛ծ այսր զՄիքիէ որդի Յենլեայ: ¹⁰Եւ արքայ Իսրայէլի և Յովսափատ արքայ Յուդայ, նստին այր իւրաքանչիւր յաթոռ իւրում վառեալ ՚ի դրունս Սամարեայ. և ամենայն մարգարէքն մարգարէանային առաջի նորա*։ ¹¹Եւ արար իւր Սեղեկիա որդի Քանանու եղջևս երկաթիս՝ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Սոքօք խեթկեսցես զԱսորիս մինչև սպառեցին: ¹²Եւ ամենայն մարգարէքն մարգարէանային նոյնպէս, և ասէին. Ե՛լ յՌամաթ Գաղաադու, և յաջողեսցիս. և տացէ՛ Տէր ՚ի ձեռս քո զարքայն Ասորւոց:

¹³Եւ հրեշտակն որ չոգաւ կոչել զՄիքա, պատմեաց նմա՝ և ասէ. Ահաւանիկ ամենայն մարգարէքն խօսին իբրև ընդ մի բերան բարի զարքայէ, արդ եղիցի

* Ոմանք. Եւ զարշեցաւ յոյժ:

* Այլք. Եւ վասն բանին զի ստրջա՛:

* Ոմանք. Հարցէ՛ք այսօր զՏէր:

* Յայլս պակասի. Չամենայն մարգարէս իւր իբրև: Յօրինակին. ՅՌամաթ Գաղաադ:

* Ի լուս՛. Այր մի ևս հարցանել, համաձայն ոմանց ՚ի բնաբ՛: Ուր Ոսկան. այր մի

Աստուծոյ հար՛: Ոմանք. Միքա որդի Յենլայ:

* Այլք. Մարգարէանային առաջի նոցա:

բան քո իբրև զմիոյ՝ ՚ի նոցանէն, և խօսեաց բարի*։¹⁴ Եւ ասէ Միքա. Կենդանի՛ է Տէր, եթէ ո՛չ գոր ինչ ասասցէ ցիս Տէր, զայն խօսեցայց։¹⁵ Եւ եկն առ արքայ։ Եւ ասէ ցնա արքայ. Միքիա, ելի՞ց յՌամաթ Գաղաադու ՚ի պատերազմ, եթէ զտեղի կալայց։ Եւ ասէ. Ե՛լ և յաջողեսցիս, և տացէ Տէր ՚ի ձեռս արքայի։¹⁶ Եւ ասէ ցնա արքայ. Դարձեալ կրկին երդմնեցուցեալ զքեզ, զի խօսեսցիս ընդ իս ճշմարտութեամբ յանուն Տեառն։¹⁷ Եւ ասէ. Ո՛չ այդպէս է. Տեսի զամենայն Իսրայէլ ցրուեալ ընդ լեռինս իբրև զհօտ՝ որոյ ո՛չ գուցէ հովիւ. և ասէ Տէր. Ո՛չ գոն դոցա տեարք, դարձցին իւրաքանչիւր ՚ի տուն իւր խաղաղութեամբ*։¹⁸ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ արքայ Յուդայ. Ո՞չ ասացի քեզ թէ ո՛չ մարգարեանայ նա ինձ բարի, բայց թէ չար։¹⁹ Եւ ասէ Միքեա. Ո՛չ այդպէս. ո՛չ ես ինչ, այլ լուր զպատգամ Տեառն. ո՛չ ապաքէն տեսի զՏէր Աստուած Իսրայէլի նստեալ ՚ի վերայ աթոռոյ իւրոյ, և ամենայն զօրք երկնից կային շուրջ զնովաւ յաջմէ և յահեկէ*։²⁰ Եւ ասէ Տէր. Ո՞ պատրեսցէ զԱքաաբ արքայ Իսրայէլի, և ելցէ անկցի յՌամաթ Գաղաադու. և ասէ ցՏէր ոմն այսպէս, և ոմն այնպէս*։²¹ Եւ ել ոգի, և եկաց առաջի Տեառն՝ և ասէ. Ես պատրեցից զնա։ Եւ ասէ Տէր. Ի՞նչ*։²² Եւ ասէ. Ելի՞ց և եղէց ոգի սուտ ՚ի բերան ամենայն մարգարեից նորա։ Եւ ասէ. Պատրեսցես և կարասցես, ե՛լ և արա՛ այդպէս։²³ Եւ արդ ահա ետ Տէր ոգի սուտ ՚ի բերան ամենայն մարգարեիցոք քոց այդոցիկ. և Տէր խօսեցաւ ՚ի վերայ քո չարիս։²⁴ Եւ մատեաւ Սեղեկիա որդի Քանանու, և եհար Միքայի զծնօտս նորա, և ասէ. Ո՞ր Յոգի Տեառն է այն, որ անց յինէն և խօսեցաւ ՚ի քեզ։²⁵ Եւ ասէ Միքա. Ահա դու՛ իսկ տեսցես յաւուր յայնմիկ յորում մտանիցես սենեակ ՚ի սենեկէ թաքչել*։²⁶ Եւ ասէ արքայ Իսրայէլի. Կալայք զՄիքիա և տուրք ցամոն քաղաքապետ, և ցՅովսա որդի արքայի,²⁷ և ասասցիք. Այսպէս ասէ արքայ. Դի՛ք զդա ՚ի բանտի, և կերիցէ հաց նեղութեան և ջուր նեղութեան արբցէ, մինչև դարձայց խաղաղութեամբ*։²⁸ Եւ ասէ Միքա. Եթէ դու դառնալով դարձցիս խաղաղութեամբ, ապա ո՛չ խօսեցաւ յիս Տէր. և ասէ. Լուարո՛ւք, զօրքդ ամենեքեան*։²⁹ Եւ ել արքայ Իսրայէլի՝ և Յովսափատ արքայ Յուդայ ընդ նմա յՌամաթ Գաղաադու։³⁰ Եւ ասէ արքայ Իսրայէլի ցՅովսափատ արքայ Յուդայ. Այլակերպեցայց և մտից ՚ի պատերազմ, և դու զգեցիր զիմ հանդերձս։ Եւ այլակերպեցաւ արքայն Իսրայէլի, և եմուտ ՚ի ճակատն։³¹ Եւ արքայն Ասորոց պատուէ՛ր ետ կառապետաց իւրոց և ասէ. Մի՛ մարտնչիցիք ընդ մեծի կամ ընդ փոքու, այլ միայն ընդ արքային Իսրայէլի։³² Եւ եղև իբրև տեսին կառապետքն զՅովսափատ արքայ Յուդայ. և ասեն ցմիմեանս. Թուի թէ սա՛ իցէ արքայն Իսրայէլի։ Եւ պատեցին զնա պատերազմել. և աղաղակեաց Յովսափատ։³³ Եւ եղև իբրև տեսին կառապետքն եթէ չէ՛ նա արքայն Իսրայէլի՝ դարձան ՚ի նմանէ։³⁴ Եւ ձգեաց մի ոմն կորովութեամբ զաղեղն իւր, և եհար զարքայն Իսրայէլի ընդ զրահսն և ընդ թոքառաջսն։ Եւ ասէ ցկառապետն իւր. Դարձո՛ զձեռն քո և հան՛ զիս ՚ի պատերազմէս զի խոցեալ եմ։³⁵ Եւ սաստկացաւ պատերազմն յաւուր

* Ոմանք. Կոչել զՄիքիա... Ահաւասիկ։

* Ոմանք. Դարձցի իւրաքանչիւրոք ՚ի։

* Ոմանք. Ոչ է այդպէս։

* Ոմանք. Եւ ելցէ և անկցի յՌա՛մա՛։ Յայլս պակասի. Եւ ասէ ցՏէր ոմն այս՛։

* Ոմանք. Եւ ասէ ցնա Տէր. Ի՛նչ։

* Ոմանք. Յորժամ մտանիցես սե՛ն։

* Յայլս պակասի. Եւ ջուր նեղութեան արբցէ, մին՛։

* Ոմանք. Լուարո՛ւք զօրք ամենեքեան։

յայնմիկ. և արքայ կայր 'ի վերայ կառացն ընդդէմ Ասորւոցն յայգուէ մինչև ցերեկոյ. և հոսէր արիւնն 'ի վիրէ անտի, և լնոյր զօոց կառացն. և իբրև ընդ երեկս եղև՝ ե՛լ ոգին*։ ³⁶Եւ եկաց քարոզ զօրուն 'ի բանակին՝ ընդ մտանել արևուն՝ և ասէ. Իւրաքանչիւր 'ի քաղաք իւր՝ և յերկիր իւր*, ³⁷զի մեռա՛ւ արքայ։ Եւ եկն 'ի Սամարիա, և թաղեցին զարքայ 'ի Սամարիա։ ³⁸Եւ լուացին զկառսն յաւազանս Սամարեայ. և լիզէին խոզք և շունք զարիւն նորա. և բոզք լուացան յարեանն, ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ։ ³⁹Եւ մնացորդք բանիցն Աքաաբու, և ամենայն ինչ զոր արար. և տունն փղոսկրեայ զոր շինեաց, և ամենայն քաղաքքն զորս արար. ահաւանիկ գրեալ է 'ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։ ⁴⁰Եւ ննջեաց Աքաաբ ընդ հարս իւր, և թագաւորեաց Ոքոզիա որդի նորա ընդ նորա։ ⁴¹Եւ Յովսափատ որդի Ասայի թագաւորեաց 'ի վերայ Յուդայ։

Կ Յամին չորրորդի Աքաաբու արքայի Իսրայէլի. ⁴²թագաւորեաց Յովսափատ. որդի երեսուն և հինգ ամաց էր 'ի թագաւորել իւրուն. և քսան և հինգ ամ թագաւորեաց յերուսաղէմ և անուն մօր նորա Ասուբա դուստր Սաղաղայ*։ ⁴³Եւ գնաց յամենայն ճանապարհս Ասայի հօր իւրոյ, և ո՛չ խտտորեցաւ 'ի նմանէ առնել ուղղութիւն առաջի Տեառն*։ ⁴⁴Բաց 'ի բարձանցն զի ո՛չ եբարձ՝ քանզի տակաւին զոհէր ժողովուրդն, և արկանէր խունկս 'ի վերայ բարձանց։ ⁴⁵Եւ խաղաղութեամբ էր Յովսափատ ընդ արքային Իսրայէլի։ ⁴⁶Եւ մնացորդք բանիցն Յովսափատու, և զօրութիւնք զոր արար, և ո՛րչափ պատերազմեցաւ. ո՛չ աւանիկ գրեալ են 'ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։ ⁴⁷Եւ զաւելորդս նուիրելոցն որ մնացին յաւուրս հօր նորա՝ քաղեաց յերկրէն։ ⁴⁸Եւ թագաւոր ո՛չ զոյր յեղոմ հաստատեալ։ ⁴⁹Եւ արքայ Յովսափատ արար նաւսս Թարսսացիս, երթալ յովփիր զոսկոյ, և ո՛չ գնացին՝ քանզի խորտակեցան նաւքն 'ի Գասիոնգաբեր*։ ⁵⁰Յայնժամ ասէ Ոքոզիա որդի Աքաաբու ցՅովսափատ. Երթիցեն ծառայք քո ընդ ծառայս իմ, և նաւք քո ընդ նա՛ւս իմ. և ո՛չ կամեցաւ Յովսափատ։ ⁵¹Եւ ննջեաց Յովսափատ ընդ հարս իւր, և թաղեցաւ առ հարս իւր 'ի քաղաք Դաւթի հօր իւրոյ. և թագաւորեաց Յովրամ որդի նորա ընդ նորա*։

ԿՎ ⁵²Եւ Ոքոզիա որդի Աքաաբու թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի 'ի Սամարիա. յամին եւթնուտասներորդի Յովսափատայ արքայի Յուդայ. և թագաւորեաց Իսրայէլի ամս երկուս*։ ⁵³Եւ արար չա՛ր առաջի Տեառն. և գնաց զճանապարհս Աքաաբու հօր իւրոյ, և զճանապարհս Յեզաբելայ մօր իւրոյ, և 'ի մեղս տանն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ. ⁵⁴և ծառայեաց Բահաղիմացն, և երկի՛ր եպագ նոցա. և բարկացոյց զՏէր Աստուած Իսրայէլի ըստ ամենայնի եղելոցն յառաջ քան գնա*։

* *Յօրինակին 'ի բնաբանի գրի.* Ընդդէմ Սամարացւոցն յայգ՝: *Իսկ 'ի լուս՝. նշանակի՝* ասորւոցն, *համաձայն այլոց. ըստ որում և մեք եղաք:*

* *Այլք.* Իւրաքանչիւրոք 'ի քաղաք իւր:

* *Ոմանք.* Դուստր Սաղսաղայ. *և ոմանք.* Սաղտաղայ:

* *Ոմանք.* Յամենայն 'ի ճանապարհս Ասայի:

* *Ոմանք.* Արար նաւս Թարսսացի... զի խորտակեցան նաւքն 'ի Գասիոնն Գաբեր:

* *Այլք.* 'ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ:

* *Այլք.* Եւ թագաւորեաց յԻսրայէլի ամս:

* *Բազումք.* Ըստ ամենայն եղելոցն:

Կատարեցաւ Թագաւորութեանց Երրորդ*

ՉՈՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

- ա. Թէ հիւանդացեալ Ոքոզիա Աքաաբեանց առաքեաց հարցանել զճանճիկ վասն կենաց. և եղև առ նա պատգամ մահու ՚ի ձեռն Եղիայի:
- բ. Ձի իջոյց Եղիա հուր և եկեզ գլխուն զօրականսն Ոքոզիա:
- գ. Թէ և զերկրորդ ևս յիսունսն այրեցեալ, էջ ապա ընդ երրորդին և խօսեցաւ ընդ Ոքոզեայ. որ և մեռաւ անորդի ըստ բանի նորին:
- դ. Ձի թագաւորեաց Յովրամ եղբայր Ոքոզեայ ՚ի վերայ Իսրայէլի, յերկրորդ ամին Յովրամայ որդւոյ Յովսափատայ՝ ամս ԲԺ. և արար չարիս: (Եւ զայս զգուշեալ կալ՝ զի կրկնաբանութեամբ իմն է գրեալն:)
- ե. Վերանալն Եղիայի հրեղէն կառօք յերկինս, և զի դարձաւ Եղիսէ յերիքով:
- զ. Բժշկեաց Եղիսէ զմահագործ ջուրն Երիքովի. և անէ՛ծ զմանկտին անօրինաց, և եկն ՚ի Սամարիա:
- է. Վերստին յիշէ զՅովրամ եղբայր Ոքոզեայ զորդին Աքաաբու, և զի հարկատու էր Աքաաբու Մովաբացին:
- ը. Գունարեցաւ Յովրամ Յովսափատ և Եդոմայեցին ՚ի վերայ Մովաբու, և ըստ բանին Եղիսէի առատացեալք ջրովն՝ հարին սաստիկ զՄովաբ, մինչև զոհեաց թագաւորն զորդին, և ՚ի բաց կացին ՚ի նմանէ:
- թ. Բողոք կալաւ կինն այրի առ Եղիսէ, և նա աղօթիւք աճեցոյց զևղն, որով հատոյց զպարտսն:
- ժ. Ձի յաղօթս Եղիսէի տուաւ որդի՝ կնոջն Սոմնացւոյ:
- ժա. Թէ մեռաւ մանուկն, և աղօթիւք յարոյց զնա Եղիսէ:
- ժբ. Ձի վայրի բանջարով ընկալաւ զհերսն:
- ժգ. Ձի սակաւ նկանակօք յագեցոյց զհարկսն բանիւ Աստուծոյ:
- ժդ. Ձի առաքեաց արքայն Ասորոց զՆէեման բորոտ առ արքայն Իսրայէլի սրբել զնա. և նա տարակուսեալ պատառեաց զհանդերձս իւր:
- ժե. Ձի սրբեաց զնա Եղիսէ լուացմամբ ՚ի Յորդանան, և արձակեաց:
- ժզ. Ձի դարձոյց զբորոտութիւն առնն ՚ի Գէզի վասն ազահութեանն:
- ժէ. Ձի վերացոյց փայտիւ զերկաթն ՚ի միջոյ Յորդանանու:
- ժը. Ձի շլացոյց զգօրսն Ասորոց և ա՛ծ ՚ի Սամարիա, ետ կերակրել և արձակեաց:
- ժթ. Իրք մանկակեր կանանցն ՚ի սովի՝ պաշարման Սամարեայ, և զի մարգարեացաւ Եղիսէ վասն փութով առատութեանն:
- ի. Ձի խուճապեալ պաշարիչքն փախեան զհշերի, և ՚ի թողեալ ռոճկացն եղև առատութիւնն:
- իա. Պատուէր ետ Եղիսէ կնոջն Սոմնացւոյ երթալ յերեսաց սովոյն պանդխտանալ յայլազգիս:
- իբ. Ձի յետ եւթն ամի դարձաւ կինն, և դարձոյց ՚ի նա Յովրամ զամենայն գոյսն վասն Եղիսէի:

* Ի վախճանի. յօրինակին՝ Թագաւորութեանց Երրորդն:

իգ. Եկն Եղիսէ՛ ՚ի Դամասկոս, և մարգարէացաւ թագաւորել Ազայելի ըստ բանին Տեառն առ Եղիա:

իդ. Թագաւորեաց Ասորոց Ազայել, և ՚ի Ե ամին Յովրամայ Աքաաբեանց՝ թագաւորէ Յովրամ որդի Յովսափատայ յԵրուսաղէմ, և արար չարիս. և ապստամբեաց ՚ի նմանէ Եդոմայեցին:

իե. Մեռաւ Յովրամ յԵրուսաղէմ. և յերկոտասան ամին Յովրամայ Աքաաբու թագաւորեաց Ոքոզիա որդի Յովրամայ տարի մի յԵրուսաղէմ, և զՅովրամ Աքաաբու խոցեցին զօրքն Ազայելի ՚ի պատերազմի:

իզ. Առաքեաց Եղիսէ մարգարէ մի յԴամաթ Գաղադու, և օ՛ժ զՅէու թագաւոր Իսրայելի ըստ բանին Տեառն առ Եղիա:

իէ. Գումարեցաւ Յէու ՚ի վերայ Յովրամայ Յեզրայել. և սպան զնա ՚ի վիճակին Նաբաւթայ, ընդ նմին և զՈքոզիա թագաւոր Յուդայ:

իը. Կրկնաբանութիւն վասն սպանելոց թագաւորացս:

իթ. Ձի նշաւակեալ մահուամբ խնդրեցաւ ՚ի Յեզաբելայ մօրէն Յովրամայ վրէժն Նաբաւթայ:

լ. Սպանան եւթանասուն որդիքն Աքաաբու, և քառասուն և երկու եղբարքն Ոքոզիայ:

լա. Ձի առաջի որդւոցն Ռաքաբու եհար Յէու և սպառեաց զտունն Աքաաբու:

լբ. Ձի պատրանօք սպան Յէու զքուրմսն Բահադու, և ետ յաղբոցս զԲահադ. այլ յերնջոցն ո՛չ եկաց ՚ի բաց. բայց վասն վրիժուցն զոր խնդրեաց մինչև ՚ի չորս ազգս տուաւ նմա թագաւորել. և զի Ազայել նեղէր զԻսրայել:

լգ. Քսան և ութ ամ թագաւորեաց Յէու, և մեռաւ:

լդ. Գողողիա դուստր Յեզաբելի թագաւորեաց յԵրուսաղէմ ամս եւթն. և զի օ՛ժ Յովիդա քահանայ մեծ զՅովաս թագաւոր Յուդայ:

լե. Ձի սպանաւ Գողողիա, և պատուէր ետ Յովաս վասն կազմութեան սպասուց տաճարին. և զդիմումն Ազայելի յԵրուսաղէմ յետս դարձոյց պատարագօք:

լզ. Ձի սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն:

լէ. Ի քսան և երկու ամին Յովասու թագաւորեաց Յովաքազ որդի Յէուայ. և սաստիկ նեղեալ յԱզայելէ՝ յոյժ աղքատացաւ և մեռաւ:

լը. Յերեսուն և յեւթն ամին Յովասու թագաւորի Յուդայ թագաւորէ Յովաս որդի Յովաքազու Իսրայելի ամս երկուտասան, և յաղթեալ Ամասիայ արքայի Յուդայ՝ եհատ զպարիսպն Երուսաղէմի:

լթ. Մեռաւ Եղիշէ. և յոսկերս նորա հասեալ մեռելոյն՝ յարեաւ:

խ. Ձի խնայեաց Տէր յԻսրայել յերեսաց Ազայելի՝ վասն ուխտին Աբրամնու:

խա. Ձի յետ մահուն Ազայելի ա՛ռ Յովաս զքաղաքսն, զոր առին ՚ի Յովաքազայ հօրէ նորա:

խբ. Յերկրորդ ամին Յովասու արքայի Իսրայելի թագաւորեաց Ամասիա որդի Յովասու ամս ԻԹ յԵրուսաղէմ. սպան զսպանօղս հօր իւրոյ, և եհար զԵդոմ ՚ի ձորն Աղտից տասն հազար:

խգ. Գրգռեաց Ամասիա զՅովաս ՚ի պատերազմ, և պարտեցաւ ՚ի նմանէ. և յետ հնգետասան ամի սպանաւ Ամասիա յիւրոցն:

խդ. Թագաւորեաց Ոզիա յԵրուսաղէմ:

խե. 'Ի հնգետասան ամին Ամասիայ թագաւորեաց Յերոբովամ որդի Յովասու, և զնաց 'ի չարիս, և նուաստացաւ Իսրայէլ. այլ ըստ բանին Յովնանու տակաւին խնայեաց Տէր յԻսրայէլ:

խզ. Մեռաւ Յերոբովամ, և թագաւորեաց Չաքարիա որդի նորա ամս վեց: խէ. 'Ի քսան և եւթն ամի Յերոբովամայ արքայի Իսրայէլի թագաւորեաց Ոգիա ամս յիսուն երկու. և արար բարիս. և էր բորոտեալ. և մեռաւ:

խը. Յերեսուն և եւթն ամին Ոգիայ, թագաւորեաց Իսրայէլի Չաքարիա, որդի Յերոբովամայ, ամիսս վեց, և սպանաւ յիւրոցն, և հատաւ տունն Յէուայ:

խթ. Յերեսուն և ինն ամին Ոգիայ թագաւորեաց Սելլուսն յԻսրայէլ ամիս մի, և սպանաւ յիւրոցն:

ծ. Յերեսուն և ինն ամին Ոգիայ թագաւորեաց Մանայեմ ամս տասն, և եմուտ ընդ հարկաւ Փուայ արքային Ասորեստանեայց:

ծա. 'Ի յիսներորդ (քառասներորդ) ամին Ոգիայ թագաւորեաց Իսրայէլի Փակէէ որդի Մանայեմայ ամս տասն. և սպան զնա Փակէէ որդի Ռոմելայ:

ծբ. 'Ի ԾԲ ամին Ոգիայ թագաւորեաց Իսրայէլի Փակէէ որդի Ռոմելայ ամս քսան: Առ նովաւ գերեաց Թագղաթփաղսար զմասն ինչ Իսրայէլի. և սպան զՓակէէ Ովսէ որդի Ելայ:

ծգ. Յերկրորդ ամին Փակէի թագաւորեաց Յովաթամ որդի Ոգիայ յերուսաղէմ ամս վեշտասան, և մեռաւ:

ծդ. Յեւթնուտասան ամին Փակէի որդւոյ Ռոմելայ թագաւորեաց յերուսաղէմ Աքազ ամս տասն և վեց, և արար չարիս. և ետ ձեռս 'ի Թագղաթփաղսար փրկել զնա 'ի Փակէէ և յՌասոնէ:

ծե. Մեռաւ Աքազ և թագաւորեաց Եզեկիա:

ծզ. Յերկրտասան ամին Աքազու թագաւորեաց Իսրայէլի Ովսէէ որդի Ելայ ամս ինն: Առ նովաւ Սաղմանասար 'ի սպառ գերեաց զԻսրայէլ վասն չարեացն զոր ամբաստանէ յերկար:

ծէ. Ամբաստանէ կրկին ևս զԻսրայէլէ, և պատմէ վասն օտար ազգացն զորս Սաղմանասար բնակեցոյց 'ի Սամարիա. որք առին զօրէնս Աստուծոյ. և ո՛չ թողին զպաշտօնս իւրեանց:

ծը. Պատմութիւն աստուածպաշտութեանն Եզեկիայ, և դարձեալ ամբաստանութիւն զԻսրայէլէ. վասն որոյ գերեցաւն իսկ:

ծթ. Ել Սենեքերիմ 'ի Յրէաստան, և առաքեաց պատգամս գոռոզս առ Եզեկիա:

կ. Չի խնդրեաց արքայ յեսայեայ աղօթել առ Տէր. և յաւել Սենեքերիմ առաքել զՏեառնէ հրովարտակս նախատանաց:

կա. Չի յաղօթս Եսայեայ և Եզեկիայ՝ եհար Տէր զգօրսն Սենեքերիմայ, և ինքն փախուցեալ սպանաւ 'ի յորդոցն:

կբ. Չի վասն բարձրութեան սրտի իւրոյ հիւանդացաւ Եզեկիա 'ի մահ:

կգ. Ելաց Եզեկիա առաջի Տեառն. և լուաւ նմա և ետ նմա նշանակ կենաց զդառնալն յետս արևուն:

կդ. Չի ելին առ նա Բաբելացիքն պատարագօք, և եթէ զի՞նչ խօսեցաւ Եսայի առ Եզեկիա:

կե. Ամբաստանութիւն չարեացն Մանասէի, իսկ գերիլ նորա 'ի Բաբելոն, և անդրէն դառնալն և ապաշխարել, պատմի 'ի գիրս անդ Մնացորդացն:

կզ. Ամբաստանութիւն չարեացն Ամովնայ, և մահ նորին:

կէ. Գովուքիւն աստուածայաշտութեանն Յովսիայ:
կը. Ձի սրբեաց Յովսիա զտաճարն և զաշխարհն բնաւին 'ի կռոց, և
այրեաց զոսկերս քրմացն, և արար զգատիկն:
կթ. Ձի սպանաւ Յովսիա առ Եփրատ գետով 'ի փարաւոնէ:
հ. Թագաւորեաց Յովաքազ որդի Յովսիայ ամս երիս, և հան զնա
Նեքաւով, և տարաւ յԵգիպտոս, որ անդէն մեռաւ:
հա. Եղիակիմ որ և Յովակիմ եղբայր Յովաքազու, ամս տասն. 'ի սորա
երրորդ ամին ել զառաջինն Նաբուքոդոնոսոր, և հնազանդեաց
զՂրէաստան. և տարաւ զԴանիէլ: Եւ 'ի մետասան ամին սորա ել
դարձեալ Նաբուքոդոնոսոր, զեղիակիմ սպան. և զՅեքոնիա
թագաւորեցոյց:
հբ. Թագաւորեաց Յեքոնիա որ և Յովակիմ ամիսս երիս, և արար չարիս:
հգ. Ել երրորդ անգամ Նաբուքոդոնոսոր, և գերի վարեաց զՅեքոնիա որ և
Յովակիմ. և զԵզեկիէլ ընդ նմա. և թագաւորեցոյց զՍեդեկիա որդի
Յովսիայ: Ել չորրորդ անգամ՝ ա՛ռ զԵրուսաղէմ, կուրացոյց զՍեդեկիա, և
վարեաց 'ի Բաբելոն:
հդ. Ձի այրեաց Նաբուզարդան զտաճարն և զԵրուսաղէմ, և զկահն
ամենայն բարձին 'ի Բաբելոն:
հե. Ձի կացոյց Նաբուքոդոնոսոր զԳողոզիա 'ի վերայ մնացորդաց
երկրին:
հզ. Ժողովեցան մնացեալքն առ Գողոզիա. և եկն Իսմայէլ Նաթանանց և
սպան զԳողոզիա, և որ մնացին չոգան մտին յԵգիպտոս:
հէ. Ձի յերեսներորդ եւթներորդ ամի գերութեանն Յովակիմայ որ և
Յեքոնիա, որդի Եղիակիմայ, զուարթացոյց զնա Իլմարուդաք: Սա ծնաւ
զՍաղաթիէլ. և նա զՉորաբաբէլ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ՉՈՐՐՈՐԴ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ նշկահեա՛ց Մովաբ զԻսրայէլ յետ մեռանելոյն Աքաաբու: ²Եւ անկաւ
Ոքոզիա 'ի վանդակապատէ վերնատանն իւրոյ որ 'ի Սամարիա և խօթացաւ. և
առաքեաց հրեշտակս, և ասէ ցնոսա. Երթա՛յք հարցէ՛ք 'ի Բահաղ զճանճիկ
աստուածն Ակկարոնի, թէ ապրիցե՞մ ես յախտէ աստի յայսմանէ: Եւ գնացին
հարցանել 'ի նմանէ՛: ³Եւ հրեշտակ Տեառն կոչեաց զԵղիա Թեզբացի և ասէ. Արի՛
ե՛րթ ընդ առաջ հրեշտակացն Ոքոզեայ արքայի՛ Սամարեայ, և ասասցես ցնոսա.
Առ 'ի չգոյէ՞ Աստուծոյ 'ի մէջ Իսրայէլի երթայք դուք հարցանել 'ի Բահաղ
զճանճիկ աստուածն Ակկարոնի*. ⁴ո՛չ այդպէս. այլ ա՛յսպէս ասէ Տէր. 'Ի մահիճսդ
յոր ելեր՝ ո՛չ իջցես այտի, այլ 'ի դմին՝ մահո՛ւ մեռցիս: Եւ չոգա՛ւ Եղիա, և ասէ
ցնոսա*: ⁵Եւ դարձան հրեշտակքն առ նա. և ասէ ցնոսա. Ձի՞՞ է զի դարձարուք:
⁶Եւ ասեն ցնա. Ա՛յր մի ել ընդ առաջ մեր, և ասէ ցնեզ. Երթա՛յք դարձարուք առ

* Ոճանք. Իւրոյ որ 'ի Սամարիայ... 'ի Բահաղ զճանճիկ... եթէ ապրիցիմ:

* Ոճանք. Առ 'ի չգոյէ՞ Աստուած 'ի մէջ Իսրայէլի:

* Ոճանք. Եւ ո՛չ այդպէս: 'Ի լուս'. 'Ի մահիճս քո. համաձայն այլոց 'ի բնաբ՛:

արքայն՝ որ առաքեացն զձեզ, և ասասցիք ցնա. այսպէս ասէ Տէր. Առ ՚ի չգոյէ՞ Աստուծոյ ՚ի մէջ Իսրայէլի՝ երթաս հարցանել ՚ի Բահաղ զճանճիկ աստուածն Ակկարոնի. ո՛չ այդպէս. այլ ՚ի մահիճսդ յոր ելեր՝ ո՛չ իջցես այտի, այլ մահո՛ւ մեռցիս*։ ⁷Եւ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Ձի՞նչ նշանք են առնն որ ել ընդ առաջ ձեր, և խօսեցաւ ընդ ձեզ զբանսդ զայդոսիկ։ ⁸Եւ ասեն ցնա. Այր թաւարծի՛, և գօտի մաշկեղէն ածեալ ընդ մէջ իւր։ Եւ ասէ. Եղիա՛ Թեզբացի՛ է այն՝։

Բ ⁹Եւ առաքեաց առ նա իշխան յիսնապետ, և գլխունս նորա. և ել և եկն առ նա. և Եղիա նստէր ՚ի վերայ զլիսոյ լերինն. և խօսեցաւ յիսնապետն՝ և ասէ ցնա. Այրդ Աստուծոյ, արքայ կոչեաց զքեզ՝ էջ այտի։ ¹⁰Պատասխանի ետ Եղիա և ասէ ցլխնապետն. Եթէ այր Աստուծոյ իցեն՝ ես՝ իջցէ՛ հուր յերկնից՝ և կերիցէ զքեզ և գլխունսդ քո։ Եւ էջ հուր յերկնից, և եկեր զնա և գլխունս նորա*։

Գ ¹¹Եւ յաւելլ արքայ առաքել առ նա այլ յիսնապետ և գլխունս նորա. և ել և խօսեցաւ յիսնապետն՝ և ասէ ցնա. Այրդ Աստուծոյ, այսպէս ասէ արքայ. Էջ այտի վաղվադակի։ ¹²Պատասխանի ետ Եղիա՝ և ասէ ցնա. Եթէ այր Աստուծոյ իցեն, իջցէ՛ հուր յերկնից և կերիցէ զքեզ և գլխունս քո։ Եւ էջ հուր Աստուծոյ յերկնից՝ և եկեր զնա և գլխունս նորա*։ ¹³Եւ յաւելլ ևս արքայ առաքել յիսնապետ երրորդ և գլխունս նորա. և ել եկն առ նա յիսնապետն երրորդ, և անկաւ ՚ի վերայ ծնգաց իւրոց առաջի Եղիայի՝ և աղաչեաց զնա, և խօսեցաւ ընդ նմա և ասէ. Այրդ Աստուծոյ, պատուեսցի՛ անձն իմ, և անձինք ծառայից քոց այսոցիկ յիսնիցս առաջի աչաց քոց*։ ¹⁴Գի ահա անկաւ հուր յերկնից, և եկեր զերկուս յիսնապետսն զառաջինսն, և գլխունս նոցա. և արդ՝ պատուեսցին անձինք ծառայից քոց յաչս քո։ ¹⁵Եւ խօսեցաւ հրեշտակ Տեառն ընդ Եղիայ և ասէ. Էջ ընդ դմա, և մի՛ երկնչիցիս յերեսաց նոցա։ Յարեաւ Եղիա, և էջ ընդ նմա առ արքայ*։ ¹⁶Եւ խօսեցաւ ընդ նմա՝ և ասէ. Փոխանակ զի առաքեցեր հրեշտակս հարցանել ՚ի Բահաղ զճանճիկ աստուածն Ակկարոնի #. որպէս առ ՚ի չգոյէ՞ Աստուծոյ ՚ի մէջ Իսրայէլի հարցանել ՚ի նմանէ. ո՛չ այդպէս, այլ ՚ի մահիճսդ յոր ելեր՝ մի՛ իջցես այտի, այլ մահո՛ւ մեռցիս*։ ¹⁷Եւ մեռաւ ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ Եղիա։

Դ Եւ Յովրամ որդի Աքաաբու թագաւորէ՛ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա անս երկուտասան, յամի ութուտասներորդի Յովսափատայ արքայի Յուդայ. և արար չա՛ր առաջի Տեառն, բայց ո՛չ իբրև զեղբարս իւր, և ո՛չ իբրև զմայր իւր։ Եւ եբարձ զարձանսն Բահաղու զոր արար հայր նորա՝ և խորտակեաց զնոսա. սակայն ՚ի մեղս տանն Յերոբովամայ որ յանցոյցն զԻսրայէլ՝ յարեցաւ, և ո՛չ մեկնեցաւ ՚ի նոցանէն. և սրտմտեցաւ բարկութեամբ Տէր ՚ի վերայ տան Աքաաբու։ Եւ թագաւորեաց Յովրամ եղբայր նորա ընդ նորա, յամի երկրորդի Յովրամայ արքայի Յուդայ՝ որդւոյ Յովսափատու, զի ո՛չ գոյր նորա որդի*։ ¹⁸Եւ

* *Ոմանք.* Առ ՚ի չգոյէ՞ Աստուած ՚ի մէջ Իսրայէլի։ *Այլք.* Այր ել ընդ առաջ։ *Ոմանք.* Ոչ այդպէս է. այլ ՚ի մահիճսդ։

* *Ոմանք.* Այր թաւ, և գօտի մաշկ։

* *Օրինակ մի.* Եւ կերիցէ զքեզ և զծառայսդ քո... և եկեր զնա և զծառայս նորա։

* *Ոմանք.* Եւ այրեսցէ զքեզ և գլխունսդ քո։

* *Բազումք.* Եւ անձն ծառայից քոց այսո՞ւ։

* *Այլք.* Ընդ Եղիայի և ասէ. էջ ընդ նմա... և յարեաւ Եղիա։

* *Այլք.* Ի մէջ Իսրայէլի հարցանել։

* *Ի բազումս պակասի.* Ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա... զոր արար հայր նորա. և խորտակեաց զնոսա։ *Ոմանք.* Յամի երրորդի Յովրամ։ *Յօրինակին պակասէր.* Արքայի

մնացորդք բանիցն Որոգեայ և ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի:

2

Գլուխ Բ

Ե ¹Եւ եղև ՚ի վերացուցանել Տեառն զեղիայ շարժամբն յերկինս. և գնացին Եղիա և Եղիսեէ ՚ի Գաղզաղա*։ ²Եւ ասէ Եղիա ցեղիսեէ. Նիստ դու աստ՝ զի Տէր առաքեաց զիս ՚ի Բեթէլ: Եւ ասէ Եղիսեէ. Կենդանի՛ է Տէր, և կենդանի՛ է անձն քո՝ թէ թողից զքեզ: Եւ եկին ՚ի Բեթէլ: ³Եւ ելին որդիք մարգարէիցն որ ՚ի Բեթէլ՝ առ Եղիսեէ, և ասեն ցնա, թէ գիտիցե՞ս զի այսօր առնու՛ Տէր զտէրդ ՚ի գլխոյ քումնէ: Եւ ասէ. Գիտե՛մ և ես, լո՛ւռ լերուք: ⁴Եւ ասէ Եղիա ցեղիսեէ. Նիստ դու աստ՝ զի Տէր առաքեաց զիս յերեքով: Եւ ասէ. Կենդանի՛ է Տէր, և կենդանի՛ է անձն քո՝ թէ թողից զքեզ: Եւ եկին յերեքով: ⁵Եւ մատեան որդիք մարգարէիցն որ յերեքով՝ առ Եղիսեէ, և ասեն ցնա, եթէ գիտիցե՞ս զի այսօր առնու՛ Տէր զտէրդ ՚ի գլխոյ քումնէ: Եւ ասէ. Գիտե՛մ և ես՝ լո՛ւռ լերուք: ⁶Եւ ասէ ցնա Եղիա. Նիստ դու աստ, զի Տէր առաքեաց զիս ՚ի Յորդանան: Եւ ասէ Եղիսեէ. Կենդանի՛ է Տէր, և կենդանի՛ է անձն քո՝ թէ թողից զքեզ: Եւ գնացին երկոքեան. ⁷և յիսուն այր յորդուոց մարգարէիցն, և կացին ՚ի հանդիպոջ ՚ի բացեայ. և երկոքեան կացին յեզերն Յորդանանու՛: ⁸Եւ ա՛ռ Եղիա զմաշկեակն իւր, ծալեաց և եհար զջուրն. և բաժանեցաւ ջուրն յա՛յսկոյս և յայնկոյս, և անցին երկոքեան ընդ ցամաք: ⁹Եւ եղև ընդ անցանելն նոցա, ասէ Եղիա ցեղիսեէ. Խնդրեա՛ զինչ արարից քեզ, մինչչև՛ վերացեալ իցեն ՚ի քէն: Եւ ասէ Եղիսեէ. Եղիցի կրկին ոգիդ քո ՚ի վերայ իմ՛: ¹⁰Եւ ասէ Եղիա. Դժուարինս խնդրեցեր, բայց եթէ տեսանիցես զիս յամբառնալն իմում ՚ի քէն՝ եղիցի՛ այնպէս, ապա թէ ոչ՝ մի՛ եղիցի: ¹¹Եւ եղև մինչդեռ գնային նոքա, և խօսէին երթային: Եւ ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք, և անջրպետեցին ՚ի մէջ երկոցունց. և վերացաւ Եղիա շարժամբ յերկինս՛: ¹²Եւ Եղիսեէ հայէ՛ր և աղաղակէր. Զայ՛ր, հայ՛ր, կառքդ Իսրայէլի և հեծեալքդ նորա: Եւ այլ ո՛չ ևս ետես զնա. և բուռն եհար զհանդերձից իւրոց, և պատառեաց յերկուս ծուէնս: ¹³Եւ ա՛ռ Եղիսեէ զմաշկեակն Եղիայի զոր ընկէ՛ց ՚ի վերայ նորա: Եւ դարձաւ Եղիսեէ, և եկաց առ եզերն Յորդանանու. ¹⁴և ա՛ռ զմաշկեակն Եղիայի զոր ընկէց ՚ի վերայ նորա, և եհար զջուրսն՝ և ասէ. Ո՞ւր ես Տէր Աստուած Եղիայի ափսոսով: Եւ եհար զջուրսն, և բաժանեցան յա՛յսկոյս և յայնկոյս, և անց Եղիսեէ՛: ¹⁵Իբրև տեսին որդիք մարգարէիցն որ յերեքով ՚ի հանդիպոյն, և ասեն. Զանգեա՛ւ ոգին Եղիայի ՚ի վերայ Եղիսէի. և եկին ընդ առաջ նորա, և երկիր պագին նմա ՚ի վերայ երկրի: ¹⁶Եւ ասեն. Ահաւասիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութեան արք յիսուն. երթիցեն և խնդրեսցեն զտէրն քո, զուցէ ա՛ռ զնա Զոգի Տեառն, և ընկէց զնա առ Յորդանանու, կամ ՚ի վերայ միոյ ուրուք ՚ի լերանց, կամ ՚ի վերայ միոյ ուրուք ՚ի բլրոց: Եւ ասէ Եղիսեէ. Մի՛

Յուդայ որդւոյ Յովսափատու, զի ո՛չ գոյր նորա որդի:

* *Բազումք.* Շարժամբ յերկինս, և գնաց Եղիա:

* *Ոմանք.* Եւ երկոքին կացին յեզերն Յոր՛:

* *Ոմանք.* Ասէ Եղիա. Եղիսեէ խնդ՛: վերացեալ եմ ՚ի քէն... կրկին ոգի քո:

* *Ոսկան.* Երթային և խօսէին. և ահա:

* *Ոմանք.* Ջջուրն. և բաժանեցաւ յայս՛:

առաքելք*։ ¹⁷Եւ բռնադատեցին զնա մինչև ամաչէր, և ասէ. Առաքեցէ՛ք։ Եւ առաքեցին յիսո՛ւն այր. և խնդրեցին զերիս աւուրս՝ և ո՛չ գտին զնա. ¹⁸և դարձան առ նա, և նա նստեր յերեքով. և ասէ ցնոսա Եղիսէէ. Ո՞չ ասացի ձեզ թէ մի՛ երթայք։

Զ ¹⁹Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէէ. Ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի՛ է, որպէս և տէրդ իսկ տեսանէ. և ջուրքս չա՛ր, և երկիրս անգաւաւկ*։ ²⁰Եւ ասէ Եղիսէէ. Առէ՛ք առ իս կուժ մի նոր, և դի՛ք այդր։ Եւ բերին առ նա։ ²¹Եւ ել Եղիսէէ յականս ջուրցն, և արկ անդ աղ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Բժշկե՛մ զջուրսդ զայդոսիկ, և մի՛ ևս լիցի այտի մահ և յանգաւակութիւն*։ ²²Եւ բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին Եղիսէի զոր խօսեցաւ։ ²³Եւ ել անտի ՚ի Բեթէլ. և մինչդեռ ելանէր ընդ ճանապարհն, մանկտի՛ մանրիկ ելին ՚ի քաղաքէն, աղաղակէին ՚ի նա և ասէին. Ե՛լ կնդակ, ե՛լ կնդակ*։ ²⁴Դարձաւ ՚ի թիկունս իւր և ետես զնոսա. և անէժ զնոսա յանուն Տեառն՝ և ասէ. Որդի՛ք յանցանաց և դատարկութեան։ Եւ ելին երկու արջք յանտառէն և պատառեցին ՚ի նոցանէ քառասուն և երկուս մանկունս։ ²⁵Եւ զնա՛ց անտի ՚ի լեառն ՚ի Կարմեղոս, և անտի դարձաւ ՚ի Սամարիա։

3

Գլուխ Գ

Է ¹Եւ Յովրամ որդի Աքաաբու թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա, յամի եւթնութասներորդի Յովսափատայ արքայի Յուդայ. և թագաւորեաց ամս երկուտասան*։ ²Եւ արար չա՛ր առաջի Տեառն, բայց ո՛չ իբրև զհայր իւր, և ո՛չ իբրև զմայր իւր. և կործանեաց զարձանսն իւր զոր արար հայր նորա։ ³Սակայն ՚ի մեղս Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ յարեցաւ, և ո՛չ մեկնեցաւ ՚ի նոցանէ։ ⁴Եւ Մովսա՛ արքայ Մովաբայ էր նեկաթ. և տայր արքային Իսրայէլի հարկս, հարիւր հազար մաքեաց, և հարիւր հազար խոյոց զեղմնաւորաց*։

Ը ⁵Եւ եղև յետ մեռանելոյ Աքաաբու, նշկահեաց արքայն Մովաբու զարքայն Իսրայէլի։ ⁶Եւ ել արքայ Յովրամ յաւուր յայնմիկ ՚ի Սամարեայ, և հանդէս արար Իսրայէլի և զնաց։ ⁷Եւ առաքեաց առ Յովսափատ արքայ Յուդայ՝ և ասէ. Արքայ Մովաբու նշկահեաց զիս, եթէ երթայցե՞ս ընդ իս ՚ի պատերազմ ՚ի վերայ Մովաբու։ Եւ ասէ. Ելի՛ց. զի որպէս դո՛ւ և ե՛ս, և որպէս զօրք քո՛ զօրք իմ, և որպէս երիվարք քո՛ երիվարք իմ*։ ⁸Եւ ասէ. Ընդ ո՞ր ճանապարհ ելից։ Եւ ասէ. Ընդ ճանապարհ անապատին Եդոմայ*։ ⁹Եւ զնա՛ց արքայ Իսրայէլի և արքայ Յուդայ, և արքայ Եդոմայ. և պատեցան զեւթն օր ՚ի ճանապարհին, և ո՛չ գոյր ջուր ՚ի

* *Բազումք.* Եւ ասեն ցնա. Ահաւա՛... ա՛ռ զնա Յոզիմ Տեառն։

* *Յօրինակին պակասէր.* Որպէս և տէրդ իսկ։

* *Ոմանք.* Եւ ել Եղիսէէ յականջս ջրոյն, և արկ անդ աղ... զջուրս զայսոսիկ. և մի՛ ևս լիցի այդ, կամ՝ սա ՚ի մահ և անգաւաւկ*։

* *Ոմանք.* Ելանէր զճանապարհն... Ելանէին ՚ի քաղաքէն և աղա՛... Ել կնտակ ել կնտակ։

* *Ոմանք.* Թագաւորեաց Իսրայէլի... յամի ութնութասներորդի։

* *Ոմանք.* Եւ Ամովս արքայ... էր նեկեթ... և տայր Իսրայէլի հարկ։ *Ի լուս՝ ՚ի վերայ՝* նեկաթ. *նշանակի՝* շպետ. և *առ այլ ոմանս.* խաշնատես. հօտաբոյժ։

* *Այլք.* Զի որպէս դու ես՝ և ես, և որպէս։

* *Ոմանք.* Ընդ ճանապարհս անապա՛։

բանակին, և ո՛չ անասնոյն որ ընդ նոսա՞: ¹⁰Եւ ասէ արքայ Իսրայէլի. Ո՛հ, պաշարեաց Տէր զերիս թագաւորսս եկեալս, տա՛լ զսոսա ՚ի ձեռս Մովաբայ: ¹¹Եւ ասէ Յովսափատ. Ո՞չ գուցէ աստ մարգարէ Տեառն, և հարցցո՛ւք զՏէր նովաւ: Եւ պատասխանի ետ մի ոմն ՚ի մանկտւոյն արքայի Իսրայէլի՝ և ասէ. Է՛ աստ Եղիսեէ որդի Սափատայ որ արկանէր ջուր ձեռաց Եղիայի: ¹²Եւ ասէ Յովսափատ. Գո՛յ բան Տեառն ընդ նմա: Եւ իջին առ նա արքայն Իսրայէլի՝ և Յովսափատ արքայ Յուդայ, և արքայ Եդոմայ: ¹³Եւ ասէ Եղիսեէ ցարքայն Իսրայէլի. Ձի՞ կայ իմ և քո. երթ առ մարգարէսն հօր քոյ, և առ մարգարէս մօր քոյ: Եւ ասէ ցնա արքայն Իսրայէլի. Միթէ արդևք կոչեաց Տէր զերիս թագաւորսս եկեալս՝ տա՛լ զսոսա ՚ի ձե՞ռս Մովաբու՞: ¹⁴Եւ ասէ Եղիսեէ. Կենդանի՛ է Տէր զօրութեանց, որոյ կացի առաջի նորա, եթէ չէ՛ր առեալ ակն Յովսափատայ արքայի Յուդայ, թէ բնա՛ւ հայի իսկ ՚ի քեզ, և տեսանէի զքեզ. ¹⁵բայց արդ՝ ա՛ծ առ իս սաղմոսասաց: Եւ եղև իբրև նուագեաց սաղմոսասացն, եկն ՚ի վերայ նորա ձեռն Տեառն, ¹⁶և ասէ. Ա՛յսպէս ասէ Տէր. Արարէ՛ք զհեղեղատոյ գայոյ գո՛ւբս գուբս: ¹⁷Ձի ա՛յսպէս ասէ Տէր. Ո՛չ տեսանիցէք հողմ, և ո՛չ տեսանիցէք անձրև. և հեղեղատոյ լցցի՛ ջրով, և արբջիք դո՛ւք՝ և անասուն ձեր, և գրաստ ձեր. ¹⁸և թեթև է այդ յաչս Տեառն. և մատնեցից զՄովաբ ՚ի ձեռս ձեր, ¹⁹և հարջիք զամենայն քաղաքս ամրացեալ, # և զամենայն քաղաքս ընտիրս, և զամենայն ծա՛ռ ազնիւ կոտորեսցիք, և զամենայն աղբերս ջրոց խցցի՛ք, և զամենայն վիճակս բարիս՝ անպիտանացուցի՛ք քարամբք՞: ²⁰Եւ եղև ընդ առաւօտն յորժամ զո՛հն ելանէր, և ահա ջուրք գային յելիցն Եդոմայ, և լցա՛ւ երկիրն ջրով: ²¹Եւ ամենայն Մովաբ լուաւ թէ ելին թագաւորքն պատերազմել ընդ նոսա, և ելին յամենայն գօտի ածուաց և ՚ի վեր, և կանխեցին ընդ առաւօտն, և կացին առ սահմանաւն: ²²Եւ ծագեաց արև ՚ի վերայ ջրոցն, և ետես Մովաբ ՚ի հանդիպոյն զջուրսն կարմիր իբրև զարիւն. ²³և ասեն. Արիւնն այն սրո՛յ է. կռուեցան ընդ միմեանս թագաւորքն, և հարին այդ զընկեր իւր. և արդ հա՛պա յաւա՛ր Մովաբ, ²⁴և մտին ՚ի բանակն Իսրայէլի: Եւ յարեան Իսրայէլացիքն՝ և հարին զՄովաբ. և փախեան յերեսաց նոցա. և մտանելով մտանէին և հարկանէին զՄովաբ՞, ²⁵և զքաղաքսն կործանեցին. և յամենայն վիճակ բարի ընկեցին այդ իւրաքանչիւր զքա՛ր իւր, և լցին զնա. և զամենայն աղբերս ջրոց խցին. և զամենայն փայտ զազնիւ հարին, մինչև թողուլ զքարինս որմոցն քակտեալս, և պատեցան պարսաւորք՝ և հարին զնա՞: ²⁶Եւ ետես արքայն Մովաբայ թէ սաստկացաւ քան զնա պատերազմն, ա՛ռ ընդ իւր եւթն հարիւր այր՝ սուսերածիգս, հատանել երթալ առ արքայն Եդոմայ, և ո՛չ կարաց՞: ²⁷Եւ ա՛ռ զորդին իւր զանդրանիկ արքայն. զոր թագաւորեցոյց փոխանակ իւր, և եհան զնա ողջակեզ ՚ի վերայ պարսպին. և եղև զի՛ղջ մեծ ՚ի վերայ Իսրայէլի, և չուեցին ՚ի նմանէ, և դարձան յերկիր իւրեանց՞:

* Ոմանք. Ջուր բանակին և ո՛չ անասնոցն:

* Ոմանք. Մի արդևք կոչեաց Տէր:

* Ոմանք. Եւ հարջիք զամենայն քաղաքս, և զամենայն քաղաք ընտիր, և զամենայն զծառ զազ՞:

* Յօրինակին. Եւ մտանելով մտանէին և հարկանէին զՄովաբ:

* Ոմանք. Մինչև ՚ի թողուլ, կամ՝ զթողուլ... քակեալս, և պատեցան պարստաւորք:

* Ոմանք. Եւ ո՛չ կարացին:

* Ոմանք. Եւ եղև զեղջ մեծ. կամ՝ զիղծ մեծ: Յոր ՚ի լուս. մերումս նշանակի՝ ահարկութիւն մեծ:

Գլուխ Դ

Թ¹ Եւ կին մի՛ ՚ի կանանց որդւոց մարգարէիցն, աղաղակէր առ Եղիսէէ և ասէր. Ծառայ քո այր իմ մեռա՛ւ. և դու ինքնին գիտես զի ծառայ քո էր երկիւղած ՚ի Տեառնէ. և փոխատուն եկն առնուլ զերկոսին զորդիս իմ իւր ՚ի ծառայութիւն*:

² Եւ ասէ ցնա Եղիսէէ. Զի՞նչ արարից քեզ. պատմեա՛ ինձ զի՞նչ կայ ՚ի տան քում: Եւ նա ասէ. Ո՛չ գոյ ՚ի տան աղախնոյ քոյ՝ և ո՛չ ինչ. բայց ի՛նչ որով օծանիցիմք*:

³ Եւ ասէ ցնա. Ե՛րթ խնդրեա՛ քեզ ամանս յամենայն դրացեաց քոց՝ ամանս ունայնս, և մի սակաւացուցանիցես. ⁴ և մտցես և փակեսցես զդրունսն ընդդէմ քո, և ընդդէմ որդւոց քոց. և արկցես յամենայն ամանսն մինչև լցցին, և առցես*:

⁵ Եւ գնաց ՚ի նմանէ՝ և փակեաց զդրունն ընդդէմ իւր, և ընդդէմ որդւոց իւրոց. նոքա մատուցանէին առ նա, և նա արկանէր մինչև լցան ամանքն: ⁶ Եւ ասէ ցորդիսն իւր. Մատուցէ՛ք առ իս և այլ աման: Եւ ասեն ցնա. Ո՛չ է այլ աման: Եւ եկաց ևղն*:

⁷ Եւ չոգաւ՝ պատմեաց առնն Աստուծոյ. և ասէ Եղիսէէ. Ե՛րթ վաճառեա՛ զևղն, և հատուցես զտոկոսիսն քո. և դու և որդիք քո կեցջիք մնացեալ իւղովմ*:

Ժ⁸ Եւ եղև օր, և անց Եղիսէէ ՚ի Սովմնա. և անդ էր կին մի մեծ, և կալաւ զնա ուտել հաց. և լինէր ՚ի շա՛տ ժամանակէ ՚ի մտանել իւրում անդր, իջանէր ուտել և ընպել*:

⁹ Եւ ասէ կինն ցա՛յր իւր. Գիտեմ, զի այրն Աստուծոյ սո՛ւրբ է, և ճանապարհք նորա առ մեք է. ¹⁰ արասցո՛ւք նմա վերնատուն մի փոքրիկ, և դիցուք ՚ի նմա մահիճս և սեղան և աթոռ և աշտանակ. և եղիցի ՚ի գալ նորա առ մեզ մտցէ՛ անդր:

¹¹ Եւ եղև օր մի, և եկն անդր, և եմո՛ւտ ՚ի վերնատունն, և ննջեաց անդր*. ¹² և ասէ ցԳեեզի ցպատանեակն իւր. Կոչեա՛ առ իս զՍոմնացին զայն: Եւ կոչեաց զնա, և եկաց առաջի նորա: ¹³ Եւ ասէ ցպատանին. Ասա՛ ցնա.

Ահա կազմեցեր մեզ զայս ամենայն կազմած, զի՞նչ պարտ իցէ առնել քեզ. եթէ իցե՞մ բանք ինչ քո առ արքայ, կամ առ իշխան զօրուն: Եւ նա ասէ. ՚Ի մէջ ժողովրդեան իմոյ բնակեալ եմ ես*:

¹⁴ Եւ ասէ. Զի՞նչ պարտ իցէ առնել նմա: Եւ ասէ Գեեզի պատանեակն նորա. Եւ կարի՛ իսկ քաջ, քանզի որդի ո՛չ գոյ նմա, և այրն իւր չէ ինչ ծեր*:

¹⁵ Եւ ասէ. Կոչեա՛ զնա: Եւ կոչեաց զնա, և եկաց առ դուրսն: ¹⁶ Եւ ասէ ցնա Եղիսէէ. Ի՛ ժամանակի յայսմիկ ՚ի սո՛յն աւուրս ունիցիս ՚ի գիրկս մանուկ: Եւ նա ասէ. Մի՛ տէր, # այրդ Աստուծոյ, մի՛ ստեր աղախնոյ քում: ¹⁷ Եւ յղացաւ կինն, և ծնաւ որդի ՚ի ժամանակի յայնմիկ, մինչդեռ կենդանի էր, որպէս խօսեցաւ ընդ նմա Եղիսէէ. ¹⁸ և հաստատեցաւ մանուկն:

ԺԱ Եւ եղև իբրև ել նա առ հայր իւր ՚ի հնձօղսն. ¹⁹ ասէ ցհայրն իւր. Գլո՛ւխ իմ զլո՛ւխ իմ: Եւ ասէ ցպատանին. Տա՛ր զդա առ մայր իւր: ²⁰ Եւ տարաւ զնա առ

* Ոմանք. Զի ծառայ քո երկիւղած էր ՚ի Տեառնէ:

* Այլք. Որով օծանիցիմ:

* Այլք. Փակեսցես զդրուն:

* Զօրինակին պակասէր. Եւ այլ աման, և ասեն ցնա. Ո՛չ է այլ աման, և եկաց:

* Այլք. Կեցջիք մնացելով իւղովմ: Ուր ոմանք. Կերջիք մնացելով իւ՞:

* Ոմանք. Անդր խոտորէր իջանէր ուտել և ըմ՞:

* Այլք. Եւ եղև օր, և եկն... և ննջեաց անդ:

* Այլք. Եթէ իցեն քո բանք ինչ... և կամ առ իշ՞:

* Այլք. Քանզի որդի ո՛չ գոյ նորա:

մայր իւր, և ննջեաց ՚ի մէջ ծնգաց նորա մինչև ցմիջօրեայ, և մեռաւ*։ ²¹Եւ եհան զնա, և կողմնեցոյց ՚ի մահիճս առնն Աստուծոյ. և փակեաց ընդդէմ նորա. և ել, ²²և կոչեաց զայր իւր՝ և ասէ. Առաքեա՛ առ իս զմի ոք ՚ի մանկտուոյդ, և էջ մի յիշոցդ, և պնդեցայց մինչև առ այրն Աստուծոյ և դարձայց։ ²³Եւ ասէ. Ջի՞ տ է զի երթա՛ն դու առ նա այսօր, զի ո՛չ ամսամուտ է՝ և ո՛չ շաբաթ։ Եւ նա ասէ. Ողջո՛յն է։ ²⁴Եւ հանդերձեաց զէջն, և ասէ ցպատանին իւր. Վարեա՛ և զնա՛. և մի՛ ունիր ինձ ելանել ՚ի դա. բայց եթէ ասացից ցքեզ՝ թէ ե՛կ այսր, և եկեսցես*։ ²⁵և երթիցես առ այրն Աստուծոյ ՚ի լեառնն ՚ի Կարմելոս։ Եւ եղև իբրև ետես Եղիսէէ զգնալն նորա առ նա, և ասէ ցԳեեզի ցպատանեակն իւր. Ահա այն Սոմնացի՛ն է*։ ²⁶ընթա՛ ընդ առաջ նորա և ասասցես. Ողջո՛յն է քեզ, և ողջո՛յն է առն քում, և ողջո՛յն է մանկանն։ Եւ նա ասէ. Ողջո՛յն է*։ ²⁷Եւ եկն առ Եղիսէէ ՚ի լեառնն, և բո՛ւմն եհար զտոից նորա. և մատեաւ Գեեզի մերժել զնա. և ասէ Եղիսէէ. Թո՛յլ տուր դմա, զի անձն դորա ցաւագին է. և Տէր թաքոյց յինէն, և ո՛չ պատմեաց ինձ*։ ²⁸Եւ նա ասէ. Միթէ խնդրեցի՞ որդի ՚ի տեառնէ իմմէ, ո՞չ ասացի թէ մի՛ խաբեր զիս։ ²⁹Եւ ասէ Եղիսէէ ցԳեեզի. Ա՛ժ գօտի ընդ մէջ քո. և ա՛ռ զցուպդ իմ ՚ի ձեռին քո և երթ. և եթէ գտանիցես զայր ոք մի՛ օրհնեսցես զնա. և եթէ օրհնեսցէ զքեզ այր ոք՝ մի՛ տացես նմա պատասխանի. և դիցես զցուպդ իմ ՚ի վերայ երեսաց մանկանն*։ ³⁰Եւ ասէ մայր մանկանն. Կենդանի՛ է Տէր և կենդանի՛ է անձն քո, թէ թողից զքեզ։ Եւ յարեաւ Եղիսէէ և զնաց զկնի նորա*։ ³¹Եւ Գեեզի անց առաջի նոցա. և ե՛դ զցուպն ՚ի վերայ երեսաց մանկանն, և ո՛չ գոյր բարբառ՝ և ո՛չ լսել. և դարձաւ ընդ առաջ նորա, պատմեաց նմա և ասէ. Ո՛չ յարեաւ մանուկն։ ³²Եւ եմուտ Եղիսէէ ՚ի տունն, և ահա մանուկն մեռեալ, և կողմնեցուցեալ ՚ի մահիճս նորա։ ³³Եւ եմուտ Եղիսէէ ՚ի տունն, և փակեաց զդուրսն ընդդէմ երկոցունց. և եկաց յաղօթս առ Տէր. ³⁴և ել և անկաւ ՚ի վերայ մանկանն. և եդ զբերան իւր ՚ի վերայ բերանոյ նորա. և զաչս իւր ՚ի վերայ աչաց նորա. և զձեռն իւր ՚ի վերայ ձեռաց նորա. և կծկեցաւ ՚ի վերայ նորա, և ջեռաւ մարմին մանկանն*։ ³⁵Եւ դարձաւ և զգնացաւ ՚ի տանն յայսկոյս և յայնկոյս, և ել և ծածկեաց զմանուկն. # և ծածկեաց զմանուկն մինչև ցելթն անգամ. և եբաց մանուկն զաչս իւր*։ ³⁶Եւ բարբառեցաւ Եղիսէէ առ Գեեզի՝ և ասէ. Կոչեա՛ այսր զՍոմնացիին։ Եւ կոչեաց զնա. և եմուտ առ նա. և ասէ Եղիսէէ. Ա՛ռ զորդի քո։ ³⁷Եւ եմուտ կինն և անկաւ առ ոտս նորա, և երկիր եպագ նմա յերկիր. և ա՛ռ զորդին իւր՝ և ել։ ³⁸Եւ Եղիսէէ դարձաւ ՚ի Գաղգաղա։

ԺԲ Եւ սո՛վ էր յերկրին. և որդիք մարգարէիցն նստէին առաջի նորա. և ասէ Եղիսէէ ցպատանեակն իւր. Կառո՛ դու զսանն մեծ, և եփեա՛ եփոյ որդւոցդ

* *Բազումք.* Եւ ննջեաց ՚ի վերայ ծնգաց նորա։
 * *Ոմանք.* Եւ նա հանդերձեաց զէջն... և մի՛ ունիր ինչ ելանել... ասացից քեզ եթէ եկ։
 * *Այլք.* Ջգալ նորա առ նա. և ասէ։
 * *Օրհնակ մի.* Ողջոյն է քեզ. ողջոյն է տան քում, ողջոյն է ման*։
 * *Բազումք.* Ջի անձն նորա ցաւա*։
 * *Յօրինակին պակասէր.* Եւ առ զցուպդ իմ ՚ի ձեռին։ *Ոմանք.* ՚ի ձեռին քում... զայր ոք, մի՛ ահամարիեսցես զնա... մի տայցես պատասխանի։
 * *Ոմանք.* Եւ ասէ կինն. Կենդանի է Տէր և։
 * *Յօրինակին պակասէր.* Եւ ել և անկաւ ՚ի վերայ։ *՚ի բազումս պակասի.* Եւ զձեռն իւր ՚ի վերայ ձեռաց նորա։
 * *Բազումք.* Եւ դարձաւ և զնաց ՚ի տանն յայսկոյս։ *Այլք միանգամ ունին.* Եւ ծածկեաց զմանուկն։

մարգարեից*։³⁹Եւ ել յանդն քաղել արիովք. և եգիտ որթ յանդին, և քաղեաց ՚ի նմանէ ազոխ լի՝ շալակաւ իւրով, և եկն և արկ ՚ի սան եփոյին՝ քանզի ո՛չ ճանաչէր*։⁴⁰Եւ արկ առաջի արանցն ուտել։ Եւ եղև յուտելն նոցա յեփոյէ անտի, աղաղակեցին և ասեն. Մա՛հ է ՚ի սանի աստ՝ այրոյ Աստուծոյ։ Եւ ո՛չ կարացին ուտել*։⁴¹Եւ ասէ. Առէ՛ք ալևր և արկէ՛ք ՚ի սան այրոյ։ Եւ ասէ Եղիսե՛է ցԳեեզի ցպատանեակն իւր. Արկ առաջի ժողովրդեանդ և կերիցեն։ Եւ ո՛չ եղև վնաս ինչ ՚ի սանէ՛ անտի*։

ԺԳ⁴²Եւ եկն այր ՚ի Բեթսարիսայ, և երե՛ր առնն Աստուծոյ նկանակս յառաջնոց արմտեաց, նկանակս գարեղէնս, և պաղատիտս բակեղաթաւ. և ասէ. Տո՛ւք ժողովրդեանդ և կերիցեն*։⁴³Եւ ասէ սպասաւորն նորա. Ձի՞նչ տաց զայս առաջի հարիւրոց արանցոյ։ Եւ ասէ. Տո՛ւր ժողովրդեանդ և կերիցեն. զի այսպէս ասէ Տէր. Կերիցեն և նշխարեսցեն*։⁴⁴Եւ եղ առաջի նոցա և կերան, և թողին նշխար ըստ բանին Տեառն։

5

Գլուխ Ե

ԺԴ¹Եւ Նեեման իշխան զօրուն Ասորոց, էր այր մե՛ծ առաջի տեառն իւրոյ, և սքանչելի երեսօք. զի նովա՛ւ ետ Տէր փրկութիւն Ասորոց. և այրն հզօր զօրութեամբ էր, և բորոտեալ*։²Եւ Ասորիքն մեկնակազէնք՝ ելին և գերեցին յերկրէն Իսրայէլի աղջիկ մի փոքրիկ, և էր առ կնոջն Նեեմանայ. ³և ասէ ցտիկինն իւր. Յանկարծ երթայր տէրդ իմ առաջի մարգարէին Աստուծոյ որ ՚ի Սամարիա. և անդէն աւաքեր զդա ՚ի բորոտութենէ իւրմէ*։⁴Եւ եմուտ՝ և պատմեաց տեառն իւրում և ասէ. Այսպէս և այսպէս խօսեցաւ աղջիկն որ յերկրէն Իսրայէլի։⁵Եւ ասէ արքայն Ասորոց ցՆեեման. Ե՛րթ և ես առաքեցից հրովարտակս առ արքայն Իսրայէլի։ Եւ զնաց. և ա՛ռ ՚ի ձեռին իւրում տասն տաղանտ արծաթոյ, և վեց հազար դահեկան, և տասն պատմունճան հանդերձեալ։⁶Եւ տարաւ հրովարտակս առ արքայն Իսրայէլի։ Եւ էր գրեալ այսպէս. Արդ՝ իբրև հասցէ առ քեզ հրովարտակդ այդ. ահա առաքեցի առ քեզ զՆեեման ծառայ իմ, և աւաքեսցես զդա ՚ի բորոտութենէ իւրմէ*։⁷Եւ եղև իբրև ընթերցաւ արքայն Իսրայէլի զհրովարտակն, պատառեաց զհանդերձս իւր՝ և ասէ. Միթէ Աստուած իցեն ես՝ սպանանել կամ կեցուցանել, զի առաքեաց առ իս աւաքել զայրդ ՚ի բորոտութենէ իւրմէ. բայց զհիտասջիք և տեսջիք զի պատճառի՛ իմն նա առ իս*։⁸Եւ եղև իբրև լուաւ Եղիսե՛է այրն Աստուծոյ՝ եթէ պատառեաց արքայն Իսրայէլի զհանդերձս իւր, առաքեաց առ արքայն Իսրայէլի և ասէ. Ընդէ՞ր պատառեցեր

* Ոսկան. Եւ եփեա եփոց։

* Ոսկան. ՚ի սան եփոցին։ *՚ի լուս՝. ՚ի վերայ՝* արիովք. *նշանակի՝* բանջար վայրի։ *Յօրինակին պակասէր.* Եւ քաղեաց ՚ի նմանէ ազոխ լի շա՛ւ։

* Ոսկան. Յեփոցէ անտի։

* Այլք. Եւ արկէք ՚ի սան անդր։

* Այլք. Արմտեաց, և նկանակս գարե՛ն։ *Ոմանք.* Բակեղեթաւ։

* Ոսկան. Ձի այսպէս ասէ Տէր. Կերիցեն և յաւելցի։

* Ոմանք. Ջօրութեամբ. և էր բորոտեալ։

* Ոսկան. Անկարծ երթայր տէր իմ։ *՚ի լուս՝. ՚ի վերայ՝* աւաքեր. *նշանակի՝* սրբեր։

* Յայլս պակասի. Եւ էր գրեալ այսպէս։

* Ոմանք. Աւաքեցուցանել զայրդ ՚ի բո՛ւ։

զհանդերձս քո, եկեսցէ՛ առ իս Նեեման, և գիտասցէ թէ գո՛յ մարգարէ յԻսրայէլի:

ԺԵ ⁹Եւ եկն Նեեման երկվարօք և կառօք, և եկաց առ դուրս տանն Եղիսէի: ¹⁰Եւ առաքեաց Եղիսէէ առ նա հրեշտակ՝ և ասէ. Երթ լուա՛ եւթն անգամ ՚ի Յորդանան, և դարձցի՛ մարմին քո և սրբեսցիս: ¹¹Եւ բարկացաւ Նեեման, գնաց և ասէ. Ես ասէի թերևս ելցէ՛ առ իս, և կացցէ յաղօթս և կարդասցէ զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ, և դիցէ զձեռն իւր ՚ի վերայ տեղւոյս, և աւաքեսցէ զբորոտութիւնս՝: ¹²Ո՞չ լաւ իցեն Նաբանա և Փարփարա զե՛տք Դամասկոսի քան զամենայն ջուրս Իսրայէլի. և ընդէ՞ր ո՛չ երթայց և լուացայց ՚ի նոսա, և սրբեսցայց. և դարձաւ և գնաց սրտմտութեամբ՝: ¹³Եւ մատեան ծառայք նորա և խօսեցան ընդ նմա, և ասեն ցնա. Հայ՛ր, եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ քեզ մարգարէին, ո՞չ ապաքէն պա՛րտ էր առնել. թող թէ զի ասաց. Լուացի՛ր և սրբեսցիս՝: ¹⁴Եւ էջ Նեեման՝ և մկրտեցաւ ՚ի Յորդանան եւթն անգամ ըստ բանին Եղիսէի. և դարձաւ մարմին նորա իբրև զմարմին մանկան մատաղոյ՝ և սրբեցաւ: ¹⁵Եւ դարձաւ առ Եղիսէէ, ինքն և ամենայն բանակն իւր, և եկն եկաց առաջի նորա՝ և ասէ. Ահա գիտացի թէ ո՛չ գոյ Աստուած յամենայն երկրի՝ բայց միայն ՚ի մէջ Իսրայէլի. և արդ՝ ա՛ն օրհնութիւն ՚ի ծառայէ քունմէ: ¹⁶Եւ ասէ Եղիսէէ. Կենդանի՛ է Տէր որոյ կացի առաջի նորա, եթէ առի՛ց ինչ: Եւ ստիպեաց զնա առնուլ. և ո՛չ հաւանեցաւ: ¹⁷Եւ ասէ Նեեման. Իսկ որովհետև ո՛չ տացի՛ն ծառայի քում բեռնիք զուզից ջորւոց ՚ի հողոյ երկրիս. զի ո՛չ ևս արասցէ ծառայ քո ողջակէզս և զոհս աստուածո՛ց օտարաց, բայց միայն Տեառն՝: ¹⁸Վասն բանիս այսորիկ. և քաւեսցէ Տէր զծառայ քո՝ ՚ի մտանել տեառն իմոյ ՚ի տուն Ռեմանայ երկիր պագանել նմա. յորժամ յենուցու ՚ի ձեռս իմ, և երկիր պագանիցեն ՚ի տան Ռեմանայ՝ ՚ի պագանելն նորա երկիր ՚ի տան Ռեմանայ. և քաւեսցէ՛ Տէր զծառայ քո վասն բանին այնորիկ: ¹⁹Եւ ասէ Եղիսէէ ցնեման. Երթ խաղաղութեամբ: Եւ գնաց՝ ՚ի նմանէ յերկրէն Իսրայէլի՝:

ԺԶ ²⁰Եւ ասէ Գեեզի պատանեակն Եղիսէի. Ահա խնայեաց տեր իմ ՚ի Նեեման Ասորի, չառնուլ ՚ի ձեռանէ նորա յորոց մատոյցն. կենդանի՛ է Տէր՝ եթէ ո՛չ ընթացայց զհետ նորա, և առից ինչ անտի՝: ²¹Եւ պնդեցաւ Գեեզի զհետ Նեեմանայ: Եւ ետես զնա Նեեման՝ ընթացեալ զհետ նորա. և դարձաւ ՚ի կառացն ընդ առաջ նորա և ասէ. Ողջո՞յն է: ²²Եւ ասէ Գեեզի. Ողջոյն է. տեր իմ առաքեաց զիս առ քեզ և ասէ. Ահա եկին առ իս երկու պատանեակք ՚ի լեռնէն Եփրեմի յորդւոցն մարգարէից, տո՛ւր նոցա տաղանտ մի արծաթոյ, և երկուս պատմուճանս հանդերձեալս: ²³Եւ ասէ Նեեման. Թէ այդպէս իցէ, ա՛ն երիս տաղանտս արծաթոյ: Եւ բռնադատեաց զնա, և ծրարեաց երիս տաղանտս արծաթոյ յերկուս պարկս, և երկուս պատմուճանս հանդերձեալս. և ետ ցերկուս ծառայս իւր՝ և բարձին առաջի նորա. ²⁴և եկին ՚ի մթինն, և ա՛ն ՚ի ձեռաց նոցա, և եղ ՚ի տան. և արձակեաց զարսն՝ և գնացին՝: ²⁵և ինքն եմո՛ւտ և կայր առաջի տեառն իւրոյ: Եւ ասէ ցնա Եղիսէէ. Ուստի՞ զաս Գեեզի: Եւ ասէ Գեեզի. Չի՛ք

* *Յօրհնակին*. Ես ասէ թերևս ելցէ: *Այլք*. Եւ կացցէ, և կարդասցէ:

* *Յօրհնակին*. Քան զամենայն ջուր Իսրայէլի:

* *Ոմանք*. Ընդ քեզ մարգարէն... թող թէ ասաց:

* *Օրհնակ մի*. Բայց միայն Աստուծոյ:

* *Յօրհնակին*. Եւ գնաց ՚ի նմանէ յերկիրն Իսրայէլի:

* *Ոմանք*. Չառնուլ ինչ ՚ի ձեռա՛:

* *Ոմանք*. Եւ եկին մթինն, և ա՛ն ՚ի:

երթալ ծառայի քոյ՝ ո՛չ յայսկոյս և ո՛չ յայնկոյս*։ ²⁶Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ո՞չ սիրտ իմ գնաց յորժամ դարձաւ այրն՝ ՚ի կառաց անտի ընդ առաջ քո. և արդ՝ առերձարձաթն և զհանդերձսն ՚ի ձիթենիս և յայգիս, և յարջառս և յոչխարս, և ՚ի ծառայս և յաղախնայս*։ ²⁷Եւ բորոտութիւնն Նեեմանայ յարեսցի՝ ՚ի քեզ՝ և ՚ի զաւակ քո յաւիտեան։ Եւ ե՛լ յերեսաց նորա բորոտեալ իբրև զձիւն։

6

Գլուխ Զ

ԺԷ ¹Եւ ասեն որդիք մարգարէիցն ցեղիսեէ. Ահաւասիկ տեղիս յորում մեք բնակեմք՝ նեղ է մեզ*։ ²Երթիցո՛ւք մինչև ցՅորդանան, և առցուք անտի այր իւրաքանչիւր գերան մի, և արասցո՛ւք մեզ անդ բնակութիւն։ Եւ ասէ. Երթայք։ ³Եւ ասէ մի ոմն. Ե՛կ և դու մեղմով՝ երթիցես ընդ ծառայս քո։ Եւ նա ասէ. Ե՛ս եկից։ ⁴Եւ գնաց ընդ նոսա. և չոգան ՚ի Յորդանան, և հարկանէին փայտ։ ⁵Եւ ահա մին՝ մինչդեռ ընկենոյր զհեծանն, անկաւ երկաթն ՚ի ջուրն. և վայեաց, և ասէ. Ո՛հ տէր։ և զայն յանօթ առեալ էր*։ ⁶Եւ ասէ այրն Աստուծոյ. Յո՞ր վայր անկաւ։ Եւ եցոյց նմա զտեղին. և ճեղքեաց փայտ, և ընկեց անդր. և ՚ի վեր եկաց երկաթն*։ ⁷Եւ ասէ. Վերացո՛ քեզէն։ Եւ ձգեաց զձեռն իւր և ա՛ռ զնա։

ԺԸ ⁸Եւ արքայն Ասորոց տայր պատերազմ ընդ Իսրայէլի. խորհեցաւ ընդ ծառայս իւր և ասէ. ՚Ի տեղւոց մի յելմոնի բանակեցայց ՚ի դարանի*։ ⁹Եւ առաքեաց Եղիսեէ առ արքայն Իսրայէլի՝ և ասէ. Զգոյ՛շ լեր զուցէ՛ անցանիցես ընդ այն տեղի, զի անդ թաքուցեալ նստին Ասորիք։ ¹⁰Եւ առաքեաց արքայն Իսրայէլի ՚ի տեղին զոր ասաց նմա Եղիսեէ #, և դարանայոյզ արար զնա, և զգուշացաւ անտի ո՛չ մի անգամ և ո՛չ երկիցս*։ ¹¹Եւ զայրացաւ անձն արքային Ասորոց վասն բանին այնորիկ, և կոչեաց զծառայս իւր և ասէ ցնոսա. Ո՞չ պատմէք ինձ, եթէ ո՞ մատնէ զիս արքային Իսրայէլի*։ ¹²Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից նորա. Ո՛չ տէր իմ արքայ. այլ Եղիսեէ մարգարէ Իսրայէլի պատմէ արքայի Իսրայէլի զամենայն բանս քո՝ զոր խօսիցիս ՚ի սենեկի քնոյ քոյ*։ ¹³Եւ ասէ. Երթայք տեսէք՝ ո՞ւր իցէ նա. և առաքեցից ըմբռնեցից զնա։ Եւ պատմեցին նմա և ասեն. Ահաւանիկ ՚ի Դովթայիմ է։ ¹⁴Եւ առաքեաց անդր կառս և երիվարս՝ և զօր ծանր. և եկին զհշերի և պատեցին զքաղաքն*։ ¹⁵Եւ կանխեաց յառնել ՚ի պաշտօն Եղիսեէ, և ել զնաց. և ահա զօր պատեալ էր զքաղաքաւն, և երիվարք և կառք. և ասէ ցնա պատանեակն. Տէր՝ զի՞ զործեսցուք*։ ¹⁶Եւ ասէ Եղիսեէ. Մի՛ երկնչիր, զի ընդ մեզ բազումք են քան ընդ նոսա։ ¹⁷Եւ եկաց յաղօթս Եղիսեէ՝ և ասէ. Տէր բաց զաչս պատանեկիս՝ և տեսցէ։ Եւ եբաց Տէր զաչս նորա, և ետես և

* Ոմանք. Եւ ասէ. Զիք երթեալ ծա՛։

* Ոմանք. Եւ անդ առեր զարձաթսն։

* Ոմանք. Յորում մեք բնակեալ եմք, նեղ է զմեզ։

* Ոմանք. Եւ վարեաց և ասէ. Ո՛հ տէր։

* Ոմանք. Յո՛ր վայր անկաւ։

* Այլք. ՚Ի տեղի մի յելմոնի։ ՚Ի վերայ՝ յելմոնի. նշանակի՝ յայս միշ։

* Ոմանք. Եւ դարայոյզ արար զնա։

* Այլք. Եթէ ո՞վ մատնէ զիս։

* Այլք. Եղիսեէ մարգարէ Իսրայէլի։

* Այլք. Եւ եկին ՚ի զհշերի։

* Ոմանք. Առնել ՚ի պաշտօն Եղիսեի։

ահա լեառնն լի՛ էր ծիովք, և հրեղէն կառօք շուրջ զեղիսէիւ. ¹⁸և իջին առ նա: Եւ եկաց յաղօթս Եղիսէէ առ Տէր՝ և ասէ. Զա՛ր զագգո զայդ շլացութեամբ: Եւ եհար զնոսա շլացութեամբ ըստ բանին Եղիսէի: ¹⁹Եւ ասէ ցնոսա Եղիսէէ. Ո՛չ այս ճանապարհ է՝ և ո՛չ այս քաղաք. եկայք զկնի իմ և տարայց զձեզ առ այրն զոր խնդրէք: Եւ տարա՛ւ զնոսա ՚ի Սամարիա: ²⁰Եւ եղև իբրև եմուտ ՚ի Սամարիա, ասէ Եղիսէէ. Բա՛ց Տէր զաչս նոցա՝ և տեսցեն: Եւ եբաց Տէր զաչս նոցա և տեսին. և ահա էին ՚ի մէջ Սամարիայ*: ²¹Իբրև ետես զնոսա արքայն Իսրայէլի, ասէ ցեղիսէէ, եթէ հարկանելով հարի՞ց զդոսա հայր: ²²Եւ ասէ. Մի՛ հարկաներ, բայց եթէ զայնոսիկ զոր գերեսցես սրով քով, և աղեղամբ քով հարկանիցես. դի՛ր հաց և ջուր առաջի դոցա, և կերիցեն և արբցեն, և երթիցեն առ տէր իւրեանց*: ²³Եւ արկ առաջի նոցա խո՛տս, տակաւ մեծաւ և կերան և արբին. և արձակեաց զնոսա. և զնացին առ տէր իւրեանց. և ո՛չ ևս յաւելին մեկնակազէնքն Ասորոց զա՛լ յերկիրն Իսրայէլի*:

ԺԹ ²⁴Եւ եղև յետ այնորիկ, ժողովեաց որդի Ադերայ՝ արքայ Ասորոց զամենայն զբանակն իւր #, և ե՛լ նստաւ շուրջ զՍամարեաւ*: ²⁵Եւ եղև սո՛վ մեծ ՚ի Սամարիա, և նստէին զնովաւ, մինչև եղև խալամ իշոյ յիսո՛ւն սկեղ արծաթոյ, և չորրորդ կապճի աղբոյ աղաւնեաց յիսու՛ն և հինգ արծաթոյ: ²⁶Եւ արքայ Իսրայէլի շրջէր ՚ի վերայ պարսպին. և կին մի աղաղակեաց առ նա և ասէ. Ապրեցո՞ զիս տէր արքայ: ²⁷Եւ ասէ. Մի՛ ապրեցուցէ զքեզ Տէր, ուստի՞ ապրեցուցից զքեզ ՚ի կալո՞յ թէ ՚ի հնձանէ: ²⁸Եւ ասէ ցնա արքայ. Ձի՞ է քեզ: Եւ ասէ. Կինս այս ասաց ցիս. Տո՛ւր զորդիդ քո՝ և կերիցուք զդա այսօր, և զորդիս զիմ կերիցուք առ վաղիւ*: ²⁹Եւ եփեցա՛ք զորդին իմ և կերաք զնա, և ասեն ցսա յաւուրն երկրորդի. Տո՛ւր զորդիդ քո և կերիցուք զդա. և թաքոյց զորդին իւր*: ³⁰Եւ եղև իբրև լուաւ արքայ զբանս կնոջն, պատառեաց զհանդերձս իւր. և ինքն շրջէր ՚ի վերայ պարսպին. և ետես ժողովուրդն զքուրծն որ ՚ի վերայ մարմնոյ նորա ՚ի ներքոյ*: ³¹Եւ ասէ. Օ՛ն և օ՛ն արասցէ ինձ Աստուած, և օ՛ն և օ՛ն յաւելցէ, եթէ կացցէ զլուխն Եղիսէի որդւոյ Սափատայ ՚ի վերայ նորա այսօր*: ³²Եւ Եղիսէէ նստէր ՚ի տան իւրում, և ծերքն նստէին ընդ նմա. և առաքեաց այր առաջի երեսաց իւրոց. և մինչչև՝ եկեալ էր հրեշտակին առ նա, ասէ ցժերսն, եթէ գիտիցէ՞ք զի առաքեաց որդի սպանողին առնուլ զզլուխ իմ. իբրև մտանիցէ հրեշտակն՝ կալջի՞ք զնա ընդ դրօքն. ո՛չ ապաքէն ձայն ոտից տեսա՛ն նորա զկնի նորա իցէ*: ³³Եւ մինչդեռ խօսէր ընդ նոսա, ահա հրեշտակն էջ առ նոսա՝ և ասէ. Ահա չարութիւն ՚ի Տեառնէ է. զի՞ ևս համբերից Տեառն*:

7

* Ոմանք. Բա՛ց Տէր զաչս սոցա. կամ՝ դոցա:

* Ոմանք. Եւ ասէ Եղիսէէ. Մի՛ հարկ... զոր գրեսցես սրով:

* Օրհնակ մի. Առաջի նոցա խոստոս տակաւ: Ոմանք. Եւ ո՛չ ևս յաւելուին մեկն*:

* Այլք. Եւ ել նստաւ զՍամարեաւ: Ուր Ոսկան. և ելեալ նստ*:

* Ոմանք. Եւ ասէ ցնա. Կինս այս... զի կերիցուք զդա:

* Ոմանք. Եւ ասեն ցնա յաւու*:

* Այլք. Ձքուրծն որ ՚ի վերայ մարմն*:

* Ոմանք. Արասցէ ինձ Տէր, և օն:

* Ոմանք. Նստէին ընդ նմին:

* Բազումք. Ահա այս չարութիւն ՚ի Տեառնէ: Ի՛ լուս. Չարութիւն ՚ի Տեռնէ է. համաձայն ոմանց ՚ի բնաբ*:

Գլուխ Է

¹Եւ ասէ եղիսէ. Լո՛ւր զբան Տեառն. այսպէս ասէ Տէր. Քանզի վաղիւ այս ժամ իցէ գրիւ մի նաշիւոյ սկե՛ղ միոյ, և երկու գրիւք գարւոյ՝ սկե՛ղ միոյ՝ ՚ի դրունս Սամարիայ: ²Եւ պատասխանի՛ ետ սպառազէնն յորոյ արքայ յենոյր ՚ի ձեռն նորա՝ եղիսէ և ասէ. Եթէ սահանս յերկինս արասցէ Տէր, միթէ լինիցի՞՞ բանդ այդ: Եւ ասէ եղիսէ. Ահա տեսցես աչօք քովք, և անտի մի՛ կերիցես:

Ի ³Եւ էին արք չո՛րք բորոտք առ դրան քաղաքին, և ասեն այր ցընկեր իւր. Ջի՞՞ նստիմք աստ՝ և մեռանիմք*. ⁴Եթէ ասեմք՝ եթէ մտցուք ՚ի քաղաք՝ սո՛վ է ՚ի քաղաքին, և մեռանիմք անդ, և եթէ աստէն նստիցիմք՝ սակայն մեռանիմք. և արդ՝ եկայք դիմեսցուք ՚ի բանակն Ասորւոց, եթէ ապրեցուցեն զմեզ՝ կեցցուք, և եթէ սպանցեն զմեզ՝ մեռցուք: ⁵Եւ յարեան ընդ արշալուրշսն մտանէլ ՚ի բանակն Ասորւոց, և եկին ՚ի մասն ինչ բանակին Ասորւոց. և ահա ո՛չ գոյր անդ մարդ*. ⁶Գի Տէր հնչեցոյց ՚ի բանակն Ասորւոց շաչիւն կառաց, և բարբառ զօրու մեծի. և ասեն այր ցեղբայր իւր. Արդ՝ ՚ի վարձու կալաւ ՚ի վերայ մեր արքայն Իսրայէլի զթագաւորս Քետացւոց, և զթագաւորս Եգիպտացւոց: ⁷Եւ յարեան և փախեան ընդ մութն, և թողին զվրանս իւրեանց, և զծիս իւրեանց՝ և զէշս իւրեանց ՚ի բանակին որպէս և կային, և փախեան մարդապուր*: ⁸Եւ մտին բորոտքն մինչև ՚ի մասն մի բանակին, մտին ՚ի վրան մի և կերան և արբին. և առին անտի արծաթ և ոսկի և հանդերձս, և գնացին՝ և չոգան թաքուցին. և դարձան և մտին յա՛յլ վրան, և առին անտի՝ և չոգան և թաքուցին: ⁹Եւ ասեն այր ցընկեր իւր. Ո՛չ այսպէս է զոր մեքս առնեմք. օ՛րս այս՝ օ՛ր աւետեաց է, և մեք լռիցե՞մք. և մնայցեմք լուսո՞յ առաւօտու, և գտանիցեմք յանօրէնութիւն. բայց արդ՝ եկայք մտցուք և պատմեսցուք զայս ՚ի տան թագաւորին*: ¹⁰Եւ մտին և աղաղակեցին առ դրան քաղաքին, և պատմեցին նոցա և ասեն. Մտա՛ք ՚ի բանակն Ասորւոց, և ո՛չ գոյր անդ այր՝ և ո՛չ ձայն մարդոյ, բայց միայն ձիք կապեալք, և էշք կապեալք, և վրանք նոցա նոյնպէս կան: ¹¹Եւ աղաղակեցին պարապանքն, և ա՛զդ արարին ՚ի տուն թագաւորին ՚ի ներքս*: ¹²Եւ յարեաւ արքայ գիշերայն, և ասէ ցժառայս իւր. Պատմեցի՛ց ձեզ զոր ինչ արարին մեզ Ասորիքն. գիտացին՝ թէ մեք սովիմք, ելին ՚ի բանակէն և թաքեան ՚ի բացի, ասեն. Թերևս ելցեն ՚ի քաղաքէն, և ըմբռնեսցուք զնոսա կենդանւոյն. և մտցուք ՚ի քաղաքն և ելցուք: ¹³Եւ պատասխանի ետ մի ոմն ՚ի ծառայից նորա և ասէ. Առցե՛ն հինգ ՚ի ձիոց մնացելոց որ մնացեալ են յամենայն բազմութենէ Իսրայէլի նուազութիւն, և առաքեսցուք անդր և տեսցուք*: ¹⁴Եւ առին երկուս հեծեալս ձիոց. և առաքեաց արքայ զհետ արքային Ասորւոց և ասէ. Երթա՛յք և տեսէ՛ք: ¹⁵Եւ գնացին զհետ նոցա մինչև ցՅորդանան. և ահա ամենայն ճանապարհն լի՛ էր հանդերձիւ և կահիւ՝ զոր ընկեցին Ասորիքն ՚ի խուճապելն իւրեանց. և դարձան հրեշտակքն և պատմեցին արքայի*: ¹⁶Եւ ել ժողովուրդն, և յափշտակեաց զբանակն Ասորւոց: Եւ եղև գրիւ նաշիւոյ՝ սկե՛ղ միոյ արծաթոյ, և

* Ոմանք. Եւ ասէ այր ցընկեր... և մեռանիցիմք:

* Ոմանք. Ընդ արշալուսն. և ոմանք. ընդ արշալուրշսն: *Յօրինակին պակասէր.* Ոչ գոյր անդ մարդ:

* *Օրինակ մի.* Եւ փախեան մտապուր:

* Ոմանք. Եւ գտանիցեմք անօրէնութիւն... զայս ՚ի տուն թագաւորի:

* Այլք. Եւ աղաղակեցին բարապանքն:

* *Բազումք.* Մնացեալ են աստէն յամենայն բազ՞:

* Ոմանք. Եւ գնացին զհետ նորա մին՞:

երկու գրիւք գարւոյ՝ սկեղ ըստ բանին Տեառն*։ ¹⁷Եւ արքայ կացոյց զսպառազէնն՝ յորոյ յենոյր արքայ ՚ի ձեռս նորա, և կոխեաց զնա ՚ի խռանն ժողովուրդն առ դրանն, և մեռաւ որպէս և խօսեցաւ այրն Աստուծոյ, որ խօսեցաւ յիջանել հրեշտակին առ նա*։ ¹⁸Եւ եղև որպէս և խօսեցաւ Եղիսեէ ընդ արքայի՝ և ասէ, թէ երկու գրիւք գարւոյ սկեղ միոյ լինիցին, և գրիւ նաշիւոյ սկեղ. և եղիցի՝ վաղիւ ՚ի սո՛յն ժամ ՚ի դրունս Սամարեայ։ ¹⁹Եւ պատասխանի ետ սպառազէնն Եղիսէի և ասէ. Եթէ սահանս յերկինս արասցէ Տէր. միթէ լինիցի՞ բանդ այդ։ ²⁰Եւ ասէ Եղիսեէ. Ահա տեսցես աչօք քովք, և անտի մի՞ կերիցես։ ²¹Եւ եղև նմա այնպէս. և կոխեա՛ց զնա ժողովուրդն ՚ի խռանն առ դրանն, և մեռա՛ւ։

8

Գլուխ Ը

ԻԱ ¹Եւ խօսեցաւ Եղիսեէ ընդ կնոջն զորոյ կեցոյց զորդին՝ և ասէ. Արի՛ զնա՛ դու ՚ի տուն քո՝ և լէ՛ր պանդուխտ ուր և պանդխտիցիս, զի կոչեաց Տէր սո՛վ ՚ի վերայ երկրիս. քանզի եկն իսկ սով զելքն ամ ՚ի վերայ երկրին*։ ²Եւ յարեաւ կինն և արար ըստ բանին Եղիսէի. և զնաց ինքն և տուն իւր, և պանդխտեցաւ յերկրին այլազգեաց եւթն ամ։

ԻԲ ³Եւ եղև յե՛տ կատարելոյ ամացն եւթանց, դարձա՛ւ կինն յայլազգեաց, և եկն բողոք հարկանել առ արքայ վասն տան իւրոյ և վասն անդոց իւրոց։ ⁴Եւ արքայ խօսեցաւ ընդ Գեեզեայ պատանեկին Եղիսէի առնն Աստուծոյ և ասէ. Պատմեա՛ դու ինձ զամենայն մեծամեծսն զոր արար Եղիսեէ։ ⁵Եւ եղև ՚ի պատմելն նորա արքայի՝ թէ ո՞րպէս կենդանացոյց զորդին զմեռեալ, և ահաւանիկ առաջի՛ անկաւ կինն զորոյ կենդանացոյց զորդին նորա Եղիսեէ. աղաղակէր առ արքայ վասն տան իւրոյ և վասն անդոց իւրոց. և ասէ Գեեզի. Տէ՛ր արքայ, այս կին է, և այս որդի դորա, զոր կենդանացոյց Եղիսեէ*։ ⁶Եւ եհարց արքայ ցկինն՝ և պատմեաց նմա. և ետ նմա արքայ ներքինի մի և ասէ. Դարձո՛ դմա զամենայն զարդիւնսն, և զամենայն զարմտիսն անդոյն, յօրէ յորմէ եթող զերկիրս մինչև ցայժմ։

ԻԳ ⁷Եւ եկն Եղիսեէ ՚ի Դամասկոս. և որդի Ադերայ արքայ Ասորւոց հիւանդանայր. և պատմեցին նմա և ասեն. Եկն այրն Աստուծոյ այսր*։ ⁸Եւ ասէ արքայ ցԱզայէլ. Առ ՚ի ձեռին քում մաննայ, և ե՛լ ընդ առաջ առնն Աստուծոյ, և հա՛րց զՏէր նովաւ, և ասացես, եթէ կեցցե՞մ ՚ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ*։ ⁹Եւ զնա՛ց Ազայէլ ընդ առաջ նորա, և ա՛ռ մաննայ ՚ի ձեռին իւրում, և զամենայն բարութիւնս Դամասկոսի բեռինս ուղտուց քառասնից. չոգաւ եկաց առաջի նորա և ասէ. Հայր Եղիսեէ. որդի քո որդի Ադերայ արքայ Ասորւոց առաքեաց զիս առ քեզ՝ և ասէ, եթէ կեցցե՞մ ՚ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ*։ ¹⁰Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ե՛րթ և ասա՛ ցնա. Կելով կեցցես։ Եւ եցոյց ինձ

* *Յայլս պակասի.* Սկեղ միոյ *արժաթոյ*, և երկու։

* *Ոմանք.* Կոխեաց զնա ՚ի խռանն ժողովրդեան առ դրան։

* *Այլք.* Գնա՛ դու և տուն քո. և լէ՛ր... քանզի և եկն իսկ եւթն ամ ՚ի վերայ երկ՞։

* *Ոմանք.* Տէր արքայ, և ասէ, այս կին է։

* *Յօրինակին.* Եւ որդի Ադերայ արքայի Ասոր՞։

* *Յօրինակին.* Եթէ կեցցե՞մ ՚ի հիւ՞։

* *Յօրինակին.* Եթէ կեցցե՞մ ՚ի հիւ՞։ *Ի բազումս պակասի. Որդի քո որդի Ադե՞։*

Տէր զի մահու մեռանիցի: ¹¹Եւ եկաց առաջի երեսաց նորա պատկառեալ. և եկաց այրն Աստուծոյ: ¹²Եւ ասէ Ազայէլ. Ընդէ՞ր լաս տէր իմ: Եւ ասէ. Գիտե՞մ զինչ գործելոց ես ընդ որդիսն Իսրայէլի, զամուրս նոցա հրձիգ արասցես, և զընտիրս նոցա սրով կոտորեսցես, և զտղայս նոցա սատակեսցես, և զյղիս նոցա հերձցես: ¹³Եւ ասէ Ազայէլ. Ո՞վ է ծառայ քո շո՞ւն մի, թէ առնիցէ զբանդ զայդ: Եւ ասէ Եղիսէ. Եցոյց ինձ Տէր թագաւորել քեզ ՚ի վերայ Ասորոց: ¹⁴Եւ գնաց յեղիսէ և եմուտ առ տէր իւր. և ասէ ցնա. Զի՞նչ ասաց Եղիսէ: Եւ ասէ. Ասա՛ց ցիս թէ կելով կեցցէ՛: ¹⁵Եւ եղև ՚ի վաղիւ անդր՝ և ա՛ռ մաքման և եթաց ՚ի ջուր և արկ գերեսօք իւրովք՝ և մեռաւ՛:

Ի՞նչ Եւ թագաւորեաց Ազայէլ ընդ նորա: ¹⁶Յամի հինգերորդի Յովրամայ որդւոյ Աքաաբու արքայի Իսրայէլի, թագաւորեաց Յովրամ որդի Յովսափատայ արքայի Յուդայ: ¹⁷Որդի երեսուն և երկու՛ ամաց էր ՚ի թագաւորել իւրում. և ութ ամ թագաւորեաց յերուսաղէմ՛: ¹⁸Եւ գնաց զճանապարհս թագաւորաց Իսրայէլի, որպէս արար տունն Աքաաբու. զի դուստր Աքաաբու էր նորա կնութեան. և արար չար առաջի Տեառն: ¹⁹Եւ ո՛չ կամեցաւ Տէր ապականել զՅուդայ վասն Դաւթի ծառայի իւրոյ՝ որպէս և ասաց տա՛լ նմա ճրագ, և որդւոց նորա զամենայն աւուրս: ²⁰Եւ յաւուրս նորա նշկահեաց Եդոմ ՚ի ներքուստ ձեռին Յուդայ, և թագաւորեցո՛յց ՚ի վերայ իւր թագաւոր: ²¹Եւ ե՛լ Յովրամ ՚ի Սիւվր, և ամենայն կառք ընդ նմա. և եղև ընդ վաղայարոյցս լինելոյ զիշերոյն, և եհար զԵդոմն զպատեալն զիւրեաւ և զիշխանս կառացն. և փախեաւ զօրն յիւրաքանչիւր խորանս իւրեանց: ²²Եւ նշկահեաց Եդոմ ՚ի ներքուստ ձեռին Յուդայ մինչև ցայսօր: Յայնմ ժամանակի նշկահեաց և Ղոբնա: ²³Եւ մնացորդք բանից Յովրամայ, և ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ:

Ի՛նչ ²⁴Եւ ննջեաց Յովրամ ընդ հարս իւր, և թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ. և թագաւորեաց Ոքոզիա որդի նորա ընդ նորա: ²⁵Յամի՛ երկոտասաներորդի Յովրամայ որդւոյ Աքաաբու արքայի Իսրայէլի թագաւորեաց Ոքոզիա որդի Յովրամայ արքայի Յուդայ: ²⁶Քսա՛ն և երկուց ամաց էր Ոքոզիա ՚ի թագաւորել իւրում, և տարի մի թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Գոդոլիա դուստր Ամրեայ արքայի Իսրայէլի՛: ²⁷Եւ գնաց զճանապարհ տանն Աքաաբու. և արար չար առաջի Տեառն որպէս և տունն Աքաաբու. քանզի փեսայ էր տանն Աքաաբու: ²⁸Եւ գնաց ընդ Յովրամայ որդւոյ Աքաաբու՝ ՚ի պատերազմ ՚ի վերայ Ազայէլի արքայի Ասորոց յՌամաթ Գաղաադ, և հարին Ասորիքն զՅովրամ՛: ²⁹Եւ դարձաւ արքայ Յովրամ բժշկել ՚ի Յեզրայէլ՝ ՚ի վիրացն զոր խոցեցին զնա Ասորիքն յՌամաթ՝ ՚ի պատերազմել նորա ընդ Ազայէլի արքայի Ասորոց: Եւ Ոքոզիա որդի Յովրամայ արքայ Յուդայ է՛ջ տեսանել զՅովրամ որդի Աքաաբու Յեզրայէլ, զի հիւանդանայր նա՛:

* *Բազումք.* Եւ գնաց Ազայէլ և եմուտ առ տէր:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ մաքման, *նշանակի՝* Սիմ. Ավ. այսինքն՝ *Սիմաքոս և Ակիւղաս ունին՝* ընկողին:

* *Ոմանք.* Որդի Յովսափատայ ՚ի Յուդայ:

* *Բազումք.* Եւ քառասուն ամ թագաւորեաց յերուսաղէմ. և գնաց:

* *Ոմանք.* Գոթոլիա դուստր:

* *Ոմանք.* ՅՌամովք Գաղա՛:

* *Ոմանք.* ՅՌամովք Գաղա՛: *Այլք.* Որդի Յովրամայ արքայ Յուդայ էջ տե՛:

Գլուխ Թ

ԻՉ ¹Եւ Եղիսէ՛ւ մարգարէ կոչեաց զմի յորդոց մարգարէիցն՝ և ասէ ցնա. Պնդեա՛ զմէջ քո, և ա՛ռ զսրուակ իւղոյս ՚ի ձեռի՛ն քում. և ե՛րթ յՌամաթ Գաղաադ*։ ²Եւ մտցե՛ս անդր, և տեսցես դու անդ զՅէու զորդի Յովսափատայ զորդի Ամեսսեայ. և մտցես և յարուսցես զնա ՚ի միջոյ եղբարց իւրոց. և տարցի՛ս զնա սենեակ ՚ի սենեկէ*։ ³և առցես զսրուակդ իւղոյ, և արկցես ՚ի գլուխ նորա, և ասասցես. Այսպէս ասէ Տէր. Օծի՛ զքեզ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի. և բացցես զդուռն և փախիցես, և մի՛ մնասցես։ ⁴Եւ զնաց պատանեակն մարգարէ յՌամաթ Գաղաադ*, ⁵և եմուտ անդր. և ահա իշխանք զօրուն նստիին. և ասէ. Բա՛ն ինչ է ինձ ընդ քեզ իշխանդ։ Եւ ասէ Յէու. Առ ո՞ յամենեցունց ՚ի մէնջ։ Եւ ասէ. Առ քե՛զ իշխանդ։ ⁶Եւ յարեաւ եմուտ ՚ի սենեակն, և արկ զեղն ՚ի գլուխ նորա. և ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Օծի՛ զքեզ ՚ի թագաւոր ժողովրդեան Տեառն ՚ի վերայ Իսրայէլի. ⁷զի սատակեսցես զտունն Աքաաբու տեառն քո յերեսաց քոց. և առցես զվրէժ արեան ծառայից իմոց մարգարէից, և զարեանց ամենայն ծառայից Տեառն ՚ի ձեռաց Յեզաբելայ, և ՚ի ձեռաց ամենայն տան նորա*։ ⁸Եւ սատակեսցես զտանն Աքաաբու՝ որ միզիցէ զորմով. և զնեղեալն և զմնացեալն յԻսրայէլէ*։ ⁹տա՛լ զտունն Աքաաբու իբրև զտունն Յերոբովամու որդւոյ Նաբատայ. և իբրև զտունն Բասսայ որդւոյ Աքիայ. ¹⁰և զՅեզաբել կերիցեն շունք ՚ի վիճակին Յեզրայելի. և ոչ ոք իցէ որ թաղիցէ։ Եւ եբաց զդուրսն և փախեաւ։ ¹¹Եւ Յէու ե՛լ առ ծառայս տեառն իւրոյ. և ասեն ցնա. Ողջո՞յն է, զի՞ եկն առ քեզ մոլի՛ն այն։ Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնի՛ն գիտէք զայրն՝ և զբաջադանս նորա։ ¹²Եւ ասեն. Անիրաւութիւն է այդ՝ պատմեա՛ մեզ։ Եւ ասէ ցնոսա Յէու. Այսպէս և այսպէս խօսեցաւ ընդ իս, և ասէ. Այսպէս ասէ Տէր. Օծի՛ զքեզ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի*։ ¹³Իբրև լուան՝ փութացան և առին իւրաքանչիւր զբաճկոն իւր, և եղին ՚ի ներքոյ նորա ՚ի վերայ միոյ աստիճանացն ուր նստիին. և փող հարին եղջերեալն՝ և ասեն. Թագաւորեաց՛ Յէու*։

ԻԷ ¹⁴Եւ զօրածողով եղև Յէու որդի Յովսափատայ որդւոյն Ամեսսեայ ՚ի վերայ Յովրամայ, և Յովրամ զգուշացեալ էր յՌամաթ Գաղաադ. ի՛նքն և ամենայն Իսրայէլ յերեսաց Ազայելի արքայի Ասորւոց. ¹⁵և դարձաւ Յովրամ արքայ բժշկել ՚ի Յեզրայէլ՝ ՚ի վիրաց անտի զոր խոցեցին զնա Ասորիքն ՚ի պատերազմել նոցա ընդ Ազայելի արքայի Ասորւոց։ Եւ ասէ Յէու. Եթէ իցէ ոգի ձեր ընդ իս՝ մի՛ ելցէ փախստական ՚ի քաղաքէն երթալ պատմել ՚ի Յեզրայէլ*։ ¹⁶Եւ հեծաւ Յէու և զնաց, և էջ Յեզրայէլ. զի Յովրամ արքայ Իսրայէլի բժշկէր ՚ի Յեզրայէլ ՚ի նետիցն զոր խոցեցին զնա յՌամաթ ՚ի պատերազմել ընդ Ազայելի արքայի Ասորւոց. զի նա զօրաւոր էր՝ և այր զօրութեան. և ննջեաց անդ. և Ոքոզիա արքայ Յուդայ էջ տեսանել զՅովրամ։ ¹⁷Եւ դէտն ե՛լ յաշտարակն

* *Յօրիմակին*. Իւղոյս ՚ի ձեռ քում։

* *Բագումք*. Որդւոյ Ամեսսեայ։

* *Ոսկան*. Պատանեակն մարգարէի։

* *Ոմանք*. Եւ սատակեսցես զտունն։

* *Ոմանք*. Եւ զմնացեալն յԻսրայէլի։

* *Ոմանք*. Եւ ասեն ցնա. Անիրա՛։

* *Ոմանք*. Ի վերայ միոյ աշտիճանացն։

* *Ոմանք*. Ի քաղաքէս. *կամ* ՚ի քաղաքէ աստի... պատմել Յեզրայէլի։

Յեզրայելի, և ետես փոշի ՚ի գալն Յեուայ և ասէ. Փոշի՛ տեսանեն՝ ես: Եւ ասէ Յովրամ. Ա՛ն հեծեալ մի և առաքեա՛ ընդ առաջ նոցա, և ասասցէ. Ողջո՞յն է: ¹⁸Եւ չոգաւ հեծեալն ձիոյ ընդ առաջ նորա՝ և ասէ. Այսպէս ասէ արքայ, թէ ողջո՞յն իցէ: Եւ ասէ Յեու. Չի՞ կայ քո և ողջունի, դարձի՛ր զկնի իմ: Եւ պատմեաց դէտն և ասէ. Եհա՛ս ՚ի նոսա հրեշտակն՝ և ո՛չ դարձաւ: ¹⁹Եւ արձակեաց երկրորդ հեծեալ մի ձիոյ՝ և ասէ. Այսպէս ասէ արքայ, թէ ողջոյն իցէ: Եւ ասէ Յեու. Չի՞ կայ քո և ողջունի, դարձի՛ր զկնի իմ: ²⁰Եւ պատմեաց դէտն և ասէ. Եհա՛ս ՚ի նոսա, և ո՛չ դարձաւ: և որ ածերն՝ ած զՅեու զորդին Ամեսսեայ. քանզի տազնապաւ եհաս՝: ²¹Եւ ասէ Յովրամ. Լծեա՛: Եւ լծեցին կառս. և ամբարձաւ Յովրամ արքայ Իսրայելի, և Ոքոզիա արքայ Յուդայ՝ այր յիւրաքանչիւր կառս իւր, և ելին ընդ առաջ Յեուայ. և գտին զնա ՚ի վիճակին Նաբաւթայ Յեզրայելացոյ: ²²Եւ եղև իբրև ետես Յովրամ զՅեու, և ասէ. Ողջո՞յն է Յեու: Եւ ասէ Յեու. Չի՞նչ ողջոյն է, տակաւին պռնկութիւն Յեզաբելայ մօր քոյ՝ և կախարդութիւն նորա յաճախիցե՞ն: ²³Եւ դարձոյց Յովրամ զկառս իւր և փախեաւ, և ասէ ցՈքոզիա. Դա՛ւ է Ոքոզիա: ²⁴Եւ ընդ գիրկս եմուտ, և եհար զՅովրամ ընդ մէջ թիկանց նորա, և ել նետն ընդ սիրտ նորա, և կծկեցաւ ՚ի վերայ ծնգաց իւրոց: ²⁵Եւ ասէ ցԲաղեկար սպառազէնն իւր. Ընկեա՛ զդա ՚ի վիճակի ագարակին Նաբովթայ Յեզրայելացոյ, զի յիշեն մինչդեռ ես և դու հեծեալ էաք ՚ի զոյգս՝ զկնի Աքաաբու հօր դորա. և Տէր ա՛ն ՚ի վերայ դորա զառաժս զայս: ²⁶Եթէ ո՛չ զարիւնն Նաբովթայ՝ և զարիւն որդւոց նորա զոր տեսին երէկ՝ ասէ Տէր, հատուցի՛ց նմա ՚ի վիճակս յայսմիկ՝ ասէ Տէր. և արդ ա՛ն ընկեա՛ զդա ՚ի վիճակ այդր ըստ բանին Տեառն: ²⁷Եւ Ոքոզիա արքայ Յուդայ ետես՝ և փախեաւ ընդ ճանապարհն Բեթանգանայ. և պնդեցաւ զհետ նորա Յեու՝ և ասէ. Զա՛պա, և զդա ևս: Եւ եհար զնա ՚ի կառսն մինչդեռ ելանէր ընդ զառ ՚ի վերն Բերայի, որ է Յեբղասան. և փախեաւ ՚ի Մակեդոնով, և ա՛նդ մեռաւ: ²⁸Եւ հանին զնա ծառայք իւր յերուսաղէն. և թաղեցին զնա ՚ի գերեզմանի իւրում ընդ հարս իւր ՚ի քաղաքին Դաւթի: ԻԸ ²⁹Եւ յամին մետասաներորդի՛ Յովրամայ արքային Իսրայելի, թագաւորեաց Ոքոզիա ՚ի վերայ Յուդայ: ³⁰Եւ եկն Յեու Յեզրայել:

ԻԹ Եւ Յեզաբել լուաւ, և ծարրեաց զաչս իւր՝ և զարդարեաց զգլուխ իւր՝ և հայէր ընդ պատուհանն: ³¹Եւ Յեու մտանէր ՚ի քաղաքն. և ասէ. Ողջո՞յն իցէ Չամրի տիրասպան: ³²Եւ ամբարձ գերեսս իւր ՚ի պատուհանն՝ և ասէ. Ո՞վ ես դու, է՛ջ առ իս: Եւ հայեցան առ նա ՚ի խոնարհ երկու ներքինիք: ³³Եւ ասէ. Ընկեցէ՛ք զդա ՚ի խոնարհ: Եւ ընկեցին զնա. և ցայտեցաւ յարեմէ նորա զորմովքն և զձիովքն: և կոխեցին զնա առաթուր: ³⁴Եւ ինքն եմուտ՝ եկեր և արք. և ասէ. Տեսէ՛ք զանիծեալն զայն՝ և թաղեցէ՛ք զնա զի դուստր թագաւորի՛ է: ³⁵Եւ չոգան թաղել զնա, և ո՛չ ինչ գտին ՚ի նմանէ, բայց զգագաթնն և զոտսն և զթաթս ձեռացն: ³⁶Եւ դարձան պատմեցին նմա. և ասէ. Բա՛ն Տեառն է զոր խօսեցաւ ՚ի

* Ոմանք. երկրորդ հեծեալ մի ձիոյ, և ասասցէ. Այսպէս... թէ ողջոյն է:
 * Ի լուս՝. ՚ի վերայ՝ և որ ածերն. նշանակի՝ Սիմ. և վարելն իբրև զվարելն Յեուայ:
 * Ոմանք. Ել լծեա՛... և ամբարձ Յովր... այր իւրաքանչիւր ՚ի կառս:
 * Ոմանք. Եւ դարձոյց Յովրամ զձեռս իւր և փախեաւ:
 * Այլք. Ի վիճակ ագարակին Նաբով:
 * Ոմանք. Ի վիճակ անդր ըստ բանի:
 * Բազումք. Ընդ հարս իւրում ՚ի քա՛:
 * Ոմանք. Եւ Յեզաբել լուծաւ. և ծարրեաց:
 * Յօրինակին պակասէր. Եւ ո՛չ ինչ գտին ՚ի նմանէ:

ծեռն եղիայի Թեգբացւոյ՝ և ասէ՛. Ի վիճակին Յեզրայելի կերիցեն շո՛ւնք
զմարմինս Յեզաբելայ՝. ³⁷և եղիցի դին Յեզաբելայ իբրև զա՛դք՝ ի վերայ երեսաց
անդոյ վիճակին. զի մի՛ լինիցի ասել նոցա՝ թէ այս է Յեզաբել՝:

10

Գլուխ Ժ

Լ ¹Եւ Աքաաբու էին որդիք եւթանասուն՝ ի Սամարիա. և գրեա՛ց Յեու
հրովարտակ՝ և առաքեաց ՚ի Սամարիա առ իշխանսն Սամարիայ և առ ծերս և
առ դայեակսն Աքաաբու՝ և ասէ. ²Իբրև հասանիցէ առ ձեզ հրովարտակդ այդ,
ընդ ձե՛զ են որդիք տեառն ձերոյ, և ընդ ձե՛զ կառք և երիվարք՝ և ընդ ձե՛զ
քաղաքք ամուրք՝ և զէնք. ³և տեսանիցէք զլաւ և զուղիղ յորդոց տեառն ձերոյ, և
հաստատեցէք զնա ՚ի վերայ աթոռոյ հօր իւրոյ. և տայցէք պատերազմ ՚ի վերայ
տան տեառն ձերոյ՝: ⁴Եւ երկեան յոյժ, և ասեն. Ահա երկու թագաւորքն ո՛չ
կալան զդէմ նորա, և մեք զիա՞րդ ունիցիմք զդէմ՝: ⁵Եւ առաքեցին ՚ի տանէն և ՚ի
քաղաքէն, և ծերքն և դայեակք առ Յեու՝ և ասեն. Ծառայք քո ենք մեք, և զոր ինչ
ասասցես մեզ՝ արասցուք. և ո՛չ թագաւորեցուցուք զոր, այլ զոր ինչ բարի՛ է
առաջի քո՝ արասցուք՝: ⁶Եւ գրեաց առ նոսա հրովարտակ երկրորդ՝ և ասէ. Եթէ
ի՛մ էք դուք՝ և ձայնի իմում լւէք. առէք զգլուխս արանց որդւոց տեառն ձերոյ՝ և
բերէք առ իս վաղիւ ՚ի սոյն ժամու Յեզրայել: Եւ որդիք արքայի՝ էին արք
եւթանասուն. և ճոխք քաղաքին սնուցանէին զնոսա՝: ⁷Եւ եղև իբրև եհաս
հրովարտակն առ նոսա, կալան զորդիսն արքայի՝ և սպանին արս
եւթանասուն, և եղին զգլուխս նոցա ՚ի կողովս, և առաքեցին առ նա ՚ի Յեզրայել:
⁸Եւ եկն հրեշտակն և պատմեաց և ասէ. Բերին զգլուխս որդւոցն արքայի: Եւ
ասէ. Դի՛ք զնոսա երկուս զրահանս արտաքոյ քաղաքին մինչև յառաւօտ: ⁹Եւ
եղև ընդ առաւօտն ե՛լ և եկաց, և ասէ ցամենայն ժողովուրդն. Արդար էք դուք.
ահաւասիկ ես յարեայ ՚ի վերայ տեառն իմոյ և սպանի զնա. տեսէք զսոսա
ափսիով՝ ո՞ կոտորեաց՝. ¹⁰զի մի՛ անկանիցի ՚ի բանէն Տեառն յերկիր, զոր
խօսեցաւ Տէր ՚ի վերայ տանն Աքաաբու, և Տէր արար զոր ինչ խօսեցաւ ՚ի ձեռն
ծառայի իւրոյ Եղիայ՝: ¹¹Եւ եհար Յեու զամենայն մնացեալս ՚ի տանէ Աքաաբու
՚ի Յեզրայել, և զամենայն մեծամեծս նորա, և զժանօթս նորա, և զքուրմս նորա,
առ ՚ի չթողոյ նմա մնացորդ: ¹²Եւ յարեաւ զնաց, և չոգաւ ՚ի Սամարիա: Եւ
մինչդեռ ՚ի Բեթակադ՝ հովուաց ՚ի ճանապարհին էր. ¹³և եգիտ Յեու զեղբարս
Ոքոզիայ արքայի Յուդայ, և ասէ. Ո՞յր էք դուք: Եւ ասեն. Եղբարք Ոքոզիայ ենք
մեք, և իջաք յողջոյն որդւոց արքայի, և որդւոց զօրացելոյս՝: ¹⁴Եւ ասէ.
Կալարուրք զդոսա կենդանիս: Եւ կալան զնոսա կենդանիս, և կոտորեցին

* Ոմանք. Եւ դարձան և պատ՛: Այլք. Ձմարմինն Յեզաբելայ:

* Ոմանք. Ի վերայ երեսոյ անդոյ ՚ի վիճա՛:

* Ոմանք. Եւ տեսանէք զլաւ... և հաստատիցէք:

* Այլք. Եւ երկեան յոյժ յոյժ և ասեն. Ահա:

* Այլք. Այլ որ ինչ բարին է:

* Բազումք. Վաղիւ ՚ի սոյն ժամ ՚ի Յեզրայել:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ ափսիով. նշանակի՝ այժմ:

* Ոսկան. Գիտացէք այժմ զի մի ան՛:

* Յօրինակին պակասէր. Եղբարք Ոքոզիայ ենք մեք. և ի՛: Ի լուս՝. ՚ի վերայ՝ զօրացելոյս.
նշանակի՝ Ակ. աշխարհատիկնոցս:

զնոսա՝ ի Բեթակադ՝ արս քառասուն և երկուս. և ո՛չ մնաց ՚ի նոցանէ այր:

ԼԱ ¹⁵Եւ գնաց անտի, և եգիտ զՅովնադաբ որդի Ռեքաբայ ընդ առաջ իւր, և օրհնեաց զնա. և ասէ ցնա Յէու. Եթէ իցէ՞ սիրտ քո ուղիղ իբրև զսիրտ իմ, ըստ սրտի քում: Եւ ասէ Յովնադաբ. Է՛: Եւ ասէ Յէու. Եթէ իցէ, տո՛ւր ցիս զծեռն քո: Եւ ետ զծեռն իւր. և եհան զնա առ իւր ՚ի կառսն*.¹⁶ և ասէ ցնա. Ե՛կ ընդ իս՝ և տես՝ զնախանձ իմ վասն Տեառն: Եւ նստոյց զնա ՚ի կառս իւր*.¹⁷ Եւ եմուտ ՚ի Սամարիա, և եհար զամենայն մնացորդս Աքաաբու ՚ի Սամարիա. մինչև ապականել նմա զնոսա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ընդ Եղիայի:

ԼԲ ¹⁸Եւ ժողովեաց Յէու զամենայն ժողովուրդն՝ և ասէ ցնոսա. Աքաաբ ծառայեաց Բահաղու սակաւ ինչ. Յէու՝ ծառայեսցէ նմա բազում:¹⁹ Եւ արդ՝ ամենայն մարգարէք Բահաղու, զամենայն ծառայս նորա և զքուրմս նորա կոչեցէք առ իս. և այր ոք մի՛ վրիպեսցէ. զի զոհ մե՛ծ է Բահաղու. և որ վրիպեսցէ, մի՛ ապրեսցի: Եւ Յէու արար խաբանօք, զի կորորեսցէ զծառայս Բահաղու*:²⁰ Եւ ասէ Յէու. Սրբեցէ՛ք նուէրս Բահաղու: Եւ քարո՛զ կարդացին:²¹ Եւ առաքեաց Յէու ընդ ամենայն Իսրայէլ, և եկին ամենայն ծառայք Բահաղու. և ո՛չ մնաց որ ո՛չ եկն. և մտին ՚ի տունն Բահաղու, և լցաւ տունն Բահաղու ծայր ՚ի ծայր*:²² Եւ ասէ Յէու ցմիսբաղսն. Հանէ՛ք զպատմութեանս ամենայն ծառայից Բահաղու: Եւ հանին նոցա զպատմութեանս*:²³ Եւ եմուտ Յէու՝ և Յովնադաբ որդի Ռեքաբայ ՚ի տունն Բահաղու. և ասէ ցծառայսն Բահաղու. Որոնեցէ՛ք և տեսէ՛ք՝ թէ իցէ՞ ոք աստ ընդ ձեզ ՚ի ծառայից Տեառն. բայց դուք միայն ծառայք Բահաղու:²⁴ Եւ եմուտ առնել խո՛ւնկս և ողջակէզս Յէու: Եւ Յէու կացոյց իւր արտաքոյ երեքարկր և ութսուն այր, և ասէ. Այր որ ապրեսցէ՛ յարանցն զոր ես հանեմ ՚ի ձեռս ձեր, անձն նորա փոխանակ անձին նորա*:²⁵ Եւ եղև իբրև կատարեաց առնել զողջակէզսն, և ասէ Յէու ցսուրհանդակսն և ցսպառազէնս. Մտէ՛ք հանէ՛ք զնոսա, և այր մի՛ ելցէ ՚ի նոցանէն: Եւ հարին զնոսա սրով տուսերի. և ընկեցին սուրհանդակքն և սպառազէնք. և զնացին մինչև ցքաղաք տանն Բահաղու*.²⁶ և հանին զարծանն Բահաղու, և այրեցին զնա*:²⁷ Եւ կործանեցին զարծանն Բահաղու, և քակեցին զտունն Բահաղու. և կարգեցին զնա ՚ի լուալիս մինչև ցայսօր*:²⁸ Եւ ապականեաց Յէու զԲահաղ յԻսրայէլէ:²⁹ Բայց ՚ի մեղացն Յերոբովամու որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ ո՛չ մեկնեցաւ Յէու, յերնջոցն ոսկեաց, որ ՚ի Բեթէլ և ՚ի Դան:³⁰ Եւ ասէ Տէր ցՅէու. Փոխանակ զի քաջացար առնել ուղղութիւն առաջի իմ, ըստ ամենայնի՝ որ ինչ ՚ի սրտի իմում արարեր տանն Աքաաբու. որդիք չորրորդք նստցին քեզ յաթոռ Իսրայէլի:³¹ Եւ Յէու ո՛չ զգուշացաւ զնալ յօրէնս Տեառն Աստուծոյ Իսրայէլի յամենայն սրտէ իւրմէ. և ո՛չ մեկնեցաւ ՚ի մեղացն Յերոբովամայ որ յանցոյցն զԻսրայէլ:

³²Յաւուրսն յայնոսիկ սկսաւ Տէր կոտորել յամենայն սահմանս Իսրայէլի. և

* Այլք. Ընդ սրտի քում:

* Ոմանք. ՚ի կառսն իւրում:

* Բազումք. Ձի կորուսցէ զծառայս Բա՛:

* Բազումք. Եւ ո՛չ մնաց այր որ ո՛չ եկն: Ոսկան. ՚ի ծայրէ ՚ի ծայր:

* Ոմանք. Յմիսբաղսն... և հանին զնոցա պատմութեանս:

* Ոմանք. Եւ եւթանասուն այր... որ ապրեսցուցէ յարանցն զոր:

* Ի լուս՝. Մտէ՛ք հարէք զնոսա. համաձայն այլոց ՚ի բնաբ՝: Ուր ոմանք. հարէք զդոսա:

* Այլք. Եւ հանին զարծան տանն Բահաղու:

* Ի լուս՝. ՚ի վերայ ՚ի լուալիս. նշանակի՛ յաղբոցս. յոր ոմանք յաւելուն ՚ի լուս՝. և՝ ապարահանոցս. կամ՝ տըտոցս:

եհար զնոսա Ազայլ յամենայն սահմանս Իսրայէլի, ³³ի Յորդանանէ և ընդ արևելս, զամենայն երկիրն զԳաղաադ և զԳաղայ՝ և զՌոբենի՝ և զՄանասէի. յԱրոյերայ, որ է յեզեր հեղեղատին Աննովնայ, և զԳաղաադ և զԲասան: ³⁴Եւ մնացորդք բանիցն Յեուայ և ամենայն ինչ զոր արար, և ամենայն զօրութիւն նորա, և ամենայն խումբքն զոր խմբեաց. ո՞չ աւանիկ գրեալ են՝ ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի:

ԼԳ ³⁵Եւ ննջեաց Յեու ընդ հարս իւր, և թաղեցին զնա ՚ի Սամարիա. և թագաւորեաց Յովաքազ որդի նորա ընդ նորա: ³⁶Եւ աւուրք զորս թագաւորեաց Յեու՝ ՚ի վերայ Իսրայէլի ամբ քսան և ութ՝ ՚ի Սամարիա:

11

Գլուխ ԺԱ

ԼԴ ¹Եւ Գողոդիա մայր Ոքոզիայ, ետես եթէ մեռան որդիք նորա, կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն: ²Եւ ա՛ն Յովաքաբէէ դուստր արքայի Յովրամայ եղբայր Ոքոզիայ, զՅովաս զորդի Ոքոզիայ, և գողացաւ զնա ՚ի միջոյ որդւոցն արքայի սպանելոցն, զնա՝ և զղայեակ նորա ՚ի սենեկի ընկողնոց, և թաքոյց զնա յերեսաց Գողոդիայ՝ և ո՛չ մեռաւ*: ³Եւ էր ընդ նմա ՚ի տան Տեառն թաքուցեալ ամս վեց. և Գողոդիա թագաւորեալ էր ՚ի վերայ երկրին: ⁴Եւ յամին եւթներորդի առաքեաց Յովիդայէ, և ա՛ն զհարիւրապետսն, և զքոռին և զռասիմ, և աժ զնոսա ՚ի տուն Տեառն, և ուխտեաց նոցա զուխտ Տեառն. և եցոյց նոցա Յովիդայէ զորդին արքայի*: ⁵Եւ պատուէր ետ նոցա՝ և ասէ. Այս բան է զոր առնիցէք. երրորդ մասն ՚ի ձէնջ մտցէ շաբաթամուտ. և պահեսջիք զպահպանութիւն տանն արքունի ՚ի դրանն. ⁶և երրորդ մասն ՚ի դրան ճանապարհացն. և երրորդ մասն ՚ի դրան զկնի օժընդակացն՝ պահեսջիք զպահպանութիւն տանն*: ⁷Եւ երկու ձեռք ՚ի ձեզ. ամենայն որ ելանիցէ ընդ շաբաթամուտսն զգուշանալ տանն Տեառն. զգուշացի՝ պահպանութեամբ տանն Տեառն արքայի*. ⁸և պատեսջիք զարքայիւ. այր, և գործի իւր ՚ի ձեռին իւրում. և որ մտանիցէ ՚ի սաղերովքն՝ մեռցի. և ինքն էր ընդ արքայի ՚ի մտանելն նորա և յելանելն նորա*: ⁹Եւ արարին հարիւրապետքն՝ զամենայն զոր պատուիրեաց Յովիդայէ իմաստուն. և առնոյր այր զարս իւր, և զմտօսն ՚ի շաբաթամուտսն հանդերձ ելողօքն ՚ի շաբաթամտէն: և մտանէր առ Յովիդայէ քահանայ: ¹⁰Եւ ե՛տ քահանայն հարիւրապետացն գեղարդունսն, և զբովանդակ զէնն արքայի Դաւթի որ կայր ՚ի տանն Տեառն: ¹¹Եւ յարեան օժընդակքն՝ այր և գործի իւր ՚ի ձեռին իւրում. յաջոյ ուսոյ տանն, մինչև ցձախոյ ուս տանն և սեղանոյն, և տանն արքունի շուրջանակի: ¹²Եւ առաքեաց զարքայորդին, և եղ ՚ի վերայ նորա զյեզերն և զվկայութիւնն. և թագաւորեցոյց զնա՝ և օժ զնա. և ծա՛փս եհար և ասէ. Կեցցէ՛ արքայ*:

* Ոմանք. ՚ի սպանելոցն զնա և զղայեակ նորա ՚ի սենեկէ անկողնոց:

* Բազունք. Յովիդայէ. *իսկ Ոսկան*. Յովիդայ: *Ի լուս*. ՚ի վերայ՝ զքոռին և զռասիմ. *նշանակի*՝ Սիմ. զաւժանդակսն. Ակ. զգգիրսն:

* Ոմանք. Օժանդակացն և պահես՝:

* Այլք. Պահպանութեան տանն Տեառն առ արքայ:

* *Ի լուս*. ՚ի վերայ՝ ՚ի սաղերովքն, *նշանակի*՝ Ակ. փողոցն:

* Ոմանք. Եւ ետ ՚ի վերայ նորա զյազերն: *Ի լուս*. ՚ի վերայ՝ զյեզերն. *նշանակի*՝

ԼԵ ¹³Եւ լուաւ Գողողիա զձայն ընթանալոյ ժողովրդեանն, և եմուտ առ ժողովուրդն 'ի տունն Տեառն. ¹⁴և ետես, և ահա կայր 'ի վերայ սեանն՝ ըստ օրինի իւրուն, և երգիչք և փողարք շուրջ զարքայիւ. և ամենայն ժողովուրդք երկրին խնդային, և փողս հարկանէին փողովք. և պատառեաց Գողողիա զհանդերձս իւր, աղաղակեաց և ասէ. Դա՛ւ է, դա՛ւ է: ¹⁵Եւ պատուէր ետ Յովիդայէ քահանայ հարիւրապետացն ոստիկանաց զօրուն՝ և ասէ ցնոսա. Հանէ՛ք զդա 'ի ներքուստ սաղերովթայդ, և որ մտանիցէ զկնի դորա՝ մեռցի՛ սրով. քանզի ասաց քահանայն թէ մի՛ մեռցի 'ի տանն Տեառն*: ¹⁶Եւ արկին ձեռն 'ի նա, և մտին ընդ ճանապարհ մտից երիվարաց տանն արքայի, և մեռաւ անդ*: ¹⁷Եւ ուխտեաց Յովիդայէ ուխտ 'ի մէջ Տեառն՝ և 'ի մէջ արքայի, և 'ի մէջ ժողովրդեան, # լինել ժողովուրդ Տեառն և 'ի մէջ արքայի և 'ի մէջ ժողովրդեան*: ¹⁸Եւ եմուտ ամենայն ժողովուրդ երկրին 'ի տուն Բահաղու, և կործանեցին զնա՝ և զսեղանս նորա, և զպատկերս նորա խորտակեցին մանր. և զՄաթան զքուրմսն Բահաղու սպանին յանդիման սեղանոյն: Եւ եղ քահանայն ոստիկանս 'ի տան Տեառն*: ¹⁹Եւ ա՛ռ զհարիւրապետսն՝ և զքոռին՝ և զռասիմ, և զամենայն ժողովուրդ երկրին, և իջուցին զարքայ 'ի տանն Տեառն. և եմուտ ընդ ճանապարհն սուրհանդակաց դրան տանն արքունի, և նստոյց զնա յաթոռն թագաւորաց: ²⁰Եւ ուրախ եղև ամենայն ժողովուրդ երկրին. և քաղաքն դադարեաց. և զԳողողիայ սպանին սրով 'ի տանն արքայի: ²¹Որդի եւթն ամաց Յովաս 'ի թագաւորե՛լ իւրուն:

12

Գլուխ ԺԲ

¹Յամին եւթներորդի Յեուայ թագաւորեա՛ց Յովաս. և քառասուն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. և անուն մօր նորա Սաբիա 'ի Բերսաբէէ: ²Եւ արա՛ր Յովաս ուղղութիւն առաջի Տեառն զամենայն աւուրս զորս լուսաւորեաց զնա Յովիդայէ քահանայ: ³Բայց 'ի բարձանցն ո՛չ մեկնեցան. և անդ տակաւին զոհէր ժողովուրդն, և արկանէր խունկս 'ի բարձունսն*: ⁴Եւ ասէ Յովաս ցքահանայսն. Չամենայն արծաթ սրբութեանցն մտեալ 'ի տուն Տեառն՝ արծաթ՝ իւրաքանչիւր առն անցելոյ 'ի համարի ոգւոց, զամենայն արծաթ որ անկանիցի 'ի սիրտ մարդոյ բերել 'ի տուն Տեառն*. ⁵առցեն յիւրեանս քահանայքն, այր իւրաքանչիւր 'ի վաճառէ իւրեանց. և նոքա կազմեսցեն զբեղեկ տանն Տեառն. յամենայն իմիք ուր գտանիցի անդ բեղեկ*: ⁶Եւ եղև 'ի քսաներորդի և յերկրորդի

զսրբութիւնն:

* *Յօրինակին*. Եւ ասէ ցնա. Հանէ՛ք: *Ոմանք*. Սաղարովթայդ:

* *Այլք*. Երիվարաց տանն արքայի:

* *Ոմանք*. Լինել 'ի ժողովուրդ Տեառն: *Ուր յետ այսորիկ կրկնութիւն վերոգրեալ բանին՝* և 'ի մէջ արքայի և 'ի մէջ ժողովրդեան, *պակասի յոմանս. որպէս և ընդօրինակող մերունս զաղափարի զանց առնէ զնովաս:*

* *Ի լուս՝* 'ի վերայ՝ և զմաթան, *նշանակի՝* Ակ. զերկերիւր: *Ուր Ոսկան*. Եւ զՄաթան զքուրմն Բա՛:

* *Ոմանք*. Բայց 'ի բարձանցն ո՛չ մեկնեցաւ:

* *Ի լուս՝* Արծաթ գնոց իւրա՞. *համաձայն ոմանց՝ 'ի բնաբ՞:*

* *Ի լուս՝* Այր իւրաքանչիւր 'ի գնոց իւրեանց: *Ի լուս՝* 'ի վերայ՝ զբեղեկ տանն. *նշանակի՝* պիտոյի կազմած: *Ուր ոմանք ունին*. կազմեսցեն կազմած եկ տանն Տեառն:

ամի Յովասու արքայի՝ ո՛չ կազմեցին քահանայքն զբեղեկ տանն Տեառն*։ ⁷Եւ կոչեաց արքայ Յովաս զՅովիդայէ քահանայ, և զքահանայսն՝ և ասէ ցնոսա. Ընդէ՞ր ո՛չ կազմեցէք զբեղեկ տանն Տեառն. և արդ՝ մի՛ ևս առնուցուք արծաթ յամենայն վաճառացն ձերոց, այլ՝ ՚ի բեղեկ տանն Տեառն տաջիք զայն։ ⁸Եւ ուխտեցին քահանայքն չառնուլ արծաթ ՚ի ժողովրդեանէն, և ո՛չ կազմել զբեղեկ տանն։ ⁹Եւ ա՛ռ Յովիդայէ քահանայ տապանա՛կ մի՛ և ծակեաց ծակ ՚ի բերան նորա, և եդ զնա ՚ի կողմանէ սեղանոյն Տեառն. և ետուն քահանայքն՝ որ պահէին զդուռնն՝ զամենայն արծաթ գտեալ ՚ի տանն Տեառն։ ¹⁰Եւ եղև իբրև ետես թէ բազում է ՚ի տապանակի անդ, ել դպրապետն արքունի՝ և քահանայն մեծ. և պնդեցին զարծաթն գտեալ ՚ի տանն Տեառն*։ ¹¹Եւ ետուն զարծաթն և զպատրաստեալն ՚ի ձեռս գործելեաց զգործս կահու տանն Տեառն. և ետուն ցիլսունս փայտից՝ և ցշինօղս գործել ՚ի տանն Տեառն*։ ¹²Եւ ցնկարիչս՝ և ցճարտարս՝ և ցքարակոփս քարանց դնել փայտ և քարս տաշեալս, կազմել զբեղեկ տանն Տեառն. յամենայն ինչ յոր ելանիցէ ՚ի տունն կազմել։ ¹³Բայց զի մի՛ լինիցին տանն Տեառն դրունք արծաթիք, և բւեռք, և տաշտք, և փողք. ամենայն անօթ ոսկի # և անօթ արծաթի # յարծաթոյ մտելոյ ՚ի տունն Տեառն. ¹⁴այլ զի գործօնաց գործոյն տացեն զայն, և կազմեսցեն զտունն Տեառն*։ ¹⁵Եւ ո՛չ առնէին համար արանցն յորոց ձեռս տային զարծաթն, տալ գործաւորաց գործոյն, զի յաւատ գործէին*։ ¹⁶Եւ արծաթ վասն մեղաց և վասն յանցանաց՝ ո՛չ մտանէր ՚ի տունն Տեառն, այլ քահանայիցն լինէր։ ¹⁷Յայնժամ ե՛լ Ազայէլ արքայ Ասորոց, և ետ պատերազմ ընդ Գեթայ՝ և ա՛ռ զնա. և եդ Ազայէլ զերեսս իւր ելանել ՚ի վերայ Երուսաղէմի։ ¹⁸Եւ ա՛ռ Յովաս արքայ Յուդայ զամենայն զսրբութիւնսն զոր սրբեաց Յովսափատ, և Յովրամ, և Ոքոզիա հարք նորա, և թագաւորք Յուդայ, և զիւր սրբութիւնսն, և զամենայն արծաթ գտեալ ՚ի գանձս տանն Տեառն՝ և ՚ի տանն թագաւորին. և առաքեաց Ազայէլի արքայի Ասորոց, և զնա՛ց յԵրուսաղէմէ։

ԼԶ ¹⁹Եւ մնացորդք բանիցն Յովասու, և ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։ ²⁰Եւ յարեան ծառայք նորա, և եդին նմա դաւաճանութիւն, և հարին զՅովաս ՚ի տանն Մաալոնայ բնակեալ ՚ի Գաղաադ։ ²¹Եւ Յովաքազար որդի Յենաւութայ՝ և Յեզբուր որդի նորա, պանտանդք ծառայք նորա՝ հարին զնա և սպանին. և թաղեցին զնա ընդ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի. և թագաւորեաց Ամեսսիա որդի նորա ընդ նորա*։

13

Գլուխ ԺԳ

ԼԷ ¹Ի քսաներորդի և երկրորդի ամի Յովասու որդւոյ Ոքոզիայ արքայի Յուդայ, թագաւորեաց Յովաքազ որդի Յեուայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս եւթնուտասն*։ ²Եւ արար չա՛ր առաջի Տեառն, և զնաց զհետ մեղացն

* Ոմանք. ՚ի քսաներորդի և յերրորդի ամի։

* Յօրինակին. Գտեալ տանն Տեառն։

* Այլք. Չարծաթն զպատրաստեալն... կահի տանն Տեառն։

* Ոսկան. Այլ զի գործունեաց։

* Ոմանք. Չի ՚ի յաւատ գործէին։

* Այլք. Եւ Յովազաքար որդի Յենաւութայ։ Ոմանք. Պատանդք ծառայք նորա։

* Ոմանք. Եւ երրորդի ամի Յովասու որդի։

Յերոբովամայ որդւոյ Նաբատայ՝ որ յանցոյցն զԻսրայէլ, և ո՛չ մեկնեցաւ ՚ի նոցանէն: ³Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայէլի, և ետ գնոսա ՚ի ձեռս Ազայելի արքայի Ասորոց, և ՚ի ձեռն որդւոյ Ադերայ որդւոյ Ազայելի զամենայն աւուրս: ⁴Եւ աղաչեաց Յովաքազ զերեսս Տեառն. և լուաւ նմա Տէր. զի ետես զնեղութիւն Իսրայէլի՝ զոր նեղեաց զնա արքայն Ասորոց: ⁵Եւ ետ Տէր փրկիչ Իսրայէլի. և ել ՚ի ձեռանէ Ասորոց. և նստան որդիքն Իսրայէլի ՚ի բնակութիւնս իւրեանց որպէս յերեկն և յեռանդ: ⁶Սակայն ո՛չ մեկնեցան ՚ի մեղացն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ, այլ ՚ի նոսա գնացին. նա՛ և անտառն կայր ՚ի Սամարիա: ⁷Եւ ո՛չ մնաց Յովաքազայ զօր, այլ հեծեալք յիսուն՝ և կառք տասն, և տասն հազար հետևակաց. զի կորոյս գնոսա արքայն Ասորոց, և եդ գնոսա իբրև զհող ՚ի կոխումն: ⁸Եւ մնացորդք բանից Յովաքազու՝ և ամենայն ինչ զոր արար՝ և զօրութիւնք նորա, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի: ⁹Եւ ննջեաց Յովաքազ ընդ հարս իւր, և թաղեցին զնա ընդ հարս նորա ՚ի Սամարիա:

ԼԸ Եւ թագաւորեաց Յովաս որդի նորա ընդ նորա: ¹⁰Յամի երեսներորդի և եւթներորդի Յովասու արքայի Յուդայ՝ թագաւորեաց Յովաս որդի Յովաքազու ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս երկուտասան: ¹¹Եւ արար չա՛ր առաջի Տեառն, և ո՛չ մեկնեցաւ յամենայն մեղաց Յերոբովամու որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ, այլ ՚ի նոսա՛ գնաց: ¹²Եւ մնացորդք բանից Յովասու՝ և ամենայն ինչ զոր արար, և զօրութիւնք նորա զոր արար ընդ արքային Յուդայ, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի: ¹³Եւ ննջեաց Յովաս ընդ հարս իւր. և Յերոբովամ նստաւ յաթոռ նորա #. և թաղեցաւ Յովաս ՚ի Սամարիա ընդ թագաւորս Իսրայէլի:

ԼԹ ¹⁴Եւ Եղիսեէ հիւանդացաւ հիւանդութիւն, որով և մեռաւ իսկ. և էջ առ նա Յովաս արքայ Իսրայէլի, և ելաց ՚ի վերայ երեսաց նորա՝ և ասէ. Հայր՝ հայր, կառքդ Իսրայէլի և հեծեալք նորա: ¹⁵Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ա՛ռ դու զաղեղն քո՝ և զնետս քո: Եւ ա՛ռ զաղեղն և զնետս: ¹⁶Եւ ասէ ցարքայն Իսրայէլի. Մո՛ւտ ընդ աղեղնդ ձեռօք քովք: Եւ եմուտ ընդ աղեղնն ձեռօք իւրովք. և եդ Եղիսեէ զձեռն իւր ՚ի վերայ ձեռաց արքային. ¹⁷և ասէ. Բա՛ց զպատուհանդ որ է ընդ արևելս: Եւ եբաց. և ասէ Եղիսեէ. Չգեա՛: Եւ ձգեաց. և ասէ. Նե՛տ փրկութեան Տեառն, և նետ փրկութեան ընդդէմ Ասորոց. և հարցես զԱսորիս յԱփեկ մինչև ՚ի սպառ: ¹⁸Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ա՛ռ դու քեզ նետս: Եւ առ: Եւ ասէ ցարքայն Իսրայէլի. Չգեա՛ և հա՛ր զգետինդ: Եւ եհար արքայն երիցս՝ և եկաց: ¹⁹Եւ տրտմեցաւ ՚ի վերայ նորա այրն Աստուծոյ, և ասէ. Եթէ հարեալ էիր հնգի՛ցս կամ վեցի՛ցս, յայնժամ հարկանէիր զԱսորիս մինչև ՚ի սպառ. և արդ՝ երիցս հարցես զԱսորիս: ²⁰Եւ մեռաւ Եղիսեէ, և թաղեցին զնա: Եւ մեկնակազէնքն Մովաբու ելին յերկիրն ՚ի գալ տարւոյն: ²¹Եւ եղև ՚ի թաղել նոցա զայր մի. և ահա տեսին զմեկնակազէնսն՝ և ընկեցին զայրն ՚ի գերեզմանն Եղիսեի. և գնաց և մերձեցաւ յոսկերսն Եղիսեի՝ և կենդանացաւ. և կանգնեցաւ ՚ի վերայ ոտից իւրոց: ^{*}

* Այլք. Եւ ՚ի ձեռս որդւոյ Ադե՛:

* Ոմանք. Եւ ետես զնեղութիւն Իսրայէլի զոր նեղեաց զնոսա:

* Ոմանք. Որպէս երեկն և յեռանդն:

* Այլք. Որով և մեռաւ իսկ: *Յօրհնակին պակասէր.* Եւ ելաց ՚ի վերայ *երեսաց* նորա:

* Ոմանք. Եւ ա՛ռ զաղեղնն իւր և:

* Ոմանք *աստ և ստորև.* Մեկնազէնքն. զմեկնազէնսն:

* Ոմանք. Եղև թաղել նոցա զայր մի:

Խ²²Եւ Ազայլէ արքայ Ասորոց նեղեաց զԻսրայէլ զամենայն աւուրս Յովաքազու: ²³Եւ ողորմեցաւ նոցա Տէր, և զթացաւ ՚ի նոսա, և հայեցաւ ՚ի նոսա, վասն ուխտին իւրոյ՝ որ ընդ Աբրաամու և ընդ Սահակայ և ընդ Յակոբու. և ո՛չ կամեցաւ Տէր ապականել զնոսա. և ո՛չ ընկէց զնոսա յերեսաց իւրոց:

ԽԱ²⁴Եւ մեռաւ Ազայլէ արքայ Ասորոց, և թագաւորեաց որդի Ադերայ՝ որդի նորա ընդ նորա: ²⁵Եւ դարձաւ Յովաս որդի Յովաքազու, և ա՛ռ զքաղաքսն ՚ի ձեռաց որդւոյ Ադերայ՝ որդւոյ Ազայլի. զորս ա՛ռ ՚ի ձեռաց Յովաքազու հօր նորա ՚ի պատերազմին. երիցս եհար զնա Յովաս, և դարձոյց զքաղաքսն Իսրայէլի:

14

Գլուխ ԺԴ

ԽԲ¹Յամին երրորդի Յովասու որդւոյ Յովաքազու արքայի՛ Իսրայէլի, թագաւորեաց Ամասիա որդի Յովասու թագաւոր Յուդայ՝: ²Որդի քսան և հինգ ամաց էր ՚ի թագաւորել իւրում. և քսան և ինն ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յովադին յերուսաղէմէ: ³Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, բայց ո՛չ իբրև զՌաւիթ զհայր իւր. ըստ ամենայնի զոր ինչ արար Յովաս՝ հայր իւր արար*. ⁴այլ զբարձունսն ո՛չ եբարձ. և տակաւին ժողովուրդն զոհէր. և արկանէր խունկս ՚ի բարձունսն*: ⁵Եւ եղև իբրև հաստատեցաւ թագաւորութիւնն ՚ի ձեռս նորա, և եհար զժառայս իւր որ հարին զարքայ զհայր նորա*. ⁶և զորդիս սպանողացն ո՛չ սպան. որպէս գրեալ է ՚ի գիրս օրինացն Մովսիսի. զորօրինակ պատուիրեաց Տէր՝ և ասէ. Մի՛ մեռցին հարք վասն որդւոց, և մի՛ որդիք մեռցին վասն հարց. այլ իւրաքանչիւրոք ՚ի մե՛ղս իւրում մեռցի: ⁷Նա եհար զԵդոմ ՚ի Մայիլա տա՛սն հազար, և ա՛ռ զՎէմն պատերազմաւ. և կոչեաց զանուն նորա Յեկթովէլ մինչև ցայսօր*:

ԽԳ⁸Յայնմ ժամանակի առաքեաց Ամասիա հրեշտակս առ Յովաս որդի Յովաքազու որդւոյ Յեուայ արքայի Իսրայէլի՝ և ասէ. Ե՛կ յանդիման լիցուք միմեանց երեսօք: ⁹Եւ առաքեաց Յովաս արքայ Իսրայէլի առ Ամասիա արքայ Յուդայ՝ և ասէ. Ակքան ՚ի Լիբանանէ յեաց առ եղևնափայտն որ ՚ի Լիբանան՝ և ասէ. Տո՛ւր զդուստր քո որդւոյ իմուն կնութեան, և անցին գազանք անապատի որ ՚ի Լիբանան՝ և կոխեցին զԱկքանն*: ¹⁰Հարկանելով հարե՛ր զԵդոմ, և հպարտացոյց զքեզ սիրտ քո. մեծարեաց և նի՛ստ ՚ի տան քում. ընդէ՞ր զրգռէ զքեզ չարութիւն քո, և անկանիցիս դու և Յուդայ ընդ քեզ: ¹¹Եւ ո՛չ անսաց Ամասիա: Եւ ե՛լ Յովաս արքայ Իսրայէլի, և երևեցան երեսօք ի՛նքն և Ամասիա արքայ Յուդայ ՚ի Բեթսամևս Հրէաստանի: ¹²Եւ պարտեցաւ Յուդայ յերեսաց Իսրայէլի, և փախեաւ ա՛յր իւրաքանչիւր ՚ի բնակութիւն իւր: ¹³Եւ զԱմասիա զարքայ Յուդայ՝ զորդի Յովասու որդւոյ Յովաքազեայ՝ կալաւ Յովաս որդի

* *Բազումք.* Յամի երկրորդի Յովասայ որդի՛:

* *Ոմանք.* Բայց ո՛չ որպէս զՌաւիթ զհայր:

* *Բազումք.* Բայց զբարձունսն ո՛չ ե՛:

* *Ոմանք.* Թագաւորութիւնն ՚ի ձեռին նորա:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ ՚ի Մայիլա. *նշանակի՛* ՚ի ձորն Աղտից:

* *Յօրինակին պակասէր.* Եւ առաքեաց Յովաս արքայ Իսրայէլի: *Ոմանք.* Ակքանն ՚ի Լիբանան առաքեաց առ եղևնափայտն:

Յովաքազու արքայ Իսրայելի՝ ի Բեթսամնա. և եկն յերուսաղէմ, և եհատ զպարիսպն Երուսաղէմի՝ ի դրանէ Եփրեմի մինչև ի դուռն Անկեանցն, չորեքարևր կանգուն*։ ¹⁴Եւ ա՛ռ զոսկի և զարծաթ և զամենայն անօթս գտեալ ՚ի տանն Տեառն, և ՚ի գանձս տան թագաւորին, և զորդիս խառնակութեանցն. և դարձաւ ՚ի Սամարիա*։ ¹⁵Եւ մնացորդք բանից Յովասու՝ և որ ինչ արար զօրութեամբ իւրով, և պատերազմն զոր պատերազմեցաւ ընդ Ամեսեայ արքայի Յուդայ, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի։ ¹⁶Եւ ննջեաց Յովաս ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի Սամարիա ընդ թագաւորս Իսրայելի. և թագաւորեաց Յերոբովամ որդի նորա ընդ նորա։ ¹⁷Եւ եկաց Ամասիա որդի Յովասու՝ արքայ Յուդայ՝ յե՛տ մահուանն Յովասու որդւոյ Յովաքազայ թագաւորի Իսրայելի՝ ամս հնգետասան։ ¹⁸Եւ մնացորդք բանից Ամասեայ՝ և ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։ ¹⁹Եւ գումարեցան ՚ի վերայ նորա գունդք յերուսաղէմ, և փախեաւ ՚ի Լաքիս. և առաքեցին զկնի նորա ՚ի Լաքիս՝ և սպանին զնա անդ*։ ²⁰Եւ բարձին զնա ձիովք, և թաղեցաւ յերուսաղէմ ընդ հարս իւր ՚ի քաղաքի՝ Դաւթի։

ԽԴ ²¹Եւ ա՛ռ ամենայն ժողովուրդն Յուդայ զԱզարիա, և նա՛ էր ամաց վեշտասանից, և թագաւորեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ Ամասեայ։ ²²Նա՛ շինեաց զԵլաթ. և դարձոյց զնա անդրէն ՚ի Յուդայ, յետ ննջելոյ արքայի ընդ հարս իւր*։

ԽԵ ²³Յամի հնգետասաներորդի Ամասիայ որդւոյ Յովասու՝ արքայի Յուդայ, թագաւորեաց Յերոբովամ որդի Յովասու արքայի Իսրայելի ՚ի վերայ Իսրայելի ՚ի Սամարիա՝ ամս քառասուն և մի։ ²⁴Եւ արար չա՛ր առաջի Տեառն. և ո՛չ մեկնեցաւ յամենայն մեղաց Յերոբովամայ որդւոյ Նաբատայ՝ որ յանցոյցն զԻսրայել։ ²⁵Նա՛ մերժեաց զսահմանս Իսրայելի ՚ի մտիցն Եմաթայ մինչև ցծովն Արաբայ ըստ բանին Տեառն Աստուծոյ Իսրայելի՝ զոր խօսեցաւ ՚ի ձեռն ծառայի իւրոյ Յովնանու որդւոյ Ամաթայ մարգարէի ՚ի Գեթթրբերայ*։ ²⁶Պի ետես զտառապանս Իսրայելի գյո՛յժ դառնութեան, և սակաւաւորս և նեղեալս, և անօսրացեալս և լքեալս, և ո՛չ ոք էր որ օգնէր Իսրայելի*։ ²⁷Եւ ո՛չ խօսեցաւ Տէր ջնջել զգաւակ Իսրայելի ՚ի ներքոյ երկնից. և փրկեաց զնոսա Տէր ՚ի ձեռաց Յերոբովամու որդւոյ Յովասու։ ²⁸Եւ մնացորդք բանից Յերոբովամայ, և ամենայն ինչ զոր արար, և զօրութիւնք նորա զոր պատերազմեցաւ. և ո՞րպէս դարձոյց զԴամասկոս՝ և զԵմաթ անդրէն առ Յուդայ յԻսրայելէ. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի։

ԽԶ ²⁹Եւ ննջեաց Յերոբովամ ընդ հարս իւր՝ ընդ թագաւորս Իսրայելի, և թագաւորեաց Չաքարիա որդի նորա փոխանակ հօր իւրոյ*։

15

* *Յօրինակին*. Մինչև ի դուռն Ակեանցն. ուր ոմանք. զդուռնն Անկեանց։

* *Ի լուս՝* ՚ի վերայ խառնակութեանցն, *նշանակի*՝ թեռ. այսինքն՝ *Թեոդիտոն ունի*՝ զարշելեացն։

* *Ոմանք*. Եւ փախեաւ ՚ի Լաքիս։

* *Բազումք*. Նա շինեաց զԵղովթ։

* *Ոմանք*. Գեթթայ Արքերայ. և *ոմանք*. ՚ի Գեթթա Կորբերայ։

* *Ոմանք*. Ձի ետես Տէր զտառա՝... և սակաւ աւուրս և նեղ՝։

* *Այլք*. Եւ թագաւորեաց Ազարիա որդի Ամասեայ փոխանակ հօր իւրոյ։

Գլուխ ԺԵ

ԽԵ ¹Յամի՝ քսաներորդի եւթներորդի Յերոբովամայ արքայի Իսրայէլի, թագաւորեաց Ազարիա որդի Ամեսեայ արքայի Յուդայ: ²Որդի վեշտասան ամաց էր ՚ի թագաւորել իւրում. և յիսուն և երկուս ամս թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յեքելիա յերուսաղէմէ՝: ³Եւ արար բարի՝ առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արար Ամասիա հայր նորա. ⁴բա՛ց ՚ի բարձանցն զոր ո՛չ եբարձ. և տակաւին ժողովուրդն զոհէր և արկանէր խունկս ՚ի բարձունսն: ⁵Եւ արկ Տէր ձեռն ՚ի թագաւորն, և էր բորոտեալ մինչև ցօր մահուան իւրոյ. և նստէր ՚ի տան ափսուսովք. և Յովաթամ որդի արքայի էր ՚ի վերայ տանն դատել զժողովուրդ երկրին՝: ⁶Եւ մնացորդք բանից Ազարիայ, և ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ: ⁷Եւ ննջեաց Ազարիա ընդ հարս իւր, և թաղեցին զնա առ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի. և թագաւորեաց Յովաթամ որդի նորա ընդ նորա:

ԽԸ ⁸Յամի երեսներորդի եւթներորդի Ազարիայ արքայի Յուդայ՝ թագաւորեաց Ջաքարիա որդի Յերոբովամայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամիսս վեց՝: ⁹Եւ արար չա՛ր առաջի Տեառն որպէս արարին հարք նորա, և ո՛չ մեկնեցաւ ՚ի մեղացն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն զԻսրայէլ՝: ¹⁰Եւ գումարեցան ՚ի վերայ նորա Սեղ՛ղ՛ում որդի Յաբիսայ, և Կեբդամ, և հարին զնա յանդիման ժողովրդեանն և սպանին զնա. և թագաւորեաց Սեղ՛ղ՛ում ընդ նորա՝: ¹¹Եւ մնացորդք բանից Ջաքարիայ, ահա գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի: ¹²Ա՛յս է բան Տեառն՝ զոր խօսեցաւ առ Յէու և ասէ. Որդիք չորրորդք նստցին քեզ յաթոռն Իսրայէլի. և եղև այնպէս:

ԽԹ ¹³Եւ Սեղ՛ղ՛ում որդի Յաբիսայ թագաւորեաց յամին երեսներորդի ութերորդի Ազարիայ արքայի Յուդայ. և թագաւորեաց Սեղ՛ղ՛ում ամսօրեայ մի աւուրց ՚ի Սամարիա՝: ¹⁴Եւ ել Մանայեմ որդի Գադդայ ՚ի Թերսիլայ, և եմուտ ՚ի Սամարիա, և եհար զՍեղ՛ղ՛ում զորդի Յաբիսայ ՚ի Սամարիա, և սպան զնա, և թագաւորեաց ընդ նորա: ¹⁵Եւ մնացորդք բանից Սեղ՛ղ՛ումայ, և գումարութիւնք նորա զոր գումարեցաւ՝ ահաւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի:

Ծ ¹⁶Յայնմ ժամանակի եհար Մանայեմ զԹերսայ՝ և զամենայն ինչ որ ՚ի նմա, և զսահմանս նորա ՚ի Թերսայէ. քանզի ո՛չ բացին նմա, և եհար զնա՝ և գլղիս նորա պատառեաց: ¹⁷Յամի երեսներորդի իններորդի Ազարիայ արքայի Յուդայ, թագաւորեաց Մանայեմ որդի Գադդայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս տասն՝: ¹⁸Եւ արար չա՛ր առաջի Տեառն. և ո՛չ մեկնեցաւ յամենայն մեղացն Յերոբովամու որդւոյ Նաբատայ՝ որ յանցոյցն զԻսրայէլ մեղօք իւրովք: ¹⁹Եւ ել Փուա արքայ Ասորեստանեայց ՚ի վերայ երկրին. և Մանայեմ ետ Փուայ հազար տաղանտ արծաթոյ՝ լինել ձեռին նորա ընդ նմա, հաստատել զթագաւորութիւնն ՚ի ձեռն սորա՝: ²⁰Եւ արկ Մանայեմ զարծաթն ՚ի վերայ Իսրայէլի, ՚ի վերայ

* Ոմանք. Եւ անուն մօր նորա Յեքելիա յերուսաղէմէ:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ ափսուսովք. նշանակի՝ Ավ. այսինքն՝ Ակիւղաս. ծածուկ:

* Ոմանք. Երեսներորդի և ութերորդի:

* Ոմանք. Եւ ո՛չ մեկնեցան ՚ի մեղաց:

* Ոմանք. Որդի Աբիսայ, և Կեբդամ:

* Ոմանք. Երեսներորդի իններորդի:

* Ի լուս՝. Երեսներորդի ութերորդի. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:

* Յօրինակին պակասէր. Ձեռին նորա ընդ նմա: Ոմանք. Չթագաւորութիւնն ՚ի ձեռին,

ամենայն զօրաւորի զօրութեամբ՝ տալ արքային Ասորեստանեայց յիսուն սիկղ արծաթոյ առ այր մի. և դարձաւ արքայն Ասորեստանեաց՝ և ո՛չ եկաց յերկրին*։²¹Եւ մնացորդք բանիցն Մանայեմայ, և ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։²²Եւ ննջեաց Մանայեմ ընդ հարս իւր։

ԾԱ Եւ թագաւորեաց Փակիա որդի նորա ընդ նորա*։²³Յամի յիսներորդի Ազարիայ արքայի Յուդայ, թագաւորեաց Փակէիա ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս տասն*։²⁴Եւ արար չար առաջի Տեառն. և ո՛չ մեկնեցաւ ՚ի մեղացն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն գիսրայէլ։²⁵Եւ գումարեցաւ ՚ի վերայ նորա Փակէ որդի Ռոմելայ սպառազէն իւր, և եհար զնա ՚ի Սամարիա առաջի տանն արքայի. և ընդ նմա Արգոբ, և ընդ նմա Արիէ, և ընդ նմա յիսուն այր ՚ի չորեքարիւրոցն. և սպան զնա, և թագաւորեաց ընդ նորա*։²⁶Եւ մնացորդք բանիցն Փակէի և ամենայն ինչ զոր արար՝ ահա գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։

ԾԲ ²⁷Յամի յիսներորդի և երկրորդի Ազարիայ արքայի Յուդայ թագաւորեաց Փակէ որդի Ռոմելայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս քսան։²⁸Եւ արար չար առաջի Տեառն. և ո՛չ մեկնեցաւ յամենայն մեղաց Յերոբովամայ որդւոյ Նաբատայ որ յանցոյցն գիսրայէլ։²⁹Յաւուրս Փակէի արքայի Իսրայէլի, եկն Թագղաթփաղսար արքայ Ասորեստանեաց. և ա՛ռ զԱյին, և զԿաբեէլ, և զԲեթմաքա, և զՅանովթ, և զԿենէգ, և զԱսովր, և զԳաղաադ, և զԳալիլեայ, և զամենայն երկիրն Նեփթաղիմայ, և խաղացոյց զնոսա յԱսորեստանեայս*։³⁰Եւ գումարեաց գունդ Ովսէ որդի Էլայ ՚ի վերայ Փակէի որդւոյ Ռոմելայ, և եհար զնա և սպան զնա, և թագաւորեաց ընդ նորա. յամի քսաներորդի Յովաթամայ որդւոյ Ոզիայ։³¹Եւ մնացորդք բանից Փակէի և ամենայն ինչ զոր արար, ահաւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի։

ԾԳ ³²Յամի երկրորդի Փակէի որդւոյ Ռոմելայ թագաւորի Իսրայէլի, թագաւորեաց Յովաթամ որդի Ոզիայ արքայի Յուդայ։³³Որդի քսան և հինգ ամաց էր ՚ի թագաւորել իւրում, և վեշտասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յերուսայ դուստր Սադովկայ*։³⁴Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն՝ ըստ ամենայնի զոր արար Ոզիա հայր նորա.³⁵բա՛ց ՚ի բարձանցն զոր ո՛չ եբարձ. և տակաւին ժողովուրդն զոհէր և արկանէր խունկս ՚ի բարձունսն. նա՛ շինեաց զդուռն տանն Տեառն զվերին։³⁶Եւ մնացորդք բանից Յովաթամայ՝ և ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։³⁷Յաւուրսն յայնոսիկ սկսաւ Տէր առաքել ՚ի Յուդայ զՌասոն արքայ Ասորոց, և զՓակէ որդի Ռոմելայ*։

Կամ՝ ՚ի ձեռս նորա։

** Ոմանք. Յիսուն սկեղ արծաթոյ առ։ Յօրինակին այսպէս գրեալ էր բանս. և ո՛չ ե ա գ յերկրին. թերևս այսու կամեցեալ գրչին զվրիպակ գաղափարի իւրոյ յայտ առնել, զգուշութեամբ իմն տեղի պատրաստելով ուղղագրութեան. ըստ որում պատշաճ թուեցաւ դնել աստէն՝ ՚ի համաձայնութենէ այլոց։*

** Ոմանք. Եւ թագաւորեաց Փակէ. կամ՝ Փակէիա որդի նորա։*

** Ի լուս՝ Յամի քառասներորդի Ազարիայ։*

** Ի լուս՝ ՚ի վերայ՝ չորեքարիւրոցն. նշանակի՝ Ավ. այսինքն՝ Ակիւղաս. ՚ի Գաղաադէ։*

** Ոմանք. Եւ զԲեթմաքա և զՅանովթ... զնոսա յԱսորեստան։*

** Ոմանք. Եւ անուն մօր նորա Յերումա։*

** Յօրինակին. ՉՍառոն արքայ Ասորոց։*

ԾԴ³⁸Եւ ննջեաց Յովաթամ ընդ հարս իւր, և թաղեցաւ առ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ. և թագաւորեաց Աքազ որդի նորա ընդ նորա*:

16

Գլուխ ԺԶ

¹Յամի եւթնուտասներորդի Փակէի որդւոյ Ռոմելայ թագաւորեաց Աքազ որդի Յովաթամայ: ²Որդի ամաց քսանից էր Աքազ ՚ի թագաւորել իւրում, և վեշտասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. և ո՛չ արար ուղղութիւն առաջի Տեառն Աստուծոյ հաւատարմութեամբ իբրև զԴաւիթ զհայր իւր*.³ և գնաց զճանապարհ Յերոբովամայ որդւոյ Նաբատայ արքայի Իսրայէլի. նա՛ զորդիս իւր անցոյց ընդ հուր՝ ըստ գարշութեան ազգացն զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի*:⁴ Եւ զոհէր՝ և արկանէր խունկս ՚ի բարձունս և ՚ի վերայ բլրոց, և ՚ի ներքոյ անտառախիտ ծառոց: ⁵Յայնժամ ել Ռասոն արքայ Ասորւոց՝ և Փակէ որդի Ռոմելայ արքայ Իսրայէլի յերուսաղէմ ՚ի պատերազմ, և պաշարէին զնա ՚ի վերայ Աքազու. և ո՛չ կարէին պատերազմել*⁶ ի ժամանակին յայնմիկ. և դարձոյց Ռասոն արքայ Ասորւոց զԱյիլաթ յԱսորիս. և եհան զՀրեայսն յԱյիլաթայ. և եկին Եդոմայեցիք յԱյիլաթ, և բնակեցին անդ մինչև ցայսօր*:⁷ Եւ առաքեաց Աքազ հրեշտակս առ Թագղաթփաղսար արքայ Ասորեստանեաց և ասէ. Ծառայ՛ քո՝ և որդի՛ քո եմ ես՝ ել և փրկեա՛ զիս ՚ի ձեռաց արքային Ասորւոց, և ՚ի ձեռաց արքային Իսրայէլի յարուցելոց ՚ի վերայ իմ: ⁸Եւ ա՛ռ Աքազ զարծաթ և զոսկի զգտեալս ՚ի գանձ տան Տեառն՝ և ՚ի տան թագաւորին, և առաքեաց արքային Ասորեստանեաց պատարագս: ⁹Եւ լուաւ նմա արքայն Ասորեստանեաց. և ել արքայն Ասորեստանեաց ՚ի Դամասկոս և ա՛ռ զնա, և վարեաց զնա ՚ի գերութիւն ՚ի Կիւրէն. և զՌասոն սպան: ¹⁰Եւ չոգաւ արքայ Աքազ ընդ առաջ Թագղաթփաղսարայ արքային Ասորեստանեաց ՚ի Դամասկոս. և տեսեալ զսեղանն որ ՚ի Դամասկոս, և առաքեաց արքայ Աքազ առ Ուրիա քահանայ զնմանութիւն սեղանոյն, և զձն նորա. ըստ ամենայն գործուածոյն նորա*:¹¹ Եւ շինեաց Ուրիա քահանայ զսեղանն ըստ ամենայնի՝ որպէս և առաքեաց արքայ Աքազ ՚ի Դամասկոսէ, նոյնպէս արար Ուրիա քահանայ մինչև ՚ի գալ արքայի Աքազու ՚ի Դամասկոսէ: ¹²Ետես զսեղանն, և մատեաւ արքայ ՚ի սեղանն, ել ՚ի վեր և ճենճերեաց զողջակէզս իւր՝ և զգոհս. ¹³ և նուիրեաց զնուէրս իւր, և եհեղ զարիւն խաղաղականաց իւրոց: ¹⁴ Եւ զսեղանն պղնձի որ կայր առաջի Տեառն փոխեաց յերեսաց տանն Տեառն ՚ի տեղւոջէ իւրմէ, և եդ զնա ՚ի կողմանէ սեղանոյն ընդ հիւսւսի: ¹⁵ Եւ պատուէր ետ արքայ Աքազ Ուրիա՛ քահանայի և ասէ. ՚ի վերայ մեծի սեղանոյդ մատուցանիցես զողջակէզս առաւօտինս, և զգոհս երեկոյինս, և զողջակէզս արքայի և զգոհս նորա. և զողջակէզս ժողովրդեան երկրիս, և զոհս նոցա և զնուէրս նոցա, և զամենայն արիւն

* Յօրինակին պակասէր. Եւ թաղեցաւ առ հարս իւր ՚ի քաղաքի:

* Ոսկան. Ամաց քսան և հնգից էր արքայ Աքազ ՚ի թա՛:

* Ոմանք. Նաև զորդին իւր անցոյց:

* Ոմանք. Որդի Ռոմելի... և պաշարեաց զնա ՚ի վերայ:

* Յօրինակին. Եւ դարձոյց Սառոն: Ոմանք. ՉԱյիաթալ... յԱյիաթալայ: Ի լուս՝ ՚ի վերայ՝ Եդոմայեցիք. նշանակի՝ Ասորիք:

* Ոմանք. Եւ ետես զսեղանն որ ՚ի:

ողջակիզաց, և զամենայն արիւն զոհից՝ ՚ի վերայ նորա հեղուցուս. բայց սեղանն պղնձի եղիցի ինձ յառաւօտինս*։ ¹⁶Եւ արար Ուրիա քահանայ ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա Աքազ արքայ։ ¹⁷Եւ կոտորեաց արքայ Աքազ զաղխան մեքենովթացն, և փոխեաց ՚ի նոցանէ զաւազանսն, և զժովն իջոյց ՚ի ցլուցն պղնձեաց երկոտասանեցունց որ ՚ի ներքոյ նորա, և եդ զնա ՚ի վերայ քարեղէն խարսխի։ ¹⁸Եւ զհիմն աթոռոյն շինեաց ՚ի տան Տեառն, և զմուտ թագաւորին զարտաքին դարձոյց ՚ի տուն Տեառն, յերեսաց արքային Ասորեստանեաց։

ԾԵ ¹⁹Եւ մնացորդք բանից Աքազու զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ։ ²⁰Եւ ննջեաց Աքազ ընդ հարս իւր, և թաղեցաւ առ հարս իւր ՚ի քաղաքին Դաւթի. և թագաւորեաց Եզեկիա որդի նորա ընդ նորա*։

17

Գլուխ ԺԷ

ԾԶ 13ամի երկոտասաներորդի Աքազու արքայի Յուդայ, թագաւորեաց Ովսէ նորդի Ելայ ՚ի վերայ Իսրայէլի ՚ի Սամարիա ամս ինն*։ ²Եւ արար չար առաջի Տեառն, բայց ո՞չ իբրև զթագաւորսն Իսրայէլի որ էին յառաջ քան զնա։ ³Ի վերայ նորա Ել Սաղմանասար արքայ Ասորեստանեաց. և եղև նորա Ովսէ ծառայ, և տայր տանել նմա մաննայ*։ ⁴Եւ եգիտ արքայ Ասորեստանեաց յՈվսէ վնաս. զի առաքեաց իրեշտակս առ Սովա արքայ Եգիպտացւոց, և ո՞չ ետ մաննա արքային Ասորեստանեաց ՚ի տարուջն յայնմիկ. և պաշարեաց զնա արքայն Ասորեստանեաց, և կապեաց զնա ՚ի տան բանտի*։ ⁵Եւ Ել արքայն Ասորեստանեաց յամենայն երկիրն. Ել և ՚ի Սամարիա, և պաշարեաց զնա ամս երիս*։ ⁶Յամին իններորդի Ովսեայ՝ առ արքայ Ասորեստանեաց զՍամարիա. և խաղացոյց զԻսրայէլ յԱսորեստանեայս, և բնակեցոյց զնոսա յԱլաթ, և յԱբովր, և զգետովն Գովզանայ, և զԵրամբքն Սարաց*։ ⁷Եւ եղև իբրև մեղան որդիքն Իսրայէլի Տեառն Աստուծոյ իւրեանց որ եհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ ՚ի ձեռաց փարաւոնի արքայի Եգիպտացւոց, և երկեան յաստուածոց օտարաց. ⁸և զնացին ըստ կրօնից ազգացն զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։ Եւ թագաւորքն Իսրայէլի որչափ ինչ արարին՝ ⁹և որչափ ինչ պաճուճեցին որդիքն Իսրայէլի. բայց ո՞չ այնպէս ինչ զՏեառնէ Աստուծոյ իւրեանց. և շինեցին իւրեանց բարձունս յամենայն քաղաքս իւրեանց, յաշտարակէ պահապանացն մինչև ՚ի քաղաքն ամուր*։ ¹⁰Եւ կանգնեցին իւրեանց արձանս և անտառս յամենայն բլուրս բարձունս, և ՚ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոց. ¹¹և արկին

* Ոմանք. Եւ զամենայն արիւն զոհից նոցա ՚ի վերայ նորա։

* Ոմանք. Եւ թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքի։

* Ոմանք. Որդի Ելայի։

* Ոմանք. Եւ եղև նմա Ովսէ ծա՞։ Ի լուս՞. ՚ի վերայ՝ մաննայ. նշանակի՝ Սիմ. այսինքն՝ Սիմաքոս. յայտնի ինչ։

* Ոմանք. Եւ կացոյց զնա ՚ի տան բանտի։

* Յօրինակին պակասէր. Ել և ՚ի Սամարիա, և պա՞։

* Այլք. Եւ Աբովր, զգետովն Գով՞։

* Այլք. Պաճուճեցին որդիքն Իսրայէլի բան, ո՞չ այնպէս ինչ։ Ի լուս՞. ՚ի վերայ՝ բարձունս. նշանակի՝ բազինս։

խոնկս յամենայն բարձունս, իբրև զամենայն ազգսն զորս մերժեաց Տէր
յերեսաց նոցա: Արարին զՎօղս, և ընկերշակեցին առ ՚ի բարկացուցանելոյ
զՏէր*.¹² և պաշտեցին զկուռս, որովք ասաց նոցա Տէր, թէ մի՛ առնիցէք զբանդ
զայդ Տեառն: ¹³Եւ եդ վկայութիւն Տէր ընդ Իսրայէլի և ընդ Յուդայ ՚ի ձեռն
ամենայն մարգարէիցն իւրոց, և ամենայն տեսանողացն իւրոց, և ասէ.
Դարձարո՛ւք ՚ի ճանապարհաց ձերոց չարաց, և պահեցէ՛ք զպատուիրանս իմ և
զիրաւունս իմ, և զամենայն օրէնս զոր պատուիրեցի հարց ձերոց, զորս
առաքեցի առ ձեզ ՚ի ձեռն ծառայից իմոց մարգարէից՝: ¹⁴Եւ ո՛չ լուան նոցա, և
խստացուցին զողն իւրեանց քան զողն հարց իւրեանց, և ո՛չ հաւատացին ՚ի
Տէր Աստուած իւրեանց. ¹⁵և ընկեցին ՚ի բաց զհաստատութիւնս իւրեանց, և
զդաշինսն զոր կռեաց ընդ հարս նոցա, և զվկայութիւնս նորա զոր ուխտեաց
նոցա ո՛չ պահեցին. և գնացին զհետ սնոտեաց, և սնոտեցան զհետ ազգացն որ
շուրջ զնոքօք. յորոց պատուիրեաց նոցա Տէր չառնել ըստ նմին օրինակի*:
¹⁶Թողին զամենայն պատուիրանսն Տեառն Աստուծոյ իւրեանց, և արարին
իւրեանց ձուլածոյս երկուս երինջս, և երկիր պագին զօրութեան երկնից, և
պաշտեցին զԲահաղ. ¹⁷և անցուցին զուստերս և զդստերս իւրեանց ընդ հուր, և
դիւթեցին դիւթութիւնս, և հնայեցին հնայս. և համարձակեցան առնել չար
առաջի Տեառն առ ՚ի բարկացուցանելոյ զնա: ¹⁸Եւ բարկացաւ Տէր յո՛րժ
Իսրայէլի, և մերժեաց զնոսա յերեսաց իւրոց. և ո՛չ մնաց՝ բայց միայն ցե՛ղն
Յուդայ: ¹⁹Սակայն և Յուդայ՝ ո՛չ պահեցին զպատուիրանս Տեառն Աստուծոյ
իւրեանց, և գնացին ըստ կրօնիցն Իսրայէլի զոր արարին: ²⁰Եւ մերժեցին զՏէր
յամենայն զաւակէն Իսրայէլի. և շարժեաց զնոսա՝ և ետ զնոսա ՚ի ձեռս
աւարառուաց իւրեանց, մինչև ընկէց զնոսա յերեսաց իւրոց*:
Ծէ ²¹Սակայն Իսրայէլ առ տամբն իսկ Դաւթի թագաւորեցուցին զՅերոբովամ
որդի Նաբատայ. և մերժեաց Յերոբովամ զԻսրայէլ ՚ի գնացից Տեառն, և մեղոյց
զնոսա մեղանս մեծամեծա՛: ²²Եւ արարին որդիքն Իսրայէլի ըստ ամենայն
մեղաց Յերոբովամու զոր արար. և ո՛չ մերժեցան ՚ի նոցանէն, ²³մինչև փոխեաց
Տէր զԻսրայէլ յերեսաց իւրոց, որպէս և խօսեցաւ Տէր ՚ի ձեռն ամենայն ծառայից
իւրոց մարգարէից. և վարեցաւ Իսրայէլ յերկրէ իւրմէ յԱսորեստանեայս մինչև
ցայսօր: ²⁴Եւ ած արքայն Ասորեստանեաց ՚ի Բաբելոնէ, և ՚ի Քութայ, և յԱյայ, և
յԵմաթայ, և ՚ի Սեփարուիմայ, և բնակեցան ՚ի քաղաքս Սամարեայ փոխանակ
որդւոցն Իսրայէլի, և ժառանգեցին զՍամարիա, և բնակեցին ՚ի քաղաքս նորա*:
²⁵Եւ եղև ՚ի սկզբան բնակութեան նոցա անդ, ո՛չ երկեան ՚ի Տեառնէ. և առաքեաց
Տէր առևձս, և կտորրէին զնոսա: ²⁶Եւ խօսեցան ընդ արքային Ասորեստանեաց և
ասեն. Ազգքն զոր փոխեցեր՝ և նստան փոխանակաւ ՚ի քաղաքս Սամարեայ, ո՛չ
գիտեն զկրօնս Աստուծոյ երկրին, և առաքեաց Տէր ՚ի նոսա առևձս, և ահա
կտորրեն՝ զնոսա. քանզի ո՛չ գիտեն զկրօնս Աստուծոյ երկրին: ²⁷Եւ հրաման ետ
արքայն Ասորեստանեաց՝ և ասէ. Տարա՛յք անդր զմի ոք ՚ի քահանայիցն
գերելոց անտի՝ զի երթեալ բնակեսցէ անդ, և ցուցցէ զկրօնս Տեառն, և

* *Ոմանք.* Եւ արկանէին խոնկս... յերեսաց նորա. և ընկերաշակեցին:

* *Ոսկան.* Եւ ետ վկայութիւն Տէր:

* *Օրինակ մի.* Եւ զդաշինս զոր կռեաց ընդ հարս:

* *Ոմանք.* Մինչև ընկէց զնա յերե՛:

* *Ոմանք.* Թագաւորեցոյց զՅերոբովամ: *Այլք.* Եւ մեղոյց զնոսա մեղս մեծա՛:

* *Ոմանք.* Եւ ած արքայն Ասորւոց ՚ի Բա՛... և ՚ի Սեփարուիմայ:

լուսաւորեցտ զնոսա իրաւամբք Աստուծոյ երկրին*։²⁸ Եւ տարան զմի՝ ի քահանայիցն զոր գերեցին ՚ի Սամարեայ. և նստաւ ՚ի Բեթէլ, և լուսաւորէր զնոսա, զի երկնչիցին ՚ի Տեառնէ։²⁹ Եւ արարին ա՛զգք ա՛զգք աստուածս իւրեանց, և եդին ՚ի տունս բարձանցն զոր արարին Սամարացիքն. իւրաքանչիւր ազգքն ՚ի քաղաքս իւրեանց յորս ինքեանք բնակէին։³⁰ Եւ արք Բաբելոնի արարին զՍոքքովթ և զԲանովթ, և արք Քութայ՝ արարին զԱնգեղ, և արք Եմաթայ՝ արարին զԱսիմաթ*։³¹ և Այիացիք արարին՝ զԱբղազեր, և զՆեբաս, և զԹարթակ, և զՍեփարուիմ, ուր այրէին զորդիս իւրեանց ՚ի հուր՝ Ադրամելեքայ, և Ամելեքայ՝ աստուածոց Սեփարուիմայ*։³² և երկնչէին ՚ի Տեառնէ. և բնակեցուցին զգարշելիսն իւրեանց ՚ի տունս բարձանցն զոր արարին ՚ի Սամարիա իւրաքանչիւր ազգաց յորում բնակէին։ Եւ երկնչէին ՚ի Տեառնէ, և արարին իւրեանց քուրմս բարձանց*։³³ Եւ երկնչէին ՚ի Տեառնէ, և պաշտէին զաստուածս իւրեանց, ըստ կրօնից ազգացն՝ զորս Աստուած մերժեաց անտի։³⁴ Եւ մինչև ցայսօր առնեն նոքա ըստ կրօնից նոցա, և երկնչին ՚ի Տեառնէ. և առնեն ըստ կրօնից նոցա, և ըստ իրաւանց նոցա՝ և ըստ օրինաց. և ըստ պատուիրանին զոր պատուիրեաց Տէր որդւոցն Յակոբայ, որում եդ անուն Իսրայէլ*։³⁵ և ուխտեաց Տէր ուխտ՝ և պատուիրեաց նոցա և ասէ. Սի՛ երկնչիցիք յաստուածոց օտարաց, և մի՛ երկիրպագանիցէք նոցա, և մի՛ պաշտիցէք զնոսա, և մի՛ զոհիցէք նոցա.³⁶ Եւ Տեառն Աստուծոյ որ եհան զձեզ յերկրէն Եգիպտացւոց մեծաւ զօրութեամբ, և բարձր բազկաւ. ՚ի նմանէ՛ երկնչիցիք, և նմա՛ երկիրպագանիցէք, և նմա՛ զոհիցէք։³⁷ Եւ իրաւանց և դատաստանաց և օրինաց, և պատուիրանացն զորս գրեաց ձեզ՝ զգուշանայցէք առնել. և մի՛ երկնչիցիք յաստուածոց օտարաց.³⁸ և զուխտն զոր ուխտեաց ընդ ձեզ՝ մի՛ ցրիցէք. և մի՛ երկնչիցիք յաստուածոց օտարաց,³⁹ Եւ ՚ի Տեառնէ Աստուծոյ ձերմէ երկնչիցիք, և նա փրկեսցէ զձեզ յամենայն թշնամեաց ձերոց։⁴⁰ Եւ մի՛ ունկնդիր լինիք կրօնից նոցա զոր նոքա առնիցեն*։⁴¹ Եւ երկնչէին ազգքն այնոքիկ ՚ի Տեառնէ. և դրօշելոց իւրեանց ծառայէին, և որդիք նոցա, և որդիք որդւոց նոցա, որպէս և արարին հարք իւրեանց՝ առնեն մինչև ցայսօր։

18

Գլուխ ԺԸ

ԾԸ¹ Եւ եղև յամին երրորդի Ովսէի որդւոյ Ելայ արքայի Իսրայէլի. թագաւորեաց Եգեկիա որդի Աքազու արքայի Յուդայ։² Որդի քսան և հինգ ամաց էր ՚ի թագաւորել իւրում, և քսան և ինն ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Աբութ՝ դուստր Զաքարայ*։³ Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր արար Դաւիթ հայր նորա։⁴ Նա՛ եբարձ զբարձունսն,

* Ոմանք. Տարայք անդ... և ցուցցէ զկրօնս Աստուծոյ։

* Ոմանք. Արարին զՍաքովթ. կամ՝ զՍովքովթ։

* Ոմանք. ԶԱբեղազեր... և զՍեփար... և Ամամելեքայ։

* Ոմանք. Իւրաքանչիւր ազգք ազգք յորում բնակէին։

* Ոմանք. Եւ մինչև ցայսօր առնէին... և երկնչէին ՚ի Տեառնէ. և առնէին ըստ կրօնից նոցա, և ըստ պատուիրանաց նոցա, և ըստ օրինաց։

* Այլք. Եւ մի՛ ունկնդիր լինիցիք կրօնից։

* Այլք. Դուստր Զաքարիայ։

և խորտակեաց զամենայն արծանսն, և կոտորեաց զանտառսն, և զօժն պղնձի զոր արար Մովսէս, զի մինչև ցա՛յն աւուրս զոհէին նմա որդիքն Իսրայէլի, և կոչեցին զնա Նեեսթան: ⁵Ի Տէր Աստուած Իսրայէլի յուսացաւ. և յետ նորա նման նմա ո՛չ եղև յամենայն թագաւորս Յուդայ, և յեղեալսն յառաջագոյն քան զնա: ⁶Յարեցա՛ւ ՚ի Տէր, և ո՛չ մեկնեցաւ ՚ի զնացից նորա. և պահեաց զպատուիրանս նորա զոր պատուիրեաց Մովսէս: ⁷Եւ էր Տէր ընդ նմա. յամենայնի զոր ինչ առնէր՝ խելամուտ լինէր: Եւ նշկահեաց զարքայն Ասորեստանի և ո՛չ ծառայեաց նմա*. ⁸և նա եհար զայլազգիսն մինչև ցՊազայ և մինչև ցսահմանս նորա, յաշտարակէ պահապանացն մինչև ցքաղաքն ամուր: ⁹Եւ եղև յամի չորրորդի Եգեկիա արքայի. այն է ամ եւթներորդ Ովսեայ՝ որդւոյ Ելայ արքայի Իսրայէլի, ել Սաղմանասար արքայ Ասորեստանեաց ՚ի վերայ Սամարիայ, և պաշարէր զնա*. ¹⁰և ա՛ռ զնա ՚ի կատարել ամաց երից, յամի վեցերորդի Եգեկիայ արքայի. այն ամ իններորդ էր Ովսեայ արքայի Իսրայէլի: Ա՛ռ զՍամարիա*. ¹¹և խաղացոյց արքայն Ասորեստանեաց զՍամարիա յԱսորեստանեայս, և նստոյց զնոսա յԱլլաթ, և յԱբովր՝ առ գետովն Գովզանայ՝ և լերամբքն Մարաց. ¹²զի ո՛չ լուան ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց, և անցին զուխտիւ նորա՝ ըստ ամենայնի՝ զոր պատուիրեաց նոցա Մովսէս ծառայ Տեառն, ո՛չ լուան և ո՛չ արարին*:

ԾԹ ¹³Եւ յամի չորեքտասաներորդի արքայի Եգեկիայ, ել Սենեքերիմ արքայ Ասորեստանեաց ՚ի վերայ ամուր ամուր քաղաքացն Յուդայ, և ա՛ռ զնոսա: ¹⁴Եւ առաքեաց Եգեկիա արքայ Յուդայ իրեշտակս առ արքայ Ասորեստանեաց ՚ի Լաքիս՝ և ասէ. Մեղայ՛, դարձի՛ր յինէն. և զոր ինչ դիցես ՚ի վերայ իմ բարձից: Եւ եդ արքայն Ասորեստանեաց ՚ի վերայ Եգեկիայ արքայի Յուդայ երեքարևր տաղանտ արծաթոյ՝ և երեսուն տաղանտ ոսկւոյ: ¹⁵Եւ ետ Եգեկիա զամենայն արծաթ գտեալ ՚ի տան Տեառն, և ՚ի զանձս տան թագաւորին: ¹⁶Ի ժամանակի յայնմիկ կոտորեաց Եգեկիա զղրունս տաճարին Տեառն՝ և զսեանսն զոր պատեաց ոսկւով Եգեկիա արքայ Յուդայ, և ե՛տ զայն արքային Ասորեստանեաց: ¹⁷Եւ առաքեաց արքայ Ասորեստանեաց զԹարաթա՝ և զՌաբսարիս՝ և զՌափսակ ՚ի Լաքիսայ առ արքայ Եգեկիայ զօրու ծանու ՚ի վերայ Երուսաղէմի. և ելին և եկին յԵրուսաղէմ, և կացին ՚ի վերայ ջրմղին վերնոյ աւազանին, որ է ՚ի ճանապարհի ագարակին թափչի. ¹⁸և աղաղակեցին առ Եգեկիա: Եւ եկին առ նա Եդիակիմ որդի Քեղկեայ հազարապետ, և Սովմնաս դարապետ, և Յովաք որդի Ասափայ՝ որ ՚ի վերայ յիշատակաց*: ¹⁹Եւ ասէ ցնոսա Ռափսակ. Ասացէ՛ք ցԵգեկիայ, այսպէս ասէ արքայ մե՛ծ՝ արքայն Ասորեստանեաց. Ջի՞նչ իցէ յոյսն յոր դու յուսացեալ իցես. ²⁰բայց եթէ ասիցես՝ եթէ բանք չըթանց և խորհուրդ՝ պատերա՞զմ վճարիցէ. և զօրութիւն պիտո՛յ իցեն ՚ի պատերազմ. և արդ՝ յո՞ւսացեալ նշկահեցեր զիս*: ²¹Ահա յուսացեալ իցես ՚ի ցո՞ւպն եղեգնեայ ջաղջախեալ յԵգիպտոս. յոր թէ յենուցու այր՝ մտանիցէ ընդ ձեռս նորա, և խոցիցէ զնա. այնպէս փարաւոն արքայ

* Այլք. Ջոր ինչ և առնէր՝ խելամուտ:

* Ոմանք. Ել Սաղմանասար... ՚ի Սամարիա:

* Այլք. Արքայի Իսրայէլի, առաւ Սամարիա, (11) և խաղա՛:

* Ոմանք. ՚ի վերայ ամուր քաղաքացն Յուդայ, և ա՛ռ զնա:

* Այլք. Եւ եկին առ նոսա Եդիակիմ:

* Յայլս պակասի. Եւ խորհուրդ՝ պատերա՞զմ վճարիցէ: Ոմանք. Եւ զօրութիւն պիտոյ իցէ պատերազմի:

Եգիպտացւոց ամենայն յուսացելոց իւրոց*։ ²²Եւ զի ասացեր ցիս՝ թէ՛ ՚ի Տէր Աստուած յուսացեալ ենք. ո՛չ դա ա՛յն է, զորոյ մերժեաց Եգեկիա զբարձունս նորա, և զսեղանս նորա. և ասէ ցՅուդայ և ցԵրուսաղէմ. Առաջի սեղանո՛յս այսորիկ երկիր պագէք յԵրուսաղէմ։ ²³Եւ արդ՝ աղէ խառնեցարո՛ւք ՚ի տէր իմ արքայ Ասորեստանեաց. և տա՛ց քեզ երկուս հազարս երիվարաց, եթէ կարասցե՛ս տալ դու քեզ հեծեալս ՚ի վերայ նոցա*։ ²⁴Եւ զի՞արդ կարիցես զդէմ ունել միոյ ուրուք կուսակալի ՚ի ծառայից տեսան իմոյ ՚ի յետնոց. զի յուսացեալդ ես յԵգիպտոս ՚ի կառս և յերիվարս։ ²⁵Իսկ արդ՝ առանց Տեա՞ռն ինչ ելանիցենք ՚ի տեղիս յայս ապականել զսա. Տէր ասաց ցիս. Ե՛լ յերկիրն յայն և ապականեա՛ զնա*։ ²⁶Եւ ասէ Եղիակիմ որդի Քեղկեայ, և Սովմնաս, և Յովաք Ասափայ՝ ցՌափսակ. Խօսեաց ընդ ծառայս քո Ասորերէն, քանզի լսե՛նք մեք. և մի՛ խօսիր Յրեարէն յականջս ժողովրդեանդ որ կան ՚ի պարսպիդ*։ ²⁷Եւ ասէ ցնոսա Ռափսակ. Միթէ առ տէ՞րն քո՛ կամ առ քե՞զ առաքեաց զիս տէ՛ր իմ խօսել զբանս զայսոսիկ. ո՛չ ապաքէն առ արսդ որ նստին ՚ի վերայ պարսպիդ, ուտել զաղբ իւրեանց, և ըմպել զմեզ իւրեանց ձևք հանդերձ*։ ²⁸Եւ յարեաւ Ռափսակ, և աղաղակեաց մեծածայն Յրեարէն՝ և խօսեցաւ և ասէ. Լուարո՛ւք զպատգամս արքայի մեծի, արքային Ասորեստանեայց. ²⁹ա՛յսպէս ասէ արքայ. Մի՛ հպարտացուսցէ զձեզ Եգեկիա, զի ո՛չ կարէ ապրեցուցանել զձեզ ՚ի ձեռաց իմոց*։ ³⁰Եւ մի՛ յուսացուսցէ զձեզ Եգեկիա ՚ի Տէր, և ասացէ թէ՛ փրկելով փրկէ զմեզ Տէր, և ո՛չ մատնեսցի քաղաքս ՚ի ձեռս արքային Ասորեստանեայց*։ ³¹մի՛ լսէք Եգեկիայ։ Ձի ա՛յսպէս ասէ արքայն Ասորեստանեաց. Արարէ՛ք ընդ իս օրհնութիւն, և ելէ՛ք առ իս. և կերիցէ՛ այր իւրաքանչիւր զայգի իւր, և զթզենի իւր, և արբցէ՛ ջուր ՚ի ջրհորոյ իւրմէ. ³²մի՛նչև եկից և առից և տարայց զձեզ յերկիրն որ իբրև գերկիրս ձե՛ր է. երկիր ցորենոյ և զինւոյ, այգեաց և հացի, երկիր ձիթենեաց իւղոյ և մեղու. և կեցէ՛ք և ո՛չ մեռանիցիք. և մի՛ լսէք Եգեկիայ, զի խաբէ զձեզ և ասէ, թէ՛ Տէր փրկեսցէ զմեզ*։ ³³Միթէ փրկելով փրկեցի՞ն աստուածք ազգացն զիւրաքանչիւր աշխարհի ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց։ ³⁴Ո՛ւր է աստուածն Եմաթայ և Արփաթայ. և ո՞ւր է աստուած Սեփարուիմայ քաղաքին, Անայ և Գաւայ. միթէ փրկելով փրկեցի՞ն զՍամարիա ՚ի ձեռաց իմոց*։ ³⁵ո՛վ ոք յամենայն աստուածոց աշխարհաց, որ փրկեցին զերկիր իւրեանց ՚ի ձեռաց իմոց. զի փրկեսցէ Տէր զԵրուսաղէմ ՚ի ձեռաց իմոց*։ ³⁶Եւ լռեցին և ո՛չ ետուն մնա պատասխանի, զի պատուէ՛ր տուեալ էր արքայի թէ՛ մի՛ տայցէք մնա պատասխանի*։ ³⁷Եւ եմո՛ւտ Եղիակիմ որդի Քեղկեայ հազարապետ, և Սովմնաս դպրապետ, և Յովաք որդի Ասափայ որ ՚ի վերայ

* *Յօրինակին պակասէր.* Յուսացեալ *իցես* ՚ի ցուպն։

* *Ոմանք.* Եւ տացէ քեզ երկուս հա՞։

* *Ի լուս՞.* Ելեալ իցենք ՚ի տեղիս յայս. *համաձայն ոմանց ՚ի բնար՞.*

* *Յօրինակին.* Եւ Յովակ Ասափայ։

* *Այլք.* Եւ առ քեզ առաքեաց։

* *Ոսկան.* Ձի՛ կարէ ապրեցուցանել զձեզ։

* *Ոմանք.* Եւ ո՛չ մատնեսցի քաղաքդ ՚ի։

* *Բազումք.* Մի՛նչև եկից առից և տարայց։

* *Այլք.* Միթէ փրկեցին զՍամարիա ՚ի ձեռաց։

* *Ոմանք.* Որ փրկեցին զաշխարհս իւրեանց։

* *Յօրինակին պակասէր.* Պատուէր տուեալ էր արքայի։ *Ոմանք.* Եթէ մի՛ տայք մնա պատասխանի։

յիշատակաց առ Եզեկիա, պատառեալ զհանդերձս. և պատմեցին նմա զպատգամս Ռափսակայ:

19

Գլուխ ԺԹ

Կ ¹Եւ եղև իբրև լուաւ արքայ Եզեկիա, պատառեալ զհանդերձս իւր, և զգեցաւ քո՛ւրձ. և եմուտ ՚ի տուն Տեառն: ²Եւ առաքեաց զԵղիակիմ հազարապետ՝ և զՍովմնաս դարապետ, և զժերս ՚ի քահանայիցն քրձազգածս առ Եսայի մարգարտ որդի Ամովսայ: ³Եւ ասեն ցնա. Այսպէս ասէ Եզեկիա. Օր նեղութեան և կշտամբանաց, և զայրացուցանելոյ օրս այս. զի հասեալ են մանկունք յերկունս, և չի՞ք զօրութիւն ՚ի ծնանելիս: ⁴Թերևս լուիցէ Աստուած քո զպատգամս Ռափսակայ, զոր առաքեաց զնա արքայն Ասորեստանեայց տէր իւր՝ նախատել զԱստուած կենդանի՝ և հայիոյել բանիւք, զորս լուաւ Տէր Աստուած քո. և արասցես աղօթս ՚ի վերայ մնացորդացս որ մնացին*: ⁵Եւ եկին ծառայք արքայի Եզեկիայ առ Եսայի*: ⁶Եւ ասէ ցնոսա Եսայի. Այսպէս ասասցի՞ք տեառն ձերում. այսպէս ասէ Տէր. Մի՛ երկնչիր յերեսաց պատգամացն զորս լուար՝ որովք հայիոյեցին զիս ծառայք արքային Ասորեստանեայց: ⁷Ահա ե՛ս տաց ՚ի նա այս. և լուիցէ գո՛յժ, և դարձցի յերկիր իւր, և կործանեցի՞ց զնա սրով յերկրի իւրում: ⁸Եւ դարձաւ Ռափսակ և Եգիտ զարքայն Ասորեստանեաց պատերազմեալ ընդ Ղոբնայի. զի լուաւ թէ չուեաց ՚ի Լաքիսայ: ⁹Եւ նա լուաւ զԹարաքայ արքայէ Եթովպացուց, ասեն. Ահա ե՛լ պատերազմել ընդ քեզ: Եւ դարձաւ անդրէն: Եւ առաքեաց հրեշտակս առ Եզեկիա և ասէ*. ¹⁰Այսպէս խօսեսցիք ընդ Եզեկիայ արքայի Յուդայ՝ ասել. Մի՛ հպարտացուցէ՛ զքեզ Աստուած քո, յոր դուն յուսացեալ ես. ասել՝ թէ ո՛չ մատնեսցի Երուսաղէմ ՚ի ձեռս արքային Ասորեստանեայց: ¹¹Ահա դու քեզէ՛ն իսկ լուար զամենայն ինչ զոր արարին թագաւորք Ասորեստանեայց ընդ ամենայն աշխարհս նզովել զնոսա, և դու փրկիցի՞ս: ¹²Միթէ փրկեցի՞ս զնոսա աստուածք ազգացն զորս սատակեցին հարք իմ, զԳովգան, և զՔառան, և զՌափաթ, և զորդիս Եդոմայ առ ծովեզերքն*. ¹³ո՛ւր է արքայն Եմաթայ՝ և արքայն Արփաթայ, և արքայ քաղաքին Սեփարուիմայ, Անայ և Այիայ*: ¹⁴Եւ ա՛ռ Եզեկիա զհրովարտակսն ՚ի ձեռաց հրեշտակացն, և ընթերցաւ զնոսա. և ել ՚ի տունն Տեառն. և տարածեաց զնոսա Եզեկիա առաջի Տեառն: ¹⁵Եւ եկաց յաղօթս Եզեկիա առաջի Տեառն՝ և ասէ. Տէր Աստուած Իսրայէլի որ նստիս ՚ի քրոքէս. դո՛ւ ես միայն Աստուած յամենայն թագաւորութիւնս երկրի. դո՛ւ արարեր զերկինս և զերկիր: ¹⁶Խոնարհեցո՛ Տէր զունկն քո և լո՛ւր. բաց Տէր զաչս քո և տե՛ս. և լո՛ւր զբանս Սենեքերիմայ՝ զոր առաքեաց նախատել զԱստուած կենդանի*. ¹⁷զի արդարև Տէր՝ ակերեցին թագաւորք Ասորեստանեայց զազգս և զերկիր նոցա. ¹⁸և ետուն զաստուածս նոցա հրո՛յ, զի չէին աստուածք, այլ ձեռագործք մարդկան, փայտ՝ և քար, և

* Ոմանք. Թերևս լուիցէ Տէր քո. և:

* Ոմանք. Եւ եկին... առ Եսայիա:

* Այլք. Լուաւ զԹարակայ ար՛:

* Այլք. Ազգացն զորս ապականեցին հարք իմ:

* Ոմանք. Անայ և Աւայ:

* Ոմանք. Լո՛ւր զբանսն Սենեքերիմայ:

կորուսին զնոսա*։ ¹⁹Եւ արդ՝ Տէր Աստուած մեր՝ փրկեա՛ զմեզ ՚ի ձեռաց նորա. և ծանիցեն ամենայն թագաւորութիւնք երկրի, զի դո՛ւ ես Տէր Աստուած միայն*։

ԿԱ ²⁰Եւ առաքեաց Եսայի որդի Ամովսայ առ Եգեկիայ՝ և ասէ. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ջոր կացեր յաղօթս առ իս վասն Սենեքերիմայ արքայի Ասորեստանեայց՝ լուայ*։ ²¹Այս բան է զոր խօսեցաւ Տէր վասն նորա. Արհամարհեա՛ց, անգոսնեա՛ց զքեզ կոյս դուստր Սիոնի. զլո՞ւիս շարժեաց ՚ի վերայ քո դուստր Երուսաղէմի։ ²²Չո՞ նախատեցեր և հայիոյեցեր, և յո՞յր վերայ բարձրացուցեր զբարբառ քո նախատել. և ո՞չ ամբարձեր ՚ի բարձունս զաչս քո ՚ի Սուրբն Իսրայէլի*։ ²³Ի ձեռն հրեշտակաց քոց նախատեցեր զՏէր և ասացեր. Բազմութեամբ կառաց իմոց ելի՛ ՚ի բարձրութիւն լերանց ՚ի կողմն Լիբանանու, և կտորեցի զմեծութիւն եղևնափայտիցն նորա, և զընտիր ընտիր նոճից նորա, և հասի՛ յեզր սպառուածոյ անտառին Կարմելայ*։ ²⁴Ես պահեցի՝ և արբի զջուրս օտարոտիս. և ակերեցի թաթի՛ւ ոտին իմոյ զամենայն գետս սաստիկս։ ²⁵Միթէ չիցէ՞ լուեալ ՚ի հեռաստանէ զայդ զոր արարի յաւուրց առաջնոց. ստեղծի՛ զդա՛ և ածի հասուցի. և եղեն ՚ի հպարտութիւն գերեվարաց պատերազմողաց. քաղաքք՝ ամուրք* ²⁶բնակե՛ալք ՚ի նոսա տկարացան ձեռամբ և զարհուրեցան, և անաչեցին, և եղեն իբրև զխոտ վայրի, և իբրև զդալարի բանջարոյ և զդալարի տանեաց. և կոխան առաջի հասելոց։ ²⁷Արդ՝ զմիստ քո, և զել և զմուտ քո գիտեմ, և զսրտմտութիւն քո*։ ²⁸Ի բարկանալ քո ինձ, և խայտալդ քո ել յականջս իմ. և արկի՛ց կարթ ՚ի քիթս քո, և դանդանաւանդ ՚ի կզակս քո, և դարձուցից զքեզ ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկիր*։ ²⁹Եւ քեզ այս նշանակ լիցի. կերիցես այս ամ զինքնեակս, և յամին երկրորդի զինքնեակս ինքնեակս. և յամին երրորդի՝ սերմանք և հունձք և տունկք այգեաց. և կերիջիք զպտուղ նոցա*, ³⁰և յաւելցի՛ ապրեալ տանդ Յուդայ. մնացեալն արձակեսցէ արմատս ՚ի խոնարի և պտուղս ՚ի վեր։ ³¹Ձի յերուսաղէմէ՛ ելցէ մնացորդ, և ՚ի Սիոն լեռնէ ապրեալ. նախանձ Տեառն զօրութեանց արասցէ զայս*։ ³²Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. Արքայն Ասորեստանեաց մի՛ մտցէ ՚ի քաղաքդ յայդ, և մի՛ ձգեսցէ ՚ի դա նե՛տս, և մի՛ պատեսցէ զդա վահանօք, և մի՛ կուտեսցէ զդովաւ հո՛ղ*։ ³³Ընդ ճանապարհ ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի. և ՚ի քաղաքդ յայդ մի՛ մտցէ ասէ Տէր։ ³⁴Եւ վերակացո՛ւ եղէց քաղաքիդ այդմիկ փրկել զդա վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ։ ³⁵Եւ ՚ի հասանել գիշերոյն ել հրեշտակ Տեառն, և եհար ՚ի բանակէն Ասորեստանեայց հարիւր և ութսուն և հինգ հազար. և կանխեցին ընդ առաւօտն, և ահա ամենայն մարմինք մեռեալ։ ³⁶Եւ չուեաց

* Այլք. Այլ գործք ձեռաց մարդկան, փայտ։

* Ոմանք. Ամենայն թագաւորք երկրի։

* Ոմանք. Տէր Աստուած զօրութեանց Աստուած Իսրայէլի։ *Յօրինակին պակասէր.* Ջոր կացեր յաղօթս *առ իս* վասն։

* Այլք. Եւ ամբարձեր ՚ի բարձունս։

* Ոմանք. Յեզր սպառուածի։

* Ի լուս՝. Ջայն զոր արարի։

* Ոմանք. Արդ զմտտել քո և զել։

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ կարթ. *նշանակի.* շրաւշակ։ *Յօրինակին.* Եւ դադանաւանդ։ *Այլք.* Ընդ ճանապարհ ընդ որ։

* Ոսկան. Կերիցես յայս ամ զինքնեակս։

* Այլք. Եւ ՚ի Սիովնէ լեռնէ։

* Այլք. Վասն այնորիկ այսպէս։ *Ոմանք.* Եւ մի՛ ձգեսցէ ՚ի դմա։

զնաց, և դարձաւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց՝ և բնակեաց ՚ի Նինուէ՜:
37Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր ՚ի տան Նեսրաքայ աստուածոյ իւրում,
Ադրամելէք և Սարասար որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան
յերկիրն Արարադայ. և թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա՜:

20

Գլուխ Ի

ԿԲ 1Յաւուրսն յայնոսիկ հիւանդացաւ Եզեկիա ՚ի մահ:

ԿԳ Եւ եմուտ առ նա Եսայի որդի Ամովսայ մարգարտ, և ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր. Հրաման տուր վասն տան քոյ, զի մեռանիս դու և ո՛չ ապրեսցիս՜: 2Եւ դարձոյց Եզեկիա զերեսս իւր յորմն, և եկաց յաղօթս առ Տէր և ասէ. 3Ո՛վ Տէր, յիշեա՛ որպէս զնացի առաջի քո ճշմարտութեամբ և կատարեալ սրտիւ, և զբարին առաջի քո արարի: Եւ ելաց Եզեկիա լալիւն մեծ: 4Եւ է՛ր Եսայի ՚ի սրահին միջնում. և բան Տեառն եղև առ նա և ասէ. 5Դարձի՛ր անդրէն, և ասասցես ցեզեկիա ցառաջնորդ ժողովրդեան իմոյ. Այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քոյ. Լուայ՛ աղօթից քոց և տեսի զարտասուս քո. ահա ե՛ս բժշկեցից զքեզ. և յաւուրն երրորդի ելցես ՚ի տուն Տեառն. 6և յաւելից յաւուրս քո ամս հնգետասան. և ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց փրկեցի՛ց զքեզ, և զքաղաքդ զայդ. և վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ, վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ: 7Եւ ասէ Եսայիա. Առցեն պաղատիտս թզոյ. և առաւ. և դիցեն ՚ի վերայ վիրիդ՝ և ողջասցիս՜: 8Եւ ասէ Եզեկիա ցեսայի. Ձի՞նչ նշան է թէ բժշկեսցէ զիս Տէր, և ելանիցեն ՚ի տուն Տեառն յաւուրն երրորդի: 9Եւ ասէ Եսայի. Այս նշան է ՚ի Տեառնէ. զի արասցէ Տէր զբանն, զոր խօսեցաւ. Երթիցէ ստուերն զտասն աստիճանօք՜: 10Եւ ասէ Եզեկիա. Դիւրին է ստուերին դառնալ զտասն աստիճանօք. և ասէ. Ո՛չ այդպէս է. այլ դարձցի՛ ստուերն զտասն աստիճանօք անդրէն յետս՜: 11Եւ աղաղակեաց Եսայի մարգարտ առ Տէր. և դարձաւ ստուերն զտասնէքումբք աստիճանօք անդրէն յետս զտասնէքումբք աստիճանօքն Աքագու՜:

ԿԴ 12Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Մարովդաք Բաղդան որդի Բաղդանայ արքայ Բաբելոնի հրովարտակս և պատարագս առ Եզեկիա, զի լուաւ թէ հիւանդացաւ Եզեկիա՜: 13Եւ ուրախ եղև ՚ի նոսա Եզեկիա. և եցոյց նոցա զամենայն տունս Նաքովթայ, զարծաթ, և զոսկի, և զխունկս, և զիւղս անուշունս. և զտունս անօթոց, և որ ինչ գտանէր ՚ի գանձս նորա. և ո՛չ էր տեղի զոր ո՛չ եցոյց Եզեկիա ՚ի տան իւրում, և յամենայն իշխանութեան իւրում՜: 14Եւ եմուտ Եսայի մարգարտ առ Եզեկիա արքայ և ասէ ցնա. Ձի՞նչ խօսեցան արքդ

* Ոսկան. Եւ չուեալ զնաց:

* Ոմանք. ՚ի տան Եսրաքայ աստուածոց իւրում, և Ադրա՛: ՚ի լուս՛. ՚ի վերայ՝ Արարադայ. նշանակի՛ Սիմ. այսինքն՝ Սիմաքոս դնէ. Հայոց:

* Ոմանք. Վասն տան քում... և ո՛չ ապրեսցես:

* Ոմանք. Եւ դիցես ՚ի վերայ վիրին, և ողջասցի:

* Բագումք. Աշտիճանօք:

* Բագումք. Աշտիճանօք:

* Բագումք. Աշտիճանօք:

* Ոմանք. Մարովդակ Բաղատան:

* Ոմանք. Ձոր ո՛չ եցոյց նոցա եզէ՛:

այդոքիկ, և ուստի՞ եկին առ քեզ: Եւ ասէ Եզեկիա. Յերկրէ հեռաստանէ եկին առ իս 'ի Բաբելոնէ': ¹⁵Եւ ասէ. Ջի՞նչ տեսին 'ի տան քում: Եւ ասէ Եզեկիա. Չամենայն ինչ որ 'ի տան իմում էր՝ տեսին, և ո՛չ ինչ էր 'ի տան իմում զոր ո՛չ ցուցի նոցա, այլ և ո՛չ 'ի գանձս իմ: ¹⁶Եւ ասէ Եսայի ցեզեկիայ. Լո՛ւր զբան Տեառն. ¹⁷Ահա աւուրք գան, և առցի ամենայն որ ինչ 'ի տան քում է, և զոր ինչ գանձեցին հարք քո մինչև ցայսօր, և երթիցէ 'ի Բաբելոն, և մի՛ ինչ մնասցէ. զի բան է զոր խօսեցաւ Տէր. ¹⁸և որդիք քո, որ ելանիցեն 'ի քէն՝ առցին, և եղիցին ներքինիք 'ի տան թագաւորին Բաբելացոց*: ¹⁹Եւ ասէ Եզեկիա ցեսայի. Բարի՛ է բանն Տեառն զոր խօսեցաւ. և ասէ. Եղիցի խաղաղութիւն և ճշմարտութիւն յաւուրս իմ: ²⁰Եւ մնացորդք բանից Եզեկիայ՝ և ամենայն զօրութիւնք նորա, և ո՛րպէս արար զջրաբուղիսն, և զջրմուղն, և աժ ջուր 'ի քաղաքն, ո՛չ աւանիկ գրեալ են 'ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ՝:

Կէ ²¹Եւ ննջեաց Եզեկիա ընդ հարս իւր. և թագաւորեաց Մանասէ որդի նորա ընդ նորա:

21

Գլուխ ԻԱ

¹Որդի ամաց երկոտասանից Մանասէ՝ 'ի թագաւորել իւրում. և յիսուն և ինն ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Եփսիբա*: ²Եւ արար չա՛ր առաջի Տեառն ըստ գարշութեան ազգացն, զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի. ³և դարձաւ շինեաց զբարձունսն զոր կործանեաց Եզեկիա հայր նորա. և կանգնեաց զսեղանն Բահաղու. և արար անտառս, որպէս արար Աքաաբ արքայ Իսրայէլի. և երկիր եպագ ամենայն զօրութեան երկնից, և ծառայեաց նոցա*. ⁴և շինեաց սեղան 'ի տան Տեառն. որպէս ասաց Տէր. Յերուսաղէմ եղից զաթոռ իմ: ⁵Եւ շինեաց սեղան ամենայն զօրութեան երկնից յամենայն սրահս տանն Տեառն*: ⁶Եւ անցոյց զորդիս իւր ընդ հուր. և հմայէր, և հաւահարց լինէր. և արար վիուկս, և գէտս. և յաճախեաց առնել չա՛ր առաջի Տեառն առ 'ի բարկացուցանելոյ զնա: ⁷Եւ եդ զդրօշեալս անտառաց 'ի տան Տեառն. զորմէ ասաց Տէր ց՛Դաւիթ և ց՛Սողոմոն որդի նորա, թէ 'ի տանս յայսմիկ և յերուսաղէմ զոր ընտրեցի յամենայն ցեղից Իսրայէլի, եղի՛ց զանուն իմ յաւիտեան*. ⁸և ո՛չ յաւելից շարժել զտոն Իսրայէլի յերկրէդ զոր ետու հարց նոցա. ոյք զգուշանայցեն առնել զամենայն որ ինչ պատուիրեցի նոցա, և ըստ ամենայն պատուիրանի բանին զոր պատուիրեաց նոցա ծառայ իմ Սովսէս, և ո՛չ լուան*: ⁹Եւ մոլորեցոյց զնոսա Մանասէ առնել չա՛ր առաջի Տեառն՝ առաւել՝ քան զազգսն՝ զորս ապականեաց Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի: ¹⁰Եւ խօսեցաւ Տէր 'ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից՝ և ասէ. ¹¹Փոխանակ զի արար Մանասէ

* Այլք. Եսայիա մարգարէ առ արքայ Եզե՛:

* Այլք. 'ի տան արքային Բաբելացոց:

* Բազումք. Եւ ամենայն զօրութիւն նորա... և զջրմուղսն. և աժ:

* Այլք. Որդի երկոտասանից ամաց Մանասէ:

* Ոմանք. Ամենայն զօրութեանց երկնից:

* Ոմանք. Ամենայն զօրութեանց երկնից:

* Բազումք. Եւ ց՛Սողոմոն ցորդի նորա:

* Այլք. Ըստ ամենայն պատուիրանին, զոր պատուիրեաց:

արքայ Յուդայ զգարշելիսդ զայդոսիկ զչարս առաւել քան զամենայն զոր արար Անովրիացին առաջի իմ, և յանցեալ Յուդայ կռովք իւրեանց* . ¹²վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ահա ե՛ս ածեմ չարիս ՚ի վերայ Երուսաղեմի և ՚ի վերայ Յուդայ, զի ամենայնի որ լսիցէ, հնչեսցեն երկոքին ականջք իւր* : ¹³Եւ ձգեցից ՚ի վերայ Երուսաղեմի զչափն Սամարեայ, և զկշիռ տանն Աքաաբու: Եւ ջնջեցից զԵրուսաղեմ որպէս շիշ մի ջնջեալ որ կործանիցի ՚ի վերայ երեսաց իւրոց: ¹⁴Եւ մերժեցից զմնացորդս ժառանգութեան իմոյ. և մատնեցից զնոսա ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց, և եղիցին յափշտակութիւն և յաւար ամենայն թշնամեաց իւրեանց* . ¹⁵Վոխանակ զի արարին չար առաջի իմ, և բարկացուցանէին զիս յօրէ յօրմէհետէ հանի զնոսա յեգիպտոսէ մինչև ցայսօր: ¹⁶Նա և արիւն անպարտ եհեղ Մանասէ բազում յոյժ, մինչև ելից զԵրուսաղեմ ծայր ՚ի ծայր. թո՛ղ զմեղս իւր որովք մեղոյցն զՅուդայ՝ առնել չար առաջի Տեառն* : ¹⁷Եւ մնացորդք բանից Մանասէ՛ի և ամենայն ինչ զոր արար. և մեղք նորա զոր մեղաւ, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ:

ԿԶ ¹⁸Եւ ննջեաց Մանասէ ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի պարտիզի տան իւրոյ, ՚ի պարտիզին Ոգայ. և թագաւորեաց Ամոն որդի նորա ընդ նորա* : ¹⁹Որդի քսան և երկուց ամաց Ամոն ՚ի թագաւորել իւրում, և երկոտասան ամ թագաւորեաց յԵրուսաղեմ. և անուն մօր նորա Մեսողոմիթ՝ դուստր Արուսայ Յետեբելայ* : ²⁰Եւ արար չար առաջի Տեառն, որպէս արար Մանասէ հայր նորա. ²¹և գնաց յամենայն ճանապարհս յոր գնաց հայր նորա, և պաշտեաց զկուռս զոր պաշտեաց հայր նորա, և երկիր եպագ նոցա. ²²և եթող զՏէր Աստուած հարց իւրոց, և ո՛չ գնաց ՚ի ճանապարհս Տեառն: ²³Եւ գումարեցան ծառայք Ամոնայ ՚ի վերայ նորա, և սպանին զարքայ ՚ի տան իւրում* : ²⁴Եւ եհար ամենայն ժողովուրդն զամենայն գումարեալսն ՚ի վերայ արքայի Ամոնայ. և թագաւորեցոյց ժողովուրդ երկրին զՅովսիայ որդի նորա ընդ նորա: ²⁵Եւ մնացորդք բանիցն Ամոնայ զոր արար, ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ: ²⁶Եւ ննջեաց Ամոն ընդ հարս իւր, և թաղեցին զնա ՚ի գերեզմանի իւրում ՚ի պարտիզին Ոգայ:

ԿԷ Եւ թագաւորեաց Յովսիայ որդի նորա ընդ նորա:

22

ԳԼՈՒԽ ԻԲ

¹Որդի ամաց ութից Յովսիայ ՚ի թագաւորել իւրում, և երեսուն և մի ամ թագաւորեաց յԵրուսաղեմ. և անուն մօր նորա Յեդիդա. դուստր Յեդիդայ ՚ի Բասուրովթայ: ²Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, և գնաց յամենայն ճանապարհս Դաւթի հօր իւրոյ. և ո՛չ խոտորեցաւ յաջ կամ յահեակ: ³Եւ եղև

* Այլք. Եւ յանցեալ և Յուդա:

* Ոմանք. Ձի ամենայնի որ եղիցի, հնչեսցեն:

* Այլք. Եւ եղիցին ՚ի յափշտա՛:

* Ոսկան. ՚Ի ծայրէ ՚ի ծայր:

* Ոմանք. Ամոն:

* Այլք. Դուստր Արուսայ Յետեբաղայ: Ոմանք. Ամոն:

* Ոմանք. Ամոն:

յամի ութուտասներորդի Յովսիայ արքայի Յուդայ, յամսեանն եւթներորդի առաքեաց արքայ գՍափան գորդի Եսելիա գորդոյ Մեսողոմայ գղպրապետ տանն, և ասէ՝ ⁴Երբ առ Քեղկիա քահանայ մեծ, զի ձուլեցեն զարծաթն մտեալ ՚ի տուն Տեառն, զոր ժողովեցին պահպանեալքն կշռով ՚ի ժողովրդենն՝ ⁵և տայցեն զայն ՚ի ձեռս գործաւորաց գործոյն ցվերակացուս տանն Տեառն: Եւ ետուն ցգործաւորս գործոցն ՚ի տանն Տեառն, զօրացուցանել զբեղեկ տանն Տեառն՝ ⁶ցհիւսունս և ցշինօղս և ցճարտարս, զնել փայտ և քարինս կոփածոյս՝ առ ՚ի կազմելոյ զբեղեկ տանն Տեառն: ⁷Բայց ո՛չ առնէին համար արծաթոյն տուելոյ նոցա. քանզի յաւատ գործէին՝ ⁸Եւ ասէ Քեղկիա քահանայ մեծ՝ ցՍափան դպրապետ. Մատեան օրինաց գտի ՚ի տան Տեառն: Եւ ետ Քեղկիա ցՍափան. և ընթերցաւ զայն, ⁹և տարաւ առ արքայ զպատգամն, և ասէ. Չուլեցին ծառայք քո զարծաթն գտեալ ՚ի տան Տեառն. և ետուն զայն ՚ի ձեռս գործաւորաց գործոյն վերակացուաց ՚ի տան Տեառն՝ ¹⁰Եւ խօսեցաւ Սափան դպրապետ ընդ արքայի՝ և ասէ. Մատեան մի ետ ցիս Քեղկիա քահանայ. և ընթերցաւ զայն Սափան առաջի արքայի: ¹¹Եւ եղև իբրև լուսաւ արքայ զբանս մատենի օրինացն, պատառեաց զհանդերձս իւր: ¹²Եւ պատուէր ետ արքայ Քեղկիայ քահանայի, և Աքիկամայ որդոյ Սափանայ, և Աքոբերայ որդոյ Միքէի, և Սափանայ դպրապետի, և Յասայեայ ծառայի արքայի՝ և ասէ՝ ¹³Երթայք խնդրեցէք ՚ի Տեառնէ վասն իմ և վասն ամենայն ժողովրդեանդ՝ և վասն ամենայն Յուդայ, վասն բանից մատենիդ գտելոյ այդորիկ. զի մեծ բարկութիւն Տեառն բորբոքեալ է ՚ի մեզ. փոխանակ զի ո՛չ լուան հարք մեր բանից մատենիդ այդորիկ առնել ըստ ամենայն գրելոցդ զմէնջ՝ ¹⁴Եւ զնաց Քեղկիա քահանայ, և Աքիկամ, և Աքոբովր, և Սափան, և Յասայիա, առ Ողղա մարգարէ՝ կին Սելլովմայ որդոյ Թեկուեայ, որդոյ Արասայ պատմուճակի. և նա բնակէր յերուսաղէմ ՚ի Մասենա. և խօսեցան ընդ նմա: ¹⁵Եւ ասէ ցնոսաւ. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ասացէք ցայրն որ առաքեաց զձեզ առ իս. ¹⁶այսպէս ասէ Տէր. Ահա ես ածեմ չարիս ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ, և ՚ի վերայ բնակչաց դորա ըստ ամենայն բանից մատենին զոր ընթերցաւ արքայ Յուդայ. ¹⁷փոխանակ զի թողին զիս, և արկանէին խունկս աստուածոց օտարաց. զի բարկացուցեն զիս գործովք ձեռաց իւրեանց. և բորբոքեսցի սրտմտութիւն իմ ՚ի տեղւոջ յայդմիկ, և մի՛ շիջցի՝ ¹⁸Եւ ցարքայ Յուդայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր, զայս ասասցիք. այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Բանքն զոր լուար՝ այս են՝ ¹⁹փոխանակ զի կակղացաւ սիրտ քո, և պատկառեցեր յերեսաց Տեառն իբրև լուար զոր ինչ խօսեցաւ ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ, և ՚ի վերայ բնակչաց դորա լինել յապականութիւն և յանէծս, և պատառեցեր զհանդերձս քո, և լացեր

* *Ոմանք.* Չորդի Եսելիայ որդոյ Մոսողոմայ գղպրապետն, և ասէ:

* *Այլք.* Չոր ժողովեցին պահապանքն կշռով:

* *Ի լուս՝* ՚ի վերայ՝ զբեղեկ. *նշանակի՝* Սիմ. զկազմածս:

* *Ոմանք.* Քանզի յաւարտ գործէին:

* *Ոմանք.* Գտեալ ՚ի տուն Տեառն:

* *Ոմանք.* Եւ Աքոբերայ որդի:

* *Ի լուս՝* Երթայք հարցէք ՚ի Տեառնէ: *Ոմանք.* Եւ վասն բանից մատենիդ գտելոյ յայդորիկ. *կամ՝* այդորիկ գտելոյ:

* *Ոմանք.* Ձի բարկացուցին զիս:

* *Ոմանք.* Բանքն զոր լուար այսրէն. փոխանակ զի:

առաջի իմ. և ես լուսյ՝ ասէ՛ Տէր*։ ²⁰Վասն այդորիկ ես յաւելում գրեզ առ հարս քո, և ժողովեցիս ՚ի տեղոջ քում յերուսաղէմ. և ո՛չ տեսցեն աչք քո զչարիսն զոր ես ածից ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ*։

23

Գլուխ ԻԳ

¹Եւ դարձուցի՛ն արքայի զպատգամն զոր յղեաց արքայ. և ժողովեաց առ ինքն զամենայն ծերս Յուդայ՝ և զերուսաղէմի։ ²Եւ ել արքայ ՚ի տուն Տեառն. և ամենայն այր Յուդայ՝ և ամենայն բնակիչք Երուսաղէմի ընդ նմա, և քահանայք և մարգարէք՝ և ամենայն ժողովուրդն ընդ նմա ՚ի փոքուէ մինչև ցմեծ. և ընթերցաւ յականջս նոցա զամենայն բանս մատենի ուխտին գտելոյ ՚ի տան Տեառն։ ³Եւ եկաց արքայ ՚ի վերայ սեանն, և ուխտեաց ուխտ առաջի Տեառն՝ երթալոյ զհետ Տեառն, և պահելոյ զպատուիրանս նորա, և զվկայութիւնս նորա, և զիրաւունս նորա յամենայն սրտէ՝ և յամենայն անձնէ. կանգնել զբանս ուխտին գրելոյ ՚ի մատենին յայնմիկ. և եկաց ամենայն ժողովուրդն յուխտի։

ԿԸ ⁴Եւ պատուէր ետ արքայ Քեղկիայ քահանայի մեծի, և քահանայիցն երկրորդաց, և պահապանաց կշռոյն՝ հանել ՚ի տաճարէն Տեառն զամենայն անօթ գործեալ Բահաղու, և անտառացն, և զօրութեան երկնից, և այրեաց զնոսա արտաքոյ Երուսաղէմի ՚ի Սադեմովթ Կեդրոնի, և արկ զմոխիր նոցա ՚ի Բեթէլ*։ ⁵Եւ այրեաց զքովմարիմսն զոր տուեալ էր արքային Յուդայ, և արկանէին խունկս ՚ի բարձունսն, և յամենայն քաղաքս Յուդայ, և շուրջ զԵրուսաղէմաւ. և զխնկարկուսն զարեգական և զլուսնի՝ և զաստեղաց՝ և զամենայն զօրութեան երկնից*։ ⁶և զանտառն ՚ի տանէ Տեառն արտաքոյ Երուսաղէմի ՚ի հեղեղատն Կեդրոնի. և այրեաց զայն ՚ի հեղեղատին Կեդրոնի, և մանրեաց իբրև զփոշի. ցանեաց զմոխիրն նորա ՚ի գերեզմանս որդւոց ժողովրդեանն*։ ⁷Եւ քակեաց զտուն կաղէսիմացն որ ՚ի տան Տեառն. և յորում կանայքն անկանէին զպատմութեանս անտառացն*։ ⁸Եւ եհան զամենայն քուրմսն ՚ի քաղաքէն Յուդայ։ Եւ պղծեաց զբարձունսն. յոր արկանէին խունկս քուրմքն, ՚ի Քաբայ մինչև ցԲերսաբէէ. և քակեաց զտուն դրանցն որ առ դրանդոջ դրանն Յեսովայ իշխանի դրանն ՚ի ձախմէ առ դրան քաղաքին*։ ⁹Բայց ո՛չ ելանէին քուրմք բարձանցն ՚ի սեղան Տեառն որ յերուսաղէմ. եթէ ո՛չ ուտէին բաղարջ ՚ի մէջ եղբարց իւրեանց։ ¹⁰Եւ պղծեաց զԹոփոթ, որ ՚ի ձո՛ր որդւոցն Ենոմայ, առ ՚ի չածելոյ առն զուստր իւր կամ զդուստր զբոցով Մեղքոմայ*։ ¹¹Եւ այրեցին զձիսն զորս ետ արքայ Յուդայ արեգական՝ ՚ի մուտս տան Տեառն ՚ի գանձանակի Նաթանայ ներքինւոյ արքայի, որ ՚ի Փարուրիմ. և զկառսն արեգական այրեաց

* Ոմանք. Լուար զինչ խօսեցաւ։

* Այլք. Չամենայն չարիսն, զոր ես ա՛։

* Ոմանք. Եւ պահպանաց կշռոցն հանել։

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ զքովմարիմսն. *նշանակի՝* Ակ. այսինքն՝ *Ակիւղաս*. զմեհեանսն։

* Այլք. Եւ ցանեաց զմո՛։

* Բազումք. Յորում կանայքն անկանէին։

* Ոմանք. Յոր արկանէին. *կամ՝* ուր արկանէին։

* Յօրինակին. Որդւոցն Ենոմայ։

հրով*։ ¹²Եւ զսեղանս որ 'ի վերայ տանեաց վերնատանն, զոր արարին թագաւորք Յուդայ. և զսեղանն՝ զոր արար Մանասէ յերկուս սրահս տանն Տեառն. և քակեաց զայն արքայ, և կործանեաց անտի, և ընկեց զհողն նոցա 'ի հեղեղատն Կեդրոնի*։ ¹³Նա և զտունն որ 'ի դիմաց Երուսաղեմի ընդ աջմէ լերինն Մոսաթայ, զոր շինեաց Սողոմոն արքայ Իսրայէլի Աստարտայ գարշելոյ Սիդոնացւոյ, և Քանովսայ զագրոտոյ Մովաբայ, և Մելքոնայ գարշելոյ որդւոցն Ամոնայ՝ պղծեաց արքայ*։ ¹⁴Եւ խորտակեաց զարծանսն, և կոտորեաց զանտառսն. և ելից զտեղիս նոցա ոսկերօք մարդկան։ ¹⁵Եւ զսեղանն որ 'ի Բեթէլ զբարձր, զոր արար Յերոբովամ որդի Նաբատայ որ մեղոյցն զԻսրայէլ. և զայն ևս սեղան զբարձր կործանեաց և խորտակեաց զբարինս նորա, և մանրեաց իբրև զփոշի, և այրեաց զանտառն*։ ¹⁶Եւ հայեցաւ Յովսիա, և ետնս զգերեզմանս որ 'ի քաղաքին. և առաքեաց և ա՛ռ զոսկերս 'ի գերեզմանացն՝ և այրեաց 'ի վերայ սեղանոյն, և պղծեաց զնա ըստ բանին Տեառն, զոր խօսեցաւ այրն Աստուծոյ, մինչև կայր Յերոբովամ 'ի տօնին 'ի վերայ սեղանոյն։ Եւ դարձոյց զաչս իւր 'ի գերեզման առնն Աստուծոյ որ խօսեցաւ զբանս զայսոսիկ*։ ¹⁷Եւ ասէ. Ձի՞նչ է կոթողն այն զոր ես տեսաննմ։ Եւ ասեն ցնա արք քաղաքին. Այրն Աստուծոյ է՝ որ եկն 'ի Յուդայ, և բարբառեցաւ զբանս զայսոսիկ 'ի վերայ սեղանոյն Բեթէլայ։ ¹⁸Եւ ասէ. Թո՛յլ տուք զայն՝ մի՛ ոք շարժեսցէ զոսկերս նորա։ Եւ զտան ոսկերք նորա ընդ ոսկերս մարգարէին եկելոյ 'ի Սամարիայ*։ ¹⁹Նա և զամենայն տունս բարձանց զոր 'ի քաղաքս Սամարիայ արարին թագաւորք Իսրայէլի առ 'ի բարկացուցանելոյ զՏէր, մերժեաց Յովսիա արքայ Իսրայէլի. և արար ըստ ամենայն գործոցն զոր արար 'ի Բեթէլ։ ²⁰Եւ ճենճերեաց զամենայն քուրմս բարձանց որ էին անդ 'ի վերայ սեղանոյն. և այրեաց զոսկերս մարդկան 'ի վերայ նոցա. և դարձաւ յերուսաղեմ։ ²¹Եւ պատուէր ետ արքայ ամենայն ժողովրդեանն՝ և ասէ. Արարէ՛ք զգատիկ Տեառն Աստուծոյ մերոյ, որպէս և գրեալ է 'ի մատենի ուխտիս այսորիկ*։ ²²Ձի՛ ո՛չ եղև զատիկն այն յաւուրս դատաւորացն որ դատէին զԻսրայէլ, և յաւուրս թագաւորացն Իսրայէլի, և թագաւորացն Յուդայ*։ ²³Բայց զի յուրօրտասներորդի ամի Յովսիայ արքայի եղև զատիկն այն Տեառն յերուսաղեմ*։ ²⁴Եւ զվիուկս, և զգէտս, և զթերափիմս, և զկուռս, և զամենայն գարշելիսն եղեալս 'ի Յուդայ և յերուսաղեմ, եբարձ Յովսիա. զի հաստատեսցէ զբանս օրինացն գրելոց 'ի մատենին, զոր եգիտ Քեղկիա քահանայ 'ի տան Տեառն*։ ²⁵Նման նմա՝ ո՛չ եղև յառաջ քան զնա թագաւոր, որ դարձաւ առ Տէր յամենայն սրտէ իւրմէ, և յամենայն անձնէ իւրմէ, և

* Ի լուս՝ 'ի վերայ՝ զանձանակի. *նշանակի՝* Սիմ. առ պաշտկամբին։ *Ոմանք.* Եւ զանձանակին... որ 'ի Փարուրիմ։

* *Ոմանք.* Յերկուս 'ի սրահս տանն։

* Ի լուս՝ 'ի վերայ՝ Մոսաթայ. *նշանակի՝* Սիմ. ապականչին ապականութեանց։ *Ոմանք.* Սիդոնացւոց... և Սողքոմայ... որդւոցն Ամոնայ։

* *Ոմանք.* Եւ մանրեաց 'ի փոշի։

* Ի լուս՝ 'ի վերայ՝ 'ի քաղաքին. *նշանակի՝* Սիմ. 'ի լերինն։ *Ոմանք.* Սինչ կայր Յերոբովամ։

* Ի լուս՝ Եկելոյ 'ի Սամարեայ. *համաձայն ոմանց՝ 'ի բնար՝*

* *Ոմանք.* Արարէք զատիկ Տեառն Աստուծոյ մերուն։

* Ի լուս՝ Յաւուրց դատաւորացն. *համաձայն ոմանց՝ 'ի բնար՝*

* *Յօրինակին պակասէր.* Չատիկն այն Տեառն յերուսաղեմ։

* *Ոմանք.* Եւ զվիուկս և զգէտս։ Ի լուս՝ 'ի վերայ՝ զթերափիմս, *նշանակի՝* զտօնահմայս։

յամենայն զօրութենէ իւրմէ, ըստ ամենայն օրինացն Մովսիսի. և յետ նորա ո՛չ եկաց նման նմա*։ ²⁶Սակայն ո՛չ դարձաւ Տէր ՚ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ մեծէ՝ զոր սրտմտեցաւ բարկութեամբ իւրով ՚ի վերայ Յուդայ վասն զայրացութեանցն որովք զայրացոյց զնա Սանասէ։ ²⁷Եւ ասէ Տէր. Նա և զՅուդայ՝ մերժեցից յերեսաց իմոց, որպէս մերժեցի գիսրայէլ. և մերժեցից զքաղաքդ զայդ զոր ընտրեցի զերուսաղէմ, և զտունդ զորմէ ասացի թէ եղիցի անուն իմ անդ*։

ԿԹ ²⁸Եւ մնացորդք բանիցն Յովսիայ՝ և ամենայն ինչ զոր արար՝ ո՛չ աւանիկ գրեալ է ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ*։ ²⁹Յաւուրսն յայնոսիկ ել վարաւոն Նեքաւով արքայ Եգիպտացոց ՚ի վերայ թագաւորին Ասորեստանեաց առ Եփրատ գետով. և զնաց Յովսիա արքայ ընդ առաջ նորա. և սպան զնա ՚ի Մակեդով ՚ի տեսանելն նորա զնա*։ ³⁰Եւ բարձին զնա ծառայք նորա ՚ի Մակեդովայ, և բերին զնա յերուսաղէմ. և թաղեցին զնա ՚ի գերեզմանի հօր իւրում*։

Յ Եւ ա՛ռ ժողովուրդ երկրին զՅովաքազ որդի Յովսիայ, և օժին զնա՝ և թագաւորեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ։ ³¹Որդի՛ քսան և երից ամաց էր Յովաքազ ՚ի թագաւորել իւրում, և երիս ամիսս թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Ամիտալ դուստր Երեմիայի ՚ի Ղուբնայ*։ ³²Եւ արար չա՛ր առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արարին հա՛րք նորա։ ³³Եւ փոխեաց զնա փարաւոն Նեքաւով ՚ի Ղեբդաթա յերկիրն Եմաթայ չթագաւորել նմա յերուսաղէմ. և արկ հարկ երկրին հարիւր տաղանտ արծաթոյ և տասն տաղանտ ոսկւոյ։

ՅԱ ³⁴Եւ թագաւորեցոյց փարաւոն Նեքաւով ՚ի վերայ նոցա զեղիակիմ որդի Յովսիայ արքայի Յուդայ փոխանակ Յովսեայ հօր իւրոյ. և փոխեաց զանուն նորա Յովակիմ. և զՅովաքազ ա՛ռ տարաւ յԵգիպտոս, և մեռա՛ւ անդ*։ ³⁵Եւ զարծաթն և զոսկին ե՛տ Յովակիմ փարաւոնի. սակայն ճշդով գրեցին զերկիրն տա՛լ զարծաթն բանիւ փարաւոնի՝ այր ըստ կարի իւրում ետուն զարծաթ և զոսկի հանդերձ ժողովրդեամբ երկրին տա՛լ փարաւոնի Նեքաւովայ*։ ³⁶Որդի քսան և հինգ ամաց էր Յովակիմ ՚ի թագաւորել իւրում. և մետասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Ելզափ՝ դուստր Յեդդելայ յԻովմայ*։ ³⁷և արար չա՛ր առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արարին հարք նորա։

24

Գլուխ ԻԴ

¹Յաւուրս նորա ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի, և եղև նորա ծառայ

* *Յօրինակին պակասէր.* Եւ յամենայն զօրութենէ իւրմէ։

* *Ոմանք.* Թէ դիցի անուն իմ անդ։

* *Այլք.* Ոչ աւանիկ գրեալ են ՚ի գիրս։

* *Ի լուս՝.* ՚ի վերայ Նեքաւով. *նշանակի՝* կաղ։ *Ոմանք.* ՚ի վերայ արքային Ասորեստան։

* *Այլք.* Չնա ՚ի գերեզմանի իւրում։

* *Ոմանք.* Եւ երիս ամս թագաւորեաց յերուսաղէմ... ՚ի Ղուբնայ։

* *Ոմանք.* Ա՛ռ և տարաւ յԵգիպտոս։

* *Ի լուս՝.* Այր ըստ սակի իւրում. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝.*

* *Ոմանք.* Դուստր Յեկդելայ յԻովմայ։

Յովակիմ ամս երիս. և դարձա՛ւ վտարանջեաց ՚ի նմանէ: ²Եւ առաքեա՛ց նմա Տէր
զմեկնակազէնսն Քաղղէացւոց, և զմեկնակազէնսն Ասորւոց, և զմեկնակազէնսն
Մովաբայ, և զմեկնակազէնսն որդւոցն Ամովնայ. և առաքեաց զնոսա յերկիրն
Հրեաստանի սատակել զնոսա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ՚ի ձեռն
ծառայից իւրոց մարգարէից*։ ³Քանզի բարկութիւն Տեառն էր ՚ի վերայ Յուդայ
մերժել զնա յերեսաց իւրոց՝ վասն մեղաց Մանասէի, ըստ ամենայնի զոր արար.
⁴և վասն անպարտ արեանցն զոր եհեղ, և ելից գերուսաղէմ անպարտ արեամբ.
և ո՛չ կամեցաւ Տէր ցածնուլ: ⁵Եւ մնացորդք բանիցն Յովակիմայ, և ամենայն ինչ
զոր արար. ո՛չ աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ:

ՀԲ Եւ մնջեա՛ց Յովակիմ ընդ հարս իւր. ⁶և թագաւորեաց Յովաքիմ որդի նորա
ընդ նորա*։ ⁷Եւ ո՛չ ևս յաւել արքայն Եգիպտացւոց ելանել յերկրէն իւրմէ. քանզի
ա՛ռ արքայն Բաբելոնի ՚ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչև ցգետն Եփրատ,
զամենայն ինչ որ էր արքային Եգիպտացւոց: ⁸Որդի ամաց ութուտասնից էր
Յովաքիմ ՚ի թագաւորել իւրում, և երիս ամիսս թագաւորեաց յերուսաղէմ. և
անուն մօր նորա Նեսթա, դուստր Ելենաթայ յերուսաղէմէ*։ ⁹և արար չա՛ր
առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր արար հայր նորա:

ՀԳ ¹⁰Ի ժամանակին յայնմիկ ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի
յերուսաղէմ. և եկն քաղաքն ՚ի պաշարումն*։ ¹¹Եւ եմուտ արքայն Բաբելացւոց ՚ի
քաղաքն. և ծառայք նորա պաշարեալ պահէին զնա: ¹²Եւ ել Յովաքիմ արքայ
Յուդայ առ արքայն Բաբելացւոց՝ ինքն և ծառայք իւր, և մայր իւր և իշխանք
իւր, և ներքինիք իւր. և ա՛ռ զնոսա արքայն Բաբելացւոց. յամի ութերորդի
թագաւորութեան իւրոյ: ¹³Եւ եհան զամենայն զանձս տանն Տեառն, և զզանձս
տան թագաւորին. և կոտորեաց զամենայն անօթս ոսկեղէնս զոր արար
Սողոմոն արքայ Իսրայէլի ՚ի տաճարին Տեառն ըստ բանին Տեառն: ¹⁴Եւ
խաղացոյց զամենայն Երուսաղէմ, և զամենայն իշխանս, և զամենայն
զօրաւորս զօրութեամբ ՚ի գերութեան, տասն հազար գերեաց. և զամենայն
հիւսունս և զդահիճս, և ո՛չ ոք մնաց բաց յաղքատաց երկրին*։ ¹⁵Եւ խաղացոյց
զՅովաքիմ ՚ի Բաբելոն, և զմայր թագաւորին, և զկանայս նորա, և զներքինիս
նորա. և զզօրաւորս երկրին վարեաց ՚ի գերութիւն յերուսաղէմէ ՚ի Բաբելոն*։
¹⁶Եւ զամենայն արս զօրութեան արս եւթն հազար. և զհիւսունս և զդահիճս
հազար այր, ամենեքեան զօրաւորք պատերազմօղք. և վարեաց զնոսա
արքայն Բաբելացւոց ՚ի գերութեան ՚ի Բաբելոն*։ ¹⁷Եւ թագաւորեցոյց արքայն
Բաբելացւոց զՍեթթանիա որդի նորա ընդ նորա. և եղ անուն նմա Սեղեկիա:
¹⁸Որդի քսան և մի ամաց էր Սեղեկիա ՚ի թագաւորել իւրում. և մետասան ամ
թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Ամատել դուստր Երեմիայի ՚ի
Ղուբնայ*։ ¹⁹Եւ արար չա՛ր առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արար Յովաքիմ:
²⁰Զի սրտմտութիւն Տեառն էր ՚ի վերայ Երուսաղէմի և Յուդայ, մինչև ընկեցտ

* Օրինակ մի. Եւ զմեկնակազէնսն:

* Ոմանք. Եւ թագաւորեաց Յովակիմ որ՞:

* Ոմանք. Անեսթա դուստր Եղ՛ամաթայ:

* Ոմանք. Եւ եկն ՚ի քաղաքն ՚ի պաշարումն:

* Ոմանք. Ի գերութիւն, տասն հազար գե՛:

* Ոմանք. Վարեաց ՚ի գերութեան:

* Ոմանք. Ի գերութիւն ՚ի Բաբելոն:

* Ոմանք. Ամարել դուստր Երեմիայ ՚ի Ղուբնայ:

զնոսա յերեսաց իւրոց. և նշկահեաց Սեդեկիա զարքայն Բաբելացոց*:

25

Գլուխ ԻԵ

¹Եւ եղև յամին իններորդի թագաւորութան նորա, յամսեանն տասներորդի որ օր տասն էր ամսոյն. եկն Նաբուքոդոնոսոր արքայն Բաբելոնի, և ամենայն զօրք իւր ՚ի վերայ Երուսաղեմի, և բանակեցաւ զնովաւ, և շինեաց շուրջ զնովաւ պարիսպ: ²Եւ պաշարեցաւ քաղաքն մինչև ցամն մետասաներորդ Սեդեկիայ արքայի, ³և ցամիսն իններորդ. և սաստկացաւ սով ՚ի քաղաքին, և ո՛չ գոյր հաց ժողովրդեան երկրին: ⁴Եւ խրամատեցաւ քաղաքն. և ամենայն արք պատերազմի ելին արտաքս գիշերի ՚ի ճանապարհ դրանն ՚ի մէջ պարսպացն, որ էր առ պարտիզաւն արքունի. և Քաղդէացիքն պատեալ էին շուրջ զքաղաքաւն. և գնաց ընդ ճանապարհն Արաբայ*:

⁵Եւ պնտեցաւ զօրն Քաղդէացոց զհետ թագաւորին, և հասին նմա յԱրաբովթ Երիքովայ. և ամենայն զօրք նորա ցրուեցան ՚ի նմանէ*. ⁶և կալան զթագաւորն, և ածին առ արքայն Բաբելոնի ՚ի Դեբղ'աթայ. և խօսեցաւ ընդ նմա դատաստանօք: ⁷Եւ զորդիսն Սեդեկիայ սպանին առաջի նորա, և զաչսն Սեդեկիայ կուրացոյց. և կապեա՛ց գնա կապանօք և տարաւ ՚ի Բաբելոն*:

⁸Եւ յամսեանն հինգերորդի, որ օր եւթն էր ամսոյն. այն ամ ինն և տասներորդ էր Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացոց. եկն Նաբուզարդան դահճապետ՝ յանդիմանակաց արքային Բաբելոնի յերուսաղեմ*. ⁹և այրեաց զտունն Տեառն, և զտուն թագաւորին. և զամենայն տունս Երուսաղեմի, և զամենայն տունս այրեաց հրով*:

¹⁰Եւ զպարիսպն Երուսաղեմի շուրջանակի քակեցին ամենայն զօրքն Քաղդէացոց որ ընդ դահճապետին: ¹¹Եւ զաւելորդս ժողովրդեանն զմնացեալս ՚ի քաղաքին, և զանկեալսն յարքայն Բաբելացոց. և զա՛յլ ևս խուժան ժողովրդեանն, խաղացոյց Նաբուզարդան դահճապետ*:

¹²Եւ յաղքատաց երկրին եթող դահճապետն յայգեգործս և յարդիւնարարս: ¹³Եւ զսիւնսն պղնձիս զերկոսին որ ՚ի տան Տեառն, և զմենքենովթսն, և զծովն պղնձի որ ՚ի տան Տեառն, խորտակեցին Քաղդէացիքն, և բարձին զպղինձ նոցա ՚ի Բաբելոն*:

¹⁴Եւ զսանսն, և զկատասայսն, և զտաշտսն, և զտուփս, և զամենայն անօթս պղնձիս որովք պաշտէին՝ առին: ¹⁵Եւ զբուրուառսն, և զափսեան արծաթիս և զոսկիս ա՛ռ դահճապետն*:

¹⁶Եւ զսիւնսն զերկոսին, և զծովն զմի. և զմենքենովթսն զոր արար Սողոմոն ՚ի տան Տեառն. և ո՛չ գոյր կշիռ պղնձոյ

* Ոմանք. Մինչև ընկեց զնոսա յեր*:

* Ոմանք. ՚ի գիշերի ընդ ճանապարհ դրանն ընդ մէջ պարսպացն, որ է առ պար... ընդ ճանապարհն Արաբիայ:

* Ի լուս՝. ՚ի վերայ յԱրաբովթ. նշանակի՝ Սիմ. յանշինին: Ուր ոմանք. յՌաբովթ Երիքովայ:

* Այլք. Եւ զորդիսն Սե՛... սպան առաջի նորա:

* Ոմանք. Այն ամ ինն և տասն էր... արքային Բաբելացոց յերուսաղեմ:

* Ոմանք. Եւ զամենայն տունս Երուսաղեմի այրեաց հրով:

* Ոմանք. Եւ զմնացեալս քաղաքին, և զանկեալս յարքայն Բաբելոնի:

* Ի լուս՝. ՚ի վերայ և զմենքենովթսն. նշանակի՝ Ակ. զթակոյկսն: Ուր ոմանք. և զմենքենովթսն պղնձի:

* Ոմանք. Եւ զափսեայսն զարծա՛:

ամենայն անօթոցն* . 17 յուրօրուտասն կանգնոյ բարձրութիւն միոյ սեանն . և քովթար պղնձի ՚ի վերայ նորա . և բարձրութիւն միոյ քովթարայ՝ յերկոց կանգնոց . և սաբակ , և նռնածեք ՚ի վերայ քովթարայն շուրջանակի ամենայն պղնձի . ըստ նմին օրինակի և սեանն երկրորդի ՚ի վերայ սաբաքին* : 18 Եւ ա՛ռ դահճապետն զՍարայիա քահանայն զառաջինն , և զՍոփոնիա զերկրորդ քահանայ , և զերիս պահապանս կշռոյն* . 19 և ՚ի քաղաքէ անտի ա՛ռ ներքինի մի , որ էր ոստիկան արանց պատերազմողաց . և հինգ այր ՚ի յանդիմանակացաց արքայի գտելոց ՚ի քաղաքին . և զդպրապետ իշխան զօրուն զկարգիչ ժողովրդեան երկրին , և եւթն ա՛յլ այր ՚ի ժողովրդենէ երկրին զգտեալս ՚ի քաղաքին* . 20 ա՛ռ զնոսա Նաբուզարդան դահճապետ , և տարաւ զնոսա առ արքայն Բաբելոնի ՚ի Դեբլաթա : 21 Եւ եհար զնոսա արքայն Բաբելոնի , և սպան զնոսա ՚ի Դեբլաթա յերկրին Եմաթայ : Եւ գերեցաւ Յուդայ յերկրէ՛ իւրմէ :

ԴԵ 22 Եւ զժողովուրդն որ մնաց ՚ի Յուդայ , եթող Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի . և կացոյց ՚ի վերայ նոցա զԳողոզիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ* :

ԴՁ 23 Եւ լուան ամենայն իշխանք զօրուն նորա՝ և արք նոցա՝ եթէ կացոյց արքայ Բաբելոնի ՚ի վերայ նոցա զԳողոզիա . և եկին առ Գողոզիա ՚ի Մասեփա . Իսմայէլ որդի Նաթանայ , և Յովման որդի Կարէի , և Սարայիա որդի Թանայեմայ Սովփաթացի , և Յեզոնիա որդի Մաքաթու , ինքեանք և արք իւրեանց* . 24 Եւ երդուան Գողոզիայ՝ ինքեանք և արք իւրեանց . և ասէ ցնոսա . Մի՛ երկնչիք յասպատակէ Քաղդեացւոցն . նստա՛յք յերկրիս , և ծառայեցէ՛ք արքային Բաբելոնի , և բարի՛ եղիցի ձեզ* : 25 Եւ եղև յամսեանն եւթներորդի , եկն Իսմայէլ որդի Նաթանայ որդւոյ Ելիսամայ ՚ի զաւակէ թագաւորաց . և տասն այր ընդ նմա , և հարին զԳողոզիա և մեռաւ , և զԴրէայսն և զՔաղդեացիսն որ էին ընդ նմա ՚ի Մասեփա : 26 Եւ յարեաւ ամենայն ժողովուրդն ՚ի փոքունէ՝ մինչև ցմե՛ծ , և իշխանք զօրուն՝ մտին յեգիպտոս . զի երկեան յերեսաց Քաղդեացւոցն :

ԴԷ 27 Եւ եղև յերեսներորդի և յեւթներորդի ամի գերութեանն Յովակիմայ արքայի Յուդայ , յամսեանն երկոտասաներորդի , ՚ի քսան և յեւթն ամսոյն , բարձրացոյց Իլմարուդաք արքայ Բաբելոնի յամին յորուն թագաւորութեանց՝ զգլուխ Յովակիմայ արքայի Յուդայ . և եհան զնա ՚ի տանէ բանտին իւրոյ* , 28 և խօսեցաւ ընդ նմա քաղցրութեամբ . և արկ զաթոռ նորա ՚ի վերոյ՝ քան զաթոռս թագաւորացն որ ընդ նմա ՚ի Բաբելոնի* : 29 Եւ փոխեաց զհանդերձ բանտին

* *Յօրինակին* . Սողոմոն տան Տեառն :

* *Ի լուս*՝ ՚ի վերայ՝ և քովթար . *նշանակի*՝ Սիմ . ծայր սեանն : *Ի լուս*՝ ՚ի վերայ՝ և սաբակ . *նշանակի*՝ Ակ . կողակ : *Ի լուս*՝ ՚ի վերայ՝ քովթարայն . *նշանակի*՝ Սիմ . վանդակ : *Ոմանք* . Յուք և տասն... միոյ քովթարաց... և սաբաք և նռնածեք ՚ի վերայ քովթարացն :

* *Ոմանք* . ՉՍարայի քահանայ զառաջին :

* *Ոմանք* . Եւ զդպրապետն իշխանի զօրուն... և եօթն այր ՚ի ժողովրդենէ երկրին , և զգտեալս ՚ի քաղաքին և ա՛ռ զնոսա : *Ի լուս*՝ ՚ի վերայ՝ եւթն այր . *նշանակի* . վաթսուն այր :

* *Յօրինակին* . Եւ ժողովուրդն որ մնաց : *Ոմանք* . Որ մնաց ՚ի Յուդայէ , եթող :

* *Այլք* . Եթէ կացոյց ՚ի վերայ արքայն Բաբելացւոց զԳողոզիա , եկին... որդի Նաթանիայ... որդի Թանայիմայ . *կամ*՝ Նաթանայիմայ Տովփատացի... Մաքաթայ :

* *Ոմանք* . Նստարուք յերկ՛ :

* *Ոմանք* . Յերեսներորդ և եւթներորդի ամի... Իլմարուդաք արքայ Բաբելոնի , յամի թագաւորութեան իւրոյ՝ զգլուխ :

* *Այլք* . Քան զաթոռ թագաւորացն : *Ոմանք* . Թագաւորացն որ ՚ի Բաբելոնի :

Նորա. և ուտէր հանապազ հաց առաջի Նորա զամենայն աւուրս կենաց իւրոց*:
30Եւ ռոճիկ Նորա ռոճիկ հանապազորդ տուաւ նմա ՚ի տանէ՛ թագաւորին,
համարով օրըստօրէ զամենայն աւուրս կենաց իւրոց*:

Կատարեցաւ Թագաւորութեանց Չորրորդ*

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՅՈՐԴԱՅ

Երևի և Գիրք Մնացորդացս յայլ և յայլ պատմողաց շարագրեալ, և յետոյ ՚ի մի հաւաքեալ. բայց անուանք գրողացն ո՛չ են յայտ, որպէս և ո՛չ Դատաւորացն գրողաց, և ո՛չ Թագաւորութեանցն բնաւն: Եւ թէ ընդէ՞ր. կամ զի ՚ի մէջ ժողովրդեանն անուանիք էին նոքա. և առժամայն չհամարեցան հարկ՝ դնել զանուանս իւրեանց. կամ զի անփառասերք ոմանք էին. կամ զի ՚ի բազմաց մատենից հաւաքեաց որ հաւաքեացն. և զիւրաքանչիւրոցն ծանր վարկաւ դնել զանուանս: Կամ զի բազում ինչ բանք և տեսիլք մարգարէից կան ՚ի պատմութիւնսս յայս, յորոց պատկառեալ շարագրօղք՝ թաքուցին զանուանս իւրեանց: Բայց ժամանակն յորում ՚ի մի հաւաքեցաւ Գիրքս հուսկ յետոյ երևի քան զդարձն Չորաբաբիլի ՚ի Բաբելոնէ, վեց ծննդովք ՚ի խոնարհ իջեալ ՚ի նմանէ. որք են ըստ կարգի որդիք ՚ի հօրէ այսոքիկ. Չորաբաբէլ. Անանիա. Սեբեմիա. Սամայիա. Նովադիա. Ելիոնէ. Անանիա, ՚ի սորա աւուրս երևի հաւաքումն գրոցս: Այլ զի ո՛չ ձայնակցին անուանքս այս աւետարանչացն, կարծելի է այլովք անուանքք կոչել զսոսա, որպէս սովոր են Եբրայեցիք, երկանունս և եռանունս (զով). կամ թէ յայլոց եղբարց են ծնեալք՝ որք յաւետարանին յիշին. որպէս Նաթան և Սողոմոն որդիք Դաւթի, յորոց Յովսէփ: Իսկ զերեքտասաներորդ նահապետն Կայինան զոր ասեն վասն անարժանութեան չյիշեալ Մովսիսի. այլ զի է նա որդի Արփաքսադայ՝ և Դուկաս վկայէ: Բայց թէ ուստի եղաւ աստ զի ՚ի գիրսն Մովսիսի չիք, թէպէտ գոյ կարծել ՚ի Քաղդեացոց մատենից որք բազում ինչ զոյգ Մովսիսի պատմեն զհնոցն. այլ հաւանիմ ՚ի նմին Մովսիսէ աւանդութեամբ ընկալեալ զանունն ՚ի կարգս հարցն. զոր ո՛չ վասն պատուոյ եդ պատմագիրս, այլ վասն զկարգս հարցն ողջ ածելոյ: Կամ խորհրդով թողութեանն որ Քրիստոսիւ. որով և ինքն Մովսէս օրհնեաց զԴոբէն, զոր անէծն Յակոբ: Իսկ զի կոչի գիրքս Մնացորդք՝ յիրէն առեալ զանունն. զի բազում ինչ զմնացեալսն ՚ի կանուխ գրելոցն, ՚ի հնագէտ պատմութեանցն առեալ ՚ի մէջ ածէ, դէմս, և իրս, և տեղիս, և յեղանակս՝ իբրև զհարկաւորս առ ՚ի գիտել, որպէս ՚ի հարցն զԿայինանն, և զնախածնօղսն Բեսելիէլի ՚ի տանէն Փարիսի. և զծնունդս եղբօրն

* Այլք. Չհանդերձս բանտի Նորա:

* Ոմանք. ՚ի տան թագաւորին:

* Ի վախճանի ոմանք. Կատարումն, կամ՝ կատարեցաւ Թագաւորութեանց Չորրորդ գլուխ:

Ռախարու Երիքովացւոյ: Իսկ ևս բազումս վասն Ղևտացւոցն, զորս կարգեաց Դաւիթ և Սամուէլ ՚ի պաշտօնն Աստուծոյ, և զի հանգոյց զտապանակն Աստուծոյ ՚ի տանէն Աբեղդարայ յԵրուսաղէմ ՚ի խորանն զոր կազմեաց Դաւիթ, և կարգեաց անդ զԱսափ իւրով դասուն պաշտել զՏէր: Իսկ զՍադովկ իւրովքն ՚ի Բամա առաջի խորանին զոր կազմեացն Մովսէս: Եւ զի կարգեցան Դաւիթ երկոտասան իշխանս յամենայն ցեղիցն ըստ երկոտասան ամսոց ՚ի վերայ ռոճկաց տանն արքայի: Եւ զի կացոյց Դաւիթ քարահատս վասն տաճարին, և պատրաստեաց նիւթ. և ետ զհանգամանս շինուածոյ տաճարին Սողոմոնի որդւոյ իւրոյ: Եւ այլ բազում ինչ զորս յերկրորդ Մնացորդսն ՚ի մէջ ածէ: Իսկ զազգահամար թագաւորացն, միայն զտանն Դաւթի թուէ մինչև ցգերիչն ՚ի Բաբելոն, և ցառաջին ամն Կիւրոսի:

Գլուխք Առաջին Մնացորդաց

ա. ՅԱդամայ մինչև ցՆոյ:

բ. Ազգք երից որդւոցն Նոյի, որք յեւթանասուն և երկու լեզուս բաժանեցան:

գ. Ի Սեմայ մինչև ցԱբրահամ, հանդերձ Սեմաւ մետասան ծնունդք:

դ. Որդիք Աբրահամու որ ՚ի Յազարայ են՝ երկոտասան ազգ:

ե. Նոյնպէս և որք ՚ի Քետուրայ՝ երկոտասան ազգ:

զ. Որդիք Եսաւայ վեշտասան ազգ. և Քոռեցին քսան և ութ ազգ:

է. Ութ թագաւորք տանն Եսաւայ:

ը. Եւ յետ նոցա մետասան իշխանք:

թ. Երկոտասան որդիք Յակոբայ:

ժ. Տունն Յուդայ ՚ի Փարիսայ մինչև ցԴաւիթ տասն ազգ:

ժա. Չի ՚ի տանէն Փարիսի է Բեսելիէլ:

ժբ. Որդիք Դաւթի մինչև ցՋորաբաբել. և ՚ի Ջորաբաբել մինչև ցԱմանիա, յորոյ աւուրս գրեցաւ զիրս այս:

ժգ. Ծնունդք եղբօրն Ռախարու:

ժդ. Կալուածք որդւոցն Շմաւոնի:

ժե. Չի Ռոբէն Գադաւ և Մանասէի քաջացան կալով ընդ Աստուծոյ, և յուխտազանց լինելոյ՝ գերեաց զնոսա Թագղաթփաղսար:

ժզ. Ի տանէն Կահաթու որդիք Ամրամայ Ահարոն, և որդիք իւր քահանայապետք մինչև ցՅովսեփէլ որ գերի՝ չոգաւ ՚ի Բաբելոն:

ժէ. Ի նոյն տանէն Կահաթու որդիք Սահառայ, Կորիս և որդիք նոցա. յորոց Սամուէլ. և յորդւոց նորա սաղմոսասացք կարգեալք ՚ի Դաւթայ. և այլք ՚ի տանէն Գեթսոնի և Մերարեայ:

ժը. Քաղաքքն ապաւինութեան, յորս բնակեցան Ղևտացիքն:

ժթ. Յանդէս որդւոցն Իսաքարու, Նեփթաղիմայ, Մանասէի, Եփրեմի, Ասերայ, Բենիամինի:

ի. Թէ ո՞րք էին դռնապանք և իշխանք գործոյ տաճարին:

իա. Մահն Սաւուղայ և որդւոց նորա:

իբ. Թագաւորեաց Դաւիթ ՚ի Քեբրոն. և ա՞ն զԵրուսաղէմ:

իգ. Քաջութիւնք զօրականացն Դաւթի:

իդ. Ժողովեցան ՚ի Քեբրոն յամենայն ցեղիցն՝ երեք հարիւր երեսուն և

եւթն հազար, և չորեք հարիւր, և թագաւորեցուցին զԴաւիթ ամենայն
 Իսրայէլի:
 իե. Եւ զի ո՛չ ուսովք բարձին զտապանակն՝ սպան Աստուած զՈզա
 քահանայ:
 իզ. Բարեկամութիւն Քիրամայ ընդ Դաւթի, և վասն որդւոցն որ ծնան նմա
 յերուսաղէմ:
 իէ. Եհար Դաւիթ երկիցս զայլազգիսն:
 իը. Եհան Դաւիթ զտապանակն ՚ի տանէն Աբեդդարայ, և հանգոյց ՚ի
 խորանն զոր ինքն կազմեաց:
 իթ. Կարգեաց զՂևտացիսն սաղմոսասացս առաջի տապանակին
 յերուսաղէմ:
 լ. Կարգեաց քահանայս և ՚ի Գաբաւոն առաջի խորանին և սեղանոյն՝ զոր
 արար Բեսելիէլ:
 լա. Ասաց Դաւիթ շինել տուն Աստուծոյ, և ասաց Տէր. Ո՛չ դու այլ որդին քո
 շինեսցէ ինձ տուն: Եւ գոհացաւ ընդ այնր զՏեառնէ:
 լբ. Սպան Դաւիթ զարքայն Մծբնայ, և տիրեաց մինչև ցեփրատ գետ.
 կոտորեաց զԵդոմ, և հարկեաց զԴամասկոս:
 լգ. Սրբեաց Տեառն զանօթսն ոսկեղէն, զոր առաքեաց նմա արքայն
 Անտիոքոս:
 լդ. Առաքեաց Դաւիթ մխիթարել զԶանոն. և նորա նախատեալ
 զիրեշտակսն, ՚ի թշնամութիւն եկն՝ և յաղթեցաւ:
 լե. Ձի յայլ և յայլ պատերազմունս անկան սկայքն անճոռնիք:
 լզ. Բարկութեանն Աստուծոյ իբրև ինքնայորդոր դահիճ բանսարկուն,
 դրդեաց զԴաւիթ թուել զԻսրայէլ, և ՚ի լինել հարուածոց մահուն յԻսրայէլ,
 եկաց ՚ի միջի Դաւիթ բարեխօս:
 լէ. Եցոյց Տէր Դաւթի զտեղի տաճարին զկալն Արանայ՝ ուր կանգնեաց
 սեղան, որ և ընկալաւ Աստուած զողջակէզսն հրով:
 լը. Կացոյց Դաւիթ քարահատս և հիւսունս, և նիւթ տաճարին, և
 քաջալերեաց զՍողոմոն և զիշխանսն ՚ի գործն:
 լթ. Կացոյց Դաւիթ գաւառապետս յՂևտացոցն, և դարմանօղս
 աղքատաց. և զի որդիքն Մովսիսի թուեցան յՂևտացիսն:
 խ. Որդւոցն Ահարոնի Սադոկ ՚ի տանէն Եղիազարու, և Աբիաթար
 յԹամարայ. և որք ըստ իւրաքանչիւր դասուցն ՚ի պաշտօնն:
 խա. Իշխանք և գործավարք Դաւթի յամենայն ցեղիցն:
 խբ. Պատուէր ետ Սողոմոնի պահել զօրէնս Աստուծոյ, և ետ նմա
 զհանգամանս շինուածոյ տաճարին:
 խգ. Ձի նպաստ եղեն իշխանքն ՚ի նիւթ տաճարին:
 խդ. Ձի վասն այսորիկ գոհացաւ Դաւիթ, և յանձնեաց Տեառն
 զժողովուրդն:

ՄՆԱՅՈՐԴԱՅ ԱՌԱՋԻՆ*

* Ի վերնագիր գրոցս ունին ոմանք. Գլուխ Մնացորդաց Առաջին:

Գլուխ Ա

Ա ¹Ադամ, Սէթ, Ենոք: ²Կայինան, Սաղաղայէլ, Յարեդ*: ³Ենոք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ:

Բ ⁴Որդիք Նոյի՝ Սէմ, Քան, Յաբեթ: ⁵Որդիք Յաբեթի՝ Գամեր, Մագովգ, Մադայի, Յովիդան, Եղիսան, Թորէլ, Մոսոք, և Թիրաս: ⁶Եւ որդիք Գամերայ՝ Ասքանագ, և Յռիփաթ, և Թորգոնա*: ⁷Եւ որդիք Յովիդանայ՝ Ելիսա, և Թարսիս, Կիտացիք՝ և Յռոդացիք: ⁸Եւ որդիք Քանայ՝ Քուս, և Մեստրեմ, Փուդ, և Քանան*: ⁹Եւ որդիք Քուսայ՝ Սաբա, և Իլա, և Սաբաթա, և Յռեզմա, և Սաբակաթա, և որդիք Յռեզմայ՝ Սաբա, և Դեդան*: ¹⁰Եւ Քուս ծնաւ զՆեմրոզը. սա՛ սկսաւ լինել հսկայ որսորդ՝ ի վերայ երկրի*: ¹¹Եւ Մեստրեմ ծնաւ զԼուդիմացիս, և զԼաբիիմացիս, և զԱմաիմացիս, և զՆեփթաբիմացիս*: ¹²Եւ զՊատրոսիիմացիս, և զՔաստղոնիիմացիս, ուստի ելին անտի Փղշտացիք, և զՔափթորիմացիս: ¹³Եւ Քանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր, և զՔանանացին, ¹⁴և զԵբուսացին, և զԱմուրիացիս, և զԳերգեսացին, ¹⁵և զԽևացին, և զԱրուկեցին, և զԱրսեմացին, ¹⁶և զԱրադացին, և զՍամարացին, և զԱմաթացին: ¹⁷Որդիք Սեմայ՝ Եղամ, և Ասուր, և Արփաքսադ՝ և Ղուդ, և Արամ. և որդիք Արամայ Յուս, և Ենովլ, և Գաթեր, և Մոսոք*: ¹⁸Եւ Արփաքսադ ծնաւ զԿայինան. և Կայինան ծնաւ զՍաղա. և Սաղա ծնաւ զԵբեր: ¹⁹Եւ Եբերայ ծնան երկու՝ որդիք, անուն միունն Փաղէկ, զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր. և անուն եղբօր նորա Յեկտան: ²⁰Յեկտան ծնաւ զԵլնովդադ, և զՍաղափ, և զԱրամովք*, ²¹և զԿեդրուրան, և զԵգէլ, և զԴեկլան*, ²²և զԿամաան, և զԱբիմէլ, և զՍաբա, ²³և զՍոփիր, և զԵլի, և զՈվրամ. ամենեքեան սոքա որդիք Յեկտանայ:

Գ ²⁴Որդիք Սեմայ՝ Ելամ, և Ասուր, և Արփաքսադ, Կայինան, Սաղա*, ²⁵Եբեր, Փաղէկ, Ռագաւ, ²⁶Սերուք, Նաքովր, Թառայ, ²⁷Աբրամ, նա՛ ինքն է Աբրաամ:

Դ ²⁸Եւ որդիք Աբրաամու՝ Իսահակ, և Իսմայէլ: ²⁹Սոքա՛ են ծնունդք Իսմայէլի. Նաբեովք, և Կեդար, և Նաբդէլ, Մաբսան, ³⁰Մասմա, և Իդունա, Մասսէ, Քոդադ, Թաման, ³¹Իտուր, Նափէս, և Կեդմա. սոքա՛ են որդիք Իսմայէլի:

Ե ³²Եւ որդիք Քետուրայ հարճին Աբրաամու, և ծնաւ նմա զԵմրան, և զՅեկսան, և զՄադան, և զՄադիան, և զՅեսբոկ, և զՍովիւէ: Եւ որդիք Յեկսանայ՝ Սաբա, և Դեդան, և որդիք Դեդանայ՝ Ռագուէլ, և Նաբդէլ, և Ասուրիիմ, և Լատուսիիմ, և Լոովմիմ*: ³³Եւ որդիք Մադիանայ՝ Գեփար, և Ոփեր, և Ենոք, և Աբիդա, և Ելդան. ամենեքեան սոքա որդիք Քետուրայ: ³⁴Եւ ծնաւ Աբրաամ զԻսահակ. և որդիք Իսահակայ՝ Եսաւ, և Յակոբ:

* Ոմանք. Կայնան. Մաղաղէլ, կամ՝ Մաղաղիէլ:

* Ոմանք. Ասքենէզ և Յռի՞:

* Ոմանք. Փուք և Քանաան:

* Ոմանք. Եւ Սեբեթաքա:

* Ոմանք. Եւ Քուս ծնաւ զՄեստրովդ:

* Ոսկան. Եւ զՆեփթադիմացիս:

* Ոմանք. Եւ որդիք Արամայ Յովսեմոդ, և:

* Ոմանք. Եւ Յեկտան ծն՞:

* Ոսկան. Եւ զԴեկղան և զԻրահ. և զԿամա՞:

* Յոմանս պակասի. Կայնան. Սաղա:

* Ի լուս՞. Սաբա և Թեման և Դեդան. համաձայն ոմանց՝ ի բնաք՞: Ուր և այլ ոմանք. Սաբա և Մագեդան: Ոմանք. Եւ Ջատուսուիիմ և Ղովմիմ:

Ձ ³⁵Որդիք Եսաւայ՝ Եղիփազ, և Զնագուէլ, և Յէուլ, և Էգղոմ, և Կորէ*։ ³⁶Որդիք Եղիփազայ՝ Թեման, և Ովմար, Սոփար, Գոթոմ, և Կենէզ, և Թամար՝ հարճ Եղիազարու ծնաւ նմա զԱմադէլ*։ ³⁷Եւ որդիք Ռագուելի՝ Նաքէթ, Ջարեհ, Սոմէ, և Մոզէ։ ³⁸Եւ որդիք Սէիրայ՝ Ղովտան, Սոբադ, Սեբեգոն, Անա, Դեսոն, և Ասար՝ և Զռիսոն*։ ³⁹Եւ որդիք Ղովտանայ՝ Քոռի, և Էման, և քոյր Ղովտանայ՝ Թամնա։ ⁴⁰Որդիք Սովբադայ՝ Գովդ'ամ, և Մանաքաթ, և Գեբէլ, և Սովփար, և Յովնան. և որդիք Սեբեգոնի՝ Այիա, և Ովնան. և որդիք Անայ՝ Դեսոն. և Ողիբամա դուստր Անայի*։ ⁴¹Եւ որդիք Դեսոնի՝ Ադամա, և Եսեբամ, և Յեթրան, և Քառան*։ ⁴²Եւ որդիք Ասարայ՝ Բաղտան և Ազուկամ և Յովիկամ և Ուկամ. և որդիք Դեսոնի՝ Ովս, և Առան։

Է ⁴³Եւ այսոքիկ թագաւորք նոցա որք թագաւորեցին յԵդոմ, յառաջ քան զթագաւորել թագաւոր որդւոցն Իսրայէլի. Բաղակ որդի Սեփովրայ. և անուն քաղաքի նորա Դենաքա։ ⁴⁴Եւ մեռաւ Բաղակ, և թագաւորեաց փոխանակ նորա Յոբաբ, որդի Ջարեհի՝ ի Բոսորայ*։ ⁴⁵Եւ մեռաւ Յոբաբ. և թագաւորեաց փոխանակ նորա Ասովմ յերկրին Թեմնացւոց*։ ⁴⁶Եւ մեռաւ Ասովմ. և թագաւորեաց փոխանակ նորա Ադադ, որդի Բարադայ. որ եհար զՍադիամ ՚ի դաշտին Մովաբայ. և անուն քաղաքի նորա Գեթեմ։ ⁴⁷Եւ մեռաւ Ադադ. և թագաւորեաց փոխանակ նորա Սամաա ՚ի Մասեկա։ ⁴⁸Եւ մեռաւ Սամաա, և թագաւորեաց փոխանակ նորա Սաւուդ յՌորովթայ, որ առ գետեզերքն էր։ ⁴⁹Եւ մեռաւ Սաւուդ. և թագաւորեաց փոխանակ նորա Բաղաենոն որդի Աքորովրայ։ ⁵⁰Եւ մեռաւ Բաղաենոն որդի Աքորովրա, և թագաւորեաց փոխանակ նորա Ադադ, և անուն քաղաքի նորա Փոգովր, և անուն կնոջ նորա Մետաբեէլ՝ դուստր Մատրադայ*։ ⁵¹Եւ մեռաւ Ադադ*։

Ը Եւ այս են իշխանք Եդովմայ. իշխան Թամանայ, իշխան Գովլայ, իշխան Յեթեր, ⁵²իշխան Եղիսակամաս, իշխան Էդ'աս. իշխան Փինոն, ⁵³իշխան Կենէզ, իշխան Թեման, իշխան Սարսար, ⁵⁴իշխան Մագեդիէլ, իշխան Ջափովսիմ։ Սոքա՝ են իշխանք Եդովմայ*։

2

Գուխ Բ

Թ ¹Եւ այս են անուանք որդւոցն Իսրայէլի. Ռոբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Իսաքար, Ջաբուղոն. ²Դան, Յովսէփ, Բենիամին, Նեփթալիմ, Գադ, Ասեր։ ³Եւ որդիք Յուդայ. Էր, և Աւնան, Սելովմ. երեք սոքա ծնան նմա ՚ի դստերէն Շաւայ Քանանացւոյ. և Էր անդրանիկն Յուդայ չա՛ր առաջի Տեառն. և սպան

* Ի լուս՝. Եւ Էգղոմ և Կորիս։

* Ոմանք. Եւ Գոթամ... և Թամնա հարճ։ Այլք. Զարճ Եղիփազու ծնաւ։

* Ոմանք. Դեսովմ և Ակար։

* Յորինակին. Եւ որդիք Սեբեգոնի։ Ոսկան. Այա և Անա. և Եղիբամա դուստր։

* Ոսկան. Իսկ որդիք Գիսոնի, Ամրան և Եսբան, և Իթրան և Քերան։ (42) Որդիք Եսերայ՝ Բիլիան և Յաւան և Յաական. և որդիք Դեսոնի. Ովս։

* Ոմանք. Որդի Ջարայի։

* Ոմանք. Թեմնացւոց։

* Ոմանք. Ամետաբեէլ դուստր։

* Ոմանք. Եւ էին իշխանք Եդովմայ։

* Ոմանք. Իշխան Սեկեդիէլ։

զնա*։ ⁴Եւ Թամար՝ նո՛ւ նորա ծնաւ նմա զՓարէս, և զՉարայ. ամենեքին սոքա որդիք Յուդայ հինգ։ ⁵Որդիք Փարէսի՝ Եսրոն և Յեմուէլ*։ ⁶Եւ որդիք Չարայի՝ Չամրի, և Եթան, և Եման, և Քաղքաղ, և Դարա. ամենեքեան հինգ*։ ⁷Եւ որդիք Քարմեայ, Աքար խափանիչն Իսրայէլի՝ որ անօրինեցաւ ՚ի նզովսն*։ ⁸և որդիք Եթանայ՝ Ազարիա*։ ⁹Եւ որդիք Եսրոնայ որք ծնան նմա. Յերամէլ, և Ովրամ, և Ոքոբէլ, և Արամ*։ ¹⁰Արամ ծնաւ զԱմինադաբ. և Ամինադաբ ծնաւ զՆաասոն զիշխան տանն Յուդայ։ ¹¹Եւ Նաասոն ծնաւ զՍաղման. և Սաղման ծնաւ զԲոոս*։ ¹²և Բոոս ծնաւ զՈվբեդ. և Ովբեթ ծնաւ զՅեսսէ։ ¹³Եւ Յեսսէ ծնաւ զանդրանիկն իւր զԵղիաբ, և զԱմինադաբ երկրորդ, և զՍամաա երրորդ, ¹⁴և զՆաթանայէլ չորրորդ, և զՅադայի հինգերորդ, ¹⁵և զԱսոն վեցերորդ, և զԴաւիթ ութերորդ*։ ¹⁶Եւ քորք նոցա՝ Սարուիա, և Աբիգեա։ Եւ որդիք Սարուիեայ. Աբեսսա, և Յովաբ, և Ասայէլ. երեք։ ¹⁷Եւ Աբիգեա ծնաւ զԱմեսայի. և հայր Ամեսեայ՝ Յեթրի Մայելացի*։

ԺԱ ¹⁸Եւ Քաղեբ որդի Եսրոնայ ա՛ռ զԱզուբա կին իւր, և ծնաւ զԵրիմովթ. և սոքա են որդիք նորա. Յովասար, և Սովբաբ, և Ոռնա։ ¹⁹Եւ մեռաւ Ազուբա, և ա՛ռ իւր Քաղեբ զԵփրաթ. և ծնաւ նմա զՈվր. ²⁰և Ովր ծնաւ զՈվրի. և Ովրի ծնաւ զԲեսելիէլ։ ²¹Եւ յետ այսորիկ եմուտ Եսրոն առ դուստր Մաքիրայ իօրն Գաղամայ, և նա՛ ա՛ռ զնա. և ինքն էր ամաց վաթսուն. և ծնաւ նմա զՍեգուբ. ²²և Սեգուբ ծնաւ զՅայիր. և էին նորա քսան և երեք քաղաքք ՚ի Գաղաադ։ ²³Եւ ա՛ռ զԳեսուր և զԱրամ. զԳեսոսն Յայիրայ ՚ի նոցանէ. զԿանաթ և զաւանս նորա, վաթսուն քաղաքք, զամենեսեան որդւոցն Մաքիրայ՝ իօրն Գաղաադու։ ²⁴Եւ յետ մեռանելոյն Եսրովմայ, եկն Քաղեբ յԵփրաթա. և կին Եսրոնայ Աբիա, ծնաւ նմա զԱսղոն զհայր Թելուայ։ ²⁵Եւ էին որդիք Յերեմիէլի անդրանկանն Եսրոնայ. անդրանիկ Յոանա, և Բաան, և Առան. և Ասովմայ եղբայր նորա*։ ²⁶Եւ է՛ր կին ա՛յլ Յերեմիէլի, և անուն նորա Ատարա. նա՛ է՛ մայր Ունոնայ։ ²⁷Եւ էին որդիք Յոանայ անդրանկանն Յերեմիէլի՝ Մասս, և Յաբին և Ակոր։ ²⁸Եւ էին որդիք Ունոնայ՝ Սամայի, և Յադայի. և որդիք Սամայայ՝ Նաբադ, և Աբիսուր. ²⁹և անուն կնոջն Աբիսուրայ՝ Աբիսեա. և ծնաւ նմա զԱզաբար, և զՄովղիդ։ ³⁰Եւ որդիք Նաբադայ՝ Սաղադ, և Ափիեմ։ Եւ մեռաւ Սաղադ, և ո՛չ գոյր նորա որդի։ ³¹Եւ որդիք Ափիեմայ՝ Յեսսի. և որդիք Յեսսիայ՝ Սաւսան. և որդիք Սաւսանայ՝ Աղ՛այի։ ³²Որդիք Աղ՛այիայ՝ Աքիսամա, և Յեթեր, և Յովնաթան. և մեռաւ Յեթեր, և ո՛չ գոյր նորա որդի*։ ³³և որդիք Յովնաթանայ՝ Փաղէթ, և Ոզազա։ Սոքա՛ են որդիք

* *Ոմանք*. Երեքեան սոքա... Սաւայ, *կամ* Շմաւայ Քանա՛։

* *Ոսկան*. Եւ որդիք... Եսրոն և Յամուլ։

* *Ոսկան*. Եւ Քալքօլ և Դարա. ամենեքեան սոքա հինգ։

* *Ոսկան*. Աքար խանգարիչ Իսրայէլի։

* *Յօրինակին*. Եւ որդիք Եթանայ։

* *Ոսկան*. Իսկ որդիք Եսրոնի... Յերմէլ և Չարամ և Ոքոբէլ։

* *Ի լուս՛*. ՉՍաղմոն. և Սաղմոն։

* *Ոմանք*. Եւ գԴաւիթ եւթներորդ։ *Իսկ այլ ոմանք*. Եւ Չասոն վեցերորդ. և զԵւթներորդն, և գԴաւիթ ութերորդ։

* *Ոսկան*. Եւ հայր Ամեսսեայ, Յեթեր Իսմայելացի։

* *Օրինակն Ոսկանայ զԿարգեալ անուանսն ՚ի նախընթաց զլուխ. համար 41 աղաւաղութեամբ ՚ի ներքս մուծանէ աստանօր*. Եւ Բաան. և որդիք Գեսոնի, Ադամա, և այլն։

* *Ոսկան*. Եւ որդիք Եղլիա եղբօր Աքիսամայ, Յեթեր։

Յերեմիելի*։³⁴ Եւ ո՛չ գոյին Սաւսանայ ուստերք, այլ դստերք միայն։ Եւ Սաւսանայ էր ծառայ Եգիպտացի, և անուն նորա Յովքաղ։³⁵ Եւ տա Սաւսան գղուստրն իւր Յովքեղի ծառային իւրում կնութեան, և ծնաւ նմա զԵթթի։³⁶ Եւ Յեթթի ծնաւ զՆաթան. և Նաթան ծնաւ զԱբեդ։³⁷ Եւ Աբեդ ծնաւ զՈւփղաղ, և Ուփղաղ ծնաւ զՈւլբեդ։³⁸ Եւ Ուլբեդ ծնաւ զՅէու. և Յէու ծնաւ զԱզարիաս։³⁹ Եւ Ազարիաս ծնաւ զՔեղղէս. և Քեղղէս ծնաւ զԵղէասա։⁴⁰ Եւ Եղէասա ծնաւ զՍոսոմէ. և Սոսոմէ ծնաւ զՍաղղում։⁴¹ Եւ Սաղղում ծնաւ զՅեքոնիաս. և Յեքոնիա ծնաւ զԵղիսամա։⁴² Եւ որդիք Քաղեբայ եղբօր Յերեմիելի՝ Մարիսա անդրանիկ նորա. սա՛ է հայր Զիփայ. և որդիք Մարիսայ հօր Քեքրոնի*։⁴³ Եւ որդիք Քեքրոնի՝ Կորիս, և Թափփսի և Ղոնկոմ*։⁴⁴ Եւ Սենաա ծնաւ զՂոնկոմ. և Ղոնկոմ ծնաւ զՅաղղում։⁴⁵ Եւ որդիք նորա Մաովն, հայր Բեթսովրայ։⁴⁶ Եւ Գեփա հարճ Քաղեբայ ծնաւ զԱռան, և զՅովսա, և զԳեզուէ։⁴⁷ Եւ որդիք Ադայի՝ Ղոնկոմ, և Ուլբան, և Գերսոմ, և Փաղէա, և Գեփա, և Սագափ։⁴⁸ Եւ հարճն Քաղեբայ Սովքա ծնաւ զԱբեդ, և զԹաքնա։⁴⁹ Եւ ծնաւ Սագափ զհայրն Մաղենայ. և Ջաւուղ զհայրն Մաքամենայ, և զհայրն Բաաղայ. և դուստրն Քաղեբայ Աքա*։⁵⁰ Սոքա՛ էին որդիք Քաղեբայ։ Որդիք Ուլրայ անդրանկանն Եփրաթայ, Սովքաղ հայր Կարիաթարիմայ։⁵¹ Սաղոմոն հայր Բեթղամոնայ. հայր Բեթղէն. Արի հայր Բեթեգովրայ։⁵² Եւ էին որդիք Սովքաղայ հօրն Կարիաթարիմայ*։⁵³ Արաեսի, Ամանիթ, Թիւմասփայէ, և Ղոնկոմ, և Եփիթին, և Սամաթին, Ղոնկոմարին. ՚ի նոցանէ՛ ելին Սարաթացիք, և Եսաւուղացիք։⁵⁴ Որդիք Սաղոմոնի, Բեթղէն, և Նետոփաթի, Ատարովք. տունն Յովքայ, և Կեսմանաթայ, Եսարայի*։⁵⁵ Եւ տոհմ դպրացն որք բնակէին ՚ի Գաբէս. Ազաթէն, և Սամաթիին. Սովկաթիին։ Սոքա՛ են տունք որք ելին յԵմաթայ, հօր տա՛ն Ղոնկոմայ*։

3

Գլուխ Գ

ԺԲ ¹Եւ սոքա՛ են որդիք Դաւթայ որք ծնան նմա ՚ի Քեքրոն. անդրանիկն Ամոն՝ յԱքիմովանայ Յեզրայելացոյ, և երկրորդն Դաղուիա՝ յԱբիգեայ Կարմելացոյ. ²երրորդն Աբեսողոմ, որդի Սովքայ՝ դստեր Թողմայ թագաւորին Գեսուրայ. չորրորդ Ադոնիա՝ որդի Ագիթայ. ³հինգերորդ Սափատիաս՝ յԱբիտաղայ. վեցերորդ Յեթթան, յԱղգեայ կնոջէ իւրմէ*։ ⁴Սոքա՛ ծնան նմա ՚ի Քեքրոն. և թագաւորեաց անդ զԵլթն ամ և զվեց ամիս. և երեսուն և երիս ամս թագաւորեաց յԵրուսաղէմ։ ⁵Եւ սոքա՛ ծնան նմա յԵրուսաղէմ, Սամաա, Սովքաթ, Նաթան, և Սողոմոն ՚ի Բերսաբեացոյն ՚ի դստերէ Ամիելի*։ ⁶Եւ Յեթթար, և Եղիսամա, ⁷և

* *Ոմանք*. Սոքա էին որդիք։

* *Ոսկան*. Եւ որդիք Արմիսա հօր։

* *Ոսկան*. Եւ Թափփու. և Ղոնկոմ. և Սենա։ (44) Եւ Սենա ծնաւ... զհայրն Յերակայայ։

* *Ոմանք*. Եւ դուստրն Քաղեբայ Աքա։ *Ուր Ոսկան*. Աքաթ։

* *Ոսկան յաւելու*. Զօրն Կարիաթարիմայ, *որ տեսանէր զմասն հանգստեան։ Եւ ՚ի տոհմն Կարիաթարիմայ* (53) Արաեսի. Ամա՛։

* *Ոսկան*. Տունն Յովքայ, և Կես՛։

* *Ոմանք*. Ազաթէն, և Սամաթայիին։

* *Ոսկան*. Յեզրայի կնոջէ իւրմէ։

* *Ոսկան*. Եւ Սողոմոն ՚ի Բերսաբեացոյն։

Եղիփալէտ, և Նագեբ, և Նափեկ, և Նափիի, ⁸և Եղիսամա, և Եղիթադա. սոքա ինն և տասն* ⁹որդի Դաւթայ, առանց որդւոց հարժից նորա. և Թամար քոյր նոցա: ¹⁰Որդիք Սողոմոնի, Զռոբովամ, և Աբիաս որդի նորա. Ասա որդի նորա. Յովսափատ որդի նորա: ¹¹Յովրամ որդի նորա, Ոքոզիաս որդի նորա, Յովաս որդի նորա*: ¹²Ամասիա որդի նորա. Ազարիա որդի նորա. Յովաթամ որդի նորա. ¹³Աքազ որդի նորա. Եգեկիա որդի նորա. Մանասէ որդի նորա*: ¹⁴Ամովս որդի նորա. Յովսիա որդի նորա: ¹⁵Եւ որդիք Յովսիայ. անդրանիկ՝ Յովաքազ. Երկրորդ՝ Յովակիմ. Երրորդ՝ Սեդեկիա. չորրորդ՝ Աղ'ում*: ¹⁶Եւ որդիք Յովակիմայ. Յեքոնիաս որդի նորա. Սեդեկիաս որդի նորա: ¹⁷Եւ որդիք Յեքոնիայ. Ասիր. Սաղաթիէլ որդի նորա: ¹⁸Մեղ'քիրամ, և Փադայիաս, և Սովսամով, և Նաբատիաս, և Սանեսար, և Յեքոնիաս*: ¹⁹Եւ որդիք Սաղաթիէլի. Ջորաբաբէլ, և Սենէի. և որդիք Ջորաբաբէլի. Մասողամոս, և Անանիաս, և Սաղովմէ քոյր նոցա. ²⁰և Ասեբա, և Ոռդ. և Բարաքիաս, և Ասադիաս, և Ասոբասէդ՝ ուր*: ²¹Եւ որդիք Անանիայ՝ Փալէտիա, և Յեսիա որդի նորա. Զափայիա որդի նորա. Ոռնա որդի նորա. Աբդիա որդի նորա. Սեքենիա որդի նորա*: ²²Եւ որդիք Սեքենիայ, Սամայիա. և որդիք Սամայայ, Քետտուս, և Յովէլ, և Բերիա, և Նովադիա, և Սափատ, և Սափեք, վեց: ²³Եւ որդիք Նովադիայ՝ Եղիոնէ, Եգեկիաս, Եսրիկամ. Երեք: ²⁴Եւ որդիք Եղիոնէայ՝ Ովդուիա, և Եղիասիբ, և Փադայիա, և Ակկուբ, և Յովնան, և Գադայիա, և Անանիա, եւթն:

4

Գլուխ Դ

¹Որդիք Յուդայ, Փարէս, Եսրոմ, և Քարմի. և Ովր, և Սուբադ, ²և Կերիա որդի նորա. և Սուբադ ծնաւ զՅէթ. և Յէթ ծնաւ զԱքիսայի, և զՂ'ադա: Սոքա՛ են ծնունդք Սարաթիայ: ³Եւ սոքա՛ են որդիք Ետամայ, Յեսրայէլ, և Յեսմա, և Գաբէս. և անուն քեոց նոցա Եսեղ'եփոն*: ⁴Եւ Փանուէլ հայր Գեդուրայ. և Եգեր՝ հայր Սաւսանայ: Եւ սոքա են որդիք Ովրայ անդրանկանն Եփրաթայ՝ հօրն Բեթղահեմայ*: ⁵Եւ Ասքուրայ՝ հօրն Թեկուայ՝ էին երկու կանայք. Աադա, և Նոորա. ⁶և ծնաւ նմա Նոորա զՈքոզամ, և զՆեփադ, և զԹեման, և զԱսթերան. ամենեքեան սոքա որդիք Նոորայ: ⁷Եւ որդիք Աադայ, Նարթթ, և Ասաար, և Եթնադի: ⁸Եւ Կովս ծնաւ զԵգովբ, և զՍովբերա:

ԺԳ Եւ այս են ծնունդք եղբօրն Զռեքեբայ որդւոյ Յարիմայ*: ⁹Եւ էր Գաբէս փառաւոր քան զեղբարսն իւր, և մայրն կարդաց զանուն նորա Իգաբէս, և ասէ. Ծնայ՝ իբրև զԳաբէս: ¹⁰Եւ կոչեաց Իգաբէս զԱստուած Իսրայէլի՝ և ասէ. Եթէ օրհնելով օրհնեսցես զիս, և յաճախեսցես զսահմանս իմ. և եղիցի ձեռն քո ընդ

* Ոսկան. Սոքա ինն: (9) Ամենեքեան այսոքիկ են որդիք Դաւ՛:

* Ոսկան զկնի Ոքոզիայ՝ կարգէ. զԱմասիա, զԱզարիա, և ապա զՅովաս:

* Ի լուս՛. Ամովս որդի նորա. համաձայն ոմանց՝ ի բնաբ՛:

* Ոմանք. Չորրորդ Աադում: Ուր Ոսկան. Սալուսմ:

* Ոմանք. Եւ Ովսամով. և Նադաբիաս:

* Ոմանք. Եւ Ասոբասէդ. հինգ:

* Ոմանք. Աբիա որդի նորա. Սենեքիա որ՛:

* Ոմանք. Անուն քեո. կամ՝ քերց նոցա:

* Ոմանք. Զայր Սուսանայ:

* Ոմանք. ԶԵգովբ և զՍովբերա: Յօրինակին. Ծնունդք յեղբօրն Զռե՛:

իս. և արասցես գթութիւն ո՛չ խոնարհեցուցանել զիս: Եւ ա՛ծ Ատուած՝ ՚ի վերայ նորա զամենայն զոր ինչ խնդրեաց*։ ¹¹Եւ Քաղեր հայր Եսրասայ ծնաւ զՄաքիր. սա է հայր Ասաբոնայ: ¹²Եւ Ասպանթոն ծնաւ զՅատրոփա, և զՓետէ, և զԹանա, և զհայրն քաղաքին Ասսայ. եղբօրն Եղեսեղոնի Կենեզացոյ. սորա՛ են արք Յռեփայ*։ ¹³Եւ որդիք Կենեզայ, Գոթոնիէլ, և Սարայիա. և որդիք Գոթոնիէլի. Աթաթ: ¹⁴Եւ Մանաթի ծնաւ զԳոփորայ, և Սարայիա ծնաւ զՅաբար զհայրն Գերսասիմայ. քանզի հիւսունք էին*։ ¹⁵Եւ որդիք Քաղերայ Յեփոնէ, Եռաղ՛ա, և Նաամ. և որդիք Արամայ, Կենեզ. ¹⁶և որդիք Յայելի Ղեզիփաղ՛ի, և Ջեփա, և Թիրա, և Եսրայէլ: ¹⁷Եւ որդիք Եսրիէլի, Յեթեր, Մովրադ, և Գափեր. և Աղ՛ոն ծնաւ զՅեթեր, և զՄարոն, և զՅեսմա, և զԱյիաբա, և զհայրն Սեթեմոնայ*։ ¹⁸Եւ կին նորա ծնաւ զԱրեդ, զհայրն Գեղովրայ, և զՅաբար զհայրն Սաքովնա, և զՅեթթիէլ զհայրն Ջովնանայ: Եւ սորա են որդիք Բեթթիայ դստերն փարաւոնի, զոր ա՛ռ Մովրեդ*։ ¹⁹Եւ որդիք կնոջ Ովդեայ՝ քեռն Նաքիմայ. և Դանա հայր Կեսիայ. և Սիմէոն հայր Յովմամայ. և որդիք Նայեմայ հօր Կէիլայ, Ոտարմի, և Յեսթեմոն, և Մաքաթի*։ ²⁰Եւ որդիք Սիմիոնայ Ամնոն, և Յանանովն որդի Անանայ, և Թիղ՛ոն. և որդի Սեթայ՝ Ջովքաթ, և որդի Ջովքաթայ*։ ²¹որդիք Սեղումայ: Որդիք Յուդայ, Եր՛ հայր Ղեքադայ. և Դադաա հայր Մադեսայ. և ծնունդք նոցա՝ Եբդաթ, Աբուստան, Նեսոբա, և Յովակիմ, ²²և արք Քուզերայ, և Յովաս, և Սարափ, և որք բնակեցին ՚ի Մովաբ. և դարձոյց նոցա զԱբեթար ՚ի Նաթուկիմ*։ ²³Սորա էին բրուտք որք բնակէին յԱնատիմ. և Սադերա, ընդ թագաւորին ՚ի թագաւորութեան նորա. զօրացան, և բնակեցին անդ: ԺԴ ²⁴Որդիք Շմաւոնի՝ Նաբուէլ, և Յամին, և Յարիք. Ջարեհ, Սաւուղ: ²⁵Սաղէմ որդի նորա, Բասան որդի նորա, Ասեման որդի նորա, Մազբա որդի նորա, ²⁶Ամուէլ որդի նորա, Սաբուղ որդի նորա, Ջաքուր որդի նորա, Սեմէի որդի նորա: ²⁷Եւ Սեմեայ որդիք վեց. և դստերք տասն. և եղբարց նոցա ո՛չ էին որդիք բազումք. և ամենայն տոհմն նոցա ո՛չ առաւելաւ իբրև զորդիսն Յուդայ*։ ²⁸Եւ բնակեցին ՚ի Բերսաբին. և Սամաա, և Մովղ՛ադա, և Սերսուղա*, ²⁹և Բաադա, և Քուասոմ, և Թուղադայ. ³⁰և Բաթուղ, և Երմա, և Սիկիդակ, ³¹և Բեթմարա, և Քաբորա, և կէսն Սեովսիմ և տունն Բարուայ և Սեովրիմայ: Այսոքիկ են քաղաքք նոցա մինչև ցարքայ Դաւիթ. ³²և քաղաքք նոցա՝ Երամ, և Երեմոն, և Թոբան, և Եսան, և Թեկեն. քաղաքք հինգ: ³³Եւ ամենայն քաղաքք նոցա, և շուրջ զքաղաքօքն իւրեանց մինչև ՚ի Բաադ. այս են կալուածք նոցա՝ և վիճակք իւրեանց: ³⁴Եւ Մոսոբար, և Ամաղէկ, և Յովսիա որդի Ամասիայ. ³⁵և Յովէլ, և Յեու, որդի Սաբիայ, որդի Սարիայ, որդի Ասիէլի. ³⁶և Եղիոնէ, և Յեկեբա, և Յասթէ, և Յասուհա, և Ասայիա, և Եդիել, և Իսմայել, և Բանեա, ³⁷և Ջուզա որդի Սեփերիայ.

* Ոսկան. Ջեռն քո ընդ իս: ՚Ի լուս՛. Եւ արասցես գիտութիւն. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛: * Ոմանք. Եւ Ասպաթովն ծնաւ: Ուր Ոսկան. և Ասաբոն: Ոմանք. Եղեսովնի, կամ՝ Եսեղովնի Կենե՛:

* Ոմանք. Վասն զի հիւսունք էին:

* Ոմանք. Եւ զՅեսմէ և զԱյեսբա, և:

* Ոմանք. Եւ զՅաբեր զհայրն Սա՛:

* Ոմանք. Եւ Սեմիովն հայր Յով՛:

* Ոմանք. Եւ որդի Սամիոնայ: Ոսկան. Ջովքաթ, և Բէնգօհէթ. և որդիք Ջով՛:

* Ոմանք. Եւ դարձոյց նոցա զԱբեթարիմայ Թուկիիմ:

* Ոսկան. Եւ Սեմայ որդիք վեշտասան՝ և դստերք վեց, և եղբարց նորա ո՛չ էին:

* Այլք. Եւ բնակեցին ՚ի Բերսաբին:

որդի Աղովնեայ, որդւոյ Յեդիայ, որդւոյ Սամարիայ, որդւոյ Սամուեայ: ³⁸Սոքա՛ են որ անցին յանուանս իշխանացն, յազգս իւրեանց. և ՚ի տունս տոհմից իւրեանց բազմացան յաճախութեամբ: ³⁹Եւ գնացին մինչև ՚ի գա՛լ ՚ի Գերերա՛ մինչև յարևելից Գայեայ, խնդրե՛լ արօտս անասնոց իւրեանց՝. ⁴⁰և գտին արօտս բազունս և բարիս. և երկիր ընդարձակ առաջի նոցա, և խաղաղութիւն և հանդարտութիւն. վասն զի յորդւոցն Քամայ էին, որք բնակէին անդ յառաջ: ⁴¹Եւ եկին նոքա գրեալք յանուանէ յաւուրս Եզեկիայ արքայի Յուդայ, և հարին զբնակիչս նորա, և զՄինեցիսն զորս գտին անդ, և նզովեցին զնոսս մինչև յաւուրս յայս, և բնակեցին փոխանակ նոցա. վասն զի արօտս անասնոց իւրեանց գտին անդ՝. ⁴²Եւ ՚ի նոցանէ յորդւոցն Շմաւոնի գնացին ՚ի լեառն Սերայ արք հինգ հարիւր. և Փաղ՛ատիա, և Նովադիա. և Յափայիա, և Ոզիէլ. որդիք Յեթեսիայ իշխանք նոցա՝. ⁴³և հարին զմնացորդսն որք էին մնացեալք յԱմաղեկայ, և բնակեցին անդ մինչև յօրս յայս:

5

Գլուխ Ե

ԺԵ ¹Եւ Որդիք Ռութինի՝ անդրանկանն Իսրայէլի. վասն զի նա՛ էր անդրանիկ. և յելանելն նորա յանկողինս հօր իւրոյ՝ ետ զօրհնութիւն նորա որդւոյ իւրում Յովսեփայ՝ որդւոյ Իսրայէլի. և ո՛չ համարեցաւ յազգ յանդրանկութեանն իւրում՝. ²վասն զի Յուդաս զօրաւոր էր ուժով յեղբարսն իւրում. և էր իշխան նոցա. և եղև օրհնութիւնն Յովսեփայ: ³Եւ որդիք Ռութինի անդրանկանն Իսրայէլի՝ Ենոք, և Փաղ՛ղ՛ուս, Եսրովմ, և Քարմի: ⁴Որդւոյ Յովելայ, Սեմէի, և Բեբեմա որդի նորա. և որդիք Գովգայ. ⁵որդիք Սեմէի. որդի նորա Բաաղ. ⁶որդի նորա Բեեղ՛ա, զոր զերեաց Թագղ՛աթփաղսար արքայ Ասորեստանի. նա՛ էր իշխան Ռութինի: ⁷Եւ եղբարք նորա ՚ի տոհմին իւրեանց, և ՚ի վիճակին իւրեանց, յազգին իւրեանց. իշխան Յովէլ՝ և Ջաքարիա: ⁸Եւ Իբաղէի որդի Ոզուգայ, որդի Ամայ, որդի Յովէլի. նա բնակեաց յԱրոտեր, և ՚ի Նաբաւ, և ՚ի Բելմաոն՝. ⁹և յարևելս բնակեաց, մինչև ՚ի գա՛լ յանապատն ՚ի գետոյն Եփրատայ. վասն զի անասուն բազում էր նոցա ՚ի Գաղաադ՝. ¹⁰Եւ յաւուրսն Սաւուդայ արարին պատերազմ ընդ բնակիչսն. և անկան ՚ի ձեռս նոցա բնակեալքն ՚ի խորանսն մինչև յամենայն յարևելից Գաղաադու: ¹¹Որդիք Գադայ յանդիման նոցա բնակեցին ՚ի Բասան մինչև ՚ի Մեղ՛քէ: ¹²Յովէլ անդրանիկն, և Սափա երկրորդն. և Անայի որ էր դպիր ՚ի Բասան. ¹³և եղբարք նոցա բնակեցան ՚ի տունս տոհմիցն իւրեանց: Միքայէլ, և Մոսողաամ, և Սովբայէ, և Յովրէ, և Յաքան, և Ազիա, և Ովբեդ՝. ¹⁴Եւթն սոքա որդիք Աբիքայիայ: Որդիք Ուրիայ, որդւոյ Ադայի, որդւոյ Գաղաադու, որդւոյ Միքայէլի, որդւոյ Յեսսայ, որդւոյ Յեգդադեայ, որդւոյ Աթիբուգայ, ¹⁵որդւոյ Աբդիեւի, որդւոյ Գունեայ. իշխան տան տոհմից ¹⁶բնակչաց ՚ի Գաղաադ. ՚ի

* Ոմանք. Մինչ ՚ի գալն ՚ի Գերարայ:

* Ոմանք. Մինչև յօրս յայս:

* Այլք. ՚ի լեառն Սէիրայ:

* Ոմանք. Ետ զօրհնութիւնս նորա:

* Ոսկան. Որդի Սամա. որ՝:

* Ոմանք. Յանապատին ՚ի գետոյն:

* Ոսկան. Եւ Ովբեդ եօթն: (14) Սոքա որդիք Աբիքայիայ. որդ՝:

Բասան՝ և յաւանս նոցա, և յամենայն շուրջ գաւառսն Սարովնայ մինչև յելս ամենեցուն՝ ¹⁷համարոցն նոցա. յաւուրս Յովաթամայ արքայի Յուդայ, և յաւուրս Յերոբովամայ արքայի Իսրայէլի*։ ¹⁸Որդիք Ռուբինի, և Գադայ, և կիսոյ ցեղին Մանասէի՝ յորդուցն զօրութեան, արք որ առնուին վահանս և սուսերս, և լարէին աղեղունս, և ուսեալ էին պատերազմ, քառասուն և չորք հազարք՝ և եւթն հարիւր և վաթսուն. որք ելանէին ՚ի մարտ, ¹⁹և առնէին պատերազմ ընդ Ագարացիսն, և ընդ Տուրեցիսն, և ընդ Նափեսացիսն, և ընդ Նաբեղոնացիսն, և ընդ Նաբինացիսն. ²⁰և զօրացան ՚ի վերայ նոցա, և տուան ՚ի ձեռս նոցա Ագարացիքն, և ամենայն խորանք նոցա. վասն զի առ Աստուած գոչեցին ՚ի պատերազմին՝ և լուաւ նոցա, զի յուսացան ՚ի նա*։ ²¹Եւ գերեցին զպատրաստութիւն նոցա. ուղտս հինգ հազար, և յոչխարաց երկերիւր և յիսուն հազար, էշս երկուս հազարս, և ոգիս արանց հարիւր հազար. ²²վասն զի վիրաւորք բազումք անկան, զի ՚ի Տեառնէ եղև պատերազմն. և բնակեցին փոխանակ նոցա մինչև ՚ի գերութիւնն իւրեանց։ ²³Եւ կէս ցեղին Մանասէի բնակեաց յերկրին Բասանայ մինչև ՚ի Բաաղերմոն, և Սանիր, և ՚ի լեռանն Յերմոնի, և ՚ի Լիբանան. ինքեանք բազմացան*։ ²⁴Եւ այսոքիկ են իշխանք տանց տոհմից նոցա. Ովփեր, և Յեսսի, և Եղիէղ, և Եգիէլ, և Յերեմիա, և Յովդիա, և Իգիէլ, որք զօրաւորք ուժով. արք անուանիք իշխանք տանց տոհմիցն իւրեանց*։ ²⁵Եւ ուխտագանց եղեն յԱստուծոյ հարցն իւրեանց, և պոռնկեցան զհետ աստուածոց օտարաց երկրին՝ զորս եբարձ Աստուած յերեսաց նոցա։ ²⁶Եւ յարոյց Աստուած Իսրայէլի՝ զհոգին Փանովքայ արքային Ասորեստանեայց, և զհոգի Թագլաթփաղասարայ արքային Սուբայ, և գերեաց զՅոռբէն, և զԳադդի, և զկէս ցեղին Մանասէի, և տարաւ զնոսա ՚ի Քաղա և ՚ի Քաբովր, առ գետեզերքն Գովգանայ, մինչև յօրս յայս*։

6

Գլուխ Զ

ԺԶ ¹Որդիք Ղևեայ, Գեթսոն, Կահաթ, և Մերարի*։ ²Որդիք Կահաթու, Ամրամ, և Սահառ. Քեբրոն, և Ոգիէլ։ ³Եւ որդիք Ամրամայ, Ահարոն և Մովսէս, և Մարիամ. և որդիք Ահարոնի՝ Նաբադ, և Աբիուդ. Եղիազար, և Իթամար։ ⁴Եւ Եղիազար ծնաւ զՓեննէս. Փեննէս ծնաւ զԱբեսսու. ⁵Աբեսսու ծնաւ զԲորքի. Բորքի ծնաւ զՈգիա. ⁶Ոգիայ ծնաւ զԱրէաս. Արէաս ծնաւ զՄարէովք*։ ⁷Մարէովք ծնաւ զԱմարիաս. Ամարիաս ծնաւ զԱքիտովք. ⁸Աքիտովք ծնաւ զՍաղովկ. Սաղովկ ծնաւ զԱքիմաս. ⁹Աքիմասս ծնաւ զԱզարիաս. Ազարիաս ծնաւ զՅովնաս. ¹⁰Յովնաս ծնաւ զԱզարիաս. սա՛ էր քահանայ ՚ի տանն Աստուծոյ, զոր շինեաց Սողոմոն

* Ոսկան. Համարոցն նոցա ամենեցուն յաւուրս։

* Ոմանք. Ագարացիքն և ամենայն իշխանք նոցա։

* Ոմանք. Բնակեաց յերկրին ՚ի Բասանայ մինչև ՚ի Բաաղաերմովն... և ՚ի լեռանն Ահերմոնի։

* Այլք. Եւ Իգիէլ. և արք զօրա՛։

* Ոմանք. Թագլաթփաղասարայ արքային Ասուբայ, և գերեաց զՌուբէն... մինչև ցօրս.

կամ՝ յաւուրս յայս։

* Ոմանք. Գեթսոն, Կահ՛։

* Ոմանք. Եւ Ոգիա... և Արէաս... և Ամարիաս։

յերուսաղէմ: ¹¹Եւ ծնաւ Ազարիա զԱմարիաս. Ամարիաս ծնաւ զԱքիտովբ.
¹²Աքիտովբ ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զՍելլուս*. ¹³Սելլուս ծնաւ զՔեղկիաս.
Քեղկիաս ծնաւ զԱզարիաս. ¹⁴Ազարիաս ծնաւ զՍարեաս. Սարեաս ծնաւ
զՅովսեփէկ. ¹⁵և Յովսեփէկ զնաց ՚ի գերութեանն ընդ Յուդայի և Երուսաղէմի ՚ի
ձեռն Նաբուքոդոնոսորայ: ¹⁶Որդիք Ղևեայ՝ Գեթսոն, Կահաթ, և Մերարի: ¹⁷Եւ
այսոքիկ անուանք որդւոցն Գեթսոնի՝ Ղոբենի, և Սիմէի*: ¹⁸Եւ որդիք Կահաթու,
Ամրամ, և Սահառ. Քեբրոն, և Ոգիէլ: ¹⁹Որդիք Մերարեայ, Մոողի, և Մուսի. և
այսոքիկ տոհմք Ղևեայ ըստ ազգին իւրեանց. ²⁰Գեթսոնի, և Ղուբենայ որդւոյն
իւրոյ. Յեթթի որդի նորա. ²¹Յովաք որդի նորա. Աբդիու որդի նորա. Ջասա որդի
նորա. Յաթրի որդի նորա*:

ԺԷ ²²Որդիք Կահաթու. Սահառ որդի նորա. Կորխ որդի նորա. Ասիր որդի նորա.
²³Եղկանա որդի նորա. Աբիսափ որդի նորա. Ասիր որդի նորա. Ոգիաս որդի
նորա. ²⁴Աթ որդի նորա. Ուրիէլ որդի նորա. Սաւուղ որդի նորա*: ²⁵Եւ որդիք
Եղկանայ, Ամաս, Աքովթ*: ²⁶Եղկանա որդի նորա. Սուփի որդի նորա. Կանաթ
որդի նորա. ²⁷Եղիաթ որդի նորա. Յերոամ որդի նորա. Եղկանա որդի նորա*:
²⁸Որդիք Սամուէլի. անդրանիկ նորա Յովէլ, և Երկրորդն Աբիա: ²⁹Որդիք
Մերարեայ՝ Մոսողի, Նաբար. Ղոբենի որդի նորա. Սեմէի որդի նորա. Ոգա որդի
նորա. ³⁰Սամաս որդի նորա. Անգիա որդի նորա. Ասիա որդի նորա: ³¹Եւ սոքա՝
են զորս կացոյց Դաւիթ ՚ի վերայ երգեցողացն՝ ՚ի տան Տեառն, ՚ի
դադարեցուցանել զտապանակն. ³²և էին պաշտօնեայք առաջի խորանին տանն
վկայութեան նուագարանօք, մինչև շինեաց Սողոմոն զտունն Տեառն
յերուսաղէմ. և կացին ՚ի կարգին իւրեանց ՚ի պաշտամանն իւրեանց*: ³³Եւ սոքա՝
են որ կացին և որդիք իւրեանց. Էման՝ թռն Սամուէլի, ՚ի Կորխայ Կահաթացի:
Յորդուցն Կահաթու. Էման սաղմոսանուագ. որդի Յովէլի, որդւոյ Սամուէլի.
³⁴որդւոյ Եղկանայի. որդւոյ Յերեմիէլի. որդւոյ Ելիեղի. որդւոյ Թովկեայ. ³⁵որդւոյ
Սուփիայ. որդւոյ Եղկանայ. որդւոյ Մաաթայ. որդւոյ Ամասեայ*. ³⁶որդւոյ
Եղկանայ. որդւոյ Յովէլի. որդւոյ Ազարիայ. որդւոյ Սափանայ. ³⁷որդւոյ Թաաթայ.
որդւոյ Ասիրայ. որդւոյ Բիասափայ. որդւոյ Կորխայ. ³⁸որդւոյ Յեսարայ. որդւոյ
Կահաթու. որդւոյ Ղևեայ. որդւոյ Իսրայէլի*: ³⁹Եւ եղբայր նորա Ասափ, որ կայր
ընդ աջմէ նորա. Ասափ որդի Բարաթեայ. որդւոյ Սամայ. ⁴⁰որդւոյ Միքայէլի.
որդւոյ Բասսիայ. որդւոյ Մեքիայ*. ⁴¹որդւոյ Աթանիայ. որդւոյ Ազարիայ. որդւոյ
Յադիայ. ⁴²որդւոյ Ուրայ. որդւոյ Ջամմայ. որդւոյ Սեմեայ*. ⁴³որդւոյ Յիթեայ.
որդւոյ Գեթսոնի. որդւոյ Ղևեայ: ⁴⁴Եւ որդիք Մերարեայ եղբարք նոցա ՚ի ձախմէ.
Էթան որդի Կիսանայ. որդւոյ Աբդիայ. որդւոյ Մաղովտայ. ⁴⁵որդւոյ Ասեբիայ.

* *Ոմանք.* Եւ Աքիտովբ:

* *Այլք.* Ղոբենի և Սեմէի:

* *Ոմանք.* Յովաք որդի նորա. Ադդի որդի նորա: *Ոսկան.* Ադդի որդի նորա. Ջիմահ որդի
նորա. Ջասա որդի նորա:

* *Ոսկան.* Տաաթ որդի նորա, Ուրիէլ որդի:

* *Այլք.* Ամաս, Աքիտովթ:

* *Ոսկան.* Եղիաթ որդի նորա:

* *Ոմանք.* Եւ կացին ըստ կարգին իւրեանց:

* *Ոսկան.* Որդւոյ Մաթայ:

* *Ոսկան.* Որդւոյ Յեսարայ:

* *Ոմանք.* Որդւոյ Միքայ: *Ուր Ոսկան.* Մեքիայ:

* *Այլք.* Որդւոյ Ուրիայ:

որդւոյ Ամեսսիայ. որդւոյ Քեղկիայ*.⁴⁶ որդւոյ Ամասիայ. որդւոյ Բասանայ. որդւոյ Սեներայ*.⁴⁷ որդւոյ Ամոռոյայ. որդւոյ Մուսեայ. որդւոյ Մերարեայ. որդւոյ Ղևեայ:⁴⁸ Եւ եղբարք նոցա ըստ տանց տոհմից իւրեանց, Ղևտացիք. տուեալք յամենայն 'ի գործ պաշտաման խորանին տանն Աստուծոյ:⁴⁹ Եւ Ահարոն և որդիք նորա ծխէին խունկս 'ի վերայ սեղանոյ ողջակիզաց, և 'ի վերայ սեղանոյն խնկոցն, յամենայն 'ի գործ սրբութեան սրբութեանցն. քաւել վասն Իսրայէլի ըստ ամենայնի զոր պատուիրեաց Սոփսէս ծառայ Աստուծոյ:⁵⁰ Եւ սոքա՛ են որդիք Ահարոնի. Եղիազար որդի նորա. Փենէս որդի նորա. Աբիսու որդի նորա.⁵¹ Բովկա որդի նորա. Ոզիա որդի նորա. Չարա որդի նորա*.⁵² Մերաովթ որդի նորա. Ամարիաթ որդի նորա, Աբիտովթ որդի նորա.⁵³ Սադովկ որդի նորա. Աբիմաս որդի նորա:

ԺԸ⁵⁴ Եւ այսոքիկ են բնակութիւնք նոցա 'ի գետոյս իւրեանց, 'ի սահմանս իւրեանց՝ որդւոցն Ահարոնի՝ 'ի տոհմին Կահաթու. վասն զի նա՛ եղև խիստ իշխան:⁵⁵ Ետուն նոցա զՔեբրոն յերկրին Յուդայ. և զգատուցեալսն նորա շուրջ զնովաւ.⁵⁶ և զդաշտն քաղաքին, և զգեղսն նորա ետուն Քաղեբայ որդւոյ Յեփոնեայ:⁵⁷ Եւ որդւոցն Ահարոնի ետուն զքաղաքս ապաւինութեանցն. զՔեբրոն, և զՂոբնա, և շուրջ զգատուցեալսն նոցա, և զեղոն՝ և զգատուցեալսն նորա. և զԵսթամով՝ և զգատուցեալսն նորա*.⁵⁸ և զՅեսթեր՝ և զգատուցեալսն նորա. և զՂաբիր՝ և զգատուցեալս նորա.⁵⁹ և զԱսան՝ և զգատուցեալս նորա. և զԲեթսամիւս՝ և զգատուցեալս նորա. և զԲեթեր՝ և զգատուցեալս նորա:⁶⁰ Եւ 'ի ցեղէն Բենիամինի, զԳաբէէ՝ և զգատուցեալս նորա. և զԳալեմէթ՝ և զգատուցեալս նորա. և զՂաբէէ՝ և զգատուցեալս նորա. զԱնաթովթ՝ և զգատուցեալս նորա. զԱնքովս՝ և զգատուցեալս նորա. ամենայն քաղաքք չորեքտասան. քաղաքք տոհմից իւրեանց*:⁶¹ Եւ որդւոցն Կահաթու մնացելոց ըստ տոհմից իւրեանց. 'ի ցեղէ կիսոյ ցեղին Մանասէի՝ վիճակօք՝ քաղաք տասն*:⁶² Եւ որդւոցն Գեթսոնի ըստ տոհմից իւրեանց. 'ի ցեղէն Իսաքարայ, և 'ի ցեղէն Ասերայ, և 'ի ցեղէն Նեփթաղիմայ, և 'ի ցեղէն Մանասէի՝ 'ի Բասան քաղաքս չորեքտասան*:⁶³ Եւ որդւոցն Մերարեայ ըստ տոհմից իւրեանց. 'ի ցեղէն Ռուբինի, և 'ի ցեղէն Գադայ, և 'ի ցեղէն Չաբուլոնի, վիճակաւ քաղաքս երկուտասան:⁶⁴ Եւ ետուն որդիքն Իսրայէլի Ղևտացւոցն զքաղաքսն, և շուրջ զգատուցեալսն նոցա:⁶⁵ Եւ ետուն վիճակաւ 'ի ցեղէ որդւոցն Յուդայ, և 'ի ցեղէ որդւոցն Շմաւոնի, և 'ի ցեղէ որդւոցն Բենիամինի. զքաղաքսն զայնոսիկ զորս կոչեցին յանուանէ*:⁶⁶ Եւ 'ի ցեղէ որդւոցն Կահաթու եղեն քաղաքք սահմանաց իւրեանց 'ի ցեղէն Եփրեմի*.⁶⁷ և ետուն նոցա զքաղաքսն ապաւինի. զՍիւքեմ, և շուրջ զգատուցեալսն նորա 'ի լերինն Եփրեմի. և զԳազեր՝ և զգատուցեալսն նորա.⁶⁸ և զՅեկնամ՝ և զգատուցեալսն նորա, և զԲեթորոն՝ և զգատուցեալսն

* Ոսկան. Որդւոյ Ամասիայ:

* Ոսկան. Որդւոյ Բասանայ:

* Ոմանք. Ոզի որդի նորա:

* Ոմանք. Եւ զՂաբնա, և շուրջ:

* Ոմանք. Եւ զԱնաթովթ... զԱնքովս... քաղաքք երեքտասան:

* Ոմանք. Վիճակաւ քաղաքս տասն:

* Ոմանք. Քաղաքս երեքտասան:

* Ոմանք. Կոչեցին զնոսա յանուանէ:

* 'ի լուս'. Եւ տոհմից որդւոցն Կահաթու. համաձայն ոմանց 'ի բնաբ':

նորա՝ ⁶⁹և գելովթ՝ և զգատուցեալսն նորա. և զԳեթրոմնն՝ և զգատուցեալսն նորա՝: ⁷⁰Եւ ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի. զԵներ՝ և զգատուցեալսն նորա, և զԻբղ՝ամամ՝ և զգատուցեալսն նորա. ըստ տոհմից որդւոցն Կահաթու մնացորդաց՝: ⁷¹Որդւոցն Գեթսոնի ըստ տոհմից իւրեանց ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի. զԳողաւն ՚ի Բասան՝ և շուրջ զգատուցեալսն նորա. զՅռոմովթ՝ և զգատուցեալսն նորա: ⁷²Եւ ՚ի ցեղէն Իսաքարայ, զԿեդէս՝ և զգատուցեալսն նորա. զԿադիր՝ և զգատուցեալսն նորա. ⁷³զԱմովս՝ և զգատուցեալսն նորա. զԱնամ՝ և զգատուցեալսն նորա՝: ⁷⁴Եւ ՚ի ցեղէն Ասերայ. զՄասադ՝ և զգատուցեալսն նորա. զԱւդոն՝ և զգատուցեալսն նորա. ⁷⁵զՅակակ՝ և զգատուցեալսն նորա. զՅռովթ՝ և զգատուցեալսն նորա: ⁷⁶Եւ ՚ի ցեղէն Նեփթաղիմայ, զԿեդէս ՚ի Գալիլեա՝ և զգատուցեալսն նորա. զՔամով՝ և զգատուցեալսն նորա. զԿարիաթարիմ՝ և զգատուցեալսն նորա: ⁷⁷Եւ որդւոցն Մերարեայ մնացորդաց, ՚ի ցեղէն Չաբուղոնի. զՅեկոման՝ և զգատուցեալսն նորա. զԿադէս՝ և զգատուցեալսն նորա. զՅռոմնն՝ և զգատուցեալսն նորա. զԲաթովր և զգատուցեալսն նորա՝: ⁷⁸Եւ յեզերն Յորդանանու Երիքովի, յարևմտից Յորդանանու: ՚ի ցեղէն Ռուբինի, զԲոսոր յանապատին՝ և զգատուցեալսն նորա. և զՅասա՝ և զգատուցեալսն նորա՝. ⁷⁹և զԿադեթովթ՝ և զգատուցեալսն նորա. և զՄոփասաթ՝ և զգատուցեալսն նորա՝: ⁸⁰Եւ ՚ի ցեղէն Գադայ, զՌամովթ ՚ի Գադաադ՝ և զգատուցեալսն նորա. և զՄանայեմ՝ և զգատուցեալսն նորա. ⁸¹և զՅեսեբոն՝ և զգատուցեալսն նորա. և զՅազեր՝ և զգատուցեալսն նորա:

7

Գլուխ Է

ԺԹ ¹Եւ սոքա՝ են որդիք Իսաքարայ՝ Թովղայ, և Փուա, և Յասուբ, և Սամրամ, չորք: ²Եւ որդիք Թովղայ՝ Ոզի, և Յափայիաս, և Յերիէլ, և Յեմու, և Յեբամ, և Սամուէլ. իշխանք ըստ տանց տոհմից իւրեանց. և Թուդ, և Անան, զօրաւորք ուժով ըստ ազգին իւրեանց. և գունդք նոցա յաւուրս Դաւթայ. քսան և երկու հազարք, և վեց հարիւր: ³Եւ որդիք Ոզիայ՝ Յեզեբիաս. և որդիք Յեզեբիայ՝ Միքայէլ, և Աբդիաս, և Յովէլ, և Յիսիաս. իշխանք ամենեքեան՝: ⁴Եւ ընդ նոսա ըստ ազգին իւրեանց, ըստ տանց տոհմից իւրեանց, զօրաւորք կարգեալք ՚ի պատերազմ, երեսուն և վեց հազար. վասն զի բազմացուցին կանայս և որդիս: ⁵Եւ եղբարք նոցա յամենայն տոհմսն Իսաքարայ զօրաւորք ուժով, ութսուն և եւթն հազար՝ թիւ նոցա ամենեցուն: ⁶Որդիք Բենիամինի՝ Բաղէէ, և Բոքոր, և Ադիէլ, երեք՝: ⁷Սոքա՝ են որդիք Բաղեայ. Ասեբոն, և Ոզի, և Ոզիէլ, և Երեմովթ, և

* Ոմանք. Եւ զՅեկսան:

* Այլք. Եւ զԳեթրեմոն, և զՉա՛:

* Ոմանք. Եւ զԻբաաղամա:

* Ոսկան. Եւ զՌամօթ... և զԱնամ:

* Ոմանք. Եւ զԹաբովր:

* Ոմանք. Եւ զՅասսայ: Ուր Ոսկան. և զՅասսէ:

* Ոսկան. Եւ զԿադեմօթ: Ոմանք. Եւ զՄոփասաթ և զՉա՛:

* Ոմանք. Եւ Յովէլ, և Յեդիաս:

* Ոմանք. Եւ Բոքոր և Ապիէլ:

Ուրի, հինգ. իշխանք տանց տոհմից իւրեանց զօրաւորք ուժով. և թիւ նոցա քսան և երկու հազարք, և երեսուն և չորք: ⁸Որդիք Բոքորեայ՝ Չամարիաս, և Յովաս, և Եղիեզեր, և Եղիողէ, և Նաւ, և Ամարիա, և Երիմովթ, և Աբիու, և Անաթովթ, և Եղմեթեմ. ամենեքեան սոքա որդիք Բոքորեայ*.⁹ իշխանք տանց տոհմիցն իւրեանց ըստ ազգին իւրեանց զօրաւորք ուժով, և թիւ նոցա քսան հազար և երկերիւր: ¹⁰Եւ որդիք Աբդիելի, Բաղասան. և որդիք Բաղասանու, Յեովս, և Բինիամին, և Աւովդ, և Քանասան, և Եղան, և Թարսիս, և Աքիսաար*:
¹¹Ամենեքեան սոքա որդիք Աբդիելի իշխանք տոհմիցն իւրեանց զօրաւորք ուժով, և եւթնութասն հազար և երկերիւր, որք ելանէին զօրութեամբ պատերազմել*:
¹²Եւ Սափիմ, և Ափիմ, և որդիք Սովրայայ՝ Սոբու. և որդի նորա Յաթեր*:
¹³Որդիք Նեփթաղիմայ՝ Յասիել, և Գովնի, և Սահառ, և Սեղղում. որդիք Բաղղայ: ¹⁴Որդիք Մանասէի՝ Երիէլ՝ զոր ծնաւ նմա հարճն Ասորի. և ծնաւ զՄաքիր զհայրն Գաղաադու*.
¹⁵և Մաքիր ա՛ռ կին Յափիմայ, և Սեփոնա. անուն քեռ նորա Մոռքա, և անուն երկրորդին Սափադ. և ծնաւ Սափադայ դստերք*:
¹⁶Եւ ծնաւ Մոռքա կինն Մաքիրայ որդի, և կոչեաց զանուն նորա Փարէս, և անուն եղբոր նորա Սորոմ. և որդւոյ նորա Ուղամա*.
¹⁷որդի Ուղամայ՝ Բադիմ: Սոքա՛ են որդիք Գաղաադայ. որդիք Մաքիրայ որդւոյ Մանասէի.
¹⁸և քոյր նորա Մաղէթթ ծնաւ զԵսուդ և զԱբիեզեր, և զՄոռուա.
¹⁹և էին որդիք Սեմիդայ՝ Ային, և Սիւքեմ, և Ղակեիա, և Անիամ*:
²⁰Եւ որդիք Եփրեմի Մեսթաղա, և Բարագ որդի նորա, և Թաաթ որդի նորա, և Եղիադ որդի նորա, Նոմեէ որդի նորա, Ջարեդ որդի նորա*,
²¹Սովբել որդի նորա, Եզեր որդի նորա, Եղեադ որդի նորա. և սպանին զնոսա արք Գեթացիք ծնեալք յերկրին, վասն զի իշին առնուլ զանասունս նոցա.
²²և սո՛ւգ առ Եփրեմ հայրն նոցա յաւուրս բազումս. և եկին եղբարք նորա մխիթարել զնա: ²³Եւ եմուտ առ կինն իւր՝ յղացաւ և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա Բարիա, վասն զի՝ ի չար ժամանակի ծնաւ ասէ՛ ՚ի տան իմում: ²⁴Եւ դուստր նորա Սառա. և մնացորդօքն այնոքիւք շինեաց զԲեթորոն ներքին և զվերին: Եւ որդիք Ոզանայ՝ Սէերա,
²⁵և Յափայէ որդի նորա, և Յաասեթ, և Թաղէ որդի նորա, Ջոռդա որդի նորա, և Թասան որդի նորա.
²⁶և Ամիուդ որդի նորա, Եղիսամա որդի նորա,
²⁷Նուն որդի նորա, Յեսու՛ որդի նորա*:
²⁸Եւ կալուածք նոցա և բնակութիւն իւրեանց յեթեղ, և գեօղք նորին յարևելս. Գազեր՝ և գեօղք նորին, և Սիւքեմ՝ և գեօղք նորին մինչև ՚ի Գազա և ՚ի գեօղսն նորա.
²⁹և մինչև ՚ի սահմանս որդւոցն Մանասէի. Բեթսան՝ և գեօղք նորա. Թանաք՝ և գեօղք նորա. Գաղաադ՝ և գեօղք նորա. Մակեդդով՝ և գեօղք նորա. Դովր՝ և գեօղք նորա: Ի՛նոսա բնակեցան որդիքն Յովսեփու՝ որդւոյ Իսրայէլի*:
³⁰Որդիք Ասերայ՝ Յեսնա, և Յասուր, և Յեսովա, և Յեսու, և Աբարիա, և

* Այլք. Եւ որդիք Բոքով՝:

* Ոմանք. Եւ որդիք Ադիելի... և Բենիամին:

* Յօրինակին պակասէր. Եւ երկերիւր, որք ելա՛:

* Ոմանք. Եւ որդիք Ովրայայ:

* Ոմանք. Հարճն իւր Ասորի:

* Այլք. Եւ ծնան Սափաաթայ:

* Ի՛ւրու՛. Եւ որդի նորա Ուղամա: Ուր Ոսկան. Որդւոց նորա Ուլամա և Ոէկեմ:

* Ոսկան. Որդիք Սեմիդայ, Ային:

* Ոմանք. Եւ Եղադ որդի նորա: Ուր Ոսկան. Եղիադա:

* Ոմանք. Յեսուէ որդի:

* Ոմանք. Բաղաադ և գեօղք:

Սարա քոյր նոցա: ³¹Եւ որդիք Բարեայ՝ Քերեր, և Մեղ՛քիեղ՛. նա՛ ինքն է հայր Չերեթայ՝. ³²և Քարեր ծնաւ զՅափաղետ, և զՍովմեր, և զՔովթաս. և զՍովղամ զքոյրն նոցա՝. ³³Եւ որդիք Յափեղատայ, Բեսեքի, Բամայել. և Ասիթ. սոքա՛ են որդիք Յափեղատայ՝. ³⁴Եւ որդիք Սովմերայ՝ Աքիու, Յռաադա, և Ոգա, և Արամ: ³⁵Եւ որդիք Եղ՛ամայ եղբօրն Սոփարայ՝ Յամանա, և Մեղէս, և Ամաաղ: ³⁶Որդիք Սովփարայ՝ Առնափար, և Սոտաղ, և Բարի, և Յեմնա՝, ³⁷և Բասար, և Ովդ, և Սեմա, և Սաղիա, և Յեթեր, և Բեերա: ³⁸Եւ որդիք Յեթերայ՝ Յափինա, և Փասփա, և Արա: ³⁹Եւ որդիք Ովղայ, Որէք, և Անիէլ, և Յռայիէլ: ⁴⁰Ամենեքեան սոքա որդիք Ասերայ, ամենեքեան իշխանք և պետք տոհմիցն, ընտիրք զօրաւորք ուժով, իշխանք և առաջնորդք. և թիւ նոցա ՚ի մարտ պատերազմի արք քսան և վեց հազարք:

8

Գլուխ Ը

¹Եւ Բենիամին ծնաւ զԲաղէ զանդրանիկ իւր, և զԱզբեղ՛ գերկրորդն, և զԱրա երրորդ. ²և զՆովա չորրորդ, և զՅռափա հինգերորդ՝: ³Եւ էին որդիք Բարեայ, Արեդ, և Գերա, և Աքիուդ՝, ⁴և Աքիսուէ, և Մաաման, և Գերան, ⁵և Սովփան, և Աքիրան, և Սովիմ: ⁶Սոքա՛ են որդիք Ովղայ. և սոքա իշխանք տոհմիցն, բնակէին ՚ի Գաբէս, և գերեցին զնոսա ՚ի Մանաքաթի: ⁷Եւ Նոոմա, և Աքիա, և Գերա, նա՛ ինքն է Էգղամ. և ծնաւ զԱզար, և զԱքիադ. ⁸և Գաարիմ ծնաւ զՄովամ, յետ արձակելոյն զնա. և Ովսիմ, և Բաարա՝: ⁹Եւ Ադա կին նորա ծնաւ նմա զՅովբար, և զՍաբիա, և զՄովսա. և զՄեղ՛քամ՝, ¹⁰և զՅեուս, և զՍեբիա, և զՍարմա. սոքա՛ իշխանք տոհմիցն Յովսիմայ: ¹¹Եւ ծնաւ Մեովսիմ զԱքիտովբ, և զԱղփաղա: ¹²Եւ որդիք Աղփաղայ՝ Ովէդ, և Միսայել, Սեմեր. նա՛ շինեաց զՆովնով, և զՂովդ. և զԳեօղս նորա՝. ¹³և զԲարիգա, և զՍամա. սոքա՛ են իշխանք տոհմից որ բնակէին յեղ՛ամ. և սոքա հալածեցին զբնակիչսն Գեթայ՝: ¹⁴Եւ եղբարք նոցա՝ Մովսէք, և Յարիմաթ, ¹⁵և Ազաբադիա, և Արովդ, և Ուդեր՝, ¹⁶և Միքայել, և Յեսփաք, և Յովաքա, և Յեզիաս: Որդիք Բարիագայ, ¹⁷Չաբդափա, և Մոքողամ, և Ազակի, և Աբար, ¹⁸և Յեսամարի, և Եսիեղ՛ա, և Յաբաբ. որդիք Եղ՛փաղ՛այ՝, ¹⁹Յակիմ, և Չէրի, և Չաբդի. ²⁰և Եղ՛իովնէ, և Սաղթի, և Ելիէլ, ²¹և Աղափա, և Բերիգա, և Բարեա, և Սամարիամ: Որդիք Ամարեայ՝ ²²Յեսփան, և Ովբեդ, և Եղ՛իեղ՛. ²³և Աբդոն, և Մեքրի, և Անան, ²⁴և Անանիա, և Ամբրի, և Աեղ՛ամ, և Անաթովթիա, ²⁵և Աթին, և Յեփաղիա, և Փանուէլ: Որդիք Սովսեկայ՝ ²⁶Սամերիա, և Սարայիա, և

* *Ոմանք.* Հայր Չերեթայ:

* *Ոսկան.* Եւ Քերեր... և զՔովթամ:

* *Այլք.* Եւ որդիք Յափաղետայ... սոքա էին որ՛:

* *Ոմանք.* Որդիք Սովփորայ Առնա՛: *Ուր Ոսկան.* Սովփասայ:

* *Ոմանք.* Եւ զՅռափէ հինգերորդն:

* *Ոսկան.* Եւ էին որդիք Բալեգայ:

* *Ոսկան.* Եւ Գաարիմ ծնաւ զՄովաբ... և Նովսիմ:

* *Ոմանք.* Եւ զՍեբիայ և զՄովսայ:

* *Այլք.* Նա շինեաց զՈվնով:

* *Ոմանք.* Եւ սոքա են իշխանք:

* *Ոսկան.* Եւ Արովդ. և Ազեր:

* *Ոմանք.* Եւ Եսիղա և Յովաբ:

Գոթողիաս, ²⁷և Արասիաս, և Յեղիաս, և Ջեքրի. որդիք Երոմեայ: ²⁸Սոքա իշխանք տոհմից ըստ ազգ իւրեանց առաջնորդք. և սոքա բնակեցան յԵրուսաղէմ*: ²⁹Եւ ՚ի Գաբաւոն բնակեաց հայրն Գաբաւոնի, և անուն կնոջ նորա Մաաքա: ³⁰Եւ որդիք նորա, անդրանիկ Սաբդոն, և Յեսուր, և Կիս, և Բաղասան, և Նէր, և Նաբադ, ³¹և Գեդուր. և եղբարք նորա՝ Ջաքուր, ³²և Մաղողովք, որ ծնաւ զՍամաա: Եւ սոքա դէմ յանդիման եղբարց իւրեանց բնակեցան յԵրուսաղէմ ընդ եղբարսն իւրեանց*: ³³Եւ Նէր՝ ծնաւ զԿիս, և Կիս՝ ծնաւ զՍաւուղ. և Սաւուղ ծնաւ զՅովնաթան, և զՄեղ՛քիսաւ, և զԱմինադար, և զԻսմայէլ: ³⁴Եւ Յովնաթան ծնաւ զՄենփիբաադ. և Մենփիբաադ ծնաւ զՍիքա. ³⁵և որդիք Սիքայի, Փիդոն, և Մաղովք, և Թարէ, և Քաազ: ³⁶Եւ Քաազ ծնաւ զՅովիդա. և Յովիդա ծնաւ զԳաղենաթ, և զԱզովք, և զՋամարիա. և Ջամարիա ծնաւ զՄեսսա, ³⁷և Մեսսա ծնաւ զԲանաա, և զՂափեա որդի նորա. և զԵղ՛եաս որդի նորա, և զԵսէլ որդի նորա, ³⁸և զՅովսէլ. վե՛ց որդիք. և այսոքիկ անուանք նոցա, Եզրիկան անդրանիկ նորա, և Իսմայէլ, և Սարաիաս, և Աբդիաս, և Անան. ամենեքեան սոքա որդիք Եսեէլի*: ³⁹Եւ որդիք Եսեղկանայ եղբօր նորա. Ուղ՛ամ անդրանիկ նորա, և Աւաս երկրորդ, և Եղ՛իփաղ՛ետ երրորդ: ⁴⁰Եւ էին որդիք Եղկանայ զօրաւորք՝ արք ուժով, որ լարէին աղեղունս. և բազմացուցին որդիս, և զորդիս որդւոց. հարիւր և իննսուն. ամենեքեան սոքա յորդւոցն Բենիամինի:

9

Գլուխ Թ

¹Եւ ամենայն Իսրայէլ ըստ թուոյն իւրեանց գրեալք սոքա ՚ի գիրս թագաւորացն Իսրայէլի՝ և Յուդայ, հանդերձ բնակելովքն ՚ի Բաբելոն, վասն մեղացն իւրեանց: ²Եւ որ բնակեալ էին յառաջին կալուածսն իւրեանց ՚ի քաղաքսն Իսրայէլի, քահանայք և Ղևտացիք, որք տուեալ էին. ³յԵրուսաղէմ բնակեցան. յորդւոցն Յուդայ, և յորդւոցն Բենիամինի, և յորդւոցն Եփրեմի և Մանասէի: ⁴Եւ Գովթի որդի Ամիութայ, որդւոյ Ամարիայ. որդւոյ Փարեսի՝ որդւոյ Յուդայ*. ⁵ի Սեղոմայ՝ անդրանիկ նորա Ասեա. և որդիքն նորա: ⁶Յորդւոցն Ջարայի, և Յիէլ, և եղբարք նորա, վեց հարիւր և իննսուն*. ⁷և յորդւոցն Բենիամինի՝ Սաղովմ որդի Մոսոմայ, որդւոյ Դովեայ. որդւոյ Ասանուայ*. ⁸և Յեբնա որդի Յերեմայ. և Եղ՛ամ որդի Ոզիայ, որդւոյ Սոքորայ. և Մասաղամ որդի Սափատայ, որդւոյ Ռագուելի. որդւոյ Յաբեմայ*. ⁹և եղբարք նորա ըստ ազգին իւրեանց. ինն հարիւր յիսուն և վեց. ամենեքեան արք պետք տոհմին իւրեանց, ըստ տանց ազգին իւրեանց*:

Ի ¹⁰Եւ ՚ի քահանայիցն՝ Յովիդայէ, և Յովաբիբ, և Աբին*, ¹¹և Ազարիաս՝ որդի

* Այլք. Տոհմից ըստ ազգին իւրեանց:

* Ոսկան. Որ ծնաւ զՍամմա:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ վեց որդիք, նշանակի՝ հինգ որդիք:

* Ոսկան յաւելու. Որդւոյ Ամարիայ, որդւոյ Իմրի, որդւոյ Բանեայ. յորդւոցն Փարեսի:

* Ոմանք. Եւ Յիէլ և եղբարք նոցա: Յօրինակին թուագրով դնի՝ ՈՂ:

* Ոմանք. Որդւոյ Դովեայ:

* Ոմանք. Որդւոյ Սաքորայ... որդւոյ Յեբանայ:

* Յօրինակին. ԶԾԶ: Ոմանք. Տոհմիցն իւրեանց:

* Այլք. Յովիդայէ, և Յովա՛:

Քեղկեայ, որդւոյ Մոսողոմայ, որդւոյ Սաղովկայ, որդւոյ Մարիովթայ, որդւոյ Աքիտովթայ. առաջնորդ տանն Աստուծոյ. ¹²և Որդիաս՝ որդի Յերեմեայ, որդւոյ Փասուրայ, որդւոյ Քեղկեայ. և Մասե՝ որդի Ադիէլի, որդւոյ Եզրայ, որդւոյ Մոսողոմայ, և Ղաամովթ՝ որդի Ասերայ*.¹³ և եղբարք նոցա, իշխանք տանց տոհմից հազար և եւթն հարիւր և իննսուն. արք զօրաւորք ուժով՝ ՚ի գործ պաշտաման տանն Աստուծոյ*:¹⁴ Եւ ՚ի յՂևտացւոցն՝ Սամաա որդի Ասովթայ, որդւոյ Եզրիկամայ, որդւոյ Ասաբիայ, որդւոյ որդւոյն Մերարեայ*.¹⁵ և Բագբագ, և Արես, և Գովզէղ, և Մաթանիաս որդի Միքայի, որդւոյ Ջեքրեայ, որդւոյ Ասափայ:¹⁶ Որդիաս որդի Սամեայ, որդւոյ Գովզաղայ, որդւոյ Իդիթովնայ. և Բարաքիաս որդի Ասայի, որդւոյ Եղկանայ. որ բնակէր ՚ի գևղսն Նետոփատայ*:¹⁷ Եւ դմնապանք՝ Սալլուն, և Ակուբ, և Տէղման, Եման, և եղբարք նոցա. Սալլուն իշխան.¹⁸ Ինչև ցա՛յս վայր, ՚ի դրան թագաւորին յարևելս. այսոքիկ են դրունք բանակաց որդւոցն Ղևեայ:¹⁹ Եւ Սաղովմ որդի Կովրեայ, որդւոյ Աբիսափայ, որդւոյ Կորիսայ. և եղբարք նորա ՚ի տանէ հօրն իւրեանց, Կորիսացիքն ՚ի վերայ գործոց սպասուն. որք պահէին զպահպանութիւնս խորանին, ինքեանք և հարք իւրեանց ՚ի բանակին Տեառն, և պահէին զնուտն:²⁰ Եւ Փենէս որդի Եղիազարու իշխան էր ՚ի վերայ նոցա առաջի Տեառն. և նոքա ընդ նմա:²¹ Ջաքարիաս որդի Մոսողոմայ՝ դմնապան դրան խորանին վկայութեան:²² Ամենեքեան ընտիրք ՚ի դրունս. երկերիւր և երկուտասան. սոքա էին ՚ի սրահսն նոցա, և թիւն իւրեանց. և զսոսա կացոյց Դաւիթ՝ և Սամուէլ տեսանօղն՝ հաւատարմութեամբն նոցա*:²³ Սոքա և որդիքն նոցա ՚ի վերայ դրանց տանն Տեառն, և ՚ի տան խորանին որք պահէին*²⁴ ՚ի չորեսին կողմանս դրանն՝ յարևելս, և ՚ի ծովակողմն, ՚ի հիւսիսի, և ՚ի հարաւ:²⁵ Եւ եղբարք նոցա ՚ի սրահսն իւրեանց, ՚ի մտանելն յեւթն աւուրսն, ՚ի ժամանակաց ՚ի ժամանակս՝ հանդերձ նոքօք:²⁶ Վասն զի հաւատարմութեամբ էին չորք զօրաւորք դրանցն, որ էին Ղևտացիք՝ ՚ի վերայ տանց շտեմարանացն՝ և զանձուց տանն Աստուծոյ:²⁷ Եւ բանակէին՝ վասն զի նոցա էր պահպանութիւնն. և նոքա՛ էին ՚ի վերայ բանակեացն. ընդ առաւօտս առաւօտս բանային զդրունս տաճարին:²⁸ Եւ ՚ի նոցանէ ՚ի վերայ սպասուց պաշտամանն. վասն զի թուով բերէին զսպասսն, և թուով տանէին:²⁹ Եւ ՚ի նոցանէ կային ՚ի վերայ կահի սրբութեանցն, և նաշիւոյն, և զինւոյ, և իւղոյ, և կնդրկին, և այլոց խնկոցն:³⁰ Եւ յորդւոց քահանայիցն էին իւղեփեացք իւղոյն և խնկոցն՝³¹ Սատաթիաս ՚ի Ղևտացւոցն. նա՛ էր անդրանիկն Սաղովմայ Կորիսացւոյ. հաւատարմութեամբ ՚ի վերայ գործոյ զոհիցն՝ և տապակի մեծի քահանային*:³² Եւ Բանեաս Կահաթացի յեղբարցն իւրոց ՚ի վերայ հացին առաջադրութեան՝ պատրաստել շաբաթ ՚ի շաբաթ:³³ Եւ սոքա սաղմոսանուագք, իշխանք տոհմիցն Ղևտացւոց, կարգեալք ՚ի սպաս աւուրցն. վասն զի ՚ի տուէ և ՚ի գիշերի էին ՚ի գործն:³⁴ Սոքա իշխանք տոհմիցն Ղևտացւոց, ըստ ազգին իւրեանց իշխանք. և սոքա բնակեցան յերուսաղէմ*,³⁵ և ՚ի Գաբաւուն:

* Ոմանք. Որդւոյ Եզրիայ... և Ջատամովթ:

* Յօրինակին. ՌԶՂ:

* Ի լուս՝. Որդւոյ որդւոցն Մերարեայ. համաձայն բազմաց ՚ի բն՝:

* Ի լուս՝. Ի գեաւղսն Նետոփատայ:

* Յօրինակին թուագրով. ՄԲԺ. Ոսկան. Եւ զնոսա կացոյց Դաւիթ:

* Ի լուս՝. Եւ որդիքն իւրեանց ՚ի վերայ դր՝. համաձայն ոմանց ՚ի բնաթ՝:

* Ոսկան. Եւ Սատաթիաս:

* Յօրինակին պակասէր. Եւ սոքա բնակեցան:

ԻԱ Եւ բնակեաց հայրն Գաբաւոնի Յեւլ, և անուն կնոջ նորա Սողա*, ³⁶և որդի նորա անդրանիկ Աբդոն, և Յասիր, և Կիս, և Բաաղ, և Ներ, և Նաբաղ, ³⁷և Գեղուր. և եղբարք Չաբուրայ՝ Այիոն, և Ջեբրի, և Մակեղովք: ³⁸Եւ Մակեղովք ծնաւ զՍամաա. և սոքա՝ ի մէջ եղբարցն իւրեանց բնակեցին յերուսաղէմ ընդ եղբարս իւրեանց: ³⁹Եւ Նէր՝ ծնաւ զԿիս. և Կիս ծնաւ զՍաւուղ. և Սաւուղ ծնաւ զՅովնաթան, և զՄեղքիսաւէ, և զԱմինադաբ, և զԲաաղ: ⁴⁰Եւ որդի Յովնաթանու Մենփիբաաղ ծնաւ զՄիքա: ⁴¹Եւ որդիք Միքայի՝ Փիոն, և Մաղովք, և Թարա. ⁴²և Բաաղ ծնաւ զՅովաադա. և Յովադա ծնաւ զԳաղէմովք, և զԱզեմովք. և Ջամրի ծնաւ զՄասա*. ⁴³և Մասա ծնաւ զԲանար. Ափա որդի նորա. Եղէասար որդի նորա. Եսսեղ՝ որդի նորա: ⁴⁴Եւ Եսսեղի որդիք վեց. և այսոքիկ անուանք նոցա, Եզրիկամ անդրանիկ նորա, և Իսմայէլ, և Սարիա, և Աբդիա, և Ամարիա, և Անան. սոքա՝ որդիք Ասիելի:

10

Գլուխ Ժ

¹Եւ այլազգիք պատերազմեցան ընդ Իսրայէլի, և փախեան յերեսաց այլազգեացն. և անկան վիրաւորք ի լերինս Գեղբուայ*: ²Եւ անդեցան այլազգիքն զհետ Սաւուղայ, և զհետ որդոցն նորա, և հարին այլազգիքն զՅովնաթան, և զԱմինադաբ, և զՄեղքիսաւէ զորդիսն Սաւուղայ*: ³Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ Սաւուղայ, և գտին զնա աղեղնաւորք աղեղամբք և ցաւովք, և վտանգեցաւ յաղեղանցն: ⁴Եւ ասէ Սաւուղ ցկապարճակիրն իւր. Չգեա՛ զսուր քո և խոցեա՛ զիս դովաւ, մի՛ գուցէ եկեսցեն անթլփատքն այնոքիկ, և խաղասցեն ինն: Եւ ո՛չ կամեցաւ կապարճակիրն նորա՝ վասն զի երկեաւ յոյժ. և ա՛ն Սաւուղ զսուրն, և անկաւ ՚ի վերայ նորա*: ⁵Եւ ետես կապարճակիրն նորա թէ մեռաւ Սաւուղ, անկաւ և նա ՚ի վերայ սրոյն իւրոյ՝ և մեռաւ: ⁶Եւ մեռան Սաւուղ, և երկոքին որդիքն իւր յաւուր յայնմիկ. և ամենայն տուն նորա միանգամայն մեռան: ⁷Եւ ետես ամենայն այր Իսրայէլի որք ՚ի հանգրուանսն էին, եթէ փախեաւ Իսրայէլ, և եթէ մեռան Սաւուղ և որդիք նորա, թողին զքաղաքս իւրեանց և փախեան. և եկին այլազգիքն և բանակեցան ՚ի նոսա*: ⁸Եւ եղև ՚ի վաղիւն՝ եկին այլազգիքն կողոպտել զվիրաւորսն, և գտին զՍաւուղ և զորդիս նորա անկեալս ՚ի լերինն Գեղբուայ*, ⁹մերկացուցին զնա. և առին զգլուխ նորա, և զզէն նորա, և առաքեցին յերկիր այլազգեաց, շուրջանակի աւետարանել կռոցն իւրեանց՝ և ժողովրդեանն. ¹⁰և եղին զզէն նորա ՚ի տան աստուածոյն իւրեանց. և զգլուխ նորա եղին ՚ի տան Դազոնայ*: ¹¹Եւ լուան ամենեքեան որ բնակեալ էին ՚ի Գաղաաղ, զոր ինչ արարին

* Ոմանք. Հայրն Գաբաւոնի Յայէլ:

* Ոմանք. Եւ Քաղ, կամ՝ Քաաղ: Ուր Ոսկան. Եւ զԱզեմովք և զԱմրի, և Ամրի ծնաւ:

* Ոմանք. Գեղբուայ:

* Ոմանք. Եւ զՄեղքիսուէ:

* Յօրինակին պակասէր. Կապարճակիրն նորա:

* Ի լուս՝. Եւ երեքին որդիքն իւր: Ուր ոմանք. Եւ մեռաւ Սաւուղ և Գ որդիք:

* Այլք. Եւ բնակեցան ՚ի նոսա:

* Ոմանք. Գեղբուայ:

* Այլք. Աստուծոյն իւրեանց:

այլազգիքն ընդ Սաւուղ և ընդ Իսրայէլ. ¹²և յարեան ՚ի Գաղաադէ ամենայն արք
զօրաւորք, և առին զմարմինն Սաւուղայ և զմարմինս որդւոց նորա, և բերին
Յաբիս՝ և թաղեցին զոսկերս նոցա ընդ կաղնեաւն Յաբիս. և պահեցին աւուրս
ելօքն: ¹³Եւ մեռաւ Սաւուղ յանօրէնութիւնսն իւր, զորս անօրինեցաւ ՚ի Տէր. ըստ
բանին Տեառն զի ո՛չ պահեաց. վասն զի եհարց Սաւուղ վիկաւն խնդրել. և
պատասխանի արար նմա Սամուէլ մարգարէ. ¹⁴և ո՛չ խնդրեաց զՏէր. և սպան
զնա. և դարձոյց զթագաւորութիւնն Դաւթի որդւոյ Յեսսեայ:

11

Գլուխ ԺԱ

ԻԲ ¹Եւ եկն ամենայն Իսրայէլ առ Դաւիթ ՚ի Բեթրոն, և ասեն. Ահաւասիկ ոսկերք
քո և մարմինք քո եմք: ²Եւ յերէկն և յեռանտ՝ մինչ էր Սաւուղ արքայ՝ դու էիր որ
հանէիր և մուծանէիր զԻսրայէլ. և ասաց Տէր Աստուած քո ցքեզ. Դու
հովուեսցես ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և դու՛ լիցես առաջնորդ ՚ի վերայ
Իսրայէլի*: ³Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի առ արքայ ՚ի Բեթրոն, և եդ
արքայ Դաւիթ ուխտ ընդ նոսա ՚ի Բեթրոն առաջի Տեառն. և օծին զԴաւիթ
թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի, ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ՚ի ձեռն
Սամուէլի: ⁴Եւ զնա՛ց արքայ և արք նորա յերուսաղէմ, որ է Յեբուս, և անդ
Յեբուսացիքն բնակէին յերկրիմ*: ⁵Եւ ասեն բնակիչքն Յեբուսայ ցԴաւիթ. Ո՛չ
մտցես դու այսր: Եւ ա՛ռ զամրոցն Սիոնի, ա՛յն է քաղաք Դաւթի: ⁶Եւ ասէ Դաւիթ.
Ամենայն որ հարցէ զՅեբուսացին յառաջագոյն, եղիցի իշխան և զօրավար: Եւ
եւ յառաջ ՚ի վերայ նորա Յովաբ որդի Սարուեայ, և եղև իշխան*: ⁷Եւ նստաւ
Դաւիթ յամրոցին. վասն այնորիկ կոչեաց զնա քաղաք Դաւթի. ⁸և շինեաց
զքաղաքն շուրջանակի. և պատերազմեցաւ և ա՛ռ զքաղաքն: ⁹Եւ երթայր Դաւիթ
երթալով՝ և մեծանայր. և Տէր ամենակալ էր ընդ նմա:

ԻԳ ¹⁰Եւ սորա՛ իշխանք էին զօրացն Դաւթի, որք զօրանային ընդ նմա ՚ի
թագաւորութեան նորա, և ընդ ամենայն Իսրայէլի, որք թագաւորեցուցանէին
զնա ըստ բանին Տեառն ՚ի վերայ Իսրայէլի: ¹¹Եւ ա՛յս թիւ զօրաւորացն Դաւթի.
Իզբաամ որդի Աքամանի, առաջին յերիցն. նա՛ ձգեաց զսուրն իւր միանգամայն
՚ի վերայ երեք հարիւր վիրաւորացն ՚ի միում ժամանակի*: ¹²Եւ յետ նորա
Եղէազար որդի Դովդայի Աքուքացւոյ. նա՛ յերիս զօրաւորսն ¹³էր ընդ Դաւթայ ՚ի
Փասասողոմին: Եւ այլազգիքն ժողովեցան անդր ՚ի պատերազմ. և էր մա՛սն ինչ
անդաստանին լի՛ զարեաւ, և զօրն փախեաւ յերեսաց այլազգեացն*: ¹⁴Եւ եկաց
՚ի մէջ մասինն և պահեաց զնա. և հարին զայլազգիսն. և արար Տէր փրկութիւն
մեծ: ¹⁵Եւ իջին երեք յերեսուն իշխանացն ՚ի վէմն առ Դաւիթ յայրն Ոդողոմայ: Եւ
բանակ այլազգեացն էր բանակեալ ՚ի հովտին Սկայից: ¹⁶Եւ Դաւիթ յայնժամ էր
յամրոցին. և զօր այլազգեացն էր յայնժամ ՚ի Բեթղ՛ահեն: ¹⁷Եւ ցանկացաւ
Դաւիթ և ասէ. Ո՞ արբուցանէր ինձ ջուր ՚ի ջրհորոյն Բեթղ՛ահենի որ առ դրանն*:

* Ոմանք. Իմուն Իսրայէլի, և դու լիցիս:

* Ոմանք. Եւ արք Իսրայէլի յերուսաղէմ, որ է Յեբուս:

* Ոմանք. Որդի Սարուեայ:

* Այլք. Միանգամ ՚ի վերայ երեք հար՛:

* Ոմանք. Ընդ Դաւթի ՚ի Փասասողոմին:

* Այլք. Որ առ դրանն է:

¹⁸Եւ պատառեցին երեք զբանակ այլազգեացն, և հանին ջուր ՚ի ջրհորոյն Բեթղահեմի, որ է առ դրանն, և առին և եկին առ Դաւիթ. և ո՛չ կամեցաւ Դաւիթ ընկել զայն, և նուիրեաց զա՛յն Տեառն* . ¹⁹և ասէ. Քաւի՛չ լիցի ինձ Աստուած առնել զբանդ զայդ, եթէ զարիւն արանցդ այդոցիկ արբից յանձինս իւրեանց. վասն զի ոգւովքն իւրեանց բերին զայդ: Եւ ո՛չ կամեցաւ ընկել զայն. զա՛յս արարին երեք զօրաւորքն: ²⁰Եւ Աբեսսա եղբայր Յովաբու էր իշխան երիցն. նա՛ ձգեաց զսուրն ՚ի վերայ վեց հարիւր վիրաւորացն ՚ի միում ժամանակի. և նա՛ էր անուանի* ²¹ի մէջ երիցն ՚ի վերայ նոցա. քան զերկուսն փառաւորագոյն. և էր նոցա իշխան. և մինչ յերիսն ո՛չ ժամանէր: ²²Եւ Բանեաս որդի Յովիդայեայ, որդի առն զօրաւորի. բազո՛ւմ էին գործք նորա ՚ի Կաթսեէլ. նա՛ եհար զերկուս որդիսն Արիէլ Բանեայ, և նա՛ էջ և եհար զառնձն ՚ի մէջ գբին յաւուր ձեան*: ²³Նա՛ եհար զայրն Եգիպտացի՝ զա՛յր երևելի հինգկանգնեան, և ՚ի ձեռն Եգիպտացոյն նիզակ իբրև զստորի ոստայնանկաց. և էջ առ նա Բանեաս բրա՛ւ, և եհան ՚ի ձեռանէ Եգիպտացոյն զնիզակն. և սպան զնա նիզակաւն նորին*: ²⁴Չա՛յս արար Բանեաս որդի Յովիդայեայ. և անուն նորա ՚ի մէջ երից զօրաւորաց. ²⁵քան զերիսն փառաւորագոյն, և առ երիսն ո՛չ ժամանէր. և կացոյց զնա Դաւիթ ՚ի վերայ տոհմին իւրոյ: ²⁶Եւ սոքա էին զօրաւորք զօրացն. Ասայէլ եղբայր Յովաբայ. Եղեանան որդի Գովդայի ՚ի Բեթղահեմէ, ²⁷Սամովթ Արովրացի. Աքիզեղէս Փաղ՛ովնացի. ²⁸Ովրէ որդի Թելուացոյն. Աքիզէր Անաթովթացի: ²⁹Սովբաք Ասովթացի. Եղ՛իաք Ովնացի. ³⁰Մովարէ Նետոփացի. Եղ՛եադ որդի Բաանայ Նետոփաթացոյ* : ³¹Եթայի որդի Զոեփայի ՚ի բլրոյն Բենիամինի. Բանեաս Փարաթոնացի. ³²Ուրի ՚ի Նեթեղայ. Դասաբիէլ Սարաթթացի* : ³³Աղանովթ Բարսամացի. Եղիաք Ասաղաբոնացի՝ ³⁴որդի Ասամայ Գովթնացոյ. Յովնաթան որդի Մադէի Արարացոյ. ³⁵Աքիաք որդի Աքարայ Արարացոյ. Եղիբաադ որդի Ովրայ: ³⁶Փերովմէ Քուրաթթացի. Աքիա Ոփետղանացի: ³⁷Ասարա Կարմեղ՛ացի. Նոարէ որդի Ասբիայ. ³⁸Յովէլ եղբայր Նաթանայ. Մաբար որդի Ագարայ* . ³⁹Սեղեկով Ամոնացի: Նաար Աբերոնացի՝ կապարճակիր Յովաբայ որդւոյ Սարուեայ. ⁴⁰Իրաս Ուրեթացի. Գաբթթ Յեթերացի. ⁴¹Ուրիաս Քետացի: Չաբադ որդի Սոողայ* ⁴²որդւոյ Սեղբայ ՚ի Զուրբենայ, իշխան ՚ի վերայ երեսնիցն: ⁴³Անան որդի Մասքայ. Յովսափատ Մատթանացի* : ⁴⁴Ոգիաս Աստարովթացի. Սամաա, և Յնեղ որդիք Քովթանացոյն, Արարացիք* : ⁴⁵Յեղիէլ որդի Սամարեայ, և Յովազա եղբայր նորա, Աթովսացիք: ⁴⁶Յեղիէլ Մաովնացի. Այիրաք՝ և Յովսէ որդի նորա, Եղ՛նանացիք. Յեթենա Մովաբացի. Աղ՛իէլ, և Ոբէդ, և Յասիէլ Մովսաթթացի* :

* Ոմանք. Որ էր առ դրանն:

* Ոմանք. Չսուրն իւր ՚ի վերայ վեց հար՛:

* Ոմանք. Գործք նորա ՚ի Կաթսեէլ:

* Ոմանք. Եւ ՚ի ձեռին. կամ՝ ՚ի ձեռս Եգիպ՛:

* Ոմանք. Մովարէն Ետոփատացի... Բաանայ Նետոփացոյ:

* Ոսկան. Գասայ Աքիէլ Սարափթացի:

* Ոմանք. Մազար որդի Ագարայ:

* Ոսկան. Չաբադ որդի Սաւուղայ: (42) Աղինա որդի Սեղբայ ՚ի Ռուբենայ:

* Ոմանք. Անան որդի Մասաքայ. կամ՝ Մասքայ:

* Ոմանք. Սամաա և Յեղ:

* Ոսկան. Յեղիէլ Մաովնացի:

Գլուխ ԺԲ

¹Եւ սոքա՛ եկին առ Դաւիթ՝ ՚ի Սիկեղ՛ակ, մինչդեռ նեղեալ էր յերեսաց Սաւուղայ որդւոյ Կիսեայ. և սոքա էին ՚ի զօրաւորսն օգնականք՝ ՚ի պատերազմին. ²և աղեղամբ յաջուց և յահեկաց, և պարսաւոր քարամբք՝ և նետիւք: Յեղբարցն Սաւուղայ ՚ի Բենիամինէ՝ ³իշխան. Աքիեզեր, և Յովաս որդի Սամայ՝ Սաբանովթացի. և Յեւլ, և Ափաղէտ որդիք Ազնովթայ. Բարաքիա և Յեուլ, Անաթացիք՝: ⁴Սամէաս Գաբաւոնացի, զօրաւոր ՚ի մէջ երեսնից, և ՚ի վերայ երեսնից. Յերեմիաս, և Եզեկիէլ, և Յովնան, և Ջաբադ՝ ՚ի Գաղերոնայ: ⁵Եղիոզա, և Յարիմութ, և Բաաղիա, և Սամարիա, և Սափատիաս յԱրիփեղայ՝ ⁶Իկանայ: Յեսիայ, Եղիէղ՛, և Ուզորայ, և Յեզբամ՝ Ակորացիք: ⁷Յովէլ և Ջաբադիայ, որդիք Յերոնայ Գեղովրացւոյ՝: ⁸Եւ ՚ի Գաղաադայ որոշեցան առ Դաւիթ, և յանապատէն զօրաւորք ուժով. ա՛րք որ հարկանէին պատերազմ, առեալ վահանս և աշտեայս, և դէմք նոցա իբրև զդէ՛մս առի՛ծու, և թեթևագոյնք ոտիւք իբրև զայծեմունս ՚ի վերայ լերանց արագութեամբ: ⁹Եզեր՝ իշխան. Աբդիաս՝ երկորդ. Եղիաբ՝ երրորդ. ¹⁰Սասման՝ չորրորդ. Յերեմիաս՝ հինգերորդ. ¹¹Եթթի՝ վեցերորդ. Եղիէլ՝ եւթներորդ. ¹²Յովնան՝ ութերորդ. Եղզաբաթ՝ իններորդ՝. ¹³Յերեմիաս՝ տասներորդ. Մաքաբանա՝ մետասաներորդ: ¹⁴Սոքա՛ յորդուցն Գադայ իշխանք զօրացն, ՚ի հարիւրսն փոքր. և մեծ ՚ի մէջ հազարացն՝: ¹⁵Սոքա՛ են որք անցին ընդ Յորդանան յամսեանն առաջնում, և նա էր լի՛ յամենայն յատակսն իւրում. և հալածեցին զամենայն բնակիչս հովտացն՝ յարևելից մինչև յարևմուտս: ¹⁶Եւ եկին յորդուցն Բենիամինի և Յուդայ՝ յօգնականութիւն Դաւթի: ¹⁷Եւ Դաւիթ ել ընդ առաջ նոցա, և ասէ ցնոսա. Եթէ խաղաղութեամբ եկիք առ իս՝ եղիցի՛ սիրտ իմ ընդ ձեզ, ասպա թէ մատնել զիս թշնամեաց իմոց եկիք՝ ո՛չ ճշմարտութեամբ ձեռին, տեսցէ՛ Աստուած հարցն մերոց՝ և յանդիմանեսցէ: ¹⁸Եւ զօրացոյց Յոզիմ զԱմեսսա, զիշխան երեսնիցն. և ասէ. Եթէ Դաւիթ որդի Յեսսեայ՝ և զօրդ քո՝ խաղաղութիւն քեզ, և խաղաղութիւն օգնականաց քոց. վասն զի օգնեաց քեզ Աստուած քո: Եւ ընկալաւ զնոսա Դաւիթ, և կացոյց զնոսա իշխանս զօրացն՝: ¹⁹Եւ ՚ի Մանասէէ դիմեցին առ Դաւիթ՝ ՚ի զալ այլազգեացն ՚ի վերայ Սաւուղայ ՚ի պատերազմ, և ո՛չ օգնեաց նոցա. վասն զի խորհրդիւ եղև զօրագլխացն այլազգեաց, որք ասացին եթէ գլխովք արանցդ այդոցիկ դառնայ դա առ տէր իւր Սաւուղ՝: ²⁰Ի գնալն նորա ՚ի Սիկիլակ, դիմեցին առ նա ՚ի Մանասէէ, Եդնա, Յովզաբադ, և Եղիու, և Սաղթի. իշխանք հազարացն որք էին Մանասէի՝. ²¹և նոքա զունարեցան ընդ Դաւթի ՚ի վերայ հինին. վասն զի զօրաւորք էին ուժով, ամենեքեան իշխանք ՚ի վերայ զօրուն՝. ²²քանզի աւուրց յաւուրս զային առ

* Այլք. Սաբանովթացւոյ... Յեզեղ՛... և Յեուլ, Անաթովթացիք:

* Ոմանք. Եղիոզա... և Սափատիաս Յարիփեղացի: (6) Եղկանայ և Յեսիայ... և Ուզորա:

* Ոմանք. Որդիք Յերոնայ Գեղովրացւոյ:

* Ոմանք. Եղզաբ իններորդ:

* Օրհնակ մի. ՚ի հարիւրսն փոքր է:

* Ոմանք. խաղաղութիւն ընդ քեզ, և խա՛:

* Ոսկան. Վասն զի խորհրդով եղև զօ՛:

* Ոսկան. Յօզաբադ, Իեղիէլ, Սիբայէլ. Յօզաբադ... որք էին ՚ի Մանասէ:

* Ոմանք. Ուժով ամենեքեան. և իշխանք:

Դաւիթ, ՚ի զօրութիւն մեծ իբրև զօրութիւն Աստուծոյ*:

Ի Դ²³ Եւ այսոքիկ են անուանք իշխանաց զօրուն, որք եկին առ Դաւիթ ՚ի Քերթուն, դարձուցանել զթագաւորութիւնն Սաւուղայ առ նա՝ ըստ բանին Աստուծոյ: ²⁴Որդիք Յուդայ վահանակիրք և տիգաւորք, վեց հազար և ութ հարիւր զօրաւորք ՚ի պատերազմի: ²⁵Եւ յորդոցն Շմաւոնի հզօրք ուժով ՚ի պատերազմել, եւթն հազար և հարիւր: ²⁶Յորդոցն Ղևեայ. չորք հազար և վեց հարիւր, ²⁷և Յուդաս առաջնորդ: Եւ յորդոցն Ահարոնի ընդ նմա երեք հազար և եւթն հարիւր* . ²⁸և Սադովկ մանուկ հզօր ուժով ՚ի տանէ հօր իւրոյ. և իշխանք քսան և երկու* : ²⁹Եւ յորդոցն Բենիամինի յեղբարցն Սաւուղայ երեք հազար, և յոլովք ՚ի նոցանէ էին վերակացուք տանն Սաւուղայ*: ³⁰Եւ յորդոցն Եփրեմայ, քսան հազար և ութ հարիւր զօրաւորք ուժով, արք անուանիք ըստ տանց տոհմիցն իւրեանց: ³¹Եւ ՚ի կիսոյ ցեղէն Մանասէի ութուտասն հազար, որք անուանեցան յանուանէ թագաւորեցուցանել զԴաւիթ: ³²Եւ յորդոցն Իսաքարայ որք գիտէին զհանճար, ՚ի ժամանակի՝ ճանաչելով թէ զի՞նչ առնիցեն Իսրայէլի՝ յիշխանութեան իւրեանց՝ երկերիւր. և ամենեքեան եղբարք իւրեանց ընդ նոսա: ³³Եւ ՚ի Չաբուղոնէ՝ որք ելանէին ՚ի մարտ պատերազմի՝ պատերազմական գործեաւ, յիսուն հազար՝ օգնել Դաւիթ՝ ոչ ունայնաձեռն: ³⁴Եւ ՚ի Նեփթաղիմայ իշխանք հազարք. և ընդ նոսա վահանաւորք և տիգաւորք երեսուն հազար* : ³⁵Եւ ՚ի Դանայ կարգեալք ՚ի պատերազմ քսան և ութ հազար և ութ հարիւր* : ³⁶Եւ յԱսերայ՝ որք ելանէին օգնել ՚ի պատերազմի, քառասուն հազար: ³⁷Եւ յայնմ կողմանէ Յորդանանու, ՚ի յԻուբինէ, և ՚ի Գադայ, և ՚ի կիսոյ ցեղին Մանասէի, ամենայն պատերազմական գործեօք՝ հարիւր քսան հազար. ³⁸ամենեքեան սոքա արք պատերազմօղք կարգեալք ՚ի մարտ. խաղաղական անձամբ եկին ՚ի Քերթուն թագաւորեցուցանել զԴաւիթ ՚ի վերայ Իսրայէլի. և այլ մնացորդքն Իսրայէլի իբրև զանձն մի՝ թագաւորեցուցանել զԴաւիթ* : ³⁹Եւ էին անդ աւուրս երիս, ուտէին և ըմպէին. վասն զի պատրաստեցին նոցա եղբարքն իւրեանց, ⁴⁰և սահմանակիցք նոցին, մինչև յԻսաքար, և ՚ի Չաբուղոն, և ՚ի Նեփթաղիմ. և բերէին նոցա ուղտովք և իշովք և ջորովք և եզամբք կերակուրս, ալևր, և թուզ, և չամիչ, և զինի, և ձէթ, և զուարակս և ոչխարս բազումս. վասն զի ուրախութիւն էր յԻսրայէլի* :

13

Գլուխ ԺԳ

Ի Ե¹ Եւ խորհեցաւ Դաւիթ ընդ հազարապետսն և հարիւրապետսն, և ընդ ամենայն իշխանսն* : ²Եւ ասէ Դաւիթ ցամենայն եկեղեցին Իսրայէլի. Եթէ իցէ

* Ոմանք. Քանզի յաւուրց յաւուրս:

* Յօրինակին պակասէր. Ընդ նմա երեք հազ:

* Յօրինակին. Եւ Սասովկ մանուկ:

* Ոմանք. Սաւուղայ չորք հազարք... վերակացուք ցեղի տանն:

* Ոսկան. երեսուն և եօթն հազար:

* Ոսկան. Եւ ութ հազար և վեց հարիւր:

* Այլք. Ամենեքեան նոքա:

* Ոմանք. Եւ բերին նոցա ուղտովք... և ջորեօք... ալիւրս... վասն զի յուրախութիւն էր յԻսրայէլի:

* Ոմանք. Եւ ընդ հարիւրապետսն:

բարութիւնդ՝ ի ձեզ, և ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ յաջողեցաւ. առաքեսցուք առ եղբարսն մեր որ մնացեալ են յամենայն Իսրայէլի. և ընդ նոսա քահանայք և Ղևտացիք ՚ի քաղաքսն կալուածոց իւրեանց, և ժողովեսցին առ մեզ*.³ և բերցուք այսր առ մեզ զտապանակն Աստուծոյ մերոյ. վասն զի ո՛չ խնդրեցին զնա յաւուրցն Սաւուդայ*.⁴ Եւ ասաց ամենայն եկեղեցին՝ առնել այնպէս. վասն զի ուղիղ էր բանն յաչս ամենայն ժողովրդեանն:⁵ Եւ եկեղեցացոյց Դաւիթ զամենայն Իսրայէլ ՚ի սահմանացն Եգիպտոսի մինչև յԵմաթ, տանել զտապանակն Աստուծոյ ՚ի քաղաքէն Յարիմայ:⁶ Եւ եհան զնա Դաւիթ՝ և ամենայն Իսրայէլ ել ՚ի քաղաքն Դաւթի, որ էր Յուդայի. բերել անտի զտապանակն Տեառն Աստուծոյ որ նստի ՚ի վերայ քերովբէից, յորոյ վերայ կոչեցաւ անուն նորա*.⁷ Եւ եղին զտապանակն Աստուծոյ ՚ի վերայ սայլի՝ նորոյ, ՚ի տանէն Ամինադաբայ. և Ոզա և եղբարք նորա ածէին զսայլն*.⁸ Եւ Դաւիթ և ամենայն Իսրայէլ խաղային առաջի Աստուծոյ ամենայն զօրութեամբ, երգովք սաղմոսաց՝ տաւղօք և քնարօք և թմբկօք և ծնծղայիւք և փողովք:⁹ Եւ եկին մինչև ՚ի կալն Քելովնեայ. և ձգեաց Ոզա զծեռն իւր ունել զտապանակն, վասն զի թիւրեաց զնա զուարակն:¹⁰ Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ՚ի վերայ Ոզայ. և եհար զնա անդ յաղագս ձգելոյ նորա զծեռն իւր ՚ի տապանակն. և մեռաւ անդ առաջի Աստուծոյ:¹¹ Եւ տրտմեցաւ Դաւիթ. վասն զի խրամատեաց Տէր խրամատութիւն յՈզա. և կոչեաց զտեղին զայն Խրամատութիւն Ոզայ մինչև յօրս յայս*.¹² Եւ երկեաւ Դաւիթ յԱստուծոյ յաւուրն յայնմիկ և ասէ. Ջիւս՞րդ տարայց առ իս զտապանակն Աստուծոյ*.¹³ Եւ ո՛չ դարձոյց Դաւիթ զտապանակն առ ինքն ՚ի քաղաք Դաւթի. և խոտորեցոյց զնա ՚ի տունն Աբեդարայ Քետացւոյ*.¹⁴ Եւ նստաւ տապանակն Աստուծոյ ՚ի տանն Աբեդարայ ամիսս երիս. և օրինեաց Աստուած զԱբեդար, և զամենայն ինչ նորա*:

14

Գլուխ ԺԴ

ԻՉ¹ Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիրոսի հրեշտակս առ Դաւիթ, և փայտս մայրս. և շինօղս որմոց, և հիւսունս փայտից՝ շինել նմա տուն:² Եւ ծանեաւ Դաւիթ եթէ պատրաստեաց զնա Տէր ՚ի վերայ Իսրայէլի. վասն զի աճեաց ՚ի բարձրութիւն թագաւորութիւն նորա, վասն ժողովրդեան իւրոյ Իսրայէլի:³ Եւ ա՛ռ Դաւիթ ա՛յլ ևս կանայս յԵրուսաղէմ. և ծնան նմա ա՛յլ ևս ուստերք և դստերք:⁴ Եւ ա՛յսոքիկ են անուանք նոցա որք ծնան նմա, և էին նորա յԵրուսաղէմ. Սամաս, և Սոբաբ, Նաթան, Սողոմոն*,⁵ և Յեբաար, և Եղիսաւ, և Եղիփաղէտ*,⁶ և Նազեթ, և Նափատ, և Յափիէ.⁷ և Եղիսամա, և Բաղիադա, և Եղիփաղատ:

* Ոմանք. Եւ առաքեսցուք... և ընդ նոսա քահանայքն Ղևտացիք:

* Ոսկան. Յաւուրսն Սաւու՛:

* Ոմանք. Որ նստէր ՚ի վերայ քերով՛:

* Ոմանք. Ածէին զսայլսն:

* Ոմանք. Խրամատութիւն Ոզայ:

* Ոմանք. Ջտապանակս Աստուծոյ:

* Ի լուս՛. ՚ի վերայ Քետացւոյ, նշանակի՝ Ղևտացւոյ:

* Այլք. Եւ զամենայն որ ինչ նորա:

* Ոմանք. Եւ էին նմա յԵրուսաղէմ:

* Ոմանք. Եւ Եղիսար, և Եղիփաղէտ:

Ի՛է՞ Եւ լուան՝ այլազգիքն եթէ օծաւ Դաւիթ թագաւոր՝ ՚ի վերայ ամենայն Իսրայէլի, և ելին ամենայն այլազգիքն խնդրել զԴաւիթ. լուան՝ Դաւիթ, և ել ընդ առաջ նոցա՝⁹ Եւ այլազգիքն եկին, և հանդիպեցան միմեանց ՚ի հովիտսն Սկայից՝¹⁰ Եւ եհարց Դաւիթ ցԱստուած՝ և ասէ. Եթէ ելի՞ց ՚ի վերայ այլազգեացն, և տայցե՞ս զնոսա ՚ի ձեռս իմ: Եւ ասէ ցնա Տէր. Ե՛լ, և տաց զնոսա ՚ի ձեռս քո՝¹¹ Եւ ել Դաւիթ ՚ի Բաաղփարասին, և եհար զնոսա Դաւիթ. և ասէ Դաւիթ. Խրամատեաց Աստուած զթշնամիս իմ ձեռամբ իմով, իբրև զխրամատութիւն ջրոյ: Յաղագս այսորիկ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Խրամատութիւն Փարասինայ: ¹²Եւ թողին անդ զաստուածս իւրեանց. և ասաց Դաւիթ այրե՛լ զնոսա հրով: ¹³Եւ յաւելին այլ ևս այլազգիքն, և հանդիպեցան ՚ի հովտին Սկայից: ¹⁴Եւ եհարց Դաւիթ դարձեալ զԱստուած. և ասաց ցնա Աստուած. Ո՛չ երթիցես զկնի նոցա. դարձի՛ր ՚ի նոցանէ, և թողցես զնոսա մերձ ՚ի տանձիսն. ¹⁵ և եղիցի ՚ի լսել քո զձայն շարժման ծայրից տանձեացն, յայնժամ ելցես ՚ի պատերազմել, վասն զի ելցէ Աստուած առաջի քո հարկանել զբանակ այլազգեացն՝: ¹⁶Եւ արար որպէս պատուիրեաց նմա Աստուած. և եհար զբանակ այլազգեացն ՚ի Գաբաթովնայ մինչև ՚ի Գազերա: ¹⁷Եւ եղև անուն Դաւթի յամենայն երկրի. և Տէր ետ զերկիւղ նորա ՚ի վերայ ամենայն ազգաց:

15

Գլուխ ԺԵ

¹Եւ արար իւր տուննս ՚ի քաղաքի Դաւթի. և պատրաստեաց զտեղի տապանակին Աստուծոյ, և արար նմա խորան:

ԻԸ ²Յայնժամ ասաց Դաւիթ. Ո՛չ այլ ումեք է՝ բառնալ զտապանակն Աստուծոյ, բայց միայն Ղևտացւոցն. վասն զի զնոսա ընտրեաց Տէր բառնալ զտապանակն իւր, և պաշտել առաջի նորա մինչև ցյաւիտեանս՝: ³Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն Իսրայէլ յերուսաղէմ հանել զտապանակն Տեառն ՚ի տեղին, զոր պատրաստեաց նմա՝: ⁴Եւ ժողովեաց Դաւիթ զորդիսն Ահարոնի, և զՂևտացիսն: ⁵Յորդւոցն Կահաթուն՝ Ուրիէլ իշխան, և եղբարք նորա հարիւր քսան: ⁶Յորդւոցն Մերարեայ՝ Սայիաս իշխան, և եղբարք նորա երկերիւր յիսուն: ⁷Յորդւոցն Գեթսունի՝ Յովէլ իշխան, և եղբարք նորա հարիւր երեսուն: ⁸Յորդւոցն Եղիսափանայ՝ Սամայիաս իշխան, և եղբարք նորա երկերիւր՝: ⁹Յորդւոցն Քեբրոնի՝ Եղիէլ իշխան, և եղբարք նորա ութսուն: ¹⁰Յորդւոցն Ոգիէլի՝ Ամինադաբ իշխան, և եղբարք նորա հարիւր և երկոտասան: ¹¹Եւ կոչեաց Դաւիթ զՍադոկկ և զԱբիաթար, զբահանայսն և զՂևտացիսն. և զՈւրիէլ, և զՍայիաս, և զՅովէլ, և զՍամայիաս, և զԵղիէլ, և զԱմինադաբ. ¹² և ասէ ցնոսա. Դո՛ւք էք իշխան տոհմից Ղևտացւոց, դո՛ւք սրբեցարո՛ւք և եղբարք ձեր, և հանէ՛ք զտապանակն

* Ոսկան յաւելու. խնդրել զԴաւիթ. զոր իբրև լուաւ Դաւիթ:

* Ոմանք. ՚ի հովիտն. կամ՝ ՚ի հովտին Սկայից:

* Այլք. Եւ տացե՞ս զնոսա:

* Ոմանք. ՚ի լսել քեզ զձայն:

* Ոմանք. Ձտապանակն Աստուծոյ և պաշ՝... մինչև յաւիտեանս:

* Ոմանք. Ձտապանակն Աստուծոյ ՚ի տեղին:

* Ոմանք. Սամիաս իշխան:

Աստուծոյ 'ի տեղին զոր պատրաստեցի նմա*։ ¹³Ո՞չ ապաքէն զի ո՛չ էիք դուք յառաջ, խրամատեաց Աստուած ձեր 'ի մեզ, վասն զի ո՛չ խնդրեցաք իրաւամբք զնա։ ¹⁴Եւ սրբեցան քահանայքն և Ղևտացիք բերել զտապանակն Աստուծոյ Իսրայէլի։ ¹⁵Եւ առին որդիք Ղևտացւոցն զտապանակն Աստուծոյ, որպէս և պատուիրեաց Մովսէս բանիւ Աստուծոյ ըստ գրոց, բառնալեօքն 'ի վերայ ուսոց իւրեանց։ ¹⁶Եւ ասէ Դաւիթ ցիշխանս Ղևտացւոցն. Կացուցէ՛ք զեղբարսն ձեր որք երգեն զսաղմոսս՝ նուագարանօք երգոցն, քնարօք, և սրնգօք, և ծնծղայիւք, ամբառնալ զձայնս 'ի բարձունս՝ ուրախութեան ձայնիւ։ ¹⁷Եւ կացուցին Ղևտացիքն զՆաման որդի Յովելի, և յեղբարց նորա զԱսափ որդի Բարաքեայ. և յորդւոցն Մերարեայ յեղբարց նորա զԵթան որդի Կիսեայ։ ¹⁸Եւ ընդ նոսա եղբարքն իւրեանց երկրորդք. Ջաքարիա, և Յովէլ, և Սամիրամովթ, և Էէլ, և Անանիաս, և Եղիաբ, և Բանեաս, և Մասեաս, և Մատաթիաս, և Եղիփաղա, և Մակեդիաս, և Աբեդդոն, և Յեէլ, և Ոզիաս՝ դռնապանքն*։ ¹⁹Եւ սաղմոսանուագքն. Աման, և Ասափ, և Էթան. տաւղեօք պղնձեօք, լսելի՛ առնել զձայն*։ ²⁰Ջաքարիաս, և Ոզիէլ, և Սամիրամովթ, և Ելիէլ, և Անանիաս, և Եղիաբ, և Մասիաս, և Նաթայիաս՝ քնարօք և Աղեմովթ*։ ²¹և Մատաթիաս, և Եղիփաղատ, և Մակեդիա, և Աբեդդոն, և Յեէլ, և Ոզիաս՝ սրնգօք. Սենեթիաս՝ զօրացուցանել*։ ²²և Քոնիաս իշխան Ղևտացւոցն, իշխան 'ի վերայ երգոցն. վասն զի էր հանճարեղ։ ²³Եւ Բարաքիաս, և Եղկանա՝ դռնապանք տապանակին։ ²⁴Եւ Սովբենիաս, և Յովսափատ, և Նաթանիէլ, և Աման, և Ջաքարիաս, և Բանաիաս, և Եղիեգեր, քահանայքն յուսացեալք փողովք առաջի տապանակին Աստուծոյ. և Աբեդդովմ, և Յեիաս՝ դռնապանք տապանակին Աստուծոյ։ ²⁵Եւ Դաւիթ և ծերքն Իսրայէլի, և հազարապետք, երթային հանել զտապանակ ուխտին Տեառն 'ի տանէն Աբեդդարայ ուրախութեամբ։ ²⁶Եւ եղև 'ի զօրացուցանելն Աստուծոյ զիշխանսն՝ որ բարձին զտապանակ ուխտին Տեառն. զենին եւթն զուարակս, և եւթն խոյս։ ²⁷Եւ Դաւիթ զգեցեալ էր պատմուճան բեհեզեղէն։ Եւ ամենայն Ղևտացիքն բարձին զտապանակ ուխտին Տեառն, և սաղմոսանուագքն. և Քոնոնիաս էր իշխան երգոցն՝ որք նուագէին։ Եւ Դաւիթ զգեցեալ պատմուճան բեհեզեղէն. ²⁸և ամենայն Իսրայէլ հանին զտապանակ ուխտին Տեառն հռչակաւ ձայնիւ յրբելեաւն, և փողով՝ և ծնծղայիւք նուագելով քնարօք և տաւղօք։ ²⁹Եւ եղև մինչդեռ տապանակն Աստուծոյ գայր 'ի քաղաքն Դաւթի, և Մեղքող դուստր Սաւուղայ կարկառեալ ընդ պատուհանն, ետես զարքայ Դաւիթ զի կաքաւեր և խաղայր. և անգոսնեաց զնա 'ի միտս իւր*։

16

Գլուխ ԺԶ

¹Եւ տարաւ 'ի ներքս զտապանակն Աստուծոյ, և հաստատեաց զնա 'ի մէջ խորանին՝ զոր պատրաստեաց նմա Դաւիթ. և մատուցին ողջակէզս՝ և

* *Ոմանք.* Աստուծոյ Իսրայէլի 'ի տեղին զոր։

* *Ոմանք.* Եւ Սամիրամովթ, և Էէլ*։

* *Ոմանք.* Տաւղօք պղնձեօք։

* *Ոմանք.* Եւ Նաթիաս՝ քնարօք։

* *Ոմանք.* Եւ Մատթիաս, և Եղիփաղէաս, և Մակեդիաս։

* *Ոմանք.* Տապանակն Տեառն գայր։

զփրկութեանցն առաջի Աստուծոյ*։ ²Եւ կատարեաց Դաւիթ մատուցանել զողջակէզսն և զփրկութեանց. և օրհնեաց զժողովուրդն յանուն Տեառն։ ³Եւ բաշխեաց ամենայն Իսրայէլի յառնէ մինչև ցլին, ՚ի մարդ՝ հաց մի ՚ի հացարարոց, և պատառ մի ՚ի կասկարայից*։

ԻԹ ⁴Եւ կարգեաց առաջի երեսաց տապանակին կտակարանացն Տեառն, ՚ի Ղևտացւոցն, պաշտօնեայս երգել ձայնիւ, և խոստովան լինել, և օրհնել զՏէր Աստուած Իսրայէլի։ ⁵ԶԱսափ առաջնորդ. և երկրորդ նմա Զաքարիաս, զՅեթլ, զՍամիրամովթ, զՅայէլ, զՍատաթիաս, զԵղիաբ, զԲանեաս, զԱբեդդովմ, և զԵսիէլ, նուագարանօք տաւղաց և քնարից. և Ասափ ծնծղայիւք նուագեր*։ ⁶և Բանեաս և Ոզիէլ քահանայք փողովք հանապազ առաջի տապանակի կտակարանացն Աստուծոյ։ ⁷Եւ յաւուրն յայնմիկ յայնժամ կարգեաց Դաւիթ, իսկզբանն օրհնել զՏէր, ՚ի ձեռն Ասափայ և եղբարց նորա։ ⁸Երգ։ Խոստովան եղերովք Տեառն և կարդացէք զանուն նորա, ծանուցէք ժողովրդոց զգործս նորա։ ⁹Երգեցէք նմա և օրհնեցէք զնա, պատմեցէք ամենեցուն զսքանչելիս նորա զոր արար Տէր։ ¹⁰Օրհնեցէք զանուն սուրբ նորա. ուրախ լիցի սիրտ՝ որ խնդրէ զհաճոյս նորա։ ¹¹Խնդրեցէք զՏէր և հզօրք եղիջիք. խնդրեցէք զերեսս նորա յամենայն ժամ։ ¹²Յիշեցէք զսքանչելիս նորա զոր արար, զնշանս և զիրաւունս բերանոյ նորա. ¹³զաւանկ Իսրայէլի ծառայք նորա. որդիք Յակոբայ ընտրեալք նորա։ ¹⁴Նա՛ է Տէր Աստուած մեր, յամենայն երկրի են իրաւունք նորա։ ¹⁵Յիշեցէք յաւիտենից զուխտ իւր, զբանն զոր պատուիրեաց ՚ի հազար ազգ*։ ¹⁶զուխտն զոր եդ ընդ Աբրահամու, և զերդունն իւր ընդ Սահակայ։ ¹⁷Չաստատեաց զնա Յակոբու ՚ի հրամանս, և Իսրայէլի յուխտ յաւիտենական. ¹⁸ասէ. Քե՛զ տաց զերկիրն Քանանու, զվիճակ ժառանգութեան ձերոյ*։ ¹⁹Ձի էին նոքա սակաւք թուով. և նուազք և պանդուխտք ՚ի նմա։ ²⁰Գնացին նոքա ազգէ յազգ, և ՚ի թագաւորութենէ ՚ի ժողովուրդ յայլ։ ²¹Ո՛չ թող ա՛ռն հարստահարել զնոսա, և կշտամբեաց վասն նոցա զթագաւորս. ²²մի՛ մերձենայք յօժեալսդ իմ, և ՚ի մարգարէսդ իմ մի՛ լինիք չար։ ²³Օրհնեցէք զՏէր ամենայն երկիր. պատմեցէք օրըստօրէ զփրկութիւն նորա։ ²⁴Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա։ ²⁵Ձի մեծ է Տէր, և օրհնեալ է յոյժ. ահաւոր է ՚ի վերայ ամենայն աստուածոց. ²⁶վասն զի ամենայն աստուածք ազգաց կունք են. և Աստուած զերկինս արար։ ²⁷Փառք և զովութիւն առաջի երեսաց նորա. զօրութիւն և պարծանք ՚ի տեղոջ նորա։ ²⁸Տու՛ք Տեառն տոհմք ազանց. տու՛ք Տեառն փառք՝ և զօրութիւն*։ ²⁹Տու՛ք Տեառն զփառս անուան նորա. առէք զպատարագս, և մատուցէք առաջի երեսաց նորա. և երկրպագեցէք Տեառն ՚ի սրահ սրբութեան նորա*։ ³⁰Եւ երկիցէ՛ յերեսաց նորա ամենայն երկիր. յաջողեցի երկրի՝ և մի՛ սասանեցի։ ³¹Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծացէ՛ երկիր. և ասացեն ՚ի հեթանոսս. Տէր թագաւորեաց։ ³²Յնչեցէ՛ ծով լիութեամբն իւրով. փայտք անդաստանի և ամենայն որ է ՚ի նմա։ ³³Յայնժամ

* Ոմանք. Եւ զփրկութեանցն Աստուծոյ։

* Ոմանք. Եւ պատառ մի կասկարայից։

* Ոմանք. Ձէլ. զՍամիրամովթ... տաւղաց և քնարաց։

* Ոմանք. Յիշեաց յաւիտենից... զբան իւր զոր պա՛։

* Ոմանք. Ասէ. Ձեզ տաց։

* Ոմանք. Տուք Տեառն փառս և զօրութիւն։

* Այլք. Եւ երկիր պագէք Տեառն ՚ի։

ուրախ եղիցին ամենայն ծառք անտառի, զի եկն դատել զերկիր*։ ³⁴Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ ³⁵Եւ ասացէք. Կեցո՛ւ զմեզ Աստուած փրկութեան մերոյ, և ապրեցո՛ւ զմեզ ՚ի թշնամեաց մերոց. զի օրհնեսցուք զանուն քո սուրբ, և պարծեսցուք յօրհնութիւնս քո։ ³⁶Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտենից մինչև յաւիտեանս. և ասացէ՛ ամենայն ժողովուրն. Ամէն։ Եւ օրհնեցին զՏէր։ ³⁷Եւ եթո՛ղ անդ առաջի տապանակի կտակարանացն Տեառն՝ զԱսափ և զեղբարս նորա, պաշտե՛լ առաջի տապանակին յամենայն ժամ օրըստօրէ՛։ ³⁸Եւ Աբդոդոմ և եղբարք նորա վաթսուն և ութ. և Աբդոդոմ՝ էր որդի Իդիթունայ. և Ովսեէ՛ ՚ի դռնապանսն։

Լ ³⁹Եւ զՍադովկ քահանայ և զեղբարս նորա զքահանայսն առաջի խորանին Տեառն ՚ի Բամա՝ որ ՚ի Գաբաւոն, ⁴⁰նատուցանել ողջակէզս Տեառն ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն հանապազ առաւօտուց և երեկոյին. և ըստ ամենայնի զոր ինչ գրեալ է յօրէնսն Տեառն՝ զոր պատուիրեաց որդւոցն Իսրայէլի ՚ի ձեռն Մովսիսի ծառային Աստուծոյ*։ ⁴¹Եւ ընդ նմա Եման, և Իդիթովմ, և այլք ընտրեալք յանուանէ, օրհնել զՏէր՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ⁴²և ընդ նոսա փողք և ծնծղայք, նուագել քնարօք երգոցն Աստուծոյ. և որդիքն Իդիթունայ ՚ի դրանն։ ⁴³Եւ գնաց ամենայն ժողովուրդն իւրաքանչիւրօք ՚ի տուն իւր. և դարձաւ Դաւիթ օրհնել զիւր տունն։

17

Գլուխ ԺԷ

ԼԱ ¹Եւ եղև իբրև բնակեաց Դաւիթ ՚ի տան իւրուն, ասէ Դաւիթ ցնաթան մարգարէ. Ահա ես բնակեմ ՚ի տան մա՛յր փայտից՝ և տապանակ ուխտին Տեառն է ընդ վրանօ՞ք*։ ²Եւ ասէ Նաթան ցԴաւիթ. Չամենայն որ ինչ է յանձին քում արա՛ւ. վասն զի Աստուած ընդ քե՛զ է։ ³Եւ ՚ի գիշերին յայնմիկ եղև բա՛ն Տեառն առ Նաթան՝ և ասէ. ⁴Երբ և ասա՛ ցԴաւիթ ծառայ իմ. Ա՛յսպէս ասէ Տէր. Ո՛չ շինեսցես դու ինձ տուն բնակելոյ ՚ի նմա. ⁵վասն զի ո՛չ երբէք բնակեցի ՚ի տան՝ յօրէ յորմէ հանի զԻսրայէլ յեգիպտոսէ մինչև յօրս յայս. էի խորանաւ ՚ի վայրաբնակս*, ⁶ամենայն ուրեք՝ ընդ որ անցին որդիքն Իսրայէլի. եթէ խօսելով խօսեցա՞յ ընդ միում ՚ի ցեղիցն Իսրայէլի, և ՚ի դատաւորաց նորա, որոց պատուիրեցի հովուել ժողովրդեան իմոյ՝ և ասացի. Ընդէ՞ր ո՛չ շինեցէք ինձ տուն ՚ի մայրփայտից։ ⁷Եւ արդ՝ ա՛յսպէս ասացես ցծառայ իմ Դաւիթ. Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Առի՛ զքեզ ՚ի վերջէ վրանաց հովուացն, առ ՚ի լինել առաջնորդ ժողովրդեան իմուն Իսրայէլի*։ ⁸և էի՛ ընդ քեզ ամենայն ուրեք ուր և երթայիր. և սատակեցի զամենայն թշնամիս քո յերեսաց քոց. և արարի քեզ տուն ըստ անուան մեծամեծաց որք ՚ի վերայ երկրի*։ ⁹Եւ արդ եդի՛ց զտեղի ժողովրդեան

* Ոմանք. Ուրախ լիցին ամենայն։

* Ոմանք. Եւ եթող զնա անդ առա՛ւ։

* Ոմանք. Առաւօտուց և երեկոյին, և ըստ ամենայնի որ ինչ։ Ոսկան. Ի ձեռն Մօսէսի ծառային՝ Աստուած։

* Ոմանք. Եւ տապանակն Տեառն է ընդ վրա՛ւ։

* Ոմանք. Եւ խորանաւ ՚ի վերայ։

* Այլք. Ի վերջէ վանաց հովուացն։ *Յօրինակին պակասէր.* ժողովրդեան իմուն Իսրայէլի։

* Ոմանք. Եւ արարի քեզ անուն ըստ։

իմոյ Իսրայէլի. և տնկեսցես զդա, և բնակեսցէ՛ առանձինն, և ո՛չ ևս հոգասցէ ինչ, և ո՛չ ևս յաւելցէ անիրաւութիւն խոնարհեցուցանել զդա որպէս իսկզբանն, ¹⁰և յաւուրցն յորոց կարգեցի դատաւորս ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և նկո՛ւն արարի զամենայն թշնամիս քո: Եւ արդ՝ աճեցուցի՛ց զքեզ, և շինեցից զքեզ է՛ս Տէր: ¹¹Եւ եղիցի յորժամ լցցին աւուրք քո՝ քունեսցես ընդ հարս քո: Եւ յարուցից զգաւակ քո յե՛տ քո, որ եղիցի յորովայնէ քումնէ. և պատրաստեցից զթագաւորութիւն նորա՝. ¹²նա՛ շինեսցէ ինձ տուն. և ուղղեցից զաթոռ նորա յաւիտեան: ¹³Ե՛ս եղէց նմա ՚ի հայր, և նա եղիցի ինձ յորդի. և զողորմութիւնս ո՛չ արարից ՚ի բաց ՚ի նմանէ. որպէս մերժեցի յայնցանէ որք յառաջ քան զքեզ էին: ¹⁴Եւ հաւատարիմ լիցի նա ՚ի տան իմում. և թագաւորութիւն նորա մինչև յաւիտեանս. և աթոռ նորա եղիցի ուղղեալ մինչև յաւիտեան: ¹⁵Ըստ ամենայն բանիցս այսոցիկ, և ըստ ամենայն տեսլեանս այսմ, նո՛յնպէս խօսեցաւ Նաթան ընդ Դաւթայ՝. ¹⁶Եւ եկն արքայ Դաւիթ նստաւ առաջի Տեառն՝ և ասէ. Ո՞վ եմ ես Տէր Աստուած, և կամ զի՞նչ տուն իմ. զի սիրեցեր զիս մինչև յաւիտեան. ¹⁷և ո՛չ փոքրկացան այսոքիկ առաջի քո Աստուած. խօսեցար յաղագս տան ծառայի քո յերկարագոյն, և հայեցար դու յիս տեսլեամբ մարդոյ. բարձրացուցեր դու զիս Տէր Աստուած՝. ¹⁸Եւ զի՞նչ ևս յաւելուցու Դաւիթ փառաւորել զքեզ. դո՛ւ գիտես զծառայս քո. ¹⁹ըստ սրտի քում արարեր զամենայն զմեծութիւնդ քո Տէր: ²⁰Ո՛չ որ է նման քեզ, և ո՛չ գոյ բաց ՚ի քէն, ըստ ամենայնի զորս լուաք ակնջօք մերովք՝. ²¹և ո՛չ որ է իբրև զժողովուրդ քո զԻսրայէլ՝ ազգ ՚ի վերայ երկրի որում առաջնորդեաց նմա Աստուած փրկել՝ իւր ժողովուրդ, և դնել զանուն իւր մեծ և երևելի, հանել յերեսաց ժողովրդեան քոյ զոր փրկեցեր յեգիպտոսէ՝ զազգսն: ²²Եւ եղիր զժողովուրդ քո զԻսրայէլ ՚ի ժողովուրդ քեզ յաւիտեան. և դու եղեր նոցա յԱստուած՝. ²³Եւ արդ Տէր՝ բանն զոր խօսեցար ընդ ծառայի քում և յաղագս տան նորա, հաւատարիմ լիցի մինչև յաւիտեան. ²⁴զոր ասացեր Տէր՝ Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի, թէ տուն Դաւթի ծառայի քոյ եղիցի ուղղեալ առաջի քո. ²⁵վասն զի դու Տէր բացեր զունկն ծառայի քոյ շինել քեզ տուն. յաղագս այսորիկ եգիտ ծառայ քո կա՛լ յաղօթս առաջի քո: ²⁶Եւ արդ Տէր, դո՛ւ ես Աստուած. և խօսեցար վասն ծառայի քոյ զբարիսդ զայդոսիկ. ²⁷սկսի՛ր այսուհետև օրհնել զտուն ծառայի քոյ, լինել՝ առաջի քո յաւիտեան. վասն զի դո՛ւ Տէր օրհնեցեր՝ և օրհնեա՛ յաւիտեան:

18

Գլուխ ԺԸ

ԼԲ ¹Եւ եղև յետ այսորիկ՝ եհա՛ր Դաւիթ զայլազգիսն, և վանեաց զնոսա. և ա՛ն զԳէթ՝ և զգեօղս նորա ՚ի ձեռաց այլազգեացն: ²Եւ եհար զՄովաբ. և էին Մովաբացիքն ծառայք Դաւթի բերել ընծայս: ³Եւ եհա՛ր Դաւիթ զԱդրաազար արքայ Սուբայ ՚ի յեմաթ, յերթալ նորա հաստատել զձեռն իւր ՚ի վերայ գետոյն

* Ոմանք. Ննջեսցես ընդ հարս քո:

* Ոմանք. Տեսլեանս այսր, նոյնպէս... ընդ Դաւթի:

* Ոմանք. Յաղագս ծառայի քո յերկարագոյն:

* Ի լուս՝. Եւ ո՛չ որ գոյ բաց ՚ի քէն. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:

* Ոմանք. եղեր նոցա Աստուած:

Եփրատայ* .⁴և ա՛ռ Դաւիթ զնորա հազար կառս՝ և եւթն հազար ձիոց՝ և քսան հազար արանց հետևակաց . և քակեաց Դաւիթ զամենայն կառսն, և եթող ՚ի նոցանէ հարիւր կառս* :⁵Եւ եկն Ասորին ՚ի Դամասկոսէ օգնել Ադրաազարայ արքայի Սուբայ . և եհար Դաւիթ յԱսորեացն քսան և երկու հազարս արանց :⁶Եւ եդ Դաւիթ ամրոց յԱսորիս ՚ի Դամասկոսի, և էին Դաւթի ծառայք՝ բերել նմա ընծայս . և ապրեցոյց Տէր զԴաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր :⁷Եւ ա՛ռ Դաւիթ զմանեակսն ոսկեղէնս, որ էին ՚ի ծառայսն Ադրաազարայ, և եբեր զայն յերուսաղէմ* :⁸Եւ ՚ի Մատերեթայ, և յընտիր ընտիր քաղաքացն Ադրաազարու՝ ա՛ռ Դաւիթ պղինձ բազում յոյժ . և ՚ի նոցանէ արար Սողոմոն զծովն պղնձի, և զսիւնսն, և զկահսն պղնձի* :

ԼԳ⁹Եւ լուա՛ւ Թովու արքայ Եմաթայ՝ եթէ եհար Դաւիթ զամենայն զօրութիւնսն Ադրաազարայ արքայի Սուբայ* .¹⁰և առաքեաց զԴուրամ զորդի իւր առ արքայ Դաւիթ հարցանել զնմանէ ՚ի խաղաղութիւն, և օրհնել զնա . վասն զի պատերազմ տայր ընդ նմա Ադրաազար, և եհար զնա . քանզի այր թշնամի՛ էր Թովու՝ Ադրաազարայ . և ամենայն անօքք ոսկեղէնք և արծաթեղէնք ՚ի ձեռս նորա :¹¹Եւ զայնոսիկ սրբեաց Դաւիթ Տեառն ընդ արծաթոյն և ոսկւոյն զոր ա՛ռ յամենայն ազգացն . յեդոնայ, և ՚ի Մովաբայ, և յորդոցն Ամոնայ, և յայլազգեացն, և յԱմաղեկայ :¹²Եւ Աբեսսա որդի Սարուհեայ եհար զԵդովմ ՚ի հովտին Ելովնայ՝ ութուտասն հազար* .¹³և ե՛դ ՚ի հովտին ամրոց . և էին Եդոնայեցիք ծառայք Դաւթի . և փրկեաց Տէր զԴաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր :¹⁴Եւ թագաւորեաց Դաւիթ ՚ի վերայ ամենայն Իսրայէլի . և էր՝ առնել իրաւունս և արդարութիւն ամենայն ժողովրդեան իւրուն :¹⁵Եւ Յովաբ որդի Սարուհեայ ՚ի վերայ զօրացն . և Յովսափատ որդի Աքիղ՝ուդայ՝ յիշատակաց դպիր* :¹⁶Եւ Սաղովկ որդի Աբիտովբայ, և Աբիմեղէք որդի Աբիաթարայ՝ քահանայք . և Սուսա դպրապետ :¹⁷Եւ Բանեաս որդի Յովիդայայ՝ ՚ի վերայ քերեթեայն և ոփէլեթեայն . և որդիք Դաւթի առաջինք փոխանորդք արքայի :

19

Գլուխ ԺԹ

ԼԴ¹Եւ եղև յետ այսորիկ մեռա՛ւ Նաաս արքայ որդւոցն Ամոնայ . և թագաւորեաց Անան որդի նորա ընդ նորա :²Եւ ասէ Դաւիթ . Արասցո՛ւք ողորմութիւն ընդ Անանայ որդւոյ Նաասու, որպէս արար հայր նորա ընդ իս ողորմութիւն : Եւ առաքեաց հրեշտակս Դաւիթ՝ մխիթարել զնա վասն հօր նորա . և եկին ծառայքն Դաւթի յերկիր որդւոցն Ամոնայ մխիթարել զնա* :³Եւ ասեն իշխանքն Ամոնայ ցԱնան . Միթէ փառաւորե՞լ Դաւիթ զհայր քո առաջի քո առաքեաց քեզ զմխիթարիչսդ, ո՛չ ապաքէն զի քննեսցեն զքաղաքս, և դիտել

* Այլք . ՁԱդրազար արքայ Սուբայ յԵմաթ :

* Ոսկան . Եւ եօթն հազար ձիսն, և եօթն հազար արանց :

* Ի լուս՝ . Ի ծառայսն Ադրաազարու :

* Յօրինակին պակասէր . Պղինձ բազում յոյժ :

* Ոմանք . Ձամենայն զօրութիւնն Ադ՛ :

* Այլք . Ի հովտին Աղովնայ :

* Ոմանք . Որդի Շարուհեայ... որդի Աքիղուդայ յիշա՛ :

* Ոմանք . Մխիթարել զնա վասն հօրն իւրոյ :

գերկիրս եկին ծառայքն նորա առ քեզ: ⁴Եւ ա՛ն Անան զծառայսն Դաւթի, եգերծ զնոսա, և եհատ զդօշակսն նոցա զհասարակածն մինչև ՚ի վեր. և արծակեաց զնոսա: ⁵Եւ եկին պատմել Դաւթի վասն արանցն. առաքեաց ընդ առաջի նոցա. վասն զի էին անաչեցեալք յոյժ. և ասէ արքայ. Նստարո՛ւք յերեքով, մինչև անճեսցեն մօրուք ձեր, և ապա՛ եկեսջիք*:

⁶Եւ տեսին որդիքն Ամոնայ՝ թէ անաչեաց զօրն Դաւթայ, առաքեաց Անան և որդիքն Ամոնայ հազար տաղանտ արծաթոյ, և ՚ի վարձու կալան իւրեանց յԱսորեաց Միջագետաց, և յԱսորեաց Մաաքայ և Սուբայ՝ կա՛ռս և հեծեալս*:

⁷Եւ ՚ի վարձու կալան իւրեանց երեսուն և երկու հազարս կառաց, և զարքայն Սովաբայ և զգօր նորա. և եկին բանակեցան յանդիման Մեդաբայ. և որդիքն Ամոնայ ժողովեցան ՚ի քաղաքացն իւրեանց, և եկին պատերազմել*:

⁸Լուաւ Դաւիթ, և առաքեաց զՅովաբ և զգունդ զօրաւորացն: ⁹Եւ ելին որդիքն Ամոնայ՝ և ճակատեցան ՚ի պատերազմ առ դրան քաղաքին. և թագաւորքն եկեալք բանակեցան առանձինն ՚ի դաշտին: ¹⁰Եւ ետես Յովաբ՝ թէ եղեն դէն յանդիման պատերազմել ընդ նմա, առաջի երեսաց՝ և զկնի. ընտրեաց յամենայն երիտասարդացն Իսրայէլի, և կարգեաց ընդդէմ Ասորուցն. ¹¹և զմնացորդս զօրուն՝ ետ ՚ի ձեռս Աբեսսեայ եղբօր իւրոյ, և կարգեաց ընդդէմ որդուցն Ամոնայ: ¹²Եւ ասէ. Եթէ զօրացի քան զմեզ Ասորին, լիցի՛ն մեզ ՚ի փրկութիւն, և եթէ որդիքն Ամոնայ զօրացին քան զքեզ, ապրեցուցի՛ց զքեզ: ¹³Քա՛ջ լեր՝ և զօրացուք վասն ժողովրդեան մերուն, և վասն քաղաքաց Աստուծոյ մերոյ, և Տէր՝ որ ինչ բարի՛ իցէ յաչս նորա՝ արասցէ*:

¹⁴Եւ ճակատեցաւ Յովաբ և զօրն որ ընդ նմա ընդդէմ Ասորեացն ՚ի պատերազմին, և փախեան ՚ի նմանէ*:

¹⁵Եւ որդիքն Ամոնայ տեսին թէ փախեան Ասորիքն, փախեան և նոքա յերեսաց Յովաբայ և յերեսաց Աբեսսեայ եղբօր նորա, և մտին ՚ի քաղաքն: Եւ եկն Յովաբ յերուսաղէմ: ¹⁶Եւ ետես Ասորին եթէ յաղթեաց նմա Իսրայէլ, առաքեաց հրեշտակս և եհան զԱսորեստանեայն յայնմ կողմանէ գետոյն, և զՍովփաք զօրավար զօրացն Ադրաազարու առաջի նոցա*:

¹⁷և պատմեցին Դաւթի: Գումարեաց զամենայն Իսրայէլ, անց ընդ Յորդանան՝ և եկն ՚ի վերայ նոցա, ճակատեցաւ ընդդէմ նոցա, և կարգեցաւ Դաւիթ ընդդէմ Ասորույն. և պատերազմէր ընդ նմա: ¹⁸Եւ փախեաւ Ասորին յերեսաց Դաւթայ. և կոտորեաց Դաւիթ յԱսորեաց եւթն հազար կառաց, և քառասուն հազար հետևակաց. և զՍովփաք զօրավար զօրուցն սպան*:

¹⁹Եւ տեսին ծառայքն Ադրաազարու. եթէ անկան առաջի Իսրայէլի, եղին ո՛ւխտ ընդ Դաւթայ, և ծառայեցին նմա. և ո՛չ ևս կանեցաւ Ասորին օգնել որդուցն Ամոնայ:

20

Գլուխ Ի

¹Եւ եղև ՚ի միւսում տարւոջն յելանել թագաւորացն, ած Յովաբ զամենայն

* Ոսկան. Աճեսցին մօրուք ձեր:

* Օրհնակ մի. Եւ ՚ի վարձու կալան զնոսա յԱսոր՝:

* Օրհնակ մի. ժողովեցան ՚ի քաղաքն իւրեանց:

* Ոմանք. Վասն ժողովրդեան մերոյ:

* Ոմանք. Յովաբ և զօրն նորա ընդ նմա ընդդէմ:

* Ոմանք. Եւ զՍովփաս զօրավար զօրուցն Ադրաազարայ:

* Օրհնակ մի. Եւ կոտորեաց Դաւիթ յԱսորեստանեացն... և զՍովփակ զօ՛:

գունդս զօրացն, և ապականեաց զամենայն երկիր որդւոցն Ամոնայ. եկին և նստան շուրջ զՂազարաթաւ. և Դաւիթ նստէր յԵրուսաղէմ. և ա՛ռ Յովաբ զՂազարաթ, և կործանեաց զնա՝: ²Եւ ա՛ռ Դաւիթ զպսակն Մեղքոնայ թագաւորին նոցա՝ ՚ի գլխոյ նորա. և գտաւ կշիռ նորա տաղանտ ոսկւոյ, և ՚ի նմա ակն պատուական. և էր ՚ի գլուխն Դաւթայ. և աւար բազում յոյժ եբեր՝: ³Եւ զժողովուրդն որ էր ՚ի նմա՝ եհան. և սղոցեաց սղոցօք և ուրագօք երկաթօք. և ա՛յնպէս արար Դաւիթ ամենայն քաղաքաց որդւոցն Ամոնայ. և դարձաւ Դաւիթ՝ և ամենայն զօրն իւր յԵրուսաղէմ:

ԼԵ ⁴Եւ եղև յետ այնորիկ՝ եղև մի՛ւսանգամ պատերազմ ՚ի Գազեր ընդ այլազգիսն. յայնժամ եհար Սուբաբէ Ուսթացի զՍեպփիաս յորդոց սկայիցն՝ և վանեաց զնա՝: ⁵Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ այլազգիսն, և եհար Եղ՛եանան որդի Յայիրայ զՂ՛եմի զեղբայրն Գողիադու Գեթացւոյ. և փայտ նիզակի նորա իբրև զստորի ոստայնանկաց՝: ⁶Եւ եղև դարձեալ պատերազմ ՚ի Գեթ. և էր այր ոմն մեծ յոյժ, և մատուներ նորա վեց վեց, քսան և չորք. և նա էր յորդոց սկայիցն. ⁷և թշնամանէր զԻսրայէլ. և եհար զնա Յովնադաբ որդի Սամաայ, որդի եղբօր Դաւթայ: Նոքա եղեն Ղազարայ ՚ի Գեթ. ամենեքեան էին արք հսկայք. և անկան ՚ի ձեռս Դաւթայ, և ՚ի ձեռս ծառայից նորա՝:

21

Գլուխ ԻԱ

ԼԶ ¹Եւ եկաց Բանսարկու ՚ի մէջ Իսրայէլի. և դրդեցոյց զԴաւիթ թուել զԻսրայէլ՝: ²Եւ ասէ Դաւիթ ցՅովաբ՝ և ցիշխանս զօրուն. Երթա՛յք թուեցէք զԻսրայէլ ՚ի Բերսաբէէ մինչև ցԴան. և բերէք առ իս, և գիտացի՛ց զթիւ նոցա: ³Եւ ասէ Յովաբ. Յաւելցէ Տէր ՚ի ժողովուրդ իւր, որպէս են դոքա՝ հարիւրապատիկ. և աչք տեառն իմոյ տեսցեն. զի ամենեքեան ծառայք են տեառն իմոյ, և ընդէ՞ր խնդրէ տէր իմ զայդ, զի մի՛ լինիցի մեղք ՚ի ժողովրդեանդ Իսրայէլի՝: ⁴Եւ բանն արքայի զօրացաւ ՚ի վերայ Յովաբայ. և ել Յովաբ՝ և եկն յամենայն սահմանս Իսրայէլի, և եկն յԵրուսաղէմ: ⁵Եւ ետ Յովաբ զթիւ համարոյ ժողովրդեանն՝ Դաւթի: Եւ էր ամենայն Իսրայէլ հազարք հազարաց, և հարիւր հազար արանց որ ձգէին սուսեր. և Յուդաս չորեք հարիւր յիսուն հազար արանց սուսերաւորաց՝: ⁶Բայց զՂևի և զԲենիամին ո՛չ թուեաց ՚ի մէջ նոցա. վասն զի տաղտկացաւ բանն արքայի առ Յովաբայ՝: ⁷Եւ չար երևեցաւ առաջի Աստուծոյ վասն իրացն այնոցիկ. և եհար զԻսրայէլ: ⁸Եւ ասէ Դաւիթ ցԱստուած. Մեղայ՝ յոյժ, զի արարի զիրսդ զայդ. և արդ՝ ՚ի բաց բարձ զչարութիւն ծառայի քոյ, վասն զի ընդունայնացայ՝ յոյժ: ⁹Եւ խօսեցաւ Տէր ընդ Գադայ տեսանողի առ

* Ոմանք. ՚ի միում տարւոջն ելանել թա՛:

* Ոմանք. Մեղքոնայ... ՚ի գլխոյն նորա... ՚ի գլուխն Դաւթի:

* Ոմանք. Եւ յետ այնորիկ եղև մի՛... Սուբա քուսթացի. կամ՝ Ուսթացի:

* Ոմանք. Եւ եհար Աման որդի Յայի՛:

* Ոմանք. Եւ եհար զնա Յովնաթան որդի: Ոսկան. Սոքա եղեն ՚ի Ղազարայ:

* Յօրինակին. Եւ եկեաց Բանսարկու ՚ի մէջ: Ոմանք. Եւ դրդուեցոյց զԴաւիթ:

* Ոմանք. Եւ աչք տեառն իմոյ տեսանեն:

* Այլք. Որ ձգէին սուսերս:

* Ոսկան. Բանն արքայի առ Յովաբ:

Դաւիթ՝ և ասէ. ¹⁰Ե՛րբ՝ խօսեաց ընդ Դաւթայ և ասացես. Այսպէս ասէ Տէր. Երի՛ս ինչս ես ասեմ՝ ՚ի վերայ քո, ընտրեա՛ անձին քում՝ ՚ի նոցանէ՛ և արարի՛ց քեզ: ¹¹Եւ եկն Գադ առ Դաւիթ՝ և ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր. Ընտրեա՛ քեզ. ¹²Կամ երի՛ս ամս սովոյ՝ կամ զերիս ամիսս փախչել քեզ յերեսաց թշնամեաց քոց, և սուր թշնամեաց քոց եղիցի՝ ՚ի սատակել՝ զքեզ. կամ զերիս աւուրս սուր Տեառն՝ և մահ յերկրի քում. և հրեշտակ Տեառն սատակեսցէ յամենայն ժառանգութիւնս Իսրայէլի. և արդ՝ տես զի՞նչ բան տաց պատասխանի որ առաքեացն զիս: ¹³Եւ ասէ Դաւիթ ցԳադ. Նեղութիւն է ինձ յոյժ երեքեան այդոքիկ. բայց անկայց ՚ի ձեռս Տեառն. վասն զի բազում են գթութիւնք նորա յոյժ, և ՚ի ձեռս մարդկան մի՛ անկայց՞: ¹⁴Եւ ետ Տէր մահ յիսրայէլ. և անկան յիսրայէլէ եւթանասուն հազար արանց: ¹⁵Եւ առաքեաց Աստուած զհրեշտակն յերուսաղէմ սատակել զնա. և մինչդեռ սատակէր՝ ետես Տէր, և զղջացաւ ՚ի վերայ չարութեանն, և ասէ ցհրեշտակն որ սատակէր. Շա՛տ լիցի քեզ, թողացո՛ զձեռն քո: Եւ հրեշտակ Տեառն կայր ՚ի կալն Ուռնայ Յեբրուսացոյ՞: ¹⁶Ամբարձ Դաւիթ զաչս իւր, և ետես զհրեշտակն Տեառն, զի կայր ՚ի մէջ երկնի և երկրի, և սուրն իւր ձգեալ ՚ի ձեռին իւրում, և կարկառեալ ՚ի վերայ Երուսաղէմի. և անկան Դաւիթ՝ և ծերքն զգեցեալ քուրծս ՚ի վերայ երեսաց իւրեանց՞: ¹⁷Եւ ասէ Դաւիթ ցԱստուած. Ո՛չ ապաքէն ե՞ս ասացի թուել զժողովուրդդ. ե՛ս եմ որ մեղայն, առնելով արարի զչարիսդ. և ոչխարքդ այդոքիկ զի՞ արարին. Տէր Աստուած՝ եղիցի ձեռն քո յիս և ՚ի տուն հօր իմոյ, և մի՛ ՚ի ժողովուրդ քո կորուսանել Տէր:

ԼԷ ¹⁸Եւ ասէ հրեշտակն Տեառն ցԳադ. Ասա՛ ցԴաւիթ՝ զի ելցէ կանգնեսցէ սեղան Տեառն ՚ի կալն Ուռնայ Յեբրուսացոյ: ¹⁹Եւ ել Դաւիթ ըստ բանին Տեառն, զոր խօսեցաւ յանուն Տեառն: ²⁰Եւ դարձաւ Ուռնա իբրև ետես զարքայ և զչորեսին որդիսն նորա ընդ նմա ծածկեալս. և Ուռնա կասոյր ՚ի կալն ցորեան: ²¹Եւ եկն Դաւիթ առ Ուռնա. և ել Ուռնա ՚ի կալոյն, և երկիր եպագ Դաւթայ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր: ²²Եւ ասէ Դաւիթ ցՈւռնա. Տո՛ւր ինձ զտեղիդ քո զայդ զկալդ, և շինեցից այդ սեղան Տեառն, արծաթոյ որքան արժիցէ՝ տացես ինձ զդա. և դադարեսցեն հարուածքն ՚ի ժողովրդեմէն՞: ²³Եւ ասէ Ուռնա ցԴաւիթ. Ա՛ռ դու քեզ, և արասցէ տէր իմ արքայ զբարին առաջի իւր. ահա ետու զեզինսդ յողջակէզս. և զփայտ սայլիցդ՝ և զցորեանդ ՚ի զոհս. զամենայն ետու քեզ՞: ²⁴Եւ ասէ արքայ Դաւիթ ցՈւռնա. Ո՛չ այդպէս, այլ զնելով զնեցի՛ց արծաթոյ որքան արժիցէ. և ո՛չ առից՝ որ ինչ է քո, մատուցանել ողջակէզ ձրի՛ Տեառն՞: ²⁵Եւ ետ Դաւիթ Ուռնեայ վասն տեղոյն նորա՝ վեց հարիւր սիկդ արծաթոյ կշռով՞: ²⁶Եւ շինեաց Դաւիթ անդ սեղան Տեառն. և եհան ողջակէզս՝ և վասն փրկութեան. և գոչեաց առ Տէր. և լուաւ նմա հրով յերկնից ՚ի վերայ սեղանոյ ողջակիզին, և ծախեաց զողջակէզսն՞: ²⁷Եւ ասէ Տէր ցհրեշտակն. Դարձո՛ զսուր քո ՚ի պատեանս, ²⁸ի ժամանակին յայնմ ՚ի տեսանել զնա Դաւթի. վասն զի լուաւ

* *Յօրինակին պակասէր.* ՚ի ձեռս Տեառն. *վասն զի* բազում են:

* *Ուռնաք.* Թուլացո՛ զձեռն քո:

* *Ուռնաք.* ՚ի մէջ երկնի և ՚ի մէջ երկրի: *Յօրինակին պակասէր.* Եւ սուրն *իւր* ձգեալ ՚ի ձե՛:

* *Ուռնաք.* Որքան արժան իցէ, տացես:

* *Ուռնաք.* Ահա ետու քեզ զեզինսդ... և զցորեանս ՚ի զոհ:

* *Ուռնաք.* Որքան արժան իցէ:

* *Ոսկան.* Եւ ետ... ցՈւռնայ վասն տե՛: *Ուռնաք.* Սիկդ ոսկոյ կշռով:

* *Ուռնաք.* Եւ կոչեաց առ Տէր:

նմա Տէր 'ի կալն Ուռնայ Յեբուսացոյ. և եղեն զոհս*: ²⁹Եւ խորանն Տեառն զոր արար Մովսէս յանապատին, և սեղան ողջակիզացն 'ի ժամանակին յայնմիկ էին 'ի Բամա Գաբաւոնի*. ³⁰և ո՛չ կարէր Դաւիթ երթալ առաջի նորա՝ խնդրել յԱստուծոյ. վասն զի տազնապեցաւ յերեսաց սրոյ հրեշտակին Տեառն:

22

Գլուխ ԻԲ

¹Եւ ասէ Դաւիթ. Այս է տուն Տեառն Աստուծոյ. և այս սեղան ողջակիզաց Իսրայէլի:

ԼԸ ²Եւ ասաց Դաւիթ ժողովել զամենայն եկան յերկրին Իսրայէլի. և կացոյց քարահատս հատանել զքարինս կոփածոյս՝ և շինել զտունն Աստուծոյ*: ³Եւ երկաթ բազում 'ի բևեռս դրացն և դրանն, և զշրջանակսն արար Դաւիթ, և պղինձ բազում յոյժ որոյ ո՛չ գոյ կշիռ*. ⁴և մայր փայտս որոյ ո՛չ գոյր թիւ. վասն զի բերէին Սիդոնացիքն և Տիրացիք մայր փայտս յաճախութեամբ Դաւթի: ⁵Եւ ասէ Դաւիթ. Սողոմոն որդի իմ մանուկ փոքր է. և տունս զոր շինէ Տեառն, մեծ և 'ի վեր անուամբ՝ և 'ի փառս ամենայն երկրի. պատրաստեցի՛ց նմա նիւթս: Եւ պատրաստեաց Դաւիթ յաճախութեամբ յառաջ քան զվախճան իւր*: ⁶Եւ կոչեաց զՍողոմոն զորդի իւր, և պատուիրեաց նմա շինել զտունն անուան Տեառն Աստուծոյ Իսրայէլի: ⁷Եւ ասէ Դաւիթ զՍողոմոն. Որդեակ՝ իմ եղև 'ի մտի շինել տուն անուան Տեառն Աստուծոյ*. ⁸և բան Տեառն եղև առ իս՝ և ասէ. Արիւն բազում հեղեր, և պատերազմունս մեծամեծս արարեր. ո՛չ շինեսցես դու տուն անուան իմոյ, վասն զի արիւն բազում հեղեր 'ի վերայ երկրի առաջի իմ: ⁹Ահա ծնցի քեզ որդի, և նա եղիցի այր հանգստեան. և հանգուցից զնա յամենայն թշնամեաց շուրջանակի. քանզի Սողոմոն վն անուն է նորա. և զխաղաղութիւն և զհանդարտութիւն տա՛ց 'ի վերայ Իսրայէլի յաւուրս նորա*: ¹⁰Նա՛ շինեսցէ տուն անուան իմոյ. նա՛ եղիցի ինձ յորդի, և ես եղէց նմա 'ի հայր, և ուղղեցից զաթոռ թագաւորութեան նորա յերուսաղէմ մինչև յաւիտեան*: ¹¹Եւ արդ՝ որդեակ իմ, եղիցի ընդ քեզ Տէր, և յաջողեսցէ. և շինեսցես տուն Տեառն Աստուծոյ քոյ, որպէս խօսեցաւ վասն քո. ¹²և տացէ քեզ Տէր հանճար և իմաստութիւն. և զօրացուցէ զքեզ 'ի վերայ Իսրայէլի. և պահեսցես առնել զօրէնս Տեառն Աստուծոյ քոյ*. ¹³և յայնժամ յաջողեսցի՛ս. եթէ պահեսցես առնել զհրամանս և զիրաւունս զոր պատուիրեաց Տէր Մովսիսի 'ի վերայ Իսրայէլի. քա՛ջ լեր՝ և զօրացի՛ր. մի՛ երկիցես՝ և մի՛ զարհուրիցիս: ¹⁴Եւ ահա ես ըստ աղքատութեան իմուն պատրաստեցի 'ի տուն Տեառն ոսկի տաղանդս հարիւր հազար, և արծաթ տաղանդս հազար հազար, և պղինձ և երկաթ՝ որոյ ո՛չ գոյ թիւ. վասն զի

* Ոմանք. 'ի ժամանակին յայնմիկ: Ոսկան. Եւ եղեն անդ զոհս:

* Ոմանք. 'ի ժամանակին յայնմ: Յօրինակին. 'ի Գամա Գաբաւոնի:

* Այլք. Յերկրէն Իսրայէլի... հատանել քարինս կո՛ւ:

* Ոմանք. Ոչ գոյր կշիռ:

* Ոմանք. Մեծ է 'ի վեր անուամբ:

* Ոսկան. Եղև 'ի մտի իմուն շինել:

* Ոմանք. Եւ խաղաղութիւն և հանդարտութիւն տացի 'ի վերայ:

* Այլք. Թագաւորութեան նորա յԻսրայէլի մինչև:

* Ոմանք. Քեզ իմաստութիւն և հանճար Տէր:

բագո՛ւմ է յոյժ, և փայտ և քարինս՝ պատրաստեցի. ¹⁵և դու յաւելցես յայնդ բազմութեամբ առնել գործ արուեստից, շինօղս քարանց, և հիւսունս փայտից, և ամենայն իմաստուն՝ յամենայն գործս՝ ¹⁶ոսկւոյն՝ և արծաթոյ՝ և պղնձոյ՝ և երկաթոյ, որոյ ո՛չ գոյ համար. արդ՝ արի՛ և արա՛, վասն զի Տէր ընդ քեզ է՛: ¹⁷Եւ պատուիրեաց Դաւիթ ամենայն իշխանացն Իսրայէլի՝ օգնել Սողոմոնի որդւոյ իւրում. ¹⁸և ասէ. Ո՞չ ապաքէն Տէր ընդ ձե՛զ է. և հանգոյց զձեզ շուրջանակի. վասն զի ետ ՚ի ձեռս ձեր զբնակիչսդ երկրիդ. և հնազանդեցաւ երկիրդ առաջի Տեառն, և առաջի ժողովրդեան նորա: ¹⁹Եւ արդ՝ տո՛ւք զսիրտս ձեր և զանձինս ձեր՝ խնդրել զՏէր Աստուած մեր. արի՛ք և շինեցէ՛ք զսրբութիւնս Տեառն Աստուծոյ մերոյ, տանել ՚ի ներքս զտապանակ ուխտին Տեառն՝ և զսպաս սրբութեանցն Աստուծոյ ՚ի տունն զոր շինէք անուան Տեառն՝:

23

Գլուխ ԻԳ

¹Եւ Դաւիթ էր ծե՛ր լի՛ աւուրքք. և թագաւորեաց Սողոմոն որդի նորա փոխանակ նորա ՚ի վերայ Իսրայէլի*. ²և ժողովեաց զամենայն իշխանսն Իսրայէլի, և զքահանայս և զՂևտացիս:

ԼԹ ³Եւ մտին ՚ի թիւն Ղևտացիքն յերեսնամենից և ՚ի վեր. և եղև թիւն նոցա ըստ գլխոց իւրեանց՝ արք ութ հազար և երեսուն*: ⁴Եւ ՚ի նոցանէ գործավարք ՚ի վերայ գործոյ տանն. և քսան և չորք հազարք դպիրք, և դատաւորք վեց հազար*. ⁵և չորք հազարք դռնապանք. և չորք հազարք օրհնիչք Տեառն. նուազարանօքն որովք արարին օրհնել զՏէր: ⁶Եւ որոշեաց զնոսա Դաւիթ յօրսըստօրէ պաշտամունս գորդիսն Ղևեայ. զԳեթսոն, զԿահաթ, և զՄերարի*: ⁷Եւ Գեթսոն, և Եղեադան, և Սեմէի. ⁸որդի Եղիադանայ իշխան Իսրայէլի. և Եթոմ, և Յովէլ, ⁹և որդիք Սեմեայ. Սաղովմիթ, և Ազիէլ, և Արան. երեք սոքա իշխանք տոհմիցն Եղիադանայ: ¹⁰Եւ որդիքն Սեմեայ՝ Յեթ, և Ջիզա, և Յովաս, և Բերիա. սոքա և որդիք Սեմեայ չորք*: ¹¹Եւ էր Յեթի իշխան, և Ջիզա երկրորդ. և Յովաս, և Բերիա՝ ո՛չ յաճախեցին որդիս. և եղեն ՚ի տուն տոհմին ՚ի միում համարի*: ¹²Որդիք Կահաթու՝ Ամրամ, և Սահառ. Քեբրոն, և Ոզիէլ՝ չորք: ¹³Որդիք Ամրամայ՝ Ահարոն, և Մովսէս. և որոշեցաւ Ահարոն սուրբ լինել ՚ի սրբութիւնս սրբութեանցն՝ ի՛նքն և որդիք իւր մինչև ցյաւիտեան, ծխել խունկս առաջի Տեառն, պաշտել՝ և աղօթս առնել յանուն նորա մինչև յաւիտեան*: ¹⁴Եւ Մովսէս ա՛յրն Աստուծոյ, և որդիք նորա կոչեցան ՚ի ցեղն Ղևեայ: ¹⁵Որդիք Մովսիսի՝ Գերսամ, և Եղիազար: ¹⁶Որդիք Գերսամայ՝ Սուբայէլ իշխան. ¹⁷և էր որդի Եղիազարու Ղաբիա իշխան, և ո՛չ գոյր այլ որդի Եղիազարու. և որդիքն

* Այլք. Յաւելցես յայդ:

* Այլք. Եւ պղնձոյ և եր՛:

* Ոսկան. խնդրել զՏէր Աստուած ձեր:

* Այլք. Ծեր և լի աւուրքք:

* Յօրհնակիւն. ըստ գլխոց իւրեանց՝ Փ և Լ:

* Ոմանք. ՚ի վերայ գործոց տանն:

* Այլք. Յօր ըստ օրէ պաշտա՛:

* Այլք. Սոքա որդիք Սեմեայ:

* Այլք. Յեթ իշխան:

* Այլք. Մինչև յաւիտեան:

Չռաքիայ աճեցին՝ ի բարձրութիւն: ¹⁸Որդիք Սահառայ՝ Սաւուդ, և Մովէ իշխանք:
¹⁹Որդիք Քեբրոնի՝ Յերիա իշխան, Ամարիա երկրորդ, և Ոզիէլ երրորդ, և
 Յեկեմիաս չորրորդ*:
²⁰Որդիք Ոզիէլի՝ Միքիա իշխան, և Յեսիաս երկրորդ*:
²¹Որդիք Մերարեայ՝ Մոողի, և Մուսի. որդիք Մոողեայ՝ Եղիազար, և Կիս: ²²Եւ
 մեռաւ Եղիազար, և ո՛չ գոյին նորա որդիք, այլ դստերք միայն. և առին զնոսա
 որդիքն Կիսեայ եղբարքն իւրեանց: ²³Որդիք Մուսեայ՝ Մովդի, և Եդէր, և
 Արիմովթ, երեք: ²⁴Սոքա որդիք Ղևեայ ըստ տանց տոհմից իւրեանց. իշխանք
 ցեղիցն իւրեանց, ըստ համարս իւրեանց, և ըստ թւոյ անուանցն, ըստ գլխոցն
 իւրեանց, առնէին զգործ պաշտաման ՚ի տան Տեառն ՚ի քսանամենից և ՚ի վեր*:
²⁵Վասն զի ասաց Դաւիթ. Չանգոյց Տէր Աստուած զժողովուրդ իւր զԻսրայէլ. և
 բնակեաց յԻսրայէլ մինչև յաւիտեան: ²⁶Եւ Ղևտացիքն ո՛չ բառնային
 ամենեքեան զխորանն՝ և զամենայն սպաս նորա ՚ի պաշտաման նորին. ²⁷Վասն
 զի ՚ի բանսն Դաւթայ ՚ի վերջինս էր թիւ որդւոցն Ղևեայ ՚ի քսանամենից և ՚ի վեր:
²⁸Քանզի կացոյց զնոսա ՚ի ձեռս որդւոցն Ահարոնի պաշտել ՚ի տանն Տեառն, ՚ի
 սրահսն՝ և ՚ի սենեակսն, և ՚ի սրբութիւնսն, և ՚ի վերայ ամենայն սրբութեանցն, և
 ՚ի պաշտամունսն տանն Աստուծոյ*. ²⁹հացին առաջադրութեան, և ՚ի վերայ
 նաշիւոյ պատարագացն, և քաքարացն, բաղարջացն, և տապակին, և
 զանգելոցն իւղով, և յամենայն չափսն*, ³⁰կալ առաւօտուց, և օրինել և
 խոստովան լինել Տեառն: Նոյնպէս և ընդ երեկս. ³¹և ՚ի վերայ ամենայն
 մատուցելոց ողջակիզաց Տեառն, ՚ի շաբաթսն, և յամսամուտս, և ՚ի տօնս, ըստ
 թւոյն, ըստ իրաւանցն. ՚ի վերայ նոցին յամենայն ժամ Տեառն: ³²Եւ պահեցին
 զպահպանութիւնս խորանին վկայութեան, և զպահպանութիւնս որդւոցն
 Ահարոնի եղբարքն իւրեանց պաշտել ՚ի տանն Տեառն*:

24

Գլուխ ԻԴ

¹Եւ զորդիսն Ահարոնի զատոյց:

Խ Որդիք Ահարոնի՝ Նաբադ, և Աբիուդ. և Եղիազար, և Իթամար: ²Եւ մեռան
 Նաբադ և Աբիուդ առաջի հօրն իւրեանց. և որդիք ո՛չ գոյին նոցա. և
 քահանայացան Եղիազար և Իթամար՝ որդիքն Ահարոնի: ³Եւ զատոյց զնոսա
 Դաւիթ. զՍադովկ յորդւոցն Եղիազարու, և զԱքիմեդէք յորդւոցն Իթամարայ,
 ըստ համարոյն իւրեանց, և ըստ պաշտաման իւրեանց. և ըստ տանց տոհմիցն
 նոցա: ⁴Եւ զտան որդիք Եղիազարու յոլովագոյնք յիշխանս զօրաւորացն՝ քան
 զորդիսն Իթամարայ. և որոշեաց զնոսա. և զորդիսն Եղիազարու կացոյց
 իշխանս տանց տոհմիցն, արս վեշտասան. և զորդիսն Իթամարայ ըստ տանց
 տոհմիցն, արս ութ*: ⁵Եւ զատոյց զնոսա ըստ վիճակին նոցա. վասն զի էին
 իշխանք սրբութեանցն, և առաջնորդք ՚ի տանն Տեառն. և յորդւոցն Եղիազարու,

* Ոմանք. Եւ Յեկիմաս չորրորդ:

* Ոմանք. Միքա իշխան:

* Ոմանք. Ըստ համարոյ իւրեանց... պաշտաման Տեառն:

* Այլք. ՚ի ձեռն որդւոցն Ահարոն:

* Ոմանք. Չացին զառաջադրութեան. և ՚ի վերայ նաշիւոյ պատարագեացն:

* Այլք. Եւ պահէին զպահպանութիւնս:

* Ոմանք. Իշխանս ՚ի տանց տոհմիցն:

և յորդուցն Իթամարայ*։ ⁶Եւ գրեաց զնոսա Սամէաս որդի Նաթանայելի դպիր Ղևտացուցն՝ յանդիման կալ՝ արքայի՝ և իշխանացն. և Սաղովկայ քահանայի, և Աքիմեղ՝ իբայ որդւոյ Աբիաթարայ։ Եւ իշխանք տոհմից քահանայիցն Ղևտացուցն՝ ՚ի տանէ ազգին իւրեանց, մի մի առ որդիսն Եղիազարու, և մի մի առ որդիսն Իթամարայ*։ ⁷Եւ ել վիճակն առաջին՝ Յարիբայ. և երկրորդն՝ Յադինայ. ⁸և երրորդն՝ Քարեմայ. չորրորդն՝ Սեուրինայ. ⁹հինգերորդն՝ Մեղ՛քեայ. վեցերորդն՝ Մերեայ. ¹⁰եւ յութերորդն՝ Ակկուսայ. ութերորդն՝ Աբիայ. ¹¹իմներորդն՝ Յետուայ. տասներորդն՝ Սեքենիայ*. ¹²մետասաներորդն՝ Եղիասիբայ. երկուտասաներորդն՝ Սաղակիմայ. ¹³երեքտասաներորդն՝ Ոփփիայ. չորեքտասաներորդն՝ Իզբայելի*. ¹⁴հնգետասաներորդն՝ Բեղ՛գայ. վեշտասաներորդն՝ Եմմերայ. ¹⁵եւ յութուտասաներորդն՝ Եզիրայ. ութուտասաներորդն՝ Ափեսայ. ¹⁶իմնուտասաներորդն՝ Ոփեթիայ. քսաներորդն՝ Եզեկիելի. ¹⁷քսաներորդ առաջներորդն՝ Յաքինայ. քսաներորդ երկրորդն՝ Գամուելի. ¹⁸քսաներորդ երրորդն՝ Դադայիայ. քսաներորդ չորրորդն՝ Մոզիայ. ¹⁹Այս է համար նոցա ըստ պաշտամանն իւրեանց մտանել ՚ի տունն Տեառն. ըստ իրաւանց իւրեանց, ՚ի ձեռն Ահարոնի հօրն իւրեանց. որպէս պատուիրեաց Տէր Աստուած Իսրայելի։ ²⁰Եւ յորդուցն Ղևեայ մնացելոց. յորդուցն Ամրամայ՝ Սուբայել, Յուդայիա, Աբադիա*. ²¹յորդուցն Աբիայ՝ իշխան Յեսիաս. ²²և յորդուցն Սարայիսայ՝ Աղամովթ. և յորդուցն Սաղովկայ՝ Յանաթ*. ²³և յորդուցն Քեթրոնի՝ Յեդիու առաջին. Ամասիաս երկրորդ. Յեզիէլ երրորդ. Յեկիմաս չորրորդ*։ ²⁴Որդիքն Ոզիելի՝ Միքիա առաջին. և Յուսա երկրորդ. և որդի Միքայի՝ Սամեր. ²⁵և եղբայր Միքայ՝ Յեսիէ. որդիք Յեսիայ՝ Չաքարիաս։ ²⁶Որդիք Մերարեայ՝ Մոողի, և Մուսի։ Ոզիա որդի նորա, Բոնիա ²⁷որդի նորա. և Չակքուր, և Ոբդիա. ²⁸Մոողի, Եղիազար, և Կիս որդի նորա. ²⁹և որդի Կիսեայ՝ Իսմայել. ³⁰և որդիք Մուսեայ՝ Մոողի, և Յեդեր, և Յերիմովթ։ Սոքա էին որդիք Ղևտացոյց ըստ տանց տոհմիցն իւրեանց. ³¹առին և նոքա վիճակս, որպէս և եղբարքն իւրեանց որդիքն Ահարոնի, առաջի թագաւորին։ Եւ Սաղովկ, և Աքիմեղ՝ էք՝ յիշխանաց տոհմից քահանայիցն, և Ղևտացուցն ցեղքն՝ որք կացին իբրև գեղբարսն իւրեանց զկրցերագոյնսն*։

25

Գլուխ ԻԵ

¹Ձորս կացոյց Դաւիթ արքայ՝ և իշխանք զօրուն ՚ի գործն, ընդ որդիսն Ասափայ, և Եմանայ, և Եդիթումայ. որք երգէին տաւոթ և քնարօք և ծնծղայիւք։ Եւ եղև թիւ նոցա որք գործէին զգործս իւրեանց։ ²Որդիք Ասափայ՝ Չակքուր և

* Ոմանք. Ըստ վիճակի նոցին։

* Յօրինակին. Սամէաս որդի Նա՛։ Ոմանք. Դպիր ՚ի Ղևտացուոյն... և իշխանք տոհմիցն և Ղևտաց՛։

* Յօրինակին՝ ՚ի տասներորդէն սկսեալ մինչև ցվերջն թուագրով դնին այսպէս. Ժ-երրորդն. ԱԺ-երրորդն. ԲԺ-երրորդն, և այլն։

* Այլք. Երեքտասաներորդն Ոփփիայ։

* Ոմանք. Սուբայել. Յադայիայ։

* Ոմանք. Սարիսա. Աղովմովթ։

* Ոմանք. Եւ յորդուցն Քեթրոնի։

* Ոմանք. Եւ ՚ի Ղևտացուցն ցեղք։ Ոմանք. Չկրտսերագոյնսն։

Յովսէփ, և Նաթանիաս, և Յեսիէլ. որդիք Ասափայ մօտ առ թագաւորն: ³Եւ Իդիթունայ որդիքն՝ Գողողիաս, Սուրի, և Յէիմ, և Սեմէի, և Ասաբիաս, և Մատթանիաս, վեց՝ հանդերձ հարբն իւրեանց Իդիթունաւ երգէին քնարօքն զգոհութիւնս և զօրհնութիւնս Տեառն: ⁴Եւ որդիք Եմանայ՝ Բոկբիաս, և Մատթանիաս, և Ոզիէլ, և Սորայէլ, և Յերիմովթ, և Անանիաս, և Անան, և Եղեթան, և Գեթողաթի, և Յռեմովթի, և Եգեր, և Սեբանատան, և Մեղամովթ, և Յովթիրի, և Մազիովթ*։ ⁵Ամենեքեան սոքա որդիք Եմանայ, որք նուագէին առաջի արքայի բանիւքն Աստուծոյ՝ բարձրացուցանել եղջերեալն: Եւ ետ Աստուած որդիս Եմենայ հնգետասան, և դստերս երիս: ⁶Ամենեքեան նոքա հանդերձ հարբն իւրեանց երգէին օրհնութիւնս ՚ի տանն Տեառն ծնծոյալիւք և տաւոթ և քնարօք մերձ առ արքայն. և Ասափ, և Իդիթովմ, և Եման: ⁷Եւ եղև թիւ նոցա հանդերձ եղբարքքն իւրեանց, որք ուսեալ էին զերօսն Տեառն. ամենեքեան հանճարեղքն երկերիւր և ութսուն և ութ*։ ⁸Արկին և նոքա վիճակս հանապազորդ պաշտաման, ըստ փոքու և մեծի՝ կատարելոցն և որք ուսանէին*։ ⁹Եւ ել վիճակն առաջին Ասափայ և որդւոց նորա, և եղբարքն իւրոց. Յուսէփ առաջին, Գողողիա երկրորդ՝ ինքն և եղբարք իւր և որդիք իւր երկոտասան*։ ¹⁰Երրորդ՝ Չակքուր, որդիք իւր և եղբարք իւր երկոտասան: ¹¹Չորրորդ՝ Եզրի, և որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹²Յինգերորդ՝ Նաթանիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹³Վեցերորդ՝ Բոկիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁴Եւթներորդ՝ Յեսուէլ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁵Ութերորդ՝ Իսիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁶Իններորդ՝ Մաթանիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁷Տասներորդ՝ Սեմէի, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁸Մետասաներորդ՝ Եզրիէլ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ¹⁹Երկոտասաներորդ՝ Սաբիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան*։ ²⁰Երեքտասաներորդ՝ Սուբայէլ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²¹Չորեքտասաներորդ՝ Մատտաթիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²²Յինգետասաներորդ՝ Յերիմովթ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²³Վեշտասաներորդ՝ Անանիաս, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²⁴Եւթնուտասաներորդ՝ Եզբակատան, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²⁵Ութուտասաներորդ՝ Անանի, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²⁶Իննուտասաներորդ՝ Մեղեթի, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²⁷Քսաներորդ՝ Եղիաթ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ²⁸Քսան և առաջներորդ՝ Յեթերի, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան*։ ²⁹Քսան և երկրորդ՝ Գեղդելթի, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ³⁰Քսան և երրորդ՝ Մազիովթ, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան: ³¹Քսան և չորրորդ՝ Յռովմեթիեգեր, որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան*։

26

* Այլք. Եւ Եղեթան, և Գեղողաթի:

* Յօրինակին. ՄՁԸ:

* Ոսկան. Ըստ փոքու և մեծի կարելոցն:

* Այլք. Յովսէփ առաջին: Յօրինակին ևս այս թուահամարք մինչև քրսան և չորրորդն՝ այսպէս արձակ գրեալ էին:

* Այլք. Ասաբիաս:

* Այլք. Յեթիրի:

* Ոմանք. Յռովմիթեգեր:

Գլուխ ԻԶ

¹Եւ ՚ի զատուցեալս դրանցն յորդոցն Կորիսայ. Մոսողամ որդի Կորիսայ յորդոցն Ասափայ* ²և Մասեղամեայ. որդիք Ջաքարիայ՝ անդրանիկ Յագիէլ, երկրորդ՝ Աբդիաս, երրորդ՝ Նաթանա. չորրորդ՝ ³Յովէլ. և Ովդամ՝ հինգերորդ. Յովնաթան՝ վեցերորդ. Ելիովնէ՝ եւթներորդ: ⁴Եւ Իդիթոմայ որդիք՝ Սամէաս անդրանիկ, և Յովազաբադ՝ երկրորդ. Յովադա՝ երրորդ. Սաքար՝ չորրորդ. Նաթանայէլ՝ հինգերորդ. ⁵Ամիէլ՝ վեցերորդ. Իսաքար՝ եւթներորդ. Փեղաթի՝ ութերորդ. վասն զի օրհնեաց զնա Աստուած: ⁶Եւ Սասանայ որդւոյ նորա անդրանկան՝ ծնան որդիք զօրաւորք ՚ի տան հօր իւրոյ, վասն զի հզօրք էին*: ⁷Որդիք Սեմայ, Ագոնի, և Յափայէլ, և Յովբեդ, և Եղզաբեթ, Աբիու, և Եղբարք իւր որդիք զօրաւորք ուժով. Եղիու, և Սամաքիաս, և Իգբակոս. ⁸ամենեքեան սոքա որդիք Աբեդոմ, ինքեանք և որդիք իւրեանց և Եղբարք իւրեանց՝ զօրացեալք զօրութեամբ, գործէին զօրութեամբ զգործս, վաթսուն և երկու. Աբդեդոմայ*, ⁹և Սեղեմիայ՝ որդիք և Եղբարք հասունք՝ ութուտասն: ¹⁰Եւ Յեսամայ յորդոցն Մերարեայ որդի մի՝ Շամարի, որուն պահէին զգլխաւորութիւն. զի ոչ գոյր անդրանիկն ՚ի միջի, և առ եդ զնա հայր իւր սկիզբն*. ¹¹Քեղկիա՝ երկրորդ, Նաաբէդ՝ երրորդ, Ջաքարիաս՝ չորրորդ. ամենեքեան սոքա Ուսայեայ որդիք, և Եղբարք նորա՝ չորեքտասանք: ¹²Սոցա ել բաժին վիճակաւ դրանցն զլխաւորութեանց՝ կալ շաբաթաւոր առաջի Եղբարցն իւրեանց, և պաշտել ՚ի տան Տեառն: ¹³Եւ արկին վիճակ ըստ փոքուն և ըստ մեծին, տանց ազգատոհմին իւրեանց ՚ի դրունս դրունս*: ¹⁴Եւ ել վիճակ դրանն արևելից Սեմեայ և Ջաքարիայ որդւոյ նորա: Յովադ խորհրդական ՚ի միտս իւր. արկանէին վիճակս, և ել նմա վիճակն ընդ կողմն հիւսւսոյ: ¹⁵Եւ Աբդեդովմայ ընդ հարաւակողմն կոյս. և որդւոց իւրոց ընդդէմ տանն Ասափայ*. ¹⁶Երրորդեան սեմոյն Ովասայ ընդ արևմուտս կոյս. դրամբքն հանդերձ սրսկապանին, Ելից ճանապարհին, պահ առ պահ ընդ արևելս*: ¹⁷Իսկ Ղևտացիքն վեց վեց յաւուր ընդ կողմանս հիւսւսոյ. չորս չորս յաւուր ընդ կողմանս հարաւոյ. չորս չորս յաւուր՝ յԱսափինն. երկուս երկուս ՚ի փոխանակել*: ¹⁸Եւ ընդ արևմուտս չորս. և ՚ի ճանապարհ երկուս երկուս փոխանակաւ: ¹⁹Այս վիճակ բաժնիւ դարապանաց որդւոցն Կորիսայ և որդւոցն Մերարեայ*: ²⁰Եւ Ղևտացիքն Եղբարքք իւրեանց հանդերձ ՚ի վերայ գանձին տանն Տեառն, և ՚ի վերայ գանձին սրբոյն սրբոց*: ²¹Որդիքն Սղադանայ որդւոյ Գերսամ Սղադանա իշխանք ազգաց տոհմին Սղադանու. և Գերսամայ՝ Յեիէլ*. ²²և Չեթամ, և Յովէլ՝ Եղբարք նորա ՚ի վերայ

* *Ոմանք.* Մոսողամ որդի Կորիսայ:

* *Ոսկան.* Եւ Սամանայ որդւոյ նորա:

* *Յօրինակին.* Ջգործս ԿԲ:

* *Յօրինակին ՚ի կարգի բնաբանի՝ յետ սկիզբն, դատարկ տեղի թողեալ, ՚ի լուսանցսն չակերտիւ նշանակի ՚ի մէջ բերել,* սկզբան Էգիւ: *Ուր ոմանք ունին.* սկզբանէ Գիւքեղկիա. և *ոմանք.* սկիզբն սկզբանէ Գիւքեղկիա երկրորդ:

* *Այլք.* Եւ ըստ մեծին, ըստ տանց ազ՞:

* *Յօրինակին.* Եւ Աբդելովմայ ընդ:

* *Ոմանք.* Սեմեան և Ովասայ: *Յօրինակին.* Հանդերձ սկապանին:

* *Այլք.* Եւ երկուս երկուս ՚ի փոխանակել:

* *Ոմանք.* Այս վիճակք բաժանիւ դարա՞:

* *Յօրինակին.* Հանդերձ ՚ի գանձին տանն: *Ոմանք.* Եւ ՚ի վերին սրբոյն սրբոց:

* *Ոմանք.* Գերսամ և Սղադանայ:

գանձին տան Տեառն*։ ²³Եւ Ամրին, և Իսահառ, Քերրոն, և Ոզիէլ. ²⁴և Սերիէլ. Գերսամեանց, Մուշեանց, զօրագլուխք ՚ի վերայ գանձուցն*։ ²⁵Եւ եղբայր նորա Եղիազար, Աբիա որդի նորա, Յուսէէ որդի նորա, Յովրամ որդի նորա, Ջէքրի որդի նորա*, ²⁶և ինքն Սաղամիթ և եղբարք իւր ՚ի վերայ ամենայն գանձուն սրբոյն սրբոց. զոր նուիրեաց Դաւիթ, և իշխանք տոհմիցն՝ հարիւրապետք և հազարապետք և իշխանք զօրութեանցն՝ ²⁷զոր առեալ էր ՚ի քաղաքաց անտի աւար, և նուիրեալ էր ՚ի նոցանէն, զի մի՛ նուազեսցի գործք շինուածոյ տանն Աստուծոյ։ ²⁸Ձոր նուիրեցին Սամուէլ տեսանօղն. և Շաւուղ Կիսեանց, և Աբեններ Ներեանց, և Յովաբ որդի Շարուիեայ։ Եւ ամենայն նուէրք որ էին ՚ի ձեռս Սաղովմեայ և եղբարց իւրոց. ²⁹Յեսսարի, և Քոնոնիա, և որդիք իւր. և գործքն գործոյն արտաքնոյ ՚ի վերայ Իսրայէլի, զի գրիցեն՝ և վճարիցեն ³⁰ի Քերրոնիա. Սաղիաս և եղբարք իւր, որդիք զօրութեան հազար և եւթն հարիւր։ Եւ ՚ի վերայ ոստիկանութեան Իսրայէլի յայնկոյս Յորդանանու գետոյն ընդ արևմուտս, ամենայն գործ պաշտաման Տեառն, և ՚ի գործ արքունի ³¹Քերրոնեա Ուրիաս իշխան, Քերրոնեա ազգատոհմօքն իւրեանց հանդերձ։ Յամին քառասներորդի թագաւորութեանն Դաւթի, այս յաշխարհագրի անդ գտաւ. այր զօրութեանց ՚ի նոսա, Յազերն Գաղադիտացւոց։ ³²Եւ եղբարք իւր որդիք զօրաւորք. երկու հազար և եւթն հարիւր, գլխաւորք տոհմին։

Իսկ եւ կացոյց զնոսա արքայ Դաւիթ ՚ի վերայ զնոյն Յուրբելայ և Գադայ՝ և կէս ազգին Մանասէի զնոյն. վասն ամենայն բանից Աստուծոյ. բանից արքունի*։

27

Գլուխ ԻԵ

¹Եւ որդիք Իսրայէլի իւրաքանչիւր թուոց նահապետք ազգատոհմին հազարաւորք և հարիւրաւորք. և համարակար դպիրք, որ պաշտէին ՚ի ժողովրդեանն յամենայն համարս արքունի, ըստ իւրաքանչիւր գործոյն համարոյ ելին և մտին ամսոյ ամսոյ յամենայն ամիսս տարւոյն, ընտրութեան* ²Առաջին համարոյ առաջնոյ ամսեանն՝ Յեզբաաղ, և Բաղէէլ, և ընտրութիւն ելից նորա քսան և չորս հազարք*։ ³Յորդուց Փարեսայ, որ գլուխ էր ամենայն իշխանացն զօրաց, և յամսեանն առաջնոյ. ⁴ընտրութիւն Ամսոյն երկրորդի, Դովդայի, և Դաքթի, և Սագաղաւովթ առաջնորդք, և ընտրութիւն նորա քսան և չորս հազարք* ⁵իշխանք զօրութեան։ Երրորդն յամսեանն երրորդի. Բանէաս, Յովդադ՝ քահանայ իշխան. և յընտրութիւն նորա՝ քսան և չորս հազարք. ⁶ինքն Բանէաս հզօրագոյն քան զերեսունսն, և ՚ի վերայ երեսնիցն բաժին ընտրութեան իւրոյ։ ⁷Յամսեանն չորրորդի, Ասայէլ եղբայր Յովաբու, և Ջաբդէաս որդի նորա և եղբարք իւր զկնի նորա. և ընտրութիւնք բաժնի նորա քսան և չորս

* Ոսկան. Որդիք Յէիէլի Ջեթամ, և Յո՛ւ։

* Ոսկան. Եւ Սերիէլ՝ որդի Գերսամայ որդւոյ Մօսէսի՝ զօրագլ՛։

* Ոսկան. Ջէքրի որդի նորա. և Ջէլմիթ որդի նորա։ Եւ ինքն։

* Յօրիճակին. ՍԶ գլխաւորք։ Ուր ոմանք. ԲՈՇ։ Ոսկան. ՚ի վերայ զնոյն Ռուբինայ և Գադայ։ Այլք. Մանասեան զնոյն... ՚ի բանից արքունի։

* Այլք. Չամենայն համարս արքունի։

* Ոմանք. Յառաջ համարոյ առա՛։ Յօրիճակին. Ելից նորա ԻԴՈք։

* Ոմանք. Յուդայի և Դոքթի։

հազարք* : ⁸Հինգերորդ ամսեանն՝ հինգերորդ իշխան Սաթիովք, յիգիա. և բաժին մասին նորա քսան և չորս հազարք : ⁹Վեցերորդ յամսեանն՝ վեցերորդ իշխան էկէս որդի Եկզայ Թեկուացւոյ. և մասն բաժնի նորա քսան և չորս հազարք : ¹⁰Յեւթներորդուն ամսեանն՝ եւթներորդ իշխան, Քեղ՝ փաղոնեանց յորդւոցն Եփրեմայ. և մասն բաժնի իւրոյ քսան և չորս հազարք : ¹¹Ութերորդ յամսեանն ութերորդի, Ուսաքեկի Եսթայիանց Ջարայեայ. և մասն բաժնի նորա քսան և չորս հազարք* : ¹²Իններորդ յամսեանն իններորդի, Աբեզեր որ յԱնաթովթայն, որ ՚ի Բենիամին երկրի. և մասն ՚ի բաժնի իւրում քսան և չորս հազարք* : ¹³Տասներորդ յամսեանն տասներորդի, Մաարի Նէտոպաթեանց Ջարայ. և մասն բաժնի իւրում քսան և չորս հազարք* : ¹⁴Մետասաներորդն յամսեանն մետասաներորդի, Բանաիաս ՚ի Փարաթոնեայ, յորդւոցն Եփրեմի, և ՚ի զատուցեալսն նորա քսան և չորս հազարք : ¹⁵Երկոտասաներորդն յամսեանն երկոտասաներորդի, Քաղոյայ ՚ի Նետուփատայ, որդի Գոթոնիելի. և ՚ի զատուցեալս նորա քսան և չորս հազարք* : ¹⁶Եւ ՚ի ցեղիցն Իսրայէլի, Ռուբինի իշխան, Եղիազար որդի Ջեքրեայ. և Շմաւոնի, Սափատիաս որդի Մակքեայ* : ¹⁷Լևեայ, Ասաբիա որդի Սամուէլի. և Ահարոնի՝ Սաղովկ որդի* : ¹⁸Եւ Յուդայ, Եղիաբ յեղբարցն Դաւթի. և Իսաքարայ՝ Ամարիաս որդի Միքայելի. ¹⁹Զաբուղոնի, Սամէաս որդի Աբդիայ. և Նեփթաղիմայ՝ Յաբիմուք որդի Ոգիելի* : ²⁰Եւ Եփրեմի՝ Ովսեր որդի Ոգիայ. և կիսոյ ցեղին Մանասէի՝ Յովէլ որդի Փաղոնիայ. ²¹Եւ կիսոյ ցեղին Մանասէի որ էր ՚ի Գաղաադ, Յաղայի որդի Ջաբդիայ. որդւոցն Բենիամինի՝ Ասիէլ որդի Աբեններայ : ²²Դանայ՝ Եզրիէլ որդի Յովրամայ : Սոքա՝ էին նահապետք ցեղիցն Իսրայէլի* : ²³Եւ ո՛չ առ Դաւիթ զթիւն նոցա ՚ի քսանամեանից և ՚ի վեր. վասն զի Տէր ասաց բազմացուցանել զԻսրայէլ իբրև զաստեղս երկնից : ²⁴Եւ Յովաբ որդի Սարուիեայ սկսաւ թուել զժողովուրդն. և ո՛չ կատարեաց. և եղև յաղագս այնորիկ բարկութիւն ՚ի վերայ Իսրայէլի. և ո՛չ յարգեցաւ թիւն ՚ի գիրս բանից աւուրց թագաւորին Դաւթի* : ²⁵Եւ ՚ի վերայ գանձուց արքային Սազանովք որդի Մովդիելի. և ՚ի վերայ գանձուց անդաստանաց ՚ի գեօղսն, և ՚ի տունս, և յաշտարակս, Յովնաթան որդի Ոգիայ* : ²⁶Եւ ՚ի վերայ երկրագոծացն որք գործէինն, Եզրաս որդի Քեղուբայ. ²⁷Եւ ՚ի վերայ ազարակացն, Սեմէի Արիմաթացի. և ՚ի վերայ շտեմարանացն գիւղից գիւնոյն, Ջաբդի որդի Սեփիմայ : ²⁸Եւ ՚ի վերայ ձիթենեացն և մուլաթգենեացն որք ՚ի դաշտս՝ Բաղդանա որդի Գեդէոնի. և ՚ի վերայ շտեմարանաց ձիթոյն՝ Յովաս* :

* *Ի լուս*՝ Աբեսսա եղբայր Յովաբու. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝ :

* *Ոսկան*. Ուսաք Եկիեսթայեանց :

* *Ոմանք*. Եւ մասն բաժնի իւրոյ :

* *Յօրինակին*. Մաարիմէ Տոպատ՝ :

* *Ոմանք*. Եւ երկոտասանե՛... Քողոյայի Նետուփատայ :

* *Ոմանք*. Ռուբէն իշխան. Եղիէզեր որդի Ջեքրեայ :

* *Ի լուս*՝ Ասաբիա որդի Կամուէլի. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝ : *Ոմանք*. Սաղովկ որդի (18) Յուդայ և Եղիաբ : *Ուր Ոսկան*. Սաղովթ : (18) Որդւոցն Յուդայ, Եղիաբ :

* *Ոմանք*. Որդի Աբդիմեայ :

* *Ոմանք*. Եւ Դանայ՝ Եզրիէլ որդի Յովրամայ : *Աստէն ՚ի բնաբան օրինակի մերում տող մի դատարկ թողեալ, ՚ի լուս*՝ . *նշանակի ՚ի մէջ բերել*, Գաղ և Ասեր. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝ :

* *Ոմանք*. Եւ ո՛չ յարգեցաւ գիրն ՚ի գիրս բանից :

* *Այլք*. Ազմովք որդի Մովդիելի :

* *Ոմանք*. Եւ մուլթգենեացն :

²⁹Եւ ՚ի վերայ արջառոց արօտականաց որք էին ՚ի հովիտսն. Սովփատ որդի Ադայիայ. ³⁰և ՚ի վերայ ուղտուցն՝ Ուրփաս Ամելացի. և ՚ի վերայ իշոցն՝ Յադիաս Մարաթովնացի* : ³¹Եւ ՚ի վերայ հօտիցն՝ Յովազ Ագարացի. ամենեքեան սոքա վերակացուք ստացուածոցն Դաւթի արքայի: ³²Եւ Յովնաթան հօրեղբայր Դաւթի՝ խորհրդակից, ա՛յր հանճարեղ. և ինքն դպրապետ. և Յէքիէլ որդի Աքիմենայ ընդ որդիս արքայի: ³³Եւ Աքիտոփէլ՝ խորհրդակից արքայի. և Քուսի առաջին բարեկամ արքայի. ³⁴և գկնի նորա Աքիտոփէլ մերձ ՚ի նա. և Յովիդայեայ որդի Բանեայ. և Աբիաթար. և զօրավար զօրացն արքայի Յովաբ:

28

Գլուխ ԻԸ

ԽԲ ¹Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն իշանսն Իսրայէլի, զիշխանս դատաւորացն, և զամենայն իշխան օրամտիցն, ՚ի սպաս անձնապահաց թագաւորին. և զիշխանս հազարաւորացն, և հարիւրաւորացն, և գանձապահացն, և որք էին ՚ի վերայ ստացուածոցն նորա. և զզօրաւորսն, և զպատերազմօղս զօրավարացն յերուսաղէմ: ²Եւ եկաց Դաւիթ արքայ ՚ի մէջ եկեղեցւոյն՝ և ասէ. Լուարո՛ւք ինձ եղբարք իմ և ժողովուրդ իմ: Ի սրտի իմում եղև շինե՛լ տո՛ւն հանգստեան տապանակի ուխտին Տեառն, և կայան ոտից Տեառն մերոյ. և պատրաստեցի ես ՚ի բնակութիւնն յայն զկազմածո՞ գայո՞. ոսկի, և արծաթ, և պղինձ, և արոյր, և երկաթ, և փայտ բազում*. ³և ասաց Աստուած ցիս. Ո՛չ շինեսցես դու ինձ տուն, անուանել զանուն իմ ՚ի վերայ նորա. վասն զի ա՛յր պատերազմօղ ես դու, և հեղեր արիւն բազում: ⁴Եւ ընտրեաց Տէր Աստուած յամենայն ազգաց զԻսրայէլ, և յամենայն Իսրայէլէ ընտրեաց զՅուդաս, կանգնել զթագաւորութիւնն իւր յաւիտեանական. և ՚ի տանէն Յուդայ՝ ընտրեաց զտուն հօր իմոյ և յորդուց հօր իմոյ՝ կամեցաւ զիս լինել թագաւոր ՚ի վերայ ամենայն Իսրայէլի*: ⁵Եւ յամենայն որդւոց իմոց՝ վասն զի որդիս բազումս ետ ինձ Տէր, ընտրեաց զՍողոմոն որդի իմ, նստուցանել յաթոռ թագաւորութեանն Տեառն ՚ի վերայ Իսրայէլի: ⁶Եւ ասաց ցիս Աստուած. Սողոմոն որդի քո շինեսցէ զտուն իմ, և զսրահն իմ. վասն զի ընտրեցի՞ զնա լինել ինձ որդի, և ես եղէց նմա ՚ի հա՛յր. ⁷և ուղղեցից զթագաւորութիւն նորա մինչև յաւիտեան, եթէ զօրացի պահել զպատուիրանս իմ և զիրաւունս իմ իբրև յաւուրս յայսմիկ: ⁸Եւ արդ՝ դի՞ք առաջի երեսաց ամենայն եկեղեցւոյս Տեառն, և յականջս Աստուծոյ մերոյ. պահեցէ՛ք և խնդրեցէ՛ք զամենայն պատուիրանս Տեառն Աստուծոյ մերոյ. զի ժառանգիցէք զերկիրս բարի, և ժառանգեցուցանիցէք որդւոց ձերոց յետ ձեր մինչև յաւիտեան*: ⁹Եւ դու Սողոմոն որդի իմ, ծանի՛ր զԱստուած հարցն քոց, և ծառայեա՛ նմա կատարեալ սրտիւ, և մտօք կամաց քոց. վասն զի զամենայն սիրտ քննէ Տէր, և զամենայն խորհուրդս ճանաչէ. եթէ խնդրեսցես զնա, գտցի՞ քեզ. և եթէ թողցես զնա՝ լքցէ՛ զքեզ ՚ի սպառ*: ¹⁰Տե՛ս այժմ, զի Տէր ընտրեաց զքեզ շինել նմա տո՛ւն ՚ի սրբութիւն. զօրացի՛ր և արա՛: ¹¹Եւ ետ Դաւիթ Սողոմոնի

* Ոմանք. Ուրփաս Ամայէլացի: Ուր Ոսկան. Իսմայէլացի:

* Ոմանք. Եւ կացոյց Դաւիթ արքայ ՚ի մէջ:

* Այլք. Ձթագաւորութիւն իւր յաւիտեան:

* Ոմանք. Որդւոցն ձերոց գկնի ձեր:

* Այլք. Չամենայն սիրտս քննէ: Ոմանք. Եւ եթէ խնդրեսցես:

որդոյ իւրում զօրինակ տաճարին՝ և սենեկաց նորա, և գանձարանաց նորա, և վերնատանցն, և շտեմարանացն ներքնոց, և տանն քաւութեան. ¹²և զօրինակ զոր ունէր ՚ի մտի իւրում, սրահից տանն Տեառն, և զամենայն շտեմարանացն շուրջանակի, յամբարս տանն Տեառն, և մթերից սրբութեանցն. ¹³և մնացորդացն, յօտարամտից ՚ի պաշտօն քահանայիցն, և Ղևտացւոց յամենայն գործ պաշտամանց տանն Տեառն, և շտեմարանացն անօթոց սպասուց տանն Տեառն*։ ¹⁴Եւ զմէտս կշռոց նոցա՝ զոսկոյ և զարծաթոյ ¹⁵զկշիռ աշտանակաց ետ նմա. և զբազմականցն նմանութիւնս*։ ¹⁶և զկշիռս սեղանոցն առաջադրութեան. և զհւրաքանչիւր ուրուք ոսկեղէն սեղանոց. նոյնպէս և զարծաթեղինացն. ¹⁷և զմսահանացն, և զնուիրանոցացն, և զտաշտիցն ոսկեղինաց. և զկշիռս ոսկոյ և արծաթոյ, և զտփոցն զհւրաքանչիւր ուրուք։ ¹⁸Եւ զսեղանոց խնկոցն ՚ի մաքուր ոսկոյ զկշռութիւնն եցոյց նմա. և զօրինակ քերովբէիցն որոց տարածեալ էր զթևան իւրեանց, և հովանի՝ ունէին ՚ի վերայ տապանակի ուխտին Տեառն։ ¹⁹Չամենայն գրով ՚ի ձեռանէ Տեառն ետ Դաւիթ Սողոմոնի, ըստ եղելոյ ՚ի նմա իմաստութեանն և ըստ օրինակին։ ²⁰Եւ ասէ Դաւիթ ցՍողոմոն որդի իւր. Չօրացիր և քաջ լեր, արա՛ և մի՛ երկիցես, և մի՛ զարհուրեսցիս. վասն զի Տէր Աստուած իմ է՝ ընդ քեզ. ո՛չ թողցէ զքեզ, և ո՛չ լքցէ մինչև կատարեսցես զամենայն գործ սպասու տանն Տեառն։ Եւ ահա այդ է օրինակ տաճարին, և սենեկաց նորա, և սրահից նորա, և վերնատանցն, և շտեմարանացն, ներքնատանցն, և տանն քաւութեան. և օրինակ տաճարին Տեառն այդ է*։ ²¹Եւ օրամտից քահանայիցն և Ղևտացւոց, յամենայն ՚ի պաշտամունս տանն Աստուծոյ, և ընդ քեզ եղիցի յամենայն իրս, ամենայն ոք որ յօժարեսցէ իմաստութեամբ ըստ համօրէն արուեստից. իշխանքն, և ամենայն ժողովուրդդ յամենայն ՚ի բանս քո*։

29

Գլուխ ԻԹ

¹Եւ ասէ Դաւիթ արքայ ցամենայն եկեղեցին. Սողոմոն որդի իմ զոր ընտրեաց իւր Տէր, մանուկ փոքր է, և գործս մեծ է. վասն զի ո՛չ մարդոյ է շինուածս, այլ Տեառն Աստուծոյ։ ²Ըստ ամենայն զօրութեան իմոյ պատրաստեցի նիւթս տանն Աստուծոյ իմոյ. ոսկի, և արծաթ. պղինձ, և երկաթ. փայտս, և քարինս անկեանց և կամարաց, և քարինս ընտիրս, և ականս պատուականս, և այլ պատրաստութիւն բազում։ ³Եւ նս վասն հաճոյն լինելոյն իմ ՚ի տան Աստուծոյ իմոյ եղև ինձ զորս նուիրեցիդ Տեառն, ոսկի և արծաթ. և ահաւաղիկ ետու զայդ ՚ի տուն Աստուծոյ իմոյ ՚ի բարձրութիւն. բաց յայնցանէ զոր պատրաստեցի ՚ի տուն սրբութեանցն*, ⁴երիս հազարս տաղանտս ոսկի ՚ի Սովփերայ, և եւթն հազար տաղանտ ընտիր արծաթ, օժանել նոքօք զորմս տաճարին ⁵ի ձեռն

* Այլք. Եւ մնացորդացն յօրամտից ՚ի պաշտօն: Ուր յոմանս պակասի. Տանն Տեառն: Եւ շտեմարանացն անօթոց սպասուց տանն Տեառն:

* Ոմանք. Եւ զբազմականցն նմանութիւնս:

* Ոմանք. Ընդ քեզ է... մինչև կատարեսցէ:

* Ոմանք. Իշխանքդ և ամենայն ժողովուրդ յամենայն:

* Ոմանք. Վասն հաճոյ լինելոյ իմ... ՚ի տան Տեառն իմոյ. և եղև ինձ... ՚ի տունս սրբութեանցն:

արուեստաւորաց: Եւ որ ոք յօժարիցէ մտօք լնո՛ւլ զձեռս իւր այսօր Տեառն*:

ԽԳ ⁶Եւ յառաջամիտք եղեն իշխանք տոհմիցն, և իշխանք որդւոցն Իսրայէլի, հազարապետք և հարիւրապետք, և վերակացուք գործոցն, և գաւառապետք արայի. ⁷և ետուն ՚ի գործ տանն Տեառն, ոսկի՝ տաղանտս հինգ հազար, և բեր դահեկան. և արծաթ՝ տաղանտս տասն հազար. և պղինձ՝ տաղանտս բեր և ութ հազար. և երկաթ՝ տաղանտս հարիւր հազար: ⁸Եւ ոյր ուրուք գտաւ քար պատուական, ետուն ՚ի շտեմարանս տանն Տեառն, ՚ի ձեռս Յերիէլի որդւոյ Եսրովմի*: ⁹Եւ զուարճացաւ ժողովուրդն յաղագս յառաջամիտ լինելոյն. վասն զի լի՛ սրտիւ եղեն յառաջամիտք Տեառն. և Դաւիթ արքայ ուրախ եղև մեծապէս: ¹⁰Եւ օրհնեաց արքայ Դաւիթ զՏէր առաջի եկեղեցւոյն՝ և ասէ.

ԽԳ Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի հարցն մերոց յաւիտենից մինչև յաւիտեանս: ¹¹Քո՛ է Տէր մեծութիւն, և զօրութիւն, և պարծանք, և յաղթութիւն, և կարողութիւն. վասն զի դո՛ւ ամենեցուն որք են յերկինս և ՚ի վերայ երկրի՝ տիրես. յերեսաց քոց դողան ամենայն թագաւորք և ազգք. ¹²ի քէն է մեծութիւն և փառք. դո՛ւ ես ամենեցուն իշխան և Տէ՛ր. և իշխան ամենայն իշխանութեանց. ՚ի ձեռին քում է՛ զօրութիւն և հարստութիւն. և ՚ի ձեռին քում ամենակալ մեծութիւն, զօրացուցանել զամենայն*: ¹³Եւ արդ Տէր՝ գոհանա՛մք զքէն, և օրհնենք զանուն պարծանացդ քոց: ¹⁴Ո՛ եմ ես՝ և ո՛ւ է ժողովուրդ քո. զի կարացուք յօժարամիտ լինել քեզ յայսմ ամենայնի. վասն զի քո՛ է ամենայն ինչ՝ և ՚ի քոյոցդ տուաք քեզ*. ¹⁵քանզի պանդո՛ւխտք ենք մեք առաջի քո և նժդեք՝ որպէս ամենայն հարք մեր. իբրև զստուեր են աւուրք մեր ՚ի վերայ երկրի, և ո՛չ գոն մեր մնացուածք ինչ: ¹⁶Տէր Աստուած մեր՝ ամենայն բազմութիւնս այս, զոր պատրաստեցի շինել զտուն անուան սրբութեան քոյ, է՛ ՚ի ձեռանէ քումնէ, և քո՛ է ամենայն ինչ: ¹⁷Եւ ծանեայ Տէր՝ եթէ դո՛ւ ես որ քննես զսիրտս, զարդարութիւն սիրես. և մեք պա՛րզ սրտիւք յօժարամիտք եղեաք յայսմ յամենայնի. և արդ՝ զժողովուրդս քո որ գտաւ աստ, տեսի ուրախութեամբ լի՛, եղեալ առ քեզ յօժարամիտ*: ¹⁸Տէր Աստուած Աբրահամու, և Իսահակայ, և Իսրայէլի հարցն մերոց, պահեա՛ զայս ՚ի միտս և ՚ի սիրտ ժողովրդեան քոյ յաւիտեան. և ուղղեա՛ զսիրտս նոցա առ քեզ*: ¹⁹Եւ Սողոմոնի որդւոյ իմում տո՛ւր սիրտ բարի առնել զպատուիրանս քո, և զվկայութիւնս քո, և զիրամանս քո. և ՚ի կատարունն ածել զպատրաստութիւն տան քոյ: ²⁰Եւ ասէ Դաւիթ ցամենայն եկեղեցին. Օրհնեցէ՛ք զՏէր Աստուած ձեր: Եւ օրհնեաց ամենայն եկեղեցին զՏէր Աստուած հարցն իւրեանց. և խոնարհեցուցեալ զծունկս՝ երկիր պագին Տեառն, և արքայի: ²¹Եւ եզեն Դաւիթ Տեառն զիս. և մատոյց ողջակէ՛զ Աստուծոյ ՚ի վաղիւն առաջնոյ աւուրն, զուարակս հազար, խոյս հազար, գառինս հազար, և զնուէրս նոցա. և զզոհսն յաճախութեամբ ամենայն Իսրայէլի: ²²Կերան և արբին առաջի Տեառն յաւուր յայնմիկ ուրախութեամբ: Եւ թագաւորեցուցին երկրորդ անգամ զՍողոմոն որդի Դաւթի. և օծին զնա Տեառն ՚ի թագաւոր. և զՍադոկ ՚ի քահանայութիւն*: ²³Եւ նստաւ Սողոմոն յաթոռ Դաւթի հօր իւրոյ, և

* Ոմանք. Եւ որ ոք յօժարեալ իցէ մտօք:

* Ոմանք. ՚ի ձեռն Յերիէլի որդւոյ:

* Այլք. Ամենեցուն իշխան Տէր. և իշ՛:

* Այլք. Չի կարացաք յօժարամիտ: Ոմանք. Եւ ՚ի քոյոցդ տուաւ քեզ:

* Ոմանք. Յօժարամիտք եղեալք... զժողովուրդ քո:

* Ոմանք. ՚ի միտս և ՚ի սրտի ժողովրդեան:

* Ոմանք. Յաւուր յայնմ ուրա՛:

յաջողեցաւ. և հնազանդեցաւ նմա ամենայն Իսրայէլ. ²⁴Իշխանք և զօրաւորք, և ամենայն որդիք արքայի Դաւթի հօրն նորա՝ հնազանդեցան նմա*։ ²⁵Եւ մեծացոյց Տէր զՍողոմոնն ՚ի վերուստ առաջի ամենայն Իսրայէլի, և ետ նմա փառս թագաւորութեան. որ ո՛չ ունէր եղև ամենեցուն թագաւորացն որք յառաջ քան զնա*։ ²⁶Եւ Դաւթ որդի Յեսսեայ թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի ամս քառասուն. ²⁷ի Քեբրոն ամս եւթն, և յերուսաղէմ ամս երեսուն և երեք։ ²⁸Եւ վախճանեցաւ բարի ծերութեամբ, լի՛ աւուրքք՝ մեծութեամբ և փառօք. և թագաւորեաց Սողոմոնն որդի նորա փոխանակ նորա։ ²⁹Եւ մնացեալ բանք արքայի Դաւթի՝ առաջինք և վերջինք, գրեալ են ՚ի բանս Սամուէլի տեսանողի, և ՚ի բանս Նաթանայ մարգարէի, և ՚ի բանս Գադայ տեսանողի. ³⁰յազաղս ամենայն թագաւորութեան նորա, և հարստութեան նորա. և ժամանակք որ եղեն նորա ՚ի վերայ Իսրայէլի, և ՚ի վերայ ամենայն թագաւորութեանց երկրի*։

Կատարեցաւ Մնացորդաց Առաջին*

Գլուխք Երկրորդ Մնացորդաց

- ա. Թէ հազար ողջակէզս եհան Սողոմոնն Աստուծոյ ՚ի Գաբաւոն. որուն երևեալ Աստուծոյ ասէ. Խնդրեա՛ զինչ կամիս։ Եւ խնդրեաց զհանճար. և ետ նմա Տէր։
- բ. Ձի խնդրեաց ՚ի Քիրամայ արուեստաւորս և փայտս ՚ի Լիբանանէ, և նա առաքեաց նմա։
- գ. Հանգամանք շինուածոյ տաճարին, և ամենայն կահից նորա։
- դ. Ձի տարան զտապանակն ՚ի ներքս ՚ի դաբիրն, և տունն լցաւ ամպով. և յետ խնդրելոյն Սողոմոնի՝ հուր էջ և եկեր զողջակէզսն ՚ի նաւակատիսն անդ։
- ե. Կրկին երևեալ նմա Տէր զգուշացոյց զնա։
- զ. Վասն քաղաքացն զոր ետ Քիրամ Սողոմոնի, և վասն մնացելոց ազգացն որք եղեն նմա հարկատուք։
- է. Ձի կարգեաց զՂևտացիսն ըստ հրամանացն Դաւթի ՚ի վերայ իւրաքանչիւր գործոց։
- ը. Ձի եկն առ նա տիկինն Սաբայ, վասն մեծ հարստութեանն Սողոմոնի. և թէ մնացորդք բանից նորա ՚ի գիրս մարգարէիցն՝ Նաթանայ և Աբիայ և Յովելայ։
- թ. Թէ վասն խիստ պատասխանւոյն Ռոբովամայ բաժանեցան տասն ցեղքն ՚ի տանէն Դաւթի. և վասն քաղաքացն զոր շինեաց նա և անրացոյց։

* *Ոմանք.* Իշխանքն զօրաւորք։

* *Ոմանք.* Եւ ետ նմա փառս թագաւորութեամբ։

* *Յօրինակին.* Եւ ժամանակք որ են նորա։

* *Ի վախճանի ոմանք.* Կատարեցաւ Մնացորդն Առաջին։ *Եւ ոմանք.* Կատարումն Առաջին Մնացորդաց։

ժ. Ձի յաւելան Ղևտացիքն յՌոբովամ. և զօրացուցին զթագաւորութիւնն յերուսաղէմ. և զի զառաջինն բարի՛ էր յՌոբովամ, և ՚ի թիրելն ել ՚ի վերայ նորա Սաւսակիմ Եգիպտացի:

ժա. Թագաւորեաց Աբիա. և գումարեալ ՚ի վերայ Յերոբովամայ նախատեաց զկռապաշտելն նորա, և ինքն պարօէր յԱստուած և ՚ի պաշտօն քահանայիցն յերուսաղէմ. որ և վանեաց զՅերոբովամ զամենայն աւուրս իւր:

ժբ. Թագաւորեաց Ասա, և էր բարի առաջի Տեառն և զօրացեալ. և ել ՚ի վերայ նորա Չարեհ Եթովպացի հազար հազարօք. և գոչեաց առ Տէր, և կոտորեաց զՀնդիկսն և զմիաստնիսն՝ մինչ ո՛չ մնալ ապրեալ. և ա՛ռ աւար բազում:

ժգ. ՚ի բանից Ազարիայ մարգարէի զօրացեալ Ասայի յԱստուած՝ արար նաւակատիս սեղանոյն, և սրբեաց բնաւին զՅուդա:

ժդ. Ել ՚ի վերայ նորա Բասա արքայ Իսրայէլի. և նա առաքեաց զանձս որդւոյ Ադերայ որ ել և մերժեաց ՚ի նմանէ զԲասա:

ժե. Եւ զի վասն այսր իրի յանդիմանեաց Անանիա մարգարէ զԱսա, թէ զի ո՛չ յԱստուած՝ այլ ՚ի մարդ յուսացար. ընդ որ բարկացեալ եղ զնա ՚ի բանտի. և ՚ի ցաւել ոտից նորա ո՛չ խնդրեաց զՏէր, այլ խնդրեաց բժիշկս. և մեռաւ:

ժզ. Գովութիւն Յովսափատու. և զի յերթալ նորա ընդ Աքաաբու ապրեցոյց զնա Տէր ՚ի սրոյ Ասորոցն, որպէս վկայեացն Անանիա մարգարէ:

ժէ. Ժողովեցան ՚ի վերայ նորա Ամոն Մովաբ և Մինեցիք. և գոչեաց Յովսափատ առ Տէր. և ՚ի ձեռն Ոգիէլի մարգարէի քաջալերեաց զնա Տէր. և ՚ի կարգելն ընդդէմ թշնամեացն և նուազել զսաղմոսն Աստուծոյ՝ զմիմեանս հարին թշնամիքն, ուստի առին սոքա աւար յոյժ: Եւ զի խնամութիւն արար ընդ Աքաաբու՝ խորտակեցաւ նաւ նորա: Եւ թէ Յէու գրեաց զգիրս թագաւորացն Իսրայէլի:

ժը. Թագաւորեաց Յովրամ և արար չար արաջի Տեառն, և ապստամբեաց ՚ի նմանէ Եդոմ: Գրեաց առ նա Եղիա մարգարէ և ասէ. Ձի թողեր զՏէր՝ չարաչար հիւանդութեամբ մեռանիս. և հեղաւ որովայն նորա, և մեռաւ:

ժթ. Թագաւորեաց Ոքոզիա, և արար չար, և եսպան զնա Յէու՝ այն որ ջնջեաց զտունն Աքաաբու:

ի. Թագաւորեաց Գողոզիա. և յետ եւթն ամի սպանաւ. և թագաւորեաց Յովաս, և արար բարի, և յետ մահուն Յովիդեայ քահանայի դարձաւ ՚ի կուռս. և յանդիմանեալ յԱզարիայ որդւոյ Յովիդեայ՝ սպան զնա. ընդ որոյ չարաչար հիւանդացեալ՝ սպանաւ յիւրոցն:

իա. Թագաւորեաց Ամասիա և արար սակաւ ինչ բարի, վարձեաց յԻսրայէլէ ընդ իւր ՚ի մարտ ընդ Եդովմ, և ո՛չ տարաւ ընդ իւր. Եհար զԵդոմ և ա՛ռ զաստուածս նոցա ի՛ւր յաստուածս. մատնեցաւ ՚ի ձեռս Յովասու արքայի Իսրայէլի, և յետոյ յիւրոցն սպանաւ:

իբ. Թագաւորեաց Ոզիա և արար ուղղութիւն. այլ հպարտացեալ մատեաւ խնկարկել. և էր բորոտեալ մինչև մեռաւ:

իգ. Թագաւորեաց Յովաթամ և արար ուղղութիւն. և նա հարկեաց զորդիսն Ամոնայ:

իդ. Թագաւորեաց Աքազ և արար չարիս. նեղեաց զնա Ռասուն. և մեծ

հարուածս եհար 'ի Յուդայ Փակեէ, և գերեաց զՅուդա. զորս Ովդեդ մարգարէ յե'տս ետ դարձուցանել. ձեռս ետ Աքազ 'ի Թագադաթիադսար և 'ի կուռս նորա, և մեռաւ:

իե. Աստուածապաշտ գոլով եգեկիա արար զգատիկն յամսեանն երկրորդում. և վասն հինին Ասորոց եխից զաղբերսն որ արտաքոյ քաղաքին և զելս Գեհոնի:

իզ. Թագաւորեաց Մանասէ. և յաճախեալ 'ի չարիս, ածաւ կապանօք 'ի Բաբելոն, և 'ի վտանգիլն դարձաւ աղաչեաց զԱստուած, և դարձոյց զնա 'ի թագաւորութիւնն իւր, և պաշտեաց զՏէր մինչև մեռաւ:

իէ. Թագաւորեաց Ամովս, և արար չարիս զորս արար Մանասէ, և սպանաւ յիւրոցն:

իը. Գովեստ Յովսիայ որ սրբեաց զՅուդայ. և այրեաց զոսկերս քրմացն. արար զգատիկն, յօրինեաց զկարգ քահանայիցն ըստ պայմանին Դաւթայ. սպանաւ 'ի փարաւոնէ՝ զոր ողբաց Երեմիա:

իթ. Թագաւորեաց Ոքոզիա և արար չարիս. կապեաց զնա փարաւոն և ած յեգիպտոս՝ ուստի ո'չ դարձաւ:

լ. Թագաւորեցոյց փարաւոն զեղիակիմ որ և Յովակիմ, զեղբայր Ոքոզեայ. և եդ հարկս 'ի վերայ երկրի:

լա. Յաւուրս Եղիակիմ Յովակիմայ ե'լ Նաբուքոդոնոսոր զառաջինն, եղև նմա Եղիակիմ ծառայ. և դարձաւ ապստամբեաց:

լբ. Ել 'ի վերայ նորա Նաբուքոդոնոսոր, և կապեաց զնա, կամ ըստ ոմանց՝ սպան, և զի ասէ մասն ինչ առնուլ 'ի սպասուցն Տեառն, կարծիս տայ թէ այժմ տարաւ զԴանիէլ:

լգ. Թագաւորեաց որդի սորա Յեքոնիա. և յետ երից ամսոց ապստամբեաց. և աստ ոմանք երրորդ գալ ասեն Նաբուքոդոնոսորայ և թագաւորեցուցանել զՍեդեկիա, և տանել զՅեքոնիա, յորժամ և զեգեկիէլ. և յինն ամին Սեդեկիայ՝ գալ դարձեալ Նաբուքոդոնոսորայ զվերջինն. իսկ այլք երիցս ասեն գալ Նաբուքոդոնոսորայ յերուսաղէմ:

լդ. Իսկ յառաջին ամին Կիւրոսի եւթանասուն ամ լցաւ իսկզբանէ մարգարէութեանն Երեմիայ, և ըստ վճռին Եսայեայ՝ հրաման ետ Կիւրոս ելանել զերւոյն յերուսաղէմ և շինել զտունն Աստուծոյ:

ՄՆԱՅՈՐԴԱՅ ԵՐԿՐՈՐԴ*

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ զօրացաւ Սողոմոն որդի Դաւթի 'ի թագաւորութեանն իւրում. և Տէր Աստուած իւր ընդ նմա էր. և մեծացոյց զնա 'ի բարձրութիւն: ²Եւ ասաց Սողոմոն ցամենայն Իսրայէլ, ցիազարապետս և ցիարիւրապետս, և ցղատաւորս, և ցամենայն իշխանս տոհմիցն: ³Եւ զնաց Սողոմոն և ամենայն եկեղեցին ընդ

* Ի վերնագիր գրոցս յօրինակին եղեալ էր՝ Մնացորդ Երկրորդ. բայց առեալ յայլոց եղաւ աստէն համաձայն առաջնոյն Մնացորդաց Երկրորդ. թէպէտ և օրինակ մի ունէր՝ Մնացորդք Երկրորդք:

նմա, ՚ի բարձաւանդա՛կն Գաբաւոնի. ուր էր անդ խորանն վկայութեան Աստուծոյ, զոր արա՛ր Սովսէս ծառայ Տեառն յանապատին՝: ⁴Բայց զտապանակն Աստուծոյ եհան Դաւիթ ՚ի քաղաքէն Կարիաթարիմայ. վասն զի պատրաստեաց նմա խորան Դաւիթ յերուսաղէմ. ⁵և սեղանն պղնձի զոր արար Բեսելիէլ որդի Ուրիայ որդւոյ Յովրայ, անդ էր առաջի խորանին Տեառն: Եւ խնդրեաց ինքն Սողոմոն և եկեղեցին՝: ⁶Եւ եհան անդ Սողոմոն ՚ի վերայ պղնձի սեղանոյն առաջի Տեառն ՚ի խորանին, և մատոյց ՚ի վերայ նորա ողջակէզս հազար: ⁷Ի գիշերին յայնմիկ երևեցաւ Աստուած Սողոմոնի, և ասէ ցնա. խնդրեա՛ զինչ տաց քեզ: ⁸Եւ ասէ Սողոմոն ցԱստուած. Դո՛ւ արարեր ընդ Դաւթի հօր իմում ողորմութիւն մեծ. և թագաւորեցուցէ՛ր զիս փոխանակ նորա. ⁹և արդ Տէր Աստուած՝ հաւատարիմ լիցի անուն քո ՚ի վերայ Դաւթի հօր իմոյ. վասն զի դո՛ւ թագաւորեցուցեր զիս ՚ի վերայ բազում ժողովրդեանս, որ է իբրև զհող երկրի: ¹⁰Եւ արդ՝ զիմաստութիւն և զհանճար տացես ինձ, զի ելանիցեմ առաջի ժողովրդեանս քոյ այսորիկ, և մտանիցեմ. վասն զի ո՛ր դատիցի զժողովուրդս քո զմեծ զայս՝: ¹¹Եւ ասէ Աստուած ցՍողոմոն. Փոխանակ զի եղև՝ այդ ՚ի սրտի քում, և ո՛չ խնդրեցեր մեծութիւն ընչից, և ո՛չ փառս, և ո՛չ զանձինս հակառակորդաց քոց, և աւուրս բազումս ո՛չ խնդրեցեր. այլ խնդրեցեր դու քեզ զիմաստութիւն և զհանճար, զի դատիցիս զժողովուրդ իմ յորոյ վերայ թագաւորեցուցի զքեզ՝: ¹²Զիմաստութիւն և զհանճար տամ քեզ, և զմեծութիւն, և զինչս և զփառս տաց քեզ. որպէս զի ո՛չ եղև նման քեզ ՚ի թագաւորս յառաջագոյն քան զքեզ, և զկնի քո ո՛չ լինիցի այդպէս: ¹³Եւ եկն Սողոմոն ՚ի Բամայ Գաբաւոնի յերուսաղէմ, յերեսաց խորանին վկայութեան. և թագաւորեաց ՚ի վերայ Իսրայէլի: ¹⁴Եւ ժողովեաց Սողոմոն կառս և հեծեալս. և եղեն նմա հազար և չորեք հարիւր կառք, և երկուտասան հազար հեծելոց. և եթող զնոսա ՚ի քաղաքս հեծելոցն, և զօրն էր ընդ արքայի յերուսաղէմ: ¹⁵Եւ եդ արքայ զոսկի և զարծաթ իբրև զքարինս յերուսաղէմ, և զմայրս ՚ի Յրեաստանի, իբրև զմուլաթզենիս ՚ի դաշտի բազմութեամբ: ¹⁶Եւ ելք ձիոցն Սողոմոնի յեգիպտոսէ. և զինք վաճառուց արքայի. ¹⁷երթեալ զնէին. և ելանէին ածէին յեգիպտոսէ կառս մի վեց հարիւր արծաթոյ, և ձի հարիւր և յիսուն. և այնպէս ամենայն թագաւորացն Նեքտացոց, և թագաւորացն Ասորեաց ՚ի ձեռս նոցա բերէին՝:

2

Գլուխ Բ

Բ ¹Եւ ասաց Սողոմոն շինել զտուն անուան Տեառն, և զտուն թագաւորութեան իւրոյ: ²Եւ ժողովեաց Սողոմոն եւթանասուն հազար արանց բեռնակրաց, և ութսուն հազար քարահատաց ՚ի լէրինս. և վերակացուք նոցա երեք հազար և վեց հարիւր: ³Եւ առաքեաց Սողոմոն առ Քիրամ արքայ Տիրոսի՝ և ասէ. Որպէս արարեր ընդ հօր իմոյ Դաւթի, և ետուր նմա մայր փայտս, շինել իւր տուն

* *Յօրինակին.* ՚ի բարձաւակն Գաբա՛:

* *Ոմանք.* Եւ զսեղանն պղնձի զոր արար Բեսելիէլ որդի:

* *Բազումք.* Ո՞ր դատեցի զժողո՞: *Յօրինակին պակասէր.* Զժողովուրդս քո զմեծ:

* *Այլք.* Զի դատեցիս զժողովուրդ իմ: *Ոմանք.* Յորոց վերայ թագաւորէ՛:

* *Այլք.* Ամենայն թագաւորացն Քեքտացոց. *կամ՝* Քեքտացոց:

բնակելոյ ՚ի նմա*։ ⁴Եւ արդ՝ ահա ե՛ս որդի նորա՝ շինեմ տուն անուան Տեառն Աստուծոյ իմոյ, սրբել զնա նմա, ծխել առաջի նորա խունկս, և առաջադրութիւնս յամենայն ժամ. և մատուցանել ողջակէզս հանապազ առաւօտուց և երեկորին, և ՚ի շաբաթս, և յամսամուտս, և ՚ի տօնս Աստուծոյ մերոյ, յաւիտեան զայն յԻսրայէլէ*։ ⁵Եւ տունս զոր ե՛ս շինեմ մեծ է. վասն զի մեծ է Աստուած մեր քան զամենայն աստուածս. ⁶և ո՛ր կարասցէ շինել նմա տուն. զի եթէ երկինք՝ և երկնից երկինք ո՛չ տանին զփառս նորա. և զի՞նչ ես շինեցից նմա տուն. այլ զի ծխեսցեն խունկս առաջի նորա։ ⁷Եւ արդ՝ առաքեա՛ ինձ ա՛յր իմաստուն, որ գիտիցէ գործել զոսկի և զարծաթ, և զպղինձ, և զերկաթ, և զծիրանի, և զկարմիր, և զկապուտակն, և զբեհեզն. և որ գիտիցէ քանդակել զքանդակս ընդ իմաստունս իմ, որք են ՚ի Յրեաստանի և յԵրուսաղէմ. զորս պատրաստեաց Դաւիթ հայր իմ։ ⁸Եւ տո՛ւր բերել ինձ փայտս մայրս, և սարոյս, և թեղաւշս ՚ի Լիբանանէ. վասն զի ես գիտեմ, իբրև զծառայս քո ո՛չ որ գիտէ հատանել փայտ ՚ի Լիբանանէ. և արդ՝ ծառայք քո երթիցեն ընդ ծառայս իմ*, ⁹պատրաստել ինձ փայտ բազում. վասն զի տունս զոր ես շինեմ, է մեծ և փառաւոր*։ ¹⁰Եւ գործօնէիցն որք հատանեն զփայտն՝ ՚ի կերակուր ետու հաց՝ ռոճիկ ծեռայից քոց՝ քսան հազար քոռ ցորենոյ, և քսան հազար քոռ գարւոյ, և քսան հազար չափ գինւոյ, և ձէթ քսան հազար չափ*։ ¹¹Եւ ասաց Քիրամ արքայ Տիրոսի գրով, և արձակեաց առ Սողոմոն. Վասն սիրելոյ Տեառն զժողովուրդ իւր, ետ զքեզ ՚ի վերայ դոցա թագաւոր։ ¹²Եւ ասէ Քիրամ. Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի որ արար զերկինս և զերկիր. որ ե՛տ Դաւթի արքայի որդի իմաստուն, գիտել զհանճար և զիմաստութիւն. որ շինեսցէ զտուն Տեառն, և զտուն թագաւորութեան իւրոյ*։ ¹³Եւ արդ՝ ահա առաքեցի քեզ ա՛յր իմաստուն, որ գիտէ զհանճար՝ զՔիրամ զծառայ իմ*։ ¹⁴մայր դորա՝ է ՚ի դստերացն Դանայ, և հայր դորա՝ այր Տիրացի. գիտէ գործել զոսկի և զարծաթ, և զպղինձ, և զերկաթ, և զքարինս, և զփայտս, և անկանել զծիրանին, և զկապուտակն, և զբեհեզն, և զկարմիրն, և քանդակել քանդակս. և իմանալ զամենայն հնարս զորս տացես ցոյ՛ս՝ ընդ իմաստունս քո և ընդ իմաստունս Դաւթի տեառն իմոյ հօր քոյ։ ¹⁵Եւ արդ՝ զցորեանն և զգարին և զձէթն և զգինին, զոր ասաց տէր իմ. տացէ՛ ծառայից իւրոց. ¹⁶և մեք հատանենք փայտ ՚ի Լիբանանէ ըստ ամենայն պիտոյից քոց. և ածցուք զնոսա ընդ ծով լաստս ՚ի Յոպպէ, և հաւաքեսցեն՝ զայն յԵրուսաղէմ։

Գ ¹⁷Եւ ժողովեաց Սողոմոն զամենայն արս պանդուխտս յԵրուսաղէմ զկնի թուոյն զոր թուեաց զնոսա Դաւիթ հայր նորա. և գտան հարիւր յիսուն հազար, և երեք հազար և վեց հարիւր. ¹⁸և արար ՚ի նոցանէ եւթանասուն հազար բեռնակրաց, և ութսուն հազար քարահատաց, և զերեք հազարսն և զվեց հարիւրսն՝ զործավարս ՚ի վերայ նոցա*։

* *Ոմանք.* Ընդ հօրն իմուն Դաւթի։

* *Ոմանք.* Եւ ՚ի տօնս Տեառն Աստուծոյ մերոյ, յաւիտեան։

* *Ոմանք.* Եւ սարոյրս, և թեղաւշս։

* *Ոսկան.* Է մեծ փառաւոր։

* *Ոմանք.* Եւ գինի ԻՌ չափ։

* *Բազումք.* Չտունն Տեառն, և զտուն։

* *Ոմանք.* Իմաստուն և որ գիտէ։

* *Ոմանք.* Եւ զերիս հազարսն։

Գլուխ Գ

¹Եւ սկսաւ Սողոմոն շինել գտունն յերուսաղէմ. ՚ի լերինս Ամուրհացոցն, ուր երևեցաւ Տէր Դաւթի հօր նորա, ՚ի տեղուջ յորում պատրաստեաց Դաւիթ, ՚ի կա՛լ Ոռնայ Յերուսացոյ*։ ²Եւ սկսաւ շինել յամսեանն երկրորդի, յամին չորրորդի թագաւորութեան իւրոյ. ³և սկսաւ Սողոմոն շինել գտունն Աստուծոյ։ Երկայնութիւն չափոյ առաջնոյն ՚ի վաթսուն կանգնոյ՝ և լայնութիւն ՚ի քսան կանգնոյ։ ⁴Եւ եղ՛ամ դէմ յանդիման տանն, երկայնութիւնն առաջին՝ և լայնութիւն տանն կանգնոց քսանից. և բարձրութիւն քսան կանգնոյ. և պատեաց զնա ոսկով սրբով ՚ի ներքուստ*։ ⁵Եւ գտունն մեծ՝ դրուագեաց մա՛յր փայտիւք, և պատեաց ոսկով սրբով, և քանդակեաց ՚ի նմա արմաւենիս, և շղթայագործս։ ⁶Եւ զարդարեաց գտունն ականբք պատուականօք ՚ի փառս, և ոսկով սրբով ՚ի Սեփարուիմայ։ ⁷Եւ պատեաց գտունն ոսկով, և զորմսն, և զդրունսն, և զծեղունն՝ և զդուրս, և քանդակեաց քրորէս յորմսն։ ⁸Եւ արար գտուն սրբութեան սրբութեանցն, զերկայնութիւն նորա առաջոյ կողմանէ ՚ի քսան կանգնոյ, և զլայնութիւնն ՚ի քսան կանգնոյ, և պատեաց զնա մաքուր ոսկով ՚ի քրորէս՝ վեց հարիւր տաղանտով*։ ⁹Եւ կշիռ բեռացն միոյ միոյ կշռութիւն յիսուն սիկղ ոսկոյ. և զվերնատունն պատեաց ոսկով*։ ¹⁰Եւ արար ՚ի տան սրբութեան սրբութեանցն քրորէս երկուս գործ. և պատեաց զնոսա ոսկով. ¹¹և թևք քրորէիցն՝ երկայնութիւն քսան կանգուն. թև մի ՚ի հինգ կանգնոյ, կցեալ յորմս տանն, և թևն մևս ՚ի հինգ կանգնոյ կցեալ ՚ի թև քրորէին միւսոյ*։ ¹²և թևն քրորէին միւսոյ ՚ի հինգ կանգնոյ կցեալ յորմս տանն. և մևս թևն ՚ի հինգ կանգնոյ կցեալ ՚ի թև քրորէին միւսոյ։ ¹³Եւ թևք քրորէիցն տարածեալք ՚ի քսան կանգնոյ. և ինքեանք կային ՚ի վերայ ոտից իւրեանց, և դէմք նոցա ՚ի տունն։ ¹⁴Եւ արար զվարագոյրն ՚ի կապուտակէ և ՚ի ծիրանւոյ, ՚ի կարմրոյ՝ և ՚ի բեհեզոյ, և անկանէր ՚ի նմա քերովբէս։ ¹⁵Եւ արար առաջի տանն սիւնս երկու. յերեսունուհինգ կանգնոյ բարձրութիւն. և զխոյակս նոցա ՚ի հինգ կանգնոյ*։ ¹⁶Եւ արար վանդակապատ ՚ի դաբիրայն, և եդ ՚ի վերայ զլիտոյ սեանցն. և արար նոնաձևս հարիւր, և եդ ՚ի վերայ շղթայագործացն։ Եւ կանգնեաց զսիւնսն առաջի տաճարին, զմին յաջմէ, և զմևսն յահեկէ. և կոչեաց զանուն այնորիկ որ յաջմէն էր՝ Ուղղութիւն, և զանուն այնորիկ՝ որ ՚ի ձախմէն էր՝ Զօրութիւն*։

Գլուխ Դ

* *Ոմանք.* Չտունն Տեառն յերուսաղէմ, ՚ի լերին Ամուրհացոյն։ *Յօրինակին յետ բառիս՝* երևեցաւ, *յաւելեալ դնի՝* նմա, *որ և չակերտիւ նշանակի բառնալ. գորով և մեք զանց արարաք համաձայն այլոց։*

* *Այլք.* Եւ բարձրութիւն հարիւր և քսան կանգնոյ։ *Ոմանք.* Եւ պատեաց զնոսա ոսկով սր՛։

* *Ոմանք.* Առաջի կողմանէ ՚ի քսան կանգնոց։

* *Այլք.* Եւ կշիռ բեռացն միոյ միոյ։

* *Ոմանք.* Քսան կանգնոյ. և թև մի ՚ի հինգ։

* *Այլք.* Յերեսուն և ՚ի հինգ կանգնոյ։

* *Ոմանք.* Եւ զանուն այնորիկ որ ՚ի ձախմէն։

¹Եւ արար սեղան պղնձի, ՚ի քսան կանգնոյ զերկայնութիւն, և ՚ի քսան կանգնոյ զլայնութիւն, և զբարձրութիւն ՚ի տասն կանգնոյ: ²Եւ արար զծովն հալածոյ ՚ի տասն կանգնոյ զչափն, բոլորակ շուրջանակի, և ՚ի հինգ կանգնոյ զբարձրութիւն, և շուրջանակի յերեսուն կանգնոյ*: ³Եւ նմանութիւն եզանց ՚ի ներքոյ նորա, որք շուրջ կային, ՚ի տասն կանգնոյ շուրջ պատեալք զնովաւ. և ձուլեցին զգուարակսն ըստ ձուլածոյն իւրեանց. ⁴որպէս արարին զնոսա երկոտասան զուարակս. երեքն հայէին ՚ի հիւսւսի, և երեքն հայէին յարևմուտս, և երեքն հայէին ՚ի հարաւ, և երեքն հայէին յարևելս. և ծովն ՚ի վերայ նոցա, և յետոյքն իւրեանց ՚ի ներքոյ*: ⁵Եւ թանձրութիւն ծովուն թզաւ, և շուրթն նորա իբրև զշուրթն բաժակի, քանդակեալ բոյս շուշանի, և տանէր երիս հազարս չափ. ⁶և կատարեաց զնա: Եւ արար աւազանս տասն. և եդ զհինգն յաջմէ, և զհինգն ՚ի ձախմէ. լուանալ ՚ի նոսա զգործ ողջակիզացն, և ողողել ՚ի նոսա. և ծովն առ ՚ի լուանալ ՚ի նմա քահանայիցն զինքեանս: ⁷Եւ արար զաշտանակսն ոսկիս տասն ըստ յօրինուածոյն իւրեանց. և եդ զնոսա ՚ի տաճարին, զհինգն յաջմէ և զհինգն ՚ի ձախմէ*: ⁸Եւ արար սեղանս տասն, և եդ ՚ի տաճարին, հինգ յաջմէ և հինգ ՚ի ձախմէ. և արար տաշտս ոսկիս հարիւր: ⁹Եւ արար զսրահն քահանայիցն. և զսրահն զմեծ. և զդրունս սրահին, և զդրունս նոցա պատեաց պղնձով: ¹⁰Եւ զծովն եդ յանկեան տաճարին յաջմէ կողմանէ իբրև յարևելս առաջի: ¹¹Եւ արար Քիրամ զմսահանսն և զկաթսայս, և զկասկարայս սեղանոյն, և զամենայն զկահն նորա: Եւ կատարեաց Քիրամ առնել զամենայն գործն զոր հրամայեաց արքայն Սողոմոն ՚ի տանն Աստուծոյ*: ¹²Զսիւսն երկուս, և ՚ի վերայ նոցա զխոյակսն, և ՚ի վերայ խոյակաց սեանցն զքովթարովթսն զերկոսեան, և զվանդակագործսն զերկուս՝ առ ՚ի ծածկել զխոյակս քովթարովթայցն, որք էին ՚ի վերայ զլիսոց սեանցն: ¹³Եւ զանգակս ոսկեղէնս չորեքհարիւր յերկոսեան վանդակապատսն. և զերկուս ազգս նմանաձևացն ՚ի միում վանդակագործին՝ ծածկել զերկոսեան խոյակսն որ էին ՚ի վերայ սեանցն: ¹⁴Եւ զմենքենովթսն արար տասն, և զաւազանսն ՚ի վերայ մենքենովթացն. ¹⁵և զծովն զմի. և զուարակս երկոտասան ՚ի ներքոյ նորա*. ¹⁶և զկասկարայս. և զբառնալիսն. և զսանսն. և զմսահանսն. և զամենայն կահ նոցա զոր արար Քիրամ. և տարաւ արքայի Սողոմոնի ՚ի տունն Տեառն: Ի մաքուր պղնձոյ, ¹⁷յընդարձակութեան երկրին Յորդանանու ձուլեաց զայն արքայ ՚ի թանձրութեան հողոյն ՚ի տանն Սոքովթայ, ՚ի մէջ Սադաթայ*: ¹⁸Եւ արար Սողոմոն զամենայն սպասն զայն բազում յոյժ. վասն զի ո՛չ պակասեաց կշիռ պղնձոյն: ¹⁹Եւ արար Սողոմոն զամենայն սպաս տանն Տեառն. և զսեղանն ոսկի, և զայլ սեղանսն. և ՚ի վերայ նոցա զհացն զառաջաւորութեան. ²⁰և զաշտանակսն. և զճրագունսն լուսոյ ըստ յօրինուածոյն յանդիման դաբիրայն ՚ի մաքուր ոսկւոյ*. ²¹և ճրագարանք իւրեանց, և բազմակալք իւրեանց, ²²և տաշտքն, և խնկամանքն, և բուրուառքն ՚ի մաքուր ոսկւոյ. և դուրք տանն ներքոյ ՚ի սրբութիւն սրբութեանցն. և զդրունս

* *Ոմանք.* Զծովն հալածոց:

* *Ոմանք.* Հայէին ընդ հիւսւսի... հայէին ընդ հարաւ:

* *Յօրինակին.* Զաշտանակն ոսկիս տասն:

* *Այլք.* Եւ զկատսայս: *Յօրինակին.* Եւ զկասարայս սեղա՞ն:

* *Ոմանք.* Եւ զուարակս ԲԺ ՚ի վերայ նորա:

* *Ոսկան.* Զուլեաց զայն արքայ ՚ի թանձրութիւն:

* *Ոսկան.* Յանդիման դաբիրային:

տաճարին ոսկեղէն*:

5

Գլուխ Ե

¹Եւ կատարեցաւ ամենայն գործն զոր արար Սողոմոնն ՚ի տանն Տեառն. և տարաւ ՚ի ներքս Սողոմոնն զսրբութիւնսն Դաւթի՝ հօր իւրոյ, զարծաթն և զոսկին. և զսպասն ե՛տ ՚ի գանձս տան Տեառն*:

Դ ²Յայնժամ եկեղեցացո՛յց Սողոմոնն զծերսն Իսրայէլի, և զամենայն իշխանս ցեղիցն, զառաջնորդս տոհմից որդւոցն Իսրայէլի յերուսաղէմ, հանել զտապանակ ուխտին Տեառն ՚ի քաղաքէ Դաւթի՝ նա՛ է Սիովն: ³Եւ ժողովեցաւ առ արքայ ամենայն այր Իսրայէլի ՚ի տօնին. այն է ամիսն եւթներորդ. ⁴և եկին ամենեքեան ծերքն Իսրայէլի: Եւ առին ամենեքեան Ղևտացիքն զտապանակն և հանին զնա. ⁵և զխորանն վկայութեան, և զամենայն սպասն սուրբ որ էր ՚ի խորանին. և հանին զայն քահանայքն և Ղևտացիքն*:⁶Եւ արքայ Սողոմոնն և ամենայն ժողովուրդն Իսրայէլի, և երկիւղածքն, և ժողովեալքն նոցա առաջի տապանակին. զենուին զուարակս և ոչխարս, որոց ո՛չ գոյր թիւ և ո՛չ համար ՚ի բազմութենէն: ⁷Եւ տարան ՚ի ներքս Ղևտացիքն զտապանակ ուխտին Տեառն ՚ի տեղին իւր՝ ՚ի դաբիր տանն ՚ի սրբութիւն սրբութեանցն, ՚ի ներքոյ թևոց քերորէիցն: ⁸Եւ էր քերորէիցն թռուցեալ զթևս իւրեանց ՚ի վերայ տապանակին, և ծածկէին քրորէքն զտապանակն, և զբառնալիս նորա ՚ի վերուստ: ⁹Եւ շուրջ ունէին բառնալիքն, և հայէին զլուխք բառնալեացն ՚ի սրբութեանցն ՚ի դէմս դաբիրայն. և ո՛չ երևէին արտաքս և էին անդ մինչև ցայսօր: ¹⁰Եւ ո՛չ ինչ էր ՚ի տապանակին՝ բայց երկո՛ւ տախտակքն զորս ե՛ր անդ Մովսէս ՚ի Քորէք, զորս ուխտեաց Տէր ընդ որդիսն Իսրայէլի, յելանելն նոցա յերկրէն Եգիպտոսի: ¹¹Եւ եղև իբրև ելին քահանայքն ՚ի սրբութեանցն. վասն զի ամենեքեան քահանայքն որք գտան անդ՝ սրբեցան. և ո՛չ էին կարգեալ օր ըստ օրէ պաշտօնեայքն, ¹²և Ղևտացիքն սաղմոսանուագք. ամենեքեան յորդւոցն Ասափայ և Եմանայ և Իդիթովմայ, և յորդւոցն նոցա, և յեղբարցն նոցա. որք զգեցեալ էին զպատմութեանս բեհեզեղէնս. և տաւօրք և քնարօք և սրընգօք, կային յարևելից կողմանէ սեղանոյն. և ընդ նոսա քահանայք հարիւր և քսան՝ հարկանէին փողս*:¹³Եւ եղև միանգամայն ձայն ՚ի հարկանել զփողսն, և յերգել զսաղմոսն, և ամբառնալ զձայնսն միաբան ասելով. Խոստովան եղերուք և օրհնեցէք զՏէր: Եւ բարձրացուցին զձայնսն փողովքն և ծնծղայիւք, և զործուովք երգոյն. և ասացին. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմ նորա: Եւ տունն լցա՛ւ ամպով փառացն Տեառն*. ¹⁴և ո՛չ կարէին քահանայքն կա՛լ ՚ի պաշտամանն յերեսաց ամպոյն. վասն զի լցին փառքն Տեառն զտունն Աստուծոյ:

6

* Այլք. Տանն ներքնոյ ՚ի սր՛:

* Ոմանք. Եւ զպասսն: Եւ զամենայն սպասսն:

* Ոմանք. Եւ զսպասսն: Եւ զամենայն սպասսն:

* Յօրհնակին. Քահանայք ճի՛:

* Այլք. Եւ գործեօք երգոյն: Ոմանք. Ձի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Գլուխ Զ

¹Յայնժամ խօսեցաւ Սողոմոն. Տէր ասաց բնակել 'ի մառախոյի*։ ²Եւ ես շինեցի տուն անուան քում զարբութիւնս քո, և պատրաստեցի բնակել 'ի սմա յալիտեանս։ ³Եւ դարձոյց արքայ զերեսս իւր, և օրհնեաց զամենայն եկեղեցին Իսրայէլի. և ամենայն եկեղեցին Իսրայէլի կայր շուրջ. և ասէ. ⁴Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի. որ խօսեցաւ բերանով իւրով ընդ Դաւթի հօր իմում, և ձեռօք իւրովք ելից։ ⁵Եւ ասէ. Յօրէ յորմէ հանի զժողովուրդ իմ յերկրէն Եգիպտոսի՝ ո՛չ ընտրեցի քաղաք մի յամենայն ցեղիցն Իսրայէլի շինել ինձ տուն, զի լինիցի անուն իմ անդ. և ո՛չ ընտրեցի զայր ոք լինել առաջնորդ 'ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի։ ⁶Եւ արդ՝ ընտրեցի զերուսաղէմ լինել անուան իմոյ աստ. և ընտրեցի զԴաւիթ՝ զի լինիցի 'ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի։ ⁷Եւ եղև 'ի սրտի Դաւթի հօր իմոյ շինել տո՛ւն անուան Տեառն Աստուծոյ Իսրայէլի. ⁸և ասաց Տէր ցԴաւիթ հայր իմ. Վասն զի եղև 'ի սրտի քում շինել տո՛ւն անուան իմոյ՝ բարւո՛ք արարեր զի եղև այդ 'ի սրտի քում*. ⁹բայց սակայն դու ո՛չ շինեսցես ինձ տուն, այլ որդի՛ քո որ ելանէ յորովայնէ քումմէ, նա՛ շինեսցէ տուն անուան իմոյ*։ ¹⁰Եւ կանգնեաց Տէր զբան իւր զոր խօսեցաւ, և եղէ ես փոխանակ Դաւթի հօր իմոյ. նստայ յաթոռն Իսրայէլի որպէս խօսեցաւ Տէր, և շինեցի զտունս զայս անուան Տեառն Աստուծոյ Իսրայէլի. ¹¹և եղի՛ աստ զտապանակ ուխտին զոր ուխտեաց ընդ որդիսն Իսրայէլի*։ ¹²Եւ եկա՛ց յանդիման սեղանոյն Տեառն առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայէլի. և ամբարձ զձեռս իւր։ ¹³Վասն զի արար Սողոմոնով խարիսխս պղնձի, և եղ գնա 'ի մէջ սրահի տաճարին, 'ի հինգ կանգնոյ զերկայնութիւն նորա, և 'ի հինգ կանգնոյ զլայնութիւնն, և յերից կանգնոց զբարձրութիւն նորա. և եկաց 'ի վերայ նորա, անկաւ 'ի վերայ ծնգաց իւրոց առաջի ամենայն եկեղեցւոյն Իսրայէլի, և ամբարձ զձեռս իւր յերկինս, ¹⁴և ասէ. Տէր Աստուած Իսրայէլի. ո՛չ ոք է նման քեզ Աստուած յերկինս, և ո՛չ 'ի վերայ երկրի. որ պահես զուխտս և զողորմութիւն ամենեցուն, որ գնան առաջի քո ամենայն սրտիւք իւրեանց։ ¹⁵Ձի պահեցեր ծառայի քում Դաւթի հօր իմոյ, զոր խօսեցար ընդ նմա և ասացեր. խօսեցար բերանով քով, և ձեռօք քո լցեր՝ այսօր։ ¹⁶Եւ արդ՝ Տէր Աստուած Իսրայէլի, պահեա՛ ծառայի քում Դաւթի հօր իմում, զոր ինչ խօսեցար ընդ նմա և ասացեր. Ո՛չ պակասեցէ քո այր յերեսաց իմոց որ նստցի յաթոռն Իսրայէլի. բայց միայն թէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ, որպէս գնացեր դու առաջի իմ*։ ¹⁷Եւ արդ՝ Տէր Աստուած Իսրայէլի, հաւատարիմ լիցի բանն քո Դաւթի*։ ¹⁸Եթէ ստուգութեամբ բնակեսցէ Աստուած ընդ մարդկան 'ի վերայ երկրի. զի եթէ երկինք՝ և երկնից երկինք ո՛չ են բաւական քեզ. և՛ զի՞նչ է տունս այս զոր շինեցի։ ¹⁹Եւ արդ՝ հայեսցիս յաղօթս ծառայի քոյ, և 'ի խնդրուածս իմ Տէր Աստուած, լսել զաղաչանս և զաղօթս, զոր ծառայ քո աղաչէ՛ առաջի քո այսօր, ²⁰լինել բա՛ց աչաց քոց և մտաց 'ի տանս յայսմ 'ի տուէ և 'ի գիշերի. 'ի տեղուոջս յորում ասացեր կոչել զանուն քո 'ի սմա, առ 'ի լսել

* Ոմանք. Տէր իմ ասաց բնակել 'ի մա՛։

* Ոմանք. ՅԴաւիթ ցհայր իմ։

* Բազումք. Որ ելցէ յորովայնէ։

* Ոմանք. Ձտապանակ ուխտին Տեառն։

* Ոմանք. Որ նստցի յաթոռ... միայն եթէ պահեսցէ։

* Յօրհնակին պակասէր. Լիցի բանն քո Դաւթի։

զաղօթս զոր ծառայ քո աղաչէ՛ ՚ի տեղւոջս յայսմ՝: ²¹Եւ լուիցեն՝ս զխնդրուածս ծառայի քոյ, և ժողովրդեան քոյ Իսրայէլի, զոր ինչ աղաչեսցեն ՚ի տեղւոջս յայսմ. և դու լուիցես ՚ի տեղւոջէ բնակութեան քոյ յերկնից, լուիցես՝ և քաւիչ լիցիս: ²²Ձոր ինչ մեղանչիցէ այր ընկերի իւրում, և առնուցու նզովս յաղագս այնորիկ նզովել՝ զնա. և եկեսցէ կացցէ առաջի սեղանոյս ՚ի տանս յայսմիկ. ²³և դու լուիցեն՝ս յերկնից, և արասցես, և դատեսցիս զծառայսն քո՝ հատուցանելով անօրինին. տալ՝ ըստ ճանապարհաց նորա ՚ի գլուխ նորա, և արդարացուցանել զարդարն. և տալ՝ իւրաքանչիւր ունեք ըստ արդարութեան իւրում: ²⁴Եւ եթէ վանեսցի՝ ժողովուրդ քո Իսրայէլ առաջի թշնամեաց, եթէ մեղիցեն քեզ՝ և դարձցին, և խոստովան լիցին անուան քում, և յաղօթս կացցեն և պաղատեսցին առաջի քո ՚ի տանս յայսմ՝, ²⁵և դու լուիցեն՝ս յերկնից. և քաւիչ լիցիս մեղաց ժողովրդեան քոյ Իսրայէլի. և դարձուցեն՝ս զնոսա յերկիրն զոր ետուր նոցա՝ և հարց նոցա: ²⁶Յարգելուլ քո զերկինս ո՛չ լինել անձրև, թէ մեղիցեն քեզ. և յաղօթս կացցեն ՚ի տեղւոջս յայսմ, և օրհնեսցեն զանուն քո, և ՚ի մեղացն իւրեանց դարձցին, վասն զի նկուն արասցես զնոսա՝. ²⁷և դու լուիցեն՝ս յերկնից, և քաւիչ լիցիս մեղաց ծառայից քոց, և ժողովրդեան քոյ Իսրայէլի. վասն զի յայտնեսցեն՝ս նոցա զճանապարհն բարի որ գնասցեն ՚ի նմա. և տացես անձրև՝ ՚ի վերայ երկրի քոյ, զոր ետուր ժողովրդեան քում ՚ի ժառանգութիւն՝: ²⁸Սո՛վ եթէ լինիցի ՚ի վերայ երկրի. մա՛հ եթէ լինիցի. խորշակահարութիւն, և դալուկն. և մարախ, և ջորեակ եթէ լինիցի. եթէ նեղիցէ զնոսա թշնամի յանդիման քաղաքացն իւրեանց. ըստ ամենայն հարուածոց, և ըստ ամենայն ցաւոց՝, ²⁹ամենայն աղօթիւք և ամենայն պաղատանօք, որ լինիցին ամենայն մարդոյ, և ամենայն ժողովրդեան քո Իսրայէլի. եթէ ծանիցէ մարդ զբորոտութիւն իւր և զախտ իւր, և ամբարձցէ զձեռս իւր ՚ի տունս յայսմ՝: ³⁰Եւ դու լուիցեն՝ս յերկնից ՚ի պատրաստ բնակութենէ քումմէ. և բժշկեսցեն՝ս, և տացեն՝ս առն ըստ սրտի իւրում, որպէս և ծանիցես զսիրտ նորա. վասն զի դու միայն ճանաչես զսիրտս որդւոց մարդկան. ³¹որպէս զի երկիցեն ՚ի ճանապարհաց քոց զամենայն աւուրս զոր կեսցեն նոքա ՚ի վերայ երեսաց երկրին զոր ետուր հարցն նոցա՝: ³²Եւ ամենայն օտարական որ ո՛չ իցէ ՚ի ժողովրդենէ քումմէ յԻսրայէլէ ինքն. և եկեսցէ յերկրէ հեռաստանէ՝ վասն անուան քոյ մեծի՝ և հզօր ձեռին քոյ, և բա՛րձր բազկի քոյ. և եկեսցեն և յաղօթս կացցեն ՚ի տեղւոջս յայսմ՝. ³³և լուիցեն՝ս յերկնից ՚ի պատրաստ բնակութենէ քումմէ. և արասցեն՝ս ըստ ամենայնի զոր ինչ և կարդասցէ առ քեզ օտարականն. զի ծանիցեն ամենայն ժողովուրդք երկրի զանուն քո, և երկիցեն ՚ի քէն՝ որպէս և ժողովուրդ քո Իսրայէլ, և գիտասցեն եթէ կոչեցեալ է անուն քո ՚ի վերայ տանս այսորիկ զոր շինեցի՝: ³⁴Եթէ ելցէ ժողովուրդ քո ՚ի պատերազմ ՚ի վերայ

* *Ոսկան.* Աչաց քոց ՚ի վերայ տանս այսմ ՚ի տուէ:

* *Ոմանք.* Եւ եթէ մեղիցեն քեզ:

* *Ոմանք.* Նկունս արասցես:

* *Ոմանք.* Յոր գնասցեն ՚ի նոսա, և տացես:

* *Այլք.* Եւ դալուկն և մարախ, և:

* *Այլք.* Ամենայն աղօթք և ամենայն պաղատանք: *Ոսկան.* Ծանիցի մարդ... ՚ի տանս յայսմ:

* *Այլք.* Ձորս կեսցեն:

* *Յօրինակին կրկնի.* Ինքն. և եկեսցէ *ինքն* յերկրէ հե՛:

* *Ոմանք.* Եթէ կոչեցեալ է Տէր անուն քո:

թշնամեաց իւրոց ՚ի ճանապարհ յոր առաքեսցես զնոսա. և յաղօթս կացցեն առ քեզ ՚ի ճանապարհի քաղաքիս այսորիկ զոր ընտրեսցեր զսա, և տանս զոր շինեցի անուան քում*.³⁵ և լուիցես յերկնից պաղատանաց և աղօթից նոցա, և արասցես իրաւունս նոցա*,³⁶ վասն զի մեղանչեն քեզ. քանզի ո՛չ գոյ մարդ որ ո՛չ մեղանչէ, և հարցես զնոսա, և մատնեսցես զնոսա առաջի երեսաց թշնամեաց. և գերելով գերեսցին յերկիր թշնամեացն, յերկիր հեռաւոր կամ մերձաւոր*.³⁷ և դարձցին սրտիւք իւրեանց յերկրին յոր փոփոխեցան անդր. դարձցին և աղաչեսցեն զքեզ ՚ի գերութեանն իւրեանց. և ասասցեն. Մեղա՛ք անօրինեցաք*:³⁸ Եւ դարձցին առ քեզ յամենայն սրտից իւրեանց, և ՚ի բոլոր անձնէ իւրեանց յերկիր գերութեանն. և յաղօթս կացցեն ՚ի ճանապարհ երկրիս այսորիկ զոր ետուր հարցն մերոց, և քաղաքիս զոր ընտրեսցեր, և տանս զոր շինեցի անուան քում*:³⁹ Եւ լուիցես յերկնից ՚ի պատրաստ բնակութենէ քումմէ աղօթից նոցա և պաղատանաց իւրեանց. և արասցես իրաւունս, և քաւի՛չ լիցիս ժողովրդեանն մեղուցելոյ քեզ*:⁴⁰ Եւ արդ՛ Տէր, եղիցին աչք քո բա՛ց, և ականջք քո առ ՚ի լսել՛ զպաղատանս ՚ի տեղւոջս յայսմ:⁴¹ Եւ արդ՛ արի՛ Տէր Աստուած՝ ՚ի հանգիստ քո, դու և տապանակ սրբութեան քոյ. քահանայք քո Տէր Աստուած՝ զգեցցին զփրկութիւն, և որդիք քո ուրախ եղիցին ՚ի բարութիւնս:⁴² Տէր Աստուած՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յօժելոյ քումմէ. յիշեա՛ ողորմութեամբ քո զԴաւիթ ծառայ քո:

7

Գլուխ Է

¹Եւ իբրև կատարեաց Սողոմոն զաղօթսն, հո՛ւր էջ յերկնից և եկեր զողջակէզսն, և զգոհսն. և փառքն Տեառն լցին զտունն:² Եւ ո՛չ ևս կարէին քահանայքն մտանել ՚ի տուն Տեառն ՚ի ժամանակին յայնմիկ. վասն զի լցին փառքն Տեառն զտունն:³ Եւ ամենայն որդիքն Իսրայէլի տեսանէին զիջանել հրոյն, և զփառսն Տեառն ՚ի վերայ տանն. և անկան ՚ի վերայ երեսաց յերկիր ՚ի քարայատակ տեղւոջն, և երկիր պագին, և օրհնեցին զՏէր. զի բարի՛ է՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա*:⁴ Եւ արքայ և ամենայն ժողովուրդն զենուին զոհս առաջի Տեառն:⁵ Եւ եզեն Սողոմոն զգոհսն, զուարակս քսան և երկու հազարս, և ոչխարս արօտականս հարիւր քսան հազարս. և արար զնաւակատիս տաճարին Աստուծոյ արքայ և ամենայն ժողովուրդն*:⁶ Եւ քահանայքն ըստ պահպանութեանն իւրեանց կացին, և Ղևտացիքն նուագարանօք երգոցն Տեառն, և Դաւթայ արքայի. խոստովան լինել առաջի Տեառն՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա. օրհնութեամբքն Դաւթայ ՚ի ձեռն նոցա. և քահանայքն հարկանէին փողս առաջի նոցա. և ամենայն Իսրայէլ յո՛տն

* *Յօրինակին.* ՚ի ճանապարհ ՚ի քաղաքիս այսո՛ւ:

* *Այլք.* Պաղատանաց նոցա և աղօ՛:

* *Այլք.* Յերկիր հեռաւոր կամ մօտաւոր:

* *Ոմանք.* Յոր փոխեցան անդր... մեղաք և անօրի՛:

* *Ոմանք.* Յերկրի գերութեանն... զոր ետուր հարցն նոցա:

* *Ոսկան.* Ժողովրդեան քո մեղուցելոյ:

* *Ոմանք.* ՚ի վերայ երեսաց երկրի քարայա՛:

* *Յօրինակին.* Զուարակս ԻԲՈս:

կայր*։ ⁷Եւ սրբեաց Սողոմոն զմիջոց սրահին՝ որ էր ՚ի տանն Տեառն. վասն զի անդ արար զողջակէզսն և զճարպն փրկութեան. քանզի սեղանն պղնձի զոր արար Սողոմոն ո՛չ կարէր ընդունել զողջակէզսն, և զմանանայն, և զճարպսն*։ ⁸Եւ արար Սողոմոն զտօնն ՚ի ժամանակին յայնմ աւուրս եւթն. և ամենայն Իսրայէլ ընդ նմա, եկեղեցի մե՛ծ յոյժ, ՚ի մտիցն Եմաթայ մինչև ՚ի հեղեղատն Եգիպտոսի*։ ⁹Եւ արար յաւուրն ութերորդի ե՛լս. վասն զի զնաւակատիսն արար սեղանոյն զեւթն օր տօնին։ ¹⁰Եւ ՚ի քսան և երիս ամսոյն եւթներորդի արձակեաց զժողովուրդն ՚ի խորանս իւրեանց ուրախութեամբ և բարի սրտիւ, յամենայն բարութիւնսն զոր արար Տէր Դաւթի՝ և Սողոմոնի, և ժողովրդեան իւրում Իսրայէլի։ ¹¹Եւ կատարեաց Սողոմոն զտունն Տեառն, և զտունն արքայի, և զամենայն ինչ զոր կամեցաւ անձն Սողոմոնի առնել ՚ի տանն Տեառն և ՚ի տան իւրում, յաջողեցաւ։

Ե ¹²Եւ երևեցաւ Աստուած Սողոմոնի ՚ի գիշերին յայնմիկ, և ասէ ցնա. Լուայ աղօթից քոց. ընտրեցի՛ զտեղիդ զայդ ինձ ՚ի տուն զոհից*։ ¹³Եթէ արգելից զերկինս, և ո՛չ լինիցի անձրև. և եթէ պատուիրեցից մարախոյ ուտել զփայտ. և եթէ առաքեցից մահ ՚ի ժողովուրդ իմ. ¹⁴և եթէ ամաչեսցէ ժողովուրդ իմ յորոյ կոչեցեալ է անուն իմ ՚ի վերայ նոցա. և յաղօթս կացցեն և խնդրեսցեն զերեսս իմ, և դարձցին ՚ի ճանապարհաց իւրեանց չարաց. և ես լուայց յերկնից, և քաւի՛չ եղէց նոցա՝ և բժշկեցից զերկիր նոցա*։ ¹⁵Եւ այժմ աչք իմ եղիցին բա՛ց, և ականջք իմ առ ՚ի լսել զաղօթս ՚ի տեղուջս յայսմ։ ¹⁶Եւ արդ՝ ահա ընտրեցի՛ զտունս զայս, և սրբեցի՛ զսա առ ՚ի լինել անուան իմոյ աստ յաւիտեան. և եղիցին աչք իմ և սիրտ աստ զամենայն աւուրս։ ¹⁷Եւ դու՝ եթէ զնասցես առաջի իմ իբրև զԴաւիթ հայր քո, և արասցես ըստ ամենայնի զոր ինչ պատուիրեցի քեզ. զիրամանս իմ և զիրաւունս իմ պահեսցես. ¹⁸կանգնեցից զաթոռ թագաւորութեան քոյ, որպէս ուխտեցի ընդ Դաւթի հօր քոյ և ասացի. Ո՛չ բարձցի քո այր առաջնորդ յԻսրայէլէ*։ ¹⁹Ապա թէ դարձջիք դուք և թողջիք զիրամանս իմ, և զպատուիրանս իմ զորս ետու առաջի իմ. և երթայցէք պաշտիցէք զաստուածս օտարս, և երկիր պագանիցէք նոցա*։ ²⁰Բարձի՛ց զձեզ յերկրէս զոր ետու ձեզ, և զտունս զայս զոր սրբեցի անուան իմոյ, ՚ի բա՛ց դարձուցից յերեսաց իմոց, և տա՛ց զսա յառակ և ՚ի պատմութիւն յամենայն ազգս. ²¹զտունս զայս զբարձր. և ամենայն որ անցանիցէ առ սովալ՝ զարմասցի՛ և ասացէ. Ընդէ՞ր արար Տէր երկրիս այսմ, և տանս այսմիկ։ ²²Եւ ասացեն. Վասն զի թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց՝ որ եհան զնոսա յերկրէն Եգիպտոսի. և ընկալան զաստուածս օտարս, երկիր պագին նոցա և ծառայեցին նոցա. յաղագս այնորիկ աս՝ ՚ի վերայ դոցա զամենայն չարիսդ զայդոսիկ*։

8

* Ոսկան. Առաջի Աստուծոյ, զի յաւիտե՛ն։

* Ոմանք. Եւ զմանանայն և զճարպսն։

* Յօրհնակին. Եւ արար Սողոմոն զտունն ՚ի ժամանակին։

* Այլք. Ի գիշերին յայնմ։ Ոմանք. Եւ ընտրեցի զտեղիդ... ինձ տուն զո՞։

* Այլք. Յորոց կոչեցեալ է անուն իմ։

* Ոմանք. Ընդ Դաւթի հօր քուն։

* Ոմանք. Ձոր ետու առաջի իմ։

* Ոմանք. Եւ երկիրպագին։

Գլուխ Ը

Ձ¹ Եւ եղև յետ քսան ամաց՝ յորս շինեաց Սողոմոն զտունն Տեառն և զտունն իւր.² և զքաղաքսն զոր ետ Քիրամ Սողոմոնի, շինեաց զնոսա Սողոմոն. և բնակեցոյց անդ զորդիսն Իսրայէլի*։³ Եւ եկն Սողոմոն յեմաթսովբայ, և զօրացոյց զնա.⁴ և շինեաց զԹեղմոս յանապատին. և զամենայն քաղաքսն ամուրս շինեաց յեմաթ.⁵ և շինեաց զԲեթորոն վերին, և զԲեթորոն ներքին, քաղաքս ամուրս պարսպօք, և դրամբք, և նգօք։⁶ Եւ զԲաղաաթ, և զամենայն քաղաքսն ամուրս որք էին Սողոմոնի, և զամենայն քաղաքս կառացն, և զամենայն քաղաքս ձիոց. և զոր ինչ ցանկացաւ Սողոմոն ըստ ցանկութեան իւրում շինել յերուսաղէմ, և ՚ի Լիբանան, և յամենայն թագաւորութեան իւրում*։⁷ Ամենայն ժողովուրդ որ մնացեալ էր ՚ի Քետացւոցն, և յԱմուրիացւոցն, և ՚ի Փերեզացւոցն, և ՚ի Խևացւոցն, և ՚ի Յեբուսացւոցն, որք ո՛չ էին յորդոցն Իսրայէլի, ⁸այլ էին յորդոց այնոցիկ, որք մնացեալ էին ընդ նոսա յերկրին զորս ո՛չ սատակեցին որդիքն Իսրայէլի. և աժ զնոսա Սողոմոն ՚ի հարկատուս մինչև ցայսօր։⁹ Եւ յորդոցն Իսրայէլի ո՛չ առ Սողոմոն ՚ի ծառայս թագաւորութեան իւրոյ. վասն զի նոքա էին արք պատերազմօղք, և իշխանք զօրաւորք, և իշխանք կառաց և երիվարաց.¹⁰ և սոքա էին իշխանք հրամանաց թագաւորութեանն Սողոմոնի. երկերիւր յիսուն զործավարք ժողովրդեանն։¹¹ Եւ զդուստրն փարաւոնի եհան Սողոմոն ՚ի քաղաքէն Դաւթի, ՚ի տունն զոր շինեաց նմա. վասն զի ասաց. Ո՛չ բնակեսցէ կին իմ ՚ի քաղաքին Իսրայէլի արքայի Դաւթի, վասն զի սուրբ է որ եմուտ անդր տապանակն Տեառն։

Է¹² Յայնժամ եհան Սողոմոն ողջակէզս Տեառն ՚ի վերայ սեղանոյն նորա զոր շինեաց յանդիման տաճարին.¹³ և ըստ բանին աւուրց յաւուրս մատուցանել ըստ պատուիրանացն Մովսիսի ՚ի շաբաթսն, և յամսամուտսն, և ՚ի տօնսն, երի՛ս ժամանակս ՚ի տարւոջ ՚ի տօնի բաղարջակերացն, և ՚ի տօնի եւթներորդացն, և ՚ի տօնի տաղաւարահարացն*։¹⁴ Եւ կացոյց ըստ իրաւանցն Դաւթի զդասս քահանայիցն ըստ պաշտաման նոցա. և Ղևտացիքն ՚ի վերայ պահպանութեանն իւրեանց, օրինել և պաշտել առաջի քահանայիցն ըստ օրինին օր ըստ օրէ։ Եւ դմնապանք ըստ որոշմանն իւրեանց ՚ի դրունս դրունս. վասն զի այս էր պատուիրանն Դաւթայ առն Աստուծոյ*։¹⁵ Եւ ո՛չ անցին զպատուիրանօքն արքայի, յաղագս քահանայից և Ղևտացւոց, յամենայն բանի և ՚ի զանձարանս։¹⁶ Եւ պատրաստեցաւ ամենայն գործն, յօրէ յորմէ սկսաւ մինչև յօրն յորում կատարեաց Սողոմոն զտունն Տեառն։¹⁷ Յայնժամ զնաց Սողոմոն ՚ի Գասիոնգաբեր, և յեղ՛ամ, որ առ ծովեզերն Յրեաստանի էր։¹⁸ Եւ առաքեաց Քիրամ ՚ի ձեռն ծառայից իւրոց նաւս, և արք որ գիտէին նաւել ընդ ծովն, և զնացին ընդ ծառայսն Սողոմոնի ՚ի Սովփերա. և առին անտի չորեքհարիւր յիսուն տաղանտ ոսկւոյ, և եկին առ արքայ Սողոմոն։

9

Գլուխ Թ

* Այլք. Եւ բնակեցոյց անդ զոր՝:

* Ոմանք. Եւ յամենայն ՚ի թագաւորութեանն:

* Ոմանք. ՚ի տօնի բաղարջացն և ՚ի տօնի:

* Ոմանք. Վասն զի այսպէս էր: *Իսկ ոմանք.* Այդպէս էր պատուիրան:

Ը ¹Եւ թագուհին Սաբայ լուաւ զանուն Սողոմոնի, և եկն փորձել զՍողոմոն առակօք յերուսաղէմ, յոյժ ծանր զօրութեամբ, և ուղտուք՝ որ բարձեալ բերէին խունկս և ոսկի՝ բազում, և ականս պատուականս, և եկն առ Սողոմոն, և խօսեցաւ ընդ նմա զամենայն որ ինչ էր ՚ի միտս իւր*։ ²Եւ պատմեաց նմա Սողոմոն զամենայն բանս նորա. և ո՛չ վրիպեաց բան մի ՚ի Սողոմոնէ զոր ո՛չ պատմեաց նմա*։ ³Եւ ետես թագուհին Սաբայ զիմաստութիւնն Սողոմոնի. և զտունն զոր շինեաց. ⁴և զկերակուրս սեղանոցն. և զաթոռս ծառայից նորա, և զկարգս պաշտօնէից նորա, և զպատմուճանս նոցա. և զմատռուակս նորա, և զզգեստն նոցա. և զողջակէզսն զոր մատուցանէր ՚ի տանն Տեառն, ՚ի զարմացման եղև*։ ⁵և ասէ ցարքայ. Ճշմարիտ էր բանն զոր լուայ յերկրին իմում յաղագս բանից քոց, և վասն իմաստութեան քոյ. ⁶և ո՛չ հաւատացի բանիցն մինչև եկի, և տեսին աչք իմ. և ահա ո՛չ է ՚ի կէս զոր պատմեցինն, ՚ի բազմութենէ իմաստութեանս քոյ զորս յաւելեր ՚ի համբաւն զոր լուայ*։ ⁷Երանելիք են արքո՛ւ և երանելի կանայք քո, և ծառայքդ այդոքիկ որք կան առ քեզ հանապազ՝ և լսեն զիմաստութիւնդ քո։ ⁸Եղիցի Տէր Աստուած քո օրհնեալ՝ որ հաճեցաւ ընդ քեզ, տալ զքեզ յաթոռ թագաւորութեան իւրոյ՝ ժողովրդեան քում. զի յաղագս սիրելոյ Տեառն Աստուծոյ քո զԻսրայէլ, և կացուցանելոյ զնա յաւիտեան, ե՛տ զքեզ ՚ի վերայ դոցա թագաւոր, առնել իրաւունս և արդարութիւն*։ ⁹Եւ ետ արքայի հարիւր քսան տաղանտ ոսկւոյ, և խունկս բազում յոյժ, և ականս պատուականս. և ո՛չ գոյր իբրև զխունկսն զայնոսիկ զորս ետ տիկինն Սաբայ արքայի Սողոմոնի։ ¹⁰Եւ ծառայքն Սողոմոնի՝ և ծառայքն Քիրամայ բերին ոսկի Սողոմոնի ՚ի Սովփերայ, և փայտս նոճս, և ականս պատուականս*։ ¹¹Եւ արար արքայ զփայտն նոճ՝ աստիճանս տանն Տեառն՝ և տանն արքայի, և քնարս, և տաւիղս երգեցողացն. և ո՛չ երբէք երևեցաւ այնպէս յառաջագոյն յերկրին Յուդայ*։ ¹²Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն Սաբայ զամենայն զոր ինչ կամեցաւ նա՝ և զոր ինչ խնդրեաց, բա՛ց յայնցանէ զոր ետ արքայի Սողոմոնի. և դարձաւ յերկիրն իւր։ ¹³Եւ էր կշիռն ոսկւոյն զոր բերին Սողոմոնի ՚ի միում տարւոջ, վեց հարիւր վաթսուն և վեց տաղանտ ոսկւոյ*։ ¹⁴առանց արանցն կարգելոց՝ և վաճառականացն որք բերէին. և յամենայն թագաւորութեանցն Արաբացւոց, և յիշխանաց երկրին՝ բերէին ոսկի և արծաթ արքայի Սողոմոնի*։ ¹⁵Եւ արար արքայ Սողոմոն երեք հարիւր վահան ոսկի կռածոյ, վեց հարիւր դահեկան մաքուր ոսկի ՚ի մի՛ վահան. ¹⁶և երեք հարիւր նիզակ ոսկի կռածոյ, երեք հարիւր դահեկան ՚ի մի նիզակ յիւրաքանչիւրոք ՚ի նոցանէ. և ե՛տ զայն արքայ ՚ի տուն անտառին Լիբանանու*։ ¹⁷Եւ արար արքայ աթոռ ՚ի ժանեաց փղաց մեծ, և պատեաց զնա մաքուր ոսկւով. ¹⁸և վեց աստիճանք էին աթոռոյն կապեալք

* *Ոսկան.* Յոյժ ծանու զօրութեամբ։

* *Ոմանք.* ՚ի Սողոմոնէ զոր պատմեաց նմա։

* *Յօրհնակին.* Եւ զզգեստն նոցա։

* *Ոմանք.* Ձորս պատմեցին՝ ՚ի բազմութենէ իմաստութեան քո։

* *Ոմանք.* Տեառն Աստուծոյ քում զԻսրայէլ։

* *Ոմանք.* Բերէին ոսկի Սողոմոնի ՚ի։

* *Այլք.* Աշտիճանս։

* *Յօրհնակին.* ՈԿՁ տաղանտ։

* *Այլք.* Առանց արանցն կարգեցելոց։ *Ոսկան.* Եւ ամենայն թագաւորացն... և իշխանաց երկրին որք բե՛։

* *Ոմանք.* Յիւրաքանչիւր ՚ի նոցանէ։

ոսկւով. և անկիւնք աստի և անտի յաթոռն նստելոյ, և երկու առնօք կային առ
 ոտս անկեանցն. ¹⁹և երկուտասան առնօք կային աստի և անտի առ վեց
 աստիճանսն. և ո՛չ երբէք եղև այնպիսի յամենայն թագաւորութեան ուրուք: ²⁰Եւ
 ամենայն սպաս արքայի Սողոմոնի ոսկեղէն, և ամենայն սպաս տան անտառին
 Լիբանանու ոսկւով բնեռեալ. և ո՛չինչ էր համարեալ արծաթ յաւուրս Սողոմոնի*:
²¹Վասն զի նա՛ւ արքայի Սողոմոնի երթայր ՚ի Թարսսիս ընդ ծառայսն Քիրամայ,
 և միանգամ յերիս ամս գա՛յր նաւն ՚ի Թարշայ արքայի, լի՛ ոսկւով և արծաթով,
 և ժանեօք փղաց, և կապկաց, և սիրամարգօք*:
²²Եւ մեծացաւ Սողոմոն քան
 զամենայն թագաւորս՝ ընչիւք և իմաստութեամբ: ²³Եւ ամենայն թագաւորք
 երկրի խնդրէին զերեսս Սողոմոնի տեսանել. և լսել զիմաստութիւն նորա զոր
 ետ Աստուած ՚ի սիրտ նորա: ²⁴Եւ նոքա բերէին իւրաքանչիւրոք ընծայ՝ նմա,
 անօթս արծաթեղէնս, և անօթս ոսկեղէնս, և պատմուճանս, և ստաշխն, և
 խունկս, և ձիս, և ջորիս՝ ամի ամի*:
²⁵Եւ էին Սողոմոնի չորք բարք մատակ ձիք ՚ի
 կառս, և երկուտասան հազար երիվարք. և ետ զնոսա ՚ի քաղաքս կառացն, և էին
 ընդ Սողոմոնի յերուսաղէն: ²⁶Եւ էր իշխան ամենայն թագաւորացն, ՚ի գետոյն
 Եփրատայ մինչև յերկիրն այլազգեաց, և մինչև ՚ի սահմանս Եգիպտոսի*:
²⁷Եւ եղ
 արքայ զոսկի և զարծաթ իբրև զքարինս յերուսաղէն, և զփայտս մայրս իբրև
 զմոլեթգենիս ՚ի դաշտս բազում: ²⁸Եւ էլք ձիոցն Սողոմոնի յեգիպտոսէ՝ և
 յամենայն երկրէ: ²⁹Եւ մնացորդք բանիցն Սողոմոնի առաջինք և վերջինք՝ ահա
 գրեալ են ՚ի բանս Նաթանայ մարգարէի, և ՚ի բանս Աքիայ Սիդոնացոյ, և ՚ի
 տեսիլն Յովելայ տեսանողի, վասն Յերոբովամայ որդւոյ Նաբատայ: ³⁰Եւ
 թագաւորեաց արքայ Սողոմոն ՚ի վերայ ամենայն Իսրայէլի ամս քառասուն*. ³¹և
 մնջեաց Սողոմոն, և թաղեցին զնա ՚ի քաղաքին Դաւթի հօր իւրոյ:

Թ Եւ թագաւորեաց Ռոբովամ որդի նորա փոխանակ նորա:

10

Գլուխ Ժ

¹Եւ եկն Ռոբովամ ՚ի Սիւքեն, վասն զի ՚ի Սիւքեն գայր ամենայն Իսրայէլ
 թագաւորեցուցանել զնա*: ²Եւ եղև իբրև լուաւ Յերոբովամ որդի Նաբատայ, և
 ինքն էր յեգիպտոս փախուցեալ յերեսաց արքայի Սողոմոնի, և բնակէր
 Յերոբովամ յեգիպտոս. և դարձաւ Յերոբովամ յեգիպտոսէ, ³առաքեցին և
 կոչեցին զնա: Եւ եկն Յերոբովամ և ամենայն եկեղեցին Իսրայէլի առ արքայ
 Ռոբովամ՝ և ասեն*. ⁴Յայր քո խստացոյց զլուծ մեր. և արդ՝ թուլացո՛ւ զխիստ
 ծառայութիւն հօր քոյ, և զլուծ նորա զծանր զոր եղ ՚ի վերայ մեր. և
 ծառայեսցուք քեզ: ⁵Եւ ասէ ցնոսա. Երթայք մինչև յաւուրս երիս, և եկեսջի՛ք առ
 իս: Եւ զնաց ժողովուրդն: ⁶Եւ ժողովեաց արքայ Ռոբովամ զծերսն որք կային

* Ոմանք. Եւ ամենայն սպասք... ոսկեղէնք:
 * Ոմանք. Եւ սիրամարգաց:
 * Ոմանք. Եւ գտաշխն:
 * Ոմանք. ՚ի գետոցն Եփրատ:՝
 * Ոմանք. իբրև զմոլեթգենիս ՚ի դաշտս բազումս:
 * Ոմանք. ՚ի վերայ ամենայն Իսրայէլի քառասուն ամ:
 * Յօրինակին. ՚ի Սիւքեն գայ ամենայն Իսրայէլ:
 * Ոսկան. Եկեղեցին Իսրայէլի, խօսեցան առ արքայ և ասեն:

առաջի Սողոմոնի հոր նորա մինչդեռ կենդանի՝ էր նա, և ասէ. Ձիա՞րդ թուի ձեզ, և զի՞նչ խորհիք պատասխանի առնել ժողովրդեանն այնմ, բան ինչ: ⁷Եւ խօսեցան ընդ նմա և ասեն. Եթէ այսօր լինիս բարի՝ ժողովրդեան քում, և հաճո՞յ լիցիս, և խօսեսցիս ընդ նոսա բանս բարիս. և եղիցին քեզ ծառայք զամենայն աւուրս*: ⁸Եւ եթող զխորհուրդ ծերոցն զոր խորհեցան ընդ նմա, և խորհեցաւ ընդ մանկտի սննդակիցսն իւր որք կային առաջի նորա. ⁹և ասէ ցնոսա. Ձի՞նչ թուի ձեզ, և պատասխանի տաց բան ժողովրդեանն այնմիկ որք խօսեցան ընդ իս՝ և ասացին. Թողացո՞՛ր ի լծոյն զոր եդ հայր քո ՚ի վերայ մեր: ¹⁰Եւ խօսեցան ընդ նմա մանկտին սննդակիցքն նորա. Ա՛յսպէս խօսեսցիս ընդ ժողովրդեանն որ խօսեցաւ ընդ քեզ՝ և ասաց. Հայր քո ծանրացոյց զլուծն մեր, և դու թո՞ղ մեզ. ա՛յսպէս ասասցես. Փոքր մատնս իմ ստուարագո՛յն է քան զմէջ հօր իմոյ. ¹¹և արդ՝ հայրն իմ խրատեաց զձեզ ծանր լծով, և ես յաւելից՝ ՚ի լուծն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ գաւազանօք՝ և ես խրատեցից զձեզ կարծօք: ¹²Եւ եկն Յերոբօվամ և ամենայն ժողովուրդն առ Ռոբօվամ յաւուրն երրորդի, որպէս խօսեցաւ արքայ և ասաց. Դարձջի՞ք առ իս յաւուրն երրորդի: ¹³Եւ պատասխանի արար արքայ խիստ, և եթող արքայ Ռոբօվամ զխորհուրդ ծերոցն, ¹⁴և խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդոյ մանկանցն՝ և ասէ. Հայրն իմ ծանրացոյց զլուծ ձեր, և ես յաւելից յայն. հայրն իմ խրատեաց զձեզ գաւազանօք, և ես խրատեցից զձեզ կարծօք*: ¹⁵Եւ ո՛չ լուաւ արքայ ժողովրդեանն, վասն զի էր կործանուանն յԱստուծոյ. և հաստատեաց Տէր զբան իւր զոր խօսեցաւ ՚ի ձեռն Աբիայ Սիլովնացոյ յաղագս Յերոբօվամու որդւոյ Նաբատայ, և ամենայն Իսրայէլի. ¹⁶և ո՛չ լուաւ արքայ նոցա: Պատասխանի՛ ետ ժողովուրդն արքայի՝ և ասեն. Ձի՞նչ բաժին կայ մեր ընդ Դաւթի, և կամ ժառանգութիւն ընդ որդւոյն Յեսսեայ. Ե՛րթ գնա՛ ՚ի բնակութիւնս քո Իսրայէլ. և արդ տես դու զտուն քո Դաւիթ: Եւ գնաց ամենայն Իսրայէլ ՚ի բնակութիւնս իւր*: ¹⁷Եւ արքն Իսրայէլի մնացեալքն ՚ի քաղաքս Յուդայ՝ թագաւորեցուցին ՚ի վերայ իւրեանց զՌոբօվամ: ¹⁸Եւ առաքեաց արքայ Ռոբօվամ զԱդոնիրամ որ էր ՚ի վերայ հարկացն. և քարկոծեցին գնա որդիքն Իսրայէլի քարամբք, և մեռաւ: Եւ արքայ Ռոբօվամ փութացաւ ելանել ՚ի կառս իւր՝ և փախչել յերուսաղէմ: ¹⁹Եւ անգոսնեաց Իսրայէլ զտունն Դաւթի մինչև յօրս յայս*:

11

Գլուխ ԺԱ

¹Եւ եկն Ռոբօվամ յերուսաղէմ. և ժողովեաց զՅուդաս և զԲենիամին հարիւր ութսուն հազար երիտասարդաց որք առնէին պատերազմ. և տա՛յր պատերազմ ընդ Իսրայէլի դարձուցանել զթագաւորութիւնն յինքն: ²Եւ եղև բան Տեառն առ Սամէաս այրն Աստուծոյ՝ և ասէ. ³Խօսեաց ընդ Ռոբօվամայ որդւոյ Սողոմոնի, և ընդ ամենայն Յուդայ և Բենիամինի՝ և ասասցես. ⁴Ա՛յսպէս ասէ Տէր. Մի՛ ելանէք՝ և մի՛ պատերազմիք ընդ եղբարս ձեր, դարձցի՛ իւրաքանչիւրք ՚ի տուն իւր. վասն զի յինէ՛ն եղև բանդ այդ: Եւ լուան բանին Տեառն, դարձան ո՛չ ևս երթալ ՚ի վերայ

* Այլք. Լինիս բարի ժողովրդեանդ այդմ. և հա՞:

* Ոմանք. Ըստ խորհրդեան մանկանցն: Ոսկան. Եւ ես յաւելից յայնմ:

* Ոմանք. Եւ արդ տես զտուն քո Դաւիթ:

* Ոմանք. Եւ անկոսնեաց Իսրայէլ զտունն Դաւթայ:

Յերոբովամայ*։ ⁵Եւ բնակեաց Ռոբովամ յերուսաղէմ. և շինեաց քաղաքս պարսպաւորս ՚ի Յրեաստանի. ⁶և շինեաց զԲեթսէմ. և գետանի. և զԲեքովրայ*. ⁷և զԲեթաւրա. և զՍոկքով. և զՈղողամ*. ⁸և զԳէթ. և զՄարիսան. և զԶիփ. ⁹և զԱդովրայիմ. և զՂաքիս. և զԱզելա. ¹⁰և զՍարաա. և զԵաղոն. և զՔեբրոն որ էր Յուդայ. և ՚ի Բենիամինէ քաղաքս պարսպաւորս։ ¹¹Եւ ամրացոյց զնոսա պարսպօք, և ետ ՚ի նոսա իշխանս, և համբարս կերակրոց՝ ձէթ և գինի* ¹²ըստ քաղաքաց. վահանս, և նիզակս, և զօրացոյց զնոսա յաճախութեամբ յոյժ։

Ժ Եւ էին նորա Յուդաս և Բենիամին. ¹³և քահանայքն և Ղևտացիքն որք էին յամենայն Իսրայէլի, ժողովեցան առ նա յամենայն սահմանացն. վասն զի թողին Ղևտացիքն զբնակութիւնս կալուածոց իւրեանց, և գնացին առ Յուդայ յերուսաղէմ. ¹⁴քանզի եհան զնոսա Յերոբովամ և որդիք նորա, ո՛չ ևս պաշտել զՏէր։ ¹⁵Եւ կացոյց իւր քուրմս բարձանցն և կռոցն, և սնոտուցն, և երընջոցն զոր արար Յերոբովամ*. ¹⁶և եհան զնոսա ՚ի ցեղիցն Իսրայէլի, որք ետուն զսիրտս իւրեանց խնդրել զՏէր Աստուած Իսրայէլի. և եկին յերուսաղէմ զոհել Տեառն Աստուծոյ հարցն իւրեանց. ¹⁷և զօրացուցին զթագաւորութիւնն Յուդայ։ Եւ հզօրացաւ Ռոբովամ որդի Սողոմոնի ամս երիս. վասն զի գնաց ՚ի ճանապարհս Դաւթի և Սողոմոնի զերիս ամս։ ¹⁸Եւ ա՛ռ իւր Ռոբովամ կին զՄովղաթ դուստր Յերիմութայ որդւոյ Դաւթի, և զԱբիադ դուստր Եղիաբայ որդւոյ Յեսսեայ. ¹⁹և ծնան նմա որդիս, զՅերոււմ, և զՍամարիա, և զԱդով։ ²⁰Եւ յետ այսորիկ ա՛ռ զՄաաքա դուստր Աբեսաղոմայ, և ծնաւ նմա զԱբիաս, և զԵթթի, և զԻզա, և զՍաղէմովթ։ ²¹Եւ սիրեաց Ռոբովամ զՄաաքա դուստր Աբեսաղոմայ քան զամենայն կանայս իւր, և զհարճս իւր. վասն զի կանայս ունէր ութուտասն, և հարճս վաթսուն. և ծնաւ ուստերս քսանուութ, և դստերս վաթսուն։ ²²Եւ կացոյց իշխանս Ռոբովամ զԱբիա՝ որ էր ՚ի Մաաքայ, իշխան ՚ի վերայ եղբարցն իւրոց. վասն զի թագաւորեցուցանել խորհէր զնա*։ ²³Եւ աճեաց առաւել քան զամենայն որդիս նորա. յամենայն սահմանս Յուդայ և Բենիամինի, և ՚ի քաղաքսն ամուրս՝ ե՛ր ՚ի նոսա կերակուր բազում յոյժ. և խնդրեաց բազմութիւն կանանց։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ եղև իբրև պատրաստեցաւ թագաւորութիւնն Ռոբովամայ. և յորժամ զօրացաւ, եթող զպատուիրանս Տեառն, և ամենայն Իսրայէլ ընդ նմա։ ²Եւ եղև ՚ի հինգերորդի՝ ամի թագաւորութեանն Ռոբովամայ, ե՛լ Սաւսակիմ արքայ Եգիպտոսի ՚ի վերայ Երուսաղէմի. վասն զի մեղան առաջի Տեառն*. ³հազար և երկերիւր կառօք, և վաթսուն հազար երիվարօք. և ո՛չ գոյր թիւ բազմութեանն

* Ոսկան. Եւ դարձան։

* Ոսկան. Եւ շինեաց զԲեթլէմ և զԵ՛: Այլք. Եւ զԵտանի և զԲեքովեայ։

* Ոմանք. Եւ զԲեթսուրայ և զՍոկքով։

* Ոսկան. Եւ եղ ՚ի նոսա իշ՛:

* Այլք. Չորս արար Յերո՛:

* Ոմանք. Եւ կացոյց իշխան Ռոբովամ։

* Բազումք. ՚ի հինգերորդ ամի։

եկելոյ ընդ նմա յեգիպտոսէ. Լիբեացիք, Տրոգլոդացիք, Եթովպացիք* . 4և զօրացան՝ ՚ի վերայ ամուր քաղաքացն որ էին Յուդայ. և եկն յերուսաղէմ: 5Եւ Սամէաս մարգարէ եկն առ Ռոբովամ, և առ իշխանսն Յուդայ ժողովեալսն յերուսաղէմ յերեսաց Սաւսակիմայ, և ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր. Դուք թողէք զիս, և ես թողից զձեզ ՚ի ձեռս Սաւսակիմայ: 6Եւ ամաչեցին իշխանքն Իսրայէլի՝ և արքայն, և ասեն. Արդար է Տէր: 7Եւ իբրև ետես Տէր եթէ պատկառեցին, եղև բան Տեառն առ Սամէաս՝ և ասէ. Պատկառեցին, ո՛չ ապականեցից զդոսա. տա՛ց զդոսա իբրև սակաւ մի՝ ՚ի փրկութիւն. և մի՛ կաթեցէ սրտմտութիւն իմ՝ ՚ի վերայ Երուսաղէմի. 8վասն զի եղիցին ինձ ՚ի ծառայս, և ծանիցեն զծառայութիւնն իմ, և զծառայութիւն թագաւորութեան երկրիս: 9Եւ ել Սաւսակիմ արքայ Եգիպտոսի, և ա՛ռ զգանձսն որ էին ՚ի տանն Տեառն, և զգանձս տանն արքայի և զամենայն առ. ա՛ռ և զվահանսն ոսկեղէնս զոր արար Սողոմոն*. 10և արար Ռոբովամ վահանս պղնձիս փոխանակ նոցա: Եւ կացոյց ՚ի վերայ նոցա Սաւսակիմ իշխանս սուրհանդակացն որք պահէին զդուռն արքային: 11Եւ լինէր ՚ի մտանել արքայի ՚ի տունն Տեառն, մտանէին և պահապանքն և սուրհանդակքն, և բառնային ընդ առաջ սուրհանդակացն: 12Եւ ՚ի պատկառելն նորա, դարձաւ ՚ի նմանէ բարկութիւն Տեառն, և ո՛չ ապականեցաւ ՚ի սպառ. վասն զի էին բանք բարիք ՚ի Յուդայ*: 13Եւ զօրացաւ Ռոբովամ յերուսաղէմ, և թագաւորեաց. քառասուն և միոյ ամի էր ՚ի թագաւորելն իւրում, և զեւթնևտասն ամ թագաւորեաց յերուսաղէմ, ՚ի քաղաքին զոր ընտրեաց Տէր անուանել զանուն իւր անդ՝ յամենայն ցեղիցն Իսրայէլի. և անուն մօր նորա Նոոմա Ամոնացի*. 14և արար չա՛ր. վասն զի ո՛չ ուղղեցաւ սիրտ նորա խնդրել զՏէր: 15Եւ բանքն Ռոբովամայ առաջինք և վերջինք, ո՛չ ահա գրեալ են ՚ի բանս Սամէայ մարգարէի, և Աղղովայ տեսանողի. և զորժք նորա. և պատերազմ էր Ռոբովամայ ընդ Յերոբովամայ զամենայն աւուրս*: 16Եւ մեռաւ Ռոբովամ, և թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքին Դաւթի:

ԺԱ Եւ թագաւորեաց Աբիաս որդի նորա փոխանակ նորա:

13

Գլուխ ԺԳ

1Յուք և տասներորդ ամի թագաւորութեանն Յերոբովամայ թագաւորեաց Աբիաս ՚ի վերայ Յուդայ և Երուսաղէմի* 2ամս երիս. և անուն մօր նորա Մաաքա դուստր Աբեսողոմայ. և էր պատերազմ ՚ի մէջ Աբիայ, և ՚ի մէջ Յերոբովամայ: 3Եւ կարգեցաւ Աբիաս ՚ի պատերազմին զօրաւոր մարտկօք չորեք հարիւր հազարօք արամբք զօրաւորօք. և Յերոբովամ ճակատեցաւ ընդդէմ նորա ՚ի պատերազմին ութ հարիւր հազարօք զօրաւորօք պատերազմողաց

* Ոմանք. Տրոգլոդացիք և Եթովպացիք:

* Ոմանք. Եւ ես թողի զձեզ ՚ի ձեռս Սուսակիմայ:

* Ոմանք. Եւ զգանձս որ էին ՚ի տան արքայի զամենայն ա՛ռ:

* Ոմանք. Բանք բարի Յուդայ:

* Ոմանք. Եւ եւթնևտասն ամ թագաւորեաց յերուսաղէմ ՚ի քաղաքն:

* Ոմանք. Եւ պատերազմէր Ռոբովամ ընդ Յերո՞:

* Ոմանք. Յուրօտասներորդի ամի... ՚ի վրայ Յուդայ ամս երիս՝ և Երուսաղէմի:

գօրութեամբ*։ ⁴Եւ յարեալ Աբիաս ՚ի լեռնէն Սոմորոնայ, որ էր ՚ի լերինն Եփրեմի, և ասէ. Լուարո՛ւք Յերոբօվամ և ամենայն Իսրայէլ։ ⁵Ո՞չ է ձեր ճանաչել եթէ Տէր Աստուած Իսրայէլի ե՛տ զթագաւորութիւնն Իսրայէլի յաւիտեան՝ Դաւթի և որդւոց նորա ուխտ ադի։ ⁶Եւ յարեալ Յերոբօվամ որդի Նաբատայ ծառայ Սողոմոնի որդւոյ Դաւթի, և ապստամբեաց ՚ի տեռնէ իւրմէ*։ ⁷և ժողովեցան առ նա արք ժանտք, որդիք անօրէնք. և ընդդէմ եկաց Ռոբօվամայ որդւոյ Սողոմոնի. և Ռոբօվամ է՛ր մանուկ և երկչոտ սրտիւ, և ո՛չ եկաց ընդդէմ նորա։ ⁸Եւ արդ դուք ասէք կալ հակառա՞կ երեսաց թագաւորութեան Տեառն, որ է ՚ի ձեռս որդւոց Դաւթի. և դուք բազում էք յոյժ, և ընդ ձեզ երինջքդ ոսկեղէնք, զոր արար ձեզ Յերոբօվամ յաստուածս*։ ⁹Միթէ ո՞չ հանէք դուք զքահանայսն Տեառն զորդիսն Ահարոնի և զՂևտացիսն, և արարէք ձեզ քուրմս ՚ի ժողովրդենէ երկրիդ, ամենեքեան որ գային լնուլ զձեռս զուարակօք յարջառոց. և եւթն խոյօք. և լինէր քուրմն չաստուածոցն*։ ¹⁰Եւ մեք զՏէր Աստուած մեր ո՛չ թողաք, և քահանայքն նորա պաշտեն զՏէր որդիք Ահարոնի և Ղևտացիք. և հանապազորդեալքն ՚ի նոցանէ ծխեն խունկս Տեառն*։ ¹¹և զողջակէզս ընդ առաւօտս և ընդ երեկոյս, և զխունկսն խառնուածոյս, և հացքն առաջադրութեան ՚ի վերայ սուրբ սեղանոյն, և աշտանակն ոսկեղէն, և ճրագունքն վառեալք յերեկորեայ լուցեալք. վասն զի պահենք մեք զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ հարցն մերոց. և դուք թողէք զնա։ ¹²Եւ ահաւասիկ ընդ մեզ իշխան Տէր, և քահանայք նորա, և փողք նշանակաց նշանակել ՚ի մեզ. և դուք որդիք Իսրայէլի պատերազմի՞ք ընդ Տեառն Աստուծոյ հարցն մերոց. և ո՛չ ևս աջողեսցի ձեզ*։ ¹³Եւ Յերոբօվամ դարձո՛յց զդարանակալսն գա՛լ նմա զկնի կողմանէ, և եղեն առաջի Յուդայ, և դարանակալքն յետուստ*։ ¹⁴Եւ դարձաւ Յուդաս, և ահա պատերազմն նոցա առաջի՛ և զկնի. և գոչեցին առ Տէր. և քահանայքն հարին զփողսն. ¹⁵և գոչեցին արք Յուդայ։ Եւ եղև ՚ի գոչել արանց Յուդայ, և Տէր եհար զՅերոբօվամ, և զԻսրայէլ առաջի Աբիայ և Յուդայի։ ¹⁶Եւ փախեան որդիքն Իսրայէլի յերեսաց Յուդայ. և մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս նոցա։ ¹⁷Եւ եհար ՚ի նոցանէ Աբիա և զօրն նորա հարուածս մեծամեծս. և անկան վիրաւորք յԻսրայէլէ հինգ հազար արք զօրաւորք*։ ¹⁸Եւ նկո՛ւն եղեն որդիքն Իսրայէլի յաւուր յայնմիկ. և զօրացան որդիքն Յուդայ. վասն զի յուսացան ՚ի Տէր Աստուած հարցն իւրեանց։ ¹⁹Եւ հալածեաց Աբիաս զՅերոբօվամ, և ա՛ռ ՚ի նմանէ քաղաքս. զԲեթէլ՝ և զգեօս նորա. և զվնա՛ և զգեօս նորա. և զԵփրոն՝ և զդաստերս նորա. և զԲեայ՝ և զգեօս նորա*։ ²⁰Եւ ո՛չ ևս գոյր զօրութիւն Յերոբօվամայ զամենայն աւուրս Աբիայ. և եհար զնա Տէր, և վախճանեաց։ ²¹Եւ զօրացաւ Աբիաս. և ա՛ռ իւր կանայս

* *Ոմանք.* Եւ կարգեցաւ Աբիաս ՚ի մարտին։

* *Ոմանք.* ՚ի տեառնէ իւրմէ։

* *Ոսկան.* ՚ի ձեռս որդւոյ Դաւթի։ *Այլք.* Ձորս արար ձեզ։

* *Ոմանք.* Քուրմ ո՛չ աստուածոց։ *Իսկ ոմանք.* Քուրմն աստուածոցն։

* *Ոմանք.* Ծխէին խունկս։

* *Ոմանք.* Նշանակել մեզ։

* *Ոսկան.* Ձկնի ՚ի կողմանէ։

* *Յօրինակին թուագրով այսպէս դնի.* Վիրաւորք յԻսրայէլէ Ռ արք զօրաւորք։ *Իսկ ոմանք.* Ե՛ւ արք։ *Եւ այլ ոմանք.* հինգ Ռ արք։ *Ուր Ոսկան միայն ունի՝* հինգ հարիւր հազար արք։

* *Ոսկան.* Եւ զԱսանայ և զգեօս։

չորեքտասան. և ծնաւ ուստերս քսան և երկուս, և դստերս վեշտասան: ²²Եւ մնացեալ բանքն Աբիայ, և գործք նորա՝ և խօսք նորա. ահա գրեալ են ՚ի գիրս մարգարէի Ադդովայ:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ մեռաւ Աբիաս ընդ հարս իւր, և թաղեցին զնա ՚ի քաղաքին Դաւթի: ԺԲ Եւ թագաւորեաց Ասա որդի նորա փոխանակ նորա. յաւուրս Ասայի հանդարտեաց երկիրն Յուդայ ամս տասն: ²Եւ արար բարի և ուղղութիւն առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ. ³և ՚ի բաց արար զսեղանս օտարացն, և զբարձունսն. և խորտակեաց զարձանսն, և այրեաց զանտառն: ⁴Եւ ասաց ցՅուդայ խնդրել զՏէր Աստուած հարցն իւրեանց, և առնել զօրէնս և զպատուիրանս. ⁵և ՚ի բաց արար յամենայն քաղաքացն Յուդայ զսեղանս և զկուռս. և խաղաղացան քաղաքք պարսպաւորք որք յերկիրն Յուդայ*. ⁶վասն զի խաղաղեցաւ երկիրն, և ո՛չ գոյր ուստեք նմա պատերազմ յամսն յայնոսիկ. վասն զի հանգոյց զնա Տէր: ⁷Եւ ասէ ցՅուդայ. Շինեսցուք զքաղաքսն զայնոսիկ. և արասցուք պարիսպս և աշտարակս, և դրունս, և նիզս՝ որով տիրենք երկրիս. զի զոր օրինակ խնդրեցաք զՏէր Աստուած մեր, և նա խնդրեաց զմեզ, և հանգոյց զմեզ շուրջանակի, և յաջողեաց մեզ: ⁸Եւ եղև Ասայի զօր զինակրաց որք բառնային վահանս և նիզակս յերկիրն Յուդայ, երեք հարիւր հազար. և յերկիրն Բենիամինի պարսաւորք և աղեղնաւորք՝ երկերիւր և վաթսուն հազար. ամենեքեան նոքա պատերազմօք զօրութեամբ*: ⁹Եւ ել ՚ի վերայ նոցա Զարեհ Եթովպացի զօրութեամբ հազար հազարօք՝ և երեք հարիւր կառօք, և եկն մինչև ՚ի Մարիսա. ¹⁰և զնաց Ասա ընդդէմ նորա. և ճակատեցաւ պատերազմն ՚ի ձորն, ՚ի հիւսւսոյ Մարիսայ: ¹¹Եւ զոչեաց Ասա առ Տէր Աստուած իւր, և ասէ. Տէր ո՛չ տկարանայ քեզ ապրեցուցանել բազմօք և սակաւօք. զօրացո՛ւ զմեզ Տէր Աստուած մեր, վասն զի ՚ի քե՛զ յուսացաք, և անուամբ քով եկաք ՚ի վերայ բազմութեանս այսորիկ. Տէր Աստուած մեր՝ մի՛ յաղթահարեսցէ քեզ մարդ*: ¹²Եւ եհար Տէր զԵթովպացիսն առաջի Յուդայ, և փախեան Եթովպացիքն: ¹³Եւ հալածեաց Ասա և զօրն իւր՝ մինչև ՚ի Գեդովր. և անկան Եթովպացիքն մինչև ո՛չ մնալ ՚ի նոցանէ ապրեալ. քանզի խորտակեցան առաջի Տեառն, և առաջի զօրութեան նորա: Եւ կողոպտեցին ււար բազում*: ¹⁴Եւ կործանեցին զգետոս նոցա շուրջ զԳեդուրաւն. վասն զի եղեն արհաւիրք ՚ի Տեառնէ ՚ի վերայ նոցա. և առին ււար զամենայն քաղաքս նոցա, քանզի ււար բազում եղև նոցա: ¹⁵Այլ և զվրանս անասնոցն նոցա առին: Եւ զմիաստնիսն կոտորեցին, և առին խաշինս բազումս և ուղտս, և դարձան յերուսաղէմ:

15

Գլուխ ԺԵ

* *Ոմանք.* Եւ խաղաղեցան քաղաքք: *Այլք.* Պարսպաւորք յերկիրն Յու՞:

* *Ոմանք.* Յերկիրն Բենիամինի ասպարաւորք:

* *Ոսկան.* Տէր Աստուած ո՛չ տկարանայ: *Այլք.* Մի՛ յաղթահարեսցէ զքեզ մարդ:

* *Յօրինակին.* Մինչև ՚ի Դեբովր: *Յօրինակին պակասէր.* Եւ առաջի զօրութեան նորա:

ԺԳ ¹Եւ Ազարիաս՝ որդի Ադադայ. եղև ՚ի վերայ նորա Յոզի Տեառն*. ²և ել ընդ առաջ Ասայի, և ամենայն Յուդայ և Բենիամին՝ և ասէ. Լուարո՛ւք ինձ՝ Ասա՝ և ամենայն Յուդա, և Բենիամին. Տէր ընդ ձեզ. վասն լինելոյ ձերոյ ընդ նմա. և արդ եթէ խնդրէք զնա՝ գտցի՛ ձեզ. և եթէ թողո՛ւք զնա՝ թողցէ՛ զձեզ*: ³Եւ աւուրք բազումք յԻսրայէլի եղեն՝ ո՛չ յԱստուած ճշմարիտ, և ո՛չ քահանայ որ ցուցանէր, և ո՛չ օրէնք* ⁴որ դարձոյց զնոսա ՚ի Տէր Աստուած Իսրայէլի, և գտաւ ՚ի նոսա: ⁵Ի ժամանակին յայնմիկ ո՛չ գոյր խաղաղութիւն այնոցիկ որք մտանէին, և որք ելանէին. վասն զի արհաւիրք ՚ի Տեառնէ անկան ՚ի վերայ ամենեցուն բնակչաց գաւառացն. ⁶և պատերազմէր ազգ ընդ ազգի, և քաղաք ընդ քաղաքի. վասն զի Աստուած զարհուրեցոյց զնոսա ամենայն նեղութեամբք*: ⁷Եւ արդ՝ դուք զօրացարո՛ւք, և մի՛ լքցին ձեռք ձեր. քանզի գո՛ն վարձք գործոց ձերոց: ⁸Եւ ՚ի լսել զբանս զայսոսիկ, և զմարգարեութիւն Ազարիայ մարգարէի, զօրացաւ և եհան արտաքս զամենայն զպղծութիւնսն յամենայն երկրէն Յուդայ և Բենիամինի՝ և ՚ի քաղաքացն զորս կալաւ ՚ի լերինն Եփրեմի: Եւ արար նաւակատիս սեղանոյն Տեառն որ էր առաջի տաճարին Տեառն. ⁹և եկեղեցացոյց զՅուդայ և զԲենիամին, և զԵկսն, և զպանդուխտսն ընդ նմա, յԵփրեմայ, և ՚ի Սանասէ, և ՚ի Շմաւոնէ. վասն զի յաւելան առ նա բազումք յԻսրայէլէ ՚ի տեսանելն նոցա, թէ Տէր Աստուած նոցա ընդ նմա՛ է*: ¹⁰Եւ ժողովեցան յերուսաղէմ յամսեանն երրորդի, ՚ի հնգետասաներորդում ամի թագաւորութեանն Ասայի. ¹¹և եզեն Տեառն յաւուրն յայնմ, յաւարացն զոր ածին, զուարակս եւթն հարիւր, և ոչխարս եւթն հազար: ¹²Եւ եղ ուխտ՝ ընտրել զՏէր Աստուած հարցն իւրեանց յամենայն սրտէ, և յամենայն անձնէ*. ¹³և ամենայն որ ո՛չ խնդրիցէ զՏէր Աստուած Իսրայէլի՝ մեռցի, յերիտասարդէ մինչև ՚ի ծերն, և յառնէ մինչև ցկին: ¹⁴Եւ երդուան Տեառն մեծածայն. և եղջերեաւ փողովն: ¹⁵Եւ ուրախ եղև ամենայն Յուդա վասն երդմանն. զի յամենայն սրտից իւրեանց երդուան, և ամենայն կամօք խնդրեցին զնա. և գտաւ նոցա, և հանգոյց զնոսա Տէր շուրջանակի: ¹⁶Եւ զՄաաքա զմայրն իւր ՚ի բա՛ց մերժեաց. վասն զի էր Աստարտեայ պաշտօնեայ. և խորտակեաց զկուռսն, և այրեաց ՚ի հեղեղատին Կեդրոնի: ¹⁷Սակայն զբարձունսն ո՛չ բարձին, և տակաւին ևս կայր ՚ի Յուդայ և յԻսրայէլ. բայց սիրտն Ասայի եղև լի՛ զամենայն աւուրս կենաց իւրոց: ¹⁸Եւ տարաւ ՚ի ներքս զսրբութիւնսն Դաւթի հօր իւրոյ, և զսրբութիւնս Տեառն Աստուծոյ, արծաթ, և ոսկի, և սպասս: ¹⁹Եւ պատերազմ ո՛չ գոյր նմա, մինչև յերեսներորդ և հինգերորդ ամ թագաւորութեանն Ասայի*:

16

Գլուխ ԺԶ

ԺԴ ¹Եւ յերեսներո՛րդ ութերորդ ամի թագաւորութեան Ասայի, ել Բաաս արքայ

* *Ոմանք.* Որդի Ադադայ:

* *Բազումք.* Եւ ամենայն Յուդայ և Բենիամինի:

* *Ոսկան.* Իսրայէլի եղեն ո՛չ Աստուած ճշմարիտ:

* *Յօրինակին.* Եւ պատերազմէ ազգ ընդ:

* *Այլք.* Յաւելան ՚ի նա բազումք յԻսրայէլէ:

* *Ոմանք.* Եւ եղ ուխտ խնդրել զՏէր Աստուած... և ՚ի բոլոր անձնէ:

* *Ոմանք.* Յերեսներորդի և հինգերորդի ամի թա՛:

Իսրայելի ՚ի վերայ Յուդայ, և շինեաց զՅոնան, ո՛չ տալով ելս Ասայի արքայի Յուդայ: ²Եւ ա՛ռ Ասա ոսկի և արծաթ ՚ի գանձուց տանն Տեառն, և ՚ի տանէ թագաւորին, և առաքեաց առ որդին Ադերայ արքայն Ասորուց որ բնակեալ էր ՚ի Դամասկոս, և ասէ*.

³Դի՛ր ուխտ ՚ի մէջ իմ և քո, և ՚ի մէջ հօր իմոյ և հօր քոյ. ահաւադիկ առաքեցի քեզ արծաթ և ոսկի, եկ և մերժեա՛ յինէն զԲաաս արքայ Իսրայելի, և գնասցէ՛ ՚ի բաց յինէն: ⁴Եւ լուաւ որդին Ադերայ արքայ Ասորուց, և առաքեաց զիշխանս զօրացն իւրոց ՚ի քաղաքսն Իսրայելի. և եհար զԱւոն, և զԴան, և զԱբեղ՛մային, և զամենայն շուրջ զգաւառաւն Նեփթաղիմայ*:

⁵Եւ եղև իբրև լուաւ Բաաս, ՚ի բաց արծակեաց և ո՛չ ևս շինել զՅոնան. և դադարեաց գործն նորա*:

⁶Եւ Ասա արքայ՝ ած զամենայն Յուդաս. և ա՛ռ զքարինս Յոնան, և զփայտս նորա զոր շինեաց Բաաս. և շինեաց նոքօք զԳաբբաա, և զՄասփա*:

ԺԵ ⁷Ի ժամանակին յայնմ եկն Անանիաս մարգարէ առ Ասա արքայ Յուդայ՝ և ասէ ցնա. Վասն զի յուսացար դու յարքայն Ասորեաց՝ և ո՛չ յուսացար ՚ի Տէր Աստուած քո, յաղագս այնորիկ ապրեցաւ զօր արքային Իսրայելի ՚ի ձեռաց քոց: ⁸Ոչ ապաքէն Եթովպացիք և Լիբեացիք՝ էին զօրք բազումք. համարձակութեամբ բազում հեծելովք յոյժ եկին, և ՚ի յուսալն քո ՚ի Տէր՝ մատնեաց զնոսա Տէր ՚ի ձեռս քո.

⁹Վասն զի աչք Տեառն հային յամենայն երկիր զօրացուցանել յամենայն լի սրտից զնա: և արդ՝ տգիտացար յայդմիկ. յայսմ հետէ եղիցի քեզ պատերազմ: ¹⁰Եւ սրտմտեցաւ Ասա մարգարէին, և եդ զնա ՚ի բանտի. զի բարկացաւ յաղագս այնորիկ. և ժանտացաւ Ասա ՚ի ժողովուրդն ՚ի ժամանակին յայնմ*:

¹¹Եւ ահա բանք Ասայի առաջինք և վերջինք՝ գրեալ են ՚ի գիրս թագաւորացն Յուդայ և Իսրայելի: ¹²Եւ ախտացան Ասայի ոտք, յերեսներորդի և յիններորդի ամի թագաւորութեանն իւրոյ, և յոյժ հիւանդացաւ. և ՚ի հիւանդանալն իւրում ո՛չ խնդրեաց զՏէր, այլ խնդրեաց բժիշկս: ¹³Եւ ննջեաց Ասա ընդ հարս իւր, և վախճանեցաւ ՚ի քառասներորդի և յառաջնում ամի թագաւորութեանն իւրում*:

¹⁴Եւ թաղեցին զնա ՚ի շիրմին զոր փորեաց իւր ՚ի քաղաքին Դաւթի. և ընկողմանեցուցին զնա ՚ի գահոյսն, և լցին խնկովք, և ազգի ազգի իւղովք իւղեփեցաց. և արարին նմա յուղարկութիւն մեծ յոյժ*:

Գլուխ ԺԵ

ԺԶ ¹Եւ թագաւորեաց Յովսափատ որդի նորա փոխանակ նորա: Եւ զօրացաւ Յովսափատ ՚ի վերայ Իսրայելի: ²Եւ ետ զօրս յամենայն քաղաքսն Յուդայ յամուրս, և կացոյց իշխանս յամենայն քաղաքսն Եփրեմի, զոր ա՛ռ արքայ Ասա՝ հայրն նորա*:

³Եւ եղև Տէր ընդ Յովսափատայ. վասն զի գնաց ՚ի ճանապարհս հօր իւրոյ յառաջինս. և ո՛չ խնդրեաց զկուռսն. ⁴այլ զՏէր Աստուած հօր իւրոյ

* Այլք. Որ բնակէր ՚ի Դամասկոս, և ասէ:

* Այլք. Զիշխանս զօրուցն իւրոց: *Ոսկան*. Շուրջ զգաւառն Նեփթ*:

* *Ոմանք*. Բաասայ... ո՛չ ևս շի՛:

* *Ոսկան*. Եւ բարձին զքարինս Յոնա՛: *Ոմանք*. Նոքօք զԳաբբայ. *կամ՝* զԳաբբաա:

* Այլք. Վասն զի բարկացաւ յաղագս:

* *Ոմանք*. Թագաւորութեանն իւրոյ:

* *Ոմանք*. Եւ արարին նմա յուղարկաւորութիւն մեծ:

* *Ոսկան*. Եւ եդ զօրս յամենայն:

խնդրեաց, և ՚ի պատուիրանս հօրն իւրոյ գնաց. և ո՛չ էին իբրև զԻսրայէլի գործք նորա: ⁵Եւ յաջողեցաւ թագաւորութիւնն ՚ի ձեռս նորա. և ետ ամենայն Յուդայ ընծայ Յովսափատայ. և եղև նորա մեծութիւն և փառք բազումք*. ⁶և բարձրացաւ սիրտ նորա ՚ի ճանապարհս Տեառն. և այլ ևս եբարձ զբարձաւանդակսն, և զանտառսն յերկրէն Յուդայ: ⁷Եւ յերրորդ ամի թագաւորութեանն իւրոյ առաքեաց զիշխանս իւր, և զորդիս զօրութեանցն, զԱբդիաս, և զՋաքարիաս, և զՆաթանայէլ, և զՄիքէաս՝ ուսուցանել ՚ի քաղաքսն Յուդայ. ⁸և ընդ նոսա Ղևտացիքն, Սամուիաս, և Սաթանաս, և Ջաքարիաս, և Ասիէլ, և Սենիրամովթ, և Յովնաթան. և Ադոնիաս, և Տորադոնիաս՝ Ղևտացիք. և ընդ նոսա Եղիսամա, և Յովրամ քահանայք. ⁹և ուսուցանէին զՅուդայ, և ընդ նոսա զի՛րք օրինացն Տեառն. և անցանէին ընդ քաղաքսն Յուդայ, և ուսուցանէին զժողովուրդն: ¹⁰Եւ եղեն արհաւիրք ՚ի Տեառնէ ՚ի վերայ թագաւորաց երկրին որ շուրջ զՅուդայիւ. և ո՛չ պատերազմէին ընդ Յովսափատայ*: ¹¹Եւ յայլազգեացն բերէին Յովսափատայ ընծայս, ոսկի, և արծաթ, և պատարագս, և Արաբացիքն ածէին նմա խոյս յոչխարաց՝ եւթն հազար և եւթն հարիւր, և նոխագս եւթն հազար և եւթն հարիւր*: ¹²Եւ երթալով Յովսափատ մեծանայր ՚ի բարձրութիւն: Եւ շինեաց տունս ՚ի Յրէաստանի քաղաքս ամուրս. ¹³և գործք բազում եղեն նորա ՚ի Յրէաստանի: Եւ արք զօրաւորք պատերազմօղք ուժով յերուսաղէմ. ¹⁴և այս էր թիւ նոցա ըստ տանց տոհմիցն իւրեանց: ՚ի Յուդայի հազարապետք. Եղնաս իշխան, և ընդ նմա որդիք զօրաւորք զօրութեամբ երեք հարիւր հազար. ¹⁵և ընդ նոսա Յովնան իշխան, և ընդ նմա երկերիւր ութսուն հազար*: ¹⁶Եւ ընդ նմա Սասէաս որդի Ջաքարիայ յօժարեալն ՚ի Տէր. ընդ նմա երկերիւր հազար զօրաւորք ուժով*: ¹⁷Եւ ՚ի Բենիամինէ զօրաւոր ուժով. Եղիադա, և ընդ նմա աղեղնաւորք և պարսաւորք երկերիւր հազար*: ¹⁸Եւ ընդ նոսա Յովզաբադ. և ընդ նմա հարիւր ութսուն հազար զօրաւորք ՚ի պատերազմի*: ¹⁹Սոքա՛ էին պաշտօնեայք արքայի. բա՛ց յայնցանէ զորս ետ արքայ ՚ի քաղաքսն ամուրս յամենայն Յրէաստանի*:

18

Գլուխ ԺԸ

¹Եւ եղև Յովսափատայ մեծութիւն և այլ ևս. և փառք բազում. և արար խնամութիւն ընդ տանն Աքաաբու*: ²Եւ էջ ՚ի կատարել տարւոյն առ Աքաաբ ՚ի Սամարիա. և եզեն նմա Աքաաբ ոչխարս և զուարակս բազումս, և զօրուն որ ընդ նմա. և սիրէր զնա ելանել ընդ նմա յՌամովթ Գաղաադացւոյն: ³Եւ ասէ Աքաաբ արքայ Իսրայէլի ցՅովսափատ արքայ Յուդայ. Գա՞ս ընդ իս յՌամովթ

* Ոմանք. Ընծայս Յովսափատայ... և փառք բազում:

* Ոմանք. Որ էին շուրջ զՅուդայիւ:

* Ոմանք. Եւ նոխագս ԵՌ և ԵԾ:

* Ոմանք. Եւ ընդ նմա Մ և ՉՌ:

* Ոսկան. Եւ ընդ նմա Ամասէաս:

* Ոմանք. Եւ ասպարաւորք երկերիւր:

* Յօրինակին. Եւ ընդ նմա Յովադադաբ:

* Ոսկան. Ջորս եղ արքայ:

* Ոսկան. Մեծութիւն և այլ ևս փառք բազում:

Գաղաադացւոյն: Եւ ասէ ցնա. Որպէս ես՝ նոյնպէս և դու. և որպէս զօրք քո՝ զօրք իմ ընդ քեզ՝ ՚ի պատերազմին: ⁴Եւ ասէ Յովսափատ ցարքայն Իսրայէլի. Խնդրեսցուք այսօր զՏէր: ⁵Եւ ժողովեաց արքայն Իսրայէլի զմարգարէսն Իսրայէլի արս չորեքհարիւր, և ասէ ցնոսա. Եթէ երթա՞յց յՌամովթ Գաղաադ ՚ի պատերազմ, և կամ թէ դադարեցից: Եւ ասեն. Ե՛լ, և յաջողեսցէ՛ Աստուած ՚ի ձեռս արքայի: ⁶Եւ ասէ Յովսափատ. Ո՞չ գոյ աստ և այլ ևս մարգարէ Տեառն. և խնդրեսցուք ՚ի նմանէ: ⁷Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ. Է՛ մնա ևս այր՝ առ ՚ի խնդրել զՏէր նովաւ. և ես ատեցի՛ զնա, վասն զի ո՛չ մարգարեանայ ինձ բարիս. և զի ամենայն աւուրք իւր եմ ՚ի չարութիւն. նա՛ է Միքիաս որդի Յեմլեայ: Եւ ասէ Յովսափատ. Մի՛ խօսեսցի արքայ այդպէս*: ⁸Եւ կոչեաց արքայն Իսրայէլի ներքինի մի՝ և ասէ. Վաղվադակի ա՛ծ զՄիքիաս որդի Յեմլեայ: ⁹Եւ արքայն Իսրայէլի՝ և Յովսափատ արքայ Յուդայ՝ նստին իւրաքանչիւրոք յաթոռ իւրում, զգեցեալ պատմութեանս, և նստին յընդարձակ դրանն Սամարեայ. և ամենեքեան մարգարէքն առաջի նոցա մարգարեանային: ¹⁰Եւ արար իւր Սեղեկիաս որդի Քանանու եղջևու երկաթեղէնս, և ասէ. Այսպէս ասէ Տէր. Սոքօք հարցես զԱսորիս մինչև վախճանեսցես: ¹¹Եւ ամենեքեան մարգարէքն նոյնպէս մարգարեանային և ասին. Ե՛լ յՌամովթ Գաղաադ, և յաջողեսցիս, և տացէ՛ Տէր ՚ի ձեռս արքայի: ¹²Եւ հրեշտակն որ չոգաւ կոչել զՄիքեաս, խօսեցաւ ընդ նմա՝ և ասէ. Ահա խօսեցան մարգարէքն իբրև ընդ մի բերան յաղագս արքայի՝ բարիս. եղիցին և քո բանք իբրև զմիոյ՝ նոցա, և խօսեսցիս բարիս: ¹³Եւ ասէ Միքեաս. Կենդանի՛ է Տէր՝ զի զոր ինչ ասասցէ Աստուած ցիս՝ զայն խօսեցայց*: ¹⁴Եւ եկն առ արքայ. և ասէ ցնա արքայ. Միքեաս՝ եթէ երթա՞յց յՌամովթ Գաղաադ ՚ի պատերազմ, եթէ դադարեցից: Եւ ասէ. Ե՛լ և յաջողեսցի, և տացին ՚ի ձեռս ձեր*: ¹⁵Եւ ասէ ցնա արքայ. Քանի՞ցս անգամ երդմնեցուցի զքեզ, զի մի՛ այլ ինչ խօսեսցիս ընդ իս, բայց զճշմարտութիւն յանուն Տեառն*: ¹⁶Եւ ասէ. Տեսի ցրուեալ զԻսրայէլ ՚ի լերինս՝ իբրև զոչխարս որոց ո՛չ գոյ հովիւ. և ասէ Տէր. Ո՛չ գոյ դոցա իշխան. դարձցի՛ իւրաքանչիւրոք ՚ի տուն իւր խաղաղութեամբ: ¹⁷Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ. Ո՞չ ասացի քեզ՝ թէ ո՛չ մարգարեանայ նա վասն իմ բարիս՝ այլ չարութիւն*: ¹⁸Եւ ասէ. Ո՛չ այդպէս. լուարովք զբան Տեառն. տեսի զՏէր՝ զի նստէր յաթոռն իւրում. և ամենայն զօրք երկնից մե՛րձ կային յաջմէ նորա և յահեկէ. ¹⁹և ասէ Տէր. Ո՞ խաբեսցէ զԱքաաբ արքայ Իսրայէլի, զի ելցէ և անկցի յՌամովթ Գաղաադու. և ասեն, ոմն այսպէս, և ոմն այնպէս*: ²⁰Եւ ե՛լ հոգի՛ եկաց առաջի Տեառն՝ և ասէ. Ես խաբեցից զնա: Եւ ասէ Տէր. Ի՞նչ: ²¹Եւ ասէ. Ելից և եղէց հոգի սո՛ւտ ՚ի բերան ամենայն մարգարէիցն նորա: Եւ ասէ. Խաբեսցես՝ և կարասցես, ե՛լ և արա այդպէս: ²²Եւ արդ ահա ետ Տէր հոգի սո՛ւտ ՚ի բերան մարգարէիցոք քոց այդոցիկ. և Տէր խօսեցաւ վասն քո չարիս: ²³Եւ մատուցեալ Սեղեկիաս որդի Քանանու՝ եհար զծնօտն Միքայի, և ասէ ցնա. Որո՞վ ճանապարհաւ անց Ոգի Տեառն զինև, և խօսեցաւ ընդ քեզ*: ²⁴Եւ ասէ Միքեաս. Ահա տեսցես յաւուրն յայնմիկ. յորում մտանիցես շտեմարան ՚ի շտեմարանէ

* Այլք. Ինձ ՚ի բարիս: *Ոսկան*. Են ՚ի չարութեան:

* *Ոմանք*. Ասասցէ ցիս Աստուած:

* *Ոմանք*. Եւ եթէ դադարեցից:

* *Ոմանք*. Երդմնեցուցից զքեզ:

* *Ոմանք*. Ո՞չ ասացի ցքեզ:

* *Ոմանք*. Ձի եկեսցէ և անկցի յՌա՛... ոմն այսպէս և ոմն այսպէս:

* *Ոմանք*. Զծնօտն Միքայի:

քաբչել*։²⁵ Եւ ասէ արքայն Իսրայէլի. Առէք զՄիքէաս՝ և դարձուցէք զդա առ Սեններ իշխան քաղաքիս, և առ Յովաս իշխան որդի արքայի*։²⁶ և ասացէ՛ք, ա՛յսպէս ասէ արքայ. Տո՛ւք զդա ՚ի տուն բանտին, և կերիցէ հաց նեղութեան, և ջուր նեղութեան արբցէ՛ մինչև ՚ի դառնալն ինուն խաղաղութեամբ։²⁷ Եւ ասէ Միքէաս. Եթէ դառնալով դարձցիս խաղաղութեամբ՝ ո՛չ խօսեցաւ ընդ իս Տէր, լուարովք ժողովուրդք ամենեքեան։²⁸ Եւ ել արքայն Իսրայէլի, և Յովսափատ արքայ Յուդայ յՌամովթ Գաղաադ։²⁹ Եւ ասէ արքայն Իսրայէլի ցՅովսափատ. Ծածկեա՛ զիս և մտից ՚ի պատերազմն, և դու զգեցիր զպատմուճանն ին։ Եւ ծածկեցաւ արքայն Իսրայէլի, և եմուտ ՚ի պատերազմ։³⁰ Եւ արքայն Ասորոց պատուիրեաց իշխանաց կառացն որք էին ընդ նմա՝ և ասէ. Մի՛ պատերազմիցիք ընդ փոքու և մի՛ ընդ մեծի, բայց ընդ արքային Իսրայէլի միայն։³¹ Եւ եղև իբրև տեսին իշխանք կառացն զՅովսափատ, և ասեն նորա. Սա՛ է արքայն Իսրայէլի։ Եւ շո՛ւրջ եղեն զնովաւ պատերազմել. և գոչեաց Յովսափատ, և Տէր ապրեցոյց զնա. և դարձոյց զնոսա Աստուած ՚ի նմանէ։³² Եւ եղև իբրև տեսին իշխանք կառացն՝ թէ ո՛չ է նա արքայն Իսրայէլի, դարձան ՚ի նմանէ։³³ Եւ այր ոմն ելից զաղեղն կորովութեամբ, և եհար զարքայն Իսրայէլի ընդ մէջ թոքոցն և լանջաց. և ասէ ցնեքիմին. Դարձո՛ զձեռն քո՝ և հան զիս ՚ի պատերազմես, վասն զի վտանգեցայ։³⁴ Եւ պարտեցաւ պատերազմ յաւուր յայնմիկ, և արքայն Իսրայէլի կա՛յր ՚ի վերայ կառացն իւրոց մինչև ցերեկոյ ընդդէմ Ասորեացն. և մեռաւ ՚ի մտանել արեգականն։

19

Գլուխ ԺԹ

1 Եւ դարձաւ Յովսափատ արքայ Յուդայ ՚ի տուն իւր խաղաղութեամբ յերուսաղէն։² Եւ ել ընդ առաջ նորա Յեու որդի Անանիայ մարգարէ, և ասէ նա ցարքայ Յովսափատ. Եթէ մեղաւորին դու օգնե՞ս, կամ ատելւոյն ՚ի Տեառնէ բարեկա՞մ լինիս. վասն այդորիկ եղև ՚ի վերայ քո բարկութիւն ՚ի Տեառնէ*։³ Այլ զի գտան ՚ի քեզ բանք բարիք, և զի բարձեր զանտառսն յերկրես Յուդայ, և ուղղեցեր զսիրտ քո խնդրել զՏէր՝ ապրեցո՛յց զքեզ Տէր։⁴ Եւ բնակեաց Յովսափատ յերուսաղէն. և միւսանգամ ել ժողովուրդն ՚ի Բերսաբէ մինչև ՚ի լեառնն Եփրեմի, և դարձոյց զնոսա առ Տէր Աստուած հարցն իւրեանց։⁵ Եւ կացոյց դատաւորս յամենայն քաղաքսն Յուդայ, և յամուրս յիւրաքանչիւր քաղաքի*։⁶ Եւ ասէ ցդատաւորսն. Տեսէ՛ք զինչ առնիցէք դուք, վասն զի ո՛չ զմարդկան իրս դատիք դուք՝ այլ զՏեառն, և ընդ ձե՛զ են բանք իրաւանց։⁷ և արդ եղիցի երկևղ Տեառն ՚ի վերայ ձեր, պահեցէ՛ք և արարէ՛ք. զի ո՛չ գոյ Տեառն Աստուծոյ մերոյ անիրաւութիւն, և ո՛չ երեսաց աչառել, և ո՛չ առնուլ կաշառս։⁸ Այլ և յերուսաղէն կացոյց Յովսափատ ՚ի քահանայից և ՚ի Ղևտացւոց, և ՚ի հայրապետաց Իսրայէլի՝ յիրաւունս Տեառն դատել զբնակիչսն Երուսաղէմի։⁹ Եւ պատուիրեաց նոցա և ասէ. Ա՛յնպէս արարէք երկիւղիւ Տեառն,

* Ոմանք. Մտցես ՚ի շտեմարան ՚ի շտեմարանէ։

* Ոմանք. Առ Սենների իշխան։ Իսկ Ոսկան. Առ Սենն իշխան։

* Ոմանք. Որդի Անանիայի մարգարէի։ Այլք. Եւ կամ ատելւոյն։

* Օրինակ մի. Եւ ամուրս յիւրաքանչիւրոք քա՛։

ճշմարտութեամբ և լի՛ սրտիւ ¹⁰ամենայն այր զիրաւունսն, զեկեալս առ ձեզ յեղբարց ձերոց՝ և բնակչաց քաղաքացն իւրեանց, ՚ի մէջ արեան և արեան, և ՚ի մէջ իրաց և պատուիրանի. և զիրաւունս և զդատաստանսն որոշեցէ՛ք նոցա. և մի՛ մեղիցեն առ Աստուած. և ո՛չ ևս եղիցի ՚ի վերայ ձեր բարկութիւն, և ո՛չ ՚ի վերայ եղբարց ձերոց. այսպէս արասջի՛ք և ո՛չ մեղանչիցէ՛ք*։ ¹¹Եւ ահա Ամարիաս քահանայ՝ առաջնորդ ՚ի վերայ ձեր յամենայն բանի Տեառն. և Ջաբդիաս որդի Իսմայելի առաջնորդ ՚ի տանն Յուդայ. յամենայն բանի արքայի. և դպիրքն և Ղևտացիք առաջի ձեր. զօրացարուք և արարէ՛ք. և եղիցի՛ Տէր ընդ բարւոյն։

20

Գլուխ Ի

ԺԷ ¹Եւ յետ այսորիկ եկի՛ն որդիքն Ամոնայ, և որդիքն Մովաբայ. և ընդ նոսա ՚ի Մինեցւոց անտի, առ Յովսափատ ՚ի պատերազմ։ ²Եկի՛ն և ցուցին Յովսափատայ՝ և ասեն. Ե՛կն ՚ի վերայ քո ամբոխ բազում յայնմ կողմանէ ծովուն յԱսորեաց, և ահա են յԱսասանթամար՝ որ է ՚ի Գադդի. ³և երկեալ։ Եւ ետ Յովսափատ զերեսս իւր խնդրել զՏէր, և քարոզեաց պահս յամենայն Յուդայ*։ ⁴Եւ ժողովեցաւ Յուդաս խնդրել զՏէր. և յամենայն քաղաքացն Յուդայ եկին խնդրել զՏէր։ ⁵Եւ յարեաւ Յովսափատ ՚ի մէջ եկեղեցւոյն Յուդայ յերուսաղէմ ՚ի տանն Տեառն՝ յանդիման սրահին նորոյ. ⁶և ասէ. Տէր Աստուած հարցն մերոց, ո՞չ ապաքէն դո՛ւ ես Աստուած յերկինս, և դո՛ւ տիրես ամենայն թագաւորութեանց հեթանոսաց, և ՚ի ձեռնս քո զօրութիւն ուժոյ. և ո՛չ որ կարէ կալ ընդդէմ քո. ⁷ո՞չ ապաքէն դո՛ւ ես Տէր որ սատակեցեր զբնակիչս երկրիս այսորիկ յերեսաց ժողովրդեան քոյ Իսրայելի, և ետուր զսա զաւակի Աբրահամու սիրելւոյն քո յաւիտեան։ ⁸Բնակեցին ՚ի սմա, և շինեցին աստ սրբութիւն անուան թում, և ասացին. ⁹Եթէ եկեսցեն ՚ի վերայ մեր չարիք՝ սո՛ւր, դատաստանք, մահ, սո՛վ, կացցուք առաջի տանս այսմիկ՝ և առաջի քո. վասն զի անուն քո ՚ի վերայ տանս այսորիկ է՛. և զոչեսցուք առ քեզ ՚ի նեղութեան, լուիցես՝ և ապրեցուցես զմեզ*։ ¹⁰Եւ արդ՝ ահա որդիքն Ամոնայ և Մովաբու, և լեառն Սէիրայ. ընդ որս ո՛չ ետուր անցանել ընդ նոսա Իսրայելի յելանելն նոցա յերկրէն Եգիպտոսի. վասն զի խտորեցան ՚ի նոցանէ, և ո՛չ սատակեցին զնոսա. ¹¹և արդ՝ աւասիկ նոքա յանդգնին զա՛լ ՚ի վերայ մեր, և հանել զմեզ յերկրէս ժառանգութեան մերոյ զոր ետուր մեզ։ ¹²Տէր Աստուած մեր՝ ո՞չ առնես դատաստանս ՚ի նոսա. վասն զի ո՛չ գոյ զօրութիւն մեր ընդդէմ կալ բազում ամբոխին այնորիկ, և ո՛չ զիտենք զինչ արասցուք նոցա. այլ առ քե՛զ են աչք մեր։ ¹³Եւ ամենայն Յուդաս կայր առաջի Տեառն. և մանկունք նոցա, և կանայք նոցա։ ¹⁴Եւ Ոգիելի որդւոյ Ջաբարեայ, և յորդւոցն Բանեայ, և յորդւոցն Եղիելի, որդւոյն Մաթանիայ Ղևտացւոյ յորդւոցն Ասափայ, եղև՝ ՚ի վերայ նորա Յոգի Տեառն ՚ի մէջ եկեղեցւոյն*։ ¹⁵և ասէ. Լուարուք ամենայն Յուդայ և բնակիչք Երուսաղէմի՝ և արքայ Յովսափատ. այսպէս ասէ Տէր ցձեզ. Մի՛ երկնչիք, և մի՛ զարհուրիք յերեսաց բազում

* *Ոմանք.* Յեղբարց ձերոց ՚ի բնակչաց։

* *Ոսկան.* Եւ եղ Յօսափատ զեր՛։

* *Ոմանք.* Առաջի տանս այսորիկ։

* *Ոմանք.* Եւ Ոգիել որդի Ջաբարիայ յորդւոցն Բանեայ... և եղև ՚ի վերայ նորա։

ամբոխին այնորիկ. վասն զի ո՛չ ձե՛ր է պատերազմո՞ւ այլ Աստուծոյ: ¹⁶Վաղիւ իջէ՛ք ՚ի վերայ նոցա. ահա իջանեն ընդ գառ ՚ի վայրն Ասեր, և գտջի՛ք զնոսա առ եզեր գետոյն, անապատին Յերիելի. ¹⁷Ո՛չ է ձեր պատերազմել անդ. իմասջի՛ք և տեսջի՛ք զփրկութիւն Տեառն որ է ընդ ձեզ, Յուդայ և Երուսաղէմ. մի՛ երկնջիք և մի՛ զարհուրիք վաղիւ իջանել ընդ առաջ նոցա. զի Տէր է՛ ընդ ձեզ՝: ¹⁸Եւ խոնարհեալ Յովսափատ ՚ի վերայ երեսաց իւրոց, և ամենայն Յուդաս՝ և բնակիչք Երուսաղէմի. անկան առաջի Տեառն, և երկի՛ր պագին Տեառն: ¹⁹Եւ յարեան՝ Ղևտացիքն՝ յորդոցն Կահաթու, և յորդոցն Կորխայ՝ օրհնել զՏէր Աստուած ձայնիւ մեծաւ ՚ի բարձունս: ²⁰Եւ կանխեցին ընդ առաւօտս, ելին յանապատն Թելուայ. և յելանելն իւրեանց՝ եկաց Յովսափատ, գոչեաց և ասէ. Լուարո՞ւք ինձ Յուդաս և բնակիչք Երուսաղէմի. հաւատացէ՛ք Տեառն Աստուծոյ մերուն, և հաւատացէ՛ ձեզ. հաւատացէ՛ք մարգարէից նորա՝ և յաջողեսցի՛ ձեզ: ²¹Եւ խոնարհեցաւ ընդ ժողովրդեանն. և կացոյց սաղմոսանուագս՝ և օրհնիչս, խոստովան լինել և օրհնել զսրբութիւնսն, յելանելն առաջի զօրուն՝ և ասէին. Խոստովան եղերո՞ւք Տեառն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա՝: ²²Եւ եղև ՚ի սկսանելն զօրհնութիւնս Տեառն և զխոստովանութիւնսն նորա, ետ Տէր պատերազմել որդոցն Ամոնայ ՚ի վերայ Մովաբու ՚ի լերինն Սէիրայ, որք ելեալ էին ՚ի վերայ Յուդայ. և պարտեցան՝: ²³Եւ յարեան որդիքն Ամոնայ և Մովաբու ՚ի վերայ բնակչաց լերինն Սէիրայ սատակել՝ և խորտակել. և իբրև վախճանեցին զբնակիչսն Սէիրայ, յարեան ՚ի վերայ միմեանց սատակել: ²⁴Եւ Յուդաս եկն ՚ի դիտանոցն անապատին, հայեցաւ և ետես զբազմութիւնն, և ահա ամենեքեան մեռեալք և անկեալք ՚ի վերայ երկրի. և ո՛չ ոք էր ապրեալ: ²⁵Եւ եկն Յովսափատ և զօրն, կողոպտել զաւարն նոցա. և գտին անասուն բազում, և զկազմածն, և զաւարն, և անօթս ցանկալիս. և աւարեցին զայն: Եւ եղև զերիս աւուրս ժողովելն նոցա զաւարն. վասն զի բազում էր յոյժ: ²⁶Եւ յաւուրն չորրորդի ժողովեցան ՚ի Յովիտսն օրհնութեան. վասն զի անդ օրհնեցին զՏէր. յաղագս այնորիկ կոչեցին զանուն տեղոյն այնորիկ՝ Յովիտ օրհնութեան մինչև յօրս յայս: ²⁷Եւ դարձաւ ամենայն այր Յուդայ յերուսաղէմ, և Յովսափատ առաջնորդ նոցա ուրախութեամբ մեծաւ. քանզի ուրախ արար զնոսա Տէր ՚ի թշնամեացն իւրեանց. ²⁸և մտին յերուսաղէմ քնարօք և տաւրօք և փողովք ՚ի տուն Տեառն: ²⁹Եւ եղեն արհաւիրք ՚ի Տեառնէ՛ ՚ի վերայ ամենայն թագաւորութեանց երկրի ՚ի լսելն նոցա՝ եթէ Տէր ե՛տ պատերազմ ընդ հակառակորդսն Իսրայէլի: ³⁰Եւ խաղաղեցաւ թագաւորութիւնն Յովսափատու. և հանգոյց զնա Աստուած նորա շուրջանակի: ³¹Եւ թագաւորեաց Յովսափատ ՚ի վերայ Յուդայ. և էր ամաց երեսնից ՚ի թագաւորելն իւրուն, և քսան և հինգ ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօրն նորա Ազուբա՝ դուստր Սաղիայ՝: ³²Եւ գնաց ՚ի ճանապարհս հօր իւրոյ Ասայի, ո՛չ խոտորեցաւ առնել ուղղութիւն առաջի Տեառն: ³³Այլ բարձունքն տակաւին ևս էին. և ժողովուրդն ո՛չ ուղղեաց զսիրտ իւր առ Տէր Աստուած հարցն իւրեանց: ³⁴Եւ մնացեալ բանքն Յովսափատու առաջինք և վերջինք՝ ահա գրեալ են ՚ի բանս Յէուայ որդւոյ Ամանայ, որ գրեաց զգիրս թագաւորացն Իսրայէլի: ³⁵Եւ յետ այսորիկ հաղորդութիւն արար Յովսափատ

* *Ոմանք.* Մի՛ երկնջիջիք և մի՛ զարհուրիջիք վաղիւ ելանել ընդ առաջ:

* *Ոսկան.* Եւ խորհեցաւ ընդ ժողովրդ՝: *Ոմանք.* Խոստովան լերուք Տեառն:

* *Բազունք.* ՚ի վերայ Մովաբու և լերինն Սէիրայ:

* *Ոսկան.* Էր ամաց երեսնից և հնգից ՚ի թագա՞: *Յօրինակին.* Եւ Ի՛ւ ամ թագաւորեաց:

արքայ Յուդայ ընդ Ոքոզեայ արքայի Իսրայէլի. և անօրինեցաւ նա յառնել* 36և երթալ առ նա. և առնել նա՛ւ գնալ ՚ի Թարսիս, և արար նա՛ւ ՚ի Գասիոնգաբեր: 37Եւ մարգարեացաւ եղիազար որդի Ովդրայ ՚ի Մարեսայ՝ առ Յովսափատ, և ասէ. Վասն զի եղեր սիրելի Ոքոզիայ, խորտակեաց Տէր զգործն քո, և խորտակեցաւ նաւն քո՝ և ո՛չ կարաց երթալ ՚ի Թարսիս*:

21

Գլուխ ԻԱ

1Եւ ննջեաց Յովսափատ ընդ հարս իւր, և թաղեցաւ ընդ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի:

ԺԸ Եւ թագաւորեաց Յովրամ որդի նորա փոխանակ նորա: 2Եւ նորա էին եղբարք՝ որդիք Յովսափատու վեց՝ Եզրիաս, և Էէլ, և Ջաքարիաս, և Միսայէլ, և Սափատիաս, և Ազարիու. ամենեքեան սորա որդիք Յովսափատու արքայի Յուդայ: 3Եւ ետ նոցա հայրն իւրեանց պարգևս բազումս, արծաթ և ոսկի, և զէնս, հանդերձ պարսպաւոր քաղաքօքն Յուդայ. և զթագաւորութիւնն ետ Յովրամայ, վասն զի նա՛ էր անդրանիկ: 4Եւ յարեաւ Յովրամ ՚ի թագաւորութեանն իւրում, և զօրացաւ. և սպան զամենեսեան զեղբարսն իւր սրով, և յիշխանացն Իսրայէլի: 5Եր ինքն երեսուն և երկուց ամաց՝ յորժամ եկաց ՚ի թագաւորութեանն իւրում, և զուրս ամ թագաւորեաց յերուսաղէմ. 6և գնաց ՚ի ճանապարհս թագաւորացն Իսրայէլի, որպէս արար տունն Աքաաբու. վասն զի դուստր Աքաաբու էր նորա կին. և արար չա՛ր առաջի Տեառն: 7Եւ ո՛չ կամեցաւ Տէր սատակել զտունն Դաւթի, վասն ուխտին զոր եղ ընդ Դաւթի. և որպէս ասացն ցնա՝ տալ նմա ճրագ, և որդուց նորա զամենայն աւուրս: 8Յաւուրսն յայնոսիկ ապստամբեաց Եդոմ ՚ի Յուդայ, և թագաւորեցուցին ՚ի վերայ իւրեանց թագաւոր*։ 9Եւ գնաց Յովրամ հանդերձ իշխանօքն, և ամենայն երիվարք ընդ նմա. և եղև ՚ի յառնելն նորա զիշերի, եհա՛ր Եդոմ զայնոսիկ որ պատեցին զնա, և զիշխանս կառացն. և փախեաւ զօրն ՚ի բնակութիւնս իւրեանց: 10Եւ ՚ի բաց եկաց Եդոմ ՚ի ձեռանէ Յուդայ՝ մինչև յօրս յայս: Յայնժամ ապստամբեաց Ղոբնա ՚ի ձեռանէ նորա ՚ի ժամանակին յայնմիկ. վասն զի թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց*։ 11Քանզի արար իւր բարձունս ՚ի քաղաքսն Յուդայ, և պոռնկեցոյց զբնակիչսն Երուսաղէմի. և մոլորեցոյց զՅուդաս: 12Եւ եկն նմա զի՛ր յեղիայէ մարգարէ. և ասէ. Այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քոյ. Փոխանակ զի ո՛չ գնացեր դու ՚ի ճանապարհս Յովսափատու հօր քո, և ո՛չ ՚ի ճանապարհս Ասայի արքայի Յուդայ. 13այլ գնացեր ՚ի ճանապարհս թագաւորին Իսրայէլի. և պոռնկեցուցեր զՅուդայ՝ և զբնակիչսն Երուսաղէմի. որպէս պոռնկեցաւ տունն Աքաաբու. և զեղբարս քո զորդիս հօր քոյ՝ զլաւագոյնսն քան զքեզ սպանե՛ր. 14և ահա Տէր հարցէ զքեզ հարուածօք մեծամեծօք ՚ի ժողովրդեան քում, և զորդիս քո և զկանայս քո, և զամենայն ստացուածս քո*։ 15և դու չա՛ր հիւանդութեամբ և ախտիւ որովայնի հաշեսցիս, մինչև ելցէ որովայն քո հիւանդութեամբն

* Ոսկան. Եւ անօրինեցաւ նա առնել:

* Ոմանք. Ովդայ ՚ի Մարեսայ... և ո՛չ կարացեր երթալ ՚ի Թարսիս:

* Ոմանք. Ապստամբեաց Եդոմ և Յուդայ, և թա՛:

* Ոմանք. Ապստամբեաց Ղոբնա... ՚ի ժամանակին յայնմ. վասն զի:

* Բազումք. Հարուածովք մեծօք:

հանդերձ՝ աւուրց յաւուրս: ¹⁶Եւ յարո՛յց Տէր՝ ՚ի վերայ Յովրամայ այլազգիս, և զԱրաբացիս, և զմերձաւորսն յեթովպացւոց. ¹⁷և ելին ՚ի վերայ Յուդայ, և հարստահարէին զնա. և դարձուցին զամենայն պատրաստութիւնն զոր գտին ՚ի տան արքային, և զուստերս նորա, և զդաստերս նորա. և ո՛չ մնաց նմա որդի. բայց Ոքոզիաս միայն՝ կրտսերագոյն յորդիս նորա: ¹⁸Եւ յետ այսր ամենայնի՝ եհար զնա Տէր ախտիւ որովայնի որոյ ո՛չ գոյր բժշկութիւն. ¹⁹և եղև աւուրց յաւուրս, իբրև եկն ժամանակ աւուրցն նորա, յերկուս աւուրս ե՛լ որովայն նորա հանդերձ ախտիւն. և մեռաւ ՚ի չար հիւանդութեանն յայնմիկ. և ո՛չ արար նմա ժողովուրդն յուղարկութիւն, իբրև գյուղարկաւորութիւն հարցն նորա* : ²⁰Է՛ր ամաց երեսուն և երկուց՝ յորժամ թագաւորեաց. և զութ ամ թագաւորեաց յերուսաղէմ. և մեռաւ ո՛չ գովութեամբ. և թաղեցաւ ՚ի քաղաքին Դաւթի, և ո՛չ ՚ի գերեզմանս թագաւորացն:

22

Գլուխ ԻԲ

ԺԹ ¹Եւ թագաւորեցուցին բնակիչքն Երուսաղէմի զՈքոզիաս որդի նորա զկրտսերագոյնն փոխանակ նորա. վասն զի զամենեսեան զերիցագոյնսն կոտորեաց հէնն եկեալ ՚ի վերայ նոցա, Արաբացիքն, և Աղիմագովմեայքն. և թագաւորեաց Ոքոզիա որդի Յովրամայ արքայի Յուդայ: ²Է՛ր քսան և երկուց ամաց յորժամ թագաւորեաց Ոքոզիա. և տարի մի թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Գողողիա դուստր Զամբեայ* : ³Եւ նա՛ զնաց ՚ի ճանապարհս տանն Աքաաբու. վասն զի մայրն իւր է՛ր խորհրդակից նմա մեղանչել: ⁴Եւ արար չա՛ր առաջի Տեառն որպէս արար տունն Աքաաբու. քանզի նոքա էին խորհրդակիցք նմա յետ մեռանելոյ հօրն նորա սատակել զնա. ⁵ըստ խորհրդոց նոցա զնա՛ց նա: Եւ չոգաւ ընդ Յովրամայ որդւոյ Աքաաբու ՚ի պատերազմ ՚ի վերայ Ազայելի արքայի Ասորեաց յՌամաթ Գաղաադ. և հարին աղեղնաւորքն զՅովրամ: ⁶Եւ դարձաւ Յովրամ բժշկել յեզրայէլ, ՚ի վիրացն զոր խոցեցին զնա Ասորիքն յՌամաթ՝ ՚ի պատերազմել նորա ընդ Ազայելի արքայի Ասորեաց: Եւ Ոքոզիաս որդի Յովրամայ արքայի Յուդայ՝ էջ տեսանել զՅովրամ որդին Աքաաբու յեզրայէլ, վասն զի հիւանդ էր: ⁷Եւ ՚ի Տեառնէ եղև կործանումն Ոքոզիայ յերթալն առ Յովրամ. և յերթալն նորա ե՛լ նա առ Յէու՝ որդին Ամեսսեայ օծեալն Տեառն* : ⁸Եւ եղև իբրև ա՛ռ Յէու զվրէժ տանն Աքաաբու՝ եգիտ և զիշխանսն Յուդայ և զեղբարսն Ոքոզեայ՝ որք պաշտէին զՈքոզիաս, և կոտորեաց զնոսա. ⁹և ասաց խնդրել զՈքոզիաս. և կալան զնա ՚ի բժշկելն ՚ի Սամարիա. և ածին զնա առ Յէու, և սպան զնա. և թաղեցին զնա անդէն. վասն զի ասացին. Որդի՛ է Յովսափատայ որ խնդրեաց զՏէր ՚ի բոլոր սրտէ իւրմէ: Եւ ո՛չ գոյր ՚ի տանն Ոքոզիայ՝ զօրացուցանել զոք յաղագս զօրութեան թագաւորութեանն:

Ի ¹⁰Եւ Գողողիա մայրն Ոքոզիայ, ետես թէ մեռաւ որդին նորա, յարեալ և կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն ՚ի տանն Յուդայ* : ¹¹Եւ ա՛ռ

* *Ոմանք.* Ժողովուրդն նմա յուղարկաւորութիւն, իբրև գյուղարկութիւն հարցն նորա:

* *Ոսկան.* Քառասուն և երկուց ամաց էր՝ յորժամ: *Ոմանք.* Դուստր Զամբբեայ:

* *Ոմանք.* Առ օծեալն Տեառն:

* *Յօրինակին ՚ի վերայ* ՚ի տանն Յուդայ, *այսպէս չակերտ եղեալ, թերևս ակնարկի առնել* ՚ի տանէն, *որպէս ունին ոմանք:*

Յովսափէթ դուստր արքայի զՅովաս որդի Ոքոզիայ, և գողացաւ զնա՝ ի միջոյ որդւոցն արքայի կոտորելոցն. և ետ զնա ՚ի դայեակ նորա ՚ի սենեակս անկողացն. և թաքոյց զնա Յովսափէթ դուստր արքային Յովրամայ՝ եղբայրն Ոքոզիայ կին Յովիդայեայ քահանայի, և ծածկեաց զնա յերեսաց Գողողիայ, և ո՛չ սպան զնա՝: ¹²Եւ է՛ր ընդ նմա թաքուցեալ ՚ի տանն Աստուծոյ ամս վեց. և Գողողիա թագաւորեաց ՚ի վերայ երկրին՝:

23

Գլուխ ԻԳ

¹Եւ յամին եւթներորդի զօրացաւ Յովիդայեա. ա՛ն զհարիւրապետսն՝ զԱզարիաս որդի՝ Յովրամայ, և զԻսմայէլ որդի՝ Յովնանայ, և զԱզարիաս որդի՝ Յովքադայ, և զՄասիաս որդի Ադայիայ. և զեղիսափատ որդի՝ Չաքարիայ ՚ի տունն Տեառն. ²շրջեցան ընդ Յուդաս, և ժողովեցին զՂևտացիսն յամենայն քաղաքացն Յուդայ, և զիշխանս տոհմիցն Իսրայէլի, և եկին յերուսաղէմ: ³Եւ եղին ուխտ ընդ ամենայն եկեղեցւոյն Յուդայ ՚ի տանն Տեառն, և ընդ արքային: Եւ կացոյց նոցա զորդին արքայի, և ասէ ցնոսա. Ահաւասիկ որդի արքային Յուդայ, թագաւորեսցէ՛ դա, որպէս խօսեցաւ Տէր ՚ի վերայ տանն Դաւթի: ⁴Եւ արդ՝ բան՝ ա՛յս է զոր առնիցէք. երրորդ մասն ՚ի ձէնջ մտցէ ՚ի շաբաթապահ քահանայիցն Ղևտացւոց, և ՚ի մուտս դրանցն՝. ⁵և երրորդ մասն ՚ի տան արքային. և երրորդ մասն ՚ի դրանն միջնում: Եւ ամենայն ժողովուրդն ՚ի սրահի տանն Տեառն լիցի՝. ⁶և մի՛ ոք մտցէ ՚ի տունն Տեառն, բայց միայն քահանայքն և Ղևտացիքն՝ և պաշտօնեայքն ՚ի Ղևտացւոց՝ նոքա մտցեն. վասն զի սուրբք են. և ամենայն ժողովուրդն պահեսցէ զպահպանութիւնս Տեառն: ⁷Եւ պատեսցեն Ղևտացիքն շուրջանակի զարքայ՝ ա՛յր և զէն իւր ՚ի ձեռին իւրում և որ ոք մտանիցէ ՚ի տունն, մեռցի՛. և նոքա եղիցին ընդ արքայի ՚ի մտանել և յելանել նորա: ⁸Եւ արարին Ղևտացիքն և ամենայն Յուդայ ըստ ամենայնի զոր ինչ պատուիրեաց Յովիդայեայ քահանայ. և ա՛ն իւրաքանչիւրոք զընկեր իւր ՚ի սկսանելոյ շաբաթուն. վասն զի ո՛չ արձակեաց Յովիդայէ զհանապազորդեան պահապանսն: ⁹Եւ ետ նոցա զսուսերսն և զվահանսն, և զգէնսն որք էին արքայի Դաւթի ՚ի տանն Աստուծոյ՝. ¹⁰և կացոյց զամենայն ժողովուրդն զիւրաքանչիւրոք զինուն իւրով յուսոյ տանն յաջմէ, մինչև յուս ահեկի կողմանն սեղանոյն և տաճարին զթագաւորաւն շուրջանակի: ¹¹Եւ եհան զորդին արքայի, և եղ ՚ի վերայ նորա զթագն և զվկայութիւնն. և թագաւորեցուցին և օծին զնա Յովիդայէ և որդիք իւր. և ասեն. Կեցցէ՛ արքայ՝: ¹²Եւ լուաւ Գողողիա զձայն ժողովրդեանն զընթանալոյն, զգոհանալոյն՝ և զօրհնելոյն զարքայ, և եմուտ առ արքայն ՚ի տուն Տեառն. ¹³Ետե՛ս, և ահա թագաւորն կայր ՚ի տեղւոջն իւրում, ՚ի մուտս

* Այլք. Եւ ետ զնա և զդայակն նորա ՚ի սե՛: Ոմանք. ՚ի սենեակս անկողնոցն. կամ՝ անկողնացն... եղբօրն Ոքոզիայ:

* Ոսկան. ՚ի տանն Տեառն:

* Ոմանք. եկեղեցին Յուդայ ՚ի տանն Տեառն: Այլք. Եւ եցոյց նոցա զորդին արքայի:

* Ոմանք. Բանս այս է զոր: Այլք. Քահանայիցն և Ղևտաց՝:

* Այլք. Եւ երրորդն ՚ի դրանն միջնում:

* Ոմանք. ՚ի տանն Տեառն:

* Ոմանք. Եւ որդիքն իւր, և ասեն:

ճանապարհին՝ պե՛տքն, և փողքն, և իշխանքն շուրջ զարքայիւ. և ամենայն ժողովուրդն զուարճացեալ հարկանէին զփողսն, և երգէին նուագարանօքն երգս, և օրհնէին զօրհնութիւնսն. և պատառեաց Գողողիա զգգեստն իւր, գոչեա՛ց և ասէ. Դաւաճանութեա՛նք խարդախեցէք: ¹⁴Եւ ել Յովիդայէ քահանայ՝ պատուիրեաց Յովիդայէ քահանայ հարիւրապետացն և իշխանաց զօրուն, և ասէ ցնոսա. Դանէ՛ք զդա արտաքոյ՝ ՚ի տանէդ. և ելէ՛ք զկնի դորա, և մեռցի՛ սրով. վասն զի ասաց քահանայն. Մի՛ մեռցի նա ՚ի տանն Տեառն՝: ¹⁵Եւ թո՛յլ ետուն նմա, և անց ընդ դուռն հեծելոց տան արքային. և սպանի՛ն զնա անդ: ¹⁶Եւ ուխտեաց Յովիդայէ ուխտ ՚ի մէջ իւր՝ և ժողովրդեանն և արքային, լինել ժողովուրդ Տեառն: ¹⁷Եւ եմուտ ամենայն ժողովուրդ երկրին ՚ի տունն Բահաղու, և կործանեցին զնա, և զսեղանս նորա, և զկուռսն նորա մանրեցին. և զՄաթան քուրմն Բահաղու սպանին առաջի սեղանոյ նորին՝: ¹⁸Եւ ա՛ռ Յովիդայէ քահանայ զգործ տանն ՚ի ձեռն քահանայից և Ղևտացոց. և կանգնեաց զհանապազորդեան պաշտօնեայս զքահանայս և զՂևտացիս զորս զատոյց Դաւիթ ՚ի տունն Տեառն, և մատոյց ողջակէզս Տեառն, որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի, ուրախութեանք և երգովք ՚ի ձեռն Դաւթի՝: ¹⁹Եւ կացին դռնապանքն ՚ի դրունս տան Տեառն, և ո՛չ մտանէր անմաքուր ոք անդր յամենայն իրս: ²⁰Եւ ա՛ռ զպետս տոհմիցն, և զզօրաւորսն, և զիշխանս ժողովրդեանն, և զամենայն ժողովուրդ երկրին, և հանին զարքայ ՚ի տանէ Տեառն, և մտին ընդ դուռն ներքին ՚ի տուն թագաւորին, և նստուցին զարքայ յաթոռ թագաւորութեանն՝: ²¹Եւ ուրախ եղև ամենայն ժողովուրդ երկրին, և քաղաքն լռեաց. և զԳողողիա սպանին սրով:

24

Գլուխ ԻԴ

¹Է՛ր եւթն ամաց Յովաս ՚ի թագաւորելն իւրում. և քառասուն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ. և անուն մօր նորա Աբիա ՚ի Բերսաբէէ՝: ²Եւ արար Յովաս ուղղութիւն առաջի Տեառն զամենայն աւուրս Յովիդայեայ քահանայի: ³Եւ ա՛ռ իւր Յովաս երկուս կանայս, և ծնաւ ուստերս և դստերս: ⁴Եւ յետ այսորիկ եղև ՚ի սրտին Յովասու կազմել զտունն Տեառն: ⁵Եւ ժողովեաց զքահանայսն և զՂևտացիսն, և ասէ ցնոսա. Ելէ՛ք ՚ի քաղաքս Յուդայ, և ժողովեցէ՛ք յամենայն յիսրայէլէ արծաթ, զօրացուցանել զտունն Տեառն ամի ամի. և փութացարո՛ւք խօսել. և ո՛չ հաւատացին Ղևտացիքն: ⁶Եւ կոչեաց Յովաս արքայ զՅովիդայէ զիշխան, և ասէ ցնա. Ընդէ՞ր ո՛չ արարեր այց Ղևտացոցն, բերել ՚ի ներքս ՚ի Յուդայ և յԵրուսաղէմէ՝ որ ինչ սահմանեալ էր ՚ի Մովսիսէ յառնէն Աստուծոյ. վասն զի եկեղեցացոյց զիսրայէլ ՚ի խորանն վկայութեան՝: ⁷Զի Գողողիա էր անօրէն, և որդիք նորա կործանեցին զտունն Աստուծոյ. քանզի և զսրբութիւնս

* *Ոմանք.* Արտաքս ՚ի տանէդ:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ և զՄաթան, *ճշանակի.* զերկերիւր:

* *Ոմանք.* ՚ի ձեռս քահանայից... և երգովք Դաւթի:

* *Ոմանք.* Եւ հանին զարքայ ՚ի տուն Տեառն:

* *Ոսկան.* Սաբիա ՚ի Բերսաբէէ:

* *Յօրինակին.* Եկեղեցացոյց իսրայէլ ՚ի խո՛ւ:

տանն Աստուծոյ արարին Բահադինայցն*։⁸ Եւ ասէ արքայ. Լիցի՛ արկղ, և դիցի ՚ի դրան տանն Տեառն արտաքոյ.⁹ և քարոզեսցեն ՚ի Յուդայ և յԵրուսաղէմ, բերել Տեառն, որպէս ասացն Մովսէս ծառայն Աստուծոյ Իսրայէլի յանապատին*։¹⁰ Եւ ետուն ամենեքեան՝ իշխանքն և ամենայն ժողովուրդն, և բերէին ՚ի ներքս, և արկանէին յարկոն մինչև լցաւ։¹¹ Եւ լինէր իբրև բերէին զարկոն առ վերակացու արքային ՚ի ձեռն Ղևտացւոցն, իբրև տեսանէին թէ առաւելոյր արծաթն, գայր դարապետն առ արքայ, և վերակացու մեծի քահանային, և թափէին զարկոն. և կացուցանէին անդրէն ՚ի տեղւոջն իւրում. այնպէս առնէին օր ըստ օրէ, և ժողովէին արծաթ բազում*։¹² Եւ ետ զայն արքայ և Յովիդայէ քահանայ ցայնոսիկ որք առնէին զգործն ՚ի պատրաստութիւն տանն Տեառն. և կացուցին ՚ի վարձու քարահատս և հիւսունս կազմել զտունն Տեառն, և առնէին զգործն.¹³ և ելանէր յաջողութիւն գործոյն ՚ի ձեռս նոցա. և կանգնեցին զտունն Տեառն ՚ի կայանի իւրում, և զօրացուցին զնա*։¹⁴ Եւ իբրև կատարեցին, բերին առ արքայ և ա՛ռ Յովիդայէ զմնացեալ արծաթն. և արարին սպա՛ս ՚ի տանն Տեառն, կա՛հ պաշտաման ողջակիզացն, և խնկարանս ոսկեղէնս և արծաթեղէնս. և մատուցանէին ողջակէզս ՚ի տան Տեառն հանապազ զամենայն աւուրս Յովիդայեայ։¹⁵ Եւ ծերացաւ Յովիդայէ լի՛ աւուրքք, և վախճանեցաւ ամաց հարիւր և երեսնից։¹⁶ Եւ ՚ի վախճանելն նորա թաղեցին զնա ՚ի քաղաքի Դաւթի ընդ թագաւորս. վասն զի արա՛ր բարութիւնս ընդ Իսրայէլի, և ընդ Աստուծոյ՝ և ընդ տան նորա։¹⁷ Եւ եղև յետ վախճանելոյն Յովիդայեայ, մտի՛ն իշխանքն Յուդայ, և երկիր պագին արքայի, և շրջեցին զմիտսն Յովասու. յայնժամ լուաւ նոցա արքայ։¹⁸ Թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց, և ծառայեցին կռոց, և Աստարտայցն. և եղև բարկութիւն Տեառն ՚ի վերայ Յուդայ և Երուսաղէմի յաւուրսն յայնոսիկ։¹⁹ Եւ առաքեաց առ նոսա մարգարէս՝ դարձուցանել առ Տէր, և ո՛չ լուան. և եղև նոցա վկայութիւն՝ և ո՛չ անսացին։²⁰ Եւ Յոզիան Տեառն զգեցաւ Ազարիաս որդի Յովիդայեայ քահանայի. յարեա՛ւ ՚ի մէջ ամենայն ժողովրդեանն և ասէ. Այսպէս ասէ Տէր. Ընդէ՞ր խտորեցայք ՚ի պատուիրանացն Տեառն, և ո՛չ յաջողեսցի ձեզ. վասն զի թողէք դուք զՏէր, և նա՛ լքցէ զձեզ։²¹ Եւ յարեան ՚ի վերայ նորա և քարկոծեցին զնա պատուիրանաւ Յովասու արքայի ՚ի սրահի տանն Տեառն։²² Եւ ո՛չ յիշեաց Յովաս զգութն զոր արար ընդ նմա Յովիդայէ հայրն նորա, և սպան զորդի նորա. և եղև ՚ի մեռանելն՝ ասաց. Տեսցէ՛ Տէր և դատեսցի*։²³ Եւ ՚ի կատարել տարւոյն այնորիկ ե՛լ ՚ի վերայ նորա զօրն Ասորեաց, և եկն ՚ի վերայ Յուդայ և Երուսաղէմի, և կոտորեցին զամենայն իշխանս ժողովրդեանն և զօրուն. և զամենայն աւար նոցա ետուն տանել արքային Դամասկոսի*։²⁴ Կասն զի սակա՛ւ արամբք եկն զօրն Ասորեաց, և Աստուած մատնեաց ՚ի ձեռս նոցա զօր բազում յոյժ. վասն թողլոյն նոցա զՏէր Աստուած հարցն իւրեանց. և ընդ Յովասայ արա՛ր զդատաստանն*։²⁵ Եւ յետ զնալոյն նոցա ՚ի նմանէ, թողի՛ն զնա ՚ի հիւանդութեան մեծի. և յարեան ՚ի վերայ նորա ծառայքն իւր, վասն արեան որդւոյն Յովիդայեայ քահանայի, և սպանին

* Ոսկան. Տանն Տեառն:

* Ոսկան. Մօսէս ծառայն Տեառն Աստուծոյ:

* Այլք. Առ վերակացուս արքային: Ոմանք. Եւ ժողովեցին արծաթ բազում:

* Այլք. Ի կայանին իւրում:

* Ոմանք. Ձոր արար ընդ նա Յովիդայէ: Ոսկան. Այլ սպան զորդին նորա:

* Ոմանք. Ել ՚ի վերայ նոցա զօրն... ժողովրդեանն ՚ի զօրուն:

* Յօրինակին. Եկին զօրն Ասորեաց:

զնա՝ ի գահոյսն իւրում և մեռաւ. և թաղեցին զնա՝ ի քաղաքին Դաւթի, և ո՛չ թաղեցին զնա՝ ի գերեզմանի թագաւորացն: ²⁶Եւ որք յարեան ՚ի վերայ նորա՝ էին Չաբդեա որդի՝ Սամեթայ Ամոնացի, և Յովսաբեթ որդի՝ Սամարիթայ Մովաբացի, ²⁷և որդիք նորա ամենեքեան, և եկին առ նա հնգեքեան, և բազում մթերս ՚ի վերայ դնէին: Եւ մնացեալ բանքն Յովասու, ահա գրեալ են ՚ի գիրս թագաւորացն:

ԻԱ Եւ թագաւորեաց Ամասիա որդի նորա փոխանակ նորա*:

25

Գլուխ ԻԵ

¹Էր ամաց քսան և հնգից ՚ի թագաւորելն Ամասիաս, և քսան և ինն ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յովադին յերուսաղէմ*.² և արար ուղղութիւն առաջի Տեառն, բայց ո՛չ լի սրտիւ: ³Եւ եղև իբրև հաստատեցաւ թագաւորութիւնն ՚ի ձեռին նորա, սպան զժառայսն իւր որք սպանին զարքայ զհայրն նորա.⁴ և զորդիսն նոցա ո՛չ սպան ըստ ուխտի օրինացն Տեառն, որպէս և գրեալ է. և զորօրինակ պատուիրեաց Տէր և ասաց. Ո՛չ մեռցին հարք փոխանակ որդւոց, և որդիք ո՛չ մեռցին փոխանակ հարց իւրեանց. այլ իւրաքանչիւրք ՚ի մեղս իւրում մեռցի*.⁵ Եւ ժողովեաց Ամասիաս զտունն Յուդայ, և կացոյց նոցա ըստ տանց տոհմիցն իւրեանց հազարապետս, և հարիւրապետս, յամենայն Յուդա, և յերուսաղէմ, և թուեաց զնոսա ՚ի քսանամենից և ՚ի վեր, և եգիտ զնոսա երեք հարիւր հազար զօրաւորս, որք ելանէին ՚ի պատերազմ, ունելով նիզակ և ասպար: ⁶Եւ ՚ի վարձու կալաւ յԻսրայէլէ հարիւր հազար զօրաւորս ուժով, հարիւր տաղանտոյ արծաթոյ*.⁷ Եւ այր ոմն Աստուծոյ եկն առ նա և ասէ. Արքայ՝ մի՛ երթիցէ ընդ քեզ զօրդ Իսրայէլի, վասն զի ո՛չ է Տէր ընդ Իսրայէլի, և ո՛չ ընդ ամենայն որդիս Եփրեմի.⁸ Եթէ կարծեսցես զօրանալ դոքօք՝ ՚ի պարտութիւն մատնեսցէ զքեզ Տէր առաջի թշնամեաց քոց. քանզի ՚ի Տեառնէ՝ լինի զօրանալ՝ և ՚ի պարտութիւն մատնիլ: ⁹Եւ ասէ Ամասիա ցայրն Աստուծոյ. Եւ զի՞նչ արարից զհարիւր տաղանդսն զոր ետու զօրուդ Իսրայէլի: Եւ ասէ ցնա այրն Աստուծոյ. Գոյ՛ Տեառն տա՛լ քեզ առաւելագոյն քան զայն: ¹⁰Եւ որոշեաց Ամասիաս զգունդն որ եկեալ էր առ նա յԵփրեմայ՝ երթալ ՚ի տեղի իւրեանց. և բարկացան յոյժ ՚ի վերայ Յուդայ, և դարձան ՚ի տեղիս իւրեանց բարկութեամբ և ցասմամբ: ¹¹Եւ Ամասիաս զօրացաւ ա՛ռ զզօրն իւր, և զնաց ՚ի հովիտս Աղտիցն. և եհար զորդիսն Սէիրայ տասն հազար*.¹² և այլ ևս տասն հազար գերեցին որդիքն Յուդայ, և ածին զնոսա ՚ի գլուխ քարանձաւին և գահավէժ առնէին զնոսա ՚ի ծայրից բարձուանդակին, և ամենեքեան սատակէին*.¹³ Եւ որդիք զօրութեանցն զորս դարձոյց Ամասիաս ո՛չ երթալ ընդ իւր ՚ի պատերազմ՝ յարձակեցան ՚ի քաղաքսն

* Ոսկան. Եւ որդիք նորա ամենեքեան եկին առ նա:

* Յօրինակին. Էր ամաց ԻԵ... և ԻԹ ամ թագաւորեաց:

* Յօրինակին պակասէր. Եւ զորդիսն նոցա ո՛չ սպ: Ոմանք. ՚ի մեղս իւր մեռցի:

* Այլք. Եւ ՚ի վարձու կալան յԻսրայէլէ:

* Ոմանք. Եւ եթէ կարծես՝:

* Ոմանք. Եւ եհար անդ զորդիսն Սէիրայ:

* Ոմանք. Եւ ածին զնոսա... ՚ի ծայրից բարձուանդակին:

Յուդայ, ՚ի Սամարիայ մինչև ՚ի Բեթորոն, և հարին ՚ի նոցանէ երիս հազարս, և առին աւար բազում*։ ¹⁴Եւ եղև յետ գալոյն Ամասիայ ՚ի հարկանելոյն զեդոն, եբէր առ նոսա զաստուածս որդւոցն Սէիրայ, և կացոյց զնոսա իւր յաստուածս. և երկիր պագանէր առաջի նոցա, և զոհէր ինքն նոցա։ ¹⁵Եւ եղև բարկութիւն Տեառն ՚ի վրայ Ամասիայ. առաքեաց առ նա մարգարէս՝ և ասէ ցնա. Ընդէ՞ր խնդրեցեր դու զաստուածս ժողովրդեանն այնորիկ որք ո՛չ փրկեցին զժողովուրդն իւրեանց ՚ի ձեռաց քոց։ ¹⁶Եւ եղև ՚ի խօսելն նորա՝ ասէ ցնա. Սիթէ խորհրդակի՞ց թագաւորի ետուն զքեզ. զգո՛յշ լեր՝ գուցէ՛ տանջեսցիս։ Եւ լռեաց մարգարէն. և ասէ. Գիտե՛ն զի խորհի Տէր ՚ի վերայ քո կործանել զքեզ. վասն զի արարեր զայդ. և ո՛չ անսացեր խրատուս իմում*։ ¹⁷Եւ խորհեցաւ Ամասիաս՝ առաքեաց առ Յովաս որդի Յովաքազայ որդւոյ Յէուայ՝ առ արքայն Իսրայէլի, և ասէ. Ե՛կ և երևեսցո՛ւք երեսօք*։ ¹⁸Եւ առաքեաց Յովաս արքայ Իսրայէլի առ Ամասիաս արքայ Յուդայ և ասէ. Ոքոզն որ ՚ի Լիբանան է՝ յղեաց առ մայրսն Լիբանանու և ասէ. Տո՛ւր զդուստր քո ուստեր իմում կնութեան. և ահա անցին զազանք անապատին Լիբանանու, և եկեալ կոխեցին զամենայն զեկքեան*։ ¹⁹Ահա հարեր զեղումէաս. և հպարտացուցանէ՞ զքեզ սիրտ քո ծանրութեամբ. նիստ այսուիեստև ՚ի տան քում, և ընդէ՞ր անկանիս դու ՚ի չարութիւն. և սատակիցիս դու և Յուդաս ընդ քեզ*։ ²⁰Եւ ո՛չ լուաւ Ամասիաս. վասն զի ՚ի Տեառնէ եղև մատնել զնա ՚ի ձեռս Յովասու՝ յաղագս խնդրելոյն նորա զաստուածսն Եդոմայեցւոց։ ²¹Եւ ե՛լ Յովաս արքայ Իսրայէլի՝ և երևեցան միմեանց, նա՛ և Ամասիաս արքայ Յուդայ՝ ՚ի Բեթսամիւս, որ է Յուդայ։ ²²Եւ պարտեցաւ Յուդայ առաջի Իսրայէլի, և փախեաւ իւրաքանչիւրք ՚ի բնակութիւնս իւր։ ²³Եւ զԱմասիաս արքայ Յուդայ որդի Յովասու՝ կալաւ Յովաս արքայ Իսրայէլի ՚ի Բեթսամիւս, և տարաւ զնա յերուսաղէմ. և քակեաց ՚ի պարսպէն Երուսաղէմի, ՚ի դրանէն Եփրեմի մինչև ՚ի դուռն Անկեանն, երեք հարիւր կանգուն։ ²⁴Եւ զամենայն ոսկի և արծաթ, և զամենայն սպաս՝ որ գտաւ ՚ի տանն Տեառն, և առ Աբդեդովմայ, և զգանծս տան թագաւորին, և զորդիս խառնակութեանցն ա՛ռ և դարձաւ ՚ի Սամարիա։ ²⁵Եւ եկաց Ամասիաս որդի Յովասու արքայ Յուդայ՝ յետ մեռանելոյն Յովասու որդւոյ Յովաքազու արքայի Իսրայէլի, ամս հնգետասան*։ ²⁶Եւ մնացեալ բանքն Ամասիայ առաջինք և վերջինք. ո՞չ ահա գրեալ են ՚ի գիրս թագաւորացն Իսրայէլի և Յուդայ։ ²⁷Եւ ՚ի ժամանակին յորում ՚ի բա՛ց եկաց Ամասիաս ՚ի Տեառնէ, յարեան ՚ի վերայ նորա զօրքն յերուսաղէմ, և փախեաւ ՚ի Լաքիս. և առաքեցին զկնի նորա ՚ի Լաքիս, և սպանին զնա անդ։ ²⁸Եւ բարձին զնա ՚ի վերայ ձիոց, և թաղեցին զնա ընդ հարս իւր ՚ի քաղաքի Դաւթի։

Գլուխ ԻԶ

* Ոմանք. Մինչև ցԲեթորոն։

* Ոսկան. խորհրդակից թագաւորի եղին զքեզ։ Այլք. ՚ի վերայ քո եղծանել զքեզ։ Ոմանք. Եւ չանսացեր խրատուս։

* Ոմանք. Եւ առաքեաց առ Յովաս։

* Ոմանք. Ոքոզն որ ՚ի Լիբանանէ... ՚ի կնութեան։ Այլք. Ջամենայն զեկքեան։

* Ոմանք. Ահա հարեր զիղումէաս։

* Այլք. Եւ եկեաց Ամասիաս։

ԻՐ ¹Եւ ա՛ն ամենայն ժողովուրդ երկրին զՈգիաս՝ և է՛ր նա ամաց վեշտասանից, և թագաւորեցուցին զնա փոխանակ հօրն իւրոյ Ամասիայ: ²Նա՛ շինեաց զԵղ՛աթ, և նա՛ դարձոյց զնա անդրէն ՚ի Յուդայ՝ յետ մեռանելոյն արքային ընդ հարս իւր: ³Որդի վեշտասան ամաց թագաւորեաց Ոգիաս, և յիսուն և երկուս ամս թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յեքեղիա՝ յերուսաղէմէ՛: ⁴Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր արար Ամասիա հայր նորա: ⁵Եւ խնդրեաց զՏէր յաւուրս Զաքարիայ իմաստնոյ երկիւղի Տեառն. յաւուրս նորա խնդրեաց նա զՏէր, և յաջողեաց նմա Տէր: ⁶Եւ ել և պատերազմեցաւ ընդ այլազգիս, և քակեաց զպարիսպն Գեթայ, և զպարիսպն Յաբիսայ, և զպարիսպն Ազովտայ. և շինեաց զքաղաքսն Ազովտայ ՚ի մէջ այլազգեացն: ⁷Եւ զօրացոյց զնա Տէր ՚ի վերայ այլազգեացն, և ՚ի վերայ Արաբացւոցն որք բնակէին ՚ի վիմին, և ՚ի վերայ Մինեցւոցն: ⁸և տային Մինեցիքն ընծայս Ոգիայ. և է՛ր անուն նորա մինչև ՚ի մուտսն Եգիպտոսի, վասն զի զօրացաւ ՚ի վեր: ⁹Եւ շինեաց Ոգիաս զաշտարակսն Երուսաղէմի առ դրան Զորոյն և առ անկիւնսն, և զօրացոյց. ¹⁰և շինեաց աշտարակս յանապատին. և փորեաց ջրհորս բազումս, վասն զի անասուն բազում էր նորա ՚ի Սեփեղ՛ա՝ և ՚ի դաշտին. և այգեգործք ՚ի լերինն, և ՚ի Կարմեղ՛ոս. քանզի սիրէր զերկրագործութիւն: ¹¹Եւ եղեն Ոգիայ զօրք որք առնէին պատերազմ, և ելանէին ՚ի մարտ գունդք. և թիւն նոցա ՚ի ձեռն Յէլի դպրապետի, և Մասեայ դատաւորի, և ՚ի ձեռն Անանիայի փոխանակի արքայի: ¹²Ամենայն գունդք ցեղապետիցն զօրաց ՚ի պատերազմին երկու հազար վեցհարիւր: ¹³Եւ ընդ նոսա զօր պատերազմօղ, երեք հարիւր հազար, և եւթն հազար, և հինգ հարիւր. նոքա էին որք առնէին պատերազմ զօրութեամբ մեծաւ. օգնական լինելով արքային՝ ՚ի հակառակորդացն: ¹⁴Եւ պատրաստէր նոցա Ոգիաս ամենայն զօրուն, վահանս և նիզակս և սաղաւարտս և զրահս և աղեղունս՝ և պարսս ՚ի քարինս: ¹⁵Եւ արար յերուսաղէմ մենքեմայս արուեստից ճարտարութեան՝ լինել ՚ի վերայ պարսպաց, և ՚ի վերայ անկեանց, ձգել նետս և քարինս մեծամեծս: Եւ լսելի՛ եղև պատրաստութիւն նորա մինչև ՚ի հեռաստան. վասն զի սքանչելի՛ էր նա յօգնել մինչև զօրացաւ: ¹⁶Եւ իբրև զօրացաւ՝ բարձրացաւ սիրտ նորա առ յապականել, և անիրաւեցաւ ՚ի Տէր Աստուած իւր. և եմուտ ՚ի տաճարն Տեառն ծխել խունկս ՚ի վերայ սեղանոյ խնկոցն: ¹⁷Եւ եմուտ զհետ նորա Ազարիաս քահանայ, և ընդ նմա քահանայքն Տեառն ութսուն, որդիք զօրաւորք. ¹⁸կացին ՚ի վերայ Ոգիայ արքայի, և ասեն ցնա. Ո՛չ է քո Ոգիաս ծխել խունկս Տեառն, այլ քահանայից որդւոց Ահարոնի սրբեցելոցդ է՛ ծխել զայդ. Ե՛լ արտաքս ՚ի սրբութեանց, վասն զի ապստամբեցեր դու ՚ի Տեառնէ, և ո՛չ ևս լիցի քեզ այդ ՚ի փառս ՚ի Տեառնէ Աստուծոյ: ¹⁹Եւ սրտմտեցաւ Ոգիաս, և ՚ի ձեռին իւրում բուրուառն ծխել զխունկս ՚ի տաճարին. և ՚ի բարկանալն նորա քահանայիցն,

* Ոմանք. վեշտասանից ամաց:

* Ոմանք. Եւ զպարիսպն:

* Ոմանք. ՚ի վերայ Մինեցւոյն:

* Յօրինակին. ՚ի Սեփեղ՛ա, և դաշտին:

* Այլք. Զօրաւորաց ՚ի պատերազմին:

* Յօրինակին. Զօր պատերազմօղ ՅՌ. և Ի և Շ: Ուր ոմանք. Երեք հարիւր և եւթն Ռ, և հինգ հարիւր:

* Ոմանք. Մինչև ՚ի հեռաստանէ:

* Ոմանք. Առ ՚ի յապականել:

երևեցաւ բորոտութիւն 'ի ճակատն նորա յանդիման քահանայիցն 'ի տանն Տեառն 'ի վերայ սեղանոյ խնկոցն: ²⁰Եւ դարձաւ առ նա քահանայն առաջին, և այլ քահանայքն. և ահա բորոտեալ էր ճակատն նորա, և դադարեցուցին զնա անտի. քանզի և ինքն իսկ փութացաւ ելանել զի յանդիմանեաց զնա Տէր: ²¹Եւ էր Ոզիաս արքայ բորոտեալ մինչև ցօր վախճանի իւրոյ, և 'ի տանն ավուսովք նստէր բորոտեալ. վասն զի որոշեցաւ 'ի տանէն Տեառն. և Յովաթամ որդի նորա էր 'ի վերայ թագաւորութեան նորա՝ դատել զժողովուրդ երկրին*: ²²Եւ մնացեալ բանքն Ոզիայ առաջինք և վերջինք, գրեալք են յեսայեայ որդւոյ Ամովսայ մարգարէ: ²³Եւ ննջեաց Ոզիա ընդ հարս իւր, և թաղեցին զնա ընդ հարս նորա 'ի դաշտի գերեզմանի թագաւորացն. վասն զի ասացին թէ բորոտ է:

ԻԳ Եւ թագաւորեաց Յովաթամ որդի նորա փոխանակ նորա:

27

Գլուխ ԻԵ

¹Որդի քսան և հինգ ամաց էր Յովաթամ 'ի թագաւորելն իւրում, և վեշտասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Յերուայ դուստր Սադովկայ*: ²Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն՝ ըստ ամենայնի զոր ինչ արար Ոզիաս հայրն նորա. բայց ոչ եմուտ 'ի տաճարն Տեառն. և տակաւին ևս ժողովուրդն ապականեալ էր: ³Նա՛ շինեաց զդուռն տանն Տեառն զբարձր, և 'ի պարսպին Ոփղայ շինեաց բազումս: ⁴Եւ քաղաքս շինեաց 'ի լերինն Յուդայ և յանտառս և բնակութիւնս և աշտարակս: ⁵Նա՛ կռուեցաւ ընդ արքայի որդւոց Ամոնայ, և զօրացաւ 'ի վերայ նոցա. և տային նմա որդիքն Ամոնայ 'ի միում տարւոջ հարիւր տաղանտ արծաթոյ, և տասն հազար քոռ ցորենոյ, և զարի տասն հազար քոռ. բերէր զայն նմա արքայն Ամոնայ ամի ամի. և յառաջնում ամին, և յերկրորդին, և յերրորդին* ⁶զօրացաւ Յովաթամ. վասն զի պատրաստեաց զճանապարհս իւր առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ: ⁷Եւ մնացեալ բանքն Յովաթամայ, և պատերազմն նորա, և մարտք իւր. ահա գրեալ են 'ի գիրս թագաւորացն Յուդայ և Իսրայէլի*: ⁸Քսան և հինգ ամաց էր յորժամ թագաւորեացն. և վեշտասան ամ թագաւորեաց յերուսաղէմ*: ⁹Եւ քունեաց Յովամաթ ընդ հարս իւր, և թաղեցաւ 'ի քաղաքին Դաւթի:

ԻԴ Եւ թագաւորեաց Աքազ որդի նորա փոխանակ նորա*:

28

Գլուխ ԻԸ

¹Որդի քսան ամաց էր Աքազ 'ի թագաւորելն իւրում, և վեշտասան ամ

* Ոմանք. Մինչև յօր վախճա՛:

* Յօրինակին թուագրով դնի. Որդի ԻԵ ամաց: Ուր և պակասէր. էր Յովաթամ 'ի թագաւորելն:

* Յօրինակին պակասէր. Ամոնայ 'ի միում տարւոջ: Ոմանք. Եւ յառաջնում ամի և յերկրորդումն և յերրորդումն:

* Յօրինակին. Եւ մնացեալ բանքն Յովաթայ:

* Յօրինակին թուագրով դնի. ԻԵ ամաց էր:

* Ոմանք. Եւ ննջեաց Յովաթամ ընդ հա՛:

թագաւորեաց յերուսաղէմ. և ո՛չ արար ուղղութիւն առաջի Տեառն իբրև զԴաւիթ զհայր իւր*։ ²Եւ գնաց ըստ ճանապարհաց թագաւորացն Իսրայէլի. քանզի արար դրօշեալս. ³և կռոց նոցա զոհէր յերկրին Բէնոմայ, և անցուցանէր զորդիս իւր ընդ հուր, ըստ գարշուքեան ազգացն զորս սատակեաց Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի*։ ⁴և ծխէր խունկս ՚ի վերայ բարձանց, և ՚ի վերայ տանեաց, և ՚ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց։ ⁵Եւ մատնեաց զնա Տէր Աստուած նորա ՚ի ձեռս արքային Ասորեաց, և եհար զնա. և գերեաց ՚ի նոցանէ գերութիւն բազում, և տարաւ ՚ի Դամասկոս։ Եւ ՚ի ձեռս արքային Իսրայէլի մատնեաց զնա, և եհար զնա հարուածս մեծամեծս։ ⁶Եւ կոտորեաց Փակեէ որդի Դոզմէլայ արքայ Իսրայէլի ՚ի Յուդայ ՚ի միում աւուր հարիւր և քսան հազար արանց զօրաւորաց զօրութեամբ, ՚ի թողլւ նոցա զՏէր Աստուած հարցն իւրեանց*։ ⁷Եւ սպան Ջեքրի զօրաւորն Եփրեմի, զԱմասիաս զորդի՛ արքային, և զԵզրիկամ իշխան տան նորա, և զԵղկանա զփոխանորդ արքային։ ⁸Եւ գերեցին որդիքն Իսրայէլի յեղբարց իւրեանց երեք հարիւր հազար կանայս, և զուստերս և զդստերս, և աւար բազում առին ՚ի նոցանէ, և տարան զաւարն ՚ի Սամարիա*։ ⁹Եւ էր անդ մարգարէ Տեառն, Ովդեդ անուն նորա, ե՛լ նա ընդ առաջ զօրուն եկելոյ ՚ի Սամարիա, և ասէ ցնոսա. Ահա բարկութիւն Տեառն Աստուծոյ հարցն ձերոց եղև ՚ի վերայ Յուդայ, և մատնեաց զնոսա ՚ի ձեռս ձեր, և կոտորեցէք զնոսա բարկութեամբ, և մինչև յերկինս ժամանեաց։ ¹⁰Եւ արդ՝ զորդիսդ Յուդայ և զերուսաղէմի, դուք ասէք ստանա՞լ ՚ի ծառա՞յս և յաղախնա՞յս. ո՛չ ապաքէն աւասիկ եմ ընդ ձեզ, վկայ լինել Տեառն Աստուծոյ ձերում։ ¹¹Եւ արդ՝ լուարո՛ւք ինձ, և դարձուցէ՛ք անդրէն զգերութիւնդ զորս գերեցէք դուք յեղբարց ձերոց. վասն զի բարկութիւն սրտմտութեան Տեառն լինի՛ ՚ի վերայ ձեր։ ¹²Եւ յարեան իշխանք որդւոցն Եփրեմի, Ազարիաս որդի Յովնանայ, և Բարաքիաս որդի Մոսորդո՛մովթայ, և Եզեկիաս որդի Եղեմայ, և Մասսիաս որդի Աղղիայ ՚ի վերայ եկելոցն ՚ի պատերազմէն*, ¹³և ասեն ցնոսա. Մի՛ ածէք զգերութիւնդ զայդ ա՛յսր առ մեզ. վասն զի մեղանչել մեզ առ Տէր դուք առնէք, և յաւելուլ ՚ի մեղսն մեր և ՚ի տգիտութիւնս. քանզի բազում են մեղք ձեր այդոքիկ, և բարկութիւն սրտմտութեան Տեառն լինի ՚ի վերայ Իսրայէլի։ ¹⁴Եւ թողին պատերազմողքն զգերութիւնն և զաւարն առաջի իշխանացն և ամենայն եկեղեցւոյն։ ¹⁵Եւ յարեան ամենայն արք որ կոչեցան յանուանէ, և խնամակալութիւնս արարին գերութեանն. զամենեսեան մերկսն զգեցուցին յաւարէն, և ագուցին նոցա կօշիկս, և ետուն ուտել, և օծին իւղով. և առին գրաստուրք զամենայն տկարս, և տարան զնոսա յերեքո՛վ քաղաք Արմաւենեաց առ եղբարսն իւրեանց, և ինքեանք դարձան ՚ի Սամարիա։ ¹⁶Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Աքազ առ արքայն Ասորեաց օգնել նմա յայնոսիկ. ¹⁷վասն զի Եդոմայեցիքն յարձակեցան ՚ի վերայ, և հարին զՅուդայ, և գերեցին գերութիւն։ ¹⁸Եւ այլազգիքն դիմեցին ՚ի քաղաքս դաշտին, և Լիբեացիքն եկին ՚ի Յուդայ, և առին զԲեթսամիւս, և զԱյեղո՛նն, և զԳադերովթ, և զՍոկքով՝ և զգեօղս նորա, և զԹամնա՝ և զգեօղս նորա, և զԳամեզեր՝ և զգեօղս նորա, և բնակեցին անդ*։ ¹⁹վասն զի նկուն արար

* *Ոմանք.* Եւ չարար ուղղութիւն առաջի։

* *Ոմանք.* Յերկրին Բէնոմայ։

* *Ոսկան.* Ի Յուդայէ ՚ի միում աւուր։

* *Յօրինակին պակասէր.* Յեղբարց *իւրեանց* ՅՌ կանայս. *ուր ոմանք՝* կանանց։

* *Ոմանք.* Որդի Յովնանայ... որդի Մոսորդամովթայ... որդի Եղամայ։

* *Յօրինակին.* Եւ զԻբեացիքն եկին... և զԱյեղոն և զԱդերովթ։ *Ոմանք.* Եւ զԳամեզար, և

Տէր զՅուդայ յաղագս Աքագու արքայի Յուդայ, զի ՚ի բա՛ց եկաց ապստամբութեամբ ՚ի Տեառնէ: ²⁰Եւ ե՛կն ՚ի վերայ նորա Թագո՛ւաթփաղնասար արքայ Ասորեստանեաց, և եհար զնա*։ ²¹Եւ ա՛ռ Աքագ զոր ինչ էր ՚ի տանն Տեառն և ՚ի տան թագաւորին և իշխանացն, և ետ արքային Ասորեստանեաց. և ո՛չ էր օգնականութիւն ինչ նոցա, ²²այլ նեղել զնոսա: Եւ յաւել ևս ՚ի բա՛ց կալ ՚ի Տեառնէ. ²³և ասաց արքայն. Խնդրեցի՛ց զաստուածս Դամասկոսի որք հարին զիս. և ասէ. Եթէ աստուածք թագաւորին Ասորեստանեաց նոքա՛ են զօրաւորք, նոցա այսուհետև զոհեցից, և օգնեսցեն ինձ. և նոքա եղեն նմա խո՛չ և ամենայն Իսրայէլի: ²⁴Եւ ՚ի բա՛ց արար Աքագ զսպաս տանն Տեառն. կոտորեաց զայն, և փակեաց զդրունս տանն Տեառն. և արար իւր սեղան յամենայն անկիւնսն Երուսաղեմի: ²⁵Եւ յամենայն քաղաքսն Յուդայ արարին բարձունս, ծխել խունկս աստուածոց օտարաց, և բարկացուցին զՏէր Աստուած հարցն իւրեանց: ²⁶Եւ մնացեալ բանքն նորա առաջինք և վերջինք. ահա գրեալ են ՚ի գիրս բանից թագաւորացն Յուդայ և Իսրայէլի. և քունեաց Աքագ ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի քաղաքին Դաւթի. վասն զի ո՛չ մուծին զնա ՚ի գերեզմանս թագաւորացն:

Ի՛նչ եւ թագաւորեա՛ց Եզեկիաս փոխանակ նորա*:

29

Գլուխ ԻԹ

¹Եւ էր Եզեկիաս ՚ի թագաւորել իւրում քսան և հինգ ամաց, և ամս քսան և ինն թագաւորեաց յԵրուսաղեմ. և անուն մօր նորա Աբաուք դուստր Զաքարիայ*։ ²Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր ինչ արար Դաւթ հայրն նորա: ³Եւ եղև իբրև եկաց ՚ի թագաւորութեանն իւրում, յառաջնում ամսեանն երա՛ց զդրունս տանն Տեառն, և կազմեաց զնոսա. ⁴և տարաւ ՚ի ներքս զքահանայսն և զՂևտացիս, և կացոյց զնոսա ՚ի կողմն արևելից: ⁵Եւ ասէ ցնոսա. Լուարո՛ւք Ղևտացիք. այսուհետև սրբեցարո՛ւք, և սրբեցէ՛ք զտունն Տեառն Աստուծոյ հարցն ձերոց, և ՚ի բա՛ց հանէք զպղծութիւնսն ՚ի սրբութեանցն. ⁶վասն զի ապստամբեցին հարքն մեր, և արարին չա՛ր առաջի Տեառն, և թողին զնա, և դարձուցին զերեսս ՚ի խորանէն Տեառն. ընդվզեցան*, ⁷և փակեցին զդրունս տաճարին, և շիջուցին զճրագունսն, և խունկս ո՛չ ծխեցին նմա. և ո՛չ ողջակէզս մատուցին սրբոյն Աստուծոյ Իսրայէլի: ⁸Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր ՚ի վերայ Յուդայ և Երուսաղեմի, և ետ զնոսա ՚ի յիմարութիւն և յապականութիւն, և ՚ի շըջիւն, որպէս դուք տեսանէք աչօք ձերովք: ⁹Եւ ահա վիրաւորեցան հարքն մեր սուսերօք. և ուստերք ձեր՝ և դստերք ձեր՝ և կանայք ձեր՝ են ՚ի գերութեան, յերկրի ո՛չ իւրեանց, ուր ե՛նն այժմ*: ¹⁰Եւ այսուհետև լիցի ՚ի սիրտս մեր, դնել ուխտ Տեառն Աստուծոյ Իսրայէլի. և դարձուցէ զսրտմտութիւն բարկութեան

զգետոյ:

* *Ոմանք.* Թագաւորափաղնասար:

* *Ոմանք.* Եւ ննջեաց Աքագ ընդ հարս:

* *Յօրինակին թուագրով դնի այսպէս.* Ի՛նչ ամաց. և ամս ԻԹ թագաւորեաց: *Ոմանք.* Մօր նորա Բաուք դուստր:

* *Ոմանք.* Եւ ընդվզեցան:

* *Ոմանք.* Յերկրի ո՛չ յիւրեանց:

իւրոյ 'ի մէնջ*։ ¹¹Արդ՝ մի՛ ինչ նուազէք առնել յայսմհետէ. վասն զի զձե՛զ ընտրեաց Տէր կա՛լ և պաշտել առաջի իւր, և լինել նմա սպասաւոր, և ծխել խունկս*։ ¹²Եւ յարեան Ղևտացիքն Մայեթ՝ որդի Ամասիայ, և Յովէլ որդի Չաքարիայ, յորդուցն Կահաթու և յորդուցն Սերարեայ. Կիս որդի Աբդիայ, և Ազարիաս որդի Յեղեղայ և յորդուցն Գեթսունի՝ Յովա որդի Չենաթայ, և Յովադան որդի Յովաքայ. ¹³և յորդուցն Եղիսափանայ՝ Սամարի, և Էիէղ՝. և յորդուցն Ասափայ՝ Չաքարիաս, և Մատթանիաս. ¹⁴և յորդուցն Եմանայ՝ Էիէլ, և Սենէի, և յորդուցն Իդիթունայ՝ Սամիաս, և Ոզիէլ։ ¹⁵Եւ ժողովեցին զեղբարս իւրեանց, և սրբեցան ինքեանք ըստ պատուիրանի թագաւորին, հրամանաւ Տեառն, սրբել զտունն Տեառն։ ¹⁶Եւ մտին քահանայքն 'ի տունն Տեառն սրբել զնա և հանին արտաքս զամենայն աղտեղութիւնս որք զտան 'ի տանն Տեառն և 'ի սրահի տանն Տեառն. և առին Ղևտացիքն հանել զայն 'ի հեղեղատն Կեդրոնի արտաքս*։ ¹⁷Եւ սկսան յաւուրն առաջնում յամսամտի առաջնոյ ամսոյն սրբել զնա. և որ օր ութ էր ամսոյն՝ մտին 'ի տաճարն Տեառն. և սրբեցին զտունն Տեառն յաւուրս ութ. և յաւուրն վեշտասաներորդի ամսոյն առաջնոյ կատարեցին*։ ¹⁸Եւ մտին 'ի ներքս առ Եզեկիաս արքայ և ասեն. Սրբեցաք զամենայն որ ինչ էր 'ի տանն Տեառն. զսեղանն ողջակիզաց և զսպասն նորա, զսեղանն առաջադրութեան և զսպասն իւր*։ ¹⁹և զամենայն կահն զոր պղծեաց թագաւորն Աքազ՝ յիւրում թագաւորութեանն, և յապստամբութեանն իւրում, պատրաստեցաք և սրբեցաք. և ահա է՛ առաջի սեղանոյն Տեառն։ ²⁰Եւ կանխեաց Եզեկիաս արքայ՝ ժողովեաց զիշխանս քաղաքին, և ել 'ի տուն Տեառն. ²¹և եհան զուարակս եւթն, և խոյս եւթն, և ողջակէզս եւթն, և նոխագս այծեաց եւթն վասն մեղաց թագաւորութեանն, և վասն սրբութեանցն Իսրայէլի. և ասէ ցորդիսն Ահարոնի ցքահանայս. Մատերուք առ սեղանն Տեառն* ²²և զենէք զզուարակսն։ Եւ ընկալան քահանայքն զարիւնն. և հեղին զնա առ սեղանովն. և զենին զխոյսն, և հեղին զարիւնն առ սեղանովն. և զենին զորոջսն, և հեղին զարիւնն առ սեղանովն*։ ²³Եւ մատուցին զնոխագսն զվասն մեղացն առաջի արքային և ժողովրդեանն, և եդին զձեռս իւրեանց 'ի վերայ նոցա. ²⁴և զենին զնոսա քահանայքն, և քաւեցին զարիւնն նոցա առ սեղանովն. և արարին քաւութիւնս ամենայն Իսրայէլի, զի յաղագս ամենայն Իսրայէլի ասաց թագաւորն զողջակէզսն և զվասն մեղացն առնել*։ ²⁵Եւ կացուցին զՂևտացիսն 'ի տանն Տեառն, ծնծղայիւք և տաւոյք և քնարօք, ըստ պատուիրանին Դաւթայ արքայի, և Գադայ տեսանողի թագաւորին, և Նաթանայ մարգարէի. վասն զի պատուիրանա՛ւ Տեառն էր հրամանն 'ի ձեռն մարգարէիցն։ ²⁶Եւ կացին Ղևտացիքն նուագարանօքն Դաւթայ, և քահանայքն փողովքն*։ ²⁷Եւ ասաց Եզեկիա հանել զողջակէզսն 'ի վերայ սեղանոյն. և իբրև սկսան հանել

* *Ոմանք.* Չբարկութիւն սրտմտութեան իւրոյ 'ի մէնջ։

* *Ոմանք.* Եւ լինել նմա սպասաւորս։

* *Յօրինակին պակասէր.* Եւ 'ի սրահի տանն Տեառն։

* *Յօրինակին.* Եւ սրբեցին զտունն Տեառն յաւուր Ը։

* *Այլք.* Եւ զսեղանն զառա՛։

* *Ի լուս՝.* Եւ խոյս եւթն, և որոջս եւթն. *համաձայն ոմանց 'ի բնաբ՝:* Ոմանք. Եւ վասն սրբութեանցն և Իսրայէլի։

* *Ոսկան.* Եւ զենին զզուարակսն։

* *Ի լուս՝.* Եւ քամեցին զարիւնն նոցա. *համաձայն ոմանց 'ի բն՝:*

* *Այլք.* Եւ կային Ղևտացիքն։

զողջակէզսն, սկսան երգել Տեառն փողովքն և նուագարանօքն Դաւթայ արքայի Իսրայէլի. ²⁸և ամենայն եկեղեցին երկի՛ր պագանէր. և սաղմոսանուագքն երգէին, և հարկանէին զփողսն մինչև կատարեցան ողջակէզքն: ²⁹Եւ իբրև կատարեցին մատուցանել. խոնարհեցաւ թագաւորն և ամենայն քահանայքն և երկի՛ր պագին: ³⁰Եւ ասաց արքայ Եզեկիաս և իշխանքն ցՂևտացիսն օրհնել զՏէր բանիւքն Դաւթի, և Ասափայ մարգարէի. և օրհնէին ուրախութեամբ՝ և անկան ՚ի վերայ երեսաց և երկի՛ր պագին: ³¹Պատասխանի ետ Եզեկիաս և ասէ. Այժմ լցէ՛ք զձեռս ձեր Տեառն, մերձեցարո՛ւք այսուհետև և բերէ՛ք: Եւ եբէ՛ր եկեղեցին պատարագս օրհնութեան ՚ի տուն Տեառն, և ամենայն որ ոք յօժարեալ էր սրտիւ՝ ողջակէ՛զս: ³²Եւ եղև թիւ ողջակիզին զոր մատոյց եկեղեցին. զուարակս եւթանասուն, խոյք հարիւր, որոջք երկերիւր, յողջակէզսն Տեառն ամենեքեան այնօրիկ՝: ³³Եւ որք նուիրեցանն, զուարակք վեց հարիւր, ոչխարք երեք հազար: ³⁴Այլ քահանայքն էին սակաւք՝ և ո՛չ կարէին զենուլ զողջակէզսն. և օգնէին նոցա եղբարքն իւրեանց Ղևտացիքն՝ մինչև կատարեցաւ գործն, և մինչև սրբեցան քահանայքն. վասն զի Ղևտացիքն յօժարութեամբ սրբեցան քան զքահանայսն. ³⁵և ողջակէզքն էին բազումք ՚ի ճարպս կատարմանն, և ՚ի փրկութիւնսն, և ՚ի նուէրս ողջակիզացն. և յօրհնեցաւ գործն ՚ի տանն Տեառն: ³⁶Եւ ուրախ եղև Եզեկիաս, և ամենայն ժողովուրդն վասն պատրաստելոյ զսպասն Աստուծոյ ժողովրդեանն, քանզի յանկարծակի եղև բանն:

30

Գլուխ Լ

¹Եւ առաքեաց Եզեկիա յամենայն Իսրայէլ և Յուդայ՝ և զրեաց թուղթ յեփրեմ և Մանասէ՝ զա՛լ ՚ի տունն Տեառն յերուսաղէմ, և առնել զպասեքն Աստուծոյ Իսրայէլի՝: ²Եւ խորհեցաւ արքայ և իշխանքն, և ամենայն եկեղեցին որ յերուսաղէմ, առնել զպասեքն յամսեանն երկրորդի. ³վասն զի ո՛չ կարացին առնել զնա ՚ի ժամանակին յայնմիկ, զի քահանայքն ո՛չ սրբեցան բաւականք, և ժողովուրդն ո՛չ ժողովեցաւ յերուսաղէմ: ⁴Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի արքայի՝ և առաջի եկեղեցւոյն. ⁵և հաստատեցին բան, զի անցցեն քարոզքն ընդ ամենայն Իսրայէլ, ՚ի Բերսաբէէ մինչև ՚ի Դան, զա՛լ և առնել զպասեքն Տեառն Աստուծոյ Իսրայէլի յերուսաղէմ. վասն զի բազմութիւնն ո՛չ արար ըստ գրոյն: ⁶Եւ զնացին սուրհանդակքն հանդերձ թղթովքն ՚ի թագաւորէն և յիշխանացն՝ յամենայն Իսրայէլ և Յուդաս, ըստ հրամանի թագաւորին: Եւ ասէին ցորդիսն Իսրայէլի. Դարձարո՛ւք առ Տէր Աստուած Աբրահամու Սահակայ և Յակոբայ, և դարձցի՛ նա առ ապրեալսդ և մնացեալսդ ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց՝: ⁷Եւ մի՛ լինիք իբրև զեղբերսն ձեր, և զհարսն ձեր որք ՚ի բաց կացին ՚ի Տեառնէ Աստուծոյ հարցն իւրեանց, և մատնեաց զնոսա ՚ի կործանումն որպէս դուք տեսանէք: ⁸Եւ արդ՝ մի՛ խստացուցանէք զպարանոցս ձեր. տո՛ւք փառս Աստուծոյ. և մտէ՛ք ՚ի սրբութիւնս նորա զորս սրբեաց յաւիտեան. և ծառայեցէ՛ք Տեառն Աստուծոյ ձերում, և դարձուցէ՛ ՚ի ձէնջ զբարկութիւն սրտմտութեան

* Այլք. Չուարակք եւթանասուն:

* Ոմանք. Յեփրեմ և ՚ի Մանասէ... զպասեքն Տեառն Աստուծոյ:

* Ոմանք. Թագաւորին Ասորեստանեայց:

իւրոյ*։⁹Վասն զի ՚ի դառնալն ձերում առ Տէր, եղբա՛րք ձեր և որդի՛ք ձեր եղիցին ՚ի գթութիւնս առաջի ամենայն գերչացն իւրեանց, և դարձուցէ զնոսա յերկիրս յայս. քանզի ողորմած և գթա՛ծ է Տէր Աստուած մեր, և ո՛չ դարձուցէ զերեսս իւր ՚ի մենջ եթէ դառնայցենք առ նա։¹⁰Եւ սուրհանդակքն երթային քաղաք ՚ի քաղաքէ, ՚ի լերինս Եփրեմի և Մանասէի, մինչև ՚ի Չաբուղոն. և լինէր իբրև ծաղր իմն առնել զնոսա՝ և արհամարհել։¹¹Բայց որք յԱսերայ և ՚ի Մանասէէ, և ՚ի Չաբուղոնէ՝ պատկառեցին, և եկին յերուսաղէմ*։¹²Եւ ՚ի Յուդաս. և եղև ձեռն Տեառն տա՛լ նոցա սիրտ ՚ի գալ և առնել ըստ հրամանի քագաւորին և իշխանացն բանիւ Տեառն։¹³Եւ գումարեցաւ յերուսաղէմ ժողովուրդ բազում՝ առնել զտօն բաղարջոցն յամսեանն երկրորդի, եկեղեցի բազում յոյժ։¹⁴Եւ յարեան քակեցին զսեղանսն որ էին յերուսաղէմ. և զամենայն տեղիսն ուր ծխէին խունկս ստութեանցն, կործանեցին և ընկեցին ՚ի հեղեղատն Կեդրոնի*։¹⁵Եւ զենի՛ն զպասեքն՝ որ օր չորեքտասան էր ամսոյն երկրորդի. և քահանայքն և Ղևտացիքն պատկառեցին և սրբեցան. և տարան ՚ի ներքս զողջակէզսն ՚ի տունն Տեառն*։¹⁶Եւ կացին ՚ի կայանի իւրեանց ըստ օրինին իւրեանց, ըստ պատուիրանին Մովսիսի առնն Աստուծոյ, և քահանայքն ընդունէին զարիւնն ՚ի ձեռաց Ղևտացւոցն*։¹⁷Վասն զի բազումք յեկեղեցւոյն ո՛չ սրբեցան։ Եւ Ղևտացիքն զենուին զպասեքն ամենայնի՛ն՝ որ ո՛չ կարաց սուրբ լինել Տեառն.¹⁸Քանզի յոլո՛վք ՚ի ժողովրդենէն Եփրեմի և Մանասէի, և Իսաքարայ և Չաբուղոնի՝ ո՛չ սրբեցան. այլ կերան զպասեքն արտաքոյ գրոյն։ Եւ յաղօ՛թս եկաց Եզեկիաս վասն նոցա՝ և ասէ. Տէր բարերար, քաւի՛չ լեր¹⁹ամենայն սրտից ուղղոց, որք խնդրեն զքեզ Տէր Աստուած հարցն իւրեանց. և ո՛չ են ըստ սրբութեան սրբութեանց*։²⁰Եւ լուաւ Տէր Եզեկիայ՝ և բժշկեաց զժողովուրդն։²¹Եւ արարին որդիքն Իսրայէլի որք գտան յերուսաղէմ զտօն բաղարջակերացն աւուրս եւթն ուրախութեամբ մեծաւ, յաջողելով Տեառն օր ըստ օրէ. և քահանայքն և Ղևտացիքն նուագարանօքն Տեառն։²²Եւ խօսեցաւ Եզեկիաս ՚ի սիրտս ամենայն Ղևտացւոցն, և այլոց իմաստնոցն որք իմանային զհանճար բարի Տեառն. և կատարեցին զտօն բաղարջոցն աւուրս եւթն. զենուլ զզոհս փրկութեանն, և խոստովան լինել Տեառն Աստուծոյ հարցն իւրեանց*։²³Եւ խորհեցաւ եկեղեցին միանգամայն առնել ա՛յլ ևս աւուրս եւթն. և արարին զուրախութիւնն զեւթն ևս օր.²⁴Վասն զի Եզեկիաս սկսաւ տա՛լ ՚ի Յուդայ՝ եկեղեցւոյն, զուարակս հազար, և ոչխարս եւթն հազար. և իշխանքն սկսան տալ ժողովրդեանն զուարակս հազար, և ոչխարս տասն հազար։ Եւ սրբեցան ՚ի քահանայիցն բազումք յոյժ*։²⁵Եւ ուրախ եղև ամենայն եկեղեցին, քահանայքն և Ղևտացիքն, և ամենայն ժողովուրդն Յուդայ, և որք գտան անդ յԻսրայէլէ. և եկքն որք եկեալ էին յերկրէն Իսրայէլի, և բնակիչքն Յուդայ.²⁶Եւ եղև ուրախութիւն մեծ յերուսաղէմ. յաւուրցն Սողոմոնի որդւոյ Դաւթի արքայի Իսրայէլի ո՛չ եղև այնպէս տօն յերուսաղէմ։²⁷Եւ յարեան քահանայքն և

* Ոմանք. Փռոս Տեառն Աստուծոյ... զոր սրբեաց յաւ՛:

* Ոմանք. Բայց արք Ասերայ... պատկառեցին յերուսաղէմ... (12) տալ նոցա սիրտս գալ և:

* Ոսկան. Եւ զամենայն սեղանսն ուր ծխէին:

* Ոմանք. Էր ամսեանն երկրորդի:

* Ի բազումս պակասի. Ըստ օրինին իւրեանց:

* Ոմանք. Եւ եղեն ըստ սրբութեան սրբութեանցն:

* Ի լուս՛. Չհանճար բանի Տեառն: Ոմանք. Չենլով զզոհս... և խոստովան լինելով:

* Ոմանք. Տալ ՚ի Յուդայ յեկեղեց՛... և ոչխարս հինգ հազար:

Ղևտացիք՝ օրհնեցին զժողովուրդն, և լսելի՛ եղև ձայն նոցա. և եկին աղօթք նոցա ՚ի բնակութիւն սուրբ Տեառն յերկինս:

31

Գլուխ ԼԱ

¹Եւ իբրև կատարեցա՛ւ այն ամենայն, և ամենայն Իսրայէլ գտեալքն ՚ի քաղաքսն Յուդայ, և փշրեցին զարծանսն, և կոտորեցին զանտառսն, և կործանեցին զբարձաւանդակսն և զբազինսն յամենայն Յրէաստանի և Բենիամինի, և յեփրեմի, և ՚ի Սանասէի մինչև ՚ի սպառ. և դարձաւ ամենայն Իսրայէլ իւրաքանչիւրոք ՚ի ժառանգութիւն իւր, և ՚ի քաղաքսն իւրեանց*։ ²Եւ կարգեաց Եզեկիաս հանապազօրոյեան պաշտօնեայս քահանայից և Ղևտացւոց, և զհանապազօրեայս իւրաքանչիւր ուրուք ըստ պաշտաման իւրում, քահանայից և Ղևտացւոց. յողջակէզսն և ՚ի զոհսն փրկութեան, և յօրհնելն և խոստովան լինել, և պաշտել ՚ի դրունս սրահից տանն Տեառն։ ³Եւ մասն թագաւորին յընչից իւրոց յողջակէզսն առաւօտու և երեկորին, և յողջակէզսն շաբաթուցն և ամսամտիցն և ՚ի տօնսն՝ գրեալսն յօրէնս Տեառն*։ ⁴Եւ ասաց ժողովրդեանն՝ որ բնակէին յերուսաղէմ, տա՛լ զմասն քահանայիցն և Ղևտացւոց. զի զօրացին ՚ի սպասու տանն Տեառն։ ⁵Եւ որպէս հրամայեաց բանն, յաւելին ևս որդիքն Իսրայէլի զպտուղ ցորենոյն և զինւոյ և ձիթոյ և մեղու, և զամենայն արմտեաց անդաստանաց, և զտասանորդսն զամենայն բերին բազում յոյժ, ⁶որդիքն Իսրայէլի և որդիքն Յուդայ, որք բնակեալ էին ՚ի քաղաքսն Յուդայ. և նոքա ածին զտասանորդս զուարակացն և ոչխարաց, և բերեալ կուտեցին շէ՛ղջս շէ՛ղջս*։ ⁷Յամսեանն երրորդի սկսան շէղջքն սկիզբն առնուլ, և յեւթներորդում ամսեանն կատարեցան։ ⁸Եւ եկն Եզեկիաս և իշխանքն՝ և տեսին զշէղջսն, և օրհնեցին զՏէր, և զժողովուրդն նորա զԻսրայէլ։ ⁹Եւ հարցանէր Եզեկիաս ցքահանայսն և ցՂևտացիսն վասն շէղջոցն։ ¹⁰Եւ ասէ ցնա Ազարիաս քահանայ՝ իշխան ՚ի տանն Սաղովկայ. Յորմէ հետէ սկսան զպտուղսդ բերել ՚ի տուն Տեառն. կերաք և արբաք՝ և թողաք զմնացորդսդ. վասն զի Տէր Տէր օրհնեաց զժողովուրդդ իւր, և մնաց ևս յոլովութիւնդ այդ*։ ¹¹Եւ ասէ Եզեկիաս. Պատրաստեցէ՛ք և այլ ևս շտեմարանս ՚ի տանն Տեառն։ Եւ պատրաստեցին. ¹²և բերին անդր զպտուղսն, և զտասանորդսն հաւատովք։ Եւ էր նոցա վերակացու՝ Քովքենիաս Ղևտացի, և Սեմէի եղբայր նորա փոխանորդ նորին*, ¹³և Յէիէլ, և Ոզիաս, և Նաթան, և Ասայէլ, և Յերիմովթ, և Յովզաբաղ, և Եղիէլ, և Սամաքիա, և Մաաթ, և Բանէաս, և որդիք նորա որք կային անդ, ՚ի ձեռն Քովքինեայ, և Սեմեայ եղբօր նորա, որպէս և հրամայեաց արքայ Եզեկիաս։ Եւ Ազարիաս առաջնորդ տանն Տեառն*։ ¹⁴Կորէ որդի Յեմնայ Ղևտացի՝ դռնապան ընդ արևելս կողմն ՚ի վերայ տանեացն տա՛լ զպտուղսն Տեառն։ Եւ զսրբութիւն

* *Յօրինակին պակասէր.* Կատարեցաւ այն ամենայն: *Ոմանք.* Ջբարձրաւանդակսն:

* *Ոմանք.* Եւ ՚ի մասն թագաւորին յընչիցն:

* *Այլք.* Որդիքն Իսրայէլի և Յուդայ որք բնակէին ՚ի քաղաքսն:

* *Ոմանք.* Վասն զի Տէր օրհնեաց:

* *Ոմանք.* Եւ բերին անդ զպտո՛ւ:

* *Ոմանք.* Եւ Յէիէլ, և Ազիաս: *Ուր Ոսկան.* և Ազարիաս:

սրբութեանցն*, ¹⁵ի ձեռն Ողոմայ, և Բենիամինի, և Յեսուայ, և Սենեայ, և Մարիսայ, և Սեքինեայ, ՚ի ձեռն քահանայիցն հաւատարմութեամբ. տալ եղբարց նոցա ըստ հանապազորդեան պաշտօնէիցն, ըստ մեծի և փոքու*.
¹⁶բաց ՚ի ծննդոց արուացն յերեսննիցն և ՚ի վեր. և ամենայնի որ մտանէր ՚ի տուն Տեառն, ՚ի համարի աւուրցն յաւուրս, ՚ի պաշտօնն հանապազորդեան ըստ կարգին իւրեանց*: ¹⁷Եւ այս էր համար քահանայիցն ըստ տանց տոհմիցն, և Ղևտացիքն ՚ի հանապազորդեան պաշտամանն ՚ի քսանամենից և ՚ի վեր, ՚ի կարգի ըստ համարուն*.
¹⁸յամենայն ծնունդս ուստերաց նոցա և դստերաց, հանդերձ ամենայն յոլովութեամբ. վասն զի հաւատովք սրբեցին զսրբութիւն որդւոցն Ահարոնի*, ¹⁹որք լինէին քահանայք: Եւ ՚ի քաղաքացն նոցա, յամենայն քաղաքի արք անուանիք որք անուանեցան տալ զբաժին ամենայն արուի քահանայիցն, և յամենայնի որ մտեալ էր ՚ի թիւ Ղևտացւոցն*: ²⁰Եւ արար այնպէս Եզեկիաս ամենայն Յուդա. և արար բարի՛ և ուղղութիւն առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ. ²¹և ամենայն գործովք որովք սկսաւ գործել ՚ի տանն Տեառն, ըստ օրինացն Տեառն՝ և ըստ հրամանաց. խնդրեաց զԱստուած իւր յամենայն սրտէ իւրմէ, արար և յաջողեցաւ:

32

Գլուխ ԼԲ

¹Եւ յե՛տ բանիցս այսոցիկ՝ և ճշմարտութեանս այսորիկ, եկն Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ՚ի վերայ Յուդայ, և բանակեցաւ զպարսպաւոր քաղաքօքն. և ասէր առնու՛լ զնոսա: ²Եւ ետես Եզեկիաս թէ եկն Սենեքերիմ դէմ յանդիման նորա պատերազմել ընդ Երուսաղէմի. ³խորհեցաւ ընդ ծերսն և ընդ զօրաւորսն խնու՛լ զջուր աղբիւրացն որք էին արտաքոյ քաղաքին, և խցին զնոսա*: ⁴Եւ գումարեաց ժողովուրդ բազում, և խցին զջուրս աղբերացն, և զգետն որ բաժանէր անցանելով ընդ մէջ քաղաքին, և ասեն. Սի՛ գուցէ եկեալ արքայն Ասորեստանի՝ գտցէ՛ ջուր բազում, և զօրացի: ⁵Եւ հզօրացաւ Եզեկիաս, և շինեաց զամենայն պարիսպս կործանեալս, և զաշտարակս. և արտաքոյ զառաջին պարիսպսն՝ և զմե՛ւսն ևս. և զօրացոյց զպատուարսն քաղաքին Դաւթի. և կազմեաց զէնս բազումս*: ⁶Եւ արար իշխանս պատերազմի ՚ի վերայ զօրուն, և ժողովեցան առ նա ՚ի հրապարակ ձորոյն: Խօսեցաւ ՚ի սիրտս նոցա՝ և ասէ. ⁷Չօրացարո՛ւք և քա՛ջ լերուք, մի՛ երկնչիք յերեսաց թագաւորին Ասորեստանեայց, և մի՛ յերեսաց ամենայն ազգացն որ ընդ նմա. վասն զի ընդ մե՛զ բազումք են քան ընդ նմա. ⁸ընդ նմա բազուկք մարմնեղէնք, և ընդ մեզ Տէր Աստուած մեր ապրեցուցանել զմեզ, և պատերազմել զպատերազմ մեր: Եւ քաջալերեցաւ ժողովուրդն բանիւքն Եզեկիայ արքայի

* Այլք. Դռնապանն ընդ արևելս:

* Ոմանք. Եւ Մարիասայ և Սեքե՛:

* Ոմանք. Եւ ՚ի վեր, ամենայն որ... ՚ի համար աւ՛:

* Ոմանք. Ըստ համարոյն:

* Ոմանք. Ուստերացն իւրեանց և դս՛:

* Ոմանք. Եւ ՚ի քաղաքացն յամենայն քաղաքի: Այլք. Եւ ամենայնի որ մտեալ էր:

* Ոմանք. Ջջուր աղբերացն:

* Ոմանք. Ջառաջին պարիսպն:

Յուդայ: ⁹Եւ յետ այսորիկ առաքեաց Սինեքերիմ արքայ Ասորեստանեայց զծառայս իւր յերուսաղէմ, և ինքն էր ՚ի Ղաթիս, և ամենայն զօրք ընդ նմա. և առաքեաց առ Եզեկիա արքայ Յուդայ յերուսաղէմ, և ասէ. ¹⁰Այսպէս ասէ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց. Յո՞ դուք յուսացեալ նստիք յամրոցոյ Երուսաղէմի*. ¹¹Ո՞չ ապաքէն Եզեկիաս խաբէ զձեզ, մատնել զձեզ ՚ի մահ, ՚ի սով, և ՚ի ծարաւ. և ասէ. Տէր Աստուած ձեր փրկեսցէ զձեզ ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց*. ¹²Ո՞չ այդ Եզեկիաս է, որ քակեաց զսեղանս նորա և զբարձունս նորա. և ասաց ցՅուդայ և ցքնակիչսն Երուսաղէմի. Առաջի սեղանոյս այսորիկ միայն երկիր պագէք, և ՚ի վերայ սորա՝ զոհեցէք: ¹³Ո՞չ գիտացէք զի՞նչ արարի՝ ես և հարքն իմ ամենայն ժողովրդոց և գաւառաց. միթէ կարելով կարացի՞ն աստուածք ազգաց ամենայն երկրի փրկել զժողովուրդ իւրեանց ՚ի ձեռաց իմոց*: ¹⁴Ձո՞ որ յամենայն աստուածոց ազգացն այնոցիկ ո՞չ սատակեցին հարքն իմ. միթէ կարացի՞ն ապրեցուցանել զժողովուրդ իւրեանց ՚ի ձեռաց իմոց. և զիա՞րդ կարացէ Աստուածո՞ւ ձեր փրկել զձեզ ՚ի ձեռաց իմոց: ¹⁵Արդ՝ մի՛ խաբեսցէ զձեզ Եզեկիաս, և մի՛ յուսացուցէ զձեզ յայդ. մի՛ հաւատայք դմա. վասն զի ո՞չ կարացին աստուածք ամենայն ազգաց և թագաւորութեանց ապրեցուցանել զժողովուրդս իւրեանց ՚ի ձեռաց իմոց և ՚ի ձեռաց հարքն իմոց. և Աստուածո՞ւ ձեր ո՞չ փրկէ զձեզ ՚ի ձեռաց իմոց*: ¹⁶Եւ այլ ևս խօսեցան ծառայք նորա ՚ի Տէր Աստուած՝ և յեզեկիաս ծառայ նորա: ¹⁷Եւ թո՛ղթ գրեաց թշնամանել զՏէր Աստուած Իսրայէլի, և ասաց յաղագս նորա. Ձոր օրինակ աստուածք ազգաց երկրի՝ ո՞չ փրկեցին զժողովուրդ իւրեանց ՚ի ձեռաց իմոց. նոյնպէս և Աստուածո՞ւ Եզեկիայ զժողովուրդ իւր ո՞չ ապրեցուցէ ՚ի ձեռաց իմոց*: ¹⁸Եւ գոչեաց մեծածայն Յրէարէն առ ժողովուրդն Երուսաղէմի որ էր ՚ի վերայ պարսպին, օգնական լինել ինքեանց՝ և կործանել զպարիսպն, զի վաղվաղակի՛ առցեն զքաղաքն: ¹⁹Եւ խօսեցաւ յԱստուածն Երուսաղէմի որպէս և յաստուածս ժողովրդոց երկրի՝ ՚ի գործս ձեռաց մարդկան: ²⁰Եւ յաղօթս կացին Եզեկիաս արքայ, և Եսայիաս որդի Ամովսայ մարգարէ յաղագս այնորիկ՝ և գոչեցին յերկինս: ²¹Եւ առաքեաց Տէր հրեշտակ, և սատակեաց զամենայն զօրաւոր և պատերազմօղ, զիշխան և զզօրագլուխ ՚ի բանակի արքային Ասորեստանեայց. և դարձոյց զերեսս իւր ամօթով յերկիր իւր, և չոգաւ ՚ի տուն աստուածոյն իւրոյ. և որք ելեալ էին յորովայնէ նորա՝ ընկեցին զնա անդ սրով: ²²Եւ ապրեցոյց Տէր զԵզեկիաս և զքնակիչս Երուսաղէմի ՚ի ձեռաց Սենեքերիմայ՝ արքային Ասորեստանեայց, և ՚ի ձեռաց ամենեցունց. և հանգոյց զնա շուրջանակի*: ²³Եւ բազումք բերէին պատարագս Տեառն յերուսաղէմ, և ընծայս Եզեկիայ արքայի Յուդայ. և ամբարձաւ առաջի աչաց ամենայն ազգաց: Եւ յետ այսորիկ՝ ²⁴յաւուրսն յայնոսիկ հիւանդացաւ Եզեկիաս մե՛րձ ՚ի մահ. և յաղօթս եկաց առ Տէր. և լուաւ նմա, և ետ նմա նշան*: ²⁵Եւ ո՞չ ըստ հատուցմանն զոր ետ նմա Աստուած՝ հատոյց անդրէն Եզեկիաս, այլ բարձրացաւ սիրտ նորա. և եղև ՚ի

* Ոմանք. Յամրոցիդ Երուսաղէմի:

* Ոմանք. Տէր Աստուած փրկէ զձեզ:

* Ոմանք. Ձժողովուրդս իւրե՛ն:

* Ոմանք. Ամենայն աստուածք ազգ՞... ո՞չ փրկեսցէ զձեզ ՚ի:

* Յօրինակին պակասէր. Աստուածք ազգաց երկրի ո՞չ փր՞: Այլք. Ձժողովուրդս իւրեանց:

* Ոմանք. Եւ հանգոյց զնոսա շուրջանակի:

* Ոսկան. Ամենայն ազգաց, և յետ այսոցիկ:

* Ոմանք. Եզեկիաս մի՛նչև ՚ի մահ:

վերայ նորա բարկութիւն, և ՚ի վերայ Յուդայ և Երուսաղէմի: ²⁶Եւ խոնարհեցաւ Եզեկիաս ՚ի բարձրութենէ սրտին իւրոյ և բնակիչքն Երուսաղէմի. և ո՛չ եկն ՚ի վերայ նոցա բարկութիւն Տեառն յաւուրս Եզեկիայ: ²⁷Եւ եղև Եզեկիայ մեծութիւն և փառք բազում յոյժ. և արա՛ր իւր գանձս ոսկւոյ և արծաթոյ, և ականց պատուականաց, և խունկս, և զէնս, և անօթս ցանկալիս*: ²⁸Եւ քաղաքս յարմտիս ցորենոյ, և գինւոյ, և ձիթոյ. և գետոյս, և կայանս ամենայն անասնոց, և գոմս հօտից*: ²⁹Եւ քաղաքս զոր շինեաց իւր, և պատրաստութիւն խաշանց և արջառոց բազում. վասն զի ե՛տ նմա Տէր ստացուածս բազումս յոյժ: ³⁰Ինքն Եզեկիաս եխից զելս ջրոցն Գեհոնի զվերին, և ուղղեաց զնա խոնարհագոյն յարևմուտս կողմն քաղաքին Դաւթի. և յաջողեցաւ Եզեկիայ յամենայն ՚ի գործսն իւր*: ³¹Եւ այսպէս արար հրեշտակաց իշխանաց որք ՚ի Բաբելոնէ առաքեցան առ նա հարցանել վասն նորա, և նշանաց որ եղեն ՚ի վերայ երկրի. և եթող զնա Տէր փորձել զնա՝ և գիտել թէ զի՞նչ է ՚ի սրտի նորա*: ³²Եւ մնացեալ բանքն Եզեկիայ և ողորմութիւն նորա, ահա գրեալ է ՚ի մարգարէութիւնն Եսայեայ որդւոյ Ամովսայ մարգարէի, և ՚ի գիրս թագաւորացն Յուդայ և Իսրայէլի: ³³Եւ քունեաց Եզեկիաս ընդ հարս իւր և թաղեցին զնա ՚ի բարձուանդակի գերեզմանաց որդւոցն Դաւթի. և փառս և պատիւ ետուն նմա ՚ի մահուն նորա ամենայն Յուդայ՝ և բնակիչք Երուսաղէմի:

ԻՉ Եւ թագաւորեաց Մանասէ որդի նորա փոխանակ նորա*:

33

Գլուխ ԼԳ

¹Է՛ր ամաց երկոտասանից Մանասէ ՚ի թագաւորելն իւրուն, և յիսուն և հինգ ամ թագաւորեաց յԵրուսաղէմ*: ²Եւ արար չար առաջի Տեառն յամենայն գարշութեանց ազգացն զորս սատակեաց Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի: ³Եւ դարձաւ շինեաց զբարձաւանդակս զոր կործանեաց Եզեկիաս հայրն նորա, և կանգնեաց արձանս Բահաղիմայ, և արար անտառս. և երկի՛ր եպագ ամենայն զօրութեան երկնից, և ծառայեաց նոցա*: ⁴Եւ շինեաց սեղան ՚ի տանն Տեառն. յորում ասաց Տէր յԵրուսաղէմ եղիցի անուն իմ յաւիտեան: ⁵Շինեաց անդ սեղան ամենայն զօրութեան երկնի յերկոսեան ՚ի սրահս տանն Տեառն: ⁶Եւ ինքն անցուցանէր զորդիս իւր ընդ հուր յերկրին Բեննոմայ, և հմայէր, և հաւահարց լինէր, և դիւթէր. և արար վիուկս և թովիչս. բազմացոյց առնել չա՛ր առաջի Տեառն առ ՚ի բարկացուցանելոյ զնա: ⁷Եւ դրօշեալ և ձուլածոյ և պատկեր զոր արար ՚ի տանն Տեառն. զորմէ ասաց Աստուած ց՛Դաւիթ և ց՛Սողոմոն որդի նորա. ՚ի տանս յայսմ և յԵրուսաղէմ, զոր ընտրեցի յամենայն ցեղիցն Իսրայէլի եղից զանուն իմ յաւիտեան*. ⁸և ո՛չ ևս յաւելից սասանեցուցանել զոտն Իսրայէլի

* *Յօրինակին պակասէր.* Եւ արար իւր գանձս:

* *Յօրինակին պակասէր.* Եւ քաղաքս:

* *Ոմանք.* Եխից զջրհորն Գեհոնի: *Յօրինակին պակասէր.* Եւ ուղղեաց զնա խոնա՛:

* *Ոմանք.* Եթէ զի՞նչ է ՚ի սիրտ նորա:

* *Ոմանք.* Եւ ննջեաց Եզեկիաս... ՚ի բարձաւանդ*:

* *Յօրինակին.* Եւ ԾԵ ամ թագաւորեաց:

* *Ոմանք.* Ամենայն զօրութեանց երկնի:

* *Ոմանք.* Չորմէ ասաց Տէր:

յերկրէս զոր ետու հարց նոցա, բայց միայն թէ պահեսցեն առնել զամենայն որ ինչ պատուիրեցի նոցա, ըստ ամենայն օրինաց և սահմանաց՝ և իրաւանց՝ ՚ի ձեռն Մովսիսի*։ ⁹Եւ մոլորեցոյց Մանասէ՛ զՅուդաս, և զքնակիչսն Երուսաղէմի, առնել չա՛ր առաւել քան զամենայն ազգսն զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի։ ¹⁰Եւ խօսեցաւ Տէր ընդ Մանասէի և ընդ ժողովրդեան նորա, և ո՛չ լուան։ ¹¹Եւ ա՛ծ Տէր ՚ի վերայ նորա զիշխանս զօրու արքային Ասորեստանեայց կալան զնա և կապեցին կապանօք, և տարան ՚ի Բաբելոն*։ ¹²Եւ իբրև վտանգեցաւ, խնդրեաց զերեսս Տեառն Աստուծոյ իւրոյ. և խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աստուծոյ հարցն իւրոց։ ¹³Յաղօթս եկաց առ նա. և լուաւ զոչման նորա, և դարձոյց զնա յերուսաղէմ ՚ի թագաւորութիւնն իւր. և ծանեաւ Մանասէ, եթէ Տէր՝ նա՛ է Աստուած։ ¹⁴Եւ յետ այսորիկ շինեաց պարիսպ արտաքոյ քաղաքին Դաւթի յարևմտից ընդ հարաւակողմն ՚ի հեղեղատին, և յելս դրանցն շուրջանակի յովիղայ, և բարձրացոյց յոյժ. և կացոյց իշխանս զօրուց յամենայն քաղաքս պարսպաւորս Յուդայ*։ ¹⁵Եւ ՚ի բա՛ց եբարձ զաստուածսն օտարս, և զդրօշեալսն ՚ի տանէն Տեառն. և զամենայն սեղանսն զորս շինեաց ՚ի լերին տանն Տեառն և յերուսաղէմ, և արտաքոյ քաղաքին։ ¹⁶Եւ ուղղեաց զսեղանն Տեառն, և զոհեաց ՚ի վերայ նորա զոհս փրկութեան և օրհնութեան. և ասաց զՅուդաս՝ ծառայել Տեառն Աստուծոյ Իսրայէլի։ ¹⁷Բայց ժողովուրդն տակաւին ևս երթայր ՚ի բարձունսն. սակայն Տէր Աստուած էր նոցա։ ¹⁸Եւ մնացեալ բանքն Մանասէի, և աղօթք նորա որ առ Աստուած է, և բանք տեսանողացն որք խօսեցան ընդ նա յանուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի, ահա են ՚ի բանս* ¹⁹աղօթից նորա, և յորս լուան նմա. և ամենայն մեղք նորա և ապստամբութիւն նորա. և տեղիքն զորս շինեաց զբարձրաւանդակսն, և արար անտառս և դրօշեալս յառաջ քան զդառնալն իւրում, ահա գրեալ են ՚ի բանս տեսանողացն*։ ²⁰Եւ քունեաց Մանասէ ընդ հարս իւր. և թաղեցին զնա ՚ի դրախտի տանն իւրոյ.

Ի՛նչ Եւ թագաւորեաց փոխանակ նորա Ամովս որդի նորա*։ ²¹Է՛ր ամաց քսան և երկուց Ամովս ՚ի թագաւորելն իւրում. և երկուտասան ամ թագաւորեաց յերուսաղէմ*։ ²²Եւ արար չա՛ր առաջի Տեառն՝ որպէս արար Մանասէ հայր նորա. և ամենեցուն կռոցն զոր արար հայր նորա Մանասէ՝ զոհեաց Ամովս և ծառայեաց նոցա։ ²³Եւ ո՛չ խոնարհեցաւ առաջի Տեառն, որպէս խոնարհեցաւ Մանասէ հայր նորա. այլ որդի նորա Ամովս յաճախեաց ՚ի մեղս։ ²⁴Եւ յարեան ՚ի վերայ նորա ծառայքն իւր, և հարին զնա ՚ի տան իւրում։ ²⁵Եւ եհար ժողովուրդ երկրին զյարուցեալսն ՚ի վերայ թագաւորին։

Ի՛նչ Եւ թագաւորեցոյց ժողովուրդ երկրին զՅովսիաս որդի նորա փոխանակ նորա։

34

* *Ոմանք.* Ամենայն օրինաց և իրամանաց և իրա՛ն։

* *Ոմանք.* Եւ կապեցին զնա կապա՛ն։

* *Յօրինակին.* Շուրջանակի յովիղայ. *ըստ որում ունին և ոմանք վրիպակաւ գրչաց։*

* *Ոմանք.* Որ խօսեցան ընդ նմա։ *Ոսկան.* ՚ի բանս թագաւորաց Իսրայէլի։ Եւ բանք (19) աղօթիցն նորա. և յորս լուան նմա։

* *Այլք.* Զբարձաւանդակսն, և արար անդ անտառս։

* *Ոմանք.* Եւ ննջեաց Մանասէ ընդ։

* *Ոմանք.* Եւ երկուս ամս թագաւորեաց։

Գլուխ ԼԴ

¹Է՛ր ութ ամաց Յովսիաս ՚ի թագաւորելն իւրում, և երեսուն և մի ամ թագաւորեաց յերուսաղէմ*։ ²Եւ արար ուղղութիւն առաջի Տեառն. գնաց ՚ի ճանապարհս Դաւթի հօր իւրոյ, և ո՛չ խտտորեցաւ յաջ՝ և ո՛չ յահեակ։ ³Եւ յութերորդ ամի թագաւորութեանն իւրոյ, և ինքն էր տակաւին ևս մանուկ, սկսաւ խնդրել զՏէր Աստուած Դաւթի հօր իւրոյ. և յերկոտասաներորդ ամի թագաւորութեանն իւրոյ, սկսաւ սրբել զՅուդայ և զերուսաղէմ ՚ի բարձանցն և յանտառացն և ՚ի ձուլածոյիցն*։ ⁴Եւ կործանեաց դէմ յանդիման իւր զսեղանս Բահաղիմայցն, և զբարձաւանդակսն յորոց վերայ էին. և կոտորեաց զանտառսն, և զդրօշեալսն, և զձուլածոյսն փշրեաց և մանրեաց և ընկէց յանդիման շիրմացն այնոցիկ որք զոհէին նոցա։ ⁵Եւ զոսկերս քրմացն այրեաց ՚ի վերայ սեղանոցն, և մաքրեաց զՅուդաս և զերուսաղէմ*։ ⁶և զբաղաքսն Եփրեմի և Մանասէի, և զՇմաւոնի, և զԼեւիթաղիմայ, և զտեղիսն նոցա շուրջանակի։ ⁷Եւ ՚ի բաց եբարձ զանտառսն, և զբազինսն, և զկուռսն փշրեաց մանր. և զամենայն բարձունսն ՚ի բաց եբարձ յերկրէն Իսրայէլի. և դարձաւ յերուսաղէմ։ ⁸Եւ յամին ութուտասներորդի թագաւորութեանն իւրոյ, յորժամ վախճանեաց մաքրել զերկիրն՝ և զտուն թագաւորութեանն. առաքեաց զՍափան որդի Սեղիայ, և զՄասիաս իշխան քաղաքին, և զՅովսիաս որդի Յովաքազայ զդպիր յիշատակացն իւրոց, զօրացուցանել զտունն Տեառն Աստուծոյ իւրոյ*։ ⁹Եւ եկին առ Քեղկիաս քահանայ մեծ. և ետ զարձաթն որ մտեալ էր ՚ի տունն Տեառն, զոր ժողովեցին Ղևտացիքն պահապանք դրանն, ՚ի ձեռանէ Մանասէի և Եփրեմի, և իշխանացն, և յամենայն մնացորդացն Իսրայէլի. և յորդուցն Յուդայ և Բենիամինի, և բնակչացն Երուսաղէմի։ ¹⁰Եւ ետուն զայն ՚ի ձեռս, որք ունէին զգործն, որք կային ՚ի տանն Տեառն՝ կազմել և զօրացուցանել զտունն*։ ¹¹և ետուն հիւսանցն և շինողացն զնել քարինս չորեքանկիւնիս մեծս, և փայտս ՚ի զերանս՝ յարկանել զտունսն զորս քակեցին թագաւորքն Յուդայ։ ¹²Եւ արքն այնոքիկ կային հաւատովք ՚ի վերայ գործոյն. և վերակացուքն նոցա՝ Յէթ, և Աբդիաս, Ղևտացիք յորդուցն Մերարեայ, և Ջաքարիաս, և Մեսողամ յորդուցն Կահաթու այց առնել. և ամենայն Ղևտացի որ ոք էր իմաստուն նուագարանօք երգոցն*։ ¹³Եւ ՚ի վերայ բեռնակրացն. և ՚ի վերայ այնոցիկ որք առնէին զգործն, և զպատրաստութիւն գործոյն և ՚ի Ղևտացուցն էին դպրապետք, և դատաւորք, և դռնապանք։ ¹⁴Եւ ՚ի հանելն նոցա զարձաթն մտեալ ՚ի տուն Տեառն. եգիտ Քեղկիաս քահանայ գիրս օրինացն Տեառն որ ՚ի ձեռն Սովսիսի։ ¹⁵Պատասխանի ետ Քեղկիաս՝ և ասէ ցՍափան դպրապետ. Գիրս օրինաց գտի ՚ի տանն Տեառն։ Եւ ետ Քեղկիաս զգիրսն ցՍափան. ¹⁶և տարաւ Սափան զգիրսն առ արքայ. և ետ արքայի զհամար ամենայն տուելոյ արձաթոյն ՚ի ձեռս ծառայիցն նորա որք առնէին զգործն։ ¹⁷Եւ ձուլեցին զարձաթն գտեալ ՚ի տուն Տեառն, և ետուն զայն ՚ի ձեռս վերակացուցն, և ՚ի ձեռս այնոցիկ որք առնէին զգործն։ ¹⁸Եւ պատմեաց Սափան դպրապետ արքայի՝ և ասէ. Գիրս օրինաց ետ զիս Քեղկիաս քահանայ։ Եւ ընթերցաւ զայն Սափան առաջի թագաւորին։ ¹⁹Եւ

* *Յօրինակին.* Եւ ԼԱ ամ թագաւորեաց յերուսաղէմ։

* *Ոմանք.* Եւ յերկոտասաներորդի ամի... զՅուդաս և։

* *Ոմանք.* Ի վերայ սեղանոյն։

* *Ոմանք.* Իշխանս քաղաքին։

* *Ոմանք.* Որք առնէին զգործն, որք։

* *Ոմանք.* Եւ Մեսողամ... և ամենայն Ղևտացի ոք որ էր ի՞։

եղև իբրև լուսւ արքայ զբանս օրինացն, պատառեաց զպատմուճան իւր: ²⁰Եւ պատուիրեաց արքայ Քեղկիայ, և Աքիկամայ որդւոյ Սափանայ, և Աբդիայ որդւոյ Միքեայ, և Սափանայ դպրապետի, և Ասայիայ՝ մանկան արքայի, և ասէ. ²¹Երթայք խնդրեցէք ՚ի Տեառնէ վասն իմ, և վասն ամենեցուն մնացելոցս յԻսրայէլէ և Յուդայ, յաղագս բանից գրոցոյ այդոցիկ որք գտան. վասն զի մե՛ծ սրտմտութիւն Տեառն բորբոքեալ է ՚ի մեզ. զի ո՛չ լուսն հարքն մեր զբանս Տեառն առնել ըստ ամենայնի որ ինչ գրեալ է ՚ի գիրսոյ յայդոսիկ*: ²²Եւ գնաց Քեղկիաս՝ և որոց ասացն արքայ՝ առ Ողդան մարգարէ կին Սեղեմայ՝ որդւոյ Թակուաթայ որդւոյ Եսերայ, որ պահէր զպատուիրանսն. և ինքն բնակէր յԵրուսաղէմ ՚ի Մասենա. և խօսեցան ընդ նմա ըստ բանիցն այնոցիկ: ²³Եւ ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ասասջի՛ք ցայրն որ առաքեաց զձեզ առ իս. ²⁴Այսպէս ասէ Տէր. Ահա ես ածեմ չարիս ՚ի վերայ տեղւոյ այդորիկ, զամենայն բան գրեալս ՚ի գիրսոյ զոր ընթերցան առաջի արքայիդ Յուդայ*. ²⁵Վիոխանակ զի թողին զիս, և զոհեցին աստուածոց օտարաց. զի բարկացուցանիցեն զիս գործովք ձեռաց իւրեանց, և բորբոքեցաւ սրտմտութիւն իմ ՚ի տեղւոջոյ յայդմիկ. և ո՛չ ևս շիջցի*: ²⁶Եւ ցթագաւորն Յուդայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր, այսպէս ասասջի՛ք ցնա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Չբանսոյ զոր լուսար դու. ²⁷և պատկառեաց սիրտ քո, և խոնարհեցաւ առաջի երեսաց իմոց ՚ի լսել զբանսդ իմ ՚ի վերայ տեղւոյ այդորիկ, և ՚ի վերայ բնակչացդ դորա. և դու խոնարհեցար առաջի իմ, պատառեցեր զպատմուճանս քո, և լացեր յանդիման իմ. և ես լուսայ, ասէ Տէր: ²⁸Ահա յաւելի՛ց զքեզ առ հարս քո, և դիցեն զքեզ ՚ի շիրմին քում խաղաղութեամբ. և ո՛չ տեսցեն աչք քո զամենայն չարիսն զոր ես ածից ՚ի վերայ տեղւոյ այդորիկ, և ՚ի վերայ բնակչաց դորա: Եւ ետուն թագաւորին զբանսս զայսոսիկ: ²⁹Եւ առաքեաց արքայ և ժողովեաց զձերսն Յուդայ և զԵրուսաղէմի: ³⁰Եւ ել արքայ Յուդայ ՚ի տունն Տեառն, և ամենայն Յուդաս և բնակիչք Երուսաղէմի, և քահանայքն և Ղևտացիք, և ամենայն ժողովուրդն ՚ի մեծէ մինչև ՚ի փոքր. և ընթերցաւ յականջս նոցա զամենայն բանս կտակին գտելոյ ՚ի տանն Տեառն*: ³¹Եւ յարեաւ թագաւորն՝ եկաց ՚ի վերայ սեանն, և եղ ուխտ առաջի Տեառն երթալ զհե՛տ Տեառն, պահել զպատուիրանս նորա, և զվկայութիւնս նորա, և զհրամանս նորա, ՚ի բոլոր սրտէ, և ՚ի բոլոր անձնէ, զբանս ուխտին՝ զգրեալսն ՚ի գիրսն յայնոսիկ: ³²Եւ կացոյց զամենեսեան զգտեալսն յԵրուսաղէմ, և ՚ի Բենիամին. և արարին բնակիչքն Երուսաղէմի ո՛ւխտ ՚ի տանն Աստուծոյ հարցն իւրեանց*: ³³Եւ ՚ի բաց եբարձ Յովսիաս զամենայն գարշելիս յամենայն երկրէ, որ էր որդւոցն Իսրայէլի. և արար ամենայն գտելոցն յԵրուսաղէմ և յԻսրայէլի ծառայել Տեառն Աստուծոյ իւրեանց. զամենայն աւուրս իւր՝ ո՛չ խտտորեցաւ ՚ի հետոց Տեառն Աստուծոյ հարցն իւրոց*:

* Ոմանք. Եւ վասն ամենեցուն մնացորդացն:

* Այլք. Չամենայն բանս գրեալս ՚ի:

* Ոմանք. Ձի բարկացուցանել զիս գործովք: *Յօրինակին պակասէր.* Սրտմտութիւն իմ՝ ՚ի տեղւո՛:

* Ոմանք. Կտակին գրելոյ, ՚ի տանն Տեառն:

* Ոմանք. Եւ ՚ի Բենիամինի... ՚ի տան Տեառն Աստուծոյ:

* Ոմանք. Եւ արար ամենայն գրելոցն յԵրուսաղէմ:

Գլուխ ԼԵ

¹Եւ արա՛ր Յովսիաս զպասեքն Տեառն Աստուծոյ իւրոյ. և զենին զպասեքն ՚ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն առաջնոյ: ²Եւ կացոյց զքահանայսն ՚ի վերայ պահպանութեան իւրեանց. և զօրացոյց զնոսա ՚ի գործս տանն Տեառն: ³Եւ ասէ ցՂևտացիսն և ցգօրաւորսն յամենայն Իսրայէլի, սրբել զնոսա Տեառն. և եդին զտապանակն սրբութեան ՚ի տանն զոր շինեաց Սողոմոն որդի Դաւթի արքայի Իսրայէլի. և ասէ արքայ. Ո՛չ է ձեզ բառնալ ՚ի վերայ ուսոց՝ և ո՛չ ինչ. արդ՝ պաշտեցէ՛ք զՏէր Աստուած ձեր, և զժողովուրդ նորա զԻսրայէլ* . ⁴և պատրա՛ստք լերուք ըստ տանց տոհմից ձերոց, և ըստ օրամտից պաշտաման ձերոյ, ըստ գրոց Դաւթայ արքայի Իսրայէլի, և ՚ի ձեռն թագաւորին Սողոմոնի որդւոյ նորա: ⁵Եւ կացէ՛ք ՚ի տաճարիդ՝ ըստ որոշման տանց տահմից ձերոց, առաջի եղբարց ձերոց, և որդւոց ժողովրդեան ձերոյ. և բաժին տան ցեղիդ Ղևտացւոց* . ⁶և զոհեցէ՛ք զպասեքդ, և պատրաստեցէ՛ք զսրբութիւնսդ եղբարց ձերոց, առնել ըստ բանիդ Տեառն որ ՚ի ձեռն Սովսիսի: ⁷Եւ սկսաւ Յովսիաս տալ որդւոց ժողովրդեանն, խոյս, և որոջս, և նոխագս յորդոց այժեացն, զամենայն ՚ի պասեքն. և զամենեսեան որ ինչ գտաւ՝ թուով երեսուն հազար. և զուարակս երեք հազար. այսոքիկ ՚ի ստացուածոց թագաւորին*: ⁸Եւ իշխանքն նորա սկսան տալ ժողովրդեանն, և քահանայիցն, և Ղևտացւոցն. և ետուն՝ Քեղկիաս, և Ջաքարիաս, և Յէիէլ. և իշխանք տանն Աստուծոյ, քահանայիցն ետուն ՚ի պասեքն. խոյս, և որոջս, և նոխագս երկու հազար և վեց հարիւր, և զուարակս երեք հարիւր*: ⁹Եւ Քոնենիաս, և Բանէաս, և Սամէաս, և Նաթանայէլ եղբայր նորա, և Ասաբիաս, և Յէիէլ, և Յովզաբադ իշխանք Ղևտացւոցն, սկսան տալ ցՂևտացիսն ՚ի պասեքն. խոյս հինգ հազար, և զուարակս հինգ հարիւր: ¹⁰Եւ ուղղեցաւ պաշտօնն. և կացին քահանայքն ՚ի կարգն իւրեանց. և Ղևտացիքն ՚ի զատուցմանն իւրեանց, ըստ պատուիրանի արքային*: ¹¹Եւ զենին զպասեքն, և հեղին քահանայքն զարիւնն ՚ի ձեռացն իւրեանց. և Ղևտացիքն յօշեցին, ¹²և պատրաստեցին զողջակէզսն տալ նոցա իւրաքանչիւր ումեք ըստ զատուցմանն, վասն տանց տոհմից որդւոց ժողովրդեանն մատուցանել Տեառն. որպէս և գրեալ է ՚ի գիրս օրինացն Սովսիսի. նոյնպէս և յառաւօտինս: ¹³Եւ խորովեցին զպասեքն հրով ըստ օրինին. և զսրբութիւնն եփեցին կաթսայիւք, և սանիւք. և յաջողեցաւ. և ընթացան առ ամենեսեան որդիս ժողովրդեանն*: ¹⁴Եւ յետ պատրաստելոյն նոցա և քահանայիցն. վասն զի քահանայքն էին մատուցանել զճարպսն և զողջակէզսն մինչև ՚ի գիշերին. և Ղևտացիքն պատրաստեցին իւրեանց և եղբարցն իւրեանց որդւոցն Ահարոնի*: ¹⁵Եւ սաղմոսանուազքն որդիք Ասափայ ՚ի կարգին իւրեանց ըստ պատուիրանին Դաւթայ. և Ասափ, և Եման, և Իդիթուն՝ մարգարէք արքային: Եւ իշխանք, և դռնապանք դրանն, և դրան. և ո՛չ էր նոցա հնար շարժել ՚ի

* Ոմանք. Որդի Դաւթի արքայ Իսրայէլի:

* Ոմանք. Ըստ որոշման տոհմից ձերոց... ցեղից Ղևտաց՝:

* Յօրինակին. Թուով ԼՈՒ և զուարակս Վ:

* Յօրինակին. Եւ նոխագս ՍՈՒ, և զուա՞:

* Ոմանք. Ի կարգին իւրեանց:

* Այլք. Կատսայիւք:

* Այլք. Մինչև ՚ի գիշերն:

պաշտամանէ սրբութեանն. վասն զի եղբարք նոցա Ղևտացիքն պատրաստեցին նոցա*։ ¹⁶Եւ ուղղեցաւ և պատրաստեցաւ ամենայն պաշտօնն Տեառն յաւուր յայնմիկ առնել զպասեքն, և մատուցանել զողջակէզսն ՚ի վերայ սեղանոյն Տեառն, ըստ պատուիրանին Յովսիայ արքայի։ ¹⁷Եւ արարին որդիքն Իսրայէլի որք գտան անդ՝ զպասեքն ՚ի ժամանակին յայնմ, և գտօն անխմորիցն՝ զելթն օր։ ¹⁸Եւ ո՛չ երբէք եղև պասեք նման նմա յԻսրայէլի, յաւուրցն Սամուելի մարգարէի. և ամենայն թագաւորքն Իսրայէլի ո՛չ արարին պասեք՝ որպէս արար Յովսիաս. և քահանայքն, և Ղևտացիք, և ամենայն Յուդաս և Իսրայէլ որ գտաւ անդ, և բնակիչքն Երուսաղէմի, ¹⁹արարին Տեառն յութասաներորդ ամի թագաւորութեանն Յովսիայ։ Եւ զվիուկս, և զգէտս, և զդիւթս, և զկուռս, և զկախարդս, որք էին յերկրին Յուդայ և յերուսաղէմ, ՚ի բա՛ց եբարձ. և այրեաց հրով արքայ Յովսիա, զի հաստատեսցէ զբանս օրինացն զգրեալսն ՚ի գիրս զոր եգիտ Քեղկիա քահանայ ՚ի տանն Տեառն։ Նման նմա ո՛չ եղև յառաջ քան զնա, որ դարձաւ առ Տէր Աստուած ՚ի բոլոր սրտէ իւրմէ, և ՚ի բոլոր անձնէ իւրմէ, և յամենայն զօրութենէ իւրմէ, ըստ ամենայն օրինաց Մովսիսի. և յետ նորա ո՛չ ոք յարեաւ նմա նմա։ Սակայն ո՛չ դարձաւ Տէր ՚ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ մեծօ՛ք, զոր բարկացաւ սրտմտութեամբ Տէր ՚ի վերայ Յուդայ, ամենայն բարկութեամբքն որով բարկացոյց զնա Մանասէ. և ասաց Տէր. Այլ և զՅուդա՛ն մերժեցից յերեսաց իմոց, որպէս մերժեցի զԻսրայէլ. և ՚ի բա՛ց արարից զքաղաքն զոր ընտրեցի զերուսաղէմ, և զտունն զորմէ ասացի՝ Եղիցի անունն իմ անդ*։ ²⁰Եւ ե՛լ փարաւուն Նեքաւով՝ արքայ Եգիպտոսի ՚ի վերայ արքային Ասորեստանեայց, առ զետովն Եփրատայ. և զնաց արքայ Յովսիա ընդդէմ նորա*։ ²¹Եւ առաքեաց առ նա հրեշտակս, և ասէ. Ձի՞նչ կայ ի՛նչ և քո արքայ Յուդայ. ո՛չ եմ եկեալ ՚ի վերայ քո այսօր պատերա՛զմ առնել. և Աստուած ասաց փութալ ինձ. զգո՛յշ լեր յԱստուծոյ՝ որ է ընդ իս. մի՛ գուցէ ապականիցէ զքեզ*։ ²²Եւ ո՛չ դարձոյց Յովսիա զերեսս իւր ՚ի նմանէ, այլ պատերազմել ընդ նմա զօրացաւ. և ո՛չ լուաւ բանիցն Նեքաւովայ՝ որ ՚ի բերանոյ Տեառն. և եկն պատերազմել ՚ի դաշտին Մակեդոնովայ*։ ²³Եւ հարին աղեղնաւորքն զարքայ Յովսիաս. և ասէ արքայ զծառայս իւր. Յանէ՛ք զիս աստի, վասն զի վտանգեցայ յոյժ։ ²⁴Եւ հանին զնա ծառայքն նորա ՚ի կառացն իւրոց, և եղին զնա ՚ի կառսն յերկրորդս որ էր նորա, և տարան զնա յերուսաղէմ. և մեռաւ և թաղեցաւ ընդ հարս իւր. և ամենայն Յուդաս և Երուսաղէմ սու՛գ առին ՚ի վերայ Յովսիայ*։ ²⁵Եւ ասաց ո՛ղբս Երեմիաս ՚ի վերայ Յովսիայ, և ամենայն իշխանքն՝ արք և կանայք՝ ասացին զողբսն ՚ի վերայ Յովսիայ մինչև ցայսօր. և ետուն զայն իբրև հրամանաւ ՚ի մէջ Իսրայէլի. և ահա գրեալք են ՚ի ճառս ողբոցն։ ²⁶Եւ էին բանքն Յովսիայ, և յոյս նորա գրեալ յօրէնսն Տեառն։ ²⁷Եւ մնացեալ բանքն նորա առաջինք և վերջինք, ահա գրեալ են ՚ի գիրս թագաւորացն Իսրայէլի՝ և Յուդայ։

* *Օրինակ մի.* Եւ դռնապանք տանն և դրան։ *Ուր Ոսկան.* Եւ դռնապանք իւրաքանչիւրոյ դրանն։ *Յօրինակին պակասէր.* Եւ ո՛չ էր նոցա հնար։
 * *Ոմանք.* Յութուտասաներորդի ամի... նման նմա ո՛չ ոք եղև։
 * *Ոմանք.* Առ զետովն Եփրատաւ։
 * *Ի լուս՝ առանց պատուոյ արձակ նշանակին բառքս՝ այսպէս.* Եւ Աստուած ասաց... զգո՛յշ լեր յԱստուծոյ, որ է։
 * *Ոմանք.* Որ է ՚ի բերանոյ Տեառն։
 * *Ոսկան.* Ի կառն յերկրորդ որ էր նորա։ *Ոմանք.* Եւ ամենայն Յուդաս և յերուսաղէմ սու՛գ առին։

Գլուխ ԼԶ

ԻԹ ¹Եւ ա՛ռ ժողովուրդ երկրին զՅովաքազ որդի Յովսիայ, և օծին զնա. և կացուցին զնա թագաւոր փոխանակ իւր նորա յերուսաղէմ: ²Որդի քսան և երից ամաց էր Յովաքազ ՚ի թագաւորելն իւրուն, զերիս ամիսս թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Ամիտաղ՝ դուստր Երեմիայի ՚ի Ղոբնայ. և արար չա՛ր առաջի Տեառն, ըստ ամենայնի զոր ինչ արարին հարքն նորա*: ³Եւ կապեաց զնա փարաւոն Նեքաւով ՚ի Դեբղաթայ՝ յերկիրն Եմաթայ, ո՛չ ևս թագաւորել նմա յերուսաղէմ. և տարաւ զնա արքայն յԵգիպտոս. և ա՛րկ ՚ի վերայ երկրին հարկ հարիւր տաղանտ արծաթոյ, և տաղանտ մի ոսկւոյ*:

Լ ⁴Եւ կացոյց փարաւոն Նեքաւով զԵղիակիմ որդի Յովսիայ արքայի Յուդայ փոխանակ Յովսիայ իւր նորա. և փոխեաց զանուն նորա Յովակիմ. և զՅովաքազ եղբայրն նորա ա՛ռ փարաւոն Նեքաւով, և տարաւ յԵգիպտոս. և մեռաւ անդ. և զարծաթն և զոսկին ետուն փարաւոնի: Յայնմ հետէ սկսաւ տա՛լ հարկս երկիրն. և ետուն զարծաթն ըստ բերանոյ փարաւոնի, և յիւրաքանչիւր ումեքէ ըստ զօրութեան իրոյ պահանջէին զարծաթն և զոսկին ՚ի ժողովրդեան երկրին, տա՛լ զայն փարաւոնի Նեքաւովայ*:

ԼԱ ⁵Է՛ր քսան և հինգ ամաց Յովակիմ ՚ի թագաւորել իւրուն, և զմետասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. և անուն մօր նորա Ջեկքովրայ դուստր Ներիայ ՚ի Յռամայ. և արար չա՛ր առաջի Տեառն ըստ ամենայնի զոր ինչ արարին հարքն նորա: Յաւուրս նորա է՛լ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի յերկիրն. և ծառայեաց նմա ամիսս երիս, և ապստամբեաց ՚ի նմանէ: Եւ առաքեաց Տէր զՔաղդեացիսն, և զաւազակսն Ատրեաց, և զաւազակսն Մովաբացւոց, և որդւոցն Ամոնայ, և Սամարիայ: Եւ ՚ի բա՛ց կացին յետ բանիցս այսոցիկ ըստ բանի Տեառն ՚ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից. սակայն սրտմտութիւն ՚ի Տեառնէ է՛ր ՚ի վերայ Յուդայ, ՚ի բա՛ց բառնալ զնա յերեսաց իւրոց, վասն մեղացն Մանասէի յամենայնի զոր ինչ արար, և անպարտ արեանցն զոր եհեղ Մանասէ, և ելից զերուսաղէմ անպարտ արեամբ. և ո՛չ կամեցաւ Տէր սատակել զնոսա*:

ԼԲ ⁶Եւ ել ՚ի վերայ նորա Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի, և կապեաց զնա պղնձի կապանօք, և տարաւ զնա ՚ի Բաբելոն: ⁷Եւ մա՛սն ինչ ՚ի սպասուց տանն Տեառն տարաւ ՚ի Բաբելոն, և ե՛ր զայն ՚ի տաճարին իւրուն որ ՚ի Բաբելոն*: ⁸Եւ մնացեալ բանքն Յովակիմայ, և ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են նոքա ՚ի գիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ: Եւ քունեաց Յովակիմ ընդ հարս իւր, և թաղեցաւ ՚ի Գանովզայ՝ ընդ հարս իւր:

ԼԳ Եւ թագաւորեաց Յեքոնիա որդի նորա փոխանակ նորա*: ⁹Որդի

* *Ոմանք.* Եւ զերիս ամս թագաւորեաց:

* *Ոմանք.* Յերկրին Եմաթայ:

* *Ոմանք.* Եւ փոփոխեաց զանուն նորա: *Ոմանք.* Տալ հարկս երկրին:

* *Յօրինակին.* Է՛ր Ի՛ն ամաց Յովա՛: *Ոմանք.* Եւ ծառայեաց նմա ամս երիս: *Յօրինակին պակասէր.* Եւ առաքեաց Տէր զՔաղ՛: *Ոմանք.* ՚ի բաց առնել զնա յերե՛... արեանցն զոր եհեղ Յովակիմ:

* *Ոմանք.* Իւրուն որ ՚ի Բաբելոնի:

* *Ոմանք.* Եւ ննջեաց Յովակիմ ընդ հարսն իւ՛:

ութտասան ամաց էր Յեքոնիաս ՚ի թագաւորելն իւրում, և ամիսս երիս և աւուրս տասն թագաւորեաց յերուսաղէմ. և արար չար առաջի Տեառն*։ ¹⁰Եւ ՚ի դառնալ տարւոյն առաքեաց արքայն Նաբուքոդոնոսոր և տարաւ զնա ՚ի Բաբելոն, հանդերձ ցանկալի սպասուք տանն Տեառն։ Եւ թագաւորեցոյց զՍեդեկիաս եղբայր հօր նորա ՚ի վերայ Յուդայ յերուսաղէմ։ ¹¹Ամաց քսան և միոյ էր Սեդեկիա ՚ի թագաւորել իւրում. և մետասան ամ թագաւորեաց յերուսաղէմ։ ¹²Եւ արար չար առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ. ո՛չ պատկառեաց յերեսաց Երեմիայի մարգարէի՝ և ՚ի բանիցն Տեառն։ ¹³Եւ յապստամբելն նորա ՚ի Նաբուքոդոնոսորայ արքայէ, և անցանելոյ զերդմամբքն զոր երդմնեցոյց զնա յԱստուած իւր. խստացոյց զպարանոցն իւր, և զսիրտ իւր կարծրացոյց՝ ո՛չ ևս դառնալ առ Տէր Աստուած Իսրայէլի*։ ¹⁴Եւ ամենայն փառաւորքն Յուդայ, և քահանայք, և ժողովուրդք երկրին յաճախեցին անօրինել՝ անօրէնութիւնս ըստ գարշելեաց ազգացն, և պղծեցին զտունն Տեառն յերուսաղէմ։ ¹⁵Եւ առաքեաց Տէր Աստուած հարցն նոցա ՚ի ձեռն մարգարէիցն, կանխեալ առաքեաց զիրեշտակս իւր. վասն զի խնայէր ՚ի ժողովուրդն իւր, և ՚ի սրբութիւնն իւր*։ ¹⁶Արհամարիէին զիրեշտակս նորա, և անգոսնէին զբանս նորա. և խաղ առնէին զմարգարէսն. մինչև եղև բարկութիւն Տեառն ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ. և ո՛չ ևս գոյր այնուհետև նոցա բժշկութիւն։ ¹⁷Եւ աժ ՚ի վերայ նոցա զթագաւորն Քաղդէացւոց. կոտորեաց զերիտասարդս նոցա սրով ՚ի տան սրբութեան իւրոյ. և ո՛չ խնայեաց ՚ի Սեդեկիաս. կուսանաց նոցա՝ ո՛չ ողորմեցաւ, և զծերս նոցա զամենեսեան մատնեաց ՚ի ձեռս նոցա։ ¹⁸Եւ զամենայն սպաս տանն Աստուծոյ զմեծամեծս և զփոքունս, և զամենայն գանձն արքային և մեծամեծացն, զամենայն տարաւ ՚ի Բաբելոն։ ¹⁹Եւ այրեաց զտունն Տեառն. և կործանեաց զպարիսպն Երուսաղէմի, և զապարանսն որ ՚ի նմա այրեաց հրով. և զամենայն անօթ գետղեցիկ ապականեաց. ²⁰և գերեաց զմնացորդսն ՚ի Բաբելոն։ Եւ էին անդ՝ նմա և որդւոց նորա ՚ի ծառայութիւն, մինչև ՚ի թագաւորութիւնն Մարաց*։ ²¹Առ ՚ի լնուլ բանին Տեառն ՚ի բերանոյ Երեմիայի մինչև ընկալաւ երկիրն զշաբաթս իւր. և շաբաթանալով զամենայն աւուրս աւերածոյն իւրոյ, շաբաթացաւ ՚ի կատարումն ամացն իւթանասնից*։

ԼԴ ²²Յառաջնում ամին Կիւրոսի արքային Պարսից, յետ լնլոյ բանին Տեառն ՚ի բերանոյ Երեմիայի. զարթոյց Տէր զհոգի Կիւրոսի Պարսից արքայի։ Եւ պատուիրեաց քարոզել յամենայն թագաւորութեանն իւրում զրո՛վ՝ և ասել։ ²³Այսպէս ասէ Կիւրոս արքայ Պարսից. Ջամենայն թագաւորութիւնս երկրի ետ ինձ Տէր Աստուած երկնից. և նա՛ պատուիրեաց ինձ շինել իւր տո՛ւն յերուսաղէմ, ՚ի Զրէաստանի. որ ոք ՚ի ձէնջ յամենայն ժողովրդեմէ նորա՛ իցէ, Տէր Աստուած իւր եղիցի ընդ նմա՝ և ելցէ՛։

* *Յօրինակին թուագրով եղեալ էր այսպէս. Որդի ԸԺ ամաց էր. զոր մեք արձակ գրեցաք՝ ութտասան, ըստ որում և ունէին ոմանք. Ուր թէպէտ են և այլ ոմանք որք գրեն. Որդի ութ և տասն ամաց էր։*

* *Ոմանք. Եւ անցանել զերդմամբքն... և կարծրացոյց ո՛չ ևս։*

* *Ոմանք. Եւ ՚ի սրբութիւնս իւր։*

* *Ոմանք. Եւ որդւոց նորա ՚ի ծառայութեան։*

* *Ոմանք. Ի կատարումն եւթանասնից։*

Կատարեցաւ Մնացորդաց Երկրորդ*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵԶՐԻ

Եզր՝ ՚ի քահանայիցն էր, ՚ի տանէն Եղիազարու որդւոյ Ահարոնի, ՚ի ժամանակս գերութեանն ծնեալ և սնեալ օրինօքն Աստուծոյ ՚ի Բաբելոն. և էր աջող գրիչ օրինացն Մովսիսի: Սա պատմէ ՚ի գիրս իւր յայս գրարձ գերւոյն յետոյետ ՚ի Բաբելոնէ յերուսաղէմ. բայց սկսանի յաւուրցն Յովսիա և հասուցանէ մինչև ցգերութիւնն. և թէ յառաջնում ամին Կիւրոսի եւթանասուն ամ լցաւ գերւոյն, ՚ի վճռէն Ողոյայ մարգարէի. այսինքն՝ ՚ի հինգերորդ ամէ մարգարէութեանն Երեմիայ, որ և սահմանեաց եւթանասուն ամ լինել գերութեանն. զորս իսկ և ի՛սկ արձակեաց Կիւրոս: Որք իբրև բելք չորք և աւելի՛ ելեալք յերուսաղէմ ընդ Սամանասարայ իշխանի՝ սկսան շինել զտաճարն. այլ խափանեցաւ գործն ՚ի շրջակայ ազգացն զամս ԽԲ. մինչև ցերկրորդ ամն Դարեհի, առ որով լցաւ եւթանասուն ամ ՚ի հրկիզմանէ տաճարին: Այս Դարեհ յերկրորդում ամին իւրոյ արձակեաց զԶորաբաբել, և զՅեսու Յովսեփէկեանց զմեծ քահանայ հանդերձ չորիւք բիւրուք և աւելի յերուսաղէմ. որք և հրամանաւն Դարեհի սկսեալ ՚ի շէնս տաճարին, և յամս չորս կատարեցին: Իսկ յե՛տ այսորիկ գրէ՝ թէ զկնի յիսուն և հինգ ամաց արձակեցաւ Եզրս այս ՚ի Բաբելոնէ յերուսաղէմ հրամանաւ երկայնաձեռն Արտաշէսի մեծաւ պատուով, ուսուցանել Յրէից զօրէնս Աստուծոյ: Որոյ եկեալ՝ սրբեաց զժողովուրդն և զքահանայսն, ՚ի բաց արձակելով ՚ի նոցանէ զայլազգի կանայսն հանդերձ որդւովք իւրեանց: Եւ ժողովուրդն ուրախ լինէր նովաւ յօրէնս Աստուծոյ:

Գլուխք Առաջին գրոցն Եզրի

ա. Սկսանի յութուտասն ամէն Յովսիայ յորում արար զգատիկն, և զա՛յլն ևս համաձայն գրոց թագաւորութեանցն և մնացորդաց պատմէ ըստ կարգի՝ մինչև յառաջին ամն Կիւրոսի:

բ. Հրամայեաց Կիւրոս ելանել հրէից յերուսաղէմ և շինել զտաճարն Աստուծոյ, տուեալ անդրէն ցիրէայս զսպաս տաճարին՝ զառեալն ՚ի Նաբուքոդոնոսորայ:

գ. Գրեցին շրջաբնակ ազգքն առ Արտաշէս թագաւոր Պարսից խափանել զշինուած տաճարին, զոր և արար իսկ. բայց տե՛ս՝ զի թուի թէ առ Կիւրոսի խափանեցաւ գործն:

դ. Յերկրորդ ամին Դարեհի իմաստուն երևեալ Զորաբաբել,

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Գիրք Երկրորդ Մնացորդաց: Եւ ոմանք. Կատարումն Երկրորդ Մնացորդաց:

արձակեցաւ պարզօք յերուսաղէն, և թղթովք 'ի Դարեհէ զի օգնեսցեն 'ի շինուած տաճարին յերուսաղէն:

ե. Անուանք ելելոցն 'ի Բաբելոնէ, և թիւ նոցա հանդերձ ամենայն աղխիւն:

զ. Յամսեանն եւթներորդի կանգնեցին սեղան և տօնեցին զտաղաւարահարսն. և հեթանօսք ևս օգնէին 'ի շէնն:

է. Յերկրորդ ամի ելիցն սկսան շինել զտունն Աստուծոյ. առ որս եկեալ ազգքն որ առ Կիւրոսիւ և յետ նորա՝ խափանէին, զի այժմ կցորդեսցին 'ի գործն՝ որոց ոչ կալան յանձին:

ը. Գրեցին ապա իշխանք գաւառացն առ Դարեհ թէ զի՞նչ կամիցի վասն տաճարին. որոց գրեաց սաստիկ զի փութով օգնեսցեն գործոյն, որ և եղև իսկ:

թ. Կատարեցաւ տաճարն յամս չորս, յամսեանն Ադար, յորում և արարին զնաւակատիսն:

ժ. Արտաշէս երկայնաձեռն արձակէ զԵզր, որ յեղիազարէ Ահարոնեանց, և զմնացեալ հրէայսն ընդ նմա յերուսաղէն. համարձակեալ նմա զի ուսուցէ զօրէնսն, և առնուցու հարկս 'ի պատարագս Տեառն 'ի տաճարին:

ժա. Անուանք ելելոցն ընդ Եզրայ յերուսաղէն. և կշիռ ոսկւոյն և սպասուց տանն Աստուծոյ զոր պարզեացն Արտաշէս:

ժբ. Հրամանաւ Եզրի արձակեցին 'ի բաց որք ունէին կանայս այլազգիս, և զորդիս նոցա: Եւ ուսուցանէր Եզր զօրէնսն Աստուծոյ:

ԳԻՐՔ ԵԶՐԻ ԱՌԱՋԻՆ

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ արար Յովսիա թագաւոր՝ զգատիկն Տեառն յերուսաղէն. և եզեն զգատիկն Տեառն 'ի չորեքտասան ամսոյն առաջնոյ*։ ²Եւ կարգեա՛ց կացոյց զքահանայսն 'ի տաճարին Տեառն, ըստ ամենայն օրաթուին, զգեցեալ զպատմութեան քահանայութեան*։ ³Եւ ասաց զղևտացիսն սպասաւորս. Սրբեցէ՛ք զանձինս ձեր, և պատրաստեցէ՛ք

* Ոմանք. 'ի տասն և 'ի չորս ամսոյն:

* Ոսկան. Եւ կարգեալ կացոյց:

ըստ սրբութեան տապանակին կտակարանացն Տեառն, ՚ի տաճարին զոր շինեաց Սողոմոն թագաւոր որդի Դաւթի: ⁴Եւ մի՛ գտցի ՚ի ձեզ աղտեղութիւն և պղծութիւն. և արդ՝ պաշտեցէ՛ք զպաշտօն տեառն Աստուծոյ ձերոյ, և ժողովեցէ՛ք և պատրաստեցէ՛ք զամենայն ազգն Իսրայէլի, և կարգեցէ՛ք զնոսա ըստ կարգի հայրապետացն՝ և ցեղիցն իւրեանց. ⁵որպէս կարգեաց և գրեաց Դաւիթ թագաւոր Իսրայէլի, և որդի նորա մե՛ծ Սողոմոն. և կացցեն ՚ի տաճարին ղևտացիքն ըստ կարգի իւրաքանչիւր հարց իւրեանց, առաջի եղբարց իւրեանց որդւոցն Իսրայէլի: ⁶Եւ ըստ առաջին կարգացն զենէ՛ք զգատիկն, և պատրաստեցէ՛ք զգոհսն, և արարէ՛ք զգատիկն ըստ հրամանի Տեառն որպէս և հրամայեաց ՚ի ձեռն Մովսիսի: ⁷Եւ շնորհեալ պարգևեաց Յովսիա ժողովրդեանն, գառնս և ուլս՝ երեսուն հազար. որթս՝ երեք հազար*: ⁸Չա՛յս ամենայն տուեալ ըստ հրամանի թագաւորին ժողովրդեանն, և քահանայիցն և ղևտացւոց: Եւ դարձեալ ետ Քեղկիայ և Չաքարիայ՝ քահանայապետիցն, և առաջնորդաց ժողովրդեանն, և քահանայիցն ոչխարս երկու հազար և վեց հարիւր*: ⁹Եւ Յեքոնիաս, և Սամէաս, և Նաթանայէլ եղբայր, և Ռաբիաս, և Ոզիէլ, և Յովրամ հազարապետք, ետուն ղևտացւոցն վասն զատկին ոչխարս՝ հինգ հազար, և որթս հինգ հարիւր: ¹⁰Եւ առեալ զայս ամենայն քահանայիցն, մեծապէս և ամենայն վայելչութեամբ զարմանազան պատրաստեցին զգատիկն բաղարջակերաց. ¹¹ըստ տոհմս իւրեանց, և ըստ կարգաց դասուց հարցն իւրեանց. յօրինեալ կացին քահանայքն առաջի ժողովրդեանն, մատուցանել Տեառն զգատիկն ըստ գրեցելոյն յօրէնսն Մովսիսի*: ¹²Եւ ա՛յսպէս ընդ առաւօտսն խորովեալ հրով պատրաստեցին զգատիկն Տեառն. և զա՛յլ հումն հանդերձ անուշութեամբ եփեցին ՚ի կաթսայս և ՚ի սանս, ¹³և մատուցին յերեսաց ժողովրդեանն: Եւ զիտո այսորիկ քահանայապետքն պատրաստեցին զինքեանս. և զեղբարսն իւրեանց զորդիսն Ահարոնի. ¹⁴քանզի քահանայքն մատուցանէին զճարպ հրոյն կիզման. և ղևտացիքն պատրաստեցին զինքեանս և զեղբարս իւրեանց զքահանայս՝ զորդիս Ահարոնի: ¹⁵Եւ որդիքն Ասափայ՝ երգիչք սաղմոսաց՝ պատրաստեցին զինքեանս, որպէս և էր կարգեալ Դաւթայ թագաւորի. զԱսափ, և զՉաքարիա, և զԵղ՛դիմոն: ¹⁶Եւ դռնապանքն իւրաքանչիւր դրանցն էին զգուշացեալք ըստ իւրաքանչիւր կարգի աւուրն. քանզի էին և նոքա որդիք Ղևեայ, և պատրաստեցին զինքեանս: ¹⁷Եւ ամենեքեան միաբան կատարեցին

* Ունանք. Եւ որթս երեք հազար:

* Յօրինակին թուագրով. Ոչխարս ՍՈ:

* Ունանք. Ըստ գրեցելոցն. կամ՝ գրելոյն յօրէնսն:

զգոհն Տեառն յաւուր յայնմիկ. ¹⁸և մատուցին զգատիկն Տեառն 'ի վերայ սեղանոյն ըստ հրամանի թագաւորին Յովսիայ: ¹⁹Եւ արարին որդիքն Իսրայէլի որք գտան 'ի ժամանակի յայնմիկ զգատիկն Տեառն, և զտօն բաղարջակերացն աւուրս եւթն: ²⁰Եւ ո՛չ եղև երբէք՝ այնպիսի գատիկ 'ի մէջ Իսրայէլի. քանզի ո՛չ ոք արար գատիկ 'ի ժամանակացն Սամուելի մարգարէի* . ²¹և ո՛չ ամենայն թագաւորքն Իսրայէլի արարին զգատիկս ա՛յսպէս, որպէս արար Յովսիա թագաւոր. և քահանայքն, և ղևտացիքն, և հրէայքն, և ամենայն Իսրայէլ որ բնակեալ էին 'ի ժամանակին յայնմիկ յԵրուսաղէմ* . ²²յուրթասաներորդի ամի թագաւորութեանն Յովսիայ արա՛ր զգատիկն զայն* : ²³Եւ էին ուղի՛ղ գործք Յովսիայ առաջի տեառն Աստուծոյ իւրոյ. և ծառայէր Տեառն ամենայն սրտիւ և մտօք իւրովք. ²⁴և այլ թագաւորք որ եղեն յառաջ քան զնա, վասն որոյ գրեալ իսկ է. Որք մեղան և անօրինեցան յամենայն ազգս. և տրտմեցուցին զՏէր, և կացին ընդդէմ բանի նորա 'ի մէջ Իսրայէլի* : ²⁵Եւ յետ այսր ամենայնի առաքինութեանց Յովսիայ՝ ե՛կն փարաւոն թագաւոր Եգիպտացոց պատերազմել 'ի Կարքամուս, 'ի կողմանս Եփրատայ. և ե՛լ պատերազմել ընդդէմ նորա Յովսիա: ²⁶Եւ յղեաց առ նա թագաւորն Եգիպտացոց՝ և ասէ. Ձի՞՞ կայ՝ ի՛նչ և քո թագաւորդ Յրէաստանի. ²⁷ո՛չ եթէ առ քեզ ինչ առաքեաց զիս տէր Աստուած. քանզի 'ի կողմանս Եփրատայ երթամ պատերազմել, և այժմ Տէր ընդ ի՛նչ է, և մի՛ խափաներ զիս. զի ստիպէ զիս Տէր երթալ պատերազմել 'ի կողմանս Եփրատայ, 'ի բա՛ց կաց յինէն, և մի՛ ընդդիմանար Տեառն* : ²⁸Եւ ո՛չ դարձոյց Յովսիա զկառս իւր, այլ 'ի պատերազմել ընդ նմա ձեռնարկեաց. և ո՛չ լուաւ բանիցն Երեմիայի մարգարէի, զոր խօսէր ընդ նմա՝ 'ի բերանոյ Տեառն. ²⁹այլ խմբեաց տա՛լ պատերազմ ընդ փարաւոնի՝ 'ի դաշտին Եդդաւուս. և իջին իշխանքն առ թագաւորն Յովսիայ* . ³⁰և ասէ Յովսիա թագաւորն ցծառայս իւր. Հանէ՛ք զիս 'ի բաց 'ի պատերազմէս, քանզի տկարացայ յոյժ: Եւ վաղվաղակի հանին զնա՝ 'ի բա՛ց ծառայքն նորա՝ 'ի պատերազմէն: ³¹Եւ ել յերկրորդ՝ 'ի կառս իւր. և հասեալ յԵրուսաղէմ վախճանեցաւ, և թաղեցաւ ընդ հարսն իւր. ³²և ամենայն ժողովուրդն ողբացին, և սո՛ւգ առին 'ի վերայ Յովսիայ: Եւ եհան Երեմիա մարգարէ ո՛ղբս 'ի վերայ Յովսիայ. և նստեալ ընդ կանայս ողբան զողբսն Երեմիայի մինչև ցայսօր. և ետուն հրաման հանապազ յազգս իւրեանց ողբա՛լ

* Ոմանք. Այսպէս գատիկ 'ի մէջ:

* Ոմանք. Արարին զգատիկն այնպէս, որպէս:

* Ոմանք. Յուր և 'ի տասներորդի:

* Այլք. Վասն որոց գրեալ:

* Օրինակ մի. Երթամ պատրաստել, և այժմ:

* Ոմանք. Տալ պատերազմ ընդ նմա՝ 'ի դա՛: Ոսկան. 'ի դաշտին Եդմակեդովայ Դաւուս:

'ի մէջ Իսրայէլի: ³³Այս ամենայն գրեալ է 'ի գիրս պատմութեանց
 թագաւորութեանց Իսրայէլի. զգործն զոր գործեաց Յովսիա, և
 զառաքինութիւնսն զոր առաքինացաւ. և վասն մե՛ծ արդարութեան
 նորա և փառաց, և զհմաստութիւն զգուշութեան իւրոյ զոր ունէր առ
 օրէնսն Տեառն. և զայս ամենայն մինչև ցայժմ պատմեն գիրք
 թագաւորութեանն Իսրայէլի և Յուդայ*: ³⁴Եւ առեալ
 թագաւորեցուցին յազգէ նորա զՅեքոնիա որդի Յովսիայ. և
 թագաւորեաց Յեքոնիա փոխանակ իւր իւրոյ Յովսիայ. լեալ ամաց
 քսան և երից. ³⁵և թագաւորեաց Յրէաստանի և Երուսաղէմի ամիսս
 երիս: Եւ արգել թագաւորն Եգիպտացոց՝ զի մի՛ ոք թագաւորեսցէ
 յԵրուսաղէմ*. ³⁶և արար ծախ նոցա հարիւր տաղանտ արծաթոյ, և
 տաղանտ մի ոսկոյ: ³⁷Եւ կացոյց նոցա թագաւորն Եգիպտացոց՝
 թագաւոր զՅովակիմ զեղբայր Յեքոնիայ. և թագաւորեաց Յովակիմ
 Յրէաստանի և Երուսաղէմի: ³⁸Եւ կապեաց Յովակիմ զմեծամեծս և
 զիշխանս տանն Իսրայէլի. և Ջարա զեղբայր իւր եհան և ած առ իւր
 յերկրէն Եգիպտացոց: ³⁹Եւ էր ամաց քսան և հնգից Յովակիմ,
 յորժամ թագաւորեաց 'ի վերայ Յրէաստանի և Երուսաղէմի. և արար
 չա՛ր առաջի Տեառն: ⁴⁰Յաւուրս նորա ել Նաբուքոդոնոսոր արքայ
 Բաբելացոց, և կապեաց զնա պղնձի կապանօք և տարաւ զնա 'ի
 Բաբելոն. ⁴¹և 'ի սպասուէ տանն Տեառն ա՛ռ Նաբուքոդոնոսոր, և
 տարաւ և եղ՝ 'ի պահեստի 'ի տան կռոց իւրոց 'ի Բաբելոն: ⁴²Չայս
 ամենայն վասն նորա՝ և վասն պղծութեանց նորա և
 անօրէնութեանց՝ գրեալ է 'ի գիրս ժամանակաց թագաւորացն*: ⁴³Եւ
 թագաւորեաց փոխանակ նորա Յովակիմ որդի նորա, որ էր ամաց
 ութնտասնից. ⁴⁴և թագաւորեաց ամիսս երիս, և աւուրս տասն
 յԵրուսաղէմ. և արար չա՛ր առաջի Տեառն*: ⁴⁵Եւ զհետ ամի միոյ՝
 առաքեաց Նաբուքոդոնոսոր, և տարաւ զնա 'ի Բաբելոն հանդերձ
 զանձի՛ւ տանն Տեառն: ⁴⁶Եւ կացոյց զՍեդեկիա թագաւոր 'ի վերայ
 Յրէաստանի և Երուսաղէմի. և էր Սեդեկիա ամաց քսան և միոյ, և
 թագաւորեաց ամս մետասան: ⁴⁷Եւ արար չա՛ր առաջի Տեառն, և ո՛չ
 դարձաւ 'ի չարեաց իւրոց՝ և ոչ լուաւ բանից Երեմիայի մարգարէի
 զոր խօսեցաւ ընդ նմա 'ի բերանոյ Տեառն. ⁴⁸և զերդունն զոր
 երդուաւ Նաբուքոդոնոսոր՝ արքայի անուամբ Տեառն, ո՛չ եկաց
 յերդմանն. այլ ստեաց և հեռացաւ 'ի Նաբուքոդոնոսորայ. և
 խստացոյց զպարանոց և զսիրտ իւր յօրինաց տեառն Աստուծոյ

* *Ոմանք.* Պատմութեանց թագաւորաց Իսրայէլի զգործսն զոր... և զհմաստութիւն
 զգուշաւորութեան իւրոյ:

* *Ոմանք.* Եւ Երուսաղէմի ամս երիս:

* *Ոսկան.* Այս ամենայն վասն նորա և վասն:

* *Յօրինակին պակասէր.* Աւուրս տասն յԵրուսաղէմ:

Իսրայէլի*։ ⁴⁹Եւ իշխանք ժողովրդեանն և քահանայք բազում անպարշտութիւնս արարին, և անօրինեցան, և բազմացուցին զպղծութիւնս իւրեանց քան զամենայն հեթանոսս. և պղծեցին զտաճարն սրբութեան Տեառն յերուսաղէմ։ ⁵⁰Եւ առաքեաց Աստուած հարցն նոցա զհրեշտակս և զմարգարէս իւր առ նոսա զի դարձցին վասն զի խնայէր 'ի նոսա, և 'ի տաճարն սրբութեան իւրոյ։ ⁵¹Եւ արհամարհեցին զհրեշտակս նորա. և յաւուր յորում խօսէր ընդ նոսա Տէր, կատակէին և ծաղր առնէին զմարգարէս նորա։ ⁵²Եւ ցասեալ Տէր 'ի վերայ ազգի նոցա. և վասն անպարշտութեան նոցա ած 'ի վերայ նոցա զթագաւորսն Քաղդեացւոց։ ⁵³Եւ նոքա սպանին զերիտասարդս նոցա սրով, և հեղին զարիւնս նոցա շուրջ զսրբութեան տաճարաւն, և ո՛չ խնայեցին 'ի մանկունս և 'ի կուսանս, 'ի ծերս և յերիտասարդս նոցա։ ⁵⁴Այլ զայս ամենայն ետ 'ի ձեռս նոցա. և զամենայն սպաս տանն Տեառն զմեծ և զփոքր, և զկահ և զսպաս տապանակին Տեառն, և զգանձս թագաւորին Իսրայէլի. զամենայն առեալ տարան 'ի Բաբելոն։ ⁵⁵Եւ հրկէ՛զ արարին զտաճարն Տեառն, և քակեալ քանդեցին զպարիսպն Երուսաղէմի. և զաշտարակս նորա հրկիզեցին հրով։ ⁵⁶Եւ եղև վախճան ամենայն փառաց նորա. և զմնացեալսն վարեալ առաջի սրով՝ գերեցին 'ի Բաբելոն*։ ⁵⁷Եւ եղեն 'ի ծառայութիւն նոցա և որդւոց նոցա մինչև 'ի թագաւորս պարսից, 'ի կատարել բանին Տեառն զոր խօսեցաւ 'ի բերան Երեմիայի մարգարէի։ ⁵⁸Մինչև հաճեսցի Տէր ընդ երկիրն դատարկացեալ. շաբաթացոյց զնա, և զամենայն ժամանակս զոր եղև անապատ համարեցաւ նմա 'ի շաբաթումն. մինչև կատարեաց ամս եւթանասուն։

Բ Յառաջնում ամի թագաւորութեանն Կիւրոսի՝ եւթանասուն ամ գերութեանն կատարէր Յուդայ և Բենիամինի. և ընդ ամենայն թագաւորեաց Կիւրոս ամս երեսուն*։

2

Գլուխ Բ

¹Եւ 'ի թագաւորութեանն Կիւրոսի Պարսից՝ յամին առաջնում կատարեցաւ բանն Տեառն, զոր խօսեցաւ 'ի բերան Երեմիայի

* Ոսկան. Նաբուգոդոնոսորայ արքայի։

* Ոսկան. Վարեալ առաջի սրոյ։

* Ոսկան. Կատարեաց ամս եօթանասուն և եօթն։ Ոմանք. Յուդայ և Բենիամին։

մարգարէի*։ ²Եւ յարոյց Տէր զոգի Կիւրոսի թագաւորին Պարսից. և հրամայեաց Կիւրոս յամենայն թագաւորութեան իւրում քարոզ կարդալ և ասել*։ ³Այսպէս ասէ թագաւորն Պարսից Կիւրոս. Ինձ յայտնեաց թագաւորն ամենայն տիեզերաց տէր Աստուած Իսրայէլի, Տէր բարձրեալ. ⁴և նշանակեալ յայտնեաց ինձ, շինել նմա տաճար յերուսաղէմ Զրէաստանի։ ⁵Արդ՝ ո ոք և իցէ՛ և կայցէ առ նմա յազգացն հրէից. և տէր Աստուած եղիցի ընդ նմա. և ելեալ յերուսաղէմ ընդ հրէայսն շինեսցէ զտաճարն տեառն Աստուծոյ Իսրայէլի. այս է Տէր, որ բնակէն յերուսաղէմ*։ ⁶և ամենայն ոք որ յիւրաքանչիւր տեղիս բնակեալ են, օգնեսցեն նոցա ոսկւով և արծաթով. ⁷ձիովք և ամենայն խաշամբք, և ամենայն կազմածովք իւրեանց նուիրեսցեն ՚ի տաճարն տեառն Աստուծոյ յերուսաղէմ*։ ⁸Եւ կացցեն իշխանք ըստ ազգացն և հայրապետաց ազգին Յուդայ, և ցեղին Բենիամինի, և քահանայիցն և ղևտացւոց. և ամենեցուն զորոց զարթոյց Տէր զոգիս նոցա, ելանել և շինել զտունն Տեառն յերուսաղէմ և շուրջ զնոքօք. ⁹օգնեսցեն ամենեքեան արծաթով և ոսկւով, ձիովք և խաշամբք, ուխտեսցեն Տեառն որչափ և ՚ի միտս իւրեանց անկցի։ ¹⁰Եւ թագաւորն Կիւրոս՝ ե՛տ բերել զսուրբ սպասն Տեառն, զոր բերեալ էր Նաբուքոդոնոսորայ յերուսաղէմէ, և եղեալ էր ՚ի պահ ՚ի տան կռոցն իւրոց. ¹¹ե՛տ բերել Կիւրոս թագաւոր Պարսից, և հրամայեաց տալ զսպասն Միթրիդատայ գանձաւորի իւրոյ. ¹²և համարեալ Միթրիդատայ՝ ե՛տ ցՍամանասար հանդերձապետ Յուդայ։ ¹³Եւ այս էր թիւ սպասու կահուն Տեառն. սպաս ոսկեղէն հազար, և սպաս արծաթի էր հազար. խմբարդեայք արծաթիք քսանկինն, և ափսէք ոսկիք երեսուն, և արծաթիք երկու հազար չորեքհարիւր քսան. և այլ կահ հազար*։ ¹⁴Իսկ ամենայն կահն զոր բերին ոսկի և արծաթի, հինգ հազար չորեքհարիւր վաթսուներկին։ ¹⁵Եւ տուեալ զայս ամենայն ՚ի ձեռս Սամանասարայ՝ առեալ հանդերձ ամենայն գերութեամբ հանէին ՚ի Բաբելոնէ յերուսաղէմ։

Գ ¹⁶Ի ժամանակս թագաւորութեանն Արտաշէսի Պարսից արքայի, գրեցին առ նա որք բնակեալ էին շուրջ զԶրէաստանիւ և զերուսաղէմաւ. Բաաղսամոս, և Միթրիդատ, և Բեղ՛ղ՛իոս, և Զոաթինոս, և Բեղ՛տէթնոս, և Սամեղ՛իոս գրիչ. և այլ ևս բազումք ընդ նոսա, որք բնակեալք էին առ ծովեզերքն՝ Քանանացիք և Տիւրացիք, Ամոնացիք և Մովաբացիք, և Շամրտացիք, և այլք բազումք

* Ոմանք. Կիւրոսի Պարսից յառաջնումն, կա՛։

* Ոմանք. Յամենայն ՚ի թագաւորութեան իւրում քարոզել կարդալ։

* Ոմանք. Շինեսցեն զտաճարն Աստուծոյ Իսրայէլի։

* Ոմանք. Նուիրեսցին ՚ի տաճարն Աստուծոյ յերուսաղէմ։

* Ոմանք. Եւ սպաս արծաթեղէն հազար... և ափսիայք ոսկիք։ Այլք. Խբարդեայք ար՛։

ետեղակալք. գրեցին թուղթ՝ զայս օրինակ* . ¹⁷Թագաւոր Արտաշէս
 տէր մեր, ծառայք քո, Յռաթիմոս՝ որ երկրպագէ քեզ, և Սամեղ՝իոս
 գրիչ, և ամենայն խորհրդակիցք մեր, և դատաւորք կողմանց
 Ասորւոց և Քանանացւոց: ¹⁸Այժմ գիտուն լիցի քեզ տէր մեր և
 թագաւոր, վասն հրէիցն որ ելին ՚ի ձէնջ առ մեզ, երթեալ յերուսաղէմ
 ՚ի քաղաքն ապստամբող և դառնացող. և շինեն զնա և
 զհրապարակս նորա, և զպարիսպս նորա կամին ամրացուցանել. և
 զտաճարն նորա կամին բարձրաբերձ շինել* . ¹⁹արդ՝ եթէ զքաղաքս
 զայս շինեսցեն, և զպարիսպ նորա կատարեսցեն. հարկս՝ ումեք ո՛չ
 հարկանեն, այլ և թագաւորաց ևս ընդդէմ կան* . ²⁰քանզի
 պանծացեալ յուսան ՚ի տաճարն իւրեանց: Արդ՝ բարութք թուցաւ
 մեզ, եթէ փոյթ արասցես այսմ իրաց ²¹տէր մեր թագաւոր, և
 փորձեալ տեսցես զոր գրեցին հարք քո և նախնիք. ²²և գտցես գիր
 յիշատակարանաց. և գիտասցես թէ քաղաքս այս՝ ապստամբողաց է.
 և թագաւորք սորա՝ ²³և հրէայք ապստամբողք, և ստերդունք
 բնակիչք սորա յաւիտեան. վասն որոյ և քաղաքս այս՝ աւերեալ
 անապատ եղև: ²⁴Արդ՝ ցուցանենք տեառն մերոյ և թագաւորի, եթէ
 քաղաքս այս շինեսցի, և պարիսպ նորա կանգնեսցին՝ քո
 իշխանութիւն և ճանապարհ ՚ի կողմանս Ասորւոց և Քանանացւոց ո՛չ
 ևս լիցի*: ²⁵Յայնժամ գրեաց Արտաշէս թագաւոր, Յռաթեմու, և
 Բեղ՝տեթմու, և Սամեղ՝ի գրչի, և այլոց ամենեցուն որ բնակեալ են ՚ի
 կողմանս Սամարիայ, և Ասորւոց և Քանանացւոց որք գրեցին առ
 նա*: ²⁶Կարդացի ասէ զթուղթն ձեր զոր գրեցէք առ իս, և հրամայեցի
 տեսանել ՚ի մատեանս յիշատակարանաց. և գտաւ քաղաքդ այդ
 յիսկզբանցն և ՚ի յաւիտեանց՝ ընդդէմ ամենայն թագաւորաց. ²⁷և
 երկնային պատերազմօղք ընդ ամենայն կողմանս որ բնակեալ էին
 ՚ի դմա. և թագաւորք զօրաւորք և խիստք, որք բնակեալ էին
 յերուսաղէմ, տիրացեալք հարկս հանէին ՚ի կողմանցն Ասորւոց և
 Քանանացւոց*: ²⁸Արդ՝ այժմ հրամայեցի արգելո՛ւլ զարսդ զայդ ՚ի
 շինելոյ զքաղաքդ. և դուք փոյթ յանձին կալայք ²⁹զի մի՛ ևս
 առաւելեսցի չարութիւն դոցա՝ և ընդդիմացին, և աշխատեսցեն
 զթագաւորութիւնս մեր*: ³⁰Եւ յայնժամ կարդացեալ զգիր
 թագաւորին Արտաշիսի, Յռաթիմոս, և Սամեղ՝ գրիչ, և այլք բազումք

*Ի լուս՝ ՚ի վերայ Արտաշէսի. *նշանակի*. կամբիւս: *Ոմանք*. Եւ Բեղտեթմոս: *Ոսկան*. Բազումք
 տեղակալք:

* *Այլք*. Արդ այժմ գիտուն լիցի: *Ոմանք*. Երթալ յերուսաղէմ:

* *Ոմանք*. Եւ զպարիսպս նորա կատ:

* *Յօրինակին պակասէր*. Ասորւոց և Քանանացւոց ոչ:

* *Ոմանք*. Որ բնակեալ էին ՚ի կող:

* *Ոմանք*. Հարկս հարկանէին ՚ի կող:

* *Ոսկան*. (28) Զարսդ զայդոսիկ... յանձին կալարուք... (29) և աշխատեսցուցեն զթագա՛:

ընդ նոսա, ելի՛ն փութով յերուսաղէմ երիվարօք և զօրօք հանդերձ,
³¹և արգելին զհրէայսն ՚ի շինելոյ: Եւ խափանեցաւ շինուած
տաճարին Տեառն յերուսաղէմ մինչև յերկրորդ ամ թագաւորութեան
Դարեհի Պարսից արքայի:

3

Գլուխ Գ

¹Եւ թագաւորն Դարեհ արար խրախութիւն մեծ. և ժողովեաց
զամենայն իշխանս իւր, և զընտոծիմս իւր, և զամենայն մեծամեծս
Մարաց, Պարսից, Քաղդեացոց*.² և զամենայն նախարարս և
զզօրագլուխս, և զետեղակալս ընդ նոսա ՚ի կողմանցն Յնդկաց,
մինչև ՚ի կողմանս Եթովպացոց. և էին նախարարք հարիւր
քսաննեւթն*. ³ և կերան և արբին, և յագեցան, և ուրախ եղեն: Եւ
յորժամ վախճան եղև՝ Դարեհ թագաւոր եմուտ ՚ի սենեակ իւր. և
ելեալ ՚ի գահոյս իւր ՚ի քուն եղև: ⁴ Յայնժամ երեք պատանիք որ էին
սենեկապանք նորա. և մինչդեռ ՚ի քուն կայր թագաւորն, նոքա ՚ի
ներքս ՚ի սենեկի սպան կալեալ և պահ ունէին նմա: Խօսել սկսան
ընդ միմեանս և ասեն. ⁵ Եկայք՝ իւրաքանչիւր ասասցուք բան մի, և
որ ասասցէ իմաստուն և առաւել զօրաւոր քան զընկերս իւր՝ տացէ՛
նմա Դարեհ թագաւոր պարգէւս մեծամեծս. և մեծ և անուանի
երևեսցի քան զամենեսեան*. ⁶ և ծիրանիս զգեցուցէ նմա, և ոսկի
սպասուք արբցէ և կերիցէ, և ՚ի վերայ ոսկեղինաց նստցի, և ննջեսցէ.
և վարեսցէ երիվարս ոսկեսանձս. և խոյր բեհեզեայ թագ կապեսցէ
նմա, և մանեակ ոսկի ՚ի պարանոցի նորա. ⁷ և երկրորդ յաթոռն
Դարեհի նստցի վասն իմաստութեան իւրոյ, և ազգական Դարեհի
անուանեսցի*: ⁸ Եւ յայնժամ իւրաքանչիւր գրեալ զիւր բան, կնքեցին
և եղին ընդ սնարս Դարեհի արքայի*. ⁹ և ասեն. Յորժամ յարիցէ՛
տացուք ցնա զգիրդ. և ընտրեսցէ թագաւորն, և երեք մեծամեծք
իշխանք Պարսից. և որոյ գտցի բան իմաստնագոյն՝ նմա՛ տացէ
զյաղթողական պարգևն*: ¹⁰ Եւ գրեաց առաջինն, ասէ. Յաղթօղ և
զօրաւոր է քան զամենայն գինի: ¹¹ Եւ գրեաց երկրորդն, և ասէ.

* *Ի լուս՝ ՚ի վերայ խրախութիւն՝ նշանակի. խաղաղութիւն: Այլք. Պարսից և Քաղդ՝:*

* *Ոմանք. Եւ զտեղակալս:*

* *Ոսկան. Իւրաքանչիւրոք:*

* *Ոսկան. Եւ յերկրորդ աթոռն:*

* *Ոսկան. Իւրաքանչիւրոք: Ոմանք. Եւ եղին առ սնարս Դա՛:*

* *Այլք. Նմա տացեն զյաղթողա՛:*

Յաղթող և զօրաւոր քան զամենայն թագաւոր*։ ¹²Եւ երրորդն գրեաց, և ասէ. Յաղթող և զօրաւոր են քան զամենայն կանայք, և քան զամենայն յաղթ ճշմարտութիւն։ ¹³Եւ յորժամ զարթեալ թագաւորն, առեալ զգիրն զոր ետուն ցնա, կարդաց. ¹⁴և առաքեալ կոչեաց զամենայն մեծամեծս Պարսից և Մարաց, և զնախարարս, և զսպարապետս, և զտեղակալս, և զհշխանս։ ¹⁵Եւ նստեալ ՚ի տեղոց յայգորիլի՛. և կարդացին զգիրն առաջի ամենեցուն*։ ¹⁶Եւ ասէ թագաւորն. Կոչեցէ՛ք այսր զպատանիսն, և նոքա մեկնեցեն զբանս իւրեանց։ Եւ կոչեալ մտին առաջի. ¹⁷և ասեն ցնոսա ամենեքեան. Պատմեցէ՛ք մեզ զգրեալսդ։ Եւ սկսաւ ասել առաջինն, որ ասաց վասն զօրութեան գինւոյ. ¹⁸և ասէ այսպէս. Ո՛ւրբ. զիա՞րդ ո՛չ է զօրաւոր գինի. զի ամենայն մարդիկ որ ընպէն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն. ¹⁹և զթագաւորաց և զտառապելոց՝ մի միտս առնէ. նոյնպէս զտեառն և զժառայի, զմեծատանց և զաղքատաց*. ²⁰և զամենեցուն միտս դարձուցանէ, և շրջէ յուրախութիւն. և ո՛չ երբէք յիշեն զտրտմութիւն և զախտս ինչ։ ²¹Քանզի զամենեցուն սիրտ՝ լնո՛ւ զուարթութեամբ և մեծութեամբ. ²²և ո՛չ յիշէ զթագաւորս կամ զհշխանս. և տայ խօսել զմեծամեծս. և յորժամ ընպէ, ո՛չ յիշէ զսիրելիս և զեղբարս, և զթշնամիս. և բազում անգամ հանեալ սուր. ²³և յորժամ թափի գինին՝ ո՛չ յիշէ զինչ գործեաց։ ²⁴Ո՛վ արք՝ զիա՞րդ ոչ է զօրաւոր գինի, որ զայս ամենայն բռնադատէ գործել։ Եւ ասացեալ զայս ամենայն լռեաց։

4

Գլուխ Դ

¹Եւ սկսաւ խօսել երկրորդն, որ ասաց վասն զօրութեան թագաւորի. ²Ո՛ւրբ՝ ո՞չ ապաքէն զօրացեալ են մարդիկ որ ունին զծով և զցամաք, և զամենայն որ ինչ ՚ի նոսա*։ ³Իսկ թագաւոր զօրացեալ տիրէ՛ ամենայն երկրի և մարդկան. և զոր ինչ ասէ և հրամայէ՝ վաղվաղակի առնեն, եթէ հրամայէ պատերազմել՝ ընկեր ընդ ընկերի իւրում, ո՛չ իշխեն անցանել զբանիւ. ⁴և եթէ առաքէ զնոսա ՚ի պատերազմ ընդ թշնամիս՝ երթեալ վաղվաղակի գործեն

* Այլք. Եւ զօրաւոր է քան զամենայն։

* Այլք. ՚ի տեղոց յայգորելի։ Ոմանք. Եւ կարդացին զգիրսն։

* Ոմանք. Նոյնպէս և զտեառն։

* Այլք. Մարդիկ, և ունին զծով... և զամենայն ինչ որ է ՚ի նոսա։

մենքենայս, և լերինս, և պարիսպս, և աշտարակս. ⁵սպանանեն, և մեռանին. և զհրամանաւ թագաւորին ո՛չ կարեն անցանել. և եթէ յաղթեսցեն՝ զամենայն բարութիւնս բերեն թագաւորին: ⁶Եւ ո՛չ միայն զօրական պատերազմողք, այլև մշակք որ գործեն զերկիր. յորժամ սերմանեն և հնձեն, զարդիւնս իւրեանց բերեն թագաւորին. և հարկահանք դարձեալ բռնադատեալ զաշխարհ, հանեն հարկս թագաւորի: ⁷Եւ թագաւոր՝ միայն զօրացեալ իշխան է՝ ՚ի վերայ ամենայնի. և եթէ հրամայէ սպանանել՝ սպանանեն. և եթէ կեցուցանել՝ կեցուցանեն* . ⁸և եթէ շինել՝ շինեն. ⁹և եթէ քակել՝ քակեն. և եթէ տնկել՝ տնկեն. ¹⁰և ամենայն աշխարհ՝ թագաւորի՝ զօրութեան և հրամանի լսեն. և ինքն արքայ՝ զինչ և կամի՝ գործէ. և ինքն ՚ի հանգստեան կայ. բազմի, ուտէ, ըմպէ, և ՚ի քուն մտանէ. ¹¹և այլք ամենեքեան շո՛ւրջ պահեն զնա, և հրամանի նորա անսան. և ոչ իշխեն ըստ կամս իւրեանց երթալ ուրեք, և կամ գործել. և ո՛չ իշխեն անցանել զհրամանաւ թագաւորի: ¹²Արդ՝ ո՛ր արք, զիա՞րդ ո՛չ զօրաւոր է թագաւոր, որոյ բան հրամանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ ՚ի վերայ ամենեցունց: Եւ զայս ասացեալ՝ լռեաց: ¹³Եւ երրորդն՝ որ ասաց վասն զօրութեան կանանց, և վասն ճշմարտութեան. այս է Ջորաբաբէլ. սկսաւ խօսել՝ և ասէ* . ¹⁴Ո՛ր արք՝ եթէ մե՛ծ է թագաւոր՝ և կամ այլ բազում մարդիկ, և կամ զօրաւոր է զինի. ո՞ր է որ յաղթեալ ունի և տիրէ ՚ի վերայ ամենեցուն: ¹⁵Ո՞չ ապաքէն կանայք. քանզի կանայք են որ ծնանին զթագաւորս. և ամենայն մարդիկ որ տիրեն ծովու և ցամաքի* . ¹⁶ի նոցանէ՛ ծնան. և կանայք ծնան և սնուցին զմշակս որ տնկեն զայգիս՝ ուստի լինի՛ զինի* . ¹⁷և նոքա՛ են որ առնեն զհանդերձս արանց, և նոքօք զարդարին և փառաւորին մարդիկ. և ո՛չ է հնար առանց նոցա լինել մարդկան: ¹⁸Եւ եթէ ժողովեսցեն զոսկի և զարծաթ՝ և զամենայն բարութիւնս, և տեսեալ կին մի գեղեցիկ՝ ¹⁹դարձեալ ՚ի նա՝ և բերանաբաց եղեալ հային ընդ նա. և ամենայն կամօք իւրեանց սիրեն զնա առաւել քան զոսկի և քան զարծաթ՝ և քան զամենայն բարութիւնս. ²⁰և թողեալ զհայր՝ և զմայր իւր, որ ծնան և սնուցին զնա, և զաշխարհ իւր. երթայ զհետ կնոջ իւրոյ* . ²¹և այնպէս միացեալ ոգեխառնի ընդ նմա, մինչև ո՛չ յիշէ զհայր իւր և ո՛չ զմայր և ո՛չ զաշխարհ: ²²Եւ յայսմանէ արժան է ձեզ գիտել՝ թէ տիրեն ՚ի վերայ

* *Յօրինակին.* Եւ եթէ կեցուցանել՝ կեցուցանել:

* *Յօրինակի մերում որպէս և յայլ գրչագիրս ՚ի բազում տեղիս՝ անունս Ջորաբաբէլ, թերևս ՚ի տգիտութենէ գրչաց ՚ի ներքս մտեալ, գրեալ էր՝ Ջաւրաբաբէլ, որ յառաջիկայոյ ամենայն ուրեք միապէս եղաւ ըստ սովորականին:*

* *Ոմանք.* Որ ծնան զթագաւորս:

* *Ոսկան.* Եւ նոքա ծնան և սնուցին:

* *Ոմանք.* Եւ երթայր զհետ կնոջ:

ձեր կանայք ձեր. զի զամենայն ինչ՝ զոր գործէք և աշխատիք, բերէք
 և տայք ցկանայս ձեր: ²³Եւ առեալ առն զսուր իւր, գնայ՝ ՚ի
 ճանապարհ հեռի. և եթէ շահի ինչ, կամ աւագակէ և գողանայ, կամ
 ընդ ծով և ընդ գետս նաւէ. ²⁴և գագանաց պատահէ, և ընդ
 խաւարուտ գնայ. և յորժամ գողանայ և յափշտակէ, և ընդ ամենայն
 վիշտս անցանէ, գայ՝ բերէ զամենայն վաստակսն առ կին իւր.
²⁵Քանզի առաւել սիրէ մարդ զկին իւր՝ քան զհայր իւր և զմայր իւր:
²⁶Եւ բազունք յիմարեցան ՚ի մտաց իւրեանց. և վասն կանանց
 իւրեանց անկան՝ ՚ի ծառայութիւն. ²⁷և բազունք ՚ի կորուստ
 մատնեցան, և մեռան, և սպանին. և սխալեալ անկան ՚ի մեծամեծ
 մեղս վասն կանանց: ²⁸Եւ այժմ ո՛չ հաւատայք ինձ. ո՛չ մեծ
 թագաւորդ անձնիշխան է ինքն. և ամենայն ոք ՚ի մարդկանէ ո՛չ իշխե
 մերձեալ ՚ի դա: ²⁹Տեսանէի՜ ես զդուստր հարճի թագաւորի, զի
 նստէր ընդ աջմէ թագաւորիդ*. ³⁰և առեալ զթագն ՚ի գլխոյ դորա՝ դներ
 ՚ի գլուխ իւրում. և ածեալ ապտակ թագաւորիդ. ³¹և առ այս
 թագաւորդ ո՛չ ցասնոյր. այլ բացեալ զբերան իւր հայէր ընդդէմ
 նորա, և եթէ ծիծաղէր՝ ծիծաղէր ընդդէմ նորա. և եթէ տրտմէր՝
 թագաւորդ ողորէր, մինչև սթափեցուսցէ զնա*: ³²Արդ՝ ո՛ արք. զիա՞րդ
 ո՛չ են զօրաւոր կանայք՝ որ զայս ամենայն առնեն: ³³Եւ յայնժամ
 թագաւորն և մեծամեծք նորա սկսան հայել այր ընդ ընկեր իւր: Եւ
 սկսաւ խօսել Ջորաբաբէլ վասն ճշմարտութեան՝ և ասէ. ³³Ո՛ արք՝ ո՛չ
 ապաքէն զօրաւոր են կանայք, մեծ է երկիր, բարձր են երկինք, և
 երագընթաց է արեգակն. վասն զի ունի արշաւանս ընդ կամարածն
 խորանն երկնից. և դարձեալ վաղվաղակի սլացեալ հասանէ ՚ի
 տեղի իւր ՚ի միում աւուր: ³⁵Ո՛չ ապաքէն մեծ է այն՝ որ զայս ամենայն
 արար: Արդարն՝ ճշմարտութիւն մեծ և զօրաւոր է քան
 զամենեսեան*: ³⁶Ամենայն երկիր ապաւինի ՚ի ճշմարտութիւն, և
 երկինք օրհնեն զճշմարտութիւն. և ամենայն գործք շարժին և
 դողան առաջի նորա. և ո՛չ է ՚ի ճշմարտութեան անիրաւութիւն և ո՛չ
 մի: ³⁷Անիրաւ է գինի. անիրաւ է թագաւոր. անիրաւ են և կանայք.
 անիրաւ են և ամենայն որդիք մարդկան. անիրաւ են և ամենայն
 գործք նոցա. և ո՛չ գոյ ՚ի նոսա ճշմարտութիւն, և յանիրաւութեան
 իւրեանց կորնչին: ³⁸Իսկ ճշմարտութիւն կայ և մնայ, և զօրաւոր է
 յաւիտեան. և կենդանի է, և ունի իշխանութիւն նորա յաւիտեանս
 յաւիտենից*. ³⁹և ո՛չ գոյ ՚ի նմա ակնառութիւն, և ո՛չ երբէք փոփոխի,
 այլ իրաւունս առնէ. և մերժեալ է ՚ի նմանէ անիրաւութիւն և

* Ոսկան յաւելու. Տեսանէի ես զԱպեմէն զդուստր հարճի:

* Այլք. Ոչ ինչ ցասնոյր:

* Ոմանք. Մեծ է և զօրաւոր է:

* Այլք. Եւ զօրաւոր է յաւիտեանս: Ոսկան. Եւ ունի զիշխանութիւն յա՞:

չարութիւն. և ամենայն գործք ճշմարտութեան հաճոյ են ամենեցուն.
⁴⁰և ո՛չ գոյ ՚ի դատաստանի նորա անիրաւութիւն. քանզի
 ճշմարտութիւն է զօրութիւն թագաւորաց, և իշխանութիւն և
 մեծութիւն. և է օրհնեալ տէր Աստուած ճշմարտութեան: ⁴¹Եւ
 ասացեալ զայս՝ լռեաց ՚ի խօսելոյն: Եւ ամենայն ժողովն յայնժամ
 մեծածայն աղաղակեցին՝ և ասեն. Մե՛ծ է ճշմարտութիւն՝ և յաղթօղ և
 զօրաւոր*: ⁴²Յայնժամ թագաւորն ասէ ցնա. Խնդրեա՛ զինչ և կամիս.
 և տա՛ց ե՛ւս առաւել քան զգրեալսդ. վասն զի գտար իմաստուն քան
 զամենեսեան. և երկրորդ յաթոռ իմ նստջիր. և ազգական իմ
 անուանեսջիր: ⁴³Յայնժամ ասէ Ջորաբաբէլ ցթագաւորն. Յիշեա՛
 զուխտն զոր ուխտեցեր վասն շինուածոյն Երուսաղէմի. յաւուր
 յորում առեր դու զթագաւորութիւնդ քո. և ասացեր՝ ⁴⁴զամենայն կահ
 և սպաս Երուսաղէմի դարձուցանել անդրէն, զոր որոշեալ մեկնեաց
 Կիրոս, յորժամ եհար զԲաբելոն, և ուխտեաց նա դարձուցանել
 զսպասն Տեառն: ⁴⁵Նոյնպէս և դու թագաւոր՝ ուխտեցեր շինել
 զտաճարն Տեառն, զոր այրեցին Եդոմայեցիք յորժամ արարին
 անապատ զՅրէաստան Քաղդեացիքն: ⁴⁶Եւ այժմ աղաչե՛մ զքեզ տէր
 իմ և թագաւոր, և խնդրե՛մ ՚ի քէն. և զա՛յս մեծ պարգև շնորհեա՛ դու
 ինձ. և վասն այսորիկ աղաչե՛մ զքեզ, կատարեա՛ զուխտն զոր
 ուխտեցեր թագաւորին երկնաւորի. արա՛ ըստ այնմ՝ որ ե՛լ ՚ի
 բերանոյ քումնէ*: ⁴⁷Յայնժամ յարուցեալ Դարեհ թագաւոր և
 համբուրեաց զՋորաբաբէլ. և գրեաց նմա թուղթս առ ամենայն
 գաւառապետս, և տեղակալս, և զօրագլուխս, և առ նախարարս, զի
 յուղարկեսցեն զնա, և որք ընդ նմայն էին՝ ելանել և շինել
 զԵրուսաղէմ: ⁴⁸Եւ առ ամենայն տեղակալս կողմանցն Ասորոց և
 Փիւնիկեցոց, և որ են ՚ի կողմանս Լիբանանու. գրեա՛ց թուղթ՝ զի
 իջուցեն մա՛յր փայտ ՚ի Լիբանանէ յԵրուսաղէմ, և շինեսցեն
 հանդերձ Ջորաբաբելիւ զքաղաքն: ⁴⁹Եւ գրեցաւ առ ամենայն
 հրէայս որ ելեալ էին ՚ի թագաւորութեանն իւրում, և ազատեաց
 զնոսա ՚ի հարկաց. և ասէ ցամենայն զօրաւորս և նախարարս, և
 տեղակալս, և գաւառապետս. Մի՛ ոք վասն հարկաց մերձեցի ՚ի
 դրունս նոցա*: ⁵⁰Եւ զամենայն տեղիս զոր և ունին՝ անհա՛րկ և ազատ
 լիցի. և ամենայն Եդովմայեցիք տացեն ՚ի բա՛ց զգետոս և զտեղիս
 զոր ունին զհրէից*: ⁵¹Եւ ՚ի շինուած տաճարին տացեն յարքունուստ՝
 յամի քսան տաղանտ, մինչև շինեսցի տաճարն: ⁵²Եւ ՚ի սեղան
 ողջակիզացն տացեն զամենայն աւուրս, որպէս և գրեալ է յօրէնսն,

* *Ոմանք.* Եւ ամենայն ժողովուրդն յայնժամ... և յաղթող է և զօ՞:

* *Ոսկան.* Եւ վասն այնորիկ: *Այլք.* Արա ըստ այնմ որպէս և ել ՚ի բե՞:

* *Այլք.* Եւ գրեաց առ ամենայն հրէ՞... մերձեցի ՚ի դուրս նոցա:

* *Ոսկան.* Եւ ամենայն տեղի զոր և ու՞: *Ոմանք.* Ջոր ունէին զհրէից:

զելքներորդս. և զտասներորդս անխափան մատուցանել. և այլևս տաղանտս տասն՝ յամի* .⁵³ և ամենեքեան որ ելանեն յերուսաղէմ շինեսցեն զքաղաքն, և լիցին ազատք և առանց հարկաց. ինքեանք և ազգք իւրեանց, և ամենայն քահանայքն* :⁵⁴ Եւ հրամայեաց գրել և տալ զամենայն դարման. և զպատմուճան քահանայիցն որով կատարէին զպաշտօնն Տեառն.⁵⁵ և ղևտացւոցն գրեաց տալ ռոճիկս զաւուրս, մինչև կատարեսցի տաճարն Տեառն, և Երուսաղէմ շինեսցի* .⁵⁶ և ամենեցուն ոյք պահէին զքաղաքն՝ գրեաց տալ նոցա ժառանգութիւն երկրի՝ և ռոճիկս :⁵⁷ Եւ առաքեաց զամենայն կահ և զսպաս տաճարին, զոր որոշեաց Կիւրոս՝ ՚ի Բաբելոնէ. և զամենայն զոր ինչ ասաց Կիւրոս՝ Դարեհ զնոյն արար և կատարեաց. և ե՛տ տանել զամենայն սպասն Տեառն :⁵⁸ Եւ յորժամ ել արտաքս ՚ի թագաւորէն Ջորաբաբել, համբարձ զձեռս իւր յերկինս ընդ կողմն Երուսաղէմի. և օրհնեաց զՏէր թագաւոր երկնից,⁵⁹ և ասէ. ՚ի քէն է յաղթութիւն, և ՚ի քէն է իմաստութիւն. և քե՛զ վայել են փառք. և ես ծառայ քո եմ.⁶⁰ և օրհնեն զքեզ որ ետուր ինձ իմաստութիւն, և գոհանան զքէն Աստուած հարցն մերոց :⁶¹ Եւ ա՛ռ զթուղթսն և գնաց. և եկն եմո՛ւտ ՚ի Բաբելոն, և պատմեաց զամենայն եղբարց իւրոց :⁶² Եւ օրհնեցին զԱստուած հարցն իւրեանց. վասն զի շնորհեաց նոցա ընդարձակութիւն, և արար թողութիւն⁶³ ելանել և շինել զԵրուսաղէմ, և զտաճարն Տեառն՝ յորում անուանեցաւ անուն նորա ՚ի նմա. և արարին ուրախութիւն մեծ, հանդերձ ամենայն նուագարանօք զաւուրս եւթն :

5

Գլուխ Ե

¹Եւ զհետ այսր ամենայնի ընտրեցին զնահապետս և զառաջնորդս տանց, և ազգաց, և ցեղից, ելանել յերուսաղէմ հանդերձ կանամբք իւրեանց, և որդւովք և դստերօք և ծառայիւք, և ամենայն կահիւ և կազմածով իւրեանց :² Եւ Դարեհ առաքեաց ընդ նոսա ձիս հազար, մինչև երթեալ հասանիցեն յերուսաղէմ խաղաղութեամբ, և հանդերձ նուագարանօք՝ թմբկաւ և փողով,³ և պարու. և ամենայն ուրախութեամբ արձակեաց զնոսա յերուսաղէմ :

* *Ոմանք.* Եւ զտասանորդս անի* : *Ոսկան ՚ի լուս* . Տաղանդս տասն ամ յամի :

* *Ոմանք.* Որ ելանէին յերուսաղէմ :

* *Ոմանք.* Տալ ռոճիկս զօրաւորս մինչև :

Ե ⁴Եւ ա՛յս են անուանք արանց որ ելին յերուսաղէմ, ըստ անուանց հարցն իւրեանց, ըստ ցեղս տոհմիցն իւրեանց: ⁵Ի քահանայիցն էին. որդիք Փենեէսի որդւոյ Ահարոնի, Յեսու Յովսեփեկեանց, և Յովակիմ՝ որ և Ջորաբաբէլ Սաղաթիելեանց, յազգէն Դաւթայ՝ ՚ի տոհմէն փարեսեանց, ՚ի ցեղէն Յուդայ*.

⁶որ և խօսեցաւ առաջի Դարեհի արքայի զբանս իմաստութեան՝ յերկրորդ ամի թագաւորութեան նորա, յամսեանն Նիսան՝ յամսեանն առաջնում: ⁷Էին սոքա ամենեքեան հրէայք՝ որք արձակեալք ՚ի գերութենէն ելին յերուսաղէմ, որք էին գերեալք ՚ի Նաբուքոդոնոսորայ արքայէ Բաբելոնի. և ելեալք յերուսաղէմ* ⁸բնակեցին ՚ի Հրէաստանի յիւրաքանչիւր քաղաքս: Եւ էին առաջնորդք նոցա՝ Ջորաբաբէլ, և Յեսու Յովսեփեկեանց: Եւ էին յազգէ քահանայիցն՝ Նեեմի, Ջարեհ, Յռետէ, Անանիա, Սուրդքէ. Բեեղսար, Ասփարաս, Բորոէլ, Յռուիք, Բաանա*:

⁹Եւ ա՛յս են թիւք նահապետաց ազգացն, և իշխանք նոցա: Որդիք Փորոսայ՝ երկու հազար հարիւր եւթանասուն և երկու: Որդիք Սափատայ՝ չորեքհարիւր եւթանասուն և երկու*:

¹⁰Որդիք Արեսայ՝ եւթն հարիւր եւթանասուն և վեց: ¹¹Որդիք Նեփթաղեմի Մովաբացւոյ, և որդւոց Յեսուայ և Յովաբայ՝ երկու հազար ութ հարիւր և երկուտասան. ¹²որդիք Յեղ՛ամայ՝ երկու հազար երկերիւր յիսուն և չորս. որդիք Ջատոնայ՝ ինն հարիւր քառասուն և եւթն. որդիք Բորքեայ՝ եւթն հարիւր յիսուն. որդիք Բանեայ՝ վեց հարիւր քառասուն և ութ*.

¹³որդիք Բերեայ՝ վեցհարիւր քսան և երեք. որդիք Արգեայ՝ երեք հազար երեք հարիւր քսան և երկու. ¹⁴որդիք Ադոնիկամայ, վեց հարիւր եւթանասուն և եւթն. որդիք Բոսորեայ՝ երկու հազար վեց հարիւր և վեց. որդիք Ադիմեայ՝ չորեքհարիւր յիսուն և չորս. ¹⁵որդիք Ազերեզկիայ՝ իննսուն և երկու. որդիք Իլանայ և Ջետայ՝ վաթսուն և եւթն. որդիք Ազարայ, չորեքհարիւր երեսուն և երկու. ¹⁶որդիք Գերդաղայ՝ վեց հարիւր երեսուն և երկու. որդիք Անանիայ՝ հարիւր քսան. որդիք Արոմայ՝ երեք հարիւր քսան և երեք. ¹⁷որդիք Արսիփուրայ՝ հարիւր երկուտասան. որդիք Բետերայ՝ երեք հազար իննսուն և հինգ. որդիք Բեթղոմայ՝ հարիւր քսան և երեք: ¹⁸Ի Նատոբայ՝ յիսուն և եւթն. ՚ի Նատթայ՝ հարիւր յիսուն և ութ. ՚ի Բեթասմովթայ՝ քառասուն և երկու*.

¹⁹Ի Կարիաթարիմայ՝ քսան և հինգ. ՚ի Քափիրայ և Թերոնայ՝ եւթն հարիւր քառասուն և ութ. ՚ի

* *Յօրինակին.* Սաղաթիեանց:

* *Ոմանք.* Արքայէն Բաբելացւոց:

* *Ոմանք.* Բորսեղ. Յռուիք. Աբաանա:

* *Ոմանք.* Երկու հազարք և հարիւր եւթ*:

* *Ոմանք.* Քառասուն և հինգ. որդիք Բորքեայ:

* *Ոսկան.* Որդիք Նատոբայ: *Ոմանք.* Յիսուն և հինգ... ՚ի Բեթթասմովթայ:

Քաղիասեայ և Ամիդիայ՝ չորեքհարիւր քսան և երկու* .²⁰ի Կիմարայ և Կաբեսայ՝ վեց հարիւր քսան և մի . ՚ի Մակադովնայ՝ հարիւր քսան և երկու .²¹ի Բետողիամայ՝ յիսուն և երկու . որդիք Նեփիսայ՝ հարիւր յիսուն և վեց .²²որդիք Կաղամողայ և Ոնիայ՝ եւթն հարիւր քսան և հինգ .²³որդիք Յերեքոայ՝ երեք հարիւր քառասուն և հինգ . որդիք Սանասայ՝ երեք հազար երեք հարիւր երեսուն և մի : Եւ որդիք քահանայիցն .²⁴որդիք Յեդդուտայ՝ որդւոյ Յիսուայ՝ ինն հարիւր երեսուն և երկու . որդիք Եմմերայ՝ հազար յիսուն և երկու* .²⁵որդիք Փասորայ՝ հազար երկերիւր քառասուն և հինգ . որդիք Քարմեայ՝ հազար եւթն և տասն* :²⁶Իսկ ղևտացւոցն . որդի Յիսուայ՝ մի . և Կողողիայ և Բանեայ և Սուդիայ՝ եւթանասուն և չորս* :²⁷Եւ որք էին յազգէ քահանայիցն սաղմոսասացք , որդիք Ասափայ՝ հարիւր քառասուն և ութ :²⁸Եւ դմնապանք , որդիք Սաղոմեայ . որդիք Ատերայ . որդիք Տողմանեայ . որդիք Գակուբեայ . որդիք Ատերայ . որդիք Սաբեայ . ամենեքեան հարիւր երեսուն և ինն* :²⁹Եւ ծառայք քահանայիցն , որդիք Ասափայ . որդիք Տաբաղայ . որդիք Կերայ . որդիք Սուայ . որդիք Փաղեայ . որդիք Ղաբանեայ . որդիք Ադաբեայ .³⁰որդիք Ակուդեայ . որդիք Ուտայ . որդիք Կեդաբայ . որդիք Ադաբայ . որդիք Սուբայիմայ . որդիք Աստանայ . որդիք Կաթուայ . որդիք Գելլուրայ* .³¹որդիք Յաբուայ . որդիք Գեսանայ . որդիք Նորայ . որդիք Ասերայ . որդիք Գազերայ . որդիք Ոքոզիայ . որդիք Փանեայ . որդիք Ասասրայ . որդիք Բասեայ . որդիք Ասանայ . որդիք Մաանայ . որդիք Նափիսայ . որդիք Ակունայ . որդիք Աքիփայ . որդիք Ասուրայ . որդիք Փարակայ . որդիք Փասաղովթայ* .³²որդիք Գեդանայ . որդիք Կութայ . որդիք Քարեսայ . որդիք Բարքուսայ . որդիք Սեսարայ . որդիք Թունայի . որդիք Նասայ . որդիք Ատեփայ* :³³Որդիք ծառայիցն Սողոմոնի . որդիք Սափփիովթայ . որդիք Փարիդայ . որդիք Յեղ'այ . որդիք Ղոզոնայ . որդիք Սաելայ . որդիք Սափիայ .³⁴որդիք Ագիայ . որդիք Փաքարեայ . որդիք Սաբիայ . որդիք Սարովթայ . որդիք Մասսեայ . որդիք Գասայայ . որդիք Ադուսայ . որդիք Սուբասայ . որդիք Ափփերայ . որդիք Բարովդեայ . որդիք Սափատայ . որդիք Ալլոնեայ :³⁵Ամենայն ծառայք քահանայիցն , և ծառայք Սողոմոնի՝ երեք հարիւր

* Ոսկան . Որդիք Կարիաթարիմայ :

* Ոսկան . Որդիք Յեդդուտայ :

* Ոմանք . Քառասուն և եւթն :

* Ոմանք . Իսկ ղևտացւոցն որդիք , Յիսուայ :

* Ոմանք . Որդիք Տողմոնեայ :

* Ոմանք . Որդիք Ասափիայ... որդիք Կուտայ :

* Ոմանք . Որդիք Ոգիայ... որդիք Ասասրայ :

* Ոմանք . Որդիք Թունիայ :

եւթանասուն և երկու*։ ³⁶Սորա՛ էին որ ելեալ էին 'ի Բաբելոնէ. և
 Թերմաղէթ, և Թեղեսիաս իշխանք նոցա. և Քարաթաղան, և Աղղաար։
³⁷Եւ զայլս ևս ո՛չ կարաց թուել. ո՛չ զհարս. և ո՛չ զազգսն. որ էին
 յԻսրայէլէ. որդիք Դաղանայ. որդիք Տուբանայ. որդիք Նեկոդանայ.
 վեց հարիւր յիսուն և երկու*։ ³⁸Եւ 'ի քահանայիցն որք պաշտէին
 զքահանայութիւնն՝ ո՛չ գտան. որդիք Նորդիայ. որդիք Ակբոսեայ.
 որդիք Յոգուսայ, որք առին իւրեանց կանայս 'ի դստերացն
 Բերզեղ'եայ. ³⁹և կոչեցան ըստ անուան նոցա. և խնդրեալ զսոսա ո՛չ
 գտին 'ի գիրս ազգահամարին 'ի տեղի վիճակի նոցա. և իբրև ո՛չ
 գտին յազգահամարին, 'ի բա՛ց որոշեցին զնոսա, և ո՛չ մօտեցին 'ի
 քահանայութիւն*։ ⁴⁰Եւ ասացին ցնոսա Նէմիա, և Ատթարիա, մի՛
 մերձենալ 'ի սրբութիւնսն՝ մինչև յարիցէ քահանայապետ որոյ
 զգեցեալ իցէ զյայտնութիւնն և զճշմարտութիւնն*։ ⁴¹Եւ էին ամենայն
 Իսրայէլ յերկոտասանամենից և 'ի վեր, թո՛ղ զժառայս և
 զաղախնայս. բերք չորք, և երեք հազար և երեք հարիւր վաթսուն.
⁴²Ժառայք և աղախնայք նոցա՝ եւթն հազար երեք հարիւր երեսուն և
 հինգ։ Սաղմոսասացք և պաշտօնեայք՝ երկերիւր քառասուն և հինգ*։
⁴³Ուղտք՝ չորեքհարիւր երեսուն և հինգ. ձիք՝ եւթն հազար քառասուն
 և վեց. և ջորիք՝ երկերիւր քառասուն և հինգ. էջք՝ հինգ հազար հինգ
 հարիւր քսան և հինգ։ ⁴⁴Եւ իշխանք ըստ հայրապետացն իւրեանց
 եկեալ մտին 'ի տեղի տաճարին Աստուծոյ որ էր յԵրուսաղէմ. և
 եղեալ ուխտս զի կանգնեցի տաճարն 'ի տեղւոջ իւրում։ Եւ ըստ
 կարգի իւրեանց* ⁴⁵արկանէին 'ի գանձանակ տաճարին 'ի
 նպաստաւորութիւն գործոյն՝ ոսկի՝ հազար մնաս, և արծաթ՝ մնաս
 հինգ հազար, և պատմուճանս քահանայականս՝ հարիւր։ ⁴⁶Եւ
 բնակեցին քահանայքն և ղևտացիքն՝ և ժողովուրդքն յԵրուսաղէմ, և
 'ի տեղիս նորա. և սաղմոսասաց պաշտօնեայքն, և դռնապանքն. և
 ամենայն Իսրայէլ 'ի գեօղս և յազարակս իւրեանց։

Զ ⁴⁷Եւ յարուցեալ յեւթներորդ ամսեանն ամենայն որդիքն
 Իսրայէլի, յիւրաքանչիւր տեղեաց ժողովեցան միաբան յընդարձակ
 տեղին՝ 'ի դուռնն առաջին՝ 'ի կողմնն արևելից։ ⁴⁸Եւ կարգեալ Յեսու
 Յովսեդեկեանց և եղբարք նորա, և ամենայն բազմութիւնք
 քահանայիցն, և Ջորաբաբէլ Սաղաթիելեանց և եղբարք նորա՝
 պատրաստեցին սեղան տեառն Աստուծոյ Իսրայէլի, ⁴⁹մատուցանել
 'ի վերայ նորա ողջակէզս՝ որպէս և գրեալ է 'ի գիրս Մովսիսի առնն

* Ոսկան. Չորս հարիւր եօթանա՛։

* Ոմանք. Ոչ զհազարս և ոչ զազգս։

* Ոմանք. Ոչ գտին ըստ ազգահամարին 'ի գիրս... և իբրև ոչ գտան յազ՛։

* Ոմանք. Նէմի և Ատթարիա։

* Ոմանք. Եւ ծառայք և աղ՛... երեսուն և եւթն։

* Այլք. Եւ ըստ կարի իւրեանց ար՛։

Աստուծոյ: ⁵⁰Եւ ժողովեցան նոքա՝ և որոշեցան յայլո՛ց ՚ի հեթանոսաց երկրին. և ուղղեցին սեղան զոհարանաց ՚ի տեղւոջն իւրում. և թէպէտ էին նոցա թշնամիք հեթանոսք՝ սակայն լինէին նոցա օգնականք ամենայն ազգք երկրի, և բերէին նոքա ընծայս և պատարագս՝ ըստ ժամանակս ժամանակս, և ողջակէզս Տեառն ընդ առաւօտս և ընդ երեկոյս*:

⁵¹Եւ արարին զտօն տաղաւարահարացն, որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի, և մատուցանէին զոհս զօրհանապագ՝ որպէս և հրամայեալ էր*:

⁵²Եւ յետ այսորիկ մատուցանէին ողջակէզս ըստ ժամանակս ժամանակս, և զողջակէզս շաբաթուցն և զամսամտիցն. և զամենայն սուրբ տօնս կարգէին և կատարէին, ⁵³և որ ինչ միանգամ ուխտս ուխտէին Աստուծոյ. յամսամտէն եւթներորդ ամսոյն սկսան մատուցանել զողջակէզս տեառն Աստուծոյ. և տաճարն տեառն Աստուծոյ ո՛չ ևս էր շինեալ:

⁵⁴Եւ ետուն գինս գաղատոսաց և հիւսանց, և կերակուրս նոցա. ⁵⁵նո՛յնպէս և Սիդոնացւոց և Տիւրացւոց, զի բերցեն նոքա ՚ի Լիբանանէ մայր փայտ. և բերեալ նաւօք ՚ի նաւահանգիստն Յոպպէ, որպէս և հրամայեաց և կարգեաց նոցա յառաջագոյն Կիւրոս թագաւոր Պարսից:

Է ⁵⁶Եւ յամի երկրորդի ելիցն իւրեանց յերուսաղէմ, յամսեանն երկրորդում, սկսան շինել զտաճարն. Ջորաբաբէլ Սաղաթիելեանց, և Յեսու Յովսեփեկեանց՝ և եղբարք նոցա, և քահանայապետքն և ղևտացիք. և ամենայն որ ելեալ էին ՚ի գերութենէն յերուսաղէմ: ⁵⁷Եւ արկին հիմն տանն տեառն Աստուծոյ յամսամտի երկրորդ ամսեանն, յերկրորդի ամի ելիցն իւրեանց ՚ի Յրէաստան և յերուսաղէմ. ⁵⁸և կարգեցին զղևտացիսն ՚ի քսանամենից և ՚ի վեր ՚ի գործ սպասու Տեառն: Եւ կարգեցան Յեսու և որդիք և եղբարք նորա. և Կադմէէլ եղբայր նորա. և որդիք Յերուհեմա Բաբուն, և որդիք Յովիդայ եղ՛իաղեանց, հանդերձ եղբարքք իւրեանց. ամենայն ղևտացիքն միաբանեալ զործէին զգործ տանն Տեառն. և գաղատոսք շինօղք շինեցին զտունն Տեառն*:

⁵⁹Եւ կարգեցան քահանայապետքն զգեցեալ զպճղնաւորն՝ հանդերձ նուագարանօք և փողովք. և ղևտացիքն որդիք Ասափայ ունէին զծնծղայսն ⁶⁰հանդերձ երգովք սաղմոսէին և օրհնէին զԱստուած. որպէս և կարգեաց զերզս նուագարանաց Դաւիթ թագաւոր Իսրայէլի. ⁶¹և մեծածայն օրհնէին և զօհանային զտեառնէ Աստուծոյ. վասն զի բարերարութիւն Աստուծոյ և փառք յաւիտեան են յամենայն Իսրայէլի. ⁶²և մեծածայն ամենայն ժողովուրդքն հարկանէին զփողս իւրեանց, և զոչէին

* Ոմանք. ՚ի յայլոց հեթանոսաց... և բերէին նոցա ընծայս:

* Յօրինակին պակասէր. որպէս և գրեալ է յօրէնսն:

* Ոմանք. Եւ որդիք Յեհունայ Բաբուն:

ձայնիւ մեծաւ. և օրհնէին զՏէր, որ կանգնեաց զտաճար իւր սուրբ: ⁶³Եւ եկին մտին քահանայապետք ղևտացիք՝ որք էին գահերիցունք, և առաջնորդք ըստ նահապետութեան հարցն իւրեանց, որոց տեսեալ էր զտաճարն յառաջ քան զայս շինուած*: ⁶⁴Եւ մեծաւ ձայնիւ, և լալով, և բազում փողովք և ուրախութեամբ մեծաւ՝ ⁶⁵մինչև չլսէին բազմութիւնն զձայն փողոցն՝ ի ձայնէ լալոյ ժողովրդեանն. զի թէպէտ էին բազունք որ հարկանէին զփողսն, որ երթայր ձայնն և ՚ի հեռաւոր տեղիսն*: ⁶⁶Եւ լուան զձայնն թշնամիք ազգին Յուդայ՝ և Բենիամինի, և եկին ՚ի տեսանել և գիտել թէ զինչ իցէ ձայն փողոցն*. ⁶⁷և գիտացին՝ թէ ելեալքն ՚ի Բաբելոնէ ՚ի գերութենէն են որ շինեն զտաճարն տեառն Աստուծոյ Իսրայէլի. ⁶⁸և մատուցեալ առ Ջորաբաբէլ, և Յեսու Յովսեդեկեանց, և առ այլ իշխանս հայրապետացն, և ասեն ցնոսա. Շինեսցուք և մեք ընդ ձեզ զտաճարն Տեառն*. ⁶⁹և որպէս դուք՝ նոյնպէս և մեք լուիցուք տեառն Աստուծոյ ձերում. քանզի և մեք էաք ցանկացեալք ելից ձերոց, յօրէ յայնմանէ յորմէ գերեաց Սաղմանասար թագաւորն Ասորեստանեայց, և ած բնակեցոյց զմեզ աստ*: ⁷⁰Եւ ասեն ցնոսա Ջորաբաբէլ, և Յեսու Յովսեդեկեանց, և այլ իշխանք հայրապետացն Իսրայէլի. Ո՛չ է մեզ և ձեզ արժան շինել զտուն տեառն Աստուծոյ մերոյ. ⁷¹մեք միայն շինեսցուք զտաճարն տեառն Աստուծոյ, որպէս և հրամայեաց մեզ Կիւրոս թագաւոր Պարսից: ⁷²Քանզի այս ազգք էին որ հաղորդ էին ընդ թշնամիս Յուդայ, որք արգելուին ՚ի շինելոյ* ⁷³ի ժամանակս Կիւրոսի թագաւորի. զի հրամայեաց նա շինել զտաճարն ՚ի կենդանութեան իւրում. և յետ մահուան նորա արգելին անս երկոտասան՝ մինչև յերկրորդ ամն Դարեհի:

6

Գլուխ 2

Ը ¹Եւ յերկրորդ ամի Դարեհի արքայի մարգարեանային Անգէ և Ջաքարիա, և մարգարեանային ՚ի Յրէաստանի և յերուսաղէմ յանուն տեառն Աստուծոյ Իսրայէլի*: ²Յայնժամ Ջորաբաբէլ

* Ոմանք. Յառաջ քան զայս շինած:

* Ոմանք. Եւ ՚ի հեռաւոր ևս տեղիսն:

* Ոմանք. Եւ ՚ի գիտել թէ զինչ է ձայն փողոյն:

* Ոմանք. Եւ առ Յեսու Յովսեդէ:

* Յօրինակիւն. Եւ մեք լիցուք տեառն Աստուծոյ ձե՛ն:

* Ոմանք. Որ հաղորդէին ընդ թշնամա՛ն:

* Ոմանք. Եւ յերկրորդ ամն Դարեհի:

Սաղաթիւեանց, և Յեսու Յովսեփեկեանց. սկսան շինել զտաճարն Տեառն յերուսաղէն, հանդերձ մարգարէիւքն Տեառն որ օգնէին նոցա: ³Ի նմին ժամանակի եկին առ նոսա Սիսին, իշխանք կողմանցն Ասորոց և Փիւնիկեցոց, և Սաթրաբուզան, և այլ ընկերք նոցա* . ⁴և ասեն ցնոսա. Ո՞ր հրամանաւ շինէք զտաճարդ զայդ և զսրահս դորա. և կամ ո՞ր այնոքիկ իցեն որք կամիցին զդա շինել և կատարել* : ⁵Եւ եղև շնորհ այցելութեան ՚ի Տեառնէ ՚ի վերայ քահանայիցն և Յրէաստանեայցն. ⁶և ո՛չ արգելին զնոսա ՚ի շինելոյ, մինչև գրեցեն առ Դարեհ թագաւոր, և առցեն հրաման ՚ի նմանէ: **Թուղթն զոր գրեցին և առաքեցին առ Դարեհ արքայ* :** ⁷Սիսին իշխան Ասորոց և Փիւնիկեցոց, և Սաթրաբուզան, և որք ընդ նոսա՝ Ասորոց և Փիւնիկեցոց գործակալք և գլխաւորք՝ թագաւորի Դարեհի ողջոյն: ⁸Գիտուն լիցի քեզ տէ՛ր մեր թագաւոր. քանզի երթեալ հասաք մեք յերկիրն Յրէաստանի, և մտա՛ք ՚ի քաղաքն Երուսաղէն, և գտաք անդ զելեալսն ՚ի գերութենէ, և զքահանայապետս նոցա ՚ի քաղաքին Երուսաղէն. և տեսաք զի շինէին զտաճարն Տեառն մեծ*, ⁹և նորասքանչ՝ քարամբք կոփածոյիւք և մեծամեծօք, և փայտեայ պահանգս կապէին ՚ի մէջ որմոյն*. ¹⁰և էր գործն մեծաւ փութով և յաջողութեամբ ՚ի ձեռս նոցա. և մեծապէս փառօք կամին վաղվաղակի կատարել զնա: ¹¹Եւ յայնժամ մեր հարցեալ զծերսն ասեմք. Ո՞ր հրամանաւ շինէք զտունդ զայդ, և կամ ո՞ր բանիւ արկէք հիմունս դորա* : ¹²Եւ հարցեալ ցնոսա՝ զի տացուք գիտել քեզ, և ցուցցուք քեզ զարսն զառաջնորդս նոցա, և գրեսցուք զանուանս նոցա՝ որք իցեն իշխանք գործոյ նոցա* : ¹³Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն ցմեզ. Մեր՝ ե՛մք ծառայք տեառն Աստուծոյ որ արար զերկինս և զերկիր*. ¹⁴և էր շինեալ զտաճարս զայս յառաջ քան զբազում ամս ՚ի ձեռն մեծ և զօրաւոր թագաւորին Իսրայէլի*. ¹⁵և յորժամ հարքն մեր դառնացուցին՝ և մեղան առ տէր Աստուած Իսրայէլի որ արար զերկինս և զերկիր, մատնեաց զնոսա ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ

* Այլք. Սիսին իշխան:

* Ոմանք. Եւ զսրահս նորա... որք կամիցին զշինել դորա և զկատարել:

* Ոսկան. Օրինակ թղթոյն զոր գրեցին և: *Յօրինակին ՚ի լուսանցսն չակերտիւ նշանակի թուղթս համաձայն բազմաց, մինչև ցիւսմարն 23:*

* Ոսկան. Գիտութիւն լիցի քեզ: Ոմանք. Եւ մտաք մեք ՚ի քաղաքն... ՚ի քաղաքին յերուսաղէն:

* Ոմանք. ՚ի մէջ որմոցն:

* Այլք. Հարցեալ զծերսն... արկէք զհիմունս դորա:

* Ոմանք. Վասն զի տացուք գիտել քեզ:

* Ոմանք. Պատասխանի տուեալ ասացին մեզ:

* Ոսկան. Եւ էր շինեալ տաճարս այս:

արքայի Բաբելացւոց, որ էր թագաւոր Քաղդեացւոց*։ ¹⁷Յառաջնում ամի թագաւորութեանն Կիւրոսի՝ ի Բաբելոն, գրեաց արքայ Կիւրոս, և հրամայեաց շինել՝ զտաճարս զայս. ¹⁸և զամենայն կահ և սպաս տաճարին զոսկեղէն և զարծաթեղէն՝ զոր ա՛ռ Նաբուքոդոնոսոր արքայ ՚ի տաճարէն Տեառն յերուսաղէմէ, և ետ ՚ի պահեստ ՚ի տան կռոց իւրոց. դարձեալ Կիւրոս ա՛ռ ՚ի տանէ կռոցն Բաբելացւոց, և ետ ցՁորաբաբել և ցՍամանասար. ¹⁹և հրամայեաց նոցա բերել և դնել զկահս և զսպասս ՚ի տաճարին Տեառն յերուսաղէմ. և զտաճարս զայս Տեառն հրամայեաց շինել ՚ի տեղւոջ իւրում։ ²⁰Յայնժամ Սամանասար ելեալ յերուսաղէմ, արկ հիմունս տաճարիս այսորիկ. և յա՛յնմ ժամանակաց հետէ մինչև ցա՛յժմ շինեմք. և դեռևս ո՛չ է կատարեալ։ ²¹Արդ՝ այժմ տէր մեր և թագաւոր Դարեհ. խնդի՛ր արա և տե՛ս ՚ի տուն մատենագրաց, ուր կա՛ն գիրք յիշատակարանաց ՚ի պահեստ թագաւորի Կիւրոսի*։ ²²և եթէ գտցի հրամանա՞ւ թագաւորի Կիւրոսի, և բանի՞ւ նորա շինիցեն զտուն Տեառն յերուսաղէմ. և հասեալ ՚ի վերայ հրամանացն Կիւրոսի թագաւորի՝ առ մեզ տեղեկութիւն տացես վասն իրացս այսր ամենայնի*։ ²³Յայնմ ժամանակի թագաւորն Դարեհ հրամայեաց խնդի՛ր առնել ՚ի տունս մատենագրաց թագաւորացն, որ կային ՚ի Բաբելոնի. և գտաւ ՚ի Բատանբարիտենի, ՚ի Մարաց աշխարհին, ՚ի տեղւոջ ուր կային գիրք յիշատակարանաց. ուր էր գրեալ ա՛յսպէս*։ ²⁴Յամին առաջնում թագաւորութեանն Կիւրոսի՝ արքայ Կիւրոս հրամայեաց շինել զտունն Տեառն յերուսաղէմ, ուր մատուցանեն զոհս յայտնութեամբ ՚ի ձեռն հրոյ*։ ²⁵Եւ հրամայեաց զա՛յս չափ օրինակ շինել. զբարձրութիւնն կանգունս վաթսուն, և լայնութիւն կանգունս վաթսուն. և դնել կարգս երիս քարակոփս, և կարգ մի ՚ի փայտէ նորոյ. և զճախսն հրամայեալ էր յարքունուստ տալ*։ ²⁶Եւ զկահ սպասու տանն Տեառն՝ զոսկեղէնս և զարծաթեղէնս զոր բերեալ էր Նաբուքոդոնոսորայ ՚ի Բաբելոն ՚ի տաճարէն Տեառն որ էր յերուսաղէմ, հրամայեաց տանել Կիւրոս թագաւոր ՚ի տուն Տեառն որ էր յերուսաղէմ, զի դիցեն անդ՝ որպէս և էր յառաջագոյն*։ ²⁷Եւ յաւել՝ ևս յայս հրաման՝ Դարեհ արքայ, և ասէ. Սիսին՝ իշխան ամենայն Ասորւոց և Փիւնիկեցւոց, և Սաթրաբուզան՝ և այլ ընկերք

* Ոսկան յետ 15 համարոյ յաւելու համար 16՝ այսպէս. Եւ զտունս զայս կործանեալ այրեցին. և զժողովորդն գերեալ ածին ՚ի Բաբելոն։ Որ չիք ուրեք ՚ի գրչագիր օրինակս մեր։

* Ոմանք. խնդրեա՛ւ և տե՛ս ՚ի տուն։

* Ոմանք. Շինեսցեն զտունն յերուսաղէմ։

* Ոմանք. Որ գրեալ էր այսպէս։

* Ոսկան. Որք մատուցանեն։

* Ոսկան. Չա՛յս չափ օրինակի շինել. բարձրութիւն լիցի կանգունս տասն. և լայ՛։

* Ոմանք. Նաբուքոդոնոսոր արքայ ՚ի Բա՛։

ձեր որ կարգեալ են 'ի գործակալութիւն Ասորւոց և Փիւնիկեցւոց. 'ի բաց կացեք 'ի տեղւոյդ յայդմանէ. և մի՛ մերձենայք 'ի ծառայոյ տեառն Ջորաբաբէլ, որ է իշխան հրէից. և մի՛ 'ի քահանայապետս հրէից, որք միանգամ շինեն զտունն Տեառն 'ի տեղւոջ իւրում: ²⁸Եւ ե՛ս հրամայեցի, զի ամենևին բովանդակ շինեսցի. և եղէ՛ց օգնական հրէիցդ որք ելին յերուսաղէմ, մինչև կատարեսցեն զտաճարդ տեառն Աստուծոյ իւրեանց: ²⁹Եւ 'ի հարկաց կողմանցդ Ասորւոց և Փիւնիկեցւոց՝ պատուիրանաւ հրամայեցի, զի տացե՛ն արանց այդոցիկ 'ի նպաստութիւն զոհից Տեառն. և առցէ Ջորաբաբէլ իշխան՝ զուարակս և խոյս և գառինս՝. ³⁰ըստ նմին օրինակի և ցորեան, և աղ, և գինի, և ձէթ. և եղիցի այդ ամենայն կարգեալ ամ ըստ ամէ, որչափ և ժամանակս քահանայքն յերուսաղէմ հրամայեսցեն 'ի ծախս Տեառն. օրըստօրէ անխափան տացեն՝. ³¹զի մատուցեն պատարագս տեառն Աստուծոյ բարձրելոյ՝ վասն թագաւորին և զօրաց նորա, և արասցեն աղօթս վասն կենաց թագաւորին: ³²Եւ հրամայեցի, եթէ ոք հեղգացի և կամ անցցէ զհրամանաւ իմով զոր գրեցի՝ պատժեսցի. և տուժեսցի զամենայն յիւրմէ. և կախեսցի, և խոշտանգեսցի. և զամենայն ստացուածս նորա յարքունիս առցեն. ³³վասն զի ուր անուանեցաւ անուն Տեառն, անդ հրամայեալ է զամենայն դարմանս թագաւորութեանն և ազգաց. և նա իշխեսցա՞ ձեռնարկել և արգելուլ՝ և խորհեցաւ չա՛ր վասն տաճարին Տեառն որ յերուսաղէմ՝: ³⁴Ե՛ս թագաւոր Դարեհ, մեծա՛ւ զգուշութեամբ հրամայեցի լինել՝ և կատարել այսմ ամենայնի:

7

Գլուխ Է

¹Յայնժամ Սիսին մեծ իշխան, որ էր կողմանցն Ասորւոց և Փիւնիկեցւոց, և Սաթրաբուզան, և այլ ընկերք նոցա, որ արգելուին զգործ տաճարին. յորժամ առին զհրամանն 'ի Դարեհէ թագաւորէ՝, ²սկսան վերակացու լինել՝ և հո՛գ տանել գործոյն. և եղեն գործակիցք ծերոցն հրէից, և քահանայապետից. ³և յաջողէր գործ տաճարին. քանզի մարգարեանային Անգէ՛ և Ջաքարիա: ⁴Եւ

* *Ոմանք.* Արանցդ այդոցիկ 'ի նպաստաւորութիւն. և *ոմանք*՝ 'ի նպաստաւորութիւն:

* *Ոմանք.* Եւ ցորեան և օղ և գինի: *Ուր Ոսկան.* Եւ ցորեան, այլ և գինի և ձէթ:

* *Այլք.* Հրամայեալ էր զամենայն դար՝:

* *Ոմանք.* Որ էր 'ի կողմանցն Ասոր՝:

կատարեցաւ տաճարն ըստ հրամանի տեառն Աստուծոյ Իսրայէլի, և ըստ հրամանի կամաց Կիւրոսի և Դարեհի:

Թ Յամին վեցերորդի Դարեհի թագաւորի*, ⁵կատարեցաւ տաճարն սուրբ ՚ի քսաներորդ ամսոյն Ադար. ՚ի վեցերորդ ամի թագաւորութեանն Դարեհի: ⁶Եւ արարին որդիքն Իսրայէլի՝ և քահանայք՝ և ղևտացիք, և ամենայն ելեալքն ՚ի գերութենէ, որպէս կարգեալ և հրամայեալ էր ՚ի գիրս օրինացն Մովսիսի: ⁷Եւ մատուցին զնաւակատիս տանն Տեառն. զուարակս հարիւր, խոյս երկերիւր, գառինս չորեքհարիւր, ⁸և ամիկս վասն մեղաց ամենայն Իսրայէլի երկոտասան. ըստ թուոյ ցեղից իշխանացն Իսրայէլի: ⁹Եւ կարգեցան քահանայքն և ղևտացիքն ըստ ազգացն, զգեցեալք զպճղնաւորն առաջի տեառն Աստուծոյ Իսրայէլի, ըստ հրամանացն ՚ի գիրսն Մովսիսի. և դռնապանքն ըստ իւրաքանչիւր դրանցն: ¹⁰Եւ արարին որդիքն Իսրայէլի որք ելեալ էին ՚ի գերութենէ՝ զգատիկն Տեառն ՚ի չորեքտասաներորդի աւուր ամսեանն առաջնոյ. քանզի սրբեցան քահանայքն և ղևտացիք միանգամայն*. ¹¹և ամենայն որ ելեալքն էին ՚ի գերութենէ. և եղեալք սուրբք ղևտացիքն, ¹²զենին զգատիկն Տեառն ամենայն որդւոցն Իսրայէլի որք ելեալ էին ՚ի գերութենէ՝ և եղբարց իւրեանց, և ինքեանց՝ և քահանայիցն: ¹³Եւ կերան որդիքն Իսրայէլի որք ելեալ էին ՚ի գերութենէն, ամենեքին որք որոշեցան ՚ի պղծութեանցն հեթանոսաց, և որ խնդրեցին զսէր Աստուած: ¹⁴Եւ արարին զգատիկն բաղարջակերաց զելթն օր. և լինէին ուրախ առաջի Տեառն. ¹⁵վասն զի դարձոյց Տէր զխորհուրդ թագաւորին Ասորոց ՚ի նոսա. և զօրացոյց զձեռն նոցա ՚ի գործ տեառն Աստուծոյ Իսրայէլի:

8

Գլուխ Ը

¹Եւ յորժամ եղև և կատարեցաւ այս ամենայն:

Ժ Թագաւորեաց Արտաշէս արքայ ՚ի վերայ Պարսից: Առ որ երթեալ Եզրի, որդւոյ Ազարիայ, որդւոյ Եզերիայ, որ ՚ի Քեղկեայ, որ ՚ի Սաղեմայ*, ²որ ՚ի Յադուկայ, որ ՚ի Յաքիտովբայ, որ ՚ի Յամարթայ, որ ՚ի Յաղեկայ, որ ՚ի Մարերովթայ, որ ՚ի Չարեայ, որ ՚ի Սեուկայ, որ

* Ոսկան. Կիւրոսի և Դարեհի և Արտաշէսի արքային Պարսից: Ոմանք. Եւ յամին վեցերորդի:

* Ի բազումս պակասի. Ի չորեքտասաներորդի աւուր ամսեանն առաջնոյ:

* Ոմանք. Որդւոյ Ազարիայ, որդի Քեղկեայ, որ ՚ի Սաղեմ:

'ի Բովկեայ, որ 'ի Յաբասեայ, որ 'ի Փենեեսե, որ յեղիագարայ, որ յԱհարոնէ առաջին քահանայէ*։ ³Այս Եզր որ ել 'ի Բաբելոնէ. որ է գրիչ յաջողակ օրինացն Մովսիսի տուելոց յԱստուծոյ Իսրայէլի*։ ⁴Եւ ետ նմա թագաւորն մեծ փառս. և գտեալ շնորհս առաջի նորա փառաւորեաց զնա մեծաւ պատուով։ ⁵Եւ ելին ընդ նմա յորդոցն Իսրայէլի, և 'ի քահանայիցն, և 'ի ղևտացւոց, և 'ի պաշտօնէիցն փսալտաց, և 'ի դռնապանաց, և 'ի ծառայից քահանայիցն յերուսաղէմ։ ⁶Յամի եւթներորդի թագաւորութեանն Արտաշեսի արքայի, յամսեանն հինգերորդի, որ էր ամ եւթներորդ թագաւորին. ելեալ 'ի Բաբելոնէ յամսամտին առաջնոյ ամսեանն, և յամսամտի հինգերորդ ամսեանն* ⁷Եմուտ յերուսաղէմ. որպէս և յաջողեաց նմա Տէր զճանապարհն։ ⁸Քանզի լցեալ էր Եզր ամենայն իմաստութեամբ, և ո՛չ ինչ պակաս էր 'ի նմանէ յամենայն 'ի պատուիրանացն Տեառն. և ըստ օրինացն Տեառն ուսուցանէր Իսրայէլի զամենայն դատաստանս և զիրաւունս։ ⁹Եհանս գիր հրամանի Արտաշիսի թագաւորի առ Եզր քահանայ և պատմիչ օրինացն Տեառն. և էր գրեալ զայս օրինակ. ¹⁰Թագաւոր Արտաշէս՝ Եզրի քահանայի՝ և պատմիչ օրինացն Տեառն ողջոյն*։ ¹¹Ամենայն մարդասէր կամօք կշռելով իմ. հրամայեցի ամենայն ազգաց Յրէաստանի, որ կամիցին ելանել յերուսաղէմ. և քահանայապետիցն և ղևտացւոց, համարձակութիւն լիցի ընդ քեզ երթալ յերուսաղէմ*։ ¹²և որպէս փափաքեն ցանկութեամբ հասանել 'ի Յրէաստան՝ և յերուսաղէմ. հրամայեցաք էս՝ և եւթն խորհրդակիցք իմ. ¹³զի երթեալ՝ ըստ օրինացն կատարեսցեն զամենայն*, ¹⁴և մատուցեն զպատարագս տեառն Աստուծոյ Իսրայէլի. որպէս ուխտեցաք էս և սիրելիք իմ յերուսաղէմ. և զամենայն ոսկի և արծաթ՝ որչափ և գտցի յերկրիս Բաբելացւոց, տեառն Աստուծոյ մատուցեն պատարագս յերուսաղէմ*։ ¹⁵Եւ առեալ նպաստաւորութիւն յերկրէս Բաբելացւոց քահանայից տեառն Աստուծոյ տարցին յերուսաղէմ, ոսկի և արծաթ, և զուարակս, խոյս և զառինս, և զայլ ամենայն զոհս նուիրացն ¹⁶մատուցեն 'ի սեղան տեառն Աստուծոյ յերուսաղէմ։ ¹⁷Եւ զամենայն ինչ՝ որպէս և կամիցիս հանդերձ եղբարքդ քովք՝ արասցեն, վասն ոսկոյ և արծաթոյ հարկացն ըստ կամաց՝ տեառն

* Ոսկան. Որդիք Սաղովկայ. որ 'ի Յաքիտոբայ։

* Ոմանք. Որ էր գրիչ։

* Ոմանք. Եւ յամսամտի եւթներորդ ամսեանն։

* Ոմանք. Եւ պատմողի. կամ՝ պատմչողի օրինացն։

* Ոմանք. Կամօք կշռեալ իմ։

* Ոսկան. Կատարեսցեն զամենայն, պահելով որպէս ունիս յօրէնս Տեառն։

* Ոմանք. Որպէս և ուխտեցաք։

Աստուծոյ քոյ կատարեսցիք* .¹⁸ և զքահանայական զկահ, և զսպասն Տեառն տարեալ յերուսաղէմ¹⁹ արասցի՛ր ըստ պիտոյից տաճարին տեառն Աստուծոյ . և եղեալ զամենայն առաջի տեառն Աստուծոյ քոյ յերուսաղէմ* .²⁰ և զա՛յլ ևս աւելորդս և մնացուածս որ ինչ և իցեն՝ ՚ի պէտս տաճարին, դիցեն զայն՝ ՚ի տունս գանձից թագաւորաց* :²¹ Եւ ե՛ս Արտաշէս թագաւոր հրամայեցի գանձաւորաց որ են յԱսորեստանի, և ՚ի կողմանս Քանանացւոց, որչափ և կամեսցի՛ առնուլ Եզր քահանայ և պատմիչ օրինաց տեառն Աստուծոյ Բարձրելոյ, անխափան տաջիք մնա արժաթ՝ տաղանտս հարիւր . ըստ մմին օրինակի²² և ցորեան քոռս հարիւր, և գինի և ձէթ՝ մո՛յնչափ* .²³ և զամենայն ըստ օրինացն առեալ կատարեսցեն տեառն Աստուծոյ Բարձրելոյ . զի մի՛ լիցի ցասունն յԱստուծոյ ՚ի վերայ թագաւորութեան իմոյ՝ և որդւոյ իմոյ :²⁴ Եւ հրամայեալ վասն ձեր քահանայիցդ և ղևտացւոց, և սաղմոսասաց պաշտօնէիցդ, և դռնապանաց, և ծառայից քահանայից, և սպասաւորաց տան Տեառն .²⁵ մի՛ զհարկս ինչ՝ և մի՛ զա՛յլ ինչ՝ որ ամենևին իշխեսցէ ՚ի դոցանէ պահանջել :²⁶ Եւ դու՛ Եզր, ըստ իմաստութեան քում որ տուեալ է քեզ յԱստուծոյ, կացո՛ վերակացուս և դատաւորս, որք դատեսցին զկողմանս Ասորւոց և Փիւնիկեցւոց . ամենեքեան որոց ուսեալ իցէ զօրէնս տեառն Աստուծոյ քո* .²⁷ և որ ո՛չն գիտիցեն՝ ուսուսցի՛ր . և ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն տեառն Աստուծոյ քոյ, և զօրինօք մեր թագաւորաց . տուեալ քեզ իշխանութիւն պատուհասե՛լ և խոշտանգել . և եթէ մահապարտ իցեն՝ սպանանե՛լ, կամ թէ պատուհասի արժանի՝ պատուհասել՝ և տուգանս պահանջել* :²⁸ Եւ ասէ Եզր գրիչ օրինացն Տեառն . Օրինեալ է տէր Աստուած հարցն մերոց, որ ե՛տ զայս ամենայն ՚ի սիրտս թագաւորի փառաւորե՛լ զտաճարն Տեառն որ յերուսաղէմ* .²⁹ և զիս մեծապէ՛ս պատուեաց առաջի թագաւորին, և առաջի ամենայն խորհրդականաց նորա, և սիրելեաց՝ և ամենայն մեծամեծաց նորա .³⁰ և եղէ ես զուարճացեալ յոյժ օգնութեամբք տեառն Աստուծոյ իմոյ : Եւ ժողովեաց զամենայն արս Իսրայէլի որք ելեալ էին ընդ մնա յերուսաղէմ* :

ԺԱ³¹ Եւ ա՛յս են իշխանք ըստ նահապետութեան հարցն իւրեանց . և

* *Ոմանք.* Կատարեսցիք :

* *Ոմանք.* Արասցիք ըստ պիտո՛յ :

* *Ոմանք.* ՚ի տուն դարձուց և թագաւորեաց :

* *Ոսկան.* (21) Ըստ մմին օրինակի, և ոսկի, (22) և ցորեան :

* *Ոմանք.* Որոց ուսեալ է :

* *Ոսկան.* Տուեալ է քեզ իշխա՛ն :

* *Ոմանք.* Չտաճարն Տեառն որ է յերուսաղէմ :

* *Այլք.* Որք ելանէին ընդ մնա յերուսաղէմ :

ըստ բաժնից ցեղիցն իւրեանց որք ելին ընդ Եզրի՝ ՚ի Բաբելոնէ, ՚ի թագաւորութեանն Արտաշիսի արքայի: ³²Յորդուցն Փենեւսի՝ Գերսոն. յորդուցն ՚ի Թամարայ՝ Գամայէլ. յորդուցն Դաւթայ՝ Փարէս. ³³յորդուցն Փորոսեայ՝ Չաքարիաս, և որք ընդ նմա էին գերեալ արք հարիւր յիսուն* : ³⁴Յորդուցն Փաաթ՝ Մովաբ, Եղիա, Ովնիաս, Չարեա, և ընդ նմա արք երկերիւր. ³⁵յորդուցն Չաթեսայ՝ Յեզոնիաս, Յեթեղեայ, և ընդ նմա արք երեք հարիւր* : ³⁶Յորդուցն Ադինոբայ՝ Յովնաթանու, և ընդ նմա արք երեք հարիւր յիսուն. յորդուցն Եղամեսեայ՝ Գոդոդիա, և ընդ նմա արք եւթանասուն* . ³⁷յորդուցն Սափատիայ՝ Չաքարիաս Միքայելեանց, և ընդ նմա արք եւթանասուն: ³⁸Յորդուցն Յովաբայ՝ Աբադիսեր Եզելեանց, և ընդ նմա արք երկերիւր և երկոտասան. ³⁹յորդուցն Բանեայ՝ Ասաղիմովթ Յովսափեանց, և ընդ նմա արք հարիւր վաթսուն: ⁴⁰Յորդուցն Բէերայ՝ Չաքարիայ Բերեայ, և ընդ նմա արք քսան և ութ. ⁴¹յորդուցն Աստաթայ՝ Յովհանէս Կատանայ, և ընդ նմա արք հարիւր տասն: ⁴²Յորդուցն Ադոնիկամայ՝ Եսփատայ. և այս անուանք նոցա. Եղիփաղատ. Գելուէլ, Սամեաս, և ընդ նոսա արք եւթանասուն. յորդուցն Բանեայ Ութիաստաւկուրեանց, և ընդ նմա արք եւթանասուն* : ⁴³Եւ ժողովեալ զնոսա յեզր գետոյն, որ անուանի Թերա՝ և արարեալ օթևանս անդ աւուրս երիս. և արարեալ համար ամենեցուն. ⁴⁴յորդուցն քահանայից, և յորդուցն ղևտացւոց՝ ո՛չ որ գտաւ առ նոսա: ⁴⁵Եւ առաքեցի առ Եղիազար. և եկին առ իս Սամեաս, և Որիբոն, և Նաթան, Եննատան, Չաքարիա, և Մոսողաբոն. այս իշխանքն և վարդապետք օրինացն: ⁴⁶Եւ ասացի ցնոսա երթալ առ Ղողթոն իշխան գանձաւորացն. ⁴⁷և պատուիրեցի նոցա ասել ցՂողթոն, և ցեղբարս նորա, և որ միանգամ են՝ ՚ի տեղւոջ գանձաւորացն, առաքել՝ առ մեզ ՚ի քահանայիցն տանն Տեառն: ⁴⁸Եւ ածին առ մեզ արք որ էին զօրաւորք ըստ բանի Տեառն. և գիտունք յօրէնս Տեառն. որդուցն Մոողեայ, որ ՚ի Ղևեայն, և յԻսրայէլէ, Ասերկան, և զորդիս նորա և զեղբարս ութևտասն* . ⁴⁹և Ասերիան, և Անունոն, և Ոսետան եղբայր. յորդուցն Քանունեայ՝ և որդիք նորա արք քսան. ⁵⁰և ՚ի ծառայից քահանայիցն զորս են՝ տ Դաւիթ իշխան ՚ի գործ սպասաւորութեան ղևտացւոց, որոց գրեցան անուանք նշանաւորացն քսան* : ⁵¹Եւ քարոզեցաք անդ պա՛հս, և մատուցաք աղօթս առաջի տեառն Աստուծոյ մերոյ, խնդրել՝ դիւրութիւն և

* Յօրինակին. Ընդ նմա էին գրեալ արք հար՝:

* Ունանք. Յորդուցն Չաթեսեայ: Ուր Ոսկան. Չաթեսայ, Յեզոնիաս:

* Ունանք. Ադինոբեայ՝ Յովնաթան:

* Ունանք. Յորդուցն Ադոնիկորայ՝ Եսփա՛:

* Ոսկան. Եւ ածին առ մեզ արս, որք:

* Ոսկան. Անուանք նշա՛. երկերիւր և քսան:

յաջողութիւն մե՛զ և որդւոց մերոց. և ամենայն ինչ որ ընդ մե՛զ էր*.
⁵²վասն զի ծանրութիւն համարեցաք խնդրել ՚ի թագաւորէն
 հետևակս և հեծեալս յուղարկաւորս ընդ մեզ վասն զգուշութեան
 այնոցիկ որք ընդդիմանային մեզ. ⁵³քանզի ասացաք ցթագաւորն
 այսպէս. թէ զօրութիւն տեառն Աստուծոյ մերոյ՝ է ընդ մեզ, և ընդ
 ամենեսեան ոյք խնդրեն զնա: ⁵⁴Եւ վասն ա՛յսր ամենայնի քարոզեալ
 պահս և խնդրուածս, զի Տէր պահեսցէ զմեզ, և յաջողեսցէ մեզ ՚ի
 ճանապարհս խաղաղութեան: ⁵⁵Եւ որոշեցաք զգլխաւորս ցեղից
 քահանայիցն՝ արս երկոտասան, և զԵսեբիան, և զԱսամիան, և ընդ
 նոսա յեղբարց նոցա արս տասն*: ⁵⁶Եւ կշռեցաք և տուաք ցնոսա
 զարծաթ և զոսկի, և զսպաս քահանայութեան կահու տանն Տեառն՝
 զոր պարզեաց մեզ թագաւորն և խորհրդակիցք նորա, և իշխանք՝ և
 ամենայն Իսրայէլ. ⁵⁷և կշռեալ ետու ցնոսա արծաթ՝ տաղանտս վեց
 հարիւր յիսուն. և սպաս արծաթոյ հարիւր տաղանտ. և ոսկւոյ
 տաղանտս հարիւր. ⁵⁸և այլ կահ ոսկւոյ քսան. և կահ պղնձոյ սուրբ և
 մաքուր ոսկեգոյն՝ երկոտասան: ⁵⁹Եւ ասացի ցնոսա. Եւ դուք
 սրբեալք Տեառն էք, և ամենայն սպասդ սուրբ՝ Տեառն է, և ոսկեղէնք
 և արծաթեղէնք. աղօ՛թս արարէք առ Տէր. և տէր Աստուած հարցն
 մերոց պահեսցէ և հասուցէ խաղաղութեամբ ՚ի տեղի սրբութեան
 իւրոյ: ⁶⁰Արթուն կացէք և պահեցէ՛ք, մինչև հասուցեալ տարջիբ
 զդոսա ցգլխաւորս քահանայիցն և ղևտացւոց՝ և ցիշխանս
 հայրապետաց Իսրայէլի որ են յԵրուսաղէմ*. ⁶¹զոր առեալ
 պահապանաց տաճարին Տեառն, և քահանայապետիցն և
 ղևտացւոց զարծաթ և զոսկի, և զկահ սպասուդ՝ տարցին ՚ի տաճարն
 Տեառն որ է յԵրուսաղէմ: ⁶²Եւ յարուցեալ չուեցաք ՚ի գետոյն Թերայ,
 որ օր երկոտասան էր ամսոյն առաջնոյ, և եկաք հասաք յԵրուսաղէմ.
 պահպանեալք բարձրացեալ և զօրացեալ ձեռամբ Տեառն. և
 փրկեաց զմեզ տէր Աստուած մեր յամենայն թշնամեաց մերոց. և
 հասաք ողջամբ և խաղաղութեամբ յԵրուսաղէմ*: ⁶³Եւ յորժամ
 հանգեաք աւուրս երիս յԵրուսաղէմ, յաւուրն չորրորդի կշռեալ
 տուաք զարծաթն և զոսկի ՚ի տուն տեառն Աստուծոյ մերոյ
 ցքահանայն Սարմոթի Ուրեանց, և որ ընդ նմա էին*, ⁶⁴Եղիազար
 Փենեթեսեանց, և Յովսաբդոս Յեսովեան, և Մեթոր Սաբանեան. և ա՛յլ
 ղևտացիք՝ ցորս տուաք կշռով և համարով. ⁶⁵և գրեցաւ կշիռ

* Ոսկան. Խնդրելով զդիւրութիւն:

* Ոմանք. Եւ զԵսեբիան:

* Ոսկան. Որք էին յԵրուսաղէմ:

* Ոմանք. Եւ եկեալ հասաք յԵրուսաղէմ, պա՛:

* Ի լուս՝ ՚ի վերայ՝ հանգեաք աւուրս, նշանակի՝ հասաք: Ուր ոմանք ունին՝ և յորժամ հանգաք.
 և այլ ոմանք. և յորժամ հանեաք: Յօրինակին պակասէր. Ի տուն Տեառն Աստուծոյ մերոյ:

համարոյն յաւուր յայնմիկ*։ ⁶⁶Եւ որք ելեալն էին ընդ իս 'ի գերութենէն Բաբելացոց՝ մատուցին պատարագս տեառն Աստուծոյ Իսրայէլի. զուարակս երկոտասան վասն ամենայն Իսրայէլի, խոյս իննսուն, ⁶⁷զառննս եւթանասուն և երկու, նոխագս վասն փրկութեան երկոտասան. զայս ամենայն զո'իս մատուցին առաջի տեառն Աստուծոյ Իսրայէլի։ ⁶⁸Եւ ետուն զգիր հրամանի թագաւորին ցգործակալս թագաւորին, և ցիշխանս և ցգաւառապետս Ասորոց և Փիւնիկեցոց, և մեծա՛ւ պատուով փառաւորեցաւ ազգն մեր՝ և տաճարն Տեառն։

ԺԲ ⁶⁹Եւ 'ի կատարել այսր ամենայնի, եկին առաջի իմ նահապետք և իշխանք որդւոցն Իսրայէլի՝ և ասեն. Անխտի՛ր եղև ամենայն ազգ որդւոցն Իսրայէլի՝ և իշխանք նոցա, և քահանայքն և ղևտացիք։ ⁷⁰Խառնակեցան ընդ հեթանոսս՝ և ընդ այլազգի՛ս, և ընդ պղծութիւնս ամենայն անհաւատիցն. ընդ Քանանացիսն, և ընդ Քետացիսն, և ընդ Փերեզացիսն, և ընդ Յեբուսացիսն, և ընդ Մովաբացիսն, և ընդ Ամովնացիսն, և ընդ Գերգեսացիսն, և ընդ Եդոմայեցիսն*։ ⁷¹Վասն զի ամուսնացան ընդ դստերս նոցա. ինքեանք և որդիք իւրեանց. և խառնեցաւ սերմն սրբութեան իւրեանց ընդ այլազգի՛ս հեթանոսաց երկրին. և ընկալան իշխանք և մեծամեծք իւրաքանչիւր զանօրէնութիւնս զայս յանձինս իւրեանց. քանզի նոքա եղեն առաջնորդք չա՛ր խառնակութեանս այսոցիկ*։ ⁷²Եւ եղև յորժամ լուա՛յ ես զբանս զայսոսիկ, պատառեցի՛ զհանդերձս իմ. և ո՛ղբս առեալ փետէի զվարսս զլիսոյ իմոյ, և զմօրուաց իմոց, և նստայ 'ի սո՛ւզ մեծ տրտմեալ։ ⁷³Եւ ժողովեցան առ իս ամենեքեան իբրև լուան զողբսն իմ, որ էր վասն տեառն Աստուծոյ Իսրայէլի. և տեսեալ զիս զոր ինչ արարի 'ի վերայ անօրէնութեան նոցա. քանզի նստայ այնպէս տրտմեալ մինչև յերեկս, 'ի հասանել ժամու զոհից երեկորին. ⁷⁴և յարուցեալ 'ի սգոյն այնպէս պատառեալ էին հանդերձք իմ, և հանդերձ ողբովք կորացեալ էի։ Եւ համբարձեալ զձեռս իմ առ տէր Աստուած աղաղակեցի՛, ⁷⁵և ասեմ. Տէր՝ ամաչեմք և դողանք առաջի երեսաց քոց, ⁷⁶քանզի մեղք մեր բազմացան առաւել քան զգլուխս մեր, և անօրէնութիւնք մեր բարձրացան առաւել 'ի վերոյ քան զերկինս, ⁷⁷յամաց և 'ի ժամանակաց հարցն մերոց, և եմք մեք 'ի մեղս մեծամեծս մինչև ցայսօր։ ⁷⁸Եւ վասն մեղաց մերոց՝ և յանցանաց հարցն մերոց մատնեցաք մեք 'ի գերութիւն հանդերձ եղբարքք մերովք, և թագաւորօքն մերովք, և

* *Ոմանք*. Եւ գրեցաք կշիռ համարոյն յա՛։

* *Այլք*. Եւ ընդ Ամովնացիսն, և ընդ Եգիպտացիսն, և ընդ Եդոմայեցիսն։

* *Այլք*. Եւ խառնակեցաւ սերմն սր՛։ *Ոսկան*. Ընդ ազգս հեթանոսաց։ *Ոմանք*. Առաջնորդք չարք խառնակութեանց այ՛։

քահանայապետօրն մերովք. և ամենայն թագաւորք երկրի արկեալ զմեզ 'ի սուր սուսերի՝ գերեցին զմեզ, և աւերեցին զտեղիս մեր, և եղեալք մեք ամօթ՝ մինչև ցայսօր ժամանակի*։ ⁷⁹Եւ այժմ որչափ եղև 'ի վերայ մեր ողորմութիւն քո Տէր, 'ի թողուլ արմատ և զաւակ, և անուն 'ի տեղուքս յայսմ 'ի սրբութեան քում. ⁸⁰և յայտնեցեր զլոյս 'ի տաճարի՝ տեառն Աստուծոյ մերոյ. և ետուր մեզ կերակուր 'ի ժամանակս ծառայութեան մերոյ. ⁸¹և 'ի գերութեանն ո՛չ թողեր զմեզ 'ի ձեռաց՝ այլ եղեր մեզ Տէր օգնական. և ետուր մեզ գտանել շնորհս առաջի թագաւորին Պարսից. և պատուեաց զմեզ, և դարմանեաց ամենայն կազմածով*. ⁸²և փառաւորեաց զտաճարն տեառն Աստուծոյ մերոյ. և կանգնեաց և շինեաց զանապատն Սիոն. և հաստատեաց զմեզ 'ի Յրեաստանի և յերուսաղէմ: ⁸³Եւ այժմ զի՞նչ տացուք պատասխանի առաջի քո Տէր վասն այսր ամենայնի. քանզի անցաք զօրինօք և զիրամանօք քովք Տէր, զոր ետուր 'ի ձեռն ծառայիցն քոց մարգարեից, ⁸⁴ասելով այսպէս. Եթէ երկիրն զոր մտցես դու ժառանգել զնա, է՛ երկիր պղծեալ 'ի պղծութեանցն ազգաց երկրին այնորիկ, և աղտեղութիւնքն իւրեանց լցին զնա*. ⁸⁵և արդ՝ մի՛ առնուցուս դու 'ի դատերաց նոցա որդւոց քոց կանայս, և զդատերսն ձեր մի՛ տայցէք որդւոց նոցա*. ⁸⁶և մի՛ խնդրեսցես առնել խաղաղութիւն ընդ նոսա զամենայն ժամանակս. և եղիջիր դու զօրաւոր ուտել զբարութիւնս երկրին. և ժառանգեսցեն որդիք քո զերկիրն զայն յաւիտեանս ժամանակաց: ⁸⁷Եւ որ ինչ գա՛մ մի անցք անցին ընդ մեզ վասն գործոց մերոց, և վասն չարութեան մեղաց մերոց*. ⁸⁸այլ դու Տէր բազմագութ թողե՛ր զմեղս մեր, և ետուր մեզ այսպիսի զաւակ և արմատ. մեք դարձեալ խոտորեցաք անցանել զօրինօք քովք, և խառնակեցաք ընդ աղտեղութիւնս հեթանոսաց երկրիս*. ⁸⁹և ո՛չ բարկացար մեզ 'ի կորուսանել զմեզ, մինչև ցայն վայր եթէ ո՛չ մնացէ արմատ, և զաւակ, և անուն մեր: ⁹⁰Տէր Աստուած Իսրայէլի, դո՛ւ արդար և ճշմարիտ ես. ո՛չ սպառեցեր զզաւակ մեր, այլ մնացաք զաւակ և արմատ մինչև ցայսօր: ⁹¹Եւ արդ՝ ա՛ւասիկ ենք այսօր առաջի քո յանօրէնութիւնս մեր, և ո՛չ ևս կարենք կա՛լ առաջի

* *Ոմանք.* Եւ եղեաք մեք ամօթ:

* *Յօրինակին պակասէր.* Ոչ թողեր զմեզ:

* *Ոմանք.* Յոր մտանիցես... երկիր պղծեալ է 'ի պղծութեանց ազգաց երկրին, և աղտեղութեամբքն իւրեանց:

* *Ոմանք.* Մի՛ տայցէք կանայս որդւոց նոցա:

* *Յօրինակին ևս այսպէս գրեալ.* Եւ որ ինչ գա՛մ մի. *յետոյ երկի յաւելեալ 'ի վերայ մասնիկս՝* ան. 'ի լինել անգամ. *որպէս ունի ընդօրինակող մորին. ըստ որում ոչ ուրեք յայլ գրչագիրս մեր երկի. թպէտ և երկու օրինակք իսպառ զանց առնեն զգամ մի. և օրինակ մի դատարկ միջոց թողու յառաջ քան զգամն:*

* *Այլք.* Այլ դու Տէր բազում անգամ թողեր զմեղս մեր: *Յօրինակին.* Մեք դարձեալ խորեցաք անցանել:

երեսաց քոց. զի բազմացան անօրէնութիւնք և չարիք մեր՝ առաւել քան զգլուխս մեր: ⁹²Եւ յորժամ եկաց յաղօթս Եզր՝ հանդերձ խոստովանութեամբքս այսոքիւք, և ողբովք մեծամեծօք. անկեալ էր ՚ի վերայ երեսաց երկրի առաջի տաճարին Տեառն. ժողովեցան առ նա ամենայն որ էին յերուսաղէմ, ժողովուրդք բազումք՝ արք և կանայք, երիտասարդք և կուսանք. քանզի ո՛ղբք մեծամեծօք էին ՚ի բազմութեանն*: ⁹³Եւ կարդաց Յեքոնիա Իեղ՛ու յորդուոցն Իսրայէլի, և ասէ ցեզր. Մեք մեղաք առ տէր Աստուած, և առաք կանայս յայլազգեաց երկրիս այսորիկ. ⁹⁴և այժմ են այսօր անօրէնութիւնք ՚ի միջի մերում. եկայք ամենեքեան՝ դիցուք երդմունս առաջի Տեառն, և հանցուք ՚ի բաց զկանայս մեր զոր առաք յայլազգեաց, հանդերձ որդուովք իւրեանց. ⁹⁵որպէս և հրամայէ յօրէնս տեառն Աստուծոյ մերոյ: Արի՛ վաղվաղակի՛ և կատարեա՛. ⁹⁶զի առ քեզ են ամենայն իրք մեր, և մեք ընդ քեզ. զինչ և հրամայեսցես՝ արասցուք: ⁹⁷Եւ յարուցեալ Եզր՝ երդմնեցոյց զիշխանս ցեղից քահանայիցն և ղևտացւոց. և զամենայն Իսրայէլի առնել ըստ այսմ օրինակի. և երդուան*:

9

Գլուխ Թ

¹Եւ յարուցեալ Եզր ՚ի սրահէ տաճարին Տեառն, չոգաւ ՚ի տունն Յովհաննայ Եղիսաբեանց*. ²և անդ ագաւ. հաց ո՛չ ճաշակեաց, և ջուր ո՛չ արբ, և ողբացեալ ՚ի վերայ անօրէնութեանցն, և մեծամեծ մեղաց բազմութեանն: ³Եւ քարո՛զ կարդաց յամենայն Յրէաստան՝ և յերուսաղէմ, թէ ամենեքեան. որ ելեալ էին ՚ի գերութենէն, եկեսցեն և ժողովեսցին յերուսաղէմ*. ⁴և զհետ երկուց և երից աւուրց որք ո՛չ ժամանեսցեն անդր՝ դատեալք յառաջնորդացն և ՚ի ծերոցն, յափշտակեսցեն զստացուածս նոցա, և նոքա օտարացեալ արտա՛քս ելցեն քան զբազմութիւն ժողովրդոց գերութեանն: ⁵Եւ ժողովեցան ամենեքեան որ էին յազգէն Յուդայ և Բենիամինի մինչև ցերիս աւուրս յերուսաղէմ, յամսեանն իններորդի՝ ՚ի քսաներորդ

* *Ոսկան.* Ժողովեցան առ նա ամենեքեան, որք էին:

* *Ոմանք.* Եւ զամենայն Իսրայէլ առնել ըստ այսմ:

* *Ոմանք.* Յովհաննայ: *Եւ ոմանք.* Յովհաննու:

* *Ոսկան.* Որք ելեալք են ՚ի գերութենէն:

աւուր ամսոյն* . ⁶և նստան ընդ նմա ամենայն բազմութիւնն՝
յընդարձակութեան սրահի տանն Տեառն . և սարսռացեալք դողային
վասն ցրտութեան ձմերանոյն* : ⁷Եւ յարուցեալ Եզր՝ ասէ ցնոսա . Դուք
էք որ մեղայք՝ և արարէք կանայս ՚ի դստերաց այլազգեաց , և յաւելէք
զանօրէնութիւն ՚ի վերայ Իսրայէլի . ⁸և արդ՝ տո՛ւք
զխոստովանութիւն և զփառս տեառն Աստուծոյ հարցն մերոց . ⁹և
արարէք զկանս նորա , և զատեալ որոշեցայք յամենայն հեթանոսաց
երկրի , և ՚ի կանանց այլազգեաց զորս արարէք* : ¹⁰Եւ միաբանեալ
ամենայն բազմութիւնն՝ աղաղակեցին մեծածայն՝ և ասեն . Այդպէս
արասցուք որպէս ասացերդ . ¹¹այլ վասն զի ժամանակս ձմեռն է , և
մեք բազմութիւն յոյժ , և ո՛չ կարենք այսպէս ժուժեալ վշտաց
նեղութեանս . և գործս ո՛չ թէ զմի օր է՝ կամ զերկուս , վասն զի յոյժ
սաստիկ մեղաք յիրսս յայս* : ¹²Արդ՝ կացցեն իշխանք և առաջնորդք
՚ի վերայ բազմութեանս , և ամենայն ուրուք որոյ իցէ ՚ի տուն իւր կին
այլազգի , ¹³երթեալ պահանջեսցեն ՚ի նմանէ ժամանակս . և
իւրաքանչիւր տեղեացն կացցեն ծերք և դատաւորք , և լուծեալ
քաւեսցեն ՚ի մէնջ զբարկութիւն Տեառն . զմեծամեծ չարեացս
այսոցիկ զոր գործեցաք : ¹⁴Յովնաթան Ազայելեանց , և Եզեկիա
Թովկեանց՝ ընկալան յանձին առնել զայս . և Մոսողամոս՝ և Ղևի՝ և
Սաբատէոս , որք միաբանեցին ընդ նոսա* . ¹⁵և արարին ըստ
ամենայնի որպէս հրամայեցին որք ելեալ էին ՚ի գերութենէն* : ¹⁶Եւ
ընտրեաց Եզր արս քահանայս իշխանս և հայրապետս ըստ
անուանց իւրեանց . և նստան յամսամտին՝ յամսեանն տասներորդի ,
զի վճարեսցին իրքն . ¹⁷և ժողովեալ ածին զարսն և զկանայս , որք
ունէին զայլազգիսն՝ մինչև յամիսն առաջներորդ* : ¹⁸Եւ գտան ՚ի
քահանայիցն որ ժողովեալ էին , որք ունէին զկանայս այլազգեացն ,
և էին խառնակեալ ընդ ամպարշտութիւնսն : ¹⁹Յորդուոցն Յեսովայ
Յովսեդեկեանց և Եղբօրն նորա՝ Սաթեղա , և Եղիազարոս , և
Յորիբոս , և Յովադան . ²⁰և սկսան հանել զկանայս իւրեանց
զայլազգիս . և մատուցին իւրաքանչիւր խոյս՝ վասն թողութեան
մեղացն անգիտութեան : ²¹Եւ յորդուոցն Էմնովրայ՝ Անանիա , և
Բադդէոս , և Մանաս , և Սամաէաս , և Յերիէլ , և Ազարիաս* : ²²Եւ
յորդուոցն Փասուր՝ Եղիանաս , և Մասսիաս , Իսմայէլ , և Նաթանայէլ , և

* *Ոմանք* . Քսաներորդի աւուր :

* *Ոմանք* . Վասն ցրտութեան ձմերայնոյ :

* *Ոմանք* . Եւ զատեալ որոշեցէք :

* *Ոմանք* . Այսպէս ժուժալ վշ՝ . և *ոմանք* . ժուժ կալ վշտաց :

* *Այլք* . Ընկալան յանձինս առնել :

* *Ոմանք* . Ըստ ամենայնի հրամայեցին :

* *Ոսկան* . Մինչև յամիսն առաջներորդ :

* *Ոմանք* . Եւ յորդուոցն Էմնովր՝ Անանիա... և Սամէաս :

Սկէթը՛եդոս, և Սաղ՛թոս*։ ²³Եւ յորդուոցն ղևտացուոց՝ Յոզապտոս, և Սենիս, և Կոնոս, այս ինքն է Սաղիտաս, և Փաթեաս, որ և Յուդաս, և Յովնաս։ ²⁴Ի սաղմոսասաց պաշտօնեիցն, Եղիասիբոս, Բաքուրոս։ ²⁵Ի դռնապանացն, Սաղոհիմոս, և Տողբանէս։ ²⁶Եւ յիսրայէլէ. յորդուոցն Փորոսայ՝ Յերամաս, և Յեդդիաս, և Մեղ՛քիաս, և Միաղէս, և Եղիագարոս, և Ասաբիաս, և Բանեաս։ ²⁷Եւ յորդուոցն Եղիակիմ՝ Մատթանիաս, Չաքարիաս, Յեզորիէլ, Յովադիոս, Յերիմովթ, և Այեդիաս։ ²⁸Եւ յորդուոցն Չաթոմ, Եղիադաս, Եղիասիմոս, Ոթոնիաս, Արիմովթ, և Սաբաթոս, և Չարգէաս։ ²⁹Եւ յորդուոցն Բեբեա՝ Յովաննէս, և Անանիաս, և Յովզաբդոս, և Եմաթոս։ ³⁰Եւ յորդուոցն Մանի՝ և Ղանոս, Սամուճոս, Յեդէոս, Յասուրոս, Յասաելոս, և Յերեմովթ։ ³¹Եւ յորդուոցն Ադդի՝ Նաթոս, և Մոոսիաս, Ղակունոս, Նաիդաս, Մատաթիաս, և Եսթէլ, և Բաղունոս, և Մանասէ*։ ³²Եւ յորդուոցն Աննաս՝ Եղիովնաս, և Ասսէաս, և Մեղ՛քիաս, և Սաբէոս, և Սիմոն, և Քոսամէոս։ ³³Եւ յորդուոցն Ասոմատ՝ Աննէոս, և Մատաթիաս, և Բանէուս, և Եղիփաղատ, և Մանասէ, և Սենէի։ ³⁴Եւ յորդուոցն Բաանի՝ Երեմիաս, և Մոմդիոս, Իսմաերոս, և Յուէլ, Սամբդէ, և Պէդիաս, և Անոս, Րաբասիոն, և Անասիբոս, և Մամնիտանեմոս, Եղիասիս, Բանուս, Եղիադի, Սոմէիա, Սեղեմիաս, Նաթանիաս։ Եւ յորդուոցն Եզովրայ՝ Այեմ, Եզրիէլ, Ազայէլ, Սամատոս, Չամբրի, Յովսէփ։ ³⁵Եւ յորդուոցն Նաուճայ՝ Չազիկէաս, Ղաբադիաս, Եդեսիուէլ, Բենեսիաս։ ³⁶Այսք ամենեքեան էին որոց առեալ էր զկանայս այլազգեացն. և արձակեցին ՚ի բայց զկանայս իւրեանց և զորդիս իւրեանց*։ ³⁷Եւ բնակեցին քահանայքն և ղևտացիք, և յիսրայէլէ՝ յերուսաղէմ, և ՚ի գաւառին. յամսամտին յամսեանն հինգերորդի. և որդիքն Իսրայէլի բնակեցին ՚ի բնակութիւնս իւրեանց*։ ³⁸Եւ ժողովեցան ամենայն բազմութիւնն միաբան, յընդարձակ տեղի կողմանն արևելից, առաջի դրան տաճարին. ³⁹և ասացին ցե՛զր քահանայապետ և պատմիչ օրինացն, զի բերցէ զօրէնսն Մովսիսի, զտուեալսն ՚ի տեառնէ Աստուծոյ Իսրայէլի. ⁴⁰և եբեր ՚ի մէջ Եզր զօրէնսն առաջի ամենայն արանց և կանանց, և առաջի ամենայն քահանայիցն։ Եւ լուան զօրէնսն Տեառն յամսամտին եւթներորդ ամսեանն*։ ⁴¹և կարդայր յառաջնում դրան տաճարին յընդարձակին, յառաւօտէ մինչև ցօր հասարակ առաջի ամենայն արանց և կանանց, և լսէին և ՚ի միտ առնուին ամենայն բազմութիւնն զօրէնսն տեառն Աստուծոյ*։ ⁴²Եւ

* Ոմանք. Եւ Սկեդդոդոս, և Սաղդա։
 * Ոմանք. Եւ Մատաթիաս և Սեսթէլ։
 * Յօրինակին պակասէր. Որոց առեալ էր։
 * Բազումք. Յամսեանն եւթներորդի։
 * Ոմանք. Չօրէնսն Մովսէսի որ ՚ի Տեառնէ յամսա՛։
 * Ոմանք. Եւ կարդայր Եզր յառաջնում դրան։

կայր Եզր քահանայ և պատմիչ օրինացն Տեառն 'ի վերայ փայտեղէն բեմի, զոր կազմեալ էր. ⁴³և կային մօտ առ նմա յաջմէ կողմանէ՝ Մատաթի, Սամուս, Անանիաս, Ազարիաս, Ուրիաս, Եզէկիաս, Բաաղսամոս* . ⁴⁴և յահեկէ կողմանէ՝ Փաղթես, Միսայէլ, Մեղ'քիաս, Ղովթաս, Ուրբոս, Նաբարիաս, Չաքարիաս* : ⁴⁵Եւ առեալ 'ի ձեռն Եզրի զգիրս օրինացն. քանզի նստէր մեծաւ փառօք առաջի ամենեցուն. և ամենայն բազմութիւնն նստէին առաջի նորա* : ⁴⁶Եւ յորժամ երաց զգիրս օրինացն՝ յոտն կացին ամենայն բազմութիւնն. և օրինեաց Եզր զտէր Աստուած բարձրեալ՝ զԱստուած զսաբաւովք և զամենակալ. ⁴⁷և միաբան ամենայն բազմութիւնն ասէր. Ամէն: Եւ ամբարձեալ զձեռս իւրեանց 'ի վեր՝ անկանէին յերկիր 'ի վերայ երեսաց իւրեանց, և երկիր պագանէին տեառն Աստուծոյ: ⁴⁸Եւ Յեսուս, և Աննուս, և Ասրաբիաս, և Յադիմոս, և Յակուբաս, Սաբատէոս, Աւդեաս, Մաննէաս, և Կադիտաս, Ազարիաս, և Յոզաբդոս, և Անանիաս Փիլաթոս* : ⁴⁹Այս էին ղևտացիքն, որ ուսուցանէին ժողովրդեանն զօրէնս Տեառն, և տային նոցա 'ի միտ առնուլ. և լնուին օրինօքն տեառն Աստուծոյ: ⁵⁰Եւ ասէ Ատտարատէս՝ ցեզր քահանայ և պատմիչ օրինացն Տեառն և ցղևտացիսն, որք ուսուցանէին զբազմութիւնն. ⁵¹ասէ ցնոսա առաջի ամենեցուն. Օրս այս է՝ օր սրբութեան Տեառն. և ամենեքեան են լուծեալք 'ի լսել օրինացն Տեառն. ⁵²զնացէք և երթայք կերայք զպարարտութիւն, և արբէք զքաղցրութիւն. և առաքեցէք զգիր այնոցիկ որք ո'չն ունիցին ինչ* . ⁵³Վասն զի սուրբ է օրս այս Տեառն, և մի՛ տրտմեցուցանէք զսա. քանզի տէր Աստուած է որ փառաւորեաց զմեզ* : ⁵⁴Եւ ղևտացիքն ամենայն հրամայեցին բազմութեանն՝ և ասեն. Օրս այս սուրբ է՝ և մի՛ տրտմեցուցանէք զսա: ⁵⁵Եւ ասեն ցբազմութիւնն. Որոյ կայցէ՝ կերիցէ և արբցէ՝ և ուրախ լիցի. և տացէ՛ այնմիկ որոյ ո'չն կայցէ, և եղիցին ամենեքեան ուրախ այսօր յոյժ. վասն զի լցայք և 'ի միտ առէք զբանս օրինաց Տեառն, յորս դուք ժողովեցայք, և մեք ուսուցայք ձեզ* :

* *Ոմանք.* Եւ կային մօտ առ նա:

* *Ոսկան.* Նաբարիաս Չաքարիաս:

* *Ոմանք.* Եւ առեալ 'ի ձեռս Եզրի:

* *Ոմանք.* Եւ Յեսուս և Աննոս... և Յակուբոս... և Անանիաս Փիլաթոս:

* *Յօրինակին բառս* զգիր, *չակերտիւ նշանակեալ, ընդօրինակողն իմանայ բառնալ զնոյն. և հանեալ 'ի կարգէ բնաբանին՝ 'ի լուսանցսն գրէ. զոր մեք թողաք 'ի բնաբանին համաձայն այլոց:*

* *Ոմանք.* Վասն զի սուրբ օրս այս Տեառն:

* *Ոմանք.* Եւ ասեն բազմութիւնն, որոյ կացցէ... որոյ ոչն կացցէ: *Ոսկան 'ի վախճանի յաւելու համար 56** Եւ ժողովեցան բովանդակ յերուսաղէն տօնել զուրախութիւնն, ըստ պատուիրանաց Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

Կատարեցաւ Եզր Առաջին*

ՀԱՆԳԱՍԱՆՔ ՉԼԽՈՑ ԵՐԿՐՈՐԴ ԵԶՐԱՅ

Գիրքս Եզրի՝ որ անուանեալ կոչի Ե՛զր Երկրորդ. զնոյն պատմութիւն երկրորդէ զոր Առաջին Եզրն. միայն ՚ի կարգս գլխոցն զանազանեալ. և այնու՛ ևս, զի է՛ ինչ զոր Առաջինն պատմէ և Երկրորդս ո՛չ: Արդ՝ զի առձեռն ունիցիս զհամաձայնութիւնն. զկարգ գլխոց Երկրորդս Եզրայ յանցն իւր տեղւոջ սևադեղով գտցես դրոշմեալ, և եթէ որուն գլխոյ Առաջնոյ գրոցն համաձայնին իւրաքանչիւր գլուխքն՝ կարմրադեղով առննթեր նոցին գտցես ստորագրեալ՝:

ԵԶՐԱՅ ԵՐԿՐՈՐԴ*

1

Գլուխ Ա

Ա/բ ¹Յառաջնուն ամին Կիւրոսի արքայի Պարսից, ՚ի կատարել բանին Տեառն ՚ի բերանոյ Երեմիայի մարգարէի. զարթոյց Տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից, և ե՛տ հրաման պատուիրանի յամենայն թագաւորութեան իւրուն. և գրեաց առ ամենեսեան օրինակ զա՛յս: ²Այսպէս ասէ Կիւրոս թագաւոր Պարսից. Չամենայն թագաւորութիւնս երկրի ե՛տ ինձ Տէր Աստուած երկնից. և նա՛ հրամայեաց ինձ առնել և շինել նմա տաճար յերուսաղէմ Յրէաստանի: ³Ո՛ր որ և իցէ ՚ի ձեզ յամենայն ժողովրդեան Տեառն, ընդ որուն է՛ Աստուած նորա ընդ նմա՛ ելցէ յերուսաղէմ Յրէաստանի, և շինեսցէ՛ զտուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի. և ինքն Աստուած որ բնակեալ է յերուսաղէմ, եղիցի՛ ընդ նմա՛: ⁴Եւ զամենայն պատրաստութիւն իւր առցէ ընդ իւր, և տարցի ՚ի տեղին յայն ուր ինքն բնակեսցէ. և առցէ այր ընդ իւր զամենայն կազմած իւր՝ որ ինչ և իցէ, արծաթեղէն և ոսկեղէն, և զա՛յլ կահ և զանասուն՝ հանդերձ ընկերօք իւրեանց առցեն ընդ իւրեանս ՚ի պատրաստութիւն տաճարին Տեառն Աստուծոյ յերուսաղէմ՝: ⁵Եւ յարեան իշխանք հայրապետաց որդւոցն Յուդայ և Բենիամինի, և քահանայքն և Ղևտացիք ամենեքեան՝ զորոց զարթոյց Տէր Աստուած զոգիս նոցա ելանել և շինել զտաճարն Տեառն Աստուծոյ յերուսաղէմ: ⁶Եւ ամենեքեան որ շուրջ էին զնոքօք՝ օգնէին և զօրացուցանէին զձեռս նոցա՛ տալով արծաթ և ոսկի, և զկահ և զանասուն, և ընծայիւք և պատարագօք

* Ի վախճանի ոմանք. Կատարունն Եզրայ Առաջին:

* Չհամենատարիւն գլխոց Երկրորդս Եզրասայ ընդ Առաջնոյ, որ ՚ի նախադրութեանս սևադեղով և կարմրադեղով ասի որոշել, որպէս և ունին ամենայն գրչագիր օրինակք. մեք գլխագրովք և բոլորագրովք նշանակեցաք:

* Ի վերնագիրն ոմանք ունին՝ Եզր. կամ՝ Եզրաս Երկրորդ:

* Ոմանք. Յամենայն ՚ի ժողովրդեան Տեառն:

* Յօրինակին պակասէր. Եւ առցէ այր ընդ իւր զամենայն:

լցուցանէին զնոսա: ⁷Եւ թագաւորն Կիւրոս ե՛տ բերել զամենայն սպասս և զկահ տաճարին Տեառն զոր ա՛ռ Նաբուքոդոնոսոր յԵրուսաղէմէ. և ետ ՚ի պահ ՚ի տուն աստուածոց իւրոց. ⁸Ետ բերել զայն ամենայն Կիւրոս թագաւոր Պարսից ՚ի ձեռն Միթրադատայ գանձաւորի, և համարեալ՝ ետ ցՍամանասար իշխան Յուդայ: ⁹Եւ ա՛յս է թիւ համարուցն. զոհարանք ոսկեղէնք երեսուն, և զոհարանք սպասուն արծաթեղէնք՝ հազար քսան և ինն՝. ¹⁰սկաւառակք ոսկիք՝ երեսուն, և արծաթեղէնք՝ կրկին հազար. ¹¹ամենայն կահք ոսկեղէնք և արծաթեղէնք՝ հինգ հազար և չորեքհարիւր:

Բ/ե Եւ ընդ ամենայն որ էին ընդ Սամանասարայ և ընդ Ելելոյ գերութեանն ՚ի Բաբելոնէ յԵրուսաղէմ:

2

Գլուխ Բ

¹Այս են որդիքն Իսրայէլի, ըստ իւրաքանչիւր տեղեացն, որ ելանէին ՚ի գերութենէն զոր գերեաց Նաբուքոդոնոսոր թագաւոր Բաբելացոց ՚ի Բաբելոն, զորս և դարձոյց Կիւրոս ՚ի Բաբելոնէ յԵրուսաղէմ և ՚ի Յրեաստան՝ ա՛յր յիւրաքանչիւր քաղաք: ²Եւ որք էին ելեալ ընդ Ջորաբաբելի, Յեսուս, Նեեմի, Սարեաս, Յռէի, Ղեաս, Մարդոքէս, Բաղասան, Մասփար, Բագուար, Յռէուս, Բաանա: Այս է թիւ ժողովրդեան որդւոցն Իսրայէլի՝: ³Որդիք Փորոսայ՝ երկու հազար հարիւր եւթանասուն և երկու. ⁴որդիք Սափատայ՝ չորեք հարիւր եւթանասուն և երկու. ⁵որդիք Արեսայ՝ եւթն հարիւր եւթանասուն և վեց. ⁶որդիք Նեփթաղիմի Սովաբացոյ, և որդւոց Յեսուայ, և Յռովաբայ՝ երկու հազար ութ հարիւր և երկուտասան: ⁷Որդիք Յեղամայ՝ երկու հազար երկերիւր յիսուն և չորս. ⁸որդիք Ջատոնայ՝ ինն հարիւր քառասուն և հինգ. ⁹որդիք Քորբայ՝ եւթն հարիւր յիսուն. ¹⁰որդիք Բանեայ՝ հազար քառասուն և ութ. ¹¹որդիք Բիբեայ՝ ութ հարիւր քսան և երեք: ¹²Որդիք Արգեայ՝ երեք հազար երեք հարիւր քսան և երկու՝. ¹³որդիք Ադոնիկամայ՝ ութ հարիւր եւթանասուն և եւթն. ¹⁴որդիք Բոսերայ՝ երկու հազար ութ հարիւր և վեց. ¹⁵որդիք Ադիհնեայ՝ չորեք հարիւր յիսուն և չորս: ¹⁶Որդիք Ագերեգեկիայ՝ իննսուն և վեց. ¹⁷որդիք Բեսսեայ՝ երեք հարիւր քսան և երեք՝. ¹⁸որդիք Գաբերի՝ իննսուն և հինգ. ¹⁹որդիք Բեթղեհէմ՝ հարիւր քսան և երեք. ²⁰որդիք Նետափայ՝ յիսուն և վեց. ²¹որդիք Անաթովթ՝ հարիւր քսան և ութ, ²²որդիք Ասմովթ՝ քառասուն և երկու: ²³Որդիք Կարիաթարիմ Քափիրայ և Բերովթ՝ եւթն հարիւր քառասուն և երեք. ²⁴որդիք Յռասամայ և Գայեբայ՝ հազար քսան և մի: ²⁵որդիք Մաքմաս հարիւր քսան և երկու. ²⁸որդիք Բեթեղեայ և Յեգեայ՝ չորեք հարիւր քսան և երեք. ²⁹որդիք Նաբովթ՝ յիսուն և երկու. ³⁰որդիք Մակեբիս՝ հարիւր յիսուն և վեց. ³¹որդիք Եղամարայ՝ հազար երկերիւր յիսուն և չորս՝. ³²որդիք Երամ՝ երեք հարիւր քսան. ³³որդիք Ղիդղոն Ղովդադ ՚ի Ղեոնայ՝ եւթն հարիւր քսան և հինգ՝. ³⁴որդիք Յերիթոյ՝ երեք հարիւր քառասուն և հինգ.

* Ոմանք. Այս է թիւ համարոցն:

* Այլք. Յեսու. Նեեմի. Սարեաս:

* Ոսկան. Որդիք Արգեայ՝ հազար:

* Ոսկան. Քսան և հինգ:

* Այլք. Որդիք Եղեմարայ:

* Ոմանք. Ջովդադիդ և Ոնայ:

³⁵որդիք Սեննայ՝ երեք հազար վեց հարիւր երեսուն: ³⁶Եւ որդիք քահանայիցն, որդիք Յեղուայ տանն Յեսուայ Յովսեփէկեանց՝ ինն հարիւր եւթանասուն և երեք. ³⁷որդիք Եմեր՝ հազար յիսուն և երկու. ³⁸որդիք Փասուր՝ հազար երկերիւր քառասուն և հինգ. ³⁹որդիք Երեմ՝ հազար եւթն հարիւր: ⁴⁰Եւ Ղևտացիքն. որդիք Յեսու և Կադմիէլ որդւոցն Սեդուիա՝ եւթանասուն և չորս: ⁴¹Եւ որ էին սաղմոսասացք և երգեցիկք. որդիքն Ասափայ՝ հարիւր քսան և ութ: ⁴²Որդիք դռնապանացն. որդիք Եղում. որդիք Ատտեր. որդիք Տեղմոն. որդիք Ակուբբ. որդիք Ատիտայ. որդիք Սուբայի. ամենեքեան հարիւր երեսուն և ինն*: ⁴³Եւ Նաթանայ՝ որդիք Առաղայ. որդիք Ասուփայ. որդիք Տաբովթ. ⁴⁴որդիք Կերաւս. որդիք Սիայ. որդիք Փագովն. ⁴⁵որդիք Ղաբանայ, որդիք Ագաբայ, որդիք Ակուբ. ⁴⁶որդիք Ագաբ. որդիք Սաղամէի. որդիք Անան. ⁴⁷որդիք Գեդդէլ. որդիք Գաար. որդիք Յազաիայ: ⁴⁸Որդիք Յաասովն. որդիք Նեկովդան. որդիք Գազամ*. ⁴⁹որդիք Գազայ. որդիք Փասէ. որդիք Բասի*. ⁵⁰որդիք Ասենայ. որդիք Մովանիմ. որդիք Նեփուսիմ. ⁵¹որդիք Բակուբ. որդիք Ակուփայ. որդիք Արուր. ⁵²որդիք Բաւաղովթ. որդիք Միդայ. որդիք Արսայ. ⁵³որդիք Բարկոս. որդիք Սիսարայ. որդիք Թամայ. ⁵⁴որդիք Նեսուայ. որդիք Ատուփայ: ⁵⁵Որդիք ծառայից՝ Սողոմոնի. որդիք Ստտէ. որդիք Ատփերաթ. որդիք Փակդուրայ. ⁵⁶որդիք Յեղայ. որդիք Կերդովն. որդիք Կերդիէլ. ⁵⁷որդիք Սափատիայ. որդիք Ատտիդ. որդիք Փաքերովթայ Ասաբում. որդիք Եմէի: ⁵⁸Ամենայն որդիք Նաթանայ, և որդիք ծառայից Սողոմոնի, երեք հարիւր իննսուն և երկու: ⁵⁹Եւ այն են Էլեալքն՝ ՚ի Թեղմեղ՛էք Թեղարեսա, Քերուբ՝ Եդար՝ Եմեր. և ո՛չ կարացին պատմել զտուն հարցն իւրեանց, եթէ իցէ զաւակ նոցա յԻսրայէլի: ⁶⁰Որդիք Ղաղաւայ. որդիք Տուբիու. որդիք Նեկովդայ, վեց հարիւր յիսուն և երկու*: ⁶¹Եւ յորդոց քահանայիցն՝ որդիք Աբաիայ. որդիք Ակուս. որդիք Բերզեղայի. իբրև առին ՚ի դատերացն Բերզեղայի Գաղաղացոյ իւրեանց կանայս, և եղև մոռացումն անուանց նոցա*: ⁶²Եւ խնդրեցաւ ազգահամար գրոց նոցա՝ և ո՛չ գտաւ, և որոշեցին զնոսա ՚ի քահանայիցն. ⁶³և ասէ Անամեսիթա ցնոսա. Չէ՛ արժան ձեզ ուտել ՚ի սրբութեան սրբութեանցն՝ մինչև յարիցէ քահանայապետ՝ և յայտնեալ ցուցցէ, և նովաւ լուսաւորեցի ամենայն մինչև ՚ի սպառ: ⁶⁴Եւ էր ամենայն եկեղեցին միանգամայն, չորք բարք և երկու հազար և երեք հարիւր վաթսուն. ⁶⁵առանց ծառայից և աղախնաց իւրեանց. և կրտսերք նոցա եւթն հազար երեք հարիւր երեսուն և հինգ. և երգիչք սաղմոսասաց նոցա արք և կանայք՝ երկերիւր*: ⁶⁶Չիք նոցա՝ եւթն հարիւր երեսուն և վեց. ջորիք նոցա՝ երկերիւր քառասուն և եւթն. ⁶⁷ուղտք նոցա՝ չորեք հարիւր երեսուն և հինգ. էչք նոցա՝ վեց հազար եւթն հարիւր քսան: ⁶⁸Եւ իշխանք հայրապետացն որք եկին ՚ի տունն Տեառն յերուսաղէմ, նպաստաւորեցան ՚ի տունն Աստուծոյ ՚ի պատրաստութիւն շինութեան նորա. ⁶⁹որչափ և էր ՚ի զօրութիւն նոցա, ետուն ՚ի կազմած գանձու զործաւորութեանն. ոսկի՝ դիդրաքմայս վեց բար և հազար, և հարիւր պատմուճանս քահանայիցն*:

* *Ոմանք.* Որդիք Ակուբբ:

* *Ոմանք.* Որդիք Գազամ:

* *Ոմանք.* Որդիք Փագէ:

* *Ոմանք.* Որդիք Գաղաւայ:

* *Յօրինակին.* Բերզեղայի Գաաղացոյ իւր՝: *Ուր ոմանք.* Գաղաղացի, յիւրեանց:

* *Ոսկան.* Եւ կրտսերք նոցա հազարք երեք հա՛: *Ոմանք.* Երեսուն և եւթն. և երգիչք սաղմոսաց նոցա արք:

* *Ոմանք.* Էր ՚ի զօրութեան նոցա:

Գ/զ ⁷⁰Եւ նստան քահանայքն և Ղևտացիքն, և ՚ի ժողովրդոցն, և երգեցիկքն, և դռնապանքն, և Նաթանացիքն ՚ի քաղաքս իւրեանց. և ամենայն Իսրայէլ յիւրաքանչիւր քաղաքս:

3

Գլուխ Գ

¹Եւ ժամանեաց եհաս ամիսն եւթներորդ. և էին որդիքն Իսրայէլի յիւրաքանչիւր քաղաքս. և ժողովեցան ամենայն ժողովուրդն իբրև զմի այր յերուսաղէմ*։ ²Եւ յարեաւ Յեսու Յովսեփեկեանց՝ և եղբարք նորա քահանայք. և Ջորաբաբէլ որդի Սաղաթիելի, և եղբարք նորա վեց. և շինեցին սեղան՝ զոհից Տեառն Աստուծոյ Իսրայէլի մատուցանել ՚ի վերայ նորա ողջակէզս. ըստ գրելոցն յօրէնսն Մովսիսի առնն Աստուծոյ։ ³Եւ պատրաստեցին զզոհարանն ըստ կազմութեան իւրուն. վասն զի կասկածէին յազգաց երկրին. և մատուցին ՚ի վերայ նորա ողջակէզս վաղվաղակի Տեառն Աստուծոյ իւրեանց. մի՛ ընդ առաւօտս, և մի՛ ընդ երեկոյս։ ⁴Եւ արարին զտօն տաղաւարահարացն ըստ գրելոցն, և ողջակէզս օրըստօրէ ՚ի մի թուեալ որպէս և պատուիրեալ էր նոցա։ ⁵Եւ մատուցանէին այլ ևս ողջակէզս յամսագլուխս, և ՚ի շաբաթս, և յամենայն տօնս տարեկանաց Տեառն սրբութեանց. և զամենայն ականայիցն զոր մեղանչէին Տեառն։ ⁶Եւ յառաջնում ամսեանն եւթներորդի սկսան մատուցանել ողջակէզս Տեառն Աստուծոյ. և տանն ո՛չ ևս էր հիմն արկեալ*։ ⁷Եւ ետուն արծաթ քարահատացն և հիւսանցն, և կերակուրս և ըմպելիս և ձէթ՝ Սիդոնացւոց՝ և Տիրացւոց, և բերէին փայտս մայրս ՚ի Լիբանանէ ընդ ծով ՚ի Յոպպէ՝ որպէս և հրամայեաց նոցա Կիրոս թագաւոր Պարսից։

Դ/է ⁸Եւ յերկրորդ ամի ելանելոյ նոցա յորժամ եկին ՚ի տաճարն Տեառն յերուսաղէմ յամսեանն երկրորդի՝ սկսաւ Ջորաբաբէլ Սաղաթիելեանց՝ և Յեսու Յովսեփեկեանց, և եղբարք նոցա, և քահանայքն և Ղևտացիքն և ամենայն եկեալքն ՚ի գերութենէն յերուսաղէմ. և կացուցին զՂևտացիսն ՚ի քսանամենից և ՚ի վեր՝ վերակացուս ՚ի վերայ գործոց տանն Տեառն։ ⁹Եւ Յեսու, և որդիք նորա և եղբարք նորա. Կադմիէլ և որդիք նորա. և որդիք Յուդայ վերակացուք ՚ի վերայ գործոյ տանն Տեառն. որդիք Ենադադ և եղբարք նորա Ղևտացիք*։ ¹⁰Եւ արկին հիմն, և սկսան շինել զտունն Տեառն. և կային քահանայքն զգեցեալ զպատմութեանսն, և հարկանէին զփողս իւրեանց. և Ղևտացիքն որդիք Ասափայ ծնծղայիւր օրհնէին զՏէր Աստուած՝ որպէս և կարգեաց Դաւիթ թագաւոր Իսրայէլի*։ ¹¹Եւ ասեն այր ցընկեր իւր. Խոստովան եղերուք՝ և զոհացարուք զՏեառնէ, զի քաղցր է զի յաւիտեան է ողորմութիւն նորա ՚ի վերայ Իսրայէլի։ Եւ ամենայն ժողովուրդն մեծածայն օրհնէին զՏէր Աստուած Իսրայէլի. վասն զի անկան հիմունք տանն Տեառն*։ ¹²Եւ բազումք ՚ի քահանայիցն՝ և յՂևտացւոցն, և յիշխանաց՝ և ՚ի հազարապետացն՝ և ՚ի ծերոցն՝ որոց տեսեալ էր զտաճարն Տեառն. և յայնժամ տեսին աչօք իւրեանց զհիմնն նորա, լային մեծածայն. և

* Ոսկան. Եւ ժամանեալ էհաս ա՛՛:

* Ոսկան. Եւ յառաջնում աւուր ամսեանն:

* Ոսկան. ՚Ի վերայ գործոց տանն Տեառն:

* Ոմանք. Որպէս և գրեաց Դաւիթ թագաւոր:

* Ոսկան. Վասն զի արկան հիմունք տանն:

ժողովուրդքն ամենայն նշանակեին զուրախութիւն, և բարձրացուցանեին զձայնս իւրեանց* .¹³ և ո՛չ ոք էր ՚ի ժողովրդեանն որ կարէր գիտել՝ և լսել զձայն ուրախութեանն. վասն զի ժողովուրդն աղաղակէր մեծածայն, և լսելի լինէր ձայնն մինչև ՚ի հեռուստ տեղիս* :

4

Գլուխ Դ

¹Եւ լուան որք նեղէին զՅուդայ և զԲենիամին, եթէ որդիքն Իսրայէլի ելեալքն ՚ի գերութենէն շինեն զտունն Աստուծոյ Իսրայէլի* .² և մերձեցան առ Ջորաբաբել և առ իշխանս հայրապետացն, և ասեն ցնոսա. Շինեսցու՛րք և մեք ընդ ձեզ, և որպէս և դուք խնդրեսցուք ՚ի Տեառնէ Աստուծոյ ձերմէ. քանզի և մեք նոյնպէս զոհեմք զոհս, յօրէ յօրմէ Ասորդան թագաւոր Ասորոց ած զմեզ այսր: ³Եւ ասեն ցնոսա Ջորաբաբել՝ և Յեսու Յովսեփեկեանց՝ և մնացորդք իշխանաց հայրապետացն Իսրայէլի. Ո՛չ է արժան մեզ և ձեզ հասարակ շինել զտուն Տեառն Աստուծոյ մերոյ, մեք մեզէ՛ն իսկ շինեսցուք զտուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի, որպէս հրամայեաց մեզ Կիրոս թագաւոր Պարսից:

Ե/զ ⁴Եւ ժողովուրդք երկրին այնորիկ լքուցանեին զձեռս ժողովրդեանն Յրէաստանի, և խափանեին զնոսա ՚ի շինելոյ. ⁵ և կալեալ վարձաւորս՝ խորհէին զնոսա խափանել զամենայն աւուրս Կիրոսի թագաւորութեանն Պարսից, մինչև յաւուրս Դարեհի Պարսից արքայի: ⁶ Ի թագաւորութեանն Ասարսոյեռու Պարսից՝ իսկզբան թագաւորութեան նորա գրեցին թուղթ որք բնակեալ էին ՚ի Յրէաստանի և յերուսաղէմ* : ⁷ Եւ գրեցին յաւուրս Արսաստի՝ Սիթրիդատես, Տաբեթ, հանդերձ և այլ ծառայիւք նորա հարկահանօքն, և գրեցին գիր Ասորերէն. և էր զնա թարգմանեալ Յռէու՛մ Բաաղտիմ* : ⁸ Եւ այս են բանք թղթոյն զոր առաքեցին նոքա առ Արսասա թագաւոր. Ծառայք քո որ ենք բնակեալ յայսմ կողմն Գետոյն* . ⁹ Յռէու՛մ Բաաղտեմ, և Սամսայի գրիչ, և այլ ևս ծառայակիցք մեր, Դեենէս, Սիսաթ, Աքայիէ, Տարփաղէէ, Ափերսէէ, Ոքուէէ, Բաբելոնէէ, Սուսանա, Քեէդաւէէ* . ¹⁰ և այլ մնացեալ ազգք, զորս բնակեցոյց Ասենափար մեծ և պատուական ՚ի քաղաքս Սոմարոն, այսինքն Սամարիա յայս կողմն Գետոյն. ¹³ առ Արսասա թագաւոր խաղաղութիւն: Այժմ գիտութիւն լիցի քեզ թագաւոր՝ որ եթէ քաղաքն այն շինեսցի, և պարիսպք նորա կանգնեսցին, հարկս քեզ ո՛չ ոք տայ* . ¹⁴ այլ և ընդդիմադարձ ևս լիցին թագաւորաց. և զայնպիսի յանդգնութիւն մեք ընդդէմ թագաւորաց՝ ո՛չ կամիմք տեսանել. և վասն այսր ամենայնի գրեցաք առ ձեզ թագաւոր* . ¹⁵ զի տեսցեն և արասցես, և

* Ոմանք. Եւ յիշխանաց և ՚ի հայրապետացն և ՚ի ծե՛:

* Ոմանք. Մինչև ՚ի վերուստ տեղիս:

* Ոմանք. Շինէին զտուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

* Յօրհնակին. Ասարսոյեռու Պար՛:

* Ի լուս՛. Յաւուրս Արտաշէսի Սիթրի՛. համաձայն ոմանց ՚ի բնաք՛: Ոսկան. Հանդերձ և այլովք ծա՛:

* Ոմանք. Են բանք թղթին... յայս կողմն Գետոյն: Յօրհնակին ՚ի լուս՛. չակերտիւք նշանակի թուղթս, մինչև ցհամարն 17:

* Յօրհնակին. Աքուէէ: Ոմանք. Սփարսաթաքայիէ. Տար՛:

* Ոմանք. Առ Արսաս թագաւոր խաղաղութեան:

* Ոմանք. Եւս լինին թագաւորաց:

գտցես 'ի գիրս յիշատակարանաց հարցն քոց, և գիտացեալ եթէ քաղաքս այս ապստամբողաց է. և յամենայն ժամ ընդդէմ կացին թագաւորաց, և ապաստան են ամենայն փախստէից յամենայն ժամանակս յաւիտենից. և վասն այսորիկ քաղաքս այս իսկ աւերեցաւ: ¹⁶Արդ տուաք մեք քեզ գիտել թագաւոր, եթէ քաղաքս այս շինեսցի՝ և պարիսպք սորա կանգնեսցին՝ չէ՛ քեզ խաղաղութիւն: ¹⁷Եւ առաքեաց թագաւորն առ Յոնուճ Բաաղտեմա՝ և Կամսայի գրչի, և այլ ծառայակցաց նոցա որք բնակեալ էին 'ի Սամարիա, և մնացորդացն յայն կողմն Գետոյն, և ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ * . ¹⁸զհարկահանս զորս առաքեցէք առ իս, մտեալ առաջի իմ և տեղեկացուցեալ ինձ զամենայն. ¹⁹հասի՛ 'ի վերայ, և գտի զի քաղաքդ այդ յաւիտեանս ժամանակաց ապստամբ է, և ընդդէմ թագաւորաց լեալ է. ²⁰և թագաւորք հզօրք և բռնաւորք կացեալ են յերուսաղէմ, բռնացեալ կալեալ զայն կողմն արևմտից՝ յայն կողմն եփրատ գետոյ: Արդ՝ դիք 'ի վերայ դոցա հարկս և հա՛սս, զի մի՛ և այլ կամակարեալ բռնացին* : ²¹Արդ այժմ տուեալ ձեզ տեղեկութիւն, երթայք արգելէք և խափանեցէք զգործս նոցա, զի մի՛ շինեսցի քաղաքն. ²²և մի՛ ներէք նոցա և թողացուցանէք, այլ փոյթ յանձին կալեալ պահանջել զամենայն հարկս և զհասս. զի մի՛ երբէք բազմացին և զօրացին, և լիցին ընդդէմ թագաւորաց* : ²³Յայնժամ հարկահան Արսասաս թագաւորի՝ այսինքն է Արտաշիսի՝ բերեալ կարդաց զգիրն առաջի Յոնսիմայ՝ և Սամայի գրչի, և ծառայակցաց նորա. և ելեալ փութապէս յերուսաղէմ և 'ի Յրէաստան մեծաւ զօրութեամբ՝ և այրուծիով՝ արգելին և խափանեցին զՅրէայսն 'ի շինելոյ* : ²⁴Յայնժամ խափանեալ դատարկացաւ զործ տաճարին Տեառն Աստուծոյ յերուսաղէմ. և էր դատարկացեալ մինչև յերկրորդ ամն Դարեհի արքայի Պարսից:

5

Գլուխ Ե

Ձ/ը ¹Եւ մարգարէանային Անգեաս և Ջաքարիաս Աղդովայ, մարգարէանային 'ի վերայ Յրէաստանի և Երուսաղէմի յանուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի* : ²Յայնժամ յարեան Ջորաբաբէլ Սաղաթիւեանց, և Յեսու Յովսեդեկեանց՝ և սկսան շինել զտուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի, և միաբանեալ ընդ նոսա մարգարէքն Աստուծոյ օգնէին նոցա: ³Յայնմ ժամանակի եկն առ նոսա Թաթանա իշխան կողմանց գետոյն եփրատու, և Սաթրաբուզան, և ծառայակիցք նոցա, և ասեն ցնոսա. Ո՞ հրամայեաց ձեզ շինել զտունս զայս, և կամ ո՞ր բանիւ կանգնեցէք զաշտարակս դորա* ⁴և կամ զի՞նչ անուանք են արանցն այնոցիկ որք են առաջնորդք շինելոյ զքաղաքս զայս: ⁵Եւ էին աչք Տեառն Աստուծոյ 'ի վերայ Յրէիցն դարձելոցն 'ի գերութենէն. և ո՛չ խափանեցին

* Ոսկան 'ի լուս՝ Եւ Սամսայի գրչի, և այլ:

* Ոսկան. Եւ այլ կամակորեալ բռնացին:

* Ոմանք. Եւ թուլացուցանէք... յանձին կալեալ պահանջեսցիք զամենայն հարկս:

* Ոսկան. Եւ Սամսայի գրչի, և ծառայակցաց նոցա: Ոմանք. Ջօրութեամբ, և այր և ձիով:

* Յօրինակին՝ թերևս վրիպակաւ գրչի յաւելեալ է՝ յետ Ջաքարիաս (և) Աղդովայ. զորով զանց արարաք դնելով համաձայն այլոց՝ և Ջաքարիաս Աղդովայ. այսինքն՝ որդի Աղդովայ. որպէս դնի ստորև Գլ. 2 14:

* Ոմանք. Ջաշտարակս սորա:

գնոսա մինչև տացեն գիտել Դարեհի արքայի. և յայնժամ առաքեցին զհարկահանս վասն իրացս այսոցիկ՝ զի տեղեկացին գրով: ⁶Եւ այս է գրեալն. Թաթանա իշխան կողմանց գետոյն, և Սաթրաբուզան՝ և ծառայակիցք նորա, Փարսաքեէ և Ռեսիմ*.⁷ Դարեհի թագաւորի խաղաղութիւն բազում.⁸ զիտութիւն լիցի թագաւորիդ, զի երթեալ մեր յերկիրն Զրէաստանի՝ ի քաղաքն Երուսաղէմ, տեսաք զտաճարն Տեառն Աստուծոյ մեծի, զի շինէին ընտիր քարամբք, և փայտս պահանկս դնէին յորմսն. և գործն էր յաջողակ, և յառաջէր ՚ի ձեռն նոցա*:⁹ Յայնժամ հարցաք ցօերս նոցա և ասեմք. Ո՞ հրամայեաց ձեզ շինել զտունս զայս, և կամ ո՞ր բանիւ հաստատեք զդա*:¹⁰ Եւ խնդրեալ զանուանս առաջնորդացն, զի տացուք տեղեկութիւն ձեզ. և զի գրեսցուք զանուանս արանց իշխանաց նոցա:¹¹ Եւ զայս պատասխանի արարեալ Զրէիցն ասեն ցմեզ. Մեր ենք ծառայք Տեառն Աստուծոյ երկնի և երկրի, և շինեմք զտունս զայս որպէս և է՛ր շինեալ յառաջ քան զբազում ամս, զոր շինեաց թագաւորն Իսրայէլի մեծն Սողոմոն. ըստ այնմ օրինակի և մեք հաստատեմք զսա:¹² Վասն զի հարքն մեր բարկացուցին զԱստուած երկնի և երկրի. և ե՛տ գնոսա ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացոց և Քաղդէացոց, և զտունս զայս քակեաց, և զժողովուրդն պանդխտեցոյց ՚ի Բաբելոն:¹³ Եւ յառաջնում ամի Կիւրոսի թագաւորի Բաբելացոց, Կիւրոս թագաւոր հրամայեաց շինել զտունս զայս Տեառն Աստուծոյ*:¹⁴ Եւ զկահ տանս այսորիկ զարծաթեղէնս և զոսկեղէնս՝ զորս Նաբուքոդոնոսոր ան յերուսաղէմէ, և եկն եբեր ՚ի տուն աստուածոց իւրոց. առեալ զայն Կիւրոսի թագաւորի ՚ի տանէ թագաւորին, և ետ ցՍամանասար զանձաւոր*.¹⁵ և ասէ ցնա. Չամենայն սպասդ և զկահ ան և ե՛րթ յերուսաղէմ ՚ի տուն Տեառն որ է անդ. և տա՛ր դի՛ր զկահդ ՚ի տեղոջ իւրում:¹⁶ Յայնժամ Սամանասար եկն՝ և արկ զհիմն տաճարիս Տեառն Աստուծոյ յերուսաղէմ. և յայնմ հետէ շինեմք, և ո՛չ ևս է կատարեալ:¹⁷ Արդ եթ բարւո՛ք թուի քեզ թագաւոր, այց արա և տես ՚ի տունս պահպանութեան գրոց յիշատակարանաց թագաւորաց Բաբելացոց. զի զիտացես թէ արդարև Կիւրոս թագաւորն հրամայեաց շինել զտունս Տեառն ՚ի Զրէաստանի յերուսաղէմ. և տեղեկացեալ քո թագաւոր վասն իրացս այսոցիկ՝ առաքեսջի՛ր առ մեզ*:

6

Գլուխ Զ

¹Յայնժամ Դարեհ թագաւոր այց արար խնդրեաց և եգիտ ՚ի տունս թագաւորաց գրոց յիշատակարանացն ՚ի Բաբելոնի:² Եւ գտեալ յԱմաթստի քաղաքի Բատանացոց՝ զլուխ մի գրոյ տումարի. և զայս ինչ գրեալ էր ՚ի գիրս յիշատակարանին*:³ Յամին առաջնում Կիւրոսի. Կիւրոս թագաւոր հրաման ետ

* Ոմանք. Սասանա իշխան կող՝... և ծառայակիցք նոցա:

* Ի լուս՝ Պահանգս դնէին. համաձայն այլոց ՚ի բն՝: Այլք. Եւ յառաջէր ՚ի ձեռս նոցա:

* Ոմանք. Զարցաք ցօերս նոցա... բանիւ հաստատեցէք զդա:

* Ոմանք. Կիւրոսի արքայի Բաբել՝:

* Յօրինակին. ՅՍամանասար զան՝:

* Այլք. Պահպանութեանց գրոց:

* Ոսկան. Քաղաքի եկբատանացոց: Ոմանք. Գրոց տումարի:

վասն տանն Տեառն որ յերուսաղէմ. ասէ. Շինեսցի՛ տաճարն Տեառն, և տեղին ուր զոհեն զզոհսն Տեառն: Եւ ե՛տ զչափ բարձրութեանն կանգունս վաթսուն, և լայնութեանն կանգունս վաթսուն* .⁴ և կարգք երեք ՚ի զօրաւոր քարանց. և կարգ մի փայտեղէն. և այսպէս շինեսցի և յարկցի ամենայն տաճարն: ⁵Եւ զկահ տանն Տեառն՝ զարժաթեղէնս և զոսկեղէնս զոր եբեր Նաբուքոդոնոսոր ՚ի տանէ Տեառն յերուսաղէմէ՝ և ե՛ր ՚ի Բաբելոն. արդ տացին ՚ի բա՛ց՝ և տարցին ՚ի տաճարն Տեառն յերուսաղէմ. և երթեալ տարցին ՚ի տեղի իւր ՚ի տունն Աստուծոյ ուր լեալ էր* : ⁶Յայնժամ Դարեհ ետ զգիր հրամանիս իշխանաց կողմանց Գետոյն. Սաթրաբուզանայ և ծառայակցացն նորա ՚ի կողմանս Գետոյն, և և՛ս ՚ի հեռագոյն տեղիս* : ⁷Եւ արդ յայսմ հետէ թո՛յլ տուք շինել զտունն Աստուծոյ, իշխանացն Զրէից և ծերոցն Իսրայէլի, և շինեսցեն զտունն Աստուծոյ ՚ի տեղուց իւրում: ⁸Եւ ի՛մ հրամայեալ՝ մի՛ ոք արգելցէ զծերսն Իսրայէլի ՚ի շինել զտուն Տեառն Աստուծոյ իւրեանց. և յիշխանութենէ թագաւորութեան իմոյ որ են հարկահանք կողմանց Գետոյն ամենայն զգուշութեամբ տացեն զծախս արանցն այնոցիկ՝ և մի՛ խափանեսցեն: ⁹Եւ զորդիս ցլուց՝ և խոյս, և ամիկս յողջակէզս Տեառն Աստուծոյ երկնից. ցորեան, և աղ, և գինի, և ձէթ, որպէս և հրամայեսցեն քահանայապետքն յերուսաղէմ. և լիցի անխափան տուեալ օր ըստ օրէ որպէս և խնդրեսցեն. ¹⁰և մատուցեն պատարագ ՚ի հոտ անուշից Տեառն Աստուծոյ երկնից, և արասցեն աղօթս վասն կենաց թագաւորի՝ և որդւոց նորա: ¹¹Եւ յինէ՛ն ել հրամանս այս. և ամենայն մարդ որ կացցէ ընդդէմ հրամանի իմոյ՝ քակեսցի՛ տուն նորա, և առեալ փայտ ՚ի տանէ նորա ուղղեսցեն՝ և բւեռեսցեն զայրն ՚ի նմա որ եկաց ընդդէմ հրամանի իմոյ. և եղիցի նմա ՚ի նախատինս յաւիտենից* : ¹²Եւ Աստուած՝ որոյ բնակեալ է անուն նորա անդ՝ ելցէ և աւերեսցէ զթագաւորութիւնն և զժողովուրդն, որ յանդգնեցաւ ձգել զծեռն իւր և արգելուլ ապականել զտունն Աստուծոյ որ յերուսաղէմ: Ես Դարեհ թագաւոր՝ եղի զհրամանս զայս, և մի՛ ոք իշխեսցէ անցանել: ¹³Յայնմ ժամանակի իշխան կողմանց Գետոյն՝ և Սաթրաբուզան և ծառայակիցք նորա, առ որս առաքեաց Դարեհ թագաւոր, վաղվաղակի կատարէին զհրամանս նորա: ¹⁴Եւ ծերքն Զրէից՝ և Ղևտացիքն շինէին. ՚ի ժամանակս մարգարտութեանն Անգեայ և Ջաքարիայ որդւոյ Ադդոլայ:

Է/թ Եւ շինեսցին և հաստատեսցին ըստ հրամանին Տեառն Աստուծոյ Իսրայէլի. և որպէս հրամայեսցին Կիւրոս թագաւոր՝ և Դարեհ. և ՚ի ժամանակս Արտասասայ թագաւորին Պարսից: ¹⁵Եւ որ օր երե՛ք էր ամսոյն Ադարայ՝ յամին վեցերորդի Դարեհի արքայի կատարեցա՛ւ տաճարն: ¹⁶Եւ արարին որդիքն Իսրայէլի քահանայքն՝ և Ղևտացիքն, և որք ելեալ էին ՚ի գերութենէ նաւակատիս տանն Տեառն մեծաւ ուրախութեամբ: ¹⁷Եւ մատուցանէին ՚ի նաւակատիս տանն Տեառն զուարակս հարիւր, խոյս երկերիւր, զառինս չորեքհարիւր. և ամիկս յայծեաց վասն մեղաց ամենայն Իսրայէլի, երկոտասան՝ ըստ թուոյ ցեղիցն Իսրայէլի: ¹⁸Եւ կացուցին զքահանայսն ըստ տեղեաց իւրեանց, և զՂևտացիսն ըստ վիճակի բաժանմանն իւրեանց ՚ի սպասաւորութիւն Տեառն Աստուծոյ յերուսաղէմ. երկու հազար երկերիւր որպէս և գրեալ է ՚ի գիրս Մովսիսի* : ¹⁹Եւ

* *Յօրինակին ՚ի լուս՝. չակերտիւք նշանակի յիշատակարանս, մինչև ցիւցարն 6:*

* *Այլք. Արդ՝ տացեն ՚ի բաց: Ոմանք. Տարցեն ՚ի տեղի իւր... որ լեալ էր:*

* *Այլք. Ջգիր հրամանի:*

* *Ոմանք. Եւ եղիցի ՚ի նմա նախատինս:*

* *Ոմանք. Ըստ վիճակ բաժանման իւ՛:*

արարին որդիքն Իսրայէլի ելեալք ՚ի գերութենէն զգատիկն Տեառն ՚ի չորեքտասաներորդ ամսոյն առաջնոյ. ²⁰և սրբեցան քահանայքն և Ղևտացիք. և եղեն ամենեքեան սուրբք. և զենին զգատիկն Տեառն, ամենայն որք ելեալ էին ՚ի գերութենէն, և եղբարք իւրեանց և քահանայք. ²¹և կերան որդիքն Իսրայէլի զգատիկն ամենեքեան որք որոշեալ էին ՚ի պղծութեանց ազգաց երկրին. և որք եկեալ էին առ նոսա խնդրել զՏէր Աստուած Իսրայէլի*: ²²Եւ արարին զտօն բաղարջակերացն զելթն օր, և ուրախ եղեն յերուսաղէմ. վասն զի ուրախ արար զնոսա Տէր Աստուած Իսրայէլի. և Տէր դարձոյց զսիրտ թագաւորին Ասորւոց առ նոսա զի օգնեսցէ և զօրացուցէ զձեռս նոցա ՚ի գործ տաճարին Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

7

Գլուխ Է

Ը/Ժ ¹Եւ յետ բանիցս այսոցիկ ՚ի թագաւորութեանն Արտաշէսի արքայի Պարսից, ել Եզրա որդի Սարուայ, որդւոյ Ազարիայ, որդւոյ Քեղկեայ*. ²որդւոյ Սեղումայ, որդւոյ Սադովկայ, որդւոյ Աթիտովբայ. ³որդւոյ Սամարիայ, որդւոյ Եզրայ, որդւոյ Մարովթայ. ⁴որդւոյ Չարեայ, որդւոյ Ոզիայ, որդւոյ Բովկայ. ⁵որդւոյ Աբիսուայ, որդւոյ Փենեէսի, որդւոյ Եղիազարու, որդւոյ Ահարոնի առաջին քահանայի: ⁶Այս Եզրա՝ որ ել ՚ի Բաբելոնէ. և սա էր գրիչ արագագիր օրինացն Մովսիսի զոր ետ Տէր Աստուած Իսրայէլի. և ետ նմա թագաւորն զամենայն որ ինչ խնդրեաց ՚ի նմանէ. զի ձեռն Տեառն Աստուծոյ էր ընդ նմա*: ⁷Եւ ելին ընդ նմա յորդւոցն Իսրայէլի՝ և ՚ի քահանայից՝ և յՂևտացւոց, և յերգեցիկ պաշտօնէից, և ՚ի դռնապանաց՝ և ՚ի Նաթանայացւոցն յերուսաղէմ: Յամին եւթներորդի Արտաշէսի թագաւորի*. ⁸Ելին յերուսաղէմ յամսեանն հինգերորդի, որ էր ամ եւթներորդ թագաւորին*. ⁹և յամսամտին հինգերորդ ամսեանն եկն Եզրա յերուսաղէմ. վասն զի ձեռն Տեառն Աստուծոյ բարութեամբ էր ընդ նոսա: ¹⁰Եւ ե՛ր Եզրա ՚ի սրտի իւրում խնդրել զօրէնսն Տեառն, և գրել զնա, և ուսուցանել Իսրայէլի զհրամանս և զդատաստանս: ¹¹Եւ այս են իրք հրամանի զոր ետ Արտաշէս թագաւոր Եզրի քահանայի և գրչի գրոց բանի օրինացն Տեառն, և հրամանաց նորա ՚ի վերայ Իսրայէլի: ¹²Արտաշէս թագաւորաց թագաւոր, Եզրի գրչի օրինացն Տեառն Աստուծոյ երկնից. ¹³ամենայն հաստատութեամբ ետու ես հրաման ՚ի վերայ ամենեցուն որ են ընդ թագաւորութեամբ իմով, ժողովրդոցն Իսրայէլի, և քահանայից և Ղևտացւոցն, զի ելցեն ամենեքեան յերուսաղէմ ընդ քեզ: ¹⁴Յերեսաց թագաւորի, և եւթն խորհրդակցացն առաքեցաւ գիրս այս, այց առնել Յրէիցն՝ և Երուսաղէմացւոցն առաջնորդութեամբ Եզրի, որոյ են օրէնք Աստուծոյ ՚ի ձեռին իւրում: ¹⁵Եւ հրամայեաց թագաւորն տալ ՚ի տուն Տեառն արծաթ և ոսկի, հանդերձ խորհրդակցօք իւրովք յերուսաղէմ, և դնել ՚ի տաճարին առաջի Տեառն Աստուծոյ Իսրայէլի. ¹⁶և ամենայն որոյ գտցի արծաթ և ոսկի՝ Յրէայք որք իցեն

* Ոմանք. Եւ որք ելեալ էին առ նոսա:

* Ոմանք. Որդի Սարոյայ:

* Ոմանք. Եւ ետ նմա թագաւորն՝ զոր ինչ խնդրեաց:

* Ոմանք. Եւ ՚ի Նաթանայացւոցն յերուսաղէմ:

* Ոմանք. Յամսեանն եւթներորդի:

պանդուխտք՝ ՚ի Բաբելոն՝ ժողովուրդք և քահանայք, առցեն ընդ իւրեանս և տարցին ՚ի տուն Տեառն յերուսաղէմ: ¹⁷Եւ ամենեքեան որք ելցեն՝ պատրաստեսցեն զայս օրինակ, որպէս և գրեցաք. Ջուարակս, խոյս, գառինս, և զգոհս և զնուէրս իւրեանց. և մատուցեն ՚ի վերայ սեղանոյ Տեառն Աստուծոյ իւրեանց յերուսաղէմ*։ ¹⁸Եւս առաւել վասն քո՝ ասէ, և վասն եղբարց քոց արարի բարութիւն, և թողի՛ զարծաթ և զոսկի, որպէս վայել է՛ Աստուծոյ ձերոյ՝ արարէ՛ք։ ¹⁹Եւ զկահ տուեալ քեզ ՚ի սպասաւորութիւն տանն Տեառն, ա՛ռ ընդ քեզ՝ և տա՛ր յերուսաղէմ. ²⁰և զաւելորդսն տաջի՛ր ՚ի պահեստ գանձու տան թագաւորաց։ ²¹Ե՛ս Արտաշէս թագաւոր ետու հրաման ամենայն գանձաւորաց որ իցեն յայն կողմն Եփրատ գետոյն, զամենայն ինչ զոր և խնդրեսցէ ՚ի ձէնջ Եզրա քահանայ և զրիչ օրինացն Տեառն Աստուծոյ երկնից, տաջի՛ք ՚ի տուն Տեառն Աստուծոյ նորա*։ ²²Պատրաստ արարէք արծաթ՝ տաղանտս հարիւր. և ցորեան՝ քոռս հարիւր, և գինի՝ նոյնչափ, և ձէթ՝ նոյնչափ. ²³և մի՛ ոք կացցէ ընդդէմ հրամանաց թագաւորի։ Չամենայն ինչ զոր հրամայեցի ՚ի տուն Տեառն Աստուծոյ երկնից և երկրի՝ այս եղիցի. և մի՛ ոք ձեռնարկեսցէ խափանել՝ ՚ի տանէ Տեառն Աստուծոյ Իսրայէլի. զի մի՛ եղիցի բարկութիւն ՚ի Տեառնէ Աստուծոյ ՚ի վերայ թագաւորութեան իմոյ՝ և որդւոյ իմոյ*։ ²⁴Եւ ետու ձեզ գիտել թէ ամենայն որ իցեն ՚ի քահանայից և յԴևտացւոց՝ և ՚ի սաղմոսերգողաց՝ դռնապանացն և Նաթանացւոցն, և որք իցեն սպասաւորք տանն Աստուծոյ՝ մի՛ տացեն հարկս, և մի՛ ոք իշխեսցէ ծառայեցուցանել զնոսա*։ ²⁵Եւ դու Եզրա՝ որոյ է՛ իմաստութիւն Աստուծոյ ՚ի ձեռին քում, կացո՛ գրիչս և դատաւորս՝ զի դատեսցեն զամենայն ժողովուրդս որ են յայն կողմն Գետոյն, և ուսուցեն ամենեցուն որք ո՛չ գիտիցեն զօրէնս Աստուծոյ քոյ։ Եւ ամենեքեան որք ո՛չ գիտիցեն*։ ²⁶և ամենեքեան որք ո՛չ առնիցեն ըստ օրինացն Տեառն՝ և ըստ օրինաց թագաւորին, մատնեալք լիցին ՚ի դատաստան ըստ գործոց իւրեանց, եթէ ՚ի մահ, եթէ ՚ի տանջանս, եթէ ՚ի տուգանս, և եթէ ՚ի կապանս։ ²⁷Օրհնեալ է Տէր Աստուած հարցն մերոց՝ որ արկ զայս ՚ի սիրտ թագաւորին, և փառաւորեաց զանուն Տեառն Աստուծոյ մերոյ որ է յերուսաղէմ*։ ²⁸և արար առ իս զողորմութիւն՝ և պատուեաց զիս առաջի թագաւորին և խորհրդակցաց նորա, և առաջի ամենայն իշխանաց թագաւորին. և ես զօրացայ. վասն զի ձեռն Տեառն ամենայն բարութեամբ է՛ր ընդ իս. ժողովեցի զամենայն իշխանս Իսրայէլի ելանել ընդ իս*։

8

Գլուխ Ը

Թ/Ժա ¹Եւ այս են իշխանք հայրապետացն որ ելանէին ընդ իս ՚ի թագաւորութեանն Արտաշէսի թագաւորի Բաբելացւոց։ ²Յորդուցն Փենեէսի՝

* *Ոմանք.* Պատրաստիցեն։

* *Այլք.* Չամենայն ինչ որ և խնդրիցէ։

* *Ոսկան.* Այն եղիցի։ *Ոմանք.* Բարկութիւն Տեառն Աստուծոյ։

* *Բազումք.* Եւ Նաթանայացւոցն։

* *Ոմանք.* Եւ ուսուցանեն ամենեցուն։

* *Ոմանք.* Եւ փառաւորեաց զտունն Տեառն Աստուծոյ։

* *Ոմանք.* Եւ ամենայն իշխանաց։

Գեթսոն. յորդուոցն Իթամարայ՝ Դանիէլ. յորդուոցն Դաւթայ՝ Յատուս* .³ յորդուոցն Նաաքա՝ Նիա. յորդուոցն Փորոսայ՝ Չաքարիա, և ընդ նմա արք հարիւր յիսուն* .⁴ յորդուոցն Փաաթնովաք՝ Եղիանա որդի Չարա, և ընդ նմա երկերիւր արանց* .⁵ յորդուոցն Չատուէլի՝ Սեքենիա որդի Ազիելի, և ընդ նմա երեք հարիւր արանց* .⁶ յորդուոցն Ադինայ՝ Աբէն որդի Յովնաթանայ, և ընդ նմա յիսուն արանց* .⁷ յորդուոցն Եղամի՝ Իսաիաս որդի Աթաղիայ, և ընդ նմա եւթանասուն արանց* .⁸ յորդուոցն Սափատիայ՝ Չամբդիա որդի Միքայելի, և ընդ նմա եւթանասուն արանց. ⁹ յորդուոցն Յովաբայ՝ Բադիա որդի Յեւելի, և ընդ նմա երկերիւր և ութտասն արանց* .¹⁰ յորդուոցն Բաանայ Սեղիմութ որդի Յովսեփու, և ընդ նմա հարիւր վաթսուն արանց. ¹¹ յորդուոցն Բաբէի՝ Չաքարիաս որդի Բաբի, և ընդ նմա քսան և ութ արանց. ¹² յորդուոցն Ադոնիկամայ և Ազգադայ և Յովնան որդի Սակատանայ, և ընդ նմա հարիւր և տասն արանց: ¹³ յորդուոցն Ադոնիկամ՝ Էսքարի, և այս են անուանք նոցա, Եղիփաղաթ, Յէիեղ՝, և Սամա, և ընդ նմա վաթսուն արանց. ¹⁴ յորդուոցն Բագուի՝ Ութայի, և Չաբութ, և ընդ նմա եւթանասուն արանց: ¹⁵ Եւ ժողովեցի զնոսա առ եզր գետոյն որ գայ յԵւի, և առեալ անդ օթևանս աւուրս երիս. և ՚ի բազմութիւն ժողովրդեանն յորդուոց քահանայիցն, և յորդուոցն Ղևեայ ո՛չ գտի զոր: ¹⁶ Եւ առաքեցի առ Եղիազար, և առ Արիէլ, և առ Սեմեայ. և զԱռնաամ, և զԱրիբ, և զԵղնաթան, և զՆաթան, և զՉաքարիա, և զՍէտողաամ, և զՅովարիբ, և զՅեղամաթամ* . ¹⁷ և իմացուցեալ ածին զնոսա առաջի իշխանացն որ էին ՚ի տեղուջ գանձաւորացն, և եղի բանս ՚ի բերանս նոցա խօսել ընդ եղբարս իւրեանց. Նաթանիմ, որ էր ՚ի տեղի գանձաւորացն զորս ածին առ մեզ. որք երգէին ՚ի տան Աստուծոյ մերոյ* . ¹⁸ և եկին առ մեզ. քանզի էր ձեռն Տեառն ՚ի բարութիւն ընդ մեզ: Յորդուոցն Ղևեայ որդւոյ Իսրայէլի. և զառաջինն եկին առ մեզ որդիք նորա և եղբարք նորա ութնտասն* : ¹⁹ Եւ Ասեբիա և Յեսեա որդի Սերարեայ, և եղբարք նորա և որդիք նորա՝ արք քսան: ²⁰ Եւ ՚ի Նաթանայ զոր ետ Դաւիթ և իշխանքն ՚ի ծառայութիւն Ղևտացւոցն, և ՚ի Նաթանայիմ երկերիւր և քսան. ամենեքեան ժողովեցան ըստ անուան իւրեանց: ²¹ Եւ քարոզեցաք անդ պահս առ եզր գետոյն Առիս, և մատուցաք անդ աղօթս առաջի Տեառն Աստուծոյ մերոյ, խնդրել ՚ի նմանէ ճանապարհ ուղղութեան՝ մե՛զ և որդւոց մերոց՝ և ամենայնի որ ընդ մեզ* . ²² վասն զի ամաչեցաք խնդրել ՚ի թագաւորէն հեծեալս ապրեցուցանել զմեզ ՚ի թշնամեացն մերոց ՚ի ճանապարհին. վասն զի ասացաք ցթագաւորն այսպէս, եթէ ձեռն Տեառն մերոյ օգնէ ամենեցուն որ խնդրեն զնա ՚ի բարութիւն. և զօրութիւն նորա և բարկութիւն նորա ՚ի վերայ ամենեցուն ոյք թողուն զնա: ²³ Եւ պահեցաք, և խնդրեցաք յԱստուծոյ մերոյ վասն այսր ամենայնի՝ և լուաւ Տէր:

* Ոմանք. Եւ յորդուոցն Դաւթայ՝ Տուս:

* Ոմանք. Եւ յորդուոցն:

* Ոմանք. Եւ յորդուոցն:

* Ոմանք. Եւ յորդուոցն:

* Ոմանք. Եւ յորդուոցն: Ոմանք. Աբէն որդի Յովնաթանայ:

* Ոմանք. Եւ յորդուոցն:

* Ոմանք. Եւ ութնտասն արանց:

* Ոմանք. Եւ զԱրիբ... և զՆաթան... և զՅեղամաթամ:

* Ոմանք. Եւ եղի բան ՚ի բե՛:

* Ոմանք. Որդւոցն Իսրայէլի:

* Յօրինակին պակասէր. Առ եզր գետոյն Առիս, և մատուցաք անդ աղօ՛:

²⁴Եւ առաքեցաք յիշխանացն քահանայից երկոտասան, զՍարափա, և զԱսափա, և ընդ նոսա յեղբարց նոցա տասն. ²⁵և կշռեցաք և տուաք ցնոսա զարծաթ և զոսկի, և զսպաս առաջաւորութեան տանն Աստուծոյ մերոյ. զոր բարձրացոյց զմեզ թագաւորն և խորհրդակիցք նորա և իշխանք նորա, և ամենայն Իսրայէլ որ միանգամ էին անդ* . ²⁶և կշռեալ ետու ցնոսա արծաթ տաղանտս՝ վեց հարիւր յիսուն, և կահ արծաթոյ՝ հարիւր, և ոսկւոյ՝ տաղանտս հարիւր: ²⁷և այլ կահ ոսկւոյ՝ քսան և երեք, և կահ պղնձոյ սուրբ և մաքուր ոսկեզօծ: ²⁸Եւ ասացի ցնոսա. Եւ դուք սրբեալք Տեառն Աստուծոյ էք, և ամենայն կահ սուրբ է Տեառն, և ոսկեղէնք և արծաթեղէնք ընտրեալք Տեառն Աստուծոյ հարցն մերոց. ²⁹արթուն կացէք և պահեցէ՛ք՝ մինչև կշռեսցիք զոսա առաջի իշխանաց քահանայիցն և Ղևտացոցն, և իշխանաց հայրապետացն Իսրայէլի՝ որ են յերուսաղէմ՝ ՚ի խորանս տան Տեառն* : ³⁰Եւ առեալ քահանայիցն և Ղևտացոցն զհամար ոսկւոյ և արծաթոյ՝ և զկահս ՚ի տանել յերուսաղէմ ՚ի տուն Աստուծոյ մերոյ: ³¹Եւ յարուցեալ չուեցաք ՚ի գետոյն Էոս՝ որ օր երկոտասան էր ամսոյն առաջնոյ, և եկեալ հասաք յերուսաղէմ. և ձեռն Տեառն Աստուծոյ մերոյ էր ընդ մեզ, և փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց, և ՚ի պատերազմողաց զճանապարհայն. ³²և եկաք յերուսաղէմ, և հանգեաք անդ աւուրս երիս. ³³և յաւուրն չորրորդի կշռեալ տուաք զարծաթ և զոսկի և զկահ ՚ի տուն Տեառն Աստուծոյ մերոյ, ՚ի ձեռն Մարեմովթ որդի Ոնիայ քահանայի, և որ էր ընդ նմա Եղիազար որդի Փենեէսի, և Յովաբաթ որդի Յեսուայ, և Նովադիա որդի Բանեայ, և այլ Ղևտացիք* : ³⁴Եւ էր թուով և համարով ամենայն, և գրեցաւ ամենայն կշիռ համարոյն բովանդակ: ³⁵Եւ ՚ի ժամանակին յայնմիկ որք եկեալ էին ՚ի գերութենէն որդիք պանդխտութեան, մատուցին ողջակէզս Տեառն Աստուծոյ Իսրայէլի, զուարակս՝ երկոտասան վասն ամենայն Իսրայէլի. խոյս՝ իննսուն և վեց. զառինս՝ եւթանասուն և եւթն. ամիկս վասն մեղաց՝ երկոտասան: Չայս ամենայն ողջակէզս մատուցին Տեառն Աստուծոյ: ³⁶Եւ ետուն զգիր կարասւոյն, զոր հրամայեալ էր թագաւորին ցիշխանս կողմանց գետոյն Եփրատու. և փառաւորեցին զժողովուրդն և զտաճարն Աստուծոյ:

9

Գլուխ Թ

Ժ/Ժբ ¹Եւ ՚ի կատարել այսր ամենայնի՝ մերձեցան առ իս իշխանքն և ասեն. Ո՛չ որոշեցան ժողովուրդն Իսրայէլի և քահանայքն և Ղևտացիքն ՚ի ժողովրդոց՝ և յերկրէ՝ որ են հեռագոյն ՚ի նոցանէ. Քանանացին, և Քետացին, և Փերեզացին, և Յեբուսացին, և Ամմոնացին, և Մովաբացին, և Եգիպտացին, և Ամովրիացին* : ²Քանզի արարին կանայս ՚ի դատերաց նոցա, ինքեանք և որդիք իւրեանց. և խառնակեալ պղծեցաւ սերմն սրբութեան նոցա ընդ ժողովուրդ երկրին այնորիկ. և եղև սկիզբն անօրէնութեանս այսորիկ յիշխանացն: ³Եւ եղև յորժամ լուայ՝ ես զբանս զայսոսիկ՝ պատառեցի զհանդերձս իմ, և փետեցի՛ զհերս և

* Ոսկան. Որ բարձրացոյց զմեզ:

* Ոսկան. Եւ հայրապետացն Իսրայէլի:

* Այլք. ՚ի ձեռն Մարեմովթ... այլ և Ղևտացիք:

* Ոմանք. Մերձեցան առ իշխանքն և ասեն:

զմօրուսս իմ, և այնպէս նստէի ՚ի սուգ*։ ⁴Եւ ժողովեցան առ իս ամենեքեան որք էին երկիւղածք յԱստուծոյ Իսրայէլի. որք էին ժողովեալք յելիցն պանդխտութեան. և ես այնպէս նստէի ՚ի սուգ մինչև ՚ի ժամ զոհի՛ երեկոյին։ ⁵Եւ ՚ի զոհի երեկոյին՝ յարեայ ՚ի տառապանաց իմոց, և պատառեալ հանդերձիւք իմովք, խոնարհեալ կորանայի ՚ի վերայ ծնգաց իմոց. և տարածեալ ամբարձեալ զձեռս իմ առ Տէր Աստուած*, ⁶և ասեմ. Աստուած իմ և Տէր՝ ամաչեմք և զարհուրիմք ՚ի քէն. բարձրացո՛ Տէր Աստուած իմ զերեսս իմ առ քեզ. վասն զի անօրէնութիւնք մեր բազմացան ՚ի վերայ զլիսոց մերոց, և մեղք մեր մեծացան և բարձրացան մինչև յերկինս*. ⁷յամաց և ՚ի ժամանակաց հարցն մերոց, և եմք մեք ՚ի մեղս մեծամեծս մինչև ցայսօր. և վասն մեղաց մերոց մատնեցէ՛ր զմեզ և զթագաւորս մեր, և զորդիս մեր՝ ՚ի ձեռն թագաւորացն հեթանոսաց, և ՚ի սուր և ՚ի գերութիւն և ՚ի յափշտակութիւն, և յամօթ երեսաց մերոց եղեալք մինչև յօրս յայս*։ ⁸Եւ այժմ գթութիւնք քո եղեմ ՚ի վերայ մեր Տէր Աստուած մեր, և շնորհեցեր մեզ փրկութիւն, և հաստատեցեր զմեզ ՚ի տեղի սրբութեան քոյ, և լուսաւորեցեր զաչս մեր այսօր Տէր Աստուած մեր. և ետուր մեզ կենդանութիւն փոքր ՚ի շատէ ՚ի ծառայութեանն մերուն։ ⁹Վասն զի ծառայ եղաք. և ՚ի ծառայութեանն մերուն ո՛չ թողեր զմեզ Տէր Աստուած մեր, և խոնարհեցան առ մեզ ողորմութիւնք քո առաջի թագաւորին Պարսից տալ զմեզ ՚ի կենդանութիւն, և բարձրացուցանել զտուն Աստուծոյ մերոյ, կանգնել և շինել զանապատս զայս. և արկանել ցանգ և պարիսպ ամրութեան Յուդայ և Երուսաղեմի*։ ¹⁰Եւ արդ զի՞նչ տացուք պատասխանի առաջի քո Տէր վասն այսր ամենայնի. քանզի անցաք զօրինօք քովք Տէր՝ և զհրամանօք, ¹¹զոր ետուր ՚ի ձեռն ծառայից քոց մարգարէից, ասելով այսպէս. Եթէ երկիրն յոր մտանելոց ես ժառանգել զնա, է՛ երկիր պղծեալ ՚ի պղծութեանց ազգաց երկրին այնորիկ, և աղտեղութեամբք իւրեանց լցին զնա*։ ¹²Եւ արդ՝ մի՛ առնուցուս ՚ի դատերաց նոցա կանայս որդւոց քոց, և զդատերս քո մի՛ տաս կանայս որդւոց նոցա, և մի՛ խնդրեսցես առնել խաղաղութիւն ընդ նոսա զամենայն ժամանակս. և եղիջիր դու զօրաւոր ուտել զբարութիւն երկրին, և ժառանգեսցեն որդիք քո զերկիրն զայն յաւիտեանս ժամանակաց*։ ¹³Եւ որ ինչ միանգամ անցք անցին ընդ մեզ վասն գործոց մերոց, և չարութեան մեղաց մերոց. այլ դու՛ Տէր բազում անգամ թողեր զմեղս մեր, և ետուր մեզ այսպիսի՛ զաւակ և արմատ։ ¹⁴Եւ մեք դարձեալ խոտորեցաք անցեալ զօրինօք քովք, և խառնակեցաք ընդ աղտեղութիւնս հեթանոսաց երկրին. և ո՛չ բարկացար մեզ ՚ի կորուսանել զմեզ մինչև ցայս վայր, եթէ ո՛չ մնասցէ արմատ և զաւակ և անուան մեր*։ ¹⁵Տէր Աստուած Իսրայէլի՛ դու արդար և ճշմարիտ ես, որ ո՛չ սպառեցեր զզաւակ մեր. այլ մնաց մեր արմատ և զաւակ մինչև ցայսօր. և արդ ահաւասիկ եմք այսօր առաջի քո յանօրէնութիւնս մեր, և ո՛չ ևս կարենք ամբառնալ զգլուխ մեր՝ և կալ՝ առաջի երեսաց քոց. զի

* *Ոմանք.* Եւ Փետտեցի:

* *Բազունք.* Եւ ՚ի զոհել երեկորին յար՝... համբարձեալ զձեռս:

* *Ոսկան.* Եւ ասեմ. Տէր Աստուած իմ:

* *Այլք.* Ի ձեռս թագաւորացն:

* *Ոսկան.* Տալ մեզ ՚ի կենդանութիւն: *Ոմանք.* Վասն զի ծառայ էաք. *կամ՝* եղաք... զցանգ և զպարիսպ:

* *Ոմանք.* Եթէ յերկիրն յոր մտանելոց ես:

* *Ոսկան.* Եւ զդատերս քո մի՛ տացես կանայս որդի՛:

* *Այլք.* Եւ զաւակ և անուն մեր:

բազմացան անօրէնութիւնք մեր և չարիք՝ առաւել քան զգլուխս մեր:

10

Գլուխ Ժ

¹Եւ յորժամ եկաց Եզրաս յաղօթս հանդերձ խոստովանութեամբս այսոքիւք, և ողբովք մեծամեծօք անկեալ էր ՚ի վերայ երեսաց երկրի առաջի Տեառն. ժողովեցան առ նա ամենայն որ էին յերուսաղէմ ժողովուրդ բազում, արք և կանայք՝ երիտասարդք և կուսանք, և ողբայր ժողովուրդն, և համբարձին զձայնս լալոյ իւրեանց*։ ²Եւ պատասխանի ետ Յեքոնիա որդի Եղեայ որդւոյն Եղամայ, և ասէ ցեզրա. Մեք մեղա՛ք առ Տէր Աստուած մեր, և արարաք զկանայս յայլազգեաց երկրիս այսորիկ. և այժմ ե՛ն անօրէնութիւնք այսօր ՚ի մէջ Իսրայէլի: ³Եւ արդ՝ ուխտեսցուք ուխտս առաջի Տեառն Աստուծոյ մերոյ հանել զամենայն կանայս այլազգիս, և զզաւակս որ ՚ի նոցանէ. և արդ՝ որպէս կամիս արի՛ և կեցո՛ զսոսա օրինօքն Տեառն Աստուծոյ. և որպէս պատուիրանք հրամայեն, ⁴արի՛ և լուիցուք ՚ի բերանոյ քունմէ, և մեք ընդ քեզ. զօրացի՛ր և արա՛ որպէս և հրամայեալ է ՚ի Տեառնէ Աստուծոյ: ⁵Եւ յարուցեալ Եզրայ երդմնեցոյց զիշխանս ցեղից քահանայից և Ղևտացւոց. և զամենայն Իսրայէլ առնէր ըստ այսմ օրինակի երդման: ⁶Եւ յարուցեալ Եզրայ յերեսաց տանն Աստուծոյ, երթեալ ՚ի տուն զանձին առ Յոհան որդի Եղիսուբայ՝ հաց ո՛չ եկեր, և ջուր ո՛չ արբ, և ողբացեալ ՚ի վերայ անօրէնութեանն և մեծամեծաց մեղաց բազմութեանն: ⁷Եւ քարո՛զ կարդային ՚ի Յրէաստանի և յերուսաղէմ, ⁸ամենայն որ՝ որ ո՛չ եկեսցէ յերուսաղէմ մինչև յերիս աւուրս, յիշխանաց և ՚ի ծերոցն՝ եղիցի նզովեալ, և ամենայն ստացուածք նորա, և ինքն ՚ի բաց եղիցի յեկեղեցւոյ ժողովրդոցն Իսրայէլի: ⁹Եւ ժողովեցան ամենայն արք Յուդայ և Բենիամին յերուսաղէմ յերիս աւուրս, յիններորդ ամսեանն որ օր քսան էր ամսոյն. և նստան ամենայն ժողովուրդն ՚ի հրապարակի տան Տեառն. և էին զարիւրեալք ՚ի բանից նորա, և ՚ի ցրտութենէ ձմերայնոյն*։ ¹⁰Եւ յարուցեալ Եզրայ ասէ ցնոսա. Դուք էք որ մեղայք, և արարէք կանայս զդստերս այլազգեաց. և յաւելիք զմեղս և զանօրէնութիւնս ՚ի վերայ Իսրայէլի: ¹¹Եւ արդ՝ տուք զօրհնութիւն Տեառն Աստուծոյ հարցն մերոց, և արարէք զհաճոյսն առաջի նորա. և զատեալ որոշեցայք յամենայն հեթանոսաց երկրի, և ՚ի կանանց այլազգեաց զորս արարէք: ¹²Եւ պատասխանի ետուն ամենայն եկեղեցին՝ և ասեն. Մե՛ծ է բանս այս զոր ասես դու ՚ի վերայ մեր. ¹³վասն զի ժողովուրդ բազումք ենք, և ժամանակս ձմե՛ռն է. և ո՛չ կարենք կալ արտաքոյ, և զործո՛ղ ո՛չ է զմի օր կամ զերկու, վասն զի սաստիկ մեղաք յիրս յայս: ¹⁴Կացցեն իշխանք յամենայն տեղիս և ՚ի քաղաքս, և որոց իցէ արարեալ կանայս յայլազգեաց՝ եկեսցեն ՚ի ժամանակն, զոր ծերքն և հայրապետքն կարգեսցեն ՚ի քաղաքս քաղաքս՝ և դատեալ քաւեսցեն զմեղս զայս ՚ի մէնջ, և դարձուցեն զբարկութիւն Աստուծոյ ՚ի մէնջ որ վասն բանիս այսորիկ*։ ¹⁶Եւ արարին այսպէս որ ելեալ էին ՚ի գերութենէն. և ընտրեաց Եզրաս արս իշխանս ՚ի հայրապետաց տանն իւրոյ՝

* Ոսկան. Անկեալ ՚ի վերայ երեսաց երկրի:

* Ոմանք. Արք Յուդայ և Բենիամինի:

* Ոմանք. Եկեսցեն ՚ի ժամանակ. ուր Ոսկան. ՚ի ժամանակի:

զարս անուանիս. և շրջեցան յամսամտի տասներորդ ամսոյն՝ և վճարեցին*.¹⁷ և որոշեցին զամենայն արս որք ունէին կանայս յայլազգեացն մինչև ՚ի մոլտ ամսոյն առաջնոյ: ¹⁸Եւ գտան յորդուցն քահանայիցն որք ունէին զկանայս՝ յայլազգեացն. յորդուցն Յեսովայ Յովսեփեկեանց, և եղբօր նորա Մանասէի և Եղիազարու, Յարիր՝ և Գադաղիա.¹⁹ և սկսան հանել զկանայս յայլազգեացն՝ յինքեանց, և մատուցին իւրաքանչիւր՝ խոյս վասն թողութեան մեղացն անգիտութեան: ²⁰Եւ յորդուցն Երամ՝ Մասիս, Եղիա, Սամարիա, և Եղոզիաս*.²² և յորդուցն Փասուր՝ Եղիանաս, Մասիէլ, Միսայէլ, Նաթանայէլ, Յովզաբաթ, և Եղ'ասա.²³ և յորդուցն Ղևտացուց՝ Յնզաբաթ, Սամութ, Կովղիա՝ այս է՝ Կովղիտոս, և Ափեթիաս, և Յուդաս. և Եղեազար: ²⁴Եւ ՚ի սաղմոսերգացն՝ Եղիսափ, և ՚ի դռնապանացն՝ Կողէմ, Էտեղէս, և Ուրի: ²⁵Եւ յիսրայէլէ, յորդուցն Փորոսայ՝ Ջանայիա, Յավիա, Մեղ'քիա, Էակիմ, Եղեազար, Ասաբիա, Նիբանիա*:²⁶ և յորդուցն Եղ'ամ՝ Մատտաթանիա, Ջաքարիա, Յաւեղ', Աբդիա, Երիմովթ, Եղիա:²⁷ և յորդուցն Ջաթուայ՝ Եղ'իոնէ, Եղիսաբ, Մատթանա, Յարմովթ, Ջաբադ, Ջազիա:²⁸ և յորդուցն Բաբէի՝ Յոհան, Անանի, և Ջաբուութաղի*:²⁹ և յորդուցն Բանի՝ Մոսողամ, Մաղաք, Ադիաս, Իասուր, Սաաղ, Ջեմովթ*:³⁰ և յորդուցն Փաաթ Մովաբ՝ Ադնէքաղ'ել, Բանայիա, Մասեա, Մատթա, Բեսեէլ, Մանասէ*:³¹ և յորդուցն Երամ՝ Եղ'իեզի, Եսիա, Մեղ'քիա, Սամերաս, Սիմէոն, ³²Բենիամին, Մաղ'ուք, Սամարիա:³³ և յորդուցն Ասէմ՝ Մատթանիա, Մատաթիա, Ջարաթ, Եղ'իփաղ'էթ, Յերեմի, Մանասէ, Սամէի:³⁴ և յորդուցն Բանի՝ Մովադիա, Ամրամ, Ուէլ*, ³⁵Բանեա, Բադաիա, Քեղիա, ³⁶Ուանիա, Մարիովթ, Եղիասիբ, ³⁷Մաթանիա, Մաթանա:³⁸ և արարին որդիքն Բանի, և որդիքն Սեմէի, ³⁹Սեղեմիաս, Նաթան, Ադազիաս, ⁴⁰Մաքնա, Գայադու, Սէսէարու, ⁴¹Եգրիէլ, Սաղամիաս, Սամարիաս, ⁴²Սեղ'ում, Ատարիաս, Յովսէփ:⁴³ Յորդուցն Աբուրէ՝ Իեուէլ, Մատաթիաս, Ջաբաթ, Ջեբիննաս, Յադայի, Յադէ, Յովեդ, Բանայիա:⁴⁴ Այսք էին ամենեքեան որ ունէին զկանայս յայլազգեացն, և ծնան ՚ի նոցանէ ուստերք և դստերք*:

Կատարեցաւ Երկրորդ Եզրաս*

* *Ի լուս*. Եւ ընտրեաց Եզրաս՝ քահանայս իշխանս: *Ուր և ոմանք*. Եւ ընտրեաց Եզրաս քահանայ արս իշ*:
 * *Ոմանք*. Մասիաս, Եղիա, Սամայիա:
 * *Ոմանք*. Ջանիա, Յազիա... Նիբանայիա:
 * *Այլք*. Յոհանան, Անանիա և Ջաբուութաղի:
 * *Այլք*. Ադայիաս. Իա*:
 * *Ոմանք*. Մատթա:
 * *Յօրինակին*. Ամրամ. Ուէլ:
 * *Ոմանք*. Այս էին ամենեքեան: *Ոսկան*. Ծնան ՚ի նոցանէ ուստերս և դստերս:
 * *Ի վախճանի ոմանք*. Կատարեցաւ Եզրայ Երկրորդ. *Կամ*՝ Կատարունն Երկրորդ Եզրայ: *Երեք նորագոյն օրինակք աստանօր յետ* Երկրորդ Եզրայ, *Կարգեն*՝ Եզրայ Երրորդ. *զորով ՚ի սպառ զանց առնեն այլ հնագոյն գրչագիրք՝ համաձայն մերունս. վասն որոյ և պատշաճ թուեցաւ թողուլ զայն ՚ի յաւելուած մատենիս:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ՆԵՆՄԵԱՅ

ՁՆԵՆԻ թէ իցէ՝ ի քահանայիցն՝ հաստատութեամբ ո՛չ ունիմ ասել. բայց կարծի՝ ի նոցունց գոլ, վասն ՚ի բաց հանելոյ նորա յիշխելոյ ժողովրդեանն զճանունսն իշխանս Յուդայեանս, որք ՚ի ժամանակի անդ յետ Ջորաբաբելի, և ինքեան Նեեմեայ վարելոյ զիշխանութիւնն ՚ի վերայ Յրէից զերկոտասան ամ, զկնի որոյ ո՛չ երևի թէ Յուդայեանք, այլ քահանայքն տիրէին ժողովրդեանն. թպէտ և զիշխանաց ոմանց Յուդայեանց գոլ՝ նշանակէ Գիրքս այս. ըստ այնմ թէ մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ: Նա՛ և Եզրա՛ իսկ՝ զկնի մահուն Ջորաբաբելի երևի ՚ի Բաբելոնէ գալ յերուսաղէմ. առ որով և Նեեմի ևս յետ երեքտասան ամի հրամանաւ նո՛յն (երկայնածեռն) Արտաշիսի: Եւ ձեռն տալով իշխանացն Յրէից յերկոտասան ամ շինեաց զպարիսպն Երուսաղեմի, և կանգնեաց զդրունս նորա, ո՛չ ինչ զանգիտեալ ՚ի հակառակութենէ հեթանոսացն. այլ և գթութեամբ խնամէր զաղքատսն. և ՚ի պահպանութիւն տօնիցն և օրինացն զգուշանայր ժողովրդեանն: Կարգէր զՂևտացիսն ըստ պայմանին եղելոյ Դաւթի, և վիճակաւ առնէր ցեղիցն բնակել յիրաքանչիւր կալուածս. և ՚ի մաքրել զժողովուրդն յայլազգի կանանցն. և յամենայն հրամանս օրինացն քաջահաճոյ լինէր ընդ Եզրայ. ակն ունելով լաւագոյն կենաց յԱստուծոյ:

Գլուխք գրոցն Նեեմեայ

ա. Յետ երեքտասան ամի արձակելոյն Եզրի յերկայնածեռն Արտաշիսէ, և Նեեմի ևս արձակեալ՝ գայ յերուսաղէմ. և հանդերձ իշխանօքն սկսաւ շինել զպարիսպն Երուսաղեմի, և կանգնել զդրունսն:

բ. Ձի կամեցան հեթանոսքն խափանել զգործն, և ո՛չ զօրեցին. և Իսրայէլեանքն ապա մեծաւ զգուշութեամբ կազմեցան կէսք զինու վառեալ ընդդէմ թշնամեացն, և այլքն ՚ի գործ շինուածոյն փութացեալք:

գ. Ձի թափեաց Նեեմի զժողովուրդն ՚ի ծանր հարկաց իշխանացն Յուդայ, և դարձոյց ՚ի տեսրսն զյափշտակութիւնս, և զերկոտասան ամ ինքն կալաւ զիշխանութիւնն բարեձևութեամբ:

դ. Դարձեալ խորհէին այլազգիք չարիս խափանել զգործն՝ և ո՛չ կարացին. այլ կատարեաց զպարիսպն յերկոտասան ամս, և կանգնեալ զդրունսն՝ զգուշութեամբ փակեր և բանայր:

ե. Ընտրութիւն ցեղիցն ելելոց ՚ի Բաբելոնէ, որք բնակեցին ՚ի քաղաքս իւրեանց:

զ. Տօնեցին զտաղաւարացն, և պահեալ և աղօթեալ գրեցին ուխտ, և կնքեցին պահել զօրէնս Աստուծոյ:

է. Վիճակաւ նստան յերուսաղէմ և ՚ի Յրէաստան՝ Յուդայ և Բենիամին, և քահանայք և Ղևտացիք, և արարին զնաւակատիս պարսպին առ Յովիդայեաւ քահանայապետիւ, որ էր որդի Եղիասիբայ որդւոյ Յովակիմայ որդւոյ Յեսուայ Յովսեդեկեանց:

ը. Կարգեցին վերակացուս գանձուց տաճարին, և դռնապանս և սաղմոսերգս յՂևտացւոցն. և լուեալ յօրինացն ՚ի բաց հանին

զայլազգիսն յիսրայէլէ:

թ. Եղիասիբ քահանայապետ տուեալ էր Տուբիայ այլազգւոյ տուն գանձի ՚ի գաւիթ տաճարին. զոր մերժեաց Նեեմի զՏուբիա. և զի զրկեալք եին Ղևտացիք՝ դարձոյց ՚ի նոսա զբաժին իւրեանց, և կարգեաց ՚ի պատշօնն Տեառն:

ժ. Սրբեաց Նեեմի զշաբաթն, և ՚ի բա՛ց ետ հանել զայլազգի կանայս քահանայիցն և Ղևտացւոց. և սրբեալ զՂևտացիսն կարգեաց ՚ի պաշտօնն:

ԲԱՆՔ ՆԵՆՄԱՅ ՈՐԴԻՈՅ ԱՔԱՂԻԱՅ*

1

Գլուխ Ա

Ա ¹Եւ եղև յամսեանն Քասղև յամի քսաներորդի Արտաշէսի արքայի, ես էի ՚ի Շաւշ ՚ի մայր քաղաքացն արբիայ. ²և եկն առ իս յեղբարցն իմոց. նա՛ և արք Յուդայ, և հարցի՛ ցնոսա վասն փրկելոցն որք ապրեցան և ելին ՚ի գերութենէն՝ և վասն Երուսաղեմի՛: ³Եւ ասեն ցիս. Ջերժեալքն ՚ի գերութենէն՝ ե՛ն անդէն յաշխարհին իւրեանց ՚ի մեծ նեղութիւն և ՚ի նախատինս. և պարիսպքն Երուսաղեմի կան նոյնպէս քակեալ և աւերեալ, և դրունք նորա հրկիզեալ հրով՛: ⁴Եւ եղև յորժամ լուայ ես զբանս զայս՝ նստայ և լայի և սո՛ւգ առի զաւուրս, և պահեցի պահս, և կացի յաղօթս առաջի Տեառն Աստուծոյ երկնից՝, ⁵և ասեմ. Տէր Աստուած երկնի և երկրի՝ որ զօրաւորդ ես և մեծ և ահարկու, պահես զուխտս և զողորմութիւնս ոյք սիրեն զքեզ, և ոյք առնեն զօրէնս քո. ⁶և եղիցի ականջք քո ՚ի լսել, և աչք քո ՚ի տեսանել: Եւ արդ՝ լուր և տես զաղօթս ծառայի քոյ զոր ես այսօր մատուցանեմ առաջի քո, վասն որդւոցն Իսրայէլի ծառայից քոց, որք մատնեցաք ՚ի նեղութիւն վասն մեղաց մերոց զոր մեղաքն՝ ես և տուն հօր իմոյ մեղաք՝. ⁷վասն զի յանցանելով յանցեաք՝ և ո՛չ պահեցաք զօրէնս և զհրամանս, և զդատաստանս քո զոր պատուիրեցեր մեզ ՚ի ձեռն ծառային քոյ Մովսիսի: ⁸Յիշեա՛ Տէր զբանն քո զոր պատուիրեցեր ծառային քոյ Մովսիսի և ասացեր. Եթէ դուք ո՛չ պահեսցիք զօրէնս իմ, և ես ցրուեցից զձեզ ընդ հեթանոսս՝. ⁹և եթէ դարձջիք՝ և պահիցէք զօրէնս իմ և արասցիք զնոսա. և եթէ իցէք ցրուեալք մինչև ՚ի ծագս երկրի, և անտի ժողովեցից և ածից զձեզ ՚ի տեղին զոր ընտրեցից, և յորում բնակէ անուն իմ ՚ի նմա՛: ¹⁰Եւ արդ՝ սոքա ծառայք քո և ժողովուրդք զորս փրկեցեր զօրութեամբ քո մեծաւ՝ և բարձր բազկաւ. ¹¹մի՛ թողուր ՚ի ձեռաց քոց. այլ եղիցին ականջք քո հայել յաղօթս ծառայից քոց, և անսա՛լ խնդրուածոց որոց երկնչին յանուանէ քումմէ. և

* Ամենայն գրչագիր օրինակք՝ համաձայն մերումս ունին զվերնագիր գրոցս:

* Այլք. Եւ հարցի զնոսա վասն փրկե՛:

* Ոմանք. Անդ եմ յաշխարհին իւրեանց ՚ի մեծ նեղութեան:

* Ոսկան. Նստայ և լացի: Ոմանք. Եւ կայի յաղօթս:

* Այլք. Եղիցին ականջք քո:

* Ոմանք. Ջբանն զոր պատ՝... ծառային քում:

* Ոմանք. Եւ պահեսցիք զօրէնս... բնակեալ է անուն իմ:

յաջողեա՛ զխնդրուածս ծառայի քոյ այսօր. և տո՛ւր ինձ գտանե՛լ գթութիւնս առաջի առնս այսորիկ: Եւ ես էի՛ տակառապետ թագաւորին:

2

Գլուխ Բ

¹Եւ եղև յամսեանն Նիսան ՚ի քսաներորդ ամի Արտաշեսի արքայի. և խնդրեաց յինէն գինի. և առեալ զգինին ետու թագաւորին, և էր թագաւորն միայն. և յորժամ արբ զգինին*, ²ասէ ցիս. Ընդէ՞ր տրտուն և տխուր են երեսք քո. և ո՛չ ինչ են այսմ պատճառք, եթէ ո՛չ չարութիւն սրտի քոյ: Եւ ես երկեայ՝ յոյժ, ³և ասեմ ցթագաւորն. Արքայ՝ դու յաւիտեան կեաց. ընդէ՞ր ո՛չ տրտուն և տխուր լինիցին երեսք իմ. զի քաղաքն և տուն հօր իմոյ անապատ է, և դրունքն ապականեալ ՚ի հրոյ*: ⁴Եւ ասէ ցիս թագաւորն. Վասն որո՞յ իրաց խնդրես դու զայս: Եւ կացեալ իմ յաղօթս և ամբարձեալ զմիտս իմ առ Տէր Աստուած երկնից, ⁵ասեմ ցթագաւորն. Եղիցի ՚ի վերայ թագաւորութեանդ քում բարութիւն. և եթէ եզիտ ծառայ քո շնորհս առաջի երեսաց քոց, և կամիս՝ յղեա՛ զիս ՚ի Հրէաստան ՚ի քաղաք յիշատակարանաց հարցն իմոց, և ես բանի՛ւ հրամանի քոյ շինեցի՛ց զնա*: ⁶Եւ ասէ ցիս թագաւորն և հարճ նորա որ նստէ՛ր առ նմա. Յո՞րժամ ժամանեսցես դու, և կամ ե՞րբ դարձցիս: Եւ արա՛ր առ իս բարութիւն թագաւորն և արձակեաց զիս. և ես կալայ առ նմա ժամանակ*, ⁷և ասացի ցթագաւորն. Եթէ գտի շնորհս առաջի քո՝ տո՛ւր ինձ թուղթս առ իշխանս կողմանց Գետոյն, և տարցին զիս մինչև երթայց ՚ի Հրէաստան. ⁸և թուղթ մի առ Ասափ, որ է պահապան դրախտին արքունի. զի տացէ ինձ փայտս ՚ի կազմած դրանցն և պարսպաց քաղաքին, և տանն յոր ես մտից անդր: Եւ ե՛տ ինձ թագաւորն. վասն զի ձեռն Աստուծոյ իմոյ է՛ր ընդ իս ՚ի բարութիւն*: ⁹Եւ եկի՛ առ իշխանս Գետոյն, և ետու առ նոսա գթուղթս թագաւորին. և առաքեաց ընդ իս թագաւորն առաջնորդս զօրաւորս՝ և ձիս: ¹⁰Եւ լուան Սանաբաղատ իշխան. և Տուբիա ծառայ Ամոնի, և չա՛ր թուեցաւ առաջի նոցա. վասն զի խնդրեցի արս ՚ի բարութիւնս և ՚ի պէտս Իսրայէլի: ¹¹Եւ եկի յերուսաղէն, և եղէ անդ աւուրս երիս. ¹²և յարեայ ՚ի գիշերի ե՛ս և սակաւ արք ընդ իս. և ո՛չ պատմեցի արանցն, եթէ զի՞նչ Աստուած արկ ՚ի սիրտ իմ առնել վասն Իսրայէլի. և գրաստ ո՛չ էր ընդ իս, բայց միայն գրաստն յորոյ վերայ նստէի՛ ես*: ¹³Եւ ելի՛ ես ընդ դուռն հեղեղատին, և առ բերանով երկրի թգենւոյն՝ և մինչև ՚ի դուռն Աղբերցն. և ճնշէի՛ ՚ի նեղութենէ անցիցն առ պարսպաւն Երուսաղէմի, զոր էին նոցա սրբեալ. և դրունք նորա ապականեալ էին ՚ի հրոյ*: ¹⁴Եւ անցի ընդ դուռն Աղբերն առ ջրբղխօք թագաւորին. և ո՛չ էր անդ տեղի գրաստու իմոյ՝ անցանել ընդ նա հեծեալ*: ¹⁵Եւ ելանէի ՚ի վեր ՚ի պարիսպն առ հեղեղատաւն գիշերի, և ՚ի

* Ոմանք. Յամսեանն Նիսանի քսաներորդ:

* Ոմանք. Եւ տխուր լինին երեսք իմ. վասն զի քաղաքն:

* Ոմանք. Եւ ասեմ ցթագաւորն... հարցն իմոց:

* Յօրինակին պակասէր. Եւ հարճն նորա որ նստէ՛ր: Այլք. Յորժամ ժամանես դու:

* Այլք. Եր ընդ իս բարութեամբ:

* Ոսկան. Բայց մի գրաստ, յորոյ:

* Ոմանք. Ի դուռն Աղբերացն. և ճնշէին ՚ի նեղութենէ անցին առ պա՛:

* Ոմանք. Տեղի գրաստու միոյ:

նեղութենէն էի ճնշեալ՝ ՚ի պարսպէն, և էի առ դրան Ձորոյն. և դարձայ¹⁶ և ո՛չ գիտացին պահապանքն եթէ զի՞նչ էի երթեալ՝ և կամ զի՞նչ առնէի. և Յրէիցն և քահանայիցն և պատուականացն և զօրագլխաց, և այլոցն որք վճարէին զիրս գործոյն՝ մինչև ցայն վայր ո՛չ պատմեալ էր նոցա՝¹⁷ Եւ ասացի ցնոսա. Դուք տեսէք զչարիսս յորում ենք այժմ, և զիա՛րդ Երուսաղէմ անապատ է և դրունք սորա հրկէզ. եկա՛յք և շինեսցուք զպարիսպս Երուսաղէմի, և ո՛չ ևս եղիցուք ՚ի նախատինս: ¹⁸Եւ պատմեցի նոցա զձեռն Տեառն որ էր ընդ իս բարութեամբ. և զբանս թագաւորին զոր ասաց ցիս. և ասեմ ցնոսա. Արդ եկա՛յք՝ յարեսցուք և շինեսցուք: Եւ զօրացան ձեռք նոցա ՚ի բարութիւն՝: ¹⁹Եւ լուան Սանաբաղատ և Տուբիա ծառայ Ամոնի, և Գեսամ Արաբացի, և ծա՛ղր առնէին զմեզ. և եկին առ մեզ և ասեմ ցմեզ. Ձի՞նչ են իրքդ այդ զոր դուքդ առնէք, և կամի՞ք դուք ՚ի թագաւորէն ապստամբել՝: ²⁰Եւ ետու պատասխանի նոցա՝ և ասեմ. Աստուած երկնից և երկրի յաջողեաց մեզ, և մեք ծառայք նորա ենք սուրբք, և շինենք զքաղաքս. և ձեզ ո՛չ գոյ բաժին՝ և յիշատակ՝ և արդարութիւն յերուսաղէմ:

3

Գլուխ Գ

¹Եւ յարեալ Եղիասիբ քահանայ մեծ և եղբարք նորա քահանայք, և շինեցին զդուռն Աւագանաց ջրմղին. և սրբեցին զնա, և կանգնեցին զդրունս նորա. և կանգնեցին զնա մինչև յաշտարակն Անամայելի*.² Ի ձեռն որդւոց արանց Երիթովի, և ՚ի ձեռն որդւոց Ջաբուր, որդւոցն Ամարի*:³ Եւ զդուռնն Եթտիւրբան շինեցին որդիքն Ասանայ, և նոքա յարդարեալ կազմեցին զնա, և զփականս և զնիզս նորա*:⁴ Եւ ՚ի ձեռանէ նոցա ունէին Մոսողամ որդի Բարաքի որդի Մասիգեբէղ՝. և ՚ի ձեռանէ նոցա ունէին Սադովկ որդի Բասանայ*.⁵ Եւ ՚ի ձեռանէ նոցա ունէին Թեկուճադորեմ. և ո՛չ արկին զպարանոցս ՚ի ծառայութիւն նոցա:⁶ Եւ զդուռնն հին ունէին Յուդայ որդիք, Փասեկ, և Մեսողամ, որդի Բասողիայ. և սոքա կազմեցին զնա, և կանգնեցին զդրունս նորա, և զդռնափակս և զնիզս*:⁸ Եւ զհետ նոցա ՚ի կարգին կալալ Անանիա որդի Յոնսէկէիմ և Եթող Երուսաղէմացւոցն մինչև ՚ի պարիսպն հրապարակաց:⁹ Եւ զհետ նոցա կալալ Յոնափիա իշխան կողմանց տեղեացն Երուսաղէմի.¹⁰ Եւ ՚ի ձեռանէ նորա կալալ Յերադիա որդի Յերոմաք, և ՚ի կողմանէ տանն իւրոյ. և ՚ի ձեռանէ նորա կալալ Ատտուս որդի Սաբանիայ*:¹¹ Եւ երկրորդ կալալ Եղթիաս որդի Երամ. և Ասուբ որդի Փաադմովաբ, մինչև յաշտարակն Թանուրիմ*.¹² Եւ ՚ի ձեռանէ նորա կալալ Սաղում որդի Աղոհեմ իշխան կիսոյ կողմանն Երուսաղէմի. ինքն և դստերք իւր*:

* Ոմանք. Եթէ զի՞նչ էի՝ երթեալ... և այլքն որք վճա՞... մինչ յայն վայր:

* Ի լուս՝. Յարիցուք և շի՞նչ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:

* Ոմանք յաւելուն. Սանաբաղատ Արոն, և Տու՞ն:

* Ոմանք. Աւագանաց ջրղիսին:

* Ոմանք. Եւ ՚ի ձեռն որդւոց արանց: Յօրինակին. Որդւոց Նամարի:

* Օրինակ մի. Եւ զդուռնն Եթտիւրբան:

* Ոմանք. Սադովկ որդի Բասանայ:

* Ոմանք. Եւ Մեսողամ:

* Ոմանք. Կալալ Յերոդիա որդի Յերոմաք:

* Ոսկան. Մեղթիաս որդի Երամ:

* Ի լուս՞. Կիսոյ կողմանն Իսրայէլի. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:

¹³Եւ զդրունս Չորոյն կալաւ Անու, և որք բնակեալ էին Չանու. նոքա շինեցին զնա, և կանգնեցին զդրունս նորա, և զդնափակս և զնիզս, և հազար կանգուն շինեցին 'ի պարսպէն մինչ 'ի դուռն Մոխրոցին*։ ¹⁴Եւ զդուռն Մոխրոցին կալաւ Մեղ'քիա որդի Յեթաբ՝ իշխան տեղեացն Բեթաքարմայ, ինքն և տեղիք իւր. և յարկին զնա, և կանգնեցին զդրունս և զփակս և զնիզս նորա։ ¹⁵Եւ զպարիսպ Ջրբուղիս աղբերն կալաւ Ադիոն՝ իշխան թագաւորին, մինչև յաստիճանսն որ իջանէ 'ի քաղաքէն Դաւթի։ ¹⁶Եւ զհետ նորա կալաւ Նեեմաս որդի Ազբուք՝ իշխան կողմանն Բեթսուր մինչև 'ի պարտեզ տեղեացն Դաւթի, մինչև 'ի ջրբուղիսն կազմելոյ, և մինչև ցԲեթագաբարին*։ ¹⁷Եւ զհետ նորա կալան Ղևտացիքն, Յայուսն որդի Բանեայ. և 'ի ձեռանէ նոցա կալաւ Ասաբիա՝ իշխան կողմանցն Կէիղ'այ. ¹⁸և զհետ նորա կալան եղբարք նորա, Բենայի որդի Ադադ՝ իշխան կողմանց Կէիղ'այ։ ¹⁹Եւ զհետ նորա կալաւ Ազուր որդի Յեսու, իշխան Մասփեայ, չա'փ երկրորդ պարսպին, որ ելանէր և խառնէր յանկիւնս աշտարակին*։ ²⁰Եւ զհետ նորա կալաւ Բարուք որդի Չաբու, չա'փ երկրորդ յանկիւնէն մինչև 'ի դուռն Բեթեղ'իասուր, ուր կայր քահանայն մեծ։ ²¹Եւ զհետ նորա կալաւ Մերամովթ որդի Ուրիայ, որդի Ակովմ. չա'փ երկրորդ 'ի դրանցն Բեթեղ'իասուր մինչև 'ի սպառուած նորա։ ²²Եւ զհետ նորա կալան քահանայքն Արքաքերայ*։ ²³և զհետ նորա կալաւ Բենիամին և Ասուր առաջի տանց իւրեանց. և զհետ նորա կալաւ Ազարիա որդի Մասու, որդի Անանիայ՝ մօտ առ տամբն իւրով*։ ²⁴Եւ զհետ նորա կալաւ Բանի որդի Ենգադայ չա'փ երկրորդ 'ի Բեթագարայ մինչև յանկիւնն։ ²⁵Եւ զշրջան դարծի տեղւոյն կալաւ Փաղաք որդի Ուզայի՝ ընդդէմ անկեանն. և զաշտարակն որ էր արտաքոյ ապարանից թագաւորին վերագոյն քան զգաւիթ բանտին. և զհետ նորա Փաթաւա որդի Փորոնեայ։ ²⁶Եւ Նաթանայիմքն որ բնակեալ էին Ուփադէոս պարտիզի դրան Չրոյն կողմանն արևելից. և աշտարակն որ արտաքոյ կողմանն։ ²⁷Եւ զհետ նորա կալան Թեկուացիքն չա'փ երկրորդ ընդդէմ աշտարակին մեծի, որ էր արտաքոյ մինչև 'ի պարիսպն Սոփեղայ։ ²⁸Եւ վերագոյն դրան Չիոցն կալան քահանայքն՝ ա'յր իւրաքանչիւր հանդէպ տանց իւրեանց։ ²⁹Եւ զհետ նորա կալաւ Սադովկ որդի Եմեր, հանդէպ տան իւրոյ. և զհետ նորա կալաւ Սամեիա, որդի Սեքեմիայ, որ էր պահապան արևելից. և զհետ նորա կալաւ Անանիա որդի Սեղ'եմիայ, և Անոն որդի Սեղ'եփայ չա'փ երկրորդ։ Եւ զհետ նորա կալաւ Մեսեղ'ամ որդի Բարաքայ՝ ընդդէմ զանձու տանն իւրոյ։ ³⁰Եւ զհետ նորա կալաւ Մեղքիա որդի Սարեփի, մինչև 'ի Բեթանաթան. և այլ մեծատունք քաղաքին հանդէպ դրանն Մափկաթ մինչև յելս շրջանակին։ ³¹Եւ 'ի մէջ դրանն Ջրբղիսին կալան Քեղկիա, և մեծատունք քաղաքին*։

4

Գլուխ Դ

* Ոմանք. Եւ զդուռն Չորոյն... և որք բնակեալ էին Չանա Անու, նոքա։

* Յօրինակին. Կողմանն Գեթսուր։

* Յօրինակին. Եւ զհետ նոցա կալաւ Ազ'։

* Ոմանք. Քահանայքն Աքերայ։

* Յօրինակին. Եւ զհետ նոցա կալան Բենիա'։

* Ոմանք. Եւ 'ի մէջ դրանն Ջրբղիսեաց կալան։

Բ¹ Եւ եղև իբրև լուսւ Սանաբաղատ, եթէ շինեմք զպարիսպն, և կանգնեմք զաշտարակս նորա, չար թուեցաւ առաջի նորա՝ և զայրացեալ ուժգին ծաղր ամներ զՅրեաստան*։² Եւ ասէր առաջի եղբարց իւրոց. Ա՞յս է զօրութիւն ձեր՝ ո՛վ Սանարացիք, և զիա՞րդ Յրեայք շինեն և ամրացուցանեն զքաղաքս իւրեանց*։³ Եւ Տուբիա Աման ՚ի տե՛ս եկեալ առ նոսա ասէր. Մի՛ կարիցեն շինել. և զոհել զոհս, և կամ ուտել զնուէրսն ՚ի տեղուջ իւրեանց. և ո՞չ ելանեն այժմ աղուեսք, և քակեն զքարինս պարսպաց նորա։ Եւ ասեմք մեք*։⁴ Լո՛ւր մեզ Տէր Աստուած մեր, զի եղաք մեք յարհամարհանս և ՚ի թշնամանս, և դարձո՛ զնախատինս նոցա ՚ի գլուխս իւրեանց. և տո՛ւր զնոսա ՚ի թշնամանս առաջի գերչաց նոցա.⁵ և մի՛ ծածկեսցին անօրէնութիւնք նոցա*։⁷ Եւ եղև իբրև լուսւ Սանաբաղատ և Տուբիա, Արաբացիք և Ամոնացիք՝ թէ աջողեցաւ շինուած պարսպին Երուսաղէմի. և սկսաք իւրաքանչիւր տեղեացն զգործն երևեցուցանել, թուեցաւ չար առաջի նոցա.⁸ և ժողովեցան ամենեքեան ՚ի միասին, զա՛լ և պատերազմել ընդ Երուսաղէմի։⁹ Եւ կացաք յաղօթս առ Տէր Աստուած մեր, և կացուցաք պահանորդս ՚ի վերայ մեր ՚ի տուէ և ՚ի գիշերի առ ՚ի յերեսաց թշնամեացն։¹⁰ Եւ ասեն արք Յրեաստանի. Ո՛չ բաւեմք այսպիսի՝ պատերազմել և շինել միանգամայն. այլ ոմանք կա՛զմ կացցեն զինու, և ոմանք շինեսցեն։¹¹ Եւ ասեն որք զմեզ նեղէին. Ո՛չ տամք նոցա գիտել՝ և ո՛չ տեսանել. մինչև յիւրաքանչիւր տեղեաց յարուցեալ եկեսցուք ՚ի մէջ նոցա և սպանցուք զնոսա, և խափանեսցուք զգործս նոցա։¹² Եւ եղև իբրև եկին Յրեայքն որ բնակեալ էին ՚ի տեղիս տեղիս, և ասացին ցմեզ, եթէ ելանեն յանկարծակի յամենայն տեղեաց ՚ի վերայ մեր.¹³ և կացուցի ՚ի խոնարհագոյն տեղիսն յետոյ պարսպին ընդ յարկօքն արս հանդերձ զինու և զեղարդեամբ և աղեղամբ իւրեանց։¹⁴ Եւ ի՛մ յարուցեալ ասեմ ցարսն որ կա՛զմ պատրաստեալ կային, և ցօրագլուխս նոցա՝ և ցա՛յնս որ տեղեաց տեղեաց պահապանքն էին. Մի՛ երկնչիք յերեսաց նոցա, յիշեցէ՛ք զԱստուած մեր զմե՛ծ և զահարկու, և պատերազմեցարո՛ւք վասն եղբարց ձերոց, և վասն կանանց և որդւոց և դստերաց և տանց ձերոց*։¹⁵ Եւ եղև յորժամ լուսւ թշնամիքն մեր եթէ իմացա՛ք և կազմեալ պատրաստեցաք. ցրուեաց Աստուած զխորհուրդս նոցա, և մեք ամենեքեան դարձաք ՚ի շինել զպարիսպն՝ այր յիւրաքանչիւր գործ իւր։¹⁶ Եւ եղև յօրէ յայնմանէ. կեսքն կարգեալ լինէին ՚ի գործն, և կեսքն զինեալ ընդդէմ թշնամեացն. և զեղարդն և ասպար և աղեղն ՚ի ձեռին իւրեանց, և կայր պատրաստ այր իւրաքանչիւր յետոյ եղբօր իւրում*։¹⁷ որ շինէր զպարիսպն. և է՛ր ժամ զի օգներ եղբօր իւրում կրելով զզէնն ՚ի ձեռին իւրում, և միւսով ձեռամբն տայր ցեղբայր իւր զխիճն՝ կամ զտաղախ*։¹⁸ Եւ որք շինէինն՝ ունէր այր զսուսեր իւր ընդ մէջ իւր, և

* Ոմանք. եթէ մեք շինեմք զպա՛... և չար թուե՛։

* Ոմանք. Եւ ասէ առաջի եղբարց։

* Ի լուս՛. Եւ Տուբիա Ամանացի. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛. ուր ոմանք. և Տուբիսաման. և ոմանք. և Սուբա Ամանացի։*

* Ոսկան յաւելու. Անօրէնութիւնք. և ո՛չ մեղք նոցա յերեսաց քոց ջնջեսցին. քանզի այսպանեցին զշինողս։ 6 *Այնուհետև շինեցաք զպարիսպն զայն. և շրջափակեցաք զպարիսպն մինչև ՚ի կես նորա, և եղև սիրտ ժողովրդեանն առ ՚ի կատարել։ 7 *Եւ եղև իբրև լուսւ։

* Ոմանք. Եւ ցայնոսիկ որ տեղեաց։

* Ոմանք. Կարգեալ էին ՚ի գործն։

* Ի լուս՛. Զխիճն կամ զտաղախ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։*

զմիասայրի՝ ի վերայ բարձի իւրոյ. և այնպէս շինէին զպարիսպն Երուսաղէմի. և որ հարկանէր զփողն եղջերեայ՝ կա՛յր մօտ առ նոսա՞: ¹⁹Եւ ասե՛ն ցայնս որք կային զինեալ և պատրաստեալ, և ցիշխանս նոցա. Գործս մե՛ծ և ընդարձակ է, և մեք ցրուեալ ենք՝ ի շինուած պարսպիս, և հեռի՛ ենք ՚ի միմեանց այր յեղբօրէ իւրմէ. ²⁰արդ կացուցուք ՚ի տեղիս տեղիս զարսն որ հարկանեն զփողսն. և յորժամ լսէ որ զձայն եղջեր փողոյն, անդր ժողովեսցին ամենեքեան, և Աստուած մեր պատերազմեսցի ընդ թշնամիս մեր վասն մեր՞: ²¹Եւ կէսքն գործէին, և կէսքս ունէին զզէնսն պատրաստ, ՚ի ծագելոյ առաւօտուն մինչև յելանե՛լ աստեղն՞: ²²Եւ ասեմ ես ցարս ժողովրդեանն. Եկեսցուք և բնակեսցուք ՚ի մէջ քաղաքիս Երուսաղէմի, և զցայգ պահ արկցուք զմեք շուրջ, և զցերեկ գործեսցուք՞: ²³Եւ կացի՛ ես՝ և արքն շուրջ զինն որ պահէին զիս. և ո՛չ որ ՚ի մէնջ մերկանայր և կամ հաներ զզէն իւր յինքենէ՞:

5

Գլուխ Ե

Գ ¹Եւ եղև աղաղակ մեծ՝ ի ժողովրդեանն, և կանանց իւրեանց՝ ա՛յր առ եղբայր իւր. ²և ասեն. Վասն որդւոց մերոց և դստերաց մերոց, որոց պակասեցին կերակուրք՝ երթիցուք գնեսցուք՝ և կեցցուք: ³Եւ ոմանք ասէին. Ջանդաստանս մեր և զայգիս դիցուք՝ ՚ի գրաւի, և առցուք ցորեան և կերիցուք: ⁴Եւ էին ոմանք որ ասէին. Տուա՛ք զստացուածս մեր, և առաք ոսկի և արծաթ, և տուա՛ք ՚ի հարկս թագաւորի՞: ⁵Եւ արդ՝ որպէս մարմինք եղբարց մերոց են մարմինք մեր, և որպէս որդիք նոցա՝ որդիք մեր. և արդ՝ ընդէ՞ր տուաք մեք զորդիս մեր ՚ի ծառայութիւն, և դստերք մեր վարեալ են ՚ի բռնութիւն, և ո՛չ զոյ ՚ի ձեռս մեր կա՛ր՝ որով փրկեսցուք զնոսա: ⁶Եւ տրտմեցայ ես յո՛յժ յորժամ լուայ զաղաղակն՝ և զբանս նոցա. ⁷և արարի խորհուրդ ընդ միտս իմ. և կագեցայ ընդ պատուականս և ընդ իշխանս նոցա, և ասեմ ցնոսա. Դո՞ւք էք որ խնդրէք զհարկս յեղբարց ձերոց: Եւ հրամայեցի նոցա լինել ժողով մեծ. ⁸և ասեմ ցնոսա. Մե՛ք փրկեսցուք զեղբարս մեր զԶրէայս որ վաճառեցան հեթանոսաց, զոր մեք ո՛չ գիտացաք. և դուք վաճառեցէ՞ք զնոսա: Եւ լռեցին, և ո՛չ ինչ կարացին տալ պատասխանի: ⁹Եւ ասացի ցնոսա. Ո՛չ բարուք է գործդ զոր դուքդ առնէք, վասն զի ո՛չ երկնչիք յԱստուծոյ. և վասն այսորիկ ո՛չ ևս զերծաք մեք ՚ի նախատանաց հեթանոսաց՝ և ՚ի թշնամեաց մերոց: ¹⁰Եւ ասեմ ես ցեղբարսն իմ և ցճանօթս. Եւ ես և դուք տացուք արծաթ և արդիւնս ՚ի փրկանս զոր խնդրեն հարկահանքդ, ¹¹և դարձուցուք այսօր զանդաստանս զայգիս և զձիթենիս և զտունկս դոցա. և ընդ արծաթոյ մերոյ գնեսցեն զցորեան՝ զգինի՝ և զձէթ, և բերցեն դոցա: ¹²Եւ ասեն իշխանքն և այլ մեծամեծքն. Դարձուցուք անդրէն՝ և ՚ի դոցանէ ո՛չ ինչ խնդրեսցուք, և ա՛յդպէս արասցուք որպէս հրամայեցերդ: Եւ կոչեցի զքահանայսն՝ և երդմնեցուցի զնոսա վասն բանիս այսորիկ. ¹³և զարկանելին իմ

* Ոմանք. Եւ զմիասայր ՚ի վերայ:

* Այլք. Եւ յորժամ լսիցէ որ:

* Բագոււմք. Եւ կէսքն ունէին... ՚ի ծագել առաւօտ:

* Ոմանք. Եւ զցայգ պահարկեսցուք զմեք:

* Ոմանք. Եւ արքն որ շուրջ զինն որ պահէին զիս. և ո՛չ որ էր ՚ի մէնջ որ մերկա՞:

* Ոսկան. Որք ասէին՝ տացուք զստացուածս:

թօթափեցի ուժգին, և ասեմ. Այսպէս թօթափեցէ Աստուած զամենայն այր որ ո՛չ կատարեցէ զբանս զայս՝ ՚ի կենաց իւրոց, և ՚ի տեղեաց իւրոց, եղիցի որպէս ունայնացեալ և թօթափեալ ՚ի կենաց իւրոց: Եւ ասացին ամենայն ժողովուրդ եկեղեցւոյն այնորիկ. Ամէն: Եւ օրհնեցին զՏէր. և արարին և կատարեցին ամենայն ժողովուրդքն զբանս զայս*:

¹⁴Եւ յօրէն յայնմանէ յորմէ հետէ պատուիրեցի՝ զի մի՛ լիցին նոցա իշխանք Յուդայ. ՚ի քսաներորդ ամէն՝ մինչև յամն երեսներորդ երկրորդ Ատաշէսի արքայի զերկոտասան ամ, ե՛ս և եղբարք իմ եղաք իշխանք: Բռնի՛ զուրուք մեք ո՛չ կերաք և արբաք*:

¹⁵Եւ որք էին բռնացեալ զառաջինն՝ ծանրացուցի նոցա, և առի՛ ՚ի նոցանէ զհաց և զգինի, և զա՛յլ ամենայն. արծաթ դիդրաքմայս քառասուն, և դարձուցի ՚ի տեսարս իւրեանց, և ՚ի բա՛ց արարի զնոսա յիշխանութենէ ժողովրդեանն, և ես ո՛չ եղէ իբրև զնոսա վասն երկիրդին Աստուծոյ:

¹⁶Եւ յաջողէր գործ պարսպին. և ո՛չ զուրուք բռնացայ ունել զանդաստանս և կամ զայգիս. և ամենեքեան էին անխափան ՚ի գործ պարսպին:

¹⁷Եւ արս հարիւր ՚ի Յրէիցն, և այլք որ գային ՚ի հեթանոսաց առ մեզ որ շուրջ էին զմեք՝ ե՛ս ծախէի՝ և խառնէի ՚ի ճաշն իմ:

¹⁸Եւ լինէր յաւուր միում զուարակ մի, և ոչխարք վեց ընտիրք, և ամիկ մի. և այս էր յաւուր ծախքն իմ. և ընդ մեջ տասն աւուր անխնայ տայի զգինին ըմպել ամենեցուն. և ո՛չ յունեքէ առի զհաց բռնի, քանզի գիտէի եթէ ծանր էր գործ ժողովրդեանն*:

¹⁹Յիշեցէ զիս Աստուած ՚ի բարութիւն, որպէս արարի ամենայն ժողովրդեանն:

6

Գլուխ Զ

Դ ¹Եւ եղև յորժամ լուան Սանաբաղատ և Տուբիա՝ և երկիրն Արաբացւոց՝ և այլք բազումք ՚ի թշնամեաց մերոց, եթէ շինեցի զպարիսպն. և ո՛չ մնաց ՚ի նոսա զօրութիւն. և ցայն ժամ ևս զդրունսն ո՛չ էր կազմեալ*:

²Եւ առաքեաց Սանաբաղատ և Գեսամ առ իս, և ասեմ. Եկ՛ և ժողովեսցուք ՚ի միասին ՚ի գե՛ղ մի ՚ի դաշտին Ովնոյ: Եւ նոքա կամէին խորհել չա՛ր ՚ի վերայ իմ:

³Եւ առաքեցի առ նոսա հրեշտակս, և ասեմ. Գործս զոր գործեմ ես՝ գործ մե՛ծ է, և ո՛չ ժամանեմ իջանել առ ձեզ, զի մի՛ խափանեսցի գործս. յորժամ կատարեմ զսա՝ ապա՛ իջից առ ձեզ:

⁴Եւ առաքեցին առ իս բազում անգամ, և ես զնոյն պատասխանի արարի նոցա:

⁵Եւ առաքեաց առ իս Սանաբաղատ զպատանի իւր, և ունէր ՚ի ձեռին իւրում թուղթ արծակ. ⁶յորում գրեալ էր այսպէս. Յամենայն հեթանոսս լը՛ւր եղև, եթէ դու՛ և ամենայն Յրէայք կամիք պատանաբել ՚ի թագաւորէն. և վասն այնորիկ շինես դու զպարիսպդ՝ և ամրացուցանես զաշտարակս դորա, վասն զի կամիս դու թագաւորել.

⁷վասն այսորիկ կացուցեր քեզ մարգարէս, զի կամիս նստել յերուսաղէմ, և թագաւորել ՚ի վերայ Յրէաստանի, արդ՝ զուցէ պատմեսցեն զբանս զայս թագաւորին. Եկ՛ և վասն այսր խորհեսցուք երկորքեան*:

⁸Եւ առաքեցի առ նա՝ և ասեմ. Ո՛չ ուստեք են բանքդ այդ զոր դու

* Ոմանք. Եղիցի այսպէս ունայնացեալ... ամենայն ժողով եկեղեցւոյն:

* Ոմանք. ՚ի քսաներորդ ամին մինչև յա՛մ:

* Ոմանք. Անխնայ ՚ի զգինին ըմպել: Այլք. Եթէ ծանր է գործ ժողովրդ՛:

* Ոմանք. Եւ յայնժամ ևս զդրունսն. ուր Ոսկան. և յայնժամ զմիւս դրունսն ո՛չ էր:

* Այլք. Եւ վասն այսորիկ:

խօսիս, այլ զքէն ՚ի սրտէ քունմէ դու ասես զայդ*։ ⁹Չի ամենեքեան զարհուրեցուցանեն զմեզ՝ և ասեն. Լքցի՛ն ձեռք իւրեանց, և մի՛ կատարեսցեն զգործս իւրեանց. և արդ՝ զօրացուցի զձեռս իմ մինչև կատարեսցի գործս ՚ի գլուխ։ ¹⁰Եւ ես մտի՛ ՚ի տուն Սիմայ որդւոյ Դաղայիայ, որդւոյ Մետաբեղայ. և նա լռեալ էր ՚ի տան իւրում. և ասէ ցիս. Ժողովեսցուք ՚ի տուն Տեառն, և ամրասցուք ՚ի միջի դորա, և փակեսցուք զդրունս դորա. զի մի՛ գուցէ եկեալ թշնամիքն գիշերի սպանանիցեն զմեզ*։ ¹¹Եւ ասե՛մ ես. Ո՞վ է այն այր յորմէ ես փախեայց. և կամ ո՞րք իբրև զիս՝ այր որ մտցէ ՚ի տուն Տեառն, և կարասցէ ապրել։ ¹²Եւ գիտացի՛ եթէ ո՛չ էր Աստուծոյ առաքեալ. և ո՛չ էր բան մարգարէի վասն իմ։ ¹³Եւ Տուբիաս և Սանաբաղատ կալան վարձկանս, և ժողովս բազումս վասն իմ, զի երկեայց և մտից ՚ի տուն Տեառն՝ և մեղայց, և դիցեն ՚ի վերայ իմ անուն չար։ ¹⁴Յիշեսցէ՛ Աստուած ըստ նենգութեանն Տուբիայ և Սանաբաղտայ ոյք խորհեցան ՚ի վերայ իմ չար, և ստիպէին սո՛ւտ մարգարեանալ, զի զարհուրեցուցեն և երկեցուցեն զիս։ ¹⁵Եւ կատարեցաւ պարիսպն ՚ի քսաներորդ հինգերորդ ամսոյն Իլուլ ՚ի յերկոտասան ամս*։ ¹⁶Եւ եղև յորժամ լուան ամենայն թշնամիքն մեր, զարհուրեցան ամենայն հեթանոսքն որ շուրջ զմեք, և անկաւ ՚ի վերայ նոցա ահ և երկիւղ յոյժ. և գիտացին թէ յԱստուծոյ էր կատարումն գործոյն մերոյ։ ¹⁷Եւ յաւուրսն յայնոսիկ մեծաւ պատուով առաքէր թուղթ ՚ի Յրէիցն առ Տուբիա, և Տուբիա զայր առ նոսա*։ ¹⁸Քանզի էր ընտանութիւն մեծ առ միմեանս. զի էր փեսայ Մեքենիայ որդւոյ Երայ, և Յովնաբան որդի նորա արար կին զդուստր Մետողոմայ որդւոյ Բարաքիայ։ ¹⁹Եւ զբանս նորա էին որ բերէին առ իս, և զբանս իմ պատմէին նմա. և թուղթս բազումս տայր առ ՚ի յերկեցուցանել զիս։

7

Գլուխ Է

¹Եւ եղև յորժամ կատարեցաւ պարիսպն, և կանգնեցի զդրունս նորա. և կացին դռնապանք և երգեցիկք, սաղմոսասացք և Ղևտացիք*։ ²և պատուիրեցի եղբարցն իմոց՝ և Անանիայ որ էր իշխան ՚ի վերայ Երուսաղէմի. վասն զի նա՛ էր ճշմարիտ այր՝ և երկիւղած յԱստուծոյ քան զբազումս։ ³Եւ ասե՛մ ցնոսա. Մի՛ բանայցէք վաղվաղակի զդրունսն մինչև ՚ի ծագել արևուն, և մինչդեռ ամենեքեան արթունք իցեն՝ կալցեն զդրունսն, և փակ արկեալ պնդեսցեն զնոսա. և կացցեն պահապանք դրանց և բնակչաց Երուսաղէմի, այր ՚ի պահու իւրում, և այր իւրաքանչիւր ՚ի տան իւրում. ⁴վասն զի քաղաքս մեծ և ընդարձակ է՝ և ժողովուրդս սակաւ ՚ի սմա. և ո՛չ ևս են դեռ ամենայն ապարանք շինեալ։

* Այլք. Այլ քեզէն ՚ի սրտէ քո՛ւ։

* Ոմանք. Ժողովեցարուք ՚ի տուն Տեառն։

* Յօրինակին թուագրովք այսպէս դնի. Ի Ի-երորդ՝ հինգերորդ ամսոյն Իլուլ. ՚ի ԲԺ ամս. ուր երկու օրհնակք. ամսոյն Իլուլի ԾԲ աւուրն յԲԺ-ան ամս. և օրհնակ մի՝ ամսոյն Իլուլ ՚ի Ծ և Բ աւուրս. և այլ հնագոյն օրհնակ մի՝ ամսոյն Իլուլի յիսուն և երկու աւուրս. բայց սա ևս ՚ի լուսանցսն նշանակէ ԺԲ-ան ամս։

* Ոսկան. Եւ ՚ի Տուբիայէ զայր առ նոսա։

* Ոմանք. Եւ սաղմոսասացք և Ղև՛։

Ե 5Եւ արկ Աստուած ՚ի սիրտ իմ, և ժողովեցի զպատուականսն և զիշխանսն՝ և զժողովուրդն ՚ի ժողով մի. և գտի զգիրսն ազգահամարին որ էին ելեալ յառաջնուն ՚ի գերութենէն. և էր գրեալ ՚ի նմա այսպէս* . 6Այս են անուանք որդւոցն Իսրայէլի որք ելին ՚ի գերութենէն՝ զորս պանդխտեցոյց Նաբուքոդոնոսոր թագաւոր Բաբելացոց, և դարձան յերուսաղէմ ՚ի Զրէաստան, այր իւրաքանչիւր ՚ի քաղաք իւր* . 7որք եկին ընդ Ջորաբաբելի և ընդ Յեսուայ և ընդ Նեեմեայ Ազարիանց: Դայեղիմայ, Նայեմանի, Մարտեքու, Բեղման, Մատատփարաթ, Եզրա, Բազուիէ, Նաւուն, Բարանա, Սոփրա: Արք ժողովրդեանն Իսրայէլի. 8որդիք Փորոսայ՝ երկու հազար հարիւր եւթանասուն և երկու* . 9որդիք Սափատիայ, երեք հարիւր եւթանասուն և երկու. 10որդիք Արեսայ, վեց հարիւր յիսուն և վեց. 11որդիք Փաաթնովաք յորդւոցն Յեսուայ և Յովաբայ, երկու հազար երկերիւր ութնասուն: 12Որդիք Եղամ, հազար երկու հարիւր յիսուն և չորս. 13որդիք Չաթուայ, ութ հարիւր քառասուն և հինգ. 14որդիք Չաքու, եւթն հարիւր վաթսուն. 15որդիք Բանուայ, վեց հարիւր քառասուն և ութ: 16Որդիք Բիբէի՝ վեց հարիւր քառասուն և ութ* . 17որդիք Ազիայ, երկու հազար երեք հարիւր քսան և երկու: 18Որդիք Ադոնիկամայ, վեց հարիւր յիսուն և եւթն. 19որդիք Բազուիէ, երկու հազար վաթսուն և եւթն. 20որդիք Ադինայ, վեց հարիւր յիսուն և չորս. 21որդիք Ատտերեզիայ, իննսուն և ութ* . 23որդիք Բէասի, երեք հարիւր քսան և չորս. 24որդիք Քարիք, հարիւր տասն և երկու* : 26Որդիք Բեթղաիէմ, հարիւր քսան և երեք. որդիք Նետոփայ, յիսուն և վեց. 27որդիք Անաթովթ, հարիւր քսան և ութ. 28որդիք Բեթազմայ, քառասուն և երկու. 29որդիք Կարիաթարիմ Քաբիրայ և Բերովթ, ութ հարիւր քառասուն և երեք* . 30որդիք Արամայ և Գաբայ, վեց հարիւր քսան և մի. 31որդիք Մաքիմար, հարիւր քսան և երկու* . 32որդիք Բեթէլ՝ Լարայ, հարիւր քսան և երեք. 33որդիք Նաբիայ, հարիւր յիսուն և երկու. որդիք Մակեբոս, հարիւր յիսուն և վեց* . 34որդիք Եղամայ, հազար յիսուն և չորս* . 35որդիք Երամ, երեք հարիւր քսան. 36որդիք Երեքով, երեք հարիւր քառասուն և հինգ. 37որդիք Ղոդադիդ և Անովն, եւթն հարիւր քսան և երեք. 38որդիք Անանայ, երեք հազար հարիւր երեսուն: 39Եւ քահանայք որդիք Յովիդեայ՝ տասն, Յեսուայ ինն հարիւր եւթանասուն և երեք* . 40որդիք Եմեր, հազար յիսուն և երկու. 41որդիք Փասէուր, հազար երկերիւր քառասուն* . 42որդիք Երամ, հազար տասն և եւթն: Եւ Ղևտացիք, 43որդիք Յեսուայ՝ Կադմիէլ. յորդւոցն 44Յուդայիդ՝ եւթանասուն և երեք: Եւ երգեցիկք

* Ոմանք. Եւ գտից զգիրսն:

* Այլք. Յերուսաղէմ և ՚ի Զրէաստան, այր իւ՛:

* Այլք. Դաեղմիայ, Նայեմանի:

* Յօրինակին պակասէր այս համար. * Որդիք Բիբէի վեց հարիւր քառասուն և ութ:

* Ոսկան յաւելու. Որդիք Ատտեր. որդիք Եզիա՝ իննսուն և ութն: 22 * Որդիք Չասուճայ՝ երեք հարիւր քսան և ութն:

* Ոմանք. Որդիք Արիք, հար՛: Ուր ոմանք յաւելուն համար 25 * Որդիք Գաբաւոն՝ իննսուն և հինգ:

* Ոմանք. Արք Կարիա՛... (30) Արք Արամայ:

* Ոմանք. Արք Մաքեմար... (32) Արք Բեթէլ և Արա հար՛:

* Ոմանք. Արք. և ոմանք. Որք:

* Ոմանք. Արք. և ոմանք. Որք:

* Ոսկան. Որդիք Յովիդեայ ՚ի տանէն Յեսուայ:

* Ոմանք. Քառասուն և եւթն:

սաղմոսասացք*, ⁴⁵որդիք Ասափայ՝ հարիւր քառասուն և ութ: ⁴⁶Եւ դմնապանք՝ որդիք Եղ՛ումայ. որդիք Ատտեր. որդիք Տեմիովն. որդիք Ակուբ. որդիք Ատիտայ. որդիք Սաբէի, հարիւր երեսուն և ութ: ⁴⁷Եւ Նաթանիմացիք, որդիք Սիլայ. որդիք Ասիփայ. որդիք Տաբովթ. ⁴⁸որդիք Սարիաս. որդիք Սիայ. որդիք Փասովն. որդիք Ղաբանու. որդիք Ադաբայ. որդիք Ակուդ. որդիք Ուտայ. որդիք Կետար. որդիք Ագաբ. որդիք Սեղ՛եմի. ⁴⁹որդիք Անան. որդիք Գադեղ. որդիք Գայար: ⁵⁰Որդիք Յռեայ. որդիք Յռասոն. որդիք Նեկոդայ. ⁵¹որդիք Գեեղամ. որդիք Ոզի. որդիք Փեսէ. ⁵²որդիք Բեսէի. որդիք Մէինոս. որդիք Նեփովայիս. ⁵³որդիք Բաբովկ. որդիք Աքիբայ. որդիք Արուր. ⁵⁴որդիք Ասաղ՛ովթ. որդիք Մեիդայ. որդիք Ադասան. ⁵⁵որդիք Բարկուէ. որդիք Սիսարայ. որդիք Թեմայ. ⁵⁶որդիք Նեսիայ. որդիք Սարիփայ: ⁵⁷Որդիք ծառայիցն Սողոմոնի. որդիք Սուտի. որդիք Սափարաթ. որդիք Փարեդայ*. ⁵⁸որդիք Յէաղէ. որդիք Դորկովն. որդիք Գագէլ. ⁵⁹որդիք Սափատիայ. որդիք Ետէմ. որդիք Փաքարաթ. որդիք Սաբայիմ. որդիք Յեմիս: ⁶⁰Ամենայն Նաթանայիմք, և որդիք ծառայիցն Սողոմոնի՝ երեք հարիւր իննսուն և երկու: ⁶¹Եւ այսք էին որք ելին ՚ի Թեմեղիքայ. Թեղայոր Սաքերուբ, Երոն, Եմեր, և ո՛չ կարացին պատմել զտուն հարց իւրեանց, և ո՛չ զագգն իւրեանց որ յիսրայէլէ իցեն*: ⁶²Որդիք Դաղայ. որդիք Բուայ. որդիք Տուբիայ. որդիք Նեկովդայ՝ վեց հարիւր քառասուն և երկու: ⁶³Եւ ՚ի քահանայիցն, որդիք Եբէրայ. որդիք Ակովմ. որդիք Եղիսայ. վասն զի ա՛ռ կին ՚ի դստերաց Բերգէլեայ Գաղաադացւոյ, և կոչեցաւ ըստ անուան նորա*: ⁶⁴Սոքա խնդրեցին գրել զագգահամար իւրեանց. և ո՛չ գտաւ, և մերժեցան ՚ի քահանայիցն: ⁶⁵Եւ ասաց Արթարասաթա ցնոսա. Մի՛ կերիցեն ՚ի սրբութեանցն սրբութեանց, մինչև յարիցէ քահանայ՝ և լուսաւորեալ յայտնեսցէ զնոսա*: ⁶⁶Եւ եղև ամենայն ժողով եկեղեցւոյն չորս բար և երկերիւր վաթսուն. ⁶⁷թո՛ղ զծառայս և զաղախնայս իւրեանց՝ որք էին եւթն հազար երեք հարիւր երեսուն և եւթն. և որք էին երգեցիկք սաղմոսասացք արք և կանայք՝ երկերիւր քառասուն և հինգ*: ⁶⁸Չիք՝ եւթն հարիւր երեսուն և վեց. ջորիք՝ երկերիւր քառասուն և հինգ. ⁶⁹ուղտք՝ չորեք հարիւր երեսուն և հինգ. էչք՝ վեց հազար քսան և եւթն*: ⁷⁰Եւ իշխանք ըստ հայրապետացն իւրեանց ետուն ՚ի գործն. և Աթրասարթա ե՛տ ՚ի զանձն ոսկի սկաւառակս յիսուն, և պատմուճանս քահանայիցն երեսուն: ⁷¹Եւ իշխանք հայրապետացն ետուն ՚ի զանձն գործոյն՝ ոսկի երկու բարս. և արծաթ բար մնասս. և երկու հազար երկերիւր: ⁷²Եւ այլ ժողովուրդն ետ դահեկանս երկուս բարս, և կահ արծաթի երկու հազար, և պատմուճանս քահանայիցն վաթսուն և եւթն: ⁷³Եւ նստան քահանայքն՝ և Ղևտացիքն՝ և դմնապանքն՝ և երգեցիկք սաղմոսասացքն՝ և ՚ի ժողովրդենէն՝ և Նաթանիմացիքն, և ամենայն Իսրայէլ ՚ի քաղաքս իւրեանց:

Ձ Եւ ժամանեաց եհաս ամիսն եւթներորդ. և էին որդիքն Իսրայէլի ՚ի քաղաքս

* *Ոմանք.* Յորդուցն Ուդայիդ՝ եւթանասուն և չորս:

* *Ոմանք.* Եւ որդիք ծառայ՝:

* *Ոմանք.* Թեղայ Որսաքերուբ:

* *Ոմանք.* Որդիք Եբէիա:

* *Անունս՝* Արթարասաթա, *աստ և ստորև ՚ի համար 70 այլևայլ եղանակաւ գրի ըստ ամենայն գրչագրաց մերոց:*

* *Յօրինակին պակասէր.* Որք էին եւթն հա՛: *Ոմանք.* Երգեցիկք և սաղ՛:

* *Ոմանք թուագրով դնեն.* էչք՝ 82Ի:

իւրեանց*:

8

Գլուխ Ը

¹Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդքն իբրև զայր մի՝ ի հրապարակն առաջի դրան ջուրցն. և ասացին ցեզրա գրիչ օրինացն Տեառն, զի բերցէ զօրէնսն Մովսիսի զոր հրամայեալ է Տեառն Աստուծոյ Իսրայէլի: ²Եւ եբեր Եզրա քահանայ զօրէնսն առաջի եկեղեցւոյն, ուր ժողովեալ էին արք և կանայք, և ամենեքեան որք կամէին լսել յամսամտին եւթներորդ ամսոյն*: ³Եւ սկսաւ կարդալ զնա յառաւօտէ յորժամ ծագէր արեգակն մինչև ցօր հասարակ առաջի արանց և կանանց. և իմանային ամենեքեան՝ և դնէին ո՛ւնկն ամենայն ժողովուրդն ՚ի լսել ամենայն գրելոց օրինացն: ⁴Եւ կայր Եզրա քահանայ և գրիչ ՚ի վերայ բեմի փայտեղինի. և կային առ նմա Մատաթիաս, և Սամեաս, և Անանիաս, և Ուրիաս, և Քեղկիա, և Մասիա՝ ընդ աջմէ նորա. և ընդ ահեկէ նորա՝ Փադիաս, և Միսայէլ, և Մեղճիաս, և Ասամ, և Սարդանա, և Չաքարիա, և Մոսող՛ամ: ⁵Եւ յորժամ եբաց Եզրա զգիրսն առաջի ամենայն ժողովրդեանն, վասն զի նա՛ էր վերակացու ամենայն ժողովրդեանն. և եղև ՚ի բանալ նորա զգիրսն, կայր ժողովուրդն առաջի նորա*: ⁶Եւ օրինեաց Եզրա զՏէր Աստուած մեծ. և ասեն ամենայն ժողովուրդն. Ամէն: Եւ համբարձին զձեռս իւրեանց, և խոնարհեալ երկրպագեցին Տեառն Աստուծոյ ՚ի վերայ երեսաց իւրեանց յերկիր: ⁷Եւ Յեսուս, և Բանեաս, և Սարարիանս էին որ իմացուցանէին զօրէնսն ժողովրդեանն. և ժողովուրդքն կային ըստ կարգի իւրեանց: ⁸Եւ ասէ Նեեմի՝ որ է Աթերսասթա՝ և Եզրա քահանայ և գրիչ, և Ղևտացիքն որ իմացուցանէին ժողովրդեանն. ⁹և ասեն ամենայն ժողովրդեանն. Օրս այս՝ օր սո՛ւրբ է Տեառն Աստուծոյ մերոյ, մի՛ սգայք և մի՛ լայք: Քանզի լային ժողովուրդքն յորժամ լուան զբանս օրինացն: Եւ ասեն ցնոսա. Երթայք կերայք և արբէք զպարարտս և զքաղցունս, և առաքեցէք մասն որոց ո՛չ գուցէ, վասն զի օր սո՛ւրբ է Տեառն Աստուծոյ մերոյ. արդ զօրացարո՛ւք և մի՛ տրտմեցուցանէք զսա: ¹⁰Եւ Ղևտացիքն լռեցուցանէին զժողովուրդն՝ և ասէին. Լո՛ւռ լերուք և մի՛ տրտմիք, վասն զի օր սո՛ւրբ է սա: ¹¹Եւ զնաց ժողովուրդն յուտել և յըմպել և առաքեցին մասն որոց ո՛չ գոյր. և առնէին ուրախութիւն մեծ, վասն զի իմացան զբանս օրինացն զոր կարդաց նոցա*: ¹²Եւ յաւուրն երկրորդի ժողովեցան իշխանքն հայրապետաց ամենայն ժողովրդեանն՝ և քահանայք և Ղևտացիք առ Եզրաս գրիչ օրինացն. զի տեղեկացին և ուսցին ՚ի նմանէ զամենայն բանս օրինացն: ¹³Եւ գտին գրեալ յօրէնսն՝ զի էր հրամայեալ Տեառն Աստուծոյ Մովսիսի. ո՛րպէս արժան է որդւոցն Իսրայէլի բնակել ՚ի տաղաւարս ՚ի տօնի եւթներորդ ամսոյն. ¹⁴և ո՛րպէս նշանակել փողով յամենայն քաղաքս իւրեանց և յերուսաղէմ: Եւ ասէ Եզրա. Ելէք ՚ի լեառն և բերէք տերևս ձիթենեաց, և տերևս ՚ի ծառոց սաւսեաց, և տերևս մրտոց՝ խնկենեաց, և տերևս արմաւենեաց, և տերևս ՚ի թաւ ոստոց ծառոց. և արարէք ձեզ տաղաւարս ըստ գրեցելոցն: ¹⁵Եւ ելին ժողովուրդքն և

* Ոմանք. Եւ ժամանեալ էհաս ա՛:

* Ոմանք. Որ ժողովեալ էին արք:

* Ոմանք. Վասն զի նստեր վերակացու ամենայն... ՚ի բանալ նորա ՚ի գիրսն:

* Ոմանք. Եւ առաքէին մասն որոց:

բերին, և արարին իւրեանց տաղաւարս, ա՛յր ՚ի տանիս իւրում, և ա՛յր ՚ի սրահի իւրում, և ՚ի սրահի տանն Աստուծոյ, և ՚ի հրապարակս քաղաքին մինչև ՚ի դրունս Եփրեմայ: ¹⁷Եւ արարին տաղաւարս ամենայն ժողովք եկեղեցւոյն որք դարձեալ էին ՚ի գերութենէն, և նստան ՚ի տաղաւարս. քանզի ո՛չ երբէք արարին որդիքն Իսրայէլի յաւուրցն Յեսուայ որդւոյ Նաւեայ այնպէս մինչև յօրն յայն. և եղև ուրախութիւն մեծ յոյժ*։ ¹⁸Եւ կարդայր զգիրս օրինացն օրըստօրէ, յօրէն յառաջնմէ մինչև յօրն եւթներորդ. և արարին զտօնն զեւթն օր, և յաւուրն ութերորդի եղև կատարումն ըստ օրինացն:

9

Գլուխ Թ

¹Եւ ՚ի քսան և չորս ամսոյն ժողովեցան որդիքն Իսրայէլի և սկսան պահել պահս, և զգեցան քո՛ւրձ, և արկին մոխիր ՚ի վերայ գլխոց իւրեանց: ²Եւ որոշեցան որդիքն Իսրայէլի յամենայն որդւոցն այլազգեաց. և քաւեցին զմեղս իւրեանց՝ և զմեղս հարցն իւրեանց. ³և կային ՚ի կարգի իւրեանց: Եւ կարդայր Եզրա զգիրս օրինացն Տեառն Աստուծոյ. և երկիր պագին ժողովուրդքն Տեառն Աստուծոյ իւրեանց*։ ⁴Եւ կային ՚ի բարձրաւանդակ տեղւոջ Եզրա և Ղևտացիք և Յեսու Յովսեփեկեանց, և որդիքն Կադմելի. Սաքանիա որդի Սարեբիայ՝ որդիք Անանիայ. և գոչեցին մեծածայն առ Տէր Աստուած իւրեանց. ⁵և ասեն Ղևտացիքն Յեսու և Կադմիէլ. Ե՛ղբարք՝ օրհնեցէ՛ք զՏէր Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից. և եղիցի օրհնեալ փառք Տեառն, և բարձրացի օրհնութիւն նորա և գոհութիւն: Եւ սկսաւ օրհնել Եզրա զՏէր Աստուած՝ և ասէ*։ ⁶Դո՛ւ ես նոյն ինքն Տէր Աստուած միայն. դո՛ւ արարեր զերկինս՝ և զերկինս երկնից, և զամենայն կարգս նորա, և զերկիր և զամենայն կարգս նորա, և զամենայն ինչ որ է ՚ի նմա, զծով և զամենայն որ է ՚ի նմա. և դո՛ւ կենդանացուցեր զամենեսեան. և քե՛զ երկրպագեն զօրք երկնից, և զքե՛զ փառաւորեն երկինք երկնից*։ ⁷Վասն զի դու միայն ես Տէր Աստուած մեր: Դո՛ւ ընտրեցեր զԱբրամ, և հաներ զնա յերկրէն Քաղդեացւոց, և եղիր նմա անուն Աբրամ*։ ⁸և գտեր զսիրտ նորա հաւատացեալ առաջի քո. և եղի՛ր դու նմա ուխտ, տալ նմա զերկիրն Քանանացւոց, և Քետացւոց, և Ամովրիացւոց, և Փերեզացւոց, և Յերուսացւոց, և Գերգեսացւոց, և զաւակի նորա մինչև յաւիտեան. և հաստատեցեր զբանս քո, Վասն զի արդար ես: ⁹Եւ տեսեր զնեղութիւնս հարցն մերոց որ յեգիպտոս, և լուա՛ր աղաղակի նոցա ՚ի վերայ Կարմիր ծովուն. ¹⁰և արարեր նոցա նշան յեգիպտոս՝ և ՚ի փարաւոն և յամենայն ծառայս նորա, և յամենայն ժողովուրդ երկրի նորա. քանզի գիտացեր եթէ հպարտացաւ ՚ի վերայ ժողովրդեան քոյ, և արարե՛ր քեզ անուն մեծ մինչև յայս օր*։ ¹¹և զծովն Կարմիր հերձեր առաջի նոցա, և անցին ընդ մէջ ծովուն իբրև ընդ ցամաք. և զհալածիչս նոցա ընկղմեցեր իբրև զվէ՛նս ՚ի ջուրս բազումն: ¹²Եւ սեամբ ամպոյ առաջնորդեցեր

* *Ոմանք.* Ամենայն ժողովս եկեղեցւոյն... այսպէս մինչև յօրն:

* *Ոմանք.* Եւ երկիր պագանէին ամենայն ժողո՛ւ:

* *Ոմանք.* Եւ ասեն ցՂևտացիքն Յեսու և:

* *Յօրինակին պակասէր.* Նոյն ինքն *Տէր Աստուած* միայն:

* *Ոսկան.* Մեր, որ ընտրեցեր զԱբրահամ:

* *Յօրինակին.* Եւ արար նոցա նշան յԵ՛: *Ոմանք.* Մինչև ցայսօր:

նոցա՝ի տուէ, և սեամբ հրոյ՝ի գիշերի՝ վասն զի լուսաւորէր զճանապարհս նոցա ընդ որ գնային*։¹³ Եւ ՚ի լեռնն Սինա՝ իջէր և խօսեցար ընդ նոսա յերկնից. և ետուր նոցա զդատաստանս ուղիղս, և օրէնս ճշմարիտս, հրամանս և պատուիրանս բարիս.¹⁴ և զշաբաթս քո սուրբս ծանուցեր նոցա, և զպատուիրանս և զհրամանս և զօրէնս ետուր նոցա ՚ի ձեռն Մովսիսի ծառայի քոյ։¹⁵ Եւ զհաց երկնից ետուր նոցա ՚ի կերակուր, և զջուր բղխեցուցեր ՚ի վիմէ և արբուցեր նոցա. և բացեր նոցա մտանել ժառանգել զերկիրն յոր համբարձեր զձեռն քո տա՛լ նոցա։¹⁶ Եւ ինքեանք իսկ հարքն մեր հպարտացան և անօրինեցան, և խստացուցին զպարանոցս իւրեանց, և ո՛չ լուան պատուիրանաց քոց.¹⁷ և ակնկորեցին յօրինաց քոց, և ո՛չ յիշեցին զսքանչելիս քո զոր արարեր դու ընդ նոսա. այլ խստացուցին զպարանոցս իւրեանց, և դարձուցին զթիկունս իւրեանց. և կամեցան դառնալ ՚ի ծառայութիւն անդրէն յեգիպտոս։ Այլ դու Տէր Աստուած մեր գթած ես և ողորմած, երկայնամիտ և բազումողորմ, և ո՛չ ՚ի սպառ մերժեցեր զնոսա։¹⁸ Եւ դարձեալ արարին իւրեանց որթ ձուլածոյ՝ և ասացին. Այս են աստուածք որ համին զմեզ յերկրէն Եգիպտացուց. և արարին մեծամեծ բարկութիւնս.¹⁹ և դու ըստ բազում գթութեան և ողորմութեան քում ո՛չ թողեր և ցրուեցեր զնոսա յանապատին. և զսիւն ամպոյն ո՛չ հեռացուցեր ՚ի նոցանէ որ առաջնորդէր նոցա ՚ի տուէ, և զսիւն հրոյն որ լուսաւորէր զնոսա ՚ի գիշերի՝ զճանապարհս զոր երթային*։²⁰ Եւ զՅոգի քո Սուրբ զբարերար՝ ետուր նոցա իմանալ զօրէնսն. և զմանանայն ո՛չ հեռացուցեր ՚ի բերանոց նոցա. և ետուր նոցա ջուր ՚ի ծարաւոյ վիմէ*։²¹ Եւ զքառասուն ամ շրջեցուցեր զնոսա յանապատին. հանդերձք նոցա ո՛չ մաշեցան, և կօշիկք նոցա ո՛չ հնացան։²² Եւ հարեր առաջի նոցա զթագաւորս և զժողովուրդս. և բաժանեցին և կալան զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն, զերկիրն Սեհոնի թագաւորին Եսեբոնայ, և զերկիրն Ովգայ թագաւորին Բասանու։²³ Եւ զորդիս նոցա բազմացուցեր իբրև զաստեղս երկնից. և ածեր զնոսա յերկիր զոր խոստացար հարցն նոցա, և ժառանգեցին զնա.²⁴ Վասն զի սատակեցեր առաջի նոցա զբնակիչս երկրին Քանանացուց, և ետուր զերկիրն նոցա ՚ի ձեռս նոցա. և զթագաւորս նոցա և զժողովուրդ երկրին սպառեցեր՝ որպէս և կամեցար ըստ կամաց իւրեանց*։²⁵ Եւ առին զքաղաքս բարձրաբերձս՝ և զպարիսպս, և ժառանգեցին զտունս լի՛ ամենայն բարութեամբ. ջրհորս փորեալս և կազմեալս. այգիս և ձիթենիս և զամենայն ծառս պտղաբերս ՚ի կերակուրս լիութեան նոցա։ Կերան և յագեցան՝ զհրացան և փափկացան ՚ի բարութիւնս մեծամեծս զոր ետուր նոցա.²⁶ և հեռացան և մերժեցան ՚ի քէն, և յե՛տս դարձան յօրինաց քոց. և զմարգարէսն քո կոտորեցին, որ քարոզեցին նոցա դառնալ առ քեզ. և արարին զբարկութիւն մեծ առաջի քո*։²⁷ Եւ ետուր զնոսա ՚ի ձեռս նեղչաց նոցա, և նեղեցին զնոսա. և աղաղակեցին առ քեզ ՚ի ժամանակս նեղութեան իւրեանց. և դու յերկնից լուար նոցա. և բազում գթութեամբ և ողորմութեամբ փրկեցեր զնոսա. և հաներ զնոսա ՚ի ձեռաց նեղչաց նոցա*։²⁸ Եւ յորժամ հանգեան՝ դարձան և արարին չարիս առաջի քո. և թողեր զնոսա ՚ի ձեռս թշնամեաց նոցա,

* Ոմանք. Վասն զի լուսաւորեցեր զճանապարհն նոցա։

* Ոմանք. Եւ դու ըստ բազմագթութեան և ողորմ*։

* Յօրինակին. Եւ Յոգի քո Սուրբ զբա*։ ՚ի լուս՝. Ջուր ՚ի ծարաւուտ վիմէ։

* Ոսկան. Որպէս և կամեցան ըստ կամաց։

* Ոմանք. Որք քարոզէին նոցա։

* Ոմանք. Եւ բազմագթութեամբ և ո՛ւ*։

և չարչարեցին զնոսա. և դարձեալ աղաղակեցին առ քեզ, և դու յերկնից լուար նոցա, և փրկեցեր զնոսա բազում ողորմութեամբ քով. ²⁹և դարձեալ եղիր վկայութիւն առ նոսա՝ դառնալ յօրէնս քո: Իսկ նոքա անմտացեալք յիմարութեամբ ո՛չ լուան օրինաց քոց. և ՚ի հրամանս քո և ՚ի պատուիրանս քո մեղան. զոր դու ասացեր՝ և հրամայեցեր, զի ո ոք արասցէ ՚ի մարդկանէ զբան պատուիրանաց քոց՝ կեցցէ՛ նոքիմբք. իսկ նոքա դարձուցին զթիկունս իւրեանց, և եղեն խստապարանոցք՝ և ո՛չ լուան բանի քում*. ³⁰և դու երկայնամտեցեր առ նոսա. և առաքեցեր ՚ի վկայութիւն զմարգարէսն Զոգուով քո Սրբով, սակայն և այնպէս ո՛չ լուան. և մատնեցեր զնոսա ՚ի ձեռս ժողովրդոց օտարաց երկրին, որք տառապեցուցին զնոսա յոյժ: ³¹Եւ դու ըստ բազում գթութեան և ողորմութեան քում ո՛չ թողեր զնոսա մինչև ՚ի սպառ, և ո՛չ մերժեալ հեռացուցեր զնոսա ՚ի քէն. զի դու հզօր ես գթած և ողորմած՝ երկայնամիտ և բազումողորմ: ³²Եւ այժմ Տէր Աստուած մեր՝ զօրաւոր և մեծ, ամենակալ և ահարկու՝ արդար և ճշմարիտ, պահեա՛ զուխտ և զողորմութիւն՝ և հայեաց ՚ի տառապանս մեր և ՚ի նեղութիւնս, և ՚ի թագաւորացն մերոց և իշխանացն մերոց, և քահանայից և մարգարեիցն մերոց, և ամենայն հարցն մերոց. և ժողովրդեան քոյ զոր տառապեցուցին, և բռնացան ՚ի վերայ մեր թագաւորք Ասորեստանեայց մինչև ցայսօր*: ³³Եւ դու արդար ես յամենայնի զոր ածեր ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց. վասն զի ճշմարտութեամբ արարեր. ³⁴քանզի մեղա՛ք մեք՝ և թագաւորք մեր և իշխանք և քահանայք, և հարքն մեր՝ և ո՛չ արարաք զպատուիրանս քո, և ո՛չ հայեցաք յօրէնս քո և ՚ի վկայութիւնս զոր եղիր առ մեզ*. ³⁵և զգթութիւնս քո՝ և զբազում բարութիւնս զոր ետուր մեզ, և յերկրիս յայսմիկ՝ ՚ի լայնս և յընդարձակ և ՚ի պարարտ զոր ետուր մեզ, ո՛չ գիտացաք ծառայել քեզ, այլ դարձուցաք զսիրտս մեր յօրինաց քոց. և մատնեցաք մեք ՚ի գերութիւն վասն մեղաց մերոց: ³⁶Եւ ահաւասիկ եմք այսօր ՚ի ծառայութիւն, և երկիրս զոր ետուր հարցն մերոց ուտել զպտուղ և զբարութիւն սորա ազատութեամբ: ³⁷Արդ՝ այսօր թագաւորք օտարք տիրեն ՚ի վերայ մեր և ուտեն զսա՛ վասն մեղաց մերոց, և անկեալք ՚ի ծառայութիւն տամք հարկս. և վարեն զմեզ և զանասունս մեր որպէս և կամին, և եմք ՚ի նեղութեան և ՚ի վիշտս մեծ այսօր վասն մեղաց մերոց*: ³⁸Եւ արդ՝ ՚ի վերայ այսր ամենայնի՝ մեք դնենք ուխտս և հաւատարմութիւնս. և հաւատա՛մք յօրէնս քո, և առնենք զնոսա, և որ ինչ գրեալ է ՚ի նոսա. և զբանս զայս գրով հաստատենք և կնքենք, ամենայն իշխանք մեր, և Ղևտացիք մեր, և քահանայք մեր:

10

Գլուխ Ժ

¹Եւ այս են որ կնքեն զգիրս զայս հաւատարմութեան առ քեզ. Նեեմիա որդի Աքաղիայ. և Սեդեկիա որդի ²Սարերա. և Ազարիա. և Երեմիա. ³և Փասուր. Ամարիա. Միքիա. ⁴Ատտուս. Ասաբանիա. Մաղուք. ⁵Եմաթ. Մերամովթ. Աբդիա. ⁶Դանիէլ. Կանաթոն. Բարուք. ⁷Մեսուղ՛ամ. Աբիա. Միամին. ⁸Մադիա. Բեղ՛գեէ.

* *Յօրինակին պակասէր. Չոր դու ասացեր և հրամայեցեր:*

* *Ոսկան. Եւ թագաւորացն մերոց և իշ՛:*

* *Ոմանք. Եւ թագաւորքս մեր:*

* *Ոմանք. Եւ ՚ի վիշտս մեծս այսօր:*

Սեմէի: Այս ամենքեան են քահանայք* ⁹և Ղևտացիք ¹⁰Յեսուս որդի Ազանիա. Բանիա որդւոյ Ենադադայ. Գաղ՝միէլ*, ¹¹և եղբարք նորա. Սեբանիա. Ողուիա. Կաղիտան. Փեղ՝իաման. ¹²Միքա. Զոպբա. Սեբի. ¹³Չաբուր. Սարաբիա. Սատանիա*: ¹⁴Որդիք Բանունեայ. ¹⁵Իշխանք ժողովրդեանն. Փորիս. Փարադմովաբ. Եղ՝ամ. Չատթուրա*: ¹⁶Որդիք Բանեայ՝ Ազուրաթ. Բերայի. ¹⁷Ադոնիա. Բադու. Եգինատեր*. ¹⁸Եգեկիա. Ազուիայիդա. ¹⁹Ասամ. Բեսէի. ²⁰Արիփ. Անաթովթ. Նովրա. ²¹Մողափէս. Մեսուղ՝ամ. Եգր. Մենոզաբէէլ. Չադուկ. Եդովթ. ²²Փաղ՝իտա. Անան. Անիա*. ²³Ասէէ. Անանիաս*. ²⁴Յռայուն. Էսաբանան. Մայադուա. ²⁵Այիա. Էնան. Անան. ²⁷Մադուս. Զռէում*: ²⁸Եւ ա՛յլ ևս մնացորդք ժողովրդեանն՝ քահանայք և Ղևտացիք, դնապանք՝ երգեցիկք՝ Նաթանացիք. և ամենքեան ժողովուրդքս որք լսենք զօրէնս Տեառն Աստուծոյ մերոյ, դնենք վկայութիւն այսօր առաջի քո՝ արք և կանայք. որդիք և դստերք իւրեանց: ²⁹Եւ որ միանգամ անցցէ զօրինօք քովք, երդմամբ հաստատենք այսօր առաջի քո. եղիցի՛ նա՛ ՚ի նզո՛վս և յանէծս, որ ո՛չ պահեսցէ զօրէնս քո որ տուաւ ՚ի ձեռն Մովսիսի ծառայի քոյ. այլ ամենայն կամօք մերովք պահեսցուք, և արասցուք զամենայն պատուիրանս Տեառն Աստուծոյ, և զդատաստանս նորա և զիրամանս: ³⁰Եւ մի՛ տացուք զդստերս մեր ուստերաց ժողովրդոց օտարաց, և զդստերս հեթանոսաց ո՛չ առցուք որդւոց մերոց: ³¹Եւ ժողովուրդ երկրիս այսորիկ ո՛չ բերիցեն առ մեզ վաճառս յաւուր շաբաթու, և ո՛չ գնեսցուք ՚ի նոցանէն շաբաթուն. զի օր սո՛ւրբ է, և սո՛ւրբ պահեսցուք զօրն եւթներորդ*: ³²Եւ տացուք զողորմութիւնս երրորդ դիդրաքմայի ամ ըստ ամէ՛ ՚ի հարկ տանն Աստուծոյ. ³³և զհաց զառաջէից, և զգոհս ըստ ժամանակս ժամանակս և զողջակէզս յամենայն տօնս և ՚ի տարեկանս, և ՚ի շաբաթս, և յամսամուտս, և ՚ի նաւակատիս՝ և ՚ի սրբութիւնս, և վասն մեղաց՝ որ են ՚ի քաւութիւնս Իսրայէլի՝ և ՚ի գործս տաճարին Տեառն Աստուծոյ մերոյ: ³⁴Եւ վիճակս արկցուք վասն ժառանգութեան փայտիցն, որ երթայ քահանայիցն և Ղևտացւոցն, և ժողովուրդն բերցէ՛ ՚ի տուն Աստուծոյ մերոյ՝ ՚ի տունս հարցն մերոց ըստ ժամանակս ժամանակս ամ ըստ ամէ՛ զորս արժան է այրել ՚ի վերայ սեղանոյ զոհից Տեառն Աստուծոյ մերոյ, որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի: ³⁵Եւ տացուք զպտուղս զառաջաւորութեան երկրի մերուն, և զպտուղս ծառոց մերոց ամ ըստ ամէ՛ ՚ի տուն Տեառն Աստուծոյ մերոյ*: ³⁶Եւ զդիդրաքմայս անդրանկաց որդւոց մերոց, և զանդրանիկս անասնոց մերոց՝ որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի. և զանդրանիկս արջառոց մերոց և հօտից բերցո՛ւք ՚ի տուն Աստուծոյ մերոյ՝ քահանայից մերոց Ղևտացւոց՝ որք կան ՚ի սպասու տան Տեառն. ³⁷և զառաջաւորս ցորենոյ, և զպտուղս ծառոց՝ զինւոյ և ձիթոյ բերցուք առ

* Ոմանք. Այսք ամենքեան:

* Ոմանք. Յեսուս որդի Ազարիա:

* Ոմանք յաւելուն. Սատանիա, Սեբանիա. Ողուիա: (14) Որդիք Բանունեայ: Ուր Ոսկան կրկնութեամբ յաւելու և ևս՝ Կաղիտան և այլն:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ Փորիս. նշանակի՝ Կորիս:

* Ոսկան. Եգին. Ատեր... (18) Ազու. Այիդա: (19) Ասամ:

* Ոմանք. Փաղտիա. Անան. Անանիա:

* Ոսկան յաւելու. Անանիաս. Ասուր: 24 Ալօտս, Պիլա, Սօփէկ. Յռայուն:

* Ոսկան. Զռէում՝ Բաանա:

* Ոմանք. Եւ ժողովուրդք երկրիս... և ո՛չ գնեսցուք ՚ի նոցանէ՛ ՚ի շաբաթուն:

* Այլք. Չառաջաւորութեանց երկրի մերուն:

քահանայսն՝ ՚ի տուն գանձանակին Աստուծոյ: Եւ զտասանորդս երկրիս մերոյ Ղևտացիքն շրջեսցին՝ և առցեն գամենայն բովանդակ՝: ³⁸Եւ եղիցի քահանայ որդի Ահարոնի, որ տասանորդեսցէ՝ զՂևտացիսն. և Ղևտացիքն ՚ի տասանորդաց մերոց տասանորդեսցեն քահանային մեծի՝ ՚ի տուն Աստուծոյ մերոյ, ՚ի տուն գանձանակին որ կան ՚ի տաճարին Տեառն: ³⁹Կասն զի կացցէ ՚ի գանձել ՚ի համբարս որդւոց Ղևտացւոցն, և սպասաւորաց՝ ՚ի տեղիսն ուր կահ սրբութեանցն. և եղիցի քահանայիցն և Ղևտացւոց և դռնապանաց, և երգեցկաց սաղմոսասաց. և մի՛ պակասեսցէ նոցա ռոճիկ երբէք ՚ի տանէ Աստուծոյ մերոյ. և մի՛ նոքա զսպաս Տեառն խափանեսցեն՝:

11

Գլուխ ԺԱ

Է ¹Եւ նստան իշխանք ժողովրդոցն յերուսաղէմ. և արկին վիճակս, զի մի՛ ՚ի տասանց՝ որում և ելցէ վիճակն՝ նստցի՛ յերուսաղէմ քաղաք սրբութեան. և իններորդքն գնացեն յիւրաքանչիւր քաղաքս՝: ²Եւ օրհնեաց ժողովուրդն զարսն զայնս որ որոշեցան, և նստան յերուսաղէմ: ³Եւ այս են իշխանք երկրին՝ որ նստան յերուսաղէմ, և քահանայք և Ղևտացիք և Նաթանացիք, և որդիք ծառայիցն Սողոմոնի՝: ⁴Եւ որք նստան յերուսաղէմ, էին յազգէն Յուդայ և Բենիամինի: Եւ այս են յորդւոցն Յուդայ. Աթէ որդի Ոգիայ. որդի Չաքարիայ. որդի Սամարիայ. որդի Սափատիայ. որդի Մաղ՛եղ՛այ: Եւ յորդւոցն Փարեսայ՝ ⁵և Մաղասիա. որդի Բարուք. որդի Աղազայ. որդի Ոգիայ. որդի Ադիայ. որդի Յովարիք. որդի Չաքարիայ. որդի Եղ՛ովնի՝: ⁶Ամենեքեան որդիք Փարեսի որ նստան յերուսաղէմ. չորեքհարիւր վաթսուն և ութ՝ արք զօրաւորք՝: ⁷Եւ այս են որդիք Բենիամինի. Սեղոն որդի Մեսեղ՛ովմ. որդի Յովադ. որդի Փաղայի. որդի Կովղ՛իայ. որդի Մասսայ. որդի Աթէլ. որդի Յեսուայ: ⁸Եւ զհետ նորա Դեբէի, Սեղ՛էի, ինն հարիւր քառասուն և ութ՝: ⁹Եւ Յովսէս որդի Չեքրի՝ այցելու և վերակացու ՚ի վերայ նոցա. և Յուդա որդի Ասանայ որ էր երկրորդ ՚ի քաղաքին՝: ¹⁰Եւ ՚ի քահանայիցն՝ Ագդիդ որդի Յովարիք, Իաքին, Սարիա՝. ¹¹որդի Եղ՛քիայ. որդի Մեսուդամ. որդի Սաղովկ. որդի Մարաւովք. որդի Ետովք: Եւ էին տունք իւրեանց մօտ ՚ի տաճարն Տեառն. ¹²և եղբարք նորա որ գործէին զգործ սպասաւորութեան տանն Տեառն ութ հարիւր քսան և երկու. և Ադայի որդի Երովմ. որդւոյ Փաղայիայ. որդւոյ Ամասեայ. որդի Չաքարիայ. որդի Փասեուր.

* *Ոմանք.* Ղևտացիքս շրջեսցին:

* *Ոմանք.* Կացցէ ՚ի գանձելի համբարս: *Բազումք.* Եւ երգեցկաց սաղմոսաց, և մի՛ պակասեսցի նոցա ռոճիկք երբէք ՚ի տանէն Աստուծոյ: *Ուր Ոսկան.* Եւ մի՛ պակասեսցին նոցա ռոճ՛:

* *Ոսկան.* Վիճակս զմի՛ ՚ի տասանց:

* *Ոմանք.* Եւ Նաթանեցիք:

* *Յօրինակին.* Եւ որդւոցն Փարեսայ:

* *Ոմանք.* Որդի Իլովնի:

* *Այլք.* Ամենայն որդիք Փարեսի:

* *Յօրինակին թուագրով.* Սեղ՛էի. Ջիւլ:

* *Ոմանք.* Որ էր յերկրորդի քաղաքին:

* *Յօրինակին.* Յովարիք Իաքինսարիա: *Ուր ոմանք.* Որդի Յովարիքի, Աքինարիա:

Ոսկան. Որդի Յովարիք ՚ի Աքին. որ է յերկրորդի քաղաքին: Սարիա (11) որդի Ելքիայ:

որդի Մեղքիայ*։ ¹³Եւ եղբարք նորա իշխանք հայրապետացն, երկերիւր քառասուն և երկու. և Ամասիա որդի Եզրիէլ*։ ¹⁴Եւ եղբարք նորա զօրաւորք յամենայնի քսան և ութ. և այցելուք՝ և վերակացուք նոցա Ջեքրիէլ որ էր ՚ի մեծաց իշխանաց*։ ¹⁵Եւ յՂևտացւոցն Սամէիա որդի Ասուբ. որդի Եզրովմ։ ¹⁷Եւ Նաթանացիք որդի Միքայ, և Յորէբ. որդիք Սամուի երկերիւր եւթանասուն և չորս*։ ¹⁹Եւ դռնապանք, Ակուբ Ջտեղամին. և եղբարք նորա՝ հարիւր եւթանասուն և երկու*։ ²²Եւ այցելուք և վերակացուք Ղևտացւոցն յերուսաղէմ, Ոզա որդի Բանի. որդի Ասաբիայ. որդի Մատթանի. որդի Միքայ. յորդւոցն Ասափայ որ էին երգեցիկք մօտ առ տուն Տեառն*։ ²³Վասն զի հրաման թագաւորին էր առ նոսա լինել անդ, և անխափան ունել զպաշտօնն։ ²⁴Եւ Փաթաւա որդի Մեսիգաբիւղայ. Ջարեհ որդի Յուդայ՝ որ ՚ի ձեռանէ թագաւորին ունէր զամենայն կազմած. ²⁵և բնակէր յագարակի իւրում։ Եւ յորդւոցն Յուդայ որք նստան ՚ի Կարիաթարբա. և Յեսու. և Բերսաբէէ. և բնակութիւն նոցա* ³⁰Ղաթիս. և ագարակք իւրեանց՝ որք և ունէին զԲերսաբէէ։ ³¹Եւ որդիք Բենիամինի ՚ի Գաբա՝ Մաքմաս. ³⁶և Ղևտացւոցն բաժին Յուդայ և Բենիամին։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ այս են քահանայք և Ղևտացիք որ ելին ընդ Ջորաբաբիլի Սաղաթիւեանց, և Յեսուայ Յովսեդեկեանց. Սարայիա, Երեմիա, Եզրա*, ²և Ամարիա, Մաղուք, Արտուս, Սեդեկիա*։ ³Այս են իշխանք քահանայիցն և եղբարք նոցա յաւուրս Յեսուայ։ ⁸Եւ Ղևտացիք՝ Յեսու, Բանուի, Կադմիէղ՝, Սարաբիա, Յուդա, Մատթանիա, և եղբարք նոցա որ են կարգեալ օր ըստ օրէ. և Յովակիմա, Եղիասիբ. և Եղիասիբայ*, ⁹Յովադէ. և Յովադայեայ, Յովնաթան. և Յովնաթանայ Յատդուս։ Եւ յաւուրս Յովակիմայ եղբարք նորա էին իշխանք և քահանայք հայրապետացն. Սարիա, Եմարիա, Երեմիա, Անանիա, Ազարիա, Եզրա, Մեսուդամ, Ամարիա, Յովնան, Մաղուք։ ²²Եւ Ղևտացիք յաւուրս Եղիասիբ. Յովդա, և Յովա, և Յովնան, և Իդուա գրեալք իշխանք հայրապետացն։ Եւ այս ամենայն քահանայք էին ՚ի թագաւորութեանն Դարեհի*։ ²³Որդիք Ղևեայ իշխանք հայրապետացն գրեալք ՚ի գիրս բանից աւուրց համարոյն, մինչև ցովնան՝ որդի Եղիասիբ։ ²⁴Եւ իշխանք Ղևտացւոց Ասաբիա, և Արաբիա, և Յեսու. և որդիք Կադմէլ. և եղբարք նորա մօտ առ նմա, օրհնել և

* Ոմանք. Տանն Տեառն, և Ըճի և երկու։

* Յօրինակին. Հայրապետացն ՄԽԲ։

* Ոսկան յաւելու. Հարիւր քսան և ութն։

* Այլք. Եւ Մաթանացիք որդի Միքայ։ Ոմանք. Եւ Յորէբ որդի Սամուի։

* Ոմանք. Ղետեղ Ամին. ուր Ոսկան. Լետեմին։

* Ոմանք. Ազար, որդի Բանի։

* Ոմանք. Եւ բնակէր յագարակի իմում... և բնակութիւն նորա Լաթիս։

* Ոմանք. Եւ Յեսու Յովսեդեկեանց։

* Ոմանք. Արտուս, Սեքիկիա. կամ՝ Սեքեսիա։

* Այլք. Որ էին կարգեալ օր ըստ օրէ։

* Յօրինակին ՚ի բնաբանի պակաստր. Գրեալք իշխանք հայրա՞. այլ ՚ի լուս՞. չակերտիւ նշանակի ՚ի ներքս բերել՝ համաձայն այլոց։ Ոմանք. էին թագաւորութեանն Դարեհի։

սաղմոս ասել, որպէս և հրամայեաց Դաւիթ այրն Աստուծոյ*, ²⁵օրըստօրէ գօրհանապազ ՚ի ժողովս իւրեանց հանդերձ դռնապանօք: ²⁶Սոքա՛ էին յաւուրս Յովակիմայ որդւոյ Յեսուայ, որդւոյ Յովսեփեկայ, և յաւուրս Նեեմայ, և Եզրայ քահանայի և գրչի օրինացն Տեառն: ²⁷Եւ ՚ի նաւակատիս պարսպին Երուսաղէմի, խնդրեցին զՂևտացիսն ՚ի տեղիս իւրեանց՝ ածել՝ զնոսա յԵրուսաղէմ, և առնել զնաւակատիս ուրախութեամբ հանդերձ՝ և գոհութեամբ և երգովք նուագարանօք՝ ծնծղայիւք և թմբկօք, և սաղմոսարանօք ՚ի ձայն եղջեր փողոյ: ²⁸Եւ ժողովեցան ամենեքեան որք երգէին և սաղմոսէին շուրջանակի յամենայն կողմանց Երուսաղէմի, ²⁹ի քաղաքաց և ՚ի գիւղից և ՚ի բնակութեանց իւրեանց, գալ՝ ՚ի սպաս պաշտամանն յԵրուսաղէմ*: ³⁰Եւ սրբեցան ամենայն քահանայքն և Ղևտացիքն, և սրբեցին զժողովուրդն՝ և զդռնապանս մեծի դրանց պարսպին: ³¹Եւ հանին ՚ի վեր զիշխանս Յուդայ ՚ի պարիսպն. և երթային զհետ նոցա երգովք նուագարանօք երկու երկու*, ³²Յովսիա և Ոզիա՝ և կէս իշխանացն Յուդայ. ³³Ազարիաս, Եզրա, և Մոսողամ. ³⁴Յուդա և Բենիամին. և Սամէաս՝ և Երեմիաս: ³⁵Եւ յորդուոց քահանայիցն էին որք հարկանէին զփողսն՝ Ջաքարիաս որդի Յովնանայ. որդի Սամայի. որդի Մաթանիա. որդի Միքայ. որդի Ջաքուր. որդի Ասափ*: ³⁶Եւ եղբարք նոցա Սամէիա և Եզրիէլ օրհնէին զերգս և զսաղմոսս Դաւթի առն Աստուծոյ զորս նուագեաց: Եւ Եզրաս գրիչ երթայր առաջի նոցա ՚ի վերայ դրանցն*. ³⁷և որք երգէին երթային ընդդէմ նորա: Եւ ելին յաստիճանս քաղաքին Դաւթի յէլս պարսպին՝ ՚ի վերոյ քան զապարանսն Դաւթի, մինչև ՚ի դուռն Ջրոյն Եփրեմի, և ընդ կողմն արևելից, ³⁹և ՚ի դուռն Եքթերան. և յաշտարակն Անամայելի մինչև ՚ի դուռն Ջրբղխացն. և լսելի՛ եղև ձայն երգոցն մինչև յամենայն տեղիս. քանզի հրամայեաց Եզր կալ ՚ի վերայ ամենայն դրանցն՝ և երգել*: ⁴³Եւ զոհեցին յաւուր յայնմիկ զոհս մեծամեծս, և ուրախ եղեն յոյժ. վասն զի Աստուած արար ուրախ զնոսա յուրախութիւն մեծ. և կանայք նոցա և որդիք նոցա ուրախ եղեն. և լսելի եղև ուրախութիւն նոցա յԵրուսաղէմէ մինչև ՚ի հեռաւոր տեղիս:

Ը ⁴⁴Եւ կացուցին յաւուր յայնմիկ ՚ի վերայ գանձանակի գանձուցն, և զառաջաւորացն, և տասանորդացն, և որ միանգամ ժողովեալ էր անդր իշխանաց քաղաքին. որպէս հրամայեալ էր յօրէնս Մովսիսի քահանայիցն և Ղևտացւոց. քանզի ուրախութիւն մեծ էր ՚ի Յուդայ՝ և ՚ի քահանայս և յՂևտացիս. և զգուշացան սրբութեանցն Աստուծոյ. և պահեցին զսրբութիւնն՝ որ էին երգեցիկք սաղմոսասացքն. և դռնապանքն որպէս կարգեալ էր Դաւթի և որդւոյ նորա Սողոմոնի*: ⁴⁵Քանզի յաւուրս Դաւթի՝ Ասափ էր իշխան և առաջնորդ երգոց սաղմոսացն, որք նուագէին երգէին և փառաւոր առնէին զԱստուած: ⁴⁷Եւ ամենայն Իսրայէլ յաւուրս Ջորաբաբելի և յաւուրս Նեեմիայ՝ տային մասն և բաժին երգեցկացն և դռնապանացն՝ որպէս և կարգեալ էր օրըստօրէ. և առնէին սուրբ զՂևտացիսն, և Ղևտացիքն զորդիսն Ահարոնի:

* *Ոմանք.* Կաղմիէլ և եղբարք նոցա:

* *Ոմանք.* Եւ գալ ՚ի սպաս պաշտաման:

* *Ոմանք.* Եւ հանին ՚ի վերս զիշ:

* *Ոմանք.* Որդի Սամա, որդի Մաթանիս. որդի Միքիա:

* *Ոմանք.* Եւ եղբարք նորա. Սամէաս:

* *Ի լուս.* Եւ ՚ի դուռն Եքթերան. *ուր ոմանք.* Եքթերան. և *ոմանք.* Եքթերան: *Ոմանք.*

Երգոցն յամենայն տեղիս... ամենայն դրացն, և եր՛:

* *Ոմանք.* Երգեցիկք սաղմոսացն. և դռնա... և որդւոյ իւրում Սողոմոնի:

Գլուխ ԺԳ

¹Յաւուր յայնմիկ կարդային զգիրս Սովսիսի՝ ի լսելիս ժողովրդեանն. և գտաւ ՚ի նմա գրեալ այսպէս, թէ մի՛ մտցէ Ամնանացի և Սովաբացի յեկեղեցի Աստուծոյ յաւիտեանս ժամանակաց*։ ²Վասն զի ո՛չ ելին ընդ առաջ որդւոցն Իսրայէլի հացի և ջրով. այլ կալան ՚ի վարձու զԲաղասմ գէտ՝ անիծանել զնոսա. և դարձոյց Աստուած մեր զանէծսն յօրհնութիւն*։ ³Եւ եղև յորժամ լուան յօրինացն՝ որոշեցին ՚ի բաց զամենայն խառնեալսն յԻսրայէլէ*։

Թ ⁴Եւ յառաջ քան զայս Եղիսաիբ քահանայ էր ՚ի զանձանակի տանն Աստուծոյ մերոյ, և ետ տեղի Տուբիայ*։ ⁵և շինեաց իւր անդ տունն զանձի մեծ. և անդ էր յառաջնում ուր տային զմաննայն և զլիբանոն, և զկահն սրբութեան, և զտասանորդս ցորենոյն և զհնւոյ և ձիթոյ և իւղոյ, և զռոճիկսն Ղևտացւոցն, և երգեցկաց, և դռնապանաց, և զառաջաւորս քահանայիցն*։ ⁶Եւ մինչ զայս ամենայն արարեալ էր, ես ո՛չ էի յերուսաղէմ. քանզի յամի երեսներորդի երկրորդի Արտաշիսի թագաւորի Բաբելացւոց՝ մտի առ թագաւորն. և յետ բազում աւուրց խնդրեցի ՚ի թագաւորէն*, ⁷և ելի յերուսաղէմ: Եւ իմացայ զամենայն չարութիւնս զոր արար Եղիսաիբ վասն Տուբիայ. զի ետ նմա շինել տունն զանձու ՚ի գաւթի տանն Տեառն*։ ⁸և չար թուեցաւ առաջի իմ յոյժ: Եւ ընկեցի արտաքս զամենայն կահ Տուբիա ՚ի տանէն զանձու*։ ⁹և հրամայեցի սրբել զտունն զանձուն Տեառն. և դարձուցի անդրէն զկահ և զսպաս տանն Տեառն, և զմաննայն և զլիբանոն: ¹⁰Եւ գիտացի և հասի ՚ի վերայ՝ եթէ զբաժին Ղևտացւոցն ո՛չ էր տուեալ, և նոքա էին զնացեալ յագարակս իւրեանց. և Ղևտացիքն և երգեցիկքն զորձէին զգործ մշակութեան: ¹¹Եւ կազեցայ ընդ իշխանսն և ասեմ. Ընդէ՞ր պակասեցին ռոճիկք ՚ի տանէ Տեառն: Եւ ժողովեցի զամենայն սպասաւորսն, և կարգեցի զնոսա ՚ի տեղիս իւրեանց: ¹²Եւ ամենայն Հրէայք բերէին զտասանորդս ցորենոյ և զհնւոյ և ձիթոյ ՚ի զանձանակ տան Տեառն*։ ¹³Եւ հրամայեցի տալ ՚ի ձեռս Եղիմայ քահանայի և Սադովկայ գրչի, և Փաղայիայ որ էր յՂևտացւոցն, և ՚ի ձեռանէ նոցա Անանի որդի Ջաբուր, որդի Մաթանայի. վասն զի հաւատարիմ էին նոքա որք բաժանէին՝ և տային եղբարց իւրեանց*։ ¹⁴Յիշեսցէ՛ զիս Աստուած յայնմ ամենայնի. և մի՛ ՚ի բացէ՛ արասցէ զողորմութիւն իւր յինէն. վասն զի արարի զայս ամենայն ՚ի տան Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

Ժ ¹⁵Յաւուրսն յայնոսիկ տեսանէի ՚ի Հրէաստանի՝ զի հարկանէին հնձանս յաւուր շաբաթու, և բերէին զորայսն ընդ դրունս Երուսաղէմի. և կախէին բեռն

* Ոմանք. Եթէ մի՛ մտցէ Ամնանացի:

* Յօրհնակին պակասէր. Եւ դարձոյց Աստուած մեր զա՛:

* Ոմանք. Լուան ՚ի յօրինացն:

* Յօրհնակին. Եղիսաիբ քահանայ:

* Յօրհնակին պակասէր. Եւ ձիթոյ և իւղոյ, և զռոճ՛:

* Ոմանք. Երեսներորդի և յերկրորդի Արտաշէսի:

* Ոմանք. Ի գաւթ տանն Տեառն:

* Ոմանք. Տովբիա ՚ի տանէն զանձու Տեառն:

* Ոմանք. Բերին զտասանորդս:

* Ոմանք. Անան որդի Սաբուր:

գրաստուց զգինի և զխաղող և զթուզ. բարձեալ բեռնս բերէին յերուսաղէմ յաւուր շաբաթու. և կալեալ վկայս զի վաճառէին յաւուր շաբաթու*.¹⁶ և նստէին ՚ի տեղի վաճառուցն որք բերէին զձուկն և զամենայն վաճառսն, և գնէին յաւուր շաբաթու Զրեայքն ՚ի ներքս յերուսաղէմ*.¹⁷ Եւ կազեցայ ես ընդ որդիսն Զրեիցն որք էին յերուսաղէմ, և ընդ իշխանսն Յուդայ, և ասեմ ցնոսա. Չի՞նչ է անօրէնութիւնս այս զոր դուք գործէք՝ և պղծէք զաւուրս սուրբ զշաբաթու*:¹⁸ Ո՞չ այսպէս արարին հարքն ձեր՝ և ած ՚ի վերայ նոցա Աստուած զչարիսս զայս ամենայն, և ՚ի վերայ քաղաքիս այսորիկ. և արդ՝ դուք ընդէ՞ր յաւելուք զբարկութիւն ՚ի վերայ Իսրայէլի, և պղծէք զօրն սուրբ զշաբաթուց:¹⁹ Եւ եղև յորժամ կանգնեցի զդրունս Երուսաղէմի՝ յառաջ քան զշաբաթն հրամայէի փակել զդրունսն, և ո՛չ տայի բանալ զնոսա մինչև անցանէր շաբաթն. և դարձեալ կացուցի մանկունս պահապանս, զի մի՛ իշխեսցէ մտանել ոք բեռամբ յաւուր շաբաթու ընդ դրունսն Երուսաղէմի*.²⁰ Եւ ագանէին ամենեքեան որք վաճառէին՝ արտաքոյ՝ Երուսաղէմի միանգամ և երկիցս:²¹ Եւ ասեմ ցնոսա. Ընդէ՞ր ագանիք դուք արտաքոյ պարսպիդ. եթէ այլ տեսանեն զանօրէնութիւնդ զայդ՝ տամ հրաման այսպէս զի ո՛չ մտանիցէք դուք ՚ի շաբաթս մեր՝ և ՚ի քաղաքս*.²² Եւ ասեմ ցրևտացիսն որք էին սրբեալ, և գային պահէին զդրունսն, և սրբէին յաւուր շաբաթու. և յայնմ հետէ ո՛չ պղծեցին զշաբաթսն: Եւ յայնմ ամենայնի յիշեսցէ զիս Աստուած՝ և խնայեսցէ յիս ըստ բազում ողորմութեան իւրում:²³ Եւ յաւուրսն յայնոսիկ տեսի զԶրեայսն, զի նստէին կանայք Ազովտացիք՝ և Ամովնացիք՝ և Մովաբացիք*,²⁴ և որդիք նոցա. և ոմանք ՚ի կանանցն խօսէին Ազովտացի, և ո՛չ գիտէին խօսել Զրեարէն*:²⁵ Եւ կազեցայ ընդ նոսա, և նզովեցի զնոսա, և հարի՛ ՚ի նոցանէ արս բազումս. և երդմնեցուցի՝ զնոսա յանուն Աստուծոյ, զի մի՛ տացեն զդատերս իւրեանց որդւոց նոցա, և մի՛ զդատերս նոցա ածցեն որդւոց իւրեանց: Եւ ասեմ ցնոսա.²⁶ Ո՛չ յայդմ ամենայն մեղաւ Սողոմոն թագաւոր Իսրայէլի, և ո՞վ էր իբրև զնա իմաստուն յամենայն թագաւորս մեր. և սիրելի՛ էր նա Աստուծոյ, և կացոյց զնա Աստուած թագաւոր ՚ի վերայ ամենայն Իսրայէլի. և զայսպիսի սիրելի Աստուծոյ և զիմաստուն և զմեծ թագաւոր, խտորեցուցին և յանցուցին ՚ի մեղս կանայք այլազգեաց*:²⁷ Եւ արդ՝ մի՛ լուայց եթէ ոք արասցէ զայնպիսի մեծ չարութիւնս, և մեղիցէ առ Աստուած, և արասցէ կին այլազգի:²⁸ Եւ յորդւոցն Յովիդեայ և յեղիասիբայ մեծ քահանային, լուայ՝ թէ է՛ր կին նորա դուստր Սանաբաղատայ, և մերժեալ հալածեցի զնա յինէն*:²⁹ Յիշեսցէ՛ զնոսա Աստուած ՚ի ժառանգութեան և յուխտի քահանայութեան:³⁰ Եւ զՂևտացիսն սրբեցի յամենայն այլազգեաց՝ և կարգեալ կազմեցի զնոսա օրըստօրէ զքահանայսն և զՂևտացիսն, այ՛ր իւրաքանչիւր ՚ի գործ իւր*.³¹ և ետու կա՛զմ բերել զամենայն փայտ ողջակիզացն յիւրաքանչիւր

* Ոմանք. Չորայս ընդ դրունսն յերուսաղէմ:

* Այլք. ՚ի տեղիս վաճառացն:

* Ոմանք. Դուք գործէք յաւուրս սուրբ զշա՛:

* Ոմանք. Չի մի՛ ոք իշխեսցէ:

* Այլք. Եթէ և այլ տեսանեն:

* Ոմանք. ԶԶրեայսն. և զի նստէին կանայք Ա՛:

* Ոմանք. խօսել Զրեարէն:

* Այլք. Ոչ յայդմ ամենայնի մեղաւ: Ոմանք. Եւ սիրելի էր նա յԱստուծոյ:

* Ոմանք. Եւ յեղիասիբ մեծ քահա՛:

* Ոմանք. ՚ի գործս իւր:

Ժամանակս, և զառաջաւորսն պտղոյ իւրեանց: Յիշեսցէ՛ զիս Աստուած մեր յամենայն բարութիւնս արդարութեան. այն որ օրհնեալն է յաւիտեան: Ամէն*:

Կատարեցաւ Նենմի*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՅՆ ԵՍԹԵՐԱՅ

Ժամանակ իրացն Եսթերայ և Մուրդքէի զոր պատմեն Գիրքս այս, ոմանց առ երկայնաձեռն Արտաշիսի թուեցաւ լինել. այլ ես ո՛չ առնում յանձն՝ ասէ Եսթերի, զի ո՛չ լռէին ասէ զայսպիսի գործս՝ Գիրք Եզրի, որ առ այսու Արտաշիսի պատմեն զգործս Եզրայ և Նեեմեայ արձակելոց՝ ՚ի Բաբելոնէ յերուսաղէմ. յայտ է զի յետոյ ուրեմն առ Ուշեղն կոչեցեալ Արտաշէսի հանդիպի ժամանակ իրացս Եսթերայ: Իսկ զՅաման Ամադովթեանց Ազագեանց, որ էր փառաւոր ՚ի դրան Արտաշիսի, և կամէր սպանանել զՄուրդքէ և ջնջել զՅրէայսն, ասէ սուրբն Յակոբ Մծբնայ՝ ՚ի գիրսն որ կոչի Ջօօն, թէ էր Յաման Ամադեկացի՝ յազգէ՛ Ազագայ զոր ապրեցոյցն Սաւուղ՝ և սպան Սամուէլ. և զի Ամադէկն որ ետ պատերազմ ընդ Իսրայէլի՝ հարճորդի էր Եղիփաղու որդւոյ Եսաւայ. և զի ա՛ռ Եսաւ կանայս ՚ի Քանանացւոցն, զորս անէծն Նոյ. ՚ի ներքոյ լծոյ ծառայութեան Յակոբայ եղ Իսահակ զԵսաւ: Չայս քէն յխութեան ՚ի մտի ունէր Ամադէկ, և պատերազմէր ջնջել զԻսրայէլ. և խափանել ՚ի տանէն Եսաւայ զանէծսն Նոյի, և յԻսրայէլէ զօրհնութիւնն Իսահակայ: Իբրև հարաւ Ամադէկ յաղօթսն Մովսիսի, ասաց Աստուած ցՄովսէս զմնացելոցն, թէ ջնջեմ զյիշատակն Ամադէկայ՝ ՚ի ձեռն որդւոցն Ռաքելի: Չի նախ Յեսու յորդւոցն Յովսեփայ կոտորեաց զԱմադէկ. և յետոյ զՍաւուղ յորդւոցն Բենիամինի առաքեաց Աստուած սատակել զԱմադէկ. և էր Յամանս այս՝ մնացեալ ՚ի տանէն Ազագայ Ամադէկեանց: Իսկ Մուրդքէ ՚ի տանէն Սաւուղայ Բենիամինեանց, և վասն այնորիկ ո՛չ երկիրպագանէր Մուրդքէ Յամանայ. զի գիտէր՝ զի վճռեալ էր Աստուծոյ ջնջել զԱմադէկ: Իբրև ետես զի անարգեցաւ յԱստուծոյ Սաւուղ ազգական իւր վասն խնայելոյ յԱզագ, երկեաւ նա երկիրպագանել Յամանայ, զի մի՛ կրեսցէ պատիժ յԱստուծոյ: Իսկ Յաման զհայրենի վրէժն խնդրել կամեցաւ, կախել զՄուրդքէ, և ջնջել զՅրէայսն: Այլ Աստուծոյ վճիռն ել ՚ի գլուխ, կախեցաւ որդւովքն Յաման՝ որ մնացեալ էր յԱմադէկայ. և ջնջեցաւ յիշատակն Ամադէկայ որպէս և ասացն Աստուած*:

* Ոմանք. Չիս Տէր Աստուած մեր յամենայն:

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Նենմիէ բանքս. և ոմանք. Կատարումն Նեեմեայ բանիցն:

* Մատենագիր նախադրութեանցս՝ որ առ իւրաքանչիւր նախադրութիւն գրոց սովոր է յարել և զմանրապատում ցուցակ պարունակելոցն ՚ի նոսա, յայլ և այլ գլուխս բաժանեալ, զանց առնէ յոմանս. որպէս և յառաջիկայ երիս գիրս, այս է՝ Եսթերայ,

ԵՍԹԵՐ*

Գլուխ ԺԱ

²Յամին երկրորդի՝ ի թագաւորութեանն Արտաշէսի արքայի մեծի. յառաջնում աւուր ամսոյն Ադարայ, որ է Յայերէն Արեգ. տեսիլ ետես Մուրդքէս որդի Յայիրայ, որդւոյ Սամեայ, որդւոյ Կիսեայ. յազգէ Բենիամինի* ³այր Յրէայ, և էր բնակեալ ՚ի Սիսիս քաղաքի. այր մեծ և հաւատարիմ ամենայն իրաց տան թագաւորին: ⁴Եւ էր նա ՚ի գերութենէ անտի զոր գերեաց Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց յերուսաղեմէ, Յեքոնիաւ հանդերձ արքային Յրէաստանի: ⁵Եւ այս է երազ տեսլեան նորա զոր տեսանէր. Չայն խռովութեանց՝ և որոտմանց և շարժմանց. և էր խռովութիւն մեծ ՚ի վերայ երկրի: ⁶Եւ ահաւասիկ երկու վիշապք մեծք յոյժ, պատրաստեալ ելանէին ՚ի կռիւ ընդ միմեանս: ⁷Եւ եղև ՚ի նոցանէն ձայն մեծ. և ՚ի ձայնէ բարբառոյ նոցա պատրաստեցան ամենայն ազգք ՚ի պատերազմ. զի տացեն պատերազմ ընդ ազգին արդարոյ: ⁸Եւ էր օրն խաւարին և մթին, տառապանաց և նեղութեանց, և էր խռովութիւն մեծ ՚ի վերայ երկրի. ⁹և խռովեցաւ ամենայն արդար ազգն վասն իւրեանց չարեացն, և պատրաստեցան ՚ի կորուստ. և կարդացին նոքա առ Աստուած*:¹⁰Եւ ՚ի ձայնէ անտի նոցա եղև իբրև ՚ի փոքրիկ աղբիւրէ գետ մեծ յստակ*:¹¹Եւ արեգակն ծագեաց, և խոնարհքն բարձրացան՝ և կերան զփառաւորսն: ¹²Եւ զարթեաւ Մուրդքէ ՚ի տեսլենէ՝ աստի յայսմանէ. զոր Աստուածն խորհեցաւ առնել. և ունէր զտեսիլ երազոյն ՚ի սրտի իւրում. և յամենայն զօրութենէ իւրմէ կամէր գիտել, եթէ զի՞նչ իցէ տեսիլն, զոր ետես անդէն ՚ի նմին գիշերի:

Գլուխ ԺԲ

¹Եւ դադարեաց Մուրդքէ յապարանսն՝ Դաբիթեաւ հանդերձ և Թառայի՝ երկրորումքք ներքինեօք թագաւորին, որ էին պահապանք ապարանից թագաւորին: ²Եւ իբրև գիտակ եղև Մուրդքէ խորհրդոց ներքինեացն, և զկամս

Յուդիթայ, և Տորիթայ. որով և պակասին զլիսահամարք յայտոսիկ գիրս ՚ի լուսանցս բնաբանին նշանակեալք:

** Ի գիրս Եսթերայ սակս բազմապատիկ տարբերութեան կարգի բանից Լատինական օրինակին ՚ի Յունականէն՝ յորմէ է մերս թարգմանութիւն, այսքան այլ և այլութիւնք զլիսոց և համարոց նշանարին՝ ՚ի նշանակել զԼատինական զլիսահամարս ՚ի վերայ Յայկականիս:*

** Բազումք. Յամին երկրորդի թագաւորութեանն: Ի գիրս յայս՝ գրեթէ ըստ ամենայն գրչագիր օրինակաց մերոց՝ բազումք ՚ի յատուկ ասացեալ անուանց գրին այլևայլ եղանակաւ. որպէս յառաջիկայոյ Մուրդքէսն, գրի ևս՝ Մուրդքէ. Մուրթքէ. Մուրթքէտս. և ստորև՝ Ասթինէն՝ Ասթանէ. և Յամանն՝ Ամանն: Չսոսա եղաք ըստ իւրաքանչիւր տեղեաց համաձայն օրինակի մերում. կարծիս իմն առեալ եթէ ՚ի տարբերութենէ օրինակաց բնագրին իցեն յառաջ եկեալ այս տարբերութիւնք: Իսկ ուր յայտնապէս ՚ի վրիպմանէ գրչաց ձևացեալ երևին. որպէս Յայիրայն, գրեալ էր ևս Յարիրայ. և Ամադովթեանցն՝ Ամազովթեանց. զայնս անխիղճ ուղղագրեցաք: Այլք. Որդւոյ Սեմեայ:*

** Ոմանք. Ազգն արդար վասն չարեաց իւրեանց:*

** Ոմանք. Աղբերէ գետ մեծ և յլստակ:*

սրտից նոցա քննեաց՝ եթէ պատրաստեալ են նոքա ձեռն արկանել ՚ի թագաւորն Արտաշէս, եցոյց արքային զխորհուրդս նոցա: ³Եւ եհարց թագաւորն զերկոսին ներքինիսն, և նոքա խոստովան եղեն նմա. և հրամայեաց զնոսա կապել: ⁴Եւ գրեաց թագաւորն զբանս զայսոսիկ ՚ի յիշատակս. և Մուրթթէ գրեաց վասն բանիցս այսոցիկ: ⁵Եւ ետ հրաման թագաւորն Մուրթթէի, մեծաւ զգուշութեամբ առաւել ևս դարման տանել տան թագաւորին. և ետ նմա պարգևս: Եւ էր Համան Ամադովթեայ Բովկեցւոյ փառաւոր առաջի արքային, և կամեցաւ չարչարել զՄուրթթէ և զԺողովուրդ նոցա վասն երկուց ներքինեացն: ⁶Եւ եղև յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի, որ և այս՝

Գլուխ Ա

¹Արտաշէս կալաւ ՚ի Հնդկաց աշխարհէն մինչև յԵթովպիա հարիւր քսան և եւթն գաւառ՝. ²ի նմին աւուրս յորս նստաւ ՚ի Սիսիս քաղաքի: ³Յամին երրորդի թագաւորութեանն իւրում. արար թագաւորն կոչունս սիրելեաց իւրոց և մեծամեծաց, և այլոց ևս ազգաց՝ Պարսից և Մարաց և ամենայն իշխանաց նախարարացն: ⁴Եւ իբրև եցոյց նոցա զմեծութիւն թագաւորութեանն իւրոյ, և զփառաւորս ուրախութեան վայելչութեանն զաւուրս հարիւր և ութսուն: ⁵Եւ յորժամ յանգ ելանէին աւուրք հարսանեացն. դարձեալ միւսանգամ հրաման ետ կոչել ՚ի հարսանիսն զռամիկ քաղաքակիցս իւր ՚ի գաւիթ տանն արքունի զաւուրս վեց: ⁶Եւ էր զարդարեալ բեհեզովք և կերպասովք՝ զորս էր կարգեալ և կազմեալս զլարեօքն ծիրանեօք և բեհեզովք. և զորս էր կարգեալ ՚ի խոյակսն ոսկիս, և ՚ի ծիրանիս ուր կային ՚ի վերայ սեանցն պատուականաց. և ՚ի խարսխացն ոսկեղինաց որ կային գահոյք բազումք ոսկեղէնք և արծաթեղէնք ընդէլուզեալք մարգարտովք և ակամբք պատուականօք՝ լցեալս պաստառօք. և զոյնագոյն նկարօք, և պատուական հանդերձիւք ՚ի վերայ վարդայատակ գաւթին: ⁷Ուր կային թակոյկք և ըմպելիք թագաւորին ոսկեղէնք և արծաթեղէնք, որք էին յերկից բիւրուց քանքարաց: ⁸Եւ գինի յոյժ արքայի ըմպելի: Այլ կոչունքս՝ ոչ որպէս օրէն էր եղև. վասն զի այսպէս կամեցաւ թագաւորն առնել պաշտօնեայ ծառայիցն: ⁹Եւ Ասթինէ կին թագաւորին արար կոչունս կանանց յապարանս թագաւորին Արտաշէսի: ¹⁰Եւ յաւուրն եւթներորդի յանձն իւր զուարճացեալ լինէր թագաւորն. և ասէ ցլման, և ցբազան, և ցթառա՛, և ցբուրազէ, ցթառաբբա, ցեւթանէորն ներքինեաց ցպաշտօնեայս իւր, ¹¹կոչել զկինն յարքունիս թագաւորեցուցանել զնա. և ցուցանել ամենայն իշխանաց և ազգաց զգեղեցկութիւն նորա. զի էր գեղեցիկ յոյժ: ¹²Եւ ոչ լուաւ նմա Ասթանէ

** Ի բազումս պակասի: * Եւ էր Համան Ամադովթեայ Բովկե՝... վասն երկուց ներքինեացն:*

** Ոմանք. Յաւուրս Արտաշէսի, կալաւ ՚ի Հնդկաց աշխարհէն:*

** Ի բազումս պակասի. Աշխարհէն մինչև յԵթովպիա հարիւր:*

** Ի բազումս պակասի. Վայելչութեանն զաւուրս հարիւր և ութսուն:*

** Ոմանք. Ջռամիկ քաղաքացիս:*

** Ոմանք. Որ էր զարդա՞. և ոմանք. Եւ յոր էր զար՞... և կերպասեօք... և զորս էր կապեալ ՚ի խոյա՞... լցեալս պաստառօք. կամ՝ պաստառօք: Ոսկան. Ոյք կային ՚ի վերայ սեան՞:*

Այլք. Ուր կային գահոյք:

** Այլք. Թակոյք և ըմ՞:*

** Ոմանք. Այլ կոչունքս որպէս օրէն էր:*

** Ոմանք. Տեւթանէորն ներքինոց. և ոմանք. ցեւթանէքին ներքինիս:*

** Ոսկան. Յարքունիս թագաւորին, և ցուցանել ամենայն:*

գալ առ նա ընդ ներքինիսն: Եւ տրտմեցաւ թագաւորն՝ և բարկացաւ յոյժ: ¹³Եւ ասէ ցսիրելիսն իւր զիրսն զոր արար Ասթինէն. Արդ՝ արարէ՞ք, ասէ թագաւորն, այսուհետև օրէնս և իրաւունս: ¹⁴Եւ մատեան առաջի նորա Արքինսէսու և Առնաթև և Մաղիսեար, իշխանք Պարսից և Մարաց որ էին մերձաւորք և աթոռակիցք արքային* . ¹⁵և պատմեցին եթէ ո՞րպէս օրէն է առնել Ասթանեայ կնոջ թագաւորին, զի ո՛չ արար զիրամանս արքային, զոր հրամայեաց նմա՝ ի ձեռն ներքինեացն* : ¹⁶Եւ ասէ Ոմիքև ցարքայ և ցիշխանսն. Ո՛չ եթէ արքայի՛ միայն ընդդէմ դարձաւ Ասթինէ տիկնանց տիկին, այլ ամենայն իշխանաց և կուսակալաց արքայի* : ¹⁷Սո՛յնպէս և ամենայն կանայք լինին անհնազանդ իշխանաց Պարսից և Մարաց. ¹⁸յորժամ լսեն զարհամարհանս կնոջ թագաւորիս, համարձակին իշխել անարգել զարս իւրեանց: ¹⁹Արդ՝ եթէ կանք իցեն և հաճո՛յ թուեցի արքայի, մի՛ մտցէ նա առ արքայ. և զտիկնութիւն նորա տացէ կնոջ որ լա՛ւ ևս իցէ քան զնա: ²⁰Եւ լուիցեն զօրէնսս զոր հրամայես ՚ի թագաւորութեանդ քում. և պատուեցեն կանայք զարս իւրեանց պատուով մեծաւ՝ յաղքատաց մինչև ՚ի մեծամեծս* : ²¹Եւ հաճո՛յ թուեցաւ բանն արքայի, և ամենայն իշխանաց նորա. և արար թագաւորն որպէս խօսեցաւ Մուրդքևս* : ²²Եւ առաքեաց ընդ ամենայն թագաւորութիւնն իւր ՚ի գաւառսն ամենայն, ըստ հրամանին որ եղաւ ՚ի վերայ ամենայն կանանց* :

Գլուխ Բ

¹Եւ յետ բանիցս այսոցիկ դադարեաց թագաւորն ՚ի բարկութենէ անտի. և ո՛չ յաւել յիշել ևս զԱսթինէ. զի ՚ի մտի ունէր զոր խօսեցաւն նա. և այսպէս մերժեալ ընկեցաւ կինն* : ²Եւ ասեն սպասաւորք թագաւորին. Խնդրեցեն արքայի աղջկունս կոյսս՝ զեղեցիկս տեսանելով. ³և հրամայեցէ արքայ գաւառապետս կացուցանել ընդ ամենայն երկիր թագաւորութեանդ քոյ. և ընտրեցեն աղջկունս կոյսս, և տացին ածել ՚ի Սուսէն քաղաք՝ ՚ի կուսանոց մի. և տացեն զնոսա ցներքինիսն արքունի. որ պահապանն է կանանց, և հրամայեցէ՛ արքայ տալ նոցա ևղ և աւճառ, և զամենայն դարմանս* . ⁴և կին՝ որ հաճո՛յ լիցի արքայի, թագաւորեցէ՛ նա փոխանակ Ասթինեայ. և հաճո՛յ թուեցաւ արքայի իրքն. արա՛ր այնպէս: ⁵Եւ էր այր մի Զրեայ ՚ի Սիսիս քաղաքի, և անուն նորա Մուրթքես, որդի Յայիրայ, որդւոյ Սեմեայ, որդւոյ Կիսեայ, յազգէ Բենիամինի. ⁶որ էր գերի՛ եկեալ յերուսաղէմէ՛ զոր գերեաց Նաբուքոդոնոսոր արքայն Բաբելացոց: ⁷Եւ էր նորա մանուկ սնուցեալ զդուստր Ամինադաբայ, եղբօր հօրն իւրոյ. և անուն էր նորա Եսթեր. և յառնուլ զնա ՚ի մօրէն և ՚ի հօրէն իւրմէ, կամէր առնուլ իւր կնութեան. և էր աղջկն բարի՛ յոյժ տեսանելով: ⁸Եւ յորժամ լու եղև հրաման թագաւորին,

* Ոմանք. Արքինէսու և Առնաթև:

* Ոմանք. Ասթինեայ թագաւորին կնոջ:

* Ոմանք. Ասիթենէ տիկնաց տիկին:

* Ոմանք. Յաղքատոյ մինչև ՚ի:

* Ամենայն գրչագիր օրինակք մեր այսպէս ունին. Որպէս խօսեցաւ Մուրդքևս: Ուր երկուք ՚ի նոցանէ յետոյ քերձամբ յարմարեալ ձևացուցանեն Ոմիքևս, ըստ պահանջելոյ բանին:

* Յօրինակին. Ի գաւառն ամենայն: Բազումք. Ի վերայ կանանց ամենեցունց:

* Ոմանք. Եւ այնպէս մերժեալ:

* Ոսկան. Եւ տացեն զնոսա ցՕգեայ ցներքինին: Ոմանք. Որ պահապանն են կա՛: Այլք. Եւղ և աճառ:

ժողովեցան աղջկունք բազունք ՚ի Սիսան քաղաք, որ էր ընդ ձեռամբ Ովգեայ: Տարան զԵսթեր առ Ովգա, որ էր ներքինի ՚ի վերայ կանանց. ⁹և հաճոյ եղև նմա աղջիկն. և եգիտ նա շնորհս առաջի նորա, և փութացաւ նմա տալ զաճառն և զմասն դարմանոյ նորա. և զԵւթն աղջիկն զորս տուեալ էր նորա նաժիշտ յարքունուստ. և դարմանէր զԵսթեր առաւելագոյն քան զա՛յլ ընկերս նորա, և զնաժիշտս նորա նոյնպէս*: ¹⁰Եւ ո՛չ եցոյց Եսթեր զագգն և ո՛չ զգաւառն. վասն զի պատուիրեաց նմա Մուրթբէ՝ մի՛ պատմել: ¹¹Եւ յաճախէր Մուրթբէ զամենայն օր շրջել առ տամբ կանանցն, և տեսանել թէ որպիսի՞ անցք անցցեն ընդ Եսթեր. ¹²զի մե՛րձ էր ժամանակ աղջկանն մտանել առ թագաւորն, յորժամ լնուին ամիսք երկոտասան. զի ա՛յսպէս կատարէին աւուրք դարմանոյ նոցա, ամիսք երեք օժանէին իւղովք անուշիւք, և ամիսս վեց ՚ի խունկս անուշունս, և յաճառս, և ՚ի լուանալ կանանցն*. ¹³և ապա մտանէր առ արքայն. և որում կամէր տալ զնա ՚ի ձեռս նորա, մտանէր ընդ նմա ՚ի սենեակն առաջի թագաւորին*: ¹⁴Ընդ երեկս մտանէր առ թագաւորն. և ցերեկ երթա՛յր անդրէն առ ընկերս իւր, և առ Ովգա՛ ներքինի պահապան կանանցն. և կա՛յր անդէն, մինչև կոչէին զնա յականէ՛ ՚ի սենեակ թագաւորին*: ¹⁵Եւ իբրև լնոյր ժամանակն Եսթերայ՝ դստերն Ամինադաբայ եղբօր հօրն Մուրթբէի մտանել առ արքայն. և ո՛չինչ ապախտ արար զոր միանգամ պատուիրեաց նմա ներքինին, որ էր պահապան կանանցն. զի էր Եսթերայ գտեալ շնորհս յամենեցունց որ միանգամ տեսանէին զնա: ¹⁶Եւ եմո՛ւտ Եսթեր առ արքայն յերկոտասաներորդ ամսեանն Ադար, որ է Յայերէն Արեգ. յԵւթներորդ ամի թագաւորութեան նորա*: ¹⁷Եւ հաճոյ թուեցաւ Եսթեր արքայի յոյժ, և եգիտ նա շնորհս քան զամենայն կանայսն, և եդ ՚ի վերայ գլխոյ նորա զթագ կանանցն: ¹⁸Եւ արար թագաւորն կոչմունս ամենայն սիրելեաց իւրոց, և զօրացն իւրոց զաւուրս եւթն, և բարձրացոյց նա զհարսանիսն Եսթերայ. և հրաման ետ թողութիւն առնել ամենեցուն որ ընդ թագաւորութեամբ նորա էին. և Մուրթբէ դարմանէր և կազմէր զտունն թագաւորին*: ¹⁹Այլ Եսթեր՝ ո՛չ եցոյց զերկիր հայրենի գաւառին իւրոյ. զի ա՛յսպէս պատուիրեալ էր նմա Մուրթբէի. երկնչե՛լ յԱստուծոյ՝ և առնել զհրամանս նորա, որպէս էր նա առ նմա յառաջ. և Եսթեր ո՛չ փոխեաց զիւր կարգն: ²⁰Եւ տրտմեցան երկու ներքինիք արքային՝ որ պահպանապետքն էին մարդկանն. վասն զի նախանձէին ընդ Մուրթբէի՝ առաւել քան զնոսա պատուելոյ ՚ի թագաւորէն, և կամէին սպանանել զԱրտաշէս արքայ*: ²¹Եւ ա՛զդ եղև Մուրթբէի բանս այս, և յայտնեաց Եսթերայ. և Եսթեր եցոյց արքայի զխորհուրդս մահուն: ²²Եւ արքայն կշտամբեաց զերկոսին ներքինիսն, և կախեաց զնոսա զփայտէ. և հրամայեաց թագաւորն զիրսն զայն գրել զգուշութեամբ. եթէ ո՞րպէս հաւատարիմ եղև առ նա Մուրթբէոս:

* Յօրինակին աստ և ստորև համար 12 բաժանմամբ գրի բառս ա ճառ. ակնարկելով իմն, յաւելուլ ՚ի միջոցին՝ և որպէս ունի ՚ի վերոյ: Ոսկան. Եւ զԵսթն աղջիկսն:

* Յօրինակին. Ձի մերձ է ժամանակ: Ոմանք. Ձի յորժամ լնոյին:

* Ոմանք. Տալ զնա ՚ի ձեռս՝ նա մտանէր:

* Ոմանք. Եւ ցերեկ երթայր... և առ Ուդայի ներքինի պա՛:

* Ոմանք. Թագաւորութեանն իւրոյ:

* Ոմանք. Կոչունս ամենայն սիրե՛:

* Ոմանք. Պահպանապետքն էին մարդկան:

Գլուխ Գ

¹Եւ եղև յետ այսորիկ, և փառաւորեաց արքայ Արտաշէս զՅաման՝ Ղաթուբաւ հանդերձ ընկերօք նորա, և բարձրացոյց զնա յառաջին աթոռ քան զամենայն սիրելիս իւր*։ ²Եւ ամենեքին որ միանգամ էին՝ ՚ի տան թագաւորին՝ երկիր պագանէին նմա. զի այսպէս հրամայեաց թագաւորն առնել։ Այլ Մուրթբէ՝ ո՛չ պագանէր նմա երկիր։ ³Եւ խօսեցան մեծամեծք թագաւորին ընդ Մուրթբէի՝ և ասեն. Մուրթբէ՝ ընդէ՞ր ո՛չ պագանես դու երկիր Յամանայ ըստ հրամանի՝ թագաւորին*։ ⁴Ձի յամենայն օր խօսէին ընդ նմա. և նա ո՛չ լսէր նոցա. և ամբաստան եղեն զՄուրթբէ՝ առաջի Յամանայ. և Մուրթբէ ո՛չ հնազանդեցաւ հրամանացն արքայի՝ քանզի Յրեայ էր։ ⁵Եւ յորժամ գիտաց Աման՝ եթէ ո՛չ պագանէ նմա երկիր, բարկացաւ յոյժ. ⁶և խորհո՛ւրդ արար զի կորուսցէ զՅրեայսն որ ընդ թագաւորութեամբն Արտաշէսի արքայի իցեն. և արարին հանդէս համարոյ, ⁷յամին երկոտասաներորդի թագաւորութեանն Արտաշէսի. և արկանէր վիճակ օր յօրէ՝ և ամիս յամսոյ. զի ո՞րպէս կորուսցէ ՚ի միում աւուր զա՛զգն Մուրթբէի, և անկաւ վիճակն ՚ի չորեքտասան ամսոյն Ադար։ ⁸Եւ խօսեցաւ ընդ արքային՝ և ասէ. Գո՛յ ազգ ցրեալ ընդ հեթանոսս, և ընդ ամենայն թագաւորութեան քում, որք են ապիրատք և խորամանգք քան զամենայն ազգս, և օրինաց արքունի ո՛չ հնազանդին. և ո՛չ օգուտ են արքայի եթէ թողուս դու զնոսա։ ⁹Արդ՝ եթէ կամք իցեն արքայի, հրաման տացես կորուսանել զնոսա. և ես կարգեցից ՚ի զանձս արքունի՝ բե՛ւր քանքար արծաթոյ։ ¹⁰Եւ եհան արքայ զմատանին իւր և ետ զնա ՚ի ձեռս Ամանայ գրել զՅրեիցն և կնքել առ ՚ի կորուսանել զնոսա։ ¹¹Եւ ասէ թագաւորն ցԱման. Ջարծաթդ կա՛լ ընդ քեզ, և զազգդ զայդ՝ արա՛ որպէս և կամիս։ ¹²Եւ կոչեցին զդպիրսն արքունի յամսեանն առաջնում, յաւուրն երեքտասաներորդի. և գրեցին որպէս և հրամայեաց նոցա Յաման։ Ջօրավարաց իշխանաց ընդ ամենայն գաւառս՝ ՚ի Յնդկաց մինչև յեթովպացիս, հարիւր քսան և եւթն գաւառս. և իշխանացն ազգաց՝ զիր իւրաքանչիւր լեզուաւ Արտաշէսի հրամանաւ*։ ¹³Եւ առաքեցան հրովարտակքն ՚ի ձեռն հրեշտակաց ընդ ամենայն իշխանութիւնն Արտաշէսի՝ կորուսանել զազգն Յրեից յաւուր միում, յամսեանն երկոտասաներորդի որ է Ադար, և յափշտակել զամենայն ինչս և զստացուածս նոցա*։ ¹⁴Եւ հրաման հրովարտակին՝ էր այսպէս։

Գլուխ ԺԳ

¹Արքայ՝ մեծ Արտաշէս՝ ձեզ որ էք ՚ի կողմանս Յնդկաց և Եթովպացոց, իշխանաց և պետաց, ձե՛զ հնազանդելոցդ*, ²և ամենայն երկրիս զայս գրեն։ Կամեցեալ՝ ո՛չ ցասմամբ իշխանութեանս հպարտացեալ՝ այլ քաղցրութեամբ և խոնարհութեամբ կարգեալ. զի զայնոսիկ որ ՚ի հնազանդութեանն իցեն՝ անշուշտ յամենայն ժամ հաստատել զկեանս նոցա, զթագաւորութիւնն կացեալ խաղաղութեամբ մինչև ՚ի ծագս երկրիս, տա՛լ նորոգել զխաղաղութիւնն որում

* *Ի բազում պակասի. Եւ եղև յետ այսորիկ, և փառաւ*։ Այլք. Յանդերձ, և ընկերօք նորա։

* *Ի բազումս պակասի. Պագանես դու երկիր Յամանայ ըստ*։

* *Ոսկան. Յարիւր քսան և հինգ գա*։

* *Ոմանք. Յամսեանն երկոտա*։

* *Ոմանք. Յնդկաց և Եթովպա*։

ցանկացան ամենայն մարդիկ*³ հաւատացեալ իմ որ խորհրդակիցս են իմ, զի որպէս ՚ի գլուխ տարցի զիրսս, որ զհմաստութիւն և զխնամ առանց փոփոխելոյ հաստատուն հաւատովք յայտնեալ. որով արժանի լեալ երկրորդ աթոռակցութեան իմոյ Յաման.⁴ և եցոյց մեզ որ ընդ ամենայն տիեզերս ա՛զգ խառնեալ են դժընդակ ժողովո՛ւրդ ոմն, խափան օրինաց, որք ընդդէմ կան թագաւորաց, և ՚ի բա՛ց մերժեն յիւրեանց զհրամանս առ ՚ի չլսել նոցա, որ ՚ի մէնջ ուղղեալ և հաստատեալ անշո՛ւշտ մերոյ իշխանութեանս*⁵ Արդ կալեալ զազգս միայն բովանդակ ազգաւ իւրեանց առաջի ամենայն մարդոյ որք միանգամ իցեն, և զկարգս զօրինաց զօտարաց ՚ի բա՛ց փոխել. և որ դժընդակքն են, և ընդդէմ մերոյ իրաց. յորոց ձեռաց կատարին ամենայն չարիք, որք են թշնամիք մերոյ թագաւորութեանս*⁶ Կարգեցաք այժմիկ՝ վասն որոյ ձեզ ա՛զդ արարաք գրո՛վս մերով այսուիկ, և ՚ի Յամանայ որ հաստատեալ կացեալս է ՚ի վերայ իրացս այսոցիկ, և երկրորդի հօր մերոյ. զամենեսեան կանամբք և որդւովք հանդերձ կորուսանել իսլել՝ սրով թշնամեաց՝ առանց գթալոյ և խնայել. յամսեանն երկոտասաներորդում, ՚ի չորրորդ աւուրն՝ որ է Ադար*,⁷ ՚ի տարւոջս յայսմիկ մահու՛ չարաւ ՚ի դժոխս իջցեն յաւուր միում. և յետ այսր ժամանակի եղիցի խաղաղութիւն մեզ՝ ՚ի կատարել իրացդ այդոցիկ*⁸ Եւ պատճենք հրովարտակացն սփռեալ գրէին ընդ ամենայն գաւառսն. և իբրև ե՛լ հրամանն այն, ամենեքին պատրաստք լինէին աւուրն այնմիկ. փութանակի հասանէին իրքն այն և ՚ի Շուշան քաղաք. և թագաւորն և Յաման՝ զարդարէին զվարսս իւրեանց. և խռովէին ամենայն քաղաքն*:

Գլուխ Դ

¹Եւ Մուրթթէ իբրև գիտաց զիրսն՝ պատառեաց զպատմութեան իւր, և զգեցաւ քուրձ, և ցանեաց մոխիր զգլխով իւրով. և ընթացաւ ընդ հրապարակս քաղաքին, ՚ի ձայն բարձր աղաղակէր և ասէր. Արդ՝ ընդէ՞ր բառնայք զուր օտար տարապարտուց զազգս իմ, որ ո՛չինչ գործեաց չարիս*² Եւ եկն մինչև ՚ի դրունս տանն արքունի և եկաց. զի ո՛չ իսկ էր արժան մնա մտանել ՚ի գաւիթն արքունի, զի զգեցեալ էր զքուրձ և զմոխիր: ³Եւ ընդ ամենայն գաւառս ուր և կարդային զգիրն՝ աղաղակ և կոծումն՝ և սո՛ւգ մեծ լինէր Յրէիցն. և արկանէին քուրձ և մոխիր զիւրեամբք: ⁴Եւ մտին ներքինիքն և նաժիշտքն տիկնանց տիկնոջն, և պատմեցին Եսթերայ. և խռովեցաւ յոյժ իբրև լուաւ վասն հրամանին զոր ետ թագաւորն. և առաքեաց զգեցուցանել զհանդերձն Մուրթթէի, և հանել ՚ի նմանէ զքուրձն. և նա ո՛չ հաւանեցաւ նմա: ⁵Եւ Եսթեր կոչեաց զԱռնաթև զներքինի իւր որ կայր հանապազ առաջի նորա, և առաքեաց ճշմարտել ՚ի Մուրթթէ՛ թէ

* Ոսկան. Եւ ամենայն երկիր զայս գրել կամե՛: Ոմանք. Ձի զայսոսիկ որ... զթագաւորութիւնն խաղաղութեան մինչ ՚ի ծագս երկրի, տալ և նորոգել:

* Ոմանք. Մերժեն յինքեանց զիրա՛:

* Ոմանք. Ձազգս զայս միայն բո՛... և ընդդէմ մեր իրաց. ուր Ոսկան. մերոց իրաց:

* Յօրինակին պակասէր. Այսուիկ, և ՚ի Յամանայ որ հաստա՛: Այլք. Առանց գթալոյ և խնայելոյ:

* Այլք. Եւ յետ այդր ժամանակի... մեզ իրացդ այ՛:

* Ոսկան. Լինէին յաւուրն յայնմիկ:

* Ոմանք. Ձազգդ իմ որ ինչ ո՛չ գործեաց:

արդարև՝ ա՞յնպէս իցէ՞: ⁷Եւ Մուրթբէ եցո՛յց նմա զգիրսն որպէս և լեալ էին, և զխոստումն զոր խոստացաւ Զաման արքայի, տա՛լ զանձս բեր քանքար, զի կորուսցէ զՅրէայսն՞: ⁸Եւ զպատճէնն որ ՚ի Սուսիս քաղաքի կարդացեալ էր առ ՚ի կորուսանել զնոսա, ե՛տ զայն ցներքինին զի ցուցցէ՛ Եսթերայ՞:

Գլուխ ԺԵ

¹Եւ ասէ ցնա պատուիրելով, զի մտցեն և խնդրեսցեն յարքայէ. և աղաչեսցես վասն ժողովրդեանն. ²զի յիշեսցեն զաւուրսն տառապանաց քոց որպէս և սնա՛րն ՚ի ձեռս իմ. վասն զի Զաման՝ երկրորդ արքայի խօսեցաւ զմէնջ ՚ի մահ. ³արդ՝ աղաչեսցես զՏէր Աստուած խնդրուածովք, և խօսեսցի՛ս՝ ասէ՛ թագաւորիդ վասն մեր, և փրկեսցես զմեզ ՚ի մահուանէս: ⁴Եւ եմո՛ւտ Առնաթև, և խօսեցաւ ընդ նմա զբանս զայս. ⁵և ասէ Եսթեր ցԱռնաթև. Գնա՛ դու առ Մուրթբէ՛ և ասա՛. ⁶Եթէ ազգ ամենայն թագաւորութեանս գիտէ. եթէ ամենայն այր կամ կին՝ որ մտանիցէ առ արքայ ՚ի ներքին սենեակն առանց կոչելոյ նորա, չի՞ք փրկութիւն. բայց միայն առ որ ձգէ արքայ զոսկի գաւազանն, նա միայն ապրի. և ես ո՛չ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի եմ այս աւուրք երեսուն՞:

Գլուխ Դ

¹²Եւ պատմեաց Առնաթև Մուրթբէի զամենայն զբանսն Եսթերայ: ¹³Եւ ասէ Մուրթբէ ցԱռնաթև. Ե՛րթ և ասա՛ դու նմա, թէ Եսթե՞ր՝ մի՛ ասեր դու յանձն քո, եթէ ես միայն ապրիցիմ ՚ի թագաւորութեանս յամենայն Զրէից՞. ¹⁴և ո՛չ լուիցես ՚ի ժամանակիս յայսմիկ. այլուստ լինի օգնականութիւն և փրկութիւն Զրէից, այլ դու և տուն հօր քոյ կորնչի՞ք. և ո՛ իսկ գիտէ եթէ ՚ի ժամանակի յայսմիկ թագաւորեցեր: ¹⁵Եւ առաքեաց միւսանգամ Եսթեր առ Մուրթբէ և ասէ. ¹⁶Գնա՛ դու ժողովեա՛ զՅրէայսն որ եմ ՚ի Սիսիս քաղաքի, և պահեցէ՛ք ինձ պա՛հս, և մի՛ կերիջիք և մի՛ ըմպիջիք զաւուրս երիս, մի՛ զտիւ և մի՛ զգիշեր, և ես և նաժիշտք իմ զգուշանամք պահել: Եւ ապա մտից ես առ արքայ, քանզի առնել զայս՝ արտաքո՛յ է օրինաց թագաւորին. արարի՛ց զայդ, և եթէ իցէ ինձ մեռանել, և ո՛չ յապաղեցից՞: ¹⁷Եւ գնաց Մուրթբէ՛ և արար որպէս պատուիրեաց նմա Եսթեր:

Գլուխ ԺԳ

⁸ Եւ աղաչեաց խնդրուածովք զՏէր. ՚ի մի՛տ առեալ և յիշեալ զգործս մեծամեծս Տեառն. և ասէ. ⁹ Տէր Աստուած՝ թագաւոր ամենակալ, զի քո՛ւմ

* *Բազումք.* ՁԱռնաթև ներքինին՝ որ կայր: *Ոսկան յաւելու համար 6.* Այնպէս իցէ: **Եւ ելեալ Առնաթև առ Մուրթբէ յապարհանս քաղաքին, որ էր հանդէպ դրան թագաւորին:* Եւ Մուրթբէ:

* *Ոմանք.* Եցոյց նմա զիրսն որպէս և լեալ էին: *Այլք.* Տալ զանձ բեր:

* *Ոմանք.* Ձի ցուցցէ զայն Եսթերայ:

* *Ոմանք.* Առանց կոչելոյ, նորա չիք փրկ՛:

* *Ոմանք.* Ե՛րթ և ասա՛ դու նախ. Եսթեր:

* *Այլք.* Եւ ժողովեա՛ զՅրէ՛... և մի՛ ըմպեսջիք զաւ՛:

հրամանիդ սպասէ ամենայն ոք. ո՛չ ոք է որ ընդդէմ կայ քեզ՝ յորժամ կամիս կեցուցանել դու զժողովուրդ քո զԻսրայէլ*.¹⁰ զի դու՛ Տէր արարեր զերկինս և զերկիր և զամենայն սքանչելիս.¹¹ և դու՛ տիրես ՚ի վերայ ամենայնի, և ո՛չ ոք է որ հակառակ կայ քում տէրութեանդ,¹² որ զամենայն գիտես. զի ո՛չ հպարտութեամբ ինչ, և ո՛չ ամբարտաւանութեամբ, և ո՛չ թշնամանօք արարի զայս չպագանելս իմ երկիր ամբարտաւանին Յամանայ:¹³ Այլ հաճէի և կամէի պագանել զգարշապարս ոտից նորա առ ՚ի փրկութիւն տանս Իսրայէլի:¹⁴ Այլ արարից զայս, զի մի՛ տաց փառս մարդոյ, այլ քե՛զ միայն ճշմարտիդ Աստուծոյ. և ո՛չ երկիր պագից ունեք՝ բայց քե՛զ Տեառն իմում. և ո՛չ արարի զայս ամբարտաւանութեամբ*:¹⁵ Արդ Տէր Աստուած Աբրահամու՝ խնայեա՛ դու ՚ի ժողովուրդ քո, զի յարուցեա՛լ են ՚ի վերայ մեր ապականիչք՝ զի ցանկացեալ են կորուսանել զժառանգութիւն քո որ է՛ր իսկզբանէ.¹⁶ մի՛ անտես առնէր զբաժին քո զոր դու քեզէ՛ն փրկեցեր յերկրէն Եգիպտացոց:¹⁷ Լու՛ր Տէր ձայնի աղօթից իմոց. և քաւի՛չ լեր ժառանգութեան քում, և դարձո՛ զսուգս մեր յուրախութիւն. զի կենդանիքս օրհնեսցուք զանունդ քո մեծ Տէր. և մի՛ ապականեր զբերան զայն որ օրհնէն զքեզ:¹⁸ Եւ ամենայն Իսրայէլ կարդացին առ Տէր յամենայն զօրութենէ իւրեանց. զի մա՛հն առաջի նոցա էր:

Գլուխ ԺԴ

¹ Եւ Եսթեր տիկինն ապաստանեալ առ Տէր, և հաստատեալ էր ՚ի ճիգն մեծ*:² Եւ եհան յիւրմէ զհանդերձ փառաց թագաւորութեան իւրոյ, և զգեցաւ նա՝ քուրձ նեղութեան և սգոյ. և փոխանակ պէսպէս պատուական իւղոցն և խնկոցն՝ մոխրով և աղբով ելի՛ց զգլուխն իւր. և զմարմինս իւր ՚ի բազում աշխատութիւնս խոնարհեցոյց. և զամենայն տեղի զարդու զցնծութեան իւրոյ՝ ելի՛ց ՚ի գիսոյ հերաց իւրոց:³ Եւ մատուցեալ բազում աղօթիւք խնդրուածոց հայցէր ՚ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլի՝ և ասէր. Տէր իմ և թագաւոր մեր, դու՛ միայն օգնեա՛ ինձ միայնումս. որ ո՛չ ունիմ ինձ օգնական բաց ՚ի քէն*.⁴ զի վտանգ մեծ է առաջի իմ:⁵ Ես լսէի ՚ի ծննդենէ իմմէ՝ ՚ի հայրենի ազգէն իմմէ, եթէ դու Տէր առեր զԻսրայէլ յամենայն ազգաց, և զհարսն մեր յազգատհմէն իւրեանց ՚ի ժառանգութիւն քեզ յաւիտեան. և արարեր նոցա զամենայն զոր խօսեցար: Եւ դարձեալ նս յաճախեալ յաղօթսն իւր այսպէս ասէր. Աստուած Աբրահամու, Աստուած Սահակայ, Աստուած Յակոբայ՝ դու՛ ես օրհնեալ յաւիտեանս. ես լսէի ՚ի հայրենի գրոց. զի դու Տէր փոխեցեր յերկրէ յերկինս զԵնք, յապաշխարութենէ ՚ի կեանսն յաւիտենից. ես լուայ՝ ՚ի հայրենի գրոց Տէր՝ եթէ դու զՆոյ ՚ի ջուրոցն հեղեղէ ապրեցուցեր. ես լուայ՝ ՚ի հայրենի գրոց Տէր՝ եթէ դու Աբրահամու՝ առաջի արանցն իւրոց ՚ի մէջ թագաւորացն Ետուր փառս. ես լուայ՝ ՚ի հայրենի գրոց Տէր՝ եթէ դու զՅովնան ՚ի կէտ ձկանն ապրեցուցեր. ես լուայ՝ ՚ի հայրենի իմոց գրոց Տէր՝ եթէ դու զերիս մանկունսն ՚ի հնոցէ հրոյն փրկեցեր. և զԴանիէլ՝ ՚ի գբոյ առիւծուցն ապրեցուցեր. ես լուայ՝ ՚ի հայրենի իմոց գրոց Տէր՝ եթէ դու զԵզեկիա արքայն Յրէաստանի՝ մահուն դատապարտեալ՝ փրկեցեր, և ՚ի կալ նորա յաղօթս առ քեզ վասն կենաց իւրոց

* Ոմանք. Յորժամ կամիս դու կեցուցա՛:

* Ոսկան. Այլ արարի զայս... այլ քեզ միայնոյ ճշ՛:

* Ոմանք. Եւ հաստատէր ՚ի ճիգն:

* Ոմանք. Աստուած իմ և թագաւոր:

ողորմեցար, և շնորհեցեր և յաւելեր ՚ի կեանս նորա ամս հնգետասան. ես լուայ ՚ի հայրենի իմոց գրոց Տէր՝ եթէ դու ՚ի խնդրելն ՚ի քէն Տէր՝ Աննայի, աղօթիւք և խնդրուածովք՝ զաւակ շնորհեցեր նմա զմեծն Սամուէլ*։⁶ Եւ արդ՝ այժմ մեք Տէր մեղաք առաջի քո, և մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց։⁷ փոխանակ այնր զի փառաւորեցաք մեք զաստուածս նոցա. արդար ես դու Տէր։⁸ Եւ այսու ո՛չ շատացան ՚ի ծառայելս մերում նոցա. այլ եղին զձեռս իւրեանց ՚ի վերայ կռոց իւրեանց*,⁹ բառնալ զայն զոր սահմանեաց բերանդ քո, և եղծանել զժառանգութիւնս քո. և խնուն գրերանս որ օրհնեն զքեզ, և շիջուցանեն զփառս տան քոյ և զսեղանոյ սրբոյ քո*։¹⁰ և բանալ գրերանս ազգաց ՚ի փառաւորել զոչինչ աստուածս իւրեանց, և փառաւորել զթագաւորս մարմնաւորս յաւիտենիս այսորիկ։¹¹ Եւ արդ Տէր Աստուած՝ մի՛ մատներ զվիճակ ժառանգութեան քոյ ՚ի ձեռս այնոցիկ որ ո՛չն իսկ են բնաւ, զի մի՛ ուրախութեամբ ցնծասցեն ՚ի վերայ կործանմանս մերոյ. այլ դարձո՛ զխորհուրդս նոցա անդրէն ՚ի նոսին, և զայն որ յարուցեալ է ՚ի վերայ մեր՝ խայտառակեա*։¹² Յիշեա՛ Տէր, և մի՛ անտես առներ ՚ի ժամանակի նեղութեանս մերում։ Եւ զիս համարձակեցո՛ր որ Թագաւորդ ես ամենայն թագաւորաց՝ և Տէր տերանց։¹³ և տուր ինձ բան դիւրին ՚ի բերան, որով գտանիցեն զշնորհս առաջի թագաւորին. և դարձո՛ զսիրտ նորա յատելութիւն թշնամւոյն մերոյ, առ ՚ի կոտորումն նմին և կամակցաց նորա*։¹⁴ այլ զմեզ փրկեա՛ բարձր բազկաւ քով, և օգնեա՛ ինձ միայնումս՝ որում ո՛չ ոք է օգնական բաց ՚ի քէն Տէր։¹⁵ Տէր՝ դու զամենեցուն զսիրտս գիտես և ճանաչես, և ես ատեցի՛ զփառս անօրինացս, և զարշեցեալ եմ յանկողնէ անթլփատիցս. և յամենայն օտար ստացուածոցս*։¹⁶ Դու գիտես Տէր զկարիս իմ, զի զարշելի է ինձ թագս որ է ՚ի վերայ գլխոյ իմոյ. զարշիմ ՚ի սմանէ որպէս ՚ի կապերտէ որ լինի ըստ օրինաց կանանց, և ո՛չ զգենում զնա յորժամ ՚ի ներքս դադարեմ*։¹⁷ Եւ ո՛չ կերաւ աղախին քո ՚ի սեղանոյ անտի Ամանայ, և ո՛չ փառաւորեցի զգինարբուս թագաւորին, և ո՛չ արբի զգինի սպանդից նոցա*։¹⁸ և ո՛չ ուրախ եղև աղախին քո յօրէն յայնմանէ յորմէ հետէ մտեալ եմ առ թագաւորն մինչև ցայժմ. բայց ՚ի քեզ Տէր՝ Տէր Աստուած Աբրահամու։¹⁹ Աստուած հզօր ՚ի վերայ ամենեցունց, լուր ձայնից անյուսացս, և փրկեա՛ զմեզ ՚ի ձեռաց որ չարչարենս զմեզ, և փրկեա՛ զիս յերկիւղէ անտի զոր երկնջիմս. և ապրեցո՛ զժողովուրդ քո զԻսրայէլ*։

Գլուխ ԺԵ

* *Ոմանք.* Եւ Աստուած Յակոբայ... յաւիտեանս ամէն։ *Այլք.* Յաւիտենից. ես լսէի ՚ի հայ՝: *Ի բազումս պակասի.* Հրոյն փրկեցեր. և *զՂանիէլ ՚ի գրոյ առիւծուցն ապրեցուցեր.* ես լուայ։ *Ոմանք.* Ի քէն Տէր Աննայի Շուշանայ աղօ՞: *Եւ ոմանք լոկ.* Շուշանայ. առ որս և պակասի. շնորհեցեր նմա զմեծն Սամուէլ:

* *Ոմանք.* Ո՛չ շատացան Տէր ՚ի ծա՞:

* *Այլք.* Եւ շիջուցանել զփա՞:

* *Ի բազումս պակասի.* Եւ արդ Տէր Աստուած մի՞:

* *Այլք.* Առ ՚ի կատարումն նմին և:

* *Ոմանք.* Տէր դու զամենայն զսիրտս զի՞:

* *Ոմանք.* Որպէս և ՚ի կապերտէ... և ո՛չ զգենում զայն:

* *Ոմանք.* Զգինիս պանդխտից:

* *Ի բազումս պակասի.* Եւ ապրեցո՛ զժողովուրդ քո զԻսրայէլ:

⁴ Եւ եղև յաւուրն երրորդի՝ իբրև դադարեաց յաղօթիցն իւրոց, մերկացա՛ւ յիւրմէ գիանդերծ սգոյն, և զգեցաւ զծիրանիսն իւր, և եղև երևելի՛ յոյժ: ⁵ Եւ կարդա՛ց նա առ տեսուչն իւր Աստուած և փրկիչն ամենայնի. և ա՛ռ նա զերկուս նաժիշտսն իւր զսիրելիս. ⁶ մին ունէր զստորոտ զգեստու նորա՝ ՚ի վէր. ⁷ և զմիւսովն արկեալ զծեռն իւր: ⁸ Եւ նա՝ զամօթի հարեալ երկնչէր վասն գեղոյ մանկութեանն իւրոյ. և երեսք նորա զուարթք առ ՚ի սիրել, այլ սիրտ նորա նեղեալ էր ՚ի յահէ՛ անտի՛: ⁹ Եւ եմուտ նա ընդ ամենայն դրունս ապարանիցն, և եկա՛ց նա առաջի թագաւորին. և նա նստէր յաթոռ թագաւորութեանն իւրոյ. և զգեցեալ էր զպատմուճան փառացն իւրոց, որ էր ընդելուզեալ ոսկով և մարգարտով և ակամբք պատուականօք. և էր ահաւո՛ր յոյժ՝: ¹⁰ Եւ ՚ի վէր համբարձ գերեսս իւր, զի էին կարմրացեալ փառօք՝ և նայեցաւ. և գլորեցա՛ւ տիկինն, և փոխեաց նա զգոյն իւր, և եղև նա իբրև զթալացեալ, և խոնարհեցաւ ՚ի գլուխ նաժշտին որ երթայր առաջի նորա՛: ¹¹ Եւ դարձո՛յց Աստուած զոգի թագաւորին ՚ի հեզութիւն, և փութացեալ վաղվաղակի էջ մեծաւ երկիւղի յաթոռոյ անտի իւրմէ թագաւորն, և ա՛ռ զտիկինն ՚ի վերայ գրկաց իւրոց և կանգնեաց զնա, և աղաչէր և մխիթարէր զնա բանիւք խաղաղութան. և ասէր ցնա՛. ¹² Ձի՞ք է քեզ եսթեր տիկին, ես՝ եղբայր քո եմ, համարձակեա՛ց. ¹³ ո՛չ մեռանիս. զի ՚ի միասին է իմ և քո հրամանս: Մատի՛ր դու. ¹⁴ և ա՛ռ զգաւազանն զոսկի՝ և դիր ՚ի վերայ պարանոցի տիկնոջդ: Եւ համբուրեաց զնա՛, ¹⁵ և ասէ. Խօսեա՛ց ընդ իս՛: ¹⁶ Եւ ասէ ցնա եսթեր. Տեսի՛ զքեզ տէր՝ իբրև զհրեշտակ Աստուծոյ, և խռովեցաւ սիրտ իմ յահէ փառաց քոց՝. ¹⁷ զի սքանչելի՛ ես տէր իմ. և երեսք քո լի՛ եմ շնորհօք: ¹⁸ Եւ մինչդեռ խօսէր ընդ նմա՝ գլորեցաւ միւսանգամ յահէ թագաւորին. ¹⁹ և թագաւորն խռովեալ էր յոյժ, և ամենայն ծառայք նորա. և սպասաւորք թագաւորին աղաչէին զտիկինն: Եւ ասէ թագաւորն. Ձի՞նչ կամիս եսթեր, և զի՞նչ եմ աղաչանքդ քո. արդարև ասե՛մ քեզ, եթէ խնդրեսցես մինչև ՚ի կէս թագաւորութեանս իմոյ, տա՛ց քեզ:

Գլուխ Ե

⁴ Եւ ասէ եսթեր. Օրս իմ այս նշանաւո՛ր է. եթէ կա՛մք իցեն արքայի, եկեսցեն՝ դու և Յաման ՚ի կոչունսն իմ զոր առնելոց եմ այսօր: ⁵ Եւ ասէ թագաւորն. Կոչեցէ՛ք վաղվաղակի զՅաման, և կատարեսցո՛ւք զբանն եսթերայ: Եկին երկոքեան նոքա ՚ի կոչունսն զոր ասաց եսթեր: ⁶ Եւ մինչդեռ ըմպէին զինի, ասէ արքայն ցեսթեր. Ձի՞նչ կամիս տիկին եսթեր, տա՛ց քեզ զոր ինչ և խնդրեսցես՝: ⁷ Եւ ասէ եսթեր. Աղաչանք իմ և խնդրուածք իմ այս եմ. ⁸ եթէ գտի ես շնորհս առաջի արքայի, եկեսցէ արքայ և Յաման ՚ի կոչունսն զոր առնեն՝ ձեզ վաղիւ միւսանգամ: ⁹ Եւ ել Աման յերեսաց արքայի ուրախութեամբ մեծաւ և զուարթութեամբ: Եւ իբրև ետես Յաման զՄուրթէ զայրն Յրեայ ՚ի տան

* *Բազումք.* Այլ սիրտն նորա:

* *Ոմանք.* Եւ եմուտ առ նա ընդ ամենայն:

* *Ոսկան.* Իբրև զթալացեալ: *Ի բազումս պակասի.* Նաժշտին որ երթայր առաջի նորա:

* *Ոմանք.* Բանիւք խաղաղութեամբ:

* *Ոսկան.* Եւ էառ զգաւա՛... և եղ ՚ի վերայ պարանոցի տիկնոջն:

* *Ոմանք.* Եւ ասէ ցնա. Խօսեաց ընդ:

* *Ոմանք.* Ի յահէ փառաց քոց:

* *Այլք.* Եւ ասէ արքայն ցեսթեր: *Ոմանք.* Ձոր ինչ և խնդրես:

թագաւորին՝ բարկացա՛ւ յոյժ: ¹⁰ Եւ եմուտ նա ՚ի տուն իւր, և կոչեաց զսիրելիս իւր, և Ջովսարրա զկին իւր. ¹¹ և եցոյց նոցա զմեծութիւն և զփառսն իւր զոր ե՛տ նմա թագաւորն. և ո՞րպէս արար զնա առաջին ՚ի թագաւորութեանն իւրուն: ¹² Եւ ասէ Յաման. Ո՛չ կոչեաց տիկինն Եսթեր ՚ի կոչունս իւր ընդ արքայի զոք՝ բա՛ց յինէն. և դարձեալ առ վաղի՛ւ ևս հրաւիրեաց զիս. ¹³ և արդ՝ այս ո՛չ թուի ինձ հաճոյ, յորժամ տեսանեն զՄուրդքէ՝ զայր Յրեայ ՚ի տան թագաւորին: ¹⁴ Եւ ասէ ցնա Ջովսարրա կինն իւր և սիրելիքն իւր. Յրամա՛ն տուր հատանել քեզ փայտ մի յիսուն կանգուն, և ընդ առաւօտն ասացես արքայի, և կախեսցի Մուրդքէ զփայտէն. և դու մտանիցես ՚ի կոչունսն հանդերձ արքայի, և ուրախ լինիցիս ընդ նմա: Եւ հաճո՛յ թուեցաւ Յամանայ՝ բանն, և պատրաստեցին զփայտն*:

Գլուխ 2

¹ Եւ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն. և ասէ ցոպրապետն իւր՝ բերել առաջի իւր զգիր հրովարտակին և կարդալ: ² Եւ եգիտ նա զհրովարտակն զոր գրեալ էր վասն Մուրդքէի, եթէ ո՞րպէս պատմեաց վասն երկրոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանս թագաւորին, և կամէին սպանանել զարքայ Արտաշէս: ³ Եւ ասէ թագաւորն. Եւ զի՞նչ շնորհս և կամ փառս տուաք Մուրդքէի: Եւ ասեն սպասաւորքն արքայի. Չարարե՛ր և ոչինչ նմա՝ յորժամ հասեր ՚ի վերայ խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ: Եւ ընդ առաւօտսն եկին ՚ի գաւիթ թագաւորին*: ⁴ Եւ ասէ արքայ. Ո՞վ է ՚ի գաւիթս: Եւ Աման եկն եմուտ հրաման առնուլ ՚ի թագաւորէն, զի կախեսցէ զՄուրդքէ զփայտէն զոր պատրաստեաց*: ⁵ Եւ ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Յաման՝ արտաքո՛յ է: Եւ ասէ արքայ. Կոչեսցի՛ ՚ի ներքս: ⁶ Եւ ասէ թագաւորն ցԱման. Ձի՞նչ արարից ես առնն զոր ես կամիմ փառաւորել: Եւ խորհեցաւ Աման, և ասէ ՚ի միտս իւր. Ձո՞վ կամի արքայ փառաւորել եթէ ո՛չ զիս: ⁷ Եւ ասէ ցարքայ. Չայրն զոր արքայ կամի փառաւորել*. ⁸ բերցեն զպատմուճանն զարքունի, և զերիվարն յորում արքայ հեծանէր, և տացեն առն այնորիկ սիրելւոյն արքայի ՚ի փառաւորաց անտի*. ⁹ և զգեցուցեն զպատմուճանն առնն այնմիկ զոր արքայն սիրէ, և հեծուցեն զնա յերիվարն արքունի. և քարո՛զ կարդացցի ընդ հրապարակս քաղաքիս, և ասացէ՛. Այսպէս եղիցի ամենայն առնն զոր արքայ փառաւորէ: ¹⁰ Եւ ասէ արքայ ցԱման. Բարւո՛ք խօսեցար՝ զայդ արացես Մուրդքէի առն Յրէի՝ խնամակալի՛ տան իմուն, և մի՛ վրիպեսցի բան մի ՚ի բանից քոց զոր խօսեցարդ*: ¹¹ Եւ ա՛ռ Աման զպատմուճանն՝ և զերիվարն արքունի. և զգեցոյց զՄուրդքէ, և հեծոյց զնա յերիվարն, և անց նա ընդ փողոցս քաղաքին. և քարոզն աղաղակէր և ասէր. Այսպէս լիցի ամենայն մարդոյ զոր արքայ կամի փառաւորել*: ¹² Եւ դարձաւ Մուրդքէ յապարանս արքունի. և Յաման զնա՛ց ՚ի տուն իւր զլխարկեալ՝ լի՛ տրտմութեամբ: ¹³ Եւ պատմեաց Յաման՝ որ զի՛նչ անց ընդ նա՝ Ջովսարրայի

* Ոմանք. Ասացես ցարքայ, և կախեսցի:

* Ոմանք. Չըարարեր և ոչինչ. ուր Ոսկան. Արարեր և ոչինչ:

* Ոմանք. Ո՞վ է ՚ի գաւիթս:

* Ոմանք. Ի՛ միտս իւր. Չայրն զայն զոր կամի արքայ:

* Ոմանք. Առն այնմիկ: Եւ ոմանք. Առն միում սի՛:

* Այլք. Խնամակալի ՚ի տան իմուն:

* Ոմանք. Այսպէս եղիցի... զոր կամիցի արքայ:

կնոջ իւրում, և սիրելեաց իւրոց: Եւ ասեն ցնա սիրելիքն և կինն իւր. Եթէ յազգէ Զրէից էր Մուրդքէ՝ և եղև իշխան, հնազանդեա՛ նմա. զի ո՛չ կարես դու նմա չա՛ր հատուցանել. քանզի Տէր Աստուած ընդ նմա է, և նա՛ մեծացոյց զնա՞: ¹⁴ Եւ մինչդեռ նորա խօսէին՝ եկին երկու ներքինիքն կոչել զՀաման՝ ՚ի ճա՛շ տիկնոջն:

Գլուխ Է

¹ Եւ եմուտ թագաւորն և Համան ՚ի գիներբուս տիկնոջն: ² Եւ ասէ արքայ ցեսքեր յաւուրն երրորդի մինչդեռ ըմպէին գինի. Զի՞՞ է քեզ Եսքեր տիկին. և զի՞՞նչ է խնդրուածդ քո՛ և կամ աղաչանքդ. եղիցի՛ քեզ մինչև ՚ի կէս թագաւորութեանս իմոյ՞: ³ Եւ պատասխանի՛ ետ Եսքեր՝ և ասէ. Եթէ գտի շնորհս առաջի քո արքայ՝ տացի՛ անձն մի խնդրոյս իմում, և բան աղաչանացս իմոց ընդունելի՛ քեզ լիցի.՝ ⁴ վասն զի վաճառեցաք ես և ժողովուրդ իմ՝ ՚ի կորուստ՝ և ՚ի ծառայութիւն և ՚ի յափշտակութիւն՝ մե՛ք և որդիք մեր, և ես ո՛չ հաւատացի. արդ՝ ո՛չ է առն բանսարկուի՛ արժան ՚ի տան թագաւորի լինել: ⁵ Եւ ասէ արքայն. Ո՞ւր է որ իշխեաց առնել զիրսս զայս: ⁶ Եւ ասէ Եսքեր. Այրս թշնամի Համան, որ չա՛րս է՝ սա՛ արար: Եւ Համան զահի հարեալ խռովեցաւ յոյժ յարքայէ և ՚ի տիկնոջէն: ⁷ Եւ յարեալ թագաւորն ՚ի ճաշոյ անտի, և եմուտ ՚ի ծաղկոցն արքունի. և Համան կամէր հրաժարել ՚ի տիկնոջէն, քանզի էր յերկիւղի՛ մեծի: ⁸ Եւ դարձաւ թագաւորն ՚ի ծաղկոցէ անտի, և ետես զՀաման զի կայր անկեալ առաջի զահոյից տիկնոջն՝ և աղաչէր զնա վասն փրկութեան իւրոյ: Եւ ասէ թագաւորն. Արդ՝ յայդ չափ հասեր, զի կամիս զկին իմ բռնադատել ՚ի տան իմում: Եւ Համան իբրև լուաւ, զահի՛ զամօթի հարեալ անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց՞: ⁹ Եւ ասէ Բուգաթան մի ՚ի ներքինեաց անտի ցարքայ. Ահա Համան և փայտ մի կազմեաց Մուրդքի սիրելւոյ՛ արքայի, և կանգնեաց զնա ՚ի տան իւրում յիսուն կանգնեան: Եւ ասէ թագաւորն. Խաչեսցի՛ ՚ի վերայ նորա՞: ¹⁰ Եւ կախեցին զՀաման զփայտէն, զոր պատրաստեաց Մուրդքէի. և ապա թագաւորն դադարեաց ՚ի բարկութենէ իւրմէ:

Գլուխ Ը

¹ Եւ յայնմ աւուր պարգևեաց թագաւորն Եսքերայ զգանձն Համանայ քսուի. և զՄուրդքէ կոչեցեալ թագաւորին՝ քանզի պատմեաց նմա Եսքեր եթէ ազգական իմ է՞: ² Եւ ա՛ռ թագաւորն զմատանին զոր եհան ՚ի Համանայ, և ե՛տ զնա Մուրդքէի, և կացոյց Եսքեր զՄուրդքէ ՚ի վերայ ամենայն ընչից Ամանայ: ³ Եւ յաւել՛ ևս խօսել ընդ արքայի, և անկաւ առաջի ոտից նորա, և աղաչէր՝ զի մի՛

* Ոմանք. Անց ընդ նմա... սիրելիքն իւր և կինն իւր: *՚ի բազումս պակասի.* Ընդ նմա է, և նա մեծացոյց զնա:

* Ոսկան. Յաւուրն երկրորդի:

* Ոմանք. Շնորհք առաջի արքայի... աղաչանացս իմում ընդունելի լիցի:

* *՚ի բազումս պակասի.* Եւ ետես զՀաման զի կայր անկեալ... և աղաչէր զնա վասն փրկութեան իւրոյ:

* *՚ի բազումս պակասի.* Կազմեաց Մուրդքի սիրելւոյ արքայի, և կանգնեաց զնա:

* Ոմանք. Պարգևեաց արքայն Եսքերայ զգանձսն:

մինչև 'ի վախճան լիցի պատուհասն 'ի վերայ Յրեիցն զոր հասոյց Յաման: ⁴ Եւ ձգեաց արքայ առ Եսթեր զգաւագանն ոսկի. և յարեալ Եսթեր՝ երթեալ 'ի սենեակն արքայի: ⁵ Եւ ասէ Եսթեր. Եթէ կանք իցեն քեզ, և գտեալ է իմ շնորհս առաջի քո, առաքեսցէ արքայ հրեշտակս և դարձուցէ՝ զհրովարտակսն որ գրեցանն 'ի Յամանայ կորուսանել զՅրեայսն որք են 'ի քում թագաւորութեանդ. ⁶ և զհա՞րոյ կարիցեն ես տեսանել զչարիս ժողովրդեան իմոյ, և կամ զհա՞րոյ կարացից ապրել ես 'ի բնակչաց հայրենի գաւառին իմոյ: ⁷ Եւ ասէ թագաւորն՝ ցեպեր. Իսկ եթէ զամենայն ինչս՝ և զստացուածս Յամանայ ետու՛ շնորհեցի՝ քեզ, և զնա կախեցի զփայտէ, զի ձեռն եարկ նա 'ի Յրեայսն. զինչ այլ ևս ինչ խնդրես՝ ⁸ գրեցէ՛ք արդ դուք հրամանա՛ւ բանի իմոյ որպէս կանք իցեն ձեզ, և կնքեսցի մատանեալս իմով, զի որչափ և գրէք՝ իմ արքայի հրաման տուեալ զի մի՛ որ գտցի դիմակաց այնց հրամանաց՝: ⁹ Եւ կոչեցին զգպիրսն յառաջնում աւուրն յամսեանն Նիսան՝ որ է Արեգ, 'ի քսաներորդի յերրորդի ամի. և գրեցաւ՝ որպէս և ետ հրաման աշխարհամա՛ր դպրացն. որք միանգամ իշխանքն և կուսակալքն էին 'ի գաւառս գաւառս, նախարարացն, և իշխանաց նախարարացն. 'ի Յնդկաց մինչև յԵթովպացիս՝ հարիւր քսան և եւթն կուսակալացն, ըստ գաւառաց գաւառաց յիւրաքանչիւր լեզուս նոցա՝, ¹⁰ հրամանաւ թագաւորին. և կնքեցաւ մատանեալ նորա: Եւ առաքեցին զհրովարտակսն 'ի ձեռն հրեշտակաց. որպէս զի կացցեն Յրեայք ո՞ղջ և անարատք՝ ¹¹ իւրեանց օրինօք յամենայն քաղաքի. օգնականք և թիկունք լինել առ 'ի հատուցանել նոցա զփոխարէն թշնամեաց իւրեանց. որպէս և կամիցին յաւուրս իմում ընդ ամենայն տեղիս թագաւորութեան իմում՝, ¹² յաւուրն երեքտասաներորդի ամսոյն Ադարայ: Եւ այս էր պատճէն հրովարտակին զոր կնքեալ էր մատանեալ թագաւորին:

Գլուխ ԺԶ

¹ Թագաւոր մեծ Արտաշէս. Ձեզ՝ որ էք 'ի Յնդկաց կողմանսդ և յԵթովպացոց հարիւր քսան և եւթն գաւառաց, նախարարացդ և իշխանացդ, որ 'ի մերում մտի և 'ի խորհրդեան մերում էք, ողջոյն՝: ² Բազումս բազում անգամ 'ի բարերար քաղցրութեանց աստի, ստեպ ստեպ պատուեալք՝ աւելի՛ իմն և մեծամեծ խորհուրդս խորհեցան: ³ Եւ ո՛չ միայն զմեր հնագանդեալսն խնդրեն չարչարել. այլ և ո՛չ իւրեանց յանդգնութեամբն՝ և մեծութեանց կարեն համբերել, և յիւրեանց բարերարսն ձեռնարկել մենքեմայեն: ⁴ Եւ զգովութիւնս ո՛չ միայն 'ի մարդկանէ աստի բառնան առնուլ, այլ և 'ի չմարթնոց գովութիւնս բարձրացեալ յղփացեալ խնդրեն. ո՛չ գիտեն որոց ամենայնի տեսուչ յաւեժ Աստուած է. և ատելութիւն իմն չարութեան համարին փախչել 'ի

* Յօրինակին պակասէր. Զի ձեռն եարկ նա՛ 'ի Հրեայ՝:

* Ոսկան. Հրաման տուեալ է. զի:

* Ոմանք. Յամսեանն Նիսանայ... և Հնդկաց մինչև:

* Ոսկան յաւելու. Եւ գրեցաւ հրամանաւ թա՛:

* Այլք. Որպէս և կամիցին յաւուր միում ընդ ամենայն... թագաւորութեան իմոյ:

* Ոմանք. 'ի կողմանս Հնդկաց և Եթովպաց՝:

դատաստանէն*։⁵ Բագուն անգամ զբազունս որք յիշխանութեան կարգեալ են որոց հաւատարմութեամբ զգործ ՚ի ձեռն առեալ է, հանգիստ և մխիթարութիւն անձանց համարին առ ՚ի հեղուլ զարին անբիծ*։⁶ Վասն որոյ կրեաց իսկ զարժան պատուհասն չարակամութեամբ ստութեամբ առանց խորհելոյ, ամբաստանութիւն մատուցանել մեզ. վասն այսորիկ որք ՚ի մէնջն պատուեցան։ Այլ արդ՝ զգուշանալ արժան է*։⁷ ո՛չ այնչափ միայն, որչափ և յառաջնուն նուագին ուսուցաք ձեզ առնել. որչափ և գրեցան ձեզ առանց սրբութեան, որ եղևոյ այնոցիկ որք արժանաւորութեամբքն զօրացեալ էին՝ ժանտութեամբք իւրեանց*։⁸ Արդ հայեցեալ ձեր ՚ի թագաւորութիւնս. առանց խռովութեան ամենայն մարդկան շնորհեցաք կեալ խաղաղութեամբ։⁹ Արդ արարէք զդարձ փոխարինին ՚ի նոյն. և որ առաջին հրամանն էր՝ այն ՚ի բաց մերժեցի. և հեզութեամբ և խաղաղութեամբ ընդ առաջ ելանել։¹⁰ Եւ մի՛ որպէս Յամանն Ամադովթեանց Մակեդովնացի ճշմարտութեանց օտար լեալ ՚ի զաւակէն Պարսից. և յոյժ ատեցեալ և մերժեալ ՚ի մերմէ քաղցրութենէ աստի*։¹¹ և օտարացեալ զոր ունիմք առ ամենայն ազգս մարդասիրութիւնս. այնչափ ևս՝ զի և կոչեցաւ մեր աթոռակից. որուն երկիր պագանեն ամենեքեան որք են ընդ մերով իշխանութեամբս. զոր յերկրորդ աթոռս իմուն մատուցեալ պատուեցաք*։¹² Եւ ո՛չ հանդարտեաց նա իւրուն ամբարտաւանութեանն՝ մենքենայել ջանացաւ յիշխանութենէ աստի զմեզ ՚ի բաց մերժել. և յոգւոց աստի մերոց*։¹³ և զմեր փրկիչն և զերախտաւոր՝ զՍուրդքէ. և չքնաղ և զանարատ, զհաւասար թագաւորութեանս իմոյ զԵսթեր տիկնանց տիկին, ամենայն ազգաւն իւրեանց հանդարձ՝ բազուն զուն ՚ի նանհիր վնաս ՚ի վերայ եղեալ առանց պատճառի, խնդրեաց զոսա ՚ի կորուստ*։¹⁴ զի նա այսու՛ օրինակաւ խորհեցաւ առնել զիշխանութիւնս Պարսից յանապատ աւերակ, և ՚ի Մակեդոնացիս անդրէն դարձուցանել*։¹⁵ Այլ մեք ՚ի բազմահնար սատակչէ յայնմանէ որք մատնեցան ՚ի կորուստ Յրեայքս, տեսանենք զի ո՛չ ինչ գործք չարութեան ՚ի սոսա գտանին. և արդար օրինաց վարիչք։¹⁶ Եւ են իսկ սոքա որդիք Բարձրելոյն մեծի՛ կենդանւոյն Աստուծոյ. որ ուղղէ զմեր և զազգիս մերոյ զթագաւորութիւնս յիւրմէ բարեւեր առատութեանն*։¹⁷ Եւ արդ բարւո՛ք արարէք զի ո՛չ ինչ ձեռնամուխ եղէք ըստ հրամանի գրոյ հրովարտակացն Յամանայ՝ որ առաքեցաւ առ ձեզ*։¹⁸ Վասն զի և նա՛ ինքն զայս յինքենէ զորժեաց, մե՛րձ ՚ի դրունս Սիսացւոց քաղաքիս ամենայն ընտանեօք իւրովք հանդերձ, ՚ի փայտ

* *Բագունք*. Աստի բառնան, այլ ՚ի չմարթնոցն... յլվացեալ ո՛չ գիտեն... տեսուչն յաւերժ Աստուած է։

* *Յօրինակին*. Ի հեղուլ զարին անբիծ։

* *Ոմանք*. Ջանարժան պատուի... առանց խորհրդոյ ամբարտաւանութիւն մատուցանել։

* *Ոմանք*. Անարժանութեամբքն զօրացեալ էին ժառանգութեամբք իւրեանց։

* *Ոմանք*. Ամադովդեանց Մակեդոն՝ ճշմար... ՚ի իւրմէ քաղցրութենէ։

* *Բագունք*. Երկիր պագանէին ամենեքեան որ էին ընդ։

* *Ոմանք*. Ի մերում ամբար՝. *ուր Ոսկան*. յիւրում ամբար՝։

* *Ի բագունս պակասի*. ՋԵսթեր տիկնանց տիկին։ *Ոմանք*. Առանց պատճառանաց խնդրեաց զոսա։

* *Այլք*. Խորհեցաւ առնել զիշխա՛։

* *Ոսկան*. Առատութենէն։

* *Ոմանք*. Գրոց հրովարտա՛։ *Ոսկան*. Որք առաքեցան առ։

ելեալ է. զարժանն վրիժուց հատուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ յամենակալէն Աստուծոյ, որ հատոյց նմա վաղվաղակի զդատաստանն*։¹⁹ Եւ զպատճէն հրովարտակիս այսորիկ յառաջ հանեալ՝ եղեալ և տարածեալ ամենայն զգուշութեամբ, եթէ Յրէից վարել զիւրեանց օրէնսն։²⁰ Արդ՝ քաջալերեսցին նոքա. զի որպէս ՚ի ժամանակի նեղութեանն ստիպէին զնոսա չարչարել. հատուցեն զհատուցումն ՚ի թշնամիս իւրեանց, յերկոտասաներորդ և յերեքտասաներորդ ամսեանն Ադար՝²¹ ՚ի նմին աւուր. զի զայս իսկ ամենազօրն Աստուած փոխանակ սատակելոյ ընտրեալ ազգին՝ արար նոցա ուրախութիւն։²² Եւ դուք այժմ ՚ի կարգս ձեր և ՚ի տօնս տարեկանաց ձերոց, և յաւուր նշանաւորի ուրախութիւնս արասցիք*։²³ զի որպէս ցայժմ, և արդ զկնի այսորիկ փրկութիւն եղիցի մեզ՝ և վաստակաւորաց Պարսկաց։ Եւ որք ՚ի մեր վերայ զխորհուրդ մահու խորհէին՝ նոցա յիշատակ կորստեան*։²⁴ Ամենայն քաղաքք և ամենայն գաւառք որ ոչ առնիցեն ըստ բանից մերոց այսոցիկ՝ սրով և հրով և բարկութեամբ մաշեսցին. ոչ միայն ՚ի մարդկանէ անապատ լիցի, այլ և գազանք երկրի և թռչունք երկնից՝ մինչև յաւիտեան ՚ի բաց մերժեալք ընկեսցին*։

Գլուխ Ը

¹³ Եւ պատճէնք հրովարտակացն ցուցեալ կարդացեալ լիցի առաջի ամենայն աչաց՝ յինում թագաւորութեանս. և որ պատրաստեալ հանդերձեալ էին կորուսանել զՀրէայսոյ՝ յաւուր յայսմիկ կորուսանել զթշնամիս դոցա։ Ո՞ղջ լերուք*։¹⁴ Եւ հրեշտակքն ելին փութով կատարել որ ՚ի թագաւորէն կարգեալ էր. և գրեցաւ հրամանն և եղաւ ՚ի Սիսիս քաղաքի։ Եւ յաւուրսն յայնոսիկ յորժամ եղև այս*։¹⁵ և Մուրթբէ ել, և զգեցեալ էր զպատմութեանն զարքունի, և պսակ ուներ ոսկի, և թագ ՚ի բեհեզոյ և ՚ի ծիրանոյ. և տեսին որ ՚ի Սիսիս քաղաքին էին, և ուրախ եղեն յոյժ։¹⁶ Եւ Յրէիցն լոյս մեծ ծագեաց, և ուրախութիւն յոյժ¹⁷ յամենայն քաղաքի և ՚ի գաւառս, ուր և ընթեմնուին զհրամանս արքունի՝ խնդութիւն և ուրախութիւն լինէր նոցա. և բազումք ՚ի հեթանոսացն դառնային ՚ի Յրէութիւն անդր, և թլփատէին վասն ահին Յրէից։

Գլուխ Թ

¹ Զի յերկոտասաներորդ ամսոյն՝ և յերեքտասաներորդ աւուրն որ է Ադար. եկն եհաս հրովարտակն՝ որ գրեալ էր յարքունուստ։ ՚Ի նմին աւուր կորնչէին որ

* Այլք. Զարժանի զվրիժուց զհա՛:

* Ոմանք. Նշանաւորի ուրախութեանս:

* Բազումք. Այսորիկ ուրախութիւն եղիցի ձեզ, և վաստակաւորաց մերոց Պարսկաց... զխորհուրդ մահու խորհէին:

* Այլք. Ըստ բանից մերոց այսոցիկ:

* Բազումք. Պատրաստել հանդերձեալ զՀրէայսոյ յաւուրս յայսմիկ՝ կորուսանել զթշնամիս դոցա։ Եւ հրեշ՛:

* Ի բազումս պակասի. ՚Ի Սիսիս քաղաքի։ Եւ յաւուրսն յայնոսիկ յորժամ եղև այս. և Մուրթբէ:

միանգամ ընդդիմադարձք լինէին Յրէիցն*։² Եւ ո՛չ ոք էր որ ընդդէմ դառնայր նոցա ամենևին. քանզի զահի՛ հարան ՚ի նոցանէն։³ Ձի իշխանքն որ ՚ի վերայ նախարարացն նոցա կացեալ էին, և կուսակալք՝ և արքունի դպրապետք՝ պատուէին զՅրէայսն, զի ա՛հն Սուրդքէի կա՛յր ՚ի վերայ նոցա. ⁴ քանզի հրաման տուեալ էր հրովարտակաւ թագաւորին՝ անուանել զնա ընդ ամենայն թագաւորութիւնն իւր։⁶ Եւ ՚ի Սիսիս քաղաքի կոտորեցին Յրէայքն արս իբրև հինգ հարիւր*։⁷ ՋՓարակն, և զՆեստէն, և զԴովվոն, և զՓազգա,⁸ և զՓարդաթա, և զԲարեա, և զՍարաբաքա, և զՍարմասիս,⁹ և զԱրուփեսն, և զԱրսէն, և զԱրբութեթան,¹⁰ զորդիսն Յամանայ որդւոյն Ամադովթայ, որդւոյ Բերգեայ թշնամւոյն Յրէից*։¹¹ Եւ յափշտակեցին ՚ի նմին աւուր՝ և մատուցին զթիւն արքայի զկորուսելոցն ՚ի Սիսիս քաղաքի։¹² Եւ ասէ արքայ ցեսօքր. Կորուսին Յրէայքն ՚ի Սիսիս քաղաքի արս հինգ հարիւր. և շուրջ զքաղաքաւն ո՞րչափ ևս առաւել յոյժ կարծես. արդ զի՞նչ ևս կամիս՝ զի արարից քեզ*։¹³ Եւ ասէ ցարքայ Եսթեր. Տացէ՛ հրաման արքայ Յրէիցն սո՛յնպէս առ վաղիւ, զի զորդիսն Յամանայ կախեսցեն*։¹⁴ Եւ ետ հրաման առնել ա՛յսպէս, և հան արտաքս առ Յրէայսն որ ՚ի քաղաքին էին՝ զմարմինս որդւոցն Յամանայ հանել ՚ի փա՛յտ։¹⁵ Եւ ժողովեցան Յրէայքն ՚ի Սիսիս, յաւուրն չորեքտասաներորդի Ադարայ, և կուտեցին արս երեք հարիւր. և ո՛չ ինչ յափշտակեցին*։¹⁶ Եւ որ այլքն էին ՚ի Յրէից անտի որ ընդ թագաւորութեամբ նորա էին ժողովեցան, և անձանց իւրեանց օգնէին։ Եւ հանգեան նոքա, և դադարեցին յայնցանէ որք պատերազմէին ընդ նոսա. զի կորուսին ՚ի նոցանէ իբրև հինգ հազար ոգի*։¹⁷ Եւ յերեքտասաներորդի ամսոյն Ադարայ. և ո՛չ ինչ յափշտակեցին։ Եւ հանգեան նոքա յերեքտասաներորդ աւուրն նորին ամսոյ. և կարգեցին զօրն զայն օր հանգստեան՝ խնդութեամբ և ուրախութեամբ։¹⁸ Եւ Յրէայքն որ էին ՚ի Սիսիս քաղաքի, ժողովեցան ՚ի չորեքտասաներորդ աւուր ամսոյն, և ո՛չ հանգեան. և կարգեցին զհնգետասաներորդ օրն ցնծութեան և ուրախութեան։¹⁹ Վասն այսորիկ Յրէայքն ընդ ամենայն երկիր, և ընդ գաւառս առնէին տօնս ուրախութեան. զօրն չորեքտասաներորդ Ադա՛ր ամսոյ, օր բարի՛ ուրախութեան. և առաքեն նուէ՛րս այր ընկերի՛ իւրոյ, և բնակիչքն որ բնակեալ էին ՚ի մայրաքաղաքսն. և զհնգետասաներորդ զօրն զԱդարայ առնէին նոյնպէս բարեաց և ուրախութեան*։²⁰ Եւ գրեաց Սուրդքէ զբանս զայս ՚ի գիրս մատենից, և առաքեաց Յրէիցն որ էին ընդ իշխանութեամբ Արտաշէսի արքայի, մերձաւորաց և հեռաւորաց,²¹ հաստատել կարգել զաւուրս զայսոսիկ առնել տօնս ուրախութեան՝ զչորեքտասաներորդ և զհնգետասաներորդ աւուրն Ադարայ*։²² Վասն զի յայսմ երեսուն աւուրս հանգեան Յրէայքն ՚ի թշնամեաց իւրեանց. և յամսեանն որ դարձաւ սուգ նոցա յուրախութիւն, ա՛յսինքն է Ադար.

* Այլք. Միանգամ դիմադարձք լինէին:

* Ոմանք. Հրէայքն արս՝ Ծ:

* Ոմանք. Որդւոյն Ամադովթայ, որդւոյն Բարգեայ:

* Ոմանք. Կամիցիս՝ զի արա՛:

* Յօրինակին. Եւ ասէ արքայ ցեսօքր. Տացէ՛ հրաման: *Ըստ որում ունի վրիպակաւ և այլ օրինակ մի: Ոմանք. Այնպէս առ վաղիւ:*

* Ոմանք. Եւ կուտեցան արս երեքհա՛. ուր ոմանք. և կոտորեցին արս երեքհար՛:

* Ոսկան. Եւ որք մնացեալքն էին ՚ի Հրէից ան՛:

* Ոմանք. Ադարայ ամսոյն... ընկերի իւրում:

* Այլք. Առնել տօն ուրա՛:

և ՚ի ցաւոցն որ դարձաւ յուրախութիւն, կատարել զաւուրսն զայն՝ աւուրս հարսանեաց*.²³ որպէս և գրեաց նոցա Մուրդքէ,²⁴ եթէ ո՞րպէս Համան Ամադովթեանց Մակեդոնացի պատերազմ տայր ընդ նոսա, և ո՞րպէս եհան նոցա թիւ համարոյ և վիճակ կորուսանել զնոսա.²⁵ և կամ ո՞րպէս եմուտ առ արքայն՝ և խնդրէր կախել զՄուրդքէ զփայտէն. և ո՞րչափ ծեռն ՚ի գործ արկեալ ածէր ՚ի վերայ Յրէիցն զչարիսն: Եւ եկին մթերեցան լցան չարիք նորա. և կախեցաւ նա՝ և որդիք նորա զփայտէ*:²⁶ Վասն այնորիկ կարգեցան աւուրքս այս պահոց. վասն զի և ժամանակն իւրեանց բարբառովն ասի Պա՛հք, վասն բանից հրովարտակիս այսորիկ. և որ ինչ միանգամ անց ընդ նոսա, և որ ինչ եղև՝ նոցա*,²⁷ հաստատեաց կացոյց: Եւ ընդունին զայս Յրէայքն յամծինս իւրեանց, ուսուցանէին և որդւոց իւրեանց. և այլ որ ինչ յաւելոյր ՚ի նոսա. և ո՛չ զամիսն այլափոխեն*.²⁸ և աւուրքս այս յիշատակ լինին յազգս ազգս, ՚ի քաղաքս և ՚ի գաւառս, և աւուրքն այն պահոց պատուեսցին. և յիշատակ նոցա մի՛ պակասեսցէ ազգէ մինչև յազգս*:²⁹ Եւ գրեաց Եսթեր դուստր Ամինադաբայ, և Մուրդքէ այր Յրեայ. և հաստատեցին զպահպանութիւն հրովարտակիս այսորիկ: ³¹ Եւ Մուրդքէ և Եսթեր՝ կացուցին իւրեանց առանծինն. և ուխտեցին իւրեանց ուխտ, և խորհուրդ կատարեցին: ³² Եւ Եսթեր երդմամբ հաստատեաց մինչև յաւիտեանս ժամանակաց. և գրեցաւ ՚ի յիշատակս:

Գլուխ Ժ

¹ Եւ գրեաց թագաւորն յիշխանութեան իւրում ընդ ծով և ընդ ցամաք.² զզօրութիւնն իւր, և զքաջալերութիւն իւր. և զմեծութիւն՝ և զփառս թագաւորութեան նորա. Ահաւասիկ գրեալ է ՚ի գիրս յիշատակաց Պարսի՛ց և Մարաց: ³ Եւ իբրև առնոյր Մուրդքէ թագաւորութիւնն յԱրտաշիսէ, և էր մեծ ՚ի թագաւորութեանն իւրում. և փառաւորեալ՝ և սիրեցեալ էր ՚ի Յրէից անտի. և պատմէր զիրսն եղեալսն ամենայն ազգատոհմին իւրում*:⁴ Եւ ասէ Մուրդքէ. ՅԱստուծոյ եղև այս.⁵ Վասն զի յիշեաց զտեսիլ երագոյն՝ զոր ետես վասն բանիցս այսոցիկ. զի ո՛չ զանց եղև ՚ի նոցանէ բան մի: ⁶ Փոքրիկ աղբերն որ եղև զե՛տ մեծ. և էր լոյս և արև՝ և ջուր յոյժ. Եսթեր է զետն, զոր ամուսնացաւ թագաւորն, և արար զնա տիկին*:⁷ Եւ երկու վիշապքն՝ ե՛ս եմ և Համան.⁸ և ազգք որք ժողովեալ էին կորուսանել զանուն Յրէիցն՝ ⁹ որ է Իսրայէլ: Եւ կարդացին առ Աստուած և կեցին. և ապրեցոյց Տէր զժողովուրդ իւր, և փրկեաց զմեզ Տէր յամենայն չարեաց մերոց. և արար Աստուած զնշանս և զարուեստս իւր մեծամեծս, որ ո՛չ եղեն երբէք ՚ի հեթանոսս: ¹⁰ Վասն այսորիկ արար վիճակս երկուս, զմին ժողովրդեան Աստուծոյ, և զմին ամենայն հեթանոսաց: ¹¹ Եւ եկին այս երկու վիճակքս ՚ի ժամս և ՚ի ժամանակս. և յաւուրն դատաստանի առաջի Աստուծոյ յամենայն հեթանոսս: ¹² Եւ յիշեաց Աստուած զժողովուրդ իւր, և

* Ոսկան կրկնէ. Յուրախութիւն, այս ինքն է Ադար, կատա՛:

* Ոմանք. Ձեռնգործ արկեալ... լցան չարիք նոցա:

* Ոմանք. Վասն զի ժամանակն իւ՛ր... վասն բանիս հրովարտակիս:

* Այլք. Եւ այլ ինչ որ յաւելոյր ՚ի նոսա, և զամիսն ո՛չ այլափոխեն:

* Ոմանք. ՚ի յիշատակ լինին:

* Ոմանք. Ամենայն ազգին իւրում:

* Ոմանք. Փոքրիկ աղբերն:

արդարացոյց զժառանգութիւն իւր: ¹³ Եւ եղիցին նոցա աւուրքս այս յամսեանն Ադարայ՝ ՚ի չորեքտասան աւուր, և ՚ի հնգետասաներորդի նմին ամսոյ, ժողովուրդքն հանդերձ ցնծութեամբ և ուրախութեամբ առաջի Աստուծոյ, ըստ ազգս յաւիտենից ՚ի ժողովրդեանն Իսրայելի*:

Գլուխ ԺԱ

¹ Յամին չորրորդի թագաւորութեանն Փտղոմեայ և Կղեոպատրայ, եմոյծ Դովսիթեսու քահանայ՝ և Ղևտացի, և Պտղոմեոս որդի նորա, զազնուական գրեալ հրովարտակն, զՓրուրեանն. որ անուանի Լիւսիմաքոս Պտղոմեայ, այն որ յԵրուսաղէմ*:

Կատարեցաւ Եսթեր

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՅՍ ՅՈՒԴԱՅ

Ձգործ քաջութեանն Յուդիթայ որ սպանն զՅոդեփեռնէս՝ զայն որ պաշարեալ էր զԲետիղուա՝ որ է Սամարիա, առ Նաբուքոդոնոսորաւ եղեալ՝ ասէ պատմութիւնս. և ցուցանէ զպաշարելն Յոդեփեռնեայ զՇամրին յետ դարձի գերւոյն ՚ի Բաբելոնէ: Գիտասցեն խնդրօք զի չէ՛ Նաբուքոդոնոսորս այս՝ նա՛ որ գերեաց գերուսաղէմ. զի ասէ Եւսեբի՝ ՚ի Քրոնիկոնին, իբրև ՚ի տուչութենէ զայս ինչ. ՁԿամբիւսէ որ յետ Կիրոսի Պարսից՝ առ ՚ի Յերայեցւոց երկրորդ Նաբուգոդոնոսոր կոչել, առ որով Յրէիցն պատմութիւն լինել ասէ. որ ստուգապէս կարծելի է զոլ այս: Իսկ եթէ զժամանակն Կամբիւսէ Նաբուքոդոնոսորայ յոլով ասէ. և զտաճարն իբր շինեալ, մի՛ զարմասցիս. զի իրքս նախ է քան զգալն Ջորաբաբիլի. յաւուրս Յովակիմայ մեծ քահանայի, որդւոյ Յեսուայ Յովսեփեկեանց, և յառաջ է քան զիրսն Եսթերայ:

ՅՈՒԴԻԹ Է ԳԻՐՔՍ*

1

Գլուխ Ա

¹ Յամին երկուտասաներորդի թագաւորութեանն Նաբուքոդոնոսորայ որ թագաւորեաց Ասորեստանեայցն՝ ՚ի Նինուէի մեծի քաղաքի. յաւուրս

* Ոսկան. ՚ի չորեքտասան աւուրս, և զհնգետասաներորդի նմին ամսոյ:

* Ոմանք. Լուսիմարքոս: Ոսկան. Պտղոմեայ զորդի այն որ յԵրուսաղէմ:

* Ոմանք ունին վերնագիր գրոցս՝ Յուդիթ է գիրքս այս. և օրինակ մի լոկ՝ Յուդիթ:

Արփաքսադայ որ թագաւորեացն Մարաց՝ յեկբատանացւոց երկրին*։ ²Հինեացն անդ քաղաք, և անձ շուրջ զեկբատանացւոյն պարիսպս կոփածոյ քարանց, ՚ի լայնութիւն կանգնոց երից, և յերկայնութիւն ՚ի վեց կանգնոյ. և արար բարձրութիւն պարսպին եւթանասուն կանգուն*։ ³Եւ զաշտարակս նորա հաստատեաց հիմամբք յայսկոյս և յայնկոյս դրանցն, կանգունս հարիւր յերկայնութիւն, և զլայնութիւն նորա ՚ի հիմանէն հաստատեաց վաթսուն կանգուն։ ⁴Եւ արար զդրունս նորա անդրէն. և բարձրութիւն նորա կանգունք եւթանասուն, և լայնութիւն նորա ՚ի քառասուն կանգնոյ. յելս զօրութեանց զօրավարաց զօրաց նորա, և ՚ի կարգս հրամանի հետևակաց նորա*։ ⁵Եւ արար պատերազմ յաւուրսն յայնոսիկ Նաբուքոդոնոսոր արքայ ընդ արքային Արփաքսադայ ՚ի դաշտին մեծի, որ է ՚ի սահմանս Հռագաւայ*։ ⁶Եւ ժողովեցան գումարեցան առ նա բնակիչք լեռնակողմանն, և ամենայն որ բնակեալ էին զգետովն Եփրատայ, և զԴկղաթաւ, և զՀիւդասպ գետով, և զդաշտն Արիովքայ արքային Եղիմացւոց. և ժողովեցան ազգք բազումք յոյժ պատերազմ տալ ընդ որդիսն Քիդովթայ*։ ⁷Եւ առաքեաց Նաբուքոդոնոսոր արքայ Ասորւոց առ բնակիչս Պարսից, և առ բնակիչսն արևմտեայց, զբնակիչսն Կիւլիկեցւոց և զԴամասկոսի և զԼիբանանու, և զամենայն բնակիչսն որ բնակեալ էին դէմ յանդիման ծովեզերեայցն*։ ⁸Եւ որք յազգէն Կարմեղացւոց են, և զԳաղաադ, և զվերին Գալիլեա, և զմեծ դաշտն Յեզրայէլ. ⁹և զամենայն Շամրին, և որ ՚ի քաղաքս նորա էին. և յայնկոյս Յորդանան գետոյ մինչև յերուսաղէմ. և ՚ի Բետանն, և ՚ի Քեղուս, և ՚ի Կադէս. և ՚ի գետոյն Եգիպտացւոց, և ՚ի Տափնաս, և զՌամեսսէն. ¹⁰և զամենայն երկիրն Գերսեն, մինչև ՚ի գալ ՚ի Մենփա. և ՚ի Տանեա, և զամենայն բնակիչս Եգիպտացւոց, մինչև ՚ի սահմանս Եթովպացւոց*։ ¹¹Եւ ստահակեալ ապախտ արարին զբանսն Նաբուքոդոնոսորայ արքային Ասորեստանեայց, ամենայն բնակիչք երկրին. և ոչ հաւանեցան ընդ նմա՝ երթալ ՚ի պատերազմ. քանզի ոչ երկեան ՚ի նմանէ. և էին առաջի նոցա հրեշտակք վատթարեալք և անարգեալք յոյժ*։ ¹²Եւ բարկացաւ Նաբուքոդոնոսոր ՚ի վերայ երկրին յոյժ. և երդուաւ յիւր թագաւորութիւնն և յաթոռն իւր եթէ՝ Խնդրեցից ես, ասէ, վրէժ ՚ի լեռանց անտի, Կիւլիկեցւոց, և Դամասկացւոց, և Ասորւոց, սպառնէլ զամենեսին սրով ինով, զբնակիչսն Սովաբու, և զորդիսն Ամոնայ. և զամենայն զՀրէաստան, և զամենայն Եգիպտացիս, մինչև ՚ի սահմանս երկուց ծովուցն։ ¹³Եւ պատրաստեցաւ և ճակատեցաւ ամենայն զօրութեամբ իւրով ՚ի վերայ Արփաքսադայ արքայի, յամի եւթն և տասներեորդի. և զօրացաւ ՚ի պատերազմին իւրում, և դարձոյց առ իւր զամենայն զօրութիւնս Արփաքսադայ, և զամենայն երիվարս նոցա, և զամենայն զէնս և զկառս նոցա*։ ¹⁴Եւ տիրեաց ՚ի վերայ քաղաքաց նորա։ Եւ չոգաւ մինչև յեկբատանս, և կալաւ զաշտարակս նորա. և

* *Ոմանք*. ՚ի Նինուէի մեծ քաղաքի. և *ոմանք*. ՚ի Նինուէ ՚ի քաղաքի մեծի։

* *Յօրհիմակին*. Շուրջ զԲեկտանացւոյն պարիսպս։ *Ոմանք յաւելուն*. Եւթանասուն կանգուն, և *զլայնութիւնն յիսուն կանգուն*։

* *Այլք*. Չորունս նորա անդէն։

* *Ոմանք*. Որ ՚ի սահմանս Հռագաւայ։

* *Ոմանք*. Եւ զՀիւդիպասպ գե՛... ընդ որդիսն Թեղովթայ։

* *Ոմանք*. Դէմ յանդիման ծովեզերայսն։

* *Ոմանք*. ՚ի գալ Մենփայ։

* *Այլք*. Հրեշտակքն վատթ՛։

* *Ոմանք*. Յամի հնգետասներորդի... և զկառս նորա։

քանդէր և աւար հարկանէր զհրապարակս նորա. և զգարդ նորա դներ ՚ի նախատինս նորուն: ¹⁵Եւ ա՛ռ նա զԱրփաքսադ ՚ի սահմանս Զռագուայ. և սպա՛ն սատակեաց զնա սրով իւրով*։ ¹⁶Եւ դարձո՛յց անդրէն զգօրս իւր որ եկեալ էին ընդ նմա յայլազգեաց անտի բազմութիւն յոյժ: Եւ է՛ր անդ յանհոգութեան և յուրախութեան, ի՛նքն և ամենայն զօրք իւր զաւուրս հարիւր քսան:

2

Գլուխ Բ

¹Յամին ութ և տասներորդի, յաւուրն երկոտասաներորդի՝ ամսոյն առաջնոյ՝ հանդէս առնէր զօրաց իւրոց, և խորհէ՛ր ընդ նոսա զի խնդրեսցէ զվրժ յամենայն երկրէ, ²և կոչեաց նա զամենայն մեծամեծս իւր, և զկուսակալս իւր. ³և ասէ ցնոսա զխորհուրդս կամաց իւրոց. և կատարեաց զամենայն չարիս երկրին ՚ի բերանոյ իւրմէ յականջս զօրացն: ⁴Եւ նոցա պատասխանի՛ տուեալ ասեն. Սատակեսցի՛ ամենայն մարդ դիմակացք թագաւորի, և որ ո՛չ հնազանդեսցի բանի հրամանաց նորա*։ ⁵Եւ եղև իբրև կատարեաց զխորհուրդս զայս, կոչեաց Նաբուքոդոնոսոր արքայ Ասորեստանեայց զՅողեփեռնէս զսպարապետ ամենայն զօրաց իւրոց՝ և ասէ ցնա. Այսպէս ասէ արքայ մեծ՝ տէ՛ր ՚ի վերայ ամենայն երկրիս. ահաւասիկ դու ելանիցես առաջի երեսաց իմոց, և ընտրեսցես առցես դու ընդ քեզ որք յուսացեալ են ՚ի զօրութիւնս իւրեանց, հետևակս հազարս հարիւր քսան. և բազմութիւն յոյժ հեծելոց բերս երկոտասան. և ելցես դու ընդ կողմն արևմտից. քանզի ապախտ արարին զբանիւք հրամանաց իմոց: Եւ պատուիրեսցես նոցա, զի պատրաստեսցեն զերկիրն և զջուրսն. զի ելանեն՛ ես բարկութեամբ իմով ՚ի վերայ նոցա, և ծածկեն՛ զերեսս ամենայն երկրի, և առնեն՛ կոխա՛ն ոտից զօրութեամբ իմով, և մատնեցից զնոսա ՚ի յափշտակութիւն ամենայն զօրաց իմոց. և վիրաւորք նոցա լցցեն զծորս և զծործորս իւրեանց, և գե՛տք խաղասցեն յարենէ՛ նոցա. և ածից՛ ես զգերութիւն ՚ի վերայ նոցա ՚ի ծագաց երկրէ: Եւ դու ելանիցես պատիցես՛ պաշարիցես ինձ զսահմանս նոցա. և ապա մատնիցես քեզ զանձինս իւրեանց. և պահիցես ինձ զնոսա յաւուր նեղութեան և կշտամբանաց՝ նոցա*։ ⁶Եւ ո՛չ անխայեսցէ ակն իմ ՚ի վերայ այնոցիկ որ ապախտ արարին զիս՝ տալ՛ զնոսա ՚ի մահ և յափշտակութիւն յամենայն երկրի քում. զի կենդանի՛ եմ ես զօրութեամբ թագաւորութեամբ իմով. խօսեցայ՝ և առնեն՛ զամենայն զկամս իմ. և դու մի՛ զանց առնիցես, և մի՛ զմիով բանիւ զոր ետու քեզ հրաման. այլ կատարելով կատարեսցես՛ զամենայն որպէս և ասացի քեզ. և ո՛չ յերկարեսցես առնել զայոյ: ⁷Եւ ել՛ Յողեփեռն յերեսաց տեառն իւրոյ. և կոչեաց՝ առ ինքն զամենայն իշխանս և զզօրագլուխս Ասորոց, և ընտրէ՛ր ՚ի նոցանէ և թուէ՛ր արս ՚ի պատերազմ. որպէս և հրաման ետ նմա տէրն իւր՝ բերս երկոտասան. և զհեծելազօրս

* Ոմանք. ՚ի սահմանս Զռագուայ:

* Ոմանք. դիմադարձք թագաւորի. և որ ո՛չ հնազանդեսցան բանի:

* Ոմանք. ԶՅողեփեռնէս զսպարապետ: *՚ի զիրս յայս՝ որպէս և ՚ի նախակարգեալն Եսթերայ՝ գրեթէ ըստ ամենայն գրչագրաց մերոց այլ և այլ եղանակաւ գրին յատուկ անուանք ինչ. որպէս՝ Զողեփեռնէսն. և Յողեփեռնէս. և Յողափեռնէս, Զողփեռն, և Զողեփեռնէ: Նոյնպէս և Բետիղուայն, Բետիուղա. Բետուղա. և Բետիուղուա. զորս ըստ իւրաքանչիւր տեղեացն համեմատեցաք օրինակի մերուն:*

աղեղնաւորս՝ բերս երկոտասան* .⁸ Եւ կարգէր կազմէր զնոսա ճակատեալս ՚ի պատերազմ: Եւ ա՛ռ նա ո՛ւղտս և գրաստս բազումս յոյժ, բառնա՛լ զկահ և զկարասի, և խաշն՝ և արջառս, և երամակս այծից ՚ի դարմանս իւրեանց, որոց ո՛չ գոյր թիւ.⁹ Եւ տայր ամենայնի նոցա թռչա՛կ ՚ի ճանապարհ, ¹⁰ ոսկի և արծաթ ՚ի տանէ՛ թագաւորին բազում յոյժ: ¹¹ Ե՛լ ինքն և ամենայն զօրքն ընդ նմա ՚ի պատերազմ, զի պատրաստեսցէ թագաւորին՝ ելանել ծածկել զերեսս ամենայն երկրին արևմտեայց՝ զինու կառօք և երիվարօք, և ընտիր ընտիր հետևակօք, և որ այլևս խառնեալ էին ՚ի նոսա իբրև զբազմութիւն մարախոյ, և իբրև զաւազ երկրի. զի ո՛չ գոյր թիւ բազմութեան նոցա* : ¹² Եւ գնացին նոքա ՚ի Նինուէ քաղաքէ՛ զնա՛ց երից աւուրց ՚ի դաշտն Բեկեղիթայ, և բանակեցան նոքա մերձ առ լերինն ՚ի ձախակողմն վերին Կիլիկիայ. և ա՛ռ զամենայն զօրս իւր՝ զհեծեալս և զհետևակս, և զէնս և զկառս, և զնա՛ց նա անտի ՚ի լեռնակողմն. ¹³ Եւ եհար նա զՓուղ, և զԴ՛ուղ. քանդէր և աւար հարկանէր զամենայն որդիսն Զռամասեայ և զԻսմայելի, որ բնակեալ էին ընդ երեսս անապատին, ընդ հարաւակողմն Քեղ՛ովնեայ: ¹⁴ Եւ անց ընդ Եփրատ գետ, և շրջեցաւ նա ընդ Միջագետս, և եհար վանեաց զամենայն քաղաքս բարձունս որ ՚ի վերայ ձորոյն Նաբովրայ էին, մինչև ՚ի սահմանս ծովուն* . ¹⁵ Եւ հասանէր ունէր զսահմանս Կիլիկեցոց, և հարկանէր սատակէր զամենայն դիմադարձս իւր: Եւ եկն մինչև ՚ի սահմանս Յափեթայ ՚ի հարաւակողմն, որ է՛ դէմ յանդիման Արաբիայ. ¹⁶ Եւ արգելեալ փակեաց զամենայն որդիսն Մադիամու, և հրձի՛գ արար զամենայն յարկս և զխորանս նորա, և աւերէր քանդէր զամենայն գոմս խաշանց նոցա: ¹⁷ Եւ է՛ջ նա ՚ի դաշտն Դամասկոսի յաւուրս հնձոց ցորենոյ, և հրձի՛գ արար զամենայն զանդս և զագարակս նոցա, և զհօտս և զանդեայս նոցա արար յապականութիւն. և զքաղաքս նոցա աւար հարկանէր, և զմանկունս նոցա ջարդէր. և հարկանէր սատակէր զերիտասարդս նոցա ՚ի բերան սրոյ: ¹⁸ Եւ անկաւ ա՛հ և երկնղ ՚ի վերայ բնակչաց ծովեզերեայց՝ Տիրոսի և Սիդոնի, և ՚ի վերայ բնակչացն Սիւրիայ, և Իւկիմեայ. զամենայն բնակիչսն յեմնանու: Եւ որք բնակեալ էին յԱզովտոս, և յԱսկաղ՛ոն՝ երկեան յոյժ ՚ի նմանէ* :

3

Գլուխ Գ

¹ Եւ առաքեցին առ նա՛ խօսել ընդ նմա բանիւք խաղաղութեան, և ասեն. ² Ահաւասիկ մեք ծառայք Նաբուքոդոնոսորայ ենք, և կացեալ ենք առաջի քո, արա՛ ընդ մեզ՝ որպէս և հաճոյ թուի քեզ* : ³ Զի ահա տունք մեր, և ամենայն դաշտք ցորենոյ, և հօտք և անդեայք՝ և ամենայն գոմք խաշանց մերոց՝ առաջի աչաց քոց, արա՛ որպէս և բարի՛ թուի քեզ. զի ահա և քաղաքք մեր՝ և բնակիչք նոցա ծառայք քո ենք, ե՛կ մո՛ւտ ՚ի սոսա, որպէս և բարի թուի՛ քեզ* : ⁶ Եւ եկին

* *Ի լուս՝* Աղեղնաւորս երկոտասան հազար: *Ուր ոմանք ունին ՚ի բնաբանի.* բիւրս երկուս հազարս:

* *Ոմանք.* Ելանել ծածկել զամենայն երկիրն: *Եւ ոմանք.* Չամենայն երեսս երկրին:

* *Այլք.* Ի վերայ ձորոյն Նաբովնա:

* *Ոմանք.* Բնակչաց Սիւրայ... յԱզովտոս և յԱսկաղոնի:

* *Ի լուս՝* Որպէս և հաճոյ թուի առաջի քո:

* *Ոմանք.* Առաջի աչաց քոց են... որպէս և բարւոք թուի քեզ: *Ուր Ոսկան յաւելու համար*

արք հրեշտակք առ Յողափեռնէս, և պատմեցին նմա ըստ բանիցս ըստ այսոցիկ. ⁷և էջ ՚ի ծովեզրն ի՛նքն և զօրք իւր, և պահապանս կացուցանէր ՚ի քաղաքս բարձունս: Եւ ա՛ն նա ՚ի քաղաքաց անտի ա՛րս ընտիրս պատերազմակիցս իւր: ⁹Եւ ելին ընդ առաջ նորա քաղաքքն այնոքիկ ¹⁰երգովք և պակօք և ծնծղայիւք և թմբկօք: ¹¹Եւ փորեաց նա զսահմանս նոցա. և ՚ի բա՛ց ընկէց զամենայն զանտառ նոցա*: ¹²Եւ էր հրամա՛ն տուեալ նմա սատակե՛լ զաստուածս երկրին. ¹³զի միայն Նաբուքոդոնոսորա՛յ պաշտօն տարցին ամենայն ազգք և ազինք. կարդասցեն զնա Աստուած: ¹⁴Եւ եկն նա դէմ յանդիման Եզրայելոմեայ, որ մե՛րձ էր առ բնակիչսն, որ է դէմ յանդիման սարոյն մեծի՝ Յրէաստանի*: ¹⁵Եւ բանակեցաւ նա ՚ի մէջ Գայեայ և Բիշանու. և եղև անդ՝ ամիս մի ժողովե՛լ ռոճիկս և դարմանս զօրաց իւրոց*:

4

Գլուխ Դ

¹Իբրև զա՛յն լուան որդիքն Իսրայէլի և բնակիչքն Յրէաստանի, զոր արար Յողոփեռնէս ընդ ազգս և ընդ հեթանոսս, և զօրագլուխք արքային Ասորեստանեայց. և ո՞րպէս քանդեաց զամենայն մեհեանս նոցա, և արա՛ր զնոսս յապականութիւն. ²և երկեան նոքա յոյժ յերեսաց նորա. և վասն Երուսաղէմի՝ և տանն Աստուծոյ իւրեանց խռովեցան. զի ընդ ա՛յն ժամանակս էին դարձեալ ՚ի գերութենէ անտի իւրեանց. և իբրև նո՛րք էին ժողովեալք ՚ի Յրէաստան. և զսեղանն Տեառն Աստուծոյ իւրեանց՝ և զսպասսն և զտունն ՚ի պղծութենէ անտի դե՛ռևս էին սրբեալ*։ ³Եւ առաքեցին նոքա յամենայն սահմանս Շամրնի, և ՚ի Կոնբեթորովն, և ՚ի Բեղ՛մային, և յԵրեքով, և ՚ի Քովքա, և ՚ի Սովմայն, և ՚ի հովիտսն Շաղիմայ*։ ⁴և հասին կալան զամենայն գլուխս լերանց բարձանց, և պարսպեցին զգետոս որ էին ՚ի նոսս. և կազմեցին և եղին անդ զդարմանս ՚ի գործ պատերազմի. զի ընդ ա՛յն ժամանակս էին հնձեալ զանդս նոցա: ⁵Եւ գրեաց Յովակիմ քահանայ մեծ՝ որ էր յաւուրսն յայնոսիկ յԵրուսաղէմ, բնակչաց Բատիղուայ, և Բետոմեսթեայ, որ է ընդդէմ Եզրոմեայ, ընդդէմ դաշտին՝ որ է մերձ առ Դովթայիմ. ⁶և ասէ. Ելէ՛ք կալէ՛ք զանցս լեռնային կողմանն: Զի ընդ ա՛յն էին մուտք ՚ի Յրէաստան. և էր դիւրին նոցա արգելուլ զնոսս, քանզի նե՛ղ էին անցք կրճից՝ զոր կարէին պահել ա՛րք երկու*։ ⁷Եւ արարին որդիքն Իսրայէլի՝ որպէս և հրամայեաց նոցա Յովակիմ քահանայ մեծ, և ծերակոյտք ժողովրդեանն Իսրայէլի որ նստէին յԵրուսաղէմ: ⁸Եւ կարդացին առ Տէր ամենայն այր Իսրայէլի՝ յամենայն սրտէ իւրեանց. և խոնարհեցուցին

4, 5, 6. *Եղիցին մերայինք ամենայնք ՚ի ներքոյ օրինի քո: Մեք ևս և որդիք մեր ծառայք քո ենք: Եկ առ մեզ խաղաղարար Տէր, և կառավարեա՛ զծառայութիւնս մեր, որպէս հաճոյասցի քեզ: Եւ եկին:

* Ոմանք. Ձամենայն զանտառս նոցա:

* Ոմանք. Եզրայելովեայ:

* Ոմանք. Ի մէջ Գայեայ և Բաշանու: Ուր Ոսկան. Բասանու:

* Ոմանք. Եւ տանն Տեառն Աստուծոյ իւրեանց... նորք էին ժողովեալ Յրէաստան: Այլք.

Դեռ ևս էր սրբեալ: Ուր Ոսկան. և սեղանն... և սպասքն և տունն ՚ի պղ՛:

* Ոմանք. Կոնբեթորովն... և յԵրիքով:

* Ոմանք. Զի էին նեղք անցք:

զանձինս իւրեանց՝ ինքեանք և կանայք իւրեանց*.⁹ և ամենայն պանդուխտք և վարձկանք՝ հանդերձ անասնօք իւրեանց պաշարեցան, և արծաթագին ծառայք նոցա արկին քուրձ զմիջովք իւրեանց*:¹⁰ Եւ ամենայն այր Իսրայէլի կանամբք և մանկամբք իւրեանց որ բնակեալ էին յերուսաղէմ, ՚ի գունճս իջեալ առաջի տաճարին Տեառն աղաչէին, և արկին մոխիր զգլխովք իւրեանց, և թօթափէին զքուրձն առաջի Տեառն, և զսրբութեան սեղանօքն քուրձ արկանէին. և կարդացին նոքա առ Աստուած Իսրայէլի ՚ի միասին յամենայն սրտէ, զի մի՛ մատնեսցէ ՚ի յափշտակութիւն զտղայս նոցա յաւար, և զկանայս նոցա յաւար, և զքաղաքս ժառանգութեան նոցա յապականութիւն, և զսրբութիւնն ՚ի պղծութիւն և ՚ի նախատինս՝ և յայլն հեթանոսաց: Եւ լուաւ Տէր ձայնի՛ նոցա, և ետես զնեղութիւնս նոցա. և էր ժողովուրդն ՚ի պահս բազումս ընդ ամենայն Զրէաստան և յերուսաղէմ առաջի սրբութեանցն Տեառն ամենակալի*:¹⁶ Եւ Յովակիմ քահանայ մեծ՝ և ամենեքեան որ կային առաջի Տեառն՝ քահանայք և պաշտօնեայքն Տեառն քուրձ զգեցեալ էին, և մատուցանէին զողջակէզս հանապազորդս և զաղօթս, և զկամաւ յօժարութեանն, և զպատարագս ժողովրդեանն*:¹⁷ Եւ էր մոխիրն ՚ի վերայ վարշամակաց նոցա որ կայր ՚ի վերայ գլխոց նոցա. և գոչէին առ Տէր յամենայն սրտէ իւրեանց, յայցելութիւն և ՚ի բարիս առնել տանն Իսրայէլի:

5

Գլուխ Ե

¹Եւ պատմեցին Զողովեռնեայ զօրագլխի զօրացն Ասուր, եթէ որդիքն Իսրայէլի պատրաստեցան ՚ի պատերազմ, և զանցս լեռնային կողմանցն փակեցին, և պարսպեցին զամենայն գլուխս լերանց բարձանց, և թաքուցին ՚ի դաշտս որոգայթս*:² Եւ բարկացաւ յոյժ Զողովեռնէս բարկութեամբ մեծաւ. և կոչեաց նա զամենայն իշխանսն Մովաբայ, և զզօրագլուխսն Ամովնայ, և զամենայն նախարարս ծովեզերեայս.³ և ասէ ցնոսա. Պատմեցէ՛ք դուք ինձ որդիք Քանանու, ո՞վ են ժողովուրդս այս որ նստին ՚ի լեռնակողմանս. և զի՞նչ քաղաքք են յորում բնակեալ են սոքա՝ և կամ բազմութիւն զօրա՞ց նոցա. և ի՞նչ է ոյժ նոցա և կամ զօրութիւն. կամ ո՞վ է թագաւոր նոցա և առաջնորդ զօրաց նոցա*:⁴ Եւ ընդէ՞ր թիրեցին զմիտս իւրեանց, զի մի՛ եկեսցեն ընդ առաջ՝ իմ. այլ հպարտացան քան զամենայն բնակիչս արևմտեայցս:⁵ Եւ ասէ ցնա Աքիովր առաջնորդ ամենայն որդւոցն Ամոնայ. Լուիցէ տէր բանից ծառայի քոյ, և պատմեցիք քեզ զճշմարիտն՝ վասն ժողովրդեանդ որ բնակեալ են ՚ի լեռնակողմանդ յայդմ որ մերձ առ քեզս է. և ո՛չ ինչ ելանէ ստութիւն ՚ի բերանոյ ծառայի քոյ*:⁶ Ժողովուրդս այս են յազգէ՛ Քաղդեացւոց.⁷ և պանդխտեցան

* Ոմանք. Եւ կարդային առ Տէր:

* Ոմանք. Եւ վարձկանք իւրեանց:

* Ոմանք. Ի գունճս իջեալ առաջի Տեառն... և թօթափեցին զքուրձն: Ոսկան. Ջտղայս նոցա և զկանայս նոցա յաւար:

* Ոմանք. Եւ ամենեքեան որ կացին առաջի:

* Ոմանք. Ի դաշտ որո՞: Ոսկան. ՚ի դաշտի:

* Ոմանք. Բնակեալ են նոքա... և կամ ո՞վ է թա՞:

* Ոսկան. Ի կողմանդ յայդմ:

զառաջինն՝ ի Միջագետս. զի ո՛չ կամեցան պաշտել զդիս հարց իւրեանց յերկրին Քաղդեացւոց. ⁸և ելին նոքա ՚ի հայրենի երկրէն իւրեանց. և երկիր պագին Աստուծոյ երկնաւորի զոր ճշմարտեալ ծանեան: Եւ եկեալ գնացին նոքա ՚ի Միջագետս՝ և պանդխտեցան անդ աւուրս բազումս. և ասէ ցնոսա Աստուածն նոցա՝ ելանել՝ նոցա ՚ի պանդխտութենէն և գալ յերկիրս Քանանու. և բնակեցին անդ, և մեծացան ոսկւով և արծաթով՝ և անասնով բազմով: ⁹Եւ իջին նոքա յԵգիպտոս, քանզի եղև սով յերկրին Քանանացւոց, և պանդխտեցան անդ մինչև սնան, և եղեն անդ բազում յոյժ. և ո՛չ էր թիւ ազգի նոցա: ¹⁰Եւ յարեալ ՚ի վերայ նոցա արքայն Եգիպտացւոց չարչարել գնոսա ցաւովք, և աղիւսովք, և արկին գնոսա ՚ի ծառայութիւն: ¹¹Եւ կարդացին նոքա առ Աստուած իւրեանց, և եհար նա զերկիրն Եգիպտացւոց հարուածովք անբժշկութեան. և հալածեցին հանին գնոսա Եգիպտացիքն յերեսաց իւրեանց. ¹²Եւ ցամաքեցոյց Աստուած զծովն Կարմիր առաջի նոցա, ¹³և ած գնոսա ՚ի ճանապարհն Սինայ, և ՚ի Կադէսբառնեայ. և հանին զամենայն բնակիչս անապատին*. ¹⁴և բնակեցուցին յերկրին Ամովրիացւոց. և զամենայն զԵսեբովնացիս սատակեցին զօրութեամբ իւրեանց: Եւ անցին նոքա ընդ Յորդանան, և ժառանգեցին զամենայն երկիրն*. ²⁰և մերժեցին հանին յերեսաց իւրեանց զՔանանացին, և զՓերեզացին, և զՅեբուսացին, և զՍիւքեմ, և զամենայն Գերզեսացիս, և բնակեցին յերկրին աւուրս բազումս: ²¹Եւ մինչ ո՛չ մեղանչէին առաջի Աստուծոյն իւրեանց՝ էր ընդ նոսա ամենայն բարութիւն. զի Աստուած որ ատեայ զանիրաւութիւն՝ էր ընդ նոսա: ²²Եւ յորժամ ՚ի բա՛ց մերժեցին յիւրեանց զճանապարհս ուխտին Աստուծոյ, սատակեցան ՚ի պատերազմունս բազումս յոյժ. և զերեցան յերկիր օտար որ ո՛չ իւրեանց էր. և տաճարն Աստուծոյ իւրեանց եղև ՚ի կործանումն. և քաղաքք նոցա մատնեցան ՚ի ձեռս թշնամեաց նոցա*: ²³Եւ այժմ դարձան առ Տէր Աստուած իւրեանց՝ և ժողովեցան ՚ի գերութենէ իւրեանց ուր էին ցրուեալք, և կալան զքաղաքն զԵրուսաղէմ ուր էր սրբութիւնն. և բնակեցին ՚ի լեռնակողմանն, զի էր աւերակ: ²⁴Եւ արդ այժմ տէր, եթէ անգիտութիւն ինչ լինի ՚ի ժողովրդեան նոցա, և մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց, ակնկալեալ սպասեսցուք այսմիկ, զի այս է նոցա գայթակցութիւն. և ապա գումարեսցուք ՚ի վերայ նոցա, և տացուք ՚ի վերայ նոցա պատերազմ: ²⁵Ապա թէ չիցէ՛ ինչ նոցա անիրաւութիւն առ Աստուածն իւրեանց՝ զա՛նց արասցուք առ նոքօք տէր. գուցէ պաշտպանիցէ նոցա Տէր Աստուածն իւրեանց, և լինիցինք մեք յամօթ նախատանաց ամենայն երկրի: ²⁶Եւ եղև իբրև դադարեաց Աքիովր ՚ի Խօսելոյ զբանս զայս, տրտնջեաց ամենայն բանակն որ շուրջ զԽորանաւն*: ²⁷Եւ ասեն իշխանքն ցՅողովեռն, և որ բնակիչքն էին ծովեզերեայց և Մովաբացւոց, զի պատուհասեսցէ զԱքիովր. Ձի ո՛չինչ երկնչիմք մեք յորդոնցն Իսրայէլի. ժողովուրդ որ ո՛չ ունի կար ինչ զօրութեան պատերազմի*: ²⁸Արդ՝ ելցուք մեք, և լիցին նոքա կերակուր ամենայն զօրաց քոց տէր Յողովեռն*:

* *Ոսկան.* Եւ անասնով բազմաւ:

* *Քաղաքք.* ՚ի ճանապարհ Սինայ ՚ի Կադէսբառնեայ:

* *Ոմանք.* Եւ ժառանգեցին նոքա զամենայն եր՛:

* *Ոմանք.* Որ ո՛չ էր իւրեանց:

* *Ոմանք.* Որ շուրջ էին զԽորա՛:

* *Ոմանք.* Ոչ ունին ինչ կարի զօրութիւն ՚ի պատերազմի:

* *Ոմանք.* Եւ լիցին նոքա... զօրաց մերոց:

Գլուխ Զ

¹Եւ յորժամ դադարեցին ՚ի խօսելոյ իւրեանց, որ շուրջ էին գխորանաւն իւրեանց. և ասէ Զողոփեռնէս զօրագլուխ զօրացն Ասուր՝ ցԱքիովր, առաջի ամենայն զօրացն այլացգեաց. Ո՞վ ե՛ս դու Աքիովր, որ դիմակա՛ց ես ժողովրդեանն այլազգեաց ամենեցուն՝ և առ որդիս Մովաբայ, և որ վարձկանքս են յեփրեմայ*։ ²Գի մարգարեացար մեզ որպէս և օրս այս, և ասես եթէ մի՛ տացուք պատերազմ ընդ որդիսն Իսրայէլի. զի Աստուածն նոցա պաշտպանէ նոցա. և ո՞վ է Աստուած բաց ՚ի Նաբուքոդոնոսորայ։ Նա՛ առաքէ զզօրութիւն իւր, և սատակէ զնոսա յերկրէ. և ո՛չ փրկէ զնոսա Աստուածն նոցա*։ ³Այլ մեք ծառայք նորա վանե՛նք զնոսա իբրև զայր մի. և ո՛չ կարասցեն կալ՝ ընդդէմ հեծելազօր երիվարաց մերոց, և ջնջեսցուք զնոսա նոքօք. և զլերինս նոցա արբուցանե՛նք յարենէ նոցա. և դաշտք նոցա լցցի՛ն դիակամբք նոցա. և ո՛չ ևս կարասցեն կալ առաջի մեր, այլ կորնչելով կորնչիցին*։ ⁴ասէ արքայ Նաբուքոդոնոսոր տէ՛ր ամենայն երկրի. քանզի ասաց՝ և ո՛չ ընդունայնացան բանք բերանոյ նորա։ ⁵Այլ դու Աքիովր վարձկան Ամոնայ՝ և խօսեցար զբանս զայս յանիրաւութեան քում. և ո՛չ ևս յաւելցես տեսանել զերեսս իմ յօրէս յայսմանէ մինչև խնդրեցից վրէժ յազգէն որ յեգիպտոսէն ելին. և ապա՛ անցցէ սուր զօրաց իմոց ընդ կողս քո*։ ⁶և կործանեսցիս ընդ վիրաւորս բազումս յորժամ դարձայց։ Այլ այժմ դարձուցեն զքեզ ծառայք իմ ՚ի լեռնակողմն՝ և պահեսցեն զքեզ յանցս քաղաքի միոյ որ յանցս ճանապարհացն է, և մի՛ կորնչիցիս մինչև սատակեսցիս նոքօք հանդերձ. և եթէ յուսաս սրտիւ քով եթէ ո՛չ մատնին՝ յայդ ինչ մի՛ վստահ լինիցիս. զի խօսեցայ՝ և ո՛չ անցանէ բան մի՛ ՚ի բանից իմոց*։ ⁷Եւ ե՛տ հրաման Զողոփեռնէս ծառայից իւրոց որ կային առաջի նորա, կապե՛լ զԱքիովր, և տանել զնա ՚ի Բետիուղա, և մատնել զնա ՚ի ձեռս որդւոցն Իսրայէլի*։ ⁸Եւ կալան զնա ծառայք նորա, և ածին զնա արտաքոյ բանակին ՚ի դաշտ անդր, և գնացին նոքա ՚ի դաշտէ անտի, և եկին ՚ի լեռնակողմն աղբերցն ՚ի ներքոյ Բետիուղայ, որ է Շամրին։ Եւ իբրև տեսին զնոսա արք քաղաքին ՚ի վերայ գլխոյ լերինն, առին նոքա զզէնս իւրեանց և յարձակեցան ՚ի վերայ նոցա ՚ի գլուխ լերինն. և ամենայն այր պարսաւոր կալան զելս նոցա և քարածի՛գ արարին ՚ի վերայ նոցա*։ ⁹Եւ մտին նոքա ընդ լեռնոտամբն, և կապեցին զԱքիովր, և ընկեցին զնա առ լեռնոտինն. և նոքա գնացին դարձան առ տէրն իւրեանց։ ¹⁰Եւ իջին որդիքն Իսրայէլի ՚ի քաղաքէ անտի և հասին ՚ի վերայ նորա՝ և լուծին զնա, և տարան ՚ի Բետուղա. և կացուցին զնա ընդ իշխանս քաղաքին իւրեանց ¹¹որք էին յաւուրսն յայնոսիկ՝ Ոզիա որդի Սիբեայ յազգէ Շմաւոնի, և Քարմի որդի Եղժիէլի*։ ¹²Եւ ժողովեցին զամենայն զծերս քաղաքին՝ և զամենայն երիտասարդս, և զամենայն կանայս

* *Ոմանք.* Եւ յորժամ դադարեցին ՚ի խոսվել իւրեանց. որ էին շուրջ գխորա՛ն։

* *Ոմանք.* Եւ սատակէ զնոսա յերեսաց երկրէ։

* *Ոմանք.* Եւ ո՛չ ևս կարիցեն կալ... այլ կորնչելով կորիցեն։

* *Այլք.* Որ խօսեցար զբանս... սուր զօրացս իմոց։

* *Ոմանք.* Քաղաքի միում... մի՛ վստահացիս. զի խօսեցայ և ո՛չ անցցէ բան մի։

* *Ոմանք.* Որք կացին առաջի նորա, ունել և կապել զԱ՛։

* *Ոսկան.* Եւ քարձիգ արարին։

* *Ոմանք.* Եւ Քարմի որդի Մեղքիէլի։

յեկեղեցին. և կոչեցին զԱքիովր 'ի մէջ ամենայն ժողովրդեանն. և հարցանէր զնա Ոգիա, եթէ՝ Վասն է՞ր եղև ընդ քեզ այդ անցք: Եւ նա տայր պատասխանի, և պատմէր զբանս խորհրդոյն Հողովեռնեայ. և զամենայն բանսն զոր խօսեցաւ ինքն 'ի մէջ իշխանացն որդւոցն Ասուր* .¹³ զոր ինչ միանգամ մեծաբանեալ խօսեցաւ Հողովեռնէս վասն տանն Իսրայէլի: ¹⁴Եւ 'ի գո՛ւնս իջեալ ամենայն ժողովուրդն երկրին երկի՛ր պագանէին Աստուծոյ, աղաղակէին և ասէին. ¹⁵Տէր Աստուած երկնից՝ տե՛ս զամբարտաւանութիւն նոցա, և ողորմեա՛ց խոնարհութեան ազգիս մերուն, և նայեա՛ց 'ի սրբութիւն քո Տէր յաւուրս յայսմիկ: ¹⁶Եւ աղաչեցին: Եւ մխիթարեցին զԱքիովր, և գովեցին յոյժ զնա: ¹⁹Եւ ա՛ռ զնա Ոգիա յեկեղեցւոյ անտի և տարա՛ւ 'ի տուն իւր. ²⁰և արար նմա կոչունս ծերոցն և քահանայիցն: Եւ կարդացին զգիշերն զայն ամենայն առ Տէր Աստուած Իսրայէլի* :

7

Գլուխ Է

¹Եւ 'ի վաղիւ անդր պատուիրեաց Հողովեռն զօրաց իւրոց, և ժողովեցան որ եկեալն էին նմա յօգնականութիւն, չուել զնա՛լ 'ի Բետիղուա, և 'ի վերայ Ելից լեռնակողմանն, և հասանել տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայէլի: ²Եւ կազմեցան պատրաստեցան՝ գնացին յաւուրն յայսմիկ, ամենայն այր պատերազմի, և ամենայն հետևակազօր պատերազմողացն հարիւր եւթանասուն հազար, և հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար. թող զայլ ռամիկն ամենայն, և զկա՛հ և զկարասի բազում սաստիկ յոյժ: ³Եւ բանակեցան նոքա 'ի հովիտն որ մե՛րձ էր 'ի Բետիղուա 'ի վերայ աղբերն. և հանին զառաջս բանակացն ընդ հարաւակողմն 'ի լայնութիւն մինչև 'ի Դովթայիմ, մինչև 'ի Բեղ՛բեմ. և յերկայնութիւն 'ի Բետիղուա մինչև 'ի Կիամ, որ է ընդդէմ Յեզրայելովմայ, այս ինքն է Յեզրայէլ* : ⁴Եւ որդիքն Իսրայէլի իբրև տեսին զայնչափ բազմութիւնն խռովեցան յոյժ, և ասեն այր ցընկեր իւր. Այժմ լիզո՛ւն նոքա զամենայն երեսս երկրի, և ո՛չ լերինք բարձունք, և ո՛չ ծորք և բլուրք կարասցեն կա՛լ առաջի զօրութեան դոցա* : ⁵Եւ առին որդիքն Իսրայէլի այր իւրաքանչիւր զզէն իւր, և լուցանէին ջահս 'ի վերայ աշտարակացն քաղաքին, և կային պահէին զամենայն գիշերն զայն* : ⁶Եւ յաւուրն երկրորդի եհան Հողովեռնէս զամենայն զհեծելազօրն դէմ յանդիման որդւոցն Իսրայէլի որ էին 'ի Բետիղուա, և հաս նա 'ի վերայ Ելից քաղաքին նոցա, և զաղբերս ջրոցն քննեաց, և աճապարէր պաշարել զնոսա. և հարկանէր 'ի վերայ նոցա բանակս բանակս յարանց պատերազմողաց. և ինքն չուէր գնայր անդդէն 'ի բանակն իւր* : ⁸Եւ մատեան առ նա ամենայն որդիքն Ամովմայ, և ամենայն ժողովք և

* Ոմանք. Եւ հարցանէր ցնա... զբանս խորհրդոցն:

* Ոմանք. Եւ արար նա կոչունս:

* Ոմանք. 'Ի հովտին որ է... որ էր ընդդէմ... այսինքն Յեզրայէլ: Այլք. Եւ հարին զառէջս բանակացն:

* Ոմանք. Այժմ լեզուն նոքա:

* Ոսկան. Եւ կային և պահէին զայն:

* Ոմանք. Եւ զաղբիւր ջուրոցն քննեաց:

առաջնորդք որդւոցն Մովսէսու, և զօրագլուխք ծովեզերեայցն՝ և ասեն*։ ⁹Լուիցէ՛ բանից ծառայից իւրոց Տէր մեր, զի մի՛ լիցին հարուածք զօրաց քոց. զի ժողովուրդ որդւոցս Իսրայէլի ո՛չ են յուսացեալ ՚ի նիզակս իւրեանց, և ո՛չ ՚ի զէնս, այլ ՚ի վերայ լերանց բարձանց իւրեանց յորում բնակեալ են ՚ի նոսա. ո՛չ իսկ հնա՛ր է հասանել ՚ի նոսա։ Եւ արդ՝ Տէր՝ մի՛ տար դու ընդ նոսա մարտ պատերազմի՝ որպէս և լինի պատերազմ. և ո՛չ անկցի մի այր ՚ի զօրաց քոց. այլ հանդարտեա՛ և մնա՛ դու ՚ի բանակիս քում, և ապրեցուցես դու զգօրս քո. այլ կալցին ծառայք քո զաղբերս ջուրցն որ ելանէ ՚ի լեռնոտանէ անտի. քանզի անտի՛ ընպէն ամենայն բնակիչք քաղաքիդ. և սատակին նոքա ՚ի ծարաւոյ, և ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ՚ի ձեռս քո. և ամենայն զօրավարօք մերովք ելանենք ՚ի վերայ լերանց բարձանց որ մերձաւորքս իցեն, և բանակեսցուք ՚ի վերայ նոցա իբրև զայր մի. քանզի սպառեսցին նոքա ՚ի սովոյ և ծարաւոյ, ինքեանք և կանայք իւրեանց և որդիք իւրեանց մինչչե՛ւ եկեալ իցէ ՚ի վերայ նոցա սուր. տապա՛ստ անկցին ՚ի հրապարակս քաղաքին իւրեանց, և հատուցես նոցա զհատուցումն չարութեան նոցա. փոխանակ զի ՚ի կռիւ կացին և ո՛չ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ*։ ¹⁰Եւ հաճո՛յ թուեցաւ խորհուրդն՝ Զողովեռնեայ և ամենայն ծառայից նորա, և հրաման ետ առնել որպէս և խօսեցանն։ Եւ գնաց բանակ որդւոցն Ամոնայ, և ընդ նոսա հազարք հինգ յորդւոցն Ասուր, և բանակեցան նոքա ՚ի ձոր հովտին, և հասին կալան նոքա զաղբերս ջուրցն զորդւոցն Իսրայէլի։ Եւ ելին որդիքն Եսաւայ, և որդիքն Ամոնայ, և բանակեցան ընդ կողմն լերինն ընդդէմ Դովթայիմայ. և առաքեցին ՚ի նոցանէն ՚ի հարաւակողմն կոյս՝ և ընդ հիւսւսի ընդդէմ Եգրեբիլ՝այ՝ որ է մերձ ընդ Քուշ, որ է ՚ի վերայ ձորոյն Քունուրայ։ Եւ այլ զօրք Ասորեստանեայցն բանակեցան ՚ի դաշտին՝ և ծածկեցին զամենայն երեսս երկրին։ Եւ այլ ռամիկքն՝ կահիւ և կարասով և խորանօք հանդերձ բանակեցան անդէն բազում մեծութեամբ։ Եւ որդիքն Իսրայէլի գոչեցին առ Տէր Աստուած իւրեանց, զի զահի հարեալ սպառեալ էին ոգիք նոցա. քանզի պատեալ պաշարեալ էր զնոսա թշնամեաց նոցա. և ո՛չ ինչ էր հնար նոցա ելանել ՚ի միջոյ նոցա. և կացին պաշարեցին զնոսա զօրքն Ասուրայ զինու կառօք և երիվարօք իւրեանց զաւուրս երեսուն և չորս*։ ¹¹Եւ լքան պարտասեցան ամենայն բնակիչք Բետիղուայ. և ամենայն ամանք նոցա սպառեալ էին ՚ի ջրոյ, և գուրք սպառեալ թափեալ էին. և ո՛չ գոյր ընպելի միում աւուր, և զոր ընպէին չափով և կշռով ընպէին։ ¹²Եւ ՚ի վարանի և ՚ի տարակուսի կային կանայք և մանկունք նոցա. և երիտասարդք նոցա լքեալ էին ՚ի ծարաւոյ, և գլորեալք կային ընդ հրապարակս քաղաքին, և ընդ անցս դրանցն. և ո՛չ ուստեք էր նոցա մխիթարութիւն։ Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն ՚ի վերայ Ոգիայ՝ և ՚ի վերայ իշխանաց քաղաքին, երիտասարդք և կանայք և մանկտին, և լացին նոքա ձայնիւ մեծաւ, և ասեն առաջի ամենայն ծերոց ժողովրդեանն. ¹³Դա՛տ արասցէ Աստուած ՚ի մէջ մեր և ՚ի մէջ ձեր, զի արարէք առ մեզ իրս անիրաւութեան, առ ՚ի չխօսելոյ ձեր ՚ի խաղաղութիւն ընդ որդիսն Ասուր*։ ¹⁴Եւ արդ՝ ո՛չ ոք է որ օգնէ մեզ, այլ մատնեաց

* *Յօրինակին պակասէր.* Եւ ամենայն *ժողովք* և առաջնորդք։

* *Ոմանք.* Ընդ նոսա պատերազմ մարտի, և ո՛չ անկցի մի այր ՚ի զօրաց քոց։ *Այլք.* Եւ ապրեցուցանես դու։ *Ոմանք.* Չհատուցումն չարութեան իւրեանց։

* *Ոսկան.* Եւ գնացին յորդւոցն Ամոնայ, և ընդ նոսա հա՛։ *Ոմանք.* Մերձ ՚ի Քուշ, որ է ՚ի վերայ ձորոյն Քունուրայ։ *Յօրինակին պակասէր.* Կառօք և երիվարօք իւրեանց։

* *Ոմանք.* Ի մէջ մերում և ՚ի մէջ ձեր։

զմեզ Աստուած՝ ի ձեռս նոցա, զի տապա՛ստ անկցուք մեք առաջի նոցա, և ՚ի կորուստ մեծի ծարաւոյ՝: ¹⁵Արդ այժմ աղաչեցէ՛ք դուք զնոսա, և տո՛ւք յաւար նոցա զքաղաքս ամենայն: ¹⁶Զի լա՛ւ է մեզ լինել ՚ի յափշտակութիւն նոցա և ՚ի ծառայութիւն՝ և կեցցեն անձինք մեր. քանզի ո՛չ կարենք տեսանել զմահ տղայոց և զկանանց աչօք մերովք, զի պակասեալ սպառեալ են ոգիք նոցա: ¹⁷Արդ վկայե՛նք ձեզ առաջի երկնից և երկրի, և Աստուծոյ հարցն մերոց որ խնդրէ զվրէժ անձանց մերոց, և ըստ մեղաց հարցն մերոց. զի մի՛ արասցէ ըստ բանիցս այսոցիկ յաւուրս յայսոսիկ՝: ¹⁸Եւ եղև լալուճն և ողբումն մեծ՝ ՚ի վերայ եկեղեցւոյն ամենեցուն ՚ի միասին, և գոչեցին նոքա առ Տէր Աստուած ձայնիւ մեծաւ՝: ²³Եւ ասէ ցնոսա Ոգիա. Քաջալերեցարո՛ւք եղբարք, և համբերեցէ՛ք աւուրս ևս հինգ, յորում աւուր առաքէ Տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ մեր. ²⁴զի ո՛չ թողու նա զմեզ ՚ի սպառ. ²⁵և յորժամ անցանիցեն այս աւուրք, և ո՛չ եկեսցէ ՚ի վերայ մեր օգնութիւն՝ արարի՛ց ձեզ ըստ բանիցս այսոցիկ: Եւ արձակեաց զժողովուրդս ՚ի տունս իւրեանց. և յաշտարակս և ՚ի պարիսպս քաղաքին զգուշանալ ՚ի թշնամեացն: Եւ էին ՚ի վարանս և ՚ի մեծ տարակուսանս՝:

8

Գլուխ Ը

¹Եւ լուաւ յաւուր յայնմիկ Յուդիթ դուստր Մերարեայ. որդւոյ Ոթոզեայ. որդւոյ Յովսեփու. որդւոյ Ոգիելեայ. որդւոյ Եղ՛կիեայ. որդւոյ Եղ՛իեսու. որդւոյ Քեղկեայ. որդւոյ Եղիաբու. որդւոյ Նաթանայելի. որդւոյ Սամամիեղեայ. որդւոյ Սարա Սադդէ. որդւոյ Իսրայելի՝: ²Եւ այր նորա Մանասէ՛ յազգէ նորուն, և ՚ի հայրենեաց նորա: Եւ մեռա՛ւ այր նորա յաւուրս հնձոց գարեաց՝. ³զի կա՛յր նա ՚ի վերայ հնձողաց իւրոց ՚ի դաշտին. զի յընթանալ խորշակին և գա՛լ հասանել ՚ի վերայ գլխոյ նորա. յորմէ և մեռաւ իսկ ՚ի Բետիղուա ՚ի քաղաքի իւրում. և թաղեցաւ նա առ հարս իւր յագարակին որ մե՛րձ էր առ Դովթայիմն, և ՚ի Բաղսովն՝: ⁴Եւ նստէր Յուդիթ այրի՛ ՚ի տան իւրում ամս երիս և ամիսս չորս: ⁵Եւ արար նա տաղաւար ՚ի տանիս տանն իւրոյ. և ած քուրձ ՚ի վերայ միջոյ իւրում. և է՛ր արկեալ զիւրև հանդերձ այրութեան՝. ⁶և պահէր նա՝ զամենայն աւուրս այրութեանն իւրոյ. բայց միայն զօր շաբաթուն և զամսամտից և զտարեկանացն, և զուրախութեան տանն Իսրայելի: ⁷Եւ է՛ր նա գեղեցիկ յոյժ տեսանելով. և եթող նմա Մանասէ այր նորա ոսկի և արծաթ, ծառայս և աղախնայս, և անդս և ագարակս, և անասուն. և ինքն Յուդիթ դարմանէ՛ր զայն: ⁸Եւ ո՛չ ոք ինչ ասէր վասն նորա բան չարութեան. զի երկիւղած էր նա յոյժ ՚ի Տեառնէ: ⁹Եւ իբրև լուաւ նա զբանն ժողովրդեանն զոր խօսեցան ապիրատութեամբ ընդ իշխանին. զի պակասեալ

* Ոմանք. Առաջի նորա, և ՚ի կոր՝: Ոսկան. ՚ի կորուստ մեծ ՚ի ծարաւոյ:

* Ոմանք. Յաւուրս յայսմիկ:

* Ոմանք. Եւ ողբումն մեծ յեկեղեցւոյն:

* Այլք. Եւ ո՛չ եկեսցեն ՚ի վերայ մեր... և արձակեաց զժողովուրդն: Ուր Ոսկան. ՚ի վերայ մեր օգնութիւնք՝ արա՛:

* Ոսկան յաւելու. Որդւոյ Եղ՛կիայ, որդւոյ Անանիայ, որդւոյ Գեղէօնի, որդւոյ Ռափայի. որդւոյ Եղիեսու:

* Այլք. Եւ այրն նորա:

* Յօրինակին պակասէր. Զի կայր նա ՚ի վերայ:

* Ոմանք. ՚ի վերայ միջոյ իւրոյ:

էին նոքա՝ ի ծարաւոյ. և լուաւ Յուդիոք զբանսն Ոգիայ զոր խօսեցաւ ընդ ժողովուրդսն, և որպէս վկայեաց նոցա՝ մատնել զքաղաքն յետ հինգ աւուրն՝ ի ձեռս Ասորեստանեացն: Եւ առաքեաց զնաժիշտն իւր՝ որ էր ՚ի վերայ ամենայն ընչից իւրոց, և կոչեաց զՈգիայ, և զՔաբրին, և զՔարմին, և զժերս ամենայն քաղաքին իւրոյ*։¹⁰ Եւ եկին առ նա: Եւ ասէ ցնոսա. Լուարուք ինձ բնակիչք Բետիղուայ, զի ո՛չ ուղիղ են բանք ձեր զոր խօսեցարուք առաջի ժողովրդեանդ յաւուրս յայսմիկ. և երդմամբ հաստատեցէք զոր խօսեցարուքն առաջի Աստուծոյ ՚ի միջի ձերում, և ասացէք մատնել զքաղաքս ՚ի ձեռս թշնամեաց մերոց, և եթէ ո՛չ Տէր առաքէ զօգնականութիւն մեզ: ¹¹Եւ արդ դուք որ փորձէք զԱստուած յաւուրս յայսմիկ. արդ հաստատեալ կայ այդ ՚ի մէջ որդւոց մարդկան*։ ¹²Եւ ահա այժմ զՏէր զամենակալ ո՛չ հարցէք, և ո՛չ ինչ գիտացէք*։ ¹³Ձի խորութիւն սրտի մարդոյ ո՛չ գտանի, և բանից սրտից նոցա ո՛չ հասանէք. զիա՞րդ զԱստուած որ արա՛ր զայս ամենայն քննել մարթիցէք, և զկամս նորա գիտիցէք, և կամ ՚ի խորհուրդս նորա հայիցիք. քա՛ւ լիցի ձեզ եղբարք. մի՛ բարկացուցանիցէք զՏէր Աստուած մեր*։ ¹⁴Եթէ ո՛չ կամիցի յաւուրս հինգ օգնել մեզ. նա ունի զիշխանութիւնն. յորս կամի պաշտպան լինի մեզ յորում և իցէ, և կամ սատակել զմեզ առաջի թշնամեաց մերոց*։ ¹⁵Այլ դուք մի՛ գրաւէք ՚ի ձեզ զխորհուրդս Տեառն Աստուծոյ ձերոյ. զի ո՛չ որպէս մարդոյ է Աստուծոյ սպառնալիք, և ո՛չ որպէս որդւոյ մարդոյ զի տանջէ: ¹⁶Այլ այժմ կացեալ ակնկալցուք գտանել ՚ի նմանէ զողորմութիւն, աղաչեսցուք և կարդասցուք առ նա յօգնականութիւն մեզ. և լուիցէ՛ ձայնի աղօթից մերոց՝ եթէ իցէ նմա հաճոյ*։ ¹⁷Ձի ո՛չ երբէք յարուցեալ է այդպիսի ՚ի վերայ ազգիս մերոյ, և ո՛չ լեալ է այդպիսի մինչև ցայսօր, ո՛չ յազգիս մերում, և ո՛չ ՚ի տոհմի մերում, և ո՛չ ՚ի ժողովրդեան մերում, և ո՛չ ՚ի քաղաքս մեր: Ո՛չ պագանեն երկիր ձեռագործաց* ¹⁸որպէս եղև յաւուրսն առաջինս. վասն որոյ մատնեցան ՚ի սուր և ՚ի յափշտակութիւն հարքն մեր, և կործանեցան կործանումն մե՛ծ առաջի թշնամեաց իւրեանց*։ ¹⁹Այլ մեք զայլ Աստուած ո՛չ գիտացաք բաց ՚ի նմանէ յոր յուսամքն զի ո՛չ անտես առնէ զմեզ. ²⁰և ո՛չ զազգս մեր մատնել այսպէս՝ որպէս և ուխտեցէք դուք. և կամ աւար հարկանել զսրբութիւնս մեր. և կամ թէ չխնդրիցէ զվրէժ անարգանաց թշնամեաց սրբութեանս, և զմա՛հ զեղբարցս մերոց, և զգերութիւն երկրիս, և զաւերումն ժառանգութեանս մերոյ դարձուցանէ ՚ի գլուխս մեր, յամենայն հեթանոսս՝ ուր և ծառայիցենք նոցա. և եղիցուք յամօթ և ՚ի նախատինս առաջի այնոցիկ որոց ստացեալն իցէ զմեզ: Ձի ո՛չ ուղղեսցի ծառայութիւնս մեր նոցա յուրախութիւն, այլ յանարգութիւն և ՚ի կործանումն նոցա արասցէ զմեզ Տէր Աստուած մեր*։ ²¹Եւ արդ եղբարք՝ ցուցցուք մեք

* Այլք. Ջբանս ժողովրդեանն: Ոմանք. Ձոր խօսեցաւ նա ընդ ժողովուրդսն յետ հինգ աւուր: Յօրինակին ընդ այլոց գրչագրաց յայսմ վայրի դնի վրիպակաւ. Եւ զՔաբրին և զՔամրին:

* Ոմանք. Որ փորձեցէք զԱստուած:

* Ոմանք. ՁՏէր զամենակալ հարցէք, և ո՛:

* Ոմանք. Ի սրտի մարդոյ ո՛չ գտանի... ո՛չ հասանիցէք:

* Բազումք. Օգնել ձեզ... պաշտպան լինել մեզ:

* Այլք. Արդ այժմ կացեալ:

* Այլք. Եւ ո՛չ եղեալ է այդպիսի: Ոմանք. Ոչ պագան երկիր ձեռա՛:

* Ոսկան. Ի կործանումն մեծ:

* Ոմանք. Մատնել՝ որպէս և ուխտե՛: Բազումք. Եւ եղիցուք մեք յամօթ:

եղբարց մեր, զի 'ի մե՛զ կան կախեալ ոգիք նոցա, և սրբութիւնքն և սեղանն՝ և տաճարն հաստատեալ կայ 'ի մեզ: Եւ արդ՝ 'ի վերայ ամենայնի այսորիկ գոհացարուք զԱստուծոյ մերմէ, որ փորձէն զմեզ, որպէս և զհարսն մեր՝:

²²Յիշեցէք՝ ո՞րչափ արար ընդ Աբրահամուն, և ո՞րպէս արար ընդ Սահակայ, և կամ ընդ Յակոբայ 'ի Միջագետս Ասորոց, 'ի հովուել նորա խաշանցն Ղաբանու եղբոր մօր իւրոյ՝: ²³Ձի ո՛չ եթէ որպէս զնոսայն փորձեաց առ 'ի ճանաչել զխորհուրդս սրտից նոցա, և զմեր մեղս ո՛չ խնդրեսցէ. այլ 'ի խրատել և ուսուցանել տանջէ Տէր զմերձաւորս իւր: ²⁸Եւ ասէ ցնա Ոգիա. Ջամենայն զոր ինչ ասացերդ՝ 'ի լրութենէ սրտի և 'ի բարութ մտէ խօսեցար, և ո՛չ որ է որ ընդդէմ դառնայ բանից քոց. զի ո՛չ միայն այսօր յայտնեցաւ իմաստութիւնդ քո, այլ յաւուրցն առաջնոց գիտաց ամենայն ժողովուրդդ զհանճարդ քո. վասն զի բարութ են ստեղծուածք սրտի քոյ: Այլ ժողովուրդս ծարաւեաց յոյժ, և հա՛րկ եղև մեզ առնել՝ որպէս և խօսեցաք ընդ դոսա. և ածել 'ի վերայ մեր զերդունն զորով ո՛չ կարենք անցանել՝: ²⁹Արդ աղաչեա՛ դու խնդրուածովք զԱստուած, զի կին արդա՛ր ես դու, և առաքեսցէ՛ Տէր զանձրև և լցցին գուրբս, և ո՛չ ևս պակասեսցուք՝: ³⁰Եւ ասէ ցնոսա Յուդիթ. Լուարո՛ւք դուք ինձ. և արարից ես իրս մի, որ պատմեսցի ազգաց մինչև յազգս, և որդւոց մինչև յորդիս՝: ³²Դուք կացջի՛ք առ դրան քաղաքիս՝ զգիշերս զայս, և ելից ես նաժշտաւս իմով. և յաւուրս յայս յոր ուխտեցէք մատնել զքաղաքս զայս 'ի ձեռս թշնամեաց մերոց, այցելու՛ լիցի Տէր Աստուած 'ի ձեռն իմ: ³³Եւ դուք մի՛ քննէք զգործսն իմ զոր գործելոց են. քանզի ո՛չ իսկ ասացից ձեզ, մինչև կատարեսցի այն զոր ե՛սն առնեն: ³⁴Եւ ասէ Ոգիա՝ իշխանօքն հանդերձ ցնա. Գնա՛ դու 'ի խաղաղութիւն. և Տէր Աստուած Իսրայէլի եղիցի ընդ քեզ խնդրել զվրէժ 'ի թշնամեաց մերոց: Եւ նոքա դարձան 'ի տաղաւարէ անտի Յուդթայ յիւրաքանչիւր տեղիս պահպանութեան պարսպացն՝:

9

Գլուխ Թ

¹Եւ անկաւ Յուդիթ 'ի վերայ երեսաց իւրոց. և 'ի բա՛ց առ զքուրձն որ զգեցեալ էր ինքեան, և ցանեաց մոխիր 'ի վերայ գլխոյ իւրոյ: Եւ էին 'ի նմին ժամու խունկք մատուցեալք երեկոյինք յերուսաղէմ 'ի տաճարին Տեառն: Եւ կարդաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած. և ասէ Յուդիթ՝. ²Տէր Աստուած հօրն իմոյ Շնաւոնի, որուն ետու՛ր զսուրն 'ի ձեռն խնդրել զվրէժն յայլազգեաց, ³որք լուծին զարգանդ կուսին 'ի պղծութիւն, և մերկացուցին զանդամս 'ի նախատինս, և խայտառակեցին զկուսութիւնն 'ի թշնամանս. որ ո՛չ եղեն հաճոյ

* *Ոմանք.* Ցուցցուք մեր եղբարց մերոց... գոհացուք զԱստուծոյ մերմէ:
 * *Ոմանք.* Ընդ Աբրահամու: *Յօրինակին այսպէս գրի.* Ո՞րպէս արար ըն Սահակ՝: *Ուր ընդօրինակողն 'ի լուս՝. նշանակէ 'ի ներքս բերել՝ դ. և առնել՝ ընդ:*
 * *Ոմանք.* Ջամենայն ինչ զոր ա՛: *Ոսկան.* Եւ 'ի բարութ մտաց խօ՞: *Այլք.* Եւ խօսեցաք ընդ նոսա:
 * *Յօրինակին.* Եւ ո՛չ և պակասեսցուք:
 * *Ոմանք.* Եւ որդւոց մինչև յորդւոց որդիս:
 * *Ոմանք.* Եւ ասէ ցնա Ոգիա իշ՞:
 * *Ոմանք.* Զգեցեալ էր յինքեան: *Բազումք.* Մատուցեալք երեկորինք:

առաջի քո. վասն որոյ ետուր իսկ զիշխանս նոցա հանդերձ անկողնովքն որով դատապարտեցանն յարին. և սատակեցեր զժառայսն հանդերձ տերամբք իւրեանց, և զհարսն ՚ի վերայ աթոռոց իւրեանց. և ետուր զկանայս նոցա յաւար, և զդստերս նոցա ՚ի գերութիւն. և զամենայն զաւարն ՚ի բաժինս որդւոց սիրելեաց քոց որ նախանձեցան զնախանձ քո. և գարշանս համարեցան զպղծութիւն քեռն իւրեանց, և կարդացին զքեզ յօգնականութիւն: Եւ արդ Տէր Աստուած ինձ, լո՛ւր ձայնի աղախնոյ քոյ, և նայեաց ՚ի խնդրուածս այրւոյս. ⁴զի դո՛ւ արարեր զայն յառաջ ընդ նոսա, և յետ այնորիկ, և այժմ, և որ գալոցն է զայն դո՛ւ խորհեցար. և որ եղև որպէս և կամեցար, և յանդիման եղեն քեզ որպէս և խորհեցար*: ⁵Եւ ասացին. Ահաւասիկ մեք. զի ամենայն ճանապարհք քո պատրաստ են, և դատաստանք քո կանխագէտք են: ⁶Ձի ահաւասիկ Ասորեստանեայն ելից զօրօք իւրովք զերկիրս. և բարձրացան հեծելովք երիվարացն, և հպարտացեալ մեծամտեաց ՚ի բազուկ հետևակացն բազմութեան, և յուսացան ՚ի նիզակս և ՚ի սպառազինութիւնս, և ՚ի կորովս աղեղնաւորացն և պարսաւորացն. և ո՛չ գիտացին թէ դո՛ւ Տէր ես որ խորտակես զպատերազմունս, և Տէր է անուն քո: Փրկեա՛ զմեզ ՚ի նեղութենէս: ¹¹Եւ ցրուեա՛ զգօրութիւնս նոցա Տէր ամենակալ. և խորտակեա՛ ընկեա՛ զգօրութիւնս նոցա բարկութեամբ քով. զի կամեցան պղծել զսրբութիւնս քո և զյարկս անուան բնակութեան փառաց քոց, և կործանել երկաթով զեղջերս սեղանոյ սրբոյ քոյ*: ¹²Նայեա՛ց և տես զամբարտաւանութիւնս նոցա, և առաքեա՛ զբարկութիւնս քո ՚ի վերայ գլխոց նոցա. և տո՛ւր ձեռն աղախնոյ քոյ, և այրւոյս զօրութիւն՝ զոր խորհեցայս առնել. ¹⁵և հա՛ր կործանեա՛ զժառայն խաբանօք շրթանց իմոց, և զիշխանն ժառայիւքն իւրովք. և խորտակեա՛ զսաստկութիւն նոցա ՚ի ձեռն կնոջս: ¹⁶Ձի ո՛չ եթէ ՚ի բազմութենէ է քո զօրութիւնդ. և ո՛չ կարող քո յայնս է որ հզօրքն են. այլ խոնարհաց ես Տէր Աստուած, և կարօտելո՛ց ես օգնական, տկարաց ես ընդունելութիւն, կարօտելո՛ց ես խնդրակ, անյուսի՛ց ես փրկիչ*: ¹⁷Այո՛ Աստուած հօրն իմոյ, և Աստուած ժառանգութեանն Իսրայէլի. Տէր երկնից և երկրի, արարիչ ջուրց. թագաւոր ամենայն ստացուածոց քոց դո՛ւ ես*: ¹⁸Լո՛ւր աղօթից աղախնոյ քոյ. տո՛ւր ինձ բանս զի խօսեցայ՞ց զնոսա ՚ի կործանումն նոցին՝ որ եկեալ են ՚ի վերայ կտակարանաց քոց, և ՚ի վերայ տան քոյ՝ և բարձունս Սիոնի, և ՚ի վերայ բնակութեան որդւոց քոց, զի խորհեցան զխորհուրդս խիստս*. ¹⁹և ծանո՛ զբարձր բազուկ քո ժառանգութեան քոյ, եթէ դո՛ւ ես Աստուած՝ որ տիրես ամենայն զօրութեանց և իշխանութեանց. զի ո՛չ ոք է որ պաշտպան լինի ազգիս Իսրայէլի բաց ՚ի քէն Տէր*:

10

Գլուխ Ժ

* Այլք. Եւ եղև որպէս և կամեցար:

* Ոմանք. Ձեղջիւրս սեղանոյ:

* Ոսկան. Եւ ո՛չ կարգդ քո յայնս է: Ոմանք. Որք հզօրագոյնքն են... անյուսաց ես փրկիչ:

* Յօրինակին՝ Արարիչ ջուրց, կարմրադեղով նշանակի: Ոմանք. Թագաւոր ամենայն ստեղծուածոց քոց:

* Բազունք. Եւ բարձուն Սիովնի: Եւ օրինակ մի. Եւ ՚ի բարձուն Սի՛:

* Ոմանք. Զբարձր բազուկ ժառանգ՛:

¹Եւ իբրև դադարեաց Յուդիոս յաղօթից իւրոց, և կատարեաց զբանս զայս. և յո՛ւտն եկաց յերեսացն խոնարհելոց. ²և կոչեաց զնաժիշտն իւր, և էջ ՚ի տուն իւր նա ուր կատարէր զաւուրս շաբաթուց, և զաւուրս տօնիցն: ³Մերկացաւ յիւրմէ զքուրծն զոր զգեցեալն էր, և ՚ի բաց եհան զհանդերձն այրութեան իւրոյ, և լուաց զմարմինս իւր ջրով, և օծաւ իւղով անուշիւ. և եհիւս զհեր զխոյ իւրոյ, և կապեաց զապարաւշն ՚ի ճակատ իւր. և զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոյ, զոր զգենոյր առ կենդանութեամբ առն իւրոյ Մանասէի. ⁴և ագանէր կօշիկս ոսկեօծոս. և արկանէր ապարանջանս ՚ի ձեռս իւր, և արկանէր քայռս յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ՚ի պարանոց իւր, և մատանիս ՚ի մատունս իւր, և զգորշապահանգս ՚ի գլուխ իւր. և յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, և պայծառանայր առաւել յոյժ առ ՚ի խաբէլ և պատրել զամենեսին ՚ի գեղ երեսաց իւրոց՝ որ տեսանիցենն զնա*: ⁵Եւ ետ ցաղախինն իւր զմախաղն. և ելից զնա փոխնդով և պաղատակօք և հացիւք սրբովք. և զհադադակն գինւոյ, և զսրուակն իւղոյ. և սրբէր կազմէր զամենայն ըստ օրինին իւրեանց, և տայր ցաղախինն իւր*: ⁶Եւ ելին նոքա ընդ դուռն քաղաքին Բետիղուայ. և տեսին անդ զՈզիա զի կայր առ դրանն՝ և զայլ քահանայս քաղաքին ընդ նմա, և զՔարբին, և զՔարմին: ⁷Եւ իբրև տեսին նոքա զՅուդիոս՝ զի էր փոխեալ նորա զգեղ երեսաց իւրոց՝ և զգեստ հանդերձին իւրոյ, զարմացան նոքա ընդ գեղ նորա յոյժ*: ⁸Եւ ասեն ցնա. Աստուած Աստուած հարցն մերոց տացէ՛ քեզ շնորհս, և կատարեսցէ՛ զկամս սրտի քոյ ՚ի ցնծութիւն և յուրախութիւն որդւոցն Իսրայէլի, և ՚ի բարութիւն Երուսաղեմի: Եւ երկիր պագին Աստուծոյ: ⁹Եւ ասէ ցնոսա Յուդիոս. Հրամայեցէ՛ք ինձ բանալ զդրունս քաղաքիս, զի ելից ես՝ կատարել զբանս զոր խօսեցայք ընդ իս: Եւ հրամայեցին դռնապանացն բանալ, որպէս և խօսեցանն՝ և արարին այնպէս: ¹⁰Եւ ել Յուդիոս ինքն և աղախինն իւր ընդ նմա: Եւ միտ դնէին նմա արք քաղաքին յերթալն նորա, մինչև եղև նա ընդ լերամբն, մինչև անց նա ընդ ծործոր հովտին. և ապա ո՛չ ևս տեսին զնա: ¹¹Եւ երթային նոքա ընդ ծործոր հովտին ուղիղ ընդ ճանապարհն: Եւ պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայցն, ¹²և կալան զնոսա. հարցին և ասեն. Ո՞րք ես դու՝ և ուստի՛ գաս, կամ յո՞ք երթաս: Եւ ասէ ցնոսա Յուդիոս. Դո՛ւստր եմ ես Եբրայեցւոց, և փախուցեալ եմ ես յերեսաց նոցա, զի մատնելոց եմ նոքա ՚ի կերակուր ձեզ*. ¹³և ես եկի կալ առաջի Հողովեռնեայ իշխանի զօրաց ձերոց՝ պատմել նմա զբանս ճշմարտութեան, և ցուցանել նմա զճանապարհն ընդ որ երթայցէ, և տիրեսցէ ամենայն լեռնային կողմանցն. և ո՛չ միւս ումեք լիցի վնաս ՚ի զօրաց դորա*: ¹⁴Եւ իբրև լուան արքն զբանսս Յուդիոսայ, և նայեցան նոքա յերեսս նորա, և էր առաջի նոցա գեղեցկութիւն յոյժ. և ասեն ցնա*. ¹⁵Ապրեցուցեր դու զանձն քո այսօր. արդ փութա՛ դու իջանել տեսանել զերեսս տեառն մերոյ, և մատիցես՝ դու առ խորան նորա մկք հանդերձ, և տացուք զքեզ ՚ի ձեռս նորա*: ¹⁶Եւ յորժամ կացցես

* Ոմանք. Եւ արկանէր քայռս... և զգարչապարհանգս ՚ի գլ... որ տեսանիցեն զնա:

* Ոմանք. Եւ ետ ցաղախինն զմախաղ իւր... և պաղատակօք... և զհանդադակն գինւոյ... ըստ օրինի իւր... և տայր յաղախինն իւր:

* Ոմանք. Հանդերձին նորա, և զար՝:

* Ոմանք. Եւ կամ ուստի՛ գաս:

* Ոմանք. Ընդ որ գնայցէ և տիրես՝:

* Ոմանք. Եւ նայեցան ընդ երեսս նորա:

* Ոսկան. Դու ՚ի խորան նորա մեօք հան՝:

առաջի նորա, մի՛ երկնչիցիս ՚ի սրտի քում, այլ պատմեսցես՝ դու նմա ըստ բանիցդ այդոցիկ. և բարի՛ արասցէ քեզ: Եւ ընտրեցին յիրեանց արս հարիւր՝ և յղեցին ընդ նմա: Եւ ածին զնոսա ՚ի խորանն Զողովեռնեայ. և պատմեցին զգեղեցկութիւն նորա, և զգալն՝ յամենայն բանակին. և գային ՚ի տեսանել զնա մինչդեռ կա՛յր արտաքոյ խորանին Զողովեռնեայ, մինչդեռ պատմէին Զողովեռնեայ. ¹⁷և զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա, և ընդ ամենայն որդւոցն Իսրայէլի: ¹⁸Եւ ասեն այր ցընկեր իւր. Իսկ արդ ո՞ կարէ չար ինչ խորհել ՚ի վերայ ազգիս այսորիկ որք ունին զայդպիսի գեղեցկութիւն կանայք նոցա: Արդ՝ ո՛չ պարտին ապրել արք նոցա, զի եղիցին դատերք նոցա մեզ կնութեան. զի թէ ապրեն՝ վնաս են նոքա ամենայն երկրի: Եւ ելին սպասաւորքն Զողովեռնեայ և ամենայն ծառայք նորա, և տարան զնա ՚ի խորանն*: ¹⁹Եւ Զողովեռն նստեր ՚ի գահոյսն իւր. և էր փակեալ զնա վարագուրօք շուրջանակի. զորս էր ընդելուզեալ ոսկւով և մարգարտով՝ և ակամբք պատուականօք: Եւ իբրև լուա՛ւ նա զՅուդթայ, ե՛լ նա արտաքս ՚ի սրահ խորանին ջահիւք և լապտերօք արծաթեօք, քանզի գիշեր էր*: ²⁰Եւ իբրև ետես զնա Զողովեռնէս, զարմացա՛ւ ընդ տեսիլ գեղոյ նորա: Եւ անկեալ ՚ի խոնարհ երկիր պագաներ Յուդիթ Զողովեռնեայ. և կանգնեցին զնա ծառայք նորա:

11

Գլուխ ԺԱ

¹Եւ ասէ ցնա Զողովեռնէս. Զամարծակեաց կին դու, և մի՛ երկնչիր. զի ես ո՛չ չարչարեմ զմարդ որ կամի ծառայել Նաբուքոդոնոսորայ արքայի որ տիրէ ամենայն երկրիս: ²Եւ արդ՝ ժողովուրդ քո այդ՝ որ բնակեալդ է ՚ի լեռնակողմանդ, եթէ ո՛չ էր ապստամբեալ դոցա յինէն, ո՛չ էր իմ առեալ զնիզակ իմ ՚ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց գայս: ³Արդ՝ ասա՛ դու ինձ, վասն որո՞յ ես դու փախուցեալ ՚ի նոցանէն, և եկեալ ես առ մեզ. քաջալերեաց՝ զի ՚ի փրկութիւն եկեալ ես, զի կենդանի՛ ես ՚ի գիշերիս յայսմիկ, և զամենայն աւուրս քո, և ո՛չ ոք է որ վնասէ՛ քեզ. այլ բարի՛ լիցի քեզ, որպէս և լինի ծառայից տեառն իմոյ Նաբուքոդոնոսորայ*: ⁴Եւ ասէ ցնա Յուդիթ. Ընկա՛լ զբանս աղախնոյ քոյ, և խօսեսցի աղախին քո առաջի քո. և ո՛չ ինչ ստութիւն պատմեմ տեառն իմում ՚ի գիշերիս յայսմիկ: Եթէ զհետ եկեսցես և լուիցես բանից աղախնոյ քոյ, զործ կատարեալ զործէ ընդ քեզ Աստուած, և ո՛չ անկցի բան քո ընդունայն*. ⁵զի կենդանի՛ է Նաբուքոդոնոսոր արքայ ամենայն երկրի, և կենդանի՛ է զօրութիւն նորա որ առաքեաց զքեզ յուղղութիւն ամենայն մարդոյ. զի ո՛չ եթէ մարդիկս միայն ծառայեն նմա ՚ի ձեռն քո, այլ և գազանք վայրի, և անասունք՝ և թռչունք երկնից քե՛ւ կեցցեն Նաբուքոդոնոսոր և ամենայն տուն նորա*: ⁶վասն զի լուա՛ք զիմաստութիւն և զհանճար անձին քոյ որ և պատմեալ իսկ է յամենայն երկրի, զի դու միայն ես բարերար յամենայն ՚ի թագաւորութեան

* Ոմանք. Որ ունին զայսպիսի գե՛: *Յօրինակին*. Եւ ելին պարսաւորք Զողովեռն՝:

* Ոմանք. Ընդելուզեալ մարկւով և մարգարտով և ակ՛: *Ոսկան*. Եւ լապտերօք արծաթեղինօք:

* Ոմանք. Որ վնասէ ՚ի քեզ:

* Ոմանք. Պատմէ տեառն իմում... բանից աղախնոյ քում:

* Ոմանք. Այլ և գազանք վայրենի:

նորա, և հզօր ես բանիւք, և սքանչելի՛ ես՝ ՚ի մէջ պատերազմօղ զօրացս: ⁷Արդ զբանսն զոր խօսեցաւ Աքիովր ՚ի խորհրդեան սենեկի քում, լուա՛ք և մեք. և զի խնայեցին ՚ի նա արք Բետիուղուայ՝ և նա պատմեաց զամենայն որպէս և խօսեցաւ ընդ քեզ: Եւ արդ՝ այժմ տէր՝ մի՛ անցաներ զբանիւք նորա, այլ հաստատեա՛ զնոսա ՚ի սրտի քում. քանզի ճշմարիտ են: ⁸Ձի ո՛չ որ կարէ չարչարել զազգս մեր, և ո՛չ սուր թշնամւոյ վնասէ մեզ. բայց յորժամ մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց՝: ⁹Եւ արդ մի՛ վնասիցիս տէր իմ, դու և զօրք քո. քանզի հասեալ իսկ է ժամանակ մահու նոցա՝ վասն մեղացն զոր մեղան Աստուծոյն իւրեանց. քանզի արարին նոքա մեղս մե՛ծ անօրէնութեան: ¹⁰Ձի պակասեցին նոցա ջուրք և կերակուր, ¹¹խորհեցան նոքա և արկին զձեռս իւրեանց յանասունս զոր ո՛չ էր հրամայեալ ուտել՝ Աստուծոյն իւրեանց. ¹²և զպտուղ ցորենոյ՝ և զտասանորդս գինւոյ և իւղոյ որ էր սրբեալ քահանայիցն որ պաշտօնեայքն են յերուսաղէմ, առաջի Աստուծոյն մերոյ. սկսան ուտել զայն՝ զոր ո՛չ էր օրէն ուտել նոցա՝ բայց միայն քահանայիցն: Եւ առաքեցին յերուսաղէմ, զի որք անդն իցեն՝ արասցեն այնպէս. վասն որոյ լինէր նոցա թողութիւն յԱստուծոյ ՚ի ձեռն քահանայիցն: Եւ արդ յորժամ արարին զայս մեղս, և մատնին ՚ի սատակունմն՝: ¹³Արդ՝ ես աղախին քո՝ յորժամ գիտացի զայս՝ փախեայ ՚ի նոցանէն: Եւ առաքեաց զիս առնել ընդ քեզ գործ մեծ՝ զորմէ զարմացի ամենայն երկիրս որ միանգամ լուիցեն զայն՝: ¹⁴Ձի աղախին քո աստուածապաշտ է, և աղաչեմ զցայգ և զցերեկ զՏէր Աստուած երկնից: Եւ արդ մնացի՛ց ես առ քեզ տէր իմ. և ելցէ աղախին քո ՚ի գիշերիս յայսմիկ ՚ի ծործորն հովտին, և կացից յաղօթս առ Տէր Աստուած իմ. և պատմէ՛ ինձ յորժամ մեղանա՛ն նմա՛. ¹⁷և ես գա՛մ և պատմեմ քեզ. և դու ելցես ամենայն զօրօք քովք հանդերձ, և ո՛չ իցէ ՚ի նոցանէն որ ապրիցէ ՚ի քէն. և տարայց զքեզ ընդ մէջ Յրէաստանի, մինչև տարայց զքեզ յերուսաղէմ, և արկցես զաթոռ քո ՚ի միջի նորա, և ժողովեսցես զնոսա որպէս զհօտ՝ որոց ո՛չ իցէ հովիւ. և ո՛չ հաջեսցէ շո՛ւն մի լեզուաւ իւրով ընդդէմ քո: Եւ ինձ պատմեցա՛ւ այս լինել յԱստուծոյ, և եկի՛ ցուցանել քեզ՝: ¹⁸Եւ հաճո՛յ թուեցան բանք նորա առաջի Յողովեռնեայ՝ և առաջի ամենայն ծառայից նորա, և զարմանային ընդ իմաստութիւն նորա, և ասեն՝. ¹⁹Ո՛չ գտանի կին գեղեցիկ համենա՛տ սմա, ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս՝ իմաստութեամբ բանիւք և գեղեցկութեամբ երեսաց իւրոց: ²⁰Եւ ասէ ցնա Յողովեռնէս. Բարի՛ արար Աստուած զի առաքեաց՝ զքեզ առաջնորդել ժողովրդեանս. զի լիցի հզօրացեալ տէրութիւնս մեր՝ և որք ապստամբեցին ՚ի մէնջ կորիցեն: Եւ արդ տեսանե՛մ զքեզ կայտա՛ռ տեսլեամբ, և բարի՛ զամենայն բանս քո. ²¹զի թէ արասցէ որպէս խօսեցար՝ Աստուածն քո եղիցի՛ նա և ի՛մ Աստուած. և դու ՚ի տան Նաբուքոդոնոսորայ նստցիս, և եղիցիս անուանի քան զամենայն երկիր՝:

* *Ոմանք.* Վնասէ զմեզ:

* *Ոմանք.* Եւ իւղոյ զոր էր սրբեալ քա՛: *Այլք.* Ձի որք անդ իցեն՝ արասցեն այսպէս:

* *Ոսկան.* Եւ առաքեաց զիս Տէր առնել:

* *Ոմանք.* Եւ պատմէ ինձ յորժամ մեղանն նմա:

* *Ոմանք.* Ձնոսա իբրև զհօտ որոյ ո՛չ գուցէ հովիւ:

* *Այլք.* Եւ ասէին. Ո՛չ գտանի:

* *Ոսկան.* Ձի թէ արասցես որպէս խօսեցար:

Գլուխ ԺԲ

¹Եւ հրամայեաց տանել զնա՝ ՚ի տուն գանձին: Եւ հրամայեաց նմա ռոճիկս յիւրոց խորտկացն, և ՚ի գինւոյ անտի զոր ինքն ընպէր: ²Եւ ասէ Յուդիթ. Ո՛չ կերայց ես ՚ի դոցանէն, զի մի՛ լինիցին ինձ ՚ի գայթազողութիւն, այլ տացես ինձ հրաման՝ ուտել ինձ անտի զոր բերին ինձ ՚ի քաղաքէ անտի*: ³Եւ ասէ ցնա Յողովեռնէս. Եթէ պակասեսցէ այն՝ ուստի՞ տացուք քեզ նման նոցա. զի ո՛չ ոք է ընդ մեզ յազգէդ քունմէ: ⁴Եւ ասէ ցնա Յուդիթ. Կենդանի՛ է անձն քո տէր իմ, եթէ ո՛չ ծախէ աղախին քո զկերակուրն որ եկեալն է ընդ իս՝ մինչև արասցէ ՚ի ձեռն իմ զոր խօսեցաւն: Եւ ածին զնա ծառայքն Յողովեռնեայ ՚ի խորան անդր. և ննջեաց նա անդ մինչև ՚ի մէջ գիշեր: Եւ յարեաւ Յուդիթ յառաւօտին պահուն*. ⁵Եւ առաքեաց առ Յողովեռնէս և ասէ. Հրամայեսցէ՛ տէր իմ թողուլ զաղախին իւր ելանել կալ յաղօթս: ⁶Եւ հրամայեաց Յողովեռնէս պահապանացն՝ մի՛ արգելուլ զնա: Եւ եղև նա ՚ի բանակի անդ՝ աւուրս երիս: ⁷Եւ ելանէր նա ՚ի գիշերին ՚ի ձորն Բետիղուայ. և մկրտէր ՚ի բանակի անդ՝ յաղբերս ջուրցն ըստ օրինի Հրէիցն: ⁸Եւ իբրև մկրտէր՝ կայր յաղօթս առ Տէր Աստուած Իսրայէլի զի յաջողեսցէ զճանապարհս նորա, ՚ի փրկութիւն որդւոց ժողովրդեան իւրոյ: ⁹Եւ նա մտանէր սրբեալ. և լինէր ՚ի խորանին՝ մինչև առնոյր տանէր զիւր կերակուրսն առ ինքն ընդ երեկս: ¹⁰Եւ եղև յաւուրն չորրորդի, արար Յողովեռնէս կոչունս ծառայիցն իւրոց միայն. և կոչեաց ՚ի կոչունսն և ո՛չ զմի ոք յօտարաց անտի: Եւ ասէ ցԲագու ցներքինին իւր, որ էր հազարապետ հաւատարիմ ՚ի վերայ ամենայն ընչից նորա. Երբ հաւանեցո՞ղու ասէ զկինն Հեբրայեցի որ է՛ առ քեզ, ուտել և ընպել ընդ մեզ*: ¹¹Եւ զի՞նչ է այդ այլն կատականաց, թողուլ մեզ զայդպիսի կին, և ո՛չ բնաւ խօսել ընդ նմա. արդ եթէ ո՛չ առցուք զմարդդ և մերձեցուցուք առ մեզ, գուցէ ծաղր ինչ առնիցէ զմեզ: ¹²Եւ ել Բագու յերեսաց Յողովեռնեայ. և եմուտ առ նա և ասէ ցնա. Մի՛ դանդաղեսցի աղախինդ գեղեցիկ գալ՝ առ տէր իմ՝ և փառաւորել ՚ի նմանէն. և ընպել ընդ նմա զգինի ուրախութեանն մէք հանդերձ. և եղիցիս դու այսօր իբրև զդուստր մի յորդւոց Ասուրայ, որք կան ՚ի սպասու Նաբուքոդոնոսորայ արքայի: ¹³Եւ ասէ ցնա Յուդիթ. Եւ ո՞վ ոք եմ ես որ ընդդէմ դառնամ տեսոն ինուն: ¹⁴Ձի զամենայն որ ինչ հաճոյ է առաջի աչաց քոց փութալով՝ առնեն. և եղիցի ինձ ՚ի ցնծութիւն մինչև յօր մահուան իմոյ: ¹⁵Եւ յարեալ զարդարեցաւ զարդու իւրով՝ ըստ զարդու կանանց: Եւ մատեաւ նաժիշտ իւր, և արկ նմա բազմական ՚ի գետնի դէմ յանդիման Յողովեռնեայ զակումբն մաշկեայ, զոր ա՛ն նա ՚ի Բագուայ ՚ի հանապազորդ սպաս նմա. և բազմեցաւ Յուդիթ ՚ի վերայ նորա*: ¹⁶Եւ յիմարեցաւ Յողովեռնէս ՚ի գուր երեսաց նորա, և խռովեցաւ անձն

* Ոսկան. Ձոր բերի ՚ի քաղաքէ:

* Յօրինակին պակասէր. Եւ ննջեաց նա անդ մինչև: Ոմանք. Յառաւօտուն պահու:

* Յօրինակին պակասէր. Եւ ելանէր նա ՚ի գիշերին: Ոմանք. Եւ մկրտէր նա ՚ի բանա՛:

* Անունս Բագու՝ ՚ի գիրս յայս գրեթէ յամենայն օրինակս մեր աղաւաղեալ ՚ի գրչաց դնի պէսպէս եղանակաւ. զի ըստ մեծի մասին գրի՝ Բագու. և երբեմն Դաբու. նաև մերթ առ ոմանս Աբուդ. որ ՚ի մէնջ ըստ պատշաճի ամենայն ուրեք միապէս եղաւ համենատ բնագրին Բագու:

* Ոմանք. Ձի զամենայն ինչ որ հաճոյ է... մինչև յօր մահուն իմոյ:

* Ոմանք. Ձոր ա՛ն նա ՚ի Գաբաւուայ ՚ի հանա՛:

նորա. և է՛ր ՚ի ցանկութեան մեծի լինել ընդ նմա. և խնդրէր Յողովեռնէս խաբել զնա յօրէն յայնմանէ յորմէ ետես զնա*։ ¹⁷Եւ ասէ ցնա Յողովեռնէս. Ա՛րբ դու և լէ՛ր առ մեզ ուրախ: Եւ ասէ Յուդիթ. Այո՛ տէր, զի մեծացան յիս կեանք իմ այսօր՝ քան զամենայն աւուրս ՚ի ծննդեանէ իմմէ*։ ¹⁸Եւ ա՛ռ կերաւ և արբ առաջի նորա զոր պատրաստեաց նմա աղախինն իւր: ¹⁹Եւ ուրախ եղև Յողովեռնէս ՚ի վերայ նորա. և արբ նա գինի սաստիկ յոյժ. որչափ ո՛չ էր արբեալ նորա այնչափ յաւուրս իւրում, յօրէ ծննդեանէ իւրմէ:

13

Գլուխ ԺԳ

¹Եւ իբրև երեկոյ՛ եղև փութացոյց զծառայսն իւր զնա՛լ արտաքս. և Բագու փակեաց զդուրս խորանին: Եւ զնացին նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ՛ քան զխորանն. ²քանզի էին ամենեքեան խոնջք և վաստակք ՚ի բագում գիներբուաց անտի: ³Եւ մնացին Յուդիթ և Յողովեռնէս միայն ՚ի խորանին: ⁴Եւ Յողովեռնէս մտեալ ՚ի գահոյս իւր ՚ի քուն եղև, և էր թմբրեալ յոյժ ՚ի գինւոյ անտի: ⁵Եւ ասէ Յուդիթ ցաղախինն իւր, զի կացցէ արտաքոյ խորանին և սպասեսցէ նմա՝ յորժամ ելանիցէ արտաքս որպէս և յայլ աւուրսն. զի ասաց նմա թէ երթամ կալ յաղօթս ըստ սովորութեանն. և ընդ Բագուայ խօսեցաւ ըստ բանիցս այսոցիկ*։ ⁶Եւ զնացին ամենեքեան ՚ի սենեկէ անտի, և ո՛չ ոք մնաց ամենևին անդ: Եւ եկաց Յուդիթ առ գահոյս նորա՝ և ասէ. Տէր Աստուած զօրութեանց՝ նայեաց՛ ՚ի ժամուս յայսմիկ ՚ի գործս ձեռաց իմոց՝ և ՚ի բարձրութիւն Երուսաղէմի*։ ⁷զի այժմ է ժամանակ այց առնել քեզ ժառանգութեան քում, և առնել զգործս զայս ՚ի ձեռս իմ, ՚ի սատակումն թշնամեաց մերոց որք յարուցեալ են ՚ի վերայ մեր: ⁸Եւ մատեա՛ւ առ քանուն գահոյիցն, որ էր ընդ սնարսն Յողովեռնեայ, և եհան զդաշոյն նորա յազդերէ՛ նորա. ⁹և կալա՛ւ զիերաց նորա՝ և ասէ. Զօրացո՛ զիս Աստուած Իսրայէլի յաւուրս յայսմիկ: ¹⁰Եւ եհա՛ր ՚ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով: Եւ հատեալ եբարձ զգլուխ նորա. ¹¹և թաւալեցոյց ընկէ՛ց զմարմին նորա ՚ի գահոյից անտի: Եւ յետ ժամու միոջ՝ ել և ետ նաժշտին իւրում զգլուխն Յողովեռնեայ*։ ¹²և ընկէց ՚ի մախաղ կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկոքին ՚ի միասին ըստ սովորութեանն իւրեանց, և անցին նոքա ըստ բանակն, և շրջեցան եկին ընդ ձորն. և ելին նոքա ՚ի լեռանն Բետիղուայ. ¹³և եկին նոքա ՚ի դրունս քաղաքին: Եւ ասէ Յուդիթ ՚ի հեռաստանէ ցպահապանս դրանցն. Բացէ՛ք բացէ՛ք արդ զդրունսդ, զի ընդ մե՛զ է Տէր Աստուած մեր, արասցէ՛ ևս զօրութիւն յիսրայէլի, և ՚ի բեկումն թշնամեաց մերոց. որպէս և արա՛ր այսօր*։ ¹⁴Եւ եղև իբրև լուան արք քաղաքին նորա զձայն նորա, փութացան իջանել ՚ի դրունս քաղաքին իւրեանց. և կարդացին նոքա զքահանայսն և զծերս ժողովրդեանն: ¹⁵Եւ ժողովեցան ՚ի փոքուէ մինչև ցմեծամեծս, քանզի զարմացեալ էին նոքա յոյժ ընդ զնալն նորա: Եւ բացի՛ն

* *Ի բագումս պակասի.* Երեսաց նորա, և խռովեցաւ ամձն նորա:

* *Ոմանք.* Եւ լէ՛ր ընդ մեզ ուրախ:

* *Այլք.* Եթէ երթամ կալ յա՛:

* *Ոմանք յաւելուն.* Եւ եկաց Յուդիթ յաղօթս առ գահոյս նորա:

* *Ոմանք.* Եւ յետ ժամու միոյ... նաժշտին իւրոյ զգլ՛:

* *Այլք.* Զօրութիւնս յիսրայէլի:

գղումն քաղաքին, և առին զնոսա՝ ՚ի ներքս՝¹⁶ և լուցին զլապտերս իւրեանց, և կացին շուրջ զնոքօք: ¹⁷Եւ ասէ Յուդիթ բարձրաձայն բարբառով. Ո՛րդիք Իսրայէլի օրհնեցէ՛ք զԱստուած, ¹⁸որ ո՛չ մերժեաց զողորմութիւն իւր ՚ի տանէս Իսրայէլի. այլ եհար վանեաց զթշնամիս մեր ՚ի ձեռն իմ ՚ի գիշերիս յայսմիկ՝: ¹⁹Եւ եհան զգլուխն ՚ի մախաղէն և եցոյց նոցա. և ասէ ցնոսա. Ահաւասիկ գլուխն Յողովեռնեայ զօրագլխի զօրացն Ասուրայ. և ահա վարագո՛յրքն պատուականք ընդ որով անկեալ դնէր յարբեցութեան իւրում՝ և սատակեաց զնա Տէր Աստուած ՚ի ձեռն կնոջս: ²⁰Կենդանի՛ է Տէր որ պահեաց զիս ՚ի ճանապարհին յայնմիկ յորում գնացին. զի խաբեաց զնա տեսիլ երեսաց իմոց ՚ի կորո՛ւստ նմին, և ո՛չ արար նա ընդ իս պղծութիւն ՚ի նախատինս անձին իմոյ: ²²Եւ գոհացան ամենայն ժողովուրդքն, և խոնարհեալ երկիր պագին Աստուծոյ. և ասեն միաձայն ամենեքին. Օրհնեա՛լ ես դու Տէր Աստուած մեր, որ յամօ՛թ արարեր այսօր զթշնամիս ժողովրդեան քոյ: ²³Եւ ասէ Ոգիա ցՅուդիթ. Օրհնեալ ես դու դուստր՝ յԱստուծոյ բարձրելոյ, քան զամենայն կանայս որ ՚ի վերայ երկրի՝. ²⁴և օրհնեալ Տէր Աստուած որ արար զերկինս և զերկիր. որ յաջողեացն քեզ ՚ի վերայ գլխոյ իշխանիդ այդորիկ թշնամոյ մերոյ: ²⁵Եւ ո՛չ պակասեցէ անունդ քո ՚ի մարդկանէ, առ ՚ի յիշելոյ զքեզ առաջի Աստուծոյ մինչև յաւիտեան. և արասցէ զքեզ Տէր Աստուած իմ ՚ի բարձրութիւն անձին քո. և այցելու՛ լիցի քեզ ՚ի բարիս. փոխանակ զի ո՛չ խնայեցեր դու յանձն քո վասն տառապանաց ազգի մերոյ. այլ խնդրեցեր զվրէժ կործանման հարուածոցս մեր. զնացեալ քո ուղիղ զճանապարհս առաջի Տեառն մերոյ՝: ²⁶Եւ ասէ ամենայն ժողովուրդն. Եղիցի՛ եղիցի:

14

Գլուխ ԺԴ

¹Եւ ասէ Յուդիթ ցնոսա. Լուարո՛ւք դուք ինձ եղբարք զոր ասեմս ձեզ. և առէ՛ք զգլուխս զայս, և կախեցէ՛ք զսա առաջի մահարձանաց պարսպաց քաղաքիս: ²Եւ եղիցի յորժամ մերկասցի առաւօտն և ծագեցէ արեգակն յերկիր, վառեցարո՛ւք ամենայն արք զօրաւորք պատերազմի, և կացուցանիցէք ՚ի վերայ ձեր զօրավարս, և ելանիցէք արտաքոյ քաղաքիս, իբրև թէ իջանիցէք ՚ի դաշտ անդր ՚ի թև մի պարսկապանաց որդւոցն Ասուր. և անդր մի՛ իջանիցէք՝. ³այլ խռով հարկանիցէք նոցա. և նոքա առցեն զգէնս իւրեանց, և զնասցեն ՚ի բո՛ւն բանակն իւրեանց, և յարուցանիցեն զզօրագլուխսն Ասուր. և ժողովեալք դիմեսցեն ՚ի խորանն Յողովեռնեայ, և զնա ո՛չ գտանիցեն. ⁴և անկանիցի ՚ի վերայ նոցա ա՛հ, և ՚ի փախուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց: ⁵Եւ դուք զկնի՛ մտեալ, և ամենայն բնակիչք սահմանացս Իսրայէլի՝ տապա՛ստ արկեալ վանիջիք զնոսա յամենայն ճանապարհս նոցա: Եւ արդ մինչչե՛ւ արարեալ զայս, կոչեցէ՛ք առ իս զԱքիովր Ամոնացի, զի տեսցէ՛ զայս որ ընդ ո՛ւտն եհար

* Ոմանք. Մինչև ՚ի մեծամեծս: Բազումք. Նոքա յոյժ ընդ գալն նորա:

* Ոմանք. Վանեաց զթշնամիս ձեր:

* Ոմանք. Կանայս ՚ի վերայ երկրի:

* Այլք. Ձի ո՛չ պակասեցէ ա՛հ: Ոմանք. Ազգի մերում. այլ խնդրեցեր դու զվրէժ...

հարուածոցս մերոց, զնացեալքս ուղիղ:

* Յօրինակին. Իբրև թէ իջանիցէ ՚ի:

գտունս Իսրայէլի. որ կապեացն զնա, և ե՛տ ածել այսր ՚ի մահ: Եւ կարդացին զԱքիովր ՚ի տանէն Ոգիայ: Եւ իբրև եկն ետե՛ս նա զգլուխն Զողովեռնեայ ՚ի ձեռն ա՛ռն միոջ ՚ի ժողովրդեանն, անկա՛ւ ՚ի վերայ երեսաց իւրոց՝ և թաւալեցաւ: Եւ իբրև անդրէ՛ն զօրացաւ, անկեալ առ ոտս Յուդթայ՝ երկի՛ր եպագ նմա՝ և ասէ. Օրհնեա՛լ ես դու յամենայն բնակութիւնս Յուդայ. և ընդ ազգս ամենայն ուր և լսիցեն զանուն քո զարմասցին. և արդ՝ պատմեա՛ դու ինձ, ո՞րպէս արարեր յաւուր յայսմիկ: Եւ պատմեաց նմա Յուդիթ առաջի ամենայն ժողովրդեանն իւրոյ, զոր էր նորա արարեալ յօրէ յայնմանէ յորում ել նա մինչև ցա՛յն ժամ: Եւ իբրև դադարեաց Յուդիթ ՚ի խօսից իւրոց, աղաղակեաց ժողովուրդն մեծածայն փառաւորել զԱստուած ՚ի քաղաքին իւրեանց*։ ⁶Եւ իբրև ետես Աքիովր զայն ամենայն զոր արար Աստուածն Իսրայէլի, հաւատաց յԱստուած ամենայն սրտիւ իւրով. և թլփատեր ՚ի մարմին անթլփատութեան իւրոյ, և յաւելաւ նա ՚ի տունն Իսրայէլի մինչև ցա՛յս օր: ⁷Եւ յորժամ ծագեաց առաւօտն, կախեցին զգլուխն Զողովեռնեայ ՚ի պարսպէ՛ անտի. և վառեցաւ ամենայն այր զգէն իւր. և ելին նոքա առնել զայն ընդ անցս կողմանն ՚ի վերայ լերինն: Եւ որդիքն Ասուր իբրև տեսին զնոսա՝ ա՛զդ արարին նոքա առ առաջնորդս իւրեանց, և եկին նոքա առ զօրագլուխս և առ իշխանս և առ հազարապետս նոցա*։ ⁸Եւ դիմեցին նոքա ՚ի խորանն Զողովեռնեայ, և ասեն ցտենեկապետ նորա. Արդ մուտ յարո՛ զտէրդ մեր. զի իշխեցին ծառայքն ՚ի վերայ մեր ՚ի պատերազմ. զի սատակեսցուք զնոսա ՚ի սպառ: ¹³Եւ եմուտ Բագու և բախեաց զդուրս սենեկին. քանզի կարծէր թէ ՚ի քո՛ւն իցէ հանդերձ Յուդթաւ: ¹⁴Իբրև ո՛չ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ ՚ի ներքս ՚ի սենեակն, և ետես զի անկեալ կայր ՚ի վերայ գետնոյն մերկ, և գլուխն իւր բարձեալ էր ՚ի նմանէն: Եւ զոչեաց Բագու ձայնիւ մեծաւ, և լալով և ողբմամբ յոյժ, և պատառեաց նա զպատմուճան իւր*։ ¹⁵Եւ եմուտ նա ՚ի սենեակն Յուդթայ՝ և ո՛չ եգիտ զնա. և ել ընթացաւ նա առ զօրսն և ասէ*։ ¹⁶Ապստամբեցին ծառայքն, զի արար ամօթ նախատանաց կի՛ն մի Զեբրայեցի տան արքայի Նաբուքոդոնոսորայ, զի ահաւասիկ Զողովեռն յերկի՛ր կործանեալ, և գլուխ իւր չէ՛ առ նմա: ¹⁷Եւ իբրև լուան զայս բանս իշխանք զօրացն Ասուրայ, պատառեցին ամենեքեան զպատմուճանս իւրեանց և երկեան յոյժ*։ ¹⁸Եւ զոչեցին նոքա ՚ի մէջ բանակին:

15

Գլուխ ԺԵ

¹Եւ իբրև լուան որք ՚ի վրանսն էին, յիմարեցան վասն իրացն որ եղեն: ²Եւ անկաւ ՚ի վերայ նոցա ա՛հ և դողունն յոյժ. և ապա ո՛չ մնացին ամենեկին այր ընկերի իւրում: ³Եւ հեղեալք զբաղեալք առ հասարակ ՚ի փախո՛ւստ դարձան ՚ի դաշտակողմանն և ՚ի լեռնակողմանն ⁴շուրջ զԲետիղուա. և դարձեալ անտի փախստեայք լինէին: Եւ ապա ամենայն այր պատերազմօղ որդւոցն Իսրայէլի

* *Ոմանք.* Եւ իբրև եկն և ետես նա... ՚ի ձեռին առն:

* *Ոսկան.* Եւ վառեցաւ ամենայն այր ՚ի գէն իւր: *Ոմանք.* Ազդ արարին նոքա յառաջնորդս իւ՛ր:

* *Այլք.* Եւ լալով և ողբմամբ մեծաւ յոյժ:

* *Ոսկան.* Նա առ զիւրսն և ասէ:

* *Ոմանք.* Լուան զայն բանս:

յարձակեցան ՚ի վերայ նոցա: ⁵Եւ առաքեաց Ոգիա ՚ի Բեռնեթեմ, և ՚ի Քոբա, և ՚ի Կովլա, և յամենայն սահմանս Իսրայէլի աւետաւորս վասն իրացն որ եղեն. զի ամենեքին առ հասարակ ժողովեսցին և մտցեն զհետ նոցա սատակել՝ զնոսա*:

⁶Եւ իբրև լուան որդիքն Իսրայէլի, ամենեքեան առ հասարակ յարձակէին անկանէին ՚ի վերայ նոցա, և կոտորէին հարկանէին զնոսա մինչև ՚ի Քոբա. սոյնպէս և Երուսաղէմացիքն առնէին: Եւ ամենեքեան որք ՚ի լեռնակողմանցն եկեալ էին՝ պատմեցին նոցա որ եղև ՚ի բանակին. և որք ՚ի Գաղաաղն էին, և որք ՚ի Գալիլեայ, հասանէին հարկանէին վանէին զնոսա, մինչև անցուցանէին զնոսա ընդ Դամասկոս և ընդ սահմանս նորա: ⁷Եւ այլ բնակիչքն Բետիղուայ ելանէին անկանէին ՚ի վերայ բնակչացն բնադրացն Ասուրայ, աւար հարկանել՝ ժողովել զառ զապուռ բանակացն, յորս յղկացան լցան մեծացան յոյժ բնակիչքն Բետիղուայ*:

⁸Եւ որդիքն Իսրայէլի դարձան ՚ի կոտորածէ անտի. և սկսանէին ժողովել զկապուտ կողոպուտ զանկելոցն: Եւ գեօղքն և ագարակքն լեռնակողմանցն և դաշտականացն եկեալ առնուին զմնացորդս յոյժ աւարացն*:

⁹Եւ Յովակիմ քահանայ՝ մեծ՝ և ծերակոյտ որդւոցն Իսրայէլի որք բնակեալ էին յերուսաղէմ, եկին տեսանել զբարութիւնսն զոր արար Տէր Աստուած Իսրայէլի, և տեսանել զՅուդիթ՝ և խօսել ընդ նմա զխաղաղութիւն: ¹⁰Եւ իբրև մտեալ տեսին զնա՝ օրհնեցին զնա ամենեքեան միաբան՝ և ասէն ցնա. Դո՛ւ բարձրութիւն Երուսաղէմի. դո՛ւ ցնծութիւն Իսրայէլի. դո՛ւ պարծանք ազգիս մերոյ. ¹¹զի արարեր զայս ամենայն բարութիւնս ձեռօք քովք Իսրայէլի. և հաճեցա՛ւ ընդ նոսա Աստուած. և օրհնեալ եղիջիր դու յամենակալէն Աստուծոյ մինչև յաւիտեան*:

¹²Եւ ասէ ամենայն ժողովուրդն. Եղիցի՛: ¹³Եւ ժողովուրդն կրէին զաւար բանակին զաւուրս երեսուն: Եւ ետուն Յուդայ զխորանն Զողովեռնեայ, և զամենայն զարծաթ խորանին՝ և զգահոյսն. և զամենայն զսպասսն զոսկւոյ և զարծաթոյ նորա: Եւ նորա առեալ կուտէ՛ր զայն ՚ի սայլս իւր, և ՚ի վերայ գրաստուց իւրոց և բերէր ՚ի ներքս ՚ի քաղաքն*:

¹⁴Եւ եկին առ նա ամենայն կանայք որդւոցն Իսրայէլի տեսանել զնա. և օրհնեցին զնա. և նուագէին նմա երգս պարուք: Եւ առեալ նորա ո՛ստս արմաւենեաց և ձիթենեաց ծաղկօք հանդերձ, և տայր նոցա: ¹⁵Եւ այլ ևս կանայք մեծամեծք տեղեացն գային գունդագունդք՝ գովել զնա: Եւ ամենայն Իսրայէլ զկնի՛ երթային նոցա վառեալք և կազմեալք՝ պսակս գունակս գունակս ՚ի գլուխս իւրեանց. և օրհնութիւնք ամենեցուն ՚ի բերանս իւրեանց փառաւորել զԱստուած:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ սկսաւ Յուդիթ օրհնել զօրհնութիւնս զայս. և ամենայն Իսրայէլ նուագէին ընդ նմա: ²Եւ ասէ Յուդիթ. Երգեցէ՛ք Տեառն թըմբկօք, և օրհնեցէ՛ք զնա ծնծղայիւք. և ուղղեցէ՛ք նմա երգս և օրհնութիւնս: Բարձր արարէք զնա և կարդացէք զանուն նորա: ³Ձի Աստուած խորտակէ զպատերազմունս Տէր. ⁴և

* Ոճանք. Եւ ՚ի Քոբա, և ՚ի Կովա, և յամենայն:

* Ոսկան. Ձառ և զապուր բանակացն... լցան և մեծացան:

* Ոսկան. Ձկապուտն և զկողոպուտ անկելոցն... և դաշտականաց. և եկեալ առ՛:

* Ոճանք. Օրհնեալ լիջիր դու յամե՛:

* Ոճանք. Եւ ՚ի վերայ գրաստուց իւր՝ և բերին ՚ի ներքս:

գբանակս նորա 'ի մէջ ժողովրդոց. փրկեաց զիս 'ի ձեռաց հալածչաց իմոց:
⁵Եկն Ասուր 'ի լերանցն հիւստոյ. եկն 'ի բիրաւորս զօրօք իւրովք, որոց
բազմութիւնն ծածկեաց զձորս. և բազմութիւն երկվարաց նորա ծածկեաց
զբլուրս: ⁶Եւ ասաց հրծի՛գ առնել զսահմանս իմ, և գերիտասարդս իմ ընդաթո՛ւր
հարկանել. և զտղայս իմ աւա՛ր հարկանել. և զկուսանս իմ վարել 'ի գերութեան:
⁷Տէր Աստուած ամենակալ կործանեա՛ց գնոսա 'ի ձեռն կնոջ: ⁸Ձի ո՛չ անկաւ
հզօրն նոցա յերիտասարդաց, և ո՛չ որդիք տիտանացուց սատակեցին զնա, և
ո՛չ բարձունք հսկայք յարեան 'ի վերայ նորա. այլ Յուդիթ դուստր Մերարեայ,
գեղեցկութիւն երեսաց յո՛յժ խաբեաց զնա՛: ⁹Ձի մերկացաւ զհանդերձն
այրութեան իւրոյ՝ 'ի բարձրութիւն այնոցիկ որք կռփեալք էին յիսրայէլի: ¹⁰Եւ օժ
զերեսս իւր յանոյշ իւղոց. և յօրինեաց զգլուխ իւր զարդու իւրով. և ա՛ռ
զշղաշատեռն 'ի խաբութիւն նորա՛. ¹¹և 'ի գեղ ոտից կօշկաց նորա մուրեցաւ
սիրտ նորա. և գեղեցկութիւն նորա գերեա՛ց զանձն նորա. և էանց դաշոյնն ընդ
փողս նորա: ¹²Դողացան Պարսիկք 'ի քաջասրտութենէ նորա. և Մարք 'ի
քաջութենէ նորա խռովեցան: ¹³Յա՛յս ժամ աղաղակեցին տառապեալքն իմ, և
գոչեցին հիւանդքն իմ, և յաղթեցան. բարձրացուցին զձայնս իւրեանց և լքան՛:
¹⁴Որդիք աղջկանց խոցոտեցին զնոսա. և որպէս զորդիս տնանկաց
պանդխտաց կոտորէին. և կորեան 'ի պատերազմէ Տեառն իմոյ: ¹⁵Օրհնեցից
զՏէր Աստուած իմ յօրհնութիւն նոր՛: ¹⁶Տէր մե՛ծ ես դու և փառաւորեալ.
սքանչելի՛ ես զօրութեամբ անպակաս: ¹⁷Քե՛զ ծառայեսցեն ամենայն
ստացուածքս քո. զի ասացե՛ր և եղեն. առաքեցեր զհոգի՛դ քո՝ և ստացան և
շինեցան, և ո՛չ ոք է որ ընդդէ՛մ կայ ձայնի քոյ՛: ¹⁸Քանզի լերինք 'ի հիմանէ
ջրովքն հանդերձ սասանեցան. և վէնք առաջի երեսաց քոց իբրև զնոմ
հալեցան. և երկիւղածա՛ց քոց քաւիչ լինիս դու նոցա: Եւ ամենայն սակաւիկ
զոհ 'ի հո՛տ անուշութեան, և չնչի՛ն ճարպն՝ քեզ յողջակէզս է՛: ¹⁹Այլ որ
երկիւղածն է՛ նա մե՛ծ է յաւիտեան: ²⁰Վա՛յ ազգացն այնոցիկ որք յարուցեալ են
'ի վերայ ազգիս մերոյ. և Տէր ամենակալն խնդրեսցէ վրէ՛ժ 'ի նոցանէ յաւուրն
դատաստանի: ²¹Եւ տայ հուր և զորդունս 'ի մարմինս նոցա, և լացցեն նոքա՛ 'ի
սզման մինչև յաւիտեան՛: ²²Եւ իբրև չոզան՝ նոքա յերուսաղէմ, երկիր պագին
Աստուծոյ. և յորժամ սրբեցաւ ժողովուրդն, հանի՛ն զողջակէզսն իւրեանց, և
զկամայականսն և զպատարագս իւրեանց: ²³Եւ եհան նուիրեա՛ց Յուդիթ
զամենայն զկահն և զկարասին Յողովեռնեայ, և ե՛տ զայն 'ի նուէրս Տեառն
Աստուծոյ: ²⁴Եւ ուրախ լինէր ժողովուրդն յերուսաղէմ դէ՛մ յանդիման սրբոցն
զամիսս երիս: Եւ Յուդիթ մնա՛յր ընդ նոսա: ²⁵Եւ յետ աւուրցս այսոցիկ՝ չուեցին
զնացին իւրաքանչիւր 'ի ժառանգութիւնս իւրեանց: Եւ Յուդիթ զնաց 'ի
Բետիղուա, և դարմանէ՛ր զտուն իւր: ²⁶Եւ եղև 'ի ժամանակէ անտի յայնմանէ
փառաւորէր անուն նորա ընդ ամենայն երկիր: ²⁷Եւ բազումք ցանկացան նմա
զամենայն աւուրս կենաց նորա, յորմէ՛ հետէ մեռաւ Մանասէ՛ այրն նորա և
յաւելաւ 'ի ժողովուրդ իւր: ²⁸Եւ լինէր Յուդիթ մեծացեալ և պատուեալ օր քան

* *Ոմանք.* Դուստր Մերարայի: *Ոսկան.* Գեղեցկութեամբ երեսաց:
* *Ոմանք.* Յանոյշ իւղոյ... զարդու իւղով. և ա՛ռ նա զշղաշատեռն:
* *Ոսկան.* Յայնժամ աղաղակէ՛:
* *Ոմանք.* Յօրհնութիւն 'ի նոր:
* *Յօրինակին.* Ձիոգիդ քո. *կարմրադեղով նշանակի:*
* *Բազումք.* Ձի ամենայն սակաւիկ զոհ:
* *Օրհնակ մի.* Եւ լացցեն նոքա՛ 'ի սրումն:

զօր: Եւ ծերացաւ նա անդէն ՚ի տան առնն իւրոյ ամս հարիւր հինգ. և ազատեաց նա զնաժիշտն իւր: Եւ մեռաւ նա ՚ի Բետիդուա. և թաղեցին զնա ՚ի շիրմի առն իւրոյ Մանասէի: ²⁹Եւ սո՛ւզ առին ՚ի վերայ նորա ամենայն տունն Իսրայէլի զաւուրս եւթն: Եւ բաժանեաց նա զինչս իւր՝ մինչչև՝ մեռեալ էր ինքն՝ ամենեցուն որ ազգականք էին Մանասէի առն նորա, և ամենեցուն որք մերձաւորք էին իւր, սո՛յնպէս բաժանեաց՝: ³⁰Եւ ո՛չ ոք էր որ զարհուրեցուցանէր զորդիսն Իսրայէլի յաւուրս Յուդթայ, և յե՛տ մեռանելոյ նորա զաւուրս բազումս:

Կատարեցաւ Յուդիթ*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՏՈՎԲԻԹԱՅ

Տովբիթ ՚ի գերելոցն է Սաղմանասարայ, և բնակեաց ՚ի Նինուէ. իսկ յետ այնր իբրև Սենեքերիմ դարձաւ ամօթով յերուսաղեմէ, զբազումս ՚ի Յրէիցն սպանանէր ՚ի Նինուէ, զորս և թաղէրն Տովբիթ: Վասն որոյ խնդրեաց զնա սպանանել Սենեքերիմ. յորոյ երեսաց փախուցեալ, յետ սպանման Սենեքերիմայ յորդուոց իւրոց՝ դարձաւ Տովբիթ ՚ի Նինուէ: Գուշակեաց զաւերն Երուսաղեմի, և զիրկիզութիւն տաճարին ՚ի Նաբուքոդոնոսորայ, ևս և զդարձ գերւոյն, և զվերստին շինումն տաճարին. զբառնիլ կռապաշտութեանն յերկրէ, և զդառնալն յԱստուած՝ հեթանոսաց: Պատուէր ետ որդւոյ իւրոյ Տուբիայ ելանել ՚ի Նինուէ. զի կործանելոց է ըստ բանին Յովնանու. որ եղև առ Տուբիաւ. զի գերեալ կործանեցաւ Նինուէ ՚ի Նաբուքոդոնոսորայ՝ որպէս սպառնացաւն Նաւոււմ: Եւ կանխագոյն է իրքս Տովբիթայ քան զգերիլն Երուսաղեմի:

ՏՈՎԲԻԹ

1

Գլուխ Ա

¹Գիրք բանից Տովբիթայ որդւոյ Տովբեղ՛եայ. որդւոյ Անանիելեայ. որդւոյ Անաւեղայ. որդւոյ Գաբայեղ՛այ. ՚ի զաւակէ Սասիեղ՛այ. յազգէ Նեփթաղիմայ՝: ²Որ գերեցաւն յաւուրս Ենեմեսարու թագաւորին Ասորեստանեայց ՚ի Թեզբուէ. որ է ընդ աջմէ կողմանցն Նեփթաղիմայ ՚ի Գալիլեայ ՚ի վերայ Ասէի: ³Ե՛ս Տուբիթ զճանապարհս ճշմարտութեան զնացի, և յարդարութեան զամենայն աւուրս կենաց ինոց. և ողորմութիւնս բազումս արարի ես եղբարց ինոց՝ և ազգին իմում որ ընդ իսն էին յերկրին Ասորեստանեայց ՚ի Նինուէ: ⁴Եւ յորժամ էի ես ՚ի

* Ոմանք. Մերձաւորքն էին իւրոյ: Ոմանք. Այնպէս բաժանեաց:

* Ի վախճանի, ոմանք. Կատարեցաւ Յուդիթ գիրքս:

* Ոսկան. Ի զաւակէն Ասիելեայ:

գաւառին իմուն յերկիրն Իսրայէլի, և մինչդեռ մանուկն էի, ամենայն ազգն
 Նեփթաղիմայ իմոյ մերժեցան՝ ՚ի բաց եղեն ՚ի տաճարէն Երուսաղեմէ. զոր
 ընտրեալն էր յամենայն ազգացն Իսրայէլի զոհել յամենայն տոհմս. և սրբեցաւ
 տաճարն բնակութեան Բարձրելոյն, և շինեցաւ յամենայն աւուրս յաւիտենից՝
 5 Եւ ամենայն ազգքն որք ապստամբք էին՝ ՚ի զոհելն Բահաղու երնջուն, և տունն
 Նեփթաղիմայ իմոյ՝ 6 Եւ ես միայն երթայի բազում անգամ յերուսաղէմ ՚ի
 տօնս տարեկանաց, որպէս և գրեալ է ամենայն Իսրայէլի հրամանաւ
 յաւիտենից. զպտուղս և զտասանորդս զարդեանց, և զպատարագսն զոր
 ունէին. և տայի զայն քահանայիցն որդւոցն Ահարոնի, առաջի սեղանոյն
 յամենայն արդեանցն: Եւ զտասանորդսն տայի որդւոցն Ղևեայ, որք
 պաշտօնեայքն էին յերուսաղեմի: 7 Եւ զերկրորդ տասանորդսն ժողովէի և
 վաճառէի, և երթայի ծախելի զայն ամենայն յերուսաղէմ ըստ ամենայն
 տարեկանի՝ 8 Եւ զերրորդն տայի՝ որոց արժան էր. որպէս պատուիրեաց
 Դերուա մայր իմոյ. զի ո՛րք մնացեալ էի ես ՚ի հօրէն իմնէ՝ 9 Եւ յորժամ եղէ՝
 այր՝ առի ես ինձ կին ՚ի զաւակէ հայրենի իմոյ, և ծնայ ես ՚ի նմանէ զՏուբի՝ 10 Եւ
 յորժամ գերի՝ վարեցայ ՚ի Նինուէ, ամենայն եղբարք իմ և ա՛զգ իմ ուտէին ՚ի
 հացէ անտի հեթանոսացն. 12 և ես պահեցի՝ զանձն իմ, զի մի՛ կերայց քանզի
 յիշէի ես զԱստուած յամենայն անձնէ իմնէ՝ 13 Եւ ե՛տ ինձ Բարձրեալն շնորհս՝ և
 զեղեցկութիւն առաջի Նեմեսարայ, և էի նորա վաճառական. 15 Երթայի ես ՚ի
 Մարս: Եւ եղի ես ՚ի պահեստի առ Գաբայէղայ եղբօրն Գուրիայ, ՚ի Յռագա
 յերկիրն Մարաց՝ արժաթոյ քանքարս տասն՝ 18 Եւ յորժամ մեռաւ Նեմեսար, և
 թագաւորեաց Սենեքերիմ որդի նորա փոխանակ նորա. և զի էր խռով յամս
 նորա, ո՛չ եղև ինձ երթալ յերկիրն Մարաց՝ 19 Եւ յաւուրս Նեմեսարայ
 ողորմութիւնս բազումս առնէի ես եղբարց իմոց. 20 զհա՛ց իմ տայի քաղցելոց, և
 զձորձ իմ մերկոց. և զոր տեսանէի ես յազգէն իմնէ թէ մեռեալ էր, և ընկենուին
 զնա արտաքոյ պարսպին, և ե՛ս թաղէի: Եւ կամ թէ յորժամ սպանանէր զոք
 Սենեքերիմ արքայ՝ 21 յորժամ եկն փախստական ՚ի Յրէաստանէ. գողանայի՛ և
 թաղէի զնոսա. վասն զի զբազումս կոտորեաց սրտմտութեամբ իւրով, և յետոյ
 խնդի՛ր արար մարմնոց դիականցն, և ո՛չ եզիտ՝ 22 Եւ եմուտ մի ոմն ՚ի
 Նինուէացւոց անտի, և իմացուցանէր թագաւորին վասն իմ զդիակունսն
 թաղելոյ. և թաքեայ, զի գիտացի՛ ես եթէ խնդրէն սպանանել զիս. և զահի՛
 հարեալ փախստեայ գնացի: Եւ յափշտակեցան ամենայն ինչք իմ՝ 23 և ո՛չ մնաց
 բնաւ ինչ, բայց միայն կայ կինն իմ. և Տուբի՛ որդին իմ՝ 24 Եւ ո՛չ անցին աւուրք
 յիսուն. մինչև սպանին զնա երկոքին որդիքն իւր. և փախեան նոքա ՚ի լերինս

* Այլք. Յերկիրն Իսրայէլի... ՚ի բաց եղեն ՚ի տաճարէն Երուսաղեմի: *Ուր Ոսկան.* Եւ ՚ի բաց եղեն:

* *Ոսկան.* Եւ ամենայն ազգք նորա ապստ՝: *Յօրինակին.* Ձոհելն Բահաղու:

* *Ոմանք.* Եւ զերկրորդ տասանորդ տասանորդսն ժո՛:

* *Ոմանք.* Դերուա մայր իմոյ: *Ուր Ոսկան.* Դեբօրա մայր:

* *Ոմանք.* Առի ես ինձ կին զԱննա ՚ի զաւա՛: *Ուր Ոսկան.* ՚ի զաւակէ հայրենոյ իմոյ:

* *Ոմանք.* ՁԱստուած յամենայն սրտէ իմնէ:

* *Ոմանք.* Առ Գաբայէլ եղբօրն... յերկրէն Մարաց:

* *Ոսկան.* Եւ զի էր խռովութիւն յամս նորա:

* *Ոմանք.* Եւ զհանդերձ իմ մերկաց. և զոր... եթէ մեռանէր, և:

* *Ոմանք.* Մարմնոյ դիականցն, և ո՛չ գտաւ:

* *Ոմանք.* Թէ խնդրէ նա սպանանել զիս:

* *Ոսկան.* Բայց միայն Աննա կայ կինն իմ:

Հայոց: Եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա. և կարգեաց նա զԱքիաքարոս զԱնայէլ որդի եղբօր իմոյ ՚ի վերայ ամենայն իշխանաց թագաւորութեանն իւրոյ, և ՚ի վերայ ամենայն տան իւրոյ: Եւ աղաչեաց Աքիաքարոս զթագաւորն վասն իմ, ²⁵և եկին դարձուցանել զիս. և եկի՛ ես ՚ի Նինուէ: Եւ էր Աքիաքարոս տակառապետ, և ամենայն գիր համարոյ ելի՛ մտի՛ տան թագաւորին՝ ՚ի ձեռին նորա. և կացոյց զնոսա Քերդոյն երկրորդ իւր. և էր նա եղբօրորդի իմ: Եւ յորժամ եկի ես ՚ի տունն իմ, և ետուն ինձ զԱննա կինն իմ, և զՏուբի զորդին իմ*:

2

Գլուխ Բ

¹Եւ ՚ի տօնին մեծի որ է սուրբն յեւթներորդ շաբաթուն, արարին ինձ ճա՛շ մեծ. և բազմեցայ ուտել և ըմպել*:²Եւ տեսի՛ ես առաջի իմ խորտիկս բազմապատիկս, և ասեմ ես ցորդին իմ. Երթ ա՛ծ դու յեղբարցն մերոց յաղքատաց զորս և զտանես, և ես մնամ քեզ:³Եւ եկն՝ և ասէ. Հայր, մի՛ ոմն յազգէս մերմէ՛ որոյ թափեալ են ոտք նորա, և անկեալ պճղունք նորա. և կայ՛ ՚ի հրապարակի անդ մեռեալ*:⁴Եւ իմ մինչև էր ճաշակեալ՝ չոգայ առի՛ զնա և բերի ՚ի տուն իմ մինչև եմուտ արեգակն.⁵և ընդ երեկս լուացայ և ուտի զհացն իմ տրտմութեամբ:⁶Եւ յիշեցի՛ ես զմարգարտութիւնն Անովսայ՝ որպէս և ասացն. Դարձցին տարեկանքն ձեր ՚ի սուգ, և ամենայն ուրախութիւնք ձեր ՚ի տրտմութիւն: Եւ լացի յոյժ:⁷Եւ յորժամ եմուտ արեգակն, փորեցի և թաղեցի զնա:⁸Եւ մերձաւորքն իմ այսպն առնէին՝ և ասէին. Արդ ո՞չ ևս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ. զի վասն որոյ հալածեցան. դարձեալ եկեալ թաղե՞ զդիակունսն*:⁹Եւ ՚ի նմին գիշերի դարձայ իբրև թաղեցին.¹⁰և ննջեցի ես պղծեալ առ որմոյ գաւթին և զերեսս իմ ո՛չ ծածկեցի:¹⁸Եւ ո՛չ գիտի թէ ճնճղուկք նստէին յառաստաղս անդ. և աչօք բացօք ՚ի վեր հայեի, և ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս իմ: Եւ երթեալ իմ առ բժիշկս ո՛չ ինչ օգնէին ինձ: Եւ Աքիաքարոս դարմանէր զիս ռոճկօք իւրովք, մինչև չոգայ՛ ես յեղմայիդայ*:¹⁹Եւ կինն իմ մանէր և զործեր ձեռօք իւրովք՝ և տայր տերանցն:²⁰Եւ նոքա տային զվարձս նորա. և յաւելին և ետուն նմա ո՛ւլ մնա ևս:²¹Եւ յորժամ եկն նա առ իս, սկսաւ կագել ընդ իս. և ասեմ ես ցնա. Ուստի՞ բերեր դու զուլդ զայդ, մի՞թէ գողունի՛ է, տո՛ւր անդր ցտեարս իւր. զի ո՛չ են ինձ օրէն ուտել զգողունի*:²²Եւ ասէ կինն իմ. Պատի՛ւ ետուն ինձ վասն վարձուց իմոց: Եւ ես անհաւատացի նմա, այլ ստիպէի տա՛լ ցտեարս իւր. և ես իբրև զամօթի հարկանէի ՚ի նմանէ: Եւ նա ասէ ցիս. Ո՞ւր են արդ ողորմութիւնքն քո և արդարութիւնքն. զի ահաւասիկ յայտնի՛ եղեն քեզ:

3

* Ոմանք. Ելի և մտի տան թագա՛:

* Այլք. Եւ արարին ինձ ճաշ:

* Ոմանք. Որ են թափեալ ոտք նորա:

* Ոմանք. Երկնչի ՚ի մեռանել... եկեալ թաղել զդիակունս:

* Այլք. Եթէ ճնճղուկք նստին յառաս՛: Ոմանք. Ձերաջերմ յաչս իմ:

* Ոմանք. Միթէ գողօն իցէ: Յօրինակին պակասէր. Օրէն ուտել զգողունի:

Գլուխ Գ

¹Եւ ես տրտմեցայ և լացի. և յարեայ կացի յաղօթս զայրագին սրտիւ. ²և ասեմ. Արդար ես դու Տէր՝ և ամենայն գործք քո, և ամենայն ճանապարհք քո ողորմութիւն և զղատաստանս՝ և զճշմարիտն և զարդարն դատես մինչև յաւիտեան: ³Նայեա՛ առ իս և յիշեա՛ զիս, և մի՛ հատուցաներ ինձ ըստ մեղս իմ, և ըստ չարիս իմ, և հարց իմոց որք մեղան առաջի քո: ⁴Ձի անցի՛ն նոքա զպատուիրանօք քովք, ետուր զմեզ ՚ի յափշտակութիւն և ՚ի գերութիւն և ՚ի մահ, և յառակս նախատանաց ընդ ամենայն հեթանոսս ուր և ցրուեալքս եմք: Եւ արդ այժմ Տէր՝ բազում են իրաւունք ճշմարտութեան քոյ՝ ⁵զոր արարեր ընդ իս և ընդ հարս մեր. զի ո՛չ արարաք զպատուիրանս քո, և ո՛չ ևս գնացաք ճշմարտութեամբ առաջի քո՞: ⁶Արդ՝ արա՛ ընդ իս ըստ հաճութեան կամաց քոց. և տո՛ւր հրաման առնուլ զոգի՛ իմ, զի եղէց արծակեալ ՚ի հոգւոյս՝ և եղէ՛ց հող. վասն զի լա՛ւ է ինձ մեռանել քան զայս կեանս իմ. զի նախատինս սո՛ւտս լուայ, և տրտմութիւն բազում է յիս. արծակեա՛ զիս ՚ի վշտաց իմոց ՚ի տեղին յաւիտենից, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն: ⁷Քանզի և ՚ի նմին իսկ աւուր էր լուեալ նորա զիրսն, որ էր անցեալ ընդ Սարրա ընդ դուստրն Յռագուելայ. որ էր յեկբատանս ՚ի Մարաց գաւառին: ⁸Ձի նախատին զաղջիկն աղախնայք հօրն իւրոյ զոր էր տուեալ արանց եւթն. և Ազմոդ՝ ևս դևն չար սպանանէ՛ր զնոսա, մինչչև՛ մերձեցեալ էին ՚ի նա ըստ օրինի արանց և կանանց: Եւ նախատին զնա աղախնայքն և ասէին. Ո՛չ իմանաս՝ զի հեղձուցանես զարսդ քո, զի ահա եւթն այր առեր, և ո՛չ ՚ի միում ո՛չ վայելեցեր՝. ⁹արդ զմեզ զի՞ տանջես, ընդէ՛ր և ո՛չ դու՛ ընդ նոսա կորեար. զի ո՛չ տեսանէաք մեք զգաւակ քո մինչև յաւիտեան: ¹⁰Ձայս իբրև լուաւ աղջիկն՝ տրտմեցա՛ւ յոյժ, և կամեր խեղդել զինքն: Եւ ասէր. Մի՛ եմ ես միամօր հօրն իմում. արդ եթէ առնել զայս՝ նախատինս առնեմ նմա, և իջուցանեմ ես զճերութիւն նորա ցաւօք ՚ի դժոխս՞: ¹¹Եւ կայր նա յաղօթս ընդ պատուհանն որ էր ընդդէմ երուսաղեմի: Եւ ասէր. ¹³Օրհնեալ ես դու Տէր Աստուած իմ. և օրհնեալ է անունդ քո սուրբ և պատուական մինչև յաւիտեան: ¹⁴Եւ արդ Տէր՝ բոլորով սրտիւ իմով աղաչեցի զքեզ. ¹⁵և ասացի հրաժարել հոգւոյս ՚ի մարմնոյս իմմէ. զի մի՛ ևս յաւելից լսել զնախատինսն՞. ¹⁶զի դու Տէր գիտես զի սուրբ եմ ես յամենայն մեղաց կուսութեամբս իմով: ¹⁷Եւ ո՛չ է իմ աղտեղեալ զանուն իմ և զանուն հօր իմոյ, և միամօր եմ ես հօր իմոյ. և ո՛չ գոյ որդի որ ժառանգէ զսա, և ո՛չ իւր եղբայր մերձաւոր, և ո՛չ եղբօրորդի՝ զի պահեցից ես զանձն իմ նմա կնութեան. զի ահաւասիկ կորեան իմ եւթն այր, արդ զի՞նչ օգուտ է ինձ բնաւ կեալ: Արդ եթէ ո՛չ կամիս զմեռանելս Տէր՝ նայեա՛ առ իս՝ և ողորմեա՛ ինձ. զի մի՛ ևս լուայց ես զնախատինսն՞: ²⁴Եւ լսելի՛ եղեն աղօթք երկոցունն առաջի մեծին Յռափայելայ՞: ²⁵Եւ առաքեցաւ նա բժշկել զերկոսեան. Տուրիթայ՝ կեղևել զլուսնն յաչաց նորա. և զՍառայի զդատերն Յռագուելի հանել զԱզմոդ դևն, և տալ զնա կին Տուրիթայ որդւոյ Տուրիթայ. վասն զի Տուրիթայ անկ իսկ էր ժառանգել զնա: Եւ ՚ի նմին

* Այլք. Եւ ետուր զմեզ ՚ի յա՞:

* Ոմանք. Ընդ իս և ընդ հարսն իմ:

* Ոմանք. Որ էր տուեալ ար՞... և Ազմոդևս դևն չար:

* Ոմանք. Միամօր հօրն իմոյ: Ոսկան. Արդ եթէ առնեմ զայս:

* Ոմանք. Ձի մի՛ ևս լսիցեմ զնախ՞:

* Այլք. Եւ ո՛չ է իւր եղբայր: Ոմանք. Նայեա՛ց յիս և ողորմեա՛:

* Ոմանք. Աղօթք երկոցունն:

ժամանակի դարձա՛ւ Տուբիթ և եմուտ ՚ի տունն իւր. և Սառա դուստրն
Հռագուելայ էջ ՚ի վերնատանէ իւրմէ՛:

4

Գլուխ Դ

¹Եւ յաւուր յայնմիկ յիշեաց զարծաթն, զոր եղ առ Գաբայելայ ՚ի Հռագիւս
քաղաքի յերկրին Մարաց: Եւ ասէ նա ՚ի միտս իւր. Ես խնդրեցի մա՛հ անձինս
իմոյ, ընդէ՞ր ո՛չ կոչեմ զՏուբիա զորդին իմ, և ցուցանեմ նմա զամենայն մինչչև՛
մեռեալ իցեմ՞: ²Եւ կոչեաց զնա և ասէ ցնա. Որդեա՛կ իմ. ³Եթէ մեռանիցիմ ես՝
թաղեսջի՛ր զիս՝ և մի՛ անարգիցես, և կամ անտես առնիցես զմայրս քո. այլ
պատուեսցես զսա զամենայն աւուրս կենաց քոց, և արասցես սմա զամենայն
ինչ որ հաճո՛յ է սմա, և մի՛ տրտմեցուցանես զսա՞. ⁴և յիշեսցես դու զի բազում
ճգունս կրեաց վասն քո՝ յորժամ էի՛ր դու յորովայնին: ⁵Եւ յորժամ մեռանիցի՛
թաղեսցես ընդ իս ՚ի նմին շիրմի՞: ⁶Եւ յիշեա՛ դու զՏէր Աստուած քո զամենայն
աւուրս կենաց քոց. և մի՛ մեղանչիցես դու, և կամ անցանիցես զպատուիրանօք
նորա. այլ առնիցես զարդարութիւն յամենայն ՚ի կեանս քո. և մի՛ գնասցես դու ՚ի
ճանապարհս անիրաւութեան. զի յորժամ առնիցես դու զճմարտութիւն՝
յաջողեսցի՛ն ամենայն գործք քո. և ամենեցուն որոց գործեն զարդարութիւն՞:
⁷Յընչից քոց առնիցես զողորմութիւնս. և մի՛ ազահիցէ ակն քո յորժամ առնիցես
զողորմութիւնն. և մի՛ դարձուցանիցես զերեսս քո յամենայն աղքատոյ. և ՚ի քէն
ո՛չ դարձուցէ Տէր Աստուած զերեսս իւր՞: ⁸Որչափ և իցէ՛ քո՝ ըստ նմին
բազմութեան արասցես զողորմութիւնսն. ⁹Եթէ սակա՛ւ իցէ քո՝ ըստ սակաւին, և
մի՛ յապաղիցես առնել զողորմութիւնսն. ¹⁰զի գանձս բարիս գանձեսցես քեզ
յաւուրն կենաց քոց. ¹¹զի ողորմութիւնք փրկեն ՚ի մահուանէ. և ո՛չ տան մտանել
՚ի խաւարն: ¹²Պարզեք բարի՛ք են ողորմութիւնք ամենեցուն որ առնեն զնա
առաջի Աստուծոյ: ¹³Եւ զգո՛յշ լինիջի որդու անձին քում ՚ի պոռնկութենէ. և
առնուցուս դու կին՝ ՚ի զաւակէ՛ հարց քոց. և մի՛ առնուցուս դու կին՝ յազգէ
օտարէ. զի որդիք մարգարէի՛ց ենք՝ Նոյի, Աբրահամու, Սահակայ, և Յակոբու
հարցն մերոց առաջնոց: Յիշեա՛ դու որդեակ՝ զի սոքա ամենեքեան առին
կանայս յեղբա՛րց իւրեանց, և օրհնեցան յորդիս իւրեանց. և զաւակ նոցա
ժառանգեսցէ զերկիր: Եւ դու որդեակ՝ սիրեսցես զեղբարս քո, և մի՛ դարձուցես
զերեսս քո, և մի՛ դարձուցանիցես զսիրտ քո յեղբարց քոց, յորդւոց և ՚ի
դստերաց ժողովրդեան քոյ, առնուլ քեզ ՚ի նոցանէ կին՞: ¹⁴Վասն զի
յամբարտաւանութենէ՛ կորուստ և խռովութիւն յոյժ. և ՚ի պղծութենէ՛

* Ոմանք. Ջլոյսնն յաչաց նորա:

* Յօրինակին մերում որպէս և գրեթէ յայլ ամենայն գրչագիրս մեր, անունս՝ Գաբայել,
աստի սկսեալ յաղաւաղութենէ գրչաց գրի Դաբայել. զոր մեք ամենայն ուրեք միապէս
եղաք ըստ բնագրին Գաբայել:

* Ոմանք. Եւ մի՛ անարգեսցես... սմա զամենայն որ ինչ... և մի՛ տրտմեցուցանիցես:

* Ոմանք. Ի նմին շիրմի իւրում:

* Ոսկան. Եւ կամ յանցանիցես զպատ՝... յամենայն կեանս քո:

* Ոմանք. Եւ մի՛ ազահեսցէ ակն քո, յորժամ առնիցես դու զողորմութիւնսն, և մի՛
դարձուցանիցես դու զե՛:

* Ի բազումս պակասի. Իւրեանց. և օրհնեցան յորդիս իւրեանց. և զաւակ: Ոմանք. Եւ մի՛
դարձու՞. դու զսիրտ:

պակասութիւն և կարօտութիւն մեծ. զի պղծութիւն է մայր սովոյ՝: ¹⁵Եւ վարձք վարձկանի քոյ առ քեզ մի՛ ազգին, այլ հատուցես՝ դու առժամայն. եթէ ծառայեսցես դու Աստուծոյ՝ հատուցէ քեզ՝ ի բարիս: Ջգոյ՛շ լինիջիր դու որդեակ յամենայն գործս քո, և լեր՝ դու խրատեալ յամենայն կեանս քո՝: ¹⁶Եւ զոր դու ատես՝ ումեք մի՛ առնիցես: Գինի արբեցութեան մի՛ ընպիցես. և մի՛ երթայցես դու արբեալ՝ ի ճանապարհ՝: ¹⁷Ի հացէ՛ քումմէ տացես՝ քաղցելոց, ՚ի հանդերձէ՛ քումմէ՛ մերկոց. և ամենայն որ յաւելուցուն քեզ՝ առնիցես ողորմութիւն: ¹⁸Սփռեսցես՝ դու զհացն քո՝ ի վերայ գերեզմանաց՝ արդարոց, և մի՛ տացես զայն մեղաւորաց: ¹⁹Խորհուրդ՝ յամենայն մարդոյ խնդրեսցես. և մի՛ արհամարհեսցես զամենայն խորհուրդս պիտանեաց: ²⁰Եւ յամենայն ժամ օրհնեսցես դու զՏէր Աստուած քո, և ՚ի նմանէն խնդրեսցես դու՝ որպէ՛ս ուղղեսցին ճանապարհք քո, և ամենայն խորհուրդք քո և զնացք քո յաջողեսցին. զի ամենայն խորհուրդ մարդոյ ոչինչ են. այլ Տէր ինքնին տայ զխորհուրդս բարեացն, և զորս կամի խոնարհեցուցէ որպէս և հաճոյ է նմա: Եւ արդ որդեակ իմ, յիշեսցես՝ դու զամենայն զպատուիրանս իմ զոր պատուիրեմ ես քեզ. մի՛ ջնջեսցին նոքա՝ ի սրտէ՛ քումմէ՛: ²¹Եւ արդ՝ ես ցուցանեմ քեզ զտասն քանքար արծաթոյն զոր եղի՛ ես՝ ՚ի պահ առ Գաբայելայ որդւոյ Գաբրիայ, ՚ի Յռազաւ. յերկրին Մարաց՝: ²³Եւ մի՛ երկնչիցիս որդեակ զի աղքատացաք յոյժ. գան քո բազում ինչք և ստացուածք՝ եթէ երկնչիցիս դու յԱստուծոյ, և ՚ի բաց լինիցիս յամենայն մեղաց. և արասցես դու զհաճոյս առաջի նորա՝:

5

Գլուխ Ե

¹Եւ պատասխանի ետ Տուբիա՝ և ասէ ցնա. Հայր՝ արարից՝ զամենայն ինչ զոր պատուիրեցեր ինձ: ²Այլ ես զհա՞րդ կարացից գտանել զարծաթն, զի ո՛չ գիտեմ զայրն: ³Եւ ե՛տ նմա զգիր առնն որում կայր զանձն յաւանդի՝: ⁴Եւ ասէ ցնա. Խնդրեա՛ դու քեզ այր որ եկեսցէ՛ ընդ քեզ. և ես տաց զվարձս նորա՝ մինչև կենդանիս եմ, և երթիցես առցես զարծաթն՝: ⁵Եւ զնաց Տուբի խնդրել ընդ իւր վարձաւոր: Եւ եգիտ՝ նա զՀռափայել հրեշտակ՝. ⁶և նա ո՛չ գիտէր ո՞վ իցէ նա: ⁷Եւ ասէ ցնա Տուբիա. Կարե՞ս գալ դու ընդ իս՝ ՚ի Հռազաւ յերկրին Մարաց. և կամ ե՞ս դու տեղեակ խելամո՛ւտ տեղեացն: ⁸Ասէ ցնա հրեշտակն. Եկից՝ ես ընդ քեզ, և ճանապարհին տեղեակ եմ, և ճանաչեմ զԳաբայել զեղբայրն մեր՝: ⁹Եւ ասէ ցնա Տուբիա. Մնա՛ դու վայրիկ մի աստէն՝ մինչև մտից հարցից՝ ես զհայրն իմ: Եւ ասէ ցնա. Երթ, և մի՛ յամիցես՝: ¹⁰Եւ եմո՛ւտ պատմեաց հօրն. Ահաւասիկ գտի՛

* Ոսկան. Յանքարտաւանութենէ է կր՝: Ոմանք. Եւ կարօտութիւն յոյժ, զի պղ՞:

* Ոմանք. Առ քեզ մի՛ անկցին... և եթէ ծա՞:

* Ոմանք. Եւ զոր ատեսս դու, և ումեք... և մի՛ երթիցես դու:

* Ոմանք. Այլ Տէր ինքն տայ զխոր՞... խոնարհեցուցանէ, և որպէս հաճոյ է:

* Ոմանք. Որդւոյ Գաբրիայ:

* Ոմանք. Գան քեզ բազում ինչ: Ուր Ոսկան. Գոն քո բազում ինչք:

* Ոմանք. Ջգիր առն առ որում կայր:

* Ոմանք. Ջայր ոք որ եկեսցէ:

* Բազումք. Իւր վարձուոր:

* Ոմանք. Եւ ճանաչեմ ես զԳա՞:

* Ոմանք. Վայր մի աստէն՝ մինչև հար՞:

ընկեր որ գայ ընդ իս: Եւ ասէ ցնա հայր իւր. Կոչեա՛ դու զնա առ իս զի գիտացից թէ յորմէ՞ ազգէ է նա, և կամ թէ հաւատարի՞մ է գալ ընդ քեզ: ¹¹Եւ նա կոչեաց զնա ՚ի ներքս. և ողջոյն ետուն միմեանց: ¹⁶Եւ ասէ ցնա Տովբիթ. Եղբայր՝ յորմէ՞ ցեղիցն մերոց ես դու՝ պատմեա՛ ինձ: ¹⁷Եւ ասէ ցնա. Չազգատո՛հմ իմ խնդրես՝ թէ վարձաւոր որ երթայ ընդ որդւոյդ քում: Եւ ասէ ցնա Տովբիթ. Կամի՛մ եղբայր՝ գիտե՛լ զազգն քո և զանուն՝: ¹⁸Եւ ասէ. Անուն է իմ Ազարիա Անանիա որդի մեծի եղբարցն քոց՝: ¹⁹Եւ ասէ ցնա Տովբիթ. Ո՛ղջ եկիր եղբայր՝ և մի՛ ցասնուր ինձ զի խնդրեցի զազգատոհմն քո գիտել, զի դու եղբայր իմ իսկ ես, ՚ի բարի և յազնուական յազգէ. զի ճանաչէի և ես զԱնանիա և զՅաթան՝ և զորդիսն, և զԱեմա, և զմեծի. յորժամ երթայաք մեք ՚ի միասին երկի՛ր պագանել յերուսաղէմ, և մատուցանել զանդրանիկս և զտասանորդս արդեանց. և ո՛չ մուրեցան մորա ըստ մուրութեան եղբարցն մերոց: Յարմատոյ և յազգէ մեծամեծաց ես եղբայր՝: ²⁰Այլ արդ՝ ասա՛ դու ինձ, զի՞նչ տայցեմ քեզ վարձս. դրամ մի յաւուր, և զռոճիկն որպէս որդւոյն իմուն: ²¹Եւ յաւել ևս ՚ի վարձն քո՝ եթէ ողջութեամբ դառնայցէք այսրէն: Եւ հաճո՛յ թուեցաւ նոցա առնել այսպէս՝: ²²Եւ ասէ ցնա Տովբիթ. Պատրաստեա՛ դու որդեակ ՚ի ճանապարհն, և յաջողեսցի ձեզ: Եւ պատրաստեաց մանուկն զթոշակ ճանապարհին: Եւ ասէ ցնա հայրն իւր. Գնա՛ դու որդեակ ընդ առնդ ընդ այդմիկ, այլ որ բնակեալն է յերկինս Աստուած՝ յաջողեսցէ՛ զճանապարհն ձեր, և հրեշտակն նորա ուղղելի՛ց լիցի ձեզ՝: ²³Եւ ելին գնացին երկոքեան ՚ի միասին, և շուն պատանեկին ընդ նոսա: Եւ ասէ մայրն նորա լալով. Տովբիթ՝ զի՞ արձակեցեր զորդեակն ՚ի մէնջ. ո՛չ դա՛ է ցուպ ծերութեան մերոյ, մտանել և ելանել առաջի մեր: ²⁴Արձաթ արձաթոյ մի՛ ժամանեսցէ. այլ եղիցի փոխանակ որդեկին մերոյ: ²⁵Քանզի որ պատրաստեալս է մեզ յԱստուծոյ՝ բաւական է մեզ: ²⁶Եւ ասէ ցնա Տովբիթ. Մի՛ լիցի քեզ տրտմութիւն քոյր. զի ողջութեամբ եկեսցէ, և աչք քո տեսցեն զնա: ²⁷Չի հրեշտակ նորա բարի առաջնորդէ՛ նորա, և աջողեսցէ զճանապարհս նորա. և դարձցի՛ այսրէն ողջութեամբ՝: ²⁸Եւ ապա դադարեաց մայրն ՚ի լալոյ անտի:

6

Գլուխ Զ

¹Եւ նոքա գնացին ՚ի ճանապարհն: Եւ եկին ՚ի գետն Դկղ՛աթ, և հանգեան անդ առ ափամբն՝: ²Եւ պատանեակն էջ լուանալ յեզր գետոյն. և վազեաց ձուկն մի ՚ի գետոյ անտի, և կամէր կլանել զպատանեակն: ⁴Եւ հրեշտակն ասէ ցպատանեակն. Բո՛ւռն հար՝ կալ զձուկնդ: Եւ կալաւ պատանեակն զձուկն, և հան զնա ՚ի ցամաք: ⁵Եւ ասէ ցնա հրեշտակն. Բա՛ց դու զփոր ձկանդ, և հան

* *Ոմանք.* Եթէ վարձուոր որ երթայց ընդ:

* *Այլք.* Անուն իմ Ազարիա:

* *Ոսկան.* ՉԱնանիա և զՅոնաթան: *Ոմանք.* Եւ յազգէ ՚ի մեծաց ես:

* *Ոմանք.* Յաւելից ևս ՚ի վարձսն քո:

* *Ոմանք.* Եւ յաջողեսցի քեզ:

* *Ոմանք.* Առաջնորդեսցէ նորա, և յաջողեսցէ զճանապարհն նորա:

* *Ոմանք.* Անդ առ ափն:

զսիրտդ և զլեարդդ՝ և զլեղիդ, և դի՛ր զգուշութեամբ*։ ⁶Եւ արար պատանեակն որպէս և ասաց ցնա հրեշտակն. և զծուկնն խորովեցին և կերան. և ապա գնացին երկոքեան՝ ՚ի միասին, մինչև մօտ եղեն յեկբատանս։ ⁷Եւ ասէ պատանեակն ցհրեշտակն. Ազարիա՛ եղբայր՝ վասն ո՞ր բարձաք զսիրտս՝ և զլեարդս՝ և զլեղիս ձկանս*։ ⁸Եւ ասէ ցնա. Մի՛րտդ՝ և լեարդդ, եթէ զոք ունի դև՝ կամ այսն պիղծ, զայս արժան է ծխել առաջի ա՛ռն կամ կնոջ, և այլ ո՛չ ևս դիւահարեսցէ*։ ⁹Եւ լեղիս՝ եթէ ոք ունի զլուսն յաչս իւր, օժանի՛ սովաւ և բժշկի*։ ¹⁰Եւ իբրև մերձեցան նոքա ՚ի Յռագուէ, ¹¹ասէ հրեշտակն ցպատանեակն. Ե՛ղբայր՝ այսօր ունիմք մեք հանգչել առ Յռագուելայ, և նա ինքն ազգական է քո. և է՛ նորա դուստր, և անո՛ւն է նորա Սառա. արդ խօսեցա՞յց ես վասն նորա, զի տացէ զնա քեզ կին*։ ¹²Ղի քե՛զ ա՛նկ է ժառանգութիւն աղջկանն. և դու միայն ես յազգէ նորա, և աղջիկն արդարև բարւո՛ք է, զգա՛ստ է և իմաստուն։ Եւ արդ լո՛ւր ինձ*, ¹³և խօսեցայց ընդ հօր աղջկանն, և յորժամ դարձցուք մեք այսրէն ՚ի Յռագուացւոց անտի՛ արասցուք քեզ զհարսանիսն. քանզի գիտե՛մ ես զՅռագուէլ, զի ո՛չ տացէ զնա առն օտարի ըստ օրինացն Մովսիսի, որ ո՛չ է մերձաւոր արեան. վասն զի և զժառանգութիւնն քե՛զ արժան է առնուլ քան ամենայն մարդոյ*։ ¹⁴Յայնժամ ասէ պատանեակն ցհրեշտակն. Եղբայր Ազարիա՛ ի՛մ այսպէս լուեալ է վասն աղջկանն, թէ տուեալ է զնա եւթն առն, և ամենեքեան նոքա մեռեալ են յառազաստի անդ. ¹⁵և ես մի՛ եմ միամօր հօրն իմում. երկնչիմ գուցէ՛ մտանիցեմ, և մեռանիցիմ որպէս և առաջինքն. զի ունի զաղջիկն դև՝, և սիրէ զնա. որում ո՛չ մերձեանայ մեղանչել ումեք, բայց միայն որոց մերձեանան առնուլ զնա կնութեան. արդ եթէ առնե՛մ զայս՝ երկնչիմ գուցէ իջուցանիցեմ ես զհայրն իմ և զմայրն իմ ցաւօք ՚ի վերայ իմ ՚ի գերեզմանն իւրեանց. և որդի այլ ո՛չ գոյ որ թաղէ զնոսա*։ ¹⁶Եւ ասէ ցնա հրեշտակն. Ո՞չ յիշես դու զբանս պատուիրանաց հօրն քոյ, առնուլ քեզ կին յազգէ քումմէ. և արդ լո՛ւր դու ինձ, զի քե՛զ եղիցի նա ՚ի կնութիւն*։ ¹⁷Եւ վասն դիւին մի՛ ինչ հոգար, զի ՚ի գիշերիս յայսմիկ առցես դու զնա քեզ կնութեան։ ¹⁸Եւ յորժամ մտանիցես յառազաստ անդր՝ առցես դու աճիւնախառն կրակ յորում խունկք ծխեալ են, և դիցես դու ՚ի վերայ նորա ՚ի սրտէ անտի և ՚ի լերդէ ձկանն՝ և ծխեսցես։ ¹⁹Եւ հոտոտիցէ դևն, և փախիցէ. և ո՛չ ևս դարձցի անդրէն մինչև յաւիտենից*։ ²⁰Եւ յորժամ մտանիցէք դու և աղջիկն ՚ի սենեակ անդր, յարիջիք դուք երկոքեան՝ և գոչեսջիք առ ողորմածն Աստուած լալով մեծաւ. և կեցուցէ՛ զձեզ, և ողորմեսցի՛ ձեզ*։ ²¹Ղի քե՛զ էր պատրաստեալ իսկզբանէ իւրմէ, և դու՛ ապրեցուցես զնա. և նա ընդ քե՛զ եկեսցէ ՚ի տուն քո, և կարծեմ թէ որդիք լինին քո ՚ի նմանէն։ ²²Եւ իբրև լուաւ զայս Տուբիա, անկաւ նմա գութ ընդ աղջկանն, և

* *Ոսկան.* Եւ դի՛ր զգուշութեան։

* *Ոմանք.* Վասն որո՞յ բարձաք զսիրտս։

* *Ոմանք.* Եթէ ոք ունի դև, կամ։

* *Ոմանք.* Եթէ ոք ունիցի զլուսնն ՚ի յաչս իւր... և բժշկեսցի։

* *Բագոււմք.* Ձի տացեն զնա քեզ։

* *Ոմանք.* Եւ արդ լո՛ւր դու ինձ։

* *Ոմանք.* Ընդ հայր աղջկանն... քան զամենայն մարդոյ։

* *Ոմանք.* Միամօր հօրն իմոյ... գուցէ իջուցանեմ ես։

* *Ոմանք.* Եղիցի նա ՚ի կնութեան։

* *Ոմանք.* Եւ հոտոտեսցէ դևն։

* *Ոմանք.* Եւ գոչեսջիք դուք առ։

ոգի նորա կցեցա՛ւ ՚ի սէր նորա:

7

Գլուխ Է

¹Եւ եկին նոքա յԵկբատանս, և մտին նոքա ՚ի տուն Յնագուելայ. և ե՛լ ընդ առաջ նոցա Սառա, և ողջոյն ետ նոցա՝ և նոքա մմա, և տարաւ զնոսա ՚ի տուն: ²Եւ Յնագուել ասէ ցՅեղնա ցկին իւր. Տեսանե՞ս զի նման է պատանեակս Տուրիթայ եղբորորդւոյն իմոյ*: ³Եհարց ցնոսա Յնագուել և ասէ. Ուստի՞ էք եղբարք: Եւ ասեն ցնա. Յորդուցն Նեփթաղիմայ՝ ենք որք գերեալն են ՚ի Նինուէ*: ⁴Եւ ասէ ցնոսա. Ճանաչե՞ք դուք զՏուրիթ գեղբայրն մեր: Եւ ասեն. Ճանաչեմք: Եւ ասէ ցնոսա. Ո՛ղջ է: ⁵Եւ նոքա ասեն. Ո՛ղջ է, և կենդանի՛ է: Եւ ասէ Տուրիթ. Հայր իմ է: ⁶Եւ յարուցեալ վաղվաղակի Յնագուել համբուրեաց զնա, և ելաց յոյժ. ⁷և օրհնեաց զնա՝ և ասէ ցնա. Բարւոյ և բարերարի առն որդի: Եւ իբրև լուաւ թէ Տուրիթայ կացին աչքն, ելաց. ⁸և տրտմեցաւ ի՛նքն՝ և Յեղնա կինն իւր, և Սառա դուստր նոցա: Եւ ընկալան՝ և հանգուցին զնսա մեծաւ ուրախութեամբ*: ⁹Եւ զենին նոցա խոյ մի ՚ի խաշանց, և յօրհնեցին եղին առաջի նոցա խորտիկս բազումս: Եւ ասէ Տուրիթ ցՅնափայել. Եղբայր Ազարիա՝ արդ խօսեաց՝ դու վասն որոյ խօսեիրն դու ՚ի ճանապարհի անդ, զի եղիցի այնպէս: Եւ դարձոյց զբանսն անդրէն առ Յնագուել: Եւ ասէ Յնագուել ցՏուրիթ. Կե՛ր արք և ուրախ լեր զի քեզ անկ է առնուլ զմանուկն իմ. բայց ասե՛մ քեզ զճշմարիտն. ետո՛ւ ես զմանուկդ իմ եւթն առն, և յորժամ կամե՛ին մտանել առ դա՝ մեռանէին ՚ի նմին գիշերի: Այլ դու այժմ որդեակ իմ ուրախ լեր*: ¹⁰Եւ ասէ Տուրիթ. Ո՛չինչ ճաշակեմ ես աստ՝ մինչև հաստատեք առ իս զիրսդ: ¹³Եւ ասէ Յնագուել. Եւ ա՛ռ զնա քեզ ըստ օրինաց. զի դու եղբայր ես աղջկանն, և քե՛զ լիցի. ¹⁴այլ ողորմածն Աստուած աջողեսցէ՛ ձեզ ՚ի բարիս: ¹⁵Եւ կոչեաց նա զՍառա զդուստրն իւր, և կալաւ նա զձեռանէ նորա, և ետ զնա Տուրիթայ կնութեան: Եւ ասէ. Ահաւասիկ ըստ օրինացն Մովսիսի ա՛ռ դու զնա. և տա՛ր դու զնա առ հայր քո: Եւ օրհնեաց զնոսա: ¹⁶Եւ կոչեաց նա զՅեղնա զկինն իւր, և առեալ նա տայր աղջկանն զամենայն ինչս զտանն. և հաստատէր մուրհակօք և կնքէր: ¹⁷Եւ ապա սկսան ուտել և ըմպել՝ և ուրախ լինել: ¹⁸Եւ կոչեաց Յնագուել զՅեղնա զկին իւր՝ և ասէ ցնա. Քո՛յր պատրաստեա՛ դու զմես սենեակն՝ և տա՛ր անդր զաղջիկն*: ¹⁹Եւ արա՛ր որպէս և հրամայեաց նմա, և տարա՛ւ զնա անդր, և ելաց. և ջնջէր մաքրէր մայրն զարտասուս աղջկանն. ²⁰և ասէր ցնա. Քաջալերեաց՝ դուստր՝ Տէր երկնից և երկրի տացէ՛ քեզ ուրախութիւն և ցնծութիւն, փոխանակ տրտմութեանս այսորիկ. քաջալերեաց՝ դուստր՝ քաջալերեաց:

8

* Յայլս պակասի. Եւ Յնագուել ասէ:

* Ոմանք. Եւ Եհարց ցնոսա... Ուստի՞ էք դուք եղբարք:

* Ոմանք. Եւ Յեղնա կին նորա, և... զնոսա մեծաւ խնդութեամբ:

* Ոմանք. Եւ զենին նոքա խոյ մի... վասն որոյ խօսեիրն ՚ի ճանապարհի... զմանուկն իմ... արդ դու այժմ:

* Յօրհնակին պակասէր. Եւ ասէ ցնա քոյր, պատր՛:

Գլուխ Ը

¹Եւ իբրև կատարեցին նոքա ուտել՝ զընթրիսն, տարան՝ զՏուբիա առ աղջիկն:
²Եւ իբրև եմուտ, յիշեաց նա զբանսն Յոնայելի, և առ նա զաճիւնախառն զկրակն խնգոցն. և եղ ՚ի վերայ նորա զսիրտ ձկանն և զլեարդն՝ և ծխեաց: Եւ իբրև հոտոտեցաւ դևն զհոտն զայն՝ փախեալ ՚ի վերին կողմն սահմանացն Եգիպտոսի*.
³և կապեաց զնա հրեշտակն: Եւ իբրև մտին յանկողին երկոքին.
⁴յարեալ Տուբիա ՚ի գահոյից անտի՝ և ասէ. Արի՛ և դու քոյր՝ և կացցուք յաղօթս՝ և ողորմեսցի մեզ Աստուած: Եւ սկսաւ Տուբիա կալ յաղօթս: ⁷Եւ ասէ. Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց, և օրհնեալ է անուն քո սուրբ՝ և փառաւորեալ մինչև յաւիտեանս. օրհնեսցեն զքեզ երկինք և ամենայն ստացուածք քո: ⁸Դու՛ արարեր զԱդամ և ետուր նմա օգնական զԵւա, հաստատութիւն նմա զկինն նորա. և ՚ի նոցանէն եղև ամենայն զաւակ մարդկան. դու ասացեր եթէ՛ Ո՛չ է բարուք լինել մարդոյն միայն. արասցուք նմա օգնական նման նմա*:
⁹Եւ արդ Տէր՝ ո՛չ եթէ վասն պոռնկութեան ինչ առնում ես ինձ զքոյրս զայս՝ այլ ճշմարտութեամբ. նայեա՛ց Տէր ¹⁰և ողորմեա՛ց ինձ, զի ՚ի միասին ծերասցուք: Եւ ասէ աղջիկն ընդ նմա: Եւ ննջեցին երկոքին ՚ի միասին ՚ի գիշերին յայնմիկ: ¹¹Եւ չոգաւ Յոնայել. և փորեաց նմա գերեզման*.
¹²քանզի երկնչէր, եթէ գուցէ և նա մեռանիցի: ¹³Եւ եկն Յոնայել ՚ի տուն իւր. ¹⁴և ասէ ց՜Յեղնա ցկին իւր. Յղեա՛ դու զմի ոք յաղախնաց այդի, և տեսցէ թէ կենդանի՛ է. ապա թէ ոչ՝ թաղեսցուք զնա՝ և մի՛ ոք գիտասցէ: ¹⁵Եւ եմուտ աղախինն, և ետես զերկոսեան զի ննջէին: ¹⁶Եւ ել նա և պատմեաց նոցա՝ եթէ կենդանի՛ են: ¹⁷Եւ օրհնեաց Յոնայել զԱստուած՝ և ասէ. Օրհնեալ ես դու Տէր Աստուած յամենայն օրհնութիւնս և ՚ի փառս քո. և օրհնեսցեն զքեզ ամենայն սուրբք քո, և ամենայն ստեղծուածք քո, և ընտրեալք քո օրհնեսցեն զքեզ մինչև յաւիտեանս*:
¹⁸Օրհնեալ ես դու Տէր Աստուած զի ուրախ արարեր զիս, և ո՛չ անց ընդ իս որպէս և կարծէին. այլ ըստ բազում ողորմութեանդ քոյ արարեր՝ դու ընդ մեզ: ¹⁹Օրհնեալ ես դու Տէր զի ողորմեցար երկոցունց միամօրուցս. արա՛ դու Տէր ընդ սոսա զողորմութիւնս քո. կատարեա՛ դու զկեանս սոցա ողջութեամբ և ուրախութեամբ: ²⁰Եւ հրամայեաց նա ծառայից իւրոց խնուլ զգերեզմանն: ²²Եւ արար նոցա հարսանիս աւուրս չորեքտասան: ²³Եւ ասէ ցնա Յոնայել. Երդմնեցուցանեմ զքեզ՝ մի՛ գնասցես դու աստի մինչև կատարեսցին աւուրք չորեքտասան հարսանեացս*.
²⁴և ապա առցես դու զկէս ընչից իմոց, և երթիցես դու և աղջիկդ խաղաղութեամբ առ հայրն քո. և զայլն ամենայն առնուցուք՝ յորժամ մեռանիցինք ես և կինս իմ:

9

Գլուխ Թ

¹Եւ կոչեաց Տուբի զՅոնայել՝ և ասէ ցնա. Եղբայր Ազարիա, ³ա՛ռ դու ընդ քեզ պատանի մի, և երկուս ուղտս. և զնա՛ դու ՚ի Յոնայելու Մարաց առ Գաբայել,

* *Յօրինակին պակասէր.* Յիշեաց նա զբանսն Յոնայելի: *Ոմանք.* ՚ի վերին կողմն ՚ի սահմանացն Եգիպտոսի:

* *Ոմանք.* Դու Տէր արարեր զԱդամ:

* *Յօրինակին.* Եւ փորեաց նա գերեզմանն:

* *Ոմանք.* Եւ օրհնեալ Յոնայել զԱստուած:

* *Ոմանք.* Ջքեզ՝ զի մի՛ գնասցես... աւուրք չորեքտասան:

և բե՛ր դու ինձ զարժաթն անտի, և զնա առեալ ընդ քեզ աճցես ՚ի հարսանիսս*.
4Վասն զի երդուաւ Յոնան զի եթէ ո՛չ արձակեն զքեզ. 5արդ հայրն իմ համարէ
զաւուրսս. և եթէ յամենք՝ մեծա՛ւ վշտօք ՚ի տրտմութեան լինի: 6Եւ զնա՛ց
Հռափայլէ՛ և հանգեաւ առ Գաբայելայ, և ետ նմա զգիր մուրհակին. և եբեր նմա
զպարկսն կնքօքն հանդերձ, և ետ ցնա*: 12Եւ կանխեալ ընդ առաւօտսն՝ զնացին
նոքա ՚ի հարսանիս անդր: Եւ հաճեցաւ Տուբիա ընդ կինն իւր:

10

Գլուխ Ժ

1Եւ Տուբիթ հայրն նորա զամենայն աւուրս խորհէ՛ր ՚ի սրտի իւրում: Յորժամ
կատարեցան աւուրք ժամանակելոյն՝ և ո՛չ եկին*. 2և ասէ. Արդևք մեռաւ
Գաբայել, և ո՛չ ոք ետ նմա զարժաթն. և նա ո՛չ կամի զալ յամօթոյ: Եւ տրտում էր
նա յոյժ*: 3Եւ ասէ ցնա կինն իւր. Կորեա՛ւ մանուկն, զի յամեաց այսչափ: 4Եւ
սկսաւ նա լալ և սգալ զնա. 5և ասէ. Ո՛չ է ինձ պէտս ո՛րդեակ իմ և ո՛չ ինչ. այլ
ընդէ՞ր բնաւ թողի զքեզ լոյս աչաց իմոց: 6Եւ ասէ ցնա Տուբիթ. Լո՛ւռ լեր, և մի՛
հոգար. ո՛ղջ է: 7Եւ նա ասէ ցնա. Դո՛ւ լուռ լեր, և մի՛ խաբեր զիս, զի մանկիկն իմ
կորեա՛ւ: Եւ ելանէր զօրհանապագ և գա՛յր ՚ի ճանապարհն ընդ որ գնացինն ՚ի
տուէ հաց ո՛չ ուտէր, և ՚ի գիշերի ո՛չ դադարէր ՚ի սգալոյ զՏուբիա զորդին իւր,
մինչև կատարեցան աւուրք չորեքտասան հարսանեացն, զոր երդուաւ
Հոնան լինել նոցա անդ*: 8Եւ ասէ Տուբիա ցՀոնան. Արձակեա՛ զիս, զի հայր
իմ և մայր իմ ո՛չ ևս ակն ունին տեսանել զիս ՚ի հոգոց*: 9Եւ ասէ ցնա աներն իւր.
Կա՛ց մնա դու աստ առ իս, և ե՛ս յղեցից մանկունս առ հայրն քո, և նոքա
պատմեսցեն նմա վասն քո: 10Եւ ասէ Տուբիա. Ո՛չ է այդպէս, այլ արձակեսցես
զիս առ հայր իմ: Եւ յարեաւ Հոնան լի և ետ նմա զՍառա զկին նորա, և զկէս
ընչից իւրոց, և զճառայ և զաղախին և զանասուն և զարժաթ. 11և օրհնեաց
զնոսա. և արձակեաց և ասէ. Յաջողեսցէ՛ ձեզ որդեակ իմ Տէր Աստուած երկնից
մինչչև՝ մեռեալ իցեն ես: 12Եւ ասէ ցդուստրն իւր. Պատուեա՛ դու որդեակ իմ և
զսկեստուրն քո, և զսկեստայրն, քանզի արդ նոքա՛ են քո հայր և մայր, և ՚ի բա՛ց
լեր դու ՚ի բանից ատելութեանց: Եւ համբուրեաց զնա*: 13Եւ Հեղնաս ասէ
ցՏուբիա. Եղբայր սիրելի՛ ողջութեամբ տարցի զքեզ Տէր ՚ի տուն քո. և տացէ՛
տեսանել ինձ զաւակ ՚ի Սառայէ դստերէս իմնէ. զի բերկրեցայց ես առաջի
Տեառն. և արդ՝ յանձն առնեն զսա քեզ, և յանձն լիցի. մի՛ տրտմեցուցանիցես
զսա յետ այսորիկ*:

11

* Ոմանք. Ա՛ռ դու քեզ պատանի:

* Այլք. Եւ եբեր նա զպարկսն: Ոմանք. Եւ ետ նոցա:

* Յօրհնակին բաժանմամբ զրի բառս, այսպէս՝ ժամանակ ելոյն. զոր այլք ունին որպէս և եղաք:

* Ոմանք. Եւ տրտում է նա յոյժ: Ուր Ոսկան. եղև նա յոյժ:

* Ոմանք. Ձի մանուկն իմ կորեաւ:

* Ոմանք. Տեսանել զիս ՚ի հոգւոց: Ուր Ոսկան. ՚ի հոգւոց:

* Ոմանք. Քանզի անդ նոքա են քո հայր: Յօրհնակին պակասէր. Նոքա են քո:

* Ոմանք. Տրտմեցուցանիցես զնոսա:

Գլուխ ԺԱ

¹Եւ Տուբիա երթայր, և օրհներ զԱստուած, զի յաջողեաց նմա զճանապարհն նորա. օրհներ Զնագուէլ զկինն իւր, և նա երթայր ընդ նոսա մինչև մերձեցան նոքա ՚ի Նինուէ*։ ²Եւ ասէ Զնափայլէլ ցՏուբիա. Արդ ո՞չ գիտես դու եղբայր՝ ո՞րպէս թողեր դու զհայրն քո. ³Եկ յառաջ անցցուք մեք քան զկինդ քո, և պատրաստեսցուք մեք զտունն. ⁴և ա՛ռ դու ՚ի ձեռն քո զլեղի ձկանն: Եւ գնացին նոքա. և եկն շունն զկնի նոցա: ⁵Եւ Աննա՝ նստէր և սպասէր ըստ սովորութեանն ճանապարհին որդւոյն իւրոյ: ⁶Եւ ետես նա գնա զի գայր, և ասէ. Ահաւասիկ որդին քո գայ. և այրն որ ընկերն չոգաւ ընդ նմա: ⁷Եւ ասէ Զնափայլէլ. Գիտե՛մ ես զի բանան աչք հօրն քոյ: ⁸Արդ ո՞՞՞ շուրջ զաչօքն զլեղիդ, և նա կսկծեցուսցէ և հանցէ զլուսնն յաչաց նորա, և տեսանիցէ: ⁹Եւ ընթացաւ ընդ առաջ Աննա, և անկաւ ՚ի վերայ պարանոցի որդւոյն իւրոյ՝ և ասէ ցնա. Տեսի՞՞ ես զքեզ որդեակ իմ, արդ՝ այսուհետև անհո՞գ մեռանիմ: Եւ լացին երկոքին: ¹⁰Եւ Տուբիթ ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխաբէր զլորէր. որդին ընթացաւ առ նա, և յարուցանէր կանգնէր զհայրն իւր*։ ¹³Եւ ցանէր նա զլեղին յաչս հօրն իւրոյ, և ասէր. Ժուժեա՛ հայրիկ և համբերեա՛: ¹⁴Եւ իբրև եկաց վայր մի, վաղվաղակի կեղևեցան և անկան լուսունքն յաչաց նորա. ¹⁵և ետես նա զորդին իւր, և անկա՛ւ նա զպարանոցաւ նորա: ¹⁶Եւ լայր, և ասէր. Օրհնեա՛լ ես Տէր Աստուած, և օրհնեալ է անուն քո յաւիտեանս: Եւ օրհնեալ են ամենայն սուրբք քո հրեշտակք: ¹⁷Ձի խրատեցեր՝ և ողորմեցար ինձ, զի տեսանե՛մ ես զՏուբիա զորդի իմ: Եւ եմո՛ւտ որդի նորա ՚ի ներքս խնդութեամբ, և պատմեաց նա հօրն իւրում զմեծամեծսն որ եղեն նմա ՚ի Մա՛րս: ¹⁸Եւ ե՛լ Տուբիթ ընդ առաջ նըւոյն իւրոյ խնդութեամբ, և օրհներ զԱստուած առ դրունսն Նինուէի, և զարմանային ոյք տեսանէին գնա, զի յընթանալն իւրում տեսանէր*։ ¹⁹Եւ Տուբիթ գոհանայր առաջի նոցա, թէ ո՞րպէս ողորմեցաւ նոցա Աստուած: Եւ իբրև մօտ եղև Տուբիթ առ հարսնն իւր, օրհնեա՛ց գնա և ասէ. Եկիր ողջութեամբ դուստր, օրհնեա՛լ է Աստուած՝ որ ա՛ծդ զքեզ առ մեզ, և հայրն քո և մայրն քո: Եւ եղև ուրախութիւն ամենեցուն եղբարցն նորա որք էին ՚ի Նինուէի*։ ²¹Եւ արարին նմա անդ հարսանիս աւուրս եւթն:

12

Գլուխ ԺԲ

¹Եւ կոչեա՛ց Տուբիթ զՏուբիա զորդին իւր՝ և ասէ ցնա. Տես՛ արդ որդեակ զվարձս ա՛ռնդ որ եկն ընդ քեզ. և յաւելուլ յայն արժան է: ²Եւ ասէ ցնա. Զայր, ո՞չ ինչ պակասէ՛ ինձ եթէ տա՛ն դնա զկէս ընչից իմոց զոր բերին. ³զի զիս ած առ քեզ ո՞ղջ, և զկինն իմ ողջացոյց, և զարծաթն իմ եբէր, և զքեզ նոյնպէս ողջացոյց: ⁴Եւ ասէ ծերն. Յիրաւի՛ է տալ նմա*։ ⁵Եւ կոչեա՛ց նա զհրեշտակն՝ և

* Ոճանք. Ձճանապարհս նորա:

* Ոսկան. Եւ յարուցանէր և կանգնէր:

* Բազումք. Առ դուրսն Նինուէի:

* Ոճանք. Առաջի նորա, եթէ որպէս ողորմեցաւ նմա Աստուած: Ոսկան յաւելուլ աստէն համար 20. *Եւ եկին Աքիաքարոս և Նասրաս եղբօրորդիք նորա: Եւ արարին:

* Ոճանք. Յիրաւի է տալ դնա:

ասէ ցնա. Ա՞ն դու զկէսս այնր ամենայնի զոր բերերն*։ ⁶Եւ կոչեաց յայնժամ զնոսա զերկոսին՝ և ասէ ցնոսա. Օրհնեցէ՛ք դուք զԱստուած, և խոստովան եղերուք դուք նմա. և տո՛ւք նմա զփառս. և խոստովան եղերուք առաջի ամենայն կենդանեաց վասն այդր զոր արարդ ընդ ձեզ. զի բարի՛ է օրհնել զԱստուած, և բարձրացուցանել զանուն նորա. և զպատգամս գործոց Աստուծոյ՝ պատուով մեծացուցանել, և մի՛ յապաղէք խոստովան լինել նմա։ ⁷Զխորհուրդ թագաւորի բարուք է ծածկել, այլ զգործս Աստուծոյ յայտնել փառօք։ Զբարիս գործեսցիք, և չար ձեզ ո՛չ պատահեսցէ։ ⁸Բարի՛ են աղօթք՝ պահօք և ողորմութեամբք և արդարութեամբք. բարի՛ է սակաւիկ մի արդարութեամբ, քան զբազում ինչս անիրաւութեամբ. բարի՛ է առնել զողորմութիւնս՝ քան զնել զգանձս ոսկւոյ*։ ⁹Քի ողորմութիւն՝ ՚ի մահուանէ փրկէ, և նա ինքն սրբէ յամենայն մեղաց. որք առնեն զողորմութիւնս և զարդարութիւնս՝ լցցին կենօք. ¹⁰և ոյք մեղանչենն՝ պատերազմօ՞ղք են իւրեանց կենացն։ ¹¹Արդ՝ ո՛չ ծածկեցից ես ՚ի ձեռք բան մի. զի ասացի՛ իսկ եթէ զխորհուրդս արքայի ծածկել բարիոք է, այլ զգործս Աստուծոյ յայտնել փառօք*։ ¹²Յորժամ կացեր դու յաղօթս՝ և նուն քո Սառա, ե՛ս մատուցի գլխատակս աղօթից ձերոց առաջի սրբոյն։ Եւ յորժամ թաղէիր դու զմեռեալսն՝ ե՛ս ընդ քեզ էի։ ¹³Եւ յորժամ ո՛չն դանդաղեցար ՚ի յառնելն և թողուլ զճաշն քո, զի երթիցես և ամփոփիցես զմեռեալն՝ ո՛չ մոռացայ զքեզ յորժամ զբարիսն գործէիր. այլ ընդ քե՛զ էի*։ ¹⁴Եւ առաքեաց զիս Աստուած բժշկել զքեզ՝ և զնուն քո Սառա*։ ¹⁵Ե՛ս եմ Զնափայլէ յեւթանց անտի ՚ի սրբոցն հրեշտակաց՝ որք հանեն մատուցանեն զաղօթս սրբոցն, և մտանեն առաջի փառաց սրբոյն*։ ¹⁶Եւ խռովեցան երկոքին՝ և անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց, զի զահի՛ հարան յոյժ։ ¹⁷Եւ ասէ ցնոսա. Մի՛ երկնցիք, խաղաղութիւն լիցի ձեզ՝ և զԱստուած օրհնեցէք. ¹⁸զի ո՛չ եթէ իմով ինչ շնորհօք եկի ես, այլ կամօք Աստուծոյ ձերոյ եկի. օրհնեցէ՛ք զնա յաւիտեան։ ¹⁹Վասն զի զամենայն զաւուրսն զոր յայտնէի՛ ես ձեզ, ո՛չ կերայ և ո՛չ արբի, այլ իբրև տեսիլ տեսանէիք։ ²⁰Եւ արդ՝ այժմ խոստովան եղերուք Աստուծոյ ձերում, զի ելանեն ես առ ա՛յն որ առաքեացն զիս։ Եւ գրեցէ՛ք դուք զայս ամենայն որ եղև՝ և կատարեցաւ։ ²¹Եւ գրեցաւ ՚ի գիրսս։ Եւ այլ ո՛չ ևս տեսին զնա։ ²²Գոհանային զգործոյն և զմեծամեծացն Աստուծոյ, և ո՛րպէս երևեցաւ նոցա հրեշտակն Տեառն։

13

Գլուխ ԺԳ

¹Եւ Տուբիթ գրեաց զաղօթս ՚ի ցնծութիւն՝ և ասէ. Օրհնեալ է Աստուած որ կենդանին է յաւիտեանս՝ և արքայութիւն նորա*։ ²Քի նա հարկանէ՛ և ողորմի, իջուցանէ ՚ի դժոխս և հանէ. և ո՛չ ոք է որ փախչի ՚ի ձեռաց նորա։ ³Խոստովան

* *Յօրինակին պակասէր.* Եւ կոչեաց նա զհրեշ՝:

* *Ոմանք.* Զգանձս ոսկւոց:

* *Այլք.* Ծածկել բարուք է:

* *Ոմանք.* Եւ ամփոփեցես դու զմեռեալն:

* *Ոսկան.* Եւ զնու քո զՍառա:

* *Ոմանք.* Որք հանենն մատու՞: *Ուր Ոսկան.* Որք հանեն և մատուցանեն:

* *Ոսկան յաւելու.* Եւ արքայութիւն նորա *յամենայն յաւիտեանս:*

եղերուք նմա որդիք Իսրայէլի առաջի ազգաց. ⁴զի նա՛ ցրուեաց զմեզ անդր՝ ՚ի նոսա: Յայտնեցէ՛ք զմեծութիւնս նորա, բարձրացուցէ՛ք զնա առաջի ամենայն կենդանեաց, զի նա՛ իսկ է Տէր Աստուած մեր. Աստուած հա՛յր մեր մինչև յամենայն յաւիտեանս՝: ⁵Եւ տանջեսցէ՛ զմեզ յամենայն յանիրաւութիւնս մեր. և դարձեալ ողորմեսցի՛ մեզ, և ժողովեսցէ զմեզ յամենայն ազգաց յորս և ցրուեցաք՝ ՚ի նոսա: ⁶Եթէ դարձջիք դուք՝ ՚ի նա բոլորով սրտիւ ձերով՝ և յամենայն անձնէ, և արասջիք դուք առաջի նորա զճշմարտութիւն, յայնժամ դարձցի՛ նա առ ձեզ. և մի՛ ծածկեսցէ նա զերեսս իւր՝ ՚ի ձեռնէ՛: ⁷Եւ տեսանիցէ՛ք դուք՝ զոր ամնիցն ընդ ձեզ. և խոստովան եղիջիք դուք նմա ամենայն բերանովք ձերովք. և օրհնեցէ՛ք զՏէր որ արդարն է, և բարձր արասջիք զթագաւորն յաւիտենից: ⁸Եւ ես յերկրի գերութեանս իմում գոհացայ զնմանէ, և ցուցից զգօրութիւն և զմեծութիւն նորա ազգաց մեղաւորաց: Եւ արդ՝ դարձարուք մեղաւորք՝ և արարէք զարդարութիւն առաջի նորա. զի ո՞վ գիտէ, հաճեսցի՛ և ողորմեսցի՛ ձեզ: ⁹Այլ ես զԱստուած իմ օրհնեցից՝ և անձն իմ զթագաւորն երկնից, և ցնծացայց ես ՚ի մեծութեան նորա: ¹⁰Ասասցեն՛ զայս ամենայն ազգք, և խոստովան եղեն նմա յերուսաղէմ՝ ՚ի քաղաքն սուրբ՝. ¹¹և խրատեսցէ՛ նա զորդիս ժողովրդեան քոյ, և դարձցի՛ և ողորմեսցի՛ որդւոցն արդարոց: ¹²Գոհասցես դու զՏեառնէ բարերարտ, և օրհնեսցես՛ դու զթագաւորն յաւիտենից. զի դարձեալ զխորանն իւր շինեսցէ՛ ՚ի քեզ ուրախութեամբ՝: ¹³Եւ բերկրեսցին՝ ՚ի քեզ որ գերեալքն են. և սիրեսցեն զքեզ որք չուռացեալքն են յամենայն ազգսն յաւիտենից: ¹⁴Ազգք բազումք ՚ի հեռաստանէ եկեսցեն. յանուն Տեառն Աստուծոյ բարձեալ բերիցեն զպատարագս իւրեանց ՚ի ձեռս իւրեանց, մատուցանել զայն թագաւորին երկնաւորին. և տացեն՛ քեզ զուրախութիւն ազգէ մինչև յազգ՝: ¹⁵Եւ անիծեալ լիցին ամենայն ատելիք քո, և եկեսցեն օրհնութիւնք ՚ի վերայ սիրելեաց քոց: ¹⁶Յնձա՛ և ուրախ լեր դու՝ ՚ի վերայ որդւոցն արդարոց. և ժողովեսցին նոքա՛ ՚ի միասին, և օրհնեսցեն զՏէր արդարութեանց ՚ի միասին: ¹⁷Երանեալք իցեն որք սիրեսցեն զքեզ, և ցնծասցեն նոքա ՚ի խաղաղութեան քում. և երանի՛ իցէ այնոցիկ որք տրտմեցանն ՚ի վերայ բեկման քո, զի անդրէն՝ ՚ի քեզ բերկրեսցին, ՚ի տեսանել նոցա զփառսն քո. և ուրախ լիցին մինչև յաւիտեանս: ¹⁸Անձն իմ օրհնեսցէ զԱստուած զթագաւորն մեծ՝: ¹⁹Ձի շինեսցի Երուսաղէմ ՚ի քարանց պատուականաց, ՚ի շափիղայ և ՚ի սուտակէ, և այլ ևս պատուական քարամբք. պարիսպք քո և աշտարակք, մարտկոցքն քո յոսկւոյ սրբոյ՝: ²⁰Եւ ամենայն հրապարակքն Երուսաղէմի բիրեղ և դահանակ և սարդիոն ակամբք կազմեսցին: ²¹Եւ ասասցեն յամենայն փողոցս Երուսաղէմի. Ալէլուիա: Եւ օրհնեսցեն՝ և ասիցեն. Օրհնեալ է Աստուած որ բարձրացոյց զամենայն աշխարհս յաւիտեանս՝:

* *Ոմանք.* Ձի նա ցրեաց զմեզ:

* *Ոմանք.* Եթէ դարձջիք դուք ՚ի նոսա բո՛ւ:

* *Ոսկան.* Եւ խոստովան եղիցին նմա:

* *Ոմանք.* Գոհասցես դու զԱստուծոյ բարերար՝:

* *Ոսկան յաւելու համար 15. *Քանզի զանուն մեծ կոչեսցեն ՚ի քեզ:* Եւ անիծ՝:

* *Ոսկան յաւելու աստէն համար 20. *Երանելի եղէք թէ եղիցին մնացորդք զաւակի իմոյ առ ՚ի տեսանել զԵրուսաղէմ պայծառացեալ:* Ձի շինես՝:

* *Ոմանք.* Եւ զի շինեսցի Երուսաղէմ ՚ի քարանց... և մարտկոցքն քո:

* *Ոմանք.* Եւ ասասցեն. Օրհնեալ է Աստուած որ:

Գլուխ ԺԴ

¹Եւ իբրև դադարեաց Տուբիթ յօրհնութենէս յայսմանէ. ²և էր ինքն ամաց յիսուն և ութ՝ յորժամ կացին աչք նորա, և յետ ամաց ութից՝ բացան միւսանգամ աչք նորա*։ ³Եւ առնէր նա ողորմութիւնս. և յաւել ևս երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ, և խոստովան լինել նմա։ ⁴Եւ ծերացաւ նա յոյժ։ ⁵Կոչեաց նա զորդին իւր, և զորդի՝ որդւոյն իւրոյ՝ և ասէ ցնա. Որդեակ՝ ա՛ռ դու զորդիս քո, զի ահաւասիկ ես ծերացեալ եմ և մե՛րձ եմ ՚ի մեռանել։ Արդ ե՛րթ դու յերկիրն Մարաց որդեակ իմ*։ ⁶Գի հաւատամ ես, որպէս և խօսեցաւ Յունան մարգարէ վասն Նինուէի եթէ՝ Կործանեսցի՛, և յերկիրն Մարաց եղիցի խաղաղութիւն մինչև ՚ի ժամանակ մի։ Զի եղբարք մեր ցրուեսցին ՚ի բարի երկրէս, և Երուսաղէմ եղիցի աւերակ և անապատ, և տունն Աստուծոյ ՚ի նմին հրձի՛գ լիցի, և յաւելր լիցի մինչև ՚ի ժամանակս*։ ⁷Եւ դարձեալ ողորմեսցի՛ նոցա Աստուած. և դարձուցէ զնոսա անդրէն յերկիրն, և շինեսցեն նոքա զտունն. ո՛չ եթէ ըստ օրինակի առաջնոյն՝ մինչև լցցին ժամանակք յաւիտենից։ Եւ յետ այսորիկ դարձցին ՚ի գերութենէ աստի, և շինեսցեն զԵրուսաղէմ փառօք՝ և մեծաւ պատուով և տաճարն Աստուծոյ ՚ի նմին շինեսցի՛ յամենայն ազգս յաւիտենից, շինուածս փառաւորս որպէս և խօսեցան զնմանէ մարգարէքմ*։ ⁸Եւ ամենայն հեթանոսք դարձցին ճշմարտութեամբ երկնչել ՚ի Տեառնէ Աստուծոյ. և կործանեսցեն և ՚ի բաց մերժեսցեն զկուռս իւրեանց. ⁹և օրհնեսցեն ամենայն հեթանոսք զՏէր, և ժողովուրդն խոստովան լիցի առ Աստուած իւր։ Եւ բարձրացուցէ Տէր զժողովուրդն իւր. և ցնծացեն ամենեքեան ոյք սիրեն զՏէր Աստուած ճշմարտութեամբ և արդարութեամբ. և արասջի՛ք դուք ողորմութիւն հարց ձերոց։ ¹⁰Եւ արդ՝ որդեակ իմ, զնա՛ դու աստի. զի լինելով լինի զոր ասաց մարգարէն Յունան։ ¹¹Այլ դու պահեսցես զօրէնս և զհրամանս. և լէր դու ողորմած և արդար, զի բարի՛ լինիցի քեզ։ ¹²Եւ թաղեսցես զիս՝ և զմայր քո ընդ իս, և մի՛ ևս հանգիցես դու ՚ի Նինուէ։ Որդեակ իմ, տես՛ս դու ո՛րպէս արար Ադամ Աքիաքարայ որ սնոյց զնա, ո՛րպէս ՚ի լուսոյ տարաւ զնա ՚ի խաւար, ո՛րչափ չար անցոյց ընդ նա։ Այլ Աքիաքարոս ապրեցաւ, և նմա՛ հատուցումն անդրէն հատուցաւ, և էջ նա փոխանակ նորա ՚ի խաւարն։ Եւ Մանասէ արար զողորմութիւնս, և ապրեցաւ յաւուր մահու՝ զոր թաքոյցն նմա. և Ադամ անկաւ յորոգայթ՝ և կորեաւ։ ¹³Եւ արդ՝ դու որդեակ իմ, տես՛ս որպիսի՛ առնէ ողորմութիւն, կամ ո՛րպէս փրկէ արդարութիւն։ Եւ իբրև զայս ասաց, կատարեաց զհոգին ՚ի վերայ մահճացն. զի էր նա ամաց հարիւր և յիսուն։ Եւ թաղեաց զնա որդին իւր լի փառօք՝ և բարի՛ վախճանաւ*։ ¹⁴Եւ յորժամ մեռաւ Աննա՛ թաղեաց և զնա առ հօրն իւրում։ Եւ զնա՛ց Տուբիա կնաւ իւրով՝ և որդւովք իւրովք հանդերձ

* *Յօրհնակին*. Ինքն ամաց ԾԸ:

* *Ոմանք*. Եւ զորդիս որդւոյն իւրոյ:

* *Ոմանք*. Ի բարի երկրէն:

* *Յօրհնակին պակասէր*. Փառօք՝ և մեծաւ պատուով: *Ուր ոմանք*. Փառօք մեծաւ և պատուովք:

* *Ոմանք*. Զհոգին իւր ՚ի վերայ մահճ՝: *Յօրհնակին*. Ամաց ԾԾ:

յեկբատանս Մարաց՝ առ Հռագուէլ աներ իւր՝¹⁵ Եւ ծերացաւ նա պատուով մեծաւ. և թաղեաց նա զաներն իւր՝ և զգոքանչն, փառօք և պատուով. և ժառանգեաց զտունն նոցա, և զտունն Տուրիթայ իօրն իւրոյ: ¹⁶Եւ մեռաւ նա ամաց հարիւր և քսան և եւթն, յեկբատանս Մարաց՝: ¹⁷Եւ մինչչև մեռեալ էր նա, լուաւ ինքն զկործանմանէն Նինուէի՝ զոր գերեաց Նաբուքոդոնոսոր Ասուերոսն: Եւ ուրախ եղև Տուրիա՝ մինչչև՝ մեռեալ էր նա, ՚ի վերայ Նինուէի. փառս ետ գոհանալով զԱստուծոյ. որուն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն*:

Կատարեցաւ Տովբիթ*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԱՅԵՑԻՈՑ

ՅԱդամայ մինչև ցկրկին շինուած պարսպին Երուսաղեմի, և ցերկոտասան ամ իշխանութեանն Հրէից Նեեմիայ, կարգաւ ատեն զժամանակն Գիրք Երրայեցւոց. իսկ անտի և յառաջ՝ ո՛չ ևս: Քանզի երկերիւր (յիսուն) և հինգ ամաց միջոցաւ յետ Նեեմեայ կրցեր է ժամանակն Անտիոքայ Եպիփանեայ՝ առ որով պատմութիւնս Մակաբայեցւոց. և ՚ի միջոցս յայս ՚ի Յովսեպայ և յԱփրիկանեայ առեալ Եւսեբի զանունս քահանայապետիցն որ տիրէին ժողովրդեանն՝ նշանակէ ՚ի կանոնս ժամանակաց: Բայց զի առ Անտիոքաւ Մեծն կոչեցելով՝ զԱռաջին Մակաբայեցւոցն իրս վճարիլ ասէ ինքն Եւսեբի, որ քառասուն և աւելի ամօք յառաջ է քան զԱնտիոքոս Եպիփանէս. այս Երրորդ Մակաբայեցւոցն ճահաւորի. զի առ Մեծն Անտիոքաւ հանդիպի Պտղոմէոս Փիղոպատովր, առ որովք իրք Երրորդ Մակաբայեցւոցն: Եւ թէ զի՞նչ այսմ պատճառ, ո՛չ ունիմ ասել. ևս զի և առ մահուամբն Շմաւոնի ասէ զԵրկրորդ Մակաբայեցւոցն իրս կատարել. և յա՛յտ է ՚ի գրոց աստի, զի Առաջինս՝ և ո՛չ Երկրորդ Մակաբայեցին հասուցանէ զպատմութիւնս մինչև ցՇմաւոն, կալցի՛ զայս ոք որպէս և ախորժէ կամ գրչին սխալել, կամ կարգի գրոցս փոփոխել: Բայց թէ ո՞ք որք արեաց զպատմութիւնս զայս, և կամ զի՞նչ պատճառաւ, թէպէտ և զվերասացեալ միջոցս ժամանակին ո՛չ նշանակեն ինչ գիրք Հրէից՝ յետ Նեեմեայ, բաց յԵսթերայ իրացն. այլ զայս վասն մեծ վշտացն զոր կրեցին Հրէայք վասն աստուածպաշտութեան յԱնտիոքեանց. և վասն մեծ քաջութեանն Մակաբեանց, և մեծագոյն առ նոսա Աստուծոյ խնամոցն՝ գրեցին մեծաւ զգուշութեամբ. մանաւանդ ՚ի հաւատարմութիւն մարգարէութեանն Դանիէլի, որ նշանակեաց զանցս ժամանակին այնորիկ: Այլ որպէս յԵրկրորդ Մակաբայեցւոցն ասէ, թէ՛ Յասոն Կիւրենացի ՚ի հինգ գիրս բաժանեաց զպատմութիւնս Մակաբայեցւոցն լայն և ճոխ բանիւ. զորս

* *Յօրինակին պակասէր. Թաղեաց և զնա:*

* *Յօրինակին. Ամաց ճիւղ:*

* *Այլք. Եւ մինչչև մեռեալ էր նորա... նորա՝ ՚ի վերայ Նինուէի:*

* *՚ի վախճանի ոմանք. Կատարեցաւ գիրք Տովբիթայ:*

յետոյ առեալ համառօտեցին վասն հեշտի՝ ընթերցողաց: Արդ՝ երկի
յերկոցունց գրոցս զի՝ ի միոջէ նախագրեալ օրինակէ, ի հնգից գրոցն
ասեն Յասոնեայ երկուք ոմանք համառօտեցին. յայտ է՝ զի յայլ և յայլ
տեղիս կամ ժամանակս. ուստի է՝ ինչ զոր համաձայնին, և է՝ ինչ զոր
յաւելուն մի քան զմի: Բայց զանուանս իւրեանց ո՛չ եղին ըստ առաջնոցն
պատճառի, զոր ի Դատաւորացն և ի Թագաւորութեանցն
յառաջաբանսն ասացաք:

Գլուխք Առաջին գրոցն Մակաբայեցոց

ա. Թէ յետ հարիւր և յիսուն ամի մահուանն Աղէքսադրի թագաւորեաց
Ասորոց և Բաբելոնի Անտիոքոս Եպիփանէս. նա բռնադատէր զԻսրայէլ ՚ի
կռապաշտութիւն, ետ պատերազմ ընդ Փիղոմետոր Պտղոմեայ
Եգիպտացոյ, և դարձաւ յոլով աւարաւ. եկն յԵրուսաղէմ, կողոպտեաց
զտաճարն Աստուծոյ, և սպան զբազունս ՚ի Յրէից:

բ. Առաքեաց ապա զօրավար, որ ՚ի բուռն առեալ զգանձս և զամրոցս՝
ենոյծ ՚ի միջնաբերդն Երուսաղէմի հեթանոսս յորոգայթ Յրէից, պղծեաց
զտաճարն սուրբ, և կռապաշտեցո՛յց գյուղվս ՚ի Յրէից. և այլք շփոթեալք
զնացին փախստեայք:

գ. Ջետեղեցաւ Մատաթի քահանայ որդւովքն ՚ի Մովդիիմ. եկին
սպասաւորքն Անտիոքոս՝ ստիպէին զբաղաքն ՚ի պաշտօն կռոցն. որոց
ընդդէմ կացեալ Մատաթի, սպան զՅրէայն որ զոհեաց կռոցն, և ինքն
բազում ընկերօք նստաւ յամուրս լերանցն:

դ. Սպանին զօրքն Անտիոքոս ՚ի լեռնամուտ Յրէիցն ՚ի շաբաթու հազար
ոգի. իսկ Մատաթի հօր ընկերօք եհար սատակեաց ՚ի նոցունց բազումս
՚ի շաբաթու. կործանէր զբազինս, վանէր զանօրէնսն, և պայծառ
յաղթութեամբ կեցեալ՝ վախճանէր:

ե. Յուդա Մակաբէ զօրապետ Յրէից՝ սպան զԱպողոնիոս, և փախոյց
զՆրեն սպարապետ Անտիոքոս. և ինքն կայր մեծաւ ճոխութեամբ:

զ. Դիմեաց Անտիոքոս յԱնտիոք քաղաքէ աւարել ապռել զաշխարհն
Պարսից. յանձն արար զորդին և զգօրսն իշխանին Լիւսեայ, պատուէր
տուեալ նմա ջնջել սատակել զՅրէայսն յերկրէ:

է. Առաքէր Լիւսիաս երիս զօրավարս ՚ի վերայ Յրէից. զորս Յուդայեանք
սաստկապէս հարեալ առին յաւարի. իսկ ապա Լիւսիաս եկեալ
ճակատեալ, պարտեալ վատթարեալ դառնայր ամօթով:

ը. Սրբեաց Յուդա զտաճարն որ պղծեալ էր յերից ամաց. շինեաց
զամրոցն Սիոն յաշտարակս ամուրս յերեսաց հեթանոսաց:

թ. Պէսպէս քաջութիւնք Յուդայ և եղբարց իւրոց ՚ի մարտս բազումս,
վանեալ զՏիմոթէոս, զՅրէայսն փրկեալ ՚ի կողմանս կողմանս՝ զամուրս
հեթանոսաց քանդելով. և զի պարտեցան Յովսեպոս Ջաքարեանց և
իւրքն յերեսաց Գէորգեայ ՚ի հարուածս սաստիկս:

ժ. Անտիոքոս ՚ի Պարսից փախստեայ անկեալ ՚ի Բաբելոն, լուաւ զբօթ
պարտութեան զօրացն ՚ի Յրէաստան. սրտաբեկեալ եղև, զի գտին զնա
չարիքն զոր անցոյց ընդ Երուսաղէմ. յանձնեալ Փիլիպեայ զգօրսն, և զի
թագաւորեցուցէ զորդին իւր, և ինքն անդէն չարաւ մեռանէր:

ժա. Թագաւորեցոյց Լիւսիաս զհօրամոյն Անտիոքոս, որ և ՚ի բանսարկու

չարախօսաց զայրացեալ Յրէից եկն զօրօք և փղօք պաշարեաց զԲեթսուվր. որուն Մակաբեանք ՚ի դիմի՝ հարան քաջութեամբ. ուր և եղիագարոս Աւարան եղբայր Յուդայի կործանեալ զփիղ մի նշանաւոր՝ ճնլեցաւ ընդ նովաւ. իսկ նա ա՛ռ զԲեթսուվր, և պաշարեաց զԵրուսաղէմ. և հաշտութիւն խօսեցեալ եմուտ յԵրուսաղէմ, և կործանեաց զպարիսպս նորա:

Ժբ. Դեմետրիոս Սելևկեանց Յռովմայեցի թագաւորեաց ծովեզերեայց. և ըմբռնեալ սպան զԱնտիոքոս. առ նա՛ Յակիմոս անօրէն չարախօսեր զՅուդայէ՝ ա՛կն եղեալ քահանայութեանն, և նա ետ ընդ նմա զԲաքիդդ. որ ո՛չ կարաց ըմբռնել զՅուդա. եկն ապա Նիկանովր, և սպառնացաւ տաճարին հրով, և ճակատեալ ընդ Յուդայի՝ սպանա՛ւ ինքն և զօրքն. և կախեցաւ զլուխն ձեռամբն զպարսպէն Երուսաղէմի:

Ժգ. Ի համբաւ յաղթութեանն Յռոմայեցւոց՝ ձեռն առ նոսա տուեալ Յուդայի, զոր ընկալեալ դաշամբք՝ գրեցին Դեմետրեայ մի՛ մեղանչել Յրէից. որոց ո՛չ անսացեալ գումարեաց զօրս ընդ Յակիմայ և Բաքիդդեայ. որոց քաջապէս պատահեալ Յուդայի, անկա՛ւ ՚ի պատերազմին:

Ժդ. Յետ նորա եկաց Յովնաթան, և որդիքն Ամբրեայ հրամանաւ Բաքիդդեայ կալան զՅովհաննէս եղբայր Յովնաթանեայ, զորոյ փութապէս առին վրէժ յորդւոցն Ամբրեայ ՚ի հարսանեկաց անտի: Բռնացան Բաքիդեանք, կալան զքաղաքս: Յակիմոս քակել սկսաւ զսրահ սրբութեանցն և հարաւ յԱստուծոյ. և Բաքիդէս իբրև ո՛չ կարաց կալուլ զՅովնաթան՝ չոգաւ և այլ ո՛չ դարձաւ:

Ժե. Թագաւորեաց Աղէքսանդրոս Անտիոքեանց ՚ի Պտղոմիդեա, և պատրաստեր ՚ի մա՛րտ ընդ Դեմետրի. առաքեր Դեմետր առ Յովնաթան բանս հաշտութեան: Լուաւ Աղէքսանդրոս՝ և առաքեաց Յովնաթանու թագ և ծիրանիս, և եղև նմա ուխտադիր. զոր քակելոյ սակս յղեաց Դեմետր առ Յովնաթան բազում խոստմամբք ձգել զնա առ իւր, որուն ո՛չ կալաւ յանձին, այլ մնա՛ց ընդ Աղէքսանդրի:

Ժզ. Սպանաւ Դեմետր առաջի Աղէքսանդրի, և Աղէքսանդր փեսայացեալ Էրգիտեայ Պտղոմէի՝ մեծապէս շքով պատուեաց զՅովնաթան:

Ժէ. Դեմետր որդի Դեմետրեայ ՚ի Կրէտեայ ուշ եղեալ հայրենեացն գայ յԱնտիոք. սպառնալիս, և զօրս ՚ի ձեռն Ապողոնեայ առաքէ ՚ի մարտ ընդ Յովնաթանու. զորս սաստիկ հարեալ Յովնաթան՝ տիրէ Ազովտայ և Ասկաղոնի. կրկին պատուի յԱղէքսանդրէ ոսկի թագիւ. առնու և զԱկկարոն հանդերձ սահմանօքն:

Ժը. Պտղոմէու աներ Աղէքսանդրու նենգութեամբ յինքն շորթեաց զաշխարհի փեսային մինչև ցՍելևկիա, և հանեալ ՚ի նմանէ զդուստրն ետ Դեմետրի. իսկ Ջաբէլ Արուայիկ հատեալ զգլուխն Աղէքսանդրի մատոյց Պտղոմեայ, և յաւուրն երրորդի մեռաւ Պտղոմէոս:

Ժթ. Թագաւորէ Դեմետր. իսկ Յովնաթան պնդեալ մենքենայիւք զմարտն ՚ի վերայ միջնաբերդին Երուսաղէմի, ընդ որ բարկանայր Դեմետր. առ որ եկեալ Յովնաթան՝ բազում պատիւս և օժիտս հարկաց գտեալ ՚ի նմանէ դառնայր:

ի. Ապստամբեալ զօրքն ՚ի Դեմետրեայ թագաւորեցուցանել զԱնտիոքոս Աղէքսանդրեան. խնդրեաց Յովնաթան ՚ի Դեմետրեայ՝ տալ նմա ՚ի ձեռս

զմիջնաբերդն Երուսաղեմի, զոր խոստացաւ և այլ ևս՝ միայն զի տացէ նմա զօրս ՚ի Զրէից գլխապահս զի մի՛ սպանցի. որովք իբրև փրկեցաւն՝ ո՛չ ևս եկաց ՚ի խոստմունսն:

իա. Թագաւորեցոյց Տրիփոն զԱնտիոքոս. յորմէ ՚ի պատահելն մարտիւ՝ յաղթահարեալ Դեմետրի գնաց փախստեայ:

իբ. Մեծապէս պատուեաց Անտիոքոս զՅովնաթան ոսկի սպասուք և թագիւ (շգեղք). և զՇմաւոն եղբայր նորա սպարապետ ՚ի Ծուրայ մինչև ցեգիպոսս. և ո՛չ կարացին իշխանք Դեմետրի խախտել զՅովնաթան. այլ կային մեծաւ փառօք պսակեալք յաղթութեամբ:

իգ. Առաքեաց նորոգեաց Յովնաթան զսէրն առ Զոռմայեցիս. զոր ընկալեալ գրեցին եղբարս գոլ Զրէից զՍպարտիացիս, և յԱբրահամէ սերեալս:

իդ. Գունարեցան դարձեալ ՚ի վերայ Յովնաթանու իշխանք Դեմետրի, որոց ընդ առաջ եղեալ պատրաստէր գիշերամարտի. յորմէ զարհուրեալ թշնամեացն խիտ առ խիտ խարոյկս վառեալ թողին և փախեան:

իե. Քաջութիւնք Յովնաթանու ՚ի վերայ Արաբացւոց, Դամասկացւոց, Յոպպեացւոց. և զի ամուր շինուածովք փակեալ պաշարեաց նեղել զորս ՚ի միջնաբերդն Երուսաղեմի, ո՛չ տալով մուտ կամ ել. նաև զպարիսպն ամրացոյց զԵրուսաղեմի:

իզ. Խնդրէր Տրիփոն թագաւորել, այլ կասկածէր ՚ի Յովնաթանայ. իբրև յայտնի պատերազմաւ ո՛չ կարէր ունել, նենգութեամբ թօթափեաց զգօրսն ՚ի նմանէ. կալաւ նա ՚ի Պտղոմիդեայ. և սպան զորս ընդ նմա: Սգացին զնա, և կացուցին զՇմաւոն ՚ի տեղի նորա. առ որ յղեաց Տրիփոն թէ վասն պարտուց արծաթոյ ունիմ զՅովնաթան. արդ տուր զարծաթն և զորդիսն պատանդս. իբրև առ՝ սպան զՅովնաթան. զոր բարձեալ թաղեաց Շմաւոն առ հօրն և եղբարցն:

իէ. Սպան Տրիփոն զԱնտիոքոս մանուկ և թագաւորեաց: Շմաւոն ամրացոյց զերկիրն, և խնդրեաց հաշտութիւն ՚ի Դեմետրեայ. յանձն առ և արար խաղաղութիւն և ազատութիւն Զրէից. պաշարեաց Շմաւոն և ան զԳազա. նեղեցան և որք ՚ի միջնաբերդին, և ետուն զնա ՚ի ձեռս Շմաւոնի. զոր սրբեալ բնակէր ՚ի ներքս սեպիական գնդաւն, և կացոյց զՅովնաթան որդի իւր սպարապետ զօրուն:

իը. Անց Դեմետր ՚ի Մարս և ՚ի Պարթևս, առնուլ թիկունս և մարտնչել ընդ Տրիփոնեայ, ըմբռնեցաւ ՚ի Պարթևացն և եղաւ ՚ի բանտի: Եւ յաւուրս Շմաւոնի մեծաւ խաղաղութեամբ և բարեփառութեամբ կայր ազգն Զրէից:

իթ. ՚Ի տախտակս պղնձիս թղթեն Զոռմայեցիք առ Շմաւոն. որոց արծակեաց զհրեշտակս և վահան ոսկի. զի այս երիցս անգամ հաստատեցաւ ուխտ հաշտութեան ՚ի միջի սոցուն. և զի ընդարձակս գովեն Զոռմայեցիք զՇմաւոն՝ հաստատելով զտէրութիւն նորա:

լ. Անտիոքոս Դեմետրեանց որ է Սիդէացին՝ պատուէ մեծապէս զՇմաւոն փառօք և ազատութեամբ հարկաց, և ինքն զհետ մտեալ Տրիփոնեայ՝ անկ զնա փախստեայ ՚ի Դովրա քաղաք ծովեզերեայց, և անդ պաշարեաց:

լա. Եկին հասին հրովարտակք Զոռմայեցւոց առ Պտղոմէոս Էրգէտէս, և առ այլ թագաւորս՝ Ասիացւոց, Պարսից, յաշխարհս և յազգս, զի

պատուեալ լիցին Յրեայք, և մի՛ որ նոցա մեղիցէ:

լբ. Դարձաւ շրջեցաւ Անտիոքոս թշնամութեամբ ընդ Շմաւոնի, իբրև փախեալ Տրիփոն ՚ի նմանէ, ետ զօրս ՚ի ձեռն Կենդեբեայ յաւարի առնուլ զՅրեայս. որոց ընդդէմ գումարեաց Շմաւոն զգօրսն և զորդիսն, որք զբազունս սրով հարեալ, զփախստեայսն ՚ի բուրգսն Ազովտայ հրով այրեցին, և դարձան յաղթութեամբ:

լգ. Աղէքսանդրոս փեսայ Շմաւոնի ա՛կն եղեալ իշխանութեանն, նենգութեամբ ա՛ծ զՇմաւոն որդւովքն ՚ի մեծարանս կոչնոց. իբրև ընդ գինիս մտին, սպան զՇմաւոն և զորդիսն որք ընդ նմա էին ՚ի Դովրա քաղաքի: Յովհաննէս որդի նորա իբրև լուաւ զսպանումն հօրն և զեղբարցն, զգուշացաւ անձին. և եղև քահանայապետ, և կալաւ զիշխանութիւնն յետ հօրն. և ՚ի նմանէ որդի ՚ի հօրէ մինչև ցՅերովդէս, յորոյ աւուրս ծնաւ Քրիստոս:

Արդ՝ են ժամանակք պատմութեան գրոցս այսոցիկ, ՚ի թագաւորելոյն Անտիոքայ երևելոյ մինչև ՚ի մահն Շմաւոնի, ամք քառասուն և հինգ, և անտի մինչև ցՅերովդէս ամք իննսուն և վեց: Բայց Գիրքս Մակաբայեցոց, ո՛չ ՚ի մահուանէն Աղէքսանդրի՝ այլ յետ տասն ամի, յերրորդ ամէն Կասանդրեայ, որ զկնի Փիլիպոսի Արիդեայ եւթն ամին թագաւորեաց Մակեդոնացոց՝ սկսանի թուել զժամանակս Յունացն:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ

1

Գլուխ Ա

¹Եւ յետ հարուածոցն Աղէքսանդրի կայսեր Մակեդոնացոց որդւոյ Փիլիպպեայ. որ խաղաց գնաց նա յերկրէն Քետիմացոց, ՚ի ժամանակի զի հարկանէր զԴարեհ արքայ զՊարսից և զՊարթևաց. և որ թագաւորեաց իսկ յետ նորա, ՚ի վերայ Յունաց աշխարհին և Յռոմոց*։ ²Եւ զօրաժողով լինէր մեծաւ պատերազմաւ, զամուրս հարկանէր, զբազում թագաւորս ՚ի սուր սուսերի իւրոյ սատակէր. ³առնոյր զօր բազում ազգաց ազգաց հեթանոսաց. և սարսէր երկիրս ամենայն առաջի նորա*։ ⁴Զօրաժողով լինէր զօրօք բազմօք, և հասանէր ՚ի վերայ երկրի, յամենայն պետութեանցն զօրութեանց, ⁵և զաշխարհս ամենայն ՚ի հարկի՛ կացուցանէր։ ⁶Եւ յետ այսր անկանէր ՚ի մահիճս իւր և զախտս մահու ջերանէր. և իբրև ետես թէ մեռանիմ*, ⁷կոչեաց նա զժառայսն դայեկորդիսն իւր, զչորեսին փառաւորեալս ՚ի նմանէ, որ ընդ նմա՛ իսկ սնեալ էին ՚ի մանկութենէ. և բաժանեաց և ետ նոցա զարքայութիւնն իւր, մինչդեռ ինքն կենդանի՛ էր*։ ⁸Եւ թագաւորեաց Աղէքսանդրոս ամս երկոտասան՝ և մեռաւ։ ⁹Յետ նորա զատեալ հաստատեցան կացին յիւրաքանչիւր տէրութեան դայեկորդիքն իւր*, ¹⁰թագ

* Ոմանք. Գնաց նա յերկրէն Քետացոց... որ և թագաւորեաց իսկ... և Յռոմոց:

* Ոմանք. Առնոյր զաւար բազում:

* Ոմանք. Եւ զախտ մահու... եթէ մեռանի:

* Ոմանք. Դայեկորդիսն իւր:

* Ի՛ բազումս պակասի. Յետ նորա զատեալ հաստա՛:

կապեցին իւրաքանչիւր յետ մահուան նորա. և որդիք նոցա յետ նոցա՝ ամս բազումս. բազմացուցին զանօրէնութիւնս, և լցին զերկիր չարեօք իւրեանց:

Ա ¹¹Ի նոցանէ բղխէր արմատ չարի, շառաւիղ դառնութեան անօրէնն Անտիոք, որդի Անտիոքայ արքայի, որ էր մնացեալ ՚ի պատանդս ՚ի Յոնն քաղաքի: Եւ թագաւորեաց նա յամին հարիւրորդի երեսներորդի եւթներորդի թագաւորութեանն Յունաց*։ ¹²Յաւուրս ժամանակացն այնոցիկ, ելին զատան յորդուցն Իսրայէլի արք անօրէնք, ՚ի բանս պատիրս՝ ՚ի բանս հրապուրանաց արկին զբազումս՝ և ասեն. Եկայք՝ երթիցուք ուխտ դիցուք և դաշինս կոեսցուք՝ ընդ ամենայն ազգս հեթանոսաց՝ որ շուրջ զմեքդ բնակեալ են. զի յաւուրցն ժամանակաց հետէ՝ յորմէ անջատաք մեկնեցաք մեք ՚ի նոցանէ, չարիք բազումք կարևորք եկին հասին ՚ի վերայ մեր*։ ¹³Հաճո՛յ թուեցաւ բանն ՚ի միտս բազմաց, ¹⁴յօժարեցին ոմանք ՚ի ժողովրդենէ անտի երթալ յանդիման լինել թագաւորին: Եւ ետ նոցա իշխանութիւն թագաւորն՝ գործել զամենայն իրաւունս ըստ օրինացն հեթանոսաց: ¹⁵Եւ շինեցին հրապարակս մեհենիցն յերուսաղէմ ըստ օրինացն հեթանոսաց. ¹⁶և հաստատեցին իւրեանց օրէնս անթլիատութեան, և ապստամբ եղեն յուխտէ կտակարանացն սրբութեան. զուգեցան ընդ հեթանոսս, յօժարեցին կանխեցին առնել զչարիս: ¹⁷Եւ իբրև աջողեցաւ թագաւորութիւնն առաջի Անտիոքայ, ե՛ր ՚ի մտի իւրում նա՝ թագաւորել և ՚ի վերայ երկրին Եգիպտացւոց՝ միաբանել զերկոսին թագաւորութիւնսն*։ ¹⁸Դիմեաց խաղաց գնաց նա ՚ի վերայ երկրին Եգիպտացւոց զօրօք բազմօք՝ կառօք և փղօք, և նաւուք բազմօք, ¹⁹տա՛լ պատերազմ ընդ Պտղոմեայ թագաւորին Եգիպտացւոց: Ի պարտութիւն մատնեցաւ Պտղոմէոս յերեսաց նորա, և փախստական լինէր առաջի նորա: Յայնմ մարտի բազում վիրաւորք անկանէին*։ ²⁰Ասպատակ սփռէր ընդ աշխարհն ամենայն Անտիոքոս. վա՛ղ հասանէին, արագ արագ զաւարն ժողովին, և առնուին զամուրս ամենայն երկրին Եգիպտացւոց*։ ²¹Եւ յետ հարուածոց Եգիպտացւոցն դարձաւ Անտիոքոս: Յամին հարիւրորդի քառասներորդի երրորդի* ²²եկն եհաս ՚ի վերայ քաղաքին Երուսաղէմացւոց մեծա՛ւ պատերազմա՛ւ*։ ²³Եւ եկն եմուտ ՚ի սրբութիւն անդր մեծաւ հպարտութեամբ. և ա՛ռ նա զսեղանն ոսկի, և զաշտանակն լուսոյ, և զամենայն կահ զանձին. զսեղանն պատարագաց, զսկիհսն, և զտաշտսն, և զխնկաղացսն, և զվարագոյրսն ամենայն. զպսակսն, և զգարդն ոսկի*։ ²⁴Եւ զառաջինն դիմեաց յանդիման տաճարին. կեղևեաց ձուլեաց զամենայն. և ա՛ռ նա զարծաթն և զոսկին, զզէնն և զգարդն, և զամենայն զկահն պատերազմին. և ա՛ռ նա զգանձս ծածկեալս զոր եգիտ, և զամենայն անօթ ցանկալի. և գնաց նա յերկիր իւր: ²⁵Եհեղ արիւն բազում, և գործեաց մահուոնս անհամարս. խօսեցաւ զամբարտաւանութիւն մեծա՛ւ

* *Ոմանք.* Արմատ չար, շառաւիղ... որ սերմանեալ ՚ի պատանդս:

* *Ոմանք.* Յորմէ անջատեցաք:

* *Յօրինակին պակասէր.* Թագաւորել և ՚ի վերայ: *Ոմանք յաւելուն.* Եւ ՚ի վերայ թագաւորութեան երկրին Ե՛:

* *Ոմանք.* Եւ յայնմանէ բազում վիրաւորք անկա՛ւ:

* *Ոմանք.* Արագ արագ զօրն ժողովին:

* *Յայլս պակասի.* Քառասներորդի երրորդի:

* *Ոմանք յաւելուն.* Եկն եհաս նա ՚ի վերայ:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ մեծաւ, նշանակի՝ բազում: *Որպէս և ոմանք.* Անդր հպարտութեամբ բազմաւ:

հպարտութեամբ*։ ²⁶Եւ եղև սո՛ւգ մեծ ՚ի վերայ Իսրայէլի. ընդ ամենայն տեղիս իւրեանց ²⁷հեծեցին իշխանք և ծերք. կուսանք և երիտասարդք տկարացան. եղծա՛ւ գեղ կանանց. ²⁸և ամենայն փեսայից լի՛ եղեն բերանք ողբոց լալութեան. և ամենայն հարսանց եղեն արգելանք սգոյ սրսկապանք իւրեանց*։ ²⁹և շարժեցաւ երկիր ՚ի վերայ բնակչաց իւրոց. և ամենայն տունն Յակոբայ զգեցաւ զամօթ զանարգանաց։

Բ ³⁰Չհետ երկուց ամաց ժամանակացն այնոցիկ, արձակեա՛ց արքայ Անտիոքոս իշխան հարկահան ՚ի քաղաքսն Յրէաստանի, և եկն յերուսաղէմ զօրօք բազմօք, ³¹խօսել՝ սկսաւ բանիւք խաղաղութեան նենգութեամբ. և նոքա հաւատացին նմա։ ³²Եւ անկա՛ւ նա ՚ի վերայ քաղաքին յանկարծակի, և հար զնոսա հարուածս մեծամեծս. և սատակեաց ժողովս բազումս յԻսրայէլէ*։ ³³Եւ ա՛ռ նա զաւար քաղաքին, և հրձի՛գ արար զամենայն փայտակերտ զապարանից նորա. քակեաց և աւերեաց շուրջ զպարիսպս քաղաքին, և զամենայն զորմս շինուածոց զապարանից նորա։ ³⁴Ի գերութիւն վարեցին զկանայս և զմանկունս, և զամենայն անասունս նոցա ՚ի ժառանգութիւն իւրեանց։ ³⁵Եւ շինեցին զամրակողմնն զգլո՛ւխ քաղաքին ՚ի պարիսպս ամուր, յաշտարակս հզօրաց. և եղև նոցա այն իբրև բերդ ՚ի բերդի ամրացեալ քաղաքին. ³⁶և անդր մուծին ազգ մեղաւոր զարս անօրէնս, ամրացուցին լցին զհնու. հանդերձեցին լցին համբարօք, և զամենայն զօրն երուսաղէմի* ³⁷ի ներքս կուտեցին. և եղեն յորոգայթ մեծ, ³⁸և ՚ի խափան սրբութեանն և ՚ի սատանայ չա՛ր տանն Իսրայէլի հանապազորդ*։ ³⁹և հեղին զարիւն զարդար շուրջ զսրբութեամբն, և պղծեցին զսրբութիւնսն։ ⁴⁰Փախստեա՛յ գնացին այնուհետև բնակիչքն երուսաղէմի վասն նոցա. և եղև նա բնակութիւն օտարաց, և ինքն օտարացաւ ՚ի զաւակէ յիւրոց ծննդոց. զի որդիք նորա թողին զնա*։ ⁴¹և սրբութիւն նորա աւերեցաւ և եղև յանապատ։ Դարձան տօնք տարեկանաց նորա ՚ի սուգ, և շաբաթք նորա յամօթ նախատանաց. պատի՛ւ նորա անարգեցաւ*, ⁴²և փառք նորա լցա՛ն անարգանօք. և բարձրութիւն նորա ՚ի սո՛ւգ կործանեցաւ։ ⁴³Ընդ ամենայն աշխարհս հրովարտակք արձակեցան, զի թողցեն ամենայն բնակիչք երկրի զօրէնս իւրաքանչիւր, և ՚ի մի օրէնս նորա կացցեն։ ⁴⁴Յանձն առին ազգք ամենայն, ըստ հրամանին արքունի. ⁴⁵և բազումք ևս յԻսրայէլացւոց անտի դարձան ՚ի պաշտօնն անօրէնութեան, և զոհեցին կռոց նոցա, և պղծեցին զշաբաթս իւրեանց։ ⁴⁶Յրեշտակս արձակեաց թագաւորն հրովարտակօք հանդերձ յերուսաղէմ, ՚ի քաղաքսն Յրէաստանի՝ դարձուցանել զնոսա յօրէնս օտարոտիս. ⁴⁷և խափան առնել ողջակիզացն պատարագաց, և զոհիցն սրբութեան. ⁴⁸պղծել՝ զշաբաթս՝ և զտօնս տարեկանաց. ⁴⁹և ապականել զսրբութիւնն. և նուիրեալ ⁵⁰սեղանս կանգնել. երևեցուցանել անդս մեհենից, յազել զխոզս, և խառնա՛կ զանասունս. ⁵¹և թողուլ զորդիս նոցա անթլփատս. պղծել՝ զանձինս նոցա յամենայն պղծութիւն անօրէնութեան. զի մոռացին

* *Ոմանք.* Եւ հեղ արիւն բազում։

* *Այլք.* Լի՛ էին բերանք ող՛։

* *Այլք.* Եւ սատակեաց ժողովուրդս բազումս։

* *Ոմանք.* Լցուցին զհնու... և զամենայն զաւարն երուսաղէմի։

* *Ոսկան.* Եւ ՚ի սատան չար տանն։

* *Ոմանք.* Բնակիչքն յերուսաղէմէ վասն նոցա։

* *Այլք.* Պատիւ նորա անգոսնեցաւ։

ամենևին զօրէնս, և փոխեսցեն զիրաւունս* .⁵² և որ ո՛չ կացցէ ՚ի հրամանի թագաւորին, մահո՛ւ մեռցի: ⁵³Ըստ ամենայն բանի զոր գրեաց թագաւորն՝ արար ոստիկանս ըստ ամենայն տեղիս* .⁵⁴ և պատուէ՛ր ետ քաղաքացն Զրէաստանի մատուցանել՝ զոհս քաղաքի քաղաքի: ⁵⁵Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի, և լցին չարեօք զերկիրն* .⁵⁶ և արարին ամրախիտ գիսրայել յամենայն տեղիս ամրութեան ապաստանաց նոցա: ⁵⁷Յամին հարիւրորդի քառասներորդի հինգերորդի, ամսեանն որ օր քսան և հինգ էր ամսոյն. շինեաց նա պատկեր պղծութեան անապատի ՚ի վերայ սեղանոյն* .⁵⁸ ընդ ամենայն Զրէաստան շուրջ զքաղաքօք շինեցին մեհեանս, և ՚ի վերայ ամենայն դրանց ապարանիցն, և ընդ ամենայն գնացս քաղաքացն՝ խո՛ւնկս արկանէին: ⁵⁹Եւ զգիրս ամենայն կտակարանացն զոր գտանէին, պատառէին և հուրք կիզուին: ⁶⁰Եւ ուր առ ումեք գտանէին գիրք կտակարանաց, կամ թէ ոք ուրեք ընդ օրէնս հաւասարէր, հրաման թագաւորին զնա մահո՛ւ սպանանէր: ⁶¹Եւ այդպէս սաստկացեալ էր հրամանն ՚ի վերայ Իսրայէլացւոց, առնել նոցա զոր գտանէին ամսոյ ամսոյ ՚ի մէջ քաղաքացն: ⁶²Եւ ըստ քսան և հինգ և քսան և հինգ ամսոյ զո՛հս ՚ի բազինս բազինս մատուցանէին, որ է ՚ի վերայ սեղանոյն* .⁶³ Եւ զկանայսն որոց զմանկունսն իւրեանց թլփատեալ էր՝ սպանանէին ըստ հրամանին. ⁶⁴և զմանկունսն զպարանոցէ մարցն կախէին ըստ հրամանին արքունի, և զթլփատիչսն և զորդիս նոցա ըստ նմին օրինակի: ⁶⁵Եւ բազումք յերուսաղեմացւոցն հաստատեցան պնդեցին զանծինս իւրեանց՝ զի մի՛ կերիցեն ՚ի պղծութենէ անտի. յանձն առին յօժարութեամբ մեռանել, և ո՛չ պղծել զանծինս իւրեանց ՚ի խառնակ կերակրոյ անտի* .⁶⁶ զի մի՛ սուրբ կտակարանքն պղծիցին: Եւ մեռան բազումք ՚ի նոցանէ. ⁶⁷և եղև տօ՛ն ուրախութեան ՚ի վերայ Իսրայէլի մե՛ծ յոյժ:

2

Գլուխ Բ

Գ ¹Յաւուրս ժամանակացն այնոցիկ համբարձա՛ւ Մատաթի Շմաւոնեան որդի Յովհաննու, քահանայ յորդոցն Յովարիմ յերուսաղեմէ, եկն և նստաւ նա յամուրս այրիցն ՚ի Մովդիիմ* : ²Եւ նորա էին որդիք հինգ. Յովհաննէս՝ որ անուանեալ կոչի Կադդիշ, ³Շմաւոն՝ որ անուանեալ Թարսսի*, ⁴Յուդաս՝ որ անուանեալ է Մակաբէ, ⁵Եղիազար՝ որ անուանեալ է Աւարան, Յովնաթան՝ որ կոչեցաւ Սափութ* : ⁶Եւ իբրև ետես նա զհայիոյութիւնսն որ լինէին ՚ի Զրէաստանի և ՚ի մէջ Երուսաղեմի. ⁷սկսաւ ողբալ յանձն իւր՝ և ասէ. Վայ՛ ինձ. իսկ ընդէ՞ր պատրաստեցաւ բնաւ տեսանել ինձ զբեկումն ժողովրդեան ինոյ, և

* Ոմանք. Պղծութեան անօրէ՛:

* Ոմանք. Ըստ ամենայն բանիցն զոր... ընդ ամենայն տե՛:

* Ոսկան. Արք ամենայնք որք ապստամբք լեալք էին յօ՛:

* Ոմանք յաւելուն. Ամսեանն Քասդէ, որ օր քսան և եւթն էր:

* Այսպէս կրկնեն ամենայն գրչագիրք՝ բաց յոսկանայ որ ունի. Եւ ըստ քսան և հինգերորդի աւուր ամսոյ:

* Բազումք. Եւ բազումք յիսրայէլացւոցն հաստա՛:

* Ոմանք. Որդի Յովնանու քահանայ յորդ՛:

* Ոսկան. Որ անուանեալ է Թարսսի:

* Յօրինակին. Անուանեալ է Աւարան: Ուր ոմանք. Աւարեան:

կամ տեսանել զբեկումն սրբոյ քաղաքին Երուսաղէմի. զի կա՛ց մնա՛ց նա մատնեալ ՚ի ձեռս թշնամեաց իւրոց* .⁸ և սրբութիւնն մատնեցաւ ՚ի ձեռս օտարաց. և եղև տաճարն իբրև այր մի զի անկեալ ՚ի փառաց* .⁹ և սպաս փառաց նորա իբրև մարդ՝ որ մատնեցաւ ՚ի գերութիւն: Կոտորեցան տղայք նորա ՚ի փողոցս իւրում, և երիտասարդք նորա ՚ի սուր թշնամեաց* :¹⁰ Իսկ ո՞ր ազգ իցէ որ ո՛չ ժառանգեաց գտերութիւն նորա. և կամ ո՞վ իցէ՝ որ ո՛չ հար աւար զկապուտ նորա, և ո՛չ յաղթեցին աւարի նորա* :¹¹ Ամենայն զարդք նորա գերծաւ ՚ի նմանէ. փոխանակ ազատութեանն՝ մատնեցաւ ՚ի ստրկութիւն. ¹² և ամենայն գեղ զարդուն մերոյ, և սրբութիւնն մեր, և փառքն մեր յաւա՛ր կործանեցան. և զայս ամենայն պղծեցին հեթանոսք. ¹³ և զի՞ պիտոյ են բնաւ մեզ այս կեանք: ¹⁴ Յայնմ ժամանակի Մատաթի և որդիքն ձեռն զօճեօք արկանէին և զպատմունճանս պատառէին, քրճազգած լինէին, և ՚ի սո՛ւզ մտանէին* :¹⁵ Եկին հասին ՚ի թագաւորէ անտի՝ որ ստիպաւ տագնապէին զապրտամբութիւնն. և եկին ՚ի քաղաքն ՚ի Մովդիիմ, զի անդ զոհս մատուցեն. ¹⁶ և բազումք յիսրայէլացւոց անտի ընդ նոսա. եկին ժողովեցան առ նոսա՝ և Մատաթի և որդիքն* :¹⁷ Յայա, խօսել սկսան որ եկեալ էին ՚ի թագաւորէ անտի, և ասեն ցՄատաթի. Իշխան փառաւոր ես դու՝ և մե՛ծ ես դու ՚ի քաղաքիս յայսմիկ. որդւովք և եղբարքք հաստատեալ դու ՚ի մէջ սոցա* :¹⁸ Արդ մատի՛ր նախ՝ դո՛ւ արա՛ զհրաման կամաց թագաւորին, որպէս և արարին ազգքն ամենայն արք Յրէաստանեայք, և ամենայն որ բնակեալ են յԵրուսաղէմ. և եղիջի՛ք դուք բարեկամք արքայի, և դու՝ և որդիքդ պատուեսջիք ոսկւով և արծաթով, և հրովարտակօք արքունի* :¹⁹ Պատասխանի՛ ետ Մատաթի ՚ի ձայն մեծ և ասէ. Եթէ ամենայն ազինք ՚ի տան թագաւորին ունկնդիր են հրամանաց թագաւորին, ապստամբեալ և ելեալ են յիւրաքանչիւր հա՛րցն օրինաց, և ընտրեցին նոքա զպատուէրն թագաւորին: ²⁰ Սակայն ե՛ս և որդիք և եղբարք իմ ըստ պատուիրանա՛ց հարցն մերոց գնասցուք: ²¹ Բա՛ւ լիցի մեզ թողուլ զօրէնս և զիրաւունս Աստուծոյ՝ ,²² և ՚ի հրամանս դառնալ թագաւորի. ո՛չ թողումք զպաշտօն հարցն. ո՛չ թիրիմք յա՛ջ կամ յահեակ. և ո՛չ անսամք հրամանի թագաւորին: ²³ Ա՛յն ինչ նորա բանքն ՚ի բերան էին, այր մի ՚ի Յրէից անտի՝ յանդիման ամենեցուն յառա՛ջ կաց զո՛հս մատուցանել առաջի մեհիմինն ՚ի բազմի անդ ՚ի Մովդիիմ, ըստ հրամանի թագաւորին* :²⁴ Իբրև ետես Մատաթի՝ ՚ի նախանձ բարկութեան բրդեցաւ, երկկամունք իւր զդողանի՛ հարան, և լի՛ եղև սրտմտութեամբ բարկութեամբ ըստ օրինաց դատաստանին. զո՛տս արծակեաց՝ հար զՅրեայն և անդէն սատակեաց առաջի բազմին* :²⁵ Եւ զայրն որ արքունի հրամանաւն տագնապէր զզոհսն մատուցանել, անդէն սպանանէր, զբազմն

* *Ոմանք.* Վայ է ինձ, իսկ ընդէ՞ր բնաւ պատրաստեցաւ ինձ տե՛:

* *Ոսկան.* Իբրև այր մի անկեալ ՚ի փա՛:

* *Ոսկան.* Ի՞ փողոցի իւրում: *Ոմանք.* Ի՞ սուր թշնամւոյ:

* *Ոմանք.* Իսկ ո՞ր ազգ է որ:

* *Ոսկան.* Մատաթի և որդիք նորա: *Ոմանք.* Քրճազգեաց լի՛:

* *Ոսկան.* Եւ Մատաթի և որդիք նորա:

* *Այլք.* Հաստատեալ ես դու ՚ի մէջ:

* *Յօրինակին պակասէր.* Արքայի, և դու և որդիքդ:

* *Ի բազումս պակասի.* Եւ զիրաւունս *Աստուծոյ:*

* *Այլք.* Առաջի մեհեմին:

* *Ի բազումս պակասի.* Սրտմտութեամբ *բարկութեամբ* ըստ:

կործանել զմեհեանն ակերեր, ²⁶խնդրել զնախանձն օրինաց. որպէս արար Փենէէս ընդ Ջամբրի ընդ որդին Եդոմայ: ²⁷Ի ծայն բարձր աղաղակել սկսաւ՝ և ասել. Զայն անենայն մարդ որ դիցէ՛ ՚ի մտի իւրում խնդրել զնախանձ վրիժուց օրինացն. որ ընդ հաստատութիւն կամիցի օրինացն՝ զհետ իմ ելցէ:

²⁸Խաղացին փախստեայ՝ զնացին, նա՛ և եղբայրք իւր ընդ լերինս, և թողին զամենայն զինչս իւրեանց անդէն՝ ՚ի քաղաքի: ²⁹Յայնմ ժամանակի իջին բազումք որք խնդրէին զիրաւունս և զարդարութիւն յանապատ անդր*, ³⁰նստել անդ կանամբք և որդուվք և անասնուվք հանդերձ. զի խստացան չարիքն ՚ի վերայ նոցա:

Դ ³¹Ազդ եղև իշխանաց թագաւորին և զօրաց որ էին ՚ի քաղաքին Դաւթի, եթ իջին արք ոմանք յամուրս անապատի որ իշխեցին ցրել զիրաման թագաւորին, և բազումք միաբանեալ իջին ընդ նոսա: ³²Ժամ ետուն, կազմեցան, պատրաստեցան, հեծան, հասին, պատեցին զամուրս անապատին. եկին ՚ի մարտ պատերազմի, և փակեցին զնոսա յաւուրս շաբաթուց: ³³Նախ բանագնաց եղեն, սկսան խօսել ընդ նոսա՝ և ասեն. Գոնէ արդ յայսմհետ կացէք ՚ի հրամանի թագաւորին, և կեցջիք*: ³⁴Անդուստ խօսել սկսան և ասեն. Ո՛չ ըստ ամուրս ելանենք. ո՛չ ըստ այդմ բանի հրամանի թագաւորին պղծենք զշաբաթս մեր. և ո՛չ անօրինիմք յօրէնս մեր*: ³⁵Իբրև զայն բան լուան, սաստկացուցին զպատերազմ առաւել՝ ՚ի վերայ նոցա, և պնդեցին զամուրսն յառնուլ զնոսա*: ³⁶Նոքա ո՛չ զկիրճս առին, ո՛չ զիլս արծակեցին, ո՛չ զամուրսն փակեցին, և ո՛չ բնաւ բանիցն ետուն պատասխանի, վասն աւուրն շաբաթուն. ³⁷բայց միայն լուկ զմիմեանս քաջալերէին. ասէ. Աստէն մեռցուք ՚ի սրտմտութեան մերում. զի աւաղիկ վկայ են մեզ երկինք և երկիր, զի ՚ի զո՛ւր տարապարտուց կորուսանէք զմեզ. այլ մեզ լաւ լիցի մեռանել, քան թէ ըստ օրէնս անցանիցենք, և զշաբաթս պղծիցենք*: ³⁸Իբրև զայն լուան, սաստկացուցին զպատերազմ յաւուրն շաբաթու, և սպանին ՚ի նոցանէ հազար ոգի, թո՛ղ զմարդ և զանասուն զոր ՚ի գերութեան վարեցին*: ³⁹Իբրև զայն լուան Մատաթի և եղբարքն իւր, սուգ մեծ առին և տրտմեցան յոյժ: ⁴⁰Սկսան խօսել այր ընդ ընկերի՝ և ասեն. Եթ ամենեքին զայն օրինակ ունիմք զոր արարին եղբարքն մեր, և ո՛չ ելին տալ պատերազմ ընդ հեթանոսս ՚ի վերայ անձանց՝ և ՚ի վերայ իրաւանց մերոց, քան սակաւ ինչ ժամանակ անցեալ իցէ, զմեզ արագագոյն ևս սատակեցեն քան զառաջինսն*: ⁴¹Զայն, ժողովեցան, ուխտ եղին, խորհուրդ խորհեցան ընդ միմեանս՝ և ասեն. Ամենայն մարդ որ եկեացէ ՚ի վերայ մեր ՚ի մարտ պատերազմի յաւուրս շաբաթու, համարձակ մարտիցուք և մի՛ առհասարակ ամենեքեան սատակեցուք, որպէս և եղբարքն մեր որ ապրեալ էին յանապատի անդ*: ⁴²Յայնմ ժամանակի ժողով լինէր առ նոսա բազում զօրաց Ասիտացուց, ազգ հզօր և պատերազմօղ յորդուցն Իսրայէլի. այր ամենայն ինքնակամ

* *Ոմանք.* Եւ զարդարութիւն յանապատի անդր:

* *Ոմանք.* Խօսել ընդ նոսա և ասել... կացէք ՚ի հրաման թա՛:

* *Յօրինակին պակասէր.* Ոչ ըստ այդմ բա՛:

* *Ոմանք.* Իբրև զայն բանս լու՛:

* *Ոսկան.* Ասեն. Աստէն մեռցուք:

* *Ոմանք յաւելուն.* Չմարդ և զանասուն, զկանայս և զմանկտի, զոր ՚ի գերութիւն վա՛:

* *Ոմանք.* Տալ մարտ պատերազմի ընդ հե՛:

* *Ի լուս՛.* Որ ամրացեալ էին յանա՛: *Ուր ոմանք.* Որպէս ապրեալ էին յա՛:

նահատակեալ՝ ՚ի վերայ օրինացն*։ ⁴³Եւ ամենայն փախստեայք յիրաքանչիւր չարեաց՝ գային յաւելուին ՚ի նոսա. և լինէր նոցա հաստատութիւն զօրութեան։ ⁴⁴Զօր կազմեցին և գունդ բովանդակեցին, պատրաստեցան, հարին զմեղաւորս ՚ի զօրութիւն բարկութեան իւրեանց, և զգօրս անօրէնս ՚ի սրտմտութիւն բարկութեան իւրեանց. և որ զմնացեալսն փախստեայս ՚ի հեթանոսս արկանէին. ⁴⁵զհետ խաղայր Մատաթի եղբարքքն և բարեկամօքն հանդերձ, հասանէր հարկանէր աւերէր զմեհեանսն, կործանէր զբագինսն, ⁴⁶թլփատէր զմանկունս անթլփատս. և զօրանայր ՚ի վերայ սահմանացն Իսրայէլացւոց, ⁴⁷հալածականս առնէր զորդիսն հպարտութեան։ Եւ աջողեցաւ գործն ՚ի ձեռս նոցա, ⁴⁸այցելու լինել օրինացն, վրէժխնդիր լինել ՚ի ձեռացն հեթանոսաց, եղծանել զանօրէն հրաման թագաւորին. և ո՛չ ետուն բարձրանալ եղջարն ամբարտաւանութեան։ ⁴⁹Իբրև մերձեցան աւուրքն Մատաթայ մեռանելոյ, կոչեաց զորդիսն առաջի իւր, և ասէ ցնոսա. Այժմիկ հաստատեցաւ հպարտութիւն և ամբարտաւանութիւն. և ահա հասեալ է ժամանակ կշտանբութեան կործանման և հպարտութեան*։ ⁵⁰Բայց արդ որդեակք իմ, եկայք նախանձեցարուք զնախանձ օրինացն, փոխանակեցէք դիք զանձինս ձեր փոխանակ հարցն կտակարանաց*։ ⁵¹Յիշեցէք զգործս հարցն ձերոց, որ ինչ քաջութիւնս արարին ՚ի դարս իւրաքանչիւր. ստացարուք փառս աւագութեան, և ժառանգեցէք զանուն յաւիտենից։ ⁵²Աբրահամ ապաքէն ՚ի փորձութեան ՚ի հանդիսի գտաւ հաւատարիմ, և համարեցաւ նմա յարդարութիւն*։ ⁵³Յովսէփ ՚ի ժամանակի նեղութեան իւրոյ պահեաց զպատուիրանն, և եղև տէր ՚ի վերայ երկրին Եգիպտացւոց։ ⁵⁴Փենէէս հայր մեր նախանձայոյ՝ զնախանձեցաւ զնախանձն արդարութեան, և ա՛ռ կտակ յաւիտենից զքահանայութեանն։ ⁵⁵Յեսու որդի Նաւեայ՝ առ հաստատել կատարել զպատգամս Տեառն, եղև դատաւոր որդւոցն Իսրայէլի։ ⁵⁶Քաղեր՝ վասն վկայելոյն ՚ի մէջ ժողովրդեանն, տէր եղև ժառանգութեանն։ ⁵⁷Դաւիթ՝ վասն հեզութեան արդարութեան ողորմութեան՝ ժառանգեաց զաթոռ թագաւորութեան յաւիտենից։ ⁵⁸Եղիա՝ վասն նախանձայոյ՝ զնախանձու խնդրելոյ զվրէժն օրինաց՝ վերացաւ յերկինս*։ ⁵⁹Անանիա՝ Ազարիա՝ և Միսայէլ՝ հաւատովքն իւրեանց ապրեցան ՚ի հրոյն ՚ի հնոցէ։ ⁶⁰Դանիէլ՝ ՚ի խորհուրդս միամտութեան իւրոյ՝ փրկեցաւ յառիժուցն բերանոյ*։ ⁶¹Արդ՝ այդպէս ասէք զմտաւ, եթէ ամենեքին որ յուսացեալ են ՚ի նա ըստ ազգս ազգս իւրեանց՝ ո՛չ տկարացին։ ⁶²Եւ ՚ի բանից առն ամբարշտի մի՛ զանգիտիցէք, զի փառք նորա արբեղէնք են. ⁶³այսօր և վաղիւ, և այլ ո՛չ գտանի. զի դառնայ նա ՚ի հող իւր, և կորնչին ամենայն խորհուրդք նորա*։ ⁶⁴Զօրացարուք որդիք, քա՛ջ լերուք ՚ի վերայ օրինացն, զի ՚ի նմին փառաւորեսցիք։ ⁶⁵Եւ աւաղիկ Շմաւոն եղբայր ձեր, զիտեն զի այր խորհրդական է, դմա՛ լուիջիք. դա ձեզ լիցի ՚ի տեղոջ հօր։ ⁶⁶Եւ Յուդա Մակաբէ. դա լիցի ձեզ սպարապետ զօրավար զօրացո, և տացէ

* *Ոմանք.* Զօրաց Աստիացւոց։

* *Ոմանք յաւելուն.* Կործանման հպարտութեան և ամբարտաւանութեան։

* *Ոմանք.* Փոխանակեցէք դիք զանձինս։

* *Ոսկան.* Աբրահամ ո՛չ ապաք՛։

* *Ոմանք.* Վասն նախանձայոյ՝ զնախանձ խնդրելոյ զվր՛։ *Ուր Ոսկան.* Նախանձայոյ՝ լինելոյ խնդ՛։

* *Ոմանք.* Ի խորհուրդս իմաստութեան իւրոյ։

* *Ոսկան.* Այսօր է՝ և ՚ի վաղիւ այլ ո՛չ գտանի։

պատերա՛զմ ընդ զօրս: ⁶⁷Բայց և դուք յարեսցի՛ք ՚ի ձեզ զամենայն զօրինակիրս օրինաց. նախանձայո՛յզ լիջիք, խնդրել զվրժ ժողովրդեանն ձերոյ: ⁶⁸Հատուցէ՛ք զհատուցումն ՚ի հեթանոսս, և հայեցարո՛ւք ՚ի հրամանս օրինացն: ⁶⁹Օրհնեա՛ց զնոսս, և ինքն կատարեցաւ փոխեցա՛ւ առ հարս իւր: ⁷⁰Եւ մեռա՛ւ նա յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի. և եդին զնա ՚ի շիրիմս հարցն իւրոց ՚ի Մովդիիմ. և կոծեցան զնա ամենայն Իսրայել զկոծ մեծ՝:

3

Գլուխ Գ

Ե ¹Համբարձա՛ւ Յուդա որ անուանեալ կոչէր Մակաբէ, որդի նորա ընդ նորա՝: ²Եւ ձեռնտու օգնական եղեն նմա ամենայն եղբարք նորա, և ամենեքեան որ երթեալ էին զհետ հօր նորա: Տային պատերազմ ՚ի վերայ Իսրայէլացոց խնդութեամբ և ուրախութեամբ. ³և մե՛ծ լինէին փառքն ՚ի վերայ ժողովրդեանն: Ջգեցա՛ւ զէն իբրև զհսկայ, և հանդերձեցաւ ՚ի զարդ պատերազմի. մղէր զմեծամեծս ՚ի պատերազմի, և հովանի՝ լինէր ամենայն զնդին իւրո՛վ նիզակաւն: ⁴Նմանեցաւ առիւծու գործովք իւրովք. և իբրև զկորիւն առիւծուց՝ որ յորս մռնչէր՝: ⁵Հալածեա՛ց զանօրէնսն ՚ի քննելն իւրում, և հրձի՛գ արար զխռովիչս ժողովրդեան իւրոյ՝: ⁶Սարսեցին անօրէնք յահէ նորա. և ամենայն սատարք անօրէնութեան խռովեցան. և աջողեցաւ փրկութիւն ՚ի ձեռս նորա: ⁷Եւ դառնացո՛յց զթագաւորս բազումս. և ուրախ արար զՅակոբ ՚ի գործս իւր, և մինչև յաւիտեանս յիշատակ նորա օրհնութեամբ: ⁸Եւ հասանէր նա ՚ի վերայ քաղաքաց Յրէաստանի, և ջնջէր զամպարիշտս ՚ի նոցանէ՝ դարձուցանել զբարկութիւն յԻսրայէլէ՝: ⁹Ժողովէր զցրուեալս, և գտանէր զկորուսեալս: ¹⁰Հա՛պա. զօրաժողով լինէր Ապողոնիոս հեթանոսօք հանդերձ, և բազում ևս զօրս ՚ի Շամրտացոց ժողովէր՝ զա՛լ տա՛լ ընդ Իսրայէլի պատերա՛զմ: ¹¹Իբրև ետես Յուդա՝ ել ընդ առաջ նորա. հար սպա՛ն զնա, և արկանէր բազում վիրաւորս ՚ի զօրաց նորա, և զմնացեալսն ՚ի փախուստ դարձուցանէր՝: ¹²առնո՛յր զկապուտ զաւար նորա. և զսուսերն Ապողոնեայ առնոյր Յուդա, և այնո՛ւ իսկ հարկանէր զզօրս նոցա զամենայն աւուրս կենաց իւրոց: ¹³Իբրև զայն լսէր Նրէն իշխան զօրացն Ասորեստանեայց, եթէ զօրաժողով է Յուդա, և բազում հաւատացեալք ընդ նմա որ գային ՚ի պատերազմ՝: ¹⁴խորհեցաւ յանձն իւր և ասէ. Արարից և ես անուն և փառաւորեցա՛յց յարքայութեան իմում, տա՛ց պատերազմ ընդ Յուդայի և պարտեցի՛ց զայնոսիկ որ անարգեն զհրաման թագաւորի՝: ¹⁵Դարձեալ կրկնէր՝ լինէր զօրաժողով, և բազում զօրք ընդ նմա անօրինացն ՚ի թիկունս հասանէին, զա՛լ հասանել խնդրել վրէժ յորդոցն

* *Ոմանք.* Յութերորդի... ամենայն Իսրայել կոծ մեծ:

* *Ոմանք.* Կոչէր Մակաբէոս:

* *Ի բազումս պակասի.* Որ յորս մռնչէր:

* *Բազումք.* Ջանօրէնս ՚ի քննել իւրում:

* *Յօրինակին պակասէր.* ՚ի նոցանէ՝ դարձուցանել զբարկութիւն յԻսրայէլէ:

* *Ոմանք.* Եւ իբրև ետես... ընդ առաջ նոցա... ՚ի զօրաց նոցա:

* *Ոմանք.* Նիրէն իշխան: *Իսկ Ոսկան.* Սրէն իշխան: *Ոմանք.* Եւ բազում հաստատեալք ընդ նմա որ:

* *Ոսկան.* Իմում. և տաց պա՛:

Իսրայելի*։ ¹⁶և եկն եհաս մինչև ՚ի կողմանս Բեթովրայ։ Ել Յուդա ընդ առաջ նորա սակաւութ*։ ¹⁷Իբրև տեսին զգունդն զի գայր ճակատեալ ընդդէմ նոցա. սկսան խօսել որ ընդ Յուդային էին՝ և ասեն. Ջիա՞րդ կարասցուք մեք սակաւածեռն մարտնչել ընդ այնչափ պնդակա՛զմ գնդի, մանաւանդ զի լքեալք և լուծեալք. զի այսօր քանի՛ է զի նօթի՛ ենք։ ¹⁸Քաջալերել՛ սկսաւ գնոսա Յուդա՛ և ասէ. Գործ մի դիւրին է Աստուծոյ մատնել զբազումս ՚ի ձեռս սակաւուց. և ո՛չինչ է խտիր առաջի երկնաւորին ընդ բազումս կամ ընդ սակաւս. ¹⁹զի ո՛չ եթէ բազում զօրօք յաղթութիւնն կանգնի, այլ յերկնից՝ է զօրութիւն յաղթութեան։ ²⁰Նոքա գա՛ն ՚ի վերայ մեր ՚ի հպարտութիւն ամբարտաւանութեան անօրէնութեամբ զմեզ ջնջել, զկանայս և զորդիս մեր վարել ՚ի գերութեան*։ ²¹մեք մարտնչիմք վասն անձանց մերոց, և վասն օրինաց մերոց. ²²և Տէր սատակեսցէ՛ գնոսա առաջի ոտից մերոց. և դուք զօրացարո՛ւք, քա՛ջ լերուք՝ մի՛ զանգիտէք*։ ²³Այն ինչ բանքն ՚ի բերան էին, յարձակէր ՚ի վերայ գնդին. զայն թև բեկանէր յորում վառեալ կայր Նրէն արքայ, և շարժէր զգունդն ՚ի տեղւոջէ, և զգօրսն ամենայն առաջի նորա նովա՛ւ հանդերձ ՚ի փախուստ դարձուցանէր. ²⁴և ինքեանք զհետ լինէին նոցա մինչև ՚ի կողմանս Բեթովրայ դաշտին. և բազում վիրաւորս ՚ի նոցանէ դիաթաւալ յերկիր կացուցանէին. և անկանէին ՚ի նոցանէ իբրև արք ուք հարիր. և որ մնացեալքն էին՝ փախստեայք անկանէին ՚ի Փիղիստիմ*։ ²⁵Եւ սկսաւ ա՛հն և հոյն երթալ՝ առաջի Յուդայ և եղբարցն. յօժարէին այնուհետև ասպատակ տալ՝ ՚ի հեթանոսս որ շուրջ էին գնոքօք։ ²⁶Եւ եկն եհաս մինչև ՚ի թագաւորն անուն նորա. և վասն պատերազմացն պատմէին հեթանոսքն։

Ձ ²⁷Իբրև լուաւ Անտիոքոս կայսր զբանս զայս, բարկացաւ ՚ի սրտմտութիւն բարկութեան իւրոյ. զօրաժողով լինէր յամենայն աշխարհաց իւրոց, զօրս կուտէր բազում յոյժ. ²⁸գա՛նձ բանայր՝ պարգևս բաշխէր զօրացն տարւոյ միոջ. և պատուէր տայր կա՛լ նոցա պատրաստ յիրս ամենայն։ ²⁹Իբրև ետես թէ գանձք սպառեցան, և հարկ աշխարհին նուագեաց, վասն երկպառակութեանն և հարուածոցն, որ ած նա ՚ի վերայ երկրի, յեղծանել օրինաց նախնեացն, որ էին իսկզբանէ աւուրց ժամանակաց*։ ³⁰զարհուրեցա՛ւ թէ գուցէ ո՛չ բաւեցուցէ զպարգևսն և զռոճիկս, որպէս յառաջ առատածեռն բաշխէր. ³¹վարանէր յանձն իւր. խորհեցաւ մտանել յաշխարհն Պարսից. առնուլ հա՛րկ յաշխարհաց անտի կուտել արծաթ յոյժ*։ ³²Եւ եթո՛ղ նա անդ զԼիւսի՝ այր փառաւոր յազգէ թագաւորութեանն, ՚ի վերայ իրացն արքունի ՚ի կողմանցն Եփրատու, և ՚ի սահմանս Եգիպտացւոց*, ³³սնուցանել զորդի իւր զԱնտիոքոս, մինչև դարձցի նա անդրէն*։ ³⁴և եթո՛ղ առ նմա զկէս զօրացն և զփիղսն. և պատուէր ետ նմա վասն ամենայնի որ ինչ կամէր, և որ զինչ խորհեցաւ. և վասն բնակչացն

* *Ոսկան.* Հասանել և խնդրել։

* *Ոմանք.* Ընդ առաջ նմա սա՛։

* *Ոմանք.* Վարել ՚ի գերութիւն։

* *Ոմանք.* Մի՛ զանգիտիցէք։ *Ուր Ոսկան.* Եւ մի՛ զանգիտէք։

* *Յօրինակին պակասէր.* ՚ի նոցանէ իբրև *արք* Պ. և որ մնացեալքն։ *Այլք.* Անկանէին ՚ի Փիղիստիմ։

* *Ոմանք.* Որ էր իսկզբանէ աւ՛։

* *Ոմանք յաւելուն.* Յանձն իւր *յոյժ*։

* *Ոմանք.* Եւ ՚ի սահմանի Եգիպ՛։

* *Յօրինակին.* Ջորդիս իւր զԱնտիո՛ն։

Յրէաստանի և Երուսաղէմի*։ ³⁵Եւ գումարտակ արար ՚ի վերայ նոցա սատակել զնոսա, և ջնջել զգօրութիւնն Իսրայէլի, և զմնացորդսն Երուսաղէմի. և ջնջել ՚ի տեղւոջէ անտի գլիշատակ նոցա. ³⁶և բնակեցուցանել անդ զորդիս օտարաց ընդ ամենայն սահմանս նոցա. լարաբաժին առնել զամենայն երկիր նոցա. ³⁷և ինքն ա՛ռ զկէս ՚ի զօրաց անտի: Խաղա՛ց գնաց յԱնտիոք քաղաքէ ՚ի տանէ թագաւորութեան իւրոյ. յամի հարիւրորդի քառասներորդի. և անց նա ըստ զետն մեծ ըստ Եփրատ, և երթա՛յր ընդ կողմն վերնագաւառացն*:

Է ³⁸Եւ ընտրեաց Լիւսիաս զՊտղոմէոս պարզական, և զՆիկանովր, և զԳորգիաս, ա՛րս հզօրս բարեկամս խորհրդականս արքայի*։ ³⁹Եւ ընդ նոսա առնէր գումարտակ քառասուն հազար հեծեալ, և եւթն հազար ձի սասպաստանիկ, զալ հասանել ՚ի վերայ երկրին Յրէաստանի, հարկանել սատակել զաշխարհն, յապականութիւն դարձուցանել զերկիրն ըստ հրամանի թագաւորին: ⁴⁰Խաղացին գնացին ամենայն զօրօքն հանդերձ, և եկին հասին բանակեցան մերձ ՚ի Յամուով, ՚ի տափակողմն ՚ի դաշտագետին վայրին*։ ⁴¹Լո՛ւ եղև վաճառականաց աշխարհին, եթէ եկեալ հասեալ են զօրք՝ աւա՛ր առնուլ զերկիրն Յրէաստանի, ՚ի գերութիւն վարել զորդիս և զդատերս նոցա. առին զարժաթ և զոսկի իւրեանց, և մարդիկ բազում որչափ ձեռնհաս էին օգնականք իւրեանց. գա՛լ գնել զորդիսն Իսրայէլացւոց յանաշխարհիկս իւրեանց. և յաւելան ՚ի նոսա զօրք Ասորոց, և երկիրն այլազգեաց: ⁴²Իբրև ետես Յուդա և եղբարք իւր՝ եթէ եկին հասին ամենայն չարիքն ՚ի վերայ նոցա. և այս զօրք ամենայն եկեալ հասեալ պաշարեալ պահէին զսահմանս նոցա. և գիտացին զհրամանս թագաւորին, զոր պատուիրեաց սատակել զժողովուրդն ՚ի կորուստ և յապականութիւն*։ ⁴³սկսան խօսել այր ընդ ընկերի և ասեն. Եկայք պնդեսցուք զանձինս մեր, կանգնեսցուք զգլորումն ժողովրդեան մերոյ, տացուք պատերազմ ՚ի վերայ սրբութեանցն՝ և ՚ի վերայ ազգաց մերոց: ⁴⁴Եւ ժողովեցան ժողովք ՚ի պատրաստութիւն պատերազմի. կային յաղօթս և խնդրէին զողորմութիւն ՚ի Տեառնէ*։ ⁴⁵Եւ էր Երուսաղէմ աւերակ թափո՛ւր, և ո՛չ ոք էր որ մտանէր և ելանէր յազգաց նորա, և սրբութիւնն կայր կոխան յորդւոցն այլազգեաց. և ամրակողմն զլուխ քաղաքին բնակութիւն եղև հեթանոսաց. և բարձան ուրախութիւնք Յակոբայ, պակասեցին փողք և տաւիղք, և լռեցին ամենայն ցանկալի ուրախութիւնք արուեստականաց*։ ⁴⁶Եկին ժողովեցան ամենեքին ՚ի Մասեփա՝ դէմ յանդիման Երուսաղէմի. զի անդ էր տեղի աղօթից յառաջ Իսրայէլացւոցն ՚ի Մասեփա*։ ⁴⁷Ծո՛ն կարդացին, քրձագգա՛ծ լինէին, խորճ և մոխի՛ր առնուին, հող ՚ի գլուխ լինէին, զօձիս պատարնէին: ⁴⁸Ձմատեանս օրինացն տարածանէին, վասն որոյ պնդէին զնոսա հեթանոսք. ⁴⁹և բերէին զհանդերձս քահանայութեանն, և զծնունդս անդրանկացն, և զտասանորդսն ՚ի

* *Ոմանք.* Եւ զոր ինչ խորհեցաւ:

* *Յօրինակին.* Եւ ինք առ զկէս: *Ոմանք.* Գնաց յԱնտիոք քարոզել ՚ի տան թագաւորութեան իւրոյ: *Ոսկան յաւելու.* Քառասներորդի *եօթներորդի...* ընդ զետն մեծ ընդ Եփրատ:

* *Ոմանք.* ՉՊտղոմէոս Պարթևական:

* *Ոսկան.* Մերձ Յամաւոյ:

* *Ոմանք.* Պաշարեալ պահեն: *Ուր Ոսկան.* Չօր ամենայն եկեալ... պարհեն:

* *Ոմանք.* Եւ ժողովեցան ժողովուրդք ՚ի պատրաստ:

* *Ոմանք.* Քաղաքին ՚ի բնակութիւն եղև:

* *Այլք.* Եւ եկին ժողովէ՛:

մէջ առնուին. յարուցանէին և ածէին զուխտաւորսն որոց լցեալ էր զաւուրս իւրեանց: ⁵⁰Ի ծայն բարձր միաբարբա՛ռ աղաղակէին յերկինս և ասէին. Արդ զի՞ արասցուք զայսոսիկ, կամ յո՞ տարցուք. ⁵¹զի՞ սրբութիւնք քո կոխան եղեն, և քահանայք քո ՚ի սո՛ւգ և ՚ի տառապանս նստին: ⁵²Եւ ամենայն հեթանոսք ժողովեալ են աւասիկ ջնջել՝ զմեզ. դու գիտես որ ինչ խորհիւն նոքա ՚ի վերայ մեր: ⁵³Արդ՝ զիա՞րդ կարասցուք մեք զդէ՛մ ունել՝ եթէ ո՛չ դու օգնեսցես մեզ: ⁵⁴Փո՛ղ հարկանէին, զաղաղակ դնէին, ՚ի ծայն բարձր յերկինս կարդային: ⁵⁵Յե՛տ այսորիկ կարգել սկսաւ Յուդա զժողովուրդսն, և կացոյց ՚ի վերայ նոցա իշխանս՝ հազարապետս, և հարիւրապետս, և յիսնապետս, և տասնապետս: ⁵⁶Եւ ասեն ցայնոսիկ որ շինէին շինուածս, և խօսէին կանայս, և տնկէին այգիս, և պատուէ՛ր տային վատասրտացն զի դարձցին ՚ի տունս իւրեանց ըստ օրինացն: ⁵⁷Եւ ամենայն զօրքն հասանէին և բանակէին ՚ի թիկանց Ամաւոյ՝: ⁵⁸Անդուստ քաջալերել սկսաւ Յուդա զգօրսն՝ և ասէ. Վառեցարո՛ւք պատրաստեցարո՛ւք զօրացարո՛ւք, վաղորդայն տա՛լ պատերազմ ընդ հեթանոսս ընդ այսոսիկ որ ժողովեալ են ՚ի վերայ մեր ջնջել՝ զմեզ՝ և զսրբութիւնս մեր՝: ⁵⁹զի լաւ լիցի մեզ մեռանել՝ ՚ի պատերազմի, քան տեսանել զչարչարանս ազգի մերոյ և սրբութեանցն մերոց: ⁶⁰Որպէս և իցեն կամք Տեառն յերկինս, այնպէս և կատարեսցին:

4

Գլուխ Դ

¹⁰Եւ յիշեսցէ՛ զուխտ կտակարանացն որ ընդ հարսն մեր է, և բեկցէ՛ զգօրս զայս առաջի ոտից մերոց: ¹¹Գիտասցեն հեթանոսք եթէ գո՛յ Աստուած որ փրկէ զԻսրայէլ: ¹²Եւ ամբարձին զաչս իւրեանց յայլազգիքն, և տեսին զի յարձակեալ գային ընդդէմ նոցա՝, ¹³և ելին յառաջ քան զգունդն ՚ի պատերազմ: Փո՛ղ հարին ՚ի կողմանցն Յուդայի. ¹⁴ի մի՛ վայր ժողովեցան, ՚ի վերայ յարձակէին. ձեռն ՚ի գործ առնէին, ՚ի փախուստ դարձուցանէին՝: ¹⁵զբազունս առ ետե՛ղ սատակէին. զբազունս փախստականս առնէին ընդ երեսս դաշտին, ՚ի սո՛ւր սուսերի իւրեանց անկանէին՝ մինչ ՚ի սահմանս Գազիրոնայ, ՚ի կողմանս Եղոմայեցւոց, և յԱզովտայ, և Յամենա. և անկանէին յաւուր յայնմիկ վիրաւորք իբրև երեք հազարք այր՝: ¹⁶Եւ դառնայր Յուդա զօրօքն հանդերձ. իբրև գայր հասանէր ՚ի տեղի պատերազմին, ¹⁷խօսել սկսաւ ընդ գօրսն՝ և ասէ. Մի՛ ինչ աչս արձակէք դուք յաւա՛ր ՚ի կապուտ դիականցն անկելոց. ¹⁸զի դեռ աւանիկ Գորգիոս վառեալ պատրաստեալ՝ ընդդէ՛մ կայ մեր զօրօք իւրովք. այլ կացէ՛ք կալարո՛ւք զտեղի, զդէ՛մ կալարուք թշնամեաց ձերոց. ապա յետ մարտին յաղթութեան դարձջի՛ք համարձակութեամբ: ¹⁹Մինչդեռ նա զայն ընդ նոսա խօսէր՝ տեսին զի գունդ մի երևեցաւ ՚ի լեռնէ անտի՞: ²⁰Եւ գիտացին եթէ ՚ի պարտութիւն մատնեալ

* Ոմանք. Հասանէին բնակէին:

* Ոմանք. Ընդ այնոսիկ որ ժողո՛:

* Այլք. Եւ ամբարձին զաչս իւրեանց այլ ազգիքն և տեսին զնոսա զի յար՝:

* Ոմանք. ՚ի վերայ յարձակեցան:

* Ոմանք. ՚ի սուր սուսերի իւրեանց արկանէին: Ոսկան. Եւ Ազովտայ... երեք հազարք այր:

* Ոմանք. Չայս ընդ նոսա խօսէր:

հո՛ւր արկանել սկսան 'ի բանակի անդ. և ծուխն որ դիզաներ՝ նշան լիներ գործոյն եղելոց*։ ²¹Նոքա իբրև զայն տեսանէին՝ կասէին. մանաւանդ իբրև հայէին 'ի գունդն Յուդայեան, ո՛րպէս ճակատեալ կայր պատրաստութեամբ 'ի մարտ պատերազմի։ ²²Ձո՛ւտս արծակէին, փախստեայ գնային յերկիրն Փղշտացոց։ ²³Եւ Յուդա դառնայր 'ի տեղին պատերազմի, 'ի կապուտ կողոպուտ յաւար դիականցն անկելոց. և առնոյր 'ի բանակէ անտի նոցա զոսկի և զարծաթ՝ զհանդերձս պատուականս, զկարմիր, զկապուտակ, զծովու ծիրանիս, մեծութիւն բազում։ ²⁴Եւ իբրև դարձան անտի, սկսան գոհանալով օրհնել զՏէր յերկինս, և ասել. Ձի բարի՛ է՝ զի յաւիտեան է ողորմ նորա*։ ²⁵Եւ եղև 'ի փրկութիւն մե՛ծ 'ի վերայ Իսրայէլի յաւուր յայսմիկ*։ ²⁶Եւ որք միանգամ յայլազգեաց անտի ապրեցան, եկեալ պատմէին Լիւսայ զամենայն գործն որ գործեցաւ։ ²⁷Իբրև զայն լսէր Լիւսիայ՝ տրտմեր, խոնարհէր անկաներ 'ի վերայ երեսաց իւրոց. զի ո՛չ այնպէս կամք կատարեցան որպէս նա՛ խորհէր 'ի վերայ Իսրայէլացոցն, և որպէս նմա՛ ետ պատուէր թագաւորն, այն ո՛չ կատարեցաւ*։ ²⁸Ի գալուստ ամին միւսոյ, զօր հատանէր, այրևծի՛ առնէր՝ իբրև վեց հազար հետևակ, հինգ հազար հեծեալ սպառազէն. զա՛լ հասանել՝ աւար առնուլ զերկիրն Յրէաստանի*։ ²⁹Եկին հասին՝ ճակատեցան 'ի կողմանս Բեթսովրայ։ Ե՛լ նոցա ընդ յառաջ Յուդա մետասան հազար արամբ։ ³⁰Եւ իբրև տեսին զգունդն ստուար և հզօր. սկսան կալ յաղօթս, օրհնել զԱստուած՝ և ասեն. Տէր Աստուած՝ դու այն ես որ խորտակեցեր զգօրութիւն յարձակելոյ հզօրին 'ի ձեռն ծառայի քոյ Դաւթի, և մատնեցեր զբանակս այլազգեաց 'ի ձեռս Յովնաթանու որդւոյ Շաւուդի*։ ³¹Արդ՝ խորտակեա՛ դու զգօրութիւն զօրացս այսոցիկ 'ի ձեռս Իսրայէլի. շիջցի՛ գօրութիւն նոցա երիվարօք և զօրօքն հանդերձ։ ³²Արկ զնոքօք զվատութիւն, և հալածեա՛ զգօրութիւն հպարտութեան նոցա. շարժեսցին նոքա 'ի բեկումն իւրեանց։ ³³Կործանեսցես արկցես զնոսա՛ 'ի սուր սիրելեաց քոց. և օրհնեսցես զքեզ յօրհնութիւնս որ ճանաչեն զանուն քո։ ³⁴Եւ հարան միմեանց 'ի դիմի. և անկան 'ի ժամանակին յայսմիկ 'ի գնդէ՛ անտի Լիւսիայ՝ հինգ հազար հեծեալ առաջի նոցա։ ³⁵Եւ իբրև ետես Լիւսիա զպարտութիւն զնդին իւրոյ, և զյաղթութիւն քաջութեան զնդին Յուդայ, և որպէս զի պատրաստ էին 'ի կեալ և 'ի մեռանել 'ի վերայ անուան քաջի՛ յաղթութեան. չուեաց խաղաց գնաց 'ի կողմանս Անտիոքացոց։ Դարձեալ զօրաժողով լինէր, կազմել պատրաստել անդէն. անդրէն արշաւել 'ի կողմանս Յրէաստանի*։

Ը ³⁶Խօսել սկսաւ Յուդա եղբարքքն հանդերձ ընդ ժողովուրդսն՝ և ասէ. Ահաւասիկ խորտակեցան թշնամիք մեր 'ի ներքոյ ոտից մերոց. եկայք երթիցուք մաքրեսցուք զսրբութիւնսն, մաքրեսցու՛ք զտաճարն առնել նաւակատիս 'ի նմա։ ³⁷Ժողովեցան ժողովքն ամենայն, եկին հասին 'ի լեառն Սիոն. ³⁸տեսին

* *Ոսկան*. 'ի պարտութիւն մատնեալ է։ *Յօրհնակին*. Եւ զծուխն որ դիզա՛։ *Ոմանք*. Որ դիզանայր... գործոցն եղելոց։

* *Այլք*. Սկսան գոհանալ օրհնել։ *Ուր Ոսկան*. ՁԱստուած յերկինս։ *Ոմանք*. Ողորմութիւն նորա։

* *Այլք*. Եւ եղև փրկութիւն մեծ։

* *Ոմանք*. Ձի ո՛չ այն կամք։

* *Ոմանք*. Այրուծի առնէր։ *Յօրհնակին թուագրով դնի այսպէս*. Իբրև Յ հետևակ. Բ հեծեալ սպա՛։ *Իսկ այլք*. զԲ հետևակ. ԵՆ հեծեալ։

* *Ոմանք*. Օրհնել զԱստուած և ասել։ *Ոսկան*. Որդւոյ Շարուիի։

* *Այլք*. Եւ զյաղթութիւն քաջալերութեան։ *Ոմանք*. Քաջի և յաղթութեան։

զսրբութիւնսն աւերեալ, և զսեղանն աղտեղեալ, զդրունսն այրեցեալ, թուփ առ թուփ բուսեալ՝ ի սրահսն իբրև յանտառի, կամ իբրև միոյ միոյ լերանց. զկոնքս աւերեալս, և զվարագոյրածիզսն խաթարեալս*։ ³⁹Ձեռս զօժեօք արկանէին, զպատմուճանս պատառէին, հող՝ ի գլուխ լինէին, ⁴⁰ընդ երկիր թաւալէին. փողանշանս հարկանէին, յերկինս աղաղակէին։ ⁴¹Յայնմ ժամանակի հրաման տայր Յուդա՝ զօրահատոյց առնէր՝ ի վերայ միջնաբերդին պաշարել զնա, զի մաքրեսցէ զսրբութիւնսն։ ⁴²Եւ ընտրեաց նա քահանայս անարատս, կամարարս օրինացն. ⁴³և սրբեաց զսրբութիւնն. և ՚ի բաց առին զվէմսն՝ որ պղծեալ էին, եղին մեկուսի ՚ի տեղի մի*։ ⁴⁴Եւ խորհուրդ կալան ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն, որ պղծեալ էր ՚ի թշնամեաց անտի, եթ զի՞նչ արասցեն զնա։ ⁴⁵Հաստատեցաւ բանս այս ՚ի խորհրդի անդ, քակել զսեղանն զի պղծեալ էր ՚ի թշնամեաց. զի մի՛ լիցի նոցա այն ՚ի խիղճ մտաց, և ՚ի նախատինս յաւիտենից։ Եւ քակեցին զսեղանն*։ ⁴⁶Եւ տարան եղին զքարինսն ՚ի դիպան տեղուջ, մինչև եկեսցէ մարգարէ և խօսեսցի վասն նոցա։ ⁴⁷Եւ առին վէմս անկոփս ըստ օրինացն, և շինեցին զսրբութիւնսն։ ⁴⁸Եւ ո՛չինչ էր ՚ի ներքս ՚ի տաճարի անդ. և զսրահսն սրբեցին. ⁴⁹և սպաս սրբութեան նոր գործեցին. և տարան ՚ի ներքս զաշտանակն լուսոյ, և զսեղանն խնկոց, և զսեղանն տաճարին։ ⁵⁰Եւ արկանէին խուկնս ՚ի վերայ սեղանոյն. ճրագս լուցանէին, և լոյս տային տաճարին։ ⁵¹Դնէին ՚ի վերայ սեղանոյն զհացն հանապազորդ. և ձգէին զվարագոյրսն, և կատարէին զգործսն զամենայն սպասուն զոր առնէին։ ⁵²Կանխէին ընդ առաւօտն յաւուրն քսաներորդի հինգերորդի՝ յամսեանն իններորդի. յամին հարիւրորդի քառասներորդի*։ ⁵³մատուցանէին պատարագ ըստ օրինացն ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն, որոյ նոր արարին ըստ ժամանակին*։ ⁵⁴Յաւուրսն յայնոսիկ յորս պղծեցին հեթանոսքն, ՚ի մին ժամանակի և նորոգեցաւ յերգս օրհնութեան, ՚ի փող և ՚ի քնար և ՚ի սրինգ*։ ⁵⁵Եւ անկանէին ամենայն ժողովուրդքն ՚ի վերայ երեսաց իւրեանց, անկանէին ՚ի խոնարհ, երկիր պագանէին. օրհնէին զԱստուած յերկինս որ յաջողեաց նոցա։ ⁵⁶Եւ արարին զնաւակատիս սեղանոյն աւուրս ութ. և մատուցին զողջակէզսն ուրախութեամբ, և մատուցին պատարագս փրկութեան և օրհնութեան։ ⁵⁷Չարդարեցին զկոնքսն՝ և զվարագոյրածիզսն՝ յանդիման տաճարին, ոսկի՝ պսակօք՝ և ոսկովք տապակօք. և նորոգեցին զդրունսն, և կանգնեցին զդրունսն*։ ⁵⁸Եւ եղև ուրախութիւն մեծ ՚ի վերայ ժողովրդեանն յոյժ. և ջնջեցան նախատանք հեթանոսաց ՚ի նոցանէ*։ ⁵⁹Եւ հաստատեաց Յուդա եղբարքքն հանդերձ, և ամենայն ժողովքն Իսրայէլացւոց, հանապազ կացցեն աւուրքս այս նաւակատեաց սեղանոյն ՚ի ժամանակի իւրեանց տարոջէ ՚ի տարի, ՚ի գլուխ տարեկանի աւուրս ութ ՚ի հինգերորդ քսաներորդ՝ իններորդի ամսոյն՝ ուրախութեամբ և ցնծութեամբ*։ ⁶⁰Եւ շինեցին նոքա ՚ի ժամանակին յայնմիկ

* Ոսկան. Եւ զսեղանսն աղ՞։ Ոմանք. Կամ իբրև զմիոյ միոյ։

* Ոմանք. Չվէմն որ պղծեալն էին։

* Ոմանք. Այն խիղճ մտաց։

* Ոսկան յաւելու. Յամին... քառասներորդի ութերորդի։

* Յօրինակին պակասէր. ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն։

* Ոմանք. Յաւուրս յայնոսիկ յորում պղ՞։

* Ոսկան. Եւ զվարագուրածիզսն։

* Ոմանք. Եւ ջնջեցան նախատինք հե՞։

* Ոմանք. Եւ ամենայն ժողովուրդքն Իսրայէլաց՞։ Յօրինակին ՚ի մէջ բառիցս

զլեառն Սիոն շուրջանակի, ՚ի պարիսպս բարձրացեալս, և յաշտարակս ամրացեալս, գուցէ գայցեն հեթանոսք, և կոխան առնիցեն զդոսս. որպէս արարին զառաջինն*: ⁶¹Եւ զօր թողոյր ՚ի վերայ պահապան նմա. և ամրացոյց զնա. պաշարել զԲեթսուրա. զի լիցի ամրութիւն զօրացն ՚ի կողմանցն Եդոմայեցոց:

5

Գլուխ Ե

Թ ¹Եւ եղև իբրև լուան հեթանոսքն շուրջանակի. եթէ շինեցաւ սեղանն, և նորոգեցաւ սրբութիւնն միւսանգամ, որպէս էր զառաջինն, բարկացան յոյժ*: ²Խորհեցան զալ հասանել ջնջել զագոցն Յակոբեան որք էին ՚ի մէջ նոցա. և սկսան կոտորել և սպառել զնոսա: ³Եւ տայր պատերազմ հանապազ Յուդա ընդ որդիսն Եսաւայ որ են ՚ի կողմանս Եդոմայեցոց Ակրաբատեանց. զի շուրջանակի եկեալ պատեալ պաշարեալ նստէին շուրջ զԻսրայէլիւ. հարկանէր զնոսա ՚ի հարուածս բազումս, և նուա՛զ առնէր զնոսա, և առնոյր նա զկապուտ զաւար նոցա*: ⁴Եւ յիշէր զչարութիւն որդւոցն Բեանայ, որ էին լեալ ժողովրդեանն յորոգայթ գայթազողութեան, վարանել զնոսա ՚ի ճանապարհս իւրեանց*: ⁵Փախստեայ լինէին ՚ի նմանէ, և ամրանային ՚ի բերդս իւրեանց. գայր շուրջ, պահ դներ զնոքօք, և հրծի՛գ առնէր զամուրս նոցա ամենայն բնակչօքն հանդերձ: ⁶Եւ անցանէր խաղայր նա ՚ի վերայ որդւոցն Ամոնայ. և անդ գտանէր ձեռն հզօր, զօրս բազումս. և զՏիմոթէոս զօրագլուխ նոցա: ⁷Յարկանէր նոցա ՚ի դիմի, և բազում անգամ պատերազմաւ սաստկանայր ՚ի վերայ նոցա. ⁸հարկանէր վանէր, և առնոյր նա զԱզեր քաղաք՝ և զդստերս իւր, և դառնայր ՚ի կողմանս Ղրեաստանի: ⁹Եւ ժողովեցան ամենայն հեթանոսք ՚ի Գաղաադ վասն Իսրայէլի, որ էին ՚ի կողմանս նոցա, զի ջնջեսցեն զնոսա. և նոքա փախստեայք անկանէին յամուրսն ՚ի Դովթայիմ: ¹⁰Եւ արձակեցին նոքա հրեշտակս առ Յուդա և առ եղբարսն՝ և ասեն. ժողովեալ են ահաւասիկ ՚ի վերայ մեր ամենայն հեթանոսք, պատեալ պաշարեալ պնդեն զմեզ ջնջել ՚ի տեղւոջէ աստի. ¹¹պատրաստ են յառնուլ զամուրս յոր անկեալ ենք. և Տիմոթէոս զօրագլուխ նոցա*: ¹²Արդ՝ եթէ իցէ ինչ ՚ի ձեռս՝ արագեսցեն փրկել զմեզ ՚ի ձեռաց նոցա. զի անկան բազումք ՚ի մէնջ*. ¹³և ամենայն եղբարք որ էին ՚ի Տովբա կոտորեցան. և ՚ի գերութեան վարեցան կանայք նոցա և որդիք նոցա, ամենայն կահիւ կարասեալ իւրեանց առհասարակ կորեան նոքա, որչափ ՚ի կողմն մի աւագի հազարապետութեան միոջ: ¹⁴Այն ինչ դեռ թուրքքն ՚ի ձեռին էին, այլ գուժկանք հասանէին ՚ի կողմանցն Գալիլեացոց անտի, զօձիս պատառեալ, զճակատ հարեալ, և զգոյժս զայս տային. ¹⁵և ասեն. ժողովեցան ՚ի

Իսրայէլացոց հանապազ՝ *չակերտիւ՝ նշանակի: Ուր Ոսկան միայն ՚ի լուս՝. ակնարկէ յաւելուլ՝ զի: Ոմանք. Աուրս ուք ՚ի քսաներորդի հինգերորդի ամսոյն:*

* *Ոսկան. Մի գուցէ գայցեն:*

* *Բազումք. Եւ իբրև լուան:*

* *Այլք. Որ էին ՚ի կողմանս Եդով՝:*

* *Ոմանք. Ձորդւոցն Բանեայ:*

* *Բազումք. Ձամուրսս յոր: Ոսկան. Ձօրագլուխ է նոցա:*

* *Ոմանք. ՚ի ձեռաց սոցա. զի:*

վերայ մեր 'ի Պտողոմեայ, և 'ի Ծուրայ, և 'ի Ծայդանայ, և ամենայն կողմանք Գալիլեացոց յայլազգեաց կուսէ, ջնջել՝ զմեզ անտի: ¹⁶Եւ իբրև լուան զբանսն զայն՝ Յուդա՝ և ժողովուրդն, 'ի խորհուրդ ժողովեցան վաղվաղակի. զի խորհեսցին զինչ գործ գործեսցեն վասն եղբարցն որ էին 'ի նեղութեան, և ճգնին 'ի ձեռաց պատերազմողաց*:

¹⁷Խօսել՝ սկսաւ Յուդա ընդ Շմաւոնեայ ընդ եղբոր իւրում և ասէ. Ընտրեա՛ դու քեզ արս հօջոս, և երթ փրկել զեղբարսն որ են 'ի նեղութեան 'ի կողմանս Գալիլեացոց. և ես և Յովնաթան եղբայր իմ երթիցուք 'ի կողմանս Գաղաադու*:

¹⁸Եւ եթո՛ղ անդ զՅովսեպոս Զաքարեանց, և զԶաքարի զօրագլուխ ընտիր ընտիր՝ զօրօք հանդերձ՝ յերկրին Յրէաստանի պահապանս. ¹⁹պատուէ՛ր ետ նոցա՝ և ասէ. Առաջնորդեսցիք ժողովրդեանս այսմիկ, և մի՛ տայցէք դուք մարտ պատերազմի ընդ հեթանոսս մինչև 'ի դարձ գալստեան մերոյ անտի*:

²⁰Զօրահատո՛յց արարին, ընդ երկու՛ զօրսն բաժանեցին. զնացին երեքհազարք ընդ Շմաւոնեայ 'ի կողմանս Գալիլեացոց, և ութ հազար յերկիրն Գաղաադու: ²¹Եւ զնաց Շմաւոն յերկիրն Գալիլեացոց, տայր պատերազմ ընդ հեթանոսս. և խորտակեցան հեթանոսք առաջի երեսաց նորա. և հալածական տաներ զնոսս մինչև 'ի դրունս Պտողոմեայ*:

²²Յայնմ աւուր անկանէին 'ի հեթանոսաց անտի երեք հազար վառեալք սպառազէն. ²³և առնոյր զաւար նոցա 'ի կողմանցն Կալիլեացոց և յԱրաբաթուց, կանամբք և որդւովք հանդերձ, և ամենայն կարասեաւ հանդերձ, և զանձի կահիւ. և եկին ածին զայն ամենայն ցնծութեամբ և ուրախութեամբ յերկիրն Յրէաստանի*:

²⁴Եւ Յուդա Մակաբէ, և Յովնաթան եղբայր նորա անցին յայն կողմն Յորդանան գետոյն, և զնացին երից աւուրց զնա՛ց ճանապարհի, յերկիր յանապատ: ²⁵Եւ ընդառաջ եղեն նոցա Նաբատացիք խաղաղութեամբ. և պատմէին նոցա զամենայն անցսն որ անցին ընդ եղբարսն յերկիրն Գաղաադու*:

²⁶Եւ բազումք 'ի նոցանէ յաւար երթեալ էին 'ի քաղաքս Բոսորայ, և Բոսաղունայ, և Սերփովրմակեղեայ, և Զառնասպասեայ, այս քաղաքք ամուրք և մեծամեծք են*.

²⁷և այլոց քաղաքացն 'ի կողմանցն Գաղաադու. և 'ի մի վայր միաժողով են առ վաղիւ, ժամադիր են փակել՝ պատել զամուրսն, առնուլ ջնջել սատակել զամենեսին յաւուր միում: ²⁸Իբրև զայն լուաւ Յուդա՝ զո՛ւնդ կազմեաց վաղվաղակի. ճանապարհ կալաւ ընդ անապատ, յանկարծակի անկանէր 'ի վերայ Բոսորայ. յանկարծակի յաղեկարծու՛մ ժամու զամենայն քաղաքն 'ի բուռն առնոյր. անդ 'ի մի սուր սուսերի իւրոյ սպանանէր զամենայն արու մանուկ, և առնոյր զամենայն զաւար քաղաքին Բոսորացոց. և զքաղաքն ամենայն հրձի՛գ առնէր*.

²⁹և ինքն զհչերայն զնդաւն հանդերձ դիմէր 'ի վերայ ամրոցն պաշարելոց*:

³⁰Այն ինչ կանէր առաւօտն 'ի զիչերոյն մերկանալ, զա՛յս 'ի վեր ամբարձին, տեսին զօրս բազումս զի ո՛չ գոյր նոցա թիւ. զի բարձեալ

* *Ոմանք.* Եւ ճգնէին 'ի ձեռաց:

* *Ոմանք.* Ընդ Շմաւոնեայ եղբոր: *Այլք.* Եւ երթ դու փրկել զեղ՛.... 'ի կողմն Գաղաադու:

* *Ոսկան.* Մինչև 'ի գալ մեր անտի:

* *Ոսկան.* Հեթանոսք յերեսաց նորա:

* *Այլք.* 'ի կողմանցն Գալիլեացոց: *Ոմանք.* Եւ ամենայն տան կարասեաւ հանդերձ:

* *Ոմանք.* Եւ պատմեցին նոցա զամենայն... յերկրին Գաղաադու:

* *Ոմանք.* Յաւարի երթեալք եղեն 'ի քաղաքսն... և Սերփովր Մակեղեայ:

* *Ոսկան.* Յանկարծակի յեղակարծումն ժամու... անտի 'ի սուր սուսերի իւ՛: *Ի լուս.* 'ի բուռն անկանէր: *Ուր ոմանք.* 'ի բուռն արկանէր:

* *Ոմանք.* 'ի վերայ ամրոցացն պաշարե՛:

բերէին սանդուղիս և մանգլիոնս, և պէսպէս մենքենայս 'ի վերայ ամրոցն, մարտ եղեալ և 'ի պատերազմ մատուցեալ*։ ³¹Եւ իբրև ընդ այն հայեցաւ Յուդա, և ետես զի սկիզբն էր մարտին, անտի՝ աղաղակ քաղաքին, և աստի՝ զօրացն որ պաշարեալ պահէին, ծայն մարտի, ծայն պատերազմի, ծայն փողոյ առ հասարակ յերկինս ելանէր։ ³²Սկսաւ խօսել ընդ զօրսն իւր՝ և ասէ. Հայա, ժիրք լերուք, պինդ կացէք. զործ՝ այսօր է մարտնչել ձեզ 'ի վերայ եղբարց ձերոց*։ ³³Եւ զզօրսն ամենայն յերիս գունդս բաժանէր, և շուրջ զնոքօք ճակատեալ 'ի մարտ մատուցանէր. փող հարին, խրախոյս բարձին. գոչեցին աղօթիք առ Աստուած, 'ի վերայ յարձակեցան։ ³⁴Ազդ եղև Տիմոթեայ և զօրացն, եթէ Մակաբէ զօրօքն 'ի վերայ հասեալ է. իբրև հայեցան տեսին, շրտեան լքան կասեցին, ընկեցին զհրաքանջիւր մենքենայս, և 'ի փախուստ դարձան։ Եւ հարկանէր յաւուր յայնմիկ զնոսա 'ի հարուածս սաստիկս. տանէին փախստեայս առաջի իւրեանց. մի առ միոջ դիաթաւալ կացուցանէին. արկանէին 'ի սուր սուսերի իւրեանց իբրև արս ութ հարիւր հազար սպառազէն*։ ³⁵Եւ ինքն դառնայր 'ի կողմն Մայափայ. մարտ պատերազմի դներ զնովալ՝ և առնոյր զնա, և 'ի նմա սպանանէր զամենայն արու մանուկ նոցա. և առնոյր զամենայն ինչս և զստացուածս նոցա յաւարի, և զքաղաքն այրէր հրով։ ³⁶Անտի խաղայր գայր պատէր զՔասփովն Մակեթ, և զԲոսոր, և զմնացեալ քաղաքս Գաղաադու։ ³⁷Յետ այսց ժամանակաց՝ դարձեալ զօրաժողով լինէր Տիմոթեոս, և գայր բանակէր դէմ յանդիման Ռափովնայ, յայնկոյս գետոյն։ ³⁸Դէտ արձակեաց Յուդա զի տեսցէ զբանակս նոցա։ Եկին պատմեցին՝ և ասեն. Միաժողով եղեն ամենայն ազգք և ազինք յոյժ, որ շուրջ զնկք բանակեալ են, և զօրք բազումք կուտեալ են յոյժ*։ ³⁹Եւ արուացիկս բազումս ածեալ է 'ի վարձու յօգնականութիւն իւրեանց. և բանակեալ են յայնկոյս գետոյն, պատրաստեալ են զալ անկանել 'ի վերայ քո։ Իբրև զայն լսէր Յուդա, նոյնժամայն խաղայր զնայր 'ի վերայ նոցա*։ ⁴⁰Իբրև ետես Տիմոթեոս՝ խօսել կալաւ ընդ իշխանսն և ասէ. Միտ դիջիք դուք Յուդայ և զնդին նորա առ հասանել յափն գետոյն, եթէ զհասանելն և զանցանելն մի արասցէ՝ ապա մեք ո՛չ կարենք լինել դիմակալ նորա, զի յաղթելով յաղթեսցէ նա մեզ*։ ⁴¹Ապա թէ հասցէ յափն գետոյն և ճակատեսցի՝ յայտ արար՝ թէ զանգիտեաց, մեք անցցուք մարտիցուք և յաղթեսցուք նմա։ ⁴²Այն ինչ նորա բանք 'ի բերան էին, և Յուդա զօրօքն հասանէր յափն գետոյն. անդ՝ առ ափն գետոյն կացուցանէր զաշխարհամար դպիրսն, և տայր նոցա պատուէր, զի մի՛ զոք ամենկին թողցեն առ ափն գետոյն բանակել. այլ զամենայն գայր պատերազմօղ զկնի նորա փողեսցեն*։ ⁴³Եւ ինքն զհասանելն՝ զանցանելն՝ զյարձակելն 'ի վերայ՝ մի առնէր, և նախ զգունդն

* Ոսկան. Տեսանէին զօրս բազումս։ Ոմանք. Սանդուղիս և մանգլիոնս... 'ի վերայ ամրոցացն։

* Այլք. ժիր լերուք։

* Ոմանք. Դիաթաւալ կացուցանէին։ Ամենայն զրչագիր օրինակք մեր աստանօր համաձայն մերունս ունին զթիւս, զրելով՝ ՊՌ. կամ ութ Ծ հազար. և միայն Ոսկան դնէ ութն հազար։

* Ոմանք. Միաժողով են... զմեք բնակեալ են։

* Ոսկան. Եւ արուացիկս բազումս ածեալ է 'ի վարձու են յօգ'։ Ոմանք. Պատրաստ են զալ։

* Ոսկան. խօսել սկսաւ ընդ իշխանսն։ Ոմանք. Լինել դիմակալ նմա։

* Բազումք. Անդ առ ափն գետոյն։ Ոսկան. Զկնի նորա փողեցին։

նահատակաց ՚ի ներքս բեկաներ, զգօրսն ամենայն ՚ի փախո՛ւստ դարձուցաներ. և ամենայն ազգք և ազինք զենընկէցք փախստեայ՝ գնային յամրակողմն, ՚ի նուիրեալ տեղին մեհենին ՚ի Կառնային*։ ⁴⁴Սոքա եկին հասին պատեցին զքաղաքն, հրձիգ արարին զամուրն՝ մեհենին հանդերձ. և Կառնային նեղեր, և ո՛չ կարէր հանդարտել ընդդէմ Յուդայ։ ⁴⁵Հրաման ետ Յուդա խաղացուցանել զամենայն ազգս Հրէից որ էին ՚ի կողմանս Գաղաադու, կանամբք և մանկուով ամենայն կահիւ հանդերձ, ածել հասուցանել յերկիրն Հրէաստանի. և էին նոքա բանակք մեծամեծք։ ⁴⁶Եւ եկին հասին ՚ի դուռն Եփրոն քաղաքի. և այս քաղաք՝ է՛ մեծ ՚ի վերայ ճանապարհի յամուր վայրի. և ո՛չ գոյր նոցա այլ ճանապարհ խոտորել յաջ կամ յահեակ, բայց երթալ ընդ մէջ քաղաքին*։ ⁴⁷Իբրև տեսին զօրք քաղաքին զամբոխ զօրացն, և զբազմութիւն բանակացն՝ զդրունսն փակեցին, զդրանդսն սեղմեցին վիմօք. և ո՛չ տային անցանել նոցա։ Իբրև զայն ետես Յուդա. առաքեաց առ նոսա բանս խաղաղութեամբ* ⁴⁸և ասէ. Թո՛յլ տուք՝ անցից ընդ երկիր քո, երթալ անցանել ինձ յաշխարհ իմ, և ո՛չ որ ինչ մեղիցէ քեզ. բայց այնչափ որչափ ոտի՛ւք մերովք կոխեսցուք զերկիր քո։ Եւ ո՛չ առին յանձն նոքա նմա բանալ զդրունսն*։ ⁴⁹Ապա հրաման ետ Յուդա փո՛ղ հարկանել, քարո՛զ կարդալ և ասել. Հա՛պա՛ իւրաքանչիւր գունդ յորում վայրի և կացցէ ՚ի ներքս խաղասցէ։ ⁵⁰Եւ մատեան զօրքն յիւրաքանչիւր տեղւոջ յորում կային ՚ի մա՛րտ պատերազմի, զամենայն տիւն և զամենայն գիշերն ՚ի մարտ, մինչև մատնեցաւ քաղաքն ՚ի ձեռս նոցա*։ ⁵¹Ա՛նդ սատակեցին զամենայն արու մանուկ նոցա ՚ի սուր սուսերի իւրեանց. խլեցին զնոսա յարմատոց, խաղացուցին զաւար քաղաքին, և ինքեանք անցին ընդ մէջ քաղաքին, գնային երթային ՚ի վերայ դիականցն անկելոց. ⁵²և անցին նոքա ընդ Յորդանան գետ ՚ի տափակողմն ՚ի դաշտ մի մեծ. և անդ բանակեցան դէմ յանդիման Բեթսովնայ*։ ⁵³Եւ անդ յանձանձէր զկաց մնաց ժողովրդեանն, մխիթարէր զամենեսին Յուդա ընդ ամենայն չո՛ւս ճանապարհին ա՛յսպէս առներ մինչև ածէր հասուցաներ յերկիրն Հրէաստանի*։ ⁵⁴Եւ եկին հասին ելին ՚ի լեառն Սիովն ցնծութեամբ և ուրախութեամբ. անդ մատուցանէին զողջակէզս և զպատարագս. զի ո՛չ ծախեցաւ ՚ի նոցանէ, մինչև եկին հասին անդդէմ ՚ի տեղի իւրեանց խաղաղութեամբ*։ ⁵⁵Եւ յաւուրսն յայնոսիկ էր Յուդա և Յովնաթան յերկիրն Գաղաադու. և Շմաւոն եղբայր նոցա էր յերկիրն Գալիլեացւոց, յանդիման Պտղոմեայ։ Իբրև զայն քաջութիւնս պատերազմին լսէին* ⁵⁶Յովսեպոս Ջաքարեանց, և Ջաքարի իշխան զօրացն մնացելոց, ⁵⁷ասեն. Եկայք և մե՛ք երթիցուք տացուք մարտ պատերազմի ընդ հեթանոսս որ շո՛ւրջ զմեք են, և արասցուք և մեք մե՛զ անուն։ ⁵⁸Ժա՛ն ետուն զօրացն, խաղացին զնացին ՚ի կողմանս Յամնեայ։ ⁵⁹Եւ ե՛լ Գորգի ՚ի քաղաքէ անտի զօրօք հանդերձ որ ընդ ի՛ւր էին ՚ի մարտ պատերազմի, և հարա՛ւ ՚ի դիմի նոցա։ ⁶⁰Ի պարտութիւն

* *Ոսկան.* Մեհենին ՚ի Կառնային։
 * *Ոմանք.* Եւ եկին հասին նոքա ՚ի դուռն։
 * *Ոմանք.* Եւ զբազմութիւն զբանակացն։
 * *Ոսկան.* Եւ ո՛չ ինչ մեղիցէ քեզ։
 * *Ոսկան.* Յիւրաքանչիւր տեղւոջ։
 * *Յօրինակին պակասէր.* Եւ անցին *նոքա* ընդ։
 * *Ոմանք.* Մխիթարել զամենեսին։
 * *Ոմանք.* Անդէմ ՚ի տեղիս, *կամ* ՚ի տեղւոջ իւրեանց։
 * *Ոսկան.* Էին Յուդա և Յօնաթան։

մատնեցան Յովսեփոս և Ջաքարիա, և հալածականս երթային մինչև 'ի սահմանս երկրին Յրեաստանի: Յայնմ աւուր անկանէին 'ի նոցանէ արք իբրև երկու հազարք. և եղեն կործանումնն այն սաստիկ 'ի վերայ ժողովրդեանն*:

⁶¹Ձի ո՛չ անսացին նոքա Յուդայի և եղբարց նորա. խորհեցան՝ թէ մեք իբրև զնա առցուք անուն քաջութեան*.

⁶²բայց նոքա չէին 'ի զաւակէ անտի արանցն այնոցիկ, որոց տուեալ էր գփրկութիւն Իսրայէլի 'ի ձեռս նոցա: ⁶³Եւ ի՛նքն Յուդա և եղբարք իւր փառաւոր լինէին յաչս ժողովրդեանն՝ առաջի ամենայն ազգաց հեթանոսաց. ուր և լսէին զանուն նոցա*, ⁶⁴ժողովէին՝ և օրհնէին զնոսա: ⁶⁵Եւ ե՛լ Յուդա եղբարքքն հանդերձ, տա՛լ պատերազմ ընդ որդիսն Եսաւայ՝ 'ի հարաւակողմ կուսէ անդ: Ա՛նդ հարկանէր զՔերրոն քաղաք՝ և զդստերս իւր. քակէր կործանէր զամենայն ամուրս նոցա, և հրձի՛գ առնէր զաշտարակս նորա շուրջանակի ուր և գտանէր*:

⁶⁶Եւ ե՛լ դիմեաց զնալ նա յերկիրն այլազգեաց, գայր հասանէր 'ի կողմ Սարիսայ: ⁶⁷Յաւուր յայնմիկ անկան քահանայք՝ 'ի պատերազմի անդ, մինչ նա դեռ կանէր քաջութիւն ինչ առնել. զի ե՛լ նա տա՛լ պատերազմ առանց խորհրդոց: ⁶⁸Եւ դարձա՛ւ Յուդա՝ 'ի կողմն Ազովտայ յերկիրն այլազգեաց, աւերէր զմեհեանս նոցա, և կործանէր զկուռս նոցա, և հրձի՛գ առնէր զքաղաքս նոցա, 'ի գերութեան վարէր զինչս և զստացուածս նոցա, և դառնայր զնայր յերկիրն Յրեաստանի*:

6

Գլուխ Զ

Ժ ¹Եւ Անտիոքոս կայսր՝ զնայր նա ընդ վերնագաւառսն. ապա լու՛ եղև նմա եթէ է՛ քաղաք մի 'ի կողմանս Ղիմնեայ՝ 'ի Պարսից աշխարհին, քաղաք փառաւոր, լի՛ ոսկւով և արծաթով*.

²և մեհեանն որ 'ի նմա, է՛ մեծագանձ յոյժ, և կուռք ոսկեղէնք ծուլածոյք մեծամեծք՝ 'ի նմա: Ա՛ռ նա՝ զէն բազում, զրահք և պատեանք որ թողեալ էր Աղէքսանդրի կայսեր Մակեդոնացոց, որ թագաւորեաց նախ 'ի վերայ Յունաց աշխարհին*.

³Եկն եհաս նա 'ի քաղաքն յայն, և խնդրէր առնուլ աւարաբար: Ա՛զդ եղև քաղաքացոցն. ⁴ի մարտ պատերազմի պատրաստեցան, և ո՛չ ետուն մտանել: Ձահի՛ հարաւ՝ խաղա՛ց զնաց 'ի կողմանցն արևելից յերկիրն Բաբելացոց: ⁵Ա՛նդր գուժկան հասանէր առ կայսր Անտիոքոս՝ 'ի կողմանցն հարաւոյ, թէ 'ի պարտութիւն մատնեցան զօրքն՝ որ ելեալ էին յերկիրն Յրեաստանի*:

⁶Ձի չոգաւ զառաջին նուագն Լիւսի զօրօք բազմօք, և 'ի պարտութիւն մատնեցաւ յերեսաց նոցա: Ջօրացան զինուք, զօրօք և լցան աւարաւ բազմաւ, կտտորեցին զբանակս նոցա. զինչս և զստացուածս նոցա՝ 'ի գերութիւն վարեցին. ⁷զմեհեանս աւերեցին. զկուռս կործանեցին որ շինեալ էր 'ի վերայ սեղանոյն յերուսաղէմ, և զսրբութիւնն

* *Յօրինակին.* 'ի նոցանէ արք արք Ս: *Ոմանք.* Եւ եղև կործանումն:

* *Ոմանք.* Թէ և մեք իբրև:

* *Ոմանք.* Եւ եղբարք նորա: *Այլք.* Ձանուն նորա:

* *Ոմանք.* Շուրջ ուր գտանէր:

* *Ոմանք.* 'ի գերութիւն վարէր:

* *Ոսկան.* Գնայր ընդ վերնա՛: *Յօրինակին.* Եթէ է՛ 'ի քաղաք մի:

* *Ոսկան.* Ջորս թողեալ էր: *Ոմանք.* Որ թագաւորեաց նա նախ 'ի:

* *Ոմանք.* Որ երևեալ էին յերկիրն:

փակեցին պարսպօք բարձրութեան որպէս զառաջինն, և ընդ նմին զքաղաքն Բեթսուր*։ ⁸Եւ եղև իբրև լուաւ զբանս զայս թագաւորն, հիացաւ զարմացաւ թմբրեցաւ և խռովեցաւ յոյժ. անկաւ ՚ի մահիճս իւր և հիւանդացաւ, զի ո՛չ կատարեցաւ խորհուրդ հրամանի նորա*։ ⁹Եւ անդ դներ նա բազում աւուրս, զի նորոգեցան ՚ի վերայ նորա տրտմութիւնք բազումք։ Աժ զմտաւ՝ թէ մեռանիմ. ¹⁰Կոչեաց զամենայն բարեկամս իւր՝ և ասէ ցնոսա. Քուն հատաւ յերեսաց իմոց. պախեալ եմ ՚ի սիրտ իմ հոգոց իմոց*։ ¹¹Խօսեցայ ընդ սրտի իմում և ասեմ. Յո՛ր վայր նեղութեանց հասանես, և խռովութեան բազմի, յորում այժմիկ պաշարեալ կամ. զի քաղցր և բարերար և սիրելի՛ էի զօրաց իմոց*։ ¹²Արդ՝ յուշ եղեն ինձ չարիքն այն՝ զոր գործեցի ես յերուսաղէմ, և առի ես զամենայն սպասն զայն զոսկւոյ և զարծաթոյ, և զօ՛րս ևս զումարեցի տարապարտուց ՚ի վերայ նոցա ջնջել զնոսա։ ¹³Արդ գիտե՛մ եթէ վասն այսորիկ գտին զիս չարիքս այս ամենայն, և կորնչիմ աւասիկ տրտմութեամբ յօտա՛ր երկրի։ ¹⁴Եւ կոչեաց նա զՓիլիպպոս՝ մի ՚ի բարեկամաց անտի իւրոց, կացո՛յց զնա ՚ի վերայ ամենայն թագաւորութեան իւրոյ*։ ¹⁵Եւ ետ ցնա թագ և պատմուճան՝ և զմատանին զիւր, ածել զորդի իւր զԱնտիոքոս, սնուցանել և յիւր տեղի թագաւորեցուցանել զնա*։ ¹⁶Եւ մեռաւ անդ՝ Անտիոքոս արքայ, յամին հարիւրորդի քառասներորդի իններորդի*։

ԺԱ ¹⁷Ա՛զդ եղև Լիւսիայ եթէ մեռա՛ւ արքայ՝ և կացոյց թագաւոր զորդի իւր Անտիոքոս, և ե՛ր անուն նմա Զօրանոյն Անտիոքոս*։ ¹⁸Եւ որ ՚ի միջնաբերդին էին արգելեալք՝ որ նեղէին զԻսրայէլ, և շուրջ զսրբութեամբն խնդրէին զչարի՛ս հանապազ, և զօրութիւն էին նոքա հեթանոսացն. ¹⁹խորհեցան քաղաքացիքն ջնջել զնոսա։ Եւ իբրև ժողովեաց զամենայն ժողովս զօրացն, ²⁰և եկին նստան շուրջ զնոքօք. և ժողովեցան ՚ի մի վայր, և պաշարեցին զնա։ Յամին հարիւրորդի յիսներորդի, շինեցին պատուարս և նետակալս և մենքենայս բազումս։ ²¹Եւ եկին ելին նոքա յարգելանէ անտի, և կցեցան յարս անօրէնս յԻսրայէլացւոց անտի. ²²և զնացին նոքա առ արքայն և ասեն. Մինչև յե՞րբ ո՛չ արասցես դու զդատաստանն, և զվրէժ խնդրեսցես եղբարցն մերոց. ²³մեք հաւանեալ ենք ծառայել հօր քում, և երթալ զիեստ հրամանաց նորա։ ²⁴Եւ նստէին զնովաւ որդիք ժողովրդեան մերոյ, վասն այսորիկ օտարանային բազումք ՚ի մէնջ. բայց զոր գտանէին ՚ի մէնջ՝ մահու՛ մեռուցանէին, և ժառանգութիւնք մեր ՚ի յափշտակութիւն մատնէին*։ ²⁵Եւ ո՛չ ՚ի մեզ միայն ձեռնս մխեցին, այլ և յամենայն սահմանս իւրեանց*։ ²⁶Եւ այժմ եկեալ պաշարեալ շուրջ զմեք, և աւաղիկ եկեալ փակեալ պաշարեալ պահեն զմիջնաբերդն երուսաղէմի առնուլ զնա, և զսրբութիւնն. և զԲեթսուվրա ամրացուցին*։ ²⁷Եւ եթէ

* *Ոմանք.* Որպէս էր առաջինն:
 * *Ոմանք.* Լուաւ զայն բանս թագաւորն:
 * *Ոմանք.* Պախեալ եմ ՚ի սիրտ իմ:
 * *Ոսկան.* Եւ խռովութեանց բազմաց:
 * *Ոսկան.* ԶՓիլիպպոս զմի ՚ի բա՛:
 * *Ոմանք.* Եւ ետ նոցա թագ:
 * *Այլք.* Քառասներորդի ինն՛:
 * *Օրինակ մի.* Զօրանոյն Անտիոքոս:
 * *Այլք.* Բայց զոր գտա՛... մահու մեռանէին: *Ուր Ոսկան.* Բայց որք:
 * *Ոմանք.* Եւ ո՛չ ՚ի մեզ մի՛ մեզ միայն ձեռամխեցին:
 * *Ոմանք.* Պաշարեալ շուրջ զմեզ:

ո՛չ վա՛ղ աճապարեսցիք՝ և՛ս մեծամեծ ինչ քան զայս գործիցեն, և դուք զառաջս
 ո՛չ կարիցէք ունել: ²⁸Իբրև զայն լուաւ թագաւորն՝ բարկացա՛ւ յոյժ, հրամայեաց
 կոչել զբարեկամս իւր, և զիշխանս որ ՚ի վերայ զօրացն էին: ²⁹Եւ յայլմէ
 թագաւորութենէ, և յայլոց կղզեաց եկին առ նա զօրք բազումք ՚ի վարձու: ³⁰Եւ
 էր թիւ զօրաց նորա հարիւր հազար ասպա՛ր ՚ի ձեռին տիգաւոր հետևակ, և
 քսան հազար հեծեալ սպառազէն, երեսուն և երկու փիղք վառեալք
 երիվարիկք*: ³¹Եւ եկին անցին ընդ Ադոմ. ճակատեցան պատեցին զԲեթսովր
 քաղաք, և մա՛րտ պատերազմի եղին շուրջ զնովաւ աւուրս բազումս: Կազմեցին
 շուրջ զմանգղ՚իոնս և մենքենայս: Եւ եկին ՚ի քաղաքէ անտի, այրեցին
 զմենքենայսն, և մա՛րտ եղին ընդ նոսա քաջութեամբ*: ³²Չուեա՛ց խաղաց գնաց
 Յուդա ՚ի միջնաբերդ ամրոցէ անտի, և եկն բանակեցաւ ՚ի Բեթսակարիա, դէմ
 յանդիման բանակի արքային*: ³³Կանխեա՛ց ընդ առաւօտն թագաւորն, ա՛ն
 զբանակն՝ տարա՛ւ բանակեցոյց ՚ի միջոյ անտի ըստ ճանապարհին
 Բեթսակարիա. և զգօրսն սփռեա՛ց ճակատեցոյց ՚ի մա՛րտ պատերազմի. փո՛ղ
 հարին, ³⁴կազմեցին պատրաստեցին զփիղսն՝ ճաշակեցուցին յարիւն խաղողոյ,
 ՚ի զըմուռս և ՚ի զհնիս*: ³⁵Եւ կարգեցան բաշխեցին ՚ի գունդս գունդս. և
 կարգեցին առ փի՛ղ փիղ հազար հազար այր սպառազէն. և պահապան գլուխ
 գնդիցն հինգ հազար հեծեալ վառեալ նժո՛յգ ՚ի ձեռն պաշտպան գնդիցն. ³⁶զի
 ուր և կայցեն գազանքն՝ կայցեն և նոքա. և ուր և գնայցեն՝ գնայցեն և նոքա*:
³⁷Եւ վանդակակապ մարտկոցս մենքենայիւք ՚ի վերայ փղացն կազմեցին, և
 զփղապանն ՚ի վերայ գլխոյն նստուցին. ³⁸և զայլ այրուծին յա՛ջ և յահեակ թևս
 գնդին կազմեցին: ³⁹Իբրև անտի արեգակն ծա՛յրս արծակէր, առ հասարակ ՚ի
 զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն նշոյլքն զլերամբքն
 փայլատակէին, և ճառագայթք հատանէին իբրև ՚ի փայլատականց հրոյ*: ⁴⁰Եւ
 երկայնէ՛ր ճակատն, զեղոյր որ զբարձամբք լերանցն, որ զձորովք և զխորովք և
 զդաշտիւք*. ⁴¹և խաղային յառաջ՝ առ հասարակ կարգեալք և կազմեալք.
 միաբան շարժէին առ հասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ
 բազմութեանն, զշաչիւն զինու, զշառաչիւն զերիվարացն թնդիւն, զոտնաձայն
 վահանաւոր վառելոցն*: ⁴²Ե՛կն եհա՛ս Յուդա իւրով գնդաւն, կարգեցա՛ւ
 կազմեցա՛ւ ճակատեցա՛ւ պատրաստեցա՛ւ, յարձակեցաւ, ՚ի դիմի՛ հարաւ գնդի
 թագաւորին. յա՛յնմ տեղոջ յանդիման թագաւորին՝ վեց հարիւր հեծեալ
 սպառազէն դիթաւալ կացուցանէր յանդիման թագաւորին*. ⁴³Եւ յա՛յնմ վայրի դէտ
 ա՛կն ՚ի վե՛ր ամբառնայր: Եղիազա՛ր Աւարան տեսանէր մի ՚ի գազանաց անտի
 վառեալ զարդարեալ, ՚ի զէն արքունի վառեալ՝ և նշանս արձակեալ,
 համարեցաւ թէ արքայն իսկ ՚ի նմին իցէ: ⁴⁴Յարձակեցաւ ՚ի վերայ գնդին՝ յա՛ջ
 յահեակ կոտորեաց, չոգա՛ւ մինչև եհաս ՚ի փի՛ղ անդր նշանաւոր, զէ՛ն

* Ոմանք. Սպար ՚ի ձեռն տեգաւոր:

* Ոմանք. Անցին ընդ Եդոմ:

* Այլք. Յամրոցէ անտի:

* Այլք. Ի գնուռս և ՚ի զհնի:

* Ոմանք. Կայցեն նոքա. ուր և գնայցեն գնացեն նոքա:

* Ոմանք. Ծայր արծակէր... ՚ի վահանացն... իբրև փայլատականց:

* Ոմանք. Եւ զեղոյր զբարձամբք:

* Ոմանք. Թնդիւն և զոտնաձայն:

* Ոմանք. Դիաթաւալ կացուցանէր: (43) Յայնմ վայրի դէտակն ՚ի վեր բառնայր Եղիազար Աւա՛:

վերացոյց*, ⁴⁵և եմուտ ՚ի ներքոյ, եհար՝ և անդէն կործանեաց. ⁴⁶և էջ նստաւ փիղն ՚ի վերայ և զնա անդէն ճմլեաց: ⁴⁷Նոքա իբրև տեսին զգօրութիւն զօրաց թագաւորին՝ խոյս ետուն ՚ի նոցանէ: ⁴⁸Սակայն յոր կողմ և գային, ընդ առաջ լինէին նոցա գունդքն արքունի, մինչև եկին ՚ի կողմանս Երուսաղեմի: Եւ եկն արքայն և բանակեցան ՚ի Յրէաստանի, և ՚ի լեառնն Սիոն: ⁴⁹Եւ խօսեցաւ նա ՚ի հաշտութիւն խաղաղութեան Բեթսուվր քաղաքին. և ելին սփռեցան նոքա ՚ի քաղաքէ անտի, զի ո՛չ գոյին նոցա անդ համբարք. զի բազում ժամանակաց արգելեալ պաշարեալ էին. և ամն իսկ ընդ աշխարհն շաբա՞թ դիպեցաւ: ⁵⁰Եւ ան թագաւորն զԲեթսուվր քաղաք, և հրամայեաց զգօրն ՚ի ներքս տանել պահապան քաղաքին: ⁵¹Եւ ինքն պաշարեալ պահէր զսուրբ քաղաքն աւուրս բազումս: Եւ շուրջ զնովաւ կանգնէին մանգղիոնս և մենքենայս, հրացանս և քարընկէցն՝ ռմբաբարս, և բալիստր, նետածիգ աշտարակս, և աշտարակս պարսաւորաց*: ⁵²Պարծեալ և նոքա ՚ի քաղաքէ անտի սկսան կազմել մենքենայս առ մենքենայս նոցա մարտ եղեալ կռուէին աւուրս բազումս*. ⁵³բայց համբար ինչ ո՛չ գտանէին. զի այն ամ եւթներորդ էր ընդ երկիրն, զի գաղթականք աշխարհին սպառեցին զհամբարսն մթերեալս*: ⁵⁴Մնացեալ էին սակաւք ՚ի սուրբս անդ. զի սփռեալ էին ընդ իւրաքանչիւր տեղիս, զի սովն սաստկացեալ էր ՚ի վերայ նոցա. և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս: ⁵⁵Իբրև լուաւ Լիւսի՝ եթ Փիլիպպոս որուն հրամայեաց ինքնին Անտիոքոս սնուցանել զորդի իւր զԱնտիոքոս, զի կացուցէ զնա արքայ*. ⁵⁶իբրև դարձաւ նա ՚ի Պարսից և ՚ի Պարթևաց, եթ զօրքն ամենայն ՚ի նա հատան. և ինքն կամի հասանել ՚ի վերայ իրաց աշխարհին*: ⁵⁷Եկն՝ և ասէ նա ցարքայն և ցամենայն մեծամեծս զօրացն. Նեղին զօրքս հանապազ, համբարք նուազեալ են, և կերակուր կարծեալ են. և տեղիդ յորոյ վերայ պատերազմդ է՝ ամուր է և անհնարին է, և գործ թագաւորութեան ՚ի մեզ հասեալ է: ⁵⁸Արդ եկայք ՚ի հաշտութիւն խօսեցարուք, դաշինս կռեսցուք, խաղաղութիւն արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդմիկ*. ⁵⁹բանս հաստատեսցուք մեք ընդ նոսա. կա՛լ նոցա յիւրաքանչիւր օրէնս իբրև զառաջինն. զի վասն օրինացն իսկ իւրեանց յորում խռովեցաք զնոսա՝ բարկացան նոքա ՚ի մենջ, ՚ի վէ՛զ եկին՝ և արարին զայս ամենայն: ⁶⁰Յաճո՛յ թուեցաւ բանն առաջի թագաւորին և իշխանաց նորա. և արծակեաց նա հրեշտակս խօսել ՚ի խաղաղութիւն: Եւ ընկալան: ⁶¹Երդունն երդուաւ նոցա թագաւորն և իշխանքն. և ապա նոքա ելին յամրոցաց անտի: ⁶²Եւ եմուտ թագաւորն ՚ի լեառն Սիոն, և ետես զամրութիւն տեղւոյն. և ստեա՛ց զերդունն զոր երդուաւ. հրաման ետ քակել շուրջանակի զպարիսպս նորա*: ⁶³Չո՛ւ արար վաղվաղակի ՚ի կողմանս Անտիոքայ, և եգիտ նա զՓիլիպպոս տիրեալ քաղաքին. մարտեաւ ընդ նմա, և ան զքաղաքն բռնութեամբ:

7

* Ոմանք. Յաջ յաիեակ կոտորեաց մինչև եհաս ՚ի փիղ անդ նշա՛:

* Ոմանք. Եւ նետածիգ աշտարակս աշտարակս պարսպաւորաց:

* Ոմանք. Առ մենքենայս նորա:

* Այլք. Ձի գաղթականք աշ՛:

* Ոսկան. Իբրև լուաւ Լիւսիաս:

* Ի լուս՛. Զօրքն ամենայն ՚ի նա հարան. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:

* Այլք. Ի հաշտութիւն խօսեսցուք: Ոսկան. Ընդ արս ազգիդ այդմիկ:

* Ոմանք. Եւ ստեաց նա զերդունն զոր:

Գլուխ Է

ԺԲ 1Յամին հարիւրորդի յիսներորդի յառաջնում, համբարձաւ Դեմետրիոս Սելևկեան՝ ի Զոռն քաղաքէ. և եկն նա սակաւ զօրօք ՚ի քաղաքն ծովեզերեայ, և թագաւորեաց նա ՚ի նմա: 2Եւ եղև իբրև մտանել կամէր Անտիոքոս ՚ի տուն թագաւորութեան հարց իւրոց. շո՛ւրջ եղեն պատեցին զնա զօրք բազումք, ձերբակալ արարին զԼիւսի, և զԱնտիոքոս կալեալ կապեալ ածին առ Դեմետրոս: 3Իբրև ցուցին Դեմետրի զբանսն, հրաման ետ և ասէ. Բնա՛ւ զերեսս նոցա ինձ յակն մի՛ արկանէք: 4Եւ առին արտաքուստ արտաքս զօրօքն, և տարան սպանին զնոսա: Եւ նստաւ յաթոռ թագաւորութեանն Դեմետրոս: 5Եւ եկին առաջի նորա արք անօրէնք ամբարիշտք յազգացն Իսրայէլի. և Յակիմոս գլուխ էր նոցա, զի ինքն իսկ անսայր քահանայութեանն: 6Ամբաստան եղեն զԺողովրդեանն, և ասեն. Կորո՛յս սպառեաց Յուդա զմեզ զեղբարս իւր, և զքո զբարեկամս, և զմեզ ցրուեաց յերկրէ անտի: 7Արդ առաքեա՛ դու արս հաւատարիմս որ եկեսցեն տեսցեն զչարչարանս ազգին, և զսատակումնն զոր հասոյց ՚ի վերայ մեր. զի սատակեաց նա զերկիրն արքունի, և վշտացոյց զօգնականս նոցա: 8Եւ ընտրեաց կայսր՝ զԲաքիդ սիրելի զարքայի՝ զիշխան յայն կողմն գետոյն, իշխան մեծ հաւատարիմ յարքայութեան իւրում. և արձակեցին զնա, 9և զանօրէնն Յակիմոս ընդ նմա. և յանձն արարին նմա զքահանայութիւնն. և ետ հրաման խնդրել զվրէժ որդւոցն Իսրայէլի: 10Չո՛ւ արար խաղաց զնաց Բաքիդ. և հրեշտակս արձակեաց ՚ի տեղուջէ առ Յուդա և առ եղբարս նորա՝ խօսել ընդ նոսա ՚ի խաղաղութիւն բանիւք նենգութեամբ: 11Եւ նոքա ո՛չինչ անսացին բանից նորա, զի տեսին զնա հասեալ զօրօք բազմօք: 12Սկսան ժողովել առ Բաքիդ և առ Յակիմոս ժողովք դարաց որ խնդրէին զիրաւունս: 13Նախ Ասիդացիքն էին յորդւոցն Իսրայէլի որ խնդրէին զխաղաղութիւն: 14Ձի ա՛յսպէս համարեցան եթէ այր քահանայ ՚ի զաւակէ Ահարոնի եկեալ է ընդ զօրսն, ո՛չ ինչ տացէ մեղանչել մեզ: 15Եւ խօսեցաւ ընդ նոսա բանս խաղաղութեամբ, և երդմնի՛ եղև նոցա. եթէ ո՛չինչ տաց մեղանչել ձեզ. և ո՛չ բարեկամաց ձերոց: 16Եւ հաւատացին ՚ի նա. և նա ա՛ռ ՚ի նոցանէն արս վաթսուն, և սպան յաւուր միում ըստ բանին որպէս և գրեալ է. 17Ընկեցին զմարմինս սրբոց քոց թռչնոց երկնից, և հեղին զարիւնս նոցա շուրջ զերուսաղեմաւ, և ո՛չոք էր որ թաղէր զնոսա: 18Եւ անկաւ ա՛հ և երկնդ ՚ի վերայ ժողովրդեանն, զի ասացին թէ չի՞ք ՚ի նոսա իրաւունք և ո՛չ ճշմարտութիւն. զի անցին ըստ հաստատութիւն, և ըստ երդումն զոր երդուան: 19Չուեաց Բաքիդ յերուսաղեմէ, և եկն բանակեցաւ ՚ի Բերաթթ. և առաքեաց կալաւ նա զբազումս ՚ի նոցանէ՝ յարանցն ինքնեկաց, և զբազումս ՚ի ժողովրդեանէ անտի. և հրամայեաց փողոտել ՚ի ջրիո՛ր անդր ՚ի ներքս: 20Եւ եդ զաշխարհն ՚ի ձեռն Յակիմայ. և եթող առ Յակիմայ զօրս բազումս օգնական նմա. և զնաց Բաքիդ

* Ոմանք. Կապեալ ածին առ Դե՛:

* Ոմանք. Ձերեսս նորա ինձ:

* Այլք. Արտաքս զօրքն, և տա՛:

* Ոսկան յաւելու. ՚ի տեղուջէ անտի առ Յուդա, և առ:

* Ի լուս՛. Բանից նոցա. համաձայն ոմանց ՚ի բնաք՛:

* Ոմանք. էին յորդիսն Իսրայէլի որ:

* Ոմանք. Ձարիւն նոցա շուրջ:

* Ոմանք. Եւ եկն բնակեցաւ ՚ի Բերաթթ:

առ արքայ* : ²¹Եւ ջանայր Յակիմոս վասն քահանայապետութեան. ²²և ժողովեցան առ նա ամենայն խռովիչք ժողովրդեանն, և յաղթահարեցին զերկիրն Յուդայ. և արարին հարուածս մեծամեծս 'ի վերայ Իսրայէլի: ²³Իբրև ետես Յուդա զչարիսն զոր արար Յակիմոս, և որ ընդ նմա էին որդիքն Իսրայէլի. ²⁴յարձակեցաւ նա 'ի վերայ Յրէաստանի շուրջանակի զսահմանօք նորա, և արար վրէժխնդրութիւն 'ի վերայ արանցն որ ինքնական գնացեալ էին 'ի հեթանոսս. և կարճեցան նոքա այնուհետև դառնալ անդրէն յերկիրն Յրէաստանի* : ²⁵Իբրև ետես Յակիմոս՝ եթէ միւսանգամ ևս զօրացաւ Յուդա, և գիտաց թէ ո՛չ կարեն ժոյժ ունել նմա, դարձաւ անդրէն առ թագաւորն չարախօս լինել զնմանէ* : ²⁶Եւ առաքեաց թագաւորն զՆիկանովրա, մի 'ի փառաւոր յիշխանաց անտի որ մանաւանդ ատեայր և թշնամութեամբ կայր ընդ կողմն Իսրայէլի. պատուէր ետ նմա զի ջնջեսցէ զժողովուրդն 'ի տեղուջէն* : ²⁷Եւ եկն եհաս Նիկանովր զօրօք բազմօք. և առաքեաց նա առ Յուդայ և առ եղբարս նորա բանս խաղաղութեան նենգութեամբ* : ²⁸Մի՛ եղիցի կռիւ ընդ իս և ընդ ձեզ. եկի՛ց ես սակաւ արամբք տեսանել զերեսս ձեր խաղաղութեամբ* : ²⁹Եւ եկն առ Յուդա, և ողջոյն ետուն միմեանց խաղաղութեամբ. և զօրքն ճակատեալ պատրաստեալ էին յարձակել և ձերբակալ առնել զՅուդա: ³⁰Իբրև ա՛գդ եղև բանն այն առ Յուդա, եթէ նենգութեամբ եկեալ է զնմանէ, խռովեցաւ խորշեցաւ մերժեցաւ հեռացաւ՝ և այլ ո՛չ կամէր տեսանել զերեսս նորա: ³¹Իբրև ետես Նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդս նմա, խաղա՛ց պատահել նմա պատերազմաւ 'ի կողմանս Փարսաղայ* : ³²Եւ անկաւ 'ի կողմանցն Նիկանովրայ իբրև արք հինգ հարիւր, և փախստեալ եղեն 'ի քաղաքն Դաւթի* : ³³Եւ յետ այսց բանից՝ եկն ել Նիկանովր 'ի լեառն Սիոն: Եւ եկին ելին 'ի քահանայից անտի սրբոց ընդ նմա. ողջոյն տալ նմա խաղաղութեամբ, և ցուցանել նմա զողջակէզս պատարագաց զոր մատուցանէին հանապազորդ վասն կենաց թագաւորին* : ³⁴Նա անարգեա՛ց զնոսա, և ծիծաղէր զնոքօք. և պղծեաց զնոսա բանիւք հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ. ³⁵և եհար զնոսա. և ասէ ցասմամբ. Եթէ ո՛չ 'ի ձեռս իմ տաջիք զՅուդա զնդաւն իւրով, այժմ ահա է՛ որպէս իցէ. բայց թէ ընդ սոյն դարձայց խաղաղութեամբ, զայն տաճար հրով դատեցայց, և 'ի ձէնջ վրէժ խնդրեցից: Եւ անց գնաց սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ* : ³⁶Եւ քահանայքն՝ եկին մտին կացին յանդիման սեղանոյն և տաճարին, սկսան լալ և ասեն* . ³⁷Դո՛ւ ընտրեցեր զտաճարս քո զայս՝ կոչել զանուն սուրբ քո 'ի վերայ սորա. զի լիցի դա տուն ուխտից խնդրուածոց ժողովրդեան քոյ* : ³⁸Դու խնդրեա՛ զվրէժ յառնէ այտի յայդմանէ, և 'ի բանակէ դորա, և անկցին ինքեանք

* *Յօրինակին յայսմ վայրի միայն Բաբիլոն վրիպակաւ գրի՝ Քաբիլոն:*

* *Յօրինակին. Դառնալ յերկրէն Յրէաստանի:*

* *Ոսկան. Թէ ո՛չ կարէ ժոյժ ունիլ:*

* *Ոմանք. Եւ թշնամութեամբ կեայր... զժողովուրդսն 'ի տեղուջէ:*

* *Ոմանք. Առ եղբարս իւր:*

* *Ոմանք. Ընդ իս և ընդ քեզ:*

* *Ոսկան. Խորհուրդն նմա:*

* *Ոսկան. Եւ անկան 'ի կողմանցն:*

* *Ոմանք. Հանապազ վասն կենաց թա՛:*

* *Ոմանք. Ահա է որպէս և իցէ, բայց եթէ ընդ այն դարձայց... և անց գնաց տրտմութեամբ և մե՛:*

* *Ոմանք. Սկսան լալ և ասել:*

* *Ոմանք. Չայս սուրբ, կոչել զանուն քո սուրբ:*

ի սուր իւրեանց. յիշեա՛ր դու զհայոյնութիւնս նոցա, և մի՛ տար նոցա դադար: ³⁹Եւ ել Նիկանովր յերուսաղեմէ, բանակեցաւ ՚ի Բեթսորովն. ընդ առաջ եղեն նմա զօրք Ասորեստանեայք: ⁴⁰Եւ Յուդա ինքն բանակեալ էր յԱդասա երկըք հազար արամբք. սկսաւ կալ յաղօթս՝ և ասել* . ⁴¹Յայնժամ որ ՚ի թագաւորէ անտի եկեալ հայոյնէին, ել հրեշտակ քո և եհա՛ր զնոսա ՚ի հարիւր ութսուն և հինգ հազար, և անդէն սատակեաց, ըստ այնմ օրինակի սատակեա՛ր դու զբանակս զայս այսօր, և գիտասցեն մնացեալքն թէ ՚ի նանի՛ր խօսեցաւ ՚ի վերայ սրբութեան քոյ. և դատեա՛ր դու զնա ըստ իւրուն չարութեան* : ⁴²Հասի՛ն ճակատքն երկոքեան ՚ի միմեանս, և ընդ միմեանս բախեցան յաւուրն երեքտասաներորդի յամսեանն Ադարայ. ՚ի պարտութիւն մատնեցաւ, խորտակեցաւ զունդն Նիկանովրայ, և անկաւ նախ ի՛նքն ՚ի սուր սուսերի ՚ի մէջ երկուց ճակատուցն: ⁴³Իբրև ետես զունդն եթէ անկաւ Նիկանովր՝ զէնընկէց լինէին, ՚ի փախուստ դառնային: ⁴⁵Սոքա զհետ երթային նոցա օր մի յԱդասայ մինչև եկին հասին յԱզերա. և հարկանէին զփողս նշանաց զհետ նոցա* . ⁴⁶Եւ ելանէին յամենայն քաղաքաց անտի Յրէաստանի շուրջանակի, և կրճատէին զնոսա: Դարձեալ անդրէն առ միմեանս միմեանց ընդդէմ ՚ի մի վայր ժողովէին. և անկան յայնմ աւուր ամենեքին ՚ի սուր սուսերի, և ո՛չ մնաց ՚ի նոցանէ և ո՛չ մի: ⁴⁷Եւ եկին խառնեցան ընդ աւա՛ր ընդ կապուտ՝ ընդ զէն՝ ընդ գանձ ընդ կահ բանակին: Եւ զգլուխն Նիկանովրայ աջով ձեռամբն հանդերձ զոր իշխեաց ձգել նա հպարտութեամբ ՚ի տաճար անդր, և բերին պրկեցին զնա յանդիման երուսաղեմի* : ⁴⁸Եւ ուրախ եղև ժողովուրդն յոյժ: Եւ արարին զօրն զայն տարեկան մեծ. ⁴⁹և կարգեցին ամ յամէ զօրն զայն տօ՛ն տարեկանաց, զերեքտասաներորդ ամսոյն Ադարայ: ⁵⁰Եւ լռեաց երկիրն Յուդայ աւուրս քանի՛ մի:

8

Գլուխ Ը

ԺԳ ¹Իբրև լուաւ Յուդա զանուն Յոզովմայեցւոց, եթէ են նոքա հզօրք զօրութեամբ իւրեանց. և նոցա բարւո՛ք թուի թէ ոք թիկունս առնէ զնոսա, և դաշնաւոր լինի նոցա. և զի զօրացեալ են զօրութեամբ ՚ի վերայ երկրի: ²Եւ վասն մարտից պատերազմի, զի հարկանէին քաջութեամբ իւրեանց զկողմանս Գաղատացւոց, զի զօրացան ՚ի վերայ նոցա, և կացուցին զնոսա ՚ի հարկի: ³Եւ որ ինչ միանգամ արարին նոքա ընդ կողմանս Սպանիացւոց. և թափեցին ՚ի նոցանէ զբովսն ուստի ոսկին և արծաթն հատանի. և ըմբռնեցին նոքա զտեղիսն զայն ամենայն խորհրդովք իւրեանց, և երկայնատութեամբ իւրեանց. զի էր տեղին կարի բացարձակ ՚ի նոցանէ. ⁴և ՚ի թագաւորաց անտի որ եկեալ էին ՚ի վերայ նոցա ՚ի ծագաց երկրի մինչև հարի՛ն զնոսա: Եւ հարին զնոսա ՚ի հարուածս մեծամեծս, և ջնջեցին զնոսա, և զմնացորդսն ՚ի հարկի կացուցին տա՛լ նոցա հարկ ամ յամէ: ⁵Եւ զՓիլիպպոս, և զարքայն Կինեացւոց որ յարուցեալ էին ՚ի վերայ նոցա, սատակեցին զնոսա ՚ի պատերազմի և յաղթեցին

* Այլք. Երկըք հազարօք ար՛:

* Ոսկան յաւելու. ՚ի թագաւորէ անտի Սենեքերիմայ եկեալ:

* Ոմանք. Մինչ եկին հասին յա՛... փողս նշանակաց զհետ նոցա:

* Ոմանք. Եւ զգլուխն Նիկանովրայ աջու ձե՛:

նոցա*։ ⁶Եւ զԱնտիոքոս մեծ արքայն Ասիացոց, որ եկեալ էր ՚ի վերայ նոցա մեծաւ պատերազմաւ, ընդ իւր ունէր հարիւր քսան փիղ, և կառս և երկվարս բազում յոյժ, և պարտեցաւ ՚ի նոցանէ*։ ⁷Պի ձերբակալ արարին զնա կենդանւոյն, և կացուցին զնա ՚ի տեղի մի հարկ հարկանել։ ⁸Եւ զթագաւորս որ ըստ նմանէ՝ էին տալ պատանդս և գրաւականս. և զաշխարհն Յնդկաց, և Պարթևաց, և Լիդացոց, զընտիր ընտիր գաւառաց նոցա. և առին զայնս և ՚ի ձեռնս ետուն Եւմենէայ արքայի*։ ⁹Իբրև զայն ևս լուան եթէ Յոյնք խորհեցան զալ սատակել զնոսա. և իբրև ազդ եղև բանն նոցա. ¹⁰արձակեցին մի ՚ի զօրավարաց անտի, և եկն եհար սատակեաց զնոսա մեծաւ պատերազմաւ, և արկին ՚ի նոցանէ ՚ի սուր իւրեանց վիրաւորս բազումս. ՚ի գերութեան վարեցին զկանայս և զորդիս նոցա. յաւարի առին զինչս և զստացուածս նոցա։ Կալան զերկիրն ՚ի ծառայութեան. զամուրսն քակեցին, զաշխարհն ՚ի հարկի ծառայութեան կացուցին մինչև յօրս յայս*։ ¹¹Եւ զայլ թագաւորութիւնսն և զկղզիսն՝ որ խլըրտէին՝ սատակեցին և ՚ի ծառայութեան կացուցին։ ¹²Բայց ընդ բարեկամս իւրեանց՝ և որ թիկունս առնէ զնոսա, հաստատութեամբ սէր առնէր ընդ նոսա։ Եւ հզօրացան նոքա ՚ի վերայ ամենայն թագաւորութեանց՝ որ մերձ էին և որ հեռի՝ էին. և որ միանգամ լսէին զանուն նոցա՝ երկնչէին ՚ի նոցանէ*։ ¹³Ում կամէին տային զթագաւորութիւն, զո կամէին՝ հանէին ՚ի տէրութենէ. և բարձրացան յոյժ։ ¹⁴Եւ ՚ի վերայ այսր ամենայնի ո՛չ ոք ՚ի նոցանէ յանձն առ թագ առնուլ՝ և ծիրանիս արկանել՝ զի հաստատեցի տէրութիւնն։ ¹⁵Այլ տուն խորհրդոց շինեցին, և հանապա՛զ օր երեք հարիւր և քսան այր ՚ի խորհուրդ մտանէին վասն զօրաց՝ զի զաշխարհն շէն կալցին։ ¹⁶Եւ մի մի այր ՚ի նոցանէն որ հաւատարիմ էր իշխան, զլուխ կացուցանէին տարւոյն, զի տիրեսցէ ՚ի վերայ ամենայն երկրի նոցա, և ամենեքեան հնազանդութեամբ լսէին միում. և ո՛չ ինչ գոյր հեռ և նախանձ ՚ի մէջ նոցա*։ ¹⁷Ապա կարգեաց արս ընտիրս Յուդա յիւրաքանչիւր գնդէ անտի. զԱպողենոս զԱկկոսեան զորդի Յովնաթանու, և զՅասոն զորդի Եղիազարու. և առաքեաց զնոսա ՚ի Ղռոն քաղաք, խնդրել ՚ի նոցանէ զհաշտութիւն և թիկունս*։ ¹⁸Եւ զի բարձցեն զլուծն ՚ի պարանոցէ նոցա. քանզի ծանրացուցեալ էր յունաց զլուծ ծառայութեան ՚ի վերայ պարանոցին Իսրայէլացոց։ ¹⁹Եւ զնացին ՚ի կողմանս Ղռոնայեցոց։ Եւ էր ճանապարհն մեծ. եկին հասին հրեշտակքն, և յանդիման եղեն նոցա ՚ի տաճարին խորհրդոց. կացին ՚ի մէջ, և սկսան տալ զպատգամն*։ ²⁰Յուդա Մակաբէ և եղբարք իւր, և ամենայն սպայ Յրէաստանեայց. խօսել ընդ ձեզ ՚ի հաշտութիւն. առնել զձեզ թիկունս, և խնդրել ՚ի ձեռն խաղաղութիւն. զի և ձե՛զ ևս կամ լիցի, գրել ձեզ զմեզ նիզակակիցս և բարեկամս*։ ²¹Եւ հաճո՛յ թուեցաւ բանն առաջի նոցա։ ²²Եւ այս այն պատճէն է հրովարտակի նոցա զոր գրեցին նոքա առ նոսա ՚ի տախտակս պղնձիս և առաքեցին յերուսաղէմ. և առ իւրեանս թողին յիշատակ թիկանց և

* Այլք. Եւ զարքայն Կինացոց։

* Ոմանք. Եւ պարտեցաւ նա ՚ի նոցանէ։

* Ոմանք. Տալ պանտանդս և գրա՛... և առին զայն՝ և ՚ի։

* Ոմանք. Մինչև ցօրս յայս։

* Ոմանք. Եւ որ թիկունս առնէր զնոսա։ Ոսկան. Սէր առնէին ընդ նոսա։

* Ոսկան. Իշխան և զլուխ կա՛։

* Ոմանք. Ձեպողենոս զԱկկոսեան։

* Ոմանք. Լացին ՚ի մէջ, և սկսան։

* Ոմանք. Եւ ամենայն սպահ Յրէաս՛։

խաղաղութեան*։ ²³Խաղաղութիւն և բարիք լիցին ընդ Յրեաստան, և ընդ Յռոմայեցւոց ընդ ամենայն ընդ ծով և ընդ ցամաք. սուր և թշնամի հեռի՛ լիցի ՚ի նոցանէ*։ ²⁴Ապա եթէ հասցէ պատերազմ նախ ՚ի վերայ Յռոմայեցւոց, կամ ուրեք բարեկամաց նոցա՝ ընդ ամենայն տեղիս տէրութեան նոցա*, ²⁵ի թիկունս վաղվաղակի հասցէ գունդն Յրեաստանեայց, որպէս ժամանակն ցուցանէ նոցա՝ մտադար սրտի մտօք*։ ²⁶Եւ ՚ի թշնամի ինչ մի՛ տացեն, և մի՛ ձեռնտու լիցին արծաթով կամ ոսկով՝ կամ զինու՝ կամ նաւօք։ Այսպէս հաճոյ թուեցաւ Յռոմայեցւոց. զի պահեսցեն զպատուիրանդ զայդ առանց կաշառոյ։ ²⁷Սոյնպէս եթէ ՚ի վերայ ազգին Յրեից հասանիցէ պատերազմ, ՚ի թիկունս վաղվաղակի հասցեն Յռոմայեցիք՝ միամտութեամբ սրտի մտօք. որպէս ժամանակն նոցա ցուցանիցէ*։ ²⁸Եւ ՚ի թշնամի ինչ ո՛չ տացեն, ոսկի կամ արծաթ կամ զէն կամ նաւս. որպէս հաճոյ թուեցաւ Յռոմայեցւոց։ Պահեսցեն զպատուիրանս զայս առանց նենգութեան։ ²⁹Եւ ըստ բանիցս այսոցիկ այսպէս հաստատեցին Յռոմայեցիք ընդ գնդին Յրեից։ ³⁰Ապա եթէ յետ այդ բանից խորհուրդ ինչ ՚ի մէջ մտցէ սոցա կամ նոցա՝ հանել կամ յաւելուլ, որ ինչ դէպն տացէ՝ կարգեսցեն հասարակ հաւանութեամբ, և հաստատուն կացցեն։ ³¹Եւ վասն չարեաց արքային Դեմետրեայ որ հասուցանէ նոցա, գրեսցուք առ նա. գոգցուք. Ընդէ՞ր ծանրացուցանէք զլուծ ՚ի վերայ պարանոցի միզակակից բարեկամաց մերոց*։ ³²Ձայս գիտասջիք՝ եթէ զքէն ամբաստան լիցին դոքա. դատաստան յիրաւի կալցուք, մարտ պատերազմի տացուք ընդ քեզ, եթէ ընդ ծով իցէ՝ եթէ ընդ ցամաք*։

9

Գլուխ Թ

¹Եւ ո՛չ ինչ լուաւ Դեմետր. զի անկեալ կործանեալ էր Նիկանովր գնդաւն իւրով ՚ի նոցանէ պատերազմաւ։ Եւ նա դարձեալ անդրէն կրկնեալ յղեաց զԲաքիդ և զՅակիմոս, և գյառաջակողմն թևոյն իւրոյ ընդ նոսա յերկրին Յրեաստանի*։ ²Եւ գնացին ՚ի ճանապարհն Գաղգաղայ. և եկին ճակատեցան ՚ի Մեսաղովթ յերկիրն Արբեղացւոց, և առին զնա, և սատակեցին անձինս բազումս մարդկան ՚ի նմա։ ³Յամսեանն առաջնուն յամին հարիւրորդի յիսներորդի երրորդի, բանակեցան մերձ առ յերուսաղէմ։ ⁴Եւ չուեցին գնացին հասին ՚ի Բերթէ քսան հազար մկնդաւոր արամբք. և երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ*։ ⁵Եւ Յուդա էր բանակեալ յեղիշա. և երեք հազար սպառազէն ընտիրք. ⁶իբրև տեսին զամբոխ բազմութեան գնդին, և երկեան յոյժ, և բազումք թօթափեցան ՚ի նմանէ. և ո՛չոք մնաց առ Յուդայի, բայց ութ հարիւր հեծեալ սպառազէն։ ⁷Իբրև ետես Յուդա թէ

* Ոսկան. Եւ այս է պատճէն հրո՞ւ։

* Յօրինակին պակասէր. Ընդ ամենայն ընդ ծով և ընդ։

* Ոմանք. կամ ումեք բարեկամաց նոցա։

* Ոմանք. վաղվաղակի հասանիցէ... ցուցանիցէ նոցա։

* Ոմանք. Նոյնպէս... հասցէ պատերազմ, ՚ի թիկունս հասանիցեն վաղվաղակի։

* Ոմանք. Ընդէր ծանրացուցէք։

* Ոմանք. Լինիցին դոքա... եթէ ընդ ծով իցէ, և եթէ։

* Յօրինակին պակասէր. Անդրէն կրկնեալ յղեաց։ Այլք. Եւ գյառաջակողմն թևոյն իւրոյ ընդ նոսա յերկիրն։

* Ոմանք. Հասին առ Բերթէ։ Յօրինակին. Եւ Բ-ք Ռ-ք հեծեալ։

թօթափեցան զօրքն ՚ի նմանէ, և պատերազմ նեղէր զնա, նեղեցաւ ՚ի սիրտ իւր. զի ո՛չ էր ժամանօղ միւսանգամ ժողովել զնոսա. լուծաւ լքաւ անկաւ*։ ⁸Սկսաւ խօսել ընդ մնացեալսն և ասէ. Եկա՛յք հարցուք ՚ի դիմի, թերևս կարասցուք կծանել ինչ ՚ի նոցանէ*։ ⁹Եւ ինքն յարծակ յարծակ խաղայր. և զօրքն մատուցեալ պաշարէին դարձուցանել անդրէն. սկսան խօսել ընդ նմա՝ և ասեն. Ա՛յր դու՝ նոցա ինչ մեք ո՛չ կարենք ստնանել. բայց այժմ զանձն ապրեցուցանել ո՛ւշ դիցուք. հապա դարձցուք ժողովեսցուք գեղբարս մեր. ապա մարտիցուք. թէպէտ և իցենք սակաւք*։ ¹⁰Պատասխանի ետ նոցա Յուդա՝ և ասէ. Քա՛ւ լիցի ինձ առնել զիրսդ գայդ, ՚ի փախուստ դառնալ ինձ ՚ի նոցանէ. եթէ հասեալ իցէ ժամանակ մեր՝ մեռցուք քաջութեամբ ՚ի վերայ եղբարց մերոց, և ո՛չ խառնեսցուք զանուն վատութեան մերոյ ընդ արութիւնս քաջութեան*։ ¹¹Եւ ելին զօրքն յիւրաքանչիւր բանակէ, և ճակատեցան դէմ յանդիման միմեանց. երկու՛ գունդք լինէին՝ գունդքն Բաքիդեան սպառազինաւ։ Պարսաւորքն և աղեղնաւորքն առաջի գնդին խաղային, և նահատակքն յառաջագոյն խաղացեալ էին*։ ¹²Բայց Բաքիդ յաջու՛մ թևի անդ ճեպէր զգօրսն ՚ի ձայն փողոյ տազնապաւ յառաջ մատուցանէր*։ ¹³Եւ գունդն Յուդայեան փո՛ղ հարեալ ՚ի վերայ յարծակեալ գային, մինչև երկիրն շարժեր յամբոխ յաղաղակէ անտի յերկոցունց կողմանց։ Եւ եղև պատերազմն խառնեալ անդադար, յառաւօտէ մինչև յերեկոյ։ ¹⁴Իբրև ետես Յուդա՝ եթէ Բաքիդդ ընտիր ընտիր զօրօք յաջում թևի անդ է, զընտիր ընտիր սպառազինաց յիւրմէ գնդէ անտի յառաջ կոչէր, քաջալերէր և անդէն ՚ի վերայ յարծակէր*։ ¹⁵Ի նմին ժամանակի զաջակողմն թևին բեկանէր, և զձախուն արկանէր. և անդստին առաջի արկեալ փախստեալս տանէր մինչև ՚ի կողմանս վերինս Յազովտայ*։ ¹⁶Եւ որ ՚ի ձախակողմն թևի անդ էին, իբրև տեսին թէ աջակողմն թևին բեկաւ առաջի Յուդայեանց, գային խառնէին, և զՅուդայ գնդաւն հանդերձ ՚ի մէջ արկանէին։ ¹⁷Յայնմ վայրի վիրաւորք յերկուց կողմանց անկեալ ընդ երկիր թաւալէին*։ ¹⁸Անդ անկանէր Յուդա՝ առաջին նահատակօքն. և որ մնացեալ էին ՚ի փախուստ դառնային*։ ¹⁹Դարձան Յովնաթան և Շմաւոն եղբարքն երկոքին, բարձին զՅուդա, տարան թաղեցին ՚ի շիրիմս հարց իւրեանց ՚ի Մովդիիմ։ ²⁰Լացին կոծեցան որդիքն Իսրայէլի կո՛ծ մեծ. սո՛ւզ առին աւուրս բազումս, և սկսան խօսել. ²¹և ասեն. Ձիա՛րդ անկաւ կործանեցաւ հզօրն փրկիչն Իսրայէլի։ ²²Այլ ուրեք ուրեք մարտ՝ կամ ճակատ՝ կամ մղել պատերազմի, կամ քաջութիւնս ինչ որ արարեալ է Յուդայի՝ գրեցաւ իսկ ո՛չ յայսմ մատենի. զի բազու՛մ էր կարի յոյժ*։

ԺԴ ²³Եւ եղև յետ մահուանն Յուդայի՝ բրեցին անօրէնքն շուրջ զսահմանօքն

* *Ոմանք.* Եւ պատերազմն նեղէր զնոսա։

* *Ոմանք.* Կարասցուք ինչ կծանել։

* *Ոմանք.* Յանձն ապրեցու՞... ապա դարձցուք։

* *Այլք.* Ընդ արութիւնս քաջութեան։

* *Ոմանք.* Առաջի գնդին խաղացին։

* *Ոմանք.* Յառաջնում թևի անդ։

* *Ոմանք.* Եւ անդրէն ՚ի վերայ յար՞։

* *Ոմանք.* Ի կողմանս լերինն Ազովտայ։

* *Ոմանք.* Յերկոցունց կողմանց անկեալ յերկիր թա՞։

* *Յօրինակին կարծրադեղով նշանակի բանս.* Անդ անկանէր Յուդա։

* *Այլք.* Որ արարեալ էր Յուդայի։

Իսրայելացւոց, բուսան՝ բոխեցին, և բազմացան որ գործէին զանօրէնութիւն՝
²⁴Յաւուրսն յայնոսիկ եղև սո՛վ մեծ, և ինքնական գնացին մարդիկն ՚ի նոսա. և աշխարհն ձեռնտու էր ՚ի նոսա: ²⁵Եւ ընտրեաց Բաքիդդ արս անօրէնս, և կացոյց իբրև տեսարս ՚ի վերայ նոցա, ²⁶որ քննէին և խնդրէին և ածէին զբարեկամսն Յուդայի առ Բաքիդդ, և խնդրէին վրէժ ՚ի նոցանէ, տառապեցուցանէին և այլան առնէին. ²⁷և նեղէին և ծաղր առնէին զԻսրայէլ. զի ո՛չ երբէք լեա՛լ էր այս յորմէ հետէ երևեցաւ մարգարտ: ²⁸Եւ ժողովեցան ամենայն բարեկամքն Յուդայի, և չոգան առ Յովնաթան Ափուս՝ և ասեն. ²⁹Եղբայր քո Յուդա մեռա՛ւ, և այր չի՞ք որ նման է նմա ելանել ընդդէմ թշնամոյ, տա՛լ պատասխանի այդոցիկ որ եկեալ թշնամութեամբ նեղեն զագոս մեր: ³⁰Այլ զքեզ ընտրեցաք մեք ՚ի տեղի նորա, զի եղիցես դու իշխան ՚ի վերայ մեր. լինել մեզ առաջնորդ՝ և տա՛լ պատերազմ ընդ թշնամիս մեր՝: ³¹Եւ յանձն առ Յովնաթան ՚ի ժամանակին յայնմիկ զառաջնորդութիւն. և համբարծաւ նա փոխանակ Յուդայի եղբօր իւրոյ: ³²Իբրև գիտաց Բաքիդդ՝ խնդրէր սպանանել զՅովնաթան և զՇմաւոն զեղբայր նորա. ³³և փախեան նոքա յանապատն Թակովեայ. և եկին բանակեցան ՚ի ջուր անդր Ակուսասփառ՝: ³⁴Եւ գիտեաց Բաքիդ զօրն շաբաթուց, և եկն ինքն բանակեցաւ զօրօքն իւրովք յայնկոյս Յորդանան գետոյ: ³⁵Եւ առաքեաց առ նոսա զեղբայր մի զհւր՝ զօրագլուխ զօրաց բազմաց, և աղաչեցին զՆաբատացիս զբարեկամս իւրեանց, յանձն առնէին նոցա զկահ և զգրաստ՝ և զամենայն ինչս որ մնացեալ էր ՚ի բնի իւրեանց՝: ³⁶Եւ ելին որդիքն Յամբրեայ որ ՚ի մէջ Դամասայն էին, ըմբռնեցին զՅոհաննէս, և առին գնացին կահիւ հանդերձ ընդ իւրեանցն: ³⁷Յետ ժամանակացս այսոցիկ ա՛զդ եղև Յովնաթանու և Շմաւոնի եղբարց նորա, եթ որդիքն Ամբրեայ հարսանիս արարին. և առեալ ածէին զհարսն յԱբդաղաթայ՝ դուստր միոյ ուրումն ՚ի մեծամեծաց աւագաց Քանանացւոց անտի, մեծա՛ւ չուով անչափ հանդերձի՝: ³⁸Եւ յիշեցին նոքա զՅոհաննէս զեղբայրն իւրեանց. ելին մտին նոքա ՚ի դարան ՚ի ծործո՛ր լերինն: ³⁹Եւ ամբարծին զաչս իւրեանց, տեսին զի գայր չո՛ւ մեծ՝ և ամբոխ բազում. և ե՛լ փեսայն փեսաւիւրօքն և եղբարքքն հանդերձ, և փողովք և թմբկաւ, և պէսպէ՛ս արուեստականօք, և բազում վառելովք: ⁴⁰Եւ ելին սոքա ՚ի դարանէ աստի, սպանին զբազումս, և բազում վիրաւորս արծակեցին, և զվառեալսն փախստեա՛յ արարին. և առին յաւարի զկահ և զհանդերձ. և զչուն աւա՛ր հարկանէին՝: ⁴¹Եւ դարձան հարսանիքն ՚ի կոծ, և ձայն արուեստականացն՝ ՚ի սուգ և յողբս դարձա՛ւ: ⁴²Եւ խնդրեցին սպառ սպուռ զվրէժ արեան եղբօրն իւրեանց. և դարձան ՚ի մարգն Յորդանան գետոյ: ⁴³Իբրև գիտաց Բաքիդդ՝ ա՛ն զօրս և խաղաց ՚ի վերայ նոցա, և եկն եհաս յանձաւսն Յորդանան գետոյ՝: ⁴⁴Ասէ Յովնաթան զօրսն իւր. Եկայք յարիցուք մարտ դիցուք վասն ոգւոց մերոց. զի ո՛չ է այսօր իբրև զերեկն և իբրև զեռանտն՝: ⁴⁵Եւ ահաւասիկ զօրք ճակատեալ յանդիման մեր. ո՛չ ամուր

* *Ոմանք.* Յետ մահուն Յուդայի:
 * *Այլք.* Արդ զքեզ ընտրեցաք:
 * *Ոմանք.* Անդր Ակուսասփառ. *կամ՝* Ասկու Ասփառ:
 * *Ոմանք.* Եւ աղաչէին զՆաբատա՛ւ:
 * *Ոմանք.* Յովհաննու և Շմաւոնի, և եղբարցն իւրեանց: *Ոսկան.* Մեծաւ չափով՝ անչափ:
 * *Ոմանք.* Ի դարանէ անտի:
 * *Ոմանք.* Եւ դարձան ձայն արու՛:
 * *Բազումք.* Իբրև լուաւ Բաքիդդ՝ ա՛ն զօրս:
 * *Ոմանք.* Իբրև զերեկն և գյեռանդն:

թաքստի՝ ո՛չ դաշտ փախստի. և գետս Յորդանան շուրջ զմեք պատեալ է՝⁴⁶Արդ եկայք ձայն բարձցուք յերկինս, յարձակեսցուք ՚ի վերայ, թերևս ապրեսցիք ՚ի ձեռաց թշնամեաց մերոց: Ջբանսն ասաց, և անդէն խառնեցաւ յարձակեցաւ ՚ի վերայ Բաքիդեայ՝⁴⁷Այն ինչ լինէր զոգիսն ՚ի գիրկս իւր թափել, և նա յե՛տս կոյս կործանեցաւ.⁴⁸և հոսեցան Յովնաթան և որ ընդ նմա էին ՚ի դարէ՛ անտի՝⁴⁹Ա՛նդ հարին կոտորեցին Բաքիդեանք՝ ՚ի Յուդայի գնդէ անտի արս հազար մի. և դարձան յերուսաղէմ՝⁵⁰Սկսան շինել քաղաքս ամուրս յերկրին Յրեաստանի, և զամուրսն երիքովի, և զԱմաւեայ, և զԲեթորեայ, և զԲեթելայ, և զՄինաթարովթայ, և զՍտեփայ. ՚ի պարիսպս ամրացեալս, և ՚ի դրունս հզօրս, և ՚ի նիզս հաստատունս:⁵¹Եւ պահապանս կացուցին թշնամութեամբ ՚ի վերայ Իսրայէլացւոց.⁵²և ամրացուցին զքաղաքն Բեթսովրայ, և զԳազերամ, և զակառն. և կացոյց ՚ի նմա զօրս բազումս՝ և համբարս յոյժ՝⁵³Եւ ա՛ռ նա զորդիս իշխանաց երկրին ՚ի պատանդս, և եդ զնոսա յակառն Երուսաղէմի ՚ի պահեստ՝⁵⁴Յամին հարիւրորդի տասներորդի. յամսեանն երկրորդում, հրամայեաց Յակիմոս քակել զպարիսպսն սրահիցն սրբութեան ներքնոյ. և սկսան քակել զգործն մարգարէից՝⁵⁵Ի ժամանակին յայնմիկ հարաւ Յակիմոս, և խափանեցան գործք նորա. քակեցան երախք նորա. պապանձեցաւ և ո՛չ կարէր խօսել բան մի և հրաման տալ վասն տան իւրոյ:⁵⁶Եւ մեռաւ Յակիմոս ՚ի ժամանակին յայնմիկ մեծաւ տանջանօք:⁵⁷Իբրև ետես Բաքիդ, եթէ մեռաւ Յակիմոս, դարձա՛ւ անդրէն առ արքայն. և դադարեաց երկիրն Յրեաստանի ամս երկուս:⁵⁸Խորհեցան անօրէնքն և ասեն. Ահաւաղիկ Յովնաթան և որ ընդ նմա են՝ խաղաղութեամբ նստին բնակութեամբ յանհոգս. արդ՝ եկայք ածցուք զԲաքիդ, և ըմբռնեսցէ զդոսա ամենեսին ՚ի գիշերի միում:⁵⁹Գնացին խորհեցան ընդ նմա:⁶⁰Նա՛ խաղաց գալ վաղվաղակի զօրօք բազմօք: Եւ առաքեաց նա հրովարտակս գաղտ՝ առ խորհրդակիցս իւր որ էին ՚ի Յրեաստանի, զի ըմբռնեսցեն զՅովնաթան և որ ընդ նմա էին. և ո՛չ կարէին, զի ազդ եղև նմա բանք խորհրդին՝⁶¹Եւ կալան նոքա արս յերկրին առաջնորդաց չարեացն յիսուն մի, և անդէն խոխողեցին՝⁶²Եւ խոյս ետուն Յովնաթան և Շմաւոն և որք ընդ նոսա էին ՚ի Բեթբէս ՚ի յանապատն. և խրամակարկատ արարին զնա, և ամրացուցին զնա:⁶³Եւ իբրև ետես Բաքիդ, զօրահատոյց լինէր, և գայր պաշարէր.⁶⁴մարտ եղեալ զԲեթբեսեաւ, և մարտնչէր աւուրս բազումս. և առնէին կանգնէին շուրջ զնովաւ մենքեմայս:⁶⁵Եւ եթող Յովնաթան զՇմաւոն զեղբայր իւր ՚ի քաղաքի անդ, և եկն ել նա ՚ի գաւառ անդր. և եկն արթամ՝⁶⁶Եհար զՈղոմերա և զեղբարս իւր, և զորդիսն Փասիրոնայ ՚ի խորանի

* Այլք. ճակատեալ են յանդիման... և ո՛չ դաշտ փախստի:

* Ոմանք. Ապրեսցուք ՚ի ձեռաց թշնամեաց ձերոց:

* Ոսկան. Եւ որք ընդ նմա էին ՚ի դարանէ անտի:

* Ի լուս՝. Ի Յովնաթանու գնդէ անտի. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝. Ուր ոմանք. և Յուդայի գնդէ անտի: Իսկ Ոսկան. Ջբաքիդեանս, և Յուդայ ՚ի գնդէ ան՝:*

* Այլք. Եւ զԳազերայ, և զակառն: *Ուր յօրհնակին. Ջօր բազումս:*

* Ոմանք. Եւ եդ զնոսա յամրոցն Երուսաղէմի:

* Ոմանք. Յարիւրորդի յիսներորդի... սրբութեան ՚ի ներքոյ: *Ուր Ոսկան յաւելու. Յիսներորդի երրորդի: Յօրհնակին. Կակիմոս. այլ ՚ի լուս՝. ուղղագրի՝ Յակիմոս. համաձայն այլոց:*

* Ոսկան. Ազդ եղև նմա վասն խորհրդոյն:

* Ոմանք. Եւ նոքա կալան... չարաց... և խողխողեցին:

* Ի լուս՝. Եւ եկն Յովնաթան (66) Եհար զՈղոմերա և զեղ՞. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

իւրեանց. և սկսաւ ելանել հարկանել զգօրսն: ⁶⁷Եւ Շմաւո՛ն և որ ընդ նմա էին. ելին հրծիգ արարին զմենքենա՛յս*. ⁶⁸և մարտ պատերազմի եղին ընդ Բաքիդայ. ՚ի պարտութիւն մատնեցան ՚ի նոցանէ. զի էր խորհուրդն այն և արշաւան նորին ընդունայն: ⁶⁹Եւ բարկացաւ սրտմտութեամբ ՚ի վերայ արանցն անօրինաց, որ խրա՛տն ետուն նմա արշաւել յերկիր նորա. սպա՛ն նա զբազունս ՚ի նոցանէ, և խորհեցաւ նա դառնալ յերկիր իւր ուստի եկեալ էր*: ⁷⁰Իբրև գիտաց Յովնաթան՝ առաքեաց զկնի նորա հրեշտակս, և խօսէր ընդ նմա խաղաղութեամբ, դնել ուխտ, և դարձուցանել նմա զգերին ամենայն*: ⁷¹Յանձն առ և արար որպէս խօսեցաւ նա ընդ նմա. և երդուաւ նմա, թէ այլ ո՛չ ևս խնդրեցից ՚ի վերայ ձեր չարիս. մինչև կենդանի՛ իցեն՝: ⁷²Եւ դարձոյց անդո՛ւն զգերին որ առեալ է յառաջու յերկրէն Յրէաստանի. և ինքն գնաց յաշխարհ իւր, և այլ ո՛չ ևս դիմեաց դառնալ ՚ի սահմանս նոցա*. ⁷³և դադարեաց սուր յիսրայէլէ: Եւ բնակեաց Յովնաթան ՚ի Սաքմաս. և սկսաւ դատել Յովնաթան զժողովուրդ իւր, և սատակել զանօրէնսն յիսրայէլէ:

10

Գլուխ Ժ

ԺԵ ¹Յամին հարիւրորդի վաթսներորդի ել Աղէքսանդրոս Անտիոքեան Եպիփան, և ա՛ռ նա զքաղաքն Պտղոմէայեցւոց. ընկալան զնա. և թագաւորեաց նա անդ ՚ի նմա*: ²Լուաւ Դեմետր արքայ, եթէ ժողովեաց զօրս բազունս, և ել տալ ընդ նմա մարտ պատերազմի: ³Եւ յղեաց առ նա Դեմետր բանս խաղաղութեամբ, զի մեծարեսցեն նոքա զնա*. ⁴Աճապարեսցուք ասէ դնել ընդ նմա ուխտ խաղաղութեամբ, մինչչև՛ եղեալ իցէ ընդ նոսա ուխտ Աղէքսանդրեայ վասն մեր*: ⁵Եւ գիտեմ յուշ լիցին նմա չարիքն զոր անցուցաք մեք ընդ նմա և ընդ եղբարս նորա և յազգս նորա*: ⁶Եւ ետ նմա իշխանութիւն ժողովել զօրս, և պատրաստել զէն, զի լիցի նա նիզակակից նորա. և զպատանդսն որ էին յակառն հրամայեաց տալ ՚ի ձեռս նորա*: ⁷Եւ եկն Յովնաթան յերուսաղէմ. ընթերցաւ նա զթուղթն առաջի ամենայն ժողովրդեանն, առաջի այնոցիկ որ յամրի՛ անդ էին*: ⁸Եւ երկեան նոքա երկիւղ յոյժ. զի լուան եթէ ետ նմա իշխանութիւն արքայն ժողովել զօրս: ⁹Սակայն ածին կալան զպատանդսն առաջի նորա, և ետ զնոսա ցընտանիս իւրեանց: ¹⁰Եւ բնակեցաւ Յովնաթան յերուսաղէմ, սկսաւ շինել և նորոգել զքաղաքն. ¹¹և ասէ ցայնոսիկ, որ գործէին զգործն շինուածոց պարսպացն. Շինեցէք ասէ զպարիսպդ, և զլեառն Սիոն

Ուր Ոսկան. Եկն Արթամէ: (66) Էհար զՈդստերայ:

* *Ի լուս՝.* նշանակի երկիցս. Ելին ելին:

* *Ի բազունս պակասի.* Ի վերայ արանցն *անօրինաց*, որ:

* *Բազունք.* Եւ խօսէր ընդ նմա խաղաղութիւն:

* *Ոմանք.* Չարիս. ցորչափ կենդանի իցեն:

* *Ոմանք.* Չոր առեալ էր յառաջ յերկրէն:

* *Այլք.* Չքաղաքն Պտղոմէացւոց:

* *Ի լուս՝.* Եւ յղեաց առ Յովնաթան՝ Դեմետր. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Աճապարեսցուք դնել ընդ նոսա ուխտ խաղաղութեան:

* *Այլք.* Ընդ նա և ընդ եղբարս:

* *Ոմանք.* Նիզակակից նմա:

* *Ոմանք.* Չթուղթսն առաջի:

շուրջ, ՚ի չո՛րս կոյս յորձաքար վիճաց: Եւ արարին այնպէս՝: ¹²Փախստեայ
 գնացին այլազգիքն՝ որ էին յամուրս անդ. որոց շինեաց յայնժամ Բաքիդդ՝ ¹³և
 եթող գնոսա յիրաքանչիւր տեղւոջ. և գնաց նա յերկիրն ուստի էր: ¹⁴Եւ ՚ի
 Բեթսուվր մնացեալ էին ոմանք՝ որոց թողեալ էր զօրէնսն և զիրամանս. զի նա՛ էր
 ամուր՝: ¹⁵Իբրև լուաւ Աղէքսանդրոս արքայ զաւետիսն զոր ետ բերել
 Դեմետրիոս առ Յովնաթան, և պատմեցին նմա զպատերազմ քաջութեամբ, որ
 արարեալ էր եղբարքք իւրովք, և զվիշտսն որ անցուցեալ էր ընդ նոսա՝. ¹⁶և ասէ.
 Միթէ կարե՞մք ուրեք գտանել այ՛ր մի այնպիսի. առէ՛ք առնենք զնա մեզ
 բարեկան և թիկունս՝: ¹⁷Եւ հրամայեաց առնել առ նոսա հրովարտակ ըստ
 բանիցս այսոցիկ: ¹⁸Արքայ Աղէքսանդրոս՝ առ եղբայր Յովնաթան ողջոյն: ¹⁹Ա՛զդ
 եղև մեզ վասն քո, եթէ այր քա՛ջ զօրութեամբ ես, և արժանի՛ ես դու լինել մեզ
 բարեկան: ²⁰Արդ կացուցա՛ք մեք զքեզ այսօր զլուխ քահանայապետութեան
 ազգի քոյ. և բարեկան արքայի կոչել զքեզ: Եւ ետ տանել նմա պսակ ոսկի և
 ծիրանիս: Արդ կա՛լ լիցի քեզ յուխտի մերում, և պահել զհաւատ
 բարեկամութեան առ մեզ. ո՛ղջ լեր: ²¹Եւ ա՛ն՝ զգեցաւ Յովնաթան զայն ընտիր
 պատմուճան: Յամին հարիւրորդի վաթսներորդի եւթներորդի, ՚ի տօնին
 տարեկանաց տաղաւարահարաց ժողովեցին զօրս, կազմեցին զէնս, և ուրախ
 եղեն՝: ²²Եւ լուա՛ւ Դեմետր զբանս զայս, տրտմեցաւ յոյժ. ²³և ասէ. Չի՞նչ գործ
 գործեցաք, զի ո՛չ մեք մեզ արարաք գնոսա թիկունս: Եւ արդ աճապարեաց
 Աղէքսանդրոս, և խօսեցաւ ընդ նոսա ՚ի հաշտութիւն, և արար իւր ձեռն
 հաստատութեան զՅրէաստան: ²⁴Արդ առէ՛ք և մեք գրեսցուք առ նոսա բանս
 մխիթարութեան մեծարանաց և պարգևաց, զի եղիցին նոքա մեզ
 յօգնականութիւն: ²⁵Եւ ետ տանել նոցա հրովարտակս ըստ բանիցս այսոցիկ.
 Արքայ Դեմետրիոս՝ առ ազգն Յրէից ողջոյն. ²⁶քանզի պահեցէր դուք զուխտս և
 զդաշինս զոր ընդ մեզ եղիք. կացէ՛ք մնացէ՛ք դուք ՚ի մերո՛ւն բարեկամութեան, և
 ո՛չ ձեռնտու եղէք ՚ի թշնամի. լուա՛ք մեք և ուրախ եղեաք: ²⁷Եւ արդ՝ կացէ՛ք
 մնացէ՛ք պահեցէ՛ք դուք առ մեզ զնոյն հաւատ. ²⁸և մեք հատուցուք ձեզ
 թողութիւնս բազումս, և տացուք ձեզ պարգևս բազումս: ²⁹Եւ արձակեսցուք
 զձեզ՝ և թողուք զամենայն Յրէայ ՚ի հարկաց, և զբաժ զաղտիցն և զպսակաց. և
 փոխանակ երրորդաց սերմանն՝: ³⁰Եւ զհասարակաց այգւոյն և զծառոյն որ
 գայր ինչ, թողում ձեզ յայսմ օրէ և առ յապա. և յերիցն օրինաց որ յաւելան ՚ի
 ձեզ, և ՚ի Շամրտացիս, և ՚ի Գալիլեացիս. յայսմ հետէ և ՚ի յաւիտեանս
 ժամանակաց՝: ³¹Եւ յերուսաղէմ նուիրեալ՝ սուրբ թողեալ կացցէ շուրջ
 զսահմանօք իւրովք հանդերձ, և ՚ի տասանորդէ զմաքս ձեզ թողեալ լիցի՝: ³²Եւ
 զիշխանութիւն զամրիդ ՚ի ներքս տուեալ լիցի ցքահանայապետդ, և կացուցէ
 դա ՚ի նմա արս զոր ինքն ընտրեսցէ պահել զդա: ³³Եւ ամենայն անձն Յրէի որ ՚ի

* *Ոմանք.* Չպարիսպսդ... ՚ի չորեքկոյս յոր՝:

* *Այլք.* Փախստեայ գնային:

* *Յօրինակին.* Թողեալ էր զանօրէնսն և զիրա՛ն:

* *Ոմանք.* Եւ զվիշտն որ անցեալ էր ընդ նոսա:

* *Ոսկան.* Այր մի այնպիսի, զի առնիցենք զնա մեզ:

* *Ոմանք.* Յինգերորդի, ՚ի տօնին... և կազմեցին... և ուրախ լինէին:

* *Ոսկան.* Եւ զբաժ աղիցն և պսակաց:

* *Ի լուս՝.* Որ գայր ինձ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:* Այլք. Եւ զհասարակուց այգւոյն...

յայսմ օրէ և յապա:

* *Ոմանք.* Չմաքս ձեր թո՛ն:

գերութեան գտցի՝ յերկրէն Յրէաստանի յամենայն թագաւորութեան իմում, արձակեալ ձրի առանց փրկանաց. զամենայն հարկս՝ հասի և մաքսի և գրաստու*։³⁴ Եւ յամենայն տօնս տարեկանաց, շաբաթք և գլուխք ամսոց, և աւուրք յառաջ քան զտօնն, և երեք երեք աւուրք զկնի տօնին, եղիցին ապահարկ թողեալ ամենայն Յրէից որ իցեն՝ ի թագաւորութեան իմում.³⁵ մի՛ իշխեսցէ պահանջել նեղել զոք վասն ամենայն իրաց իմոց։³⁶ Եւ առաջինք գտցին նոքա ՚ի զօրս արքունի՝ ի վեց հարիւր հազար զօրական. և պարզեք ելցեն նոցա որպէս օրէն է ընդ առաջին զօրս արքունի՝ ընդ մեծամեծս*։³⁷ Եւ ՚ի նոցանէ դարձեալ հաստատեսցի ՚ի ձեռնանէ արքունի որ են հաւատարիմ։ Եւ իշխանք և վերակացուք եղիցին նոցունց։ Եւ զնասցեն նոքա ըստ օրէնս իւրեանց որպէս հրաման ետ արքայ երկրին Յրէաստանի։³⁸ Եւ գերիս օրէնս որ յառաջագոյն եղեալ էր Յրէաստանեայց, յերկրէն Շամրտացոց անդրէն դարձուցանել ՚ի Յրէաստան, և համարել ընդ երկոսին մի օրէնս. զի մի՛ այլ իշխան ձեռնահաս լիցի ՚ի վերայ նոցա, այլ քահանայապետն*։³⁹ Եւ զքաղաքն Պտղոմայեցոց տուեալ լիցին նոցա պարզս ՚ի նուէրս սրբութեանցն որ յերուսաղէմն են, ՚ի պէտս ծախիցն որ ՚ի սուրբս անդր ծախիցին*։⁴⁰ Եւ ես տաց ամ յամէ հնգետասան հազար կշիռ արծաթոյ՝ յարքունի համբարուէ, ՚ի կողմանց ուստի արժան իցէ*։⁴¹ Ձամենայն մթեր զոր նոքա ո՛չն կարէին լնուլ՝ յարքունուստ լիցի, որպէս ընդ առաջին ազգսն,⁴² յայսմ հետէ տացեն յարքունի՛ տարազէ։ Եւ ՚ի վերայ այսորիկ զհինգ հազար կշիռ արծաթոյն՝ զոր առնուն ՚ի մտիցն սրբութեանն ըստ համարոյ տարւոյն. և այդ թողեալ լիցի, զի անկ է այդ քահանայից և պաշտօնէից*։⁴³ Որ միանգամ դիմեսցէն ոք փախստեայ անկանել ՚ի տաճար անդր յերուսաղէմ, կամ որ միանգամ ՚ի սահմանաց դորա իցէ որ պարտիցի ոք ինչ յարքունիս, թողեալ լիցի նմա. և ինքեանք արձակեալ լիցին*։⁴⁴ Եւ ամենայն ինչ որ արատեալ կործանեալ իցէ շինուածոց սրբոց, շինեսցին նորոգեսցին, և ծախս համարոյն յարքունուստ վճարեսցի։⁴⁵ Եւ շինեսցեն զպարիսպն երուսաղէմի, ամրացուցեն շուրջանակի. և ծախս համարոյն յարքունուստ վճարեսցի։ Եւ ամենայն պարիսպք ամրաց Յրէաստանի շինեսցին*։⁴⁶ Եւ իբրև լուաւ Յովնաթան և ժողովուրդն զքանս զայս, ո՛չ ինչ հաստատեսցին՝ և ո՛չ յանձն առին, զի յիշեցին զչարիսն մեծամեծս որ արարեալ էր յերուսաղէմ, և նեղութիւնս յոյժ զոր նեղեցին նոքա զնոսա*։⁴⁷ Այլ հաճեցան հաւանեցան ընդ հաշտութիւնն Աղէքսանդրի. զի նա եղև նոցա նախ առաջնորդ բանիցն խաղաղութեան. և էին նոքա նմա նիզակակիցք և թիկունք զամենայն

* *Ոմանք.* Յամենայն ՚ի թագաւորութեան... արձակեալ լիցի ձրի։

* *Ի լուս՝.* Եւ առաջինք գրեցին. *համաձայն ոմանց ՚ի լուս՝:* Յօրինակին թուագրով այսպէս դնի. ՚ի ՈՌ զօրական. *ըստ որում ունի և այլ օրինակ մի. և միւս այլ՝* ՚ի Ձ հարիւր Ռ: *Իսկ երկու օրինակք համենատ միմեանց դնեն:* արքունի ՁՌ զօրական. և *Ոսկան.* քսան և վեց հազար։

* *Ոմանք.* Եւ համարել երկոսին ընդ մի օրէնս։

* *Ոսկան.* Եւ քաղաքն Պտղոմէաց՝: *Ոմանք.* Տուեալ լիցի նոցա ՚ի պարզս ՚ի նուէրս սրբոցն։

* *Ոմանք.* Յարքունի համարուէ։

* *Ոմանք.* Ձոր առնուին ՚ի մտիցն սրբութեան։

* *Ոմանք.* Դիմեսցէ ոք... որ պարտիցէ ոք։

* *Ոսկան.* Ամրոցաց Յրէաստանի։

* *Այլք.* Ոչինչ հաւատացին, և ո՛չ յանձն ա՛: *Ոմանք.* Արարեալ էր ընդ երուսաղէմ։

աւուրս կենաց իւրեանց*:

ԺԶ ⁴⁸Զօրաժողով լինէր արքայ, և կուտէր զօրս բազումս զա՛լ տալ պատերազմ ընդ Դեմետրեայ*։ ⁴⁹Եւ եկին բախեցան թագաւորքն երկոքին ընդ միմեանս. ՚ի փախուստ դառնայր գունդն Դեմետրեայ, յաղթական լինէր նոցա Աղէքսանդրոս. ⁵⁰և սաստկացուցանէր զճակատ մարտին ՚ի վերայ նոցա մինչև արևուն մտանելոյ: Անդ յայնմ աւուր անկանէր Դեմետր առաջի Աղէքսանդրի. հարկանէին վանէին և առ օրին զգործն վճարէին*։ ⁵¹Յրեշտակս արձակէր Աղէքսանդրոս յերկիրն Եգիպտացոց՝ զի դարձաւ տէրութիւն իմ յիս, առ Պտղոմէոս արքայ. պատգամ տայր ՚ի բանից ըստ օրինակիս ըստ այսմիկ. Այս ինչ յայտնի լիցի քեզ արքայդ Եգիպտացոց*, ⁵²զի դարձաւ տէրութիւն իմ յիս, և նստա՛յ ես յաթոռ հարց իմոց, ՚ի ձեռն առի զիշխանութիւն իմ, հարի վանեցի զԴեմետրիոս զօրօք իւրովք, և նուաճեցի՛ անդրէն զաշխարհն իմ*։ ⁵³ի մարտ պատերազմի հարի վանեցի զնա և զզօրս իւր, և նստա՛յ յաթոռ թագաւորութեան նորա: ⁵⁴Արդ ե՛կ հաստատեսցուք ՚ի միջի մերում զհաստատութիւն խաղաղութեան. տո՛ւր ինձ դու զդուստր քո կնութեան, զի արժանի՛ լիցի ինձ, և ես քեզ եղէց արժանի փեսայութեան*։ ⁵⁵Ետ պատասխանի արքայն Եգիպտացոց և ասէ. Օրն յաւուրս բարութեան յորում դարձա՛ր դու յերկիր նախնեաց քոց, և նստար դու յաթոռ արքայութեան հարց քոց*։ ⁵⁶Եւ ես պատրաստեալ եմ ՚ի կամս քաղցրութեան առնել զայս ամենայն որպէս գրեցե՛ր դու առ իս. բայց ե՛կ յանդիման լիցուք միմեանց ՚ի քաղաքն Պտղոմէացոց, զի տեսցուք զմիմեանս. և փեսայացուցից զքեզ ինձ՝ որպէս և ասացեր*։ ⁵⁷Եւ ե՛լ Պտղոմէոս արքայ յերկրէն Եգիպտացոց, ինքն Կղէոպատրաւ դստերքն հանդերձ ՚ի քաղաքն Պտղոմէացոց. յամին հարիւրորդի վաթսմերորդի երկրորդի: ⁵⁸Եւ յանդիման եղէն թագաւորքն երկոքեան միմեանց, և ետ զԿղէոպատրաւ զդուստր իւր. և արարին հարսանիս մեծաւ պատրաստութեամբ՝ մեծաւ փառօք ըստ օրէնս թագաւորաց ՚ի քաղաքին Պտղոմէացոց*։ ⁵⁹Ետ հրովարտակս Աղէքսանդրոս առ Յովնաթան, զի եկեսցէ նա առ նա: ⁶⁰Խաղա՛ց զնաց Յովնաթան մեծաւ փառօք ՚ի քաղաքն Պտղոմէացոց, և եկն յանդիման եղև թագաւորացն երկոցուն մեծապէս պատարագօք. և եգիտ շնորհս ՚ի նոցանէ: ⁶¹Եւ կուտեցան ՚ի վերայ նորա արք անօրէնք յերուսաղեմէ, ամբաստան լինել զնմանէ. և ո՛չինչ անսայր թագաւորն նոցա: ⁶²Յրաման ետ արքայ մերկացուցանել զՅովնաթան ՚ի հանդերձից իւրոց. և զգեցուցին նմա ծիրանիս, և ընդ ի՛ւր նստոյց զնա: ⁶³Եւ ասէ ցիշխանսն. Արդ երթիջի՛ք դուք ընդ նմա, և ընդ ամենայն քաղաքս քարո՛գ տաջիք կարդալ. զի մի ոք իշխեսցէ ամբաստան լինել վասն դորա. և մի ոք նեղեսցէ զդա մինչև բանի՛ւ միով: ⁶⁴Եւ եղև իբրև տեսանէին զփառս նորա, և լսէին զձայն բարբառոյ քարոզին, և

* Ոսկան. Ընդ հաստատութիւն Աղէքսանդրեայ զի: Այլք. Բանիցն ՚ի խաղաղութիւն:

* Ոսկան յաւելու. Արքայ Աղէքսանդրոս. և կուտէր:

* Այլք. Եւ սաստկացուցանէր զճակատամարտն ՚ի վերայ նոցա:

* Յոմանս պակասի. Եգիպտացոց, զի դարձաւ տէրութիւն իմ յիս, առ Պտղոմէոս: Ոմանք.

Պատգամ տայր բանից:

* Ոմանք. ՚ի ձեռին առի զիշխ՛:

* Յօրինակին պակասէր. Եւ ես քեզ եղէց արժա՛ն:

* Ոմանք. Յաւուրս բարութեամբ:

* Ոմանք. Լիցուք մեր միմեանց ՚ի քաղաքն Պտղոմէացոց:

* Ոմանք. Եւ ետ նմա զԿղէոմէոս: Ոսկան. Ըստ օրինաց թագաւորաց:

տեսանելին զի զգեցեալ էր ծիրանիս՝ փախչելին, թաքչելին, կորնչելին ամենայն չարախօսքն: ⁶⁵Եւ փառաւորեաց զնա թագաւորն ընդ առաջին բարեկամսն, և արար զնա սպարապետ կուսակալ*:

⁶⁶Եւ զնաց Յովնաթան յերուսաղէմ լի՝ ուրախութեամբ և խաղաղութեամբ: Ժէ ⁶⁷Դարձեալ յամին հարիւրորդի վաթսներորդի՝ հինգերորդի. եկն Դեմետրիոս որդի Դեմետրեայ՝ ի կողմանց Կրետացւոց՝ յերկիրն հարց իւրոց: ⁶⁸Տրտմեցաւ յոյժ Աղէքսանդրոս՝ դարձաւ անդրէն ի քաղաքն Անտիոքացւոց: ⁶⁹Եւ կացոյց անդ Դեմետրիոս՝ զԱպողոնիոս, որ էր յառաջ ի վերայ ստորին Ասորեստանեայց, և ժողովեաց նա զօրս բազումս. և եկն բանակեցաւ նա զՅամնեաւ: Առաքեաց նա առ Յովնաթան քահանայապետ, և ասէ*:

⁷⁰Դու միայն վերացեալ հպարտացեալ կան ի վերայ մեր, և ես եղէ ծաղր նախատանաց վասն քո. ընդէ՞ր դու նագիս ի վերայ մեր լերամբքո՞: ⁷¹Արդ աղէ՞ դու՝ եթէ յուսացեալ ես ի զօրսդ քո. եկ էջ դու ի դաշտ այսր առ մեզ զի յանդիման լիցուք միմեանց. զի գոն և աստ ընդ իս զօրք քաղաքաց*:

⁷²Արդ՝ հարց փորձեա՞ դու՝ տեսնո՞ւ իցեմ ես, կամ ո՛ւ այն իցեմ որ օգնականն իցեմ ձեզ: Եւ ասեն. Ո՛չ գոյ ձեզ ոտից կռիւ առաջի մեր. զի երկիթս անգամ ի պարտութիւն մատնեցան հարքն ձեր յերկիրն իւրեանց*:

⁷³Եւ արդ ո՛չ կարէք դուք զդէմ ունել զայդչափ այրուծիոյ, ի դաշտի ուր ո՛չ գուցէ թուփ թաքստի, և ո՛չ տեղի փախստեան. և ո՛չ վէմ ապաւինի. և ո՛չ խիճ ի ձեռն՝ ի քար ձգելոյ*:

⁷⁴Իբրև լուաւ Յովնաթան զպատգամն զայն զԱպողոնեայ՝ բարկացաւ ի միտս իւր, յո՛տն եկաց վաղվաղակի. ընտրէր զընտիր ընտիր զօրացն իբրև արս տասն հազար. և զայր ի դուրս յերուսաղէմէ. ընդ առաջ եղև նմա Շմաւոն եղբայր նորա, ձեռնտո՛ւ լինէր նմա յօգնականութիւն*:

⁷⁵Եւ եկին հասին ի քաղաքն Յոպպեացւոց. քաղաքացիքն զդուրս ընդդէմ դնէին, զի պահապանք ոստիկանութեամբ կային Ապողոնեայ ի վերայ նոցա, հարին՝ մարտ պատերազմի եղին ի վերայ քաղաքին:

⁷⁶Նոքա առ երկիւղի բացին զդրունսն. սոքա մտին և տիրեցին ի վերայ քաղաքին:

⁷⁷Եւ իբրև զայն լուաւ Ապողոնիոս, կազմեցաւ պատրաստեցաւ՝ ա՛ռ ընդ իւր երիս հազարս սպառազէնս, և այլ զօրս բազումս.

⁷⁸և զնաց ի կողմանս Ազովտայ, մօտ քերէր առ դաշտիւն, զի յուսացեալ էր ի զօրս իւր: Զկնի՛ լինէր նորա Յովնաթան տա՛լ մարտ պատերազմի: ⁷⁹Նա եթող հազար հեծեալ ի դարանի զհետ նորա*:

⁸⁰Իբրև ետես Յովնաթան եթէ դարան գործեցին զհետ նորա, եկին փակեցին պաշարեցին զամրո՛ց դարանակալացն, և շուրջ զնոքօք արկին պատնէշ, և կային պահէին յառաւօտէ մինչև յերեկոյ. որպէս հրաման ետ նոցա Յովնաթան: ⁸¹Վաստակեցին՝ տաժանեցան հեծեալքն, և լուծան: ⁸²Զգողուղի կալաւ Շմաւոն զնդիւն իւրով, և գայր ձորակին ի վերայ, և անկանէր զնոքօք՝ մինչդեռ նոքա կային լուծեալք և ձանձրացեալք, անկանէր

* *Յօրինակին պակասէր.* Եւ արար զնա սպարա՞:

* *Ոմանք.* Որ էր ի վերայ ստորին Ասորեաց... նա գյամենեաւ:

* *Ոսկան.* Ընդէր դու զինիս ի վերայ մեր:

* *Ոմանք.* Ի դաշտ այսօր առ մեզ:

* *Ոսկան.* Կամ ոչք այնք իցեմ, որք օգնականք: *Ի լուս.* Զի երկիցս անգամ. *համաձայն միոյ և եթ օրինակի ի բնաբանի:* Ուր այլ գրչագիրք միաբան համենատ մերունս ունին՝ երկիթս:

* *Ոմանք.* Ուրուք գուցէ թուփ թագ՝... և ո՛չ խիճ ձեռն ի քար ձգ՞:

* *Ոմանք.* Զեռնտու լինել նմա:

* *Ոմանք.* Ի դարանի զկնի նորա:

ի վերայ. զբազունս անդրէն ՚ի դարանի՝ անդ սատակէր*.⁸³ զբազունս հեծելագօրս ընդ երե՛սս դաշտին փախստեայ առաջի երեսաց իւրոց տաներ, հատուցանէր մինչև ՚ի կողմանս Զագովտայ. այնչափ շտապ տագնապի ՚ի վերայ հասուցանէր, զի փախստեայքն գնային ՚ի մեհեանն Դագովնայ ամրանալ անկանէին*.⁸⁴ Զասանէր Յովնաթան զօրօքն հանդերձ. պատէր զմեհեանն Դագոնայ և զքաղաքն Ազովտացոց, և որ շուրջ զնովաւ քաղաքքն էին առնոյր յաւարի. զմեհեանն Դագովնայ ամրացելովքն հանդերձ այրէր հրով:⁸⁵ Եւ եղեն անկեալքն ՚ի սրոյ՝ այրեցելովքն հանդերձ՝ իբրև արք ութ հարիւր հազար*.⁸⁶ Զուեաց խաղաց գնաց Յովնաթան անտի, և եկն բանակեցաւ ՚ի կողմանս Ասկաղոնեայ, եկին ելին ՚ի քաղաքէ անտի ընդ առաջ նմա փառօք*:⁸⁷ Եւ դարձաւ Յովնաթան յերուսաղէմ գնդաւն իւրով, և բազում աւարաւ. զի բերէր զկապուտ զկողոպուտ բազում զթշնամեաց*.⁸⁸ Եւ իբրև լուաւ զայս Աղէքսանդրոս, յաւել փառաւորել առաւել ևս զՅովնաթան.⁸⁹ և ետ տանել նմա շինգղ ոսկի զորօրինակ օրէն էր ունել եղբարց թագաւորին. և ետ նմա զԱկկարոն ամենայն սահմանօքն հանդերձ ՚ի ժառանգութիւն:

11

Գլուխ ԺԱ

ԺԸ ¹Եւ թագաւորն Եգիպտացոց զօրաժողով լինէր՝ կուտէր զօրս բազունս իբրև զաւագ առ ափն ծովուն, և նա՛ւս բազունս. և խնդրէր նա ունել զարքայութիւնն Աղէքսանդրեայ նենգութեամբ, և յաւելուլ յիւր արքայութիւնն:² Եւ ել ընդ կողմանս Ասորեստանեայց բանիւ խաղաղութեամբ. և նորա դուռն բանային նմա, և ընդ առաջ երթային նորա. քանզի պատուէր էր յԱղէքսանդրեայ արքայէ՝ քանզի անէր էր նորա*:³ Եւ իբրև մտանէր Պտղոմէոս ՚ի քաղաքն, յիւրոց զօրացն պահապան թողոյր իւրաքանչիւր քաղաքաց*:⁴ Իբրև եկին մերձեցան նորա ՚ի քաղաքն Ազովտացոց, ցուցին նմա զմեհեանն Դագովնայ այրեցեալ, զքաղաքն և որ շուրջ զիւրն էին այրեցեալ ՚ի ժամանակի պատերազմի, և զդիակունսն որ այրեցեալ էր՝ բերեալ կուտեալ էր կոյտս կոյտս ՚ի վերայ ճանապարհին*:⁵ Եւ պատմէին առաջի արքային որ զինչ միանգամ գործեաց Յովնաթան, և յաչա՛ց հանէին զնա. և թագաւորն լռի՛կ կայր*:⁶ Եւ եկն յանդիման եղև Յովնաթան թագաւորին ՚ի քաղաքն Յոպպէացոց փառօք մեծօք. ողջոյն ետուն միմեանց, և եղեն այն օր առ միմեանս*:⁷ Եւ գնաց Յովնաթան ընդ արքային մինչև ՚ի կողմանս գետոյն որ անուանեալ կոչի Ազատ: Եւ դարձաւ

* *Ոմանք.* Եւ գայր ձորձորակին ՚ի վերայ: *Բազունք.* Անդէն ՚ի դարանի:

* *Այլք.* Զասուցանէր մինչև ՚ի կող՛:

* *Յօրինակին թուագրով այսպէս դնի՝* Արք ՊՌ. *համաձայն այլոց երկուց օրինակաց: Եւ օրինակ մի՝* Ը հարիւր Ռ: *Իսկ երկու օրինակք համեմատք միմեանց ունին՝* ԸՌ: *Եւ Ոսկան.* արք ութ հարիւր:

* *Ոմանք.* Ընդ առաջ նմա մեծաւ փառօք. *կամ՝* փառօք մեծօք:

* *Ոմանք.* Զկապուտ կողոպուտ բազում թշնա՛:

* *Ոմանք.* Ընդ առաջ երթային նմա:

* *Ոմանք.* Պահապանս թողոյր յիւրա՛:

* *Ոմանք.* Բերեալ կուտէր կոյտս կոյտս:

* *Ոմանք.* Զոր ինչ միանգամ... և թագաւորն լռի՛ կայր:

* *Ոմանք.* Փառօք մեծաւ:

Յովնաթան անդրէն յերուսաղէմ: ⁸Իսկ արքայ Պտղոմէոս տիրեաց ՚ի վերայ քաղաքացն ծովեզերեայց՝ մինչև ՚ի քաղաքն Սելևկացւոց. և խորհէր ՚ի վերայ Աղէքսանդրեայ խորհուրդ չարութեան*։ ⁹Եւ արձակեաց նա հրովարտակս առ Դեմետր արքայ և ասէ. Ե՛կ ուխտ դիցուք առ միմեանս՝ և դաշինս կռեսցուք, և տաց քեզ զդուստր իմ զոր ունի Աղէքսանդրոս արքայ, և տիրեսցես դու ՚ի վերայ արքայութեան հօր քոյ*։ ¹⁰Գի զղջացեալ եմ թէ ընդէ՞ր ետու ես զդուստր իմ նմա կնութեան. զի խորհեցաւ նա ՚ի վերայ իմ մահ*։ ¹¹Եւ այսպէս յաչաց հանէր զնա, զի ի՛ւր ական եղեալ էր տէրութեան նորա: ¹²Եւ եհան զդուստրն, և ետ Դեմետրի. և խտորեցաւ յԱղէքսանդրէ, և յայտնեաց զթշնամութիւն իւր: Եւ եմուտ Պտղոմէոս և տիրեաց նա ՚ի վերայ քաղաքացն, և Սելևկեայ ծովեզերեայց: Եւ խորհէր չարութիւն ՚ի վերայ Աղէքսանդրոս*։ ¹³Եկն եմուտ ՚ի քաղաքն Անտիոքացւոց. և եղաւ զթագ զԱսիացւոցն. և պսակեցաւ կրկին թագաւն Ասիացւոց՝ և թագաւն Եգիպտացւոց: ¹⁴Բայց Աղէքսանդրոս արքայ էր ՚ի կողմանս Կիւլիկեցւոց ՚ի ժամանակին յայնմիկ. զի ապստամբէին մարդիկն ՚ի նմանէ*։ ¹⁵Եւ լուաւ Աղէքսանդրոս՝ դիմեաց զալ ՚ի վերայ նորա մարտիւ պատերազմաւ: Եւ ել Պտղոմէոս ընդ առաջ նորա զօրօք բազմօք, և դարձոյց զնա ՚ի պարտութիւն: ¹⁶Եւ փախստեայ լինէր Աղէքսանդրոս ՚ի կողմանս Արաբացւոց. զի անդ թաքիցէ և ապրիցէ ՚ի նմանէ: Եւ արքայ Պտղոմէոս բարձրացաւ: ¹⁷Եւ եկն Ջաբել Արուայիկ, եհան զգլուխն Աղէքսանդրեայ, և ետ տանել Պտղոմոսի արքայի*։ ¹⁸Եւ Պտղոմէոս մեռաւ յաւուրն երրորդի, և որ էին զամբօքն սատակեցան յամրականացն:

ԺԹ ¹⁹Եւ թագաւորեաց Դեմետր, յամին հարիւրորդի վաթսներորդի եւթներորդի: ²⁰Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողովեաց Յովնաթան զօրս ՚ի Յրէաստան, զալ մահտ դնել զբերդաւն որ յերուսաղէմ էր. կազմեցին զնովաւ շուրջ մենքենայս բազումս: ²¹Ապա գնացին ոմանք որ թշնամի՝ էին ազգին Յրէից, արք անօրէնք պատմել թագաւորին, եթէ Յովնաթան մենքենայս կազմեալ շուրջ զբերդաւն պատեալ՝ յառնուլ պատրաստեալ*։ ²²Իբրև լուաւ՝ բարկացաւ յոյժ. չուեաց և եկն ՚ի Պտղոմէոս, ետ հրովարտակս առ Յովնաթան, զի մի՛ ևս զբերդն շուրջ պաշարեալ պահիցէ. այլ ինքն յարուցեալ վաղվաղակի առ նա հասանիցէ՝ ՚ի քաղաքն Պտղոմէացւոց զի անդ յանդիման լիցին միմեանց*։ ²³Իբրև լուաւ Յովնաթան՝ և ս քան զևս պնդել հրամայեաց զպահ բերդին. և ինքն ա՛ռ արս ընտիրս իմաստունս ՚ի ծերակոյտ ժողովրդենէ անտի, և ՚ի քահանայից անտի. ²⁴հանդերձեցաւ պատարագօք, ոսկուվ և արծաթով, և եղ զանձն ՚ի մահ, զնաց յանդիման լինել թագաւորին ՚ի քաղաքն Պտղոմէացւոց: Եւ եգիտ նա շնորհս ՚ի նմանէ*։ ²⁵Թէպէտ և բազումք էին յանօրինաց անտի ամբաստան զնմանէ: ²⁶Եւ մեծարեաց զնա թագաւորն որպէս առաջինքն իւր. և

* *Ոմանք.* Ծովեզերեաց՝ մինչ ՚ի քաղաքն:

* *Այլք.* Եւ արձակեաց նա հրեշտակս առ... ուխտ դիցուք ընդ միմեանս:

* *Ոմանք.* Ձի զղջացեալ եմ ես:

* *Ոմանք.* Եւ եկն եմուտ Պտղոմէոս:

* *Ոմանք.* Ի կողմանս Կիւլիկեացւոց:

* *Ոմանք.* Տանել Պտղոմէոսի. *կամ* Պտղոմէի ար:

* *Ոսկան.* Յառնուլ պատրաստեալ է:

* *Ոմանք.* Չուեաց և եկն Պտղոմէոս: *Եւ ոմանք.* Եկն ՚ի Պտղոմեցիս... ՚ի Պտղոմէացւոց քաղաքն:

* *Ոմանք.* Եւ ետ զանձն ՚ի մահ:

բարձրացոյց զնա յոյժ առաջի ամենայն բարեկամաց իւրոց. ²⁷և կարգեաց նմա զիշխանութիւն քահանայապետութեանն. և որ ինչ ա՛յլ ինչ պատիւ ունէր յառաջագոյն քան զնա: Կացոյց կարգեաց զնա ընդ առաջին բարեկամա՛ն: ²⁸Եւ աղաչեաց Յովնաթան զարքայն, զի ապահարկ արասցէ զՅրէաստան, և զերեսին կուսակալութիւնսն, և զՇամրին: Եւ յանձն առ նմա տա՛լ նմա երեք հարիւր քանքար՝: ²⁹Եւ հաճո՛յ թուեցաւ թագաւորին. և վասն ա՛յսր ամենայնի հրամա՛ն ետ հրովարտակս տալ առ Յովնաթան օրինակաւս այսուիկ: ³⁰Արքայ՝ Դեմետր առ Յովնաթան եղբայր՝ ողջո՛յն: ³¹Զպատճէն հրովարտակիս այսորիկ գրեցաք մեք առ Ղասթենէս եղբայր մեր, նովին օրինակաւ և առ ձեզ գրեցաք զի գիտասաջիք՝: ³²Արքայ Դեմետր՝ առ Ղասթենէս հայր՝ ողջոյն: ³³Ազգին Յրէից օգնական նիզակակից՝ ուխտակալ՝ բարեկամաց մերոց, իրաւունս համարեցաք դիւրել բարի՛ առնել փոխանակ արդարութեան միամտութեամբ զոր պահեցին նոքա առ մեզ՝: ³⁴Կարգեցաք մեք զսահմանս Յրէաստանի, և զերիս օրէնսն՝ Ափարիմ, և Ղուդա, և Ռաթամին, յաւելցին ՚ի Յրէաստանի ՚ի կողմանս Շամրնի. և ամենայն որ ինչ հասի օրէն գայցէ ՚ի նոցանէ՝ լիցի՛ այն պաշտօնէից յերուսաղէմ. փոխանակ արքունական մտիցն որ գայր ՚ի նոցանէ ա՛ն յամէ յարմտեաց երկրին, և ՚ի բերոյ ծառոցն պտղոյն՝: ³⁵Եւ ա՛յլ որ ինչ տարագք արքունի, կամ տասանորոք, կամ մաքս, կամ ինչ որինչ մուտք յարքունիս իցեն. կամ բաժ աղտից, կամ տարագ պսակաց՝, ³⁶զայս ամենայն թողցուք ՚ի նոսա. և մի մի ինչ մի՛ յայսցանէ անարգեալ գտցի մինչև յաւիտեանս ժամանակաց՝: ³⁷Արդ ձեզ փո՛յթ լիցի առնել պատճէն մի հրովարտակիդ, և տալ առ Յովնաթան՝ զի դիցի ՚ի գանձն սրբութեան՝ ՚ի դիպան վայր ՚ի նշանաւոր տեղւոջ՝: ³⁸Իբրև ետես Դեմետր արքայ, եթէ հնազանդեցաւ ամենայն երկիր առաջի նորա. և ո՛չինչ էր յաշխարհի որ ինչ ընդդէմ դառնայր հրամանաց նորա, հրամա՛ն ետ արձակել զգօրսն յիւրաքանչիւր տեղիս. բա՛ց ՚ի զօրաց յազգաց հեռաւորաց, և ՚ի մարզիկ գնդէ կղզեաց կղզեաց ոք:

Ի՛ եւ ՚ի թշնամութիւն դարձան ամենայն զօրք ազգաց ընդ նմա՛: ³⁹Տրիփոն անուն էր Աղէքսանդրեան տոհմին, իբրև ետես եթէ զօրքն ամենայն տրտո՛ւնջ են զԴեմետրեայ՝ գնա՛ց նա առ Իմադկուս Արուայիկ, որ սնուցանէր զԱնտիոք զպատանեակն Աղէքսանդրի՛: ⁴⁰Եւ առ նմա՛ կանխէր՝ զի տացէ նա ցնա՛ զմանուկն, և աճցէ թագաւորեցուցէ ՚ի տեղի հօր իւրոյ. և պատմեաց նմա որ ինչ միանգամ զործս զործեաց Դեմետր, և զամենայն թշնամութիւնս որ միանգամ գոռային զօրքն. և ա՛նդ լինէր առ նմա աւուրս բազումս՝: ⁴¹Առաքեա՛ց Յովնաթան առ Դեմետր արքայ, զի հրամա՛ն տացէ իջուցանել զգօրսն որ ՚ի

* *Ոմանք.* Ունէր յառաջ քան զնա:

* *Ոսկան.* Եւ յանձն էառ նա տալ:

* *Յօրինակին.* Առ Չասթենէս եղ՛:

* *Ոմանք.* Արդարութեան միամտութեան:

* *Ոսկան.* Ի՛ կողմանցն Շամրնի... հասի օրէն գայր: *Ոմանք.* Եւ ՚ի բերոյ ծառոցն պտղոյն:

* *Ոմանք.* Կամ որ ինչ մուտք յարքունիս:

* *Ոմանք.* Ի՛ նոսա. և մի մի ինչ յայսցանէ:

* *Ոմանք.* Տալ ցՅովնաթան... ՚ի դիպան վայրի: *Ուր Ոսկան.* Ի՛ Յօնաթան, զի դիցէ ՚ի գանձն:

* *Ոմանք.* Որ ընդդէմ դառ՛... բայց ՚ի զօրաց ազգաց:

* *Ոմանք.* Տրիփոն ոմն անուն Աղէքսան՛: *Այլք.* Սնուցանէր զԱնտիոքոս:

* *Յօրինակին.* Զի տացէ նմա ցնա: *Ոմանք.* Զի աճցէ թագաւորեցուցէ:

միջնաբերդի անդ էին, և որ յամուրս անդ էին. զի էին նոքա թշնամութեամբ ընդ Իսրայէլի: ⁴²Եւ առաքեաց Դեմետրիոս առ Յովնաթան՝ և ասէ. Ո՛չ զայդ միայն արարից քեզ և ազգի բուն, այլ փառօք փառաւորեցից զազգ քո՝ եթէ ժամանակ միայն գտից՝: ⁴³Արդ դու բարուք արասցես, առաքեսցես առ իս գունդ մի՝ ի թիկունս, զի զօրքս աւասիկ յինէն յետս կացին: ⁴⁴Իբրև լուաւ զայն Յովնաթան, վաղվաղակի գունդ մի յերից հազարաց արս ընտիրս սպառազէնս արծակեաց ի թիկունս թագաւորին՝ ի քաղաքն Անտիոքացւոց. և ուրախ եղև թագաւորն ի հասանել նոցա ի ձեռս նորա: ⁴⁵Իբրև զայն լուան քաղաքացիքն. ժողովեցան յիւրաքանչիւր տեղւոջէ ի մէջ քաղաքին՝ իբրև բերք երկոտասան: Այն ինչ յարծակեալ էին ի վերայ թագաւորին, կամէին անդէն սպանանել. ⁴⁶նա խոյս ետ ի նոցանէ. և նոքա առին վաղվաղակի զկիրճսն ամենայն գնացից քաղաքին. մարտ եղին և սկսան մաքառել: ⁴⁷Ա՛զդ եղև Իսրայէլեան գնդին. կուտեցան ի վերայ ապարանից թագաւորին, ձայն ետուն միմեանց, և սփռեցան ընդ ամենայն քաղաքն. ⁴⁸իբրև հարին՝ սպանին կոտորեցին արս իբրև տասն հազար. հրձիգ արարին զամենայն փայտակերտն զապարանից նորա. և զինչս և զստացուածս նոցա առին յաւարի. արկին յիւրեանս զթագաւորն, և ապրեցուցին զնա ի ձեռաց նոցա՝: ⁴⁹Իբրև ետես մնացեալ գունդ քաղաքին, եթէ զօրացաւ գունդն Իսրայէլեան ի վերայ նոցա, և կամակար յաղթեցին նոցա. լքան նուաղեցան, և տկարացան ի խորհուրդս իւրեանց. ի ձայն բարբառոյ ողորանաց սկսան աղաղակել՝ առ թագաւորն՝ և ասեն. ⁵⁰Ձե՛ռն տուր մեզ, և դադարեսցէ գունդս մոլեկան ի կոտորածէ քաղաքիս: ⁵¹Ձայն բան ասէին, և զիւրաքանչիւր զէնս առ ոտս պատերազմողացն ընկենուին: Եւ բարձրանայր փառօք գունդն Իսրայէլեան առաջի թագաւորին, և առաջի ամենայն զօրաց նորա. և դառնային անդրէն յերուսաղէմ անուամբ մեծաւ և բազում աւարաւ: ⁵²Եւ նստաւ Դեմետր արքայ յաթոռ տէրութեան իւրոյ, և սարսեաց երկիրն ամենայն առաջի նորա՝: ⁵³Եւ ստեաց Իսրայէլացւոցն յամենայնի որ ինչ խոստացաւ նա նոցա, և ամենևին օտարացաւ յաչս Յովնաթանու. և ո՛չ հատոյց նմա ըստ միամտութեան վաստակոց նորա:

Իւ ⁵⁴Յետ այսորիկ դարձաւ Տրիփոն, և պատանեակն Անտիոքոս ընդ նմա, թագաւորեալ և նստեալ յաթոռ տէրութեան: ⁵⁵Եւ առ նա՛ ժողովէին զօրքն ամենայն որ ցրուեալ էր ի Դեմետրեայ: Եւ ետուն մարտ պատերազմի ընդ Դեմետրեայ, և փախուցին զնա վատթարեալ: ⁵⁶Եւ եկն ա՛ռ զգագանսն Տրիփոն. և կալաւ զքաղաքն Անտիոքացւոց:

Իբ ⁵⁷Հրաման ետ հրովարտակ առնել մանուկն Անտիոքոս՝ առ Յովնաթան՝ և ասէ. Կացուցեալ իմ զքեզ ի գործ քահանայապետութեան, և հաստատեալ իմ զքեզ ի վերայ չորիցն օրինաց, և կարգեցաք զքեզ ընդ բուն և ընդ առաջին բարեկամս մեր: ⁵⁸Եւ ե՛տ տանել նմա նուազս ոսկիս, և սպաս տաճարին: Եւ ետ նմա իշխանութիւն ընպէլ ոսկի նուազօք, արկանել ծիրանիս, և իշխել կրել նշան շգեղ, ըստ նշանի թագաւորաց: ⁵⁹Եւ զՇմաւոն զեղբայր նորա հրաման ետ իշխան զօրավար կացուցանել ի կողմանցն Ծուրայ մինչև ի սահմանս

* *Ոսկան.* ժամանակ միայն գտցի:

* *Ոմանք.* Արկին իւրեանց զթագաւորն:

* *Յօրինակին.* Եւ դատեսցին անդրէն յերուսաղէմ անուամբ մե՛:

* *Յօրինակին կրկնի.* Երկիրն ամենայն ամենայն:

* *Բազումք.* Որ ցրուեալ էր Դեմետրեայ: *Ուր Ոսկան.* զոր ցրուեալ էր:

* *Ոմանք.* Կացուցեալ եմ զքեզ... և հաստատեալ եմ:

Եգիպտացւոց: ⁶⁰Եւ ել Յովնաթան շրջել յայնկոյս Յորդանան գետոյ՝ և ընդ քաղաքսն, և ժողովեցան առ նա ամենայն զօրք Ասորւոց ՚ի թիկունս: Եւ եկն նա ՚ի կողմանս Ասկաղոնեայ. և ելին նմա քաղաքացիքն ընդ առաջ մեծա՛ւ գովութեամբ: ⁶¹Անտի գնա՛ց եկն ՚ի Գազայ, և Գազացիքն փակեցին նմա զդրունսն. նստա՛ւ շուրջ զնոքօք, և հրձիգ արար զաւանս նոցա. և զինչս և զստացուածս նոցա վարեցին ՚ի գերութեան*։ ⁶²Ապա եկին Գազացիքն առաջի կացին՝ ձեռն ետուն նմա, և մատուցին զորդիս իշխանացն իւրեանց ՚ի պատանդութիւն, և նա ա՛ռ ետ տանել զնոսա յերուսաղէմ. և ինքն անց ընդ երկիրն ՚ի կողմանս Դամասկեայ: ⁶³Եւ լուաւ Յովնաթան եթէ հասին իշխանք Դեմետրեայ ՚ի Կադէս ՚ի կողմանս Գալիլեացւոց զօրօք բազմօք. իբրև կամէին իմն թէ փոխեսցուք զնա ՚ի զործոյ անտի. ⁶⁴նա եթող զեղբայր իւր զՇմաւոն յերկրին վերայ. և ինքն գնա՛ց ընդ առաջ նոցա: ⁶⁵Եւ Շմաւոն հասանէր պատերազմաւ ՚ի վերայ Բեթսովրայ, և պաշարէր զնա աւուրս բազումս, և յարգե՛լ արկանէր զնոսա: ⁶⁶Աղաչե՛լ սկսան նոքա զնա, զի դաշի՛նս արասցէ ընդ նոսա. նա ետ ձեռն նոցա, և եհան զնոսա անտի. և կացո՛յց անդ նա պահապանս քաղաքին: ⁶⁷Եւ Յովնաթան զօրօքն իւրովք եկն բանակեցաւ ՚ի վերայ ջուրցն Գեննեսարեթայ, կանխեաց նա ընդ առաւօտն ՚ի դաշտն Նասովրայ*։ ⁶⁸և գունդ մի այլազգեաց ընդ առաջ եղև ՚ի դաշտի անդ: Եւ դարան զործեցին ՚ի վերայ նորա. կէսքն ՚ի դարան մտին, կէսքն ՚ի դիմի՛ հարան նմա. ⁶⁹Եւ յարեան դարանակալքն յիւրաքանչիւր տեղեաց՝ զհետ եղեն նոցա, և զՅովնաթան ՚ի մէջ արկին զօրօքն հանդերձ*։ ⁷⁰Եւ արարին զզօրսն Յովնաթանու փախստեայս. և ո՛չ մնաց առ նմա, բայց միայն Մատաթի Բեսաղոմեան, և Յուդա Սկափեան՝ զօրավարք զօրացն*։ ⁷¹Ձեռն զօճեօք արկանէր Յովնաթան, զպատմուճանն պատառէր, հող ՚ի գլուխ լինէր: ⁷²Ի վերայ յարձակէր բարկութեամբ մեծաւ, և ՚ի պարտութիւն մատնէր զնոսա*։ ⁷³Յայնմ ժամանակի փախստեայքն ամենեքեան անդրէն ՚ի նոյն դառնային, հալածական զթշնամիսն առնէին առաջի իւրեանց, մինչև ՚ի բանակն իւրեանց ՚ի Կադէս. և եկին անկան զբանակաւն այլազգեաց*։ ⁷⁴հարին կոտորեցին յաւուր յայնմիկ իբրև երեք հազար հեծեալ սպառազէնս: Եւ դարձաւ Յովնաթան յերուսաղէմ*։

12

Գլուխ ԺԲ

ԻԳ ¹Իբրև ետես Յովնաթան թէ ժամանակն աջողեալ է նմա, կոչեաց արս ընտիրս, առաքեա՛ց զնոսա ՚ի քաղաք Յռոմայեցւոց, երթալ նորոգել զուխտ հաշտութեան ընդ նոսա*։ ²Եւ ընդ Սպարտացիս, և ընդ այլ տեղիս տեղիս արար

* Ոսկան. նմա զդրունսն Գազայ: Ոմանք. Եւ զինչս ևս և զստաց՝:

* Ոմանք. Ջուրցն Գեննեսարեթ... ՚ի դաշտն Նասսովրայ. կամ՝ Ասովրայ:

* Յօրինակին ՚ի բնաբանի դնի. Ձիետ են նոցա. այլ ՚ի լուս՝. ուղղագրի՝ եղեն. համաձայն այլոց:

* Ոմանք. Եւ Յուդաս Կափեան:

* Ոմանք. Բարկութեամբ բազմաւ, և ՚ի պար՝:

* Բազումք. Մինչ ՚ի բանակն իւրեանց:

* Ոմանք. Իբրև երիս հազարս հեծեալս սպա՞:

* Ոմանք. ժամանակն յաջողեալ էր նմա... ՚ի քաղաքն Յռո՞:

հրովարտակա ըստ նմին օրինակի*։ ³Գնացին հրեշտակքն, և եկին հասին ՚ի քաղաքն Զոռնայեցւոց. և յանդիման եղեն նոցա ՚ի տաճարին խորհրդոց, և ասեն. Յովնաթան քահանայապետ՝ և ազգն Զրէից առաքեցին զմեզ առ ձեզ նորոգել զհաշտութիւնն առաջին. լինել նիզակակից և թիկունք ըստ օրինակին առաջնուն։ ⁴Յանձն առին՝ հաճեցան. և ետուն հրովարտակա ՚ի տեղիս տեղիս. զի յուղարկեսցին նոքա խաղաղութեամբ յերկիրն Զրէաստանի։ ⁵Եւ այս պատճեն հրովարտակացն զոր գրեաց Յովնաթան առ աշխարհակալս, իշխանս, առ կուսակալս նոցա*։ ⁶Յովնաթան քահանայապետ, ծերակոյտ ժողովրդեանք հանդերձ, և քահանայք, գունդ և սպահ ազգին Զրէաստանեայց. առ Սպարտացիս եղբարս մեր՝ ողջոյն*։ ⁷Քանզի յառաջ իսկ առաքեցան հրովարտակք առ Ոնիա քահանայապետ՝ ՚ի Դարեհէ արքայէ ՚ի թագաւորտ ձերմէ, եթէ նիզակակիցք եղբարք և բարեկամք մեր էք, որպէս մեզ պատճենքս ցուցանեն*։ ⁸Ընկալաւ Ոնիա զայրն որ առաքեցաւ մեծաւ փառօք, և ա՛ռ ՚ի ձեռն հրովարտակ մի՝ ուր նշանակէր զմեզ նիզակակիցս և թիկունս իւր, և սիրելի բարեկամս*։ ⁹Արդ մեք՝ քանզի լի՛ և ո՛չ կարօտեալք մխիթարեցաք ձերովք հրովարտակօքս*, ¹⁰առաքել նորոգել միւսանգամ զնոյն հաւանութիւն հարազատութեան, զի մի՛ օտարացուք մեք ՚ի ձեռնք. զի բազում են այն ժամանակք որ անցին ՚ի վերայ հին հաւանութեանցն զոր դուքն առ մեզ արարէք*։ ¹¹Արդ մեք անպակաս յամենայն ժամանակի ՚ի տօնս տարեկանաց՝ և յայլ աւուրս արժանաւորս՝ յիշենք մեք զձեզ, ՚ի վերայ պատարագացն որ մատուցանենք. յիշենք յաղօթս մեր որպէս արժան և օրէն է յիշել զեղբարս մեր*։ ¹²Եւ ցնծամք մեք ընդ փառս ձեր։ ¹³Արդ զմեք պատեցան աւասիկ բազում նեղութիւնք պատերազմաց. մարտ եղին աւասիկ թագաւորք որ շուրջ զմեք են*։ ¹⁴և մեք ո՛չինչ կամեցաք ցարդ նեղել զձեզ. և ո՛չ զձեզ, և ո՛չ որ շուրջ զձեզք բարեկամք նիզակակիցք մեր են յայս մարտս պատերազմի*։ ¹⁵Ձի գոյր մեզ օգնութիւն յերկնից, և ապրեցաք մեք ՚ի ձեռաց թշնամեաց մերոց. և ՚ի պարտութիւն մատնեցան թշնամիք մեր առաջի մեր։ ¹⁶Արդ ընտրեցաք մեք զՆումենիոս զԱնտիոքեան, և զԱնտիպատրոս Յասովնեանց, և առաքեցաք առ Զոռնայեցիս զի նորոգեսցեն զառաջին հաշտութիւն հաւանութեանն, թիկունս բարեկամութիւն եղբայրութեան*։ ¹⁷Տուա՛ք նոցա պատուէր անցանել առ ձեզ, տա՛լ նոցա ձեզ ողջոյն. և մատուցանել թուղթս վասն նորոգման սիրոյ եղբայրութեան մերոյ*։ ¹⁸Արդ բարուք արասցէք հրաման տալ պատասխանի առնել մեզ*։ ¹⁹Եւ այս պատճեն հրովարտակացն է որ արարին անդրէն առ Ոնիա

* *Ոմանք.* Եւ ընդ Սպարտեցիս։

* *Ոմանք.* Զրովարտակացն է, զոր... և առ կուսակալս։

* *Այլք.* Գունդ և սպայ. *կամ՝* սպա։

* *Ի բազումս պակասի.* Առաքեցան *հրովարտակք* առ Ոնիա... եղբարք *և բարեկամք* մեր։

* *Ոմանք.* Եւ ա՛ռ ՚ի ձեռն հրովարտակսն, ուր։

* *Ոմանք.* Այլ մեք՝ քանզի լի՛ և ո՛չ։

* *Ոմանք.* Առաքեցաք նորոգել միւ՛ր։

* *Ոսկան.* Պատարագացն զորս մատու՛ր։

* *Ոմանք.* Որ շուրջ զմեք էին։

* *Այլք.* Ձձեզ. ո՛չ զձեզ և ո՛չ որ։

* *Ոմանք.* Ի թիկունս բարեկամութեան եղ՛։

* *Ոմանք.* Վասն նորոգութեան սիրոյ։

* *Երկու օրինակք համեմատք միմեանց.* Բարուք արարէք. *իսկ Ոսկան.* բարուք առնէք։ առնիցէք։

քահանայ*։ ²⁰Արքայ՝ Սպարտացուց Ոնիա մեծ քահանայապետի ողջոյն*։
²¹Գտան հին մատեանք վասն Սպարտիացուց և Զրեաստանեայց, զի են եղբարք
հաւասարք՝ և են յԱբրահամ։ ²²Արդ յորմէ հետէ զայս այսպէս գիտացաք.
բարուք արասցէք հանապազորդ գրե՛լ առ մեզ, վասն խաղաղութեան և ողջունի
ծեր առ մեզ*։ ²³և մեր առ ձեզ։ Ինչք և ստացուածք և ամենայն անասուն մեր՝
ծեր է, որպէս և ձերն մեր։ Արդ տանք զայս պատուէր, զի հանապազ պահեսցիք
զայս առ մեզ*։

Ի Դ ²⁴Եւ լուաւ Յովնաթան եթէ դարձան իշխանք Դեմետրեայ զօրօք բազմօք
քան զառաջինն, գա՛լ ՚ի վերայ նորա ՚ի մարտ պատերազմի։ ²⁵Չո՛ւ արար
յերուսաղեմէ, խաղա՛ց ՚ի վերայ նոցա, եհաս ՚ի դիմի, հարա՛ւ ՚ի կողմանցն
Ամաթիտայ վայրաց. քանզի չէտ թոյլ նմա հասանել յուզե՛լ գերկիր իւր*։
²⁶Արձակեաց նա դէտ ՚ի բանակ նոցա, և պատմէին նմա այսպէս՝ եթէ
պատրաստեալ են գիշերայն անկանել ՚ի վերայ մեր։ ²⁷Եւ իբրև արևն ՚ի մուտս
եղև, հրաման ետ Յովնաթան զօրացն զի վառեալք՝ արթունք՝ պատրաստեալք՝
միագունդ կայցեն մինչև յառաւօտ, ՚ի մարտ պատերազմի, պարեկապանս
հանին, շուրջ զիւրեամբք փակեցին. և ինքեանք կային պատրաստեալք ՚ի
մարտ պատերազմի*։ ²⁸Իբրև լուան թշնամիքն՝ եթէ գիշերայն պատրաստեցան
՚ի պատերազմ, երկեան՝ զարհուրեցան՝ բեկան ՚ի սիրտս իւրեանց. խիտ առ
խիտ խարոյկս վառեցին ընդ ամենայն տեղիս, և ինքեանք գիշերայն
փախստեայք մեկնեցան։ ²⁹Եւ ո՛չ գիտաց Յովնաթան զօրօքն հանդերձ
զփախուստն նոցա. զի հայեր ընդ խարոյկսն բորբոքեալս, համարէր թէ առ
ետե՛ղ իցեն։ ³⁰Ապա թէպէտ և զհետ եղև նոցա՝ չկարա՛ց հասանել, զի անցեալ էր
նոցա ընդ գետն Ազատ*։

Ի Ե ³¹Ապա դարձա՛ւ ՚ի նոցանէ Յովնաթան ՚ի վերայ Արաբացուցն, որ
անուանեալ կոչին Ջարդեցիք, հարկանէր՝ սատակեր՝ վաներ զբանակս նոցա, և
առնոյր զինչս և զստացուածս նոցա յաւարի։ ³²Եւ դառնայր ՚ի կողմանս
Դամասկեայ։ ³³Եւ հասանէր յԱսկաղոն, և առնոյր զամուրսն ամենայն որ շուրջ
գնովաւ էին, և դառնայր ՚ի կողմանսն Յոպպայեցուց. արագէր զզօրն ՚ի ներքս
մուծանէր*։ ³⁴Գի լուաւ թէ ամրականքն ձեռն տային ՚ի Դեմետր, պահապանս
ոստիկանս ՚ի վերայ կացուցանէր։ ³⁵Եւ դարձաւ Յովնաթան՝ զօրընտիր լինէր,
զծերակոյտն ՚ի խորհուրդն կոչէր. կամէր զամուրսն շինե՛լ Զրեաստանի*, ³⁶և
բարձրացուցանել ՚ի բարձրութիւն ՚ի մէջ միջնաբերդին. և քաղաքն ՚ի
բարձրութիւն մեծ, անջրպետե՛լ կամէր ընդ նոսա և ընդ քաղաքն, զի առանձինն
լիցին. զի մի՛ տայցեն և մի՛ առնուցուն, մի՛ զմիցեն և մի՛ վաճառիցեն*։ ³⁷Եւ
ժողովեցան շինել զքաղաքն. և ինչ որ անկեալ էր ՚ի պարսպացն յուղխաջուր

* Ոմանք. Եւ այս պատճէնք հրովարտակացն և որ արա՛ւ։ Ուր Ոսկան. զոր արարին։

* Ոմանք. Արքայ Սպարտիացուց առ Ոնիա մեծ քահանայապետ։

* Երկու օրինակք համեմատք միմեանց. Բարուք արարէք. իսկ Ոսկան. բարուք առնէք։
առնիցէք։

* Ոմանք. Պահեսցիք զայս առ ձեզ։

* Ոմանք. Ի վերայ նորա... ՚ի կողմանս Նամաթիտայ. կամ՝ Զամաթիտայ։

* Ոմանք. Մի գունդ կայցեն մինչ ՚ի յառաւօտ։

* Բազումք. Քանզի անցեալ էր նոցա։

* Ոսկան. Ի կողմանսն Յոպպայեցուց։ Ոմանք. Ջօր ՚ի ներքս մուծա՛ւ։

* Ոսկան. Եւ դարձեալ Յովնաթան... ՚ի խորհուրդ կո՛ւ։

* Ոմանք. Եւ զքաղաք ՚ի բարձ՛. կամ՝ և քաղաքին ՚ի բարձ՛։

հեղեղատաց ՚ի ծնակին կողմանց անտի, որ անուանեալ կոչի Փակնթա: ³⁸Եւ Շնաւոն սկսաւ շինել զԱղեղա յԱփիղա. ամրացոյց զնա, և դրունս եղ նմա, և նրգօք հաստատեաց զնա*:

ԻՋ ³⁹Եւ խնդրէր Տրիփոն թագաւորել կողմանցն Ասիացոց, և դնել թագ, և ձգել զձեռն ՚ի վերայ արքային Անտիոքացոց: ⁴⁰Բայց երկեալ զանգիտեաց, թէ գուցէ յանձն ո՛չ առնուցու Յովնաթան, և խաղայցէ ՚ի վերայ նորա մարտի պատերազմաւ. և խնդրէր նա հնարս ըմբռնել զնա՝ և կորուսանել. ⁴¹խաղաց զնաց՝ և եկն ՚ի կողմանս Բեթսանայ: Եւ ել ընդ առաջ նորա Յովնաթան քառասուն հազարաւ ընտիր վառելով պատրաստեալ պատերազմի, և եկն եհաս նա ՚ի Բեթսա*: ⁴²Եւ ետես Տրիփոն եթէ հասեալ է Յովնաթան զօրօք բազմօք, և զանգիտեաց ձգել զձեռս իւր ՚ի նա*. ⁴³ապա ա՛ռ ընկալաւ զնա փառաւորութեամբ, և յանդիմանեաց զնա ամենայն բարեկամացն իւրոց. և ետ նմա պարզևս, և հրաման ետ զօրացն իւրոց զի հնազանդ լիցին նմա: ⁴⁴Խօսել սկսաւ ընդ Յովնաթանու՝ և ասէ. Ընդէ՞ր զայդչափ զօրս կոտորեցեր, զի ո՛չինչ գոյր ՚ի միջի գործ պատերազմի*: ⁴⁵Արդ արձակեա՛ դու զզօրսդ յիւրաքանչիւր տեղիս, և ընտրեա՛ դու ընդ քեզ արս սակաւս որ ընդ քե՛զ հանապազ շրջիցին, և եկ դու ընդ իս ՚ի քաղաքն Պտղոմէացոց, և տա՛ց քեզ զնա ՚ի ձեռս, և զայլ ամուրս զօրօքն հանդերձ, որպէս ՚ի ձեռն լիցի, և ես դարձայց անդրէն. զի վասն ա՛յսորիկ իսկ եկեալ էի*: ⁴⁶Եւ հաւատաց նա ՚ի նա, և արա՛ր որպէս հրամայեաց նմա, և արձակեաց զզօրսն յիւրաքանչիւր տեղիս յերկիրն Յրէաստամի: ⁴⁷Եւ եթող առ իւր ՚ի նոցանէ իբրև արս երիս հազարս: Դարձեալ եթող ՚ի նոցանէ զերկուս հազարսն յերկրին Գալիլեացոց. և ինքն զնա՛ց ընդ նմա հազարաւ միով: ⁴⁸Եւ իբրև եմուտ Յովնաթան ՚ի քաղաքն Պտղոմէացոց, առին զդրունսն քաղաքացիքն և զնա ՚ի ներքս արգելին, և հանին ընդ սուր զամենեսին որ ընդ նմա մտեալ էին*: ⁴⁹Եւ արար Տրիփոն զօրս ՚ի վերայ զօրաց նորա որ էին յերկրին Գալիլեացոց՝ և ՚ի դաշտին մեծի, զի երթիցեն սատակեսցեն զամենայն զօրսն Յովնաթանու*: ⁵⁰Նոքա իբրև գիտացին թէ նա ՚ի ներքս արգելաւ, և ամենեքեան կորեան որ ընդ նմա էին, միտիարեցին զանձինս, և զնացին միագունդ միաբանութեամբ ՚ի մա՛րտ պատերազմի: ⁵¹Իբրև տեսին զօրականքն որ ՚ի վերայ երթեալ էին, թէ սրտի մտօք ՚ի վերայ իւրաքանչիւր ոգւոց մարտնչէին. զանգիտեցին, թողին և դարձան*: ⁵²Եւ սոքա եկին հասին յերկիրն Յրէաստամի խաղաղութեամբ: Կո՛ծ առին՝ լացին զՅովնաթան և զզօրսն որ ընդ նմա էին, և էին յերկիւղի մեծի: Եւ նստէր ՚ի սուգ ամենայն Իսրայէլ, և լային զՅովնաթան: ⁵³Սկսան խնդրել ամենայն հեթանոսք որ շուրջ զնոքօք էին սատակել զնոսա, զի ասէին այսպէս, ⁵⁴թէ չի՞ք ոք զլուխ իշխան ՚ի վերայ նոցա, որ տայ ընդ մեզ մարտ պատերազմի. արդ եկա՛յք՝ հասցո՛ւք ՚ի վերայ, ջնջեսցուք

* *Ոսկան.* ՁԱղեղայ յԱփիղայ:

* *Ոմանք.* Ընտիր ընտիր վառելով:

* *Բազումք.* Չանգիտեաց ձգել զձեռն իւր:

* *Ոմանք.* Ի միջի մարտ պատերազմի:

* *Ոմանք.* Դու քեզ արս սա՛... զի վասն այսր իսկ եկ՛: *Յօրինակին պակասէր.* Եւ տաց քեզ զնա ՚ի:

* *Օրինակ մի.* Եւ հանին ընդ նոսա զամենեսեան:

* *Ոմանք.* Եւ ՚ի դաշտին մեծ. զի եր՛:

* *Ոմանք.* Որ ՚ի վերայն երթեալ էին:

գլխատակ նոցա յերկրէ*:

13

Գլուխ ԺԳ

¹Եւ լուաւ Շմաւոն՝ եթէ ժողովեաց Տրիփոն զօրս բազումս գալ հասանել ՚ի վերայ երկրին Յրէաստանի սատակել զնոսա. ²և ստուգեաց թէ յահի յերկիւղի մեծի է: Եւ ինքն եկն ել յերուսաղէմ, ժողովեաց և նա զժողովուրդսն*.
³մխիթարեաց զնոսա՝ և ասէ. Դուք ինքնին գիտէք որչափ գործ գործեցաք՝ ես և եղբարք իմ, և տուն հօր իմոյ. քանի՛ մարտ պատերազմի մղեցաք, կամ ո՞րչափ նեղութեան համբերաք ՚ի վերայ սրբութեանցն օրինաց և քաղաքին*. ⁴զի վասն Իսրայէլի՝ և ձեր ամենեցուն կորեան եղբարքն ամենայն, և ես մնացեալ եմ միայն*. ⁵Եւ արդ քա՛ւ լիցի անխայել ապաշաւել յանձն իմ, յամենայն ժամանակս նեղութեան. արութեամբ ինչ՝ չե՛մ լաւ քան զեղբարսն*, ⁶բայց սակայն զօրացայց խնդրել զվրէժ զագգի ՚ի վերայ սրբութեանցն օրինաց, ՚ի վերայ կանանց և որդւոց. զի աւասիկ ժողովեալ եմ հեթանոսքն ամենայն, հասանել սատակել գլխատակս մեր յերկրէ*: ⁷Իբրև զայն խօսէր՝ զուարթացուցանէր՝ մխիթարէր զամենայն միտս ժողովրդեանն: ⁸Ետո՛ւն պատասխանի, սկսան խօսել ՚ի ձայն մեծ՝ և ասեն. Դո՛ւ ես մեր առաջնորդ փոխանակ Յուդայի և Յովնաթանու եղբօր քոյ*. ⁹մարտի՛ր զպատերազմ մեր, և զամենայն որ ինչ ասիցես՝ հնազանդ լիցուք քեզ: ¹⁰Եւ ժողովեաց նա զամենայն արս պատերազմի, վաղվաղեաց՝ փութացաւ՝ շինեաց զպարիսպսն Երուսաղէմի*: ¹¹Եւ արձակեաց նա զՅովնաթան զվբիսողոմեան զօրօք բազմօք ՚ի քաղաքն Յոպպէացւոց. և եհան նա անտի զպահապանսն, և ինքն եմո՛ւտ ամրացաւ, և պահէր զնա: ¹²Յետ այսորիկ խաղաց գնաց Տրիփոն ՚ի քաղաքէն Պտղոմէացւոց զօրօք բազմօք՝ գալ յերկիրն Յրէաստանի. և ածէր ընդ իւր զՅովնաթան ՚ի զգուշութիւն պահպանութեան: ¹³Եւ Շմաւոն բանակեալ էր ՚ի Դիդայ յանդիման դաշտին*: ¹⁴Եւ գիտաց Տրիփոն թէ համբարձաւ Շմաւոն փոխանակ Յովնաթանու եղբօր իւրոյ, և պատրաստեալ է նա ՚ի մարտ պատերազմի. արար հրեշտակս՝ և արձակեաց առ նա և ասէ. ¹⁵Վասն արձաթոյն որ պարտէր Յովնաթան յարքունիս՝ արգելեալ կայ աստ*. ¹⁶արդ տո՛ւր բերել զարձաթն հարիւր քանքար, և երկուս որդիս յորդւոց սորա տո՛ւր ածել առ իս. զի մի՛ յորժամ արձակեսցուք՝ ապստամբ լիցի սա ՚ի մէնջ: ¹⁷Եւ գիտաց Շմաւոն, եթէ նենգութեամբ խօսի ընդ նմա, ե՛տ տանել զարձաթն և զպատանեակսն. գուցէ

* Ոսկան. Գլուխ և իշխան ՚ի վերայ:

* Ոսկան յաւելու. Թէ ժողովուրդն յահի և յեր՝... և ինքն եկեալ յերուսաղէմ ժողովեաց զժողովուրդն:

* Ոմանք. Որչափ ինչ գործ գործե՛: Բազումք. Նեղութեան համբերեցաք... օրինաց և քաղաքիս:

* Ոսկան. Եղբարքն իմ ամենեքեան:

* Ոմանք. Ապաշաւել զանձն իմ: Ոսկան. Քան զեղբարսն իմ:

* Ոմանք. Կանանց և որդւոց ձերոց:

* Ոմանք. Եւ Յովնաթանու՝ եղբարց քոց:

* Ոմանք. Ձպարիսպսն Երուսաղէմի:

* Բանակեալ էր ՚ի կողմանս Դիդայ յանդիման դաշտին:

* Ոսկան. Ձոր պարտ էր Յօնաթան:

ինչ թշնամութիւն լինիցի ընդ ժողովրդեանն և ընդ նմա*։¹⁸ և ասիցեն, թէ ազահեաց յարձաթն՝ և չե՛տ տանել զպատանեակսն, և այրն կորեալ։¹⁹ Ապա ետ տանել զպատանեակսն՝ և զհարիւր քանքարն. և սակայն ստեաց, և ո՛չ արձակեաց զՅովնաթան։²⁰ Եւ յետ այսորիկ եկն Տրիփոն ՚ի կողմանս երկրին, շրջել և սատակել զնոսա, և պատեցին զճանապարհն Ադովրայ։ Եւ Շմաւոն բանակաւ հանդերձ զառաջս ունէր նորա՝ յոր կողմ և երթայր առ նա*։²¹ Եւ որք ՚ի միջնաբերդին էին յերուսաղէմ. յղեցին առ Տրիփոն հրեշտակս՝ ստիպել զնա, զի եկեսցէ առ նոսա ընդ անապատն, և համբարս բերդին արասցէ։²² Եւ պատրաստեցաւ Տրիփոն գնդաւն հանդերձ՝ զա՛լ մտանել ՚ի գիշերին յայնմիկ. և ծիւնաբեր եղև յոյժ, վասն այնորիկ ո՛չ կարաց մտանել. չու արար եկն ՚ի կողմանս Գաղաադու*։²³ Իբրև մերձեցաւ նա ՚ի Բականա՝ անդ սպան զՅովնաթան, և անդէն թաղեցաւ*։²⁴ Դարձաւ անտի Տրիփոն և եկն յաշխարհիւր։²⁵ Եւ առաքեաց Շմաւոն՝ բարձ անտի զոսկերսն Յովնաթանու եղբօր իւրոյ. և բերին թաղեցին զնա ՚ի Մովդիիմ ՚ի քաղաքն հարց իւրոց*։²⁶ Կո՛ծ երին, լացին զնա ամենայն Իսրայէլ, և սո՛ւզ առին աւուրս բազումս։²⁷ Եւ անդ շինեաց շինուած ՚ի վերայ գերեզմանի հօր իւրոյ և եղբարց իւրոց. և բարձրացոյց զնա գործ քարկռի քարակոփ շուրջանակի*։²⁸ և կանգնեաց ՚ի վերայ նորա բրզունս դէմ ընդդէմ. և կացոյց անդ երիս վառեալս՝ հօրն և եղբարցն դէմ ընդդէմ*։²⁹ Սեամբք բարձրութեան վանդակապատ. և արար իւր անուն յաւիտենից։ Եւ եղ զկողիւք վանդակին գործ քանդակի նաւա՛ց նմանութեան. զի երևելի կացցեն որ անցանեն ընդ ծով նաւօք*,³⁰ առ շիրմօքն զոր արարին ՚ի Մովդիիմ մինչև յօրս յայս*։

Իէ³¹ Եւ Տրիփոն գնայր նենգութեամբ ընդ արքայի Անտիոքայ մանկան. սպան զնա,³² և թագաւորեաց ընդ նորա. և թագ ա՛ռ նա զԱսիացւոց, և արար համարս մեծամեծս յերկրի։³³ Եւ շինեաց Շմաւոն զամուրսն Յրեաստանի, բարձրացոյց պարսպօք, և կանգնեաց զաշտարակս, դրամբք և նգօք հաստատեաց. և պնդեաց զամուրսն համբարօք*։³⁴ Եւ կոչեաց Շմաւոն արս ընտիրս, և առաքեաց առ Դեմետր, զի արասցէ թողութիւն երկրին. զի ամենայն գործքն Տրիփոնեայ յափշտակութիւնք էին։³⁵ Եւ առաքեաց Դեմետր թագաւոր՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ պատասխանի ետ նմա, և գրեաց հրովարտակս ըստ օրինակիս ըստ այսմիկ։³⁶ Դեմետր արքայ՝ առ Շմաւոն քահանայապետ՝ առ բարեկամ թագաւորաց, և առ ամենայն ծերակոյտ ազգիդ Յրէից ողջոյն։³⁷ Պսակդ ոսկի՝ և զօրհնութիւնդ որ ետուք բերել մեզ՝ ընկալա՛ք, և պատրաստ եմք առնել խաղաղութիւն մեծ. և գրել առ իշխանս հարկահանաց, զի թողցին ձեզ պարտիքն*։³⁸ Եւ զոր միանգամ հաստատեցաք առ ձեզ՝ հաստատո՛ւն կացցէ. և

* Ոմանք. Խօսի նա ընդ նմա... լիցի ընդ ժողովուրդն և ընդ նա։

* Այլք. Յոր կողմ և երթայր նա։

* Այլք. Չու արար և եկն։

* Ոմանք. Մերձեցաւ նա ՚ի Բակսանայ։

* Ոմանք. Եւ արձակեաց Շմաւոն՝ բարձ անտի։

* Ոմանք. Գործ քարկռի քարակոփ։

* Ոսկան. Բրզունս դէմ յանդիման։

* Ոմանք. Նմանութեամբ. զի երևելի կայցեն... ընդ ծով նաւօք։

* Ոմանք. Մինչև յաւուրս յայս։

* Ոմանք. Եւ շինեաց աշտարակս։

* Յօրինակին պակասէր. Եւ զօրհնութիւնդ որ ետուք։ Ուր ոմանք. Եւ զօրհնութիւնն զոր

ամուրթդ գոր շինէք՝ այդ ձե՛զ իսկ լիցի՞*։ ³⁹Եւ թողեալ լիցի՞ ՚ի մէնջ ձեզ մեղք կամայ՝ և ակամայ մինչև յայսօր ժամանակի։ Եւ զպսակն որ պարտիք՝ և ինչ ա՛յլ ինչ որ մաքս ելանէ յերուսաղէմ՝ այլ մի՛ ելցէ՞*։ ⁴⁰Եւ թէ որք պիտանի՞ք իցեն ձեր, և արժանի՞ իցեն ՚ի մեր գիր մտանել՝ մտցեն համարձակ։ Եւ եղիցի մեզ ընդ ձեզ խաղաղութիւն*։ ⁴¹Յամին հարիւրորդի եւթանասներորդի, բարձա՛ւ լուծն հեթանոսաց յԻսրայէլեան տոհմէ անտի։ ⁴²Եւ սկսաւ ժողովուրդն գրել ՚ի մատեանս իւրեանց, և ՚ի կտակս վաճառաց իւրեանց։ Յամին առաջնորդի յամս Շմաւոնի մեծի քահանայապետի՝ և առաջնորդ զօրավար ազգին Յրէից*։ ⁴³Յաւուրսն յայնոսիկ պատեաց նա զքաղաքն Գազացւոց, և պաշարեաց զնա զօրօք, և արար անդ մենքենայս և մատոյց ՚ի պարիսպ անդր, և կործանեաց աշտարակ մի։ ⁴⁴Եւ ելին ՚ի մենքենայէ անտի՝ և յարձակեցան ՚ի ներքս ՚ի քաղաքն, և եղև խռովութիւն յոյժ՝ ՚ի քաղաքի անդ։ ⁴⁵Եւ դիմեցին առ հասարակ քաղաքացիքն կանամբք և մանկտուվք հանդերձ, ճի՛չ առեալ և զօճիս պատառեալ՝ և զաղաղակ բարձեալ կարդային առ Շմաւոն. ⁴⁶և աղաչէին ձե՛ռն տալ նոցա. զի մի՛ դատեսցեն զնոսա ըստ չարութեան նոցա. այլ ըստ ողորմութեան իւրում գթացի ՚ի վերայ նոցա*։ ⁴⁷Եւ կակղացաւ Շմաւոն, և ցածոյց զպատերազմն. և հրամայեաց հանել զնոսա արտաքս քան զքաղաքն։ Եւ սրբեցին զապարանսն յամենայն աղտեղութենէ պղծութեան կռո՛ց նոցա. և ապա եկն եմուտ ՚ի ներքս ցնծութեամբ և օրհնութեամբ։ ⁴⁸Եւ սրբեաց ՚ի նմանէ զամենայն պղծութիւնս, և բնակեցոյց ՚ի նմա արս որ զօրէնսն պահիցեն. ամրացոյց ևս զնա. և շինեաց ՚ի նմա բիւրազգի՝ գործած ապարանից*։ ⁴⁹Իսկ որ ՚ի միջնաբերդին էին յերուսաղէմ, արգելեալ նեղեալ պաշարեալ կային. զի ո՛չ էր նոցա՝ ո՛չ ել և ո՛չ մուտ, և ո՛չ գին և ո՛չ վաճառ, և նեղեալ սովամահէին. և բազումք ՚ի նոցանէ սատակեցան*։ ⁵⁰Աղաղակեցին առ Շմաւոն, աղաչէին կա՛լ առաջի նորա։ Նա ե՛տ նոցա՝ ձեռն, և եհան զնոսա անտի. և սրբեաց նա զմիջնաբերդն յամենայն պղծութեանց նոցա*։ ⁵¹Եւ եկն եմուտ նա անդր ՚ի քսաներորդ ամսոյն յերկրորդում ամսեանն. յամին հարիւրորդի եւթանասներորդի մտանէր անդր՝ օրհնութեամբ զոհութեամբ, ոստովք արմաւենեօք. ՚ի ցնծութիւն փողոյ և սրընգի. զի խորտակեցաւ մեծ թշնամի ՚ի տանէն Իսրայէլի*։ ⁵²Եւ հրաման ետ նա առնել զտօնն զայն ամի ամի ըստ աւուրն ըստ այնմիկ՝ ուրախութեամբ և ցնծութեամբ։ ⁵³Ամրացոյց նա զլեառն տաճարին առ միջնաբերդաւն. և բնակեալ էր ինքն ՚ի ներքս սեպիական զնդաւն հանդերձ։ ⁵⁴Եւ ետես Շմաւոն զՅովնաթան զորդի իւր, եթէ ա՛յր կատարեալ և ՚ի չափ հասեալ է, առ՝ կացոյց զնա իշխան զօրավար առաջնորդ ՚ի վերայ

ետուք:

* Այլք. Ձեզ իսկ լիցին:

* Ի բազումս պակասի. Մեղք կամայ և ակամայ: Ոմանք. Մաքս ելանէ յերուսաղէմ:

* Ոսկան. Եթէ որք պիտա՛... և արժանք իցեն:

* Ոսկան. Առաջնորդի և զօրավարի ազգին:

* Ոսկան. Ձի մի՛ դատեսցէ զնոսա:

* Ոմանք. Բիւր ազգի ազգի գոր՞:

* Ոմանք. Ի միջնաբերդն էին... ո՛չ գին, և ո՛չ:

* Յօրինակին պակասէր. Եւ սրբեաց նա զմիջնա՞: Ոմանք. Յամենայն պղծութեանց նորա:

* Ոմանք յաւելուն. Ի քսաներորդ երրորդ ամսոյն: Ոսկան յաւելու. Եօթանասներորդի առաջներորդի մտանէր:

ամենայն զօրացն. և կացոյց զնա ՚ի կողմանս Գազարայ:

14

Գլուխ ԺԴ

ԻԸ ¹Յամին հարիւրորդի եւթանասներորդի երկրորդի, զօրածողով լինէր Դեմետր արքայ, և անցանէր ՚ի կողմանս Մարացն և Պարթևացն ՚ի խնդրել իւր անտի թիկունս. զի եկեսցէ տացէ՝ մարտ պատերազմի ընդ Տրիփոնեայ*։ ²Իբրև զայն լսէր Արշակ արքայ Պարսից և Պարթևաց՝ թէ եկն եմուտ Դեմետր ՚ի սահմանս աշխարհի նորա, արձակեաց նա մի յիշխանաց իւրոց՝ երթալ ձերբակալ առնել զնա։ ³Գնաց նա՝ եհար սատակեաց զգօրսն Դեմետրայ, և արար զնա ձերբակալ. եկն ած՝ կալաւ զԴեմետր առաջի Արշակայ. և հրամայեաց կապել զնա ՚ի կապանս ոստիկանս և դնել զնա ՚ի բանտի*։ ⁴Եւ դադարեաց ՚ի խաղաղութեան երկիրն զամենայն աւուրս Շմաւոնի, և յաւելոյր բարիս ՚ի բարեաց վերայ ազգին իւրեանց. տիրէր նա ՚ի վերայ գաւառացն*։ ⁷Եւ ժողովէր զգերիս բազումս. տիրէր ՚ի վերայ կողմանցն Գազիոնայ՝ և Բեթսովրայ, և ակառանց*։ ⁸Եւ գործէին զերկիր իւրեանց խաղաղութեամբ. և երկիրն տայր զպտուղ իւր, և ամենայն փայտ ծառատունկ տայր զբեր իւր առատութեամբ։ ⁹Ծերք ՚ի հրապարակս նստէին, ճառս արկեալ զբանից բարութենէ ընդ միմեանս խորհէին։ Երիտասարդք զփառս զգեցեալ՝ զարդարեալ ՚ի զարդ պատերազմի*։ ¹⁰Ձքաղաքս պնդէին համբարօք, և զանձինս պատրաստէին ՚ի պատրաստութիւն զարդու ամրութեան զինու. մինչև երթայր անուն փառաւորութեան նորա մինչև ՚ի ծագս երկրի*։ ¹¹Եւ առնէր խաղաղութիւն։ Եւ ցնծայր Իսրայէլ յուրախութիւն մեծ. ¹²Եւ նստէին իւրաքանչիւր ընդ այգւով իւրեանց և ընդ թզենեալ իւրեանց, և ոչ ոք զարհուրեցուցանէր զնոսա*։ ¹³Եւ պակասեցին ամենեքեան որ մարտնչէին ընդ նոսա՝ յերկրէ. և թագաւորքն խորտակեցան յաւուրս իւրեանց։ ¹⁴Եւ նա հաստատեաց զօրացոյց զխոնարիս ժողովրդեանն, խնդրէր զվրէժն օրինացն. և զամենայն չարս և զանօրէնս ջնջեաց յերկրէ*։ ¹⁵Փառաւորեցոյց զսրբութիւնս, և բազմացոյց զսպաս սրբութեանն։

ԻԹ ¹⁶Լու եղև ՚ի Զոռվմայեցւոց քաղաք, և մինչև ՚ի կողմանս Սպարտացւոց, եթէ մեռաւ Յովնաթան. և տրտմեցան յոյժ*։ ¹⁷Այլ իբրև լուան եթէ Շմաւոն եղբայր նորա կայ ՚ի գլուխ քահանայութեան ընդ նորա, և տիրեալ հաստատեալ ունի

* Ոմանք. Եւ Պարթևաց խնդրել իւր ան՝:

* Ամենայն գրչագիր օրինակք համաձայն մերունս ունին՝ Ի կապանս ոստիկանս: Իսկ Ոսկան ՚ի կարգին զանց արարեալ՝ ոստիկանս, ՚ի լուսանցսն այսպէս կարգէ զբանն. Եկն և կալաւ զԴեմետր, և եած առաջի ոստիկանս: Օրինակ մի. Ոստիկանս, և դնել ՚ի բերդի:

* Ոմանք. Ի խաղաղութիւն երկիրն... և յաւելոյր ՚ի բարիս ՚ի բարեաց ՚ի վերայ ազգին իւրոյ:

* Ոմանք. Եւ ակառանց. կամ՝ ակառանաց:

* Այլք. ճառ արկեալ զբանից:

* Ոսկան. Պատրաստութեամբ զարդու ամրութեամբ զինու:

* Ոմանք. Ընդ այգեալ իւրեանց: Իսկ Ոսկան. ընդ որթով իւրե՞ն:

* Ոմանք. ժողովրդեան իւրոյ, խնդրել. կամ՝ խնդրեաց զվրէժ օրի՞ն:

* Ոմանք. Ի Զոռմ քաղաք, մինչև ՚ի կողմանս Սպարտիացւոց:

զգաւառս և զքաղաքս որ 'ի նոսայն էին*։¹⁸ Զրեշտակս արարին, և հրովարտակս գրեցին 'ի տախտակս պղնձիս, նորոգել զհին բարեկամութիւնն զոր ուխտեցին հաստատեցին առ Յուդա՝ և առ Յովնաթան եղբայր նորա։¹⁹ Եւ իբրև բերին՝ ընթերցան առաջի ժողովրդոցն Երուսաղեմի։ Եւ այս պատճէն հրովարտակացն զոր առաքեցին Սպարտիացիք։²⁰ Սպարտիացւոց իշխանք և առաջնորդք՝ մեծաւ քաղաքաւն հանդերձ, առ Շմաւոն մեծ քահանայ՝ և առ ծերակոյտդ Իսրայէլացւոց՝ և առ քահանայս, և առ ամենայն գունդդ Զրէից եղբարս մեր՝ ողջոյն։²¹ Զրեշտակք որ արձակեցան 'ի ձէնջ առ մեզ, պատմեցին մեզ վասն փառաց և պատուի ձերոյ. և ուրախ եղեաք 'ի գալստեան դոցա*։²² Եւ գրեցաք մեք զպատգամս ձեր 'ի մատեանս խորհրդոց գնդի մերոյ՝ օրինակ զայս. Նումենիոս զԱնտիոքեան, և Անտիպատրոս Յասոնեան հրեշտակք Զրէից, որ եկին առ մեզ նորոգել զբարեկամութիւնն ընդ ազգի մերում*։²³ Եւ հաճոյ թուեցաւ ամենայն Սպարտացւոց ընդունել զարսն մեծաւ փառօք, և զպատճէն բանից նոցա դնել 'ի տեղի յերևելի 'ի մատեանս խորհրդոց գնդի Սպարտիացւոց։ Եւ պատասխանի՝ արարին հրովարտակացն առ Շմաւոն մեծ քահանայ։²⁴ Դարձեալ յետ այսց ժամանակաց, Շմաւոն հրեշտակս առնէր անդրէն 'ի Զոնոմ մեծաւ պատարագաւ, և ոսկւով վահանաւ 'ի հազար քանքարէ. զի երթիցէ հաստատեսցէ զառաջին բարեկամութիւնն և թիկունս։²⁵ Իբրև լուան զայն գունդն Զոնմայեցւոց, սկսան խորհել և ասել. Իսկ արդ զի՞նչ երախտեաց երախտիս դարձուցուք Շմաւոնի՝ և որդւոց նորա։²⁶ զի հաստատեաց նա և եղբարք իւր և տուն հօր իւրոյ զայն որ առ մեզ բարեկամութիւն. հարկանելով եհար զթշնամիս իւր. և հաստատելով հաստատեաց զմեզ ընդ իւր 'ի բարեկամս և 'ի թիկունս։ Եւ հաստատեցին նմա ազատութիւն, և գրեցին զայս 'ի տախտակս պղնձիս։ Եւ կանգնեցին նմա արձան 'ի լերինն Սիոն*։²⁷ Եւ այս պատճէն գրոյն զոր գրեցին. Յամին հարիւրորդի եւթանասներորդի, որ օր ութուտասն էր ամսոյն, 'ի վերայ ամին երրորդի առ քահանայապետութեամբն Շմաւոնի, 'ի Սամարէք*։²⁸ առաջի մեծաց ժողովրդոց՝ քահանայից՝ ժողովրդեան՝ իշխանաց՝ ազգաց՝ և ծերակոյտ գաւառաց բազմաց։ Ա՛զդ եղև մեզ՝ քանզի բազում մարտք պատերազմի մղեցան յերկրի անդ*։²⁹ Այլ Շմաւոն որդի Մատաթեայ քահանայապետի որդւոցն Յովարիմ, եղբարքբն հանդերձ ե՛ղ զգլուխ իւր 'ի կշիռս, և ետ զանձն իւր 'ի ճգնութիւն մարտի պատերազմի. դիմակալ եղև թշնամեաց ազգի նոցա, զի սրբութիւնքն իւրեանց և օրէնքն մի՛ պղծեցին. և փառօք մեծօք փառաւորեաց զազգս նոցա*։³⁰ Եւ ժողովեաց Յովնաթան

* Ոմանք. Կայր 'ի գլուխ քահանա՞:

* Ոմանք. Եւ պատուոյ ձերոյ:

* Թերևս յառաջին գաղափարս սխալմամբ գրչին աղաւաղեալ՝ և միամտութեամբ հետզհետէ 'ի միմեանց ընդօրինակեալ, երևի այսօր յամենայն գրչագիրս որ առ մեօք՝ միաբան այսպէս գրեալ բանս. 'ի մատեանս խորհրդոց գնդի մերոյ օրինակ զԱնումենիոս զԱնտիոքեան, և այլն: Ուր մեր զհետ երթեալ երկուց գրչագրաց. որք 'ի վերայ կարգի գրելոցն անդրէն ուղղագրեալ նովին գրչաւ՝ ձևացուցանէին. Օրինակ զայս. Նումենիոս զԱնտիոքեան, և այլն: Եղաք զուղիղն ըստ պատշաճի, որպէս և ունի Ոսկան. թպէտ և թողեալ զնախդիրն զ 'ի վերայ Անտիոքեան. որպէս ունին ամենեքեան. զոր և ոմանք յաւելուն և 'ի վերայ Անդիպատրոսի:

* Ոմանք. Չայն առ մեզ բարեկա՞... 'ի լերինն Սիոնի: Ոսկան. Եւ հաստեցին նմա ազատ՞:

* Ոսկան յաւելու. Եօթանասներորդի երկրորդի:

* Ոմանք. Առաջի մեծաց ժողովոց:

* Ոմանք. Յորդւոցն Յովարիմ... և եղ զանձն իւր:

զագգսն նոցա, և եղև նոցա քահանայապետ, հանգեալ նա՝ և ժողովեցաւ առ հարս իւր: ³¹Եւ կամեցան թշնամիք նոցա հասանել՝ ՚ի վերայ երկրի նոցա, և ձգել զձեռս իւրեանց ՚ի սրբութիւնս նոցա: ³²Յայնմ ժամանակի յարեալ Շմաւոն, և ետ նա՛րտ պատերազմի ՚ի վերայ ազգին իւրեանց, և ծախեաց նա գանձս բազումս յիւրմէ և արար նա հանդերձս զինու զարդու արանցն պատերազմողաց ազգին իւրում, և կուտեաց նա համբարս և թռակս զօրականին: ³³Եւ ամրացոյց զքաղաքսն Յրեաստանի: Ջբէթսովրա՝ որ ՚ի սահմանս Յրեաստանի էր, ուր հանդերձեալ դներ զգէնն ամենայն՝ զէն և զա՛րդ առաջին զօրաց թշնամեաց նոցա. և կացոյց նա անդ արս Յրեաստանեայս պահապանս: ³⁴Եւ զքաղաքսն Յոպպեացւոց ամրացոյց՝ որ ՚ի վերայ ծովուն էր. և զԳազարայ՝ որ ՚ի վերայ սահմանաց Ազովտայ՝ էր, զոր յառաջ թշնամիքն ունէին. և բնակեցոյց անդ արս Յրեաստանեայս, և որինչ միանգամ պէտք էին իւրեանց՝ հաստատութեամբ յօրինեաց զնոսա՛: ³⁵Իբրև զայս ամենայն զգործս տեսին Շմաւոնի ժողովուրդքն, և զփառսն զոր խորհէ՛ր ՚ի վերայ ազգին, և կացուցին զնա իշխան քահանայապետ՝ զի զայս ամենայն արարեալ էր նորա նոցա. և զարդարութիւնն և զհաւատն զոր պահէր նա ՚ի վերայ ազգին իւրոյ, և խնդրէր նա յամենայն հանգամանս բարձրացուցանել զժողովուրդ իւր՝: ³⁶Եւ յաւուրս նորա աջողեցաւ ՚ի ձեռս նորա ջնջել՝ հեթանոսացն յերկրէ նորա, այնոցիկ որ ՚ի միջնաբերդին էին յերուսաղէմ. ելանէին մտանէին և պղծէին յոյժ շուրջ զսրբութեամբն, և հարուածք մեծամեծք լինէին ՚ի սրբութեան անդ, արգել զնոսա և ջնջեաց զնոսա՛: ³⁷Նստոյց և ամրացոյց անդ պահապանս վասն զգուշութեան երկրին և քաղաքին, և բարձրացոյց զնա: ³⁸Սակայն և Դեմետր արքայ բարձրացոյց զքահանայապետութիւն նորա. ³⁹վասն այսր ամենայնի ընդ բո՛ւն բարեկանս փառաւորեաց զնա ՚ի փառս մեծութեան: ⁴⁰Ձի լո՛ւ եղև նմա եթէ անուանեալ կոչին Յրեայքն բարեկամք Հռոմայեցւոց, եղբարք և թիկունք և նիզակակիցք. և զի ընկալան զիրեշտակսն Շմաւոնի փառաւորութեամբ: ⁴¹Ձի Յրեայքն ինքեանք և քահանայքն հաճեցան, յանձն առին՝ իշխան քահանայապետ կացուցանել զնա յաւիտեանս ժամանակի. մինչև կանգնեսցի մարգարէ հաւատարիմ. ⁴²զի լիցի նոցա զօրավար յառաջնորդութեան. և զի փո՛յթ լիցի նմա վասն սրբոցն. և կացուցանել ՚ի նորա ձեռանէ ՚ի վերայ գործոց նոցա, ՚ի վերայ գաւառաց նոցա, ՚ի վերայ զինու զարդու նոցա, և ՚ի վերայ ամրոցաց նոցա՛: ⁴³Վասն զի փո՛յթ լիցի նմա վասն սրբոցն. և հնազանդեսցին նոցա ամենայն ազգք, և յանուն նորա կնքիցին ամենայն մուրհակք աշխարհի: Ձի իշխան լիցի արկանել ծիրանիս, և զարդարել ոսկուով: ⁴⁴Եւ մի՛ ոք իշխեսցէ ՚ի ժողովրդոց անտի կամ ՚ի քահանայից ընդդէմ դառնալ հրամանաց նորա, և կամ ժողովել ժողովս յերկրի նորա առանց նորա. և կամ զգենուլ ծիրանիս, կամ արկանել շիզոլ ոսկի՛: ⁴⁵Ձի եթէ ոք մի ինչ յայսցանէ անցցէ և կամ անարգեսցէ՝ մահապարտ լիցի: ⁴⁶Եւ հաճո՛յ թուեցաւ ՚ի ժողովրդեանն առնել Շմաւոնի ըստ բանիցս այսոցիկ՝: ⁴⁷Ա՛ռ յանձն Շմաւոն, և հաճեցաւ կալ՝ ՚ի գլուխ քահանայապետութեան. լինել սպարապետ զօրավար՝ զնդին Յրեաստանի, և

* Ոմանք. Եւ զքաղաքն Յոպպայեցւոց... ՚ի վերայ ծովուն է... Ազովտայ է, զոր:

* Ոմանք. Տեսին զՇմաւոնի... զոր խորհէր նա ՚ի վերայ ազ՛... իշխանքն քահանայապետ:

* Ոմանք. Եւ այնոցիկ որ ՚ի միջնաբերդն էին:

* Ոմանք. Ձի փոյթ լիցի նոցա... և ՚ի վերայ ամրոց նոցա:

* Ոմանք. Կամ զգենուլ... շինկո ոսկի:

* Ոմանք. Հաճոյ թուեցաւ ժողովրդ՛:

կալ գլուխ քահանայից, և առաջնորդել ամենեցուն: ⁴⁸Եւ զգիրս զայս գրել ՚ի տախտակս պղնձիս, և հրամայեցին դնել յամրի ՚ի նշանաւոր և յերևելի տեղւոջ ՚ի մէջ սրբութեանցն. ⁴⁹և զպատճենս նոցա դնել ՚ի գանձ. զի Շնաւոն և որդիք նորա զայն առ իւր ունիցին հանապազ*:

15

Գլուխ ԺԵ

Լ ¹Եւ առաքեաց Անտիոքոս որդի Դեմետրեայ արքայի՝ հրովարտակս ՚ի կղզեաց անտի առ Շնաւոն քահանայապետ՝ և կուսակալ ազգին Զրէից՝ և առ ամենայն ազգս նորա* . ²և էին հրովարտակքն օրինակ զայս. Արքայ Անտիոքոս՝ առ Շնաւոն մեծ քահանայապետ՝ և առ կուսակալ ազգին Զրէից՝ ողջոյն* : ³Քանզի ոմանք անօրէնք եկին՝ բուռն եղեն արքայութեան հարցն իմոց. և արդ՝ ես աւասիկ ՚ի խնդիր եմ անդրէն շինել կանգնել հաստատել զնոյն արքայութիւն որպէս էր զառաջինն: Արդ ես՝ զօրաժողով եմ զօրօք բազմօք՝ պատրաստեալ նաւս պատերազմի* , ⁴եւանել խնդրել զվրէժ հարցն իմոց յազգաց վնասակարաց երկրին մերոյ, և որ աւերեցին զքաղաքսն մեր զմեծամեծս: ⁵Արդ հաստատեալ իմ զքեզ, զամենայն ուխտ հարկին զոր թողին ձեզ թագաւորքն առաջինք, և որ ինչ այլինչ հաս օրէն հարկի իցէ՝ թողեալ լիցի քեզ* : ⁶Եւ հրաման ևս տուաք, զի իշխան լիցիս հատանել առանձինն դահեկան յաշխարհի քում* . ⁷և երուսաղէմ: Եւ սրբութիւնդ ազատ լիցին յամենայնէ. և զէնդ և զարդդ զոր գործեցեր, և զամուրսդ որ ամրացուցեր՝ քեզ լիցին այդ: ⁸Եւ ամենայն պարտք արքունի, հասք և օրէնք որ այտի գային՝ քեզ լիցին յայսմ հետէ մինչև յաւիտեանս ժամանակաց: ⁹Այլ իբրև հասցուք ՚ի տէրութիւն մեր, փառաւորեսցուք զքեզ և զազգդ քո, և զտաճարդ ՚ի փառս մեծութեան. զի յայտնի լիցին փառքն ձեր ընդ ամենայն երկիր: ¹⁰Յամին հարիւրորդի եւթանասներորդի չորրորդի՝ եկն եհաս Անտիոքոս յերկիրն հարց իւրոց: Ժողովեցան առ նա ամենայն զօրք, և սակաւք ինչ մնացին առ Տրիփոնեայ: ¹¹Եւ հալածեաց զնա Անտիոքոս, և ած արկ զնա ՚ի Դովրա ծովեզերեայ* . ¹²և թողին զնա ամենայն զօրքն. և իբրև տեսին զչարիսն որ անցին ընդ նա: ¹³Անտիոքոս եկն բանակեցաւ շուրջ զԴովրաւ երկուտասան հազարաւ՝ մարտիկ պատերազմօղ արամբ, և ութ հազար հեծեալ սպառազիմաւ* . ¹⁴և զծովակողմն փակեաց նաւօք. և ՚ի նեղ արկ զքաղաքն ՚ի ծովէ և ՚ի ցամաք կուսէ. և ո՛չ զոք թողուին ելանել* :

* *Ոմանք.* Դնել ՚ի գանձի: *Ոսկան.* Չայն առ իւրեանս ունիցին:

* *Ոմանք.* Եւ առ ամենայն ազգս նոցա:

* *Ոսկան.* Եւ ունէին հրովար՝: *Ոմանք.* Ջօրինակ զայս... առ կուսակալ:

* *Ոմանք.* Աւասիկ խնդրեմ շինել:

* *Օրինակ մի.* Արդ պատրաստեալ իմ զքեզ: *Ուր Ոսկան.* Հաստատեալ եմ քեզ զամենայն:

* *Ոմանք.* Յաշխարհի քում (7) յերուսաղէմ... ազատ լիցի յամենայնէ... զոր ամրացուցեր՝ քեզ լի՞:

* *Ոմանք.* Եւ արկած զնա ՚ի Դով՞:

* *Ոսկան.* Մարտիւ պատերազմօղ ա՞:

* *Յօրինակին.* Փակեաց նոքօք և ՚ի նեղ արկ զցամաքն ՚ի ծովէ և ՚ի ցա՞... թողին ելանել: *Ոմանք.* Թողուին ելանել կամ մտանել:

ԼԱ ¹⁵Եւ եկն Նումէնիոս և որ ընդ նմա էին, բերին հրովարտակս 'ի Զոովմ քաղաքէ առ թագաւորս երկրին, յորս գրեալ էր այսպէս*։ ¹⁶Ղևկիոս հիւպատոս Զոոմայեցւոց՝ առ արքայ Պտղոմէոս ողջոյն*։ ¹⁷Ծերքո 'ի Զրէաստանէ եկին առ մեզ նորոգել զառաջին սէր բարեկամութեան, նիզակակիցս և թիկունս մեզ. զորս արձակեալ առ մեզ Շմաւոնի քահանայապետի՝ և գնդին Զրէից. ¹⁸բերին մեզ վահան ոսկի 'ի հինգ հազար քանքարէ*։ ¹⁹Վասն այսորիկ հաճոյ թուեցաւ մեզ գրել առ թագաւորս երկրիդ՝ և ամենայն ազգացդ, զի մի՛ ոք ինչ յոռի խորհիցի 'ի վերայ նոցա. և մի՛ տայցեն մա՛րտ պատերազմի ընդ քաղաքս դոցա՝ և ընդ երկրի. զի մի՛ դոքա ընկեր լիցին մարտի թշնամեաց*։ ²⁰Հաճոյ թուեցաւ մեզ առնուլ զվահանն 'ի դոցանէ։ ²¹Արդ եթէ իցեն ոք արք անօրէնք փախուցեալք յերկրէ նոցա՝ 'ի ձե՛ռս տաջիք Շմաւոնի քահանայապետի. զի խնդրե՛լ մարթասցէ զվրէժ ըստ օրինացն իւրեանց*։ ²²Եւ այսպէս գրեր առ Դեմետր արքայ, և առ Աթաղա, և առ Արիարթ, և առ Արշակ։ ²³Յամենայն գաւառս՝ որ ինչ բարուք թուիցի Սպարտիացւոց, և 'ի Դեղոս, և 'ի Սիդովնա, և 'ի Սիկիովնա, և 'ի Կարաղա, և 'ի Սամոն, և 'ի Պամփիլա, և 'ի Դիդիա, և 'ի յԱղիկառնակոս, և 'ի Ռոդոն, և 'ի Փասեղիդա, և 'ի Սիդէն, և 'ի Սարադոն, և 'ի Պորտունիա, և 'ի Կնիդոս, և 'ի Կիւպրոս, և 'ի Կիւրէն*։ ²⁴Եւ 'ի պատճէն հրովարտակացն գրեցին առ Շմաւոն քահանայապետ*։

ԼԲ ²⁵Եւ Անտիոքոս արքայ եկն պաշարեաց զԴովրա. և 'ի վաղիւ անդր մատուցանէր առ նա մենքենայս, և ձե՛ռն արկանէ 'ի նա. և 'ի ներքս արգելեալ պաշարեալ պահեր զՏրիփոն, և ո՛չ ել ունէք գոյր 'ի ներքուստ արտաքս՝ և ո՛չ մուտ արտաքուստ 'ի ներքս*։ ²⁶Եւ յղեաց Շմաւոն 'ի թիկունս նմա արս ընտիրս մարտիկ պատերազմօղս՝ երկու հազար սպառազէնս, և պատարագս հանդերձեալս յոյժ՝ ոսկի և արծաթ*։ ²⁷Այլ անարգեաց զամենայն բանսն որ ուխտեաց նմա, և օտարանայր 'ի նմանէ*։ ²⁸Եւ առաքեաց նա զԱթենորբիոս՝ մի 'ի բարեկամաց իւրոց, խօ՛սս 'ի մէջ առնել ընդ նմա՝ և ասել. Դուք իշխեալ զօրացեալ ունի՛ք զքաղաքս թագաւորութեան իմոյ. զքաղաքն Յոպպէացւոց, և Գազարացւոց, և զմիջնաբերդն Երուսաղէմի*։ ²⁹Զսահմանս նոցա աւերեցէք դուք, և հարուածս մեծամեծս հասուցէք 'ի վերայ երկրին նոցա, տիրեցէք դուք կողմանցն բազմաց, և գաւառս բազումս հատէք զիմոյ տերութեան*։ ³⁰Արդ տո՛ւք 'ի դուրս զքաղաքս և զգաւառս և զկողմանս, և զհարկս նոցուն. և որ ինչ միանգամ բռնութեամբ կալեալ է ձեր 'ի մէնջ արտաքոյ սահմանացն Զրէաստանի։ ³¹Ապա թէ ոչ՝ տո՛ւք փոխանակ այնորիկ հինգ հարիւր քանքար

* *Ոմանք.* Առ թագաւորն երկրին:

* *Ոսկան.* Ղուկիոս հիւպատոս:

* *Ոմանք.* Վահան ոսկի 'ի Ռ քանքարէ:

* *Ոմանք.* Խորհիցի 'ի վերոյ դոցա: *Ոսկան.* Ընդ քաղաքս դոցա՝ և ընդ երկիր:

* *Ոսկան.* Եթէ իցեն արք անօրէնք: *Այլք.* Յերկրէ դոցա:

* *Ոմանք.* Եւ որ ինչ բարուք... և 'ի Սիդովնայ և 'ի Սիկովնայ... և 'ի Պորտինայ... և 'ի Կիարոս:

* *Այլք.* Եւ պատճէն հրովար՛:

* *Ոմանք.* Եւ ձեռնարկեր 'ի նա:

* *Ոմանք.* Երկուս հազարս... և 'ի պատարագս հան՛:

* *Ոսկան.* Զոր ուխտեաց նմա:

* *Յօրինակին.* ԶԱթենորբիոս՝ մի 'ի բա՛: *Ոմանք.* Խօսս 'ի մէջ առնել նմա... զքաղաքսն Յոպպայեցւոց... Երուսաղէմի:

* *Ոմանք.* Հասուցէք դուք 'ի վերայ:

արծաթոյ, և զխափանած հարկաց քաղաքացն, որ ցայսօր խափանեցէք՝ այլ հինգ հազար քանքար: Ապա թէ ոչ՝ եկեսցուք հարցուք վանեսցուք գերկիրն սատակեսցուք*։³² Եւ իբրև եկն Աթենոբիոս բարեկամ արքայի յերուսաղէմ, ետես զփառսն Շմաւոնի, և զսպաս զոսկւոյ և զարծաթոյ, և զհանդերձս պատրաստութեան զօրաց բազմաց, յո՛տն կայր առաջի նորա, և շքով տայր զպատգամ թագաւորին*։³³ Պատասխանի ետ նմա Շմաւոն՝ և ասէ. Ո՛չ յերկիր օտար ուրուք մտեալ եմք, և ո՛չ ՚ի բաժին յուրուք տարապարտուց ձեռն բռնութեամբ մխեալ է. զվիճակս ժառանգութեան հարցն մերոց վտարանդի լեալ յանպարտ թշնամեաց տարապարտուց*,³⁴ քաջութեամբ ժամանակ գտեալ խնդրեցաք։³⁵ Այլ վասն Յոպպէացւոց քաղաքին, և Գազարայ զոր դուքն խնդրէք, վնաս բազում գործեցին ՚ի մէջ աշխարհին մերոյ, վրէժ խնդրեցաք. վասն այնորիկ տուժեսցուք հարիւր քանքար: Եւ ո՛չ ետ նմա բանիցն պատասխանի*։³⁶ Եւ դարձաւ բարկութեամբ առ թագաւորն, և պատմեաց նմա զփառսն Շմաւոնի, և զամենայն պատրաստութիւն զոր ետես սպասուց նորա: Եւ բարկացոյց յոյժ զթագաւորն: ³⁷ Եւ Տրիփոն փախեալ յՈրթոսիա: ³⁸ Եւ թագաւորն գումարեաց զԿենդէբոս ծովեզերեայց սպարապետն, և զօրս բազումս հեծեալս և հետևակս ընդ նմա. ³⁹ պատուէր ետ նմա զի բնակեսցէ դէմ յանդիման Յրէաստանի. և շինեսցեն զամուրսն ՚ի պատրաստութիւն մարտի պատերազմի ընդ զօրսն Իսրայէլացւոց: Եւ ինքն թագաւորն զհետ էր Տրիփոնեայ*։⁴⁰ Իսաղաց գնաց Կենդէբոս, եկն եհաս ՚ի կողմանսն Յամենեայ, և սկսաւ գրգռել զզօրսն, և մխել ՚ի Յրէաստան, գերել և սպանանել: Եւ շինեաց նա զԿեդրոն*,⁴¹ և գումարեաց անդ հեծելագօրս բազումս, զի մխեսցին ՚ի Յրէաստան, և պաշարեսցեն զճանապարհս նոցա որպէս հրաման ետ թագաւորն:

16

Գլուխ ԺԶ

¹ Եւ ել Յովհանն ՚ի Գազարայ, և եկն պատմեաց Շմաւոնի հօր իւրում. որպէս և գնայր Կենդէբոս: ² Եւ կոչեաց Շմաւոն գերկոսին որդիսն զՅուդայ և զՅովհանն, և ասէ ցնոսա. Ե՛ս և եղբարք իմ և տուն հօր իմոյ՝ մարտ պատերազմի տուաք ընդ թշնամիսն Իսրայէլացւոց, ՚ի մանկութենէ մերմէ մինչև ցայսօր ժամանակի, և աջողեցան գործքն ամենայն ՚ի ձեռս մեր, փրկել զբազումս զազգսդ Իսրայէլացւոց*։³ Բայց արդ ծերացայ, և դուք հերիք էք յամս իմ, փոխանակ իմ և եղբոր իմոյ. արդ ելէք մարտերուք ՚ի վերայ ազգիդ մերոյ. և զօրութիւն օգնութեանց յերկնից եղիցի ընդ ձեզ*։⁴ Եւ ընտրեաց նա յաշխարհէ անտի իբրև

* Ոսկան. Փոխանակ այնոցիկ հինգ... զորս ցայսօր խափանեցիք՝ այլ ևս հինգ հա՛:

* Յօրինակին. Եկն Աթենոբիոս:

* Ոսկան. ՚ի բաժին ուրուք... բռնութեամբ մխեալ եմք:

* Ոմանք. Վնասս բազում գործեցին ՚ի մէջ աշխարհին մերում:

* Ոմանք. Ձի բնակեսցէ դէմ յանդի՛:

* Ոմանք. ՚ի կողմանս Յամենեայ:

* Ոմանք. Ձորդիսն զՅուդա և զՅովհաննան... մինչև յայսօր ժամանակի, և յաջողե՛... զբազում զազգս Իսրայէլացւոց:

* Ոմանք. Յրիք էք յամս ձեր... արդ ելէք և մարտերուք... օգնականութեան յերկնից:

քսան հազար հեծեալ սպառազէն, և խաղաց ՚ի վերայ Կենդեբեայ*։ ⁵Եւ եկին ազան այն օր ՚ի Մովդիիմ. ընդ առաւօտն կանխեալ լինէին դաշտամուխ։ Անդ տեսանէին զօրս բազումս հեծեալս և հետևակս, որ գային ընդդէմ նորա. և հեղեղատ մի էր ՚ի մէջ երկոցուն*։ ⁶Եւ ճակատեցաւ յանդիման նոցա ինքն և զօրքն։ Իբրև հայեցաւ ետես զզօրսն թէ դանդաղեցան անցանել ընդ հեղեղատն, յառաջ ինքն նահատակեցաւ, հապա՝ զօրքն միագունդ զկնի՝ փողեցան*։ ⁷Եւ բաժանեաց յերկուս գունդս զհեծեալազօրն ՚ի մէջ հետևակացն. և էր հեծեալազօրն կարի յոյժ։ ⁸Փո՛ղ հարին խրախոյս բարձին, ՚ի վերայ յարձակեցան. ՚ի պարտութիւն մատնեցաւ Կենդեբու. և անկաւ ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ վիրաւորք բազումք։ Եւ որ մնացեալ էին փախստեայ անկանէին յամուրսն*։ ⁹Յաւուր յայնմիկ խոց մնայր Յուդա. բայց Յովհան զհետ լինէր փախստեայցն, մինչ ածէր արկանէր զնոսա ՚ի կողմանս Կեդրոնայ զոր շինեաց*։ ¹⁰Եւ մեկնեցին նոքա ընդ բրգունսն ՚ի կողմանս Ազովտայ։ Եւ հրձիգ արար զնոսա. յայնմ ամրի այրեցան արք ՚ի հրոյ իբրև երկու հազար։ Եւ ինքն դարձաւ ՚ի կողմանս Յրէաստանի խաղաղութամբ*։

ԼԳ ¹¹Եւ Պտղոմէոս Աբբուբեանց՝ էր կացուցեալ ՚ի կողմանցն դաշտին յերեքով. և ունէր նա արծաթ և ոսկի յոյժ*։ ¹²Չի էր նա փեսայ քահանայապետին։ ¹³Եւ հպարտացաւ ՚ի սիրտ իւր, մեծամտեաց ՚ի խորհուրդս իւր, և կամէր տիրել ՚ի վերայ կողմանցն գաւառին. և խորհուրդ խորհէր նենգութեամբ ՚ի վերայ Շմաւոնի և որդւոց նորա, ջնջել զնոսա ՚ի միջոյ*։ ¹⁴Եւ Շմաւոն շրջէր ՚ի կողմանս գաւառացն. խնամէր և տեսանէր զպետս նոցա. և եկն էջ յերեքով, ինքն և Մատաթի և Յուդա՝ և որդիք նորա. յամին հարիւրորդի եւթանասներորդի եւթներորդի, յամսեանն մետասաներորդի՝ այս ամիս շաբաթ է*։ ¹⁵Եւ ընկալաւ զնոսա Պտղոմէոս ՚ի մեծարանս նենգութեամբ ՚ի քաղաքի անդ Դովրայ զոր շինեաց, և արար ուրախութիւն կոչնոցն։ Անդ ՚ի դարանի՝ առնէր արս*։ ¹⁶Եւ իբրև կերան և արբին Շմաւոն և որդիք իւր, արբեցան. յարեալ Պտղոմէոս թաքուցելովքն հանդերձ, առին զէնս իւրեանց, և մտին ՚ի վերայ Շմաւոնի. և սպանին անդէն ՚ի տաճարի անդ զնա՝ և զորդիս իւր՝ և զժառայսն որ ընդ նմա էին*։ ¹⁷Եւ արարին անօրէնութիւն մեծ. և հատուցին չար փոխանակ ընդ բարւոյ*։ ¹⁸Եւ գրեաց Պտղոմէոս առ արքայն զի զօր ՚ի թիկունս արձակեսցէ նմա, զի ՚ի ձեռս տացէ նոցա զքաղաքսն իւրեանց՝ և զհարկն*։ ¹⁹Չկէսն արձակեաց ՚ի կողմն Գազարայ՝ բառնալ անտի զՅովհաննէս։ Եւ գրեաց նա առ զօրագլուխսն զի եկեսցեն և առցեն ՚ի նմանէ ոսկի և արծաթ և պարգևս բազումս։ ²⁰Եւ այլս

* *Ոսկան.* ՚ի վերայ Կենդեբոսեայ։

* *Ի լուս.* Գային ընդդէմ նոցա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ.*։

* *Ոսկան.* Հայեցաւ և ետես զզօրսն եթէ... զկնի փոխեցան։ *Ուր ոմանք.* Չկնի նորա փողեցան։

* *Ոսկան.* Եւ անկան ՚ի նոցանէ։

* *Բազումք.* Յամուրսն։ յայնմիկ խոց մնայր և Յուդա։

* *Ոսկան.* Եւ մեկնեցան նոքա ընդ։ *Ոմանք.* Յայնմ այրեցան արք ՚ի հրոյ իբրև արք եր։

* *Ոմանք.* Աբուբեանց՝ էր կացուցեալ կողմանց։ *Ուր Ոսկան.* Դաշտին Երիքովի։

* *Ոմանք.* Եւ հպարտացաւ սիրտ իւր։

* *Ոսկան.* Այս է ամիս շաբաթու։

* *Ոմանք.* Ի քաղաքի անդ Դովքեայ՝ զոր... անդ ՚ի վարանի առնէր արս։

* *Ոմանք.* Կերան արբին Շմաւոն որդիք իւր՝ և արբե... առին զզէնս իւրե։

* *Ոսկան.* Փոխանակ բարւոյ։

* *Ոմանք.* Նմա. և ՚ի ձեռս տացէ նոցա... և զհարկս։ (19) Չկէս արձակեաց։

արձակեաց յերուսաղէմ, զի աճապարեսցեն՝ հասցեն առցեն զլեառն տաճարին: ²¹Այր մի պնդեցաւ յառաջագոյն ՚ի Գազարա, գո՛յժ ետ Յովհաննու՝ թէ կորեալ հայր նորա և եղբարք իւր, և զքէն ևս յղեալ է նենգութեամբ զի սպանցէ՛ զքեզ*։ ²²Իբրև լուաւ՝ զարմացաւ յոյժ և յիմարեցաւ, և ըմբռնեաց զարսն զայնս և անդէն սպան զնոսա, իբրև գիտաց թէ նենգութեամբ եկեալ են կորուսանել զնա: ²³Եւ այլ ինչ բանք որ իցեն զՅովհաննէ՝ վասն մարտի պատերազմաց՝ կամ այլոց քաջութեանց, կամ շինուածոց պարսպաց, կամ գործոցն բարութեան. ²⁴այն ամենայն գրեալ է ՚ի մատեանս քահանայից, յորմէ հետէ եկաց նա քահանայապետ զկնի հօր իւրոյ:

Կատարեցաւ Առաջին Մակարայեցիքն՝

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԱՅԵՑԻՈՅՆ

Բազումք ՚ի Յրէից իջին յեգիպտոս ո՛չ միայն ՚ի մնացելոցն յորժամ գերեաց Նաբուքոդոնոսոր, այլ և յետ դարձին զկնի յոլով ժամանակի. նախ քան զգրուիլն նոցա յերեսաց երևելոյ Անտիոքայ՝ Պտղոմէոս Ղազոսեանց զբազումս ՚ի Յրէից խարդախութեամբ իջոյց յեգիպտոս, առ որս զայս գրեն ՚ի Յրէաստանէ: Իսկ ժամանակս զոր յետ սկզբան գրոցս նշանակէ, թուի թէ նոյն է Յունացն զոր և Առաջին գիրքն ՚ի կիր առնու. կամ թէ աստ զեգիպտացւոցն ասէ, որ տասն ամաւ յառաջ սկսանի յետ մահուն Աղէքսանդրի: Այլ Դեմետրիոս՝ Ասորւոց թագաւորեաց. յետ Անտիոքայ Եպիփանեայ և որդւոյ նորա: Իսկ Յասոն՝ եղբայր Ոնեայ առ Անտիոքաւ Եպիփանեաւ շորթեաց զքահանայութիւնն յինեայ, զոր յետոյ յիւրում տեղւոջ պատմէ: Քանզի զժամանակսս զոր իսկզբան աստ դնէ ո՛չ զիրացն լինելոյ, այլ զգրոցս գրելոյ պարտ է իմանալ. վասն որոյ զկանուխ եղելոց իրացն՝ յետ ժամանակի գրելովս ՚ի կարծոյ նշանակէ: Իսկ Արիստաբուղոս Յրէայ և փիլիսոփոս վարդապետ էր Փիլոմետոր Պտղոմէայ Եգիպտացւոց արքայի, որ առ Անտիոքօք և Դեմետրեաւ Ասորւոց թագաւորօք, և ևս աւելի եկեաց. և որք ընդ Արիստաբուղեայ, առ որս զայս գրեն ՚ի Յրէաստանէ: Նախ՝ ՚ի կարծոյ յիշեցուցանեն զվիշտսն զոր հասոյց Անտիոքոս Եպիփանէս՝ կողոպտելով և պղծելով զտաճարն, զոր և Առաջին գիրքն պատմեաց, և այս գիրք յիւրում տեղւոջն պատմելոց է: Բայց զոր ասէս թէ սատակեցին զմտեալսն ՚ի տաճարն զառաջնորդն զնդան, ո՛չ զԱնտիոքոս, այլ ՚ի նորայոցն զայլ ոք: Իսկ իբրև պղծեաց զտաճարն Անտիոքոս յետ երից ամաց ամայութեանն՝ ՚ի չուելն Անտիոքայ ՚ի Պարսս՝ ուստի ո՛չ դարձաւ. իբրև յաղթեաց Յուդա զօրաց նորա՝ սրբեաց զտաճարն, զոր մօտ ՚ի սկիզբն գրոցս յիշէ՝ աստ ՚ի կարծոյ. և դարձեալ յիւրում տեղւոջն պատմելոց է ըստ առաջնոյ գրոցն:

* Այլք. Չի սպանցեն զքեզ:

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Գիրք Առաջին Մակարայեցւոց. և ոմանք. Կատարեցաւ Առաջին զլուխս Մակարեացւոց:

Եւ զի յիշէ աստ 'ի սկզբանս զհանգամանս հրոյ սեղանոյն վառման, զայն ասէ, զոր յետ դարձի գերութեանն նախ քան զշինել զտաճարն՝ միայն սեղան կանգնեալ, ջրովն վառեցաւ հուրն, որպէս առ Մովսիսիւ և Սողոմոնիւ: Իսկ Նեէմի՛ն, զոր աստ ասէ, այլ Նեէմի է. կամ զՅեսուայ Յովսեփեկեանց ասէ, թերևս երկանուն էր, կամ մանաւանդ զԵզրէ է կարծել, զորմէ ասէ թէ զամենայն մատեանս մարգարէիցն և զպատմութիւնս 'ի մի վայր գումարեաց. ըստ որում և յետոյ Յուդա Մակաբէ յետ սրբելոյ զտաճարն՝ ժողովեաց զգրեանսն, զորս օրինակ տալ ասէ պատմագիրս որոց յեգիպտոս Յրէից. զի ակն ունէին ժողովելոյ ցրուեալ Յրէիցն: Յայնս վայր հասուցեալ զպատմութիւնս, խոստանայ այժմ պատմագիրս վասն Յուդայի Մակաբեայ և եղբարց նորա. զորոց ո՛չ այս Յասոն 'ի հինգ գիրս բովանդակեալ զպատմութիւնս, 'ի մի գիրս աստ համառօտել վասն դիւրահասութեան: Սկիզբն առնէ 'ի ժամանակէն Ոնեայ քահանայապետի և Սելևկեայ Ասորոց արքայի, որ մետասան ամ թագաւորեաց նախ քան զԱնտիոքոս Եպիփանէս: Ձի զայս մետասան ամս կանխագոյն սկսանի այս պատմագիրս քան զԱռաջին գրոցն Մակաբայեցոց, այսինքն՝ զժամանակս Սելևկեայ. ուստի իջուցեալ զգրոյցն յԱնտիոքոս Եպիփանէս, է՛ ինչ զոր համաձայն Առաջնոյ գրոցն պատմէ, և է՛ ինչ, զոր աւելի, որպէս զեղիագարայ քահանայի, և զԵւթն որդւոցն Շամունեայ, և զայլ քաջութիւնս Յուդայ մինչև ցսպանումն Նիկանովրայ 'ի պատերազմին, զոր մղեաց Յուդայ, ուր և աւարտէ զգիրս զայս. զի ո՛չ հասուցանէ զպատմութիւնս մինչև ցՅովնաթան և ցՇմաւոն՝ որք յետ Յուդայի տիրեցին:

Գլուխք Երկրորդ Մակաբայեցոց

- ա. Աղօթք Յրէաստանեայց 'ի վիրայ Յրէից որք յեգիպտոս:
- բ. Ձի յաւուրս Դեմետրի գրեցին վասն չարեացն Յասոնեայ որ առ Անտիոքաւ, և պղծելոյ զտաճարն. զոր սրբեալ տօնեցին, զի և նոքա տօնեցեն զքսան և հինգն Քասղև ամսոյ:
- գ. Վասն հրոյն զոր թաքուցին 'ի ժամանակի գերութեանն և տապանակին. և թէ ո՞րպէս գտաւ և վառեցաւ 'ի սեղանն յետ դարձին, և զի ցանգեաց Կիրոս զտեղին:
- դ. Ձի 'ի մի՛ գիրս աստ ժողովէ զհինգ գիրսն Յասոնի վասն Մակաբեանց:
- ե. Ձի զառաջինն պատուէր զտաճարն Սելևկիոս արքայ, իսկ 'ի բանսարկելոյ անօրէն Սիմոնի՝ խորհրդով Ապողոնի, առաքեն զՅեղիոդորոս կողոպտել զտաճարն. և եթէ զինչ անցք յԱստուծոյ անցին ընդ Յեղիոդորոս: Եւ զի դեռ ևս Սիմոն ընդ հակառակս էր Ոնիայ արդարոյ, մինչև արգելուլ զնա յամուրն Դափնէ:
- զ. Թագաւորեաց անօրէն Անտիոքոս, 'ի նմանէ Յասոն եղբայր Ոնիայ ա՛ռ իշխանութիւն չքահանայութեան. և զՅրէայսն ինքն 'ի հեթանոսական օրէնս մարգէր. զոր և Առաջին գիրքն պատմէ:
- է. Անտիոքոս յետ յաղթելոյ Փիղոմետոր Պտղոմէի իբրև դարձաւ՝ եհան զքահանայութիւնն 'ի Յասոնայ և ետ Մենեղաւեայ եղբօր Սիմոնի, և Յասոն փախստեայ յԱմոնացիսն անկանէր:
- ը. Անօրէն Մենեղաւոս կաշառեաց զԱնդրոնիկոս և սպան զՈնիա. իսկ 'ի

բողոքել բազմաց վասն այնր առ Անտիոքոս՝ հատին զգլուխն
Անդրոնիկեայ:

թ. Ձի՛ ՚ի ձեռն Լուսինաքեայ մեծամեծ չարիս գործեր Մենեղաւոս. ընդ
որում ՚ի սուտ համբաւ զԱնտիոքայ վստահացեալ Յասոն, ՚ի մարտ
եկեալ ընդ Մենեղեայ, մեծամեծ չարեաց պատճառք Յրէից լինէին. յորում
և Յասոն փախստեայ յեգիպտոս սատակիր:

ժ. Մեծամեծ չարիքն զոր հասոյց Անտիոքոս Յրէից և տաճարին
սպանմամբ և վաճառելով, և յաւուր շաբաթու կոտորմամբ:

ժա. Յուդա Մակաբէ փախստեայ լինի յանապատ. և Անտիոքոս
բռնադատէր զազգն ՚ի կռապաշտութիւն:

ժբ. Վկայաբանութիւն Եղիազարու. և եւթն որդւոցն Շամունի:

ժգ. Ջօրս ժողովեալ Յուդա հարկանէր զթշնամիսն ընդ Տիմոթեայ և
Գեորգեայ, և Նիկանովրայ ճակատ տուեալ յաղթեր. յորմէ Նիկանովր
փախստեայ եղեալ՝ պատմէր զօգնութիւնն Աստուծոյ առ զօրսն Յրէից:
ժդ. Անտիոքոս վատթարեալ դառնայր ՚ի Պարսից սպառնալով Յրէից. և ՚ի
բարկութենէ Աստուծոյ որդնեռաց ախտիւ հարեալ, գրէ աղաչանս առ
Եբրայեցիս. և ինքն դա՛ռն մահուամբ սատակի:

ժե. Սրբեաց Յուդա զտաճարն յետ երից ամաց պղծութեանն. զո՛րք օր
տօնելով ըստ աւուրց տաղաւարահարացն:

ժզ. Թագաւորեաց Անտիոքոս Անտիոքեան. և Մակաբէ եհար
զեղովմայեցիս և քակեաց զանուրս նոցա: Եւ ընդդէմ Տիմոթեանց
ճակատեալ՝ երկնաւոր նիզակակցօք յաղթեր, և զՏիմոթէոս կալեալ
սպանանէր:

ժէ. Գա՛յր Լիւսիաս ութ բիրուք ՚ի վերայ Երուսաղեմի. և անդէն հրեշտակ
հասեալ՝ զօրացան Մակաբեանք. Լիւսիաս մազապուր փախստեայ
եղեալ՝ միջնորդ հաշտութեան առ թագաւորն և խաղաղութեան թղթոց
առի՞թ Յրէիցն լինէր, զոր և Յռոմայեցիք որ անցին առ Անտիոքոս զնոյն
հոգացան:

ժը. Իշխանքն Անտիոքոս ո՛չ տային Յրէիցն հանգչել. և Յոպպէացիք
դաւաճանեալ զՅրէայսն որ ընդ ինքեանս ՚ի ծով ընկլուզին. իբրև գիտաց
Յուդա, այրեաց զնաւահանգիստն Յոպպէացւոց և զՅամնէացիս:

ժթ. Դիմեալ Յուդա ՚ի վերայ Տիմոթեայ՝ արար ընդ հանդիպեալ Տաճիկսն
խաղաղութիւն, և զքաղաք մի Դեկասպ անուն չարաւ սատակեաց, և
զզօրսն Տիմոթեայ հարեալ՝ զՏիմոթէոս ձերբակալեաց. իսկ նա
խոստացեալ՝ բարի առնել Յրէից զերծաւ. և ստեալ ուխտին չար ընդ
բարւոյ հատոյց:

ի. Հարկանէ Յուդա զԵփրոն քաղաք, յորում էր Լիւսիաս. և ապրեցուցանէ
զՍկիւթուպօլիս զերախտաւորս Յրէից:

իա. Պատերազմեալ Յուդայ ընդ Գեորգեայ՝ բազում կոտորածք եղեն, և ՚ի
թաղելն զդիակունս Յրէիցն՝ գտին ՚ի սպանեալսն՝ յուռութս ուլունս և այլ
բժըժանս հեթանոսաց. և ՚ի յոյս յարութեան վասն մեղացն այնոցիկ տայր
պատարագս յԵրուսաղէմ:

իբ. Յրէաստան հասեալ Անտիոքոս՝ զՍիմոն Յրէայ մոխրաւ հեղծուցանէ,
և ինքն կամէր ջնջել զՅրէայս. զորոյ զդէմ ունի հզօրապէս Յուդա, մինչև
լուեալ Անտիոքայ զապստամբելն Փիլիպպոսի՝ հաշտեալ ընդ Յրէայս
պատուեաց զտաճարն և զՅուդա, և դարձաւ անդրէն:

իգ. Դեմետր արքայ դիմեալ 'ի վերայ Անտիոքու, Աղկիմոս մերժեալն 'ի քահանայութենէ, չարախօսեր առ նա զՅուդայէ. և նա առաքէ զՆիկոնոս վր ըմբռնել զՅուդա, և ունել զաշխարհն: Պարտեալ Նիկանովր 'ի Յուդայէ փեսայացոյց զնա՝ նենգաւ ըմբռնել. և յոչ կարելն զզուէր զքահանայսն, և սպառնայր տաճարին. ուր և վասն նախանձու տաճարին Հռաքսն զիւրովի չոգաւ. այլ պատերազմ տուեալ Յուդայի և յաղթեալ սպանաւ Նիկանովր, և կախեցաւ ձեռն նորա զաշտարակէ տաճարին:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ*

1

Գլուխ Ա

Ա ¹Առ եղբարս Հրէաստանեայս, որ 'ի կողմանս Եգիպտացւոցդ են. յեղբարց Հրէից՝ յերուսաղէմացւոց, և յեղբարց Հրէաստանեայց առ ձեզ ողջոյն. խաղաղութեամբ բազմաւ՝ ²առատասցի 'ի ձեզ Աստուած. և յիշեսցէ՛ նա զուխտն զոր եդ ընդ Աբրահամու, ընդ Սահակայ, ընդ Յակոբայ, ընդ հաւատարիմ ծառայս իւր: ³Եւ տացէ՛ ձեզ սիրտ յամենայնի պաշտել զնա, և առնել զկամս նորա յանձինս մտադկրս, և 'ի սիրտս կամակարս՝. ⁴բանալ զաչս և զականջս սրտից ձերոց յօրէնս իւր և 'ի հրամանս, առնել խաղաղութիւն՝ ⁵և լսել խնդրուածոց ձերոց. հաճեսցի՛ ընդ ձեզ, և մի՛ 'ի ձեռաց թողցէ զձեզ 'ի ժամանակս նեղութեան: ⁶Եւ արդ՝ այժմիկ կանխեմք մեք յաղօթս մեր վասն ձեր: Բ Յամս քազաւորութեանն Դեմետրի՝ ⁷յամին հարիւրորդի վաթսներորդի իններորդի. մեք Հրէայք գրեցաք զայս առ ձեզ, 'ի նեղութեանն որ հասեալ էր 'ի վերայ մեր: 'Ի ժամանակի անդ յորում եկաց յետս Յասոն և որ ընդ նմա էին 'ի սուրբ գետնոյ և յարքայութենէ անտի. ⁸և հրձիգ արարին զդուռնն, և հեղին զարիւն անբիծ, աղօթս մատուցաք մեք Տեառն, և լուա՛ւ մեզ. և մատուցաք մեք ուխտս և խունկս՝ և պատարագս նաշիօք, և եղաք մեք զհացն յաճախաց առաջի: ⁹Եւ արդ՝ արասցիք դուք զաւուրսն տաղաւարահարաց յամսեանն Քասոն: ¹⁰Յամին ութսներորդի ութերորդի՝ որ յերուսաղէմացւոց, և 'ի ժերակոյտ Հրէաստանեայց, և 'ի Յուդայէ՝ առ Երիստաբուղոս վարդապետ Պտղոմեայ արքայի, որ է ինքն յազգէ քահանայիցն օծելոց սակի, որ են 'ի կողմանս Եգիպտացւոց Հրէայք. ողջոյն ընդ ձեզ և խաղաղութիւն: ¹¹'Ի մեծամեծ վշտացս ապրեալքս յԱստուծոյ, մեծապէ՛ս զոհանամք զնմանէ. որպէս զի՝ զիարդ 'ի մարտ պատերազմի պատրաստեալ էաք ընդ առն քազաւորի. զի նա ինքնին եռացոյց, և եհեղ զայնոսիկ՝ ¹²որ եկեալ պատեալ պաշարեալ պահէին զսուրբ

* Զվերնագիր գրոցս ամենայն օրինակք ունին համեմատ մերումս, բաց 'ի միոջէ որ դնէ՝ Գլուխ Երկրորդ Մակաբեացւոց:

* Յոմանս պակասի. Հրէից՝ յերուսաղէմացւոց, և յեղբարց Հրէաստանեայց առ ձեզ ողջոյն: Ոմանք. խաղաղութիւն. բազմաւ (2) առատասցի առ ձեզ... և ընդ Յակոբայ:

* Ոմանք. Եւ տացէ՛ ձեզ սիրտ յամենայնէ պաշտ... մտադկրս:

* Ոմանք. Սրտից մերոց... և 'ի հրամանս իւր:

* Ոմանք յաւելուն. Յամին հարիւրերորդի ութսներորդի: Որ և այլով գրչաւ նշանակի 'ի լուսանց մերումս: Ոմանք. Առ Արիստաբուղոս... և որ են 'ի կողմ:

* Ոմանք. 'Ի մեծամեծաց վշտացս ապրեալքս Աստուծոյ... զի նա ինքն եռա՛:

քաղաքն: Քանզի 'ի ժամանակի իբրև դիմեաց ինքնին իշխանն 'ի կողմանս Պարսից, ¹³անթիւ անհամար զօրօքն հանդերձ. և անդէն անկան կործանեցան շուրջ զԱնանեայ տաճարաւն. 'ի խորհուրդ յիմարութեան խորհեցան նոքա զԼէւնեայ տաճարաւն*: ¹⁴Ձի իբր բնակութեամբ իմն հասեալ կայր 'ի տեղի անդր ինքնին Անտիոքոս՝ և որ ընդ նմա բարեկամքն էին առնուլ զգանձսն ամենայն իբրև 'ի պատճառս վարձկանաց համարի*: ¹⁵Առաջի արարին քահանայք տաճարին զամենայն: Եւ նա յօժարեաց զալ մտանել սակաւուք 'ի ներքս. իբրև եղև միջամուտ սրահիցն՝ համարձակ զդրունսն առին զարտաքինս պարսպացն ընդ որ եմուտ Անտիոքոս. ¹⁶և բացին զպատուհանսն գաղտնիս որ ընդ առաստաղակալօքն էին, և ընդ այնոսիկ սկսան հոսել վիրգս մեծամեծս, և անդէն զառաջնորդն զնդաւն հանդերձ սատակեցին: Իբրև զնոսա 'ի ներքս յօշեցին, հանին զկառափունսն և ընկեցին 'ի պարսպէն 'ի մէջ զօրացն*: ¹⁷Վասն այսր ամենայնի օրհնեալ է Աստուած որ ետ 'ի ձեռս զամպարիշտս: ¹⁸Արդ մեք իբրև կամեցաք 'ի քսաներորդի հինգերորդի 'ի Քասղև ամսեանն սրբել զտաճարն. լաւ համարեցաք զայս և ձեզ ցուցանել, զի և դուք արասջիք զայս իբրև զօրէնս տօնիցն տաղաւարահարացն. և հրոյն որպէս շինեաց Լէւնի զտաճարն և զսեղանն, յորում մատուցանէր զպատարագսն ողջակիզացն*:

Գ ¹⁹Քանզի 'ի ժամանակի յորում վարեցան հարքն մեր 'ի կողմանս Պարսից որ այնց ժամանակաց պաշտօնասէր քահանայք էին, առին 'ի սեղանոյ անտի զհուրն 'ի ծածուկ, և տարան թաքուցին 'ի խորշս կողմանցն անջուր ջրհորոցն. անդ զգուշութեամբ զտեղին հետախաղաղ ծածկէին, զի ամենայն տեղին աներևոյթ լիցի*: ²⁰Իբրև անցին անք բազումք, իբրև կամք եղեն Աստուծոյ, առաքեաց Լէւնի զհրոյն՝ հրամանաւ Պարսից արքային, զթոռունս քահանայապետիցն այնոցիկ. որոց ծածկեալ էր թաքուցեալ զհուրն զի բերցեն: Նոքա իբրև եկին, պատմեցին և ասեն. Բայ՝ հուր ինչ մեք անդր ո՛չ գտաք, բայց գտաք մեք անդ ջուր դանդաղամած թանձրացեալ*: ²¹Ապա ետ նոցա հրաման երթալ մխոցաւ առնուլ և բերել: Եւ իբրև եղև ժամ պատարագացն ողջակիզաց, հրաման ետ քահանայապետն Լէւնի ցանել զայն 'ի վերայ փայտիցն և պատարագացն*: ²²Եւ իբրև զայս արարին՝ փոքր մի ժամանակ անց 'ի վերայ. և արեգակն շո՛ղ ամպագոյն 'ի վերայ ծագեաց, բորբոքեցաւ բոց հրոյն 'ի վերայ փայտից սեղանոյն՝ և մաշեաց զողջակէզսն, զի սքանչացեալ էին ամենեքեան*: ²³Չայն առին՝ սկսան օրհնել քահանայքն մինչդեռ ողջակէզքն կատարէին. բայց առաջնորդէր Յովնաթան իբրև 'ի բերանոյ Լէւնեայ, և այլքն զկնի կցէին*: ²⁴Եւ էր աղօթիցն օրինակ՝ այս: Տէր Տէր Աստուած ամենայն արարածոց, ահեղ, հզօր, ճշմարիտ, արդար և ողորմած. դու միայն թագաւոր քաղցր. ²⁵դու միայն

* *Ոմանք.* Շուրջ զԼէւնեայ տաճարաւն:

* *Ոմանք.* 'Ի պատճառս վարձանաց համարի:

* *Ոմանք.* Եւ ընդ այն սկսան հոսել զվիրգս: *'Ի լուս՝.* Հարին զկառափունսն:

* *Ոմանք.* 'Ի հինգերորդի Քասղև ամս... արասջիք իբրև զօրէնս տօնիցն և տաղա՛: *Յօրհնակին.* Շինեաց Լէւնէի:

* *Ոմանք.* Թաքուցին 'ի խորս կողմանց... զի ամենևին տեղին անէ՛:

* *Այլք.* Որոց ծածկեալ թաքուցեալ էր: *Ոմանք.* Ձի բերիցեն... մեք անդ ո՛չ գտաք. բայց գտաք մեք անջուր դան՛:

* *Ոմանք.* Երթալ մխոց առնել և բե՛:

* *Ոմանք.* Եւ արեգակն շողամպագոյն 'ի վերայ ծագ՛:

* *Ոմանք.* Չայն առին՝ սկսան օրհն՛:

ես որ մատակարարես ամենայնի զամենայն. դու միայն ես արդար և ճշմարիտ, ամենակալ յաւիտենից. որ ապրեցուցանես զԻսրայէլ յամենայն չարեաց, որ արարեր զհարսն այնպէս ընտրեալս, և սրբեցեր զնոսա*։²⁶ Ընկալ զպատարագս զայս փոխանակ ամենայն ժողովրդեան քոյ, և պահեա՛ դու զժառանգութիւն քո։²⁷ Սրբեա՛ և ժողովեա՛ զցրուոմն գերութեան մերոյ. ազատեա՛ զայնոսիկ որ կան ՚ի ծառայութիւն անարգելոց և պղծոց. հայեաց ՚ի ծառայս քո. ծանիցեն հեթանոսք՝ թէ դու ես Աստուած մեր*։²⁸ Զար հարուածովք քովք զայնոսիկ որ բռնադատեցին զմեզ՝ հեթանոսք պիղծք և անարգեալք, որ այժմ հպարտացեալ և ամբարտաւանեալ են ՚ի վերայ մեր։²⁹ Եւ տնկեա՛ դու զժողովուրդ քո ՚ի տեղի սրբութեան քոյ, որպէս ասացն Մովսէս*։³⁰ Եւ քահանայքն օրհնէին զօրհնութիւնս իւրեանց։³¹ Եւ ողջակէզքն տակաւ վառեալ բորբոքեալ մաշէին։ Եւ իբրև վախճան եղև պատարագացն, զջուրն մնացեալ հրամայեաց Նեէմի զվիմօքն արկանել։³² Եւ իբրև այս եղև, առաւել բոցն ՚ի վերայ բորբոքեցաւ. և իբրև բոցոյն նշոյլք եղեն, դարձեալ միւսանգամ վառեցաւ բորբոքեցաւ սեղանն, և որ ինչ էր մնացեալ և այն մաշեցաւ*։³³ Եւ իբրև իրքն այն համարձակ յայտնեցան, և բանքն ՚ի թագաւոր անդր հասին, և եկին տեսին զտեղին յորում զհուրն թաքուցեալ էր քահանայիցն գերելոց, ջուր բղխեաց. ուստի և քահանայքն որ զՆեէմեաւն էին զողջակէզսն իւրեանց կատարեալ սրբեցին*։³⁴ Ապա իբրև եհաս թագաւորն յիրացն հաստատութեան վերայ՝ հրամայեաց շուրջ փակել զտեղին, և տաճար շինեցին*։³⁵ Եւ ում կամէր շնորհս առնել թագաւորն՝ անտի՛ տայր պարգև. և ում տայր՝ բազում ինչս մատուցանէին նմա։³⁶ Եւ անուն եղին նմա որ զՆեէմեաւն էին՝ Նեփթէ՛, որ թարգմանեալ կոչի սրբիչ։ Այլ կարդային զանուն նորա բազումք, Եփրաթա*։

2

Գլուխ Բ

¹Եւ գտանի այս գրեալ ՚ի մատեանս առաջինս. եթէ Երեմիա մարգարէ հրաման ետ առնուլ ՚ի հրոյ անտի յայնմանէ յետոյ՝ նոցա՝ որպէս ցուցանի. և ետ պատուէր մարգարէն զաւակի նոցա որ յետ նոցա էին*։² Եւ օրէնս եղ նոցա զի մի՛ մոռացին զհրամանս Տեառն, և մի՛ մոլորեսցին ՚ի խորհուրդս իւրեանց, յորժամ տեսանիցեն կուռս քանդակեալս, պատկերս կերպարանեալս ոսկեղէնս և արծաթեղէնս, և որ զնոքօք զարդ ինչ իցէ*։³ Աղաչէր պատուիրանօքն, մի՛ մոռանալ զօրէնս ՚ի սրտից իւրեանց*։⁴ Եւ էր՝ գրեալ ՚ի մատեանս անդ՝ այսպէս. իբրև զի զվրան ժամուն՝ և զտապանակ կտակարանացն հրամայեաց մարգարէն ըստ երկնաւոր հրամանին ընդ իւրեանս շրջեցուցանել. իբրև ելաներ

* *Ոմանք.* Որ Մատակարարես ամենայն զամենայն... զհարսն զայնս ընտրեալս։

* *Ոմանք.* ՚ի ծառայութեան անարգե՛... և ծանիցեն։

* *Ի բազումս պակասի.* Քոյ, որպէս ասացն Մովսէս։

* *Ոսկան.* Բոցն ՚ի վեր բորբոքեցաւ։

* *Ոմանք.* Եւ բանքն ՚ի թագաւորէ անդր հա՛։

* *Ոմանք.* Զաստատութեամբ ՚ի վերայ։

* *Ի լուս՛.* Նեփթա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։* *Ոմանք.* Այլ կարդացին զա՛։

* *Ոմանք.* Յետնոց նոցա, որպէս ցուցանէ... որ յետ նոցայն էին։

* *Ոմանք.* Եւ օրէնս ետ նոցա։

* *Ոմանք.* Աղաչէր պատուիրանաւն։

Մովսէսն ՚ի լեառն անդր տեսանել զժառանգութիւնն Աստուծոյ*։ ⁵Արդ եկն եհաս Երեմիա մարգարէ ՚ի տեղի՝ անդր. և անդ եգիտ այրս ամուրս անտառախիտս. զվրան ժամուն, և զտապանակն կտակարանաց, և զսեղանն խնկոց անդ տարեալ դներ ՚ի ներքս, և զդրունսն ինքնին առարկանէր*։ ⁶Եւ անդէն մատեան որ ընդ նմայն իսկ էին նշանակել զտեղին, և ամենկին ճանապարհ ՚ի տեղի անդր ո՛չ կարացին գտանել*։ ⁷Իբրև զգաց Երեմիա՝ պատուհասել սկսաւ զնոսա՝ և ասէ. Ի՞բր ո՛չ գիտէք՝ եթէ անծանօթ հրաման է զտեղիդ կացուցանել, մինչև հաճեսցի Տէր տերանց ընդ արարածս իւր, և ժողովել հրամայեսցէ Աստուած զժողովս ժողովողեան իւրոյ*։ ⁸Եւ ապա Տէր յայտնեսցէ զայս. և երևեսցին փառքն Տեառն ՚ի սիւն ամպոյ, որպէս ՚ի ժամանակսն Մովսիսի։ Որպէս և Սողոմոն աղաչեաց զի տեղին սրբեսցի մեծապէս Տեառն*։ ⁹Յայտ իմն այսպէս առնէր, թէ իմաստութեան խորհրդով մատուցին զպատարագս նաւակատեաց և զկատարելեաց տաճարին։ ¹⁰Որպէս և Մովսէսն եկաց յաղօթս առ Տէր, և էջ հուր յերկնից և մաշեաց զփայտն, և զողջակէզս պատարագացն. սոյնպէս և Սողոմոն եկաց յաղօթս, և էջ հուր՝ և մաշեաց զողջակէզսն ՚ի վերայ սեղանոյն։ ¹¹Ձի Մովսիսի չէր հրամայեալ ուտելի առնել զվասն մեղացն, իջանէր հուրն և մաշէր զպատարագսն. ¹²սոյնպէս և Սողոմոն առնէր զայն զուրբ օրն ՚ի գլուխ։ ¹³Եւ խնդրէին ՚ի հին մատեանսն ՚ի գիրս հարցափորձից, որ առ ամօքն Նեէմեայ եղեալ. և իբրև զիւր եղեալ զայս ամենայն ժողովէր, և զայլ մատեանս թագաւորաց և մարգարէից, և զԴաւթի ինքն ՚ի գլխովին, և զայլ հրովարտակս թագաւորաց՝ որ վասն ինչ ինչ ՚ի պատիւ տաճարին տուեալ էր, զամենայն ՚ի մի վայր կուտէր*։ ¹⁴Սոյնպէս և Յուդա զամենայն կործանեալն ՚ի պատերազմաց անտի և զցրուեալն ՚ի մի վայր ժողովեաց. և այժմ առ մեզ բովանդակեալ պահի*։ ¹⁵Եւ արդ որպէս զհարդ և պիտոյ իցէ ձեզ՝ յղեսցիք, և մեք տացուք բերել ձեզ։ ¹⁶Եւ զայն ինչ բարի գործեսցիք, եթէ զաւուրս տօնիցն հանապազորդ առնիցիք*։ ¹⁷Այլ ինքն Աստուած որ փրկեաց զամենայն ժողովուրդ իւր, և դարձոյց զամենայն ՚ի ժառանգութիւն, զարքայութիւն և զքահանայութիւն՝ և զսրբութիւն. ¹⁸որպէս և խոստացաւն ՚ի ձեռն կտակարանացն. յուսամք ՚ի Տէր եթէ հուպ ընդ հուպ ժողովեսցէ ՚ի սուրբ տեղին*։ ¹⁹Ձի փրկեաց իսկ զմեզ ՚ի մեծամեծ չարեաց, և զտեղին ՚ի սրբութիւն դարձոյց։

Դ ²⁰Այլ վասն Յուդայ Մակաբեանց, և եղբարցն սորին, և տաճարին մեծի՝ սրբութեան, և սեղանոյն նաւակատեաց. ²¹և կամ վասն ընդ երևեալ Անտիոքայ, կամ ընդ քաջահայր որդի նորա ճակատամարտս*։ ²²Կամ որ ինչ յերկնից յայտնութիւնք եղեն. այն որ ինչ վասն քաջութեան պնդութեան օրինացն, և կամ

* *Ոմանք.* Իբրև զվրան ժա՛... ընդ իւրեանց շրջեցուցանել։

* *Ոմանք.* Անդր տարեալ դներ... ինքնին առարկանէր։

* *Ոսկան.* ճանապարհի տեղի անդր։

* *Ոմանք.* Իբրև ո՛չ գիտէիք եթէ։ *Ոսկան.* Եթէ յանծանօթ հրամանէ։

* *Ոմանք.* Ի սիւն ամպոյն՝ որպէս և ՚ի ժամանակս... սրբեսցի Տեառն։

* *Այլք.* Եւ զԴաւթի ինքնին գլխովին։ *Ոմանք.* Հրովարտակս ՚ի թագաւորաց... ՚ի պատիւ թագաւորաց ՚ի տաճարին եղեալ էր։ *Ի լուս՝.* Տաճարին տուժէր. *համեմատ ոմանց ՚ի բնաթ՝.* որ ունին՝ տուժեալ էր։

* *Ոմանք.* Եւ զցրուեալսն... և այժմ բովանդակեալ պարհի։

* *Ոմանք.* Բարի գործիցիք։

* *Ոմանք.* Որպէս խոստացաւ նա ՚ի ձեռն։

* *Ոմանք.* Եւ վասն ընդ երևել Անտիոքայ։

որ զքաջութիւնն ՚ի մտի դնել. և սակաւութ զբազումս որ զաշխարհս յաչս դնէին, զխուժողութ ազգս հալածել*։²³Կամ զհոյակապ ընդ ամենայն տիեզերս զշքեղ տաճարն վերստին շինել, կամ զմեծ քաղաքն ամենայնիւ յամենայնէ յազատութիւն հասանել. կամ զի ամենայն քաղցրութեամբ հեզութեամբ, խաղաղութեամբ Տեառն Աստուծոյ ընդ մեզ հաճ լինել*։²⁴Ձայն ամենայն որ ինչ միանգամ ՚ի ձեռն Յասոնեայ Կիրենացոյ ՚ի հինգ զլուխս դպրութեան ցուցեալ է. զայս ամենայն ջանասցութ ՚ի մի զլուխ հրովարտակիս կարճ ՚ի կարճոյ ցուցանել։²⁵Ձի հայեցաք մեք ՚ի խուռն մեծաթիւ համարոյ բանիցդ, և որ ՚ի ներքս ծանրութիւն թուիցի՝ որ կամիցին մխել ՚ի բանս մատենիցդ*։²⁶Այդոքն ՚ի դոյն թաւալել վասն թանձրութեան հիւթոյ խորութեան բանիցդ. հոգացաք մեք առնել ընթերցանելեացն զքօսանս իմաստնոցն՝ յիշատակ առանց աշխատութեան, և ամենեցուն անեղծ անարատութեան*։²⁷Եւ մեզ՝ որ զաշխատութիւնս զայս յանձն առաք վասն համառօտ բանիս, մի՛ դիւրին ինչ ջան համարիցիք, կամ սակաւ քրտանց և տքնութեանց արժանի։²⁸Որպէս որ զի պատրաստիցի առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց. մեծահաց գործիցէ զընկերացն ուրախութիւն, և ո՛չ զիւր դիւրութիւն խորհիցի. սակայն վասն բազմացն հաճութեան ջան յանձն առաք։²⁹Ձճշդէլն և զճշմարտելն՝ զայն առաջնոյն թողաք. զեղչելն և զբազկելն, և զկարճառօտ բանն ՚ի համառօտ կացուցանել, զայն մեք ո՛չ դանդաղեցաք։³⁰Որպէս վասն հասարակաց շինութեան ապարանից՝ բազմաց զգործ բաժանեալ, բայց սկիզբն և կատարածն շինուածոցն ՚ի բուն ճարտարապետ անդր հայի. այլ ծեփելն և գունելն և արծնելն և նկարելն, այն ՚ի զարդարի՛չ անդր հայի*։³¹Սոյնպէս և մերս. հարցանելն և փորձելն և քննելն, և զհետ վարել ճշմարտութեան բանիցն, և զխորին խորհուրդս խորագիտութեամբ ՚ի վեր բերել. որ առաջնորդ եղև այնց դպրութեանց՝ ՚ի նմանէ՛ խնդրելի է*։³²Այլ զհամառօտ կարճառօտ բանից՝ որպէս այժմիկ պատմելոյ յանձն առեալս իցէ, յինէն պահանջելի է*։³³Արդ՝ աստի՛ սկիզբն արասցութ բանիցդ պատմել խոստացելոց, ա՛յսչափ ինչ զօղեսցութ յառաջին անդր։ Բայց սակայն և ա՛յս անագորոյն մտաց է, զճառս մատենին յառաջագոյն երկայնել, և զմատեանն ՚ի զլխովին համառօտ կարճառօտ պատմել*։

3

Գլուխ Գ

Ե՛ 1Սրբոյ քաղաքին ամենայն խաղաղութեամբ բնակելոյ, և օրինացն ճշմարտութեան, իբրև զի գեղեցիկ իմն պահեցելոյ՝ վասն ՈՆԵԱ՛յ

* Ոմանք. Որ զաշխարհ յաչս դնէին, զխուժողութ ազգս:

* Ոմանք. Յազատութիւն հանել:

* Ոմանք. Թուեսցի, որ կամի մխել:

* Ոմանք. Այդրին ընդ դոյն թաթաւեալ վասն թանձ*:

* Ոմանք. Ձգործ բաժանել... և կատարածն շինածոյն:

* Ոմանք. Որ առաջնորդ եղեն այցն:

* Այլք. Բանից, որ այժմիկ:

* Ոսկան. Համառօտ և կարճա՛:

քահանայապետի բարեպաշտ չարատեաց սրբութեանն*։ ²Ձի իբրև հարկ իմն լինէր և թագաւորացն ինքնին մեծարել զերևելի տաճարն, հրովարտակօք պատարագօք և տրօք բազմօք*։ ³Սինչև Սելևկոս արքայ կողմանցն Ասիացոց ՚ի սպաս պաշտաման կայր, և յիւրոց մտից զամենայն սպաս պաշտաման ՚ի պատարագս ողջակիզացն ծախէր։ ⁴Սիմովն ոմն անուն ՚ի Բաղգեղ գնդէ անտի առաջնորդէր տոհմին իւրոյ, ընդ հակառակս ել քահանայապետին՝ վասն իւր ՚ի քաղաք անդր անօրինելոյ*։ ⁵Իբրև յաղթել ինչ և առնել Ոնեայ ո՛չ կարաց, եկն եկաց առաջի Ապողոնի Դրասեանց՝ որ ըստ այնմ ժամանակի Ստորին Ասորոց և Տաճկաստանի սպարապետ էր*։ ⁶Ե պատմեաց նմա եթէ բազում են այն գանձք՝ որով լցեալ պահեն զտուն զանձուցն յերուսաղէմ, և ազգի ազգի գանձիցն զթիւ իսկ և զհամար՝ ո՛չ մարթէ՝ ոք ունել. և պարտ՝ այնպէս էր՝ ասէ, ընդ ձեռամբ արքայի ՚ի սպաս զոհիցն պաշտել զայն*։ ⁷Յանձն առին Ապողոնիոս և թագաւորն, որպէս և նմա՝ պատմեցաւ վասն զանձուցն ցուցանել։ Նա յառաջ կոչեաց զՅեղէոդորոս զհանդերձապետ իւր, հրաման ետ նմա՝ զայսչափ գանձս հանել բերել ՚ի քաղաքէ անտի*։ ⁸Վաղվաղակի չու՝ առնէր խաղայր գնայր Յեղէոդորոս, պատճառանօք իբրև Ստորին Ասորոցն և Տաճկաստանի քաղաքացն զաշակերտութեամբ շրջել, բայց ՚ի սրտէ զհրաման թագաւորին վաղվաղակի կատարէր։ ⁹Իբրև եկն եհաս յերուսաղէմ, անդ սիրով քահանայապետն և քաղաքն ամենայն առատութեամբ ընկալան զնա։ Սկսաւ նա պատմել նոցա որպէս ցուցին արքայի՝ և ասէ. Ո՛, կամ ընդէր, և կամ ո՞րպէս ամբաստան եղեն զձեռն առ արքայի, և կամ արդարև այնչափ գանձք իցեն զոր ասացի՞նն*։ ¹⁰Եկաց յառաջ քահանայապետն՝ և ասէ. Են են արդարև աւանդք այրեաց և որբոց ՚ի պահ եղեալ։ ¹¹Իցեն ևս՝ և Որկանեայ Տուրեանց առն աւագի. այլ ո՛չ եթէ այնչափ որչափ ամբաստանօղ նամակագիրն անօրէն Սիմոն խօսեցաւ։ Ընդ ամենայն թէ քաջ իցեն քանքարք արծաթոյն չորեքհարիւր, և քանքարք ոսկւոյ երկերիւր*։ ¹²Այլ զրկել զհաւատացեալս՝ վասն մեծապատիւ շքեղ ընդ ամենայն աշխարհ ամուր անխաբ տաճարին չիք ինչ հնար*։ ¹³Նա իբրև լուաւ զբանս քահանայապետին՝ զարքունի զհրամանն ՚ի մէջ առնոյր՝ և ասէր. Ի սպան և ՚ի պէտս արքունի երթալ հրաման է գանձիդ այդմիկ*։ ¹⁴Օր և ժամ յայտ առնէր, մտանել համարել առնուլ պատրաստէր ըստ հրամանին արքունի։ Եւ անդ լինէր ո՛չ սակաւ ջան և վտանգ խռովութեան քաղաքին։ ¹⁵Քահանայքն ինքնին թաւալեալ անկանէին առաջի սեղանոյն նովին սրբութեան պատմութեանս. աղաչէին զայն՝ որ վասն աւանդապահ զգուշութեան զօրէնս հաստատեաց. որ զայս ո՛ղջ անարատ յիւրաքանչիւր

* Ոմանք. Բնակելոց. կամ՝ բնակեցելոյ... պարիեցելոց... ՚ի բարեպաշտ չարատ։ Ուր Ոսկան. չարեաց սրբութեան։

* Ոսկան. Եւ գրովք բազմօք։

* Ոմանք. ՚ի լուսանցս ՚ի վերայ՝ Բաղգեղ, նշանակեն՝ Բենիամինի։

* Ոմանք. Ապողոնիայն Դրասե։ Ուր Ոսկան. Դրասեանցն ըստ այնմ ժա՛... որ և Տաճկաս։

* Ոմանք. Բազում են գանձք... ընդ բռամբ արքայի։

* Ոմանք. Յանձն առ Ապողո՛... որպէս նմա պատմեցաւ վասն գանձիցն... զայսչափ գանձ։

* Ոմանք. Եւ քաղաքն ամենայն ընկալան զնա ամենայն առատութեամբ։

* Ոմանք. Եւ քանքարս ոսկւոյ։

* Ոմանք. Աշխարհամուր անխաբ տաճարիդ չիք։

* Ոմանք. Նա իբրև լսէր զբա՛։

աւանդատուս հասուցանել մարթասցեն*։ ¹⁶Ա՛նդ էր տեսանել զտեսիլ քահանայապետին, և զհալել ՚ի միտս իւր. զի տեսիլն և գո՛յն երեսացն ցուցանէր զսրտին թախծութիւն*։ ¹⁷Ձի իջեալ մածեալ պատեալ պաշարէր զնա ահ և երկիւղ և սոսկումն մարմնոյ. յա՛յնմ ամենայնէ յայտնի էր տեսանելեացն զսրտին տաղտուկ*։ ¹⁸Դարձեալ յիւրաքանչիւր ապարանիցն դասադաս մտանէին ՚ի համաշխարհի խնդրուածս. զի մի՛ յարհամարհանս՝ պատիւ մեծի տաճարին զնասցէ*։ ¹⁹Եւ կանայք քրճագգածք ընդ հրապարակս աշխարէին. արգելականք կուսանաց ՚ի կուսաստանաց անտի ՚ի դրունս և ՚ի պարիսպս ընթանային. և կէսք ընդ պատուհանս արտաքս կարկառէին*։ ²⁰Եւ ամենեքեան առ հասարակ աղօթից բարբառով զձեռս համբարձեալ յերկինս մատունս տատանէին։ ²¹Եւ ան՛դ էր ողորմ տեսիլ տեսանել. զի առ հասարակ անկեալ մարդկանն՝ զաղօթս թաւալելով յերկինս մատուցանել. զմեծապէ՛ս սքանչելի շտա՛պ տագնապի ըստ քահանայապետին կարծեաց։ ²²Եւ նոքա ա՛յնպէս թաւալելով անկեալ առ Ամենակալն կարդային, զաւանդս հաւատացելոցն՝ ՚ի հաւատացեալսն ո՛ղջ անարատ հասուցանել։ ²³Եւ Զեղիողորոս գլխոսնութեան վճիռն գտանէր։ Եւ մինչդեռ նա սպասաւորաւն հանդերձ ընդ գանձի տուն շրջէր. ²⁴որ ՚ի վերայ ոգւոց և ամենայն իշխանութեանց զօրութիւն ՚ի ձեռս իւր ունի, երևո՛յթ մի նշանի մեծ արար, զի ամենեքեան որ իշխեցին մտանել ընդ նմա, լուծան լքան ընդարմացան՝ ՚ի պարտութիւնս վատթարութեան մատնեցան յԱստուծոյ զօրութենէ անտի*։ ²⁵Ձի երևեցաւ նոցա յանկարծակի երիվար մի մեծաշո՛ւք հեծելով հանդերձ, երևելի զարդու ՚ի զէն ոսկի վառելով*։ ²⁶և այլ երկու արք երիտասարդք հզօրեղք ՚ի զարդ գեղեցիկ զարդարեալք առաջի հեծելոյն. որք մատեան վաղվաղակի յաջմէ և յահեկէ, ՚ի մեծամեծ հարուածս հարկանէին զԶեղիողորոս*։ ²⁷մինչև անկեալ յանզգայ թմբրեալ մերձ ՚ի մահ, բառնային զնա ²⁸որ այնչափ շքով և պատուով և սաստիւ և սպասաւորօք մտեալ ճեմեր ՚ի տան գանձին. արդ բարձեալ բերէին յանզգայ՝ զչա՛փ առեալ*։ ²⁹զի յայտնապէս զօրութիւնքն Աստուծոյ ՚ի վերայ հասեալ՝ անմոռնչ անբարբառ պակասեալ յամենայն յուսոյ փրկութեան, ընկեցեալ յերկիր կիսամահ դներ։ ³⁰Իսկ որ շուրջ զՈՆԵԱՆ էին, զՏէր օրհնէին. որ յամենայնի փառաւորէր զիւր տեղիսն սրբութեան։ Եւ զայն որ փոքր մի յառաջ խռովութեամբ լցեալ էր զտաճարն. յերևել փառաց ամենակալ Տեառն, խնդութեամբ և ուրախութեամբ լնուլ, և անպակաս զուարթութեամբ*։ ³¹Յայնժամ փութապէս ոմանք յեկելոց անտի բարեկիրք՝ աւագք ընկերք զօրավարին, յո՛տս հասանէին ՈՆԵԱՅ՝ խնդրել ՚ի Բարձրելոյն՝ զոնէ զշունչն շնորհել նմա. ա՛յնպէս անկեալ չարաչար ՚ի վերայ յետին ժամանակի այրն ցամաքեալ դներ*։ ³²Խորհու՛րդ կալաւ

* *Ոմանք.* Ինքնին անկեալք թաւալէին... աւանդատուրս։ *Ուր օրհնակ մի.* աւանդուս։

* *Ոմանք.* Եւ զհալելի միտս իւր։ *Իսկ օրհնակ մի.* Եւ զհայել ՚ի միտս իւր։

* *Ոմանք.* Ջսրտին տաղտկութիւն։

* *Ոմանք.* Դաս դաս մտանէին ՚ի համար աշխարհի խն՛։

* *Ոմանք.* Արգելականք կուսանաց անտի ՚ի։ *Յօրհնակին.* ՚ի դրուն և ՚ի պարիսպս ըն՛։

* *Ոմանք.* Նշանի մեծի արար, զի ամենեքին։

* *Ոսկան.* Յանկարծ երիվար մի։

* *Ոմանք.* Երիտասարդք զօրեղք։

* *Ոմանք.* Շքով և սաստիւ և սպասաւորաւ։

* *Ոմանք.* Իսկ որ զՆԵՆԵԱՆ էին... զիւր տեղին սրբութեան... և անպակաս զօրութեամբ։

* *Ոմանք.* Յետին ժամանակի այրն ցամա՛։

քահանայապետն՝ գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին, իբրև դաւով ինչ ՚ի նմանէ, կամ ՚ի Յրէից անտի զայրն վնասեալ. ՚ի խնդրուածս լինէր, պատարագս մատուցանէր վասն առնն փրկութեան: ³³Այն ինչ քաւութիւնքն ՚ի ձեռս քահանայապետին մատչէին՝ վաղվաղակի նոյն երիտասարդք գային իջանէին առաջի Յեղիոդովրայ՝ նովին հանդերձիւ զարդարեալ, և ասէին. Բագո՛ւմ շնորհս դու Ոնեայ քահանայապետի կալջիւր. վասն նորա քեզ Տէր ՚ի ձեռն նորա զոգիսդ շնորհեաց*։ ³⁴Այլ դու վասն նորա այդչափ տանջանօք պատուհասեալ, պատմեսջիւր զայդչափ մեծութիւն զօրութեանցն Աստուծոյ առ ամենեսեան: Եւ զայս իբրև ասացին՝ անդէն վերացան*։ ³⁵Յեղիոդորոս իբրև անձին զգաց՝ յո՛տն կացեալ վաղվաղակի, ողջակէ՛զս պատարագաց մատուցանէր Տեառն. ո՛ւխտս և աղօթս մեծամեծս կատարէր Տեառն՝ որ շնորհեաց նմա զոգիսն. և անդէն ՚ի նոյն չափ յառաջինն զօրացոյց: Եւ զքահանայապետն զՈնիա մեծապատիւ մեծապարզև մեծարէր. և ինքն չո՛ւ արար խաղաց գնաց անդրէն առ թագաւորն*։ ³⁶Եւ ընդ ամենայն տեղիս լնոյր զսքանչելիսն Աստուծոյ վկայութեամբ, զոր ինքն իսկ իւրովք աչօք տեսեալ լինէր*։ ³⁷Թագաւորն իբրև սկսաւ հարցանել զՅեղիոդորոս. թէ ո՞րպէս՝ զիա՞րդ՝ յոր զործ երթեալ էիր զի՞նչ վճարեցեր: Սկսաւ տալ զրոյցս քանքատելով՝ և ասէ. Ոհ. յերուսաղէմ երթեալ երթիցէ* ³⁸որ ոք ձեր թշնամի և իրաց մեծաց ձերոց վնասակար իցէ, զնա հրամայեսջիք յղել. և գտջիք զնա անտի այսր գանալից չարագան, թէ ապրել միայն կարասցէ: ³⁹Ձի այնպէս ճշմարիտ մեծ զօրութիւն նստի անդ: Ձի ինքն իսկ՝ որոյ զօրութիւնն յերկնից երկինս է, այցելու և օգնական է նմա. և որ միանգամ թշնամութեամբ, կամ թէ արհամարհանօք յայն տեղի հասէ, մեծամեծ հարուածովք հարեալ՝ թէ՛ արծակեսցէ և եթ*։ ⁴⁰Վասն Յեղիոդորայ և զանձին տանն պաշարելոյ այսչափ բանք եղեն:

4

Գլուխ Դ

¹Այլ վասն Սիմոնի՝ որ գանձին և գաւառին նամակագիր էր, առաւել ևս յաճախէր՝ ամբաստան լինէր վասն Յոնեայ, եթէ նա՛ ինքնին գլխովին որ զՅեղիոդորոսն շարժեաց և լլկեաց. և ամենայն չարեաց ինքն է առաջնորդ և գործելի*։ ²Եւ զբարերար քաղաքին և զայցելու, և զերախտաւոր զազգին, զնախանձայոյզ զվրէժխնդիւր զօրինացն, իբրև զվնասակար իրաց արքունի իշխէր ՚ի ներքս արկանել կշտամբելով*։ ³Եւ այնչափ վարէր զիե՛ռ զնախանձ թշնամութեան, մինչև ոմանց՝ զոր ՚ի գործ կացուցեալ էր Սիմոն մահու պարտ

* Ոմանք. Յեղիոդորեայ. նովին հանդերձով:

* Ոմանք. Անդրէն վերացան:

* Ոմանք. Անդրէն ՚ի նոյնչափ յառաջին... մեծարեաց. և ինքն չու արարեալ խաղաց:

* Այլք. Ձոր ինքնին իսկ իւրովք:

* Ոմանք. Քանքատելով և ասէ. Ոհ՝ յերուսաղէմ երթալ. (38) որ ոք ձեր թշ՛: Ուր օրինակ մի՛ ընդ Ոսկանայ. Քանքարտալով և ասէ... (38) ձեր թշնամի իցէ և:

* Ոմանք. Նստի ՚ի տեղուջ անդ... որոյ զօրութիւն յերկինս երկնից է... օգնական է նորա... հարեալ է, եթէ արծակէ և եթ: Այլք. Յայն տեղի հասանէ... թէ արծակէ:

* Ոմանք. Վասն Սիմոնի և գանձին... լինէր վասն Յոնեայ... նա ինքն գլխովին: Ոսկան.

Շարժեաց և լլկեաց... առաջնորդ և գործօղ:

* Ի լուս՝. Ի ներքս առնել կշտամ՝. համաձայն ոմանց ՚ի բնար՝:

առնէր նոցա զսուրբն*։ ⁴Իբրև զայնչափ անհնարին տեսանէր հակառակութեամբ Յոնիա, դարձեալ ՚ի մոլորութիւն անդր հայեր Ապողոնիա՝ որ Ստորին Ասորոց և Տաճկաստանի սպարապետն էր, զի և նա՝ չարեաց ընկեր գործոց կցորդէր Սիմոնի. յայնչափ զմիտս թագաւորին բորբոքէին*։ ⁵Անհնարին համարեցաւ այնուհետև զհասարակաց օգուտ ՚ի մէջ մատուցանել առանց օգնականութեան թագաւորի առն հրամանի*։ ⁶մանաւանդ զի տեսանէր զՍիմոն անդադար ՚ի վերայ խարդախութեանց խորամանկութեամբ անհանգիստ ջանացեալ*։

⁷Իբրև Սելևկոս փոխեցաւ յաշխարհէ, և ա՛ռ զթագաւորութիւնն Անտիոքոս, որ անուանեալն կոչէր Երևեալ. Յասոն անուն ոմն՝ եղբայր Յոնեայ, ջանացաւ շնութեամբ մտանել հանել զքահանայապետութիւնն յՈՆԵԱՅ*։ ⁸Խոստացաւ տալ յարքունիս վաթսուն քանքար ՚ի վերայ երեք հարիւր քանքարոյ. և յայլոց մտից ութսուն քանքար. ⁹և ա՛յլ ևս հարիւր ևս մատուցից ասէ՝ եթէ գործն աջողեսցի. զքաղաքն ՚ի ձեզ նուաճեցից, թատրոնս և կրկեսս շինեցից ասէր, և Երուսաղէմացւոցն ՚ի ձե՛ր անուն Անտիոքացիս գրեցից*։ ¹⁰Իբրև յա՛նձն առ թագաւորն, եգի՛տ նա զիշխանութիւնն զոր խնդրէր՝ հետ ընդ հետ վաղվաղակի ՚ի Յունաց ՚ի հեթանոսութիւն անդր զընտանի օրէնսն դարձուցանէր*։ ¹¹Չպարզան զառաջինսն զարքունի որ ՚ի ձեռն Յովհաննու, և Փտողոմեայ հօր ՚ի ժամանակի հրեշտակութեանն՝ որ վասն հասարակաց սիրով օգնականութեան կատարեցան և զկրօնսն օրինաւորս ՚ի բա՛ց քակեցին, և անօրէնութեան նո՛ր օրէնս ՚ի ներքս արկանէր*։ ¹²Ձի ՚ի ներքս ընդ բերդա՛ն իսկ թատրոնս և երիտասարդանոցս շինէր. ժիրաժիր մանկունս ընտրանալ՝ զայն յուսումն արուեստականացն տային։ ¹³Եւ այնպէս իմն եռանդն ածէին, սկիզբն արարեալ այլազգութեանն և հեթանոսութեանն վասն անպարիշտ և չքահանայապետ Յասոնեայ անհնարին մոլորութեանն*։ ¹⁴Ձի այնուհետև թողեալ էր զպաշտօն պատարագաց սեղանոյն, և զսպասս տաճարին, և արհամարհեալ էր զողջակէզս պատարագացն. յօժարագոյնս տային զանձինս իւրեանց ազգք քահանայիցն ՚ի մարծիչս և ՚ի բռնամարտիկս, և յանօրէնս բաշխոյս կաքաւչաց, և արդնընկէց տէգընկէց ձայնատու ժամանակաւն*։ ¹⁵Եւ զհայրենի՛ պատիւն առ ոչինչ համարէին, բայց զանօրէն հեթանոսութեան փառս

* *Ոմանք.* Եւ յայն չափ վարէր զհեռ նախանձ թշնամութեամբ... կացուցեալ էր Շմաւովն՝ ՚ի մահու պարտ առնէր նոցա: սուրբն իբրև:

* *Ոմանք.* Ընկեր գործակից լինէր Սիմոնի:

* *Ոմանք.* Անհնար համարեցաւ:

* *Ոմանք.* Տեսանէր Սիմոնն անդա՛:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ Երևեալ, *նշանակի՝* Եպիփան: *Ուր ոմանք.* Կոչէր յերևելի: *Ոմանք.*

Հանել զքահանայութիւնն:

* *Այլք.* Եւ այլ հարիւր ևս մատու:՝ *Ոմանք.* Թատրոնս... շինեցից ասէ: *Յօրինակին պակասէր.* Ի ձե՛ր *անուն* Անտիոքա՛:

* *Յօրինակին.* Վաղվաղակի ՚ի Յոնեայ ՚ի հեթանո՞. որ ՚ի *լուս՝.* ուղղագրի *համաձայն այլոց եղեալ՝* Յունաց:

* *Օրինակ մի.* Ձառաջինսն դարձուցի որ ՚ի ձեռն Յովհ՛: *Ոմանք.* Սիրոյ օգնակա՛... նոր կրօնս ՚ի ներքս ար՛:

* *Ոմանք.* Եւ չքահանայապետութեան ՚ի Յասոնայ:

* *Այլք.* Ձի յայնմ հետէ թողեալ էր: *Ի լուս՝.* Ի մարզիչս և ՚ի բռնա՛. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:* *Ուր ոմանք.* Եւ ՚ի բռնամարտիկ մարտիկս, և յանօրէն բաշ՛... ձայնատուր ժամանակաւն:

քան զօրհնութեան փառս լա՛ւ համարէին: ¹⁶Վասն այսորիկ իսկ և վա՛ղ հասանէին ՚ի վերայ նոցա նեղութիւնքն որ շուրջանակի հասեալ պատեալ պաշարեալ պահէին: Զի որոց ընդ բա՛րս և ընդ գնացս նախանձէին, և կամէին ամենայնիւ նմանել նոցա, զնոսին իսկ դահիճս և թշնամիս և տանջիչս անձամբ անձին ինքեանք իսկ պատրաստեցին*։ ¹⁷Զի անօրինել ոք յաստուածեղէն օրէնսն դիւրին մի՛ համարիցի. այլ զայս ամենայն ժամանակդ որ առաջի կայ յայտնապէ՛ս պատմեսցէ*։ ¹⁸Արդ էր ժամանակ եկեալ հասեալ՝ է՛ր դից պաշտօնն հինգամեակ պաշտաման ՚ի Օուր քաղաքի առաջի թագաւորին*։ ¹⁹Յայն պաշտօն՝ անօրէն Յասոն խաղալիկս և հանդիսականս ՚ի սուրբ յերուսաղէմ քաղաքէ անուանեալս Անտիոքացիս յղէր. ՚ի ձեռն տայր նոցա երեք հարիւր սատեր ՚ի գինս զոհից Վահագնի պաշտաման: Իբրև եկին բերին որ բերէինն՝ աղաչեցին զի մի՛ խառնեսցեն զայն արծաթ ՚ի զոհս կռոց պաշտաման. զի ո՛չ էր պարտ և պատշաճ ՚ի սուրբ տեղւոջէ անտի գանձ՝ երթալ զոհից կռոց դից պաշտաման*։ ²⁰Նոքա որ առինն՝ առնուլ առին վասն այնորիկ որ ետն բերել յանուն զոհիցն պաշտաման. բայց վասն բերելեացն աղաչելոյ՝ անդր ինչ ո՛չ խառնեցին, այլ ետուն ՚ի գործ արքունի վարձ նաւաց գործելոյ*։

Է ²¹Այլ յետ հրեշտակութեանն Ապողոնեայ Մենեսթեանց յերկիրն Եգիպտացւոց անց Փտողոմէոս թագաւորն Եգիպտացւոց, և ա՛ռ զթագ փոխանակ նորա Անտիոքոս. և իբրև օտարացեալ իմն համարէր զանձն կողմանցս այսոցիկ: Դա՛րձ արար խաղաց գնաց՝ եկն ՚ի քաղաքն Յոպպէացւոց. անտի եկն յերուսաղէմ*։ ²²Ե անդ մեծապէս մեծարեցաւ ՚ի Յասոնէ՝ և ՚ի քաղաքէ անտի, մեծամե՛ծ սքանչելեօք՝ ջահիւք և բոցաճաճանչ սպասուք. ապա անտի խաղաց գնաց ՚ի կողմանս Տաճկաստանի ամենայն զօրօքն հանդերձ: ²³Ապա յետ երից ամաց ժամանակի, արծակեաց Յասոն զՄենեղաւոս գեղբայր մոլեկան Սիմոնի, ՚ի ձեռն ետ նմա տանել առ արքայ զգանձն զարքունի*։ ²⁴Եւ իբրև յանդիման եղև արքային, և մեծարեցաւ ՚ի նմանէ, յա՛նձն իւր սկսաւ կորզել զքահանայութիւնն. և զյանցանել զՅասոնեալ՝ յաւել ևս ՚ի սակ գանձին այլ ևս երեք հարիւր քանքար*։ ²⁵Ե առեալ գայր զիրաման իշխանութեանն զարքունի: Եկն եհաս. քահանայապետութեան ինչ արժանի գործ ո՛չ գործեաց, այլ սրտմտութիւն դառնութեան՝ չարաչար գազանապէս վարեալ բերէր*։ ²⁶Եւ Յասոն որ դաւով զիւրոյ եղբօր զքահանայութիւնն ինքն շնացաւ, դարձեալ զնորա քահանայութիւնն նոյնպէս այլ տարաւ. և նա փախստեայ յերկիրն Ամոնացւոց հալածական անկանէր*։

Ը ²⁷Իսկ Մենեղաւոս առնուլ ա՛ռ ՚ի ձեռս զիշխանութիւն քահանայութեան. բայց զայն ինչ որ թագաւորին խոստացեալ էր ողջ՝ ո՛չ կարէր առնել: Իբրև ստիպել

* Ոմանք. Վասն այնորիկ իսկ... անձին իսկ ինքեանց պատրաս*։

* Ոմանք. Արդ զայս ամենայն ժամանակդ:

* Ոսկան. Արդ է ժամանակ եկեալ:

* Ոմանք. Ի ձեռս տայր նոցա... սատեր գինս զո՛: Ոսկան. Կռոց դիւացն պաշտա՛:

* Ոսկան. Վասն բարեացն աղաչե՛:

* Ոմանք. Համարեալ զանձն իւր ՚ի կողմանցս այսո՛: Ի լուս՞. Ի կողմն Յոպպէացւոց. համաձայն ոմանց ՚ի բնաք՞:

* Ոմանք. Սիմոնի մոլեկանի:

* Ոմանք. Եւ զյանցանել զՅասոնաւ:

* Ոմանք. Գործ ո՛չ գործեր... գազանապէս վարարեալ բերէր:

* Ոմանք. Եւ Յասոն այն որ դաւով... փախստական անկանէր:

տագնապել պահանջել սկսաւ հազարապետն դդեակ բերդին*.²⁸ զի նմա՛ էր յանձն հանել հարկ գաշխարհին. վասն այնորիկ իսկ և երկոքին՝ ՚ի միասին՝ ՚ի դուռն կոչեցան*.²⁹ Եւ իբրև ետես Մենեղաւոս թէ չէ՛ զհարկն ՚ի դուրս հատուցանելոց, եմո՛ւտ ընդ փոխանակաւ, և կացոյց փոխանակ զԼիւսիմաքոս զեղբայր իւր. և Սուտրատոս կա՛յր ՚ի վերայ գործոցն Կիպրացոց*.³⁰ Իբրև ա՛յս իրք ա՛յսպէս հաստատեալ կային, դէ՛պ եղև Տարսացոց և Մաղովտացոց ժամանակն ՚ի գրգի՛ռ վայրի դիպել. վասն զի տուեալ էր զնոսա յուտեստ Անտիոքիդեայ հարճի թագաւորին*.³¹ Փո՛յթ կալա՛ւ չո՛ւ առնել հասանել ցածուցանել զնոսա. և թո՛ղ ՚ի տեղոջ իւրում փոխանակ իւր զԱնդրոնիկոս ՚ի նմին պատուի: ³²Իբրև ժամանակ իւր պարապոյ գտեալ Մենեղաւոս, մեղմով սպաս ոսկի գողացաւ ՚ի տաճարէ անտի. և ետ նա Անդրոնիկեայ. նա և ա՛յլ ևս վաճառեալ էր նորա ՚ի Ծուր և յայլ քաղաքսն որ շուրջ զնովաւ էին: ³³Որպէս յանդիմանութեամբ յայտ առնէր Ոնիա յամրէ անտի, յոր անկեալ էր ՚ի Դափնա Անտիոքացոց*.³⁴ Վասն այնորիկ Մենեղաւոս իբրև ի՛ւր արարեալ զԱնդրոնիկոս՝ աղաչէր զնա, և նովաւ ջանայր զբռա՛մբ արկանել զՈնիա: Նա զնա՛ց եկն առ Ոնիա, և հաւատացուցանէր զնա նենգութեամբ՝ և դաշինս հաւատարիմս կռէր ընդ նմա ծա՛նր ծա՛նր երդմամբք. սակայն հաւանեցոյց զնա ելանել յամրէ անտի, թէպէտ և էր ինքն ՚ի միտս կասկածոտս: Եւ անդէն իբրև եհան խողխողեաց, ամենևին ո՛չ զանգիտեաց յիրաւանցն արդարութենէ*.³⁵ Վասն այսորիկ ո՛չ միայն Զրէայք՝ այլև հեթանոսք բարկացեալ էին. և կարի՛ առաւել՝ վասն առնն տարապարտուց մահուանն*.³⁶ Այլ թագաւորն իբրև դարձաւ ՚ի կողմանցն Կիւլիկեայ, առաջի՛ անկանէին քաղաքա՛ց քաղաքաց Զրէայքն, և հեթանոսք սրտացաւութեամբ, վասն առնն զո՛ւր մեռելոյ, տարապարտուց կորուսելոյ*.³⁷ Յայնր վերայ սրտի մտօք Անտիոքոս դժգմեցաւ, ՚ի զո՛ւթ դարձաւ և արտասուեա՛ց յոյժ ՚ի վերայ սրբութեան և բազում իմաստութեան առնն*.³⁸ Եւ ջեռաւ բորբոքեցաւ ՚ի սրտմտութիւն բարկութեան իւրոյ. և անդէն հրամայեաց զզլխո՛վ ածել զծիրանիսն Անդրոնիկեայ. և զԱնդրոնիկոս մերկացեալ ՚ի հանդերձէ իւրմէ, շո՛ւրջ ածեալ զքաղաքաւն, և ՚ի նմին տեղոջ ուր զՈնիայն անօրինեցին՝ հրամայեաց զկառափն հարկանել զանօրէն մահապարտին. ՚ի Տեառնէ զարժան տանջանս ՚ի վերայ չարագործին հասուցելոյ*:

Թ ³⁹Իբրև բազո՛ւմ գաղտագողօսք լինէին գանձին ՚ի ձեռն Լիւսիմաքեայ Մենեղեայ խորհրդով, և համբաւն ՚ի դուրս յաճախէր, ժողովեցան զօրքն ՚ի վերայ Լիւսիմաքեայ. քանզի բազում նուագս ոսկիս կորուսեալ ՚ի միջոյ

* *Ոմանք.* Ա՛ռ ՚ի ձեռն զքահանայութիւնն:

* *Ոմանք.* Վասն այնորիկ և երկոքին:

* *Ոմանք.* ՚ի դուրս հատուցանելոյ... և կացոյց փոխանակաւ: *Յօրինակին.* Եւ Սուտրատոս:

* *Ոմանք.* Եւ Մաղովտացոց ժամանակին:

* *Յօրինակին պակասէր.* Անկեալ էր ՚ի դափ՛:

* *Ոմանք.* Իբր իւր արարեալ... նմա նենգութեամբ... առնէր ընդ նմա... և անդրէն իբրև եհաս... և ամենևին ոչ:

* *Ոմանք.* Բարկացեալ և կարիս առնէին վասն առն:

* *Ոմանք.* Սրտացաւութեամբ:

* *Ոմանք.* Գժգմեցաւ. *Իսկ Ոսկան դնէ. Գժգմնեցաւ:*

* *Ոմանք.* Եւ անդրէն հրամայեաց... զծիրանիսն՝ զԱնդրոնիկոս մերկացեալ... ետ շուրջ ածել զքա՛... ՚ի Տեառնէ զարժանի տանջ՛... հասուցանելով:

համարուէն*։ ⁴⁰Իբրև սկսան զօրքն տագնապել, և լի բարկութեամբ ՚ի վերայ յարձակել. վառեցոյց Լիւսիմաքոս արս իբրև երիս հազարս։ Սկսաւ ձեռն ՚ի գործ արկանել, և սկիզբն առնել գործոցն չարութեան. արամբ միով որ խուժադո՛ւժ ևս էր տեսանելով քան զմտօքն թանձրութեան*։ ⁴¹Իբրև տեսին զԼիւսիմաքեայ զդա՛ւն և զնենգութիւն որ եղև խռնեցան վաղվաղակի, ձեռն ՚ի գործ առնէին, ոմն վէմս, ոմն վի՛րգս, կէսքն գաւա՛զն գխիճն հողախառն առ հասարակ յարձակելոցն ՚ի վերայ արկանէին*։ ⁴²Չոմանս վիրաւորս, զոմանս կառափնատս արձակէին, զբազումս սպանանէին, և զամենեսին առ հասարակ ՚ի փախուստ դարձուցանէին. զնոյն ինքն զսեղանագերծ զտաճարակապուտ՝ զգանձի տամբն արկանէին փախստեայ*։ ⁴³Վասն այսր ամենայնի լինէին դատաստանք ընդ Մենեղայայ։ ⁴⁴Իբրև եկն էջ թագաւորն ՚ի Ծուր, յանդիման նորա իսկ էին դատաստանք. զի եկին ա՛րք երեք ՚ի ծերակոյտ ժողովրդենէ անտի ցուցանել զիրաւունս*։ ⁴⁵Իբրև ՚ի պարտութիւն մատնեցաւ Մենեղաւոս, խոստացաւ գանձ բազում տալ Փտողմեայ, զի հաճեսցէ զմիտս նորա*։ ⁴⁶Վասն այսորիկ առեալ զթագաւորն մեկուսի՝ իբրև զբօսանաց պատճառաւ՝ շրջեաց զմիտս նորա*։ ⁴⁷զամենայն չարեացապարտ Մենեղաւոս արձակել ՚ի պարտեաց անտի։ Եւ զայն տառապեալս, որ թէպէտ առաջի Խաղտեաց դատ վարէին, իրաւ գտանէին, արձակեալք՝ գտեալք անարատք երթային, զնոսա մահապարտս արարին*։ ⁴⁸Եւ վաղվաղակի զանիրաւութեան պատիժս զնոքօք արկանէին, որ վասն քաղաքին և զնդին և սպասուն սրբութեան գուժել եկեալ էին*։ ⁴⁹Եւ վասն այսր ամենայնի Ծուրացիքն չարատեացք առատապէս սրտացաւութեամբ հանդերձեցին զնոսա*, ⁵⁰և յղարկեցին զՄենեղաւոս վասն իշխանացն ռժոճութեան և ագահութեան։ Հաստատեալ կայր չարախօսութիւն մեծ, եղե՛նն վնասու քաղաքացւոցն իւրոց կացուցանէր*։

5

Գլուխ Ե

¹Եւ ժամանակօք երկրորդ գալստեանն Անտիոքոս յերկիրն Եգիպտացւոց առաքեր ՚ի կողմանցն Անտիոքացւոց*։ ²Իբրև դէպ լինէր ընդ ամենայն քաղաքն յաւուրց քառասուն երևել ընդ երկինս և ընդ երկիր, ա՛րս հեծեալս տիգաւորս, ՚ի

* *Ոմանք.* Կորուսեալս ՚ի միջոյ համարին էին։

* *Ոմանք.* Արս իբրև վեց հազարս... ձեռն ՚ի գործ առնել... զմտօքն թանձրութեամբ։

* *Ոմանք.* Ձեռն ՚ի գործ արկանէին, ոմն վէմ։

* *Ոմանք.* Եւ զամենեսին հասարակ։

* *Ոմանք.* Ի ծերակոյտ ժողովրդենէն։

* *Ի լուս՝.* Չմիտս թագաւորին։

* *Ոմանք.* Ջբօսանաց պատճառանաւ։

* *Օրինակ մի.* Չամենայն չարեաց անպարտ զՄենեղաւոս։ *Ոմանք.* Իրաւունս գտանէին ար՛։

* *Ոմանք.* Չանօրէնութեան զպատիժսն զնոքօք։

* *Ոմանք.* Սրտացաւութեամբ։

* *Ոմանք.* Եւ յղարկեցին զՄենեղաւոս վասն իշխանացն զժողութեան... մեծեղեռն վնասու։

* *Ոմանք.* Եւ ժամանակօք երկրորդ գալստեանս։ Անտիոքոս յերկիրն Ե՛։

զարդ ոսկի* ³վառեալս՝ զարդարեալս, արշաւեալս յարծակեալս խառնեալս ընդ միմեանս. անդ էր լսել թընդին վահանաց, շկահին զաղեղանց, շողին սուսերաց, շաչին նշանաց, շառաչին նետից, զփայլին զոսկեղէն վառելոց: ⁴Եւ ամենեքեան անկեալ աղաչէին զայն նշանս՝ ի բարի ինչ կատարել: ⁵Իբրև շոհնդն իմն յանկարծուստ համբաւի հարկանէր, իբրև թէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ. առնոյր Յասոն ո՛չինչ պակաս քան զքսան հազար վառեալ, և յարծակէր ՚ի վերայ քաղաքին. և նոքա վասն յանկարծ դաւոյն ՚ի պարսպէ անտի մերժէին: Եւ Մենեղաւոս արշաւեալ ՚ի քաղաք անդր հասանէր* ⁶ուր Յասոնն մոլեգին յանխնայ անկեալ գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն իւրոց, իբրև ՚ի մէջ թշնամեաց գործէր. և ո՛չ ածէր զմտաւ զտոհմային քաղաքակից ընկերութեանն բարեկանդանութիւն, զի ՚ի թշուառութիւն դարձուցանէր. այլ համարէր իբրև ՚ի մէջ թշնամեաց անկեալ սպէպ ստէպ տագնապել, և ՚ի վերայ միատոհմի՝ զնդին իբրև ՚ի վերայ թշնամոյ նշան յաղթութեան կանգնել* ⁷Ապա իշխանութեան ինչ ո՛չ կարաց հասանել, բայց ՚ի կատարած զամօթ դաւոյն ժառանգէր. և ինքն փախստեայն անկանէր ՚ի կողմանս Ամոնացոց ⁸յորմէ չարաչար կատարած վախճանի ընդունէր, արգելեալ ՚ի բանտի Արետայ Արաբացոց արքայի: Դարձեալ ՚ի քաղաքէ՝ ՚ի քաղաք փախստեայ լինէր, ատելի հալածական յամենեցունց՝ իբրև ապստամբ յօրինացն, պղծեալ զարշեցեալ՝ իբրև գաւառի և քաղաքի և զնդի՝ մատնիչ և դահիճ, յերկրին Եգիպտացոց եռացեալ թքաւ* ⁹Բազումս և անթիւս յիւրմէ աշխարհէ օտարացոյց, և ինքն օտարացեալ ՚ի մէջ օտարաց կորեաւ* ¹⁰անսուգ, անխնամ, անհանդերձ, և գերեզմանացն հայրենեաց չեղև՝ արժան*:

Ժ ¹¹Իբրև ա՛զդ եղև արքային վասն իրացն եղելոց, ապստամբ համարեցաւ թագաւորն զՅրէաստան յիւրմէ. վասն այսորիկ փութացաւ զնաց յերկրէն Եգիպտացոց զազանացեալ սրտիւ, եկն՝ առ զքաղաքն ՚ի սուր սայր սուսերի՝ և ՚ի տէ՛գ նիզակի* ¹²և հրաման ետ զօրացն՝ որ ՚ի բուռն անկանիցին յանխնայ կոտորեսցին, և որ յապարանս ամրացին՝ անդէն ՚ի ներքս սատակեսցին* ¹³Եւ անդ լինէր տղայոց և ծերոց առ հասարակ կոտորած, կանանց և մանկանց առ հասարակ սատակումն, կուսի՛ց և կուսանաց առ հասարակ կոտորած: ¹⁴Եւ ո՛ւր բեր յայն երիս աւուրս միանգամայն կոտորեսցին. և չորս բերս ՚ի վաճառի ո՛չինչ պակաս լաւութեամբ քան զսպանեալսն վաճառեսցին: ¹⁵Եւ իբրև այսու չարեօք ո՛չ յագեցաւ, իշխեաց ձեռնամուխ լինել ՚ի սուրբն ամենայն աշխարհաց, իշխեաց մտանել ՚ի տաճար անդր. առաջնորդ ՚ի ձեռն ունէր զՄենեղաւոս, որ օրինացն և աշխարհին և զնդին մատնիչ և դահիճ եղեալ էր* ¹⁶Եւ պիղծ և

* *Ոմանք.* Իբր դէպ լինէր: *Ոսկան.* Յաւուրս քառասուն:

* *Ոմանք.* Իբրև շոհնդն իմն... իբրև Անտիոքոս փոխեալ յաշխարհէ... քան զհազար վառեալ:

* *Ոմանք.* Քաղաքացոցն իւրոց... ընկերութեան բարեկանութիւն... ՚ի մէջ թշնամեաց անկանել... միատոհմն զնդին:

* *Ոմանք.* Յունմէ չարաչար կատարած... պղծեալ զարշացեալ... եռացեալ թքեաւ: *Ուր Ոսկան.* Հեռացեալ թաքեաւ:

* *Ի լուս.* Ի մէջ օտարաց մեռաւ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝:

* *Ոմանք.* Չեղև հայրենեացն արժանի:

* *Ոմանք.* Եւ ՚ի տէգս նիզակաց:

* *Ոմանք.* Ի բուռն անկցի՝ յանխնայս կոտոր՝... անդէն սատակեսցին:

* *Ոմանք.* Ի սուրբս ամենայն աշ՝... որ օրինաց աշխարհին... մատնիչն և դա՛:

անօրէն ձեռք զսուրբ սպաս սեղանոյն, և որ յայլոց թագաւորաց և յայլոց քաղաքաց եղեալ էր ՚ի սրբութիւն յաճումն և ՚ի փառս տեղոյն, զայն առեալ պղծո՛ց բաշխէին: ¹⁷Թերևս հպարտացեալ յամառեալ էր ՚ի միտս իւր Անտիոքոս և ասէր. Եթէ վասն մեղաց անօրէնութեան բնակչաց քաղաքիս բարկացեալ է սոցա Տէր, վասն այսորիկ եղեն արհամարհանք ՚ի վերայ տեղոյն սրբութեան*:

¹⁸Ձի եթէ ո՛չ մեղօք մեծօք պաշարեալ էին, լինէր որպէս Յեղիոփորոսն որ առաքեցաւ ՚ի Սելևկեայ արքայէ. զի նա առաքեցաւ համար առնել զանձուն. և սա արդևք վաղվաղակի մտեալ՝ կործանէր ՚ի հպարտութենէ իւրմէ*:

¹⁹Այլ ո՛չ վասն տեղոյն զազգն, այլ վասն ազգին զտեղին ընտրեաց Տէր: ²⁰Քանզի և տեղին ինքն ժառանգեաց զազգին խոտորութիւն, որպէս և յետոյ բարեացն կցորդ լինիցի, ՚ի միւսանգամ հաճել մեծի Աստուծոյ փառօք ուղղութեան*:

²¹Այլ Անտիոքոսն ութհարիւր քանքար ՚ի վերայ իննհարիւրոյն բարձեալ բերէր ՚ի տաճարէ անտի. արա՛գ հասանէր ՚ի քաղաքն Անտիոքացւոց, հպարտացեալ մտօք համարէր զծով՝ ՚ի ցամաք, և զցամաք՝ ՚ի ծով փոփոխել*:

²²Եւ անդ թողոյր վարդապետս խիստս, չարչարել զմնացորդսն Երուսաղէմացւոց, և զՓիլիպոս յազգէ Փրանգ, բայց ՚ի բարուց խժոժագոյն ևս էր քան զայն որ եթո՛ղ զնա անդ*:

²³Եւ ՚ի Գարգահիզին՝ զԱնդրոնիկոս. և ՚ի վերայ սոցա զՄենեղաւոս, որ չարաչար ևս քան զնոսա ՚ի վերայ հասեալ դատէր զքաղաքն*:

²⁴Բայց զի ունէր սակաւ մի գութ ընդ Յրէայսն, առաքեաց նա մաշուէ զԱպողոնիոս երկուք բիւրուք զօրօք, թո՛ղ զհազարն զառաջին. զի զամենայն մարդ հասարակաչափ կոտորեսցէ, և զվանայս և զմանկունս վաճառեսցէ*:

²⁵Սա իբրև եկն յերուսաղէմ, նախ զառաջինն խաղաղութեամբ դաւով եմուտ, և եղև անդ մինչև յօրն սուրբ՝ յօրն շաբաթուց. իբրև յաւուրն շաբաթուց եգիտ զՅրէայսն դատարկացեալս, հրաման ետ զօրացն իւրոց վառել*:

²⁶Որ միանգամ ՚ի զնին տեսլեանն եկին, սուր ՚ի վերայ եղեալ կոտորեաց. և ընդ քաղաքն ընդ ամենայն զինու հանդերձ այսր անդր վառեալք ընթանային, առ հասարակ տարածեալ դիթաւալ կացուցանէին:

ԺԱ ²⁷Եւ Յուդա Մակաբէ՝ որ տասներորդն եղեալ էր, փախստեայ՝ լինէր՝ յանապատ ելանէր, զազանակեաց կեանս ՚ի լերինս անցուցանէր. և այնպէս զնդաւն որ ընդ նմա էին խոտաբուտ կերակուր կերակրեալ անցուցանէին զժամանակն, զի մի՛ ՚ի պղծութիւնս մերձեսցին:

6

Գլուխ Զ

¹Յետ բազում ժամանակաց առաքեաց թագաւորն զԱթենքիոս ծերունի,

* *Ոմանք.* Հպարտացեալ յիմարեալ էր ՚ի... և անօրէնութեան քաղաքիս բնակ*:

* *Ոմանք.* Համար առնել զանձին, զի սա արդևք:

* *Ոմանք.* Եւ տեղին ինքնին... կցորդ լինիցին... մեծի փառօք ուղղութեամբ:

* *Ոմանք.* Արագ արագ հասանէր ՚ի քա*:

* *Ոմանք.* Յազգէ Փրանք. *կամ*՝ Փրանքս. *և նոր օրինակ մի*՝ Ֆռանկ:

* *Օրինակ մի.* Եւ ՚ի Գարգահիզն զԱնդր*։ *Ուր Ոսկան.* և ՚ի Գարգահին:

* *Ոմանք.* Երկու բիւրուք. թո՛ղ զհազար զօրն զառաջինն. զի զամենայն մարդ հասարակաչափ կո*:

* *Ոմանք.* Եւ իբրև յօրն շաբաթուց եգիտ:

ստիպել տազնապել զՅրեայսն, անցանել զհարցն օրինօք, և յօրէնսն Աստուծոյ այլ մի՛ ևս յամենալ՝. ²և պղծել զտաճարն Երուսաղեմի, և անուանել զնա յայնմհետէ յանուն որմզդական դիցն Ողոմպիացւոց որ ՚ի Գարգարիզին էին. որպէս որ զտեղին բնակեալ նստէին. հիւրասէր որմզդական դիցն վանատրի՛: ³Եւ չարաչար դժուարին նեղութիւն չարեաց ՚ի վերայ հասուցանէին: ⁴Չտաճարն սուրբ պղծութեամբք արուեստականօք հեթանոսաց լնոյր, և սրբութեան սրահն արամբք և կանամբք միմեանց խառնակութեամբք յաղտեղութիւն դարձուցանէին. և որ ինչ ո՛չ ևս արժան ինչ էր՝ զայն ՚ի ներքս համարձակ տանէին՝. ⁵և զսեղանն ինքնին ՚ի գլխովին անարգելովք յօրինացն և խոտելովք լնուին՝: ⁶Եւ անդ էր ո՛չ զօրէնս շաբաթուց տեսանել, և ո՛չ զտօնս տարեկանաց զհայրենիս պահել, և ո՛չ բնաւ ամենկին Յրեայ՝ անուն անուանել իշխել: ⁷Վարէին ածէին ստէպ ստէպ տազնապաւ յամսաւոր յօր տօնի ծննդեան թագաւորին՝ զի զոհեսցեն: Իբրև տօն հասանէր սպանդարամետական պաշտամանն, տազնապէին զնոսա՝ պսակեալս թա՛ւ ոստօք սպանդարամետին կաքաւել՝: ⁸Յրաման առաքեցին յամենայն մօտաքաղաքս պաշտօնաւորս լինել. և իբրև բանս ՚ի բերան եղին Փտողոմայեցիքն, յոր հասո՛ւ իցեն զոհիւք զպաշտօնն պաշտիցեն՝: ⁹Եւ այն՝ որ ո՛չ յանձն առնուցուն զոհել՝ անդէն սուր ՚ի վերայ դնել: Եւ անդ էր տեսանել շտապ տազնապի տառապանս չարչարելոցն՝: ¹⁰Նամակագիր եղեն զերկուց կանանց՝ վասն զորդիս իւրեանց թլփատելոյ. ածին վաղվաղակի՝ զմանկունսն զստեանցն կախեցին զմարցն, և զնոսա ընդ հրապարակսն առառակէ՝ շրջեցուցանէին. ապա ՚ի պարսպաց անտի ՚ի վայր հոսեցին՝: ¹¹Կէսքն երթեալ զաղտուկ յայրսն մօտաւորս՝ զշաբաթուց աւուրսն անցուցանէին. իբրև ՚ի վերայ հասանէին, կենդանւոյն խանձատեալս հրով սպանանէին. վասն երկիւղածութեան աւուրն փափկութեան և օրինացն սրբութեան՝: ¹²Այլ ես՝ աղաչեմ զամենեսեան, որ զգիրսդ յակն արկանիցէք՝ մի՛ ինչ վասն ազգին խղճիցէք, և զվիշտս զայս ամենայն առ սատակման տոհմին համարիցիք, այլ ՚ի խրատ ազգին մերոյ՝: ¹³Եւ ո՛չ առ բազում ժամանակս ինչ թողուլ զանօրէնս. այլ վաղվաղակի զնշանս իւր և զարուեստս իւր յայտնէ՛: ¹⁴Չի ո՛չ եթէ որպէս առ այլ հեթանոսս երկայնամիտ լինի Աստուած՝ մինչև լցցեն զչա՛փ մեղաց իւրեանց, և եկեսցեն հասցեն ՚ի դատաստանս անհնարինս. ¹⁵այնպէս և առ մե՛ւք կատարէ զամենայն, զի հասցուք մեք ՚ի տեղի դատաստանի. ¹⁶այլ մօտ առ մօտ խրատէ, և արագ արագ ածէ ՚ի վերայ զողորմութիւն: ¹⁷Չայս բանս ընդ ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք. արդ

** Ի լուս՝. Յետ ո՛չ բազում ժամանակաց. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Ոմանք.*

ՉԱթենոբիոս:

** Ոմանք. Ողմպացւոց, և որ ՚ի Գարգա՝: Ուր Ոսկան. Ոլիմպիացւոց որ ՚ի Գարիզին:*

Ոմանք. Դից վանաւորի:

** Ոմանք. Արժանի էր ինչ՝ զայն ՚ի:*

** Ի լուս՝. Եւ խոտորելովք լնուին. համաձայն այլոց ՚ի բնաբ՝:*

** Ոմանք. Իբրև տօն հասեալ էր սպան՝: Ուր Ոսկան. Սպանդարամետական...*

սպանդարամետին:

** Ոմանք. Լինել. իբրև բանս... Պտողոմայեցիքն:*

** Ոսկան. Եւ այնք որք ո՛չ յանձն:*

** Ոմանք. Ընդ հրապարակսն առակէ շրջե՛:*

** Ոմանք. Չշաբաթու աւուրս... խանձատեալ սրով սպա՛:*

** Ոմանք. Յակն արկիցէք... և վիշտս:*

** Ոմանք. Թողուլ զօրէնս. և ոմանք. թողու զանօրէնսն:*

անդրէն 'ի գլո՛ւխ պատմելոյն մատիցուք:

ԺԲ ¹⁸Եղիազարո՛ս այր մեծ ընդ առաջինսն 'ի գնդի անդ. լցեա՛լ աւուրբք՝
ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք. ածեալ գա՛յլ 'ի բերան ստիպէին ուտել
խոզենի: ¹⁹Նորա 'ի մտի՛ եղեալ՝ յամառեալ պնդեալ սրտիւ՝ յա՛նձն առ ընդունել
զմահ քաջ անուամբ՝ քան զկեանս խղճիւ, և ընկերաց ըստգտանելով: Ընտրեաց
ինքնակա՛մ հասանել 'ի տանջանս. ձեռներէ՛ց լինէր, թքանել անարգել
զպաշտօնս նոցա՝. ²⁰որպէս օրէ՛ն է համբերողաց բացէ՛ 'ի բա՛ց անարգել ինչ՝ զոր
ո՛չ է օրէն յանձինս մատուցանել՝: ²¹Իսկ այն՝ որ պատրաստեալ եկեալ էին,
ինքեանք առ տկարութեան մտացն, վասն անձնասէր բարոյից զոհից 'ի
պաշտօն, ծանօթ ևս էին առնն աւագութեան. առեալ մեկուսի՝ իւրեանց
տկարութեան մտօքն զհաստատեալ միտսն 'ի հրապո՛յրս ցոփութեան
դարձուցանել ջանային: Յա՛նձն առ ասեն զհրաման թագաւորիդ՝ ²²և քեզ ա՛յլ
միս մատուցուք զի լուծցես զկարծիսն, և 'ի մահուանէդ ապրեսցիս: ²³Նա
գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եղեալ, զարժանի հասակին՝ ըստ
ծերութեան մեծութեանն, ըստ երևելի՛ վայելչութեանն, ըստ զուարթածաղիկ
ալեա՛ցն զուարճացելոց, ըստ գեղեցիկ 'ի մանկութենէ մինչև յաւագո՛յթ
սննդեանն. մանաւանդ առաւել ըստ աստուածագործ սրբութեան օրինադի՛ր
կրօնից, ամենայն կարգօք լի, արագ արա՛գ առնէր զպատասխանին՝: ²⁴Ո՛չ
արժան՝ ո՛չ պատշաճ, ասէ՛ մերոյ չափոյ հասակի՝ կեղծաւորութիւն մտանել ընդ
սրբութեան խոստովանութիւն: Իցեն բազումք 'ի մանկտւոյ այտի՝ որ ընդ
ակա՛մբ հայիցին. կարծիս 'ի մտի դնիցեն և ասիցեն. Եթէ Եղիազարո՛ս
իննըսնամեան անցեալ ծերութեանք հասեալ 'ի դուռն վախճանի,
յայլագգութիւն դարձաւ՝: ²⁵Եւ նոքա վասն ի՛ն կեղծաւորեալ գայթաղեսցին. և
զայս՝ խի՛ղճ մտաց և կե՛ղտ անուն ծերութեանս յաշխարհի թողից: ²⁶Իսկ արդ՝
եթէ ամենևին նո՛յնչափ ժամանակս կենաց շնորհիցեն ինձ, և 'ի ձեռս մարդկան
բնաւ այլ ո՛չ մատնիցին. սակայն յաւիտենից 'ի մշտնջենաւոր ձեռա՛ց անտի՝ ո՛չ
կենդանեօք և ո՛չ յետ կենդանութեան ուրեք փախչել կարիցեն՝: ²⁷Վասն
այսորիկ քաջութեանք փոխեցայց յաշխարհէ աստի, զի արժանի՛ իմոյ
ծերութեանս երևեցայց: ²⁸Եւ օրինակ բարեա՛ց և առաքինութեան մանկտւոյ
թողից, զի յօժարութեանք և քաջութեանք 'ի վերայ սրբութեան օրինացն մահու՛ն
չափ ջանալ մարթասցեն: Ջայս ամենայն իբրև ասէր՝ ինքնակամ դիմագրաւ
կամակար 'ի վիշտս մահուն և տանջանացն դիմէր՝: ²⁹Նոքա որ յառաջագոյն
շո՛ւրջ մատուցեալ մխիթարէին, զբանս մխիթարութեանն 'ի թշնամութիւն
դարձուցանէին, և զիմաստութեան խորհուրդսն իբրև մոլորութիւն համարէին.
առաւել՝ մատուցեալ 'ի տանջանս տազնապէին: ³⁰Նա իբրև մերձ եղև 'ի
տանջանաց անտի 'ի վախճան, եբաց զբերան իւր հեծեծելով, սկսաւ խօսել 'ի
Տէր որ ունի զգիտութիւն սրբութեան խորհրդոց՝ և ասէ. Այս մի ինչ յա՛յտ եղև, եթէ
'ի ձեռս ի՛ն էր արծակել 'ի մահուս վշտաց. զայս խստութեան տանջանս մարմնոյ

* Ոճանք. Եւ նորա 'ի մտի... յանձն առեալ զմահ քաջ:

* Ոճանք. Ինչ՝ զոր ինչ ո՛չ է օրէն. կամ՝ ինչ որ զինչ ո՛չ է օ՛:

* Ոճանք. Նաև զգեղեցիկ խորհուրդն. կամ՝ խորհուրդս հաստատունս յան՝:

* Ոճանք. Եւ ո՛չ պատշաճ է ասէ... կեղծաւորութեանք մտա՛... իննսնամեայն... և հասեալ 'ի
դու՛:

* Ոճանք. Շնորհիցին ինձ... սակայն 'ի յաւիտենից:

* Ոճանք. Բարեաց և քաջութեան մանկտւոյ թողից, և յօժարութեանք... 'ի վերայ
սրբութեանց:

ընկալեալ համբերեմ. այլ հոգւով քաջ քաղցրութեամբ վասն ահի սաստիցն Տեառն ընդունիմ*։ ³¹Եւ սա՝ զայս օրինակ պատերազմեալ՝ յաշխարհէ փոխեցաւ։

7

Գլուխ Է

¹Դէպ եղև եղբարս եւթն մարբն հանդերձ կալեալս, ածել՝ յատեան թագաւորին, ՚ի խոշտանգանս տագնապէին ուտել խոզենի*։ ²Մի ՚ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն, սկսաւ խօսել և ասէ. Ձի՞ կայք անցեալ, կամ զնեզ զի՞նչ հարցանելոց էք. մեք պատրաստ ենք ՚ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս հայրենիս*։ ³Բարկութեամբ սրտմտութեամբ լի՛ եղև թագաւորն. հրամայեաց ջեռուցանել տապակս, և կատսայս, և անիւս, և պէսպէս գործիս տանջանաց պատրաստել։ Չայն իբրև վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին*, ⁴հրամայեաց զնահատակն յառաջ կացուցանել. և նախ զլեզուն կտրեցին, և զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին. ապա զոտս և զձեռս առաջի մօրն և եղբարցն ծայրաքաղս առնէին։ ⁵Եւ ապա իբրև ՚ի բանից և ՚ի ձեռաց անպիտան առնէր՝ հրամայէր կենդանւոյն ՚ի տապակսն ջեռուցեալս իջուցանել։ Ապա իբրև ճենճերն ընդերկար՝ այնպէս ՚ի տապակէ անտի ելեալ դիզացեալ ծառանայր, սկսան եղբարքն ընդ միմեանս մարբն հանդերձ մխիթարել և ասել. Քաջութեամբ մեռցուք, զանուն և զոգիս ժառանգեսցուք*։ ⁶Կայր՝ Տէր Աստուած ՚ի ճգնութիւն պատերազմիս մերոյ, և ՚ի ծառայս իւր մխիթարի՝ որպէս յայտ յանդիմանութեամբ ասաց Մովսէս յօրհնութեան իւրում. և ՚ի ծառայս իւր մխիթարի*։ ⁷Իբրև առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փոխեցաւ. Չերկրորդն ՚ի տեղի տանջանացն մատուցանէին, և զգլխոյն մորթն վարսիւքն հանդերձ զերեսօքն արկանէին. և անդէն հարցանէին. Կերիցե՞ս խոզենի միս, մինչչև զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է*։ ⁸Նա ետ պատասխանի իւրեանց բարբառովն՝ և ասէ. Ո՛չ։ Վասն այսորիկ և սա ՚ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր։ ⁹Իբրև յոգւոցն պարզել ապաստան եղև. սկսաւ խօսել և ասէ ցթագաւորն. Այ սէզ հպարտ և ամբարտաւան, դու զնեզ յայնց կենաց աշխարհիս կարճել համարիս. իսկ այն որ աշխարհաց թագաւորն է՝ թեպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, ՚ի կեանսն յաւիտենից ՚ի միւսանգամ ծննդեանն ժամանակի՝ կենաց ՚ի կեանս դարձուցանէ*։ ¹⁰Յետ նորա զերրորդն ածին, և զլեզուն խնդրէին. նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռսն

* Ոմանք. Չբերան իւր հեծելով. սկսաւ խօսել զտէրունի զգիտութիւն սրբութեան... եթէ ՚ի ձեռս էր իմ։

* Ոմանք. ՚ի խոշտանգանս տագնապի գանէին ուտել։

* Աստանօր ՚ի լուսանցս ամենայն գրչագիր օրինակաց մերոց նշանակին անուանք նահատակ եղբարցս մարբն հանդերձ. գոր և մեք պատշաճ համարեցաք դնել ըստ այնմ կարգի։ Ոմանք. Մեք ենք պատրաստեալք ՚ի։

* Ոմանք. Հրաման ետ ջեռուցանել... տանջանաց պատրաստեալ։

* Ոմանք. Անպիտանս առնէր։

* Այլք. Եւ ՚ի ծառայս իւր մխիթարեսցի։

* Ոմանք. Տանջանացն մատուցին... կերիցես խոզի միս։ Ոսկան. Մինչչև ամենայն մարմինդ։

* Ոմանք. Յայնց կենաց յաշխարհէս... յաւիտենից միւսանգամ ծննդեան ժամանակ կենաց ՚ի կեանս դարձուցանել։

քաջասիրտս տարածանէր*։ ¹²Ձի և թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշի՝ մտացն, և սրտին քաջութեան. զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ*։ ¹³Եւ սա իբրև փոխէր՝ Չորրորդն ՚ի տեղի՝ մատուցեալ, ՚ի նոյն տանջանս չարչարէին։ ¹⁴Իբրև շունչն վախճանի՝ հասանէր, խօսել սկսաւ ա՛յսպէս. Մեզ լա՛ւ է զի փոխիմք աստի ՚ի մարդկանէ. և յուսոյն ա՛կն ունիմք միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ ՚ի կենդանիս. զի արգելեալ փակեալ է ՚ի քէն յարութիւն մեռելոց*։ ¹⁵Յետ սորա զհինգերորդն մատուցին ՚ի տանջանս չարչարանացն. իբրև զաչս ՚ի վեր եբարծ՝ հայեցա՛ւ ընդ թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա՝ և ասէ՛. ¹⁶Իշխանութիւն առեալ մարդկան, և դու մարդ մահկանացու՝ գործես՝ զինչ և կամիս. բայց մի՛ ՚ի վատութիւն ինչ և զմեր ազգս հատանիցես, կամ լքեալ թողեալ ինչ ՚ի ձեռաց Աստուծոյ համարիցիս։ ¹⁷Կա՛ց մնա՛ դու՝ և տեսցես զգորութիւնս մեծամեծ սքանչելեացն. որպէս զի զքե՛զ և զազգատոհմն քո չարաչար հարուածովք չարչարիցէ*։ ¹⁸Յետ այսորիկ ածեալ եղև վեցերորդն. և իբրև մե՛րծ եղև ՚ի մեռանել՝ ասէ. Ձի՞ մոլորեալ ես տարապարտուց. ընդ մեզ ա՛յս անցք որ անցանցն վասն մե՛ր մեղաց. զի մեղանչեմք առ Աստուած արժանի՝ զարմանալոյ*։ ¹⁹Բայց դու մի՛ ակնուրևիցիս ողջանդամ բարեմիտ ապրել յաստուածամարտ մատուցեալ։ ²⁰Եւս առաւել բարեաց յիշատակաց արժանի՝ մայրն սքանչելի. որ զայնպիսի գելթն որդի յիրմէ կորուսեալ ՚ի միում աւուր ՚ի միում ժամանակի՝ վասն յուսոյն Աստուծոյ* ²¹քաջալերեալ սրտապնդեալ զմի՛ մի՛ ՚ի նոցանէ քաջալերէր մխիթարէր իւրեանց բարբառովն, և զսիրտն և զմիտսն զիզութեան առնապէս վառեալ. ²²քաջութեամբ յառաջ մատուցեալ՝ ասէր. Չգիտեմ որպէս բնաւ դուք յարգանդիս երևեցարուք. և ո՛չ ես ինչ զոգիսդ՝ կամ զկեանսդ ձեր շնորհեցի, և ո՛չ զկերպարանսդ ձեր զիրաքանչիւր ես նկարեցի, և ո՛չ զհասակսդ ձեր ծնեալ և սնուցեալ։ Այսուիետև ես իմ ինչ՝ ո՛չ համարեցայց*։ ²³այլ որ աշխարհի արարիչն է, որ ստեղծ զծնունդս մարդկան, զկեանսդ և զոգիսդ ՚ի գալստեան իւրում իւրով ողորմութեամբք ՚ի ձե՛զ դարձուցանէ*։ ²⁴Անտիոքոս թպէտ և արհամարհեալ զինքն համարեցաւ վասն բարբառոյ նահատակացն, սակայն մինչդեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ ի՛ւր կային, սկսաւ ո՛չ միայն բանիւք մխիթարութիւն մատուցանել, այլև արդեամբք հաստատէր՝ ՚ի մեծութիւնս յաւագութիւնս հասուցանել, երանելի՛ առնել յաշխարհի. միայն թէ ՚ի նախնեացն օրինաց փոփոխեսցի. գործ ՚ի ձեռին տալ՝ և բարեկամ անուանել թագաւորաց*։ ²⁵Իբրև ետես թէ ամենևին պատանին ՚ի բանս թագաւորին ո՛չ խտորեցաւ, կոչեաց թագաւորն զմայրն, և աղաչէր լինել պատանւոյն կենաց նորին

* *Ոմանք.* Յետ սորա զերրորդն ածէին... և նա։

* *Բազումք.* Ուշիմ մտացն։

* *Ոմանք.* Եւ իբրև շունչն։

* *Այլք.* Եւ իբրև զաչս։

* *Ոմանք.* Եւ տեսցես... որպէս զքեզ և զազգատոհմն քո չարչարիցէ։

* *Ոմանք.* Ածեալ զվեցերորդն... զի՛ մոլորեալ ես ընդ մեզ ՚ի տարապարտուց։

* *Բազումք.* Ի միում աւուր ժամանակի։

* *Ոմանք.* Չգիտեմ բնաւ որպէս դուք յարգանդի իմ երևեց՞... զկեանսդ ձեզ շնորհեցի... և զհասակդ ձեր... ես ինչ ո՛չ համարեցայց։

* *Բազումք.* Ողորմութեամբ ՚ի ձեզ դարձուցէ։

* *Ի լուս՝.* Վասն բարբառոյ նախատանացն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝։ Ուր և ոմանք.* Ի բարբառոյ։ *Բազումք.* Այլ և երդմամբ հաստա՛։ *Ոմանք.* Գործ ՚ի ձեռն տալ. և բարեկամ առնել թագաւորաց։

խորհրդակալան՝ զի փրկեսցի: ²⁶Իբրև կարի՝ շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն. խոնարհեցաւ ՚ի նա, ²⁷սկսաւ ծա՛ղր առնել զհպարտ զամբարտաւան թագաւորն, և ասէ: Ողորմեաց ինձ որդեակ իմ. յուշ լիցի քեզ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, և սնուցի զքեզ զերիս ամս ՚ի գիրկս ստեամբք, և հասուցի զքեզ յա՛յդչափ մեծութիւն հասակի՞: ²⁸Արդ աղաչեմ զքեզ որդեակ, հայեսցես դու յերկինս և յերկիր, և որ ՚ի նոսա արարածք իցեն. յուշ լիցի քեզ զի յոչնչէ արար զնոսա Աստուած. սո՛յնպէս և ազգք մարդկան ստեղծան ՚ի նմանէ: ²⁹Մի՛ զարհուրիր դու ՚ի չարաշուք դահճէ այտի, այլ եղբարցն արժանի՛ եղեալ՝ ընտրեա՛ զմահ քան զկեանս աշխարհի. զի ընդ ա՛յն եղբարս ընկալայց զքեզ ՚ի ձեռս ողորմութեան մեծի՛ն Աստուծոյ՞: ³⁰Եւ մինչդեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր ՚ի միտս հաստատունս, սկսաւ խօսել պատանեակն՝ և ասէ. Ու՞մ կայք, զի՞ յապաղէք. չե՛մ ինչ լսելոց հրամանի թագաւորիդ. այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց որ տուան ՚ի ձեռն Մովսիսի: ³¹Այլ դու՛ որ զամենայն ինչ չարիսդ խորմանգեցեր ՚ի վերայ որդւոցդ Եբրայեցոց, դու ո՛չ ապրեսցիս ՚ի ձեռաց Աստուծոյ՞: ³²Ձի եթէ առ խրատո՛ւ պատուհասի՞ ³³Կենդանի Տէր մեր առ փոքր մի ինչ բարկացեալ իցէ, դարձեալ հաճեսցի ողորմութեամբ ընդ ծառայս իւր: ³⁴Այլ դու անօրէն, ապստամբ, պի՛ղծ, վատարանց. զի՞ զուր հպարտանաս յուսով քոյով սնոտեալ ՚ի վերայ ծառայից նորա՞: ³⁵Սակայն չես ինչ ապրելոց յամենագէտ յամենակալ դատաստանացն Աստուծոյ: ³⁶Ձի այժմիկ մեր եղբարք սակա՛ւ ինչ ցաւոց համբերեալ վասն կենացն յաւիտենից, և ՚ի վերայ ուխտի կտակարանացն Աստուծոյ, անկեալ կան մահո՛ւ տարածեալ՞: ³⁷Այլ ես հաւասար եղբարցն ինոց զշունչ և զմարմին մատնել պատրաստեալ ունիմ ՚ի վերայ հարցն օրինաց. յուսացեալ կարդամ առ Աստուած, քաւութիւն ազգին ամենայնի գտանել. և զքեզ մեծամեծ տանջանօք հեծեծութեամբ խոստովանել՝ զի նա՛ միայն է Աստուած, և այլ ոք՝ չիք՞: ³⁸Ին և եղբարքքն իմով զամենայն նիւթեալ սրտմտութիւն բարկութեան ջնջել և ՚ի բաց անցանել՞: ³⁹Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն իւթանցունց՝ սրտաբէկ լինէր թագաւորն, առաւել՛ ՚ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին՞: ⁴⁰Սակայն և սա՛ անարատութեամբ և սրբութեամբ յուսացեալ ՚ի Տէր մեկնեցաւ յաշխարհէ: ⁴¹Ձիետ որդւոցն և մայրն երանելի ՚ի նոյն օրէնս կատարեցաւ: ⁴²Այն որ ինչ վասն հարցմանց զոհիցն, և վասն անհնարին տանջանացն՝ ցա՛յս վայր ցուցեալ լիցի՞:

8

* *Յօրինակին պակասէր. Ծաղր առնել զհպարտ զամբարտա՞: Ոմանք. Ձինն ամիս յարգան՞ ... յայդ չափ մեծութեան:*

* *Ոմանք. Ընտրեալ զմահ:*

* *Ոմանք. Ձչարիս խորամանկեցեր:*

* *Ոսկան յաւելու. Պատուհասի՞ զայս վասն մեղաց մերոց կրեմք: Կեն՞:*

* *Ոմանք. Պիղծ, վատ արանց... յուսովդ քով սնոտով:*

* *Ոմանք. Ի վերայ ուխտին կտակա՞:*

* *Ոմանք. Եւ զմարմին մատնեալ պա՞: Ոսկան. Գեծութեամբ խոստո՞:*

* *Բազումք. Եւ ՚ի բաց անցուցանել:*

* *Ոմանք յաւելուն. Ի վերայ կրտսերոյ որդւոյն դառնա՞:*

* *Ոմանք. Այն ինչ որ վասն հարցմանց:*

Գլուխ Ը

ԺԳ ¹Այլ Յուդա Մակաբէ՝ և որ ընդ նմա էին. ոյք աստ անդ գաղտագողացեալ մտանէին ՚ի գեղս՝ ՚ի քաղաքս՝ և յագարակս. յի՛նքն արկանէին զագգատոհմն, և նուաճէր զՅրեայսն որ կացեալ էին հաստատութեամբ յուխտին իւրեանց. զո՛ւնդ լինէին յաւելուին բազմանային, լինէին իբրև վեց հազար այր՝. ²Կարդային առ Տէր այց առնել հայել ՚ի ժողովուրդ անդր որ կոխեալ եղև ՚ի հեթանոսաց, գթալ ՚ի վերայ տաճարին որ յամպարշտաց ձեռացն պղծեցաւ՝: ³Ողորմել ՚ի վերայ քաղաքին որ յապականութիւն և ՚ի սատակումն յատակացն հասուցանելոց էր, և հայել ՚ի գոչումն արեանցն. ⁴յիշել զանմեղ մանկանցն կորուստ տարապարտուց. ածել զմտաւ զհայիոյանս անուանն սրբոյ: ⁵Իբրև կազմէր՝ լինէր զօրաժողով Մակաբէ, դիմակալ ինչ ո՛չ լինէին նմա հեթանոսքն. զի սրտմտութիւն բարկութեան մեծութեանցն աստուածութեան յողորմութիւն դարձաւ: ⁶Յասանէր ՚ի վերայ գիւղից և քաղաքաց, հրձի՛գ առնէր զամուր ամուր տեղիս թշնամեացն. անդրէն նուաճէր դարձուցանէր զըմբռնեալսն ՚ի թշնամեացն. մեծամեծ սաստիկ հարուածս ՚ի վերայ թշնամեացն հասուցանէր՝: ⁷Մանաւանդ զգիշեր ևս իւր օգնական գործակից գտանէր. և համբաւ քաջութեանն ընդ ամենայն կողմանս ընթանայր: ⁸Իբրև զայն տեսանէր Փիլիպպոս, զի զամ քան զգամ ի՛րք առնն յառաջադէմ աջողէին, արքունի հրովարտակօք առ Պտղոմէոս սպարապետ Ստորին Ասորոց և Տաճկաստանի՝ հրեշտակս առնէր, օգնական ՚ի թիկունս զօրս ՚ի ձեռն հասուցանել՝: ⁹Նա վաղվաղակի իբրև առնոյր զհրովարտակսն՝ զՆիկանովր Պատրոկղեանց զառաջին սիրելի աւագաց իւրոց ՚ի ձեռն գումարէր ո՛չ ինչ պակաս քան զքառասուն հազարաւ առ հասարակ բառնալ ՚ի միջոյ՝ ջնջել զագգն Յրեից: Յանդիմանեաց նմա զԳորգի սպարապետ՝ զայր քա՛ջ իրաց պատերազմի, տեղեակ ամենայնի հմուտ՝: ¹⁰Յանձն առ Նիկանովր՝ զհարկն առաջին զոր տային Յռոմայեցոց հարիւր քանքար՝ ՚ի Յրեից գերութենէ անտի լնուլ: ¹¹Անդ հրաման տայր շուրջ զծովեգերօքն, կոչէր զվաճառականսն մարդագին ՚ի Յրեաստան. խոստանայր իննսո՛ւն իննսո՛ւն մարդ տալ նոցա ՚ի քանքար մի. յայն ինչ ո՛չ հայէր որ յերկնից դատաստանն յԱմենակալէն կանխեալ պատրաստեալ կայր ՚ի վերայ նորա՝: ¹²Յուդայի՛ էին ոմանք որ զուշակ լինէին վասն Նիկանովրայ արշաւանին: ¹³Նոքա առ վատասրտել իւրեանց՝ ա՛յսր անդր խուսափէին. ¹⁴և որ ինչ իւրեանց մնացեալ էր վաճառէին. և առ հասարակ զՏէր ամենակալ՝ աղաչէին, ապրել յանօրէն յանարժան ձեռանէ Նիկանովրայ. որ մինչչև՝ տեսեալ էր նորա, ընդ վաճառականս՝ անձանց նոցա գինս հատանէր՝:

* *Ոմանք.* Եւ որ ընդ նմայն ոք էին, աստ... ՚ի գեղս և ՚ի քա՛... զագգատոհմսն: *Յօրինակին պակասէր.* Գունդ լինէին *յաւելուին՝* բազմանային:

* *Ոմանք.* Կարդային առ Աստուած... որ և կոխան եղև ՚ի հե՛... որ յամպարշտաց ձեռն պղծեցաւ:

* *Ոմանք.* Տեղիս թշնամւոյն... ՚ի վերայ թշնամւոյն հասուցանէր:

* *Ոմանք.* Զօրս ՚ի ձեռս հասուցանել:

* *Յօրինակին.* Պատրոկղեանց: *Ոմանք.* Զհրովարտակն. զՆիկանովրայ զՊատրոկ՛... յաւագաց իւրոց... քան զքառասուն հազար: *Ոմանք.* Տեղեակ ամենայնի: Ընդ մուտ (10) յանձն առ:

* *Ոմանք.* Անդր հրաման տայր... խոստանայր իննսուն մարդ տայր նոցա... որ երկնից դա՛... կայ ՚ի վերայ նորա:

* *Ոմանք.* Ապրել ՚ի յանօրէն... ձեռացն Նիկա՛... գին հատանէր:

¹⁵Իսկ արդ եթե ո՛չ իսկ վասն նոցա, բայց սակայն վասն ընդ հարսն ուխտիցն և կտակարանացն, և վասն մեծի և սրբոյ անուանն իւրոյ փրկէ՛ր զնոսա ՚ի նմանէ՛:

¹⁶Զօրաժողո՛վ լինէր Մակաբէ որ զհլրեաւն էին արամբք իբրև վեց հազարաւ մխիթարէր զնոսա՝ զի մի՛ պակասիցեն յայնչափ զօրաց բազմութենէ, և մի՛ վիատեսցին զո՛ր տարապարտուց ՚ի վերայ եկելոց կուտելոց բազմութեան հեթանոսաց զնդին. այլ կա՛լ և մարտնչել քաջութեամբ՝: ¹⁷Նախանձ ՚ի մտի դնել զսրբութեան տեղոյն զկատարեալ անարգանսն, և զհարեալ քաղաքին գերութեան զչարչարանսն. զնախնեաց սրբութեան զվարատել օրինացն՝: ¹⁸Եւ նոքա ասէ՛ ՚ի զէնս յուսացեալ են և ՚ի զօրութիւնս իւրեանց. մեք յամենակալն Աստուած որ կարող է զայնոսիկ որ զմեզ յաչսն դնեն և զաշխարհ ամենայն, ՚ի մի շունչ ոգւոյ զօրութեան սատակել: ¹⁹Եւ սկսաւ յո՛ւշ առնել զմիոյ միոյ զառաջնոցն զքաջութիւնս, և զօգնականութիւնս որ եղեալ էին ՚ի Տեառնէ: Յիշեցէք զՍենեքերիմ, և զութուտասն բիրուն սատակունն միանգամայն՝:

²⁰Յո՛ւշ լիցի ձեզ պատերազմն Զռոմայեցւոց ընդ Գաղատացիս. զի ամենեքին առ հասարակ ՚ի գործ անդր հասեալ էին երկոտասան բիրու. սոքա ելին վեց հազարաւ, առ հասարակ ՚ի միում ժամանակի զերկոտասան բերն առ հասարակ կոտորեցին, օգնականութեամբ լցեալ Բարձրելոյն: ²¹Եւ այսու մխիթար քաջալէ՛ր բանիւք վառէ՛ր պատրաստէր զնոսա ՚ի վերայ օրինացն և աշխարհին իւրեանց՝ մտադէ՛ր մարտնչել՝ համարձակ մեռանել՝: ²²Յերիս գունդս զգօրսն բաժանէր, երկոցունց զնդացն՝ զերկոսին զեղբարսն զՇմաւոն և զՅովսէպ զօրավար կացուցանէր՝: ²³Դարձեալ առ քաջալերութեան առ մխիթարութեան զօրացն՝ բերեալ զսուրբ զեզրեայ մատեանսն առաջի՝ ընթեռնոյր: Իւրաքանչիւր զօրացն յանուն Տեառն նշանս բաշխէր. և առաջնոյ զնդին ինքնին զօրագլուխ պատրաստեալ, յարձակէր ՚ի դիմի՛ հարկանէր Նիկանովրայ՝: ²⁴Իբրև օգնականութիւն յամենակալէն՝ նոցա ՚ի վերայ իջանէր, հասանէին հարկանէին ՚ի զօրաց անտի թշնամեացն աւելի քան զինն հազար սպառազէն, յառաջնում յարձակել անդ պակաս առնէին: Եւ զայն խոց և խեղս և վիրաւորս առնէին. և շուրջ զբանակաւն՝ պահ արկանէին՝: ²⁵Եւ զինչս և զգանձս մարդագին վաճառականացն՝ իւրեանց առնուին. և զմնացեալ զօրսն Նիկանովրայ առաջի իւրեանց փախստականս առնէին, մինչ օրն տարաժամէր՝:

²⁶Իբրև ժամ աւուրն ՚ի տարաժամել անկանէր, այսրէն վաղվաղակի տագնապաւ դառնային, և ո՛չ ընդերկար հալածէին զնոսա զի ՚ի վաղիւ անդր շաբաթ էր՝: ²⁷Այլ հասեալ այսրէն՝ ունէին զճակատուն տեղի. զզէնս քաղէին զանկելոցն, դիագերծ առնէին զվիրաւորսն. և ինքեանք շաբաթուն պատրաստէին: Օրհնէին խոստովան լինէին՝ փառաւոր առնէին զՏէր, զի

** Ոմանք.* Իսկ եթե ո՛չ վասն նոցա, բայց սակայն վասն ուխտիցն հարցն և կտա՛:

** Ոմանք.* Որ զհլրեն էին... զի մի՛ պակասեսցեն. և *ոմանք.* զի մի պակիցեն յայնչափ զօ՛:

** Ոմանք.* Եւ զվարատել:

** Ոմանք.* Որ եղեալ են ՚ի Տեառնէ... և զերկոսեան բիրուն. *զոր ոմանք գրեն*՝ և զԺ-ան բիրուն:

** Ոմանք.* Եւ այսու մխիթարէր, և քաջալեր բանիւք վարէր:

** Բազումք.* Եւ զՅովսէպի զօրավար: *՚ի լուս*՝. Եւ զՅովնաթան զօրա՛:

** Ոմանք.* Առ քաջալերութիւն զօրացն:

** Ոմանք.* Ի զօրաց անտի ՚ի թշնամեաց: *Ոսկան.* Եւ զայլսն խոցս և խեղս:

** Ոմանք.* Յիրեանս առնուին... փախստականս տանէին:

** Բազումք.* Եւ այսրէն վաղվաղակի:

փրկեաց զնոսա՝ ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ: Չայն օր ողորմութեան առնէին՝ և նշան յաղթութեան*։²⁸ Յետ շաբաթուն՝ նեղելոց և այրեաց՝ և որբոց մասն առնէին յաւարէ անտի. և ապա ինքեանք ընդ բաժինս աւարին խառնէին: ²⁹Իբրև զայս գործեցին՝ առ հասարակ աղօթս անկեալ մատուցանէին առ ողորմածն Աստուած. աղաչէին մինչ ՚ի վախճան հաշտ լինել ընդ ծառայս իւր: ³⁰Տիմոթէոս և Բաղիգէս յոր գործ հասեալ էին. հասանէին բախէին հարկանէին սպանանէին ՚ի նոցանէ աւելի՝ քան զերկուս բերս. ամուրս բազումս և զբարձունս քաջութեանք ունէին, բազում գանձս ընչից և ստացուածոց նոցա յաւարի՝ տանէին. բաժանակիցս իւրեանց զտնանկս և զորբս և զծերս աւարին իւրեանց առնէին*։ ³¹Չզէնս սպանանելոցն քաղէին, ՚ի պիտոյս տեղիս թողուին. և ինքեանք աւարաւն յերուսաղէմ առ նահապետս ազգացն գային*։ ³²Անդ սպանեալ լինէր նոցա զՏիմոթէոս, որ բազում չարչարանս ՚ի վերայ ազգին Յրէից հասուցանէր: ³³Ժողովեցին զմարդիկ գաւառացն. օր ուրախութեան առնէին, նշան յաղթութեան կանգնէին. ածէին զԿալիսթենէս փախստեայ՝ և որ զնովան էին, որոց զորունսն լուցեալ էր՝ կենդանւոյն այրէին*։ ³⁴Իսկ յամենայն կողմանց թշուառացեալ Նիկանովր. որ զհազար վաճառականսն ՚ի մարդագին ածէր որդւոց Յրէիցն. ³⁵մեծաւ տառապանօք թշուառութեանք անկեալ ՚ի փառացն հանդերձէ հրամանաւ Տեառն, զձծեալ ընդ մուրօղս անկեալ, մեծ սուգ առեալ վասն զօրացն կորստեան, փախստեայ կորացեալ ՚ի քաղաքն Անտիոքացւոց անկանէր*։ ³⁶Եւ որ զՀռոմայեցւոցն խոստանայր զհարկն յերուսաղէմացւոց գերութենէ անտի լնուլ, ինքնին նովին բերանով պատմէր՝ թէ յայտնի Աստուած է նոցա օգնական. վասն այսորիկ ողջանդամք և առանց խոցոտելոյ ՚ի պատերազմէ ելանեն. զի հաստատութեամբ ուրեմն պահեն զօրէնս որ ՚ի նմանէ կալեալ է*։

9

Գլուխ Թ

ԺԴ ¹Ընդ այն ժամանակս դէպ եղև դառնալ Անտիոքայ մեծաւ անարգանօք ՚ի կողմանցն Պարսից. քանզի էր երթեալ նա ՚ի քաղաքն ՚ի բուն նոցա, խորհեցաւ ձեռն արկանել զգանձին. և թէ հնարեսցի զքաղաքն իսկ աւերել ջանայր: Իբրև զայն զգացին զօրք քաղաքին, առ հասարակ ՚ի զէնս իւրեանց ընթացան. և զայն որ մեծաւ սաստկութեամբ ՚ի վերայ երթեալ էր. անարժան կորակոր յանձանց ՚ի բաց մերժէին*։ ²Իբրև չու առնէր խաղայր գնայր ամօթալից Անտիոքոս ՚ի կողմանցն Պարսից, գայր հասանէր ՚ի կողմանս Եկբատանայ. ա՛զդ լինէր նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ նա: ³Չմտաւ ածէր

* *Ոմանք.* Չայն օր ողորմութեան հաստէին:

* *Ոմանք.* Տիմոթէոս իւր և Բա՛:

* *Բազունք.* Չզէնս սպանելոցն քա՛: *Յօրինակին.* ՚ի պիտոյս տեղիս թողէին:

* *Յօրինակին.* Չորունսն լցեալ էր՝ կեն՛:

* *Ոմանք.* Չզեալ ընդ մուրօղս անկեալ:

* *Ոմանք.* Ինքն նովին բերանով... ՚ի պատերազմէ ելանէին:

* *Այլք.* Անտիոքայ մեծաւ. *կամ՝* մեծիւ կորանօք ՚ի կողմանցն: *Ոմանք.* Էր երթեալ նորա ՚ի քա՛... և թէ հնարեսցէ զքաղաքն... իբրև զայն զգային... սաստկութեամբ ՚ի վերայ ընթացեալ էր, անար՛:

զստահակութիւն քաղաքացւոցն որ զնա՝ ի փախո՛ւստ դարձուցին*։ ⁴Լցեա՛լ սրտմտութեամբ՝ զերկոցունց կողմանցն զմտաւ ածեր յերուսաղեմացիս անդ յագեցուցանել զսրտմտութիւն բարկութեան իւրոյ. վասն այսորիկ հրաման տայր կառավարին, ստե՛պ տագնապաւ անդադար տայր վարել. միտ եղեալ ճանապարհին։ Ջայն ինչ ո՛չ ածեր զմտաւ, թէ յերկնից իրաւունք ինչ ո՛չ երթային. բայց ինքն մեծամեծս փքայր ՚ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ, և ասէր անմարդի՝ զերուսաղէմ Յրէից հասուցանել*։ ⁵Իսկ ամենակալ Բարձրեալն Տէր Աստուած Իսրայէլի եհար զնա աներևոյթ հարուածովք. այն ինչ բանքն ՚ի բերան նորա էին, ցաւք սաստիկք և անհնարին ոսկերաց ՚ի վերայ հասանէին, և դառնութեան խիթք ՚ի փո՛ր անկանէին*։ ⁶Կարի՛ յիրաւունս. զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, նոյն սաստկութեան ցաւք զնովաւ անկեալ պաշարեալ պահէին։ ⁷Սակայն և այնպէս ո՛չ կասէր ՚ի հպարտութենէ անտի, այլ առաւել բորբոքէր ամբարտաւանութեամբ բարկութեամբ ՚ի վերայ Յեբրայեցւոց. ստիպէր ճեպել ՚ի ճանապարհ, մինչ դէ՛պ եղև նմա անկանել ՚ի կառաց անտի՝ մինչդեռ գայր նա տագնապաւ։ Ա՛նդ անկանէր ՚ի չարաչար տանջանս. զի ամենայն ոսկերքն առ հասարակ խորտակէին*։ ⁸Եւ այն՝ որ այնինչ կամէր ՚ի վերայ ալեաց ծովու սաստել վասն անօրէն հպարտութեանն, և զվերին լերանցն ներքին առնել, և զներքին վերին. զնա ինքն յերկիր հողեալ, շալակա՛ւ շրջեցուցանէին. յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երևեցելոց*։ ⁹Մինչև յաչա՛ց անտի անօրինին եռանդն որդանց բղխեալ սորսորել. և կենդանութեամբ իւրով ախտին ցաւոց զանդամսն ՚ի միմեանց յօշել։ Եւ ՚ի նեխոյն հոտոյ զօրացն ամենայնի նեղել տագնապաւ։ ¹⁰Եւ որ յառաջն հպարտացեալ մտօք զաստեղս երկնից ամփոփել՝ համարէր, այսր անդր շրջշրջել ո՛չոք կարէր վասն նեխոյն հոտոյ տագնապի*։ ¹¹Յայնմ վայրի սկսաւ բեկանել ՚ի հպարտ յամբարտաւան խստութենէ անտի, և ՚ի միտս իւր իջանէր առ տանջանացն Աստուծոյ. միով միով ցաւօք ՚ի վերայ հարեալ մարմնոյն զայրացելոյ*։ ¹²Քի և ինքն իսկ ո՛չ կարէր ժո՛յժ ունել ՚ի նեխոյ հոտոյ անտի։ Սկսաւ այսպէս խօսել. Պա՛րտ և պատշաճ է հնազանդ լինել Տեառն Աստուծոյ, և մի՛ ՚ի մարմինս մահկանացուս աստուածակերպ օրինակ բարձրանալ*։ ¹³Աղաչէ՛ր, ուխտս դներ առ այն որ չէր նմա ողորմելոց*։ ¹⁴Վասն զսուրբ քաղաքն հարթ յատա՛կ և անմարդի՛ կացուցանել, զայն մարդաշա՛տ և ազատ ցուցանել*։ ¹⁵ՁՅեբրայեցիսն որոց սպառնայր՝ ո՛չ պատանաց և ո՛չ թաղելոյ արժանի առնել, այլ կանամբք և մանկտուվ ՚ի հաւակերի՛ դնել զազանաբե՛կս արարեալ, զնոսա քաղաքակիցս

* *Բազումք*. Չմտաւ ևս ածեր զստահա՛ն։

* *Ոմանք*. Չմտաւ ևս ածեր յերուսաղեմա՛ն։ *Ի լուս՛*. Եւ միտ եղեալ ճանապարհին։ Ջայն ինչ ածեր զմտաւ, թէ յերկնից իրաւունք ինչ երթային, *համաձայն ոմանց ՚ի բնար՛*։ *Ուր և ոմանք*. Իրաւունք ինչ ո՛չ օգնէին։

* *Ոմանք*. Այն ինչ նորա բանք ՚ի բերան լինէին։

* *Ոմանք*. Բորբոքէր յամբարտաւանութեան... ճեպել զճանապարհին... ՚ի չարաչար տանջանաց։

* *Ոմանք*. Եւ զներքին վերին առնել... Աստուծոյ զօրութեանց երևելոց։

* *Ոմանք*. Վասն նեխութեան հոտոյ. *և օրինակ մի*. Վասն հոտոյն նեխի։

* *Ոմանք*. Յայնմ վայրի... իջանել առ տանջանաց... հարեալ մարմնոցն զայրացելոց։

* *Ոմանք*. Աստուածակերպ օրինակաւ բարձրա՛ն։

* *Ոմանք*. Աղաչէ՛ր՝ և ուխտս։

* *Ոմանք*. Վասն զի զսուրբ քա՛... յարթյատակ... և ազատացուցանել։

իւր՝ հաւասարս Աթենացւոց գրով մուրհակօք կացուցանել*։ ¹⁶Եւ զտաճարն սուրբ՝ զոր յառաջ սպառնայր կապուտ կողոպուտ թողուլ, գեղեցիկ պատարագօք զարդարեցից. և զգարդ և զսպաս տաճարին որ յառաջ անտի տարեալ իցէ, բազմապատիկ անդրէն դարձուցանել. և զկարգս մտից պիտոյ պատարագաց յարքունուտ լնուլ*։ ¹⁷Եւ ՚ի վերայ այսր ամենայնի Յերբայեցի՝ ևս լինել. և յամենայն մարդաշէն տեղիս հասանել պատմել զգօրութիւն մեծութեանցն Աստուծոյ։ ¹⁸Իբրև ոչինչ էր հնար ցաւոցն դադարել, զի հասեալ էր ՚ի վերայ նորա պատուհասն ՚ի Տեառնէ արդար դատաստանաւ. իբրև ակն ինչ ոչ կալաւ այնուհետև ապրելոյ իւրոյ. հրովարտակս առնէր առ Եբրայեցիսն մեծաւ խոնարհութեամբ՝ օրինակաւս այսուիկ*։ ¹⁹Առ քաղցր Յերբայեցիս. առ ընկերս եղբարս քաղաքակիցս, ողջոյն յոյժ*։ ²⁰Շնորհ յոյժ ունիմ վասն ձեր յԱստուծոյ։ ²¹Եւ ես ՚ի տկարութեան իմում յանհնարին հիւանդութեան մեծաւ գթով յիշեցի զձեզ։ Դարձեալ եմ ես ՚ի կողմանց Պարսից, և անկայ ՚ի հիւանդութիւն դժուարին. և այսպէս լաւ համարեցայ ՚ի մտի իմում վասն օգտի հասարակաց և շինութեան*։ ²²Եւ իմ՝ ոչ եթէ յոյս ինչ հատեալ է վասն կենաց, այլ ակն ունիմ ապրել ՚ի դժուարին հիվանդութենէ աստի։ ²³Բայց և յայն վայր հայեցայ, եթէ հայրն ՚ի ժամանակի յորում վերակողմն կողման չուեալ գնացեալ երթայր՝ ցոյց նա զփոխանակն իւր*։ ²⁴Քի եթէ որ ինչ անցք անցցեն ընդ նա, կամ համբաւ ինչ դժուարին եկեսցէ՝ զիտիցեն ում պահեալ կայ՝ և յանձն է տեղին, և մի՛ խռովեսցին։ ²⁵Եւ թող զայս՝ հայեցայ ես շուրջ զմեք ՚ի մերձաւորս արքայութեան մերոյ, և որ շուրջ զմեք՝ ընդ ականք հայէին ՚ի մեզ. յայտ արարի ես զորդի իմ զԱնտիոքոս ՚ի տեղի իմ թագաւորութեան. զոր բազում անգամ արդեք իբրև չու արարեալ իմ գնայի, ՚ի վերին կողմանս երթանայի. բազմաց ումեք ՚ի ձէնջ յանձն արարեալ՝ և ՚ի ձեռն եղեալ երթայի։ Այլ ես՝ և առ նոսա գրեցի պատճենիւդ այդուիկ, զոր առ ձեզդ ՚ի ներքոյ գրեցի*։ ²⁶Արդ աղաչեմ զձեզ՝ յիշել ձեզ զերախտիսն զառ հասարակ բարեացն. և սեր օգուտ առ իւրաքանչիւր՝ պահել ընդ իս զհաւանութիւն միաբանութեան՝ և առ որդիդ իմ*։ ²⁷Քի զայս ինչ հաստատեալ հաւատացեալ զիտեմ, թէ քաղցրագոյն մարդասիրագոյն ևս յանկիցէ՝ ՚ի ձեզ՝ զիմոց բարուց զկնի՝ հայեցեալ*։ ²⁸Եւ մարդախոշոշն՝ անօրէն հայիոյիչն, զայս օրինակ անկեալ կործանեալ սատակամահ լինէր, յօտար լերինս չարաչար տանջանօք զոր ընդ այլս անցոյց՝ կարճէր ՚ի կենաց անտի։ ²⁹Իսկ Փիլիպպոս դայեկորդի իւր որ առեալ տանէր զմարմին նորա՝ երկեալ յորդոյ անտի. առ Պտղոմէոս յերկիրն Եգիպտացւոց հատուածով փախստեայ լինէր*։

* *Ոսկան.* Ձի զնոսա քաղաքակիցս։ *Ոմանք.* Քաղաքակիցս հաւասար Ա՛... մուրհակացն կա՛։

* *Ոմանք.* Ձոր յառաջ անտի։

* *Ոմանք.* Պատուհաս... դատաստանօք։

* *Ոսկան.* Եղբարս քաղաքացիս։

* *Այլք.* Գթով յիշէի զձեզ։

* *Ոմանք.* Եթէ հայրենի ժամանակի յորում վերակողմն կողման չու առեալ գնացեալ եր՛։

* *Ոմանք.* Նայէին ՚ի մեզ... զնացի, ՚ի վերին կողմանս երթայի, բազմաց։

* *Ոմանք.* Ձառ հասարակացն բարեաց։

* *Ոմանք.* Յանկ իցէ... զիմոց բարուց։

* *Ոմանք.* Դայեակորդի իւր... առ Պտղոմէայ... հատուած փախստեայ լինէր։

Գլուխ Ժ

ԺԵ ¹Մակաբեոս և որ ընդ նմա էին յօգնականութենէ Տեառն զօրացեալ, գերեդարձ առնէին քաղաքին և տաճարին*։ ²Եւ զբագինսն որ 'ի մէջ քաղաքին էին, որ այլազգեացն արարեալ էր, և զտեղիս պաշտամանց քակէին*։ ³և զտաճարն սրբէին, և այլ սեղան շինէին սրբեալ զվէնսն հրով. և դարձեալ 'ի նոցունց հուր առնուին, և մատուցանէին զողջակէզսն պատարագաց՝ յետ երկեամ ժամանակի. ճրագունս և խունկս, և զդնել զնուէրս հանապազորոյս յաճախաց հացին*։ ⁴Եւ զայս իբրև արարին, անկեալ տարածեալ 'ի վերայ երեսաց իւրեանց զՏէր աղաչէին՝ զի այլ մի՛ կրկնեսցին 'ի վերայ նոցա նոյն չարիք. այլ թպէտ և երբէք յանցանիցեն ինչ՝ 'ի ձեռն ի՛ւր հեզութեամբ խրատել, և մի՛ 'ի ձեռն հայիոյիչ խուժադուժ հեթանոսաց մատնել զմեզ*։ ⁵Արդ յորում աւուր տաճարն 'ի ձեռս հեթանոսաց պղծեցաւ՝ դէպ եղև 'ի նմին աւուր 'ի նոյն ժամանակի զսրբութիւնն անդրէն նորոգել, 'ի քսաներորդի հինգերորդի ամսոյն որ անուանեալ կոչի Քասղև*։ ⁶Գնծութեամբ և ուրախութեամբ առնել զտօն աւուրցն զութ օր, ըստ բանի աւուրցն տաղաւարահարաց։ Զի յունչ լիցի նոցա՝ որպէս յառաջ զտօնս տաղաւարահարացն 'ի լերինս պաշտէին՝ յայրս և 'ի քարածերպս, զօրէն երեոց խոտաճարակ շրջել*։ ⁷Վասն այսորիկ ոստս առեալ գեղեցիկս 'ի թա՛ւ ծառոց, և ոստս արմաւու՝ այնմիկ որ աջողեաց նոցա սրբել զիւր տեղին*։ ⁸Զրաման տուաք ածել զաւուրս զայս 'ի տօն տարեկանաց բարեկենդանութեան ցնծութեամբ և ուրախութեամբ՝ 'ի հասարակաց համարուէ ազգին Եբրայեցւոց՝ ածել զայս տօն տարեկանաց 'ի կարգի աւուրց իւրոց*։ ⁹Այլ վասն Անտիոքայ Երևեալն անուանելոյ մահուանն՝ այսչափ բանք*։ ¹⁰Բայց վասն Զօրամոյն Անտիոքայ անօրէն զաւակի, ցուցցուք համառօտ որ ինչ անցք ընդ քաղաքսն անցանէին։

ԺԶ ¹¹Իբրև ա՛ռ թա՛գ Անտիոքոս, կացոյց 'ի վերայ իրացն արքունի կողմանցն Ստորին Ասորոց և Տաճկաստանի զԼիւսիաս, ¹²և զՊտղոմէոս՝ որում բարձրանձնն ասէին. զիրաւունս հաստատուն պահէր առ Եբրայեցիս, վասն ուխտիցն եղելոց՝ և իրաւանցն զրկելոց՝ ջանայր խաղաղութեամբ անցանել*։ ¹³Վասն այսորիկ ամբաստան լինէին զնմանէ ընկերքն իւր առ Անտիոքոս. և մատնի՛չ կոչէին զնա յայն սակս, զի կողմանքն Կիպրացւոց 'ի ձեռն էին նորա 'ի Փիղ՛ովմիտովրայ հրամանէ. թո՛ղ զնա և Եկն առ Անտիոքոս. նա իբրև ո՛չ համբերէր նախատանացն, դե՛ղս ա՛ռ անձամբ իւրով և մեռաւ*։ ¹⁴Գորգիաս

* *Օրինակ մի*. Մակաբայեայ, և որ ընդ նմա։

* *Ոմանք*. Որ այլազգեացն արարեալ էր։ *Ուր Ոսկան*. Չորս այլազգ՝։

* *Ոմանք*. Յաճախեաց հացին։

* *Ոմանք*. Եւ մի՛ 'ի ձեռս հայիոյիչ։

* *Յօրինակին պակասէր*. Դէպ եղև 'ի նմին աւուր 'ի նոյն ժամանակի։ *Ոմանք*.

Յինգերորդի ամսեանն։

* *Ոմանք*. Ըստ տօնի աւուրցն տա՛։

* *Ոմանք*. Որ յաջողեաց նոցա զիւր սուրբ տեղին սրբել։

* *Ոմանք*. Ածել զօրս զայս 'ի տօն։

* *Ոմանք*. Երևելին անուանելոյ։

* *Ոմանք*. Հաստատուն պահէր ընդ Եբրայեցիսն։ *Այլք*. Եղելոց՝ և իրացն զրկելոց։

* *Ոմանք*. 'Ի ձեռն նորա էին 'ի Փիղետիմիտովրայ հրամանէն։

զօրավար վայրացն զօրաժողով լինէր Եդովմայեցւոյն հանդերձ, հասանել հարկանել խուզել զամուր ամուր կողմանս: ¹⁵Ընդելանէին ընդելուզանէին փախուցանել զնոսա յերուսաղեմէ, զո՛ւնդ գործին, մարտի՛ պատրաստին*:
¹⁶Իսկ որ զՄակաբեացւոյն էին՝ խնդրուածս առ Աստուած անէին, օգնական ՚ի ձեռն կոչէին. զի ինքեանք կանխեսցեն հարկանել զամուրսն Եդովմայեցւոց:
¹⁷Իբրև եկին հասին պատեցին, խո՛ւմբ արարին, առ հասարակ ՚ի վերայ յարձակեցան, զամուրսն փլուցին, հարին կոտորեցին, զոր ՚ի ձեռն առին առ հասարակ սատակեցին*:
¹⁸Էին ոմանք որ փախստեա՛յ գնացին, և եկին ամրացան ՚ի բերդս երկուս ամուրս: Եւ նոքա ընդ իւրեանս ունէին զամենայն կահ մենքենայից, շուրջ պահ եղին, և զմենքենայսն առ պարիսպսն կանգնեցին:
¹⁹Եւ Մակաբէոս եթող ՚ի վերայ բերդին զՇիմոն, և զՅովսէպ, և զԶաքէ, և որ ընդ նոսա զօրք էին՝ վասն բերդիցն պաշարման. և ինքն գնաց*:
²⁰Իսկ Շիմոնեանք որ զբերդաւն նստին՝ ՚ի պատգամս անկանէին, կաշառագնաց լինէին. առնուին յամրականաց անտի եւթն բեր սատեր կրկին արծաթոյ, և թո՛յլ տային նոցա ելանել սփռել յամրոցաց անտի:
²¹Իբրև ա՛զդ եղև Մակաբեայ վասն իրացն որ եղեն, ժողովր զիշխանսն ամենայն, ամբաստան լինէր, յա՛յտ առնէր՝ զի արծաթոյ վաճառեցին զեղբարսն, և արձակեցին զթշնամիսն:
²²Ձայնոսիկ որ այնպէս մատն եղեն օրինացն, ածին սատակեցին զնոսա. և ինքեանք ՚ի բերդն արշաւեցին*:
²³Հասին պատեցին պաշարեցին, զի յաջողումն ՚ի ձեռն նորա լինէր. և յայնմ աւուր կոտորեցին աւելի քան զքսան հազար*:
²⁴Եւ Տիմոթէոս որ յառաջ ՚ի պարտութիւն մատնեցաւ ՚ի ձեռաց Յեբրայեցւոցն. դարձեալ զուարթանայր, դարձեալ զօրաժողով լինէր յօտարակողմն կուսաց. բազում զայրուծի զԱսիացւոցն կուտեալ, ՚ի մտի՛ եղեալ՝ զայր ՚ի տէգս նիզակաց վարել ՚ի գերութիւն զերկիրն Յրէաստանի*:
²⁵Իսկ որ զՄակաբայեցւոյն էին՝ ընդ մերձենալ նոցա ՚ի խնդրուածս պնդէին առ Աստուած. հող ՚ի գլո՛ւխ քրձագգած լինէին*:
²⁶Առաջի սեղանոյն անկեալ զաշտիճանօքն թաւալէին. խնդրէին յայսմ հետէ հա՛շտ լինել ընդ նոսա, վանել զթշնամիս նոցա. հակառակ կալ ընդ հակառակորդս նոցա. և զամենայն աղօթս որպէս օրէնքն հրամայէին՝ աղաչէին*:
²⁷Իբրև զաղօթսն կատարեցին՝ առ հասարակ ՚ի զէն դարձան, վառեցան կազմեցան պատրաստեցան, հարուստ մի ըստ քաղաքն արտաքս ելին. իբրև մերձ եղեն ՚ի գունդն թշնամեաց, կարգեցան կազմեցան օրինօք ճակատեցան:
²⁸Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, և նոքա կողմանքն երկրքին ընդ միմեանս խառնէին. կիսոցն՝ օր բարենշան՝ զուարթութեամբ պատրաստեալ, զյաղթութիւն զուարճացեալ մատուցանէր. զի փառքն զօրութեանց յերկնից օգնականութեան Տեառն իւրեանց լուսով իջեալ շուրջանակի պատեալ հաստատեալ պահէին: Կիսոցն սրտմտութիւն բարկութեան ըստ հպարտութեան զօրավարացն ածեալ պնդեալ շտա՛պ

* Ոմանք. Ընդելուզանէին ընդելուզանէին փախուցանէին զնոսա:

* Ոմանք. Ձամուրսն փլուզին:

* Ոմանք. ՚ի վերայ բերդին զՇիմաւոն և զՅովսէպի և զԶաքէ:

* Ոմանք. Որ այնպէս մատնեալ եղեն օրինաց... ՚ի բերդսն արշա՛:

* Այլք. ՚ի ձեռս նորա լինէր, և յայն ամուրս կոտորեցին:

* Ոմանք. Վարել ՚ի գերութեան:

* Ոմանք. Քրձագգեաց լինէին:

* Ոմանք. Խնդրէին յայնմ հետէ:

տագնապի՝ ի տեղին հասուցանեին*։²⁹ Այն ինչ լինէր նորա զանաչա՛ն զանողորմ ձեռն պատերազմի՝ ի գործ արկանել. և երևեցան յերկնից արք հինգ հեծեալ սպառազէն վառեալ ՚ի զէ՛ն ոսկի՝ և ՚ի զարդ ոսկի, որ եկին իջին առ գնդաւն թշնամեացն. գային խառնեին ՚ի գունդ Եբրայեցւոց*։³⁰ Որք ՚ի մէջ առեալ զՅուդա Մակաբէ, յառա՛ջ խաղային իւրեանց զինուքն ծածուկ վառեալ, առաւել յառաջ տանեին քան իւրով զինուն. զի յամենայն կողմանց նետք և տէգք որ գային ՚ի վերայ՝ առ հասարակ ՚ի բաց թօթափեին. և ինքեանք իւրեանց նետիւք լի բարկութեամբ զաչս թշնամեացն՝ բուռն դէ՛պ կալեալ առ հասարակ ՚ի կուրութիւն դարձուցանեին. և խռովեալ զօրքն թշնամեացն ընդ միմեանս խառնեին*։³¹ Յայնժամ յայնմ աւուր անկեալ գտանէր ՚ի գնդէ անտի թշնամեացն առաջի նոցա քսան հազար և հինգ հարիւր սպառազէն։³² Եւ ինքն Տիմոթոս պրծեալ ընդ ամբոխն ՚ի փախուստ դառնայր. եկն անկաւ ՚ի Գազարա քաղաք մի ամուր, ուր ինքնին Քերէաս զօրագլուխ էր*։³³ Եւ Մակաբէ զօրօքն եկն փակեաց պաշարեաց զամուրն ՚ի չորս աւուրս։³⁴ Իսկ այն որ ՚ի ներքս անդ էին, յամրութիւն քաղաքին յուսացեալ էին, այլն կատակ լինեին Եբրայեցւոցն. և բանս կսկծելիս թշնամանաց առ իւրեանց չարի ՚ի նոսա՛ արծակեին*։³⁵ Իբրև օրն հինգօրեայ շաբաթուց լուսանա՛լ կամէր, արք ընտիրք քսան ՚ի գնդէ անտի Եբրայեցւոցն՝ Մակաբէիւ հանդերձ՝ լի՛ նախանձու բարկութեամբ զէ՛նս առեալ ընդ դուռն քաղաքին ՚ի ներքս յարծակեցան քաջութեամբ գազանաբար։ Չորս առ դրանն գտին առ ո՛տս իւրեանց կոտորեցին։³⁶ Եւ զօրքն առ հասարակ շուրջ զպարսպօքն յարծակեցան. և զայն աղմուկ և զաղաղակ ՚ի վերայ քաղաքին հասուցանեին, զի որ զօրք պարսպապահ ՚ի վէ՛ր անդ կային, որ ՚ի ներքս՝ որ արտաքս՝ քան զտեղ քան զտարափ թանձր և արագ վերուստ ՚ի վայր թօթափեին. և ինքեանք առ հասարակ ՚ի ներքս անկանեին. զաշտարակս բերդին և զամենայն փայտակերտ քաղաքին հրձիգ առնեին. զդրունսն այրեին և զմենքենայսն. և զամենայն երևելի և երևելի՝ գործի՝ ՚ի բաց ապականեին։ Ապա խարոյկս ՚ի մէջ քաղաքին արկանեին, և զհայիոյիչ թշնամանօղսն ՚ի նմա այրեին*։³⁷ Եւ զամենայն զինչս և զստացուածս և զօրէնս և զկարգս քաղաքին, զայն ՚ի ձեռն առնուին. մինչև զՏիմոթոս եկին գտին փախուցեալ թաքուցեալ ՚ի գբի միոջ. զնա և զՔերէոս եղբայր նորա, և զԱպողոփանէս ՚ի նոյն գուր փողոտեցին*։³⁸ Չայս ամենայն իբրև գործեցին կազմեցին՝ օրհնութեամբ ցնծութեամբ զոհութեամբ ուրախութեամբ օրհնեին զՏէր, որ մեծաւ քաջութեամբ քաջ անուամբ զյաղթութիւն պատրաստեաց ՚ի ձեռն Իսրայէլի։

* *Ոմանք.* Բարենշան զօրութեամբ պատեալ, զյաղթութիւնն զուարճացուցեալ մատու՛։
Այլք. Շտապ տագնապաւ ՚ի տեղի հասու՛։
* *Այլք.* Այն ինչ լինէր նոցա... երևեցան յերկ՛... գային և խառնեին առ գունդն Եբրայ՛։
* *Ոմանք.* Յառաջ տանեին զնոսա իւրեանց զինուքն... և տէգք որոգայթին առ հասարակ... բուռն դէտ կալեալ առ հասարակ։
* *Ոմանք.* Ի Գազար անուն քաղաք մի... զօրագլուխ է։
* *Ոմանք.* Այլնակատակ լինեին Եբրայեցւոց ՚ի բանս կսկծ՛... առ իւրեանց չարին ՚ի նոսա յարծակեին։
* *Ոմանք.* Եւ զօրքն ամենայն առ հասարակ... զի որ զօր պարսպա՛... ՚ի վերուստ ՚ի վայր թօթա՛... և զամենայն երևելի երևելի գործ ՚ի բաց ապա՛։ *Ուր օրհնակ մի.* Եւ զմենքենայսն յերևելի գործ։
* *Ոմանք յաւելուն.* Եւ զամենայն զինչս և զգզանձս և զստաց՛։

Գլուխ ԺԱ

ԺԵ ¹Յետ սակաւ ժամանակաց հազարապետն արքայի Լիւսիաս իբրև լուաւ, մեծաւ բարկութեամբ՝ լի՛ նախանձու ծանրացեալ տրտմէր՝ ՚ի վերայ գործոցն եղելոց՝* ²Ձօրաժողով լինէր, կուտէր ութսուն հազար. և զամենայն զօրսն հեծելազօր՝ ո՛ւթ բիւրուն հանդերձ ընդ իւր ամնոյր. ընդ իւր ամեալ խաղայր՝ ՚ի վերայ Եբրայեցւոցն, ՚ի մտի՛ եղեալ զքաղաքն գլխաւոր բնակութիւն ամնել հեթանոսաց՝* ³Եւ զտաճարն սրբութեան դրամաժողով՝ ՚ի վարձո՛ւ կացուցանել իբրև զայլ մեհեանս. և զքահանայապետութիւնն ինքնին վարձկան զանձուն կացուցանել ամ յամէ՝* ⁴Ձմտաւ ինչ ո՛չ ածէր զզօրութիւնն Աստուծոյ՝ հպարտացեալ մտօք՝ ՚ի բերս բիւրուց զհետևակն և զհեծելազօրն, և զփիղսն աղխաղխեալ տանէր՝* ⁵Այլ իբրև ՚ի Յրէաստան մխեցաւ, և մերձ եղև յամուրսն Բեթսովրայ որ մերձ է յերուսաղէմ իբրև ասպարիսօք հինգ, պատէր բիւրուքն, և ՚ի նեղ մեծ զամուրն հասուցանէր՝* ⁶Իբրև ա՛զդ եղև Մակաբէացւոցն պաշարունմն ամրոյն իւրեանց, ողբո՛վք և արտասուօք անկեալ ժողովրդովքն հանդերձ աղաչէին զԱստուած, հրեշտակ բարութեան առաքել ՚ի փրկութիւն Իսրայէլացւոց՝* ⁷Եւ ինքն Մակաբէ նախ յառաջագոյն ՚ի զէն ընթանայր. և զօրացն հրաման տայր վառել կազմել պատրաստել՝ աշխատութիւն յանձն ամնուլ, լինել օգնական եղբարցն որ ՚ի նեղութեանն էին. ⁸յայնմ ժամանակի՝ միաբան միահաւան վառեալ պատրաստեալ յառաջ մատչէին: Այն ինչ լինէր նոցա մերձ ՚ի կողմն քաղաքին Երուսաղէմացւոց հասանել. եկն է՛ջ առաջի նոցա այր մի սպիտակածի յոսկիազէն վառեալ, ճօճեր զնիզակն և պատրաստէր յարձակել՝* ⁹Եւ առ հասարակ ամենեքին խրախոյս բարձեալ օրհնէին զողորմածն Աստուած. և այնպէս քաջալերեալք և զօրացեալք էին, ՚ի մտի եղեալ յարձակեալ երթային. իբրև ո՛չ եթէ մարդկան ՚ի դիմի՛ հարկանելոց երթային, այլ թէ և զազանք ինչ՝ անհնարին պատահեսցեն, և կամ պարիսապք երկաթիք, հարկանել սատակել կործանել թա՛փ անցանել՝*, ¹⁰համարձակ յարձակէին. նիզակակից զերկնաւորն ողորմութեամբ իւրով յանձինս ընկալեալ՝* ¹¹Եւ այնպէս վարազախառն առիւծաբար յա՛ր արձակեցան ՚ի վերայ զնդին թշնամեաց. և անդէն ՚ի նմին տեղուջ հարին տապաստ արկին մետասան հազար զընտիր զօր, և հազար հեծեալ ՚ի վերայ հազարացն՝* ¹²Եւ զամենայն զօրսն ՚ի փախուստ դարձուցանէին. և բազումք ՚ի նոցանէ խո՛ց վիրաւորք՝ և ապիկար մերկանդանք փախստեայք ապրեցան: Եւ ինքն Լիւսիաս կորակոր

* *Ոմանք.* Յետ սակաւ ժամանակի:

* *Ոմանք.* Եւ զամենայն զօրսն հեծելազօրս:

* *Ոմանք.* Ինքն վարձկան զան՝:

* *Ոմանք.* Եւ զմտաւ ինչ ո՛չ ա՛... այլ հպարտացեալ:

* *Ոմանք.* Եւ ՚ի նեղ մեծ զամուրսն:

* *Ոմանք.* Պաշարունմն ամրացն իւր՝: *Ոսկան.* Յրեշտակ բարկութեան առաքել ՚ի բարկութիւն Իսրայէլաց՝:

* *Ոմանք.* Յառաջ մատնուին... եկն եկաց է՛ջ առաջի նոցա:

* *Ոմանք.* Եւ զօրացեալ լինէին... կործանել թափանցանց ելանել:

* *Ոմանք.* Նիզակակից զողորմածն զերկնաւորն յանձինս ընկալեալ:

* *Այլք.* Առիւծաբար յարձակէին... և վեց հարիւր հեծեալ ՚ի վերայ հազարացն:

փախուցեալ մագապուր լինէր*։¹³Իբր ո՛չ եթէ անմիտ ինչ լինէր յանձն իւր վասն իւրոյ վատթարութեանն. ՚ի մտի՛ եղեալ խօսէր անհնարինս առ յաղթութիւն ասէր զԵբրայեցիսն, հզօրին Աստուծոյ օգնական լինել նոցա. և առաքեաց զնոսա։ Եւ յղեաց զկնի նոցա հաշտութիւն ամենլ ՚ի վերայ ամենայն իրաւանցն։¹⁴Եւ թագաւորն ևս յանձն առ. և զթագաւորին միտս հաճեաց, բարեկամ լինել ընդ նմա*։¹⁵Յանձն առ Յուդա զոր միանգամ Լիւսին աղաչեաց զնա, վասն օգտի ուխտի խորհրդոցն հասարակաց. և որչափ միանգամ Մակաբէ նամակեաց Լիւսիաս վասն Յրէիցն, թողացոյց նոցա արքայն*։¹⁶Եւ էին առ Յրէայս թողթք գրեալ օրինակաւս այսուիկ. Լիւսիան առ գունդն Յրէից ողջոյն։¹⁷Յոհաննէս և Աբեսաղոն որ առ մեզ ՚ի ձէնջ առաքեցան, մատուցին մեզ իբրև ՚ի ձէնջ գիրն էր, և աղաչէին որ ինչ ՚ի նմա գրեալ էր։ Եւ որչափ ինչ թողուլ արժան էր՝ թողի*։¹⁸Եւ որչափ ինչ ցուցանել էր թագաւորին՝ ցուցի. զի թո՛յլ լիցի ձեզ վասն ձերոց իրաց. ¹⁹ինչ որ գրեալ էր մեզ ընդ ձեզ խնամ անկցի։ Եւ յայսմ հետէ առաւել ևս ջանացայց լինել ձեզ պատճառք բարեաց. ²⁰և որ յապա ինչ իցէ, պատուէր տուաք խօսել ընդ ձեզ. ²¹և դուք ո՛ղջ լիջիք։ Յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի, յորմզակական տօնին, որ օր քսանկէորդ էին*։²²Իսկ հրովարտակք արքունի գրեալ էր այսպէս. Արքայ Անտիոքոս՝ առ եղբայր Լիւսիաս՝ ողջոյն*։²³Յայրն մեր իբրև ՚ի դիցն պաշտօն փոխեցաւ, կամեցաք զի որ ընդ մերով թագաւորութեամբ իցեն՝ առանց խռովութեան լիցին։²⁴Չո՞ ալ զոր առաւել քան զՅրէայսդ. զի նախ նոքա՛ ո՛չ հաճեցան զհօրն ՚ի հեթանոսութիւն դառնալոյ. վասն այսորիկ աղաչեցին թողութիւն ամենլ զօրէնսն իւրեանց*։²⁵Յանձն առաք և զայս ազգ առանց խռովութեան լինել. հրաման տուաք՝ զտաճարն անդրէն նոցին դարձուցանել, և զնոսա զրգել ըստ օրէնս նախնեաց իւրեանց։²⁶Արդ լա՛ւ և բարւո՛ք արասցես. առաքեցցես դու առ նոսա, ո՛ւխտ արասցես, և դաշինս կռեսցես. զի գիտասցեն նոքա զմեր առ իւրեանս զխնամ կամաց, և խրախամիտ լիցին. մտադիւրագոյն շրջիցին, օգնականութիւն գտեալ զիւրեանցն օրինաց*։²⁷Հրովարտակն արքունի օրինակաւս այսուիկ գրեալ էր. Արքայ Անտիոքոս՝ առ ծերակոյտն Յրէից, և առ զօրս և առ գունդս Յրէից ընտանի՛ ողջոյն*։²⁸Ո՛ղջ լիջիք. և եղիցի ամենայն որպէս և մեք կամիմք. և մեք իսկ ո՛ղջ ենք։²⁹Եցոյց այսպէս մեզ Լիւսիաս, եթէ կամիցիք դուք իջանել առ Յրէայսդ որ են յերուսաղէմ*։³⁰այն որ այժմիկ զնա՛ւ ունիցին՝ մինչև յերեսունն Ահեկանի ամսեան ձեռն տուեալ լիցի. դաշինս հաստատեալ* ³¹թողութեան դիւրութեան քաղցրութեան՝ ընդ Յրէայսն, կա՛լ դոցա յիւրեանց օրէնս և ՚ի կրօնս որպէս յառաջն, և մի՛ ումեք նեղել զնոսա մի՛ով

* *Ոսկան.* Մագապուրծ լինէր։

* *Ոմանք.* Եւ զթագաւորին ևս զմիտս հաճել։

* *Ոմանք.* Վասն օգտի խորհրդոցն հասարակաց։ *Այլք.* Մակաբէ նամակ ետ ցԼիւսիաս։

* *Ոմանք.* ՚ի ձէնջն առաքեցան... իբր ՚ի ձէնջ։ *Ի բազումս պակասի.* Գրեալ էր. և որչափ ինչ թողուլ արժան էր՝ թողի։

* *Յօրինակին թուագրով գրի այսպէս.* Որ օր ԻԴ էին։

* *Ոմանք.* Իսկ հրովարտակն արքունի։

* *Ոմանք.* Ոչ հաճեցան հօրն ՚ի հեթա՞... ալ վասն այսորիկ աղա՞։

* *Ոմանք.* Ձի գտցեն նոքա զմեր... խրախամիտ լինիցին։

* *Ոմանք.* Ձհրովարտակն արքունի օրի՞։

* *Ոմանք.* Եթէ կամիցիք դուք իջանել առ Յրէայսն։

* *Ոմանք.* Մինչև յերեսունն Ահեկանի ամսեանն... դաշինս հաստատել (31) թո՞։

իւիք օրինակաւ*։ ³²Այլ մեք արծակեցաք զԼիւսիաս, և զՄենեղաւոս՝ մխիթարել՝ զձեզ. և դուք ո՞ղջ լիջիք։ ³³Յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի, յամսեանն Ահեկանի, որ օր հնգետասան էր։ ³⁴Առաքեցին և Յռոմայեցիքն օրինակաւս այսուիկ. Կոյինդոս Մեմիոս, Տիտոս Մանիոս՝ գլխաւորք Յռոմայեցւոց, առ ժողովուրդդ Յեբրայեցւոց ողջոյն*։ ³⁵Վասն որոյ իրաց Լիւսիաս եղբայր թագաւորին թողութիւն արար ձեզ, հաճեալ եմք և մեք*։ ³⁶Այլ ինչ որ զինչ արժան է՝ ի մենջ մատուցանել արքայի ինչ՝ տո՛ւք արագագոյն բերել խորհեցեալ իմաստութեամբ, զի դիցուք օրէնս մի որպէս արժան իցէ օգտել վասն ձեր. զի մեք աւադիկ յառաջագոյն երթամք՝ ի քաղաքն Անտիոքացւոց*։ ³⁷Վասն այսորիկ փութացարուք, և յղեցէք դուք զոք, զի և մեք գիտասցուք յորպիսի խորհուրդս կայք դուք*։ ³⁸Ո՞ղջ լիջիք։ Յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի, յորմզդական տօնին եղան դաշինքս այս*։

12

Գլուխ ԺԲ

¹Լիւսիաս անց գնաց անդրէն առ թագաւորն. Յրեայք՝ անդրէն զգործովք զարաւրով, զարդեամբք պատաղեցան*։

ԺԸ ²Որ զօրացն զօրավարքն էին՝ Տիմոթէոս և Ապողոնիոս Քաջեան, և Յերոնիմոս, և Դիմոփոն, և ՚ի վերայ սոցա Նիկանովր՝ ամենևին ո՛չ տային դլա՛լ և դադարել նոցա*։ ³Այլ Յոպպէացիքն այնչափ ինչ համարծակեցան անօրէնութիւն գործել. եկին բարեխօսք՝ ստիպէին որ շուրջ զնոքօք Յրեայք էին՝ կանամբք և մանկտուով ածել զնոսա նաւուք*։ ⁴Առ հասարակ քաղաքին միաբանութեամբ։ Եւ նոքա յանձն առին իբրև թէ՛ ի խաղաղութիւն միաբանութեան ածել զնոսա. սոքա յանձն առին՝ իբր ո՛չ ինչ կասկած կամ կարծիս ՚ի մտի ունել. ածին զնոսա՝ ընկլուզին ՚ի ծով ոչինչ սակաւ քան զերկերիւր մարդ։ ⁵Իբրև զգաստ եղև Յուդա վասն անօրէն խակութեան վնասին որ եղև, ետ պատուէր զօրացն որ զիւրեաւն էին, կարդալ առ արդար դատաւորն*։ ⁶Յայն վայր վաղվաղակի հասանէր ՚ի վերայ մահապարտացն, և զհշերայն զնաւահանգիստսն հրծի՛գ արարին, և զնաւսն այրեցին, և որ ՚ի նոսա ապաստան եղեն՝ անդէն խոցուտեցին*։ ⁷Եւ զամուրսն ՚ի պահ զգուշութեան փակեալ. դարձեալ ժամակալ լինէր ՚ի դարձին միւսանգամ առ հասարակ սատակել զազգն Յոպպայեցւոց*։ ⁸Եհանս նա և ՚ի վերայ Յամնէացւոցն, իբրև

* *Ոմանք.* Թողութիւն դիւրութեան... նեղել զդոսա։

* *Ոմանք յաւելուածով.* Եւ Յռոմայեցիքն առ նոսին օրինակաւս... Կայինդոս։

* *Ոմանք.* Վասն որոց Լիւսիաս եղ՛։

* *Ոմանք.* Այլ որ ինչ զինչ արժան իցէ ՚ի մեջ մատուցանել։

* *Ոմանք.* Վասն այսորիկ փութարուք և։

* *Ոմանք.* Տօնին եղեն դաշինքս այս։

* *Ոմանք.* Եւ Յրեայքն անդէն զգործով զարարով զարդեամբ։

* *Ոմանք.* Քաջեանն... և Դեմոփոն, և ՚ի սոցա վերայ Նիկանովր... դղալ և դադարել։ *Ուր օրինակ մի.* դղալ և դա՛։

* *Ոմանք.* Այսչափ ինչ հա՛... կանամբք և մանկամբք ա՛։

* *Ոմանք.* Որ զիւրև էին, կարդալ առ դատաւորն։

* *Ոմանք.* Ի՞ գիշերայն զնաւահանգիստսն հրծ՛։ *Այլք.* Անդէն խոցեցին։

* *Ոմանք.* Փակեաց. դարձաւ ժամակալ լինէր ՚ի դարձէ միւսանգամ սատակել առ

զնոյն գործ կամէին գործել և ՚ի վերայ իւրեանց քաղաքակից Յերբայեցւոցն*:
9Գիշերախառն հասանէր ՚ի վերայ Յամնէացւոցն և զնաւահանգիստն նաւուքն
հանդերձ հրձիգ առնէր. մինչև ճառագայթք հրոյն յերուսաղէմ երևէին. զի էր
անտի անդր վտաւանք իբրև չորեքհարիւր ութսուն*:

ԺԹ 10Եւ անտի կարթեցին իբրև քսան վտաւանաւ ՚ի վերայ Տիմոթի, և
անկանել կամեցան. ընդ առաջ եղեն նմա Տաճիկք իբրև հինգ հազար և հինգ
հարիւր հեծեալ: 11Եւ իբրև մարտն սաստկացաւ, գունդքն ՚ի միմեանս հասին,
գունդն Յուդայեան յուսացեալ յօգնականութիւն Տեառն զբարէնշան նշան
յաղթութեան առաջի աչաց տեսանէին: Իբրև ՚ի պարտութիւն մատնեցան
Արօտականքն, առաջի կացին գնդին Յուդայեան, և հնազանդեալ առաջի
անկեալ դաշինս հաստատել խնդրէին. և խոստացան ևս խաշինս տալ նոցա. և
՚ի բազում պէտս պէտս օգտակար լինել նոցա*: 12Խորհեցաւ Յուդա եթէ շատ
ինչ իրք են յորում օգուտ են նոքա նոցա. յանձն առ, ներեաց և արար ընդ նոսա
խաղաղութիւն: Նոքա իբրև դաշինս հաստատեցին, յիւրաքանչիւր բանակս
սփռեցան: 13Սոքա ասպատակ եղին ՚ի կողմն մի, զքաղաք մի ամրացեալ
պարսպօք, լցեալ պէսպէս խառնիճաղանճ ազգաւն բնակեցեալ զօրօք՝ Դէկասպ
անուն. և զայն պատեալ պաշարեալ պահէին*: 14Իսկ որ ՚ի ներքս անդ էին ՚ի
պարսպացն ամրութիւն յուսացեալ էին, և ՚ի համբարոցն բազմութիւն հայէին.
հպարտագոյնս արհամարհանօք ընդ Յուդա և ընդ զօրսն հայէին. և բանիւք ևս
նախատանաց կսկծելեօք հայիոյէին զնոսա, և խօսէին զայն ինչ զոր ո՛չ էր
արժան*: 15Իսկ նոքա զամենազօրն զմեծն՝ զհզօրն երկնից և երկրի օգնական
կոչէին. որ առանց հոյոց մանգղոնից մենքենայից գերեքովն կործանեաց ՚ի
ժամանակս Յեսուայ որդւոյ Նաւեայ: Խոնմբ արարին, առ հասարակ ՚ի վերայ
պարսպացն զազանաբար յարձակեցան*, 16հասին առին զամրացեալ քաղաքն
կամօքն Աստուծոյ. և անդ ՚ի նմա բազում կոտորածս զօրացն գործեցին. մինչև
ծովակն որ զնովաւ շուրջ էր, զի էր ինքն որչափ քան զերկուս վտաւանս՝
խառնեալ արեամբ երևէր*: 17Եւ անտի պարգեցան մեկնեցան ՚ի կողմն Քարայի,
իբրև վտաւանօք հինգ հարիւր և յիսուն, առ անուանեալ Տուբէական Յրէայսն
մերձանային: 18Եւ անդ գտանէին զՏիմոթէսն՝ ո՛չ ինչ գործ ՚ի ձեռս յաջողեալ,
լուծեալ լքեալ ՚ի զօրութենէ իւրմէ. սակայն թողեալ էր պահապանս զօրս ՚ի
տեղւոջ միոջ ուժգին ամրացեալ: 19Ապա՝ Դովսիթէոս և Սոսիպատրոս արք
հզօրք զօրավարք ՚ի Մակաբայեցւոց գնդէ անտի, իբրև արտաքս ըստ զօրսն
ելեալ շրջէին զնդաւն իւրեանց, եկին դիպեցան ամրոյն այնմիկ, հարին
սպանին կոտորեցին ՚ի նմա իբրև ասելի՛ քան զտասն հազար այր*: 20Իսկ
Մակաբէոս զզօրն ամենայն ՚ի գունդս գունդս բաժանէր. և ինքն իւրով զնդաւն ՚ի

հասարակ:

* Այլք. Եհաս նա ՚ի վերայ:

* Յօրհնակին. Վտաւանք իբրև ՆՁ:

* Ոմանք. Եւ իբրև ՚ի պար՝... արատականքն... գնդին Յուդայեանց... ՚ի բազում պէտս
իւրեանց օգտա՛:

* Ոսկան. Խառնիճաղանջ ազգօք բն՝... Դէկկասպին անուն:

* Ոմանք. ՚Ի պարսպացն յամրութիւն... և ՚ի համբարացն բազ՝... և բանիւք ևս
նախատանօք և կսկծելովք... զայն ինչ զոր ինչ ո՛չ էր:

* Ի լուս՝. Որ առանց խոյոց մանգ՛:

* Ոմանք. Որ զնովաւ շրջէր... արեամբ երևեալ:

* Ոմանք. Արտաքս ընդ զօրսն եղեալ:

վերայ Տիմոթեոսի հասաներ: Եւ զնովաւ էին զօրք վահան ՚ի ձեռին երկոտասան բեր, և հեծեալք իբրև երկու հազար և հինգ հարիւր*։ ²¹Տիմոթեոս իբրև զգայր զարշաւանն Մակաբեացոց ՚ի վերայ նորա, արծակեաց վաղվաղակի զկահ և զգանձ, և զկին և զմանուկ զօրացն որ ընդ իւրն էին, յամուր անդր Կառնացոց յուղարկէր. և ինքն ամուրն անհնարին էր առ պաշարել վասն դժուարամատոյց նեղութեան ամրութեան վայրացն*։ ²²Այլ իբրև երևեցաւ գունդն Յուդայեան, յառաջ զեռեալ սկսան զօրքն թշնամւոյն. զի ա՛հ Ամենակալին ՚ի վերայ անկեալ, սրտաթափս անդէն և անդ մրրկեալ ընդ միմեանս պողէր պղտորէր. և առ հասարակ ընդ ամենայն կողմանս ՚ի փախուստ դարձուցանէր: Եւ այնք բազում էին՝ որ առ ահին յիմարութեան ընդ իւրեանց զէնս ելանէին*։ ²³Իսկ գունդն Յուդայեան սաստկագոյն հալածանօք բուռն ՚ի վերայ եղեալ զփախստեայսն տանէր, խառն խոցել խառն հարկանել. ՚ի նմին տեղոջ տապաստ արկանէին իբրև երիս բերս ա՛յր պատերազմի ՚ի մարտիկ զօրէ անտի*։ ²⁴Եւ ինքն Տիմոթեոս դիպէր առաջի գնդին Դովսիթեան և Սոսիպատրեայ: Արդ ՚ի ձեռն անկեալ նոցա՝ աղաչէր զնոսա մեծաւ դիւրութեամբ թողուլ զնա կենդանի. զի ասէր. Բայ՝ բազմաց ՚ի ձէնջ են ընտանիք առ մեզ և եղբարք. զամենեսին զնոսա ո՛ղջս բովանդակս փոխանակ միոյ գլխոյս իմոյ ՚ի ձե՛զ արծակեցից*։ ²⁵Եւ այնու բանիւք հաստատեալ, փոխանակ իւր զբազումս արծակելոյն. թոյլ ետուն նմա վասն եղբարցն փրկութեան: ²⁶Նա իբրև ե՛լ անկաւ յամուր անդր, կշիռ ՚ի բնի ՚ի շռնջանան վերայ, ած կոտորեաց յայնցանէ զոր խոստացաւն արծակել աւելի՛ քան զերկուս բերս մարդկան*։

Ի ²⁷Նոքա նոյն հետայն արշաւեցին ՚ի քաղաք մի ամուր Եփրոն անուն. յորում էր բնակեալ ինքնին Լիւսիաս: Եւ Զոովսաղեցիք բազումք արտաքոյ պարսպացն ապաստան յամուրն և ՚ի հանդերձս մենքենայից նետիցն և ՚ի զինուն պատրաստութիւն հաստատեալ կային, մտադիւրագոյնս ներքուստ արտաքս մարտնչէին*։ ²⁸Իսկ սոքա զամենակալ՝ հզօրն յօգնականութիւն կոչէին, որ կարող է խորտակել զպատերազմողաց զօրութիւն. վաղվաղակի զքաղաքն ամրութեամբն հանդերձ ՚ի ձե՛ռն առնուին. անդ ՚ի ներքս հարկանէին կոտորէին տապաստ արկանէին՝ իբրև երկուս բերս և հինգ հազար այր*։ ²⁹Անտի՝ ասպատակ դնէին ՚ի քաղաք մի Սկիւթացոց՝ որ ՚ի բացեայ էր յերուսաղեմէ իբրև վեց հարիւր վտաւանաւ. որք զանձինս իւրեանց երախտաւորս համարէին առ ազգն Զրէից*։ ³⁰Եւ ինքեանք ևս Զրէայքն որ ՚ի ներքս բնակալ էին՝ վկայութիւն

* *Ոմանք.* Եւ ինքն իւրով զօրան հասանէր ՚ի վերայ Տիմոթեոսի. և որ զնովաւ էին զօրք բազումք վահանաւոր երկոտասան բեր: *Ի լուս՝.* Վահանաւոր ՚ի ձեռին. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Ջօրացն որ ընդ իւր էր... անհնարին էր պաշարեալ վասն... նեղութեան վայրացն:

* *Ոսկան.* Յառաջ զեռալ սկսան: *Ոմանք ունին լոկ.* Ընդ միմեանս պողէր. և *ոմանք լոկ.* Ընդ միմեանս պղտորէր:

* *Ոմանք.* Խառն հարկանել... տապաստ արկանել իբրև: *Ի լուս՝.* Ի մարտիկ զօրաց անտի. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Արդ ՚ի ձեռն եկեալ նոցա, աղաչէր զնոսա մեծաւ թողութեամբ. *կամ՝* դիւրողութեամբ թողուլ:

* *Ոմանք.* Ի շռնջանան ՚ի վերայ ած և կոտոր՝:

* *Ոմանք.* Եւ ՚ի հանդերձ մեքե՛... և զինուն պատ՝:

* *Յօրինակին.* Անդ ՚ի ներք հարկանէին:

* *Ոմանք.* Որ ՚ի բացէ էր: *Ոսկան.* Առ ազն Զրէից:

տային երախտեացն որ նոցա 'ի քաղաքացեացն գտեալ էր 'ի ժամանակի նեղութեան իւրեանց*։ ³¹Նոքա իբրև խաղաղութեան պատահար 'ի Մակաբայեցւոց գնդէ անտի աջողեցաւ, ձայն բարձեալ 'ի գունդ անդր. յայսմ հետէ յառաջ առաւել ևս յազգս նոցա հնազանդութիւն պահելոյ։ Սոքա զանցին զնոքօք փութացեալ 'ի քաղաքն Երուսաղէմացւոց. զի տօնք եւթներորդ շաբաթակրօնիցն մերձ 'ի վերայ հասեալ կային*։

Իւ ³²Այլ իբրև կատարեցաւ տօն պենտակոստիցն. դիմեցին նոքա 'ի վերայ Գորգեայ, որ կողմնապահ կայր կողմանցն Եղովմայեցւոց։ ³³Նա՛ ել ընդ առաջ նոցա երիւք բիրուք վահանաւոր զօրու, և չորիւք հազարօք հեծելազօր գնդաւ։ ³⁴Իբրև յայսկոյս յայնկոյս միմեանց ընդդէմ ճակատեցան. դէպ եղև սակաւուց յեբրայեցւոց գնդէ անտի անկանել 'ի մէջ երկուց ճակատուցն*։ ³⁵Դովսիթէս ոմն անուն 'ի Տովբեկենացւոց գնդէ անտի, այր հզօր սպառազէն պատերազմօղ, յարձակեալ գայր 'ի վերայ Գորգեայ. և այն ինչ կամէր զանօրէնն ձերբակալ կալեալ կապեալ առաջի Մակաբեացւոց գնդին պատարագ մատուցանել. և անտի վառեալ մի 'ի Թրակայ գնդէ անտի զուս հարկանէր, 'ի վայր քարշէր. և զԳորգին 'ի ձեռաց նորա թափէր, մազապուր ճողոպրեալ յամուրն Միմարէն փախստեայ անկանէր*։ ³⁶Այլ եզրեայ նոցա իբրև երկայնագոյն լինէր նոցա մարտ պատերազմի, և բազում կոտորածք 'ի միջի լինէին։ Յայնմ ժամանակի գունդն Մակաբայեցւոց զամենազօրն զամենակալն Աստուած յօգնականութիւն կոչէին, երևել առաջնորդել պատերազմին*։ ³⁷Եւ այնպէս խրախոյս բարձեալ իւրեանց բարբառովն, ձեռն 'ի գործ առնէին. և 'ի նմին ժամանակի զԳորգի հանդերձ զօրօքն 'ի փախուստ դարձուցանէին։ ³⁸Եւ Յուդա զզօրսն առնոյր, 'ի քաղաք մի Սոդոմ անուն հասուցանէր. և իբրև շաբաթն մերձենայր՝ ըստ իւրեանց օրինացն սրբեալք և լուացեալք զշաբաթն անցուցանէին։ ³⁹Ի վաղիւն գային ընդ կողմն Յրեաստանի ամփոփել զմարմինս անկելոցն 'ի պատերազմի. և տոհմային եղբարքք հանդերձ յիւրաքանչիւր շիրիմս առ հարսն իւրեանց ծածկիցն*։ ⁴⁰Եւ իբրև հասանէին 'ի ճակատուն տեղի, գտանէին զիւրեանց եղբարց դիակունսն, և 'ի ներքոյ հանդերձից նոցա յուռու՛թ ուլունս, և բժրժանս յամենայն կոռց, ուսընդանու՛թ ունէին. ուստի մանաւանդ գարշէին օրէնքն, և զՅեբրայեցիսն յայնպիսի գործոց ամենևին 'ի բաց մերժէին։ Ապա իբրև զայն գտին, ստուգեցին 'ի միտս իւրեանց եթէ կոտորած նոցա յայնց պատճառաց լեալ իցէ*։ ⁴¹Ապա ամենեքին առ հասարակ օրհնէին զարդար գդատաւորն զՏէր, որ զգաղտնի ծածկեալսն 'ի յայտնութիւն դարձուցանէ։ ⁴²Եւ անկեալ խնդրուածս առնէին, զեղեալ անցեալ զմեղսն զայն սրտի մտօք թողուլ նոցա։ Քաջի՛կ ևս Յուդա մխիթարէր զզօրսն, և աղաչէր զգո՛յշ լինել վասն նորին մեղաց. Ձի ձերովք աչօք տեսէք ասէ՛՝ զպատուհասդ եղեալ վասն մեղացն

* *Ոմանք.* Որ նոցա 'ի քաղաքացն գտեալ էր։

* *Ոմանք.* Իբրև խաղաղութեամբ էին պատահար... յայնմ հետէ յառաջ... հնազանդ պահելոյ... շաբաթու կրօնիցն մերձ 'ի վերայ կային։ *Ուր ոմանք.* Շաբաթակրօնիցն։

* *Ոմանք.* Երկուց ճակատացն։

* *Ոսկան.* Այր ոմն Դօսիթէս հզօր սպառա՞... մազապուրձ ճողոպրեալ յամուր մի Մարես։ *'Ի լուս՞.* Ի Թրակայ գնդէ անտի, զուս հատանէր։ *Օրինակ մի.* Յամուր Միմարեան։

* *Ոմանք.* Երևել առաջնորդ պատերազմի։

* *Ոմանք.* Ի վաղիւ անդր գային... շիրմի առ հարսն իւրեանց ծածկէին։

* *Օրինակ մի.* Յուռութիւլունս... և զՅեբրայեցիսն յայնպէս գործոց։

եղելոց*։ ⁴³Քաջութեամբ խորհրդովք չորս սատերս կրկին ժողովէր, և տայր տանել յերուսաղէմ, մատուցանել պատարագս վասն մեղացն. կարի՛ բարուք իմաստութեամբ. զի վասն յարութեան մեռելոց խորհէր առնել զոր առնէր*։ ⁴⁴Ձի եթէ յարութեան ակն ո՛չ ունէր, անկելոցն ՚ի պատերազմէն զո՛ւր տարապարտուց լինէր վասն մեռելոցն աղօթս մատուցանել*։ ⁴⁵Այլ հայէր նա ուղիղ, ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգևաց. ⁴⁶արութեամբ քաջութեամբ վասն մեռելոցն զմտա՛ւ ածէր այց լինել մեղացն թողութեան*։

13

Գլուխ ԺԳ

ԻԲ ¹Յամին հարիւրորդի քառասներորդի իմներորդի. դէ՛պ եղև առ ժամանակօքն Յուդայ, եկն Անտիոքոս բազում զօրօք ²Լիւսիաւ հանդերձ ՚ի Յրեաստան՝ մետասան բիւրու վահանաւոր զօրօք. հինգ հազար և երեք հարիւր հեծելազօր գնդաւ, և քսան և երկու փղօք. երեք հարիւր գերանդազէն կառօք*։ ³Անկեալ էր և Շիմոն ՚ի նոսա ՚ի խե՛լս կերպարանեալս՝ իբրև թէ բարեխօս էր ՚ի խաղաղութիւն աշխարհին, բայց սրտի՛ խորհրդով ցանկացեալ էր քահանայապետութեան աշխարհին*։ ⁴Իսկ արքայ՝ արքայից արքայ, յո՛յժ յուզեաց զսրտմտութիւն բարկութեան Անտիոքայ ՚ի վերայ անօրէն Շիմոնի. մանաւանդ Լիւսի՛ ևս ցուցանէր, թէ սա՛ է պատճառք ամենայն չարեաց որ լինին յաշխարհի անդ. հրաման տայր ըստ օրինի ՚ի նմին տեղուջ կալեալ կորուսանել*։ ⁵Եւ է՛ր ՚ի տեղուջ անդ աշտարակ մի յիսուն կանգուն շինեալ լի՛ մոխրով, գործած բոլորշի՛ յամենայն կողմանց. ⁶դուռն առ ՚ի շեղ ՚ի ներքսակողմ ՚ի մոխի՛ր անդ առ լեզ շինեալ, յայն արկանէր զվնասակար տաճարին. և կամ զպարտ այլոց մեծամեծ չարեաց ընկենուլ, հասարակ հաւանութեամբ շուրջ լինել մէն ձե՛ռն մատուցեալ*։ ⁷Այսպիսի օրհասաւ հրամայեցին զանօրէն Շիմոն ՚ի միջոյ՛ ջնջել*։ ⁸Գի մի՛ հողոյ և մի՛ պատանաց յիւրում բնակութեան աշխարհին արժանի լիցի։ Քանզի բազում չարիս էր ցուցեալ նորա ՚ի սեղան անդր, ուր հուրն սրբութեան կայր՝ և աճիւնն. վասն այնորիկ մոխրահեղձոյց մահու զկատարած իւր վախճանէր*։ ⁹Անտիոքոս արքայ՝ առաւել վայրենացեալ խորհրդովք գայր՝ պատրաստեալ չարաչար տանջանս քան որ առ հարբն եղեն՝

* *Ոմանք.* Վասն նորին իսկ մեղաց։

* *Ոմանք.* խորհրդովք ժԲ-ան հազար սատեր... մեռելոց խորհեալ առնէր։

* *Ոսկան.* Անկելոցն ՚ի պատերազմի։

* *Ոմանք.* Չմտաւ ածեալ այց լի՛։

* *Ոմանք.* Բիւրաւ վահանաւոր զօրու, և հինգ հազար... և Յ գերանդա՛։

* *Ոմանք.* Իբրև բարեխօսէր... բայց ՚ի սրտէ խորհրդով ինքն անցեալ էր քահա՛։

* *Ոսկան.* Իսկ արքայից արքայ յոյժ։ *Ոմանք.* Եթէ սա էր պատճառք... որ լինի յաշխարհի անդր... կալեալ կորուսանէր։ *Յօրինակին.* ՚ի նմին տարուջ կալեալ կո՛։

* *Ոմանք.* Դուր քաշել ՚ի ներքսակողմն ՚ի մոխի՛ր անդր առլեփ շինեալ... և կամ զպարտս այլոց... լեալ մէն։ *Ուր Ոսկան.* Դուրս քարշել ՚ի ներքսակողմն ՚ի մոխի՛ր անդր... և զպարտականն այլոց մեծամեծ չա՛... շուրջ լեալ մեռելաւուս ձեռն մատուցեալ։ *՚ի լուս՛.* Առ լեփ շինեալ. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՛.*։ *Ուր օրինակ մի՛* առ լեբ։

* *Ոմանք.* Եւ այսպէս օրհասաւ։

* *Ոմանք.* Մի՛ լիցի արժանի... ցուցեալ նա ՚ի սեղան... վասն այսորիկ մոխ՛։

հասուցանել 'ի վերայ Յեբրայեցոց* : ¹⁰Իբրև զայն զգայր Յուդա, պատուէր տայր ժողովրդոցն ցայգ և զցերեկ կարողալ առ Տէր. զի որպէս այլ երբէք, և արդ օգնական լիցի այնոցիկ* , ¹¹որ 'ի հարցն օրինաց և 'ի սրբոյ տաճարէն մերժել կամին. և մի՛ յանձն առցէ հեթանոսաց անօրինաց 'ի ձեռս տալ* : ¹²Իբրև ամենեքին առ հասարակ միաբանութեամբ յայսմ ուխտի կային արտասուօք և պահովք, առաջի անկեալ թաւալէին անպակաս զերիս աւուրս, մխիթարեաց զնոսա Յուդա անձին զգալ* : ¹³Եւ ինքն առնոյր զօճերակոյտ ժողովրդեանն առանձինն 'ի խորհուրդ մտանէր. Պնդեսցուք ասէ զքաղաքսդ, մինչչև՛ զօրաց թագաւորին 'ի ներքս 'ի Յրեաստան մտեալ է : ¹⁴Եւ մեք ելցուք քաջութեամբ կամօքն Աստուծոյ, մահո՛ւ չափ մարտնչել 'ի վերայ օրինացն, քաղաքին և տաճարին՝ աշխարհի՛ և տէրութեան : Իբրև զայն ասէր՝ պնդէին վաղվաղակի 'ի կողմն Մովդիիմ քաղաքի զօրօքն հանդերձ : Բանա՛կ հարկանէր* . ¹⁵զնշան բաշխէր. յանձն առնէր Աստուծոյ զանձն և զգօրսն, և զյաղթութիւն զնդին : Եւ առնոյր զԱրիստիդէս ընտիր ընտիր երիտասարդ վառելովք. անկանէր գիշերի ընդ բանակս թագաւորին 'ի ներքս զսրահակօքն, կոտորէր զգիշերապահ դռնապահսն իբրև չորս հազար այր. և զգլխաւոր փղացն փղապետաւն հանդերձ անդէն սպանանէր. և այնպէս զդռնապահսն տապաստ արկեալ այսրէն դիմէր* : ¹⁶Յայնմ ժամանակի զամենայն բանակն խռովութեամբ և դողութեամբ լնոյր : ¹⁷Եւ ամենեքին լքեալք և լուծեալք և սպառեալք և տարակուսեալք՝ յայն առաւօտն հասանէին* : ¹⁸Իսկ թագաւորն՝ վասն յերկնից օգնականութեանն, այսպիսի ճաշակս քաջասրտութեան քաջութեան զԵբրայեցոց զնդին առնոյր՝ խելօք, միւսանգամ փորձ փորձէր. 'ի կորէս ելանէր* ¹⁹և 'ի Բեթսո՛վր ասպատակեալ, պահ պատնէշ պաշարումն մատուցանէր : Սակայն և անդ յարձակեալ մարտուցեալ 'ի պարտութիւն մատնէր : ²⁰Չի որ 'ի ներքս անդ էին, ինքնին Յուդա՝ նետ և զէն և համբարս ընդ աներևոյթ կողմանս 'ի ներքս մատուցանէր : ²¹Այս խորհրդոց առ թշնամի անդր՝ Ռոդոկ անուն 'ի Յրէից զնդէ անտի մատն և գուշակ լինէր. քննեցաւ, խնդրեցաւ, գտաւ, պատժեցաւ, 'ի սուր սպառեցաւ* : ²²Իբրև ա՛գդ զգուշութեան եղև ամրականացն բռնութիւն թագաւորին. սկսա՛ւ թողեալ զգօրութիւնն, նենգա՛ւ ջանալ ընդ ամրականսն. դաշինս կռէր, և յառնո՛ւլ առնէր զամուրսն : ²³Անդէն անդո՛ւստ յարձակէր 'ի կողմն Յուդայեանց. և յերկոցունց կողմանց 'ի պարտութիւն մատնեալ վատթարեալ գտանէր : Ապա ա՛գդ եղև նմա մոլեգին զնացքն Փիլիպպեայ, զի բռնութեամբ տիրաբար 'ի վերայ իրացն արքունի հասեալ շրջէր յաշխարհին. լուծաւ լքաւ տրտմեցաւ, աղաչեաց զԵբրայեցիս՝ և հաւանեցաւ նոցա. ո՛ւխտ եղ, երդմնի՛ արար՝ զամենայն իրաւունս նոցա անդրէն դարձուցանել, զխաղաղութիւն հաշտութեան 'ի մէջ հաստատեաց. մատոյց

* *Ոմանք.* Քան առ հարբն որ եղեն հասուցանել Յեբր՞ :
 * *Ոմանք.* Չցայգ և... զի որպէս և յայլ ժամանակս՝ և արդ :
 * *Ոմանք.* Եւ 'ի սրբոյ տաճարէ անտի մեր՞ :
 * *Ոմանք.* Թաւալէին զերիս աւուրս :
 * *Ոմանք.* Եւ տաճարին և աշխարհի :
 * *Ոմանք.* Եւ առնոյր զԱրիստիդէս... դռնապահսն իբրև զչորս հազարս այր... և այսպէս զդռ՞ : *Ուր Ոսկան.* զարս Տիդէս... դռնապահուն իբրև :
 * *Ոմանք.* Յայն յառաւօտուն հասանէին :
 * *Ոմանք.* Եւ միւսանգամ... և 'ի Կորէս :
 * *Օրինակ մի.* Եւ պատժեցաւ, 'ի սուր պատեցաւ... (22) և յառնուլ առնոյր զամուրսն :

պատարագ, և մեծարեաց զտաճարն. ՚ի գո՛ւթ սեր քաղցրութեան մարդասէ՛ր լինէր ընդ ամենայն տեղիս նոցա՞: ²⁴Փառաւորեաց զՄակաբէ, և ճոխագոյն ևս կացոյց զնա ՚ի վերայ նոցա քան զառաջինն: Եւ եթող անդ սպարապետ ՚ի վերայ աշխարհին զՅեզեմոնիդէս ՚ի Դովրայ մինչև ՚ի Գերար՝: ²⁵Ինքն եկն եմուտ ՚ի Պտղոմայիս: Բարկացեալ յո՛յժ էին քաղաքացիքն վասն ուխտիցն հաշտութեան. ո՛չ հանդարտէին, այլ ՚ի նմին խռովութեան կային, զի անդրէն լուծցէ զհաշտութիւն հաւանութեանն՝: ²⁶Սատեալ ինքնին Լիւսիաս, առաջի եկաց իմաստաբար, հաճեաց զմիտսն, մեղմացոյց: Դարձ արար անդրէն ՚ի կողմանս Անտիոքացոց: Այն արշաւան ասպատակի թագաւորին՝ այսպիսի դարձիւ վճարեցաւ՝:

14

Գլուխ ԺԴ

ԻԳ ¹Յետ երից ամա՛ց ժամանակի դէ՛պ եղև դիմել Դեմետրեայ Սելևկեանց ՚ի վերայ Յեբրայեցոց ընդ երեք քաղաքեան նաւահանգիստ՝ մեծա՛ւ գնդաւ, բազում զօրօք ՚ի ներքս՝ ²յաշխարհամիջի անդր արշաւել, մերժել զԱնտիոքոս և զնորուն եղբայր Լիւսիաս՝: ³Աղ՛կիմոս ոմն անուն էր քահանայապետ լեալ յառաջ, կամօք իւրովք պղծեաց զառաջինն խառնակութեամբ ժամանակաց: Խորհեցաւ ՚ի միտս իւր և ասէ թէ՛ Որպէս և է, սակայն անհնա՛ր է նմա գտանել փրկութիւն, և ո՛չ այլ գոյր նմա մերձենալ առ սեղանն սրբութեան՝: ⁴Եկն եկաց առաջի արքայի Դեմետրեայ ՚ի հարիւրորդի յիսներորդի յառաջնում ամի, մատուցանէր նմա պսակս ոսկիս և արմաւենիս, և ոստս թաւս ՚ի պատիւ մեհենին: Եւ զայն օր լո՛ւռ լինէր. ⁵բայց ժամանակի՛ սպասէր իւրում անմտութեանն օգնական գտանելոյ: Իբրև դէ՛պ եղև օր մի ՚ի խորհուրդ կոչել զնա Դեմետրեայ. սկսաւ հարցանել զնա արքայն. Յի՞նչ օրէնս, յի՞նչ կանս, յի՞նչ խորհուրդս կան ընդ մեզ Յեբրայեցիքդ՝ որ ՚ի Յրեաստանի են՝: ⁶Այսպէս ետ պատասխանի. Ասիդացիքդ որ անուանեալ են ՚ի մէջ Յրէիցդ՝ որոց սպարապետ և զօրավար Յուդա Մակաբէ համբարձեալ է, զօրաժողով են՝ ՚ի մա՛րտ պատերազմի պատրաստեալ են, յուզեն հանապազ զժողովս նոցա. և ո՛չ տան խաղաղութեամբ հնազանդել ձերում տէրութեանդ՝: ⁷Վասն այսորիկ իմ աւասիկ թողեալ ՚ի բաց զփա՛ռսն հայրենի՝ զքահանայութիւն, եկեալ հասեալ եմ առ քեզ. ⁸նախ՝ վասն իրացս արքունի սրտացաւութեամբ ցուցանել, և ապա վասն մեր. զի մեծաւ ծփանօք մտախո՛հ հասի առ քեզ վասն արանցն անմտութեան. որպէս

* *Ոմանք.* Կողմանց անտի ՚ի պար՝... մոլեգին գնացն Փիլ՝... և աղաչեաց զԵբրայեցիսն և հնազանդեցաւ նոցա... և զխաղաղ՝:

* *Յօրինակին.* Ջհեզեմոնիդէս ՚ի Դովրայ:

* *Ոմանք.* Եւ ո՛չ հանդարտէին:

* *Այլք.* Առաջի եկաց իմաստնաբար: *Ոսկան.* Յայն արշաւան... այսպիսեալ դարձիւ:

* *Յօրինակին պակասէր.* Յետ երից ամաց ժամանակի:

* *Ոմանք.* Յաշխարհամէջս անդր արշաւել, և մեր՝:

* *Ոմանք.* Պղծեալ զառաջին խառնակութեան ժամանակաց խորհեցաւ ՚ի միտս իւր, և ետես եթէ որպէս և է:

* *Ոմանք.* Անմտութեան օգնական լինելոյ:

* *Այլք.* Յուդա Մակաբէ համարձակեալ է: *Ոմանք.* Եւ պատրաստեալ են յուզել... ձերոյ տէրութեան:

ամենայն ազգն մեր յանպարտ՝ անպարտ կան՝ ՚ի խռովութեան*։ ⁹Այլ որպէս ընդ կողմանս կողմանս և ընդ աշխարհս ամենայն խորհուրդս խաղաղութեան՝ և կանս մարդասէրս ունիք, զայն ամենայն տեղեկացեալ գիտեմ։ ¹⁰Այլ մինչ Յուդա կենդանի է՝ անհնար է խաղաղութիւն առնուլ իրաց արքունի ՚ի Յրէաստանի*։ ¹¹Իբրև նա այնպէս սկսաւ խօսել վասն նորա, այլ աւագանին որ թշնամութեամբ ոխս պահէին Յուդայ, առաւել ևս շուրջ զայրացուցին զթագաւորն*։ ¹²Մինչ անդէն վաղվաղակի հրամայեաց կոչել զփղապետն Նիկանովր, ետ զօրս ՚ի ձեռն, և կացոյց սպարապետ կողմանցն Յրէաստանի. արձակեաց մեծաւ հանդերձաւ*, ¹³բազում պատուիրանաւ զի զՅուդայ ինքնին ՚ի գլխովին զբռնմբ արկանել, և զգունդն ամենայն յայնկոյս՝ յայնկոյս ցրել. անդ կացուցանել զԱղկիմոս քահանայապետ մեծի տաճարին։ Այն որ ՚ի Յրէաստանէ* ¹⁴անտի ազգքն փախստական գնացեալ էին վասն Յուդայ, գային պառակտեալք՝ և անդէն խառնէին ՚ի գունդն Նիկանովրայ. զՅրէիցն թշուառութիւն իւրեանց փառաւորութիւն համարէին։ ¹⁵Սոքա իբրև լսէին զՆիկանովրայ զարշաւանն. և զայնչափ յոյզսն հեթանոսաց. հող ՚ի գլուխ լինէին, առաջի թաւալէին, որ իսկզբանէ յաւիտենից հաստատեաց զիւր ժողովուրդ, և յամենայն ժամանակի յայտնապէս ձեռնկալու լինէր իւրոյ վիճակին*։ ¹⁶Իբրև հրաման տայր զօրավարն՝ փութանակի ընդ առաջ եղև նմա ՚ի գետոյ մի Դեսաոմ անուն՝ ¹⁷Շմաւոն եղբայր Յուդայ, ՚ի դիմի՝ հարաւ Նիկանովրայ. և առ փոքր մի նիզակակցացն յանզգաստութենէ ՚ի պարտութիւն մատնեալ*։ ¹⁸Սակայն լուեալ էր Նիկանովրայ զարանցն քաջութեան, և զմարտ պատերազմի ՚ի վերայ աշխարհին ճգնութեան քաջութեամբ, երկնչէր զիրս դատաստանին արեամբ վճարել*։ ¹⁹Վասն այսորիկ յղեաց կոչեաց նա զՊոսիդոնիոս, և զԹէոդոտոս, և զՄատաթէոս, տալ և առնուլ և կռել դաշինս*։ ²⁰Իբրև բազում տարուբեր և խորհուրդք ՚ի մէջ լինէին, և ՚ի բազումս ևս զօրագլուխն զխորհուրդն սփռէր. և զօրքն ևս միաբանութեամբ միով հաւանութեամբ զհաշտութիւն յանձն առնուին*։ ²¹Եդին զուխտն առաջի՝ և դաշինս կռեցին։ Ժամադիւր լինէին միմեանց, յորում աւուր ՚ի մի՝ վայր հասեալ զուխտսն հաստատեսցեն։ Եկին առ միմեանս, աթո՛ռս արկին, խորհուրդ խորհեցան, դաշինս կռեցին։ ²²Յուդա հրաման ետ իւրեանց գնդին՝ վառել պատրաստել՝ դարանամուտ լինել, զի մի դաւ ինչ չարագործութեան նոցա ՚ի թշնամեացն լինիցի։ Եւ այնպէս զգուշութեամբ զյօրինի դաշինս ընդ միմեանս հաստատէին*։ ²³Եւ մտեալ շրջէր յերուսաղէմ ո՛չինչ անկարգ և անօրէն

* *Ոմանք.* Վասն իրացոյ արքունի սրտցաւութեամբ... յանպարտ պարտական ՚ի խռով։ *Ուր Ոսկան.* Անպարտական ՚ի խռովու։

* *Ոմանք.* Անհնար է խաղաղութիւն առնել իրացոյ ար։

* *Ոմանք.* Իբրև նա այնպէս սկսաւ։

* *Ոմանք.* Մինչ անդէն վաղվա՞... կոչեաց զփղապետ Նի՞... և արձակեաց։

* *Ոմանք.* Յուդայն ինքնին գլխովին զբռնմբ... և անդ կացու։ *Ոմանք.* Այն որ ՚ի Յրէաստանի (14) ազգքն փախստական գնացեալ էր վասն Յուդայի, գային... փառաւորութիւն համարեալ առնէին։

* *Ոմանք.* Լինէր յիւրում վիճակին։

* *Ոմանք.* Եւ Շմաւոն եղ՞... ՚ի դիմի հարեալ Նիկա՞։

* *Ոմանք.* Նիկանովրայ՝ զօրացն զքաջութիւն... ճգնութեան քաջութեան։

* *Ոմանք.* ՁՊոսիդոնիոս, և զԹիոդոտոս և զՄատաթիաս։

* *Ոմանք.* Միաբան միով հաւանութեամբ։

* *Ոմանք.* Վառեալ պատրաստեալ... զօրինի ՚ի դաշինս ընդ։

գնացիւք: Չայն որ խառնիճաղանճ զօրս յինքն կուտեալ էր՝ յիւրաքանչիւր տեղիս արձակէր*։²⁴Եւ ունէր Նիկանովրայ զՅուդայ գրգանօք փափկութեամբ՝ և մտադար սիրով*։²⁵Աղաչեաց կի՛ն առնուլ ՚ի նմանէ, զի գո՛ւթ անկցի, և զաւակ խառնեսցի: Յանձն առ Յուդա, հաւանեցաւ, հաստատեաց, ընտանեցաւ*։²⁶Իբրև ետես Աղկիմոս զնոցա ընդ միմեանս հաւասարութիւն, և դաշինք որ ՚ի մէջ կռեցան, վարեաց եկն վաղվաղակի առ Դեմետրիոս. ամբաստան լինէր զՆիկանովրայ. և ցուցանէր՝ օտարածայն այլամիտ խորհուրդս ունել նմա ընդ օրէնս արքունի. զի զվնասակարն իրաց արքունի՝ յորդէգիրս առեալ ժառանգ՝ ի՛ւր անձին փոխանակ կացուցանէ*։²⁷Իբրև լսէր զբանս անօրէն բանասարկուին՝ ՚ի սրտմտութիւն բրդեցաւ թագաւորն. հրաման ետ թագաւորն հրովարտակս տալ, յայտ առնել թէ չէ՛ հաճեալ ընդ դաշինս հաւանութեանն: Ի՛նմին հրովարտակի հրաման տայր՝ կապեալ՝ ոտիւք և կապեալ ձեռօք տալ՝ ածել զՄակաբէ ՚ի քաղաքն Անտիոքացւոց*։²⁸Իբրև այս ամենայն ա՛զդ եղև Նիկանովրայ, խոնարհեալ կործանեալ՝ կայր տրտմեալ ՚ի միտս իւր թէ ստութիւն ինչ մտցէ ՚ի դաշինս անդր. և ուխտքն եղիցին տարապարտուց, յոչի՛նչ վնասու ՚ի վերայ առնն արդարոյ: ²⁹Բայց քանզի զհրաման ինչ ո՛չ անցանել ըստ թագաւորին, սպաս արար մարթանօք զհրամանն կատարել*։³⁰Իսկ Մակաբէոս՝ իբրև ետես յայրատագոյնս իմն մատուցեալ զնա Նիկանովրայ. և զօրէն նուաճութեանն խստագոյնս և շինականագոյնս մերձեցալ նորա ՚ի նա. ո՛չ լա՛ւ համարեցաւ զյանդգնութիւնն Նիկանովրայ. անդէն յանդիման նորա շա՛տ զոք ընդ իրեարս շփոթեաց. և ինքն է՛լ զնաց յերեսաց Նիկանովրայ*։³¹Իբրև ետես Նիկանովր, թէ այնպէս զձեռօք ո՛չ կարաց ածել զայրն որպէս կամէր. եկն եհաս ՚ի վերայ քահանայիցն ՚ի տաճարին սրբութեան՝ մինչդեռ նոքա զպատարագսն մատուցանէին, սաստէր նոցա՝ զայրն ՚ի ձեռս տալ վաղվաղակի*։³²Նոքա երդմամբ հաստատեցին՝ թէ ամենևին զայն այր և տեսեալ չիք մեր. ձգեաց զձեռն իւր ՚ի տաճար անդր*,³³և այսպէս երդուաւ. Եթէ ո՛չ կապեալ ոտիւք և ձեռօք զՅուդա ՚ի ձեռս իմ տայցէք, զայդ տաճար Աստուծոյ հարթ յատակ արարից, և զսեղանդ կործանեցից, և զտաճարդ զայդ նուիրեալ որմզղական դից հաստատեցից*։³⁴Եւ զայս իբրև ասաց՝ է՛լ զնաց: Քահանայքն ձեռս բարձին յերկինս, կարդային առ որ յամենայն ժամանակի օգնական և պաշտպան լինէր ազգին իւրեանց՝ և ասէին*։³⁵Դու Տէր ամենայնի, անմիագ յամենայնէ, լի՛ ամենայնիւ. քեզ կամք այնպէս եղեն, հաստատել զտաճար բնակութեան քոյ ՚ի միջի մերուն: ³⁶Եւ արդ՝ յամենայնի սրբութեամբ Տէր,

* *Ոմանք.* Խառնիճաղանճ զօրն իւր կու՛:

* *Ոմանք.* Եւ ունէր Նիկանովր զՅու՛... և փափկութեամբ և մտադիր:

* *Ոմանք.* Եւ աղաչեաց:

* *Ոմանք.* Օտարածայնս և այլա՛... յորդէգիրս ա՛ռ ՚ի ժառանգ իւր:

* *Ոմանք.* Ի՛ սրտմտութիւն բարկութեան բրդեցաւ թա՛:

* *Ոմանք.* Բայց քան զհրամանաւ ինչ ո՛չ անցանել զթագաւորին:

* *Յօրինակին պակասէր.* Մատուցեալ զնա Նիկանով՛... խստագոյնս և շինականագոյնս մերձե՛: *Ոմանք.* Մատուցանէր զնա Նիկանովր, և զօրէն սորին նուաճութիւն... մերձեցալ նորա առ նա. ո՛չ ՚ի լաւ համա՛... ընդ միմեանս շփոթեաց:

* *Ոմանք.* Ի՛ տաճարն սրբութեան: *Յօրինակին պակասէր.* Չայրն ՚ի ձեռս տալ վաղվաղակի:

* *Ոմանք.* Հաստատէին եթէ ամենն՛:

* *Ոմանք.* Եւ այնպէս երդուաւ... ՚ի ձեռս իմ տայցէք, զայս տաճար:

* *Ոմանք.* Եւ կարդային առ այն որ յամենայն:

պահեա՛ դու յաւիտեան զայս նորոգապէս սրբութեամբ զտաճար քո՛: ³⁷Հռա՛քս ոմն անուն՝ ՚ի ծերակոյտ ժողովրդենէ անտի ՚ի զօրացն Երուսաղեմի ա՛յր ընդընկերասէր, մարդասէր յոյժ, բարենշան բարեհամբաւ, ըստ խնամոտ մտաց՝ հա՛յր կարդացեալ Եբրայեցւոց՝: ³⁸Ձի յառաջ ժամանակի անդ՝ զանխառն զանապակ օրէնսն օրինադի՛ր լինէր Հրեութեան ոգւով և մարմնով. յառաջ տուեալ էր զանձն ամենայն ազատութեան՝: ³⁹Իբրև կամեցաւ Նիկանովր յա՛յտ յանդիմանութեամբ զթշնամութիւն յայտնել զոր ունէր ընդ Հրէայսն, հատոյց զօր աւելի քան զհինգ հարիւր, երթալ ՚ի բուռն առնուլ զնոսա՛: ⁴⁰Ձի ա՛յսպէս ասաց, թէ այդք ևս անաչեցեալք դարձցին, գործ մեծ գործեցից ՚ի վերայ քաղաքիդ: ⁴¹Իբրև հասին զօրքն, զաշտարակն պատեցին, և ՚ի վերայ դրանն գո՛ւն գործեցին. ձա՛յն տային միմեանց հո՛ւր մատուցանել՝ զի զդուռն հրձիգ արասցեն՝: ⁴²Իբրև այնչափ ՚ի վարան տագնապի մտանէր այրն, ո՛ւչ առնէր, անձին հրամայէր, դնէր սուսեր ընդ պորտով, կամէր ազատօրէն մեռանել քան անկանել ՚ի ձեռս անօրինաց, և պղծել զանձին ազնութիւն: ⁴³Եւ սրովն ուղղո՛րդ ՚ի ներքս երթայր վասն ճեպոյն վտանգի: Եւ զօրացն ընդ դրունսն խուժելոյ. կամէր ելանել ՚ի վեր և զանձն ՚ի բարձուէ ընդ պարիսպն հոսել՝: ⁴⁴Նորքա իբրև յիւրեանս ա՛յսր անդր խուճապեցան, և ՚ի նմանէ ամբոխն փարատեցաւ. ե՛դ զսուսերն և չոգաւ զիւրովին. ⁴⁵և կանգնեցաւ անդէն, մինչև զօրն և ոգիքն անդէն կային. եկն յայտ անդր զայրագին լի՛ բարկութեամբ, մինչև արիւնն գունդագունդ արտաքս հոսէր, և վերքն չարաչար պատառեալ էին, և ամբոխն առաջի անդ յա՛յսկոյս յա՛յնկոյս փարատէր՝: ⁴⁶Ե՛լ եկաց ՚ի վերայ վիմի միոջ, յանդիման կողմանցն երկոցուն. խոնարհեցաւ ա՛ռ ՚ի գիրկս իւր զաղիսն արեամբն հանդերձ, և ցո՛յց ՚ի վեր յերկինս, կարդաց զՏէր կենդանութեան զոգւոց և զմարմնոց՝ և ասէ. Չսո՛յն հատուցումն հատուցչիդ դու նմա: Եւ նա զա՛յս օրինակ փոխեցաւ յաշխարհէ՛:

15

Գլուխ ԺԵ

¹Իսկ Նիկանովր՝ իբրև ա՛զդ եղև նմա վասն Յուդայեանց ՚ի կողմանցն Շամրտացւոց, խորհեցաւ պատրաստեցաւ յաւուր պահոց շաբաթու անկանել ՚ի վերայ՝: ²Եւ Հրէայքն՝ որ ընդ նմա էին, բռնադատեալ տանէր Նիկանովր, սկսան աղաչել և ասել. Քա՛ւ քեզ Տէր, մի՛ այդպէս խիստ և խըժաբար կատարեր զկամս քո. այլ տո՛ւր փառս, և դի՛ր պատիւ աւուրս որ պատուեցաւ ՚ի պատիւ

* *Ոսկան.* Յամենայնի սրբութեան Տէր... զսրբութեան տաճար քո: *Յօրինակին.*

Յաւիտեան զանորոգապէս սրբ՝:

* *Օրինակ մի.* Առաքս ոմն անուն: *Այլք.* Այր ընկերասէր մար՝:

* *Ոմանք.* Ձի յառաջին ժամանակի... զանապական օրէնսն:

* *Ոսկան.* Հասոյց զօրս աւելի:

* *Ոմանք.* Ձի զդրունսն հրձիգս ա՛:

* *Ոմանք.* Ուղղորդ ՚ի ներքս երթալ վասն ճեպիցն վտան՝... ընդ պարիսպն հոսել:

* *Ոմանք.* Անդրէն, մինչդեռ զօրն և ոգ՝... եկն ՚ի յայտ անդր... մինչ արիւնն գունդա՝... առաջի անդր յայսկոյս:

* *Ոմանք.* Ել եկաց ՚ի վիմի միոջ... և եցոյց ՚ի վեր... և կարդաց զՏէր:

* *Ոմանք.* Վասն Յուդայեան կողմանցն Շա՝... անկանել ՚ի վերայ նորա:

հանգստեան յամենակալ սրբոյդ*։ ³Սկսաւ անդէն հարցանել անօրէնն՝ և ասէ. Եւ գո՞յ Աստուած ամենակալ յերկինս որ հրամայեաց ձեզ փափուկ ունել զօրն շաբաթուց*։ ⁴Նոքա պատասխանի ետուն՝ և ասեն. Այո՛, գոյ Տէր ամենագոր կենդանի՛, որ հրամայեաց փափուկ ունել զելթներորդ շաբաթուց*։ ⁵Եւ ժանտաժուտն ասէ արհամարհանօք, ասէ. Հօգօրն երկրիս է. որ տայ գործել զինու և զարդու, և գործել զգործ արքունի։ Եւ սակայն ո՛չ մեղմացաւ անօրէնն ՚ի հպարտութենէ անտի*։ ⁶Եւ Նիկանովր ամենայն հպարտութեամբ խստապարանոց գնացեալ, համարէր հասանել ՚ի վերայ Յուդայեանց. հասանել սատակել՝ և նշան յաղթութեան կանգնել։ ⁷Իսկ Մակաբէոս յամենայն ժամ յուսացեալ էր ՚ի Տէր, որ հանապազօր զօգնութիւն իւր ո՛չ առնէր պակաս ՚ի նմանէ*։ ⁸Մխիթարէր զայնոսիկ որ ընդ իւրն էին, մի՛ ձանձրանալ՝ մի՛ զանգիտել յանօրէն հեթանոսաց. յարձակել, և դնել ՚ի մտի զգործսն քաջութեան զառաջինս։ Եւ որ օգնականութիւնքն ձեզ յերկնից գտան. և արդ՝ ակն ունել զնոյն ՚ի Տեառնէ զյաղթութիւն և զմխիթարութիւն*։ ⁹Եւ մխիթարէր զնոսա յօրինացն և ՚ի մարգարէից. առ յիշեցուցանել նոցա զմարտ պատերազմաց որ ՚ի ձեռս նոցա կատարեցաւ*։ ¹⁰Անդասրտեալ յօժարագոյնս ևս առնէր զնոսա, զհեթանոսացն ևս ստութիւնս ՚ի մէջ բերելով, և զուխտիցն անցանել, և զերդմանցն անարգել*։ ¹¹Եւ զմի՛ մի ՚ի նոցանէ առաւել վառէր մխիթարութեան բանիւք, քան զինութն՝ տիգօք և ասպարօք։ Եւ երա՛զ ևս սկսաւ պատմել նոցա արժանի ժամանակին, զի առաւել զուարթացոյց զամենեսեան*։ ¹²Եւ էր տեսիլ երազոյն օրինակ այս. Ոնիա ոմն որ յայնժամ լեալ էր քահանայապետ. զեղեցիկ հայելով, շքեղ տեսանելով, հեզ բարոյիւք, և հանդարտ սրտիւ. եկեալ խօսս արկանէր զեղեցիկ, որպէս սովոր էր ՚ի մանկութենէ, զամենայն զանձին քաջութենէ. համբարձեալ զձեռս իւր աղաչէր ՚ի վերայ ազգացն Հեբրայեցւոց հաստատութեան*։ ¹³Ապա դարձեալ տեսանէր զօտերութիւն փառաւորութեան սքանչելի՛ և կարի՛ վայելուչ իմն, որ շուրջ զնովաւ բա՛կ առեալ ունէր՝ և ասէ*։ ¹⁴Անդուստ խօսել սկսաւ Ոնիա՛ և ասէր. Եղբայր ծերս այս. սա՛ է որ բազում աղօթս անպակաս յաճախ մատուցանէ Աստուծոյ Երեմիա՛ մարգարէ Աստուծոյ*։ ¹⁵Եւ ձգէր զաջ ձեռն իւր Երեմիա, և տայր ձեռն ՚ի ձեռն ցՅուդայ սուսեր մի ոսկեհանդերձ. և ընդ տալն՝ ասէր այսպէս. ¹⁶Ա՛ռ զսուսերդ զայդ սուրբ պարգև՝ ՚ի Տեառնէ, զի դովաւ սատակեսցես զթշնամիս ամենայն։ ¹⁷Մխիթարեցան ՚ի

* *Ոմանք.* Աղաչել և ասեն. Քաւ քեզ։ *Օրինակ մի.* Խիստ և դժուարաբար կատարեր... որպէս պատուեցաւ ՚ի պա՞... յամենակալ սրբոյն։

* *Ոմանք.* Սկսաւ անդէն հարցա՞... փափուկ ունել զելթներորդ օր շաբա՞։

* *Ոմանք.* Ձելթներորդ օր շաբաթուց։

* *Ոսկան.* Ասէ արհամարհանօք. Հօգօրն երկ՞։

* *Ոմանք.* Ձօգնականութիւն իւր ո՛չ առնէ պակաս։

* *Ոմանք.* Եւ մխիթարէր... և մի՛ զանգիտել յանօրէն հեթանոսաց... ձեզ յերկնից գտանել։

* *Ոմանք.* Առ ՚ի յիշեցուցանել նոցա զմարտ պատերազմողաց... կատարեցան։

* *Ոսկան.* Պատրաստեալ յօժարագոյն ևս առնէր։ *Ոմանք.* Եւս ստութիւն ՚ի մէջ բերեալ՝ և։

* *Ոմանք յաւելուն.* Եւ տիգօք և ասպարօք *մխիթարեալ զնոսա։* Եւ երազ։

* *Ի բազումս պակասի.* Ոնիա *ոմն* որ յայնժամ։ *Ոսկան.* Հեզ բարուք։

* *Ոմանք.* Բակառեալ ունէր՝ և ասէր։

* *Ոմանք.* Խօսել սկսանէր Ոնիա... յաճախ մատուցանէր Երեմիա։ *Աստանօր՝ ՚ի բազում գրչագիրս՝ համենատ մերունս օրինակի, թէպէտ և պատշաճաբար, բայց թուի թէ վրիպակաւ իմն ձևացեալ գրի բանս՝ Եղբայր ծերս այս, սա է և այլն։ Ուր երկու օրինակք և եթ համենատ բնագրին Յունաց ունին.* Եղբայրասէրս այս, սա է, և այլն։

բանից անտի Յուդայ՝ ՚ի զօրեղ և ՚ի գեղեցիկ, և բարձրացան յոյժ քաջալերութեամբ. և անձինք երիտասարդաց վերստին նորոգեցան: Եղին ՚ի մտի այնուհետև ո՛չ այսր անդր սայթաքել, այլ հաստատուն զոտս ՚ի բո՛յս հարկանել, յենուլ ՚ի համբերութիւն, պնտել ՚ի պատերազմի. ժառանգել զանուն քաջութեան, հաստատել ՚ի վերայ իրաց ուխտին հաւասարութեան, առնուլ յանձն զճգնութիւն ՚ի վերայ քաղաքին* .¹⁸ ՚ի վերայ կանանց և մանկանց, և եղբարց հարազատաց, ՚ի վերայ դայեկաց բնակաց տոհմային քաղաքացւոց: Եւ առաւել քան զայս ամենայն ճգնութիւն պատերազմի էր նոցա ՚ի վերայ մեծի՝ տաճարին սրբելոյ* .¹⁹ Է՛ր սակայն և ՚ի ներքս քաղաքացւոցն ո՛չ թեթև վիշտ պատերազմի, կարծիք վշտագին դատաստանիմ* :²⁰ Այլ իբրև կողմանք զօրացն երկոցունց ՚ի միմեանս հասանէին, փող հարկանէր, պատրաստութիւն լինէր, ճակատ յարդարէր, զփիղսն վառեալս գնդաց գնդաց ՚ի գլուխ յօրինեալ կացուցանէին, զհեծելագօրն յա՛ջ յահեա՛կ թևս գործէին* :²¹ Ձայն ահեղ տեսիլ՝ Յուդա հայեցեալ տեսանէր՝ զգնդացն դրօշու դրօշու պատրաստութիւն, զգինուցն զպէսպէս սրբութիւն, զնշանացն փողփողել, զմեծամեծ գազանացն զանհնարին գազանութիւն, զձեռս յերկինս համբարձեալ ՚ի նշանագործ Տէրն կարդայր. որ ո՛չ թէ ըստ կանս մարդկան, այլ ըստ կանս իրաւանց իւրոց տայ գյաղթութիւն արժանեաց իւրոց* :²² Եւ սկսաւ ասել յաղաչելն իւր ա՛յսպէս. Դու Տէր տերանց՝ առաքեցեր զիրեշտակ քո ՚ի ժամանակս Եզեկիայ արքայի, և սատակեցեր դու ՚ի զօրաց անտի Սենեքերիմայ հարիւր ութսուն և հինգ հազար հեծեալ սպառազն* :²³ Եւ արդ Տէր ամենագոր որ բնակեալ ես յերկինս, առաքեա՛ զիրեշտակ քո առաջի մեր, յա՛հ յերկնղ ՚ի դողումն, ՚ի զօրութիւն բազկի քոյ, զի զահի հարցին՝ և պակիցեն* ,²⁴ որ հայիոյութեամբ հասեալ եմ ՚ի վերայ ժողովրդեան քոյ: Եւ սա զբանս իւր վախճանեաց: ²⁵ Իսկ Նիկանովր՝ մեծաշուք ՚ի զոչիւն փողոյ, բազում արուեստականաց ձայնիւ զճակատն յառա՛ջ մատուցանէր* :²⁶ Սոքա աստի բազում աղօթիւք խնդրուածոց ՚ի վերայ յարձակէին* .²⁷ զձեռս ՚ի գործ արարեալ, և զսիրտս առ Աստուած աղօթիւք յերկինս: Հասանէին հարկանէին գունդն Մակաբեան Յուդայ ՚ի զօրացն հեթանոսաց, ո՛չ ինչ պակաս յերից բիւրուց և ՚ի հինգ հազարէ. մեծապէս զուարճացեալք յերևել օգնականութեան մեծութեանցն Աստուծոյ* :²⁸ Եւ ա՛յսպէս զգործն ուրախութեան վճարեալ խնդութեամբ դառնային: Ա՛նդ գտանէին անկեալ զՆիկանովր առաջի գնդին կոտորելոց՝ զինուն զարդուն նշանօք հանդերձ ՚ի մէջ երկուց ճակատոցն* :²⁹ Ի ձայն բարձր զոչման մեծ աղաղակաւ

* *Ոմանք.* ՚ի զօրեղ և գեղեցիկ... այսր անդր սաթաքել: *Յօրինակին պակաստր.* Եւ բարձրացան յոյժ քաջալե՛ն:

* *Ոմանք.* Եւ ՚ի վերայ դայեկաց:

* *Ոմանք.* Ոչինչ թեթև վիշտս:

* *Ոսկան.* Այլ իբրև կողմանց զօրացն երկոցունց պատրաստութիւն լինիւր, ճակատ յարդարէր՝ ՚ի միմեանս հասանէին. փող հարկանէր. զփիղսն վարեալս... յաջ և յահեակ:

* *Ոմանք.* Ձինու զպէսպէս սրբութիւն... զձեռս յերկինս բարձեալ ՚ի նշանագործ Տէրն կարդային... գյաղթութիւն արժանաւորաց իւրոց:

* *Ոմանք.* Սենեքերիմի՝ հարիւր: *Յօրինակին թուագրով դնի.* Սենեքերիմայ ճՁԵՈ:

* *Ոսկան.* Եւ ՚ի դողումն: *Ոմանք.* Բազկի քո զահի հարցին և պա՛:

* *Ոմանք.* Եւ բազում արուեստականաց ձայնից զճակա՛:

* *Ոմանք.* Սոքա ուստի բազում:

* *Ոմանք.* Եւ զսիրտս աղօթիւք առ Աստուած յեր՛... Մակաբեան Յուդայի զօրացն:

* *Ոմանք.* Ձգործն ուրախութեամբ վճարեալ... երկուց ճակատացն. *կամ՝* ճակատուցն:

զամենագորն Աստուած յիրեանց հայրենի բարբառն օրհնէին*։ ³⁰Յրաման տայր որ զօրութեամբն հաստատութեամբ՝ առ հասարակ քաջութեամբ նահատակութեամբ՝ մտադեր հաւանութեամբ ՚ի վերայ ազգին նահատակեալ՝ հրամայեաց զգլուխն հատանել զՆիկանովրայ, և զաջ ձեռն թիկամբն հանդերձ, և տանել յերուսաղէմ*։ ³¹Իբրև եկն ինքն՝ եհաս, կոչեաց զազգատոհմն, զքահանայսն առաջի սեղանոյն. և ետ ածել զամրապահ միջնաբերդին զակառանց*։ ³²Եւ ցոյց նոցա զանօրէն զհայիոյիչ զՆիկանովրայ զգլուխն, և զձեռն զոր իշխեաց ձգել ՚ի տաճար անդր յամենակալի Աստուծոյ պարծանօք հպարտութեամբ*։ ³³Եւ զլեզուն հրամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել. և ասէ. Մանր մանր կոտորեալ զայս թռչնոց գէշագէշ ջամբեցից։ Եւ զանմտութեան բազուկն յանդիման տաճարին հրամայեաց կախել*։ ³⁴Այլ ամենեքին յերկինս օրհնէին զերևելին Աստուած՝ և ասէին. Օրհնեալ որ պահեաց անարատ զսուրբ տեղի իւր։ ³⁵Եւ կախեաց զՆիկանովրայ զգլուխն զբարձրամուր աշտարակէն յայտ յանդիման ամենեցուն. և յայտնապէս օգնականութեան Տեառն նշան յաղթութեան կանգնեցաւ*։ ³⁶Ուխտ եղին առ հասարակ, հրաման ետուն ընդ ամենայն ազգն ՚ի հասարակ կամաց հաւանութենէ առնել զօրն զայն օր տօնից տարեկանաց. զի մի՛ թողցեն աննշան զօրն զայն*։ ³⁷Եւ էր նշան աւուրն թիւ երեքտասաներորդ օր, երկոտասաներորդ ամսեանն Ադարայ, որ անուանեալ կոչի յԱսորոց բարբառոյ անտի ա՛յսպէս. որ միով աւուրք յառաջ էր քան զամիսն Մարդքեական*։ ³⁸Այն որ ինչ վասն Նիկանովրայ իրացն՝ խօսք են, ա՛յսչափ։ Եւ յայնց ժամանակաց յորում հասուն եղեն Յեբրայեցիք քաղաքին՝ ՚ի նմին վայրի և ես զբանս վախճանեցից*։ ³⁹Եւ թէ իցեն ՚ի կարգի՝ զովեցայց ՚ի կարգել անդ. զայս և ես կամիմ. ապա թէ հետևակս ինչ՝ և տկարս ինչ խօսեալ իցէ, ես ա՛յդչափ ինչ կարող էի*։ ⁴⁰Ձի որպէս զգինի ոք առանձինն ընկիցէ՝ և դարձեալ զջուր առանձինն՝ անարգ է. այլ զորօրինակ զջուր ընդ գինի ոք խառնէ, քաղցր և անո՛յշ առնէ զշնորհս նորա. սո՛յնպէս և բանից կազմութիւն զուարթացուցանէ զլսելիս որ ընդունին զսա։ Յայսմ վայրի լիցի վախճան բանիցս*։

Կատարեցաւ գիրք Երկրորդ Մակաբայեցոց*

* *Ոմանք*. Մեծաւ աղաղակաւ զամենակալն Աստուած յիւր՝:

* *Ոսկան*. Նահատակեալ, զգլուխն հատանել Նի՛:

* *Ոսկան*. Իբրև եկն և եհաս... միջնաբերդին զակառանց:

* *Ոմանք*. Եւ եցոյց նոցա... ամենակալի Աստուծոյ պարծանօք հպարտութեան:

* *Ոմանք*. Ձլեզուն... զանօրինի Նիկանովրայ... մանր կտրել զայն:

* *Ոմանք*. Ջբարձր աշտարակէն... նշան յաղթութեան կանգնեցին:

* *Ոմանք*. Եւ հրաման ետուն... կամաց հաւասարութեան: *Եւ ոմանք*. կամաց հնազանդութենէ առնել:

* *Ոմանք*. Եւ էր նշանաւորն թիւ... յերկոտասաներորդ ամս՛: *Ոսկան*. Չամիսն Մարդքեական:

* *Ոմանք*. Այն ինչ որ վասն Նիկա՛:

* *Ոմանք*. ՚ի կարգել անդր զայս... ապա եթէ... ես ա՛յդչափ իսկ կարող էի:

* *Ոմանք*. Անուշ առնէ... որ ընդունի զնա:

* *Ի վախճանի ոմանք*. Կատարեցաւ Երկրորդ գլուխ Մակաբեանց. և *ոմանք*. Կատարումն Երկրորդ Մակաբեացոց:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ

Երևի Երրորդ Մակաբայեցիս երեսուն և աւելի ամօք յառա՛ջ գոլ քան զԵրկրորդն և զԱռաջինն. քանզի Փիլոպատովր Պտղոմէոս՝ առ որով իրքս այս՝ այլ ոք ո՛չ գոյ ՚ի Պտղոմէանսն որք տիրեցին Եգիպտոսի: Այս Փիլոպատովր թագաւոր Եգիպտոսի էր առ Մեծն Անտիոքաւ Ասիացոց և Ասորոց թագաւորաւ. և ո՛չ առ կրցեր որդւով նորա Անտիոքու Եպիփանէաւ. յա՛յտ է՝ զանցս աղէտիցս այսոցիկ զոր պատմեն Գիրքս այս, կանխագոյն կրեցին Յրէայք ՚ի Մեծն անուանեալ Անտիոքայ. և ապա երեսուն ամօք կամ քառասնիւք սո՛ւղ ինչ աւելի՝ յետոյ կրեցին յորդոյ նորա Անտիոքայ Երևելոյ, զոր ինչ Առաջին և Երկրորդ գիրքն պատմաբանեն:

Գլուխք Երրորդ Մակաբայեցոց

ա. Զի Փիլոպատովր թագաւորն Եգիպտոսի եկն ՚ի մարտ պատերազմի ընդդէմ Մեծն անուանեալ Անտիոքայ Ասիացոց և Ասորոց արքայի. և դաւաճանեալ սպանաւ յոմանց. և առանց պատերազմի յաղթեալ Անտիոքոս, վասն որոց դիցն պարգևս բաշխէր:

բ. Եկն Անտիոքոս յերուսաղէմ, և ՚ի պատճառս պատուոյ կամէր ՚ի տաճարն մտանել, որոյ ընդդէմ կալով Յրէիցն մեծանայր աղէտն. և յաղօթս գոչէին չտալ զսուրբ տեղին ՚ի կոխ անօրինին. որ թէպէտ ժպրիեաց մտանել՝ պատժեալ յԱստուծոյ հազիւ շնչով զերծանէր, ընդ որոյ մե՛ծ ևս թշնամութեամբ դառնայր նա ընդ Յրէայսն:

գ. Եկն եհաս նա յԵգիպտոս. և գիր սաստիկ առնէր զՅրէից՝ զի թողցեն զօրէնսն: Ուր բազումք գայթաղէին, և յոլովք քաջանային. ծանրացոյց զհարկսն. և ո՛չ վարկաւ զայն բաւական, այլ գրեաց յամենայն աշխարհ՝ կապանօք ածել զամենայն Յրէայս, և կորուսանել ՚ի կոխումն տալով փղաց: Զորոյ ցասումնն ՚ի գութ շրջեաց խնամքն Աստուծոյ, և Յրէայք մեծապէս փառօք և պարգևօք արձակեցան:

դ. Եւ զի ՚ի գիր հրամանին մեծարանօք ընդունել զՅրէայսն, և զինչս առեալս անդրէն տալ ցնոսա, և գյանցաւորս ՚ի ձեռս. արքայ Փիլոպատովր Պտղոմէոս գրէ՝ ինքն իսկ է Անտիոքոս, և գրէ իւր զանունն Պտղոմէայ. զի եմո՛ւտ ճոխութեամբ յաշխարհ նորա:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ

1

Գլուխ Ա

Ա՛Վճղ եղև Փիլոպատովրայ ՚ի դարձելո՛ց անտի վասն կողմանցն յորոց մերժէր զնա՝ և զգօրս իւր Անտիոքոս. ժա՛մ տայր՝ հրամա՛ն հանէր ամենայն զօրաց իւրոց հետևակաց և հեծելոց, և առնոյր ընդ իւր զքոյր իւր զԱրսիմոյէ. չո՛ւ առնէր, խաղայր գնայր գայր հասանէր ՚ի կողմանս Յռափայեցոց, ուր էին

հասեալ բանակեալ Անտիոքոս ամենայն զօրօք իւրովք*։ 2Թէոդոտոս ոմն անուն՝ գործ ՚ի միտ արկանէր, առնոյր գունդ մի որ ընդ իւրով ձեռամբ էր, ծածո՛ւկ վառէր. հասանէր գիշերի ՚ի վերայ խորանին Փտողոմեայ, ՚ի ներքս անկանել և զնա անդէն սպանանել. և միայն անձամբ վճարել զգործ պատերազմին։ Նմա պատահեալ առաջնորդէր Դովսիթէոս անուն յազգէ Զրեայ, օտարացեալ ՚ի նախնեացն օրինաց. անդէն ՚ի խորանի անդ արագ արագ շիջուցանէին. և այսպէս մարտն բորբոքէր, և իրքն Անտիոքայ առաւել յաջողէին*։ 3Յառնէր վաղվաղակի Արսինոյէ, ՚ի ձայն ողորմ լալոյ, զգէսս արձակեալ առաջի զօրացն աղաչէր, այսուհետև ՚ի վերայ անձանց և որդւոց մարտնչել։ Եւ եթէ ինչ յաղթութեան հնարս գտանել մարթասցեն, խոստանայր տալ նոցա յայր՝ երկուս երկուս մանեակս ոսկիս։ Եւ այնպէս դէպ լինէր թշնամին ՚ի ձեռս Անտիոքայ և զօրացն ապականել բազումս կոտորելով, և բազումս ՚ի գերութեան վարելով*։ 4Իբրև այս խորհուրդք յաղթեցան, և գործն այն ՚ի ձեռս իւր պատրաստեցաւ. եդ ՚ի մտի իւրում հասանել ինքն ՚ի վերայ քաղաքաց որ շուրջ զիւրն էին, և տալ նոցա մխիթար։ Ջայս առնէր կատարէր, ընդ ամենայն տեղիս պաշտամանց պարզևս բաշխէր. քաջալերեալս և մխիթարեալս ընդ իւրն կացուցանէր*։ 5Արձակեցին և Զեբրայեցիքն ՚ի ծերակոյտ ժողովրդենէ անտի հարցանել զողջոյն. մատուցանել պատարագս. յայտ առնել զխնդալ վասն յաղթութեանն ուրախութեան. և նա եդ ինքն ՚ի մտի իւրում յօժարել հասանել սիրով ուրախութեամբ ՚ի մէջ նոցա*։

Բ 6Իբրև եկն եհաս յերուսաղէմ մեծաւ շքով բազում պաշտամամբք, ողջակէզս պատարագաց մատուցանէր մեծին Աստուծոյ, գոհանայր և շնորհս մատուցանէր. և ինչ մի կամէր աւելի պաշտօն ՚ի տեղի անդր ցուցանել։ Իբրև եկն եհաս ՚ի տեղին սուրբ, էր զարմացեալ ընդ գեղեցկութիւն վայելչութեանց տաճարին, և ընդ օրէնս սպասուցն. խորհեցաւ ցանկացաւ մտանել ինքն ՚ի տաճար անդր*։ 7Նոքա կացին առաջի և ցուցանէին, եթէ ո՛չ օրէն և պատշաճ է զայդ առնել. քանզի և Զրէից իսկ ո՛չ է մարթ մտանել, և ո՛չ քահանայից ամենեցուն. բայց միայն միում քահանայապետին, սակայն և նմա տարոջէ՝ ՚ի տարի, միանգամ ՚ի տարւոջ*։ 8Նածուկայի ո՛չ ինչ թուլանայր. թէպէտ և բերէին զօրէնսն, առաջի ընթեռնուին. և այնպէս ո՛չ թուլանայր. յամառեալ պնդեալ էր զանձն ՚ի ներքս մատուցանել. եթէ նոքա չիցեն ասէ արժանի ՚ի ներքս մտանել՝ սակայն ինձ արժան է զայդ պատիւ առնել*։ 9Բայց աղէ՛ դու քե՛զ ասեմ. զիա՞րդ է զի յամենայն տեղիս պաշտամանց անխտի՛ր համարձակ մտանեմ. և ո՛չոք է որ արգել առնէ։ Եւ այլ ոք անդուստ յանդգնագոյնս բարբառեցաւ՝ ասէ. Զի՞՞

* *Ի լուս*։ Զետեաց և հեծելոց. *համաձայն այլոց ՚ի բնաբ*։

* *Ոմանք*. Անդէն ՚ի ներքս ՚ի խորանի անդ։

* *Ոմանք*. Գէսս արձակեալ վաղվաղակի առաջի զօ՞... մարտնչել. թերևս յաղթութեան հնարս ինչ մարթասցեն. և խոս։

* *Ոմանք*. Եդ ՚ի մտի իւր հասանել ՚ի վերայ քա՞։

* *Ոմանք*. Անտի՛ առ նա հարցանել... և նա ինքն ՚ի մտի իւրում յօժարեալ։

* *Ոմանք*. Բազում պաշտամամբք... վայելչութեան տաճարին... ցանկացաւ ինքնին մտանել ՚ի տաճար։

* *Ոմանք*. Սակայն և նա տարւոջ ՚ի տարի։

* *Ի լուս*։ Նա ծուկայր ո՛չինչ թու՞. *համաձայն երկուց նոր օրինակաց ՚ի բնաբ*։ Ուր երեք հնագոյնք՝ *համեմատ մերումս բնաբանի ունին այսպէս միահետ գրեալ*. Նածուկայի. *որպէս ունի և օրինակն Ոսկանայ, թէպէտ և անստոյգ նշանակութեամբ*։ Ոմանք. Եւ յամառեալ էր պնդել զանձն։

պնդեալ յամառեալ ես. իցեն ինչ արդևք՝ վասն որոյ չիցէ՛ արժան մտանել: Նա ասէ. Այի՛, չի՛ք ինչ հնար. թէ կամիք, և թէ ո՛չ կամիք. բայց թէ մտանե՛մ*: ¹⁰Անդ քահանայքն ամենայն պատուական հանդերձիւքն իւրեանց, անկանէին սողէին, աղաչէին զԱստուած օգնել նոցա, և փոխել զխորհուրդն զայն ՚ի նմանէ. աղաղակաւ արտասուօք զտաճարն լնուին. և որ ինչ անդ դիպեալ էին քաղաքացիքն խռովեալ յանկարծակի յա՛յն վայր հասանէին վաղվաղակի, զի՞նչ իրք իցեն շշնջէին: Կոյսք ՚ի կուսաստանաց մարբքն հանդերձ ՚ի հրապարակսն հասանէին. հո՛ղ արկեալ զվարսիւք, ճչի՛ւ աղաղակաւ զքաղաքամէջսն լնուին*.¹¹ և որ ա՛րդ ևս նորամուտ հարսունք առագաստեալք յօրինեալք նստէին, զօրինաւոր զամօթն մոռացեալ, ընթացս յանդգնութեան ընդ քաղաքամէջսն ընթանային: Սոյնպէս մատաղամարքն մանկամբքն հանդերձ, զդարման մանկանցն թողեալ, և ա՛յնպէս անզգայութեամբ ընդ անդաստանս առանց դարձադարձի յաւագամեծար տաճար անդր պնդեալ ժողովէին: Բիւրապատիկ իմն էին յայս և ՚ի սոյն աղօթք ժողովելոցն. վասն այսորիկ որ անօրէնութեամբն խորհէր ձեռն յանձին հարեալ զինքն ՚ի ներքս մատուցանել: Յայսր վերայ քաղաքացիքն բարկացեալ չառնուին յանձն զայնչափ տարապարտուց զառնն բռնութիւն*:¹² Իբրև տեսին թէ պնդեալ հաստատեալ կայ զի՛ւր կամսն կատարել. ձա՛յն ետուն միմեանց, և յիւրաքանչիւր զէնս զնացին, վառել կազմել պատրաստել մարտնչել՝ մեռանել ՚ի վերայ կարգացն նախնեաց՝ և հայրենի օրինացն. և անդէն վաղվաղակի մե՛ծ խռով ՚ի տեղւոջն կացուցանէին. մինչև հազի՛ւհազ ծերակոյտ ժողովրդեանն ցածուցանէին զամբոխն. և զպատրաստեալսն ՚ի մարտէ անտի անդրէն ՚ի նոյն ժողովսն խնդրուածոց դարձուցանէին: Եւ զօրք քաղաքին անդրէն ՚ի նոյն խնդուածս դառնային*:¹³ Իսկ որ զթագաւորաւն ծերք և մեծամեծք ժողովրդեանն էին՝ ջանային զմի՛տսն հպարտացեալս ցածուցանել. և զհեստեալ յամառութիւնն զիջուցանել. և նորա չէ՛ր ինչ հնար, այլ պնդեալ յամառեալ էր զդոյն կամս կատարել՝ զոր յառաջն խորհեցաւ*:¹⁴ Սոյնպէս դարձեալ և որ զնովաւն էին՝ իբրև յառնն պնդութիւն հայեցան, այսրէն ՚ի խնդրուածսն դարձան, զամենագորն աղաչել զԱստուած. այցելու՛ օգնական լինել. զի մի՛ արհամարհեսցէ, և մի՛ ՚ի ձեռաց թողցէ, և մի՛ ընդ ոտս տացէ հպարտութեան խորհրդոց՝ զօրէնսն օրինաւորս: Եւ այնպիսի ստեպ ստեպ սրտի մտօք աղաղակ էր զօրացն ժողովելոց. անհնարին՝ զոչիւն ՚ի նմին լինէր. զի կարծեալ ա՛յսպէս էր. եթէ ո՛չ միայն մարդիկն աղաղակիցեն, այլ և պարիսպքն և յատակքն հնչիցեն. զի ամենայն մարդկանն ՚ի մտի եղեալ՝ զմահ ընդ կենաց փոխանակել, քան տեսանել զտեղին սրբութեան ՚ի պղծութիւն դարձուցեալ*:

* Ոմանք. Չիցէ ինչ արժան... թէ կամիցիք թէ չկամիցիք: Ոսկան. Նա ասէ. Այո՛, չիք ինչ:

* Ոմանք. Ձխորհուրդն զայն ՚ի նոցանէ... և որ ո՛չ անդ դիպեալ էին քաղաքակիցքն խռ՞: Յօրինակին. Ձքամէջսն լնուին. ուր ՚ի լուս՞. ուղղագրի զքաղաքամէջսն. համաձայն այլոց:

* Ոմանք յաւելուածով. Առագաստօք յօրինեալք... և այնպէս անզգայութեամբ զիւրաքանչիւր զործ թողեալ անզգայութեամբ ընդ անդաս՞... յայս և ՚ի սոյն էին աղօթք: ՚ի լուս՞. Յայսր վերայ քաղաքակիցքն. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:

* Ոմանք. ՚ի տեղւոջն կացուցին:

* Ոմանք. Եւ զհեստել յամառութեանն... զնոյն կամս կատարել, զոր յառաջնունն խորհե՞:

* Ոմանք. Եւ այնպէս ստեպ ստեպ: Այլք. Անհնարին զոչիւն իմն լինէր:

Գլուխ Բ

¹Սկսան աղաչել և ասել. Տէր Տէր թագաւոր երկնից, և Տէր Աստուած ամենայն արարածոց, սուրբ սրբոց, ամենազօր ամենակալ, հայեաց՝ ի ցաւագնութիւնս մեր որ ՚ի ձեռն անօրինին և պղծոյն՝ որ յանդգնութեամբ հպարտացեալ է*։ ²Դու ստեղծեր զամենայն. դու որ զամենայն ընդունիս հեզութեամբ և արդարութեամբ. արդար ես դու Տէր, և որ հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ ինչ գործեն՝ դատիս զնոսա. դու՝ որ յառաջ զանօրէնութիւնսն գործէին հսկայս՝ որ յանձանց զօրութիւն և ՚ի քաջութիւն յուսացեալ էին՝ ջնջեցեր, ածեր ՚ի վերայ նոցա զանչափ ջուրցն սաստկութիւն։ ³Դու՝ որ գործէին զամբարտաւանութիւն զՍողոմոնացիսն՝ յայտ յանդիմանութեամբ չարեօքն իւրեանց հանդերձ՝ խայտառակեցեր, ՚ի հո՛ւր և ՚ի ծծումբ դատեցեր, և առակ խայտառակութեան յետնոց թողեալ*։ ⁴Դու՝ զյանդուզն զբուռն արքայն սաստիկ զփարաւոն՝ որ արկ ՚ի ծառայութիւն զժողովուրդ քո սուրբ զԻսրայէլ՝ պէսպէս հարուածովք կշտամբեցեր. ցուցեր զքո զօրութիւն, և ցուցեր դու նմա զմեծութիւն զօրութեան քոյ, զի պատրաստեալ զհետ հեծանէր ժողովրդեան քոյ բազում զօրօք՝ կառօք և երիվարօք, ընկլուզեր զնա ՚ի ծով Կարմիր։ ⁵Բայց զայնոսիկ որ հաւատացինն ՚ի քեզ, ՚ի վերայ ամենայն արարածոց զօրացեալս պահեցեր. որք իբրև տեսին զգործս ձեռաց քոց, օրհնեցին զքեզ Տէր ամենակալ։ Դու՝ թագաւոր, որ ստեղծեր զանչափ զանքննին զերկինս ամենայն, և ընտրեցեր քեզ զքաղաքս զայս, և սրբեցեր զտեղիս զայս յանուն քո քե՛զ որ աննիազդ ես յամենայնի*։ ⁶Դու՝ ժողովեցեր զսա ՚ի փառս մեծութեան, և ՚ի պատիւ անուան քոյ. դու սիրեցեր զտաճարս զայս, և խոստացար դու տանս Իսրայէլի, բան, ինչ դէպք որ հասանիցեն, կամ նեղութիւնք որ զայցեն ՚ի վերայ, զալ հասանել յայս տեղի սրբութեան խնդրուածովք, լսելի՛ առնել զաղօթս մեր։ Արդ հաւատարիմ է բան քո՝ և ճշմարիտ*։ ⁷Քանզի բազում անգամ յորժամ նեղեցան հարքն մեր՝ օգնեցեր դու նոցա ՚ի խոնարհութեան իւրեանց, և փրկեցեր դու զնոսա ՚ի մեծամեծ չարեաց։ Արդ աւասիկ և մեք սուրբ թագաւոր, վասն մեծամեծ և բազում մեղաց մերոց չարչարեալք, հնազանդեալ ենք ՚ի թշնամեաց մերոց պարտաստեալք և տարակուսեալք ՚ի տկարութեան մերում, և յաւուրս նեղութեան յայսմիկ. պիղծս հպարտս և ամբարտաւանս սպրդէ հնարել ՚ի ներքս անկանել, թշնամանել զտեղի սրբութեան զանուանի ընդ ամենայն երկիր երևեալ տաճար փառաց անուան քոյ*։ ⁸Թէպէտ և բնակութիւն քո երկնից երկինք են, աներևոյթ անձեռնհաս ձեռին մարդոյ. սակայն վասն զի հաճեցար փառօք քովք ընդ վայելչութիւն Իսրայէլի. սրբեցեր զտեղիս զայս. թէպէտ և յանցաւոր ենք քեզ, մի՛ խնդրեր զվրժն զայն հեթանոսաց պղծութեամբ. և մի՛ պարծեսցին անօրէնք յիւրեանց հպարտութիւնն, և մի՛ ցնծացեն յամբարտաւանութիւն խօսից իւրեանց. խօսիցեն՝ թէ մեք կոխեցաք զտաճարն սրբութեան, զորօրինակ

* Ոճանք. Հայեաց ՚ի ցանկութիւնս մեր որ ՚ի ձեռս անօրինին... հպարտացեալ էր։

* Ոճանք. Եւ ՚ի ծծումբ դատեցար... յետնոց թողեր։

* Ոճանք. Թագաւոր, ստեղծեր զանքննին զեր... աննիազդ ես յամենայնէ։

* Ոճանք. Իսրայէլի. բանք ինչ անդէպք որ հասա՞։

* Ոճանք. Չարեաց իւրեանց, աւասիկ... պատրաստեալք և տկարացեալք... և յաւուրս ՚ի նեղութեանս։

կոխիցին խառնակոխ յատակք մեհենից*։⁹ Ձնջեա՛ զմեղս մեր, և ցրուեա՛ զամենայն յանցանս մեր, երևեցո՛ զողորմութիւնս քո ըստ ժամանակիս ըստ այսմիկ։ Վաղվաղակի ժամանեցեն՝ մեզ ողորմութիւնք քո. և տո՛ւր օրհնութիւն ՚ի բերան կործանելոցս և չարչարելոց. և արա՛ ընդ մեզ խաղաղութիւն*։¹⁰ Իսկ սուրբն որ ՚ի սուրբս բնակեալ է, ամենազօ՛րն ամենակա՛լն Աստուած լուաւ զօրինաւոր զաղօթս խնդրուածոց ժողովրդեանն։ Ջայն՝ որ արդ ևս հպարտութեամբ ամբարտաւանութեամբ մեծաւ ՚ի վերայ նոցա համարձակ սաստկացեալ էր. հարկանէր զնա աստի անտի սաստիկ. տանէր և շարժէր զնա իբրև զեղէզն ՚ի հողմոյ, և անդէն զգետնէր։ Եւ նա այնպէս անկեալ դներ անզգայ ընդարմացեալ անմռունչ՝ անդամալոյծ լուծեալ յամենայն յօդից. զի սաստիկ և արագ արագ հասանէր ՚ի վերայ նորա դատաստանքն հպարտութեան*։

¹¹ Բարեկամքն և որ զնովաւ սպասաւորքն էին, իբրև տեսին թէ այնպէս արագ հասանէր ՚ի վերայ նորա դատաստանն, զահի հարկանէին, թէ զուցէ և ոգիքն սպառնիցին. և վաղվաղակի զնա ՚ի ներքուստ արտաքս քարշէին. զարհուրեալք ՚ի սաստիկ հարուածոց անտի*։¹² Իբրև ժամք հարուստ ՚ի վերայ անցին, և առնն միտք յինքն եկին։ Սակայն ո՛չ եթէ զղջացաւ ՚ի միտս իւր յե՛տ մեծի պատուհասին, այլ սաստկագո՛յնս ևս սկսաւ սպառնալ։

Գ Զրամայէր չու դարձս առնել*։¹³ Իբրև եկն եհաս յերկիրն Եգիպտացւոց. և զչարութիւնն և՛ս քան զևս յանձն իւր աճեցուցանէր, տաճարակից ընկերովքն իւրովք՝ մեկնելովք յամենայն իրաւանց. և ո՛չ միայն անթիւ աղտեղութեամբքն չյագեցաւ, և յանչափ յանդգնութիւն հասանէր, զի հայիոյութեամբ զտեղին լնոյր։ Զի բազումք ՚ի բարեկամաց անտի իբրև ընդ թագաւորն նայէին՝ և ինքեանք զհետ երթային կամաց նորա։¹⁴ Գի՛ր առնէր՝ և ՚ի հրապարակս տայր տարածանել, բամբասանս՝ և հայիոյութիւնս։ Եւ զսրահիւն շուրջ ՚ի վերայ աշտարակացն արծանս հրամայէր կանգնել, և զի՛ր հաստատել, հրաման տալ սաստկութեամբ։ Ապա թէ իցէ ոք այնր՝ գտցի որ ո՛չ զոհիցէ. մի՛ իշխել ամենևին մտանել ՚ի տաճար անդր։ Եւ զամենայն ազգն Զրէից յաշխարհագի՛ր խառնել, ՚ի կարգս հարկի ծառայութեան օրհնի։ Եւ որ սակաւ մի խեռեալ ընդդէմ դառնայցեն, պատուհաս մահու ՚ի վերայ նոցա. և զոր ոչն սպանանիցեն, դրոշմեալս հրով նշանաւորս որմզդական դիցն տօնի ո՛ստս ՚ի ձեռն պսակաւորս կաքաւեցուցանել*։¹⁵ Այլ զի մի՛ ամենեցուն իբրև զթշնամի երևեսցի, զայս ևս հրամայեաց գրել ՚ի հրովարտակի անդ. ապա թէ իցեն ոմանք ՚ի նոցանէ որ յօժարիցեն զօրէնս արքունի յանձինս իւրեանց ունել, զսոսա քաղաքակիցս Աղեքսանդրացւոց համարել*։¹⁶ Բազումք ՚ի նոցանէ ծանծաղամիտք, որ յառա՛ջն իսկ գայթի գայթի կային յօրէնսն առաջինս, դիւրաւ տային զանձինս իւրեանց ՚ի ներքս. իբրև մե՛ծ իմն անուն փառաց ժառանգել

* *Ոմանք.* Զթանոսաց ըստ պղծութեան. զի մի՛ պարծեսցին... յամբարտաւանութեան խօսից իւրեանց, և ասիցեն թէ։

* *Յօրհնակին պակասէր.* Ըստ ժամանակիս ըստ այսմիկ։ *Ոմանք.* ժամանեցեն առ մեզ ո՛ն։

* *Ոմանք.* ՚ի վերայ նոցա. համբարձեալ սաստ՛... սաստիկ հարուածովք տանէր և շար՛... իբրև զեղէզն ՚ի հողմոց։

* *Ոմանք.* Տեսեալ բարեկամքն... այնպէս երագ հասա՛... և ոգիքն անդէն սպառնիցին։

* *Ոմանք.* Ոչ եթէ զղջացաւ ինչ ՚ի միտս իւր... չու դարձի առնել։

* *Ոմանք.* Եւ ՚ի գի՛ր հաստատել... իցէ ոք այն գտցի ոք... ոստս ՚ի ձեռս պսա՛։

* *Ոմանք.* Յանձինս իւրեանց ցուցանել։

խորհէին, եթէ մտաց թագաւորին հնազանդեսցին*։ ¹⁷Բազումք 'ի նոցանէ անդեցան հաստատեցան 'ի սիրոս իւրեանց. և ո՛չ դրդուեցան յօրինացն իւրեանց սրբութեան. արկին առաջի զգանձս իւրեանց՝ տալ փոխանակ անձանց իւրեանց. զի յաներկելոս զանձինս իւրեանց փրկեսցեն 'ի գրոյ անտի. և յուսով հաստատեսցին օգնականութիւն գտանել։ Եւ որ մեկնէին 'ի նոցանէ, խորշէին՝ զարշէին, և զնոսա պիղծս համարէին. որոշէին զատանէին յօրինացն հայրենի. և յազնուութենէ անտի սրբութեան զնոսա 'ի բա՛ց մերժեցին*։

3

Գլուխ Գ

¹Իբրև 'ի վերայ հասանէր անօրէնն՝ խորհրդոց նոցա, յայնչափ սրտմտութիւն բարկութեան բրդէր, մինչև հրաման տայր՝ ո՛չ միայն յերուսաղեմացւոցն ածել, այլ ընդ ամենայն երկիր ուր բնակեալ իցեն որդիք Յեբրայեցւոց, հրաման տայր ածել ժողովել կուտել զնոսա, և չարաչար մահու սպանանել զկեանս նոցա յերկրէ*։ ²Իբրև այս հրաման դառնութեան սաստիկ ելանէր անօրէն, չար թուէր նոցա նեղութիւն փոփոխելոյ օրինացն քան զմահուն դառնութիւն*։ ³Իսկ որդիքն Յեբրայեցւոց՝ զօրէնս միամտութեամբ ընդ արքային՝ արդար պահէին, և 'ի Տէր Աստուած իւրեանց հաստատուն կային, և զօրէնսն տուեալս հաստատուն պահէին. մեկնութիւն առնէին յապստամբացն անօրէնութենէ. վասն այսորիկ շատի՛ց յաչաց ելանէին*։ ⁴Բայց վասն հաստատութեան գործոյ սպասուն օրինաց՝ առաջի ամենայն մարդկան փառաւորեալ կային. վասն այսորիկ զարգասիսն բարեաց ազգին՝ այլազգիքն 'ի համար ո՛չ բերէին։ Բայց զպաշտօնն և զօրէնս կերակրոցն 'ի հակառակութիւն ապստամբութեան տանէին՝ ասէին. Առ հասարակ արքայի և զօրացն արքունի թշնամի՛ է ազգս այս։ Եւ այսպիսի բանիւք հայիոյութեան վնաս արքունի և պատուհաս մե՛ծ 'ի վերայ հասուցեալ դնէին*։ ⁵Իսկ որ 'ի քաղաքի անդ հեթանոսք էին, իբրև տեսին զյանկարծակի խռովութիւն մարդկանն, և զայնչափ հալածանսն յանկարծակի հասեալ 'ի վերայ, օգնել ինչ ո՛չ կարէին, և ո՛չ ընդդէմ դառնալ հրամանացն արքունի*։ ⁶Բայց սակայն արգահատէին մխիթարէին քաջալերէին և խնդրէին անցուցանել վաղվադակի զժամն բարկութեան, և ասէին. Ո՛չ թողու Տէր Աստուած իւրեանց զայդպիսի գունդ տարապարտուց կորուսանել։ Եւ որ այլ ոք բարեկամք և մերձաւորք՝ և վաճառակիցք էին, լռելեայն ո՛ւխտ դնէին օգնական լինել՝ որչափ ձեռնհաս լինէին*։ ⁷Բայց անօրէնն այնչափ համբաժեալ էր 'ի հպարտութիւնն առ ժամանակ անդր, և ամենկին ո՛չ հայէր 'ի զօրութիւն մեծին Աստուծոյ. բայց այսպէս ածէր զմտաւ՝ թէ մշտնջեան իցէ իւրոց խորհրդոցն

* *Ոմանք.* Որ յառաջ իսկ գայթն 'ի գայթին կային... իբրև մեծի իմն անուն։

* *Ոմանք.* Ձի աներկիւղ զանձինս... յօրինացն հայրենեաց. յազնուութենէ... 'ի բաց մերժէին։

* *Ոմանք.* Մինչ հրաման տայր ո՛չ միայն 'ի վերայ Երուսաղեմացւոցն ածել զբարկութիւն. այլ ընդ ամենայն... և չարաչար մահուամբ սպառել զկեանս։

* *Ոսկան.* Ելանէր յանօրինէն։

* *Ոմանք.* Առնէին յապստամբ անօրէնութենէ։

* *Ոմանք.* Եւ զօրէնսն կերակրոյն։

* *Ոմանք.* Եւ զայսչափ հալածանս յան՞։

* *Ոմանք.* Եւ այլ ոք որ բարեկամք։

իշխանութիւն: Արդ՝ հրովարտակա առնէր ընդ ամենայն աշխարհ՝ օրինակ զայս*:
⁸Արքայ Անտիոքոս՝ կողմանցդ եգիպտացւոց ՚ի տեղիս տեղիս, առ սպարապետս, և առ զօրավարս, և առ զօրս՝ ողջոյն. ո՛ղջ լիջի՛ք. և ես ինձէն իսկ ո՛ղջ եմ ամենայն իրօք, զօրօք, տէրութեան օրինօք*:
⁹Չեր ինքնին լուեալ իցէ վասն առնուծիոյ ճանապարհին, որպիսի՛ գնդաւ մտի ես դի՛ցն օգնականութեամբ ՚ի ճանապարհին. ո՛չ զօրութեան բռնութեամբ, ո՛չ ՚ի տեգ նիզակաց, ո՛չ ՚ի հաստապինդ բռնութիւն աղեղանց. այլ հեզութեամբ և խոնարհութեամբ, մարդասէր խորհրդովք, իբրև դայեկաբա՛ր սնուցանել զամենայն կողմանս Ստորին Ասորւոց և Տաճկաստանի. ընդ ամենայնի ամենայն բարեաւ եղէ*.
¹⁰մեծապատիւ մեծապարզև արարաք զամենայն կողմանս քաղաքացն: Եկաք իջաք և ՚ի քաղաքն Երուսաղէմացւոց, եկաք կամեցաք մտանել ՚ի տաճարն ՚ի չարագործաց վայր անդր, որ ո՛չ կամէին կասել երբէք ՚ի խորամանգութենէ չարեաց իւրեանց*:
¹¹Նոքա վեր ՚ի վերոյ բանիւք խնդացին զմեր ՚ի նոսա հասանել, բայց արդեամբք խորամանգեցին չմերձենալ ՚ի մեզ. և ո՛չ զմեզ ՚ի տաճար անդր մերձեցուցին, և ո՛չ գերևելի դահամունս պատարագաց մերոց ՚ի տաճար անդր իւրեանց ընկալան, ՚ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, յայն որ ՚ի հնոց ժամանակաց հետէ ունէին, արգելին զմեզ ՚ի ներքս մտանելոյ: Կարօտացան պակասեցան ՚ի մերմէ բարեաց մարդասէր զօրութենէ՝ զոր ունինք առ ամենայն մարդիկ*:
¹²Եւ զիւրեանց զանհնարին մտացն թշնամութիւն զոր ունէին ընդ մեզ, յայտնապէս կամեցան ցուցանել. իբրև միայն ՚ի մէջ ամենայն ազգաց կամեցան կնճանալ ելանել տիրել թագաւորել հպարտանալ՝ ամբարտաւանել յո՛ղն կալ, բարձրապարանոց երևել ՚ի վերայ երախտաւորաց իւրեանց*:
¹³Մեք իբրև կամեցաք ըստ նոցա անմտութեանն զմեր միտս զնստուցանել, մեծաւ յաղթութեամբ դարձաք անտի ՚ի կողմանս երկրի՛ն Եգիպտացւոց: Չամենայն ազգս և զազինս մարդասէր հեզութեամբ խնամով՝ որպէս պա՛րտ պատշաճ էր օրինի մերում նուաճեցաք*:
¹⁴Եւ զազատոհմն նոցա առանց ո՛խս ՚ի մտի ունելոյ, վասն բազմապատիկ յանդգնութեանն և ժպրհութեան նոցա. սակայն հրամայեցաք Աղէքսանդրացւոց քաղաքակից արժանիս առնել ՚ի համարի: ¹⁵Նոքա ևս վատթար յետսամիտ խորհրդովք՝ և տնկակից խորամանգութեամբք զայն բարիս յանձանց մերժեցին: Եւ քանզի հանապազ զմիտս իւրեանց ՚ի չարին հաւանութեան ունէին, ո՛չ միայն ՚ի բաց մերժեցին գերևելի պատիւ մեծարանաց ընկերութեանն. այլ գարշին և անարգեն, և պիղծ համարին բանիւք և լռութեամբ: Եւ զա՛յն ևս սակաւս որ ՚ի մեզ գթով նուաճեցան, խոտեն և անարգեն, և անկեաց կեանս շտապ տագնապաւ ՚ի վերայ հասուցանեն. կարճ

* *Ոմանք.* Այնչափ բարձրացեալ էր ՚ի հպարտութեան... այսպէս ածեր նա զմտաւ... ընդ ամենայն աշխարհս զօրինակ զայս: *Ոսկան.* Եթէ մշտնջենական իցէ իւրոց:

* *Ոմանք.* Արքայ Անտիոքոսէ:

* *Ոմանք.* Դիցն օգնականութեամբ զայն ճանապարհ խորհեցայ, ո՛չ զօրութեամբ բռնութեամբ, և ոչ:

* *Յօրինակին պակասէր.* Իջաք և ՚ի քաղաքն: *Ոմանք.* Մտանել ՚ի տաճար անդր, ՚ի չա՛... որ ո՛չ երբէք կամին կասել:

* *Ոմանք.* Ի մարդասէր զօրութենէ:

* *Ոմանք.* Կնճանալ. զեզանել տիրել... յողնկալ. բարձ՛:

* *Ոմանք.* Ըստ նոցա անզգամութեան զմեր միտս... պատշաճ էր ՚ի մերում նուա՛:

ի կարծոյ վաղվադակի՝ կործանուլն իրաց նոցա խոստանան ցուցանել*:
¹⁶Յայսմ ամենայնէ հաստատեցաք նոցա ընդ մեզ թշնամութիւն. և խորհուրդս ՚ի մտի եղաք, եթէ գուցէ առ այնպիսի խորամանգ բարոյիւք նոցա յանկարծակի խռովութիւն ինչ ՚ի մեր վերայ հասանիցէ. և նոքա ըստ իւրեանց անօրէնութեան զթիկունս հաստ առնիցեն, մատնտու ՚ի ներքուստ արտաքս առ թշնամիս անդր գտանիցեն: Զրաման տուաք՝ վաղվադակի իբրև ՚ի ձեռն առնուցուք զայդ մեր առ ձե՛զ հրովարտակս. զմոլեկան չարագործսդ կնաւ և մանկամբք հանդերձ մեծաւ թշնամանօք և աշխատութեամբ, ուիւք ձեռօք պարանոցօք կապելովք, շուրջանակի պատեալ պաշարեալ պահապանօք, ահագին պատուհասիւք առ մե՛զ արծակել*:
¹⁷Ձի իբրև նոքա՝ խորամանգ ըստ անօրէն չարագործութեանն պատիժ և պատուհաս ըստ իւրեանց արժանի գործոցն կրեսցեն. խաղաղագոյն և դիւրին մերոց իրաց կազմած հաստատութեամբ պատրաստեսցի: Ապա թէ գտցի՝ որ թաքուցէ որք ՚ի նոցանէ ա՛յր մի՝ կամ կին մի, կամ տղայ մանուկ մի՝ յանցեալ ծերութենէ մինչև ՚ի դիեցիկն ՚ի գրկի, չարաչա՛ր տանջանօք պատուհասու՛մ մահու զնա տոհմաւ հարցեն*:
¹⁸Ապա թէ որք գտցի, որ զղօղեալն թաքուցեալն գուշակեսցէ, ինչքն և ստացուածքն գուշակելեացն լիցին, և յարքունի գանձէ նմա պարգև լիցի, և ազատութեան պսակաւ պատուեալ ՚ի հրապարակս եկեսցէ կոչեցեալ*:
¹⁹Եւ ամենայն տեղի՝ ուր երևեսցի ՚ի նմա՝ ՚ի նոցանէ որք ղօղեալ և թաքուցեալ, աւեր հրձիգ և անապատ լիցի. և ամենայն ազգի մարդկան յամենայն պէտս՝ անպէ՛տ կացցէ մինչև յաւիտեանս ժամանակաց*:

4

Գլուխ Դ

¹Եւ հրովարտակն՝ արքունի օրինակ զայս գրեցաւ: Բայց ընդ ամենայն տեղիս ուր և հասանէր հրաման հրովարտակին, գաւառակոյտ քաղաքաժողով ուրախութիւն լինէր հեթանոսացն, մեծաւ ցնծութեամբ և ուրախութեամբ, զառագաստեալ խորամանգ նենգութեամբ զոխութիւն խորհրդոցն գաղտնեաց՝ յայտնութեամբ համարձակութեամբ զթշնամութիւն ցուցանելն*:
²Եւ քաջացն սո՛ւգ անհնարին՝ և գերարտօսրալից գոչմամբ եռանդն ՚ի վեր հասեալ զսիրտս ճնլէր: Յանկարծակի հրամանն դառնութեան որ ՚ի սատակուլն զամենեսեան առ հասարակ հրաւիրէր*:
³Քանզի զի՞նչ օրէնք կամ քաղաք, կամ բնա՛ւ ամենևին տեղի բնակեալ մարդկանբ, կամ ո՞ր անցք փողոցաց ընդ ամենայն քաղաքս, որ ո՛չ գուժիւ աղաղակաւ կոծով ՚ի վերայ նոցա չէին լցեալ ճչելով*:

* *Ոմանք.* Յետամիտ խորհրդով և տն՝... ՚ի կործանուլն իրաց նոցա խոստանան անցուցանել:

* *Ոմանք.* Եւ խորհուրդ ևս ՚ի մտի եղաք. թէ գուցէ առ այսպիսի... և ձեռօք և պարանոցօք... պաշարեալ պահպանօք:

* *Ոմանք.* Տանջանօք պատուհասաւ. *կամ՝* պատուհասիւ. *և ոմանք.* պատուհաս մահու զնա:

* *Ոմանք.* Թագուցեալն գուշակել:

* *Բազումք.* Եւ ամենայն տեղի որ երևեսցի:

* *Յօրինակին պակասէր.* Եւ հրովարտակն *արքունի* օրինակ զայս:

* *Ոմանք.* Եռանդն ՚ի վերայ հասեալ:

* *Ոմանք.* Կամ բնակութիւն բնաւ տեղի մարդկան, կամ ո՞ր անցք:

⁴Ձի այսպէս մեծաւ սաստիւ դառնութեամբ, և անողորմ հրամանաւ զազգն ընտրեալ ՚ի քաղաքաց քաղաքաց ժողովեալ յուղարկէին ՚ի ձեռն զօրավարաց գաւառացն, զի արտաքոյ բնակութեան ՚ի տար պայման հրամանին տարապարտուց մեռանել: Եւ այնչափ աղէտ տարակուսի էր ՚ի վերայ անհնարին վշտացն, մինչև սիրտն ոխակալ և ակն նախանձալից՝ վասն հաւասար գթոյն յայն ողորմ տեսիլ չարչարանաց մարդկանն, արտասուք քամէին: Ձի յանկարծակի զթշուառութեան ճանապարհօքն՝ ⁵զի երթային տանէին զբազմութիւն ծերակոյտ ակեացն հնացելոց, հիւանդաքայլ ոտիւք տարակուսեալ տկարութեամբ ՚ի հնութեան ժամանակի: Իսկ որ արդ ևս նորոգ ամուսնութիւնք ՚ի միմեանս հասեալ թերալից ուրախութեամբ նորասէր առագաստիցն, չարաչար գուժիւ մերկացեալք, ուղղոյ լինէին՝: ⁶Եւ ամրածածուկ քօղածիզ ծնկասէր հարսունք, վարսս մերկացեալ՝ գոյժ առեալ՝ զհիւաթուրմ ցցունսն յանդգնեալ հոլանեալ՝ հող ՚ի գլուխ տանէին: Փոխանակ երգոցն ուրախութեան ձայնակից ընկերօք, անընդէլ աշխատութեան տառապանօք, հերարծակ ցտեալք՝ և կապեալք ընդ հրապարակսն, մինչ ՚ի նաւացն նաւահանգիստսն բռնութեամբ քարշեալք երթային՝: ⁷Եւ նոցին ամուսինքն՝ տոռն ընդ անձն փոխանակ երիտասարդութեան ցնծութեանն՝ ձեռակապօք խառնաձիգ ՚ի մռնչիւն լալոյ վասն հասեալ ժամանակին, անդէն առ ոտս իւրեանց զօրհաս մահուն՝ դէմ յանդիման առ ՚ի դժոխս նկարէին՝: ⁸Եւ այսպէս զամենեսին իբրև զգազանս ինչ ՚ի վայրէ երկաթակապս ածեալ, ընդ խելս նաւաց զպարանոցս կապէին՝ և նովին շղթայիւք բեռնէին: Կիսոցն զոտիցն և զձեռաց կապելոց՝ առեալ՝ ընդ վերնակողմն տախտակամա՛ծ նաւին բեռնէին: Յամենայն կողմանց թմբրեալք և յիմարեալք, զի անձին ինչ հրամայել յերթալ նաւացն նենգութեամբ ինչ մի՛ կարասցեն՝: ⁹Իբրև այնպէս զամենեսին զնոսա ՚ի նա՛ւ անդր՝ ամացեալ տանէին. և ընդ հողմոյն աջողել ըստ հրամանի թագաւորին ՚ի տեղի հասուցանէին: Յրաման ետուն արտաքոյ քաղաքին յասպարիսի անդ՝ յընդարծակ տեղւոջ յաշխարհակոյտ վայրի վասն խայտառակութեան ազգին. զի ամենեցուն համարծակ իցէ տեսանել որ յայսկոյս յայնկոյս շահատակէին. զառաջին քինու վրէժն զամենեցունց ընդ այն հանէին՝: ¹⁰Իբրև այս ամենայն լինէր. դարձեալ լո՛ւ լինէր, թէ ազգակիցքն գաղտուկ ելանեն արտասուաց կցորդ լինել, վասն յանկարծակի թշուառութեանն ՚ի վերայ ազգին հասելոյ: Իբրև այն ա՛զդ լինէր՝ ՚ի սրտմտութիւն բարկութեան բրդէր թագաւորն. հրաման տայր և այնոցիկ որ ՚ի ներքս ՚ի քաղաքի անդ էին՝ ածել խառնել ընդ նոսա, և առ հասարակ ՚ի նմին պատժի պատուհասի արժանի մահո՛ւ առնել զամենեսեան. և ընդ միով աշխարհամար

* *Ոմանք յաւելուածով.* Ձի այնպէս մեծաւ սաստիկ դառ... ՚ի ձեռն զօրավարաց քաղաքացն և գաւառաց... գթոյն յանողորմ տեսիլ չարչարանաց մարդկան արտասուք քամէին, զյանկարծա՛: *Ի լուս՝.* Ի տալ պայման հրա՛. *համաձայն բազմաց ՚ի բնաք՝:*

* *Բազուկք.* Ուղղոյ լինէին:

* *Ոմանք.* Վարսս մերկացուցեալ... մինչև ՚ի նաւացն նաւա՛: *Ոսկան.* Ձիւղաթորմ ցցունսն:

* *Ոմանք.* Եւ նոցուն ամուսինքն... ձեռակապօք խառնաձիգ... առ ՚ի գլուխս նկատէին: *Ի լուս՝.* Առ ՚ի դժոխս նկատէին. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Թմբրեալք անձին ինչ հրամայել երթալ նաւացն նենգութեամբ ինչ մի՛ արասցեն:

* *Ոմանք.* Ի նաւ անդր ամրացեալ տա՛... որ յայնկոյս յայնկոյս շահատակեն, զի զառաջին քինու:

գրովն զազգատոհմն ամենայն յանուանէ գրել*։ ¹¹Ձի առ յառաջ սակաւ մի յայտնելոյ գործոցն վասն սրտացաւութեան պաշտամանն պատուիրեալ էր, սաստիկ պատուհասիւք մեծամեծ տանջանօք ՚ի միում ժամանակի արագ արագ կորուսանել*։ ¹²Եւ նոցա գիր համարոյն այսպէս դառնութեան սաստիկ հրամանին սրտացաւութեան պնդապէս յարևելից մինչև ՚ի մուտս արևու անվախճան կատարած յաւուրս քառասուն ձգտէր*։ ¹³Առաւել մեծապէս քան զօրէն հանապազորդ թագաւորն լի՝ ցնծութեամբ հրաման տայր՝ մեծի տաճարին կոչնականս նուիրել յամենայն մեծամեծաց. մոլորեալ մտօք ՚ի ճշմարտութենէ, անօրէն պիղծ բերանովն զանշըշունչ զանձայն զանմռունչ կուռսն՝ յարգէր գովէր. և յօրինաւոր սրբութիւնսն խօսէր որ ինչ ո՛չ էր արժան*։ ¹⁴Եւ յետ ժամանակեալ ժամադիր ժամուն, եկին մատուցին աշխարհահամար դպիրքն զգիրն առաջի թագաւորին. սկսան պաղատել, և անհնար համարեցան առնել գիր զաշխարհամար Յրեիցն. ասէ. Ո՛չ յաղթեմք վասն անչա՛փ բազմութեանն. զի բազում այն են ասէ, որ ցան աստ անդ ընդ աշխարհ անհամար մնացեալ են արտաքոյ այդոր գրոյ անհամար կան. և որ ՚ի տեղիս տեղիս՝ յապարանս ապարանս ՚ի կողմանս երկրին Եգիպտացւոց անհամար կան*։ ¹⁵Իբրև զայն լսէր թագաւորն, պատուհասակո՛ծ առնէր զդպիրսն իբրև զկաշառաբէկս, իբրև զայն ինչ խելս մենքենայից խառնեալ՝ զի ապրեցուցանել մարթասցեն նոքա զնոսա*։ ¹⁶Նոքա՝ հաստատէին և ասէին, յայտ յանդիման ցուցանէին զքարտէսն պակասեալ, և զգրիչսն մաշեալս։ Եւ այս ամենայն լինէր վասն օգնականութեան Բարձրելոյն, որ ցուցանէր զգթութիւն խնամոց ՚ի վերայ Եբրայեցւոցն*։

5

Գլուխ Ե

¹Յայնմ ժամանակի կոչէր նա զՅերմոն փղապետ, մեծա՛ւ սաստկութեամբ վառել զփիղսն ՚ի վաղիւ անդր. զի առանց յապաղելոյ պատրաստեսցէ գինեզէնս խնկալիցս՝ զայրացեալս կնդրկաւ՝ զազանացեալս անապակաւ, ՚ի հրապարակ ածել՝ թուով իբրև եւթն հարիւր. ածել պատրաստել ահագին պատուհաս ազգին Եբրայեցւոց*։ ²Եւ թագաւորն զայս հրաման տայր փղապետին, և ինքն յուրախութիւն դառնայր՝ բազում զօրօք մեծամեծ աւագանով, որ առաւել ևս թշնամութեամբ էին ընդ ազգին Եբրայեցւոց քան

* *Ոմանք.* Ելանէին արտասուակցորդ լինել... արժանի առնել։ *՚Ի լուս*՝ Աշխարհահամար գր՝։

* *Ոմանք.* Ձի առ սակաւ մի յառաջ յայտնելոյ գործոյն վասն սրտացաւութեան։

* *Ոմանք.* Յարևելից մինչև յարևմուտս։

* *Ոսկան.* Չանշըշունչ զանձայն։

* *Ոմանք.* Եւ յետ սակաւ ժամադիր ժամուն... աշխարհամար... զի բազում են ասէ որ ցրուեցան աստ անդ։ *՚Ի լուս*՝ Սկսան պատմել, և անհնար հա՛. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝։

* *Ոմանք.* Պատուհասակո՛ծ արձակէր զդպ՛... խելս մենքենայիցն խառնել։

* *Ոմանք.* Եւ յայտ յանդիման ցու՛։

* *Ոմանք.* Չայրացուցեալս կնդրկաւ, զազանացուցեալս անապա՛... ածեալ թուով... յահագին պատու՛։

զթագաւորն*։ ³Իսկ փղապետն իբրև լուսւ՛ զհրամանն սաստկութեամբ՝ կատարէր, ՚ի ժամ անդ զփիղսն պատրաստէր. և ա՛յլ սպասաւորքն ելանէին կապէին զտառապելոցն զոտս և զձեռս, և զա՛յլ պահ գիշերապահ շո՛ւրջ զնոքօք զգուշութեամբ բիրազգի ածէին. ընդ միտս իւրեանց համարեալ, ընդ այգն ընդ առաւօտն վախճան սատակման ածեալ ՚ի վերայ ազգին տեսանէին*։ ⁴Իսկ Յրէայքն յամենայն կողմանց զանձինս իւրեանց անզօր և առանց օգնականութեան գէ՛շ անկեալ հեթանոսացն համարէին. զամենակալն Աստուած, և զամենայն զօրութեանց զօրացուցիչ զողորմածն Աստուած՝ անդադար բարբառով արտասուօք կարդային։ Անկեալ առ հասարակ աղաչէին՝ դարձուցանել շրջել զխորհուրդն անօրէնութեան. մեծապէս յայտնութեամբ անցուցանել զօրհասն, որ անդէն մօտաշուտ զոտիւք զձեռօք պատեալ է*։ ⁵Փղապետն զանողորմ զազանսն՝ զինեզէնս խնկալիցս զայրացուցեալ ընդ առաւօտն ՚ի դուռն թագաւորին հասուցանէր։ ⁶Իսկ ա՛յն որ յաւիտենից ժամանակաց գեղեցիկ արարածք, բարւո՛ք բաժին տունջեան և գիշերոյ վիճակ ելեալ յերկնաւոր ՚ի պարզևատու յառատածեռնն Աստուծոյ, ելանէր պարզև մասն մի քնոյ՝ զոր առաքէր ՚ի վերայ թագաւորին. և անդէն թանձր և խորին, և քաղցր և անոյշ քնով ՚ի զօրութիւն Տեառն կապէր զթագաւորն, և զնա յանշարժ խորհրդոցն անտի խաբեալ վրիպեալ կացուցանէր*։ ⁷Անդ որդիք Եբրայեցւոցն զժամանակեալ զմահաբեր զօրհասի՝ ժամանակն զանցուցեալ, զսուրբն զերկնաւորն Աստուած օրհնէին։ Եւ դարձեալ անկեալ ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ աղաչէին կատարել զպարզևն ՚ի մեծազօր բազկէ անտի, ՚ի մէջ հպարտացեալ հեթանոսացն երևեցուցանել*։ ⁸Իբրև ընդ մէջ լինէր ժամ տա՛սներորդ. և սպաս տաճարին ամենայն պատրաստեալ էր, և կոչնականքն յիրաքանչիւր ՚ի չափս յօրինեալ կային. յանկարծակի խթեաց ա՛զդ արար, մերձ յանցանել լինել ժամ ուրախութեան տաճարին։ Ջա՛յն ժամ զուրախութեան զմտաւ ածէր թագաւորն, և անդէն բազմեալ վաղվաղակի հրամայէր զկոչնականսն ՚ի ներքս կոչել, սպա՛ս առնել տաճարին բարձի՛ցն պատրաստութեան, զա՛յր ա՛յր յիրաքանչիւր գահ հրամայէր մատուցանել*։ ⁹Ի ձե՛ռն առեալ զուրախութիւն խրախու՛նս առնէր տաճարին, զանագան ժամուն ընդ ուրախութիւն զուարթութեան անցուցանել։ Իբրև յերկարագոյն նուագօք զբանիւք անկանէին. կոչեաց զփղապետն ահե՛ղ սաստկութեամբ դառնապէս պատուհասէր. ընդէ՞ր կամ զմէ՞ զժամադիր սաստիկ հրամանի զօրահասաւ՝ անցեալ Յրէայքն, և զայս օր կեցեալ զտանէին*։ ¹⁰Նա՛ կա՛յր ցուցանէր նմա զհրամանն արքունի՝ գիշերախառն կատարեալ. և նոքին կոչնականքն վկայէին բանիցն փղապետին։ Ապա թագաւորն զդառնութիւն զազանութեանն ցածուցանէր՝ և ասէ. Ե՛րթ դու քեզ՝ զայս օր քնո՛յ շնո՛րի կալցին նոքա։ Բայց

* *Ոմանք յաւելուն.* Բազում զօրօք *բարեկամօք* մեծամեծ։
 * *Ոմանք.* Իսկ փղապետն իբրև առնոյր զհրա՛... և ՚ի ժամ անդր զփիղսն... ՚ի միտս իւրեանց հա՛... ածել ՚ի վերայ։
 * *Ի լուս՛.* Որ անդէն մօտաշուտ զոտիւք. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:*
 * *Ոմանք.* Եւ գիշերոյ վիճակեալ յերկնաւոր... ելանէր պարզև մի մասն քն՛։ *Ոսկան.* Թանձր և խորխորին և։
 * *Ոմանք.* Ձժամակալ զմահաբեր զօր՛։
 * *Ոմանք.* Եւ անդրէն բազմեալ։
 * *Ոմանք.* Յերկարագոյն նուագքն... կոչեցեալ զփղապետն... և զայս օր կեցեալ զտանին։ *Ուր Ոսկան.* և այսօր կե՛։

անվրէպ զվաղիւ օրն պատրաստեսցիր՝ ՚ի նմին գազանութեան զփիղսն ՚ի վերայ անօրէն ազգին Զրէից սատակման հասուցանելոյ՝¹¹ Իբրև զայն ասէր թագաւորն. և ամենեքին լի՝ ուրախութեամբ ընդ մի բերան զհրամանն զովէին, յիրաքանչիւր վանս ՚ի միմեանց բաժանեալք, վասն անագան ժամուն մեկնէին. և սակայն այնչափ ո՛չ տային քնոյ զանձինս, որչափ զգիշերն ամենայն զմտաւ ածէին մենքենայել զինչ նոր նոր չարչարանս ՚ի վերայ տառապելոցն հասուցանել մարթասցեն՝¹² Այն ինչ՝ հաւ խօսեցաւ, կանուխ ընդ առաւօտն գազանացուցեալ՝ վառեալ զգազանսն ՚ի գինի և ՚ի խունկ, ածեալ պատրաստէր. և ինքն իջեալ ՚ի մեծի սրահի անդ ճեմ առեալ շրջէր: Իսկ որ ՚ի քաղաքի անդ էին, առհասարակ ելեալ հեղեալ՝ եկեալ ժողովեալ էին. դէտ ակն ունէին թշուառութեան տեսլեանն, որ ընդ այգն ընդ առաւօտն ՚ի վերայ Զրէից սպառնացեալ պահէր՝¹³ Եւ Զրէայքն ժամ ՚ի ժամ անցեալ զօրհասաւն, բազում արտօսը՝ պահոց պնդութեան ՚ի ձայն ողորմ ողբոց, զձեռս յերկինս բարձեալ՝ զմեծ զամենազօրն Աստուած աղաչէին, միւսանգամ այցելու լինել փրկել զնոսա յանհնարին յօրհասէն: ¹⁴Չև՛ լինէր արեգական ճառագայթիցն յաշխարհ սփռեալ, և թագաւորն յարուցեալ դէտ ակն ունէր մեծամեծացն. հասեալ ՚ի դուռն փղապետին, աչօք ցուցանել զպատրաստութիւն փղացն, ո՛րպէս վառեալ պատրաստեալ ՚ի դուռն հասեալ էր՝¹⁵ Թագաւորն շնորհակալ լինէր. զարմացեալ էր ընդ պատրաստութիւնն: Դարձեալ միւսանգամ անդրէն զառածանէր, զի՞նչ իրք իցեն վասն անօրէն ճեպոյն. դարձեալ զմիտս դարձուցանէր, պատուհաս ՚ի վերայ փղապետին կապէր, թէ որ ինչ հրաման տուեալ էր, զայն ո՛չ վաղվաղակի ՚ի գլուխ հանեալ ցուցանէր: ¹⁶Եւ այս ամենայն լինէր ՚ի հրամանէ Տեառն ամենակալի, զանհնարին զօրհասին պնդութեան խորհուրդսն յապուշ դարձուցանէր: Արդ մատուցեալ փղապետն զմեծամեծս յաւազանուոյն ՚ի վկայութիւն տանէր. ո՛րպէս կանխաւ փիղքն վառեալ և զօրքն պատրաստեալ, զհրամանն արքունի հաստատուն ՚ի գլուխ կատարեալ ցուցանէր՝¹⁷ Դարձեալ յայնմ ժամանակի թագաւորն լնոյր մեծաւ բարկութեամբ վասն մեծութեանց գթոյն Աստուծոյ, զի կամէր ցրուել զխորհուրդս նորա: Որ անդէն իսկ մեծաւ բարկութեամբ՝ սաստիկ պատուհասիւք հայեցաւ ընդ փղապետն: Սկսաւ խօսել՝ և ասէ՝¹⁸ Որ միանգամ հարք և մարք և որդիք ՚ի տեսանել իսկ եկեալ իցեն, գրեսցի կո՛ւր արկանել զազանացն. և զքեզ ընդ նոսա փոխանակ անմեղացոյ այդոցիկ, որ իսկզբանէ՝ նախնեաց մինչև ՚ի նախնիս անարատ զարդարութիւն և զհաւատս՝ մեզ պահեալ է Եբրայեցուոցոյ այդոցիկ: Եւ եթէ ո՛չ վասն դայեկատոհմ միասնունդ սիրոյն էր, զքաղցր արևդ յաչա՛ցոյ հատանէի, և զքեզ նենգաւոր չարագործ ՚ի միջոյ պակաս առնէի՝¹⁹ Փղապետն այսպէս յանկարծ ժամանակի յեղեռնաւոր պատուհասէն

* *Ոմանք.* Եւ ասէր. Ե՛րթ դու... զվաղուի օրն պատրաստ:

* *Ոմանք.* Իբրև զայս ասէր... ուրախութեամբ իբրև ընդ մի բե՛... իւրաքանչիւր ՚ի միմեանց բա՛:

* *Ոմանք.* Այն ինչ հաւ խօսէր... ածեալ պատրաստեալ... ՚ի մեծ սրահի... իսկ որ ՚ի քաղաքին զօրքն էին, առ հասարակ եկեալ հեղեալ:

* *Ոմանք.* Յաշխարհ սփռել... փղապետն, աչօք ցուցանէր զպատ:

* *Ոմանք.* Ի մեծամեծ յաւազանին ՚ի վկայութիւն ածէր:

* *Ոմանք.* Ձի կամէր ցրել զխոր:

* *Ոմանք.* Կամ որդիք... գրեսցի կորուսանել զազա՛... փոխանակ մեղացոյ այդոցիկ... և զհաւատ պահեալ է առ մեզ Զեբր՛:

մագապուր ելանէր. և յառաջին զուարթութենէ անտի զիջեալ տրտմագոյն երեսօք այր զարամբ զինքն՝ ՚ի միջոյ՝ անտի ՚ի բա՛ց մերժէր. և բարեկամքն իւրաքանչիւր գլուխս ՚ի վայր արկեալ, զամբոխն ժողովեալ յիւրաքանչիւր պէտս հրաման տուեալ ցրուէին*։²⁰ Որդիքն եբրայեցւոց իբրև լուան զթագաւորին. զերևելին զՏէր Աստուած, զթագաւորն թագաւորաց օրհնել սկսան. առաւել իբրև զա՛յս օգնութիւն ևս ՚ի վերայ անձանց իւրեանց գտին։ Եւ անդէն վաղվաղակի թագաւորն հրաման տայր կոչնականացն յուրախութիւն դառնալ։²¹ Կոչեաց զփղապետն դարձեալ մեծա՛ւ պատուհասիւ, սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. Քանի՞ ցս անգամ քեզ վասն նոցա, ա՛յ թշուառ՝ պատուէր տուեալ է, վառել կազմել պատրաստել զփիղոսն. զոնէ արդ՝ առ վաղիւ պատրաստեսցես յեղեռնաւոր թշուառական ազգին Յրէիցն*։²² Իբրև զա՛յն լսէին բազմականքն ամենայն առաւել՝ զարմանային ընդ յեղյեղուկ միտս թագաւորին։ Եւ ասեն. Տե՞րբ է այդ արքայ, ցե՞րբ ՚ի միտս քո փորձես զմեզ. այդ՝ երիցս անգամ հրամայեալ է սատակել զազգո՛ ժպիրի. և դարձեալ միւսանգամ զքոյին հրաման անդրէն եղծանես։ Զիա՞րդ վասն այսորիկ և քաղաքս ամենայն ՚ի ժողովս իւրեանց առաւել վշտացեալ են քան զայն չարագործս*։²³ Զայսմանէ ամենայնիւ վրիպակ արքայն լի՛ եղեալ յիմարութեամբ ՚ի վարանս մտանէր. և յա՛յն ինչ ո՛չ հայէր՝ որ յերկնից այցելութիւն էր ՚ի վերայ Յեբրայեցւոց։ Դարձեալ սաստկութեամբ երդնոյր զերդումն անկատար, ասէ. Առանց իրիք յերկուանալոյ՝ զնոսա ՚ի դժոխս յուղարկեցից առաթուր կոխեալս անհնարին զազանացն. զօրաժողով լինել առ հասարակ ՚ի վերայ Յրէաստանի, զփայտակերտն հրով դատել, և զկաւակերտն ջուրբ լուանալ. ՚ի գերութեան վարել առ հասարակ, զինչս և զստացուածս, և զոր ինչ կայ ՚ի նմա։ Եւ զայն պահեստ ՚ի մէնջ զտաճարն նոցա հրծի՛գ առնել, և զնա տուն զոհից զամենայն աւուրս ժամանակաց կացուցանել*։²⁴ Յայնմ ժամանակի հաստատութեամբ բանս լուեալ կոչնականքն, և բարեկամք տոհմային սիրելիք, հաստատութեամբ զբանն լուեալ՝ զուարճացեալ զնային. հրաման տային զօրացն՝ յամուր վայրի արգելեալս, շուրջ զիշերապահս և խրամապահս կացուցանել։²⁵ Իսկ փղապետն յանհնարին մոլութիւն զգազանսն վառեալ պատրաստէր. խնձեալ գինուով կնդրկախառն յահեղ պատրաստութիւնն վառէր զդիւազին զազանսն առ վաղիւ անդր, անթիւ գէշ անկեալ հասեալ յասպարիսի անդ։ Արդ՝ ե՛կն եմուտ ՚ի սրահ անդր, ստիպէր տագնապաւ զթագաւորն ՚ի կոտորո՛ւմն կապեալ ժողովրդեան*։²⁶ Յայնմ ժամանակի ամենայն զօրքն՝ անհնարին զազանօքն դիմեալ գայր ՚ի դուրս թագաւորն, ՚ի մտի եղեալ անգութ աչօք, անողորմ սրտիւ, ինքնին տեսանել զվշտագին սատակումն թշուառական զնդին*։²⁷ Իբրև եկին

* *Ոսկան.* Մագապուրծ ելանէր։ *Ոմանք.* ՚ի զուարթութենէ անտի զիջեալ տրտմագին երեսօք այր ընդ արամբ։ *Ուր օրինակ մի.* այլ զարամբ զինքն։

* *Ոմանք.* Սկսաւ խօսել ընդ նա... ա՛յ թշուառական, պատուիրեալ է վառել կազ՝... ազգէն Յրէից։

* *Ոմանք.* Արդ երիցս անգամ... զազգն դժպիրի... զքոյին հրամանս անդրէն։

* *Ոմանք.* Յայսմանէ ամենայնիւ... լի եղև յիմարութեամբ... զօրաժողով լինել հասանել վաղվաղակի ՚ի վերայ Յրէաստանի առ հասարակ զփայտակերտն հուրբ դա՛... և ՚ի գերութեան վա՛... և որ ինչ կայ ՚ի նմա։ *Յօրինակին.* Զամենայն աւուր ժամանակաց։

* *Ոմանք.* Յանհնարին մոլորութիւն զգա՛... զահեղ պատրաստութիւն... անթիւ զօրաց գէշ անկեալ... ՚ի կատարումն կապեալ ժողովրդեանն։

* *Ոմանք.* Ամենայն զօրօքն անհնա՛... գայր ՚ի ներքս թագաւորն... թշուառական ազգին։

հասին փղօքն պատրաստելովք, և զօրօք վառելովք ՚ի դուռն քաղաքին. ա՛զդ լինէր Յրէիցն թնդիւն զօրացն, փայլիւն զինուն. փոշին որ ելանէր դիզանէր՝ յա՛նպս հասանէր. ամբոխն աղաղակէին զնոքօք պատեալ, զմիտսն յապուշ դարձուցանէր. և զայս յետին կատարած համարեցան ՚ի վերայ թշուառութեան կարծեացն: Յողորմ գութ խանդաղատեալ հարք և մարք, ուստերք և դստերք, քորք և եղբարք, տոհմային բարեկամք սիրելիք, զմիմեանց պարանոցօք անկեալ փարեալ պատեալ համբուրէին*²⁸ Եւ կէսք զմատաղածին մանկունս ՚ի գիրկս առեալ յետին զայն ծուծ ստին ՚ի բերան եղեալ տղայոցն՝ համարէին: Եւ մինչդեռ յայնմ յաղէտս տարակուսի և ՚ի շտապ տագնապի երիթամածեալ կային, յիշեցին զառաջին օգնականութիւնն որ եղև յերկնից. առհասարակ միաբան ՚ի միմեանց մեկնէին, և ՚ի տղայ մանկանցն բերանոյ զստինսն ՚ի բա՛ց կորզէին. և առ հասարակ անկեալ առաջի մեծութեանցն աստուածութեանն թաւալէին: Չայն բարձեալ մեծաւ բարբառով ՚ի գոչիւն լալոյ, զամենագօրն զամենակալն աղաչէին, ՚ի գութ դառնալ մեծաւ ողորմութեամբ. փրկել զհատեալս ՚ի յուսոյ, զհասեալ մերձեցեալսն ՚ի դրունս դժոխոց*:

6

Գլուխ Զ

¹Եղիագարոս ոմն անուն՝ ա՛յր երևելի ՚ի գնդէ՝ քահանայիցն, յեցեալ ՚ի ծերութիւն, զարդարեալ լուսաւորեալ ամենայն քաջութեամբ և արդարութեամբ ՚ի մանկութենէ, հազիւ ինչ՝ ծերս քանի մի որ զհլրւն էին՝ հանդարտեցուցանէր, և առ ի՛նքն յարեալ ՚ի սուրբն Աստուած աղօթս մատուցանէր, և ասէր ա՛յսպէս*.
²Թագաւոր մեծագօր, բարձրեալ ամենակալ Աստուած. որ զամենայն վարես և ուղղես ՚ի գթութիւն ողորմութեանց քոց. հայեա՛ց ՚ի վերայ Աբրահամեան զաւակիս, ՚ի սրբոյ Սահակայ՝ յորդիս Յակոբայ, ՚ի բաժին ժառանգութեան քոյ՝ ՚ի ժողովուրդ օտար՝ յօտար երկրի ՚ի կորուստ մատնեալ*:
³Դու ա՛յն Աստուած ես, որ զփարաւոն բազմացեալ կառօք և երիվարօք և զօրօքն Եգիպտացոց, զհպարտացեալ բարձրացեալ մեծաբանեալ ամբարտաւան զօրօքն հանդերձ՝ ծովամացս ՚ի կորուստ յուղարկեալս ընկղմեցեր*:
⁴Դու՝ որ զանթիւ զօրսն պերճացեալ պարծեցեալս՝ Սանատրուկ արքայի Ասորեստանեայց սատակեցեր, որ ՚ի մի սայր սուսերի, և ՚ի մի տէգ նիզակաց առեալ հաւաքէր ամփոփել զերկիրն ամենայն Յրէաստանի. հպարտացաւ ևս հասանել ծանր բարբառով՝ յանդուզն սաստկութեամբ մեծա՛ւ նախատանօք ՚ի վերայ քաղաքին սրբոյ: Դու Տէր հարեր բեկեր կործանեցեր, յա՛յտ յանդիմանութեամբ ցուցեր զգօրութիւն բազկի քոյ ամենայն հեթանոսաց*:
⁵Դու՝ և որ յերկրին Բաբելացոց

* *Ոմանք.* Ամբոխ աղաղակին զնոքօք պա՛... և զայն յետին կատա՛:

* *Ոմանք.* Առեալ գյետին զանծուծ ստին... և շտապ տագնապի էր՝ ՚ի թաւ մածեալ կային... մանկանց բերանոցն... զհասեալս մերձեալսն ՚ի դրունս:

* *Ոմանք.* Ի մանկութենէ իւրմէ. հազիւ ինչ զծերսն և զամենեսին որ զհլրւն...

մատուցանէր. և յառաջ մատուցեալ ասէր այսպէս: *Ուր օրինակ մի.* Ձծերսն քան զամենեսին ՚ի մի որ զհլրւն:

* *Ոմանք.* Ի յորդիս Յակոբայ, ՚ի բաժին սրբութեան քո... յօտար երկիր ՚ի կորուստ մատնել:

* *Ոմանք.* Ամբարտաւանեալ զօրօքն հանդերձ ծովաթացս ՚ի կո՛:

* *Ոմանք.* Սանատրուկով արքային Ասորեստան... աւագեալ ամփոփեալ զերկիրն... ՚ի վերայ

երեք մանկունքն ինքնական զանձինս 'ի հուրն մատնեցին՝ զի մի՛ երկիր պագցեն սնոտի պաշտամանց, փրկեցեր, զի և հերոյ վարսից նոցա ո՛չ մեղանչէր հուրն. ճարա՛կ ետուր հրոյն զօրութեանց զթշնամիսն*։ ⁶Դու՛ և որ 'ի նախանձ նենգութեան 'ի գու՛ր արկեալ զԴանիէլ 'ի բերան անհնարին գազանացն, 'ի լո՛յս ածեր անարատ պահեալ*։ ⁷Դու՛ և որ զհե՛ւրն անդնդոց. որ տեսեր զի մաշէր 'ի պորտ ձկանն, անարա՛տ ածեալ, յանդիման ընտանեաց իւրոց կացուցանէիր*։ ⁸Դու՛ հայր և արդ ամբարտաւանատեաց, բարեսէր, ողորմած, ապաւէն ամենայնի, արա՛գ երևեաց 'ի վերայ ազգիս Իսրայէլացոց, որ 'ի ձեռս պղծոց անօրինաց հեթանոսաց անկեալ չարաչար կան 'ի պատուհասի*։ ⁹Ապա եթէ ըստ ամպարշտութեան կեանքս մեր 'ի վախճան մահու այսու՛ սաստիւք հասեալ իցեն. 'ի ձեռաց թշնամեացս միայն փրկեա՛ զմեզ. և որով կամիցիս սաստիկ պատիժ պատուհասիւք դատեսջիր զմեզ. զի մի՛ ընդունայնամիտ զրախորհուրդ հեթանոսք պարծեսցին առաջի սնոտեաց իւրեանց 'ի վերայ մերոյ կորստեան, և ասիցեն թէ՛ եւ ո՛չ Աստուածն իւրեանց փրկեաց զնոսա՛ 'ի ձեռա՛ց մերոց*։ ¹⁰Այլ դու որ զամենայն զօրութիւնս՝ և զիշխանութիւնս և զպետութիւնս յաւիտենից 'ի ձեռս քո ունիս, անուշակ անմահ ողորմած Աստուած՝ ողորմեաց գթա՛ 'ի մեզ, որ այսչափ անօրէն թշնամանօք զանկարգ զանիմաստ պատուհաս մահու յանձինս կրեալ 'ի կենաց 'ի մահ՝ զօրէն չարագործաց յուղարկիմք*։ ¹¹Չաշեսցէ մաշեսցէ զհեթանոսս զօրութիւն յաղթութեան քոյ. զի գո՛յ զօրութիւն փրկութեան պատուի քում 'ի վերայ փրկութեան Յակովբեան տոհմիս*։ ¹²Անկեալ աղաղակէին աւասիկ ամենայն աղածրի երամ երամ բազմութիւն տղայոց. և նոցունց հարք և մարք արտասուօք, զի ողորմութիւն քո յայտնի՛ լիցի ամենայն հեթանոսաց, եթէ դու Տէր մեր ընդ մե՛զ ես, և ո՛չ դարձուցեր զերեսս քո՛ 'ի մէնջ. այլ որպէս յառա՛ջ իսկ խոստացար՝ թէ և յերկրի թշնամեաց նոցա զնոսա՛ 'ի ձեռաց ո՛չ թողից. արդ զնոյն բան հրամանի քոյ կատարեսջիր Տէր*։ ¹³Այն ինչ լինէր եղիագարու զաղօթսն առ Աստուած մատուցանել. և թագաւորն գազանօքն և զօրօքն հանդերձ 'ի տեղի հանդիսին յասպարէս անդր մեծա՛ւ բարկութեամբ հասանէր։ Չաչս 'ի վեր բարձին որդիք եբրայեցւոցն, իբրև զայն տեսին՝ 'ի ձայն մեծ գոչման յերկինս զաղաղակ բարձին։ Յայն ձայն գոչման առ հասարակ լերինք և հովիտք անդրէն կրկնեալ բարբառով ընդդէմ հնչեցին. անհնարին խռովութիւն յերկոցունց աղաղակէ գոչմանն 'ի վերայ զօրացն հասանէր*։ ¹⁴Յայնմ ժամանակի Բարձրեալն փառօք՝ մեծապատիւ ամենակալ՝ ճշմարիտն Աստուած երևեցոյց զերեսս իւր. բաց նա զդրունս երկնից. ուստի եկին իջին երկու ահեղ

քաղաքին սրբութեանց։ *Ի լուս՝ 'ի վերայ՝* Սանատրուկ, *նշանակի՝* Սենեքերիմ։ *Ուր օրինակ մի.* Սանատրուկ Սենեքերիմ արքայի։ *Ոմանք յաւելուն.* Դու Տէր *ամենակալ* հարեր։

* *Ոմանք.* Սնոտոյ պաշտամանց... ո՛չ մեղանչեաց հուրն։

* *Ոմանք.* ԶԴանիէլ 'ի բերանոյ անհնարին գա՛։

* *Բազունք.* Դու և հերն անդնդոց։

* *Յօրինակին.* Արագ երևելեաց 'ի վերայ ազգիս։

* *Ոմանք.* Այս սաստիւ... 'ի ձեռաց միայն 'ի թշնամեաց... և ասացեն եթէ ո՛չ Աստուածն իւր՝։

* *Ոմանք.* Յանձինս կալեալ 'ի կե՛։

* *Ոմանք.* Ի պատուի քում 'ի վերայ... տոհմին։

* *Այլք.* Անկեալ աղաչեն աւասիկ։

* *Յօրինակին պակասէր.* Եւ հովիտք *անդրէն* կրկնեալ։

փառաւորեալք աներևոյթ հրեշտակք. զի ո՛չ ումեք ո՛չ երևէին՝ բայց միայն Յրէիցն*։ ¹⁵Եւ հարան ՚ի դիմի թշնամեացն, և լցին զգօրսն խռովութեամբ, և լի՛ արարին ահիւ և դողութեամբ. և առ հասարակ զամենեսեան անշարժ կապեալ պատեալ պաշարեալ պահէին։ Եւ թագաւորին իսկ գլխովին՝ սոսկացեալ դողացեալ քստմնեալ լինէին ոսկերք և մարմինքն. սաստն խռովութեան գազանութեանն՝ և սրտմտութիւն բարկութեանն անդէն յապո՛ւշ միտս եղծանէին։ Եւ գազանքն անդէն յետս ՚ի վերայ վառեալ զօրացն յարձակէին, և զբազումս ՚ի նոցանէ առաթուր հարեալ անդէն առ ոտս իւրեանց սատակէին*։ ¹⁶Ի նմին տեղուոջ վաղվաղակի թագաւորին բարկութիւնն ՚ի գութ յարտասուս վասն առաջին պնդութեան յամառութեան խստութեանն հարկանէր. զի իբրև լուաւ զգոչիւն բարբառոյն, և զմտաւ ած զկորուստն բազմաց, զայրացաւ՝ հարա՛ւ յարտասուս։ Խօսել սկսաւ ընդ բարեկամսն լի՛ բարկութեամբ՝ և ասէ*։ ¹⁷Անցէք զանցէք ապաքէն, բռնացարուք, թագաւորել կամիք. և զիս իսկ ՚ի վերայ ամենայն երախտեաց, ՚ի մտաց խորհրդոց՝ ՚ի տէրութենէ առ հասարակ մերժել կամիք. գողացարուք աւաղիկ զմիտս իմ խորհրդականքդ առաքինիք. և զինչ ո՛չ է օգուտ տէրութեան մերում, զայն առնել տալ մենքենայիւք*։ ¹⁸Ո՞ է որ զհօր զաշտարակդ հաւատարիմ սասանէ, զաւանդապահսդ ուխտից մերոց։ Ո՞ է որ զսոսա յիւրաքանչի՛ւր տեղեաց բնակութենէ իբրև զգազանս չարագործս յայս տեղի կապեալս կուտեալս պաշարեալս պահէ։ Ո՞ է որ զսոսա որ իսկզբանէ ընդ մեզ միաբանութեամբ և արդարութեամբ քան զամենայն ազգս և ազինս ՚ի մէջ բազում պատերազմաց և խռովութեան ժամանակի, հաւանութիւն արդարութեան պահեալ, այսպիսի անօրէն չարաչար տանջանօք ածեալ կապեալ պատեալ պաշարեալ պահէ*։ ¹⁹Լուծէ՛ք արձակեցէ՛ք զանօրէն կապանսդ, յիւրաքանչիւր տեղիս խաղաղութեամբ յուղարկեցէ՛ք, զառաջին զեղեալ լկութիւնսն ՚ի գրգութիւնս ողորանաց. մխիթարեցէ՛ք զորդիսդ ամենակալի՛ Աստուծոյ երկնաւորի կենդանոյ, որ ՚ի սկզբանն նախնեաց մինչև ցայսօր անարգել տէրութիւն և հաստատուն իրաւունք՝ տուեալ են մեզ։ Եւ թագաւորն յայնս օրինակի զբանս իւր մերկանայր*։ ²⁰Իսկ Յերբայեցիքն վաղվաղակի յական թօթափել, լուծեալք ՚ի կապանաց անտի, զամենակալ փրկիչ զսուրբն Աստուած իւրեանց օրհնէին. այն ինչ մազապուր ՚ի դրաց մահուանէ չհաւատալի զերժեալք*։ ²¹Իբրև զայն դիւրութիւն դիւրէր Յերբայեցւոց՝ թագաւորն ինքն ՚ի ներքս ՚ի քաղաքն դառնայր, կոչել հրամայէր զմտից դպիրն՝ և ասէ. Հա՛պա, վաղվաղակի գինի՛ և նաշիի, և որ զինչ պիտի յուրախութեան հանդերձ Յրէիցն մատուցանել զելքն օր։ Ձի հրամայեցաւ նոցա ՚ի նմին տեղուոջ ուր համարեցան զեղեռնաւոր սատակումն անձանց իւրեանց կատարել, անդէն զայն եւթն օր փրկութեան ուրախութեամբ անցուցանէին*։

* *Ոմանք.* Ձի ո՛չ ումեք երևէին։

* *Ոմանք.* Սաստն խստութեան գազանութեանն... և գազանքն անդրէն յետս։

* *Յօրինակին պակասէր.* Վաղվաղակի թագաւորին՝ բարկութիւնն։

* *Ոմանք.* Ի մտաց ՚ի խորհրդոց։

* *Ոմանք.* Ո՞վ է որ... իբրև զգազանս ինչ չարա՛... ո՞վ է որ զսոսա իսկզբանէ... ՚ի ժամանակի հաւանութեան զարդարութիւն պարհեալ... պատեալ պարշարեալ պահէ։

* *Ոմանք.* Որ ՚ի սկզբանէ նախնեաց մինչև... յայն օրինակ զբանս։

* *Ոմանք.* Մազապուրք ՚ի դրանց մահուանէ չհաւատալի զերժեալ լինէին։

* *Ոմանք.* Եւ որ զինչ պիտոյ իցէ. *կամ՝* պիտիցի յուրախութիւն Յրէիցն... եւթն օր փրկութեամբ անցուցանել։

22Յայնմ ժամանակի՝ որ յառաջ մատնցոյց նախատանօք եկեալ հասեալ ՚ի մահ, մանաւանդ թէ մտեալ իսկ էին ընդ դրունս դժոխոց. փոխանակ դա՛ռն այնր օրահասին՝ խնճոյս ուրախութեան կացուցեալ ՚ի փրկութեան տեղւոջն, ուր սատակմանն և վիին ակն ունէին: Բազմականս բազմականս բաշխեալ լի՝ ուրախութեամբ յիւրաքանչիւր կողմանս բաժանէին*²³ Եւ փոխանակ արտասուալից ողբոցն, ե՛րգս առեալ ՚ի ձայն օրհնութեան հայրենի բարբառովն զնշանագործ փրկիչն զԱստուած օրհնէին: Չլալիւն և զհեծեծութիւն ՚ի բաց մերժեցին. պա՛ր առեալ ուրախութեան խաղաղութեան ցնծութեան նշան կանգնէին*²⁴ Սո՛յն օրինակ և թագաւորն վասն նոցա ՚ի մեծի՝ տաճարին ժամ տուեալ ուրախութեամբ բազմաւ զկոչնականսն հրամայէր ՚ի ներքս կոչել, անպակաս բերանով յերկինս հայեցեալ, բազմապատիկ ՚ի վերայ յանկարծակի սքանչելի փրկութեան ժողովրդեանն զԱստուած ՚ի վե՛ր օրհնէին: Եւ որ յառաջն ՚ի սատակումն զազանագէշ հաւակերի զժողովուրդն նուիրէին խնդութեամբ, յոգւո՛ց ելանէին ամօթ և վնաս յանձին կալեալ. և զհրաշո՛ւնչ բարկութիւնն իւրեանց շիջուցեալ, ցնծութեամբ զուրախութիւն զուարթացուցանէին*²⁵ Իսկ Յրէայքն որպէս ասացաք յառաջագոյն՝ պա՛րս ուրախութեան կազմեալ զեւթնօրեայ ժամանակն զուարթութեամբ ցնծութեամբ օրհնէին զԱստուած: Ի՛ հաւասար միաբանութենէ՝²⁶ օրէնս դնէին յամենայն տեղիս բնակութեան իւրեանց՝ ածե՛լ զաւուրսն զայն ուրախութեան. ո՛չ վասն հպարտութեան, և ո՛չ վասն որկորստութեան, այլ վասն գոհութեան և փրկութեան զոր արա՛ր ընդ նոսա Աստուած*²⁷ Կարգեցին խառնել զաւուրսն զայնս ՚ի տօնս տարեկանաց իւրեանց. և ապա խնդրեցին ՚ի թագաւորէ՝ անտի արձակել զինքեանս յիւրաքանչիւր տեղիս: Յաշխարհահամար խառնէին ՚ի հինգերորդ քսաներորդ Պաքոնայ, մինչև ՚ի չորրորդն Եպիփայ՝ աւուրս քառասուն*²⁸ Դարձեալ հրաման ևս արարին ՚ի տեղւոջն առնել զե՛լս և զծափս ՚ի հինգերորդէ անտի Եպիփայ մինչև յօր երրորդ ամսոյ աւուրցն, յորում մեծապէս փառաւորեցոյց Աստուած զողորմութիւն իւր, և փրկեաց զնոսա անարատս առ հասարակ. և այնպէս ուրախ լինէին ՚ի հրամանէ թագաւորին*²⁹ Ձի հրամայեալ էր տալ զամենայն հանդերձանս զուրախութեան, մինչև յօրն չորեքտասաներորդ, յորում գտին զվճիռ արձակելոյն իւրեանց: Յա՛նձն առ թագաւորն. հրամա՛ն ետ տալ հրովարտակս ՚ի քաղաքս քաղաքս՝ առ զօրավար զօրավար օրինակ զա՛յս*:

7

Գլուխ Է

Դ¹ Արքայ Փիղ՛ովպատովր Պտողոմէոս՝ առ զօրավարս և առ ամենայն

-
- * *Ոմանք.* Եւ փոխանակ արտասուալից... և զհեծութիւն ՚ի բաց մեր՝... նշանակ կանգնեցին:
- * *Ոմանք.* Եւ փոխանակ արտասուալից... և զհեծութիւն ՚ի բաց մեր՝... նշանակ կանգնեցին:
- * *Ոմանք.* Կասն նոցա մեծի տաճարին... ՚ի վերայ սքանչելի փրկութեան... և որ յառաջին սատակումն զազանա՛:
- * *Ոսկան.* Ի՛ հաւասար միաբանութեան:
- * *Ոմանք.* Օրէնս դնէին ընդ ամենայն տեղիս:
- * *Ոմանք.* Յաշխարհահամար խառնէին զնոսա. և հինգերորդ քսա՛... մինչ ՚ի չորրորդն Եպիփայ:
- * *Ոմանք.* Ձի փրկեաց զնոսա անա՛:
- * *Ոմանք.* Ձի հրամայեալ տալ զամենայն զհանդերձն ուրա՛:

իշխանս՝ և պետս, որ ՚ի վերայ իրաց արքունի են՝ ողջոյն. դուք խրախ լիջիք, զի ո՛ղջ ենք մեք որդւոյք և եղբարքք, և ամենայն զօրօք հանդերձ, որպէս և աջողեաց Աստուած զիրս մեր, որպէս մեր իսկ միտք խնդրէին*։ ²Արդ ոմանք ՚ի ներքին բարեկամաց աստի մերոց՝ ըստ իւրեանց չարաբարութեան կանխեալ մերձենային չարախօս լինել. գրգռէին զմիտս մեր, մինչև ածին ՚ի հաւանութիւն տալ հրաման ժողովել զամենայն Հրեայ ազգ՝ որ ընդ մերով իշխանութեամբ, խռնել ՚ի մի՛ վայր՝ կոտորել ՚ի նորանշան տեսիլ տանջանաց*։ ³Եւ ամենևին թոյլ ո՛չ ետուն՝ պատճառս եղեալ զդիտութիւն որ ունէին ընդ ամենայն հեթանոսս, մինչև ածին ժողովեցին. զորս և կապեալս ևս ածին, բազում լլկութեամբ և չարչարանօք իբրև զանաշխարհիկս, մանաւանդ թէ իբրև զչարագործս. առանց ամենայն հարցափորձի քննութեան. յօժարեցին կոտորել զնոսա միանգամայն։ Քան զխուժ և զդուժս վայրենագոյն ևս զգածեալ էր զիւրեամբք զգազանութիւնն*։ ⁴Այլ մեք որպէս սովոր ենք՝ զսոսա խստագոյնս պատուհասեցաք. այլ որպէս և մարդասիրութիւն ունիմք ընդ մարդիկ, հազիւ՝ մինչ նոցա զոգիսն շնորհեցաք, և մեք զԱստուած երկնաւոր ծանեաք, զի ճշմարտութեամբ այցելու եղև Հրէիցն, որպէս հայր որդւոց լինիցի*։ ⁵Եւ դարձեալ զսոցա սեր և զմիամտութիւն, որպէս զի հաստատուն ունէին ընդ մեզ ՚ի նախնեացն մինչև ՚ի նախնիս. խորհեցաք հրաման տուաք արձակել զդոսա. և թողաք դոցա զամենայն վնաս զոր եղին ՚ի վերայ։ Եւ զայն ևս հրաման տուաք, զի զամենեցուն զդոցա՝ զոյր ինչ ուրուք և առեալ իցէ՝ յիւրաքանչիւր տէր դարձուցանել, զի ոք ՚ի նոցանէ ամենևին մի՛ զրկեսցի. և մի՛ ոք իշխեսցէ նախատել զնոսա վասն իրացոյ եղելոց*։ ⁶Ձի զայս գիտասջիք. եթէ ինչ զդոսա խորամանկել կամ տրտմեցուցանել յօժարեսցուք, ո՛չ առ մարդ մեղանչեմք, այլ առ այն՝ որ ամենայն զօրութեանց և բարձրութեանց տիրէ Աստուած. և ո՛չ եթէ ՚ի մարդոյ միայն հատուցումն գտանէ այնպիսին, այլ անվրէ՛պ ամենայն իրօք ՚ի Բարձրելոյն գտանէ։ Եւ դուք ո՛ղջ լիջիք։ ⁷Իբրև առին զհրովարտակն զայն՝ ո՛չ եթէ փութացուցանել վաղվաղակի, այլ մտեալ առ թագաւորն անդր՝ աղօթս մատուցանել՝ և ասել. Յազգէ աստի Հրէից՝ որ զսուրբն Աստուած ինքնակամն ուրացան. և անցին ըստ օրէնսն Աստուծոյ, հրամայել տալ ՚ի ձեռս նոցա, ըստ արժանի օրինացն ածել զպատուհաս ՚ի վերայ նոցա։ Դնէին ևս ՚ի վերայ և ասէին. Եթէ մարդք՝ որ վասն պորտոցն աղետի և որկորոյն չարութեան յօժարեցին անցին ըստ օրէնս նախնեացն, երբէք նոքա յիրս արքունի արդարանալ միամտութեամբ ո՛չ կարեն*։ ⁸Իրաւունս համարեցաւ թագաւորն, և ետ նոցա իշխանութիւն՝ զի սատակեսցեն զյանցաւորս օրինացն Աստուծոյ, ընդ

* *Ոմանք յաւելուն.* Պտղոմէոս՝ ՚ի կողմանս. կամ ՚ի կողմանց Եգիպտացւոց առ զօրավարս... որ ՚ի վերայ *ամենայն* իրաց արքունի... զի և մեք ողջ ենք որ... որպէս զի ուղղեաց Աստուած զիրս մերս։

* *Ոսկան.* Իւրեանց չարաբարոյութեան։ *Ոմանք.* Ընդ մերով իշխանութեամբ իցեն, խռնել ՚ի մի վայր, կատարել ՚ի նորատեսիլ տանջանաց։

* *Ոմանք.* Որ ունին ընդ ամենայն հե՛... քան զխուժս և զդուժս։

* *Ոմանք.* Ձնոսա խստագոյնս պա՛... ունիմք ընդ ամենայն մարդիկ... զորդիսն շնորհեաք։

* *Ոմանք.* Եւ դարձեալ նորա զսեր և զմիամտութիւն, որպէս զի հաստատուն ունելով մեզ ՚ի նախնեաց մերոց մինչև թողաք դոցա զամենայն... և զայս ևս հրաման տուաք, զի ամենեցուն դոցա զոր ինչ և ուրուք առեալ իցէ։

* *Ոմանք.* Ոչ եթէ փութացան ելանել վաղվաղակի, այլ մատեան առ թագաւորն... ըստ արժանի գործոյն ածել զպատու՛... որ վասն պորտոյն և որկորոյն չարութեան յօժարեցին անցանել ըստ օրէնս նախնեացն. երբէք նորա յիրս ար՛։

ամենայն տեղիս տէրութեան թագաւորին ուր և գտցեն՝ ամենայն համարձակութեամբ. և որ ընդդէմ մի՛ դարձցի՝ մի՛ իւր սաստիւք արքունի: ⁹Յայնմ ժամանակի գոհացան օրհնեցին՝ որպէս օրէնք էին քահանայիցն, և ամենայն ժողովուրդքն. և գլուխ բանից բարբառոյն և վախճան՝ եղին զալէլուիա: Ինքեանք ցնծութեամբ և ուրախութեամբ պագին երկիր, և ՚ի թագաւորէ անտի գնացին*։ ¹⁰Իբրև անկան յուղի. որ միանգամ անցեալ էին ըստ օրէնսն, և անօրինեալ պղծեալ էին յազգատոհմէ անտի, տանջանօք առակելով սատակէին: Եւ յայնմ ՚ի միում աւուր անդ սպանին աւելի՛ քան զարս երեք հարիւր. և զայն օր ուրախութեամբ կատարէին. զի զպիղծս զանօրէնս զյանցաւորս օրինաց իւրեանց՝ ձերբակալս ըմբռնեալ սատակէին. քանզի ինքեանք ՚ի դրանց մահու յԱստուծոյ ողորմութեանցն զփրկութիւն գտեալ լինէին*։ ¹¹Չուեցին խաղացին գնացին ՚ի քաղաքէ անտի ազգի ազգի՝ անուշութեամբ, և ՚ի գոյնագոյն ծաղիկս պսակեալք ուրախութեամբ և ցնծութեամբ և օրհնութեամբ ՚ի ձայն քաղցրութեան գոհանային զԱստուծոյ հարցն նոցա, որ յաւիտենիցն է փրկիչ Իսրայէլի*։ ¹²Եւ իբրև եկին հասին ՚ի քաղաքն Փտողմէացւոց՝ որ անուանեալ կոչի վասն տեղւոյն յայտնութեան՝ Վարդաբերք. քանզի իսկ անցեալ կացեալ մնային նոցա նաւքն, որովք եկեալ անդ՝ ՚ի հասարակաց հաւանութենէ, երեկացին աւուրս եւթն: Ուրախ լինէին, զի հրաման տուեալ էր նոցա թագաւորին առատապէս հանդերձս առնել ՚ի պէտս ճանապարհին, մինչև երթիցեն յիւրաքանչիւր տեղիս*։ ¹³Եւ իբրև հասանէին ՚ի տեղի, ըստ արժանի իւր պարգևացն գոհանային: Դարձեալ եղին օրէնս, և զայն աւուրս ևս խառնել ՚ի տօն տարեկանաց իւրեանց, կատարել յուրախութիւն. նուէրս մատուցին, արձանս կանգնեցին ըստ տեղեաց ուրախութեան. խառնեցին զօրն զայն ՚ի տօնս տարեկանաց*։ ¹⁴Ի մի՛ վայր ժողովեցան, աղօթս մատուցին և գոհացան. մեկնեցան ՚ի միմեանց ողջք և անարատք, ազատեալք, խրախամիտք, զուարթացեալք, ապրեալք ընդ ծով և ընդ ցամաք և ընդ գետս՝ ՚ի հրամանաց Տեառն, ՚ի հրամանէ թագաւորին յիւրաքանչիւր տեղիս սփռեցան*։ ¹⁵Որ յառաջ ընդ ձեռամբ թշնամւոյն էին՝ ապա իշխանութեան փառօք և շքով գնային, զի ամենևին զնոսա այնուհետև ո՛չ որ կարէ խռովել: Եւ զիւրաքանչիւր ինչս և զստացուածս՝ յաշխարհագրին զամենայն ժողովեցին. զի ահիւ և դողութեամբ ամենեքին որ զինչ առ ումեք կայր՝ բերէին տային ՚ի դուրս վասն փրկութեան մեծին Աստուծոյ: Օրհնեալ է Աստուած որ յամենայնէ փրկէ զԻսրայէլ յամենայն նեղութեանց՝ և վշտաց: Նմա փառք և պատիւ և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն*։

Կատարեցաւ գիրք Երրորդ Մակաբայեցւոց*

* *Ոմանք.* Որպէս օրէն էր քահանայիցն... և գլուխ բանից բարբառոյն եղին զալէլուիա:

* *Ոմանք.* Եւ յայնմ ՚ի միում աւուր... զփրկութիւն գտեալ էին:

* *Ոմանք.* Ի ձայն քաղցրութեամբ:

* *Ոմանք.* Երակացին աւուրս եւթն: *Եւ ոմանք.* Երագեցին աւ՛՛:

* *Ոմանք.* Խառնեցին զաւուրսն զայն ՚ի:

* *Ոմանք.* Եւ ընդ գետս՝ ՚ի կամաց Տեառն, ՚ի հրամանէ:

* *Ոմանք.* Ոչ որ կարէր խռովել... որ յամենայնի փրկէ զԻսրայէլ յամենայն նեղութեանց և ՚ի վշտաց: Նմա փառք և պատիւ և երկրպագութիւն. յաւիտեանս. ամէն:

* *Ի վախճանի՝ յօրինակին պակասէր.* Կատարեցաւ գիրք Երրորդ, և այլն. զոր յայլոց

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԵՊԻՓԱՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԻՊՐԱՅԻՈՅ՝ ՅԱՂԱԳՍ ԵՐԳՈՑ ՍԱՂՄՈՍԱՐԱՆԻ

Ձամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա՝ ի հոգեկիր ծերոյն՝ բաւական համարեցաք պատմել, փոքր ՚ի շատէ, և դնել ՚ի տեղի առաջաբանի. քանզի հոգեխառն մտօք իմացաւ՝ որ ինչ շնորհեցաւ նմա յԱստուծոյ: Եւ ցոյց ամենեցուն որք կամիցին օգտել. զի և մեր առեալ նպաստաւորութիւն ՚ի հոգեխառնութենէ նորա, որպէս ոմանք ՚ի հոգւոյն Մովսիսի, և Եղիսէ յԵղիայէ, աղօթիւք ձերովք և յիս հանգիցէ հոգի շնորհացն Աթանասի մտանել ՚ի պատմութիւն սաղմոսացս և ցուցանել զբազմադէմ և զդժուարագիւտ միտս սաղմոսարանիս: Արդ՝ որ ասեն թէ՝ Սաղմոս որդւոց Կորիսայ, և կամ՝ Իմաստութիւն. զբանսն զոր մարգարէանայր Դաւիթ՝ որդիքն Կորիսայ դասագլուխ եղեալ զյեղանակս ձայնիցն նուագէին գեղեցկապէս, զայն կոչէ Իմաստութիւն որդւոցն Կորիսայ: Իսկ որ ասեն թէ՝ Սաղմոս յԱսափ, և Իդիթովմ և յայլս ուրուք, և նոքա առաջնորդք դասուց պարուն, որք իւրաքանչիւր նուագարանօք և ձայնիւք առաջնորդէին, զոր Դաւիթ էր ասացեալ: Է՛ զի և Դաւիթ ընդ նոսա երգէր. է՛ զի զուսեալսն ՚ի Դաւթայ առանց նորա երգեալ նուագէին. և է՛ զի հոգի շնորհացն յերգելն նոցա հոգեխառնել, մարգարէախառն որպէս ընդ Դաւթին ասէին և նուագէին. զոր երանելւոյն Դաւթի ՚ի վերայ հասեալ ՚ի վարդապետութենէ Զոգւոյն Սրբոյ, և զանուն ևս գրէր զնոցա. այլ Դաւիթ ինքնին իսկ էր պատճառք ամենայն սաղմոսարանիս, որպէս եղէզն գրողի՝ որ թացեալ և ներկեալ էր շնորհօք Զոգւոյն Սրբոյ, ըստ իւրաքանչիւր դիմաց և առակաց երգէր և մարգարէանայր: Իսկ որ ասեն թէ՝ Զանգիստ, քանզի քնարաւ և ձայնիւ՝ և երբեմն կաքաւելով երգէր և սաղմոսէր: Իսկ յորժամ ձայնիւ լոկ նուագէր և սաղմոսէր, և կամ առանց կաքաւելոյ քնարահարութեամբ միայն, և կամ միով իւրք յեղանակաւ, զայն կոչէ Զանգիստ: Իսկ որ ասեն, թէ՝ Սաղմոս յարձանագիր. այս է՛ զի արձան ո՛չ եթէ ՚ի վերայ գերեզմանաց միայն արձանագիր, այլ և որք ՚ի պատերազմունս յաղթութիւնս առնեն՝ կանգնեն արձանս, և գրեն զամենայն պատերազմացն յաղթութիւնս, որպէս և երանելին Դաւիթ առներ, զի որք անտեղեակք իցեն, և որք ո՛չ գիտիցեն զգիրս՝ յարձանագրէն իմացեալ ծանիցեն, զայս նշանակէ այժմ Արձանագիրս ասելով երանելին Դաւիթ. զի որպէս յարձանի՛ գրեալ մարգարէացաւ զյաղթութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ՚ի վերայ կարծեցեալ անպարտելի թշնամւոյն, որպէս պատմեցաւ մեզ ամենեցուն: Եւ որ ասէ թէ՝ Սաղմոս ՚ի կատարած վասն հնծանաց, Եւթանասուն և երկու թարգմանիչքն՝ կատարած ասացին, և Ակիւղաս և Թէոդիտոն՝ յաղթահարութիւն ասացին. իսկ Սիմաքոս՝ յաղթութիւն ասաց. այս է՛ զոր ՚ի վախճան ժամանակաց կատարեցաւ յաղթութիւնս Քրիստոսի առ թշնամին Աստուծոյ, և ամենկին ազատեալ մինչ ՚ի սպառ զազգս մարդկան ՚ի բռնութենէ Սատանայի, այս է ասելն ՚ի կատարած: Իսկ վասն հնծանացն, հնծան՝ զեկեղեցի՝ կոչեաց. քանզի և Տէրն ինքնին իսկ

օրինակաց առեալ լցուցաք:

այգի՝ անուանեցաւ ասելով. Ե՛ս եմ այգի ճշմարիտ. իսկ որք հաւատով
յայգւոյ յայսմանէ կթեն զմեծ խորհուրդ կազմեալ՝ մեծաւ ուրախութեամբ
ճաշակեն զյօրինեալ զինին՝ ՚ի կողահոս աղբերէն: Իսկ որ՝ վասն
ժառանգաւորին ասէ. որք զվերնագիրս մեկնեցին և թարգմանեցին՝
ժառանգաւոր կոչի Բանն Աստուծոյ, ա՛յս ինքն միածին Որդի նորա, և
միաբանեալք ընդ նմա եկեղեցի իւր՝ կոչին ժառանգաւորք. քանզի է
զլուխ Քրիստոս, և անդամք նորա եկեղեցի՝ մարդիկ որ ըստ
աստուածպաշտութեան վարեն զկեանս իւրեանց սրբութեամբ հոգւոյն.
զի ասացեալ է Տեառն ՚ի սուրբ Աւետարանին. Եկայք օրհնեալք Յօր իմոյ
ժառանգեցէք զարքայութիւն զպատրաստեալն ձեզ իսկզբանէ աշխարհի:
Իսկ Ալէլուիա ճԴ սաղմոսին, ուսուցանէ օրհնել զամենեցունն Աստուած.
քանզի ալէլուիա՝ Եւթանասունքն՝ զովեցէք զՏէր թարգմանեցին. իսկ
Եբրայեցին թէ՛ Բարի է սաղմոս, իսկ Սիմաքոս անթարգման իսկ եթող.
իսկ Թեոդոտոն թէ՛ Գովեցէք. զոր և երանելին Դաւիթ զաստուածահաճոյ
ընթացեալ ճանապարհ. և թէ խոտորեցաւ զայթագղեալ, դարձեալ
միւսանգամ արտասուօք հետևեալ աստուածայնոցն օրինաց, որպէս
պատմէ ՚ի ճԺԸ սաղմոսին. զի արժան է մեզ ՚ի նմանէ առնուլ տարացոյց
իւրային ուրուք յարդարել ախտից դեղս. վասն զի ալէլուիա որպէս
նախագոյն թարգմանեցին զովեցէք զՏէր է՝ ըստ Ելլադացւոցն ձայնին. և
արդ՝ նշանակէ ալէլու՝ զովեցէք. իսկ իա՝ զՏէր կամ զէն:

Իսկ որ ասեն՝ Երգ աստիճանաց, Թեոդոտոն՝ Երգ ասաց ելից, իսկ
Սիմաքոս և Ակիւղաս՝ Երգ յելս. և յայտնի են այսուհետև ելք և աստիճանք
զգերեալ ժողովրդեանն և զօթևանացն բանակետոյս, զոր և մերձակայ
բնակիչքն տխրեալ ընդ Յրէիցն ազատութիւն, միաբանեալ ՚ի
պատերազմն բարբարոս հեթանոսօք ժողովեալ ընդ ինքեանս ՚ի վերայ
նոցա գումարեցան, կամեցեալ անյիշատակել զնոսա: Իսկ բոլորեցունցն
Աստուած իւրայոցն օգնականեաց բաւականապէս, զոր և երանելին
Դաւիթ զյուսացեալսն ՚ի Տէր որպէս զլեառն Սիոն ո՛չ սասանեալ
յաւիտեան, և Տէր շո՛ւրջ է զժողովրդեամբ իւրով: Իսկ բազումք ՚ի Յրէիցն
ունելով ապառն՛ւմ բարս, ընդդիմանալով աստուածային հրամանացն որ
առ Կիրոս ո՛չ կամէին դառնալ. իսկ ազատեալքն և արձակեալքն
զազգակիցսն մաղթէին հետևել յծալի քաղաքն Երուսաղէմ: Եւ որպէս
առ Ռոբովամաւ ճեղքեցան ցեղքն, և մասունք տասն Յորոբովամու
հետևեցին, և երկո՛ւ Դաւթեան թագաւորութեանն հնազանդեցան. այժմ ՚ի
դարձիս ՚ի Բաբելոնէ յառաջատեսօղ Յոգւոյն ՚ի ճԼԲ սաղմոսին
զմիաբանութիւն և զմիածայնութիւն սիրել, և ընդ միմեանս վսեմութեամբ՝
երգէր երանելին Դաւիթ. Ահա զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին
եղբարք ՚ի միասին:

Իսկ որ՝ անվերնագիր ասի ըստ Եբրայեցւոց, յանդգունք ոմանք և
իրահամարձակք, վերնագրեցին զԴաւթին՝ Երեմիայի և Անգէի և
Ջաքարիայի՝ անուանեցին. և այն իսկ եղծումն վերնագրին՝ քարոզէ
զվերագրելոցն զանմտութիւն. զի Երեմիաս ո՛չ երբէք վարեցաւ ընդ
գերեալսն ՚ի Բաբելոն. այլ դոյզն ինչ ընդ յերուսաղէմ անցուցեալ աւուրս
ինչ, և յանօրէն Յրէիցն բռնադատեալ յեգիպտո՛ս ճանապարհորդեալ ընդ
նոսա. և չյարմարի ասել Երեմիայի, թէ՛ Առ գետովն Բաբելացւոց նստեալք
և լայաք. այլ նոցին իսկ գերելոցն ուսեալք զԴաւթայն երգեն, և պատմեն

զառ 'ի Բաբելոնի պատահումն. քանզի ո՛չ իսկ սուտ լինի երգ երից մանկանցն. ասէ. Ո՛չ գոյ 'ի ժամանակի յայսմիկ 'ի միջի մերում ո՛չ իշխան, ո՛չ մարգարէ, ո՛չ առաջնորդ բաց 'ի Դանիէլէ: Եւ 'ի լնուլ եւթանասուն ամաց 'ի Բաբելոնի առ Դարեհիւ արքայիւ մարգարէանային Անգեաս և Ջաքարիաս:

Իսկ ՅԱ սաղմոսն որ ասի թէ 'ի Սաղմոն, վասն Սողոմոնի և ո՛չ մի ինչ դէմս գտանեմք 'ի սաղմոսարանիս ասացեալ. Ձի ո՛չ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի թագաւորեաց. և. Ո՛չ յառաջ քան զարուսեակ անուն նորա. և. Ո՛չ ամենայն թագաւորք երկրի երկրպագեցին նմա. և. Ո՛չ փրկեաց զամենայն հեթանոսս: Այլ ճշմարտիւ ասացեալ է զսաղմոսս վասն միայնոյ Որդւոյն Աստուծոյ, որ էն թագաւոր թագաւորաց և Աստուած ճշմարիտ, և. Յառաջ քան զարուսեակ անուն նորա. և վասն մերոյ փրկութեան մա՛րդ եղեալ կեցոյց զաշխարհ: Ձա՛յս երգէր երանելին Դաւիթ. Աստուած զիրաւունս քո արքայի տուր, և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի:

Իսկ զԵՍԳ սաղմոսն Դաւթի գոհ՝ յօրինակս ուրեմն, թէ 'ի Գողիադ. զոր ո՛չ յեբրայեցւոջն, և ո՛չ յայլ թարգմանիչսն, և ո՛չ յեւթանասնիցն և ո՛չ 'ի Վեցիջեանսն. այլ զդարձէն 'ի Բաբելոնէ յարուցելոց պատերազմողացն 'ի վերայ Յրէիցն մարգարէանայ. զոր և բազումք 'ի մարգարէիցն նոյնպէս յիշեցին. զոր և երանելին Դաւիթ երգէ, և առ բոլոր հաւատացեալս ասէ. Օրհնեալ է Տէր Աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ 'ի պատերազմ, գործել ձեռօք զարդարութիւն ընդդէմ սատանայական որոգայթիցն, ընդ որում ո՛չն է մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան. և զմատունսն իմ 'ի ճակատամարտ. մատամբ դրոշմեալ զնշան խաչին 'ի ճակատս մեր 'ի վանումն հակառակամարտին, անմարմին Գողիադու: Այսպէս առաք զաւանդութիւնս զայս 'ի հարցն բանիւք և մտաւորութեամբ. և. Որպէս զմեր իսկ զբանս խօսել 'ի տուէ և 'ի զիշերի. որպէս և շնորհեցաւ մեզ 'ի փրկչէն մերմէ Քրիստոսէ, ճանաչել զնա և զգործս նորա. և. Որպէս զպատկեր օրինակի առաջի աչաց ունել, և. Գնա՛լ ըստ պատուիրանի նորա, որ վասն մեր եղև մարդ, և. Մատնեաց զանձն իւր 'ի մահ վասն փրկութեան մերոյ, զի զամենեսեան փրկեսցէ 'ի մահուանէ: Արդ՝ մի՛ լիցուք դիրախաբք 'ի թշնամւոյն. վասն զի առաք մեք զաւանդութիւն առհաւատչեայ 'ի զգուշութիւն հոգևոր երգարանին:

Իսկ 'ի ԵՍԵ սաղմոսին գոհի ուրեմն յօրինակս առընթերագրեալ 'ի վերնագրին՝ Անգեայ և Ջաքարիայ, զոր ո՛չ յեբրայեցւոջն և ո՛չ յայլ թարգմանիչսն, և ո՛չ յեւթանասնիցն և ո՛չ 'ի Վեցիջեանսն գոհի: Օրհնե՛լ այսուհետև յորդորէ երանելիս Դաւիթ զամենեցունն Աստուած. զոր վերնագիրս յայտ առնէ թէ՛ ալէլուիա. և ասէ թէ՛ Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, զոր և Անգեա և Ջաքարիա յետ դարձին 'ի գերութենէն 'ի շինելն զտաճարն 'ի Ջորաբաբիլէ, երգ առեալ նուագէին թէ՛ Շինէ՛ զերուսաղէմ Տէր, և զցրուեալսն Իսրայէլի ժողովէ:

Արդ՝ որպէս յառաջագոյն ցուցաք թէ ինքն Դաւիթ էր պատճառք ամենայն սաղմոսացս, որպէս եղէզն գրչի որ թացեալ և ներկեալ լինի, այսպէս և երանելին Դաւիթ ներկեալ՝ շնորհօք Յոգւոյն Սրբոյ առ 'ի յերգել զերգս հոգևոր նուագարանացս, որ ցուցանէ զտիրականն իշխանութիւն Յօր ամենեցուն, և սկիզբն և պատճառ գոլ էիցս, արմատ կենդանութեան,

ուստի յառաջ եկն աղբւրն կենաց՝ իմաստութիւնն զօրութիւնն պատկերն անայլայլելի անտեսանելոյն Աստուծոյ. որով ընկալաք զզօրութիւն Սուրբ Գոգւոյն՝ ՚ի ձեռն մարմնաւորութեան Որդւոյ. որուն փառք յաւիտեանս. ամէն:

Եւ առանց գրոյ սաղմոսք՝ ԺԹ, և գրով՝ ԵԼԱ, և են այսոքիկ. Դաւթի ԶԲ, Սողոմոնի՝ Բ, Կորխայ՝ ԺԱ, Ասափայ՝ ԺԲ, Մովսիսի՝ Ա, Եթեմայ (Եմանայ)՝ Ա, ալէլուիա՝ ԺԵ, անանուն՝ ԺԵ, առանց գրոյ՝ ԺԹ. և են անուանք որ վերնագիր ունին, և ո՛չ յայտնի թէ ո՛յր են, միանգամայն՝ ԳԾ:

՚Ի հինգ մասն բաժանեն մանկունք Եբրայեցւոց զամենայն սաղմոսացն գիրս. իսկ հինգերորդն՝ ՚ի հարիւրորդէն վեցերորդէն մինչև ՚ի կատարած գրոցս: Սաղմոսք Դաւթի ԳԾ. ըստ կարի սաղմոսեցին ԳԾ: Գրոցս սաղմոսաց անյապէս է որոշողութիւն որ ՚ի ճշմարիտ օրինակաց, որպէս ոմանք կարծեցին՝ թէ ամենայն սաղմոսքն՝ Դաւթի ասացեալք, են այլ և այլոց մարգարէիցն՝ ՚ի սաղմոսել մարգարէացեալ: Յաղագս որոյ ամենայն գիրքն Եբրայեցւոց ո՛չ միայն Դաւթի գրեն, այլ և անյայտ Գիրք սաղմոսաց անուանին: ՚Ի հինգ մասն բաժանին. են սաղմոսք որք ասին իւրաքանչիւր, Դաւթայ գրին սաղմոսք ԶԲ, ՚ի Դաւիթ Թ. Ասափայ ԺԲ, որդւոցն Կորխայ Ժ, Իդիթոմայ Ա, Եմանայ Ա, Սողոմոնի Բ, Անգէի և Ջաքարիայի Զ, առանց անուան ԺԶ, Մովսիսի Ա, ալէլուիա Է, աշտիճանաց ԺԳ*:

Ցանկ Դաւթայ Մարգարէութեանն

- ա. Վասն հաւատոց և գործոց, և յանդիմանութեան անպարշտաց:
- բ. Վասն չարչարանացն Քրիստոսի, և առ ՚ի Զօրէ ծննդեանն, և վասն հեթանոսաց հաւատալոյն:
- գ. Թէ փախեալ նա յԱբեսաղոմայ որդւոյ իւրոյ:
- դ. Գոհանայ զԱստուծոյ, զի ազատեաց զնա ՚ի ձեռաց Աբեսաղոմայ:
- ե. Աղօթք ՚ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ:
- զ. Վասն զի հիւանդութիւն ծիրական ախտի՝ ՚ի հրամանէն Աստուծոյ ՚ի վերայ նորա հասեալ, մերձեցաւ մինչև ՚ի դրունս մահու:
- է. Վասն բանիցն Քուսեայ, և խեղդմանն Աքիտոփելայ:
- ը. Վասն երախտեացն Աստուծոյ առ մարդկային բնութիւնս, և վասն կործանմանն Սատանայի:
- թ. Մարգարէանայ վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մահուամբն

* Յօրինակին մերում զկնի առաջիկայ նախադրութեանս մակագրելոյ՝ Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ, (գոր և եթ ունին բազում գրչագիրք,) յաւելեալ լինի և այլ հատուած ինչ ճառի ՚ի վերայ սաղմոսաց, դարձեալ նմին Եպիփանու Կիպրացւոց մակագրեալ, որ սկսանի. Արդ առեալ ասէ Սամուէլ զեղջւր և այլն. գոր բաց ՚ի մերմէս ունէր և այլ օրինակ մի՝ բայց յանուն Դաւթի փիլիսոփայի: Արդ մեք զերկրորդիւ զայսու զանց արարեալ՝ փոխանակ նորա դիպողագոյն ևս համարեցաք՝ համեմատ այլոց գրոց յաւելեալ կարգել աստանօր զգանկ զլիակարգութեանց իւրաքանչիւր սաղմոսաց, առեալ յայլոց օրինակաց, որ պակասէր ՚ի մերումս: Մանաւանդ զի և արտադրութիւն բանիցն նորա՝ ուշիմ քննողաց հաւանական իմն կարծիս տայ՝ նորին լինել գործ, որ զնախադրութիւնս և զգանկս անցն իւր գրոց Զնոց Կտակարանաց վայելչաբան հմտութեամբ յօրինեաց:

իւրով յաղթահարեաց զՍատանայ որպէս զայր քաջ. խորտակեաց զբռնութիւն մեղաց, և ելոյծ զհշխանութիւն մահու:

ժ. Ասէ և վասն փախստեան իւրոյ 'ի Սաւուղայ:

ժա. Յուցանէ զխորամանգութիւն, որք կրկնակի ունին զմիտսն, և զընտանութեան և սիրոյ բանս խօսին, և թշնամոյ և պատերազմողի գործ գործեն. զոր Սաւուղ առնէր՝ առ 'ի որսալ զԴաւիթ:

ժբ. Միւսանգամ փախուստն 'ի Սաւուղայ, յառաջ քան զմեղանչելն իւր:

ժգ. Վասն Սենեքերիմայ և Ռափսակայ, և վասն հրեշտակին որ կոտորեաց:

ժդ. Աստ զփառս և զգոհութիւնս Աստուծոյ գրէ. և երանէ զայնոսիկ որ բնակեալ են զլէրամբն՝ և զտաճարաւն աստուածայնով:

ժե. Մարգարեանայ զմարդկեղէն չարչարանսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զյարութիւնն մեռելոց, և զփրկութիւն այնոցիկ՝ որ հաւատալոց էին 'ի նա:

ժզ. Աղօթ մարգարէն առ Աստուած, և աղաչէ փրկիլ 'ի ձեռաց Սաւուղայ:

ժէ. Օրհնութիւն Աստուծոյ, որ փրկեցաւ 'ի ձեռաց Սաւուղայ, և 'ի ձեռաց ամենայն թշնամեաց իւրոց. և կոչումն հեթանոսաց և օտարանալն Յրէից:

ժը. Վասն արարածոցս լինելութեան. և վասն երից օրինացն, բնականին, և օրինականին, և կատարելոյն, որ է Քրիստոսին. և 'ի խորհուրդ առաքելոցն Քրիստոսի:

ժթ. Առաքեաց Սենեքերիմ թուղթ հայիոյութեան առ Եզեկիա 'ի ձեռն Յռափսակայ զօրագլխին իւրոյ: Իսկ Եզեկիա տարեալ զթուղթ նորա 'ի տաճարն տարածանէր, որպէս զի փոխանակ հայիոյութեանն Սենեքերիմայ, ընկալցի յԱստուծոյ զհատուցումն որ եղև իսկ:

ի. Վասն կոտորածին Ասորոց, և հիւանդանալոյն Եզեկիայ և յառնելոյն և հնգետասան ամ 'ի կենացն խոստանալոյն:

իա. Վասն չարչարանացն Քրիստոսի և յարութեանն, և վասն կոչման հեթանոսաց, և փրկութեան ամենայն աշխարհի, և վասն առաքելոցն Քրիստոսի, և վասն Յրէիցն յանդգնութեան:

իբ. Մարգարեանայ վասն ճշմարիտ հովուին Քրիստոսի, որ եդ զանձն իւր 'ի վերայ հօտին:

իգ. Վասն յարութեան Քրիստոսի, և յերկինս վերանալոյն և ամպաչու ճանապարհին:

իդ. Աղօթ մարգարէն վասն իւր, զի պատերազմունք յոյժ խաղային 'ի վերայ նորա. վասն այնորիկ զնոր և զհին մեղսն յիշէ, և աղաչէ զԱստուած, թողութիւն գտանել:

իե. Պաղատանք առ Աստուած չկորնչել ընդ ամպարիշտս և ընդ մեղաւորս. այլ և 'ի խորհուրդ Եկեղեցոյ:

իզ. Փախուստն 'ի Սաւուղայ յառաջ քան զերկրորդ օծումն նորա 'ի Քեբրոն՝ թագաւոր:

իէ. Դարձեալ վասն հալածմանն իւրոյ 'ի Սաւուղայ:

իը. Վասն խորանին և պատարագացն, և քահանայիցն. յարի այս և յեզեկիա, և 'ի Քրիստոս, վասն զի նա կոտորեաց զԱսորիս, և Քրիստոս զդևս 'ի մկրտութեան իւրում:

իթ. Հպարտանալն Ադամայ, նոյնպէս և Եզեկիայ, և խրատելն նոցա յԱստուծոյ և փրկելն:

լ. Վասն հալածման յԱբեսողոմայ զհետ մեղացն գործելոյ. քանզի ցուցանէ 'ի բանս իւրում Դաւիթ՝ յասելն այսպէս. 'ի քեզ Տէր յուսացայ: լա. Վասն զի մեղաւ և ապաշխարեաց և եհաս թողութեան. և երանի տայ այնոցիկ, որք ապաշխարութեամբ գտցեն զթողութիւն մեղաց: լբ. Եզեկիայ փրկիլն յԱսորոց, առ որ յորդորեաց զժողովուրդն մատուցանել զոհս Տեառն, և ցնծալ և ուրախ լինել 'ի Տէր, այլ և վասն արարածոցս լինելութեան: լգ. Փախեալ մարգարէն 'ի Սաւուղայ, և գնաց առ Աքիմելէք. և անտի առ Անքուս. յիշէ և զԴովեկ Ասորի. քանզի նա եղև մատնիչ քահանայապետիցն՝ զոր կոտորեաց Սաւուղ: Յիշէ աստ և զԶիփացիսն, և զայնոսիկ որ լինէին Դաւթի առ Սաւուղ մատնիչ: լդ. Մարգարէութիւն վասն չարչարանացն Տեառն. և վասն միւսանգամ փախստեան իւրոյ 'ի Սաւուղայ: լե. Առնուլ զկուծն 'ի Սաւուղայ և զնիզակն, և երդնուլն Սաւուղայ, և ստելն: լզ. Խրատէ նախանձաւոր լինել բարեաց. և մխիթարէ զայնոսիկ որ 'ի վիշտս իցեն. և ո՛չ երանէ զամպարիշտս 'ի դիւրութիւն: լէ. Պատմէ զպէսպէս վիշտս Սաւուղայ, և զԱբեսողոմայ զբռնաւորութիւնն, և զչար խորհրդաւորութիւնն Աքիտոփելայ: լը. Փախուցեալ երթայր մարգարէն յԱբեսողոմայ, և պատահեալ նմա Սէմէի, դէմ յանդիման թշնամանէր զնա: Իսկ նա եղեալ պահապան բերանոյ իւրոյ՝ կայր 'ի լռութեան, և ընդ միտս իւր աստուածախօսէր: լթ. Ձերծեալ մարգարէն 'ի հիւանդութենէ իւրմէ՝ զոհանայ զԱստուծոյ. այլն մարգարէութիւն վասն Դանիէլի և Երեմիայ. և վասն մարդկային բնութեանս ազատութեան 'ի մեղաց և 'ի մահուանէ: լա. Վասն չարչարանացն Քրիստոսի, և կամաւոր աղքատութեանն, և վասն Յուդայի մատնչի: լա. Փափագելով մարգարէն 'ի խորանն Տեառն, յորժամ փախստեայ էր 'ի Սաւուղայ. նաև գերելոցն 'ի Բաբելովն ողբերգական պաղատանք: լբ. Չի դարձաւ մարգարէն 'ի հալածանաց իւրոց յառաջին, և եկն 'ի խորանն Տեառն. յայտնէ սա և զխակութիւն, և զչարութիւն Բաբելացւոցն, և զզազանամտութիւն տգիտութեան նոցա: լգ. Յիշատակ ելիցն յեգիպտոսէ. և վասն Մակաբայեցւոցն մարտիրոսանալոյն յԱնտիոքայ թագաւորէ: լդ. Մարգաւեանայ զբղխումն Բանին 'ի Չօրէ, որ եղև փրկութիւն ամենայն աշխարհի. վասն զի Չայր՝ զՈրդի իւր սիրելի անուանեաց, որպէս և ասաց. Դա՛ է Որդի իմ սիրելի: Եւս և 'ի խորհուրդ սուրբ Աստուածածնին: լե. Վասն պէսպէս փորձութեանցն եկեղեցւոյ և խաղաղութեան: լզ. Վասն հեթանոսաց փրկութեան, և եկեղեցւոյ խաղաղութեան, և համբառնալոյն Քրիստոսի առ Չայր: լա. Եւ այս զնոյն օրինակ զեկեղեցւոյ պատմէ, և զմեծ և զաստուածազօր պատերազմին յաղթութիւնն նշանակէ: լբ. Վասն վախճանի աշխարհիս, և հատուցման իւրաքանչիւր գործոց: լգ. Մարգարէանայ վասն միւսանգամ զալստեանն Քրիստոսի, և տիեզերաժողով դատաստանին, և վասն նորոյ կտակիս, և փոխելոյ հնոյն:

ծ. Յանդիմանեալ 'ի Նաթանայ մարգարէ՛ խոստովանի զմեղսն. վասն մտանելոյն առ Բերսաբէ՛է, այլև մարգարեանայ վասն դարձին 'ի Բաբելոնն:

ծա. Թաքեալ Դաւիթ 'ի տան Աբիմելէքեայ քահանայի. առ որ եկեալ Դովեկ Եդովմայեցի, պատմեաց Սաւուղայ. և նորա բարկացեալ յոյժ կոտորեաց զքահանայսն:

ծբ. Վասն հրեշտակին՝ որ կոտորեաց զՍենեքերիմ 'ի ձորն. և 'ի տեղին Մաղաղեթայ:

ծգ. Մարգարեանայ զոր առ յապա անցք ընդ Սաւուղ անցանելոց էին յայլազգեացն. և դարձեալ որպէս անպարապ եղև 'ի ժամուն Սաւուղ, և դարձաւ 'ի հալածելոյ զԴաւիթ. և Դաւթի գտեալ զօգնութիւն յԱստուծոյ, գոհանայ և օրհնէ զԱստուած:

ծդ. Ասէ դարձեալ վասն հալածանացն իւրոց 'ի Սաւուղայ, և ընդ նմին մարգարեանայ վասն չարչարանաց Փրկչին մերոյ. և վասն Յրէիցն՝ որ ինչ արարին ընդ նմա. և վասն Յուդայի՝ որ խորամանկութեամբ մատնեաց զնա:

ծե. Պատմէ Դաւիթ վասն իւր, և վասն գերութեան ժողովրդեանն, զի կոխան եղև անօրինաց սրբութիւնք նոցա, և հեռացան նոքա 'ի տաճարէն իւրեանց և 'ի քաղաքէն:

ծզ. Զի փախեալ Դաւիթ յերեսաց Սաւուղայ յայրի անդ. այլ և 'ի կոչումն հեթանոսաց:

ծէ. Վասն հալածման Սաւուղայ, և վասն երդմնազանցութեան նորա. որ այլոց դատաւոր անուանէր, և ինքն համակ զանօրէնութիւն զորձեր. յարի այս և առ Յրէիցն ժողով:

ծը. Զերծեալ մարգարէն յանիրաւ պատերազմէն և 'ի սպանմանէն, մատուցանէ Աստուծոյ զաղօթս, և խնդրէ զփրկութիւն. և մարգարեանայ վասն կոչման հեթանոսաց, և ցրման Յրէից. և զԱստուծոյ արդար դատաւորութենէն:

ծթ. Աստ զգերութիւնս և զաւերս Յրէիցն՝ որ հասանելոց էին մարգարեանայ. ասէ, արդ և զԱստուծոյ արդար դատաւորութիւնն և զմարդասիրութիւնն:

կ. Դարձեալ 'ի նոյն դէմս ասէ. այլև զգերութիւնն Բաբելացոց՝ և զելն նշանակէ:

կա. Վասն Մակաբայեցոցն, և Անտիոքայ երևելոյն 'ի վերայ յառնելոյն. և թէ ո՞րպիսի միտս պա՛րտ է ունել 'ի պատերազմի և նեղութեան:

կբ. Փախչիլն 'ի Սաւուղայ առ Աբիմելէք, և անտի առ Անքուս, և գնալն յանապատ. և զոր ունէր փափաք առ Աստուած նուազէ. և զսատակումն Սաւուղայ յառաջագոյն պատմէ:

կգ. Դարձեալ 'ի նոյն դէմս ասէ. այլ և պատմէ զամենայն դաւաճանութիւնսն Սաւուղայ. և թէ ո՞րպէս զերծաւ 'ի նենգութեանց նորա:

կդ. Վասն գերելոցն 'ի Բաբելոն, որք տային բերել ընծայս և պատարագս յերուսաղէմ. և ցանկութիւն քաղաքին. ընդ նմին մարգարեանայ և զհեթանոսաց փրկութիւն:

կե. Վասն կոչման հեթանոսաց, և մարգարեութիւն վասն գերութեանն Իսրայէլի 'ի Բաբելոն, և ո՛չ վասն ելիցն:

կգ. Վասն մարմնանալոյ Բանին Աստուծոյ, և յայտնելոյ աշխարհի զփրկութիւն:

կէ. Վասն միւսանգամ զալստեանն Քրիստոսի. և հատուցման ըստ գործոց. և կործանմանն Սատանայի, և աւերման դժոխոց և զերծեալք ՚ի բռնաւորէն փառաւորէն զԱստուած:

կը. Վասն Քրիստոսի չարչարանացն. և մերժումն Յրէիցն. և վասն դարձին ՚ի Բաբելոնէ:

կթ. Վասն փրկելոյն Դաւթի յԱբեսողոմայ և ՚ի Սաւուղայ և յայլոց բազմաց: հ. Բժշկեալ մարգարէն ՚ի հարուածոցն, գոհանայ զԱստուծոյ. այլ և վասն գերելոցն ՚ի Բաբելոն, և վասն ելիցն նոցա մարգարէութիւն:

հա. Մարգարէանայ վասն մարմնանալոյ միածնի Որդւոյն Աստուծոյ. զի նմա երկիրպագին ամենայն թագաւորք երկրի, և նա թագաւորեաց ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս աշխարհի:

հբ. Չգերելոցն ՚ի Բաբելոն, և զամենայն մարդոյ զպէսպէս յուզմունս խորհրդոց ողջացուցանէ:

հգ. Ասէ և զբնաջինջ լինելն Յրէից ՚ի Հռոմայեցւոց անտի. որ եղև ՚ի ձեռն Տիտոսի կայսեր յետ խաչին:

հդ. Չի եբարձ մարգարէն զամբարշտութիւն ազգին Յուդայ իբրու թագաւորեալ էր նոցա. և քանզի թևակոխէր թագաւորել ՚ի վերայ Իսրայէլի, և ասէր. Յորժամ առից ժամանակ, զԻսրայէլ և՛ս ուղիղ դատեցայց, և զեղջևրս մեղաւորաց փշրեցից:

հե. Վասն հատուցման Ասորեստանեայց, և վասն հարուածոցն Սենեքերիմայ:

հզ. Վասն գերելոցն որք ՚ի Բաբելոն էին. զի յերկմիտս եղեալ զարհուրէին ՚ի վշտաց. ուսուցանէ նոցա թէ ո՞րպէս արժան է առ Աստուած աղօթս մատուցանել, և զերծանել ՚ի վշտաց և հասանել դիւրութեանց:

հէ. Ամբաստանէ զՅրեայս, և ցուցանէ որ ինչ առ հարս նոցա սքանչելիք եղեն. և նոքա ամենայնի ապերախտ գտան:

հը. Վասն Անտիոքայ Եպիփանու, որ քանդեաց զԵրուսաղէմ, և կոտորեաց զպաշտօնեայս Աստուծոյ:

հթ. Պաղատանք գերելոցն որք ՚ի Բաբելոն էին. և թէ ո՞րպէս պա՛րտ է խնդրել յԱստուծոյ զքաւութիւն և զթողութիւն:

ձ. Յիշէ զելն յեգիպտոսէ. և մարգարէանայ դարձեալ զաւերն ՚ի Բաբելացւոց, և վասն կոչման հեթանոսաց:

ձա. Չգուշացուցանէ յանիրաւ դատաստանաց. և պատուիրէ խնամել զաղքատս. և կոչէ զիշխանս Յրէից՝ աստուածս և հրեշտակս:

ձբ. Մարգարէանայ վասն ելիցն Իսրայէլի ՚ի Բաբելոնէ, որ առ Դարեհիւ արքայիւ. զի ամենայն ազգք՝ որք գոռային զհետ նոցա, ամաչէին որպէս զԱմաղէկ:

ձգ. Ցանկայր մարգարէն տանն Տեառն, յորժամ էրն յերկիրն այլազգեաց. և երանի տայր բնակողաց ՚ի նմա. և մարգարէանայ դարձեալ վասն ելիցն ՚ի Բաբելոնէ, և տիեզերաց ազատանալոյ: Իսկ հնձան զԵկեղեցի կոչէ, և այգի զմարմին Քրիստոսի, որ ուրախ առնէ զամենայն արարածս:

ձդ. Չփրկութիւն երկուց ժողովրդոց մարգարէանայ. զի զՅրեայսն փրկեաց ՚ի ծառայութենէ Բաբելացւոցն, և զհեթանոսս՝ ՚ի բռնութենէ Սատանայի:

ծե. Աղօթե՛ մարգարէն առ Աստուած վասն փրկութեան իւրոյ, և այլոց բազմաց. և մարգարէանայ զԱենեքերիմայ և զԵզեկիայ իրս. և յառաջագոյն ասէ զհեթանոսաց կոչումն ե զփրկութիւն:

ծգ. Վասն Եկեղեցւոյ մարգարէութիւն:

ծէ. Թէ կալան զնա այլազգիքն ՚ի Գէթ. կապեցին երկաթով և եդին ՚ի ներքնումն և ՚ի ստուերական բանտի. և որք ընդ նմայն էին՝ ցրուեցան ՚ի նմանէ. հանէ այս յԱդամ և ՚ի Քրիստոս, և յելն ՚ի Բաբելոնէ. և յամենայն բնութիւնս մարդկան՝ փրկել ՚ի դժոխոց:

ծը. Վասն բազում երախտեացն Աստուծոյ առ Դաւիթ, և պէսպէս բարերարութեանցն գոհանալով զԱստուծոյ, երգս առեալ՝ զայս ամենայն խնդութեամբ նուագէ:

ծթ. Հրէից և ամենայն մարդկան՝ առհասարակ ներգործութիւն և յոյս փրկութեան ցուցանէ:

դ. Ասէ թէ ոյք յուսան առ Աստուած, յամենայն երկիւղից փրկին որպէս զԵզեկիա:

դա. Վասն միւսանգամ գալստեանն Քրիստոսի, և վերջին շաբաթին. որ և ցուցանէ սրբոցն պատիւ, և մեղաւորացն տանջանս:

դբ. Վասն մարմնոյն Քրիստոսի վայելչութեանն և փոփոխմանն երգէ, զի Աստուծոյ բնութիւնն անշրջելի է:

դգ. Վասն թագաւորաց և իշխանացն Հրէից, որ անիրաւէին և զրկէին:

դդ. Վասն Յովսիայ թագաւորի, որ կործանեաց, և այրեաց զկուռս:

դե. Մարգարէանայ վասն շինութեան տաճարին. և վասն կոչման հեթանոսաց. և վասն միւսանգամ գալստեանն Քրիստոսի, և արդար դատաստանին:

դզ. Վասն առաջին և երկրորդ գալստեանն Քրիստոսի. և վասն հաստատութեան երկրին, և յանդիմանութիւն կռապաշտիցն:

դէ. Մարգարէանայ դարձեալ վասն միւսանգամ գալստեանն Քրիստոսի, և արդար դատաստանի նորին. և վասն դարձին Հրէից:

դը. Ասէ զելս Հրէիցն ՚ի Բաբելոնէ. և մարգարէանայ վասն յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և վասն Հրէիցն ապստամբութեան:

դթ. Յորդորէ զամենայն մարդ, թէ ո՞րպէս արժան է գոհանալ և օրհնել զԱստուած:

ծ. Մարգարէանայ դարձեալ՝ վասն Յովսիայ թագաւորի. և սպառնայ մեղաւորաց՝ ՚ի մեծ և ՚ի վերջին առաւօտին սատակել զամենեսեան:

ծա. Զգերելոցն ՚ի Բաբելոն՝ զվիշտսն յիշէ: Այլ և զկոչումն հեթանոսաց. յարի այս և յամենայն ոք՝ որ ՚ի վիշտս իցեն. և Աստուծոյ օգնականութեանցն պատահեալ աղերսէ:

ծբ. Յարէ զայս՝ յառաջին նոյն միտս, վասն զի ՚ի նմա աղաչէին՝ դարձին պատահել. իսկ ՚ի սմա ազատեալք, օրհնեն զԱստուած բարերարն: Եւ կարծեմ յաճախ լինել յամենայն մարգարէից զայսպիսի օրհնութիւն՝ ազատել ՚ի դառն ծառայութեանց, և մեծի փրկութեան արժանանալ:

ծգ. Վասն արարածոցս լինելութեան մի ըստ միոջէ պատմէ. և արարիչ և յօրինող ամենայնի զԱստուած երևեցուցանէ:

ծդ. Յիշեցուցանէ զառ ՚ի հայրապետացն զԱստուծոյ եղեալ խոստմունսն. որպէս թէ ո՛չ անիրաւ զապաշնորի ժողովուրդն՝ յիւրում խնամոցն մերկացոյց: Եւ վարդապետէ սովիմբ զնոր ժողովուրդս զի մի՛ ընդ նոյն

հետս գնացեն. այլ ընդ ուղղորդն ճանապարհորդեսցեն:

Ճե. Ջբարեգործութեանցն առնէ յիշումն. և զօգտեցելոցն
զանշնորհակալութիւնն տրտնջէ. և զհասեալ նոցա նեղութիւնն
վարդապետէ, և թողութեան պատահել աղաչէ:

Ճգ. Յառաջածայնէ զառ ՚ի գերութեանն զերծումնն՝ յանբաւ
բարութեանցն Աստուծոյ եղեալ. զի յայնմ ստուերագրեալ տեսանենք և
զմեր փրկութիւն. և յայսմ օրէնսդրութիւնս, մեզ առաւել քան նոցա, ՚ի
ճանապարհս մարգարէութեան հաւատարմացուցանել:

Ճե. Ջրից զդարձն ՚ի գերութենէն. և զհեթանոսաց փրկութիւնն
յառաջագոյն վճռէ. ընդ ԾԶ սաղմոսին, և ընդ ԾԹ-ին, որ ասէ. Աստուած
մերժեցեր և:

Ճը. Առ մատնիչն անձին իւրոյ ասաց, առ Աքիտոփէլ, որ կին ունէր և
որդիս. բայց կատարեցաւ դարձեալ առ Յուդայ՝ որ եղև մատնիչ Որդւոյ
նորա Յիսուսի, թէպէտ ո՛չ ունէր կին և որդիս. որում մարթ էր լինել որբ և
այրի:

Ճթ. Պատմէ զվերացումն Փրկչին, և զնստելն ընդ աջմէ Զօր. նաև
զճնունդն որ յԱստուծոյ Զօրէ:

Ճժ. ՁԱմնացւոց և զՄովաբացւոց և զԵդոմայեցւոց գումարելն ՚ի միասին
՚ի պատերազմ՝ պատմէ յերեսաց Յովսափաթու:

Ճժա. Երանէ զերկիւղածս Տեառն, զվարդապետութիւն
բարեպաշտութեան կամեցողացն յառաջ բերելով:

Ճժբ. Ձարթուցանէ զամենեսեան օրհնել զԱստուած, յիշելով
զբարերարութիւն իւր առ աղքատս:

Ճժգ. Վասն ելիցն յեգիպտոսէ, և անցանելոյն ընդ Յորդանան, ՚ի ձեռն
Յեսուայ, և վասն կռոցն տկարութեան, և Աստուծոյ զօրութեանն:

Ճժդ. Վասն Անտիոքայ Եպիփանու նեղութեանցն. և վասն հասարակաց
վշտաց, և Տեառն օգնականութեանն. այլ և վասն զերծանելոյ
մարգարէին ՚ի հիւանդութենէ իւրմէ:

Ճժե. Ձերծեալ մարգարէն ՚ի տեսչութենէն Աստուծոյ ՚ի բանտէն
Աբիմելեքեայ, այլակերպեցաւ առաջի նորա. և գնաց անտի գոհանալով
զԱստուծոյ:

Ճժզ. Վասն զի՝ յամենայն մարգարէ յարի օրհնութիւնս. քանզի շնորհք
Յոգւոյն է, փրկութեան պատահողացն՝ օրհնել զբարերարն Աստուած:

Ճժէ. Ձի ՚ի դարձին ՚ի Բաբելոնէ խմբեալ բարբարոսացն ՚ի վերայ Զրէիցն,
և աստուածահալած հարուածովք ծախեալք եղեն: Յարի՛ այս և առ
հեթանոսս, որ բազում իշխեցելոյն ՚ի Բանսարկուէն զերծեալք, որոց
սոցա և նոցա՝ շնորհք Յոգւոյն առաջնորդեաց վարդապետութեամբ:

Ճժը. Ձբոլոր առաքինութեան տեսակս եղեալ է՝ աստ, և զբժշկութիւնս
պէսպէս ախտից, որպէս ինքն Դաւիթ՝ որ թէպէտ և խտորեցաւ
գայթազդեալ՝ սակայն դարձեալ միւսանգամ արտասուօք հետևեցաւ
աստուածայնոց օրինաց: Երանէ և զթագաւորական ճանապարհին
զանխտոր հետևեալսն, և ո՛չ յաջ կամ յահեակ ՚ի հրամանէ
պատուիրանին խտորեալ:

Ճժթ. Թէ շրջէր մարգարէն փախստական տեղւոջէ ՚ի տեղիս. որպէս
ագռաւ ՚ի լերինս, զամս երկոտասան՝ վասն որոյ տաղտկացեալ ասաց.
Վայ՝ զի պանդխտութիւն իմ յերկարեցաւ:

ՃԻ. Մարգարեանայ վասն եղելոցն 'ի Բաբելոն 'ի վիշտս:
ՃԻԿ. Ասէ դարձեալ վասն ելիցն, և վասն շինութեանն Երուսաղէմի:
ՃԻԲ. Եւ այս ցուցանէ զարդարոցն զբարեպաշտութիւն:
ՃԻԳ. Թէ յետ ելիցն 'ի Բաբելոնէ, մերձակայ բնակիչքն տխրեալք ընդ
Հրէիցն ազատութիւն, միաբանեալք 'ի պատերազմ գումարեցան 'ի
վերայ նոցա. կամեցեալք անյիշատակել զնոսա. իսկ Աստուած իւրայոցն՝
օգնեաց, և զպատերազմօղսն յետս դարձոյց:
ՃԻԴ. Ձի յետ դարձին՝ յաղթութեան հանդիպօղքն, զյաղթութեանն երգեն
զօրհնութիւն. և զաստուածային յուսոյն քարոզեն զգօրութիւն:
ՃԻԵ. Ազատանալ բովանդակ ազգին Հրէից 'ի Կիւրոսէ Պարսից արքայէ:
ՃԻԶ. Վասն շինութեան տաճարին 'ի Ջորաբաբիլէ:
ՃԻԸ. Երանէ զայնոսիկ՝ որք յուսալովն յԱստուած 'ի նմանէ երկնչին. որով
առաքինութեան ստացուածք՝ առաւել աւարտին:
ՃԻՂ. Ցուցանէ զկնի դարձին՝ զյարուցելոցն 'ի վերայ Հրէիցն զօտար
ազգացն, և որպէս թէ որք 'ի Հրէից են, վարդապետեն ասել զայս:
ՃԻԹ. Արդարք՝ զայս աղօթս մատուցանեն առ Աստուած. վկայէ և
յառաջաբան Սաղմոսիս:
ՃԼ. Ձխոնարհութիւն ուսուցանէ մարգարեական բանս, և զնորա
կերպարանացն ցուցանէ զդէմս. որպէս թէ աղօթելով զԱստուած
հաշտեցուցանել:
ՃԼԱ. Մարգարեանայ 'ի դէմս Ջորաբաբիլի, որով վերստին տաճարն
նորոգեցաւ. և վասն մարմնաւոր ծննդեանն Քրիստոսի. նաև 'ի խորհուրդ
Եկեղեցւոյ:
ՃԼԲ. Թէ յետ ելիցն 'ի Բաբելոնէ 'ի ձեռն Ջորաբաբիլի, 'ի մի տէրութիւն
հնազանդեցան Յուդայ և Իսրայէլ, որք 'ի յՌոբովամայ բաժանեցան:
ՃԼԳ. Յարի՛ և այս 'ի Բաբելոնէ դարձեալսն. և ամենայն բարեպաշտից 'ի
խրատս, որպէս թէ ո՛չ միայն 'ի տունջեան, այլ և 'ի գիշերի օրհնել
զԱստուած:
ՃԼԴ. Ասէ զառաջին ելն յեգիպտոսէ. և մարգարեանայ վասն դարձին 'ի
Բաբելոնէ. և վասն կռոցն տկարութեան, և Աստուծոյ զօրութեանն:
ՃԼԵ. Վասն մեծամեծ սքանչելեացն Աստուծոյ:
ՃԼԶ. Ջառ 'ի Բաբելոնի պատահումն պատմէ:
ՃԼԷ. Յետ դարձին գոհութիւն՝ վանել զթշնամիսն:
ՃԼԸ. Ձնվսիս թագաւորէ ունի նախասացութիւն:
ՃԼԹ. Հալածեալ 'ի Սաւուղայ երանելին Դաւիթ, յօգնականութիւն կոչէ
զբոլորեցունցն Աստուած:
ՃԼԻ. Դարձեալ վասն նորին իրաց աղաչէ:
ՃԼԻԱ. Ձի յայրին թաքուցեալ Դաւիթ՝ աղօթս մատուցանէր առ Աստուած:
ՃԼԻԲ. Ձի հալածէր զնա Աբիսողոմ որդի նորա:
ՃԼԻԳ. Մարգարեանայ վասն դարձին 'ի Բաբելոնէ, և վասն յարուցելոցն
պատերազմողաց 'ի վերայ Հրէից, զոր և բազումք 'ի մարգարեից յիշեցին:
ՃԼԻԴ. Օրհնել հրամայէ ամենեցուն զՏէր. յարմարի այս և առ հեթանոսաց
կոչումն:
ՃԼԻԵ. Դարձեալ յորդորէ երանելիս Դաւիթ, օրհնել զամենեցունցն
Աստուած. զոր և վերնագիր սաղմոսիս յայտ առնէ. քանզի ասէ. Ալէլուիա:
ՃԼԻԶ. Թէ յետ դարձին 'ի Բաբելոնէ և շինելոյն զտաճարն 'ի Ջորաբաբիլէ,

Անգէաս և Ջաքարիաս՝ երգս առեալ նուագէին ասելով. Շինէ գերուսաղէմ Տէր, և զգրուեալսն Իսրայէլի ժողովէ:
Ճխէ. Դարձեալ ՚ի նոյն դէմս ասէ, ևս և վասն առաքելոցն քարոզութեան:
Ճխը. Չամենայն արարածս յօրինաբանութիւն կոչէ երանելիս Դաւիթ՝
զինանալիս և զզգալիս:
Ճխթ. Օրհնութիւն վասն դարձին ՚ի Բաբելոնէ. նաև ՚ի խորհուրդ
Մակաբայեցւոցն:
Ճծ. Վասն հասարակաց օրհնութեան:

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱՒԹԻ*

1

Սաղմոս ՚ի Դաւիթ. Ա:

¹Երանեալ է այր որ ո՛չ գնաց ՚ի խորհուրդս ամպարշտաց, ՚ի ճանապարհի մեղաւորաց նա ո՛չ եկաց, և յաթոռս ժանտից նա ո՛չ նստաւ: ²Այլ յօրէնս Տեառն են կանք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. ³Եւ եղիցի նա որպէս ծառ որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց: Որ զպտուղ իւր ՚ի ժամու տացէ, և տերև նորա մի՛ թափեսցի. և զամենայն զոր ինչ արասցէ յաջողեսցի՝ նմա*: ⁴Ո՛չ այսպէս են ամպարիշտք, և ո՛չ այսպէս. այլ որպէս հողմ զփոշի, զոր հոսէ՝ ՚ի վերայ երեսաց երկրի*: ⁵Վասն այսորիկ ո՛չ յարիցեն ամպարիշտք ՚ի դատաստան, և ո՛չ մեղաւորք ՚ի խորհուրդս արդարոց: ⁶Քանզի ճանաչէ՛ Տէր զճանապարհս արդարոց, ճանապարհք ամպարշտաց կորիցեն: *Տունք. Զ:**

2

Ի Դեբրայեցւոց գրոց երկոքեան սոքա ընդ մի համար են՝:

Սաղմոս. Բ:

¹Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս*:
²Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին վասն

* Յօրինակին ՚ի ճակատ գրոցս դատարկ թողեալ՝ ՚ի լուսանցսն կարմրադեղով նշանակի վերնագիրս Գիրքս սաղմոսաց Դաւթի. յորմէ առեալ եղաք ՚ի կարգի՝ համենատ այլոց ևս գրչագիր օրհնակաց մերոց:

* Ոմանք. Որպէս ծառն որ տնկ՝: Ոմանք. Եւ զամենայն զոր ինչ և առնիցէ:

* Ոմանք. Զի հոսէ յերեսաց երկրէ:

* Ի վախճանի իւրաքանչիւր սաղմոսաց՝ ուր օրհնակս մեր առնէ գումարութիւն տանց և գորդայից, ոմանք իսպառ զանց առնեն, և ոմանք զտունս և եթ նշանակեն. թէպէտ և ամենեքեան զբաժանումն Սաղմոսագրոցս ՚ի յուր կանոնս և ՚ի յիսուն և վեց գորդայս առանձինն ծաղկազարդ դրօշմամբ ՚ի գլխագրութիւնս նոցին յայտ առնեն:

* Վերնագիրք իւրաքանչիւր սաղմոսաց, որ աստէն նօտր ասացեալ գրով եղան, ամենայն գրչագիր օրհնակք մեր կարմրադեղով գրեալ՝ զանազանեն յաղօթական բանիցն: Ի վերայ սաղմոսիս ոմանք դնեն. Անվերնագիր ՚ի Դեբրայեցւոց. երկոքին սոքա ընդ մի համարի են:

* Ոմանք. Խորհեցան սնոտիս:

Տեառն և վասն Օծելոյ նորա*։ ³Իսգեսցուք զկապանս նոցա, և ընկեսցուք ՚ի մէնջ զլուծ նոցա*։ ⁴Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, և Տէր արհամարհեսցէ զնոսա։ ⁵Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, և սրտմտութեամբ իւրով խռովեսցուցէ զնոսա։ ⁶Ես կացի թագաւոր ՚ի նմանէ, ՚ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա՝ պատմել ինձ զիրամանս Տեառն*։ ⁷Տէր ասաց զիս Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ*։ ⁸Ինդրեա՛ յինէն և տա՛ց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի։ ⁹Յովուսեսցեն զնոսա գաւազանաւ երկաթեաւ. որպէս զանօթ բրտի փշրեսցեն զնոսա։ ¹⁰Արդ թագաւորք՝ զայս ՚ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան ոյք դատիք զերկիր։ ¹¹Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ։ ¹²Ընկալարուք զխրատ նորա՝ զի մի՛ բարկացի Տէր, և կորնչիցիք ՚ի ճանապարհացն արդարութեան։ ¹³Ի ժամանակի որպէս բորբոքեսցի բարկութիւն նորա։ Երանի՛ ամենեցուն՝ ոյք յուսացեալ են ՚ի Տէր*։ *Տունք. ԺԴ։*

3

¹Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի ժամանակի զի փախուցեալ էր նա յերեսաց Աբիսողոմայ որդւոյ իւրոյ։ Գ*։

²Տէր՝ զի բազում եղեն նեղիչք իմ, բազումք յարեան ՚ի վերայ իմ*։ ³Բազումք ասէին զանձնէ իմնէ, թէ չի՛ք փրկութիւն սորա առ Աստուած իւր*։ ⁴Այլ դու Տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։ ⁵Չայնիւ իմով ես առ Տէր կարդացի, լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ*։ ⁶Ես ննջեցի և ՚ի քուն եղէ, զարթայ և Տէր ընդունելի՛ իմ է*։ ⁷Ո՛չ երկեայց ես ՚ի բիւրուց զօրաց նոցա. որ շուրջանակի պատեալ պահեալ պաշարէին զիս։ Արի՛ Տէր՝ և փրկեա՛ զիս Աստուած իմ*։ ⁸Գի դու հարե՛ր զամենեսեան ոյք էին ընդ իս թշնամութեամբ ՚ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեսցես*։ ⁹Տեառն է փրկութիւն. ՚ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո*։ *Տունք. Ը։ Գորդայս. ԻԸ։*

4

* *Ոմանք.* Եւ իշխանք ժողովրդոց ժողո՛ւրդ։

* *Ոմանք ՚ի վերջ տանս նշանակեն՝* Հանգիստ։

* *Ոմանք.* Ի վերայ լերին Սիոնի սրբոյ նորա ՚ի պատմել ինձ։

* *Ոմանք առանձինն վերնագիր կարգեն աստանօր.* Սաղմոս ՚ի Դաւիթ։ Տէր ասաց զիս... և ես այսօր։

* *Ոմանք.* Ի ժամանակի յորժամ բորբոքեսցի հուր բարկութեան նորա... յուսացեալ են ՚ի նա։

* *Ոմանք աստի սկսեալ ՚ի վերնագիրս բազում անգամ փոխանակ.* Սաղմոս ՚ի Դաւիթ, *դնեն* Սաղմոս Դաւթի։

* *Ոմանք.* Եւ բազումք յար՛։

* *Ոմանք.* Փրկութիւն նորա առ Աստուած իւր։

* *Ոմանք.* Եւ լուաւ ինձ։

* *Ոսկան.* Եւ Տէր ընդունօղ իմ էր։

* *Ոմանք.* Ի բիւրուց զօրացն, ոյք... պատեալ պաշարեալ պահէին զիս։

* *Ոմանք.* Ի տարապարտուց, զատա՛ւ։

* *Ոմանք.* Տեառնդ է փր՛։

1^ի կատարած օրհնութեան. Սաղմոս երգոց 'ի Դաւիթ. Դ*:

²Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան. 'ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա՛ ինձ և լուր աղօթից իմոց*։ ³Որդի՛ք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։ ⁴Ծաներո՛ւք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. և Տէր լուիցէ՛ ինձ 'ի կարդալ իմում առ նա։ ⁵Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր յանկողինս ձեր զղջացարո՛ւք։ ⁶Մատուցէ՛ք պատարագ արդարութեան, և յուսացարո՛ւք 'ի Տէր։ Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն*։ ⁷Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։ ⁸Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւրեանց լցուցէ՛ր զնոսա*։ ⁹Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցո՛ւք և զարթիցո՛ւք*։ ¹⁰Ղի դու Տէր միայն առանձին յուսո՛վ քով բնակեցուցեր զմեզ։ *Տունք. Ը:*

5

1^ի կատարած վասն վիճակելոցն: Սաղմոս. Ե*:

²Բանից իմոց ո՛ւնկն դիր Տէր, և 'ի միտ առ զաղաղակ իմ*։ ³Նայեաց 'ի ձայն աղօթից իմոց, Թագաւոր իմ և Աստուած իմ*։ ⁴Ես զքեզ աղաչե՛մ Տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ⁵ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել քեզ։ Ո՛չ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն* , ⁶և ո՛չ բնակեն առ քեզ չարք, մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց*։ ⁷Ատեցէ՛ր զայնոսիկ որ գործեն զանօրէնութիւն. կորուսանեն՝ զամենեսեան ոյք խօսին սուտ։ Ձայր արինահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու, Տէր* , ⁸այլ ես՝ ըստ բազում ողորմութեան քում մտից 'ի տուն քո. երկիր պագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո։ ⁹Տէր՝ առաջնորդեա՛ ինձ յարդարութեան քում. վասն թշնամեաց իմոց ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո։ ¹⁰Ձի ո՛չ գոյ 'ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են։ ¹¹Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն։ Դատեա՛ զնոսա Աստուած զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում անպարշտութեան նոցա մերժեա՛ զնոսա՝ զի դառնացուցին զքեզ*։ ¹²Ուրախ լիցին ամենեքեան ոյք յուսացեալ են 'ի քեզ, յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցես դու 'ի նոսա։ Պարծեսցին 'ի քեզ

* *Ոմանք.* 'ի կատարած ընդ օրհնութիւնս սաղմոս 'ի Դաւիթ։
* *Ոմանք.* Լուաւ ինձ Աստուած... 'ի նեղութենէ ինձ։
* *Ոմանք.* Պատարագս արդա՛: *Ոմանք.* Թէ ո՛վ ցուցանէ մեզ զբարութիւն Տեառն։
* *Ոմանք.* Չիթոյ, նոքօք լցուցեր զմեզ։
* *Ոմանք.* Խաղաղութեամբ քով յայս և 'ի սոյն ննջեցից և զարթեայց... (10) յուսով քո։
* *Ոմանք.* Վասն վիճակաց. և *ոմանք.* Վասն ժառանգաւորաց. սաղմոս 'ի Դաւիթ։
* *Յօրհնակին պակասէր.* Եւ ի միտ առ։
* *Ոմանք.* Նայեա՛ 'ի ձայն։
* *Ոմանք.* Յանդիման լինել առ քեզ։ *Եւ ոմանք.* լինել քեզ Աստուած։ *Ուր և ոմանք.* Ոչ թէ դու այն Աստուած ես որ կամիս։
* *Ոմանք.* Եւ մի՛ անօրէնք բնա՛։
* *Ոմանք.* Ատեցեր դու զայնո՞... ոյք խօսեին սուտ... և զնենգաւոր պիղծ առնէ Տէր։
* *Ոմանք.* Որպէս գերեզմանք բաց են կոկորդք նոցա. և լեզ՛... 'ի խորհրդոց սրտից իւրեանց։

սիրելիք անուան քոյ*, ¹³զի օրհնեսցես դու զարդարն. Տէր որպէս զինու հաճութեամբ քով պսակեցեր զնեզ*: *Տունք. ժԲ.:*

6

¹Ի կատարած ընդ օրհնութիւնս վասն Ութերորդաց: Սաղմոս 'ի Դաւիթ. Զ*:

²Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս*: ³Ողորմեա՛ ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ: ⁴Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր՝ մինչև յե՞րբ: ⁵Դա՛րձ Տէր և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս Տէր ըստ ողորմութեան քուն: ⁶Զի ո՛չ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առնի առ քեզ*: ⁷Վաստակեցի ես 'ի հեծութեան իմուն, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի: ⁸Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց: ⁹Ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն: ¹⁰Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց. և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ*: ¹¹Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվադակի և խռովեսցին: *Տունք. ժ: Գորդայս. Լ:*

7

¹Սաղմոս 'ի Դաւիթ. զոր ասաց Տեառն վասն բանին Քուսեայ որդւոյ Յիմենայ. Է*:

²Տէր Աստուած իմ 'ի քեզ յուսացայ և փրկեա՛ զիս, յամենայն հալածչաց իմոց ապրեցո՛ զիս*: ³Գուցէ երբէք յափշտակիցէ որպէս առե՛ւծ զանձն իմ, ո՛չ ոք իցէ որ փրկիցէ, և ո՛չ այն որ ապրեցուցանէ*: ⁴Տէր Աստուած իմ թէ արարից զայս, թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ*: ⁵Թէ հատուցի՛ երբէք այնոցիկ ոյք հատուցին ինձ չար. անկայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն*: ⁶Հալածեսցէ՛ ապա թշնամին զանձն իմ. հասցէ՛ կոխեսցէ յերկիր զկեանս իմ, և զփառս իմ 'ի հող բնակեցուցէ*: ⁷Արի՛ Տէր բարկութեամբ քով, և բարձր լեր 'ի սպառել թշնամեաց իմոց: Զարթի՛ր Տէր Աստուած իմ 'ի հրամանս քո զոր պատուիրեցեր*, ⁸և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքև: Վասն այսորիկ 'ի բարձունս դա՛րձ Տէր. ⁹և Տէր

* *Ոմանք.* Ուրախ լիցին 'ի քեզ ամե՛:

* *Ոմանք.* Քո պսակեսցես զնոսա:

* *Ոմանք.* Ընդ օրհնութեան, վասն Ու՛:

* *Ոմանք.* Մի՛ սրտմտութեամբ յան՛:

* *Ոսկան.* Կամ 'ի դժոխս ոք խոս՛:

* *Ոմանք.* Լուաւ Տէր զձայն լալոյ իմոյ:

* *Ոմանք.* Զոր ասաց Տէր վասն Քուսի Քօշեայ որդւոցն Յամինայ: *Ուր ոմանք.* Վասն բանիցն... Յեմինայ:

* *Ոմանք.* Յուսացայ, փրկ՛... և յամենայն հա՛:

* *Ոմանք.* Որ ապրեցուցանիցէ:

* *Ոմանք.* Թէ արարի զայս. և թէ:

* *Ոմանք.* Թէ հատուցից երբէք... անկեայց և ես:

* *Ոմանք.* Հալածիցէ ապա... հասցէ և կոխեսցէ:

* *Ոմանք.* Տէր Աստուած իմ հրամանաւն զոր պատ՛:

դատի զժողովուրդս իւր: Դա՛տ արա ինձ Տէր ըստ արդարութեան իմում. ըստ անբժութեան իմում որ յիս*: ¹⁰Կատարեսցին չարիք ՚ի վերայ մեղաւորաց, և յաջողեսցես դու արդարոյն: Որ քննէ զսիրտս և զերիկամունս Աստուած արդար. յիրաւի է* ¹¹օգնութիւն ինձ յԱստուծոյ՝ որ ապրեսցուցանէ զայնոսիկ, որ ուղիղ են սրտիւք: ¹²Աստուած դատաւոր արդա՛ր հզօր և երկայնամիտ. որ ո՛չ ածէ զբարկութիւն իւր զօրհանապագ: ¹³Ապա թէ ո՛չ դառնայ առ նա՝ զսուր իւր սրեալ է՝ և զաղեղն իւր լարեալ. ¹⁴ի նմա է պատրաստեալ զանօթս մահու, և զնետս իւր այրեցելո՛ւք է զործեալ*: ¹⁵Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն, յղացաւ զցա՛ւս և ծնաւ զանօրէնութիւն*: ¹⁶Գութն՝ զոր փորեաց և պեղեաց, ՚ի նոյն անկցի ՚ի խորխորատ զոր և զործեաց*: ¹⁷Դարձցին ցաւք ՚ի գլուխ նորա. ՚ի վերայ գագաթան նորա անօրէնութիւնք իւր իջցեն: ¹⁸Խոստովան եղէց Տեառն ըստ արդարութեան նորա, և սաղմոս ասացից անուան Տեառն բարձրելոյ: *Տունք. ժէ:*

8

¹Ի կատարած ՚ի վերայ հնձանացն. Սաղմոս ՚ի Դաւիթ. Ը:

²Տէր Տէր մեր՝ զի սքանչելի՛ է անուն քո յամենայն երկրի: Համբարձաւ մեծվայելչութիւն քո ՚ի վերոյ՝ քան զերկինս*. ³ի բերանոյ մանկանց տղայոց ստղնդիեցաց կատարեսցի օրհնութիւն: Վասն թշնամեաց քոց Տէր. զի եղծցին թշնամին և հակառակորդն*: ⁴Տեսից զերկինս զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս զորս դու՛ հասատեցեր: ⁵Ո՞վ է մարդ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ թէ այց ինչ արասցես դու նմա*: ⁶Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զիրեշտակս քո, փառօք և պատուով պսակեցեր զնա, ⁷և կացուցեր զնա ՚ի վերայ ձեռակերտաց քոց*: ⁸Չամենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառ՝ և զամենայն ինչ: ⁹Եւս և զերէ՛ վայրի, զթռչունս երկնից, զձկունս ծովուց որ շրջին ընդ շաւիղս ծովուց*: ¹⁰Տէր Տէր մեր՝ զի սքանչելի՛ է անուն քո յամենայն երկրի: *Տունք. Թ: Գորդայս. ԻԶ:*

9

¹Ի կատարած. վասն գաղտնեաց որդւոյ: Սաղմոս. Թ*:

²Գոհացայց զքէն Տէր բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո: ³Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ. սաղմոս ասացից անուան քում

* *Ոմանք.* Ըստ արդարութեան քում... իմում որ է յիս:

* *Ոմանք.* Յիրաւ (11) օգնութիւն իմ յԱստուծոյ:

* *Ոմանք.* Ի նմա պատրաստեալ է. *կամ*՝ ՚ի նմա պատրաստէ:

* *Ոմանք.* Յղեցաւ զցաւս, և ծնաւ զանիրաւութիւն:

* *Ոմանք.* Ի նոյն անկցի խորխորատ զոր զործեաց:

* *Ոմանք.* Անուն քո ՚ի վերայ ամենայն երկ՛:

* *Ոմանք.* Ի բերանոց... հասատեցեր զօրհնութիւն... եղծցի թշնա՛:

* *Ոմանք.* Թէ այց առնես դու նմա:

* *Ոմանք.* Ի վերայ ամենայն ձեռակեր՛:

* *Ոմանք.* Եւ զձկունս ծովու, ոյք շրջին... ծովու:

* *Ոմանք.* Վասն գալստեան որդւոցն: *Ուր օրինակ մի.* վասն գալստեան Որդւոյն Աստուծոյ. սաղմոս ՚ի Դաւիթ:

Բարձրեալ*։ ⁴Ի դառնալ յետս թշնամեաց իմոց, տկարասցին և կորիցե՛ն յերեսաց քոց։ ⁵Արարեր զդատաստանս իմ և զիրաւունս, նստար յաթոռ դատաւոր արդարութեան*։ ⁶Սաստեցեր ՚ի հեթանոսս, և կորեա՛ւ ամպարիշտն. զանուանս նոցա ջնջեցեր յաւիտեանս յաւիտենից. ⁷և թշնամւոյն զէն պակասեա՛ց մինչ ՚ի սպառ։ Զքաղաքս ակերեցեր, և կորեա՛ւ յիշատակ նոցա աղաղակաւ։ Աստուած կայ և մնայ յաւիտեան*, ⁸պատրաստ արար զաթոռ իւր ՚ի դատաստանի։ ⁹Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ։ ¹⁰Եղև Տէր ապաւե՛ն տնանկի, օգնական ՚ի նեղութեան՝ ՚ի դէպ ժամանակի։ ¹¹Յուսասցին ՚ի քե՛զ ամենեքեան ոյք գիտեն զանուն քո. զի ո՛չ թողցես զայնոսիկ որ խնդրեն զքեզ Տէր։ ¹²Սաղմոս ասացէք Տեառն որ բնակեալն է ՚ի Սիոն. պատմեցէ՛ք ՚ի հեթանոսս զգործս նորա։ ¹³Ի խնդրել զարիւն նոցա՝ յիշեաց և ո՛չ մոռացաւ Տէր զաղօթս տնանկաց*։ ¹⁴Ողորմեաց ինձ Տէր՝ և տես՝ զխոնարհութիւն իմ ՚ի թշնամեաց իմոց. ¹⁵ո՛ բարձր արարեր զիս ՚ի դրանց ՚ի մահուանէ։ Որպէս պատմեցից զամենայն օրհնութիւնս քո ՚ի դրունս դստեր Սիոնի*, ¹⁶ցնծացայց ՚ի փրկութեան քում։ Ընկլան հեթանոսք յապականութեան իւրեանց զոր արարին. որոգայթ՝ զոր թաքուցին առջէ՛ զոտս նոցա*։ ¹⁷Ճանաչէ Տէր առնել զդատաստանս իւր, և ՚ի գործս ձեռաց իւրեանց կապեցցին մեղաւորք*։ ¹⁸Դարձցին մեղաւորք անդրէն ՚ի դժոխս, և ամենայն հեթանոսք որ մոռացան զԱստուած։ ¹⁹Ո՛չ ՚ի սպառ մոռանայ Տէր զաղքատն. համբերութիւն տնանկաց մի՛ կորիցէ ՚ի սպառ*։ ²⁰Արի՛ Տէր՝ և մի՛ զօրասցի մարդ. դատեցցին հեթանոսք առաջի քո։ ²¹Կացո՛ Տէր օրէնսդիր ՚ի վերայ նոցա. և ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են*։ ¹Ընդէ՛ր Տէր կացեր ՚ի հեռաստանէ. անտես արարեր ՚ի դէպ նեղութեան ժամանակի։ ²Յամբարտաւանել ամպարշտի՛ այրի աղքատ. արգելցին ՚ի խորհուրդս իւրեանց զոր և խորհեցան։ ³Ձի՞ զովի մեղաւոր ՚ի ցանկութիւն անձին իւրոյ. որ զրկէ, և նա գովի*։ ⁴Իսկ ընդէ՛ր բարկացոյց մեղաւորն զԱստուած, ըստ բազում բարկութեան իւրում եթէ ո՛չ խնդրի*։ ⁵Ո՛չ է Աստուած առաջի աչաց նորա, պիղծ են ճանապարհք նորա յամենայն ժամ։ Բարձեալ են իրաւունք յերեսաց նորա, ՚ի վերայ ամենայն թշնամեաց իւրոց տիրեցէ։ ⁶Ասաց ՚ի սրտի իւրում թէ ո՛չ սասանեցայց ազգէ յազգ առանց չարի*։ ⁷Անէ՛ք և դառնութիւն և նենգութիւն լի՛ է բերան նորա, ՚ի ներքոյ լեզուի նորա ցաւք և վաստակք*։ ⁸Նստի դարանեալ ընդ մեծամեծս, ՚ի գաղտնիս սպանանել զանբիծն*։ ⁹Աչք նորա ՚ի տնանկս հային. վարանի ՚ի գաղտնիս՝ որպէս զառևձ ՚ի մորուջ իւրում։ Դարանի յափշտակել զաղքատն,

* *Ոմանք.* Անուան Տեառնդ բարձրելոյ։

* *Ոմանք.* Եւ զիրաւունս իմ։

* *Ոմանք.* Մինչև իսպառ... և կորեան յիշատակք նոցա ա՛ն։

* *Ոմանք.* Տէր զաղաղակ տնանկաց։

* *Ոմանք.* Ո՛ բարձր արասցէ զիս ՚ի դրաց մահուանէ։

* *Ոմանք.* Եւ ցնծացայց ես ՚ի փր՛... և որոգայթ զոր։

* *Ոմանք.* Ճանաչի Տէր յառնել։

* *Ոմանք.* Եւ համբերութիւն տն՛։

* *Ոմանք.* Կարգեա՛ Տէր օրէնսդ՛։

* *Ոմանք.* Գովի մեղաւորն... որ զրկէն։

* *Ի բազումս պակասի.* Իսկ ընդէր բարկացոյց մե՛ն։ *Ուր ոմանք.* իւրում թէ ո՛չ քննի։

* *Ոմանք.* Ձի ասաց ՚ի սրտի իւ՛։

* *Ոսկան.* Անիծիւք և դառնութեամբ և նենգութեամբ լի է։

* *Ոմանք.* Նստի վարանեալ ընդ մեծա՛ն։

յափշտակել զաղքատն և ձգել զնա*։ ¹⁰Յորոգայթ իւր խոնարհեցուցէ՛ զնա, խոնարհեցի և անկցի՝ ՚ի տիրել իւրում ՚ի վերայ տնանկաց։ ¹¹Ձի ասաց ՚ի սրտի իւրում թէ մոռացաւ Աստուած, դարձոյց զերեսս իւր զի մի՛ տեսցէ ՚ի սպառ*։ ¹²Արի՛ Տէր Աստուած իմ և բարձր եղիցի ձեռն քո, և մի՛ մոռանար զտնանկա։ ¹³Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամպարիշտն զԱստուած, զի ասաց ՚ի սրտի իւրում թէ ո՛չ քննի*։ ¹⁴Տեսանէ՛ս դու զնա ՚ի ցաւս, և ՚ի տրտմութիւնս՝ և հայիս. ՚ի քեզ թողեալ է աղքատն և որբոյն դու՛ ես օգնական*։ ¹⁵Խորտակեցի՛ բազուկ մեղաւորի և չարի. խնդրեցի՛ն մեղք նորա և նա մի՛ գտցի*։ ¹⁶Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից. կորիցեն՝ հեթանոսք յերկրէ նորա։ ¹⁷Չցանկութիւն տնանկաց լուար Տէր, ՚ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ունկն քո*։ ¹⁸Դա՛տ առնել որբոյն և տնանկի, զի մի՛ ևս յաւելուցու մարդ ՚ի մեծաբանել իւրում ՚ի վերայ երեսաց երկրի*։ *Տունք. ԼԹ*։

10

¹Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. Ժ

²Ի Տէր յուսացայ. ո՞րպէս ասիցէք ցանձն իմ. Փոփոխեա՛ց ՚ի լերինս որպէս ճնճղուկ*։ ³Ձի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց. պատրաստ արարին զնետս ՚ի կապարճս, ձգել՝ ընդ խաւար այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք։ ⁴Ձի զոր դուն շինեցեր՝ աւերեցին. իսկ արդարն զի՞ արար*։ ⁵Տէր ՚ի տաճար սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում։ Աչք նորա ՚ի տնանկս հային, արտևանունք նորա քննեն զորդիս մարդկան*։ ⁶Տէր քննէ զարդարն և զամպարիշտ, որ սիրէ զմեղս ատեա՛յ զանձն իւր։ ⁷Տեղասցէ ՚ի վերայ մեղաւորաց որոգայթ հո՛ւր և ծծումբ, այս մրրիկ բաժին բաժակի նոցա։ ⁸Արդար է Տէր՝ զարդարութիւն սիրէ, զուղղութիւն տեսանեն երեսք նորա։ *Տունք. Ը*։

11

¹Ի կատարած ՚ի վերայ Ութերորդին. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԺԱ*

²Ապրեցո՛ր զիս Տէր՝ զի նուագեա՛ց սուրբ. նուաղեցին ճշմարտութիւնք յորդոց

* *Ոմանք.* Դարանի ՚ի գաղտնիս որպէս առիծ։ *Ուր ևս ոմանք.* վարանի յափշտակել զաղ՛... և ՚ի ձգել զնա։

* *Ոմանք.* Ասաց ՚ի սրտի։

* *Ոմանք.* Ի սրտի իւրում թէ ո՛չ խնդրի։

* *Ոմանք յաւելուածով այսպէս ունին զայս տուն.* Տեսանես դու զցաւս, և զսրտմտութիւնս հայիս, *մատնել զնա ՚ի ձեռս քո*, քեզ թողեալ է աղքատն։

* *Ոմանք.* Մեղք նորա. և մի՛ գտցին։

* *Ոմանք.* Տնանկաց լուար Տէր։

* *Ոմանք.* Ձի մի՛ ևս յաւելցի։

* *Ոմանք.* Որպէս ասացէք. *կամ՝* ասիցէ ցանձն իմ. Փոփոխեցի. *կամ՝* փոփոխեցայ ՚ի լերինս։

* *Ոմանք.* Դու շինեցեր՝ նոքա աւերե՛։

* *Ոմանք.* Ի տաճար սուրբ իւր, Տէր... և արտևանունք նորա։

* *Ոմանք.* Վասն Ութերորդացն։

ի մարդկանէ՞: ³Ի նանի՛ր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթամբք
նենգաւորօք սրտէ ՚ի սիրտ խօսեցաւ: ⁴Սատակէ Տէր զամենայն շրթունս
նենգաւորս, և զլեզուս մեծաբանս: ⁵Ոյք ասացին. Ձլեզուս մեր մեծս արասցուք,
շրթունք մեր առ մե՛զ են, և արդ մեր ո՞վ է տէր՞: ⁶Վասն տառապանաց աղքատին՝
և հեծութեան տնանկի՝ այժմ յարեա՛յց ասէ Տէր. եղից զփրկութիւն իմ, և
համարձակեցայց ՚ի նոսա: ⁷Բանք Տեառն բանք սուրբ են, որպէս և արծաթ
ընտրեալ և փորձեալ յերկրէ, սրբեալ և պարզեալ եւթնպատիկ ՚ի հողոյ՞: ⁸Դու
Տէր պահեցեր զմեզ, և ապրեցուցես յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան՞:
⁹Շուրջանակի՛ ամպարիշտք շրջին. ըստ բարձրութեան քուն մե՛ծ արասցես դու
գորդիս մարդկան: *Տունք. Ը:*

12

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԺԲ:

Մինչև յե՞րբ Տէր մոռանաս զիս ՚ի սպառ, մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո
յինէն: ²Մինչև յե՞րբ դնեն զխորհուրդս յանձն իմ, և ցաւք սրտի իմոյ զաւուրս:
³Մինչև յե՞րբ բարձրանայ թշնամին ՚ի վերայ իմ՞. ⁴ճայեա՛ և լուր ինձ Տէր
Աստուած իմ: Լո՛յս տուր Տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ: ⁵Մի՛
ասասցէ թշնամին իմ թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես
սասանեցայց՞: ⁶Ես յողորմութիւնս քո Տէր յուսացայ, ցնծացա՛ւ սիրտ իմ ՚ի
փրկութեան քում. օրհնեցից զՏէր զԲարերարդ իմ՞: *Տունք. Զ:*

13

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԺԳ:

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում, թէ ո՛չ գոյ Աստուած: Ապականեցան և
պղծեցան յանօրէնութեան իւրեանց. ո՛չ ոք է որ առնէ զբաղցրութիւն՞: ²Տէր
յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցե՞ ոք իմաստուն որ
խնդրիցէ զԱստուած: ³Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին անպիտանացան: Ոչ
ոք է որ առնէ զբաղցրութիւն, և ո՛չ ոք է մինչև ՚ի մի՞: ⁴Որպէս ո՛չ ծանիցեն
ամենեքեան, որ զործեն զանօրէնութիւն: Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս
կերակուր հացի՞, ⁵և առ Տէր ո՛չ կարդացին: Ա՛նդ երկիցեն զերկևղ՝ ուր ո՛չ իցէ
երկևղ. ⁶զի Տէր է յազգ արդարոց: Ձխորհուրդ աղքատի յամօթ արարին, զի Տէր

* *Ոմանք.* Յորդուոց մարդկանէ:

* *Ոմանք.* Ոյք ասէին. Ձլեզուս:

* *Ոմանք.* Բանք Տեառն են բանք սուրբ որպէս զարծաթ... ՚ի յերկրէ:

* *Ոմանք.* Պահեսցես զմեզ և ապրեցուցեր զմեզ յազգէ:

* *Այլք.* Մինչև ցերբ բարձրա՛:

* *Ոմանք.* Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի:

* *Ոմանք.* Օրհնեցից զքեզ Տէր բարերար իմ:

* *Ոսկան.* Եւ ո՛չ ոք է որ առնէ զբարի:

* *Ոմանք.* Եւ անպիտանացան... որ առնէ զբարի, և չէ ոք մինչև ցմի: *Ոսկան յայս տունն՝
առեալ ՚ի Լատինականէն յաւելու.* Գերեզման բաց է կոկորդ նոցա, և այլն. որ են
կրկնութիւնք այլ և այլ տանց սաղմոսաց:

* *Ոսկան.* Ոյք ուտեն զժողովուրդ իմ:

է յոյս նորա*։ ⁷Ո՛ր տացէ՛ ՚ի Սիոնէ՛ զփրկութիւն Իսրայէլի. ՚ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ. ցնծացէ՛ Յակոբ՝ և ուրախ եղիցի Իսրայէլ։
Տունք. Ժ. Գորդայս. ԼԲ:

14

¹Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԺԴ:

Տէր ո՞վ կացցէ՛ ՚ի խորանի քում, կամ ո՞վ բնակեցցէ՛ ՚ի լեռն սուրբ քո*։ ²Որ գնայ անբի՛ծ գործէ՛ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ՚ի սրտի իւրում։ ³Որ ո՛չ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում նա ո՛չ արար։ Նախատինս ՚ի մերձաւորաց նա ո՛չ առնու*։ ⁴Արհամարհեալ է առաջի նորա չարագործն։ Ջերկիւղածս Տեառն փառաւոր առնէ. երդնու ընկերի իւրում և ո՛չ ստէ*։ ⁵Ձարձաթ իւր ՚ի վարձու ո՛չ տայ, կաշառ ՚ի վերայ իրաւանց ո՛չ առնու. որ զայս արասցէ՛ նա մի՛ սասանեցցի յաւիտեան*։ *Տունք. Զ:*

15

¹Սաղմոս Յարձանագիր ՚ի Դաւիթ. ԺԵ:

Պահեա՛ զիս Աստուած զի ես ՚ի քեզ յուսացայ*։ ²ասացի Տեառն. Տէր ես դու, և բարիք իմ ինձ ՚ի քէն եմ*։ ³Սրբոց քոց որ են յերկրի քում. սքանչելի՛ արարեր զամենայն կամս իմ ՚ի նոսա։ ⁴Յաճախեցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա՛ վաղվաղեցին։ Ո՛չ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա յարեանց, և ո՛չ յիշեցից զանուանս նոցա ՚ի շրթունս իմ*։ ⁵Տէր է բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ. դո՛ւ ես որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս*։ ⁶Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։ ⁷Օրհնեցից զՏէր որ իմաստուն արար զիս, մինչ ՚ի գիշերի ևս խրատեին զիս երիկամունք իմ*։ ⁸Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ զի մի՛ սասանեցայց*։ ⁹Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ևս՝ և մարմին իմ բնակեցցէ յուսով։ ¹⁰Ձի ո՛չ թողցես զանձն իմ ՚ի դժոխս, և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։ Տուցեր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ՚ի քաղցրութենէ

* *Ոմանք.* Ձի Աստուած է յարկս արդարոց. զխորհուրդ աղքատին յա՛:

* *Ոմանք.* Տէր ո՛ր կացցէ... կամ ո՛ր բնակես՛:

* *Ոմանք.* Իւրում ո՛չ արար... ՚ի մերձաւորաց ո՛չ առնու:

* *Ոմանք.* Փառաւոր առնէ, որ երդնու:

* *Ոմանք.* Ի վարձու նա ո՛չ տայ, և կաշառ ՚ի վերայ:

* *Ոմանք.* Ի կատարած յարձանագիր. սաղմոս ՚ի Դաւիթ: Պահեա՛ զիս Աստուած իմ, զի:

* *Ի լուս՛.* Տէր իմ ես դու. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:* *Ոմանք.* Եւ բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ:

* *Ոմանք.* Յաճախեցեն հիւ՛... ապա վաղվաղեցցեն... ՚ի ժողովն նոցա յարեան. *կամ՛* յարենէ:

* *Ոմանք.* Տէր բաժին ժառան՛: *Ոսկան.* Որ անդրէն դար՛:

* *Ոմանք.* Մինչ զի գիշերի ևս խրատեցին զիս:

* *Ոմանք.* Ձի եր ընդ աջմէ իմմէ:

վայելչութեան աջոյ քո մինչև 'ի սպառ* : *Տունք. ԺԱ:*

16

¹Աղօթք 'ի Դաւիթ. ԺԶ:

Լուր Տէր արդարութեան. և նայեա՛ 'ի խնդրուածս իմ. ո՛ւնկն դիր աղօթից իմոց՝
զի ո՛չ շրթամբք նենգաւորօք: ²Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ
տեսցեն զուղղութիւն: ³Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր 'ի գիշերի, փորձեցեր
զիս՝ և ո՛չ գտաւ յիս անիրաւութիւն* : ⁴Մի՛ խօսեցի բերան իմ զգործս որդւոց
մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցի՛ց զճանապարհս խիստս* :
⁵Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանապարհի քում, զի մի՛ գայթաղեսցին գնացք
իմ: ⁶Ես առ քեզ Տէր կարդացի՛ զի լուար ինձ Աստուած, խոնարհեցո՛ւ առ իս
զունկն քո և լուր բանից իմոց: ⁷Սքանչելի՛ արարեր զողորմութիւնս քո. ո՛ փրկես
զայնոսիկ որ յուսացեալ եմ 'ի քեզ* . ⁸Յայնցանէ որ հակառակ կան աջոյ քո:
Պահեա՛ զիս որպէս բի՛բ ական. 'ի հովանի թևոց քոց, ծածկեսցես զիս* ⁹յերեսաց
ամպարշտաց ոյք տառապեցուցին զիս: Թշնամիք զանձն իմ պաշարեցին, ¹⁰'ի
ճարպս իւրեանց արգելան, և բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութիւն* :
¹¹Մերժեցին զիս և այժմ դարձեալ պատեցան զինև. ո՛ւշ եդին
խոնարհեցուցանել զիս յերկիր* : ¹²Համարեցան ինձ որպէս առևճ զի պատրաստ
է յորս, որպէս կորիւն առիճու զի նստի դարանեալ* : ¹³Արի՛ Տէր ժամանեա՛ նոցա
և խափանեա՛ զնոսա. փրկեա՛ զանձն իմ յամպարշտաց 'ի սրոյ՝ ¹⁴և 'ի ձեռանէ
թշնամւոյն: Տէր կորո՛ զնոսա յերկրէ, բաժանեա՛ և խափանեա՛ զնոսա 'ի կեանս
իւրեանց: Գաղտնեօք քովք լցան որովայնք նոցա, յագեցան կերակրովք և
թողին զմնացուածս տղայոց իւրեանց* : ¹⁵Ես արդարութեամբ երևեցայց երեսաց
քոց. յագեցայց յերևել փառաց քոց* : *Տունք. ԺԵ: Գորդայս. ԼԲ:*

17

**¹'Ի կատարած 'ի վերայ պատերազմօղ նահատակի ծառայի Տեառն Դաւթի: Զոր
խօսեցաւ ընդ Տեառն զբանս օրհնութեան. յաւուր յորում փրկեաց զնա Տէր 'ի
ձեռաց ամենայն թշնամեաց, և 'ի ձեռաց Սաւուղայ. և ասէ. ԺԵ* :**

²Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ, Տէր հաստատի՛չ իմ ապաւէն իմ և փրկիչ
իմ: ³Աստուած օգնական իմ և ես յուսամ 'ի նա. ապաւէն իմ եղջեր փրկութեան

* *Ոմանք.* Զի ո՛չ թողցես դու զան* : *Ոսկան.* Ցուցցես ինձ... լցուցցես զիս:

* *Ոմանք.* Զսիրտս իմ... և ո՛չ գտար յիս ա* :

* *Ոմանք.* Ես պահեցի զճանապարհս:

* *Ոմանք.* Եւ փրկես զայնոսիկ, ոյք:

* *Ոմանք.* Ընդ հովանեալ թևոց քոց ծած* :

* *Ոսկան.* Եւ 'ի ճարպս իւրեանց արգելին:

* *Ոմանք.* Ուս եդին խոնարհեցուցանել զիս:

* *Ոմանք.* Զի պատրաստի յորս:

* *Ոմանք.* Եւ 'ի ձեռաց թշնա* :

* *Ոմանք.* Յերևել երեսաց փառաց քոց:

* *Ոմանք.* Որ խօսեցաւ զօրհնութիւնս զայս յաւուր յո՛... 'ի թշնամեաց իւրոց, և 'ի ձեռաց
Սաւուղի:

իմոյ ընդունելի իմ է՝ ⁴Օրհնելով կարդացի առ Տէր, և ՚ի թշնամեաց իմոց
 ապրեցոյց՝ ⁵Շուրջ եղեն զինն երկունք մահու. և ուղխք անօրէնութեան
 խռովեցուցին զիս՝ ⁶Վիշտք դժոխսոց պաշարեցին զիս. և ժամանեցին ինձ
 որոգայթք մահու: ⁷Ի նեղութեան իմուն ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ
 աղաղակեցի: Լուաւ ինձ ՚ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց, և
 աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս նորա: ⁸Խռովեցաւ և դողաց երկիր՝ և
 հիմունք լերանց սասանեցան և խռովեցան՝ զի բարկացաւ ՚ի վերայ նոցա
 Աստուած: ⁹Ել ծուխ ՚ի բարկութենէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ, և
 փայլատակունք հատան ՚ի նմանէ: ¹⁰Խոնարհեցոյց զերկինս և եջ, և մէգ ՚ի
 ներքոյ ոտից նորա: ¹¹Ել ՚ի քրովբէս և թռեաւ, և սլացաւ նա ՚ի թևս հողմոց: ¹²Եդ
 զխաւարն ՚ի ծածկոյթ իւր, և շո՛ւրջ զնովաւ եմ յարկք իւր. և խաւարային ջուրք
 մինչև յամպս օդոց՝ ¹³Ի փայլատակել նորա առաջի նորա, ամպք անցուցին
 զկարկուտ և զկայծակունս հուր: ¹⁴Որոտաց Տէր յերկնից, և Բարձրեալն ետ
 զձայն իւր ՚ի կարկուտ և ՚ի կայծակունս հուր՝ ¹⁵Առաքեաց զնետս իւր և
 ցրուեաց զնոսա, յաճախեաց զփայլատակունս իւր և խռովեցոյց զնոսա: ¹⁶Երևեցան
 աղբւրք ջուրց, և յայտնեցան հիմունք աշխարհի: Ի սաստէ քունմէ
 Տէր, և ՚ի շնչել հոգւոյ բարկութեան քո: ¹⁷Առաքեաց ՚ի բարձանց և ընկալաւ զիս,
 ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց: ¹⁸Փրկեցէ զիս Տէր ՚ի թշնամեաց իմոց հզօրաց,
 և յատելեաց իմոց զի հզօր եղեն քան զիս: ¹⁹Ժամանեցին ինձ յաւուր
 չարչարանաց իմոց. եղև Տէր հզօրիչ իմ, ²⁰և եհան զիս յանդորր, և փրկեցէ զիս
 Տէր՝ զի կամեցաւ զիս: ²¹Յատուցէ ինձ Տէր ըստ արդարութեան իմուն. ըստ
 անբժութեան իմուն հատուցէ ինձ: ²²Ես պահեցից զճանապարհս Տեառն, և ո՛չ
 ամպարշտեցայց յԱստուծոյ իմմէ: ²³Ամենայն իրաւունք նորա առաջի իմ եմ.
 զարդարութիւն իւր ո՛չ ՚ի բացէ արար յինէն: ²⁴Եղէց և ես անբիծ ընդ նմա. և
 զգուշացայց յանօրէնութենէ իմմէ: ²⁵Յատուցէ ինձ Տէր ըստ արդարութեան
 իմուն, ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց իւրոց: ²⁶Ընդ սրբոյն՝ սո՛ւրբ
 եղիցես, ընդ առն անբժի՝ անբիծ եղիցես, ²⁷ընդ ընտրեալսն ընտրեալ եղիցես, և
 զթերսն կործանեցես: ²⁸Դու՝ զժողովուրդս խոնարհս կեցուցանես. և զաչս
 ամբարտաւանից դո՛ւ խոնարհեցուցանես: ²⁹Դու՝ լուսաւո՛ր առնես զճրագ իմ
 Տէր. Աստուած իմ լոյս արա ինձ ՚ի խաւարի: ³⁰Քև փրկեցայց ՚ի փորձութենէ,
 Աստուծով իմով անցից ընդ պարիսպս: ³¹Աստուած իմ անբիծ եմ ճանապարհք
 քո, և բանք Տեառն ընտրեալ եմ. և ապաւին ամենեցուն որ յուսան ՚ի նա:

* *Ոմանք.* Փրկութեան ընդունելի իմ է:

* *Ոմանք.* Կարդացից առ Տէր. և ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց: *Ուր ոմանք.* ապրեցոյց զիս:

* *Ոմանք.* Եւ ուխք ա՛:

* *Ոմանք.* Եդ զխաւարն ծածկոյթ իւր:

* *Յօրհիմակին.* Որոտեաց Տէր:

* *Ոմանք.* Յաւուրս չարչարանաց:

* *Ոսկան.* Եւ փրկեաց զիս Տէր:

* *Ոմանք.* Ըստ սրբութեան իմուն հատուցէ ինձ:

* *Ոմանք.* Եւ զարդարութիւն իւր:

* *Ոմանք.* Եւ զգուշացայց:

* *Ոմանք.* Առաջի աչաց նորա:

* *Ոմանք.* Եւ ընդ թիրսն թիրեցիս:

* *Ոմանք.* Լոյս առնես ինձ ՚ի խաւարի:

* *Ոմանք.* Անբիծ եմ ճանապարհք նորա... ոյք յուսան:

32Վասն զի ո՞վ է Աստուած բաց՝ ՚ի Տեառնէ, կամ ո՞վ է Աստուած բաց յԱստուծոյ մերնէ: 33Աստուած որ զգեցուցեր ինձ զօրութիւն՝ և եղիր յանթութեան զճանապարհս իմ: 34Յաստատեցեր զոտս իմ որպէս զեղջերուի, և ՚ի վերայ բարձանց կացուցեր զիս: 35Ուսուցեր զձեռս իմ ՚ի պատերազմ, և արարեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ: 36Ետուր ինձ զպաշտպանութիւն փրկութեան քոյ: Աջ քո ընկալաւ զիս՝ և խրատ քո կանգնեաց զիս ՚ի սպառ, և խրատ քո ուսուցէ զիս: 37Ընդարձակեցեր զգնացս իմ ՚ի ստորն՝ իմով. և ո՛չ տկարացան շաւիղք իմ: 38Յալածեցից զթշնամիս իմ և հասից նոցա, և ո՛չ դարձայց ՚ի նոցանէ՝ մինչև սպառեցից զնոսա: 39Նեղեցից զնոսա և այլ մի՛ կարասցեն կալ. և անկցին ՚ի ներքոյ ոտից իմոց: 40Որ զգեցուցեր ինձ զօրութիւն ՚ի պատերազմի. զյարուցեալսն ՚ի վերայ իմ ներքոյ իմ արարեր: 41Զթշնամիս իմ հալածականս արարեր, և զատելիս իմ սատակեցեր: 42Աղաղակեցին, և ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա. կարդացին առ Տէր և ո՛չ լուաւ նոցա: 43Սանրեցից զնոսա որպէս փոշի՝ առաջի հողմոյ. որպէս կաւ գռեհաց կոխեցից զնոսա: 44Փրկեսցէ զիս Տէր ՚ի հակառակութենէ ժողովրդոց, և կացուցէ զիս գլուխ հեթանոսաց: 45Ժողովուրդ զոր ո՛չ գիտի ծառայեաց ինձ. և ՚ի լուր ակընջաց լուաւ ինձ: 46Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց մաշեցան և կաղացան ՚ի շաւղաց իւրեանց: 47Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած, և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ: 48Աստուած որ խնդրէ զվրժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինն: Փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բարկացողաց, 49յայնցանէ որ յարուցեալ էին ՚ի վերայ իմ բարձր արարեր զիս, և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս: 50Վասն այսորիկ խոստովան եղեց քեզ ՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասացից: 51Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա, առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա, ընդ Դաւթի և ընդ զաւակի նորա ազգէ մինչև յազգ: *Տունք. Ծ: Կանոնս Գորդայս. Է: Սաղմոս. ԺԷ: Տունս. ՍԼԸ:*

18

1՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւթ. ԺԷ:

2Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ՝ հաստատութիւն: 3Օր՝ աւուր բղխէ զբան. և գիշեր՝ գիշերի՛ ցուցանէ զգիտութիւն: 4Ո՛չ են բանք և ո՛չ են խօսք, որոց ո՛չ լսին ծայնք նոցա: 5Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա:

* *Ոմանք.* ՚Ի ստորէ իմնէ. և *օրհնակ մի.* ՚Ի ստորուէ:
 * *Ոմանք.* Եւ մի՛ կարասցին կեալ:
 * *Ոմանք.* Զգեցուցեր ինձ. և *ոմանք.* Ո զգեցուցեր:
 * *Ոմանք.* Զթշնամին իմ... և զատելին իմ:
 * *Ոմանք.* Եւ որպէս կաւ գռեխաց:
 * *Այլք.* Եւ ՚ի լուր ականջաց:
 * *Ոսկան.* Աստուած է որ խնդրէ:
 * *Ոմանք.* Ոյք յարուցեալ են ՚ի վերայ իմ:
 * *Ոմանք.* Մեծ արասցէ զփրկութիւն թա՛... ընդ օծելոյ իւրոյ ընդ Դաւթ:
 * *Յօրհնակի մերում և եթ՝ յաւարտ իւրաքանչիւր կանոնաց եղեալ էին և օրհնութիւնքն սաղմոսարանին. զորովք զանց արարեալ աստանօր, թողունք կարգել յայլում վայրի:*
 * *Ոմանք.* Եւ գիշեր գիշերոյ ցու՛:

⁶Յարևու եհար զխորան իւր, և ինքն որպէս փեսայ զի ելանէ՛ յառագաստէ իւրմէ, և ցնծայ նա որպէս սկայ յընթանալ զճանապարհս իւր՝: ⁷Ի ծագաց երկնից՝ են ելք նորա, հանգիստ նորա մինչև ՚ի ծագս նորուն. և ո՛չ որ իցէ որ թաքիցէ ՚ի տապոյ նորա: ⁸Օրէնք Տեառն անբի՛ծ են և դարձուցանեն զհոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ, և իմաստուն առնէ զտղայս՝: ⁹Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց. երկեղ Տեառն սուրբ, և մնայ յաւիտեան՝: ¹⁰Դատաստանք Տեառն ճշմարիտ են, և արդար է նոյն՝: ¹¹Ցանկալի է նա քան զսկի՝ և քան զականս պատուականս բազումս, քաղցր է նա քան զմեղու խորիսխ: ¹²Քանզի ծառայ քո պահեսցէ զայս, ՚ի պահել նմա հատուցումն բազում՝: ¹³Ձյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ ՚ի միտ. ՚ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տէր, ¹⁴և յօտարէ պահեա՛ զծառայս քո: Ապա թէ ո՛չ տիրեսցեն ինձ, յայնժամ անբի՛ծ եղէց, և սուրբ եղէց ՚ի մեղաց մեծաց՝: ¹⁵Եղիցին քե՛զ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ. Տէր օգնական իմ և փրկիչ իմ: *Տունք. ԺԴ:*

19

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԺԹ:

²Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակովբայ: ³Առաքեսցէ քեզ Տէր օգնութիւն ՚ի սրբութենէ իւրմէ ՚ի Սիովնէ, և ընկալցի՛ զքեզ՝: ⁴Յիշեսցէ Տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի՛ արասցէ: ⁵Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում, և զամենայն խորհուրդս քո նա՛ կատարեսցէ: ⁶Ցնծասցուք մեք ՚ի փրկութեան քում, յանուն Աստուծոյ մերոյ մեք մե՛ծք եղիցուք. ⁷Լցուցէ Տէր զամենայն խնդրուածս քո. այժմ ծանեայք՝ զի կեցոյց Տէր զօծեալ իւր: Լուաւ սմա յերկնից ՚ի սրբութենէ իւրմէ, ՚ի զօրութիւն փրկութեան աջոյ իւրոյ: ⁸Սոքա կառօք և սոքա երիվարօք, այլ մեք զանուն Տեառն Աստուծոյ մերոյ կարդասցուք՝: ⁹Սոքա խափանեցան և անկան, մեք յարեա՛ք և ուղիղք եղաք՝: ¹⁰Տէր կեցո՛ զթագաւորն և լո՛ւր մեզ, յաւուր յորում կարդասցուք առ քեզ: *Տունք. Ժ:*

20

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. Ի:

²Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ՚ի փրկութեան քում ցնծասցէ՛ յոյժ՝: ³Ձցանկութիւն սրտի նորա ետո՛ւր նմա. և զկամս շրթանց նորա

* *Ոմանք.* Ընթանալ ՚ի ճանապարհս իւր:

* *Ոսկան.* Հաւատարիմ է. և ի՞նչ:

* *Ոմանք.* Արդարութիւնք Տեառն ուղիղ են, և ուրախ առնեն... սուրբ է, և մնայ:

* *Ոմանք.* Դատաստան Տեառն ճշմարիտ է, և արդար է ՚ի նոյն:

* *Ոմանք.* Ի պահել նորա հա՛:

* *Ոմանք.* Եւ յօտարէն պահեա՛:

* *Յօրինակին պակասէր.* ՚ի սրբութենէ իւրմէ ՚ի Սիովնէ:

* *Ոմանք.* Ձանուն Տեառն Աստուծոյ կարդասցուք:

* *Ոմանք.* Նոքա խափանեցան:

* *Ոմանք.* Եւ ՚ի փրկութեան քում ցն՛:

ո՛չ արգելեր ՚ի նմանէ: ⁴Ժաման արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քոյ, և եղիր ՚ի գլուխ նորա պսակ ՚ի քարէ՛ պատուականէ: ⁵Կեանս խնդրեաց ՚ի քէն և ետուր նմա ընդ երկայն աւուրս, յաւիտեանս յաւիտենից* : ⁶Մեծ են փառք նորա ՚ի փրկութեան քում. զփառս և զմեծվայելչութիւն դիցես ՚ի վերայ նորա: ⁷Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց: ⁸Թագաւոր յուսացաւ ՚ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի* : ⁹Գտցի՛ ձեռն քո ՚ի վերայ թշնամեաց քոց. և աջ քո գտցէ՛ զամենայն ատելիս քո: ¹⁰Դիցես զնոսա որպէս հնոց ՚ի հուր՝ ՚ի ժամանակի երեսաց քոց: Տէր բարկութեամբ իւրով խռովեցուցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա* : ¹¹Պտուղ նոցա յերկրէ կորիցէ, և զաւակ նոցա յորդոց ՚ի մարդկանէ: ¹²Խոտորեցան ՚ի քէն չարութեամբ. խորհեցան խորհուրդ զոր ո՛չ կարացին հաստատել* : ¹³Արասցես զնոսա հալածեալս, ՚ի մնացուածս քո պատրաստեսցես զերեսս նոցա: ¹⁴Բարձր լեր Տէր ՚ի զօրութեան քում. օրհնեսցուք, և սաղմոս սասացուք զօրութեան քում* : *Տունք. ԺԴ: Գորդայս. ԼԸ:*

21

1՚Ի կատարած. վասն առաւօտին օգնականութեանց. Սաղմոս ՚ի Ղաւիթ. ԻԱ* :

²Աստուած Աստուած իմ նայեաց առ իս, ընդէ՞ր թողեր զիս. հեռի՛ եղեր ՚ի փրկութենէ իմմէ՛ վասն բանից յանցանաց իմոց* : ³Աստուած իմ ՚ի տուէ կարդացի առ քեզ, և ինձ ո՛չ լուար. ՚ի գիշերի՛ և ինձ ո՛չ անսացեր: ⁴Դու ՚ի սուրբս բնակեալ ես, և զովեալ յԻսրայէլի* : ⁵Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան ՚ի քեզ և փրկեցեր զնոսա: ⁶Առ քեզ աղաղակեցին և կեցին, ՚ի քեզ յուսացան և ո՛չ ամաչեցին: ⁷Այլ ես ո՛րդն եմ և ո՛չ եմ մարդ, նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց: ⁸Ամենեքեան որ տեսանէին զիս արհամարհէին զինև, խօսէին շրթամբք՝ և շարժին զգլուխս իւրեանց: ⁹Յուսացաւ ՚ի Տէր և փրկեսցէ՛ զնա, կեցուցէ զնա զի կամի՛ զնա: ¹⁰Դու ես որ հանար զիս յարգանդի. յո՛յս իմ ՚ի ստեանց մօր իմոյ* : ¹¹Ի քեզ անկայ ես յարգանդէ յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ: ¹²Մի՛ ՚ի բացեայ առնիր յինէն, զի նեղութիւնք մերձեալ են, և ո՛չ ոք է որ օգնէ ինձ* : ¹³Շուրջ եղեն զինև զուարակք բազումք, և ցուլք գէրք պաշարեցին զիս: ¹⁴Բացին ՚ի վերայ իմ զբերանս իւրեանց, որպէս առևձ զի մռնչէ և յափշտակէ: ¹⁵Ես որպէս զջուր հեղայ՝ և ցրուեցան ամենայն ոսկերք իմ. և եղև սիրտ իմ որպէս մոմ հալեալ ՚ի մէջ որովայնի իմոյ: ¹⁶Չորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ, լեզու իմ ՚ի քի՛նս իմ կցեցաւ, և ՚ի հող մահու՛ իջուցին զիս* : ¹⁷Շուրջ եղեն զինև շո՛ւնք բազումք, և

* *Ոմանք.* Յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

* *Ոմանք.* Եւ ողորմութիւն Բարձրելոյն. նա մի՛ սասանեսցի յաւիտեան:

* *Ոմանք.* Որպէս հնոց հրոյ ՚ի ժամա՛:

* *Ոմանք.* Ձոր ո՛չ կարացեն հաստատել:

* *Ոմանք.* Եւ սաղմոս սասացուք զօրութեանց քոց:

* *Ոմանք.* Առաւօտին օգնականութեան:

* *Ոմանք.* Յեռի եղէ ՚ի փրկութենէ:

* *Ոմանք.* Եւ զովեալդ Իսրայէլի:

* *Ոմանք.* Որ հաներ զիս յարգանդէ:

* *Ոմանք.* Մի՛ ՚ի բացէ առնէր յինէն:

* *Ոմանք.* Որպէս զխեցի զօրութիւն իմ:

ժողովք չարաց պաշարեցին զիս: ¹⁸Ծակեցին զծեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. և նոքա հայեցան և տեսին զիս: ¹⁹Բաժանեցան զհանդերձս իմ ՚ի մէջ իւրեանց, և ՚ի վերայ պատմութեանի իմոյ վիճակս արկանէին*:²⁰Ղու Տէր մի՛ հեռի առներ զօգնականութիւն քո յինէն. և Տէր յօգնել ինձ նայեաց*:²¹Փրկեա՛ ՚ի սրոյ զանձն իմ, և ՚ի ձեռաց շանց զմիամօրութիւն իմ:²²Փրկեա՛ զիս ՚ի բերանոյ առիժու, և յեղջերէ միեղջերոյ զխոնարհութիւն իմ:²³Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից՝ զքեզ*:²⁴Երկիւղածք Տեառն օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն զաւակն Յակովբեան փառաւոր արասցեն զնա*:²⁵Երկիցէ՛ ՚ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայէլի, զի ո՛չ արհամարհեաց և ո՛չ անարգեաց Տէր զաղօթս աղքատիս, և ո՛չ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ՚ի կարողալ իմում առ նա լուաւ ինձ*:²⁶Ի քէ՛ն է գովութիւն իմ, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ: Զուխտս իմ կատարեցից առաջի ամենայն երկիւղածաց նորա*:²⁷Կերիցեն տնանկը և յագեսցին. օրհնեսցեն զՏէր որ խնդրեն զնա: Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից*:²⁸Երկեսցեն, և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի: Երկիր պագցեն նմա ամենայն տոհմք ազանց.²⁹Ղի Տեառն է արքայութիւն, և նա՛ տիրէ ՚ի վերայ ամենայն հեթանոսաց:³⁰Կերան և երկիր պագին նմա ամենայն պարարտք երկրի. առաջի նորա անկցին ամենեքեան որ իջանեն ՚ի հող*:³¹Անձն իմ նովա՛ւ կեայ. և զաւակ իմ ծառայեսցէ նմա:³²Պատմեցից զՏեառնէ ազգի՛ որ գալոցն է, պատմեսցեն զարդարութիւն ժողովրդեան որ ծնանելոցն իցէ զոր արար Տէր*:
Տունք. ԼԲ:

22

՚ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ո՛չ պակասեսցէ: ²Ի վայրի՛ դալարւոջ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս*:³Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ*:⁴Թէպէտ և զնացից ես ՚ի մէջ ստուերաց մահու, ո՛չ երկեայց ՚ի չարէ զի դու Տէր ընդ իս ես: Տուա՛ քո և զաւագան, նոքա մխիթարեսցեն զիս*:⁵Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակն յանդիման նեղչաց իմոց: Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:⁶Ողորմութիւն քո Տէր զիտ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ՚ի տան Տեառն ընդ երկայն

* *Ոսկան.* Բաժանեցին զհամ՝:
 * *Ոմանք.* Մի՛ հեռի առներ զօգնութիւն. *կամ՝* զգթութիւն քո յի՞:
 * *Ոմանք.* Յեղջերէ միեղջերոյ:
 * *Ոմանք.* ՚ի մէջ եկեղեցեաց օրհնե՞:
 * *Ոմանք.* Երկիւղածք Տեառն օրհնեսցեն զնա ամենայն:
 * *Ոմանք.* Ամենայն զաւակն Իսրայէլեան... զաղօթս աղքատին:
 * *Յօրհնակին.* ՚ի քէն է գովութիւն իմ:
 * *Ոմանք.* Ոյք խնդրեն զնա:
 * *Ոմանք.* Եւ երկիր պագցեն նմա ամենայն պարարտք:
 * *Ոմանք.* Պատմեսցի Տեառն ազգ որ գալոց իցէ... զարդարութիւն նորա... ծնանելոցն է զոր:
 * *Ոմանք.* Դալարւոջ անդ բնակեցոյց զիս, և ՚ի ջուրս համ՝:
 * *Ոմանք.* Զանձն իմ, և առաջնոր՞:
 * *Ոմանք.* Թէպէտ և զնացի ես:

աւուրս: *Տունք. Ը:*

23

¹Սաղմոս 'ի Դաւիթ. միաշաբաթունս. ԻԳ:

Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ամենայն բնակիչք նորա*։ ²Նա ինքն 'ի վերայ ծովո՛ւ հիմունս արկ նմա, 'ի վերայ գետոց պատրաստեաց զնա։ ³Ո՞վ ելցէ 'ի լեառն Տեառն, կամ ո՞վ կացցէ 'ի տեղոջ սրբութեան նորա։ ⁴Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ, որ ո՛չ առ զանրութիւնս յանձն իւր, և ո՛չ երդուաւ ընդ ընկերի իւրուն նենգութեամբ*։ ⁵Սա առցէ զօրհնութիւն 'ի Տեառնէ, զողորմութիւն յԱստուծոյ փրկչէ իւրմէ*։ ⁶Այս ազգ է որ խնդրէ զՏէր, խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակովբայ։ ⁷Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձցի՛ն դրունք յաւիտենից և մտցէ Թագաւոր փառաց։ *Հանգիստ:* ⁸Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեամբ իւրով, Տէր հզօր 'ի պատերազմի։ ⁹Համբարձէ՛ք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, համբարձցի՛ն դրունք յաւիտենից և մտցէ Թագաւոր փառաց։ ¹⁰Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր զօրութեանց. սա ինքն է Թագաւոր փառաց։ *Տունք. Ժ: Գորդայս. Ծ*:*

24

¹Ի կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ. ԻԴ:

Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ. ²Աստուած իմ 'ի քեզ յուսացայ՝ մի՛ ամաչեցից, ³և մի՛ ծիծաղեսցին զինև թշնամիք իմ: Ամենեքեան որ համբերեն քեզ մի՛ ամաչեսցեն*, ⁴այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց: Ջճանապահս քո Տէր ցոյց ինձ, և զշաւիղս քո ուսո՛ւ ինձ: ⁵Առաջնորդեա՛ ինձ 'ի ճշմարտութեան քուն և ուսո՛ւ զիս, զի դու ես Աստուած փրկիչ իմ. և ես քեզ համբերի զօրհանապագ*։ ⁶Յիշեա՛ Տէր՝ զգթութիւնս քո և զողորմութիւնս որ եմն յաւիտենից*։ ⁷Չմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա՛ զիս Տէր ըստ ողորմութեան քուն՝ վասն քաղցրութեան քոյ*, ⁸զի քաղցր և ուղիղ ես Տէր: Վասն այսորիկ օրէնսզէ՛տ առնես զմեղաւորս 'ի ճանապարհի, ⁹առաջնորդես՛ հեզոց 'ի դատաստանի. ուսուցանես՛ հեզոց զճանապահս քո*։ ¹⁰Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են այնոցիկ, որ խնդրեն զուխտ և զվկայութիւն նորա: ¹¹Վասն անուան քոյ Տէր քաւեա՛ զմեղս իմ զի բազում եղեն. ¹²ո՞վ է մարդ որ երկնչի 'ի Տեառնէ, օրէնսզէ՛տ առնէ զնա 'ի ճանապարհ յոր և հաճեցաւ*։ ¹³Անձն նորա 'ի բարութեան հանգիցէ, և զաւակ

* *Ոմանք.* Սաղմոս միաշաբաթուց Դաւթի:

* *Ոմանք.* Եւ ո՛չ երդուաւ նենգութեամբ ընկերի իւրուն:

* *Ոմանք.* Սա առցէ զօրհնութիւն 'ի Տեառնէ:

* *Յօրինակին բառս.* Գորդայ, *աստ և ստորև ուրեք ուրեք գրի՝* Գորդայ:

* *Ոմանք.* Ամենեքեան ոյք համբերեն քեզ:

* *Ոմանք.* Քեզ համբերեն զօրհանապագ:

* *Ոմանք.* Եւ զողորմութիւնս քո որ եմն:

* *Ոմանք.* Չմեղս մանկութեան և զանգիտութեան իմոյ... վասն քաղցրութեան քո Տէր:

* *Ոմանք.* Եւ ուսուցանես հեզոց:

* *Ոմանք.* 'Ի ճանապարհի յոր և հաճեցաւ:

նորա ժառանգեսցէ զերկիր: ¹⁴Ձօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց, և զկտակարանս իւր ուսուցանէ նոցա: ¹⁵Աչք իմ յամենայն ժամ առ Տէր. և նա՛ հանէ յորոգայթէ զոտս իմ՛: ¹⁶Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ, զի միամօր և աղքատ եմ ես: ¹⁷Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ, և ՚ի վշտաց իմոց հան՛ զիս: ¹⁸Տե՛ս զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն մեղս իմ: ¹⁹Տե՛ս զթշնամիս իմ զի բազում եղեն, ատելութիւն զոր ՚ի նամիր ատեցին զիս՝: ²⁰Պահեա՛ զանձն իմ և փրկեա՛ զիս, և մի՛ յամօթ եղէց զի յուսացայ ՚ի քեզ: ²¹Անբիծք և ուղիղք կցորդ եղեն ինձ, և ես քեզ համբերի՝: ²²Փրկեա՛ Աստուած զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա: *Տունք. ժԸ:*

25

¹Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԻԵ:

Ղա՛տ արա ինձ Տէր՝ զի ես յանբօութեան իմում գնացի, ՚ի Տէր յուսացայ զի մի՛ եղէց հիւանդ: ²Փորձեա՛ զիս Տէր և քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամո՛ւնս իմ և զսիրտ իմ՝: ³Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց, և հաճո՛յ եղէց ճշմարտութեան քում: ⁴Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ անօրէնս ես ո՛չ մտից: ⁵Ատեցի՛ ես զժողովս չարաց, և ընդ ամպարիշտս ես ո՛չ նստայց: ⁶Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով Տէր՝: ⁷Լսել ինձ զձայն օրհնութեան քոյ, և պատմել զամենայն սքանչելիս քո: ⁸Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց: ⁹Մի՛ կորուսանել ընդ ամպարիշտս զանձն իմ, և մի՛ ընդ արս արիւնահեղ զկեանս իմ՝: ¹⁰Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, և աջ նոցա լի՛ է կաշառօք: ¹¹Ես յանբօութեան իմում գնացի, փրկեա՛ զիս Տէր և ողորմեա՛ ինձ: ¹²Ոտն իմ կացցէ յուղղութեան, յեկեղեցիս մեծս օրհնեցի՛ց զքեզ: *Տունք. ժԲ:*

26

¹Սաղմոս ՚ի Դաւիթ. մինչև օծեալ էր. ԻԶ:

Տէր լո՛յս իմ և կեանք իմ ես յումէ՞ երկեայց. Տէր ապաւե՛ն կենաց իմոց ես յումէ՞ դողացայց: ²Ի մերձեմալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան՝: ³Թէ պատրաստեսցի ՚ի վերայ իմ պատերազմ, ո՛չ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ՝ սակայն և այսուիկ ՚ի քեզ Տէր յուսացայ՝: ⁴Զմի խնդրեցի ՚ի Տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակել ինձ ՚ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց: Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, և հրաման տալ ՚ի տաճարի նորա՝: ⁵Օածկեաց զիս

* *Ոմանք.* Յամենայն ժամ առ Տէր են:

* *Ոմանք.* Ատելութիւն որ ՚ի նամիր ատե՛:

* *Ոմանք.* Եւ ես քեզ համբերի՛ զօրհանապագ:

* *Ոմանք.* Եւ զսիրտս իմ:

* *Ոսկան.* Լուացից սրբութեամբ:

* *Այլք.* Մի՛ կորուսաներ ընդ ամպա՛: *Ոմանք.* Ընդ արս արիւնահեղս:

* *Ոմանք.* Ի մերձեմալ առ իս... զմարմինս իմ:

* *Ոմանք.* Սակայն և այսմիկ ՚ի քեզ Տէր:

* *Ոմանք.* Զմի խնդրեցի:

՚ի խորանի իւրում յաւուր չարի, ընդ յարկա՛ւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում*։ ⁶Ի վիմէ բարձր արարեր զիս, և այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց։ Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարա՛գ օրհնութեան, օրհնեցից և սաղմոս ասացից Տեառն*։ ⁷Լո՛ւր Տէր ձայնի իմում, զի կարդացի առ քեզ. ողորմեա՛ ինձ և լո՛ւր ինձ, ⁸զի քե՛զ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո Տէր խնդրեցին*։ ⁹Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ խտտորիր բարկութեամբ ՚ի ծառայէ քումնէ։ Օգնական իմ լէ՛ր Տէր, և մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս Աստուած փրկիչ իմ։ ¹⁰Չայր իմ և մայր իմ թողին զիս, և Տէր ընկալաւ զիս*։ ¹¹Օրէնսգէտ արա զիս Տէր ՚ի ճանապարհի քում, առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս*։ ¹²Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց։ Յարեան ՚ի վերայ իմ վկայք մեղաց, և ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց։ ¹³Չաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկիր կենդանեաց*, ¹⁴համբեր Տեառն և քաջալերեա՛ց. զօրացի՛ սիրտ քո և համբեր Տեառն։ *Տունք. ԺԶ։ Գորդայս. ԽԶ։*

27

Մաղմոս ՚ի Դաւիթ. ԻԷ։

Առ քեզ կարդացի Աստուած իմ, մի՛ լռեր յինէն. մի՛ երբէք լռիցես յինէն. զի մի՛ նմանիցեմ այնոցիկ որ իջանեն ՚ի գուբ*։ ²Լո՛ւր Տէր ձայնի խնդրուածաց իմոց յաղաչել ինձ առ քեզ, ՚ի համբառնա՛լ ձեռաց իմոց ՚ի տաճար սուրբ քո։ ³Մի՛ համարիիր ընդ անպարհիշտս զանձն իմ. մի՛ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն կորուսաներ զիս։ Ոյք խօսէին զխաղաղութիւն ընդ ընկերս իւրեանց, և չարութիւն է ՚ի սիրտս նոցա*։ ⁴Տո՛ւր նոցա Տէր ըստ գործս նոցա, ըստ անօրէնութեան գնացից նոցա հատո՛ւ նոցա։ Ըստ գործոց ձեռաց նոցա հատո՛ւ նոցա՝ զհատուցումն նոցա նոցին*։ ⁵Ո՛չ իմացան նոքա զգործս Տեառն, և ո՛չ ՚ի գործս ձեռաց նորա հայեցան. կործանեսցես զնոսա և այլ մի՛ շինեսցին։ ⁶Օրհնեալ է Տէր զի լուաւ ձայնի՛ աղօթից իմոց. ⁷Տէր օգնական իմ և պաշտպան իմ։ Ի՛նչ յուսացաւ սիրտ իմ, օգտեցաւ և զուարճացաւ մարմին իմ. և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։ ⁸Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ, ապաւեն փրկութեան օծելոյ իւրոյ։ ⁹Փրկեա՛ զժողովուրդս քո. և օրհնեա՛ զժառանգութիւնս քո, հովուեա՛ և բարձրացո՛ւ զնոսա մինչև յաւիտեան։ *Տունք. ԺԱ։*

28

* *Ոմանք.* ՚ի ծածկոյթ խորանի իւրոյ։

* *Ոսկան.* ՚ի վիմի բարձր արարեր։

* *Ոմանք.* Ձի քեզ անսաց սիրտ իմ։ *Ոսկան.* Ձերեսս քո Տէր խնդրեցից։

* *Ոմանք.* Եւ Տէր իմ ընկալաւ զիս։

* *Ոմանք.* Եւ առաջնորդեա՛։

* *Ոմանք.* Տեառն յերկրին կեն՞։

* *Ի լուս՞.* Առ քեզ Տէր կարդացի. *համաձայն ոմանց ՚ի բնար՞։* *Ոմանք.* Մի՛ երբէք լռեր յինէն. նմանիցեմ այնոցիկ ոյք։

* *Ոմանք.* Եւ մի՛ ընդ այնոսիկ... Ոյք խօսին։

* *Ոսկան.* Ըստ գործոց նոցա։

1Սաղմոս 'ի Դաւիթ. օրհնութեանց նաւակատեաց տաճարին. ԻԸ:

Սատուցէ՛ք Տեառն որդիք Աստուծոյ, մատուցէ՛ք Տեառն զորդիս խոյոց*:
2Սատուցէ՛ք Տեառն զփառս և զպատիւ, մատուցէ՛ք Տեառն զփառս անուան
նորա. և երկիր պագէ՛ք Տեառն 'ի սրահ սրբութեան նորա: 3Չայն Տեառն 'ի վերայ
ջուրց, և Աստուած փառօք որոտաց, և Տէր ինքն 'ի վերայ ջուրց բազմաց*: 4Չայն
Տեառն զօրութեանց, և ձայն Տեառն մեծ վայելչութեանց*: 5Չայն Տեառն փշրե՛
զմայրս. և մանրէ Տէր զմայրսն Լիբանանու: 6Մանրեսցէ՛ զնոսա որպէս
մատաղատունկն Լիբանանու, որ սիրելին է որպէս զորդիս միեղջերոյ*: 7Չայն
Տեառն հատանէ՛ զբոց հրոյ*. 8ձայն Տեառն շարժէ զանապատն, և
խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս*: 9Չայն Տեառն հաստատէ զեղջերուս,
և յայտնի առնէ զանտառս: 'Ի տաճարի նորա ամենայն որ ասեն զփառս նորա*:
10Տէր զջրհեղեղս զնստուցանէ՛ և ցածուցանէ, թագաւորեսցէ Տէր յաւիտեան*:
11Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ, և օրհնեսցէ զժողովուրդ իւր 'ի
խաղաղութիւն*: *Տունք. ժԱ:*

29

1Սաղմոս օրհնութեանց նաւակատեաց տաճարի 'ի Դաւիթ. ԻԹ*:

2Բարձր առնեն զքեզ Տէր զի ընկալար զիս. և ո՛չ ուրախ արարեր զթշնամին իմ
յիս: 3Տէր Աստուած իմ՝ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս 4Տէր հաներ 'ի
դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն 'ի գուբ: 5Սաղմոս
ասացէ՛ք Տեառն սուրբք նորա. խոստովան եղերուք յիշատակի սրբութեան
նորա: 6Սրտմտութիւն է 'ի բարկութեան նորա, և կեանք են 'ի կամաց նորա: Ընդ
երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն*: 7Ես ասացի 'ի
բարեկենդանութեան իմում, թէ ո՛չ սասանեցայց յաւիտեան: 8Տէր 'ի կամս քո
ետուր գեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ:
9Առ քեզ Տէր կարդացի, առ Աստուած իմ աղաչեցի*. 10Գի՞նչ օգուտ է քեզ յարեմէ
իմմէ, թէ իջանեն ես յապականութիւն: Սիթէ հող խոստովան՝ առնիցի առ քեզ,
կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւնս քո: 11Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղև
ինձ օգնական*: 12Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրծ, և ինձ
զգեցոյց զուրախութիւն: 13Որպէս սաղմոս ասացեն քեզ փառք իմ. և այլ մի՛

* *Ոմանք փոխանակ մերումս ունին զայս վերնագիր. 'Ի կատարած սաղմոս Դաւիթ.*

Յելանել և 'ի մտանել, և 'ի հարկանել զխորանն:

* *Ոմանք. Եւ Աստուած փառաց որոտաց:*

* *Ոմանք. Զօրութեամբ... մեծվայելչութեամբ:*

* *Ոմանք. Որպէս որդիս միեղջերու. կամ՝ միեղջերուի:*

* *Ոմանք. Զբոց 'ի հրոյ:*

* *Ոմանք. Զանապատն 'ի Կադէս:*

* *Ոմանք. 'Ի տաճարի նորա ամենայն ոք ասէ. կամ՝ ամենայն ոք ասէին փառս նմա:*

* *Ոմանք. Զջրհեղեղս նստուցանէ:*

* *Ոմանք. Տէր օրհնեսցէ զժողովուրդս իւր 'ի խաղաղութեան:*

* *Ոմանք. Նաւակատեաց տաճարին 'ի կատարած Դաւիթ:*

* *Օրհնակ մի. Սրտմտութիւն է 'ի բարկութեան նորա... առաւօտուց եղիցի:*

* *Ոմանք. Ես առ քեզ... առ Աստուածդ իմ աղաղակեցի, զինչ օ՞:*

* *Ոմանք. Եւ Տէր եղև իմ օգնական:*

զղջացայց, Տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ*։ *Տունք. ժԲ։*
Գորդայս. ԼԴ։

30

1^Ի Կատարած. նահատակութիւն գովութեան. Սաղմոս Ի Դաւիթ. Լ*։

2^Ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան, յարդարութեան քում փրկեա՛
զիս և ապրեցո՛ւ զիս*։ 3^Ի Խոնարհեցո՛ւ առ իս զունկն քո, վաղվադեա՛ կեցուցանել
զիս։ Լե՛ր իմ Աստուած պաշտպան և տո՛ւն ապաւինի ապրեցուցանել զիս* 4^Գ զի
հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։ Վասն անուան քոյ առաջնորդեցեր ինձ, և
սնուցեր զիս* 5^Ե և հանցես զիս յորոգայթ յայսմանէ որ թաքուցաւ ինձ։ Դու ես
պաշտպան իմ Տէր*, 6^Ե և ՚ի ձեռնս քո յանձն առնեմ զհոգի իմ։ Փրկեցեր զիս Տէր
Աստուած ճշմարտութեամբ քով. 7^Ե առեցեր զայնոսիկ որ պահեն զերկևղ ՚ի
սնոտիս*։ 8^Ե և ՚ի Տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց ՚ի փրկութեան քում։
Հայեցար ՚ի խոնարհութիւն իմ, և փրկեցեր ՚ի վշտաց զանձն իմ*։ 9^Ե և ո՛չ
մատնեցեր զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց, և կացուցեր յանդորրո՛ւ զոտս իմ։
10^Ո Ողորմեա՛ ինձ Տէր զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ՚ի սրտմտութենէ՛ ակն իմ՝ անձն
իմ և փոր իմ*։ 11^Պ Պակասեցան ՚ի ցաւոց կեանք իմ, և անք իմ յոգւոց ելանելոյ։
Աղքատացա՛ւ ՚ի տկարութենէ՛ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան*։ 12^Ք Քան
զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց՝ յոյժ ա՛հ և երկևղ
ծանօթից իմոց։ Ամենեքեան ոյք տեսանէին զիս, արտա՛քս փախչէին յինէն*։
13^Ս Սոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ՚ի սրտէ. և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ։
14^Ձ Ձի լուայ ես զբամբասանս բազմաց՝ ոյք շո՛ւրջ էին զինև, ՚ի ժողովել նոցա ՚ի
միասին առնուլ զանձն իմ խորհեցան*։ 15^Ա Այլ ես ՚ի քեզ Տէր յուսացայ։ Ասացի
դո՛ւ ես Աստուած իմ, 16^Ե և ՚ի ձեռս քո է ժառանգութիւն իմ։ Փրկեա՛ զիս ՚ի ձեռաց
թշնամեաց իմոց, և ՚ի հալածչաց իմոց։ 17^Ե Երևեցո՛ւ զերեսս քո ՚ի ծառայս քո.
ապրեցո՛ւ զիս Տէր ըստ ողորմութեան քում. 18^Տ Տէր մի՛ յամօթ եղէց զի կարդացի
առ քեզ։ Ամաչեսցեն ամպարիշտք և իջցեն ՚ի դժոխս. 19^Ե և համր եղիցին շրթունք
նենգաւորք ոյք խօսէին զարդարոյ զանհրաւութիւն, յամբարտաւանութեան և
յանկոսնել իւրեանց*։ 20^Ո Որպէս զի բազում է ողորմութիւն քաղցրութեան քո, Տէր,
զոր պահեցեր երկիւղածաց քոց։ Արարեր դու այնոցիկ ոյք յուսացեալ են ՚ի քեզ,

* *Ոմանք.* Եւ այլ մի՛ ևս զղջացայց. և *ոմանք.* Եւ մի՛ զղջաց՝։

* *Ոմանք.* Ի կատարած սաղմոս Դաւիթի, վասն զարմացման։ *Իսկ Ոսկան.* Սաղմոս Դաւիթի
օրհնութիւն նահատակութեան։

* *Ոմանք.* Փրկեա՛ և ապրեցո՛ւ զիս։

* *Ոմանք.* Ի կեցուցանել զիս։

* *Ոմանք.* Վասն անուան քո Տէր առաջնորդեցես ինձ, և սնուցես։

* *Ոմանք.* Ձոր թաքուցին ինձ։

* *Ոմանք.* Որ պահեն զերկևղ սնոտի։

* *Ոմանք.* Ձի հայեցար ՚ի խոնար՝։

* *Ոմանք.* Ի սրտմտութենէ՛ քումմէ՛ ակն իմ։

* *Ոմանք.* Պակասեցան ՚ի ցաւոց։

* *Յօրհնակին.* Նախատ դրացաց ի՞նչ։

* *Ոմանք.* Լուայ ես զբամբա՛... զինև, ժողովել նոցա։

* *Ոմանք.* Ոյք խօսին զարդարոյն... յամբարտաւանել և յանգոսնել։

առաջի որդւոց մարդկան*։ ²¹Ամրացուցեր զնոսա՝ ի ծածկոյթ երեսաց քոց, ՚ի խռովութենէ մարդկան։ Ծածկեցեր զնոսա ՚ի խորանի քուն, ՚ի հակառակութենէ լեզուաց*։ ²²Օրհնեալ է Տէր, զի սքանչելիս արար զողորմութիւն իւր ՚ի քաղաք ամուր։ ²³Ես ասացի ՚ի զարմանալ իմուն, թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։ Վասն այսորիկ լուար՝ ծայնի աղօթից իմոց, յաղաղակել իմուն առ քեզ*։ ²⁴Սիրեցէ՛ք զՏէր ամենայն սուրբք նորա, զի ստուգութիւն խնդրէ Տէր, և հատուցանէ այնոցիկ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն։ ²⁵Քաջալերեցարու՛ք և զօրացին սիրտք ձեր, ամենեքեան որ յուսացեալ էք ՚ի Տէր*։ *Տունք. ԻԸ*։

31

՚Իմաստութիւն ՚ի Դաւիթ. ԼԱ:

Երանի՛ ուն թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա*։ ²Երանի՛ առն որում ո՛չ համարեսցի Տէր զմեղս նորա, և ո՛չ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա*։ ³Լռեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանապազ ⁴ի տուէ և ՚ի զիշերի։ Ծանրեաց ձեռն քո՝ ՚ի վերայ իմ, դարձայ ՚ի թշուառութիւն զի հարան յիս փուշք*։ *Չանգիստ*։ ⁵Ձմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ո՛չ ծածկեցից ՚ի քէն։ Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամպարշտութիւնս մեղաց իմոց*։ *Չանգիստ*։ ⁶Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք, ՚ի ժամ ընդունելի։ Բայց միայն ՚ի շուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ո՛չ մերձեսցի*։ ⁷Դու ես ապաւն իմ ՚ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինև։ Տնծութիւն իմ փրկեա գիս յայնցանէ՝ որ պաշարեցին զիս*։ ⁸՚Իմաստուն արարից գքեզ և խելամո՛ւտ ՚ի ճանապարհ յոր և գնացես, և հաստատեցից ՚ի վերայ քո զաչս իմ*։ ⁹Սի՛ լինիք որպէս զձիս և զշորիս զի ո՛չ գոյ ՚ի նոսա իմաստութիւն. ՚ի սանձս և ՚ի դանդանաւանդս ճնլեցես զկզակս նոցա որ առ քեզ ինչ ո՛չ մերձեանան*։ ¹⁰Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ոյք յուսան ՚ի Տէր՝ ողորմութիւն Տեառն շո՛ւրջ եղիցի զնոքօք։ ¹¹Ուրախ եղերուք և ցնծացէ՛ք արդարք ՚ի Տէր, պարծեցարու՛ք ամենեքեան ոյք ուղիղ էք սրտիւք։ *Տունք. ԺԴ. Գորդայս. ԽԲ*։

*Ոմանք. Բազում արարեր զողորմութիւն քաղց՝։ *Յօրինակին պակասէր*. Ոյք յուսացեալ են՝ ՚ի քեզ։

*Ոմանք. Ամրացուցես զնոսա ի... ծածկեցես զնոսա ՚ի խորա՞ն։

*Ոմանք. Յաղաղակել ինձ առ քեզ։

*Ոմանք. Ոյք յուսացեալ էք ՚ի։

*Ոմանք. Սաղմոս իմաստութիւն Դաւիթի։ Երանի՛ որում թողութիւն ե՞։

*Ոմանք. Ոչ համարի Տէր։

*Ոմանք. Ի թշուառութիւն իմ. և ոմանք. ՚ի թշուառութենէ իմմէ, զի հա՞ն։

*Ոմանք. Ասացի թէ պատմեցից յինէն։

*Յօրինակին պակասէր. Յաղօթս կացցեն առ քեզ ամենայն։ *Ոմանք*. Առ նոսա ինչ ո՛չ մերձանան։

*Ոսկան. Որ շուրջ եղև զինև։

*Ոմանք. Ի ճանապարհի յոր և գնա՞ն։ *Յօրինակին*. Ի վերայ քո զաչս իմ։

*Ոմանք. Առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին։

Սաղմոս 'ի Դաւիթ. ԼԲ:

¹Յնծացէ՛ք արդարք 'ի Տէր՝ ուղղոց վայելէ օրհնութիւն*, ²խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ. տասնադէա՛ւ սաղմոսարանաւ սաղմո՛ս ասացէք նմա: ³Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր զի բարի՛ է, սաղմո՛ս ասացէք նմա օրհնութեամբ*: ⁴Ուղիղ են պատգամք Տեառն, և ամենայն ճանապարհք նորա հաւատովք են*, ⁵և սիրէ զողորմութիւն և զիրաւունս Տէր: Ողորմութեամբ Տեառն լի՛ եղև երկիր, ⁶և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա: ⁷Ժողովեաց որպէս 'ի տի՛կ զջուրս ծովու, և դնէ 'ի խոր զգանձս իւր*: ⁸Երկիցէ 'ի Տեառնէ ամենայն երկիր, և 'ի նմանէ դողասցեն ամենայն բնակիչք աշխարհի*: ⁹Նա՛ ասաց և եղեն, ի՛նքն հրամայեաց՝ և հաստատեցան*: ¹⁰Տէր ցրուէ՛ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ՛ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարիտ Տէր զխորհուրդս իշխանաց: ¹¹Խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ, խորհուրդ սրտի նորա ազգէ մինչև յազգ*: ¹²Երանի ազգի որոյ Տէր Աստուած օգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց 'ի ժառանգութիւն իւր*: ¹³Յերկնից նայեցաւ Տէր յամենայն որդիս մարդկան. ¹⁴'ի պատրաստ բնակութենէ իւրմէ՛ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի: ¹⁵Ո ստեղծ առանձին զսի՛րտս նոցա և 'ի միտ առնու զամենայն գործս նոցա*: ¹⁶Ո՛չ թէ 'ի բազում զօրս իւր ապրեցցի թագաւոր, և ո՛չ սկայ 'ի բազում զօրութեան իւրում: ¹⁷Սուտ է ձի 'ի փրկութեան իւրում. 'ի բազում զօրութեան իւրում ո՛չ ապրեցուցանէ զհեծեալն*: ¹⁸Աչք Տեառն 'ի վերայ երկիւղածաց իւրոց, և ոյք յուսան յողորմութիւն նորա: ¹⁹Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա. կերակրել զնոսա 'ի սովի*: ²⁰Անձինք մեր համբերեցցեն Տեառն, զի օգնական և պաշտպան մեր է: ²¹Ի՛նչ ուրախ եղիցին սիրտք մեր, և յանուն սուրբ նորա յուսացուք: ²²Եղիցի՛ ողորմութիւն քո Տէր 'ի վերայ մեր, որպէս յուսացա՛ք 'ի քեզ*: *Տունք. ժԹ:*

¹Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժամանակի զի այլագունեաց զերեսս իւր առաջի Արիմելիբայ. և ապա արծակեաց զնա, և զնաց. ԼԳ:

²Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ: ³Ի՛ Տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք, և ուրախ եղիցին: ⁴Մե՛ծ արարէք

* *Ոմանք դնեն 'ի վերայ սաղմոսիս.* Անվերնագիր 'ի Յեբրայեցոց:

* *Ոմանք.* Յօրհնութիւն նոր բարի, սաղմոս:

* *Ոմանք.* Եւ ամենայն գործք նորա հաւատովք:

* *Ոմանք.* Որպէս 'ի տիկս... և դնէ 'ի խորս:

* *Ոմանք.* Եւ 'ի նմանէ դողասցին:

* *Ոմանք.* Ձի նա ասաց՝ և:

* *Ոմանք.* Խորհուրդք Տեառն յաւիտեան մնան:

* *Ոմանք.* Օգնական է նորա:

* *Ոմանք.* Որ ստեղծ ա՛... նոցա. որ 'ի միտ առ՛:

* *Ոմանք.* Սուտ է ձի փրկութեան իւրում:

* *Ոսկան.* Կերակրել զնոսա 'ի սովու:

* *Ոմանք.* Որպէս յուսացաք մեր 'ի քեզ:

զՏէր ինձ, և բարձր արասցուք զանուն նորա՝ ի միասին: ⁵Խնդրեցի ՚ի Տեառնէ և լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս*։ ⁶Մատի՛ք առ Տէր և առէ՛ք զլոյս, և երեսք ձեր մի՛ ամաչեացեն*։ ⁷Այս աղբատ կարդաց առ Տէր, և Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա: ⁸Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ է զերկիւղածովք իւրովք, և պահէ զնոսա: ⁹Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք զի քաղցր է Տէր. երանեալ է այր որ յուսայ ՚ի նա: ¹⁰Երկերո՛ւք ՚ի Տեառնէ ամենայն սո՛ւրբք նորա. զի ո՛չ ինչ է պակասութիւն երկիւղածաց նորա: ¹¹Մեծամեծք՝ աղբատացան և քաղցեան. բայց ոյք խնդրեն զՏէր՝ մի՛ պակասեցէ ՚ի նոցանէ ամենայն բարութիւն: ¹²Եկայք որդիք իմ և լուարո՛ւք ինձ, և զերկեղ Տեառն ուսուցի՛ց ձեզ*։ ¹³Ո՞վ է մարդ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան*։ ¹⁴Լռեցո՛ւ զլեզու քո ՚ի չարութենէ. շրթունք քո մի՛ խօսեսցի զնենգութիւն*։ ¹⁵Խոտորեա՛ ՚ի չարէ և արա՛ զբարի, խնդրեա՛ զխաղաղութիւն և ե՛րբ զհետ նորա: ¹⁶Աչք Տեառն ՚ի վերայ արդարոց, ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա*։ ¹⁷Երեսք Տեառն ՚ի վերայ չարագործաց, սատակել յերկրէ զյիշատակս նոցա: ¹⁸Կարդացին արդարք առ Տէր՝ և Տէր լուաւ նոցա, յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա: ¹⁹Մերձ է Տէր առ այնոսիկ որ մաշեալ են սրտիւք, և զխոնարիս հոգուով կեցուցանէ*։ ²⁰Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, ²¹և պահէ զամենայն ոսկերս, նոցա և մի՛ ՚ի նոցանէ ո՛չ փշրեսցի*։ ²²Մահ մեղաւորի չար է. բայց որ ատեայ զարդար զղջացի*։ ²³Փրկէ Տէր զանձինս ծառայից իւրոց, մի՛ զղջացին ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նա*։ *Տունք. ԻԱ: Գորդայս. Խ:*

34

՚ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԼԴ:

¹Դատեա՛ Տէր զայնոսիկ ոյք դատին զիս. մարտի՛ր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ իս*։ ²Ա՛ռ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ. ³Իան՛ զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել՛ զնոսա. և ասա՛՛ դու ցանձն իմ թէ փրկութիւն քո ես եմ*։ ⁴Ամաչեացեն և յամօթ լիցին ոյք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեացեն, ոյք խորհէին ինձ չար*։ ⁵Եղիցին նոքա որպէս փոշի՛ առաջի հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեցէ զնոսա: ⁶Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար և ՚ի գայթազղութիւն. և հրեշտակ Աստուծոյ հալածեցէ զնոսա: ⁷Ի՛ նանիր թաքուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց, և ՚ի նանիր նախատեցին զանձն իմ:

* *Ոմանք.* Եւ յամենայն նեղութենէ իմ՝:
 * *Ոմանք.* Եւ առէք լոյս:
 * *Ոմանք.* Եկայք որդեակք իմ... և ես զերկիւղ Տեառն ու՛:
 * *Ոմանք.* Տեսանել ՚ի բարութիւն:
 * *Ոմանք.* Եւ շրթունք քո մի՛ խօսեսցին:
 * *Ոմանք.* Եւ ականջք նորա:
 * *Ոմանք.* Ձի մերձ է Տէր առ:
 * *Ոմանք.* Եւ մի ՚ի նոցանէ փշրեսցի. և *ոմանք.* Եւ մի ՚ի նոցանէ ո՛չ կորիցէ:
 * *Ոմանք.* Մահ մեղաւորին... որ ատէ: *Ուր ոմանք.* Ոյք ատեան զարդարն զղջացին:
 * *Ոմանք.* Ոյք յուսացեալ են ՚ի Տէր:
 * *Ոմանք.* Որ դատին զիս... ոյք մարտնչին:
 * *Ոմանք.* Եւ արգել զնոսա:
 * *Ոմանք.* Ոյք խնդրեն զանձն... որ խնդրէին ինձ չար:

⁸Չասցէ՛ ՚ի վերայ նոցա որոգայթ զոր ո՛չ գիտացին. և որս զոր թաքուցին՝ առցէ՛ զոտս նոցա, և յորոգայթ ՚ի նոյն անկցին*։ ⁹Այլ անձն իմ ցնծասցէ՛ ՚ի Տէր, ուրախ եղիցի ՚ի փրկութեան նորա. ¹⁰և ամենայն ոսկերք իմ ասասցեն. Տէր՝ ո՞վ նման է քեզ։ Չի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկ յայնցանէ որ յափշտակեն զնա*։ ¹¹Յարեան ՚ի վերայ իմ վկայք չարեաց. զոր ինչ ո՛չ գիտէի հարցանէին զիս*։ ¹²Չատուցին ինձ չար փոխանակ ընդ բարոյ. անժառանգել զանձն իմ խորհեցան յորդուոց ՚ի մարդկանէ*։ ¹³Ես ՚ի նեղել նոցա քո՛ւրձ զգեմուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ, և աղօթք իմ ՚ի ծոց իմ դարձցին։ ¹⁴Որպէս զեղբայր և զընկեր այնպէս հաճոյ լինէի, որպէս սգաւոր և տրտում այնպէս խոնարհ առնէի*։ ¹⁵Ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան, ժողովեցան յիս տանջանք և ես ո՛չ ծանեայ. ¹⁶ցրուեցան և ո՛չ զղջացան։ Փորձեցին զիս և արհամարհեցին, արհամարհանօք կրճտեցին ՚ի վերայ իմ զատամունս իւրեանց, ¹⁷Տէր ե՞րբ տեսցես։ Ի բաց արա զանձն իմ ՚ի խորամանկութենէ նոցա, և յառիժուց զմիամօրութիւն իմ։ ¹⁸Խոստովան եղէք քեզ Տէր յեկեղեցիս մեծս, և ՚ի ժողովս բազմաց օրհնեցից՝ զքեզ։ ¹⁹Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ ոյք ատէին զիս տարապարտուց. ակնարկի՛ առնէին յիս աչօք իւրեանց*։ ²⁰Ընդ իս զխաղաղութիւն խօսէին, և ինքեանք բարկութեամբ զնենգութիւն խորհէին։ ²¹Բացին ՚ի վերայ իմ զբերանս իւրեանց, և ասացին. Այո՛ այո՛ տեսին աչք մեր*։ ²²Տեսեր Տէր և մի՛ լռեր, Տէր՝ մի՛ ՚ի բացեայ առնիր յինէն*։ ²³Ձարթի՛ր և հայեաց Տէր յիրաւունս իմ, Աստուած իմ և Տէր իմ ՚ի դատաստանս իմ. ²⁴և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում Տէր Աստուած իմ։ Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, ²⁵և մի՛ ասասցեն ՚ի սիրոսս իւրեանց թէ վաշվաշ անձանց մերոց զի ընկլուզաք զնա։ ²⁶Ամաչեսցեն և յամօք լիցին ոյք խնդային ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգանս ոյք մեծաբանէին ՚ի վերայ իմ*։ ²⁷Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ ամենեքեան, ոյք կամին ընդ արդարութիւն իմ։ Ասասցեն յամենայն ժամ մե՛ծ է Աստուած. և ոյք կամին զխաղաղութիւն ծառայի քոյ*։ ²⁸Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո, զօրհանապազ զգովութիւնս քո*։

Տունք. Իէ:

35

¹Ի կատարած. ծառայի Տեառն. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԼԵ*:

²Ասէ անօրէնն ՚ի մեղանչել ընդ միտս իւր, թէ չի՞ք երկևղ Աստուծոյ առաջի

* *Ոմանք.* Որոգայթ զոր ո՛չ գիտացցեն. և որսն զոր թաքու՛։
 * *Ոմանք.* Տէր ո՛ նմանէ քեզ. փրկել զաղքատն ՚ի ձեռաց հզօրին։
 * *Բազումք.* Չարցանէին ցիս։
 * *Ոսկան.* Փոխանակ բարոյ... յորդուոց մարդկանէ։
 * *Ոմանք.* Այսպէս հաճոյ լինէի։
 * *Ոմանք.* Ատէին զիս ՚ի տարապարտուց, ակնարկի առնէին զիս։
 * *Ոմանք.* Այոյ այոյ տեսին աչք մեր։
 * *Ոմանք.* Մի՛ ՚ի բացէ առնիր։
 * *Ոսկան.* Ոյք խնդան ընդ չար... ոյք մեծաբանեն ՚ի վերայ իմ։
 * *Ոմանք.* Եւ ոյք կամին խաղաղութիւն ընդ ծառայի քո։
 * *Ոմանք.* Ջօրհանապազ զգոհութիւնս քո։
 * *Ոմանք.* Ի կատարած ծառային Տեառն Դաւիթ։

աչաց նորա*։ ³Նենգեաց առաջի նորա գտանել զանօրէնութիւն իւր, և ատել զնա*։ ⁴Բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն և նենգութիւն են։ Ո՛չ կամեցաւ նա իմանալ զբարի, ⁵զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրում։ Եկաց նա յամենայն ճանապարհ որ ո՛չ է բարի, և ՚ի չարէ նա ո՛չ ձանձրացաւ*։ ⁶Տէր յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս։ ⁷Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած. իրաւունք քո որպէս գխորս բազումս. զմարդիկ և զանասուն կեցուցանես դու Տէր*։ ⁸Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած. այլ որդիք մարդկան ՚ի հովանի թևոց քոց յուսասցին։ ⁹Արբեցցին նոքա ՚ի պարարտութենէ տան քոյ, և զուխս փափկութեան քո տացես ընպէլ նոցա*։ ¹⁰Ի քէն է Տէր աղբար կենաց, և լուսով երեսաց քոց տեսանենք զլոյս։ ¹¹Ծագեա՛ զողորմութիւնս քո ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո որ ուղիղ են սրտիւք։ ¹²Մի՛ եկեսցէ ՚ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուցեն զմեզ։ ¹³Անդ անկցին ամենեքեան ոյք գործեն զանօրէնութիւն, մերժեցան և այլ մի՛ կարասցին հաստատիլ*։ *Տունք. ԺԳ։ Գորդայս. Խ։*

Կանոնս Գորդայս. Է։ Սաղմոս. ԺԸ։ Տունս. ՍԶ։

36

¹Սաղմոս ՚ի Դաւիթ. ԼԶ*։

Մի՛ նախանձիր ընդ չարս. մի՛ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն։ ²Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեցցին. որպէս դալարի՛ խոտոյ վաղվաղակի անցցեն։ ³Յուսա՛ ՚ի Տէր՝ և արա՛ զքաղցրութիւն. բնակեա՛ յերկրի՛ և հովուեսցիս ՚ի մեծութեան նորա*։ ⁴Ժտեա՛ ՚ի Տեառնէ՝ և նա՛ տացէ քեզ զխնդրուածս սրտի քոյ*։ ⁵յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո և յուսա՛ ՚ի նա։ Նա արասցէ* ⁶և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, զիրաւունս քո որպէս զօր հասարակ։ ⁷Յնագանդ լեր Տեառն՝ և ծառայեա՛ նմա, և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ որոց առակեալ իցեն ճանապարհք իւրեանց ընդ մարդոյ որ գործէ զանօրէնութիւն*։ ⁸Լռեա՛ ՚ի բարկութենէ և հանգի՛ր ՚ի սրտմտութենէ, մի՛ նախանձիր ընդ չարս։ ⁹Զի չարք վաղվաղակի սատակեսցին. բայց ոյք համբերեն Տեառն նոքա ժառանգեսցեն զերկիր։ ¹⁰Փոքր մի և այլ ո՛չ ևս իցէ ամպարիշտն. խնդրեսցես

* *Ոմանք.* Ասէ անօրէնն մեղանչել ընդ միտս. չիք երկիւղ։

* *Ոմանք.* Յայտնեաց առաջի նորա գտա՛։

* *Ոմանք.* Եկաց նա յայն ճանապարհ որ։

* *Ոմանք.* Որպէս խորք բազումք։

* *Ոմանք.* Արբեցեն նոքա ՚ի պա՛։

* *Ոմանք.* Մերժեսցին, և այլ մի՛ կարասցեն հաս՛։

* *Երկուք ՚ի գրչագիր օրինակաց յայս սաղմոս ԼԶ որպէս և ՚ի ԵԺԸ և ՚ի ԵԽԴ դրոշմեն երբայական այփաբետս՝ Ալիփ, բեթ, և այլն. զորովք ընդ այլոց զանց առնէ մերս։*

Ոմանք. Եւ մի՛ ընդ այնոսիկ։

* *Ոմանք.* Եւ հովուեսցես ՚ի մե՛։

* *Յօրինակին պակասէր.* Եւ նա տացէ քեզ զխն՛։

* *Ոմանք.* Զի նա արասցէ... (6) և զիրա՛։

* *Ոմանք.* Որ գործեն զանօ՛։

գտեղի նորա և ո՛չ գտցես*։ ¹¹Այլ որ հեզքն են՝ նոքա՛ ժառանգեսցեն գերկիր, և փափկասցին՝ ՚ի բազում խաղաղութեան իւրեանց։ ¹²Սպասէ մեղաւոր արդարոյ, և կրճտէ՛ ՚ի վերայ նորա զատամունս իւր։ ¹³Այլ Տէր ծիծաղեսցի՛ զնովաւ։ Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա։ ¹⁴Սուր հանին մեղաւորք և լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել՝ զաղքատ և զտնանկ, սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ։ ¹⁵Սուրք նոցա մտցեն ՚ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին*։ ¹⁶Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ քան զբազում մեծութիւն մեղաւորաց*, ¹⁷և բազուկք ամպարշտաց խորտակեսցին։ Հաստատ Տէր զարդարս* ¹⁸և ճանաչէ զաւուրս անբժից, ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի։ ¹⁹Մի՛ ամաչեսցեն նոքա ՚ի ժամանակս չարութեան. այլ յաւուրս սովոյ յագեսցին*։ ²⁰Ահա մեղաւորք կորիցեն. այլ թշնամիք Տեառն ՚ի փառաւորել և ՚ի բարձրանալ իւրեանց պակասեսցին որպէս ծուխ զի պակասէ։ ²¹Փոխ առնու մեղաւորն և ո՛չ հատուցանէ. այլ որ արդարն է ողորմի և տայ։ ²²Ոյք օրինեն զՏէր՝ ժառանգեսցեն գերկիր, և ոյք անիծանեն սատակեսցին՝ ՚ի նմանէ*։ ²³Ի Տեառնէ ուղղին գնացք առն, զճանապարհս նորա նա՛ կամի յոյժ։ ²⁴Թէպէտ և գայթազեսցի, նա մի՛ կործանեսցի, զի Տէր ձեռնկալու է նորա։ ²⁵Սանուկ էի ես և ծերացայ, և ո՛չ տեսի զարդար արհամարհեալ, և ո՛չ զգաւակ նորա թէ մուրանայ՝ հաց։ ²⁶Ձօրհանապազ ողորմի և տայ փոխ, զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։ ²⁷Խոտորեա՛ ՚ի չարէ և արա՛ զբարի. բնակեսցես յաւիտեանս յաւիտենից ՚ի նմա։ ²⁸Տէր սիրէ զիրաւունս, և ո՛չ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր, այլ յաւիտեան պահէ զնոսա։ Անօրէնք հալածեսցին ՚ի միասին, և զաւակ ամպարշտաց սատակեսցի*։ ²⁹Այլ արդարք ժառանգեսցեն գերկիր, և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից ՚ի նմա։ ³⁰Բերան արդարոյ պատմէ զհմաստութիւն, և լեզու նորա խօսեսցի զիրաւունս*։ ³¹Օրէնք Աստուծոյ իւրոյ են ՚ի սրտի իւրուն, և մի՛ գայթազեսցին գնացք նորա։ ³²Հայի մեղաւորն ընդ արդար և խնդրէ սպանանել զնա, ³³այլ Տէր ո՛չ թողու զնա ՚ի ձեռս նորա, և ո՛չ դատապարտէ զնա յորժամ դատի զնա*։ ³⁴Համբէ՛ր Տեառն և պահեա՛ զճանապարհս նորա, և բարձր արասցէ զքեզ ՚ի ժառանգել գերկիր, և զսատակունմն մեղաւորաց տեսցես։ ³⁵Տեսի զամպարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրս Լիբանանու*։ ³⁶Անցի և ահա՝ ո՛չ էր, խնդրեցի՝ և ո՛չ գտաւ տեղի նորա։ ³⁷Պահեա՛ զանբժութիւն, և տես՛ զուղղութիւն. զի գո՛ն մնացուածք յառն խաղաղարարի*։ ³⁸Անօրէնք հալածեսցին ՚ի միասին, և զաւակ ամպարշտաց կորիցէ։ ³⁹Փրկութիւն արդարոց ՚ի Տեառնէ է, վերակացու է նոցա ՚ի ժամանակս նեղութեան։ ⁴⁰Օգնեսցէ նոցա Տէր և փրկեսցէ՛ զնոսա.

* *Ոմանք.* Փոքր մի ևս և այլ ո՛չ իցէ։

* *Ոմանք.* Ձի սուրք նոցա մտցեն։

* *Ոմանք.* Սակաւիկ ինչք ար՞։

* *Ոմանք.* Եւ բազուկք ամբարտաւանից։

* *Ոմանք.* Նոքա ՚ի ժամանակս նեղութեան։

* *Ոմանք.* Ոյք օրինեն զնա, ժա՞։

* *Ոմանք.* Եւ զաւակք ամ՞... սատակեսցին։

* *Ոմանք.* Բերան արդարոյ խորի զիմաս՞։

* *Ոմանք.* Դատապարտէ յորժամ և դատի։

* *Ոմանք.* Իբրև զմայրսն Լիբա՞։

* *Բազունք.* Մնացուածք առն խաղա՞։

ապրեցուցէ 'ի մեղաւորաց՝ և կեցուցէ՝ զնոսա զի յուսացան 'ի նա՝: *Տունք. ԼԸ:*

37

¹Սաղմոս 'ի Դաւիթ. առ 'ի յիշատակ շաբաթու. ԼԷ՞:

²Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս: ³Չի նետք քո հարան յիս, և յի՛ս հաստատեցա՛ւ ձեռն քո՞: ⁴Ո՛չ զոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերեսաց բարկութեան քոյ: Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց: ⁵Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ՞: ⁶Սեխեցան և փտեցան վէրք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ: ⁷Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ, զօրհանապազ տրտո՛ւմ զնայի՞, ⁸զի անձն իմ լի եղև չարչարանօք, և ո՛չ զոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ: ⁹Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ, մռնչէի՛ առ հեծութեան սրտի իմոյ: ¹⁰Տէր առաջի քո՛ է ամենայն ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ 'ի քէն ո՛չ ծածկեցաւ՞: ¹¹Սիրտ իմ խռովեցաւ յիս և եթո՛ղ զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց և այս ո՛չ եղև ընդ իս: ¹²Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի՛ եղեն յինէն՞: ¹³Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ ոյք խնդրէին չա՛ր 'ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւն և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան՞: ¹⁴Այլ ես որպէս խուլ զի ո՛չ լսէ, որպէս համր՝ որ ո՛չ բանայ զբերան իւր: ¹⁵Եղէ ես որպէս մարդ որ ո՛չ լսէ, և ո՛չ զոն խօսք 'ի բերան նորա՞: ¹⁶Ես 'ի քեզ Տէր յուսացայ, և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ: ¹⁷Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան՞: ¹⁸Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ: ¹⁹Չանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց: ²⁰Իսկ արդ թշնամիք իմ կենդանի՛ եմ, և զօրացեալ եղեն քան զիս. բազում էին ոյք ատէին զիս 'ի տարապարտուց՞: ²¹Ոյք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. չա՛ր խօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան՞: ²²Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ. և մի՛ 'ի բացեայ առնիր յինէն՞, ²³հայեաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ: *Տունք. ԻԱ:*

* *Ոմանք.* Ապրեցուցէ զնոսա 'ի մեղաց, և կե՞:

* *Ոմանք.* Առ 'ի յիշատակէ շաբ՞:

* *Ոմանք.* Հաստատեցան ձեռք քո:

* *Ոմանք.* Ծանրացաւ 'ի վերայ իմ:

* *Ոմանք.* Եւ խոնարհ եղէ մինչև յոյժ:

* *Ոմանք.* Քո են ամենայն ցանկութիւնք իմ:

* *Ոմանք.* Առաջի իմ մերժեցան և կացին:

* *Ոմանք.* Խորհեցան զանօրէնութիւն:

* *Ոմանք.* Եւ ո՛չ զոյ խօսք 'ի:

* *Ոմանք.* Մեծամեծս խորհեցան:

* *Ոմանք.* Եւ զօրացեալ են քան զիս, և բազում: *Ուր Ոսկան.* Եւ բազում են ոյք ատեն զիս տարա՞:

* *Ոմանք.* Ոյք հատուցանէին... զհետ արդարութեան իմոյ: *Ուր Ոսկան.* Չարախօսէին զինէն:

* *Ոմանք.* Եւ մի՛ 'ի բացէ առնիր:

1^ի կատարած յիդիթոմ օրհնութիւն. Ի Դաւիթ Սաղմոս. ԼԸ*:

²Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի՛ մեղայց լեզուաւ իմով: Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել մեղաւորին առաջի իմ: ³Խուլ եղէ և խոնարհեցայ. լռեցի ՚ի բարութենէ՝ և ցաւք իմ նորոգեցան յիս*:⁴Ձեռաւ սիրտ իմ ՚ի փորի իմում, և ՚ի խորհուրդս իմ վառեցաւ հուր: ⁵Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. Տոյց ինձ Տէր զկատարած իմ և զթիւ աւուրց իմոց քանի՞օ՞ն է, զի գիտացից թէ ո՞րչափ ինչ պակասեալ է յինէն: ⁶Ահա չափով եդիր զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ընդունայն է ամենայն մարդ մտելի*:⁷Ապաքէն որպէս ՚ի պատկերի՛ շրջի մարդ, սակայն զուր խռովի, գանձէ և ո՛չ գիտէ ում ժողովէ*:⁸Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ թէ ո՛չ դո՛ւ Տէր կամ կա՛ր զօրութեան իմոյ՝ թէ ո՛չ ՚ի քէն*:⁹Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս, նախատինս անզգամաց արարեր զիս: ¹⁰Խուլ եղէ և ո՛չ բացի զբերան իմ, զի դու արարեր*:¹¹Ի բաց արա յինէն զտանջանս իմ, զի ՚ի զօրութենէ ձեռին քոյ ես պակասեցայ: ¹²Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդիոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ: *Հանգիստ:* ¹³Լուր Տէր աղօթից իմոց, ո՛րնկնդիր խնդրուածաց իմոց, արտասուաց իմոց մի՛ լռեր: Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և անցաւոր որպէս ամենայն հարք իմ*:¹⁴Թո՛յլ արա ինձ զի հանգեայց մինչև՛ երթեալ իցեմ, ուստի այլ ո՛չ ևս գտանիցիմ*:
Տունք. ժե:

1^ի կատարած Սաղմոս Ի Դաւիթ. ԼԹ:

²Համբերելով համբերի՛ Տեառն, և նայեցաւ առ իս, ³և լուաւ աղօթից իմոց: Եհան զիս ՚ի գբոյ տառապանաց, ՚ի կաւոյ և ՚ի տղմոյ: Հաստատեաց ՚ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զգնացս իմ: ⁴Արկ ՚ի բերան իմ օրհնութիւն նոր, օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ: Տեսցեն բազումք և երկիցեն և յուսացին ՚ի Տէր. ⁵երանեալ է այր որոյ անուն Տեառն յոյս է նորա: Ո՛չ հայեցաւ նա ՚ի նանրութիւն, և ո՛չ ՚ի մոլութիւն սուտ: ⁶Բազում արարեր դու Տէր Աստուած իմ զսքանչելիս քո. խորհրդոց քոց ո՛չ որ է որ նմանէ քեզ: Պատմեցի և խօսեցայ և բազում եղեն քան զթիւ*:⁷ընդ զոհս և ընդ պատարագս ո՛չ հաճեցար, լսելիս հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղացն ո՛չ խնդրեցեր: ⁸Յայնժամ ասացի թէ ահաւասիկ գան ես, ՚ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ: ⁹Առնել զկամս քո Աստուած իմ կամեցայ, և զօրէնս քո ՚ի մէջ որովայնի իմոյ: ¹⁰Աւետարանեցից

* *Ոմանք.* Ի կատարած Եդիթովմայ. Սաղմոս:

* *Ոսկան.* Լուռ եղէ և խոնար՝: *Ի լուս*՝. Լռեցի ՚ի բարկութենէ:

* *Ոմանք.* Սակայն ամենևին ընդունայն է ամենայն:

* *Ոմանք.* Սակայն ՚ի զուր խռո՞:

* *Ոմանք.* Թէ ո՛չ ՚ի քէն է:

* *Ոմանք.* Լուռ եղէ, և ո՛չ բացի:

* *Ոմանք.* Որպէս զամենայն հարքն իմ:

* *Ոմանք.* Մինչև երթեալ իցեմ, և այլ ո՛չ ևս գտա՞:

* *Ոմանք.* Եւ ո՛չ որ է որ նման է:

զարդարութիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա՛ շրթունս իմ ո՛չ արգելից ՚ի քն: Տէր դու գիտացեր* ¹¹զի զարդարութիւնս քո ո՛չ ծածկեցի ՚ի սրտի իմում, զճշմարտութիւն քո և զփրկութիւն քո: Ասացի և ո՛չ թաքուցի զողորմութիւն քո, և ճշմարտութիւն քո ՚ի ժողովրդենէ մեծէ*: ¹²Այլ դու Տէր մի՛ հեռի առնէր զգթութիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցի զիս*: ¹³Շո՛ւրջ եղեն զինև չարք որոց ո՛չ էր նոցա թիւ, հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ո՛չ կարացի տեսանել: Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, և սիրտ իմ եթո՛ղ զիս*: ¹⁴Կամեաց Տէր փրկել զիս, և Տէր յօգնել ինձ նայեաց: ¹⁵Ամաչեսցեն և յամօթ լիցին ոյք խնդրէին զանձն իմ բառնալ զսա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որ խնդրէին ինձ չար*: ¹⁶Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի, որ ասէին ինձ Վա՛շ վա՛շ: ¹⁷Տնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ, ամենեքեան որ խնդրեն զքեզ Տէր: Ասացեն յամենայն ժամ մե՛ծ է Աստուած, և ոյք սիրեն զփրկութիւնս քո: ¹⁸Ես աղքատ և տնանկ եմ Աստուած խորհեա՛ զիս. օգնական և պաշտպան իմ, և դու Աստուած իմ մի՛ յամենար*: *Տունք. ԻԲ: Գորդայս. ԾԸ:*

40

1^Ի Կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. Խ:

²Երանի որ խորհի զաղքատն և զտնանկ, յաւուր չարի փրկէ՛ զնա Տէր*: ³Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի՛ առնէ զնա ՚ի վերայ երկրի, և ո՛չ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց: ⁴Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա: ⁵Ես ասացի Տէր ողորմեա՛ ինձ, բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ*: ⁶Թշնամիք իմ ասացին ինձ չար. Ե՞րբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նորա: ⁷Ստանէր տեսանել զանրութիւն, խօսէր ՚ի սիրտ իւր, ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր: Արտաքս ելանէր և զնոյն խօսէր*. ⁸զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ: Խորհեցան չար ՚ի վերայ իմ, ⁹բան անօրէնութեան եղին ՚ի վերայ իմ: Սիթէ որ ննջիցէն այլ ո՛չ ևս յաւելուցու յառնել*. ¹⁰Քանզի և այրն խաղաղութեան իմոյ յոր և եսն յուսացայ: Որ ուտէր զհաց իմ յաճախեաց առնել ինձ խաբէութիւն: ¹¹Այլ դու Տէր ողորմեա՛ ինձ կանգնեա՛ զիս, և հատուցից նոցա*: ¹²Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս, զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ*: ¹³Այլ զիս յանբժութեան իմում ընկալար. հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան: ¹⁴Օրինեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի:

* *Ոմանք.* Աւետարանեցի զար՛:

* *Ոմանք.* Ձողորմութիւնս քո. և զճշմարտութիւնս քո:

* *Ոմանք.* Դու Տէր մի:

* *Ոմանք.* Որոց ո՛չ գոյր նոցա թիւ:

* *Ոմանք.* Ոյք խորհէին ինձ չար:

* *Ոմանք.* Իմ ես. և դու Տէր իմ մի՛ յապաղեր:

* *Ոմանք.* Յաւուր չարէ փրկէ զնա:

* *Ոմանք.* Ձաճն իմ. մեղայ քեզ:

* *Ոմանք.* Տեսանէր զանրութիւն. խօսէր ՚ի սրտի իւրում. և ժողովեաց զանօրէնութիւն:

* *Ոմանք.* Ձի թէ որ ննջիցեն, և այլ ո՛չ ևս յաւելուցուն:

* *Ոմանք.* Եւ ես հատուցից:

* *Ոմանք.* Յայսմ ծանեայ: *Ուր Ոսկան.* զի հաճեցար ընդ:

Տունք. ԺԴ:

41

¹Ի կատարած. իմաստութեան որդւոցն Կորխայ. Սաղմոս 'ի Ղաւիթ. ԽԱՎ՝:

²Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած: ³Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հզօր և կենդանի. ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ: ⁴Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապագա՝ թէ ո՞ւր է Աստուած քո: ⁵Ձայս որպէս յիշէի տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տան Աստուծոյ: 'Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և 'ի ձայն բարեկենդանութեան: ⁶Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է: ⁷Անձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այնորիկ յիշեցի՛ զքեզ յերկրէն Յորդանանու, 'ի Յերմոնէ 'ի լեռնէ Փոքուէ՛: ⁸Խորք 'ի խորոց կարդացին առ քեզ, 'ի ձայն սահանաց քոց: Ամենայն զքօսանք քո, և ալիք քո անցին 'ի վերայ իմ՛: ⁹Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր, գիշերի զօրհնութիւն նոր. և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց՝: ¹⁰Ասացի Աստուծոյ. Ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ: ¹¹'Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ, յասել՛ ցիս զօրհանապագ թէ ո՞ւր է Աստուած քո: ¹²Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Տունք. ԺԳ:

42

¹Սաղմոս 'ի Ղաւիթ. ԽԲ:

Ղաւտ արա ինձ Աստուած, և իրա՛ւ արա ինձ 'ի դատաստանի իմուն: Յազգէ որ ո՛չ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ՛ նենգաւորէ՛ փրկեա՛ զիս: ²Դու Աստուած հզօրիչ իմ ես ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ: ³Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ հանցեն զիս 'ի լեռան սուրբ և 'ի յարկս քո՛: ⁴Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ: Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ: ⁵Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Տունք. Է: Գորդայս. ԼԴ:

43

* *Ոմանք.* Վասն իմաստութեան որդի՛:

* *Ոմանք.* Վասն այսորիկ յիշեցի... 'ի Յերմոնէ լեռնէ:

* *Ոմանք.* Խորք խորոց կար՛:

* *Ոմանք.* 'Ի գիշերի զօրհնութիւն:

* *Ոմանք.* Զի նոքա առաջնորդեսցեն ինձ, աճցեն զիս 'ի լեռան:

1^ի Կատարած. Իմաստութիւն որդւոցն Կորիսայ. Սաղմոս Ի Դաւիթ. ԽԳ*:

²Աստուած՝ ակընջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեզ: Գործն զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս*:³Ձեռն քո խլեաց զհեթանոսս՝ և զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս և հաներ զնոսա:⁴Ո՛չ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, և ո՛չ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա: Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լո՛յս երեսաց քոց, զի հաճեցար դու ընդ նոսա*:⁵Դու ինքն ես Թագաւոր իմ և Աստուած իմ, որ հրամայեցեր զփրկութեանցն Յակոբայ*:⁶Քն զթշնամիս մեր հարցուք, և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն ՚ի վերայ մեր:⁷Ո՛չ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ո՛չ սուր իմ կեցուցանէ զիս:⁸Այլ դու՛ փրկեցեր զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց, և զատելիս մեր յամօթ արարեր*:⁹Աստուծով պարծեսցուք զօրհանապագ, և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան:¹⁰Բայց արդ՝ մերժեցեր և անարգեցեր զմեզ. և ո՛չ ելեր Աստուած ընդ զօրս մեր:¹¹Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր, և ատելիք մեր յափշտակեցին զմեզ:¹²Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի զենումն, և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ*:¹³Վաճառեցեր զժողովուրդս քո առանց զնոյ, և ո՛չ զոյ թիւ աղաղակի մերոյ*:¹⁴Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. ծաղր և այլան կատականաց այնոցիկ որ շուրջ էին զմեք:¹⁵Արարեր զմեզ յառակս հեթանոսաց, ՚ի շարժել զգլուխս ժողովրդոց*:¹⁶Ձօր ամենայն նախատինք իմ առաջի իմ եմ, և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս:¹⁷Ի ձայնէ նախատորդին և չարախօսի, յերեսաց թշնամւոյն և հալածչի:¹⁸Այս ամենայն եկն ՚ի վերայ մեր, և մեք զքեզ ո՛չ մոռացաք և ո՛չ ստեցաք ուխտի քում, ¹⁹և ո՛չ դարձաք յետս սրտիւք մերովք: Դու դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանապարհաց քոց*,²⁰խոնարհ արարեր զմեզ ՚ի տեղի չարչարանաց, և ծածկեցին զմեզ ստուերք մահու:²¹Թէ մոռացեա՞լ իցէ մեր զանուն Աստուծոյ մերոյ, կամ ձգեալ իցէ զձեռս մեր յաստուածս օտարս*:²²Սակայն Աստուած խնդրէ զայս. զի Նա՛ քննէ զգաղտնիս սրտից մերոց: Վասն քո մեռանիմք զօրհանապագ, համարեցաք որպէս զոչխար ՚ի սպանումն*:²³Ձարթի՛ր ընդէ՞ր ննջես Տէր. արի՛ և մի՛ մերժեր զմեզ ՚ի սպառ: ²⁴Ձմէ՞ր դարձուցանես զերեսս քո ՚ի մէնջ, մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր*:²⁵Խոնարհ եղեն մինչև ՚ի հող անձիմք մեր. և յերկիր կցեցան մէջք մեր:²⁶Արի՛ Տէր օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ, վասն անուան քո: *Տունք. Իէ:*

* *Ոմանք.* Ի կատարած որդւոցն Կորիսայ սաղմոս իմաստութեան:

* *Ոմանք.* Ձգործսն զոր գործէ՛:

* *Ոմանք.* Ժառանգեցեն զեր՛:

* *Ոմանք.* Թագաւոր մեր և Աստուած մեր. հրամայեցեր փրկութեանցն:

* *Ոմանք.* Փրկեցեր զմեզ ՚ի թշնամեաց մերոց:

* *Ոմանք.* Որպէս զոչխար ՚ի սպանումն:

* *Ոմանք.* Առանց զնոց:

* *Ոմանք.* Ձմեզ առակս հեթ՛:

* *Ոմանք.* Սրտիւք մերովք. դարձուցեր:

* *Ոմանք.* Եթէ մոռացեալ... առ աստուածս:

* *Ոմանք.* Որպէս զոչխար ՚ի զենումն:

* *Ոմանք.* Մոռանալ զաղքատութիւն:

**1^ի կատարած. զառանցելոց ժամանակաց, որդւոցն Կորիսայ իմաստութեան.
Սաղմոս օրհնութեան վասն սիրելւոյն: ԽԴ*:**

²Բղխեսցէ՛ սիրտ իմ զպատգամս քո բարիս, և ասացից զգործս իմ թագաւորի: Լեզու իմ որպէս գրիչ արագագի՛ր դպրի՛*, ³գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան: Սփռեցան շնորհք ՚ի շրթանց քոց. վասն այնորիկ օրհնեա՛ց զքեզ Աստուած յաւիտեան*:⁴Ա՛ծ զսուր ընդ մէջ քո Յօօր, ⁵զվայելչութիւն գեղոյ քոյ: Լարեա՛ ուղղեա՛ և թագաւորեա՛՞ վասն ճշմարտութեան հեզութեան և արդարութեան, և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո*:⁶Նետք քո սրեալ են Յօօր, և ժողովուրդք ՚ի ներքոյ քոյ անկցին, ՚ի սիրտս թշնամեաց թագաւորի:⁷Աբռռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ:⁸Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն: Վասն այսորիկ օճ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեամբ, առաւել քան զընկերս քո*:⁹Ձմուռս և ստաշխն և կասիա ՚ի զգեստէ քումմէ, ՚ի տաճարաց փղոսկրէից, ուստի ուրախ արարին զքեզ ¹⁰դաստերք թագաւորաց ՚ի պատիւ քո: Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, ՚ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ և պաճուճեալ*:¹¹Լո՛ւր դուստր և տե՛ս՝ խոնարհեցո՛՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քոյ. ¹²զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ: Սա ինքն է Տէր քո՝ երկիր պազցես սմա, և դուստր Ծուրայ երկիր պազցէ սմա. և պատարագօք ¹³զերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք ժողովրդոց*:¹⁴Ամենայն փառք դաստեր թագաւորի ՚ի ներքոյ, ՚ի վերջաւորս ոսկեհուռն* ¹⁵զարդարեալ և պաճուճեալ: Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա, և զընկերս նորա տարցին նմա:¹⁶Աճցեն ցնծութեամբ և ուրախութեամբ և տարցին ՚ի տաճար թագաւորի, ¹⁷և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո: Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր, ¹⁸յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց: Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից*:
Տունք. ժԸ:

45

1^ի կատարած. որդւոցն Կորիսայ ՚ի վերայ գաղտնեաց. ԽԵ*:

²Աստուած մեր ապաւէ՛ն և զօրութիւն. օգնական ՚ի վերայ նեղութեանց որ գտին զմեզ յոյժ*:³Վասն այսորիկ ո՛չ երկիցուք մեք ՚ի խռովել երկրի, ՚ի փոփոխել լերանց ՚ի սիրտ ծովու*:⁴Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա, խռովեցան լերինք

* *Ոմանք.* Կորիսայ իմաստութեան. երգ վասն սիրելւոյն:

* *Ոմանք.* Բղխեսցա՛ սիրտ իմ զբանս բարիս, և ասացի. *կամ՝* ասեմ... երագագիր դպրի:

* *Ոմանք.* Ձամենայն որդւոց մարդկան... վասն այսորիկ օրհ՛:

* *Ոմանք.* Վայելչութեան և գեղոյ քո:

* *Ոմանք.* Իւղով ուրախութեան:

* *Ոմանք.* Ի հանդերձս յոսկեհուռն:

* *Ոմանք.* Մեծամեծք ՚ի ժողովրդոց:

* *Ոմանք.* Ի վերջաւորս յոսկեհուռն:

* *Ոմանք.* Եւ յիշեսցի:

* *Ոմանք յաւելուն.* Սաղմոս ՚ի Դաւիթ:

* *Ոմանք.* Ի սիրտս ծովու:

ի զօրութենէ նորա*։ ⁵Գնացք զետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն։ ⁶Աստուած ՚ի մէջ նոցա և նոքա մի՛ սասանեսցին. օգնեսցէ նոցա Աստուած ՚ի վաղորդայնէ մինչ ՚ի վաղորդայն*։ ⁷Խռովեցան հեթանոսք, և խոնարհ եղեն թագաւորութիւնք. ետ զձայն իւր Բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր*։ ⁸Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի՛ է մեր Աստուած Յակովբայ*։ ⁹Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ արար զնշանս և զարուեստս ՚ի վերայ երկրի։ ¹⁰Եհար՝ զպատերազմ ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զգէնս խորտակեաց և զասպարս այրեաց հրով։ ¹¹Կանխեսցէք և ծաներու՛ք զի ես եմ Աստուած. բարձր եղէց ՚ի հեթանոսս, և բարձրացայց ՚ի վերայ երկրի։ ¹²Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի՛ է մեր Աստուած Յակովբայ։ *Տունք. ԺԱ։ Գորդայս. ԾԶ։*

46

1՚ի կատարած. վասն որդւոցն Կորխայ. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԽԶ:

²Ծա՛փս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ՚ի ձայն ցնծութեան։ ³Տէր բարձրեալ և ահարկու, Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի*։ ⁴Յնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ, և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց*։ ⁵Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութիւն, զեղեցկութեանցն Յակովբայ զոր և սիրեաց*։ ⁶Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ*։ ⁷Սաղմո՛ս ասացէք Աստուծոյ մերում, սաղմո՛ս ասացէք Թագաւորին մերում սաղմո՛ս ասացէք։ ⁸Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմո՛ս ասացէք նմա օրհնութեամբ*։ ⁹Թագաւորեաց Աստուած ՚ի վերայ հեթանոսաց. Աստուած նստաւ յաթո՛ռ սրբութեան իւրոյ։ ¹⁰Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Աստուած Աբրահամու, զի Աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան*։ *Տունք. Թ։*

47

1Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորխայ. երկրորդ շաբաթու. ԽԷ:

²Մեծ է Տէր, և օրհնեալ է յոյժ, ՚ի քաղաք Աստուծոյ մերոյ, ՚ի լեառն սուրբ նորա։ ³Հաստարմա՛տ ցնծացէ ցնծութեամբ ամենայն երկիր. լերինք Սիոնի կողմանք հիւսւսոյ՝ քաղաք Թագաւորի մեծի։ ⁴Աստուած ՚ի տաճարի իւրում յայտնի, ՚ի ժամանակի որպէս օգնական լինէր նոցա*։ ⁵Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի

* *Ոմանք.* Կոչեցին և խռովեցան։
* *Ոմանք.* ՚ի վաղորդենէ մինչև ՚ի վաղորդեան։
* *Ոմանք.* Եւ խոնարհեցան թագաւորութիւնք։
* *Ոմանք.* Ընկալուչ է մեր Աստուած Յակովբայ։
* *Ոմանք.* Ձի Տէր բարձրեալ։
* *Ոմանք.* Ձժողովուրդս ՚ի մեզ։
* *Ոմանք.* Գեղեցկութիւն Յակովբայ։
* *Ոմանք.* Եւ Տէր մեր ՚ի ձայն փողոյ։
* *Բազումք.* Սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ։
* *Ոմանք.* Առ Աստուածն Աբրահամու։
* *Ոմանք.* Յայտնի է, ՚ի ժամանակի իբրև օգնական։

ժողովեցան, և անցին 'ի միասին: ⁶Ինքեանք տեսին այսպէս և զարմացան, խռովեցան սասանեցան, ⁷և դողուն կալաւ զնոսա: ⁸Անդ երկունք որպէս 'ի ծննդեան, 'ի հողմ սաստիկ փշրեցէ զնաւս 'ի Թարսիս: ⁹Որպէս լուաք՝ սոյնպէս և տեսաք, 'ի քաղաք Տեառն զօրութեանց 'ի քաղաք Աստուծոյ մերոյ: Աստուած հիմունս արկ նմա յաւիտեան*։ ¹⁰ընկալաք Աստուած զողորմութիւն քո 'ի մէջ ժողովրդեան քոյ: *Հանգիստ:* ¹¹Ըստ անուան քում սոյնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս, արդարութեամբ լի է աջ քո*։ ¹²Ուրախ եղիցի լեառն Սիոն, և ցնծացեն դստերք Յուդայ, վասն իրաւանց քոց Տէր: ¹³Շրջեցարուք զՍիոնիւ պաշարեցէք զնա, և պատեցէք զաշտարակս նորա*։ ¹⁴Որք զսիրտս ձեր 'ի վերայ զօրութեանց նորա, բաժանեցէք զամուրս նորա, զի պատմել կարասջիք յազգ յայլ: ¹⁵Սա է Աստուած Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից, և սա հովուեցէ՛ զմեզ մինչև յաւիտեան: *Տունք. ԺԳ:*

48

¹Ի կատարած որդւոցն Կորխայ. Սաղմոս օրհնութեան 'ի Դաւիթ. ԽԸ:

²Լուարուք զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքեան ոյք բնակեալ էք յաշխարհի: ³Ծնունդք երկրի և որդիք մարդկան 'ի միասին, մեծամեծք և տնանկք: ⁴Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և խորհուրդ սրտի իմոյ զհանճար: ⁵Խոնարհեցուցից յառակումն զունկն իմ. բացից զառակս օրհնութեան իսկզբանէ: ⁶Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի, զի անօրէնութիւնք զնացից իմոց շուրջ եղեն զինև: ⁷Յուսացեալք 'ի զօրութիւն իւրեանց, 'ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին*։ ⁸Եղբայր ո՛չ փրկէ՛ և ո՛չ փրկէ մարդ և ո՛չ տայ Աստուծոյ փրկանս*, ⁹և ո՛չ զգինս փրկանաց անձին իւրոյ: Վաստակեա՛ յաւիտեան, ¹⁰և կեցցես մինչ 'ի սպառ, և ո՛չ տեսցես զապականութիւն: Յորժամ տեսցես թէ իմաստունք մեռանին, 'ի միասին անզգա՛մք և անմիտք կորիցեն, ¹¹և թողցեն օտարաց զմեծութիւնս իւրեանց: ¹²Գերեզմանք տունք նոցա եղիցին յաւիտեան, և յարկք նոցա ազգէ մինչև յազգ, և կարդասցին անուանք նոցա 'ի հողս իւրեանց*։ ¹³Մարդ 'ի պատուի՛ էր և ո՛չ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա*։ ¹⁴Այս ճանապարհ է զայթազղութեան նոցա նոցին. յետ այսորիկ բերանօք իւրեանց հաճեսցին*։ ¹⁵Որպէս խաշն 'ի դժոխս մատնեսցին, և մահ հովուեցէ զնոսա, և տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս: Օգնութիւնք նոցա մաշեսցին 'ի դժոխս, և 'ի փառաց իւրեանց անկցին: ¹⁶Բայց սակայն Աստուած փրկեսցէ զանձն իմ 'ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունին զիս*։ ¹⁷Մի՛ երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա: ¹⁸Զի ո՛չ թէ՛ 'ի մեռանել իւրում առցէ՛

* *Ոմանք.* Նոյնպէս և տեսաք:

* *Ոմանք.* Ըստ անուան քում Աստուած, սոյնպէս... և արդարութեամբ:

* *Ոմանք.* ՁՍիոնիւ, և պահպանեցէք զնա. *կամ՝* պաշտպանեցէք նմա. և պատմեցէք յաշտարակս նորա:

* *Ոմանք.* 'Ի բազմութիւն մեծութեանց պարծես՛:

* *Ոմանք.* Եւ ո՛չ տայ Աստուծոյ զփրկանս իւր:

* *Ոմանք.* Գերեզմանք նոցա տունք նոցա եղի՛... և կարդասցին ան՛:

* *Ոմանք.* Հաւասարեաց անասնոց անմտից և:

* *Ոմանք.* Ճանապարհ է նոցա զայթազղութեան նոցին. յետ այ՛:

* *Ոմանք.* Յորժամ ընդունի զիս:

ընդ իւր զամենայն, և ո՛չ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա: ¹⁹Այլ անձն նորա ՚ի կեանս իւրում օրհնեսցի, խոստովան եղիցի քեզ յորժամ բարի արասցես դու նմա: ²⁰Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց. մինչև յաւիտեան լոյս մի՛ տեսցէ: ²¹Մարդ ՚ի պատուի՛ էր և ո՛չ իմացաւ, հաւասարեաց անասնո՛ց անբանից և նմանեաց նոցա՞: *Տունք. Ի: Գորդայս. ԽԲ:*

49

Մաղմոս ՚ի Դաւիթ. ԽԹ:

Աստուած աստուծոց Տէր խօսեցաւ, կոչեաց զերկիր յարևելից մինչ ՚ի մուտս արևու՞: ²Ի Սիովնէ մեծվայելչութիւն, փրկութեան գեղոյ նորա: ³Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, և Աստուած մեր մի՛ դադարեսցէ: Հուր առաջի նորա բորբոքեսցի, և շուրջ գնովաւ մրրիկ յոյժ: ⁴Կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ՝ և զերկիր ՚ի դատել զժողովուրդ իւր, ⁵ժողովել առ ինքն զսուրբս իւր, և ոյք դնեն զպատարագս ուխտից ՚ի վերայ սեղանոյ՞: ⁶Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա, զի Աստուած դատաւոր է: *Հանգիստ:* ⁷Լո՛ւր ժողովուրդ իմ և խօսեցայց ընդ քեզ, և Իսրայէլ քե՛զ վկայեցից. զի Աստուած Աստուած քո ես եմ: ⁸Ո՛չ թէ վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ. զի ողջակէզք քո առաջի իմ են յամենայն ժամ: ⁹Ո՛չ ընդունիմ ՚ի տանն քումնէ զուարակս, և ո՛չ ՚ի հօտից քոց նոխագս: ¹⁰Ի՛մ է ամենայն գազան անտառի, երէ լերանց և ամենայն անասուն՞: ¹¹Գիտե՛ն ես զամենայն թռչունս երկնից, զեղեցկութիւն վայրի ընդ իս է: ¹²Թէ քաղցայց, քեզ ինչ ո՛չ ասացից. զի ի՛մ է աշխարհ լրիւ իւրով՞: ¹³Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց, և ո՛չ զարիւն նոխագաց քոց ըմպեմ: ¹⁴Մատո՛ւ Աստուծոյ պատարագ օրհնութեան, կատարեա՛ւ Բարձրելոյն զուխտս քո՞: ¹⁵Կարդասցես առ իս յաւուր նեղութեան քո, ես փրկեցից զքեզ՝ և դու փառաւոր արասցես զիս՞: *Հանգիստ:* ¹⁶Սակայն մեղաւորին ասէ Աստուած. Իսկ դու ընչէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ՚ի բերան քո՞: ¹⁷Ձի դու ատեցե՛ր զխրատ իմ, մերժեցեր և յե՛տս ընկեցեր զամենայն բանս բերանոյ իմոյ: ¹⁸Թէ տեսանէիր զգողս ընթանայի՛ր ընդ նոսա, և ընդ շունս դնէիր զբաժին քո: ¹⁹Բերան քո յաճախէր զչարութիւն, և լեզու քո նիւթէր զնենգութիւն: ²⁰Նստեալ զեղբօրէ քումնէ չարախօսէիր, և ՚ի վերայ որդւոյ մօր քոյ դնէիր զգայթագղութիւն: ²¹Ձայս ամենայն արարեր և ես լռեցի քեզ. կարծեցեր անօրէնդ ՚ի մտի քում, թէ և ես քեզ նմանիցեմ: Արդ յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քո՞, ²²իմացարո՛ւք ամենեքեան որոց մոռացեալ իցէ զԱստուած: Գուցէ երբէք յափշտակիցիք, և ո՛չ ո՛ք իցէ որ փրկիցէ: ²³Պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս. և անդ է ճանապարհ ուր ցուցից նմա

* *Ոմանք.* Հաւասարեաց անասնոց անմտից և:

* *Ոմանք.* Մաղմոս յԱսափ... մինչև ՚ի մուտս:

* *Ոմանք.* Ի վերայ սեղանոյ նորա:

* *Ոմանք.* Ձի իմ է ամենայն գազան:

* *Յօրինակին.* Թէ քաղցայց: *Ոմանք.* Ընդ քեզ ինչ ո՛չ ասա՞:

* *Ոմանք.* Պատարագ օրհնութիւն, և կատարեա՛ւ Բարձրելոյն ուխտ զքեզ:

* *Ոմանք.* Կարդասցես դու առ իս:

* *Ոմանք.* Ձուխտս իմ ՚ի բե՞:

* *Ոմանք.* Եւ լռեցի քեզ:

50

1^Ի Կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ. 2^Ի ժամանակի զի եկն առ նա Նաթան մարգարէ, իբրև զի մտեալ էր նա առ Բերսաբէէ. Ծ*:

³Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս ինձ: ⁴Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ ինձէ. և 'ի մեղաց ինոց սո՛ւրբ արա զիս: ⁵Ձանօրէնութիւնս ինձ ես ինձէ՛ն գիտեմ, և մեղք իմ առաջի ինձ եմ յամենայն ժամ: ⁶Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի: Որպէս արդար եղիցես 'ի բանս քո, և յաղթող 'ի դատել քեզ*:
⁷Անօրէնութեամբ յղացաւ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր ինձ: ⁸Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ*:
⁹Յօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց*:
¹⁰Լսելի՛ արա ինձ ցնծութիւն և ուրախութիւն, և ցնծացեն ոսկերք իմ տառապեալք*:
¹¹Դարձո՛ գերեսս քո 'ի մեղաց ինոց. զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն*:
¹²Սիրտ սուրբ հաստեա՛ յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի ինձում*:
¹³Սի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զՅոգի Սուրբ քո մի՛ հաներ յինէն*:
¹⁴Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեամբ քով հաստատեա՛ զիս*:
¹⁵Ուսուցից անօրինաց զճանապահս քո, և ամպարիշտք առ քեզ դարձցին: ¹⁶Փրկեա՛ զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ. ցնծացէ՛ լեզու իմ յարդարութեան քում: ¹⁷Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո*:
¹⁸Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար*:
¹⁹Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ո՛չ արհամարիէ: ²⁰Բարի՛ արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպք երուսաղէմի: ²¹Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս*:
Տունք. Ի:

51

1^Ի Կատարած իմաստութեան. Սաղմոս 'ի Դաւիթ* . 2^Ի ժամանակի զի եկն Դովեկ

* *Ոմանք.* 'Ի ժամանակի յորժամ եկն առ նա... առ Բերսաբէէ կին Ուրիայ:
* *Ոմանք.* Եւ զչարիս իմ առաջի քո արա՛... և յաղթեսցես 'ի դատել քում:
* *Ոմանք.* Ձանյայտս և զգաղտնիս իմաստութեամբ քով ցուցեր ինձ:
* *Ոմանք.* Լուացայց և քան զձիւն:
* *Ոմանք.* Լսելի արա՛ ինձ Տէր զցնծ*:
* *Ոմանք.* Անօրէնութիւնս իմ ջնջեա՛ յինէն:
* *Ոմանք.* Հաստատեա յիս Աստուած:
* *Ոմանք.* Քո Սուրբ մի՛:
* *Ոմանք.* Այլ տուր ինձ... փրկութեան քո, և հոգւով պետութեան քո:
* *Ոմանք.* Բերան իմ պատմեսցէ զօրի՛:
* *Յօրհնակին պակասէր.* Բայց դու ընդ ողջակէզս:
* *Ոմանք.* Ուխտիւք պատարագս:
* *Ոմանք.* 'Ի կատարած սաղմոս. իմաստութիւն Դաւթի:

պատմեաց Սաւուղայ, թէ ահաւասիկ Դաւիթ ՚ի տան Աքիմելիքայ է. ԾԱ*:

³Ձի՞ պարծի ՚ի չարութեան հզօր զանօրէնութիւն* . ⁴Վորհանապազ զանհրաւութիւն խորհեցաւ ՚ի լեզուի իւրում: Որպէս զածելի սուր սրեա՛ց զնենգութիւն, ⁵սիրեաց զչարութիւն քան զբարութիւն, զանօրէնութիւն քան զխօսս արդարութեան* : ⁶Սիրեաց նա զամենայն խօսս կործանման, և զլեզուս նենգաւորս: ⁷Վասն այսորիկ Աստուած կործանեցէ զնա ՚ի սպառ, խլեցէ և հանցէ՛ զնա յարկաց իւրոց, և զարմատս նորա յերկրէն կենդանեաց: ⁸Տեսցեն արդարք և երկիցեն, զնովաւ ծիծաղեսցին և ասասցեն. ⁹Այս այր է որ ո՛չ արար զԱստուած իւր օգնական. այլ յուսացաւ սա ՚ի բազում մեծութիւն իւր, և զօրացաւ ՚ի նանրութեան իւրում* : ¹⁰Այլ ես որպէս ձիթենի պտղալի՛ց ՚ի տան Աստուծոյ. յուսացայ յողորմութիւն Աստուծոյ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից: ¹¹Խոստովան եղէք քեզ յաւիտեան զի արարեր. և համբերից անուան քում, զի քաղցր ես առաջի սրբոց քոց: *Տունք. Ը: Գորդայս. ԾԲ:*

52

՚ի կատարած. վասն Մաղաղեթայ. իմաստութիւն Դաւթի. ԾԲ:

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ո՛չ գոյ Աստուած* . ²ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց, և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն: ³Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱստուած: ⁴Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին, և անպիտանացան: Ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ՛ ոք մինչև ՚ի մի* : ⁵Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն: Ոյք ուտէին զժողովուրդ որպէս կերակուր հացի* , ⁶և առ Աստուած ո՛չ կարդացին: Անդ երկիցեն զերկևղ ուր ո՛չ իցէ երկևղ. զի Աստուած ցրուեցէ զոսկերս մարդահաճոյից: Անաչեսցեն և յամօթ լիցին, զի Աստուած անարգեաց զնոսա* : ⁷Ո՛ տացէ ՚ի Սիովնէ զփրկութիւն Իսրայէլի. ՚ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծացէ Յակովբ և ուրախ եղիցի Իսրայէլ: *Տունք. Թ:*

53

՚ի կատարած. ընդ օրհնութիւնս իմաստութիւն ՚ի Դաւիթ: ՚ի ժամանակի զի եկին Զիփացիքն, և ասեն ցՍաւուղ. Ահաւասիկ Դաւիթ թաքուցեալ նստի առ մեզ: ԾԳ:

³Աստուած յանուան քում կեցո՛ր զիս, և ՚ի զօրութեան քում իրա՛ւ արա ինձ:

* *Ոմանք.* Դովեկ Եղոմայեցի, պատմեաց Սաւուղի, և ասէ թէ եկն Դաւիթ առ Աքիմելէք:

* *Ոմանք.* Ձի՞ պարծիցի ՚ի չարութիւն հզօրն: *Ուր Ոսկան.* Յզօրն յանօրէնութեան:

* *Ոմանք.* Եւ զանօրէնութիւն քան:

* *Ոմանք.* ՚ի բազում զօրութիւն իւր:

* *Ոմանք.* Վասն Մաղաղեթայ իմաստութեան. Սաղմոս Դաւթի... ՚ի սրտի իւրում թէ չիք Աստուած. *կամ* թէ չգոյ Աստուած:

* *Ոմանք.* Ոք մինչև ցմի:

* *Ոմանք.* Զժողովուրդ իմ, որպէս կերակուր հացի:

* *Ոմանք.* Եւ առ Տէր ո՛չ կարդացին:

⁴Աստուած լուր աղօթից իմոց, ո՛րնկն դիր բանից բերանոյ իմոյ: ⁵Օտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց: ⁶Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունելի հոգւոյ իմոյ: ⁷Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա՛: ⁸Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. խոստովան եղէց անուան քում Տէր զի բարի է՛: ⁹Յամենայն նեղութենէ իմնէ փրկեցեր զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ: *Տունք. Է:*

54

¹Ի կատարած. ընդ օրհնութիւնս իմաստութեան. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԴ:

²Ո՛րնկն դիր Աստուած աղօթից իմոց, և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ: ³Նայեա՛ց առ իս և լուր ինձ. զի տրտմեցա՛յ ես ՚ի ձանձրանալ իմում և խռովեցայ: ⁴Ի ձայնէ թշնամւոյն և ՚ի նեղել մեղաւորի խտորեցան յիս անիրաւութեամբ. բարկութեամբ ոխս պահէին ինձ: ⁵Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկեղ մահու անկաւ ՚ի վերայ իմ: ⁶Ա՛հ և դողումն եկն ՚ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար: ⁷Ասէի տայր ոք ինձ թևս որպէս զաղաւնւոյ. զի թռչէի վերանայի՛, ⁸հեռացեալ դադարէի յանապատի: ⁹Ակն ունէի Աստուծոյ որ փրկէր զիս ՚ի կարճմտութենէ զայրանալոյ, ՚ի մրրկեալ նեղսրտութենէ՛: ¹⁰Ընկլո՛ Տէր և բաժանեա՛ զլեզուս նոցա, զի տեսի զանօրէնութիւն և զհակառակութիւն ՚ի քաղաքի: ¹¹Ի տուէ և ՚ի գիշերի շուրջ եղեն զպարսպօք նորա անօրէնութիւն. չարիք և մեղք են ՚ի մէջ նոցա. ¹²և ո՛չ պակասեաց ՚ի հրապարակաց նոցա վա՛շխ և նենգութիւն: ¹³Ձի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի՛ արդևք, կամ ատելոյն մեծաբանեալ էր ՚ի վերայ իմ՝ թաքչէի արդևք ՚ի նմանէ: ¹⁴Իսկ դո՛ւ մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ՛: ¹⁵Ապաքէն ՚ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր, զի գնայաք միաբանութեամբ ՚ի տան Աստուծոյ: ¹⁶Եկեսցէ մա՛հ ՚ի վերայ նոցա, և կենդանւոյն իջցեն ՚ի դժոխս. զի չարութիւն է ՚ի բնակութեան նոցա և ՚ի մէջ նոցա: ¹⁷Ես առ Աստուած կարդացի, և Տէր լուաւ ինձ՝ ¹⁸յերեկոյս՝ ՚ի վաղորդայն ՚ի հասարակ աւուր: Պատմեցի և ասացի և լուիցէ՛ ձայնի իմում՝. ¹⁹փրկեսցէ՛ խաղաղութեամբ զանձն իմ ՚ի մերձաւորաց իմոց, զի կարեօք հասին ՚ի վերայ իմ: ²⁰Լուիցէ Աստուած և խոնարհ արասցէ զնոսա, որ յառաջն է քան գլաւիտեանս: Ձի ո՛չ գոյր նոցա փոխանակ, և ո՛չ երկեան յԱստուծոյ: ²¹Չգեաց զձեռն իւր ՚ի հատուցանել նոցա, և նոքա պղծեցին՝ զօրէնս նորա՛: ²²Բաժանեցան ՚ի սրտմտութենէ երեսաց նոցա. և եհաս ՚ի սիրտս նոցա: Կակուղ էին բանք նոցա քան զձե՛թ, և ինքեանք էին որպէս սլաք՛: ²³Ընկեա՛ ՚ի Տէր զհոգս քո և նա կերակրէ զքեզ, և ո՛չ տայ

** Ոմանք. Դարձո՛ զչարն ՚ի թշնամիս իմ և ճշմար՛: Եւ ոմանք. Դարձուցանել զչարչարանս ՚ի թշնա՛:*

** Ոմանք. Անուան քում զի բարի է:*

** Ոմանք. Ասացի. Տայր ոք:*

** Ոմանք. Ի կարճմտութենէ և ՚ի զայրանալոյ, մրրկեալ ՚ի նեղսրտութենէ:*

** Ոմանք. Արդ դու մարդ: Եւ ոմանք. Իսկ արդ դու մարդ:*

** Ոմանք. Եւ ՚ի հասարակ աւուր:*

** Ոմանք. Եւ լուիցես ձայնի իմ՛:*

** Յօրհնակին պակասէր. Չգեաց զձեռն իւր ՚ի հա՛:*

** Ոմանք. Ի սրտմտութենէ երեսաց նորա: Եւ ոմանք. Երեսաց իւրեանց... Եւ ինքեանք*

յաւիտեան սասանութիւն արդարոյ՝²⁴Ռու Աստուած իջուցես զնոսա՝ ՚ի գուր ապականութեան, արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեցես զաւուրս իւրեանց. այլ ես ՚ի քե՛զ Տէր յուսացայ: *Տունք. ԻԲ: Գորդայս. ԼԸ:*

Կանոնս Գորդայս. Է: Սաղմոս. ԺԹ: Տունս. 3Ի:

55

1՚Ի կատարած վասն ժողովրդեանն, որ ՚ի սրբոյն հեռացեալ էին. ՚ի ժամանակի զի կալան զնա այլազգիքն ՚ի Գէթ. Յարծանագիր. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԵ՝:

²Ողորմեաց ինձ Աստուած զի կոխեաց զիս մարդ. զօրհանապազ պատերազմունք նեղեցին զիս՝³Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, բազում եղեն ոյք մարտնչէին ընդ իս ՚ի բարձանց՝⁴Ի տուէ ես ո՛չ երկեայց զի ՚ի Տէր յուսացայ. Աստուծով զովեցից զբանս իմ. ⁵յԱստուած յուսացայ և ո՛չ երկեայց զի՞ արասցէ ինձ մարդ՝⁶Զօրհանապազ զբանս իմ անարգեցին, զինէն էին խորհուրդք նոցա ՚ի չարութիւն: ⁷Պանդուխտք եղիցին և թաքթաքունք շրջեցին. նոքա գարշապարի իմուն սպասէին՝ որպէս սպասէին անձին իմոյ՝:

⁸Որպէս առջընչէ՛ մերժեցես զնոսա, բարկութեամբ զժողովուրդս հնազանդեցուցես: ⁹Աստուած՝ զկեանս իմ պատմեցի՛ց քեզ. եղից զարտասուս իմ առաջի քո որպէս խոստացար դու ինձ: ¹⁰Ղարձցին թշնամիք յետս իւրեանց, յաւուր յորում կարդացից առ քեզ: Ահա ծանեայ զի Աստուած իմ ես դու՛:

¹¹զԱստուած օրհնեցից ՚ի բանս իմ, և զՏէր զովեցից ՚ի խօսս իմ. յԱստուած յուսացայ և ո՛չ երկեայց զի արասցէ ինձ մարդ: ¹²Յինէն են ուխտք իմ, զոր տաց քեզ Աստուած օրհնութեամբ՝: ¹³Փրկեցեր՝ զանձն իմ ՚ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, զոտս իմ ՚ի գայթազդութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկիր կենդանեաց՝: *Տունք. ԺԱ:*

56

1՚Ի կատարած մի՛ ապականեր. ՚ի Դաւիթ արծանագիր. ՚ի ժամանակի զի փախուցեալ թաքուցեալ էր նա յերեսաց Սաւուղայ՝ յայրի՛ անդ. ԾԶ՝:

²Ողորմեա՛ ինձ Աստուած ողորմեա՛ ինձ, զի ՚ի քե՛զ յուսացաւ անձն իմ: ՚Ի

որպէս սլաք:

* *Ոմանք.* Սասանութիւն արդարոյն:

* *Ոմանք.* ՚Ի կատարած սաղմոս Դաւիթի վասն ժողովրդեանն որ ՚ի սրբութեանցն հեռացեալ էին: Յարծանագիր ՚ի ժամանակի, և այլն:

* *Ոմանք.* Պատերազմողք նեղեցին զիս:

* *Ոմանք.* Եւ բազումք էին ոյք մարդ:

* *Ոմանք.* Զի արասցէ ինձ:

* *Ոմանք.* Եւ թաքթաքուրք շրջես... իմուն սպասեցին. *կամ՝* սպասեցեն, որպէս և սպասէին անձին իմուն:

* *Ոմանք.* Թշնամիք իմ յետս... յորում և կարդացուրք առ քեզ:

* *Ոմանք.* Քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ:

* *Ոմանք.* Եւ զոտս իմ... յերկրին կենդանեաց:

* *Ոմանք.* ՚Ի Դաւիթ յարծանագիր:

հովանի թևոց քոց յուսացայց, մինչև անցցէ անօրէնութիւն՝: ³Աղաղակեցի առ Աստուած բարձրեալ, առ Աստուած բարերար իմ: ⁴Առաքեաց յերկնից և կեցոյց զիս. ե՛ր ՚ի նախատինս որ կոխէին զիս: Առաքեաց Աստուած զողորմութիւն և զճշմարտութիւն իւր՝, ⁵և փրկեաց զանձն իմ ՚ի միջոյ գազանաց, զի ննջէի ես խռովեալ: Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն և նե՛տք են, և լեզուք նոցա որպէս սուր սուսեր՝: ⁶Բարձրեալ ես դու յերկինս Աստուած, յամենայն երկրի են փառք քո՝: ⁷Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց, և խոնարհ արարին զանձն իմ. փորեցին առաջի իմ խորխորատ՝ և անկան ինքեանք ՚ի նոյն՝: ⁸Պատրաստ է սիրտ իմ Աստուած, պատրաստ է սիրտ իմ, օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք՝: ⁹Ձարթի՛ք փառք իմ զարթի՛ք սաղմոսիւք և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտուց: ¹⁰Խոստովան եղէք քեզ ՚ի ժողովուրդս Տէր, և սաղմոս ասացից քեզ յազինս՝: ¹¹Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո. մինչև յամպս է ճշմարտութիւն քո: ¹²Բարձրեալ ես դու յերկինս, յամենայն երկրի են փառք քո՝: *Տունք. ԺԳ:*

57

1՚ի կատարած. մի՛ ապականեր. յարձանագիր. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԷ:

²Թէ արդարև՝ զարդարութիւն խօսէիք, և ուղիղս դատէիք որդիք մարդկան՝: ³Քանզի և արդ իսկ ՚ի սրտի ձերում զանօրէնութիւն գործէիք յերկրի. անիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն՝: ⁴Օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ, խաբեցան յարգանդէ և խօսեցան սուտ: ⁵Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան օձին, որպէս իժի՛ և քարբի զի խցեալ է զականջս իւր՝: ⁶Ձի մի՛ լուիցէ նա զծայն թովչի ճարտարի, և մի՛ առցէ դեղ ՚ի դեղատուէ՛ իմաստնոյ՝: ⁷Աստուած փշրեցէ՛ զատամունս նոցա ՚ի բերանս իւրեանց, և զժանիս առիւծուց խորտակեաց Տէր: ⁸Անարգ եղիցին նոքա որպէս ջուր զի հեղու, ՚ի լարել աղեղան նորա տկարացին՝ ⁹որպէս մոմ զի հալի, և սպառեցին: Անկաւ հուր և ո՛չ տեսին զարև, ¹⁰մինչև ՚ի միտ առեալ էր զփուշս իւրեանց. որպէս դժնիկ բարկութեան կենդանւոյն կիզցէ զնոսա՝: ¹¹Ուրախ եղիցի արդար յորժամ տեսցէ զհատուցումն, և զձեռս իւր լուսացէ՛ յարեան մեղաւորի՝: ¹²Եւ ասացէ՛ մարդ, թէ արդարև՝ գուցէ՛ պտուղ արդարոյ, և է Աստուած որ դատի զնոսա յերկրի: *Տունք.*

* *Ոմանք.* Թևոց քոց յուսացայ:

* *Ոմանք.* Ոյք կոխէին զիս:

* *Ոմանք.* Որպէս սուր սուսերի:

* *Ոմանք.* Եւ յամենայն երկրի:

* *Բազումք.* Որոգայթ պատրաստ՝:

* *Ոմանք.* Օրհնեցից և սաղմոս ասացից քեզ փա՛:

* *Ոմանք.* Ասացից քեզ ՚ի հեթանոսս:

* *՚ի լուս՝.* Դու յերկինս Աստուած. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

* *Ոմանք.* Եթէ արդարև զարդարութիւն սիրէիք, և ուղիղ դատէիք:

* *Ոմանք.* Գործէք յերկրի, զանօրէնութիւն ձեռք ձեր նիւ՛:

* *Ոմանք.* Օձի, որպէս իժի և քարբի:

* *Ոմանք.* Եւ մի՛ առցէ նա դեղ:

* *Ոմանք.* Անարգք եղի՛:

* *Ոմանք.* Որպէս դժնիկ բարկութեամբ:

* *Ոմանք.* Արդարև ՚ի Տէր յորժամ տեսցէ զհատուցումն իւր:

58

1Ի կատարած մի՛ ապականեր. յարձանագիր. ՚ի ժամանակի զի առաքեաց Սաւուղ պաշարեաց զտուն նորա, զի սպանցէ՛ զնա: Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԸ:

²Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց Աստուած, յայնցանէ որ յարուցեալ եմ ՚ի վերայ իմ ապրեցո՛ զիս: ³Փրկեա՛ զիս յայնցանէ ոյք գործեն զանօրէնութիւն, յարանց արիւնահեղաց ապրեցո՛ զիս: ⁴Որսա՛լ զանձն իմ կանեցան, և հասին ՚ի վերայ իմ հօրք: ⁵Ո՛չ մեղք իմ և ո՛չ յանցանք, առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ՛: ⁶Ձարթի՛ր ընդ առաջ իմ և տես, դու Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի: Նայեաց և այց արա ամենայն հեթանոսաց, մի՛ ողորմիր ամենեցուն ոյք գործեն զանօրէնութիւն: ⁷Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք և շրջեսցին զքաղաքաւ՝: ⁸Նոքա ղօղանջեսցեն բերանովք իւրեանց, և սուր ՚ի շրթունս նոցա: Իսկ արդ ո՞վ լուաւ զայս՝, ⁹զի դու Տէր ծիծաղեսցի՛ս զնոքօք, և արհամարհեսցես զամենայն հեթանոսա: ¹⁰Ձգօրութիւն իմ առ քե՛զ պահեցից, զի Աստուած օգնական իմ է: ¹¹Աստուած իմ ողորմութիւն նորա կանխեսցէ առ իս, ¹²և Աստուած իմ ցուցցէ ինձ ՚ի թշնամիս իմ: Մի՛ սպանաներ զնոսա, զի մի՛ մոռացին զժողովուրդս քո: Յրուեա՛ զնոսա զօրութեամբ քով և ընկճեա՛ զնոսա. զի դո՛ւ ես պաշտպան իմ Տէր՝: ¹³Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա, ընկլցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց: Յանէծս և ՚ի ստութիւն մատնեսցին, ¹⁴ի կատարածի բարկութեան սպառեսցին, և մի՛ գտցին: Գիտացեն զի Աստուած տիրէ՛ Յակովբայ, և ամենայն ծագաց երկրի՛: ¹⁵Դարձցին ընդ երեկոյս, սովեսցին որպէս շունք և շրջեսցին զքաղաքաւ՝: ¹⁶Նոքա սփռեսցին յուտել, ապա թէ ո՛չ յագեսցին տրտնջեսցեն: ¹⁷Ես օրհնեցից զօրհնութիւնս Տեառն. ցնծացայց առաւօտուց յողորմութեան քում՝: ¹⁸Եղեր իմ պաշտպան և տուն ապաւինի, յաւուր նեղութեան իմոյ՝ ¹⁹օգնական: Քե՛զ սաղմոս ասացից Աստուած ապաւեն իմ, Աստուած ողորմութեան իմոյ՝: *Տունք. ԻԱ:*

59

1Ձառանցելոց ժամանակաց առ ուսմէ՛. **2**ի ժամանակի զի հրձիգ արար նա զՄիջագետս և զԱսորեստանն Սորողայ, և ՚ի դարձին հարկանէր Յովաբ զծորն

* *Ոմանք.* Ոչ մեղք և ո՛չ յանցանք:
* *Ոմանք.* Ընդ երիկոյս սովեսցին. որպէս շունք շրջեսցին զքա՛:
* *Ոմանք.* Նոքա ղօղանջեսցեն բերանօք իւրեանց, և սուր է ՚ի շր՞:
* *Ոսկան.* Եւ Աստուած իմ ցոյց ինձ: *Ոմանք.* Այլ ցրուեա՛ զնոսա զօրութեամբ:
* *Ոմանք.* Ի կատարածի բարկութեամբ... Գիտացին թէ Աստուած տիրէ:
* *Ոմանք.* Ընդ երիկոյս սովեսցին. որպէս շունք շրջեսցին զքա՛:
* *Ոմանք.* Առաւօտուց յողորմութիւնս քո:
* *Ոմանք.* Ձի եղեր իմ:
* *Ոմանք.* Օգնական իմ քեզ սաղ՞:
* *Ոմանք.* Սաղմոս Դաւթի. արձանագիր ՚ի կատարած զառանցելոց ժամանակաց առ ուսմանէ:

Աղտից յերկոտասան հազարս: Յարձանագիր. Սաղմոս 'ի Դաւիթ. ԾԹ*:

³Աստուած մերժեցեր և ակերեցեր զմեզ, բարկացար և գթացիս 'ի մեզ:
⁴Շարժեցեր զերկիր և խռովեցուցեր զսա. բժշկեա՛ զհարուածս սորա զի սասանեցաւ: ⁵Յուցեր ժողովրդեան քում խստութիւն, և ետուր ընպել մեզ զինի՛ յիմարութեան*:
⁶Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեցիս յերեսաց աղեղան:
⁷Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո՛ւ աջով քո և լո՛ւր մեզ*:
⁸Աստուած խօսեցաւ 'ի սրբութենէ իւրմէ, բարձր եղէց բաժանեցայց զՍիւքէմ, և զհովիտսն Յարկաց չափեցից*:
⁹Իմ է Գաղաադ և իմ է Մանասէ, Եփրեմ հզօրի՛չ գլխոյ իմոյ: Յուդայ թագաւոր իմ, ¹⁰Մովաբ աւազան յուսոյ իմոյ: Յեդոմէ՛ ուղղեցից զգնացս իմ, և ինձ այլազգիք հնազանդ եղեն:
¹¹Ո՛ տարցէ զիս 'ի քաղաք անուր, կամ ո՛ւ առաջնորդեցէ ինձ մինչև յեդոմէ*:
¹²Թէ ո՛չ դու Աստուած որ մերժեցեր զմեզ, և ո՛չ ելեր Աստուած ընդ զօրս մեր*:
¹³Տո՛ւր մեզ օգնութիւն 'ի նեղութեան, զի ընդունայն է փրկութիւն մարդոյ:
¹⁴Աստուծով արասցուք զօրութիւն, և նա արհամարհեցէ՛ զայնոսիկ որ նեղեն զմեզ*:
Տունք. ԺԳ:

60

'Ի կատարած ընդ օրհնութիւն. Սաղմոս 'ի Դաւիթ. Կ:

²Լո՛ւր Աստուած աղօթից իմոց, և նայեա՛ Տէր յաղօթս իմ: ³'Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ 'ի վաստակել սրտի իմոյ: 'Ի վիմէ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ*, ⁴իմ եղեր յոյս և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն*:
⁵Բնակեցայց ես 'ի յարկս քո յաւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց*:
⁶Դու Աստուած լուա՛ր աղօթից իմոց. ետուր ժառանգութիւն ոյք երկնչին յանուանէ քումմէ:
⁷Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի ամաց նորա, աւուրս ազգաց մինչև յազգս նորա*:
⁸Կայ և մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ ողորմութիւն, և ճշմարտութիւն ոյք խնդրեցեն 'ի նմանէ*:
⁹Այսպէս սաղմոս ասացից քեզ յաւիտեանս յաւիտենից, և տաց քեզ զաղօթս իմ օրըստօրէ*:
Տունք. Ը: Գորդայս. ԽԲ:

61

* *Ոմանք.* ՁՍիջագետս Ասորոց և զԱսորեստան և զՍուբա... աղտից ԴԾ և ԲԺ հազարաւ: *Յօրհնակին.* Հարկանէր Մովաբ զձորն:

* *Ոմանք.* Քում զխստութիւնս քո:

* *Ոմանք.* Աջով քո և լո՛ւր:

* *Ոմանք յաւելուն.* 'Ի սրբութենէ իմմէ. *ցնծացայց, բարձր եղէց բա՛:* *Ուր Ոսկան.* Բաժանեցից զՍիւքէմ:

* *Ոմանք.* Ո՛ տարցի զիս... կամ ո՛վ առաջ՛: *Ուր Ոսկան.* Մինչև յեդովմ:

* *Ոմանք.* Եթէ ո՛չ դու Աստուած, որ մերժեցեր. և ո՛չ ելեր ընդ զօրս մեր:

* *Ոմանք.* Արասցուք զզօրութիւն:

* *Ոմանք.* 'Ի ծագաց երկրի: *'Ի լուս՛.* 'Ի վիմի բարձր ա՛:

* *Ոմանք.* Եւ իմ եղեր... եղեր ընդ երեսաց թշնամ՛:

* *Ոմանք.* Բնակեցայ ես 'ի յարկս:

* *Ոսկան.* Աւուրք յազգաց: *Յօրհնակին պակասէր.* Մինչև յազգս *նորա:*

* *Ոմանք.* Աստուծոյ. զողորմութիւն և զճշմարտ՛:

* *Ոմանք.* Սաղմոս ասացից անուան քում յաւիտեանս յաւիտենից:

1¹Ի կատարած. Ի վերայ Իդիթովմայ. Սաղմոս Ի Դաւիթ. ԿԱ:

²Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի Ի նմանէ՛ է ինձ փրկութիւն:
³Նա է Աստուած իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ զի մի՛ սասանեցայց առաւել: ⁴Մինչև յե՞րբ յառնէք Ի վերայ մարդոյ՝ սպանանել ամենեքեան. որպէս զորմոյ՝ թիրեւոյ՝ և Ի ցանգոյ մերժելոյ՝: ⁵Բայց միայն զպատիւ իմ խորհեցան մերժել յինէն, և ընթացան Ի ծարաւս իւրեանց: Բերանօք իւրեանց օրհնէին, և սրտիւք իւրեանց անիծանէին: ⁶Բայց սակայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի Ի նմանէ՛ է ինձ համբերութիւն: ⁷Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ զի մի՛ սասանեցայց: ⁸ՅԱստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ. Աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ է՝ առ Աստուած: ⁹Յուսացարուք Ի նա ամենայն ժողովք ժողովորոց, սփռեցէ՛ք առաջի նորա զսիրտս ձեր, զի Աստուած օգնական է մեր յաւիտեանս ժամանակաց: *Հանգիստ:* ¹⁰Սակայն ընդունայն են որդիք մարդկան, սո՛ւտ են որդիք մարդկան, Ի կշիռս իւրեանց մեղանչեն, և ինքեանք յունայնութեան են Ի միասին: ¹¹Մի՛ յուսայք յանիրաւութիւն, յափշտակութեան մի՛ ցանկայք. մեծութիւն թէ առիւ գայցէ, մի՛ յօժարեսցին սիրտք ձեր: ¹²Միանգամ խօսեցաւ Աստուած, և երկուս զայս լուաք: ՅԱստուծոյ է զօրութիւն: ¹³և քո՛ Տէր ողորմութիւն. և դու հատուցանես իւրաքանչի՛ւր ըստ գործս նոցա: *Տունք. ԺԳ:*

62

1¹Սաղմոս Ի Դաւիթ. մինչ նստեր յանապատի Հրէաստանի. ԿԲ*:

²Աստուած Աստուած իմ ես առ քեզ առաւօտ առնեն. ծարաւեանց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ ևս և մարմին իմ: ³Որպէս երկիր անապատ և անջուր, ուր ո՛չ գոյ Ի նմա ճանապարհ: Այսպիսի՛ սուրբս երևեցայց քեզ, տեսանել ինձ զզօրութիւն քո և զփառս քո: ⁴Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, և շրթունք իմ զովեսցեն զքեզ: ⁵Այսպէս օրհնեցի՛ց զքեզ Ի կեանս իմ, և յանուն քո համբարձից զձեռս իմ: ⁶Որպէս Ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն իմ, շրթունք իմ ցնծութեամբ օրհնեսցէ զքեզ բերան իմ: ⁷Ձի թէ յիշէի զքեզ յանկողնի իմուն, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ: ⁸Ձի եղեր իմ օգնական, Ի հովանի թևոց քոց ցնծացայց: ⁹Եկն զկնի քո անձն իմ, և զիս ընկալաւ աջ քո. ¹⁰և նոքա Ի նանի՛ր խնդրեցին զանձն իմ: Սոցեն Ի ներքոյ

* *Ոմանք.* Որպէս յորմոյ թիրեւոյ, և Ի ցանկոյ մերժե՛ն:

* *Ոմանք.* Եւ սրտիւք անիծանէին:

* *Ոմանք.* Բայց միայն Աստուծոյ հնազանդ լիցի անձն իմ:

* *Ոմանք.* Ձի նա է Աստուած իմ:

* *Ոմանք.* Յոյս իմ առ Աստուած է:

* *Ոմանք.* Եւ Ի կշիռս իւր:

* *Ոմանք.* Եւ մեծութիւն թէ առուիւ. *կամ՝* առուով գայցէ:

* *Ոմանք.* Եւ երկուս զայս լուաք:

* *Ոմանք.* Աստուծոյ է զօրութիւն:

* *Ոմանք.* Աղօթք Դաւիթ մինչ էր նա յանապատն Հրէաս:

* *Ոմանք.* Ծարաւի է առ քեզ հո՛:

* *Բազումք.* Երկիր յանապատ անջուր, ուր... այսպէս Ի սուրբս երևեցայց քեզ. Ի տեսանել ինձ զզօրութիւնս և զփա՛:

* *Ոմանք.* Եւ շրթամբք ցնծութեամբ:

անդնդոց երկրի*, ¹¹մատնեցին 'ի ձեռս սրոյ, և բաժինք աղուեսուց եղիցին*:
¹²Թագաւոր յուսացաւ 'ի Տէր, գովեսցին անենեքեան որ երդնուն նովաւ, խցցին
բերանք այնոցիկ ոյք խօսէին զանհրաւութիւն*:
Տունք. ժԱ:

63

¹Ի կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ. ԿԳ:

²Լո՛ւր Աստուած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն
փրկեա՛ զանձն իմ: ³Ծածկեցես զիս 'ի ժողովոց չարաց, 'ի բազմութենէ ոյք
գործեն զանօրէնութիւն*:
⁴Ոյք սրեցին որպէս սուսե՛ր զլեզուս իւրեանց, լարեցին
զաղեղունս իւրեանց յիրս դառնութեան: ⁵Չգել 'ի գաղտնիս այնոցիկ ոյք ուղիղ
են սրտիւք, ⁶յանկարծակի ձգեսցեն 'ի նոսա և մի՛ երկիցեն: Ոյք զօրացուցին
յանձինս իւրեանց զբանս չարութեան, խորհեցան թաքուցանել ինձ որոգայթ և
ասացին ո՛չ տեսանէ զայս Տէր: ⁷Քննեցին զանօրէնութիւն, պատրաստեցան 'ի
քննել զքննութիւն: ⁸Մատիցէ այր՝ 'ի խորութիւն սրտի իւրոյ, և բա՛րձր եղիցի
Աստուած*:
⁹Նետք տղայոց եղեն վէրք նոցա, տկարացան 'ի նոսա լեզուք
իւրեանց. և խռովեսցին անենեքեան ոյք հային ընդ նոսա*:
¹⁰Երկեաւ ամենայն մարդ և պատմեցին զգործս Աստուծոյ, զարարածս նորա 'ի միտ առին*:
¹¹Ուրախ եղիցի արդար 'ի Տէր, և յուսացին 'ի նա. նովաւ գովեսցին
անենեքեան ոյք ուղիղ են սրտիւք*:
Տունք. ժ: Գորդայս. ԼԴ:

64

**¹Ի կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ. օրհնութիւն Երեմիայի Եգեկիելի՝ և
ժողովրդեանն յորժամ 'ի պանդխտութենէն կամէին ելանել. ԿԴ*:**

²Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած 'ի Սիովն, և քեզ տացին աղօթք
յերուսաղէմ*:
³Լո՛ւր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ: ⁴Բանք
անօրինաց զօրացան 'ի վերայ մեր, զամպարշտութիւնս մեր դու քաւեսցես*:
⁵Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցեն 'ի գաւիթս քո: Լցցո՛ւք մեք 'ի
բարութենէ տան քոյ, սուրբ է տաճար քո* ⁶Աքանջելի արդարութեամբ: Լո՛ւր մեզ
Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ 'ի ծով հեռի: ⁷Ո
պատրաստ զլերինս զօրութեամբ իւրով, և զգեցեալ է զօրութիւն: ⁸Ո
խռովեցուցանէ զմեծութիւն ծովու, և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

* *Ոմանք.* Այլ նոքա 'ի նամիր խնդրեցին:

* *Ոմանք.* 'ի ձեռն սրոյ:

* *Ոմանք.* Ոյք երդնուին նովաւ... որ խօսին զանօրէնութիւն:

* *Ոմանք.* Ծածկեցեր զիս 'ի ժողո՛:

* *Ոմանք.* Խորութեամբ սրտի իւրոյ:

* *Ոմանք.* Լեզուք նոցա, և խռովեցան անենեքեան ոյք հայէին ընդ նոսա:

* *Ոմանք.* Մարդ 'ի պատմել զգործս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա 'ի միտ:

* *Ոմանք.* Արդարն 'ի Տէր, և յուսացի 'ի նա:

* *Ոմանք.* Երգ Երեմիայ Եգե՛... 'ի պանդխտութենէ անտի կամէին ե՛:

* *Ոմանք.* Եւ քեզ տարցին աղօթք յերուսաղէմ:

* *Ոմանք.* Եւ զամպարշ՛:

* *Ոմանք.* Ջորս ընտրեցեր ընկալար:

⁹Խռովեցսին հեթանոսք, և երկիցեն բնակիչք երկրի 'ի նշանաց քոց: Յելս առաւօտու և ընդ երեկոյս զուարճացին*.¹⁰ Կայեցար յերկիր արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա: Գետն Աստուծոյ լի եղև ջուրք. պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն: ¹¹Ձակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա: 'Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա*.¹² Օրհնեցի պսակ տարւոյ քաղցրութան քոյ: Դաշտք քո լցցին պարարտութեամբ.¹³ Կարարտացին զեղեցկութիւնք անապատի*: ¹⁴Բլուրք ցնծութիւն զգեցցին, և զգեցցին խոյք մաքեաց: Յովիտք բազում արասցեն ցորեան, աղաղակեցեն և օրհնեցեն: *Տունք. ԺԶ:*

65

1^Ի կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ. յարութեան. ԿԵ*:

²Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոն սասցէք անուան նորա, և տունք զփառս օրհնութեան նորա: ³Ասացէք Աստուծոյ որպէս զի ահեղ են գործք քո. 'ի բազում զօրութեան քում ստեցին քեզ թշնամիք քո: ⁴Ամենայն երկիր երկիրպագցեն քեզ, սաղմոս սասացեն քեզ, և սաղմոս սասացեն անուան քում: ⁵Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդովք՝ քան զամենայն որդւոց մարդկան*: ⁶Ո՛ր դարձոյց զծովն 'ի ցամաք, և ընդ գետս անցցեն յոտանաւոր: Անդ ուրախ եղիցուք մեք 'ի նա*, ⁷որ տիրէն զօրութեամբ իւրով յաւիտենից: Աչք նորա 'ի հեթանոսս հային, ոյք դառնացուցին զնա մի՛ բարձրացին յանձինս իւրեանց*: ⁸Օրհնեցէք հեթանոսք զԱստուած մեր, լսելի՛ արարէք զձայն օրհնութեան նորա: ⁹Այն որ ետ զանձն իմ 'ի կեանս, և ո՛չ ետ դողութիւն ոտից իմոց*: ¹⁰Փորձեցեր զմեզ Աստուած և քննեցեր, որպէս և քննի՛ արծաթ: ¹¹Իջուցեր զմեզ յորոգայթ՝ եղիր նեղութիւն 'ի թիկունս մեր*, ¹²և անցուցեր զմարդիկ 'ի վերայ գլխոց մերոց: Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ: ¹³Մտից 'ի տուն քո պատարագօք. տաց քեզ զուխտս իմ* ¹⁴զոր խոստացան քեզ շրթունք իմ, զոր բերան իմ խօսեցաւ 'ի նեղութեան: ¹⁵Ձողջակէզս ուղղալի՛ցս մատուցից քեզ խոյովք և խնկովք. և քեզ մատուցից զուարակս և նոխագս: ¹⁶Եկայք լուարուք ինձ, և պատմեցի՛ց ձեզ ամենեքեան ոյք երկնչիք յԱստուծոյ, որ ինչ արար անձին իմոյ*: ¹⁷Առ նա բերանով իմով կարդացի, և բարձր արարից զնա լեզուաւ իմով*: ¹⁸Ձմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, մի լուիցէ ինձ Տէր*: ¹⁹Վասն այսորիկ լուաւ Աստուած, և նայեցաւ 'ի ձայն

* *Ոմանք.* Խռովեցան հեթանոսք... և բնակիչք... յելս առաւօտուց:
 * *Ոմանք.* Եղիցին բոյսք նորա:
 * *Յօրհնակին.* Պարարացին զեղ՛:
 * *Ոմանք.* Վասն յարութեան:
 * *Ոմանք.* Ահեղ է... քան զամենայն որդիս մարդկան:
 * *Ոմանք.* Ո՞վ դարձոյց... անցին յոտանաւորք:
 * *Ոմանք 'ի վերջ տանս նշանակեն՝* Յանգիստ:
 * *Ոմանք.* Այն որ եղ զան՛... ոտից մերոց:
 * *Ոմանք.* Եւ եղիր զնեղութիւն:
 * *Ոմանք.* Մտից ես 'ի տուն:
 * *Ոմանք.* Ձոր ինչ արար:
 * *Ոմանք.* Կարդացից և բարձր ա՛:
 * *Ոմանք.* Մեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում, միթէ լսեր ինձ Տէր:

խնդրուածաց իմոց: ²⁰Օրհնեալ է Աստուած որ ո՛չ ՚ի բացէ արար զաղօթս իմ, և ո՛չ զողորմութիւն իւր յինէն*։ *Տունք. ԺԹ:*

66

¹Ի կատարած ընդ օրհնութիւն. Սաղմոս երգոց. ԿԶ*:

²Աստուած ողորմեա մեզ և օրհնեա՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ և ողորմեա մեզ*։ ³Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազիսս ամենայն զփրկութիւնս քո: ⁴Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն: ⁵Ուրախ եղիցին ազգք և ցնծասցեն ազինք. զի դու դատիս զժողովուրդս յուղղութիւն, և ազգաց երկրի դու առաջնորդես*։ ⁶Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն*։ ⁷Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած Աստուած մեր: ⁸Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, ՚ի նմանէ երկիցէն ամենայն ծագք երկրի*։ *Տունք. Է: Գորդայս. ԽԲ:*

67

¹Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԿԷ*:

²Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա: ³Որպէս պակասէ ծուխ պակասեսցին, որպէս հալի մո՛մ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց Աստուծոյ: ⁴Արդարք ուրախ եղիցին՝ ցնծասցեն առաջի նորա, և զուարճասցին յուրախութեան իւրեանց*։ ⁵Օրհնեցէք զԱստուած և սաղմո՛ս ասացէք անուան նորա. ճանապարհ արարէք այնմիկ որ նստի ընդ արևմուտս՝ և Տէ՛ր է անուն նորա: Ցնծասցեն առաջի նորա, և խռովեսցին յերեսաց նորա*։ ⁶Որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, Աստուած ՚ի տեղուջ սրբութեան իւրում*։ ⁷Աստուած բնակեցուցանէ՛ զմիակրօնս ՚ի տան, և հանէ զկապեալսն քաջութեամբ իւրով, սոյնպէս և զառնացօրս որ բնակեալ են ՚ի գերեզմանս*։ ⁸Աստուած ընդ ելանել քեզ առաջի ժողովրդեան քոյ. ընդ անցանել քեզ ընդ անապատ* ⁹Երկիր շարժեցաւ: Քանզի և երկինք ցօղեցին յերեսաց Աստուծոյ ՚ի Սինէ, առաջի Աստուծոյ Իսրայէլի*։ ¹⁰Անծրև կամաց պատրաստեցեր Աստուած ժառանգութեան քում. թեպէտ հիւանդացաւ՝

* *Ոմանք.* ՚ի բացեայ արար:

* *Ոմանք յաւելուն.* Սաղմոս ՚ի Դաւիթ երգոց:

* *Ոմանք.* Աստուած մեր ողորմեա՛ մեզ:

* *Ոմանք.* Ուրախ եղիցին և ցնծ՛:

* *Ոմանք.* Աստուած. խոստովան եղիցին ժողովուրդք ամենայն:

* *Ոմանք.* Եւ ՚ի նմանէ երկիցեն: *Ուր Ոսկան.* Ջի ՚ի նմանէ եր՛:

* *Ոմանք.* ՚ի կատարած Դաւթի սաղմոս երգոց:

* *Ոմանք.* Եւ ցնծաս՛:

* *Ոմանք.* Օրհնեցէք զԱստուած մեր և սաղ՛:

* *Ոմանք.* Սրբութեան իւրոյ:

* *Ոմանք.* Որ բնակեն ՚ի գերեզմանս:

* *Ոմանք.* Յանցանել քեզ յանապատ:

* *Ոմանք.* Քանզի երկինք ևս ցօղեսցին... ՚ի Սինայէ:

սակայն դու հաստատեցեր զնա*, ¹¹և գազանք քո բնակեցեն 'ի նմա:
 Պատրաստ արարեր քաղցրութեամբ քով աղքատի Աստուած. ¹²Տէր տացէ
 զբան ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ: ¹³Թագաւոր զօրութեանց
 սիրելոյ, զգեղեցկութիւն տան քո բաժանեալ յաւարի*, ¹⁴թեպէտ և ննջեսչիք 'ի
 մէջ վիճակաց: Թեք աղանւոյ արծաթապատ, և թիկնամէջք նորա 'ի գոյն ոսկոյ:
¹⁵Ի գունարել երկնաւորին գթագաւորս 'ի վերայ նորա, ձիւնասցին 'ի Սաղմոն:
¹⁶Լեառն Աստուծոյ լեառն պարարտ լեառն մածեալ և լեառն պարարտ, ¹⁷և զի՞նչ
 կարծէք լերինք հպարտացեալք: Լեառն ընդ որ հաճեցաւ Աստուած բնակիլ 'ի
 նմա. քանզի և Տէր իսկ բնակեցէ 'ի նմա 'ի սպառ*: ¹⁸Կառք Աստուծոյ
 բիրապատիկք հազարք ուղղիչք, և Տէր 'ի նոսա 'ի Սիմէ սրբութենէ իւրմէ*: ¹⁹Ե՛լ
 'ի բարձունս գերեաց զգերութիւն. ա՛ռ աւար բաշխեաց պարզևս և ետ որդւոց
 մարդկան. քանզի թերահաւատից ևս բնակեալ եղիցի 'ի նմա*: ²⁰Տէր Աստուած
 օրհնեալ. օրհնեալ Տէր զօրհանապագ, առաջնորդեցէ՛ մեզ Աստուած փրկիչ
 մեր*: ²¹Աստուած մեր Աստուած կենարար, և 'ի Տեառնէ են ելք մահու: ²²Բայց
 սակայն Աստուած փշրեցէ՛ զգլուխ թշնամեաց մերոց, և զհերն կարծովին, որ
 զնան յանօրէնութեան իւրեանց*: ²³Ասաց Տէր. 'ի խորոց անդնդոց դարձուցից, և
 'ի միջոյ ժանեաց զայն 'ի դուրս կորզեցից*: ²⁴Որպէս թացցի ոտն քո յարեան, և
 լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց: ²⁵Երևեցան զնացք քո Աստուած,
 զնացք Աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ: ²⁶Կանխեցին իշխանք հանել
 զօրհնութիւն, 'ի մէջ զուսանաց և զովչաց*: ²⁷Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և
 զՏէր յաղբերացն Իսրայէլի: ²⁸Անդ Բենիամին՝ 'ի տղայութեան զարմանալի,
 իշխանք Յուդայ առաջնորդք նորա՝ իշխանք Չաբուղոնի և իշխանք
 Նեփթաղիմայ*: ²⁹Հրամայեա՛ Աստուած զօրութեամբ քով. զօրացո՛ զայս զոր
 հաստատեցեր 'ի մեզ: ³⁰Ի տաճարի քում յերուսաղէմ, քեզ մատուցեն
 թագաւորք զպատարագս*: ³¹Սաստեա՛ 'ի գազան եղեգան, 'ի ժողովս
 զուարակաց՝ և 'ի դասս երնջուց: Խոտեցին այնոքիկ որ ընտրեալ են
 արծաթով, ցրուեա՛ զհեթանոսս և ոյք կամին ընդ պատերագմ: ³²Եկեցեն
 հրեշտակք յեգիպտոսէ. Հնդիկք յառաջագոյն ձեռնտո՛ւ լիցին առ Աստուած:
³³Թագաւորութիւնք երկրի օրհնեցէ՛ք զԱստուած, և սաղմո՛ս ասացէք Տեառն:
 ճանապարհ արարէք այնմիկ, ³⁴որ նստի յերկինս երկնից ընդ յարևելս: Ահա
 տացէ զձայն իւր զձայն զօրութեան, և տո՛ւք զփառս Աստուծոյ*: ³⁵Ի վերայ
 Իսրայէլի մեծվայելչութիւն նորա, և զօրութիւն նորա մինչև յամպս երկնից:
³⁶Աքանչելի է Աստուած 'ի վերայ սրբոց իւրոց, Աստուած Իսրայէլի: Նա տացէ
 զօրութիւն հաստատութիւն ժողովրդեան իւրոյ. օրհնեա՛լ է Աստուած*: *Տունք.*

* *Ոմանք.* Թեպէտ և հիւանդացաւ:

* *Ոմանք.* Բաժանել յաւարի:

* *Ոմանք.* Աստուած բնակել 'ի նմա:

* *Ոմանք.* 'ի Սիմէ սրբութեան իւրոյ:

* *Ոմանք.* Եւ գերեաց զգե՛... քանզի և թերեհաւա՛:

* *Ոմանք.* Օրհնեալ օրհնեալ է Տէր զօրհանապագ, և առաջնոր՛:

* *Ի լուս՛.* Եւ զհերն կարծնովին. *համաձայն ոմանց 'ի բնաբ՛:*

* *Ոմանք.* Եւ 'ի միջոյ ժանեաց զիմն 'ի դուրս կորզե՛:

* *Այլք.* 'ի մէջ կուսանաց և զովչաց:

* *Ոմանք.* Եւ առաջնորդք նորա:

* *Ոմանք.* 'ի տաճարէ քումմէ յերուսաղէմէ քեզ:

* *Ոմանք.* Իւր 'ի ձայն զօրութեան, և տուք զփառս Տեառն:

* *Ոմանք.* Հաստատութեան ժողովրդեանն իւրոյ:

¹Ի կատարած. վասն զառանցելոց. Սաղմոս 'ի Դաւիթ. ԿԸ*:

²Կեցո՛ր զիս Աստուած զի հասին ջուրք յանձն իմ, ընկլայ ես 'ի խորս անդնդոց, ուր ո՛չ գոյ հանգիստ*։ ³Եկի ես 'ի խորս, և շրջանք ընկղմեցին զիս*։ ⁴Վաստակեցի ես առ աղաղակել, կերկերեցա՛ւ կոկորդ իմ։ Նուաղեցին աչք իմ, առ յուսալ ինձ առ Տէր Աստուած իմ։ ⁵Բազում եղեն քան զիեր գլխոյ իմոյ, ոյք ատէին զիս 'ի տարապարտուց։ Ջօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ 'ի նանիր. ինչ որ ո՛չ յափշտակեալն էր՝ տուժէի նոցա*։ ⁶Աստուած դու ծանեար զանզգամութիւն իմ, և յանցանք իմ 'ի քէն ո՛չ ծածկեցան։ ⁷Մի՛ ամաչեցեն վասն իմ որ համբերեն քեզ Տէր Տէր զօրութեանց. մի՛ պատկառեցեն վասն իմ, որ խնդրեն զքեզ Աստուած Իսրայէլի։ ⁸Վասն քո համբերի նախատանաց, և ծածկեաց ամօթ զերեսս իմ*։ ⁹Օտար եղէ ես եղբարց իմոց, և հիւր որդւոց մօր իմոյ*։ ¹⁰Նախանձ տան քոյ եկեր զիս. նախատինք նախատչաց քոց անկան 'ի վերայ իմ։ ¹¹Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. ¹²արարի զհանդերձս իմ քուրձ, և եղէ յառակ նոցա*։ ¹³Զինէն խորհէին ոյք նստէին առ դրունս. զիս ա՛յսն առնէին որ ըմպէին զինի։ ¹⁴Ես յաղօթս կայի առ քեզ Տէր, 'ի ժամանակ ընդունելի։ Աստուած 'ի բազում ողորմութեան քում լո՛ւր ինձ, 'ի ճշմարտութիւն փրկութեան քո*։ ¹⁵Ապրեցո՛ր զիս 'ի կաւոյ զի մի՛ ընկլայց. ապրեցայ՛ց ես յատելեաց իմոց, և 'ի խորոց ջուրց բազմաց։ ¹⁶Մի՛ ընկլցեն զիս պտոյտք ջուրց, և մի՛ ընկղմեցեն զիս անդունդք խորոց. ջրիոր մի՛ կափուսցէ զբերան իւր 'ի վերայ իմ*։ ¹⁷Լո՛ւր ինձ Տէր զի քա՛ղցր է ողորմութիւն քո, ըստ բազում գթութեան քոյ հայեա՛ր յիս*, ¹⁸և մի՛ դարձուցաներ զերեսս քո 'ի ծառայէ քումմէ. զի նեղեալ եմ ես վաղվաղակի լո՛ւր ինձ։ ¹⁹Չայեա՛ր յանձն իմ և փրկեա՛ր զիս, և վասն թշնամեաց իմոց ապրեցո՛ր զիս։ ²⁰Զի դու գիտես զնախատինս իմ, զամօթ իմ և զպատկառանս իմ։ ²¹Առաջի քո՛ եմ ամենայն նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբեր սիրտ իմ և թշուառութեան։ Ակն ունէի թէ ո՛ տրտմեցի ընդ իս, և ո՛չ ոք էր. և մխիթարիչ ոք ո՛չ գտաւ*։ ²²Ետուն 'ի կերակուր ինձ լեղի, և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։ ²³Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, 'ի հատուցումն և 'ի գայթազղութիւն։ ²⁴Խաւարեցին աչք նոցա զի մի՛ տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո՛ր։ ²⁵Արկցես 'ի վերայ նոցա

* *Ոմանք.* Ջառանցելոց ժամանակաց Դաւթի վասն փոփոխմանց։
 * *Յօրինակին 'ի կարգի բնաբանին դատարկ տեղի թողեալ վասն անդնդոց, ակնարկի 'ի ներքս առնուլ. ըստ որում և եղաք համաձայն այլոց օրինակաց։ Ոմանք.* Ուր ո՛չ գոյր ինձ հանգիստ։
 * *Ոմանք.* 'ի խորս ծովու, և շրջանք ընկլուզին զիս։
 * *Ոմանք.* Ջոր ո՛չ յափշտակեալ էր։ *Ուր Ոսկան.* յափշտակեալ էի՝ տուլ*։
 * *Ոմանք.* Վասն քո համբերի նախատանաց։
 * *Ոմանք.* Ես յեղբարց իմոց։
 * *Ոմանք.* Յառակս նոցա։
 * *Ոմանք.* 'ի ճշմարտութեան փրկութեան։
 * *Յօրինակին.* Պտոյք ջուրց։ *Ոմանք.* Եւ մի՛ ընկլցեն զիս անդ*։
 * *Ոմանք.* Գթութեան քում հայեաց։
 * *Ոմանք.* Ակն ունէին թէ ով. *կամ՝* ոք տրտմեցի... և մխիթարիչ ինձ ո՛չ գտաւ։

զբարկութիւն քո, և սրտմտութիւն բարկութեան քոյ հասցէ 'ի վերայ նոցա:
²⁶Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, և 'ի յարկս նոցա մի՛ ոք իցէ որ բնակիցէ՜:
²⁷Ձի գոր դուն հարեր հալածեցին, և 'ի վերս ցաւոց ինոց յաւելին: ²⁸Դի՛ր զմեղս
'ի վերայ մեղաց նոցա, զի մի՛ մտցեն յարդարութիւն քո: ²⁹Ձնջեսցին նոքա 'ի
դպրութենէ քունմէ կենաց, և ընդ արդարս քո մի՛ գրեսցին: ³⁰Աղքատ և ցաւած
եմ ես, փրկութիւն քո Աստուած ընկալցի զիս: ³¹Օրհնեցից զանուն Աստուծոյ
ինոյ օրհնութեամբ, և բարձր արարից զնա գովութեամբ՝: ³²Հաճոյ եղիցի
Աստուծոյ քան զորք մատաղ, որ բերէ եղջերս և կճղակս՝: ³³Տեսցեն աղքատք և
ուրախ եղիցին, խնդրեցէք զԱստուած և կեցցեն անձինք ձեր: ³⁴Ձի լուաւ Տէր
տնանկաց, և զկապեալս իւր ո՛չ արհամարհեաց: ³⁵Օրհնեսցեն զնա երկինք և
երկիր, ծովք և ամենայն որ զեռայ 'ի նոսա՝: ³⁶Աստուած փրկէ զՍիոն, և
շինեսցին քաղաքք Հրէաստանի. շինեսցեն բնակեսցեն և ժառանգեսցեն 'ի նմա:
³⁷Ձաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ, և ոյք սիրեն զանուն քո բնակեսցեն
'ի նմա՝: *Տունք. ԼԸ:*

69

1՝Ի կատարած. 'ի Դաւիթ՝ առ յիշատակի փրկելոյ զնա Տեառն. Սաղմոս. ԿԹ՝:

²Աստուած յօգնել ինձ նայեա, և Տէր յընկերել ինձ փութա: ³Ամաչեսցեն և
յամօթ լիցին որ խնդրէին զանձն իմ. դարձցին յե՛տս և ամաչեսցեն ոյք խորհէին
ինձ չար՝: ⁴Դարձցին առ ժամայն ամաչեցեալ որ ասէին ինձ վա՛շ վա՛շ:
⁵Յնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ, ամենեքեան որ խնդրեն զքեզ: Ասացեն
յամենայն ժամ մեծ է Աստուած, և ոյք սիրեն զփրկութիւնս քո՝: ⁶Ես աղքատ և
տնանկ եմ Աստուած օգնեա՛ ինձ. օգնական և փրկիչ իմ ես և Տէր իմ մի՛
յամենար՝: *Տունք. Զ: Գորդայս. ԽԴ:*

70

**1՝Ի կատարած. որդւոցն Յովնադաբայ՝ յետ առաջնոյ գերութեան. Սաղմոս 'ի
Դաւիթ. Գ:**

'ի քեզ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան՝, ²յարդարութեան քուն փրկեա՛
զիս և ապրեցո՛ զիս: Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և կեցո՛ զիս՝: ³Լե՛ր իմ
Աստուած ապաւեն և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և

* *Ոսկան.* Եղիցի բնակութիւն նոցա:

* *Ոմանք.* Եւ բարձր ա՛... գոհութեամբ:

* *Ոմանք.* Ձեղջիւրս և զկճղակս:

* *Ոմանք.* Ծով և ամենայն որ զեռ՝:

* *Ոմանք.* Բնակեսցեն 'ի նոսա:

* *Ոմանք.* 'Ի կատարած, Սաղմոս Դաւիթի առ 'ի յիշատակ փրկե՛:

* *Ոմանք.* Եւ յամօթ լիցին ամենեքեան ոյք խնդրեն զան՝:

* *Ոմանք.* Ոյք խնդրեն զքեզ Տէր:

* *Ոմանք.* Եւ փրկիչ իմ ես, և դու Աստուած իմ մի՛ յամենար:

* *Ոմանք.* 'Ի կատարած սաղմոս 'ի Դաւիթ, որդւոցն Յովնադաբայ, և առաջին
գերութեանն. Անվերնագիր 'ի Հեբրայեցւոց:

* *Ոմանք.* Արդարութեամբ քով փրկեա՛:

ապաւէն իմ դու ես: ⁴Աստուած իմ փրկեա՛ զիս ՚ի ձեռաց մեղաւորի, ՚ի ձեռաց անօրինի և անիրաւի: ⁵Դու ես համբերութիւն իմ Տէր Տէր, յոյս իմ ՚ի մանկութենէ իմնէ: ⁶Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ՚ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ: ⁷Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց, և դու օգնական իմ և հօգորիչ իմ*: ⁸Լցցի բերան իմ գովութեամբ, որպէս օրհնեցից զփառս քո, զօրհանապազ զմեծվայելչութիւնս քո: ⁹Մի՛ ընկենուր զիս Տէր ՚ի ժամանակի ծերութեան, ՚ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս*: ¹⁰Ասացին թշնամիք իմ ինձ, և ոյք պաշարեցին զանձն իմ, խորհեցան ՚ի միասին և ասացին: ¹¹Աստուած եթող զնա հալածեսցո՛ւք և հասցո՛ւք նմա, զի ո՛չ ոք է որ փրկէ զնա: ¹²Աստուած իմ մի՛ հեռի առնիր յինէն, և Աստուած յօգնել ինձ նայեա՛ց*: ¹³Ամաչեսցեն և պատկառեսցին որ չարախօս կային զանձնէ իմնէ, զգեցցին զամօթ և զպատկառանս ոյք խնդրէին ինձ չար*: ¹⁴Ես յամենայն ժամ յուսացայց, և յաւելից յօրհնութիւնս քո*: ¹⁵Բերան իմ պատմեսցէ զարդարութիւնս քո, զօրհանապազ զգովութիւնս քո: Որպէս ո՛չ թէ խարդախութիւն ինչ գիտէի ես դպրութեան*: ¹⁶այլ մտի ՚ի զօրութիւնս Տեառն, և Տէր յիշեցի զարդարութիւնս քո միայն: ¹⁷Աստուած իմ ուսուցեր զիս ՚ի մանկութենէ իմնէ, և ցա՛րդ ևս պատմեցից զարդարութիւնս քո*: ¹⁸Մինչև յալևորել և ՚ի ծերանալ, Աստուած իմ մի՛ թողուր զիս: Մինչև պատմեսցի բազուկ քո ազգի ամենայնի որ գալոցն է: Զզօրութիւնս քո ¹⁹և զարդարութիւն մինչև ՚ի բարձունս, զոր արարեր մեծամեծս: Աստուած ո՛ նմանէ քեզ*: ²⁰Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բազում և չարչարանս, դարձար մխիթարեցեր զիս, և ՚ի խորոց անդնդոց երկրէ հաներ զիս*: ²¹Յաճախեցեր ՚ի զօրութիւնս քո, դարձար և մխիթարեցեր զիս, և ՚ի խորոց երկրէ միւսանգամ հաներ զիս*: ²²Արդ և ես խոստովան եղէց քեզ ՚ի պատրաստութիւն սաղմոսաց ճշմարիտդ Աստուած. սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ սուրբդ Իսրայէլի*: ²³Յնծասցեն շրթունք իմ յորժամ սաղմոս ասիցեն քեզ, և անձն իմ զոր և փրկեցեր*: ²⁴Եւս և լեզու իմ՝ զօրհանապազ խօսեսցի՛ զարդարութիւնս քո: Ի ժամանակի որպէս յամօթ լիցին, և ամաչեսցեն ոյք խորհէին ինձ չար*: *Տունք. ԻԶ:*

՚ի Սողոմոն Սաղմոս. ԶԱ*:

* *Ոմանք.* Որպէս զնշաւակ եղէ ես բազմաց. այլ դու:
 * *Ոմանք.* Ի ժամանակս ծերութեան:
 * *Յօրհնակին պակասէր.* Աստուած իմ մի՛ հեռի առնիր յի՛:
 * *Ոմանք.* Ամաչեսցեն և պակասեսցին ոյք չա՛:
 * *Ոմանք.* Յուսացայ, և յաւել՛:
 * *Ոմանք.* Խարդախութեամբ ինչ գիտէի զդպրութիւն. (16) այլ մտից ՚ի զօ՛:
 * *Ոմանք.* Յարդ և ես պատ՛:
 * *Ոմանք.* Եւ զարդարութիւնս քո մինչ ՚ի բարձունս:
 * *Ոմանք.* Դարձար և մխիթարեցեր զիս:
 * *Ոսկան.* Յաճախեցեր զզօրութիւնս:
 * *Ոմանք.* Խոստովան եղէց քեզ Տէր ՚ի պատ՛:
 * *Ոմանք.* Սաղմոս ասիցեն. *կամ՝* ասացից քեզ:
 * *Ոմանք.* Ի ժամանակի իբրև յամօթ լի՛... ոյք խնդրէին ինձ չար:
 * *Ոմանք ունին զայս վերնագիր.* Ի կատարած սաղմոս ՚ի Դաւիթ:

²Աստուած գիրաւունս քո արքայի՛ տուր, զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի: ³Դատել զժողովուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո իրաւամբբ*:

³Առջեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան, և բլուրք զարդարութիւն: ⁴Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, և կեցուցէ՛ զորդիս տնանկաց, և խոնարհեցուցէ՛ զամբարտաւանս*:

⁵Կացցէ և մնասցէ՛ ընդ արևու, յառաջ քան զլուսին ազգէ մինչև յազգ: ⁶Իջցէ որպէս զանծրև ՚ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր: ⁷Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն՝ բազում խաղաղութիւն, մինչև կատարեսցի լուսին*:

⁸Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, ՚ի գետոց մինչ ՚ի ծա՛գս աշխարհի*:

⁹Առաջի նորա նախ Յնդիկք անկցին, և թշնամիք նորա հող կերիցեն: ¹⁰Թագաւորք Թարսսի և կղզեաց պատարագս մատուցեն նմա. թագաւորք Արաբայ՝ և Սաբայ պատարագս բերցեն նմա: ¹¹Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա: ¹²Ձի փրկեաց զաղքատն ՚ի հզօրէ. զաղքատ և զտնանկ որոյ ո՛չ է իւր օգնական*:

¹³Անխայեսցէ նա յաղքատն և ՚ի տնանկ, և զանծինս տնանկաց կեցուցէ. ¹⁴ի վաշխից չարաց փրկեսցէ զանծինս նոցա: Պատուական է անուն նորա առաջի նոցա*:

¹⁵Կեցցէ և տացի նմա յսկւոյն Արաբացւոց: Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհանապագ օրհնեսցեն զնա: ¹⁶Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ՚ի վերայ գլխոց լերանց: Բարձրացի՛ քան զԼիբանան պտուղ նորա. ծաղկեսցի ՚ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի*:

¹⁷Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարև է անուն նորա: ՚Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, ամենայն ազիւնք երանիցեն նմա*:

¹⁸Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի որ առնէ զսքանչելիս միայն. ¹⁹և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. եղիցի եղիցի*:

Տունք. Ի: Գորդայս. ԽԶ:
Կանոնս Գորդայս. Է: Սաղմոս. ժէ: Տունս. ՍԶ:

¹Սաղմոս յԱսափ. ԶԲ:

Իբրև զի բարի՛ է Աստուած Իսրայէլի, և ոյք ուղիղ են սրտիւք*:

²Բայց զի ի՛ն փոքր մի ևս սասանեալ էին ոտք, սակաւիկ մի և զայթագղեալ էին գնացք*:

³Նախանձեցայ ես ընդ անօրէնս՝ զխաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի,

* *Ոմանք.* Եւ զարդարութիւնս:
 * *Յօրհնակիւն.* Եւ կացուցէ զորդիս տնան*:
 * *Ոմանք.* Ծագեսցէ յաւուրս նորա:
 * *Ոմանք.* Մինչև ՚ի ծագս աշ*:
 * *Ոմանք.* Չաղքատն ՚ի ձեռաց հզօրին, զաղքատն և զտնանկն յայնցանէ որ ո՛չ էր իւր օգնական:
 * *Ոմանք.* ՚Ի վաշխից չարեաց. *կամ*՝ ՚ի վաշխից և ՚ի չարաց:
 * *Ոմանք.* Ծաղկեսցեն ՚ի քաղաքի:
 * *Ոմանք.* Եւ ամենայն ազիւնք:
 * *Ոմանք յաւելուն.* Յաւիտեան. *լցցի փառօք նորա ամենայն երկիր.* եղիցի եղիցի: *Յետ այսորիկ Ոսկան յաւելու համար 20. *Պակասեցան օրհնութիւնք ՚ի Դաւթ որդւոյ Յեսսեայ: որ ո՛չ երևի ուրեք ՚ի գրչագիրս մեր:*
 * *Ոմանք յաւելուն.* ՚Ի կատարած սաղմոս յԱ՛... բարի է Իսրայէլի Աստուած:
 * *Ոմանք.* Բայց իմ փոքր մի ևս սա՛... գնացք իմ:

⁴ո՛չ գոյր վրէպ մահու նոցա: Հաստատուն են տանջանք նոցա*, ⁵ի վաստակս մարդկան չեն նոքա, և ըստ մարդկան ո՛չ տանջեսցին*: ⁶Վասն այսորիկ կալա՛ւ գնոսա ամբարտաւանութիւն. արկան զիրեանքք զամպարշտութիւն և զանհրաւութիւն իւրեանց: ⁷Ելցէ որպէս ՚ի ճարպոյ անհրաւութիւն նոցա. զի գնացին նոքա ըստ խորհրդոց սրտից իւրեանց*: ⁸Խորհեցան և խօսեցան չարութեամբ. զապիրատութիւն ՚ի բարձունս խորհեցան*: ⁹Եղին յերկինս զբերանս իւրեանց, և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ: ¹⁰Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցին այսրէն, և աւուրք իմ լի՛ կատարեալ գտցին ՚ի նոսա*: ¹¹Ասացին թէ զհա՞րդ գիտա՞ց Աստուած. կամ գուցէ՞ արդէք գիտութիւն առ ՚ի Բարձրելոյ*: ¹²Ահա մեղաւորք են և յաջողեալ է նոցա, կան և ունին զմեծութիւն աշխարհի*: ¹³Ասացի. ՚ի զուր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ. լուացայ սրբութեամբ զձեռս իմ*, ¹⁴և եղէ ես խոշտանկեալ զօրհանապագ. և կշտամբանք իմ ընդ առաւօտս: ¹⁵Թէպէտ և ասէի, թէ այսպէս պատմեցից ահաւասիկ յազգս որդւոց քոց որոց և ուխտեցի*: ¹⁶Ի մտի եղի թէ սակայն և այս ջան է առաջի իմ, ¹⁷մինչև մտից ՚ի սրբութիւն Աստուծոյ և ՚ի միտ առից զկատարած նոցա: ¹⁸Սակայն վասն նենգութեան նոցա տարագի՛ր արասցես զնոսա. և կործանեսցես զնոսա յամբարտաւանութեան իւրեանց*: ¹⁹Իսկ զհա՞րդ եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան պակասեցան կորեան վասն անօրէնութեան իւրեանց*, ²⁰և եղեն որպէս երազք զարթուցելոց: Տէր ՚ի քաղաքի քում զպատկերս նոցա անարգեսցես*. ²¹Ղի հուր բորբոքեցա՛ւ ՚ի սրտի իմում, և երկկանունք իմ այլազունեցան*: ²²Ես արհամարհեալ եղէ և ո՛չ գիտացի. ²³որպէս զանասուն համարեցայ առաջի քո, և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ: ²⁴Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ՚ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ, և փառօք ընկալար զիս*: ²⁵Ձի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրէ*: ²⁶Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ. բաժին իմ Աստուած յաւիտեան*: ²⁷Ահաւասիկ ոյք հեռի արարին զանձինս իւրեանց ՚ի քէն կորիցեն. սատակեցես զամենեսեան որ ապստամբ եղեն ՚ի քէն*: ²⁸Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր գոյս իմ: Պատմել զամենայն օրհնութիւնս քո, ՚ի դրունս դստեր Սիոնի: *Տունք. ԻԴ:*

* *Ոմանք.* Ձի ո՛չ գոյր վր՛... հաստատուն են:

* *Ոմանք.* Եւ վաստակք մարդկան... նոքա ո՛չ տանջեսցին:

* *Ոմանք.* Անհրաւութիւնք նոցա:

* *Ոմանք.* Եւ խօսեցան չարութիւն... ՚ի բարձունս խօսեցան:

* *Ոմանք.* Դարձցի այսրէն... գտցի ՚ի նոսա:

* *Ոմանք.* Ասացին զհարդ գի՛:

* *Ոմանք.* Եւ աջողեալ է սոցա:

* *Ոմանք.* Ասացի թէ զուր ուրե՛: *Ոսկան.* Լուացից սրբութեամբ:

* *Ոմանք.* Թէպէտ և ասէի... ահաւասիկ յազգ որդ՛:

* *Ոմանք.* Եւ կործանեսցես զնոսա:

* *Ոմանք.* Եղեն աւեր... կորեան վասն անզգամութեան. *կամ՝* ամբարտաւանութեան իւրեանց:

* *Ոմանք.* Նոցա անարգեցի ես:

* *Ոմանք.* Այլազունեցին:

* *Ոմանք.* Եւ փառօք քո ընկալար:

* *Ոմանք.* Խնդրեցից յերկրի:

* *Ոմանք.* Բաժին Աստուած իմ ես յաւիտեան:

* *Ոմանք.* Սատակեցեր զամենեսին. *կամ՝* սատակեցին ամենեքեան ոյք:

՝Իմաստութիւն յԱսափ. 39:

Ընդէ՞ր մերժեցեր Աստուած ՚ի սպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քոյ՝: ²Յիշեա՛ զժողովուրդ քո զոր ստացա՛ր իսկզբանէ. փրկեցեր զվիճակ ժառանգութեան քոյ: Լեառն Սիոն ա՛յս որ բնակեցեր դու ՚ի սնա՛. ³համբարձ զձեռն քո ՚ի վերայ ամբարտաւանութեան նոցա ՚ի սպառ: Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ՚ի սրբութեան քում՝, ⁴պարծեցան ատելիք քո ՚ի մէջ բարեկենդանութեան քոյ՝: ⁵Եդին զնշանս իւրեանց ՚ի նշանս. և ինքեանք ո՛չ ծանեան զելս ՚ի վերուստ: ⁶Որպէս յանտառի փայտատօք կոտորեցին զդրունս նորա, ՚ի միասին փայտատօք և մրճովք կործանեցին զնա՛: ⁷Այրեցին ՚ի հոլր զսրբութիւն քո. յերկրի պղծեցին զխորան անուան քոյ՝: ⁸Ասացին ՚ի սիրտս իւրեանց ազգ նոցա ՚ի միասին. Եկայք լռեցուցուր զամենայն տօնս Աստուծոյ յերկրէ: ⁹Նշանս մեք ինչ ո՛չ տեսաք, և ո՛չ ևս գուցէ մարգարէ. և զմեզ ինչ որ ո՛չ ճանաչիցէ: ¹⁰Մինչև յե՞րբ Աստուած նախատէ թշնամին, բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո: ¹¹Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և զաջ քո ՚ի միջոյ ծոցոյ քումնէ՞ ՚ի սպառ: ¹²Աստուած թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս, որ արարեր զփրկութիւն ՚ի մէջ երկրի: ¹³Դու հաստատեցեր զօրութեամբ քով զժով. դու խորտակեցեր զգլուխս վիշապաց ՚ի վերայ ջուրցն՝: ¹⁴Դու փշրեցեր զգլուխս վիշապին, և ետուր զնա կերակուր զօրացն Յնդկաց: ¹⁵Դու բղխեցուցեր զաղբերս և զվտակս, դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս՝: ¹⁶Քո՛ւ է տիւ և քո է գիշեր, զլոյս և զարև դու՛ հաստատեցեր՝. ¹⁷և դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զգարուն և զամառն դու՛ ստեղծեր: ¹⁸Այս յու՛շ լիցի քեզ զի թշնամին նախատեաց զՏէրդ. ժողովուրդ անզգամ բարկացոյց զանուն սուրբ քո: ¹⁹Մի՛ մատներ զազանաց զանձն որ խոստովան առնի առ քեզ, և զանձինս տնանկաց քոց մի՛ մոռանար ՚ի սպառ: ²⁰Յայեա՛ յուխտ քո՝ զի լցան տունք ափշելոց յերկրի անիրաւութեամբ: ²¹Մի՛ դարձցի տնանկն անաչեցեալ. այլ աղքատն և տնանկ օրհնեցեն զանուն սուրբ քո՝: ²²Արի՛ Աստուած և դատեա՛ զդատաստանս քո. յիշեա՛ զնախատինս որ յանզգամէն զօրհանապագ: ²³Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց. ամբարտաւանութիւն ատելեաց քոց վերացի հանապագ: *Տունք. ԻԲ: Գորդայս. ԽԶ:*

* Ոմանք. ՚ի կատարած սաղմոս յԱսափ:

* Ոմանք. Այս է, ուր բնակեցար դու ՚ի նմա:

* Ոմանք. Որ ինչ անօրինեցաւ թշ՞:

* Ոմանք. Բարեկենդանութեան իւրեանց:

* Ոմանք. Ձորունս նոցա... կործանեցին զնոսա:

* Ոմանք. Յերկիր պղծեցին:

* Ոմանք. խորտակեցեր զգլուխս վիշապին ՚ի վերայ ջուրցն:

* Ոմանք. Ցամաքեցուցեր զջուրս սաստ՞:

* Ոմանք. Ձարև դու արարեր:

* Ոմանք. Այլ աղքատք և տնանկք օրհ՞:

1^Ի Կատարած մի՛ ապականեր. սաղմոս յԱսափ. երգ առ Ասորեստանեայս. 37^{*}:

²Խոստովան եղիցուք առ քեզ Աստուած, խոստովան եղիցուք և կարդասցուք զանուն քո: Պատմեցից զամենայն սքանչելիս քո^{*}. ³յորժամ ժամ առից՝ ես ուղիղ դատեցայց^{*}: ⁴Մաշեցաւ երկիր և ամենայն բնակիչք նորա, ես հաստատեցի զսիւնս նորա: ⁵Ասացի անօրինաց թէ մի՛ անօրինիք. և մեղաւորաց թէ մի՛ բարձրացուցանէք զեղջերս ձեր^{*}: ⁶Մի՛ համբառնայք ՚ի բարձունս զեղջերս ձեր, և մի՛ խօսիք զԱստուծոյ անիրաւութիւն: ⁷Ձի ո՛չ յարևելից և ո՛չ յարևմտից և ո՛չ յանապատ լերանց. այլ Աստուած դատաւոր է: ⁸Ձայս խոնարհ առնէ, և զսոյն բարձրացուցանէ. ⁹բաժակ ՚ի ձեռնն Տեառն գինի լի՛ անապակ արկեալ. և խոնարհեցոյց յայսմանէ յայս: Սակայն մրուր նորա ո՛չ սպառեցի, և արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի^{*}: ¹⁰Ես ցնծացայց յաւիտեան. սաղմոս ասացից Աստուծոյ Յակոբայ^{*}: ¹¹Ձամենայն եղջերս մեղաւորաց փշրեսցես, և բարձր եղիցի եղջեր արդարոյ: *Տունք. Ժ:*

75

1^Ի Կատարած ընդ օրհնութիւնս. մի՛ ապականեր. Սաղմոս յԱսափ. երգ առ Ասորեստանեայս. 38:

²Յայտնի՛ է ՚ի Հրէաստանի Աստուած, և յԻսրայէլ մեծ է անուն նորա: ³Եղև խաղաղութիւն տեղի նորա, և բնակութիւն նորա Սիովն: ⁴Անդ խորտակեաց Տեր զգօրութիւն աղեղան, զգէ՛ն զսո՛ւր և զճակատամարտ: ⁵Լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից. ⁶խռովեցիս ամենեքեան որ անմիտ են սրտիւք, ննջեցիս զքունս իւրեանց և ո՛չ ինչ գտին: Ամենայն արք ՚ի մեծութեան ձեռաց իւրեանց^{*}. ⁷Ի սաստէ քումմէ Աստուած Յակոբայ ննջեցիս, և ոյք հեծեալ էին ՚ի ձիս^{*}: ⁸Ու ահաւոր ես և ո՛վ կարէ կալ առաջի քո^{*}. ⁹որպէս երևեցար դու յերկնից, յայտնի եղև բարկութիւն քո: Երկիր երկեալ և սարսեաց՝ ¹⁰ընդ յառնելն Աստուծոյ ՚ի դատաստան. ընդ ապրեցուցանել զամենայն հեգս երկրի: ¹¹Խորհուրդք մարդկան խոստովան առնին առ քեզ, և ծածկեալք իմաստութեամբ օրհնեսցեն զքեզ: ¹²Ո՛ւխտս դիք և կատարեցէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ, ամենեքեան ոյք շուրջ էք զնովաւ: Մատուցէ՛ք պատարագս Ահաւորին. ¹³ո՛ քաղէ զհոգիս իշխանաց, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի^{*}: *Տունք. Ժ:*

76

** Ոմանք.* Սաղմոս օրհնութեան Ասափայ:

** Ոմանք.* Ձանուն սուրբ քո:

** Ոմանք.* Ես ուղիղս դատեցայց:

** Ոմանք.* Թէ մի՛ բարձրէք զեղջերս ձեր:

** Ոմանք.* Եւ խոնարհեցուցանէ յայսմանէ: *Յօրինակին պակասէր.* Եւ արբցեն զնա ամենայն մեղա՛:

** Ոմանք.* Ես ցնծացայց յաւիտեանս յաւիտենից սաղ՛:

** Ոմանք.* Ոյք անմիտ էին սրտ՛... և ինչ ո՛չ գտին... ՚ի մեծութիւն ձե՛:

** Ոմանք.* Ննջեցիս ոյք հեծեալ էին:

** Ոմանք.* Եւ ո՛ կարէ կալ:

** Ոմանք.* Որ քաղէ զհոգիս:

1^Ի կատարած. վասն Իդիթովմայ. Սաղմոս յԱսափ. ԴԶ:

²Չայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով առ Աստուած, և նայեցաւ առ իս: ³Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի ձեռօք իմովք, ՚ի գիշերի առաջի նորա և ո՛չ խաբեցայ: Ո՛չ կամէր մխիթարել անձն իմ, ⁴յիշեցի զԱստուած և ուրախ եղէ. հոգայի և նուաղէ՛ր յիս հոգի իմ*: *Հանգիստ:* ⁵Ժամանեցին պահուց աչք իմ, խռովեցայ և ո՛չ խօսեցայ. ⁶խորհեցայ զաւուրսն զառաջինս և զամս յաւիտենից յիշեցի: ⁷Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սրտի իմում, հոգայի՝ և տառապէր յիս հոգի իմ: ⁸Միթէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս Տէր, և ո՞չ ևս յաւելուցու ՚ի հաճել և ևս: ⁹Կամ ՚ի սպա՞ռ արգելցէ զողորմութիւն իւր յինէն, կամ կատարեա՞ց զբան իւր ազգէ մինչև յազգ: ¹⁰Կամ մոռասցի՞՞ գթալ Աստուած իմ և ևս, կամ արգելցէ՞ զգթութիւն իւր բարկութեամբ իւրով*: ¹¹Ասացի թէ այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյ Բարձրելոյն*: ¹²Յիշեցի զգործս Տեառն իսկզբանէ, յիշեցի զսքանչելիս նորա: ¹³Խոսեցայ յամենայն գործս քո, և ՚ի ձեռագործս քո խորհեցայ*: ¹⁴Աստուած ՚ի սրբութեան են ճանապարհք քո. ո՞վ է Աստուած մեծ որպէս զԱստուած մեր. ¹⁵դու ես Աստուած որ առնես զսքանչելիս: Տուցեր ժողովրդեան քում զգորութիւն քո*. ¹⁶փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս քո զորդիսն Յակովբայ և Յովսէփու*: *Հանգիստ:* ¹⁷Տեսին զքեզ ջուրք Աստուած, տեսին զքեզ ջուրք և երկեան, և խորք խռովեցան ¹⁸ի ձայնէ ջուրց բազմաց: Չայն ետուն ամպք, քանզի և նետք քո գնան ¹⁹ի ձայնէ որոտալոյ քոյ անուի: Երևեցան փայլատակունք քո տիեզերաց, խռովեցաւ և դողաց երկիր*: ²⁰Ի ծովո՛ւ են ճանապարհք քո, և շաւիղք քո ՚ի ջուրս բազումս, և հետք քո ո՛չ ևս երևին*: ²¹Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան քոյ, ՚ի ձեռն Մովսիսի և Ահարոնի*: *Տունք. ժԸ: Գորդայս. ԼԸ:*

77

1^Իմաստութիւն յԱսափ. ԴԷ:

Նայեցարուք ժողովուրդք յօրէնս իմ, խոնարհեցուցէ՛ք զունկն ձեր ՚ի բանս բերանոյ իմոյ*: ²Բացից առակօք զբերան իմ, և խօսեցայ՞ց զառակս իսկզբանէ*: ³Որպէս լուաք և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ: ⁴Ոչի՛նչ ծածկեցաւ յորդուց նոցա յազգ յայլ. պատմել զօրհնութիւնս Տեառն զգորութիւն և զսքանչելիս իւր զոր արար: ⁵Հաստատեաց զվկայութիւն իւր առ Յակովբ, և օրէնս եղ ՚ի վերայ Իսրայէլի. Որ ինչ միանգամ պատուիրեա՞ց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց, ⁶զի ծանիցեն յազգ յայլ: Որդիք որ ծնանին

* *Ոմանք.* Եւ նուաղեաց յիս հոգի իմ:

* *Ի վերջ տանս ոմանք նշանակեն.* (Մէջն է սաղմոսիս:)

* *Ոմանք.* Ասացի այժմ սկսայ:

* *Ոմանք.* Խորհեցայ յամենայն ՚ի գործս քո:

* *Ոմանք.* Ձգորութիւնս քո:

* *Ոմանք.* Ձժողովուրդ քո:

* *Ոմանք.* Չայն որոտալոյ քո յանուի:

* *Ոմանք.* Եւ հետք քո ո՛չ երևին:

* *Յօրհնակին.* Մովսիսի և Եհարոնի:

* *Ոմանք ունին վերնագիր.* Ի կատարած սաղմոս յԱսափ... Նայեցարուք ժողովուրդք իմ:

* *Ոմանք.* Բացից առակաւ:

յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց*։ ⁷Գի դիցեն առ Աստուած գոյս իւրեանց, և մի՛ մոռացին զգործս Աստուծոյ։ Ջպատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն, ⁸և մի՛ եղիցին որպէս և հարք իւրեանց։ Ազգ չա՛ր և դառնացող, ազգ որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր և ո՛չ հաստատեաց առ Աստուած զոգի իւր*։ ⁹Որդիք եփրեմի լիաձիգք և պնդաձիգք, յաւուր պատերազմի կապարճս դարձուցին*։ ¹⁰Ո՛չ կացին նոքա յուխտի Տեառն, և ըստ իրաւանց նորա ո՛չ կամեցան գնալ։ ¹¹Սոռացան զերախտիս նորա, և զսքանչելիսն զոր եցոյց նոցա*։ ¹²Առաջի հարց նոցա զոր արար զսքանչելիս իւր, յերկրին Եգիպտացւոց և ՚ի դաշտին Տայանու։ ¹³Չերձ զծովն և անցոյց զնոսա, կացոյց զջուրս որպէս ՚ի տիկս։ ¹⁴Առաջնորդեաց նոցա ամպով ՚ի տուէ, և զամենայն գիշեր ՚ի լոյս հրոյ։ ¹⁵Չերձ զվեմն յանապատի, և ետ ըմպել նոցա որպէս ՚ի խորոյ մեծէ։ ¹⁶Չան զջուրն ՚ի վիմէ, և հոսեաց որպէս զգետս զջուրս*։ ¹⁷Սակայն յաւելին ՚ի մեղանչել, և նս բարկացուցին զԲարձրեալն յանջրդի*։ ¹⁸Փորձեցին զԱստուած ՚ի սիրտս իւրեանց, ՚ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց։ ¹⁹Տրտնջեցին զԱստուծոյ և ասացին։ Սիթ կարո՞ղ իցէ Աստուած պատրաստել սեղան յանապատի։ ²⁰Քանզի հարկանէր զվեմն՝ և հոսէին ջուրք, և վտակք խաղային ՚ի նմանէ։ Աղէ՛ հա՞ց ևս կարասցէ տալ նա մեզ, կամ պատրաստէ սեղան ժողովրդեան իւրոյ*։ ²¹Վասն այսորիկ լուաւ զայս Տէր և յապաղեաց. հուր բորբոքեցաւ ՚ի Յակովբ, բարկութիւն ել ՚ի վերայ Իսրայէլի*։ ²²Ո՛չ հաւատացին յԱստուած, և ո՛չ յուսացան ՚ի փրկութիւն նորա*։ ²³Չրաման ետ ամպոց ՚ի վերուստ և զդրունս երկնից եբաց*, ²⁴և տեղեաց՝ ՚ի նոսա մանանայ կերակուր։ Ձիաց երկնից ե՛տ նոցա*, ²⁵զիաց հրեշտակաց կերան մարդիկ. իջոյց ՚ի նոսա կերակուր ՚ի լիութիւն*։ ²⁶Չան զհողմ հարաւոյ, և ա՛ծ զօրութեամբ իւրով զհիւսւտի։ ²⁷Տեղեաց ՚ի նոսա միս որպէս հող, որպէս զաւա՛զ ծովու զթռչունս թևաւորս։ ²⁸Արկ ՚ի մէջ բանակի նոցա, և շուրջ զվրանօք նոցա։ ²⁹Կերան և յագեցան յոյժ, զցանկութիւն նոցա ե՛տ նոցա, ³⁰և ոչինչ կարօտ եղեն ՚ի ցանկութենէ իւրեանց։ Սինչդեռ կերակուրք ՚ի բերանս իւրեանց էին, ³¹բարկութիւն յԱստուծոյ ել ՚ի վերայ նոցա։ Սպան զբազումս ՚ի նոցանէ, և զընտիր ընտիրս յԻսրայէլէ սատակեաց*։ ³²Յայսմ ամենայնի մեղան և նս, և ո՛չ հաւատացին սքանչելեաց նորա։ ³³Պակասեցան յունայնութեան աւուրք նոցա, և անբ նոցա փութապէս անցին։ ³⁴Յորժամ սպանանէր զնոսա խնդրէին զնա, դառնային և առաւօտ առնէին առ Աստուած։ ³⁵Յիշեցին զի Աստուած օգնական էր նոցա, Աստուած բարձրեալ փրկիչ էր նոցա։ ³⁶Սիրեցին զնա բերանօք իւրեանց, և լեզուօք իւրեանց ստեցին նմա. ³⁷և

* *Ոմանք.* Ձի ծանիցէ յազգ յայլ։

* *Ոմանք.* Առ Աստուած զհոգի իւր։

* *Ոմանք.* Եփրեմի լիադիրկք և պնդա՞։

* *Ոմանք.* Եւ զսքանչելիս նորա զոր ե՞։

* *Ոմանք.* Չան զջուրսն ՚ի վիմէն։

* *Ոմանք.* Սակայն յաւելան ՚ի մե՞։

* *Ոմանք.* Կամ պատրաստեսցէ. և *ոմանք.* պատրաստել։

* *Ոմանք.* Եւ բարկութիւն ել։

* *Ոմանք.* Ձի ո՛չ հաւատացին։

* *Ոմանք.* Որ հրաման ետ։

* *Ոմանք.* Եւ տեղաց... ՚ի կերակուր։

* *Ոմանք.* Եւ իջոյց ՚ի նոսա։

* *Ոմանք.* Բարկութիւն Աստուծոյ էջ ՚ի վերայ նոցա... և զընտիր ընտիր Իսրայէլի սա՞։

սիրտք իւրեանց ո՛չ էին ուղիղ ընդ նմա, և ո՛չ հաւատացին ուխտի նորա*։ ³⁸Այլ նա՛ ինքն գթա՛ծ էր, քաւէր զմեղս նոցա՝ և ո՛չ ապականէր։ Յաճախէր դարձուցանել զբարկութիւն, և ո՛չ բորբոքէր զամենայն սրտմտութիւն իւր*։ ³⁹Յիշեաց թէ մարմին են նոքա. հոգի որ ելանէ՝ և ո՛չ ևս դառնայ*։ ⁴⁰Քանիցս անգամ դառնացուցին զնա յանապատի, բարկացուցին զԲարձրեալն յանջրդի։ ⁴¹Դարձան և փորձեցին զԱստուած, և զՍուրբն Իսրայէլի զայրացուցին։ ⁴²Ո՛չ յիշեցին զձեռն նորա յաւուր յորում փրկեաց զնոսա՝ ՚ի ձեռաց նեղչաց նոցա։ ⁴³Որպէս արար զնշանս և զարուեստս իւր յերկրին Եգիպտացւոց, և ՚ի դաշտին Տայանու։ ⁴⁴Դարձոյց յարիւն զգետս նոցա, և զանձրևս նոցա զի մի՛ արբցեն։ ⁴⁵Առաքեաց ՚ի նոսա շանաճանճ և եկէ՛ր զնոսա, և գորտիւ ապականեաց զնոսա։ ⁴⁶Ետ ժանկոյ զպտուղ նոցա, և զվաստակս նոցա մարախոյ*։ ⁴⁷Հարկարկտիւ զայգիս նոցա, և զթզենիս նոցա եղեմամբ*։ ⁴⁸Մատնեաց ՚ի կարկուտ զանասունս նոցա, զստացուածս նոցա հրով դատեցաւ*։ ⁴⁹Առաքեաց ՚ի նոսա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ, զսրտմտութիւն բարկութիւն և զնեղութիւն։ Առաքեաց ՚ի նոսա տանջանս ՚ի ձեռն հրեշտակի չարի*, ⁵⁰դիմեցոյց ՚ի նոսա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ։ Ո՛չ անխայեաց ՚ի մահուանէ զանձինս նոցա, և զանասունս նոցա ՚ի մահ մատնեաց։ ⁵¹Եհար՛ զամենայն անդրանիկս Եգիպտացւոց, զսկիզբն ամենայն վաստակոյ նոցա ՚ի յարկս Քամայ*։ *Հանգիստ։* ⁵²Հորդան ետ որպէս խաշին ժողովրդեան իւրոյ. և եհան զնոսա որպէս հօ՛տ յանապատ։ ⁵³Առաջնորդեաց նոցա յուսով, և ո՛չ երկեան, և զթշնամիս նոցա ծով ծածկեաց։ ⁵⁴Եհան զնոսա ՚ի լեռն սրբութեան իւրոյ, լեռնն՝ այն զոր ստացեալ էր աջոյ նորա։ Սերժեաց՝ յերեսաց նոցա զհեթանոսս, վիճակեցոյց ՚ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ*, ⁵⁵և բնակեցոյց ՚ի յարկս նոցա զա՛զգն Իսրայէլի։ ⁵⁶Փորձեցին դառնացուցին զԱստուած բարձրեալ, և զվկայութիւն նորա ո՛չ պահեցին։ ⁵⁷Դարձան խտորեցան՝ որպէս և հարք իւրեանց, դարձան և եղեն որպէս զաղեղն թևր*։ ⁵⁸Դարձան բարկացուցին զնա ՚ի բազինս իւրեանց, և դրօշելովք իւրեանց նախանձ արկին նմա*։ ⁵⁹Լուաւ Աստուած և արհամարհեաց զնոսա, և անարգեաց յոյժ գիսրայէլ։ ⁶⁰Սերժեաց յիւրմէ զխորանն ՚ի Սելով, խորան զոր բնակեցոյց ՚ի մէջ մարդկան։ ⁶¹Մատնեաց ՚ի գերութիւն զզօրութիւնս նոցա, և զգեղս նոցա ՚ի ձեռս թշնամեաց նոցա*։ ⁶²Արգել ՚ի սուր զժողովուրդ իւր, և զժառանգութիւն իւր անտես արար։ ⁶³Ձերիտասարդս նոցա եկեր հուր, և վասն կուսանաց նոցա ո՛չ ոք սգացաւ։ ⁶⁴Քահանայք նոցա անկան ՚ի սուր. և զայրիս նոցա ո՛չ ոք էր որ լայր։ ⁶⁵Ձարթեաւ որպէս ՚ի քնոյ Տէր, որպէս հզօր զի թափէ զգինի։ ⁶⁶Եհար յե՛տս զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից արար

* *Ոմանք.* Եւ սիրտք նոցա ո՛չ էին։

* *Ոմանք.* Ջբարկութիւն իւր, և ո՛չ բորբոքեաց զամենայն։

* *Ոմանք.* Նոքա. և ոգի որ ելանէ և այլ ո՛չ դառնայ։

* *Ոմանք.* Ետ ժանկոյ զպտուղս։

* *Ոմանք.* Եհար կարկտիւ։

* *Ոմանք.* Եւ զստացուածս։

* *Յօրինակին պակասէր.* Բարկութեան իւրոյ, զսրտմտութիւն բարկութիւն և զնեղութիւն։

* *Ոմանք.* Հար զամենայն անդրա՞... ամենայն վաստակոց նոցա յարկս Քամայ։

* *Ոմանք.* Հան զնոսա... զոր ստացաւ աջ նորա։

* *Ոմանք.* Դարձեալ խտոր՞։

* *Ոմանք.* Դարձեալ բար՞։

* *Ոմանք.* Ձզօրութիւն նոցա, և զգեղ նոցա։

զնոսա*։ ⁶⁷Մերժեաց նա զխորանն Յովսեփու, և զազգն Եփրեմի նա ո՛չ ընտրեաց։ ⁶⁸Այլ ընտրեաց նա զազգն Յուդայ. լեառն Սիովն զոր և սիրեաց*։ ⁶⁹Շինեաց որպէս միեղջերոյ զսրբութիւն նորա յերկրի հաստատեաց զնա յաւիտեան։ ⁷⁰Ընտրեաց զԴաւիթ ծառայ իւր և ընկալաւ զնա ՚ի հօտէ խաշանց, ՚ի վերջին ծնելոցն ընկալաւ զնա*։ ⁷¹Հովուել զՅակովբ ծառայ իւր, և զԻսրայէլ ժառանգութիւն իւր։ ⁷²Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւրոյ, յանմեղութիւն ձեռաց իւրոց առաջնորդէր նոցա։ *Տունք. 77:*

78

¹Սաղմոս յԱսափ. 3Ը:

Աստուած մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ քո։ Արարին զԵրուսաղէմ որպէս հիղս մրգապահաց*։ ²արկին զդիակունս ծառայից քոց գէշ թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։ ³Հեղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ զԵրուսաղէմաւ, և ո՛չ ոք էր որ թաղէր զնոսա։ ⁴Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր և այպն կատականաց այնոցիկ որ շուրջ էին զմեք*։ ⁵Մինչև յե՞րբ Տէր բարկանաս դու ՚ի սպառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։ ⁶Հեղ զբարկութիւն քո ՚ի վերայ ազգաց որ զքեզ ո՛չ ճանաչիցեն, ՚ի վերայ թագաւորաց որ զանուն քո ո՛չ կարդացին*։ ⁷զի կերան զՅակովբ և զտեղի նորա աւերեցին։ ⁸Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվա՛ն եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո զի աղքատացաք յոյժ*։ ⁹Օգնեա՛ մեզ Աստուած փրկիչ մեր, վասն փառաց անուան քոյ։ Տէր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեղս մեր վասն անուան քոյ*։ ¹⁰Մի՛ երբէք ասացեն ՚ի հեթանոսս, թէ ո՛ւր է Աստուած նոցա։ Այլ յայտնի՛ ինչ լիցի ՚ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ՚ի խնդրել զվրէժ արեանց ծառայից քոց որ հեղաւ*։ ¹¹Սոցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քո շահեա՛ դու զորդիս սպանելոց։ ¹²Հատո՛ դրացեաց մերոց եւթնպատիկ ՚ի ծոցն նոցա, նախատինս զոր նախատեցին զքեզ Տէր*։ ¹³Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յա՛զգ պատմեսցուք զօրհնութիւնս քո*։ *Տունք. 84:*

79

¹Ի կատարած. ՚ի վերայ զառանցելոցն վկայութիւնս. ասացեալ Սաղմոս ՚ի

* *Ոմանք.* Հար յետս զթշ՛:

* *Ոմանք.* Զլեառն Սիովն:

* *Ոմանք.* Եւ ՚ի վերջին ծնելոց:

* *Ոմանք.* Ի կատարած սաղմոս յԱսափ... որպէս զհիւզս մր՛:

* *Ոմանք.* Եղեաք մեք նախատինս:

* *Ոսկան.* Որք զքեզ ո՛չ ճանաչեցին:

* *Ոմանք.* Ողորմութիւն քո Տէր, զի:

* *Ոմանք.* Վասն մեծի փառաց ան՛:

* *Այլք.* Զվրէժ արեան ծառ՛: *Ոմանք.* Ուր և հեղաւ:

* *Ոմանք.* Ի ծոցս նոցա. նախատինս իւրեանց զոր նախա՛:

* *Ոմանք.* Մեք ժողովուրդք և խաշն:

վերայ Եթովպացւոցն. 3Թ*:

²Որ հովուեսդ Իսրայէլի նայեա՛ց, որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու: Որ նստիսդ ՚ի քրովբէս յայտնեա՛* ³առաջի Եփրեմի Բենիամինի և Մանասի: Ջարթո՛ գօրութիւն քո, և եկ կեցուցանել զմեզ: ⁴Աստուած գօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք: ⁵Տէր Աստուած գօրութեանց մինչև յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց: ⁶Ձամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով: ⁷Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այլան կատականաց թշնամեաց մերոց: ⁸Աստուած գօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք: ⁹Այգի յեգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս և զնոսս տնկեցեր՝, ¹⁰և առաջնորդեցեր նմա: Հաստատեցեր զարմատս նորա և ելից զերկիր. ¹¹ծածկեաց զլերինս հովանի նորա, և բարունակք նորա զմայր Աստուծոյ*: ¹²Չգեաց զորթ իւր մինչև ՚ի ծով, մինչև ՚ի Գետս են շառաւեղք նորա: ¹³Ընդէ՞ր քակեցեր զցանգ նորա, կթեն զնա անցաւորք ճանապարհի: ¹⁴Ապականեաց զնա խոզ անտառի, և երէ վայրի արածեցաւ ՚ի նմա: ¹⁵Աստուած գօրութեանց դարձ հայեա՛ց յերկնից և տե՛ս, այց արա այգւոյս այսմիկ ¹⁶և դարման տար՛ սմա զոր տնկեաց աջ քո: Ի վերայ որդւոյ մարդոյ զոր գօրացուցեր զնա ՚ի քեզ, ¹⁷այրեցեալ՝ ՚ի հուր, աւերեալ, և ՚ի սաստէ քունմէ կորիցէ՛: ¹⁸Եղիցի ձեռն քո ՚ի վերայ առն, աջ քո ՚ի վերայ որդւոյ մարդոյ զոր գօրացուցեր զնա ՚ի քեզ: ¹⁹Ո՛չ ևս ՚ի բացէ եղիցուք մեք ՚ի քէն. կեցուցես դու զմեզ, և զանուն քո Տէր կարդասցուք*: ²⁰Աստուած գօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ և կեցցուք: *Տունք. ԺԸ:*

80

1Ի կատարած. վասն հնծանաց. Սաղմոս յԱսափ. հինգերորդ շաբաթուց. 2*:

²Յնծացէ՛ք առ Աստուած օգնական է մեր աղաղակեցէ՛ք առ Աստուած Յակովբայ՝: ³Առէ՛ք սաղմոս և տո՛ւք օրհնութիւն, սաղմոս ասացէք նմա ՚ի ձայն քաղցրութեան*: ⁴Փո՛ղ հարէք ՚ի զլուխս ամսոց, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց: ⁵Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Աստուծոյ Յակովբայ՝: ⁶Վկայութիւնն Յովսեփու զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ո՛չ գիտէր լուաւ: ⁷Ի բաց արա ՚ի բեռանց գթիկունս նորա, և զձեռս նորա յարդի և ՚ի թիոյ ծառայութենէ՛: ⁸Ի նեղութեան կարդացեր առ իս և փրկեցի զքեզ, լուայ քեզ ՚ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ ՚ի

* *Ոմանք.* Ձառանցելոց. սաղմոս յԱսափ. ՚ի վերայ Եթովպացւոց:

* *Ոսկան.* Որ հովուեսդ Իսրայէլի: *Ոմանք.* Որ նստիս ՚ի քրով... յայտնեաց... (3) և եկ ՚ի կեցուցանել:

* *Ոսկան.* Եւ զնա տնկեցեր:

* *Ոմանք.* Եւ բարունակ նորա զմայրս Աստուծոյ:

* *Ոմանք.* Ի հուր, և աւերեալ. ՚ի սաստէ քունմէ:

* *Ոմանք.* Ոչ ևս ՚ի բաց. *կամ* ՚ի բացեայ եղիցուք:

* *Ոմանք.* Ի վերայ հնծանաց... Է-երորդ շաբաթու:

* *Ոմանք.* Ձի օգնական մեր է, աղա՛:

* *Ոմանք.* Առէք սաղմոսք, և:

* *Ոմանք.* Հրաման է այս յԻսրայէլի:

* *Ոմանք.* Ի բաց արարի ՚ի բեռանց... և զձեռն յորթ. *կամ* յորդ և ՚ի թի ծառայելոյ: *Ուր Ոսկան.* Ի բաց արար:

վերայ ջուրցն Յակառակութեան*։ ⁹Լոր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ, և Իսրայէլ թէ լուիցես ինձ։ ¹⁰Մի՛ ևս եղիցին քեզ աստուածք առժամայնք. և մի՛ երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի։ ¹¹Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, բայց զբերան քո և լցից զդա։ ¹²Ժողովուրդ իմ ո՛չ լուաւ ձայնի իմուն, և Իսրայէլ յիս ինչ ո՛չ նայեցաւ։ ¹³Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց, զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց։ ¹⁴Ձի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր*։ ¹⁵Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա, ՚ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ*։ ¹⁶Թշնամիք Տեառն ստեցին նմա, եղիցին ժամանակք նոցա յաշխարհի*։ ¹⁷Կերակրեաց զնոսա ՚ի պարարտութենէ ցորենոյ, ՚ի վիմէ մեղր յագեցոյց ՚ի նոսա*։ *Տունք. ԺԶ:*

81

¹Սաղմոս յԱսափ. ԶԱ:

Աստուած եկաց ՚ի ժողովս աստուածոց, և ՚ի միջի նոցա դատէր զնոսա*։ ²Մինչև յե՞րբ դատիք անիրաւութեամբ, և ակն առնուք մեղաւորաց։ ³Դատ արարէք որբոյն և այրոյ. իրաւունս արարէք տնանկին և խոնարհի։ ⁴Ապրեցուցէք զաղքատն և զտնանկ, ՚ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։ ⁵Ո՛չ իմացան և ո՛չ ՚ի միտ առին, ՚ի խաւարի գնացին, և շարժեցան ամենայն հիմունք երկրի։ ⁶Ես ասացի թէ աստուածք իցէք, կամ որդիք Բարձրելոյ ամենեքեան։ ⁷Դուք աւաղիկ որպէս մարդիկ մեռանիք, և որպէս զմի յիշխանաց անկանիք*։ ⁸Արի՛ Աստուած և դատեա՛ զերկիր, զի դո՛ւ ժառանգեսցես զամենայն հեթանոսս։ *Տունք. Ը: Գորդայս. ԾԶ:*

82

¹Օրհնութիւն. Սաղմոս յԱսափ. ԶԲ*:

²Աստուած ո՞ք քեզ նմանիցէ. մի՛ լռեր և մի՛ դադարեր Աստուած։ ³Ձի ահա թշնամիք քո զոչեցին, և ատելիք քո համբարձին զգլուխս իւրեանց։ ⁴Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին զգիտութիւն, խորհեցան ՚ի վերայ սրբոց քոց և ասացին. ⁵Եկայք սատակեսցուք զնոսա յազգաց, և մի՛ յիշեսցի անուն Իսրայէլի և ևս։ ⁶Խորհեցան միաբանութեամբ ՚ի միասին, վասն քո ո՛ւխտ արարին։ ⁷Բանակք Եդովմայեցւոց և Իսմայելացիք, Մովաբ և Յագարացիք։ ⁸Գեբաղ՝ Ամովն՝ Ամադեկ, և այլազգիքն ամենայն բնակչօքն հանդերձ Ծուրաւ*։ ⁹Նա՛ և

* *Ոմանք.* Ի նեղութեան կարդասցես առ իս, և փրկեցից զքեզ. լուայց քեզ... և փորձեցից զքեզ:

* *Ոմանք.* Եթէ ժողովրդեան իմոյ լու՛:

* *Ոմանք.* Զթշնամիս նոցա, և ՚ի վերայ նեղչաց նոցա... զձեռն իմ:

* *Ոմանք.* Եւ եղիցին ժամանակք:

* *Ոմանք.* Եւ ՚ի վիմէ մեղր յագեցոյց զնոսա. *կամ՝* նոցա:

* *Ոմանք.* Ի ժողովս աստուածոց:

* *Ոմանք.* Դուք ահաւաղիկ որպէս զմարդիկ մեռանիք:

* *Ոմանք.* Օրհնութիւն սաղմոսաց յԱսափ և ՚ի Դաւիթ:

* *Ոմանք.* Յանդերձ Ծուրայ:

Ասուր եկեալ էր ընդ նոսա. ամենեքեան սոքա զօրավիճն էին որդւոցն Ղովտայ:
¹⁰Արա՛ զնոսա որպէս Մադիամ, որպէս զՍիսարա, որպէս զՅաբին՝ ՚ի ծործորսն
 Կիսովնի*:
¹¹Սատակեցան նոքա յականս Դովրայ, և եղեն որպէս զաղբ երկրի*:
¹²Արա՛ զիշխանս նոցա որպէս զՈրէբն, զԷբն, զՋէբէէ, և զՍաղմանա և զամենայն
 իշխանս նոցա*:
¹³Ոյք ասացին. ժառանգեսցուք ՚ի մեզ զսրբութիւն Աստուծոյ*:
¹⁴Աստուած իմ արա՛ զնոսա որպէս զանիւ, որպէս զեղէզն առաջի հողմոյ:
¹⁵Որպէս հուր զի այրէ՛ զանտառ, որպէս բոց զի կիզու՛ զլերինս*:
¹⁶Այսպէս
 հալածեսցես զնոսա մրրկաւ քով, և բարկութեամբ քով խռովեսցուցես զնոսա:
¹⁷Լի՛ց զերեսս նոցա անարգանօք, և խնդրեսցեն զանուն քո Տէր:
¹⁸Ամաչեսցեն և խռովեսցին յաւիտեանս յաւիտենից, և ամօթալից կորիցեն:
¹⁹Ծանիցեն զի անուն քո Տէր է, և դու միայն բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն երկրի: *Տունք. ԺԸ:*

83

¹Ի կատարած. վասն հնծանաց. որդւոցն Կորիայ Սաղմոս. ԶԳ*:

²Որպէս սիրելի՛ են յարկք քո Տէր զօրութեանց*, ³ցանկայ և փափագէ անծն իմ
 ՚ի գաւիթս քո: Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցեն առ Աստուած կենդանի*:
⁴Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն. և տատրակ զբոյն ուր դիցէ զձագս իւր: Սեղան
 քո Տէր զօրութեանց, Թագաւոր իմ և Աստուած իմ:
⁵Երանի՛ ամենեցուն որ բնակեալ են ՚ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ*:
⁶Երանեալ է այր որոյ օգնութիւն իւր ՚ի քէն է. ելս եղ ՚ի մտի իւրում ⁷ի հովտէս
 տրտմութեան ՚ի տեղւոջ յորում ուխտեաց*:
⁸Զօրհնութիւն ստասցի որ զօրէնս դնէ, զնասցէ նա ՚ի զօրութենէ ՚ի զօրութիւն, և երևեսցի Աստուած հրեշտակաց ՚ի Սիոն*:
⁹Տէր Աստուած զօրութեանց լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկն դիր Աստուած Յակովբայ:
¹⁰Ընդունելի՛ ես դու մեր, տես Աստուած և նայեա՛ յերեսս օծելոյ քոյ:
¹¹Վասն զի լաւ է ինձ մի օր ՚ի գաւիթս քո, քան զհազարս: Ընտրեցի ընդ աղբ
 զալ ՚ի տան Աստուծոյ, առաւել քան զբնականալ ՚ի յարկս մեղաւորաց*:
¹²Ձողորմութիւն և զճշմարտութիւն սիրէ Տէր Աստուած, զշնորհս և զփառս տացէ՛:
¹³Տէր ո՛չ պակաս առնէ զողորմութիւն իւր յայնցանէ, որ զնան յանբծութեան:
 Տէր Աստուած զօրութեանց երանեալ է այր որ յուսայ ՚ի քեզ*:
Տունք. ԺԴ:

* *Ոմանք.* Որպէս զԱբիմա ՚ի ծործորս Կի՛:
 * *Ոմանք.* Նոքա յականս Դեբովրայ:
 * *Ոմանք.* Եւ զՋէբն և զՋէբէէ զՍաղմանա:
 * *Ոմանք.* Ոյք ասէին եթէ եկայք ժառանգեսցուք:
 * *Ոմանք.* Որպէս զհուր զի այրէ զանտառս:
 * *Ոմանք յաւելուն.* Սաղմոս *Դաւթի:*
 * *Ոմանք.* Իբրև զի սիրելի են յար՛:
 * *Ոմանք.* Ցնծասցէ առ Աստուած կեն՛:
 * *Ոմանք.* Օրհնեսցեն զքեզ Տէր:
 * *Ոմանք.* Ի հովիտս տրտմութեան:
 * *Ոմանք.* Զօրհնութիւնս տացէ որ օրէնս դիցէ, զնասցէ նա զօրութենէ ՚ի զօ՞. և երևեսցի Աստուած աստուծոց ՚ի Սիոն:
 * *Ոմանք.* Ընտրեցի ես ընդ աղբ: *Ուր Ոսկան.* Ընդ աղբ կալ ՚ի տ՞:
 * *Ոմանք.* Սիրէ Տէր Աստուած մեր:
 * *Ոմանք.* Ոյք զնան յանբծութիւն:

1^ի կատարած. որդւոցն Կորիսայ Սաղմոս. ԶԴ*:

²Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւնն Յակովբայ: ³Թողեր զանհրաւութիւն ժողովրդեան քոյ, ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

⁴Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, դարձար ՚ի բարկութենէ սրտմտութեան քո: ⁵Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ զսրտմտութիւնս քո ՚ի մէնջ: ⁶Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչև յազգ: ⁷Աստուած՝ դու դարձեալ կեցուցես զմեզ, ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ: ⁸Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ: ⁹Լուաք զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ որ դարձեալ են առ նա սրտիւք*: ¹⁰Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակել փառաց նորա յերկրի մերում: ¹¹Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին*:

¹²Ճշմարտութիւն յերկրէ՛ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ: ¹³Տէր տացէ զքաղցրութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր*. ¹⁴արդարութիւն առաջի՛ նորա գնասցէ դիցէ ՚ի ճանապարհի զգնացս իւր: *Տունք. ժԲ: Գորդայս. ԽԴ:*

1^{Սաղմոս ՚ի Դաւիթ. աղօթք. ԶԵ:}

Խոնարհեցո՛ Տէր զունկն քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես*: ²Պահեա՛ զանձն իմ զի սուրբ եմ ես. փրկեա՛ զճառայս քո Աստուած իմ որ ՚ի քեզ յուսացայ*: ³Ողորմեա՛ ինձ Տէր զի առ քե՛զ աղաղակեցի զօրհանապագ, ⁴ուրախ արա զանձն ճառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ*: ⁵Ձի դու Տէր քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսեան որ կարդան առ քեզ: ⁶Ո՛ւնկն դիր Տէր աղօթից իմոց, և նայեա՛ ՚ի ձայն խնդրուածոց իմոց: ⁷Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ: ⁸Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տէր, և ո՛չ ոք է որպէս զգործս քո: ⁹Չամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո, փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան*: ¹⁰Սե՛ծ ես դու Տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած: ¹¹Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի քում, և գնացից ՚ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ քումնէ*: ¹²Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ

* *Ոմանք յաւելուն.* Սաղմոս ՚ի Դաւիթ:

* *Ոմանք.* Լուայց զինչ խօսի Տէր... ժողովրդեան իւրում... առ նա սրտիւ:

* *Ոմանք.* Պատահեսցի... և խաղաղութիւն համբուրեսցին:

* *Ոմանք.* Տէր տայ զքաղցրութիւն իր, և երկիր:

* *Ոմանք.* Աղօթք Դաւթի որդւոյ Յեսսեայ: *Ուր Ոսկան.* Աղօթք Դաւթի ՚ի կատարած որդւոցն Կորիսայ:

* *Ոմանք.* Պահեա՛ զանձն իմ սուրբ Տէր, փրկեա՛:

* *Ոմանք.* Համբարձի զաչս իմ:

* *Ոմանք.* Չամենայն ազգ զոր արա՛... առաջի քո Տէր, և փառա՛:

* *Ոմանք.* Եւ գնացից ՚ի ճշմարտութիւն. և ուրախ ե՛... յերկնչել:

բոլորով սրտիւ իմով. փառաւոր արարից զանուն քո յաւիտեան: ¹³Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմութիւն քո, փրկեցեր զանձն իմ 'ի դժոխսց ներքնոց Աստուած*: ¹⁴Անօրէնք յարեան 'ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց: ¹⁵Այլ դու Տէր Աստուած իմ գթած ես և ողորմած, երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, ¹⁶նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ: Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ, կեցո՛ զորդի աղախնոյ քոյ*, ¹⁷և արա՛ առ իս նշան բարութեան: Տեսցեն ատելիք իմ և անաչեսցեն, զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս: *Տունք. ԺԶ:*

86

¹Սաղմոս օրհնութեան. որդւոցն Կորխայ. ԶԶ:

Հիմունք նորա 'ի լեառն 'ի սուրբ նորա*. ²սիրտ Տէր զդրունս Սիովնի քան զամենայն յարկսն Յակոբայ*: ³Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, ահաւաղիկ քաղաքդ Աստուծոյ*: ⁴Յիշեցի զԲահաբ և զԲաբելոն ոյք ճանաչեն զիս. ահա Այլազգիք և Ծուր և ժողովուրդք Յնդկաց՝ սոքա եղեն անդ*: ⁵Սիովնի ասի մայր, և մարդ ծնաւ 'ի նմա, և ինքն հիմունս արկ նմա Բարձրեալն*: ⁶Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան, իշխանացս այսոցիկ որ եղեն անդ*: ⁷Որպէս զի ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան. որոց բնակութիւն իւրեանց 'ի քէն է*: *Տունք. Զ:*

87

¹Ի կատարած. վասն Մաղաղեթայ իմաստութիւն. զի ետ պատասխանի եմման իմաստութեամբ Իսրայէլի. ԶԷ*:

²Տէր Աստուած փրկութեան իմոյ, 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո: ³Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս իմ: ⁴Ձի լցան չարչարանօք անձն իմ, և կեանք իմ 'ի դժոխս մերձեցաւ*, ⁵և համարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն 'ի գուբ: Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, ⁶և 'ի մեռեալս ազատ: Որպէս զվիրաւորս, որ ննջեն 'ի գերեզմանի: Չորս դուն ո՛չ յիշեցեր, և նոքա 'ի ձեռանէ քունմէ մերժեցան*: ⁷Եդին զիս 'ի գբի ներքնում, 'ի խաւարի և 'ի ստուերս մահու: ⁸Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն

* *Ոմանք.* Ներքնոց: Աստուած (14) անօրէնքն յարեան... զքեզ Աստուածդ առաջի:

* *Ոմանք.* Զօրութիւն ծառայի քուն:

* *Ոմանք.* 'Ի կատարած սաղմոս որդւոցն Կորխայ: *Այլք.* 'Ի լեառն սուրբ նորա:

* *Ոմանք յաւելուն.* Զդրունս Սիովնի *առաւել* քան զամենայն:

* *Ոմանք.* Աւաղիկ քաղաքդ:

* *Ոմանք.* ԶԲահաբ և զԲաբելոն... ահա Այլազգիք, Ծուր, ժողովուրդք Յնդ՛:

* *Ոմանք.* Մայր զՍիովն ասէ մարդ... և ինքն իսկ հիմունս արկ 'ի նմա Բարձր՛:

* *Ոմանք.* Գրովք ժողովրդեան իւրոյ:

* *Յօրինակին պակասէր.* Ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան:

* *Ոմանք.* Սաղմոս օրհնութեան որդւոցն Կորխայ, վասն Մաղաղեթայ իմաստութեան. զի ետ պատասխանի եմ՛: *Եւ ոմանք.* օրհնութիւն սաղմոսաց... ետ պատասխանի եմման Եզրայէլացի:

* *Ոմանք.* Զի լցաւ չար՛... 'ի դժոխս մերձեցան:

* *Ոմանք.* Որպէս վիրաւորս... 'ի գերեզմանս. զի զոր դու ո՛չ յիշեցեր, նոքա 'ի ձե՛:

գբօսանս քո անծեր՝ի վերայ իմ: ⁹Յեռի՛ արարեր յինէն զժանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց: Մատնեցայ և ո՛չ ելանէի, ¹⁰աչք իմ տկարացաւ յաղքատութենէ: Աղաղակեցի առ Տէր զօրհանապագ, և համբարձի առ քեզ զձեռս իմ: ¹¹Միթէ մեռելոց առնիցե՞ս սքանչելիս, կամ բժիշկք յարուցանիցեն խոստովան առնիցին առ քեզ: ¹²Միթէ պատմեսցե՞ոք երբէք ՚ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճնարտութիւնս քո ՚ի կորստեան: ¹³Միթէ ճանաչիցեն ՚ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ: ¹⁴Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ: ¹⁵Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն: ¹⁶Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկութենէ իմմէ. ՚ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ: ¹⁷Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս: ¹⁸Շրջեցան զինն որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս ՚ի միասին: ¹⁹Յեռի՛ արարեր յինէն զբարեկամս իմ և զժանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ: *Տունք. Ի: Գորդայս. ԽԲ:*

88

՚Իմաստութիւն Եմանայ Յեզրայելացւոյ. ԶԸ:

²Չողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից, ազգէ յազգ պատմեցից զճնարտութիւնս քո բերանով իմով: ³Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի, յերկինս պատրաստ եղիցի ճնարտութիւն քո: ⁴Եդի ուխտ ընտրելոյ իմոյ, երդուայ Ղաւթի ծառայի իմոյ: ⁵Յաւիտեան հաստատեցից զգաւակ քո, շինեցից ազգէ յազգ զաթոռ քո: ⁶Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, և ճնարտութիւն քո յեկեղեցիս սրբոց: ⁷Ո՞վ է յամպս որ հաւասարէ քեզ. կամ ո՞վ նմանիցէ Տեառն յորդիս Աստուծոյ: ⁸Աստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ և ահաւոր ՚ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովա: ⁹Տէր Աստուած զօրութեանց ո՛ նմանէ քեզ. հզօր ես դու Տէր՝ և ճնարտութիւն քո շուրջ են զքեզ: ¹⁰Դու տիրես զօրութեանց ծովու, և զխռովութիւն ալեաց նորա դու՛ ցածուցանես: ¹¹Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս, ՚ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո: ¹²Քո են երկինք և քո՛ է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր, ¹³զհիւսս և զհարաւ դու արարեր, Թաբոր և Յերմոն յանուն քո ցնծացեն: ¹⁴Քո՛ է բազուկ և քո՛ է զօրութիւն, զօրացի՛ աջ քո և բարձր եղիցի ձեռն քո: ¹⁵Յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ քո, ողորմութիւն և ճնարտութիւն զնացէ առաջի երեսաց

* *Ոմանք.* Տկարացան յաղքա՞:

* *Յօրհնակին.* Կամ բժիշկ յարուցանիցեն: *Ոմանք.* Բժիշկ յարուցանէ և խոստովան առնիցէ առ քեզ:

* *Այլք.* Միթէ ճանաչիցին ՚ի:

* *Ոմանք.* Առաւօտուց աղօթք իմ:

* *Ոմանք.* Եւ ափշեցայ:

* *Ոմանք.* Ուխտ ընտրելոց իմոց:

* *Ոմանք.* Յաւիտեան հաստատեցեր զաւակ քո. և շինե՞:

* *Ոմանք.* Եւ կամ ո՛ նմանիցէ Տեառն յորդիսն Աստուծոյ:

* *Ոմանք.* Մեծ և ահարկու ՚ի վերայ այնոցիկ ոյք:

* *Ոմանք.* Շուրջ է զքեզ:

քոց*։ ¹⁶Երանի՛ ժողովրդեան որ գիտեն զօրհնութիւնս քո Տէր. ՚ի լոյս երեսաց քոց գնասցեն, ¹⁷և յանուն քո ցնծասցեն զօրհանապագ, և յարդարութեան քում բարձր եղիցին։ ¹⁸Պարծանք զօրութեանց մերոց դո՛ւ ես, և ՚ի կամս քո բարձր եղիցի եղջեր մեր*։ ¹⁹Ի Տեառնէ է օգնութիւն սրբոյն Իսրայէլի՝ թագաւորին մերոյ։ ²⁰Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, և ասացեր եղից զօգնութիւն ՚ի վերայ հզօրին, և բարձր արարից զընտրեալն ՚ի ժողովրդենէ իմմէ*։ ²¹Գտի գԴաւիթ ծառայ իմ, իւղով սրբով իմով օծի զնա*։ ²²Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուցէ զնա։ ²³Մի՛ մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա։ ²⁴Յարից առաջի նորա զթշնամիս նորա, և զատելիս նորա ՚ի պարտութիւն մատնեցից։ ²⁵Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղջեր նորա։ ²⁶Եղից ՚ի ծովու զծեռն նորա, և ՚ի վերայ գետոց զաջ նորա*։ ²⁷Նա կարդասցէ առ իս՝ Յայր իմ ես դու, Աստուած ընդունելի փրկութեան իմոյ։ ²⁸Ես անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամենայն թագաւորս երկրի։ ²⁹Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։ ³⁰Յաստատեցից յաւիտեանս յաւիտենից զգաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից։ ³¹Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ, և յիրաւունս իմ ո՛չ կամեսցին զնալ։ ³²Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն, և զպատուիրանս իմ ո՛չ պահեսցեն։ ³³Յարից գաւազանաւ զանօրէնութիւնս նոցա, տանջանօք զանիրաւութիւնս նոցա*։ ³⁴Բայց զողորմութիւն իմ ո՛չ արգելից ՚ի նոցանէ, և ո՛չ նենգեցից ճշմարտութեան իմում*, ³⁵և ո՛չ անարգեցից զուխտ իմ, և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ զայն ո՛չ արհամարհեցից*։ ³⁶Միանգամ երդուայ ՚ի սրբութիւն իմ, թէ Դաւթի ես ո՛չ ստեցից*։ ³⁷Չաւակ նորա յաւիտեան կացցէ, և աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ. ³⁸որպէս լուսին զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս*։ ³⁹Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր, և ընդ վայր հարեր զօծեալ քո։ ⁴⁰Դարձուցեր զուխտ ՚ի ծառայէ քումմէ, պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա։ ⁴¹Քակեցեր զամենայն պարիսպս նորա, և եղիր զամուրս նորա ՚ի դողումն։ ⁴²Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի, եղև նա նախատ դրացեաց իւրոց*։ ⁴³Բարձր արարեր զաջ նեղչաց նորա. ուրախ արարեր զամենայն թշնամիս նորա։ ⁴⁴Դարձուցեր զօգնութիւն ՚ի սրոյ նորա, և ո՛չ ընկալար զնա ՚ի պատերազմի։ ⁴⁵Անարգեցեր զսրբութիւն նորա, զաթոռ նորա յերկիր կործանեցեր։ ⁴⁶Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հեղեր զնովաւ զամօթ։ ⁴⁷Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո ՚ի սպառ, բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո*։ ⁴⁸Իսկ արդ յիշեա՛ տես՝ ով է իմ հանգիստ. միթէ՛ ՚ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան*։

* *Ոմանք.* Գնասցեն առաջի երե՛ս։
 * *Ոմանք.* Զօրութեանց նոցա դու ես Տէր, և ՚ի։
 * *Ոմանք.* Զօգնութիւն իմ ՚ի վերայ հզօ*։
 * *Ոմանք.* Եւ իւղով սրբով։
 * *Ոմանք.* Զծեռն նորա. և ՚ի վերայ։
 * *Ոմանք.* Եւ տանջանօք։
 * *Ոմանք.* Գշմարտութեան իմոյ։
 * *Ոմանք.* Եւ ինչ որ ելանէր։
 * *Ոմանք.* Ի սրբութիւնս իմ։
 * *Ոմանք.* Եւ որպէս լուսին։
 * *Ոմանք.* Անցաւորք ճանապարհաց։
 * *Ոմանք.* Որպէս զհուր բորբոք*։
 * *Ոմանք.* Յիշեա՛ և տես՝ ով է... միթէ՛ զուր ինչ։

49Ո՛վ է մարդ որ կեցցէ և ո՛չ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ՚ի ձեռաց դժոխաց: 50Ուր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով*: 51Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ, զոր ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց բազմաց*: 52Ձոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախատեցին փոխանակ օժելոյ քոյ: 53Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի: *Տունք. ԽԸ:*

Կանոնս Գորդայս. Է: Սաղմոս. ԺԶ: Տունս. ՅԽԸ:

89

1Աղօթք ՚ի Մովսէս յայրն Աստուծոյ. ԶԹ:

Տէր ապաւեն եղեր մեր ազգէ մինչև յազգ*. 2մինչև՛ լերինք հաստատեալ էին, մինչև՛ ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս: Յաւիտենից մինչև յաւիտեանս դո՛ւ ես*. 3և մի՛ դարձուցաներ զմարդ ՚ի տառապանս. և ասացեր դարձարո՛ւք առ իս որդիք մարդկան: 4Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի զի անց. որպէս պահ մի գիշերոյ*. 5և ամք նոցա անարգութեամբ եղիցին: Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, 6ընդ առաւօտս որպէս դալարի զուարճացին և ծաղկեսցին, ընդ երեկոյս թարշամեսցին չորացին և անկցին: 7Նուազեցա՛ք մեք ՚ի բարկութենէ քումմէ, և ՚ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք: 8Եղիր զմեղս մեր առաջի քո, և զկեանս մեր ՚ի լոյս երեսաց քոց: 9Ամենայն աւուրք մեր նուաղեցան, և ՚ի բարկութենէ քումմէ խռովեցաք: Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի*, 10և թիւ աւուրց ամաց մերոց ՚ի նոսա եւթանասուն ամ: Ապա թէ առաւել ևս՝ ութսուն ամ. որ ինչ աւելի քան զայն ցաւօ՛ք և հեծութեամբ: Եկն ՚ի վերայ մեր հեզութիւն, և խրատեցաք*. 11Իսկ արդ ո՞ գիտասցէ զգօրութիւն բարկութեան քո, կամ յաիէ քումմէ զսրտմտութիւն քո համարիցի*: 12Այսպէս ցոյց ինձ զաջ քո. և որ խոնարհ են սրտիւք, զիմաստութիւնս քո: 13Դարձ Տէր մինչև յե՞րբ, մխիթարեա՛ ՚ի ծառայս քո: 14Լցաք առաւօտու ողորմութեամբ քո. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց*: 15Ուրախ եղաք փոխանակ աւուրցն որ խոնարհ արարեր զմեզ, և ամացն յորս տեսաք զչարչարանս*: 16Հայեա՛ Տէր ՚ի ծառայս քո և ՚ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛ որդւոց նոցա. 17եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ՚ի վերայ մեր: Չգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ՚ի մեզ Տէր. զգործս ձեռաց մերոց աջողեա՛ մեզ*: *Տունք. ԺԶ:*

* *Ոմանք.* Ողորմութիւնք քո առաջինքն Տէր:

* *Ոմանք.* Ընկալայ ՚ի ծոցս իմ:

* *Ոմանք.* Եղեր մեր ազգէ յազգ:

* *Ոմանք.* Հաստատեալ էին ստեղծեր զերկիր և զամենայն: *Ուր Ոսկան.* Եւ մինչև ստեղծեր զերկիր:

* *Ոմանք.* Որպէս զպահ մի գիշերոյ:

* *Ոմանք.* Եւ մեք ՚ի բարկութենէ քումմէ:

* *Ոմանք.* Եւ որ ինչ աւելի քան:

* *Ոմանք.* Չսրտմտութիւնս քո համարեցի:

* *Ոմանք.* Լցաք առաւօտուց ողորմութեամբ քով:

* *Ոսկան.* Յորս խոնարհ արարեր զմեզ և ա՛:

* *Ոմանք.* Եւ եղիցի... աջողեա՛ մեզ:

¹Օրհնութիւն գովութիւն 'ի Դաւիթ. Ղ:

Որ բնակեալն է յօգնութիւն Բարձրելոյ, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ*։ ²Ասասցէ Տեառն ընդունելի իմ ես, ապաւեն իմ Աստուած, և ես յուսամ 'ի նա*։ ³Նա փրկեսցէ զիս յորոգայթ որսողին, և 'ի բանից խռովութենէ*։ ⁴Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, 'ի հովանի թևոց նորա յուսասցիս*։ ⁵Որպէս զէն՝ շո՛ւրջ եղիցին զքն ճշմարտութիւն նորա*։ ⁶Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ո՛չ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ։ Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթազողութենէ դիւի 'ի հասարակ աւուր*։ ⁷Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք և բարք ընդ աջմէ քումմէ, որ առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին*։ ⁸Բայց միայն աչօք քով հայեսցիս դու, զհատուցումն մեղաւորաց տեսցես*։ ⁹Գի դու Տէր յո՛յս իմ ես։ ՁԲարձրեալն արարեր քեզ ապաւեն*։ ¹⁰Ո՛չ հասցեն առ քեզ չարք, տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո*։ ¹¹Յրեշտակաց իւր պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ յամենայն ճանապարհս քո*։ ¹²Ի բազուկս իրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո*։ ¹³Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. առ ոտն կոխեսցես զառնծն և զվիշապ*։ ¹⁴Քանզի յի՛ս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի՛ եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։ ¹⁵Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց 'ի նեղութեան։ Փրկեցից փառաւոր արարից զնա*, ¹⁶երկայն աւուրբք լցուցից զնա և ցուցից նմա զփրկութիւն իմ*։ *Տունք. Ժ2:*

¹Սաղմոս օրհնութեան աւուր շաբաթուց 'ի Դաւիթ. ՂԱ*:

²Բարի է խոստովան լինել Տեառն, սաղմոս ասել անուան քում Բարձրեալ։ ³Պատմել առաւօտու զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս 'ի գիշերի*։ ⁴Տասնադէա՛ւ սաղմոսարանաւ, 'ի ձայն օրհնութեան գովել։ ⁵Ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո, և 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց։ ⁶Որպէս զի մեծ են

* *Ոմանք.* Օրհնութիւն գովութեան 'ի Դաւիթ։ Անվերնագիր 'ի Յերբ"։ Ո՞ բնակեալ յօգնութիւն Բարձ"։

* *Ոմանք.* Ասա՛ Տեառն ընդունող իմ ես։

* *Ոմանք.* Եւ 'ի բանից 'ի խռովութենէ։

* *Ոմանք.* Թևոց նորա յուսասցես։

* *Բազումք.* Որպէս զզէն շուրջ եղիցի զքն։

* *Ոմանք.* Յերկիւղէ գիշերոյ։

* *Ոմանք.* Քումմէ. և առ քեզ ինչ։

* *Ոմանք.* Նայեսցիս դու, և զհատուցումն մե՛ն։

* *Ոմանք.* Արարեր ապաւեն քեզ։

* *Ոմանք.* Եւ տանջանք ո՛չ մերձես"։

* *Բազումք.* Յրեշտակաց իւրոց պա"։

* *Ոմանք.* 'Ի բազուկս իրեանց բարձցեն զքեզ... հարցի զքարի ոտն քո։

* *Օրհնակ մի.* 'Ի վերայ իժի թագաւորականի գնասցես դու, և։

* *Ոմանք.* Կարդաց առ իս, և ես... փրկեցից և փառա"։

* *Ոմանք.* Լցուցից զնա. և ցուցից նմա։

* *Ոսկան յաւելու.* Շաբաթուց. *Անվերնագիր 'ի Յերբայեցուց։*

* *Ոմանք.* Եւ զճշմարտութիւնս քո 'ի։

գործք քո Տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո: ⁷Այր անզգամ զայս ո՛չ ծանիցէ, և անմիտն զայս ո՛չ առնու ՚ի միտ: ⁸Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ՚ի ծաղկել այնոցիկ որ գործեն զանօրէնութիւն: Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից*, ⁹և դու բարձրեալ ես յաւիտեանս Տէր: ¹⁰Ձի ահա թշնամիք քո Տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն. ցրուեսցին ամենեքեան ոյք գործեն զանօրէնութիւն: ¹¹Բարձր եղիցի որպէս միեղջերոյ եղջևր իմ, և ծերութիւն իմ ՚ի ձէթ պարարտութեան*: ¹²Ետես ակն իմ ՚ի թշնամիս իմ որ յարուցեալ են ՚ի վերայ իմ չարութեամբ, ՚ի նոսա լուիցէ ունկն իմ*: ¹³Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս մայրքն Լիբանանու բազումք եղիցին*: ¹⁴Տնկեալք եղիցին ՚ի տան Տեառն, ՚ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին*: ¹⁵Եւս՝ և բազումք եղիցին ՚ի ծերութիւն պարարտութեան, գիրգք և փափո՛ւկք եղիցին ¹⁶: ՚ի պատմել, ուղիղ է Տէր Աստուած մեր և ո՛չ գոյ ՚ի նմա անիրաւութիւն: *Տունք. ԺԴ: Գորդայս. ԽԶ:*

92

Յօրն առաջին շաբաթու յոր հաստատեցաւ երկիր. օրհնութիւն գովութեան ՚ի Դաւիթ. ՂԲ*:

¹Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ: Հաստատեաց զաշխարհի զի մի՛ սասանեսցի*. ²պատրաստ է աթոռ քո իսկզբանէ յաւիտեանս դու ես: ³Ամբարձան գետք ՚ի Տէր, և համբարձին գետք զծայնս իւրեանց. յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց*: ⁴Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու: Սքանչելի ես դու Տէր ՚ի բարձունս, ⁵վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք: Տան քուն վայելէ սրբութիւն Տէր, ընդ երկայն աւուրս*: *Տունք. Զ:*

93

Սաղմոս ՚ի Դաւիթ. չորեքշաբաթու. ՂԳ*:

¹Աստուած վրեժխնդիր, Տէր Աստուած վրեժխնդիր յայտնեցար*: ²Բարձր լեր որ դատիս զերկիր, հատո՛ զհատուցումն ամբարտաւանից: ³Մինչև յե՞րբ մեղաւորք Տէր, մինչև յե՞րբ մեղաւորք պարծեսցին: ⁴Բարբառեալ խօսեսցին

* *Ոմանք.* Որպէս զխոտ... ոյք գործեն:

* *Ոմանք.* Որպէս զմիեղջերոյ:

* *Ոմանք.* Եւ ՚ի նոսա լուիցէ:

* *Ոմանք.* Արդարք որպէս զար՝... որպէս զմայրս Լիբա՛:

* *Ոմանք.* Եւ ՚ի գաւիթս Աստուծոյ:

* *Ոմանք այսպէս ունին զվերնագիր սաղմոսիս.* Օրհնութիւն երգ Դաւթի յաւուր միաշաբաթու, յորժամ երկիր հաստատեցաւ. Անվերնագիր ՚ի Հեբրայ՛:

* *Ոսկան.* Ընդ մէջ իւր էած: *Ոմանք.* Հաստատեաց զաշխարհս:

* *Այլք.* Ամբարձան գետք Տէր, և:

* *Ոմանք.* Ի տան քուն վայե՛:

* *Ոմանք.* Սաղմոս Դաւթի չորրորդ շաբաթու: *Յոր Ոսկան յաւելու. Անվերնագիր ՚ի Հեբրայ՛:*

* *Ոմանք.* Վրեժխնդիր յայտնեցաւ:

զանհրաւութիւն, խօսեցոյցն ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն*:
⁵Ձժողովորդ քո Տէր խոնարհ արարին, և զժառանգութիւն քո չարչարեցին*:
⁶Ձայրին և զպանդուխտն սպանին զորքսն կոտորեցին, ⁷և ասացին ո՛չ տեսանէ
զայս Տէր, և ո՛չ ՚ի միտ առնու Աստուած Յակոբայ: ⁸Իմացարուք անզգամք
ժողովրդեան, և անմիտք մինչև յե՞րբ ո՛չ առնուք ՚ի միտ*:
⁹Որպէս զի թէ որ տնկեաց զունկն՝ ինքն ո՛չ լուիցէ, կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՛չ տեսանիցէ*:
¹⁰Որ խրատէն զազինս որպէս թէ ո՛չ յանդիմանեսցէ. ո՛ր ուսուցանէ մարդոյ
գիտութիւն*:
¹¹Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան զի են ընդունայն: ¹²Երանի՛
մարդոյ զոր խրատես դու Տէր, և յօրինաց քոց ուսուցանես դու նմա*:
¹³Ցածուցանես դու նմա զաւուրս չարութեան, մինչև փորեցի խորխորատ
մեղաւորի: ¹⁴Ո՛չ մերժէ Տէր զժողովորդ իւր, և զժառանգութիւն իւր ո՛չ առնէ
անտես: ¹⁵Մինչև դարձցին իրաւունք յարդարութիւն. ընկալցին զնա
ամենեքեան ոյք ուղիղ են սրտիւք: ¹⁶Ո՛ր յարիցէ ընդ իս ՚ի վերայ չարաց, կամ ո՛ր
հաւասարեսցէ ինձ ՚ի վերայ այնոցիկ որ գործեն զանօրէնութիւն*:
¹⁷Թէ ո՛չ Տեառն օգնեալ էր ինձ, փոքր միւս ևս և բնակեալ էր անձն իմ ՚ի դժոխս*:
¹⁸Եթէ ասէի թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո Տէր օգնէր ինձ*:
¹⁹Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ, մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ: ²⁰Մի՛
հաւասարեսցէ քեզ աթոռ անօրէնութեան, ո՛ր պատճառէ զվաստակս ընդդէմ
հրամանի*:
²¹Որսացան զանձն արդարոյ, և զարիւն անբիծ պարտաւոր առնէին:
²²Եղև Տէր ապաւէն իմ, Աստուած օգնական յուսոյ իմոյ: ²³Հատուցէ նոցա Տէր
ըստ անօրէնութեան նոցա, ըստ չարութեան նոցա կործանեսցէ զնոսա Տէր
Աստուած մեր: *Տունք. ԻԱ:*

Օրհնութիւն գովութեան ՚ի Դաւիթ. ԴԴ*:

¹Եկայք ցնծասցուք ՚ի Տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:
²Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ, սաղմոսիւք աղաղակեսցուք
առ նա: ³Աստուած մե՛ծ է, Տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի*:
⁴Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի, բարձրութիւնք լեռանց նորա են:
⁵Նորա՛ է ծով և նա՛ արար զնա, և զգամաք ձեռք նորա ստեղծին: ⁶Եկայք երկիրպագցուք
նմա, անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ: ⁷Նա ինքն է Տէր
Աստուած մեր. մեք ժողովորդք ձեռին նորա, և խաշն արօտի նորա*:
⁸Այսօր եթէ

* *Ոմանք.* Բարբառեալ խօսեին. *կամ՝* խօսին զա՛... ոյք գործեն:
* *Ոմանք.* Ձժողովորդս քո:
* *Ոմանք.* Անզգամք ժողովրդոց... ո՛չ առնուք զայս ՚ի միտ:
* *Ոմանք.* Ինքն ո՛չ լսիցէ:
* *Ոմանք.* Ո խրատէ զազինս... որ ուսուցանէ մարդոյ զգիտ*:
* *Ոմանք.* Ուսուցանես դու ՚ի նմա:
* *Ոմանք.* Ո՛վ յարիցէ ընդ իս ՚ի վերայ չարեաց:
* *Ոմանք.* Եթէ ո՛չ Տեառն... փոքր մի ևս բնա՛*:
* *Ոմանք.* Թէ ասէի թէ ահա:
* *Ոմանք.* Մի՛ հաւասարեսցի:
* *Ոսկան յաւելու.* Անվերնագիր ՚ի Հեբրայ՝:
* *Ոմանք.* Եւ Տէրն թագաւոր մեծ:
* *Ոմանք.* Ժողովորդք ՚ի ձեռին նորա:

ծայնի նորա լսիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր* ⁹որպէս ՚ի Դառնութեան: Յաւուրն փորձութեան յանապատին ուր փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս և տեսին զգործս իմ* ¹⁰զքառասուն ամ: Ջանացայ ընդ ազգին ընդ այնմիկ և ասացի. Միշտ մոլորեալ են սրտիւք*. ¹¹և նոքա ո՛չ ծանեան զճանապարհս իմ: Որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում, թէ՛ մտցեն ՚ի հանգիստ իմ: *Տունք. ՃԱ: Գորդայս. ԼԸ:*

95

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի ժամանակի զի տաճարն շինեցաւ. ՂԵ*:

¹Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնեցէ՛ք զՏէր ամենայն երկիր:
²Օրհնեցէ՛ք զՏէր և օրհնեցէ՛ք զանուն նորա, ակետարանեցէ՛ք օրըստօր՝ զփրկութիւն նորա: ³Պատմեցէ՛ք ՚ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա: ⁴Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, ահարկո՛ւ է նա ՚ի վերայ ամենայն կռոց: ⁵Ամենայն կուռք հեթանոսաց դէք են, և Տէր զերկինս արար*: ⁶Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա, սրբութիւն և մեծ վայելչութիւն ՚ի սրբութեան նորա*: ⁷Մատուցէ՛ք Տեառն տո՛հմք ազանց, մատուցէ՛ք Տեառն զփառս և զպատիւ*, ⁸մատուցէ՛ք Տեառն զփառս անուան նորա: Առէ՛ք պատարագս և մտէ՛ք ՚ի սրահ նորա*, ⁹երկիր պագէք Տեառն ՚ի գաւիթս սրբութեան նորա. և խռովեսցի՛ յերեսաց նորա ամենայն երկիր:
¹⁰Ասացէ՛ք ՚ի հեթանոսս թէ Տէր թագաւորեաց, հաստատեաց զաշխարհ զի մի՛ սասանեսցի, և դատի զժողովուրդս իւր ուղղութեամբ*: ¹¹Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծացէ՛ երկիր. զուարճացի՛ ծով լրիւ իւրով*. ¹²ցնծացեն դաշտք և ամենայն որ է ՚ի նոսա: Յայնժամ ցնծացեն ամենայն ծառք անտառի*
¹³յերեսաց Տեառն զի գայ, և գայ նա ՚ի դատել զերկիր: Դատի զտիեզերս իրաւամբք, և զժողովուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով*: *Տունք. ՃԲ:*

96

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի ժամանակի զի երկիրն հաստատեցաւ. ՂԶ:

Տէր թագաւորեաց՝ ցնծացէ՛ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք*: ²Ամպ և

* *Ոմանք.* Ձայնի նորա լուիցէք:

* *Ոմանք.* Ի դառնութեանն. յաւուրսն փորձութեան յանապատի:

* *Ոմանք.* Տաղտկացայ ազգան այնուիկ. և ասացի միշտ մոլորեալ:

* *Ոմանք.* Ի ժամանակի յորում տաճարն շի՞: *Ուր Ոսկան յաւելու. Շինեցաւ յետ գերութեանն. Անվերնագիր ՚ի Յերբայ՝:*

* *Ոմանք.* Այլ Տէր զերկինս արար:

* *Ոմանք.* Մեծվայելչութիւն է ՚ի սրբութիւն նորա:

* *Ոմանք.* Ձփառս և զպատիւս:

* *Ոմանք.* Ի սրահս նորա:

* *Ոմանք.* Հաստատեաց զաշխարհս:

* *Ոմանք.* Ուրախ լիցին երկինք:

* *Ոմանք.* Եւ ամենայն որ ՚ի նոսա:

* *Ոմանք.* Դատի զաշխարհս արդարութեամբ. և զտիե՛:

* *Ոմանք.* Ձի երկիրն հաստատէր: *Ուր Ոսկան յաւելու. Անվերնագիր ՚ի Յերբայ՝:*

մեզ շուրջ է գնովաւ, յիրաւունս և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա*։ ³Չուր առաջի նորա գնասցէ, այրեսցէ շուրջ զթշնամիս նորա։ ⁴Երևեսցան փայլատակունք նորա տիեզերաց, ետես և սասանեցաւ երկիր։ ⁵Լերինք որպէս մոմ հալեսցին յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր*։ ⁶Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա. տեսին ամենայն ժողովուրդք զփառս նորա։ ⁷Ամաչեսցեն ամենեքեան որ երկիրպագանեն կռոց, և ոյք պարծին ՚ի դրօշեալս իւրեանց։ Երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք նորա*, ⁸զի լուաւ և ուրախ եղև Սիոն, և ցնծասցեն դստերք Յուդայ վասն իրաւանց քոց Տէր։ ⁹Ձի դու բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն երկրի, յոյժ բարձրացար ՚ի վերայ ամենայն կռոց։ ¹⁰Ոյք սիրէք զՏէր ատեցէք զչարութիւն. պահէ՛ Տէր զանձինս սրբոց իւրոց, ՚ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա*։ ¹¹Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտից եղև ուրախութիւն*։ ¹²Ուրախ եղերուք արդարք ՚ի Տէր, խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։ *Տունք. ժԲ։*

97

¹Սաղմոս ՚ի Դաւիթ օրհնութեան. ՂԷ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար։ Փրկեաց զնա աջ իւր, և բազուկ սուրբ իւր*։ ²Եցոյց Տէր զփրկութիւն իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր։ ³Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակովբ, ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլի. և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ*։ ⁴Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, օրհնեցէք ցնծացէք և սաղմոս ասացէք։ ⁵Սաղմոս ասացէք Աստուծոյ մերուն օրհնութեամբ, օրհնութեամբ և ՚ի ձայն սաղմոսաց։ ⁶Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ և ՚ի ձայն եղջեր փողոյ. և աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն։ ⁷Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ամենայն բնակիչք նորա. ⁸և գետք ծափս հարցեն ՚ի միասին ձեռամբ։ ⁹Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասեալ է Տէր ՚ի դատել զերկիր։ Դատի զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ*։ *Տունք. ժ։ Գորդայս. ԼԳ։*

98

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՂԸ։

¹Տէր թագաւորեաց բարկացան ժողովուրդք, որ նստիս ՚ի քրովբէս, սասանեցաւ երկիր*։ ²Տէր ՚ի Սիովն մեծ է, և բարձր է ՚ի վերայ ամենայն

* *Ոմանք.* Շուրջ են գնովաւ։

* *Ոմանք.* Որպէս մոմ հալին։

* *Ոմանք.* Ոյք երկիրպա՛... և ոյք պարծինն ՚ի։

* *Ոմանք.* Մեղաւորի փրկէ զնոսա։

* *Ոմանք.* Ուղղոց սրտիւք եղև։

* *Ոմանք.* Փրկեաց նմա աջ իւր, և։

* *Ոմանք.* Յիշեաց զողորմութիւն իւր Յակովբայ, զճշմարտութիւն իւր ՚ի վերայ տանն Իսրայէլի, և տեսին։

* *Ոմանք.* Ձի գայ զի հասեալ է Տէր... դատի զաշխարհ ար՛... և զժողովուրդ իւր։

* *Ոմանք.* Որ նստի ՚ի քրովբէս։

ժողովրդոց: ³Խոստովան եղիցուք անուան քուն մեծի, զի ահաւոր և սուրբ է*, ⁴և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ: Դու պատրաստեցեր զուղղութիւն, զիրաւունս և զարդարութիւն Յակովբայ դու արարեր: ⁵Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է: ⁶Սովսես և Ահարովն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ որ կարդան զանուն նորա: Կարդային առ Տէր և նա լսէր նոցա, ⁷և ՚ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա: Պահէին զվկայութիւն նորա, և զհրամանս զոր ետ նոցա*: ⁸Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա, Աստուած դու քաւիչ լինէիր, վրէժխնդիր ՚ի վերայ ամենայն գործոց նոցա*: ⁹Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք ՚ի լեառն սուրբ նորա զի սուրբ է Տէր Աստուած մեր: *Տունք. Ժ:*

99

¹Սաղմոս խոստովանութեան ՚ի Դաւիթ. ԴԹ:

²Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ: ³Ստէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր: Նա՛ արար զմեզ և ո՛չ մեք էաք, մեք ժողովուրդք և խա՛շն արօտի նորա*: ⁴Ստէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ընդ յարկս նորա: Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա*: ⁵Քաղցր է Տէր, յալիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչև յա՛զգ է ճշմարտութիւն նորա: *Տունք. Զ:*

100

¹Սաղմոս ՚ի Դաւիթ. Ծ:

Յողորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր. սաղմոս ասացից ²և ՚ի միտ առից: Ճանապարհ անբիծ մինչև եկեսցէ առ իս. զի գնայի ես յանբծութեան սրտի իմոյ ՚ի մէջ տան իմոյ*: ³Ո՛չ եղի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան. ոյք առնէին զուրացութիւն. ատեցի: Ո՛չ մերձեցաւ առ իս* ⁴որ թերն էր սրտիւ. խոտորեալ յինէն անզգամին, և ես ո՛չ ինչ փոյթ առնէի*: ⁵Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ, զնա բացէ ՚ի բա՛ց հալածէի: Որ ամբարտաւան էր աչօք՝ և ազահ սրտիւ, ընդ նմա և հա՛ց ո՛չ ուտէի*: ⁶Աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս: Որ գնայր ՚ի ճանապարհ անբիծ, նա՛ պաշտէր զիս*: ⁷Ո՛չ բնակէր ՚ի մէջ տան իմոյ որ առնէր զամբարտաւանութիւն. որ խօսէր զանօրէնութիւն չէր

* *Ոմանք.* Խոստովան եղիցին անուան:

* *Ոմանք.* Պահէին զվկայութիւնս նորա:

* *Ոմանք.* Քաւիչ լինէիր նոցա, վրէժխն՝:

* *Ոմանք.* Ձմեզ, և ո՛չ մեք. մեք ժողո՛ր:

* *Ոմանք.* Եւ օրհնութեամբ ՚ի յարկս նորա:

* *Ոմանք.* Գնայի ես անբծութեամբ. *կամ՝* յանբծութիւն սրտի իմոյ և ՚ի մէջ:

* *Ոմանք.* Ձիրս անիրաւութեամբ. ոյք առնէին զանօրէնութիւնս ատեցի:

* *Ոմանք.* Որ թերն էր սրտիւ, խոտորել յի՛... և ես ինչ ո՛չ փոյթ առնէի:

* *Ոմանք.* Ձնա բացեայ ՚ի բաց հա՛... Որ ամբարտաւան էր... և ո՛չ հաց ուտէի:

* *Ոմանք.* Ի ճանապարհս անբիծ:

յաջողեալ նմա առաջի աչաց իմոց*։⁸Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. սատակեցից ՚ի քաղաքի Տեառն զամենեսեան որ գործեն զանօրէնութիւն*։ *Տունք. Ժ. Գորդայս. Ի2:*

101

¹Աղօթք ուրկի. իբրև ձանձրացի՝ առաջի Տեառն սփռեցէ զխնդրուածս իւր. ԵԱ*:

²Տէր լուր աղօթից իմոց աղաղակ իմ առ քե՛զ եկեցէ, ³մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։ Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ւ առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ*։ ⁴Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան*։ ⁵Հարաւ որպէս խոտ և ցամաքեաց սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ* ⁶ի ձայնէ հեծութեան իմոյ։ Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. ⁷Նմանեցի ես հաւալսան յանապատի։ Եղէ ես որպէս բու յաւերակի*, ⁸տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։ ⁹Նախատեցին զիս թշնամիք զօրհանապագ, և գովիչք իմ ինև՝ երդնուիմ*։ ¹⁰Չմոխիր որպէս հաց կերայ, և զըմպելի իմ արտասուօք խառնեցի*։ ¹¹Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։ ¹²Աւուրք իմ որպէս հովանի՝ անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։ ¹³Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։ ¹⁴Դու յարուցեալ գթացիս ՚ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։ ¹⁵Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ՚ի հողս նորա գթացին*։ ¹⁶Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ. և ամենայն թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։ ¹⁷Շիմէ՛ Տէր զՍիոն, և երևեսցի՛ փառօք իւրովք ՚ի նմա։ ¹⁸Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ո՛չ արհամարհեաց զխնդրուածս նոցա։ ¹⁹Գրեսցի այս յազգ յա՛յլ, ժողովուրդ զոր ստացեալ է օրհնեցէ զՏէր*։ ²⁰Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութենէ իւրմէ. Տէր յերկնից յերկիր հայեցաւ։ ²¹Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։ ²²Պատմել ՚ի Սիոն զանուն Տեառն, և զօրհնութիւնս նորա յերուսաղէմ։ ²³Ժողովել ժողովրդոց ՚ի միասին, և թագաւորաց ծառայել Տեառն։ ²⁴Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի զօրութեան իւրոյ. զնուազութիւն աւուրց իմոց ասա՛ ինձ* ²⁵և մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց. զի ազգ յազգ են ամք քո*։ ²⁶Իսկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց

* *Ոմանք.* Որ խօսեր զանիրաւութիւն չէր աջողեալ։

* *Ոմանք.* Սատակէի ՚ի քաղաքի Տեառն. *կամ* ՚ի քաղաքէ Տեառն զամենեսին ոյք գործէին զանօ՞։

* *Ոմանք.* Եւ առաջի Տեառն սփ՞։ *Ուր Ոսկան.* Աղօթք աղքատի. իբրև։

* *Ոմանք.* Յօր նեղութեան իմոյ։

* *Ոմանք.* Որպէս խռիւ չորացաւ։

* *Ոմանք.* Հարայ որպէս զխոտ, և ցամաքեցաւ սիրտ։

* *Ոմանք.* Նմանեցայ ես հա՞։ *Ուր Ոսկան.* Հաւալասան անապատի։

* *Ոմանք.* Թշնամիք իմ զօրհա՞։

* *Ոմանք.* Որպէս զհաց կերայ։

* *Ոմանք.* Եւ ՚ի հող նորա գթացեն։

* *Ոմանք.* Ժողովուրդ որ ստացեալ է։

* *Օրհնակ մի.* Աւուրց իմոց, անսա ինձ։

* *Ոմանք.* Չի ազգէ յազգ են։

երկինք են: ²⁷Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան: Ամենեքեան որպէս զծործս մաշեցին. որպէս վերարկուս փոխեցես զնոսա և փոխեցին*: ²⁸Բայց դու նոյն իսկ ես և անք քո ո՛չ անցանեն*. ²⁹որդիք ծառայից քոց բնակեցեն ՚ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան աջողեսցի*: *Տունք. ԻԶ:*

102

Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԲ*:

¹Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա:
²Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա: ³Ո քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո: ⁴Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ: ⁵Ո լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո*: ⁶Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոց: ⁷Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսիսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր*: ⁸Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ: ⁹Ո՛չ ՚ի սպառ բարկանայ Տէր, և ո՛չ յաւիտեան պահէ ոխս*: ¹⁰Ո՛չ ըստ մեղս մեր արար մեզ, և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ*: ¹¹Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց: ¹²Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնպէս հեռի՛ արար ՚ի մէջ զանօրէնութիւնս մեր*: ¹³Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի Տէր յերկիւղածս իւր: ¹⁴Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող ենք: ¹⁵Մարդոյ որպէս խտոյ՛ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ*: ¹⁶Շնչէ ՚ի նմա հողմ և ո՛չ է, և ո՛չ ևս երևի տեղի նորա: ¹⁷Բայց ողորմութիւն Տեառն յաւիտեանս յաւիտենի՛ց ՚ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս*: ¹⁸Որ պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա*: ¹⁹Տէր յերկինս պատրաստեաց աթո՛ռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ*: ²⁰Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ որ առնէք զբան նորա, լսէք ձայնի պատգամաց նորա*: ²¹Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա*: ²²Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն գործք նորա, ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա՛ անձն իմ զՏէր: *Տունք. ԻԲ:*

* *Ոմանք.* Որպէս ծործս մաշեցին, և որպէս:

* *Ոմանք.* Բայց դու նոյն ես:

* *Ոմանք.* Եւ զաւակի նորա յաւիտեան յաջողեսցի:

* *Ոմանք.* ՚Ի կատարած սաղմոս ՚ի Դաւիթ:

* *Ոմանք.* Որպէս արծուի ման:

* *Ոմանք.* Ծանոյց Տէր զճանապարհս իւր:

* *Ոմանք.* Բարկանայ մեզ Տէր:

* *Ոմանք.* Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր:

* *Ոսկան.* Այնչափ հեռի արար:

* *Ոմանք.* Որպէս գիտոյն են աւուրք իւր, որպէս ծաղիկ ՚ի վայրի այնպէս:

* *Ոմանք.* Ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս:

* *Ոմանք.* Ոյք պահեն:

* *Ոմանք.* Տէր յերկինս... զաթոռ իւր, և արքայութիւն:

* *Ոմանք.* Հզօրք զօրութեանց... ՚ի լսել. *կամ՝* լսողք ձայնի պատ:

* *Ոմանք.* Պաշտօնեայք նորա. *կամ՝* պաշտօնեայք Տեառն, և արարողք կա:

¹Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի վերայ աշխարհագործ արարածոց. ԾԳ:

Օրինեա՛ անձն իմ զՏէր. Տէր Աստուած իմ մե՛ծ եղեր յոյժ: Խոստովանութիւն և մեծվայելչութիւն զգեցար, ²արկար զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս խորան*, ³և յարկար 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա: Ո դնէ՛ յամպս զգնացս իւր, և շրջի նա 'ի վերայ թևոց հողմոց*: ⁴Ո արա՛ր զիրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հո՛ւր կիզելոյ: ⁵Ո հաստատեաց զերկիր 'ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան*: ⁶Խորք որպէս զգեստ վերարկու է նորա, 'ի վերայ լերանց կացցեն ջուրք*: ⁷Ի սաստէ քունմէ փախիցեն, և 'ի ձայնէ որոտալոյ քունմէ սարսիցեն: ⁸Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան, 'ի տեղի յոր հաստատեցեր զնոսա: ⁹Սահման եղիր և ո՛չ անցանեն, և ո՛չ ևս դառնան 'ի ծածկել զերկիր: ¹⁰Առաքեցեր զաղբերս ընդ ծործորս, 'ի մէջ լերանց գնացեն ջուրք*: ¹¹Արբուցանել զամենայն գազանս վայրի, յագեսցին ցիռք 'ի ծարաւս իւրեանց*: ¹²Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն, և 'ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց: ¹³Արբուցանէ զլերինս 'ի շտեմարանաց իւրոց, 'ի պտղոյ գործոց իւրոց լցցի՛ երկիր*: ¹⁴Բուսուցեր զխոտ 'ի լերինս, զդալարի 'ի ծառայութիւն մարդկան: Հաներ զհաց յերկրէ*, ¹⁵զինի ուրախ առնէ՛ և դուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ: ¹⁶Յագեսցին ծառք Տեառն, և մայրքն Լիբանանու զորս դու տնկեցեր*: ¹⁷Անդ թռչունք երկնից ծագս հանցեն, և բոյն արագլի ապաւեն է նոցա: ¹⁸Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք ապաւեն նապաստակաց: ¹⁹Արարեր զլուսին վասն ժամանակի, արեգակն ծանեա՛լ զժամ մտանելոյ իւրոյ: ²⁰Արարեր զխաւար և եղև գիշեր. 'ի նմա գնան ամենայն գազանք անտառի: ²¹Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն, և խնդրեն յԱստուծոյ զվերակուրս իւրեանց: ²²Ի ծագել արևու ժողովին, և 'ի մորիս իւրեանց դադարեն*: ²³Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի վաստակս ձեռնաց իւրոց մինչև յերեկոյ*: ²⁴Որպէս զի մե՛ծ են գործք քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցա՛ւ երկիր ստեղծուածովք քովք*: ²⁵Այս ծով մե՛ծ և անդորր. 'ի սմա սողուն որ ո՛չ գոյ թիւ, զազանք մեծամեծք և մանունք*. ²⁶Ի սմա և նաւք գնան. վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ: ²⁷Ամենեքեան քեզ

* Ոսկան. Արկեր զլոյս որպէս զօ՞:
 * Ոմանք. Եւ յարկեր 'ի վերայ ջուրց:
 * Ոմանք. Հաստատեաց զերկիր:
 * Օրինակ մի. Է նորա. նման լերանց կացցեն ջուրք:
 * Ոմանք. 'ի միջոյ. կամ՝ ընդ մէջ լերանց գնացեն:
 * Ոսկան. Արբուցանէ զամենայն գա՞:
 * Ոմանք. 'ի պտղոց գործոց լցցի:
 * Ոմանք. Բուսուցեր զխոտ անասնոց. դալարի:
 * Ոսկան. Յագեսցին ծառք անտառի, և:
 * Ոմանք. 'ի ծագել արևուն... դադարին:
 * Ոմանք. Մինչև ցերեկոյ:
 * Ոմանք. Եւ լցաւ երկիր ստացուածովք քովք:
 * Ոմանք. Այս ծով մեծ և անդորր. 'ի սմա են սողունք. կամ՝ զեռունք որոց ո՛չ գոյ թիւ. կենդանիք մեծամեծք և մա՞:

սպասեն, և դու տա՛ս կերակուր նոցա ՚ի ժամու: ²⁸Տաս դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո կերակրե՛ս զամենեսեան կամօք քովք՝: ²⁹Դարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ և խռովին, հանես զոգի ՚ի նոցանէն, պակասին և ՚ի հող դառնան՝: ³⁰Առաքես զոգի քո և ստանաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի՝: ³¹Եղիցին փառք Տեառն յաւիտեան, Տէր ուրախ եղիցի յարարածս իւր: ³²Ո՛ հայի՛ յերկիր և տայ դողալ սմա, մերձի ՚ի լերինս և ծխեսցին՝: ³³Օրհնեցից զՏէր ՚ի կեանս իմ, սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես: ³⁴Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղեց ՚ի Տէր: ³⁵Պակասեսցին մեղաւորք յերկր, ամպարիշտք մի՛ ևս գտցին ՚ի նմա. օրհնեա՛ անձն իմ զՏէր՝: *Տունք. ԼԴ:*

104

Ալելուիա. ԾԴ:

¹Խոստովան եղերուք Տեառն՝ և կարդացէք զանուն նորա. պատմեցէք ՚ի հեթանոսս զգործս նորա: ²Օրհնեցէք և սաղմո՛ս ասացէք նմա. պատմեցէք զամենայն սքանչելիս նորա, ³և գովեցարուք յանուն սուրբ նորա: Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ ոյք խնդրեն զՏէր, ⁴խնդրեցէք զՏէր և հզօրք եղերուք, խնդրեցէք զերեսս նորա յամենայն ժամ: ⁵Յիշեցէք զսքանչելիս նորա զոր արար, զարուեստս և զիրաւունս բերանոյ նորա: ⁶Ջաւակն Աբրահամեան ծառայք նորա, որդիք Յակովբայ ընտրեալք նորա: ⁷Նա ինքն է Տէր Աստուած մեր, յամենայն երկրի եմ իրաւունք նորա: ⁸Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, և զբանն զոր պատուիրեաց մինչև ՚ի հազար ամ՝: ⁹Չուխտն զոր եղ ընդ Աբրահամու, և զերդումն իւր ընդ Սահակայ: ¹⁰Չաստատեաց առ Յակովբ զիրաման իւր, և առ Իսրայէլ զուխտ իւր յաւիտենից՝: ¹¹Ասէ. Չե՛զ տաց զերկիրն Քանանու, զվիճակ ժառանգութեան ձերոյ: ¹²Չի էին նոքա թուով սակաւ, նուաճք և պանդուխտք ՚ի նմա: ¹³Անցին նոքա ազգէ յազգ, ՚ի թագաւորութենէ ՚ի ժողովորդ յայլ: ¹⁴Ո՛չ եթող մարդկան մեղանչել նոցա, կշտամբեաց զթագաւորս վասն նոցա՝: ¹⁵Մի՛ մերձենայք ասէ յօժեալս իմ, և ՚ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք: ¹⁶Կոչեաց սով յերկիր նոցա, զամենայն զօրութիւն հացի եբել: ¹⁷Առաքեաց առաջի նոցա այր, ՚ի ծառայութիւն վաճառեցաւ Յովսէփ: ¹⁸Խոնարհ արարին ՚ի կապանս զոտս նորա, և անց ընդ երկաթս անձն նորա՝: ¹⁹Մինչև եկեսցէ բան նորա, և բան Տեառն փորձեաց զնա: ²⁰Առաքեաց թագաւորն և ելոյծ զնա, իշխան ժողովրդեան եթող զնա: ²¹Կացոյց զնա տէր տան իւրոյ, իշխան ՚ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց՝: ²²Խրատել զիշխանս նոցա որպէս զինքն, և զծերս նոցա իմաստունս արասցէ: ²³Եմուտ Իսրայէլ յեգիպտոս, Յակովբ

* *Օրհնակ մի.* Չձեռն քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեան կամօք քովք:

* *Օրհնակ մի.* Ի՛ նոցանէ, և սպառիմ... ՚ի նոցանէ, պակասեն և ՚ի հողս իւրեանց դառնան:

* *Ոմանք.* Առաքես զհոգի քո, ստանաս:

* *Ոմանք.* Ի՛ լերինս՝ և ծխին:

* *Ոմանք.* Եւ ամբարիշտք մի՛ ևս գտցին ՚ի սմա:

* *Ոմանք.* Պատուիրեաց մինչ ՚ի հազար ազգ:

* *Օրհնակ մի.* Չայն հաստատեաց առ Յակովբ զիրամանս իւր:

* *Օրհնակ մի.* Չթագաւորս նոցա:

* *Ոմանք.* Եւ անց ընդ երկաթս ան՝:

* *Ոմանք.* Չնա Տէր ՚ի վերայ տան իւ՛:

պանդխտեցա՛ւ յերկիր Քամայ*։ ²⁴Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ, և զօրացո՛յց զնոսա քան զթշնամիս իւր։ ²⁵Ղարձոյց զսիրտս նոցա ատե՛լ զժողովուրդ իւր, և ՚ի նենգե՛լ զժառայս իւր։ ²⁶Առաքեաց զՄովսէ՛ս ծառայ իւր, և զԱհարովն ընտրեալ իւր։ ²⁷Ետ նոցա զբան նշանաց իւրոց, և զարուեստս իւր յերկիր Քամայ։ ²⁸Առաքեաց խաւար և խաւարեցոյց զնոսա, զի դառնացուցին զբան նորա*։ ²⁹Ղարձոյց յարիւն զգետս նոցա, և սպան զամենայն ձկունս նոցա։ ³⁰Եռաց յերկիր նոցա գորտ, ՚ի շտեմարանս թագաւորաց նոցա*։ ³¹Ասաց և եկն շանաճանճ, և մժիխ ընդ ամենայն սահմանս նոցա*։ ³²Ղարձոյց զանձրևս նոցա ՚ի կարկուտ, և հուր յերկիր նոցա բորբոքեցաւ։ ³³Եհար զայգիս և զթզնիս նոցա, և փշրեաց զամենայն ծառս սահմանաց նոցա*։ ³⁴Ասաց և եկն մարախ, և խառնիճ՝ զի ո՛չ գոյր թիւ։ ³⁵Եկեր զամենայն խոտ երկրի նոցա, սպառեաց զամենայն պտուղ անդոյ նոցա։ ³⁶Եհար զամենայն անդրանիկս Եգիպտացոց, զսկիզբն ամենայն վաստակոյ նոցա*։ ³⁷Եհան զնոսա ոսկով և արծաթով, և ո՛չ գոյր յազգի նոցա հիւանդ*։ ³⁸Ուրախ եղև Եգիպտոս ընդ ելանել նոցա, զի անկաւ ահ Տեառն ՚ի վերայ նոցա։ ³⁹Սփռեաց ամպ հովանի՝ առնել նոցա ՚ի տուէ, և հրով լոյս տայր նոցա ՚ի գիշերի։ ⁴⁰Խնդրեցին և եկն լորամարգի, և հացին երկնից լցոյց զնոսա։ ⁴¹Եհար զվէմն և բղխեցին ջուրք, և գնացին գետք ընդ անջրդիս*։ ⁴²Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ Աբրահամու ծառայի իւրում*։ ⁴³Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ, և զընտրեալս իւր ուրախութեամբ*։ ⁴⁴Ետ նոցա զգաւառս հեթանոսաց, ՚ի վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա։ ⁴⁵Զի պահեսցեն զվկայութիւնս նորա, և զօրէնս նորա խնդրեսցեն։ *Տունք. ԽԴ: Գորդայս. 3Ը:*

105

Ալեւուիա. Ծե:

¹Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւնս նորա։ ²Ո՛ խօսեսցի զզօրութիւնս Տեառն, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա։ ³Երանի ոյք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւնս յամենայն ժամ։ ⁴Յիշեա՛ զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քոյ, և այց արա մեզ ՚ի փրկութեան քում։ ⁵Տեսցուք մեք զքաղցրութիւնս ընտրելոց քոց. ուրախ եղիցուք յուրախութիւնս ազգի քոյ, և գովեսցուք մեք ՚ի ժառանգութեան քում։ ⁶Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք*։ ⁷Հարքն մեր յեգիպտոս ո՛չ իմացան զսքանչելիս քո, և ո՛չ յիշեցին զբազում ողորմութիւնս քո։ Բարկացուցին զքեզ յանցանելն իւրեանց ընդ ծով Կարմիր. ⁸փրկեաց զնոսա վասն անուան իւրոյ զի

* *Ոմանք.* Յակոբ բնակեցաւ յերկրին Քամայ։
 * *Ոմանք.* Առաքեաց զխաւարն և։
 * *Ոմանք.* Եւ ՚ի շտեմարանս։
 * *Ոմանք.* Եւ մժիխ ընդ ամենայն։
 * *Ոմանք.* Հար զայգիս և։
 * *Ոմանք.* Հար զամենայն անդր՝... վաստակոց նոցա։
 * *Ոմանք.* Հան զնոսա ոսկ՝։
 * *Ոմանք.* Հար զվէմն։
 * *Ոմանք.* Ծառայի իւրոյ։
 * *Ոմանք.* Հան զժողովուրդ իւր։
 * *Ոմանք.* Մեղաք մեք և հարքն մեր. անօ՛:

ծանիցեն զգորութիւնս նորա: ⁹Սաստեաց 'ի ծով Կարմիր և ցամաքեցաւ, առաջնորդեաց նոցա ընդ անդունդս որպէս ընդ անապատ: ¹⁰Կեցոյց զնոսա 'ի ձեռաց ատելեաց նոցա, և փրկեաց զնոսա 'ի ձեռաց թշնամեաց նոցա*:

¹¹Ծածկեաց ծով զնեղիչս նոցա, և մի 'ի նոցանէ ո՛չ ապրեցաւ: ¹²Հաւատացին 'ի բան նորա, և օրհնեցին զօրհնութիւն նորա*:

¹³Վաղվաղեցին և մոռացան զգործս նորա, և ո՛չ անսացին խորհրդոյ նորա*:

¹⁴Ցանկացան զցանկութիւն յանապատի, և փորձեցին զԱստուած յանջրդի*:

¹⁵Ետ նոցա զխնդրուածս նոցա, առաքեաց լիութիւն յանձինս նոցա*:

¹⁶Բարկացուցին զՄովսէս 'ի բանակի, և զԱհարոն սուրբ Տեառն: ¹⁷Բացաւ երկիր և եկուլ զԴադան, և ծածկեաց զբանակսն զԱբիրովնի*:

¹⁸Հուր վառեցաւ 'ի ժողովս նոցա, և բոց մաշեաց զմեղաւորս: ¹⁹Արարին որթ 'ի Քորէբ և երկիր պագին պատկերի*, ²⁰և փոխեցին Ձփառս իւրեանց 'ի նմանութիւն որթու խոտակերի*:

²¹Մոռացան զԱստուած կենարար իւրեանց, որ արար զմեծամեծս յեգիպտոս*, ²²զսքանչելիս իւր յերկիր Քամայ, և զահ իւր 'ի վերայ Կարմիր ծովուն: ²³Ասաց սատակել զնոսա, եթէ ո՛չ Մովսէս ընտրեալ կայր առաջի նորա: Դարձաւ առ Տէր և անցոյց զբարկութիւն նորա, զի մի՛ սատակեցին նոքա*:

²⁴Անարգեցին զերկիրն ցանկալի, և ո՛չ հաւատացին բանի նորա: ²⁵Տրտնջեցին 'ի բանակս իւրեանց, և ո՛չ լուան ձայնի Տեառն: ²⁶Համբարձ զձեռն իւր 'ի վերայ նոցա, հարկանել զնոսա յանապատի: ²⁷Տրուեսցի՛ զաւակ նոցա ընդ հեթանոսս. ցրուեսցի զաւակ նոցա ընդ զաւառս: ²⁸Պղծեցան նոքա 'ի Բելքեգովր, կերան զգոհեալ և զմեռելոտի*:

²⁹Բարկացուցին զնա 'ի գործս իւրեանց, յաճախեաց 'ի վերայ նոցա բեկումն: ³⁰Ապա եկաց 'ի մէջ Փենէէս, քաւեաց և արգելաւ մահ. ³¹համարեցաւ նմա յարդարութիւն ազգէ յազգ մինչև յաւիտեան: ³²Բարկացուցին զնա 'ի ջուրսն Հակառակութեան. չարչարեցաւ Մովսէս վասն նոցա. ³³զի դառնացուցին զոգի նորա: Հրամայեաց շրթամբք իւրովք*, ³⁴և ո՛չ սատակեցին զազգսն զոր ասաց նոցա Տէր: ³⁵Խառնակեցան ընդ հեթանոսս և ուսան զգործս նոցա. ³⁶ծառայեցին կոռց նոցա, և եղև նոցա 'ի գայթազութիւն: ³⁷Չոհեցին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց, ³⁸և հեղին արիւն անբիծ: Արիւն ուստերաց և դստերաց իւրեանց, զոր զոհեցին կոռցն Քանանու*:

³⁹Շաղախեցաւ երկիր յարենէ նոցա և պղծեցաւ 'ի գործոց նոցա, զի պոռնկեցան 'ի գնացս իւրեանց: ⁴⁰Բարկացաւ սրտմտութեամբ Տէր 'ի վերայ ժողովրդեան իւրոյ, և զարշեցոյց զժառանգութիւն իւր յոյժ: ⁴¹Սատնեաց զնոսա 'ի ձեռս հեթանոսաց, տիրեցին նոցա ատելիք իւրեանց ⁴²և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա, և խոնարհ եղեն 'ի ներքոյ

* *Ոմանք.* Կացոյց զնոսա 'ի ձեռաց:

* *Ոմանք.* Հաւատացին բանի նորա... զօրհնութիւնս նորա:

* *Ոմանք.* Խորհրդոց նորա:

* *Ոմանք.* Ցանկացան ցանկութիւն:

* *Ոմանք.* Առաքեաց զլիութիւն:

* *Ոմանք.* Ձբանակն զԱբի*:

* *Ոմանք.* Չորթն 'ի Քորէբ. երկիր պագին պատկերին:

* *Ոմանք.* Նմանութեան որթուն խո*:

* *Ոմանք.* Չմեծամեծս իւր յեգիպտոս:

* *Ոմանք.* Թէ ո՛չ Մովսէս ընտրեալն... առաջի նոցա:

* *Ոմանք.* 'ի Բելքեգովր. զի կերան զոհեալս և զմեռելոտիս:

* *Ոմանք.* Դառնացուցին զոգի նորա: *Ուր օրհնակ մի.* Քրթմնջեաց շրթամբք, և ո՛չ սատակեաց զազգսն զոր ասաց նմա Տէր:

* *Ոմանք.* Եւ դստերաց նոցա, զոր:

ծեռաց նոցա: ⁴³Բազում անգամ փրկեաց զնոսա, և նոքա դառնացուցին զնա 'ի խորհուրդս իւրեանց, և կորացան յանօրէնութեան իւրեանց*: ⁴⁴Հայեցաւ Տէր 'ի նեղութիւնս նոցա, 'ի լսել ձայնի աղօթից նոցա*: ⁴⁵Յիշեաց զուխտ իւր և զղջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում. ⁴⁶Ետ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա: ⁴⁷Փրկեաց զմեզ Տէր Աստուած մեր, և ժողովեաց զմեզ 'ի հեթանոսաց: Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ, և պարծեսցուք յօրհնութիւնս քո*: ⁴⁸Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, յաւիտեանս յաւիտենից: Եւ ասացէ ամենայն ժողովուրդն. եղիցի եղիցի: *Տունք. ԽԴ:*

Կանոնս Գորդայս. Է: Սաղմոս. ժԷ: Տունս. 3ԺԴ:

106

Ալելուիա. 62:

¹Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա: ²Ասացեն փրկեալք Տեառն, զորս փրկեաց 'ի ձեռաց թշնամւոյն: Յամենայն գաւառաց ժողովեաց զնոսա*, ³յարևելից և յարևմտից 'ի հիւսսոյ և 'ի ծովէ: ⁴Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի ճանապարհի, քաղաք բնակութեան ո՛չ գտին*: ⁵Քաղցեան և ծարաւեցան, և անձինք նոցա 'ի նոսին նուաղեցան*: ⁶Աղաղակեցին առ Տէր 'ի նեղութեան իւրեանց, 'ի վշտաց նոցա փրկեաց զնոսա: ⁷Առաջնորդեաց նոցա 'ի ճանապարհ ուղիղ, զի երթիցեն 'ի քաղաք բնակութեան իւրեանց: ⁸Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան*: ⁹Ձի յագեցոյց զանձինս քաղցեալս, և զանձինս կարօտեալս լի՛ արար բարութեամբ*: ¹⁰Ոյք նստին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթ: ¹¹Ձի դառնացուցին զբանն Աստուծոյ, և զխորհուրդս Բարձրելոյն բարկացուցին*: ¹²Խոնարհ եղեն 'ի ցաւոց սիրտք նոցա, տկարացան և ո՛չ ոք էր որ օգնէր նոցա*: ¹³Աղաղակեցին առ Տէր 'ի նեղութեան իւրեանց, 'ի վշտաց նոցա եհան զնոսա: ¹⁴Փրկեաց զնոսա 'ի խաւարէ և 'ի ստուերաց մահու, և խզեա՛ց զկապանս նոցա: ¹⁵Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան*: ¹⁶Ձի փշրեա՛ց զդրունս պղնձիս, և զմիզս երկաթիս խորտակեաց: ¹⁷Օգնեա՛ց նոցա 'ի ճանապարհի անօրէնութեանց, զի վասն մեղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ*: ¹⁸Յամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա, մերձեցան մինչև 'ի դրունս մահու: ¹⁹Աղաղակեցին առ Տէր 'ի նեղութեան իւրեանց, 'ի վշտաց նոցա ասպրեցոյց զնոսա: ²⁰Առաքեաց զբան իւր և բժշկեա՛ց զնոսա, և փրկեաց զնոսա

* *Ոմանք.* Եւ բազում անգամ փր՛:

* *Ոմանք.* 'ի լսել զձայն աղօթից:

* *Ոմանք.* Փրկեա՛ զմեզ Տէր... և ժողովեա՛ զմեզ 'ի հե՛:

* *Ոմանք.* 'ի ձեռաց թշնամեաց:

* *Ոմանք.* ճանապարհ և քաղաք բնակութիւն:

* *Ոմանք.* Եւ ծարաւեցին... 'ի նոսին նուաղեցին:

* *Ոմանք.* Տեառն ողորմութիւնք նորա:

* *Ոմանք.* Յագեցոյց զանձինս:

* *Ոմանք.* Դառնացուցին զբանն:

* *Ոմանք.* Եւ ո՛չ ոք էր որ առաջնորդէր նոցա:

* *Ոմանք.* Տեառն ողորմութիւնք նորա:

* *Ոմանք.* Անօրէնութեան իւրեանց:

յապականութենէ իւրեանց: ²¹Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան*։ ²²Մատուցեն նմա պատարագ օրհնութեան, և պատմեսցեն զգործս նորա ցնծութեամբ: ²³Ոյք իջանէին ՚ի ծով նաւովք, և առնէին գործս ՚ի ջուրս բազումս*։ ²⁴Նոքա տեսին զգործս Տեառն, և զսքանչելիս նորա ՚ի խորս անդնդոց: ²⁵Ասաց և յարեաւ հողմ և մրրիկ, և բարձրացան ալիք նորա: ²⁶Ելանէին յերկինս և իջանէին յանդունդս, և անձինք նոցա յանձինս իւրեանց մաշեցան: ²⁷Խռովեցան սասանեցան որպէս արբեալք, և ամենայն իմաստութիւն նոցա ընկլաւ*։ ²⁸Աղաղակեցին առ Տէր ՚ի նեղութեան իւրեանց, ՚ի վշտաց նոցա կեցոյց զնոսա*։ ²⁹Դարձոյց զմրրիկն յօդ և դադարեցին ալիք նորա*։ ³⁰Ուրախ եղեն զի դադարեցին, և առաջնորդեաց նոցա ՚ի նաւահանգիստ կամաց իւրեանց: ³¹Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան*։ ³²Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս ժողովրդոց, և յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա: ³³Ձի դարձոյց զգետս ՚ի ցամաք, և զգնացս ջուրց յերկիր ծարաւուտ: ³⁴Արար զերկիրն պտղաբեր յաղտաղտո՛ւկս, վասն չարութեան բնակչաց նորա*։ ³⁵Արար զանապատն ՚ի ճահիճս ջուրց, և զերկիրն ծարաւուտ ՚ի գնացս ջուրց: ³⁶Բնակեցոյց ՚ի նմա քաղցեալս, և շինեցին քաղաք բնակութեան իւրեանց*։ ³⁷Վարեցին արտս և տնկեցին այգիս, և արարին պտո՛ւղ արմտեաց իւրեանց: ³⁸Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ, և անասունք նոցա ո՛չ նուազեցան*։ ³⁹Նուաղեցան նոքա և չարչարեցան, ՚ի նեղութենէ չարեաց և ՚ի վշտաց: ⁴⁰Եկն անարգութիւն ՚ի վերայ իշխանաց նոցա, մոլորեցոյց զնոսա յանապատի և ո՛չ ՚ի ճանապարհի: ⁴¹Օգնեաց տնանկին յաղքատութեան իւրեանց, առաջնորդեաց որպէս խաշին ազգի նոցա*։ ⁴²Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին, և ամենայն անօրէն խցցէ՛ զբերան իւր: ⁴³Ո՛վ է իմաստուն որ պահեսցէ զայս, և ՚ի միտ առցէ զողորմութիւնս Տեառն: *Տունք. ԽԲ:*

107

¹Օրհնութիւն Սաղմոսաց ՚ի Դաւիթ. ԾԷ*:

²Պատրաստ է սիրտ իմ Աստուած, պատրաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս սսել քեզ փառօք իմովք: ³Ձարթի՛ք փառք իմ զարթի՛ք սաղմոսի՛ք և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտու*։ ⁴Խոստովան եղէց քեզ ՚ի ժողովուրդս Տէր, և սաղմոս ասացից քեզ յազինս: ⁵Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո, մինչև յամպս է ճշմարտութիւն քո: ⁶Բարձ լեր մինչև յերկինս

* *Ոմանք.* Տեառն ողորմութիւնք նորա:

* *Ոմանք.* ՚ի ծով նաւօք, և առնէին զգործս:

* *Ոմանք.* Որպէս զարբեալս:

* *Ոմանք.* ՚ի վշտաց նոցա փրկեաց զնոսա:

* *Ոմանք.* Դարձ զմրրիկ նորա յօդս:

* *Ոմանք.* Տեառն ողորմութիւնք նորա:

* *Բազումք.* Բնակչաց նոցա:

* *Ոմանք.* Եւ շինեցին ՚ի քաղաք բնա՛:

* *Ոմանք.* Եւ անասուն նոցա ո՛չ նուաղեցաւ:

* *Ոմանք.* Յաղքատութեան առաջնորդեաց... ազգաց նոցա:

* *Ոմանք.* Օրհնութիւն սաղմոս ՚ի Դաւի՛:

* *Ոմանք.* Ձարթեայց առաւօտուց:

Աստուած, յամենայն երկրի են փառք քո*։ ⁷Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո՛ւ աջով քով և լո՛ւր մեզ։ ⁸Աստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ իւրմէ, բարձր եղէք բաժանեցայց զՍիւրբն և զհովիտսն Յարկաց չափեցից*։ ⁹Ի՛ն է Գաղաադ և ին է Մանասէ, եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։ Յուդա թագաւոր ին, ¹⁰և Մովաբ աւագան յուսոյ իմոյ։ Յեդովմէ ուղղեցից զգնացս ին, և ինձ այլազգիք հնազանդ եղեն։ ¹¹Ո՛ւ տարցէ զիս ՚ի քաղաք ամուր, կամ ո՛ւ առաջնորդեսցէ ինձ մինչև յեդովմէ*։ ¹²Թէ ո՛չ դու Աստուած որ մերժեցեր զմեզ, և ո՛չ ելեր Աստուած ընդ զօրս մեր*։ ¹³Տո՛ւր մեզ օգնութիւն ՚ի նեղութեան, զի սուտ է փրկութիւն մարդոյ։ ¹⁴Աստուծով արասցո՛ւք զօրութիւն, և նա յամօթ արասցէ զթշնամիս մեր։ *Տունք. ԺԴ։*

108

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԸ:

²Աստուած օրհնութեան իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ՚ի վերայ ին։ Խօսեցան զինէն լեզուօք նենգաւորօք*, ³և բանիւք ատելութեան պաշարեցին զիս։ Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց*, ⁴փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։ ⁵Յատուցին ինձ չա՛ր փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։ ⁶Կացո՛ւ ՚ի վերայ նորա մեղաւոր, Սատանայ՝ կացցէ ընդ աջմէ նորա*։ ⁷Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ, և աղօթք նորա ՚ի մեղս դարձցին։ ⁸Եղիցին աւուրք նորա նուագ, և զայցելութիւն նորա զայն ա՛յլ տարցի։ ⁹Եղիցին որդիք նորա որբ և կին նորա այրի՛. ¹⁰սահեսցին փոփոխեսցին, որդիք նորա մուրօղք եղիցին, և ելցեն ՚ի բնակութենէ իւրեանց։ ¹¹Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա, յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա*։ ¹²Մի՛ գտցի ոք օգնական նմա, և մի ոք ողորմեսցի ՚ի վերայ որբոց նորա*։ ¹³Եղիցին որդիք նորա ՚ի սատակումն, և յազգէ ջնջեսցի անուն նորա*։ ¹⁴Յիշեսցին մեղք հօր նորա առաջի Տեառն. և մեղք մօր նորա մի՛ ջնջեսցին*, ¹⁵և եղիցին առաջի Տեառն յայնենայն ժամ։ ¹⁶Սատակեսցի՛ յերկրէ յիշատակ նորա. փոխանակ զի ո՛չ յիշեաց առնել զողորմութիւն։ ¹⁷Յալածեաց զայր աղքատ և զտնանկ, սպանանել զայն որ խոնարհ է սրտիւ։ ¹⁸Սիրեաց զանձնս և ելցէ՛ նմա. ո՛չ կամեցաւ զօրհնութիւն, հեռի՛ եղիցի ՚ի նմանէ։ Զգեցաւ զանձնս որպէս հանդերձ, մտցէ որպէս ջո՛ւր ՚ի փոր նորա, որպէս ձէք ընդ ոսկերս նորա։ ¹⁹Եղիցի նմա որպէս հանդերձ զի ազանի, որպէս գօտի որ ածի՛ հանապազ ընդ մէջ*։ ²⁰Այս գործի այնոցիկ որ

* *Ոմանք.* Բարձրեալ ես դու յերկինս Աստուած, և յամենայն։
 * *Ոմանք.* Իւրմէ, ցնծացայց բարձր եղէք բաժանեցայց զՍիւրբն։ *Ուր Ոսկան.* բաժանեցից։
 * *Ոմանք.* Ո տարցի զիս... մինչև յիդումէ։ *Ուր Ոսկան.* յեդօմ։
 * *Ոմանք.* Եթէ ո՛չ դու Աստուած։
 * *Ոմանք.* Լեզուաւ նենգաւորաւ։
 * *Ոմանք.* Եւ բանիւ ատելութեամբ։
 * *Ոմանք.* Կացո՛ւ ՚ի վերայ նոցա մեղաւ*։
 * *Ոմանք.* Փոխատուն զամենայն։
 * *Ոմանք.* Մի՛ գտցի օգնա*։
 * *Օրհնակ մի.* Եւ յազգ մի ջնջեսցի անուն նորա։
 * *Յօրհնակին պակասէր.* Մեղք հօր նորա *առաջի Տեառն.* և։
 * *Ոմանք.* Որ ածէ հանապազ ընդ մէջ իւր։

չարախօս կային զինէն առ Տէր, և ոյք խօսէին չա՛ր զանձնէ իմնէ՛: ²¹Այլ դու Տէր Տէր՝ արա՛ ընդ իս ըստ անուան քում, զի քաղցր է ողորմութիւն քո, փրկեա՛ զիս՝ ²²զի աղքատ և տնանկ եմ ես: Սիրտ իմ խռովեցաւ ՚ի փորի իմում, ²³և ես որպէս ստուեր՝ ՚ի խուսափել իմում պակասեցայ, և թօթափեցայ որպէս մարախ: ²⁴Ծունկք իմ տկարացան ՚ի պահոց, և մարմին իմ այլագունեաց յիւղոյ: ²⁵Եղէ ես նախատ նոցա, տեսին զիս և շարժեցին զգլուխս իւրեանց: ²⁶Օգնեա՛ ինձ Տէր Աստուած իմ, և փրկեա՛ զիս ըստ ողորմութեան քում: ²⁷Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու Տէր արարեր զայս: ²⁸Նոքա անիծանեն և դու օրհնեսցես. ոյք յարուցեալ եմ ՚ի վերայ իմ ամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի ՚ի քեզ՝: ²⁹Զգեցցին զամօթ որ չարախօս կային զանձնէ իմնէ, և արկցեն որպէս կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք՝: ³⁰Այլ ես խոստովան եղէց առ Տէր յոյժ բերանով իմով, ՚ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ: ³¹Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս, փրկել զիս յայնցանէ ոյք հալածեն զանձն իմ՝: *Տունք. ԻԸ:*

109

՚ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԹ:

Ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ իմնէ, մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: ²Քաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ՚ի Սիովնէ, և տիրեսցես դու ՚ի մէջ թշնամեաց քոց: ³Ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրց զօրութեան. ՚ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ՝: ⁴Երդուաւ Տէր և ո՛չ ևս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, ⁵և Տէր ընդ աջմէ քումնմէ: Խորտակեսցէ՛ յաւուր բարկութեան զթագաւորս. ⁶դատի զհեթանոսս և բազում առնէ զհարուածս, և խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրի՝: ⁷Զուխս ՚ի ճանապարհի արբուսցէ. վասն այնորիկ և բարձր արասցէ զգլուխս՝: *Տունք. Զ: Գորդայս. ԽԸ:*

110

Ալէլուիա. ԾԺ:

¹Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, ՚ի խորհուրդս ուղղոց ՚ի ժողովուրդս՝ ²մեծ են գործք Տեառն, և քննեալ եմ յամենայնի կամք նորա: ³Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք նորա. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից՝: ⁴Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց.

* *Այլք.* Այս գործ է այնոցիկ որ չարա՛:

* *Ոմանք.* Եւ փրկեա՛ զիս:

* *Ոմանք.* Նոքա անիծանեսցեն. *կամ՝* անիծանիցեն:

* *Ոմանք.* Ոյք չարախօս կային զինէն. արկցեն որպէս:

* *Ոմանք.* Ընդ աջմէ տնանկիւն... ոյք հալածէին:

* *Ոմանք.* Ընդ քեզ է սկիզբն աւուրն զօրութեան:

* *Ոսկան.* Դատեսցէ զհեթանոսս և բազում արասցէ զհարուածս: *Ոմանք.* Զգլուխս բազմաց յերկրէ:

* *Ոմանք.* Զուխից ՚ի ճանապարհի արբուսցէ. վասն այսորիկ: *Ուր Ոսկան.* արբցէ:

* *Ոմանք.* Ուղղոց ՚ի ժողովս:

* *Ոմանք.* Խոստովանութիւն և մեծվայելչութիւն են:

ողորմած գթած է Տէր ⁵Կերակուր տայ երկիւղածաց իւրոց: Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, ⁶զգօրութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժողովրդեան իւրոյ*: ⁷Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց, և գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են*: ⁸Չաւատարիմ են յամենայնի պատուիրանք նորա, հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից, արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ: ⁹Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր սուրբ և ահեղ է անուն նորա: ¹⁰Սկիզբն զգօնութեան երկեղ Տեառն, իմաստութիւն բարի ամենեցուն որ առնեն զնա, և օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից: *Տունք. Ը:*

111

Ալէլուիա. 'ի վերայ ապաշխարութեան, Անգեայ և Զաքարիայ. ճԺԱ*:

¹Երանեալ է այր որ երկնչի 'ի Տեառնէ, զի զպատուիրանս նորա նա՛ կամի յոյժ*: ²Չգօր եղիցի յերկրի զաւակ նորա, և ազգ ուղղոց օրհնեսցի*: ³Փառք և մեծութիւն են 'ի տան նորա, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից: ⁴Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց, ողորմած գթած և արդար է Տէր: ⁵Քաղցր այր ողորմի՛ և տայ փոխ, յօրինէ՛ զբան իւր 'ի դատաստանի, ⁶զի յաւիտեան նա մի՛ սասանեսցի: ⁷Յիշատակ յաւիտենի՛ց եղիցի արդար, 'ի համբաւէ չարէ նա մի՛ երկիցէ: Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ Աստուած*: ⁸Չաստատեալ է սիրտ նորա և նա մի՛ երկիցէ, մինչև տեսցէ 'ի թշնամիս իւր: ⁹Սփռեաց և ետ աղքատաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից, և եղջևր նորա բարձր եղիցի փառօք: ¹⁰Մեղաւորն տեսցէ՛ և բարկացի, զատամունս իւր կրճտեսցէ՛ և հալեսցի, և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ: *Տունք. Ժ:*

112

Ալէլուիա. ճԺԲ:

¹Օրհնեսցէ՛ք մանկունք զՏէր, և օրհնեսցէ՛ք զանուն Տեառն: ²Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան: ³Յարևելից մինչ 'ի մուտս արևու, օրհնեալ է անուն Տեառն*: ⁴Բարձր է 'ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա: ⁵Ո՛վ է որպէս Տէր Աստուած մեր 'ի բարձունս բնակեալ, ⁶և զխոնարիս տեսանէ յերկնից 'ի յերկիր*: ⁷Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց: ⁸Նստուցանէ զնոսա իշխանս, ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ*: ⁹Բնակեցուցանէ զամուլն 'ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւոց բերկրեալ*: *Տունք. Ը:*

* *Ոմանք.* Պատմեաց ժողովրդեան իւրում:
 * *Ոմանք.* Տալ նոցա ժառանգ*:
 * *Ոսկան.* Ալէլուիայ. վերադարձութիւն Անգեայ և Զա՛:
 * *Ոմանք.* 'ի Տեառնէ. զպատուիր:՝:
 * *Ոմանք.* Եղիցի արդարն. 'ի համբաւոյ չա՛:
 * *Ոմանք.* Մինչև 'ի մուտս ա՛... անունն Տեառն:
 * *Ոմանք.* Տեսանէ յերկինս և յերկրի:
 * *Ոմանք.* Զնոսա իշխան ընդ իշ՛:
 * *Ոմանք.* Մայր որդւովք բերկր՛:

Ալեկուիա. ԾԺԳ:

¹Ելանելն Իսրայելի յեգիպտոսէ. տանն Յակոբայ ՚ի ժողովրդենէ այլազգեաց*:
²Եղև Զրեաստան սրբութիւն նորա, և Իսրայել իշխանութիւն նորա: ³Օով ետես և
 փախեսաւ, և Յորդանան անդրէն դարձաւ: ⁴Լերինք ցնծացին որպէս խոյք, և
 բլուրք որպէս գառնիք մաքեաց*: ⁵Ձի՞ք է քեզ ծով, զո՞ տեսեր և փախեսար, կամ
 դու Յորդանան զի՞ դարձար անդրէն: ⁶Լերինք՝ ցնծացէ՛ք որպէս խոյք, և բլուրք
 որպէս գառնիք մաքեաց*: ⁷Յերեսաց Տեառն սասանեցաւ երկիր, յերեսաց
 Աստուծոյ Յակովբայ: ⁸Ո՞ դարձոյց զվէմն ՚ի վտակս ջուրց, և զապառաժն ՚ի
 յաղբերակունս*:

¹Մի՛ մեզ Տէր մի՛ մեզ. այլ անուան քում տո՛ւր զփառս, վասն անուան և
 ճշմարտութեան քում*: ²Մի՛ երբէք ասացեն ՚ի հեթանոսս, թէ ո՛ւր է Աստուած
 նոցա: ³Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար:
⁴Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, ձեռագործք են որդւոց մարդկան:
⁵Բերան ունին՝ և ո՛չ խօսին, աչս ունին՝ և ո՛չ տեսանեն: ⁶Ականջս ունին՝ և ո՛չ
 լսեն, ունչս ունին՝ և ո՛չ հոտոտին*: ⁷Ձեռս ունին՝ և ո՛չ շօշափեն, ոտս ունին՝ և ո՛չ
 գնան. և ո՛չ գոյ բարբառ ՚ի կոկորդս նոցա: ⁸Նման նոցա՛ եղիցին ոյք արարին
 զնոսս. ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նոսս*: ⁹Տուն Իսրայելի յուսացաւ ՚ի
 Տէր, օգնական ընդունելի՛ է նոցա*: ¹⁰Տուն Ահարոնի յուսացաւ ՚ի Տէր, օգնական
 ընկերելի՛ է նոցա*: ¹¹Երկիւղածք Տեառն յուսացան ՚ի Տէր, օգնական և փրկիչ է
 նոցա: ¹²Յիշեաց՝ զմեզ Տէր և օրհնեաց զմեզ. օրհնեաց Տէր զտունն Իսրայելի.
 օրհնեաց Տէր զտունն Ահարոնի: ¹³Օրհնեաց Տէր զերկիւղածս իւր, զփոքրկունս
 և զմեծամեծս: ¹⁴Յաւելցէ՛ ՚ի ձեզ Տէր, ՚ի ձեզ և յորդիս ձեր: ¹⁵Օրհնեալ էք դուք ՚ի
 Տեառնէ, որ արար զերկինս և զերկիր*: ¹⁶Երկինք երկնից Տեառն են, և զերկիրս
 ետ որդւոց մարդկան: ¹⁷Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ո՛չ ամենեքեան որ
 իջանեն ՚ի դժոխս*: ¹⁸Այլ կենդանիքս օրհնեսցո՛ւք զՏէր, յայսմ հետէ մինչև
 յաւիտեան: *Տունք. ԻԶ: Գորդայս. ԾԲ:*

Ալեկուիա. ԾԺԴ:

¹Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. ²խոնարհեցոյց զուսկն իւր առ իս,

* *Բազումք.* Յեկանելն Իսրայելի յեգ՞:

* *Ոմանք.* Որպէս զխոյս... որպէս գառնիս մաք՞:

* *Ոմանք.* Ցնծացեն որպէս զխոյս... որպէս գառնիս:

* *Ոմանք.* Յաղբերակունս:

* *Բազումք.* Վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ:

* *Ոմանք.* Եւ ո՛չ հոտոտեն:

* *Ոմանք.* Եւ ամենեքեան որ յու՞:

* *Ոմանք.* Տունն: *Ուր Ոսկան.* Եւ ընկերոջ է նոցա:

* *Ոմանք.* Տունն: *Ուր Ոսկան.* Եւ ընկերոջ է նոցա:

* *Ոմանք.* ՚ի Տեառնէ. այն որ արար զերկինս:

* *Ոմանք.* Օրհնեսցեն զքեզ Տէր. և ոչ:

և ես յաւուրս իմ կարդացի առ նա*։³Շրջեցան զինն երկունք մահու, և վիշտք դժոխց գտին զիս։ Ձնեղութիւն և զանձկութիւն գտի,⁴և զանուն Տեառն կարդացի։ Ո՛ր Տէր փրկեա՛ զանձն իմ։⁵Ողորմած և արդար է Տէր Աստուած մեր, ողորմի՛⁶և պահէ զտղայս Տէր։ Ես խոնարի եղէ և Տէր կեցոյց զիս*,⁷դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո զի Տէր օգնեաց քեզ*։⁸Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, զոտս իմ ՚ի գայթաղութենէ,⁹հաճոյ եղէց առաջի Տեառն յերկիր կենդանեաց*։ *Տունք. Զ։*

115

Ալէլուիա. ճԺԵ:

¹⁰Չաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարի եղէ յոյժ։¹¹Ես ասացի ՚ի զարմանալ իմուն, թէ ամենայն մարդ սուտ է*։¹²Ձի՞նչ տաց տրիտո՛ւր Տեառն, ընդ ամենայնի զոր և ե՛տ ինձ։¹³Բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացից*։¹⁴Ձաղօթս իմ Տեառն տաց՝ առաջի ամենայն ժողովրդեա՛ն նորա։¹⁵Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց։¹⁶Ո՛ր Տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ։¹⁷Չատե՛ր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն Տեառն կարդացից։¹⁸Ձաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեա՛ն նորա,¹⁹ի գաւիթս տան Տեառն, և ՚ի մէջ քո երուսաղէմ։ *Տունք. Ը։*

116

Ալէլուիա. ճԺԶ:

¹Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն ազինք. գովեցէ՛ք զնա ամենայն ժողովուրդք։²Չօրասցի՛ ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր. ճշմարտութիւն Տեառն մնացտ յաւիտեան։ *Տունք. Բ։*

117

¹Ալէլուիա. ճԺԷ:

Խոստովա՛ն եղերուք Տեառն զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա*։²Ասացէ տուն Իսրայէլի զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա*։³Ասացէ տուն Ահարոնի, զի յաւիտեան է ողորմութիւն նորա*։⁴Ասացեն

**Ոմանք.* Եւ ես զաւուրս իմ կարդացից առ նա։

**Ոմանք.* Ողորմած Տէր և արդար, ողորմի, և պա՛։

**Ոմանք.* Ձի Տէր օգնեաց ինձ։

**Ոմանք.* Յերկրին կենդանեաց։

**Ոմանք.* ՚Ի զարմանալն իմուն։

**Ոմանք.* Ձբաժակ փրկութեան։

**Ոմանք.* Ձի յաւիտեան է ողորմ նորա։

**Ոմանք.* Ձի յաւիտեան է ողորմ նորա։

**Ոմանք.* Ձի յաւիտեան է ողորմ նորա։

երկիւղածք Տեառն զի բարի՛ է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա*։ ⁵Ի նեղութեան կարդացի առ Տէր, և լուա՛ւ ինձ յանդորր*։ ⁶Տէր է իմ օգնական և ես ո՛չ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։ ⁷Տէր է իմ օգնական, և ես տեսի՛ց ՚ի թշնամիս իմ։ ⁸Բարի՛ է յուսալ ՚ի Տէր քան յուսալ ՚ի մարդիկ, ⁹բարի՛ է յուսալ ՚ի Տէր քան յուսալ յիշխանս։ ¹⁰Ամենայն ազինք շրջեցան զինն, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա։ ¹¹Շրջելով շրջեցան զինն, պաշարեցին զիս ՚ի միասին, և անուամբ Տեառն վանեցի զնոսա*։ ¹²Շրջեցան զինն որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ՚ի հուր, և անուամբ Տեառն մերժեցի զնոսա*։ ¹³Ի մերժելն դրդուեցայ և եղէ մե՛րձ ՚ի գլորել. և Տէր իմ ընկալաւ զիս*։ ¹⁴Զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն։ ¹⁵Չայն ցնծութեան փրկութեան ՚ի յարկս արդարոց։ ¹⁶Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն բա՛րձր արար զիս, աջ Տեառն արար զօրութիւն*։ ¹⁷Ո՛չ մեռայց, այլ կեցից և պատմեցի՛ց զգործս Տեառն։ ¹⁸Խրատելով խրատեա՛ց զիս Տէր, և ՚ի մահ ո՛չ մատնեաց։ ¹⁹Բացէ՛ք ինձ դրունս արդարութեան զի մտից ընդ այն, և խոստովան եղէց Տեառն*։ ²⁰Այս դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա։ ²¹Խոստովան եղէց քեզ Տէր զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն։ ²²Վե՛մն զոր անարգեցին շինօղքն, նա՛ եղև գլուխ անկեան։ ²³Ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի՛ առաջի աչաց մերոց*։ ²⁴Այսօր է զոր արար Տէր, եկա՛յք ցնծացուք և ուրախ եղիցուք ՚ի սմա։ ²⁵Ո՛ Տէր փրկեա՛ ո՛ Տէր առաջնորդեա՛։ ²⁶Օրհնեալ որ գալոցդ ես յանուն Տեառն, և օրհնեցաք զքեզ յանուանէ Տեառն*։ ²⁷Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ, արարէ՛ք տօնս ուրախութեան կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։ ²⁸Աստուած իմ ես դու խոստովան եղէց քեզ, Աստուած իմ ես դու՛ և բա՛րձր արարից զքեզ։ Խոստովան եղէց քեզ Տէր զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն*։ ²⁹Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմութիւն նորա*։

Ալեկուիա. ԾԺԸ*:

¹Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս Տեառն։ ²Երանի՛ ոյք քննեն զվկայութիւն նորա, բոլորով սրտի՛ւ իւրեանց խնդրեսցեն զնա*։ ³Ո՛չ թէ որ

* *Ոմանք.* Ձի յաւիտեան է ողորմ նորա:
 * *Ոմանք.* Ի նեղութեան ինուն ես առ Տէր կարդացի, և լու՛ւ:
 * *Ոմանք.* Եւ անուամբ Տեառն մերժեցի զնոսա:
 * *Ոմանք.* Շուրջ եղեն զինն որպէս մեղուք:
 * *Ոմանք.* Եւ Տէր ընկալաւ:
 * *Ոմանք.* Եւ աջ Տեառն ա՛ւ:
 * *Ոմանք.* Ինձ զդրունս ար՛:
 * *Ոմանք.* Սքանչելի յաչս մեր:
 * *Ոմանք.* Որ գալոց է անուամբ Տեառն... զքեզ ՚ի տանէ Տեառն:
 * *Ոմանք.* Ես դու, և խոստովան եղէց:
 * *Ոմանք.* Ձի յաւիտեան է ողորմ նորա:
 * *Ոմանք և յայս սաղմոս դրոշմեն Եբրայական ալփաբետս, որպէս և ՚ի սաղմոս ԼԶ. գորով զանց առնէ օրհնակս մեր ընդ այլոց ոմանց:*
 * *Ոմանք.* Ձվկայութիւնս նորա:

գործեն զանօրէնութիւն, 'ի ճանապարհս նորա գնասցեն*։ ⁴Ռու պատուիրեցեր զպատուիրանս քո, 'ի պահել ինձ յոյժ*։ ⁵Աւշ թէ յաջողեալ էին ճանապարհք իմ, պահել ինձ զարդարութիւնս քո*։ ⁶Յայնժամ ես ո՛չ ամաչէի 'ի զգուշանալ ինձ 'ի պատուիրանս քո։ ⁷Խոստովան եղէք թե՛զ Տէր յուղղութիւն սրտի իմոյ. որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։ ⁸Ձիրաւունս քո պահեցի, մի՛ թողուր զիս մինչև 'ի սպառ*։ ⁹Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ 'ի պահել զբանս քո։ ¹⁰Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ, մի՛ մերժեր զիս 'ի պատուիրանաց քոց*։ ¹¹Ի սրտի իմում թաքուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց թե՛զ։ ¹²Օրհնեալ ես դու Տէր, ուսո՛ր ինձ զարդարութիւնս քո։ ¹³Շրթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քոյ։ ¹⁴Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ, որպէս յամենայն 'ի մեծութեան։ ¹⁵Ի պատուիրանս քո հոգացայ, և զգուշացայ 'ի ճանապարհս քո։ ¹⁶Ձիրաւունս քո խօսեցայ, և ո՛չ մոռացայ զբանս քո*։ ¹⁷Չատո՛ ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։ ¹⁸Ձարթո՛ զաչս իմ, և նայեցայ 'ի սքանչելիս օրինաց քոց։ ¹⁹Պանդուխտ եմ ես յերկրի, մի՛ թաքուցաներ յինէն զպատուիրանս քո։ ²⁰Փափաքեաց անձն իմ, 'ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամենայն ժամ։ ²¹Սաստեցեր ամբարտաւանից. անհիծեալ ոյք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։ ²²Ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս, զի զվկայութիւնս քո խնդրեցի։ ²³Քանզի նստան իշխանք և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։ ²⁴Ձի վկայութիւնք քո խօսք իմ էին, և խորհուրդք իմ արդարութիւն քո*։ ²⁵Մերժեցաւ անձն իմ 'ի հող, Տէր կեցո՛ր զիս ըստ բանի քում։ ²⁶Ձճանապարհս իմ պատմեցից թե՛զ և լուար ինձ. ուսո՛ր ինձ զարդարութիւնս քո*։ ²⁷Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստո՛ւն արա զիս, և քննեցից զսքանչելիս քո։ ²⁸Տքնեցաւ անձն իմ առ 'ի ձանձրանալ, հաստատեա՛ր զիս 'ի բանս քո։ ²⁹Ձճանապարհս մեղաց 'ի բա՛ց արա յինէն, և յօրէնս քո ողորմեա՛ց ինձ։ ³⁰Ձճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի, և զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ։ ³¹Մերժեցայ ես 'ի վկայութիւնս քո, Տէր մի՛ յամօթ առնէր զիս։ ³²Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ։ ³³Օրէնսզէ՛տ արա զիս Տէր 'ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամենայն ժամ։ ³⁴Իմաստո՛ւն արա զիս, և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։ ³⁵Առաջնորդեա՛ր ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։ ³⁶Խոնարհեցո՛ր զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն։ ³⁷Պարձո՛ր զաչս իմ զի մի՛ տեսից զնանրութիւն, 'ի ճանապարհս քո կեցո՛ր զիս։ ³⁸Չաստատեա՛ր ծառայի քում զբան քո յերկեղ քո*։ ³⁹Չան՝ յինէն զնախատինս զոր և կարծեցի. զի դատաստանք քո քա՛ղցր են։ ⁴⁰Ահա՛ ցանկացայ՝ պատուիրանաց քոց, յարդարութեան քում կեցո՛ր զիս։ ⁴¹Եկեսցէ 'ի վերայ իմ

* Ոմանք. Ձի ո՛չ թէ ոյք գործեն։

* Ոմանք. Պահել ինձ յոյժ։

* Ի լուս՛. 'ի վերայ՝ Աւշ թէ, նշանակի՝ երանի թէ. համաձայն ոմանց առանձին սաղմոսարանաց։ Ոմանք. Յաջողեալ էին ինձ... 'ի պահել ինձ։

* Ոմանք. Եւ մի՛ թողուր զիս մինչ իս՛։

* Ոմանք. Խնդրեցից զքեզ, մի՛։

* Ոմանք. Ձիրաւունս քո խօսեցայց։

* Ոմանք. Վկայութիւնք քո խօսք... յարդարութիւն քո։

* Ոմանք. Պատմեցի թե՛զ։

* Ոմանք. Ծառայի քո զբան քո։

ողորմութիւն քո Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում: ⁴²Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես 'ի բանս քո յուսացայ: ⁴³Մի' 'ի բացէ առներ 'ի բերանոյ իմնէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ*: ⁴⁴Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից*: ⁴⁵Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի: ⁴⁶Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ո՛չ ամաչէի: ⁴⁷Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի*: ⁴⁸Ամբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի՝ յարդարութեան քում: ⁴⁹Յիշեա՛ զբան ծառայի քոյ, յոր և յուսացուցեր զիս*: ⁵⁰Սա՛ մխիթարեսցէ՛ զիս 'ի խոնարհութեան իմում. զի բանք քո կեցոյց զիս*: ⁵¹Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ո՛չ խտորեցայ: ⁵²Յիշեցի՛ զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ: ⁵³Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո: ⁵⁴Գովելի՛ են ինձ իրաւունք քո, 'ի տեղոջ պանդխտութեան իմոյ: ⁵⁵Յիշեցի՛ 'ի գիշերի զանուն քո Տէր, և պահեցի զօրէնս քո: ⁵⁶Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս, զի զարդարութիւնս քո խնդրեցի: *Տունք. ԾԶ:*

⁵⁷Բաժին իմ ես դու Տէր, ասացի պահել՝ զօրէնս քո*: ⁵⁸Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով, ողորմեա՛ ինձ ըստ բանի քում: ⁵⁹Խորհեցայ 'ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո*: ⁶⁰Պատրաստեցայ և ո՛չ խռովեցայ, զի պահեցի՛ զպատուիրանս քո*: ⁶¹Տոռունք մեղաց պատեցան զինև, այլ զօրէնս քո ես ո՛չ մոռացայ*: ⁶²Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ Տէր, վասն իրաւանց և արդարութեան քո*: ⁶³Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց, որոց պահեալ է զպատուիրանս քո*: ⁶⁴Ողորմութեամբ քով Տէր լի՛ եղև երկիր, զարդարութիւնս քո ուսո՛ ինձ*: ⁶⁵Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում Տէր, ըստ բանի՛ քում: ⁶⁶Քաղցրութիւն զխրատ և զգիտութիւն ուսո՛ ինձ, զի 'ի պատուիրանս քո ես հաւատացի*: ⁶⁷Մինչև խոնարհեալ էի ես մեղայ, վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ: ⁶⁸Քաղցր ես դու Տէր, և քաղցրութեամբ քով ուսո՛ ինձ զարդարութիւնս քո*: ⁶⁹Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես՝ բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո: ⁷⁰Մածաւ որպէս կաթն սիրտք նոցա, այլ ես զօրէնս քո խօսեցայ*: ⁷¹Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո: ⁷²Բարի են ինձ

* *Ոմանք.* 'ի բերանոյ իմոյ զբան:

* *Ոմանք.* Պահեցից զօրէնս քո:

* *Ոմանք.* Ձոր և սիրեցի:

* *Ոմանք.* Համբարձի զձեռս... զոր և սիրեցի:

* *Օրինակ մի.* Յիշեա՛ զբան քո ծա՞:

* *Բազումք.* Ձի բան քո կեցոյց:

* *Ոմանք.* Պահել ինձ զօրէնս:

* *Ոմանք.* Խորհեցայ 'ի ճանապարհս քո:

* *Ոմանք.* Այլ պահեցի զպատուի՞:

* *Ոմանք.* Պատեցին զինև, և զօրէնս քո:

* *Ոմանք.* Խոստովան առնել առ քեզ, վասն ի՞:

* *Օրինակ մի.* Հաղորդ արա զիս ամենայն երկիւղածաց քոց, ոյք պահէին զպատ՞:

* *Ոմանք.* Ողորմութեամբ Տեառն լի եղև:

* *Ոմանք.* Եւ զխրատ և զգի՞:

* *Յօրինակին պակասէր.* Եւ քաղցրութեամբ քով ուսո՛ ինձ:

* *Ոմանք.* Մածեաւ. կամ՝ մածան որպէս կաթն... յօրէնս քո խօսե՞:

օրէնք բերանոյ քոյ, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ: ⁷³Ձեռք քո արարին և ստեղծին զիս, իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո: ⁷⁴Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ եղիցին, զի ես ՚ի բանս քո յուսացայ: ⁷⁵Ծանեայ Տէր զի արդարութեամբ են դատաստանք քո. յիրաւի՝ խոնարհեցուցեր զիս: ⁷⁶Եղիցի ողորմութիւն ՚ի մխիթարել զիս, ըստ բանի քում զծառայս քո*: ⁷⁷Եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից, զի օրէնք քո խօսք իմ էին: ⁷⁸Ամաչեսցեն ամբարտաւանք որ ՚ի տարապարտուց անիրաւեցան յիս, այլ ես հոգացայց ՚ի պատուիրանս քո*: ⁷⁹Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և ոյք ճանաչեն զվկայութիւնս քո: ⁸⁰Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան քում, զի մի՛ ամաչեցից: ⁸¹Կարօտացաւ անձն իմ ՚ի փրկութիւնս քո, զի ես ՚ի բանս քո յուսացայ*: ⁸²Սպասեցին աչք իմ բանի քում, ասացի ե՞րբ մխիթարեսցէ զիս*: ⁸³Եղէ ես որպէս տի՛կ ՚ի պարզի, զի զարդարութիւնս քո ես ո՛չ մոռացայ: ⁸⁴Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո, ե՞րբ արասցես ինձ իրաւունս ՚ի հալածչաց իմոց*: ⁸⁵Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս, այլ ո՛չ որպէս զօրէնս քո: ⁸⁶Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են, ՚ի նամիր հալածեցին զիս օգնեա՛ ինձ: ⁸⁷Փոքր միւս ևս և կորուսանէին զիս յերկրէ, այլ ես ո՛չ թողի զպատուիրանս քո*: ⁸⁸Ըստ ողորմութեան քում կեցո՛ զիս, և պահեցից զվկայութիւնս բերանոյ քո: ⁸⁹Յաւիտեան Տէր բան քո կայ յերկինս, ⁹⁰ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո: Հաստատեցեր զերկիր, կայ՛ և մնայ՛: ⁹¹Հրամանի քում մնայ տիւ, զի ամենայն ծառայ՛ քո է: ⁹²Եթէ ո՛չ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ևս արդէք կորուսեալ էի ՚ի խոնարհութեան իմում*: ⁹³Յաւիտեան ո՛չ մոռացայ զարդարութիւնս քո, զի նոքօ՛ք կեցուցեր զիս*: ⁹⁴Քո են ես և կեցո՛ զիս, զի զարդարութիւնս քո խնդրեցի: ⁹⁵Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորուսանել, զի զվկայութիւնս քո ես ՚ի մի՛տ առի*: ⁹⁶Յամենայն կատարածի տեսի զվախճան, յոյժ անդորր են ինձ պատուիրանք քո*: ⁹⁷Որպէս սիրեցի զօրէնս քո, զօրհանապազ խօսք իմ էին: ⁹⁸Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս ՚ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին: ⁹⁹Քան զամենայն ուսուցիչ իմ իմաստուն եղէ, զի վկայութիւնք քո խօսք իմ էին*: ¹⁰⁰Քան զծերս իմ իմաստուն եղէ, զի զպատուիրանս քո քննեցի*: ¹⁰¹Յամենայն ճանապարհաց չարաց արգելի՛ զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո*: ¹⁰²Յիրաւանց քոց ես ո՛չ խտորեցայ, զի դու օրէնսգէ՛տ արարեր զիս: ¹⁰³Որպէս զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ*: ¹⁰⁴Ի պատուիրանաց քոց իմացեալ՝

* *Ոմանք.* Ողորմութիւն քո ՚ի մխիթա՛:
 * *Ոմանք.* Յիս յոյժ. այլ ես հոգացայ ՚ի պատ՛:
 * *Ոմանք.* Կարօտեցաւ:
 * *Ոմանք.* Երբ մխիթարեսցես զիս:
 * *Ոմանք.* Ծառայի քում:
 * *Ոմանք.* Փոքր մի ևս և... զիս յերկրի:
 * *Ոմանք.* Ձերկիր, և կայ: (91) Հրամանի: *Ուր օրինակ մի.* Ձերկիր, և կայ ՚ի (91) հրամանի քում: Մնայ և տիւ, զի ամենայն ծառայք քո են:
 * *Ոմանք.* Կանխաւ ես արդէք:
 * *Ոմանք.* Ոչ մոռացայց զար՛: *Ուր Ոսկան.* Ես ո՛չ մոռացայց:
 * *Ոմանք.* Ի կորուսանել զիս. զի:
 * *Ոմանք.* Անդորր էին ինձ:
 * *Բազումք.* Քան զամենայն ուսուցիչս իմ:
 * *Ի բազումս պակասի.* Քան զծերս իմ իմաս՛:
 * *Ոմանք.* Որպէս պահեցի զբանս:
 * *Յօրինակին պակասէր.* Ի քիմս իմ բանք քո:

ատեցի՝ զամենայն ճանապարհս չարաց, զի դու օրէնագէտ արարեր զիս*:
¹⁰⁵Երա՛գ է բան քո ոտից իմոց, և լոյս տայ շաւղաց իմոց*:¹⁰⁶Երդուայ և
հաստատեցի, զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո:¹⁰⁷Խոնարհ
եղէ մինչև յոյժ, Տէր կեցո՛ւ զիս ըստ բանի քում:¹⁰⁸Ընդ կանս բերանոյ իմոյ
հաճեա՛ Տէր, և զիրաւունս քո ուսո՛ւ ինձ:¹⁰⁹Անձն իմ՝ ի ձեռս քո յամենայն ժամ, և
զօրէնս քո ես ո՛չ մոռացայ*:¹¹⁰Եդին ինձ մեղաւորք որոգայթ, ՚ի պատուիրանաց
քոց ես ո՛չ մոլորեցայ*:¹¹¹Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի
ցնծութիւն է սրտի իմոյ*:¹¹²Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո
յաւիտեան, վասն հատուցման*:¹¹³Ձանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի*:
¹¹⁴Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես ՚ի բանս քո յուսացայ:¹¹⁵Ի բա՛ց եղերուք
յինէն չարք, և քննեցի՛ց զպատուիրանս Աստուծոյ իմոյ:¹¹⁶Օգնեա՛ ինձ ըստ
բանի քում և կեցո՛ւ զիս, և մի՛ յամօք առներ զիս ՚ի յուսոյ իմմէ:¹¹⁷Օգնեա՛ ինձ և
ապրեցո՛ւ զիս, և խորհեցա՛յց յիրաւունս քո յամենայն ժամ:¹¹⁸Անարգեցեր
զամենեսեան որ ապստամբ եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ են
խորհուրդք նոցա*:¹¹⁹Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի,
վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո*:¹²⁰Բւեռեա՛ ընդ երկևր քո զմարմին
իմ, զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ: *Տունք. 47:*

¹²¹Արարի իրաւունս և արդարութիւն, մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:
¹²²Ընկա՛լ զժառայս քո ՚ի բարի, զի մի՛ ամբարտաւանք զզուեսցեն զիս:
¹²³Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր, և բանից արդարութեան քո*:
¹²⁴Արա՛ ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում, զարդարութիւնս քո ուսո՛
ինձ:¹²⁵Ծառայ քո եմ ես, իմաստո՛ւն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:
¹²⁶Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո*:¹²⁷Վասն այսորիկ սիրեցի
զպատուիրանս քո, քան զամենայն ոսկի և տպագիծն*:¹²⁸Ամենայն
պատուիրանք քո աջողեցան ինձ, զի ատեցի՛ զճանապարհս չարաց*:
¹²⁹Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այնորիկ քննեաց զնոսա անձն իմ*:
¹³⁰Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստո՛ւն առնէ զտղայս*:¹³¹Ձբերան
իմ բացի և առի զհոգի, ՚ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ:¹³²Նայեա՛ առ
իս և ողորմեա՛ ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քում*:¹³³Ձճանապարհս իմ

* *Օրինակ մի.* Չարաց. զի դու խրատեցեր զիս յօրէնս քո:

* *Ոմանք.* Երագ են բանք քո... և լոյս տան:

* *Ոմանք.* Ես ո՛չ մոռացայց:

* *Ոմանք.* Որոգայթ. այլ ՚ի պատուիրանաց քոց:

* *Ոմանք.* Ձի ցնծութիւն եղև սրտի իմում:

* *Ոմանք.* Վասն հատուցման:

* *Ոմանք.* Ձանօրէնն ատեցի:

* *Օրինակ մի.* Անարգեցին զամենեսին ոյք: *Ոմանք.* Անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա:

* *Օրինակ մի.* Անցաւոր համարեցայ: *Ոմանք.* Վասն այսորիկ սիրեցի զվկայութիւնս քո:

* *Ոմանք.* Արդարութեան քում:

* *Օրինակ մի.* Ժամ է յառնել Տեառն, խափանե՛:

* *Ոմանք.* Եւ զտպագիծն:

* *Բազումք.* Ձի ատեցի ես զճանապարհս չա՞:

* *Ոմանք.* Եղեն վկայութիւնք քո, վասն այսորիկ սիրեաց զսոսա անձն իմ:

* *Ոմանք.* Քոց լուսաւորէ և ի՞:

* *Ոմանք.* Սիրելեաց անուան քո:

ուղի՛ղ արա ինձ ըստ բանի քում, և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք: ¹³⁴Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ մարդկան, և պահեցից զպատուիրանս քո՞: ¹³⁵Երևեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո: ¹³⁶Վտակ ջուրց իջին յաչաց իմոց, զի ո՛չ պահեցին զօրէնս քո: ¹³⁷Արդար ես դու Տէր, և ուղի՛ղ են դատաստանք քո: ¹³⁸Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց, և ճշմարիտ են յոյժ՞: ¹³⁹Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ: ¹⁴⁰Ընտրեալ են բանք քո յոյժ, և ծառայ քո սիրեաց՝ զսա՞: ¹⁴¹Մանուկ են ես արհամարհեալ, և զարդարութիւնս քո ես ո՛չ մոռացայ՞: ¹⁴²Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են: ¹⁴³Նեղութիւն և վիշտք գտին զիս, և պատուիրանք քո խօսք իմ էին: ¹⁴⁴Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա և կեցո՛ զիս: ¹⁴⁵Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով, լուր ինձ Տէր զի զարդարութիւնս քո խնդրեցի: ¹⁴⁶Աղաղակեցի առ քեզ և փրկեա՛ զիս, և պահեցից զվկայութիւնս քո: ¹⁴⁷Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի, և ես ՚ի բանս քո յուսացայ՞: ¹⁴⁸Կանխեցին աչք իմ առաւօտու, ՚ի խօսել ինձ զբանս քո՞: ¹⁴⁹Չայնի իմում լուր Տէր ըստ ողորմութեան քում, Տէր յիրաւունս քո կեցո՛ զիս: ¹⁵⁰Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն, զի յիրաւանց քոց հեռի՛ եղեն՞: ¹⁵¹Մերձ ես դու Տէր, և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են՞: ¹⁵²Իսկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց, զի յաւիտեան հաստատեցեր զնոսա: ¹⁵³Տե՛ս զխոնարհութիւն իմ և փրկեա՛ զիս, զի զօրէնս քո ես ո՛չ մոռացայ: ¹⁵⁴Դատեա՛ զդատաստան իմ և փրկեա՛ զիս, և ըստ բանի քում կեցո՛ զիս՞: ¹⁵⁵Յեռի է մեղաւորաց փրկութիւն, զի զիրաւունս քո ո՛չ պահեցին՞: ¹⁵⁶Գթութիւնք քո բազում են Տէր, և ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս: ¹⁵⁷Բազում են որ հալածեն և նեղեն զիս, ՚ի վկայութեանց քոց ես ո՛չ խտորեցայ: ¹⁵⁸Յայէի յանազորոյնս և մաշէի, զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին: ¹⁵⁹Տե՛ս զի զպատուիրանս քո սիրեցի, Տէր ողորմութեամբ քո կեցո՛ զիս: ¹⁶⁰Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է, յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քո: ¹⁶¹Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր, և ՚ի բանից քոց երկեալ սիրտ իմ՞: ¹⁶²Յնծացայ ես ՚ի բանս քո, որպէս այն որ գտանէ աւա՛ր բազում: ¹⁶³Չմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի՞: ¹⁶⁴Եւթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վասն իրաւանց և արդարութեան քոյ: ¹⁶⁵Խաղաղութիւն բազում է այնոցիկ որ սիրեն զօրէնս քո, և ո՛չ զոյ ՚ի նոսա զայթազողութիւն: ¹⁶⁶Սպասեցի փրկութեան քում Տէր, և զպատուիրանս քո սիրեցի: ¹⁶⁷Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ՞: ¹⁶⁸Պահեցի զպատուիրանս և զվկայութիւնս քո, զի ամենայն

* *Ոմանք.* Մարդկան, և պահեցից:

* *Ոմանք.* Ձի պատուիրեցեր զարդա՞:

* *Ոմանք.* Ընտրեալ է բան քո... սիրեաց զնոսա:

* *Ոմանք.* Այլ զարդարութիւնս քո:

* *Ոմանք.* Ի տարաժամու:

* *Ոմանք.* Աչք իմ առաւօտուց:

* *Ոմանք.* Ձի յօրինաց քոց հեռի՛ եղեն:

* *Ոմանք.* Եւ ամենայն ճանապարհք քո ճշմարտութեամբ են:

* *Ոմանք.* Չդատաստանս իմ:

* *Այլք.* Յեռի է ՚ի մեղաւորաց: *Ոմանք.* Ձիրաւունս քո ո՛չ խնդրեցին:

* *Ոմանք.* Այլ ՚ի բանից քոց երկեալ:

* *Ոմանք.* Այլ զօրէնս քո սիրե՞:

* *Ոմանք.* Եւ սիրեաց զնոսա յոյժ:

ճանապարհք իմ առաջի քո են*։ ¹⁶⁹Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։ ¹⁷⁰Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ քով փրկեա՛ զիս։ ¹⁷¹Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո։ ¹⁷²Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։ ¹⁷³Եղիցի ձեռն քո կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի*։ ¹⁷⁴Ցանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։ ¹⁷⁵Կեցցէ անձն իմ և օրհնեցից զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ*։ ¹⁷⁶Սոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զժառայս քո զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։ *Տունք. ԾԶ։*
Կանոնս Գորդայս. Է։ Սաղմոս. ԺԳ։ Տունս. 34Բ

119

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԵԺԹ*։

՚ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ, ²Տէր փրկեաց զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց և ՚ի լեզուէ՛ չարէ։ ³Ձի՞ տացի քեզ կամ զի՞ յաւելցի՛ լեզու՛ նենգաւոր*։ ⁴Որպէս նետք հօգորի, զի մխեալ կայծակամբք կաղնւոյ*։ ⁵Վայ՛ է ինձ՝ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ, բնակեցի ես ՚ի վրանս Կեդարու։ Բազում անգամ բնակեաց անձն իմ* ⁶ընդ այնոսիկ, ոյք ատէին զողջոյն։ Ես էի խաղաղարար, յորժամ խօսէի մարտնչէին ընդ իս։ *Տունք. Զ։*

120

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԵԻ։

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս, ուստի եկեսցէ՛ ինձ օգնութիւն։ ²Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ՛ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։ ³Մի՛ տար սասանութեան զոտն քո, և մի՛ ննջեսցէ Պահապան քո*։ ⁴Որպէս ո՛չ ննջէ և ո՛չ ՚ի քում երթայ Պահապան Իսրայէլի*։ ⁵Տէր պահեսցէ զքեզ, և Տէր ընկալցի աջով ձեռամբ իւրով*։ ⁶Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսին ՚ի գիշերի։ ⁷Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ Տէր զանձն քո։ ⁸Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։ *Տունք. Ը։*

121

* *Ոմանք.* Պահեցից զպատուիրանս։
 * *Բազունք.* ՚ի կեցուցանել զիս։
 * *Ոմանք.* Անձն իմ օրհնեսցէ զքեզ։
 * *Ոմանք ՚ի վերնագիր սաղմոսացս փոխանակ* Օրհնութիւնք, *ունին*՝ Երգ աստիճանաց։
 * *Ոմանք.* Կամ զինչ յաւելուցու։
 * *Բազունք.* Ձի մխեալ են կայծակամբ։
 * *Ոմանք.* Վայ ինձ զի... զի բնակեցայ ես ՚ի։
 * *Ոմանք.* Մի՛ տար ՚ի սասանութիւն։
 * *Ոմանք.* Պահապանն Իսրայէլի։
 * *Ոմանք.* Աջոյ ձեռամբն իւ՛։

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԱ:

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս. ¹Ի տուն Տեառն երթիցուք մեք: ²Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ: ³Ձերուսաղէմ շինեալ քաղաք, և բնակութիւն իւր շուրջ զնովաւ: ⁴Անդ ելին ա՛զգ ա՛զգ Տեառն, վկայութիւնք Իսրայէլի խոստովան լինել անուան Տեառն: ⁵Անդ արկեալ են աթոռք դատաստանի, աթոռս արկեալ ՚ի տան Դաւթի: ⁶Հարցէ՛ք զողջունէ՛ զԵրուսաղէմի, զշինութենէ ոյք սիրէք զնա: ⁷Եղիցի խաղաղութիւն ՚ի զօրութեան քում, շինութիւն յաշտարակս յամուրս քո: ⁸Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութիւն, վասն քո ⁹և վասն տան Տեառն Աստուծոյ մերոյ խնդրեցաք զբարութիւն քեզ: *Տունք. Ը:*

122

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԲ:

Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ՚ի յերկինս: ²Որպէս աչք ծառայից ՚ի ձեռս տերանց իւրեանց, որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռս տիկնոջ իւրոյ: Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ՚ի վերայ մեր: ³Ողորմեա՛ց մեզ Տէր ողորմեա՛ց մեզ, զի բազում լցաք արհամարհանօք: ⁴Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, ոյք նախատեն զմեզ արհամարհանօք ամբարտաւանից: *Տունք. Ը:*

123

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԳ:

Եթէ ո՛չ Տէր է՛ր առ մեզ, ասաց Իսրայէլ: ²Եթէ ո՛չ Տէր է՛ր առ մեզ: Ընդ յառնել մարդկան ՚ի վերայ մեր, ³Կենդանւոյն կամեցան կլանել զմեզ: Բարկանալ սրտմտութեամբ նոցա ՚ի վերայ մեր: ⁴Ապա և ջո՛ւրք ուրեմն ընկլուզանէին զմեզ: ⁵Ընդ ուղիսս անցին անձինք մեր, անցին անձինք մեր ընդ ջուրս անդադարս: ⁶Օրհնեալ է Տէր, որ ո՛չ ետ զմեզ ՚ի յորս ատամանց նոցա: ⁷Անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկ, յորոգայթ որսողաց: Որոգայթք նոցա փշրեցան, և մեք ապրեցաք: ⁸Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկինս և զերկիր: *Տունք. Ը:*

* *Ոմանք.* Շինեալ որպէս քաղաք:

* *Ոմանք.* Անդ ելանէին ազգք ազգք Տեառն. վկայութիւն:

* *Ոմանք.* Անդ արկեալ է. *կամ* էր աթոռս դատաստանի. աթոռք ար:

* *Ոմանք.* Եւ զշինութենէ ոյք սիրէք զՏէր:

* *Ոմանք.* Ձբարութիւն ՚ի քէն:

* *Ոմանք.* Ծառայի ՚ի ձեռն Տեառն իւրոյ:

* *Ոմանք.* Որ նախատէին զմեզ, է արհա՛:

* *Ոմանք.* Ասասցէ Իսրայէլ:

* *Ոմանք.* Կենդանւոյն կամէին կլանել զմեզ: Ի բարկանալ սրտմտ:

* *Ոմանք.* Ուրեմն ընկղմեցին. *կամ* ընկղմէին զմեզ:

* *Ոմանք.* Ընդ ուղիս անդադարս:

* *Ոմանք.* Տեառն. այն որ արար զերկինս և զեր՛:

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԴ:

Որ յուսայ ՚ի Տէր որպէս լեանն Սիովն, մի՛ սասանեսցի յաւիտեան՝ բնակեալն՝
²յերուսաղէմ: Լերի՛նք շուրջ են գնովաւ, Տէր շուրջ է գժողովրդեանք իւրով,
 յայսմ հետէ մինչև յաւիտեան: ³Ո՛չ թողու Տէր զգաւազան մեղաւորաց ՚ի վիճակս
 արդարոց, և արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն՝: ⁴Բարի՛ առնէ
 Տէր բարեաց, և այնոցիկ ոյք ուղի՛ղ են սրտիւք: ⁵Իսկ զթիրեալսն
 յափշտակութեամբ, տանի զնոսա Տէր ընդ այնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն.
 Խաղաղութիւն ՚ի վերայ Իսրայէլի՛: *Տունք. Ե: Գորդայս. Խ:*

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԵ:

՚Ի դարձուցանել Տեառն զգերութիւն Սիովնի, և եղաք մեք մխիթարեալք՝:
²Յայնժամ լցան բերանք մեր խնդութեամբ, և լեզուք մեր ցնծութեամբ: Յայնժամ
 ասասցեն ՚ի հեթանոսս. Մեծ արար Տէր առնել ընդ նոսա՛, ³մեծ արար Տէր
 գլառնել իւր ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք՝: ⁴Դարձո՛ Տէր զգերութիւնս մեր
 որպէս զուխս ՚ի հարաւոյ, ⁵ոյք վարէին արտասուօք ցնծութեամբ հնծեսցեն:
⁶Երթալով երթային և լային, ոյք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց: Գալով
 եկեսցեն և ցնծասցեն, ոյք առեալ բերիցեն զորայս իւրեանց՝: *Տունք. Զ:*

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ճԻԶ:

Եթէ ո՛չ Տէր շինէ զտուն, ՚ի նանի՛ր վաստակին շինօղք նորա: Եթէ ո՛չ Տէր պահէ
 զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նորա՛: ²Ի նանի՛ր է ձեզ յառնել
 կանխաւ. արդ արիք՝ մինչչև՝ էք ննջեցեալ, և ոյք ուտէք զհաց ցաւոց՝: ³Ի
 ժամանակի որպէս տացի քուն սիրելեաց իւրոց. ժառանգութիւն առն որդիք են,
 որոյ վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ՝: ⁴Որպէս նետք ՚ի ձեռս հզօրի.
 այնպէս են որդիքն թօթափելոց: ⁵Երանի՛ որ ելից զցանկութիւն իւր ՚ի նոցանէն.
 և ո՛չ ամաչեսցեն յորժամ խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ դրան՝:
Տունք. Զ:

* *Ոմանք.* Ո յուսայ ՚ի Տէր... յաւիտեան՝ որ բնակեալն է յերուսաղէմ:

* *Ոմանք.* Բայց արդարք մի՛ ձգես՝: *Ուր Ոսկան.* Ձի արդարք մի:

* *Ոմանք.* Ձթիրեալսն ՚ի յափշտակութիւն:

* *Ոմանք.* Եւ եղեաք մեք մխի՛:

* *Ոմանք.* Մեծ արար Տէր գառնել իւր ընդ նոսա:

* *Ոմանք.* Տէր գառնել իւր ընդ մեզ:

* *Ոմանք.* Տանէին զսերմանս իւրեանց:

* *Ոմանք.* Շինէ զտունն... ՚ի նանի՛ր տքնին պահա՛:

* *Ոմանք.* Ի նանի՛ր էր ձեզ:

* *Օրհնակ մի.* ժառանգութիւն Տեառն որդիք են... պտուղ որովայնի նորա:

* *Ոմանք.* Իւր ՚ի նոցանէ. մի՛ ամաչեսցեն... առ դրանն:

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԳԻԷ:

Երանի ամենեցուն ոյք երկնչին 'ի Տեառնէ, և գնան 'ի ճանապարհս նորա:
²Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի՛ է քեզ, և բարի եղիցի: ³Կին քո որպէս
 զայգի՛ վայելուչ յանկիւնս տան քոյ. որդիք քո որպէս նորատունկ ձիթենույ
 շո՛ւրջ զսեղանով քով՛: ⁴Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի 'ի Տեառնէ.
⁵Օրհնեսցէ՛ զքեզ Տէր 'ի Սիովնէ: Եւ տեսցես դու զբարութիւն յերուսաղէմ
 զամենայն աւուրս կենաց քոց: ⁶Տեսցես դու զորդիս որդւո՛ց քոց, խաղաղութիւն
 'ի վերայ Իսրայէլի: *Տունք. Զ:*

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԳԻԸ:

Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմնէ, ասաց Իսրայէլ՛:
²Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմնէ, և ինձ ո՛չ յաղթեցին:
³Զթիկունս իմ հարին մեղաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս
 իւրեանց: ⁴Տէր արդար է, խորտակէ զուլն մեղաւորաց՛: ⁵Ամաչեսցեն և յե՛տս
 դարձցին ամենեքեան՝ ոյք ատեան զՍիովն: ⁶Եղիցին նոքա որպէս զխոտ
 տանեաց, որ մինչչև՛ 'ի բուռն եկեալ էր չորացաւ՛: ⁷Ուստի ո՛չ ելից զբուռն իւր
 հնձօղն, և ո՛չ զգիրկս իւր որ զորայն ժողովէր: ⁸Ո՛չ ասացին ամենեքեան ոյք
 անցանէին առ նոքօք, թէ օրհնութիւն Տեառն ընդ ձե՛զ է, և օրհնեսցա՛ք զձեզ 'ի
 տանէ Տեառն՛: *Տունք. Ը:*

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԳԻԹ:

'ի խորոց կարդացի առ քեզ Տէր, ²Տէր լուր ձայնի իմուն: Եղիցին ականջք քո,
 լսել զձայն աղօթից իմոց՛: ³Թէ զանօրէնութիւնս իմ պահես Տէր Տէր, ո՛ կարէ կալ
 առաջի քո՛. ⁴զի՛ 'ի քէն է քաւութիւն: Վասն անուան քոյ համբերի Տէր, ⁵համբեր
 անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի Տէր՛: ⁶Ի պահէ առաւօտու մինչև
 ցերեկոյ, 'ի պահու առաւօտու՛ ⁷յուսացաւ Իսրայէլ 'ի Տէր: 'ի Տեառնէ՛ է
 ողորմութիւն և բազում 'ի նմանէ է փրկութիւն՛. ⁸և նա փրկէ զԻսրայէլ յամենայն
 նեղութեանց նորա՛: *Տունք. Թ:*

* *Յօրհնակիւն.* Որդի քո որպէս նորա՛:

* *Ոմանք.* Իմնէ. ասացէ Իսրայէլ:

* *Ոմանք.* Տէր արդար, և խորտա՛:

* *Ոմանք.* Որպէս խոտ տա՛... եկեալ չորացաւ:

* *Ոմանք.* Զձեզ յանուանէ Տեառն:

* *Ոմանք.* 'ի լսել զձայն աղօ՛: *Ուր Ոսկան.* Հայիլ 'ի ձայն աղօ՛:

* *Ոմանք.* Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր Տէր, իսկ ո՛ կարէ կալ:

* *Ոմանք.* Յուսացաւ Իսրայէլ 'ի Տէր:

* *Ոմանք.* Մինչև յերեկոյ 'ի պահէ առա՛:

* *Ոմանք.* Ողորմութիւն բազում 'ի նմանէ:

* *Ոմանք.* Եւ նա փրկեաց զԻսրայէլ:

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԳԼ:

Տէր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ, և ո՛չ զբօսան աչք իմ: Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս, և ո՛չ ընդ այնոսիկ ոյք սքանչելի՛ էին քան զիս*: ²Բայց թէ խոնարհեցայ ես որպէս մանուկ հատուցեալ ՚ի ստեմէ մօր իւրոյ, և դարձ նորա անդրէն ՚ի նոյն: Այլ հպարտացուցի արդէք զանձն իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին իմոյ*, ³յուսացաւ Իսրայէլ ՚ի Տէր յայսմեհետ մինչև յաւիտեան: *Տունք. Դ: Գորդայս. ԽԴ:*

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԳԼԱ:

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա*: ²Որպէս երդուաւ Տեառն, և ուխտեաց Աստուծոյ Յակոբայ*: ³Եթէ ո՛չ մտից ՚ի յարկս տան իմոյ, եթէ ելից յանկողինս մահճա՛ց իմոց*: ⁴Թէ՛ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևանաց իմոց*, ⁵կամ հանգիստ իրանաց իմոց. մինչև գտից զտեղի՛ յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ*: ⁶Ահա՛ լուա՛ք զնմանէ յեփրաթայ, և գտաք զնա ՚ի դա՛շտս մայրեաց: ⁷Մտցո՛ւք ՚ի յարկս նորա, երկի՛ր պագցուք ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա: ⁸Արի՛ Տէր ՚ի հանգիստ քո, դու և կտակարանք սրբութեան քոյ*: ⁹Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալո՛վ ցնծասցեն: ¹⁰Վասն Դաւթի սիրելւոյ քոյ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ: ¹¹Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ և ո՛չ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնէ քումմէ նստուցից յաթոռ քո*: ¹²Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա: Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո: ¹³Հաճեցաւ Տէր ընդ Սիովն, և ընտրեաց բնակիլ ՚ի նմա*. ¹⁴ասէ. Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ՚ի սմա բնակեցայ զի հաճեցայ ընդ սա*: ¹⁵Չորս սորա՝ օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցի՛ց հացիւ: ¹⁶Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն, և սուրբք սորա ցնծալո՛վ ցնծասցեն*: ¹⁷Անդ ծագեցից զեղջևր ՚ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ: ¹⁸Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ՚ի վերայ նորա

* *Ոմանք.* Օրհնութիւն չուոց... Որ սքանչելի եղեն քան զիս:

* *Ոմանք.* Որպէս զմանուկ սարտուցեալ ՚ի ստե՛... Այլ թէ հպարտա՛:

* *Ոմանք.* Երգ չուոց:

* *Ոմանք.* Եւ ուխտս եդ Աստուծոյ յա՛:

* *Ոմանք.* Թէ ո՛չ մտից յարկս... թէ ելից:

* *Ոմանք.* Եթէ տաց:

* *Օրհնակ մի.* Կամ հանգիստ երանաց իմոց:

* *Ոմանք.* Դու և տապանակ կտակի սրբութեան:

* *Ոմանք.* ՚ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

* *Բագունք.* Բնակել ՚ի նմա:

* *Ոմանք.* ՚ի սմա բնակեցայց, զի:

* *Ոմանք.* Երիցանց սորա զգե՛:

ծաղկեցտ սրբութիւն իմ* *Տուևք. ժէ:*

132

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԾԼԲ:

Ձի^օ բարի կամ զի^օ վայելուչ, զի բնակին եղբարք 'ի միասին*։ ²Որպէս ևղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մորունսն Ահարովնի, 'ի մորուացն իջանէ 'ի գրապանս զգեստուն նորա*։ ³Որպէս ցօղ զի ցօղէ 'ի Յերմոնէ, 'ի վերայ լերին Սիովնի: Անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն, և զկեանսն յաւիտենից*։ *Տուևք. Դ:*

133

¹Օրհնութիւնք Աշտիճանաց. ԾԼԳ:

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր, ո՛ր կայք 'ի տուն Տեառն 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ*։ ²Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր: ³Օրհնեցտ զձեզ Տէր 'ի Սիովնէ. այն որ արար զերկինս և զերկիր*։ *Տուևք. Դ:*

134

¹Ալէլուիա. ԾԼԴ:

Օրհնեցէք զանուն Տեառն, օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր*։ ²ո՞ր կայք 'ի տուն Տեառն, 'ի գաւիթս տան Աստուծոյ մերոյ*։ ³Օրհնեցէք զՏէր զի բարի է, սաղմո՛ս ասացէք անուան նորա զի քաղցր է: ⁴ՁՅակովք ընտրեաց իւր Տէր, և զԻսրայէլ ժառանգութիւն իւր: ⁵Ես ծանեայ զի մեծ է Տէր, և Տէր մեծ է քան զամենայն կուռս: ⁶Ձամենայն զոր ինչ կամեցաւ և արար Տէր, յերկինս և յերկրի, 'ի ծովս և յամենայն խորս*։ ⁷Հանէ զամպս 'ի ծագաց երկրէ, զփայլատակունս իւր յանձրևս արար, և հանէ զհողմս 'ի շտեմարանաց իւրոց*։ ⁸Ո եհար զամենայն անդրանիկս Եգիպտացւոց, 'ի մարդոյ մինչև յանասուն*։ ⁹Առաքեաց զնշանս և զարուեստս իւր 'ի մէջ քո Եգիպտոս, 'ի փարաւովն և յամենայն զօրս իւր: ¹⁰Ո եհար ա՛զգս բազումս, և սպան զթագաւորս հզօրս*։ ¹¹ՁՍեհովն թագաւոր Ամուրիացւոց,

* *Ոմանք.* Ծաղկեցտ սրբութիւն իմ:

* *Ոմանք.* Երգ չուոց... Ձինչ բարի կամ... զի բնակեն եղ՞:

* *Ոմանք.* Ի գրապան զգեստուոց:

* *Ոմանք.* Ձի ցօղէ յԱհերմոնէ... Տէր անդ պատրաստեաց զօրհնութիւն իւր, և:

* *Ոմանք.* Երգ չուոց... և 'ի գաւ՞:

* *Ոմանք.* Օրհնեցտ զմեզ Տէր 'ի Սիովնէ, որ արար:

* *Ոմանք ունին վերնագիր.* Օրհնութիւնք ելից:

* *Ոմանք.* Ի գաւիթս Աստուծոյ մերոյ:

* *Ոմանք.* Ի ծով և յամենայն խորս:

* *Ոմանք.* Ո հանէ զամպս 'ի ծագաց երկրի:

* *Ոմանք.* Եհար զամենայն:

* *Ոմանք.* Եհար զազգս:

զովզ թագաւոր Բիշանու, և զամենայն թագաւորութիւնս Քանանացոց*։ ¹²Ետ զերկիրս նոցա ՚ի ժառանգութիւն, ժառանգութիւն Իսրայէլի ժողովրդեան իւրոյ*։ ¹³Տէր անուն քո յաւիտեան, Տէր յիշատակ քո ազգէ՛ մինչև յազգ։ ¹⁴Դատի Տէր զժողովուրդս իւր, և ՚ի ծառայս իւր մխիթարի։ ¹⁵Կուռք հեթանոսաց արծաթ և ոսկի են, ձեռագործք են որդւոց մարդկան։ ¹⁶Բերան գոյ՝ և ո՛չ խօսին, աչք են՝ և ո՛չ տեսանեն։ ¹⁷Ականջք են՝ և ո՛չ լսեն, և ո՛չ գոյ շունչ ՚ի բերանս նոցա։ ¹⁸Նման նոցա եղիցին ոյք արարին զնոսա, և ամենեքեան ոյք յուսացեալ են ՚ի նոսա։ ¹⁹Տո՛ւն Իսրայէլի օրհնեցէ՛ք զՏէր. տո՛ւն Ահարոնի օրհնեցէ՛ք զՏէր*։ ²⁰Տո՛ւն Ղևեայ օրհնեցէ՛ զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէ՛ք զՏէր։ ²¹Օրհնեալ է Տէր ՚ի Սիոնէ, այն որ բնակեալն է յերուսաղէմ*։

135

¹Ալէլուիա. ՃԼԵ:

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է զի յաւիտեան է ողորմ նորա*։
²Խոստովան եղերուք Աստուծոյ աստուծոց, զի յաւիտեան է ողորմ նորա*։
³Խոստովան եղերուք Տեառն տերանց, զի յաւիտեան է ողորմ նորա*։ ⁴Արար զսքանչելիս մեծամեծս միայն, զի յաւիտեան է ողորմ նորա։ ⁵Ձերկինս արար իմաստութեամբ իւրով, զի յաւիտեան է ողորմ նորա։ ⁶Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց, զի յաւիտեան*։ ⁷Արար զլուսաւորս մեծամեծս միայն, զի յաւիտեան*։ ⁸Չարեգակն արար իշխանական տուրնջեան, զի*։ ⁹Չլուսին և զաստեղս արար իշխանական գիշերոյ, զի յաւիտեան*։ ¹⁰Եհար զերկիրն Եգիպտացոց անդրանկօք իւրովք հանդերձ, զի յաւիտեան*։ ¹¹Եւ եհան զԻսրայէլ ՚ի միջոյ նորա, զի յաւիտեան*։ ¹²Ի ձեռն բարձր և ՚ի բազուկ իւր հզօր, զի յաւիտեան*։ ¹³Եհերձ զծովն մեծ և բաժանեաց յերկուս մասունս, զի յաւիտեան*։ ¹⁴Եւ անցոյց զԻսրայէլ ընդ մէջ նորա, զի յաւիտեան*։ ¹⁵Ընկղմեաց զփարաւովն և զգօրս իւր ՚ի ծով Կարմիր, զի յաւիտեան*։ ¹⁶Եհան զժողովուրդ իւր յանապատ, զի յաւիտեան*։ ¹⁷Ո եհար զթագաւորս մեծամեծս, զի*։ ¹⁸Եւ սպան զթագաւորս հզօրս, զի յաւիտեան*։ ¹⁹ՉՍեհովն թագաւոր Ամովրիացոց, զի յաւիտեան*։ ²⁰ՉՈվզ թագաւոր Բեշանու, զի յաւիտեան է*։ ²¹Ետ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն, զի յաւիտեան*։ ²²Ժառանգութիւն Իսրայէլի ծառայի իւրոյ, զի յաւիտեան*։ ²³Յիշեաց զմեզ Տէր ՚ի խոնարհութեան մերում, զի յաւիտեան*։ ²⁴Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց, զի*։ ²⁵Ո տայ կերակուր ամենայն կենդանեաց, զի*։ ²⁶Խոստովան եղերուք Աստուծոյ երկնաւորի, զի յաւիտեան*։ *Տունք. ԻԶ:*

* *Ոմանք.* ՉՈվզ թագաւոր Բասանու, և զամենայն թագաւորս Քանան*։

* *Ոմանք.* Ետ զերկիր նոցա։

* *Ոմանք.* Տունն Իսրայէլի օրհնեցէ զՏէր տունն Ահարոնի օրհնեցէ զՏէր։

* *Ոմանք.* Օրհնեալ Տէր ՚ի Սիոնէ որ բն*։ *Տունք. Ի: Գորդայս. ԽԴ:*

* *Ոմանք.* Ողորմութիւն նորա։

* *Ոմանք.* Ողորմութիւն նորա։ *Ոմանք.* Աստուծոյն աստուծոց։

* *Ոմանք.* Ողորմութիւն նորա։

* *Ոմանք.* Հար զերկիրն ե*։

* *Ոմանք.* Հերձ զծովն մեծ։

* *Ոմանք.* Եւ եհան զժողովուրդ։

* *Ոմանք.* Հար զազգս մեծամեծս միայն։

* *Բազումք.* ՉՈվզ թագաւոր Բասանու։

* *Ոմանք.* Կերակուր ամենայն կենդանոյ։

Ի Դաւիթ. Ի ձեռն Երեմիայի. աննշան յԵբրայեցւոցն. ՃԼԶ*:

¹Ի գե՛տս Բաբելացւոց, անդ նստեալ և լայաք. որպէս յիշեցաք մեք անդ զՍիւղն*։ ²Ի մէջ ուռեաց նոցա կախեցա՛ք զկտակարանս մեր։ ³Անդ հարցանեին գերիչք մեր զբանս օրհնութեան, գերեվարք մեր ստիպեին զմեզ և ասէին. Օրհնեցէ՛ք մեզ յօրհնութենէն Սիւղնի*։ ⁴Իսկ՝ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար։ ⁵Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի՛ զիս աջ իմ։ ⁶Կցեսցի լեզու իմ՝ ի քիմս իմ թէ ո՛չ յիշեցից զքեզ, թէ ո՛չ նախ նուագեցից զքեզ Երուսաղէմ, սկի՛զբն ուրախութեան իմոյ։ ⁷Յիշեա՛ Տէր զորդիսն Եղովմայ՝ յաւուրս Երուսաղէմի։ Ոյք ասէին. Քակեցէ՛ք քակեցէ՛ք, մինչև ՚ի հիմն հասուցէ՛ք*։ ⁸Դուստր Բաբելացւոց թշուառական, երանի՛ որ հատոյց զհատուցումն քո զոր դու մեզ հատուցեր։ ⁹Երանի՛ որ կալաւ զմանկունս քո, և հար զքարի։ *Տունք. Ժ:*

Սաղմոս Ի Դաւիթ. ՃԼԷ:

Խոստովան եղեց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, առաջի հրեշտակաց սաղմո՛ս սասցից քեզ։ Զի լուար զբանս բերանոյ իմոյ, ²երկիր պագից ՚ի տաճար սուրբ քո, և խոստովան եղեց անուան քում վասն ողորմութեան և ճշմարտութեան քոյ։ Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. ³յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լո՛ւր ինձ, և բազում արասցես զօրութիւնս յանձն իմ*։ ⁴Խոստովան եղիցին առ քեզ Տէր ամենայն թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ քոյ, ⁵և օրհնեսցեն զճանապարհս քո։ Մեծ են փառք Տեառն, ⁶բարձր է Տէր՝ զխոնարհս տեսանէ, զբարձունս ՚ի հեռաստանէ ճանաչէ*։ ⁷Թէ գնացից ես ՚ի մէջ նեղութեանց, կեցուցես զիս ՚ի բարկութենէ թշնամւոյն։ Զգեցեր զձեռն քո և փրկեաց աջ քո*, ⁸և Տէր հատուցէ ընդ իմ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ *Տունք. Ը։ Գորդայս. ԽԴ:*

Ի կատարած. Ի Դաւիթ սաղմոս. ՃԼԸ:

Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս, ²դու ծանեար զնստել իմ և զյառնել իմ։ ³Ի միտ առեր զխորհուրդս իմ ՚ի հեռաստանէ, զշաւիղս իմ և զվիճակս իմ դու

* Ոմանք այսպիսի ունին վերնագիր. Սաղմոս Դաւթի աննշան յԵբրայեցին, յերեմիա. անվերնագիր յԵբրայեցւոց։

* Ոմանք. Առ գետս Բաբելացւոց։

* Օրհնակ մի. Երգեցէ՛ք մեզ յերգոյն Սիւղնի. (4) իսկ զիարդ երգեսցուք զօրհն*։

* Ոմանք. Յաւուրն Երուսաղէմի։

* Ոմանք. Զօրութիւն յանձն իմ։

* Ոմանք. Եւ բարձր է Տէր։

* Ոմանք. Թեպէտ և գնացից ես ՚ի մէջ։ Ուր օրհնակ մի. Կեցուցես զիս ՚ի բարձրութենէ թշնամւոյն։ Բազումք. Եւ փրկեաց զիս աջ քո։

քննեցեր. ⁴և զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր, զի ո՛չ գոյ նենգութիւն ՚ի լեզուի իմում: ⁵Ահա դու Տէր ծանեար գյետին իմ և զառաջին իմ, դու ստեղծեր զիս և եղիր զձեռն քո ՚ի վերայ իմ: ⁶Սքանչելի՛ եղև գիտութիւն քո յինէն, զօրացաւ և ո՛չ հանդարտեմ սմա՛: ⁷Յո՞ երթայց ես յՈգոյ քումնէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: ⁸Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ ՚ի դժոխս՝ և անդդ մօտ ես՛: ⁹Թէ առից զթևս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու՛: ¹⁰Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս: ¹¹Ասացի թէ խաւար ուրեմն արդևք ծածկեաց զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ: ¹²Խաւարն՝ ՚ի քէն ո՛չ խաւարանայ, և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս և լոյս նորա՛: ¹³Դու ստացար զերկանունս իմ, և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ: ¹⁴Խոստովան եղէց քեզ Տէր զի ահեղ և սքանչելի՛ ես. սքանչելի են գործք քո, և անձն իմ գիտաց յոյժ՛: ¹⁵Ո՛չ թաքեաւ ոսկր իմ ՚ի քէն զոր արարեր ՚ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի: ¹⁶Ձանգործս իմ տեսին աչք քո, և ՚ի գիրս քո ամենեքեան գրեցան: Ի տուէ մոլորեցան, և ո՛չ ոք էր որ առաջնորդէր նոցա: ¹⁷Ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք քո Աստուած, և յոյժ զօրացան իշխանք նոցա՛: ¹⁸Թուեցի զնոսա և քան զաւագ բազմացան, զարթեայ և արդ ընդ քեզ եմ: ¹⁹Եթէ սպանանես զմեղաւորս Աստուած, արք արեանց ՚ի բա՛ց եղերուք յինէն՛: ²⁰Ի հակառակութիւն և ՚ի նախանձ, առցեն ՚ի նանիր զքաղաքս քո՛: ²¹Ոչ գատելիս քո Տէր ատեցի, այլ ՚ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ՛: ²²Ատելութիւն կատարեալ ատեցի զնոսա, և եղեն ինձ ՚ի թշնամիս՛: ²³Փորձեա՛ զիս Աստուած և ծանի՛ր զսիրտ իմ, քննեա՛ զիս և ծանի՛ր զշաւիղս իմ. ²⁴և տես՛ թէ իցեն անօրէնութիւնք ՚ի ճանապարհս իմ, և առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհս քո յաւիտենից: *Տունք. ԻԲ:*

139

՚Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԼԹ:

²Ապրեցո՛ զիս Տէր ՚ի մարդոյ չարէ, յառնէ անհրաւէ փրկեա՛ զիս՛: ³Խորհեցան զանօրէնութիւն ՚ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատրաստեցան ՚ի պատերազմ: ⁴Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձին, և թո՛յնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա՛: ⁵Պահեա՛ զիս Տէր ՚ի ձեռաց մեղաւորի, և ՚ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս: Խորհեցան խափանել զգնացս իմ, ⁶թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ: Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւիղօք իմովք եղին ինձ

* *Ոմանք.* Եւ ո՛չ հանդարտեմ սմա:

* *Ոմանք.* Եւ անդ մօտ ես:

* *Ոմանք.* Եւ թէ առից զթևս:

* *Ոմանք.* Խաւարն քեզ ո՛չ խաւարեսցի... և խաւար նորա որպէս լոյս սմա:

* *Ի լուս՛.* Եւ անձն քո սիրեաց յոյժ. *համաձայն բազմաց ՚ի բնար՛:*

* *Ոսկան.* Մեծարու եղեն բա՛:

* *Ոմանք.* Թէ սպանանես... արք արեան ՚ի բա՛ց ե՛:

* *Օրհնակ մի.* Եւ ՚ի նախանձ, ՚ի նանիր ատեցին զքաղաքս քո:

* *Ոմանք.* Ձատելիս քո Տէր ո՛չ միայն ատեցի, այլ և ՚ի վերայ թշ՛:

* *Ոմանք.* Յատելութիւն կատարեալ... և եղեն ինձ թշնամիք:

* *Ոմանք.* Յառնէ յանհրաւէ փրկ՛:

* *Ոմանք.* Որպէս զօձի. *կամ՛* զօձից, թոյնք իժից:

գայթազդութիւն: ⁷Ասացի Տէր Աստուած իմ ես դու. ո՛ւնկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց: ⁸Տէր Տէր գօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի: ⁹Մի՛ մատներ զիս Տէր՝ ի ցանկութիւն մեղաւորաց, խորհելով վասն իմ մի՛ ընդ վայր հարկաներ զիս: Չի մի՛ երբէք բարձրացին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին*։ ¹⁰Վախճան կատարածի նոցա վաստակ չրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա: ¹¹Արկցես ՚ի վերայ նոցա կայծակունս հրոյ, կործանեսցես զնոսա. ՚ի տառապանաց մի՛ կարացես կեալ*։ ¹²Մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեսցի ՚ի վերայ երկրի. զայր մեղաւոր չարի՛ք իւր որսացեն ՚ի կորուստ: ¹³Ծանեայ զի առնէ Տէր դատաստան աղքատի, և իրաւունս տնանկի*։ ¹⁴Արդարք գոհացին զանուանէ քունմէ, բնակեսցեն ուղիդք առաջի երեսաց քոց*։ *Տունք. ԺԴ:*

140

¹Սաղմոս ՚ի Դաւիթ. ԾԽ:

Տէր կարդացի առ քեզ և լո՛ւր ինձ, նայեա՛ց ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ ինուն առ քեզ*։ ²Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի*։ ³Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ. և զդուռն ամուր չրթանց իմոց, ⁴և մի՛ խտորեսցի սիրտ իմ բանիւք չարութեան: Պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս որ գործեն զանօրէնութիւն. ո՛չ եղէց կցորդ ընտրելոց նոցա*։ ⁵Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ ակն յանդիման արասցէ զիս, ևղ մեղաւորի մի՛ օձոցէ զգլուխ իմ*, ⁶և աղօթք իմ ըստ կամաց նորա: Ընկլան մերձ առ վիմին դատաւորք նոցա*։ ⁷Լուիցեն զբանս իմ զի քաղցունք են: Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ՚ի վերայ երկրի*։ ⁸Գրուեսցին ոսկերք նոցա մերձ ՚ի դժոխս: Առ քեզ Տէր Տէր են աչք իմ, ՚ի քեզ յուսացայ մի՛ հաներ զհոգի յինէ*։ ⁹Պահեա՛ զիս յորոգայթ որ թաքուցաւ ինձ, ՚ի գայթազդութենէ ոյք գործեն զանօրէնութիւն*։ ¹⁰Անկցին ՚ի ցանցս նորա մեղաւորք, միայն են ես մինչև ուր անցից*։ *Տունք. Ժ:*

141

* *Ոմանք.* Ոյք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել զիս:

* *Ոմանք.* Եւ կործանեսցես:

* *Ոմանք.* Ծանեայ Տէր զի առնես դատաստան աղքատին:

* *Ոմանք.* Արդարքն գոհացեն... և բնակեսցեն:

* *Ոմանք.* Ի կատարած սաղմոս ՚ի Դա՛:

* *Ոմանք.* Համբառնալ ձեռ՝... երեկոյիս. *կամ՝* երեկոյին:

* *Ոմանք.* Չի մի՛ խտորեսցի... բանիւ չա՛... ՚ի պատճառել... և ո՛չ եղէց... ընտրելեաց նորա:

* *Ոմանք.* Եւ յանդիման արասցէ. իւղ մե՛:

* *Ոմանք.* Եւս և աղօթք իմ ՚ի կամս նորա. *կամ՝* նմա: Արգելան մերձ առ վիմին:

* *Ոմանք.* Լուիցեն բանից իմոց և քաղցրացին: Հողոյ սփռեալ ՚ի վերայ երկրի:

* *Ոմանք.* Տրուեսցին ոս՛: Տէր մի՛ հաներ զհո՛:

* *Ոմանք.* Այլ պահեա զիս... ՚ի գայթազդութենէ գործողին զանօ՛:

* *Ոմանք.* Եմ ես մինչև անցից:

¹Իմաստութիւն 'ի Դաւիթ. Աղօթք, 'ի ժամանակի զի էր նա յայրի անդ. ՃԽԱՒ:

²Չայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի: ³Սփռեն առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից՝: ⁴Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու Տէր ծանեար զշաւիղս իմ, 'ի ճանապարհ յոր և գնայի թաքուցաւ ինձ որոգայթ: ⁵Հայէի յաջմէ և տեսանէի, և ո՛չ ոք էր որ ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ո՛չ ոք էր որ խնդրէր զանձն իմ՝: ⁶Աղաղակեցի առ քեզ Տէր և ասացի. Դո՛ւ ես յոյս և բաժին իմ յերկիր կենդանեաց՝: ⁷Նայեա՛ Տէր յաղօթս իմ զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի հալածչաց իմոց զի հզօր եղեն քան զիս: ⁸Տէր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումնէ: Ինձ սպասեն արդարք քո մինչև հատուցես ինձ՝: *Տունք. Ը: Գորդայս. ԾԴ:*

142

¹Սաղմոս 'ի Դաւիթ, 'ի ժամանակի զի հալածեաց զնա Աբիսողոմ որդի նորա. ՃԽԲ:

Տէր լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով: Լո՛ւր արդարութեամբ քով՝, ²և մի՛ մտաներ ոտիս ընդ ծառայի քոյ, զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն մտեղի՝: ³Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. ⁴նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից: Չանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս՝: ⁵Յիշեցի զաւուրսն զառաջինս, խօսեցայ յամենայն 'ի զործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ՝, ⁶և համբարձի առ քեզ զձեռս իմ: Անձն իմ որպէս զերկիր ծարաւի՛ է առ քեզ. ⁷վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր զի նուաղեաց յինէն հոգի իմ: Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեն այնոցիկ ոյք իջանեն 'ի գուր՝: ⁸Լսելի՛ արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ Տէր յուսացայ: Տոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ՝: ⁹Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւեն ինձ արարի: Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ՝: ¹⁰Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ: Վասն անուան քո Տէր կեցուցես զիս արդարութեամբ քով, ¹¹հանցես 'ի նեղութենէ զանձն իմ: Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ՝: ¹²Կորուցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ: *Տունք. Ե: ԺԳ:*

**Ոմանք.* Սաղմոս Դաւթի. 'ի ժամանակի զի էր:

**Ոմանք.* Սփռեցից առաջի:

**Ոմանք.* Հայէի յաջ իմ, տեսա՛... և ո՛չ ոք ճանաչէր... և ո՛չ գտաւ խնդրող անձին իմոյ:

**Ոմանք.* Յերկրին կենդանեաց:

**Ոմանք.* Չանձն իմ, խոստովան եղէց անուան քումն: Ինձ սպասեսցեն արդարք մինչ հատուցի:

**Ոմանք.* Ձի հալածէր զնա... Լուր ինձ արդա՛:

**Ոմանք.* Եւ մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քումն... ամենայն կենդանի:

**Ոմանք.* Եւ նստոյց զիս:

**Ոմանք.* Խորհեցայ յամենայն զործս քո:

**Ոմանք.* Նմանիցիմ այնոցիկ՝ որ ի՛:

**Ոմանք.* Ինձ զառաւօտու ողորմութիւն... յոր և գնացից... զաչս իմ:

**Ոմանք.* Ձի զքեզ յոյս և ապաւեն ինձ:

**Ոմանք.* Եւ ողորմութեամբ քով:

՚Ի Դաւիթ. առ Գողիադ. ճԽԳ:

Օրհնեալ Տէր Աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ, և զմատուցանս իմ ՚ի ճակատամարտ*։² Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յուսամ ՚ի նա: Ո հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինն*։³ Տէր՝ ո՞ է մարդ զի յայտնեցար նմա, կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա*։⁴ Մարդ նանրութեան նմանեաց, և աւուրք նորա որպէս հովանի՝ անցին*։⁵ Տէր խոնարհեցո՛ւ զերկինս և էջ, մերձեաց ՚ի լերինս՝ և ծխեսցին*։⁶ Փայլատակեա՛ւ զփայլատակունս քո և խռովեա՛ւ զնոսա, առաքեա՛ւ զնետս քո և ցրուեա՛ւ զնոսա*։⁷ Առաքեա՛ւ զձեռն քո ՚ի բարձանց և փրկեա՛ւ զիս ՚ի ջուրց բազմաց, և ՚ի ձեռաց որդւոց օտարաց: ⁸ Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա ա՛ջ է մեղաց: ⁹ Աստուած՝ յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ, տասնադէա՛ւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ: ¹⁰ Ո՛ տացէ զփրկութիւն թագաւորաց մերոց, որ փրկելո՛ցն իցէ զԴաւիթ ծառայ իւր: ՚Ի սրոյ՛ չարէ փրկեա՛ւ զիս և ապրեցո՛ւ զիս*, ¹¹ և ՚ի ձեռաց որդւոց օտարաց: Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա ա՛ջ է մեղաց: ¹² Որոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ, հաստատուն են ՚ի մանկութենէ իւրեանց. դստերք նոցա զարդարեալ և պաճուճեալ ՚ի նմանութիւն տաճարի*։ ¹³ Շտեմարանք նոցա լի՛ են և բղխեն ՚ի միմեանս, խաշինք նոցա բազմածինք են և բազմանան ՚ի գնացս իւրեանց, ¹⁴ և անդք նոցա պարարտք են: Ո՛չ գոյ խրամատութիւն ցանկոյ նոցա, և ո՛չ աղաղակ ՚ի հրապարակս նոցա*։ ¹⁵ Արդ երանեցից ժողովրդեան որոց այս այսպէս է. նա՛ երանի՛ ժողովրդեան որոյ Տէր Աստուած է նոցա*։ *Տունք. ժԶ:*

՚Օրհնութեանց Սաղմոս ՚ի Դաւիթ. ճԽԴ:

ալիւտի: Բարձր առնեն զքեզ Աստուած իմ և Թագաւոր իմ, և օրհնեն զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից*։² *բեթ* Զօրհանապագ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից: ³ *զամէդ* Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութեան նորա ո՛չ գոյ չափ: ⁴ *տալեթ* Ազգք և ազգք գովեսցեն զգործս քո, և զգօրութիւնս քո պատմեսցեն: ⁵ *հէ* Չմեծվայելչութիւն

* *Ոմանք.* ՚Ի կատարած սաղմոս ՚ի Դաւիթ առ Գող՝:

* *Ոմանք.* Ո հնազանդէ զժողովուրդս:

* *Ոմանք.* Ով է... Յայտնեցար դու նմա:

* *Ոմանք.* Մարդ նանրոյ նմանեաց:

* *Ոմանք.* Տէր խոնարհեցոյց զեր՝:

* *Ոմանք.* Փայլեա՛ւ զփայլատակունս քո:

* *Ոմանք.* Ծառայ իւր ՚ի սրոյ չարէ: Փրկեա՛ւ զիս և ապրեցո՛ւ զիս (11) ՚ի ձե՛:

* *Ոմանք.* Հաստատեալ են ՚ի մանկութեան:

* *Ոմանք.* Եւ անդեայք նոցա:

* *Յօրհնակին պակասէր.* Այսպէս է. նա: *Ոմանք.* Այսպէս իցէ... Տէր Աստուած է նորա:

* *Ոմանք.* ՚Ի կատարած սաղմոս Դաւթի օրհնութեանց: *Ոմանք զանց առնեն դրոշմել յայս սաղմոս զեբրայական ալփաբետս. զոր աստ միայն ունի մերս համեմատ այլոց ոմանց:*

փառաց սրբութեան քոյ խօսեսցին, և զսքանչելիս քո պատմեսցեն: ⁶*վաւ*
 Զգօրութիւն ահի քոյ ասասցեն, և զմեծութիւնս քո պատմեսցեն: ⁷*զէ* Զյիշատակ
 բազում քաղցրութեան քո բղխեսցեն, և արդարութեամբ քով ցնծասցեն*: ⁸*խէթ*:
 Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ: ⁹*տէթ* Քաղցր է Տէր առ
 ամենեսեան, և գթութիւն նորա ՚ի վերայ ամենայն արարածոց իւրոց: ¹⁰*յոգ*
 Խոստովան եղիցին առ քեզ Տէր ամենայն գործք քո, և սուրբք քո օրհնեսցեն
 զքեզ: ¹¹*քափ*: Զփառս արքայութեան քոյ ասասցեն, և զգօրութիւնս քո
 պատմեսցեն: ¹²*ղամէթ* ճանաչել որդւոց մարդկան զգօրութիւն քո, զփառս
 մեծվայելչութիւն արքայութեան քոյ*: ¹³*մեմ* Արքայութիւն քոյ արքայութիւն
 ամենայն յաւիտենից. և տէրութիւն քոյ ազգէ մինչև յազգ: *նուն* Զաւատարիմ է
 Տէր յամենայն ՚ի բանս իւր, և արդար է յամենայն ՚ի գործս իւր: ¹⁴*սամքաթ*
 Զաստատէ Տէր զամենայն գայթազդեալս, և կանգնէ զամենայն զլորեալս: ¹⁵*էյ*
 Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու: Տաս դու
 նոցա և կերակրին*, ¹⁶*փէ* բանաս զծեռն քո, լցուցանես զամենեսեան
 քաղցրութեամբ կամօք քովք*: ¹⁷*ծաղէ* Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր,
 և սուրբ է յամենայն ՚ի գործս իւր: ¹⁸*կոփ* Սերծ է Տէր առ ամենեսեան ոյք կարդան
 առ նա, առ ամենեսեան ոյք կարդան առ նա ճշմարտութեամբ: ¹⁹*րէշ* Զկամս
 երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա: ²⁰*շիմ*
 Պահէ Տէր զամենեսեան ոյք սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ Տէր:
²¹*թաւ* Զօրհնութիւնս Տեառն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամենայն կենդանի
 զանուն սուրբ նորա յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից*: *Տունք. ԻԲ:*
Գորդայս. ՕԲ:

145

ՄԱՆՆԱԿԱՆ ԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԶԱՐԿԱՆՆԵՐԻ ԳՆԵՆԵՐԻ:

²Օրհնեա՛ անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ՚ի կեանս իմ, սաղմոս ասացից
 Աստուծոյ իմոյ մինչև եմ ես: ³Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան, զի ո՛չ գոյ
 փրկութիւն ՚ի նոսա*: ⁴Ելցէ հոգի ՚ի նոցանէ՛ և դարձցին անդրէն ՚ի հող, և յայնմ
 աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա: ⁵Երանի՛ ում Տէր Աստուած
 Յակոբայ օգնական է նմա, և յո՛յս նորա ՚ի Տէր Աստուած է*: ⁶Որ արար զերկինս
 և զերկիր, զծով և զամենայն որ է՛ ՚ի նոսա*: ⁷Պահէ զճշմարտութիւն յաւիտեան,
 և առնէ իրաւունս զրկելոց: Տայ հա՛ց քաղցելոց*, ⁸և արձակէ՛ զկապեալս Տէր:
 Տէր բանայ գաչս կուրաց, և կանգնէ զզլորեալս: Տէր սիրէ զարդարս*, ⁹Տէր պահէ
 զպանդուխտս. զորքս և զայրիս ընդունի՛ Տէր, և զճանապարհս անպարշտաց

* *Ոմանք.* Յիշատակ բազում քաղց՛:

* *Ոմանք.* Զգօրութիւնս քո և զփառս մեծվայելչութեան ար՛:

* *Ոմանք.* Աչք ամենեցուն ՚ի քեզ հային. և դու տաս նոցա կե՛:

* *Ոմանք.* Զծեռն քո, կերակրես զամենեսեան քաղց՛:

* *Ոմանք.* Ամենայն մարմին զանուն: *Ուր Ոսկան.* ամենայն մսեղի:

* *Ոմանք.* Եւ մի՛ յորդիս մարդ՛:

* *Ոմանք.* Երանի ազգի որոյ Աստուածն Յակոբայ օգնական է նորա:

* *Ոմանք.* Ո արար զեր՛:

* *Ոմանք.* Ո պահէ զճշմարտութիւն Յակոբայ յաւիտեան, և:

* *Ոմանք.* Զզլորեալս Տէր:

կորուսանէ*։ ¹⁰Թագաւորեացէ Տէր յաւիտեան, Աստուած քո Սիովն ազգէ մինչև յազգ։ *Տունք. Ժ:*

146

¹Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ. ՃԽԶ:

Օրհնեցէ՛ք զՏէր՝ զի բարի է. սաղմոսք Աստուծոյ մերուն քաղցրասցի օրհնութիւն*։ ²Շինէ գերուսաղէմ Տէր, և զցրուեալսն Իսրայէլի ժողովէ։ ³Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զամենայն վէրս նոցա։ ⁴Թուէ զբազմութիւն աստեղաց, և զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ*։ ⁵Մեծ է Տէր մեր և մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ո՛չ գոյ բաւ*։ ⁶Ընդունի զհեզս Տէր, և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր*։ ⁷Օրհնեցէ՛ք զՏէր խոստովանութեամբ, սաղմո՛ս ասացէք նմա օրհնութեամբ*։ ⁸Զգեցո՛յց զերկինս ամպովք, պատրաստ արար զանձրև իւր յերկիր։ Բուսոյց գխտս ՚ի լերինս, զդալարի ծառայութիւն մարդկան*։ ⁹Այն որ տայ անասնոց զկերակուր իւրեանց. ծագաց ազաւուց որ կարդան առ նա*։ ¹⁰Ո՛չ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամեցաւ Տէր, և ո՛չ ընդ երանս առն սկայի հաճեցաւ*։ ¹¹Այլ հաճեցաւ Տէր յերկիւղածս իւր, և ընդ այնոսիկ ոյք յուսան յողորմութիւն նորա*։ *Տունք. ԺԲ:*

147

Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ. ՃԽԷ:

¹²Գովեա՛ երուսաղէմ զՏէր։ Եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիովն։ ¹³Զի զօրացոյց զնիզս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։ ¹⁴Որ ե՛ղ զսահմանս քո ՚ի խաղաղութիւն պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ*։ ¹⁵Որ առաքէ՛ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա*։ ¹⁶Դնէ զձիւն որպէս զսար, և զմէզ որպէս փոշի՝ ցանեաց։ ¹⁷Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՛ կարէ կալ*։ ¹⁸Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, հնչեսցեն հողմք և զնասցեն ջուրք*։ ¹⁹Ո պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։ ²⁰Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա։ *Տունք. Ժ: Գորդայս. ԼԲ:*

* *Ոմանք.* Տէր սիրտ զպանդուխտս։

* *Ոմանք.* Բարի են սաղմոսք. Աստուծոյ մերոյ քաղցր եղիցի։

* *Ոմանք.* Ո թուէ զբազ՞։

* *Ոմանք.* Տէր. և մեծ է զօ՞... և իմաս՞։

* *Ոմանք.* Առնէր զմեղաւորս մինչև յեր՞։

* *Ոմանք.* Օրհնեցէ՛ք զԱստուած խոս՞։

* *Ոմանք.* Ո զգեցոյց զեր՞... զդալար ՚ի ծառայութիւն։

* *Ոմանք.* Ո տայ անասնոց կերակուր, ծագուց ազաւ՞։ *Յօրինակին.* Ծագաց ազաւ՞։

* *Ոմանք.* Եւ ո՛չ ընդ իրանս առն։

* *Ոմանք.* Տէր ընդ երկիւղածս։

* *Ոմանք.* Ո եղ զսահմանս քո։

* *Ոմանք.* Առաքէ զբան իւր։

* *Ոմանք.* Ով կարէ կեալ։

* *Բազումք.* Շնչեսցեն հողմք և։ *Բազումք.* Ջուրք. (19) պատմէ զբան իւր։

¹Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ. ՃԻԸ:

Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից, օրհնեցէ՛ք զնա՝ ՚ի բարձանց՝: ²Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք նորա՝: ³Օրհնեցէ՛ք զնա արեգակն և լուսին, օրհնեցէ՛ք զնա ամենայն աստեղք և լոյս՝: ⁴Օրհնեցէ՛ք զնա երկինք երկնից, և ջուրք որ ՚ի վերոյ քան գերկինս օրհնեցէ՛ք զանուն Տեառն՝: ⁵Ձի նա ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցաւ՝: ⁶Կարգեաց զնոսա յաւիտեանս յաւիտենից, հրաման ետ և ո՛չ անցանէ՛: ⁷Օրհնեցէ՛ք զՏէր յերկրէ վիշապք, և ամենայն խորք՝: ⁸Յուր և կարկուտ ձիւն և սառն, հողմ և մրրիկ որ առնեն զբան նորա՝: ⁹Լերինք և ամենայն բլուրք, ծառք պտղաբերք և ամենայն մայրք՝: ¹⁰Գազանք և ամենայն անասունք, սողունք և ամենայն թռչունք թևաւորք՝: ¹¹Թագաւորք երկրի և զօրք իւրեանց, իշխանք և ամենայն դատաւորք երկրի: ¹²Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք օրհնեցէ՛ք զանուն Տեառն: Բարձրացաւ անուն նորա միայն, ¹³խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի: Բարձր առնէ Տէր զեղջւր ժողովրդեան իւրոյ, ¹⁴օրհնութիւն յամենայն սրբոց նորա, որդւոցն Իսրայէլի, ժողովուրդ որ մերձ է առ Տէր՝: *Տունք. ԺԴ:*

¹Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ. ՃԻԹ:

Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց՝: ²Ուրախ եղև Իսրայէլ յԱրարիչ իւր, որդիք Սիովնի ցնծացեն ՚ի թագաւորն իւրեանց՝: ³Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմո՛ս ասացեն նմա՝: ⁴Հաճի Տէր ընդ ժողովուրդս իւր սուրբ, և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան՝: ⁵Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծացեն ՚ի հանգիստ իւրեանց, ⁶և բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց: Սուրք երկսայրիք են ՚ի ձեռս նոցա, ⁷առնուլ հատուցումն ՚ի հեթանոսաց, յանդիմանութիւն ամենայն

* *Ոմանք.* ՁՏէր յերկինս... զնա ՚ի բարձունս:

* *Օրհնակ մի.* Օրհնեն զնա հրեշտակք նորա. օրհնեսցեն զնա ամենայն զօ՞:

* *Ոմանք.* Աստեղք և լոյսք:

* *Ոմանք.* Օրհնեսցեն զնա եր՞:

* *Ոմանք.* Ասաց և եղեն... և հաստատեցան:

* *Ոմանք.* Յաւիտենից. սահման եղ որ ո՛չ անցցէ:

* *Ոմանք.* Վիշապք որ յամենայն խորս:

* *Ոմանք.* Որ առնէք զբան նորա:

* *Ոմանք.* Եւ ամենայն բարձունք. ծառ պտղաբեր և ամենայն մայր:

* *Ոմանք.* Գազան և ամենայն անա՞:

* *Ոմանք.* Յամենայն սրբոց նմա, յորդւոցն Իսրայէլի ժողովոյն որ մերձ է:

* *Ոմանք.* Յօրհնութիւն ՚ի նոր:

* *Ոմանք.* Ուրախացի Իսրայէլ յարա՞:

* *Ոմանք.* Օրհնելով զանուն նորա օրհ՞... սաղմոս երգեցէք նմա:

* *Ոմանք.* Ընդ ժողովուրդ իւր, և... արասցէ զհեզս ՚ի փրկութիւն:

ժողովրդոց*։⁸Կապել զթագաւորս նոցա կապանօք, զգօրաւորս նոցա ձեռակապաւ երկաթաւ*։⁹Առնել 'ի նոսա զդատաստանն գրեալ. փառք այս են յամենայն սրբոց նորա*։ *Տունք. Ը:*

150

¹Ալէլուիա. ԾԾ:

Օրհնեցէք զԱստուած 'ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա հաստատութեան 'ի զօրութեան նորա*։²Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա, զովեցէք զնա 'ի բազում մեծութեան նորա*։³Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ*։⁴Օրհնեցէք զնա ցնծութեամբ, զովեցէք զնա ուրախութեամբ*։⁵Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցունս, օրհնեցէք զնա 'ի բարբառ լսելի: Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան*։⁶ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր: *Տունք. Զ: Գորդայս. ԻԸ:*

Կանոնս տունք. ՅԽԸ: Չորք Կանոնս Տունք ՌՅԽԲ: Միահամուռ սաղմոսս՝ Գորդայս. ԾԶ: Սաղմոս ԾԾ: Տունք 'ի սնա ՍՆԿԲ:

Այս Սաղմոս ինքնագիր 'ի Դաւթի արտաքոյ թուոց: 'Ի ժամանակի զի ել նա նահատակ ընդդէմ Գողիադու, առաջի Շաւուղի:*

¹Փոքր էի ես յեղբարս իմ. և կրտսէր 'ի տան հօր իմոյ, արածէի զխաշինս հօր իմոյ: ²Չեռք իմ արարին զսաղմոսարանս, և մատունք իմ կազմեցին զգործի՝ օրհնութեան*։³Իսկ արդ՝ ո՛ր պատմեսցէ զայս Տեառն իմուն, ինքն Տէր ամենայնի լուիցէ զամենայն*։⁴Որ առաքեաց զհրեշտակ իւր և ամբարձ զիս 'ի հօտէ խաշանց հօր իմոյ, և օժ զիս յօծունն իւրոյ իւրոյ*։⁵Եղբարք իմ գեղեցիկք և մեծամեծք, և ո՛չ հաճեցաւ ընդ նոսա Տէր: ⁶Ելի՛ ես ընդ առաջ այլազգւոյն, և նզովեցի զկուռս նորա: ⁷Ես հանի զսուսեր 'ի մմանէ և հատի՛ զգլուխ նորին, և բարձի զնախատինս յորդուոցն Իսրայէլի*։ *Տունք. Է:*

Կատարեցաւ գիրք Սաղմոսացն Դաւթի*

**Ոմանք.* Սուր երկսայրի ետ 'ի ձեռս... յանդիման ամենայն ժողովրդեան:

**Ոմանք.* 'Ի կապել զթա՛... զգօրավարս նոցա ձեռակապօք երկաթօք:

**Ոմանք.* Առնել նոցա դատաստանս 'ի գրոց. *կամ՝* գրեալս... են ամենայն սրբոց մմա:

**Ոմանք.* Ալէլուիա. Անգեայ և Ջաքարիա... 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա:

**Ոմանք.* Օրհնեցէք զՏէր 'ի զօրութեան նորա, օրհնեցէք զՏէր 'ի բազում մե՛:

**Ոմանք.* Օրհնեցէք զնա ուրախութեամբ:

**Ոմանք.* 'Ի բանս քաղցր, զովեցէք զնա 'ի:

**Ամենայն գրչագիր օրհնակք մեր համաձայն Յունական բնագրի յաւարտ ԾԾ*

սաղմոսաց յարեն զսաղմոսս՝ Փոքր էի. զորով զանց առնէ Ոսկան, թերևս

համաձայնելով օրհնակին Լատինացւոց, առ որս պակասի: Ոմանք. Զի ել

նահատակել... առաջի Սաւուղի:

**Ոմանք.* Արարին սաղմոսարան... զործի օրհնութեան:

**Ոմանք.* Ջայս Տեառն իմոյ, ինքնին Տէր ամենայնի:

**Ոմանք.* Եւ առաքեաց Տէր զիր՝... և համբարձ զիս:

**Ոմանք.* Հանի զսուսերն... զգլուխ նորա:

**'Ի վախճանի յօրհնակին մերուն պակասէր. Կատարեցաւ, և այլն. զոր յայլոց*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑՆ

Խորհուրդ փրկելոյն Քրիստոսի նախ քան զաշխարհս առաջադրեցաւ, որում յոլով օրինակք կանխաւ դրոշմեցան զի ՚ի գալ կատարման խորհրդոյն վկայեսցեն օրինակքն ճշմարտութեանն: Առ այս նախ արժանանայ Աբրահամ՝ պատկեր լինել Աստուծոյ Զօր, և Իսահակ՝ տիպ պատարագելոյն Քրիստոսի ՚ի խաչն: Պատուի ապա և Դաւիթ ՚ի դէմս Զօր. և որդի նորա Սողոմոն յօրինակ ամենակալ խաղաղարար թագաւորութեանն Քրիստոսի, և անչափ իմաստութեանն, և աշխարհակեցոյց խրատու աւետարանին: Յայս խորհուրդ ասացաւ յԱստուծոյ, օրինակաւ զՍողոմոնէ՝ և ճշմարտութեամբ զՔրիստոսէ, թէ՛ Ես եղէց նմա ՚ի Զայր, և նա եղիցի ինձ յՈրդի. և թէ՛ Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք՝ և ազգք պաշտեսցեն զնա: Եւ զի Քրիստոսի էր պահեալ խոստումնս այս, թէպէտ և կարծեաց Սողոմոն յի՛նքն լնուլ խոստմանս, ածելով կանայս, և ծննդովք նոցա տիրել աշխարհի, յանդիմանեցաւ իբրև զմարդ, որպէս Եզեկիա ցաւովքն: Այլ զի անգեղջ են շնորհքն Աստուծոյ, պահեցաւ նմա օրինակն զոլ Քրիստոսի, և մանաւանդ առատութեամբ իմաստիցն, որով և խրատէ զամենայն մարդիկ լուսաւոր բանիւ ըստ Քրիստոսի առակախօս վարդապետութեանն: Եւ նախ՝ առաջին գրովք առակացս՝ զտղայական հասակ մարդկութեանս յերիս մասունս հոգւոյ՝ որովք վարի մարդս՝ վարժէ գեղեցիկ բանիւ յաստուածայինսն, հաւանել Աստուծոյ, կրթիլ իմաստիւք, հրաժարել ՚ի ցասմանէ, զգուշանալ ցանկութեանց. և բազում ինչ ՚ի սոյն դրոշմէ զխորհուրդն Քրիստոսի, յորոց զառաջին հատորս վասն դիւրահասութեան ՚ի գլուխս բաժանեցաք: Իսկ երկրորդ և երրորդ հատորքն առաջին գրոցս՝ առակացս ասեմ, վասն խիտ և բազմակերպ դիմաց բանին և համառօտ և այլափոխ ոճոյն՝ անվաւեր թուեցաւ բաժանել ՚ի գլուխս:

Գլուխք առաջնոյ բանի առակացն

ա. Ջբանական մասն հոգւոյ ուղղելով ՚ի մեզ, յորդորէ զմանկունս ՚ի փոյթ աստուածային ուսման՝ ցանկալի խոստմամբք. որոյ սկիզբն աջողման երկնչելն յԱստուծոյ. և աղօթիւք և բարի գործովք պաշտելն զնա զգուշութեամբ:

բ. Ջցասմնականն ՚ի մեզ ուղղելով՝ պատուիրէ լսել խրատու ծնողաց, և մի՛ կցորդել ազահութեան և պիղծ սպանողաց կամ տիրասպան Զրէից:

գ. Գովելով զիմաստութիւն՝ և զՔրիստոս ցանկալի առնէ, և զհետևելն արդարութեան բացերես. և բամբասէ զանմտութիւն անհնազանդից. որոց սպառնայ Աստուած չլսել նոցա յօր նեղութեան սատակման մահուն:

դ. Թէ անկեղծ և ծածուկ առաքինութեամբք, և մեծաւ ջանիւ ընդունի որ

օրինակաց առեալ լցուցաք:

զԱուրբ Յոգին գիտութեան իմաստութեան, որով ապրի՝ի չար շաւղաց. ընդ որ կամակոր ուխտադրութե իջանեն յատակս դժոխաց, վրիպեալք՝ի բարեաց կենդանի երկրին՝ զոր քաղցունքն ժառանգեն:

Ե. Կրկին կենաց խոստմամբք յորդորէ՝ի մարդասիրութիւն ողորմութեամբ, և յաստուածսիրութիւն հաւատովք, և յուսով համբերել՝ի վիշտս, և մի՛ հպարտանալ. և երկիւղիւ Աստուծոյ ապրել յաջ և յահեակ գայթազողութեանց:

զ. Խրատ տայ պատուել զԱստուած՝ի ձեռս քահանայից խոստմամբ առատ լիութեամբ. և՝ի փորձանս նեղութեանց կամ՝ի տուայտութիւնս մի՛ լինել յուսահատ, զի այսու փորձ գտան ընտրեալքն ամենայն:

է. Երանէ զիմաստունն որ եգիտ զՔրիստոս, որ է Աստուծոյ իմաստութիւն, և կեանք կախեալ զփայտէ, և նոյն փայտ կենաց մարմնովն. և վստահ առնէ զիմաստունն՝ նման գոլ Աստուծոյ, որ իմաստութեամբն և հանճարովն Որդւովն և Յոգւովն արար զարարածս:

ը. Ընդոստուցանէ պահել զիմաստութիւն՝ի կեանս և՝ի խաղաղութիւն, ի գնացս ի նստել և՝ի ննջել:

թ. Չյապաղել զբարիս և չնիւթել զչարիս. և չլինել դատապարտ անիծից որ յօրէնսն, կամ ընդդէմ Աստուծոյ ամբարտաւանել:

ժ. Օրինադրէ մանկանց անսալ խրատուն Աստուծոյ Յօր, օրինակ տալով զինքն. ստանալ ասէ զիմաստութիւն, և ընդգրկիլ ի նմանէ և պսակիլ:

ժա. Երկնաւոր կենացն խոստմամբ՝ի բազում ճանապարհս առաքինութեանց ուղևորէ զմանկունս. և խոտորել խրատ յանօրէն զրկողաց խաւարային գնացից:

ժբ. Աղբեր ասէ զսիրտն իմաստից և զպահելն զնա, և նովաւ զամենայն զգայութիւնսն՝ կեանս և բժշկութիւն. վասն որոյ և աղօթէ Աստուծով յաջողիլ:

ժգ. Ձգանկականն ի մեզ ուղղելով՝ զգուշացուցանէ և՝ի հայելոյ և՝ի գործելոյ ընդ բոզս և ընդ հերձուածողս. և մի՛ փոխ առնլով փակիլ ընդ վաշխիւք. այլ իւրով կնաւն զովանալ, և ուսմամբ և գոյիւք շատանալ. ապա թէ ոչ՝ Աստուծոյ մատնելով կրկին մահու սպառնայ:

ժդ. Խրատէ չլինել վաղվաղկոտ յերաշխաւորութիւն, և թէ լինի՝ փութալ և փութացուցանել ի հատուցումն պարտուցն. և՝ի սոյն նշանակէ զգուշանալ հովուաց և առաջնորդաց ժողովրդոց:

ժե. Նկարագրաւն ի գործասիրութիւն զարթուցանէ զյոյսն: Իսկ առ ի միտս զմրջիւնն առ գործնականն՝ և զմեղուն առ տեսականն տայ օրինակ. զի ի կրկին աղքատութեանց զերծանիցի:

ժզ. Բամբասէ զակնարկօղսն նենգութեամբ, այս է զայպանօղս. և նիւթող չարի գոխչքն են նոր և աշխարհաւեր հարկաց. անիրաւ վկայ, նախ սուտ վկայն, և ապա հերձուածօղքն որ խռովեցուցին զեկեղեցի:

ժէ. Յերկար պատուիրանաւ զգուշացուցանէ ի շնութենէ:

ժը. Աղաչելով խրատէ զմարդիկ իմաստնանալ. և թէ զի՞նչպիսի բանս խօսի իմաստութիւն ինքն վասն ինքեան. և զի բնակէ նա՝ ի խորհուրդս սրբոց:

ժթ. Ձի ստացական մարմնովն արար սկիզբն փրկութեան մերոյ իմաստութիւնն. յառաջ քան զամենայն ի Յօրէ ծնեալն, որով ամենայնք եղեն:

ի. Դարձեալ վասն մարդեղութեան Բանին որ շինեաց իւր տաճար
զմարմինն, յորում էջ և եկաց եւթնաւոյս Յոգին, և վասն զենմանն Յիսուսի
ի խաչին, և կոչման պակասամիտ Յրէից և անզգամ հեթանոսաց:
իա. Թէ վիշտք և անարգանք հետևի քարոզողաց բանին Աստուծոյ, և զի
զգուշանալ պիտոյ է ՚ի հերետիկոսաց. և վասն շան կնոջ, որ այլաբանի ՚ի
ժողովս կռապաշտից, որ ստիպեն ուրանալ ՚ի Քրիստոսէ, որսալով
զթոյլսն ՚ի կորուստ դժոխցոյ, ուստի զգուշացուցանէ զարիսն:

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՍՈՆԻ*

¹Որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայէլի յերուսաղէմ՝:

1

Գլուխ Ա

Ա ²ճանաչել զիմաստութիւն և զխրատ, ³իմանալ զբանս հանճարոյ. ընդունել
զդարձուածս բանից: ՚Ի մի՛տ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել
զիրաւունս: ⁴Ձի տացէ անմեղաց զխորագիտութիւն. մանկանց տղայոց զմիտս և
զհանճար: ⁵Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ
հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի*:⁶Ի մի՛տ առցէ զառակս և զբանս
խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: ⁷Սկիզբն իմաստութեան երկև
Տեառն. հանճար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ
Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ՝ ամպարիշտք
անգոսնեն: ⁸Լուր որդեակ խրատու հօր քոյ, և մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ. ⁹զի
պսակ շնորհաց ընկալցի զլուիս քո. և մանեակ ոսկի ՚ի պարանոցի քում*:

Բ ¹⁰Որդեակ մի՛ խաբեցեն զքեզ արք ամպարիշտք. և մի՛ փխորժեցես՝ ¹¹եթէ
կոչեցեն զքեզ՝ և ասիցեն. Ե՛կ ընդ մեզ՝ կցորդ լեր արեան. ծածկեցուք յերկրի
զայր արդար ՚ի տարապարտուց*:¹²Կլցուք զնա կենդանւոյն իբրև դժոխք. և
բարձցուք զյիշատակս նորա յերկրէ. ¹³և զստացուածս նորա զպէսպէս
ըմբռնեցուք. լցցուք զտունս մեր աւարաւ: ¹⁴Ձվիճակ քո արկ ընդ մեզ. քսակ
հասարակաց ստասցուք ամենեքեան. զանձարան ՚ի միասին եղիցի մեր:
¹⁵Որդեակ մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա. խտտորեա՛ զտոն քո ՚ի շաւղաց
նոցա: ¹⁶Ձի ոտք նոցա ՚ի չարիս ընթանան, և արագունք են հեղուլ զարիւն*:¹⁷Ձի
ո՛չ եթէ տարապարտուց ձգեն գործիս թռչնոց*. ¹⁸զի նոքին իսկ որ
սպանութեանն հաղորդք են՝ զանձեն անձանց իւրեանց զչարիս. կործանումն

**Թէպէտ յերիս բանս կամ ՚ի հատուածս բաժանեալ է զիրս Առակաց, որպէս յայտ է ՚ի
նախադրութեանն. սակայն ամենայն օրինակք մեր զանց առնեն ՚ի սկզբան աստ
դրոշմել. Բան առաջին, և ՚ի զլ. ԻԵ. Բան երրորդ. որպէս և դէպն պահանջէր. այլ միայն
զերկրորդն ունին. ըստ որում և եղաք:*

**Ոմանք. Որդւոյ Դաւթի մարգարէի թագաւորի Իսրայէլի: Ուր Ոսկան. Արքայի Իսրայէլի:*

**Ոմանք. Որ հանճարեղն է:*

**Ոմանք. Ընկալցիս ՚ի զլուիս քո, և:*

**Ոմանք. Ձքեզ՝ և ասասցեն. Եկ:*

**Ի լուս՝. Եւ երագունք են. համաձայն այլոց ՚ի բնաբ՝: Ուր և ոմանք. ՚ի հեղուլ զարիւն:*

**Ոսկան. Ձգին գործիք թռչ՝:*

արանց անօրինաց չար է*։ ¹⁹Այս ճանապարհք են ամենեցուն որ գործեն զանօրէնս. զի ամպարշտութեամբն զանձինս իւրեանց սատակեն։

Գ ²⁰Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի՛, և ՚ի հրապարակս համարձակութիւն բերէ. ²¹և ՚ի գլուխս պարսպաց քարոզի, և առ դրունս հզօրաց յաճախէ. և ՚ի դրունս քաղաքաց համարձակեալ խօսի։ ²²Տորքան ժամանակս անմեղք իցեն զհետ արդարութեան, մի՛ ամաչեսցեն։ Իսկ անմիտք ցանկացօրք թշնամանաց՝ ամպարշտեալք ատեցին զիմաստութիւն*։ ²³և դատապարտք եղեն յանդիմանութեանց։ Ահաւասիկ առաջի առնեն ձեզ զհոգւոյ իմոյ զպատգամս. ուսուցից զբանս իմ ձեզ*։ ²⁴Քանզի կոչէի և ո՛չ լսէիք՝ յերկարէի զբանս իմ և ո՛չ անսայիք։ ²⁵Այլ ապախտ առնէիք զխորհուրդս իմ. և յանդիմանութեանց իմոց ո՛չ անսայիք։ ²⁶Այսուհետև՝ ե՛ս ծիծաղեցայց զկորստեամբ ձերով. և ոտնհար եղեց՝ յորժամ գայցէ նեղութիւն և պաշարումն*։ ²⁷Եւ յորժամ հասանիցէ ձեզ յանկարծակի խռովութիւն, և կործանումն ՚ի նմանութիւն մրրկի գայցէ. կամ յորժամ հասանիցէ ձեզ սատակումն*, ²⁸իցէ զի կարդայցէք առ իս՝ և ես ո՛չ լսիցեն ձեզ։ Խնդրեսցեն զիս չարք՝ և ո՛չ գտանիցեն. ²⁹զի ատեցին զիմաստութիւն. և զերկւղ Տեառն ո՛չ խնդրեցին*։ ³⁰Եւ ո՛չ կամէին անսալ խորհրդոց իմոց, և արհամարհեցին զյանդիմանութիւնս իմ*։ ³¹Այսուհետև կերիցեն զպտուղս ճանապարհաց իւրեանց. և իւրեանց ամպարշտութեամբն յագեսցին։ ³²Փոխանակ զի զրկէին, զտղայս կոտորեցին. և կշտամբութիւն զամպարիշտս սատակեսցէ*։ ³³Իսկ որ ինձ լսէ՝ բնակեսցէ յուսով. և դադարեսցէ աներկւղ յամենայն չարութենէ։

2

Գլուխ Բ

Դ ¹Որդեակ՝ եթէ ընկալեալ զպատգամս պատուիրանի իմոյ ծածկեսցես յանձին քում. ²լուիցէ իմաստութեան ունկն քո. և առակեսցես զսիրտ քո ՚ի հանճար. և աւանդեսցես զնա որդւոյ քում ՚ի խրատ*։ ³Զի եթէ զիմաստութիւն կոչեսցես ՚ի քեզ, և հանճարոյ տացես զանձն քո*։ ⁴և եթէ խնդրեսցես զնա իբրև զարծաթ ընտիր. և իբրև զգանձս քննեսցես զնա։ ⁵Յայնժամ ՚ի միտ առցես զերկւղ Տեառն, և զբարութիւն Աստուծոյ գտցես*։ ⁶Զի Տէր տայ զիմաստութիւն. և յերեսաց նորա գիտութիւն և հանճար։ ⁷Գանձէ՛ ուղղոց զփրկութիւն. վերակացո՛ւ լինի զնացից նոցա*։ ⁸Պահել զճանապարհս իրաւանց. և

* *Ոմանք.* Քանզի նոքին... որ սպանութեան հաղորդին, զան*։

* *Ոմանք.* Տորչակի ժամանակս։

* *Ոմանք.* Յանդիմանութեան... ուսուցից ձեզ զբանս։

* *Բազումք.* Գայցէ ձեզ նեղութիւն։

* *Ոմանք.* Հասցէ ՚ի վերայ ձեր սատա*։

* *Օրինակ մի.* Եւ զերկւղ Տեառն ո՛չ ընտրեցին։

* *Ոմանք.* Եւ ո՛չ կամեցան անսալ։

* *Ոմանք.* Զրկէին զանմեղս, զտղայս կոտո*։

* *Ոմանք.* Աւանդեսցես զնոսա։

* *Ոմանք.* Տացես զձայն քո։

* *Ի լուս՝.* Եւ զգիտութիւն Աստուծոյ գտցես. *համաձայն բազմաց ՚ի բն՝.*

* *Ոմանք.* Եւ զանձն ուղ*։

զճանապարհս երկիւղածաց իւրոց ամրացուցէ*։ ⁹Յայնժամ 'ի միտ առցես զարդարութիւն և զիրաւունս. և ուղղեսցես զամենայն շաւիղս բարութեան։ ¹⁰Ձի եթէ եկեսցէ իմաստութիւն 'ի միտս քո. և զհանճար անձին քում բարի՝ համարեսցիս լինել։ ¹¹Խորհուրդք բարեաց զգուշացին զքե՛ն և միտք սուրբք պահեսցեն զքեզ։ ¹²Ձի ապրեցուցես զքեզ 'ի ճանապարհէ չարէ, և յառնէ որ խօսիցի և ո՛չ ինչ հաւատարիմս*։ ¹³Ո՛հ որոց թողեալ իցէ զճանապարհս ուղիղս՝ զնա՛լ 'ի ճանապարհս խաւարինս*։ ¹⁴Որ ուրախ լինիցին ընդ չարիս, և խնդայցեն ընդ խտորունն չարութեան*։ ¹⁵Որոց թեր իցեն ճանապարհք իւրեանց, և կանակոր շաւիղք նոցա*։ ¹⁶Յեռի՛ առնել զքեզ յուղիղ ճանապարհէ, և օտարացուցանել յարդար խորհրդոց։ Որդեա՛կ իմ, մի՛ հասցեն քեզ խորհուրդք չարք*, ¹⁷որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան. ¹⁸և մոռացեալ զուխտն աստուածոէն։ Ձի եղ մերձ 'ի մահ զտուն իւր, և մօտ 'ի դժոխս՝ ընդ երկրածինս զշաւիղս իւր։ ¹⁹Ամենեքեան որ գնան ընդ նոսա՝ ո՛չ դարձցին. այլ և 'ի զղջումն ևս եկեսցեն։ Եւ ո՛չ ժամանեսցեն 'ի ճանապարհս ուղիղս. և ո՛չ հասցեն 'ի տարեկանս կենդանութեան*։ ²⁰Ձի եթէ գնացեալ էր 'ի ճանապարհս բարիս, գտանէին արդևք զշաւիղս արդարութեան զդիւրինս։ Քաղցրացեալք եղիցին բնակիչք երկրի. անմեղք մնասցեն 'ի նմա*։ ²¹Ձի ուղիղք բնակեսցեն յերկրի. և անարատք մնասցեն 'ի նմա*։ ²²Ճանապարհք ամպարշտաց կորիցեն յերկրէ. և անօրէնք մերժեսցին 'ի նմանէ։

3

Գլուխ Գ

Ե ¹Որդեակ՝ զօրէնս իմ մի՛ մոռանար. և զբանս իմ պահեսցես 'ի սրտի քում*։ ²Ձի ընդերկարութիւն կենաց, և ամք կենդանութեան և խաղաղութեան յաւելցին քեզ*։ ³Ողորմութիւն և հաւատք 'ի քէն մի՛ պակասեսցեն։ Արկ զնոսա ընդ պարանոց քո, և գրեա՛ զնոսա յընդարձակութիւն սրտի քո. ⁴և գտցես շնորհս։ Եւ խորհեա՛ց զբարիս առաջի Տեառն և մարդկան։ ⁵Լե՛ր յուսացեալ 'ի Տէր յամենայն սրտէ քումնէ. և յիմաստութիւն քո մի՛ հպարտանար։ ⁶Յամենայն ճանապարհս քո ծանի՛ր գնա զի ուղի՛ղ արասցէ զճանապարհս քո. և ոտն քո մի՛ գայթազղեսցի*։ ⁷Մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քոյ՝ այլ երկիր 'ի Տեառնէ, և խտորեա՛ յամենայն չարութենէ։ ⁸Ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քում. և դարման ոսկերաց քոց։

Ձ ⁹Պատուեա՛ զՏէր 'ի քո՛ց արդար վաստակոց. և հան նմա պտուղ 'ի քո՛ց

* Ոմանք. Պահել զճանապարհս արդարութեան։

* Ոմանք. Ձի ապրեցուցեն զքեզ։

* Ոմանք. Որոց թողեալ են։

* Ոմանք. Ուրախ լինին ընդ չա՛ն։

* Ոմանք. Թիւր են ճանա՛ն։

* Ոմանք. Որդեակ՝ մի՛ հասցէ քեզ։

* Ոմանք. Գնան ընդ նա ո՛չ դարձցին անդրէն, այլև։

* Ոմանք. Գնացեալ էր նոցա 'ի ճա՛ն։

* Ոմանք. Ձի անմեղք բնակեսցեն յերկ՛ր։

* Ոմանք. Եւ զպատգամս իմ պահեսցէ սիրտ քո։

* Ոմանք. Եւ խաղաղութիւն յաւելցին։

* Ոմանք. Ձի ուղիղ արասցէ զշաւիղս քո։

արդարութեան արմտեաց*։ ¹⁰Ձի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ. և գինեաւ հնծանք քո առաւել ևս բոխեսցեն*։ ¹¹Որդեակ՝ մի՛ լքանիր ՚ի խրատու Տեառն, և մի՛ լուծանիցիս յանդիմանեալ ՚ի նմանէ*։ ¹²Ձի զոր սիրտ Տէր՝ խրատէ՛ տանջէ զամենայն որդի զոր ընդունի։

Է ¹³Երանեալ է այր որ եգիտ զիմաստութիւն, և մահկանացու՝ որ ետես զհանճար։ ¹⁴Ձի լա՛ւ է զվաճառն զայն գտանել՝ քան զգանծս ոսկւոյ և արծաթոյ*։ ¹⁵Պատուականագո՛յն է նա քան զականս պատուականս. և ո՛չ ինչ է չար որ հակառակ կայցէ նմա։ Յայտնի՛ է ամենեցուն որ մերձին ՚ի նա. և ամենայն ինչ որ պատուական է՝ շարժէ զնա*։ ¹⁶Ձի երկայնաւուրք և ամբ կենաց յաջմէ իւրմէ, և յահեկէ իւրմէ փառք և մեծութիւն։ Ի բերանոյ բոխէ արդարութիւն. զօրէնս և զողորմութիւն ՚ի լեզուի իւրում կրէ*։ ¹⁷Ճանապարհք նորա ճանապարհք բարեաց, և ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ։ ¹⁸Փայտ կենաց է ամենեցուն որ պատսպարին ՚ի նա, և որ յենուն ՚ի նա իբրև ՚ի Տէր հաստատութեամբ։ ¹⁹Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի. պատրաստեաց զերկինս խորհրդով. ²⁰հանճարով իւրով զանդունդս պատառեաց. և ամալք հոսեցին զանձրև*։

Ը ²¹Որդեակ՝ պահեա՛ զխորհուրդս իմ, և զիմաստութիւն*։ ²²Ձի կեցցէ անձն քո, և շնորհք իցեն ՚ի վերայ պարանոցի քոյ. եղիցի՛ բժշկութիւն մարմնոյ քում, և դարման ոսկերաց քոց*։ ²³Ձի գնացես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո. և ոտն քո մի՛ գայթաղեսցի*։ ²⁴Ձի եթէ նստիցես՝ աներկեղ իցես. և եթէ ննջեսցես՝ քաղցր քունեսցես*։ ²⁵Ո՛չ երկիցես ՚ի զարհուրանաց ՚ի վերայ հասելոց և յարշաւանաց ամպարշտաց ՚ի վերայ եկելոց*։ ²⁶Ձի Տէր եղիցի ՚ի վերայ ամենայն ճանապարհաց քոց. և հաստատեսցէ զոտն քո զի մի՛ գայթաղեսցի*։

Թ ²⁷Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ, յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա։ ²⁸Մի՛ ասիցես թէ երթ և եկեսջիր, և վաղիւ տաց. զի կարօղ ևս իցես բարի առնել. զի ո՛չ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ*։ ²⁹Մի՛ նիւթեր բարեկամի քում չարիս՝ որ յեցեալ և յուսացեալ իցէ ՚ի քեզ։ ³⁰Մի՛ թշնամանասէր լինիր մարդոյ ՚ի տարապարտուց. զի մի՛ չար ինչ գործեսցէ քեզ։ Մի՛ ստանար նախատինս յարանց չարաց. ³¹և մի՛ նախանձիր ընդ ճանապարհս նոցա*։ ³²Ձի պի՛ղծ է առաջի Տեառն ամենայն անօրէն, և ընդ արդարս ո՛չ հաղորդի*։ ³³Անէ՛ծք Տեառն

* Ոմանք. ՚ի քոյոց արդար վաս*։

* Ոմանք. եւ հնծանք գինւոյ քոյ ա*։

* Ոմանք. եւ մի՛ լուծանիւր ՚ի նմանէ յան*։

* Յօրհիմակին պակասէր. Ձի լաւ է զվաճառն։

* Ոմանք. Որ մերձին առ նա։

* Ոմանք. ՚ի յաջմէ իւրմէ... ՚ի բերանոյ նորա բոխէ արդա*։

* Ոմանք. եւ հանճարով իւ*։

* Ոմանք. Որդեակ մի լքանիր. կամ՝ լուծանիցիս, պահեա՛ զխո*։

* Ոմանք. ՚ի վերայ պարանոցի քում։

* Ոմանք. եւ ոտն քո ո՛չ գայթաղ*։

* Այլք. եւ եթէ ննջիցես, քաղցր քուն. կամ՝ քաղցր ՚ի քում լիցիս։

* Ոմանք. եւ ո՛չ երկիցես... և յամբարշտաց արշաւանաց ՚ի վերայ ե*։

* Ոմանք. Ձոտն քո զի մի՛ սասանեսցի. կամ՝ սասանեսցիս։

* Ոմանք. Քանզի ո՛չ գիտես։

* Ոմանք. եւ մի՛ նախանձիցիս ընդ։

* Ոմանք. Քանզի պիղծ է... ո՛չ հաղորդին։

ի տունս անպարշտաց. յարկք արդարոց օրհնին: ³⁴Տէր ամբարտաւանից հակառակ կայ. և տայ շնորհս խոնարհաց: ³⁵Չփառս իմաստունք ժառանգեսցեն. իսկ անմիտք բարձրացուցին զանարգանս*:

4

Գլուխ Դ

Ժ ¹Լուարո՛ւք մանկունք զխրատ հօր. և անսացէ՛ք ստանալ զիմաստութիւն*.
²Գի պարզևս բարեաց պարզեցից ձեզ: Զօրէնս իմ մի՛ թողուք. ³Գի որդի՛ եղեալ եմ և ես հպատակ հօր իմոյ, և սիրեցեալ յաչս մօր իմոյ: ⁴Որք ուսուցանէին զիս և ասէին. Զաստատեսցի՛ բան մեր ՚ի սրտի քում: Պահեա՛ զպատուիրանս իմ և կեաց*.
⁵Ստացի՛ր զիմաստութիւն. ստացի՛ր զհանճար՝ և մի՛ մոռանար: Մի՛ արհամարհեր զպատգամս բերանոյ իմոյ, և մի՛ խտորիր ՚ի բանից շրթանց իմոց: ⁶Մի՛ թողուր զնա, և պատսպարեսցէ զքեզ. սիրեա՛ զնա՝ և պահեսցէ՛ զքեզ: ⁷Սկիզբն զօգնութեան ստացի՛ր զիմաստութիւն. և յամենայն ճանապարհս քո ստացի՛ր զհանճար*:
⁸Շուրջ փակեա՛ զնովաւ, և բարձրացուցէ՛ զքեզ. մեծարեա՛ զնա՝ և զիրկս արկցէ՛ զքև*:
⁹Զի տացէ՛ զլխոյ քում պսակ շնորհաց. և պսակաւն վայելչութեան վերակացու լիցի քեզ*:

ԺԱ ¹⁰Լո՛ւր որդեակ՝ և ընկալ՛ զբանս իմ. և բազմացին անք կենաց քոց. և յաճախեսցին ճանապարհք կենաց քոց*:
¹¹Չճանապարհս իմաստութեան ուսուցանեմ քեզ. իսելամուտ առնեմ զքեզ ուղիղ շաւղաց*:
¹²Զի եթէ՛ գնայցես՝ ո՛չ խափանեսցին զնացք քո. և եթէ՛ ընթանայցես՝ ո՛չ վաստակեսցիս: ¹³Բո՛ւնն հար զխրատուէ իմնէ՛ և մի՛ թողուցուս. այլ պահեա՛ զնա անձին քում ՚ի կեանս*:
¹⁴Ի ճանապարհս ամպարշտաց մի՛ երթայցես, և մի՛ նախանձիցիս ընդ ճանապարհս անօրինաց. ¹⁵և ՚ի տեղուջ ուր բնակիցեն՝ ընդ այն մի՛ անցանիցես: Խտորեա՛ ՚ի նոցանէ, և խորշեա՛ անտի*:
¹⁶Զի ո՛չ ննջեն, եթէ՛ ո՛չ չար գործիցեն: Բարձեալ է քուն նոցա՝ և ո՛չ ննջեն*.
¹⁷Որք ուտեն զկերակուրս ամպարշտութեան. և զինուով անօրէնութեան արբենան*:
¹⁸Ճանապարհք արդարոց որպէս լոյս ծագեն առաջնորդեն և լուսաւորեն, մինչև տիւն լուսաւորեսցէ*:
¹⁹Ճանապարհք ամպարշտաց խաւարինք. և ո՛չ զիտեն զհարդ գայթազդին:

ԺԲ ²⁰Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա՛. և իմոց բանից մատո՛ զունկն քո*.

* Ոմանք. Իսկ ամպարիշտք բարձրա՛:

* Ի լուս՛. Եւ անսացէք ճանաչել զիմաս՛. համաձայն ոմանց ՚ի բնար՛: Ուր ևս ոմանք. Իմանալ զիմաս՛:

* Ոմանք. Ոյք ուսուցանէին... պահեա՛ զբան մեր և կեաց:

* Ոմանք. Եւ յամենայն ստացուածս քո ստացի՛ր զհան՛:

* Բազումք. Զի զիրկս արկցէ:

* Ոմանք. Եւ պսակաւն փափկութեան վերակացու լիցիցի քեզ:

* Ոմանք. Զի բազմացին... և յաճախեսցեն ճա՛:

* Ոմանք. Խելամուտ առնել զքեզ:

* Ի լուս՛. Զնա յանձին քում. համաձայն ոմանց ՚ի բնար՛:

* Ոմանք. Ուր բնակիցինն, ընդ այն մի՛ գնայցես:

* Ոմանք. Եթէ՛ ո՛չ չար գործեն:

* Ոմանք. Եւ զինեաւ անօրէ՛:

* Ոմանք. Այլ ճանապարհք արդարոց իբրև լոյս... մինչև տիւն ծագեսցէ:

* Օրհնակ մի. Եւ իմոյ պատգամաց մատո՛ զունկն քո:

21 զի մի՛ պակասեսցին աղբերք քո: Պահեա՛ զնոսա՛ ՚ի սրտի քում. 22 զի կեանք են որոց գտանենն զնա. և ամենայն մտելոյ՝ բժշկութիւն*։ 23 Ամենայն պահպանութեամբ պահեա՛ զսիրտ քո. զի ՚ի սոցանէ՛ են ելք կենաց: 24 Ի բաց արա՛ ՚ի քէն զբերան կամակոր. և զշրթունս անիրաւս մերժեա՛ ՚ի քէն*։ 25 Աչք քո ուղիղ հայեսցին. և արտևանունք քո արդա՛ր ակնարկեսցեն: 26 Ձշաւիղս ուղիղս արասցես ոտից քոց, և զճանապարհս քո ուղղեսցես: 27 Մի՛ յաջ խտորիցիս՝ և մի՛ յահեակ. դարձո՛ զոտն քո ՚ի ճանապարհէ չարէ: Ձի զճանապարհս որ յաջմէ են՝ գիտէ Աստուած. թիւր են ճանապարհք՝ որ ՚ի ձախմէ են: Այլ ինքն ուղիղ արասցէ զշաւիղս քո, և զճանապարհս քո խաղաղութեամբ յառաջեցուցէ՛:

5

Գլուխ Ե

ԺԳ 1 Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա՛, և իմոց բանից մատո՛ զունկն քո*։ 2 զի պահեսցես զխորհուրդս բարեաց. զիմաստութիւն շրթանց իմոց պատուիրեն քեզ: Մի՛ հայիր ընդ կին չար. 3 զի մեղր կաթէ՛ ՚ի շրթանց կնոջ պոռնկի, որ առ ժամանակ մի պարարէ՛ զքիմս քո. 4 բայց յետոյ դառնագոյն ևս գտանի քան զլեղի. և սրեալ առաւել քան զսուր երկասարի*։ 5 Ձի ոտք անզգամի իջուցանեն զմերձաւորս նորա մահու՛ հանդերձ՝ ՚ի դժոխս*։ 6 և հետք նորա չեն հաստատուն: Ձի ՚ի ճանապարհս կենաց ո՛չ գնան. զեղիս են ճանապարհք նորա՝ և ո՛չ յայտնիք*։ 7 Արդ որդեակ՝ լուր ինձ. և մի՛ ապախտ առներ զբանս իմ*։ 8 Յեռի՛ արա՛ ՚ի նմանէ զճանապարհս քո. և մի՛ մերձենար ՚ի դրունս տանց նորա: 9 Ձի մի՛ մատնեսցես օտարաց զկեանս քո, և զստացուածս քո անողորմից*։ 10 Ձի մի՛ լցցին օտարք ՚ի զօրութենէ քումմէ. և մի՛ վաստակք քո ՚ի տունս այլոց մտանիցեն*։ 11 Եւ զղջասցիս յետոյ յորժամ մաշիցին անդամք մարմնոյ քոյ*։ 12 և ասիցես՝ թէ զիա՞րդ ատեցի զխրատ. և ՚ի յանդիմանութեանց խտորեցաւ սիրտ իմ: 13 Ո՛չ լսէի ձայնի խրատտուի իմոյ, և ուսուցչի իմոյ ո՛չ մատուցանէի զունկն իմ*։ 14 Սակաւիկ մես և եղեալ էի ՚ի մէջ ամենայն չարեաց, ՚ի մէջ եկեղեցոյ՝ և ժողովրդեան*։ 15 Արբ ջուր ՚ի քոց ամանոց, և ՚ի քոց ջրհորոց աղբիւրաց: 16 Բղխեսցեն քեզ ջուրք քո ՚ի քումմէ աղբիւրէ, և ՚ի քո՛ հրապարակս գնասցեն

* Ոմանք. Քանզի կեանք են... զնոսա, և ամենայն մարմնոյ բժշկութիւն:

* Օրինակ մի. Ի բաց մերժեա՛ ՚ի քէն զբերան:

* Ոմանք. Մի՛ խտորեսցիս յաջ... գիտէ Տէր... այլ ինքն Տէր ուղիղ ա՛... և զգնացս քո խաղաղութեամբ յա՛:

* Ոմանք. Եւ իմոյ բանից մատո՛:

* Ոմանք. Դառնագոյն ևս գտցես:

* Ոմանք. Վասն զի ոտք անզգամութեան իջուցանեն:

* Ոմանք. Ոչ են հաստատուն:

* Ոմանք. Եւ մի՛ ապախտ առնիցես:

* Ոմանք. Ձի մի՛ տայցես օտարաց զկեանս:

* Ոմանք. Եւ մի՛ մտցեն վաստակք քո ՚ի տունս այլոց. կամ՝ ՚ի տունս օտարաց մտանիցեն:

* Ոմանք. Եւ զղջանայցես յետոյ:

* Ոմանք. Ոչ դնէի զունկն իմ:

* Ոմանք. Սակաւիկ միւս ևս և անկանէի ՚ի մէջ... ՚ի մէջ եկեղեցեաց և ժողովրդոց:

ջուրք քո*։ ¹⁷Եղիցին քե՛զ միայնոյ լինել, և մի՛ ոք օտար հաղորդեսցէ քեզ*։
¹⁸Աղբեր ջրոյ քոյ եղիցի քե՛զ առանձին. և ուրախ լինիջիր ընդ կնոջ
մանկութեան քոյ*։ ¹⁹Ե՛ղն սիրոյ՝ և յաւանակ քոց շնորհաց խօսեսցի ընդ քեզ. և ՚ի
քո իմաստութիւն համարեսցի և ընդ քեզ եղիցի յամենայն ժամ. զի եթէ զնորա
սիրովն գնայցես՝ բազմապատիկ եղիցես*։ ²⁰Մի՛ յաճախեր առ օտարս. և մի՛
փարիր ՚ի գիրկս՝ որ ո՛չ քո իցեն*։ ²¹Զի առաջի աչացն Աստուծոյ են
ճանապարհք առն. և յամենայն շաւիղս նորա դիտէ*։ ²²Անօրէնութիւնք որսան
զայր, և ՚ի տոռունս մեղաց իւրոց շաղի իւրաքանչի՛ւր ոք*։ ²³Մեռանի նա ընդ
անխրատս՝ վասն անխրատութեան. և ՚ի բազմութենէ կենաց իւրոց զրկեցաւ. և
կորեաւ վասն անզգամութեան*։

6

Գլուխ Զ

ԺԴ ¹Որդեակ՝ եթէ լինիցիս երաշխաւոր բարեկամի քում, մատնեցեր զանձն քո
թշնամւոյ*։ ²Զի որոգայթ բո՛ւռն են առն շրթունք իւր, և ըմբռնի՛ բանիւ բերանոյ
իւրոյ*։ ³Արդ՝ արա՛ որդեակ զոր ինչ ես պատուիրեմ քեզ՝ և կեցցես. զի անկար ՚ի
ձեռս չարաց վասն բարեկամի քոյ։ Արդ պնդեա՛ և մի՛ լքանիր. յորդորեա՛ և
զբարեկամն զոր առեր յերաշխի։ ⁴Մի՛ տար քուն աչաց, և մի՛ նինջ արտևանաց
քոց*։ ⁵Զի ապրեսցիս որպէս զայծեամն ՚ի հաղբից, և իբրև զհաւ ՚ի ծուղակաց*։

ԺԵ ⁶Ե՛րթ առ մրջիւն ո՛վ վատ, և նախանձեա՛ ընդ ճանապարհս նորա. և լեր
իմաստնագոյն ևս քան զնա*։ ⁷Զի նորա ո՛չ գոյ հողագործութիւն, և ո՛չ
հարկադիր, և ո՛չ ընդ տերամբք է*։ ⁸Եւ պատրաստէ ամարանի զկերակուր, և
բազում համբարս դնէ ՚ի հունձս։ Կամ ե՛րթ առ մեղուն և ուսի՛ր՝ զհա՞րդ գործօ՛ն
է. և զործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի. զորոյ զվաստակն թագաւորք
և տնանկք ՚ի բժշկութիւն մատուցանեն։ Ցանկալի՛ է ամենեցուն և մեծարոյ. զի
թէպէտ տկա՛ր է զօրութեամբ, պատուեաց զիմաստութիւն՝ և յարգեցաւ*։ ⁹Մինչև

*Ոմանք. Զուրք ՚ի քումնէ աղբերէ։

*Ոմանք. Եւ եղիցի քեզ միայն։

*Ոմանք. Եւ ուրախ լեր ընդ կնոջ։

*Ոմանք. Եւ յովանակ... ընդ քեզ. և քեզ առանձինն եղիցի յամենայն ժամ։ Այլք. Զնորա սիրովն գայցես։

*Ոմանք. Առ օտար, և մի՛ պատիր ՚ի գիրկս որ...։ (21) Վասն զի առաջի աչաց։

*Ոմանք. Մեղաց շաղի իւրա՛։

*Ոմանք. Կենաց իւրոց արտաքս ընկեցաւ, և կորեաւ վասն անզգամութեան իւրոյ։

*Ոմանք. Մատնեցեր զքեզ ՚ի ձեռս թշնամւոյն։

*Օրինակ մի. Եւ ըմբռնի շրթամբք բերանոյ։

*Ոմանք. Քուն աչաց քոց, և մի նիրհ արտևանաց քոց։

*Ոմանք. Իբրև զայծեամն ՚ի գործուոց, և իբրև զհաւ յորոգայթից։

*Ոմանք. Եւ լիջիր իմաստնա՛։

*Ոմանք յաւելուածով ունին. Ոչ գոյ երկրագործութիւն և ո՛չ հարկադիր, և ո՛չ այն որ տազնապիցէ, և ո՛չ ընդ տերամբք։

*Ոմանք. Եւ պատրաստէ ամարայնոյ... առ մեղուն... զհարդ գործօնեայ է...

պարկեշտութեամբ է, որ զվաստակսն թա՛... ցանկալի է ամենեցուն և փառաւորեալ. զի թէպէտ և։

յեօրբ յորսայսեալ կաս ո՛վ վատ, կամ եօրբ ՚ի քնոյ զարթիցես*։ ¹⁰Փոքր մի ննջիցես՝ ս. փոքր մի նստիցի՝ ս. փոքր մի նիրհիցես՝ ս. փոքր մի հանգուցանիցես՝ ս. զձեռն քո ՚ի վերայ լանջաց*։ ¹¹Ապա հասանիցէ ՚ի վերայ քո իբրև զչար ուղևոր տնանկութիւն, և կարօտութիւն իբրև զժիր սուրհանդակ։ Ապա թէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ իբրև զաղբեր ամառն քո, և կարօտութիւն իբրև այր մի չար ինքնահալած*։

ԺՁ ¹²Այր անօրէն և անզգամ գնայ՝ զճանապարհս թերս։ ¹³Քանզի նոյն ինքն ակնարկէ՝ ակամբ, և նշանակէ՝ ոտամբ, և ուսուցանէ՝ նշանացի՝ մատամբ*։

¹⁴Սիրտ խտորեալ նիւթ զչարիս. յամենայն ժամանակի այնպիսին խռովութիւնս առնէ քաղաքի*։ ¹⁵Վասն այնորիկ յանկարծակի՝ հասցէ նմա կորուստ իւր. հաշումն՝ և մաշումն առանց բժշկութեան*։ ¹⁶Ձի խնդայ՝ ընդ ամենայն զոր ատեայ Տէր. և խորտակի վասն պղծութեան անձին իւրոյ։ ¹⁷Աչք թշնամանողի՝ լեզու անիրաւ, ձեռք՝ որ հեղուն զարիւն արդար*։ ¹⁸Սիրտ՝ որ նիւթ զխորհուրդս չարութեան. ոտք՝ որ փութան գործել զչարիս, սատակեսցին*։ ¹⁹Բորբոքէ՝ զստութիւն վկայ անիրաւ, և արկանէ գրգռութիւն ՚ի մէջ եղբարց*։

ԺԷ ²⁰Որդեակ՝ պահեա՛ զօրէնս հօր քոյ, և մի՛ մերժեր զխրատ մօր քոյ։ ²¹Ընկալ՝ զնոսա յանձին և ՚ի գլուխ քո հանապազ. և արկ իբրև մանեակ ՚ի պարանոց քո*։

²²Յորժամ շրջիցիս՝ ընդ քեզ տարջիր, և ընդ քեզ եղիցի. յորժամ ննջիցես՝ պահեսցէ զքեզ. և յորժամ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ*։ ²³Ձի ճրագ է պատուիրան օրինացն՝ և լոյս, և ճանապարհ կենաց՝ յանդիմանութիւն և խրատ*։ ²⁴Պահեա՛ զքեզ յառնակին կնոջէ. և ՚ի չարախօսութենէ օտար լեզուէ*։

²⁵Որդեակ՝ մի՛ յաղթեսցէ քեզ ցանկութիւն զեղոյ. և մի՛ ըմբռնիցիս աչօք քովք. և մի՛ յափշտակիցիս արտևանամբք նորա։ ²⁶Ձի գինք կնոջ պռոնկի՝ որչափ նկանակի՝ միոջ հացի. քանզի կին չար՝ զարանց պատուականաց զհոգիս որսայ*։

²⁷Օրարիցէ՛ ոք հուր ՚ի գոգ՝ և զհանդերձսն ո՛չ այրիցէ*։ ²⁸Կամ գնայցէ՛ ոք ՚ի վերայ կայծականց հրոյ, և զոտս իւր ո՛չ խարշիցէ։ ²⁹Նոյնպէս և որ մտանէ առ առնակին՝ առանց պատժի ո՛չ լիցի, և ո՛չ արդարացի ամենայն որ մերձենայ առ նա*։

³⁰Ոչ ինչ են զարմանք եթէ ըմբռնեսցի ոք ՚ի գողութեան. գողանայ՝ զի լցուսցէ զանձն իւր քաղցեալ. ³¹ապա թէ ըմբռնեսցի, եւթնպատիկ

*Ոմանք. Մինչև յեօրբ անկեալ կաս ո՛վ։

*Ոմանք. ՚ի վերայ լանջաց քոց։

*Ոմանք. Ապա այնուհետև հասանիցէ քեզ իբրև զչար ճանապարհորդ աղքատութիւն... եկեսցէ իբրև զաղբեր... ինքնահալած լինիցի։

*Ոմանք. Եւ նոյն ինքն ակ՛։

*Ոմանք. Նիւթ զչարութիւն։

*Ոմանք. Եւ վասն այնորիկ... հաշումն և բեկումն անբժշկելի։

*Ոմանք. Յեղուն զարիւն անպարտ։

*Ոմանք. Եւ սիրտ... զխորհուրդս չարս. և ոտք որ։

*Ոմանք. Եւ արկանէ դատաստանս ՚ի մէջ։

*Ոմանք. Ընկալ զնոսա ՚ի գլուխ քո։

*Ոմանք. Յորժամ գնացես՝ ընդ... զի. կամ՝ և յորժամ ննջի՛... զի յորժամ յառ՛։

*Ոսկան. Ձի պատուիրան ճրագ է. և օրէնք լոյս... յանդիմանութիւն խրատու։

*Ոմանք. Պահեա՛ զքեզ ՚ի կնոջէ առն... օտար լեզուի։

*Ոմանք. Նկանակի միոջ հացի է... զոգիս որսայ։

*Բազումք. Եւ զհանդերձն ո՛չ այ՛։

*Ոմանք. Ոչ լինի առանց պատժոյ... որ մերձենայ ՚ի նա։

տուժեցի. և զամենայն ինչս իւր տուեալ ապրեցուցանէ զանձն*։ ³²Իսկ որ շնայն՝ առ պակասութեան մտաց, կորուստ անձին իւրում ստանայ։ ³³Յա՛ւս և անարգանս կրէ. և նախատինք նորա մի՛ կորիցեն յաւիտեան*։ ³⁴Լի՛ է նախանձու սրտմտութիւն առն նորա. և ո՛չ խնայեսցէ յաւուր դատաստանի։ ³⁵Ո՛չ փոխանակեսցէ և ո՛չ ընդ միո՛յ իրիք փրկանաց զթշնամութիւն. և ո՛չ վճարիցի բազում կաշառօք*։

7

Գլուխ Է

¹Որդեակ՝ պահեա՛ զբանս իմ, և զպատուիրանս իմ ծածկեա՛ յանձին քում։ Որդեակ՝ պատուեա՛ զՏէր՝ և զօրացիր, և բա՛ց ՚ի նմանէ յայլ ունեքէ մի՛ երկնչիւր*։ ²Որդեակ՝ պահեա՛ զպատուիրանս իմ և կեցցես. և զբանս իմ իբրև զբի՛բ աչաց։ ³Յե՛ռ գնոսա ընդ մատունս քո. և գրեա՛ յընդարձակութիւն սրտի քոյ։ ⁴Ասա՛ զիմաստութիւն քո՛յր քեզ լինել, և զհանճա՛ր արա քեզ ծանօթ*։ ⁵Գի պահեսցէ զքեզ ՚ի կնոջէ օտարէ և ՚ի չարէ։ Յորժամ բանիւք զքեզ ՚ի պատրանս արկանիցէ. ⁶ի պատուհանից տան իւրոյ ՚ի հրապարակս կարկառեալ։ ⁷Զոր տեսանիցէ յանմիտ մանկանց, զպակասամիտս յերիտասարդաց*։ ⁸Որ անցանիցեն ընդ հրապարակս առ ակա՛մբ գնացից տան նորա*։ ⁹և խօսիցի ընդ խաւար երեկոյին. յորժամ դադարեալ ՚ի մթոց գիշերոյն իցեն*։ ¹⁰Եւ կինն ընդ առա՛ջ լինի նմա պոռնկութեան կերպարանօք, որ յիմարեցուցանէ զմիտս երիտասարդաց՝ որ արբեալ և պակշոտեալ*։ ¹¹Եւ ՚ի տան ո՛չ դադարեն ոտք նորա. ¹²Ժամանակ ինչ արտաքոյ յածի և ժամանակ ինչ ընդ հրապարակս առ ամենայն անկեան դարանակալ լինի*։ ¹³Ապա բուռն հարեալ համբուրեա՛ց զնա, և լրբենի երեսօք ասէ ցնա. ¹⁴Ուխտք խաղաղութեան են ինձ. այսօր հատուցանեմ զաղօթս իմ։ ¹⁵Սմին իրի իսկ ելի ընդ առաջ քո. ցանկացեալ երեսաց քոց գտի զքեզ*։ ¹⁶Երիզապատ պնդեցի զգահոյս իմ։ Պաստառալի՛ր Եգիպտացուվք զարդարեցի*։ ¹⁷Քրքմացան պատրաստեցի զանկողինս իմ. և զտուն իմ

* Ոմանք. Տուեալ փրկեսցէ զանձն իւր։

* Ոմանք. Եւ նախատինք նորա ո՛չ ջնջեսցին յաւիտեան։

* Ոմանք. Եւ ո՛չ փոխանա՛... և ո՛չ վճարեսցի։

* Ոմանք. Եւ զօրասցիր. կամ՝ զօրասցիս... մի՛ երկնչիցիս։

* Ոսկան. Ասա՛ իմաստութեան... կոչեա՛ քեզ ծա՛։ Ոմանք. Եւ զհանճար անձին քում ծանօթ։

* Ոսկան. Եւ տեսանիցէ։

* Ոմանք. Որ անցանիցէ... առ անկեամբ գնացից տանց նորա։

* Ոմանք. Յորժամ դադարունն և մութ գիշերոյն իցէ։

* Ոմանք. Ընդ առաջ լինիցի նմա պոռնկութեան դիմօք։ *Յօրինակին ՚ի բանս՝ Որ արբեալ և. ո-ն թուի քերմամբ և վերստին գրութեամբ անդրէն յարմարեալ, որով կարծիս տայ թէ յառաջագոյն գրեալ իցէ՝ Սրարբեալ. որպէս օրինակ մի ունի զբանս այսպէս. Զմիտս տղայոց սրարբեալ և պակշոտեալ. և այլ օրինակ մի գնոյն թերևս վրիպակաւ գրէ. սրբեալ և պագշոտեալ։*

* Ոմանք. Զի ժամանակ ինչ... ՚ի հրապարակս։

* Ոսկան. Նմին իրի իսկ ե՛։

* Ոմանք. Զգահոյս իմ. Եգիպտացի պաստառակալօք լցեալ զարդարեցի։

կինամոնով խնկեցի*։ ¹⁸Ե՛կ և վայելեսցուք սիրով մինչև ցառաւօտն. ե՛կ և խաղասցուք ցանկութեամբ*։ ¹⁹Ձի ո՛չ է այր իմ ՚ի տան. այլ գնացեալ է ճանապարհ հեռի*։ ²⁰Ձքսակն արծաթոյ ՚ի ձեռին իւրում առեալ, յետ բազում ժամանակաց՝ թէ՛ ուրեք գայցէ ՚ի տուն*։ ²¹Եւ մոլորեցո՛յց զնա բազում բանիւք, և խեղդիւք շրթանց իւրոց վարանեաց՝ զնա*։ ²²Եւ նա գնաց զկնի նորա յիմարեալ՝ իբրև արջառ ՚ի սպանումն, և իբրև զշուն տոռամբ*։ ²³Կամ իբրև գեղջիւրու հարեալ նետիւ ընդ լերդակողմն. և փութայ իբրև զհաւ ՚ի ծաւղակս, և ո՛չ գիտէ թէ զոգին հալածական տանի*։ ²⁴Արդ որդեակ՝ լուր ինձ. և անսա՛ բանից բերանոյ իմոյ*։ ²⁵Մի՛ խոտորեսցի սիրտ քո ՚ի ճանապարհս նորա, և մի՛ մոլորիցիս ՚ի շաւիղս նորա*։ ²⁶Ձի զբազումս տապաստ արկեալ է նորա խոցոտելով, և անթիւ են սպանեալք ՚ի նմանէ։ ²⁷Ճանապարհք դժոխոց են տուն նորա. որ իջուցանեն ՚ի շտեմարանս մահու*։

8

Գլուխ Ը

¹Վասն այսորիկ դու զիմաստութիւն քարոզեսցես, զի հանճար ձայնատո՛ւ լիցի քեզ։ ²Քանզի ՚ի վերայ լերանց գլխաւորաց է, և ՚ի մէջ շաւղաց հասեալ կայ*։ ³և ՚ի դրունս հզօրաց սպասէ՛. և ՚ի մուտս օրհնի*։

ԺԸ ⁴Ձձեզ աղաչեմ ո՛վ մարդիկ, և բաշխեմ զբարբառ իմ որդւոց մարդկան։ ⁵Իմացարու՛ք անմեղք գիտրագիտութիւն. և անխրատք դի՛ք ՚ի սիրտս ձեր։ ⁶Ունկն դիք ինձ, զի զպարկեշտս բարբառիմ. և բղխեմ ՚ի շրթանց իմոց զուղղութիւնս*։ ⁷Ձի զճշմարտութիւն խոկասցէ կոկորդ իմ. և պի՛ղծ են առաջի իմ շրթունք սուտք*։ ⁸Արդարութեամբ են ամենայն պատգամք բերանոյ իմոյ, և ո՛չ ինչ գոյ ՚ի նոսա ծռութիւն և ո՛չ թիրութիւն*։ ⁹Ամենայն ինչ ուղիղ է իմաստնոց. և յարմարեալ է այնոցիկ ոյք գտանեն զգիտութիւն։ ¹⁰Ընկալարու՛ք գիտատ՝ և մի՛ զարծաթ. և զգիտութիւն քան զոսկի ընտիր*։ ¹¹Լա՛ւ է իմաստութիւն քան զականս պատուականս. և ամենայն ինչ պատուական չարժէ՛ զնա։ ¹²Ես

* *Բազումք*. Կինամոնով խնկեցի։

* *Ոմանք*. Մինչև յառաւօտ։

* *Ոսկան*. ՚Ի ճանապարհ հեռի։

* *Ոմանք*. Առեալ է. յետ բազում աւուրց... գայցէ ՚ի տուն իւր։

* *Ոմանք*. Ձնա բազում խօսիւք։

* *Օրհնակ մի*. Շուն ՚ի տոռն։

* *Ոմանք*. Նետիւ ՚ի լերդակողմն. *կամ*՝ զլերդակողմն։ *Ոմանք*. Ոչ գիտէ թէ վասն անձին կորստեան ընթանայ։

* *Յօրհնակին պակասէր*. Արդ որդեակ։

* *Բազումք*. Մոլորեսցիս ՚ի շաւ՛։

* *Ոսկան*. Որք իջուցեն ՚ի շտե՛։

* *Ոսկան*. Եւ ՚ի մէջ շաւղաց հաստատեալ կայ։

* *Ոմանք*. Եւ առ դրունս հզօ՛։

* *Ի լուս՛*. Լուարուք ինձ զի զպար՛. *համաձայն ոմանց ՚ի բն՛*։

* *Ոսկան*. Ձճշմարտութիւն խոկայ։

* *Ոմանք*. Ամենայն բանք բերանոյ իմոյ... և ոչինչ գոյ ՚ի նոսա ծռայութիւն և թիր՛։

* *Ոմանք յաւելուն*. Եւ զգիտութիւն *առաւել*, քան զոսկի ընտիր. *ընտրելի է հանճար քան զոսկի մարուր*։ (11) Եւ լաւագոյն է իմաստութիւն քան։

իմաստութիւն բնակեցայ ՚ի խորագիտութեան. զխորհուրդս և զգիտութիւն կոչեցի յիս: ¹³Երկև Տեառն ատեայ զանիրաւութիւն. զթշնամանս և զհպարտութիւն, և զճանապարհս չարեաց: ¹⁴Ին է խորհուրդ և զգուշութիւն, և ին է հանճար և զօրութիւն: ¹⁵Ինն՝ թագաւորք թագաւորեն, և հզօրք գրեն զարդարութիւն: ¹⁶Ինն՝ մեծամեծք մեծանան, և բռունք ինն՝ ունին զերկիր: ¹⁷Ես՝ որ զիսն սիրեն՝ սիրեմ. և որ զիսն խնդրեն՝ զտցեն շնորհս: ¹⁸Մեծութիւն և փառք իմ իսկ են. և ստացուածք բազմաց և արդարութիւն: ¹⁹Լաւ է զիս ստանալ՝ քան զոսկի և զականս պատուականս. և զարդիւնս իմ քան զոսկի և զարծաթ ընտիր: ²⁰Ի ճանապարհս արդարութեան գնամ. և ՚ի մէջ շաւղաց արդարութեան շրջիմ: ²¹Ձի բաշխեցից սիրելեաց իմոց զմեծութիւն. և զգանձս նոցա լցուցից բարութեամբ:

ԺՅ Եթէ պատմեցից ձեզ զհանապազորդ լինելոցն, և յիշեցուցից որ յաւիտենիցն համարեալ են: ²²Տէր հաստատեաց զիս ՚ի սկիզբն ճանապարհաց իւրոց ՚ի գործս իւր. յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս: ²³Իսկզբանէ յառաջ քան զերկիր առնել. ²⁴և նախ քան զանդունդս գործել. և նախ քան զբղխել աղբիւրաց ջրոց: ²⁵յառաջ քան զլերինս հաստատել. յառաջ քան զամենայն բլուրս ծնաւ զիս: ²⁶Տէր արար զշէնս և զանշէնս. և զեզերս բնակեալս ՚ի ներքոյ երկնից: ²⁷Մինչդեռ պատրաստէր զերկինս՝ ընդ նմա՝ էի. և մինչ զատուցանէր զաթոռ իւր ՚ի վերայ հողոնց: ²⁸Եւ յորժամ զօրացուցանէր զամպս վերինս. և յորժամ հաստատուն դներ զաղբերս ՚ի ներքոյ երկնից: ²⁹Ի դնել ծովու զհաստատութիւն իւր. զի ջուրք մի՛ անցցեն ըստ ակնն նորա. ՚ի ժամանակի յորում հաստատուն դներ զհիմունս երկրի: ³⁰Ես էի առ նովաւ պատշաճեալ: Ես էի որով ուրախ լինէր Տէր հանապազ, և ցնծայի առաջի նորա յամենայն ժամ: ³¹Յորժամ ուրախ լինէր ընդ աշխարհին բովանդակել. և ցնծայր յորդիս մարդկան: ³²Արդ ո՛րդեակ՝ լո՛ւր ինձ. և երանելի են՝ որ զճանապարհս իմ պահիցեն: ³³Լուարո՛ւք զիմաստութիւն՝ և իմաստո՛ւնք լերուք, և մի՛

* *Ոմանք.* Ես իմաստութիւն բնակեցի ՚ի խորհրդեան. զգիտութիւն և զհանճար կոչեցի յիս:

* *Ոմանք.* Զթշնամանս և զամբարտաւանութիւն և զճանապարհս չարաց: *Յոր Ոսկան յաւելու.* Չարեաց. և *զբերան երկլեզու ապականէ:* Ին է:

* *Ոմանք.* Եւ ին է զօրութիւն:

* *Ոմանք.* Մեծութիւն և փառք իմ են:

* *Ոմանք.* Եւ արդիւնք իմ լաւագոյն են քան զարծաթ:

* *Ոմանք.* Շաւղաց ճշմարտութեան շրջիմ:

* *Ոմանք.* Լցից բարութեամբ... զհանապազորդ լինելոցսն, և յիշեցուցից զայն որ յաւ՛:

* *Ի լուս՛.* Տէր ստացաւ զիս ՚ի սկիզ՛. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:*

* *Ոմանք.* Ի սկզբանն յառաջ քան:

* *Ոմանք.* Եւ յառաջ քան զբղխել աղբերաց ջուրց:

* *Ոմանք.* Եւ նախ քան... և յառաջ քան զամենայն բլուրս ծնեալ են ես:

* *Ոմանք.* Յորժամ պատրաստէր:

* *Ոմանք.* Եւ յորժամ զօրաւոր առնէր զամպս... և յորժամ անսխալ դներ զաղբէ՛:

* *Ոմանք.* Ի դնել ծովու զգուշութիւն նորա, զի... ՚ի ժամանակի յորժամ հաստատուն:

Այլք. Ընդ ակնն նորա:

* *Ոմանք.* Առ նմա պատշաճեալ:

* *Ոմանք.* Յորժամ զուարճացեալ էր տիեզերս բովանդակել. և ուրախ լինէր յորդիս:

* *Ոմանք.* Երանելի են... պահեն:

պաշարիցիք*³⁴Երանեալ է այր որ լուիցէ ինձ, և մարդ որ զճանապարհս իմ պահիցէ. տքնիցի առ դրունս իմ հանապագ. և պահիցէ զսեանս մտից իմոց*
³⁵Ձի ելք իմ են ելք կենաց. և պատրաստին կամք իմ ՚ի Տեառնէ*³⁶Իսկ որ յիսն մեղանչեն՝ ամպարշտեն յանձինս իւրեանց. և որ ատեանն զիս՝ սիրեն զմահ*:

9

Գլուխ Թ

Ի ¹Իմաստութիւն շինեաց ի՛ւր տուն, և կանգնեաց սիւնս եւթն: ²Ձեն զզենլիս իւր, և խառնեաց ՚ի խառնելիս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր*³Եւ առաքեաց զժառայս իւր, կոչել բարձր քարոզութեամբ ՚ի խառնելիս իւր* ⁴և ասէ. Որ ոք իցէ անզգամ, եկեսցէ՛ առ իս: Եւ ցպակասամիտսն ասէ. ⁵Եկա՛յք կերա՛յք ՚ի հացէ իմնէ, և արբէ՛ք զգինի իմ զոր խառնեցի ձեզ: ⁶Թողէ՛ք զանզգամութիւն և կեցջիք. խնդրեցէ՛ք զիմաստութիւն զի ապրեսջիք. և ուղղեցէ՛ք գիտութեամբ զհանճար. և ուղիղ ճանապարհաւ իմացարո՛ւք զխրատ:

Իւ ⁷Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անարգանս. և որ յանդիմանէ զամպարիշտս՝ ատեայ զանձն*⁸Մի՛ յանդիմաներ զչարս, զի մի՛ ատեսցեն զքեզ. յանդիմանեա՛ զիմաստունն, և սիրեսցէ զքեզ. զանմիտն, և յաւելցէ ատել զքեզ*⁹Տո՛ւր իմաստնոյն պատճառս՝ և իմաստնագոյն ևս լիցի. տեղեկացո՛ զարդարն, և յաւելցէ ընդունել*¹⁰Սկիզբն իմաստութեան՝ երկև Տեառն, և խորհուրդ սրբոց հանճար. իմանալ զօրէնս՝ մտա՛ց առատաց է: ¹¹Այսո՛ւ օրինակաւ բազում ժամանակս կեցցես. և յաւելցին քեզ ամբ կենաց: ¹²Որդեակ իմ՝ թէ իմաստուն լինիցիս, անձին քում իմաստուն իցես՝ և ընկերաց. և եթէ անզգամ իցես՝ միայն պեղեսցես զչարիս: Որ հաստատի ՚ի ստութիւն՝ նա զհողմս արածէ և նոյն հալածէ զթռչունս թևաւորս: Ձի եթող զճանապարհս այգւոյ իւրոյ, և ՚ի շաւղաց անդոյ իւրոյ մոլորեալ է: Գնա՛յ ընդ անջրդին և ընդ անապատն. և ընդ երկիր կարգեալ ՚ի ծարաւուտ. և ժողովէ ձեռօք իւրովք զանպտղութիւն*¹³Կին անզգամ և յանդուգն կարօտ լիցի հացի. և որ ո՛չ գիտէ զամօթ*¹⁴Նստաւ առ դրունս տան իւրոյ աթոռով յայտնապէս ՚ի հրապարակս*¹⁵և կոչէ զանցաւորս որ գնայցեն ուղիղ զճանապարհս իւրեանց*¹⁶Որ ոք իցէ ՚ի ձէնջ առաւել

*Ոմանք. Եւ իմաստունք եղերուք:

*Ոմանք. Երանելի է այր... որ զիմ ճանապարհս պահիցէ. որ տքնի՛:

*Ոմանք. Ձի ճանապարհք իմ են ճանապարհք կենաց. և պատ՛: Ուր Ոսկան յաւելլու. Ձի որ զիս գտանիցէ՛ զտանիցէ՛ զկեանս, և ընդունիցի զփրկութիւն ՚ի Տեառնէ.
ճանապարհք իմ:

*Ոմանք. Ատեանն զիս՝ գտցեն զմահ:

*Ոմանք. Եզեն զզենլիս... ՚ի խառնարանս զգինի իւր:

*Ոմանք. Յանդիմանէ զամբարիշտն:

*Ոմանք. Եւ զանմիտն, և յաւել՛:

*Ոմանք. Ծանո՛ արդարոյն, և յաւել՛:

*Ոմանք. Անձին քում իցես... այնպիսին զհողմս արա՛... քանզի եթող զճա՛... գնայ ընդ անջուր և ընդ անապատ... ՚ի ծարաւուտս:

*Ոմանք. Կարօտ լիցի ՚ի հացէ:

*Ոմանք. Առ դուրս տան:

*Ոմանք. Որ գնան ուղիղ:

անմտագոյն՝ առ իս դարձցի. և պակասամտացդ հրաման տամ, և ասեմ*.¹⁷ Չա՛ց գաղտնի մտադեր կերիջիք, և ջուր գողունի՝ ավտորժելով արբջիք*:¹⁸ Եւ ո՞՞նչ գիտէ թէ երկրածինք առ նմա կորնչին. և ՚ի թափս դժոխոց հասանեն: Այլ դու ՚ի բա՛ց ոստիր, և մի՛ յամեր ՚ի տեղուջ նորա. և մի՛ հաստատեր զակն քո ՚ի նա: Ջի ա՛յնպէս անցցես ընդ ջուրն օտար, և անցանիցես ընդ գետն օտարական. և ՚ի ջրոյ օտարէ ՚ի բաց լինիցիս. և յօտար աղբիւրէ մի՛ ըմպիցես: Ջի բազում ժամանակս կեցցես. և յաւելցին քեզ ամբ կենաց*:

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

Բան երկրորդ

10

Գլուխ Ժ

¹Որդի իմաստուն՝ ուրախ առնէ գիայր. որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր:²Ո՛չ օգնեսցեն զանձք՝ անօրինաց. այլ արդարութիւն փրկէ ՚ի մահուանէ*:³Ո՛չ սովամահ առնէ Տէր զանձն արդարոյ. և զկեանս ամպարշտաց կործանեսցէ*:⁴Տնանկութիւն զա՛յր խոնարհեցուցանէ. ձեռք ժրաց՝ մեծացուցանեն*:⁵Որդի խրատեալ՝ իմաստուն լիցի. և զանմիտն ՚ի ծառայութեան վարեսցէ: Ապրեցա՛ւ ՚ի խորշակէ որդի իմաստուն. խորշակահա՛ր լինի ամարանի որդի՝ անօրէն*:⁶Օրհնութիւն Տեառն ՚ի գլուխս արդարոց. զբերանս ամպարշտաց ծածկեսցէ՝ սո՛ւգ տարածամ: ⁷Յիշատակ արդարոյ գովութեամբ. անուն ամպարշտաց շիջցի*:⁸Սիրտ իմաստուն ընկալցի զպատուիրանս. և ցո՛փն շրթամբք գայթազդելով կործանեսցի*:⁹Որ գնայ իմաստութեամբ՝ գնայ յուսով. իսկ որ թիւրէ զճանապարհս իւր՝ յայտնի՛ լիցի*:¹⁰Որ ակնարկէ ակամբ նենգութեամբ՝ ժողովէ արանց զտրտմութիւն. որ յանդիմանէ համարձակութեամբ՝ առնէ զխաղաղութիւն*:¹¹Աղբեր կենաց յԱստուծոյ ՚ի ձեռին արդարոյ. զբերան ամպարշտաց ծածկեսցէ կորուստ*:¹²Ձատելութիւն զրգռէ հակառակութիւն, և

*Ոմանք. Խտտորեսցի առ իս:

*Ոմանք. Եւ ջուր գողովցի. կամ՝ գաղտնի:

*Ոմանք. Եւ ո՛չ գիտէ եթէ... և յատակս դժոխոց հասա՛... Այլ ՚ի բաց վազեա՛, և մի՛ յամեր... քանզի այսպէս անց՛:

*Ոմանք. Ոչինչ օգնեսցեն:

*Ոմանք. Ձանձինս արդարոց. բայց զկեանս ամբա՛:

*Ոմանք. Աղքատութիւն զայր խոնար՛: Ոսկան յաւելու. Մեծացուցանեն: Որ ջանայ ստութեամբ նա արածէ գողոյնս. նոյն իսկ ինքն հետևի հաւուց թռուցելոց: Որ ժողովէ նէր հնձուն, որդի իմաստուն է. այլ որ ննջէ յամարայնի որդի պատկառանաց: (5) Որդի խրա՛... և անմիտն ՚ի ծառայութիւն վարեսցի:

*Ոմանք. Իմաստուն եղիցի:

*Ոմանք. Յիշատակ արդարոց հանդերձ գովութեամբ, և անուն ամպարշտի:

*Ոմանք. Իմաստունն սրտիւ ընկալ՛:

*Ոմանք. Որ գնայ միամտութեամբ... յայտնի եղիցի:

*Ոմանք. Որ ակն արկէ... նենգութեան... իսկ որ յանդի՛:

*Ոսկան. ՅԱստուծոյ բերան արդարոյ: Ուր ոմանք. Ջբերան ամբարշտի:

զամենեսին որ ո՛չ հակառակին ծածկէ սէր*։ ¹³Որ ՚ի շրթանց բղխէ զհմաստութիւն. իբրև գաւազանաւ հարկանէ զա՛յր անմիտ*։ ¹⁴Իմաստունը ծածկեսցեն զհմաստութիւն. բերան յանդգնելոյ մե՛րձ է ՚ի բեկումն*։ ¹⁵Ստացուածք մեծատանց՝ քաղաք ամուր. բեկումն ամպարշտաց՝ աղքատութիւն։ ¹⁶Գործք արդարոց կեանս առնեն. և պտուղք ամպարշտաց մեղս*։ ¹⁷Ձճանապարհս կենաց պահէ Տէր։ Խրատ առանց յանդիմանութեան՝ մոլա՛ր է։ ¹⁸Ծածկեն զթշամութիւն շրթունք արդարք. իսկ որ ՚ի վե՛ր հանեն զբամբասանս՝ անզգամք են։ ¹⁹Ի Շատխօսութենէ ո՛չ ապրեսցիս ՚ի մեղաց. թէ խնայես ՚ի շրթունս՝ իմաստո՛ւն լինիս*։ ²⁰Արծաթ ընտի՛ր է լեզու արդարոյ. սիրտ ամպարշտի նուաղեսցի*։ ²¹Շրթո՛ւնք արդարոց ճանաչեն զբարձունս. և անզգամք ՚ի կարօտութեան սատակեսցին*։ ²²Օրհնութիւն Տեառն ՚ի գլուխս արդարոց. և նոյն մեծացուցանէ, և ո՛չ ևս յաւելու տրտմութիւն ՚ի սի՛րտ նորա*։ ²³Ծիծաղելով գործէ անզգամ զչար. իսկ իմաստութիւն առն նիւթ զհանճար*։ ²⁴Ըստ կորստեան շրջի ամպարիշտ. ցանկութիւն արդարոց՝ ընդունելի է*։ ²⁵Յանցանել մրրկի՝ եղծանի ամպարիշտն. իսկ արդարոյն խոյս տուեալ՝ կեցցէ՛ յաւիտեան*։ ²⁶Որպէս ազոխ՝ ատամանց վնասակա՛ր է՝ և ծո՛ւխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւնք որոց վարին նովաւ։ ²⁷Երկեղ Տեառն յաւելու յաւուրս. ամբ ամպարշտաց նուազեսցին*։ ²⁸Յերկարի արդարոց ուրախութիւն. յոյս ամպարշտաց կորիցէ։ ²⁹Ամրութիւն սրբոց երկեղ Տեառն. և բեկումն այնոցիկ ոյք գործեն զչարիս*։ ³⁰Արդար՝ յաւիտեան ո՛չ դողացէ. ամպարիշտք մի՛ բնակեսցեն յերկրի*։ ³¹Բերան արդարոյ բղխէ զհմաստութիւն, լեզո՛ւ անհրաւի սատակեսցի*։ ³²Շրթունք արանց արդարոց բղխեսցեն զշնորհս. բերան ամբարշտաց կործանեսցի*։

11

Գլուխ ԺԱ

¹Կշիռք նենգութեան պիղծ են առաջի Տեառն. կշիռ արդար ընդունելի՛ է նմա*։ ²Յոր վայր մտանեն թշնամանք, անդ են և անարգանք։ Բերան խոնարհաց

* *Ոմանք*. Ատելութիւն գրգռէ զհակա՛ն։

* *Ոմանք*. ՚ի շրթանց իւրոց բղխ՛։

* *Ի լուս*. Ծածկեսցեն զզգայութիւն։ *Ոմանք*. Ծածկեն զհմաս՛... բերան յանդուգն։

* *Ոմանք*. Ամբարշտաց մեղք։

* *Ոմանք*. Շատխօս լինելով, ո՛չ զերծցիս ՚ի մեղաց, եթէ խնայես ՚ի շրթունս քո, ի՛։

* *Ոմանք*. Լեզու իմաստնոյ։

* *Ոմանք*. Իսկ անզգամք ՚ի կա՛ն։

* *Ոսկան*. Եւ ո՛չ ևս յաւելանայ։

* *Ոսկան*. Անզգամն զչարիս։

* *Ոմանք*. ՚ի կորստեան շրջի։

* *Ոմանք*. ՚ի յանցանել մրր՛... և արդարոյն։

* *Ոսկան*. Յաւելու զաւուրս... նուազեսցին։

* *Ոսկան*. Ամրութիւն արդարոց եր՛։ *Ոմանք*. Եւ խորտակումն այնոցիկ որ։

* *Ոմանք*. Ոչ սասանեսցի, և ամպա՛ն։

* *Ոմանք*. Բղխեսցէ զհմաստութիւն։

* *Ոմանք*. Կաթեն շնորհս... կործանի։

* *Ոսկան*. Կշիռ նենգութեան պիղծ է։

խոկայ գիմաստութիւն*։ ³Կատարունն ուղղոց առաջնորդեսցէ՛ նոցա և գայթագողութիւն արհամարհողաց աւերեսցէ՛ զնոսա*։ ⁴Ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան. այլ արդարութիւն փրկէ՛ ՚ի մահուանէ։ Մեռաւ արդար՝ և եթող զղջունն յոյժ. յանդուզն և ոտնհարութիւն լինի կորուստ ամպարշտաց*։ ⁵Արդարութիւն անբժի ուղղէ՛ զճանապարհս, և յամպարշտութիւնս արկանէ անհրաւութիւն*։ ⁶Արդարութիւն արանց ուղղոց փրկէ զնոսա, անմտութեամբ կորնչին անօրէնք։ ⁷Ի վախճանել առն արդարոյ ո՛չ կորնչի յոյս. բայց պարծանք ամպարշտաց կորիցեն*։ ⁸Արդար՝ յորսողաց փրծանի, և փոխանակ նորա մատնի՝ ամպարիշտն։ ⁹Ի բերանս անօրինաց որոգայթ ընկերաց. իմաստութիւն արդարոց յաջողեալ է*։ ¹⁰Ի բարութեան արդարոց յօրինեցաւ քաղաք. և ՚ի կորստեան ամպարշտաց եղև ուրախութիւն*։ ¹¹Յօրհնութեան ուղղոց բարձրասցի քաղաք. և բերանօք ամպարշտաց կործանեսցի*։ ¹²Արհամարիտ զընկերս այր պակասամիտ. այր իմաստուն զլռութիւն սիրէ*։ ¹³Այր երկխօս՝ յայտնէ զխորհուրդս յատենի, իսկ հաւատարիմն ոգւով՝ ծածկէ՛ զիրս*։ ¹⁴Որոց ո՛չ գոյ առաջնորդութիւն՝ թօթափին իբրև զտերև. փրկութիւն գոյ՝ ՚ի խորհուրդս բազումս*։ ¹⁵Անզգամ՝ չարիս գործէ յորժամ խառնակիցի ընդ արդարոյ. և ատեայ զբարբառ զգուշութեան*։ ¹⁶Կին շնորհակալ բարձր առնէ զփառս առն իւրոյ. և աթոռ անարգութեան՝ կին որ ատեայ զիրաւունս։ Ի մեծութենէ վատք՝ կարօտեալ լինին. իսկ որ ժիրքն են՝ հաստատին մեծութեամբ*։ ¹⁷Անձին իւրում բարի գործէ այր ողորմած, կորուսանէ զմարմին իւր՝ այր անողորմ*։ ¹⁸Ամպարիշտ՝ գործէ զգործս անհրաւութեան. զաւակ արդարոց՝ վարձկան ճշմարտութեան*։ ¹⁹Որդի արդար՝ ծնանի ՚ի կեանս. հալածանք ամպարշտաց ՚ի մահ։ ²⁰Պիղծ են Տեառն ճանապարհք թկրք. ընդունելի են նմա ամենայն անբիծք ճանապարհաւ*։ ²¹Որ ձեռներեց լինի տարապարտուց, առանց պատժի ո՛չ լիցի։ Իսկ որ սերմանէ զարդարութիւն, կալցի վարձս հաւատարիմ*։ ²²Իբրև գինդ ոսկի ՚ի քիթ խոզի՝ այնպէս կնոջ չարաբարոյի գեղեցկութիւն*։

* *Ոմանք.* Ուր մտանեն... խօսի գիմաստութիւն։ *Ուր ՚ի լուս*՝ Անդ են և անարգութիւնք. *համաձայն ոմանց ՚ի բն*՝ Ոսկան յաւելու. Եւ անարգութիւնք. *իսկ ուր է խոնարհութիւն՝ անդ և իմաստութիւն.* բերան։

* *Ոմանք.* Կատարելութիւն ուղղոց։

* *Ոմանք.* Ոչինչ օգնեսցեն... և ոտն հարութեամբ լինի կո՞։ *Յօրհնակին.* Ոչ օգնեսցեն ինչ յա՞։

* *Ոմանք.* Արդարութիւն անարատի... և յամբարշտութիւն անկանի անհրաւն։

* *Ոմանք.* Ամբարշտաց կորնչին։

* *Ոմանք.* Ի բերանս ամբարշտաց որոգայթ քաղաքակցաց։

* *Ոմանք.* Բարութիւնք արդարոց յօրինեն զքաղաքս։ *Ոսկան.* և ՚ի կորուստ ամբ՞։

* *Ոմանք.* Օրհնութեամբ ուղղոց բարձրանայ քաղաք... կործանի։

* *Ոմանք.* Արհամարիտ զքաղաքակիցս այր պա՞։

* *Ոսկան.* Ծածկէ զնոսա։

* *Ոմանք.* Որպէս զտերև. փրկութիւն գտանի ՚ի խոր՞։

* *Ոմանք.* Չարն առնէ զչարիս յորժամ խառնակի ընդ։

* *Ոմանք.* Կին շնորհակալու... կին որ ատէ զարդարութիւն... վատք կարօտ լինին։

* *Ոմանք.* Գործէ բարիս ողորմածն։

* *Ոմանք.* Վարձ ճշմարտութեան։

* *Ոմանք.* Եմա ամենայն անարատք ՚ի ճանապարհս իւրեանց։

* *Ոմանք.* Ձեռներեց լիցի ՚ի տա՞... ընկալցի վարձս հաւատարիմս։

* *Ոմանք.* Որպէս գինդ ոս՞... նոյնպէս կնոջ չարի գե՞։

²³Ցանկութիւն արդարոց ամենայն բարութեամբ. յոյս ամպարշտաց կորիցէ*:
²⁴Ե՛ն որ զհրեանց սերմանեն և բազմապատիկ առնեն, և են՝ որ յանիրաւութենէ ժողովեն՝ և կարօտանան: ²⁵Ամենայն անձն օրհնեալ՝ պարզամիտ է. և այր բարկացօղ՝ տգեղ է կերպարանօք: ²⁶Որ խնայէ զցորեան՝ լքցէ՛ զնա օտարաց. և որ ճշդէ զցորեան՝ հրապարականէ՛ծ լիցի. այլ օրհնութիւն՝ ՚ի գլուխս սփռողաց*:
²⁷Որ նիւթ զբարիս՝ խնդրէ՛ զշնորհս բարութեան. իսկ որ խնդրէ՛ զչար՝ հասցէ նմա: ²⁸Որ յուսայ՝ ՚ի մեծութիւն՝ կործանեսցի, իսկ որ վերակացու լիցի արդարոց՝ նա ծագեսցէ*:
²⁹Որ ո՛չ գայցէ զտամբ իւրով, նա զհողմս ժառանգեսցէ. և ծառայեսցէ անմիտն իմաստնոյն*:
³⁰Ի պտղոյ արդարութեան բուսանի ծառ կենաց. բարձցին տարածան անձինք անօրինաց*:
³¹Եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ մեղաւորն և ամպարիշտն ո՞ւր գտանիցին*:

12

Գլուխ ԺԲ

¹Որ սիրէ զխրատ՝ սիրէ զիմաստութիւն. իսկ որ ատեայ զյանդիմանութիւն՝ անմիտ է*:
²Լա՛ւ է որ գտանէ շնորհս ՚ի Տեառնէ. իսկ այր անօրէն կարկեսցի*:
³Ո՛չ յաջողեսցի մարդոյ յանօրէնութենէ. արմատք արդարոց ո՛չ հատցին*:
⁴Կին ժրագլուխ՝ պսակ է առն իւրոյ. որպէս որդն՝ փայտի վնասակար է, նոյնպէս կորուսանէ զայր կին չարագործ*:
⁵Խորհուրդք արդարոց իրաւունք. առաջնորդք են ամպարիշտք նենգութեանց*:
⁶Բերան ամպարշտաց նենգաւորք. բերան ուղղոց փրկեսցէ զնոսա*:
⁷Յոր կողմ և դարձցի ամպարիշտն՝ եղծանի՛. տունք արդարոց յերկարեսցին*:
⁸Բերան իմաստնոյ գովի՛ ՚ի մարդկանէ. իսկ խօթասիրտն արհամարհեսցի:
⁹Լա՛ւ է մարդոյ խոնարհութեամբ ծառայել անձին, քան անձին շուք եղեալ՝ և հաց մուրանայցէ:
¹⁰Արդար ողորմի՛ անասնոյ իւրում. աղիք ամպարշտաց անողորմ են*:
¹¹Որ գործէ զերկիր իւր՝ յագեսցի հացիւ, իսկ որ զհետ երթան զանրութեան՝ պակասամիտք են:
 Որ ախորժէ զգինեաց դեգերանս, թողցէ՛ ՚ի բնակութիւնս իւր զանարգանս*:
¹²Ցանկութիւնք ամպարշտաց՝ չար են. արմատք բարեպաշտաց՝ հաստատունք են:
¹³Վասն

* Ոմանք. Յոյս ամբարշտաց կորնչի:

* Ոմանք. Որ անխայէ ՚ի ցորեան... օրհնութիւն Տեառն ՚ի գլ՝: *Ի լուս*. Ի գլուխս սփռողին. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*:

* Ոմանք. Այնպիսին կործանեսցի. իսկ որ օգնական լինի արդարոց, ծագեսցէ:

* Ոմանք. Եւ որ ո՛չ գայ զտամբ... զհողմս արածէ:

* Ոմանք. Տարածան ոգիք անօ՞: *Ուր Ոսկան*. Որդիք անօրինաց:

* Ոմանք. Եւ ամբարիշտն ուր երևեսցի:

* Ոմանք. Եւ որ ատեայ:

* Ոսկան. Լաւ է գտանել զշնորհս:

* Ոմանք. Մարդոյ յանիրաւութենէ:

* Ոմանք. Որպէս որդն ՚ի փայտի, նոյնպէս:

* Ոմանք. Առաջնորդեն ամբարիշտք:

* Ոմանք. Նենգաւորք են... փրկէ զնոսա:

* Ոսկան. Յերկարասցին:

* Ոմանք. Անասնոյ իւրոյ:

* Ոմանք. Լցցի հացիւ. և որ զհետ երթայ դատարկութեան. լցցի աղքատութեամբ... ՚ի բնակութիւնս իւր անարգութիւն:

վնասու շրթանց անկանի յորոգայթ մեղաւորն՝ և արդարն զերծանի՝ ՚ի նմանէ։ Քաղցրահայեացն գթութիւն գտցէ. որ պատահէ ՚ի դրունս՝ նեղէ զոգիս*։ ¹⁴Ի պտղոյ բերանոյ առն՝ լցցի՝ անձն իւր բարութեամբ. հատուցունն շրթանց իւրոց հատուցի՝ նմա։ ¹⁵Ճանապարհք անմտաց՝ ուղիղ թուին առաջի նոցա։ Ունկնդի՛ր լինի խրատու իմաստունն. ¹⁶իսկ անմիտն առ օրին յայտնէ զբարկութիւն իւր։ Թաքուցանէ զանարգանս իւր այր խորագէտ*։ ¹⁷Եւ գայտ հաւատս պատմէ արդար. իսկ վկայ անօրինաց նենգաւոր է*։ ¹⁸Են՝ որ բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով. բայց լեզուք իմաստնոց բժշկեն*։ ¹⁹Շրթունք ճշմարիտք հաստատեն զվկայութիւն. վկայ վաղվաղուկ՝ ունի լեզու անիրաւ*։ ²⁰Նենգութիւն կայ ՚ի սրտի չարանիւթի. իսկ որ կամին զխաղաղութիւն՝ ուրախ լիցին*։ ²¹Ո՛չ է հաճոյ արդարոյ՝ և ո՛չ մի ինչ անիրաւ. իսկ ամպարիշտք լցցին չարութեամբ*։ ²²Պիղծ են առաջի Տեառն շրթունք սուտք. իսկ որ առնէ զհաւատս ընդունելի՝ է նմա*։ ²³Այր իմաստուն՝ աթո՛ռ հանճարոյ. սիրտ անզգամաց պատահեսցէ նզովից*։ ²⁴Ձեռն ընտրելոց դիրաւ՝ յաղթեսցէ. նենգաւորք մատնեսցին ՚ի յափշտակութիւն։ ²⁵Բան ահեղ խռովեցուցանէ զսիրտ առն արդարոյ. աւետիք բարեաց՝ ուրախ առնեն զնա։ Արդարն իրաւախոհ սիրէ զանձն. խորհուրդք ամպարշտաց մեղմեխք են։ Չմեղաւորս հալածեն չարիք*։ ²⁶Արդարոց հասցեն բարութիւնք։ Ճանապարհք ամպարշտաց մոլորեցուցէ՝ զնոսա. ²⁷ո՛չ պատահեսցէ որս նենգաւորի։ Ստացուածք պատուական է այր սուրբ և առատ*։ ²⁸Ի ճանապարհս արդարութեան կեանք. ճանապարհք ոխակալաց մահ*։

13

Գլուխ ԺԳ

¹Որդի խորագէտ հնազանդ հօր. որդի անհնազանդ՝ ՚ի կորուստ եղիցի*։ ²Ի պտղոյ արդարութեան կերիցէ առատ. անձինք անօրինաց սատակեսցին տարածամ։ ³Որ խնայէ ՚ի բերան իւր՝ պահէ զանձն. իսկ որ յանդուզն է շրթամբք՝ խռովէ զանձն իւր*։ ⁴Ի կարօտութեան է ամենայն վատ. ձեռք ժրաց ՚ի դարմանս։ ⁵Ջբան անիրաւ՝ ատեայ՝ արդար. իսկ ամպարիշտն ամաչէ, և ո՛չ գտցէ համարձակութիւն*։ ⁶Արդարութիւն պահէ զանմեղս ճանապարհաւ

* *Ոմանք.* Գթութիւն գտանէ... նեղէ զանձինս։

* *Ոմանք.* Ծածկէ զանարգանս իւր խորագէտն։

* *Ոմանք.* Եւ գայտնի զհաւատս պատ*։

* *Ոսկան.* Խոցոտեն որպէս սրով։

* *Ոսկան.* Շրթունք իմաստունք... վկայ վաղվաղակ՝ ու*։ *Ուր ոմանք.* վաղվաղակի։

* *Ոմանք.* Նենգութիւն է ՚ի սրտի չարանիւթին։ *Ուր Ոսկան.* Որ առնէ զխա՛... լիցի։

* *Ոմանք.* Եւ ոչինչ անիրաւ... լցցին չարեօք։

* *Ոսկան.* Որ առնէ զհաւատարիմս։

* *Ոմանք.* Պատահէ նզովից։

* *Ոմանք.* Բան ահաւոր խռովե՛... զանձն իւր. բարք ամբար*։

* *Ոմանք.* Այր բարի։

* *Ոմանք.* Ոխակալաց ՚ի մահ։

* *Ոմանք.* Հնազանդ է հօր։ *Ուր Ոսկան.* հնազանդի հօր։

* *Ոմանք.* Որ անխայէ ՚ի բերան իւր՝ զանձն իւր սիրէ. իսկ որ։

* *Ոսկան.* Ջբերան անիրաւ՝ ատ*։ *Ոմանք.* Եւ ո՛չ ունի համարձա՛*։

զամպարիշտս անզգամեցուցանեն մեղք*։ 7Ե՛ն՝ որ մեծացուցանեն զանձինս՝ և ո՛չ ինչ ունին, և ե՛ն որ խոնարհեցուցանեն զանձինս՝ և լի՛ են մեծութեամբ բազմաւ*։ 8Փրկանք անձին մարդոյ՝ մեծութիւն իւր. իսկ տնանկն ո՛չ հանդարտ պատուեհասի*։ 9Լոյս արդարոց՝ յամենայն ժամ. լոյս ամպարշտաց՝ շիջցի։ Անձինք նենգաւորք՝ մոլորեցին՝ ՚ի մեղս. այլ արդարք՝ գթասցին և ողորմեցին։ 10Անզգամ թշնամանօք գործէ զչարիս. իսկ որ իրաւախոհքն են յանձինս՝ իմաստունք են։ 11Մեծութիւն խռկեալ անիրաւութեամբ՝ պակասեցէ. իսկ որ աստուածպաշտութեամբ ժողովէ՝ բազմասցի։ Լա՛ւ է իսկզբան օգնել սրտիւ. քան որ վաղվաղիցէ խոստանալ*։ 12և կախեալ կայցէ գյուսոյ։ Արդար ողորմի՛ և տայ՝ փոխ. ծառ կենաց ցանկութիւն բարեաց*։ 13Որ արհամարիէ զիրօք՝ արհամարիեցի՛ ՚ի նոցանէ. որ երկնչի՛ ՚ի պատուիրանէն՝ առո՛ղջ լիցի։ Որդւոյ նենգաւորի՝ բարի ինչ մի՛ եղիցի. ծառայի իմաստնոյ՝ յաջողեցին գործք իւր, և ուղղեցին ճանապարհք նորա*։ 14Օրէնք իմաստնոյ աղբւր կենաց. իսկ անմիտն ընդ որոգայթիւ մեռցի։ 15Իմաստութիւն բարի՝ տայ՝ շնորհս. և ճանաչել զօրէնս՝ մտաց բարեաց է. ճանապարհ արհամարիողաց՝ ՚ի կորուստ*։ 16Ամենայն խորագէտ՝ գործէ իմաստութեամբ. իսկ անմիտն տարածէ յանձն իւր զչարիս*։ 17Թագաւոր յանդուգն՝ անկցի՛ ՚ի չարիս. և հրեշտակ հաւատարիմ՝ փրկէ զնա*։ 18Ջաղքատութիւն և զանարգանս՝ ՚ի բաց բառնայ խրատ. և որ պահէ գյանդիմանութիւնս փառաւորեցի։ 19Ցանկութիւն բարեպաշտաց քաղցրացուցանեն զոգիս. գործք ամպարշտաց՝ հեռի՛ են ՚ի գիտութենէ։ 20Որ գնայ ընդ իմաստունս՝ իմաստուն եղիցի. և որ թարթափի ընդ անզգամս՝ յայտնի՛ եղիցի*։ 21Ձմեղաւորս՝ հալածեն չարիք. և արդարոց՝ հասցեն բարութիւնք։ 22Այր առատ՝ ժառանգեցուցանէ զորդիս որդւոց. զանձի արդարոց՝ մեծութիւն ամպարշտաց*։ 23Արդարք՝ վայելեցեն ՚ի մեծութեան անս բազումս. և անիրաւք կորնչին վաղվաղակի։ 24Որ խնայէ՛ ՚ի գաւազան՝ աստայ՝ զորդի իւր. իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ*։ 25Արդարն յուտել իւրում յագեցուցանէ զանձն իւր. և անձինք ամպարշտաց՝ կարօտեալք*։

14

Գլուխ ԺԴ

1Իմաստուն կանայք՝ շինեցին տունս. իսկ անզգամքն ձեռօք իւրեանց կործանեցին։ 2Որ գնայ ուղիղ՝ երկնչի՛ ՚ի Տեառնէ. և որ կամակորի՛ ՚ի

* Ոմանք. Ձանմեղս ՚ի ճանապարհէ. զամպարիշտս պիղծ առնեն մեղք։

* Ոմանք. Եւ ոչինչ ո՛չ ունին։

* Ոմանք. Իսկ աղքատն ո՛չ հանդարտ*։

* Ոմանք յաւելուն. Խռկեալ անօրէնութեամբ... բազմասցի *անձին իւրում*։

* Ոմանք. Ծառ կենաց է։

* Ոմանք. ՚Ի պատուիրանէն Աստուծոյ... բարի ո՛չ եղիցի։

* Ոմանք. ճանապարհք... ՚ի կորուստ է։

* Ոսկան. Տարածեաց յանձն իւր։

* Ոմանք. Անկցի յորոգայթ։

* Ոսկան. Յայտնի լիցի։

* Ոսկան. Այր անարատ ժառ*։ Ուր ոմանք. ժառանգեցուցէ։

* Ոսկան. Իսկ որ սիրէ։

* Ոմանք. Եւ անձինք... կարօտք են։ Ուր Ոսկան. Կարօտք եղիցին։

ճանապարհս իւր՝ անարգեսցի: ³Ի բերանոյ անզգամաց՝ գաւազան
 թշնամանաց. շրթունք իմաստնոց զգոյշ լինիցին նոցա*: ⁴Ուր ո՛չ գոն եզինք՝
 մտուրք սուրբ են. և ուր բազում արդիւնք են, յայտնի՛ է եզին զօրութիւն: ⁵Վկայ
 հաւատարիմ՝ ո՛չ ստէ. բորբոքէ՛ զստութիւն՝ վկայ անհրաւ: ⁶Խնդրեսցես
 զիմաստութիւն առ ՚ի չարաց՝ և ո՛չ գտցես. և զհանճար առ յիմաստնոց՝ դիւրաւ*:
⁷Ամենայն ինչ հակառակ է անզգամի. զէն հանճարոյ շրթունք իմաստունք:
⁸Իմաստութիւն խորագիտաց՝ ծանիցէ զճանապարհս նոցա. անմտութիւն
 անզգամաց՝ մոլորութեամբ*: ⁹Տունք անօրինաց պարտաւորեսցին ՚ի սրբութենէ.
 տունք արդարոց՝ ընդունելի՛ են նմա: ¹⁰Սիրտ առն ընդմտատարի՛ տրտմութիւն
 է անձին իւրոյ. և յորժամ ուրախ լինի՝ չխառնի ընդ թշնամանս*: ¹¹Տունք
 ամպարշտաց՝ կործանեսցին. յարկք արդարոց՝ հաստատեսցին*: ¹²Են
 ճանապարհք որ թուին մարդկան թէ ուղիղ իցեն. բայց կատարած նոցա երթայ
 յատակս դժոխոց*: ¹³Ընդ ուրախութիւնս՝ ո՛չ խառնի տրտմութիւն. բայց յետոյ
 ուրախութիւնն ՚ի սո՛ւզ գայ: ¹⁴Յիւրոց ճանապարհաց յագեսցի խստասիրտն. և
 ՚ի խորհրդոց իւրոց ուղղեսցի այր բարերար*: ¹⁵Ամենեղն հաւատայ ամենայն
 բանի. իսկ խորագէտն գայ ՚ի զղջումն*: ¹⁶Իմաստունն զարհուրեալ՝ խտորեցաւ
 ՚ի չարէ. իսկ անզգամն յանձնապաստան խառնակի՛ ընդ անօրինին:
¹⁷Բարկասիրտ՝ գործէ՛ առանց խորհրդոյ. և այր իմաստուն՝ յո՛յժ համբերէ:
¹⁸Բաժանին ամպարիշտք ՚ի չարիս. իսկ խորագէտք զօրանան իմաստութեամբ*:
¹⁹Գայթազղեսցին չարք առաջի բարեաց. և ամպարիշտք կողկողեսցին առ
 դրունս արդարոց*: ²⁰Բարեկամք ատեսցեն զբարեկամս աղքատս. բարեկամք
 մեծատանց բազումք*: ²¹Որ անարգէ զտնանկն՝ մեղանչէ. և որ ողորմի աղքատի՝
 երանելի է*: ²²Մոլորեալք նիւթեն զչարիս. զողորմութիւն և զճշմարտութիւն
 նիւթեն բարիք: Ո՛չ գիտեն զողորմութիւն և զհաւատ՝ նիւթօղք չարեաց,
 ողորմութիւն և հաւատք առ նիւթօղս բարեաց*: ²³Ամենայնի որ հոգայ՝ մի ինչ
 աւելի է, իմաստութիւն. իսկ անձնդիւրն և անհոգն ՚ի կարօտութեան եղիցի*:
²⁴Պսակ իմաստնոց՝ խորագիտութիւն. և զնացք անմտաց՝ չարութիւն*: ²⁵Փրկե՛
 զանձն՝ վկայ հաւատարիմ. և բորբոքէ ստութեամբ նենգաւորն*: ²⁶Յերկկղ

* *Ոմանք.* Գաւազան բարկութեան. շրթունք իմաստնոց պահեսցեն զնոսա:
 * *Ոմանք.* Առ ՚ի յիմաստնոց:
 * *Ոմանք.* Ձճանապարհս նորա:
 * *Ոմանք.* Չխառնի ՚ի թշնամանս:
 * *Ոմանք.* Յարկք արդարոց օրհնեսցին:
 * *Ոսկան.* Է ճանապարհ որ թուի յաչս մարդկան թէ ուղիղ իցէ... նորա երթայ ՚ի յատակս դժ՛:
 * *Ոմանք.* Ի յիւրոց ճանապարհաց:
 * *Ոսկան յաւելու.* Գայ ՚ի զղջումն. *որդւոյ նենգաւորի ո՛չ ինչ եղիցի բարի. իսկ ծառայի իմաստնոյ պատկանաւորք եղիցին գործք, և ուղղեսցին ճանապարհք նորա:*
 * *Ոսկան.* Բաժանեն ամբա՛:
 * *Ոսկան յաւելու.* Առ դրունս արդարոց: *Բայց բարեկամի իւրոյ աղքատն ատելի եղիցի:*
 * *Ոմանք.* Բարեկամք աղքատք ատեսցեն:
 * *Ի լուս՝.* Որ անարգէ զաղքատն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:* *Ոսկան յաւելու.*
 Աղքատաց, երանելի է, *որ հաւատայ ՚ի Տէր՝ զողորմութիւն սիրէ:*
 * *Ոմանք.* Ձողորմութիւն և զհաւատք:
 * *Ոմանք.* Մի ինչ է. *կամ՝* իցէ աւելի:
 * *Ի լուս՝.* Պսակ իմաստնոց մեծութիւն:
 * *Ոմանք.* Փրկէ ՚ի չարէ զանձն:

Տեառն՝ յոյս զօրութեան. և որդւոց իւրոց թողու զհաստատութիւն խաղաղութեան: ²⁷Յրաման Տեառն աղբւր կենաց. և առնէ խոտորել յորոգայթից մահու*: ²⁸Ի բազում զօրս՝ փառք թագաւորի. ՚ի նուազել ժողովրդոց՝ բեկումն հզօրաց: ²⁹Այր երկայնամիտ՝ բազմապատիկ է խորհրդովք. իսկ կարճամիտն՝ յոյժ անմիտ է: ³⁰Այր հեզ՝ բժիշկ է սրտի. ցե՛ց ոսկերաց սիրտ հոգած*: ³¹Որ զրպարտէ զտնանկն՝ բարկացուցանէ զԱրարիչ նորա, և որ պատուէ զՆա՝ ողորմի աղքատի: ³²Չարեօք իւրովք մերժի՝ անպարհիշտն, և որ յուսայ յանձին սրբութիւն՝ արդար է: ³³Ի սիրտ առատ հանգչի իմաստութիւն. և ՚ի սիրտ անմտաց ո՛չ ծանիցի*: ³⁴Արդարութիւն զազգ բարձրացուցանէ. նուազեցուցանեն զազգս մեղք: ³⁵Ընդունելի՛ է թագաւորի սպասաւոր իմաստուն. և իւրով շուքափութեամբ թօթափէ զանարգանս: Բարկութիւն կորուսանէ զիմաստունս*:

15

Գլուխ ԺԵ

¹Պատասխանի ողորձ՝ դարձուցանէ զսրտմտութիւն: Բան խիստ՝ յարուցանէ զբարկութիւն. ²Լեզու իմաստնոյ գիտէ զբարիս: Բերան անզգամաց պատմեն զչարիս*: ³Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զբարիս և զչարս: ⁴Բժշկութիւն Լեզուի՝ ծա՛ռ կենաց. և որ պահէն զնա՝ լցցի՛ հոգւով*: ⁵Անզգամն՝ անգոսնէ զխրատ հօր. որ պահէ զյանդիմանութիւն՝ խորագէտ է: Ի յաճախել արդարութեան՝ զօրութիւն բազում. և անպարհիշտք արմատաքի՛ յերկրէ կորիցեն*: ⁶Տունք արդարոց զօրութեամբ բազմաւ. պտուղք անպարշտաց կորիցեն: ⁷Շրթունք իմաստնոց՝ հաստատեալ են իմաստութեամբ. սիրտք անմտաց ո՛չ են անսխալք: ⁸Պատարագք անպարշտաց՝ պիղծ են առաջի Աստուծոյ. ուխտք ուղղոց՝ ընդունելի՛ են նմա*: ⁹Պիղծ են առաջի Տեառն ճանապարհք անպարշտաց. իսկ որ երթայ զհետ արդարութեան՝ սիրէ զնա: ¹⁰Խրատ անմեղին՝ ճանաչի՛ մերձաւորաց, իսկ որ ատեանն զյանդիմանութիւն՝ վախճանեցցին անարգանօք*: ¹¹Դժոխք և կորուստ յայտնի՛ են առաջի Տեառն. զհարձ ո՛չ և սիրտք մարդկան*: ¹²Ոչ սիրէ անխրատն զյանդիմանիչս իւր, և ընդ իմաստունս ո՛չ խօսեցցի: ¹³Սրտի բերկրեցելոյ երեսք ծաղկին. և ոգի որ ՚ի տրտմութեան թախծեալ շրջի*: ¹⁴Սիրտ ուղիղ՝ խնդրէ զիմաստութիւն. և բերան անխրատից՝ տեղեկանայ չարեաց: ¹⁵Յամենայն ժամանակս աչք չարաց՝

* Ոսկան. Երկիւղ Տեառն աղբւր կեն՝:

* Ոմանք. Այր հեզ երկայնամիտ բժ՝:

* Ոմանք. Ի սիրտ բարի հանգչի... ո՛չ ճանաչի:

* Ոմանք. Շուքափութեամբ ՚ի բաց բառնայ զանարգութիւն: Ուր Ոսկան.

շուտափութութեամբ:

* Ոմանք. Լեզուք իմաստնոց գիտեն:

* Ոմանք. Եւ որ պահեն զնոսա:

* Ոմանք. Իսկ որ պահէ զյանդի՛:

* Ոսկան. Առաջի Տեառն:

* Ոմանք. Իսկ որք ատեն զիմաստութիւն վախճանեցցին անարգութեամբ:

* Ոսկան. Զհարդ և ո՛չ սիրտ:

* Բազունք. Սրտի բերկրելոյ... որ ՚ի տրտմութեան իցէ՝ թախ՝: Ոսկան. Երեսք ծիծաղեցցին:

սպասե՛ն չարեաց, իսկ բարիքն՝ հանդարտե՛ն յամենայն ժամ: ¹⁶Լա՛ւ է փոքր բաժին երկիւղի Տեառն, քան զգանձս մեծամեծս աներկիւղութեամբ*։ ¹⁷Լա՛ւ է կոչունք բանջարեղէնք սիրով և շնորհիւ, քան զուարակ՝ ՚ի մարոյ թշնամութեամբ*։ ¹⁸Այր բարկացող՝ նիւթ՝ գկռիւս. իսկ երկայնամիտն և զհանդերձեալն ցածուցանէ։ Այր երկայնամիտ շիջուցանէ զդատաստանս. իսկ ամպարիշտն՝ առաւել ևս գրգռէ։ ¹⁹Ճանապարհք վատաց՝ կցեալ են փշովք, իսկ ժրացն վարունք են*։ ²⁰Որդի իմաստուն՝ ուրախ առնէ զհայր. որդի անմիտ՝ արհամարիէ զմայր իւր։ ²¹Սիրտ անմտի կարօ՛տ է հանճարոյ. այր իմաստուն ուղղորդ գնայ։ ²²Յապաղեն զխորհուրդս՝ որ ո՛չ պատուեն զխորհրդակիցս։ ՚Ի սիրտս խորհրդականաց հաստատի՝ խորհուրդ. ²³և ո՛չ հնազանդի նմա անզգամ. և ո՛չ ասիցէ դիպօղ ինչ և բարի հասարակաց*։ ²⁴Ճանապարհք կենաց ՚ի խորհուրդս իմաստնոց, զի խորշեալ ՚ի դժոխոց՝ փրկեսցի*։ ²⁵Չտունս թշնամանողաց կործանէ՝ Տէր. և հաստատէ զսահմանս որբոց և այրեաց։ ²⁶Պի՛ղծ է առաջի Տեառն խորհուրդ անհրաւ. բանք սրբոց պարկե՛շտ են։ ²⁷Սատակէ զանձն իւր կաշառառուն. իսկ որ ատեայ զկաշառս՝ կեցցէ։ Ողորմութեամբ և հաւատով սրբին մեղք. երկիւղի Տեառն խորշի ամենայն ոք ՚ի չարէ*։ ²⁸Սիրտք արդարոց խոկան զհաւատս. բերան ամպարշտի պատասխանի տայ զչարիս։ Ընդունելի՛ են առաջի Տեառն ճանապարհք մարդոց արդարոց. վասն նոցա և թշնամիք բարեկամք լինին*։ ²⁹Յեռի՛ է Աստուած յամպարշտաց. և աղօթից արդարոց՝ լսէ։ Լա՛ւ է սակաւիկ ինչ առնուլ արդարութեամբ, քան զբազում արդիւնս աներկիւղութեամբ։ Սիրտ առն խորիեսցի զիրաւունս. զի յԱստուծոյ ուղղեսցին զնացք նորա*։ ³⁰Ակն որ տեսանէ զբարիս՝ ուրախ առնէ զսիրտ. համբաւ բարեաց պարարէ զոսկերս*։ ³²Որ մերժէ զխրատ՝ ատեայ զանձն. որ պահէ զյանդիմանութիւն՝ ստանայ զհանճար*։ ³³Երկևղ Տեառն խրատ և իմաստութիւն. և սկի՛զբն փառաց պատասխանի արասցէ նմա*։

16

Գլուխ ԺԶ

¹Մարդո՛յ իրս ինչ դնել ՚ի սրտի. ՚ի Տեառնէ է պատասխանի լեզուի*։ ²Ամենայն

* *Ոմանք.* Մեծամեծս աներկիւղածութեամբ։

* *Ոսկան.* Լաւք են կոչմունք։

* *Ոմանք.* Բայց ժրացն։

* *Ոսկան.* Եւ ո՛չ ասասցէ դիպ՛։

* *Ոմանք.* Եւ խորհուրդք իմաստ՛։

* *Ոմանք.* Իսկ որ ատէ զկա՛։

* *Ոմանք.* Խորհին զհաւատս։ *Ոսկան.* Բերանք ամբարշտաց պատասխանի տան... մարդկանց արդա՛։

* *Ոմանք.* Լաւ է սակաւիկ ինչ... արդիւնս աներկիւղածութեամբ... խորհի զիմաստութիւն. զի յԱստուծոյ։

* *Ոմանք.* Յամբաւ բարի պա՛։ *Ուր Ոսկան յաւելու համար 31.* *Ունկն որ լսէ զկշտամբանս կենաց՝ ՚ի մէջ իմաստնոց յարամնացէ։

* *Ոմանք.* Իսկ որ պահէ զյան՛։

* *Ոսկան.* Խրատ է և իմաս՛։ *Ոմանք յաւելուն.* Արասցէ նմա. *առաջի երթան խոնարհաց փառք։*

* *Ի լուս՛.* Դնել ՚ի մտի. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։* *Ոմանք.* Եւ ՚ի Տեառնէ լինի

գործք խոնարհին՝ յայտնի՝ են առաջի Աստուծոյ. և հաստատե՞ գոգիս Տէր:
³Դարձո՛ւ առ Տէր զգործս քո. և հաստատեսցին խորհուրդք քո: Որչափ ՚ի մեծութիւն հասանիցես՝ ՚ի խոնարհութեան կալ գանձն քո. և առաջի Տեառն գտցես շնորհս՝: ⁴Ձամենայն ինչ գործէ Տէր վասն իւր. իսկ ամպարիշտք յաւուր չարի կորիցեն՝: ⁵Պիղծ է առաջի Տեառն ամենայն մեծամիտ. որ ձեռնամուխ լինի տարապարտուց՝ ո՛չ արդարացի: Սկիզբն ճանապարհի բարւոյ՝ գործելն զարդարութիւն. և ընդունելի՝ են Աստուծոյ աղօթք քան մատուցանել պատարագս՝: ⁶Որ խնդրէ զՏէր՝ գտցէ զգիտութիւն արդարութեամբ հանդերձ. և որ ուղղութեամբ խնդրեն զնա՝ գտցեն զխաղաղութիւն: ⁷Ձի ամենայն գործք Աստուծոյ արդարութեամբ են. ամպարիշտ պահի աւուր չարի՝: ⁸Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղիւ Տեառն. քան զգանձս մեծամեծս ամպարշտութեամբ՝: ⁹Սիրտ առն խորհեսցի զիրաւունս, զի յԱստուծոյ ուղղեսցին գնացք նորա: ¹⁰Մարգարեութիւն է ՚ի շրթունս թագաւորի, և ՚ի դատաստանի մի՛ մոլորեսցի բերան նորա՝: ¹¹Մէտ կշռոյ է արդարութիւն ՚ի Տեառնէ. և գործք նորա կշիռք արդարք՝: ¹²Գարշելի՛ է թագաւորի որ առնէ զչարիս. զի արդարութեամբ հաստատի աթոռ իշխանութեան նորա: ¹³Ընդունելի են թագաւորի շրթունք արդարք. զբանս ուղիղս սիրէ Տէր: ¹⁴Սրտմտութիւն թագաւորի հրեշտակ մահու. և այր իմաստուն՝ ցածուցանէ՛ զնա: ¹⁵Ի լոյս կենաց՝ որդի թագաւորի. և ընդունելիք նորա իբրև զամպ անագան: ¹⁶Դադարք իմաստութեան ցանկալի են քան զոսկի. դադարք հանճարոյ՝ ցանկալի՛ են քան զարծաթ՝: ¹⁷Շաւիղք կենաց խոտորեն ՚ի չարեաց. երկայնութիւն կենաց ճանապարհք արդարութեան: Որ ընդունի զխրատ՝ ՚ի բարիս եղիցի, և որ պահէ զյանդիմանութիւն՝ իմաստնացի: Որ զգուշանայ ճանապարհաց Տեառն՝ պահէ զանձն իւր. որ սիրէ զկեանս, խնայեսցէ ՚ի բերան իւր՝: ¹⁸Յառաջ քան զբեկումն՝ համարին թշնամանք. և նախ քան զզլորումն՝ չարաբարութիւնք՝: ¹⁹Լաւ է հանդարտասիրտն խոնարհութեամբ, քան զայն որ բաժանէ աւար ընդ թշնամանօղս: ²⁰Որ իմաստուն է յիրս՝ գտանէ զբարիս. և որ յուսայ ՚ի Տէր՝ երանելի՛ է՝: ²¹Ձիմաստունս և զհանճարեղս անմիտս կոչեն. և որ քաղցր են բանիւք՝ աւելի՛ ևս լուիցեն: ²²Աղբեր կենաց են միտք՝ որոց ունիցին զնա. խրատ անմտաց չար է՝: ²³Սիրտ իմաստնոյ իմանայ՝ որ ինչ յիւրմէ բերանոյ. և ՚ի շրթունս իւր խորհեսցի զիրաւագիտութիւն՝: ²⁴Խորիխս մեղու՝ բանք բարիք. և քաղցրութիւն

պատասխանի:

*Ոմանք. Մերձեցո՛ւ ՚ի Տէր զգործս քո:

*Ոմանք. Ձամենայն ինչ գործեաց Տէր:

*Ոմանք. Առաջի Աստուծոյ ամենայն... լինի ՚ի տարապարտուց... առնել զարդարութիւն:

*Ոսկան. Պահի յաւուր չարի:

*Ոսկան. Լաւ է սակաւ ինչ:

*Ոմանք. Մարգարեութիւն է ՚ի շրթ:

*Ոմանք. Մէտ կշռոց է:

*Ոմանք. Իմաստութեան ընտիր քան զոսկի:

*Ոմանք. Խոտորին ՚ի չարեաց, և եր՛... են ճանապարհք ար՛... խնայէ ՚ի բերան: Ոսկան.

ճանապարհաց իւրոց՝ պահէ:

*Ոմանք. Նախ քան զբեկումն յառաջեն թշնամանք. և յառաջ քան զզլո՛ւ: Ոսկան.

Զզլորումն՝ չարաբարոյութիւն:

*Ոմանք. Իմաստունն յիրս գիտակ բարեաց է, և որ յու՛:

*Ոմանք. Որոց ունին զնա:

*Ոմանք. Սիրտ իմաստնոց... յիւրմէ բերանոյ է... կրէ զիրաւա՛:

նորա բժշկութիւնն հոգւոց*։ ²⁵Ե՛ն ճանապարհք որ թուին մարդոյ թէ ուղի՞ղ իցեն,
 և կատարած նորա հայի յատակս դժոխոց*։ ²⁶Այր՝ ՚ի վաստակս ջանայ անձին
 իւրում. և բռնազբօւէ իւր զկորուստ. իսկ թերն ՚ի բերան իւր կրէ զկորուստ*։
²⁷Այր անզգամ փորէ՛ անձին իւրում չարիս. և ՚ի վերայ շրթանց իւրոց գանձէ
 հուր։ ²⁸Այր խորամանգ նիտայ զչարիս. և լապտեր նենգութեան բորբոքի
 չարեօք, և քակէ զբարեկամս*։ ²⁹Այր անօրէն փորձ փորձ առնէ զբարեկամաց, և
 տանի զնոսա ՚ի ճանապարհս անբարիս*։ ³⁰Որ հաստատէ զաչս իւր, և խորհի
 զկամակորս. և վիճէ շրթամբք իւրովք զամենայն չարիս. այնպիսին է հնոց
 չարեաց*։ ³¹Պսակ պարծանաց ծերութիւն. և ՚ի ճանապարհս արդարութեան
 գտանի։ ³²Լա՛ւ է այր երկայնամիտ քան զհզօր. և այր որ ունի զիմաստութիւն՝
 քան զանդս մեծամեծս, և որ յաղթ բարկութեան. քան որ առնուցու զքաղաք
 հզօր*։ ³³Անդրէն ՚ի ծո՛ց իւրեանց դառնայ ամենայն ինչ անիրաւաց, այլ ՚ի
 Տեառնէ ամենեցուն իրաւունք են։

17

Գլուխ ԺԷ

¹Լա՛ւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտունս լի՛ զենւեօք և
 բարեօք թշնամութեամբ*։ ²Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց. և ընդ
 եղբարս բաժանեսցի մասն*։ ³Որպէս փորձի ՚ի բովս արծաթ և ոսկի, նոյնպէս
 ընտրէ զսիրտս Աստուած։ ⁴Չարի հնազանդի լեզու՛ անօրինաց, և արդար ո՛չ
 հայի ՚ի շրթունս սուտս։ Հաւատացելոյն ամենայն աշխարհ ընչիւք լի՛ է.
 անհաւատին և ո՛չ դանձ մի*։ ⁵Որ կատակէ զաղքատով՝ բարկացուցանէ
 զԱրարիչ նորա. և որ ո՛տն հարկանէ կորուսելոյն՝ ո՛չ արդարասցի. իսկ որ գթայն՝
 ողորմութիւն գտցէ*։ ⁶Պսակ ծերոց՝ որդիք որդւոց. պարծանք որդւոց՝ հարք
 իւրեանց։ ⁷Ո՛չ վայելեն անզգամաց շրթունք հաւատարհիւք. և ո՛չ արդարոյ՝
 շրթունք սուտք*։ ⁸Վարձ շնորհաց խրատ՝ որոց կրեն զնա. զի ուր և դառնայցէ՝
 աջողեսցի*։ ⁹Որ ծածկէ գյանցանս՝ խնդրէ զբարեկամութիւն. իսկ որ ատեայ
 զծածկելն, քակէ զբարեկամս և զընտանիս։ ¹⁰Փշրէ զսիրտս իմաստնոց
 սպառնալիք. իսկ անմիտն թէպէտ և բազում գան ընպէ՛ չառնու ՚ի միտ*։
¹¹Զհակառակութիւնս յարուցանէ ամենայն չարական. իսկ Տէր հրեշտակ

* *Ոմանք.* Մեղու՝ են բանք բա՛... նոցա բժշկութիւնն է հոգւոց։

* *Ոմանք.* Որ թուին մարդկան... և կատարած նոցա։

* *Ոմանք.* Կրէ զսատակունն։

* *Ոմանք.* խորամանկ նիւթ զչարիս... բորբոքէ զչարութիւն։

* *Ոմանք.* Փորձ փորձ առնէ զբարեկամս. *կամ՝* առնի բարեկամաց։

* *Ի լրու՛.* Որ հաստատէ զանձն իւր։ *Ոմանք.* Եւ սահմանէ շրթամբք իւ՛։

* *Ոմանք.* Լաւ է քան զայն որ առնու զքաղաքս հզօրս։

* *Ոմանք.* Պատառ մի հեշտութեամբ և խաղա՛... լի բազում բարեօք հանդերձ թշնա՛։

* *Ոմանք.* Ծառայք իմաստունք տիրեսցեն։ *Ոսկան.* Բաժանեսցեն զմասն։

* *Ոմանք.* Չարն հնազանդի լեզուի անիրաւաց. բայց արդարն ո՛չ հայի։

* *Ոմանք.* Որ ծաղր առնէ զաղքատն՝ բար՛։

* *Ոմանք.* Ոչ յարմարին անզգամաց շր՛... և ո՛չ արդարոց։

* *Ոմանք.* Վարձք շնորհաց խրատ՝ որոց վարին նովաւ։

* *Ոմանք.* Փշրեն զսիրտս ի՛... իսկ անմիտն պատժեալ՝ ո՛չ զգայ։

անողորմ արծակե՛ր Վերայ նորա՛: ¹²Անկցի հո՛գ ՚ի սիրտ առն իմաստնոյ. և անմիտք խորհին զչարիս: ¹³Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար ՚ի տանէ նորա մի՛ պակասեսցէ: ¹⁴Իշխանութիւն բանի՝ տայ սկի՛զքն արդարութեան. և առաջնորդ լինի կարօտութեան՝ հակառակութիւն և կռիւ՛: ¹⁵Որ արդար համարի զանհրաւն, և անհրաւ զարդարն. պիղծ և գարշելի են առաջի Տեառն երկոքին՛: ¹⁶Ընդէ՞ր գտանին ստացուածք՝ անմտի. զի իմանալ զիմաստութիւն անմիտն ո՛չ կարէ: Որ բարձր առնէ զտուն իւր՝ խնդրէ զբեկումն. և որ կամակորէ՛ յուսմանէ, անկցի՛ ՚ի չարիս՛: ¹⁷Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո. բայց եղբարք՝ ՚ի վիշտս եղիցին քե՛զ պիտոյ. զի վասն այնորիկ իսկ ծնանին՛: ¹⁸Ա՛յր անմիտ կայթէ և խնդայ՝ յորժամ երաշխաւոր լինի բարեկամի իւրոյ՛. ¹⁹և վնասասէրն խնդայ ընդ կռիւ. բարձրացուցանէ զտուն իւր՝ և խնդրէ զբեկումն՛. ²⁰և խստասիրտն՝ բարեաց ո՛չ պատահէ: Այր յեղյեղուկ լեզուաւ անկցի՛ ՚ի չարիս՛. ²¹սիրտ անզգամի ցա՛ւ է կրելեաց իւրոց: Ո՛չ ուրախ լինի հայր ՚ի վերայ որդւոյ անխրատի. որդի իմաստուն՝ ուրախ առնէ զմայր իւր՛: ²²Սիրտ ուրախ բարեմոյն առնէ, առն հոգածի՝ ցամաքեն՝ ոսկերք՛: ²³Որ առնու կաշառ ՚ի գոգ իւր տարապարտուց՝ ո՛չ աջողին ճանապարհք նորա. ամպարիշտ խտորի ՚ի ճանապարհաց արդարութեան՛: ²⁴Երեսք առն հանճարեղի իմաստունք. աչք անմտի զվայրօք յածին: ²⁵Բարկութիւն հօր որդի անմիտ. և ցաւք են ծնանելեաց նորա՛: ²⁶Տուժել զայր արդար՝ չէ՛ բարւոք. և ո՛չ նենգել զարդարն իշխանաց յիրաւանց վերայ՛: ²⁷Որ խնայէ բան խիստ հանել՝ իմաստուն է. այր երկայնամիտ՝ հանճարե՛ղ է: ²⁸Ձանմիտն հարցին՝ թէ իմաստութիւն իցէ՞ ինչ, և իմաստութիւն համարիցի՞. պապանձեցաւ և համարեցաւ թէ իմաստուն իցէ՛:

18

Գլուխ ԺԸ

¹Պատճառս խնդրէ այր որ կամիցի քակել ՚ի բարեկամաց իւրոց. յամենայն ժամանակի նախատ լիցի՛: ²Ո՛չ ինչ պիտոյ է իմաստութիւն պակասամտի. զի

* *Ոմանք.* Բայց Տէր հրեշտակ անողորմ առաքէ ՚ի վերայ նորա:

* *Ոմանք.* Իշխանութիւն բանից:

* *Ոմանք.* Պիղծ են և գարշելի երկո՞ք:

* *Ոմանք.* Ընդէր բնաւ գտա՞... զի իմանալ զիմաստութեան միտս ո՛չ կարէ... և որ կամակոր է յուսմա՞:

* *Ոմանք.* Վասն այնորիկ իսկ ծնան:

* *Ոմանք.* Լինի բարեկամաց իւրոց:

* *Բազումք.* Որ բարձրացուցանէ զտուն իւր, խնդրէ զբե՞:

* *Ոմանք.* Այր որ յեղյեղուկ է լեզուով:

* *Ոմանք.* Անզգամի ՚ի ցաւս կրելեաց:

* *Ոմանք.* Սիրտ բերկրեալ բարեմոյնս:

* *Ոմանք.* Ի տարապարտուց... ՚ի ճանապարհէ արդարութեան:

* *Ոմանք.* Որդի անզգամ, և ցաւք են ծնողի իւրոյ:

* *Ոմանք.* Եւ ո՛չ զարդարն նենգել հօրաց ՚ի վերայ իրաւանց:

* *Ոմանք.* Թէ իմաստութիւն և հանճար հանճարեալ ինչ իցեն պա՞: *Ուր Ոսկան.*

համարեալ ինչ իցեն:

* *Ոմանք.* Պատճառս դնէ այր յորժամ կամի քակիլ ՚ի... յամենայն ժամ նախատ եղիցի:

առաւել՝ ևս վարի անզգամութեամբ: ³Յորժամ հասանէ ամպարիշտ 'ի խորս չարեաց՝ արհամարհէ. բայց գա՛ն 'ի վերայ նորա անարգանք և նախատինք՝: ⁴Ջուր խոր է խորհուրդ 'ի սրտի առն. գե՛տ բղխեալ և աղբար կենաց՝: ⁵Ա՛կն առնուլ ամպարշտի չէ՛ բարութ. և ո՛չ գիրաւունս խտտորել արդարոյ 'ի դատաստանի՝: ⁶Շրթունք անզգամի հասուցանեն զնա 'ի չարիս. և բերան նորա յանդուզն մահ կոչէ 'ի վերայ: ⁷Բերան անզգամի բեկումն է նմա. և շրթունք նորա որոգայթ անձին իւրում՝: ⁸Չվատ կործանէ երկև. անձինք կանացեաց քաղցիցեն՝: ⁹Որ զանձն իւր ո՛չ բժշկէ 'ի գործս իւր, եղբայր է նա այնորիկ՝ որ անձին առնիցէ՝: ¹⁰Ի մեծութենէ՛ զօրութեան յայտնի՝ է անուն Տեառն. և առ նա ընթացեալ արդարոց բարձրանան՝: ¹¹Ստացուածք առն մեծատան քաղա՛ք ամուր և փառք նորա մեծապէս հովանի ունին: ¹²Յառաջ քան զբեկումն հպարտանայ սիրտ առն. և յառաջ քան զկարծիս իւր կորանայ՝: ¹³Որ տայ պատասխանի բան մինչչև՝ լուեալ իցէ ինչ՝ անզգամութիւն է նմա և նախատինք՝: ¹⁴Չցասումն առն հանդարտեցուցանէ ծառայ իմաստուն. այլ առն նեղասրտի ո՞վ ունիցի ժոյժ՝: ¹⁵Սիրտ իմաստնոյ ստանայ զհանճար. ականջք իմաստնոց խնդրեն զխորհուրդս: ¹⁶Տուրք մարդոյ ընդարձակեցուցանեն զնա, և ընդ իշխանս նստուցանեն զնա: ¹⁷Արդար՝ անձին իւրում չարախօսէ իսկզբան բանից իւրոց, զի յորժամ սկսանի՝ ոսոխն յանդիմանի՝: ¹⁸Ձիակառակութիւնս ցածուցանէ լու՛ռ լուռն. և 'ի մէջ բռնաւորաց ընտրէ զիրս՝: ¹⁹Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրև զքաղաք ամուր. և զօրացեալ բարձրացեալ իբրև զթագաւորութիւն հաստատեալ՝: ²⁰Ի պտղոյ բերանոյ այր յագեցուցանէ՛ զորովայն իւր. և 'ի պտղոյ շրթանց իւրոց յագեսցի՝: ²¹Մա՛հ և կեանք 'ի ձեռս լեզուի. և որ յաղթէ նմա՝ կերիցէ՛ զպտուղ նորա՝: ²²Որ եգիտ կին բարի՝ եգիտ շնորհս. և ընկալաւ յԱստուծոյ ուրախութիւն: Որ հարկանէ զկին բարի՝ հանէ՛ զբարիս. և որ ունի կին շուն՝ անմիտ է և ամպարիշտ՝: ²³Յողո՛ք բանի և եթ կայ տնանկն. և մեծատունն յանդուզն տայ պատասխանի: ²⁴Այր 'ի բոզանոց՝ լկտութեամբ զնայ: Լա՛ւ է բարեկամ մերձաւոր՝ քան զեղբայր հեռաւոր:

19

* *Ոմանք.* Անմիտն հասեալ 'ի խորս չարեաց ար՝... 'ի վերայ նորա անարգութիւն և թշնամանք:

* *Ոմանք.* Խորհուրդ սրտի առն:

* *Ոմանք.* Եւ ո՛չ թիրել գիրաւունս արդա՛:

* *Ոմանք.* Բերան անզգամին՝ բեկումն նմին:

* *Ոմանք.* Եւ անձինք կանանցեաց:

* *Ոմանք.* Եղբայր է այնորիկ որ ժանտացուցանէ զանձն իւր:

* *Ոմանք.* Ընթացեալ արդարք բարձ՝:

* *Ոմանք.* Ձբեկումն իւր բարձրանայ սիրտ առն. և նախ քան:

* *Ոմանք.* Որ տայ պատասխանի յառաջ քան զլսել ինչ՝ անզ՛:

* *Ոմանք.* Չսրտմտութիւն առն ցածուցանէ ծա՛... բայց առն նեղասրտի ո՞վ համբերեսցէ:

* *Ոմանք.* Յորժամ սկսանիցի:

* *Ոմանք.* Ձիակառակութիւնս դադարեցուցանէ լուռ լուռն:

* *Ոմանք.* Իբրև զքաղաք ամուր և բարձր. և հզօր է իբրև զհաստատեալ թագաւորութիւն:

* *Ոմանք.* Շրթանց իւրոց լցցի:

* *Ոսկան.* Եւ կեանք 'ի ձեռն լեզուի:

* *Այլք.* Որ հանէ զկին բարի՝ հանէ զբարիս:

Գլուխ ԺԹ

¹Լա՛ւ է տգիտի որ գնայ միամտութեամբ իւրով. քան անգգամին որ շաղաւաշուրթն իցէ: ²Սակայն տգիտութիւն անձին իւրում ո՛չ է բարւոք, և ՚ի ստիպել ոտից իւրոց մեղանչէ՛: ³Անգգամութիւն առն՝ ապականէ՛ զճանապարհս նորա. և Աստուծոյ մեղ դնէ ՚ի սրտի իւրում՝: ⁴Մեծութիւն յաւելլու բարեկամս բազումս, և աղքատն՝ և ՚ի բո՛ւն բարեկամէ անտի քակի՝: ⁵Վկայ սուտ՝ առանց պատժի ո՛չ լիցի. և որ մեղ դնէ տարապարտուց՝ ո՛չ ապրեսցի՝: ⁶Բազո՛ւնք ողորքեն գերեսս թագաւորաց. և ամենայն չարական նախատ լիցի մարդկան՝: ⁷Ամենայն որ ատեայ զեղբայր աղքատ, հեռի լինի և ՚ի սիրոյ նորա: Խորհուրդ բարի՝ առ որս ճանաչենն զնա, մերձենայ. և այր իմաստուն գտցէ զնա: Որ կարի չա՛ր առնէ՝ կատարէ զչարիս. և որ գրգռէ զբանս՝ ո՛չ ապրեսցի, մանաւանդ որ վարէ զբանս որ ո՛չ իւր իցէ՛: ⁸Որ ստանայ զհանճար՝ սիրէ զանձն. և որ պահէ զիմաստութիւն՝ պահէ զբարիս՝: ⁹Վկայ սուտ՝ առանց պատժի ո՛չ լիցի. և որ բորբոքէ զչարութիւն՝ ընկերաց, և որ յուզէ զչարութիւն՝ կորիցէ՛: ¹⁰Ոչ վայելէ անգգամի փափկութիւն. և եթէ ծառայ սկսանիցի հպարտութեամբ տիրել՝: ¹¹Այր ողորմած՝ երկայնամիտ լինի. և պարծանք նորա գերիվերոյ՝ լինին անգգամաց՝: ¹²Սպառնալիք թագաւորի նման են մոնչելոյ առիծու. զուարթութիւն նորա իբրև զցօղ ՚ի վերայ դալարոյ: ¹³Ամօթ հօր՝ որդի անմիտ. ո՛չ են սուրբ ուխտք ՚ի վարձուց վարձկանաց՝: ¹⁴Զտունս և զստացուածս բաժանեն հարք որդւոց. և ՚ի Տեառնէ պատշաճի կին առն: ¹⁵Վատութիւն ունի զկանացին. անձն գործատեաց՝ քաղցիցէ՛: ¹⁶Որ պահէ զպատուիրանս՝ պահէ զանձն իւր, և որ արհամարիէ զճանապարհ իւր՝ կորիցէ՛: ¹⁷Փոխ տայ Աստուծոյ որ ողորմի տնանկին, ըստ տրոց նորա հատուցէ՛ նմա՝: ¹⁸Խրատեա՛ զորդի քո՝ զի այնպէս եղիցի քեզ յոյս բարի. և ՚ի թշնամանս մի՛ հպարտանար անձամբ քով: Զի եթէ հարկանես զնա գաւազանաւ՝ ո՛չ մեռանի. բայց զանձն նորա փրկես ՚ի մահուանէ՛: ¹⁹Այր չարաբար՝ բազումս տուժեսցի. և եթէ ևս ժանտանայցէ՛ և զանձն ևս դիցէ ՚ի վերայ՝: ²⁰Լո՛ւր որդեակ խրատու հօր քոյ. զի իմաստուն եղիցիս ՚ի վախճանի քում՝: ²¹Բազո՛ւն խորհուրդք են ՚ի սրտի առն. բայց խորհուրդ Աստուծոյ յաւիտեան մնայ: ²²Պտուղ առն՝ ողորմածութիւն իւր. լա՛ւ է աղքատ արդար քան

* *Ոմանք.* Սակայն անգիտութիւն... չէ բարւոք: *Իսկ Ոսկան.* ո՛չ է բարի:

* *Ոմանք.* Եւ զԱստուած պատճառս դնէ սրտի իւրոյ:

* *Ոմանք.* Իսկ աղքատն... բարեկամէն քակի:

* *Ոսկան.* Պատժոյ՝ ո՛չ եղիցի: *Ոմանք.* Եւ որ բամբասէ անիրաւութեամբ ո՛չ գերծցի:

* *Ոմանք.* Նախատ լինի:

* *Ոմանք.* Եւ ՚ի սիրոյն: Հանճար բարի մերձենայ յայնոսիկ որք գիտենն զնա. և այր... Որ բազում չարիս առնէ՝ կատարէ զչարութիւն... որ ո՛չ իւր իցեն:

* *Ոմանք.* Սիրէ զանձն իւր:

* *Ոմանք.* Զչարութիւն՝ կորիցէ ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Հպարտութեամբ բռնանալ:

* *Ոմանք.* Նորա գեր ՚ի վերոյ անօրինաց:

* *Ոմանք.* Եւ ո՛չ են... ՚ի վարձուց վարձակաց:

* *Ոմանք.* Եւ անձն գործատեաց:

* *Ոմանք.* Պահէ զանձն. և որ արհամարիէ զճանապարհս:

* *Օրինակ մի.* Որ ողորմի աղքատաց... հատուցի նմա:

* *Ոսկան.* Եւ ՚ի թշնամանս նորա մի՛:

* *Ոսկան.* Այր չարաբարոյ:

* *Ոսկան յաւելլու.* Հօր քո. և ընկալ զմակացութիւն. զի իմաս՛:

զմեծատուն սուտ*։ ²³Երկև Տեառն՝ ի կենդանութիւն առն. իսկ աներկև ընդ մոլորեալ ՚ի դրունս՝ բնակեացէ ՚ի տեղիս ուր ո՛չ լիցի այցելութիւն յաւիտենից*։ ²⁴Որ թաքուցանէ զձեռս իւր ՚ի ծոց իւր զուր, և ո՛չ ՚ի բերան իւր տարցի զնոսա*։ ²⁵Ի չարչարել անզգամի՝ խորագիտագոյն ևս լինի անմեղն. ապա թէ յանդիմանես զայր իմաստուն՝ ՚ի միտ առցէ զհանճար։ ²⁶Որդի որ անարգէ զհայր և մերժէ զմայր, ամօթ կրէ և նախատ լիցի*։ ²⁷Որդի որ թողուցու պահել զխրատ հօր, խորհի զճառս չարեաց։ ²⁸Որ յերաշխի առնու զմանուկ անմիտ՝ թշնամանս առնէ օրինաց. և բերան ամպարշտաց կլանէ զդատաստանս*։ ²⁹Պատրաստին անխրատից տանջանք. նոյնպէս և պատիժք անզգամաց։

20

Գլուխ Ի

¹Անառա՛կ է գինի՝ և թշնամանօղ արբեցութիւն. և ամենայն որ խառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն*։ ²Ո՛չ ինչ է պակաս պատուհաս թագաւորի՝ ՚ի ցասմանէ առիւծու. և որ բարկացուցանէ զնա՝ վնաս առնէ անձին իւրուն*։ ³Փա՛ռք են առն խոտորել ՚ի հայհոյութեանց. իսկ ամենայն անզգամ ընդ այնպիսիսն շաղի*։ ⁴Թէպէտ և նախատի վատ՝ ո՛չ ամաչէ. նոյնպէս և որ առնու ցորեան՝ փոխ ամարանի*։ ⁵Չուր խո՛ր է խորհուրդ սրտի առն. և այր իմաստուն քամէ զնա*։ ⁶Մե՛ծ է մարդ և պատուական՝ այր ողորմած. բայց զայր հաւատարիմ գործ է գտանել։ ⁷Որ շրջի անարատ յարդարութեան, երանելի՛ որդիս թողու զկնի իւր*։ ⁸Յորժամ թագաւոր արդար նստիցի յաթոռ. ո՛չ դառնայցէ ընդդէմ աչաց նորա ամենայն չարագործ*։ ⁹Ո՞վ պարծեսցի սիրտ սուրբ ունել. կամ ո՞վ համարձակիցի՝ եթէ սո՛ւրբ իցէ ՚ի մեղաց*։ ¹⁰Կշիռ մեծ և փոքր, և չա՛փ կրկին պի՛ղծ են առաջի Աստուծոյ երկոքեան. և խափանեսցին նոքա, և որ առնենն զնոսա. նա և ՚ի զնացս իսկ իւր խափանեսցի այր։ ¹¹Երիտասարդ որ ՚ի սրբութեան է՝ ուղիղ են ճանապարհք նորա*։ ¹²Ունկն լսէ և ա՛կն տեսանէ. Տեառն գործուած են երկոքեան*։ ¹³Մի՛ սիրեր զչա՛ր խօսել՝ զի մի՛ սատակեսցիս. բա՛ց զաչս քո, և յագեաց հացիւ*։ ¹⁴Չչարն չար ասէ՝ որոյ զնոյն ստացեալ ունիցի, և

* Ոմանք. Պտուղ առն ողորմութիւն։

* Ոսկան. ՚ի տեղիս ուր լինիցի այցելութիւն։

* Ոմանք. ՚ի ծոց իւր տարապարտուց։

* Ոմանք. Չհայր և ՚ի բաց մերժէ զմայր իւր, ամօթ կրեսցէ։

* Ոմանք. Թշնամանս առնէ իրաւանց։

* Ոմանք. Եւ ամենայն որ հաղորդի նոցա չէ իմաստուն։

* Ոմանք. Թագաւորի ՚ի սրտմտութենէ առնծու։

* Ոսկան. Ընդ այնպիսիսն շաղախի։

* Ոսկան. Ցորեան փոխ յամարայնի։

* Ոմանք. խորհուրդ ՚ի սրտի... քամեսցէ զնա։

* Ոմանք. Երանելիս թողցէ զորդիս իւր։

* Ոմանք. Ոչ կայ ընդդէմ առաջի աչաց նորա ամենայն։

* Ոմանք. Ո՛վ ոք պարծ՛։

* Ոմանք. ճանապարհք իւր։

* Ոմանք. Տեառն գործած են երկոքին։

* Ոմանք. Մի՛ սիրեր զչարախօսել, զի մի՛ մեռցիս։

մատուցեալ յառաջ ապա նովինք պարծի*։ ¹⁵Է՛ ոսկի և բազմութիւն անդոց. և անօթ պատուական՝ շրթունք գիտութեան*։ ¹⁶Ձե՛րժ զհանդերձ նորա զի երաշխաւոր եղև օտարի. և ՚ի հիւրութեան գրաւեաց զնա*։ ¹⁷Քաղցրացաւ առն հաց ստութեան, և լցցի բերան նորա կոպճով։ ¹⁸Խորհուրդք մտօք պատրաստեսցին, և պատերազմ իմաստութեամբ մղեսցի։ ¹⁹Որ յայտնէ զխորհուրդս՝ զնայ՝ նենգութեամբ. և ընդ պատրողին շրթամբք իւրովք՝ մի՛ խառնակեսցիս։ ²⁰Որ հայիոյէ զհայր կամ զմայր՝ շիջցի լոյս նորա. և բիբք աչաց նորա զխաւար տեսցեն*։ ²¹Մասն փութացեալ յառաջնունն, ՚ի վախճանի ո՛չ օրհնեսցի*։ ²²Մի՛ ասիցես թէ առից վրէժ ՚ի թշնամւոյն. այլ համբեր Տեառն, զի քեզ օգնական լիցի։ ²³Պիղծ է առաջի Տեառն՝ չափ կրկին. և կշիռ նենգութեան ո՛չ է բարուք առաջի նորա*։ ²⁴Ի Տեառնէ ուղղին զնացք առն. և մահկանացուն՝ զհա՞րդ խելամուտ լիցի ճանապարհաց իւրոց։ ²⁵Որոգայթ է առն վաղվաղել և յիւրո՛ց ընչից խոստանալ. թերևս յետ ուխտելոյն զղջունն լինիցի*։ ²⁶Յրունն ամպարշտաց՝ թագաւոր իմաստուն. և արկանէ զնոքօք անիւ*։ ²⁷Լոյս Տեառն շունչ մարդկան, և որ քննէ զշտեմարանս սրտի։ ²⁸Ողորմութիւն և ճշմարտութիւն պահապան թագաւորի. և պատեսցեն արդարութեամբ զաթոռ նորա։ ²⁹Ձա՛րդ երիտասարդաց իմաստութիւն. և փա՛ռք ծերոց ալիք։ ³⁰Վէ՛րք և հարուածք պատահեն չարաց, և տանջանք ՚ի շտեմարանս որովայնի։

21

Գլուխ ԻԱ

¹Որպէս սահանք քրոց. նոյնպէս սիրտ թագաւորի ՚ի ձեռս Աստուծոյ. ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝ դարձուցէ զնա*։ ²Ամենայն այր երկի անձին իւրուն արդար. բայց ուղղէ զսիրտս Տէր։ ³Գործել զարդարութիւն և խօսել զճշմարտութիւն, հաճո՛յ է առաջի Տեառն քան զարին զոհից*։ ⁴Մեծամիտ է ՚ի թշնամանս այր խստասիրտ. լամպար ամպարշտաց՝ մե՛ղք։ ⁵Խորհուրդ համառօտ՝ սակայն յառաւելութիւն. և ամենայն վաղվաղուկ՝ սակայն ՚ի նուազութիւն*։ ⁶Որ կուտէ զգանձս ստութեամբ լեզուի՝ զիտ երթայ սնոտեաց. և հասանէ յորոգայթս մահու*։ ⁷Սատակունն ամպարշտաց հասցէ, զի ո՛չ կամին առնել զիրաւունս*։ ⁸Առ խոտորեալս՝ խոտորեալ ճանապարհ առաքէ Աստուած. զի սո՛ւրբ և ուղի՛ղ են գործք նորա*։ ⁹Լա՛ւ է բնակել առ անկեան ՚ի ներքոյ օդոյ,

* Ոմանք. Ձչարն ատեսցեալ չար ասէ... ստացեալ իցէ... նովինք պարծեսցի։

* Ոմանք. Եւ բազմութիւն անդաստանաց։

* Ոմանք. Գրաւէ զնա։

* Ոմանք. Եւ բիբք աչաց նորա խաւարեսցին։

* Ոմանք. Փութացեալ յառաջինսն։

* Ոմանք. Եւ կշիռք նենգութեան ո՛չ են։

* Ոմանք. Եւ յիւրոց ընչից նուիրել. քանզի յետ ուխտելոյն զղջունն լինի։

* Ոմանք. Եւ արկանէ ՚ի վերայ նոցա անիւ։

* Ոմանք. Դարձուցանէ զնա։

* Ոմանք. Առաջի Տեառն առաւել քան։

* Ոմանք. Սակայն յարդարութիւն, և ամենայն։

* Ոմանք. Որ ժողովէ զգանձս ստ՝... և անկանի յորոգայթս մա՞։

* Ոմանք. Վասն զի ո՛չ կամին առնել զարդարութիւն։ *Յօրինակին*. Առնուլ զիրաւունս։

* Ոմանք. Քանզի սուրբ և ու՞։

քան ՚ի բռեալս անիրաւութեամբ, և ՚ի տան խառնակութեան: ¹⁰Անձն ամպարշտի ցանկայ չարեաց. և ո՛չ գտցէ յունեքէ ողորմութիւն*։ ¹¹Ի տուժել անխրատի՝ խորագիտագոյն ևս լինի անմեղն. առ իմաստութեան հանճարեղն ընդունի զգիտութիւն*։ ¹²Ի միտ առնու արդար զսիրտ ամպարշտաց. և ապականեն զամպարիշտս չարիք*։ ¹³Որ խնու զլսելիս իւր զի մի՛ լուիցէ տկարաց. և նա կարդասցէ առ Տէր, և ո՛չ լուիցէ նմա*։ ¹⁴Տուրք գաղտնիք՝ դարձուցանեն զբարկութիւն. իսկ որ խնայէ ՚ի տուրս՝ սաստիկ բարկութիւն յարուցանէ*։ ¹⁵Ուրախութիւն արդարոց առնել զիրաւունս. և սուրբն՝ պի՛ղծ թուի չարագործաց*։ ¹⁶Այր մոլորեալ ՚ի ճանապարհէ արդարութեան՝ ՚ի ժողովս հսկայից հանգիցէ*։ ¹⁷Այր կարօտեալ սիրէ՛ զուրախութիւն. որ սիրէ զգինի և զձէթ ՚ի մեծութիւն*։ ¹⁸Ձնջան լինի արդարոյն անօրէնն. և ուղղոց որ անցանեն զուխտիւ*։ ¹⁹Լա՛ւ իցէ բնակել յանապատի՝ քան ընդ կնոջ անզգամի լեզուանոյ և բարկացողի*։ ²⁰Գանձ ցանկալի հանգիցէ ՚ի բերան իմաստնոյ. ա՛րք տգէտք կլցեն զնա*։ ²¹Ճանապարհք արդարութեան և ողորմածութեան գտցէ զկեանս, և զարդարութիւն և զփառս*։ ²²Ի վերայ ամուր քաղաքաց եհաս իմաստութիւն. և քակեաց զամուրս յորս յուսացեալ էին ամպարիշտք*։ ²³Որ պահէ զբերան իւր և զլեզու՝ պահէ՛ ՚ի նեղութենէ զանձն իւր։ ²⁴Խիստն՝ և յանդուզն՝ և հպարտն՝ ժանտ կոչին. և որ պահէ ոխս անօրէն է*։ ²⁵Ցանկութիւնք սպանանեն զվատ, զի ո՛չ յօժարեն ձեռք նորա զործել ինչ։ ²⁶Ամպարիշտ ցանկանայ զամենայն աւուրս զցանկութիւն չարեաց. իսկ արդարն ողորմի և տայ առանց խնայելոյ*։ ²⁷Պատարագ ամպարշտաց պի՛ղծ են առաջի Տեառն. քանզի անօրէնութեամբ իսկ մատուցանեն զնոսա*։ ²⁸Վկայ սուտ՝ կորիցէ. այր հլու՝ զգուշութեամբ խօսեսցի*։ ²⁹Այր ամպարիշտ յանդգնութեամբ հարկանի ՚ի դիմի. իսկ ուղիղն ինքնին իմանայ զճանապարհս իւր*։ ³⁰Ո՛չ է մարդոյ իմաստութիւն՝ ո՛չ արութիւն, և ո՛չ խորհուրդ առ Աստուած։ ³¹Երիվար պատրաստի յաւուր պատերազմի. բայց ՚ի Տեառնէ է օգնականութիւն։

22

* Այլք. Ցանկանայ չարեաց։

* Ոմանք. Եւ իմաստութեամբ հանճա՞ր։

* Ոմանք. Եւ ապականին ամբարիշտք չարեօք։

* Ոմանք. Ձի մի՛ լսիցէ տկարին։

* Ոմանք. Իսկ որ անխայէ ՚ի։

* Ոսկան. Ուրախութիւն արդարոյ է։

* Ոմանք. Հսկայից դադարեսցէ։

* Ոսկան. Եւ զձէթ ՚ի մեծութեան։

* Ոմանք. Արդարոց անօրէն։

* Ոմանք. Լա՛ւ է բնակել։

* Ոմանք. Հանգիցէ ՚ի սիրտ իմաստնոց և արք։

* Ոմանք. Ձկեանս, և զողորմութիւն և զփա՞ր։

* Ոմանք. Եհաս իմաստունն, և քակեաց զամբութիւնն յոր յու՞ր։

* Ոմանք. Եւ որ ոխակալ է, անօրէն է։

* Ոմանք. Ցանկայ զամենայն օր ՚ի ցանկութիւնս չար՞... ողորմի և գթայ։

* Ոմանք. Պատարագք ամպարշ՞։

* Ոմանք. Եւ այր հլու։

* Ոմանք. Ուղիղն ինքն իմանայ։

Գլուխ ԻԲ

¹Լա՛ւ է անուն բարի քան զմեծութիւն բազում. և քան զարծաթ և զոսկի շնորհ բարիք: ²Մեծատուն և աղքատ միմեանց պատահիցին. երկոցունց այցելութիւն առնէ Տէր*։ ³Խորագիտի տեսեալ զչարագործն պատժեալ՝ հաստատութեամբ խրատ զանձն. և անմտաց անցեալ առ նորօք վնասեցան: ⁴Սկիզբն իմաստութեան երկև Տեառն. և մեծութիւն և փառք և կեանք: ⁵Տատասկ և որոգայթ՝ ՚ի ճանապարհս թիւրաց, իսկ որ զգո՛յշ կայ անձին իւրում՝ մերժեցի ՚ի նոցանէ*։ ⁶Նորոգումն երիտասարդի ըստ ճանապարհա՛ց իւրոց. նա՛ և յորժամ ծերացի՝ ո՛չ մերժեցի ՚ի նոցանէ*։ ⁷Աղքատք տիրեցեն մեծատանց, և ծառայք տերանց իւրեանց փոխ տայցեն*։ ⁸Որ սերմանէ զանզգամութիւն՝ հնձեցէ՛ զչարիս, և զհարուածս գործոց իւրոց բովանդակեցէ: ⁹Չայր զուարթ և զառատ՝ սիրէ Աստուած. որ ողորմի տնանկի՝ ինքն կերակրեցի, զի յիւրմէ հացէ անտի ետ տնանկի: Ջյաղթութիւն և զպատիւ ստանայ որ տայ կաշառ, բայց զոգիս առողացն սպանանէ*։ ¹⁰Չա՛ն զժամտն յատենէ՛ և ելցէ ընդ նմա և հակառակութիւն. զի յորժամ նստիցի յատենի զամենեսեան անարգէ*։ ¹¹Սիրէ Տէր զսիրտ սուրբ, և ընդունելի են նմա ամենայն անարատք: Շրթամբք հովուէ թագաւոր. ¹²և աչք Տեառն պահեն զհանճար. և անգոսնէ զբանս անօրէն*։ ¹³Պատճառս դնէ վատ և ասէ. Առևճ ունի զճանապարհս, և զանցս հրապարակաց սպանողք*։ ¹⁴Գուր խո՛ր է բերան անօրինի, և ատեցեալն ՚ի Տեառնէ անկցի ՚ի նա: Են ճանապարհք չարք՝ առաջի առն, և ո՛չ սիրէ դառնալ ՚ի նոցանէ. բայց դառնալ պարտ է ՚ի թեր և ՚ի չար ճանապարհէ*։ ¹⁵Անմտութիւն բորբոքեալ ՚ի սիրտ երիտասարդի. գաւազան և խրատ հեռի՛ է ՚ի նմանէ*։ ¹⁶Որ զրպարտէ զաղքատ՝ բազում առնէ իւր չարիս. և որ տայ մեծատան կարօտութեամբ*։ ¹⁷Բանից իմաստնոց մատո՛ զունկն քո, և լո՛ւր բանից իմոց. և հաստատեա՛ զսիրտ քո*։ ¹⁸Գի գիտացես զնոսա՝ թէ բարի՛ են. և եթէ արկցես զնոսա ՚ի սրտի քում. և զուարճացի միանգամայն ՚ի շրթունս քո*։ ¹⁹Զի եղիցի յոյս քո ՚ի Տէր. և ցուցցէ քեզ զճանապարհս իւր*։ ²⁰Եւ դու գրեա զնոսա յանձին քում երեքկին. ՚ի խորհուրդս, և ՚ի գիտութիւն, և ՚ի հանճար*։ ²¹Ահաւասիկ ուսուցանեն քեզ զբանս ճշմարիտս և զգիտութեան. հնազանդ լինել

* *Ոմանք.* Պատահեցին. *կամ՝* պատահեցին. և երկո:

* *Ոմանք.* Տատասկք և որոգայթք ՚ի ճանապարհս թերս. և որ պահէ զանձն իւր հեռի լիցի ՚ի նոցանէ:

* *Ոմանք.* Նորոգութիւն երիտա՛:

* *Ոմանք.* Աղքատք տիրիցեն:

* *Ոմանք.* Քանզի յիւրմէ հացէ ետ աղքատին... որ տայ զկաշառ. բայց սակայն զոգիս:

* *Ոմանք.* Ընդ նմա հակա՛... նստիցի ընդ աթոռակիցսն զամենեսին:

* *Ոմանք.* Եւ անարգէ զբանս անօ՛:

* *Ոմանք.* Յրապարակաց սպանանողք:

* *Ոսկան.* Անկցի ՚ի նոյն:

* *Ոմանք.* Ի սրտի երիտասարդի. գա՛:

* *Ոմանք.* Բազում առնէ անձին իւրում չարիս. և տայ մեծա՛:

* *Ոմանք.* Եւ լո՛ւր զբանս իմ. և հաս՛:

* *Ոմանք.* Զի ծանիցես զնոսա թէ... զնոսա ՚ի սիրտ քո, զուարճացին միանգամայն ՚ի շրթունս:

* *Ոմանք.* Եւ ծանուցէ քեզ զճանապարհս:

* *Ոմանք.* Եւ դու գրեցես զնոսա երեքկին... ՚ի խորհուրդ... և ՚ի հանճար, և յընդարձակութիւն սրտի քո:

պատասխանի տալոյ զբանս ճշմարտութեան որոց մատչիցին առ քեզ*։ ²²Մի՛ բուռն լինիցիս տնանկի, քանզի աղքատ է. և մի՛ անարգիցես զտնանկն ՚ի դրունս*։ ²³զի Տէր դատի զդատաստանս նորա, և փրկեսցէ անկապուտ զանձն քո*։ ²⁴Մի՛ լինիր ընկեր ամն բարկացողի, և ընդ բարեկամի զայրացողի մի՛ բնակեր։ ²⁵զուցէ ուսանիցիս զճանապարհս նորա. և առնուցուս խեղդ ընդ անձն քո*։ ²⁶Մի՛ տար զանձն քո յերաշխաւորութիւն՝ ակն առեալ երեսաց. ²⁷զի թէ ո՛չ ունիցիս ուստի հատուցանիցես՝ և առնուցուն զանկողինս որ ընդ կողիւք քովք կայցեն։ ²⁸Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենականս զոր եղին հարք քո։ ²⁹Ձայր շոյտ և զգոյշ ՚ի գործ իւր՝ թագաւորաց առաջի պարտ է կացուցանել. և ո՛չ կացուցանել առաջի արանց խօթասրտաց*։

23

Գլուխ ԻԳ

¹Յորժամ նստիցիս յընթրիս ուտել ՚ի սեղան հզօրաց. իմանալով իմասջի՛ր որ ինչ առաջի դնիցի, և ապա՛ մխեսջի՛ր զձեռն քո*։ ²Գիտասջի՛ր թէ այնպիսի ինչ և քեզ պարտ է պատրաստել։ Ապա թէ ազահագոյն իցես, ³մի՛ ցանկանայցես խորտկաց նորա. զի այն իսկ կցեալ երթայ զկենացն ստութենէ*։ ⁴Մի՛ ձգտիր՝ եթէ տնանկ իցես՝ ընդ մեծատան, այլ քո իմաստութեամբդ մերժեա՛ ՚ի նմանէ*։ ⁵Եթէ հաստատեսցես զերեսս քո ՚ի վերայ նորա, ո՛չ ուրեք երկի զի հանդերձեալ է նորա իւր թև որպէս զարծուոյ. և դառնայ ՚ի տուն նահապետի իւրոյ*։ ⁶Մի՛ ուտեր հաց ընդ առն չարական. և մի՛ ցանկանար կերակրոյ նորա*։ ⁷զոր օրինակ թէ մազ ոք կլանէ՝ այնպէս ուտէ և ըմպէ*։ ⁸Մի՛ մուծանիցես զնա առ քեզ, և մի՛ ուտիցես զհաց քո ընդ նմա, զի նողկտացուցանէ զնա. և ապականէ զբանս քո բարիս*։ ⁹Յականջս անզգամի ամենկին մի՛ խօսիր. զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո*։ ¹⁰Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենականս. և ՚ի ստացուածս որբոց մի՛ մտանիցես. ¹¹զի որ փրկէն զնոսա Տէր հզօր է. և դատի զդատաստանս նոցա ընդ քեզ։ ¹²Տո՛ւր ՚ի խրատ զսիրտ քո. և զլսելիս քո

* *Ոմանք.* Ահա ուսուցանեն քեզ զբան ճշմարիտ. և զգիտութիւն բարի լսել. պատասխանի տալ քեզ զբանս ճշմարտութեան այնոցիկ որ վիճինն ընդ քեզ։
 * *Ոմանք.* Մի՛ հարստահարեր զտնանկն. վասն զի աղքատ է. և մի՛ անարգեր զտկարն ՚ի դրունս։
 * *Ոսկան.* Ձանձն նորա։
 * *Ոմանք.* Ձի զուցէ ուսա՞... խեղդ ընդ անձին քուն։
 * *Ոմանք.* Եւ ո՛չ առաջի արանց խօթա՞։
 * *Ոմանք.* Յորժամ նստցիս ընթրիս ու՞։
 * *Ոմանք.* Վասն զի այնոքիկ կցեալ են ՚ի կեանս ստութեան։
 * *Ոմանք.* Մի՛ ձկտիր թէ աղքատ ես ընդ մեծատան. այլ քո իմաստութեամբդ հրաժարեա՛ ՚ի նմանէ։
 * *Ոմանք.* Ձի եթէ հաստատեսցես զակն քո ՚ի... թևս իբրև արծուոյ... ՚ի տուն վերակացուին իւրոյ։
 * *Ոսկան.* Ընդ առն չարականի, և մի՛ ցանկար կերակրոց նորա։
 * *Ոմանք.* Ձի զորօրինակ եթէ ոք մազ կլանիցէ։
 * *Ոմանք.* Մի՛ մերձեցուցես զնա, և կերիցես զհացն քո ընդ նմա. քանզի զարշեցուցանէ զնա։
 * *Ոմանք.* Ձի մի՛ երբեք անգոսնես՞։

պատրաստեա՛ր բանից իմաստութեան: ¹³Մի՛ խնայեար խրատել զտղայ զի թէ հարկանես զնա զաւագանաւ՝ ո՛չ մեռանի՛*։ ¹⁴դու հարկանես զնա զաւագանաւ, բայց զանձն նորա փրկես ՚ի մահուանէ՛*։ ¹⁵Որդեակ՝ եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես և զի՛ն սիրտս: ¹⁶Եւ եթէ ընդելուզցես զշրթունս քո ընդ շրթունս ին, միայն թէ ուղի՛ղ իցես՛*։ ¹⁷Մի՛ նախանձիցի սիրտ քո ընդ մեղաւորս: այլ յերկև Տեառն կանխեսցի՛ր զօրհանապագ՛*։ ¹⁸զի եթէ պահեսցես զնա, եղիցի զաւակ քեզ: և յոյս քո մի՛ մերժեսցի՛*։ ¹⁹Լո՛ւր որդեակ՝ և լե՛ր իմաստուն: և ուղղեա զխորհուրդս սրտի քոյ՛*։ ²⁰Մի՛ լինիր արբեցող: և մի՛ նախանձիր ընդ հանգանակօղս մտոյ՛ վաճառաց՛*։ ²¹Ձի ամենայն արբշիռն և բոզանոցն աղքատացի՛: և զգեցցի պատառատունս ամենայն քնէած՛*։ ²²Լո՛ւր որդեակ հօրն որ ծնաւ զքեզ: և մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քոյ՛*։ ²³Ձճշմարտութիւն ստացիր: և մի՛ թողուր զիմաստութիւն՝ և զխրատ՝ և զհանճար: ²⁴Բարւո՛ք սնուցանէ հայր արդար: և ՚ի վերայ որդւոյ իմաստնոյ ուրախ լինի սիրտ նորա՛*։ ²⁵Ուրախ լիցին հայր և մայր քո ՚ի քեզ: և խնդասցէ որ ծնաւն զքեզ՛*։ ²⁶Տո՛ւր ցիս որդեակ զսիրտ քո: և աչք քո ճանապարհաց իմոց սպասեսցեն: ²⁷Կարաս՝ ծակ է տուն օտար: և ջրհոր նե՛ղ օտարոտին: ²⁸Ձի այնպիսին վաղվաղակի՛ սատակեսցի: և ամենայն անօրէն սպառեսցի: ²⁹Ո՞ւմ է վայ: ո՞ւմ խռովութիւնք, ո՞ւմ են դատաստանք: ո՞ւմ դժընդակութիւնք և վարանք: ո՞ւմ են ջաղջախանք տարապարտուց: ո՞յր են կապուտակ ականողիք՛*։ ³⁰Ոչ ապաքէն այնոցիկ՝ որ յամենն ՚ի գինւոջ, և դիտեն ուր գիներբուք լինիցին՛*։ ³¹Մի՛ արբենայք գինեաւ: այլ խօսեցարո՛ւք ընդ մարդս արդարս, և խօսեցարուք ընդ միմեանս ՚ի հրապարակս: Ապա թէ ՚ի տաշտս և ՚ի բաժակս արձակիցես զաչս քո, յետոյ շրջիցիս մերկագոյն ևս քան զսանդատոռն՛*։ ³²Եւ ՚ի վախճանի իբրև զօճահար տարածիցիս, և իբրև իժի թոյնք սփռեսցին՛*։ ³³Աչք քո իբրև տեսանիցէ զկին օտար, բերան քո յայնժամ խօսիցի զթերս՛*։ ³⁴և անկեալ դնիցիս ՚ի սիրտ ծովու՝ և իբրև զնաւավար ՚ի մէջ բազում մրրկի՛*։ ³⁵Եւ ասիցես՝ թէ հարկանէին զիս՝ և ինձ ո՛չ ցաւէր: այպն առնէին զիս՝ և ո՛չ գիտէի: Ե՞րբ լիցի առաւօտ՝ զի ելեալ խնդրեցի՛ց ընդ որուն շրջիցիմ՛*։

*Ոմանք. Մի՛ խնայեար խրատել:

*Ոմանք. Քանզի դու հարկանես:

*Ոսկան. Ընդելուզցես զշր՞. ուղիղ իցեն:

*Ոմանք. Մի՛ նախանձեսցի... ընդ մեղաւորաց:

Ոսկան. Եւ լոյս քո մի՛ մեր՛։

Ոմանք. Եւ ուղղեսցես զխոր՛։

Ոմանք. Եւ մի՛ ձկտիր ընդ հանկանակօղս մտոյ և վաճա՛։

*Ոմանք. Քանզի ամենայն արբեցող և բոզանոց աղ՞... պատառատուն ամենայն:

*Ոսկան. Չօր քո որ ծնաւ:

*Ոմանք. Ուրախ լինի անձն նորա:

*Ոմանք. Ուրախ լինին հայր և:

*Ոմանք. Ո՞ւմ դատաստանք: ո՞ւմ վերք տարապարտուց:

*Ոսկան. Որք յամենանն ՚ի գին՞. և ոյք գիտենն:

*Ոմանք. Գինւով... և ՚ի բաժակս արկանիցես զաչս... մերկագոյն քան զսանդիտոռն:

*Բազումք. Տարածանիցիս:

*Ոմանք. Իբրև տեսանիցեն զկին օտ՞... խօսեսցի զթերս:

*Ոմանք. Դնիցիս իբրև ՚ի սիրտ ծովու... և իբրև զնաւուղիղ ՚ի բազում ալէկոծութիւնս: Ուր

ոմանք. Եւ անկեալ լինիցիս իբրև զսիրտ ծո՛*։

*Ոմանք. Եւ ասացես. Չարկա՞... և ես ո՛չ գիտէի. երբ լինիցի առաւօտ... ընդ որուն

Գլուխ ԻԴ

¹Որդեակ իմ՝ մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ցանկանայցես կալ ընդ նոսա*.
²Գի ստութիւն խորի սիրտ նոցա, և ցաւս խօսին շրթունք նոցա:
³Իմաստութեամբ շինի տուն, և հանճարով կանգնի. ⁴և խորհրդով լնուն շտեմարանք ամենայն մեծութեամբ պատուականաւ և բարեօք: ⁵Լաւ է իմաստուն քան զհզօր, և հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս: ⁶Առաջնորդութեամբ մղի պատերազմ, և օգնականութեամբ խորհրդական սրտի*: ⁷Իմաստութիւն և խորհուրդ բարեաց ՚ի դրունս իմաստնոց: ⁸Իմաստունք ո՛չ խտորին ՚ի բերանոյ Տեառն. այլ խորհին ՚ի ժողովս իւրեանց*: ⁹Անխրատից պատահէ մահ. և մեռանի անզգամ ՚ի մեղս: Պղծութիւն զայր ժանտագործ աղտեղի առնէ յաւուր չարի. ¹⁰և յաւուր նեղութեան՝ մինչև սատակեսցի: ¹¹Փրկեա՛ զորս ՚ի մահ տանին, և զնեա՛ զմահապարտս՝ և մի՛ խնայեար*: ¹²Ապա թէ ասիցես, թէ ո՛չ ճանաչեմ զնա՝ և ո՛չ նա զիս ճանաչէ, գիտասցի՛ր զի Տէր զսիրտս ամենեցուն ճանաչէ. և որ ստեղծ զշունչ ամենեցուն՝ նա՛ գիտէ զամենայն, և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր*: ¹³Կէր մեղր որդեակ զի բարի է. և խորիսխ՝ զի քաղցրացի կոկորդ քո. ¹⁴նոյնպէս եղիցի հանճար իմաստութեան յանձին քում: Ձի եթէ զայն գտանիցես՝ եղիցի բարեա՛ւ վախճան քո. և լոյս քո մի՛ պակասեսցէ*: ¹⁵Մի՛ մատուցաներ զամպարիշտն յարօտս արդարոց. և մի՛ խաբիր լրութեամբ որովայնի*: ¹⁶Ձի եթէ եւթն անգամ անկանիցի արդարն՝ կանգնեսցի. իսկ ամպարիշտք տկարացին ՚ի չարիս*: ¹⁷Եթէ կործանեսցի թշնամին քո՝ մի՛ ոտն հարկաներ. և ՚ի գայթազդելն նորա մի՛ հպարտանար: ¹⁸Ձի մի՛ հայեսցի Տէր, և ո՛չ հաճեսցի ընդ այն. և դարձուցէ զբարկութիւն իւր ՚ի նմանէ*: ¹⁹Մի՛ խնդար ընդ չարագործս, և մի՛ նախանձիր ընդ մեղաւորս. ²⁰զի ո՛չ լինիցի զաւակ չարաց. ճրագ ամպարշտաց շիջցի*: ²¹Երկի՛ր յԱստուծոյ որդեակ՝ և ՚ի թագաւորէ. և ՚ի միոջէ ՚ի նոցանէ մի՛ ապստամբիցես*: ²²Ձի՛ յանկարծակի պահանջիցեն զամպարիշտս. և զպատուհաս երկոցունց ո՞վ ծանիցէ*:
¹Որդի որ զգուշանայ բանից՝ եղիցի արտաքոյ կորստեան. զի ընդունելով

շրջեցայց:

*Ոմանք. Եւ մի՛ ցանկասցիս լինել ընդ նոսա:

*Ոմանք. Խոհական սրտի:

*Ոմանք. Ոչ խտորին յօրինաց Տեառն:

*Ոմանք. Եւ զնել զմահապարտս մի խնայեար: Ոսկան. Եւ մի խնայեար:

*Ոմանք. Ասիցես. Ոչ գիտեմ զնա... իւրաքանչիւր ումեք ըստ գործոց իւրոց:

Ոմանք. Ձի եթէ գտցես զնա եղիցի... և յոյս քո մի՛ պակաս:

*Ոմանք. Լրբութեամբ որովայնի:

*Ոմանք. Անկցի արդարն:

*Ոմանք. Ձի գուցէ տեսանիցէ Տէր, և ո՛չ լինիցի նմա. և դարձուցէ զսրտմտութիւն իւր ՚ի նմանէ:

*Ոմանք. Ձի ո՛չ լինի զաւակ չարեաց. և ճրագ:

*Ոմանք. Մի՛ ապստամբեր:

*Ոմանք. Քանզի յանկարծակի:

ընկալաւ զնա*։ ²Մի՛ ինչ ստութիւն ասասցի՝ ի լեզուէ թագաւորի. և ո՛չ ելցէ խաբէութիւն ի լեզուէ նորա*։ ³Սուսեր սուր է լեզու թագաւորի, և ո՛չ մարմնեղէն. և որ նմա մատնեսցի՝ խորտակի*։ ⁴Ձի եթէ սրեսցի բարկութիւն նորա՝ յօղիւք հանդերձ աստակեսցէ զմարդիկ, և զոսկերս արանց կերիցէ, և այրեսցէ իբրև զբոց. և իբրև զգէշ եղիցի՝ ի բո՛յնս արծուեաց*։ ⁵Յիմոց բանից երկի՛ր որդեակ. և յորժամ ընկալցիս զնոսա՝ ապաշաւեսցիր*։

²³Ձայս ասեմ ձեզ իմաստնոցը՝ խելամո՛ւտ լինել իրաւանց մի՛ ամաչէք. ակն առնուլ ՚ի դատաստանի չէ՛ բարւոք*։ ²⁴Որ ասէ զամպարիշտն թէ արդար է՝ անհօճեալ՝ ՚ի ժողովրդոց լիցի, և ատելի՛ յազգաց*։ ²⁵Իսկ որ յանդիմանէն, նոքա լա՛ւք երևեսցին, և ՚ի վերայ նոցա եկեսցէ օրհնութիւն բարեաց։ ²⁶Շրթունք սիրեսցեն զպատասխանիս բանից բարեաց. և որ պատասխանի տայ բանս դիմադարձութեան, պատրաստէ անձի՛ն իւրում բանս հեռանալոյ*։

²⁷Պատրաստեա՛ յելս զգործս քո. և պատրաստեա՛ ՚ի դատաստանս քո, և զնա՛ դու զկնի իմ. և շինեսցես վերստին զտուն քո*։ ²⁸Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում. և մի՛ լայնիր շրթամբք քովք։ ²⁹Մի՛ ասեր՝ թէ որպէս նա ընդ իս գնաց, և ես ընդ նա՛ գնացից. հատուցից նմա՝ որպէս և զրկեաց զիս*։ ³⁰Իբրև անդ մի այր անզգամ, և իբրև այգի այր պակասամիտ*։ ³¹և եթէ թողուս զնա՝ խոպանանայ և մոլախտտէ՛ ամենահին և լքանի. և քարինք որմոց նորա յատակին*։ ³²Յետոյ ասիցէ՛ թէ զղջացայ ես, հայեցայ և ընտրեցի զխրատ։ Մինչև յե՞րբ անկեալ դնիս ո՛վ վատ. ե՞րբ ՚ի քնոյ զարթիցես*։ ³³Սակաւիկ ինչ ննջիցե՞ս. սակաւիկ ինչ նիրհիցե՞ս, սակաւիկ ինչ դադարիցե՞ս. սակաւիկ ինչ ընդգրկիցե՞ս զձեռն քո ՚ի վերայ լանջաց քոց։ Եթէ զայդ առնիցես*։ ³⁴Եկեսցէ՛ իբրև զկարապետ աղքատութիւն քո. և կարօտութիւն քո իբրև զարագո՛տն սուրհանդակ։

25

Գլուխ ԻԵ*

1 Առակք Սողոմոնի անքնինք. զոր գրեցին բարեկամքն Եզեկիայ արքայի

* *Ոմանք.* Որդի որ պահէ զբան արտաքոյ կորստեան եղիցի։

* *Ոմանք.* Մի՛ ինչ սուտ ասասցի... և մի՛ խաբէութիւն ՚ի լեզուէ նորա ելցէ։

* *Ոմանք.* Եւ ո՛չ մարմնաւոր, և որ ոք մատնեսցի նմա խորտակեսցի։

* *Ոմանք.* Սրեսցի սրտմտութիւն նորա... և զոսկերս մարդկան կերիցէ։

* *Ոմանք.* Եւ ընկալեալ զնոսա ապաշաւեա՛. և *ոմանք.* յորժամ ընդունիցիս զնոսա։

* *Ոմանք.* Ձայս ասեմ իմաստնոց։

* *Ոմանք.* Թէ արդար իցէ, անհօճեալ եղիցի։

* *Ոմանք.* Եւ որ պատասխանէ բանս։

* *Ոմանք.* Եւ պատրաստեա՛ ՚ի դատաստանս զդատաստանս քո, և ե՛րբ զիտն նորա. և շինեսցես. *կամ՝* և շինեա՛ վերս՛։

* *Ոմանք.* Մի՛ ասիցես, թէ զոր օրինակ արար նա ինձ՝ արարից նմա, և հատուցից։

* *Ոմանք.* Իբրև անդաստան մի է այր անզգամ։

* *Ոմանք.* Եւ քարինք ցանկոյ նորա բրին։

* *Ոմանք.* Եւ յետոյ ասիցէ թէ ես զղջացայ, և հայեցայ ընտրել զխրատ։

* *Ոմանք.* Սակաւ ինչ դադարեսցես. և փոքր ինչ ընդգրկիցես զձե՛... եթէ զայդ արասցես։

* *Երրորդ բան կամ հատուած գրոցս Առակաց աստի սկսանի, թէպէտ և ո՛չ մի յօրինակաց մերոց նշանակէ ինչ յառաջիկայդ, որպէս և ո՛չ առաջնոյն։*

Յրէաստանի:*

²Փառք Աստուծոյ ծածկեն զբան. փառք թագաւորի՝ պատուեն զիրամանս*:
³Երկինք բարձունք, և երկիր՝ խորին. սիրտ թագաւորի առանց քննելոյ*:
⁴Փորձ տեն զանփորձ արծաթոյ. և սրբելով սրբի ամենայն*:
⁵Սատակեա՛ զամպարիշտս յերեսաց թագաւորի. և ուղղեսցի արդարութեամբ աթոռ նորա:
⁶Մի՛ հպարտանար առաջի թագաւորի, և մի՛ ՚ի տեղիս մեծամեծաց մատչիր.
⁷Ղի լաւ իցէ քեզ՝ թէ ասիցէ ոք. ՚ի վեր առ ի՛ս մատի՛ր, քան թէ կորանայցես առաջի հզօրի*:
⁸Ձոր տեսին աչք քո՝ խօսեաց. մի՛ յանդուզն անկանիցիս ՚ի մարտ, զի մի՛ յետոյ զղջանայցես: Յորժամ նախատիցէ զքեզ բարեկամ քո*.
⁹Խոյս տուր՝ մի՛ արհամարհեր. ¹⁰զուցէ՛ նախատիցէ զքեզ բարեկամն. և թշնամութիւն և մարտ քո ո՛չ մեկնիցի. այլ լինիցի քեզ հանգոյն մահու: Շնորհք և բարեկամութիւն ազատք են. հաստատեա՛ զնոսա ՚ի քեզ՝ զի մի՛ նախատ լինիցիս. և պահեա՛ զժամանակս քո հաշտութեամբ*:
¹¹Ոսկի խնձոր ընդ սարդիոն յեռեալ. այնպէս է խօսել զբանս իմաստունս*:
¹²Գինդ ոսկի՛ և սարդիոն ամենապայծառ յեռեալ. բան իմաստուն յունկնդիր լսելիս*:
¹³Որպէս ծիւնաբեր ամարայնի՝ տօթացելոյ օգնական է, նոյնպէս և հրեշտակ հաւատարիմ որոց առաքեցին զնա՝ զանծինս յուսացելոց իւրոց շահի*:
¹⁴Որպէս հո՛ղմբ և ամպք և անձրևք սաստիկք. նոյնպէս են և որ պարծին ՚ի տուրս ստութեան:
¹⁵Յերկայնմտութենէ՝ յաջողութիւն թագաւորի, լեզու արծակ փշրէ՛ զոսկերս*:
¹⁶Մե՛ղր յորժամ գտանիցես որդեակ՝ չափով կերիջիր. զուցէ՛ յագիցիս՝ և փսխիցես:
¹⁷Մի՛ կարի յաճախեր ոտիւք քովք առ բարեկամ. զուցէ՛ յագիցի քև, և ատիցէ զքեզ*:
¹⁸Իբրև սուսեր և սլաք սրեալ, նոյնպէս և որ վկայէ զբարեկամէ իւրմէ՝ վկայութիւն ստութեան*:
¹⁹Ճանապարհք չարի և ոտք անօրինի՝ կորիցեն յաւուր չարի:
²⁰Որ հանէ զբաճկոն յաւուր ցրտոյ. որպէս քացախ՝ վիրի անօգուտ է, նոյնպէս հասեալ ցաւք մարմնոյ տրտմեցուցանեն զսիրտ: Իբրև ցեց հանդերձի՝ և որդն փայտի, նոյնպէս սրտմտութիւն վնասակար է սրտի առն*:
²¹Եթէ քաղցեալ է թշնամին քո՝ կերակրեա՛ զնա. և եթէ ծարաւի՝ տո՛ւր նմա ըմպել*:
²²Ձայս իբրև առնես՝ կայծակո՛ւնս հրոյ կուտես ՚ի վերայ գլխոյ նորա. և Տէր հատուցէ քեզ բարութիւն*:
²³Յո՛ղմ հիւսւտոյ զամպս յարուցանէ. և երեսք լիրբք զլեզու գրգռեն:
²⁴Լա՛ւ է բնակել առ անկեան ՚ի տամալոջ, քան ընդ կնոջ բամբասողի ՚ի տան

* *Ոմանք.* Առակք Սողոմոնի արքայի Իսրայէլի անքնն*:
Ուր Ոսկան. Եզեկիայի արքայի Իսրայէլի Յրէաս*:

* *Ոմանք.* Ծածկեն զբանս:

* *Ոմանք.* Երկին բարձր և երկիր խոր. սիրտ թագաւորի անքննին:

* *Ոմանք.* Սրբեսցի ամենայն:

* *Ոմանք.* Ձի լաւ է քեզ:

* *Ոմանք.* Ձոր ինչ տեսին:

* *Ոմանք.* Ձի զուցէ՛ նախա՛... ո՛չ մեկնեսցի... և բարեկամութիւնք ազատ են:

* *Ոմանք.* Նոյնպէս խօսել բանս:

* *Ոմանք.* ՚ի գինդ ոսկի սարդիովն պատուական յեռեալ:

* *Ոմանք.* Որոց առաքեն զնա:

* *Ոմանք.* Յաջողութիւն թագաւորաց:

* *Ոմանք.* Մի՛ յաճախեր:

* *Ոմանք.* Նոյնպէս և այր որ վկայէ:

* *Ոմանք.* Եւ որպէս ցեց հան՛... նոյնպէս տրտմութիւն վնասակար է:

* *Ոմանք.* Եթէ ծարաւի է՝ տուր ըմպել նմա:

* *Ոմանք.* Իբրև առնիցես... կուտեսցես ՚ի վերայ... քեզ զբարիս:

միում*։ ²⁵Որպես ջուր ցուրտ անձին ծարաւոյ ւխորժելի՛ է, նոյնպէս ււետիք բարեաց յերկրէ հեռաստանէ։ ²⁶Որպէս թէ ոք զակն աղբեր խնուցու. և զգնացս ջուրց ապականիցէ, նոյնպէս տգեղձ է արդարոյ անկանել առաջի ամպարշտի*։ ²⁷Մեղր շատ ուտել չէ՛ բարւոք. բայց յարգել պարտ է զբանս պատուականս*։ ²⁸Որպէս քաղաք կործանեալ՝ի պարսպաց, նոյնպէս և այր որ ո՛չ խորհրդով ինչ գործիցէ*։

26

Գլուխ ԻԶ

¹Որպէս ցօղ ամարայնի և անձրև ՚ի հունձս, նոյնպէս ո՛չ յարգոյ անզգամի պատիւ*։ ²Որպէս թռչունք և ճնճողուկք թռանին, նոյնպէս անէծք զուր ումեք ո՛չ ելանեն*։ ³Որպէս մտրակ ձիոյ և խթան իշոյ, նոյնպէս և գաւազան ազգի անմտի*։ ⁴Մի՛ տար պատասխանի անզգամի ըստ նորա անզգամութեանն. զի մի՛ լինիցիս նմանօղ նմա*։ ⁵Այլ տո՛ւր նմա պատասխանի ըստ անզգամութեան նորա. զի մի՛ իմաստնագոյն երևեսցի յանձն իւր։ ⁶Ճանապարհաց իւրոց նախատինս առնէ, որ առաքէ զբան ՚ի ձեռն անմիտ հրեշտակի*։ ⁷Կարճեա՛ զգնացս ոտից, և զառակս ՚ի բերանոյ անզգամի։ ⁸Որ դնէ քար ՚ի պարսատիկս՝ նման է առն որ դնէ պատիւ անմտի*։ ⁹Փշալից լինին ձեռք արբեցողի. և ծառայութիւն ՚ի ձեռս անզգամի*։ ¹⁰Բազում ծուփս ծփին ամենայն մարմինք անզգամաց. զի խորտակին յիմարութիւնք նոցա*։ ¹¹Որպէս շուն յորժամ դառնայ՝ ՚ի փսխած իւր և ատելի՛ լինի, նոյնպէս անզգամն իւրովք չարեօք յորժամ դառնայցէ անդրէն ՚ի մեղս իւր։ Է՛ ամօթ որ ատէ զմեղս, և է ամօթ որ ատէ զփառս և զշնորհս*։ ¹²Տեսի այր յանձն իւր պանծացեալ թէ իմաստուն իցէ. բայց յոյս գոյր յանզգամին քան ՚ի նմա*։ ¹³Զվատ յորժամ յուղի առաքես, ասէ. Առևճ ունի զճանապարհս, և զհրապարակս սպանօղք*։ ¹⁴Որպէս դուրք շրջին ՚ի ծղխնուոց, նոյնպէս վատ ՚ի մահիճս իւր*։ ¹⁵Թաքուցանէ վատ զձեռս իւր ՚ի ծոց իւրում, և ՚ի բերան իւր դանդաղի՛ տանել։ ¹⁶Իմաստնագոյն թուի անձին իւրում վատ, քան

* Ոսկան. Առ անկեան ՚ի տամալուոց։

* Ոմանք. Եւ զելս ջուրց ապականիցէ, նոյնպէս անվայելուչ է արդա՞։

* Ոմանք. Այլ յարգել պարտ է։

* Ոմանք յաւելուն. ՚Ի պարսպաց, և անպարհսպ իցէ՛ նոյնպէս։

* Ոմանք. Որպէս ձիւն ամարայնի... նոյնպէս ո՛չ է պիտոյ պատիւ անզգամի։

* Ոմանք. Ջուր ումեք ո՛չ մտանեն։

* Յօրինակին պակասէր. Եւ գաւազան ազգի անմտի։

* Ոսկան. Նմանօղ նորա։

* Ոմանք. ՚Ի ճանապարհաց իւրոց նախատ լինի, որ առա՞։

* Ոմանք. Նման է այնն որ դնէ պատիւ անզգամի։

* Ոմանք. Փշալից են ձեռք արբեցողաց։

* Ոմանք. Բազում մրրկօք ծփին ամենայն... քանզի խորտակին։

* Ոմանք. Դառնայ անդրէն ՚ի փս՞։ Նոյնպէս և անզգամն չարութեամբ անձին իւրոյ, յորժամ դառնայ... որ ատէ ՚ի վերայ զմեղս։

* Օրինակ մի. Տեսի այր մի յանձն։

* Ոմանք. Յուղի առաքեսցես։ Ուր օրինակ մի. Զվատ յորժամ ուրեք յղեսցես, ասէ։

* Ոմանք. Դուրք որ շրջին։

զայն որ զմեծութեան աւետիս բերիցէ՝¹⁷Որպէս որ բուռն հարկանիցէ զշան ձեռոյ, նոյնպէս և մարդ որ անկանի յայլոյ դատաստան՝¹⁸Որպէս փորձիչք որ ընդհարկանեն բանս ՚ի մարդկանէ, և որ վաղվաղէ ընդդէմ բանից՝ նախ նա ընկճի՝¹⁹Նոյնպէս ամենեքեան որ դարանակալ լինին բարեկամաց իւրեանց. և յորժամ յանդիմանին, ասեն. Սեք ընդ խաղ արարաք՝²⁰Ի բազում փայտից զուարթանայ հուր. և ուր ո՛չ գոյ երկմիտ՝ դադարէ կռիւ՝²¹Կրակարանք կայծականց, և փայտ հրոյ. և այր բանսարկու առ ՚ի յուզել զկռիւ։²²Քանք սուտակասպասաց կակո՛ղ են, բայց արկանեն ՚ի շտեմարանս մարտի։²³Որ տայ արծաթ գնեցութեամբ, իբրև ընդ խեցի՝ համարեալ է. շրթունք ողորկք ծածկեն զսիրտս տրտնագինս՝²⁴Շրթամբք իւրովք յայտնի առնէ ամենայն որ լայ զթշնամի. և ՚ի սրտի իւրում նիւթ գնենգութիւն՝²⁵Եթէ աղաչիցէ զքեզ թշնամի, և ՚ի ձայն բարձր աղերսիցէ՝ մի՛ հաւատար նմա. զի եւթն չարիք կան ՚ի սրտի նորա՝²⁶Որ խղիսայթէ զթշնամութիւն, յայտ առնէ զգնեցութիւն. սուզանէ՛ զվնաս իւր բանգէտն յատենի՝²⁷Որ փորէ՛ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ զնա. և որ զլէ վէմ՝ յանձն իւր զլեսցէ՝²⁸Լեզու՛ սուտ՝ ատեայ զճշմարտութիւն. բերան անդադար՝ գործէ խռովութիւնս՝

27

Գլուխ ԻԷ

¹Մի՛ պարծիր առ վաղիւն, զի ո՛չ գիտես զինչ ծնանիցի քեզ վաղիւն՝²Գովեսցէ զքեզ ընկերն՝ և մի՛ քո բերան, օտարն՝ և մի՛ քո շրթունք։³Քար՝ ծանր է, և աւազ դժուարին առ ՚ի բառնալ. բայց բարկութիւն անզգամի ծանրագոյն է քան զերկոսեան՝⁴Անողորմ է սրտմտութիւն, և սաստիկ է բարկութիւն. այլ ոխակալն և ո՛չ իմիք ժուժկալէ՝⁵Լա՛ւ է յայտնութիւն յանդիմանութեան՝ քան զբարեկամութիւն ՚ի ծածուկ՝⁶Լա՛ւ են հարուածք բարեկամի, քան զկամակոր համբոյրս թշնամւոյ՝⁷Անձն յագեալ՝ զխորհիսխ և զմեղր արհամարիէ. բայց անձին կարօտելոյր և դառն իբրև զքաղցր թուի՝⁸Որպէս թռչուն որ թռանի ՚ի

*Ոմանք. Որ զլրութեան աւետիս բե՛ն։

*Ոմանք. Բուռն հարկանէ... որ անկանիցի յայլոյ դատաստանս։

*Ոմանք. Որպէս թունաւորքն առաջի արկանեն զբանս մարդկան, և որ վաղվա՛ն։

*Ոմանք. Ընդ խաղ առնէաք։

*Ոսկան յաւելու. Ոչ գոյ այր երկմիտ։

*Ոմանք. Իբրև զխեցի համարեալ է. կամ՝ համարէ. շրթունք ուղորդք ծած՞։

*Ոմանք. Որ լայ զթշնամիս. կամ՝ զթշնամին իւր։

*Ոմանք. Ջքեզ թշնամին քո, և ի... մի՛ հաւանիր նմա. զի։

*Ոմանք. Որ ծածկէ զթշնամութիւն հաստատէ գնեցութիւն... բանագէտն յատենի։

*Ոմանք. Ընկերի, անկցի ինքն ՚ի նոյն։ Ոսկան. Անձին իւրում զլեսցէ։

*Ոմանք. Եւ բերան անդադար՝ առնէ խռո՛ւ։

*Ոմանք. Քանզի ո՛չ գիտես։

*Ոմանք. Ծանր է քար և դժուարաբառնալի աւազ։

*Ի լուս՝ Այլ նախանձ և ոչ. համաձայն ոմանց ՚ի բնար՝։ Ուր ոմանք. Եւ ո՛չ իմիք ժուժէ կեալ։

*Ոմանք. Լաւ է յանդիմանութիւն յայտնեալ քան զբարեկամութիւն ծածկեալ։

*Ոմանք. Լաւ են վերք բարեկամի քան զկամակար համ՞։

*Քաղունք. Բայց անձին կարօտելոյ՝ և։

բունոյ իւրմէ, նոյնպէս և մարդ ստրկանայ՝ յորժամ օտարանայ յիւրմէ տեղւոյ՝
⁹Իւղով և խնկով և գինւով զուարճանայ սիրտ. և բեկանի՝ ի տրտմութենէ անձն՝
¹⁰Ձբարեկան քո, և զբարեկան հայրենի մի՝ թողուր. և ՚ի տուն եղբօր քոյ մի՝
մտաներ թշուառացեալ: Լա՛ւ է բարեկան մերձաւոր, քան եղբայր ՚ի հեռաստանէ
բնակեալ՝: ¹¹Իմաստուն լեր որդեակ՝ զի ուրախ լիցի սիրտ քո. և դարձո՛ւ ՚ի քէն
զբանս նախատանաց՝: ¹²Խորագէտն ՚ի գալ չարեաց ղօղեաց. և անզգամք ընդ
առաջ երթեալ ՚ի տոյժս անկցին: ¹³Ձե՛րձ ՚ի նմանէ զհանդերձս նորա, զի անց
թշնամանագիրն. քանզի նա զայլոյն ապականէր՝: ¹⁴Որ գովէ զբարեկան ընդ
առաւօտս բարձր ձայնի՛ւ՝ քան զանիժանօղն ո՛չ ինչ առաւել համարեսցի:
¹⁵Կաթիլ հանէ զմարդ ՚ի տանէ իւրմէ յաւուր ձմերայնոյ. նոյնպէս և կին անզգամ
՚ի տանէ իւրմէ զայր՝: ¹⁶Խիստ հողմ է հիւսւսի. բայց անուամբ աջոյ կոչի:
¹⁷Երկաթ զերկաթ խարտէ. և այր գրգռէ զերեսս ընկերի՝: ¹⁸Որ տնկէ՛ թզենի՝
կերիցէ՛ զպտուղ նորա, և որ պահէ զտէր իւր՝ պատուեսցի՝: ¹⁹Որպէս ո՛չ են նման
երեսք երեսաց, նոյնպէս և ո՛չ սիրտք մարդկան սրտից նման են՝: ²⁰Դժոխք և
կորուստ՝ անյա՛գ են. նոյնպէս և աչք՝ ազահք մարդոյ. պիղծ է առաջի Տեառն որ
արձակէ զաչս, և անխրատ՝ և ցոփ լեզուա՛ւ: ²¹Փո՛րձ արծաթոյ և ոսկւոյ ՚ի բովս.
և այր՝ փորձի ՚ի բերանոյ գովչաց իւրոց: Սիրտ անօրինի խնդրէ զչարիս. և սիրտ
ուղիղ՝ խնդրէ զգիտութիւն՝: ²²Եթէ հարկանես զանզգամ ՚ի մէջ ատենի և
անարգես զնա. սակայն ո՛չ մերժես զանզգամութիւն ՚ի նմանէ՝:
²³Խելամտութեամբ խելամուտ լիցես անձանց խաշանց քոց. և հաստատեսցես
զսիրտ քո ՚ի վերայ երամակաց քոց՝. ²⁴զի ո՛չ յաւիտեան է առն ոյժ, և զօրութիւն,
և իշխանութիւն. և ո՛չ տուեալ են նմա ազգաց յազգս՝: ²⁵Խնամ կալ բանջարոյ ՚ի
դաշտի, և հնձեսցես խոտ, և ժողովեա՛ր զխոտ դալար. ²⁶զի եղիցին քեզ ոչխարք
ձորձաբերք. դարմանեա՛ր զդաշտս՝ զի եղիցին քեզ գառիք: ²⁷Որդեակ՝ յինէ՛ն
ուսիր զպատգամս զօրաւորս ՚ի կեանս տա՛ն քոյ և ՚ի կեանս բարեկամաց քոց՝:

28

Գլուխ ԻԸ

¹Փախուցեալ է ամպարիշտն առանց ուրուք հալածելոյ. իսկ արդարն՝ իբրև

* *Ոմանք.* Որ թռչի ՚ի բունոյ... օտարանայցէ յիւրոց տեղեաց:

* *Ոմանք.* Իւղով և գինեաւ և խն՝:

* *Ոմանք.* Ձեղբայր ՚ի հեռաստանի բնա՛ւ:

* *Ոմանք.* Ուրախ եղիցի սիրտ քո. և ՚ի բաց դարձո՛ւ ՚ի քէն զբանս թշնամանաց:

* *Ոմանք.* Ձայլոցն ապականէ:

* *Ոմանք.* Եւ կին անզգամ հանէ ՚ի տա՛... զայր իւր:

* *Ոմանք.* Երկաթ զերկաթ սրէ... ընկերի իւրոյ:

* *Ի լուս՝.* Եւ որ պատուէ զտէր իւր պահեսցէ զնա. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Նոյնպէս և ո՛չ են նմա սիրտք սրտից:

* *Ոմանք.* Ազահ մարդկան:

* *Ոմանք.* Եւ սիրտ ուղիղ քննէ զգի՛:

* *Ոմանք.* Եթէ տանջես զանզգամն ՚ի մէջ ա՛՛:

* *Ոմանք.* Խելամտութեամբ ծանիր զանձինս խաշանց քոց, և հաստատեա՛ր զսի՛:

* *Ոմանք.* Վասն զի ո՛չ յաւ՛... տուեալ է նմա: *Ուր Ոսկան.* ո՛չ յաւիտեանական է:

* *Ոմանք.* Եւ ՚ի կեանս բարեկամի քո:

գառնած յամեն ապաստան է*։ ²Վասն մեղաց ամպարշտաց դատաստանք յուզին։
 և այր խորագետ շիջուցանէ զնա*։ ³Չգորն առ ամպարշտութեան իւրում
 զրպարտէ զտնանկս։ Որպէս անձրև սաստիկ և անշահ*։ ⁴Նոյնպէս և որ թողուն
 զօրէնս, և գովեն զանօրէնութիւն։ իսկ որ սիրեն զօրէնս՝ պատեն զինքեամբ
 պարիսպ*։ ⁵Արք չարք ո՛չ առնուն ՚ի միտ զիրաւունս։ իսկ որ խնդրեն զՏէր՝
 խելամուտ լիցին ամենայնի*։ ⁶Լաւ է աղքատ՝ որ գնայ ճշմարտութեամբ, քան
 զմեծատուն սուտ։ ⁷Պահէ՛ զօրէնս որդի իմաստուն։ իսկ որ արածէ
 զորկորստութիւն՝ անարգէ զհայր իւր։ ⁸Որ լնու զտուն իւր ՚ի տոկոսեաց և ՚ի
 վաշխից, ժողովէ՛ այնմիկ որ ողորմի աղքատաց*։ ⁹Որ խոտորեցուցանէ զունկն
 իւր՝ չլսէ օրինաց։ և ինքն զիւր ուխտս պղծէ*։ ¹⁰Որ մոլորեցուցանէ զուղիս չար
 ճանապարհաւ, ինքն անկցի յապականութիւն։ Անբիծք բաժանեսցեն
 զբարութիւնս։ և անօրէնք անցցեն առ բարութեամբք, և մի՛ մտցեն ՚ի նոսա*։
¹¹Իմաստուն թուի անձին իւրում այր մեծատուն։ և աղքատ հանճարեղ
 ստգտանէ զնա։ ¹²Վասն օգնականութեան արդարոց՝ բազում լինին փառք, և ՚ի
 տեղիս ամպարշտաց՝ սատակին մարդիկ։ ¹³Որ ծածկէ զամպարշտութիւնն իւր՝
 ո՛չ յաշողեսցի։ իսկ որ ՚ի վեր հանէ և յանդիմանէ՝ սիրելի՛ լիցի*։ ¹⁴Երանի՛ իցէ
 առն որ արհամարհիցէ զամենայն վասն երկիւղածութեան։ իսկ խիստն սրտիւ,
 անկցի ՚ի չարիս*։ ¹⁵Առն՝ քաղցեալ և գայլ ծարաւի։ որ աղքատ է՝ և բուռն լինիցի
 ազգի տնանկի*։ ¹⁶Թագաւոր կարօտ մտօք՝ մե՛ծ զրպարտօղ։ իսկ որ ատեայ
 զանիրաւութիւն՝ երկայնակեաց լիցի*։ ¹⁷Այր որ զմահապարտ յերաշխի առնու,
 փախստական լինի և ո՛չ ՚ի հաստատութեան։ Խրատեա՛ զորդի քո, և հանգուսցէ
 զքեզ։ և տացէ զարդ անձին քում։ և ո՛չ հնազանդի ազգի անօրինի*։ ¹⁸Որ գնայ
 արդարութեամբ՝ գտցէ օգնականութիւն։ իսկ որ ելանէ ՚ի թեր ճանապարհ՝ նովին
 վարակեսցի*։ ¹⁹Որ գործէ զերկիր իւր՝ լցցի հացիւ, և որ զհետ երթայ
 դատարկութեան՝ լցցի տնանկութեամբ*։ ²⁰Այր հաւատարիմ օրինեսցի՛ յոյժ։ և
 չարագործն ՚ի պատուհասէ մի՛ ապրեսցի։ Որ ո՛չ պատկառէ յերեսաց արդարոց՝
 չէ՛ գովելի*։ ²¹Որ ակն ածէ զերեսս անօրինաց յանդիմանել՝ չէ՛ բարւոք.
 այնպիսին պատառոյ՛ հացի վաճառէ զմարդ*։ ²²Փութայ մեծանալ այր չարակն,

* *Ոմանք.* Փախուցեալ երթայ ամբա՛... բայց արդարն իբրև։

* *Ոմանք.* Դատաստանք յառնեն... շիջուցանէ զնոսա։

* *Ոմանք.* Սաստիկ և անօգուտ։

* *Ոմանք.* Եւ գովեն զամբարշտութիւն։

* *Ոմանք.* Ոչ իմանան զիրաւունս։ իսկ որք խնդրեն զՏէր՝ իմաստունք լինին յամենայնի։

* *Յօրինակին.* ՚Ի տոկոսաց և ՚ի վաշ՛։ *Ոմանք.* Ժողովէ զնա այնմ որ ողո՛։

* *Ոսկան.* Որ խստացուցանէ զունկն իւր։ *Ոմանք.* Ձունկն իւր զի մի՛ լուիցէ օրինաց։ *Ուր
 ոմանք.* Չլսել օրինաց։

* *Ոսկան.* Ջբարութիւնս նորա։ *Ոմանք.* Անցցեն առ բարեօքն։

* *Ոմանք.* Ձամպարշտութիւնս իւր... իսկ որ պատմէ և յանդիմանէ սիրելի լինի. *կամ՝
 եղիցի:*

* *Ոմանք.* Երանելի է այր որ ար՛... որ խիստ է սրտիւ։

* *Ոմանք.* Եւ բուռն լինի ազ՛։

* *Ոսկան.* Երկայնակեաց լինի։

* *Ոմանք.* ՚Ի հաստատութեան կայցէ... և ո՛չ հնազանդեսցի ազգի անօ՛։

* *Ոմանք.* Իսկ որ գնայ ՚ի ճանապարհս թիւրս, նոքիմբք վարա՛։

* *Ոմանք.* Ձերկիր, լցցի հա՛... լցցի աղքատութեամբ։

* *Ոմանք.* Արդարոց, ո՛չ է բարւոք։

* *Ոմանք.* Յանդիմանել, չէ գովելի։

և ո՛չ գիտե՛ թե ողորմածն յաղթե՛ նմա՛: ²³Որ յանդիմանե՛ զայր՝ ՚ի ճանապարհս իւր, շնորհակալութիւն զտանե՛ քան զսուտակասպասն լեզուաւ՛: ²⁴Որ մերժե՛ զհայր կամ զմայր՝ և համարիցի չմեղանչել, կցո՛րդ է նա արանց ամպարշտաց՛: ²⁵Այր ազահ գրգռե՛ զհակառակութիւն. իսկ որ յուսացեալ է ՚ի Տէր՝ ընդ խնամո՛վ կեցցե՛: ²⁶Որ յուսացեալ է ՚ի յանդգնութիւն սրտի՝ նա անզգամ է. իսկ որ զնայ իմաստութեամբ՝ ապրեսցի՛: ²⁷Որ տայ աղքատաց՝ ո՛չ կարօտացի. իսկ որ դարձուցանե՛ զակն իւր ՚ի նոցանե՛ ՚ի բազում կարօտութեան եղիցի՛: ²⁸Ի տեղիս ամպարշտաց հեծե՛ն արդարք. բայց ՚ի նոցա կորստեան բազմանան արդարք՛:

29

Գլուխ ԻԹ

¹Լա՛ւ է այր յանդիմանիչ՝ քան զայր խստապարանոց. զի յանկարծակի հուր հարեալ զնովաւ՝ չլինիցի բժշկութիւն՛: ²Ի գովութեան արդարոց՝ ուրախ եղիցին ժողովուրդք. ընդ իշխանութիւնս ամպարշտաց՝ հեծե՛ն արդարք: ³Առն իմաստասիրի՝ ուրախ առնի հայր իւր. իսկ որ զբոզս արածե՛, կորուսանե՛ զմեծութիւն՛: ⁴Թագաւոր արդար՝ կանգնե՛ զաշխարհ. և այր անօրէն կործանե՛: ⁵Որ կազմե՛ կռիւս յերեսս բարեկամի իւրոյ, պատահեսցե՛ հաղթս զոտիւք իւրովք՛: ⁶Առն մեղաւորի որոգայթ սաստիկ դիցի. իսկ արդարն՝ յուրախութեան և ՚ի խնդութեան եղիցի՛: ⁷Գիտե՛ արդար դատել զտնանկս. իսկ ամպարիշտն գիտութեան ո՛չ խելամտե՛. և աղքատի՝ ո՛չ գտանին միտք իրաւախոք՛: ⁸Արք անօրէնք հո՛ւր հարին զքաղաքե՛. և իմաստունք դարձուցին զբարկութիւն: ⁹Այր իմաստուն դատի զազգս. և այր անզգամ ՚ի բարկանալ իւրում ծաղր լինի՛ և ո՛չ ակնածե՛: ¹⁰Արք արեանց՝ ատեան զարդար. իսկ ուղիղք փափաքեսցեն յանձն նորա: ¹¹Չամենայն բարկութիւն իւր միանգամայն թափե՛ անզգամ. իսկ իմաստունն մեղմով համբերե՛: ¹²Թագաւոր՝ որ ունկնդի՛ր է բանից անիրաւութեան, ամենեքեան որ ընդ նովաւ են՝ անօրէնք են՛: ¹³Փոխատուի և փոխառուի ՚ի մի վայր հասելոց, երկոցունց հանդէս առնե՛ Տէր՛: ¹⁴Թագաւոր յորժամ ճշմարտութեամբ դատիցի զտնանկս, աթոռ նորա ՚ի վկայութիւն

*Ոմանք. Թե այր ողորմած զօրանայ քան զնա:

*Ոմանք. Ձմարդ ՚ի ճանապարհս իւր... շնորհակալութիւն ընկալցի առաւել քան զսու՛:

*Ոմանք. Ձհայր իւր կամ զմայր, և համարի չմե՛:

*Ոմանք. Ի Տէր, ՚ի խնամակալութեան եղիցի:

*Ոմանք. Որ յուսայ յանդգ՛... այնպիսին անզգամ է:

*Ոմանք. Եւ որ տայ աղ՛:

*Ոմանք. Եւ ՚ի նոցա կո՛:

*Ոմանք. Քան զխստապարանոց. քանզի յանկար՛. հուր հարեալ զնմանէն՝ ո՛չ լինի բժշ՛:

*Ոմանք. Այր որ սիրե՛ զիմաստութիւն բերկրեսցի հայր նորա, և որ արա՛:

*Ոմանք. Որ պատրաստե՛ յերեսս բարեկամի իւրոյ որոգայթ, շուրջ արկանե՛ զայն զոտիւք իւրովք:

*Ոմանք. Մեղաւորի մեծ է որոգայթ. բայց արդարն ՚ի խնդութեան և յուրա՛:

*Ոմանք. Դատել զաղքատս. իսկ ամբարիշտն ո՛չ իմանայ դատել:

*Ոմանք. Ծաղր լինի և ո՛չ ամաչե՛:

*Ոմանք. Բովանդակ զսրտմտութիւն իւր արտաքս բերե՛ անզգամն:

*Ոմանք. Թագաւոր որ հաւանի բանից ա՛:

*Ոմանք. Ի մի վայր եկելոց, այցելութիւն առնե՛ երկոցունց Տէր:

հաստատեսցի*։ ¹⁵Գանք և կշտամբանք տան զիմաստութիւն. մանուկ մուրեւալ՝
 յամօթ առնէ զծնօղս իւր։ ¹⁶Ի բազմանալ ամպարշտաց՝ յաճախեն մեղք. իսկ
 արդարք ՚ի նոցա կործանելն՝ զահի՛ հարկանին*։ ¹⁷Խրատեա՛ զորդի քո՝ և
 հանգուսցէ զքեզ, և տացէ զարդ անձին քում։ ¹⁸Ո՛չ գտցի առաջնորդ ազգի
 անօրինի. իսկ որ պահէ զօրէնս՝ երանելի՛ է*։ ¹⁹Բանիւք ո՛չ խրատի ծառայ խիստ.
 թեպէտ և իմանայցէ չղնէ յունկան*։ ²⁰Յորժամ տեսանիցես զայր յանդուզն
 բանիւք, գիտասջի՛ր զի յոյս գոյ յանգամին քան ՚ի նմա*։ ²¹Որ փափկասուն
 լինի ՚ի մանկութենէ, ՚ի ծառայութիւն մատնեսցի. և յետոյ մորմոքեսցի յանձն
 իւր*։ ²²Այր անզգամ փորէ զհակառակութիւն. այր հեզ՝ դարձոյց զմեղս. և այր
 բարկացօղ փորեաց զմեղս*։ ²³Ամբարտաւանութիւն զայր նկո՛ւն առնէ. իսկ
 զխոնարհս փառաւոր առնէ Տէր*։ ²⁴Որ բաժանակի՛ց լինի գողոց՝ ատեայ զանձն,
 որք յորժամ երդումն առաջի դիցի՝ լուեալ և ո՛չ պատմիցեն*, ²⁵և առ երկիւղի և
 ամօթոյ մարդկան յայտնիցեն և կործանեսցին. իսկ որ յուսացեալ է ՚ի Տէր
 ուրախ լիցի։ Ամպարշտութիւն առն ածէ զայթազդութիւն, և որ յուսայ ՚ի Տէր՝
 ապրեսցի*։ ²⁶Բազումք ողորքեն զերեսս իշխանաց. բայց ՚ի Տեառնէ ելանեն
 իրաւունք առն*։ ²⁷Պի՛ղծ է արդարոյ այր անօրէն, և պի՛ղծ է անօրինի՝ ուղիղ
 ճանապարհ*։

30

Գլուխ L

¹Չայս ասէ այր ցիւտացեալս Աստուծոյ. եթէ լո՛ւռ եղէց՝ զի անմտագոյն են
 քան զամենայն մարդիկ*։ ²և իմաստութիւն մարդոյ ո՛չ գոյ յիս։ ³Աստուած ուսոյց
 ինձ իմաստութիւն. և գիտութեան սրբոց խելամո՛ւտ եղէ, և ճանաչեմ
 զսրբութիւնս*։ ⁴Ո՞վ ել յերկինս՝ և էջ. ո՞վ ժողովեաց զհողմս ՚ի գոգ իւր. ո՞վ
 ամփոփեաց զջուրս ՚ի ձորձս իւր. ո՞վ կալաւ զծագս երկրի։ Չի՞՞նչ անուն է նորա.
 կամ զի՞՞նչ անուն որդւոյ նորա. զի գիտասցես* ⁵թէ ամենայն բանք Աստուծոյ

* *Ոմանք.* Թագաւոր որ ճշմարտութեամբ դատի զաղքատս, աթոռ։

* *Ոմանք.* Յաճախեն մեղք, և ՚ի նոցա կործանմանն արդարք յերկիւղի լինին։

* *Ոմանք.* Եւ ո՛չ գտցի առաջ՝։

* *Ոմանք.* Ոչ խրատեսցի ծառայ խիստ. զի թեպէտ և իմանայ, ո՛չ հնազանդի։

* *Ոմանք.* Գիտացիր, զի յոյս գոյ։

* *Ոմանք.* Որ փափկանայ ՚ի մանկութեան ծառայ լիցի, և յետոյ վտանկեսցի յանձն իւր։

* *Ոմանք.* Այր բարկացող՝ յարուցանէ զհակառակութիւն. և այր հեզ դարձարեցոյց զմեղս. և այր սրտմտող փոր՝։

* *Ոմանք.* Իսկ զխոնարհս կանգնէ փառօք Տէր։

* *Ոմանք.* Ատեայ զանձն իւր, և եթէ երդումն առաջի դիցի, զարհուրեալ ո՛չ ևս պատմեսցեն։

* *Ոմանք.* Որք երկնչին և ամաչեն ՚ի մարդկանէ ընկճեսցին. իսկ որ յուսացեալն են ՚ի Տէր ուրախ լիցին։

* *Ոմանք.* Ողորքեսցեն զե՛՛։

* *Ոմանք.* Արդարոյ այր անիրաւ։

* *Ոմանք.* Աստուծոյ. Լուռ եղէց... քան զամենայն մարդ։

* *Ոմանք.* Եւ գիտութեան սրբոյ խելա՛՛... և ճանաչեմ զսրբութիւն։

* *Ոմանք.* Կալաւ զամենայն ծագս երկ՝։ *Օրինակ մի.* Կամ զինչ անուն որդւոց նորա։ Չի գիտասցեն։ (5) Ամենայն բանք Աստուծոյ ընտիրք. և պաշտպան լինի ինքն

ընտրեալք են, և վերակացո՛ւ է նա երկիւղածաց իւրոց: ⁶Մի՛ յաւելուցուս ՚ի բանս նորա՝ զի մի՛ յանդիմանեսցէ զքեզ, և սո՛ւտ լինիցիս*:

⁷Երկու՛ս ինչս խնդրեմ ՚ի քէն, մի՛ հաներ յինէն զշնորհս մինչչև՝ մեռեալ իցեմ*:

⁸Զբան՝ զուր և սուտ՝ հեռի՛ արա յինէն: Մեծութիւն և տնանկութիւն մի՛ տար ինձ. այլ կշռեա՛ ինձ զարժանն բաւականութեամբ*:

⁹Զի մի՛ մեծացայց՝ և ստեցից. և ապիցեմ, թէ ո՞վ տեսանիցէ զիս. կամ աղքատացայց և գողացայց, և երդուայց յանուն Աստուծոյ իմոյ*:

¹⁰Մի՛ մատներ զծառայ ՚ի ձեռս տեառն իւրոյ. զի մի՛ երբէք անիծանիցէ զքեզ՝ և ապականիցիս:

¹¹Ծնունդ չար՝ զհայր իւր անիծանէ, և զմայր իւր ո՛չ օրինէ*:

¹²Ծնունդ չար՝ առ արդարս ունի զանձն իւր. և զելս անձին իւրոյ ո՛չ լուացաւ*:

¹³Ծնունդ չար՝ ամբարտաւան աչս ունի. և յարտևանունս իւր հպարտանայ*:

¹⁴Ծնունդ չար՝ իբրև զսուսեր ունի զատամունս իւր. և զժանիս իւր իբրև զկտորոցս. մաշել և ուտել զխոնարիս երկրի, և զտնանկս ՚ի մարդկանէ*:

¹⁵Տգրկի՛ երեք դասերք էին սիրով սիրեցեալք, և երեքին սոքա՝ ո՛չ յագեցուցին զնա. և չորրորդն ո՛չ լցաւ ասել շատ*:

¹⁶Դժոխք՝ և կորուստ՝ և սէր կանանց՝ և տարտարոսն. և երկիր՝ ո՛չ յագի ջրով, և ջուր և հուր՝ ո՛չ երբէք ասեն շատ:

¹⁷Ակն որ արհամարիէ զհայր, և անարգէ զծերութիւն մօր. խլեսցեն զնա ագռաւք ձորոց. և գէշ գէշ արասցեն զնա ձագք արծուեաց*:

¹⁸Երեք են՝ զորս անհնար է ինձ իմանալ, և զչորրորդն ո՛չ ճանաչեմ*:

¹⁹Զհետս արծուոյ թռուցելոյ. և զճանապարհս օձի՛ ՚ի վերայ վիմի. և զշաւիղս նաւի ընդ ծով գնացելոյ. և զճանապահս առն երիտասարդի*:

²⁰Նոյնպիսի՛ և ճանապարհ կնոջ շնացողի. զի յորժամ գործէ ինչ՝ լուանայ և ասէ. Իմ չիք ինչ գործեալ*:

²¹Երիւք շարժի երկիր, և չորրորդին ո՛չ կարէ հանդարտել:

²²Եթէ ծառայ թագաւորեսցէ. և անմիտն՝ եթէ յագեսցի հացիւ.

²³և աղախին՝ եթէ հանէ զտիկին իւր. և կին ատելի՛ եթէ դիպեսցի առն բարւոյ*:

²⁴Չո՞րք են որ փոքր են յերկրի. և նոքա իմաստնագոյնք են քան զիմաստունս*:

²⁵Սրջիւն՝ որոյ ո՛չ գոյ զօրութիւն, և պատրաստ ամարայնոյ զկերակուր իւր:

²⁶Եւ ճագար՝ ազգ անհօր, որ արարին ՚ի վէմս զդադարս իւրեանց:

²⁷Առանց թագաւորի՛ է մարախ, և զօրաժողով լինի իբրև ՚ի միոջէ հրամանէ օրինօք:

²⁸Եւ սարդ՝ կռուեալ ձեռօք յորմ, որ դիւրին է առ որսալ,

երկիւղածաց:

*Ոմանք. Մի՛ յաւելուր ՚ի բանս:

*Ոսկան յաւելու. խնդրեմ ՚ի քէն Տէր:

*Ոմանք. Չմեծութիւն և զաղքատութիւն:

*Ոմանք. Թէ ո՞ տեսանէ զիս... յանուն Տեառն Աստուծոյ իմոյ:

*Ոմանք. Չհայր իւր անիծանիցէ:

*Ոմանք. Ծնունդ չար արդար համարի զանձն. և զելս անձին իւրոյ ո՛չ լուանայ:

*Ոմանք. Եւ արտևանամբք իւրովք հպար՛:

*Ոմանք. Եւ զաղքատս ՚ի մարդկանէ:

*Ոմանք. Եւ երեքեան նոքա ո՛չ յա՛:

*Ոմանք. Ակն որ ծաղր առնէ զհայր. և ա՛... և կերիցեն զնա ձագք արծ՛:

*Ոմանք. Անհնարին է ինձ իմա՛:

*Ոմանք. Առն յերիտասարդութեան իւրում:

*Այլք. Նոյնպիսի է և ճանապարհ: Ոմանք. Լուանայ և ասէ. Ոչ գործեցի չար: Ուր օրինակ մի. Իմ չիք ինչ գործեալ անօրէնս:

*Ոմանք. Եթէ հանիցէ զտի՛:

*Յօրինակին պակասէր. Որ փոքր են յերկրի: Ուր ոմանք. ՚ի վերայ երկրի: Իսկ Ոսկան. փոքրագոյնք են ՚ի վերայ:

բնակէ՝ ՚ի յարկս թագաւորաց*։ ²⁹Երեք են որ պարծ շրջին, և չորրորդն գեղեցիկ ճեմի*։ ³⁰Կորին առիւծու հօտը է քան զանասունս, որ ո՛չ զանգիտէ և ո՛չ թիկունս դարձուցանէ յանասնոց*։ ³¹Եւ արաղաղ՝ որ շրջի ՚ի մէջ մարեաց սիգալով. և նոխազ՝ առաջնորդ հօտի. և թագաւոր՝ որ հպարտախօս լինի ՚ի մէջ ազգաց*։ ³²Եթէ զանձն դիւրութեան տացես, և ձեռն ՚ի բերան կռուով ձգիցես՝ անարգեսցիս*։ ³³Կթեա՛ կաթն՝ և եղիցի ևղ. ապա թէ կարի՛ ճմլեսցես զպտկունսն, ելանէ արիւն։ Եւ եթէ ձգեսցես զբանս, ելցեն դատաստանք և կռիւք*։

31

Գլուխ ԼԱ

¹Իմ բանք յԱստուծոյ խօսեցեալ են, հրաման թագաւորի զոր խրատեաց զնա մայր իւր*։ ²Ձի որդեակ՝ Աստուծոյ բանք են. անդրանիկդ քե՛զ ասեմ որդի. զի որդեակ՝ պտուղ որովայնի իմոյ. զի որդեակ՝ ուխտից իմոց*։ ³Մի՛ տար կանանց զմեծութիւն քո և զմիտս քո և զկեանս՝ ՚ի խորհուրդս յետինս. խորհրդով գործեա՛ զամենայն, խորհրդով՝ արբ գինի։ ⁴Մեծամեծքն բարկասիրտք են, զինի մի՛ արբցեն. ⁵զի մի՛ իբրև արբցեն՝ մոռանայցեն զիմաստութիւն, և ուղիղ ո՛չ կարիցեն դատել զտկարն*։ ⁶Տուք արբեցութիւն տրտմեցելոց, և զինի ըմպել՝ ցաւագնոտաց*։ ⁷զի արբցեն՝ և մոռացին զտնանկութիւնս իւրեանց, և զցաւս իւրեանց ո՛չ ևս յիշեսցեն*։ ⁸Բաց զբերան քո բանիւ Աստուծոյ, և դատեա՛ զամենեսեան ողջմտութեամբ*, ⁹և ընտրեա՛ և որոշեա՛ զտնանկն և զտկարն։ ¹⁰Կին ժրագլուխ եթէ գտանիցի, պատուականագոյն է այնպիսին քան զականս պատուականս*։ ¹¹Վստահ է ՚ի նա սիրտ առն իւրոյ. այնպիսին աւարաց երբէք ո՛չ կարօտասցի*։ ¹²Գործակից է առն իւրում ամենայն բարեաց և կենաց՝ և ո՛չ չարեաց*։ ¹³Գտեալ ա՛սր և կտալ՝ արար անօթս պիտանիս ձեռք իւրովք*։ ¹⁴Եւ եղև իբրև զնաւ շահաբեր. ՚ի հեռաստանէ ժողովէ իւր զանձս*։ ¹⁵Յառնէ ընդ

* *Ոմանք.* Ձեռքք ՚ի յորմս։

* *Ոսկան.* Գեղեցիկ ճեմէ։

* *Ոսկան.* Եւ ո՛չ զթիկունս դարձուցանէ ՚ի թշնամւոյ։

* *Ոմանք.* Յորժամ հրապարակախօս լինի ընդ ազգի։ *Աստանօր ամենայն օրինակք բաց ՚ի մերմէս ունիցն՝* հրապարակախօս լինի։

* *Ոմանք.* Եւ ձգեսցես զձեռն քո կռուով, անար*։

* *Ոմանք.* Ճմլեսցես զպտուկսն։

* *Ոսկան.* Ամենայն բանք Աստուծոյ խօսե՛։

* *Ոսկան.* Քեզ ասեմ որդեակ։

* *Ոմանք.* Ձի մի՛ յորժամ ըմպիցեն մո՞... ո՛չ կարասցեն դատել զտնանկն։

* *Օրինակ մի.* Ըմպել ցաւագնելոց։

* *Ոմանք.* Մոռացին զաղքատութիւնս իւր*։

* *Ոմանք յաւելուն.* Ողջմտութեամբ։ *Բաց զբերան քո և դատեա՛ իրաւամբք,* (9) և ընտրեա՛ և որոշեա՛ զաղքատն և զտկարն։

* *Ոմանք.* Եթէ որ գտանիցէ։

* *Ոմանք.* Սիրտ առն նորա, այնպիսին բազում աւարաց ո՛չ կարօ*։

* *Ոմանք.* Քանզի գործակից է։ *Ոսկան.* Եւ կենակից՝ և ո՛չ չարաց։

* *Ոմանք.* Արար հանդերձս պի*։

* *Ոմանք.* Ժողովէ զմեծութիւն։

արշալուրշս, և տայ կերակուր ընտանեաց, և գործ նաժշտաց*։ ¹⁶Տեսանէ զանդ գեղեցիկ՝ և գնէ զնա, և ՚ի պտղոյ ձեռաց իւրոց գործէ՝ զերկիր*։ ¹⁷Գօտի ածեալ հաստատութեամբ ընդ մէջ իւր՝ մխեաց զբազուկս իւր ՚ի գործ*, ¹⁸և ճաշակեաց՝ զի քաղցր է գործել, և ո՛չ շիջանի ճրագ ՚ի նմանէ զամենայն գիշեր*։ ¹⁹Ձծեռս իւր ձգէ յօգուտ, և զմատունս իւր անձանձրոյթ տայ ՚ի լոյս*։ ²⁰Ձծեռս իւր ընդարձակեաց աղքատաց, և կարկառ պտուղ տնանկին*։ ²¹Ո՛չ ինչ հոգայ ՚ի տանէ կողմանէ այր նորա յորժամ ուրեք յամիցէ. զի ամենեքին որ զնովա՛ւ են, զգեցեալ են կրկին պատմուճանս*։ ²²Արա՛ր առն իւրում բեհեզս և ծիրանիս, և անձին իւրում արկանելի՛ս։ ²³Եւ երևելի՛ է ՚ի դրունս այր նորա, յորժամ նստիցի ՚ի ժողովրդեան ՚ի մէջ ծերոց և բնակչաց երկրի*։ ²⁴Կտա՛ւս արար և վաճառեաց, և արկանելի՛ս Քանանացւոց*։ ²⁵Ձբերան իւր եբաց չափով և իմաստութեամբ. և կարգ եղ լեզուի իւրում։ ²⁶Ձգօրութիւն և զմեծվայելչութիւն զգեցաւ. և ուրախ եղև յաւուրս յետինս։ ²⁷Պարկէ՛շտ են ճանապարհք տան նորա. հաց դատարկութեան ո՛չ եկեր*։ ²⁸Եւ ողորմածութիւնք նորա կանգնեցին զորդիս նորա և մեծացուցին։ Եւ այր նորա գովէ զնա՝ և ասէ*։ ²⁹Բազում դատերք ստացան զմեծութիւն. բազումք արարին զօրութիւն. բայց դու առաւել՝ եղեր՝ և անցուցեր զամենեքումբք*։ ³⁰Սուտ հաճութիւնք, և ընդունայն գեղ կնոջ ո՛չ գոյ ՚ի քեզ. զի կին իմաստուն և բարեպաշտօն օրհնեսցի։ Ձերկիւղածս Տեառն պատուեսցէ նա*։ ³¹Թու՛րք նմա ՚ի պտղոյ շրթանց նորա. և գովեսցի ՚ի դրունս այր նորա։ Ձի ճանապարհք առնն առաջի երեսաց իւրոց երթիցեն, և աջողեսցին յաւիտեանս յաւիտենից։

Առակք Սողոմոնի. Տունք ՌԶԾ*:

* *Ոմանք.* Յառնէ ընդ առաւօտս։

* *Ոմանք.* Տեսեալ անդաստան գեղեցիկ։

* *Ոմանք.* Պնդեալ է հզօրապէս զմէջ իւր։

* *Ոմանք.* Եւ ո՛չ շիջանի զամենայն գիշերս ճրագ նորա։

* *Յայսմ վայրի երեք օրհնակք հասնածայն մերումս ունին՝* անձանձրոյթ տայ ՚ի լոյս. և երկու օրհնակք. տա ՚ի լուսոյն. *կամ՝* լուսոյ։ *Իսկ օրհնակ մի գրեալ զառաջինն՝* անձանձրոյթ ՚ի տալոյ. *յետոյ ՚ի բաց քերեալ ՚ի սկզբնէ անտի ի-ն, և այլով ձեռամբ գրեալ ՚ի վերայ՝ նշանակէր մուծանել ՚ի մէջ տա և լոյ, և այնպէս առնել տա իլոյ. որպէս ունի կիսակատար նորագիր օրհնակ մի յանցեալ դարու գրեալ։*

* *Ոմանք.* Ձծեռս իւր բանայ աղքատաց, և պտուղ կարկառէ տնանկաց։

* *Ոսկան.* Ի տան կողմանէ։

* *Ոմանք.* Երևելի է... յորժամ նստցի... ՚ի մէջ ծերոց բնակ՝։

* *Ոմանք.* Եւ արկանելիս արար։

* *Ոմանք յաւելուածով ունին.* Հաստատուն են ճանապարհք տան նորա, և հաց... ո՛չ եկեր. *զբերան իւր բանայ հանճարով և օրհնադրութեամբ։*

* *Ոսկան.* Եւ ողորմութիւն նորա կանգնէ։

* *Ոմանք.* Եւ զանցուցեր զամենեքումբք։

* *Ոմանք.* Քանզի կին բարեպաշտօն... զերկիւղածս Տեառն գովէ նա. և օրհնակ մի պատմեսցէ նա։

* *Ի վախճանի՝ ոմանք ունին՝* Կատարումն Առակացն. և ոմանք՝ Կատարեցաւ Առակք Սողոմոնի։ *Իսկ որք ըստ մերումս նշանակեն աստանօր զթուահամարս տանց, յընթացս կարգի բնաբանին նմանապէս զանց առնեն և նորա դրոշմել զթուագիրս առ իւրաքանչիւր տուն։*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՐԻՆ

Եւ ժողովօղս յետ Առակացն երկրորդ գիրք է Սողոմոնի. զոր բերանովն Սողոմոնի խօսի զայս ընդ մեզ ճշմարիտ ժողովօղն Քրիստոս, որ ժողովեաց զցրուեալսն բազմաստուածութեամբ՝ ՚ի մի ճշմարիտ աստուածպաշտութիւնն: Ասի ժողովօղդ և Եկլեսիաստես, որ է Եկեղեցական. զի քան զամենայն աստուածային գիրս սա շահաւէտ խրատ է Եկեղեցւոյ: Զի Առակացն գիրք՝ զտղայական հասակն նախակրթ յառաքինութիւն, ազգի ազգի առակօք, և խիտառխիտ դարձուածովք բանից. իսկ այս Գիրք՝ զահահասեալսն ՚ի չափ՝ խրատ է կատարելագոյն իմաստիւք ըստ կատարեալ հասակին: Եւ դիտաւորութիւն բովանդակ գրոցս զանազան դիմակօք յայս հայի, թէ պարտ է քան զհեշտալիս զգայութեանց գերիվերոյ ամբառնալ զմիտս, և զերևելիս զամենայն ՚ի խոնարհ թողուլ, և յայն ինչ ձգտել՝ որ ՚ի վեր է քան զգայութիւն: Բայց տե՛ս, զի հաւատարմանայ ասացեալն յոմանց՝ ապաշխարեալ Սողոմոնի զյանցումնն յորդ արտասուօք, որով և պահեցաւ նմա շնորհք իմաստութեան հոգւոյն որպէս Դաւթի, և ո՛չ վրիպեցաւ յօրինակ լինելոյ Քրիստոսի. զի թէ ստուգապէս հայեսցուք ՚ի բանս գրոցս այսորիկ, ճշմարտապէս յայտնիչք և զղջման, և ապաշաւանաց:

Գլուխք ժողովողին

ա. Թէ ընդունայն է ջանք ընդ արեգակամբ, այսինքն երկրաւոր, զի չէ՛ աստ մարդկան ազգ մնացական. այլ հաստատուն է առաքինութիւն օրինակաւ երկրի որ կայ. իսկ մարդկայինքս անկայունք, որպէս արև ծագէ և մտանէ, և մարդ ծնանի և մեռանի. և որպէս անլիր է ծով, և հոսանուտ է մարմին և դառնայ ՚ի հող իւր, որպէս հողմ ՚ի շրջանս իւր: Բ. Հաւատարմացուցանէ զասացեալ ունայնութիւնքս փորձի՛ւ իրացն զորս թուէ. թէ արարի զայս ինչ և զայն, և ահա սնոտի են. ո՛չ զի Աստուած է պատճառ, այլ անձնիշխան կամաց չար և անմիտ յօժարութիւնն: Գ. Յուցանէ ապա զճշմարիտ բարին որ է իմաստութիւն. այսինքն՝ առաքինութիւն, որ առ անզգամութեան զանազանեալ է որպէս լոյս առ խաւար. և թէ նա՛ է իմաստուն որ զտեսօղ միտքն գլուխ պահէ հոգւոյն. իսկ որ զզգայութիւն յարգէ որ է ոտք, ՚ի խաւարի՛ ունի զմիտսն: Դ. Դնէ վիճմամբ ՚ի դիմաց մարմնասիրաց, թէ ո՛չ գոյ շահ յառաքինութեանց. զի իմաստունն իբրև զանզգամն մեռանի. և առնէ ինքն պատասխանի թէ աւելորդ է զայս ասել, զի իմաստնոյն յիշատակ յաւիտեան, և անզգամին մոռացմամբ վատնի: Ե. Յաւելու խրատել թէ ատելի է փափկութիւն և ազահութիւն. մի՛ զի չար է և ամօթ բերէ, և միւս՝ զի թողում այլոց, որք թէ զիա՞րդ ինովքն վարին ո՛չ գիտեմ, իմաստութեամբ թէ չարութեամբ: Զ. Սորին նման ատելի ասէ և զայն որ համարի իմաստնոյն որ յառաքինութիւնս ճգնի, և անմտին որ յազահութիւնս ցնորի, միապէս առնու վճար. և չարութիւն ասէ զանիրաւ վճիռս զայս:

է. Ընդդիմադրեն որկրամուկքն թէ բարի՛ է ուտելն և յԱստուծոյ շնորհք. որոց պատասխանէ թէ Աստուած մարդոյն բարի ետ զառաքինութիւնն, և ուտելն է արօտականաց:

ը. Ասէ թէ չափ և ժամանակ պիտի, որով ուղղի առաքինութիւն և պակասի չարութիւն. առանց որոց անարուեստ է առաքինութիւն, և արտաքոյ չափու. և ժամանակն է չափ որ զամենայն կատարէ՝ որպէս զհասակս մարդոյ:

թ. Թէ այսու սխալեն մարդիկ, զի ո՛չ գտին զբարի արարածս Աստուծոյ, որ է՝ ի յաւիտեան ՚ի բարիս վարել. և զուարճանալ առաքինութեամբ, որպէս կերակրովք. որովք կատարեալ բարին երկիւղածացն կայ և պահի. յոր մութանէ Աստուած զհալածեալքս երբեմն:

ժ. Հաստատէ ՚ի մերձակայիցս զհանդերձեալ դատաստանն արդարոց և ամպարշտաց, յորմէ ուրանան անասնաբարոյքն. ո՛չ խնամոց Աստուծոյ՝ այլ պատահման տան զիրս մարդկան, միայն բանիւ առաւել զմարդ քան զանասուն, և վասն այսր վայելել յաստիս և բռնանալ, քան զորս լա՛ւ ասէ ժողովօրս զմեռեալս և զչեղեալս քան զչարութեամբ կեցեալսն:

ժա. Ընդդէմ այսոցիկ գովէ զչափաւորութիւն քան զագահութիւն. մանաւանդ թէ մի՛անձն ոք իցէ և ագահիցէ. քան զորոյ միանձնութիւնն լա՛ւ ասէ զմիաբանութիւն ընկերաց առ ՚ի յօգնել միմեանց յաւետ ևս ՚ի հոգևորսն:

ժբ. Գովէ զիմաստունն թէ և մանուկ և աղքատ իցէ, որոյ և կարգեալքն ախորժելիք քան զանմիտ ծերոյ, թէ և թագաւոր իցէ, յորոյ կարգեալսն ո՛չ ուրախ լինին յետինք:

ժգ. Ուղղել ասէ զընթացս վարուց, որով մտցուք առ Աստուած՝ լսել Աստուծոյ. և վասն անմտաց աղօթել զի զգաստասցին, և մի՛ շատ խօսել որպէս յերազի. մի՛ լինել ուխտագանց կամ մեղանչել մարմնով, այլ երկնչել յԱստուծոյ:

ժդ. Չզարմանալ ընդ ներելն Աստուծոյ զրկողաց զտնանկս, այլ հեռանալ յամբարտաւան շփացութենէն և յափշտակելոյ, զի մեծութիւն հողեղէն յանտի սպառնալեացն ո՛չ փրկէ:

ժե. Ջի անշահ է արծաթսիրութիւն և միշտ քաղցեալ. այլ արդարագործքն և արիքն յագին ՚ի տեսանել զերևումն երեսաց փառացն Աստուծոյ:

ժզ. Յիմարութիւն ասէ զագահութիւն, զի բազումք պատճառաւ ընչիցն մեռանին, և ո՛չ ժառանգեցուցանեն որդւոց, այլ հողմոց ջանան՝ ո՛չ բարեգործելով յընչիցն. քան զորս լաւ ասէ զվիժածն՝ թէ և հազար ամ կեցցէ. այլ իմաստունն բարւոք ուղղէ զինչս թէ և սակաւ իցէ. և զարմանայ ընդ անյագութիւն աչաց սնոտի ցանկացողաց:

ժէ. Ասէ թէ յայտնի եղելումն ո՛չ ոք կարէ ընդդէմ ասել կամ ուրանալ, այլ գլետ մահու կեանս ոմանք ընդ կարծեօք դնեն, և խաբեն թէ իբրև զստուեր անցանեն իրք մարդկան յետ աստեացս. այլ ես ասեմ թէ բարի է յետ մահու անուն բարի գրեալ ՚ի կեանս քան զիւղ հեշտարար մարմնոյ:

ժը. Հաստատելով զայս՝ բարի՛ ասէ զխոկումն մահու՝ որ է վախճան մարդկան. զի խոկմամբ մահու կենդանին զգուշանայ ՚ի զրպարտելոյ զոք, և խնայէ զինքն ՚ի բարկութենէ:

ժթ. Ծոյլքն զքաջութիւն առաջնոցն՝ ժամանակին գրեն, և ո՛չ իմաստութեամբ ստանան զառաքինութիւն. որ այնչափ պայծառ է քան

զինչս, որչափ արծաթ քան գստուերն իւր, և կենդանի առնէ զունօղն իւր. զորոյ ներհակն զանզգամութիւն՝ եղծանէ Աստուած. արդ՝ այժմ փութա՛ ՚ի բարիս, և փախի՛ր ՚ի չարէ. զի մի՛ յետոյ պապանձեսցիս:

ի. Թէ անձնիշխան բարուք ոմն անշարժ մնայ յարդարութիւն՝ թէ և մեռանել հասցէ, և ոմն յամպարշտութիւն նո՛յնպէս. արդ մի՛ խոտորիր յաջ և մի՛ յահեակ. այլ յերկևղ և յիմաստութիւն յեցեալ ուղղեա՛ զգործս քո՛ ՚ի բարին. և մի՛ ՚ի դժնեայ բանից գրգռիցիս անիծանել ումեք:

իա. Փորձեցի զի մե՛ծ է ՚ի քաջութիւնս ո՛չ ըմբռնիլ յորոգայթ կանանց, զի ո՛չ բնաւ գտանի ՚ի կանայս ողջախոհութիւն:

իբ. Ձի յԱստուծոյ միամիտ եղեալ մարդիկ, պատճառանօք իմաստից յանօգուտ խնդիրս տապին. այլ վրիպին ՚ի խնդրոյն. զի իմաստունն ՚ի համեստ դիմացն երկի, որպէս յանդուզն ՚ի լրբութենէն:

իգ. Ասէ՛ թագաւորի և Աստուծոյ հաւատարիմ լինել. զի մի՛ յիշխանութենէն պատժեսցի ՚ի ժամ իրաւանց. և անմիտ է ո՛չ ճանաչել զբազում Աստուծոյ խնամսն. զի այնպիսին յետ անվրէպ մահու ընդ ամպարիշտս կորիցէ:

իդ. Թէ բռնաւոր իշխանք չարչարեն զմարդիկ, այլ ընդ կանխաւ ամպարշտեալսն արմատաքի խլին. զորս և սգան սուրբք. և զի ո՛չ վաղվաղակի պատժէ Աստուած՝ վասն այնորիկ գործեն զչար. այլ երկնչել պարտ է յԱստուծոյ. զի յետ ո՛չ բազում աւուրց ըմբռնի աներկևղն ՚ի սատակումն:

իե. Ձի մեծ չար է զարդարն ամպարիշտ կարծել, և զանիրաւն արդար, և զուտելն բարի. այլ այնու անօգուտ ջանիւ ո՛չ գտանի բարին. և կարծելն մի և նոյն վճարումն գոլ արդարոյ և մեղաւորի՝ չարութիւն է մեծ:

իզ. Չար է կարծելն թէ որ մեռանին՝ կորնչի ՚ի սպառ. և վասն այսր լա՛ւ գոլ զկենդանիս թէ և իբրև զշուն շրջիցի, զի յետ մահու չի՛ք ինչ յոյս բարւոյ. ապա կե՛ր և արբ ո՛վ դու ընդ կանայս և բռնասջի՛ր, զի ՚ի գերեզմանի խափանին այնոքիկ:

իէ. Ընդդէմ բերէ այնպիսեացն՝ թէ ո՛չ մարմնով թեթևքն զհոգևոր ընթացսն, և ո՛չ մարմնով զօրեղքն զհոգևոր կռիւն մղեն. և ո՛չ ընչիւք ստանան հանճար. զի տգիտաց է այս կարծիք, որք իբրև ձկունք անկցին յորոգայթ. իսկ իմաստունն՝ և զքաղաք պաշարեալ՝ ապրեցուցէ. որոյ բանն թէպէտ և առժամայն անարգ՝ այլ յետոյ նախապատիւ քան զաղաղակ մեծաց:

իը. Ընդդիմաքննութիւն իմաստութեան և անզգամութեան, և թէ չար իշխանն արկցէ զոք ՚ի մեղս, ողորեսցէ զԱստուած, և նա թողցէ զմեղսն:

իթ. Թէ և ո՛չ կամի՝ Սատանայ բարձրացուցանէ զանմիտն ՚ի կորուստ նմին, և զժառայս մեղաց ՚ի ձիս:

լ. Որ նենգէ ուրուք Սատանայ, թէ մարդ ինքեան դաւաճանէ. և թէ անկցի կացինն ՚ի մեղեխէն՝ անօթ ոք չարին, թէ զղջանայ՝ տրտմի նա, ևս և որ յարգէ զվաղանցուկ զօրութիւն:

լա. Ձչար խորհրդով մեղկեալսն որք թովեն զՍատանայ՝ հարկանէ մեղօք. իսկ իմաստունք շնորհս բղխեն, և անմիտք զնորին ներհակն:

լբ. Ձի անյայտ են եղեալքն և լինելոցք, և ՚ի չարիս մաշին անկարգ քաղաքավարեալքն. ուր ժուժկալքն երկին պայծառք:

լգ. Թէ արտաքոյ յարկաց առաքինութեան ձմեռնանան վատք՝ և հացկատակք և գինեսէրք, արծաթասէրք և հայիոյիչք:

լդ. Խրատէ ողորմութեամբ սպաս առնել յանկարծահաս աւուրն անվրէպ

հողմոյ մահուն որ ընկեցու զծառս զմեզ. քան զոր կանուխ պիտի ջանալ, զի անյայտ է երբն, որպէս մանուկ յարգանդի՝ թէ էզ է, թէ արու:

Լե. Ընդդէմ այսոցիկ յուսահատքն՝ ՚ի յարութենէ՝ ՚ի վայելս կենցաղոյս յորդորեն, սնոտի կարծելով զբան յարութեանն. ուրախանալ մանկանց ախորժակօք մարմնոյ յորդորեն:

Լզ. Սաստ այնպիսեացն ահիւ դատաստանին՝ զգաստանալ նախքան զօր մահու և հասարակաց ձմերանին, և խռովելոյ աշխարհապահ հրեշտակաց ՚ի խափանել զօրաւորաց, և որք յերկանսն աղան տնանկաց, ՚ի փակել զգայարանաց և մեկնել հոգւոյ ՚ի կոչ վերնոյն.

անսուրբ կանայք ատեսցեն զերգս, և շաղախեալքն արեամբ որպէս նշի տագնապին ահիւ տանջանացն իբրև զթանձր մարախ ՚ի վերայ թռելոց. ծանունքն մեղօք ընդ երկիր տարածին, արդարք ՚ի հանգիստ զնան, և վատքն ՚ի կոծ լալոյ. զի արծաթ և ոսկի ո՛չ փրկէ յանկանել մարմնոյս և խափանել կենաց և ժամանակի. և որք զԱստուած ճանաչեն հոգիք առ նա վերանան:

Լէ. Կրկնէ զառաջին խրատն զի մի՛ անօգուտ իցէ լսողաց. զի մեծաւ աշխատութեամբ գտեալ զկամս Աստուծոյ գրեաց, որ ընդոստուցանէ զոգի. քան զե՛զն խթան՝ տուեալս ՚ի ժողովողէն. և չեն պէտք անօգուտ ուսմանց. այլ երկնչել յԱստուծոյ. զի դատաստանաւ է հատուցումն բարւոյ և չարի:

ԲԱՆՔ ԺՈՂՈՎՈՂԻՆ

¹Որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայէլի յերուսաղէմ. Եկկլէսիաստէս:*

1

Գլուխ Ա

Ա ²Ունայնութիւն ունայնութեանց ասաց ժողովօղն: Ունայնութիւն ունայնութեանց՝ ամենայն ինչ ընդունայն է*:³Զի՞նչ աւելի է մարդոյ յամենայն վաստակս իւր զոր տաժանի ընդ արեգակամբ*:⁴Ազգ երթայ և ազգ գայ՝ և երկիրս յաւիտեան կայ*:⁵Ծագէ՛ արեգակն՝ և մտանէ արեգակն և ՚ի տեղի իւր ձգի:⁶Ի ծագել իւրում ելանէ ընդ հարաւ, և պատի ընդ հիւսիսիւ, պատելով պատի. գնայ հողմ, և ՚ի շրջանս իւր դառնայ հողմ*:⁷Ամենայն ուխք ՚ի ծո՛վ գնան, և ծով ո՛չ լնու. ՚ի տեղի յոր ուխք գնան՝ անդ նոքին դառնան ՚ի գնալ:⁸Ամենայն բան ջանիւ, և ո՛չ կարասցէ այր խօսել. ո՛չ յագեսցի ակն տեսանելով, և ո՛չ լցցի ունկն լսելով*:⁹Զի՞նչ է որ եղևն, նոյն ինքն որ լինելոցն է. և զի՞նչ է որ արարաւն՝

*Ոմանք յաւելուն. Դաւթի թագաւորի, Սողոմոնի արքայի Իսրայէլի յերուսաղէմ.

Եկկլէսիաստէս:

*Ոմանք. Ամենայն ինչ սնոտի է:

*Ոմանք. Յամենայն ՚ի վաստակս... ՚ի ներքոյ արեգական:

*Ոմանք. Եւ երկիր յաւիտեան:

*Բազումք. Եւ պատէ զհիւսիսով:

*Ոմանք. Եւ ո՛չ ինչ կարասցէ այր:

նոյն ինքն որ առնելոցն է*։ ¹⁰Եւ ո՛չ է ամենայն առժամայն ընդ արեգակամբ. զի զոր խօսիցի ոք՝ և ասիցէ. Ահաւասիկ այս նոր է. վա՛ղ իսկ եղեալ է՝ ի յաւիտենից եղելոցն նախ քան զմեզ*։ ¹¹Ո՛չ գոյ յիշատակ առաջնոցն. նա և ո՛չ վերջնոցն որ լինելոց են. ո՛չ գոյ յիշատակ նոցա ընդ լինելոցսն ՚ի վախճանի*։

Բ ¹²Ես եկլէսիաստէս եղէ թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի յերուսաղէմ* ¹³և ետու զսիրտ իմ խնդրել և խորհել իմաստութեամբ վասն ամենայնի որ եղեալ են ընդ արեգակամբ։ Ձի զբաղունն չա՛ր ետ Աստուած որդւոց մարդկան զբաղել ընդ արեգակամբ*։ ¹⁴Տեսի ես զամենայն արարեալս որ արարեալ են ՚ի ներքոյ արեգական. և ահա ամենայն ինչ ընդունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ*։ ¹⁵Թիւրեալն՝ ո՛չ կարասցէ զարդարել, և պակասեալն՝ ո՛չ կարասցէ ՚ի թիւ անկանել*։ ¹⁶Խօսեցայ ՚ի սրտի իմուն թէ առաւել ես մեծացայ քան զամենեսեան որ էին յառաջ քան զիս յերուսաղէմ։ Եւ ետու զսիրտ իմ գիտել զիմաստութիւն և զգիտութիւն. և յաւելի յիմաստութիւն քան զամենեսեան, որ յառաջ եղեն քան զիս յերուսաղէմ*։ ¹⁷Եւ սիրտ իմ ետես բազում իմաստութիւն՝ և գիտութիւն. զառակս և զիմաստութիւն գիտացի ես. զի սակայն և այս յօժարութիւն ոգւոյ է*։ ¹⁸Ձի բազմութիւն իմաստութեան բազմութիւն գիտութեան. և որ յոլովեաց ՚ի գիտութիւն յաւելցէ ՚ի ցաւս։

2

Գլուխ Բ

¹Ասացի ես ՚ի սրտի իմուն. Ե՛կ և փորձեցից զքեզ յուրախութեան. և տեսից ՚ի բարութեան. և ահա և այս ինքն ունայնութիւն է*։ ²Ծաղուն ասացի զքօսանս. և ուրախութեանն՝ զի՞ գործես զայդ*։ ³Եւ խորհեցայ թէ սիրտ իմ ձգեսցէ իբրև զգինի զմարմին իմ. և սիրտ իմ առաջնորդեաց իմաստութեամբ. և զօրանալ յուրախութեան. մինչև տեսից ո՞ր իցէ բարին որդւոց մարդկան զոր արասցեն ՚ի ներքոյ արեգական, ՚ի թիւ աւուրց կենաց իւրեանց*։ ⁴Յաճախեցի ինձ արա՛րս, շինեցի ինձ ապարանս, տնկեցի ինձ այգիս։ ⁵Արարի ինձ պարտէ՛զս և դրախտս,

* *Ոմանք.* Որ եղև, նոյն որ լինելոց է... նոյն ինքն է որ առ՞։

* *Ոմանք.* Եւ ո՛չ ինչ գոյ ամենայնի առ ժամայն ՚ի ներքոյ արեգական... ահա այս նոր է, յառաջագոյն իսկ եղեալ է յաւի՞։

* *Ոմանք.* Բայց և ո՛չ ՚ի վախճանի եղելոցն, ո՛չ գոյ նոցա յիշատակ հանդերձ եղելովքն ՚ի վերջինսն։

* *Ոմանք.* Ես ժողովող եղէ թագաւոր։

* *Ոմանք.* Խնդրել և քննել իմաստութեամբ վասն ամենայն եղելոց ՚ի ներքոյ արե՞... զբաղիլ ՚ի նոսա։

* *Ոմանք.* Տեսի միանգամայն զամենայն արարածս զարարեալս ՚ի ներքոյ երկնից։

* *Ոմանք.* Ոչ կարասցէ զարդ առնուլ։

* *Ոմանք.* Ի սրտի իմուն ասել թէ ահա մեծա՞... և յաւելայ յիմաս՞։

* *Ոմանք.* Ձառակս և զհանճարս ծանեայ. զի սակայն և այս յօժարութիւն է ոգւոյ։ (18) Վասն զի ՚ի բազում իմաստութենէ յոլովութիւն գիտութեան. և որ յաւելու ՚ի գիտութիւն յաւելու ՚ի ցաւս։

* *Ոմանք.* Ասացի ընդ սրտի իմուն... և այս ընդունայնութիւն է։

* *Ոմանք.* Ձծաղրն ասացի... զինչ առնես զայդ։ *Ուր Ոսկան.* Եւ զուրախութիւն։

* *Ոմանք.* Եւ այց արարի թէ սիրտ իմ... և առաջնորդեսցէ իմաս՞... և զօրանայ։

և տնկեցի ՚ի նոսա փայտս ամենաբերս*։ ⁶Արարի՛ ինձ աւագանս ջուրց արբուցանել ՚ի նոցանէ զանտառախիտս մայրեաց*։ ⁷Ստացայ ծառայս և աղախնայս՝ և ընդոծինք եղեն ինձ. և ստացուածք անդուց և հօտից բազում եղեն ինձ քան զամենեցուն որ յառաջ եղեալ էին քան զիս յերուսաղէմ*։ ⁸Ժողովեցի ինձ արծաթ և ոսկի. և ստացուածս բազումս զթագաւորաց և զգաւառաց։ Արարի ինձ զուսանս և երգեցիկս՝ արս և կանայս, և զփափկութիւնս որդուց մարդկան։ Արարի ինձ տակառապետս՝ արս և կանայս*։ ⁹Եւ մեծացայ առաւել քան զամենեսին որ յառաջ էին քան զիս յերուսաղէմ, նաև իմաստութիւն յաւելաւ ինձ*։ ¹⁰Եւ զամենայն զոր ինչ խնդրեցին աչք իմ, ո՛չ զրկեցի ՚ի նոցանէն. և ո՛չ արգելի զսիրտ իմ յամենայն ուրախութենէ։ Ձի սիրտ իմ ուրախ եղև յամենայն վաստակս իմ. և այս եղև բաժին իմ յամենայն վաստակոց իմոց*։ ¹¹Եւ հայեցայ ես յամենայն արարս իմ զոր արարին ձեռք իմ, և ՚ի վաստակս զոր վաստակեցայ առնել, և ահա ամենայն ընդունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ. և ո՛չ ինչ է առաւելութիւն ՚ի ներքոյ արեգական*։

Գ ¹²Եւ հայեցայ ես տեսանել զիմաստութիւն, և զքօսանս, և զանզգամութիւն, եթէ ո՞վ է մարդ որ երթայցէ զհետ խորհրդոյն զոր ինչ արար*։ ¹³Եւ տեսի ես եթէ է՛ առաւելութիւն իմաստութեան քան անմտութեան. որպէս է առաւելութիւն լուսոյ քան զխաւարի։ ¹⁴Իմաստնոյն աչք իւր ՚ի գլուխ իւրում, և որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ։

Դ Եւ գիտացի ես թէ պատահար մի պատահելոց է ամենեցուն նոցա*։ ¹⁵Եւ ասացի ես ՚ի սրտի իմում, թէ որպէս պատահարն անզգամին՝ և ինձ պատահեսցէ նոյն, և ընդէ՞ր իմաստնացայ։ Եւ զաւելորդս խօսեցայ ՚ի սրտի իմում. զի և այս իսկ ունայնութիւն է. զի անզգամն ՚ի յաւելորդաց անտի խօսի*։ ¹⁶Վասն զի ո՛չ գոյ յիշատակ իմաստնոյն ընդ անզգամի յաւիտեան. զի արդարև իսկ յաւուրցն որ գալոց են ամենայն ինչ մոռացօնք են. և զիա՞րդ մեռանիցի իմաստունն ընդ անմտին*։

Ե ¹⁷Եւ ատեցի՛ ես զկեանս իմ. զի չա՛ր էր ինձ արարածն, որ արարեալն էր ՚ի ներքոյ արեգական. զի ամենայն ինչ ունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ*։ ¹⁸Եւ ատեցի ես զամենայն վաստակս իմ զոր ջանացայ ընդ արեգակամբ, զի թողում

* *Ոմանք.* Փայտս ամենապտուղս։

* *Ոմանք.* Արարի ՚ի նոցանէ ինձ աւագանս ջրոյ, առնել ՚ի նոցանէ անտառ զուարճացեալ ծառոց։

* *Ոմանք.* Քան զամենեցուն եղելոցն յառաջագոյն քան զիս։

* *Ոմանք.* Բազումս քան զթագաւորաց։

* *Ոմանք.* Քան զամենեսին եղեալսն յերուսաղէմ։

* *Ոմանք.* Եւ զամենայն ինչ զոր խնդ... ո՛չ զրկեցայ ՚ի նոցանէ... և այն եղև։

* *Ոմանք.* Ձոր ջանացայ առնել, և ահա ամենայն սնոտի է և։

* *Ոմանք.* Քանզի ով է մարդ որ երթայցէ զհետ խորհրդոց իւրոց։

* *Ոսկան.* Աչք ՚ի գլխոյ իւրում։ *Ոմանք.* Եւ ծանեայ զի մի դիպուած է յամենեսին ՚ի նոսա։ *Ուր ՚ի լուս.* ՚ի վերայ՝ գիտացի, *նշանակի*՝ ասացի. ծանեայ։

* *Ոմանք.* Թէ որպէս դիպուած է անմտին, և ինձ դիպեսցի... զի և այն իսկ... վասն զի անմիտն յաւելորդացն խօ՞։

* *Ոմանք.* Քանզի ո՛չ գոյ... ընդ անմտին... վասն զի անդէն. *կամ*՝ արդէն իսկ յաւուրսն որ գա՞... ինչ մոռացեալ եղև։

* *Ոմանք.* Եւ ատեցի միանգամայն զկե՞... վասն զի չար էր ՚ի վերայ իմ արարածն որ արարաւն ՚ի ներ՞... ամենայն ինչ ընդունայնութիւն է և։

ես զնա մարդոյ՝ որ լինելոց է յետ իմ*։ ¹⁹Եւ ո՞վ գիտէ՝ իմաստուն լինիցի թէ անմիտ. և կամ իշխելոց՝ իցէ ամենայն վաստակոցն իմոց զոր եսն վաստակեցի, և յորս իմաստնացայ ընդ արեգակամբ. սակայն և այս ունայնութիւն է*։

Ձ ²⁰Եւ դարձայ ես հրաժարեալ սրտիւ իմով, յամենայն վաստակոց իմոց զոր վաստակեցի ընդ արեգակամբ։ ²¹Ձի է՝ մարդ՝ զի վաստակ նորա իմաստութեամբ և գիտութեամբ և արութեամբ. և մարդ՝ որ ո՛չ ինչ վաստակեաց՝ ի նոյն՝ տացի՞ նմա մասն նորա. սակայն և այս ընդունայնութիւն է՝ և չարութիւն մեծ*։ ²²Ձի՞ լինի մարդոյն յամենայն վաստակս իւր, և ՚ի յօժարութեան սրտի իւրոյ՝ յորում ինքն ջանայ ՚ի ներքոյ արեգակամ*։ ²³Ձի ամենայն աւուրք նորա ցաւոց, և տրտմութեան՝ զբօսանք իւր, և գիշերի ո՛չ ննջէ սիրտ նորա. սակայն և այս ընդունայնութիւն է*։

Է ²⁴Եւ ո՛չ գոյ բարի ինչ մարդոյ, բայց զոր ուտէն՝ և ըմպէն. և եցոյ՛ց անձին իւրում բարիս ՚ի վաստակս իւր։ Սակայն և զայն տեսի՝ զի ՚ի ձեռանէ Աստուծոյ է*։ ²⁵Քանզի ո՞վ իցէ որ ուտիցէ և ըմպիցէ առանց նորա։ ²⁶Ձի մարդոյ բարւոյ՝ ետ զիմաստութիւն և զգիտութիւն՝ և զուրախութիւն. և մեղանչականին ետ զբաղումն, յաճախել և ժողովել, և տալ բարւոյն առաջի երեսաց Աստուծոյ։ Սակայն և այն ունայնութիւն է՝ և յօժարութիւն ոգւոյ*։

3

Գլուխ Գ

Ը ¹Ամենեցուն ժամանակ է՝ և ժամ ամենայն իրաց ՚ի ներքոյ երկնից*։ ²Ժամանակ ծնանելոյ, և ժամանակ մեռանելոյ։ Ժամանակ տնկելոյ, և ժամանակ խլելոյ՝ զտնկեալն*։ ³Ժամանակ սպանանելոյ, և ժամանակ բժշկելոյ։ Ժամանակ քակելոյ, և ժամանակ շինելոյ։ ⁴Ժամանակ լալոյ, և ժամանակ ծիծաղելոյ։ Ժամանակ կոծելոյ, և ժամանակ կաքաւելոյ։ ⁵Ժամանակ ցրելոյ քարինս, և ժամանակ ժողովելոյ քարինս։ Ժամանակ գիրկս արկանելոյ, և ժամանակ հեռանալոյ ՚ի գիրկս արկանելոյ*։ ⁶Ժամանակ խնդրելոյ, և ժամանակ կորուսանելոյ։ Ժամանակ պահելոյ, և ժամանակ արտաքս հանելոյ։ ⁷Ժամանակ պատառելոյ, և ժամանակ կարկատելոյ։ Ժամանակ լռելոյ, և ժամանակ խօսելոյ։ ⁸Ժամանակ սիրելոյ, և ժամանակ ատելոյ*։ Ժամանակ պատերազմի, և ժամանակ խաղաղութեան։ ⁹Արդ՝ զի՞նչ առաւելութիւն է այնմ որ առնէ որով ինքն ջանայ*։

* *Ոմանք.* ՚ի ներքոյ արեգականս. վասն զի թողում զայն մարդոյ... զկնի իմ։

* *Ոմանք.* Եւ իշխիցէ ամենայն վաս՞... զոր ջանացայ, և յորս։

* *Ոմանք.* Իմաստութեամբ և արդարութեամբ է. և մարդ որ ո՛չ ջանացաւ ՚ի նմա, տացէ նմա զմասն իւր։

* *Ոսկան.* Քանզի զի՞նչ օգուտ լինի մարդոյ։

* *Ոմանք.* Քանզի ՚ի գիշերի ո՛չ ննջ... և այն ունայնութիւն է։

* *Ոմանք.* Եւ զոր ցուցանէ բարի... ՚ի վաստակսն իւրում։

* *Բազումք.* Մարդոյ բարւոյ առաջի երեսաց իւրոց ետ զի՞...։ *Ուր ոմանք.* և այն սնոտի է, և յօժա՞։

* *Ոմանք.* Ամենայնի ժամանակ է, և ժամանակ ամենայն ի՞։

* *Ոմանք.* Ձտնկեալսն։

* *Ոմանք.* Ժամանակ ձգելոյ զքարինս։

* *Ոմանք.* Եւ զինչ առաւելութիւն է արարողին. յորս ինքն ջա՞։

Թ ¹⁰Տեսի ես զամենայն զբաղումն զոր ետ Աստուած որդւոց մարդկան զբաղումս ՚ի նմա*։ ¹¹Ամենայն ինչ զոր գործեաց՝ բարի՝ է ՚ի ժամանակի իւրում. նա՝ և զամենայն յաւիտեանս ետ ՚ի սիրտս նոցա. զի մի՛ գտցէ մարդ զարարածն զոր արար Աստուած իսկզբանէ մինչ ցկատարած*։ ¹²Գիտացի՝ թէ ո՛չ գոյ բարի ՚ի նոսա՝ եթէ ո՛չ ուրախ լինել՝ և գործել բարիս ՚ի կեանս իւրում*։ ¹³Քանզի ամենայն մարդ՝ որ ուտիցէ և ըմպիցէ, և տեսանիցէ բարի յամենայն վաստակս իւր, այն պարզև Աստուծոյ է*։ ¹⁴Գիտացի՝ թէ զամենայն զոր արար Աստուած՝ այն կայ յաւիտեան. ՚ի նոսա ո՛չ ինչ յաւելուլ, և ՚ի նոցանէ ո՛չ ինչ գոյ պակասեցուցանել. և արար Աստուած, զի երկիցեն յերեսաց նորա*։ ¹⁵Որ ինչ եղևն այն ահա կայ, և որ ինչ լինելոցն էր՝ ահա եղև. և Աստուած խնդրեսցէ զհալածեալն*։

Ժ ¹⁶Դարծեալ տեսի ՚ի ներքոյ արեգական տեղի դատաստանի՝ և անդ ամպարի՛շտ. և տեղի արդարոյ՝ և անդ բարեպա՛շտ։ ¹⁷Եւ ասացի ես ՚ի սրտի իմում, թէ զարդարն և զամպարիշտն դատի՛ Աստուած. զի ժամանակ է ամենայն իրաց, և ՚ի վերայ ամենայն արարածոց ժամ և ժամանակ*։ ¹⁸Անդ ասացի ես ՚ի սրտի իմում վասն խօսից որդւոց մարդկան՝ եթէ դատի զնոսա Աստուած. և զի ցուցցէ եթէ նոքա անասունք են*։ ¹⁹Սակայն և ՚ի մէջ նոցա պատահար է որդւոց մարդկան. և պատահար է անասնոց, և պատահար յամենեսին ՚ի նոսա։ Որպէս մահ սորա՝ նոյնպէս և մահ նորա. և շունչ է յամենեսին. և զի՞նչ առաւելութիւն եղև մարդոյ քան զանասնոյ, և ո՛չ ինչ. զի ամենայն ինչ ընդունայն է*։ ²⁰Ամենայն ՚ի մի տեղի երթայ. ամենայն եղև ՚ի հողոյ, և ամենայն դառնայ ՚ի հող*։ ²¹Եւ ո՞վ գիտէ զոգի որդւոց մարդկան՝ թէ ելանէ ՚ի վեր, և զշունչ անասնոց՝ թէ իջանէ ՚ի խոնարի յերկիր*։ ²²Եւ տեսի զի ո՛չ գոյ բարի, բայց թէ ուրախ լիցի մարդ յարարածս իւր. զի այն է բաժին նորա. զի ո՞վ ածիցէ զնա տեսանել զայն ինչ որ յետ նորա լինիցի*։

4

Գլուխ Դ

*Ոմանք. Տեսի միանգամայն զբաղումն:

*Ոմանք. Ձամենայն ինչ արար Աստուած բարի ՚ի ժամանակի իւրեանց. և սակայն զամենայն յաւ... որպէս զի մի՛ գտցէ... մինչև ՚ի կատարած:

*Ոմանք. Ծանեայ զի ո՛չ ինչ է բարի ՚ի նոսա. բայց ուրախ լինել և գործել զբա՛:

*Ոմանք. Եւ սակայն ամենայն մարդ որ ուտէ... զբարիս յամենայն ՚ի վաստակսն իւրում, այն տուրք Աստուծոյ են:

*Ոմանք. Ձի զամենայն... այնոքիկ կան յաւիտեանս. ՚ի նոսա ո՛չ ինչ գոյ յաւե՛. կամ՝ ՚ի յայնս ո՛չ ինչ է յաւե՛... ո՛չ ինչ գոյ ՚ի բաց բառնալ:

*Ոմանք. Որ լինելոցն էր արդէն իսկ եղև. և որում լինելն պարտ էր ահա եղև, և Աստուած խնդ՛:

*Ոմանք. Եւ ասացի անդ սրտի իմում... վասն զի ժամանակ... ժամ է և ժամանակ:

*Ոմանք. Եթէ որոշէ զնոսա Աստուած և ցուցանէ թէ անասունք են նոքա:

*Ոմանք. Եւ նոցա սակայն դիպուած է որդւոց մարդկան. և դիպուած անասնոց դիպուած է նոցա... և հոգի է յամենեսին, և զինչ առաւելաւ մարդ քան զանասուն և ո՛չ ինչ. վասն զի:

*Ոմանք. Ամենայն ինչ ՚ի մի... դառնայ անդրէն ՚ի հող:

*Ոմանք. Եւ ո՞վ գիտէ զհոգիս... եթէ ելանեն ՚ի վեր:

*Ոմանք. Ձի ո՛չ ինչ գոյ բարի, բայց ուրախ լինել մարդոյ յարարածն իւր. քանզի... ածցէ զնա տեսանել որ ինչ լինին յետ նորա:

¹Դարձայ և տեսի ես զամենայն զրպարտութիւնս որ լինին ընդ արեգակամբ, և ահա արտասուք զրպարտելոցն. և ո՛չ ոք էր որ մխիթարէր զնոսա. և ՚ի ձեռս զրպարտչաց նոցա բռնութիւնք*։ ²Եւ գովեցի՝ ես զամենայն մեռեալսն որ յառաջագոյն մեռան. քան զկենդանիսն՝ որ ցայժմ կենդանի իցեն*։ ³Եւ քան զնոսա զերկոսին լաւ այն է որ չէ՛ ևս իցէ լեալ. որ ո՛չ ետես զամենայն արարածն չար որ արարաւ ՚ի ներքոյ արեգական*։ ⁴Եւ տեսի ես զամենայն վաստակս, և զամենայն չարութիւն արարածոցն. զի նախանձ առն ՚ի մերձաւորէ իւրմէ. սակայն և այն ունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ*։ ⁵Անզգամն բուռն եհար զբազկաց իւրոց, և եկեր զմարմին իւր։

ԺԱ ⁶Լաւ է բուռն մի հանգստեամբ, քան զլիութիւն երկուց բռանց՝ ջանալով և յօժարութեամբ ոգւոյ*։ ⁷Դարձայ ես և տեսի ընդունայնութիւն ՚ի ներքոյ արեգական։ ⁸Ձի մի է, և ո՛չ կրկին. և որդի և եղբայր ո՛չ գոյ նորա. և ո՛չ է վախճան ամենայն վաստակոյ նորա. և սակայն ակն նորա ո՛չ յագի մեծութեամբ։ Եւ արդ՝ ո՞ւմ ջանամ ես, և զլանամ զանձն իմ ՚ի բարութենէ. զի և այն ընդունայնութիւն է՝ և զբաղումն չար*։ ⁹Լաւ են երկու քան զմի, որոց գոն վարձք բարի ՚ի վաստակս նոցա։ ¹⁰Ձի եթէ գլորիցի մին՝ կանգնեցէ զնա ընկեր իւր. և վայ միումն յորժամ գլորիցի, և ո՛չ գուցէ մնա՝ որ յարուցանիցէ զնա*։ ¹¹Ձի եթէ ննջիցեն երկու՝ ջեռուցանեն զմիմեանս. և մին՝ զիա՞րդ ջեռուցու*։ ¹²Եւ եթէ բռնասցի մին՝ երկուքն կայցեն ընդդէմ նորա. և առասան երեքկին՝ ո՛չ վաղվաղակի խզեսցի*։

ԺԲ ¹³Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծե՛ր և անմիտ. որ ո՛չ իմացաւ հայել ևս*։ ¹⁴Եթէ ՚ի տանէ կապանաց ելանիցէ թագաւորել. նա և ՚ի թագաւորութեան իւրում եղև աղքատ*։ ¹⁵Տեսի ես զամենայն կենդանիս որ զնան ՚ի ներքոյ արեգական, հանդերձ երիտասարդաւն երկրորդաւ որ յարիցէ փոխանակ նորա*։ ¹⁶Ո՛չ գոյ կատարումն ամենայն ժողովրդեանն, ամենեցուն որք եղեն յառաջ քան զնոսա։ Նա և յետինքն ո՛չ լինին ուրախ ՚ի վերայ նորա. զի և այն ինքն ունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ*։

ԺԳ ¹⁷Զգուշացիր ոտին քում որով երթայցես ՚ի տուն Աստուծոյ. և մե՛րձ լեր ՚ի լսել*։ ¹⁸Քանզի պատուական է քան զտուրս անզգամաց՝ զոհ քո. զի ո՛չ եթէ զիտակ ինչ են առնելոյ բարիս*։

* *Ոմանք.* Եւ դարձեալ տեսի միանգամայն զամենայն... որ լինէին ընդ արե՛:

* *Ոմանք.* Եւ գովեցի առ հասարակ զմեռեալսն... որ կենդանի են ինքեանք մինչև ցայժմ։

* *Ոմանք.* Եւ լաւագոյն քան զնոսա զերկոսեան, որ չէ ևս է լեալ։

* *Ոմանք.* Եւ զամենայն արութիւն արարածոյն, զի նոյն ինքն նախանձ։

* *Ոմանք.* Բարի է լիութիւն բռան միոյ հանգստ՝... ջանիւ և յօժար՝։

* *Ոմանք.* Եւ զրկեն զանձն իմ ՚ի բարութենէ։

* *Ոսկան.* Եւ վայ միոյն եթէ գլորի՛:

* *Ոմանք.* Իսկ մին զիարդ։

* *Ոմանք.* Երկուքն կալցեն զդէմ նորա. և առասան երեքկուղ, ո՛չ վաղ՛: *Ուր Ոսկան.* երեքկուղի ո՛չ վաղ՛:

* *Ոմանք.* Որ ո՛չ ևս իմացաւ հայել։

* *Ոսկան.* Ի տանէ կապանաց ելցէ այլ ոմն առ ՚ի թագաւորել։ *Ուր ոմանք.* զի և ՚ի թագաւորութեանն։

* *Ոմանք.* Տեսի միանգամայն զամենայն կենդանիս որ շրջին ՚ի ներ՝... որ յառնելոցն է փոխանակ նորա։

* *Ոմանք.* Ո՛չ գոյ վախճան ամենայն ժո՛... զի և այն սնոտի է և յօժա՛:

* *Ոմանք.* Զգոյշ լեր ոտին քում որով երթաս ՚ի... և մերձ լիցին ՚ի։

* *Ոսկան.* Զի լաւագոյն է հնազանդութիւն քան զտուրս անզ՛: *Ոմանք.* Վասն զի ո՛չ են

Գլուխ Ե

¹Մի՛ փութար բերանով քով, և մի՛ վաղվաղեսցե՛ սիրտ քո հանել բանս առաջի Աստուծոյ. զի Աստուած յերկի՛նս է՝ և դու յերկրի. վասն այնորիկ եղիցին բանք քո սակաւք՝: ²Ձի հասանէ երա՛գ՝ ՚ի բազմութիւն փորձութեան. և ծայն անզգամին ՚ի բազմութեան բանից՝: ³Եւ որպէս ինչ և ուխտիցես դու Աստուծոյ, մի՛ յամիցես հատուցանել զնա. զի ո՛չ են կամք ՚ի ձեռս անզգամաց: Դու որչափ ուխտիցես՝ հատո՞ւ: ⁴Գի լա՛ւ է քեզ չուխտել, քան ուխտել և ո՛չ հատուցանել՝: ⁵Մի՛ տար զբերան քո առ ՚ի յանցուցանելոյ զմարմին քո. և մի՛ ասեր առաջի Աստուծոյ թէ անգիտութիւն է. զի մի՛ բարկասցի Աստուած ՚ի բարբառ քո, և ապականեսցէ զգործս ձեռաց քոց՝: ⁶Ձի ՚ի բազմութեան երագոց՝ և ընդունայնութեանց և բանից բազմաց. սակայն դու երկի՛ր յԱստուծոյ՝:

ԺԴ ⁷Եթէ՛ զգրպարտութիւն տնանկի և գյափշտակութիւն իրաւանց և արդարութեան տեսանիցես յերկրի, մի՛ զարմանայցես ՚ի վերայ իրացն. զի բարձր ՚ի վերայ բարձու պահէ, և բարձունք ՚ի վերայ նոցա, և յաճախութիւն հողոյ՝: ⁸Ի վերայ ամենայնի է թագաւոր ՚ի վերայ անդոյն գործելոյ: Եւ լիջի՛ր դու հաւատարիմ յամենայնէ՛ ՚ի ծանր յափշտակելոյ անտի՝:

ԺԵ ⁹Որ սիրէ՛ զարծաթ՝ ո՛չ յագեսցի արծաթով. և որ սիրեաց ՚ի բազմութեան իւրում զարդիւնս. քանզի և այն ունայնութիւն է՝: ¹⁰Ի բազմութեան արդարութեան յագեսցան որք ուտէին զնա. և զի՛նչ արութիւն է նմա առ ՚ի նմանէ, զի սկիզբն տեսանելոյ՝ ա՛չք իւր են՝: ¹¹Քաղցր քո՛ւն է ծառայի՝ եթէ սակաւ և եթէ շա՛տ կերիցէ. և որում յագին մեծանալով՝ չէ՛ նմա համարձակ ՚ի քո՛ւն մտանել՝:

ԺԶ ¹²Է խրատ մի՛ զոր տեսի ՚ի ներքոյ արեգական. մեծութիւն պահեալ ունեք առ ՚ի նմանէ չարոյ՛ իւրում՝. ¹³և կորիցէ մեծութիւն նորա՝ և նա ՚ի զբաղման չարի

գիտակ բարի առնելոյ:

*Ոմանք. Հանել բան... վասն այդորիկ:

*Ոմանք. Քանզի. կամ՝ Եւ հասանէ երագ ՚ի բազմութեան փորձութեան:

*Ոմանք. Որպէս ուխտես զուխտ քո Աստուծոյ, մի՛ յամեր հատուցանել զայն. վասն զի ո՛չ են կամք յանզգամսն. արդ՝ դու զոր ուխտեսն հատո՞ւ:

*Ոմանք. Ձի բարի է քեզ ո՛չ ուխտել:

*Ոմանք. Առ ՚ի մեղանչել մարմնոյ քում, և մի՛ ասիցես թէ առաջի երեսաց Աստուծոյ տգիտութիւն է... Աստուած ՚ի վերայ բարբառոյ քո:

*Ոմանք. Վասն զի ըստ յաճախութեան երագոց է և ընդունայնութիւն բանից բազմաց:

*Ոմանք. Եթէ՛ զգրպարտութիւն աղքատաց... և զարդարութիւն տեսցես յերկրի միոջ... քանզի զբարձունս ՚ի վերայ բարձանց պահէ, և զբարձրութիւն ՚ի վերայ նոցա, և զառաւելութիւն երկրի:

*Ոմանք. Է թագաւոր անդաստանի գործելոյ... հաւատարիմ ամենայնի ՚ի ծանր յափշտակելոյն:

*Ոսկան. Եւ որ սիրեաց զարծաթ ՚ի բագ՝: Ոմանք. Սակայն և այն ընդունայնութիւն է:

*Ոմանք. Եւ զինչ է արութիւն... վասն զի սկիզբ՝:

*Ոմանք. Եւ որ յագի մեծանա՞:

*Ոմանք. Է հիւանդութիւն զոր տեսի ՚ի ներ՞:

է. ծնաւ որդի՝ և ո՛չ գոյ ՚ի ձեռին նորա և ո՛չ ինչ*։ ¹⁴Որպէս ել յորովայնէ մօր իւրոյ մերկ, դառնայ երթալ՝ որպէս և եկեալն էր՝ և ո՛չ ինչ առցէ ՚ի վաստակոյ իւրմէ, եթէ երթիցէ ՚ի ձեռին իւրում*։ ¹⁵Նա և այն իսկ ախտ չար է, զի որպէս եկն՝ նոյնպէս և երթիցէ. և զի՞նչ օգուտ իցէ նմա ՚ի վաստակոց անտի զոր ջանայ նա հողմոյ*։ ¹⁶Ձի ամենայն աւուրք նորա խաւար և սուգ. և ՚ի բազում սրտմտութեան և ՚ի հիւանդութեան և ՚ի բարկութեան*։ ¹⁷Արդ աւասիկ զոր տեսի ես՝ բարի է ուտելն և ընպել, և տեսանել զբարութիւն յամենայն վաստակս իւր զոր ջանայցէ ընդ արեգակամբ ՚ի թիւ աւուրց կենաց իւրոց զոր ետ նմա Աստուած. զի այն է բաժին նորա*։ ¹⁸Քանզի ամենայն մարդ՝ որում ետ նմա Աստուած մեծութիւն և ինչս, և իշխան արար զնա ուտել ՚ի նոցանէ. և առնուլ զբաժին իւր, և ուրախ լինել ՚ի վաստակս իւր. այն պարզև Աստուծոյ է*։ ¹⁹Ձի ո՛չ բազում աւուրս յիշեցցէ զկենաց իւրոց. զի Աստուած զբօսացուցանէ զնա յուրախութեան սրտի իւրոյ*։

6

Գլուխ Զ

¹Է՛ չարութիւն զոր տեսի ՚ի ներքոյ արեգական, և բազում է յոյժ ՚ի վերայ մարդոյ*։ ²Ա՛յր մի որում տացէ Աստուած մեծութիւնս և ինչս և փառս, և ո՛չ ինչ պակաս իցէ անձին իւրում յամենայնէ որում ցանկանայցէ. և ո՛չ առնիցէ զնա Աստուած իշխան ուտել ՚ի նմանէ. զի այր օտար կերիցէ զնա. և այն ընդունայնութիւն է՝ և ախտ չար*։ ³Եթէ ծնցի այր հարիւր, և ամս բազումս կեցցէ. և նս բազում եղիցին աւուրք ամաց նորա. և անձն նորա ո՛չ յագեսցի ՚ի բարեաց անտի, և գերեզման ևս ո՛չ գտցի նմա. ես սասացի թէ լա՛ւ է քան զնա վիժածն*։ ⁴Գի ունայնութեամբ եկն և խաւարաւ զնաց, և ՚ի խաւարի՛ անուն նորա ծածկեսցի*։ ⁵Քանզի զարև ո՛չ ետես՝ և ո՛չ գիտաց, զի՞նչ է հանգիստ սորա քան զնորա*։ ⁶Եւ եթէ եկաց նա զհազար ամաց ելս, և զբարութիւն ինչ ո՛չ ետես՝ միթէ ո՛չ երթայցէ ամենայն ՚ի մի տեղի*։ ⁷Ամենայն ջան մարդոյ ՚ի բերան իւր, և սակայն անձն նորա ո՛չ յագեսցի*։ ⁸Ձի՞նչ առաւելութիւն է իմաստնոյն քան

Ոմանք. Եւ ո՛չ ինչ գոյ ՚ի ձեռն։

Ոմանք. Եւ որպէս ել... դարձցի երթալ որպէս և եկն... եթէ երթայցէ ՚ի ձեռն։

Ոմանք. Սակայն և այն ախտ չար է. զի զորօրինակ եկն... օգուտ է նմա ՚ի վաստակոյն զոր։

Ոմանք. Ի խաւարի և ՚ի սուգ, և սրտմտութեամբ բազմաւ, և հիւանդութեամբ և ցասմամբ։

Ոմանք. Ահա զոր տեսի ես զբարին՝ որ է լաւն, ուտելն և ըն՝... յամենայն ՚ի վաստակսն իւրում զոր ջանայ ՚ի ներքոյ արեգական... վասն զի այն է։

Ոսկան. Որոյ ետ Աստուած զմեծութիւն։ Ոմանք. Ուտել ՚ի նմանէ... ՚ի վաստակսն իւրում*։

Ոմանք. Ձի ո՛չ յիշեաց զբազում աւուրց կենաց իւրոց, զի Աստուած զբաղեցուցանէ զնա։

Ոմանք. Եւ բազում է ՚ի վերայ մարդկան։

Ոմանք. Եւ ո՛չ տացէ նմա Աստուած իշխանութիւն ուտել ՚ի նմանէ. քանզի այր օտ։

Ոսկան յաւելու ՚ի լուս՝. Այր հարիւր զաւակ։ Ոմանք. Աւուրք կենաց նորա... ՚ի բարութենէն. և գերեզման ո՛չ ևս գտցի նմա*։

Ոմանք. Անուն նորա ծածկեսցաւ։

Ոմանք. Քանզի զարեգակն ո՛չ ետես և ո՛չ ծանեաւ։

Ոմանք. Ձիազար ամաց շրջանակս և զր՝։

զանմտին, զի տնանկն գիտե՛ երթալ առաջի կենաց իւրոց*։ ⁹Լա՛ւ է տեսիլ աչաց քան զգնացեալն ոգւով. սակայն և այն ունայնութիւն է՝ և յօժարութիւն ոգւոյ*։

ԺԷ ¹⁰Որ ինչ եղևն՝ ահա անուն կոչեցեալ է նմա. և յայտնի՛ եղև որպիսի՛ ինչ է մարդ. և ո՛չ կարէ դատել ընդ Յզօրին քան զնա*։ ¹¹Ձի են բազում բանք՝ որ յաճախեն զընդունայնութիւնս*։

7

Գլուխ Է

¹Ձինչ առաւելութիւն է մարդոյ։ Ձի ո՞ գիտէ զինչ բարի է մարդոյ՝ ի կեանս իւրում՝ ի թի՛ւ աւուրց կենաց ընդունայնութեան նորա. և արար զայն՝ ի ստուեր։ Ձի ո՞վ է որ պատմեսցէ մարդոյն՝ զինչ լինելոց է զկնի նորա ընդ արեգակամբ*։ ²Բարի է անուն բարի՝ քան զողորմութիւն բարի, և օր մահուան իւրոյ՝ քան զօր ծննդեան իւրոյ*։

ԺԸ ³Բարի՛ է երթալ ՚ի տուն սգոյ՝ քան երթալ ՚ի տուն արբեցութեան, զի այն ինքն է կատարած ամենայն մարդոյ. և որ կենդանի է՝ տացէ բարութիւն ՚ի սիրտ իւր*։ ⁴Լաւ է սրտմտութիւն քան զծաղր. զի չարութեամբ երեսաց զուարթացի սիրտ*։ ⁵Սիրտ իմաստնոյ՝ ի տան սգոյ, և սիրտ անմտի՝ ի տան ուրախութեան*։ ⁶Լա՛ւ է լսել զպատուհաս իմաստնոյ, քան լսել մարդոյ զերգս անմտաց*։ ⁷Ձի որպէս ձայն փշոց ՚ի ներքոյ կատսայի՝ այնպէս ծաղր անմտաց. սակայն և այն ընդունայնութիւն է*։ ⁸Ջրպարտութիւն ծփեցուցանէ զիմաստունս. և կորուսանէ զսիրտ ազնուութեան նորա*։ ⁹Բարի՛ է կատարած բանից՝ քան զսկիզբն իւրեանց. բարի է երկայնամիտ՝ քան զհպարտացեալն ոգւով*։ ¹⁰Մի՛ փութար յոգի քո բարկանալ, զի բարկութիւն ՚ի ծոց անզգամաց հանգիցէ*։

ԺԹ ¹¹Մի՛ ասիցես զինչ գործեցաւ. զի աւուրքն առաջինք լաւ են քան զաւուրսս զայս. զի ո՛չ իմաստութեամբ հարցեր վասն այդորիկ*։ ¹²Բարի՛ է իմաստութիւն ընդ ժառանգութեան, և յաւելուած որոց տեսանեն զարեգակն*։ ¹³զի ընդ

* Ոմանք. Վասն զի զինչ առաւե՛... քանզի աղքատն գիտէ երթալ։

* Ոմանք. Բարի է տեսիլ ա՛... և այն սնտոյ է և յօ՛։

* Ոմանք. Ահա անդէն կոչեցաւ անուն նորա, և յայտնի եղև որ ինչ է մարդ. և ո՛չ կարացէ դատել ընդ Աստուծոյ հզօրին։ *Ի լուս՝* Յզօրին քան զինքն. *համաձայն ոմանց՝ ՚ի բնար՝*։

* Ոմանք. Վասն զի են բանք բազումք՝ որ բազմացուցանեն զընդունայնութիւն։

* Ոմանք. Ձինչ է առաւե՛... քանզի ո՛վ գիտէ... զթիւ աւուրց կե՛... զոր արար զնոսա ՚ի ստուերի։ Վասն զի ով պատմեսցէ մարդոյն եթէ զինչ լինիցի զկնի նորա ՚ի ներքոյ արե՛։

* *Ի լուս՝ ՚ի վերայ՝* Քան զողորմութիւն, *նշանակի՛* քան զևղ մարմնոյ։ *Ուր բազումք*. քան զևղ բարի։

* Ոմանք. Լաւ է երթալ ՚ի տուն... վասն զի այն է կատարած... տացէ բարի ՚ի սիրտ։

* Ոմանք. Բարի է սրտմտութիւն... քանզի ՚ի չարութեան երեսաց։

* Ոմանք. Սիրտ իմաստնոց... և սիրտ անզգամաց ՚ի տան։

* Ոմանք. Լսել զսպառնալիս իմաս՛։

* Ոմանք. Այնպէս է ծաղր... և այն սնտոյ է։

* Ոմանք. Վասն զի զրպարտութիւն սահեցուցանէ զիմաս՛... զսիրտ պնդութեան նորա։

* Ոմանք. Բարի է վախճան բանից։

* Ոմանք. Վասն զի բարկութիւն... անզգամաց դադարէ։

* Ոմանք. Մի՛ ասեր թէ զինչ եղև... բարի եղեն քան զայսոսիկ. վասն զի ոչ։

* Ոմանք. Յանդերձ ժառանգութեամբ, և առաւելութիւն, որոց տե՛։

հովանեաւ նորա իմաստութիւն է իբրև զհովանի արծաթոյ: Եւ առաւելութիւն զհտութեան իմաստութեանն կենդանացուցէ՛ զայն որ առ ՚ի նմանէ՛: ¹⁴Տե՛ս զգործս Աստուծոյ զի ո՞վ է այն որ կարօղ լինիցի զարդարել՝ զոր Աստուածն խանգարիցէ՛: ¹⁵Յաւուր բարութեան կեցջի՛ր ՚ի բարիս. և տե՛ս յաւուր չարութեան: Տե՛ս սակայն նմին միաբան: Չայն արար Աստուած վասն խօսից՝ զի մի՛ գտցէ մարդ զկնի իւր՝ և մի՛ ինչ՛:

Ի ¹⁶Չամենայն ինչ տեսի յաւուրս ունայնութեան ինոյ: Է՛ արդար կորուսեալ յարդարութեան իւրում, և է՛ անպարիշտ որ կայ չարութեամբ իւրով՛: ¹⁷Մի՛ կարի արդար լինիր, և մի՛ ճարտարեր առաւել՝ զի մի՛ թիրեցիս՛: ¹⁸Մի՛ անպարշտեր կարի, և մի՛ լինիր խիստ՝ զի մի՛ տարածան մեռցիս՛: ¹⁹Բարի՛ է թէ ՚ի կողմն այսոսիկ լինիցիս. սակայն և յայսմիկ մի՛ պղծեր զձեռն քո. զի որ երկնչի յԱստուծոյ՝ անցցէ ընդ ամենայն՛: ²⁰Իմաստութիւն օգնեսցէ իմաստնոյն քան զտա՛սն իշխան որ իցեն ՚ի քաղաքի: ²¹Ձի մարդ ո՛չ գոյ ՚ի վերայ երկրի՝ որ գործէ զբարիս, և ո՛չ մեղանչիցէ՛: ²²Սակայն յամենայն բանս զոր խօսիցին անպարիշտք՝ մի՛ դներ ՚ի սրտի քում: Ձի մի՛ լուիցես դու անէծս ՚ի ծառայէ քումմէ՛ որ զքեզ անիծանիցէ՛: ²³Ձի բազում անգամ չարահաւեսցի ընդ քեզ, և ՚ի նուագս բազումս չարչարեսցէ զսիրտ քո. սակայն և դու մի՛ անիծաներ այլոց՛:

Իւ ²⁴Չայն ամենայն փորձեցի ես իմաստութեամբ, և ասացի. Բա՛ իմաստնացայ: Եւ նա հեռացաւ յինէն՛, ²⁵հեռագոյն քան որպէս էրն. և զխորութիւն խորոց ո՞վ կարասցէ գիտել՛: ²⁶Շուրջ եկի ես և սիրտ իմ, ճանաչել՝ նա և խորիել՝ և խնդրել զիմաստութիւն և զհանճար. գիտել զանպարշտի զուրախութիւն և զլլկանս և զծփանս՛: ²⁷Եւ գտի՛ ես զնա. և ասեմ թէ դառն է քան զմահ կնաւն հանդերձ. որ է որս և թակարդ սրտի նորա, և կապանք ՚ի ձեռս նորա: Բարին առաջի երեսաց Աստուծոյ զերծցի՛ ՚ի նմանէ, և որ մեղաւորն է ըմբռնեսցի՛ ՚ի նմա՛: ²⁸Ահա զայս ամենայն գտի ասէ՛ Էկլեսիաստէս. մի միոջ զտանել խորհուրդս՛, ²⁹զոր խնդրեաց անձն իմ, և ո՛չ գտի. այր մի ՚ի հազարաց

* *Ոմանք.* Քանզի ընդ հովանեաւ նորա է ի՛... զայն առ ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Տե՛ս զարարածս Աստուծոյ. վասն զի ո՞վ կարէ զարդարել զոր Աստուած եղծցէ զնա:

* *Ոմանք.* Չարութեան: Ահա և այս միաբանի ընդ այսմ, արար Աստուած զայն վասն խօսից. զի ո՛չ գտանիցէ... իւր՝ և ո՛չ ինչ:

* *Ոմանք.* Միանգամայն տեսի զամենայն յաւուրս ու՛... որ կայ մնայ ՚ի չարութեան իւրում:

* *Ոմանք.* Ձի մի՛ երբէք խոտորիցիս:

* *Ոմանք.* Անպարշտեր յոյժ... զի մի՛ մեռանիցիս տա՛:

* *Ոմանք.* Բարի է քեզ եթէ պաշտպանիցիս յայսոսիկ. սակայն և այսիւ մի՛ պղծիցես զձե՛... վասն զի երկիւղածն յԱստուծոյ անցցէ: *Ուր ՚ի լուս՛. մերումս նշանակի՛* սակայն և այսու:

* *Ոմանք.* Ոչ գոյ արդար ՚ի վերայ երկրի՝ որ արասցէ բարի:

* *Ոմանք.* Սակայն զամենայն... որ զքեզ անիծցէ:

* *Ի լուս՛.* Բազում անգամ չարախօսեսցէ զքեզ. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՛: Ուր ոմանք ևս.* Չարախօսեսցի ընդ քեզ, և ըստ բազում ճանապարհաց չարչա՛:

* *Ոմանք.* Եւ ասացի թէ իմաստնացայց:

* *Ոմանք.* Հեռագոյն քան որչափ էրն. և խորք խորոց ո՛չ գտցեն զնա:

* *Ոմանք.* Եւ գիտել զամբարշտին զանգամութիւն:

* *Ոմանք.* Եւ գտի զնա դառնագոյն քան զմահ... որս և ուռկան սրտի... և յանցաւորն ըմբռնեսցի ՚ի նմա:

* *Ոմանք.* Ձի մի միում գտանել զխորհուրդն:

գտի, բայց կին՝ ամենկին ո՛չ*:

ԻԲ ³⁰Ահա արդ՝ զայս գտի՛. զոր արար Աստուած՝ զմարդն ուղիղ, և նոքա խնդրեցին զխորհուրդս չարութեան: Ո՞վ գիտէ զիմաստունս՝ և ո՞վ գիտէ զմեկնութիւն բանից*:

8

Գլուխ Ը

¹Իմաստութիւն առն լուսաւոր առնէ զերեսս իւր. և որ ժպիրին է երեսօք իւրովք ատելի լիցի*:

ԻԳ ²Բերանոյ թագաւորի զգո՛յշ լեր, և ՚ի բան երդման Աստուծոյ մի՛ վաղվաղիցես*։ ³Յերեսաց նորա գնասցես, և մի՛ կացցես ՚ի բանի չարի. զի զամենայն զոր ինչ կամիցի՝ արասցէ*։ ⁴Իբրև զթագաւոր իշխանութեամբ խօսի. և ո՞վ կարէ ասել ցնա՝ թէ զի՛նչ գործեցեր*։ ⁵Որ պահէ զպատուիրան՝ ո՛չ գիտասցէ զբան չարութեան. և ժամանակ իրաւանց ճանաչէ սիրտ իմաստնոց։ ⁶Ձի ամենայն իրաց ժամանակ է և իրաւունք, զի գիտութիւն մարդոյն բազում է ՚ի վերայ նորա*։ ⁷Քանզի ո՛չ գիտէ զինչ լինելոց է. զի որպէս ի՛նչ լինելոց իցէ ո՞վ պատմեսցէ նմա*։ ⁸Ո՛չ է մարդ իշխան ոգւոյ՝ արգելուլ զոգի, և ո՛չ գոյ իշխանութիւն նորա յաւուր մահուան. և ո՛չ գոյ իրեշտակութիւն յաւուր պատերազմի. և ո՛չ ապրեցուցանէ ամպարշտութիւն զմերձաւորս իւր*։

ԻԴ ⁹Չամենայն զայս տեսի, և ետու զսիրտ իմ յամենայն արարածս որ արարեալ են ՚ի ներքոյ արեգական. որում միանգամ իշխան եղև մարդն ՚ի վերայ մարդոյ չարչարել զնա*։ ¹⁰Եւ ապա տեսի ես ամպարիշտս մուծեալս ՚ի գերեզմանս. և ՚ի սրբոց անտի գնացին, և սու՛գ առին ՚ի քաղաքին. զի այսպէս արարին. սակայն և այն ընդունայնութիւն է*։ ¹¹Ձի ո՛չ գոյ ընդդէմ դառնալ յայնցանէ որ վաղվաղակի՛ գործեն զչար. վասն այնորիկ համարձակեցան սիրտք որդւոց մարդկան յանձինս իւրեանց գործել զչար*։ ¹²Որ մեղաւն արար զչարիս, յայսմհետէ՛ և ՚ի վաղնջուց. քանզի գիտեմ և ես զինչ է բարին երկիւղածաց Աստուծոյ, զի երկնչիցին նոքա յերեսաց նորա*։ ¹³Եւ բարի ինչ ո՛չ եղիցի ամպարշտի. ո՛չ յերկարեսցէ աւուրս ընդ հովանեաւ որ ո՛չ իցէ երկիւղած

* *Ոմանք.* Եւ այր՝ մի ՚ի հազա՛:

* *Ոմանք.* Սակայն զայս ահա գտի. զի արար Աստուած: *Ոսկան.* Ո՞վ գիտէ զիմաստութիւնս:

* *Ոմանք.* Իմաստութիւն մարդոյ լու՛... և լիրբն երեսօք իւրովք լինի ատելի:

* *Ոմանք.* Երդման մի՛ փութասցիս:

* *Ոմանք.* Մի՛ կայցես ՚ի չար բանի:

* *Ոմանք.* Եւ իբրև զթա՛... և ո՞վ ասասցէ ցնա թէ զինչ գործես. *կամ՝* առնես:

* *Ոմանք.* Վասն զի ամենայն իրաց է ժա՛... վասն զի տգիտութիւն մարդոյն բազում:

* *Ոմանք.* Ձի՛ ո՛չ ոք է որ գիտէ եթէ զի՛նչ է որ լինելոց է. վասն զի որպէս լինիցին ո՞վ պա՛:

* *Ոմանք.* Եւ ո՛չ գոյ պատգամաւորութիւն յաւուր պատերազմի:

* *Ոմանք.* Եւ զայս ամենայն տեսի միանգամայն և ետու... որոյ իշխան եղև:

* *Ոմանք.* Եւ յայնժամ տեսի զամբարիշտսն ՚ի գերեզմանս ածեալս... վասն զի այնպէս արարին:

* *Ոմանք.* Քանզի ո՛չ գոյ ընդդէմ... իւրեանց առնել զչարիս:

* *Ոմանք.* Արար զչար յայսմ հետէ և ՚ի վաղուց ժամանակաց... զի երկիցեն յերեսաց նորա:

յԱստուծոյ*:

ԻԵ ¹⁴Գո՛յ ընդունայնութիւն որ եղեալ է ՚ի վերայ երկրի. զի են արդարք՝ որոց ժամանեն առ նոսա գործք ամպարշտաց. և են ամպարիշտք՝ զի հասանեն նոցա իբրև զգործս արդարոց. և ասացի ես թէ սակայն և այն ընդունայնութիւն է*։ ¹⁵Եւ գովեցի ես զուրախութիւն. զի ո՛չ է բարի մարդկան ՚ի ներքոյ արեգական, բա՛ց յուտելոյ և յըմպելոյ և յուրախ լինելոյ. և այն երթայ ընդ նմա ՚ի ջանալ նմա զաւուրս կենաց իւրոց, որչափ ետ նմա Աստուած ՚ի ներքոյ արեգական*։ ¹⁶Յոր միանգամ ետու զսիրտ իմ գիտել զիմաստութիւն, և տեսանել զգրադումն որ արարեալ է ՚ի վերայ երկրի, զի ՚ի տուէ և ՚ի գիշերի քուն յաչս նորա ո՛չ է տեսանել*։ ¹⁷Եւ տեսի ես զամենայն արարածս Աստուծոյ. զի ո՛չ կարասցէ մարդ գտանել զարարածն արարեալ ՚ի ներքոյ արեգական. որքան ջանասցի մարդ խնդրել՝ և ո՛չ գտցէ. քանզի որչափ ասասցէ իմաստունն գիտել՝ ո՛չ կարասցէ գտանել*։

9

Գլուխ Թ

¹Ձի զամենայն զայս ետու ՚ի սիրտ իմ. և սիրտ իմ ետես զայս ամենայն: Որպէս արդարքն և իմաստունքն, և գործք նոցա ՚ի ձեռս Աստուծոյ. քանզի զսէր և զատելութիւն ո՛չ գիտէ մարդն*։ ²Ամենայն ինչ առաջի երեսաց նորա է. և ունայնութիւն է յամենայնի: Պատահար է յարդարն և յամպարիշտն, ՚ի բարին՝ և ՚ի չարն, ՚ի սրբունն և ՚ի պղծուն, որ մատուցանէ պատարագ՝ և որ ոչն մատուցանէ: Որպէս որ բարին՝ և որպէս որ մեղանչէն. որպէս որ երդնուն՝ և որպէս որ յերդմանէն երկուցեալ է*։ ³Այս է որ չարն է յամենայնի՝ որ արարեալն է ընդ արեգականք. զի պատահար է յամենայնի:

ԻՁ Քանզի սիրտ որդւոց մարդկան լի՛ եղև չարութեամբ. և զբաղումն ՚ի սիրտս նոցա ՚ի կենդանութեան իւրեանց. և զկնի նոցա առ մեռեալսն*։ ⁴Քանզի ո՞վ են՝

*Ոմանք. Եւ ո՛չ ինչ գոյ բարի ամբարշտի, և ոչ... աւուրս իբրև ընդ հովանեաւ նորա ո՛չ է երկիւղած յերեսացն Աստուծոյ:

*Ոմանք. Է ընդունայ՛... վասն զի են արդարք... առ նոսա իբրև գործս ամբարշտաց... որոց հասանեն առ նոսա իբրև զգործս ար՛: Ուր Ոսկան. Որոց ժամանեն չարիք իբրև զգործս ամ՛... հասանին այնպէս իբրև զգոր՛:

*Ոմանք. Եւ գովեցի միանգամայն զուրախութիւն. վասն զի ո՛չ ինչ է բարի մարդոյ... բայց ուտելն և ըմպելն և ուրախ լինելն... ընդ նմա ՚ի վաստակոց իւրոց յաւուրս կեն՛... զորս ետ նմա Աստուած:

*Ոմանք. Չսիրտ իմ ճանաչել զի՛... որ եղեալ են ՚ի վերայ երկ՛:

*Ոմանք. Վասն զի ո՛չ կարաս՛... գտանել ինչ միանգամայն զարարածս նորա որք արարեալ են ՚ի ներքոյ... զոր միանգամ ջանասցէ մարդ... քանզի որչափ արասցէ իմաստունն:

*Ոմանք. Եւ ակն իմ ետես զայս ամենայն. վասն զի արդարք... և գործք իւրեանց ՚ի ձեռին Աստուծոյ. քանզի զսէր իսկ և զատելութիւն:

*Ոմանք. Եւ ընդունայնութիւն է յամենեսին: Պիպուած է արդարոյն և ամբարշտին, բարւոյն և չարին, սրբոյն և պղծոյն, այնմ որ զոհիցէ և որ ոչն զոհիցէ: Որպէս բարին՝ և որպէս յանցաւորն. որպէս որ երդնուցուն՝ և որպէս որ երկնչին յերդմանէն:

*Ոմանք. Այս է չար յամենայնի որ արարեալ է ՚ի ներքոյ արեգական, զի դիպուածք են յամենեսեան... լցան չարութեամբք... ՚ի կեանս իւրեանց:

որ հաւասարե՛ն առ ամենայն կենդանիս. գո՛յ յոյս թէ շուն որ կենդանի՛ է՝ լա՛ւ է քան զառնձ մեռեալ՝: ⁵Քանզի որ կենդանիքն են՝ գիտեն նոքա թէ մեռանելո՛ց են. և մեռեալքն ո՛չ են գիտակ և ո՛չ իմիք: Եւ ո՛չ ևս գոն նոցա վարձք՝ զի մոռացաւ յիշատակ նոցա՝. ⁶և սէր իսկ նոցա՝ և ատելութիւն նոցա՝ և նախանձ նոցա՝ ահա կորեաւ. և բաժին իսկ ո՛չ գոյ նոցա յաւիտեանս յամենայնի յայսմիկ՝ որ արարեալ են ընդ արեգակամբ՝: ⁷Ե՛կ կեր ուրախութեամբ զհաց քո, և ա՛րբ սրտիւ զուարճացելով զգինի քո. զի արդէ՛ն իսկ հաճեցաւ Աստուած ընդ գործս քո՝: ⁸Յամենայն ժամ եղիցին ձորձք քո սպիտակ, և ևա՛ ՚ի գլխոյ քումմէ մի՛ պակասեսցէ՝: ⁹Եւ տե՛ս կեանս ընդ կնոջ քո՝ զոր սիրեցեր զամենայն աւուրս կենաց ընդունայնութեան քոյ, որ տուեալ է քեզ ընդ արեգակամբ ամենայն աւուրք վախճանի քոյ: Ձի ա՛յն է բաժին քո ՚ի կեանս քո, և ՚ի վաստակս զոր վաստակես ՚ի ներքոյ արեգական՝: ¹⁰Չամենայն ինչ որ ինչ գտցէ ձեռն քո գործել, որչափ ՚ի կարի քում իցէ գործեսցիր. զի ո՛չ է խորհուրդ և գիտութիւն և իմաստութիւն ՚ի դժոխս յոր դու երթալոցն ես՝:

Ի՛է ¹¹Դարձայ և տեսի ՚ի ներքոյ արեգական, զի ո՛չ թեթևաց են ընթացք, և ո՛չ զօրաւորաց պատերազմն, և ո՛չ իմաստնոց հաց, և ո՛չ հանճարեղաց մեծութիւն, և ո՛չ զիտնոց շնորհք: Ձի ժամանակ է, և պատահար պատահէ ամենեցուն նոցա՝: ¹²Քանզի ո՛չ իսկ գիտաց մարդն զժամանակ իւր: Որպէս ձկունք որսացեալք ցանցիւք չարեօք, և որպէս թռչունք որսացեալք ՚ի ծուղակս. նոյնպէս հարկանին յորոգայթս որդիք մարդկան ՚ի ժամանակի չարի՝ յորժամ հասանիցէ ՚ի վերայ նոցա յանկարծակի՝: ¹³Սակայն և զայս իմաստութիւն մի տեսի ՚ի ներքոյ արեգական, և մեծ թուի ինձ՝: ¹⁴Քաղաք փոքր՝ և իցեն ՚ի նմա արք սակաւք՝ և գայցէ ՚ի վերայ նորա թագաւոր մեծ՝ և պատիցէ զնա, և շինիցէ ՚ի վերայ նորա պատնէշս մեծամեծս՝: ¹⁵Եւ գտցի ՚ի նմա այր մի տնանկ իմաստուն՝ և ապրեցուցանիցէ զքաղաքն իմաստութեամբ իւրով. և մարդ ո՛չ յիշեաց զայրն զայն տնանկ՝: ¹⁶Եւ ասացի ես. Բարի՛ է իմաստութիւն քան զզօրութիւն. և իմաստութիւն տնանկին արհամարհեալ է, և բանք նորա ո՛չ լինին լսելի՝: ¹⁷Բանք իմաստնոց մեղմով լսին՝ քան զաղաղակ իշխանաց անզգամութեամբ:

* *Ոմանք.* Վասն զի ո՛վ են՝ որ:

* *Ոմանք.* Քանզի կենդանիքն գիտեն թէ մե՛:

* *Ոմանք.* Եւ սէր նոցա և ատելութիւն նոցա. այլ և նախանձ նոցա յայնմ հետէ կորեաւ... են ՚ի ներքոյ արեգական:

* *Ոմանք.* Ձի անդէն իսկ... ՚ի գործս քո:

* *Ոմանք.* Յամենայն ժամանակի եղիցին հանդերձք քո:

* *Ոմանք.* Ընդ արեգակամբ մինչև յաւուրս վախճանի... ՚ի կեանս քում, և ՚ի վաստակոց քոց զոր ջանաս ՚ի ներքոյ արե՛:

* *Ոմանք.* Չամենայն որ ինչ գտանիցի ՚ի ձեռն քո առնել, որքան է զօրութիւն քո արա՛. վասն զի ո՛չ է գործ և խորհուրդ: *Ուր Ոսկան.* և իմաստութիւն եղիցին ՚ի դժոխս, յոր:

* *Ոմանք.* Վասն զի ժամանակք և դիպուածք պատահեն ամենեցուն:

* *Յօրինակին պակասէր. Քանզի ո՛չ իսկ գիտաց մարդն զժամանակ իւր:* Որպէս ձկունք որ՝: *Ոմանք.* Ցանցիւք չարեաց, և որպէս թռչունք ըմբռնեալք ՚ի ծուղակս, նոյնպէս անկանին յորո՛... ՚ի չար ժամանակի: *Ուր ոմանք.* Ցանցիւք ձարեօք:

* *Ոմանք.* Իմաստութիւն տեսի ՚ի ներքոյ արեգական, և է մեծ:

* *Ոմանք.* Փոքր, և արք ՚ի նմա սակաւք... և պաշարիցէ զնա, և կանգնեսցէ շուրջ պատնէշս մե՛:

* *Ոմանք.* Եւ գտանիցի ՚ի նմա այր աղքատ և իմաս՛... նա զքաղաք իմաս՛:

* *Ոմանք.* Եւ իմաստութիւն աղքատին:

¹⁸Բարի՛ է իմաստութիւն քան զանօթս պատերազմի. և յանցաւոր մի կորուսանէ զօրութիւնս բազումս:

ԻԸ Լաւ է իմաստուն քան զգէն պատերազմի, և ՚ի մեղանչելոյ միոյն կորուսանէ զբարութիւնս բազումս*:

10

Գլուխ Ժ

¹ճանճք մեռեալք զազրացուցանեն զկոյն անուշունս: Պատուակա՛ն է սակաւիկ ինչ յիմաստութենէ, քան զմե՛ծ փառս անմտութեամբ*:²Սիրտ իմաստնոյ յաջակողմ իւր, և սիրտ անմտի ՚ի ձախակողմ իւր:³Քանզի և ՚ի ճանապարհի յորժամ գնայցէ անմիտն, սիրտ նորա կասեսցի՛. և զոր ինչ խորհի՛ ամենայն անմտութիւն է*:⁴Եթէ հոգի իշխանին ելցէ ՚ի վերայ քո՝ մի՛ թողուր զտեղի քո. զի ողորմունն դարձուցանէ՛ զմեղս մեծամեծս:

ԻԹ ⁵Է՛ չարութիւն զոր տեսի ՚ի ներքոյ արեգական որ իբրև յականայ կամս ել յերեսաց իշխանին*:⁶Տուաւ անմիտն ՚ի բարձրութիւնս մեծամեծս. և մեծատունք ՚ի խոնարհութեան նստցին:⁷Տեսի ես զժառայս հեծեալս ՚ի ձիս, և իշխանս զի գնային իբրև զժառայս յերկրի:

Լ ⁸Որ փորէ խորխորատ՝ ՚ի նոյն անկցի, և որ քակէ զցանգ՝ հարցէ՛ զնա օձ:⁹Եւ որ բառնայ քարինս՝ նոքինք չարչարեսցի, և որ պատառէ փայտ՝ նովին ճգնեսցի*:¹⁰Եթէ անկցի ևս երկաթն՝ և նա տրտմեցոյց զերեսս իւր. և զօրութիւնք զօրացուցանեն, և է՛ առաւելութիւն քաջ իմաստութեանն:

ԼԱ ¹¹Եթէ հարցէ օձ ՚ի թովել, ո՛չ ինչ է առաւելութիւն թովչին:¹²Բանք բերանոյ իմաստնոյ շնորհք. և շրթունք անմտի ընկղմեն զնա*:¹³Սկիզբն բանից բերանոյ նորա անմտութիւն. և վախճան նորա ծուկ չարութեան*:¹⁴Եւ որ անմիտն է յաճախէ զբանս:

ԼԲ Ո՛չ գիտէ մարդ զինչ եղեալ է՝ և զինչ լինելոց է, զի զկնի նորա ո՞վ պատմեսցէ նմա*:¹⁵Ձան անմտին չարչարեսցէ զնա. որ ո՛չ գիտաց երթալ ՚ի քաղաք*:¹⁶Վայ՛ քեզ քաղաք որոյ թագաւոր քո մանուկ է, և իշխանք քո ընդ առաւօտս ուտեն:¹⁷Երանի՛ քեզ երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է, և իշխանք քո ՚ի ժամու ուտեն զօրութեամբ՝ և ո՛չ ամաչեսցեն*:

ԼԳ ¹⁸Ի վատութեան խոնարհեսցին հեծանաճգութիւնք. և ՚ի դատարկութեան

* Յայսմ վայրի օրինակն մեր համաձայն այլ միում օրինակի գնոյն բան կրկին դնէ ըստ այլևայլ օրինակաց կամ թարգմանութեանց, չակերտիւ նշանակեալ գերկաքանչիւրսն: Ուր ոմանք զմին և եթ ունին. այս է՝ Բարի է իմաստութիւն քան, և այլն. և ոմանք լոկ գերկրորդն՝ Լաւ է իմաստուն քան, և այլն:

* Ոմանք. Սակաւ ինչ իմաստութեամբ:

* Ոմանք. Սիրտ նորա պակասեսցի:

* Ոմանք. Արեգական. իբրև ականայ իմն ել յերեսաց:

* Ի լուս՝. Եւ որ բրէ քարինս. համաձայն ոմանց ՚ի բնար՝: Ոմանք. Քարինս, վտանգեսցի նոքինքք, և որ հերձանէ փայտ վշտասցի ՚ի նոսին:

* Ոմանք. Եւ շրթունք անզգամի:

* Ոմանք. Բերանոյ նորա անզգամութիւն է. և վերջինք բերանոյ նորա յածումն չար:

* Ոմանք. Եւ անմիտն բազմացուցանէ զբանս:

* Ոսկան. Բան անմտին չարչարէ:

* Ոմանք. Երանի է քեզ եր՝... որդի ազատի իցէ:

ծեռաց կաթեսցէ՛ տուն*։ ¹⁹Ի ծաղր առնեն զհաց, և զինի և ևղ ուրախ առնեն զկենդանիս. և արծաթոյ լուիցէ ամենայն ինչ*։ ²⁰Սակայն և ՚ի մտի քում մի՛ անիծաներ թագաւորի, և ՚ի շտեմարանս սենեկաց քոց մի՛ անիծաներ մեծի. զի թռչունք երկնից հասուցանեն զբարբառ քո, և որոց թևք են պատմեն զբան քո*։

11

Գլուխ ԺԱ

ԼԴ ¹Առաքեա՛ դու զհաց քո ՚ի վերայ ջրոց, զի ՚ի բազմութեան աւուրց քոց գտցես զնա*։ ²Տո՛ւր բաժինս եւթանց՝ այլ և ութից. զի ո՛չ գիտես զինչ չարութիւն է ՚ի վերայ երկրի*։ ³Թէ լցցին ամպք անձրևով՝ ՚ի վերայ երկրի հեղուն։ Եթէ անկցի փայտն ՚ի հարաւ՝ և կամ ՚ի կողմն հիւսւտոյ՝ ուր անկցի փայտն անդ կացցէ*։ ⁴Որ խտրէ զհողմս՝ ո՛չ սերմանէ, և որ հայի ընդ ամպս՝ ո՛չ հնձեսցէ*։ ⁵որովք ո՛չ է հնար գիտել զինչ է ճանապարհի հողմոյ։ Իբրև զոսկերս յարգանդի յղոյ, նո՛յնպէս ո՛չ գիտասցես դու զարարածս Աստուծոյ զոր ինչ առնիցէ նա զամենայն*։ ⁶Ընդ առաւօտս սերմանեսցես դու զսերմն քո, և ընդ երեկոյս մի՛ լքցին ձեռք քո. զի ո՛չ գիտես՝ ո՞ր պատկանի. այս թէ այն, կամ թէ երկոքեան ՚ի միասին՝ բարի՛ իսկ է*։

ԼԵ ⁷Քա՛ղցր է լոյս, և բարի աչաց տեսանել ընդ արեգակամբ*։ ⁸զի թէ ամս բազումս կեցցէ մարդ, և յամենայն ՚ի նոսա ուրախ լինիցի. և յիշեսցէ նա զաւուրս խաւարի, զի բազում իցեն. ամենայն ինչ որ գալոցն իցէ ընդունայնութիւն է*։ ⁹Ուրախ լեր երիտասարդ ՚ի մանկութեան քում. և զուարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուրս մանկութեան քոյ։

ԼԶ Եւ զնա՛ դու ՚ի ճանապարհս սրտի քո անբիծ, և ՚ի տեսիլ աչաց քոց. և գիտասցես թէ վասն այսր ամենայնի ածցէ զքեզ Աստուած ՚ի դատաստան*։ ¹⁰Եւ ՚ի բաց արա զսրտմտութիւն ՚ի սրտէ քումմէ, և անցո՛ զչարութիւն ՚ի մարմնոյ քումմէ. զի մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է*։

12

*Ոսկան. Եւ ՚ի դատարկութենէ ձե՛։

*Ի լուս՝. Ի ծաղր առնել զհաց. *համաձայն ոմանց՝ ՚ի բնաբ՝. Ուր և ոմանք. Ծաղր առնեն զհաց... լուիցէ ամենայն ոք։*

*Ոմանք. Եւ յըշտեմարանս... մի՛ նզովեսցես զմեծն. վասն զի թո՛... և որ ունի թևս պատմէ զբանս քո։

*Ոմանք. Ի վերայ երեսաց ջրոց, զի ՚ի բազմութիւն աւ՛։

*Ոմանք. Վասն զի ո՛չ գիտես զինչ լինիցի չար ՚ի վերայ երկրի։

*Բազումք. Եւ եթէ անկցի փայտն։

*Ոմանք. Եւ որ հայի յամպս։

*Ոմանք. Յորս ո՛չ գոյ գիտութիւն եթէ զինչ է ճանա՛... իբրև ոսկերք յորովայնի յղոյ։

*Ոմանք. Սերմանեա՛ զսերմն քո... եթէ որ պատկանիցի. այս... և թէ երկոքին ՚ի միասին բարի է։

*Ոմանք. Եւ բարի է աչաց տեսանել զարեգակն։

*Ոմանք. Եւ յամենայնի ՚ի սոսա ուրախ լինիցի։ *Ոսկան. Որ գալոցն է սնոտի է։*

*Ոմանք. Եւ զուարճացուսցէ զսիրտ քո յաւուր մանկութեան... ՚ի ճանապարհս սրտի քո անարատ. *կամ՝ անարատութեամբ և ՚ի տե՛... և ծանիր եթէ վասն այսր։*

*Ոմանք. Եւ հեռացո՛ զչարութիւն ՚ի մարմնոյ... վասն զի մանկութիւն։

Գլուխ ԺԲ

¹Եւ յիշեա՛ դու զայն որ հաստատեացն զքեզ յաւուրս մանկութեան քոյ. մինչչև՛ հասեալ իցեն աւուրք չարութեան, և հասցեն ամբ յորս ասացեն ո՛չ են կամք իմ ՚ի դոսա՛: ²Մինչչև՛ խաւարեալ իցեն արեգակն՝ և լոյս՝ և լուսին՝ և աստեղք, և դարձցին ամպք զկնի անձրևաց՛: ³Յաւուր յորում շարժեսցին պահապանք տանն, և թիւրեսցին արք զօրութեան. և դատարկացան աղօրիք զի նուազեցան. և խաւարեսցին որք տեսանեն ընդ ծակս՛: ⁴Եւ փակեսցեն զդրունս ՚ի հրապարակս ՚ի տկարութենէ ձայնի աղօրւոյն, և յարիցեն ՚ի ձայն հաւուն, և նկուն լիցին դստերք երգոց՛: ⁵Եւ ՚ի բարձունս հայեսցին, և ապշութիւն ՚ի ճանապարհին. և ծաղկեսցի՛ նշին, և թանձրասցի՛ մարախն, և տարածեսցի՛ կապարն. զի գնաց մարդ ՚ի տուն իւր յաւիտենից, և շո՛ւրջ եղեն կոծողք ՚ի հրապարակս՛: ⁶Մինչչև՛ կործանեալ իցէ լար արծաթոյն, և խորտակեալ մանեալ ոսկւոյն. և մանրեալ սափորն յաղբերն, և ընկրկեալ անիւն ՚ի գուրն: ⁷Եւ դարձցի հողն յերկիր որպէս և էրն, և հոգին դարձցի՛ առ Աստուած որ ետ զնա՛:

Լէ՛ ⁸Ունայնութիւն ունայնութեանց ասաց ժողովօղն, ամենայն ինչ ընդունայն է: Եւ աւելի՛ իմն է՝ ⁹զի եղև ժողովօղն իմաստուն. զի ուսուցանէր ժողովրդեանն զգիտութիւն. և ունկն քննէ զգարդ առակաց՛: ¹⁰Յո՛յժ խնդրեաց ժողովօղն զտանել զբանս կամաց, և գրել զգիրս ուղղութեան բանից ճշմարտութեան՛: ¹¹Բանք իմաստնոց իբրև զխթան եզանց. և իբրև բւեռք հարեալք ՚ի մուրհակաց տուան ՚ի հովուէ միոջէ՛. ¹²և աւելորդ ՚ի նոցանէ: Որդեակ իմ զգո՛յ՜ լեր ՚ի ստանալոյ գիրս բազումս, զի ո՛չ գոյ վախճան. և վարժ բազում աշխատութիւն է մարմնոյ՛: ¹³Եւ վախճան բանիս՝ զամենայն ինչ լուր. յԱստուծոյ երկի՛ր՝ և զպատուիրանս նորա պահեա՛. զի այս է մարդն ամենկին՛: ¹⁴Ձի զամենայն արարածս ածցէ Աստուած ՚ի դատաստան, յամենայնի անտես արարելոցն՝ եթէ բարի՛ և եթէ չար՛:

* *Ոմանք.* Եւ յիշեա՛ զԱրարիչն քո յաւուրս մանկութեան քո. մինչչև հաստատեալ իցեն... և ժամանեսցեն ամբ յորս ասիցես ո՛չ են:

* *Ոմանք.* Խաւարեալ իցէ... զկնի անձրևոյ:

* *Բազումք.* Արք զօրութեանց, և դատարկացին աղօր՛:

* *Ոմանք.* Եւ նկուն եղիցին ամենայն դստերք եր՛:

* *Ոմանք.* Եւ ՚ի բարձանց տեսցեն, և ապշ՛... կապարն. վասն զի գնաց... և շրջեցան կոծողք:

* *Ոմանք.* Եւ ոգին դարձցի:

* *Ոմանք.* Ամենայն ինչ սնոտի և աւելորդ է:

* *Ոմանք.* Իմաստուն զի ուսուցանէր գիտութիւն ժողովրդեանն. *կամ՝* և զի ուսոյց զգիտութիւն ամենայն մարդոյ. և ունկն:

* *Ոմանք.* Եւ գրեալ զուղղութիւնս բանից ճշ՛:

* *Ոմանք.* Եւ իբրև զբւեռք հրացեալք, որ տուան ՚ի նշանակացն ՚ի հովուէ միո՛: *Ուր ՚ի լուս՛. և ս ներումս նշանակի՛* ՚ի նշանակացն:

* *Ոմանք.* Քանզի ո՛չ գոյ վախ՛: *՚ի լուս՛.* Ոչ գոյ վախճան, և խորհուրդ բազում և ջան մարդոյ. *համաձայն ոմանց ՚ի բնար՛:*

* *Ոմանք.* ՅԱստուծոյ երկնջիր՝ և զպատուիրանս նորա պահեսջիր. վասն զի այս է ամենայն մարդ:

* *Ոմանք.* Քանզի զամենայն արա՛... յամենայնի անփոյթ արարելոյ, եթէ զբարի, և եթէ զչար: *Ուր Ոսկան.* Յամենայն անտես արարելոցն:

Եկկլէսիաստեւ. Տունք ԶԷ*:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ

Անուն Երգոյ երգոցս յայտ առնէ զի եղանակաւոր ծայնիւ ընդ այլ երգս և օրհնութիւնս Աստուծոյ երգէին զսա ՚ի հնումն: Եւ է Երգերգոցս երրորդ գիրք Սողոմոնի, և յոյժ բարձրագոյն իմաստիւք քան զառաջինսն. զորոյ գերազանցութիւնն կրկնաբանութիւն կոչմանն յայտնէ. զի Երգերգոց ասելն՝ զառաւելութիւնն քան զպարզաբար երգոց և օրհնութեանց յայտնէ. որպէս սրբութիւնն քան զսոսկ տեղի. և սրբութիւն սրբութեանցն քան զպարզ սրբութիւն առաւելեալ. այսպէս և Երգերգոցս քան զամենայն աստուածեղէն երգս և օրհնութիւնս: Եւ է՝ սորա առաւելութեան պատճառն և օրինակն այսպիսի. զի ամենայն առաքինութեանց քաջութիւնք յորս ամենայն աստուածեղէն գիրք քաջալերեն՝ վարձ և մրցանակ ունին զառ ՚ի յԱստուած միանալն՝ և ընդ նմա լինելն յաւետ, զոր այս Գիրք աստուածաբանէ. զի այլքն զյեղանակ արժանանալոյն Աստուծոյ ուսուցանեն. և Երգերգոցս զանպատմելի սիրովն միանալն Աստուծոյ յարժանացեալսն աւետարանէ՝ փեսայի առ հարսն օրհնակաւ: Ձի ամենայն որ ինչ բարի՝ է և կոչի Աստուած, բարձրն և առաւել բարձրն, որ անդրն է քան զամենայն անծանօթ բնութիւնն. այլ գիտելեօքս իբր պատկերօք զիջանի, զի զմեզ ինքեան հաղորդեցուցէ: Ձի թէ Պաւղոս գիտէր՝ ընդ ամենայնի լինել ամենայն, տնօրէնութեամբ՝ ո՞րչափ ևս Աստուածն զայս ուղղեցէ աստուածայնաբար գերազանցութեամբ. ըստ որում և կոչի բազում վայելուչ անուամբք, ո՛չ միայն բարձրագունիւք, որպէս՝ Աստուած, Տէր, և Թագաւոր. այլ ևս յաւետ ընտանի կոչմամբք. այսինքն՝ հայր, վարդապետ, փեսայ, և այլ բազում, յորոց գերեք ընտանի անունքս Աստուծոյ յերից գրոց աստի է տեսանել: Ձի զորս իբրև զդեռևս տղայս յաստուածայինսն՝ առակօքն խրատեաց որպէս հայր. և ապա զաճեցեալսն քան զտղայական խակութիւնն, և յերիտասարդական քաջութիւն հասեալսն՝ վարժեաց ժողովօղն ՚ի մեծագոյն հանդէս որպէս վարդապետ, զորդին և զաշակերտ՝ աստիճան քան զաստիճան առ ինքն ձգելով: Այլ ո՛չ կայ մնայ յառաջինսն և եթ դէմս բարեգործի, ՚ի հօր ասեն կամ վարդապետի, այլ զանհաս և զաստուածեղէն սիրով միանալն իւր յըստ չափոյ աստուածացեալսն և ՚ի սրբեալսն ներգործելով. զերբեմն որդի և զաշակերտ կոչեցեալն անձն, այժմ հարսն և մերձաւոր կոչէ, և զինքն փեսայ և սիրեցեալ, և այլովք ևս այսպիսեօք անուամբք մարմնականօք, նախ զանճառ միանալն իւր փեսայն Բանն Աստուած յիւրն հարսնացեալ մարմնում՝ զոր էառն, որով ապա և յաստուածարեալ հարսնացեալսն ՚ի սուրբս յայտնաբանէ:

ԵՐԳ ԵՐԳՈՅ

* Ի վախճանի ոմանք դնեն. Կատարեցաւ Եկկլէսիաստեւ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ

ԱՍԱՅԵԱԼ ՍՈՂՈՍՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԻՍՐԱՅԷԼԻ*

1

Գլուխ Ա

Հարսն ասէ.

¹Համբուրեցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ. զի բարի՛ են ստինք քո քան զգինի*, ²և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս: Ե՛ւղ անոյշ հեղեալ է անուն քո. վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ*, ³և ձգեցին զքեզ: Ձիե՛տ հոտոյ իւղոց քոց ընթացուք մեք: **Օրիորդացն պատմէ հարսնն վասն փեսային՝ զոր ինչ շնորհեաց նմա.** Տարա՛ւ զիս արքայ 'ի սենեակ իւր: **Հարսինն պատմեալ օրիորդացն: Եւ նոքա ասեն.** Յնծասցու՛ք և ուրախ լիցուք մեք 'ի քեզ. և սիրեսցու՛ք զստինս քո քան զգինի: **Օրիորդքն հարսինն բարբառին զանուն փեսային.** Ուղղութի՛ւն սիրեաց զքեզ: **Հարսնն ասէ՛.** ⁴Սեա՛ւ եմ ես և զեղեցիկ դստերք Երուսաղեմի, իբրև զվրանս Կեղարու, և իբրև զխորանն Սողոմոնի*: ⁵Մի՛ հայիք ընդ իս, զի ես սևացեալ թխացայ: Քանզի խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն: Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս, և եղին զիս պահապան այգեստանի. զի զայգին իմ ո՛չ պահեցի: **Հարսնն ցփեսայն ասէ՛.** ⁶Պատմեա՛ ինձ զոր սիրեաց անձն իմ. ո՞ւր հովուես, ո՞ւր հանգուցանես 'ի միջօրէի. գուցէ լինիցիմ իբրև զընկեցեալն յերամակս ընկերաց քոց: **Փեսայն ցհարսնն ասէ՛.** ⁷Եթէ ո՛չ ծանիցես զանձն քո զեղեցիկդ՝ 'ի կանայս. ելեր դու զհետ գարշապարացն հօտից, և արածես զուլս քո 'ի վրանս հովուաց*: ⁸Երիվարացն ինոց 'ի կառսն փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձաւորդ իմ: **Օրիորդքն ցհարսնն ասեն՝.** ⁹Քանզի զեղեցկացան ծնօտք քո իբրև զտատրակի. պարանոց քո իբրև զմանեակս: ¹⁰Նմանութի՛ւն ոսկւոյ արասցուք քեզ՝ հանդերձ

* Ամենայն գրչագիր օրհնակք զվերնագիր գրոցս ունին համաձայն մերումս, բաց յերկուց որք դնեն. երգ երգոց Հարսն ասէ Սողոմոնի. Համբուրեցէ: *Յայտարարութիւն դիմաց 'ի գիրս Երզոց՝ որ առանձին 'ի մերումս բարզմանութեան տեսանի, յամենայն գրչագիր օրհնակս առ 'ի զանազանութիւն բուն բանիցն՝ կարմրադեղով էր գրեալ. որ 'ի տպագրութեանս ըստ պատշաճի նօտր ասացեալ գրով եղաւ:*

* *Ոմանք.* Վասն զի բարի են:
 * *Ոմանք.* Եւղ թափեալ է անուն քո. վասն այնորիկ:
 * *Ոմանք.* Եւ ձգեցին զքեզ յինքեանս: Ձիետ քո 'ի հոտ իւղոց քոց... և ուրախ լիցուք 'ի քեզ. սիրես՝... Օրիորդքն փեսային բարբառին զանուն հարսինն:
 * *Ոմանք.* Իբրև զվրանն:
 * *Ոմանք.* Մի՛ հայիք յիս, զի ես եմ սևացեալ, վասն զի խեթիւ հայեցաւ յիս արեգակն... պահապան այգեստանին. *կամ՝* այգեստանի:
 * *Ոմանք.* Մի՛ գուցէ լինիցիմ իբրև զընկեցեալն 'ի հօտս ընկե՛:
 * *Ոմանք.* Ել դու զհետ... և արածեա՛ զուլս: *Ուր Ոսկան յաւելու. Դարձեալ փեսայն ասէ.* Ձիոյն:
 * *Ոմանք.* Ձիոյն իմոյ 'ի կառսն... նմանեցուցից:

կիտուածովք արծաթոյ*, ¹¹մինչև արքայ՝ի գիրկս իւր ընկալցի գրեզ: **Յարսնն
ցիւր անձնն, և ցփեսայն ասէ.** Նարդոս իմ ե՛տ զհոտ իւր*. ¹²Ծրար ստաշխին է
եղբորորդին իմ ինձ. ՚ի մէջ ստեանց իմոց հանգիցէ*: ¹³Ողկոյզ նոճոյ է
եղբորորդին իմ ինձ. ՚ի մէջ այգեստանեանցն ենգադդայ: **Փեսայն ցհարսնն ասէ*.**
¹⁴Ահա՛ւադիկ կաս գեղեցիկ մերձաւոր իմ. ահա՛ւադիկ կաս գեղեցիկ. ա՛չք քո
աղաւնիք: **Յարսնն ցփեսայն ասէ*.** ¹⁵Ահա՛ւադիկ կաս բարենշան եղբորորդեակ
իմ. այլ և գեղեցիկ առ գահոյս մեր հովանաւոր*: ¹⁶Գերանք տանց մերոց մայրք.
դարանաւանդք մեր նո՛ճք*:

2

Գլուխ Բ

Փեսայն ցիւր անձնն և ցհարսնն ասէ.*

¹Ես ծաղիկ դաշտաց՝ շուշան հովտաց: ²Իբրև շուշան՝ ՚ի մէջ փշոց. այնպէս
մերձաւորդ իմ ՚ի մէջ դստերաց: **Յարսնն ցփեսայն ասէ*.** ³Իբրև խնձորի ՚ի
փայտս անտառի, այնպէս եղբորորդիդ իմ ՚ի մէջ ուստերաց: Ընդ հովանեան
նորա ցանկացայ նստել՝ և նստայ. և պտուղ նորա քաղցր է ՚ի կոկորդի իմուն: **Յօրիորդսն
հարսնն ասէ*.** ⁴Մուժէ՛ք զիս ՚ի տուն գինւոյ, կարգեցէ՛ք ՚ի վերայ իմ
զւեր. ⁵հաստատեցէ՛ք զիս իւղով. կուտեցէ՛ք յիս խնձոր. զի խանդակաթ եմ ես
սիրով*: ⁶Ձախ նորա ընդ գլխով իմով. և աջ նորա պատեսցէ զին: **Յարսնն
ցօրիորդսն ասէ*.** ⁷Երդմնեցուցանեմ զձեզ դստերք Երուսաղեմի ՚ի զօրութիւնս և
յուժգնութիւնս անդաստանի, եթէ յառնիցէ՛ք՝ զարթուջի՛ք զւերն մինչև կամեսցի:
Լուաւ զձայն փեսային և ասէ*. ⁸Ձայն եղբորորդւոյ իմոյ. ահաւասիկ սա եկն
վազս առնու ՚ի վերայ լերանց՝ խաղաղացեալ ՚ի վերայ բլրոց*: ⁹Նման է
եղբորորդին իմ այժեման կամ որթուց եղանց ՚ի վերայ լերանց Բեթելայ:
Յարսնն նշան տայ օրիորդացն զփեսայէն, և ասէ. Ահա՛ւասիկ սա եկաց
յայնկոյս որմոյն մերոյ, կարկառեալ ընդ պատուհանս, հայեցեալ ընդ

* *Ոմանք.* Նմանութեամբ ոսկւոյ... քեզ հանդերձս, կիտ՝: *Եւ ոմանք.* Արասցուք գրեզ՝ հան՝:

* *Ոմանք.* Մինչև թագաւորն ՚ի գիրկս ընկալցի: Նարդոս իմ բուրեաց զհոտ:

* *Ոմանք.* Ծրարս տաշխին եղբոր՝:

* *Ոմանք.* Ողկոյզ ծաղկեալ եղբոր՝... այգեստանին ենգադդայ:

* *Ոմանք.* Ահաւադիկ ես գեղե՛... ահաւադիկ ես գեղե՛: *Ուր Ոսկան.* Ահաւասիկ... աչք քո
աղաւնւոյ:

* *Ոմանք.* Ահաւադիկ ես գեղեցիկ եղբորորդի իմ և վայելուչ. առ գահոյսն մեր
հովանաւորք:

* *Ոմանք.* Դարաւանդք մեր նոճք: *Ուր Ոսկան.* նոճիք:

* *Ոմանք.* Փեսայն ցհարսնն յաղազս անձին իւրոյ ասէ:

* *Ոմանք.* Որպէս շուշան... այնպէս է քոյր իմ ՚ի մէջ դս՛:

* *Ոմանք.* Որպէս խնձոր ՚ի փայտս անտառաց: *Եւ ոմանք.* Իբրև զխնձոր ՚ի մէջ ծառոց
անտառի... ընդ հովանեաւ նորա փափագեցի և նստայ:

* *Ոմանք.* Յաւաքեցէք յիս խնձորս, վասն զի խանդակաթ եմ ես սիրոյ. *կամ՝* սիրով եմ ես:

* *Ոմանք.* Ահեակ նորա ՚ի վերայ գլխոյ իմոյ, և աջ նորա պատեսցի. *և ոմանք.* զգլխով
իմով, և աջ նորա ընդգրկեսցէ զիս:

* *Ոմանք.* Երդմնեցուցից զձեզ դս՛... եթէ յառնիջիք... զւերն իմ մինչև կամեսցի:

* *Ոմանք.* Լուեալ զձայն... եղբորորդւոյ իմոյ առ դրանն. Ահա սա եկն վազելով ՚ի վերայ
լերանց խայտալով ՚ի վերայ բլրոց:

վանդակապատն՝¹⁰Պատասխանի՛ տայ եղբորորդին իմ ինձ՝ և ասէ. Արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ: ¹¹Զի ահա ձմեռն անց. անձրևք անցին և գնացեալ մեկնեցան՝. ¹²Ժաղիկք երևեցան յերկրի մերում. Ժամանակ եհաս յատանելոյ՝ ձայն տատրակի լսելի՛ եղև յերկրի մերում: ¹³Թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք մեր ծաղկեալք ետուն զհոտ իւրեանց: Արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ՝, ¹⁴աղաւնի իմ՝ և եկ դու աղաւնեակ իմ ընդ հովանեաւ վիմիդ առ պատուարաւ պարսպիդ: Երևեցո՛ ինձ գերեսս քո, և լսելի՛ արա ինձ զբարբառ քո. զի բարբառ քո քաղցր է՝ և տեսիլ քո գեղեցիկ: **Յօրիորդսն փեսայն ասէ զայս ինչ՝.** ¹⁵Կալարո՛ւք մեզ աղուեսունս մանրկունս զապականիչս այգեաց. և որթք մեր ծաղկեացեն: **Հարսն ասէ զայս ինչ՝.** ¹⁶Եղբորորդին իմ ինձ՝ և ես նմա՛ որ հովուէն՝ ՚ի մէջ շուշանաց՝ ¹⁷մինչև տիւն լուսաւորեսցէ՛ և ստուերքն շարժեսցին: Դարձի՛ր նմանեաց՝ դու եղբորորդի իմ այժեման կամ որթուց եղանց՝ ՚ի վերայ լերանց խնկաբերաց՝:

3

Գլուխ Գ

¹Յանկողնի ինում ՚ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա՝ և ո՛չ գտի. կոչեցի՛ և ո՛չ ետ ինձ ձայն՝: ²Յարեայց և շրջեցայց ընդ քաղաքն ընդ փողոցս և ընդ հրապարակս՝ և խնդրեցի՛ց զոր սիրեաց անձն իմ: Խնդրեցի զնա՝ և ո՛չ գտի. կոչեցի զնա՝ և ո՛չ ետ ինձ ձայն՝: ³Գտին զիս պահապանքն որ շրջէին ընդ քաղաքն: **Հարսնն ցպահապանսն ասէ.** Սիթէ զոր սիրեաց անձն իմ տեսե՞ք՝: ⁴Իբրև սակաւ մի անցի ըստ նոսա, գտի՛ զոր սիրեաց անձն իմ: **Գտեալ զփեսայն ասէ.** Կալայ զնա, և ո՛չ թողի զնա, մինչև տարայց զնա ՚ի տուն մօր իմոյ, և ՚ի սենեակ յղացելոյն զիս: **Ջօրիորդսն երդմնեցուցանէ երկրորդ անգամ հարսնն՝.** ⁵Երդմնեցուցից զձեզ դստերք Երուսաղեմի՛ ՚ի զօրութիւնս և ՚ի հաստատութիւնս ազարակի, եթէ յառնիցէք զարթուսջիք զսերն մինչև կամեսցի: **Փեսայն վասն հարսինն ասէ՝.** ⁶Ո՞վ է սա որ ելեալ զայ յանապատէ՛ իբրև զժուլս ծառացեալ բարձրացեալ, զնուռս և կնդրուկ յամենայն փոշւոյ իւղագործաց: **Օրիորդքն**

* *Ոմանք.* Սա եկաց՝ յետուստ. *կամ՝* զկնի որմոյն մերոյ, յառեալ ընդ պատու՝:

* *Ոմանք.* Վասն զի ահա ձմեռն էանց, անձրևք հեռացան և գնաց ինքեամբ:

* *Ոմանք.* Թզենի ընծիղեաց զբողբոջ իւր. այգիք մեր ծաղկեցին և ետուն զհոտս իւր՝:

* *Ոմանք.* Եկ ՚ի հովանի վիմին մերձ առ նախապարիսպն. ցոյց ինձ զդէմս քո. և լուսո՛ ինձ զձայն քո. վասն զի ձայն քո քաղցր է և դէմք քո գեղէ՛:

* *Ի լուս՝.* Աղուէս մանրկունս: *Ոմանք.* Աղուէսունս փոքունս. *կամ՝* փոքրկունս... և զի այգիք մեր ծաղկեալ են:

* *Ոմանք.* Որ հովուէն ՚ի շուշանս:

* *Ոմանք.* Տիւն շնչեսցէ. *կամ՝* նուաղեսցէ. և շարժեսցին ստ՝: *Ի լուս՝.* Ի վերայ լերանց հովտաց:

* *Ոմանք.* Կոչեցի զնա և ո՛չ լուաւ ինձ:

* *Ոմանք.* Յարեայ և շրջեցայ ընդ քաղաքն ՚ի փողոցս և ՚ի հրա՛:

* *Ոմանք.* Պահապանք պարսպացն որ: Հարսն ասէ ցպահապանս քաղաքին:

* *Ոմանք.* Իբրև փոքր ինչ անցի ընդ նոսա... Ասէ հարսն... մինչև մուծի զնա ՚ի տուն:

* *Ոմանք.* Երդմնեցուցանեն զձեզ... ՚ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի, եթէ յառնիցիք:

ասացին զայս ինչ⁷։ Միա գահոյք Սողոմոնի վաթսուն սպառազէնք շուրջ
զնովալ ՚ի քաջացն Իսրայէլի⁸։ Ըմենեքեան սուսերաւորք հմուտք
պատերազմի, այր իւրաքանչիւր սուր յազդեր յարհաւրաց գիշերոյ⁹։ Արար իւր
գահաւորակ արքայ Սողոմոն ՚ի փայտից Լիբանանու¹⁰։ զսիւնս նորա գործեաց
արծաթիս, զկոնք նորա ոսկի, և զծեղուն նորա ծիրանի, զմէջ նորա
ականակապ տարածեալ զսէրն ՚ի դստերացն Երուսաղեմի¹¹։ Ելէք
հայեցարուք դստերք Սիոնի յարքայ Սողոմոն ՚ի պսակն որով պսակեաց զնա
մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ, և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ¹²։

4

Գլուխ Դ

Փեսայն ասէ.

¹Միաւաղիկ կաս գեղեցիկ մերձաւոր իմ՝ ահաւաղիկ կաս գեղեցիկ. աչք քո
աղաւնիք բաց ՚ի լուսեմէն քունմէ։ Վարսք քո իբրև գերամակս այծից որք
երևեցան ՚ի Գաղաադէ²։ Ատամունք քո իբրև գերամակս կտրելոց որք ելանեն ՚ի
լուալեաց. ամենեքեան երկուորիք են, և անորդի ո՛չ գոյ ՚ի նոսա³։ Իբրև զթել
որդան են շրթունք քո. և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղև նռան են այտք քո՝
բաց ՚ի լուսեմէն քունմէ⁴։ Իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո՝ որ շինեալն
է ՚ի Թալպիովթ. հազար վահանք կախեալ են զնմանէ, և ամենայն նետք
սպառազինաց⁵։ Երկու ստինք քո իբրև գերկուս ուլս երկուորիս այծեման, որ
արածիցին ՚ի մէջ շուշանաց⁶, մինչև տիւն նուաղեսցէ, և ստուերքն շարժեսցին։
Գնացից ես ինձէն ՚ի լեառն զմըռնենեաց, և ՚ի բլուրն կնդրկի⁷։ Ամենկին
գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ո՛չ գոյ ՚ի քեզ⁸։ Ե՛կ ՚ի Լիբանանէ հարսն,
ե՛կ այսր ՚ի Լիբանանէ. եկեսցես և անցցես ՚ի գլխոյ հաւատոց՝ ՚ի կատարէ
Սանիրայ և Յերմոնի, ՚ի մայրեաց առևճուց, և ՚ի լերանց ընծուց⁹։ Սրտակաթ
արարեր զմեզ քոյր մեր հարսն. սրտակաթ արարեր զմեզ միով ականք քով, և
միով քառամանեկաւ պարանոցի քոյ¹⁰։ Քանզի գեղեցկացան ստինք քո քոյր իմ

¹Ոմանք. Որ ելանէ յանապատէ իբրև զստեղծ ծխոյ խնկեալ զմուռս... յամենայն փոշեաց
եւղեփեցաց։

²Ոմանք. Վաթսուն զօրաւորք շուրջ զնովալ ՚ի զօրաւորացն Իսրայէլի։

³Ոմանք. Ամենեքեան ունին սուր ուսեալք զպատերազմ... զսուր իւր ՚ի վերայ ազդեր
իւրոյ ՚ի զարհուրանաց գիշերոյ։

⁴Ոմանք. Ջսիւնսն արար արծաթեղէն. և զսնարսն. կամ՝ զկողմանս՝ ոսկեղէնս, և
զխարիսխսն ծիրանի. և զմէջն ականակապ ՚ի սէր դստերացն Երուսաղեմի։

⁵Ոմանք. Ելէք և տեսէք դստերք Երուսաղեմի... զպսակն որով պս... ուրախութեան սրտի
նորա։

⁶Ոմանք. Միա ես գեղեցիկ մեր՝... ահա ես գեղեցիկ... իբրև զհաւրանս այծից։

⁷Ոմանք. Իբրև լար կարմիր են շր՝... իբրև կեղև նռան այտք քո առանց լուսեման քո։

⁸Ոմանք. Կախեալ են ՚ի նմա, և ամենայն աշտեայք զօրաւորաց։

⁹Ոմանք. Ուլս այծեման որք արածին ՚ի շուշանս։

¹⁰Ի լուս՝ Մինչև տիւն պայծառացի։ Ուր ոմանք. Մինչև տիւն ծագեսցէ... զնացից ես
առանձին ՚ի լեառն զմըռսոյ և ՚ի։

¹¹Ոմանք. Ե՛կ ՚ի Լիբանանէ. եկե՛՛... իսկզբան հաւատոյ, ՚ի գլխոյ. կամ՝ ՚ի գլուխ Սանիրայ...
՚ի մորեաց առևճուց, և ՚ի լերանց ընծուց։

¹²Ոմանք. Օրիորդք ասեն. Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարսն. սրտացուցեր զմեզ միով...

հարսն. քանզի գեղեցկացան ստինք քո՝ ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան
 զամենայն խունկս՝: ¹¹Սեղր կաթեցուցանեն շրթունք քո քոյր իմ հարսն. մեղր և
 կաթն ՚ի ներքոյ լեզուի քոյ, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի:
¹²Պարտէ՛զ փակեալ քոյր իմ հարսն, պարտէ՛զ փակեալ և աղբեր կնքեալ:
¹³Պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղովք մրգաբերաց:
 Կիպրոս հանդերձ նարդոսի՝: ¹⁴Նարդոս և քրթում, խունկեղէզն և կինամոնոն,
 հանդերձ ամենայն ծառօք Լիբանանու: Ջրմուռս և հալուէ, հանդերձ ամենայն
 գլխաւոր խնկօք՝: ¹⁵Աղբեր բուրաստանաց և ակն ջրոյ կենդանւոյ՝ բխեալ ՚ի
 Լիբանանէ՝: ¹⁶Արի՛ հիւսւսի և ե՛կ հարաւ, շնչեա՛ ՚ի պարտէ՛զ իմ, և բուրեցցին
 խունկք իմ՝:

5

Գլուխ Ե

Հարսնն աղաչէ զի իջցէ փեսայն իւր.

¹Իջցէ եղբորորդի իմ ՚ի պարտէ՛զ իւր. և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց:
Փեսայն ցհարսն ասէ. Ստի՛ ՚ի պարտէ՛զ իմ քոյր իմ հարսն, կթեցի՛ զմուռս իմ
 հանդերձ խնկօք իմովք. կերայ զհաց իմ մեղու իմով. արբի զգինի իմ կաթամբ
 իմով: Կերայք մերձաւորք իմ և արբէ՛ք, և արբեցարո՛ւք եղբորորդիք իմ՝: ²Ես
 ննջեմ, և սիրտ իմ արթո՛ւն կայ: **Հարսնն զգայ զփեսային բախել զդուռնն.** Չայն
 եղբորորդւոյ իմոյ բախէ՛ ՚ի դրանն: **Փեսայն ասէ.** Բաց ինձ քո՛յր իմ, մերձաւոր
 իմ, աղանի՛ իմ, կատարեալ իմ. զի գլուխ իմ լցաւ ցօղով, և վարսք իմ ՚ի շաղից
 գիշերոյ: **Հարսնն ասէ զայս ինչ՝.** ³Մերկացայ զպատմուճան իմ, զհա՞րդ
 ազանիցիմ զնա. լուացի զոտս իմ, զհա՞րդ աղտեղացուցից զնոսա՛:
⁴Եղբորորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ պատուհանն, և որովայն իմ խռովեցաւ
 ՚ի նա՛: ⁵Յարեայ՛ ես ՚ի բանալ եղբորորդւոյ իմոյ: Չեռք իմ կաթեցուցին զմուռս. և
 մատուներ իմ զմուռս լցեալս՝ ⁶ի վերայ ձեռաց փակաղակին: Բացի՛ ես
 եղբորորդւոյ իմոյ. եղբորորդի իմ անց, և ոգի իմ ե՛լ ընդ բանի նորա: Խնդրեցի
 զնա՛ և ո՛չ գտի. կոչեցի զնա՛ և ո՛չ ետ ինձ ձայն՝: ⁷Գտին զիս պահապանքն որ

և միով քառամանեակ պարանոցաւ քով:

**Ոմանք.* Փեսայն ասէ ցհարսն. Քանզի գեղեցկացան ստ՞:

**Ոմանք.* Առաքումն քո դրախտ... պտղովք ծառոց. ծաղիկ հանդերձ: *Ուր և ՚ի լուսանց
 մերումս նշանակի՝* ծաղիկ:

**Ոմանք.* Եւ քրթում, եղեզն և կինամոնոն հանդերձ ամենայն փայտիւք Լիբա՞... հանդերձ
 ամենայն առաջին. *կամ՝* ընտիր եւղովքն:

**Ոմանք.* Աղբեր պարտիզաց. ջրհոր ջրոյ կենդանւոյ և հոսեցելոյ ՚ի Լիբա՞:

**Ոմանք.* Հարսն ասէ. Արի՛ հիւս՞:

**Ոմանք.* Չպտուղ մրգաբերաց իւրոց... Իջի ՚ի պարտէ՛զ իմ... զհաց իմ մեղուով իմով...
 եղբորորդեակք իմ:

**Ոմանք.* Արթո՛ւն է... բաղխել զդուռնն, ասէ. Չայն եղբորորդւոյ իմոյ առ դրանն. *կամ՝*
 բաղխէ զդուռնն... վասն զի գլուխ իմ լի եղև ցօղով. և վարսք իմ տարափով գիշերոյ:

**Ոմանք.* Չիա՞րդ զգեցայց զնա... զիա՞րդ աղտեղացուցանեմ զնա:

**Ոմանք.* Եղբորորդի իմ յառեաց զձեռն իւր ընդ ծակոյն: *Ուր Ոսկան.* ընդ ծակոյկն:

**Ոմանք.* Եւ մատուներ իմ լցան զմըռսովք:

**Ի լուս՝.* Ի վերայ դրանց փակաղակին. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:* *Ուր ևս ոմանք.*
 կոչեցի զնա յանուանէ, և ո՛չ լուաւ ինձ:

շրջէին 'ի քաղաքին. հարին և վիրաւորեցին զիս. հանին յինէն զխլայն իմ պահապանք պարսպացն*։⁸ Երդմնեցուցից զձեզ դստերք Երուսաղեմի՝ 'ի զօրութիւնս և 'ի հաստատութիւնս ագարակի, եթէ գտանիցէք զեղբօրորդին իմ պատմեսչիք նմա, եթէ կաթոգին եմ ես 'ի սէր քո: **Դստերքն Երուսաղեմի և պահապանք պարսպացն հարցանեն զհարսն*.** ⁹Զի՞նչ է եղբօրորդին քո յեղբօրորդեաց՝ զեղեցիկդ 'ի կանայս. զի՞նչ է եղբօրորդին քո յեղբօրորդեաց, զի այդպէս երդմնեցուցեր զմեզ: **Հարսնն նշան տայ զեղբօրորդւոյն զինչ ոք էրն*.** ¹⁰Եղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր՝ ընտրեալ 'ի բիւրուց: ¹¹Գլուխ նորա յոսկւոյ կեփազեայ. վարսք նորա կռածոյք սեա՛ւ իբրև զագռաւ: ¹²Աչք նորա իբրև զաղաւնիս 'ի վերայ լիութեան ջրոց, լուացեալ կաթամբ, նստեալ 'ի վերայ ջրոց լրութեան*։ ¹³Ծնօտք նորա իբրև զտաշտս խնկոց բուրեն զանուշահոտութիւն իւղագործաց. շրթունք նորա շուշանք՝ բուրեն զմուռս լիութեան*։ ¹⁴Ձեռք նորա ոսկիք ճախարակեայք՝ լցեալ ականբք Թարսսայ. որովայն նորա տախտակ փղոսկրեայ ականակապ յականց շափիղայ*։ ¹⁵Սրունք նորա սիւնք մարմարեայք հաստատեալք 'ի վերայ ոսկեաց խարսխաց: Տեսիլ նորա որպէս զընտիր եղնափայտից Լիբանանու*։ ¹⁶Կոկորդ նորա լի՛ քաղցրութեամբ. և ամենին ցանկալի: Այն է եղբօրորդին իմ, և այն է մերձաւոր իմ՝ դստերք Երուսաղեմի: **Հարցանեն դստերքն Երուսաղեմի՝ ո՞ր անց եղբօրորդի նորա. այսինքն է՝ հարսինն*.** ¹⁷Յ՞ո գնաց եղբօրորդին քո զեղեցիկդ 'ի կանայս. յո՞ր կողմն դիտեաց եղբօրորդին քո՝ և խնդրեսցուք և մեք զնա ընդ քեզ*։

6

Գլուխ Զ

Պատասխանի տայ հարսնն և ասէ.

¹Եղբօրորդին իմ էջ 'ի պարտեզ իւր 'ի տաշտս խնգոց. հովուել 'ի բուրաստանս՝ և ժողովել շուշանս*։ ²Ես եղբօրորդւոյ իմոյ՝ և եղբօրորդին իմ ի՛նձ որ հովուէն 'ի մէջ շուշանաց: **Փեսայն ցհարսնն ասէ.** ³Բարենշան ես մերձաւոր իմ իբրև

* *Ոմանք.* Պահապանք պարսպացն որ շր՞... առին զխլայն իմ յինէն:

* *Ոմանք.* Երդմնեցուցանեն զձեզ դս՞... 'ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի, եթէ գտա՞... եթէ խանդակաթ եմ 'ի սէր. *կամ՝* կաթոգի եմ ես:

* *Ոմանք.* Յեղբօրորդիս, զեղեցիկդ 'ի... զի այդպէս երդմնեցուցանես զմեզ: *Ոմանք.* Զինչ ոք էրն, և ասէ:

* *Ոմանք.* Զաղաւնիս լուացեալ... 'ի վերայ լիութեան ջուրց:

* *Ոմանք.* Խնկոց իւղեփեցաց բուրեալք զանուշահոտութիւնս շր՞... բղխեն զմուռս:

* *Ոմանք.* Նորա ճախարակեայք ոսկեղէնք նման գլխոյն լցեալք 'ի Թարշշայ... ականակապ 'ի քարանց շա՞:

* *Ոմանք.* Սիւնք կճեայք հաս՞... 'ի վերայ ոսկի. *կամ՝* ոսկեղէն խարսխաց. տեսակ նորա իբրև Լիբանան ընտրեալ իբրև զմայրս:

* *Ոմանք.* Այն է եղբօրորդեակն իմ:

* *Ոմանք.* Ուր գնաց եղբօրորդին... ուր դիտեաց:

* *Ոմանք.* Պատասխանի տուեալ ասէ... և ժողովել 'ի շուշանս: *Օրինակ մի յաւելու.* Եւ ժողովել շուշանս *յամենայն ծաղկանց մայրից: Որպէս զարդ 'ի մէջ փշոց. սոյնպէս է եղբօրորդին իմ 'ի մէջ դստերաց:* Ես եղ՞:

գիտնութիւն, գեղեցիկ իբրև գերուսաղէմ, զարմանալի յօրինեալ*։ ⁴Դարձո՛ գաչս քո յինէն, վասն զի դոքա սրարբեցուցին զիս. վարսք քո իբրև գերամակս այծից որք երևեցան ՚ի Գաղաաղէ*։ ⁵Ատանունք քո իբրև գերամակս կտրելոց որք ելանեն ՚ի լուալեաց. ամենեքին երկուորիք են, և անծնունդ ո՛չ գոյ ՚ի նոսա*։ ⁶Իբրև զթել կարմիր շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրև կեղև նռան այտք քո՝ բաց ՚ի լռութենէդ քումմէ*։ ⁷Վաթսո՛ւն են թագուհիք, և ութսո՛ւն հարճք. և օրհորդք որոց ո՛չ գոյ թիւ*։ ⁸Մի՛ է աղանի իմ կատարեալ իմ. մի է մօր իւրոյ ընտրեալ ծնողի իւրոյ. տեսին զնա դստերք՝ և երանեցին նմա. թագուհիքն և հարճք գովեցին զնա։ **Դստերքն և թագուհիք տեսին զհարսնն, և երանեցին նմա.** ⁹Ո՛վ է սա որ երևեալս է իբրև զառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն. զարմանալի յօրինեալ։ **Փեսայն ցհարսնն ասէ*.** ¹⁰Ի պարտեզս ընգուզեացն իջի հայել յարդիւնս վտակացն. տեսանել թէ ծաղկեա՞լ իցէ որթ, թէ ծաղկեա՞լ իցէ նոճ, թէ ծաղկեալ իցեն նոնենիք։ **Հարսնն ցփեսայն ասէ*.** ¹¹Անդ տաց զստինս իմ քեզ, ո՛չ ծանեաւ անձն իմ. ե՛ր զիս իբրև զկառսն Ամինադաբայ։ **Դստերքն և թագուհիքն ցհարսնն ասեն*.** ¹²Դարձիր Ողորդնացիդ դարձիր, դարձիր և տեսցուք մեք ՚ի քեզ*։

7

Գլուխ Է

Տղատերսն և ցթագուհիսն փեսայն զայս ինչ ասէ.

¹Ձի՞նչ տեսանէք յՈղորդնացիդ որ դիմեալ գայ իբրև զգունդս բանակաց. քանզի գեղեցկացան զնացք քո կօշկօք, դո՛ւստր Ամինադաբայ։ Ձև բարձից քոց նման է ուլանց յեռելոց գործոյ ճարտարի*։ ²Պո՛րտ քո թակոյկ ճախարակեայ անպակաս ՚ի գինւոյ խառնելոյ. որովայն քո՝ իբրև զշեղջ ցորենոյ փակեալ շուշանաւ*։ ³Երկո՛ւ ստինք քո՝ իբրև երկուս ուլս երկուորիս այծեման*։ ⁴Կարանոց քո՝ իբրև աշտարակ փղոսկրեայ։ Աչք քո՝ իբրև զծովակն Եսեբոնի ՚ի դրունս դստերաց բազմաց։ Ըռնգունք քո՝ իբրև զաշտարակն Լիբանանու, որ

* *Ոմանք.* Փեսայն ընդ հարսնն ասէ. Գեղեցիկ ես մերձաւոր իմ իբրև զանուշահոտութիւն. գեղեցիկ ես իբրև գերուսաղէմ որպէս հիացումն կարգեալ։

* *Ոմանք.* Ձաչս քո առաջի իմ... այծեաց որք երևեցանն։ *՚ի լուս*՞. Վասն զի դոքա ընդոստուցին զիս. *համաձայն այլոց ՚ի բնար*՞։

* *Ոմանք.* Եւ անորդի ո՛չ գոյ ՚ի նոսա։

* *Ոմանք.* Իբրև լար կարմիր են շր՞։

* *Ոմանք.* Եւ օրհորդացն ո՛չ գոյ թիւ։

* *Ոմանք.* Եւ թագուհիքն երանի տան... որպէս զլուսին... զարեգակն իբրև զհիացումն կարգեալ։

* *Ոմանք.* Փեսայն ընդ հարսնն ասէ... իջի հայել ՚ի յարմտիս ուլից։ *Ուր յոմանս պակասի.* Որթ և նոճ։

* *Ոմանք.* Ոչ գիտաց անձն իմ։

* *Ոմանք.* Դարձիր դարձիր Սոմնացիդ, դար՞։

* *Ոմանք.* Ձինչ տեսանիցէք ՚ի Սոմնացին որ եկեալ է իբրև զպարս բանակաց. զի գեղեց՞... դուստր Նադաբայ։ Յարմարումն բարձից քոց նմանութիւն ուլան յեռելոց գործոյ ձեռաց արուեստաւորի։

* *Ոմանք.* Ոչ նուաղեալ ՚ի գինւոյ խառնելեաց... որպէս զշեղջ։

* *Ոմանք յաւելուն.* Այծեման որ արածին ՚ի շուշանս։

դիտէ հանդէպ Դամասկոսի*։ ⁵Գլուխ քո՝ ի վերայ քո իբրև զԿարմելոս. և հևսք գլխոյ քոյ իբրև զծիրանի իբրև զթագաւոր, թա՛գ ՚ի գլուխ յասպարէսս*։ ⁶Քանի՞ զեղեցկացար՝ և քանի՞ քաղցրացար, սէր ՚ի փափկութեան քում*։ ⁷Նմանեցաւ մեծութիւն քո արմաւենւոյ, և ստինք քո ողկուզաց։ ⁸Ասացեր՝ թէ ելի՛ց յարմաւենին, բո՛ւռն հարից զբարձրութեանց նորա։ Եւ եղիցին ստինք քո իբրև զողկոյզս որոյ. և հոտ ընձաց քոց իբրև զխնձոր*։ ⁹և կոկորդ քո իբրև զգինի ազնիւ։ Երթեալ զհետ եղբորորդւոյ իմոյ յուղղութիւնս, բաւականեալ շրթամբք իմովք՝ և ատամամբք*։ ¹⁰Ե՛ս եղբորորդւոյ իմոյ՝ և առ ի՛ս դարձ նորա։ ¹¹Ե՛կ եղբորորդի իմ ելցուք յագարակս, ազցուք ՚ի շէնս և ՚ի պարտէզս*։ ¹²Կանխեսցուք յայգիս։ Տեսցուք թէ ծաղկեա՞լ իցէ որթ, թէ ծաղկեա՞լ իցէ նոճ, թէ ծաղկեա՞լ իցէ նռնենի. անդ տաց զստինս իմ քեզ*։ ¹³Մանրագործ ետուն զհոտ իւրեանց. և առ դուրս մեր ամենայն մրգաբերք։ Զնոր առ հնով, զոր ետ ինձ մայր իմ, պահեցի՛ քեզ եղբորորդի իմ*։

8

Գլուխ Ը

¹Ո՛վ տայր քեզ եղբորորդի իմ դիտել զստինս մօր իմոյ։ Գտեալ զքեզ արտաքոյ՝ համբուրեցի՛ց զքեզ, և ո՛չ անգոսնեսցես զիս*։ ²Առեալ ածից զքեզ ՚ի տուն մօր իմոյ՝ և ՚ի սենեակ յղացելոյն զիս. արթուցից քեզ ՚ի գինւոյ իւղագործաց, յօշարակէ՛ նռնենեաց իմոց։ ³Չախ նորա ընդ գլխով իմով, և ա՛ջ նորա պատեսցի զինև*։ ⁴Երդմնեցուցից զձեզ դասերք Երուսաղէմի ՚ի զօրութիւնս և ՚ի հաստատութիւնս ագարակի, եթէ յառնիցէք զարթուսջի՛ք զստինս մինչև կամեսցի։ **Դստերքն և թագուհիքն ասեն***։ ⁵Ո՛վ է սա որ ելեալ գայ սպիտակացեալ. յենո՛ւ գայ յեղբորորդի իւր։ **Փեսայն ցհարսնն ասէ**. ՚ի ներքոյ խնձորոյն զարթուցի զքեզ. անդ երկնեաց զքեզ մայր քո. անդ երկնեաց որ ծնաւն զքեզ*։ ⁶Դի՛ր զիս իբրև զկնիք ՚ի սրտի քում, և իբրև զմատանի յաջոյ ձեռին քո. զի բո՛ւռն է իբրև զմահ սէր, և խիստ իբրև զդժոխս նախանձ. թռիչք նորա իբրև զթռիչս բոցոյ՝ հրոյ*։ ⁷Զուրք բազումք ո՛չ կարացեն զսէր

* *Ոմանք*. Իբրև զծովն Եսեբոնի... որ դիտէ ՚ի դէմս. *կամ*՝ ընդդէմ Դամասկոսի։
 * *Ոմանք*. Որպէս զծիրանի թագաւորի թագ ՚ի գլուխ յընթացս ասպարիզաց։
 * *Ոմանք*. Քանզի զեղեցկացար, և զի հեշտալի եղեր, սէր ՚ի փափ*։
 * *Բազումք*. Ասացի ելից ՚ի վերայ արմաւենւոյն. *կամ*՝ ՚ի վեր յարմաւենին, կալայց զբարձրութենէ նորա։
 * *Ոմանք յաւելուն*. Իբրև զգինի ազնիւ. *հոտ խնձորոյ յրռընգունս քո, և համ գինւոյ ՚ի կոկորդի քում*. Եւ երթեալ ընդ եղբորորդւոյ իմոյ յուղղութիւն բաւական լեալ շր*։
 * *Ոմանք*. Ելցուք յանդաստան. հանգիցուք ՚ի գետոյս։
 * *Ոմանք*. Ծաղկեալ իցեն նռնենիք։
 * *Ոմանք*. Նոր առ հնովն, զոր։
 * *Բազումք*. Ո՛վ տացէ քեզ... դիտել զստինս։
 * *Ոմանք*. Ահեակ նորա ընդ գլխո՞ւ... պատեսցէ զինև։
 * *Ոմանք*. Երդմնեցուցի զձեզ... ՚ի զօրութիւնս և յուժգնութիւնս անդաստանի։ *Ուր Ոսկան*. Երդմնեցուցանեն։
 * *Ոմանք*. Որ ելանէ սպիտակացեալ, յեցեալ յեղբօ՞ւ։ ... ՚ի ներքոյ խնձորոյ զարթուցից զքեզ։
 * *Ոմանք*. ՚ի վերայ սրտի քո. իբրև զմատանի ՚ի վերայ բազկի քո. վասն զի հզօր է իբրև

շիջուցանել. և գետք ո՛չ արգելցեն զնա: Եթէ տացէ այր զամենայն զկեանս իւր ընդ սիրոյ, անգոսնելով անգոսնեսցեն զնա*: ⁸Քոյր մեր փոքրիկ և ստինք ո՛չ գոյ նորա. զի՞նչ արասցուք քեռ մերում յաւուր յորում պատմեսցի նմա*: ⁹Եթէ պարիսպ իցէ՝ շինեսցուք ՚ի վերայ նորա մահարձանս արծաթիս. եթէ դուռն իցէ՝ յօրինեսցուք ՚ի նմա տախտակս եղևնափայտեայս: **Յարսնն համարձակի և ասէ***. ¹⁰Ես եմ պարիսպ և ստինք իմ իբրև զաշտարակս, ե՛ս էի յաչս նորա որպէս որ գտանիցէ զխաղաղութիւն*: ¹¹Ա՛յգի եղև Սողոմոնի ՚ի Բեւելմաւուն. ե՛տ զայգին իւր ցպահապանս. բերցէ այր իւրաքանչիւր ընդ պտղոյ նորա հազարս արծաթոյ*: ¹²Այգի իմ ինձ առաջի իմ. հազարքն Սողոմոնի, և երկերիւր պահապանաց որ պահեն զպտուղ նորա: **Յարսնն ասէ***. ¹³Որ նստիսդ ՚ի պարտէզս ա՛յլք անսան քեզ. լսելի՛ արա ինձ զբարբառ քո*: ¹⁴Փախի՛ր եղբօրորդի իմ, և նմանեաց յայծեման. կամ որթուց եղանց ՚ի վերայ լերանց խնկաբերաց:

**Այլուստ իմն գտեալ ՚ի սմին երգոյ:*

Օրհորդքն և թագուհիքն ասեն.

¹Գիտացի զի մարմին զբօսացուցանէ զմանկութիւն բարձրացուցէ ՚ի շտեմարանս իւր. թագաւոր մեր ՚ի գահոյս մեր. իբրև արմաւ ոսկեղէն զըմռսալից լցցին տաշտք մեր*: ²Պարծցի թագաւորն անդրէն ՚ի մանկութիւն: ³Սիրելին ՚ի սենեակս մեր. երգեսցուք զսէրն: **Փեսայն ասէ***. ⁴Ե՛ս իսկ եմ ՚ի սաղմոսարանին. երգեցի՛ց ընդ ընկերս իմ. երգեսցուք և ուրախ լիցուք: **Յարսնն և դստերքն և օրհորդքն ասեն***. ⁵Թագաւոր սիրելի, թէպէտ և ծածկեցաք ՚ի տեսլենէ, աչք մեր յսնաւորք*: ⁶Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդէ. գեղեցիկդ ՚ի կանայս. մա՛յր քո ծնցի մարմին անտրխիղծ: Առ նոյն՝ յայլմէ տեսչութենէ, զի ա՛յսպէս ունէր՝:

զմահ... թեք նորա իբրև զթևս բոցոյ հրոյ:

*Ոմանք. Ոչ կարեն շիջուցանել զսէր... Եթէ տացէ մարդ զամենայն զկեանս իւր ՚ի սէր, արհամարհանօք անգոսնեսցեն:

*Ոմանք. Օրհորդքն ասեն. Քոյր մեր փոքր, և ստինս ո՛չ ունի. զինչ ա՛:

*Ոմանք. ՚Ի վերայ նորա մարտկոցս արծաթեղէնս... ՚ի նմա տախտակս մայրս:

*Ոմանք. Ես ՚ի յաչս նորա իբրև գտեալ խաղաղութիւն:

*Ոմանք. Այր իւրաքանչիւր ՚ի պտղոյն իւրմէ հազարս:

*Ոմանք. Եւ երկերիւրք որոց պահեն զպտ՛:

*Ոմանք. Ձծայն քո լսելի արա ինձ:

*Ոմանք զանց արարեալ զվերնագիրս զայս. Այլուստ իմն, և այլն. անընդմիջապէս յետ 14 համարոյն նախընթաց զլիտոյ՝ այսպէս սկիզբն առնեն մերունս թարգմանութեան յաւելուածոյ երգոցս. Ես Եկլէսիաստէս գիտացի զի մարմին զօրացուցանէ: *Իսկ այլ ոմանք այսպէս ունին զվերնագիրս. Այլուստ գտեալ բանս այս իմաստնոյն:*

*Ոմանք զանց առնեն. Գիտացի, և այլն. և սկսանին զբանն այսպէս. Բարձրացի թագաւոր մեր յըշտեմա՛: *՚Ի լուս՛*. Ձի մարմին զօրացուցանէ զման՛. *համաձայն ոմանց:*

*Ոմանք. ՚Ի սենեակ իւր. երգեցէք զսէրն:

*Ոմանք. Եմ երգ սաղմոսարանին: *Ոմանք ՚ի մի յարեն այսպէս*. Եւ ուրախ լիցուք (5) ՚ի թագաւոր սիրելի, և երգեսցուք օրհնութեամբ նմա. թէպէտ և ծած՛:

*Ոսկան. Աչք մեր յիսնաւորք:

*Ոմանք. Տէր արար և հաստատեաց զքեզ: *Ոմանք*. Ծնցի մարմին անխիղճ: Առ նոյն յայնմանէ տեսչ՛: *Իսկ ոմանք*. Ծնցի մարմին առ նոյն անխիղճ անաղտ յայլմէ տեսչութենէ, զի այսպէս ունէր և կայր այս Օրհնութիւն օրհնութեանց:

Երգ երգոց*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՍԱՍՏՈՒԹԵԱՆՆ ՍՈՂՈՄՈՆԻ

Բազում գիրս երևեցուցանեն գոլ Սողոմոնի՝ ասացեալքն զնմանէ. երիս հազար առակս, և հինգ հազար օրհնութիւնս. զոր կէսք յԱռակսն և յԵրգերգոցն իմանան, և այլք թէ չէ՝ բովանդակն՝ ՚ի միջի. արդ՝ զկարծիս զայս կալցի՝ ոք որպէս ախորժէ: Այլ առ այս գիրք ոմանք կարծեօք վարեցան, իբր թէ չէ՝ նորա. բայց բազում քննութեամբ ստուգեցաւ նորա գոլ, և ընդ առաջին գիրսն հարազատ. որպէս տիպք բանիցն և զօրութիւն իմաստիցն յայտնէ, հաւասարազօր գոլով առաջնոց գրեանց, թէ և սուղ ինչ զանազանի. որպէս ժողովօղն յԱռակացն, և Երգերգոցն յերկոցունցն. որով մեծ հարստութիւնն նորա յիմաստս և ՚ի բանս ցուցանի: Նոյնպէս և այս գիրք առատագոյն բանիւ խրատէ զլսօղսն. սիրել զարդարութիւն որով կարասցեն ընդունել զՍուրբ Հոգին, և փախչել ՚ի կորուսիչ խորհրդոց անպարշտաց, որք թէպէտ ժամանակօք և ծննդովք բազմանան. փոխք են և զաղփաղփուրք: Եւ զի վայելեցցեն արդարք զանճառ բարութիւնս, որ թէպէտ և անզաւակք կամ կարճակեացք. այլ անմահութեան յուսով հաստատեալք. և թէ ՚ի պատուհասիլ անզգամացն նոքա մեծապէս փառաւորեսցին: Խրատէ զթագաւորս, և որք վերնոյ թագին փափաքեն՝ պատուել զիմաստութիւն՝ որով յաւիտեան թագաւորեսցեն: Եւ հաստատէ զբանն բազում վկայիւք, ինքեամբ և այլովք որք պատուեցին զիմաստութիւն՝ և փառաւորեցան. և այլովք որ վարեցան անզգամութեամբ՝ և պատուհասեցան:

Գլուխք Իմաստութեանն Սողոմոնի

ա. Խրատ արդարութեան առ Աստուած հաւատոց, և փախչել ՚ի նենգ խորհրդոց, և զգուշանալ երիկամանց, այսինքն է՝ ցանկութեան և ցասման, սրտի և բանի՝ որ է խոհականն. զի Աստուած ամենակալ է Հոգին՝ դատիչ և հատուցիչ սրտի և լեզուի:
բ. Հրաժեշտ ՚ի մահաբեր գործոց. և զի ո՛չ յԱստուծոյ է մահ. ամբաստանութիւն մարմնասէր անպարշտաց չար բռնութեան. և վասն խաչահանուացն լրբութեան և անմիտ հայիոյութեան:
գ. Ընդդիմադրութիւն աստուածապարզ և յուսոյ անմահութեան արդարոց, և թշուառական կորստեան անպարշտաց:
դ. Երանութիւն անլոց և ողջախոհ ներքինեաց, և եղկութիւն գիշասիրաց, և նախատինք որդւոց շնութեան:
ե. Ձի շահաւէտ է սակաւակեաց կեանք արդարոց, և ՚ի հանգիստ

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Երգ երգոցն:

վախճան նոցա. և եղկելի յերկարակեաց ծերութիւն ամպարշտաց, և տագնապաւ կորուստ նոցա:

գ. Թէ ընդ ամենապայծառ փառս արդարոցն 'ի յարութեանն զղջացեալ երբեմն խրոխտացեալքն՝ յանօգուտս ապաշաւեն, այլ և այլ օրինակօք ողբալով զունայնութիւն աստի կենացս:

է. Ձի արդարք անթառամ պսակեսցին, և մեղաւորք անհանդուրժելի տանջանօք լլկեսցին:

ը. Ձի սաստիկ և ստուգագոյն քննութիւն կայ 'ի վերայ մեծամեծաց:

թ. Գովեստ հանճարեղ առաքինութեան, և յորդորունն 'ի նոյն և շահ առ 'ի նմանէ:

ժ. Իմաստութիւն զխոհականութիւնն ասէ, որուն և այլ առաքինութիւքն հետևին. և բնախօսելով ապա յայտ առնէ թէ յԱստուծոյ պարտ է խնդրել զայն. զի նա ինքն է ուղղիչ գիտութեան, յորմէ և զինքն իմաստնացեալ ասէ Սողոմոն:

ժա. ՅԱստուծոյ ուսեալ և իմաստնացեալ՝ աստուածաբանէ վասն Սրբոյ Յոգւոյն 'ի Յօրէ անմեկն անորոշմամբ աստուածեղէն ներգործութեանն:

ժբ. Ձի սիրելի է Աստուծոյ և պատուելի է առ մարդկան որ ստանայ զիմաստութիւն, հանդերձ արութեամբ արդարութեամբ և ժուժկալութեամբ:

ժգ. Աստուածահաճոյ խնդիրք Սողոմոնի, զոր և յերրորդուն թագաւորութեանցն գտցես. և թէ Յոգւովն Սրբով որ 'ի բարձանց իմաստնացան մարդիկ յԱստուծոյսն:

ժդ. Պատմութիւն աստուածավայելուչ ներգործութեան Յոգւոյն Սրբոյ՝ յԱղանայ մինչև 'ի Մովսէս, և 'ի սքանչելիսն որ յԵգիպտոս:

ժե. Ձգոյ՛ լեր յասելն վասն անտեսակ նիւթոյ. ո՛չ յինքնագոյակ նիւթոյ ասէ, այլ զկարգ առնելոյն և զարդու՝ որ յետ զնիւթն առնելոյ, և թէ ո՛չ կարողութեան չափով, այլ փրկչաբար ներմամբ տանջել Աստուած զԵգիպտոս, իբրև յիւրս խնայելով կոչէր յապաշխարութիւն:

ժզ. Թէ և ընդ Քանանացիսն նոյնօրինակ խնամօք վարեցաւ Աստուած. և խնայելովն յայտ արար թէ չի՛ք այլ Աստուած բաց 'ի նմանէ:

ժէ. Բամբասէ զանմտութիւն տարրապաշտիցն. յիշէ և վասն աշխարհակեցոյց խաչին Քրիստոսի. և անիծանէ զկուռս և զարարօղս նոցին:

ժը. Թէ ո՞րպէս եղև սկիզբն կռապաշտութեանն 'ի փառասէր բռնութենէ:

ժթ. Աստուծոյ զօրութեանն դաւանութիւն, և կշտամբութիւն կռոցն տկարութեան:

ի. Քարոզէ զԱստուծոյ զօրութիւնն՝ բաղդատելով զտանջելն զԵգիպտոս գորտամբ և մժղխով և մարախով, և հրախառն կարկտիւ, ընդ բարեգործելն զԻսրայէլ բժշկելովն 'ի թունից օձիցն, և ջամբելով մանանային:

իա. Թէ Եգիպտացիք յօրինակ հանդերձեալ խաւարին անբերելի արհաւրօք չարչարեալ զարհուրէին. և Իսրայէլ պայծառափայլ սեամբ լուսոյ 'ի գիշերի առաջնորդիր:

իբ. Ձի տղայահեղձ նենգութեանն տոյժս հատոյց Աստուած Եգիպտացւոցն, սատակմամբ անդրանկացն, և հեղձմամբ 'ի ջուրսն:

իգ. Թէ յիրաւի տանջեցաւ Եգիպտոս. զի և քան զՍողոմնացիսն

անագորոյն և երախտամոռաց գտաւ:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ*

1

Գլուխ Ա

Ա ¹Սիրեցէ՛ք զարդարութիւն՝ ոյք դատիք զերկիր: Խորհեցարո՛ւք զՏեառնէ բարութեամբ. և միամտութեամբ սրտիւ խնդրեցէ՛ք զնա*։ ²Ձի գտանի՛ այնոցիկ որ ո՛չ փորձեն զնա. և երկի՛ որոց ո՛չ թերահաւատեն ՚ի նմանէ: ³Ձի խորհո՛ւրդք թելք անջատեն յԱստուծոյ. և զօրութիւն փորձ՝ յանդիմանէ՛ զանզգամս: ⁴Ձի յանձն չարարուեստ՝ իմաստութիւն ո՛չ մտցէ, և ո՛չ բնակէ ՚ի մարմնի վարեցելո՛յ մեղօք*։ ⁵Ձի Սուրբ Յոգին իմաստութեան փախիցէ՛ ՚ի նենգութենէ. և մերժեսցի ՚ի խորհրդոց անմտաց, և յանդիմանեսցէ՛ ՚ի հասանել ՚ի վերայ անիրաւութեանց*։ ⁶Ձի մարդասէր Յոգին իմաստութեան՝ ո՛չ արդարացուցանէ զհայիոյիչն ՚ի շրթանց իւրոց. զի երիկամանց նորա է վկայ Աստուած, և սրտի նորա ոստիկան ճշմարիտ. և լեզուի նորա ունկնդիր*։ ⁷Ձի Յոգի Տեառն էլից զտիեզերս, և որ ունի զամենայն՝ ունի՛ զգիտութիւն բարբառոյ: ⁸Վասն այնորիկ՝ և որ շըշնջեն զանիրաւս ո՛չ ծածկեսցի. և ո՛չ իրաւունք առ նովաւ առանց կշտամբութեան անցցեն*։ ⁹Ձի խորհրդոց անպարշտաց՝ հարց և փորձ եղիցի. և բանի՛ց նոցա լուր՝ առ Տէր հասցէ ՚ի կշտամբութիւն անօրէնութեանց նոցա*։ ¹⁰Ձի ունկն նախանձաւորութեան լսէ՛ զամենայն. և շըշնջիւն քրթմնջանաց՝ ո՛չ ծածկեսցի*։ ¹¹Այսուհետև զգո՛յշ լերուք յանօգուտ քրթմնջանէ. և ՚ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզու. զի շըշունջ գաղտնի՝ դատարկ ո՛չ անցցէ, և բերան ստախօս՝ սպանանէ զանձն*։

Բ ¹²Մի՛ ցանկայք մահու մոլորութեամբ կենաց ձերոց. և մի՛ ձգէք յանձինս զսատակունն գործովք ձեռաց ձերոց*։ ¹³Ձի Աստուած զմահ ո՛չ արար, և ո՛չ խնդայ ընդ կորուստ կենդանեաց: ¹⁴Քանզի հաստատեաց ՚ի լինել զամենայն. և ՚ի փրկութիւն են գործք աշխարհի: Չի՛ք ՚ի նոսա դեղ սատակման. և ո՛չ թագաւորութիւն դժոխսոց ՚ի վերայ երկրի*։ ¹⁵Ձի արդարութիւն՝ անմահ է*։ ¹⁶Իսկ

* Ամենայն գրչագիր օրինակք համաձայն մերումս ունին զվերնագիրս, բաց ՚ի միոյն որ յաւելու. Իմաստութիւն Սողովմոնի արքայի Յրէաստանի: Ուր Ոսկան լոկ դնէ. Գիրք իմաստութեան:

* Ոմանք. Եւ միամտութեամբ սրտի:

* Ոմանք. Իմաստութիւն ոչ մտանէ: Օրինակ մի. ՚ի մարմնի վարելոյ մեղօք:

* Ոմանք. Եւ հեռացի ՚ի խորհրդոց անմտ*:

* Ոմանք. Ձհայիոյիչս շրթանց իւրեանց... նորա վկայէ Աստուած, և սր*:

* Ոմանք. Առ նովաւ առանց բժշկութեան անկցին:

* Ոմանք. Ամբարշտաց հարցափորձ լիցի... առ Աստուած հասցէ. զի կշտամբութիւն անօրէնութեանց նոցա է:

* Ոմանք. Ոչ ծածկի:

* Ոմանք. Յանօգուտ քրթմնջեն... զի շըշիւն գաղտնի... զանձն իւր:

* Օրինակ մի. Յանձինս ձեր զսա*:

* Ոմանք. Դժոխսոց ՚ի ներքոյ երկնի:

* Ոսկան յաւելու. Ձի արդարութիւն մշտնջենաւոր և անմահ է:

ամպարիչտը ձեռք և բանիւք կոչեցին զնա առ իւրեանս. բարեկամ համարեցան զնա, և հալեցան, և դաշինս կռեցին ընդ նմա. զի արժանի՝ իսկ են բաժանակից նմա լինելոյ*:

2

Գլուխ Բ

¹Խորհեցան յանձինս իւրեանց զանուղղայս և ասեն. Սակաւ և ցաւագին են կեանք մեր, և ոչ գոյ բժշկութիւն ՚ի վախճանի մարդոյ. և չերևեցաւ որ դարձաւ ՚ի դժոխոց*:²Ձի յանկարծակի՝ իմն եղաք. և յետ այսորիկ լինիցիմք իբրև զչեղեալք: Ձի իբրև զճուխ է շունչ յըռնգունս մեր, և իբրև զկայծակն բան ՚ի շարժման սրտի մերում*:³Յորոյ շիջանելն՝ մոխի՛ր լինի մարմինն. և ոգին սփռի իբրև զօդ թոյլ*:⁴Եւ անունս մեր մոռացի՛ ժամանակաւ. և ոչ ոք յիշատակեսցէ զգործս մեր: Անցցեն կեանք մեր իբրև զհետս ամպոյ, և իբրև զշամանդա՛ղ ցրուեսցին հալածեալք ՚ի ճառագայթից արեգական, և ՚ի տապոյ նորա ծանրացեալք*:⁵Ձի անցք ստուերի՛ են կեանք մեր, և չի՛ք խափան վախճանի մարդկան, զի կնքեցաւ և ոչ ոք դարձուցանէ*:⁶Արդ եկայ՞ք և վայելեսցուք ՚ի բարութիւնս որ կանս. և վարեսցուք արարածովքս զբաղեալք իբրև ՚ի մանկութեան*:⁷Պէտպէ՛ս զինեօք և անոյշ իւղովք լցցուք. մի՛ անցցէ առ մեւք ծաղիկ զարմայնոյ: ⁸Բոլորիւք վարդից պսակեսցուք՝ մինչչև՝ թառամեալ իցեն*:⁹Մի՛ որ ամենևին լիցի անմասն ՚ի մեծամեծար ուրախութենէս մերմէ. յամենայն տեղիս թողցուք զնշանակ ուրախութեան. զի այն է բաժին մեր, և սոյն վիճակ*:¹⁰Բռնադատեսցուք զտնանկն անիրաւութեամբ. մի՛ խնայեսցուք յայրին. մի՛ խորչեսցուք ՚ի բազմանակեայ ալեաց ծերոյն*:¹¹Եւ օրէնս արդարութեան բռնութիւն մեր եղիցի. զի տկարութիւն անպիտան յանդիմանի*:¹²Դարանակալ լիցուք արդարոյն զի դժպիի եղև մեզ. և հակառակ կայ գործոց մերոց. և նախատինս դէմ մեզ զյանցանս օրինացն. և բամբասէ զմեղօք մանկութեան մերոյ*:¹³Խոստանայ ունել զգիտութիւն Աստուծոյ, և որդի Տեառն զանձն իւր անուանէ*:¹⁴Եղև ՚ի յանդիմանութիւն մտաց մերոց*:¹⁵Ծանր է մեզ և տեսանելն

* *Ոմանք.* Բաժանակից լինելոյ նմա:

* *Ոմանք.* Եւ ոչ գոյր բժշ... և ոչ երևեցաւ:

* *Ոմանք.* Իմն եղեաք, և յետ այնորիկ... իբրև զչեղեալս... ՚ի յռունկունս... բանն ՚ի շարժումն սրտից մերոց:

* *Ոմանք.* Յորոյ ՚ի շիջանելն... մարմինն. և որպէս հուրն մոխիր լինի. և ոգին: *Ուր օրինակ մի.* Յորոյ իջանելն:

* *Օրինակ մի.* Հալեալ ՚ի ճառագ՛:

* *Ոմանք.* Վախճանի մարդոյ... և ոչ ոք է որ դարձուցէ:

* *Ոմանք.* Ի բարութիւնս որ կան... զբաղեալ իբրև ՚ի մանկութիւն:

* *Ոմանք.* Բոլորիւք վարդիւք պս՛:

* *Ոմանք.* Անմասն լիցի ՚ի մեծ ու՛. *կամ*՝ ՚ի մեծամեծ ուրա՛... և սոյն վիճակ մեր:

* *Ոմանք.* Եւ բռնադատեսցուք զանաւագն. *կամ*՝ զաղքատն անիրա՛... և մի՛ խնայեսցուք ՚ի բազմաժամանակեայ ալեաց ծերոցն:

* *Ոմանք.* Եւ օրինադրութիւն բռնութիւնս մեր:

* *Ոմանք.* Եւ հակառակ եկաց գոր՛... և բամբասէ զմեզ մեղօք ման՛:

* *Ոմանք.* Եւ որդի Աստուծոյ զանձն:

* *Ոմանք.* Եւ եղև յանդիմա՛:

զնա. զի աննման են այլոց կեանք նորա՝ և այլազգի շաւիղք նորա*։ ¹⁶Ի գարշութիւն համարեցաք նմա. և խորշի՛ ՚ի ճանապարհաց մերոց՝ իբրև ՚ի պղծութեանց. երանէ՛ զվախճան արդարոց. և հպարտացեալ՝ կոչէ Յայր զԱստուած*։ ¹⁷Տեսցուք թէ ճշմարի՞տ իցեն բանք նորա. և փորձեսցուք զվախճան նորա։ ¹⁸Եթէ իցէ արդարև՝ որդի Աստուծոյ՝ պաշտպանեսցէ՛ նմա. և փրկեսցէ զնա Աստուած ՚ի ձեռաց հակառակորդաց*։ ¹⁹Թշնամանօք և զանիւք խոշտանգեսցուք զնա։ Եթէ լինիցի՞ այցելութիւն նմա. զի զչափ առցուք զհեզութեան նորա, և խելամուտ լիցուք անոխակալութեան նորա*։ ²⁰Մահո՛ւ խայտառակութեան դատեսցուք զնա. եթէ լինիցի՞ այցելութիւն նմա ՚ի բանից իւրոց*։

Գ ²¹Չայս խորհեցան և խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւնն իւրեանց. ²²և ո՛չ ծանեան զխորհուրդս Աստուծոյ, և ո՛չ վարձուց ակնկալան սրբութեան. և ո՛չ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից։ ²³Ձի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան, և ՚ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա*։ ²⁴Նախանձու բանսարկուին ենուտ մահ յաշխարհ*։ ²⁵և փորձեն զնա որ նորա՛ վիճակին սակի՛ են։

3

Գլուխ Գ

¹Բայց ոգիք արդարոց ՚ի ձեռնն Աստուծոյ են, և ո՛չ մերձեսցի ՚ի նոսա մահ։ ²Թուեցան յաչս անզգամաց թէ մեռան, և համարեցան չարչարանք ելք նոցա*։ ³և գնալն ՚ի մէջ բեկունն. բայց նոքա են ՚ի խաղաղութեան։ ⁴Ձի թեպէտ և յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի՛ է անմահութեամբ*։ ⁵Եւ սակաւիկ ինչ խրատեալք և տրտմեալք, գտցեն զմեծ բարութիւն. զի Աստուած փորձեաց զնոսա, և եզիտ զնոսա իւր արժանիս*։ ⁶Իբրև զոսկի ՚ի բովս քննեաց զնոսա, և իբրև զողջակէ՛զ զոհի ընկալաւ զնոսա։ Ի ժամանակի այցելութեան իւրեանց* ⁷պայծառասցին, և իբրև կայծակն ընդ եղէգն ընթասցին*։ ⁸Դատեսցին զազգս՝ և ընկալցին զժողովուրդս. և թագաւորեսցէ՛ նոցա Տէր յաւիտեան*։ ⁹Յուսացեալք ՚ի նա՝ իմասցին զճշմարտութիւն. և հաւատարիմք՝ սիրով ակնկալցին նմա. զի շնորհք և ողորմութիւն ՚ի վերայ սրբոց նորա, և այցելութիւն ՚ի վերայ ընտրելոց նորա։ ¹⁰Իսկ անպարիշտք ըստ խորհրդոց իւրեանց ընկալցին զպատիժս. որ

* *Ոմանք.* Ձի աննմանի են այլոց։

* *Ոմանք.* Որպէս ՚ի պղծութեանց... երանէ զվախճան մարդոյ... Յայր կոչէ զԱստուած։

* *Ոմանք.* Եթէ իցէ արդարև որդի Աստուծոյ։

* *Ի բազումս պակասի.* Ձնա, *եթէ լինիցի այցելութիւն նմա.* զի զչափ։ *Ոմանք.* Եւ խելամուտ լիցուք անսխալութեան նորա։

* *Ոմանք.* Այցելութիւն նորա ՚ի բանից իւրոց։

* *Ոմանք.* Ձմարդն յանեղծութիւն. *կամ՝* յանմեղծութիւն, և ՚ի։

* *Ոմանք.* Յաշխարհս. (25) զի փորձեն զնա որ նորին։

* *Ոմանք.* Յաչս մարդկան թէ մե՛։

* *Ի լուս՝.* Յաչս մարդկան տանջեսցին. *համաձայն ոմանց ՚ի բն՝։*

* *Ոմանք.* Խրատեալ, գտցեն մեծ բարերարութիւն։

* *Ոմանք.* Եւ որպէս զողջակէզս զո՞... և ՚ի ժամանակի այ՞։

* *Ոմանք.* Ընդ եղէգն ընթանայցեն։

* *Այլք.* Եւ կալցին զժողովուրդս։

անփոյթ արարին զիրաւանց, և եղեն ապստանքք ՚ի Տեառնէ: ¹¹Ձի որ զհմաստութիւն և զխրատ անարգէ՝ թշուառական է, և ընդունայն է յոյս նոցա. և վաստակք նոցա անօգուտք, և անպիտան գործք նոցա. ¹²կանայք նոցա անմիտք, և չարաբար մանկունք նոցա. ¹³և անիծեալ ծնունդք նոցա:

Դ Ձի երանեալ է ամուլն անարատ՝ որ ո՛չ գիտաց զանկողինս յանցանաց. ընկալցի՝ պտուղ յայցելութեան ոգւոց՝: ¹⁴Եւ ներքինի՝ որ ո՛չ գործեաց ձեռօք զանօրէնութիւն, և ո՛չ խորհեցաւ զՏեառնէ չարութիւն. տացի նմա շնորի ընտիր ըստ հաւատոցն, և վիճակ ցանկալի ՚ի տաճարի Տեառն: ¹⁵Ձի ընդ վաստակոց բարեաց պտուղ փառաւոր է. և արմատ անսխալ յիմաստութենէ՝: ¹⁶Որդիք շնացելոց թերակատարք եղիցին. և զաւակ անօրէն անկողնոց սատակեսցի՝: ¹⁷Եթէ երկայնակեացք եղիցին՝ յոչինչ համարեսցին, և անարգի՝ ՚ի վախճանի ծերութիւն նոցա՝: ¹⁸Եւ եթէ արագ սատակեսցին՝ ո՛չ կալցին յոյս, և ո՛չ յաւուրն յանդիմանութեան մխիթարութիւն: ¹⁹Ձի ազգի անիրաւի չարաչար կատարած՝:

4

Գլուխ Դ

¹Լաւ է անզաւակութիւն հանդերձ քաջութեամբ. քանզի անմահութիւն է յիշատակ նորա. զի և յԱստուծոյ ճանաչի՝ և ՚ի մարդկանէ՝: ²Ի հպել նորա՝ նմանօղ լինի նմա, և ՚ի մեկնել նորա՝ անձկանայ առ նա. և ՚ի յաւիտեան պսակաւորս ճենեցուցանէ. անթառամ նահատակութեանցն պատերազմի յաղթեալ՝: ³Բազմածնունդ բազմութիւն ամպարշտաց անպիտան լիցի. և ՚ի փուտ շառաւեղաց մի՝ տայցէ արմատս ՚ի խոր. և մի արմատ և հիմն խախտուտ հաստատեսցի՝: ⁴Ձի թեպէտ և ոստովք առ ժամանակ մի պտկեսցէ, սակայն զաղփաղփուն կանդաղեալն ՚ի հողմոյ շարժեսցի. և ՚ի բռնութենէ հողմոյ արմատաքի՝ խլեսցի՝: ⁵Բեկտեսցին շուրջ զնովաւ շառաւիղք թերակատարք, և պտուղ նոցա անպիտան տարածան ՚ի կերակուր, և յոչինչ պիտանացու՝: ⁶Ձի յանօրէն անկողնոց որդիք ծնեալք՝ վկայք են չարեաց ծնողաց իւրեանց ՚ի հարցափորձի իւրեանց՝:

* *Ոմանք.* Ձի երանելի է ամուլն... պտուղ այցելութեան:

* *Ոմանք.* Ձի ըստ վաստակոց:

* *Ոմանք.* Անօրէն ընկողնաց. *կամ՝* անկողնաց: *Ուր Ոսկան.* անկողնից:

* *Ոմանք.* Եւ եթէ երկայնակեացք լինիցին... և անարգեսցի... ծերութիւն նորա:

* *Ի լուս՝.* Ազգի անօրինի չա՞. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Յօրինակին.* Լաւ է անզաւակութիւն հանդերձ: *Ոմանք.* Ձի անմահութիւն է... զի յԱստուծոյ ճա՞:

* *Օրինակ մի.* Ի հպել նորա աննմանող լինին նմա և ՚ի մեկնել նորա անձկան առ նա... և յաւիտեան... յաղթել: *Ի լուս՝.* Անձկանայ:

* *Ոմանք.* Անպիտան լիցին... մի՛ տացի արմատս ՚ի խոր. և հիմն խախտուտ մի՛ հաստատեսցի:

* *Օրինակ մի.* Առ ժամանակ մի պտկեսցեն, սակայն զաղփաղփուն կան: Դանդաղեալն ՚ի հողմոց շար՞: *Ուր այլ օրինակ մի.* Սակայն զաղփաղփուն կանդաղ՞. և այլ. զաղփախփուն դանդաղեալն:

* *Ոմանք.* Շուրջ շառաւեղքն թերա՞:

* *Ոմանք.* Ձի անօրէն ընկողնաց ծնեալ որդիք:

Ե 7Իսկ արդարն՝ եթէ հասցէ՝ ՚ի վախճանել՝ ՚ի հանգստեան՝ եղիցի*։ 8Ձի ծերութիւն պատուական՝ ո՛չ բազմաժամանակեայն է, և ո՛չ որ թուով ամացն չափիցի. այլ ալիք՝ իմաստութիւն մարդոյ են*։ 9և հասակ ծերութեան կեանք անարատք։ 10Ձի հաճոյ եղեալ Աստուծոյ սիրեցաւ, և կենդանւոյն ՚ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ։ 11Յափշտակեցաւ՝ զի մի՛ չարութիւն ինչ շրջեսցէ զիմաստութիւն նորա, կամ նենգութիւն պատրիցէ զանձն նորա*։ 12Ձի չարակնութիւն անզգամութեան շլացուցանէ զբարիս. և յածունն ցանկութեան խուճապէ միտս անմեղս*։ 13Կատարեալ ՚ի սակաւուն ելից ժամանակս երկայնս. 14զի ցանկալի՝ էր Տեառն անձն նորա. վասն այնորիկ տագնապեցաւ ՚ի միջոյ չարեաց։ Իսկ ժողովուրդք տեսին՝ և ո՛չ իմացան. և ո՛չ եղին ՚ի մտի այսպիսի ինչ*։ 15Եթէ իրաւունք Աստուծոյ ՚ի վերայ սրբոց իւրոց, և այցելութիւն ՚ի վերայ ընտրելոց նորա։ 16Դատապարտէ՛ արդար հանգուցեալ զամպարիշտս կենդանիս, և մանկութիւն վաղվաղակի վախճանեալ՝ զբազմամեայ ծերութիւն անիրաւի։ 17Ձի տեսցեն զվախճան իմաստնոյ, և ո՛չ իմացին՝ զինչ խորհեցաւ վասն նորա. և առ իմե՞ զգուշացաւ նմա Տէր*։ 18Տեսցեն և անգոսնեսցեն զնա. այլ զնոքօք Տէր ծիծաղեսցի։ 19Եւ եղիցին յետ այնորիկ ՚ի կործանումն անարգութեան և ՚ի թշնամանս՝ ընդ մեռեալսն յաւիտենից։ Ձի պայթուցէ զնոսա անշշունչս ուռուցեալս. և շարժեսցէ զնոսա ՚ի հիմանց. և մինչև ՚ի սպառ խոպանասցին, և եղիցին ՚ի ցաւս. և յիշատակ նոցա կորիցէ*։ 20Յասցեն ՚ի մթերս մեղաց իւրեանց տագնապեալ. և կշտամբեսցեն զնոսա յանդիման անօրէնութիւնք իւրեանց*։

5

Գլուխ Ե

Ձ 1Յայնժամ կացցէ արդարն բազում համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց։ Եւ որոց անգոսնէին զվաստակս նորա*, 2տեսեալ զնա՝ խռովեսցին անհնարին երկիւղիւ. և զարհուրեսցին ՚ի վերայ սքանչելի փրկութեան նորա։ 3Եւ զղջասցին ՚ի միտս իւրեանց. և առ նեղութեան անձանց յոգոց հանցեն և ասասցեն. Այս այն այր է զոր երբեմն մեք ծաղր առնէաք, և յառակս նախատանաց*։ 4Մեք անմիտք զվարս դորա մոլորութիւն համարէաք՝ և զվախճան դորա անարգութիւն։ 5Ձիա՞րդ համարեցաւ ընդ որդիս Աստուծոյ, և ընդ սուրբս վիճակ դորա։ 6Ուրեմն մոլորեցաք ՚ի ճանապարհէ ճշմարտութեանն, և լոյսն արդարութեան ո՛չ լուսաւորեաց զմեզ, և արեգակն արդարութեան ո՛չ

* Ոմանք. ՚ի հանգստեան լիցի։

* Ոմանք. Իմաստութիւն մարդոյն են։

* Ոմանք. Շրջիցէ զիմաստութիւն իւր։

* Ոմանք. Ձի չարութիւն անզգամութեան... և յածութիւն ցանկութեան։

* Ոմանք. Ձի ցանկալի է Տեառն... ՚ի մտի այնպիսի ինչ։

* Ոմանք. Ձվախճան իմաստնոց։ *Օրինակ մի*. Եւ առ ՚ի մեզ զգուշացաւ Տէր։

* Ոմանք. Եւ եղիցին յետ այսորիկ։ *Ոսկան*. Եւ մեռեալս յաւիտենից։ *Յօրինակին ՚ի բնաբանի*. Անշ ունչս, գրեալ, ՚ի լուս՝. *Նշանակի ՚ի մէջ բերել շ. և առնել անշշունչս. կամ՝ անշշունչս. համաձայն այլոց։*

* Ոմանք. Մեղաց իւրեանց տուգանեալք։

* Ոսկան. Բազմաւ համարձակութեամբ։

* Ոմանք. Յանիցեն յոգւոց և ասասցեն։

ծագեաց ՚ի սիրտս մեր*։ ⁷Անօրէնութեան և կորստեան շաւղօք լցաք. և գնացաք ընդ անկոխ անապատ, և զճանապարհս Տեառն ո՛չ ծանեաք*։ ⁸Ձի՞նչ շահ եղև մեզ հպարտութիւնն, և զի՞նչ մեծութիւն ամբարտաւանութեանն իցէ մեզ նպաստաւոր։ ⁹Ա՛նց այն ամենայն իբրև զստուեր. և իբրև զհամբաւ առն ընթացեալ. ¹⁰և իբրև զնաւ սահեալ ՚ի ջուրց կուտակելոց. զորոյ իբրև անցանիցէ ո՛չ գոյ զհետսն գտանել. և ո՛չ զշաւիղս գնացից նորա ՚ի մէջ ալեաց*։ ¹¹Կամ իբրև զհաւու թռուցելոյ յօդս, որոյ ո՛չ գտանին նշմարանք գնացից. բաղխելով մագլացն պատառեալ զհողմն թեթև և հերձեալ բռնութեամբ ընդ ոլորտս մտանէ. յածել թևոցն յառաջադէմ սլանայ. և յետ այնորիկ ո՛չ գտանի նշանակ ամբառնալոյն ՚ի նմա*։ ¹²Կամ իբրև ՚ի նետէ ձգելոյ ՚ի նպատակ՝ կտրեալ օդն վաղվաղակի յի՛նքն կարկատեցաւ առ ՚ի չգիտելոյ զանցս նորա*։ ¹³Նոյնպէս և մեք եղեալք՝ պակասեցա՛ք. և առաքինութեան նշանակ ո՛չ կարացաք ցուցանել. բայց ՚ի չարիս մեր մաշեցաք*։ ¹⁵Ձի յոյս ամպարշտի իբրև զփոշի յարուցեալ ՚ի հողմոյ. և իբրև զսարդիոստայն և զեղեամն ՚ի մրրկէ հալեալ մանրի. և իբրև զծովս մաշեալ ՚ի հողմոյ. կամ իբրև զյիշատակ իջաւորի միոյ աւուր գնացելոյ*։

Է ¹⁶Բայց արդարք յաւիտեան կեցցեն. և ՚ի Տեառնէ վարձք նոցա, և խնամք նոցա ՚ի Բարձրելոյն*։ ¹⁷Վասն այնորիկ ընկալցին զարքայութեանն զվայելչութիւն, և զթագն գեղեցկութեան ՚ի ձեռանէ Տեառն. զի աջով իւրով հովանի՛ լիցի նոցա, և բազկաւ իւրով վերակացու լիցի նոցա*։ ¹⁸Առցէ՛ սպառազինութիւն զնախանձ իւր, և վառեսցէ զարարածս առ ՚ի խնդրելոյ զվրէժս ՚ի թշնամեաց*։ ¹⁹Ձգեցցի զրա՛հս զարդարութիւն, և դիցէ սաղաւարտ զդատաստանն անաչառ։ ²⁰Առցէ վահան զսրբութիւն անվկանդ*։ ²¹և սրեսցէ զհատու բարկութիւնն ՚ի սուսեր. և պատերազմեսցի խա՛ռն ընդ նմա և աշխարհս առ անզգամս։ ²²Գնացեն նետք կորովիք փայլատականց, և իբրև ՚ի լայնալիճ աղեղանէ յամպոցն ոստիցեն ՚ի նպատակս*։ ²³և ՚ի քարընկէց բարկութենէ թափեսցի՛ լիով կարկուտ։ Ջայրագնեսցի ՚ի վերայ նոցա ջուր ծովու, և գետք ողողեսցեն անխնայ*։ ²⁴Ի դիմի՛ հարցի նոցա հողմն բռնութեան, և իբրև զմրրիկ հոսեսցէ զնոսա։ Աւերեսցէ զամենայն երկիր անօրէնութիւն. և խարդախութիւն կործանեսցէ զաթոռս բռնաւորաց*։

* *Ոմանք.* Եւ լոյսն ողորմութեան ոչ լու՛... և արդարութեան արեգակն ոչ ծագեաց ՚ի մեզ։
 * *Ոմանք.* Եւ կորստեան շաւղօք շրջեցաք։
 * *Ոմանք.* Սահեալ ՚ի վերայ ջուրց կու՛... իբրև անցանէ։ *Յօրինակիւն.* ՚ի ջուրց կուակելոց։
 * *Ոմանք.* Պատառեաց զհողմս թե՛... ընդ ոլորտս մտեալ... ոչ գտանի նշանակ բառնալոյ նորա։
 * *Ոմանք.* Յինքն կարկատեալ։ *Ուր Ոսկան.* կտրեալ զօդն։
 * *Ոսկան յաւելու աստէն համար 14.* **Ջայսպիսիս ասացեն ՚ի դժոխս այնորիկ, ոյք մեղան։*
 * *Ոմանք.* ՚ի մրրկէ հալածեալ մանր. և *ոմանք.* իբրև զեղեամն հալածեալ ՚ի մրրկէ... մածեալ. *կամ՝* մաղեալ ՚ի հողմոյ... իջաւորի միոյ գնացելոյ։
 * *Ոմանք.* Յաւիտեան կացցեն։ *Ուր Ոսկան.* Եւ ՚ի Տեառնէ է վարձք։
 * *Ոմանք.* Վասն այսորիկ ընկ՛... վերակացու եղիցի։
 * *Ոմանք.* Ջարարածս իւր առ ՚ի խնդ՛։
 * *Ի լուս՛.* Ջսրբութիւն անվտանգ. *համաձայն ոմանց ՚ի բն՛:*
 * *Ոմանք.* ՚ի փայլատականց որպէս ՚ի լայնալիճ աղեղանէ ոստի՛։
 * *Բազումք.* Ողողեսցեն յանխնայ։
 * *Ոմանք.* Կործանէ զաթոռս բռնաւորացս։

Գլուխ Զ*

Ը ²Լուսարո՛ւք թագաւորք, և ՚ի մի՛տ առէք. ուսարո՛ւք դատաւորք ծագաց երկրի: ³Ո՛ւնկն դիք որ ունիք զբազմութիւն, և պերճացեալ էք ՚ի վերայ ամբոխից ազգաց: ⁴Զի ՚ի Տեառնէ՛ տուաւ ձեզ հարստութիւնդ, և իշխանութիւնդ ՚ի Բարձրելոյն. որ պահանջեսցէ զգործս ձեր, և քննեսցէ զխորհուրդս՝: ⁵Զի սպասաւորք էք նորա թագաւորութեանն, և ո՛չ դատիք ուղղութեամբ. և ո՛չ պահեցէք զօրէնս նորա, և ո՛չ գնացէք ըստ կամացն Աստուծոյ՝. ⁶ահի՛ւ և տագնապաւ հասցէ ՚ի վերայ ձեր: Զի դատաստան անաչառ իշխանաց լինի՝. ⁷այլ ռամիկն ներելի ողորմութեան է: Դժո՛րք հզօրագոյնս պահանջեսցին՝. ⁸զի ո՛չ առնու ակն ամենեցունց Տէրն, և ո՛չ խորշի ՚ի մեծութենէ. զի զփոքր և զմեծ ինքն արար. և զմի՛ օրինակ խնամ ունի ամենեցուն՝. ⁹բայց ՚ի վերայ զօրաւորաց՝ զօրաւոր քննութիւն հասանէ՛:

Թ ¹⁰Արդ առ ձե՛զ ո՛վ բռունք են բանք իմ. զի ուսանիցիք զիմաստութիւն, և մի՛ սխալիցիք՝: ¹¹Զի որք պահեցին սրբութեամբ զսրբութիւն՝ սրբեսցին. և որք ուսան զնոսա՝ գտցեն պատասխանատրութիւն՝: ¹²Արդ ցանկացարո՛ւք բանից իմոց. փափաքեցարո՛ւք՝ և խրատեսցի՛ք՝: ¹³Լուսաւոր և անթառան է իմաստութիւն, և դիւրա՛ւ երկի սիրողաց իւրոց, և գտանի խնդրողաց իւրոց: ¹⁴Չասանէ առ ցանկացօղս իւր, առ յառաջագոյն ճանաչելոյ՝: ¹⁵Որ կանխեսցաւ առ նա՝ ո՛չ վաստակեսցի. զի դեգերեալ գտցէ զնա առ դրունս իւր՝: ¹⁶Քանզի և զմտա՛ւ ածել զնմանէ՛ կատարեալ իմաստութիւն է. և որ տքնի վասն նորա՝ վաղվաղակի անհո՛գ լիցի: ¹⁷Զի ինքնին շրջի խնդրել զարժանաւորս իւր. և ՚ի շաւիղս երկի նոցա քաղցրութեամբ, և յամենայն հնարագիտութիւնս պատահէ նոցա՝: ¹⁸Զի սկիզբն նորա ճշմարիտ ցանկութիւն խրատու է՝. ¹⁹և խնամ խրատու՝ սէ՛ր. և պահպանութիւն օրինաց նորա՝ զուրթ. մտադիւրութիւն օրինաց՝ հաստատութիւն անեղծութեան՝: ²⁰Իսկ անեղծութիւն՝ մերձաւոր լինել առնէ

** Երկու օրինակք և եթ համաձայնք իրերաց յաւելուն համար 1. *Լաւ է իմաստութիւն քան զգօրութիւն, և այր հանճարեղ քան զհզօր: Զոր Ոսկան առեալ ՚ի Լատինականէն այսպէս զօրէ թարգմանել. *Բարեգոյն է իմաստութիւն քան զարս. և այր հանճարեղ քան զօրաւոր:*

** Ոմանք. Որ պահանջիցի... և քննիցէ:*

** Ոմանք. Զի սպասաւորէք նորա թագաւորութեանն, և ոչ վարիք ուղղութեամբ. և զի ոչ պահեցէք:*

** Ոմանք. Ահ և տագնապ հասցէ:*

** Ոմանք. Այլ խառնիճաղանջն ներելի ողորմութեամբ. զի հզօրք հզօ՛:*

** Ոմանք. Զի ոչ ակն առնու ամե՛... և զմիօրինակ խնամ տանի ամենեցուն:*

** Ոմանք. Զօրագոյն քննութիւն հա՛:*

** Ոմանք. Ո՛վ բռնաւորք են բանք իմ. զի ուսանիցիք:*

** Ոմանք. Զպատասխանատրութիւն. կամ՝ զպատասխանատրութիւնս:*

** Ոմանք. Փափազեցէք և խրատես՝:*

** Ոմանք. Եւ հասանէ... առ ՚ի յառաջագոյն:*

** Ոմանք. Ոչ վաստակեսցէ... առ դուրս իւր:*

** Ոմանք. Զի ինքն շրջի խնդ՛... երկի նմա քաղց՛:*

** Ոմանք. Զի սկիզբն նոցա ճշմարիտ ցանկութիւն է խրատու աշխարհի:*

** Ոմանք. Օրինաց նորա՝ հաս՛:*

Աստուծոյ* .²¹ և ցանկութիւն իմաստութեան՝ տանի յարքայութիւն* :²² Արդ եթէ ցանկայք աթոռոց և գաւազանաց իշխանութեան՝ բռունք ժողովրդոց՝ պատուեցէք զիմաստութիւն, զի յաւիտեան թագաւորիցէք* :

Ժ²⁴ Իսկ եթէ զի՞նչ է իմաստութիւն, և ո՞րպէս եղև՝ պատմեցից, և ո՛չ թաքուցից՝ ՚ի ձեռք զխորհուրդս. այլ իսկզբանէ՝ արարածոց քննեցից, և ածից յայտ զգիտութիւն նորա: Եւ ո՛չ ստերիւրեցայց ՚ի ճշմարտութենէն* .²⁵ և ո՛չ նախանձով մաշեալ զնացից ընդ նմա. զի այն՝ ո՛չ հաղորդի ընդ իմաստութեան* :
²⁶ Բազմութիւն իմաստնոց՝ փրկութիւն աշխարհաց. և թագաւոր հանճարեղ՝ հաստատութիւն ժողովրդոց* :²⁷ Այսուհետև խրատեցարուք բանիւք ինովք՝ և օգտեցարուք:

7

Գլուխ Է

¹ Ե՛մ ե՛մ և ես մարդ մահկանացու հանգոյն ամենեցուն. և ծնունդ հողածնի նախաստեղծին: Եւ յորովայնի մօր նկարեցայ մարմին*,² և տասնամսեայ ժամանակաւ՝ մածեալ արեամբ ՚ի սերմանէ առն և ՚ի ցանկութենէ քնոյ ՚ի վերայ հասելոյ: ³ Եւ ես եղեալ՝ զհասարակաց օդն ձգեցի յիս. և ՚ի նոյն ՚ի նմանավիշտ յերկիր անկայ: Զառաջին բարբառն զնմանն ամենեցուն նոյնգունակ լացեալ*,⁴ ՚ի խանձարուրս սնայ և ՚ի հոգս*: ⁵ Ո՛չ ոք ՚ի թագաւորաց այլազգ ինչ սկիզբն կալաւ լինելոյ*: ⁶ Մի՛ մուտ է ամենեցուն յաշխարհ՝ և մի՛ ել հասարակաց: ⁷ Վասն այնորիկ խնդրեցի աղօթիւք, և տուաւ ինձ հանճար. կոչեցի՝ և ելն ինձ հոգի իմաստութեան* :⁸ Եւ նախամեծար ընտրեցի զնա քան զիշխանութիւնս և զաթոռս: Եւ զմեծութիւն ոչինչ համարեցայ առ նորա՝ համեմատութեամբ* :⁹ Ո՛չ նմանեցուցի նմա զականս պատուականս. զի ամենայն ոսկի առ նովաւ՝ իբրև սակաւ մի՛ աւազ, և իբրև զկաւ՝ համարեցի արծաթ առաջի նորա* :¹⁰ Քան զառողջութիւն և զգեղեցկութիւն՝ սիրեցի՝ զնա, և ընտրեցի զնա նախ փոխանակ լուսոյ ունել. զի անքուն է լոյսն որ ՚ի նմանէ է* :¹¹ Եւ եկին ինձ բարութիւնք միանգամայն ընդ նմա, և անթիւ մեծութիւնք ՚ի ձեռնն նորա* :
¹² Ուրախ եղէ ընդ ամենեսին որոց առաջնորդէր իմաստութիւն. բայց գիտէի ո՛չ

* Ոմանք. Մերձաւոր առնէ Աստուծոյ:

* Ոմանք. Տանի յարքայութիւնն:

* Ոմանք. Բռունք ժողովրդեան: Աստանօր Ոսկան ՚ի ներքս մուծանէ համար 23.

* Սիրեցէք զայս իմաստութեան ամենեքեան. ոյք առաջնորդէք ժողովրդոց:

* Ոմանք. Արարածոց պատմեցից և ածից ՚ի յայտ զգի՞... ՚ի ճշմարտութենէ նորա:

* Ոմանք. Ոչ հաղորդ լինի ընդ ի՞:

* Ոմանք. Փրկութիւն աշխարհի:

* Ոմանք. Հողածին նախաստեղծին:

* Ոմանք. Յիս ձգեցի և ՚ի նոյն նմանավիշտ յերկիրս ան՞... զնոյն գունակ:

* Ոմանք. Ի խանձարուրս ծնայ:

* Ոմանք. Եւ ոչ ոք ՚ի թագաւորաց այլազգ սկիզբն:

* Ոմանք. Խնդրեցի աղօթիւք ՚ի Տեառնէ:

* Ոմանք. Ոչինչ համարեցայ առ նորա նմանութեամբ:

* Ոմանք. Որպէս սակաւ մի աւազ. և որպէս:

* Ոսկան. Լոյսն որ ՚ի նմայն է:

* Ոսկան. Մեծութիւն ՚ի ձեռն նորա:

զնա՝ թէ ծնունդ իցէ սոցա: ¹³Առանց նենգութեան ուսայ, և առանց նախանձո՛ւ բաշխեցից. զմեծութիւն նորա ո՛չ թաքուցից, ¹⁴զի անպակաս գանձ է նա մարդկան: Որով որք վարեցան՝ առ Աստուած առաքեցին զբարեկամութիւն, վասն առ ՚ի խրատուէ պարգևացն ընծայեալք: ¹⁵Բայց ինձ տացէ՛ Աստուած ասել ըստ միտս, և խորհել արժանաւոր ըստ բանից ասացելոց. զի նա՛ իսկ և իմաստութեան առաջնորդ է, և իմաստնոց ուղղիչ՝: ¹⁶Ձի ՚ի ձեռի՛ն նորա եմք, և մե՛ք՝ և բանք մեր, և ամենայն հանճար՝ և գործոց խելամտութիւն: ¹⁷Ձի նա՛ ետ ինձ զանվրէպ գիտութիւն զեղելոցս, գիտել զհաստատութիւն աշխարհի, և զազդեցութիւն բնութեանց. ¹⁸զսկիզբն և զկատարած և զմէջ ժամանակաց. զշրջանաց փոփոխումն, և զշրջել ժամանակաց՝: ¹⁹Ձտարեաց բոլորմունս, և զաստեղաց դիրս՝. ²⁰զբարս անասնոց, և զգազանութիւն գազանաց. զհողմոց բռնութիւնս, և զխօսս մարդկան. զայլակերպութիւնս տնկոց, և զգօրութիւնս արմատոց՝. ²¹որ ինչ ծածուկ՝ և որ ինչ յայտնի՝ գիտացի:

ԺԱ Ձի ամենեցունց ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն՝: ²²Ձի գո՛յ ՚ի նմա հոգի մտաւոր, սուրբ, միածին, բազմաբաշխ, նուրբ, դիւրաշարժ, պարզ, անարատ, յայտնի, անվրէպ, բարեսէր, երագ, անարգել, բարերար՝, ²³մարդասէր, հաստատուն, զգուշաւոր, անհոգ, ամենագօր, ամենահայեաց, և ամենայն իրաց բաւական. մտաւորաց, սրբոց, նրբից: ²⁴Քան զամենայն շարժունս շարժնագոյն է իմաստութիւն. դարմանէ և ընդմտանէ ընդ ամենայն վասն յստակութեան՝: ²⁵Քանզի ճաճանչ է Աստուծոյ գօրութեանն, և ծագումն ճշմարիտ փառաց Ամենակալին. վասն այնորիկ և ո՛չ մի ինչ պղծեալ խառնի ՚ի նա: ²⁶Քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն, և հայելի անարատ Աստուծոյ ազդեցութեանն. և պատկեր առատութեան նորա՝: ²⁷Մի՛ է՝ և ամենայնի կարօղ. կայ յինքեան՝ և զամենայն նորոգէ. և ըստ ազգաց յոգիս սուրբս փոփոխի. բարեկամս Աստուծոյ և մարգարես յարդարէ՝:

ԺԲ ²⁸Ո՛չ զոք սիրէ Աստուած՝ բայց զայն որ ընդ իմաստութեան բնակիցէ՝: ²⁹Ձի գեղեցկագոյն է նա քան զարեգակն, և քան զամենայն դիրս աստեղաց. ընդ լուսոյ համեմատեալ՝ առաւել գտանի. ³⁰զի զնա գիշեր փոխանակէ, բայց իմաստութեանն ո՛չ յաղթէ չարութիւն՝:

8

Գլուխ Ը

¹Ձգտի ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս օգտակար առողջութեամբ, և դարմանէ՛

* *Ոմանք.* Իմաստութեանն առաջնորդէ:

* *Բազումք.* Ձշրջանաց փոփոխումնս:

* *Ոմանք.* Ձտարերաց բոլորմունս:

* *՚ի լուս՝.* Եւ զխորհուրդս մարդկան. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

* *Ոմանք.* Որ ինչ ՚ի ծածուկ: *Ուր Ոսկան.* Ձոր ինչ ծածուկ, և զոր ինչ:

* *Ոմանք.* Արագ. անարգել:

* *Ոմանք.* Քան զամենայն շարժումն շարժագոյն է իմ՝:

* *Ոմանք.* Եւ պատկեր բարերարութեան նորա:

* *Ոմանք.* Եւ յամենայնի կարող... և զամենեսեան նորոգէ... Յոգիս Սուրբ փոփոխի... և մարգարես առնէ:

* *Ոմանք.* Որ ընդ իմաստութեամբն կեցցէ:

* *Ոմանք.* Քանզի զայն գիշեր փոխանակէ:

զամենայն քաղցրութեամբ*։ ²Չնա՛ սիրեցի և քննեցի՝ ՚ի մանկութենէ իմմէ, և խնդրեցի ածել ինձ հարսնութեան. և եղէ ցանկացող գեղոյ նորա։ ³Չազնուականութիւն փառաւորէ. զի կենաց հաղորդութիւն ունի ընդ Աստուծոյ, և ամենեցունց Տէրն սիրեաց զնա*։ ⁴Չի խորհրդակից է Աստուծոյ իմաստութեանն, և ցանկացող գեղոյ նորա*։ ⁵Եթէ մեծութիւն ցանկալի է ՚ի կենաց ստացուածս, իսկ զի՞նչ իցէ մեծագոյն քան զիմաստութիւն՝ որ զամենայն առնէ*։ ⁶Եթէ հանճար գործիցէ՝ ինչ՞ ո՞ քան զնա յեղելոցս իցէ առաւել ճարտարապետ։ ⁷Եթէ զարդարութիւն ոք սիրէ, վաստակք նորա առաքինութիւնք են. զի զգիտութիւն և զհանճար ուսուցանէ, և զարդարութիւն, և զարուքիւն. քան զորս պիտանագոյն ինչ՞ չիք ՚ի կեանս մարդկան*։ ⁸Իսկ եթէ բազմահմուտ ոք լինել ցանկանայցէ՝ գիտէ՛ զառաջինն և զհանդերձեալսն նկատել. ճանաչէ զդարձուածս բանից՝ և զմեկնութիւնս առակաց. զնշանս և զարուեստս յառաջագոյն գիտէ, և զելս ժամուց և ժամանակաց։ ⁹Արդ եղի ՚ի մտի՝ զնա՛ ածել ինձ կենաց կցորդ, ծանուցեալ՝ թէ է՛ ինձ խորհրդակից բարեաց, և մխիթարիչ հոգւոց և տրտմութեան*։ ¹⁰Կալայց վասն նորա փառս ՚ի մէջ ժողովրդոց, և պատիւ առաջի ծերոց*։ ¹¹Մանուկ սուր գտայց՝ ՚ի դատաստանի, և յաչս հզօրաց փառաւորեցայց։ ¹²Ի լռել իմում անասցեն ինձ, և ՚ի բարբառել՝ ո՛ւշ եղեալ հայեսցին յիս. և ՚ի խօսել իմում՝ առաւել ափիբերան լինիցին։ ¹³Կալայց վասն նորա անմահութիւն, և յիշատակ յաւիտենական այնոցիկ զոր յետ իմ թողուցում*։ ¹⁴Դարմանեցի՛ց զժողովուրդս՝ և ազգք հնազանդեսցի՛ն ինձ*։ ¹⁵Սարսեցեն յինէն՝ իբրև լուիցեն բռունք սոսկալիք. ՚ի մէջ բազմութեան երևեցայց առա՛տ, և ՚ի մէջ պատերազմի առաքինի*։ ¹⁶Ստեալ ՚ի տուն իմ հանգեայց նովաւ. զի ո՛չ ունի դառնութիւն տնակցութիւն նորա, և ո՛չ ցաւս հաղորդութիւն կենաց նորա. այլ ուրախութիւն՝ և խնդութիւն*։ ¹⁷Չայս խորհեցայ յանձին հոգացեալ ՚ի սրտի իմում, թէ անմահութիւն է ազգականութիւն իմաստութեան. ¹⁸և բարեկամութեան նորա վայելչութիւն բարեաց. և ՚ի վաստակս գործոց ձեռաց նորա մեծութիւն անպակաս. և ՚ի կրթութեան խօսից նորա՝ հանճար. և փառաւորութիւն ՚ի հաղորդութեան բանից նորա. և շրջի խնդրէի՝ որպէս զի առից զնա առ իս*։ ¹⁹Մանուկ էի մտավարժ՝ և ոգւոյ բարւոյ դիպեցայ։ ²⁰Մանաւանդ զի ազնուագոյն էի, և եկի ՚ի մարմին անարատ*։ ²¹Գիտացի թէ ո՛չ այլազգ լինիցիմ ժուժկալ՝ բայց եթէ Աստուած տայցէ։ Նա և այն

* *Ոմանք.* Չգի ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս։

* *Ոմանք.* Ըստ ազնուականութեան փառաւոր է։ *Ուր Ոսկան.* Չազնուականութիւն նորա փառաւորէ։

* *Ոմանք.* Աստուծոյ իմաստութիւն, և ցանկացող գործոց նորա. *ըստ այսմ նշանակի և ՚ի լուս՝*։

* *Ոմանք.* Իսկ զի՞նչ է մե՞։

* *Ոմանք.* Չարդարութիւն ոք սիրեսցէ... և զարութիւն, քան զորս։

* *Ոմանք.* Եւ մխիթար հոգւոց և տրտմութեանց։

* *Ոմանք.* Եւ պատիւս ՚ի ծերոց։

* *Ոմանք.* Չորս յետ իմ թողում։

* *Ոմանք.* Եւ ազգք հնազանդ եղիցին ինձ։

* *Ոմանք.* Իսկ ՚ի մէջ բազմութեան։

* *Ոմանք.* Դառնութիւն բնակութիւն. *կամ՝* բնակցութիւն նորա։ *Ոսկան.* Այլ զուրախութիւն և զցնծութիւն։

* *Բազումք.* Եւ ՚ի բարեկամութեան նորա վայել՞։

* *Ոմանք.* Ազնուականագոյն էի։

իմաստութիւն է, ճանաչել թէ յունմէ՞ք է շնորհն: Անկայ՝ առաջի Տեառն, և աղաչեցի զնա յամենայն սրտէ իմմէ՞:

9

Գլուխ Թ

ԺԳ ¹Աստուած հարց՝ և Տէր ողորմութեան քոյ. դո՛ւ ես որ արարեր զամենայն բանիւ քով՝. ²և իմաստութեամբ քով կազմեցեր զմարդն: Չի տիրեսցէ արարածոց ՚ի քէն եղելոց. ³և վարեսցէ զաշխարհ սրբութեամբ և արդարութեամբ, և ուղղութեամբ ոգւո՛յ դատեսցի զդատաստան: ⁴Տո՛ւր ինձ զքոյոց աթոռոցդ զդարանակալ իմաստութիւն. և մի՛ խոտան առներ զիս ՚ի քոց ծառայից: ⁵Չի ես ծառայ քո եմ, և որդի աղախնոյ քոյ. մարդ տկար և սակա՛ւ ժամանակեան, և կրտսեր իմաստութեան դատաստանի և օրինաց՝: ⁶Չի թէպէտ և իցէ՛ ոք կատարեալ յորդիս մարդկան, և առ ՚ի քէն իմաստութիւնդ հեռի է ՚ի նմանէ՛ յոչի՛նչ համարեսցի՝: ⁷Դո՛ւ ընտրեսցեր զիս թագաւոր ժողովրդեան քում, և դատաւոր ուստերաց քոց և դատերաց: ⁸Ասացեր շինել տաճար ՚ի լէրին սրբութեան քոյ, և ՚ի քաղաքի բնակութեան քոյ սեղան, ՚ի նմանութիւն սրբոյ խորանին, զոր յառաջագոյն պատրաստեսցեր իսկզբանէ՞: ⁹Ընդ քե՛զ և իմաստութիւն՝ որ գիտէ զգործս քո, և մօտ էր յորժամ առնէիր զաշխարհս. և ճանաչէ՛ր զինչ հաճոյ իցէ յաչս քո, և զինչ ուղղութիւն ՚ի պատուիրանս քո՞: ¹⁰Առաքեա՛ զդա ՚ի սրբութեանց երկնից, և յաթոռոյ փառաց քոց արձակեա՛ զդա. զի եկեալ դադարեսցէ առ իս, և գիտացի՛ց զինչ հաճոյ իցէ առաջի քո՞. ¹¹քանզի գիտէ՛ դա զամենայն, և խելամո՛ւտ է. և առաջնորդեսցէ ինձ ՚ի գործս իմ զգաստութեամբ: Եւ պահեսցէ զիս փառօք իւրովք, ¹²և եղիցին ընդունելի՛ գործք իմ. և դատեսցայց զժողովուրդս քո արդարութեամբ. և եղէց արժանի՛ աթոռոյ հօր իմոյ՝: ¹³Չի ո՞վ է մարդ՝ որ գիտիցէ զխորհուրդս Աստուծոյ, կամ ո՞վ ածիցէ զմտաւ թէ զինչ կամիցի Տէր՝: ¹⁴Չի խորհուրդ մահկանացուաց՝ զանգիտօղք եմ, և զաղփաղփունք հնարագիտութիւնք մեր՝: ¹⁵Չի մարմին եղծանելի՛ ծանրացուցանէ զոգի, և հակէ հողեղէն յարկս զմի՛տս բազմահոգս: ¹⁶Եւ հազի՛ւ նկատենք զերկրաւորս, և որ ինչ առ ոտս կայցէ՛ աշխատութեամբ գտանենք: Իսկ որ ինչ յերկինս է՝ ո՞վ քննեսցէ. ¹⁷և զխորհուրդս քո ո՞վ գիտաց՝ եթէ ոչ դո՛ւ ետուր իմաստութիւն, և առաքեսցեր զՍուրբ Յոգիդ քո ՚ի բարձանց՝: ¹⁸Եւ ապա

* *Ոմանք.* Լինիմ ժուժկալ... Աստուած տացէ. նա և այն իսկ իմաստութիւն է... յամենայն սրտէ իմմէ և ասացի:

* *Ոսկան.* Եւ Տէր ողորմութեան. դու ես:

* *Ոմանք.* Եւ սակաւ ժամանակեայ, և կրտսեր իմաստութեամբ: *Ուր ոմանք.* և կարօտ իմաստութեան:

* *Ոմանք.* Յեռի իցէ ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Բնակութեան քում սեղան. նմանութիւն:

* *Ոմանք.* Եւ ընդ քեզ և իմաստութիւն՝ որ գիտէր: *Ուր Ոսկան.* և իմաստութիւն քո:

* *Ոմանք.* Առաքեա՛ զնա ՚ի սր՞... և յաթոռոց փառաց քոց արձակեա զնա, զի եկեսցէ դադա՞:

* *Ոմանք.* Եւ լիցին ընդունելի:

* *Ոմանք.* Որ գիտացէ:

* *Բազումք.* Եւ զաղփաղփուն հնա՞:

* *Ոմանք.* ՉՅոգիդ քո Սուրբ ՚ի բար՞:

ուղղեցան շաւիղք երկրաւորացս, և զճանապարհս քո ուսան՝ մարդիկ. և իմաստութեամբ քո փրկեցան*:

10

Գլուխ Ժ

ԺԴ ¹Նա զնախաստեղծն զհայրն աշխարհի զմիայն հաստատեալ պահեաց*,
²և փրկեաց զնա՝ ի յանցանաց իրոց. և ետ նմա զօրութիւն ունելոյ զամենայն*:
³Մերժեցաւ ՚ի նմանէ անիրաւն իւրով բարկութեամբ, ընդ եղբայրասպան
սրտմտութիւնս կորեալ: ⁴Վասն որոյ և զհեղեղեալ երկիր միւսանգամ փրկեաց
իմաստութիւնն՝ չնչին փայտիւն արդարոյն նաւապետեալ*:
⁵Նոյն և ՚ի միաբանութիւն չարութեան ազգացն շփոթելոց, ծանեալ զարդարն՝ և պահեաց
զնա անարատ Աստուծոյ. և ՚ի վերայ որդւոյն գթութեամբք պահեաց զհօրն*:
⁶Նա զարդարն ՚ի կորստական ամպարշտաց փախուցեալ փրկեաց յիջանել
հրոյն զհինգ քաղաքաւն*:
⁷Որ ՚ի վկայութիւն չարութեանն ծխեալ կայ խոպանացեալ,
և անկատար ժամանակօք տունկք մրգաբերք. անհաւատի՛ ոգւոյն յիշատակ
հաստատեալ զարձանն աղի*:
⁸Ձի որոց զիմաստութեամբ զանց արարեալ՝ ոչ միայն վնասեցան առ ՚ի
չճանաչելոյ զբարիս, այլ և զանմտութեան յիշատակ թողին յաշխարհի.
զի որովք յանցեանն մի՛ կարասցեն ծածկել*:
⁹Իմաստութիւն զողոքիչս իւր փրկեաց ՚ի ցաւոց: ¹⁰Նա՛ փախուցելոյ ՚ի
բարկութենէ եղբօրն՝ առաջնորդեաց արդարոյն ՚ի շաւիղս ուղիղս. եցոյց նմա
զարքայութիւն Աստուծոյ, և ետ զգիտութիւն սրբոց: Յաջողեաց նմա շահս ՚ի
վաստակոց իւրոց. և բազմացոյց զպտուղ նորա*:
¹¹Յագահութեան բռնաւորաց նորա պաշտպանեաց նմա, և մեծացոյց զնա. ¹²և պահեաց ՚ի թշնամեաց:
Եւ ՚ի դարանակալաց նորա զգուշացաւ, և ՚ի զօրաւոր պատերազմի արար զնա
յաղթօղ: Ձի գիտասցէ թէ քան զամենայն ինչ զօրաւոր է աստուածապաշտութիւն*:
¹³Նա՛ զարդարն վաճառեալ ոչ եթող ՚ի ձեռանէ. այլ ՚ի մեղաց փրկեաց զնա.
ընդ նմա էջ ՚ի գուր, ¹⁴և ՚ի կապանս ոչ եթող զնա ՚ի ձեռանէ:
Մինչև եբեր նմա զաւազան թագաւորութեան, և իշխանութիւն ՚ի վերայ
բռնաւորաց նորա: Սո՛ւտ եցոյց զբամբասօղս նորա, և ետ նմա զփառսն
յաւիտենական: ¹⁵Նա զժողովուրդն սուրբ, և զզազգն անարատ փրկեաց յազգէ
նեղչաց*:
¹⁶Եմո՛ւտ յոգի ծառայի Տեառն, և ընդդէմ դարձաւ թագաւորաց

* *Բազումք.* Եւ զհաճոյս քո ուսան մարդիկ:

* *Ոմանք.* Նա զնախաստեղծ հայրն:

* *Ոմանք.* Զօրութիւն ունելոյ ամենայնի. և *ոմանք.* Ունել զամենայն:

* *Ոմանք.* Արդարոյն նաւապետեաց:

* *Ոմանք.* Եւ ՚ի վերայ որդւոցն:

* *Ոմանք.* Ի կորստական ամբարշտութեանցն:

* *Ոմանք.* Որք ՚ի վկայութիւն չարութեան. ծախեալն, խոպանացեալք: *Ուր օրինակ մի.* որ է ՚ի վկայութիւն չա՞:

* *Ոմանք.* Ձի որոց զիմաստութեան զանց արարեալ, ոչ միայն չվնասեցան... զբարին... թողին յիշատակ յերկրի:

* *Ոմանք.* Աստուծոյ, և գիտութիւն սրբոց. առաջնորդեաց նմա շաւիղս ՚ի վաստա՞:

* *Ոմանք.* Եւ պահեաց զնա:

* *Ի լուս՞.* Եւ զզաւակն անարատ. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՞:*

ահաւորաց՝ արուեստիւք և նշանօք՝¹⁷Յատոյց սրբոցն զվարձս վաստակոց նոցա. առաջնորդեաց նոցա ընդ ճանապարհ սքանչելի. եղև նոցա հովանի՝ ի տուէ՝ և բոց աստեղաց ՚ի գիշերի: ¹⁸Անցոյց զնոսա ընդ ծովն Կարմիր, և տարաւ զնոսա ընդ ջուրս բազումս: ¹⁹Զթշնամիս նոցա ընկղմեաց, և ՚ի խորոց անդնդոց աժ զնոսա ՚ի վեր: ²⁰Վասն այնորիկ արդարք կողոպտեցին զամպարիշտս, և օրհնեցին Տէր զանուն քո սուրբ. և զձեռն քո որ մարտնչէր ՚ի վերայ նոցա՝ օրհնեցին միանգամայն: ²¹Զի իմաստութիւն եբաց զբերան համերց, և զլեզուս տղայոց եղ պարզախօսս՝:

11

Գլուխ ԺԱ

¹Յաջողեաց զգործս նոցա ՚ի ձեռն մարգարէին սրբոյ: ²Շրջեցան ընդ անապատ անշէն, և յանկոխս հարին զխորանս: ³Ընդդէմ դարձան պատերազմողաց. և վանեցին զթշնամիս: ⁴Ծարաւեցան և կարդացին առ քեզ, և տուաւ նոցա ջուր յապառաժ վիմէ, և փափաք ծարաւոյ ՚ի խիստ վիմէ: ⁵Զի որովք տանջեցան թշնամիք նոցա, ⁶նոքիմբք սոքա կարօտեալք գտին բարերարութիւն: ⁷Որոց փոխանակ մշտնջենաւոր գետոյն արեամբ կարմրացելոյ խռովեցելոց՝⁸ի կշտամբութիւն տղայակոտոր հրամանին: Ետուր ջուր առատութեան անյոյսս ⁹ցուցեալ վասն յայն ժամու ծարաւոյ. որպէս տանջեցեր զհակառակորդսն՝, ¹⁰յորժամ գչա՛փ առին. թէպէտ և ողորմութեամբ խրատեցան. ծանեան թէ զիա՞րդ բարկութեամբ դատեալ ամպարիշտք տանջիցին: ¹¹Զսոսա իբրև հայր խրատեալ փորձեցեր. և զնոսա իբրև զաստիկ թագաւոր դատապարտեալ կշտամբեցեր: ¹²Յեռացեալք և մօտեալք՝ զնոյն օրինակ վտանկէին. ¹³զի կրկին կալաւ զնոսա տրտմութիւն և հեծութիւն անցելոց յիշատակաց: ¹⁴Զի յորժամ լսէին իւրեանց տանջանօքն երախտաւորեալք՝ առնուին զքո չափ Տէր: ¹⁵Զի զոր երէկ և ՚ի վաղուց հետէ ընկեցեալ ուրացան և ծաղր առնէին, ՚ի վախճանի նոցին ելիցն զարմանային, զի ո՛չ նման արդարոցն ծարաւեալք: ¹⁶Փոխանակ անմիտ խորհրդոց անիրաւութեան իւրեանց, որովք մոլորեալն պաշտէին զանմռունչ սողունս՝ և զճրճիս վատթարս, արձակեցեր ՚ի վերայ նոցա բազմութիւն անխօսուն անասնոց ՚ի վրէժխնդրութիւն: ¹⁷Զի գիտացեն թէ որովք մեղանչէ ոք՝ նոքունբք և տանջի՛:

ԺԵ ¹⁸Զի ո՛չ չքաւորէր ամենազօր ձեռն քո, որ հաստատեաց զաշխարհս

* *Ոմանք.* Եւ եմուտ յոգի:

* *Ոմանք.* Եւ ՚ի խորս անդնդոց աժ:

* *Ոմանք.* Եբաց զբերանս... տղայոց ետ պարզ խօսել:

* *Ոմանք.* Նովիմբք սոքա... զբարերար՝:

* *Ոմանք.* Որոյ փոխանակ... կարմրացելով խռովելով. *կամ*՝ խտտորելոց (8)

կշտամբութիւն տղակոտոր հրա՛:

* *Ոմանք.* Վասն յայն ժամ ծարաւոյ:

* *Ոմանք.* Զիա՛րդ բարկութեամբ տանջեցան ամբարիշտք:

* *Ոմանք.* Զսոսա որպէս զհայր... և զնոսա որպէս սաստիկ:

* *Ոմանք.* Եւ վաղուց հետէ:

* *Ի լուս՝.* Անխօսուն զեռնոց ՚ի վր՛: *Ուր ոմանք.* անխօս անաս՛:

* *Այլք.* Նոքիմբք. *կամ*՝ նովիմբք և տանջի:

յանկերպարան նիւթոյ՝ արծակել՝ ՚ի վերայ նոցա բազմութիւնս արջոց, կամ առեւծս սաստիկս. ¹⁹կամ նորագործս լի՝ բարկութեամբ գազանս անծանօթս. կամ հրաշունչս փորատօղս գոռոզութեան. կամ զհոսիչս ծխոյն շարաւոյ. կամ որ սաստիկ կայծակունս յաչաց փայլատակեցուցանիցեն* : ²⁰Որոց ո՛չ միայն վնասն կարօղ էր խորտակել զնոսա, այլ և տեսիլն ահիւ սատակել : ²¹Եւ առանց այնորիկ միով իսկ հողմով կարէիր կործանել. հալածեալք և հոսեալք ՚ի դատաստանաց ոգւոյ զօրութեան քոյ : Այլ զամենայն չափով և թուով և կշռով կարգեցեր* . ²²Չի մեծապէս կարօղ լինել յամենայն ժամ առ քե՛զ է. և զօրութեան բազկի քոյ ո՞վ է որ ընդդէմ դառնայցէ : ²³Ձի իբրև զմէտ մի ՚ի նժարից կշռոց է ամենայն աշխարհս առաջի քո. և իբրև զկաթ մի առաւօտի՝ ցօղոյ՝ որ իջանէ յերկիր* : ²⁴Այլ ողորմիս ամենեցուն՝ զի յամենայնի կարօղ ես. և անտես առնես զմեղս մարդկան ապաշխարութեամբ* : ²⁵Ձի սիրես զամենայն որ ինչ է. և ո՛չ գարշիս յունեքէ յորոց արարեր. զի ո՛չ եթէ առ ատել հաստատեցեր ինչ* : ²⁶Քանզի զհա՞րդ կայր ինչ՝ եթէ դու ո՛չ կամէիր. և կամ որ ՚ի քէն չէր կոչեցեալ՝ զհա՞րդ պահեր* : ²⁷Խնայեա՛ յամենեսեան, զի քո՛ են Տէր ոգեսեր* :

12

Գլուխ ԺԲ

¹Ձի անեղծ Յոգիդ քո է յամենեսին* : ²Վասն որոյ գյանցաւորս առ սակաւ սակաւ յանդիմանես, և որովք մեղանչենն յուշ արարեալ խրատես. զի զերծեալք ՚ի չարեաց հաւատասցեն ՚ի քեզ Տէր :

³ԺՆա և զհին բնակիչս սրբոյ երկրի քոյ ատեցեր, ⁴վասն զգարչելի գործսն գործելոյ. զկախարդութեանց՝ և զանսուրբ նուիրացն. ⁵զորդեկոտորսն զանողորմս. և զաղեկերսն մարդկեղէն մարմնոցն զոր սնուցանէին. և արեան ՚ի միջոյ խորհրդականաց քոց աստուածեղինաց* : ⁶Եւ զճոխս և զծնօղս անձանց անօգնականաց, կամեցար կորուսանել ՚ի ձեռն հարցն մերոց* . ⁷Չի արժանի գերութիւն ընկալցի ծառայից Աստուծոյ. որ առ ՚ի քէն քան զամենայն առաւել

* *Ոմանք.* Փորոտողս. կամ՝ փարատողս գոռութեան. կամ՝ գոռոզութեամբ... փայլատակեցուցանեն :

* *Ոմանք.* Եւ առանց այսոցիկ. կամ՝ այնոցիկ իսկ միով հողմով կարէր կործանել, հալածեալք և հասեալք... ոգւոց զօրութեան քո :

* *Ոմանք.* Ձի որպէս մէտ մի... և որպէս զկաթ մի առա՞ :

* *Ոմանք.* Ձմեղս մարդկան յապաշխարութեան :

* *Ոմանք.* Ձամենայն ինչ որ է : *Ոսկան.* Յունեքէ՝ զորս արարեր... հաստատեցեր ինչ՝ կամ արարեր :

* *Ոմանք.* Եթէ դու ոչ կամէիր... զհա՞րդ պահիր :

* *Ոսկան.* Խնայես յամենեսեան :

* *Ոմանք.* Ձի անեղծ Յոգի է յամենեսեան : *Աստեն Ոսկան առեալ ՚ի Լատինականէն զնոյն բան՝ կրկնէ բացազանչութեամբ այսպէս. *Ո՞վ, որքան բարի և համեղ է Տէր Յոգի քո յամենեսեան :*

* *Ոմանք.* Ի միջոց խորհրդականաց քոյոց :

* *Երկու օրինակք համաձայնք իրերաց փոխանակ երկուց համարոց՝ Եւ զճոխս, և այլն :* Ձի արժանի, և այլն. ունին զայս. Որք ճոխութեամբ անկարօտ էին ծնողք մանկանցն, զորդիս անողորմելի մահուամբ դիւացն զենուին : Եւ ոչ ոք էր որ օգնէր տարապարտ սպանեալ մանկանցն :

պատուական էր երկիրն*։⁸Այլ և՛ ճոսա իբրև ՚ի մարդիկ խնայեցեր։ Արձակեցեր կարապետս զօրու քոյ զպիծակն՝ զի զնոսա առ սակաւ սակաւ սատակեցցեն*։⁹Ո՛չ տկարացեալ ՚ի պատերազմի, տալ՝ զամպարիշտս ընդ ձեռամբ արդարոց կամ անհնարին զագանօք, կամ բանիւ միանգամայն համառօտս խորտակել*։¹⁰Այլ առ սակաւ սակաւ դատելովն տայիր տեղի ապաշխարութեան։ Ո՛չ անգիտացեալ թէ չար է արար նոցա, և ընտաբոյս չարութիւն նոցա, և ո՛չ փոխին խորհուրդք նոցա յաւիտեան*։¹¹Ոհ զաւակ անիծեալ էր իսկզբանէ։ Ո՛չ եթէ երկուցեալ ինչ յունեքէ՝ յորոյ վերայ մեղանչէինն, շնորհէիր զներելն*։¹²Քանզի ո՛վ ասիցէ քեզ՝ թէ զինչ գործեցեր, և կամ ո՛վ է որ ընդդէմ դառնայցէ դատաստանի քում, և ո՞ կշտամբեսցէ զքեզ յազգացն կորուսելոց՝ զոր դու արարեր, կամ ո՛վ զայցէ ընդ քեզ ՚ի հակառակութիւն ՚ի վրէժխնդրութիւն մարդոց անիրաւաց*։¹³Քանզի և ո՛չ Աստուած այլ զոյ բաց ՚ի քէն որում փոյթ իցէ վասն ամենեցուն, զի յայտ արասցես՝ թէ ո՛չ տարապարտուց դատեցեր*։¹⁴Եւ ո՛չ թագաւոր կամ բռնաւոր՝ բառնալ զակն ՚ի վեր կարիցէ ընդդէմ քո՝ վասն որոց տանջեցեր*։¹⁵Քանզի արդար ես՝ և արդարութեամբ վարես զամենայն, զայն որ պարտն իցէ տանջելոյ՝ տանջեցեր, օտար համարեալ ՚ի քումն՝ զօրութենէ*։¹⁶Ձի քո զօրութիւնդ իշխան է արդարութեան, և տիրելդ ամենեցուն՝ խնայել տայ քեզ յամենայն*։¹⁷Ցուցանես զօրութիւն ՚ի վերայ թերահաւատին՝ կատարեալ զօրութեամբ, և զայնոսիկ որ ո՛չ ճանաչեն զզօրութիւն քո՝ յանդիմանէս*։¹⁸Դու որ տիրեսդ զօրութեամբ՝ հեզութեամբ դատիս, և բազում խնամութեամբ դարմանես զմեզ, քանզի մօտ է առ քեզ յորժամ կամիցիս կարօղ լինել*։¹⁹Ուսուցեր զժողովուրդ քո այսպիսի գործովք՝ թէ պարտ է արդարոյն լինել մարդասէր, և բարեյոյս արարեր զորդիս քո, զի տաս ՚ի վերայ մեղաց ապաշխարութիւն*։²⁰Ձի եթէ զթշնամիս ծառայից քոց՝ և զմահապարտս այնչափ ներելով պատժեցեր՝ և փրկեցեր, տուեալ ժամանակս և տեղիս՝ որովք զերծանիցին ՚ի չարեաց։²¹Ամենայն ճշմարտիւ դատեցար զորդիս քո, որոց ընդ հարսն երդմունս և դաշինս արարեր բարեացն աւետեաց*։²²Արդ զմեզ խրատեալ՝ զթշնամիսն բիւրապատիկ տանջես, զի զքո բարերարութեանդ զչափ առեալ հոգասցուք, և դատեալք՝ ակն կալցուք ողորմութեան*։
Ժէ²³Ուստի և զայնոսիկ որ յանմտութեան կեանս կէին տարապարտուց՝

* Ոմանք. Որ առ ՚ի քէն քան զամենայն պատուական էր եր*։ Ուր Ոսկան. որ առ ՚ի քեզ։

* Ոմանք. Այլ ՚ի ճոսա որպէս ՚ի մարդիկ... առաքեցեր կարապետս։

* Ոմանք. Կամ բանիւ միայն հա*։

* Ոմանք. Թէ չար է արարեալ նոցա, և ընդաբոյս չարութիւն նոցին։

* Ոմանք. Յորոց վերայ մեղանչէինն։

* Ոմանք. Մարդոց անօրինաց։

* Ոմանք. Քանզի ոչ այլ Աստուած զոյ... թէ ոչ ՚ի տարապար*։

* Ոմանք. Կարասցէ ընդդէմ քո, վասն որոյ տանջեցերն։

* Ոմանք. Օտար համարելով ՚ի։

* Ոմանք. Եւ տիրելդ քո ամենեցուն։

* Ոմանք. Ցուցանես զօրութիւն ՚ի վերայ անհաւատին։

* Ոմանք. Որ տիրես զօրութեան... և բազում խնայութեամբ դարմանես... մօտ է քեզ յորժամ կամիս կա*։

* Ոմանք. Զժողովուրդն այսպիսի գոր*... արդարոցն լինել։

* Ոմանք. Իսկ որչափ ճշմարտութեամբ դատիս զորդիս քո։

* Ոմանք. Բիւրապատիկս տան*... ակնկալցուք հանդերձեալ ողորմութեանն։

իւրեանց գարշութեամբքն տանջեցեր*։²⁴Քանզի և մոլորութեան ճանապարհօք երկայնագոյնս մոլորեցան. Աստուածս համարեալ, զորս և յանասուն թշնամեացն անարգք էին, զօրէն տղայոց անմտաց խաբեալք*։²⁵Վասն այնորիկ իբրև անխօսուն մանկանց դատաստան ընդ խաղ արծակեցեր*։²⁶Եւ զի նոքա խաղովք սաստիցն ոչ խրատեցան, զարժանաւոր Աստուծոյ դատաստանն կրեսցեն*։²⁷Չի որովք ինքեանք ՚ի չարչարելն զայրանային, նոքիմբք զորս աստուածսն համարէին՝ տանջեսցին։ Տեսեալ զայն որ յառաջն ուրանային՝ ծանեան զի Աստուած ճշմարիտ է. վասն որոյ և նշանակ դատապարտութեան եկն ՚ի վերայ նոցա*։

13

Գլուխ ԺԳ

¹Չի ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ յորս էր աստուածանգիտութիւն, և յերևելի բարութեանցն ոչ կարացին գիտել զայն որ էրն, և ոչ ՚ի գործս հայեցեալ ծանեան զճարտարապետն*։²Այլ կամ զհուր, կամ զհողմ, կամ զօդ երագ, կամ զաստեղաց շրջանս, կամ զջրոց բռնութիւնս, կամ զլուսաւորս երկնաւորս՝ զարբանեակս աշխարհի՝ աստուածս համարեցան*։³Ընդ որոց թէ ընդ գեղն զուարճացեալք՝ զնոսա աստուածս կարծիցեն, գիտացեն թէ ո՞րչափ ևս նոցա Տէրն առաւել լաւ է. զի որ գեղեցկութեան արարչապետն է՝ նա՛ հաստատեաց զնոսա*։⁴Ապա թէ ընդ զօրութիւնս և ընդ ազդեցութիւնս զարմանայցեն, իմասցին ՚ի նոցանէն՝ ո՞րչափ ևս որ կազմեացն զնոսա առաւել զօրաւոր է*։⁵Չի ՚ի մեծութենէ և ՚ի գեղեցկութենէ արարածոյն ըստ նմին համեմատութեան և արարչագործն նոցա երևի*։⁶Բայց սակայն տակաւին և նոցա գոյ սակաւ ինչ մեղադրութիւն. զի և նոքա թերևս մոլորեալք խնդրեն զԱստուած՝ և կամին գտանել*։⁷Ընդ գործս նորա յածեալ՝ քննեն, և հաւանին տեսեամբն թէ բարւոք են երևելիքս։⁸Դարձեալ՝ և նոքա ոչ են ներելիք։⁹Չի թէ այնչափ կարացին գիտել՝ զի բաւական լինիցին նկատել զաշխարհս. զոցա Տէրն զիա՞րդ ոչ գտին վաղվադակի*։¹⁰Թշուառականք են՝ և

* *Ոմանք.* Կեանսն կային. *կամ* էին:

* *Օրինակ մի.* Քանզի և ողորմութեան ճանապարհաւ երկայ՝: *Ոմանք.* Մոլորեցան. համրեալ աստուածս համարեալ, զորս և յանասունս թշնամանացն անարգէին: *Ոմանք.* Անմտաց խաբեալք:

* *Ոմանք.* Որպէս անխօսուն անասնոց դատաս*:

* *Ոմանք.* Չարժանաւորապէս դատաս*:

* *Ոսկան.* Չայն զոր յառաջն ու*:

* *Ոմանք.* Ամենայն մարդիկ բնակութեամբ... և ոչ ՚ի գործն նայեցեալք: *՚ի լուս*՝. ՚ի վերայ՝ աստուածանգիտութիւն. *նշանակի*՝ Ակ. Աստուծոյ անգիտութիւն. *համաձայն ոմանց ՚ի բնար*՝: *Ուր երկու օրինակք համաձայնք իրերաց ունին.* Յորս ոչ էր աստուածային գիտութիւն: *Եւ օրինակ մի.* յորս էր աստուածգիտութիւն:

* *Ոմանք.* Կամ զօդ արագ... կամ զջրոյ բնութիւն: *Ուր Ոսկան.* կամ զհող. կամ զօդ արագ:

* *Ոմանք.* Որոց եթէ ընդ գեղն... զնոսա աստուածս կարծեցին:

* *Ոմանք.* Ո՛րչափ ևս առեալ որ:

* *Ոմանք.* Եւ ՚ի գեղեցկութենէ արարածոց ըստ նմին:

* *Ոմանք.* Գոյ և նոցա սակաւ:

* *Ոսկան.* Չնոցա Տէրն զիարդ:

ի մեռելս յոյս նոցա. որք համարեցան աստուածս զձեռագործս մարդկան. զոսկի և զարծաթ զճարտարութան արուեստ, և զնմանութիւն անասնոց. կամ զքա՛ր անպիտան, զձեռագործս նախնեաց* : ¹¹Ապա թէ որ ատաղձագործ հեւսն՝ զփայտ ինչ գեղեցիկ սղոցեալ՝ քերեաց ճարտարութեամբ զամենայն կեղև նորա, և հնարեալ վայելուչ անօթ պիտանի կազմեաց ՚ի սպասաւորութիւն կենաց* : ¹²Եւ զտաշիղ գործոյն ՚ի պատրաստութիւն կերակրոյ ծախեալ յագեցաւ. և որ ինչ ՚ի նոցանէ անպիտան և խոտան էր* : ¹³Զփայտն խեղաթելը և ոստովք վարակեալ. առեալ դրօշեաց մտադրութեամբ գործոյն իւրոյ, և խելամտութեամբ իմաստութեան տպաւորեաց զնա: Եւ նմանեցոյց զնա պատկերի մարդոյ* : ¹⁴Կամ անասնոյ վատթարի ճշգրտեցոյց զնա: Ծեփեաց բռով, և կարմրացոյց սնգուրաւ զգոյն նորա. և զամենայն խնդբունդս նորա ծեփեաց հողով: ¹⁵Եւ արար նմա տուն ըստ նմին արժանի. ե՛ղ զնա առ որմ հաստատեալ երկաթով*, ¹⁶և զգուշացաւ նմա զի մի՛ կործանեսցի: Գիտե՛ թէ և իւրո՛ւմ անձինն օգնել ո՛չ կարէ. քանզի է՛ պատկեր՝ և կարօ՛տ է օգնականութեան: ¹⁷Եւ վասն անուսնութեան, և որդւոց և ստացուածոց իւրոց՝ մատուցեալ շըշնջէ առ անշնչին*. ¹⁸աղաչէ՛ և ո՛չ ամաչէ: Եւ վասն առողջութեան՝ զապիկարն կարդայ. և վասն կենաց՝ զմեռեալն աղաչէ. և վասն ՚ի թիկունս հասանելոյ՝ տարակուսելոյն մաղթէ: ¹⁹Եւ վասն ճանապարհորդութեան՝ զայն որ և ոտն յոտանէ չկարէ՛ փոխել. և ընչաւետութեան՝ և գործոց և ձեռաց կորովութեան, յանարգասաւորէն ձեռօք՝ զարգասաւորութիւն խնդրէ* :

14

Գլուխ ԺԴ

¹Դարձեալ եթէ ՚ի նա՛ւ ելեալ որք՝ ընդ ամեհի ալիս կամիցի ճանապարհորդել, առ փայտն որ քան զնաւափայտն տկարագոյն է՝ աղաղակէ: ²Զի զայն թէպէտ և ցանկութիւն շահից հնարեցաւ՝ և ճարտարապետ իմաստութեամբ կազմեաց, ³սակայն քո՛ Յայր՝ վարէ տեսչութիւնդ. զի ետուր և ՚ի ծովու ճանապարհ, և ՚ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր*: ⁴Յայտ արարեալ՝ թէ յամենայնի կարող ես փրկել՝ թէպէտ և առանց ճարտարութեան որ ելանիցէ ՚ի վերայ: ⁵Բայց կամիս զի մի՛ դատարկասցի գործ իմաստութեանն. վասն այնորիկ չնչին փայտի հաւատան մարդիկ զանձինս իւրեանց. և շրջեալ ընդ ալիսն դոյզն լաստիւն ապրեցան* : ⁶Քանզի և իսկզբանէ ՚ի կորնչել սկայիցն ամբարտաւանից, յոյս աշխարհի ՚ի լաստափայտն ապաւինեալ, եթող աշխարհի զաւակ լինելոյ քո՛ ձեռամբդ

* *Ոմանք.* Եւ զճարտարութեան արուեստս: *Ոսկան յաւելու.* Զձեռագործս նախնեաց զաստուածս յորջորջեցին:

* *Ոմանք.* Կազմեաց պիտանի ՚ի սպասաւորութիւն կենացս:

* *Ոմանք.* Եւ զտաշեղ գոր՛:

* *Այլք.* Մտադիւրութեամբ գործոյն: *Ոմանք.* Եւ պատկերի մարդոյ... (14) վատթարի ճշգրտիւ նմանեցոյց զնա... և զամենայն խնդբունս նորա:

* *Ոմանք.* Ըստ նորին արժանի, և զնա առ որմն:

* *Ոմանք.* Շըշնջէ առանձին:

* *Ոմանք.* Եւ վասն ընչաւետութեան և գործոց ձեռաց կարողութեան:

* *Ոմանք.* Շաւիղս զգուշաւորս:

* *Ոմանք.* Զի մի՛ դատարկիցէ գործ: *Ոսկան.* Վասն այնորիկ և չնչին:

նաւապետեալ*։ ⁷Չի օրհնեալ է փայտն որով լինի արդարութիւն։ ⁸Եւ ձեռագործն անիծեալ ինքն՝ և որ արար զնա զի նա՛ արար և սա եղծանելի աստուած անուանեցաւ*։ ⁹Առ հասարակ ատելի են Աստուծոյ, ամպարշտեալն և ամպարշտութիւն իւր*։ ¹⁰Չի գործն և գործելին առ հասարակ տանջեսցին*։ ¹¹Վասն այնորիկ և ՚ի կոնոս հեթանոսաց այցելութիւն եղիցի զի ՚ի մէջ Աստուծոյ արարածոց՝ ՚ի գարշութիւն եղեն, և ՚ի գայթազողութիւնս որդւոց մարդկան, և յորոգայթս ոտից անզգամաց։ ¹²Չի սկիզբն պոռնկութեան հնարագիտութիւն կռոց է. և գիւտք նոցա՝ ապականութիւն կենաց։ ¹³Չի ո՛չ էր իսկզբանէ, և ո՛չ կացցէ յաւիտեան*։ ¹⁴Նորակրօնութեամբ մարդկան եմուտ յաշխարհս. և վասն այնորիկ ՚ի կարճոյ՝ հնարեցաւ վախճան նոցա։

ԺԸ ¹⁵Չի տարածամ սգով թախծեալ հայր, վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր։ Արդ զայն ժամու զմեռեալ մարդն՝ այժմ իբրև զաստուած պատուեաց. և աւանդեաց իւրոց հնազանդելոցն խորհուրդս և նուէրս*։ ¹⁶Ապա ժամանակաւ ձգեալ ամպարիշտ սովորութիւնն՝ իբրև զօրէնս պահեցաւ. և բռնաւորաց հրամանաւ կարգէին ՚ի պաշտօն դրօշեալքն*։ ¹⁷Չորս յանդիման պատուել ո՛չ կարէին մարդիկ վասն հեռի բնակելոյ. զբացական տեսիլն, զնոյն օրինակ քանդակեցին և դրօշեցին. և յայտնի՝ պատկեր պատուելոյ թագաւորին արարին. զի իբրև զմօտաւոր զհեռաւորն ողորջեսցեն փութով*։ ¹⁸Ի յաճախութիւն պաշտաման զանգէտսն, յետ այնորիկ ճարտարին համարձակեաց առատութիւն արուեստգիտութեան*։ ¹⁹Չի նա թերևս վասն զիշխանին կամեցեալ զմիտսն հաճելոյ, բռնադատեաց արուեստիւն, ածել զնմանութիւնն ՚ի գեղեցկութիւն*։ ²⁰Իսկ բազմութիւնն պատրեալ վասն պատշաճողութեան գործոյն, զայն որ յառաջ քան զսակաւիկ մի պատուեալ էր մարդն, այժմ պաշտօն համարեցաւ*։ ²¹և այն եղև կենաց ՚ի դարանակալութիւն և ՚ի գայթազողութիւն։ Չի որում յայն ժամ առ վշտի բռնութեան ծառայէին մարդիկ, արդ՝ զանհաղորդական անունն՝ քարանց և փայտից եղին*։ ²²Եւ այն ո՛չ եղև բաւական նոցա առ ՚ի մոլորելոյ յԱստուծոյ գիտութենէն. այլ մինչ ՚ի մեծի պատերազմի անգիտութեանն կէին՝ զայնպիսի չարիս խաղաղութիւն անուանէին*։ ²³Կամ զորդեկոտոր նուէրսն. կամ զգաղտնի խորհուրդսն. կամ զմոլեգին յայլոց կրօնից անառակութիւնս բերեալ*։ ²⁴Ոչ զկեանս, և ո՛չ զամուսնութիւն տակաւին սուրբ պահեն։ Այր զընկեր՝ կամ վարանեալ

* *Ոմանք.* Եթող յաշխարհի... քո ձեռամբ նաւաւարեալ։

* *Ոմանք.* Չի նա արար, և ստեղծանելի աստուած ան՞։

* *Ոմանք.* Եւ ամբարշտեալն, և ամբարշտութիւն նորա։

* *Ոսկան.* Չի գործն և գործօղն։

* *Ոմանք.* Նորակրօնաւորութեամբ. *կամ՝* նոր կրօնաւորութեամբ մարդ՞։

* *Ոմանք.* Վաղամեռիկ լինել որդւոյ արար պատկեր. արդ զայնր ժա՞. *կամ՝* յայն ժա՞։

* *Ոմանք.* Որպէս զօրէնս... կարգեցան ՚ի պաշ՞։

* *Ոմանք.* Ոչ կարէին, կամ վասն հեռի... քանդակեալ դրօշեցին... զի որպէս զմօ՞։

* *Ոմանք.* Յառատութիւն արուեստագիտութեան։

* *Ոմանք.* Ածեալ զնմանութիւնն ՚ի գեղեցկութիւն։

* *Այլք.* Յառաջ քան զսակաւ մի։

* *Օրհնակ մի.* Նոյն և կենաց ՚ի գայթազ՞։ *Ուր Ոսկան.* Կենաց մարդկան ՚ի գայ՞... առ վշտի ՚ի բռնութեանն։

* *Ոմանք.* Այլ մինչև ՚ի մեծի... անգիտութեանն կային, զայսպիսի չարիք։

* *Ոմանք.* Չմոլեգին այլոց կրօ՞։

սպանանէ, կամ գաղտապէս ցականեցուցանէ*։²⁵ Եւ ամենայն ինչ խառն 'ի խուռն. արիւն, և սպանութիւն, գողութիւն և նենգութիւն, ապականութիւն, անհաւատութիւն, խռովութիւն, երդմնաստութիւն, աղմկութիւն*,²⁶ բարեաց երախտեաց անյիշատակութիւն, ոգւոց պղծութիւն, ծննդեան փոփոխումն, ամուսնութեանց անառակութիւն, շնութիւն, գիջութիւն*։²⁷ Ձի անուն կռոցն և պաշտօն՝ ամենայն չարի սկիզբն, և պատճառք, և կատարած է*։²⁸ Կամ թէ ուրախ եղեալ՝ մոլին. կամ թէ մարգարեանան՝ ստութիւն. կամ թէ կեան անհրաւութեամբ. կամ թէ 'ի սուտ երդումն վաղվաղէն*։²⁹ Ձի յանշունչ կուռսն յուսացեալք՝ երդնուն սուտ, և պատժի ո՛չ ունին ակն*։³⁰ Արդ երկոքեան յիրաւի՝ եկեցեն 'ի վերայ նոցա. զի չարաչար խորհեցան զԱստուծոյ, ունկնդիր լեալ կռոցն, և սուտ երդուան 'ի կուռսն՝ արհամարհեալ զսրբութիւնն*։³¹ Ձի ո՛չ թէ երդնլեացն զօրութիւն, այլ մեղուցելոցն դատաստան հանէ ընդ գլուխ զանհրաւացն յանցանա*։

15

Գլուխ ԺԵ

ԺԹ¹ Այլ դու Աստուած մեր՝ քաղցր և ճշմարիտ, երկայնամիտ, և ողորմութեամբ դարմանես զամենայն*։² Ձի թէ մեղանչենք՝ քո՛ ենք. քանզի գիտենք զզօրութիւն քո. բայց ո՛չ մեղիցուք՝ քանզի գիտենք եթէ 'ի քում հրամանի ենք*։³ Ձի և ճանաչելն իսկ զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և գիտելն զզօրութիւն քո՝ արմատ անմահութեան*։⁴ Ձի ո՛չ մոլորեցոյց զմեզ մարդկան չարարութեան հնարագիտութիւն, և ո՛չ ստուերագրացն անպտուղ աշխատութիւն. պատկեր մենքենագործ՝ պէ՛սպէս զունիւք*։⁵ Որոց տեսիլն՝ անմտաց 'ի ցանկութիւն գայ. փափաքէ պատկերի մեռելոյ անշունչ տեսլեան*։⁶ Չարեաց արուեստագէտք՝ արժանի՝ այնպիսի յուսոյ. և որք գործենն, և որք փափաքեն, և որք պաշտենն*։⁷ Քանզի և բրտի լմեալ զկակուղ կաւն դնէ 'ի վերայ դրգան, և ստեղծանէ անօթ՝ առ իւրաքանչի՛ր ունեք սպասու մերոյ. սակայն անդստին 'ի կաւոյ ստեղծ, կամ թէ սրբութեանց ինչ սպասաւորութեան անօթս,

* *Ի լուս՝ 'ի վերայ՝* Ցականեցուցանէ, *նշանակի՝* թախանձեցուցանէ։ *Ոմանք.* Սուրբ տակաւին պահէին. այլ զընկեր կամ զվարանեալ սպանանէ, կամ գաղտապէս թախանձէ։ *Եւ ոմանք.* կամ գաղտամեստ թախանձ։ *Իսկ այլ ոմանք.* գաղտնապէս յականէ ցուցանէ։ *Եւ օրինակ մի՝* թերևս աղաւաղութեամբ. գաղտմեսց յակնեցուցանէ։
 * *Ոմանք.* խռովութիւն, երդմնաստութիւն. *կամ՝* երդմնութիւն։
 * *Ոմանք.* Շնութիւն և գիջութիւն։
 * *Ոմանք.* Կռոցն պաշտօն ամենայն չարի սկիզբն և պատճառ։
 * *Ոսկան.* Մարգարեանան ստութեամբ։
 * *Ոմանք.* Ձի եթէ յանշունչ կուռսն... ակն ոչ ունին։
 * *Ոմանք.* Արհամարհելով զսրբութիւնսն։
 * *Ոմանք.* Ձի ո՛չ եթէ երդմնլեացն. *կամ՝* երդնլեացն զօրութիւն... հանէր ընդ գլուխ զանհրաւացն զյանցանս։
 * *Ոմանք.* Բայց դու Աստուած մեր... և երկայնամիտ ողորմ։
 * *Ոմանք.* Եթէ 'ի քում համարի ենք։
 * *Ոմանք.* Բաւանդակ արդա։
 * *Ոմանք.* Չարաչար արուեստ... պատկերք մեքենայագործք։
 * *Ոմանք.* Պատկերի մեռելոց։

կամ թէ գործոյից, կամ թէ ամենևին նոցին հակառակ ըստ նմին օրինակի. և ՚ի նոցանէ ըստ իւրաքանչիւր ումեք են պէտքն. դատաւոր կաւագործ է և վշտահան*։ ⁸Ձի զուր ՚ի նմին կաւոյ աստուած ստեղծանէ։ Որ յառաջ քան զփոքր մի յերկրէ ստեղծեալ յետ սակաւ միոյ ՚ի նոյն երթայ ուստի առան, և զպարտս ոգւոյ պահանջեալ*։ ⁹Այլ կայ ՚ի նմա հոգ՝ ոչ զի աշխատելոցն է, և ոչ զի սակաւավախճան կեանս ունի. այլ զի ընդ ոսկերիչս և ընդ արծաթաձոյլս հակառակի, և պղնձագործաց նմանէ. և փառս համարի, զի զգարչելիսն ստեղծանէ*։ ¹⁰Սոխի՛ր է սիրտ նորա, և հող արհամարհեալ յոյս նորա. և քան զկաւն անարգագոյն կեանք նորա։ ¹¹Ձի ոչ ծանեալ զստեղծիչն իւր, և ոչ զայն որ շնչեաց ՚ի նա զշունչն ազդեցութեան. և որ փչեացն ՚ի նա հոգի կենդանական*։ ¹²Այլ խաղ համարեցան զկենդանութիւն մեր. և զկեանս՝ տօնավաճառ շահից. զի պարտ է ասեմ ուստի և իցէ, թէպէտ և ՚ի չարեաց իցէ, շահել ինչ*։ ¹³Եւ նա քան զամենեսին առաւել գիտէ թէ մեղանչէ. ՚ի հողեղէն նիւթոյ դիւրաբեկ անօթս և դրօշեալս գործէ*։ ¹⁴Եւ ամենեքին անմտագոյնք և խաւք են քան զանձն տղայոյ։ Թշնամիք ժողովրդեան քոյ բռնադատեցին զնա*։ ¹⁵Ղի զամենայն կուռս հեթանոսաց աստուածս համարեցան. որոց ոչ աչաց պիտանութիւն էր ՚ի տեսանել, և ոչ ականջք առ ՚ի լսել, և ոչ ունջք առ ՚ի ձգելոյ զօր, և ոչ մատունք ձեռաց առ ՚ի շօշափելոյ, և ոտք նոցա դատարկացեալք ՚ի գնալոյ*։ ¹⁶Քանզի մարդ արար զնոսա, և ոգի մուրացիկ ստեղծ զնոսա։ Ոչ ոք ՚ի մարդկանէ կարող է ստեղծանել նմանութիւն Աստուծոյ*։ ¹⁷Քանզի մահկանացու է, և զմեռեալ գործ գործէ անօրէն ձեռօք. զի ինքն լաւ է քան զպաշտամունս իւր. յորոց ինքն կենդանի է՝ և նոքա ոչ երբէք։ ¹⁸Եւ և զգարչելի անասունսն պաշտեն, և այն է անհնարին անմտութիւն։ ¹⁹Ձի թէ ընդ այլսն կշռեսցին՝ վատթարագոյն գտանին. ոչ որպէս ցանկանան, այնպիսի գեղեցկութիւնք ՚ի կերպարանս անասնոցն իցեն։

՚ի Բայց զի վրիպեցան յԱստուծոյ գիտութենէն, և ՚ի նորին օրինութենէն*։

16

Գլուխ ԺԶ

¹Վասն այնորիկ ըստ նոցին նմանութեան արժանապէս տանջեցան. և վասն բազմութեան ճճեացն գանալից եղեն*։ ²Փոխանակ այնր տանջանաց դիւրեցեր

* Երկու օրինակք համաձայն իրերաց. Եւ բրտի մալեալ զկա՛։ Ոմանք. Անօթս ինչ ՚ի սպասաւորութիւն... կաւագործն է և։ Ոսկան. Եւ ՚ի նոցանէ իւրաքանչիւր։

* Ոմանք. Ձի ՚ի զուր... յերկրէ եղեալ... ՚ի նոյն երթայ ուստի առին։

* Ոմանք. Եւ ընդ արծաթագործս հակառակի, և պղնձաստեղծաց նմանի։

* Ոմանք. Ձշունչն ազդեցուցիչ, և որ փչեաց ՚ի նա ոգի կենդանական։

* Ոմանք. Թէպէտ և ՚ի չարեաց է։

* Ոմանք. Ձի ՚ի հողեղէն նիւթոյ... անօթս դրօշեալ կազմէ։

* Ոմանք. Անմտագոյնք են և խաւք... տղայոց։

* Ոմանք. Ձի և զամենայն կուռս ազգաց... որոց և ոչ աչաց։

* Ոմանք. Եւ ոչ ոք մարդ կարող է։

* Ոմանք. Ընդ այլսն կշռիցեն. կամ՝ կշռիցին, վատթարագոյնք գտանիցին... այնպէս գեղեցկութիւնք ՚ի կերպարանս նոցա իցեն։ Բայց զի վրիպեաց յԱստուծոյ գովութենէն և ՚ի նո՛։

* Ոմանք. Ըստ նմին նմանութեան արժանաւորապէս տանջեցան։

ժողովրդեան քում. ՚ի ցանկութիւն տենչանաց՝ նորաճաշակ կերակուր պատրաստեցեր զլորամարգին: ³Ձի նոքա ցանկացեալք կերակրոյ ցուցելովքն որ առաքեցաւ նոցա, և ՚ի կարևոր կերակրոյ ցանկութենէն արգելցին. և սոքա առ սակաւ մի կարօտացեալք ՚ի նոր ճաշակսն վայելեսցեն*: ⁴Ձի պարտ էր ՚ի վերայ նոցա անհրաժեշտ կարօտութեանն գալ. քանզի բռնանային. և սոցա ցուցանել միայն, թէ որպէս սոցա թշնամիքն տանջիցին*: ⁵Քանզի սոցա յորժամ անհնարին բարկութիւն գազանացն եհան ՚ի վերայ՝ հարուածովք կամակոր օձիցն սատակէին*: ⁶Ոչ մինչ ՚ի սպառ յամեաց բարկութիւնն, այլ ՚ի խրատ առ սակաւ մի խռովեցան. զի նշանակ փրկութեան ունիցին, առ ՚ի յիշելոյ զպատուիրանս օրինաց քոց*: ⁷Ձի որ դառնայրն՝ ոչ վասն այնր զոր տեսանէրն ապրէր, այլ վասն քո որ ամենեցուն փրկիչդ ես: ⁸Եւ այնու հաւանեցուցեր զթշնամիսն մեր, եթէ դու ես որ փրկես յամենայն չարէ*: ⁹Ձի զոմանս մարախոյ և մկանց կոտորեցին հարուածք. և ոչ գտաւ բշկութիւն անձանց նոցա. զի արժանի՝ էին յայնպիսեացն տանջելոյ*: ¹⁰Բայց որդւոց քոց և ոչ թունաւոր վիշապացն յաղթեցին ժանիք. և ողորմութիւն քո անջրպետեաց՝ և փրկեաց զնոսա*: ¹¹Ձի ՚ի յիշատակ բանից քոց անդրէն պատուաստէին և վաղվաղակի փրկէին. զի մի՝ ՚ի խոր մոռացումն անկանիցին, և անպատասպարանք լինիցին ՚ի քումնէ բարերարութենէդ*: ¹²Քանզի ոչ դեղք՝ և ոչ սպեղանիք բշկեցին զնոսա. այլ քո Տէր բանդ որ զամենայն բշկէ*: ¹³Քանզի կենաց և մահու դու ունիս իշխանութիւն, իջուցանես ՚ի դժոխս՝ և հանես: ¹⁴Այլ մարդ սպանանէ՝ չարութեամբ իւրով. և ելեալ ոգին՝ անդրէն ոչ դառնայ. և ոչ պարանի շունչն գրաւեալ*: ¹⁵Քանզի ՚ի քումնէ ձեռանէ փախչել անհնարին է: ¹⁶Ուրանան գիտել զքեզ ամպարիշտք, բայց զօրութեամբ բազկի քոյ տանջեցան: Նոր անձրևօք կարկտի, և անհրաժեշտ շառաչմամբք հալածեալք, և հրովք ծախեալք*: ¹⁷Եւ որ ինչ նորանշան սքանչելին էր: Ձի յամենաշիջոյց ջուրն առաւել գործէր հուրն. զի վերամարտիկ արդարոց է աշխարհ*: ¹⁸Երբեմն ընտանենայր բոցն, զի մի՝ այրիցէ զարծակեալ գազանսն ՚ի վերայ ամպարշտաց. այլ նոքա հայեցեալ տեսանէին, թէ Աստուծոյ դատաստանաւն խուճապին: ¹⁹Եւ երբեմն ՚ի մէջ ջրոյն առաւել քան զգօրութիւն հրոյ բորբոքէր, զի զմեղանչական երկրին զարդիւնսն ապականեսցէ*: ²⁰Ընդ որոյ՝ կերակուր հրեշտակաց ջամբեցեր ժողովրդեան քում, և զպատրաստական հացն յերկնից ետուր նոցա առանց ջանալոյ: Առ

* *Ոմանք.* Կերակրոց ցուցանելովքն որ առաքեցան նոցա... առ սակաւ կարօտացեալք:

* *Ոմանք.* Կարօտութեանցն գալ... և սոցա ցուցեալ միայն թէ որպէս թշնամիքն տանջեսցին:

* *Ոմանք.* Քանզի յորժամ նոցա անհնա՞... և հարուա՞:

* *Ոմանք.* Ոչ մինչև իսպառ յամեաց բարկութիւն քո:

* *Ոմանք.* Հաւանեցուցանէր զթշնամիս:

* *Ոմանք.* Արժանի էին այնպիսեացն տանջանք:

* *Ոմանք.* Եւ ոչ թունաւորաց վիշապաց յաղթե՞... անջրպետեաց և բշկեաց զնոսա:

* *Ոմանք.* Ձի ՚ի յիշատակս բանից քոց անդէն... մոռացումն անկանէին... ՚ի քումնէ օգնականութենէդ:

* *Ոմանք.* Եւ ոչ սպեղանեաց գիրք բշկե՞:

* *Ոմանք.* Եւ ոչ կերպարանի շունչն գրաւեալ:

* *Ոմանք.* Ուրանան զքեզ ամ՞:

* *Ոսկան.* Ամենաշիջոյց ջուրն առաւել գործէր զիրոյ զօրութիւն. զի մարտիկ արդարոց է:

* *Ոմանք.* Ձմեղանչական երկիրն ապակա՞:

ամենայն ցանկութիւն բաւական, և առ ամենայն հանդերձանս ճաշակաց*։ ²¹Ձի քո գոյաւորութիւնդ առ քո որդիսն եցոյց զքաղցրութիւն ըստ մատուցանելոյ ցանկութեանն արբանեկեալ. առ որ զինչ ոք և կամեր՝ խառնէր*։ ²²Ձիւն և սառն կային ընդդէմ հրոյ՝ և ո՛չ հալէին. զի ծանիցուք թէ զպտուղ թշնամեացն ապականէր. հուրն բորբոքեալ ընդ կարկտի, և փայլատակեալ ՚ի մէջ ջրոյ։ ²³Եւ այն դարձեալ՝ զի արդարք կերակրեսցին, և զիւր զօրութիւնն մոռանայցէ։ ²⁴Ձի քո արարածք քե՛զ Արարչիդ արբանեկէ. և սաստկանայ ՚ի տանջանս անիրաւաց. և օրհնի ՚ի բարերարութիւն փոխանակ ՚ի քե՛զն յուսացելոց*։ ²⁵Վասն այնորիկ և յայնժամ յամենայն ինչ փոխեալ ամենակերակրիչ պարգևիդ քում լինէր սպասաւոր, առ ՚ի կամս քոյոցն կարօտելոց*։ ²⁶Ձի ուսանիցին որդիքն քո զոր դու սիրեցեր Տէր. զի ո՛չ եթէ արարք արմտեաց կերակրեն զմարդ, այլ քո բանդ զհաւատացեալսն ՚ի քեզ պահէ*։ ²⁷Ձի որ ՚ի հրոյն ո՛չ ապականէր վայրապար, ՚ի դոյզն ճառագայթից արեգականն ջեռեալ հալէր*։ ²⁸Որպէս զի յայտ լիցի՝ թէ պարտ է կանխել նախ քան զարեգակն ՚ի գովութիւն քո, և յառաջ քան զծագել լուսոյ յանդիման լինել քեզ*։ ²⁹Ձի յոյս անշնորհակալին իբրև զսառն ձմերայնոյ հալեսցի, և ծորեսցէ իբրև զջուր անպիտան*։

17

Գլուխ ԺԷ

ԻՎ ¹Ձի մեծամեծ են դատաստանք քո և դժուարապատու՛նք. վասն այնորիկ անծինք անխրատք մոլորեցան*։ ²Կարծեցին բռնադատել զազգն սուրբ՝ անօրէնք. կապեալք խաւարի, և կաշկանդեալք երկայն գիշերոյ. արգելեալք ընդ յարկօք փախստականք ՚ի յաւիտենական տեսչութենէն անկեալ դնէին*։ ³Ձի ղօղեալ համարէին ընդ գաղտնեօք մեղաց. ընդ անճաճանչ յիմարութեան առագաստաւ ցրուեցան, անհնարինս յիմարեալք և խուճապեալք և խռովեալք*։ ⁴Քանզի և ո՛չ՝ որ ունէր զնոսա մութն, աներկելոս պահեաց. զի բոմբիւնք շուրջ զնոքօք պահեալ սրարբեցուցանէին, և ցնորք անժպիտք խոժոռադիմացն երևէին*։ ⁵Եւ հրոյ և ո՛չ մի ինչ բռնութիւն կարաց լուսաւորել. և ո՛չ խարուկածին բորբոքեալ բոցք հանդարտէին լրջացուցանել զտխուր գիշերն։ ⁶Բայց միայն

* Ոսկան. Ընդ որոց զկերա՛ն։

* Ոմանք. Առ որ ինչ և կամէր ոք։ (22) խառն ձիւն և սառն կային... ՚ի մէջ ջրոց։

* Ոմանք. Արբանեկեն. և սաստկանան ՚ի տան... և օրհնի բարերարութիւնդ փոխանակ ՚ի քեզ յուսալոյ։

* Ոմանք. Յամենայն ինչ փոփոխեալ... պարգևիդ քո լինէր... քոյոցն կատարելոյ։

* Յօրհնակին. Ձի ոչ եթէ արդարք արմտեաց։ Ոմանք. Եթէ ոչ արարք... այլ քո բանն։

* Ոմանք. Վայրապար ՚ի դոյզն ճառագայթէ արեգական ջեռացեալ հալիւր։

* Ոմանք. Յայտնի լիցի... կանխել ՚ի գովութիւն քեզ. և յառաջ քան զծագել լուսոյ յանդիմանել քեզ։

* Ոմանք. Ձի յոյս անշնորհակալին որպէս սառն... և ծորեսցի որպէս զջուր։

* Ոմանք. Անծինք անխրատից։

* Ոմանք. Կապեալք ՚ի խաւարի։

* Ոմանք. Յիմարութեամբ առագաստին... և խուճապիւք խռովեալք։

* Ոմանք. Որ ունէր զնոսա մթութիւն... զի բոմբիւնք գիշերականք շուրջ զնոքօք պատեալս արբեցուցանէին. կամ՝ պահեալ որ արբեցուցանէին. և ցնորք անժպիրք. կամ՝ և ցնորք անտիպք խոժոռադի՛ն։

երևեր նոցա ինքնակաց խարոյկ լի՝ երկիւղիւ. զարհուրեալք յաներևոյթ տեսլենէն այնորիկ, համարէին չար՝ և՛ն քան զոր տեսանէինն: ⁷Ի դիւթական արուեստի խաբէութիւնս անկանէին, և՛ի խորհուրդս ամբարհաւաճութեան. կշտամբութիւն թշնամանալից՝: ⁸Ձի որք խոստանային զարհաւիրս և զխռովութիւնս հալածել յանձնէ ախտացելոց, նոքա զծաղրալից երկելոն ախտանային՝: ⁹Ձի թեպէտ և՛ն ինչ նորանշան զարհուրեցուցանէր, ճճեաց անցիւ, և սողնոց շշնամբ խուճապեալք և զողացեալք սատակէին, և յանուրեք յանփախուստ օդն հայելոյ ուրանային՝: ¹⁰Ձի երկչոտին՝ առանձին իմն չարութիւն՝ ինքեանք վկայէ դատապարտեալ. մի՛շտ կանխէ զանհնարինս՝ նեղեալ՝ ի խղճէ մտաց: ¹¹Քանզի ո՛չ ինչ է երկելո՞ւ եթէ ո՛չ մատնութիւն մտացն օգնականութեան՝: ¹²Մինչդէռ ՚ի ներքս է, սակա՛ւ ինչ է ակնկալութիւն, և բազում համարի զանգիտութեանցն. որ ածէ՛ ՚ի վերայ զպատճառս տանջանացն: ¹³Եւ նոքա զսաստիկ զանհնարին զգիշերն, և յանմատուցից մթից դժոխոցն հասելոց ՚ի վերայ՝ զնոյն քունն ննջեցին՝: ¹⁴Է՛ր զի նշանօք ցնորիցն պակչէին. և էր զի ոգւոցն մատնութեամբք լքանէին. զի յանկարծօրէն և յանկարծուստ մածանէր ան՝ ՚ի վերայ՝: ¹⁵Ապա այն զի և արդ և էր՝ անդ յանգէր, և պահէր յաներկաթ բանտն արգելեալ՝: ¹⁶Եթէ հողագործ էր, և եթէ հովիւ, և եթէ անապատական աշխատութեանցն գործաւոր՝ ըմբռնեալ յանլոյծ տագնապ հասանէր՝: ¹⁷Քանզի միով խաւարային շղթայիւ ամենեքեան կապեցան. եթէ հողմ շնչէր, և եթէ թանձրախիտ ոստոց քաղցրածայն հաւուց բարբառ հնչէր. եթէ յորդութիւն ջրոց հոսելոց բռնութեամբ՝: ¹⁸Եւ եթէ բոմբիւնք սպառնալեաց վիմաց հոլովելոց. և եթէ ընթացք աներևոյթք անասնոց կայտռելոց. և եթէ բարբառ ահագին զազանաց գոչելոց, կամ անդրէն յանձն բեկելոյ՝ ՚ի քարանձաւաց լերանց ձայնից արծազանգաց, լքոյց զնոսա զարհուրեցուցեալ՝: ¹⁹Ձի ամենայն աշխարհ պայծառացեալ լուսով լուսաւորէր, և անխափան գործով կայր պնդակազմ՝: ²⁰Բայց միայն ՚ի վերայ նոցա՝ տարածանէր ծանր գիշեր, օրինակ խաւարին որ յաջորդելոց է զնոսա. ինքեանք ինքեանց իսկ ծանրագոյնք էին քան զխաւար՝:

18

Գլուխ ԺԸ

* *Ոմանք.* Արուեստին ՚ի խաբէ՛... և ՚ի խորհուրդս ամբարշտութեան կշտամբէին թշնա՛:

* *Ոմանք.* Յանձնէ ախտացելոյ:

* *Ոմանք.* Ճճեաց ախտիւք, և սողնոց շշնամբք... օդն անդրէն հայելոյ: *Ոսկան.* Եւ յանուրեք փախուստ:

* *Ոմանք.* Օգնականութեանց:

* *Ոմանք.* Եւ նոքա զանհնարին գիշերն յանմատուցից մթից դժոխոց գործոցն վերահառելոց զնոյն:

* *Օրինակ մի.* Մուճանէր անն ՚ի վերայ:

* *Ոմանք.* Ապա զիարդ և էր անդ անկանէր, աներկաթ բանդարգելեալ:

* *Ոմանք.* Եւ կամ եթէ անապա՛:

* *Ոմանք.* Եթէ հողմ հնչէր. և եթէ ՚ի թանձրա՛... հոսելով բռնութեամբ:

* *Ոմանք.* Եւ եթէ ընթացք անն՝... զազանաց գոչելոց, և եթէ բոմբիւն սպառնալեաց վիմաց հո՛:

* *Ոսկան.* Պայծառացուցեալ լու՛:

* *Ոմանք.* Յօրինակ խաւարին որ յաջորդելոց էր զնոսա:

¹Բայց սրբոց քոց լոյս մե՛ծ էր զորոց զբարբառն լսէին, և զկերպարանսն ո՛չ տեսանէին. զի և նոքա որ զայնպիսի չարչարանս կրեցին՝ երանէին*։ ²Եւ զի ո՛չ վնասէին յառաջագոյն զրկեալքն՝ զոհանային. և վասն անցանելոյ աղաչէին*։ ³Ընդ որոյ սիւն բոցոյ առաջնորդէր անծանօթ ճանապարհին. զարեգակն անվնաս ետուր առա՛տ ասպնջականութեանն*։ ⁴Քանզի արժանի՝ իսկ էին նոքա վրիպելոյ՝ ՚ի լուսոյ, և արգելոյ՝ ՚ի խաւարի. որք արգելականս պահէին զորդիս քո. որովք հանդերձեալ էր անեղծ օրինացն լոյս կենաց աշխարհի պարգևել*։

Իբ ⁵Ձի խորհեալ էին նոքա զտղայս սրբոցն կոտորել. և ընդ միոյ մանկան ընկեցիկ եղելոյ և ապրելոյ, ՚ի յանդիմանութիւն զնոցա զբազմութիւն որդւոցն կոտորեցեր և սատակեցեր, և առ հասարակ կորուսեր ՚ի ջուրս սաստիկս*։ ⁶Այն գիշեր յառաջածանօթ եղև հարցն մերոց. զի հաստատութեամբ տեսեալ, յերդմունս յոր հաւատացին՝ խրախամի՛տ լինիցին։ ⁷Ակնկալութիւն եղև ժողովրդեան քում արդարո՛ցն փրկութիւն, և թշնամեացն կորուստ։ ⁸Ձի որով պատժեցեր զհակառակորդսն, նովի՛ն զմեզ առ քեզ կոչեցեալ փառաւորեցեր*։ ⁹Ձի զա՛ղտ զոհէին որդիք ազնուացն, և զսրբութեանն օրէնս միաբանութեամբ ուխտէին. ըստ նմին օրինակի բարութեանց՝ և վշտաց սրբոցն հաղորդակից լինել. անդ Յայր՝ քաղցրացուցանէին զօրհնութիւն*։ ¹⁰Նա անանիկ հակառակ ծայնատու էր անմիաբան բարբառ թշնամեացն. և ծայն ողորմ ելանէր մանկանցն սգացելոց։ ¹¹Չնոյն օրինակ ծառայք հանդերձ տերամբք տանջեալ, և ռամիկն թագաւորաւն զնոյն չարչարեալ*։ ¹²Առ հասարակ ամենեքին միո՛վ անուամբ մահու ունէին մեռեալս անհամարս. զի և թաղելոյ անգամ չէին բաւական կենդանիքն. քանզի ՚ի միում վայրկենի պատուական ազգն նոցա սատակէր*։ ¹³Ձի ամենայնի չհաւատային վասն կախարդութեանցն, բայց ՚ի սատակելոյ անդրանկացն՝ խոստովանեցին ժողովուրդ քո լինել*։ ¹⁴Մինչդեռ խաղաղութեանն պատեալ էր զամենայն, և այն ինչ գիշերն իւրով երագութեամբն ընդմիջէր*։ ¹⁵Ամենագօր բան քո յերկնից յաթոռոց արքունեաց սաստիկ պատերազմօղ ՚ի մէջ սատակման երկրին հասանէր*։ ¹⁶Սուսեր պողովատիկ զանաչառ հրամանդ քո բերեալ, և ՚ի մէջ անցեալ զամենեսին լնոյր մահուամբ. անդ՝ առ երկնիւք քերէր, և այսր յերկի՛ր հասանէր*։ ¹⁷Յայնժամ վաղվաղակի ցնորք անհնարին երագոց խռովեցուցանէին զնոսա, և արհաւիրք

* *Ոմանք.* Ձբարբառն միայն լսէին... որ զայնպիսի չարչա՛մ։

* *Ոմանք.* Ձի և ոչ վնասէին... և վասն անցելոյն աղաչէին։

* *Ոմանք.* Ընդ որով սիւն բոցոյ առաջնորդ լինէր անծանօթ։

* *Ոմանք.* Վասն զի արժանի իսկ... պահեցին զորդիսն քո... անդ օրինացն լոյս կենաց աշխարհի պարգևիլ. *կամ՝* պահիլ։

* *Ոմանք.* Ձբազմութիւն որդւոցն սատակեցեր, և առ հասարակ։

* *Ոմանք.* Նովիմբք զմեզ առ քեզ կոչեալ։

* *Ոմանք.* Եւ զսրբութեան օրինակն միա՛... հաղորդակից լինէին։ *Երկու օրինակք.* Արդ՝ հայր քաղցրացուցանեմք զօրհնութիւն։ *Ուր Ոսկան.* Անդ հարք քաղց՛։

* *Ոմանք.* Եւ ռամիկ ընդ թագաւորին։ *Եւ ոմանք.* և խառնիճաղանջ թագաւորին զնոյնս չար՛։

* *Ոմանք.* Ձի և թաղել անգամ։

* *Ոմանք.* Ձի ամենայն ինչ հաւատային։

* *Ոմանք.* Մինչդեռ խաղաղ լռութեանն. *կամ՝* խաղաղութիւն ինչ պատ՛... իւրով արագութեամբ։

* *Ոմանք.* Յաթոռոյ... ՚ի մէջ սատակմամբ երկ՛։

* *Ոմանք.* Քո հրամանդ։

անկարծք՝ ի վերայ հասանելին*։¹⁸Եւ այլ ոք այլ ուր անկեալ կիսամահ, վասն որոյ պատճառանաց մեռանէր՝ յայտ առնէր*։¹⁹Ձի երազոցն խռովեցուցեալ զնոսա, զնոյն յառաջագոյն գուշակէին. զի մի՛ յանգէտս վասն որոյ չարաչարն տանջէին՝ կորնչիցին*։²⁰Մատեաւ և յարդարսն երբեմն փորձ մահու, և սատակումն բազմութեանն եղև յանապատին. այլ ո՛չ ընդ երկար կալաւ բարկութիւն քո*։²¹Ձի փութացեալ այրն անարատ՝ մատեաւ յառաջ ՚ի կռիւ՝ իւրով պաշտաման զինուն, աղօթիւք և խնկօք ուղերձեալ զքաւութիւնն. եկաց ընդդէմ բարկութեանն, և արար վախճան հարուածոցն*։²²Եւ այտ արարեալ թէ քո ծառայ է։ Յաղթեաց բազում ամբոխի, ո՛չ զօրութեամբ մարմնոյ՝ և ո՛չ զինուց ազդեցութեամբ. այլ բանիւ զտանջիչն հնազանդեաց։ Ջերդունս և զղաշինս հարցն յիշատակեալ*։²³Ղշեղջաշեղջ դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ ՚ի մէջ դարձեցոյց զբարկութիւն. եհերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց և մեռելոց*։²⁴Քանզի պճղնաւոր հանդերձին էր ամենայն զարդն, և փառք հարցն ՚ի չորեքկարգեան ականսն քանդակեալս, և մեծութիւն քո թագ ՚ի վերայ գլխոց նոցա*։²⁵Յայնց խորշեցաւ սատակիչն, և ՚ի նոցունց զարհուրեցաւ. զի բաւական էր միայն փորձ բարկութեանն*։

19

Գլուխ ԺԹ

¹Բայց ամպարշտացն մինչև ՚ի սպանե հաս ՚ի վերայ անողորմ սրտմտութիւնն. քանզի գիտէր զնոցա և զհանդերձեալսն. ²զի և նոքա դարձցին ՚ի գնալ, և տագնապաւ յուղարկեալ զնոսա՝ հալածեսցեն զղջացեալք*։ ³Ձի մինչդեռ տակաւին ՚ի ձեռս իւրեանց ունէին զուզս իւրեանց, և ճշէին առ գերեզմանօք մեռելոցն. մեւս ևս անմտութեան խորհուրդ յինքեանս կորզէին. և զորս աղաչէինն և հանէին, նոցին որպէս փախստեից հետամուտ լինէին*։ ⁴Ձի ձգէր զնոսա արժանն յայնր վախճանի տագնապ. և զանցելոց անցիցն ընդ նոսա անյիշատակութիւն ՚ի միտս արկանէին, զի զմնացելոց տանջանաց լցցեն զպատիժս*։ ⁵Եւ քո ժողովուրդ զնորասքանչ ճանապարհ գնացէ, և նոքա նորանշան մահ գտանիցեն*։ ⁶Ձի ամենայն արարածք յիւրաքանչիւր կարգի վերստին նորոգէր՝ արբանեկել քոց հրամանաց։ Ձի որոց որդիքն անվճան

* *Ոմանք.* Անկարծք անկանէին ՚ի վերայ։

* *Ոմանք.* Վասն որոց պատճառաց մեռանէին, յայտ առ՝։

* *Ոմանք.* Խռովեցուցանէին զնոսա... տանջէին կորնչէին։

* *Ոմանք.* Բազում եղև յանապատի... կալաւ բարկութիւնն։

* *Ոմանք.* Մատեաւ յառաջակռիւ. և *ոմանք.* մատուցեալ ՚ի կռիւ... և խնկօք աւղերձեալ։

* *Ոմանք.* Եթէ ծառայ քո յաղթեաց բազում ամբոխից։

* *Ոմանք.* Դիականցն արկելոց... և եհերձ ճանապարհ ՚ի մէջ կեն՝։

* *Յօրինակին.* Քանզի պճղնաւորս։ *Ուր ոմանք.* Ի պճղնաւոր հանդերձսն էր... ՚ի վերայ թագի գլխոյ նորա. *կամ՝* գլուխ նորա։

* *Ոմանք.* Յայնցանէ խորշեցաւ... և ՚ի սոցունց զար՝։

* *Ոմանք.* Ձի նոքա դարձցին... յղարկեալ։

* *Ոմանք.* Յինքեանս կորզեցին։

* *Ոմանք.* Ի միտս արկանէր զի զանցելոց տանջանաց լց՝։

* *Ոմանք.* Գնապարհ գնացեն։

պահէին*, ⁷ամպն ծածկեսցէ զբանակն: Ձի՛ի ջրոյն ցամաքութենէ որ՛ի ներքոյ կայր՝ յատակք երկրին երևէին. և ՚ի Կարմիր ծովուն ճանապարհ անխափան՝ և դաշտ ծաղկաբեր ՚ի պտուտից բռնութեանն*: ⁸Վասն որոյ միագունդ անցանէին որ քով ձեռամբդ ծածկեալ էին, տեսեալ զգործս սքանչելիս*: ⁹Ձի իբրև զծիս ճախրեցան, և իբրև զգառինս խայտացին, օրհնել զքեզ Տէր որ փրկեցեր զնոսա*: ¹⁰Քանզի յիշէին տակաւին զիրսն որ ՚ի պանդխտութեան իւրեանց, թէ զիա՞րդ փոխանակ ծննդեան անասնոց՝ բղխեաց երկիր նոցա մուն: Եւ փոխանակ ջրականացն բղխեաց գետն բազմութիւն գորտոց*: ¹¹Ապա յետոյ տեսին և նոր ծնունդ թռչնոյ, յորժամ ցանկութեամբ տենչացեալք խնդրեցին խորտիկս կերակրոյ*: ¹²Ձի ՚ի մխիթարութիւն ել նոցա լորամարզ ՚ի ծովէ, և պատիժք ՚ի վերայ մեղաւորաց հասին. ո՛չ առանց յառաջագոյն եղելոց նշանացն բռնութեամբ հրացան բարկութեանցն:

ԻԳ Քանզի յիրաւի՝ չարչարեցան ըստ իւրեանց չարութեանն, զի չարաչար օտարատեցութիւն հնարեցան*: ¹³Ձի ոմանք զանծանօթս եկեալս չընդունէին. և նոքա զերախտաւոր հերս ծառայեցուցանէին*: ¹⁴Եւ ո՛չ այնչափ միայն, այլ և այցելութիւն եղիցի նոցա. քանզի ատելութեամբ ընդունէին զօտարս*: ¹⁵Բայց նոքա խնդութեամբ տօնիցն ընկալեալք, ընդ վաղուց ընդ նոցին արդարոցն վայելէին. անհնարին ցաւօք չարչարեցին զնոսա*: ¹⁶Հարին շլացութեամբ իբրև զայնոսիկ որ առ դուրս արդարոյն. յորժամ աննշոյլ անբաց խաւարաւն պատեցան, իւրաքանչի՛րոք զիւրոյ՝ դրաց ելս խնդրէր*: ¹⁷Ձի վասն նոցա բնութիւնք պատշաճեալք, իբրև սաղմոսարանաւ իւրաքանչիւր յարդարեալ ձայնիւք. զիւրաքանչիւր անուն նուագէին, յամենայն ժամ ՚ի նմին ձայնի հաստատեալք. զոր է՝ ճշմարտիւ կարծել յեղելոցն տեսլենէ*: ¹⁸Ձի ցամաքայինքն ՚ի ջուրս փոխէին, և լուղակքն յերկիր դառնային*: ¹⁹Հուր՝ ջրոյ յաղթէր իւրով զօրութեամբ, և ջուր՝ զիւր շիջուցիչ բնութիւնն մոռանայր: ²⁰Եւ բոցք՝ դարձեալ զդիրաժախ անասնոցն զմարմինսն ո՛չ թառամեցուցանէին ՚ի շրջելն իւրեանց. և ո՛չ հալէին զսառնակերպ զդիրահալ զազգ անուշակ կերակրոյն: Ձի յամենայնի բարձրացուցեր զժողովուրդ քո և փառաւորեցեր. և ո՛չ անտես արարեր յամենայն ժամանակի, և յամենայն տեղիս քոյով պաշտպանութեամբ Տէր*:

* *Ոմանք.* Ամենայն արարած յիւրաքանչիւր կարգէ... արբանեկեալ քոյոց հրամա՛:

* *Ոսկան.* Ձի քո որդիք պահեսցին անվնաս:

* *Ոմանք.* Ձի ՚ի ջրոցն ցամա՛... և ՚ի Կարմիր ծովէն:

* *Ոմանք.* Որ քոյով ձեռամբ: *Ոսկան.* Տեսեալ զգործս քո սքանչելիս:

* *Ոմանք.* Ձի որպէս ձիս ճարակեցան:

* *Ոմանք.* Բազմութիւն գորտանց:

* *Ոմանք.* Տեսին նոր ծնունդ թռչնոց... խնդրէին խորտիկս կերակրոց:

* *Ոմանք.* Լորամարզին ՚ի ծովէն... բռնութեան հրայրեաց բարկութեանց:

* *Ոմանք.* Ձանծանօթ եկեալսն ո՛չ ընդունէին:

* *Ոմանք.* Եւ ո՛չ այսչափ միայն:

* *Ոմանք.* Խնդութեամբ տօնակից ընկալեալ... զի անհնարին ցա՛:

* *Բագոււմք.* Հարան շլացութեամբ: *Ուր օրինակ մի.* շլութեամբ... անբաց խաւարաւն ծածկեցան. կուրացեալք խաւարաւն զեւս դրանցն խնդրէին:

* *Ոմանք.* Բնակութիւնք պատշաճեալք որպէս սաղմոսարանաւ իւրաքանչիւր ձայնիւ յարմարեալք զիւրաքա՛... ճշմարտ կարծել:

* *Ոմանք.* Ի ջուրսն փոփոխէին, և դաւղակք, *կամ՝* դուղակք յերկիր:

* *Ոմանք.* Անուշակ կերակրոց... քով պաշտպա՛:

ԳԻՐՔ ՍԻՐԱՔԱՅ

Որ կոչեցաւ Յեսու

1

Գլուխ Ա

¹Ամենայն իմաստութիւն ՚ի Տեառնէ է. կայ և մնայ ընդ մնա յաւիտեան:
²Ձաւագ ծովո՛ւ և գշիթս անձրևաց և զաւուրս ժամանակաց ո՞ թուեսցէ երբէք*:
³Ջբարձրութիւնս երկնից և զլայնութիւնս երկրի, և զանդունդս իմաստութեան՝
զայն ո՞ քննեսցէ: ⁴Յառաջ քան զամենայն հաստատեցաւ իմաստութիւն՝
զգոնութիւն և հանճար յաւիտենից էին: ⁵Արմատք իմաստութեան ՚ի մնա՝
յայտնեցան: ⁸Մի՛ է իմաստութիւն ահեղ յոյժ՝ որ մտի ՚ի վերայ աթոռոց
գովութեան իւրոյ: ⁹Ինքն Տէր հաստատեաց զնա՛, ¹⁰և սփռեաց զնա՛ յարարածս
իւր, և յամենայն մտեղիս ըստ պարզևաց իւրոց: ¹¹Երկիւղ Տեառն փա՛ռք և
պարծա՛նք, և ցնծութեան և ուրախութեան պսակ: ¹²Երկիւղ Տեառն ուրախ առնէ
զսիրտս՝ և շնորհս և խնդութիւն՝ և երկայն աւուրս մատուցանէ: ¹³Որ երկնչի ՚ի
Տեառնէ՝ բարի գտցէ ՚ի վախճանի, և յաւուր կատարածի իւրոյ օրհնեսցի*:
¹⁶Սկիզբն զգոնութեան երկնչել՝ ՚ի Տեառնէ. ընդ հաւատացեալս յարգանդի
ստեղծաւ. և ՚ի վերայ զաւակի նոցա հաւատարիմ ողորմութիւն լինէր: ²⁰Կատար
իմաստութեան երկնչել ՚ի Տեառնէ, և լցուցանէ զնոսա յարմտեաց իւրոց*.
²¹և զամենայն տունս նոցա լի՛ առնէ ցանկութեամբ իւրով: ²²Պսակ զգոնութեան
երկիւղ Տեառն, զուարճացեալ խաղաղութիւն մնա ողջութեամբ հանդերձ:
²³Իբրև հայեցաւ և համբուրեաց զնա՛. ²⁴զհանճար և զիմաստութիւն
աւանդապահաց նորա բարձրացոյց: ²⁵Արմատք իմաստութեան երկնչել՝ ՚ի
Տեառնէ. և շաւիղք նորա երկայնակեաց ժամանակաց*: ²⁸Ո՛չ է մարթ՝ եթէ
արդարասցի ցասունն տարապարտուց, զի մի՛ շիթ բարկութեան կործանումն
անձին իւրում լինիցի: ²⁹Առ ժամանակ մի պինդ կալ է համբերողի. և մինչև ՚ի
վախճան ՚ի մէջ կալ ամենայն ուրախութեան. ³⁰և առ ժամանակ մի ունել զսիրտ
և պահել զբան իւր, և բազում շրթունք պատմեսցեն զգովութիւն իմաստութեան
նորա: ³¹Ի զանձս իմաստութեան նորա առակք զգոնութեան: ³²Անարգ թուի

* Յաւարտ գրոցս Իմաստութեան յօրինակին մերում առանց վախճանական բանիս՝
Կատարեցաւ, և այլն. անմիջաբար յարին երկու ոտանաւորք Շնորհալուոյն՝
Աստուածեղէն Յոգուովն ՚ի սնա, և այլն. և Քաղցրագունիս այս բաղձանօք. զորս ունի և
այլ օրհնակ մի: Այլ յայսմ վայրի զանց արարեալ մեր զսոքօք, կնքեցաք զգիրս
սովորական բանիւն՝ Կատարեցաւ, և այլն. առեալ ՚ի համաձայնութենէ բազում
գրչագրաց. թպէտ և ՚ի նոսա օրհնակ մի դնէր՝ Կատարեցաւ Առակք Սողոմոնի:

* Ոմանք. Ո՛ թուեսցէ երբէք:

* Ոմանք. Եւ յաւուրս կատարա՞:

* Ոմանք. Պարար իմաստութեան երկն՞:

* Ոմանք. երկայնակեաց ժամանակի:

յաչս անհրաւին աստուածաշտութիւն: ³³Դու ո՞վ որդեակ ցանկա՛ իմաստութեան՝ և պահեա՛ զնա, և Տէր սփռեսցէ ՚ի քեզ զհանճար և զիմաստութիւն: ³⁴Ձի զգօնութիւն իմաստութեան երկիւղ Տեառն է, ³⁵և հաճոյ նմա հաւատք և հեզութիւն: ³⁶Մի՛ անհնազանդ լինիր յերկիւղ Տեառն, և մի՛ գնար դու առ նա ՚ի միտս երկմիտս: ³⁷Եւ մի՛ կեղծաւորի որ առաջի մարդկան, և շրթանց քոց զգո՛յշ լինիջի՛ր:

2

Գլուխ Բ

¹Որդեա՛կ իմ եթէ մերձենաս ծառայել Աստուծոյ՝ պատրաստեա՛ զանձն քո ամենայն փորձութեան՝: ²Ուղի՛ղ արա զսիրտ քո՛. և զմիտս քո հաստատեա՛ համբերութեամբ: ՚Ի ժամանակի յորժամ փորձանք հասանիցեն, ³մե՛րձ լեր ՚ի Տէր՝ և մի՛ անհաւատար, զի բարձրացիս ՚ի վախճանի: ⁴Ամենայն փորձութիւնք որ զան քեզ՝ ուրախութեամբ ընկալ. և ՚ի ցաւս տառապանաց գոհութեամբ երկայնամիտ լիցիս: ⁵Ձի ՚ի հուր փորձի ոսկի, իսկ մարդ փորձի ՚ի բովս խոնարհութեան՝: ⁶Հաւատա՛ ՚ի Տէր և օգնեսցէ քեզ: Ուղիղ կալ զճանապարհս քո և յուսասջի՛ր ՚ի նա: ⁷Երկիւղածք Տեառն ակն կալէք ողորմութեան նորա, և մի՛ խոտորիք, զի մի՛ կործանեսջիք: ⁸Երկիւղածք Տեառն ակնկալարո՛ւք բարւոյ, և ողորմութեան և ուրախութեանցն յաւիտենից: ⁹Հայեցարո՛ւք յազգս առաջինս և տեսէք, ո՞վ հաւատաց ՚ի Տէր՝ և յամօթ եղև. ¹⁰և ո՞վ է որ եկաց յահի նորա՝ և նա եթող զնա. և կամ ո՞վ է որ կարդաց առ նա՝ և յապաղեաց, ¹¹զի գթած և ողորմած է Տէր, և թողու զմեղս, և փրկէ ՚ի ժամանակի նեղութեան: ¹²Վա՞՞յ սրտից վատաց և ձեռաց լքելոց, և մեղաւորի՝ որ հասեալ իցէ ՚ի վերայ երկուց ճանապարհաց՝: ¹³Վասն այնորիկ մի՛ ապրեսցին: ¹⁴Վա՞՞յ որ կորուսեալ է զհամբերութիւն. ¹⁵թէ զինչ հասցէ նմա յաւուր զալստեան Տեառն՝: ¹⁶Երկիւղածք Տեառն հնազանդ լիցին բանից նորա. և որ սիրեն զնա՝ պահեն զպատուիրանս նորա: ¹⁷Երկիւղածք Տեառն խնդրեսցեն զհաճոյս նորա, և որ սիրեն զնա լցցին յօրինաց նորա: ¹⁸Երկիւղածք Տեառն պատրաստեսցեն զսիրտս իւրեանց, և առաջի Տեառն խոնարհեցուցեն զանձինս իւրեանց, ¹⁹և ասացեն. Անկցուք մեք ՚ի ձեռս Աստուծոյ, և մի՛ ՚ի ձեռս մարդկան. ²⁰զի որպէս մեծութիւն նորա՝ սոյնպէս և ողորմութիւն, և որպէս անուն նորա՝ սոյնպէս և գործք:

3

Գլուխ Գ

¹Ինձ հօրս լուարո՛ւք որդեակք, և զայս արասջի՛ք զի ապրեսջիք՝: ²Ձի Տէր փառաւորեաց զհայր ՚ի վերայ որդւոյ, և զիրաւունս հօր հաստատեաց յորդիս: ³Որ պատուէ զհայր՝ քաւէ զմեղս, և անձին իւրում զանձէ զանձս: ⁴Փառաւոր

* Ոմանք. Յամենայն փորձութեան:

* Ոմանք. Եւ մարդ փորձի:

* Ոմանք. Եւ ձեռաց լքացելոց. և մեղաւորաց:

* Ոմանք. Եւ թէ զինչ հաս՝:

* Ոմանք. Լուարուք որդիք:

առնէ զմայր իւր՝ ⁶որ պատուէ զնա, և ուրախ լիցի յորդիս իւր: ⁹Մեծարեա՛ դու զհայր քո, ¹⁰զի ծաղկեսցէ ՚ի վերայ քո օրհնութիւն նորա: ¹¹Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոյ՝ և անէծք մօր խախտեն ՚ի հիմանէ: ¹²Որդեակ՝ մի՛ մեծարիր ՚ի վերայ հօր անարգանաց, զի չէ՛ քեզ փառք ՚ի վերայ անարգանաց նորա: ¹³Ձի փառք մարդոյ ՚ի վերայ մեծարանաց հօր իւրոյ. և նախատինք որդւոյ՝ անարգանք մօր: ¹⁴Որդեակ՝ զօրավի՛զն լեր ծերութեան հօր քո, և մի՛ տրտմեցուցաներ զնա ՚ի կեանս իւր: ¹⁸Յայիոյիչ է՝ որ թողու զհայր, և անիծեալ է ՚ի Տեառնէ՝ որ ցասուցանէ զմայր: ¹⁹Որդեակ՝ իմ, զկեանս քո հեզութեամբ անցո՛, և ընդունելի մարդոյ սիրելի լիցիս: ²⁰Որչափ մեծ իցես՝ խոնարհ կալջիր զանձն քո, զի առաջի Տեառն գտցես շնորհս: ²¹Մեծ է զօրութիւն Տեառն՝ և փառաւորեսցի ՚ի խոնարհաց իւրոց: ²²Որդեակ՝ իմ՝ որ մեծ է քան զքեզ, զայն մի՛ քններ. այլ որ ինչ հրամայեցաւ քեզ՝ զայն խորհեաց՝: ²⁴Որ ինչ աւելին է քան զպէտս քո՝ զայն մի՛ զններ՝: ²⁶և մի՛ մոլորիցիս կարծեօք, զի զբազում հանճարեղաց խորհուրդս կարծօղ միտք զայթակղեցուցին: ²⁷Որ սիրէ զչար՝ ՚ի նմին սատակեսցի: ²⁹Սիրտ խիստ ծանրացի ցաւօք: ³⁰Չի՛ք ինչ բժշկութիւն տանջանաց ամբարտաւանին, զի զարմատ դառնութեան տնկեաց յանձն իւր՝: ³¹Սիրտ իմաստնոյ խորհեսցի յառակս, և ունկն լսելեաց ցանկասցի իմաստութեան: ³³Չվառեալ հուր՝ ջուր շիջուցանէ, և զմեղս բազումս քաւեն ողորմութիւնք՝: ³⁴և ՚ի ժամանակի կործանման նորա գտցէ ձեռնկալութիւն՝:

4

Գլուխ Դ

¹Որդեակ՝ մի՛ զլանար զկեանս աղքատաց. ²և մի՛ զանձինս քաղցեալս տրտմեցուցաներ: Մի՛ զայրացուցաներ զմարդ ՚ի տկարութեան իւրում: ³Չսիրտ տառապելոյ մի՛ զայրացուցաներ. մի՛ յապաղեր զտուրս կարօտելոյն՝: ⁴Մի՛ անտես առներ զծառայ ՚ի նեղութեան. մի՛ դարձուցաներ զերեսս քո յաղքատաց: ⁵Մի՛ տար տեղի անիծանել զքեզ, ⁶զի յորժամ դառնացեալ մտօք անիծանեն զքեզ, վաղվաղակի լսէ աղօթից նորա՝ որ արար զնա: ⁷Որդեակ՝ սիրելի արա՛ զանձն քո ժողովրդեան, ⁸և առաջի իշխանի խոնարհեսցո՛ զունկն քո. և խօսեաց առաջի նորա հեզութեամբ ՚ի խաղաղութիւն՝: ⁹Փրկեա՛ զզրկեալս ՚ի ձեռաց զրկողաց, և մի՛ զայրանար ՚ի դատաստանի: ¹⁰Լե՛ր իբրև զհայր որբոց, ¹¹և եղիցիս որդի Բարձրելոյն: ¹²Որդեակ՝ իմաստութիւն զորդիս բարձրացոյց, ¹³և որ սիրեն զնա՝ սիրեն զկեանս. և որ կանխէ առ նա՝ լցցի ամենայն բարութեամբ: ¹⁴Որ ընդունի զնա՝ ժառանգէ զփառս, և ուր մտանէ՝ օրհնէ զնա Տէր. ¹⁶և որ նմա լսէ՝ դատի զհեթանոսս՝: ¹⁷Եթէ հաւատացես՝ ժառանգեսցես

* Ոմանք. Որ պատուէ զմայր իւր. (6) և ուրախ եղիցի:

* Ոմանք. Այլ զոր ինչ հրա՛:

* Ոմանք. Որ առաւել է քան:

* Ոմանք. Չարմատս դառնութեան:

* Ոմանք. Շիջուցանէ ջուր:

* Ոմանք. Գտցեն ձեռնկալութիւն:

* Ոմանք. Եւ զսիրտս տառապելոց:

* Ոմանք. Եւ առաջի իշխանաց:

* Ոմանք. Դատիցէ զհեթանոսս:

զնա, և ՚ի ժառանգութեան քուն եղիցին ստացուածք նորա*։ ²³Պահեա՛ զժամանակին իրս, և երկիր ՚ի չարէ։ ²⁴և մի՛ կրեր ամօթ յանձն քո. ²⁵զի է՛ ամօթ՝ որ ածէ մեղս, և է՛ ամօթ՝ որ ածէ զփառս և զուրախութիւն։ ²⁶Ո՛րդեակ, մի՛ ակն առնուր յանձին քուն, ²⁷զի մի անաչեսցես ՚ի կործանման քուն։ ²⁸Մի՛ արգելուր զբան ՚ի ժամանակի փրկութեան։ Մի՛ թագուցաներ զիմաստութիւն քո. ²⁹զի բան յայտնէ զիմաստութիւն, և խրատ իմաստութեան ՚ի խօսս լեզուի։ ³⁰Մի՛ դառնար ընդդէմ ճշմարտութեանն՝ մի և մի՛ իւրք։ Ջոր ո՛չ գիտես և հարցանեն ցբեզ, դու մի՛ ամօթ համարիր զչգիտելն. ³¹և վասն մեղաց քոց մի՛ անաչեր խոստովանել։ ³²Ո՛րդեակ՝ մի՛ ակն առնուր ՚ի հօրէ, ³³և մինչև ՚ի մահ մարտիր վասն ճշմարտութեան. և Տէր Աստուած քո օգնեսցէ քեզ։ ³⁴Մի՛ շուտախօս լինիր՝ և խօթասիրտ և լքեալ ՚ի գործս քո*։ ³⁵Մի՛ առանձին առիժանար ՚ի տան քուն, և օծտող ՚ի մէջ ծառայից քոց։ ³⁶Մի՛ լիցիս յօժար յառնուլն ձեռօք, և ՚ի տալն կարկամեալ։

5

Գլուխ Ե

¹Եւ ՚ի վերայ ընչից քոց մի՛ ծանրանար։ ²Մի՛ երթար զհետ անձին և զօրութեան քո, և մի՛ հպարտանար ՚ի գանձս քո։ Մի՛ լինիր յանձնապաստան՝ և ասեր, եթէ բազում են ինչք իմ։ ³Մի՛ ասեր, թէ չար ինձ ո՞վ առնէ, զի Տէր խնդրեսցէ զվրէժս ՚ի քէն։ ⁴Մի՛ ասեր, թէ չար գործելով մեղայ, արդ զի՞նչ եղև ինձ. զի Տէր երկայնամիտ է ⁵վասն դարձի քո և քաւութեան. ⁷զի ողորմութիւն և բարկութիւն ՚ի ձեռին նորա է, և ՚ի մեղաւորս յագեցուցանէ զսրտմտութիւն իւր*։ ⁸Ո՛րդեակ՝ մի՛ յապաղիցես դառնալ ՚ի մեղաց առ Տէր*, ⁹զի մի առ մեղս քո սատակիցիս*։ ¹⁰Մի՛ յանիրաւ գանձս յուսար, զի ո՛չ օգնեսցեն քեզ յաւուր բարկութեան։ ¹¹Մի՛ առ ամենայն շաւիղս առներ զգնացս քո, զի այս մեղաւորի բաժին և երկխօս մարդոյ է։ ¹²Խորհուրդ բարի հաստատեսցի ՚ի միտս քո, և նոյն բան կացցէ ՚ի բերան քո։ ¹³Լէ՛ր դու երագ լսելեօք, և երկայնամիտ ՚ի պատասխանիս։ ¹⁴Եթէ իմաստութիւն եկեսցէ ՚ի քեզ՝ տո՛ւր պատասխանի ընկերին քուն, ապա թէ ոչ՝ ավիբերան լիցիս։ ¹⁵Փառք և անարգանք ՚ի ձեռս լեզուի, և կործանումն մարդոյ ՚ի ձեռն անարգ լեզուի իւրում։ ¹⁶Մի՛ սիրեր լինել բանսարկու, և լեզուաւ մի՛ գայթազդեր։ ¹⁷Խրատ, ամօթ, և անարգանք են ՚ի վերայ գայթազդութեան, և քան զայս ՚ի վերայ երկխօս լեզուի*։

6

Գլուխ Զ

¹Անուն վատ՝ ամօթ և անարգանք ժառանգէ, և մարդ մեղաւոր զերկխօսութիւն։

* Ոճանք. Ստացուածք նորա քեզ։

* Ոճանք. Մի՛ շատախօս լինիր։

* Ոճանք. Եւ ՚ի մեղս յագեցուցանէ։

* Ոճանք. Մի՛ յապաղեր դառնալ։

* Ոճանք. Առ մեղս քո մեռանիցիս։

* Ոճանք. Խրատ անամօթ և անարգ։

²Մի՛ հպարտանար յանձին քո խորհուրդ՝ ³զի մի՛ ապականիցես զպտուղ քո, և անարգեսցիս իբրև զփայտ անպտուղ: ⁴Անձն չար կորուսանէ զըստացիչս իւր, և ոտնհար լիցի անձն իւր թշնամեաց իւրոց* : ⁵Քաղցրախօս մարդ՝ բազում բարեկամս առնէ, և լեզու քաղցր՝ ՚ի բազմաց յաճախ առնու գովութիւն: ⁶Ո՛րդեակ՝ բազումք եղիցին բարեկամք քո, բայց ՚ի հազարաց եղիցի քեզ մի խորհրդակից: ⁷Եթէ ստանաս քեզ բարեկամ՝ ՚ի ժամանակի նեղութեան ստացիր, բայց մի վաղվաղակի հաւատար ՚ի նա. ⁸զի են բարեկամք սիրոյ ժամանակի, բայց յաւուր բարկութեան ոչինչ են: ⁹Եւ է՛ բարեկամ՝ որ լինի ՚ի տեղի թշնամւոյ, և առ կագ զթշնամութիւն իւր յայտնէ նախատել զքեզ: ¹⁰Բարեկամ հաղորդ սեղանոյ՝ ո՛չ օգնէ քեզ ՚ի նեղութեան. ¹¹և բարեաց քոց լիցի բաժանորդ՝ որպէս և դու* . ¹²և թէ նեղութիւն հասանէ քեզ՝ ամբաստան լիցի զքէն, և յերեսաց քոց թագուն շրջի: ¹³Ձանտ կաց ՚ի թշնամեաց քոց, և ՚ի սուտակասպաս բարեկամէ և յերկխօսէ զգո՛յշ լեր: ¹⁴Բարեկամ հաւատարիմ՝ աշտարակ ամուր, և որ եգիտ զնա՝ եգիտ գանձ* : ¹⁵Հաւատարիմ բարեկամի չիք գինք, ¹⁷և որ ՚ի Տեառնէ երկնչի՝ բարեկամ բարի յաջողի նմա, զի որպէս և նա է՝ նոյնպէս և բարեկամն: ¹⁸Ո՛րդեակ՝ ՚ի մանկութեան քուն ընտրեա՛ զիմաստութիւն, և մինչև ՚ի ծերութիւն գտանես զհանճար: ²¹Եւ զի դժուարին է հանճար տգիտաց, զի ո՛չ կարեն նմա հասու լինել: ²³Ձգօնութիւն ըստ անուան իւրում կայ, և յայտնի բազմաց ո՛չ է: ²⁴Լո՛ւր ինձ որդեակ, և ընկալ զխրատ իմ, և մի՛ լինիր ՚ի բաց ՚ի հանճարէ իմմէ: ²⁵Ա՛րկ դու զոտս քո ՚ի կապս նորա, և ընդ անուր նորա զպարանոց քո: ²⁷Յամենայն մտաց մատի՛ր դու առ նա, և յամենայն զօրութենէ պահեա՛ զճանապարհս նորա: ²⁸Խնդրեա՛ դու և քննեա՛ և յայտնեա՛ ՚ի քեզ* . ²⁹և ՚ի վախճանի գտցես զհանգիստ նորա: ³⁰Եւ կապանք իմաստութեան եղիցին քեզ ապաստանս զօրութեան, և անուրք նորա ՚ի զարդ ոսկւոյ: ³²Եւ պասկ ցնծութեան դիցի ՚ի գլուխ քո: ³³Ո՛րդեակ՝ եթէ կամիս խորագէտ լինել՝ ³⁵ի մէջ ծերոց կացցես, և որ իմաստունն է՝ ՚ի նա մերժեսցիս: Ջօր ամենայն զպատգամս Աստուծոյ կամեա՛ դու լսել, և առակք իմաստութեան ՚ի քէն մի անցցեն: ³⁶Եթէ զոք ՚ի հանճարեղաց գտցես, ստէպ կանխեա՛ առ նա: ³⁷Խորհեա՛ դու ՚ի հրամանս Տեառն, և նա հաստատեսցէ զսիրտ քո, և զիմաստութեան ցանկութիւն տացէ քեզ:

7

Գլուխ Է

¹Ո՛րդեակ՝ մի՛ չար գործեր, և չար ո՛չ հասցէ քեզ: ²Յանիրաւաց ՚ի բա՛ց լեր, և նոքա մերժեսցին ՚ի քէն: ³Յակօսս անիրաւ մի՛ սերմաներ, զի մի՛ հնձեսցես եւթնապատիկ չար ՚ի նմանէ: ⁴Իշխանութիւն ՚ի Տեառնէ մի՛ խնդրեր, եթէ ո՛չ գնասցես ըստ կամաց նորա: Ջաթոռ փառաց ՚ի թագաւորէ մի՛ խնդրեր, եթէ հպատակ հնազանդ ո՛չ իցես կամաց նորա* : ⁵Առաջի թագաւորաց ձև բանից մի՛ առներ: ⁶Դատաւոր մի՛ զքեզ կամիր, եթէ ո՛չ կարես կորզել զիրաւն յանիրաւէն:

* Ոճանք. Ջտածիչ իւր:

* Ոճանք. Լինի ժառանգորդ որպէս դու:

* Ոճանք. Աշտարակ հզօր:

* Ոճանք. Ընտրեա՛ դու և քննեա՛:

* Ոճանք. Հպատակ զամենայն ոչ իցես հրամանաց նորա:

Մի՛ զանգիտեր դու յերեսաց իշխանին, զի մի՛ դնիցես գայթազդութիւն յիրաւունս: ⁷Ի բազմութիւն քաղաքաց մի՛ մեղանչեր, և յամբոխ զանձն քո մի՛ տացես: ⁹Յաղօթս քո կարճամիտ մի՛ լինիր, և ողորմութիւն մի՛ յապաղեր առնել: Ջպատուիրանս Աստուծոյ մի՛ յամեր առնել* ¹²և զմարդով՝ ի դառնութիւն սրտի նորա մի՛ ծիծաղիր: Չի որ խոնարհեցուցանէ՛ նոյն և բարձր առնէ: ¹³Ո՛րդեակ՝ յեղբարս և ի բարեկամս ստութիւն մի՛ սերմաներ: ¹⁵Ի մէջ ծերոց մի՛ ճոխանար, և յուխտի քում զբանս մի՛ կրկներ: ¹⁷Առ արդարս զանձն քո մի՛ ունիր, և առ մեղաւորս անզեղջ զքեզ մի՛ համարիր: ¹⁹Դահիճ ամբարշտաց և մեղաւորաց՝ յաւիտենից հուրն և որդն անմահ: ²⁰Ո՛րդեակ՝ զբարեկամս ընդ կաշառոյ մի՛ փոխանակեր, և զեղբայր հարազատ ընդ ոսկւոյ Սափիրայ: ²¹Մի՛ վրիպեր ի բարեկամէ և ի հանճարեղ կնոջէ, զի լաւ է շնորհք նորա քան զոսկի: ²²Չժառայ ճշմարիտ որ վաստակիցէ քեզ՝ մի՛ զայրացուցես: Եւ զվարձկան որ տուեալ իցէ զանձն իւր ի վերայ քո՝ մի՛ զգուեր: ²³Չժառայ ժիր սիրեա՛ դու, և յազատութենէ կարօտ զնա մի՛ առներ: ²⁴Գրաստ քո իցէ պիտանի՝ խնամ տա՛ր նմա և դարմանեա՛: ²⁵Որդիք իցեն քո՝ խրատեա՛, և զպարանոց նոցա խոնարհեցո՛: ²⁶Դատերք իցեն քո՝ զգո՛յշ կաց, և մի՛ զգուեր զնոսա և համարձակեցուցաներ: ²⁷Առն իմաստնոյ տո՛ւր զնոսա, և քո գործ մեծ գտանի կատարեալ: ²⁸Եթէ ըստ կամաց քոց իցէ կին՝ մի՛ հաներ զնա ի քէն, և զքեզ ի նա մի՛ հաւատար՝ եթէ նա զքեզ ասիցէ: ²⁹Ո՛րդեակ՝ զհայր քո պատուեսջիր յամենայն զօրութենէ, և զմօր երկունս մի՛ մոռանար* ³⁰հատո՛ նոցա որպէս նոքա քեզ, զի նոքօք ծնար: ³¹Երկիր՝ ի Տեառնէ յամենայն սրտէ քումմէ, և մեծարեա՛ զքահանայս նորա: ³²Սիրեա՛ զարարիչն քո, և զպաշտօնեայս նորա մի՛ արհամարհեր: ³³Պատուեա՛ զքահանայս, և տո՛ւր զմասն նոցա զլերդաբոյոյն և զերիկամունսն ճարպովն: ³⁶Բարի արա՛ աղքատաց, զի օրհնութիւն քո կատարեալ լիցի: ³⁸Ի վերայ մեռելոց մի՛ կարօտ առներ զարտասուս քո*, ⁴⁰և վախճան քո յուշ լիցի քեզ:

8

Գլուխ Ը

¹Մի՛ հակառակիր ընդ առն հզօրի, զուցէ անկցիս ի ձեռս նորա: ²Ընդ մեծատան մի՛ հակառակիր, ³զի ոսկի և մեծութիւն թիրեաց զմիտս թագաւորաց: ⁴Ընդ առն լեզուանւոյ մի՛ կռուիր, զի ի վերայ հրոյ փայտ դիզես: ⁵Ընդ առն անմտի մի՛ խաղար՝ զուցէ զնախնիս քո նախատէ: ⁶Որ դարձեալ իցէ ի մեղաց՝ մի՛ զնա նախատեր, զի և մեք ընդ մեղաց պահու եմք: ⁷Ի ծերութեան զմարդ մի՛ անարգեր, զի և քո ծերանալ է: ¹⁴Ո՛րդեակ՝ ընդ առն թշնամանողի զբերան քո մի՛ բանար, զի իբրև զդարանակալ արշաւեսցէ ի վերայ քո: ¹⁵Առն հզօրի փոխ մի՛ տար, և թէ տաս՝ համարեա՛ թէ կորուսեր: ¹⁶Առն հարստի երաշխաւոր մի՛ մտցես, ապա թէ ոչ՝ տուժել հոգասջիր: ¹⁷Ընդդէմ դատաւորի ոսոխ մի՛ կար՝ զի մի՛ ըստ փառաց նորա դատեսցեն զքեզ: ¹⁸Ճանապարհ ընդ համարձակ մարդոյ մի՛ երթար, զի մի՛ զամենայն ինչ ի վերայ քո ծանրացուցէ. զի նա զոր առնէ՝ ըստ կամս իւր առնէ, և դու յանմտութենէ նորա կորնչիս: ¹⁹Մի՛ զնար մէն ընդ առն բարկացողի, և մի՛ կագիր ընդ նմա. զի յաչս նորա թեթև թուի

* Ոճանք. Մի՛ յապաղեր առնել:

* Ոճանք. Պատուեա՛ յամենայն:

* Ոճանք. Ի վերայ մեռելոյ:

արիւն: ²⁰Ո՛րդեակ՝ ՚ի խորհուրդ մի՛ մտաներ ընդ առն մորոսի, զի յինքն ո՛չ կարէ պահել զբանս քո: ²¹Օտարաց առաջի զգաղտնի գործ մի՛ գործեր, զի զպատահումն քո ՚ի նոցանէ ո՛չ գիտես: ²²Զսիրտ քո ամենայն մարդոյ մի՛ տարածաներ, զի մի՛ տարապարտուց շնորհս վարկանիցեն քեզ:

9

Գլուխ Թ

²Ո՛րդեակ՝ ՚ի կին մարդ զանձն քո մի՛ համարձակեր, զի մի՛ հասցէ ՚ի վերայ զօրութեան քո: ³Յերեսս կնոջ պոռնկի մի՛ լկնիր՝ զի մի՛ յորոգայթս նորա անկցիս*: ⁴Առ կանայս երգեցիկս մի՛ կանխիր, զի մի՛ ըմբռնիցիս ՚ի ցաւս*: ⁵Ընդ կոյս մի՛ պշնուր՝ զի մի՛ գայթազդեսցիս ՚ի զեղ նորա*: ⁶Չանձն քո պոռնկութեան մի՛ մատներ, զի մի՛ զժառանգութիւն քո կորուսցես: ⁷Ընդ փողոցս քաղաքաց մի՛ շրջիր, և ՚ի գնացս ճանապարհաց նորա ո՛չ մոլորիս: ¹²Ո՛րդեակ՝ ընդ առնակնոջ ամենեկին մի՛ ընդելանար, և ընդ նմա ՚ի գինի մի՛ հանգանակիր, ¹³զի մի՛ սիրտ քո խտորեսցի, և անձամբ կործանեսցիս: ¹⁴Զբարեկամ հին մի՛ թողուր, զուցէ որ նորն է՝ չիցէ նմա հաւասար: ¹⁵Նոր գինի բարեկամ նոր, եթէ հնասցի՝ ուրախութեամբ արբջիր: ¹⁶Ընդ փառս առն մեղաւորի մի՛ նախանձիր, զի զկատարած նորա ո՛չ գիտես: ¹⁷Ընդ հաճոյս ամբարշտաց մի՛ միաբանիր, զի ո՛չ արդարացիս: ¹⁸Որոյ ՚ի ձեռս իւր է իշխանութիւն սպանանելոյ՝ հեռի լեր ՚ի նմանէ, և եթէ մերձենաս՝ մի՛ մեղանջեր*: ²¹Զօրութեան քում չա՛փ առ՝ և ըստ կարի քում կշռեա՛ զբանս քո. և զմերձաւորս, և զխորհուրդս քո ընդ հանճարեղս արասջիր: ²²Արդարք եղիցին հացակիցք քո, և երկիւղածք Տեառն պարծանք քո: ²⁴Ի ճարտարութեան ձեռաց զովեսցին գործք, և որ իմաստուն է բանիւք, առաջնորդէ ժողովրդեան, ահեղ է ՚ի մէջ ընկերաց*:

10

Գլուխ Ժ

¹Դատաւոր իմաստուն խրատ ժողովրդեան, ²ըստ հրամանի նորա և հարկահանքն: ³Թագաւոր անխրատ՝ կորուսանէ զգօրս. քաղաք շինեսցի յիմաստութենէ իշխանաց: ⁴Իշխանութիւն երկրի ՚ի ձեռս Աստուծոյ, և զպիտանին յարուսցէ ՚ի ժամանակի*: ⁵Ի ձեռս Տեառն է առնն ուղղութիւն, և ՚ի վերայ երեսաց գրով դիցէ զփառս իւր: ⁶Ոխս ընկերի վասն ամենայն յանցանաց մի՛ ունիցիս: Որդեակ ՚ի ստութենէ և ՚ի մեղաց հեռացիս: ⁷Ամբարտաւանութիւն ատելի է Աստուծոյ և մարդկան: ⁸Թագաւորութիւն ազգէ յազգ փոխի, և վասն անիրաւութեան և հպարտութեան կորնչին: ¹¹Թագաւոր այսօր է՝ և վաղիւ մեռանի: ¹⁴Ամբարտաւանութեան սկիզբն՝ հեռանալ ՚ի Տեառնէ. զի յարարչէն

* Ոմանք. Պոռնկի մի՛ պշնուր... յորոգայթ նորա:

* Ոմանք. Մի՛ կանխիր զի յորոգայթ նոցա մի՛ անկցիս:

* Ոմանք. Ընդ կոյսս մի՛ նայիր:

* Ոմանք. Եւ թէ մեր՝:

* Ոմանք. Ի ճարտարութենէ ձեռաց զովեսցի գործ, և որ իմաստուն ձեռօք առաջնորդէ ժողովրդեանն, օրհնեալ է ՚ի մէջ:

* Ոմանք. Իշխանութիւնք ՚ի ձեռս Աստուծոյ... յարուցանէ:

խոտորեցաւ սիրտ նորա: ¹⁷Չաթոռս ամբարտաւանից կործանեցէ Տէր:
¹⁸Չարմատս հեթանոսաց խլեաց Տէր, և փոխանակ նոցա տնկեաց զհանդարտս,
 և զբարեպաշտս: ²²Ամբարտաւանութիւն ոչ ընդ մարդկան ստեղծաւ. վասն
 այնորիկ զօրացոյց Տէր զբարկութիւն և կործանեաց զնա*: ²³Ո՞ր է պատուական
 զաւակ մարդկան, երկիւղածաց Տեառն զաւակ պատուական: Ջաւակ անա՛րգ է
 որ անցանէ զպատուիրանաւ ծնողաց*: ²⁴Ի մէջ եղբարց երեցն է պատուական,
 իսկ որ ՚ի Տեառնէ երկնչի՝ պատուական է քան զնա*: ²⁵Փառաւորին մեծին և
 աղքատին պարծանք՝ երկիւղ Տեառն: ²⁶Ձայր աղքատ և իմաստուն անարգել չէ՛
 պարտ: ²⁷Յզօրն և իշխանն պատուեսցի: ³¹Ո՞րդեակ՝ անձին քուն հեզութեամբ
 շուք դիր. ³²զի որ անձամբ յանձն մեղանչէ՝ ո՞վ արդարացուցէ զնա: Որ զկեանս
 իւր անարգէ՝ ո՞վ մեծարէ զնա: ³³Մեծն ՚ի մեծութեան փառաւորի, և աղքատն ՚ի
 հանճար իւր:

11

Գլուխ ԺԱ

¹Հանճար իմաստութեան խոնարհաց զգլուխս բարձր առնէ, և նստուցանէ ընդ
 իշխանս*: ²Ընդ գեղ մարդոյ մի՛ զարմանար, և զայր յականէ մի՛ խոտեր: ³Ի
 թռչունս փոքր է մեղու, և պտուղ նորա գեղեցիկ: ⁴Գեղեցկագոյն հանդերձիւք մի՛
 պարծիր, և յաւուր փառաց մի՛ հպարտանար: ⁵Բազում իշխանք անկան ՚ի
 գետին, և որում ակն ո՛չ որ ունէր՝ կապեցաւ նմա թագ: ⁷Հա՛րց նախ՝ և մի՛
 բամբասեր. իմա՛ և ապա խօսիս: ⁸Ձիրս որ ոչ գիտես՝ մի՛ զրուցեր, և ՚ի մէջ
 բանից մի՛ անկանիր: ¹⁰Ո՞րդեակ՝ մի՛ բազմօք անկանիր ՚ի գործ, զի թէ յաճախես՝
 ո՛չ կարես բաւել. և թէ զհետ երթաս՝ չհասանիս, և թէ խոյս տաս՝ չապրիս*: ¹¹Ձի է
 որ ջանայ՝ վաստակէ, և առաւել ևս կարօտ գտանի*: ¹²Եւ է՛ որ նուազեալ ՚ի
 զօրութենէ, և լի աղքատութեամբ, և տկար և կարօտ օգնականի. ¹³և
 յանկարծակի հայեցաւ ՚ի նա Տէր բարութեամբ, կանգնեաց զնա ՚ի տկարութենէ.
 և բարձրացոյց զգլուխ նորա: ¹⁴Կեանք և մահ, բարի և չար, մեծութիւն և
 աղքատութիւն, առաջի Աստուծոյ հաւասար են: ¹⁵Սէր և իմաստութիւն՝ և
 ճանապարհ գործոց բարեաց ՚ի նմանէ է: ¹⁶Մոլորութիւն և խաւար վասն մեղաց
 հաստատեցաւ: Չարութիւն ընդ նոսին հնանայ՝ որ զնան չարութեամբ:
¹⁷Պարզեք Տեառն ՚ի վերայ արդարոց հաստատին: ¹⁸Մեծութիւն է՝ որ ՚ի
 պնդութենէ լինի: Եւ այն է մասն նորա, ¹⁹յորժամ ասիցէ ՚ի բարութենէ իմնէ
 կերայց և արբից. ²⁰և ո՛չ զիտէ զպատահումն իւր, զի թողուցու զայն օտարաց՝ և
 ինքն մեռանիցի: ²²Ո՞րդեակ՝ ընդ գործս ամբարշտաց մի՛ զարմանար, զի
 եղծանելեաւս զեղծանելին ստանայ: Այլ հաւատա՛ ՚ի Տէր՝ ²³զի դիւրին է յաչս
 Տեառն մեծ առնել զաղքատն: ²⁷Մի՛ յաւուրս չարեաց մոռանար զբարի, և մի՛
 յաւուրս բարւոյ մոռանար զչար: ²⁹Մոռացուցեն վիշտք զփափկութիւն և զգեղ.
 և յայտնութիւն գործոց կատարած մարդոյ: ³⁰Մի՛ ունեք երաներ յառաջ քան

* Ոճանք. Եւ կործանեաց զնոսա:

* Ոճանք. Որ անցանէ զպատուիրանս ծնողաց:

* Ոճանք. Եւ որ ՚ի Տեառնէ երկնչի:

* Ոճանք. Իմաստութեան, զգլուխս խոնարհաց բարձր առնէ:

* Ոճանք. Մի՛ անկանիր ՚ի բազում գործ. զի թէ յաճախես ոչ արդարանաս:

* Ոճանք. Կարօտ լինի:

զվախճան՝ զի որդւոյ մարդոյ մարթեսցես առնուլ զչափ նորա*։ ³¹Մի՛ զամենայն մարդ ՚ի տուն քո տանիր, զի դարանք Սատանայի պատրաստեն ՚ի նմա նենգութիւն*։ ³²Ձայր իմաստուն և զողջախոհ յամենայն ժամ սիրեսցես. զի ամբարտաւանն սրտիւ և նենգաւոր իբրև զդէտ գիտէ զնենգութիւն, զի բազմադիմի է չարիք նորա։ ³³Որպէս շուն՝ զի ուր մտանէ յափշտակէ, սոյնպէս և անօրէնն ուր հասանէ՝ սատակէ և խռովէ։ ³⁴Ի փոքր վշտոյ վառի հուր, սոյնպէս և անօրէնն ՚ի փոքր ինչ իրաց հեղու զարիւն իբրև զջուր*։ ³⁵Ի չարագործէ զգո՛յշ լեր՝ գուցէ ՚ի բամբասանս ածոց գրեզ։

12

Գլուխ ԺԲ

¹Ո՛րդեակ ընտրութեամբ արա՛ բարի մարդոյ, զի ՚ի նմանէ շնորհս բարեաց գտցես։ ²Բարի՛ արա բարեաց՝ զի փոխարէն լիցի քեզ. և թէ ՚ի նմանէ ոչ՝ սակայն ՚ի Բարձրելոյն։ ⁵Բարի արա՛ խոնարհին՝ և մի՛ ձեռն տար ամբարշտին ⁷զի մի՛ կրկին չար փոխարէն բարեացն ՚ի նմանէ գտցես։ Ահա և Բարձրեալն ատեաց զմեղաւորս, և ամբարշտի հատուցանէ հատուցումն։ ⁸Ի վերայ բարեաց բարեկամ ո՛չ երևի, և ՚ի վերայ չարեաց թշնամի ո՛չ թագչի։ ¹⁰Մի՛ հաւատար թշնամւոյ քո ամենկին՝ զի որպէս պղինձ զուճողաց ձեռս ժանգոտէ*։ ¹¹Ձգո՛յշ լեր՝ զանձն քո պահեա՛ ՚ի նմանէ, և եղիցիս դու անձին քում որպէս հայելի ջնջեալ։ ¹²Յաջմէ քո մի՛ նստուցաներ զնա՝ զի մի՛ խնդրեսցէ գտեղի քո. և յետոյ յիշեսցես զբանս իմ*։ ¹³Ձի գթովիչ օձահար՝ ո՞վ ապաշաւէ. և կամ զայն՝ որ մխտ գձեռն իւր ՚ի բերան գազանաց. սոյնպէս և որ մերձեանայ յանօրէն՝ թաթաւի ՚ի մեղս նորա*։ ¹⁴և թէ առ ժամ մի խոյս տայ գործոյն, կամակիցն ո՛չ համբերէ։ ¹⁵Սոյնպէս թշնամի քաղցր է շրթամբք, և ՚ի սրտի իւրում խորհի կործանել գրեզ։ ¹⁶Մզէ զարտասուս առաջի քո, այլ թէ ժամ գտանէ՝ արեամբ քո ո՛չ յագի։ ¹⁷Եթէ քեզ չար դիպի՝ առաջի քո չար գտանես զնա։ Կարծիս տայ օգնել քեզ, ¹⁸և շարժէ զգլուխ իւր՝ թէ ե՛րբ գտից ժամանակ կործանել զբարեկամս։ ¹⁹Եւ զերեսս իւր շրջէ յոգւոց հանելով, այլ ո՛չ ևս տեսանել գրեզ կենդանի։

13

Գլուխ ԺԳ

¹Ձի որ մերձեանայ ՚ի ձիւթ՝ շաղախի. և որ հաւատայ այնպիսւոյն՝ ապականի։ ²Որդեակ՝ ծանր ինչ քան գրեզ ՚ի վեր մի՛ առնուր, և որ մեծատուն է և հզօր՝ ընդ նա մի՛ հակառակիր։ ³Ձի՞նչ հաւասար է պոյտ ընդ կատսայի, զի ՚ի բախել առ իրեարս՝ ՚ի կաթսայէն մանրի կաւն։ ⁴Մեծն զրկէ զաղքատն՝ և դարձեալ մռնչէ. ՚ի մեծէն աղքատն զրկի, և ՚ի նմանէ սասանի։ ¹⁰Ձգո՛յշ լեր մի՛ մոլորիցիս, և

* Ոմանք. Մարթես առնուլ։

* Ոմանք. Պատրաստեն ՚ի նմանէ նենգ։

* Ոմանք. Ի փոքր բան ինչ իրաց։

* Ոմանք. ժանկոտէ։

* Ոմանք. Յաջմէ քումմէ։

* Ոմանք. Այնպէս որ... և թաթաւի։

յուրախութեան մի՛ կորանայցես: ¹¹Յորժամ ուրախութեան միջի իցես՝ չարաց զգոյ՜շ կաց, զի չարն ընդ բարին շոյտ խառնի: ¹²Եթէ հանդիպեսցիս չարաց մարդոց՝ և կոչեսցեն զքեզ ՚ի խրախութիւն, հեռացիր ՚ի նոցանէ՝ և մի՛ հասցեն քեզ: ¹³Մի՛ անձամբ ՚ի ներքս անկանիր՝ զի մի՛ կործանեսցիս, ¹⁴և բազմադէմ խօսից նոցա մի՛ հաւատար, զի ՚ի բազում խօսից փորձէ քննէ՝ և ծիծաղի զքեզ: ¹⁵Որդեակ՝ որ ոչ պահեսցէ զբանս բարեկամի՝ անիմաստ է. ¹⁹զի սիրէ անասունն զնմանիս իւր, և մարդ զհաւասար իւր: ²⁰Ազգ յազգ երթայ, և մարդ ՚ի նմանիս իւր: ²¹Գայլոյ ընդ գառին զի՞նչ նմանութիւն, սոյնպէս չի՞ք մեղաւորի ընդ արդարոյ: ²²Բորենի ընդ շան զի՞նչ հաւասարութիւն, սոյնպէս չի՞ք խաղաղութիւն աղքատաց ընդ մեծատան: ²³Որս առիւծու յանապատի՝ էշ վայրենի, սոյնպէս ճարակք մեծատանց՝ տնանկք*: ²⁴Գարշի ամբարտաւանն ՚ի խոնարհէն, սոյնպէս մեծատունն յաղքատէն: ²⁵Եթէ շարժի մեծն՝ ՚ի բարեկամաց իւրոց հաստատի, իսկ աղքատն յիւրոց բարեկամաց անկանի*: ²⁶Եթէ յանցանէ մեծն՝ օգնականք նմա բազում են, և թէ անարժան խօսի՝ արդարացուցանեն զնա: ²⁷Եւ իբրև յանցանէ աղքատն՝ յարուցեալ ՚ի վերայ պատուհասակոծ առնեն զնա, և եթէ իմաստուն բան խօսի՝ ծիծաղին և չտան թոյլ նմա*: ²⁸Խօսեցաւ մեծն՝ և ամենեքեան լռեցին, և բարձրացուցին զբան նորա մինչև յամպս: ²⁹Բայց զայս գիտասօջիր՝ զի սոցա և նոցա հատուցումն կայ՝ և Տէր: ³⁰Մեծութիւն բարի է՝ ուր ո՛չ գոն մեղք, և աղքատութիւն չար ՚ի բերան ամբարշտաց: ³¹Եթէ չար և եթէ բարի՝ ³²դէմք մարդոյ ցուցանեն զզուարթն և զբարկն:

14

Գլուխ ԺԴ

¹Որ ոչ զայթազդեսցի բերանով՝ ²Երանի նմա. և որ անձամբ զանձն ո՛չ վրիպեաց ՚ի յուսոյ Տեառն իւրոյ: ³Մեծութիւն առն կարճամտի ո՛չ վայելէ, և նախանձոտ մարդոյ ընդէ՞ր է մեծութիւն: ⁵Որ անձին չար է՝ այլոց բարի ո՛չ լինի: ⁶Զի՞նչ չար քան զայն որ նախանձի ընդ անձն իւր, ⁷և ՚ի վախճանի յայտնեսցի չարութիւն նորա: ⁹Ակն ազահի մասամբ ո՛չ յազի, ¹⁰զի ակն չարութեամբ զայրացեալ ՚ի վերայ սեղանոյ ցամաքեցուցանէ զանձն*: ¹¹Որդեակ՝ մինչդեռ ձեռնհաս ես՝ բարի գնա՛ ընդ անձին քում. ¹²յիշեա՛ զի մահ ո՛չ յամեսցէ: ¹³Ընդ բարեկամս քո բարի գնա՛, և ըստ կարի ձեռնտու լԵ՛ր նմա՝ մինչև մեռեալ իցես: ¹⁴Յաւուրց բարեաց մի՛ նուագիր, և մասն իմաստութեան մի՛ անցցէ զքև: ¹⁶Յառաջ քան զմահ զարդարութիւն գործեա՛. ¹⁷և յառ և ՚ի տուր անարատ և սուրբ պահեա՛ զանձն քո: ¹⁸Իբրև զձորձս մաշի ամենայն մարմին, և ՚ի դժոխս չի՞ք դիւրութիւն, զի ուխտ մահու իսկզբանէ է: ¹⁹Որպէս զտերև ՚ի վերայ վարսաւոր ծառոց, է՛ որ թօթափի՝ և է՛ որ բուսանի. նոյնպէս և մարդիկ՝ է՛ որ ծնանի, և է՛ որ մեռանի*: ²⁰Ամենայն գործ անցանէ, և որ գործէ զնա՝ ընդ նմին զնասցէ: ²¹Երանեալ է այր՝ որ իմաստութեամբ խորհի, և ՚ի խորհուրդս

* Ոմանք. էշ վայրի:

* Ոմանք. Յիւրոց բարեկամաց անգոսնի:

* [Ոմանք]. Եւ թէ իբրև յանցանէ:

* Ոմանք. Չարութեան զայրացեալ:

* Ոմանք. Որպէս և մարդիկ:

հանճարոյ իւրոյ խօսի*:

15

Գլուխ ԺԵ

¹⁴Որդեակ զմարդն իսկզբանէ յանձնիշխան կամս եստեղծ Աստուած, ¹⁷զիւր և զջուր եդ առաջի, զի յոր կամեսցի մխեսցէ զձեռս իւր. ¹⁸զի առաջի մարդոյ է մահ և կեանք: ¹⁹Տէր հօր է զօրութեամբ՝ տեսանէ զամենայն, և ինքն ո՛չ տեսանի: ²¹Ունեք նա ո՛չ հրամայեաց անբարշտել, և զանօրէնութիւն ՚ի մէջ մարդկան ո՛չ կամեսցաւ. զի և զանուն իւր սուրբ ՚ի սուրբս հաստատեաց: ³Զի լաւ է մին արդար որ առնէ զկամս Աստուծոյ, քան բիւր անօրէն:

16

Գլուխ ԺԶ

¹Որդեակ՝ մի՛ ցանկար բազմութեան անպիտան որդւոց. եթէ առ նոսա երկիւղ Աստուծոյ ո՛չ է, ²զկեանս քո մի՛ հաւատար ՚ի նոսա, և ո՛չ զմասն հոգւոյ քո, այլ դու տո՛ւր յաւանդ պահեստի. ⁴և լաւ համարեսցիր լինել անորդի, քան ստանալ որդիս անբարիշտս: ⁷Ի ժողովս մեղաւորաց հուր բորբոքեսցի, և յազգ անօրէն բարկութիւն վառեսցի: ¹³Ձայր ՚ի գործս իւր դատեսցի. ¹⁴զի մեղաւորն ՚ի յափշտակութեան իւրում ո՛չ ապրեսցի, և արդարն ՚ի համբերութեան իւրում ո՛չ սպառնի*: ⁹Ի պանդխտութիւնս Ղովտայ խնայեաց. ¹¹և զվեց հարիւր հազարսն սատակեաց, ¹²զի ՚ի նմանէ է արդարութիւն և ողորմութիւն: Քաւել կարօղ է, ¹³և կշտամբանս բազմապատիկս հատուցանել: ¹⁵Ամենայն ողորմած ողորմութիւն գտցէ, զի հատուցանօղն արդար ըստ գործոց դատեսցի: Չսիրտ փարաւոնի Տէր խստացոյց, զի ՚ի ներքոյ երկնից երևեսցին գործք նորա: Որդեակ՝ ամենայն արարածոց յայտնի է ողորմութիւն նորա, մինչ զի զլոյս և զխաւար բաշխեաց ՚ի մէջ մարդկան*: ¹⁶Մի՛ ասիցես. ՚ի Տեառնէ թագեայց, և զիս ՚ի բարձանց ո՞վ յիշեսցէ: ¹⁷Եւ կամ զի՞նչ է անձն իմ ՚ի մէջ այսչափ արարածոց: ¹⁸Ձայս գիտասցի՛ր՝ զի երկինք և երկնից երկինք, և երկիր ամենայն անդրնդոց հաստատութեամբ, ¹⁹միանգամայն ՚ի հայել նորա դողացեալ շարժի. զի բազում են գործք նորա կամելն միայն, որ ՚ի ծածուկ մեծ սքանչելեօք. որպէս զի և զարժանապէս օրհնութիւնն յիւրմէ օրհնի, զի ՚ի մերմէ նուաստ օրհնութենէ՝ ո՛չ թերանայ և ո՛չ լիանայ*: ²⁴Որդեակ՝ լո՛ւր ինձ, և ընկալ զխրատ իմ. ²⁵զի յայտնեցից ²⁶զգործս Տեառն իսկզբանէ արարածոց իւրոց:

17

Գլուխ ԺԷ

¹Տէր յերկրէ ստեղծ զմարդն, ²թիւ աւուրց և չափ ժամանակաց ետ նոցա. ³ըստ

* [Ոմանք]. Եւ ՚ի խորհուրդս ճանապարհի իւրոյ:

* Ոմանք. Ոչ սպառեսցի:

* Ոմանք. Չսիրտս:

* [Ոմանք]. Զի ՚ի մերմէ նուաստութենէ՝ ոչ թերանայ:

կարի և ըստ զօրութեան նոցա զգեցոյց զնոսա: ⁴Չահ և զերկիւղ նոցա եղ ՚ի վերայ ամենայն մտեղեաց, տիրել ամենայն գազանաց երկրի՝ և թռչնոց երկնից: ⁵Կատարեալ զգայարանօք՝ և բանաւորութեամբ զարդարեաց զնոսա: ⁶Չբարի և զչար ծանոյց նոցա, ⁷և եցոյց զմեծութիւն գործոց իւրոց. ⁸զի պատմեսցեն զփառս նորա, և օրհնեսցեն զանուն սուրբ նորա: ⁹Յաւել ՚ի նոսա զհանճար արուեստից, ¹⁰և ուխտ յաւիտենից կացոյց ընդ նոսա: ¹¹Չսքանչելիս փառաց տեսին աչք նոցա, և զգարիւրելի խօսս նորա լուան ականջք նոցա: ¹²Եւ պատուէր ետ նոցա զգոյ՜ լինել յամենայն չարէ, և պահել զպատուիրանն ըղծալի: Չարն զչարութիւն ուսոյց նոցա, և զԱստուած և զսերն արարչական ետ արհամարհել նոցա: Եւ զեւթնեակ շնորհսն հան ՚ի նոցանէ, և եւթն յանցանօք ելից զնոսա. և յերկրէ ուստի առան՝ զնոյն անիծից երկիր ժառանգեցին. և յետ այնորիկ մեղս ազգի ազգի ուսոյց նոցա, մինչև ջրով ջնջել զյիշատակ նոցա: Եւ որդուվն Քանանու դարձեալ դարձան ՚ի չարութիւն միաշուրթն լեզուաւ մինչև յաշտարակն վաղափուլ. ¹³և Տէր բաժանեաց լեզուս և ազգս, ¹⁴և իւրաքանչիւր ազգի կացոյց առաջնորդս: ¹⁵Եւ յետ բազմահաւաք ամաց՝ ա՛ռ բաժին իւր զԻսրայէլ, ¹⁶և աչք նորա պահէր զճանապարհս նոցա, ¹⁷և անօրէնութիւնք նոցա ո՛չ ծածկեցաւ ՚ի նմանէ, զի և մեղք ամենայն մարդոյ գրեալ է առաջի նորա. ¹⁸և արդարութիւն մարդոյ և շնորհք կնքեալ է առաջի նորա: ²⁰Սակայն մեղաւորաց դարձ ապաշխարութեան շնորհեաց. ¹⁸և յանկարծ իբրև զբիբ ական ¹⁹զարթիցէ, և հատուցէ զհատուցումն: Որդեակ՝ այր անզգամ մոլորեալ մտօք՝ մոլորութիւն խօսի: ²¹Արա՛ զդարձ քո առ Բարձրեալն՝ և թողու զմեղս քո. ²³և յանիրաւութենէ դարձի՛ր և ատեա՛ զպղծութիւն: ²⁴Փոխանակ կենդանեաց զԲարձրեալն ՚ի դժոխս ո՞վ օրհնեսցէ: ²⁵Որ հանիցէ նմա խոստովանութիւն, ²⁶ի մեղօք մեռելոյն, իբրև ՚ի չեղելոյ կորեաւ խոստովանութիւնն: ²⁷Կենդանիք և ողջք յամենայն ժամ օրհնեսցեն զՏէր. ²⁹զի ո՛չ է մարթ ամենայն լաւութիւն լինել ՚ի մարդ, զի չէ անմահ որդի մարդոյ՝ ³¹այլ հող և մոխիր: ³⁰Ձի՞նչ լուսաւորագոյն քան զարեգակն, սակայն և նա նուազի:

18

Գլուխ ԺԸ

¹Որ կենդանին յաւիտենից է՝ արար զամենայն: Տէր միայն անպատմելի և արդար. ³զի ո՞ կարասցէ քննել զմեծութիւն նորա, ⁴և զզօրութիւն և զողորմութիւն նորա ո՞ կարիցէ պատմել: ⁶Ձի յորժամ պատրաստեսցի մարդ պատմել զսքանչելիսն, յայնժամ սկիզբն իցէ պատմել զգարմանալիսն: ⁸Թիւ աւուրց մարդոյ թերևս հարիւր ամ, սակայն իբրև կաթ մի ՚ի ծովէ՝ և խիճ մի յաւազէ. այսպէս հարիւր ամն ՚ի թիւս ժամանակաց: Ձի հազար ամն յայսմ աշխարհի՝ իբրև զմի օր ո՛չ են յաշխարհն արդարոց: ⁹Ձի Տէր արկ զողորմութիւն իւր ՚ի վերայ նոցա, զի սիրեցին զնա և զիրաման նորա. ¹⁰վասն այնորիկ բազմացոյց զքաւութիւն իւր՝: ¹²Ձի գութ մարդոյ ՚ի վերայ ընկերի իւրոյ, և գութ Աստուծոյ ՚ի վերայ ամենայն մտեղեաց: ¹³Կշտամբէ խրատէ և ուսուցանէ, և դարձուցանէ իբրև հովիւ զհօտ իւր: ¹⁴Որ անսայ և փութայ յիրաւունս նորա՝ ողորմի նոցա, զի իւր են դատաստանք: ¹⁵Որդեակ՝ բարեաց բամբասանս մի՛ տար, և մի՛ յամենայն տուրս տրտմութիւն բանից: ¹⁶Տապ տօթոյ

* Ոմանք. Կասն այսորիկ բազ՛:

զուարթացուցանէ զցօղ, այսպէս լաւ բան ուրախ առնէ քան զտուրս: ¹⁸Անբաւ նախատէ այր անմիտ: ¹⁹Ուսանիջի՛ր նախ՝ և ապա խօսեսջիր: Մինչև քո ընդ թշնամիս մարտուցեալ իցէ, խնդրեա՛ քեզ օգնական. ²⁰և յառաջ քան զախտանալն՝ զգուշացի՛ր բժշկաց: Յառաջ քան ՚ի դատաստան մտանել քննեսջիր զանձն քո*, ²¹և ՚ի խոնարհ կալ զանձն քո: Եւ ՚ի ժամանակի յանցանաց դարձ յապաշխարութիւն: ²²Ի ժամ մահու մի՛ մնար արդարանալ: Եւ զուխտ քո զոր եղեալ իցես՝ մի յամեր, պատրաստեա՛ հատուցանել* ²³և զՏէր մի՛ փորձեր: ²⁴Յիշեա՛ զցասունն յաւուր կատարածի, և ՚ի ժամանակի հատուցման ՚ի դարձուցանել երեսաց: ²⁵Ի լիութեան ժամանակի զսով յիշեսջիր, և յաւուր մեծութեան զաղքատութիւն: ²⁶Ձի յայգուէ մինչև յերեկոյ փոփոխի ժամանակ, և ամենայն ինչ արագաթև է առաջի Տեառն: ²⁷Այր իմաստուն յամենայնի հնազանդէ՛, և ՚ի ժամ մեղաց զգուշացի: ²⁸Ամենայն իմաստուն ծանեալ զհանճար՝ ²⁹և զառակս հաստատուն ՚ի մտաց իւրոց բղխեաց: ³¹Որդեա՛կ զհեշտութիւն ցանկութեան մի՛ բաշխեր յանձն քո, և ոտնհար լիցիս թշնամեաց: ³²Ընդ փափկութիւն մի՛ ուրախ լինիր, և մի՛ կապիր ընդ նմա: ³³Եւ հանգանակօք և փոխով մի՛ աղքատանար:

19

Գլուխ ԺԹ

¹Ձի և մշակ արբշիռ ո՛չ հասցէ ՚ի մեծութիւն: Որ անարգէ զսակաւն՝ առ փոքր փոքր կործանեսցի*։ ²Կանայք և գինի կործանեն զիմաստութիւն. յանդուզն յանձն՝ սատակեսցի: ⁴Որ վաղվաղկոտ է ՚ի հաւատալ՝ թեթև է սրտիւ, և որ յանցանէ՛ յանձն իւր մեղանչէ: ⁵Որ լիրբ է մտօք՝ ըստգիւտ լիցի բազմաց: ⁷Ի բարեկամն և ՚ի թշնամին մի՛ յօժարեր երկրորդել զբան: ⁸Եթէ մեղք ո՛չ իցեն ՚ի ներքս՝ բնաւ և յայտներ մի, ⁹զի լուաւ նա՝ և զգուշացաւ ՚ի քէն: ¹⁰Լուար ինչ բան մեռցի ՚ի սրտի քում, պի՛նդ կաց՝ ո՛չ հերձու և ելանէ արտաքս: ¹²Իբրև նետ հարեալ ՚ի մարմին մարդոյ, այսպէս բան ՚ի սրտի անմտի: ¹³Յանդիման արա զբարեկամն՝ թերևս չիցէ իսկ յանցուցեալ, ապա թէ իցէ մեղուցեալ, դարձեալ զգուշացո՞ զի բարեկամութիւնն հաստատեսցի: ¹⁶Բազում են բանսարկութիւնք, և դու ամենայն բանից մի՛ հաւատար: ¹⁷Է՛ որ գթէ՝ և ո՛չ մտօք, զի ո՞վ է՝ որ ո՛չ յանցեալ մտօք կամ լեզուաւ*։ ¹⁸Ամենայն իմաստութիւն երկիւղ Տեառն: ¹⁹Չէ՛ իմաստութիւն խրատ չարեաց, և ո՛չ ՚ի խորհուրդ մեղաւորաց իմաստութիւն: ²¹Լաւ է պակասամիտն երկիւղած, քան որ լի է մտօք, և յանդգնի անցանել ըստ օրէնս*։ ²²Է՛ խորագիտութիւն ճշմարիտ, և լի է ապիրատութեամբ և անիրաւութեամբ: ²³Եւ է՛ որ կորուսանէ զշնորհս՝ զի յայտնի արասցէ զիրաւունս: Եւ է խորամանկ խոնարհ՝ շրջի ՚ի ծածուկ, և փոր նորա լի է նենգութեամբ: ²⁶Մարդ յականէ իսկ երևի, և ՚ի պատահել երեսաց ճանաչի իմաստութիւն: ²⁷Չանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից պատմէ զնմանէ: ²⁸Է՛ յանդիմանութիւն՝ որ ո՛չ է բարի. և է լռութիւն՝ որ է իմաստութիւն:

* Ոմանք. Ձգուշացի բժշկաց:

* Ոմանք. Մի՛ յապաղեր:

* Ոմանք. Որ անարգէ զսակաւս:

* Ոմանք. Որ ոչ յանցեալ լեզուաւ իւրով:

* Ոմանք. Պակասամիտ մի Տեառն երկիւղած:

Գլուխ Ի

¹Իբրև զի կարի լաւ է յանդիմանել քան ցասնուլ: ³Եւ որ առնէ զդատ բռնութեամբ, այնպէս է ²որպէս ներքինի ցանկայ կուսի կուսութեան: ⁵Է՛ որ ՚ի շատխօսութենէ ատելի լինի ամենեցուն. ⁶և են՝ որ ո՛չ գոն բանք ՚ի բերան: Են որ լուռ են, զի գիտեն զժամանակ բանից: ⁷Այր իմաստուն լռեսցէ մինչև ՚ի ժամանակ, և որ անզգամ է և ամբարիշտ՝ յառաջ վարեսցի: ⁸Որ յաճախէ զբան իւր՝ արհամարհեսցի, և որ ատելի լիցի՝ անչափ սաստկանայ: ⁹Է՛ յաջողութիւն ՚ի վերայ չարեաց մարդոյ, և են գիւտք ՚ի պակասութիւն: ¹⁰Են տուրք՝ որ ո՛չինչ օգնեն, և են տուրք՝ որ հատուցուն կրկնակի ունի: ¹¹Է՛ պակասութիւն՝ որ վասն փառաց է, և են՝ որ վասն խոնարհութեան: Են՝ որ գլուխ ՚ի վեր բարձին. ¹²և են՝ որ զնեն զնե՛ծն փոքու, և են՝ որ տուժին ևս եւթնպատիկ: ¹³Որ իմաստուն է բանիւք՝ զանձն սիրելի առնէ: Շնորհք մորոսաց ամաչեսցեն: ¹⁴Անզգամաց տուրք օգուտ ո՛չ լիցի, զի աչք սոցա ընդ միոյն ՚ի բազունս հային* . ¹⁵սակաւ ինչ տայ, և մեծամեծս նախատէ, և իբրև քարոզ բանայ զբերան իւր: ¹⁷Մորոսն ա՛յսպէս ասէ. Չիք իմ բարեկամ, և շնորհք բարեաց ո՛չ գոյ ինձ* : ²⁰Լաւ է յոտից գայթազդել՝ քան ՚ի լեզուէ. ա՛յսպէս չարեաց կործանուն վաղվաղակի հասցէ: ²¹Առասպել տարածամ այր անշնորհք* : ²²Ի բերանոյ առն անմտի անարգին առա՛կք. զի ո՛չ ասէ զնա՛ ՚ի ժամու: ²³Է՛ որ ՚ի մեղաց արգելեա՛լ է վասն տկարութեան, և ՚ի հանգստեան իւրում ո՛չ զղջանայ: ²⁴Է՛ որ կորուսանէ՝ զանձն վասն ամօթոյ, և կորնչի յակնառութեան իւրում: ²⁵Է՛ որ ամօթ յանձն առնու՛ վասն բարեկամի, և ՚ի տարապարտուց ստացաւ զնա՛ իւր թշնամի: ²⁶Չար բիժ՝ ՚ի մարդ ստութիւն: ²⁷Ա՛յլ է գողութիւն, և ա՛յլ է ստութիւն, և երկոքեան զկորուստ ժառանգեսցեն: ²⁸Անարգանք անձին մարդոյ՝ բանք սրտի իւրոյ, և ամօթ նորին կանխեսցէ ՚ի նո՛յն: Որդեա՛կ՝ պահեա՛ զբանս իմ, և խելամուտ լեր ՚ի դմա՛ ՚ի տուէ և ՚ի գիշերի, զի և որդի հարազատ և ժառանգ մեծագոյն որ զնախնեսցն զմեծանձնութիւն ո՛չ նորոգէ և յառաջ բերէ՝ ամօթ մե՛ծ և նախատինք է նա հաւուց իւրոց, և անե՛ծք նորոգ:

Բանք առակաց. երկրորդ:

²⁹Որ բանիւք իմաստուն է՝ առաջնորդեսցէ նմա, և իմաստուն մարդ հաճոյ լիցի մեծամեծաց* : ³¹Պատարագք և կաշառք կուրացուցանեն զսիրտս իմաստնոց, և իբրև գայլ ՚ի բերան հարեալ անդրէն դարձուցանէ* : ³²Իմաստութիւն ծածկեալ զանձ աներևոյթ, և արդ՝ յերկոցունց զի՞նչ օգուտ: ³³Լա՛ւ է մարդ որ ծածկէ զմորոսութիւն իւր, քան որ ծածկէ զիմաստութիւն:

* *Ոմանք.* ՚ի բազունս հային:

* *Ոմանք.* Մորոսն այնպէս ասէ:

* *Ոմանք.* Այր անշնորհ:

* *Ոմանք.* Առաջնորդեսցեն նմա:

* *Ոմանք.* Գայլ ընդ բերան հարեալ:

Գլուխ ԻԱ

¹Ո՛րդեակ՝ փախի՛ր ՚ի մեղաց՝ որպէս յերեսաց օձի, զի թէ մերձենաս՝ հարկանէ զքեզ: ²Ամենայն անօրէնութիւն որպէս սուր երկսայրի՛ է. ⁴և հարուածոց նորա չի՞ք բժշկութիւն: ⁵Թշնամանք և պատուհասք աւերեսցեն զմեծութիւն, սոյնպէս և տունք ամբարտաւանից կործանեսցին: ⁶Աղօթք աղքատաց մե՛րձ է առ Աստուած, և նոցա իրաւունք փութապէս ելանեն: ⁷Եւ որ ասէ գյանդիմանութիւն՝ ՚ի ճանապարհս մեղաւորաց գտանի. զի որ երկնչի ՚ի Տեառնէ՝ դառնայ վաղվաղակի սրտիւ իւրով: ⁸Ի հեռաստանէ յայտնի է հզօրն լեզուաւ իւրով. իսկ զգայթագղելն նորա գիտէ իմաստունն: ⁹Եւ որ շինէ զտուն իւր ընչիւք օտարաց, այնպէս է՝ որպէս առնէ ոք քարինս շեղջակոյտ: ¹⁰Ձի ժողով անօրինաց խժու՛ծ կուտեալ է, և կատարած նոցա բոց հրոյ՝: ¹¹Մեղաւորաց ճանապարհք դորկ և հորդեալ քարաքաղ, բայց վախճան նոցա կորուստ ՚ի դժոխս: ¹²Իսկ որ պահէ զօրէնս՝ խորհրդոց իւրոց հասու լինի, ¹³և վախճան երկիւղի Տեառն իմաստութիւն: ¹⁴Մա՛րդ որ ո՛չ է խորագէտ՝ ո՛չ խրատի. ¹⁵զի է՛ խորագիտութիւն որ յաճախէ ՚ի դառնութիւն. ¹⁶և իմաստնոյ գիտութիւն որպէս հեղեղ յորդեսցէ, և որպէս բղիտունն աղբեր: ¹⁷Սիրտ անմտի որպէս աման ջախջախեալ, զի զգիտութիւն ամենկին ո՛չ ընդունի: ¹⁸Իմաստունն իբրև լսէ զբան հանճարեղին՝ գովէ զնա և յանգի ՚ի նա: Անագորոյնն իբրև լսէ տհաճ լինի, դարձուցանէ զերեսս՝ և զայն յետս ընկենու: ¹⁹Ճառ բանից առն մորոսի՝ բեռն ընկեցեալ ՚ի ճանապարհի, ²²և իբրև կապանք յոտս անմտաց իմաստութիւն: ²³Մորոսն ՚ի ծիծաղելն իւրում բարձրացուցանէ զանձն. իսկ խորագէտն հազիւ ընդ քիմսն ժպտի: ²⁴Իբրև զարդ ոսկի է իմաստնոյ խրատ, և որպէս ապարանջան յաջոյ ձեռին նորա: ²⁷Անմտութիւն է մարդոյ կալ առ դուրս՝ և ունկն դնել ՚ի ներքս, և որ իմաստունն է՝ ծանր թուի նմա այս և անարգանք: ²⁹Առն անմտի սիրտ ՚ի բերան իւր է, և բանք իմաստնոյ կշիռ կացցէ ՚ի բերան և ՚ի սիրտ: ³⁰Անիծանէ ամբարիշտն զՍատանայ՝ և ո՛չ իմանայ թէ անիծանէ զանձն իւր: ³¹Չանձն իւր պղծէ քսուն, և ՚ի բնակութեան իւրում ատեցեալ լինի:

22

Գլուխ ԻԲ

¹Վա՛տն քարիւ շաղախելով հարաւ, և ամենայն ոք կոխէ ՚ի վերայ անմտութեան նորա: ²Յեխով շաղախեալ վատ, և որ բուռն հարկանէ զնմանէ՝ թօթափէ զձեռս: ³Չօր ամօթ են ծնունդք անխրատք: Եւ դուստր ծնունդ նիազութեան. ⁵և կին անզգամ զհայր և զմայր յամօթ առնէ: ⁶Երգք տրտմութեան իբրև պատգամք տարածանք: Իմաստութիւն և խրատ յամենայն ժամ իմաստնոց է. ⁷և որպէս զխեցի ոք կարկատէ, այսպէս է՝ և որ ուսուցանէ զմորոսն: ⁸Որ պատմէ զբան այնմ, որ ո՛չ անսայ՝ այսպէս է՝ որ զարթուցանէ զքնած ՚ի խոր քնոյ: ⁹Որ պատմէ զիմաստութիւն առն անմտի և խնդրէ ՚ի նմանէ բան՝ ասէ. Ձի՞ ես: Եւ կամ. Ձի՞նչ ասացեր: ¹⁰Լա՛ց ՚ի վերայ մեռելոյ՝ զի պակասեաց ՚ի լուսոյ. և ՚ի վերայ մորոսի լաց՝ զի պակասեաց յիմաստութենէ: ¹¹Սակա՛ւ ինչ լաց ՚ի վերայ մեռելոյն՝ զի հանգեալ. ¹²և մորոսին կեանքն չար են քան զմահ: ¹³Սուգ մեռելոյ զեւթն օր, և ամբարշտին և անմտին՝ ամենայն աւուրք իւր: ¹⁴Ընդ առն անմտի և անզգամի զբանս քո մի՛ յաճախեր. ընդ անմտին ՚ի ճանապարհ մի՛ երթար:

* Ոճանք. Եւ կատարունն նոցա բոց:

¹⁶Խոտորեա՛ ՚ի նմանե՛ և գտցես հանգիստ. ապա թե՛ ոչ՝ շաղախեսցիս ՚ի մահ նորա, և կամ նա յարեան քում: ¹⁷Զի՞նչ ծանր քան զկապար, զի՞նչ է անուն նորա՝ բայց մորոս: ¹⁸Աւագ և ա՛ղ և շանթք երկաթոյ դիւր է կրել՝ քան զմարդ անմիտ: ¹⁹Եւ զոր օրինակ պահանկակապ շինուած ՚ի ժամանակի շարժման ո՛չ կործանեսցի՝, ²⁰սոյնպէս սիրտ հաստատուն՝ ՚ի վերայ խորհրդոց իմաստութեան ՚ի ժամանակի խռովութեան ո՛չ դողասցի: ²⁴Որ շղով զակն հարկանէ զարտասուս իջուցանէ, այսպէս որ զայրացուցանէ զբարս՝ յայտնէ զսիրտ իւր. ²⁵և որ նախատէ զբարեկամ՝ քակէ զբարեկամութիւն: ²⁶Եթէ սուր հանցես ՚ի վերայ բարեկամի՝ գոյս քո ՚ի նմանէ մի՛ հատաներ, զի գոյ անդրէն դարձ: ²⁷Մի՛ նախատիցես զնա և մի՛ զանգիտիցես, զի գոյ տեղի հաշտութեան: Բայց մի՛ զխորհուրդ նորա ցրուիցես, զի այն է որ քակէ զբարեկամութիւն: ²⁸Հաւատարիմ լիջիր դու յաղքատութեան ընկերին՝ զի ՚ի բարիս նորա ուրախ լինիցիս: ²⁹Յառաջ քան զկայծակունս ծուխ և բոց. այսպէս յառաջ քան զարիւն՝ կագ և հակառակութիւն: ³³Ո՞ տացէ ինձ պահապան բերանոյ, և ՚ի վերայ շրթանց իմոց կնիք հաւատարիմ, զի մի՛ անգեայց ՚ի նմանէ:

23

Գլուխ ԻԳ

¹Տէր Հայր կենաց իմոց և Աստուած իմ, մի՛ թողուր զիս ՚ի խորհուրդս նոցա: ²Եւ ՚ի վերայ խորհրդոց իմոց ո՞ կացուցէ խրատ սաստից, և ՚ի վերայ սրտի իմոյ հանճար իմաստութեան. ³զի մի՛ յաճախեսցեն տգիտութիւնք իմ, և մեղք իմ ՚ի վերայ իմ մի՛ բազմասցին. և մի՛ ընդ ոտիւք գտայց անկեալ թշնամեաց իմոց: ⁴Տէր Հայր և Աստուած կենաց իմոց, զբաղումն աչաց ինձ մի՛ տար, ⁵և զցանկութիւն աչաց և սրտի հեռացոյ յինէն: ⁶Պէտք մարմնոյ և ցանկութիւն գիջութեան ինձ մի յաղթեսցէ, և բանս անձին ժպրհութեան ինձ մի՛ պատրաստեր: ⁷Զխրատ իմաստութեան լուարուք, և որ պահեսցէ զնա՝ մի՛ կործանեսցի շրթամբք: ⁸Հպարտն և հայիոյիչն և անօրէնն կործանեսցին: ⁹Զբերան քո մի՛ ընդելացուցես յերդումն՝ զի կործանումն մեծ է ՚ի նմանէ: ¹⁰Եւ յանուն Սրբոյն երդմամբ մի՛ սովորիր, ¹¹զի որ յաճախէ երդնուլ՝ ՚ի մեղաց ո՛չ ազատի. ¹³զի թէ ստիցէ՝ մեղք նորա ՚ի վերայ նորա, և թէ անցցէ ընդ երդումն՝ կրկին վնաս. ¹⁴և թէ ՚ի տարապարտուց երդուալ՝ սակայն ո՛չ արդարանայ: ¹⁵Զի են բանք երդման՝ որ հաւասար են մահու, մի՛ գտցին այսոքիկ ՚ի ժառանգութեան արդարոց. ¹⁶և ՚ի մեղս անօրինաց մի՛ զնասցես, ¹⁷և զբերան քո մի՛ սովորեցուցես յերդումն ընդ նոսա, ¹⁹զի մի՛ յետոյ բացցես զաչս, և զօր ծնընդեան քո նզովեսցես: ²¹Երկու իրք են որ յաճախեն ՚ի մեղս, և երրորդն հասուցանէ զբարկութիւն: ²²Բարկ անձն իբրև զհուր՝ զի այրի և ո՛չ շիջանի՝ մինչև կլանէ ինչ. ²³և մարդ պռոնիկ անդամօք մարմնոյն՝ ո՛չ դադարէ, մինչև հուր բորբոքի. ²⁴զի մարմին նորա քաղցր է, և ՚ի չարեաց ո՛չ դադարէ մինչև մեռցի: ²⁵Զի ասէր ՚ի կենդանութեան իւրում, ²⁶թէ ես յումմէ երկնչիմ, ²⁷և զմեղս իմ Բարձրեալն ո՞ւր յիշեսցէ: ²⁸Ո՛չ գիտաց՝ թէ աչք Տեառն տեսանէ զգաղտնիս, և զվախճան նորա նա սահմանեաց. ³⁰ի մէջ քաղաքաց պարտաւորեսցի այնպիսին, ³¹և ուր ակն ո՛չ ունիցի՝ կալցին զնա: ³²Սոյնպէս կին որ թողու զայր

* Ոմանք. Պահանակաց շինուած:

* Ոմանք. Եւ ՚ի բանս անձին ժպրհութեան:

իւր, և ստանայ ժառանգ յօտարէ. ³³նախ՝ զօրէնս Բարձրելոյն անարգեաց, երկրորդ անգամ՝ յայր իւր մեղաւ, երրորդ անգամ՝ շնութեամբ պոռնկեցաւ: ³⁴Չայնպիսին յատեան մատուցեն, և որդւովքն հանդերձ դատապարտեցեն. ³⁵զի արմատք որդւոցն մի՛ հաստատեցին, և ոստք նոցա պտուղ մի՛ բերցեն. ³⁶զի յիշատակ նոցա յանէծս հասցէ՛ և մի՛ ջնջեսցի, ³⁷զի ծանիցեն մնացեալքն՝ թէ չիք ինչ լաւ՝ քան զերկիւղ Տեառն, և չիք այլ քաղցր՝ քան զհայել ՚ի պատուիրանս Աստուծոյ՝:

24

Գլուխ ԻԴ

Օրհնութիւն զգօնութեան

¹Զգօնութիւն գովեսցէ զանձն իւր. ²բացցէ զբերան իւր յեկեղեցիս, և առաջի զօրաց նորա պարծեսցի: ⁵Ես ՚ի բերանոյ անտի Բարձրելոյն եկի, ⁶և իբրև զմէզ ծածկեցի զերկիր: ⁷Ես ՚ի բարձունս բնակեցի, և աթոռ իմ իբրև զսիւն ամպոյ: ⁸Շրջեցայ ես զծագօք երկրի, և զանդունդս խորոց կոխեցի: ⁹Շրջեցայ ես ՚ի վերայ ալեաց ծովու՝ և ընդ ամենայն երկիր, ¹⁰և զամենայն ազգս ստացայ: ¹¹Եւ յետ այսր ամենայնի հանգիստ խնդրեցի: Եւ արդ՝ յո՞ր ժառանգութեան հանգեայց ես: ¹³Եւ ասէ ցիս Տէր. ՚ի մէջ Յակոբու բնակեցես դու, և Իսրայէլ ժառանգութիւն քո. ¹⁴ի սրբութեան նորա պաշտեցից*, ¹⁵և ՚ի Սիոն հաստատեցայ ՚ի սիրեցեալն իմ քաղաք, նա՛ իբրև զիս: Եւ հանգեայ ես յերուսաղէմ իշխանութիւն իմ, և ես ՚ի նմա: ¹⁶Եւ հաստատեցայ ՚ի մէջ Իսրայէլի՝ ՚ի վիճակ ժառանգութեան Աստուծոյ: ¹⁷Իբրև նոճ բարձր ՚ի լերինն Լիբանանու: Եւ իբրև սարդ ՚ի լերինն Յերմոնի: ¹⁸Եւ իբրև վարդենի նորատունկ յերիքով: ¹⁹Եւ իբրև ձիթենի վայելուչ ՚ի դաշտի: Եւ իբրև սաւս ՚ի գնացս ջուրց բարձրացայ*: ²⁰Յոտ արծակեցի իբրև զկինամոն, և իբրև զմուշս ընտիրս արծակեցի հոտ անուշութեան*: ²²Եւ իբրև բնեկնի արմատացուցի զոստս իմ: Ոստք իմ ոստք փառաց և շնորհաց*: ²⁶Մատիք առ իս որ ցանկայք ինն, և ՚ի պտղոյ արմտեաց ինոց լցջիք: ²⁷Յիշատակ իմ ազգէ յազգ. ²⁹և որ ընպեն յինէն՝ դարձեալ փափագեսցեն յիս: ³²Այս ամենայն գիրք կտակարանաց Աստուծոյ Բարձրելոյ, ³⁵զիտութիւն ճշմարտութեան ՚ի վերայ մեր՝ իբրև զԴկլաթ ³⁶որ լնու իմաստութեամբ զեփրատ, և իբրև զՅորդանան յաւուրս հնձոց, ³⁷և իբրև զԳեհոն յաւուրս կթոց: ³⁸Ո՛չ առաջինք հասանել կարացին, իսկ յետինք և ո՛չ զվերջն իմացան: ³⁹Ձի ՚ի ծովէ բազմացաւ իմաստութիւն նորա, և խորհուրդ նորա յանդնդոց բազմաց: ⁴¹Ես իբրև զջրմուղ ՚ի գետոյ, և իբրև զվտակ՝ զի յորդէ մտանել ՚ի դրախտ*: ⁴³Եւ ահա եղև ինձ ջրմուղն իբրև զգետ, և գետն եղև ինձ իբրև զծով: ⁴⁶Սփռեցից զվարդապետութիւն իմ իբրև զմարգարէութիւն, և բաշխեցից զնա ազգացն յաւիտենից: ⁴⁷Ահա տեսէք զի ոչ ես ինձ միայն վաստակեցի, այլ ամենեցուն որ խնդրեն զնա:

* Ոմանք. Եւ չիք ինչ քաղցր քան:

* Ոմանք. Առաջի նորա պաշտեցայց:

* Ոմանք. Ջուրց բազմաց:

* Ոմանք յաւելուն. Ձկինամոն, և իբրև զպալասան բուրեցի հոտ անոյշ. և իբրև:

* Ոմանք. Արմատացուցի զոստ իմ:

* Ոմանք. Եւ իբրև... ՚ի գետոց:

Գլուխ ԻԵ

Իմաստութիւն խրատական

³Երեք են զոր ատեաց անձն իմ, և զարշեցայ յոյժ ՚ի կենաց նոցա: ⁴Ձիպարտ աղքատ, և զմեծատուն սուտ՝ զալևոր պոռնիկ և պակասեալ ՚ի մտաց: ⁶Իբրև զի գեղեցիկ է ծերոց իմաստութիւն ⁷և միտք և հանճար փառաւորաց: ⁸Իմաստութիւն ծերոց պսակ, և պարծանք նոցա երկիւղ: ⁹Երանեցի ինն խորհրդոց սրտիւ իմով* ¹⁰մարդոյ զուարճացելոյ յորդիս, և կենդանւոյն տեսցէ զբեկումն թշնամեաց: ¹¹և որ կայցէ ընդ կնոջ իմաստնոյ, և որ ո՛չ լծեաց զե՛զն և զէջ ՚ի միասին. և որ լեզուաւ իւրով ո՛չ զայթազղեաց, և անարժանի ուրուք ո՛չ ծառայեաց: ¹²Եւ երանեալ է ա՛ռն որ եգիտ զիմաստութիւն, և ո՛չ կործանեաց զնա աղքատութիւն և տնանկութիւն: ¹³Որ զիմաստութիւն եգիտ՝ մե՛ծ է, այլ ա՛յնպէս ո՛չ է՝ որպէս ¹⁴երկիւղ Տեառն: ¹⁵Բո՛ւռն հար զմանէ որդեակ՝ զի չիք ինչ նման նմա: ¹⁷Ընկալ զամենայն ցաւ՝ և մի՛ զվէրս սրտի: Ամենայն չարիք չար են, բայց չարութիւն կնոջ վերագոյն: ²²Գլուխ չար քան զօճի չիք, և չկայ թշնամութիւն չար քան զկնոջ: ²⁶Վիճակ չարեաց ելցէ նա, և ժառանգութիւն ամբարշտաց: ²⁷Իբրև զառ ՚ի վեր աւագի առ ոտս ծերոց, ա՛յսպէս լեզուանի կին ա՛ռն հեզոյ: ²⁸Մի՛ պատրիի ՚ի գեղ կնոջ, և մի՛ իզանար դու ՚ի լկնելն նորա: ³³Ի կնոջէ սկիզբն մեղաց, և վասն նորա հանապազ մեռանիմք:

Գլուխ ԻԶ

¹Կնոջ իմաստնոյ երանեալ է այր իւր, և թիւ աւուրց իւրոց կրկին: ³Կին իմաստուն բաժին բարեաց, և մասն երկիւղածաց: ⁵Յերից յայսցանէ զանգիտեաց սիրտ իմ*: ⁶Բարկութիւն քաղաքի ՚ի ժողովոց բազմաց: ⁷քսութիւն տարապարտուց՝ քան զմահ չար: ⁹տանջանք լեզուի ամենայնի բաւական: ¹¹Կին զինեսէր բարկութիւն մեծ, և զանարգանս իւր ծածկել ոչ կարէ*: ¹²Պռռնկութիւն կնոջ յաչս և յօնս իւր ծանիցի: ¹³Ի վերայ անամօթի դստեր հաստատեա զգուշութիւն: ¹⁵Ձի իբրև ծարաւի ոք բանայ զբերան՝ և յամենայն ջրոց ըմպել խնդրէ: Այսպէս է կին պոռնիկ. ամենայն մարդոյ բանայ զսէր իւր: ¹⁷Պարզեք ՚ի Տեառնէ կին ցածուն, ¹⁸և չիք գինք նմա: Կին՝ բարկացող և լեզուանի իբրև փող յորդորիչ պատերազմի համարեալ է: ²⁵Ի վերայ երկուցս այսոցիկ տրտմեցաւ սիրտ իմ, և ՚ի վերայ երրորդիս՝ ցասունն եկին ինձ: ²⁶Ձայր քաջ՝ զի տկարասցի վասն աղքատութեան: Եւ արք իմաստունք՝ եթէ անարգեսցին յանմտաց: ²⁷Եւ այր արդար որ դառնայցէ ՚ի մեղս յետ բազում վաստակոց: ²⁸Ձի ո՛չ ապրեցուցանէ զանձն իւր ՚ի մեղաց վաճառականն:

* Ոմանք. երանեցին ինձ խորհրդով:

* Ոմանք. Յայսցանէ զարիւրեաց սիրտ:

* Ոմանք. Բարկութիւն մեծ է:

Գլուխ ԻԵ

¹Ձի բազումք մեղան վասն յուլութեան: ⁴Եւ եթէ ոչ զահէ Տեառն բուռն հարցեն, արագ արագ կործանեսցին տունք նոցա: ⁶Չանօթս կաւեղէնս թօժէ հնոց, և մարդոյ փորձութիւն ՚ի խորհուրդս իւր. ⁷զի իբրև զբեր ծառոյ երևեսցի պտուղ նորա. սո՛յնպէս բանք խորհրդոց ՚ի սիրտ մարդոյ: ⁹Եթէ զհետ արդարութեան երթա՛ն՝ վաղ հասանես նմա, և զգենուս զնա իբրև զպատմուճան փառաց: ¹⁰Ամենայն թռչուն առ իւր նմանիսն գնայ, և ճշմարտութիւն առ այնս որ գործեն զարդարութիւն: ¹²Ճառք արդարոց յամենայն ժամ իմաստութիւն: ¹³Սպասեսցիր ժամանակի ՚ի մէջ անմտաց, բայց ՚ի մէջ խորհրդականաց կանխեսցիր: ¹⁴Ճառք յիմարաց ձանձրոյթ, և ծաղր նոցա գրգռութիւն մեղաց: ¹⁷Իսկ որ ՚ի վէր հանէ զխորհուրդս՝ զհաւա՛տ իւր կորուսանէ: ¹⁸Չբարեկամ քո սիրեա՛ և հաստատեա՛ դու ՚ի նա: ¹⁹Ապա թէ ցրիցես զխորհուրդ նորա, զհետ նորին մի՛ ևս երթար. ²⁰զի որպէս կորուսանէ մարդ զթշնամիս իւր, այնպէս կորուսեր դու զբարեկամութիւն նորա, ²¹և այլ ո՛չ կարասցես ըմբռնել զնա: ²²Մի՛ երթար զհետ նորա զի հեռացաւ ՚ի քէն. ²⁴զի խորհուրդ նորա յայտնեցաւ, և յոյսն սիրոյ հատաւ ՚ի մտաց: ²⁶Քաղցրացուցանէ զբան իւր առաջի քո՝ և բանիւ զարմացուցէ զքեզ. և յետոյ ծռիցէ զբերան իւր, և բանից քոց եպերանս դիցէ՛: ²⁸Յարուածք նենգաւորի առաւել են քան զվէր: ²⁹Որ ընկերի հո՛ր հատանէ՝ ինքն լցցէ զնա՛:

Գլուխ ԻԸ

¹Որ խնդրէ իրաւունս ՚ի Տեառնէ՝ գտցէ վրեժխնդրութիւն: ²Չվնաս ընկերի քո թո՛ղ, և ապա թողցին քեզ մեղք քո: ³Ձի եթէ ոխս ընկերին պահեսցես, զիա՞րդ ՚ի Տեառնէ խնդրեսցես թողութիւն: ⁶Յիշեա՛ զվախճան քո, և դադարեա՛ ՚ի թշնամութենէ: ⁷Չմտա՛ւ ած զմա՛հ ապականութեան, և պահեա՛ զպատուիրանս: ⁹Ա՛ծ զմտաւ զուխտ Բարձրելոյն, և թո՛ղ ՚ի բաց զանմտութիւն քո: ¹⁰Յեռացո՛ ՚ի քէն զմարտ և զկագ, և նուազեսցին ՚ի քէն մեղք: ¹¹Այր բարկացող բորբոքէ զմարտ, և այր մեղաւոր խռովէ զբարեկամս, զի ՚ի մէջ խաղաղութեան արկանէ բանսարկութիւն: ¹⁴Եթէ փչես ՚ի կայծակն՝ բորբոքի նա, և եթէ թքանես ՚ի վերայ՝ շիջուցանես զնա. և սոքա երկոքեան ՚ի բերանոյ քումնէ ելանեն: ¹⁵Չքսուն և զերկխօսն առհասարակ նզովեցէք, զի զբազումս ՚ի խաղաղութեան սատակեցին: ¹⁶Լեզու երեքդիմի արար հալածական զա՛զգս յազգաց, ¹⁷և զքաղաքս հզօրս կործանեաց, և զապարանս մեծամեծս քակեաց: ²⁰Որ զայնպիսի լեզու սիրէ՝ ո՛չ գտանէ խաղաղութիւն, և ո՛չ կարէ բնակել ՚ի խաղաղութեան: ²²Բազումք են որ անկեալ են ՚ի սուր սուսերի, այլ ո՛չ այնպէս որպէս անկեալքն ՚ի ձեռն լեզուի՛: ²⁵Մահ չարաչար մահ նորա, և լաւ են դժոխք քան զնա: ²⁶Չարդարս նա մի՛ յաղթահարեսցէ, և ՚ի հուր նորա նոքա մի՛ այրեսցին: ²⁷Որք թողին զՏէր՝ նոքա անկցին ՚ի ձեռս նորա. ՚ի վերայ նոցա

* Ոմանք. Եւ յետոյ ծանուցէ զբան իւր:

* Ոմանք. Յինքն լցցէ զնա:

* Ոմանք. Ի ձեռս լեզուի:

անկցի իբրև ինձ ապականիչ նոցա*։²⁸Որդեակ՝ զգոյշ լեր, ապրեցո՛ր զանձն քո, և դիր դուռն բերանոյ քո։²⁹Չարժաթ և զոսկի քո ծրարեա՛ր, և բանից քոց ամնիջիր չափ և կշիռ։ Բերանոյ քո կացո՛ր դուռն։³⁰Եւ զգոյշ լեր զի մի՛ գայթակղեսցիս լեզուաւ քո։

29

Գլուխ ԻԹ

¹Որ առնէ զողորմութիւն՝ փոխ տայ ընկերի, և որ սփռէ ձեռա՛նք՝ պահէ զպատուիրանս։⁴Բազումք են որ զփոխն իբրև զգիւտ համարեցան, և ջան մեծ հասուցին փոխատուաց իւրեանց։⁵Յառնո՛ւլն համբուրեն զձեռս, և յայլոյ իրաց զիւր ծայնն յեղուկս արկանէ՛*,⁶և ՚ի ժամանակի հատուցմանն յապաղէ զժամանակն՝ և բանս տայ ծանձրալիս։⁷Եւ եթէ կարի տագնապիցէ՝ զկէսն թէ վճարէ, և նա ՚ի միտս համարի եթէ գիւտս գտի։⁹Չանէժս և բամբասանս արկանէ ՚ի վերայ նորա։⁸Եւ ստանայ զնա իւր թշնամի տարապարտուց,⁹և փոխանակ մեծարանաց անարգանս։¹²Յաղագս պատուիրանին օգնական լեր աղքատի, և յողորմութենէ մի՛ ունայն զնա արձակեր։¹³Կորո՛ զարժաթ վասն եղբոր և բարեկամի, և մի՛ ժանգակեր լիցի ընդ կորուստ վիմաւ։¹⁴Չզանձս տուր չքաւորաց ըստ պատուիրանի,¹⁷և պաշտպան լիցի քեզ յերեսաց թշնամւոյն։¹⁹Այր բարերար երաշխաւոր լիցի բարեկամի։²⁰Եւ զշնորհ երաշխաւորութեան նորա մի՛ մոռանար, զի նա ետ զանձն փոխանակ քո։²⁴Երաշխաւորութիւն զբազումս կորոյս՝ և եհան ՚ի բարւոյ։²⁵Եւ մոլորեցոյց զնոսա յազգ օտար։²⁶Յերաշխաւորութիւն մեղաւորի մի՛ անկցիս, և չարայօժարն մտցէ ՚ի դատաստան նորա։²⁸Սկիզբն կենաց մարդկան՝ ջո՛ւր, հո՛ւր, հա՛ց, և հանդերձ, և տո՛ւն որ ծածկէ զանարգանս։²⁹Լաւ են կենաք աղքատին ընդ յարկաւ փայտից իւրոց, քան զսրահս մեծամեծս յօտար սեղանոյ։³⁰Չմեծն և զփոքրն յականէ մի՛ փորձեր։³¹Կեանք չար է փոխել տանէ ՚ի տուն, և ուր պանդխտեսցիս՝ ո՛չ գտցես համարձակութիւն։³²Թէպէտ ջանաս և վաստակես՝ անօգուտ է, և ՚ի վերայ այսր ամենայնի չար բանս լսես,³⁴եթէ եկ ել՝ ՚ի տանէ այտի. պարապեցո՛ր զտունդ յորում ես, զի եղբայր սիրելի և բարեկամ եկեա՛լ է։³⁵Այս ծանր է մարդոյ լսել՝ որոյ միտք իւր առ ի՛ւր է. զի պախարակեաց զնա կենդանւոյն, և զտառապանօք կեանս նորա մատն արար բազմաց։

30

Գլուխ Լ

Բան խրատական յաղագս բարեկամաց և որդւոց

¹Որ սիրէ զորդի՝ յաճախեսցէ ՚ի վերայ նորա գան։²Որ խրատէ զորդի՝ շահեսցի զնա, և ՚ի մէջ բարեկամաց փառաւորեսցի։³Որ ուսուցանէ զորդի՝ նախանձաբեկ առնէ զթշնամիս, և առաջի բարեկամաց ցնծացէ։⁴Մեռաւ հայր նորա՝ և չէ՛ մեռեալ, զի նման իւր եթող յաշխարհի։⁵Ետես նա զկեանս իւր՝ և ուրախ եղև, և ՚ի վախճանի իւրում ո՛չ տրտմեցաւ։⁶Առաջի թշնամեաց եթող վրէժխնդիր, և առ

* Ոմանք. Որք թողին զնա... ՚ի վերայ նորա առաքեսցի իբրև ինձ։

* Ոմանք. Համբուրեն զձեռն, և յայ՛։

բարեկամս շնորհս հաստատեաց: ⁷Խնամե՛ գորդի՝ և պատեա՛ զվեր նորա: ⁸Ձի թերավարժ՝ ելանէ խիստ, և որդի ընդարձակ՝ ելանէ ըստ խրատ: ⁹Մի՛ սովորեցուցաներ զնա լկնել՝ զի մի՛ տրտմիցիս: ¹⁰և մի՛ քծնիր ընդ նա, զի մի՛ մրուր տացէ նա քեզ. և ՚ի վախճանի գանալից առնէ: ¹¹Ի մանկութեան գորդի քո մի՛ համարձակեցուցաներ, և զվնաս տգիտութեան նորա մի՛ ընդ վայր համարիր: ¹²Մինչդեռ տղայ իցէ՝ զպարանոց նորա խոնարհեցո՛, ¹³զի մի՛ յանարգութիւն նորա անկցիս: ¹⁴Լաւ է աղքատ հլու յարբանեկել իւրում ըստ կարի, քան մեծն չարագանեալ ՚ի մարմին իւր՝: ¹⁵Ողջութիւն և բժշկութիւն քան զոսկի լաւ է, և քան զմեծութիւն բազում:

*Բան խրատական յաղագս կերակրոց**

¹⁶Ո՛չ է մեծութիւն լաւ քան զմարմնոյ ողջութիւն, և չի՛ք այլ ուրախութիւն սրտի: ¹⁷Մահ լաւ է քան զկեանս դառնութեամբ: ¹⁸Եւ որպէս խորտիկք յօրինեալ դնելով ՚ի վերայ գերեզմանի, ¹⁹այնչափ են ողջակէզք և զոհք կռոց առաջի: Ձի որ զայս արասցէ՝ աչօք տեսանէ զի ո՛չ ուտէն*, ²⁰և նա լայ և յոգոց հանէ: ²¹որպէս ներքինի զի գիրկս արկանէ կուսի՝ և ո՛չ յագի: ²²Տրտմութեան մի՛ տար զանձն քո, և ՚ի խորհուրդս մի՛ նեղեր զքեզ: ²³Կեանք մարդոյ ուրախութիւն սրտի: ²⁴Ձտրտմութիւն ՚ի բա՛ց արա ՚ի քէն, ²⁵զի չի՛ք ինչ օգուտ ՚ի տրտմութենէ: ²⁶Սրտմտութիւն և նախանձ նուազեն յաւուրց. և յառաջ քան զժամանակ հասուցանէ հոգք զժերութիւն:

33

Գլուխ ԼԳ

¹⁶Եղէ ես որպէս ճռաքաղ զհետ կթողաց՝ ¹⁷և լցայ օրհնութեամբ Տեառն իբրև զհնձան կոխողի: ¹⁸Չայեցարո՛ւք և տեսէք՝ զի ո՛չ ես ինձ միայն վաստակեցի, այլ ամենեցուն որ խնդրեն զիմաստութիւն: ¹⁹Լուարո՛ւք ինձ իշխանք ժողովոդոց, և առաջնորդք՝ ունկնդիր լերուք: ²⁰Մի՛ տայք իշխանութիւն կնոջ և որդւոց՝ եղբօր և բարեկամի՝ ՚ի կենդանութեան ձերում: ²¹Մինչ դեռ կենդանի ես՝ մի՛ փոխանակեր զքեզ ամենայն մսեղոյ: ²²Լաւ է քեզ զի որդիքն քո զքև գայցեն, քան թէ դու հայիցիս ՚ի ձեռս նոցա: ²³Յամենայն գործս մի լինիր առաւել, և մի՛ տար բամբասանս փառաց քոց: ²⁵Բի՛ր և բեռն՝ և բուտ իշոյ, հա՛ց և գան՝ և գործ ծառայի՝: ²⁶Ձայրացի՛ր նմա զանիւ, և գտցես հանգիստ: ²⁷Լո՛ւծ և փոկ զպարանոց ամբարտաւանից խոնարհեցուցանեն, ²⁸և զժառայ չարագործ տանջանք և կապանք: ՚Ի գործ կացո՛ զնա՝ զի մի՛ յուլասցի ՚ի մարմին իւր: ³⁰Եւ առանց իրաւանց մի՛ ինչ գործեր, ³¹այլ ընկալջիր զնա իբրև զանձն քո:

34

Գլուխ ԼԴ

* Ոմանք. Չարագնել ՚ի:

* Ոմանք. Բան խրատու յաղագս կե՛:

* Ոմանք. Ձի ուտէ:

* Բազումք. Եւ բուտ իշու:

⁵Դիւթութիւնք և հմայք և երազք ⁶զմիտս անմտաց զարթուցանեն: ⁷Չի բազումք խաբեցան յերազոց, և անկան ՚ի յուսոյ Տեառն: ⁸Օրէնք առանց ստութեան կատարեսցի, և իմաստութիւն հաւատարմաց կատարեալ լիցի: ⁹Այր հանճարեղ ծանեաւ բազում բանս, և իմաստութիւն առաքեցաւ ՚ի նմանէ:

Յաղագս անօգուտ պատարագաց

²¹Ողջակէզ յապիրատութենէ՝ պատարագ արհամարհեալ, ²³զի ո՛չ ընդունի Բարձրեալն զպատարագս ամբարշտաց. և ո՛չ ՚ի բազմութիւն ողջակիզաց նոցա քաւէ զմեղս նոցա: ²⁴Որ մատուցանէ ողջակէզս յընչից աղքատաց, ա՛յնպէս է՝ որպէս զենու ոք զորդի յանդիման հօր: ²⁵Չաց կարօտութեան կեանք աղքատաց, և որ զրկեն զնոսա՝ արիւն նոցա ՚ի զլուխս նոցա: ²⁶Սպանօղ է ընկերի իւրուն որ հատանէ զկին նորա. ²⁷ընդ արիւնահանս համարեսցի՝ որ հատանէ զվարձկանի վարձ: ²⁸Չի՞նչ օգուտ գործեն, բայց աշխատութիւնն, ²⁹զի մին օրհնէ՝ և միւսն անիծանէ, ո՞ր յ ձայնի լուիցէ Աստուած* . ³¹ա՛յսպէս է մարդ՝ որ պահէ վասն մեղաց, և դարձեալ դառնայ անդրէն ՚ի նոյն:

35

Գլուխ ԼԵ

¹Որ պահէ զօրէնս՝ յաճախէ ՚ի պատուիրանս. ³և որ առնէ զողորմութիւն՝ նուիրէ Տեառն օրհնութիւն: ⁴Չաճոյ է Տեառն մեկնել ՚ի չարէ, ⁵և փրկութիւն ոգւոց՝ ապրել ՚ի գեհեմէ: ⁹Պատարագ առն արդարոյ ընդունելի է, և յիշատակ պատարագաց նորա մի մոռասցի: ¹⁰Պաշտեա՛ զՏէր յակն առատութեան, և մի՛ գծու՛մ առներ զպտուղ ձեռաց քոց: ¹¹Յամենայն տուրս քո զուարթ կալ զերեսս, և ուրախութեամբ պաշտեա՛ զտասանորդս: ¹⁵Մի՛ հայիր ՚ի պատարագս անօրինաց, զի Տէր ինքն դատաւոր է, և ո՛չ է ակնառութիւն առաջի նորա: ¹⁶Չաղօթս զրկելոյն լսէ վաղվաղակի, ¹⁷և ո՛չ արհամարիէ զայրին և զորբն՝ յորժամ սիռէ զաղօթս իւր առաջի նորա. ²³և զհասակս անողորմից խորտակեսցէ. և զբազմութիւն ամբարտաւանից ջնջեսցէ: ²⁶Իբրև զի գեղեցիկ է ողորմութիւն ՚ի ժամանակս նեղութեան՝ որպէս անձրև ՚ի ժամանակս երաշտութեան:

36

Գլուխ ԼԶ

Յաղագս հայցողական խնդրուածոց

¹Ողորմեաց մեզ Տէր Աստուած ամենայնի, և հայեաց՝ ՚ի մեզ: ²Արկ զահ քո ՚ի վերայ ամենայն հեթանոսաց. ³ամբարձ զձեռն քո ՚ի վերայ ազգաց օտարաց: ⁵Չի ծանիցեն զքեզ՝ որպէս և մեք ծանեաք, զի ո՛չ է ա՛յլ Աստուած բաց ՚ի քէն Տէր: ⁶Դարձո՛ զքանչելիս՝ ⁷և փառաւորեա՛ զաջ քո: ⁸Չարթո՛ զսրտմտութիւնս քո, և հե՛ղ՝ զբարկութիւն քո*, ⁹բարձ զհակառակորդն՝ և ջնջեա՛ զթշնամի: ¹⁰Ճեա

* Ոմանք. Արդ՝ որում ձայնի լսէ Աստուած:

* Ոմանք. Չարթո՛ զողորմութիւնս քո:

տուր ժամանակի, և յիշեա՛ զդատաստան: ¹¹Ի բարկութիւն հրոյ սատակեցի թշնամին: Եւ որ չարչարեն զժողովուրդ քո՝ գտցեն զկորուստ ապականութեան: ¹²Խորտակեա՛ զգլուխս չար իշխանաց, որք ասեն. Չի՛ք այլ ոք բաց ՚ի մէնջ: ¹³Ժողովեա՛ զցրուեալ ազգս Յակոբայ՝ զի քո են Տէր, և զքեզ օրհնեսցեն:

31

Գլուխ ԼԱ

*Յաղագս ցնորից հոգոց**

¹Տրտմութիւն մեծ՝ մաշէ զոսկերս, ²և հոգք տրտմութեան մերժէ զմնջել: Յիւանդութիւն ծանր արթուն առնէ ՚ի քնոյ: ³Ձանացաւ մեծն ժողովել ինչս, և ՚ի հանգստեան իւրուն յագեցաւ փափկութեամբ: ⁴Ձանացաւ աղքատն ՚ի նուազել կենաց իւրոց, և ՚ի հանգստեան իւրուն կարօտեալ գտաւ: ⁵Որ սիրէ զոսկի՝ ո՛չ արդարացի, և որ երթայ զհետ անօրէնութեան՝ ապականեցի: ⁶Բազումք ՚ի կորուստ մատնեցան վասն ոսկւոյ, և եղև կորուստ նոցա առաջի՝ նոցա: ⁸Երանի մեծատան որ գտանի անարատ, և զհետ ոսկւոյ ո՛չ մոլորեցի: ¹⁴Ակն մարդոյ չար է, ¹⁶արդ՝ յի՞նչ և հայեցի նա՝ մի՛ ձգեր զձեռն քո: ¹⁸Խորհեա՛ դու բարի անձին քում, զնոյն կամեաց և ընկերին: Չի եթէ դու բարի կամիս քեզ՝ և այլոց չար, ժամանակ տացէ քեզ Տէր եւթնպատիկ չար, զի դու ընկերին բարի ո՛չ կամեցար: Ա՛ռն անմտի և հաց քուլեփի միտս մի՛ դներ, և խրատու իմաստութեան հաւանեա՛: Որ իմաստուն է և խաղաղարար, յամենայն ժամ ցանկայ տեսանել զնա: Մարդ որ յաղմուկ սովորէ՝ Սատանայի նմանէ, զի Սատանայ՝ բարի ո՛չ լինի՝ և ո՛չ մարդն այն խաղաղարար: Յան՝ զնա ՚ի միջոյ՝ և խաղաղացիր ՚ի նմանէ, զի այլք որ չգիտէին զինքն՝ գիտացցեն, և զքեզ ո՛չ պարսաւեսցեն, և հալածեսցեն զնա քաղաքէ ՚ի քաղաք. մինչև վախճանի նա՝ ուր ո՛չ գիտէ: Ո՞րդեակ՝ ա՛ռն անմտի հանդիպեցայ ես՝ և շատ տագնապեցայ ՚ի նմանէ, զի էր ծառայ սիրուն և հաւատարիմ, և դառնութեամբ խօսէր բերան նորա. և զխօսս անձին իմոյ՝ և զընկերի արդար անուսնոյ՝ պատմէր առաջի թշնամեաց յայսպն և ՚ի կատականս: Իմաստուն բանիւք խրատեցի զնա, և ո՛չ լուաւ, հատուցի նմա գան՝ և հաւանեցաւ: Լաւ է առն մորոսի բիր զլխոյն, քան բարձս փետրալիցս, զի իմաստութեամբ ո՛չ խրատի. մի՛ յապաղէր տալ նմա զօգուտ նորա. զի թէ վաղ և անագան՝ այսու խրատեցի նա՞: ²⁶Լո՛ւր ինձ ո՛րդեակ՝ և մի՛ անարգեր զիս, և ՚ի վախճանի գտցես զբանս իմ:

Յաղագս արիական գործոց, և այլոց խրատուց

²⁷Լե՛ր դու կայտառ ՚ի գործս քո, և հիւանդութիւն քեզ ո՛չ հասցէ: ²⁸Լե՛ր հացիւ առատ՝ և զովեսցեն զքեզ մարդիկ հաւատարիմ: Ամենայն մարդ՝ մարդ է, բայց դու ընտրեա՛ զպիտանին՝ որ ՚ի ժամանակի նեղութեան օգնեսցէ քեզ. և զհաց քո լիով տո՛ւր նմա, և լե՛ր կարօտելոց սեղան, և օրհնութիւն քո ՚ի նոցանէ հասցէ յամենայն տեղիս: ³⁰Առ զինուով մի՛ զայրանար, զի բազումք կորեան ՚ի զինուոյ: ³⁸Պառնութիւն սրտի՝ զինի անչափ. ցնծութիւն և ուրախութիւն սրտի՝ զինի սակաւ: ⁴¹Մի՛ կշտամբեր զընկեր քո ՚ի զինարբուս, ⁴²և բանս նախատանաց մի՛

* Ոճանք. Որդւոց. կամ՝ հոգւոց:

* Ոճանք. Քուլ եփի, միտ մի՛ դներ:

ասեր ընդ նմա, զի մի՛ գինւով չարիք մտցեն՝ ի ձեզ՝ և սատակիցիք ՚ի միմեանց*:

32

Գլուխ ԼԲ

¹Ո՞րդեակ՝ թէ գլուխ իցես բազմաց՝ մի՛ հպարտանար ՚ի վերայ նոցա. լեր դու իբրև զմի՛ ՚ի նոցանէ, ²և հանապազ խնամեա՛ զնոսա, և նոքա զանձինս իւրեանց ՚ի մահ դիցեն ՚ի վերայ քո: Եւ զպարզևս խոստման քո մի՛ պակասեցուցաներ ՚ի նոցանէ. ³հոգ տար նոցա ՚ի սեղանս, և զուրախութիւն նոցա քեզ համարեա՛: ⁴Խօսեա՛ դու իբրև զձեր՝ զի վայել է քեզ հաստատութեամբ իմաստութիւն:

33

Գլուխ ԼԳ

⁴Եւ զյայտնութեամբ պատասխանին յառաջ պատրաստեա՛ զի ամենեցուն լսելի լիցի:

Յաղագս անմիտ մարդոց, և պէսպէս խրատուց

⁵Ո՞րդեակ՝ անիւ սայլի է գութ մորոսաց, և իբրև սեռն շրջի խորհուրդ նոցա: ¹⁵Չակառակ է չարն բարւոյ, որպէս կեանք մահու: Եթէ հնա՛ր իցէ մարդոյ՝ զչարն ստիցէ, և ողորմութիւն տացէ անձին իւրուն՝ ՚ի ժամ մահու:

37

Գլուխ ԼԵ

⁹Ի նենգաւոր խորհրդակցաց պահեա՛ զանձն քո. ⁷և ընդ այնոսիկ մի՛ խորհիր դու, որ ընդ ակամբ նայիցին ՚ի քեզ, այլ և ՚ի նախանձաւորաց քոց թագուսջի՛ր զբանս քո: Մի՛ ընդ առն ամբարշտի՝ վասն աստուածապաշտութեան, և մի՛ ընդ առն անիրաւի՝ վասն արդարութեան: ¹²Մի՛ ընդ առն վատասրտի՝ վասն պատերազմի, և մի՛ ընդ առն վաճառականի՝ վասն վաճառաց փոփոխելոյ: ¹³Մի՛ ընդ առն չարական՝ վասն գոհութեան, և մի՛ ընդ առն անողորմի՝ վասն գթոյ, և մի՛ ընդ առն վատի՝ վասն ամենայն գործոյ: ¹⁴Մի՛ ընդ առն վարձկանի՝ վասն վարձուց իւրոց, մի՛ ընդ վատ ծառայի՝ վասն մեծագործ հրամանի. ընդ այնոսիկ մի՛ խառներ զխորհուրդս քո*: ¹⁵Այլ ընդ առն աստուածապաշտի արասցես զխորհուրդս քո. մանաւանդ եթէ ստուգեալ գիտասցես՝ թէ զպատուիրանս Աստուծոյ պահեալ է*: ¹⁷Եթէ ոչ գտցես այսպէս՝ հաստատեա՛ դու ՚ի քեզ զխորհուրդս սրտի քում, զի ոչ գոյ քեզ հաւատարիմ քան զնա: ¹⁹Եւ ՚ի վերայ այսր ամենայնի զԲարձրեալն աղաչեսջիր, զի ուղղեսցէ ճշմարտութեամբ զճանապարհս քո: ²⁰Սկիզբն ամենայն գործոյ՝ բանք են, և առաջին քան

*Ոմանք. Եւ սատակիք ՚ի միմեանց:

*Ոմանք. Ընդ այնոսիկ մի խառ՞:

*Ոմանք. Ասացես զխորհուրդ քո:

զամենայն գործ՝ խորհուրդ: ²¹Շաւիղք առակաց ՚ի սիրտ, զի չորք առաջք ծագեն ՚ի նմանէ, բարի և չար՝ կեանք և մահ: ²²Գոյ այր խորագէտ բազմաց խրատիչ, և անծին իւրում անպիտան: ²³Է՛ որ ճարտարաբան լինի բանիւք՝ ²⁴և յամենայն իմաստութենէ պակասեալ գտանի, զի չէ՛ տուեալ նմա շնորհք ՚ի Տեառնէ: ²⁵և իմաստութիւն՝ յանձն ի՛ւր է, և պտուղ իմաստութեան իւրոյ ՚ի բերան իւր հաւատարիմ: ²⁷Այր իմաստուն լցցի օրհնութեամբ, և երանեսցեն նմա բազումք՝ որ հային ընդ նա: ²⁹և անուն նորա կեցցէ յաւիտեան: ³²Ո՞րդեակ՝ մի՛ ազահեր դու յամենայն փափկութիւնս քո, և մի՛ շռայլիւր դու ՚ի պեսպէս խորտիկս, ³³զի ՚ի բազում խորտկաց մտանեն ցաւք: ³⁴Յագահութենէ բազումք մեռան. իսկ որ զգոյշ լինի անծին իւրոյ՝ յաւելու ՚ի կեանս:

38

Գլուխ ԼԸ

¹Պատուեա՛ զբժիշկ ՚ի պէտս անծին քո, զի և նա յԱստուծոյ արարեալ է: ²Բայց բժշկութիւն ՚ի Բարձրելոյն է: ¹⁵Է՛ ժամանակ՝ զի ՚ի ձեռս նոցա է բժշկութիւն քեզ: ¹⁴զի և նոքա զՏէր աղաչեսցեն՝ զի յաջողեսցի գործ նոցա: ¹⁶Ի վերայ մեռելոյ իջոյ արտօ՛ւր և մի՛ արհամարհեր զգիր հրամանի նորա: ¹⁸և կա՛ց ՚ի սուգ օր մի կամ երկուս, և մխիթարեսցիր ՚ի տրտմութենէ: ¹⁹Ձի ՚ի տրտմութենէ բազում անգամ և մահ լինի, և տրտմութիւն սրտի կարկամեցուցանէ ՚ի զօրութենէ: ²¹Ի բա՛ց արա ՚ի քէն գտրտմութիւն, ²²և մի՛ մոռանար՝ զի դարձ քո անդրէն է: ²³զի նա այսօր՝ և դու վաղիւն երթայցես: ²⁴Ի հանգստեան մեռելոյն հատո՛ նմա զյիշատակ նորա:

Յաղագս արուեստից մարդկան և խրատուց

²⁶Ձի՞նչ իմաստնանայ այր մաճակալ, և կամ պարծի ՚ի փայտ խթանի իւրոյ: Եւ այս է գործ նորա, եզինս վարել՝ և անդէն մնալ առ նոսա: Պատգամք նորա ՚ի մէջ որդւոց ցլուց: ²⁷և տքնութիւն նորա ՚ի մէջ զուարակաց, և սիրտ նորա զանկեալ զակօսիւք: ²⁸Այսպէս ամենայն հիւսն և ճարտարապետ, որ դրօշեն զքանդակեալ պատկերս, և ստեղծանեն զկերպարանս. միտք իւր տացէ նմանութիւն պատկերի, և տքնութիւն իւր գործ կատարէ: ²⁹Այսպէս դարբին առ սալ՝ և զննէ զշանթս դատարկ երկաթոյ՝: ³⁰մրրիկ հրոյ հալէ զմարմին նորա, և ձա՛յն ուռան խլացուցանէ զականջս նորա: ³¹Սիրտ նորա տացէ կատարումն գործոց իւրոց: ³²Սո՛յնպէս և բրուտն՝ որ նստի ՚ի վերայ գործոյ իւրոյ, և ամփոփեալ ընդ ոտիւք իւրովք շարժէ զանիւն. որ հանապազ ՚ի հոգս կայ վասն գործոյ իւրոյ, և յարգի է ամենայն բան նորա: ³⁴Կատարեալ է սիրտ նորա առողջութեամբ, և տքնութիւն նորա սրբէ զբով նորա: ³⁵Ամենեքեան տքա ՚ի ձեռս իւրեանց յուսացան, և իմաստնացան ՚ի գործս իւրեանց: ³⁶և առանց սոցա ո՛չ շինեսցին քաղաքք բնակչօք իւրեանց: ³⁷Բայց յաթոռս դատաւորաց մի՛ նստցին, ³⁸և զիրաւունս և զխրատ մի՛ յայտնեսցեն: ³⁹այլ աղօթք նոցա ՚ի գործ ճարտարութեան իւրեանց:

39

* *Բազումք*. Դատարկ երկաթ:

Գլուխ ԼԹ

Յաղագս իմաստութեան և պէսպէս խրատուց

¹Իմաստութիւն զամենայն խոր բան քննեսցէ, և մարգարտութիւն ստէպ արասցէ: ²Ձպատգամս անուանի արանց պահեսցէ, ³և յառակս օրինաց նոցա շրջեսցի*: ⁶Ձսիրտ իւր տացէ կանխել առ Տէր, և առաջի Բարձրելոյն ⁷բացցէ զբերան իւր, և քաւեսցին մեղք նորա: ¹⁰Ձբանս անհաս քննեսցէ, ¹¹և զխրատ վարդապետական յայտնեսցէ, և հանապազ յօրէնս կտակարանաց Տեառն պարծեսցի: ¹²Ձիմաստութիւն նորա տեսցեն բազումք, և յաւիտեանս յաւիտենից օրինեսցեն զնա. ¹³և անուն նորա կեցցէ՝ և մի՛ ջնջեսցի յիշատակ նորա: ¹⁷Լուարո՛ւք ինձ որդիք սուրբք՝ և բղխեսցէք զծաղիկս վարդի տնկեալ՝ ՚ի գնացս ջուրց: ¹⁹Օրհնեսցէք զՏէր յամենայն գործս նորա, ²⁰յերգս շրթանց՝ և ՚ի քնարս ձայնից: ¹⁹Տո՛ւք անուան նորա մեծվայելչութիւն. ²⁵զի յաւիտենից մինչև յաւիտեանս հայեցաւ. և ո՛չինչ է զարմանալի յաչս նորա: ²⁷Օրհնութիւն նորա իբրև գետք ծաւալեցան*, ²⁸սոյնպէս բարկութիւն նորա զհեթանոսս ժառանգեսցէ: ³¹Սկիզբն ամենայն պիտոյից մարդկան՝ ջո՛ւր և հա՛ց, հո՛ւր և երկա՛թ, կա՛թն և մե՛ղր, գինի և ձե՛թ. յա՛րկ և ձո՛րձ*: ³²Այս ամենայն բարեգործաց ՚ի բարիս՝ և անսրբոց ՚ի չարիս: ³⁴Ձսրտմտութիւն Արարչին կարճեսցեն ³⁵հո՛ւր և կարկուտ՝ սով և մահ. ³⁶և այս ՚ի վրէժխնդրութիւն և ՚ի սատակումն ամբարշտաց: ³⁸Ահա զայս ամենայն խորհեցայ ՚ի միտս իմ, և գրով արարի զամենայն:

40

Գլուխ Խ

¹Ձխաղս կատականաց և ծաղու տուեալ է ՚ի մարդիկ, բայց յօրէնս իւր և ՚ի պատգամս բերանոյ: Ձի և ծանր լուծ եղ ՚ի վերայ Ադամային ծնընդոցս: Ձի յելանել մարդոյ յարգանդէ մօր իւրոյ՝ փութով դարձցի առ մայրն ամենեցուն*:

Յաղագս անպիտան նախանձու, և պէսպէս խրատուց

²Խորհուրդ չարութեան մինչև յօր կատարածի. ³ի փառաւորէ որ նստի յաթոռ փառաց՝ և մինչև ցայն որ նստի փոխանակ բարձի ՚ի վերայ մոխրոյ: ⁴Եախանձ և զրգռութիւն և խռովութիւն և ոխութիւն ⁵եղծանէ զգիտութիւն ՚ի քուն գիշերոյ: ¹⁸Կեանք բաւականանայ ՚ի գործս ձեռաց բարեաց: ¹⁹Եւ շինուած քաղաքաց զանուն քո հաստատեն: Եւ քան զսոսա զերկոսին լաւ համարեալ է կին անարատ: ²⁰Գինի և երգ արուեստականաց ուրախ առնեն զսիրտ, և քան զերկոսին զսոսա սէր իմաստութեան: ²²Ի շնորհս և ՚ի գեղեցկութիւն ցանկայ ակն, ²³և քան զսոսա զերկոսին՝ կին զուարթ: ²⁵Արծաթ և ոսկի ²⁶բարձրացուցանեն յոյժ. բայց քան զսոսա զերկոսին երկիւղ Տեառն:

41

* Ոմանք. Օրինակաց նորա շրջեսցի:

* Ոմանք. Իբրև զգետ ծա՛:

* Ոմանք. Խաղող գինւոյ, և յարկ և ձորձ, և ձե՛թ:

* [Ոմանք]. Ի խաղս կատա՛:

Գլուխ ԽԱ

Յաղագս մահու, և պէսպէս խրատուց

¹Ո՞վ մահ՝ որպէ՛ս զի դառն է յիշատակ քո մարդոյ խաղաղացելոյ՝ ՚ի վերայ ստացուածոց իւրոց: ³Ո՞վ մահ՝ զի գեղեցիկ են դատաստանք քո, կարօտելոյ ամն, և նուաղելոյ՝ ՚ի զօրութենէ: ⁵Այս դատաստանք՝ ՚ի Տեառնէ ամենայն մսեղեաց: ⁶Իսկ արդ՝ զի՞ յապաղես ՚ի կամաց Բարձրելոյն: ⁸Գարշ և պեղծ են ծնունդք մեղաւորաց*։ ⁹Որդւոց մեղաւորաց կորիցէ ժառանգութիւն. ¹⁰զհայր ամբարիշտ և որդիք բամբասեն: ¹¹Վա՛յ ձեզ մարդիկ ամբարիշտք՝ որ թողէք զօրէնս Աստուծոյ Բարձրելոյն: ¹⁷Խրատ խաղաղութեան պահեա ո՛րդեակ, ¹⁶և անուն բարի յաւիտենական:

42

Գլուխ ԽԲ

⁸Առաջի ամենայն կենդանեաց փորձ և ընտի՛ր գտջիր: ⁹Դուստր հօր ՚ի ծածուկ տքնութիւն է: ¹¹Ի վերայ լրբագոյն դստեր հաստատեա՛ պահպանութիւն. ¹²և ՚ի մէջ կանանց մի՛ յաճախեր. ¹³զի՛ ՚ի հանդերձից ելանէ ցեց, և ՚ի կանանց չարիք: ¹⁴Լաւ է չարութիւն ամն՝ քան զբարութիւն կնոջ: Գեղեցկութիւն դիմաց կնոջ ՚ի յօնս իւր ծանիցի. և կին ամօթածու ՚ի նախատինս:

Յաղագս արարչական հրամանի Տեառն, և պէսպէս խրատուց

¹⁵Յիշեցի զգործս Տեառն, և որ ինչ տեսի պատմեցից: ՚Ի հրամանս բանի Տեառն գործք իւր, և եղեն կամք նորա և կատարեցաւ՝: ¹⁹Գիտաց Տէր զամենայն միտս, և հայեցաւ ՚ի նշան յաւիտենից: Յայտնէ զծածուկս գաղտնեաց, ²⁰և ո՛չ ծածկեցաւ ՚ի նմանէ ո՛չ բան և ո՛չ խորհուրդ. ²³և ամենայն գործք իւր ցանկալիք են: ²⁶Չաստատեաց նա զբարիս, և ո՞վ յագեսցի պատմել զփառաց նորա:

43

Գլուխ ԽԳ

⁹Ի հաստատութիւն երկնից ¹⁰զարդ են աստեղք, և զաշխարհս լուսաւորէ Տէր ՚ի բարձանց: ¹²Չայեա՛ց յաղեղն որ յամպս՝ և օրհնեա՛ զԱրարիչն նորա, որպէս զի գեղեցիկ է լոյս փառաւորութեան իւրոյ: ¹³Չեռք Բարձրելոյն հաստատեաց զխորանս երկնից: ¹⁷Ի հայել նորա լերինք հալեցցին, և ՚ի կամս նորա հնչէ հարաւ: ¹⁸Չայն որոտալոյ իւրոյ կշտամբէ զլերինս, և մրրիկ հիւսիւսոյ նորա կուտէ զհողմս*։ ¹⁹Եւ իբրև զթռչունս թռուցեալ արկանէ տարափ. և իբրև զժողովս բանակաց մարախոյ դնէ զնա յերկրի: ²⁰Գեղեցկութիւն սպիտակութեան նորա խտղտէ զաչս, և ընդ բերել նորա զարմանայ սիրտ: ²¹Եւ զեղեամն իբրև զաղ ցանեալ յերկիր: Եւ իբրև սառուցանէ՝ առնէ իբրև զտէգ միզակաց: ²⁶Եւ որ իջանեն յանդունդս նաւուք ՚ի ծով, պատմեն զսաստկութիւն

* Ոմանք. Պիղծք են:

* Ոմանք. Եւ կատարեցան:

* Ոմանք. Որոտալոյ նորա կշտամ՝:

նորա: Եւ մեք ՚ի լուր ականջաց մերոց զարմանամք: ³¹Սհարկու Տէր մեծ և ահեղ յոյժ: ³²Ի փառաւորել զՏէր բարձր արարէք զբարբառ ձեր՝ ո՛րչափ և իցէ կար ձեր: ³⁶Ձի շատ ևս քան զայս կան ծածկեալ խորհուրդք՝ և սքանչելիք: Ձի սակաւ ինչ տեսաք մեք ՚ի գործոց նորա, և պաշտօնէից իւրոց տուեալ է իմաստութիւն*:

Կատարեցաւ բանք Սիրաբայ:

ԽՕՍՔ ՍԻՐԱՔԱՅ

Սիրք հնազանդ և որկոր պարկեշտ՝ փառք են մարդոյ. իսկ ազահքն նման են անօթոյ ծակի որ ո՛չ լնու: Այր նախանձոտ յիւրոց մտացն այրեսցի. իսկ պարզամիտքն նման են մրտենոյ որ յարաժամ կանաչի: Հարսանիք և ուրախութիւն նախանձոտի և կեղծաւորի լալիս լինի նմա: Յորժամ կերիցէ այր չար և կեղծաւոր մեղր՝ զդառնըճի առցէ զհամ: Հաշին և հալին արք ամբարիշտք ՚ի միտս իւրեանց: Այր նիազ և զուճ թէպէտ և ունիցի գանձս բազումս, և ականս պատուականս, այնպիսին աղքատ է. և բաժին յընչից իւրոց՝ խոզան մի՛ հասցէ նմա թոշակ. և ՚ի զուր ծովածուփ լինիցի: Իսկ առատածեռնից զովասացիկքն բազում են քան զաւազ ծովու, և սիրտ նորա մի՛ տրտմեսցի: Իսկ ընդվայրածախքն և բոզից առատածեռքն փութով եղծանին: Դանգի միոյ ծախք ՚ի պատշաճն ժամու բազում ոսկոյ ունի զովութիւն. և որ յանդէպսն ծախիցէ հազար դահեկան՝ դանգի մի պղնձոյ համարեսցի: Ձերեսս մարդահաճոյից և կեղծաւորացն ո՛չ տեսանես կարմրացեալ, այլ իբրև զբանջար խորշակահար լեալ: Ձօրութիւն հսկայից և ըմբշաց՝ յոյժ են, բայց որ զբարկութիւն անձանց իւրեանց և զցանկութիւն արգելուն, և պատերազմին ընդ միտս իւրեանց, այն է սաստիկ ուժ և զօրութիւն: Որ աղքատ են ընչիւք՝ ՚ի ծառայից և յաղախնեաց իւրեանց անարգեալ լինին, և ՚ի հրապարակս ո՛չ ընդունին զպատիւ, և ՚ի դրունս թագաւորաց ո՛չ մեծարին: Դուստր անզգամ, նա տայ քարշել զմայր իւր՝ և անարգել և այպանել. իսկ պարկեշտն լաւ է քան զելթն որդի: Ձայր անագորոյն և զամբարիշտ ո՛չ ցածուցանէ՝ յորժամ մեռեալ տեսանիցէ զընկեր իւր: Շուրթն ցոփ և լեզու հպարտ ո՛չ ճանաչէ ՚ի պտղոյ խաղաղութեան և արդարութեան. լեզու ողորք և շուրթն քաղոր՝ զմեծ պարզևաց ունի զտեղի: Խորհուրդ անկեալ ՚ի փորամոլն, այնպէս է՝ որպէս կրակ ՚ի կերպասի: Որ ծիծաղելով գործէ զչարիս՝ նմանեալ է լերդաբեկին ծաղերն: Ամբարիշտն նման է քարի՝ որ դառնացուցանէ զկերակուրսն, և վնաս առնէ ստամոքսացն. նոյնպէս և չարիք մարդոյ որ վարին նովաւ: Ո՛չ որ խնդայ ընդ մահ մարդոյ՝ բայց միայն յափշտակողն որ բազում խնդութիւն լինի: Եթէ դիցես աստեղատանց գործիք, և արդարոց որոզայթ. իսկ մեղաւոր յիւրոց ձեռաց ըմբռնեսցի: Սեղս և արդարութիւն որպէս պղնձալից արծաթ ո՛չ գործեսցի, և իբրև զհուր և զփայտ օտար են ՚ի միմեանց: Վատն ո՛չ տարցէ ՚ի կատար զգործ պատերազմի. իսկ քաջն թէպէտ և սիրէ զխաղաղութիւն՝ ո՛չ տկարանայ: Ձգեղ պատուական ապականէ բարկութիւն:

* *Ոմանք. Քան զևս կան ծածկեալ: Աստէն աւարտեալ ամենայն օրինակք զԳիրս Սիրաբայ՝ ոմանք յաւելուն և զյաջորդ բանս, նշանակեալ ՚ի վերնագրին. Կարծեմ որդւոյ կատարելոյն Սիմեոնի. յորս զաղաւաղութիւնս գրչաց՝ առ նուագութեան անսխալ օրինակաց նահանջիմք ուղղագրել:*

Նման է պակշոտն թմբրեալ գայլոց: Ջխրատուն արմատն դառն ասացին, և գպտուղն քաղցր. բայց թէ կամիս իմաստուն լինել՝ ծանիր գժամանակն: Որք զերդումն կամուրջ համարին՝ յանուրջ խորս ընկղմեսցին. և վայ՛ որ անցանեն ընդ՝ այն կամուրջ: Յոր կողմն դարձցի այր աստուածաւեր և իրաւարար՝ արև քաղցր ծագեսցի երեսաց նորա: Վայ՛ գնացելոյ զհետ նանրութեան, զի նմանեցաւ նա հովանոյ մարդոյ. և որ ընդդէմ երթայ ցանկութեանցն անձին, նա տայ փրկանս հոգւոյն իւրոյ: (Վնաս՝ ՚ի լեզուին՝ կառափի գլուխն, և ջարդին ծնօտքն): Անմտին երկաթ և պղինձ՝ ոսկի ընտիր թուեսցի. և անձնահաճքն ստեպ ամաչեսցեն: Լեզու յանդիմանախօս և ժանդ՝ զառատութիւն ձեռաց արհամարհել տայ. իսկ լեզուք ճշմարիտք՝ ՚ի հրապարակս ո՛չ լքանին: Երեսաց սուտ վկայի թէ միտ դիցես՝ յայտնի ստութիւնն: Եթէ մտցես յեկեղեցի, լեզու շան մեռելոտոյ և լեզու սուտ ընդունին՝ ՚ի հրապարակս. որ իմաստունն է՝ է՛ կնիք անլուծանելի: Նենգաւորն թէպէտ և ազատ իցէ՝ պոռնկորդի իցէ: Ծառայ միամիտ՝ ազատ անգին: Հարաւային հողմն ո՛չ գայցէ նենգաւորին գարնանն: Այր ոխակալ նման է հրոյ՝ տաճար բարկութեան: Որդի անհնազանդ՝ նա տայ սիրել զորդի աղախնոյ: Որդիք նենգաւորաց թէպէտ և միամիտք իցեն՝ զբարութիւն ո՛չ ժառանգեն: Որ նստի ընդ իմաստունս՝ գովի յիմաստնոց. իսկ որ կցորդ լինի անմտաց՝ դիւրաւ անմտացի: Որ թողու զորդի իւր գնալ ըստ կամս անձին իւրոյ՝ նա ատեայ գնա: ՚Ի տանէ անօրինաց խորշին արդարք, և ո՛չ լուծանեն զքաղց իւրեանց. իսկ անօրէնք յագեսցին ՚ի տանէ մեղաւորաց: Գանապարիք որ թուի միոյն ուղիղ, և բազմաց թիւր, եղունկ որ գնայ ընդ նա: Եթէ ոք ծիծաղեսցի յանդուգն՝ թողցէ մասն ինչ լալոյ: Չայր պարզամիտ ամենայն ոք խաբէ: Որպէս յուզես արկչաց գանձից քոց կշռոց ամուրս, յուզեա՛ և խաղաղութիւն խորհրդակցի քո, և պատուեա՛ գնա: Մեղք մահաբերք թափի ՚ի բժշկաց ճարտարաց, և կաշառառուաց անձինք անբժշկելի եղիցին: Որպէս հալի այծեամն առաջի առիւծոյ, այնպէս և մեղք առաջի ողորմութեան: Որ ոտն հարկանէ ընկերին՝ մի՛ մոռացի զդարձ փոխարինի նորա: Թշնամոյ քո մի՛ յաճախեր թշնամութիւն, այլ թողցես տեղի սիրելութեան նորա: Սիրելոյ քո և բարեկամի զամենայն գանձս խորհրդոց քոց մի՛ բացցես: Մեծ պատրաստութիւն լինի ՚ի հրապարակս ՚ի լուռ մարդոյ, դնեն ունկն առհասարակ ամենեքեան յորժամ խօսեսցին: Չի եթէ խօսելն ընդ արծաթոյ համարեսցի, լուռ կալն ընդ ոսկոյ է: Ո՛չ է պարտ յարիլ ՚ի տուն բոզանոց: Ո՛չ դադարէ պատճառ դնել զԱստուած այր անմիտ և անբարիշտ: Լաւ է իմաստուն թշնամի քան զանմիտ սիրելի: Եթէ շօշափեսցի շուք, կամ ըմբռնեսցի արև, ապա և օգտեսցի ապաշաւանք անցեալ գործոց: Որ ապստամբէ ՚ի Տեառնէ Աստուծոյ, որ ճանաչէ գնա յարուսցէ նմա կռփիչ՝ որ ո՛չ ճանաչէ զՏէր Աստուած: Հարքացկոտ սիրելիք անհաստատ թշնամիք, բազմաց խորհրդովք ճապաղեալք: Մի՛ յաճախեսցես զգուշացուցանել զայր թագաւոր, զի մի՛ զկասկած բերիցէ զքէն չարի: Փախչի այր գուճ և կոծելի ՚ի գեղջէ՛ որ յանցս ճանապարհաց է. իսկ որ առատն է՝ ո՛չ միայն հացիւ, այլև բանիւք անուշիւք ընդունի զհիւրսն: Լեզու սուր ծառայէ մարդոյ որչափ լռէ. իսկ յորժամ խօսիս զանպատշաճն՝ ծառայ եղեր նմա: Լեզու գազան ընտանի է ՚ի բերան մարդոյ. իսկ յորժամ արծակէ գնա՝ ուտէ զինքն: Առն անմտի հազար բանն ո՛չ առնէ արդիւնս կէս բանի. իսկ իմաստնոյն կէս բանն կապէ զհազարս բանից: Որպէս երիվարաց որոզայթ են առ ՚ի կող պաղեալք. այսպէս ո՛չ օգտի զրահս և սաղաւարտս եթէ ազանիցի ընդ կնոջ լեզուանոյ և անզգամի: Եթէ ճանաչել

կամիս զանձնահաճան և զանմիտս՝ այսպէս ծանիր. փոյթ առ ՚ի բարկանալ և տալ պարգևս ուր չեն արժանի, և չմեկնել զթշնամին ՚ի սիրելոյն, և ո՛չ պահել զբանս ՚ի սրտի, և շատախօս լինել յանպատշաճ ժամու, և վստահանալ յամենայն մարդ: Երկու իրք երթան ո՛րդեակ զհետ մեռելոյն ցգերեզմանն, մնացիրսն և վերջամնացք նորա: Իսկ որ մտցէ ընդ իւր՝ այս մնասցէ առ իւր, գործքն բարի կամ չար. իսկ երկուքն դառնան ՚ի տեղիս իւրեանց, և մեռեալն ո՛չ օգտի ՚ի նոցանէ: Նման է մարդ ծառոյ. որպէս ջուր օգտէ ծառոյ՝ նոյնպէս և աղօթք մարդոյ յանձին: Որպէս ճիւղք փառք ծառոց, նոյնպէս և պահք անձին մարդոյ: Որպէս տերև կանաչ պայծառութիւն է ծառոց. նոյնպէս և աղքատսիրութիւն մարդոյ. արդ՝ եթէ մի՛ պակաս գտանի յայսցանէ՝ ծառն ո՛չ առնու արմատ. նոյնպէս և մարդ եթէ այսպիսի իր ինչ ո՛չ գործէ՝ ո՛չ ասի նմա մարդ կատարեալ: Ո՛չ է պարտ առն խորհրդականի զամենայն գիշերն ննջել. որոյ իշխանութիւն և պէտք յանձին է:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՐԱՅ

Ձայրս զայս ոմանք ըստ պատմութեան ազգահամարին՝ հինգերորդ ասեն յԱբրահամէ. քանզի զեսաւայ ազգահամարն ածէ մինչև ՚ի Յոբաբ: Առ որ ոմանք մտախոհ եղեալ ասացին՝ թէ սքանչելի այս իր եղև առանց գրոյ. զի գտանի Յոբ յառաջ քան զօրէնսն, և գրեցաւ յետ օրինացն. բայց յոր ժամանակ և եհաս կանխասացութիւնս այս՝ պատուեցաւ ՚ի ճշմարտութեան կողմնն իբրև զաւետարանսն և զմարգարէսն. մանաւանդ զի զջանս արուութեան որ առ Քրիստոսիւ լուսաւորեցաւ՝ նախ քան զՔրիստոս կանխագոյն ուղղեաց: Արդ՝ զի մի՛ ՚ի մեծ իրս յայս կասկածանօք մնասցեն վասն օտարութեան ժամանակի գրողին, ասացին թէ բարեկամքն Յոբայ գրեցին աստուածային շնորհիւն. որպէս և ինքն ըղձայր յասելն. Ո՞ տայ ինձ գրել զբանս իմ, և դնել զսա ՚ի գիրս յաւիտենականս: Գիտելի լիցի և այս, թէ ՚ի դէպ է կարծել Մովսիսի զսա գրեալ՝ որ մերձաւոր էր ժամանակին, ՚ի խրատ Իսրայէլի իբր նկարագիր զսա արկեալ: Իսկ այլոց եղև կարծիք Սողոմոնի լինել գրող. զի ստիւքիրոն է՝ որպէս նորա բանքն: Սակայն բազում մխիթարութիւն տայ համբերողաց Գիրքս՝ զայրս վշտագնեալ ՚ի մէջ բերեալ, որ զջանն ընկալաւ. ըստ Քրիստոսի խորհրդոցն. և նախ ունէր զվկայութիւնն Աստուծոյ թէ ժամանեալ է ՚ի ծայրս բարեպաշտութեան, և յետոյ առ սիրելիսն զսպառնալիսն և զանխայելն, թէ վասն նորա ո՛չ կորուսի զձեզ: Պարտ է ամենայն զգուշութեամբ դիտել զխոշորութիւն բանիցս թէ առ ո՛վ ունի զդիտումնն, և մի՛ ընկղմել յանհասութիւնն. զի գրողն կամելով ցուցանել զբազմահնար փորձանս Յոբայ ՚ի Սատանայէ, առ Աստուած բանիւքն տպաւորէր զտրտունջ դատախազութեանն. այլ զի ՚ի տունս չափով զգիրս՝ ըստ Եբրայեցւոցն արար, այսու ծաղկեալ ցանկալի արար զսա ամենայն քննողաց: Դարձեալ գտանի սա ամենեցուն խրատ, թագաւորաց, քահանայից, իշխանաց, ռամկաց, աղքատաց, մեծամեծաց, վիրաւորաց. որոց տայ բեր օրինակս, և հաստատէ ըստ ընչից՝ ըստ որդւոց՝ զորս ՚ի գայթազողութիւնս անկանին. նա՛ և որք ՚ի դիւաց վշտագնին՝ զհանգիստ և զբժշկութիւն գտանեն յայսմ գրոյ. և որք

սմա զգուշանան՝ մեծախոհութեամբ տանին զրկանաց: Սակայն զԱւսիդ աշխարհն՝ ոմանք ասեն թէ Սիոն է, և այլք թէ յԱրաբիայ է՝ կամ յԵդովմ. զի և յԱրաբիա տակաւին ևս երկի գերեզման արդարոյն, յորում և էր կեանք երանելւոյն Յորայ: Ըստ որում ասէ աստուածային գիրն՝ եթէ եկաց յետ փորձանացն ամս հարկր և եւթանասուն. և ամենայն զոր եկեաց, երկերիւր քառասուն և ութ. և է այս ստոյգ. զի յաւելումք եւթն զկալն նորա՝ ՚ի փորձանսն, և եւթանասուն և ութն, յորում հանդիպեցաւ սկիզբն փորձանացն, որ ՚ի միասին լինի ութսուն և հինգ: Զոր Աստուած կրկին ըստ այլ բարեացն զոր ետ նմա, և զկեանսն նոյնպէս շնորհեաց, զի ՚ի միասին համաձայնի ամենայն ՚ի թիւն: Թողումք և յուրսուն և հնգէն զեւթն (փորձանացն, որ մնաց միայն եւթանասուն և ութ,) որ մերձաւորի լինել հարկր և եւթանասնիցն: Ասեն զի արար զամս կենաց իւրոց յետ փորձանացն երկերիւր քառասուն և ութ. քանզի երկրորդեմք զեւթնն զոր ՚ի փորձանսն. զոր թուել ՚ի ժամանակս կենաց իւրոց ոչ արժանացոյց, այլ առաւել կեանս իւր զա՛յս Աստուծոյ մարդասիրութիւնն համարեցաւ*:

ԳԻՐՔ ՅՈՐԱՅ*

1

Գլուխ Ա

¹Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի որում անուն էր Յո՛ր. և էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեղաց*: ²Եղեն նորա ուստերք եւթն՝ և դստերք երեք*: ³Եւ էին խաշինք նորա՝ եւթն հազար. ուղտք երեք հազարք. լուծք եզանց հինգ հարկր. և էշք մատակք արօտականք հինգ հարկր. և սպասք բազում յոյժ. և գործք մեծամեծք էին նորա ՚ի վերայ երկրի: Եւ էր այրն այն ազնուական քան զամենայն արևելեայսն: ⁴Միաբանեալ զային որդիք նորա առ միմեանս, առնէին խրախութիւն զօրհանապազ. առեալ ընդ իւրեանս և զերեսին քորսն իւրեանց ուտել և ըմպել ընդ նոսա*: ⁵Եւ իբրև յանգ ելանէին աւուրք խրախութեանն, առաքէր Յոր՝ և սրբէր զնոսա. յարուցեալ ընդ առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա, և զուարակ մի վասն մեղաց որդւոց նոցա. քանզի ասէր Յոր՝ թէ զուցէ որդիքն իմ ՚ի միտս իւրեանց իմացան չարութիւն զԱստուծոյ. ա՛յսպէս

* Յետ առաջիկայ նախադրութեանս ՚ի նմին մատենագրէ յօրինելոյ ըստ ոճոյ այլոց նախադրութեանց, զրչագիր օրինակք յարեն և այլ իմն, մակագրեալ՝ Յուլիանեայ եպիսկոպոսի Աղիկառնացոյ, զոր ՚ի վախճան մատենիս թողում կարգել ընդ այլ մնացորդս: Այլ յաղագս զանց առնելոյ մատենագրիս և ՚ի գիրս յայս գտովորական ցուցակաւ զխակարգութեանց, չունիմ ասել, մանաւանդ յետ բաժանելոյ զգիրս յերկոտասան գլուխս բանից, որպէս է տեսանել ՚ի լուսանցս բնաբանին:

* Չվերնագիր գրոցս ամենայն օրինակք ունին համաձայն մերումս, բաց ՚ի միոջէ որ դնէ. Յորայ Գիրք:

* Ոմանք. էր յԱւստեր աշխարհի:

* Ոմանք. Եւ եղեն նորա ուստերք... (3) և խաշինք նորա էՌ ոչխար, ուղտք:

* Ոմանք. Միաբանեալ կային որդիք նորա:

առնէր Յոբ զամենայն աւուրս նոցա*:

⁶Եւ եղև իբրև օրս զայս՝ և ահա եկին հրեշտակք Աստուծոյ կալ՝ առաջի Տեառն. եկն և Սատանայ ընդ նոսա յածեալ ընդ երկիր և շրջեալ ՚ի նմա*:⁷Եւ ասէ Տէր ցՍատանայ. Դու ուստի՞ գաս: Պատասխանի ետ Սատանայ Տեառն, և ասէ. Շրջեալ ընդ երկիր և յածեալ ՚ի ներքոյ երկնից՝ եկեալ կամ*:⁸Եւ ասէ ցնա Տէր. Նայեցա՞ր մտօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յոբ. զի ո՛չ գոյ իբրև զնա ՚ի վերայ երկրի, այր անարատ՝ ճշմարիտ՝ աստուածապաշտ՝ մեկնեալ յամենայն իրաց չարաց*:⁹Ե՛տ պատասխանի Սատանայ, և ասէ ընդդէմ Տեառն. Միթէ ձրի՞ պաշտիցէ Յոբ զՏէր*.¹⁰ո՞չ դու ամրացուցեր զարտաքին նորա՝ և զներքին տան նորա, և որ ինչ միանգամ արտաքոյ շուրջ զնովա՛ւ է. զգործս ձեռաց նորա օրհնեցեր, և զանասուն նորա բազմացուցեր ՚ի վերայ երկրի: ¹¹Բայց ո՛չ աղէ՛ առաքեա՛ դու զձեռն քո, և արկ յամենայն ինչս նորա. եթէ ո՞չ յերեսս իսկ օրհնեսցէ զքեզ*:¹²Յայնժամ ասէ Տէր ցՍատանայ. Ահա զամենայն ինչս նորա տամ ՚ի ձեռս քո, բայց ՚ի նա մի՛ մերձեցայցես: Եւ ել Սատանայ յերեսաց Տեառն: ¹³Եւ է՛ր իբրև զօրս զայս. ուստերքն Յոբայ և դստերք նորա՝ ուտէին և ըմպէին գինի ՚ի տան երիցու եղբօրն իւրեանց: ¹⁴Եւ ահա հրեշտակ եկն առ Յոբ՝ և ասէ ցնա. Հարկիք եզանցն վարէին, և էշքն մատակք արածէին առ նոքօք: ¹⁵Եւ եկին գերեվարք և գերեցին զնոսա, և զմանկտին կոտորեցին սրով. Ե՛ս միայն ապրեալ՝ եկի պատմել քեզ: ¹⁶Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ եկն առ Յոբ՝ և ասէ ցՅոբ. Հո՛ւր անկաւ յերկնից՝ և այրեաց զիօտսն, և զհովիւսն ըստ նմին օրինակի եկեր. Ե՛ս միայն մնացեալ՝ եկի պատմել քեզ: ¹⁷Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ եկն՝ և ասէ ցՅոբ. Ասպատակաւորք ասպատակեցին ՚ի մեզ երեք առաջք և պատեցան զուղտուքն՝ և գերեցին զնոսա, և զմանկտին կոտորեցին սրով. Ե՛ս միայն ապրեալ՝ եկի պատմել քեզ: ¹⁸Եւ մինչդեռ նա խօսէր՝ այլ հրեշտակ գայր և ասէր ցՅոբ. Մինչդեռ ուստերքն քո, և դստերք ուտէին և ըմպէին առ երիցու եղբօրն իւրեանց՝ ¹⁹յանկարծակի հողմն մեծ եկն յանապատէ՝ և եհա՛ր զչորեսին անկիւնս տանն, և անկաւ տունն ՚ի վերայ որդւոցն քոց՝ և վախճանեցան. Ե՛ս միայն ապրեալ՝ եկի պատմել քեզ: ²⁰Ապա յարուցեալ Յոբ՝ պատառեաց զհանդերձս իւր, և կտրեաց զվարսս զլխոյ իւրոյ. և անկեալ ՚ի գետին երկիր եպագ Տեառն, ²¹և ասէ. Մերկ իսկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանդամ դարձայց անդրէն*:²²Տէր ետ՝ և Տէր առ. որպէս Տեառն հաճոյ թուեցաւ՝ նոյնպէս և եղև. եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ*:²³Եւ յայսմ ամենայնի անցս որ անցին ընդ նա՝ ո՛չ մեղաւ Յոբ առաջի Տեառն, և ո՛չ ետ անզգամութիւն Աստուծոյ:

2

* *Ոմանք.* Յանկ ելանէին աւուրք խրախուրեան նոցա, առա՞: *Այլք.* Վասն մեղաց ընդ ոգւոց նոցա:

* *Ոմանք.* Եւ իբրև եղև զօրս զայս, եկին իր՞... յածեալ յերկրի և շր՞:

* *Ոմանք.* Եւ ասէ Տէր ընդ Սատանայ. Ուստի՞: *Ուր Ոսկան.* Եւ ասէ Աստուած:

* *Յօրինակին.* Ընդ ծառային ընդ Յոբ: *Օրինակ մի.* Ընդդէմ ծառայի իմոյ Յոբայ, զի:

* *Ի լուս՞.* Եւ ասէ առաջի Տեառն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:*

* *Ի բազումս պակասի.* *Բայց ոչ* աղէ առա՞:

* *Ոմանք.* Եկն առ Յոբ և ասէ ցՈր:

* *Ոմանք.* Եւ մերկ անդամ դարձայց անդր:

* *Ոմանք.* Եւ յայսմ ամենայն անցս:

Գլուխ Բ

¹Եւ եղև իբրև զօրս զայս. և եկին հրեշտակք Աստուծոյ կալ՝ առաջի Աստուծոյ. եկն և Սատանայ՝ ի մէջ նոցա # ընդ նոսա կալ՝ # առաջի Տեառն*։ ²Եւ ասէ Տէր ցՍատանայ. Դու ուստի՞ զաս: Յայնժամ ասէ Սատանայ առաջի Տեառն. Սահեալ ՚ի ներքոյ երկնից՝ և շրջեալ ընդ ամենայն, եկեալ կամ: ³Եւ ասէ Տէր ցՍատանայ. Ապաքէն հայեցա՞ր ընդ ծառայ իմ ընդ Յոբ. զի ո՛չ գոյ իբրև զնա՝ ՚ի վերայ երկրի, այր ճշմարիտ անարատ, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն չարութենէ. և տակաւին կայ յանմեղութեան. և դու տարապարտ խօսեցար կորուսանել զինչս նորա*։ ⁴Կրկնեաց անդրէն Սատանայ՝ և ասէ ցՏէր. Մորթ ընդ մորթոյ, և որ ինչ իցէ մարդոյ ընդ անձին իւրոյ տուժեսցի. ⁵ապա թէ ոչ՝ աղէ առաքեա՛ զձեռն քո, և արկ զոսկերօք և զմարմնովք նորա. եթէ ո՞չ յերեսս իսկ օրհնեսցէ զքեզ: ⁶Եւ ասէ Տէր ցՍատանայ. Ահա մատնեմ զնա քեզ, բայց միայն զոգի նորա պահեսցես: ⁷Եւ ել Սատանայ յերեսաց Տեառն. և եհար զՅոբ չարաչար կեղով յոտից մինչև ցգլուխ*։ ⁸Եւ առեալ խեցի քերէր զթարախն. և նստէր յաղբևս արտաքոյ քաղաքին: Եւ իբրև բազում ժամանակք անցանէր ՚ի վերայ*։ ⁹Ասէ ցնա կինն իւր. Մինչև յե՞րբ ժուժկալեալ ասիցես՝ թէ ահա համբերեցից տակաւին՝ սակաւ ինչ ժամանակ ակն կալեալ յուսոյ փրկութեան իմոյ: # Ահաւաղիկ ապականեալ է յիշատակ քո ՚ի վերայ երկրի. # ուստերք քո և դստերք՝ իմոյ որովայնի երկք և երկունք. # յորս տարապարտուց վաստակեցի տառապանօք: # Դու ինքնին ՚ի զագրութիւն որդանց նստիս օթագացեալ բացական. # և ես մոլորեալ և հարկահար, տուն ՚ի տանէ, և տեղի ՚ի տեղուջէ. # սպասեմ թէ ե՞րբ մտանիցէ արեգակն՝ զի հանգեայց ՚ի տառապանաց իմոց՝ որ այժմ պատեալ են զինև: Աղէ՛ ասա՛ բան ինչ ՚ի Տէր, և վախճանեաց*։ ¹⁰Եւ նորա հայեցեալ ընդ նա՝ ասէ. Իբրև զմի ՚ի կանանց անզգամաց խօսեցար. եթէ զբարիսն ընկալա՛ք ՚ի ձեռանէ Տեառն՝ չարեացս ո՞չ համբերիցեմք: Եւ յայսմ ամենայնի որ ինչ անցք անցին ընդ նա, ո՛չ մեղաւ Յոբ շրթամբք իւրովք առաջի Տեառն. և ո՛չ ետ անզգամութիւն Աստուծոյ*։ ¹¹Եւ լուեալ երից բարեկամացն զչարիսն ամենայն որ հասին ՚ի վերայ նորա, եկին յիւրաքանչիւր աշխարհէ առ նա. Եղիփազ արքայ Թեննացւոց. Բաղդատ բռնաւոր Սաւրեցւոց. Սովփար արքայ Սինեցւոց. և եկին առ նա միաբան մխիթարել և սփոփել զնա*։ ¹²Եւ տեսեալ զնա ՚ի բացուստ՝ ո՛չ ծանեան. և բարբառեալ մեծաձայն լացին. և պատառեցին իւրաքանչիւր զպատմուճան իւր, և ցանեցին հո՛ղ ՚ի վերայ զլիսոց իւրեանց ընդ երկինս հայելով*։ ¹³Եւ նստան շուրջ զնովաւ յերկրի զեւթն օր և զեւթն զիշեր. և ո՛չ ոք ՚ի նոցանէ խօսեցաւ ընդ նմա բան. քանզի տեսանէին

* *Ի լուս՝. ՚ի վերայ՝ կալ առաջի, նշանակի՝ Ակ. արձանացեալ: Ոմանք. Կալ առաջի Տեառն. եկն և Սա՛... ՚ի մէջ նոցա կալ առա՛:*

* *Ոմանք. Ընդ ծառայ իմ Յոբ... այր արդար ճշմարիտ աստուածապաշտ... տարապարտուց խօսեցար:*

* *Ոմանք. Ել Սատանայ:*

* *Ոմանք. Եւ նստէր յաղբիւս... բազում ժամանակ ան՛:*

* *Ոմանք. Զամբերից տակաւին սակաւիկ ինչ ժա՛... վաստակէի տառապանօք...*

օթագացեալ բացական: Ուր Ոսկան. օթագայեալ: Բազումք յաւելում. ՚ի տառապանաց իմոց, և ՚ի ցաւոց իմոց, որ... բան ինչ առ Տէր:

* *Ոմանք. Որ ինչ անցին ընդ նա:*

* *Ի բազումս պակասի. Եւ սփոփել զնա:*

* *Ոսկան. Զպատմուճանս իւրեանց: Ի բազումս պակասի. Ընդ երկինս հայելով:*

զանհնարին հարուածսն և զմեծամեծս յոյժ*:

3

Գլուխ Գ

¹Եւ ապա ո՛ր ուրեմն Յոբ եբաց զբերան իւր, և անէծ զօրն իւր*, ²և ասէ.

³Կորիցէ՛ օրն յորում ես ծնայ, և գիշերն յորում ասացին թէ ահա արո՛ւ:

⁴Խաւարեսցի՛ գիշերն այն, և մի՛ խնդրեսցէ զնա Տէր՝ ի վերուստ: Մի՛ եկեսցէ ՚ի վերայ նորա լոյս*.⁵ ընկալցի՛ զնա խաւար՝ և ստուերք մահու. եկեսցէ՛ ՚ի վերայ նորա մեգ*.⁶ Անիծեալ լիցի օրն այն և գիշերն, և տարցի՛ զնա խաւար. մի՛ եղիցի յաւուրս տարւոյ, և մի՛ թուեսցի յաւուրս ամսոց:⁷ Այլ գիշերն այն եղիցի՛ ՚ի ցա՛ւս, և մի՛ եկեսցէ ՚ի վերայ նորա ուրախութիւն և մի՛ ցնծութիւն*:⁸ Այլ նզովեսցէ՛ զնա որ նզովելոցն է զօրն զայն. որ զբռանք ածելոցն իսկ է զմեծ վիշապն:

⁹Խաւարեսցին աստեղք գիշերոյն այնորիկ, սպասեսցէ, և ՚ի լոյս մի՛ տեսցէ, և մի՛ տեսցէ զարուսեակն ծագեալ*:¹⁰ Ձի ո՛չ փակեաց զդրունս արգանդի մօր իմոյ, զի թերևս մերժէ՛ր զցաւս յաչաց իմոց:¹¹ Իսկ ընդէ՞ր յորովայնի ո՛չ վախճանեցայ. այլ ելի յարգանդէ և ո՛չ անդէն վաղվաղակի կորեայ:¹² Ընդէ՞ր դիպեցան ինձ ծնունդք, կամ ընդէ՞ր դիեցի ես զստինս մօր իմոյ*:¹³ Ձի այժմ հանդարտեալ դադարէի, և անջեցեալ հանգչէի՛¹⁴ ընդ թագաւորս և ընդ խորհրդականս երկրի՝ ոյք հպարտացեալ էին ՚ի սուրս իւրեանց*:¹⁵ Կամ ընդ իշխանս որոց բազում էր ոսկի, որք լցին զտունս իւրեանց արծաթով:¹⁶ Կամ իբրև զանցուցեալն, որ ելանէ յարգանդէ մօր իւրոյ, կամ իբրև զտղայս որ ո՛չ տեսին զլոյս:¹⁷ Ա՛նդ ամպարիշտք որ բորբոքեցին զսրտմտութիւն բարկութեան: Անդ հանգեան աշխատեալքն մարմնով*,¹⁸ ՚ի միասին յաւիտենականք՝ որք ո՛չ լուան զձայն հարկահանի:¹⁹ Փո՛քր և մեծ անդ են, և ծառայ աներկևղ ՚ի տեսնէ իւրմէ:²⁰ Իսկ ընդէ՞ր տուեալ իցէ անձանց դառնացելոց լոյս, և կեանս ցաւազնելոց ոգւովք*.²¹ որ ցանկան մահու, և ո՛չ հասանեն. փորեն իբրև զգանձս,²² և խնդալից լինին եթէ զտանիցեն: Մահ*²³ մարդոյ հանգիստ է յորմէ ճանապարհն թաքեալ ՚ի նմանէ. զի փակեաց զնովաւ Աստուած*:²⁴ Յառաջ քան զկերակուրս իմ հեծութիւն եհաս, արտասուօք և ահիւ նեղեալ եմ:²⁵ Ձի երկևղն յորմէ խիթային ե՛կն ՚ի վերայ իմ, և յորմէ կասկածէին պատահեաց ինձ:²⁶ Ո՛չ խաղաղեցայ ո՛չ

* Յոմանս պակասի. Շուրջ զնովաւ յերկրի զելթն տիւ և զելթն գի՛:

* Բազումք. Եւ ապա ուրեմն Յոբ ե՛՛:

* Ոմանք. Եւ մի՛ եկեսցէ ՚ի վերայ նորա:

* Ոսկան. Եւ ստուեր մահու, և եկեսցէ:

* Ոմանք. Ուրախութիւն և ցնծութիւն:

* Ոմանք. Սպասեսցէ և ՚ի լոյս մի՛ եկեսցէ:

* Ոմանք. Դիպեցաւ ինձ ծնունդք. և ընդէ՞ր դիեցի ես զստինս:

* Ոմանք. Էին ՚ի սուրս իւրեանց:

* Ոմանք. Ամբարիշտք բորբոքեցին:

* Ոմանք. Իցէ դառնացելոց լոյս:

* Ոմանք. Լինին իբրև զտանիցեն: Ուր Ոսկան. եթէ զտանիցեն զմահ:

* Ի բազումս պակասի. Հանգիստ է, յորմէ ճանապարհն թաքեալ ՚ի նմանէ: Ի լուս՝ ՚ի վերայ՝ ճանապարհն, նշանակի՛ ժամանակն. և ՚ի վերայ՝ զի փակեաց զնովաւ, նշանակի՛ Ակ. ո՛չ իմացոյց նմա:

հանդարտեցի՝ ո՛չ հանգեայ. քանզի եկն ՚ի վերայ իմ բարկութիւն*:

4

Գլուխ Դ

¹Կրկնեալ անդրէն եղիփագու թեմնացոյ ասէ՛.

²Միթէ բազում անգամ լցեալ իցեն քո բանք աշխատութեամբ, և զօրութեամբ բանից քոց ո՞ հանդարտեցէ*։ ³Ձի եթէ խրատեցեր դու զբազումս, և զծնոս տկարի միփարեցեր։ ⁴Եւ զհիւանդացեալս կանգնեցեր բանիւք, և ծնկաց կթուցելոց քաջալերութիւն զգեցուցեր*։ ⁵Եւ արդ՝ եկին հասին ՚ի վերայ քո ցաւք. սակայն դու վաղվաղեցեր։ ⁶Ո՛չ ապաքէն երկևոր քո անզգամութիւն է. և կասկածո՞ք, և անչարութիւն ճանապարհի քո*։ ⁷Արդ՝ յիշեա՛ ո՞ք որ սուրբ էր՝ կորեալ, կամ ճշմարիտք արմատաքի՛ երբէք խլեցան*։ ⁸Չոր օրինակ տեսի զայնոսիկ որ զանպատեհսն արօրադի՛ր առնեն. որ սերմանեն զնոսա՝ ցա՛ւս հնծեցեն ՚ի նոցանէ։ ⁹Ի հրամանէ Տեառն կորիցեն. ՚ի հոգւոյ բարկութեան նորա սատակեցին։ ¹⁰Չօրութիւն առիծու, գոչիւն մատակ առիծու, պերճութիւն վիշապաց՝ շիջա՛ւ։ ¹¹Մրջիւնառնծն սատակեցաւ առ ՚ի չգոյէ՛ կերակրոյ. կորիւնք առիծու լքի՛ն զմիմեանս*։ ¹²Եթէ է՛ր տակաւին բա՛ն ճշմարիտ եղեալ ՚ի խօսս քո, ո՛չ ինչ յայդպիսեաց չար պատահեր քեզ։ Ուրեմն ո՞չ ընդունիցին ունկն իմ հրաշակերտս ՚ի նմանէ, ¹³արհաւիրք և բոմբիւնք գիշերականք։ Հասեալ ա՛հ ՚ի վերայ մարդկան, ¹⁴դողումն և սոսկումն պատահեցին ինձ. և մեծապէս զոսկերս իմ շարժեցին։ ¹⁵Եւ եկն հողմն ՚ի վերայ երեսաց իմոց. քստմնեցին հերք իմ և մարմինք։ ¹⁶Կանգնեցայ՝ և ո՛չ գիտացի. տեսի և ո՛չ էին կերպարանք առաջի աչաց իմոց, բայց միայն օդ և սաւսափիւն լսէի։ ¹⁷Իսկ արդ՝ միթէ սո՞ւրբ լինիցի մարդ առաջի Տեառն, կամ ՚ի գործոց իւրոց անարա՞տ այր։ ¹⁸Եթէ ծառայից իւրոց ո՛չ հաւատայցէ, և զհրեշտակաց խոտորնագոյնս ինչ իմացաւ։ ¹⁹Իսկ արդ՝ զբնակեալս ՚ի տունս կաւեղէնս, յորոց և ինքեանք ՚ի նմին կաւոյ ենք։ Եհար զնոսա ըստ օրինակի ցեցոյ. ²⁰և յառաւօտէ մինչև յերեկոյ ո՛չ ևս իցեն։ Քանզի անձամբ անձին օգնել ո՛չ կարէին, կորեան։ ²¹Փչեաց ՚ի նոսա և ցամաքեցան. սատակեցան քանզի ո՛չ էր ՚ի նոսա իմաստութիւն։

5

Գլուխ Ե

¹Արդ՝ աղէ կարդա՛, թէ որք տայցէ՞ քեզ ձայն, կամ թէ զորք ՚ի հրեշտակաց սրբոց տեսցէ՞ս*։ ²Քանզի և զանզգամ սպանանէ բարկութիւն, և զմոլորեալն

* Այլք. Ոչ խաղաղեցայ ո՛չ դադարեցի։ Ուր Ոսկան. խաղաղացայ։ Ի՛ լուս՝. Եւ եկն ՚ի վերայ իմ։

* Այլք. Բազում անգամ լեալ իցեն. կամ՝ լեալ իցէ։ Ոմանք. Եւ զօրութեան բանից։

* Ոմանք. Եւ ծնգաց։

* Ի՛ լուս՝. ՚ի վերայ կասկածո՞ք. նշանակի՞ յոյսդ։ Ոմանք. Եւ չարութիւն ճա՛ւ։

* Ոմանք. Ո՛րք էր սուրբ, և կորեալ։

* Ոմանք. Եւ ՚ի չգոյէ կերակրոյ՝ կորիւնք առի՛ւ։ Ոսկան. Կորիւնք առիծուց։

* Ոմանք. Եթէ որք տայցէ քեզ։

մեռուցանել նախանձ: ³Նա՝ ես տեսի անզգամաց արմա՛տս ձգեալ, այլ վաղվադակի հարան յարկք նոցա: ⁴Յեռի՛ լիցին որդիք նոցա ՚ի փրկութենէ. կողկողեսցին առ դրունս վատթարաց, և ո՛չ ոք իցէ որ փրկիցէ: ⁵Ձի գոր նոքայն ժողովեցին՝ արդարք կերիցեն, և նոքա մի՛ եղիցին ապրեալք ՚ի չարեաց. ծծեսցի՛ զօրութիւն նոցա: ⁶Ձի ո՛չ եթէ յերկրէ ելանիցէ աշխատութիւն, և ո՛չ ՚ի լերանց բուսանիցին ցաւք: ⁷Այլ մա՛րդ աշխատութեամբ ծնանի. ձա՛գք արծուեաց ՚ի բարձունս թռչին: ⁸Բայց սակայն ես խնդրեցից ՚ի Տեառնէ, և զՏէր զամենեցուն իշխանն կարդացից* : ⁹Որ առնէ զմեծամեծս և զանքնինս, և զփառաւորս և զհրաշակերտս որոց ո՛չ գոյ թիւ: ¹⁰Որ տա՛յ անձրև յերկիր, առաքէ՛ զջուրս ՚ի ներքո՛յ երկնից* : ¹¹Որ առնէ զխոնարհս ՚ի բարձունս, և կանգնէ զկորուսեալս: ¹²Եւ փոփոխէ զխորհուրդս խորամանգաց, և ո՛չ գործեսցեն ձեռք նոցա զճշմարտութիւն* : ¹³Որ հասանէ՛ իմաստնոց հանճարով, և զխորհուրդս բազմանիւթաց յիմարեցոյց: ¹⁴Ի տուէ՛ պատահիցէ նոցա խաւար. և ՚ի միջօրէի իբրև ՚ի գիշերի՛ խարխափեսցեն: Սատակեսցին պատերազմաւ* . ¹⁵և աղքատն ապրեսցի ՚ի ձեռանէ հզօրին: ¹⁶Եղիցի՛ յոյս տկարի. բերան անիրաւի խցցի: ¹⁷Երանեալ է մարդ գոր յանդիմանեաց Տէր ՚ի վերայ երկրի. և ՚ի խրատուէ՛ Ամենակալին մի՛ հրաժարեսցես* : ¹⁸Ձի նա՛ ցաւեցուցանէ, և միւսանգամ անդրէն հաստատէ. եհար՝ և ձե՛ռք նորա բժշկեսցին: ¹⁹Վեցիցս ՚ի վշտա՛ց փրկեսցէ զքեզ, և յեւթներորդումն ո՛չ մերձեսցի առ քեզ չար: ²⁰Ի սովի՛ փրկեսցէ՛ զքեզ ՚ի մահուանէ. ՚ի պատերազմի՛ ՚ի ձեռաց երկաթոյ արծակեսցէ զքեզ* : ²¹Ի տանջանաց լեզուի՛ ծածկեսցէ զքեզ. և մի՛ երկիցես ՚ի չարեաց եկելոց ՚ի վերայ քո. ²²զանիրաւս և զանօրէնս արհամարհեսցես: Ի գազանաց վայրենեաց ո՛չ երկիցես. ²³զի ընդ քարինս վայրի դաշինք քո. և գազանք վայրենիք խաղաղացին ընդ քեզ* : ²⁴Ապա գիտասցես թէ խաղաղութիւն է տան քո, և բնակութիւն յարկի՛ քոյ մի՛ վրիպեսցի* : ²⁵Եւ ծանիցես զի բազում է զաւա՛կ քո. և որդիք քո եղիցին իբրև զբանջար վայրի: ²⁶Եւ երթիցես ՚ի գերեզման իբրև զցորեան հասեալ ՚ի ժամանակի հնձեալ, կամ իբրև զշիղջ կալոյ՝ ՚ի ժամանակի ամփոփեալ* : ²⁷Ահաւասիկ զայս ա՛յսպէս քննեցաք. ա՛յս է գոր լուաքն. բայց դու գիտասցի՛ր յանձն քո զինչ գործեսցես* :

6

Գլուխ Զ

* *Բազումք*. Բուսանին ցաւք:

* *Ոմանք*. Եւ զՏէր ամենեցուն իշխան կար՛... (9) և զանքննինս:

* *Ոմանք*. Առաքէ ջուր ՚ի ներ՛:

* *Ոմանք*. Ձեռք նորա զճշմարտութիւն:

* *Ոմանք*. Եւ ՚ի մեջօրէի... խարխափեսցին:

* *Ի բազումս պակասի*. Տէր ՚ի վերայ երկրի:

* *Ոսկան*. Ի սովու փրկեսցէ:

* *Ի բազումս պակասի*. Ձի ընդ քարինս վայրի դաշինք քո. և գազանք: *Յօրինակին*.

խաղասցին ընդ քեզ:

* *Ոմանք*. Եթէ խաղաղութիւն է տան քում:

* *Ոմանք*. Ի ժամանակի հնձոց, և կամ իբրև զշիղջ կալոյ:

* *Ոմանք*. Յանձն քո զինչ գործեսցես:

1Կրկնեալ անդրէն Յոբայ ատ.

Բ² Եթէ կշռելով որ կշռէ՞ր զբարկութիւնս իմ. և զգաւս իմ միանգամայն բառնայր ՚ի լուծ կշռոց, ³քան զաւագ ծովու ծանրագոյն լինէր. նա՛ ուրեմն բանք իմ անզգա՛նք են: ⁴Ձի նետք Տեառն ՚ի մարմնի իմում, և սրտմտութիւն նորա ծօժ զարիւն իմ. յորժամ սկսանիմ խօսել կտտեն զիս*: ⁵Իսկ արդ՝ զիա՞րդ, միթէ տարապարտո՞ւց խանչիցէ ցիռ, բայց եթէ կերակուր խնդրիցէ: Կամ թէ գոչիցէ՞ եզն առ մտուր՝ յորժամ ունիցի զկերակուր: ⁶Կամ ուտիցի՞՞ հաց առանց աղի. կամ գուցէ՞ համ ՚ի բանս ունայնս: ⁷Սա՛ ո՛չ կարէ հանդարտել անձն իմ. զի շարաւով տեսանեն զկերակուր իմ՝ իբրև զհո՛տ առիւծու*: ⁸Ձի եթէ տացէ՛ և եկեսցեն յիս խնդրուածք իմ, և գոյս իմ տացէ՛ Տէր*: ⁹Սկսաւ Տէր խոցոտել զիս. բայց ՚ի սպառ մի՛ սպանցէ զիս: ¹⁰Եղիցի ինձ քաղաքն իմ գերեզման՝ յորոյ վերայ պարսպացն ճենէի, և ՚ի նա ո՛չ խնայեցից. զի ո՛չ սուտ արարից զբանս սրբոյն Աստուծոյ իմոյ: ¹¹Ձի զի՞նչ է զօրութիւն իմ եթէ համբերեցից, կամ զի՞նչ ժամանակ՝ զի հանդարտեսցէ անձն իմ*: ¹²Միթէ զօրութիւն վիմա՞ց իցէ զօրութիւն իմ, կամ մարմինք իմ պղնձի՞ք. կամ թէ ո՞չ ՚ի նա ապաւինէի: Արդ օգնութիւն իմ մերժեցա՛ւ յինէն, ¹³և ողորմութիւն հրաժարեաց յինէն. այցելութիւն Տեառն անտեսն արար զիս: ¹⁴Ո՛չ հայեցան յիս մերձաւորք իմ. ¹⁵իբր զվտակ պակասեալ և իբրև զալիս անցին զինն*: ¹⁶Որք սարսէին յինէն, արդ ահաւասիկ հասին ՚ի վերայ իմ*: ¹⁷Իբրև զծիւն կամ իբրև զսառն պաղեալ որ հալիցի ՚ի հասանելոյ ջերմութեան, և ո՛չ ճանաչիցի թէ ո՞րպէս էր. ¹⁸նոյնպէս և ես լքայ յամենեցունց, կորեայ և տնանկացայ: ¹⁹Տեսէ՛ք զճանապարհս թեմնացւոց որք ՚ի շաւիղս Սաբայ հայիք*. ²⁰և ամօք կրեսցեն յուսացեալքն ՚ի քաղաքս և յինչս: ²¹Դա՛ և դուք աւաղիկ անողորմ հասէք ՚ի վերայ իմ. հայեցեալ ՚ի վերս իմ՝ երկերո՛ւք: ²²Արդ ես զծեզ ինչ խնդրեցի՞. ²³կամ ձերո՞վ զօրութեամբդ կարօտեալ իցեն ապրեցուցանել զիս ՚ի թշնամեաց. կամ ՚ի ձեռաց հզօրաց փրկել զիս: ²⁴Ուսուցէ՛ք զիս՝ և ես լռեցից. և եթէ մոլորեա՞լ ինչ իցեն, արարէ՛ք զիս խելանուտ: ²⁵Այլ ուրեմն խոտան են բանք ճշմարտի. քանզի ո՛չ եթէ ՚ի ձենջ խնդրեն զօրութիւն: ²⁶Եւ ո՛չ կշտամբանք բանից ձերոց լռեցուցանեն զիս. և ո՛չ բարբառոյ բանից ձերոց անսացից: ²⁷Բայց զի իբրև ՚ի վերայ որբոյ յարուցեալ էք ՚ի վերայ իմ. և խաղացեալ էք ՚ի վերայ բարեկամի ձերոյ*: ²⁸Բայց արդ հայեցեալ յերեսս ձեր ո՛չ ստեցից. նստարո՛ւք, և մի՛ ինչ լիցի անիրաւութիւն ՚ի դատաստանի*. ²⁹և դարձեալ իրաւանց ո՛ւշ ունիցիք: ³⁰Ձի ո՛չ գոյ ՚ի լեզուի իմում անիրաւութիւն. կամ կոկորդ իմ ո՛չ խոկասցէ յիմաստութիւն՝:

7

* Բազումք յաւելուն. ՚ի մարմնի իմում են:

* Ոսկան. ևս ո՛չ կարէ հանդար՞: Ոմանք. Ձի շարաւ տեսանեն:

* Ի լուս՝. Եւ եկեսցեն ինձ խնդր՞. համաձայն ոմանց ՚ի բնար՞:

* Ոմանք. Իմ թէ համբերից:

* Այլք. Իբրև զվտակ պակա՞:

* Բազումք. Արդ ահաւանիկ հասին ՚ի:

* Ոմանք. Թեմնացւոց... Սաբայ հայէիք:

* Ի լուս՝. ՚ի վերայ խաղացեալ էք, նշանակի՞՞ ոտն հարկանէք:

* Ոմանք. նստարուք դուք. և մի՛ ինչ լիցի անիրաւութիւն. և դարձեալ:

* Ոմանք. Ոչ խոկայցէ յիմաս՞: Ուր Ոսկան. յիմաստութեան:

Գլուխ Է

¹Ոչ ապաքեն իբրև զփորձութի՞ւն են վարք մարդոյ ՚ի վերայ երկրի, և իբրև զառօրեայ վարձք վարձկանի կեանք նորա՞: ²Կամ իբրև զժառայ երկուցեալ ՚ի տեառնէ իւրմէ՝ և զօղեալ ընդ հովանեաւ, և իբրև զվարձկան որ սպասիցէ վարձուց իւրոց. ³նոյնպէս և ե՛ս սպասեցի ամսոց սնուտեաց: Գիշերք ցաւագի՛ն տուեալ են ինձ՞. ⁴եթէ ննջեցից՝ ասեմ ե՞րբ իցէ տիւ. և եթէ յառնիցեմ՝ դարձեալ թէ ե՞րբ իցէ երեկ. լի՛ ցաւօք լինիմ յերեկորեայ մինչև ցառաւօտ՞: ⁵Թաթաւին մարմինք իմ զազրութեամբ որդանց. մաշեցի՛ զկոշտս երկրի առ ՚ի զթարախս քերելոյ՞: ⁶Եւ կեանք իմ թեթևագո՛յնք են քան զխօսս, և կորեան յունայնութեան յուսոյ: ⁷Յիշեա՛ զի փուք են կեանք իմ, և ո՛չ դարձցի ակն իմ ՚ի տեսանել զբարի՞: ⁸Եւ ո՛չ հայեցցի յիս ակն տեսողի: Աչք քո յիս՝ և ես ո՛չ ևս իցեմ՞, ⁹իբրև զամպ ջնջեալ յերկնից: Ձի եթէ իջանիցէ մարդ ՚ի դժոխս. ո՛չ ևս ելցէ. ¹⁰և ո՛չ դարձցի ՚ի տուն իւր. և ո՛չ ևս ծանիցէ զնա տեղի իւր: ¹¹Այսուհետև ո՛չ ևս խնայեցից ՚ի բերան իմ. խօսեցայց մինչև իցեմ ՚ի վիշտս. բացի՛ց զդառնութիւն անձին իմոյ տազնապաւ՞: ¹²Միթէ ծո՛ւլ իցեմ կամ վիշա՛պ՝ զի կարգեցեր զինև պահ՞: ¹³Ասացի թէ մխիթարեսցեն զիս մահիճք իմ. վճարեցի՛ց յինէն զբանս յանկողնի իմում՞: ¹⁴Ձարհուրեցուցանես զիս երազովք, և տեսլեամբք հարկանես զիս: ¹⁵Թափես զոգի յանձնէ իմմէ, և ՚ի մարմնոյ զշունչ իմ. և ՚ի մահուանէ զկեանս իմ՞. ¹⁶զի ո՛չ եթէ յաւիտեան կեան, եթէ երկայնամիտ եղէց: Ի՛ բա՛ց կաց յինէն՝ զի ընդունայն են կեանք իմ՞: ¹⁷Ձի զի՞նչ է մարդ զի մեծացուցեր զնա, կամ զի հայիցիս ՚ի նա մտօք: ¹⁸Կամ այցելութիւն առնիցես նմա մինչև ցառաւօտ. և ՚ի հանգիստ դատիցիս զնա: ¹⁹Մինչև յե՞րբ ո՛չ թողուցուս զիս, և ո՛չ ընդարձակիցես ինձ. մինչև ցաւովք կլանիցեմ զտողուկս իմ՞: ²⁰Ձի թէ մեղայ՝ զի՞նչ կարիցեմ առնել քեզ, որ զիտեսդ զմիտս մարդկան: Ընդէ՞ր եղիր զքեզ ոսոխ, և իցեմ քեզ բեռն՞. ²¹և ընդէ՞ր ո՛չ արարեր մոռացումն անօրէնութեան իմոյ՝ և սրբութիւն մեղաց իմոց: Արդ ահա յերկի՛ր դառնայցեմ կանխեալ, և այլ ո՛չ ևս իցեմ՞:

8

Գլուխ Ը

*Ոմանք. Վարձս վարձկանի կեանք:

*Ոմանք. Սպասեցից ամսոց... ցաւագինք տուեալ են:

*Ոմանք. Ասիցեմ թէ ե՛րբ իցէ երեկոյ... մինչև յառաւօտ:

*Ոմանք. Իմ ՚ի զազրութիւն որդանց:

*Օրինակ մի. Ի տեսանելոյ զբարի:

*Ոմանք. Եւ ո՛չ ևս իցեմ:

*Ի լուս՝. Բացից զբերան իմ դառնութեամբ: Ոմանք. Իմոյ տազնապեալ:

*Ոսկան. Ձինև պահս:

*Այլք. Վճարեցից զինէն զբանս յան՞: Ոմանք. Ձբանս իմ յանկողնի:

*Ոմանք. Ձոգի իմ ՚ի յանձնէ իմմէ, և ՚ի մահուան՞: Ուր օրինակ մի. Թափեալ կենդանութիւն յանձնէ իմմէ:

*Ոմանք. Ձի ո՛չ յաւիտեան:

*Ոմանք. Կլանիցեմ զտողուկս. կամ՝ զտողունս իմ:

*Ոմանք. Ձամենայն միտս... ընդէ՛ր եղիր զիս քեզ ոսոխ: Ուր յօրինակին գրի՝ աւսոխ:

*Ի լուս՝. ՚ի վերայ՝ կանխեալ, նշանակի՝ քանզի առաւօտ է:

¹Կրկնեալ անդրէն Բաղդատայ Սաւքեցոյ ասէ.

²Մինչև ցեր՞ք խօսիցիս զայդ. և ոգի մեծաբանութեան 'ի բերան քո* : ³Միթէ անհրա՞ւ դատիցի Տէր. կամ որ զամենայն արար պղտորիցէ՞ զիրաւունս: ⁴Եթէ որդիքն քո մեղան առաջի Աստուծոյ, առաքեաց 'ի ձեռին զանօրէնութիւնս նոցա* : ⁵Բայց դու կանխեա՛ առ Տէր ամենակալ աղօթիւք. ⁶Եթէ սուրբ և ճշմարիտ իցես՝ աղօթից քոց լուիցէ՛: Դարձուցէ՛ քեզ զյարկն արդարութեան*. ⁷և լինիցին առաջինքն քո սակաւք, և վերջինքն քո անբաւք*: ⁸Բայց աղէ՛ հարց զազգն առաջին, և քննեա՛ ըստ տոհմից հարցն: ⁹Ձի երիկեանք ենք, և ո՛չ գիտենք. քանզի ստուեր են կեանք մեր 'ի վերայ երկրի*: ¹⁰Կամ թէ ո՞չ նոքին իսկ ուսուցեն զքեզ. պատմեսցեն և 'ի սրտէ՛ հանցեն զբանս*: ¹¹Միթէ կանաչանա՞յ պրտու առանց ջրոյ. կամ բարձրանայցէ՞ կնիւն առանց ըմպելոյ*: ¹²Մինչդեռ անդէն 'ի վերայ արմատոց իւրոց է՛ ո՞չ հնձեսցի. յառաջ քան զարբեմալ ամենայն բանջար եթէ ո՛չ ոռոգանի՝ ո՞չ ցամաքիցի*: ¹³Արդ այնպէս եղիցի վախճան ամենեցուն որ մոռանայցեն զՏէր. զի յո՛յս ամպարշտի կորիցէ: ¹⁴Անշէն լիցի տուն նորա. անցցէ՛ իբրև սարդիոստայն յարկ նորա*: ¹⁵Թէպէտ և հաստատեսցէ զտուն իւր՝ մի՛ կացցէ յարկանել ձեռին նորա, մի՛ հանդարտեսցէ: ¹⁶Ձի խոնաւութիւն յարեգականէ՛ է. և 'ի նեխութենէ նորա ելցէ շառաւիղ իւր*: ¹⁷Ի վերայ կարկառի քարանց ննջեսցէ, և 'ի մէջ մանրախիճ քարանց կեցցէ. ¹⁸Եթէ ընկլցէ զնա տեղին ստեսցէ: Ո՞չ տեսեր այսպիսի ինչ*. ¹⁹զի կործանումն ամպարշտի այսպիսի՛ է. և յերկրէ այլ բուսցի: ²⁰Ձի Տէր ո՛չ մերժէ զամենեղն. զամենայն պատարագ ամպարշտի ո՛չ ընկալցի*: ²¹Բերանք ճշմարտից լցցի՛ն ծաղու, և շրթունք նոցա գոհութեամբ: ²²Թշնամիք նոցա զգեցցի՛ն զամօթ. յարկք ամպարշտի ո՛չ ևս իցեն:

9

Գլուխ Թ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ ասէ.

Գ ²ճշմարտիւ գիտեմ թէ այդ՝ այնպէս իցէ. քանզի զիա՞րդ լինիցի մարդ արդար՝ առաջի Աստուծոյ*: ³Ձի եթէ կամիցի դատել՝ ընդ նմա՝ ո՛չ լուիցէ նմա. զի և մի բան հազար բանի պատասխանի ո՛չ տացէ: ⁴Ձի իմաստուն է մտօք՝ զօրաւոր և մե՛ծ. ո՞ խստացաւ ընդդէմ նորա, և հանդարտեաց: ⁵Որ հնացուցանէ

* Ոմանք. 'ի բերան քուն:

* Ոմանք. Մեղան առաջի նորա:

* Ոմանք. Եւ դարձուցէ զքեզ յարկն արդար՝:

* Յօրինակին պակասէր. Առաջինքն քո սակաւք, և վերջինքն քո, անբաւք:

* Ոսկան. Ձի երեկեանք ենք:

* Ոմանք. Եւ պատմեսցեն:

* Ոմանք. Եւ կամ բարձ՝:

* Ոմանք. Յառաջ քան զամենայն բանջար ո՛չ ցամաքիցի:

* Յօրինակին. Իբրև սարդիոստայն:

* Ոսկան. Յարեգակնէ է: Յօրինակին. Ելցէ շաւիղ իւր:

* Ոմանք. Այնպիսի ինչ:

* Ոմանք. Ձի Աստուած ո՛չ մերժեսցէ... ո՛չ ընկալցի Տէր:

* Ոմանք. Այդպէս է... առաջի Տեառն:

զլերինս և ո՛չ գիտեն. որ տապալէ զնոսա բարկութեամբ: ⁶Որ շարժէ՛ զառ ՚ի ներքոյս երկնից ՚ի հիմանց, և սիւնք նորա դողան՝: ⁷Որ ասէ արեգական և ո՛չ ծագէ, և ընդդէմ աստեղաց կնքէ՛: ⁸Որ ձգեաց զերկինս միայն, և շրջի ՚ի վերայ ծովու իբրև յատակի: ⁹Որ արա՛ր զԲազմաստեղսն, և զԳիշերավարն, և զՍայլն, և զշտեմարանս հարաւոյ: ¹⁰Որ առնէ զմեծամեծս և զանքնինս, և զփառաւորս և զհրաշակերտս որոց ո՛չ գոյ թիւ: ¹¹Եթէ՛ վերասցի քան զիս՝ ո՛չ տեսից. և եթէ անցցէ առ ինն՝ և ո՛չ այնպէս գիտացից: ¹²Եւ եթէ սատակեսցէ՝ ո՞ դարձուցէ, կամ ո՞վ ասիցէ ցնա թէ զի՞նչ արարեր: ¹³Ձի նա՛ դարձաւ ՚ի բարկութենէ, և ՚ի նմանէ սարսեցին կետք որ ՚ի ներքոյ երկնից: ¹⁴Իցէ՞ թէ լուիցէ ինձ, և իրաւացուցանիցէ զբանս իմ՝: ¹⁵Եթէ՛ իցեն արդար՝ ո՛չ լուիցէ ինձ. և զդատաստան նորա աղաչեցից՝: ¹⁶Եւ եթէ կարդացից և անասցէ՝ չհաւատամ թէ լուաւ իսկ ինձ. ¹⁷և ո՛չ միգով սատակեսցէ զիս: Բազում են հարուածք զոր արար ինձ տարապարտուց՝. ¹⁸և ո՛չ տայ ինձ հանգչել. և լցոյց զիս դառնութեամբ՝. ¹⁹քանզի հզօր է՝ բռնանայ. իսկ արդ՝ ո՞ իցէ, որ դատաստանի նորա կայցէ հակառակ՝: ²⁰Իսկ եթէ իցեն ևս արդար՝ սակայն բերան իմ անպարշտեսցէ. և եթէ իցեն անարատ՝ կամակոր՝ գտանիցին: ²¹Ձի եթէ անպարշտեցի յանձն իմ՝ ո՛չ գիտեն. բայց զի բառնան յինէն կեանք իմ՝: ²²Վասն որոյ ասացի, թէ զմեծն և զհզօրն կորուսանէ բարկութիւն: ²³Ձի չարք յանհնարին մահու կորիցեն. այլ արդարք ծաղր լինին. ²⁴զի մատնին ՚ի ձեռս անպարշտի: Ձերեսս դատաւորաց նորա ծածկեսցէ. և եթէ ո՛չ նա՛ է՝ ո՞վ իցէ: ²⁵Այլ իմ կեանք թեթևագոյն են քան զսուրհանդակ. փախեան և ո՛չ երևեցան: ²⁶Եւ կամ թէ իցեն նաւաց հետք ճանապարհի, և կամ արծուոյ թռուցելոյ որ խնդրիցէ զկերակուր: ²⁷Եթէ ասիցեն եթէ խօսեցայց՝ մոռանան. զերեսս ՚ի վայր արկեալ հեծեծեցից՝: ²⁸Շարժեալ են ամենայն անդամօք իմովք. զի գիտեն զի անարատ զիս ո՛չ թողուցու: ²⁹Որովհետև անպարշտի՛ ընդէ՞ր ո՛չ մեռայ: ³⁰Եթէ լուացայց ձեռամբ, և սրբեցայց ձեռօք սրբեցելովք՝. ³¹սաստկացեալ աղտով էներկ զիս. զագրացոյց զիս պատմուճան իմ: ³²Ձի ո՛չ ես իբրև զիս մարդ՝ ընդ որում դատեցայց, եթէ հասարակ եկեսցուք ՚ի դատաստան՝: ³³Իսկ յանկարծ գո՛յր միջնորդ, և յանդիմանէր և լսեր ՚ի մէջ երկոցունց: ³⁴Ի բա՛ց արասցէ յինէն զգաւազանն, և աս նորա զիս մի՛ զարհուրեցուցէ. ³⁵և մի՛ երկեայց՝ այլ խօսեցայց. նա և ո՛չ այնպէս ես գիտեն, աշխատեալ անձամբ իմով՝:

10

Գլուխ Ժ

¹Յեծեծելով՝ հասուցից ՚ի նա զբանս իմ. խօսեցայց դառնութեամբ անձին

* *Ոմանք.* Ձառ ՚ի ներքոյ երկնից:

* *Բազումք.* Իցէ եթէ լսիցէ ինձ, կամ իրաւացու՛:

* *Ոմանք.* Սատակիցէ. զի բազում են:

* *Ոմանք.* Ձի լցոյց զիս դառնու՛:

* *Ոմանք.* Ո՛ է, որ դատաստանի:

* *Ոսկան.* Ձի եթէ անբարշտիցի անձն իմ: *Ոմանք.* Բառնան յերկրէ կե՛:

* *Ոսկան.* Եթէ լուացայց ձեռամբ, և սրբեցայց ձեռամբ սր՛:

* *Ոմանք.* Ձի ո՛չ էր իբրև զիս մարդ:

* *Ոմանք յաւելուն.* Այլ խօսեցայց: *Չանձրանայ անձն իմ ՚ի կենաց իմոց.* նա և ո՛չ այնպէս գիտեն:

թախծեալ: ²Եւ ասացից. Տէր մի՛ ուսուցաներ զիս ամպարշտել. և ընդէ՞ր այսպէս դատեցար զիս*: ³Կամ թէ բարւո՞ք թուիցի քեզ թէ անիրաւ իցեմ. զի մերժեցեր զգործս ձեռաց քոց, և ՚ի խորհուրդս ամպարշտաց հայեցար*: ⁴Միթէ որպէս հայի՞ այր՝ հայիցիս. կամ որպէս տեսանիցէ՞ մարդ՝ տեսանիցես*: ⁵Կամ թէ ամբ քո իբրև զա՞ռն. ⁶զի վերստին խնդրեցեր զանօրէնութիւնս իմ, և զմեղս իմ քննեցեր*: ⁷Գիտե՛ս զի ո՛չ ամպարշտեցայ. այլ ո՛վ է որ ՚ի ձեռաց քոց հանիցէ: ⁸Ձեռք քո արարին զիս և ստեղծին. և ապա շրջեցար հարեր զիս: ⁹Յիշեա՛ զի կա՛ւ ստեղծեր զիս, և յերկիր միւսանգամ դարձուցանես զիս: ¹⁰Կամ թէ ո՞չ իբրև զկաթն կթեցեր զիս. և մածուցեր զիս իբրև զպանիր: ¹¹Մորթ՝ և միս զգեցուցեր ինձ. ոսկերօք և ջլօք հանար զիս*: ¹²Ձկեանս և զողորմութիւն եդիր ՚ի վերայ իմ. այցելութիւն քո պահեաց զոգի իմ: ¹³Չայս ամենայն ունի՛ս ՚ի քեզ. զիտեմ զի յամենայնի կարող ես, և ո՛չ ինչ տկարանայ քեզ*: ¹⁴Թէ և մեղանչեմ՝ պահես զիս. և յանօրէնութենէ անարատ ո՛չ արարեր զիս*: ¹⁵Եթէ ամպարշտեցայց՝ վայ է ինձ. և եթէ արդարացայց՝ ո՛չ կարեմ հայել ՚ի վեր, զի լի՛ եմ անարգանօք: ¹⁶Որսացեա՛լ եմ իբրև զառնձ ՚ի սպանումն: Դարձեալ կրկնեալ չարաչար սատակես զիս. ¹⁷նորոգես ՚ի վերայ իմ զհարուածս իմ: Բարկութեամբ մեծաւ ձեռնարկեր յիս. և ածեր ՚ի վերայ իմ հէ՛մ: ¹⁸Ընդէ՞ր հաներ զիս յորովայնէ, և ո՛չ անդէն մեռայ. և ական չէ՛ր տեսեալ զիս*, ¹⁹և իբրև զչեղեալ լինէի: Ընդէ՞ր յարգանդէ ՚ի գերեզման ո՛չ վճարեցայ*: ²⁰Կամ թէ ո՞չ սակաւ իցէ ժամանակ կենաց իմոց. թո՛յլ արա ինձ սակաւիկ մի հանգչել*, ²¹մինչչև՝ երթեալ իցեմ՝ ուստի ո՛չ դառնայցեմ: Յերկիր խաւարին և մթին. ²²յերկիր աղջամղջին յաւիտենական, ուր ո՛չ գոյ լոյս, և ո՛չ տեսանել զկեանս մարդկան:

11

Գլուխ ԺԱ

¹Կրկնեալ անդրէն Սովփարայ Մինեցւոյ ասէ.

²Որ շատ խօսի՝ ապաքէն ընդ նմին և լսիցէ. կամ որ խօսողն իցէ՝ կարիցէ՞ բանիւք արդարանալ*: ³Օրհնեա՛լ է ծնունդ կանանց սակաւակեաց: Մի՛ զբազում բանիւք անկանիր. զի ո՛չ գոյ որ տայցէ քեզ պատասխանի*: ⁴Մի՛ ասեր թէ սուրբ եմ գործովք, և անարատ առաջի Տեառն: ⁵Այլ թէ զիա՞րդ Տէր խօսեսցի ընդ քեզ, և բացցէ զշրթունս իւր ընդ քեզ: ⁶Ապա պատմեսցէ քեզ զօրութիւն

* *Յօրինակին.* Մի՛ ուսուցանել զիս ամ՞:

* *Ոմանք.* Թէ անիրաւիցիմ:

* *Ոմանք.* Որպէս հայիցի այր:

* *Ոմանք.* Խնդրիցես զանօրէ՞: *Ոսկան.* Եւ զմեղս իմ քննեսցես:

* *Ի լուս՞.* Եւ ջլօք հաներ զիս:

* *Ոմանք.* Ձի ամենայնիւ կարող ես:

* *Ի լուս՞.* Պահեա՛ զիս:

* *Ոմանք.* Ձեռն արկեր յիս:

* *Ոմանք.* Եւ ո՛չ անդրէն մեռայ:

* *Ոսկան.* Եւ իբրև զչեղեալ լինէի:

* *Ոմանք.* Սակաւ մի հանգչել:

* *Ոմանք.* Ապաքէն ըստ նմին և լսի՞:

* *Ոմանք.* Որ տացէ պատասխանի:

իմաստութեան, զի կրկին եղիցի քան զքոյն. և ապա գիտասցես՝ թէ արժանի ըստ որոց մեղարն անց ընդ քեզ՝ ՚ի Տեառնէ: ⁷Եթէ զհետս Տեառն գտանիցե՞ս, կամ ՚ի վերջինսն հասանիցե՞ս զոր արար Ամենակալն: ⁸Բարձր են երկինք՝ և զի՞ գործիցես. խոր են դժոխք՝ և դու զի՞ խելամտեսցես. ⁹երկայն է չափ երկրի. լայն է ծով: ¹⁰Եւ եթէ տապալեսցէ զամենայն, ո՞վ ասացէ ցնա թէ զինչ գործեցեր: ¹¹Ինքն գիտէ զգործս անօրինաց. տեսեալ զանարժանս ո՛չ արասցէ անտես: ¹²Բայց մարդ ՚ի խօսել ընդ վայր, ղօղի բանիւք. այր կանանցածին՝ հանգոյն է ցոյ անապատականի*: ¹³Իսկ եթէ դու սուրբ եղիր զսիրտ քո, տարածեա՛ առ նա զձեռս քո: ¹⁴Ապա թէ իցէ ՚ի ձեռին քում անօրէնութիւն, հեռի՛ արա զայն ՚ի քէն. և անօրէնութիւն ՚ի յարկի քում մի՛ ազցի*: ¹⁵Ապա՛ ծագեսցեն երեսք քո իբրև զջուր յստակ. մերկասցես զաղտեղութիւն՝ և ո՛չ երկիցես. ¹⁶և մոռասցիս զաշխատութիւն իբրև զալիս անցեալս, և ո՛չ զարհուրեսցիս*: ¹⁷Աղօթք քո իբրև զարուեսակն. ՚ի միջօրէի ծագեսցեն քեզ կեանք. վստահացեալ լիցիս՝ զի կայ քո յոյս. ՚ի հոգւոց և ՚ի տատանութենէ երևեսցի քեզ խաղաղութիւն*: ¹⁸Հանդարտեսցես՝ և ո՛չ ոք իցէ որ պատերազմիցի ընդ քեզ: ¹⁹Ռարձցին բազումք՝ և աղաչեսցեն զքեզ. փրկութիւն պակասեսցէ ՚ի նոցանէ, ²⁰զի յոյս նոցա կորուստ է անձանց իւրեանց. աչք անպարշտաց հալեսցի*:

12

Գլուխ ԺԲ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ ատ.

Դ ²Արդ և դո՞ւք մարդիկ իցէք. կամ ընդ ձե՞զ վախճանիցի իմաստութիւն: ³Եւ իմ սիրտս իբրև զձե՛րդ է: ⁴Զի այր արդար և անարատ եղև ՚ի կատականս*: ⁵Ի ժամանակ սահմանեալ պատրաստեցաւ. կործանեալ յօտարէ, զտունս իւր ետես ակերեալս յանօրինաց*: ⁶Սակայն մի՛ ոք որ չար իցէ՝ յուսացի անպարտ լինել. ամենայն որ միանգամ բարկացուցանեն զՏէր, միթէ ո՞չ լինիցի նոցա խնդիրք*: ⁷Բայց աղէ հարց զչորքոտանիս՝ եթէ ասիցեն քեզ. զքոչունս երկնից՝ եթէ պատմեսցեն քեզ*: ⁸Ճառեա՛ երկրի, եթէ խելամուտ արասցէ զքեզ, և կամ պատմեսցեն քեզ ձկո՛ւնք ծովու: ⁹Ո՞վ է որ ո՛չ գիտաց այսու ամենայնիւ թէ ձեռն Տեառն արար զայս*: ¹⁰Եւ եթէ ո՞չ ՚ի ձեռին նորա իցէ շունչ ամենայն կենդանեաց, և ոգի ամենայն մարդոյ: ¹¹Զի միտք զբանս քննեն, և քիմք զկերակուրս ճաշակեն: ¹²Բազո՛ւմ ժամանակաւ իմաստութիւն, և ՚ի բազում

* Ոմանք. ՚ի խօսել ղօղի բանիւք:

* Ոսկան. Ապա եթէ ՚ի ձեռին քում է անօ:՝ Ոմանք. Եւ անիրաւութիւն ՚ի յարկի:

* Ոմանք. Իբրև զալիս անցեալ:

* Ոմանք. Լինիցիս, զի կայ քեզ յոյս ՚ի հոգւոյ. կամ՝ ՚ի հոգոց:

* Ոմանք. Կորուստ է. աչք անբարշտաց հալեսցին:

* Ոսկան. Եղէ ՚ի կատականս:

* Ոմանք. ՚ի ժամանակի սահմա՞: Յօրինակիւն. Չտուն իւր ետես ակերեալս:

* Ոմանք. Բարկացուցանիցեն զՏէր, եթէ ո՛չ լինիցի:

* Ոմանք. Հարց ցչորքոտանիս... ցքոչունս երկնից: Ուր Ոսկան. Եւ քոչնոց երկնից, և ցուցցեն քեզ: Ի լուս. Եւ թէ ասիցեն... և թէ պատմեսցեն... (8) և թէ խելամուտ:

* Ոմանք. Այսու ամենայնի եթէ ձեռն:

կեանս հանճար: ¹³Ի նմանէ՛ է իմաստութիւն և զօրութիւն. նորա՛ է խորհուրդ և հանճար: ¹⁴Եթէ կործանեսցէ՝ ո՞ շինեսցէ. և եթէ փակեսցէ ընդդէմ մարդկան՝ ո՛ր բանայցէ: ¹⁵Եթէ արգելցէ զջուրս, ցամաքեցուցանէ՛ գերկիր. և եթէ թոյլ տացէ՝ կորոյս զնա կործանեալ՝: ¹⁶Ի նմանէ՛ է զօրութիւն և ուժգնութիւն. նորա է հանճար և իմաստութիւն: ¹⁷Վարէ՛ զխորհրդականս ՚ի գերութիւն. և զդատաւորս երկրի յիմարեցոյց: ¹⁸Նստուցանէ՛ զթագաւորս յաթոռս, և ածէ գօտի՛ ընդ մէջ նոցա: ¹⁹Առաքէ՛ զքահանայս ՚ի գերութիւն. և զգօրաւորս երկրի կործանեաց: ²⁰Փոփոխէ՛ զշրթունս հաւատարմաց, և զհանճար ծերոց ծանեալ: ²¹# Զեղու անարգութիւն ՚ի վերայ իշխանաց. # և զխոնարհս բժշկեաց՝: ²²Յայտնէ՛ զխորս խաւարի, և եհան ՚ի լոյս զստուերս մահու: ²³Մոլորեցուցանէ՛ զազգս՝ և կորուսանէ՛ զնոսա. սփռէ՛ զազգս՝ և առաջնորդէ՛ նոցա: ²⁴Փոփոխէ՛ զսիրտս իշխանաց երկրի. մոլորեցոյց զնոսա ՚ի ճանապարհի զոր ո՛չ գիտէին՝: ²⁵Շօշափեսցեն զխաւար և ո՛չ զլոյս. մոլորեսցին իբրև զարբեալ:

13

Գլուխ ԺԳ

¹Ահա զայս ամենայն ետե՛ս ական իմ, և լուաւ ունկն իմ: ²Եւ գիտե՛մ ես որչափ և դուք խելամու՛տ էք. և չե՛մ անմտագոյն քան զձեզ՝: ³Բայց սակայն ես ընդ Տեառն խօսեցայց. յանդիմանեցայց առաջի նորա, եթէ կամեսցի: ⁴Բայց դուք ինձ բժիշկք մեղանչականք էք. և ողջացուցիչք չարեաց ամենեքեան: ⁵Եղիցի ձեզ համրանալ՝ և համարեալ լիցի ձեզ յիմաստութիւն: ⁶Լուարո՛ւք զյանդիմանութիւն բերանոյ իմոյ, և դատաստանի շրթանց իմոց անսացէք: ⁷Ո՛չ ապաքէն առաջի Տեառն խօսիցիք, և յանդիման նորա նենգութիւն բարբառիք՝: ⁸Կամ թէ թանգուզիցէք. զի դուք ամենեքեան դատաւորք եղերուք: ⁹Ձի բարուք է եթէ քննեսցէ զձեզ: Ձի եթէ զամենայն արարեալ յաւելուցո՛ւք ՚ի նա, ¹⁰ո՛չ ինչ սակաւ կշտամբեսցէ զձեզ: Եւ եթէ ՚ի ծածուկ աչառիցէք՝. ¹¹ո՛չ ապաքէն արհաւիրք նորա զարհուրեցուցանիցեն զձեզ. և ա՛հ նորա անկցի ՚ի վերայ ձեր՝: ¹²Եւ դիպեսցին պերճութիւնքդ ձեր հանգոյն մոխրոյ, և մարմին կաւեղէն: ¹³Կարկեցարո՛ւք զի խօսեցայց ես, և հանգեայց ՚ի սրտմտութենէ՛: ¹⁴Առեալ զմարմինս իմ յատամու՛նս իմ, և զոգի իմ եղից՝ ՚ի ձեռին իմում: ¹⁵Եթէ արկցէ զձեռն իւր զինն Զգօրն, քանզի և սկսեալ իսկ է. եթէ ո՞չ խօսեցայց և յանդիմանեցայց առաջի նորա՛: ¹⁶Եւ այն դիպեսցի ինձ ՚ի փրկութիւն. քանզի ո՛չ մտցէ առաջի նորա նենգութիւն: ¹⁷Լուարո՛ւք լուարո՛ւք բանից իմոց, զի պատմեցից ձեզ լուիլու: ¹⁸Ձի ահաւասիկ մերձեալ եմ ՚ի դատաստանս իմ, և գիտեմ զի արդար երևելոց եմ: ¹⁹Ձի ո՞վ է ոսոխն իմ որ պատասխանեսցէ ինձ.

* *Ոմանք.* Արգելցէ զջուր:

* *Ոմանք.* Եւ հեղու անարգութիւն:

* *Ոմանք.* Ճանապարհի զոր ո՛չ գիտիցեն:

* *Ոմանք.* Որչափ և դուք գիտէք:

* *Ոմանք.* Առաջի Աստուծոյ խօսիցիք:

* *Օրինակ մի.* Կշտամբեսցէ զնա:

* *Ոմանք.* Ձարհուրեցուցանիցեն զձեզ:

* *Ոմանք.* Կարկեցարուք և խոսեց՛:

* *Յօրինակին պակասէր.* Քանզի և սկսեալ իսկ է:

զիս՞րդ կարկեցայց՝ և պակասեցայց*։ ²⁰# Երկու ինչք պիտոյ են ինձ. և յայնժամ յերեսաց քոց ես ո՛չ թաքեայց*։ ²¹# Ձծեռն քո՝ ի բաց արա յինէն, և ա՛հ քո զիս մի՛ զարհուրեցուցէ։ ²²# Եւ ապա կոչեսցես զիս՝ և ես լուայց քեզ. և եթէ խօսեսցիս՝ և ես տա՛ց քեզ պատասխանի։ ²³Քանի՛ ինչ են մեղք և անօրէնութիւնք իմ. ուսո՛ ինձ՝ քանի՛օն իցէ*։ ²⁴Ընդէ՞ր թաքուցանես յինէն։ Համարիցիս զիս քեզ ուսիս*։ ²⁵Կամ թէ՛ ի հողմաշարժ տերևո՞յ երկնչիցիս, կամ իբրև հողմավար խոտո՞յ կայցես ինձ հակառակ։ ²⁶Ձի գրեցեր զինէն չարիս, և արկեր զինն զմեղս մանկութեան։ ²⁷Եդիր զմիտս իմ՝ ի պաշարման. պահեցեր զամենայն զգործս իմ. և յարմա՛տս ուրից իմոց հասեր*։ ²⁸որ իբրև զտիկ հնացեալ են, կամ իբրև զծործս ցեցակեր*։

14

Գլուխ ԺԴ

¹Ձի այր կանանցածին սակաւակեաց՝ և լի՛ բարկութեամբ։ ²Որ իբրև զծաղիկ ծաղկեալ թօթափեցաւ. խոյս ետ իբրև ստուեր և մի՛ կացցէ։ ³Ո՛չ ապաքէն և այնմ համար առնիցես, և նմա արարեր մտանել՝ ի դատաստան առաջի քո։ ⁴Իսկ արդ ո՞վ իցէ սուրբ յաղտոյ, այլ և ո՛չ ոք. թպէտ և միոյ աւուր իցեն կեանք նորա՝ ի վերայ երկրի։ ⁵Համարեալ են ամիսք նորա առ ՚ի նմանէ. ժամանակ եդիր՝ և ո՛չ անցցէ*։ ⁶Ի բաց լեր ՚ի նմանէ՝ զի դադարեսցէ և անոքեսցէ զկեանս իբրև զվարձկան։ ⁷Ձի գոյ յոյս ծառոյ անդրէն. զի թպէտ և կտրեսցի՝ մի՛ւսանգամ ծաղկեսցէ, և շառաւիղ նորա մի՛ պակասեսցէ*։ ⁸Եթէ ծերասցի յերկրի արմատ նորա՝ և ՚ի քարի վախճանեսցի բուն նորա, ⁹ի հոտոյ ջրոյ ծաղկեսցի, և արասցէ հունձս իբրև զնորատունկ։ ¹⁰Բայց այր վախճանեալ գնաց. անկեալ մարդ և ո՛չ ևս իցէ*։ ¹¹Ձի ժամանակաւ անօսրի ծով, և գետք աւերեալ ցամաքեցան*։ ¹²և մարդ ննջեաց՝ և ո՛չ յարիցէ։ Մինչև երկինք իցեն ո՛չ կարկատեսցին, և ո՛չ զարթիցեն ՚ի քնոյ իւրեանց։ ¹³Երանի՛ թէ՛ ի դժոխս պահէիր զիս, և թաքուցանէիր զիս մինչև անցանէր բարկութիւն քո. և ժամանակէիր ինձ ժամանակ յորում առնէիր ինձ յիշատակ։ ¹⁴Եթէ մեռանիցի մարդ կեցցէ՛, վախճանեալ զաւուրս կենաց իւրոց։ Սպասեցից մինչ միւսանգամ լինիցիմ*։ ¹⁵ապա կոչեսցես զիս, և ես տա՛ց քեզ պատասխանի։ Ձգործս ձեռաց քոց մի՛ մերժեր*։ ¹⁶թուեցեր զգնացս իմ, և մի՛ անցցէ ինչ զքև ՚ի մեղաց իմոց։ ¹⁷Կնքեցեր զանօրէնութիւնս իմ՝ ի քսակի. և նշանակեցեր թէ՛ ակամայ ինչ յանցեայ։ ¹⁸# Սակայն և լեռոն որ

* Ոսկան. Ուսիսն իմ, եկեսցէ. զիսարդ։ *Յօրինակին*. Ձիս՞րդ կարգեցայց և։

* Ոսկան. Երկու ինչ պիտոյ են։

* *Բազումք*. Եւ անօրէնութիւնք իմ, ուսո՛ ինձ քանի՛օն իցեն։

* Ոսկան *յաւելու*. Ընդէ՞ր *զերեսս քո* թաքուցանես յի՞։

* Ոմանք. Եդիր զոտս, *կամ՝* զոտն իմ՝ ի պաշարման. պաշարեցեր զամենայն զգործ։

* Ոմանք. Կամ թէ իբրև զծործս։

* Ոմանք. ՚ի ժամանակ եդիր՝ և ոչ։

* *Ի բազումս պակասի*. Յոյս ծառոյ *անդրէն*։

* *Ի լուս՝*. *Նշանակի հարցական ոլորակաւ*. Վախճանեալ գնաց. *համաձայն ոմանց՝ ՚ի բնաբ՝*։

* Ոմանք. Եւ գետ... ցամաքեցաւ։ *Ի լուս՝*. Աւերեալ ցամաքեցան*։

* Ոմանք. Միւսանգամ լինիմ։

* Ոմանք. Ապա կոչեսցիս, և ես։

փլանելոց է, փլցի՛. և վէն հնասցի ՚ի տեղուջէ իւրմէ՛: ¹⁹# Ջքարինս ողորկեցին ջուրք, և ողորկեցին ջուրք զդաշտս թանձրութեան երկրի: Եւ զակնկալութիւն մարդոյ կորուսե՛ր* . ²⁰մերժեցեր զնա ՚ի սպառ, և զնա՛ց. հաստատեցեր ՚ի վերայ նորա զերեսս՝ և արձակեցե՞ր: ²¹Թէպէտ և բազում որդիք լինիցին նորա՝ ո՛չ գիտէ. և եթէ սակաւք առնիցին՝ ո՛չ ճանաչէ: ²²Այլ մարմինք նորա ախտացան ՚ի վերայ իւր, և ոգի նորա սգացաւ զինքն՛:

15

Գլուխ ԺԵ

¹Կրկնեալ անդրէն եղիփագու թեմնացոյ ասէ.

²Ապաքէն հանճարեղն ոգւով՝ իմաստութեամբ տացէ՛ պատասխանի. և լնուցո՞ւ աշխատութեամբ որովայնի. ³յանդիմանել բանիւք որ ո՛չ իցէ արժան, խօսիւք որ ո՛չ իցէ յօգուս* : ⁴Ձորոյ և դու զերկևղ մերժեցեր, և գումարեցեր առաջի Տեառն զայդպիսի բանս: ⁵Պարտաւորեցա՛ր բանիւք բերանոյ քոյ, և ո՛չ քննեցեր զբանս հզօրաց: ⁶Կշտամբեսցէ զքեզ քո՛ բերան՝ և ո՛չ ես, շրթունք քո հակառակ քեզ վկայեցեն: ⁷Իսկ արդ՝ զիա՞րդ. միթէ առաջի՞ն քան զմարդիկ ծնեալ իցես. կամ յառա՞ջ քան զբլուրս հաստատեցար: ⁸Կամ զիրաման Տեառն լուա՞ր. թէ ՚ի քե՞զ եհաս իմաստութիւն: ⁹Չի՞նչ է, զոր դու գիտիցես, և մեք ո՛չ գիտիցենք. կամ զի՞նչ դու իմանայցես՝ և ո՛չ մեք* : ¹⁰# Նաև ՚ի մե՛զ ծեր և հի՛ն աւուրց գոյ և երիցագոյն քան զհայր քո աւուրբք: ¹¹# Սակա՛ւս քան զորս մեղարն տանջեցար, և առաւել մեծաբանս խօսեցար* : ¹²# Ընդէ՞ր յանդգնեցաւ սիրտ քո, կամ ընդէ՞ր լկնեցան աչք քո. ¹³զի թափեցեր զսրտմտութիւն առաջի Տեառն, և հաներ ՚ի բերանոյ քումմէ զբանս այդպիսիս* : ¹⁴Ո՞ ոք իցէ մարդ որ եղև անարատ. կամ ո՞ ոք կանանցածին լինելոց է արդար* : ¹⁵Չի եթէ սրբոց ո՛չ հաւատայ, և երկինք ո՛չ են անարատ առաջի նորա* . ¹⁶թող թէ այր գարշ և անսուրբ, որ ընպէ՛ զանօրէնութիւնս հանգոյն ընպէլւոյ* : ¹⁷Պատմեցի՛ց քեզ Յոր լո՛ւր ինձ. զոր ինչ տեսի պատմեցի՛ց քեզ* . ¹⁸զոր իմաստունք ասեն, և ո՛չ թաքուցին հարց իւրեանց* : ¹⁹Նոցա՛ միայն տուաւ երկիր, և ո՛չ եկն օտարածին ՚ի վերայ նոցա: ²⁰Ամենայն կեանք ամպարշտի հոգուվք. անք թուով տուեալ են հզօրի*, ²¹և ա՛հ նորա յականջս նորա: Յորժամ համարիցի թէ ՚ի խաղաղութեան իցէ, եկեսցէ՛

* Ոմանք. Որ փլանելոցն իցէ:

* Ի լուս՛. նշանակի հարցականաւ. Մարդոյ կորուսե՞ր. ՚ի սպառ. և զնա՞ց:

* Ոմանք. Ախտացան, և ոգի նորա սգացաւ:

* Ոմանք. Յանդիմանեալ բանիւք՝ որ ո՛չ ի՞:

* Ոմանք. Ձոր գիտես, և մեք ո՛չ գիտի՞:

* Ոմանք. Քան զոր մեղարն:

* Ոմանք. Ջսրտմտութիւն քո առաջի... զբանս այսպիսիս:

* Ոմանք. Լինելոց իցէ արդար:

* Ոսկան. Չի եթէ սրբոյ ո՛չ հա՞:

* Ոմանք. Այր գարշելի և ան՞:

* Ի բազումս պակասի. Քեզ Յոր լո՛ւր:

* Ոմանք. Եւ ո՛չ թագուցին հարց իւրեանց:

* Ոմանք. Ամբարշտի հոգուվք:

կործանումն նորա*։ ²²Մի՛ հաւատասցէ դառնալ ՚ի խաւարէ, զի հրամայեալ է արդէն ՚ի ձեռս երկաթոյ*։ ²³Կարգեալ է ՚ի կերակուր անգեղաց. գիտէ՛ ՚ի միտս իւր թէ մնալո՛ց է ՚ի կործանումն։ Օրն մթին զարիուրեցուցէ զնա. ²⁴անձկութիւն և նեղութիւն հասցէ նմա. իբրև զօրավար յառաջակաց կործանեալ։ ²⁵Ձի ամբարձ ձեռս ընդդէմ Տեառն, և առաջի Տեառն ամենակալի ընդվզեցաւ*։ ²⁶# Ընթացաւ առաջի նորա հպարտութեամբ, թանձրութեամբ վահանի իւրոյ։ ²⁷# Ձի ծածկեաց զերեսս իւր ճարպով իւրով, և արար երկսայրի յազդեր իւրում*։ ²⁸Բնակեցցէ ՚ի քաղաքս ակերակս, և մտցէ ՚ի տունս անշէնս. զոր նոքա պատրաստեցին՝ ա՛յլք տարցին։ ²⁹Մի՛ մեծասցի, և մի՛ մնասցեն ինչք նորա, և մի՛ արկցէ յերկիր զստուեր*, ³⁰և մի՛ ապրեսցէ ՚ի խաւարէ։ Ջրողբոջ նորա թառամեցուցէ հողմ. թօթափեսցի՛ ծաղիկ նորա։ ³¹Մի՛ հաւատասցէ՝ թէ հանդարտիցէ. սնոտիք պատահեսցեն նմա*։ ³²Կտրօն նորա տարաժամ հարցի, և շառաւիղ նորա մի՛ բղխեսցէ։ ³³Իբրև զխակակուրն տարաժամ կթեսցի. թօթափեսցի իբրև զծաղիկ ձիթենւոյ։ ³⁴Ձի վկայութիւն անպարշտաց մահ է. հո՛ւր այրեսցէ զտունս կաշառառուաց*։ ³⁵Յղասցի՛ զցաւս, դիպեսցին՝ նմա սնոտիք. որովայն նորա կրեսցէ զնենգութիւն*։

16

Գլուխ ԺԶ

¹Կրկնեալ անդրէն Յորայ ասէ.

Ե ²Լուայ՝ այդպիսի ինչս բազումս. մխիթարիչք չարեաց ամենեքեան*։ ³Իսկ արդ՝ միթէ կա՞րգ ինչ իցէ բանից հողմոյ. կամ թէ թախանձիցէ՞ ոք զքեզ, զի տացես պատասխանի*։ ⁴Եւ ե՛ս ընդ ձեզ խօսեցայց՝ եթէ հնազանդէր անձն ձեր ըստ իմո՛ւն անձին։ ⁵Արդ՝ զկծեցուցի՞ց և ես զձեզ բանիւք. շարժեցի՞ց և ես իբրև զձեզ զգլուխ իմ։ ⁶Թերևս լիցի՛ զօրութիւն ՚ի բերան իմ. զշարժել շրթանց իմոց ո՛չ խնայեցից*։ ⁷Ձի եթէ խօսեցայց՝ ո՛չ փարատեսցեն ցաւք վիրաց իմոց, և եթէ լռիցեմ, նուազագո՞յն ինչ վիրաւորիցին։ ⁸# Այժմ կոտորեալ արար զիս, փտեալ՝ ընդարմացեալ. ⁹և բո՛ւռն հարեալ զինէն ՚ի վկայութիւն եղև ինձ։ # Եւ յարոյց ինձ զստութիւն իմ. քանզի արա՛ր ինձ ընդդէմ պատասխանի*։ ¹⁰# Բարկութեամբ վարեալ կործանեաց զիս. կրճտեաց ՚ի վերայ իմ զատամունս։ Նետք հինից նորա խաղացին ՚ի վերայ իմ. տիգաւ աչաց խաղաց ՚ի վերայ իմ։ ¹¹Արագ արագ

* *Ոմանք.* Կործանումն ՚ի վերայ նորա։

* *Ոմանք.* Մի՛ համարեսցի դառնալ ՚ի խա՛ւ։

* *Ոմանք.* Ամբարձ զձեռն ընդդէմ։ *Ոսկան.* Եւ առաջի Ամենակալին ընդվզե՛լ։

* *Ոսկան.* ճարպով իւրոյ։

* *Ոմանք.* Եւ մի՛ յարկցէ յերկիր։

* *Ոմանք.* Եթէ հանդարտեսցէ։

* *Ոմանք.* Անպարշտի մահ է։

* *Ոսկան.* Յորովայն նորա։

* *Բազումք.* Այդպիսի ինչ բազում։

* *Ոմանք.* Բանից հողմոց։

* *Ոմանք.* Ի բերան իմում։

* *Ոմանք.* Հինից նորա տեղացին ՚ի վերայ իմ, տիգօք աչաց։

եհար զիս ՚ի ծո՛ւնկս. միանգամայն ասպատակեցին ՚ի վերայ իմ*։ ¹²Քանզի մատնեաց զիս Տէր ՚ի ձեռս անիրաւին, և ՚ի մէջ անպարշտաց ընկեց զիս*։ ¹³Մինչդեռ ՚ի խաղաղութեան էի, քայքայեաց զիս. առեալ զվարսից իմոց փետտեաց զիս։ Կացոյց զիս իբրև զդէտ. ¹⁴պատեցին զիս տեգք։ Յանխնայ խոցոտեցին զերիկամունս իմ. եհեղ յերկիր զմաղծ իմ։ ¹⁵Կործանեցին զիս հարուածովք ՚ի վերայ հարուածոց։ Յարծակեցան ՚ի վերայ իմ զօրաւորք. ¹⁶կարեցին քուրծ ընդ մորթ իմ։ Զօրութիւն իմ յերկիր շիջաւ*։ ¹⁷Խարշեցաւ փոր իմ ՚ի լալոյ, և ՚ի վերայ արտևանաց իմոց ստուերք մահու*։ ¹⁸Անիրաւութիւն ինչ ո՛չ էր ՚ի ձեռին իմում. աղօթք իմ սուրբ էին։ ¹⁹Երկիր՝ մի՛ ծածկեր զարիւն մարմնոյ իմոյ, և մի՛ լիցի տեղի աղաղակի իմոյ։ ²⁰Եւ արդ ահա յերկինս է վկայն իմ, և իրաւագետն իմ ՚ի բարձունս։ ²¹Չասցեն խնդրուածք իմ առ Տէր, և յանդիման նորա կաթեցուցէ ակն իմ։ ²²Եղիցի յանդիմանութիւն առն առաջի Տեառն, և որդւոյ մարդոյ առ ընկերի իւրում։ ²³Ամբ թուով հասին ինձ. ընդ ճանապարհ անդարձ գնացին*։

17

Գլուխ ԺԷ

¹Չողմավար կորնչիմ. կարօտիմ գերեզմանի՝ և ո՛չ հասանեմ*։ ²Տառապիմ աշխատեալ՝ և զի՞նչ գործեցից։ Գողացան օտարք զստացուածս իմ. ³# ո՞վ է նա ընդ ձեռին իմում կապեցի։ ⁴# Զի զսիրտս իւրեանց թաքուցին յիմաստութենէ վասն այսորիկ մի՛ բարձրացուցէ զնոսա*։ ⁵Մասին իւրում պատմեսցէ զչարութիւնս. աչք իմ ՚ի վերայ որդւոց հալեցան*։ ⁶Եղիր զիս բամբասանս ազգաց, եղէ նոցա ծաղր*։ ⁷Շլացան ՚ի բարկութենէ աչք իմ. զի պաշարեալ եմ մեծապէս յամենեցունց։ ⁸Զարմանք կալան զճշմարիտս ՚ի վերայ այսոցիկ. արդար ՚ի վերայ անօրինի՛ յարիցէ։ ⁹Կալցի՛ հաւատարիմն զիւր ճանապարհ. սուրբն ձեռօք առցէ քաջալերութիւն*։ ¹⁰Բայց արդ՝ աղէ դուք եկայք յարեցարո՛ւք ամենեքեան. քանզի ո՛չ գտանեմ ՚ի ձեզ ճշմարտութիւն*։ ¹¹Աւուրք իմ անցին շարաւով. պայթեցին երակք սրտի իմոյ։ ¹²# Զգիշեր՝ տի՛ւ եղին. լոյս մերժեալ յերեսաց խաւարի*։ ¹³Զի եթէ համբերեցից՝ դժոխք են տուն իմ. ՚ի միզի՛ տարածեալ են անկողինք իմ*։ ¹⁴Զմահ կոչեցի ինձ հայր, մայր և քոյր ինձ՝ զերր։

* *Ի լուս՝. ՚ի վերայ՝* Ի ծունկս, *նշանակի՝* ծնօտս. *ըստ որում և օրինակ մի այսպէս ունի.*

Արագարագ եհար զծնօտս իմ։

* *Ոմանք.* Տէր ՚ի ձեռս անօրինին։

* *Ոմանք.* Կապեցին քուրծ ընդ մորթ։

* *Ոմանք.* Ի վերայ արտևանաց իմոց։

* *Ոմանք.* Անդարձ գնացի. *կամ՝* գնացից։

* *Ոմանք.* Կարօտ եմ գերեզմա՛ն։

* *Ոմանք.* Մի՛ բարձրացուցես։

* *Ոմանք.* Ի մասին իւրում. *և ոմանք.* ՚ի միասին պատմեսցէ։

* *Ոմանք.* Ի բամբասանս ազգաց։

* *Ոմանք.* Կալցէ հաւատարիմն։

* *Ոմանք.* Գտանիցեմ ՚ի ձեզ ճշմարտութիւն։

* *Ոմանք.* Տիւ եղին ինձ. լոյս։

* *Այլք.* Զի եթէ համբերից՝ դժ՛։

¹⁵Արդ ո՞ր է յոյսն իմ. կամ թե զբարութիւնս իմ տեսանիցե՞մ*։ ¹⁶Կամ թե ընդ իս
իսկ ՚ի դժո՞խս իջանիցեն. կամ թե միանգամայն ՚ի հո՞ղ իջանիցենք։

18

Գլուխ ԺԸ

¹Կրկնեալ անդրէն Բաղդատայ Սաւքեցոյ աւէ.

²Մինչև յեր՞բ ո՛չ դադարիցես. հանդարտեա՛, զի մեք խօսեսցուք*։ ³# Ընդէ՞ր
իբրև զչորքոտանիս լռեալ ենք առաջի քո, ⁴# և դու մխեալ ես բարկութեամբ։
Իսկ արդ եթէ դու մեռանիցիս՝ անշէ՞ն մնայցէ առ ՚ի ներքոյ երկնից. կամ թե և
լերինք ՚ի հիմանէ տապալեսցի՞ն*։ ⁵Եւ լոյս ամպարշտաց շիջանիցի՛, և ո՛չ
պատահեսցէ նոցա բոց*։ ⁶Եւ լոյս նորա խաւար ՚ի յարկի իւրում, և ճրագ ՚ի
վերայ նորա շիջցի*։ ⁷Որսասցեն յետինք զինչս նորա. սխալեալ են խորհուրդք
նորա։ ⁸Անկցի՛ ոտն նորա յորոգայթ, և շաղեսցի՛ ՚ի թակարդի*։ ⁹# Եկեսցեն ՚ի
վերայ նորա որոգայթք. զօրացուցէ՛ ՚ի վերայ նորա զծարաւիս։ ¹⁰# Չի
թաքուցեալ են յերկրի տոռունք նորա, և կալանք նորա շուրջանակի ՚ի վերայ
շաւղաց նորա*։ ¹¹# Սատակեսցեն զնա ցաւք շուրջանակի. բազումք զոտիւք
նորա պատեսցին ¹²ի նեղութեան սովոյ։ Պատրաստեալ է նմա կործանումն
ահագին. կերիցին կնիք ոտից նորա*։ ¹³Կերիցէ մահտարածամ զգեղեցկութիւն
նորա*։ ¹⁴Վարեսցի բժշկութիւն ՚ի յարկաց նորա. հասցէ նմա տագնապաւ
պատուհաս արքունի։ ¹⁵Եւ բնակեսցէ իբրև ՚ի գիշերի ՚ի յարկի իւրում. ցրուեսցին
վայելչութիւնք նորա ծօղմբով*։ ¹⁶# ՚ի ներքո՛ւստ արմատք նորա ցամաքեսցի, #
և ՚ի վերուստ անկցին հունձք նորա*։ ¹⁷# Յիշատակ նորա կորիցէ յերկրէ, և ո՛չ
գտցի անուն նորա առ երեսօք արտաքնովք։ ¹⁸# Մերժեսցեն զնա ՚ի լուսոյ ՚ի
խաւար. և մի՛ եղիցի նմա ծանօթ ՚ի ժողովրդեան իւրում։ ¹⁹Մի՛ լիցի ապրեալ ՚ի
ներքոյ երկնից տուն նորա. այլ ՚ի նորայն կեցցեն օտարք*։ ²⁰Յեծեծեսցեն ՚ի
վերայ նորա յետինք. զառաջինս կալան՝ զարմանք*։ ²¹Թէ ա՞յս են տունք
անիրաւաց, և ա՞յս տեղի այնոցիկ որք զՏէր ո՛չ ճանաչիցեն։

19

* Այլք. Ո՞ր է յոյսն իմ։

* Ոմանք. Չի և մեք խօսեսցուք. կամ՝ խօսիցինք։

* Ոմանք. Յանշէն մնասցէ... ՚ի հիմանէ տապալիցին։

* Ոմանք. Շիջցի, և ո՛չ պատահիցէ։

* Ոմանք. խաւարի յարկի իւրում. և ճրագ ՚ի վերայ շիջցի։

* Ոմանք. Եւ շաղախեսցի ՚ի թակար՞։

* Ոմանք. Եւ կալանք նորա ՚ի վերայ շաւղաց։

* Ի լուս՞. ՚ի վերայ՝ Կերիցին, և այլն. նշանակի՝ կորիցեն կեանք նորա։ Ոմանք. Կերիցեն
նորա կինք ոտից նորա։

* Ոմանք. Կերիցէ մահ զգեղեցկութիւնս։

* Բազումք. Բնակեսցէ ՚ի յարկի նորա ՚ի գիշերի իւրում. ցրեսցին վայել՞։

* Ոմանք. Ցամաքեսցին։

* Ոմանք. Այլ ՚ի նորայն կեցցեն։

* Ոմանք. Յեծեսցեն ՚ի վերայ նորա... և կալան։

Գլուխ ԺԹ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ ատ.

Ձ ²Մինչև յե՞րբ աշխատ առնէք զանձն իմ, և խախտէք զիս բանիւք*։ ³Բայց զհտասջիք զի Տէր արար ընդ իս այսպէս։ Բանբասէք զիս՝ և ո՞չ ամաչէք յարձակեալ ՚ի վերայ իմ*։ ⁴Այո՛, արդարն՝ ե՛ս մոլորեցայ և յի՛ս հանգուցեալ է մոլորութիւն։ Խօսել բան զոր ո՛չ է արժան։ # և բանք իմ մոլորեալ եմ՝ և ո՛չ եմ ՚ի դէ՛պ ժամանակի*։ ⁵Թողցուք զայդ որ յիմ վերայ մեծաբանեալ էք, և յարձակեալ էք ՚ի վերայ իմ նախատանօք*։ ⁶Արդ՝ զհտասջիք՝ զի Տէր է որ խռովեացն, և ամուրս ՚ի վերայ իմ բարձրացոյց։ ⁷Եւ ահա ծաղր լինիմ նախատանօք, և ո՛չ խօսեցայց. աղաղակեցից՝ և ո՛չ ուստեք իցէ դատաստան*։ ⁸Շուրջ պատեալ եմ, և ո՛չ կարացից անցանել. ե՛րբ ՚ի վերայ երեսաց իմոց խաւար։ ⁹Սերկացոյց յինէն զփառս իմ. վերացոյց զպսակն ՚ի գլխոյ իմմէ։ ¹⁰Պարուրեաց շուրջ զինն՝ և գնացի. եհատ իբրև զծառ գոյս իմ. ¹¹և չարաչար բարկութեամբ վարեցաւ ընդ իս. համարեցաւ զիս իբրև զթշնամի։ ¹²Միանգամայն հասին ՚ի վերայ իմ հէնք նորա. զճանապարհս իմ պատեցին դարանակալք։ ¹³Յեռի՛ եղեն յինէն եղբարք իմ. ծանեան զօտարս քան զիս։ ¹⁴Բարեկամք իմ անողորմք եղեն. անգոսնեցին մերձաւորք իմ, և ծանօթք իմ մոռացան զանուն իմ*։ ¹⁵# Դրացիք տան իմոյ և աղախնայք իմ օտար համարեցան զիս. այլազգի՛ թուէի առաջի նոցա։ ¹⁶Ձծառայ իմ կոչեցի՝ և ո՛չ լուաւ. բերան իմ աղաչէր՝ ¹⁷և աղերսէի զկին իմ։ Կոչէի ողորքանօք զորդիս հարճից իմոց*։ ¹⁸և նոքա յաւիտեան ուրացան զիս. յորժամ յառնեմ, բանբասեն զիս։ ¹⁹Գարշեցան յինէն ծանօթք իմ. և զորս ես սիրէի յարեան ՚ի վերայ իմ*։ ²⁰Փոտեցան մարմինք իմ ընդ մորթով իմով, և զոսկերս իմ ունիմ յատանունս։ ²¹Ողորմեցարուք ինձ, ողորմեցարուք ինձ ո՛ր բարեկամք. զի ձեռն Տեառն մխեցաւ յիս։ ²²Ընդէ՞ր հալածէք դուք զիս իբրև զՏէր, և մարմնովք իմովք չիցէ՞ք յագեալ։ ²³Ո՛ տայր ինձ գրել զբանս իմ, և հանել զնոսա ՚ի մատեան յաւիտեան*։ ²⁴Գրչաւ երկաթեալ ՚ի կապարի, կամ ՚ի վէճս քանդակեալ առ ՚ի վկայութիւն*։ ²⁵Քանզի զիտեմ զի մշտնջենաւոր է որ լուծանելոցն է զիս յերկրի՛ յարուցանել* ²⁶զմորթ իմ որ կրեաց զայս ամենայն։ Ի՛ Տեառնէ վճարեցաւ ինձ այս. ²⁷զոր ես անծին իմուն իրագէտ եմ. զոր ակն իմ ետես՝ և ո՛չ այլ ոք. ամենայն ինչ վախճանեցաւ ՚ի ծոց իմ։ ²⁸# Ապա թէ ասիցէք. Չի՞նչ խօսեսցուք առաջի նորա, և արմատ բանից գտցուք ՚ի նմա. ²⁹# երկերուք և դուք ՚ի ծածկելոց։ Չի բարկութիւն ՚ի վերայ անօրինաց եկեսցէ, և ապա

* Ոսկան. Մինչև ցե՞րբ աշ՞:

* Ոմանք. Յարձակել ՚ի վերայ իմ:

* Ոմանք. Բան՝ զոր չէ արժան:

* Ոսկան յաւելու. Եւ յարձակեալ էք ՚ի վերայ իմ՝ և յարձակեալ էք նախա՞:

* Ոմանք. Աղաղակեցի, և ո՛չ ուս՞:

* Բազումք. Անգոսնեցին զիս մերձա՞:

* Ոմանք. Եւ աղերսէր զկին իմ:

* Ոմանք. Եւ զոր ես սի՞:

* Ոմանք. Եւ հանել զնոսա ՚ի մատեան ՚ի յաւիտեան:

* Ի՛ բազումս պակասի. Քանդակել առ ՚ի վկայութիւն: (25) Քանզի զի՞:

* Ոմանք. Գիտեմ եթէ մշտն՞: Ուր Ոսկան. Յերկրէ յարուցանել զմորթ իմ որ կրեաց զամենայն:

գիտասցեն թէ ո՛ր է նիւթ նոցա*:

20

Գլուխ Ի

¹Կրկնեալ անդրէն Սովփարայ Մինեցոյ ասէ*.

²Ո՛չ այդպէս կարծէի խօսել քեզ ընդդէմ մեր զայդ. ո՛չ ապաքէն իմաստնագոյնք իցէք քան զիս: ³# Խրատո՛ւ ականածութեան իմոյ լուայց, # և ոգի յիմաստութենէ արասցէ ինձ պատասխանի*:⁴# Միթէ զայդ յայսմ հետէ՞՞ գիտացեր. այլ յորմէ հետէ եդա՛ւ մարդ ՚ի վերայ երկրի: ⁵Ձի ուրախութիւն անպարշտաց բեկումն անհնարին, և խնդութիւն անօրինաց կորուստ: ⁶Եթէ ելանիցեն յերկինս պատարագք նորա, և զոիք նորա յամպս մերձեսցին: ⁷Յորժամ համարեսցի թէ հաստատեալ իցէ՛ յա՛յնժամ ՚ի սպա՛ռ կորիցէ. և որ գիտէին զնա՝ ասասցեն թէ ո՛ր է: ⁸Իբրև զերագ թռուցեալ ո՛չ գտցի, թռեալ իբրև զտեսիլ գիշերական*:⁹# Ակն որ հայեցաւ ՚ի նա՝ ո՛չ յաւելցէ, և ո՛չ ծանիցէ զնա տեղի իւր*:¹⁰# Չորդիս նորա սատակեսցեն վատթարք. ձեռք նորա բորբոքեսցին ցաւովք: ¹¹# Ոսկերք նորա յագեսցին մանկութեամբ նորա, և ընդ մմին ՚ի հո՛ղ ննջեսցեն*:¹²# Եթէ քաղցրասցի ՚ի բերան նորա չարութիւն՝ թաքուցէ՛ զայն ՚ի ներքոյ լեզուի իւրոյ: ¹³# Խնայեսցէ ՚ի նա, և մի՛ թողէ զնա. և ժողովեսցէ զնա ՚ի մէջ կոկորդի իւրոյ*:¹⁴ և մի՛ կարասցէ օգնել անձին իւրում. լեղի իժի՛ ՚ի փորի իւրում: ¹⁵Մեծութիւն անիրաւութեամբ ժողովեալ՝ փսխեսցի. ՚ի տանէ նորա կորզեսցէ զնա հրեշտակ: ¹⁶Չարտմտութիւն վիշապաց ծծեսցէ. սպանցէ զնա լեզու օձի: ¹⁷Մի՛ տեսցէ զկիթ արօտականաց, և մի՛ զարօտս մեղու և զկոզոյ: ¹⁸Ի զուր և ՚ի տարապարտուց վաստակեցաւ ՚ի մեծութիւն՝ ուստի ո՛չ ճաշակեսցէ, իբրև զխի՛ստ ինչ զանժամ և զանկոտոր: ¹⁹# Ձի զբազում տկարաց տունս խորտակեաց, և գյարկս յափշտակեաց և ո՛չ հաստատեաց: ²⁰Չի՛ք փրկութիւն ստացուածոց նորա, ՚ի ցանկութեան իւրում ո՛չ ապրեսցի. ²¹# և մի՛ լիցին մթերք կերակրոց նորա: Վասն այնորիկ մի՛ ծաղկեսցեն բարունակք նորա*:²²# յորժամ համարեսցի թէ ահա լցեալ իցէ՛ նեղեսցի: # Ամենայն տագնապ հասցէ ՚ի վերայ նորա, ²³թէ զիա՞րդ լնուցու որովայն նորա: Առաքեսցէ ՚ի վերայ նորա զարտմտութիւն բարկութեան. արկցէ՛ զնովաւ ցաւս. ²⁴և մի՛ ապրեսցի ՚ի ձեռանէ երկաթոյ: Խոցոտեսցէ՛ զնա աղեղն պղնձի. ²⁵անցցէ ընդ մարմինս նորա նետ: Աստեղք շրջեսցին ՚ի յարկս նորա՝ արհաւիրք ՚ի վերայ նորա: ²⁶Ամենայն խաւար նմա մնասցէ. կերիցէ՛ զնա հուր անշէջ: Չարչարեսցէ եկամուտ զտուն նորա*:²⁷ յայտնեսցեն երկինք զանօրէնութիւն նորա. յարիցէ ՚ի վերայ նորա երկիր: ²⁸Քակտեսցէ կորուստ

* Ոմանք. Եւ դուք ՚ի ծածկելոյ:

* Յօրինակին. Սովփերայ Մինեցոյ:

* Ոմանք. Եւ հոգի յիմաս՛:

* Ոմանք. Իբրև զերագ թռուցեալ ոչ:

* Ոմանք. Չնա ՚ի տեղի իւր:

* Ի լուս՛. Յագեսցան մանկութեամբ. համաձայն ոմանց ՚ի բնար՛:

* Ոմանք. Մի՛ խնայեսցէ ՚ի նա, և մի՛:

* Ոմանք. Մի՛ ծաղկեսցին:

* Յօրինակին պակասէր. Ամենայն խաւար նմա:

զտուն նորա 'ի սպառ. հասցէ՛ 'ի վերայ նորա օր բարկութեան: ²⁹Այս բաժին է մարդոյ ամպարշտի առ 'ի Տեառնէ. և այս ստացուածք ընչից նորայ յԱյցելուէն*:

21

Գլուխ ԻԱ

¹Կրկնեալ անդրէն Յորայ ասէ.

Է ²Լուարո՛ւք լուարո՛ւք բանից իմոց: Երանի՛ թէ մի՛ լինէր 'ի ձեռք այդ մխիթարութիւն: ³Ներեցէ՛ք ինձ և ես խօսեցայց, եթէ ո՛չ այպանիցէք զբանիւք իմովք: ⁴Իսկ արդ չե՛ս իմ կշտամբանքս 'ի մարդկանէ իցեն. և կամ ընդէ՞ր ո՛չ բարկանայցեմ*: ⁵# Հայեցեալ ընդ իս զարմանա՞յք, եղեալ ձեռն 'ի ծնօտի: ⁶Եթէ յո՛ւշ լինիցի ինձ, տագնապեցայց. զի ունի՛ն ցաւք զմարմինս իմ: ⁷Ընդէ՞ր բնաւ ամպարիշտք կենդանի իցեն, հնացեալք և 'ի մեծութեան են: ⁸Սերմանք նոցա ըստ մի՛տս. և որդիք նոցա առաջի աչաց: ⁹Տունք նոցա աջողեալք. և երկկ և ո՛չ ուստեք. և տանջանք 'ի Տեառնէ չե՛ն 'ի վերայ նոցա: ¹⁰Արջառ նոցա ո՛չ սխալեաց 'ի ծննդենէ. ապրեցա՛ւ յդի նոցա՝ և ո՛չ վրիպեցաւ. ¹¹և կան իբրև զխաշինս յաւիտենականս: Մանկունք նոցա խաղան առաջի, ¹²առեալ սաղմոսարան և քնար. և ուրախ լինին ձայնիւ երգոց: ¹³Կատարեցին 'ի բարութեան զկեանս իւրեանց, հանգստեա՛մք ննջեցին 'ի դժոխս: ¹⁴Եւ ասէ ցՏէր. 'ի բա՛ց կաց յինէն, զճանապարհս քո ճանաչել ո՛չ կամիմ: ¹⁵# Ձի՞նչ շահ է՝ զի ծառայեսցուք նմա, կամ զի՞նչ օգուտ՝ զի հանդիպեսցուք նմա*: ¹⁶# 'ի ձեռնս նոցա էին բարութիւնք. և 'ի գործս ամպարշտաց ո՛չ հայի: ¹⁷Սակայն և ճրագ ամպարշտաց շիջցի. եկեցէ 'ի վերայ նորա կործանումն. երկունք կալցին զնոսա 'ի բարկութենէ*: ¹⁸Եղիցին իբրև գյա՛րդ առաջի հողմոյ, կամ իբրև զփոշի զոր տարաւ մրրիկ: ¹⁹# Սպառեցեն զորդիս ինչք նորա. հատուցէ նմա, և ծանուցէ*: ²⁰Տեսցեն աչք նորա զսպանումն իւր, և 'ի Տեառնէ մի՛ ապրեսցի: ²¹# Ձի կա՛նք նորա 'ի տան իւրում ընդ իւր, և զթիւ ամսոց նորա բաժանեցեն*: ²²Ոչ ապաքէն՝ Տէր է որ ուսուցանէ զհանճար և զգիտութիւն, զի ինքն քննէ զիմաստունս: ²³Այնպիսին մեռցի՛ 'ի սաստկութիւն անզգամութեան իւրում. ամենկին բարեկեցիկն և յաջողեալն*: ²⁴Փորն նորա լի՛ է ճարպով. ուղիղ նորա շճեսցէ*: ²⁵Նա վախճանեսցի 'ի դառնութենէ անձին, ո՛չ ինչ կերեալ 'ի բարութենէ: ²⁶Առ հասարակ ննջեսցեն յերկրի. երր ծածկեաց զնոսա*: ²⁷Եւ արդ գիտեմ՝ զի յանդգնութեամբ հասեալ էք 'ի վերայ իմ*: ²⁸# Արդ ասացէք՝ թէ ո՛ւր է տուն իշխանին. և ո՛ւր է յարկ բնակութեան ամպարշտաց*: ²⁹# Հարցէ՛ք զանցաւորս

* Ոմանք. Ընչից նորա յայցելութիւն:

* Ոմանք. 'ի մարդկանէ ինչ իցէ:

* Ոմանք. Եւ զի՛նչ օգուտ:

* Ոմանք. 'ի վերայ նոցա կործանումն:

* Ոմանք. Հատուցէ նմա և ծանիցէ:

* Ոմանք. Եւ զթիւ ամսոց նորա բաժանեցին:

* Ոմանք. Բարեկեցիքն և յաջողեալն:

* Ոմանք. Ուղեղ. կամ՝ ուղիղ նորա:

* Ոսկան. Երր ծածկեցէ զնոսա:

* Ոմանք. Արդ գիտեմ:

* Այլք. Արդ ասիցէք՝ թէ ո՛ւր է:

ճանապարհի, և զնշանս նոցա մի՛ օտարացուցանէք: ³⁰# Ձի յօր կորստեան ստիպի չար. յօր բարկութեան իւրոյ վարեսցի*։ ³¹# Ո՛ր պատմեսցէ յանդիման նորա զճանապարհս նորա. և զոր ինչ ինքն գործեաց՝ ո՛ր հատուցէ նմա*։ ³²# Եւ ինքն ՚ի գերեզմանի գնաց, և ՚ի տապանի տքնեցաւ*։ ³³# Եւ քաղցրացան նմա խիճք հեղեղատի։ # Եւ զհետ նորա ամենայն մարդ գնացէ, և յառաջ քան զնա անթիւք*։ ³⁴Եւ զհար՞դ մխիթարեցէք զիս սնոտեօք. և ինձ ձևք դադարելն ո՛չ ինչ է*։

22

Գլուխ ԻԲ

¹Կրկնեալ անդրէն եղիփագու թեմնացւոյ ասէ.

²Ոչ ապաքէն Տէր է՝ որ ուսուցանէ զիմաստութիւն և զհանճար։ ³Իսկ արդ զի՞ փոյթ է Տեառն, եթէ դու էիր անարատ գործովք քովք. կամ զի՞նչ օգուտ է թէ պարզեսցես զճանապարհս քո*։ ⁴Կամ համարեա՞լ ինչ զքեզ յանդիմանեսցէ՞ զքեզ, և մտանիցէ՞ ընդ քեզ ՚ի դատաստան։ ⁵Ոչ ապաքէն չարութիւն քո բազում է, և անթիւ են մեղք քո։ ⁶Գրաւեցէ՛ր դու զեղբարս քո տարապարտուց, և զզգեստ մերկոց գերծէ՛ր։ ⁷Չուր ծարաւեաց ո՛չ արբուցեր, և զհաց քաղցելոց հատեր*։ ⁸Ա՛կն առեր երեսաց ոմանց, և բնակեցուցեր զնոսա յերկրի։ ⁹Արձակեցեր զայրիս ունայնս, և զորքս չարչարեցէ՛ր։ ¹⁰Եւ արդ պատեցան զքև որոգայթք, և տագնապեանց զքեզ պատերազմ անհնարին։ ¹¹Լոյսն քո քեզ խաւար դիպեցաւ. և ՚ի քուն ծածկեաց զքեզ ջուր։ ¹²# Միթէ որ ՚ի բարձունս նայի ո՞չ տեսանիցէ. # նա աւանիկ զզգածեալսն ամբարտաւանութեամբ խոնարհեցոյց*։ ¹³Եւ ասացեր թէ զի՞ ծանեաւ Յզօրն. կամ թէ ՚ի միզի՞ դատիցի։ ¹⁴Ա՛մպ ծածկութիւն նորա, և ո՞չ երևեսցի. և ընդ ծի՞ր երկնից շրջեսցի։ ¹⁵Մի՛ զշաւիղս յաւիտենականս պահեսցէ, զորս կոխեսցեն արք արդարք*։ ¹⁶որք յափշտակեցան տարաժամ։ Գե՛տ բղխեալ հիմունք նոցա*։ ¹⁷ոյք ասէին. Ձի՞ արասցէ մեզ Տէր, կամ զի՞նչ ասօցէ ՚ի վերայ մեր Ամենակալն։ ¹⁸Եւ նա ելի՛ց զտունս նոցա բարութեամբ. բայց խորհուրդ ամպարշտաց հեռի՛ է ՚ի նմանէ։ ¹⁹Տեսեալ արդարոց ծիծաղեցան. անարատին՝ և արհամարհեաց։ ²⁰Եթէ չէ՞ր ապականեալ հաստատութիւն նոցա. և զմնացորդս նոցա կերիցէ՛ հուր։ ²¹Բայց աղէ՛ լեր խիստ եթէ ժուժկալեսցես։ Եւ եթէ պտուղ քո եղիցի ՚ի բարութիւնս*։ ²²ընկալ ՚ի բերանոյ նորա դաւանութիւն, և ան՞ զբանս նորա ՚ի սրտի քո*։ ²³Եւ

* Ոմանք. Ստիպի չարն։

* Ոմանք. Ո՛ր պատմիցէ... զճանապարհ նորա։

* Այլք. Եւ ինքն ՚ի գերեզմանս գնաց։

* Ոմանք. Քաղցրացան նմա։

* Ոմանք յաւելուն՝ Մխիթարեցէք զիս բանիւք սնոտեօք։

* Ոմանք. Իսկ զի՞ փոյթ է Տեառն... զի՞նչ օգուտ է թէ պարզես*։

* Բազումք. Այլ և զհաց քաղցելոց։

* Ոմանք. Ի՛ բարձունս նայիցի չտեսանիցէ։

* Ոսկան. Միթէ զշաւիղս յաւի՛։ Ոմանք. Յաւիտենականս պահեսցես զորս կոխեսցին։

* Ոսկան. Գետ բաղխեալ զհիմունս նոցա։

* Ոմանք. Պտուղ քո եղիցի ՚ի բնակութիւնս։ Ուր Ոսկան. Եղիցի իրաւութիւնս։

* Բազումք. Զբանս նորա ՚ի սիրտ քո։

Եթէ դարձցիս՝ և խոնարհեցուցես զանձն քո առաջի Տեառն, հեռի՛ արարեր ՚ի յարկի քում զանհրաւութիւն*։ ²⁴# Նստցիս յամրութիւն վիմի, և իբրև ՚ի վէմ ձորոյն Սովփերայ*։ ²⁵# Եւ եղիցի Ամենակալն օգնական քեզ ՚ի թշնամեաց. և յստակ հատուցէ քեզ իբրև զարծաթ զտեալ։ ²⁶Ապա համարձակեցիս առաջի Տեառն. հայեցեալ յերկին զուարթութեամբ*։ ²⁷Յաղաչել քում առ նա լուիցէ քեզ. տացէ՛ քեզ հատուցանել զաղօթս քո։ ²⁸Դարձուցէ քեզ զյարկն արդարութեան. և ՚ի ճանապարհս քո եղիցի լոյս*։ ²⁹Ձի խոնարհեցուցեր զանձն, և ասացեր թէ ամբարտաւանեցի։ Եւ զխոնարհս աչօք՝ կեցուցէ։ ³⁰Եւ փրկեցէ զանարատն, և ապրեցիս սրբութեամբ ձեռաց քոց*։

23

Գլուխ ԻԳ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ ատ.

Ը ²Նա՛ և Ես գիտեմ զի ՚ի ձեռանէ իմն՝ է յանդիմանութիւն իմ. և ձեռն նորա ծանրացաւ ՚ի վերայ հեծութեան իմոյ։ ³Իսկ ո՞վ ծանուցէ եթէ գտից զՆա, և հասից նմա ՚ի սպառ*։ ⁴Եւ ասացից առաջի նորա զիրաւունս. լցի՛ց զբերան իմ յանդիմանութեամբ։ ⁵Ծանեայց զողորմանս զոր ընդ իս խօսիցի. խելանուտ եղէ՞ց այնմ զոր ինձն պատմիցէ։ ⁶Եւ բազում զօրութեամբ եկեցէ ՚ի վերայ իմ. եթէ զպատուհաս իւր ՚ի գործ ո՛չ արկանիցէ։ ⁷# Ձի ճշմարտութիւն և յանդիմանութիւն ՚ի նմանէ է, հանցէ ՚ի սպառ զիրաւունս իմ։ ⁸# Եթէ յառաջագոյն երթայցէ՛ ո՛չ ևս իցեմ, և զվերջինսն զի՞ զհտիցեմ*։ ⁹# Ձծախս այնորիկ որ արարն զնա՝ ո՛չ կալայ, # և եթէ արկցէ զաջ իւր զինն՝ սակայն և այնպէս ո՛չ տեսից։ ¹⁰Ձի ինքն գիտէ զճանապարհս իմ, և քննեաց զիս իբրև զոսկի*։ ¹¹Չասի՛ց ՚ի պատուիրանս նորա. զճանապարհս նորա պահեցից և ո՛չ ևս թիրեցայց։ ¹²Ձպատուիրանօք նորա ո՛չ անցից՝ զի մի՞ մեռանիցիմ. ՚ի ծոց իմ թաքուցից զբանս նորա*։ ¹³Ապա թէ նա այնպէս դատեցաւ, ո՞ իցէ որ ընդդէմ դառնայցէ նմա. զի զոր ինքն կամեցաւ և արար*։ ¹⁴Վասն այնորիկ առ նա՝ փութացայց. խրատեալ զնորին հոգացայց*։ ¹⁵# Ի վերայ այսոցիկ յերեսաց նորա տագնապեցայց, և ՚ի միտ առից և զարհուրեցայց ՚ի նմանէ։ ¹⁶# Ձի Տէր հիւանդացոյց զսիրտ իմ, և Ամենակալն պագնապեաց զիս։ ¹⁷Ձի ո՛չ գիտէի թէ զայցէ ՚ի վերայ իմ խաւար. առաջի երեսաց իմոց ծածկեաց մեզ։

* *Բազումք.* ՚ի յարկէ քումնէ զանհրաւութիւն։

* *Ոսկան.* Յամրութեան վիմի։

* *Բազումք.* Չայեցեալ յերկինս։

* *Ոմանք.* Դարձուցէ զքեզ յարկն. *կամ՝* յարկն արդա՛։

* *Ոմանք.* Եւ ապրեցիս ձեռամբ քով։

* *Ոմանք.* Իսկ արդ ո՞ ծանուցէ։

* *Ոմանք.* Յառաջագոյն երթայց՝ ո՛չ ևս։

* *Ոմանք.* Որպէս զոսկի։

* *Ոմանք.* Ի ծոց իմ թագուցի զբանս։

* *Ոմանք.* Ապա եթէ. *կամ՝* ապ եթէ նա։

* *Ոմանք.* Վասն այսորիկ առ նա... զնորին հոգացից։

Գլուխ ԻԴ

¹Ընդէ՞ր զՏէր մոռացան ամպարհաւաճք*.² Եւ ամպարհաւաճք անցին ըստ սահման: Ձիօտ հանդերձ հովուօք յափշտակեցին.³ զէշ որբոյն վարեցին, և զեզն այրւոյն գրաւեցին: ⁴Խոտորեցուցին զտկարս 'ի ճանապարհէ արդարութեան. առ հասարակ ղօղեցուցին զհեզս երկրի.⁵ Դիպեցան իբրև զցիռս 'ի վայրի: # Վասն իմ ծախսեցին զգործ իւրեանց. քաղցրացաւ նոցա հաց ընդ լկտիս*:⁶ Չանդ տհաս որ ո՛չ իւրեանց էր՝ հնձեցին. տկարք զայգիս ամպարշտաց անհա՛ց և անվարձ գործեցին: ⁷Չմերկս բազումս ննջեցուցին առանց հանդերձից. զզգեստ անձանց նոցա զերծին: ⁸Ի ցօղոյ լերանց տամկանան. քանզի ո՛չ գոյր նոցա յարկ. արկին զինքեանց ընդ վիմաւ*:⁹ Յափշտակեցին զորբն 'ի ստենէ, և զանկածն տառապեցուցին*:¹⁰ Չմերկն ննջեցուցին առանց հանդերձի տարապարտուց. հատին զհաց քաղցելոց*:¹¹ Յանձուկս դարանակալ եղեն 'ի տարապարտուց. զճանապարհս արդարութեան ո՛չ գիտացին: ¹²Որք 'ի քաղաքաց և 'ի տանց իւրեանց զրկեցան, անձինք տղայոց մեծամեծս հեծեծեցին. և նա այնմ այցելութիւն ընդէ՞ր ո՛չ առնիցէ*:¹³ Յերկրի էին նորա՝ և ո՛չ ծանեան. զճանապարհս արդարութեան ո՛չ գիտացին, և ընդ շաւիղս նորա ո՛չ գնացին: ¹⁴Ծանուցեալ զգործս նոցա մատնեաց զնոսա 'ի խաւար. և զցա՛յգ եղիցին իբրև զգողս*:¹⁵ Եւ աչք շնացելոյն պահեսցեն զխաւար. # և ասիցէ թէ ո՛չ զականիցէ զիս ակն. և քօղ արկ զերեսօք իւրովք*:¹⁶ Փորեաց ընդ մութ գտուն իւր. # 'ի տուէ կնքեցին զանձինս, և ո՛չ ծանեան զլոյս: ¹⁷# Եւ եթէ միանգամայն առաւօտ նոցա 'ի ստուերս մահու է, # և եթէ 'ի միտ առնուցու զխռովութիւն ստուերաց մահու*.¹⁸ Թեթևագոյն է 'ի վերայ ջուրցն երեսաց: # Կործանեսցի մասն նոցա 'ի վերայ երկրի. երևեսցի տունկ նոցա 'ի վերայ ցամաք երկրի: ¹⁹Չի զանթանոցիկ որբոյն յափշտակեցին. ընդդէմ յիշտակեցան նմա մեղք: Իբրև զմառախուղ ցօղոյ եղև անյայտ*.²⁰ Կատուսցի նմա որ ինչ արարն: Խորտակեսցի ամենայն անիրաւ հանգոյն փայտի անբժշկականի*:²¹ Չի ամլոյն բարի ո՛չ արար, և ամուրւոյն ո՛չ ողորմեցաւ.²² Արտմտութեամբ կործանեաց զտկարս: Եւ թէպէտ և յարիցէ, մի՛ հաւատասցէ կենաց իւրոց: ²³Յիւանդացեալ՝ և մի՛ ակնկալցի ողջանալոյ, այլ անկցի ախտիւ. զի զբազումս չարչարեաց բարձրութիւն նորա: ²⁴Թարշամեսցի՛ իբրև զբանջար 'ի տօթի. կամ իբրև զհասկ ինքնին անկեալ՝ 'ի ցօղոյ: ²⁵Ապա թէ իցէ ոք որ

* Այլք. Մոռացան ամբարհաւաճք:

* Ոմանք. Չգործս իւրեանց:

* Ոմանք. Արկին զինքեանս ընդ վի՛:

* Ոմանք. Եւ զակածն տառապե՛:

* Ոմանք. Ննջեցուցին տարապար՛:

* Ոմանք. Մեծամեծս հեծեծին:

* Ոմանք. Եղիցի իբրև գող:

* Ոմանք. Եւ աչք շնացելոցն պարհեսցեն զխաւար, եթէ ո՛չ զականեսցէ զիս:

* Ոմանք. Եւ միանգամայն առաւօտ նորա ստուեր մահու է, եթէ 'ի միտ առնու զխռո՛:

* Ոմանք վրիպակաւ գրեն. Չի զանդայնոցիկ զորբոյն: Ոսկան. Ընդդէմ յափշտակեցան նմա մեղք:

* Ոսկան. Նմա զոր ինչ արարն:

* Ոմանք. Անկեալ՝ 'ի ցօղոյ:

ասիցէ գինէն սո՛ւտ խօսել, դիցէ՛ զբանս իմ յոչինչ:

25

Գլուխ ԻԵ

¹Կրկնեալ անդրէն Բաղդատայ Սաւքեցոյ ասէ.

²Իսկ արդ առա՞կ ինչ իցէ ա՛հն առ ՚ի Նմանէ, որ առնէ զամենայն ինչ ՚ի բարձունս՝: ³Մի՛ որ կարծեսցէ թէ գուցէ յապաղումն հինից նորա. յո՞յր վերայ ո՛չ եկեսցէ դարանակալութիւն առ ՚ի նմանէ՝: ⁴Զիա՞րդ լինիցի մարդ արդար առաջի Տեառն. կամ ո՞վ սրբեսցէ զանձն իւր ՚ի կանանցածնաց՝: ⁵Զի եթէ լուսնի՛ հրամայեսցէ, և ո՛չ ծագէ. և աստեղք ո՛չ են սուրբ առաջի նորա. ⁶թո՛ղ թէ մարդ ե՛րր, և որդի մարդոյ որդն:

26

Գլուխ ԻԶ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ ասէ.

Թ՛Յո՞ մօտիցիս, կամ ո՞ւմ օգնական լինելոց իցես: Ո՞չ ապաքէն ա՛յնն որոյ բազում է զօրութիւն, և որոյ հզօր է բազուկ իւր: ³Ընդ ո՞ւմ խորհրդակից լինիցիս. ո՛չ ընդ այնն որոյ ամենայն իմաստութիւն է՝: ⁴Զո՞յր զիեստ երթիցես, եթէ ո՛չ որոյ մեծ է զօրութիւն. ո՞ւմ պատմեցեր բան. և ո՞յր շունչ՝ ել ՚ի քէն: ⁵Միթէ սկա՛յք ծնանիցին ՚ի ներքուստ ջրոյ, և ՚ի դրացեաց նորա: ⁶Մերկ են դժոխք առաջի նորա՝ և չի՛ք զգեստ կորստեան: Չգեաց զհիւսւսի զոչընչիւ. ⁷կախեաց զերկիր ՚ի վերայ ոչնչի: ⁸# Ծրարէ զջուրս յամպս իւր, և ո՛չ պատառեցաւ մէ՛զ ՚ի ներքոյ նորա՝: ⁹# Որ ունի զերեսս աթոռոյ, թռուցանէ՛ նովաւ զմէ՛զ իւր՝: ¹⁰# Յրաման պատեաց զերեսօք ջրոյ՝ մինչ ՚ի վախճան լուսոյ ընդ խաւարի: ¹¹# Սիւնք երկնից թռեան և զարհուրեցան ՚ի սաստէ նորա: ¹²Զօրութեամբ հանդարտեցոյց զծով. իմաստութեամբ նորա տարածեալ է համատարածն: ¹³Աղխ երկնից սարսեցին ՚ի նմանէ. հրամանաւ իւրով սպան զվիշապն ապստամբ՝: ¹⁴Ահա ա՛յս է մասն ճանապարհի նորա: Եւ տակաւին զշիթս բանից նորա լուիցո՛ւք նովաւ. զզօրութիւն որոտման նորա ո՞ գիտէ՛ յորժամ առնիցէ:

27

Գլուխ ԻԵ

* *Բազումք.* Իսկ առա՞կ ինչ իցէ:

* *Ոմանք.* Եթէ գուցէ... հինից:

* *Ոմանք.* Արդար մարդ... կամ ո՛ սրբեսցէ զանձն:

* *Ոմանք.* Որոյ ամենայնի իմաստութիւն է:

* *Ոմանք.* Զջուր յամպս իւր:

* *Ոմանք.* Թռուցանէ զնովաւ:

* *Բազումք.* Աղխք երկնից սար՞:

1Պարծեալ յաւելեալ Յոբայ յառակի իւրում ասէ.

Ժ ²Կենդանի է Տէր որ այսպէս դատեցաւ զիս. և Ամենակալն որ դառնացոյց զանձն իմ: ³Եթէ տակաւին իցէ յիս շունչ իմ. և հոգի աստուածեղէն շուրջ զինն յռնգունս. ⁴ո՛չ խօսեսցին շրթունք իմ անօրէնութիւն, և ո՛չ անձն իմ խորհեսցի անիրաւութիւն: ⁵Մի՛ լիցի ինձ ասել զձեզ արդարս մինչև մեռանիցիմ. զի ո՛չ փոխեսցից զանմեղութիւն իմ*: ⁶Արդարութեան անսացեալ և ո՛չ մեկնեցայց. զի ո՛չ գիտեմ զանձին գործեալ զանպատեհս*: ⁷Սակայն թէն էին թշնամիք իմ իբրև զկործանումն անպարշտաց, և յարուցեալքն ՚ի վերայ իմ իբրև զկորուստ անօրինաց: ⁸Եւ զի՞նչ է յոյս անպարշտի զի յեցեալ կայցէ. վստահացեալ ՚ի Տէր թէ ապրիցէ*: ⁹Կամ թէ խնդրուածոց նորա լուիցէ Տէր: Եթէ ՚ի հասանել ՚ի վերայ նորա տագնապի*, ¹⁰ո՛չ ունիցի համարձակութիւն առաջի նորա. կամ ՚ի կարդալ նորա առ նա, լուիցէ՞ նմա*: ¹¹Այլ պատմեցի՞ց ձեզ զինչ է ՚ի ձեռին Տեառն, և որ իցէ՛ յԱմենակալին, ո՛չ ստեցից*: ¹²Ահաւասիկ ամենեքին իսկ գիտէք. զի սնոտիս զսնոտուվք պատէք*: ¹³Այս մասն է մարդոյ անպարշտի ՚ի Տեառնէ. ստացուած հզօրաց եկեսցէ ՚ի վերայ նորա յԱմենակալէն*: ¹⁴Ձի եթէ բազում ծնանիցին նմա որդիք, ՚ի սպանումն եղիցին, և եթէ յերիտասարդութիւն հասցեն՝ մուրացիկ շրջեսցին*: ¹⁵Եւ որ զնովան իցեն մահուանք վախճանեսցին. այրեաց նոցա մի՛ ոք ողորմեսցի: ¹⁶Եւ եթէ ժողովեսցէ իբրև զհող զարծաթ, և հանգոյն կաւոյ պատրաստեսցէ զոսկի, ¹⁷զայն ամենայն արդարք ստասցին, և զինչս նորա ճշմարիտք կալցին: ¹⁸Եղև տուն նորա իբրև զցեց, և իբրև զսարդիոստայն*: ¹⁹# Մեծատուն ննջեաց, և ո՛չ ևս յաւելցէ յառնել. զաչս իւր երաց՝ և ո՛չ ևս իցէ: ²⁰# Պատահեսցին նմա իբրև զջուր ցաւք. գիշերի ծածկեաց զնա մութ*: ²¹# Առցէ՛ զնա խորշակ և զնայցէ. ²²և հոսեսցէ զնա ՚ի տեղւոջէ իւրմէ. ²³և ընկեսցէ զնա՝ և մի՛ խնայեսցէ. ՚ի ձեռանէ նորա փախստիւ փախիցէ: # Ծափ զծափի՛ հարցէ ՚ի վերայ նորա, # և քարշեսցէ՛ զնա ՚ի տեղւոջէ իւրմէ:

28

Գլուխ ԻԸ

¹Ձի է՛ տեղի արծաթոյ՝ ուստի լինի, և տեղի ոսկւոյ ուստի կղկղի: ²Երկաթ ՚ի հողոյ լինի, և պղինձ հանգոյն քարի տաշի: ³# Կարգ եղ խաւարի. և զամենայն վախճան ինքն ճշմարտէ, զքար և զխաւար՝ և զստուերս մահու. ⁴զխրամ հեղեղատի ՚ի փոշւոյ: # Եւ որ մոռանան զճանապարհս արդարութեան՝ տկարասցին ՚ի մարդկանէ: ⁵# Երկիր՝ ՚ի նմանէ՛ ելցէ հաց, և ՚ի ներքոյ նորա իբրև

* Ոմանք. Մի՛ լինիցի ինձ:

* Ոսկան. Չանձին իմ գործեալ:

* Ոմանք. ՚ի Տէր, թերևս ապրիցէ:

* Ոմանք. Լսիցէ Տէր:

* Յօրինակին պակասէր. ՚ի կարդալ նորա առ նա, լուիցէ՞:

* Ոսկան. Եւ որ իցէ Ամենակալին:

* Ոմանք. Ահաւասիկ ամենեքին... զի սնոտի սնոտուվք պա՛:

* Ոմանք. Եկեսցէ ՚ի վերայ նոցա:

* Ոմանք. Յերիտասարդութիւն հասանիցեն:

* Ոմանք. Եւ եղև տուն նորա իբրև ցեց:

* Բազումք. Պատահեսցին նմա:

զիւր շրջեցաւ*։ ⁶# Տեղի շափիղ'այի քարինք նորա՝ և հող նորա ոսկի*։ ⁷Շաւիղ է գոր ո՛չ ծանեալ թռչուն, և ո՛չ դիտեաց զնա ա՛կն անգեղ։ ⁸Եւ ո՛չ կոխեցին զնա որդիք անբարտաւանից. ո՛չ անց ՚ի նա առնծ։ ⁹Յապառաժն ձգեաց զձեռն իւր. տապալեաց զլերինս ՚ի հիմանէ։ ¹⁰Ձայոյտ գետոց պատառեաց. զամենայն պատուականս ետես ակն իմ*։ ¹¹Ձխորս գետոց յայտնեաց. և եցոյց զգորութիւն իւր ՚ի լոյս*։ ¹²Իսկ իմաստութիւն ուստի՞ գտաւ, կամ զի՞նչ տեղի իցէ հանճարոյ։ ¹³Ո՛չ գիտէ մարդ զճանապարհս նորա, և ո՛չ գտաւ ՚ի մէջ մարդկան։ ¹⁴# Անդունդք ասացին թէ չէ՛ առ իս, և ծով ասաց թէ չէ՛ ընդ ինն։ ¹⁵# Ո՛չ տացի գրաւական ընդ նորա, և ո՛չ կշռեսցի արծաթ ընդ գնոց նորա*։ ¹⁶# Եւ ո՛չ բարձցի ընդ ոսկւոյն Սովփերայ. ընդ եղնգանն պատուականի՝ և ընդ շափիղ'այի։ ¹⁷# Ո՛չ զուգեսցի ընդ նմա ոսկի և ապակի. և ՚ի գինս նորա անօթք ոսկեղէնք։ ¹⁸Բարձրութիւնք և խորութիւնք ո՛չ յիշեսցին. # և ձգեաց զիմաստութիւն քան զներքսագոյնս*։ ¹⁹Ո՛չ հաւասարեսցէ նմա տպագիտնն Եթովպացոց. ընդ ոսկւոյ սրբոյ ո՛չ բարձցի*։ ²⁰# Իսկ իմաստութիւն ուստի՞ գտաւ, և զի՞նչ իցէ տեղի հանճարոյ։ ²¹Ղօղեալ է ՚ի մարդկանէ, և ՚ի թռչնոց երկնից ծածկեցաւ։ ²²Կորուստ և մահ ասացին. Լուսնք զփառաւորութենէ նորա։ ²³Եւ Տէր դիւրաւ ընծայեցոյց զճանապարհս նորա*։ ²⁴Քանզի ինքն գիտէ զտեղի նորա, և ինքն տեսանէ զամենայն առ ՚ի ներքոյ երկնից։ Քանզի ինքն գիտէ զամենայն* ²⁵զոր արար յերկրի, զկշիռ հողմոյ, և զչափ ջրոց զոր արար։ ²⁶Ինքն ետես և համարեցաւ. և զճանապարհ նորա արձակմամբ բարբառոյ*։ ²⁷Յայնժամ ետես զնա՝ և պատմեաց զնմանէ։ Պատրաստեալ քննեաց, ²⁸և ասէ՛ ցմարդ. Ահա աստուածապաշտութիւն է իմաստութիւն, և մեկնել ՚ի չարեաց է հանճար։

29

Գլուխ ԻԹ

¹Պարծեալ յաւելեալ Յորայ յառակի իւրում ասէ*.

ԺԱ ²Ո՛ւ առնէր զիս ըստ ամսոց աւուրցն առաջնոց, յորս Աստուած պահէր զիս։ ³Յորժամ լուսաւոր էր ճրագ նորա ՚ի վերայ գլխոյ իմոյ։ Յորժամ լուսով նորա զնայի ՚ի խաւարի։ ⁴Յորժամ կայի զուարճացեալ ՚ի ճանապարհի։ Յորժամ Տէր այցելութիւն առնէր տան իմում*։ ⁵Յորժամ զգածեալն էի մեծութեամբ, և շուրջ

* *Ոմանք.* Երկիր, և ՚ի նմանէ ելցէ։

* *Ոմանք.* Տեղի է. շափուղա քարինք նորա։

* *Ոմանք.* Ձայոյտս գետոց պա՛... զամենայն զպատուական։ *՚ի լուս՝. ՚ի վերայ՝* ակն իմ. *նշանակի՝* Ակ. *այսինքն՝ Ակիւղաս.* ակն նորա։

* *Ոսկան.* Ձգորութիւն իւր լոյս։

* *Ոմանք.* Ընդ գնոյ նորա։

* *Բազումք.* Քան զներքնագոյնս։

* *Ոսկան.* Ընդ ոսկւոյ սօփերայ ո՛չ բարձցի։

* *Ոմանք.* Ձճանապարհ նորա։

* *Ոմանք.* Ձամենայն զառ ՚ի ներքոյ։

* *Ոմանք.* Բարբառոց։

* *Ոմանք.* Յառակս իւր, ասէ։

* *Ոմանք.* Յորժամ կայր զուարճացեալ ՚ի ճանապարհս։

զինն ծառայք*։ ⁶Յորժամ թանային ճանապարհք իմ կոզուվ, և ոռոգանէին լերինք իմ կաթամբ։ ⁷Յորժամ ելանէի ընդ առաւօտս 'ի քաղաքն, և արկանէր 'ի հրապարակս աթռ իմ։ ⁸Տեսանէին զիս երիտասարդք՝ և թաքչէին. և ծերք՝ և յոտն կային*։ ⁹Ճոխք դադարէին 'ի խօսելոյ, և դնէին մատունս 'ի վերայ բերանոյ իւրեանց*։ ¹⁰Ոյք լսէին զինէն՝ երանէին ինձ. և լեզուք նոցա 'ի քիմս իւրեանց կցեցան։ ¹¹Ձի ունկն որ լսէր՝ երանի՛ տայր ինձ. և ակն որ տեսանէր՝ խորշէր յինէն։ ¹²Ձի փրկեցի զաղքատն 'ի ձեռանէ հզօրին. և որբոյ որոյ ո՛չ էր օգնական՝ օգնեցի*։ ¹³Օրհնութիւն կրօնսելոյն 'ի վերայ իմ եկեցցէ. և բերան այրւոյն զիս օրհնեաց։ ¹⁴Ձարդարութիւն զգեցեալ էի, և արկեալ զիրաւունս հանգոյն կրկնոցի*։ ¹⁵Ա՛չք էի կուրաց, և ո՛տք կաղաց. ¹⁶հա՛յր էի ես տկարաց։ Դատաստան զոր ո՛չ զհտէի քննէի*։ ¹⁷Խորտակէի զկզակս անիրաւաց, և 'ի միջոյ ժանեաց նոցա կորզէի զյափշտակութիւն։ ¹⁸Ասէի. Թերևս հասա՛կ իմ ծերացցի, և իբրև զծառ արմաւոյ բազդն ժամանակս կեցից*։ ¹⁹Արմատ ընդարձակեալ 'ի վերայ ջրոց, և ցօղ հանգիցէ 'ի վերայ հնձոց իմոց*։ ²⁰Կարծիքն իմ ընդունայն եղեն ինձ. # զործիք իմ և աղեղն իմ 'ի ձեռին նորա զնաց*։ ²¹Յինէն լուեալ անսային, և կարկէին 'ի խորհրդեան իմում. ²²'ի բանս իմ ո՛չ յաւելուին։ # Խնդալից լինէին յորժամ խօսէի ընդ նոսա։ ²³# Իբրև զերկիր ծարաւի որ սպասիցէ անձրևի՝ և նոքա իմոց խօսից*։ ²⁴Եթէ ծիծաղէի ընդ նոսա, ո՛չ հաւատային. # և լոյս երեսաց իմոց ո՛չ նուաղէր։ ²⁵Ընտրէի՛ զճանապարհս նոցա, և նստէի իշխան. և բնակէի իբրև զթագաւոր 'ի մէջ զօրականաց։ # Ձոր օրինակ գրգանօքն մխիթարէի*։

30

Գլուխ L

¹Արդ ծիծաղին զինն յետինք։ Արդ խրատեն զիս 'ի միասին, զորոց պախարակէի զհարս նոցա. զոր ո՛չ համարէի լինել հաւասար շանց արօտականաց իմոց*։ ²Նաև զօրութիւն ձեռաց նոցա ընդէ՞ր էր ինձ։ # Ի վերայ նոցա կորեաւ վախճան*։ ³# 'ի կարօտութեան և 'ի սովի անձնունդ։ # Որ փախչէին երկէ յանջրդւոյ, յանձկութենէ և 'ի թշուառութենէ*։ ⁴# Որք պատէին խարշափուն բանջարով. որոց բանջարն իսկ էր կերակուր։ # Անարգք և արհամարհեալք կարօտեալք յամենայն բարութենէ*, ⁵որք և զարմատս փայտից ծամէին 'ի սաստիկ սովոյ։ Յարեան 'ի վերայ իմ գողք. ⁶որոց տունք իւրեանց

* *Ոմանք.* Ձգործեալն էի 'ի մեծութիւնս։

* *Ոսկան.* Ծերք յոտն կային։

* *Ոմանք.* Ճոխք՝ և դադարէին... 'ի վերայ բերանոց իւր։

* *Ոմանք.* Ձի զարդարութիւն զգեցեալ էի։

* *Ոմանք.* Իբրև զծառ արմաւու. *կամ*՝ արմաւենի։

* *Ոմանք.* 'ի վերայ ջրոյ... 'ի վերայ հնձոց իմոց։

* *Ոմանք.* Ընդունայն են ինձ, և աղեղն իմ 'ի ձեռին նորա զնայ։

* *Օրհնակ մի.* Այնպէս և նոքա իմոց խօսից։

* *Ոմանք.* Ձթագաւոր 'ի մէջ նոցա։

* *Ոմանք.* Ձորս ո՛չ համա՞... հաւասար խաշանց արօտա՞։

* *Այլք.* Նոցա ընդէ՞ր էր ինձ։

* *Ոմանք.* 'ի կարօտութիւն և 'ի սովի։ *Ուր Ոսկան.* Եւ 'ի սով անձնունդ։

* *Ոմանք.* Որոց բանջար իսկ էր։ *Յօրհնակին պակասէր.* Եւ արհամարհեալք *կարօտեալք* յամենայն բա՞։ *Ոսկան.* Ամենայն բարութեան։

էին ծակք վիմաց, ՚ի մէջ արծագանգաց գոչեսցեն*.⁷ որք ընդ խռուովք վայրենեօք բնակեալ էին: ⁸Որդիք անգգամաց և անուանարկաց, և շիջելափառք յերկրէ*: ⁹Արդ քնար են ես նոցա, և զիս ունին բամբասանս*: ¹⁰Գարշեցան յինէն մեկնեալք ՚ի հեռաստանէ. և յերեսաց իմոց թուք ո՛չ խնայէին*: ¹¹# Զի բացեալ զկապարճս իւր խոցոտեաց՝ զիս, և սանձս երեսաց իմ առաքեաց*: ¹²Յարեան ՚ի վերայ աջոյ շառաւելի. զոտս իւր ձգեաց՝ և ճանապարհ արար ՚ի վերայ իմ: ¹³# Ընդ շաւիղս կորստեան նոցա շփեցան շաւիղք իմ: Մերկացոյց զպատմութեան իմ. նետիւք իւրովք խոցոտեաց զիս*. ¹⁴մատուցեալ որպէս և կամի: Ցաւօք վարակեալ եմ*. ¹⁵դարձեալ եմ յիս ցաւք: Գնաց յինէն յոյս իբրև զհողմ, և իբրև զմեզ փրկութիւն իմ: ¹⁶Եւ արդ զինն՝ զեղծցի անձն իմ: # Ունին զիս աւուրք ցաւոց. ¹⁷զիջերի ոսկերք իմ խարշեցան, և ջիւք իմ լուծեալ եմ: ¹⁸Բազում զօրութեամբ ձեռն արկ զպատմութեանս իմով, և իբրև զժապաւէն պատմութեանի իմոյ շուրջ կալաւ զիս: ¹⁹Յամարի զիս հանգոյն կաւոյ. ՚ի հող և ՚ի մոխիր է բաժին իմ: ²⁰# Աղաղակեցի առ քեզ՝ և ո՛չ լուիցես ինձ. կացին և հայեցան յիս*: ²¹# Պատահեցար ինձ անողորմ, հզօր ձեռամբ հարեր զիս: ²²# Կարգեցեր զիս ՚ի ցաւս, և ընկեցեր զիս ՚ի փրկութենէ: ²³Գիտեմ զի մահ սատակեսցէ զիս. զի բնակութիւն ամենայն մահկանացուի երկիր է: ²⁴Երանի՛ թէ կարէի զանձն իմ վարժել, կամ աղաչել զայլ՝ և առնէր ինձ զայն: ²⁵Եւ ես ՚ի վերայ ամենայն տկարի լայի, և հեծեծէի յորժամ տեսանէի զայր ՚ի վիշտս, ²⁶և ունէի ՚ի բարութեան. և ահաւասիկ պատահեցին ինձ առաւել աւուրք չարեաց*: ²⁷Որովայն իմ եռայ, և ո՛չ դարարեսցէ. ժամանեցին ինձ աւուրք աղքատութեան*: ²⁸Նեղեալ շրջեցայց առանց բերանակապի. կացի՛ ՚ի մէջ եկեղեցւոյ աղաղակ բարձեալ: ²⁹Եղբայր եղէ համբարուաց, և ընկեր ջայլեմանց: ³⁰Մորթ իմ սևացաւ սաստկագոյն, և ոսկերք իմ ՚ի տօթոյ: ³¹Դարձաւ ՚ի սուգ քնար իմ, և սիրտ իմ և երգ իմ ՚ի լալիւն*:

31

Գլուխ ԼԱ

¹# Ուխտ եղի ընդ աչս իմ և ո՛չ հայեցաւ ՚ի կոյս*. ²և բաժանեաց Աստուած ՚ի վերուստ, և ժառանգութիւն Բաւականին ՚ի բարձանց: ³# Ոչ ապաքէն կորո՛ւստ անհրաւին, # և տարագրութիւն այնոցիկ ոյք գործեն զանօրէնութիւն: ⁴# Ոչ ապաքէն Ինքն տեսցէ զճանապարհս իմ. և ամենայն գնացք իմ թուեսցին: ⁵Եթէ

* *Ոմանք.* ՚ի մէջ արծագանգաց:
 * *Ոմանք.* Եւ անուն անարգաց, և շիջե՛ն: *Ուր երկու օրինակք համաձայնք իրերաց.* Եւ անուն արկարկաց և շիջեալ փառք յերկրէ:
 * *Ոսկան.* Ունին ՚ի բամբա՛ս:
 * *Ոմանք.* Մեկնեալք ՚ի հեռաստան:
 * *Այլք.* Երեսաց իմոց:
 * *Ոմանք.* Շփոթեցան շաւիղք իմ:
 * *Ոմանք.* Մատուցեալ յիս որպէս և կա՛մ:
 * *Բազումք.* Եւ ո՛չ լիիցես ինձ: *Ոսկան.* Կացի, և ո՛չ հայեցար յիս:
 * *Ոմանք.* Եւ ունէի ՚ի բարութիւն:
 * *Ոմանք.* Որովայն իմ եռաց: *Ուր Ոսկան.* մեռաւ. և ոչ:
 * *Ոմանք.* ՚ի սուգ քնար իմ. սիրտ իմ:
 * *Ոմանք.* Եւ ո՛չ հայեցայց ՚ի կոյս:

գնացեալ իցեն ընդ այսպանօղս. եթէ վաղվաղեաց ոտն իմ ՚ի նենգութիւն: ⁶Ձի կշռեալ են ՚ի կշիռս արդարութեան, և գիտէ Տէր զանմեղութիւն իմ: ⁷Եթէ թիրեցաւ ոտն իմ ՚ի ճանապարհէ. եթէ չոգաւ սիրտ իմ զկնի ական իմոյ. եթէ հպեցայ ձեռօք իմովք ՚ի կաշառս: ⁸Ապա ես սերմանեցից և այլք կերիցեն. և անարմատ եղէց յերկրի: ⁹Եթէ գնաց սիրտ իմ զհետ կնոջ անն այլոյ. եթէ դարանակալ եղէ առ դրունս տան նորա: ¹⁰Ապա լիցի հաճոյ և իմ կինն այլուն, և մանկունք իմ տառապեցին: ¹¹Ձի սրտմտութիւն անժոյժ բարկութեան է պղծել զկին առն: ¹²Յո՛ւր վառեալ է յամենայն անդամս նորա. զի յոր կոյս հասցէ յարմատոյ խլեցէ: ¹³Եթէ խոտեցի՛ երբէք զիրաւունս ծառայի կամ աղախնոյ մատիցելոյ առ իս յատեան*. ¹⁴և զի՞նչ զործեցից եթէ հարցուփորձ արասցէ ինձ Տէր. և եթէ այցելութիւն, զի՞նչ պատասխանի արարից*¹⁵ Ոչ ապաքէն որպէս եղէ յարգանդի՝ և նոքա եղեն, ՚ի նմին որովայնի եղաք*: ¹⁶Իսկ տկարք որոց պէտք ինչ էին, ո՞չ արդէք երբէք վճարեցի: Ձակն այլոյ ո՛չ կողկողեցուցի: ¹⁷# Եթէ կերա՞յ արդէք զպատառն իմ միայն՝ և որբոյն ո՛չ կարկառեցի: ¹⁸# Ձի ՚ի մանկութենէ իմմէ սնուցի իբրև զհայր, և յարգանդէ մօր իմոյ առաջնորդեցի: ¹⁹Եթէ արարի՞ անտես զմերկն կորուսեալ՝ և ո՛չ զգեցուցի: ²⁰# Եթէ ո՛չ օրհնեցին զիս տկարք. և ՚ի կտրոց խաշանց իմոց ջեռան թիկունք նոցա: ²¹Եթէ վերացուցի ձեռն ՚ի վերայ որբոյն՝ յուսացեալ թէ բազում է իմ օգնականութիւն*. ²²ապա թափեցի յանրակէ ուս իմ, և բազուկ իմ յարմկանէ իմմէ խորտակեցի: ²³# Ձի ա՛հ Տեառն կալաւ զիս, և առաջի նորա ո՛չ հանդարտեցի*: ²⁴# Եթէ կարգեցի զոսկի ՚ի հող իմ. եթէ յականս պատուականս յուսացայ: ²⁵Եթէ ուրախ եղէ ՚ի բազում մեծութեան եկելոց ինձ. եթէ ՚ի վերայ անթուոց եղի՛ զձեռն իմ*: ²⁶Կամ թէ ո՞չ տեսանիցենք զարեգակն լուսաւորիչ նուաղեալ, և զլուսին մաշեալ*. ²⁷և ո՛չ ՚ի նոցանէ: Եթէ խաբեցաւ զաղտ սիրտ իմ. եթէ ձեռն եղեալ ՚ի վերայ բերանոյ իմոյ համբուրեցի*: ²⁸Ապա այն ՚ի մեծ անօրէնութիւն համարեցի ինձ, զի ստեցի առաջի Տեառն բարձրելոյ. ՚ի նմանէ՛ է զօրութիւն և կար, իմաստութիւն և հանճար*: ²⁹Եթէ ոտնհար եղէ ՚ի վերայ գլորման թշնամոյ իմոյ, և ասացի ՚ի սրտի իմուն թէ՛ վա՛շ. ³⁰ապա լուիցէ՛ ունկն իմ զանէծս իմ. զգուցեցայց ապա և ես ՚ի ժողովրդենէ իմմէ դարովեալ: ³¹Եթէ ասացին զինէն բազում անգամ աղախնայք իմ. Ո՛ւ տայր մեզ յագել ՚ի մարմնոց նորա. զի յոյժ քաղցր էի նոցա*: ³²Արտաքոյ ո՛չ ազանէր օտար, զի դուռն իմ բա՛ց էր ամենայն եկելոց*: ³³Եթէ թաքուցի զմեղս իմ ականայ՝ մեղուցեալ. ³⁴զի ո՛չ ամաչէի ՚ի բազմակոյտ ամբոխէ, առ ՚ի չպատմելոյ առաջի նոցա: Եթէ արձակեցի՛ երբէք զտկարն՝

* Այլք. Յարմատոց խլեցէ:

* Ոմանք. Եւ եթէ խոտեցի... մատուցելոյ առ իս յատեան:

* Ոմանք. Եւ եթէ զինչ պատասխանի արարից:

* Ոսկան. Որպէս ես եղէ յարգան՝:

* Ոմանք. Բազում է իմ օգնութիւն:

* Ոմանք. Ոչ հանդարտեցից:

* Ոմանք. Ի բազում մեծութիւն եկելոց: *Յօրինակին*. Եթէ ՚ի վերայ անաւթոց եղի զձեռն:

* Ոմանք. Ոչ տեսանիցեն զարեգակն:

* Ոմանք. Եւ եթէ խօսեցաւ զաղտ:

* Ոմանք. Ապա և այն ՚ի մեծ ա՛... ասէ ցիս առաջի Տեառն բարձ՝: *Ի բազումս պակասի*. Բարձրելոյ. *՚ի նմանէ՛ է զօրութիւն և կար, իմաստութիւն և հանճար*:

* Ոմանք. Ի մարմնոյ նորա:

* Ոմանք. Ամենայն եկելոյ:

ունայն գոգով ելանել 'ի դրաց իմոց*։ ³⁵Ո՛ւ տացէ ինձ լսել եթէ ձեռն Տեառն չէ՛ր գարհուրեցուցեալ։ Կամ թէ մուրհակ՝ զոր ունէի զումեքէ՛, ³⁶իբրև գպսակ 'ի վերայ ուսոց եղեալ ընթեռնուի. ³⁷և ո՞չ պատառէի զայն և անդրէն դարձուցանէի, ո՛չ ինչ առեալ 'ի պարտականէն։ ³⁸Եթէ հեծեաց երբէք երկիր վասն իմ. եթէ ակօսք նորա լացի՞ն առ հասարակ*։ ³⁹և եթէ զգօրութիւն նորա կերա՞յ միայն առանց գնոց։ Եթէ զանձն տեառն երկրին զայրացուցեալ տրտմեցուցի՞*։ ⁴⁰ապա փոխանակ ցորենոյ բուսցի եղի՛ճ, և փոխանակ գարւոյ՝ մորենի՛։

32

Գլուխ ԼԲ

¹Եւ դադարեաց Յոր 'ի խօսից։ Լռեցին և երեքին բարեկամք նորա այնուհետև 'ի խօսելոյ ընդդէմ Յոբայ. քանզի էր Յոր՝ արդար՝ առաջի նոցա։

²Եւ բարկացաւ Եղիոս Բարաքիէլի Բուզացի, յազգականութենէ Արամայ՝ աշխարհին Աւստացոց, բարկացաւ Յոբայ յոյժ. զի երևեցոյց զանձն արդար առաջի Տեառն*։ ³Եւ 'ի վերայ երեցուն բարեկամացն բարկացաւ յոյժ, զի ո՛չ կարացին տալ պատասխանի ընդդէմ Յոբայ. և եղեալ զնա լինել՝ ամպարիշտ*։ ⁴Եւ Եղիոս հանդարտեաց 'ի տալոյ պատասխանի Յոբայ. զի ծերագոյն քան զնա էին աւուրբք։ ⁵# Եւ ետես Եղիոս եթէ # ո՛չ գոյ պատասխանի 'ի բերան երեցունց արանցն, և սրտմտեցաւ բարկութիւն նորա։ **⁶Կրկնեալ անդրէն Եղիոսայ Բարաքիէլի Բուզացոյ՝ ասէ՛.** Մանո՛ւկ եմ ես ժամանակաւ, և դուք էք ծերագոյնք. վասն որոյ լու՛ռ եղէ, երկուցեալ պատմել զանձին իմոյ զիմաստութիւն*։ ⁷Ասացի թէ բազմաժամանակեայք իցեն որ խօսիցին, և բազում ամօք գիտիցեն զիմաստութիւն*։ ⁸Եւ ո՛չ այնպէս. այլ ոգի՛ է մարդկան, և շունչ Ամենակալի՛ է որ ուսուցանէ։ ⁹Ո՛չ բազմաժամանակեայք են իմաստունք, և ո՛չ ծերք գիտեն զիրաւունս։ ¹⁰Վասն որոյ ասացի. Լուարու՛ք ինձ, և պատմեցից ձեզ զոր գիտեմ*։ ¹¹# Ունկնդիք բանից իմոց. Ասացից ձեզ լու՛ 'ի լու, մինչև քննիցէք զբանս*։ ¹²Թէ ձևք չափ իմանայցեմ։ # Եւ ահա չէ՛ր որ յանդիմանէր զՅոր, և տայր պատասխանի բանից նորա 'ի ձեմք*։ ¹³# Զի մի՛ ասիցէք. Գտա՛ք զիմաստութիւն 'ի Տէր յաւելեալք*։ ¹⁴և անձն միում համարձակեցէք խօսել բանս այսպիսիս*։

* Ոմանք. Առ 'ի չպատմել առաջի։

* Ոմանք. Եթէ ձեռնն Տեառն չէր։

* Ոմանք. Եւ եթէ ակօսք նորա։

* Ոմանք. Երկրին զայրացուցի՞. ապա։

* Ոմանք. Եւ բարկացեալ Եղիոս Բարաքիէլ։ *Յօրինակին.* Բարաքիէլի Բուզացի. *այլ 'ի լուս՝. նշանակի համաձայն այլոց* Բուզացի, *ըստ որում և մեք եղաք։*

* Ոմանք. Եւ 'ի վերայ երեցունց բա՛... և եղին լինել զնա ամպա՛։

* Ոմանք. Պատմել ձեզ զանձին։

* Ոմանք. Թէ բազում ժամանակեայք են որ խօսի՞։

* Ոմանք. Ասացի ձեզ լու՛... զոր գիտեմս։

* Ոմանք. Ունկնդիր լերուք բանից ի՞։

* Ոմանք. Եւ ձևք չափ իմանայցեմ... և ահա ո՛չ էր որ յանդի՞։

* Ոմանք. 'ի Տեառնէ յաւելեալք։

* Ոմանք. Համարձակիցէք խօսել բանս այնպիսիս։

¹⁵Ձարհուրեցան և ո՛չ ևս ետուն պատասխանի. հնացուցին յինքեանց զբանս*.
¹⁶հանդարտեցին և ո՛չ խօսեցան. զի կացին և ո՛չ ետուն պատասխանի:
¹⁷Կրկնեալ անդրէն եղիուսայ ասէ. Դարձեալ խօսեցայց* ¹⁸զի լի՛ եմ բանիւք.
 քանզի սատակէ՛ զիս ոգի որովայնի. ¹⁹և որովայն իմ իբրև զտիկ քաղցուոյ՝
 կապեալ՝ եռայ, կամ իբրև զփուքս դարբնաց ուռուցեալ*:
²⁰Խօսեցայց զի հանգեայց. բացեալ՝ զշրթունս իմ. ²¹և ՚ի մարդոյ ո՛չ ամաչեցից, և ՚ի մարդկանէ
 ո՛չ պատկառեցից: ²²Քանզի ո՛չ զիտեմ աչառել երեսաց. ապա թէ ոչ՝ և զի՛ս ցեց
 կերիցէ*:

33

Գլուխ ԼԳ

¹Բայց աղէ դու Յոր՝ լուր զբանս իմ, և ո՛ւնկն դիր խօսից իմոց*:
²Ահաւասիկ բացի զբերան իմ, և խօսեցաւ լեզու իմ: ³Սուրբ է սիրտ իմ բանիւք.
 իմաստութիւն շրթանց իմոց յստակ իմասցի*:
⁴Չոգի աստուածեղէն է որ արար զիս՝ և շունչ Ամենակալի է որ ուսուցանէ զիս: ⁵Եթէ կարօղ ես տուր ինձ առ այս
 պատասխանի. ապա թէ ոչ՝ հանդարտ լեր*.
⁶Կաց ընդ իս՝ և ես ընդ քեզ: ՚Ի կաւոյ կազմեալ ես և դու իբրև զիս, անդրստին կազմեալ եմք*:
⁷Արդ՝ մի՛ ահ իմ զարհուրեցուցէ զքեզ, և մի՛ ձեռն իմ ծանրասցի ՚ի վերայ քո:
⁸Սակայն խօսեցար յականջս իմ, և զբարբառ բանից քոց լուա՛յ, ⁹զի ասացեր թէ սուրբ եմ,
 և ո՛չ մեղայ. անարատ եմ զի ո՛չ անօրինեցի*:
¹⁰Սեղադրութիւն եգիտ զինէն, համարեցաւ զիս իբրև զհակառակորդ. ¹¹ե՛ղ ՚ի կոճեղ գոտն իմ. պահեաց զամենայն
 ճանապարհս իմ: ¹²Ձիա՞րդ ասես թէ արդար եմ, և ո՛չ լուաւ ինձ. զի յաւիտենական է որ ՚ի վերայ
 մարդկան է: ¹³Եւ ասես՝ թէ ընդէ՞ր տակաւին դատաստանի իմում ո՛չ լուաւ. ամենայն բանի*
¹⁴ի միում նուագի խօսեցի Տէր. և յերկրորդումն Երազով, ¹⁵կամ զբաղմամբ զիշերականաւ.
 յորժամ անկանիցին արհաւիրք անհնարինք ՚ի վերայ մարդկան՝
 նիրհմամբ յանկողնի*.
¹⁶յայնժամ յայտնին միտք մարդկան: Այնպիսի տեսլեամբ ահի զարհուրեցոյց զնոսա*.
¹⁷դարձուցանել զմարդ յանիրաւութենէ, և զմարմին նորա փրկեաց ՚ի կործանմանէ:
¹⁸Խնայեաց զանձն նորա ՚ի մահուանէ, չանկանել նմա ՚ի պատերազմի:
¹⁹Դարձեալ կշտամբեաց զնա Յիւանդութեամբ անկողնի. և զբազմակոյտ ոսկերաց
 նորա ընդարմացոյց: ²⁰Ամենայն ուտելի կերակրոց ո՛չ

* Ոմանք. Յնացուցին զինքեանս:
 * Ոմանք. եղիուսայ Բուզացույ ասէ:
 * Ոմանք. Իբրև զտիկ քաղցուի... զփուքս դարբնի ու՛:
 * Ոմանք. Աչառեալ երեսաց:
 * Ոմանք. Եւ ունկնդիր լեր խօսից:
 * Ոմանք. Յստակս իմասցի:
 * Ոմանք. Կարող ես, ապա տուր ինձ:
 * Բազումք. Կաց ըստ իս՝ և ես ըստ քեզ:
 * Ոսկան. Ոչ անօրինեցայ:
 * Ոմանք. Եթէ ընդէր դատաստանի: Ոմանք այսպէս ունին զկետադրութիւն բանիս. Ոչ լուաւ ամենայն բանի: (14) ՚Ի միում նուագի խօսիցի:
 * Ոմանք. Յորժամ արկանիցին արհա՛... նիրհմամբք յանկողնիս:
 * Ոմանք. Տեսլեամբք ահի զար՛:

կարասցէ ակն ունել. և անձն նորա ցանկասցի կերակրոց*, ²¹մինչև նեխեսցին մարմինք նորա, և ցուցցէ զոսկերս նորա սո՛սկ: ²²Մերձեցաւ ՚ի մահ անձն նորա, և կեանք նորա ՚ի դժոխս: ²³Եթէ իցեն հազար հրեշտակք մահաբերք, մի ՚ի նոցանէ զնա մի՛ խոցեսցէ. ²⁴Եթէ իմասցի սրտիւ իւրով դառնալ առ Տէր: Պատմեսցէ մարդ զվնաս իւր, և ցուցցէ զանմտութիւն իւր. պաշտպանեսցէ առ ՚ի չանկանելոյ նմա ՚ի մահ՝: ²⁵Նորոգեսցէ՛ զմարմին նորա իբրև զծեփ որմոյ, և ոսկերք նորա լցցին ուղղով: Փափկացուցէ զմարմին նորա իբրև զտղայոյ. հաստատեսցէ զնա երիտասարդացեալ ՚ի մեջ մարդկան: ²⁶Յաղաչել իւրում առ Տէր ընդունելի՛ եղիցի նմա. մտցէ լուրջ երեսօք դաւանութեան, հատուցէ մարդկան զարդարութիւն*:²⁷Ապա մեղադիր լիցի մարդ՝ ինքն ցինքն ասիցէ. թէ զորպիսիս վճարէի, և ո՛չ արժանի ըստ որոց մեղայն պատժեաց զիս*:²⁸# Փրկեաց զանձն իմ զի մի՛ մտցէ յապականութիւն, և կեանք իմ տեսցեն զլոյս:²⁹# Ահա զայս ամենայն գործէ Յօզոն. երիս ճանապարհս ընդ առն:³⁰Այլ փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ. # զի կեանք իմ ՚ի լոյս օրհնեսցեն զնա:³¹Ո՛ւնկնդիր Յոբ և լո՛ւր ինձ, կարկեաց և ե՛ս խօսեցայց:³²# Եթէ գուցէ՛ բան տո՛ւր ինձ պատասխանի. քանզի կամի՛մ թէ արդարասցիս*:³³# Ապա թէ ոչ՝ լո՛ւր ինձ դու, կարկեաց՝ և ուսուցից քեզ զիմաստութիւն:

34

Գլուխ ԼԴ

¹Կրկնեալ անդրէն եղիուսայ ասէ՛.

²# Լուարո՛ւք ինձ իմաստունք, ունկնդիր լերուք հանճարեղք*:³Զի ունկն զբանս քննէ, և կոկորդ զկերակո՛ւրս ճաշակէ:⁴# Ընտրեսցո՛ւք մեզ դատաստան. և գիտասցուք ՚ի միջի մերում թէ բարի՛ է:⁵Զի ասաց Յոբ թէ արդար եմ ես, և Տէր զընկէց զիրաւունս իմ՝, ⁶և ստեաց դատաստանի իմում. # բռնութեամբ է նետս իմ առանց անիրաւութեան:⁷Ո՛վ է իբրև զՅոբ՝ որ ըմպէ զարհամարհանս իբրև զջուր*:⁸Ո՛չ մեղուցեալ՝ և ո՛չ ամպարշտեալ, կամ հաղորդեալ ճանապարհի որոց գործեն զանօրէնութիւն, զնա՛լ ընդ ամպարիշտս:⁹Մի՛ ասիցես չի՛ք այցելութիւն ՚ի վերայ առն, և այցելութիւն նմա ՚ի Տեառնէ*:¹⁰Վասն որոյ հանճարեղք սրտիւք լուարո՛ւք ինձ: Մի՛ լիցի ինձ ամպարշտել առաջի Տեառն, և առաջի Ամենակալին աղմկել զիրաւունս:¹¹Այլ հատուցէ մարդոյ ըստ իւրաքանչիւր գործոց նոցա, և ՚ի ճանապարհի առն գտցէ զնա:¹²Համարիցիս զՏեառնէ անկա՞րգս ինչ առնել. կամ թէ Ամենակալն պղտորիցէ՞ զիրաւունս*:¹³Ո՛ արար զերկիր. ո՛ է որ արար

* Օրհնակ մի. Ուտելի կերակուր... կերակրոյ:

* Ոմանք. Պատմեսցէ մարդոյ զվն՛:

* Ոմանք. Դաւանութեամբ:

* Ոմանք. Ինքն յինքն ասացէ. թէ զորպիսիս վճարեցի: Օրհնակ մի. Եւ ո՛չ ըստ արժանի ընդ որոց պատժեաց զիս:

* Ոմանք յաւելուն. Տո՛ւր ինձ պատասխանի, խօսեաց՝ քանզի կամի՛մ:

* Ոմանք. Եւ ունկնդիր լերուք:

* Ոմանք. Եւ Տէր ընկէց զիրաւունս:

* Ոմանք. Ո՛վ իցէ իբրև զՅոբ:

* Ի բազումս պակասի. Զիք այցելութիւն ՚ի վերայ առն, և այցելութիւն նմա:

* Ոմանք. Համարեսցի զՏեառնէ:

զառ 'ի ներքոյս երկնից, և զամենայն որ 'ի միջոցի*: 14Եթէ կամեսցի պնդել և զշունչ առ ինքեան արգելուլ. 15վախճանեսցի ամենայն մարմին առ հասարակ, և ամենայն մարմին 'ի հող դարձցի ուստի և ստեղծաւ*: 16Ապա թէ ո՛չ խրատեսցիս, լո՛ւր զայս՝ ո՛րն կնդիր բարբառոյ բանից իմոց*: 17Եթէ դու ո՛չ համարիցիս զայն որ ատեայ զանհրաւութիւն, և կորուսանէ զչարիս. արդարք յաւիտեան կեան: Ամպարի՛շտ է* 18որ ասէ ցթագաւոր թէ անհրա՛ւ ես. ամպարշտագոյն քան զիշխանս*, 19որ ո՛չ պատկառեաց 'ի պատուական երեսաց, և ո՛չ գիտաց պատիւ դնել և մեծարել զերեսս նոցա*: 20Ընդունա՛յն լիցի նոցա աղաղակելն և աղաչել զայլս. զի վարեցան անօրէնութեամբ խոտորեցուցանել զտկարս*: 21Ձի ինքն է տեսող գործոց մարդկան. և ղօղեաց ինչ ո՛չ 'ի նմանէ՝ զոր գործեցին*: 22# Եւ չի՞ք տեղի թաքչելոյ այնոցիկ՝ որ գործեն զանօրէնութիւն. 23# զի ո՛չ ևս դիցէ 'ի վերայ առն. քանզի Տէր զամենեսեան տեսանէ: 24Որ հասանէ անքննականաց, փառաւորաց և հրաշակերտաց՝ որոց ո՛չ գոյ թիւ*: 25# Որ ճանաչէ զգործս նոցա, և դարձուցանէ 'ի գիշեր. և խոնարհեսցին*: 26Շիջո՛յց զամպարիշտս. մատնցո՛յցք եղեն առաջի թշնամեաց իւրեանց: 27# Ձի խոտորեցան յիրաւանց Աստուծոյ, և զիրաւունս նորա ո՛չ ծանեան*: 28# Ածել զնովաւ զաղաղակ տնանկի. և զբողոք աղքատաց լուիցէ*: 29Եւ ինքն տացէ լռութիւն, և ո՛ պատժեսցէ զնա. և ծածկեսցէ զերեսս՝ և ո՛ տեսանիցէ զնա. և ազգաց և մարդկան միանգամայն: 30Թագաւորեցուցանէ զայր կեղծաւոր՝ վասն խստութեան ժողովրդեան*: 31# Ձի որ ասէ ընդդէմ Զօրին՝ թէ առի՛ և գրաւեցի առանց քո*. 32Եթէ տեսեր՝ ցոյց ինձ. և եթէ անհրաւութիւն արարի, այլ ո՛չ յաւելից*: 33# Միթէ 'ի քէն ոք պահանջիցէ զայն, զի՛ մերժես. դու ընտրեսցեր՝ և ո՛չ ես. և եթէ գիտիցես ինչ՝ խօսեա՛ց*: 34Վասն որոյ հանճարեղք սրտիւք խօսեսցին զայս. և այլ իմաստուն լուաւ զայս*: 35Բայց Յօր՝ ո՛չ իմաստութեամբ խօսեցաւ, և բանք նորա ո՛չ են հանճարով: 36Բայց

* Ոմանք. Որ արար զերկիր, ո՛վ է... զառ 'ի ներքոյ երկ՛:

* Ոմանք. Եւ ամենայն մարդ 'ի հող դարձցի ուստի ստեղծ՛:

* Ոմանք. Խրատիցիս... բանից. եթէ:

* Ոմանք. Որ ատեաց զանի՛... և կորուսանէ զչարս. արդար յաւիտեանական է:

* Ոմանք. Թէ անօրէն ես:

* Յօրինակին պակասէր. Ոչ պատկառեաց 'ի պատուական երեսաց. և ոչ: Ոմանք յաւելլուն. Պատիւ դնել արանց, և մե՛:

* Ոմանք. Եւ աղաչել զայր... 'ի խոտորեցուցանել զիրաւունս:

* Ոմանք. 'ի նոցանէ զոր գործեցին:

* Օրինակ մի. Փառաւորաց և հրա՛:

* Ոմանք. Եւ դարձուցէ 'ի գիշերի:

* Ոմանք. Ձի խոտորեցան յօրինաց Աստուծոյ:

* Ոմանք. Ածէ զնովաւ:

* Ոմանք. Վասն խստասրտութեան. և ոմանք. վասն խրատութեան ժողովրդեան:

* Յօրինակին 'ի բնաբանի կրկին չակերտիւ այսպէս գրի բանս. Ձի 'որ ասէ ընդդէմ հզ՛. և 'ի լուս՛. նշանակի 'ի ներքս բերել՛ է. զոր կրկին եղանակաւ ակնարկէ առնել. կամ՛ զի է որ ասէ. և կամ՛ զի ո՛ է որ ասէ. ըստ որում ոմանք ունին զմիւս, և ոմանք զմիւսն. թէպէտ են ևս որք դնեն պարզաբար համաձայն մերումս:

* Ոմանք. Այլ ո՛չ ևս յաւելից:

* Ոմանք. 'ի քէն որ պահանջիցէ: 'ի լուս՛. Ձի մերժես. համաձայն ոմանց 'ի բնաբ՛:

* Օրինակ մի. Զանճարեղք սրտից խօ՛:

սակայն ուսի՛ր Յոր. և մի՛ տացես տակաւին պատասխանի իբրև զանգագամ՝. ³⁷#
զի մի՛ յաւելուցուք ՚ի մեղս ձեր. և անօրէնութիւն համարեալ լիցի ձեզ ՚ի բազում
բանս խօսելոյ առաջի Տեառն՝:

35

Գլուխ ԼԵ

¹Կրկնեալ անդրէն եղիուսայ ասէ՛.

²Ձի՞նչ իրաւունս համարեցար զայդ. ո՛վ ես դու զի ասես թէ արդար եմ առաջի
Տեառն. ³և կամ ասես թէ մեղայ, զի՞նչ արարից՝: ⁴Ե՛ս տաց քեզ պատասխանի, և
երեցուն բարեկամացդ քոց՝: ⁵Հայեա՛ց յերկինս և տե՛ս. նշմարեա՛ զամպս՝
ո՞րչափ բարձր եմ ՚ի քէն: ⁶Եթէ մեղար՝ զի՞նչ գործեսցես, և եթէ բազում
անօրինեցար՝ զի՞նչ կարօղ ես առնել: ⁷# Արդ եթէ արդար իցես՝ զի՞նչ տացես
նմա, # կամ զի՞նչ առցէ ՚ի ձեռաց քոց: ⁸# Առն նմանոյ քեզ ամպարշտութիւնն
քո, և որդւոյ մարդոյ արդարութիւնն քո՝: ⁹# Ի բազմութենէ զրպարտեալք
աղաղակեսցեն ՚ի բազկէ բազմաց՝: ¹⁰Եւ ո՛չ ասաց՝ թէ ուր է Աստուած որ արար
զայս: Որ պահէ զպահս գիշերականս՝. ¹¹որ մեկնէ զիս ՚ի չորքոտանեաց երկրի՝ և
՚ի թռչնոց երկնից՝: ¹²Ա՛նդ աղաղակեսցեն՝ և մի՛ լուիցես. զի այն պատահումն ՚ի
հպարտութենէ չարեաց է՝. ¹³զի զանկարգութիւնս տեսանել Տէր ո՛չ կամի: Ջի
ինքն Ամենակալն՝ տեսանօ՛ղ է այնոցիկ՝ որ կատարեն զանօրէնութիւն, և
փրկեսցէ՛ զիս: ¹⁴# Դատեա՛ց առաջի նորա, եթէ կարացես զովել զնա որպէս էն՝:
¹⁵Եւ արդ քանզի չէ՛ որ կրեաց զբարկութիւն նորա, # և ո՛չ որ գիտաց զյանցանս
իւր յոյժ: ¹⁶# Ապա ուրեմն Յոր՝ զո՛ւր բանայ զբերան իւր, և ծանրացուցանէ
անգիտութեամբ զբանս:

36

Գլուխ ԼԶ

Կրկնեալ անդրէն եղիուսայ ասէ՛.

²Մնա՛ ինձ տակաւին սակաւիկ մի, զի ուսուցից քեզ զոր դու ո՛չ գիտես. զի

* Ոմանք. Եւ մի՛ տացես պատասխանի բանս իբրև զանգագամս:

* Ոմանք. Ջի մի՛ յաւելուցումք ՚ի մեղս... համարեալ լինիցի ՚ի ձեզ: Ոսկան. Խօսելոյ
առաջի Աստուծոյ:

* Ոմանք. Եւ կամ ասիցես... զինչ ևս արարից:

* Ոմանք. Եւ երեցունց բարե՛ն:

* Ոմանք. Անմանոյ քեզ ամբարշ՛: Յօրինակին պակասէր. Եւ որդւոյ մարդոյ արդար՝:

* Բազումք կրկնեն. Ջրպարտեալք աղաղակեսցեն. աղաղակեսցեն ՚ի բազկէ:

* Ոմանք. Թէ ուր է Աստուած նորա որ արար զիս:

* Ոմանք. Որ մեկնեաց զիս:

* Ոմանք. Եւ մի՛ լուիցեն, և ՚ի հպարտութենէ:

* Ոմանք. Որպէս և են:

տակաւին գոյ յիս բանք*.³ առեալ ՚ի հեռաստանէ զհանճար իմ: Արդեամբք զիրաւունս իմ խօսեցայց⁴ ճշմարտութեամբ, և ո՛չ անիրաւ բանս տարապարտուց իմացեալ*:⁵ # Գիտեա՛ զի Տէր ո՛չ մերժէ զանմեղն: Զգօ՛ր է զօրութեամբ: ⁶Ի սիրտ ամպարշտի ո՛չ կենդանացուցէ. և իրաւունս տացէ աղքատի*:⁷ # Ո՛չ արկցէ զաչս իւր յարդարոյ. և որ գտանի առաջի նորա՝ ընդ թագաւորս է յաթոռ. և նստուցէ զնոսա ՚ի սպառ՝ և բարձրացին*:⁸ # Եւ չարք կապեալք ձեռակապօք՝ վարակեցին տոռամբք տնանկութեան*:⁹ # Եւ պատմեցէ նոցա զգործս նոցա, և զյանցանս նոցա՝ թէ զօրացան:¹⁰ # Եւ արդարոյն լուիցէ, և ասացէ՝ զի դարձցին յանիրաւութենէ*:¹¹ # Եթէ լուիցեն՝ և ծառայեսցեն նմա, կատարեսցեն զաւուրս իւրեանց ՚ի բարութեան, և զամս իւրեանց ՚ի վայելչութիւնս*:¹² # Բայց զամպարիշտս ո՛չ կեցուցէ, զի ո՛չ կամեցան նոքա ճանաչել զՏէր. և զի խրատեալք և անհնազանդք էին*:¹³ Կեղծաւորք սրտիւք գրգռեսցեն զսրտմտութիւն. # ո՛չ գուժեսցեն զի կապեաց զնոսա*:¹⁴ Մեռցի յերիտասարդութիւն անձն նոցա. և կեանք նոցա խոցոտեալք ՚ի հրեշտակաց*:¹⁵ Փոխանակ զի նեղեցին զտկարն և զանգօրն: Եւ իրաւունս հեզոց հանցէ. ¹⁶և զերծոյց զքեզ ՚ի բերանոյ թշնամոյ: Անդունդք որոյ տարածունն ՚ի ներքոյ իւր. և էշ սեղան քո լի պարարտութեամբ*:¹⁷ Մի՛ պակասեսցեն իրաւունք արդարոյ. սրտմտութիւն ՚ի վերայ ամպարշտաց հասցէ*, ¹⁸վասն ամպարշտութեան կաշառաց՝ զոր ընդունէին անիրաւութեամբ*:¹⁹ # Մի՛ թիրեցեն զքեզ միտք կամակորութեան խնդրուածոց՝ յորժամ ՚ի վիճտս իցեն տկարք: # Եւ զամենայն զօրաւորս զօրութեամբ*.²⁰ # մի՛ ձգեսցես ՚ի գիշերի ելանել ժողովրդոց փոխանակ նոցա*.²¹ # այլ զգո՛յշ լեր, զուցէ գործեսցես զանպատեսիս: Քանզի զնա փրկեցեր յաղքատութենէ:²² # Ահա Զգօրն զօրացուցէ զօրութեամբ իւրով: Քանզի ո՞վ է իբրև զնա զօրաւոր. ²³կամ ո՞վ է որ քննէ զգործս նորա. կամ ո՞վ է որ ասիցէ. Անիրաւս գործեաց զոր գործեաց:²⁴ Յիշեա՛ զի մեծամեծ են գործք նորա, զոր սկսան արք արդարք:²⁵ # Ամենայն մարդ ետես ինքեամբ, ո՛րչափ խոցոտեալ են մարդիկ:²⁶ Ահա Զգօրն սաստիկ է, և ո՛չ իմացուք. թի՛ւ ամաց նորա անսպառ:²⁷ # Թուեալ են նմա շիթք անձրևի, և զեղցին անձրևով յամպս*:²⁸ Բղխեսցեն հնացեալք. հովանեցոյց զամպս ՚ի վերայ

* Ի բազումս պակասի. Քեզ. կամ՝ զքեզ, զոր դու ո՛չ գիտես. զի տակաւին գոն յիս:

* Ոմանք. Եւ ո՛չ անիրաւութեամբ տարապարտուց իմա՛:

* Բազումք. Չսիրտ. կամ՝ զի զսիրտ ամպարշտի ո՛չ:

* Ի բազումս պակասի. Եւ որ գտանի առաջի նորա ընդ թա՛:

* Ոմանք. Եւ կապեալք ձեռակապօք վարեսցին տոռամբք տնանկութեամբ: Ուր Ոսկան. ձեռնակապօք վարեսցին:

* Ոմանք. Այլ արդարոյն լուիցէ. և ասաց զի:

* Ոմանք. Իւրեանց ՚ի բարութիւնս:

* Ոմանք. Չի և խրատեալք:

* Ոմանք. Եւ կեղծաւորք:

* Ոմանք. Յերիտասարդութեան անձն:

* Ոմանք. Եւ անդունդք:

* Ոմանք. Մի՛ պակասեսցէ իրաւունք արդարոց:

* Ոմանք. Կաշառոց:

* Ի լուս՝. Միթէ օրհնեսցեն զքեզ միտք կա՛: Ուր ոմանք. մխիթարեսցեն զնա միտք կամակարութեան:

* Ոմանք. Մի՛ ձգեսցես գիշերի ելա՛:

* Ոմանք. Անձրևաւ. կամ՝ անձրև յամպս:

անբա՛ւ մարդկան, միգացին ՚ի վերայ բազում մարդկան: # Ժամանա՛կ եղ
անասնոց. և գիտեն զկարգ ծննդեան: # ՚ի վերայ այսր ամենայնի ո՞չ իցեն
զարմացեալ միտք քո, ո՞չ սարսիցե սիրտ քո ՚ի մարմնի քում. # զի արար
զմեծամեծս զոր ո՛չ գիտեաք: # Յրաման տայ ձեան թէ լե՛ր ՚ի վերայ երկրի. և
ձմերայնոյ անձրևաց զգորութիւնս իւրեանց: # ՚ի ձեռն ամենայն մարդոյ կնքէ,
զի ծանիցէ ամենայն մարդ զիւր տկարութիւն*²⁹: # Եթէ իմանայցե՞ս
զտարածանել ամպոց, զհաւասարութիւն խորանի նորա*³⁰: Ա՛հ ձգէ ՚ի վերայ
նորա ճանապարհաւ, և զարմատս ծովու ծածկեաց*³¹: զի նոքօք դատեսցի
զժողովուրդս. տացէ կերակուր զօրացելոյն*³²: Ի ձե՛ռս ծածկեաց զլոյս. և ետ
պատուէր վասն նորա պատահելոյ*³³: # Պատմեսցէ՛ զնա բարեկամաց իւրոց, և
զստացուածոց և զանիրաւութենէ՛:

37

Գլուխ ԼԵ

¹Եւ ՚ի վերայ այնորիկ խռովեցաւ սիրտ իմ, և ծորեաց ՚ի տեղուջէ իւրմէ: ²# Լուր
զլուր զբարկութեան սրտմտութեան Տեառն. և խորհուրդ ՚ի բերանոյ նորա ելցէ*³:
³# ՚ի ներքոյ ամենայն երկնից իշխանութիւն նորա. # և լոյս նորա ՚ի վերայ
ծագաց երկրի*⁴: Ձկնի նորա գոչեսցէ՛ բարբառ. որոտայցէ ձայնիւ բարձրութեան
իւրոյ. # և ո՛չ փոխանակեսցէ զնոսա. զի լսելի արասցէ զձայն իւր*⁵: և որոտացէ
Յզօրն սքանչելի՛ բարբառով իւրով. # քանզի արա՛ր մեծս՝ զոր ո՛չ գիտեաք*⁶:
Յրաման տայ ձեան թէ լե՛ր յերկրի. և ձմերայնոյ անձրևաց ըստ զօրութեան
իւրեանց*⁷: Ի ձեռն ամենայն մարդոյ կնքէ, զի ծանիցէ ամենայն մարդ զիւր
տկարութիւն: ⁸# Ստին գազանք ՚ի դադարս, ղօղեցին ՚ի խշտիս: ⁹Ի
շտեմարանաց ելանեն ցօղք, և ՚ի բարձուանդակաց ցուրտ*¹⁰: # և ՚ի շնչելոյ
Յզօրին տացէ սառամանիս: Յեղեղու զջուրս որպէս և կամի*¹¹: և զընտիր ամպ
ցանեսցէ: # Յրուէ՛ մեզ զլոյս նորա*¹²: և ինքն դարձուցէ զշրջանակս: Ուր
կամեցաւ՝ ե՛ր զգործ նոցա. և զամենայն ինչ զոր հրամայեսցէ նոցա. սոքա
կարգեալ են առ ՚ի նմանէ ՚ի վերայ երկրի*¹³: Եթէ ՚ի խրա՛տ, և եթէ յերկնդ, եթէ

* Ոմանք. Յովանացոյց զամպս... միգացին ՚ի վերայ բազում: Ոմանք. Գիտեն զկարգ հանգստեան... ո՛չ են զար... և ձմերայնոյ անձրևաց... և ձեռն ամենայն:

* Ոմանք. Ձտարածել ամպոյ. և զհա՛:

* Ոմանք. Եւ ահ ձգէ... և զարմատս ծովու:

* Օրինակ մի. Ձի դատեսցի նոքօք ժողովուրդն:

* Ոմանք. Վասն նորա պահելոյ:

* Ոմանք. Պատմեսցէ զնմանէն բարեկամաց և զստաց՛:

* Ոմանք. Լուր զլուր ՚ի բարկութեան սրտ... և խորհուրդ ՚ի բարկութենէ նորա:

* Ոմանք. Նորա ՚ի ծագաց երկրի:

* Ոմանք. Ձայն իւր բարձրութեան իւ՛:

* Այլք. Արար մեծամեծս՝ զոր ո՛չ:

* Ոմանք. Թէ ել ՚ի վերայ երկրի, և ձմերայնոյ անձրևաց զգորութիւնս իւրեանց: Ի՛ լուս՛.
Ըստ զօրութեան նոցա. համաձայն ոմանց ՚ի բնար՛:

* Ոմանք. Յշտեմարանաց ելանեն ցաւք, և ՚ի բարձուանդակաց. կամ՛ բարձրուան՛:

* Ոմանք. Եւ ՚ի շնչել հզօրին: Ուր Ոսկան. Սառամանիս:

* Ոմանք. Եւ զընտիր ամպս ցա՛... ցրուէ զմեզ լոյս նորա:

* Ոմանք. Եւ ինքն դարձուցանէ շրջա՛... և զամենայն զոր ինչ հրա՛:

յողորմութիւն՝ գտցեն զնա՝: ¹⁴Ո՛ւնկն դիր այսմիկ Յոբ՝ կա՛ց և խրատեա՛ց զգօրութիւն Տեառն՝: ¹⁵Գիտեմք զի Աստուած եղ զգործս իւր. լո՛յս արար խաւարի՝: ¹⁶Գիտե՛ զքննութիւն ամպոց. արհաւիրք են յանցանք չարագործաց: ¹⁷# Եւ քո՝ ջերմ պատմուճան հանդարտեալ կայ՝ ի վերայ երկրի: # Ի հարաւոյ՝ ¹⁸հաստատեսցես ընդ նմա՝ ի հնութիւնս, զօրացուցանել իբրև զտեսիլ եղեման՝: ¹⁹Բայց ընդէ՞ր իսկ՝ աղէ՛ ուսո՛՛ զիս. # զի՞նչ ասասցուք նմա, և դադարեսցուք ՚ի բազումս խօսելոյ՝: ²⁰# Միթէ մատեա՞ն կամ դպի՞ր մերձ կայցէ առ իս, զի զմարդկան գրեալ լռեցուցից՝: ²¹Ո՛չ ամենեցուն է լոյս տեսանելի. փայլածուն է ՚ի հնութիւնս, որպէս որ ՚ի նմանէն ՚ի վերայ ամպոց՝: ²²Ի հիւսիսոյ անպ ոսկէճաճանչ. ՚ի վերայ այսոցիկ մե՛ծ են փառք և պատիւ Ամենակալին. ²³և ո՛չ գտանեմք զայլ ոք նմանօղ զօրութեան նորա. որ զարդարն դատի՝ ո՛չ համարիցիս լսել նմա՝: ²⁴Վասն որոյ երկիցեն ՚ի նմանէ մարդիկ, երկիցեն ՚ի նմանէ և իմաստունք սրտիւք՝:

38

Գլուխ ԼԸ

13ետ դադարելոյ եղիուսայ ՚ի խօսելոյ, աւտ Տէր ցՅոբ ՚ի մրրկէ և յամպոյ՝.

ԺԲ ²Ո՞ է դա՝ որ թաքուցանէ յինէն զխորհուրդս, ժողովեալ զբանս ՚ի սրտի. և համարի յինէն թաքուցանել՝: ³Պնդեա՛ իբրև այր զմէջ քո, հարցից զքեզ՝ և տո՛ւր ինձ պատասխանի: ⁴Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա՛ ինձ եթէ խելամուտ ես հանճարոյ՝: ⁵Ո՞վ եղ զչա՛փ դորա թէ գիտիցես. կամ ո՞վ արկ ՚ի վերայ դորա լար: ⁶Յէ՛ր վերայ հաստատեցան աղխք դորա. ո՞վ է որ արկ զվէճն անկեան ՚ի դմա: ⁷Յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին զիս մեծածայն. # և ամենայն հրեշտակք իմ գովեցին՝: ⁸# Փակեցի՛ զծով դրամբք, յորժամ ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել: ⁹Եղի՛ նմա զմէզ ՚ի հանդերձ, և զմառախուղ նմա ՚ի խանճարուրս: ¹⁰Եղի՛ նմա սահմանս՝ եղեալ փականս և դրունս: ¹¹Ասացի. Տա՛յդ վայր եկեսցես՝ և այլ մի՛ անցանիցես, այլ այդրէն ՚ի քեզ խորտակեսցին ալիք քո՝: ¹²Եթէ առ քե՞ կարգեցի զլոյսն

* Ոմանք. Եւ եթէ յերկիր. կամ՝ յերկիր իւր. եթէ յողորմութիւն գտցէ զնա:

* Բազումք. Եւ խրատեա՛ զգօրութիւն:

* Բազումք. Լոյս արար ՚ի խաւարի:

* Ոմանք. Ջերմ պաճուճան հան՝:

* Ոմանք. Հաստատեսցէ ընդ նմա:

* Ոմանք. Ի բազում խօսելոյ:

* Ոմանք. Ձի զմարդկան զնալ. կամ՝ զնեալ լռեցից առ ՚ի հաստատութեան:

* Ոմանք. Ոչ ամենեցուն է զլոյս տեսանել փայլուն է ՚ի հնութիւնս: Ի լուս՝ ՚ի վերայ՝ ՚ի հնութիւնս, նշանակի՝ Ակ. հաստատութիւն:

* Ոմանք. Եւ ո՛չ ոք գտանեմք զայլ ոք նման զօր՝:

* Ոմանք. Երկիցեն և ՚ի նմանէ իմաս՝:

* Ոմանք. Եղիուսայ ՚ի խօսիցն:

* Ոմանք. Ո՞վ է դա... զխորհուրդ ժողովել:

* Ոմանք. Խելամուտ իցես հան՝:

* Ի լուս՝ ՚ի վերայ՝ ծերք, նշանակի՝ ցիրք ըստ որում առնեն և այլ բազումք յօրինակաց:

* Յօրինակին պակասէր. Եկեսցես, և այլ մի՛ անցանիցես. այլ: Ոմանք. Այլ անդրէն ՚ի:

առաւօտին: Արուսեակն ետնս գկարգ իւր* ¹³հասանել ՚ի վերայ թնց երկրի. թօթափել զամպարիշտս ՚ի նմանէ: ¹⁴Կամ թէ քո՞ առեալ գհողն կալ՝ ստեղծեր կենդանի՝ և խօսուն եդիր զնա յերկրի: ¹⁵Եւ մերժեցե՞ր զլոյսն յամպարշտաց, զբազուկս ամբարտաւանից խորտակեցե՞ր* : ¹⁶Յասեա՞լ իցես յակն ծովու, և ընդ հետս անդնդոց շրջեցա՞ր: ¹⁷Բանայցե՞նք եզ ահիւ դրունք մահու. բարապանաց դժոխոց ՚ի տեսանել զքեզ սարսիցե՞ն* : ¹⁸Խելամո՞ւտ իցես լայնութեան առ ՚ի ներքոյ երկնիցս. աղէ՛ պատմեա՛ ինձ ո՞րչափ իցէ: ¹⁹Ձի՞նչ երկիր իցէ յորում լոյսն ազանիցի, կամ զի՞նչ տեղի խաւարի: ²⁰Տանիցի՞ս զիս ՚ի սահմանս նոցա. եթէ խելամո՞ւտ իցես շաւղաց նոցա: ²¹Թերևս գիտիցե՞ս և ընդ այն ժամանակս իսկ ծնեալ իցես. և թիւ աւուրց քոց բազում իցէ: ²²Երթեա՞լ իցես ՚ի շտեմարանս ձեան. և զգանծս կարկտի տեսեա՞լ իցես: ²³Յամբարեա՞լ կայցէ քեզ ՚ի ժամանակս թշնամեաց, յոր մարտի և պատերազմի: ²⁴Ուստի՞ ելանիցէ եղեամն. կամ սփռեսցի հարա՛ւ ՚ի ներքոյ երկնից* : ²⁵Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկս անձրևաց, և զճանապարհս ամպրոպաց տեղեալ յերկիր* ²⁶ուր ո՛չ գոյ մարդ յանապատ յանմարդի, ²⁷յագեցուցանել զանկոխն և զանշէն, և բղխեցուցանել զբոյս դալարոյ* : ²⁸Ո՞ է հայր անձրևի, և ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ* : ²⁹Յո՞ր արգանդէ ելանէ սառն, և զեղեամն ո՞ ծնաւ յերկինս* , ³⁰որ իջանէ իբրև զջուր ծորեալ. և զերեսս երկնից ո՞ հալեաց* : ³¹Խելամո՞ւտ իցես կարգի Բազմաստեղաց. և քո բացեա՞լ իցէ զպատրուակ Յայկին: ³²Կամ բանայցես զՄազարովքն ՚ի ժամանակի իւրում. և զԳիշերավարն ՚ի վերայ վարսից իւրոց ածիցե՞ս ընդ նոսա* : ³³Գիտիցե՞ս զշրջանակս երկնից, կամ առ հասարակ զլեալսն ՚ի ներքոյ երկնից* : ³⁴Կոչիցե՞ս զմէզ բարբառով. և դողութեամբ լի՛ սաստիկ ջրով լուիցէ քեզ: ³⁵Արձակիցե՞ս շանթս և գնացեն. և ասիցեն ցքեզ թէ զի՞նչ է: ³⁶Ո՞վ էտ կանանց իմաստութիւնս ուտայնանկութեան՝ կամ հանճար նկարակերտութեան: ³⁷Ո՞ թուէ զամպս իմաստութեամբ, և զերկինս յերկիր խոնարհեցոյց. ³⁸և հեղեալ կայ իբրև գհող փոշի. մածուցի զնա իբրև զվիմալ խորանարդ* : ³⁹Որսայցե՞ս առիժուց կերակուր. և զանձինս վիշապաց յագեցուցանիցե՞ս: ⁴⁰Սարսեցին ՚ի խշտիս իւրեանց. և նստիցին դարանակալք ՚ի մայրիս* : ⁴¹Ո՞ պատրաստեաց ագռաւուց կերակուր՝ զի ձագք նորա առ Տէր

* *Ոմանք.* Ձլոյսն առաւօտուն:

* *Ի լուս՝ ոլորակ բառիցս* մերժեցե՞ր. խորտակեցե՞ր. *նշանակի շեշտիւ*, մերժեցե՞ր. խորտակեցե՞ր. *համաձայն այլոց*:

* *Ոմանք.* Եւ բարապա՛... տեսեալ զքեզ սարսեցեն:

* *Ոսկան.* Բազումք իցեն:

* *Բազումք.* Կամ սփռիցի:

* *Ոմանք.* Սաստիկս անձրևոյ: *Ի լուս՝ ՚ի վերայ՝* ամպրոպաց, *նշանակի՝* հողմոց: *Ուր ոմանք.* ամպրոպաց տեղեաց յեր՛:

* *Ոմանք.* Եւ զանշէն... զբոյսս դա՛:

* *Ոմանք.* Որ ծնաւ զշաւիղս ցօղոյ:

* *Օրինակ մի.* Եւ զեղեամն ո՛ ծնաւ յարգանդ:

* *Ոմանք.* Ձի իջանէ իբրև:

* *Ի լուս՝ ՚ի վերայ՝* զՄազարովքն, *նշանակի՝* Ակ. ելանիցէ սայլն: *Ոմանք.* Ածիցես ընդ նմա:

* *Ոմանք.* Ձշրջանս երկնից:

* *Ոմանք.* Արձակեցես զշանթս և գնացեն:

* *Ոմանք.* Իբրև զփոշի... իբրև վիմալ խո՛:

* *Ոմանք.* Սարսիցեն ՚ի հշտիս իւրեանց, և նստցին:

աղաղակեցին. մոլորեալք խնդրեն կերակուր*:

39

Գլուխ ԼԹ

¹Եթէ գիտիցե՞ս զժամանակ ծննդեան յամուրաց քարանձաւաց.
զգուշանայցես երկանց եղանց*:²Թուիցե՞ս լիով զամիսս ծննդեան նոցա. #
լուծանիցե՞ս զերկունս նոցա:³# Սնուցանիցե՞ս զմանկունս նոցա առանց
երկիւղի. մերժիցես ՚ի նոցանէ զերկունս*:⁴Փրճանիցի՞ն որդիք նոցա.
բազմանայցե՞ն ՚ի ծննդեան իւրեանց. # ելանիցեն՝ և անդրէն ո՛չ կրկնիցին*:⁵Ո՞ր
եթող զցիռ՝ ազատացեալ. ո՞վ ելոյ՞ծ զկապանս նորա*:⁶# Եդ ՚ի նմա կապանս
զառապարս, և բնակութիւն նմա զաղտաղտուկս*:⁷Ծա՛ղր առնէ զբազմամբոխ
քաղաքաց, և զբամբասանս հարկահանաց ո՛չ լսէ. ⁸դիտէ զլերինս արօտի իւրոյ.
և զհետս ամենայն դալարոյ շրջի խնդրել*:⁹Եթէ կամիցի քեզ միեղջուրուն
ծառայել, կամ հանգչել առ մտուր քո*.¹⁰Կապիցե՞ս սամետիւք լուծ նմա, կամ
ձգիցե՞ս ակօս ՚ի դաշտի քուն*:¹¹Յուսայցե՞ս ՚ի նա՝ զի բազում է զօրութիւն նորա.
և թողուցո՞ւս ՚ի նա զամենայն գործս քո*:¹²# Հաւատասցե՞ս եթէ հատուցանիցէ
քեզ զսերմանիս. և ամփոփիցէ զկալ քո*:¹³# Թեք թռուցելոց նէղասաց. եթէ
յղասցի՞ս սահրն և նէսայն*:¹⁴# Ձի արկցէ յերկիր զծուս իւր, և ջեռուսցէ զհողով*.
¹⁵և մոռացաւ թէ ուր ցրուիցէ. և զազանք անապատի կոխեսցեն*:¹⁶# Ուծացաւ
յորդոց իւրոց՝ իբրև ո՛չ յիւրմէ. ՚ի գո՛ւր վաստակեցաւ առանց երկիւղի*.¹⁷# զի
լռեցոյց Աստուած ՚ի նմանէ զիմաստութիւնս, և ո՛չ ետ նմա բաժին ՚ի հանճարոյ*:
¹⁸# ՚ի ժամանակի բարձրասցի՞ ՚ի բարձունս. ծա՛ղր առնէ զերիվարաւ և
զհեծելով նորա*:¹⁹Եթէ դո՞ւ ագուցեր ծիոյ զօրութիւն, և զգեցուցեր զրահ ընդ
պարանոցաւ նորա*.²⁰արկեր զնովաւ սպառազինութիւն, և փառս լանջաց նորա

**Բազումք.* Ձի ձագք նոցա աղաղակեցին առ Տէր:

**Ոմանք.* Զժամանակս ծննդեան: *՚ի լուս՝.* ՚ի վերայ՝ Յամուրաց, *նշանակի՝* Ակ.
այծքաղաց:

**Բազումք.* Մերժեսցես ՚ի նոցանէ:

**Ոմանք.* Բազմանայցեն ՚ի ծնունդս իւ՞ր... ո՛չ կրկնեսցին: *Ուր Ոսկան.* բազմասցին ՚ի ծն՞:

**Ոմանք.* Ով է որ եթող զցիռ ազա՞... ո՛ր ելոյ՞ծ:

**Ոմանք.* Եդ նմա. *կամ՝* ՚ի նմա կայանս զառա՞... և զբնակութիւնս:

**Ոմանք.* Եւ զհետ ամենայն դալարոյ:

**Ոմանք.* Միեղջերուի. *կամ՝* միեղջուրին ծառայել:

**Ոմանք.* Կապեսցես սամետիւք զլուծ ՚ի նմա. կամ ձգիցի ակօս:

**Ոմանք.* Յուսասցես ՚ի նա:

**Ոմանք.* Հաւատայցես եթէ... քեզ զսերմանս:

**Ոմանք.* Թեք թռուցելոյ: *Օրինակ մի.* Թռուցելոցն է եղասաց, եթէ յղասցի սահրն և նէ՞:

**Ոմանք.* Եւ ջեռուսցէ ընդ հողով:

**Ոմանք յաւելուածով ունին այսպէս.* Եւ մոռացաւ եթէ ցրուեսցէ... կոխեսցեն
զճանապարհս նորա:

**Ոմանք.* Որպէս ո՛չ յիւրմէ:

**Ոմանք.* ՚ի նմանէ զիմաստութիւն:

**Ոմանք.* Ծաղր արասցէ զերիվարաւ:

**Ոմանք.* Ձրահս զպարանոցաւ նորա:

զյանդգնութիւն*։ ²¹Որոտայ՝ի դաշտի՝ և դա՛փր հատանէ. ելանէ՛ ՚ի դաշտ զօրութեամբ*։ ²²Ի պատահել նետից՝ արհամարհէ, և ո՛չ դարձցի յերկաթոյ*։ ²³Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, և շարժին վահանի և նիզակի. ²⁴և բարկութեամբ ապականէ զերկիր։ Եւ ո՛չ հաւատայ՝ մինչև փո՛ղ արկանիցի*։ ²⁵և իբրև փող հարկանի՝ նա վա՛շ վա՛շ կարդայ. ՚ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի՝ վազս առնելով և փռնչելով*։ ²⁶Եթէ ՚ի քունմէ իմաստութենէ եկաց բազէ տարածեալ զթևս, անշարժ դիտել ընդ հարաւ*։ ²⁷Կամ թէ քո՞ հրամանաւ վերանայ արծուի. և անկղ ՚ի վերայ բունոյ իւրոյ նստեալ դադարիցէ* ²⁸ի քարանձաւս վիմաց և ՚ի ծածուկս* ²⁹անդ կայ և խնդրէ զկերակուր։ ՚ի հեռաստանէ դիտեն աչք իւր*։ ³⁰և ձագք նորա արեամբ թաթաւին. ուր ուրեք իցէ՛ գէշ՝ անդր վաղվաղակի գտանին*։ ³¹Եւ պատասխանի ետ Տէր Աստուած Յոբայ՝ և ասէ. ³²Միթէ զդատաստան ոք Բաւականին թիրիցէ՞. և յանդիմանիցէ՞ զԱստուած. և տայցէ՞ նմա պատասխանի*։

³³Կրկնեալ անդրէն Յոբայ՝ ասէ ցՏէր.

³⁴Զի՞ ևս տակաւին դատիցիմ, կշտամբեալ և յանդիմանեալ. ՚ի Տեառնէ լսեմ զայդպիսի բանս. զի ես ո՛չ ինչ մի եմ, զի՞նչ տաց առ այդ պատասխանի, բայց եթէ ափիբերան լինիցիմ*։ ³⁵Մի անգամ խօսեցայ՝ և յերկրորդունմ ո՛չ յաւելից*։

40

Գլուխ Խ

¹Պարծեալ կրկնեալ Տեառն յամպոյն՝ ասէ ցՅոբ.

²Ո՛չ այդպէս՝ այլ պնդեա՛ իբրև այր զմէջ քո. ես հարցից՝ և դու տո՛ւր ինձ պատասխանի*։ ³Մի՛ զընկենուր զդատաստան իմ, և մի՛ համարիր այլ ինչ ա՛զդ արարեալ առ քեզ յայտնութիւն. բայց եթէ զի երևեսցի՛ս արդար*։ ⁴Եթէ բազուկ առ բազուկ իցէ քո Տեառն. եթէ բարբա՞ռ հանգոյն նմա որոտայցես։ ⁵Արդ աղէ առ բարձրութիւն. և զօրութիւն և փառս և պատիւ զգեցի՛ր։ ⁶# Առաքեա՛ զիրեշտակս բարկութեամբ, և զամենայն հպարտս խոնարհեցո՛ւ և շիջո՛

* *Ոմանք.* Արկեր զսպառազինութիւնս, և զփառս։
 * *Յօրինակին ՚ի բնաբանի գրեալ.* Եւ տափր հատանէ, ՚ի լուս՞. նշանակի ուղղագրել՝ դափր. *համաձայն այլոց*։
 * *Ոմանք.* Պատահեալ նետից՝ արհամարհեաց, և ո՛չ դարձցի յերկաթի։
 * *Այլք.* Մինչև փող հարկանիցի։
 * *Ոմանք.* Եւ իբրև փող հարկանիցի... առնուլ զհոտ պատերազմի, վազս առնելով և։
 * *Ոմանք.* Ի քունմէ զօրութենէ եկաց բազէ... անշարժ դիտել ընդ։
 * *Ոմանք.* Կամ թէ քով հրամանաւ... և անգղ ՚ի վերայ։
 * *Ոսկան.* Վիմաց, և ՚ի ծակուկս։
 * *Ոմանք.* Եւ խնդրէ զկերակուրս։
 * *Ոմանք.* Անդ վաղվաղակի գտա՞։
 * *Ոմանք.* Եւ յանդիմանեցէ։
 * *Ոմանք.* Ի Տեառնէ լսիցեմ զայդպիսի։ *Ոսկան.* Զի ես ոչինչ եմ. զի՞նչ։
 * *Ոմանք.* Միանգամ խօսիցիմ. և։
 * *Ոմանք.* Իբրև զայր զմէջ։
 * *Ոմանք.* Զդատաստանս իմ... այլ ազդ արարեալ։

զամբարտաւանս: ⁷Փտեա՛ վաղվաղակի զամպարիշտս. ⁸և ծածկեա՛ յերկրի բացէ՛ ՚ի բաց առ հասարակ. և լի՛ց զերեսս նոցա անարգանօք՝: ⁹Իսկ յանձի՞ն կալայց արդևք եթէ կարող փրկել ա՛ջ քո՛: ¹⁰Իսկ այդ քո առաջի՛ է, զի գազանք իբրև զարջառ խո՛տ ճարակին՝: ¹¹Ահաւանիկ ո՛յժ իւր զմիջով իւրով, և զօրութիւն զպորտիւ որովայնի իւրոյ՝: ¹²Կանգնեաց զտտուն իւր իբրև զնոճի. ջիւք իւր զմիմեամբք պատեալ՝: ¹³Կողք իւր պղնձիք, և ողն իւր ձո՛յլ երկաթոյ: ¹⁴Նա՛ է սկիզբն արարածոց Տեառն, արարեալ խաղալիք հրեշտակաց նորա՛: ¹⁵Չասեալ ՚ի վերայ առապար լերին, արար խնդութիւն չորքոտանեաց ՚ի տարտարոսն: ¹⁶Ընդ ազգի ազգի՛ ծառովք ննջէ, առ պրտուով և եղեգամբ և կնիւնով: ¹⁷Չովանոցանան ընդ նովաւ ծա՛ռք մեծամեծք հանդերձ անտառօք՝ և ձո՛ղք հագնոյ՝: ¹⁸# Եթէ լինիցի հեղեղ՝ ո՛չ զգնացէ. յանձնապաստան է, զի թէ Յորդանան դիմեսցէ ՚ի վերայ նորա՛, ¹⁹# յակնակապիճս իւր ընկալցի զնա. ՚ի խուսափել նորա ծակիցե՞ս զընգունս նորա՛: ²⁰# Վերացուցանիցե՞ս զվիշապն կարթիւ. դնիցե՞ս պախուրցս շուրջ զցռկով նորա՛: ²¹Եթէ կապիցե՞ս անուր ՚ի քիթս նորա. անցուցանիցե՞ս դանդանաւանդ ընդ կզակս նորա: ²²# Խօսիցի՞ ընդ քեզ հեզութեամբ. և կակուղ բարբառով դնիցէ ընդ քեզ ուխտ՝: ²³# Նուաճիցե՞ս զնա ծառայ յաւիտենական՝: ²⁴Խաղայցե՞ս դու նովաւ իբրև հաւու. և կապիցե՞ս զնա իբրև զճագ կապով՝: ²⁵Կերակրեսցին նովաւ ազինք, # և բաժանեսցեն զնա ազգք Փիւնիկեցոց՝: ²⁶Ամենայն նաւալուղակն ՚ի մի վայր ժողովեալ, # ո՛չ բարձցեն թեփ մի ՚ի տտնոյ նորա, և ՚ի նաւս ձկնորսաց խալան՝ նորա՛: ²⁷Դնիցես դու զձեռն քո ՚ի վերայ նորա. յիշատակեալ զպատերազմ որ լինելոց է ՚ի մարմնի նորա, զի այլ ո՛չ ևս լինիցի՛: ²⁸Ո՛չ տեսեր զնա, և ո՛չ ՚ի վերայ բանիցս ասացելոց զարմանայցես:

41

Գլուխ ԽԱ

Ո՛չ երկնչիցիս՝ զի և ինձ պատրաստեալ է. բայց ո՞վ իցէ որ ինձ հակառակ

* *Ոմանք.* Բացեայ ՚ի բաց առ հասարակ:
 * *Բազումք.* Թէ կարող է փրկել:
 * *Ոմանք.* Առաջի իցէ... խոտաճարակին:
 * *Ոմանք.* Ահաւասիկ ոյժ... զպորտոյ որովայնի:
 * *Ոսկան.* Կանգնեաց զտտու իւր: *Ոմանք.* Եւ ջիւք իւր զմիջովք պատեալ:
 * *Ոմանք.* Արարեալ ՚ի խաղալիկ հրեշ՝:
 * *Ոմանք.* Չովանացան ընդ նովաւ... և ձողք հագնոյ:
 * *Բազումք.* Չեղեղ՝ ո՛չ զգացէ: *Ոմանք.* Դիմեսցէ ՚ի բերան նորա:
 * *Ոմանք.* Եւ ՚ի խուսափել նորա ծակեսցես զընգ՞:
 * *Ոմանք.* Պախուց շուրջ զցռկաւ նորա: *Ուր Ոսկան.* պախուրց:
 * *Այլք.* Խօսիցի ընդ քեզ հնազանդութեամբ. և կա՞:
 * *Ոմանք.* Եւ նուաճեցուցես զնա:
 * *Ոմանք.* Խաղայցես ընդ նովաւ իբրև հաւու. և կապեսցես զնա: *Ուր Ոսկան.* իբրև ընդ հաւու:
 * *Ոմանք.* Կերակրեսցին զնովաւ: *՚ի լուս՝.* Եւ բաժանեսցին զնա:
 * *Ոմանք.* Ամենայն նաւաղաւղակն:
 * *Ոմանք.* Յիշատակել զպատերազմ որ լինելոց է ՚ի վերայ նորա:

կայցէ. կամ ո՞վ իցէ որ ինձ ընդդէմ դառնայցէ՝ և հանդարտիցէ՝: ²Եթէ ամենայն առ ՚ի ներքոյ երկնից ի՛մ է՝: ³Ո՛չ լռեցից վասն նորա. և բան Յգօրին ողորմեսցի զուզականին նորա՝: ⁴Ո՛ մերկասցէ զպատրուակ երեսաց նորա. և ընդ աղխս պատենից նորա ո՛ մտանիցէ՝: ⁵զդրունս երեսաց նորա ո՛ բանայցէ: Շուրջ զատամամբք նորա ա՛հ: ⁶# Փոր նորա վահանք պղծիք, յօղք նորա իբրև զվէմ գայլախագ՝ ⁷մի գմիոյ կնի կցեալ, և օդ ո՛չ անցցէ ընդ նա: # Այր գեղբօր զհետ երթիցէ՝: ⁸զմիմեանց կալցին, և մի՛ մեկնեսցին: ⁹Ի փռնչելոյ նորա փայլատակունք հատանին. աչք նորա իբրև զտեսիլ արուսելի: ¹⁰Ի բերանոյ նորա լամպարք բորբոքեալք, և հատանին անկանին շանթք հրոյ՝: ¹¹Ընդ ռընգունս նորա ծուխ ելանէ հնոցի հրոյ կայծականց: ¹²Անձն նորա կայծակունք, և բոց ՚ի բերանոյ նորա ելանէ՝: ¹³Ի պարանոցի նորա բնակէ զօրութիւն. առաջի նորա կորուստ ընթանայ: ¹⁴Անդամք մարմնոյ նորա մածեալք. եթէ զեղցէ ՚ի վերայ նորա՝ ո՛չ խլրտասցէ՝: ¹⁵զի սիրտ նորա սալացեալ է իբրև զվէմ. և հաստատեալ կայ՝ իբրև զսալ դարբնաց անշարժ՝: ¹⁶Ի խլրտել նորա ա՛հ գազանաց և չորքոտանեաց, և գեռնոց երկրի: ¹⁷Եթէ պատահեսցեն նմա արդունք, ո՛չ ստնանեն զէնք և նիզակք՝: ¹⁸Քանզի համարի զերկաթ յարդ. և զպղինձ իբրև զփայտ փուտ: ¹⁹Ո՛չ խոցոտէ զնա աղեղն պղնձի. # համարի զռըմբաքար խոտ: ²⁰Եւ իբրև զեղէզն համարեցան նմա ուռունք. ծաղր առնէ զշարժումն հրալից: ²¹Անկողինք նորա տէ՛գք սրեալք. ամենայն ոսկի ծովու ընդ նովաւ իբրև զկալ անբաւ՝: ²²Եռացուցանէ զանդունդս իբրև զկատսայ. համարի զծով իբրև զոչինչ. ²³և զտարտարոսն անդնոց իբրև զգերի մի. համարեցաւ զանդունդս իւր ճեմելի: ²⁴Եւ չի՛ք ինչ յերկրի՝ որ նման է նմա. արարեալ խաղալիկ հրեշտակաց իմոց՝: ²⁵Ձամենայն բարձունս տեսանէ. և ինքն է թագաւոր ամենայնի՝ որ ՚ի ջուրսն են՝:

Գլուխ ԽԲ

¹Կրկնեալ անդրէն Յոբայ՝ ասէ ցՏէր.

²Գիտե՛մ զի կարօղ ես յամենայնի, և տկարանայ ինչ ո՛չ քեզ՝: ³Ո՞վ է որ ծածկէ ՚ի քէն զխորհուրդ՝ խնայեալ ՚ի բանս կարծիցէ թագուցանել. ո՛ պատմեսցէ ինձ

* Ոմանք. Յակառակ կացցէ:

* Ոսկան. Իմ են:

* Ոմանք. Ես ո՛չ լռեցից վասն... զուզականի ոցա:

* Ոմանք. Ո՞վ մերկասցէ:

* Ոմանք. Մի գմիոյ կցեալ:

* Ոմանք. Ղամբարք բորբոք՝:

* Ոմանք. Եւ անձն նորա կայծա՛:

* Ի լուս՝. Եթէ զեղցի: Ուր ոմանք. Եթէ զեղցին. կամ՝ զեղծցի... ո՛չ խլրտեսցէ:

* Ոմանք. Իբրև զսալ դարբնի:

* Ոմանք. Պատահեսցեն նմա գեղարդունք, ո՛չ մտանեն զէնք և նի՛:

* Ոմանք. Ընկողինք նորա տեգք:

* Ոմանք. Յերկրէ որ նման է նորա:

* Ոմանք. Եւ ինքն թագաւոր ամենայնի. կամ՝ յամենայնի:

* Ոմանք. Կարող ես ամենայնի:

գոր ո՛չ գիտէի. զմեծամեծս և զգարմանալիս՝ որոց ո՛չ էի խելամուտ*։ ⁴Արդ լուր
ինձ Տէր՝ զի և ես խօսեցայց. հարցի՛ց զքեզ՝ և դու ուսո՛ւ զիս։ ⁵Ի լուր ականջաց
լսէի զքէն յառաջագոյն. բայց արդ՝ և ական իմ իսկ ետես զքեզ*։ ⁶Վասն որոյ
խոտեցի՛ զանձն՝ և հալեցայ. և համարիմ զանձն իմ հո՛ղ և մոխիր։

**⁷Եւ եղև յետ խօսելոյ Տեառն զբանս զայսոսիկ ընդ Յոբայ. Ասէ ցեղեփագ
Թեմնացի*.**

Սեղա՛ր դու, և երկոքին բարեկամք քո. զի ո՛չ խօսեցարուք առաջի իմ
ճշմարիտ, և ո՛չ ինչ իբրև զծառայ իմ զՅոբ։ ⁸Բայց արդ ամէք զուարակս եւթն և
խոյս եւթն, և երթայք առ ծառայ իմ Յոբ. և արասցէ ողջակէ՛զս վասն ձեր. և Յոբ
ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր։ Չի թէ ո՛չ նմա ական ամեալ էր, և եթէ ո՛չ
վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդէք զձեզ. զի ո՛չ խօսեցարուք
ճշմարտութիւն զծառայէ իմնէ զՅոբայ։ ⁹Եւ գնաց եղիփագ Թեմնացի, և
Բաղդատ Սաւրեցի, և Սովփար Մինեցի. և արարին որպէս հրամայեաց նոցա
Տէր. և ելոյծ զմեղս նոցա վասն Յոբայ։ ¹⁰Եւ Տէր ամեցոյց զՅոբ. և յառնել նորա
աղօթս՝ ի վերայ բարեկամացն՝ եթո՛ղ զմեղս նոցա։ Եւ ետ Տէր կրկին քան
որչափ ինչ էրն յառաջագոյն Յոբայ՝ ի յաճախութիւն։ ¹¹Եւ լուան ամենայն
եղբարք նորա և քորք նորա զամենայն անցսն՝ որ անցին ընդ նա, և եկին առ
նա, և ամենեքին ոյք յառաջագոյն գիտէին զնա. կերան և արբին առ նմա. և
մխիթարեցին զնա, և զարմացան ՚ի վերայ ամենայնի գոր ամ ՚ի վերայ նորա
Տէր. և ետուն նմա իւրաքանչիւր մէ՛ն մի որոջ, և չորեքդրամեան մի ոսկի
անգիր*։ ¹²Եւ Տէր օրհնեաց զվերջինն Յոբայ քան զառաջինն. և էին խաշինք
նորա՝ ոչխարք բեր, և չորեքհարկր. ուղտք վեցհազարք. լուծք եզանց հազար.
էշք մատակք արօտականք հազար*։ ¹³Եւ ծնան նմա ուստերք եւթն, և դստերք
երեք։ ¹⁴Եւ կոչեաց զառաջինն Տիւ. և զերկրորդն Կասիա. և զերրորդն
Ամաթեղջեր*։ ¹⁵Եւ ո՛չ գտան համեմատ դստերացն Յոբայ ազնուագոյնք՝ ի
ներքոյ երկնից. և ետ նոցա ժառանգութիւն ընդ եղբարս իւրեանց*։ ¹⁶Եւ եկաց
յետ հարուածոցն ամս հարկր և եւթանասուն. # և ամենայն ամք գոր եկաց՝
երկերիւր քառասուն և ութ. # և ետես Յոբ զորդիս իւր՝ և զորդիս որդւոց իւրոց
ազգ չորրորդ։ Եւ վախճանեցա՛ւ Յոբ ծերացեալ և լցեալ աւուրբք։ Եւ գրեալ է
նմա յառնել ընդ որս Տէր յարուցանէ*։

¹⁷Սա թարգմանի յԱսորի գրոց. բնակէր յերկրին Աւստայ. ՚ի սահմանս
Եդովմայեցւոց և Արաբացւոց. յառաջ՝ էր անուն նորա Յոբաբ. և ամեալ կին
Արաբացի, ծնաւ որդի որուն անուն էր Էննով։ Եւ էր հայր նորա Չարեհ, որդի

* *Ոմանք.* ՚ի քէն գխորհուրդս... ո՞վ պատմիցէ ինձ... որ ո՛չ էի խել։

* *Այլք.* ՚ի լուր ականջաց։ *Ոմանք.* Լսէի ՚ի քէն յառաջա՛ւ։

* *Ոմանք.* Ասէ Տէր յեղիփագ Թեմն։

* *Օրհնակ մի.* Եւ լուան ամենայն բարեկամք նորա զամենայն անցսն՝ որ։ *Ոմանք.*
Չամենայն անցսն գոր անցին ընդ։

* *Ոմանք.* Բեր և չորեք հազար։

* *Ոմանք.* Եւ զերրորդն Մադթեղջիր։

* *Ոմանք.* Ազնուականագոյնք ՚ի ներ... ժառանգութիւնս ընդ եղ՛։

* *Բազումք յաւելուն.* Եւ եկաց Յոբ յետ հարուածոցն։ *Ոմանք.* Ամք գոր եկեաց։

*Կիսակատար օրհնակ մի՝ աստանօր վախճան տայ գրոցն Յոբայ այսու բանիւք. Եւ
գրեալ է նմա յառնել ընդ որս Տէր յարուցանէ։ Այլ բաց ՚ի նմանէ ամենայն օրհնակք՝
համաձայն մերումս ունին և զյաջորդ բանս. Սա թարգմանի, և այլն. համեմատ
Յունական բնագրին Եօթանասնից։*

որդւոյն Եսաւայ. և մայր նորա Բոսորացի՝ որպէս զի լինել նմա հինգերորդ յԱբրահամէ: Եւ ա՛յս են թագաւորք որ թագաւորեցին յԵդոմ. առաջին Բաղակ Բեովրայ. և անուն քաղաքի նորա Դենարայ: Յետ Բաղակայ Յոբաբ՝ որ կոչեցաւ Յոբ: Յետ նորա Ասովմ, որ էր զօրավար յերկրին Թեմնացւոց: Յետ նորա Ադադ որդի Բարադայ, որ կոտորեաց զՄադիամ ՚ի դաշտին Մովաբայ. և անուն քաղաքի նորա Գէթեմ: Եւ որ եկին առ նա բարեկամքն. Եդիփազ՝ յորդւոցն Եսաւայ՝ արքայ Թեմնացւոց. Բաղդատ բռնաւոր Սաւրեցւոց. Սովփար արքայ Միմեցւոց*:

Կատարեցաւ զիրքս Յոբայ*

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Հռչակաւորն ՚ի մարգարէս Եսայիաս՝ ՚ի յայտնի ժամանակի երևեալ մարգարէ յԵրուսաղէմ, յաւուրցն Ոգիա սկսեալ մինչև յաւուրս բարեպաշտն Եզեկիայ. վասն որոյ յաղօթսն Եսայեայ մե՛ծ նշանն եղև յարեգակն՝ որ և զԲաբելացիսն զարմացոյց: Սա ինքն Եսայիաս մեծագոյն շնորհի արժանացեալ յԱստուծոյ, ո՛չ վասն փոքու իրիք կամ ՚ի նուագս սակաւս, այլ յերկար ժամանակօք, և յաճախ յայտնութեամբք աստուածեղէն խորհրդոց մարգարէութեամբ փառաւորեցաւ: Ուստի և ընդարձակ ճառիւք զգիրս մարգարէութեան իւրոյ գրեաց յօգուտ լսողաց. որ և զօրացեալ Հոգւովն Աստուծոյ որով բարբառէր՝ համարձակագոյն բանիւ զմեղուցեալսն յանդիմանէր, և յայտնի քարոզէր զհանդերձեալ խորհուրդն Քրիստոսի: Որ և վասն պիտոյից ժամանակին ՚ի սկիզբն գրոց իւրոց նախ կշտամբէ զԻսրայէլ վասն պէսպէս չարեաց, և սպառնայ զաւեր երկրին. ո՛չ յայնժամ հրէիցն և եթ, այլև այժմ մեզ՝ թէ ծուլացուք: Դառնայ խրատէ յապաշխարոթյուն, և խոստանայ զհաշտոթյուն, և զեկեղեցւոյ խաղաղոթյուն: Վա՛յ տայ խաչահանուացն, և ՚ի դէմս այգւոյն դատապարտէ զանշոհակալուն: Քարոզէ ՚ի Կուսէն զծնունդն Քրիստոսի. և ընդ այնր զիրկէզ կամեւն լինել տանն Հրէից: Սպառնայ մեծամտին Սատանայի զխորտակումն. և երկրորդէ վասն ծննդեանն Տեառն ՚ի տանէն Յեսսեայ: Եւ ՚ի դէմս այլազգեացն սպառնայ

* Ոմանք. Բնակէր յերկրին Աւստացւոց: Ոմանք յաւելուն. Բոսորացի. որում և նա եղև իշխան աշխարհիին. որպէս զի լինել: Ոմանք. Սաովմ, որ էր զօրավար յերկրէն Թեմնացւոց... որ կոտորեաց զՄադիամ ՚ի դաշտին... Բաղակ բռնաւոր Սաւրեցւոց:

* Ի վախճանի ոմանք. Կատարումն գրոցս Յովբայ. և ոմանք. Կատարեցաւ Յովբ: Երկու նորագոյն օրինակք համեմատք իրերաց՝ զԳիրս Յոբայ կարգեն յետ գրոցն Մակաբայեցւոց՝ յառաջ քան զՍաղմոսն. և սորքա յետ Սաղմոսին, և գրոցն Սողոմոնի և Իմաստութեան՝ յաւելուն զԳիրս Սիրաքայ, անհամեմատ շարագրութեամբ այլոց գրոց մատենիս, և կարճառօտ բանիւք. որպէս ունի զնոյն և այլ նորագոյն կիսակատար օրինակ մի ՚ի նմին վայրի: Այլ ՚ի սպառ զանց առնեն զնովաւ. այլ հնագոյն օրինակք համաձայն մերումս. որպէս և զԵրրորդ Եզրասաւն. վասն որոյ և մեզ պատշաճ թուեցաւ կարգել զնոսա ՚ի մնացորդս մատենիս:

սկզբնաչարին: Նախատե՛ գյուսացեալսն յեգիպտոս, և երանե՛ զունօղսն զաւակ յերուսաղէմ: Պատմե՛ զԵգեկիայէ. և մարգարեանայ զՅովիաննէ. և ապա այլով ճառիւք աստուածաբանէ՛ զերախտեացն առ Յրէայս, որոց խորհուրդն՝ ՚ի նորս կատարի: Եւ ապա ՚ի գիրս իւր մարգարես նկարէ զչարչարանս Տեառն իւրոյ, նախատեալ յիւրայոցն, թքեալ, ապտակեալ, խարազանեալ, և ո՛չ տխատեալ. և բանիւ վասն խաչին և մահուն Քրիստոսի, թէ՛ Նա վասն անօրէնութեանց մերոց ՚ի մահ վարեցաւ. և զյարութենէն թէ՛ Տէր կամի սրբել զնա ՚ի վիրաց անտի. և զհամբառնալն թէ՛ Դիմեալ գայ յեդոմայ. և զհանդերձեալ գալոյն. և զնորոյ աշխարհէն. և զսրբոցն առաջի (Աստուծոյ) կալոյ ՚ի նորն Երուսաղէմ, և զանվճար տանջանս մեղաւորացն, ուր և աւարտէ զգիրս: Եւ է ժամանակ մարգարեութեանն Եսայեայ իբրև ամբ ԴԵ կամ աւելի:

Գլուխք գրոց Եսայեայ Մարգարէի

- ա. Ամբաստանութիւն զԻսրայէլէ, և զուշակութիւն վշտացն որ նոցա հասանելոց էին. հրաժեշտ ՚ի պատարագաց, և խրատ վարուց առաքիւնութեան:
- բ. Մարգարեութիւն զԵկեղեցւոյ և խաղաղութեանն որ լինելոց էր:
- գ. Ամբաստանութիւն զԻսրայէլէ, և մարգարեութիւն պաշարման քաղաքին:
- դ. Ամբաստանութիւն փափկութեան կանանց նոցա, և ամբարտաւանութեան:
- ե. Տարագրութիւն Իսրայէլի՝ այգւոյն օրինակաւ:
- զ. Բամբաստ զիշխանս Իսրայէլի ագահութեամբ և արբեցութեամբ. և յառաջագոյն զգաստ առնէ զաւերածոյն. և սպառնայ այնոցիկ որ զսուտ մարգարէս՝ առաւել քան զմարգարէս ընդունէին:
- է. Չելանել թշնամեացն զուշակէ:
- ը. Տեսանէ Եսայի զտեսիլն, որով սրբեցան նորա շրթունքն:
- թ. Զօրածողով լինին արքայն Ասորւոց և Իսրայէլացւոց ՚ի վերայ Երուսաղէմի. և մարգարեանայ Եսայի վասն ՚ի Կուսէն ծննդեանն Քրիստոսի, զոր տայ նշան մերձաւոր փրկութեանն Երուսաղէմի. թէ մնալոց է մինչև ծնցի Քրիստոս. իսկ որդւովն Եսայեայ զփութով գերիլն Սամարւոյ, և զգերութիւնն Յուդայ. և սաստէ գերողացն:
- ժ. Մարգարեութիւն վասն այնոցիկ որ ՚ի Քրիստոս էին հաւատացելոց, և ամբաստանութիւն Քրիստոսատեաց խակութեանն Յրէից և սպառնալիք:
- ժա. Վասն բռնութեան և ամբարտաւանութեան, և կորստեան Ասորեստանւոյն:
- ժբ. Վասն այնոցիկ որ ՚ի Քրիստոս էին հաւատացելոց, և վասն կորստեանն Սենեքերիմայ:
- ժգ. Վասն ՚ի տանէն Յեսսեայ ծննդեանն Քրիստոսի, և վասն նորին հաւատացելոցն հեզութեան:
- ժդ. Սատակունն Բաբելացւոցն:
- ժե. Հակառակ այլազգեացն մարգարեանայ:
- ժզ. Կորուստ Մովաբացւոցն:
- ժէ. ԶՔրիստոսէ մարգարեութիւն, և ՚ի դէմս Մովաբու կործանունն

Սատանայի:

ժը. Կորուստ Դամասկոսի, և Իսրայելի վիշտը և փրկութիւն:

ժթ. Կորուստ Եգիպտացւոց, և սատակումն ամպարշտութեան նոցա, և առակաւ ՚ի հեթանոսս որ հաւատալոց էին ՚ի Քրիստոս:

ի. Հրաման առնու Եսայի մերկ և բոկ գնալ ՚ի նշանակ գերութեան Եգիպտացւոց և Եթովպացւոց:

իա. ՚ի գումարել Մարացն ՚ի վերայ Բաբելացւոցն գուշակէ:

իբ. Կորուստ Եդովմայեցւոցն և Արաբացւոց, և վերջին պաշարումն Երուսաղեմի զոր պաշարեցաւ ՚ի Նաբուքոդոնոսորայ. և

կանխասացութիւն առ Սոմնաս հանդերձապետ վասն նորին կորստեան:

Հանդերձապետքն որ էին պահապանք տաճարին՝ ՚ի քահանայիցն էին:

իգ. Կորուստ Տիրոսի, և յետոյ փրկութիւն, և առակաւ զեկեղեցւոյ:

իդ. ՚ի վիշտս Հրէիցն նկարէ զվերջին տագնապն աշխարհի, և զճառս

գեհեմին. և վասն կորստեան Բաբելացւոց՝ գոհութիւն Աստուծոյ ՚ի մարգարէէն, և վասն ՚ի Քրիստոս հաւատացելոց մարգարէութիւն. և վասն յարութեան մեռելոց:

իե. ՚ի դէմս Բաբելացւոց ասէ զկորուստն Սատանայի. և առ Իսրայել սպառնալիք գերութեան, և փողով աւետիք դարձին, յորժամ աւերի Բաբել, և արգելցի անցանել ընդ Եփրատ. ապա և զԻսրայելէ ամբաստանութիւն, յորում ՚ի սպառնալիս խօսելոյ ընդ նոսա օտար լեզուօք Քաղդէացւոցն, վասն հրեղէն լեզուացն մարգալութիւն:

իզ. Յուսացելոցն յԱսորեստանեայս, զՔրիստոս ցուցանէ յոյս և հիմն հաստատուն, և խրատէ. նա զի թէ և տանջիցինք՝ մի՛ յուսալ ՚ի սնոտիս, յայտնէ թէ գերելոց է Երուսաղեմ. և ՚ի սատակումն Բաբելացւոցն նկարէ զհանդերձեալ գալուստն. մեղադրէ յիմարելոցն, և գուշակէ զմուտն հեթանոսաց:

իէ. ՚ի փրկութիւնն Երուսաղեմի որ ՚ի Սենեքերիմայ՝ նկարէ զմեծ փրկութիւն ՚ի Քրիստոս հաւատացելոցն:

իը. Պատուհասի Իսրայել, զի եբարձ յԱստուծոյ գոյսն և յԵգիպտացին ապաստան եղև. կանխաւ գուշակին նմա չարիք և յետոյ շինութիւն.

մարգարէանայ ՚ի նմին և վասն եկեղեցւոյ և հանդերձեալ աւուրն:

իթ. ՚ի դէմս եկեղեցւոյ վասն դարձին հեթանոսաց ՚ի Քրիստոս, և վասն աւերածոյն և շինելոյն Երուսաղեմի:

լ. Աղօթք վասն սատակման Ասորեստանեացն, և փրկութեանն որ Քրիստոսիւ լինելոց էր:

լա. Վասն դարձին Հրէից և հաստատութեան եկեղեցւոյ. և եթէ խզիլն Հրէից գերութեամբ վասն մեղացն էր. և հեթանոսաց օրինօք մեղաց՝ որոց խոստանայ զթողութիւն:

լբ. Պատմութեամբ զհարուածս Ասորեաց և զԵդոմայ, և զտանջանս հանդերձեալ աւուրն. և ըստ հանելոյ զաւերն Հրէից, և զշինութիւն եկեղեցւոյ:

լգ. Սենեքերիմայ և Եգեկիայ պատմութիւն:

լդ. Ընդ աւետիս դարձին մարգարէութիւն վասն Յովհաննու

Կարապետին, և վասն այնոցիկ որ ՚ի Քրիստոս էին հաւատացելոց:

լե. ՚ի հաւատ դարձին Հրէից և գալստեանցն Տեառն, զԱստուծոյ զօրութիւնն ցուցանէ. և ամբաստան լինի զկռապաշտութենէն Իսրայելի. և

յիշատակէ գերախտիսն որ առ ժողովուրդն:

լգ. Ի յաղթութիւնն Յրէից մարգարեանայ վասն եկեղեցական հաստատութեան, և կռոցն տկարութեան:

լէ. Վասն Քրիստոսի մարգարտութիւն, և վասն հաւատացելոց ՚ի նա. և աստ կայ այն՝ թէ ՚ի խաւարէ լոյս ծագեաց:

լը. Նախատէ զԻսրայէլ վասն մեղաց. և թէ վասն ստունգանելոյ եկին հասին նոցա չարիք:

լթ. Առաջնով փրկութեամբքն որ յեգիպտոս և ՚ի ծովն վստահ առնէ, և զառ ՚ի Քաղդէացւոցն և վասն Քրիստոսի փրկութեանս. և զի առանց զոհից փրկեաց զնոսա. և չպահանջէ զոհիւք պաշտօն, և վասն ՚ի Քրիստոս հաւատացելոց:

խ. Յանդիմանութիւն կռոցն տկարութեան, և ընծայութիւն Աստուծոյ զօրութեանն, որ ցրէ զըղծութիւնս և հաստատէ զմարգարտութիւնս, և կոչէ զԿիւրոս. և զի Աստուած է Քրիստոս՝ յոր նորոգին կղզիք. և զի նմա կրկնի ամենայն ծունր, որ և կոչէ յապաշխարութիւն:

խա. Կորուստ Բաբելացւոցն, և յանդիմանութիւն Յրէիցն խստութեան. և դիւրութեանց մարգարտութիւն. յորում վասն Քրիստոսի, զի յարգանդէ կոչեցաւ՝ Յիսուս, որ և լոյս հեթանոսաց: Եւ ետ զթիկունս ՚ի հարուածս: Խբ. Մարգարտութիւն վասն Քրիստոսի, և մխիթարութիւնն Երուսաղեմի, որ լիապէս կատարի յեկեղեցի:

խգ. Վասն առաքելոցն, և վասն Քրիստոսի մարգարտութիւն:

խդ. Վասն Քրիստոսի զարմանագործութեանցն, և չարչարանացն, և յարութեանն, և յաճախութեան հաւատացելոցն ՚ի նա:

խե. Վասն եկեղեցւոյ, և վասն Քրիստոսի իշխելոյն հեթանոսաց. ամբաստանութիւն կռապաշտութեանն Յրէից. հրաժեշտ ՚ի պահոց նոցա, և այլոց ընդունելի պահոց օրինակ. ամբաստանութիւն նենգաւոր գործոց և խորհրդոց նոցա. և պատուհաս որ ձգի և ՚ի հանդերձեալն, և աւետիք լուսաւորելոցն ՚ի Քրիստոս:

խզ. Վասն իջանելոյ Սուրբ Յոզակոյն ՚ի Քրիստոս, և բժշկութեանցն որ հոգւոց և մարմնոց լինելոց էին ՚ի նմանէ. և վասն առաքելոցն և հաւատացելոց պսակելոց ՚ի Քրիստոս. և վասն առաջին և երկրորդ գալստեանն:

խէ. Նկարագրաւն զհարուածսն Եղմայ յետ դարձին. և ըստ հանելոյ զչարչարանսն, և յերկինսն զհամբառնալն Քրիստոսի մարգարեանայ:

խը. Գոհութիւն Տեառն որ հնծան եհար. և ՚ի մարգարէէն իբրև ՚ի ժողովրդենէն խոստովանութիւն և աղերս. և ՚ի Տեառնէ յանդիմանութիւն անհաւանութեան նոցա. և ՚ի նոյն ընդունելութիւն հաւատացելոց, թէ՛ Գոյայ այնոցիկ. և ամբաստանութիւն զՅրէիցն կռապաշտութենէ, և սպառնալիք:

խթ. Վասն առ ՚ի Յրէից հաւատացելոց ՚ի Քրիստոս ճիռն օրհնութեան, զի վասն նորա ո՛չ կորեան ամենայն Յրէայք, և ամբաստանութիւն զանհաւատիցն:

ծ. Խրատ հեզութեան ՚ի փառս Աստուծոյ, և բօթ Բաբելոնի, և աւետիք Երուսաղեմի, և գալստեանցն Տեառն, և վասն հանդերձեալ կենացն:

ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՆ ԵՍԱՅԱՅ*

1

Գլուխ Ա

¹Տեսիլ Եսայայ որդւոյ Ամովսայ. զոր ետես ՚ի վերայ Չրէաստանի, և ՚ի վերայ Երուսաղէմի: Ի թագաւորութեանն Ոգիայ և Յովաթամայ և Աքազու և Եզեկիայ, որք թագաւորեցին Չրէաստանի:*

Ա ²Լուր երկին և ունկն դիր երկիր՝ զի Տէր խօսեցաւ. Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին: ³Ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմտւոր տեառն իւրոյ. և Իսրայէլ զիս ո՛չ ծանեաւ, և ժողովուրդ իմ զիս ՚ի միտ ո՛չ առ*: ⁴Վայ ազգին մեղաւորի. ժողովուրդ որ լի՛ է մեղօք, սերմն ժանտ, որդիք անօրէնք. թողէք զՏէր և բարկացուցէք զՍուրբն Իսրայէլի. օտարացան և յետս կացին*. ⁵զի՞ ևս յաւելուք վէրս յանօրէնութիւնս: Ամենայն գլուխ ՚ի ցաւս, և ամենայն սիրտ ՚ի տրտմութիւն*:⁶Յոտից մինչև ցգլուխ՝ չի՞ք ՚ի նմա առողջութիւն. ո՛չ վէրք՝ ո՛չ այտումն, ո՛չ հարուածք խխայթեալք. չի՞ք սպեղանի ՚ի վերայ դնել, ո՛չ ձեթ՝ և ո՛չ պատանս*:⁷Երկիր ձեր՝ աւերակ. քաղաքք ձեր՝ հրձիգք. զաշխարհն ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց:⁸Լքեալ թողցի դուստր Սիովմի իբրև զտաղաւար յայգւոջ, և իբրև զհովանի մրգապահաց ՚ի մէջ սեխենեաց. և իբրև զքաղաք պաշարեալ*:⁹Եւ եթէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ՝ իբրև զՍողոմ լինեաք, և Գոմորայ՝ նմանեաք:¹⁰Լուարուք զբան Տեառն իշխանք Սողոմացւոց. ունկն դիք օրինաց Աստուծոյ ժողովուրդք Գոմորացւոց:¹¹Չի՞ կայ իմ և յաճախելոյ զոհիցդ ձերոց՝ ասէ Տէր. յագեալ եմ ողջակիզօք խոյոց ձերոց. և զճարպս գառանց, և զարիւն ցլուց և նոխազաց ո՛չ կամիմ*. ¹²և ո՛չ թէ գայցէք յանդիման լինել ինձ: Ո՞վ իսկ խնդրեաց զայդ ՚ի ձեռաց ձերոց. կոխել զգաւիթս իմ մի՛ յաճախէք*:¹³Եթէ մատուցանիցէք ինձ նաշիի՝ զո՛ւր է. և խունկք ձեր պիղծ են ինձ. զգլուխս ամսոց ձերոց՝ և զշաբաթս՝ և զօրն մեծ՝ ո՛չ առնում յանձն. ¹⁴զպահս և զդատարկութիւնս, և զամսագլուխս ձեր, և զտօնս ձեր ատեաց անձն իմ: Յագեալ եմ ձեւք, ո՛չ ևս ներեցից մեղաց ձերոց:¹⁵Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր՝ դարձուցի՛ց զերեսս իմ ՚ի ձէնջ. և եթէ յաճախիցէք յաղօթս՝ ո՛չ լուայց ձեզ. զի ձեռք ձեր լի՛ են արեամբ:¹⁶Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք. ընկեցէ՛ք զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց. դադարեցէ՛ք ՚ի չարեաց ձերոց. ¹⁷ուսարո՛ւք զբարիս գործել. խնդրեցէ՛ք զիրաւունս. փրկեցէ՛ք զգրկեալն. դա՛տ

* *Ոմանք ունին վերնագիր. Եսայի Մարգարէ. և ոմանք. Մարգարէութիւն Եսայեայ:*

* *Բազումք. Որ թագաւորեցին:*

* *Ոմանք. Ծանեաւ եզն զտաժիչ իւր:*

* *Ոսկան. Վայ ազգի մեղա՛... թողին զՏէր, և բարկացուցին զՍուրբն Իսրայէլի:*

* *Ոմանք. Վէրս յանօրէնութիւնն:*

* *Ամենայն օրինակք համաձայն մերումս ունին՝ Ո՛չ վէրք, ո՛չ այտումն, ո՛չ հարու՛. ուր Ոսկան բառնայ զոչսն ՚ի բնաբանէն և ՚ի լուսանցսն նշանակէ: Ոմանք. Խղխայթեալք:*

* *Ոմանք. Ի մէջ սեխենեաց. և որպէս քաղաք պաշարեալ:*

* *Ոմանք. Եւ զճարպ գառանց:*

* *Օրինակ մի. Եւ թէ ոչ գայցէ յանդի՛: Ոմանք. Ո՞վ իսկ խնդ՛... մի՛ յաճախիցէք:*

արարէք որբոյն, և տո՛ւք իրաւունս այրոյն: ¹⁸Եւ եկայք խօսեցարուք ընդ միմեանս՝ ասէ Տէր. և եթէ իցեն մեղք ձեր իբրև զճանձախարիթ՝ իբրև զծիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև զորդան կարմիր՝ իբրև զանոթ սուրբ արարից*։ ¹⁹Եւ եթէ ախորժեսջիք և լուիջիք ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք. ²⁰ապա թէ ոչ կամիցիք լսել ինձ, տո՛ւր կերիցէ զձեզ. քանզի բերան Տեառն խօսեցաւ զայս: ²¹Չիա՞րդ եղև պոռնիկ քաղաքն հաւատարիմ Սիոն, լի՛ հաւատովքն՝ յորում արդարութիւն հանգուցեալ էր, և արդ՝ սպանօղք են: ²²Արձաթ ձեր անփորձ. վաճառականք ձեր խառնե՛ն ջուր ընդ գինի. ²³իշխանք ձեր ապստամբք, գողակի՛ցք են գողոց, սիրե՛ն զկաշառս, վրիժագործք. որբոց իրաւունս ո՛չ առնեն, և դատաստանի այրեաց՝ ունկն ո՛չ դնեն*։ ²⁴Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր զօրութեանց Չզօրն Իսրայէլի. Վայ՛ ձեզ հզօրքդ Իսրայէլի, զի ո՛չ եւ դադարեսցէ բարկութիւն իմ՝ ի հակառակորդաց իմոց. և դատաստանօք դատեցայց զթշնամիս իմ*։ ²⁵Եւ արկից զձեռն իմ՝ ի վերայ քո. և ածից քեզ եռանդն ՚ի սրբութիւն ապստամբացդ, և զապստամբսդ կորուսից. և բարձից ՚ի քէն զամենայն անօրէնս. և զամենայն ամբարտաւանս խոնարհեցուցի՛ց*։ ²⁶Եւ կացուցից ՚ի վերայ քո դատաւորս իբրև զառաջինն, և զխորհրդականս քո որպէս իսկզբանէն. և ապա կոչեսջիր դու քաղաք արդարութեան՝ մայր քաղաքաց հաւատարիմ Սիովն: ²⁷Չի իրաւամբք և արդարութեամբ փրկեսցի գերութիւն նորա, և ողորմութեամբ*։ ²⁸Եւ խորտակեսցի՛ն անօրէնք և մեղաւորք ՚ի միասին. և ոյք թողին զՏէր՝ վախճանեսցին ՚ի միասին: ²⁹Քանզի արդ՝ ամաչեսցեն ՚ի կուռս իւրեանց ընդ որս ինքեանք հաճեալ էին. և զգեցցին զամօթ ՚ի դրօշալս իւրեանց զորս ինքեանքն արարին. և ամաչեսցեն ՚ի պարտէզս իւրեանց որոց ցանկացան: ³⁰Չի եղիցին իբրև զբլեկնի՛ տերևաթափ, և իբրև զդրախտ որոյ ո՛չ գուցէ ջուր*։ ³¹Եւ եղիցի զօրութիւն նոցա իբրև զձեծած՝ վշոյ. և գործք նոցա իբրև զկայծակունս հրոյ. և այրեսցին անօրէնք և մեղաւորք ՚ի միասին. և ո՛չ ոք իցէ որ շիջուցանիցէ:

2

Գլուխ Բ

¹Բանն որ եղև առ Եսայի որդի Ամովսայ՝ ՚ի վերայ Չրեաստանի և ՚ի վերայ Երուսաղեմի:

Բ ²Չի եղիցի յաւուրս յետինս յայտնի՛ լեառն Տեառն. և տուն Աստուծոյ ՚ի վերայ գլխոց լերանց. և բարձրացի ՚ի վերայ բլրոց. և եկեսցեն ՚ի նա ամենայն հեթանոսք*։ ³Եւ երթիցեն ժողովուրդք բազումք, և ասասցեն. Եկայք ելցուք ՚ի

* *Ոմանք.* Եւ եկայք խօսեսցուք ընդ մի՛... որպէս զասր: *Օրինակ մի.* Իբրև զճանձրախարիթ:

* *Ոմանք.* Եւ ՚ի դատաստանի այրեացն:

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս:

* *Յոմանս պակասի.* Եւ ածից քեզ եռանդն ՚ի սր՛... և զապստամբսդ կորուսից... և զամենայն ամբարտաւանս խոնարհեցուցից: *Ի՛ լուս՛.* Եւ զանհաւանս կորուսից:

* *Ոմանք.* Չի իրաւամբ և ողորմութեամբ փրկեսցին գերիք քո: Եւ խորտակես՛:

* *Ոմանք.* Չի եղիցի իբրև զբլեկն ՚ի տերևաթաք:

* *Օրինակ մի.* Եւ եղիցի յաւուրս:

լեառն Տեառն և ՚ի տուն Աստուծոյ Յակովբայ. և պատմեցէ մեզ զճանապարհս իւր, և զնասցուք ընդ նա: ⁴Զի ՚ի Սիոնէ ելցեն օրէնք, և բան Տեառն յերուսաղէմէ*.

⁴և դատեցի ՚ի մէջ հեթանոսաց, և յանդիմանեցէ զժողովուրդս բազումս: Եւ ծուլեցեն զսուսերս իւրեանց ՚ի խոփս, և զսուիմս իւրեանց ՚ի մանգաղս. և ո՛չ առնուցու ազգ յազգի վերայ սուր. և ո՛չ ևս ուսանիցին տալ պատերազմ*:

⁵Եւ արդ դու տուն Յակոբու՝ եկայք երթիցուք ՚ի լո՛յս Տեառն: ⁶Քանզի եթող նա զժողովուրդ իւր զտունն Յակովբայ. զի լցա՛ւ իբրև զառաջինն աշխարհ նոցա հմայիւք իբրև զայլազգեաց, և որդիք բազումք՝ այլազգիք ծնան նոցա: ⁷Լցա՛ւ աշխարհ նոցա ոսկուով և արծաթով՝ և ո՛չ էր թիւ գանձուց նոցա. լցա՛ւ երկիր նոցա երկվարօք՝ և ո՛չ էր թիւ կառաց նոցա: ⁸Լցա՛ւ երկիր նոցա զարշէլեօք զործոց ձեռաց իւրեանց, և երկիր պագին որոց արարին մատուներ նոցա: ⁹Խոնարհեցաւ մարդ, և յերկիր կործանեցաւ այր. և ո՛չ ներեցից նոցա: ¹⁰Եւ արդ երթայք մտէք ընդ վիմօք, և թաքերո՛ւք յերկրի յերեսաց ահի Տեառն, և ՚ի փառաց զօրութեան նորա. յորժամ յարիցէ վանել զերկիր*:

¹¹Զի աչք Տեառն բարձո՛ւնք են, և մարդ տառապեալ. և խոնարհեցի՛ բարձրութիւն մարդկան, և բարձրացի Տէր միայն յաւուր յայնմիկ: ¹²Զի օ՛ր Տեառն զօրութեանց ՚ի վերայ ամենայն հպարտից և ամբարտաւանից, և ՚ի վերայ ամենայն բարձրացելոց և վերացելոց, և խոնարհեցին: ¹³Եւ ՚ի վերայ ամենայն մայրից Լիբանանու բարձրացելոց և վերացելոյ. և ՚ի վերայ ամենայն ծառոց կաղնեաց Բասանու*.

¹⁴և ՚ի վերայ ամենայն լերանց բարձանց. և ՚ի վերայ ամենայն բլրոց բարձրացելոց: ¹⁵Եւ ՚ի վերայ ամենայն աշտարակաց բարձրացելոց. և ՚ի վերայ ամենայն պարսպաց բարձրացելոց. ¹⁶և ՚ի վերայ ամենայն նաւաց ծովու. և ՚ի վերայ ամենայն հանդիսի գեղեցկութեան նաւաց*:

¹⁷Եւ խոնարհեցի՛ ամենայն մարդ, և անկցի՛ հպարտութիւն մարդկան. և բարձրացի Տէր միայն յաւուր յայնմիկ: ¹⁸Եւ զձեռագործս իւրեանց զամենայն տարցին ¹⁹թաքուցեն յայրս և ՚ի ծերպս վիմաց՝ և ՚ի սորս երկրի, յերեսաց ահի Տեառն և ՚ի փառաց զօրութեան նորա, յորժամ յարիցէ վանել զերկիր: ²⁰Զի յաւուր յայնմիկ հանցէ մարդ զգարշէլիս իւր զարծաթեղէնս և զոսկեղէնս զոր արարին, երկիր պագանել սնոտեաց և չղջիկանաց. ²¹մտանէ՛լ ՚ի ծակս վիմի հաստատնոյ՝ և ՚ի ծերպս վիմաց. յերեսաց ահի Տեառն՝ և ՚ի փառաց զօրութեան նորա, յորժամ յարիցէ վանել զերկիր: ²²Լռէ՛լ ձեզ ՚ի մարդոյն յորում գոյ շունչ յռնագունս նորա. զի ընդ ո՞ւմ ումեք համարեցի նա*:

3

Գլուխ Գ

¹Ահաւասիկ Տէր Տէր զօրութեանց բարձցէ՛ ՚ի Զրեաստանէ և յերուսաղէմէ զայր հզօր՝ և զկին զօրաւոր, զզօրութիւն հացի, և զզօրութիւն ջրոյ. ²զհսկայն և զզօրաւորն, և զայր պատերազմօղ, և զդատաւոր, և զմարգարէ, և զքննիչ, և

* *Ոմանք.* Եկայք երթիցուք ՚ի լեառն Տեառն:

* *Յօրինակին.* Եւ ո՛չ առնու ազգ յազգի: *Ուր ոմանք.* Եւ ո՛չ ևս առնուցու:

* *Օրինակ մի.* Եւ թագեցարուք յերկրի:

* *Ի լուս՝.* Բարձրացելոյ և վերացելոց. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝:*

* *Ոսկան.* Ամենայն նաւուց... գեղեցկութեան նաւուց:

* *Օրինակ մի.* Լսել ձեզ ՚ի մարդոյն:

զծեր*³ և գլխնապետ, և զսքանչելի խորհրդական, և զիմաստուն ճարտարապետ, և զհանճարեղն զունկնդիր*⁴ Եւ կացուցից ՚ի վերայ նոցա մանկունս իշխանս. և խաբեբայք տիրեսցեն նոցա: ⁵Եւ անկցի՝ ժողովուրդն՝ այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում. ընդհարցի մանուկն ընդ ծերոյն, և անարգն ընդ պատուականին: ⁶Ձի բուռն հարկանիցէ այր զեղբօրէ իւրմէ, կամ զընտանույ իւրոյ, և ասիցէ. Յանդերձք գո՛ն քո, լե՛ր մեր իշխան. և կերակուր մեր ընդ քե՛զ լիցի: ⁷Տացէ՛ պատասխանի յաւուր յայնմիկ՝ և ասասցէ. Ո՛չ եղէց իշխան, զի ո՛չ գոյ ՚ի տա՛ն իմում հաց՝ և ո՛չ հանդերձ. և ո՛չ եղէց իշխան ժողովրդեանս ա՛յսմիկ*⁸ Ձի լքա՛ւ Երուսաղէմ, և Յրէաստան կործանեցա՛ւ. և լեզուք նոցա անօրէնութեամբ ՚ի Տեառնէ ապստամբեցին: ⁹Վասն որոյ խոնարհեցան փառք նոցա, և ամօք երեսաց նոցա ծածկեաց գնոսա. զի զամպ փառաց նորա թշնամանեցին. և զմեղս իւրեանց իբրև զՍողոմնացուցն պատմեցին և յայտ արարին: Վա՞՞յ անձանց նոցա զի խորհեցան խորհուրդ չար առանձինն*¹⁰ և ասեն. Կապեսցուք զարդարն՝ զի դժպիհ՛ եղև մեզ: Այսուհետև զարդիւնս զործոց իւրեանց կերիցեն: ¹¹Վա՛յ անօրինին. չարիք ըստ զործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա՛: ¹²Ժողովուրդ իմ՝ հարկահանք ձեր ճռաքա՛ղ առնեն զձեզ, և պահանջօրք տիրեն ձեզ. ժողովուրդ իմ որ երանենդ ձեզ՝ խաբեն զձեզ, և զշաւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն: ¹³Այլ արդ հասցէ՛ Տէր ՚ի դատաստան, և կացուցէ յայտնի զժողովուրդ իւր՝. ¹⁴Ինքնին՝ Տէր ՚ի դա՛տ եկեսցէ ընդ ծերս ժողովրդեան իւրոյ՝ և ընդ իշխանս նոցա. դուք զի՞՞ հրկէ՛զ արարէք զայգի իմ, և յափշտակութիւն տնանկի՛ն է՝ ՚ի տունս ձեր՝: ¹⁵Դուք զի՞՞ զրկէք զժողովուրդ իմ, և զերեսս տնանկաց լի՛ առնէք ամօթով, ասէ Տէր Տէր զօրութեանց:

Դ ¹⁶Այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի հպարտացան դստերք Սիովնի, և գնացին ՚ի բա՛րձր պարանոց. յօնիւքն ակնարկէին, և ՚ի գնացս իւրեանց քարշէին զստորոտս իւրեանց, և ոտիւքն կաքաւէին*¹⁷ Եւ խոնարհեցուցէ Աստուած զիշխանս դստեր Սիոնի, և մերկասցէ՛ Տէր զգարդ նոցա ¹⁸յաւուր յայնմիկ. և հանցէ Տէր զփառս հանդերձից նոցա, և զպատմութեանս նոցա*¹⁹ և զհելսս, զծամակալս, և զպսակակալս, ²⁰և զմահիկս, և զգարդ երեսաց նոցա, և զպատմութեանս զարդու փառաց նոցա, և զքօղէս, և զապարանջանս, և զմեհևանդս, և զգինդս*²¹ և զմատանիս, և զկշտապանակս նոցա, զդիպակս, և

* Ոմանք. Եւ զհսկայն և զօրաւորն, և զայր:

* Բազումք. Եւ զսքանչելին խորհրդական:

* Ոմանք. Եւ ասիցէ. Ոչ եղէց քեզ. կամ՝ ձեզ իշխան:

* Ի բազումս պակասի. Ծածկեաց գնոսա. զի զամպ փառաց նորա թշնամանեցին. և զմեղս:

* Ոմանք. Իւրոց անցանեն ընդ նա:

* Այլք. Եւ կացուցէ յայտնի զժողովուրդ իւր:

* Յօրինակին. Դու զի՞՞ հրկէ՛զ ա՛:

* Բազումք. Եւ յօնօք ակնարկէին:

* Ոմանք. Եւ զպատմութեանս նոցա, (19) և զհելսս, և զծամակալս:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ և զպատմութեանս զար՝. նշանակեալ ասի՝ թէ՛ մենն քերեալ էր. իբր զի՛ ՚ի գաղափարին յորմէ՛ ընդ օրինակէր՝ զառաջինն զպատմութեանս զրեալ, յետոյ՛ մենն ՚ի բաց քերեալ ՚ի նմանէ՛ ձևացուցեալ էր զպատմութեանս. ըստ որում ունի՛ և այլ օրինակ մի. թէպէտ և ՚ի մնացեալ զրչագրաց մերոց՝ աստէն ոմանք դնեն՝ զպատմութեանս, և ոմանք՝ զպատմութեանս:

զճեղանակս*։ ²²Ձեզրածիրանին, և զմիջնածիրանին, զառտնին արկանելի, և զերևելի լակոնացին*։ ²³զբեհեզն, և զերկնագոյն, և զկարմիր շղաշատեռն, և զճամկաւորն, և զոսկեճամուկն, և զոսկէտտուն։ ²⁴Եւ եղիցի փոխանակ հոտոցն անուշից՝ փոշի՝. և փոխանակ կամարացն՝ չուան գօտի. և փոխանակ ոսկեզարդո՛ւ գլխոյն կնդութիւն՝ վասն գործոց քոց. և փոխանակ ոսկեհուռ դիպակին՝ քո՛ւրծ զգեցցիս*։ ²⁵Եւ որդիդ քո սիրելի զոր սիրես՝ սրո՛վ մեռցի. և իշխանք ձեր սրո՛վ անկցին*։ ²⁶և թշուառացին, և սո՛ւզ զգեցցին սապատք զարդուց ձերոց. և մնասջիր միայն, և յերկի՛ր կործանեսջիր։

4

Գլուխ Դ

¹Եւ բուռն հարկանիցեն եւթն կին զառնէ՛ միոջէ՛ և ասիցեն. Դաց՝ զմե՛ր կերիցուք՝ և հանդերձ՝ զմե՛ր զգեցցուք. բայց միայն անո՛ւն քո կոչեսցի՝ ՚ի վերայ մեր. բա՛րձ ՚ի մէնջ զնախատինս մեր*։ ²Յաւուր յայնմիկ ծագեսցէ Աստուած խորհրդովք փառօք իւրովք յերկիր, բարձրացուցանել և փառաւոր առնել զմնացորդս Իսրայէլի*։ ³Եւ մնացորդքն Սիովնի, և մնացորդքն Երուսաղեմի սո՛ւրբ կոչեսցին՝ ամենեքեան որ գրեցան յերուսաղեմ ՚ի կեանս*։ ⁴Ձի լուսացէ Տէր զաղտն ուստերաց և դատերաց Սիոնի և զերուսաղեմի. և զարիւնն ՚ի բաց սրբեսցէ ՚ի միջոյ նոցա հոգւով դատաստանաց, և հոգւով այրման։ ⁵Եւ եկեսցէ և հասցէ Տէր, և եղիցի ամենայն տեղի լերինն Սիոնի, և ամենայն որ շուրջ զնովաւ իցէ՝ հովանի՛ ամպոյ ՚ի տուէ. իբրև զծովս և զլոյս հրոյ բորբոքելոյ ՚ի գիշերի. ամենայն փառօք ծածկեսցի*։ ⁶Եւ եղիցի հովանի՛ ՚ի տօթոյ, և յա՛րկ ծածկութեան ՚ի խստութենէ անձրևոյ։

5

Գլուխ Ե

¹Երգեցից սիրելւոյ այգւոյ իմոյ զերգս սիրելւոյ նորա։

Ե Այգի՛ եղև սիրելւոյն յանկեան. ՚ի տեղւոջ պարարտութեան*։ ²Յանգով փակեցի՝ անրութեամբ պարսպեցի ձողաբա՛րձ զարդարեցի. և տնկեցի որթ

* *Ոմանք.* Եւ զճեղեմակս։

* *Ոմանք.* Եւ զմիջածիրանին. զառտնին արկանելին. *կամ՝* արկանելիս։

* *Բազումք.* Եւ փոխանակ ոսկի զարդու գլխոցն։

* *Այլք.* Եւ որդիդ քո գեղեցիկ զոր սիրես։

* *Ոմանք.* Եւ ասասցեն. Ձիաց մեր... և զհանդերձ։

* *Ոսկան.* Խորհրդովք և փառօք իւ՛ր։

* *Ոմանք.* Որ գրեցան յերուսաղեմէ ՚ի կեանս։

* *Ի բազումս պակասի.* Եւ եկեսցէ, և *հասցէ Տէր.* և ե՛ր։ *Ոսկան.* Որ զշուրջ զնո՞ւ։ *Ոմանք.* Եւ իբրև զծովս։

* *Ոսկան.* Եւ հովանի ՚ի տօթոյ։ *Այլք.* ՚ի խստութենէ և յանձրևոյ։

* *Ոմանք.* Երգեցից սիրեցելոյ... զերգս սիրեցելոյ նորա։ *Ուր ոմանք.* զերգս սիրելւոյն... սիրեցելոյն յանկեան տեղւոջ։

սորել. աշտարակ շինեցի 'ի միջի նորա. և գո'ւբ հնծան փորեցի 'ի նմա. և մնացի զի բերցէ խաղող, և եբեր փո'ւշ*: ³Եւ այժմ արք Յուդայ և բնակիչք Երուսաղեմի. դա'տ արարէք ընդ իս և ընդ այգի իմ: ⁴Ձի'նչ ինչ առնել էր այգւոյ իմում, և ես ո'չ արարի նմա. մնացի զի բերցէ խաղող՝ և եբեր փո'ւշ*: ⁵Եւ արդ՝ ես ինձէն պատմեցից զինչ արարից ընդ այգի իմ. քակեցի'ց զցանգ նորա, և եղիցի յափշտակութիւն. կործանեցից զպարիսպս նորա, և եղիցի 'ի կոխո'ւմն: ⁶Եւ թողի'ց զայգի իմ. և մի' յատցի, և մի' բրեսցի. և բուսցի 'ի նմա փո'ւշ իբրև 'ի խոպանի. և պատուէր տաց ամպոց ինոց զի մի' տեղասցեն յայգի իմ*: ⁷Ձի այգի Տեառն զօրութեանց՝ տունն Իսրայէլի է. և մարդն Յուդայ նորատունկ սիրելի. մնացի զի արասցէ իրաւունս՝ և արա'ր անիրաւութիւն, և ո'չ արդարութիւն՝ այլ աղաղակ:

Ձ ⁸Վա'յ այնոցիկ որ յարեն տուն 'ի տուն, և ագարակ առ ագարակ՝ մերձեցուցեն, զի զընկերին հանիցեն. միթէ միա'յն բնակելոց իցէք յերկրի*: ⁹Նա աւանիկ ա'զդ եղև յականջս Տեառն զօրութեանց այդ ամենայն: Ձի եթէ եղիցին տունք բազումք, սակայն յաւե'ր դարձցին. և եթէ մեծամեծք և գեղեցիկք իցեն, ո'չ ոք իցէ որ բնակիցէ 'ի նոսա*: ¹⁰Ձի ուր գործիցեն տա'սն լուծք եզանց, եղիցի անդ սափո'ր մի. և որ սերմանիցէ արդո'ւս վեց, ժողովեցէ գրի'ւս երիս*: ¹¹Վա'յ այնոցիկ որ յառնեն ընդ առաւօտս՝ և զհե'տ լինին ցքւոյն. որ երեկանան 'ի նմին. զի գինին իսկ անդէն զնոսին այրէ*: ¹²Փողովք և թմբկաւ և քնարաւ, և երգովք զգինին ըմպեն. և 'ի գործս Տեառն ո'չ հային, և զգործս ձեռաց նորա ո'չ առնուն 'ի միտ: ¹³Այսուհետև 'ի գերութիւն մատնեցաւ ժողովուրդ իմ, վասն չճանաչելոյ նոցա զՏէր. և բազո'ւմ եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյ*: ¹⁴Եւ լայնեցին դժոխք զանձինս իւրեանց՝ և բացին զբերանս իւրեանց՝ զի մի' դադարեսցեն. և իջցեն փառաւորք՝ և մեծամեծք, և մեծատունք և ժանտագործք նոցա, և զուարճացեալն 'ի նմա*: ¹⁵Եւ խոնարհեսցի՝ մարդ, և անարգեսցի՝ այր. և աչք ամբարտաւանք խոնարհեսցին. ¹⁶և բարձրացի Տէր զօրութեանց իրաւամբք, և Սուրբն փառաւորեսցի արդարութեամբ*: ¹⁷Եւ արածեսցին յափշտակեալքն իբրև ցուլք. և զաւերակս մնացելոցն գառի'նք կերիցեն: ¹⁸Վա'յ այնոցիկ ոյք ձգեն զմեղս իւրեանց իբրև երկայն պարանաւ. և իբրև փոկով լծոյ երնջոց զանօրէնութիւնս*: ¹⁹Ոյք ասեն թէ վաղվաղակի մերձեսցի զոր առնելո'ցն իցէ՝ զի տեսցո'ւք. և եկեսցէ խորհուրդ Սրբոյն Իսրայէլի՝ զի գիտասցո'ւք: ²⁰Վա'յ այնոցիկ ոյք ասիցեն զչա'րն բարի, և զբարի'ն չար. ոյք դնիցեն զլոյսն խաւար, և զխաւար լոյս. ոյք դնիցեն զդառն քաղցր, և զքաղցրն դառն: ²¹Վա'յ այնոցիկ որ զանձինս առ իմաստո'ւնս ունիցին, և յաչս

* *Ի բազումս պակասի. Փակեցի, ամրութեամբ պարսպեցի ձողա՞: Ոսկան. Ձի բերցէ ինձ խաղող:*

* *Ոմանք. Այգւոյ իմոյ:*

* *Ոմանք. Ձի մի' տեղասցին:*

* *Ոմանք. Առ ագարակ մերձեցուցանեն:*

* *Ոմանք. Ոչ ոք իցեն, որ բնակիցեն. կամ՝ բնակեսցէ 'ի նոսա:*

* *Ոմանք. Ձի ուր գործեսցեն:*

* *Ոմանք. Ոյք յառնեն... որ երեկանան... անդէն իսկ զնոսին:*

* *Ոմանք. Վասն ոչ ճանաչելոյ նոցա: Օրինակ մի. Վասն սովահացի և ծա՞:*

* *Ի լուս՞. Եւ ժանտագործք նորա. համաձայն ոմանց 'ի բնաբ՞: Ոսկան. Նոցա, զուարճացեալքն 'ի նմա:*

* *Բազումք. Եւ Սուրբն Աստուած փառաւորեսցի:*

* *Ոմանք. Եւ իբրև լծոյ երնջոյ:*

անձանց իւրեանց խորհրդականս*։²²Վա՛յ հզօրաց ձերոց որ ընպէն զգինին, և իշխանացդ որ խառնեն զցքին։²³որ արդարացուցանեն՝ զամպարիշտն վասն կաշառոց, և զիրաւունս զողանան զարդարոյն*։²⁴Վասն այնորիկ որպէս վառի եղեգն՝ ՚ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին ՚ի բորբոքեալ բոցոյ. և արմատ նոցա իբրև զմղեղ եղիցի. և ծաղիկ նոցա իբրև զփոշի՝ ելանիցէ. զի ո՛չ կամեցան զօրէնս Տեառն զօրութեանց, այլ գրգռեցին ևս զբանս Սրբոյն Իսրայէլի*։²⁵Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տեառն զօրութեանց ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ, և արկ զծեռն իւր ՚ի վերայ նոցա՝ և սատակեաց զնոսա. բարկացաւ ՚ի վերայ լերանց, և եղեն դիակունք նոցա իբրև աղբ զճանապարհաւ։ ՚ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ սրտմտութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է*։

Է²⁶Այսուհետև ամբարձցէ՝ նշան յազգս հեռաւորս, և ածցէ զնոսա ՚ի ծագաց երկրի. և ահա վաղվաղակի արա՛գս ընթացին, և թեթևս հասանիցեն*։²⁷Ո՛չ քաղցիցեն, և ո՛չ վաստակեսցեն, և ո՛չ նիրհեսցեն, և ո՛չ ննջեսցեն, և ո՛չ լուծցեն զգօտիս ՚ի միջոյ իւրեանց, և ո՛չ հատցին խրացք կօշկաց նոցա։²⁸Որոց նե՛տք իւրեանց սրեալ են, և աղեղունք լարեալ. սմբակք երիվարաց նոցա իբրև զվեմ հաստատուն համարեցան. անի՛րք կառաց նոցա իբրև զմրրիկ։²⁹Դիմեսցեն իբրև զառիւծունս, և հասցեն իբրև զկորիւնս առիւծուց. գոչեսցեն և յարձակեսցին, և հատցեն զազանաբար. և ո՛չ ոք իցէ որ փրկիցէ զնոսա*։³⁰Աղաղակ արասցեն վասն նոցա յաւուր յայնմիկ, իբրև զձայն ծովու ամբոխելոյ ալետօք։ Յայեսցին յերկինս ՚ի վեր՝ և յերկիր ՚ի խոնարհ, և ահա խաւա՛ր խստութեան ՚ի տարակուսանս նոցա։

6

Գլուխ Զ

Ը¹Եւ եղև յամին յորում մեռաւ Ոգիա արքայ, տեսի՛ զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ. և լի՛ էր տունն փառօք նորա*։²Եւ սրորէք կային շո՛ւրջ զնովաւ. վե՛ց թևք միոյ՝ և վե՛ց թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, և երկուքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալ։³Աղաղակէին մի առ մի՝ և ասէին. Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ. Տէր զօրութեանց՝ լի՛ է ամենայն երկիր փառօք նորա։⁴Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին, և տունն լի՛ էղև ծխով։⁵Եւ ասեմ. Վա՛յ է ինձ՝ ես այր տառապեալ զիա՞րդ կանս, հիացեալ. զի մարդ եմ՝ և պի՛ղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես. և զՏէր զօրութեանց տեսի աջօք իմովք։⁶Եւ առաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէից անտի, և ՚ի ձեռին իւրում ունէր

* *Ոմանք.* Անձանց իւրեանց խորհրդականք։

* *Ոմանք.* Ջամպարիշտս վասն կա՞ն։

* *Ոսկան.* ՚ի բորբոքելոյ բոցոյ։ *Բագունք.* Այլ և գրգռեցին ևս զբանս։

* *Այլք.* Եւ բարկացաւ սրտմտութիւն Տեառն զօրութեանց։ *Ուր ոմանք.* Եւ բարկացեալ սրտ՝... և ՚ի վերայ այսր ամենայնի։

* *Ոմանք.* ՚ի ծագաց երկրէ. և ահա վաղվաղակի ՚ի թեթևս հասանիցեն։

* *Ոմանք.* Եւ հասցեն որպէս կորիւնս առիւ՛... և հասցեն զազանաբար։

* *Յոմանս պակասի.* Փառօք նորա։

կայծակն. զոր առեալ ունելեօք՝ ի սեղանոյ անտի, երե՛ր* 7 մերձեցո՛յց ՚ի բերան իմ, և ասէ. Ահաւասիկ մերձեցաւ ա՛յդ ՚ի շրթունս քո, և հանցէ զանօրէնութիւնս քո, և զմեղս քո սրբեսցէ՛ ՚ի քէն*։ 8 Եւ լուայ զբարբառ Տեառն որ ասէր. Զո՞ առաքեցից # և կամ ո՞վ երթիցէ առ այն ժողովուրդ։ Եւ ասեմ. Ահաւասիկ ես՝ առաքեա՛ զիս*։ 9 Եւ ասէ. Ե՛րթ և ասա՛ ցժողովուրդն ցայն. Լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛ գիտասջիք։ 10 Ձի թանձրացա՛ւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ, և ակընջօք իւրեանց ծանունս լուան. և զաչս իւրեանց կափուցի՛ն զի մի՛ երբէք տեսանիցեն աչօք, և լուիցեն ակընջօք, և իմանայցեն սրտիւք, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա՛*։ 11 Եւ ասեմ. Մինչև յե՞րբ Տէր։ Եւ ասէ. Մինչև ակերեսցին քաղաքք ՚ի բնակչաց, և տունք առ ՚ի չգոյէ՛ մարդկան. և մնասցէ երկիրդ ակերակ։ 12 Եւ յետ այսորիկ յերկարեսցէ Աստուած՝ մարդկան, և բազմասցին մնացեալքն յերկրի*։ 13 Սակայն և ՚ի նմանէ՛ տասանորդեսցեն. և դարձեալ եղիցին ՚ի գերութիւն և յափշտակութիւն, իբրև զբնեկնի տերևաթափ, և իբրև զկաղին թօթափեալ յիւրաքանչիւր պատենից # զաւակն սուրբ արձանութիւն նորա*։

7

Գլուխ Է

Թ 1 Եւ եղև յաւուրս Աքագու Յովաթամայ որդւոյ Ոգիայ՝ թագաւորին Զրէաստանի. ե՛լ Զռասիմ արքայ Արամայ, և Փակէէ որդի Զռովմելայ արքայի Իսրայէլի ՚ի վերայ Երուսաղեմի, տա՛լ ընդ նմա պատերազմ. և ո՛չ կարացին պաշարել զնա։ 2 Ա՛գդ եղև ՚ի տուն Դաւթի՝ և ասէ. Միաբանեաց Արամ ընդ Եփրեմայ. և զարհուրեցա՛ւ անձն նորա, և անձն ժողովրդեան նորա, զոր օրինակ շարժեսցի յանտառի ծառ մի ՚ի հողմոյ*։ 3 Եւ ասէ Տէր ցեսայի. Ե՛լ ընդ առաջ Աքագու՝ դու և մնացեալ որդին քո Յասուր, հանդէպ ակազանին վերին ճանապարհի ագարակին թափջի. 4 և ասասցէս ցնա. Զգո՛յ՛ լեր՝ հանդարտեա՛, և մի՛ երկնչիր. և մի՛ զարհուրեսցի անձն քո յերկուց փայտից խանձողացն ծխելոց. զի յորժամ հասանիցէ բարկութիւն սրտմտութեան իմոյ, դարձեալ բժշկեցից. և որդին Արամայ՝ և որդին Ռովմելայ. 5 զի խորհեցան խորհուրդ չար # Եփրեմ և որդին Ռովմելայ զքէն՝ և ասեմ. 6 Ելցո՛ւք ՚ի Զրէաստան՝ խօսեսցու՛ք ընդ նոսա, դարձուցու՛ք զնոսա առ մեզ. և կացուցուք նոցա թագաւոր զորդին Տաբելայ։ 7 Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց. Մի՛ կացցէ խորհուրդն այն, և մի՛ եղիցի. 8 այլ գլուխ Արամայ Դամասկոս, և գլուխ Դամասկոսի Զռասիմ. և ա՛յլ ևս վաթսուն և հինգ ամ, և պակասեսցէ թագաւորութիւնն Եփրեմի ՚ի ժողովրդենէ անտի*։ 9 Եւ գլուխ Եփրեմայ Սոմորովն, և գլուխ Սոմորովնի որդին Ռովմելայ. և եթէ ո՛չ

* Ոմանք. ՚ի սեղանոյն երբեր։

* Այլք. Ահաւաղիկ մերձե՛ն։

* Ոմանք. Եւ կամ ո՞վ երթիցէ։

* Ոմանք. Եւ դառնայցեն, և բժշ՛։

* Ոմանք. Եւ յետ այնորիկ յերկա՛... և բազմասցի մնացեալք երկրի։

* Ի բազումս պակասի. Իբրև զբնեկնի տերևաթափ. և։ Օրինակ մի. Եւ իբրև զկաղին... զաւակ սուրբ արձակութիւն նորա։

* Ոսկան. Շարժիցի յանտառի ծառ ՚ի հողմոյ։

* Ոսկան. Վաթսուն և եօթն ամ։ Ոմանք. Եւ ապա պակասեսցէ թագաւորութիւնն Եփրեմայ։

հաւատայցեք, և ո՛չ ՚ի միտ առնուցուք*։ ¹⁰Եւ յաւել Տէր խօսել ընդ Աքազու՝ և ասէ. ¹¹Խնդրեա՛ ղու քեզ նշան՝ ՚ի Տեառնէ Աստուծոյ քումմէ՝ ՚ի խորութեան կամ ՚ի բարձրութեան։ ¹²Եւ ասէ Աքազ. Ո՛չ խնդրեցից՝ և ո՛չ փորձեցից զՏէր։ ¹³Եւ ասէ. Արդ լուարուք, տուն Դաւթի. Թեթե՛ւ ինչ թուիցի ձեզ աշխատութիւն հասուցանել մարդկան, և զիա՞րդ հասուցանէք աշխատութիւն Տեառն։ ¹⁴Վասն այդորիկ տացէ՛ ձեզ Տէր ինքնին նշան. Ահա կոյսն յղացի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Ե՛մմանուէլ*։ ¹⁵Եւ լ և մեղր կերիցէ. մինչչև՝ ինչ իցէ ծանուցեալ նորա. կամ ախորժեալ յառաջագոյն զչարութիւն, ընտրեսցէ՛ զբարին։ ¹⁶Վասն այնորիկ մինչչև՝ ծանուցեալ իցէ մանկանն զբարի կամ զչար, անարգեսցէ՛ զչարն՝ և ընտրեսցէ զբարին. և մնացէ երկիրդ՝ յորմէ դուր կասկածես յերեսաց երկուց թագաւորաց*։ ¹⁷Այլ ասցէ՛ Աստուած ՚ի վերայ քո, և ՚ի վերայ ժողովրդեան քոյ, և ՚ի վերայ տան հօր քոյ աւուրս՝ որ չև՝ ևս են եկեալ, յորմէ օրէ եհան Եփրեմ՝ ՚ի Յրեաստանէ զարքայն Ասորեստանեայց։ ¹⁸Եւ եղիցի յաւուր յայնմիկ շարժեսցէ՛ Տէր զճանճիւռնն որ տիրեսցէ յայնկոյս գետոյն Եգիպտացոց, և զձիաստացն որ է յերկրին Ասորեստանեայց*։ ¹⁹Եւ եկեսցեն ամենեքեան, և հանգիցեն ՚ի ձորս երկիրդ, և ՚ի ծերպս վիմաց, և յայրս, և յամենայն փապարս, և յամենայն փայտս։ ²⁰Յաւուր յայնմիկ գերծցէ՛ Տէր սրովն մեծաւ և արբեցելով, յայնկոյս գետոյն թագաւորին Ասորեստանեայց, զգլուխ և զմա՛զ ոտից, և զմօրուսն սրբեսցէ*։ ²¹Եւ եղիցի յաւուր յայնմիկ բուծցէ՛ մարդ երինջ մի յարջառոց, և մաքիս երկուս. ²²և եղիցի # ՚ի բազմութենէ կաթինն՝ կերիցէ եւլ. զի եւլ և մեղր կերիցէ ամենայն որ մնացեալ իցէ յերկրին։ ²³Եւ եղիցի յաւուր յայնմիկ ամենայն տեղի՝ ուր իցէ հազար որթ՝ հազար կշռոյ սկեղ. խոպանասցի՛ և ՚ի փուշ դարձցի*։ ²⁴Մտողք և աղեղնաւորք մտանիցեն անդր։ Ձի խոպանացեալ և փշաբեր եղիցի ամենայն երկիր, ²⁵և ամենայն լեառնն արօրադիր ակօսաբեկ լիցի. և մի՛ հասցէ անդր երկեւլ. զի եղիցի ՚ի խոպանէն և ՚ի փշոյ՝ յարօտ գառին և ՚ի կոխան եզին*։

8

Գլուխ Ը

¹Եւ ասէ ցիս Տէր. Ա՛ռ ղու քեզ տոմս մի նոր մեծ. և գրեսցես ՚ի նմա՝ գրչաւ առն ճարտարի. Արագարա՛գ զաւար հարկանել՝ և վաղվաղակի՛ զապուռ ժողովել. քանզի հասեալ է*։ ²Եւ վկայս կացուցես ինձ արս հաւատարիմս, զՈւրիա քահանայ՝ և զՁաքարիա որդի Բարաքեայ։ ³Եւ մերձեցայ առ կինն իմ մարգարէ, և յղացաւ և ծնաւ որդի. և ասէ ցիս Տէր. Կոչեա՛ զանուն նորա Արագարա՛գ կապտեսջիր՝ և վաղվաղակի աւար հարկանիջիր. ⁴քանզի մինչչև ծանուցեալ իցէ մանկանն կոչել զհայր կամ զմայր, առցէ զգօրութիւն Դամասկոսի, և զաւար

* Ոսկան. Եփրեմայ Սամարիա։

* Ոմանք. Ահա կոյս յղացի։

* Ոմանք. Վասն այսորիկ մինչչև։

* Ոմանք. Ձճանջիռնն որ տիրես*։ Յօրինակին. Ձձիաստեացն որ է։

* Ոմանք. Եւ արբեցելով, որ է յայնկոյս։ Ուր Ոսկան. Եւ սրբեցելով. որ է։

* Այլք. Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ եղիցի ամենայն տե*։

* Ոմանք. Անդ երկիւղ։

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ տոմս, նշանակի՝ քարտէս։ Ոմանք. Ձի հասեալ է։

Սամարեայ, յանդիման թագաւորին Ասորեստանեայց* : ⁵Եւ յաւել լա խօսել ընդ իս Տէր՝ և ասէ* : ⁶Փոխանակ զի ո՛չ ատորժեաց ժողովուրդդ այդ զջուրն Սելովայ՝ որ գնայ խաղաղ . # այլ կամեցան առնել իւրեանց թագաւորս զԲասիմ զորդին Ռոմելայ* : ⁷Վասն այդորիկ ահաւաղիկ անցէ Տէր ՚ի վերայ ձեր զջուր Գետոյն զհզօրն և գյորդ՝ զարքայն Ասորեստանի և զփառս նորա : Եւ եկեսցէ և հասցէ յամենայն ձորս ձեր, և ճեմեսցի ՚ի վերայ պարսպաց ձերոց* : ⁸Եւ հանցէ յերկրդ Զրէաստանէ զայր որ կարօղ իցէ ամբառնալ զգլուխ իւր, և զգօրաւորն որ կարիցէ գործել ինչ . և եղիցի բանակ նորա լնուլ զլայնութիւն երկրիդ քո* : ⁹Ընդ մե՛զ Աստուած՝ զիտացէ՛ք հեթանոսք՝ և պարտեցարո՛ւք . լսելի՛ արարէք մինչև ՚ի ծագս երկրի . հզօրացեալքդ պարտեցարուք : Ձի թէպէտ և դարձեալ զօրանայցէք՝ դարձեալ ՚ի պարտութիւն մատնեսցիք* : ¹⁰Եւ զոր խորհուրդ և խորհիցիք՝ ցրուեսցէ Տէր . և զոր բան և խօսիցիք՝ մի՛ հաստատեսցի առ ձեզ . քանզի ընդ մե՛զ Տէր Աստուած* : ¹¹Այսպէս ասէ Տէր առ այնոսիկ որ զօրութեամբ ձեռին նորա ընդդէմ դառնան ըստ գնացից ճանապարհի ժողովրդեանս այսորիկ, և ասեն* ¹²Քէ ո՛չ երբէք խօսիցին խստութիւն . զի ամենայն զոր ինչ խօսի ժողովուրդդ այդ խստութիւն է . և յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք, և մի՛ խռովիջիք* : ¹³ՁՏէր զօրութեանց գնոյն սուրբ արարէք, և նա՛ եղիցի ձեզ յերկելո . և եթէ ՚ի նա յուսացեալ իցես*, ¹⁴եղիցի քեզ ՚ի սրբութիւն . և ոտն քո զքարի ո՛չ հարկանիցի, և զայթազողութիւն քեզ ո՛չ պատահիցէ : Բայց տուն Յակովբու յորոգայթ և ՚ի ծործո՛րս դարանակալաց Երուսաղեմի . ¹⁵Վասն այնորիկ տկարացին ՚ի նմա բազումք . անկցին և խորտակեսցին . և մերձեսցին ՚ի պաշարումն # մարդիկ որ ՚ի շինութեան իցեն* : ¹⁶Յայնմ ժամանակի յայտնեսցին որ կնքիցեն զօրէնս, զի մի՛ ոք ուսանիցի, ¹⁷և ասիցէ . Կացից մնացից Աստուծոյ որ դարձոյց զերեսս իւր ՚ի տանէն Յակովբու, և եղէ՛ց յուսացեալ ՚ի նա : ¹⁸Ահաւասիկ ե՛ս և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած . և եղիցին նշանք և արուեստք ՚ի վերայ տանն Իսրայէլի, ՚ի Սաբաւովք Տեառնէ՝ որ բնակեալ է ՚ի լերին Սիովնի : ¹⁹Եւ եթէ ասիցեն ցձեզ . Խնդրեցէ՛ք զվիուկս և զգետնակոչս և զրախօսս, և զորովայնակոչս . ո՛չ իբրև զագգ ոք որ յԱստուծոյ իւրմէ խնդրիցէ : Ձի՞ոնչ խնդրիցեն վասն կենդանեաց ՚ի մեռելոց անտի . ²⁰զի զօրէնս յօգնականութիւն ետ . զի ասիցեն թէ ո՛չ իբրև զբանս զայս, վասն որոյ չի՛ք կաշառս տալ վասն նորա* : ²¹Եւ եկեսցէ ՚ի վերայ ձեր սո՛վ խստութեամբ . և եղիցի իբրև քաղցիցէք՝ տրտմեսցիք, և հայիոյեսցիք զիշխանս և զաշխարհ : Եւ

* Յոմանս պակասի . Մանկանն կոչել զհայր կամ զմայր :

* Ոմանք . Եւ յաւել ևս Տէր խօսել :

* Բազումք . Թագաւոր զՅոասիմ :

* Ոմանք . Վասն այնորիկ ահաւա՛... և գյորդն՝ զարքայն Ասորեստանեայց :

* Ոմանք . Յերկրդ Զրէաստանի... զլայնութիւն երկրիդ :

* Ոմանք . ՚Ի պարտութիւն մատնիցիք :

* Ոմանք . Եւ խորհիցիք՝ ցրեսցէ Տէր... մի՛ հաստատեսցի ձեզ... Տէր Աստուած է :

* Ի լուս՝ . Որ զօրութեամբն ձեռին : Ուր ոմանք . Որ զօրութեան ձեռինն ընդդէմ դառնան ըստ գնացից ճանապարհաց ժողովրդեանս այսմիկ :

* Ոմանք . Ձի զամենայն զոր ինչ խօ՛ :

* Ոմանք . Սուրբ արասջիք, և նա եղիցի ձեզ երկիւղ : Ոսկան . Յուսացեալ իցէք . (14) եղիցի ձեզ ՚ի սր՛ :

* Ոմանք . Տկարացին ՚ի նա բազումք... մարդիկ որ ՚ի թշուառութեան իցեն :

* Ոմանք . Յօգնութիւն ետ... չիք կաշառեալ վասն նորա :

ամբարձցեն զաչս իւրեանց յերկինս ՚ի վեր* ²²և հայեսցին յերկիր ՚ի խոնարհ, և ահա կարօտութիւն՝ և տառապանք՝ և խաւար, նեղութիւն և անձկութիւն և մութ. զի ո՛չ ոք կարիցէ տեսանել. և որ իցէ ՚ի նեղութեանն՝ մի՛ նուազեսցի մինչև ՚ի ժամանակն*:

9

Գլուխ Թ

Ժ ¹Հա՛պա նախ զայդ արբ, վաղվաղակի հե՛տ արա. երկիր Չաբուղովնի՝ և երկիր Նեփթաղեմի՝ ճանապարհ ծովու. և այլք որ բնակեալ էք զծովեզերքդ, և յայն կոյս Յորդանանու. Գալիլեա հեթանոսաց, կողմանք Յրէաստանի*:
²Ժողովուրդ որ գնայր ընդ խաւար՝ ետես լոյս մեծ. և որ բնակեալ էք յաշխարհի և ՚ի ստուերս մահու, լո՛յս ծագեսցէ ձեզ*:
³Ձմե՛ծ մասն ժողովրդեանդ զոր իջուցեր յուրախութիւն քո. և ուրախ եղիցին առաջի քո որպէս ուրախ լինիցին ՚ի հունձս, և որպէս որ բաժանիցենն զաւար*.
⁴Ղի վերացա՛ւ ՚ի նոցանէ լո՛ւծն՝ որ կայր ՚ի վերայ, և գաւազանն որ ՚ի վերայ պարանոցի՝ նոցա: Ձի զգաւազանն պահանջողաց մերժեաց՝ որպէս և յաւուրն Մադիամու*.
⁵Ղի զամենայն պատմուճան և զհանդերձ ժողովեալ նենգութեամբ, տուգանօք տուժեսցին: Այլ նոքա կամէին թէ հրձիգ լեալ էին: ⁶Ձի մանուկ ծնա՛ւ մեր, որդի՛ տուաւ մեզ. որոյ իշխանութիւն իւր եղև ՚ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա Յրեշտա՛կ մեծի՛ խորհրդոյ. Սքանչելի խորհրդակից, Աստուած հզօր. Իշխան. Հայր հանդերձելոյ աշխարհիին*:
⁷Եւ ես ածից գխաղաղութիւն ՚ի վերայ իշխանաց նորա, և առողջութիւն նմա. մե՛ծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չի՛ք սահման: Յաթոռն Դաւթի նստցի, և զարքայութիւն նորա յաջողեսցէ. և զօրացուցէ զնա իրաւամբք և արդարութեամբ, յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց. նախանձ Տեառն զօրութեանց արասցէ զայս: ⁸Մա՛հ արձակեաց Տէր ՚ի վերայ Յակվորայ, եկն եհաս ՚ի վերայ Իսրայէլի: ⁹Եւ ծանիցեն ամենայն ժողովուրդն Եփրեմեան՝ և որ նստինն ՚ի Սամարիա, որ հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ սրտից խօսեցան՝ և ասեն*.
¹⁰Աղիւսք անկան, այլ եկայք վէ՛նս տաշեսցուք. զմայրս և զեղևնափայտս հարցուք, և շինեսցուք մեզ աշտարակ*:
¹¹Եւ կործանեսցէ Աստուած զյարուցեալսն ՚ի վերայ լերին Սիովնի, և զթշնամիս Յուդայ ցրուեսցէ*.
¹²ՂԱսորեստան յելիցն արևու, և զՅոյնս ՚ի մտիցն արևու. ոյք ուտէին զԻսրայէլ բերանալիւր ամենայն բերանով: Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է*:
¹³Եւ ժողովուրդն ո՛չ դարձաւ՝ մինչև վիրաւորեցաւ. և զՏէր # զօրութեանց ո՛չ

* Ոմանք. Սով խստութեան: *Ի լուս*. Ձիշխանն և զաշ՝. *համաձայն բազմաց ՚ի բնաք*:

* *Բազումք*. Սի՛ նուազեսցէ. *կամ*՝ նուազիցէ:

* Ոմանք. Եւ այլքդ որ բնակեալդ էք զծո՛ւ:

* Ոմանք. Լոյս ծագեսցէ ՚ի ձեզ:

* Ոմանք. Եւ որպէս բաժանիցինն զաւ՛:

* Ոմանք. Ի վերայ պարանոցաց. զի... որպէս յաւուրն Մադիամու. (5) զամենայն պատ՛:

* *Օրինակ մի՛ ունի համաձայն Ոսկանայ*. Ձի մանուկ ծնաւ մեզ, որ՛:

* Ոմանք. Եւ որ նստինն ՚ի Սամա՛:

* Ոմանք. Մեզ աշտարակս:

* Ոմանք. Եւ զթշնամիսն իւր ցրուեսցէ:

* Ոմանք. Ոչ դարձաւ բարկութիւնն, այլ:

խնդրեցին: ¹⁴Եւ բարձ Տէր յԻսրայէլէ զգլուխն և զվերջն, զմեծն և զփոքր ՚ի միում աւուր*: ¹⁵Ձծերն և զակնառուն՝ այն առաջն է. և զմարգարէն որ զանօրէնութիւնն ուսուցանէր՝ այն վերջն է*: ¹⁶Եւ եղիցի որ երանիցեն ժողովրդեանս այսմիկ՝ մոլորեալք և մոլորեցուցանիցեն. որպէս զի կլանիցեն զդոսա և ապա յայտնեսցին*: ¹⁷Վասն այսորիկ ՚ի վերայ երիտասարդաց նոցա ո՛չ եղիցի ուրախ Աստուած, և որբո՛ց նոցա և այրեաց մի՛ ողորմեսցի. զի ամենեքին անօրէ՛նք են և չարք, և ամենայն բերան խօսի զանիրաւութիւն: Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկութիւնն, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է*: ¹⁸Եւ վառեսցի՛ իբրև զհուր անօրէնութիւն, և իբրև զսեւ չորացեալ այրեսցի՛ ՚ի հրոյ, և վառեսցի յանտառս մայրեաց. և շուրջ զամենայն բլրովք նոցա հո՛ւր ճարակեսցի*: ¹⁹Վասն սրտմտութեան բարկութեան Տեառն հրձիգ լիցի երկիրն ամենայն. և եղիցի ժողովուրդն այրեսցեալ իբրև ՚ի հրոյ: Այր՝ եղբօր իւրում մի՛ ողորմեսցի. ²⁰այլ խոտորեսցի յաջակողմն իւր առ քաղցի, և կերիցէ զծախակողմն իւր, և մի՛ յագեսցի մարդ՝ ուտելով զմարմինս բազկաց իւրոց. զի կերիցէ Մանասէ զԵփրեմ, և Եփրեմ զՄանասէ. ²¹և ՚ի միասին պաշարեսցեն զՅուդայ: Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկութիւնն, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է*:

10

Գլուխ Ժ

¹Վայ այնոցիկ որ գրեն զչարիս, գրելով գրեն զչարիս իւրեանց. ²խոտորեն զդատաստանս աղքատաց, և զիրաւունս տնանկաց ժողովրդեան իմոյ յափշտակեն. զի լինիցի նոցա՝ այրին ՚ի յափշտակութիւն, և որբն յաւար. ³և զի՞նչ գործեսցեն յաւուրն այցելութեան: Ջի նեղութիւն ձեր ՚ի հեռաստանէ՛ եկեսցէ. և առ ո՞ փախստեայ անկանիցիք ՚ի յօգնականութիւն. և ո՞ւր թողուցուք զփառսն ձեր. ⁴Եթէ ո՛չ մատնեսցի ՚ի գերութիւն. և ՚ի ներքոյ սպանելոցն մտանիցեն: Ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ բարկութիւնն, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է*:

ԺԱ ⁵Վայ Ասորեստանեայցն, զաւագան բարկութեան և սրտմտութեան իմոյ ՚ի ձեռս նոցա*. ⁶զի զբարկութիւն իմ յա՛զգ անօրէն արձակեցից. և իմում ժողովրդեան կարգեցից առնել զաւար և զյափշտակութիւն. կոխան առնել զքաղաքս, և դնել զնոսա ՚ի փոշի: ⁷Իսկ նա ո՛չ այսպէս աժ զմտաւ, և ո՛չ այսպէս համարեցաւ յանձին. այլ դարձո՛յց զմիտս իւր սատակել զազգս ո՛չ սակաւս: ⁸Եւ եթէ ասիցեն ցնա. Դու միա՞յն իցես իշխան. ասիցէ*. ⁹Ո՛չ առի զաշխարհն որ ՚ի վեր է քան զԲաբելոն, և զՔաղանէ ուր աշտարակն շինեցաւ: Առի՛ և զԱրաբիա,

* Ոսկան. Եւ եբարձ Տէր յԵգրայէլէ:

* Ոմանք. Եւ զակնառունսն, այս առաջն է. և զմարգարէն որ զօրէնսն ուսուցանէր:

* Ոմանք. Եւ եղիցին որ երա՛: Ի բազումս պակասի. Չդոսա. և ապա յայտնեսցին:

* Ոմանք. Խօսի զանօրէնութիւն: Ոսկան. Բարկութիւն նորա:

* Ոմանք. Այրեսցի ՚ի հուր:

* Ոսկան. Ոչ դարձցի բարկութիւն նորա:

* Յօրհնակին. Ի գերութիւն. և ՚ի քոյ սպանելոցն մտա՛: Ոմանք. Եւ ՚ի ներքոյ սպանանելոց:

* Ոմանք. Վայ Ասորեստանւոյն... ՚ի ձեռս նոցա. (6) զբարկութիւն:

* Ոմանք. Միա՞յն ես իշխան. ասացէ... (9) ՚ի վեր քան զԲաբելոնն է:

և գԴամասկոս, և զՍամարիա: ¹⁰Որպէս զնոսայն առի ձեռամբ իմով, նոյնպէս առից և զամենայն իշխանութիւնս: Ողբացէ՛ք դրօշեալք որ յերուսաղէմ և ՚ի Սամարիա. ¹¹զի զոր օրինակ արարի՛ ընդ Սամարիա՝ և ընդ ձեռագործս իւր, նոյնպէս արարից ընդ Երուսաղէմ՝ և ընդ կո՛ւռս իւր: ¹²Եւ եղիցի յորժամ կատարեսցէ Տէր առնել՝ զամենայն ինչ ՚ի լերին Սիոնի և յերուսաղէմ, ածցէ՛ ՚ի վերայ մեծամտին բարկութիւն. ՚ի վերայ իշխանին Ասորեստանեայց, և ՚ի վերայ հպարտացեալ փառաւորաց աչաց նորա՛: ¹³Քանզի ասաց թէ զօրութեամբ իմով արարից, և իմաստութեամբ խորհրդոց իմոց բարձից՝ զսահմանս ազգաց. և առից ւաւր զզօրութիւն նոցա. շարժեցից զքաղաքս բնակեալս՝. ¹⁴հասից՝ ՚ի վերայ ամենայն տիեզերաց ձեռամբ իմով իբրև ՚ի վերայ բունոյ, և բարձից իբրև զծուս մնացեալս. և ո՛չ որ իցէ որ ապրիցէ յինէն, և ո՛չ որ ընդդէմ դառնայցէ ինձ #, և բանայցէ զբերան իւր՝ և ճի՛կ հանիցէ՛: ¹⁵Այսպէս ասէ Տէր. Միթէ վերանայցէ՞ փայտատ առանց փայտահարի, կամ բարձրանայցէ՞ սղոց առանց ուրուք ձգելոյ. նոյնպէս թէ զգաւազան որ կամ զփայտ ինչ առնուցու. նա և ո՛չ այնպէս՛: ¹⁶Այլ առաքեսցէ Տէր զօրութեանց ՚ի պատիւ քո անարգանս, և ՚ի փառս քո հո՛ւր վառեալ բորբոքեսցի: ¹⁷Եւ եղիցի Լոյսն Իսրայէլի ՚ի հուր. և սրբեսցէ զնոսա հրով բորբոքելով, և կերիցէ՛ իբրև զխտ զանտառն: Յաւուր յայնմիկ՝ ¹⁸շիջցին լերինք և բլուրք և անտառք. և կերիցէ ՚ի շնչոյ մինչև ՚ի մարմին. և եղիցի ապրեալն իբրև զայն որ ապրեալն իցէ ՚ի բորբոքեալ բոցոյ՛: ¹⁹Եւ մնացեալքն ՚ի նոցանէ թուով եղիցին, և մանուկ տղայ գրեսցէ զնոսա:

ԺԲ ²⁰Եւ եղիցի յաւուր յայնմիկ ո՛չ ևս յաւելցին մնացորդքն Իսրայէլի և ապրեալքն Յակովբայ, և ո՛չ ևս ապաստան լինիցին ՚ի զրկիչսն իւրեանց. այլ եղիցին ապաստան յԱստուած Սուրբն Իսրայէլի ճշմարտութեամբ՛: ²¹Եւ եղիցին մնացեալքն Յակովբայ յԱստուած զօրացեալ: ²²Եւ եթէ եղիցի ժողովուրդն իբրև զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնացեն ՚ի նոցանէ. զի բան մի հակիրճ և համառօտ արդարութեամբ՝, ²³զբանն համառօտ արացէ Տէր զօրութեանց ընդ ամենայն տիեզերս: ²⁴Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր՝ Տէր զօրութեանց. Մի՛ երկնչիր ժողովուրդ իմ որ բնակեալդ ես ՚ի Սիովմ՝ յԱսորեստանեայց. զի եթէ հարկանիցէ զքեզ զաւազանաւ, քանզի ես ածեմ ՚ի վերայ քո զհարուածսն, ճանաչել քեզ զճանապարհն Եգիպտացոց՝. ²⁵զի փոքր մի ևս դադարեսցէ բարկութիւնն. բայց սրտմտութիւն իմ ՚ի վերայ խորհրդո՛ց նոցա՛: ²⁶Եւ յարուսցէ Տէր Աստուած ՚ի վերայ նոցա զհարուածս ըստ հարուածոցն Մադիամու ՚ի տեղին չարչարանաց. և սրտմտութիւն նորա ըստ ճանապարհի ծովուն որ յելիցն Եգիպտացոց: ²⁷Եւ եղիցի յաւուր յայնմ բարձցի երկելո նորա ՚ի քէն, և

* Ոմանք. Ածցէ և ՚ի վեր մեծա՛... փառաց աչաց նորա:

* Յօրինակին ՚ի բնաբանի եղեալ՝ խորհրդոյ իմոյ. ՚ի լուս՝. նշանակի խորհրդոց իմոց. ըստ որում և մեք եղաք համաձայն այլոց: Ոմանք. Աւար զզօրութիւնս. ուր Ոսկան. յաւար զզօ՛:

* Ոմանք. Որ ապրեսցէ յի՛:

* Ոմանք. Նոյնպէս և թէ զգա՛:

* Յօրինակին պակասէր. Եւ եղիցի Լոյսն Իսրայէլի ՚ի հուր. և սրբէ՛: Ոմանք. Լոյսն Իսրայէլի հուր. և սրբեսցես զնա հրով բոր՛:

* Ոմանք. Ի շնչոց մինչև ՚ի:

* Ոմանք. Ապաստան լիցին:

* Բազումք. Եթէ եղիցի ժողովուրդն Իսրայէլի իբրև: Ուր Ոսկան. ժողովուրդ իմ իբրև:

* Ոմանք. Ձի եթէ հարկանէ զքեզ:

* Ոմանք. Փոքր միւս ևս:

լուծ նորա՝ ի պարանոցէ քունմէ. և խորտակեսցի՝ լուծն յուսոց ձերոց՝: ²⁸Քանզի հասցէ՝ ի քաղաքն Անգէ, և անցցէ՝ ի Մակեդով. և ի Մաքմաս դիցէ գկագմած իւր: ²⁹Եւ անցցէ ընդ ձորս, և հասցէ՝ ի վերայ Գաբաւոնացւոց. ա՛հ առցէ զՅոանա գքաղաքն Սաւուղի. փախիցէ դուստր Գաղիմայ՝: ³⁰Խխնջեա՛ ձայնիւ քով. լո՛ւր լիցի՝ ի Լաիս, լո՛ւր լիցի յԱնաթովթ՝: ³¹Չարհուրեսցի՝ Մաղեբանա, և որ բնակեալ են՝ ի Գեբիմ. մխիթարեսցի՝ ³²այսօր ագանել՝ ի ճանապարհին. մխիթարեսցէ ձեռամբ լեառն դուստր Սիովնի, և բլուրքն որ յերուսաղէմ՝: ³³Ձի ահաւասիկ Տէր, Տէր զօրութեանց խռովեցուցէ զփառաւորեալսն զօրութեամբ. և բարձրացեալքն ամբարտաւանութեամբ՝ խորտակեսցին՝: ³⁴Եւ անկցին բարձունքն սրով. և Լիբանան բարձամբք իւրովք կործանեսցի՛:

11

Գլուխ ԺԱ

ԺԳ ¹Եւ բղխեսցէ՛ գաւազան յարմատոյն Յեսսեայ. և ելցէ ծաղիկ՝ յարմատոյ անտի՝: ²Եւ հանգիցէ՛ ի վերայ նորա Յոգի՛ Աստուծոյ. Յոգի իմաստութեան և հանճարոյ. Յոգի խորհրդոյ՝ և զօրութեան. Յոգի գիտութեան և աստուածպաշտութեան. ³և լցցէ՛ զնա Յոգի երկիւղի Աստուծոյ: Ո՛չ՝ ի կարծ դատեսցի, և ո՛չ ըստ խօսից յանդիմանեսցէ՛: ⁴Այլ արասցէ իրաւունս տնանկին, և յանդիմանեսցէ՛ զխոնարիս երկրի. և հարցէ զերկիր բանի՛ւ բերանոյ իւրոյ. և հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամպարիշտս: ⁵Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, և ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր: ⁶Եւ ճարակեսցէ՛ գայլ ընդ գառին. և ինձ՝ առ ուլո՛ւ մակաղեսցի. և որթ, և ցուլ, և առեւծ՝ ի միասին ճարակեսցին, և մանուկ մատաղ՝ ածցէ՛ զնոսա՛: ⁷Եզն և արջ՝ ի միասին ճարակեսցին. և որդեակք նոցա խառն շրջեսցին. և առեւծ իբրև զե՛զն յարդ կերիցէ: ⁸Եւ մանուկ մատաղ՝ ի ծակ իժից և ի բոյն կորեանց իժից արկցէ՛ զձեռն իւր. ⁹և ո՛չ մեղիցեն, և ո՛չ կարասցեն հարկանել զոք՝ ի լերին սրբութեան իմոյ. զի լցա՛ւ երկիր ամենայն՝ գիտութեամբ Տեառն՝ իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս՝: ¹⁰Եւ եղիցի յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց. և ի նա հեթանոսք յուսասցին. և եղիցի հանգիստ նորա պատուով՝: ¹¹Եւ եղիցի յաւուր յայնմիկ, յաւելցէ՛ Տէր ցուցանել զձեռն իւր. նախանձելի՛ս առնել զմնացորդս ժողովրդեան իւրոյ որ մնացեալ իցեն յԱսորեստանեայց՝ և յեգիպտացւոց՝ և ի Բաբելացւոց՝ և յեթովպացւոց՝ և

* *Ոմանք.* Եւ եղիցի յաւուր յայնմիկ... ի պարանոցէ քունմէ վերասցի. և խոր՞: *Ուր Ոսկան.* Եւ լուծ ի պարանոցէ քունմէ մի՛ վերասցի:

* *Ոմանք.* Ձքաղաքն Շաւուղի... Գաղղիմայ:

* *Ոմանք.* Լու լիցի ի Ռայիս. լու լիցի յա՞:

* *Ոմանք.* Մաղեբեանայ. և որ բնակեալն են: *Ուր Ոսկան.* ի Գիբեմ:

* *Ոմանք.* Մխիթարեսցի ձեռամբ լեառնն դստեր Սիովնի. և *ոմանք.* Լեառն զդուստր Սիովնի. և բլուրք նորա Երուսաղէմ:

* *Բազունք յաւելլուն.* Խորտակեսցին. և *խոնարիեսցին.* (34) և անկցին:

* *Ոմանք.* Եւ բղխեսցէ գաւազանն յար՞:

* *Օրինակ մի.* Ոչ՝ ի կարծիս դատեսցի:

* *Ոմանք.* Եւ ճարակեսցի գայլ... և ինձ առ ուլու... ճարակեսցեն:

* *Ոմանք.* Եւ մի՛ կարասցեն:

* *Այլք.* Յեթանոսաց, ի նա հե՛:

յելամացոց՝ և յելիցն արևու՝ և յԱրաբացոց #, և ՚ի կղզեաց ծովու՝: ¹²Եւ բարձրացուցէ՛ նշան ՚ի հեթանոսս, և ժողովեցէ՛ զկորուսեալսն Իսրայէլի. և զգրուեալսն Յուդայ ժողովեցէ՛ ՚ի չորից անկեանց երկրի՝: ¹³Եւ բարձցի՛ նախանձն Եփրեմի. և թշնամիքն Յուդայ կորիցեն. Եփրեմ ո՛չ նախանձեսցի ընդ Յուդայ, և Յուդայ՝ ո՛չ նախանձեսցի ընդ Եփրեմայ: ¹⁴Եւ թռիցեն նաւք այլազգեաց. և առցեն աւար միանգամայն զծովակողմն և զարևելեայսն, և զԵդովմայեցիսն. արկցեն զձեռս իւրեանց նախ ՚ի Մովաբ. և որդիքն Ամովնայ յառաջագոյն հնազանդեսցին՝: ¹⁵Եւ փլուսցէ՛ Տէր զծովն Եգիպտացոց. և արկցէ զձեռն իւր ՚ի վերայ գետոյն հոգւով սաստկութեամբ, և հարցէ՛ զԵւթնաձորն. զի համարձակ լիցի գնալ ընդ նա և ագելոյն՝: ¹⁶Եւ եղիցի անց մնացելոց ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս. և եղիցի Իսրայէլ որպէս յաւուրսն յորում ե՛լ յերկրէն Եգիպտացոց՝:

12

Գլուխ ԺԲ

¹Եւ ասացես յաւուր յայնմիկ. Օրհնեցի՛ց զքեզ Տէր. զի բարկացա՛ր ինձ, և դարձուցեր զսրտմտութիւն քո յինէն, և ողորմեցա՛ր ինձ՝: ²Ահաւասիկ Աստուած իմ՝ փրկի՛չ իմ Տէր, և յուսացեալ եղէց ՚ի նա՝ և ո՛չ երկեայց. զի փառք իմ և օրհնութիւն իմ Տէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն՝: ³Եւ առէ՛ք ջուր ուրախութեան յաղբիւրացն փրկութեան: ⁴Եւ ասացես յաւուր յայնմիկ. Օրհնեցէ՛ք զՏէր. հնչեցէ՛ք զանուն նորա. պատմեցէ՛ք ՚ի հեթանոսս զփառս նորա. յիշեցէ՛ք զի բարձրացա՛ւ անուն նորա: ⁵Օրհնեցէ՛ք զանուն Տեառն զի մեծամեծս արար. պատմեցէ՛ք զայս ամենայն երկիր՝: ⁶Տնձացէ՛ք և ուրախ լերուք բնակիչք Սիովնի, զի բարձրացաւ Սուրբն Իսրայէլի ՚ի մէջ նորա՝:

13

Գլուխ ԺԳ

¹Տեսիլ Բաբելացոց. Ջոր ետես Եսայի որդի Ամովսայ:

ԺԴ ²Ի վերայ լերինն դաշտականի առէ՛ք նշան. բարձրացուցէ՛ք զբարբառ ձեր ՚ի վերայ նոցա. մի՛ երկնչիք կոչեցէ՛ք ձեռամբ. բացէ՛ք, իշխանք՝, ³և ե՛ս տաց

* *Ոմանք.* Եւ յեթովպացոց և յելիմացոց:

* *Ոմանք.* Նշան ՚ի հեթանոսաց:

* *Յօրինակին պակասէր.* Աւար միանգամայն զծովակողմն:

* *Ոմանք.* Եւ փլուզցէ Տէր... հոգւով սաստկութեան... ընդ նա գնալ:

* *Բազումք.* Որպէս յաւուրն յորում:

* *Ոմանք.* Եւ ասացեն յաւուր յայնմիկ:

* *Ոմանք յաւելուն.* Եւ ես յուսացեալ եղէց ՚ի նա, և փրկեցայց նովաւ. և ոչ եր՛:

* *Ոմանք.* Ձանուն նորա, զի մե՛: *Ոսկան.* Յամենայն երկրի:

* *Ոմանք.* Իսրայէլի ՚ի մէջ նոցա:

* *Ոմանք.* Ի վերայ լերինդ դաշ՛: *Ուր երկու օրհնակք համեմատք միմեանց.* Ի վերայ լերինն մառախղուտ առէ՛ք նշ՛:

հրաման: Նուիրեալք են՝ և ես ածից զնոսա. դիմեալ՝ գան սկայք յագեցուցանել զսրտմտութիւն իմ. խնդան՝ գան միանգամայն, և թշնամանեն: ⁴Չայն ազգաց բազմաց՝ ի վերայ լերանց՝ ի նմանութիւն ազգաց բազմաց. ձայն թագաւորաց և ազանց միահամուռ ժողովելոց: Տէր զօրութեանց հրաման ետ ազգաց սպառազինաց*, ⁵գալ՝ յերկրէ հեռաստանէ՝ ի ծագաց հիմանց երկնից: Հասեալ է Տէր իւրովք սպառազինօք սատակել՝ զամենայն տիեզերս: ⁶Ողբացէք զի մերձ է օր Տեառն, և բեկումն յԱստուծոյ հասեալ է: ⁷Վասն այսորիկ ամենայն ձեռք լքցին, և ամենայն անձն մարդոյ դողացէ: ⁸Խռովեսցին հրեշտակք, և երկունք կալցին զնոսա իբրև զկանայս ծննդականս. փռնկայցեն այր ընդ ընկերի՝ և զայրացին. և զդէմս իւրեանց՝ ի բոցագոյն դարձուցեն*: ⁹Ձի ահաւասիկ Տէր զօրութեանց հասեալ է անհնարին լի բարկութեամբ՝ ոխակալութեամբ սրտմտութեամբ. առնել զտիեզերս անապատ, և զմեղաւորս սատակել՝ ի նմանէ*: ¹⁰Ձի աստեղք երկնից Հայկիւն հանդերձ, և ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն. և խաւարեսցի արեգակն՝ ի ծագել իւրում, և լուսին մի՛ տացէ զլոյս իւր*: ¹¹Եւ հրաման տաց ընդ ամենայն տիեզերս զչարիս, և ամպարշտաց զմեղս իւրեանց. և կորուսի՛ց զհպարտութիւն զանօրինաց, և զբարձրութիւն ամբարտաւանից խոնարհեցուցից: ¹²Եւ եղիցին մնացեալքն պատուականք առաւել քան զոսկի անհուր. և մարդն պատուական եղիցի քան զականս Սովփերայ*: ¹³Ձի երկինք զայրացին, և երկիր սասանեսցի՝ ի հիմանց իւրոց, վասն սրտմտութեան բարկութեան Տեառն զօրութեանց. յաւուր յորում հասեալ իցէ սրտմտութիւն նորա: ¹⁴Եւ եղիցին մնացեալքն իբրև զայծեանն փախուցեալ, և իբրև զոչխարս մոլորեալ. և ոչ ոք իցէ որ ժողովիցէ. զի մարդն անդրէն՝ ի ժողովուրդ իւր դարձցի, և այր իւրաքանչիւր յերկիր իւր հալածեսցի*: ¹⁵Ձի որ ըմբռնեսցի՝ ի պարտութիւն մատնեսցի, և ժողովեալքն՝ ի սուր անկցին: ¹⁶Եւ զորդիս նոցա՝ առաջի նոցա սատակեսցեն, և զտունս նոցա աւար հարկանիցեն, և զկանայս նոցա խայտառակեսցեն: ¹⁷Ահաւասիկ յարուցանեն ի վերայ ձեր զՄարս՝ որ ոչ ինչ համարին զարծաթ և զոսկի: ¹⁸Ձաղեղունս երիտասարդաց խորտակեսցեն, և որդւոցն ձերոց մի՛ ողորմեսցին, և ի մանկունս ձեր ոչ խնայեսցէ ակն նոցա: ¹⁹Եւ եղիցի Բաբելոն որ փառաւորն կոչի ի թագաւորէն Քաղդէացւոց. որպէս կործանեաց Աստուած զՍողոմն և զԳոմոր: ²⁰Եւ ոչ բնակեսցէ յաւիտեանս ժամանակաց. և մի՛ մտցեն ի նմա յազգս բազումս, և մի՛ ևս անցցեն ընդ նա Արաբացիք. և հովիւք մի՛ հանգիցեն ի նմա*: ²¹Այլ անդ հանգիցեն զազանք վայրենիք. և լցցին տունք նոցա աղաղակաւ. և անդ հանգիցեն համբարուք, և անդ դէք կաքաւեսցեն. ²²և յուշկապարիկք բնակեսցեն ի նմա, և ոգնիք ձագս հանցեն յապարանս նորա:

14

* *Ոմանք.* Թագաւորաց ազանց միահամուռն ժո՞:

* *Ոմանք.* Ի բոցագոյնս դարձ՞:

* *Ոմանք.* Ձի ահաւասիկ օր Տեառն հասեալ է. և *ոմանք.* Տէր հասեալ է: *՚ի լուս՞ ՚ի վերայ՝* անհնարին, *նշանակի՞* անբժշկական:

* *Ոմանք.* Մի տայցեն... մի՛ տայցէ:

* *Բազումք յաւելուն.* Քան զականս *պատուականս* Սովփերայ:

* *Ոմանք.* Եւ իբրև զոչխար մոլորեալ:

* *Ոմանք.* Եւ ոչ ևս բնակեաց յաւիտեանս ժամանակաց և մի՛ մտցեն ի նա ազգս բազումք:

Գլուխ ԺԴ

¹Վաղվաղակի հասեալ և գայ, և ո՛չ անագանեսցի. # և աւուրք նորա մի՛
յերկարեսցին: Եւ ողորմեսցի Տէր Յակովբայ, և ընտրեսցէ միւսանգամ զԻսրայէլ.
և հանգիցեն յերկրի իւրեանց. և յաւելցի՛ պանդուխտն ՚ի տունն Յակովբայ՝:
²Ընկալցին զնոսա հեթանոսք, և ածցեն ՚ի տեղիս իւրեանց՝ և ժառանգեսցեն. և
բազմասցին յերկրին Աստուծոյ ՚ի ծառայս և յաղախնայս. և եղիցին գերիք
գերեվարք նոցա, և անկցին ՚ի ծառայութիւն որ տիրէին նոցա: ³Եւ եղիցի յաւուր
յայնմիկ, հանգուսցէ՛ զքեզ Տէր ՚ի ցաւոց և ՚ի սրտմտութենէ քումմէ. և ՚ի
ծառայութենէ խստութեան զոր ծառայեցեր նոցա՝: ⁴Եւ առցես զողբս զայս ՚ի
վերայ թագաւորին Բաբելացոց, և ասասցես յաւուր յայնմիկ. Ջիա՞րդ
դադարեալ կայ պահանջօղն, հանգեալ տագնապողն: ⁵Ջի խորտակեա՛ց Տէր
զլուծ մեղաւորացն՝ զլուծ իշխանացն. ⁶սատակեաց զազգսն սրտմտութեամբ.
անհնարին հարուածովք բարկութեամբ յանխնայ՝: ⁷Յանգեալ յուսով երկիր
ամենայն, և գոչէ՛ ուրախութեամբ: ⁸Եւ փայտքն Լիբանանու ոտնահար եղեն
քեզ. և մայրքն Լիբանանու ասեն. թէ յորմէ հետէ դու դադարեցեր՝ ո՛չ ելին ՚ի մեզ
փայտահարք՝: ⁹Դժոխք ՚ի ներքուստ դառնացան ՚ի պատահելն քեզ.
կանգնեցան միանգամայն հսկայքն ամենայն որ լեալ էին իշխանք երկրի. որ
յարուցին յաթոռոց իւրեանց զամենայն թագաւորս ազգաց՝: ¹⁰Ամենքեան
պատասխանի՛ տացեն քեզ՝ և ասասցեն. Եւ դու՛ իբրև զմեզ ըմբռնեցար, և ընդ
մե՛զ համարեցար: ¹¹Իջին ՚ի դժոխս փառք քո, և բազում ուրախութիւնն քո. ՚ի
ներքոյ քոյ մե՛ցս տարածեսցեն, և ՚ի վերայ քո ո՛րդն յարկցի՝: ¹²Ջիա՞րդ անկաւ
յերկնից Արուսեակն՝ որ ընդ առաւօտն ծագէր. անկաւ յերկիր, խորտակեցաւ՝ որ
առաքէր առ ամենայն ազգս: ¹³Դու ասէիր ՚ի մտի քում. Ելի՛ց յերկինս, ՚ի վերոյ
քան զաստեղս երկնից արկի՛ց զաթոռ իմ. նստայ՛ց ՚ի լերինն բարձու, ՚ի վերայ
լերանց բարձանց հիւսւտոյ՝: ¹⁴Ելից ՚ի վե՛ր քան զամպս, եղէ՛ց նմանօղ
Բարձրելոյն: ¹⁵Արդ՝ ահաւաղիկ ՚ի դժոխս իջցես և ՚ի հիմունս երկրի՝: ¹⁶Որք
տեսանիցեն զքեզ՝ զարմասցին ՚ի վերայ քո և ասասցեն. Այս այն այր է որ
զայրացուցանէր զերկիր, շարժէր զթագաւորս. ¹⁷որ առնէր զամենայն տիեզերս
աւերակ, և քակէր զքաղաքս նոցա. գերեաց գերեդարձ ո՛չ արար: ¹⁸Ամենայն
թագաւորք ազգաց ննջեցին պատուով. այր իւրաքանչիւր ՚ի տան իւրում. ¹⁹և
դու անկցիս ՚ի վերայ լերանց իբրև զմեռեալ. զարշելի՛ ՚ի մէջ բազում դիականց
կոտորելոց սրով՝ իջելոց ՚ի դժոխս: Իբրև զծորձս արեամբ թաթաւեալ որ ո՛չ իցէ
սուրք՝. ²⁰նոյնպէս և դու ո՛չ սրբեսցիս. զի ապականեցեր զերկիր իմ, և
զժողովուրդ իմ կոտորեցեր. մի՛ մնասցես յաւիտեանս ժամանակաց: Ջաւա՛կ
չար ²¹պատրաստեա՛ զորդիս քո ՚ի սպանումն վասն մեղաց հարց իւրեանց. զի
մի՛ յարիցեն և ժառանգեսցեն զերկիր, և լցցեն զերկիր պատերազմօք՝:

* Ոսկան. Յասեալ գայ, ոչ անագ՝:

* Օրինակ մի. ՚ի ցաւոց և ՚ի տրտմութենէ խրատութեանն զոր ծա՛:

* Ոմանք. Յարուածովք յանխնայ:

* Ոմանք. Եւ փառքն Լիբանանու ոտնահար ե՛:

* Ոմանք. Իշխանք յերկրի:

* Օրինակ մի. Որդն յարկցեն:

* Ոմանք. Դու ասէիր ՚ի սրտի քում:

* Ոմանք. Արդ՝ աւաղիկ:

* Ոմանք. Ի մէջ դիականց:

* Ոմանք. Վասն մեղաց հորդ իւրեանց:

²²Յարեա՛յց ՚ի վերայ նոցա ասէ Տէր Սաբաւովք. և կորուսից զանուանս նոցա՝ և զգա՛րն և զգաւակ: Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց. Արարից զԲաբելովն ակերակ՝, ²³զի բնակեցեն ՚ի ննա ոգնի՛ք. և եղիցի յոչի՛նչ. և արարից զնա խորխորատ տղմոյ ՚ի կորուստ: Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց՝. ²⁴Ձոր օրինակ ասացի՝ ա՛յնպէս եղիցի. և որպէս խորհեալ եմ՝ ²⁵ա՛յն կացցէ. սատակել զԱսորեստանեայս յերկրի իմուն և ՚ի վերայ լերանց իմոց. և եղիցին ՚ի կոխո՛ւմն. և բարձցի՝ ՚ի ձէնջ լուծ նոցա, և գոռոզութիւն նոցա ՚ի պարանոցէ ձերմէ վերացի՛: ²⁶Ա՛յս խորհուրդ է զոր խորհեցաւ Տէր ՚ի վերայ ամենայն տիեզերաց. և ա՛յս ձեռն բարձրացեալ ՚ի վերայ ամենայն ազգաց: ²⁷Ձի զոր սուրբն Աստուած խորհեցաւ, ո՞վ իցէ որ զայն ցրիցէ. և զբարձրացեալ ձեռն նորա՝ ո՞վ իցէ որ դարձուցանիցէ: ²⁸**Յամին յորում մեռաւ Աբազ արքայ, եղև պատգամս այս ՚ի վերայ այլազգեացն՝:**

ԺԵ ²⁹Մի՛ ուրախ լինիք ամենայն այլազգիք, եթէ խորտակեցաւ լուծ հարկանողացն ձերոց. զի ՚ի գաւակէ օձին ելցեն ծնունդք իժից, և ՚ի նոցա ծննդոց ելցեն օձք թևաւորք՝: ³⁰Եւ բուծցին աղքատք նովաւ, և տկար մարդիկ ՚ի խաղաղութեան բնակեցեն. և սատակեցեն ՚ի սովոյ զգաւակ քո, և զմնացորդս քո սատակեցէ՛: ³¹Ողբացէ՛ք դրունք քաղաքաց. ձայնս արկցեն քաղաքք խռովեալք ամենայն այլազգիք. ծո՛ւխ ել ՚ի հիւսւտոյ, և ո՛չ ևս գտանիցի՛: ³²Եւ զի՞նչ տայցեն պատասխանի թագաւորք ազգաց. զի Տէր հաստատեաց զհիմունս Սիովնի, և նովա՛ւ փրկեցին խոնարիք ժողովրդեանն՝:

15

Գլուխ ԺԵ

¹ Պատգամ ՚ի վերայ Մովաբացւոց:

ԺԶ Գիշերի՛ սատակեցի Մովաբացին. գիշերի՛ կործանեցի պարիսպ Մովաբացւոյն՝: ²Սո՛ւզ առէք յանձինս, զի կորեաւ Գեղեթոն՝ տեղի մեհեմին ձերոյ. անդր ելանիցէք լալ ՚ի Նաբա՛ւ Մովաբացւոց: Ողբացէ՛ք զի ամենայն գլուխ ՚ի կնդութիւն, և ամենայն բազուկք խորտակեալք՝: ³Ի հրապարակս նորա քուրձ զգեցարուք, և ՚ի վերայ տանեաց նորա կոծեցարուք, և ՚ի փողոցս նորա

* *Ոմանք.* Եւ կորուսից զանուն նոցա... և արարից: *Ուր Ոսկան.* Եւ զգաւակ՝ ասէ Տէր զօրութեանց:

* *Ոմանք.* Ձնա ՚ի խորխորատ տղմոյ:

* *Ոմանք.* Այսպէս եղիցի:

* *Ոմանք.* ՁԱսորեստանեայս յերկրի իւրում:

* *Ոմանք.* Ախազ արքայ:

* *Ոսկան.* Եւ ՚ի նոցանէ ելցեն օձք:

* *Ոմանք.* Եւ սատակեցէ սովով զգաւակ քո: *Ուր Ոսկան.* Եւ սատակեցի սովու զաւակ քո:

* *Ոմանք.* Ձայն արկցեն... զի ծուխ ել ՚ի հիւսիւտոյ:

* *Ոսկան.* Փրկեցի խոնարի ժո՛ւ:

* *Ոմանք.* Ի գիշերի սատակես՝... պարիսպ Մովաբացւոցն:

* *Ոսկան.* Լալ ՚ի Մաբաւ Մովաբաց՝:

ողբացէ՛ք լալով*։ ⁴Ձի գուժեաց Եսեբոն, և Ելէիլա. մինչև Յասա լսելի՛ եղեն ձայնք նոցա. վասն այսորիկ երկար Մովաբացւոյն գոչէ, և անձն իւր ծանիցէ*։
⁵սիրտ Մովաբացւոյն գոչէ յանձն իւր մինչև ՚ի Սեգովր. քանզի երինջ երեմեան է։ Եւ ընդ ելսն Դ՛ովիթայ լալով՝ ելցեն առ քեզ. ՚ի ճանապարհին Արոնիիմ, գոչէ բեկումն և շարժումն. ⁶ջուրն Նեմերիմայ պակասեցէ և ցամաքեցի. և խոտ նորա նուազեցէ. և դեղ դալար՝ անդ մի՛ գտցի։ ⁷Միթէ և այնպէս ապրելո՞ց իցէ։ Քանզի ածից ՚ի վերայ ձորոց գԱրաբացիս, և առցեն գնա. ⁸զի կցեցաւ բողոք սահմանաց Մովաբացւոյն ընդ բողոքս Գաղ՛իմացւոյն. և ողբումն նորա մինչև ՚ի ջրհորն Ելիմ՝ ողբումն նորա*։ ⁹Եւ ջուրն Ռեմովնայ լցցի՛ արեամբ. զի ածից՝ ՚ի վերայ Ռեմովնայ գԱրաբացիս, և բարձից զգաւակն Մովաբու, և գԱրիէլ, և զմնացորդսն Ադեմայ, առաքեցից իբրև սողունս ընդ երկիր*։

16

Գլուխ ԺԶ

¹Միթէ ապառա՞ժ աւերակ իցէ լեառն դասեր Սիոնի։ ²Եւ եղիցի իբրև հաւու թռուցելոյ ձա՛գ մնացեալ դուստր Մովաբացւոց*։ ³Բայց ապա և դո՛ւ Առնովն աւելի՛ ինչ խորհեաց առնել յարկս սգոյն նոցա. հանապա՛զ ՚ի միջօրէի իբրև ընդ խաւար փախիցեն։ ⁴Ձարհուրեցան, և ո՛չ վարեցիս. զի պանդխտեցին առ քեզ փախստականքն Մովաբու. եղիցին ձեզ ապաւէն յերեսաց հալածչի. զի բարձաւ ընկեր մարտին քոյ, և իշխանն կորեաւ որ կոխէր գերկիր*։

ԺԵ ⁵Եւ ուղղեսցի ողորմութեամբ աթոռ, և նստցի ՚ի վերայ նորա ճշմարտութեամբ ՚ի յարկսն Դաւթի. դատեսցի՝ և խնդրեսցէ զիրաւունս, և փութասցի՛ առնել զարդարութիւն։ ⁶Լուա՛ք զամբարտաւանութիւնն Մովաբու՝ զի հպարտացեալ էր յոյժ. հպարտութիւն նորա և ոխակալութիւն՝ և զամբարտաւանութիւնն քո բարձի՛ ՚ի քէն։ Ոչ այնպէս որպէս դիւթութիւնն քո*։ ⁷և ո՛չ այնպէս որպէս ըղձանն ՚ի Մովաբ։ Ձի ՚ի Մովաբ ողբացեն ամենեքեան զայնոսիկ՝ որ բնակեալ են ՚ի Գեսեթ. մրմնջեսցեն՝ և ո՛չ պատկառեսցեն*։
⁸Դաշտքն Եսեբոնայ սո՛ւզ առցեն, և այգիքն Սեբիմայ որ կլանէին զազգս. կոխեցէ՛ք զայգիս նորա մինչև Յազեր՝ և մի՛ հասցիք. մոլորեցայք յանապատի. առաքեալք նորա լքան, քանզի անցին ընդ ծովն*։ ⁹Վասն այսորիկ լացուցից՝ իբրև զլալիւնն Յազերայ զայգիս Սեբիմայ. և զժառատունկն քո կոտորեաց Եսեբոն և Ելիլայ. զի զհունձս քո և զկութս քո կոխեցից, և ամենեքեան

* Ոմանք յաւելուն. Եւ ՚ի փողոցս նորա ամենեքեան ողբա՛ւ։

* Ոմանք. Մինչև Յասսա... վասն այնորիկ երկար։ Ոսկան. Եւ անձն իւր ծանիցի։

* Ոմանք. Մովաբացւոց ընդ բողոքս Գաղղիմացւոյն։

* Ոմանք. Եւ զմնացորդն Ադամայ. և ոմանք. Եղովմայ առաքեցից որպէս սողունս։

* Այլք. Եւ եղիցիս իբրև հաւու։

* Ոմանք. Ոչ վարեցին... և եղիցին։

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ Լուաք, փոխանակ շեշտի՛ հարցական ոլորակս օ՛նշանակի։ Ոսկան. Եւ ամբարտաւանութիւնն քո բարձից ՚ի քէն։

* Ոմանք. Եւ ոչ այնպէս որպէս ողբանն ՚ի Մովաբ... բնակեալ են ՚ի Գեսեթ. մրմնջեսցեն՝ և ո՛չ պատկառեսցեն։

* Ոմանք. Եւ այգիքն Եսեբեմայ... մինչև Յազեր. և մի՛ խառնիցիք. կամ՝ խռնիցիք. մոլորե՛ք... անցին ընդ ծով։

կործանեցին*։ ¹⁰Եւ բարձցի ուրախութիւն և ցնծութիւն յայգեաց, և յայգեստանի քում ուրախութիւն մի՛ լիցի. և մի՛ կոխեցեն գինի՝ ի հնժանս քո, քանզի պակասեաց։ ¹¹Վասն այսորիկ որովայն իմ՝ ի վերայ Մովաբու իբրև զքնա՛ր հնչեսցէ. և զփոր իմ իբրև զպարիսպ նորոգեցեր*։ ¹²Եւ եղիցի քեզ այն յամօթ. զի աշխատեցաւ Մովաբ ՚ի մեհեանս իւր, և մտցէ ուխտաւոր ՚ի ձեռագործս իւր. և մի՛ կարասցեն փրկել զնոսա*։ ¹³**Այս բան է զոր խօսեցաւ Տէր երբեմն՝ ի վերայ Մովաբու։** ¹⁴Եւ այժմ դարձեալ խօսեցաւ և ասէ. Յերիս ամս ըստ ամաց վարձանի անարգեսցին փառքն Մովաբու յամենայն ՚ի բազում մեծութեան իւրում, և մնասցէ սակաւաւոր և ո՛չ պատուական*։

17

Գլուխ ԺԷ

¹Պատգամ ՚ի վերայ Դամասկոսի։

ԺԸ Ահաւասիկ Դամասկոս բարձցի՝ ի քաղաքաց, և եղիցի ՚ի կործանումն. ²լքեալ յաւիտեան. ՚ի մակաղատե՛ղս հօտից, և ՚ի հանգրուանս անդուց. և ո՛չ որ իցէ որ հալածիցէ*։ ³Եւ ո՛չ ևս եղիցի ամուր ապաստանի Եփրեմի. և ո՛չ ևս կացցէ թագաւորութիւն ՚ի Դամասկոս, և ո՛չ մնասցեն մնացորդք Ասորուց. զի ո՛չ դու լա՛ւ ես քան զորդիսն Իսրայէլի և զփառս նոցա։ Այսպէս ասէ Տէր զօրութեանց. ⁴եղիցի յաւուր յայնմիկ պակասութիւն փառացն Յակովբայ, և յաճախութիւն փառաց նորա շարժեսցի։ ⁵Եւ եղիցի որպէս որք զի ժողովէ որայ՛ կանգուն ՚ի գիրկս իւր, և շրջիցի հասկաքաղ զկնի նորա. և եղիցի որպէս քաղիցէ որք հա՛սկ ՚ի ձորն հաստատութեան*։ ⁶և մնասցէ ՚ի նմա խոզան. և կամ իբրև զպտուղս ձիթենույ երկուս կամ երիս ՚ի բարձրութեան ծայրիցն, կամ չորք կամ հինգ յոստսն մնայցեն։ Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի*։ ⁷Յաւուր յայնմիկ յուսացեալ եղիցի մարդն յԱրարիչ իւր. և աչք նորա ՚ի Սուրբն Իսրայէլի հայեսցին*։ ⁸Եւ մի՛ ևս յուսացեալ եղիցին ՚ի մեհեանս, և մի՛ ՚ի գործս ձեռաց իւրեանց զոր արարին մատուներ նոցա. այլ եղիցին յուսացեալ ՚ի Սուրբն Իսրայէլի. և ո՛չ ևս հայեսցին յանտառս իւրեանց, և ո՛չ ՚ի գարշելիսն իւրեանց*։ ⁹Յաւուր յայնմիկ եղիցին քաղաքք քո լքեալք. զոր օրինակ լքան Ամուրիացիքն և Խևացիքն յերեսաց որդուցն Իսրայէլի, և եղիցին աւերակք. ¹⁰փոխանակ զի թողեր զԱստուած զփրկիչ քո, և զՏէր զօգնական քո ո՛չ յիշեցեր. վասն այսորիկ

*Ոմանք. Լացից իբրև զլալիւն Յեզերայ զայգիս Սաբեմայ. կամ՝ Եսեբեմայ. զժառատունկն քո... և Ելէիլա։

*Ոմանք. Վասն այնորիկ որովայն։

*Բազունք. Եւ մի՛ կարասցեն փրկել զնա։

*Ոմանք. Ձերիս ամս ըստ։ *՚ի լուս*։ Ըստ ամաց վարձկանի անար՞. *համաձայն բազմաց ՚ի բնաբ*։

*Ոմանք. Լքեալ յաւիտեանս... անդէոց։

*Ոմանք. Ձի ժողովեսցէ որայ։

*Ոմանք. Կամ իբրև... կամ չորս կամ հինգ։

*Ոմանք. Յուսացեալ լիցի մարդ յԱրարիչ։

*Ոմանք. ՚ի մեհեանս իւրեանց, և մի՛ ՚ի գոր՞։

տնկեցես տունկ անհաւատ, և սերմն անհաւատ*.¹¹ Եւ յաւուր յորում տնկեցես, վրիպեցիս: Ընդ առաւօտս եթ սերմանեցես, ծաղկեցէ յամառն. յաւուր յորում ժառանգեցուցես՝ որպէս հայր զի թողուցու զժառանգութիւն որդւոց իւրոց*:¹² Վայ բազմութեան ազգաց բազմաց. իբրև զծով ալեօք կուտակեալ այնպէս խռովեսցիք. և մկանունք ազգաց բազմաց իբրև ջուր գոչեցեն: ¹³ Իբրև զջուրս բազումս ազգք բազունք. իբրև ջուրց բազմաց բռնութիւն հոսանաց. և վտտեցէ՛ զնոսա, և բացուստ՝ ի բաց հալածեցէ: Իբրև զունգ յարդի հոսեալ յերեսաց հողմոյ, և իբրև զփոշի՝ անուոյ ՚ի փոթորկէ՛ նրկեալ*:¹⁴ Ընդ երեկոյս սո՛ւգ առցեն. յառաջ քան զառաւօտն՝ և այլ ո՛չ ևս իցեն. այս է բաժին աւարառուացն ձերոց, և ժառանգութիւն որ զձեզն ժառանգէին:

18

Գլուխ ԺԸ

¹ Վայ երկրին ՚ի թևս նաւացն յայնկոյս գետոյն Եթովպացւոց: ² Որ առաքէր պատարագս ընդ ծով, և թուղթս մագաղաթեայս ՚ի վերայ ջուրցն մկանանց. զի երթիցեն հրեշտակք երագունք յազգ հպարտացեալ՝ յազգ օտար և ՚ի չար. զի ո՛չ ևս որ իցէ քան զնա անդր, յա՛զգ անյոյս և ՚ի կոխեալ*:³ Եւ այժմ գետք ամենայն երկրին իբրև զաշխարհ բնակեալ. բնակեցէ աշխարհ նոցա՝ իբրև զնշան ՚ի լեռնէ բարձցի, և իբրև զձայն փողոյ լսելի՛ եղիցի: ⁴ Ձի այսպէս ասաց ցիս Տէր. Ջգուշութիւն եղիցի յինուն քաղաքի՝ իբրև զլոյս տօթագին ՚ի միջօրէի, և իբրև զանպ ցօղագին յաւուրս ամարայնոյ*:⁵ Յառաջ քան զհունձս յորժամ բովանդակեցի ծաղիկն. և ազոխն ծաղկեցէ ծաղիկն ազոխացեալ. և հատանիցէ զմանր մանր ողկուզոցն մանգաղաւ, և զուռսն կտրիցէ և ՚ի բաց հատանիցէ*:⁶ Եւ թողուցու միանգամայն թռչնոց երկնից և գազանաց երկրի. և ժողովեցին ՚ի վերայ նոցա թռչունք երկնից, և ամենայն գազանք երկրի հասանիցեն ՚ի վերայ նոցա*:⁷ Ի ժամանակի յայնմիկ մատչիցին պատարագք Տեառն զօրութեանց ՚ի նեղեալ և ՚ի խոնարհ ժողովրդենէ. և ՚ի մեծէ ժողովրդենէ յայնմիտէ և յաւիտեանս ժամանակաց. ա՛զգ յուսացեալ և կոխեալ՝ որ է ՚ի կողմն գետոյ աշխարհի նոցա, ՚ի տեղւոջ ուր անուն Տեառն զօրութեանց կոչեցաւ ՚ի վերայ լերինն Սիովնի*:

19

Գլուխ ԺԹ

* Ոմանք. Եւ զՏէր Աստուած զօգնական քո... վասն այնորիկ:

* Ոմանք. Յորում ժառանգեցես, որպէս հայր որ թողուցու:

* Ոմանք. Եւ իբրև զջուրս բա՛... և վատեցէ զնա... և իբրև զունգ յարդի: Ոսկան. Եւ ՚ի բաց հալածեցէ:

* Ոմանք. Յազգ անօրէն հպարտա՛:

* Ոմանք. Տօթագին ՚ի մէջօրէի:

* Ոմանք. Բաւընդակեցի ծաղիկն... կտրիցէ և ՚ի բաց հանիցէ:

* Ոմանք. Եւ ժողովեցին ՚ի վերայ նորա:

* Յօրինակին. Ի ձեղեալ և ՚ի խոնարհ ժողո՛: Ոմանք. Ի ժամանակի յայնմիկ... յայսմ հետէ և յաւիտեանս ժամանակաց, ազգ անյոյս և կոխեալ... յաշխարհի նորա:

¹Տեսիլ Եգիպտացւոց:

ԺԹ Ահաւասիկ Տէր նստեալ ՚ի վերայ թեթև ամպոյ, եկեսցէ՛ յԵգիպտոս. և շարժեսցին ձեռագործք Եգիպտացւոց յերեսաց նորա. և սիրտք նոցա լքցին ՚ի նոսա: ²Եւ յարիցեն Եգիպտացիքն ՚ի վերայ Եգիպտացւոցն, և տայցեն պատերազմ այր ընդ եղբօր, և այր ընդ ընկերի. քաղաք ընդ քաղաքի, և օրէնք ընդ օրէնս: ³Եւ խռովեսցին ոգիք Եգիպտացւոցն յանձինս իւրեանց. և գխորհուրդ նոցա ցրեցի՛ց. և հարցանիցեն զդիսն իւրեանց և զպատկերս իւրեանց, և զգետնակոչս՝ և զվիուկս՝: ⁴Եւ մատնեցից զԵգիպտացիս ՚ի ձեռս արանց տերանց խստասրտաց, և թագաւորք խստասիրտք տիրեսցեն նոցա: Ա՛յսպէս ասէ Տէր Սաբաւովք՝: ⁵Եւ արբցեն Եգիպտացիքն զջրշէղջսն ծովափնեայս. քանզի գետն նուազեսցէ, և ցամաքեսցի: ⁶Եւ պակասեսցեն գետքն և ջրադարձք գետոյն, և ցամաքեսցին ամենայն ժողովք ջուրցն. և յամենայն մարգագետինս, և յամենայն ամուրս եղեգան և պրտուոյ և ՚ի լաւռամարգս՝: ⁷Ամենայն կանաչ որ շուրջ զգետովն իցէ, և ամենայն արտավարք որ ընդ գետոյն ջրով վարեալ իցեն խորշակահար ցամաքեսցին՝: ⁸Եւ տրտմեսցին ձկնորսքն, և յոգո՛ց հանիցեն ամենայն կարթընկէցք գետոյն. և ցանցորդքն և ուռկանաւորքն սո՛ւգ առցեն: ⁹Ամաչեսցեն և կտաւագործքն բարակամանք, և որ գործեն զբեհեզն: ¹⁰Եւ եղիցին ճարտարքն ամենայն լի՛ տրտմութեամբ. և ամենայն տարագագործք նոցա տրտմեսցին, և ցաւեսցին սիրտք իւրեանց: ¹¹Եւ յիմարեսցին իշխանքն Տայանու իմաստունք խորհրդականք թագաւորին. և յիմարեսցին խորհուրդք նոցա. զհա՞րօ ասիցէք ցարքայն՝ թէ որդիք իմաստնո՛ց ենք մեք, և որդիք թագաւորաց որ իսկզբանէն էին՝: ¹²Արդ՝ ո՞ւր են իմաստունքն քո. պատմեսցեն քեզ և ասասցեն զի՞նչ խորհուրդ խորհեցաւ Տէր զօրութեանց ՚ի վերայ Եգիպտոսի: ¹³Յիմարեցան իշխանք Տայանու, և բարձրացան իշխանքն Մեմփացւոց. և մոլորեցուցեն զԵգիպտացիս ըստ ազգաց ազգաց իւրեանց՝: ¹⁴Քանզի Տէր խառնեաց նոցա ոգի մոլորութեան, և մոլորեցուցին զԵգիպտոս յամենայն ՚ի գործս իւրեանց. որպէս մոլորիցի արբեալ՝ և որ փսխիցէն՝: ¹⁵Եւ մի՛ ևս եղիցի Եգիպտացւոցն գործ՝ մի՛ յետս և մի՛ յառաջ, մի՛ իսկզբանն և մի՛ ՚ի կատարածի: ¹⁶Յաւուր յայնմիկ եղիցին Եգիպտացիք իբրև զկանա՛յս դողացեալք և զարհուրեալք յերեսաց ձեռին Տեառն զօրութեանց՝ զոր արկցէ ինքնին ՚ի վերայ նոցա: ¹⁷Եւ եղիցի երկիրն Զրէաստանի ՚ի խրտուի՛լ Եգիպտացւոցն. և ամենայն որ անուանեսցէ զանուն երկրին առ նոսա, զարհուրեսցին վասն խորհրդին զոր խորհեցաւ Տէր զօրութեանց ՚ի վերայ նորա՝: ¹⁸Յաւուր յայնմիկ եղիցին հինգ

* *Օրինակ մի.* Եւ խռովեսցին դիքն Եգիպտաց՝... և զվիուկս: *Ոմանք.* Եւ գխորհուրդս նոցա:

* *Ոմանք.* Եւ մատնեցից զԵգիպտոս ՚ի ձեռս... և թագաւորք խիստք տիրես՝... ասէ Տէր զօրութեանց:

* *Ոմանք.* Եւ պակասեսցէ գետն... և ցամաքեսցի ամենայն ժողովք... և յամուրս եղէ՛:

* *Ոսկան.* Ջրով վարիցի, խորշակահար ցամաքեսցի:

* *Ոմանք.* Եւ յիմարեսցին իշխանք:

* *Ոմանք.* Պակասեցան իշխանք Տայանու, և հպատացան իշխս՝: *Ոսկան.* Եւ մոլորեցուցին զԵգիպ՝:

* *Բազումք.* Յամենայն գործս իւր:

* *Ոսկան.* Վասն խորհրդոյն զոր: *Ոմանք.* Տէր զօրութեանց ՚ի վերայ նոցա:

քաղաք յերկրին եգիպտացոց՝ որ խօսիցին զՔանանացոց լեզուն, և երդնուցուն յանուն Տեառն զօրութեանց. քաղաք Ասեղեկ կոչեսցի մի քաղաք*։¹⁹Յաւուր յայնմիկ եղիցի սեղան Տեառն յերկրին եգիպտացոց, և արձան կանգնեալ Տեառն ՚ի սահմանս նորա.²⁰Եւ եղիցի ՚ի նշան յաւիտենից Տեառն յերկրին եգիպտացոց։ Ջի աղաղակեսցեն առ Տէր վասն նեղութեան իւրեանց. և առաքեսցէ նոցա Տէր այր մի որ փրկեսցէ զնոսա, և դատաստանա՛ւ փրկեսցէ զնոսա։²¹Եւ ծանիցի՛ Տէր եգիպտացոցն. և ծանիցեն եգիպտացիքն զՏէր յաւուր յայնմիկ. և մատուցեն զոսա և պատարագս, և դիցեն ուխտս Տեառն՝ և կատարեսցեն։²²Եւ հարցէ Տէր զեգիպտացիսն մեծամեծ՝ հարուածովք, և բժշկելով բժշկեսցէ զնոսա. և դարձցի՛ն առ Տէր՝ և լուիցէ՛ նոցա՝ և բժշկեսցէ՛ զնոսա։²³Յաւուր յայնմիկ եղիցին ճանապարհ եգիպտացոցն առ Ասորեստանեայս. և մտցեն Ասորեստանեայքն յեգիպտոս, և եգիպտացիքն երթիցեն առ Ասորեստանեայս. և ծառայեսցեն եգիպտացիքն Ասորեստանեայցն*։²⁴Յաւուր յայնմիկ եղիցի երրորդ Իսրայէլ ՚ի մէջ եգիպտացոցն և ՚ի մէջ Ասորեստանեայցն. օրհնեալ յերկրին*²⁵զոր օրհնեա՛ց Տէր զօրութեանց, և ասէ. Օրհնեա՛լ եղիցի ժողովորդ իմ որ յեգիպտոս, և որ յԱսորեստանեայսն, և ժառանգութիւն իմ Իսրայէլ*։

20

Գլուխ Ի

¹ Յաւուր յորում եկն Տանաթան յԱզովտոս՝ ՚ի ժամանակին իբրև արձակեցաւ Սաւանայ արքայէ Ասորեստանեայց. և ետ պատերազմ ընդ Ազովտայ, և առ զնա։² Յայնժամ խօսեսցա՛ւ Տէր ընդ Եսայայ որդւոյ Ամովսայ՝ և ասէ.*

՚ի Երթ և ՚ի բա՛ց հան զքուրծդ ՚ի միջոյ քումմէ. և լո՛յծ զհողաթափս յոտից քոց. և արա՛ր այնպէս. և զնայր մերկ և բոկ։³Եւ ասէ Տէր. Ջոր օրինակ զնայ ծառայ իմ Եսայի մերկ և բոկ, այդպէս զերիս ամս եղիցին նշանք և արուեստք եգիպտացոցն, և Եթեովպացոց։⁴Եւ ՚ի մի՛տ առցեն՝ թէ այդպէս տարցի արքայն Ասորեստանեայց ՚ի գերութեան զեգիպտացիսն՝ և զԵթեովպացիսն, զերիտասարդս և զժերս՝ մերկս և բոկս խայտառակեալ զամօթ եգիպտացոցն*։⁵Եւ ամաչեսցեն ՚ի պարտութիւն մատնեալ եգիպտացիքն ՚ի վերայ Եթեովպացոցն, յորս յուսացեալ էին եգիպտացիքն, որք էին նոցա փա՛ռք*։⁶Եւ ասացեն բնակիչք կղզւոյդ այդորիկ յաւուր յայնմիկ. Ահաւասիկ մեք յուսացեալ էաք ապաստան լինել ՚ի սոսա յօգնականութիւն. և սոքա ո՛չ կարացին ապրեցուցանել՝ և ո՛չ զանձինս իւրեանց յարքայէն Ասորեստանեայց. և մեք զիա՞րդ ապրեսցուք*։

* Ոմանք. Քաղաքասեղեկ կոչեսցի մի քաղաքն։

* Այլք. եղիցի ճանապարհ եգիպտացոցն։

* Ոմանք. եղիցի երկրորդ Իսրայէլի ՚ի մէջ։

* Ոմանք. եւ որ յԱսորեստանեայսն։

* Ոմանք. Մանաթան յԱզովտայ. ՚ի ժամանակին զի արձա՛ւ։

* Ոմանք. ՚ի գերութիւն զեգիպտացոցն։ Յօրհնակին. եւ բոկս կայտառակեալ զա՛ւ։

* Ոմանք. Յոր յուսացեալ էին։

* Ոմանք. Կղզւոյդ այդմիկ... լինել ՚ի սոսա ապաստան, լինել յօգնականութիւն...

Գլուխ ԻԱ

¹Տեսիլ անապատին 'ի ծովու:

ԻԱ Իբրև մրրիկ ընդ անապատ անցցէ, յանապատէ եկեալ յերկրէ: Ահագին է տեսիլն*, ²և խստութիւն պատմեցաւ ինձ. որ արհամարհելոցն է՝ արհամարհէ, և որ անօրինելոցն է՝ անօրինէ: 'Ի վերայ իմ հասին ելամացիք, և հրեշտակք Պարսից գան 'ի վերայ իմ. արդ հեծեծեցի՞ց և մխիթարեցի՞ց զանձն իմ*: ³Վասն այսորիկ լցաւ մէջ իմ դողութեամբ, և երկունք կալան զիս իբրև զծննդական. պնդեցայ՝ զի մի՛ լուայց, փութացայ՝ զի մի՛ տեսից*: ⁴Սիրտ իմ դարձաւ 'ի մոլորութիւն, և անօրէնութիւն դեռ ընկղմէր զիս. անձն իմ եկաց 'ի դողութեան. դիտեա՛ զդիտաւորութիւն քո*. ⁵պատրաստեա՛ սեղան, կե՛ր արբ. արի՛ք իշխանք պատրաստեցէ՛ք Վահան*: ⁶Զի այսպէս ասաց ցիս Տէր. Գնա՛ դու անձամբ անձին դէտ լինիջիր, և զոր ինչ տեսանիցես պատմեսջիր*: ⁷Եւ տեսի հեծեալս երկուս. հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու. լսել լուր բազում # ունկնդրութեան: Եւ կոչեա՛ զՈւրիա 'ի դիտանոցդ, ասէ Տէր: ⁸Եւ կացի զտիւն ողջոյն՝ և զգիշերն ամենայն 'ի վերայ բանակին. ⁹և տեսի զի գայր նոյն հեծեալ երկծի. պատասխանի՛ ետ և ասէ. Անկա՛ւ կործանեցաւ Բաբելովն, և ամենայն պատկերք նորա և ձեռագործք իւր կործանեցան յերկրի*: ¹⁰Լուարո՛ւք մնացորդք և ցաւագնեալք. լուարո՛ւք զոր լուայ 'ի Տեառնէ զօրութեանց, զոր Աստուած Իսրայէլի պատմեաց մեզ:

ԻԲ ¹¹**Տեսիլ Եղովմայեցւոցն:** Առ իս կոչեա՛ 'ի Սէիր լեռնէ. Պահեցէ՛ք զմահարձանս*. ¹²պահեցի՞ց ըստ առաւօտն և զցայգ. եթէ խնդրիցես, խնդրեսջիր և առ իս բնակեսջիր*:

¹³**Առած 'ի վերայ Արաբացւոց:** Ընդ երեկոյս ննջեսցես յանտառի ճանապարհին Դովդանիմ*: ¹⁴Բերէ՛ք ջուր ընդ առաջ ծարաւեաց բնակիչք Թեմանու: Հացի՛ւ ընդ առաջ ելէք փախստից: ¹⁵Վասն բազմութեան սպանելոցն, և վասն բազմութեան մոլորելոցն, և վասն բազմութեան սրոյն, և վասն բազմութեան աղեղանցն լարելոց, և վասն բազմութեան անկելոցն 'ի պատերազմի*: ¹⁶Զի այսպէս ասաց ցիս Տէր. Ա՛ն մի ևս իբրև գտարի վարձանի, և

ապրեցուցանել զանձինս: *Ուր Ոսկան.* Լինել 'ի սոցա օգնա՞:

* *Ոսկան.* Տեսիլ անապատին ծովու:

* *Ոմանք.* Եւ որ անիրաւելոցն է անիրաւէ... արդ հեծեծեցից: 'Ի լուս՞. Ելեմացիք: *Ուր ոմանք.* Իդիմացիք:

* *Ոմանք.* Վասն այնորիկ լցաւ:

* *Ոսկան.* Գիտեա՛ զդիտաւո՞:

* *Ոմանք.* Պատրաստեցէ՛ք զվահանս:

* *Յօրինակին պակասէր.* Զի այսպէս ասաց ցիս:

* *Ոմանք.* Կործանեցան յերկիր:

* *Ոսկան.* Առ իս գոչեա՛ 'ի:

* *Ոմանք.* Եթէ խնդրեսցես:

* *Ոմանք.* 'Ի յանտառի 'ի ճանհարին Դովդանիմ: *Ուր Ոսկան.* Դէղանիմ:

* *Ոմանք.* Վասն բազմութեան սպանանելոցն:

պակասեցեն փառք որդւոցն Կեդարու*։ ¹⁷Եւ մնացորդք աղեղնաւորաց
զօրաւորաց որդւոցն Կեդարու եղիցին սակաւաւորք. զի Տէր Աստուած
Իսրայէլի խօսեցաւ*։

22

Գլուխ ԻԲ

¹ Պատգամ ծորոյն Սիովնի:

Ձի^օ դու. զի^օ ընդ քեզ. զի^օ ելէք դուք այժմ ամենեքեան ՚ի տանիս
նանրութեան*։ ²Լցաւ քաղաքդ զուժկանօք, # քաղաքդ պերճացեալ. վիրաւորք
քո ո՛չ վիրաւորք սուսերի, և ո՛չ դիակունք քո՝ դիակունք պատերազմաց։
³Ամենայն իշխանք քո փախստեայք, և կալանաւորք քո կապեալք
սաստկութեամբ. և հզօրք քո առ հասարակ կապեցան, բացէ՛ ՚ի բաց
փախստականք։ ⁴Վասն այսորիկ ասացի. Թո՛յլ տուք ինձ լացի՛ց դառնապէս. մի՛
բռնադատէք միսիթարել զիս ՚ի վերայ բեկման դատեր ազգի իմոյ։ ⁵Ձի օր
խռովութեան և կորստեան և կոխման և մոլորութեան ՚ի Տեառնէ զօրութեանց ՚ի
ծորն Սիովնի. մե՛ծ և փոքր առ հասարակ մոլորեալք դանդաչեն ՚ի վերայ
լերանց*։ ⁶Իսկ Ելամացւոց առեալ զկապարճս, հեծեալք յերիվարս. և գունդք
ճակատելոց*։ ⁷և ընտիր ընտիր ծորք քո լցցին կառօք, և հեծեալք երիվարօք
խցցեն զդրունս քո։ ⁸Եւ կործանեցեն զդրունս Յուդայ. և տեսցեն յաւուր
յայնմիկ զընտիր ընտիր ապարանս քաղաքին. ⁹և յայտնեցեն զծածուկս
ապարանից բարձանցն Դաւթի։ Եւ տեսին զի բազումք էին. և զի դարձուցին
զհին ջրմուղն ՚ի քաղաքն. ¹⁰և զի քակեցին զապարանսն Երուսաղեմի
յամրութիւն պարսպաց քաղաքին։ ¹¹Եւ հանէք ձեզ ջուր ՚ի մէջ երկուց
պարսպաց, ներքսագոյն քան զհին ջրմուղն. և ո՛չ հայեցարուք յայն որ արարն
զնա իսկզբանէ, և զհաստիչ նորա ՚ի հեռուստ ո՛չ ծաներուք*։ ¹²Եւ կոչեաց Տէր
Սաբաւովք յաւուր յայնմիկ լալո՛ւմն և կոծու՛մն և աշխարու՛մն և գերծու՛մն, և
զգածու՛մն քրձի*։ ¹³Եւ նոքա արարին ուրախութիւն և ցնծութիւն. սպանանէին
զուարակս և զենուին ոչխարս, զի կերիցեն միս՝ և արբցեն զինի. և ասացեն.
Կերիցո՛ւք և արբցո՛ւք՝ քանզի վաղիւ մեռանիմք։ ¹⁴Եւ այն յայտնեալ կայ
յականջս Տեառն զօրութեանց. Ձի ո՛չ թողցուն ձեզ մեղքդ այդոքիկ՝ մինչև
մեռանիցիք # ասէ Տէր զօրութեանց*։ ¹⁵Այսպէս ասէ Տէր Տէր Սաբաւովք. Գնա՛
դու և մո՛ւտ ՚ի դիւան անդր առ Սոմնաս հանդերձապետ, և ասացես ցնա՛*։ ¹⁶Ձի^օ
եկեալ ես այսր. և զի^օնչ խնդիր է քո աստ. զի փորեցեր դու քեզ աստ գերեզման,

* Ոմանք. Իբրև զտարի վարձկանի։

* Ոմանք. Եղիցին սակաւորք. զի Տէր։

* Ոմանք. Ձի ելէք դուք այժմ։

* Ոմանք. Առ հասարակ դանդաչեն։

* Ոմանք. Իսկ Եղամացւոցն. կամ՝ Եղիմացւոցն առեալ։

* Ոմանք. Ի ներքսագոյն քան զհին։

* Յօրինակին պակասէր. Եւ կոծու՛մն, և աշխարու՛մն և գերծու՛մն, և զգածու՛մն։

* Ոմանք. Ձի ոչ թողցուն ձեզ։

* Ոմանք. Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Գնա՛։

և արարեր քեզ յարկ ՚ի վիմիդ*։ ¹⁷Ահաւասիկ Տէր զօրութեանց հանցէ՛ և սատակեսցէ՛ զքեզ այր դու, և հանցէ՛ զպատմուճան քո*։ ¹⁸և զպսակդ փառաց քոց. և ընկեսցէ՛ զքեզ յերկիրն մեծ և յանչափ, և անդ մեռանիցիս. և արասցէ՛ զկառսն քո զգեղեցիկս յանարգութիւն, և զտուն իշխանութեան քոյ ՚ի կոխունն։ ¹⁹Եւ մերժեսցի՛ր ՚ի պետութենէ քումմէ, և ՚ի հաստատութենէ քումմէ*։ ²⁰Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ կոչեցից զժառայ իմ զեղիակիմ Քեղկեայ, ²¹և զգեցուցից նմա զպատմուճանդ քո, և տաց նմա զպսակդ քո ճոխութեամբ, և տաց ՚ի ձեռս նորա զհազարապետութիւնդ քո. և եղիցի իբրև հայր բնակչացդ Երուսաղեմի և բնակչացդ Յուդայ*։ ²²Եւ տաց զփականս Դաւթի նմա. իշխեսցէ, և ո՛չ ոք իցէ որ նմա ընդդէմ դառնայցէ։ ²³Եւ կացուցից զնա իշխան ՚ի հաւատարիմ տեղւոջ, և նստցի յաթո՞ռ փառաց տան հօր իւրոյ*։ ²⁴Եւ եղիցին ՚ի նա՛ յուսացեալք ամենայն փառաւորք տան հօր իւրոյ, ՚ի փորքկանց մինչև ՚ի մեծամեծս. և զամենայն անօթս ՚ի փորքուէ մինչև յանօթս ազանովթայ. բացցէ՛ և ո՛չ ոք իցէ որ փակիցէ, և փակիցէ՛ և ո՛չ ոք իցէ որ բանայցէ. և եղիցին կախեալ զնմանէ*, ²⁵յաւուր յայնմիկ։ Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Շարժեսցի մարդ հաստատուն ՚ի հաւատարիմ տեղւոջէ. անկցի և կործանեսցի. # և բարձցին փառք նորա ՚ի նմանէն. զի Տէր խօսեցաւ*։

23

Գլուխ ԻԳ

¹Պատգամ Տիրոսի։

ԻԳ Ողբացէ՛ք նաւք Կարթեղովնացւոց, զի կորեան և ո՛չ ևս գայցեն յերկրէն Կիտացւոց. վարեցան ՚ի գերութեան*։ ²Ո՞ւմ նմանեցան բնակիչք կղզոյդ այդորիկ. վաճառականք Փիւնիկեցւոց որ անցանեն ընդ ծով, ընդ ջուրս բազումս. ³զաւակ գնողիցն իբրև զարդիւնս ամարայնոյ ամփոփելոյ վաճառականք ազգացն*։ ⁴Յամօթ լեր Սիդոն՝ ասէ ծով. և զօրութիւն ծովու ասասցէ. Ո՞չ երկնեցի, և ո՞չ ծնայ, և ո՞չ սնուցի երիտասարդս, և ո՞չ բարձրացուցի կուսանս։ ⁵Իսկ յորժամ լուր լիցի, յերկիրն Եգիպտացւոց, ցաւք կալցին զնա վասն Տիրոսի*։ ⁶Երթայք ՚ի Կարթեղոն. ողբացէ՛ք բնակիչք կղզւոյդ այդորիկ։ ⁷Ո՞չ այդ իսկ էր ամբարտաւանութիւն ձեր իսկզբանէ, մինչև՛ մատնեալ էր նորա. # և վարեսցի՛ նա յոտից իւրոց ՚ի պանդխտութիւն հեռաւոր։

* Ոմանք. Եկեալ ես այսր դու... և արարեր դու քեզ յարկ։

* Ոմանք. Ահաւաղիկ Տէր զօ՞ւ։ Ոմանք. Եւ հանցէ զպսակդ քո. (18) և զպատմուճան փառաց քոց։

* Ոմանք. Եւ մերժեսցիս ՚ի պե՞։

* Ոսկան. Ջպսակդ քո ճոխութեան։

* Ոմանք. Եւ եղիցի յաթոռ փա՞։

* Ոմանք. Մինչև ցմեծամեծս... և փակեսցէ՛ և ոչ ոք... կախեալք զնմանէ։

* Ոսկան. Փառք նոցա ՚ի նմանէ։

* Ոմանք. Կարգեղոնացւոց... վարեցան ՚ի գերութիւն։ *Ի լուս՞. ՚ի վերայ՝* Կիտացւոց, *նշանակի՞* ՚ի տանէ Տարութերին։

* Յօրինակին. Ջաւակ գնաւդիցն։

* Ոմանք. Լու լիցի յերկրին Եգիպտոսի, ցաւք կալցին զնոսա։

⁸# Իսկ ո՞ր խորհեցաւ զայս ՚ի վերայ Տիրոսի. միթէ ՚ի վա՞յր ինչ ոք էր՝ կամ տկա՞ր ոք. նա՛ վաճառականք նորա փառաւորք # Քանանացւոց, և առգնօղք նորա իշխանք երկրի: ⁹Տէր զօրութեանց խորհեցաւ քակել՝ զամենայն ամբարտաւանութիւն փառաւորաց. և անարգել՝ զամենայն պատուական ՚ի վերայ երեսաց երկրի: ¹⁰Գործեա՛ զերկիր քո, զի այսուհետև ո՛չ ևս զան նաւք ՚ի Կարքեդոնայ. ¹¹և ձեռն քո ո՛չ ևս զօրացի ՚ի վերայ ծովու. որ զայրացուցանէիր զթագաւորս: Տէր զօրութեանց հրամայեաց վասն Քանանու՝ կորուսանել զզօրութիւն նորա՝: ¹²Եւ ասացեն՝ եթէ այսուհետև մի՛ ևս յաւելուցուք թշնամանել և զրկել զկոյս դուստր Սիովնի. այլ յո՛տն կաց՝ և անց ընդ ծով. և թէպէտ և դիմեսցես ՚ի Կիտիս, և ո՛չ անդ լիցի քեզ հանգիստ՝: ¹³Եւ եթէ յերկիրն Քաղդէացւոց. սակայն և այն աւերեալ է յԱսորեստանեայց. և անդ դո՛ւ և դադար քեզ ո՛չ գտանիցի: # Արկ զհիմն նորա Սիհիմ. կանգնեաց զմահարձանս նորա, և յարոյց զաշտարակս նորա. # արդ անկա՛ւ կործանեցաւ պարիսպ նորա: ¹⁴Ողբացէ՛ք նաւք Կարքեդոնացւոց, զի կորեա՛ւ ամրութիւն ձեր: ¹⁵Եւ եղիցի յաւուր յայնմիկ, լքեա՛լ լիցի Տիրոս ամս եւթանասուն իբրև զժամանակ թագաւորի միոյ, և իբրև զժամանակ կենաց մարդոյ միոյ. և յետ ամացն եւթանասնից եղիցի Տիրոս իբրև երգ պոռնկի միոջ՝: ¹⁶Ա՛ռ քնար, յածեա՛ց, կոծեա՛ց լքեալ քաղաք պոռնկութեան, քա՛ջ հար. յաճախեա՛ երգել՝ զի քո՛ յիշատակ մնացէ՛: ¹⁷Եւ եղիցի յետ ամացն եւթանասնից, այց արասցէ Տէր Տիրոսի. և միւսանգամ անդրէն ՚ի նոյն յառաջին կարգն հաստատեսցի. և եղիցի ՚ի նմա վաճա՛ռ ամենայն թագաւորաց տիեզերաց # ընդ ամենայն երեսս երկրի՝: ¹⁸Եւ եղիցի վարձ վաճառի նորա Տեառն նուիրեալ. ո՛չ անձանց ինչ ժողովեսցեն, այլ բնակելոցն առաջի Տեառն եղիցին ամենայն վաճառք նորա, ուտել ըմպել՝ և ուրախ լինել ՚ի նշան յիշատակաց առաջի Տեառն՝:

24

Գլուխ ԻԴ

ԻԴ ¹Ահաւաղիկ Տէր ապականեսցէ՛ զտիեզերս. և աւերեսցէ՛ զնա, և տապալեսցէ՛ զատակս նորա. և ցրուեսցէ՛ զբնակեալսն ՚ի նմա՝: ²Եւ եղիցի ժողովուրդն իբրև զքահանայն, և ծառայն իբրև զտէրն, և աղախինն իբրև զտիկինն. և եղիցի գնօղն իբրև զվաճառականն, և փոխատուն իբրև զփոխառուն, և պարտապանն իբրև զպարտատէ՛րն: ³Ապականելով ապականեսցի՛ երկիր #, և յափշտակութեամբ յափշտակեսցի՛ երկիր. զի բերան Տեառն խօսեցաւ զայս: ⁴Սո՛ւզ առ՝ կործանեցաւ երկիր #, կործանեցան և ապականեցան տիեզերք. սո՛ւզ առին բարձունք երկրի՝: ⁵Քանզի երկիր անօրինեցաւ բնակչօք իւրովք. վասն զի անցին զօրինօքն Տեառն, և կոխեցին

* *Ոմանք.* Որ զայրացուցանէր:

* *Ոմանք.* Եւ դիմեսցես ՚ի Կիտիս:

* *Ոմանք.* Իբրև զժամանակս թագաւորի... և յետ եւթանասնիցն եղիցի Ծուր իբրև:

* *Ոմանք.* Յաճախեա՛ յերգել:

* *Ոմանք.* Այց արասցէ Աստուած Ծուրայ:

* *Ոմանք.* Ուտել և ըմպել և ու՛:

* *Ոմանք.* Եւ տապալեսցէ զյարկս նորա:

* *Ոսկան.* Սուզ էառ և կոծեցաւ երկիր:

զիրամանս նորա #, և ցրեցին զուխտն յաւիտենից*։ ⁶Վասն այսորիկ նզովք կերիցեն զերկիր. զի մեղան բնակիչք նորա. վասն այսորիկ տնանկք եղիցին բնակիչք նորա, և մնացեն մարդք սակաւաւորք*։ ⁷Սուգ առցէ գինի, սուգ առցէ այգի. յոգոց հանցեն ամենայն խրախճանք յանձինս իւրեանց։ ⁸Լռեցին ուրախութիւնք թմբկաց, լռեցին հպարտութիւնք և մեծութիւնք անպարշտաց. լռեցին ձայնք քնարաց. ⁹յամօթ եղեն և ո՛չ ընպէին գինի. դառնացաւ ցքի ընպէլեաց։ ¹⁰Աւերեցան ամենայն քաղաքք. դրունք ապարանից կարկեցան, զի ո՛չ ոք էր որ մտանէր*։ ¹¹Ողբացէք ՚ի վերայ գինւոյ ընդ ամենայն տեղիս. լռեաց ամենայն ուրախութիւն. պարտեցան ուրախութիւն երկրի*։ ¹²Լքցին քաղաքք աւերակք, և ապարանք մնացեալք կորիցեն։ ¹³Այս ամենայն եղիցի յերկրի ՚ի մէջ հեթանոսաց։ Ջոր օրինակ եթ ճռաքաղ ոք առնիցէ զծիթենի, այնպէս ճռաքաղ առնիցեն զնոսա. և եթ դադարեցեն կուրք*, ¹⁴նոքա մեծածայն աղաղակեցեն։ Բայց մնացեալքն յերկրի՝ ուրախ լինիցին միանգամայն փառօքն Տեառն, և խռովեցին ջուրք ծովու*։ ¹⁵Վասն այսորիկ փառք Տեառն ՚ի կղզիս ծովու, և անուն Տեառն փառաւոր եղիցի։ Տէր Աստուած Իսրայէլի*։ ¹⁶Ի ծագաց երկրի արուեստս լուաք. յոյս բարեպաշտին, և ասիցեն # խորհուրդ իմ ինձ. խորհուրդ իմ ինձ և իմոցն. վայ արհամարհողաց որ արհամարհեն, և արհամարհանօք արհամարհիցեն զօրէնս*։ ¹⁷Ահ, զուր, և որոգայթ ՚ի վերայ ձեր բնակիչք երկրի։ ¹⁸Եւ եղիցի որ փախիցէ յահէ անտի՝ անկցի ՚ի գուբն. և որ ելանիցէ ՚ի գբոյն, ըմբռնեցի՝ յորոգայթն։ Ջի պատուհանք բացան յերկնից, և շարժեցին հիմունք երկրի*։ ¹⁹Խռովութեամբ խռովեցի՝ երկիր, և տարակուսելով տարակուսեցի երկիր. խոնարհեցաւ*։ ²⁰Շարժելով շարժեցի՝ երկիր, իբրև զտաղաւար մրգապահաց. իբրև զարբեալն և զսխալակ, զլորեցի և մի՛ կարասցէ կանգնել. զի սաստկացաւ ՚ի վերայ նորա անօրէնութիւն*։ ²¹Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ածցէ՛ Աստուած ՚ի վերայ զարդուն երկնից զձեռն իւր. և ՚ի վերայ թագաւորաց երկրի՝ որ ՚ի վերայ երկրի։ ²²Եւ ժողովեցեն զժողովս նորա ՚ի կապանս, և պաշարեցեն յամուրս. և յետ բազում ազգաց այցելութիւն եղիցի նոցա*։ ²³Եւ հալեցի՝ աղիւսն, և կործանեցի՝ պարիսպն. զի թագաւորեցէ Տէր ՚ի լերին Սիովնի և յերուսաղէմ, և առաջի ծերոց փառաւորեցի՝։

25

Գլուխ ԻԵ

* Այլք. Եւ փոխեցին զիրամանս նորա։

* Ոմանք. Վասն այնորիկ տնանկք... մարդիկ սակաւաւորք։

* Ոմանք. Քաղաքք ամենայն։

* Ոմանք յաւելուն. Պարտեցաւ ամենայն ուրախութիւն։

* Ոմանք. Կուրք (14) նորա. մեծածայն աղա՛։

* Ոսկան. Ուրախ լիցին միանգամայն ՚ի փառսն Տեառն։

* Ոմանք. Եւ անուն Տեառն փառաւորեցի։

* Ոմանք միանգամ դնեն. Խորհուրդ իմ ինձ։

* Ոմանք. Բացան երկնից, և շար՛։

* Ոմանք. Խռովելով խռովեցի։

* Ոսկան ընդ միում օրինակի. Իբրև զարբեալն ևս խաղ՛ակ։

* Ոմանք. Եւ յետ բազում ժամանակաց այցելութիւն եղիցի։

¹Տէր Աստուած իմ փառաւոր արարից զքեզ. օրհնեցի՛ց զանուն քո, զի արարեր սքանչելի՛ իրս, զխորհուրդն առաջին զճշմարիտ: ²Այո՛ Տէր. զի եղիր զքաղաքս՝ ՚ի հողաբլուրս, և զքաղաքս ամուրս՝ ՚ի կործանումն հիմանց նոցա. քաղաքք ամպարշտաց յաւիտենից մի՛ շինեսցի* : ³Վասն այնորիկ օրհնեսցէ՛ զքեզ ժողովուրդ աղքատ, և քաղաքք մարդկան զրկելոց օրհնեսցեն զքեզ* . ⁴զի եղեր ամենայն քաղաքի խոնարհի օգնական, և տրտմելոց վասն կարօտութեան՝ յարկ ապաւինի. ՚ի մարդոց չարաց փրկեցեր զնոսա: ⁵Ապաւեն ծարաւեաց և ոգի մարդկան զրկելոց. # իբրև մարդոց թալկացելոց՝ ծարաւեաց ՚ի Սիովն. ՚ի մարդոց ամպարշտաց որոց մատնեցեր զնեզ: ⁶Եւ արասցէ Տէր Սաբաւովք ամենայն հեթանոսաց ՚ի լերինս յայսմիկ. արբցեն ուրախութիւն, արբցեն գինի. օծցին իւղով ՚ի մրրոյ պարզելոյ*, ⁷և ընկլցին ՚ի լերինս յայսմիկ: Պատմեա՛ զայս ամենայն հեթանոսաց. զի այս խորհուրդ է ՚ի վերայ ամենայն ազգաց* : ⁸Չօրացա՛ւ մահ և եկո՛ւլ. և դարձեալ եհատ Աստուած զամենայն արտօսր յամենայն երեսաց, և զնախատինս ժողովրդեանն եբարձ յամենայն երկրէ. զի բերան Տեառն խօսեցաւ. # զտապն հովանեա՛ւ ամպոյ, և զբազուկս հզօրաց խոնարհեցուցէ՛ : ⁹Եւ ասասցեն յաւուր յայնմիկ. Ահաւասիկ Տէր Աստուած մեր յոր յուսացեալ էաք, և ապրեցուցէ՛ զնեզ. զի սա՛ է Տէր, և սպասեա՛ք սմա. և ցնծասցուք՝ և ուրախ եղիցուք ՚ի փրկութեան մերում: ¹⁰Եւ տացէ մեզ հանգիստ Աստուած ՚ի լերինս յայսմիկ. և լիցի կոխան Մովաբացին, զոր օրինակ կոխիցէ ոք զկա՛լ կամնասայլիւք. ¹¹և հանգուցանիցէ զձեռս իւր. նոյնպէս և նա՛ չուառացոյց զնոսա ՚ի կորուսանել. և խոնարհեցուցէ՛ զբարձրութիւն նորա, յոր արկաներ զձեռս իւր* : ¹²Եւ զբարձրութիւն ապաստանի պարսպաց քոց խոնարհեցուցէ՛. և իջցեն մինչև ՚ի յատակս* :

26

Գլուխ ԻԶ

¹Յաւուր յայնմիկ երգեսցեն զերգս զայս յերկրին Յրեաստանի. թէ ահա՛ւասիկ քաղաք զօրացեալ և փրկութիւն մեր. կանգնեսցէ պարիսպ և պատուարս* : ²Բացէ՛ք զդրունս ձեր, և մտցէ ժողովուրդ որ պահէ զարդարութիւն. ³և պահէ զճշմարտութիւն. վերակացո՛ւ ճշմարտութեան. և պահէ զխաղաղութիւն. խաղաղութիւն* : ⁴Ձի ՚ի քե՛զ յուսով յուսացաք Տէր մինչև յաւիտեան* : ⁵Որ խոնարհեցուցեր իջուցեր զբնակիչս բարձանց. զքաղաքս հզօրս կործանեսցես, և իջուցես զնոսա մինչև ՚ի յատակս* : ⁶Կոխեսցեն զնոսա ոտք հեզոց և

* *Բազուկք.* Քաղաք ամպարշտաց:

* *Ոսկան.* Վասն այնորիկ օրհն* :

* *Օրհնակ մի.* ՚ի մրրոյ մարզելոյ:

* *Օրհնակ մի.* Եւ ընկլցին ՚ի լե՛ : *Ոմանք.* ՚ի վերայ ամենայն հեթանոսաց:

* *Յօրհնակիւն.* Ձի բերան Տեառն կաւեցաւ:

* *Ի լուս՛.* Չուառացոյց. *համաձայն ոմանց ՚ի բնաք՛ :* *Ոմանք.* Եւ նա թշուառացոյց զնոսա... արկանել զձեռն իւր:

* *Ոմանք.* Մինչև յատակս:

* *Ոմանք.* Քաղաքս զօրացեալ է ՚ի փրկութիւն մեր... պարիսպս և:

* *Ոմանք.* Եւ վերակացու է ճշ՛ :

* *Ոմանք.* Յուսացաք մինչև ցյաւիտեան:

* *Ոմանք.* Մինչև յատակս:

խոնարհաց, գնացք տնանկաց: ⁷Ճանապարհք բարեպաշտաց ուղի՞ղ են. # դիրեալ և պատրաստեալ են ճանապարհք աստուածապաշտաց* : ⁸Ձի ճանապարհք Տեառն իրաւունք են. յուսացա՛ք յանուն քո՝ և ՚ի յիշատակս ցանկութեամբ ոգւոց որուն ցանկացաւ անձն մեր: ⁹Գիշերաց կանխէ հոգի իմ առ քեզ Աստուած, զի լո՛յս են հրամանք քո ՚ի վերայ երկրի. զարդարութիւն ուսարուք բնակիչք երկրի* . ¹⁰զի կարկեցաւ ամպարիշտն. և ամենայն որ ո՛չ ուսանի զարդարութիւն յերկրի, ո՛չ արասցէ ճշմարտութիւն. բարձցի՛ ամպարիշտն, զի մի՛ տեսցէ զփառս Տեառն* : ¹¹Տէր բազուկ քո բարձր, և ո՛չ ծանեան. ծանիցեն՝ և ամաչեսցեն, և նախանձ առցէ զժողովուրդն անխրատ. և այժմ հո՛ւր զհակառակորդս կերիցէ: ¹²Տէր Աստուած մեր տո՛ւր մեզ զխաղաղութիւն. զամենայն ինչ հատուցեր մեզ: ¹³Տէր Աստուած մեր ստացի՛ր զմեզ. Տէր՝ բաց ՚ի քէն զայլ ոք ո՛չ գիտենք, և զանուն քո անուանենք: ¹⁴Իսկ մեռեալք՝ զկեանս ո՛չ տեսանիցեն, և բժիշկք ո՛չ յարուցեն: Վասն այսորիկ ածեր սատակեցեր և կորուսեր զամենայն արո՛ւ նոցա* : ¹⁵Յաւել՝ նոցա Տէր չարիս, յաւել՝ չարիս ՚ի վերայ փառաւորաց երկրի. յերկարեցեր ամենայն ծագաց երկրի: ¹⁶Տէր ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ, զի փոքր նեղութիւն է խրատ քո մեզ* . ¹⁷և որպէս որ երկնիցէն մերձ ՚ի ծնանել, և առ ցաւս իւր ճչիցէ. այնպէս եղեաք սիրելւոյն քում: Վասն երկիւղի քոյ Տէր, ¹⁸յղացաք՝ երկնեցաք՝ և ծնաք զհոգի փրկութեան քոյ. արարա՛ք ՚ի վերայ երկրի: Ո՛չ ևս կործանեսցուք մեք, այլ կործանեսցին բնակիչք երկրի: ¹⁹Յարիցեն մեռեալք՝ և կանգնեսցին որ իցեն ՚ի գերեզմանս, և ուրախ եղիցին յերկրի, զի ցողո՞ր որ ՚ի քէն է՝ բժշկութիւն է նոցա. բայց երկիր ամպարշտաց կործանեսցի* : ²⁰Գնա՛ ժողովուրդ իմ՝ մո՛ւտ ՚ի շտենարանս քո, փակեա՛ զդուրս քո. թաքի՛ր առ ժամանակ մի, մինչև անցցէ՛ բարկութիւն Տեառն* : ²¹Ձի ահաւասիկ Տէր ՚ի սրբութենէ իւրմէ՛ ածցէ բարկութիւն ՚ի վերայ բնակչաց երկրի. և յայտնեսցէ՛ երկիր զարիւն իւր, և ո՛չ ծածկեսցէ զսպանեալսն:

27

Գլուխ ԻԵ

ԻԵ ¹Յաւուր յայնմիկ ածցէ՛ Տէր զսուրն սուրբ և զմեծ և զհզօր ՚ի վերայ վիշապ օձին փախուցելոյ, և ՚ի վերայ վիշապ օձին կամակորի. և սպանցէ՛ զվիշապն # ՚ի մէջ ծովուն* ²յաւուր յայնմիկ: Այգի՛ վայելուչ ցանկալի տիրել ՚ի վերայ նորա: ³Ե՛ս քաղաք ամո՛ւր. քաղաք զո՛ւր պաշարեալ. արբուցի՛ց զնա զի առցի՛ ՚ի գիշերի, և ՚ի տուէ կործանեսցի պարիսպ նորա* : ⁴Ձի չէ՛ր որ ո՛չ ձեռնամուխ լինէր ՚ի նա. ո՞՞ դիցէ զիս պահել զո՛ճ արտոյ յագարակի. վասն այսր պատերազմողի

* *Ոմանք.* Աստուածապաշտից:

* *Ոմանք.* ՚ի գիշերաց կան՛:

* *Ոմանք.* Մի՛ տեսցէ զփառսն Աստուծոյ:

* *Ոմանք.* Ձկեանս ոչ տեսցեն և:

* *Ոմանք.* Ձի փոքր մի նեղութիւն:

* *Ոսկան.* Մեռեալք քո, և կանգնեսցին: *Ոմանք.* Ուրախ լիցին յերկրի, զի ցողն... երկիր ամբարշտաց սատակեսցի:

* *Ոմանք.* Փակեա՛ զդուրսն քո: *Յօրինակին.* Առ ժամանակն մինչ:

* *Ոմանք.* Ածցէ Աստուած զսուրն:

* *Ոմանք.* Կործանեսցի պարիսպն:

անարգեցի՝ զնա այսուհետև: Վասն այսորիկ արա՛ր Տէր զամենայն ինչ զոր կարգեաց. Այրեցա՛ք ասէ՛. ⁵բողոքեցեն բնակիչք նորա. արասցուք ընդ նմա խաղաղութիւն: ⁶Ժողովեալք որդիք Յակոբայ նորատունկ բղխեսցեն: Ծաղկեսցէ Իսրայէլ, և լցցին տիեզերք պտղով նորա: ⁷Միթէ որպէս նա՛յն եհար, սա այնպէս վիրաւորեսցի՞. կամ որպէս նա՛յն սպան, այնպէս սատակեսցի՞: ⁸Պատերազմաւ և նախատանօք արծակեսցէ զնոսա. ո՞չ դու էիր որ խորհէիր խստացեալ մտօք սպանանել զնոսա ոգւո՛վ բարկութեամբ՝: ⁹Վասն այսորիկ բարձցի՛ անօրէնութիւն Յակոբայ. և ա՛յս է օրհնութիւն նորա, յորժամ բարձի՛ց ՚ի նմանէ զմեղս նորա. ՚ի ժամանակի յորում մանրեսցես իբրև զփոշի մանր զամենայն քարինս մեհենաց քոց. և մի՛ ևս մնացեն գործք պաշտամանցն նոցա՞: ¹⁰Այլ կոտորեսցեն իբրև զմայր ՚ի փայտահարաց: Եւ որ շէնն մնացէ՝ եղիցի իբրև զհօտ մակաղեալ, և իբրև զխա՛շն լքեալ. և եղիցի բազում ժամանակս յարօտս երէոց. և ա՛նդ հանգիցեն՞. ¹¹և յետ բազում ժամանակաց ո՛չ գտցի ՚ի նմա դեղ դալար, զի ցամաքեցաւ: Կանայք՝ որ դիմեալ գայք ՚ի հանդիսէ յառա՛ջ մատիք. զի ո՛չ եթէ ժողովուրդ է՝ յորում գո՛յ իմաստութիւն. վասն այնորիկ մի՛ գբացի ՚ի նոսա Աստուած որ արա՛րն զնոսա. մի՛ որ ստեղծն զնոսա ողորմեսցի նոցա՞: ¹²Եւ եղիցի յաւուր յայնմիկ, արգե՛լ արկցէ Տէր ՚ի փոսոյ Գետոյն մինչև ՚ի կողմանս Ռինոյ Կորուրայ. բայց դուք մի մի ժողովեցէ՛ք զորդիսն Իսրայէլի՞: ¹³Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ հարցեն փո՛ղ աւագափող. և եկեսցեն ցրուեալքն յերկրէն Ասորեստանեայց, և կորուսեալք յերկիրն Եգիպտացոց. և երկիր պագցեն Տեառն ՚ի վերայ լերին սրբոյ յերուսաղէմ՞:

28

Գլուխ ԻԸ

¹Վա՛յ ՚ի պսակդ հպարտութեան վարձկանացդ Եփրեմի. ծաղիկ բօթափեալ ՚ի փառաց ՚ի վերայ զլխոյ լերինդ թանձրացելոյ, որ արբեալդ էք և ո՛չ ՚ի զինւոյ՞: ²Ահաւասիկ սաստիկ և խիստ բարկութիւն Տեառն, իբրև զկարկուտ իջեալ՝ և ո՛չ գուցէ յարկ. և իբրև զբռնութիւն հեղեղաց ջուրց բազմաց որ ողողէ զերկիր. և արասցէ հանգիստ երկրի ձեռօք՞: ³Եւ կոխան լիցի պսակն հպարտութեան վարձկանացդ Եփրեմի՞: ⁴Եւ եղիցի ծաղիկն յուսոյ բօթափեալ ՚ի փառաց անտի՛

* *Օրհնակ մի*. Զի ո՛չ էր որ և ոտիւք ձեռնամուխ լինէր ՚ի նա:

* *Ոմանք*. Նայն սպան, սա այնպէս սատակիցի:

* *Ոմանք*. Զոգուով բարկութեան:

* *Ոմանք*. Վասն այնորիկ բարձցի... յորում մանրեսցեն զամենայն քարինս մեհենիցն քոց:

* *Յօրհնակին*. Այլ խոտորեսցեն իբրև: *Ոմանք*. Կոտորեսցին իբրև զմայրի փայտահարաց... և որպէս խաշն լքեալ. և եղիցին... յարօտս երէոյ: *Ոսկան*. Եւ եղիցին ՚ի բազում ժամանակս:

* *Ոսկան*. Ո՛վ կանայք՝ որք դիմեալ: *Ոմանք*. Յորս գոյ իմաստութիւն վասն այսորիկ մի՞... և մի՛ որ ստեղծն:

* *Ոմանք*. Ռինոկորայ. և *ոմանք*. Ռինոկուրուրայ. *իսկ Ոսկան*. Ռինուրկորայ:

* *Ոմանք*. Յերկրին Ասորեստանեայց... և կորուսեալքն յերկրին. *կամ՝* յերկրէն Եգիպտաց՞:

* *Ոմանք*. Վայ ՚ի պսակդ փափկութեան վարձկանացդ:

* *Ոմանք*. Որ ողողէր. *կամ՝* ողողեսցէ զերկիր... երկրի ձեռօք և ոտիւք:

* *Ոմանք*. Վարձկանքդ Եփրեմի:

ի վերայ գլխոյ լերինն բարձու, իբրև զվաղահասուկն թզոյ. զոր տեսեալ ուրուք՝ մինչև՝ ՚ի ձեռն առեալ՝ կամիցի կլանել*։ ⁵Յաւուր յայնմիկ եղիցի Տէր զօրութեանց՝ պսակ յուսոյ գործեալ ՚ի փառս մնացելոց ժողովրդեանն, ⁶զի մնացեն ոգւով դատաստանի. և դատաստանա՛ւ և զօրութեամբ արգելուցու ՚ի ծուլութենէ։ ⁷Ձի նոքա գինւով մոլորեալ են, մոլորեցան վասն ցքւոյն. քահանայն և մարգարէ յիմարեցան վասն ցքւոյ, ընկղմեցան վասն զինւոյ. դանդաչեցին յարբեցութենէ ցքոյն. մոլորեցան՝ զի այն ինքն է յիմարութիւն*։ ⁸Նգովք կերիցեն զխորհուրդն զայն. զի այն խորհուրդ ՚ի յագահութենէ՝ է*։ ⁹Ո՛ւմ պատմեսցուք զչարիսն, ո՛ւմ գոյժ տացուք. անջատելո՞ցն ՚ի կաթանէ, հատուցելո՞ցն ՚ի ստենէ*։ ¹⁰Նեղութիւնք ՚ի վերայ նեղութեանց. ընկա՛լ, ընկա՛լ կասկածանս ՚ի վերայ կասկածանաց։ Փոքր մեւս ևս. փոքր մեւս ևս վասն անզգամութեան շրթանց, ¹¹յօտար լեզուս խօսիցին ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ*։ ¹²և ասիցեն ցոյսա. թէ այն է հանգիստ քաղցելոյն, և սոյն բեկումն. և ո՛չ կամեցան լսել*։ ¹³Եւ եղիցի նոցա բանն Տեառն՝ նեղութիւնք ՚ի վերայ նեղութեանց. ընկա՛լ, ընկա՛լ կասկածանս ՚ի վերայ կասկածանաց։ Փո՛քր մեւս ևս. փոքր մեւս ևս՝ մինչ գնացեն, և յետս ընդդէմ կործանեսցին. և խորտակեսցին և չարչարեսցին և սատակեսցին*։

ԻՉ ¹⁴Վասն այսորիկ լուարո՛ւք զբան Տեառն արք նեղեալք, իշխանք ժողովրդեանդ այդորիկ յերուսաղէմ*։ ¹⁵Ձի ասացէք. Եդաք ո՛ւխտ ընդ դժոխս, և ընդ մահու դաշինս կռեցաք. մրրիկ փոթորկեալ եթէ յարիցէ՝ ո՛չ եկեսցէ ՚ի վերայ մեր. զի եդաք սուտ գոյսն մեր, և ստութեամբ ծածկեսցուք*։ ¹⁶Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես դնեմ ՚ի հիմունս Սիովնի վէմ բազմապատիկ, զընտիր զգլուխ անկեան, զպատուականն ՚ի հիմունս նորա. և որ հաւատասցէ ՚ի նա՝ մի՛ ամաչեսցէ*։ ¹⁷Եւ եղից զիրաւունս ՚ի յոյս, և զողորմութիւն իմ ՚ի կշիռս. և ոյք յուսացեալ իցեն զո՛ւր ՚ի ստութիւն, թէ ո՛չ հասցէ առ մեզ մրրիկն*։ ¹⁸և ո՛չ բարձցէ զուխտն մեր՝ որ ընդ մահուն է։ Յոյսն ձեր որ ՚ի դժոխս է մի՛ հաստատեսցի. զի մրրիկ փոթորկեալ եթէ գայցէ ՚ի վերայ, եղիջիք նմա ՚ի կոխումն*։ ¹⁹Ձի յորժամ անցանիցէ՝ առցէ՛ զձեզ. յառաւօտ յառաւօտ անցցէ, ՚ի տուէ և ՚ի զիշերի եղիցի կասկած չարեաց։ Ուսարո՛ւք լսել նեղեալքդ. ²⁰մարտնչել ևս ո՛չ կարենք. քանզի տկարացաք ՚ի ժողովելն մերում ²¹իբրև զլեռն ամպարշտաց։ Յարիցէ Տէր իբրև ՚ի ձորն Գաբաւոնացւոց լի՛ բարկութեամբ. զործիցէ զգործ իւր գործ դառնութեան. զի սրտմտութիւն նորա օտարաբար դատեսցի, և դառնութիւն նորա օտարաբար հասցէ*։ ²²Եւ դուք մի՛

* *Ոմանք.* Եւ իբրև զվաղահասուկն։

* *Ոմանք.* Քահանայք և մարգարէք յիմա՛ր։

* *Ոմանք.* Կերիցեն զխորհուրդն. զի այն խորհուրդ յագա՛ր։

* *Ոմանք.* Պատմեսցուք զչարիսս. *կամ՝* զչարիսն զայն... զանջատելոցն ՚ի կաթանէ, զհատուցելոցն ՚ի։

* *Ոմանք.* Խօսեսցին ընդ ժողովրդեանդ ընդ այդորիկ։

* *Ոմանք.* Եթէ այս է հանգիստ... և այն բեկումն։

* *Ոմանք.* Բան Տեառն նեղութիւն ՚ի վերայ... մինչև գնացեն։

* *Բազումք.* Եւ իշխանք ժողո՛ր։

* *Ոմանք.* Ձի ասացէք եթէ եդաք։ *Ոսկան.* Եւ ստութեամբ ծածկեցաք։

* *Ոմանք.* Վասն այսորիկ. *կամ՝* վասն այդորիկ... զընտիր զգլուխ անկեան պատուական։

* *Օրինակ մի.* Ձիրաւունս ՚ի լոյս, և զարդարութիւն իմ ՚ի կշիռս։

* *Ոմանք.* Եւ յոյսն ձեր որ ՚ի։ *Ուր Ոսկան.* և գոյսն։

* *Ոմանք.* Յարիցէ Տէր ՚ի ձորն Գաբաւո՛... գործեսցէ զգործ։

ցնծայք, և մի՛ զօրասցին կապանք ձեր. զի ի՛րս հաստատեալս և համառօտս լուայ ՚ի Տեառնէ. Տէր զօրութեանց զոր առնելոց է ՚ի վերայ ամենայն երկրի՝:
²³Ո՛ւնկն դիք և լուարո՛ւք բարբառոյ իմոյ. անսացէք և լուարո՛ւք բանից իմոց.
²⁴միթէ՞ զօրն ամենա՞յն հերկիցէ որ հերկէն, կամ թէ սերմն յառաջագոյն ցանիցէ՞, մինչչև զերկիրն գործեալ իցէ: ²⁵Ո՞չ ապաքէն նախ կակղէ զերեսս նորա՝ և ապա սերմանէ փոքր մի արջնդեղ և չաման. և ապա սերմանեսցէ ցորեան և գարի՝ կորեակ և հաճար ՚ի սահմանս իւր՝: ²⁶Եւ խրատեսցիս դու իրաւամբք Աստուծոյ քոյ, և ուրախ եղիցես: ²⁷Չի ո՛չ եթէ խստի՛ւ ինչ սրբի արջնդեղն, և ո՛չ զանիւ կամնասայլին ածեն ՚ի վերայ չամանոյն. այլ գաւազանաւ թափի արջնդեղն՝, ²⁸և չամանն հացի՛ւ ուտի: Չի ո՛չ եթէ յաւիտեան բարկանայցեմ ձեզ, և ո՛չ ձայն դառնութեան իմոյ կոխիցէ զձեզ: ²⁹Եւ այս նշանք ելին ՚ի Սաբաւովք Տեառնէ. արդ խորհեցարո՛ւք՝ բարձէ՛ք ՚ի ձէնջ զընդունայն մխիթարութիւնն ձեր:

29

Գլուխ ԻԹ

¹Վայ քեզ Արիէլ քաղաք. # Արիէլ զոր Դաւիթն պաշարեաց, զի տօնքն ամբոխեսցին. ժողովեցէ՛ք արմտիս և կերայք ամ յամէ. և կերիջիք Մովաբաւ հանդերձ՝: ²Չի նեղեցի՛ց զԱրիէլ, և եղիցի զօրութիւն և մեծութիւն նորա ի՛նձ. ³և պաշարեցից զքեզ՝ որպէս և Դաւիթն, և ածի՛ց զքև պատնէշ. և կանգնեցից շուրջ զքև աշտարակս: ⁴Եւ խոնարհեսցին յերկիր բանք քո, և պատգամք քո ընդ գետին մտցեն. և եղիցի իբրև գետնածայնաց բարբառ քո, և ՚ի յատակս բարբառն քո տկարասցի՞: ⁵Եւ եղիցի իբրև զփոշի՝ անուոյ մեծութիւն ամպարշտաց. # և իբրև զունգ մաղեալ բազմութիւն զրկողացն քոց՝: ⁶Եւ եղիցի որչափ յական թօթափել ՚ի Սաբաւովք Տեառնէ՝ այցելութիւն շարժմամբ և որոտմամբ և մեծածայն բարբառով, մրրիկ փոթորկեալ և բոց հրոյ որ ուտիցէ: ⁷Եւ եղիցի՝ որպէս ոք զի տեսանիցէ երազ՝ ՚ի տեսւեան գիշերոյ, մեծութիւն ամենայն հեթանոսաց յարձակելոց ՚ի վերայ Երուսաղեմի. և ամենայն ժողովելոցն ՚ի վերայ նորա, և որ նեղեցինն զնա՞: ⁸Եւ եղիցին որպէս որք յերազի քաղցեալ իցեն՝ և ուտիցեն. և իբրև յառնիցեն՝ զո՛ւր է տեսիլն. և զոր օրինակ ծարաւի՝ ոք իցէ յերազի և ըմպիցէ. և յառնիցէ՝ և դարձեալ ծարաւիցի, ՚ի զո՛ւր յուսացաւ անձն նորա. այնպէս եղիցի մեծութիւն ամենայն հեթանոսաց, որ զօրաժողով եղեն ՚ի վերայ Երուսաղեմի՝ և ՚ի վերայ լերին Սիովնի: ⁹Չարմացարո՛ւք. յիմարեցարո՛ւք. թմբրեցարո՛ւք, և առաւել թմբրեցարուք. արբեցարո՛ւք ո՛չ ՚ի գինւոյ և ո՛չ ՚ի ցքոյ: ¹⁰Չի արբոյց ձեզ Տէր ոգի՛ յիմարութեան. և խցցէ զաչս ձեր՝ և զմարգարեից ձերոց, և զիշխանաց ձերոց, և

* Ոմանք. Հաստատեալս և համառօտեալս լուայ ՚ի Տեառնէ զօրութեանց, զոր:

* Ոմանք. Ապա սերմանեսցէ փոքր մի:

* Ոմանք. Գաւազանաւ թօթափի ար՝:

* Յօրինակին ՚ի կարգի բնաբանի դատարկ թողեալ ՚ի լուս՝. նշանակի ՚ի մէջ բերել զբանս. Չի տօնքն ամբոխեսցին. զոր և բաց ՚ի միողէ՝ ունին ամենայն զրչագիրք:

* Ոմանք. Եւ եղիցին իբրև գետնա՛: Ոսկան. Եւ յատակատակս բարբառն քո:

* Օրինակ մի. Եւ եղիցի իբրև զփոշի որմոյ մեծութիւնն... և իբրև զզունկ մաղեալ:

* Ոմանք. Որպէս զի տեսանիցէ ոք երազ... և որ նեղիցեն զնա: ՚Ի լուս՝. ՚ի վերայ՝ Երուսաղեմի, նշանակի՝ սիմ. Արիէլի:

* Ոմանք. Եւ առաւել թմբրեցարուք, որ արբեալդ էք, և ոչ ՚ի գինւոյ, և ոչ ՚ի ցքոյ:

զծածկատեսա՛ցն ձերոց*։ ¹¹Եւ եղիցին ձեզ պատգամքս այս ամենայն իբրև զբան թղթոյ կնքելոյ. զոր իբրև տայցեն ցայր մի գրագէտ՝ և ասիցեն ցնա. Ընթերցի՛ր զայդ։ Եւ ասիցէ. Ո՛չ կարեն ընթեռնուլ զի կնքեալ է*։ ¹²Եւ տացի նո՛յն գիր ՚ի ձեռս առն՝ որ ո՛չ գիտիցէ գիրս, և ասասցեն ցնա. Ընթերցի՛ր զայդ։ Եւ ասիցէ. Ո՛չ գիտեն դպրութիւն*։ ¹³Եւ ասէ Տէր. Մե՛րձ է առ իս ժողովուրդս այս բերանով իւրով, և շրթամբք իւրեանց պատուեն զիս. և սրտիւք իւրեանց հեռացեալ մեկուսի՛ են յինէն. զո՛ւր պաշտեն զիս, ուսուցանեն զպատուէրս մարդկան՝ և զվարդապետութիւնս*։ ¹⁴Վասն այնորիկ ահաւաղիկ ես յաւելից փոփոխե՛լ զժողովուրդդ զայ՛դ. և փոփոխեցի՛ց զդոսա. և կորուսի՛ց զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից*։ ¹⁵Վայ՛ այնոցիկ՝ որ խորհին խորհուրդս խորհնս՝ և ո՛չ Տերամբ. վայ՛ այնոցիկ որ խորհին խորհուրդս ծածուկս. և եղիցին ընդ խաւար գործք նոցա, և ասիցեն թէ ո՞ տեսանիցէ զմեզ, և ո՞ գիտացէ զինչ գործեմք*։ ¹⁶Ո՞չ ապաքէն իբրև զկաւ բրտի՞՞ համարեալ իցէք. միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն իւր, թէ ո՛չ դու զիս ստեղծեր. կամ արարածն ցարարիչն թէ ոչ իմաստութեամբ արարեր զիս*։ Ի՛է ¹⁷Ոչ ևս յետ սակաւ ժամանակի, և եղիցի Լիբանան իբրև զլեանն Քերմէլ. և Քերմէլ յանտա՛ռ համարեսցի*։ ¹⁸Եւ լուիցեն յաւուր յայնմիկ խուլք զբանս զրոյն այնորիկ. և որք ՚ի խաւարին և ՚ի միգին իցեն, տեսցեն աչք կուրացելոցն։ ¹⁹Եւ ցնծացեն աղքատք յաղագս Տեառն ուրախութեամբ, և անյոյսքն ՚ի մարդկանէ լցցին ուրախութեամբ*։ ²⁰Պակասեաց անօրէնն, և կորեաւ ամբարտաւանն. և սատակեցան անօրէնք ՚ի չարիս, ²¹և ոյք առնեն մեղանչել մարդկան բանիւք. ամենայն յանդիմանչացն դնէին ՚ի դրունս զգայթագղութիւն, և խտորէին անիրաւութեամբ զիրաւունս։ ²²Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր ՚ի վերայ տանն Յակովբայ զոր ընտրեացն յԱբրահամէ. Ո՛չ այժմ ինչ ամաչեսցէ Յակովբ, և ո՛չ այժմ զերեսս այլագունեսցէ Իսրայէլ. ²³այլ յորժամ տեսցեն որդիք նորա զգործս իմ. վասն իմ սուրբ արացեն զանուն իմ, և սուրբ արացեն զՍուրբն Յակովբայ, և երկիցեն յԱստուծոյն Իսրայէլի*։ ²⁴Եւ ծանիցեն մոլորեալք հոգւով զիմաստութիւն. և տրտնջօղք ուսցին զինագանդութիւն. և լեզուք թոթովախօսք ուսցին խօսել զխաղաղութիւն։

30

Գլուխ Լ

ԻԸ ¹Այսպէս ասէ Տէր. Վայ՛ ձեզ որդիք ապստամբք, զի խորհեցարուք

* *Ոմանք.* Հոգի յիմարութեան։

* *Բազումք.* Իբրև զբանս։ *Ոմանք.* Եւ ասացեն ընթերցի՛ր զայդ. և ասացէ։

* *Ոմանք.* Ի՛ ձեռն առն... և ասիցեն ցնա։

* *Ոմանք.* Եւ ասէ ցիս Տէր... և սիրտք իւրեանց հե՛։

* *Ոմանք.* Վասն այսորիկ ահաւասիկ ես յաւելից փոփոխե՛լ... և փոփոխեցից զդոսա։

* *Օրինակ մի.* Վայ՛ այնոցիկ որ խորհին խորհուրդ չար առանձինն. վայ՛ այնոցիկ որ խորհին խորհուրդս ծածուկ։ *Ոմանք.* Եւ ասացեն թէ ո՛ տեսանէ զմեզ, և ո՛ գիտիցէ զինչ։

* *Ոմանք յաւելուն.* Յարարիչն *իւր*, թէ ոչ *դու* իմաստութեամբ։

* *Ոսկան.* Յետ սակաւու ժամանակի։

* *Յօրինակին պակասէր.* Եւ անյոյսքն։

* *Բազումք.* Որդիք նոցա զգործս։

խորհուրդ և ո՛չ ինձ, և դաշինս կռեցէք՝ և ո՛չ իմով Յոզուով. յաւելուլ մե՛ղս՝ ՚ի վերայ մեղաց՝: ²Որ գնայիք իջանել յերկիրն եգիպտացոց, և զիս ո՛չ հարցանէիք. գտանել՝ օգնականութիւն ՚ի փարաւոնէ, և թիկունս առնել զեգիպտացիս՝: ³Եւ եղիցի ձեզ թիկունք փարաւոն յամօթ, և յուսացելոց յեգիպտացիսն նախատինք՝: ⁴Ձի են յերկրին Տայանու իշխանք հրեշտակք չա՛րք. ⁵զո՛ւր ջանան առ ժողովուրդն՝ որ ո՛չ լինի դոցա շահ յօգնականութիւն. ո՛չ յօգուտ, այլ յամօթ և ՚ի նախատինս՝:

⁶Տեսիլ շորքոտանեաց անապատի, ՚ի նեղութեան և յանձկութեան: Առեւծ, և կորիւն առիւծու. և ՚ի նոցանէն իժք, և կորիւնք իժից. թռչունք ամբարձեալ բերեն իշոց զգանձս իւրեանց, և լցեալ ուղտուց զմեծութիւն իւրեանց. առ ազգ մի՝ որ ո՛չինչ օգուտ լինիցի նոցա յօգնականութիւն, այլ յամօթ և ՚ի նախատինս՝: ⁷Եգիպտացիքն որ զո՛ւր և տարապարտ օգնիցեն ձեզ. պատմեա՛ նոցա եթէ ՚ի զո՛ւր է այդ մխիթարութիւն ձեր՝: ⁸Արդ նի՛ստ՝ և գրեա՛ ՚ի տախտակի և ՚ի գիրս. զի եղիցի այդ յաւուր իւրում և ՚ի ժամանակս յաւիտենից՝. ⁹թէ ժողովուրդ անհաւան է, և որդիք սո՛ւտք. և ո՛չ կամեցան լսել զօրէնս Աստուծոյ՝: ¹⁰Որք ասէին ցնարգարեսն՝ թէ մի՛ պատմէք մեզ. այլ խօսեցարո՛ւք ընդ մեզ, և պատմեցէ՛ք մեզ ա՛յլ մոլորութիւն՝. ¹¹և դարձուցէ՛ք զմեզ ՚ի ճանապարհէդ յայդմանէ, և ՚ի բաց արարէք ՚ի մէնջ զշաւիղդ զայդ. և հանէ՛ք ՚ի մէնջ զօրէնս Աստուծոյ Իսրայէլի: ¹²Վասն այսորիկ ա՛յսպէս ասէ Տէր՝ Սուրբն Իսրայէլի. Փոխանակ զի անարգեցէք դուք զբանսդ զայդոսիկ, և յուսացարուք ՚ի ստութիւն սնոտի. և զի տրտնջեցէք՝ և յուսացարուք ՚ի բանդ յայդ՝: ¹³Վասն այնորիկ եղիցին ձեզ մեղքդ այդոքիկ ՚ի նզովս՝ իբրև զպարիսպ կործանեալ առժամայն ամո՛ւր քաղաքի առելոյ, որում յանկարծակի՝ հասանիցէ կործանումն՝: ¹⁴Եւ կործանումն նորա եղիցի իբրև զբեկումն խեցեղէն անօթոյ բրտի՝ մանր խորտակելոյ, զի մի՛ ոք գտանիցէ ՚ի նմանէ որով հուր բառնայցէ՛ կամ որով մարթիցէ՛ առնուլ սակաւ մի ջուր՝: ¹⁵Ձի ա՛յսպէս ասէ Տէր Տէր Սուրբն Իսրայէլի. Յորժամ դարձցիս և յոգոց հանիցես, յայնժամ կեցցես, և զիտասցես՝ թէ ո՛ւր իցես: Ձի յուսացեալ էիր դու ՚ի սնոտիսն, սնոտի՛ եղև և զօրութիւն ձեր. և ո՛չ կամէիք լսել՝. ¹⁶այլ ասէիք. Երիվարօք մերովք փախիցու՛ք. վասն այսորիկ փախստականք լինիցիք. և ասիցէք. Երազ երիվարօք մերովք փախիցուք. վասն այնորիկ երազագոյնք քան զձեզ եղիցին որ հալածենն զձեզ՝: ¹⁷Ձի ՚ի միոջէ՛ բարբառոյ հազարք փախիցեն, և ՚ի

* *Ոմանք.* Ձի խորհեցայք խորհուրդ:

* *Բազումք.* Ձեգիպտացիսն:

* *Բազումք.* Եւ եղիցին ձեզ թի՛:

* *Բազումք.* Ոչ լինիցի դոցա:

* *Ոսկան.* Չորքոտանեաց անապատի: *Ոմանք.* ՚ի նեղութեան և յանձկութեան՝ *յարեն ընդ յաջորդին՝* առեւծ և կոր՝: *Ոմանք.* Թռչունք, որ բարձեալ բերէին իշոց... որ ոչ լիցի նոցա յօգնա՛: *Ուր Ոսկան.* Եւ ՚ի նոցանէ են իժք:

* *Ոմանք.* Թէ զուր է այդ մխի՛:

* *Ոմանք.* Յաւուրս իւրում:

* *Ոմանք.* Սո՛ւտք, որ ոչ կամէ՛:

* *Ոմանք.* Այլ խօսեցարո՛ւք մեզ, և:

* *Ոսկան.* Այսպէս ասէ Տէր՝ Տէր Սուրբն:

* *Ի բազումս պակասի.* Այդոքիկ ՚ի *նզովս*, իբրև: *Ոսկան.* Քաղաքի առեցելոյ:

* *Ոսկան.* Խորտակեցելոյ... մարթիցի առնուլ:

* *Յօրինակին.* Յորժամ դարձից և յոգոց հանի՛:

* *Ոմանք.* Վասն այնորիկ փախստա՛... և ասէիք թէ երազ երի՛... վասն այսորիկ երազա՛:

բարբառոյ հնգից բազումք փախիցեն. մինչև մնասցիք իբրև զձո՞ղ ցցեալ ՚ի վերայ լերին, և իբրև զկոթո՞ղ կանգնեալ ՚ի վերայ բլրոց*։ ¹⁸Եւ դարձեալ կանխեսցէ Աստուած գթալ ՚ի ձեզ, և վասն այսորիկ բարձրացի ողորմել ձեզ. զի դատաւոր Տէր Աստուած մեր է։ Երանի՛ ամենեցուն ոյք սպասեն նմա*։ ¹⁹Ձի ժողովուրդ սուրբ ՚ի Սիոն բնակեսցէ. և Երուսաղէմ լալով ելաց՝ եթէ ողորմեաց ինձ. ողորմեսցի՛ քեզ. ձայնի աղաղակի քում իբրև ետես՝ և լուաւ քեզ*։ ²⁰Եւ տացէ քեզ Տէր հաց նեղութեան՝ և ջուր կարօտանաց. և ո՛չ ևս մերձեսցին ՚ի քեզ որ մոլորեցուցանէին զքեզ. զի աչք քո տեսցեն ՚ի մոլորեցուցիչսն քո*, ²¹և ականջք քո լուիցեն բանս զիեստ մոլորեցուցչացն քոց. որք ասէին եթէ այս է ճանապարհ, և զնասցո՞ւք ընդ սա, կամ թէ յա՛ջ կամ թէ յահեակ։ ²²Եւ գարշեցուցես զկուռսն զարծաթապատս և զոսկիապատս. մանրեսցես զնոսա և հոսեսցես իբրև զջուր դաշտանաց, և իբրև զա՛ղբ մերժեսցես զնոսա*։ ²³Յայնժամ եղիցի անձրև սերմանեաց երկրին քում, և հաց արդեանց երկրի քոյ եղիցի յագո՞ւրդ և ՚ի պարա՛ր. և ճարակեսցին խաշիճք քո յաւուր յայնմիկ ՚ի տեղւոջ պարարտութեան և յանդորրու*։ ²⁴Չուարակք ձեր և եզի՛նք որ գործեն զերկիր՝ կերիցեն յա՛րդ խառնեալ ընդ գարի, հոսեալ ՚ի կալոյ։ ²⁵Եւ եղիցի ՚ի վերայ ամենայն լերանց բարձանց, և ՚ի վերայ ամենայն բլրոց բարձուանդակաց ջուր բղխեալ յաւուր յայնմիկ. յորժամ կորիցեն բազումք, և կործանեսցին աշտարակք*։ ²⁶Եւ եղիցի լոյսն լուսնի իբրև զլոյս արեգական, և լոյսն արեգական եւթնպատիկ՝ եղիցի՝ իբրև զլոյս աւուրցն եւթանց։ Յաւուր յայնմիկ բժշկեսցէ Տէր զբեկումն ժողովրդեան իւրոյ, և զցաւս վիրաց քոց բժշկեսցէ*։ ²⁷Ահաւասիկ անուն Տեառն գա՛յ յամայր ամս, յետ բազում ժամանակաց. վառեալ բարկութեամբ՝ և լի՛ փառօք. բանք շրթանց նորա, և բանք բերանոյ նորա լի՛ բարկութեամբ. և բարկութիւն սրտմտութեան նորա իբրև զհո՛ւր կերիցէ. ²⁸և հոգի նորա իբրև զջուր ձորալիւր պարանոցաթա՛ղ յորդեսցէ։ Եւ բաժանեսցի խռովեցուցանել զազգս վասն սնոտի մոլորութեանն. և հալածեսցէ զնոսա մոլորութիւնն, և հասցէ նոցա յանդիման նոցին*։ ²⁹Միթէ հանապա՞զ պա՛րտ իցէ ձեզ ուրախութեամբ մտանել ՚ի սրբութիւնս ին. յամենայն ժամ տօնիւք և ուրախութեամբ և փողո՞վք մտանել ՚ի լեառն Տեառն՝ # առ Աստուած Սուրբն Իսրայէլի։ ³⁰Եւ լսելի՞ արասցէ զփառս բարբառոյ իւրոյ, և զսրտմտութիւն բազկի իւրոյ ցուցցէ՞ բարկութեամբ՝ և սրտմտութեամբ և բոցո՞վ որ ուտիցէ. և սաստիկ բարկութեամբ հրացանից, և ջրով, և կարկտի միանգամայն հոսելով բռնութեամբ։ ³¹Ձի ՚ի բարբառոյ Տեառն ընկճեսցին Ասորեստանեայք. հարուածովքն զոր հարկանիցէ զնոսա։ ³²Եւ եկեսցէ՛ նմա շուրջ յօգնականաց իւրոց՝ յոր կողմ և յուսացեալ իցէ. զի նոքա փողովք և թմբկաւ՝ # և պէսպէս պատերազմաւ փոխփոխ մարտիցեն ընդ նմա. և դու ո՛չ

* *Ոմանք.* Ցցեալ ՚ի լերին... ՚ի վերայ բլրոյ։

* *Ոմանք.* Եւ վասն այնորիկ բարձ՛։

* *Ոմանք յաւելուածով այսպէս ունին.* Եւ Երուսաղէմ լալով ո՛չ ելաց թէ ողոր՞... ողորմեսցի քեզ, և լուիցէ՛ ձայնի աղա՛։

* *Ոմանք.* Եւ տացէ ձեզ Տէր հաց։ *Յօրինակին.* Չաչք քո տես՛։

* *Ոմանք.* Որպէս ջուր դաշտանաց. և իբրև զաղբ։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Յագուրդ և ՚ի պարարտ, և ճարակեսցին խա՛։

* *Ոմանք.* Բարձրաւանդակաց։

* *Ոմանք.* Յաւուր յորում բժշկեսցէ Տէր։

* *Յօրինակին կրկնի.* Եւ հասցէ նոցա նոցա յանդիման։

յառաջագոյն քան զաւուրսն պահանջիցին*։ ³³Իսկ արդև քե՛զ պատրաստեալ իցէ թագաւորել ՚ի վերայ ձորոյն խորոյ. փայտ դիգեալ, հուր և փայտակոյտ բազում վառեալ. սրտմտութիւն Տեառն իբրև զձոր, լի՛ ծծմբով բորբոքեալ։

31

Գլուխ ԼԱ

¹Վա՛յ ոյք իջանեն յեգիպտոս վասն օգնականութեան. որ ՚ի հեծեալս և ՚ի կառս յուսացեալ իցեն՝ թէ բազումք են, և բազմութիւն երիվարաց յոյժ. և ո՛չ էին յուսացեալ ՚ի Սուրբն Իսրայէլի, և զԱստուած ո՛չ խնդրեցին*։ ²Եւ նա իմաստուն էր և ածէր ՚ի վերայ նոցա չարիս. և բան նորա ո՛չ անարգեսցի. և յարիցէ ՚ի վերայ տանց մարդոց չարաց, և ՚ի վերայ սնոտի յուսոյն նոցա*։ ³Յա՛յր Եգիպտացի՝ և ո՛չ յԱստուած. ՚ի մարմինս երիվարաց՝ և ո՛չ գոյր օգնականութիւն. այլ Տէր արկցէ ՚ի վերայ նոցա զձեռն իւր, և տաժանեսցին օգնականքն, և կործանեսցին օգնեալքն ՚ի նոցանէն. և առ հասարակ ամենեքեան սատակեսցին*։ ⁴Ձի ա՛յսպէս ասաց ցիս Տէր. թէ զոր օրինակ գոչեսցէ առեւծ՝ և կորիւն առիւծու յորս յոր հասանիցէ, կաւշեսցէ ՚ի վերայ և լցցէ զլերինս բարբառով իւրով. և ՚ի պարտութիւն մատնեսցին, և ՚ի սաստկութենէ սրտմտութեան նորա հալեսցին։ Ա՛յնպէս իջցէ Տէր զօրութեանց ՚ի լեառն Սիովն, և ՚ի վերայ լեռանց դորա*։ ⁵Իբրև զթռչունս թռուցեալս, ա՛յնպէս հովանի լիցի Տէր զօրութեանց ՚ի վերայ Երուսաղէմի. ՚ի թիկունս իջցէ. օգնեսցէ և փրկեսցէ և կեցուցէ*։ ⁶Պարծարուլք ոյք խորհիք խորհուրդս խորինս և զանօրէնս՝ որդիք Իսրայէլի։ ⁷Ձի յաւուր յայնմիկ բարձցեն մարդիկ զձեռագործս իւրեանց զարծաթեղէնս և զոսկեղէնս՝ զոր արարին ձեռք նոցա մեղս*։ ⁸Եւ անկցի՛ Ասորեստանեայն, ո՛չ սրով առն, և ո՛չ սուր մարդոյ կերիցէ զնա. և ՚ի փախուստ դարձցի՝ ո՛չ յերեսաց սուսերի. և երիտասարդք նորա ՚ի պարտութիւն մատնեսցին։ ⁹Եւ եղիցին վիմարգելք իբրև զորմարգելս. և ՚ի պարտութիւն մատնեսցին. և որ փախիցեն, ըմբռնեսցի՛։

Ի՞ծ Ա՛յսպէս ասէ Տէր. Երանի՛ որ ունիցի զաւա՛կ ՚ի Սիովն, և ընտանեակք իցեն նորա յերուսաղէմ*։

32

Գլուխ ԼԲ

¹Ձի ահաւասիկ թագաւոր արդա՛ր թագաւորեսցէ, և իշխանք իրաւա՛մբք տիրեսցեն։ ²Եւ եղիցի մարդն որ թաքուցանիցէ զբանս իւր, թաքիցէ՛ իբրև ՚ի

* *Ոմանք.* Շուրջ յօգնականութիւն. յոր կողմն և... փոփոխ մարտիցեն... և դու յառաջագոյն... պահանջեսցիս։

* *Ոմանք.* Եւ որ ՚ի կառս և ՚ի հեծեալս յուսա՛։

* *Ոմանք.* Եւ վասն սնոտի յուսոյն։

* *Ոմանք.* Եւ ո՛չ գոյ օգնակա՛։

* *Ոմանք.* Այսպէս իջցէ Տէր... ՚ի լեառնդ Սիովն։

* *Ոմանք.* Հովանի եղիցի։

* *Ոսկան.* Ձեռք նոցա ՚ի մեղս։

* *Օրինակ մի.* Վիմարգեալք իբրև զորմարգեալս։

ջուրցն սաստկութենէ: Եւ եղիցի Սիոն իբրև զգե՛տ յորդեալ փառաւոր ՚ի ծարաւուտ երկրի՝: ³Եւ ո՛չ ևս եղիցին յուսացեալ ՚ի մարդիկ. այլ տացեն զականջս առ ՚ի լսել՝, ⁴և սիրտք տկարաց անսայցեն ՚ի լսել. և լեզուք թոթովք՝ արագարագ ուսցին խօսել զխաղաղութիւն՝: ⁵Եւ ո՛չ ևս ասացեն ցլիմարն լինել նոցա իշխան. և ո՛չ ևս ասացեն պաշտօնեայք քո՝ թէ լո՛ւռ լեր: ⁶Քանզի յիմարն յիմարութիւն խօսեսցի, և սիրտ նորա զնանրութիւն խորհեսցի. կատարել զանօրէնութիւն, և խօսել առ Աստուած զհայիոյութիւն. ցրուել զանձինս քաղցեալս, և զանձինս ծարաւեալս՝ ունայնս արծակել՝: ⁷Ձի խորհուրդք չարաց՝ անօրէնս խորհին. ապականել՝ զխոնարհս բանիւք անիրաւութեամբ, և ցրուել զբանս տնանկաց ՚ի դատաստանի՝. ⁸Իսկ ուղիղք իմաստունս խորհեցան, և խորհուրդն այն կայ՝ մնայ՝: ⁹Կանայք մեծատունք, արի՛ք և լուարո՛ւք բարբառոյ իմոյ. և դստերք կասկածանօք լուարո՛ւք զբանս իմ: ¹⁰Յո՛ւշ լիցին ձեզ աւուրքն տարեկանաց ցաւովք և կասկածանօք. նուաղեցան կուրք. դադարեցին սերմանք, և այլ ո՛չ ևս եկեսցեն: ¹¹Ձարհուրեցարո՛ւք բարեկեցիկք. տրտմեցարո՛ւք յանձնապաստանքդ. մերկացարո՛ւք՝ կողոպտեցարո՛ւք՝ քրձագգա՛ծք եղերուք: ¹²Կոծեցարո՛ւք ՚ի վերայ արդեանց, վասն անդոցն ցանկալեաց, և վասն այգեացն բերոց՝: ¹³Յերկիր ժողովորդեան իմոյ փո՛ւշ և խո՛տ բուսցի. և յամենայն ապարանից ուրախութիւն բարձցի՛. քաղաքիդ մեծացելոյ՝ ¹⁴ապարանք լքեալք. զմեծութիւն քաղաքիդ լքցեն և գտունս ցանկալիս. և եղիցին աւանք քո այ՛րք յաւիտենից. ուրախութիւն ցո՛ւց և ճարակք հօտից: ¹⁵Սինչև եկեսցէ ՚ի վերայ ձեր Յոգի՛ ՚ի բարձանց. և եղիցի յանապատ Քերմէլ, և Քերմէլ յանտա՛ռ համարեսցի՝. ¹⁶և հանգիցեն իրաւունք յանապատի, և արդարութիւն ՚ի Քերմէլ բնակեսցէ: ¹⁷Եւ եղիցին զործք արդարութեան խաղաղութեամբ. և կալցի արդարութիւն զհանգիստ. և յուսացեալքն եղիցին մինչև յաւիտեան՝: ¹⁸Եւ բնակեսցէ ժողովուրդ իմ ՚ի քաղաքին խաղաղութեան, և բնակեսցէ յուսով, և հանգիցեն մեծութեամբ. ¹⁹այլ կարկուտ եթէ իջանիցէ, ո՛չ ՚ի ձեր վերայ եկեսցէ: Եւ եղիցի որ բնակեալ իցեն յանտառին, յանհո՛գս իբրև զայնոսիկ ոյք իցենն ՚ի դաշտի՝: ²⁰Երանի՛ որ սերմանիցեն ընդ ամենայն ջրով ուր ե՛զն և էշ կոխիցեն:

Գլուխ ԼԳ

* *Ոմանք.* Եւ երևեսցի Սիովն. *կամ*՝ ՚ի Սիովն իբրև:

* *Ոմանք.* Տայցեն զականջս ՚ի լսել:

* *Ոմանք.* Անսացեն ՚ի լսել:

* *Ոմանք.* Ձնանրութիւնս խոր՝: *Ի լուս*՝. խօսել առ Աստուած զմոլորութիւն. *համաձայն բազմաց ՚ի բնաք*՝:

* *Ոմանք զվերոյասացեալն կրկնեն վերստին.* Բանիւք անիրաւութեան. *ցրուել զանձինս քաղցեալս, և զանձինս ծարաւեալս ունայնս արծակել.* և ցրուել:

* *Ոմանք.* Իսկ ուղիղքն իմաստունս իմացան, և խոր՝:

* *Ոմանք.* Կոծեցարուք ՚ի վերայ ստեանց, և վասն անդուց. *կամ*՝ անդիոց:

* *Ոմանք.* Յերկրի ժողո՛:

* *Ոսկան.* Եւ եղիցի անապատն ՚ի Քերմէլ:

* *Ոմանք.* Ձհանգիստս... մինչև յաւիտեանս:

* *Ոմանք.* Եւ եղիցին որ բնակեալ... որք կեցցեն ՚ի դաշտի:

¹Վա՛յ այնոցիկ որ թշուառացուցանենն զձեզ. բայց զձեզ ո՛չ ոք կարէ թշուառացուցանել. և որ արհամարհեն՝ ո՛չ զձեզ արհամարհեաց. զի մատնեսցին ՚ի պարտութիւն որ զձեզն արհամարհեն. և իբրև զցեց ՚ի վերայ ձորձոց՝ ա՛յնպէս մատնեսցին ՚ի պարտութիւն*:

Լ ²Տէր ողորմեա՛ց մեզ՝ զի ՚ի քե՛զ յուսացաք. եղև զաւակ անհաւատիցն ՚ի կորո՛ւստ. այլ մեր փրկութիւն ՚ի քե՛ն է ՚ի ժամանակի նեղութեան: ³Վասն բարբառոյ ահի քոյ յիմարեցան ժողովուրդք. և յերկիւղէ քումնէ ցրուեցան հեթանոսք: ⁴Եւ արդ ժողովեսցի կապուտն ձեր մեծի՛ և փոքու. որպէս ոք զի ժողովեսցէ զմարախ իբրև ՚ի գբոյ, ա՛յնպէս այպն առնիցեն զձեզ*: ⁵Սո՛ւրբ է Տէր Աստուած մեր որ բնակեալն է ՚ի բարձունս. լցա՛ւ Սիոն իրաւամբք և արդարութեամբ: ⁶Օրհնօք մատնեսցին, և գանձուք եղիցի փրկութիւնն մեր. եհաս իմաստութիւն և հանճար և աստուածապաշտութիւն Տեառն. այս են գանձք արդարութեան*: ⁷Վհաւաղիկ յահէդ ձերմէ երկիցեն. յորոց երկնչէիքն՝ երկիցեն ՚ի ձե՛նջ. հրեշտակս արձակեսցեն որ լայցեն դառնապէս՝ և խնդրեսցեն զխաղաղութիւն*. ⁸զի հատան ճանապարհք նոցա. հանդարտեաց ահն հեթանոսաց, և բարձա՛ւ ուխտն որ ընդ նոսա. և մի՛ ևս համարիցիք զնոսա ՚ի մարդիկ: ⁹Սուգ առ՝ և տկարացաւ երկիր. յամօք եղև Լիբանան, ՚ի դա՛շտ մարգագետին համարեցաւ Սարոն. յայտնի՛ եղև Գալիլեա և Կարմելոս: ¹⁰Արդ՝ յարեայց ասէ Տէր. արդ՝ փառաւորեցայց. արդ՝ բարձրացայց. ¹¹արդ՝ տեսչիք. արդ՝ յամօք լիջիք. ընդունայն լիցի զօրութիւն ոգւոց ձերոց, և հո՛ւր կերիցէ զձեզ: ¹²Եւ եղիցին հեթանոսք խարշեալք իբրև զփո՛ւշ ագարակի՝ այրեցեալ և ընկեցեալ*: ¹³Լուիցեն հեռաւորք զոր արարի. ծանիցեն մերձաւորք զօրութիւն իմ*: ¹⁴Մերժեցան ՚ի Սիովնէ անօրէնք. դողունն կալցի զամպարիշտս: Իսկ արդ ո՞ պատմեսցէ ձեզ եթէ հուր բորբոքեալ կայ. կամ ո՞ պատմեսցէ ձեզ զտեղւոյն յաւիտենից*: ¹⁵Որ գնայ արդարութեամբ, խօսի զուղիղ ճանապարհէ. ատեայ զանօրէնութիւն և զանիրաւութիւն, թօթափէ զձեռս իւր ՚ի կաշառոց. ծանրացուցանէ զականջս առ ՚ի չլսելոյ զդատաստան արեան, խնո՛ւ զաչս իւր զի մի՛ տեսցէ զանիրաւութիւն*: ¹⁶Նա՛ բնակեսցէ ՚ի բարձր այրի վիմի հաստատոյ. հա՛ց տացի նմա՝ և ջուր նորա հաւատարիմ*: ¹⁷Զթագաւորն փառաց տեսչիք. և աչք ձեր տեսցեն զերկիրն ՚ի հեռուստ*. ¹⁸և անձինք ձեր խոկասցեն յերկեւղ Տեառն: Ո՞ւր են դպիրքն. ո՞ւր են խրատտութն. ո՞ւր է որ ունի զհամար պահակերաց զմեծի և զփոքու*. ¹⁹Ժողովողեանն, ընդ որում ո՛չ ինչ խորհեցաւ. զի չէ՛ր տեղեակ ծանրաձայնին վասն չլսելոյ: Ժողովուրդ

* *Ոմանք.* Թշուառացուցանիցեն զձեզ... ոչ զձեզ արհամարհէ. *կամ՝* արհամարհեայ... ՚ի վերայ ձորձոյ:

* *Օրհնակ մի.* Ժողովիցէ զմարախ իբրև ՚ի գուր:

* *Ոմանք.* Եւ գանձիւք եղիցի: *Ոսկան.* Այսոքիկ են գանձք:

* *Ոմանք.* Յահէ ձերմէ նոքա երկիցեն... հրեշտակք արձակեսցին... և խնդրիցեն:

* *Ոմանք.* Իբրև զփուշ յագարակի:

* *Ոմանք.* Լուիցեն հեռաւորք զոր ա՛:

* *Ոմանք.* Մերժեցան ՚ի Սիոնէ օրէնք:

* *Ոմանք.* Զականջս իւր առ ՚ի չլսելոյ զդատաստանս ար՛:

* *Երկու օրհնակք համեմատք իրերաց.* Ի բարձր այր ՚ի վիմի: *Ուր Ոսկան.* ՚ի բարձրային վիմին:

* *Ոսկան.* Զթագաւորն փառաց տեսցեն աչք նորա. տեսցեն զեր՛:

* *Օրհնակ մի.* Ո՞ւր են խրատտութն:

յոռացեալ, և ո՛չ գոյ լսողին ՚ի միտ առնուլ*:

ԼԱ ²⁰Ահաւասիկ Սիոն քաղաք փրկութեան մերոյ. աչք ձեր տեսցեն զերուսաղէմ քաղաք մեծացեալ, խորանք որ ո՛չ շարժեսցին. և մի՛ շարժեսցին ցիցք խորանի նորա յաւիտեանս ժամանակաց, և մի՛ խզեսցին ապաւանդակք նորա. ²¹զի անուն Տեառն մեծ է ՚ի ձեզ: Չե՛զ լիցի տեղին յորում գետքն և ջրադարձք լայնք և ընդարձակք. ո՛չ երթիցես ընդ այն ճանապարհ, և մի՛ գնասցեն նաւք քո վարեալք. զի Աստուած իմ մեծ է, և ո՛չ արասցէ զանց զինն*:
²²Տէր հայր մեր. Տէր դատաւոր մեր. Տէր իշխան մեր. Տէր թագաւոր մեր. Տէր փրկիչ մեր՝ և նա՛ փրկեսցէ զմեզ: ²³Խզեցան պարանք քո զի ո՛չ հանդարտեսցին. նոյնպէս և կայմն խոնարհեցաւ՝ և ո՛չ պարզեսցէ զառագաստն, և ո՛չ արձակեսցէ զնշանն մինչև մատնեսցի ՚ի կորուստ: Այսուհետև բազում կաղք աւար առնուցուն. ²⁴և մի՛ ասասցեն թէ վաստակեցաք, ժողովուրդն որ բնակեալ իցէ ՚ի նոսա. զի թողան մեղք նոցա:

34

Գլուխ ԼԴ

ԼԲ ¹Մատերուք հեթանոսք և լուարո՛ւք. ո՛ւնկն դիք իշխանք. լուիցէ՛ երկիր և որ ՚ի նմա տիեզերք, և ժողովուրդք որ ՚ի նմա*:
²Ձի սրտմտութիւն Տեառն ՚ի վերայ ամենայն ազգաց, և բարկութիւն ՚ի վերայ ամենայն թուոց նոցա. սատակել զնոսա՝ և մատնել զնոսա ՚ի սպանումն: ³Եւ վիրաւորք նոցա դի՛ տապաստ անկցին, և ելցէ հոտ նոցա. և թացցին լերինք յարենէ նոցա: ⁴Եւ հալեսցին ամենայն զօրութիւնք երկնից. և գալարեսցին երկինք իբրև զմագաղաթ, և ամենայն աստեղք թօթափեսցին իբրև գտերև յորթոյ՝ և որպէս անկանի տերև ՚ի թզենույ: ⁵Ձի արբեցա՛ւ սուր իմ յերկինս. արդ՝ ՚ի վերայ Եդովմայեցւոցն իջցէ, և ՚ի վերայ կորստական ժողովրդեանն դատաստանօք: ⁶Սո՛ւր Տեառն լցաւ արեամբ. ուռուցաւ ճարպով գառանց, և ճարպով ցլուց և խոյոց: Ձի զոհ Տեառն է ՚ի Բոսոր, և սպանո՛ւ մեծ յերկրին Եդովմայեցւոց*:
⁷Եւ ընկճեսցին մեծամեծք ընդ նոսա՝ և խոյք և ցուլք. և արբեսցի երկիրն յարենէ նոցա. և հող նոցա ՚ի ճարպոյ նոցա լցցի*:
⁸Ձի օր դատաստանի Տեառն է, և տարեկան հատուցման դատաստանի Սիովնի: ⁹Եւ դարձցին ձորք նորա ՚ի ձիւթ, և երկիր նորա ՚ի ծծումբ. և եղիցի երկիր նորա իբրև զձիւթ վառեալ* ¹⁰ի տուէ և ՚ի գիշերի. և մի՛ շիջցի յաւիտեանս ժամանակաց: Եւ բարձրացի ծուխ նորա ՚ի վեր, և աւերեսցի յազգս ազգաց. և ՚ի բազում ժամանակս աւերեսցի, և ո՛չ ոք իցէ որ անցանիցէ ընդ նա*:
¹¹Եւ բնակեսցեն ՚ի նմա թռչունք և ոզնիք, և ցինք և ազռաւք. և անկցին ՚ի նմա լարաբաժինք աւերակի. և յուշկապարիկք բնակեսցեն ՚ի նմա*:
¹²Եւ եղիցին իշխանք նորա իբրև չեղեալք, և թագաւորք նորա և մեծամեծք եղիցին ՚ի

* Օրինակ մի. ժողովրդեան իմոյ, ընդ որում ոչ ինչ խօսեցաւ, և չէր տեղ՞:

* Յօրինակին պակասէր. Ձի Աստուած իմ մեծ է, և ո՛չ:

* Ոմանք. Եւ որ ՚ի նոսա իցեն տիեզ՞:

* Ոմանք. Ձոհ Տեառն ՚ի Բոսոր... յերկիրն Եդով՞:

* Ոմանք. Եւ արբցի երկիրն յա՞:

* Ոմանք. Եւ երկիր նոցա ՚ի ծծումբ... երկիր նոցա իբրև զձիւթ:

* Ոմանք. Եւ աւերեսցէ ազգս ազգաց նոցա:

* Ոմանք. Եւ անկցի ՚ի նմա լարաբաժին ազարակի:

կորուստ* . ¹³և բուսցի՝ ի քաղաքս նորա և յամուրս փա՛յտ փշաբեր: Եւ եղիցի բնակութիւն համբարեաց և հանգիստ ջայլամանց* . ¹⁴և պատահեսցեն դևք յուշկապարկաց, և տայցեն ձայն միմեանց: Ա՛նդ հանգիցեն յուշկապարիկք, զի գտին իւրեանց հանգիստ . ¹⁵անդ եհան ձագս ոզնի, և սնոյց երկիր զձագս նորա զգուշութեամբ: Ա՛նդ պատահեցին միմեանց եղջերուք, տեսին զերեսս իրերաց* . ¹⁶թուով անցին, և մի՛ ի նոցանէ ո՛չ վրիպեաց . ընկեր զընկեր ո՛չ խնդրեցին: Զի Տէր հրամայեաց նոցա, և ոգի նորա ժողովեաց զնոսա* . ¹⁷և նոյն վիճակեցոյց զնոսա . և ձեռն նորա բաժանեաց նոցա ճարակս՝ յաւիտեանս ժամանակաց . ժառանգեսցեն ազգաց յազգս, և հանգիցեն՝ ի նմա* :

35

Գլուխ ԼԵ

¹Ուրախ լեր անապատ ծարաւի . ցնծասցէ անապատն և ծաղկեսցէ՝ իբրև զշուշան: ²Եւ ծաղկեսցէ և ցնծասցէ անապատն Յորդանանու . և փառքն Լիբանանու տացի նմա, և պատին Կարմելայ . և ժողովուրդ իմ տեսցէ զփա՛ռս Տեառն, և զբարձրութիւն Աստուծոյ մերոյ* : ³Չօրացարուք ձեռք լքեալք՝ և ծունկք կթուցեալք . ⁴մխիթարեցարուք կարճամիտք սրտիւք . զօրացարուք և մի՛ երկնչիք: Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան՝ և հատուցէ . ինքնին եկեսցէ՝ և փրկեսցէ զմեզ: ⁵Յայնժամ աչք կուրաց բացցին՝ և ականջք խլից լուիցեն: ⁶Յայնժամ վագեսցէ կաղն իբրև զեղջերու, և պարզ լիցի լեզու ծանրախօսաց: Զի ջուր բղխեաց յանապատի, և գե՛տ ՚ի ծարաւուտ երկրի: ⁷Եւ եղիցի անջուրն յեղտերս և աղբեր ջուրց ՚ի ծարաւուտ երկրի: Ա՛նդ եղիցի ուրախութիւն հաւուց, և մակաղատեղք խաշանց . անդ մարգագետինք և խաղք* : ⁸Ա՛նդ եղիցին ճանապարհ մաքրեալ, և ճանապարհ սո՛ւրբ կոչեսցի . մի՛ անցցէ ընդ նա պիղծ, և մի՛ եղիցի անդ ճանապարհ պղծոյ . այլ ցրուեալքն զնասցեն ընդ նա՝ և մի՛ մոլորեսցին* : ⁹Մի՛ եղիցի անդ առեւծ, և մի՛ ՚ի գազանաց չարաց ընդ այն մի՛ անցանիցէ . և մի՛ ամենահին գտցի ՚ի նմա . այլ ընդ նա զնասցեն փրկեալքն և ժողովեալքն վասն Տեառն: ¹⁰Դարձցին՝ և եկեսցեն ՚ի Սիովն ցնծութեամբ՝ և ուրախութիւն յաւիտենից ՚ի վերայ գլխոց նոցա . զի ՚ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ցնծութիւն, և ուրախութիւն հասցէ նոցա . մերժեցան ցա՛լք՝ և տրտմութիւնք և հեծութիւնք* :

* *Ոմանք* . Իբրև զչեղեալք:

* *Ոմանք* . ՚ի քաղաքս նոցա . և *ոմանք* . և յամուրս նորա... բնակութիւն համբարաց, և հանգիստ ջայլեմանց:

* *Բազումք* . Եւ տեսին զերեսս:

* *Ոմանք* . Եւ հոգի նորա ժո՛ւ:

* *Ոմանք* . Եւ նոյն վիճակեցուցէ զնոսա:

* *Ոմանք* . Տացին նմա... և ժողովուրդ իմ տեսցեն:

* *Յօրինակին* . Եւ եղիցի . անանջուրն յեղտերս: *Ի լուս*՝ Յաղտերս . *համաձայն բազմաց ՚ի բն*՝: *Ուր ոմանք* . յաղտերս:

* *Բազումք* . Անդ եղիցի ճանա՛... և մի՛ անցցէ... ճանապարհ պղծոց:

* *Ոսկան* . Եւ դարձցին և եկեսցեն... ՚ի վերայ գլխոց նոցա ցնծութիւն օրհն՝: *Ոմանք* . Եւ ուրախութիւն հասցեն նոցա:

Գլուխ ԼԶ

ԼԳ ¹Եւ եղև ՚ի չորեքտասաներորդի ամի թագաւորութեանն Եզեկիայ, ել Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ՚ի վերայ ամուր քաղաքաց Զրէաստանի, և ա՛ռ զնոսա: ²Եւ առաքեաց արքայն Ասորեստանեայց զՌափսակ ՚ի Լաքիսայ յերուսաղէմ առ արքայն Եզեկիայ զօրօք բազմօք. և եկն եկաց ՚ի վերայ ջրմղի վերնոյ աւազանին ՚ի ճանապարհի ագարակին թափչաց* ³Եւ ելին առ նա Եղիակիմ Քեղկեայ որ հազարապետն էր, և Սովմնաս՝ հրովարտակաց դպիր, և Յովաք Ասափայ՝ յիշատակաց դպիր: ⁴Եւ ասէ ցնոսա Ռափսակ. Երթայք ասացէք ցԵզեկիա. Այսպէս ասէ մեծ արքայն Ասորեստանեայց. Յո՞ յուսացեալ իցես. ⁵միթէ խորհրդով կամ բանիւ շրթանց պատերա՞զմ վճարիցի. իսկ արդ՝ յո՞ յուսացեալ իցես զի ո՛չ հնազանդիս ինձ*: ⁶Ահաւասիկ յուսացեալ ես ՚ի ցո՛ւպն եղեգնեայ՝ ՚ի ջախջախ յԵզիպտացին. յոր թէ յենուցու որ՝ խորտակի և ընդ ձեռս ելանէ. այնպէս է փարաւոն արքայն Եզիպտացւոց, և ամենեքեան որ յուսացեալ են ՚ի նա*: ⁷# Իսկ եթէ ասիցէք, եթէ ՚ի Տէր Աստուած մեր յուսացեալ ենք. ո՞չ ապաքէն նա է՝ վասն որոյ քակեաց Եզեկիա զբարձունս և զսեղանս նոցա. # և պատուէր ետ Զրէաստանի՝ և Երուսաղէմի, # առաջի նորա սեղանոյն միայն երկիր պագանել: ⁸Այլ արդ՝ եկայք խառնեցարուք ընդ տեառն իմում արքային Ասորեստանեայց. և տա՛ց ձեզ երկուս հազարս երիվարաց, եթէ կարիցէք տալ հեծեալս ՚ի վերայ նոցա*: ⁹Եւ զիա՞րդ կարիցէք ՚ի դիմի՛ հարկանել միում յաշխարհակալաց ծառայից տեառն իմոյ, որք յուսացեալ էք յԵզիպտոս ՚ի հեծեալս և յերիվարս նոցա*: ¹⁰Իսկ արդ մեք առանց Տեա՞ռն եկեալ իցենք յերկիրս յայս տա՛լ ընդ սմա պատերազմ. Տէր ասաց ցիս. Ել յերկիրն յայն, և ապականեա՛ զնա: ¹¹Եւ ասէ ցնա Եղիակիմ, և Սովմնաս, և Յովաք. Խօսեա՛ց ընդ ծառայս քո Ասորերէն՝ զի լսենք, և մի՛ խօսիր ընդ մեզ Զրէարէն. և ընդէ՞ր խօսիս յականջս մարդկանս որ անկեալ կան զպարսպաւս*: ¹²Ասէ ցնոսա Ռափսակ. Միթէ առ տէ՞րն ձեր՝ կամ առ ձե՞զ առաքեաց զիս տէր իմ խօսել զբանս զայսոսիկ. ո՞չ ապաքէն առ մարդիկդ որ նստին ՚ի վերայ պարսպիդ. զի մի՛ ուտիցեն զաղբ և ընպիցեն զմէ՛զս իւրեանց ձեւք հանդերձ: ¹³Յո՛տն եկա՛ց Ռափսակ և աղաղակեաց ՚ի ձայն մեծ Զրէարէն և ասէ. Լուարու՛ք զպատգամս թագաւորին մեծի արքային Ասորեստանեայց: ¹⁴Այսպէս ասէ արքայ. Մի՛ պատրեսցէ զձեզ Եզեկիա բանիւք՝ որովք ո՛չ կարէ փրկել զձեզ: ¹⁵Եւ մի՛ խաբեսցէ զձեզ Եզեկիա՝ թէ Աստուած փրկեսցէ զձեզ, և ո՛չ մատնիցի քաղաքս ՚ի ձեռս թագաւորին Ասորեստանեայց*. ¹⁶մի՛ անսայք Եզեկիայ: Այսպէս ասէ արքայն Ասորեստանեայց. Եթէ կամիցիք դիւրել՝ անձանց, եկայք ելէ՛ք առ իս. և կերիջի՛ք իւրաքանչիւր զայգի իւր և զթգենի, և արբջիք ջուր ՚ի ջրհորոց ձերոց*.

* *Ոսկան.* ՚ի Լաքիսայէ յերուսաղէմ... ՚ի վերայ ջրմղի ՚ի վերնոյ աւա՛:

* *Ոմանք.* Բանիւք շրթանց... վճարեսցի... յո՛ յուսացեալ ես զի ոչ:

* *Ոմանք.* Ահաւասիկ յուսա՞... ՚ի ջախջախ Եզիպտացին: *Ոսկան.* Այնպէս է և փարաւոն ար՛:

* *Ի լուս՞.* Եկայք խորհեցարուք ընդ Տեառն:

* *Բազումք.* Զարկանել միում ումեք. և *ոմանք.* մի ումեք յաշ՞... յուսացեալքդ էք:

* *Ոմանք.* Եւ ասեն ցնա... ընդ ծառայքս քո... ընդ մեզ Զրէարէն... և ընդէ՞ր խօսիցիս:

* *Ոմանք.* Եւ մի՛ ասացէ զձեզ Եզեկիա, եթէ Աստուած... և ո՛չ մատնի քաղաքդ ՚ի:

* *Ոմանք.* Եթէ կամիք դիւրել:

¹⁷մինչև եկից և տարայց զձեզ յերկիրն՝ որ իբրև զերկիրս ձեր է. երկիր ցորենոյ և գինւոյ, հացաւետ և գինաւետ*։ ¹⁸Մի՛ խաբեսցէ զձեզ Եզեկիա՝ և ասասցէ թէ Աստուած փրկէ զձեզ. միթէ փրկեցի՞ն աստուածք ազգացն զհւրաքանչիւր երկիր ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց*։ ¹⁹Ո՞ւր է աստուած Եմաթայն՝ և Արփաթայ. և ո՞ւր է աստուած քաղաքին Սեփարուիմ. միթէ կարացի՞ն փրկել զՍամարիա ՚ի ձեռաց իմոց*։ ²⁰Ո՞ք յաստուածոց ամենայն ազգացն այնոցիկ կարաց փրկել զերկիր իւր ՚ի ձեռաց իմոց, զի և ձեր Աստուածդ փրկեսցէ զԵրուսաղէմ ՚ի ձեռաց իմոց*։ ²¹Լու՛ռ եղեն և ո՛չ ինչ ետուն պատասխանի, վասն հրամանի թագաւորին չտալ պատասխանի*։ ²²Եւ եմո՛ւտ եղիակիմ Քեղկեայ որ հազարապետն էր՝ և Սովմնաս հրովարտակաց դպիր՝ և Յովաք Ասափայ յիշատակաց դպիր առ Եզեկիա՝ զօձիս պատառեալ, և պատմեցին նմա զբանս Ռափսակայ։

37

Գլուխ ԼԵ

¹Եւ եղև իբրև լուաւ Եզեկիա արքայ, պատառեալց զպատմութեան իւր՝ և քո՛ւրձ զգեցաւ, և ել ՚ի տուն Տեառն։ ²Եւ առաքեաց զԵղիակիմ հազարապետն, և զՍովմնաս հրովարտակաց դպիր, և զժերս ՚ի քահանայից անտի քրձազգածս առ Եսայի մարգարէ որդի Ամովսայ*։ ³Եւ ասէ ցնա. Այսպէս ասէ Եզեկիա. Այսօր է օր նեղութեան և նախատանաց, և կշտամբութեան և բարկութեան. յորում աւուր հասեալ են երկունք ծննդականի՝ և ո՛չ կարէ ծնանել*։ ⁴Լուիցէ՛ Տէր Աստուած քո զբանս Ռափսակայ, զոր առաքեաց արքայն Ասորեստանեայց տէրն նորա նախատել զԱստուած կենդանի. և նախատել բանի՛ւք զորս լուաւ Տէր Աստուած քո. և արդ խնդրեսցեն ՚ի Տեառնէ Աստուծոյ քունմէ վասն մնացելոցս այսոցիկ*։ ⁵Եւ եկին ծառայքն Եզեկիայի արքայի առ Եսայի*։ ⁶Եւ ասէ ցնոսա Եսայի. Չայս ասասցիք ցտերն ձեր. Այսպէս ասէ Տէր. Ո՛չ երկիցես ՚ի բանիցն զոր լուար, որովք նախատեցին զիս հրեշտակք արքային Ասորեստանեայց։ ⁷Ահաւասիկ ես արկանեն՝ ՚ի նա ոգի խռովութեան. և լուեալ համբաւ դարձցի յաշխարհ իւր, և անկցի ՚ի սո՛ւր յերկրի իւրում*։ ⁸Եւ դարձեալ անդրէն Ռափսակայ եհա՛ս առ արքայն Ասորեստանեայց, զի պաշարեալ էր զՂոբնան. և լուաւ թէ արքայն Ասորեստանեայց չուեա՛ց ՚ի Լաքիսայ*։ ⁹Եւ ել Թարակ արքայ Եթովպացւոց պաշարել զնա. և դարձաւ անդրէն։ Եւ առաքեաց հրեշտակս առ Եզեկիա՝ և

* *Ոմանք.* Հացաւետ և այգաւետ։

* *Ոմանք.* Ի ձեռաց թագաւորին Ասորեստանեաց։

* *Ոմանք.* Փրկել զՇամրին ՚ի ձեռաց։

* *Ոմանք.* Ո՞ք յաստուածոց... և ձեր Աստուածն փր՛։ *Ուր Ոսկան.* Ո՞ յաստուածոց ամենայն։

* *Օրինակ մի.* Չտալ ինչ պատասխանի։

* *Այլք.* Չեղիակիմ զհազարապետն։ *Ոմանք.* Ի քահանայիցն քրձազգեացս։

* *Ոմանք.* Եւ ասեն ցնա. Այսպէս։

* *Ոսկան.* Տէր իւր նախատել զԱստուած։

* *Ոմանք.* Եզեկիայ արքայի։

* *Բազումք.* Արկանեն ես ՚ի նա։

* *Ոմանք.* Եհաս արքային Ասորեստ... և լուաւ արքայն Ասորեստ. թէ չուեաց ՚ի։ *Ոսկան.* ՉԼոբնայ։

ասէ՛. ¹⁰Այսպէս ասացէ՛ք ցեզելիա արքայ Յրէաստանի. Մի՛ խաբեսցէ զքեզ Աստուած՝ յոր դու յուսացեալ ես. և ասիցէ՛ թէ՛ ո՛չ մատնեսցի Երուսաղէմ՝ ՚ի ձեռս արքային Ասորեստանեայց: ¹¹Արդ՝ ահա չիցէ՞ լուեալ քո զոր ինչ արարին թագաւորք Ասորեստանեայց ընդ՝ ամենայն երկիր, որպէս սատակեցին զնոսա. իսկ արդ՝ դու ապրելո՞ց իցես: ¹²Միթէ՛ ապրեցուցի՞ն աստուածք ազգացն զայնոսիկ զորս կորուսին հարքն իմ, զԳովզան և զԽառան և զՅափեթ, որ են յերկիրն Եմաթայ՝: ¹³Ո՞ւր են թագաւորք Եմաթայն և Արփաթայ. և ո՞ւր են թագաւորք քաղաքին Սեփարուիմ, Անայն և Գաւայ՝: ¹⁴Եւ՝ ան՝ Եզելիա զիրովարտակն՝ ՚ի ձեռաց հրեշտակացն, ընթերցաւ, և եմուտ՝ ՚ի տուն Տեառն, և տարածեաց՝ առաջի Տեառն: ¹⁵Եւ՝ եկաց յաղօթս Եզելիա առ Տէր՝ և ասէ. ¹⁶Տէր Սաբաւովք. Աստուած Իսրայէլի՝ որ նստիս ՚ի քրովքես. դո՛ւ ես Աստուած միայն՝ ամենայն թագաւորութեանց տիեզերաց. դո՛ւ արարեր զերկինս և զերկիր՝: ¹⁷Խոնարհեցո՛ Տէր զունկն քո՝ և լո՛ւր. բաց՝ Տէր զաչս քո, նայեաց՝ Տէր. լո՛ւր Տէր, և տես՝ զպատգամս զոր առաքեաց Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց նախատել՝ զԱստուած կենդանի: ¹⁸Եւ՝ արդարև աւերեցին թագաւորքն Ասորեստանի զաշխարհս ամենայն և զերկիր նոցա. ¹⁹և հրձիգ արարին զկուռս նոցա. քանզի չէին աստուածք, այլ՝ ձեռագործք մարդկան, փայտեղէնք և քարեղէնք, և կորուսին զնոսա՝: ²⁰Բայց արդ՝ Տէր Աստուած մեր՝ ապրեցո՛ւ զմեզ ՚ի ձեռաց նորա. զի ծանիցեն ամենայն թագաւորութիւնք երկրի՝ թէ՛ դո՛ւ միայն ես Աստուած: ²¹Եւ՝ առաքեցաւ Եսայի որդի Անովսայ առ Եզելիա՝ և ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Լուա՛յ աղօթիցն զոր աղաչեցեր առ իս՝ վասն Սենեքերիմայ արքային Ասորեստանեայց՝. ²²արդ՝ այս բան է զոր խօսեցաւ վասն նորա Աստուած. Անգոսնեաց՝ արհամարհեաց՝ զքեզ դուստր Սիովնի. զլո՞ւիս շարժեաց ՚ի վերայ դո՛ւստր Երուսաղէմի՝: ²³Չո՞ նախատեցեր և զրգռեցեր, և առ ո՞ բարձրացուցեր զբարբառ քո. և ո՛չ ամբարձեր զաչս ՚ի բարձունս ՚ի Սուրբն Իսրայէլի՝. ²⁴զի՞ ՚ի ձեռն հրեշտակաց նախատեցեր զՏէր: Դու ասէիր թէ՛ բազմութեամբ կառաց իմոց ելից ՚ի բարձրութիւն լերանց, և ՚ի ծագս Լիբանանու. և կոտորեցից զբարձրութիւն մայրից նորա, և զգեղեցկութիւն նոճից նորա. և մտի՛ ՚ի բարձրութիւն կողմանց անտառին՝. ²⁵և արկից կամուրջ, և աւերեցից զջուրսն և զամենայն ժողովս ջուրցն: ²⁶Չիցէ՞ լուեալ քո զոր յառաջագոյն արարի ես յաւուրցն առաջնոց. զոր կարգեցի և այժմ՝ յայտնեցի՝ աւերել զհեթանոսս յամուրս իւրեանց՝, ²⁷և զբնակիչս քաղաքաց յիւրաքանչիւր ամրոցաց, թողի՛ ՚ի ձեռաց՝ և ցամաքեցան. և եղեն իբրև գխտ՝ ցամաքեալ ՚ի վերայ տանեաց՝ և իբրև զսեզ չորացեալ: ²⁸Արդ՝ զկայս հանգստեան քոյ, և զել և

* *Ոսկան յաւելու.* Եւ լուաւ զԹարակայ թագաւորէ եթօպացւոց ասացեալ. Ել Թարակ:

* *Ոմանք.* Ապրեցուցին զնոսա աստու... և զՔառան... և որք են յերկրին Մաթայ:

* *Ոսկան.* Անայ և Աւայ:

* *Ոսկան.* Դու ես միայն ամենայն: *Ոմանք.* Ամենայն թագաւորութեան տիեզէ՛... զերկին և:

* *Ոմանք.* Քանզի ոչ էին աստուածք:

* *Օրհնակ մի.* Աղօթիցն զոր աղօթեցեր առ իս:

* *Ոմանք յաւելուն.* Արհամարհեաց զքեզ *կոյս* դուստր... շարժեաց ՚ի վերայ *քո* դուստր Երուսաղէմի:

* *Ոսկան.* Եւ ամբարձեր զաչս քո ՚ի: *Բազունք յաւելուն.* Չաչս *քո* ՚ի բար՝:

* *Յօրհնակին բառքս՝* Ելից, կոտորեցից, արկից, աւերեցից, *չակերտիւ նշանակին՝* ակնարկելով իմն բառնալ ՚ի նոցանէ՛ զվերջին ց-ոն. և առնել՝ Ելի, կոտորեցի, և այլն.

ըստ որում ունին ոմանք:

* *Ոմանք.* Եւ այժմ յայտնեսցի:

զմուտ ճանապարհաց քոց ես ինձէն գիտեմ.²⁹ և սրտմտութիւն քո զոր սրտմտեցեր, և դառնութիւն քո ե՛լ առաջի իմ. և արկից վարապան ՚ի ցռուկք քո, և դանդանաւանդ ՚ի կզակս քո. և դարձուցից զքեզ ընդ նո՛յն ճանապարհ ընդ որ եկիր*:³⁰ Այլ քեզ ա՛յս եղիցի նշան. կերիցես ա՛յս ամ զսերմանեալդ, և յամէ ևս կերիցես զմնացորդսն. և յամին երրորդում սերմանեսջիք և հնձեսջիք, տնկեսջիք այգիս՝ և կերիջիք զպտուղ նորա*:³¹ Եւ եղիցին մնացորդքն Յրէաստանի արձակել արմատս ՚ի խոնարհ, և տալ պտուղ ՚ի վեր*:³² Ձի յերուսաղէմ եղիցին մնացեալք, և ՚ի լերին Սիովնի ապրեալք. զի նախանձ Տեառն զօրութեանց արար զայս:³³ Վասն այսորիկ ա՛յսպէս ասէ Տէր ՚ի վերայ թագաւորին Ասորեստանեայց. Մի՛ մտցէ ՚ի քաղաքս յայս, և մի՛ նետս արկցէ ՚ի վերայ դորա. և մի՛ փակեսցէ զդա վահանօք, և մի՛ պաշարեսցէ զդա պատնիշօք*.³⁴ Այլ ճանապարհ ընդ որ եկն ընդ նո՛յն դարձցի, և ՚ի քաղաքն յայն մի՛ մտցէ: Այսպէս ասէ Տէր*.³⁵ Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ ապրեցուցանել զդա, վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ:³⁶ Եւ ել հրեշտակ Տեառն, և սատակեաց ՚ի բանակէ անտի Ասորեստանեայցն՝ հարեր ութսուն և հինգ հազար. և յարեան ընդ առաւօտն՝ գտին զայն ամենայն մարմին մեռեալ*:³⁷ Եւ դարձաւ անդրէն՝ զնաց Սենեքերիմ արքայն Ասորեստանեայց, բնակեալ ՚ի Նիւուէ*:³⁸ Եւ մինչդեռ երկի՛ր պագանէր ՚ի տան իւրում Նասրաքայ կռո՛ց իւրոց, Ադրամելէք և Սարասար որդիք նորա սպանին զնա սրով, և ինքեանք զնացին փախստական ՚ի Յայս. և թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա*:

38

Գլուխ ԼԸ

¹Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ հիւանդանալ Եզեկիայ մինչև ՚ի մահ. և եկն առ նա Եսայի որդի Անուվսայ՝ և ասէ ցնա. Այսպէս ասէ Տէր. Յրաման տուր վասն տան քոյ՝ զի մեռանիս և ո՛չ կեաս:² Եւ դարձոյց Եզեկիա զերես իւր յորմն անդր, յաղօթս եկաց*³ և ասէ. Ո՛ Տէր. յիշեա՛ զիս Տէր զի գնացի առաջի քո արդարութեամբ և ճշմարտութեամբ սրտիւ, և զհաճոյս առաջի քո արարի: Եւ ելաց Եզեկիա լալի՛ւն մեծ*:⁴ Եւ եղև բան Տեառն առ Եսայի՝ և ասէ.⁵ Երթ՝ և ասա՛ ցԵզեկիա. Այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քո. Լուայ բարբառոյ աղօթից քոց, և տեսի զարտասուս քո. ահաւաղիկ յաւելու՛ն ՚ի ժամանակս քո ամս հինգետասան*.⁶ և ՚ի ձեռաց արքային Ասորեստանեայց ապրեցուցի՛ց զքեզ և զքաղաքդ զայդ. և վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ:⁷ Եւ ա՛յս քեզ նշան ՚ի

* *Երկու օրինակք.* Եւ արկից վարարապան ՚ի ցռուկս քո: *Ուր Ոսկան.* վարապանակ ՚ի ցռուկ քո:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ զմնացորդսն, *նշանակի՛* սիմ. Ինքնեակ: *Ոմանք.* Չպտուղ նոցա:

* *Ոմանք.* Արձակեալ արմատս:

* *Բազումք յաւելուն.* Մի՛ մտցէ նա ՚ի քաղաքս:

* *Ոմանք.* Եւ ՚ի քաղաքդ յայդ մի՛ մտ՛:

* *Ոմանք.* Ի բանակէն Ասորե՛... հարիւր և ութսուն:

* *Բազումք.* Եւ բնակեաց ՚ի Նիւուէ:

* *Ոմանք.* Ասրաքայ կռոց իւրոց:

* *Այլք.* Չերեսս իւր յորմ. *կամ՝* յորմն անդր:

* *Բազումք.* Արդարութեամբ և ճշմարիտ սրտիւ:

* *Ոսկան.* Ահաւասիկ յաւելուն:

Տեառնէ, թէ առնիցէ Աստուած զբանդ զայդ զոր խօսեցաւ. ⁸Ահաւասիկ ես դարձուցանեմ զստուեր աշտիճանացդ, ընդ որ իջեալ է շողդ, զտասն աշտիճանաւ տան քոյ. և դարձուցից զշողդ զտասնեքունք աշտիճանօքդ: Եւ ել շողն զտասնեքունք աստիճանօք՝ ընդ որ իջեալ էր ստուերին*:

⁹Աղօթք եզեկիայ արքայի Զրէաստանի՝ ի ժամանակի յորում հիւանդացաւ՝ և յարեալ ՚ի հիւանդութենէ իւրմէ՝: ¹⁰Ես ասացի. ՚ի վերանալ աւուրց իմոց գնացի՛ց ՚ի դրունս դժոխց: Թողի՛ զմնացորդս ամաց իմոց*։ ¹¹Ասացի թէ ո՛չ ևս տեսից զփրկութիւն Աստուծոյ ՚ի վերայ երկրի, և ո՛չ ևս տեսից զմարդն բնակչօք իւրովք: ¹²Պակասեցայ՝ ես յազգատոհմէ իմմէ. թողի զմնացորդս կենաց իմոց. ելիւն և գնացին յինէն՝ որպէս որ քակէ զտաղաւար կանգնեալ. եղև հոգի իմ առ յինէն իբրև ոստայն սատարաց՝ մերձ ՚ի հատանել*։ ¹³Յաւուր յայնմիկ մատնեցայ՝ մինչև յառաւօտ. իբրև զառեւծ՝ այնպէս խորտակեաց զոսկերս իմ, զի ՚ի տունջենէ մինչև ՚ի գիշեր մատնեցայ*։ ¹⁴Իբրև զծիծառն այնպէս ճչեցի, և իբրև զաղաւնի այնպէս մնչեցի. զի նուաղեցան աչք իմ ՚ի հայելոյ ՚ի բարձունս երկնից առ Տէր որ փրկեացն զիս, և փարատեցոյց զցաւս անծին իմոյ*։ ¹⁵Եւ ինքն կարգեաց զամենայն ամս իմ ՚ի դառնութիւն անծին իմոյ: ¹⁶Տէր վասն այսորիկ պատմեցաւ քեզ, զարթուցեր զհոգի իմ, մխիթարեցայ՝ և կեցի*։ ¹⁷Ահաւասիկ ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ. փրկեցեր զանձն իմ զի մի՛ կորեայց, և ընկեցեր յետոյ՝ իմ զամենայն զմեղս իմ*։ ¹⁸Ձի ո՛չ թէ որ ՚ի դժոխս են՝ խոստովան առնիցին առ քեզ. և ո՛չ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ո՛չ յուսացին յողորմութիւնս քո՝ ոյք իջանեն ՚ի գուր*։ ¹⁹Այլ կենդանիք օրհնեսցեն զքեզ. որպէս և եսս այսուհետև մանկունս ծնայց, որ պատմեսցեն զարդարութիւն քո*։ ²⁰Տէր փրկութեան իմոյ: Եւ ո՛չ դադարեցից օրհնել զքեզ սաղմոսարանաւ զամենայն աւուրս կենաց իմոց, յանդիման տաճարիդ Աստուծոյ: ²¹Եւ ասէ Եսայի ցեզեկիա. Ա՜ն դու պաղատիտս թզոյ՝ մանրեա՛ և դի՛ր ՚ի վերայ վիրիդ՝ և ողջացի՛ս*։ ²²Եւ ասէ. Ա՛յդ եղիցի նշան եթէ ելանիցեմ ՚ի տունն Աստուծոյ*։

39

Գլուխ ԼԹ

¹Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Սարովդաք Բաղդան որդի Բաղդանայ՝ արքայ Բաբելացոց, հրեշտակս հրովարտակօք՝ և պատարագս եզեկիայ.

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես դար՝... ընդ որ իջանէ շողդ զտասն... ընդ որս իջաներ ստուերին:

* *Ոմանք.* Զհիւանդացաւ՝ և դարձաւ ՚ի հիւան՝:

* *Ոմանք.* Աւուրց իմոց ՚ի դրունս դժոխց. թողից զմնացորդ*։

* *Յօրինակին ՚ի բնաբանի դատարկ տեղի թողեալ՝ ՚ի լուս՝. նշանակի ՚ի մէջ բերել.*

Պակասեցայ ես յազգա՞. համաձայն բազմաց: Ոմանք. Եղև հոգի իմ... որպէս ոստայն:

* *Ոմանք յաւելուն.* Խորտակեաց զամենայն ոսկերս իմ:

* *Ոմանք.* ճչեցից... մնչեցից. զի նուաղեցին:

* *Ոմանք.* Եւ զարթուցեր զոգի իմ:

* *Յօրինակին գրեալ.* Յետոյ իմ զամենայն. *չակերտ ՚ի վերայ եղեալ՝ ակնարկի բառնալ զիմն. համաձայն ոմանց:*

* *Ոմանք.* ՚ի դժոխսն են՝ խոստովան առնին... և ոչ յուսացեալ են յողորմութիւն քո:

* *Ոմանք.* Օրհնեն զքեզ. որպէս և ես:

* *Ոմանք.* Պաղատիտս ՚ի թզոյ:

* *Ոսկան յաւելու.* Եւ ասէ *Եզեկիա.* Այդ եղի՞:

քանզի լուաւ թէ հիւանդացաւ մե՛րձ՝ ՚ի մահ՝ և յարեալ*։ ²Եւ ուրախ եղև Եզեկիա ՚ի նոսա, և եցոյց նոցա գտունս գանձուց, և զխնկոց, և զիւղոց, և զոսկւոյ, և զարծաթոյ. և զամենայն տունս անօթոյ գանձու, և զամենայն ինչ որ էր ՚ի գանձս իւր. և ո՛չ ինչ էր զոր ո՛չ եցոյց նոցա Եզեկիա ՚ի տան իւրում, յամենայն իշխանութեան իւրում*։ ³Եւ եկն Եսայի մարգարէ առ արքայն Եզեկիա և ասէ ցնա. Չի՞նչ ասեն արքոյ այդոքիկ, և ուստի՞ եկեալ են առ քեզ։ Եւ ասէ Եզեկիա. Յերկրէ հեռաստանէ եկի՛ն առ իս ՚ի Բաբելոնէ։ ⁴Եւ ասէ Եսայի. Չի՞նչ տեսին ՚ի տան քում։ Եւ ասէ Եզեկիա. Չամենայն ինչ որ ՚ի տան իմում էր՝ տեսին, և ո՛չ ինչ էր ՚ի տան իմում զոր ո՛չ տեսին. այլ և զգանձս ևս զիմ։ ⁵Եւ ասէ ցնա Եսայի. Արդ՝ լո՛ւր զպատգամս Տեառն զօրութեանց. ⁶Ահա եկեսցեն աւուրք, և առնուցո՛ւն զամենայն ինչ՝ որ ՚ի տան քում է, և զոր ինչ միանգամ ժողովեցին հարքն քո մինչև ցայսօր. տարցի՛ն ՚ի Բաբելոնվն, և մի՛ ինչ ամենակին թողուցուն*։ ⁷Այլ ասաց Աստուած, թէ՛ և յորդուց քոց որ ելանիցեն ՚ի քէն՝ զորս դո՛ւն ծնանիցիս, տարցին և արասցեն ներքինիս՝ ՚ի տան թագաւորին Բաբելացւոց։ ⁸Եւ ասէ Եզեկիա ցԵսայի. Բարի՛ է բանդ Տեառն զոր խօսեցաւ. եղիցի արդարութիւն և խաղաղութիւն յաւուրս իմ։

40

Գլուխ Խ

ԼԴ ¹Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած. ²քահանայքդ խօսեցարո՛ւք ՚ի սիրտ Երուսաղեմի՝ և մխիթարեցէ՛ք զդա, զի լի՛ եղև տառապանօք։ Թողեա՛լ լիցին դմա մեղք իւր, զի ընկալաւ ՚ի ձեռանէ Տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց։ ³Չայն բարբառոյ յանապատի. պատրա՛ստ արարէք զճանապարհս Տեառն, և ուղի՛ղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ։ ⁴Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին. և եղիցին ամենայն դժուարինք ՚ի դիւրինս, և առապարքն ՚ի դաշտս։ ⁵Եւ երեսեսցին փառքն Տեառն. և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, զի Տէր խօսեցաւ։ ⁶Չայն որ ասէ. Գոչեա՛։ Եւ ասեն. Չի՞նչ գոչեցից։ Գոգջիր. Ամենայն մարմին խո՛տ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ*։ ⁷Տամաքեցա՛ւ խոտն, և թօթափեցաւ ծաղիկ նորա. զի ոգի Տեառն շնչեաց ՚ի նա. արդարև խո՛տ է ժողովուրդս այս։ ⁸Տամաքեցաւ խոտն, և թօթափեցաւ ծաղիկն. և բա՛ն Տեառն մնայ յաւիտեան։

ԼԵ ⁹Ե՛լ ՚ի վերայ լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիոնի. բարձրացո՛ւ զօրութեամբ զբարբառ քո աւետարանիչդ Երուսաղեմի. բարձրացուցէ՛ք, մի՛ երկնչիք. ասա՛ ցքաղաքդ Յուդայ*։ ¹⁰Ահաւասիկ Աստուած ձեր՝ ահաւասիկ Տէր, Տէր զայ՛ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր, և զո՛րժք առաջի նորա*։ ¹¹Իբրև հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր. և

* Ոմանք. ՚ի ժամանակի յայնմիկ... Բաղան որդի Բաղաաղայ, արքայ Բաբելացւոց։

* Ոմանք. Նոցա գտունս Նաքովթաց գանձուց... անօթոց գանձու... և յամենայն իշխանութեան իւրում։

* Ոմանք. Չամենայն ինչս որ ՚ի տան... և զոր միանգամ։

* Օրհնակ մի. Չի՞նչ գոչեցից. Գոգջիր՝ ամենայն։

* Ոմանք. Ասա՛ ցքաղաքսդ Յու՛։

* Ոմանք. Ահաւաղիկ վարձք իւր։

բազկաւ իւրով ժողովեցէ՛ զգառինս, և ՚ի ծո՛ց իւր կրեցէ զնոսա, և մխիթա՛ր լիցի յղեաց: ¹²Ո՞չ փեաց ափով իւրով զջուրս, և զերկինս թգաւ, և զերկիր ամենայն՝ քլա՛ւ. ո՞չ կշռեաց զլերինս կշռով, և զդաշտս կշռորոք: ¹³Ո՞չ գիտաց զմիտս Տեառն, և ո՞չ եղև նմա խորհրդակից՝ եթէ խելամո՛ւտ արասցէ զնա. ¹⁴կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ՝ և արար զնա խելամո՛ւտ. կամ ո՞չ եցոյց նմա զդատաստան՝ և զճանապարհ իմաստութեան. կամ ո՞չ ետ նմա փոխ յառաջագոյն՝ և հատուցանիցէ՛ նմա՞: ¹⁵Եթէ ամենայն հեթանոսք իբրև զկաթիլ մի ՚ի դուլէ եմ, և իբրև զմէտ մի ՚ի կշռոց համարեցան, և իբրև շիթք ՚ի բերանոյ համարեցին: ¹⁶Եթէ Լիբանան՝ չէ՛ բաւական յայրունն, և ամենայն չորքոտանիք չեն բաւական յողջակէզս. ¹⁷և ամենայն հեթանոսք ոչի՛նչ են, և յոչի՛նչ համարեցան նմա: ¹⁸Արդ ո՞ւմ նմանեցուցէք զՏէր, և որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զնա: ¹⁹Միթէ պատկե՞ր կոփեաց զնա հելսն, կամ ոսկերի՞ջ ձուլեաց զնա ոսկի՝ և պատեաց զնա ոսկւով, ՚ի նմանութիւն պատկերի կերպարանեաց զնա՞: ²⁰Ձփայտ անփուտ ընտրեաց հելսն, և իմաստութեամբ հնարս խնդրէ զիա՞րդ կանգնեցէ զնա զի մի՛ շարժեսցի: ²¹Ո՞չ լսէք և ո՞չ իմանայք, և ո՞չ պատմեցաւ ձեզ իսկզբանէ. ո՞չ գիտացէք թէ ո՛ր հաստատեաց զհիմունս երկրի: ²²Որ ունի զծի՛ր երկրի, և բնակիչք նորա իբրև զմարախ. որ կանգնեաց զերկինս իբրև զկամար, և ձգեաց իբրև զխորան. և հաստատեաց զերկիր բնակել ՚ի նմա՞: ²³Որ տայ զիշխանս յոչի՛նչ իշխանութիւն, և զերկիր իբրև զոչի՛նչ արար: ²⁴Ձի ո՛չ սերմանեցեն՝ և ո՛չ տնկեցեն, և ո՛չ հաստատեսցի յերկրի արմատ նոցա. շնչեաց ՚ի նոսա՝ և ցամաքեցան. և փոթրիկ իբրև զխռի՛ւ առցէ զնոսա՞: ²⁵Արդ՝ ո՞ւմ նմանեցուցէք զիս, և զուզեցայց ասէ Սուրբն Իսրայէլի՞: ²⁶Համբարձէ՛ք ՚ի բարձունս զաչս ձեր, և տեսէք ո՛ր հաստատեաց զայս ամենայն. ո՞չ հանէ զգարդ նոցա, և զամենեսեան յանուանէ՛ կոչէ. բազում փառօք և սաստկութեամբ զօրութեան, և մի ինչ՝ ո՛չ ծածկեցաւ ՚ի քէն՞: ²⁷Մի՛ ասիցես Յակոբ, և զի՞նչ խօսեսցար Իսրայէլ. թէ ծածկեցան ճանապարհք իմ յԱստուծոյ, և Աստուած իմ եբարձ զիրաւունս իմ, և մեկնեցան. ²⁸նա և այժմ ո՛չ ծանեար: Եթէ չէ՛ր լուեալ՝ Աստուած յաւիտենական. Աստուած որ հաստատեաց զճագս երկրի. ո՛չ քաղցիցէ, և ո՛չ վաստակեսցի. և չի՛ք քննութիւն իմաստութեան նորա՞: ²⁹Տայ՛ քաղցելոց զօրութիւն, և անցաւաց զտրտմութիւն: ³⁰Քաղցիցեն երիտասարդք, և վաստակեսցին մանկունք. և ընտիրք անզօ՛րք եղիցին: ³¹Բայց որ սպասեն Տեառն, նորոգեսցին զօրութեամբ. նորափետո՛ւր զարդարեսցին իբրև զարծուիս. ընթացին, և մի՛ վաստակեսցին. զնասցեն՝ և մի՛ քաղցիցեն՞:

41

Գլուխ ԽԱ

* *Ոմանք.* Եւ զճանապարհս իմաս՞.... և հատուցանիցի նմա:

* *Ոմանք.* Ոսկերի՞ջ ձուլեաց ոսկի:

* *Ոմանք.* Ձերկինս որպէս կամար:

* *Բազունք.* Եւ փոթրիկ իբրև զխռիւ:

* *Ի լուս՞.* Եւ բարձրացայց ասէ Սուրբն Իսրայէլի. *համաձայն բազմաց ՚ի բնար՞: Ուր ՚ի բազումս պակասի.* Սուրբն *Իսրայէլի:*

* *Ոմանք.* Եւ ոչ մի ինչ ծած՞:

* *Ոմանք.* Եւ ոչ վաստակեսցէ:

* *Ոմանք.* Ընթացեն և մի՛ վաստակեսցեն:

¹Նորոգեցարո՛ւք առ իս կղզիք. զի իշխանք նորոգեսցին զօրութեամբ. մերձեսցին՝ խօսեսցին միանգամայն, և ապա զիրաւունս պատմեսցեն: ²Ո՞՞ զարթոյց յարևելից զարդարութիւն, և կոչեաց զնա զհետ իւր. երթիցէ և տացէ հատուցումն յանդիման հեթանոսաց. զարհուրեցուցէ զթագաւորս, և տացէ հողոյ զսուրս նոցա. և իբրև զխռիւ մերժեսցէ զնետս նոցա: ³Եւ արասցէ զնոսա փախստականս. և անցցէ խաղաղութեամբ զճանապարհս ոտից իւրոց: Արդ՝ ասիցէ՞ք թէ ո՛չ գայցէ. ⁴ո՞՞ ազդեաց՝ և արար գայս ամենայն. կոչեաց զնա՝ որ կոչէրն յազգացն առաջնոց: Ե՛ս Տէր առաջին, և ես նոյն եմ առ յապա: ⁵Տեսի՛ն զիս հեթանոսք՝ և երկեան. և սարսեցին ամենայն ծագք երկրի. մերձեցան և եկին՝ ՚ի միասին. ⁶եղին՝ ՚ի մտի իւրաքանչիւր ընդ ընկերի և ընդ եղբօր օգնական լինել. և ասիցեն՝. ⁷Քաջալերեսցէ հելսն զդարբին, կռել կոփել ո՛ւռն հարկանել. և ասիցէ նպաստ բարի եղև ինձ: Եւ բւեռեցին զնոսա բւեռօք, և դիցեն ՚ի գետնի, և ո՛չ շարժեսցին: ⁸Բայց դու Իսրայէլ ծառայ իմ, Յակովբ՝ զոր ընտրեցի. զաւակդ Աբրահամու՝ զոր սիրեցի. ⁹որում օգնական եղէ ՚ի ծագաց երկրի. և ՚ի գիտաց նորա կոչեցի զքեզ, և ասացի թէ ծառայ իմ ես դու և ընտրեցի զքեզ, և ո՛չ թողից զքեզ: ¹⁰Մի՛ երկնչիր՝ զի ընդ քեզ եմ. մի՛ խաբիր՝ զի ես եմ Աստուած քո, որ զօրացուցի զքեզ. և օգնեցի քեզ, և զգուշացայ քեզ աջով արդարութեան իմոյ: ¹¹Ահաւաղիկ ամաչեսցեն և պատկառեսցեն ամենայն հակառակորդք քո, և եղիցին նոքա իբրև զչեղեալս. և կորիցեն ամենայն դատախազք քո: ¹²Խնդրեսցես զնոսա, և ո՛չ գտցես զմարդսն որ թշնամանիցեն զքեզ. և եղիցին իբրև զչեղեալս պատերազմողքն քո: ¹³Զի ես եմ Տէր Աստուած քո, որ ունիմ զաջոյ ձեռանէ քումնէ, որ ասեմ ցքեզ՝ թէ մի՛ երկնչիր. ես օգնեցից քեզ: ¹⁴Մի՛ երկնչիր, որդնդ Յակոբեան զածածդ Իսրայէլեան. ե՛ս օգնեցի քեզ ասէ Աստուած՝ որ փրկելոցն է զքեզ Սուրբն Իսրայէլի: ¹⁵Ահաւասիկ արարի զքեզ իբրև զանիւս նո՛րս սղոցածև կամնասայլից. կասեսցես զլերինս, և մանրեսցես զբլուրս. և արասցես զնոսա իբրև զփոշի՞, ¹⁶և հոսեսցես. հողմք առցեն զնոսա, և մրրիկք ցրուեսցեն: Բայց դու ուրախ լիցիս ՚ի Տէր՝ ՚ի սրբութիւնս Իսրայէլի: ¹⁷Եւ ցնծասցեն տնանկք և կարօտեալք որ խնդրէին ջուր, և ո՛չ գտանէին. և լեզուք նոցա ՚ի ծարաւոյ ցամաքէին. ես Տէր Աստուած լուայց նոցա, Աստուած Իսրայէլի, և ո՛չ թողից զնոսա: ¹⁸Այլ բացից գետս ՚ի վերայ լերանց, և ՚ի մէջ դաշտաց աղբերս. արարից զանապատն ՚ի ճահիճս ջուրոց, և զերկիրն ծարաւուտ ՚ի վտակս: ¹⁹Եւ բղխեցուցից յանջուր երկրին զմայրն, և զտաւսախն, զմուրտն, և զնոճն, և զսաւսն. զսարդն, և զսարոյն, և զկաղամախն, զգին, և զփայտն իւղոյ: ²⁰Զի տեսցեն և զփոսացեն և

* Ոմանք. Իւրաքանչիւր ընկերի և եղբօր օգնա՛:

* Ոմանք. Եւ բւեռեսցեն զնոսա... և դնիցեն ՚ի գետնի:

* Ոմանք. Որում օգնականդ եղէ... և ոչ թողի զքեզ: *Յօրինակին պակասէր.* Եւ ընտրեցի զքեզ:

* Ոմանք. Չմարդս որ թշնամանեցին զքեզ:

* Ոմանք. Ես օգնեցի քեզ:

* *Երեք օրինակք համեմատք միմեանց, աստէն վրիպակաւ ունին.* Որդ ընդ Յակոբեան զԱստուած ածդ Իսրայէլեան: *Իսկ Ոսկան.* Որ ընդ Յակոբեան զածածդ:

* Ոմանք. Ահաւաղիկ արարից զքեզ... սղոցածևս կամնա՛:

* *Յօրինակին ՚ի բնաբանի եղեալ.* Ուրախ լիցիս Տէր ՚ի սրբութիւնս. ՚ի լուսանցս անդ նշանակի Տեարք. *համեմատ միոյ և եթ օրինակի: Ուր մեք համաձայն այլոց բազմաց եղաք ՚ի Տէր:*

* Ոմանք. ՚ի ծարաւոյ ցամաքեսցին. ես:

ծանիցեն և իմասցին ՚ի միասին՝ թէ ձեռն Տեառն արա՛ր զայս ամենայն, և Սուրբն Իսրայէլի հաստատեաց: ²¹Մերձեալ են իրաւունք ձեր՝ ասէ Տէր Աստուած. մերձեալ են իրաւունք ձեր՝ ասէ Թագաւորն Յակովբայ: ²²Մերձեսցին և պատմեսցեն ձեզ որ ինչ անցք անցանելոց իցեն: Եւ կամ զառաջինսն թէ զինչ են՝ ասացէք. ՚ի մտի դիցուք, և գիտասցուք զի՞նչ առաջին կամ զի՞նչ առ յապա՛: ²³Ասացէք մեզ. պատմեցէք մեզ որ ինչ ՚ի վախճանի լինիցի, և գիտասցուք. եթէ աստուածք իցէք՝ բարի՛ արարէք, չար՛ արարէք. զի տեսցուք # միանգամայն և զարմասցուք՝ թէ ուստի իցէք դուք՝, ²⁴և ուստի՞ գործած ձեր. զի յերկրէ պիղծս ընտրեցին զձեզ՝: ²⁵Բայց ես զարթուցից զհիւսիսայինն, և զարևելեայն. կոչեսցին յանուն իմ. եկեսցեն իշխանք. և իբրև զկաւ բրտի զոր բրուտն կոխէ՝ անյապէս կոխիցիք՝: ²⁶Ո՞ պատմեսցէ զայն՝ որ իսկզբանէն է, զի գիտասցուք. և զևս յառաջագոյնսն, և ասասցուք, թէ ճշմարիտ է. չի՞ք որ ասէ յառաջագոյն, և ո՛չ որ լսէ զբանս ձեր՝: ²⁷Սկի՛զբն արարից զՍիւղն, և զԵրուսաղէմ մխիթարեցի՛ց ՚ի ճանապարհի. ²⁸զի՛ ՚ի հեթանոսաց աւադիկ ո՛չ ոք է, և ՚ի կռոց նոցա ո՛չ ոք է որ պատմէ. և եթէ հարցի՛ց ևս զնոսա թէ ուստի՛ էք, ո՛չ տացեն ինձ պատասխանի՛: ²⁹Ձի ընդունայն են որ առնեն զձեզ, և սնտի՛ են որ ստեղծանեն զձեզ:

42

Գլուխ ԽԲ

ԼԷ ¹Յակովբ ծառայ իմ, օգնական եղէց նմա. Իսրայէլ ընտրեալ իմ զոր ընկալա՛ւ անձն իմ. ետու զՈգի իմ ՚ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց հանցէ՛: ²Մի՛ աղաղակեսցէ և մի՛ վիճեսցի, և մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա: ³Ձեղէզն ջախջախեալ մի՛ բեկցէ, և զպատրոյկն առկայծեալ մի՛ շիջուցէ: ⁴Այլ հանցէ ՚ի ճշմարտութիւն զիրաւունս. ծագեսցէ՛ և մի՛ խորտակեսցի. մինչև դիցէ յերկիր զդատաստան, և յանուն նորա հեթանոսք յուսասցին՝: ⁵Այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արա՛ր զերկինս և կանգնեաց զնա, որ հաստատեաց զերկիր և որ ՚ի նմա. որ ետ շունչ մարդկան որ ՚ի վերայ նորա. ոգի ամենեցուն որ կոխեն զնա՛: ⁶Ես Տէր Աստուած կոչեցի զքեզ արդարութեամբ. կալայ զաջոյ ձեռանէ քումմէ՛ և զօրացուցի զքեզ, և ետու զքեզ յուխտ ազգին՝ և ՚ի լոյս հեթանոսաց՝. ⁷բանալ զաչս կուրաց. հանել զկապեալս ՚ի բանտէ և ՚ի տանէ կապանաց որ նստէին ՚ի խաւարի: ⁸Ես Տէր Աստուած՝ այս է անուն իմ. զփառս իմ այլուն ո՛չ տաց, և ո՛չ զբաջութիւնս իմ դրօշելոց: ⁹Որ ինչ իսկզբանէն էր, այն եկն եհաս, և զնորս ե՛ս պատմեցից ձեզ. և մինչչև պատմեալ՝ ցուցաւ ձեզ: ¹⁰Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր, զի իշխանութիւն նորա ՚ի բարձունս փառաւորի, և

* *Բազումք.* Եթէ զինչ էին ասացէք... և զինչ առ յապա:

* *Ոմանք.* ՚ի վախճանին լինիցի... թէ աստուածք էք:

* *Այլք.* Եւ ուստի՞ գործուած ձեր:

* *Ոմանք.* Բայց ես զարթուցանեմ:

* *Ոմանք.* Որ իսկզբանէն, զի:

* *Ոմանք.* Ո՛չ տայցեն ինձ պա՛:

* *Ոմանք.* Եւ Իսրայէլ ընտրեալ իմ: *Ոսկան.* Եւ իրաւունս հեթանոսաց պատմեսցէ, *ըստ որում ունի և այլ օրհնակ մի ՚ի լուսանցն:*

* *Ոմանք.* Մինչև դիցէ յերկրի զդա՛:

* *Ոմանք.* Եւ որ ետ շունչ մարդկան. և *ոմանք.* և ետ շունչ... և ոգի ամենեցուն:

* *Օրհնակ մի.* Կալայ զձեռանէ քում: *Ոսկան.* Յուխտ ազգի, և ՚ի լոյս:

անուն նորա՝ ի ծագաց երկրի. ոյք իջանէին ՚ի ծով նաւօք, կղզիք և բնակիչք նոցա՝: ¹¹Ուրախ եղիցի անապատն և աւանք նորա՝ բանակք և բնակիչք Կեդարու. ուրախ եղիցին բնակիչք Վիմին. ՚ի գլխոց լերանց գոչեսցեն՝ ¹²տացեն զփառս Աստուծոյ. և զքաջութիւն նորա կղզիք պատմեսցեն: ¹³Տէր Աստուած զօրութեանց եկեսցէ, և հարցէ զպատերազմ. յարուցէ զնախանձ, և գոչեսցէ ՚ի վերայ թշնամեաց իւրոց զօրութեամբ: ¹⁴Լուռ եղէ իսկզբանէ, միթէ մի՞շտ լռիցեն և անսայցեն. ժուժկալեցի՛ իբրև զծնընդական. արդ զարհուրեցուցի՛ց և ցամաքեցուցի՛ց միանգամայն՝: ¹⁵Ձլերինս և զբլուրս յատակեցից, և զամենայն խոտ նոցա ցամաքեցուցից. եղից զգետս ՚ի կղզիս, և զխաղս ցամաքեցուցից: ¹⁶Առաջնորդեցի՛ց կուրաց ընդ ճանապարհ զոր ո՛չ գիտիցեն. և ընդ շաւիղս՝ զոր ո՛չ ճանաչէին՝ զնացուցից զնոսա. արարից նոցա զխաւարն ՚ի լոյս, և զդժուարինն՝ ՚ի դիւրինս: Չայս բանս արարից առ նոսա, և ո՛չ թողից զնոսա՝: ¹⁷Բայց նոքա դարձան յինէն յետս:

ԼԸ Անաչեցէք զամօթ մեծ՝ ոյք յուսացեալդ էք ՚ի դրօշեալս. և ասէք ցծուլածոյս, թէ աստուածք մեր էք դուք՝: ¹⁸Խո՛ւլք՝ լուարո՛ւք, և կո՛յրք, հայեցարո՛ւք տեսանել: ¹⁹Եւ ո՞վ է կոյրն՝ եթէ ոչ ծառայն իմ. և ո՞վ են խուլքն՝ եթէ ո՛չ որ տիրենն նոցա: # Ո՞վ է կոյրն՝ եթէ ո՛չ հեռացեալն. և կուրացան ծառայքն Աստուծոյ: ²⁰Տեսէք բազում անգամ, և ո՛չ զգուշացարուք. բաց էին անջք ձեր՝ և ո՛չ լուարուք՝: ²¹Տէր Աստուած կամէր՝ զի արդարացի՝ և բարձրացուցէ զօրհնութիւնն՝: ²²Եւ տեսի զի եղև ժողովուրդն յափշտակեալ և յաւար մատնեալ. յամենայն ՚ի շտենարանս որոգայթք, և յամենայն ապարանս միանգամայն՝ ուր և թաքուցին զնոսա. եղեն ՚ի յափշտակութիւն, և ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա. յաւար՝ և ո՛չ ոք էր որ ասէր թէ տո՛ւր ՚ի դուրս: ²³Ո՞վ է ՚ի ձէնջ որ ունկնդիր լինիցի այսմ ամենայնի. և ՚ի միտ առնուցու որ ինչ յապայն գալոց իցէ: ²⁴Ո՞վ էտ յափշտակութիւն զՅակովբ, և զԻսրայէլ աւարառուաց, ո՞չ ապաքէն ե՞ս Աստուած՝ որում մեղանն, և ո՛չ կամեցան զնալ ընդ ճանապարհս նորա, և ո՛չ լսել օրինաց նորա՝: ²⁵Եւ անձ ՚ի վերայ նոցա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ. և պատեաց զնոսա պատերազմ, և շուրջ զնոքօք հրձի՛գք. և ո՛չ գիտացին իւրաքանչիւրոք ՚ի նոցանէն, և ո՛չ եղին ՚ի մտի՝:

43

Գլուխ ԽԳ

ԼԹ ¹Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած որ արար՝ զքեզ Յակովբ, և որ ստեղծ զքեզ Իսրայէլ. Մի՛ երկնչիր զի փրկեցի՛ զքեզ, և կոչեցի թեզ զանունն քո՝ թէ իմ ես

* *Ոմանք.* Օրհնեցէք զՏէր յօրհն՝... ոյք իջանեն ՚ի ծով նաւօք:

* *Ոսկան.* Եւ աւանք նորա՝ հանգրուանք՝ և բնակիչք. *ըստ որում ունի և օրինակ մի՛ ՚ի լուս՝:*

* *Ոմանք.* Իբրև զծնընդականն:

* *Ոմանք.* Ձոր ոչ գիտէին, զնացու՝... և զդժուարինսն ՚ի դիւ՛:

* *Ոմանք.* Թէ աստուածք մեր դուք էք:

* *Բազումք.* Բաց էին անանջք ձեր, և ո՛չ լուս՛:

* *Ոմանք.* Տէր Աստուած կամի զի արդա՛: *Ուր Ոսկան.* Ձի արդարացուցէ՛ և:

* *Ոմանք.* Ո՞վ եղ յափշտա՛... ոչ ապաքէն Աստուած... զնալ զճանապարհս նորա:

* *Ի լուս՛.* Եւ պարտեաց զնոսա պատերազմ. *համաձայն բազմաց ՚ի բնար՛:*

Աստուծոյ՝ ²Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քե՛զ եմ, և գետք՝ զքեզ մի՛ ողողեսցեն. և եթէ անցանիցես ընդ հուր՝ մի՛ այրեսցիս, և բո՛ց նորա՝ զքեզ մի՛ կիզցէ: ³Ձի ե՛ս եմ Տէր Աստուած քո Սուրբն Իսրայէլի որ փրկեմ զքեզ. արարի փոխանակ քո զԵգիպտոս և զԵթովպիա. և զՍուրհէն քեզ փոխանակեցի՝: ⁴Ուստի և պատուական իսկ եղեր, և առաջի իմ փառաւորեցար. և ես սիրեցի զքեզ. և տաց զմարդիկ փոխանակ քո, և զիշխանս փոխանակ գլխոյ քոյ: ⁵Մի՛ երկնչիդ՝ զի ընդ քեզ եմ. յարևելից՝ ածից զգաւակ քո, և յարևմտից՝ ժողովեցից՝ զքեզ: ⁶Ասացից հիւսւսոյ՝ Ա՛ծ. և հարաւոյ՝ թէ մի՛ արգելուր. ածէ՛ք զորդիս իմ՝ ի հեռաստանէ, և զդստերս իմ՝ ի ծագաց երկրէ՛. ⁷և զամենեսեան որ միանգամ կոչեցեալ եմ յանուն իմ: Ձի փառօք իմովք հաստատեցի զնա, և ստեղծի զնա, և արարի զնա: ⁸Եւ հանի զժողովուրդն կոյր. և թէպէտ և աչք եմ, սակայն նո՛յնպէս կուրացեալ եմ, և խցեալ եմ ականջք իւրեանց՝: ⁹Ամենայն ազգք ժողովեցան ՚ի միասին, և իշխանք ժողովեցին ՚ի նոցանէ. ո՞ պատմեսցէ զայս. և կամ որ ինչ իսկզբանէ՛ն էր, ո՞ ազդ արասցէ ձեզ. ածցեն զվկայս իւրեանց՝ և արդարասցին. լուիցեն և ասասցեն զճշմարիտն՝: ¹⁰Եղերուրք ինձ վկայք, և ես ձե՛զ վկայ՝ ասէ Տէր Աստուած. և ծառայ իմ զոր ընտրեցի. զի գիտասջիք և հաւատասջիք ինձ. և ՚ի միտ առնուցուք՝ թէ ե՛ս եմ: Յառա՛ջ քան զիս ո՛չ եղև այլ Աստուած, և յետ իմ ո՛չ եղիցի: ¹¹Ե՛ս եմ Աստուած՝ և չի՛ք ոք բաց յինէն որ փրկիցէ: ¹²Պատմեցի և փրկեցի. նախատեցի՝ և ո՛չ ոք էր ՚ի միջի ձերում օտար. դուք ինքնի՛ն իսկ վկայէք ինձ. ¹³և ես Տէր Աստուած իսկզբանէ, և եւ. և ո՛չ ոք իցէ որ ՚ի ձեռաց իմոց հանիցէ. և արարից, և ո՛չ ոք իցէ որ դարձուցանիցէ՝: ¹⁴Ա՛յսպէս ասէ Տէր Աստուած, որ փրկելո՛ցն է զձեզ՝ Սուրբն Իսրայէլի. Վասն ձեր առաքեցից՝ ՚ի Բաբելոն, և ընդոստուցից՝ փախստական զամենեսեան. և Քաղդեացիքն նաւուք պաշարեսցին՝: ¹⁵Ե՛ս Տէր Աստուած Սուրբն ձեր, որ յա՛յտ արարի ձեզ զթագաւորն Իսրայէլի: ¹⁶Ա՛յսպէս ասէ Տէր որ արար ճանապարհ ընդ ծով, և ՚ի ջո՛րս սաստիկս շաւիղս. ¹⁷որ հանէ՛ զկառս և զերիվարս, և բազում զօրս սաստիկս. այլ ննջեցին և ո՛չ յարիցեն. շիջան իբրև զպատրոյկ շիջեալ: ¹⁸Մի՛ յիշէք զառաջինսն, և զհինն մի՛ ածէ՛ք զմտաւ. ¹⁹զի ես աւասիկ նոր՝ զործեմ, որ այժմ յայտնեսցի և ծանիջի՛ք. և արարից ճանապարհ ընդ անապատ, և յերկիր անջրդի գետս բղխեցուցից՝: ²⁰Օրհնեսցեն զիս գազանք անապատի. համբարուք և դստերք ջայլամանց. զի ետո՛ւ ես ջուր յանապատ, և գե՛տ յերկիր անջրդի. արբուցանել զազգն իմ ընտրեալ՝: ²¹և զժողովուրդն իմ զոր ստացայ, պատմե՛լ զքաջութիւնս իմ: ²²Ո՛չ այժմ ինչ կոչեցի զքեզ Յակովբ և ո՛չ աշխատ արարի զքեզ Իսրայէլ. ²³ո՛չ մատուցեր ինձ խաշինս ողջակիզաց քոց, և ո՛չ զոհիւք քովք փառաւորեցեր զիս. ո՛չ ծառայեցեր ինձ պատարագօք քովք, և ո՛չ աշխատ արարի զքեզ ՚ի ծախս կնդրկաց քոց՝: ²⁴Ո՛չ գնեցեր ինձ խունկս

* Յոմանս պակասի. Թէ իմ ես Աստուծոյ:

* Օրհնակ մի. Եւ զՍուրհէն քեզ փոխանակեցից:

* Բազումք յաւելուն. Ջորդիս իմ յերկրէ հեռաստանէ:

* Ոմանք. Եւ թէպէտ աչք եմ:

* Ոմանք. Ո՞ պատմեաց զայս. և:

* Ոմանք. Եւ ո՛չ ոք է, որ ՚ի:

* Ոմանք. Վասն ձեր առաքեցի ՚ի: Ոսկան. Փականս զամենեսին:

* Ոմանք. Եւ յերկրի անջրդի: Ի լուս. Գետս գնացուցից. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:

* Ոմանք. Եւ գետս յերկիր:

* Ոմանք. Ինձ ողջակէզս խաշանց քոց... ՚ի ծախս կնդրկաց:

արծաթոյ, և ո՛չ ցանկացայ ճարպոյ զոհից քոց. այլ ՚ի մեղս քո և յանօրէնութիւնս քո վերակացու եղէց քեզ*։²⁵Ե՛ս եմ. ե՛ս եմ նոյն որ ջնջեմ զանօրէնութիւնս քո վասն իմ, և զմեղս քո այլ ո՛չ ևս յիշեցից։²⁶Բայց քեզ յուշ լիցի քեզ՝ և # ընդ միմեանս դատեսցուք. ասա՛ դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարացիս*։²⁷Հարքն ձեր նախ մեղան, և իշխանքն ձեր անօրինեցան յիս. ²⁸և պղծեցին իշխանքն զսրբութիւնս իմ. և մատնեցի ՚ի կորուստ զՅակովբ, և զԻսրայէլ ՚ի նախատինս։

44

ԳԼՈՒԽ ԽԴ

¹Բայց արդ լուր Յակովբ ծառայ իմ, և Իսրայէլ զոր ընտրեցիդ։ ²Այսպէս ասէ Տէր Աստուած որ արար զքեզ, և որ ստեղծ զքեզ յորովայնէ, և տակաւին օգնականութիւն գտցես։ Մի՛ երկնչիր ծառայ իմ Յակոբ՝ և սիրեցեալդ իմ Իսրայէլ զոր ընտրեցի*։ ³զի ես տաց ջո՛ւր ՚ի ծարաւ՝ որոց գնան յանջրդուջ. եդից զՈգի իմ ՚ի վերայ զաւակի քո՝ և զօրհնութիւնս իմ ՚ի վերայ որդւոց քոց*։ ⁴Եւ զուարճացին իբրև զխոտ ջրարբի, և որպէս զուռ ՚ի մէջ ջրոց գնացից*։ ⁵Մին ասասցէ. Աստուծոյ եմ ես. և մեւսն խրախոյս բարձցէ յանուն Աստուծոյ Յակովբայ. և մեւսն գիր հանցէ ձեռամբ իւրով՝ թէ Աստուծոյ եմ ես, և յանուն Իսրայէլի խրախոյս բարձցէ*։

Իս ⁶Այսպէս ասէ Աստուած Թագաւորն Իսրայէլի, և որ փրկեացն զնա Աստուած զօրութեանց. ես առաջին՝ և ե՛ս առ յապայ. բաց յինէն այլ ո՛չ գոյ Աստուած։ ⁷Ո՞վ է իբրև զիս, յառաջ կացցէ, ձայն տացէ. պատմեսցէ և պատրաստեսցի՝ ինձ՝ յորմէ հետէ արարի զմարդն յաւիտեան. և որ ինչ գալոցն իցէ, մինչչև եկեալ իցէ պատմեսցեն ձեզ*։ ⁸Մի՛ զարմանայք և մի՛ պատկառէք. ոչ ապաքէն իսկզբանէ՞ լուարուք՝ և պատմեցի ձեզ. դուք ձեզէ՛ն իսկ վկայէ՛ք ինձ, թէ զուցէ՞ այլ Աստուած բաց յինէն։ Եւ յայնժամ իսկ ո՛չ ինչ էին ամենեքեան. ⁹որ ստեղծանէին և դրօշէին զսնոտիսն. որ առնէին ըստ ցանկութեան իւրեանց, որք ո՛չ օգնիցեն նոցա. # և վկայք դուք էք նոցա, զի ո՛չ տեսանեն և ո՛չ իմանան։ # Ձի ամաչեսցէ ¹⁰որ ստեղծանէ զստեղծուածն, և ձուլէ զդրօշեալն յանօգուտ. ¹¹# և ամենեքին որ հաղորդեսցին նմա։ Այլ ամաչեսցեն ամենեքեան որ ստեղծանեն կուռս, և դրօշեն զանօգուտսն. և ամենեքեան ուստի եղենն՝ ցամաքեցան, խլացեալք ՚ի մարդկանէ. ժողովեսցին ամենեքեան՝ յանդիման կացցեն ՚ի միասին. ամաչեսցեն և յամօթ լիցին առ հասարակ*։ ¹²Ձի թեքեաց հեւսն զգործի իւր. ուրա՛գ սրեաց, և կոփեաց նովաւ. դրով զործեաց և դրօշեաց զնա, և զօրութեամբ բազկի իւրոյ կանգնեաց զնա. քաղցիցէ և տկարացի, և ո՛չ արբցէ

* Ոմանք. վերակացու եղէ քեզ։

* Ի բազումս պակասի. Բայց քեզ յուշ լիցի քեզ։ Յօրհնակիւն. Եւ ընդ միմեան դատես՝։

* Ոմանք. Ասէ Տէր Աստուած քո որ արար զքեզ, և ստեղծ զքեզ յորովայնի։

* Ոսկան. Տաց զջուր ՚ի ծարաւու։

* Ոմանք. Եւ իբրև զուռ ՚ի մէջ ջրուրց։

* Ոմանք. Մին ասիցէ... և միւսն ևս գիր հանցէ։

* Ոմանք. Մինչչև եկեալ իցեն պատ՝։

* Ոմանք. Եւ ամենեքին որ հաղորդք իցեն նմա։

ջուր*։ ¹³Ընտրեաց հեւսն փայտ. չափով կշռեաց զնա՝ և դրօշեաց ՚ի նմանութիւն պատկերի. դրով կարգեաց զնա, և մածոյց զնա սոսնձով, և արար ՚ի պատկեր առն, և ՚ի զարդ գեղոյ երեսաց մարդոյ. հաստատեաց զնա ՚ի տան իւրում*։

¹⁴Ձայն փայտ զոր եհատն. զսարոյն՝ կամ զսաւսն, զկաղնին կամ զթեղաւշն. զոր տնկեաց Տէր՝ և աճեցոյց անձրև, ¹⁵զի իցէ մարդկան այրելի. առեալ ՚ի նմանէ այրեաց և ջեռաւ. և ՚ի կիսոյն արար հա՛ց, և զկէսն արար պատկեր. և երկիր եպագ նոցա. և զոր իւրովին պատկեր գործեաց, անկեալ առաջի այնմ երկիր պագանէ*։

¹⁶Ձորոյ զկէսն այրեաց ՚ի խարուկի, և եփեաց կայծակամբք նորա հաց՝ և խորովեաց միս. կերաւ և յագեցաւ և ջեռաւ, և ասէ. Վա՛շ ինձ զի ջեռայ՝ և տեսի զկրակ։ ¹⁷Եւ զկէսն արար յԱստուած դրօշեալ, և խոնարհեալ երկիր եպագ նմա. յաղօթս կայ առ նա՝ և ասէ. Փրկեա՛ զիս զի աստուած իմ ես դու*։

¹⁸Ո՛չ առին ՚ի միտ իմանալ, զի շլացան տեսանել աչօք իւրեանց, և իմանալ սրտիւք իւրեանց*։ ¹⁹Եւ ո՛չ ածին զմտաւ, զի ո՛չ ծանեան խորհրդովք՝ թէ զկէս փայտին այրեցին ՚ի հուր, և ՚ի վերայ կայծականց նորա հաց արարին, և միս խորովեցին՝ և կերան. և զկէսն ՚ի նմանէ արարին պատկեր՝ և երկիր պագանէն նմա։ ²⁰Գիտասջիր զի մոխիր է սիրտ նոցա, և մոլորեալ են. և ո՛չ ոք ՚ի նոցանէ կարէ փրկել զանձինս նոցա. տեսէք և ո՛չ ասացէք՝ թէ խաբէութիւն է ՚ի ձեռս ձեր*։

²¹Յուշ լիցի քե՛զ այդ Յակովբ, և Իսրայէլ զի ծառայ իմ ես դու. ինձ ստեղծի զքեզ ՚ի ծառայութիւն. և Իսրայէլ՝ մի՛ մոռանար զիս. ²²զի ահաւասիկ ջնջեցի իբրև զամպ զանօրէնութիւնս քո, և իբրև զմէզ զմեղս քո. դարձ առ իս՝ և փրկեցի զքեզ*։ ²³Ուրախ եղիցին երկինք՝ զի ողորմեցաւ Աստուած Իսրայէլի. փո՛ղ հարէք հիմունք երկրի. գոչեցէք լերինք զուրախութիւն, բլուրք և ամենայն ծառք որ ՚ի նոսա. զի փրկեաց Աստուած զՅակովբ, և Իսրայէլ փառաւորեսցի*։ ²⁴Այսպէս ասէ Տէր որ փրկեացն զքեզ, և ստեղծ զքեզ յորովայնէ. Ե՛ս եմ Տէր որ առնեմ, կատարեմ զամենայն. ձգեցի զերկինս միայն, և հաստատեցի զերկիր*։ ²⁵Ո՞ այլ ոք ցրեաց զնշանս վոհկաց, և զրդձութիւնս ՚ի սրտից. ո՞ դարձուցանէ զիմաստունս յետս, և զխորհուրդս նոցա յիմարեցուցանէ*։ ²⁶և հաստատէ զբանս ծառայից իւրոց. և զխորհուրդս հրեշտակաց իւրոց արդարացուցանէ։ Ե՛ս եմ որ ասեմ ցերուսաղէմ թէ բնակեսջիր. և ցքաղաքս Յրեաստանի՝ թէ շինեսջիր վերստին, և զաւերակս նորա կանգնեցից*։ ²⁷Որ ասեմ ցանդունդս թէ աւերեսջիր, և զգետս նորա ցամաքեցուցից*։ ²⁸որ ասեմ ցԿիւրոս թէ իմաստնասջիր, և զամենայն կամս իմ արասցես. որ ասեմ ցերուսաղէմ թէ շինեսջիր, և զտաճարն իմ սուրբ՝ հաստատեցից։

* *Ոսկան.* Ձի թեկեաց հիւսն։

* *Ոմանք.* Եւ մածոյց սոսնձով, և արար զնա ՚ի պատ*։

* *Ոմանք.* Մարդկան յայրելի... արար պատկերս։

* *Ոմանք.* Արար Աստուած դր... երկիր պագանէ նմա։

* *Յօրինակին պակասէր.* Աչօք իւրեանց, և իմանալ սրտիւք իւրեանց։

* *Ոմանք.* Կարող է փրկել զանձինս նոցա... խաբէութիւն էր ՚ի ձեռս մեր։

* *Ոմանք.* Ահաւասիկ ջնջեցի. կամ՝ ջնջեմ իբրև։

* *Ոմանք.* Ուրախ լերուք երկինք։

* *Ոսկան.* Որ առնեմ և կատարեմ։

* *Ոմանք.* Վհկաց... և ո՞ դարձու*։

* *Ոմանք.* Զբանս ծառայի իւրոյ... թէ շինեսջիր վերստին։

* *Ոսկան.* Եւ զգետս նորա թէ ցամաքե*։

Գլուխ ԽԵ

¹Այսպէս ասէ Տէր Աստուած ցօծեալն իմ ցԿիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զագգս, և զգօրութիւն թագաւորաց խորտակեցից, և բացից առաջի նորա զդրունս, և քաղաքք մի՛ փակեցին*։ ²Ես երթայց առաջի քո. զլերինս հարթեցի՛ց. զդրունս պղնձիս խորտակեցի՛ց, և զնիզս երկաթիս փշրեցի՛ց*։ ³Եւ տա՛ց քեզ զգանձս խաւարինս, և զաւանդս աներևոյթս բացի՛ց քեզ. զի ծանիցես թէ ե՛ս եմ Տէր Աստուած, որ կոչեցի զանուն քո՝ Աստուած Իսրայէլի։ ⁴Վասն Յակոբայ ծառայի իմոյ, և Իսրայէլի ընտրելոյ իմոյ. ես կոչեցից քեզ զանուն քո՝ և ընկալայց զքեզ. և դու զիս ո՛չ ծանեար*։ ⁵Եթէ ես Տէր Աստուած, և չի՞ք այլ ոք*։ ⁶և ծանիցեն յարևելից և յարևմտից թէ չի՞ք ոք բա՛ց յինէն*։ ⁷Ե՛ս եմ որ հաստատեցի զլոյս՝ և արարի զխաւար. ես եմ որ առնեմ զխաղաղութիւն՝ և հաստատեմ զչար. ես եմ Տէր Աստուած՝ որ առնեմ զայս ամենայն։ ⁸Ուրախ եղիցին երկինք՝ ՚ի վերուստ, և ամաք ցօղեսցեն զարդարութիւն. բղխեսցէ երկիր զողորմութիւն, և զարդարութիւն առ հասարակ բղխեսցէ։ Ե՛ս եմ Տէր որ հաստատեցի զքեզ իբրև զլա՛ւ իմն*։ ⁹Ստեղծի զքեզ իբրև զլա՛ւ բրտի. միթէ զօ՞րն ամենայն հերկիցէ որ հերկէն զերկիր. միթէ ասիցէ՞ կաւն ցբրուտն. Չի՞ կաս՝ զի՞ ո՛չ գործես, # չի՞ք քո ձեռք։ Միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն իւր թէ ընդէ՛ր այսպէս ստեղծեր զիս*։ ¹⁰Վա՛յ որ ասիցէ ցհայր իւր թէ ընդէ՞ր ծնար զիս, և ցմայր իւր՝ թէ ընդէ՞ր երկնեցեր զիս*։ ¹¹Չի այսպէս ասէ Տէր Աստուած Սուրբն Իսրայէլի, որ արար զայնս որ յապայն գալոց են. Յարցէ՞ք զիս վասն որդւոցն իմոց և դստերաց. և վասն գործոց ձեռաց իմոց պատուէր տուք ինձ։ ¹²Ե՛ս արարի զերկիր և զմարդն ՚ի վերայ նորա. ե՛ս ձեռամբ իմով հաստատեցի զերկինս. ես ամենայն աստեղաց ետո՛ւ հրաման։ ¹³Ես յարուցի զնա արդարութեամբ թագաւոր, և ամենայն ճանապարհք նորա ուղիղ են. նա՛ շինեսցէ զքաղաքն իմ, և զգերութիւն ժողովրդեան իմոյ դարձուցէ. ո՛չ կաշառօք և ո՛չ պատարագօք՝ ասէ Տէր զօրութեանց*։ ¹⁴Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Վաստակ եղև երկիրն Եգիպտացւոց. և վաճառք Եթովպացւոց. և Սաբաեցիքն արք մեծամեծք առ քե՛զ անցցեն, և քե՛զ ծառայեսցեն, և զկնի՛ք քո շրջեսցին՝ կապեալք ձեռակապօք # և առ քե՛զ ելցեն, և քե՛զ երկիր պագանիցեն, և ՚ի քե՛զ ուխտադիր լինիցին. զի ՚ի քեզ Աստուած գոյ. և ասասցեն թէ ո՛չ գոյ այլ Աստուած բա՛ց ՚ի քէն*։ ¹⁵զի դու ես Աստուած՝ և մեք ո՛չ գիտեաք.

*Ոմանք. Ցօծեալն իւր ցԿիւրոս։

*Ոմանք. Եւ զդրունս պղնձիս։

*Ոմանք. Ընտրելոյ. ես կոչեցի քեզ։

*Ոմանք. Ես եմ Տէր Աստուած, և չիք։

*Յոմանս պակասի այս համար. *Եւ ծանիցեն յար՞։ Իսկ Ոսկան զհամարսն 5 և 6 ունի այսպէս. Եւ չիք այլ ոք։ *Ես Տէր՝ և ոչ գոյ այլ. բաց յինէն ոչ գոյ Աստուած. զգօտի ածի քեզ՝ և ոչ ծանեար զիս։ *Չի գիտասցեն սոքա՝ որք յարևելից և որք յարևմտից՝ զի բաց յինէն այլ ոք ոչ գոյ. թէ ես եմ Տէր Աստուած և չիք այլ ոք։ Ես եմ որ հաստա՛ւ։

*Ոմանք. Ուրախ լիցին երկինք։

*Ոմանք. Յերկէ որ հերկէն... այդպէս ստեղծեր զիս։

*Ոմանք. Վա՛յ որ ասէ ցհայր... կամ ցմայր իւր։

*Ոսկան. Ես յարուցից զնա։

*Ոմանք. Եւ վաճառականք Եթովպացւոց և Սաբայացիքն... երկիր պագցեն...

Աստուած Իսրայէլի փրկիչ*։ ¹⁶Ամաչեսցեն՝ և յամօթ լիցին ամենայն հակառակորդք քո. և գնացեն ամօթով։ Նորոգեցարո՛ւք առ իս, կղզիք*։ ¹⁷զի Իսրայէլ փրկելոց է զփրկութիւն յաւիտենից. մի՛ ամաչեսցեն և մի՛ ևս յամօթ լիցին մինչև յաւիտեանս*։ ¹⁸Ձի այսպէս ասէ Տէր որ արար զերկինս. Աստուած՝ որ հաստատեաց զերկիր և արար զնա. նա՛ է որ սահմանեաց զնա. և ՚ի զուր ինչ ո՛չ արար զնա, այլ ՚ի բնակութիւն ստեղծ զնա. Ես եմ Տէր՝ և չի՛ք այլ ոք*։ ¹⁹Ո՛չ ՚ի ծածուկ ինչ խօսեցայ՝ և ո՛չ ՚ի տեղոջ խաւարին երկրի. չասացի ցգաւակն Յակոբայ թէ սնոտիս խնդրեսջիք. Ես եմ. Ես եմ Տէր որ խօսիմ զարդարութիւն՝ և պատմեմ զճշմարտութիւն։ ²⁰Ժողովեցարո՛ւք և եկայ՞ք՝ խորհեցարո՛ւք ՚ի միասին ապրեալքդ ՚ի հեթանոսաց. ո՛չ ծանեան որ բարձեալ բերէին զփայտն դրօշեալ. և կային յաղօթս առ աստուածս որ ո՛չ փրկէին զնոսա*։ ²¹Եթէ պատմեսցեն՝ աղէ մերձեսցին զի գիտացեն ՚ի միասին. ո՞ լսելի արար զայս ամենայն իսկզբանէ. և յայսմհետէ պատմեցա՛ւ ձեզ։ Ես եմ Աստուած՝ և չի՛ք այլ ոք բաց յինէն. արդարև փրկի՛չ, և չի՛ք ոք բաց յինէն*։ ²²Դարձարո՛ւք առ իս՝ և ապրեսցիք որ եկեալդ էք ՚ի ծագաց երկրէ։ Ես եմ Աստուած՝ և չի՛ք այլ ոք։ ²³Յանձն իմ երդնում, եթէ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ իմոյ՝ արդարութիւն է. և բանք իմ մի՛ եղծցին*։ ²⁴Ձի ի՛նձ կրկնեսցի ամենայն ծունր. և խոստովան լիցի ամենայն լեզու Աստուծոյ. ²⁵և ասացէ՛ թէ արդարութիւն և փառք՝ առ նա՛ եկեսցեն։ Եւ ամաչեսցեն ամենեքեան՝ որ որոշեն զանձինս իւրեանց ՚ի Տեառնէ։ ²⁶Արդարացի՛ն և Աստուծով փառաւորեսցի ամենայն զաւակ որդւոցն Իսրայէլի*։

46

Գլուխ ԽՁ

¹Անկա՛ւ Բէլ. խորտակեցաւ Դագովն. եղեն դրօշեալք նոցա ՚ի գագանս և յանասունս. բարձէ՛ք զնոսա կապեալս իբրև զբեռն աշխատելոյն և քաղցելոյն*, ²լքելոյ և կարօտելոյ ՚ի միասին, որք ո՛չ կարացին ապրել ՚ի պատերազմէ. և նոքա ՚ի գերութեան վարեցան*։ ³Լուարո՛ւք ինձ տունդ Յակովբայ, և ամենայն մնացեալքդ Իսրայէլի. ընտրեալքդ յորովայնէ՛ և խրատեալք ՚ի մանկութենէ ⁴մինչև ցծերութիւն, թէ Ես եմ. և մինչև կարի՛ իսկ ծերացիք՝ սակայն Ես եմ. Ես համբերեմ ձեզ. Ես արարի, և Ես անսացից. Ես ընկալայց՝ և ապրեցուցի՛ց զձեզ։ ⁵Ո՛ւմ նմանեցուցէք զիս. տեսէք հնարեցարո՛ւք մոլորեալքդ. ⁶որ արկանէք ոսկի՛ հանգանակ ՚ի քսակէ, և կշռէք զարծաթ ՚ի կշիռս, և ՚ի վարձո՛ւ ունիք զոսկերիչս

ուխտադիր լիցին։

* *Ի բազումս պակասի. Ձի դու Ես Աստուած։*

* *Ոմանք.* Ամենայն հակառակորդք նորա։ *Ոսկան յաւելու.* Եւ գնացեն ամօթով ճարտարապետք մոլորութեանց։

* *Ի լուս՝.* Փրկեցաւ զփրկութիւն յաւի՞ն. *համաձայն բազմաց ՚ի բնար՞։*

* *Ոմանք.* Ձերկինս. ասէ Աստուած, որ հաս՞... սա է որ սահմանեաց զնա, և ո՛չ ՚ի զուր ինչ արար։

* *Ոմանք.* Եւ կան յաղօթս։ *Ոսկան.* Որք ոչ փրկեն զնոսա։

* *Ոմանք.* Եւ պատմիցեն՝ աղէ... բայց յինէն... բայց յինէն։

* *Ոմանք.* Եւ բանք իմ ոչ եղծցին։

* *Ոսկան.* Արդարացին Աստուծով. և փառաւո՞ն։

* *Ոմանք.* Իբրև զբեռինս աշ՞։ *Ուր Ոսկան.* Աշխատեցելոյ և քաղցեցելոյ։

* *Ոմանք.* Լքելոյն և տկարացելոյ... որք ոչ կարիցեն... ՚ի գերութիւն վա՞։

գործել կուռս ձեռագործս. և խոնարհեալ երկիր պագանէք նմա*։ ⁷Բարձեալ բերէք ՚ի վերայ ուսոց. և եթէ դնիցէք ՚ի գետնի, անդէն ՚ի տեղոջ մնան, և ո՛չ շարժեսցին. և եթէ ոք կարդասցէ առ նա՝ ո՛չ լսէ. և ՚ի չարեաց ո՛չ փրկեսցէ զնա*։ ⁸Յիշեցէ՛ք զայս և յոգո՛ց հանէք. ապաշաւեցէ՛ք մոլորեալքդ. դարձարո՛ւք սրտիւք*, ⁹և յիշեցէ՛ք զառաջին գործսն յաւիտենից. զի ե՛ս եմ Աստուած, և չի՛ք այլ ոք բաց յինէն, ¹⁰որ պատմիցէ յառաջագոյն զվերջինսն՝ մինչչև՝ եղեալ իցեն, և միանգամայն կատարեսցին. և ասացի թէ ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին, և զամենայն զոր կամիմ արարի՛ց*։ ¹¹Կոչել յարևելից թռչունս, և յերկրէ հեռաստանէ՝ վասն որոյ խորհեցայն, խօսեցայ և ածի, հաստատեցի և արարի. ածի զնա՝ և յաջողեցի զճանապարհս նորա։ ¹²Լուարո՛ւք ինձ կորուսեալքդ սրտիւք՝ հեռացեալքդ յարդարութենէն. ¹³մերձեցուցից զարդարութիւն իմ # և այլ ո՛չ հեռացի. և զճշմարտութիւն և զփրկութիւն իմ ո՛չ յամեցուցից. # ետո՛ւ ՚ի Սիոն զփրկութիւն Իսրայէլի ՚ի փառաւորութիւն*։

47

Գլուխ ԽԵ

ԽԱ ¹Է՛ջ նիստ յերկրի օրիորդ դուստր Բաբելացւոց. նի՛ստ ՚ի գետնի, զի չի՛ք աթոռ. մո՛ւտ ՚ի խաւար դուստր Քաղդեացւոց. և ո՛չ ևս յաւելուցուս կոչել զի՛րզ և փափուկ*։ ²Ա՛ռ երկան, աղա՛ ալելու. ընկեա՛ զքօղ քո, քարշեա՛ զալիս քո, բաց զսրունս քո, անց ընդ գետ։ ³Յայտնեսցի՛ ամօթ քո, և երևեսցին նախատինք քո. զի բարձի՛ց ՚ի քէն զիրաւունս քո։ Ո՛չ ևս մատնեսցէ զքեզ մարդկան. ⁴որ փրկեսցն զքեզ, Տէր Սաբաւովթ անուն է նորա Սուրբն Իսրայէլի։ ⁵Նի՛ստ թախծեալ՝ զղջացեալ. մո՛ւտ ՚ի խաւար դուստր Քաղդեացւոց. ո՛չ ևս կոչեսցիս զօրութիւն թագաւորաց։ ⁶Ես բարկացեալ էի ՚ի վերայ ժողովրդեան իմոյ, զի պղծեցին զճառանգութիւն իմ. ես մատնեցի զնա ՚ի ձեռս քո, և դու ո՛չ արարեր ՚ի վերայ նորա ողորմութիւն։ Ծանրացուցեր զլուծ ծերոց յոյժ*։ ⁷և ասացեր. Յաւիտեան կացից իշխան. ո՛չ եղիր երբէք զայս ՚ի մտի քում, և ո՛չ յիշեցեր զվախճան*։ ⁸Եւ արդ լո՛ւր զայս փափուկդ, որ նստէիր յանձնապաստան. և ասէիր ՚ի սրտի քում թէ ե՛ս եմ, և չի՛ք ոք իմ ընկեր. ո՛չ նստայց յայրութեան, և ո՛չ ծանեայց զորբութիւն*։ ⁹Եւ արդ հասցեն յանկարծակի ՚ի վերայ քո երկոքեան սոքա ՚ի միում աւուր. այրութիւն, և անգաւակութիւն. եկեսցէ յանկարծակի ՚ի վերայ քո՝ վասն դիւթութեանդ քոց, և վասն զօրացեալ կախարդութեանդ քոց. ¹⁰և վասն վստահութեան չարութեանց քոց. զի ասէիր՝ թէ ես եմ, և չի՛ք ոք իմ ընկեր. զայս գիտասջիր, զի առնուցուս զայդ ՚ի միտ. և պոռնկութիւնն քո յամօթ լիցի քեզ. զի ասացեր ՚ի սրտի քում. Ե՛ս եմ, և չի՛ք ոք իմ ընկեր*։ ¹¹Եւ հասցէ ՚ի

* Ոմանք. երկիրպագանէք նոցա։

* Ոմանք. Կարդասցէ առ նա... ոչ փրկէ զնա։

* Ոմանք. Յիշեցէ՛ք զայն՝ և։

* Ոմանք. Որ պատմեցի յառա՛։ Ոսկան. Եւ ամենայն զոր կա՛։

* Ոմանք. Մերձեցուցի զարդա՛։

* Բագունք. Քաղդեացւոց. ո՛չ ևս։

* Ոմանք. Մատնեցի զնոսա ՚ի ձեռս... ՚ի վերայ նոցա ողորմութիւն։

* Ոմանք. Ո՛չ երբէք եղիր զայս ՚ի սրտի քում։

* Ոսկան. Եւ ոչ ծանեայց զստրկութիւն։

* Ոմանք. Եւ չիք այլ ոք իմ ըն՛... առնուցուս զայս ՚ի միտ... յամօթ լինիցի քեզ. և ասացեր

վերայ քո կորուստ՝ զոր ո՛չ գիտիցես, և խորխորատ՝ և անկցիս ՚ի նա. և եկեսցէ ՚ի վերայ քո թշուառութիւն, և ո՛չ կարասցես սուրբ լինել. և եկեսցէ ՚ի վերայ քո յանկարծակի կորուստ, և ո՛չ ծանիցես: ¹²Աղէ՛ կա՛ց դու այժմ ՚ի դիւթութիւնս քո, և ՚ի բազում կախարդութեան քում, զոր ուսար ՚ի մանկութենէ քումնէ. եթէ կարասցե՞ն ինչ օգտել՞. ¹³Եթէ կարասցե՞ն կազդուրել. զի աշխատեցար ՚ի խորհուրդս քո: Յարիցեն և ապրեցուցեն զքեզ աստեղագէտքն որ նշմարեն զաստեղս երկնից. պատմեսցեն քեզ զինչ գալոց է ՚ի վերայ քո՞: ¹⁴Ահաւասիկ ամենեքեան իբրև զխռի՛ւ ՚ի հուր այրեսցին, և մի՛ ապրեցուցեն զանձինս իւրեանց ՚ի բոցոյ անտի. զի նստիս ՚ի վերայ կայծականց հրոյ, նոքա՛ եղիցին քեզ յօգնականութիւն՞: ¹⁵Վաստակ եղեն ՚ի վաճառս քո ՚ի մանկութենէ իւրեանց. այր ըստ առնէ՛ մոլորեցան. և քեզ ո՛չ եղիցի փրկութիւն՞:

48

Գլուխ ԽԸ

¹Լուարո՛ւք զայս տունդ Յակովբայ՝ անուանեալդ յանուն Իսրայէլի. ծնեալդ ՚ի զաւակէ Յուդայ, որ երդնուք յանուն Տեառն Աստուծոյ Իսրայէլի, որ յիշատակէրդ ո՛չ ճշմարտութեամբ՝ և ո՛չ արդարութեամբ՞: ²Որ խրախուսէք յանուն քաղաքին սրբոյ, և հաստատեալ համարիք յանուն Աստուծոյ Իսրայէլի: Տէր Սաբաւովք անուն է նորա: ³Չառաջինսն տակաւին պատմե՛մ. ել՛ ՚ի բերանոյ իմնէ, և լսելի՛ եղև. յանկարծակի՛ արարի՛ և եկն եհաս՞: ⁴Գիտեմ զի խի՛ստ ես, և ջիւք երկաթի՛ք պարանոց քո, և ճակատ քո պղնձի՛: ⁵Պատմեցա՛ւ քեզ առաջինն, և մինչչև՛ հասեալ էր առ քեզ լսելի՛ արարի քեզ. մի՛ երբէք ասիցես թէ կուռքն իմ արարին, և մի՛ ասիցես թէ դրօշեալքն և ձուլածոյքն պատմեցին ինձ՞: ⁶Լուարուք զամենայն՝ և ո՛չ առէք ՚ի միտ, այլ և լսելի՛ արարի քեզ զնորն՝ որ յայսմիտէ լինելոց է. ⁷և ո՛չ ասացեր թէ այժմ լինի, և ո՛չ ՚ի վաղուց հետէ յաւուրցն առաջնոց. և ո՛չ եղեր ունկնդիր այնմիկ: Մի՛ ասիցես, թէ այո՛ գիտեմ զայդ. ⁸զի ո՛չ գիտես՝ և ո՛չ իմանաս, և ոչ իսկզբանէ բացեր զականջս քո. զի գիտացի թէ արհամարհելով՝ արհամարհեսցես, և անօրէն անդստին յորովայնէ կոչեսցիս՞: ⁹Վասն անուան իմոյ ցուցի՛ քեզ զբարկութիւն իմ և զփառաւորութիւնս իմ, զոր ածի ՚ի վերայ քո զի մի՛ սատակեցից զքեզ՞: ¹⁰Ահաւասիկ վաճառեցի զքեզ ո՛չ վասն արծաթոյ, և զերծուցի՛ զքեզ ՚ի հնոցէ աղքատութեան՞. ¹¹վասն իմ արարի քեզ զայդ, զի մի՛ անուն իմ հայիոյեսցի. և զփառս իմ այլուն ո՛չ տաց՞: ¹²Լո՛ւր ինձ

ի:

* *Ոմանք.* Կախարդութիւնս քո զոր ու՛... թէ կարասցես ինչ օգտել:

* *Ոմանք.* Եթէ կարասցես կազդ՞... ՚ի խորհուրդս քո... գալոց իցէ ՚ի վերայ քո:

* *Բազումք.* Ահաւաղիկ ամենեքին:

* *Ոմանք յաւելուն.* Վաստակ եղեն *վաճառականք քո* ՚ի վաճառս քո:

* *Ոմանք.* Անուանեալք... ծնեալքդ ՚ի զաւակս Յուդայ: *Յօրինակին պակասէր.* Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

* *Ոմանք.* Ել ՚ի բերանոյ իմոյ:

* *Ոմանք.* Պատմեսցեն ինձ:

* *Ոմանք.* Արհամարհելով արհամարհես... կոչեսցիր:

* *Ոմանք.* Վասն անուան իմոյ ցուցից քեզ:

* *Ոմանք.* Ահաւաղիկ վաճառեցից զքեզ վասն արծաթոյ: *Ուր Ոսկան.* զքեզ ոչ արծաթոյ:

* *Ոմանք.* Արարից քեզ զայդ:

Յակովբ, և Իսրայէլ զոր ետդ կոչեմ. Ե՛ս եմ առաջին, և ե՛ս եմ յաւիտեան: ¹³Ձե՛նք իմ արկ հիմունս երկրի, և ա՛ջ իմ հաստատեաց զերկինս. կոչեցից զամենեսեան զնոսա, և կայցեն ՚ի միասին*. ¹⁴Ժողովեցին ամենեքեան և լուիցեն՝ թէ ո՞ պատմեաց նոցա զայն: Առ սէր քո արարի զկամս քո ՚ի վերայ Բաբելովնի, բառնա՛լ զգաւակն Քաղդեացոց*. ¹⁵Ե՛ս կոչեցի և ե՛ս խօսեցայ. ածի՛ զնա՝ և յաջողեցի զճանապարհս նորա: ¹⁶Սատերո՛ւք առ իս՝ և լուարո՛ւք զայս. ո՛չ իսկզբանէ ՚ի ծածուկ ինչ խօսեցայ, և ո՛չ ՚ի տեղուջ խաւարին երկրի. յորժամ լինէրն իսկ՝ ես անդ էի: Եւ արդ՝ Տէր Տէր առաքեաց զիս, և Յոգի նորա: ¹⁷Ա՛յսպէս ասէ Տէր՝ որ փրկեացն զքեզ Սուրբն Իսրայէլի. Ե՛ս եմ Աստուած քո, ցուցի՛ քեզ գտանել ճանապարհ ընդ որ զնայցես*: ¹⁸Եւ եթէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց՝ լինէր քեզ իբրև զգէտ խաղաղութիւն քո, և արդարութիւն քո իբրև զալիս ծովու: ¹⁹Եւ լինէր իբրև զաւազ զաւակ քո, և ծնունդք որովայնի քոյ իբրև զհո՛ղ երկրի. սակայն և արդ՝ ո՛չ սատակեցիս, և ո՛չ կորիցէ անուն քո առաջի իմ: ²⁰Ելէ՛ք ՚ի Բաբելովնէ. փախերո՛ւք ՚ի Քաղդեացոց. ձայն ուրախութեան պատմեցէ՛ք, և լսելի՛ եղիցի. պատմեցէ՛ք մինչև ՚ի ծագս երկրի՝ զոր ասէքդ՝ թէ փրկեաց Տէր զճառայս իւր զՅակովբ*: ²¹Եւ եթէ ծարաւեցեն յանապատին, հանցէ՛ նոցա ջուր ՚ի վիմէ. վէ՛մ պատառեցի, ջուրք բղխեցեն, և արբցէ՛ ժողովուրդ իմ: Ոչ գոյ ուրախութիւն ամպարշտաց, ասէ Տէր՝:

49

Գլուխ ԽԹ

¹Լուարո՛ւք ինձ կղզիք, և ո՛ւնկն դիք հեթանոսք. յետ բազում ժամանակաց հաստատեցի՛ այդ ասէ Տէր: Յարգանդէ կոչեաց զիս, և յորովայնէ մօր իմոյ կարդաց զանուն իմ. ²եդ զբերան իմ իբրև զսուսեր սուր. և ընդ հովանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս. և եդ զիս իբրև զնետ մի ընտիր, և ՚ի կապարճս իւր թաքոյց զիս. ³և ասէ ցիս. Ծառայ՛ իմ ես դու Իսրայէլ, և ՚ի քե՛զ փառաւորեցայց: ⁴Եւ ասեմ. Ձո՛ւր ուրեմն վաստակէի տարապարտուց, յոչի՛նչ ետու զգօրութիւն իմ. վասն այսորիկ իրաւունք իմ ՚ի Տեառնէ, և վաստակ իմ առաջի Աստուծոյ իմոյ*: ⁵Եւ արդ՝ ա՛յսպէս ասէ Տէր որ ստեղծ զիս յորովայնէ ծառայ իւր, ժողովել զՅակովբ և զԻսրայէլ առ ինքն. և ժողովեցայց և փառաւորեցայց առաջի Տեառն, և Աստուած իմ է ինձ զօրութիւն: ⁶Եւ ասէ ցիս. Սե՛ծ է քեզ այդ, կոչել զքեզ ծառայ իմ. հաստատել զազգսն Յակովբայ՝ և զցրուեալսն Իսրայէլի դարձուցանել: Ահաւասիկ եդի զքեզ յուխտ ազգի և ՚ի լոյս հեթանոսաց, լինել փրկութիւն մինչև ՚ի ծագս երկրի*: ⁷Ա՛յսպէս ասէ Տէր որ փրկեացն զքեզ Աստուած Իսրայէլի. Սրբեցէ՛ք զայն որ խոտն զանձն իւր, զաղարտեալն յազգաց ՚ի ծառայիցն իշխանաց. թագաւորք տեսցեն զնա՝ և յո՛տն կացցեն. իշխանք՝ և երկիր պագցեն

* *Բազունք.* Եւ կացցեն ՚ի միասին:

* *Ոմանք.* Պատմեաց նոցա զայս: *Յօրինակին.* Արարի զկամս իմ ՚ի վերայ Բաբել՝:

* *Ոսկան.* Ես եմ Տէր Աստուած քո: *Ոմանք.* Ցուցից քեզ գտանել:

* *Ոմանք.* Մինչ ՚ի ծագս երկրի... եթէ փրկեաց զճառայ իւր:

* *Ոմանք.* Ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց, ասէ:

* *Ոմանք.* Ի տարապարտուց... վասն այնորիկ իրա՛... և վաստակք իմ:

* *Ոմանք.* Կոչելդ քեզ ծառայ իմ, հաստատել զազգն Յակոբու... ահաւասիկ ե՛:

նմա վասն Տեառն. զի հաւատարի՛ն է Սուրբն Իսրայէլի՝ և որ ընտրեաց զքեզ՝
⁸Այսպէս ասէ Տէր ցԻսրայէլ. Ի ժամանակի ընդունելութեան լուսն քեզ, և յաւուր
 փրկութեան օգնեցի քեզ. և ստեղծի զքեզ, և ետու զքեզ յովստ հեթանոսաց
 հաստատել զերկիր, և ժառանգեցուցանել զժառանգութիւնս աներակ՝. ⁹ասել
 կապելոց՝ թէ ելէք, և որ ՚ի խաւարին իցեն՝ թէ յայտնեցարո՛ւք: Յամենայն
 ճանապարհս արածեսցին, և յամենայն շաւիղս ճարակք նոցա: ¹⁰Ո՛չ քաղցիցեն
 և ո՛չ ծարաւեսցին, և ո՛չ խորշակահար լիցին յարևու. այլ որ ողորմելոցն է
 մխիթարեսցէ զնոսա, և ընդ աղբիւրակո՛ւնս ածցէ զնոսա՝: ¹¹Եւ եղից զամենայն
 լերինս ՚ի ճանապարհ, և զամենայն շաւիղս յարօտս նոցա՝: ¹²# Ահաւասիկ
 ոմանք եկեսցեն ՚ի հեռաստանէ, # ոմանք ՚ի հիւսւտոյ և ՚ի ծովէ, և ոմանք յերկրէ՝
 Պարսից: ¹³Ուրախ լերուք երկինք՝ և ցնծասցէ երկիր. գոչեսցեն լերինք
 զցնծութիւն, և բլուրք զարդարութիւն. զի ողորմեցաւ Աստուած ժողովրդեան
 իւրում, և զխոնարհս ժողովրդեան իւրոյ մխիթարեաց՝: ¹⁴Բայց Սիովն ասաց.
 Եթո՛ղ զիս Տէր և մոռացաւ զիս Աստուած: ¹⁵Միթէ մոռանայցէ՞ կին զմանուկ իւր,
 կամ թէ ո՛չ գթայցի ՚ի ծնունդս որովայնի իւրոյ. և եթէ մոռանայցէ զայն կին՝
 սակայն ես ո՛չ մոռացայց զքեզ ասէ Տէր՝: ¹⁶Ահաւասիկ ՚ի վերայ ձեռաց իմոց
 նկարեցի զպարիսպ քո. և առաջի՛ իմ ես դու յամենայն ժամ՝. ¹⁷և արագ
 շինեսցիր յայնցանէ որ քակեսցին զքեզ, և որ աներեցինն զքեզ՝ ՚ի քէն՝ ՚ի բաց
 մերժեսցին: ¹⁸Ամբարձ շուրջ զքս զաչս քո, և տես զամենեսին. զի ահաւասիկ
 ժողովեցան և եկին առ քեզ. Կենդանի՛ եմ ես ասէ Տէր. զի զամենեսին զնոսա
 իբրև զպատմուճան զգեցցիս, և արկես զնոսա զքս իբրև զգարդ հարսին՝: ¹⁹Ձի
 աներակքն և ապականեալքն՝ և կործանեալքն քո, արդ նեղեսցին ՚ի բնակչացն
 իւրեանց, և հեռացին ՚ի քէն՝ որ կլանէինն զքեզ՝: ²⁰Ձի ասասցեն յականջս քո
 որդիքն քո զորս կորուսեր. Նե՛ղ է մեզ տեղիս, ընդարձակեա՛ մեզ զի
 բնակեսցուք՝: ²¹Եւ ասասցես ՚ի սրտի քում. Ո՞՞ ծնաւ ինձ զսոսա. զի ես
 անզաւակ և այրի էի #, պանդուխտ և արգելական. և զսոսա ինձ ո՞՞ սնոյց, զի ես
 միայն մնացեալ էի, և սոքա ո՞՞ր էին: ²²Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւաղիկ
 ամբարձից զձեռս իմ ՚ի վերայ ազգաց, և ՚ի կղզիս կանգնեցից զնշան իմ. և
 ածցեն զորդիս քո ՚ի ծոցս իւրեանց, և զդստերս քո ՚ի վերայ ուսոց իւրեանց
 բարձեալ բերիցեն: ²³Եւ եղիցին թագաւորք դայեակք քո, և կանայք նոցա
 մանկակալք քո. ՚ի վերայ երեսաց երկրի երկիր պագանիցեն քեզ, և զհող ոտից
 քոց լիզեսցեն. և ծանիցես թէ ես եմ Տէր. և ո՛չ ամաչեսցեն ոյք սպասեն ինձ՝:
²⁴Միթէ հանիցէ՞ ոք զկողոպտած սկայի. կամ վարիցէ՞ ոք տարապարտուց գերի՝

* *Ոմանք.* Իսրայէլի, որ ընտրեացն:

* *Ոմանք.* Փրկութեան ստեղծի զքեզ և օգնե՛... աներակս:

* *Ոմանք.* Որ ողորմելոցն իցէ... և ընդ աղբերականս ածցէ զնոսա:

* *Ի լուս՝.* Յարօտս նոցին. *համաձայն այլոց ՚ի բնաբ՝:*

* *Օրհնակ մի.* Գոչեսցեն երկինք զցնծ՝: *Ոսկան.* Ձի ողորմեցաւ Տէր ժողո՛:

* *Ոմանք.* Կամ ոչ գթայցէ... մոռանայցէ զայս կին:

* *Ոմանք.* Ձպարիսպս քո:

* *Բազումք.* Ձի ահաւաղիկ ժողովէ՛: *Յօրհնակին.* Ձամենեսին իբրև զնոսա իբրև
 զպատմուճան:

* *Ոմանք.* Ձի աներեալքն և ապա՛:

* *Ոմանք.* Ձոր կորուսեր:

* *Ի լուս՝.* Եւ իշխանք նոցա մանկակալք. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:* *Ոմանք.* Ոյք
 սպասէին ինձ:

և ապրիցի²⁵: ²⁵Այսպէս ասէ Տէր. եթէ ոք վարիցէ զսկայ գերի, առցէ զաւար նորա. և քաջ ապրէ՝ որ առնուցու զաւար սկայի: Այլ ես զդատաստան իմ դատեցայց, և զորդիս իմ փրկեցից՝ ²⁶Եւ կերիցեն նեղիչք քո զմարմինս իւրեանց, և արբեցեն իբրև զգինի նոր զարիւնս իւրեանց՝ և արբեսցին. և ծանիցէ ամենայն մարմին եթէ ես եմ Տէր՝ որ փրկեցի զքեզ, և օգնեցի՝ քեզ և զօրացուցի զՅակովբ²⁷:

50

Գլուխ Ծ

¹Այսպէս ասէ Տէր. Ո՞ւր է թուղթն ապահարզանի որով արծակեցի զմայրն ձեր. կամ ո՞ւր է գրաւական վաճառականացն, որով վաճառեցի զձեզ. այլ ՚ի մեղս ձեր վաճառեցայք. և վասն անօրէնութեանց ձերոց արծակեցի զմայրն ձեր: ²Ձի եկի, և ո՛չ գոյր մարդ. կոչեցի՝ և ո՛չ ոք էր որ լսէր. միթէ ո՛չ կարէ փրկել ձեռն իմ. կամ ո՛չ զօրեն ապրեցուցանել. ահա կշտամբութեամբ իմով ակերեցի զձով, և զգետս ապականեցից. և ցամաքեսցին ձկունք նոցա ՚ի ջուրցն պակասութենէ. և մեռցին ՚ի ծարաւոյ³: ³Ձգեցուցից զերկինս խաւարաւ, և իբրև զքո՛ւրծ արարից զհանդերձ նոցա: ⁴Տէր Տէր տայ ինձ լեզու խրատու, զի գիտացից խօսել ՚ի ժամու զբանն. պատրաստեաց զիս ընդ առաւօտս. յաւել ինձ ունկն ՚ի լսել. ⁵և խրատ Տեառն բանայ զականջս իմ. և ես ո՛չ խստանամ և ո՛չ ընդդէմ դառնամ: ⁶Ձթիկունս իմ ետո՛ւ ՚ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս. և զերեսս իմ ո՛չ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ⁷: ⁷Եւ Տէր Տէր եղև իմ օգնական. վասն այնորիկ ո՛չ ամաչեցի, այլ արարի զդէմս իմ իբրև զվէ՛մ հաստատուն: Եւ գիտացի թէ ո՛չ ամաչեցից⁸. ⁸Ձի մե՛րձ է որ արդարացուցանէ զիս. ո՞վ է ոսոխն իմ, եկեսցէ և կացցէ ՚ի մէջ. և ո՞վ է որ դատին զիս, մերձեսցի առ իս: ⁹Ձի ահաւասիկ Տէր Տէր օգնական է ինձ, ո՞վ է որ չարչարիցէն զիս: Ահաւաղիկ դուք ամենեքեան իբրև զձործս հնասջիք, և ցեց մեծամէ՛ս կերիցէ զձեզ¹⁰: ¹⁰Ո՞վ իցէ ՚ի ձեռն որ երկնչի ՚ի Տեառնէ, լուիցէ՝ զձայն ծառայի նորա. որ գնային ընդ խաւար՝ և ո՛չ գոյր նոցա լոյս. յուսացեալք յանուն Տեառն և խրախուսեալք յԱստուած¹¹: ¹¹Ահաւաղիկ դուք ամենեքեան հո՛ւրբ վառեալ պարտեսջիք իբրև ՚ի բոցոյ. զնասջիք ՚ի լոյս հրոյ՝ ձերոյ, և բորբոքեսջիք բոցով. վասն ի՛մ եղև ձեզ այդ, և ՚ի սրտմութեան ննջեսջիք¹²:

51

Գլուխ ԾԱ

¹Ոմանք. Կամ թէ վարիցէ՞ ոք:

²Ոմանք. Վարիցէ զսկայ գերի՝ առցէ և զաւար նորա:

³Ոմանք. Թէ ես եմ Տէր Տէր, որ փր... և օգնեցի և զօրացուցի զՅա՛:

⁴Ոմանք. Կամ ո՞չ հզօրեն ապրե՞... ակերեցից զձով:

⁵Ոմանք. Ոչ դարձուցից յամօթոյ:

⁶Ոսկան. Վասն այնորիկ ոչ ամա՛: Ոմանք. Ոչ ամաչեցից, այլ արարից:

⁷Ոմանք. Ահաւասիկ դուք ամենեքին... և ցեց մեծամեծս կերիցէ զձեզ:

⁸Ոմանք. Որ երկնչիցի ՚ի Տեառնէ:

⁹Ոմանք. Ամենեքեան իբրև հուրբ վառեալ պատրաստեսջիք: Ուր օրինակ մի. ամենեքեան հուր վառեալ... ՚ի սրտմութեան ննջեսջիք:

¹Լուարո՛ւք ինձ որ հալածեք՞ զիրաւունս՝ և խնդրեք զՏէր: Նայեցարո՛ւք ՚ի վեմն հաստատուն յորմէ կոփեցարուք, և ՚ի գո՛ւք հորոյն յորմէ փորեցարուք՝:

²Նայեցարո՛ւք յԱբրահամ հայրն ձեր, և ՚ի Սառա որ երկնեացն զձեզ. զի մի էր՝ և կոչեցի զնա. և օրհնեցի՛ զնա, և սիրեցի զնա և բազմացուցի զնա՝: ³Եւ արդ մխիթարեցի՛ց զքեզ Սիովն, և մխիթարեցից զամենայն զաւերակս նորա. և արարից զամենայն աւերակս նորա իբրև զդրախտ, և զկողմն արևմտից իբրև զդրախտ Տեառն. ուրախութիւն և ցնծութիւն գտցեն ՚ի նմա, խոստովանութիւն և ձայն օրհնութեան՝:

ԽԲ ⁴Լուարո՛ւք ինձ՝ Լուարո՛ւք ինձ ժողովուրդ, և թագաւորք ունկնդիր լերուք ինձ. զի օրէնք յինէն ելցեն, և դատաստան իմ ՚ի լո՛յս հեթանոսաց՝: ⁵Արագ արա՛գ մերձեսցի արդարութիւն իմ, և ելցէ իբրև զլո՛յս փրկութիւն իմ. ՚ի բազուկ իմ հեթանոսք յուսացին. ինձ կղզիք սպասեալ մնան, և ՚ի բազուկ իմ յուսացին: ⁶Ամբարձէ՛ք յերկինս զաչս ձեր, և հայեցարո՛ւք յերկիր ՚ի խոնարհ. զի երկինք իբրև զծո՛ւխ հաստատեալ են, և երկիր իբրև զձո՛րձս մաշեսցի. և բնակիչք նորա իբրև զնո՛յնս կորիցեն. այլ փրկութիւն իմ յաւիտեան կացցէ, և արդարութիւն իմ մի՛ պակասեսցէ՝: ⁷Լուարո՛ւք ինձ որ գիտեք զիրաւունս, ժողովուրդ իմ՝ որոց օրէնք իմ ՚ի սիրտս ձեր: Մի՛ երկնչիք ՚ի նախատանաց մարդկան. և բամբասանք նոցա զձեզ յամօթ մի՛ արասցեն՝. ⁸զի իբրև ձորձք ընդ ժամանակաւ մաշեսցին, և իբրև զասր որ ուտիցի ՚ի ցեցոյ. բայց արդարութիւն իմ յաւիտեան կացցէ, և փրկութիւն ազգաց յազգս՝: ⁹Ձարթիր զարթիր Երուսաղէմ, և զգեցի՛ր զգօրութիւն բազկի քոյ. զարթիր իբրև յաւուրցն իսկզբանէ, իբրև յազգացն յաւիտենից: # Ո՞չ դու այն ես որ տաշեսցեր զլայնութիւնն, վանեցեր զվիշապն. ¹⁰ո՞չ դու այն ես որ աւերեցեր զծովն, զբազմութիւն ջուրցն անդնդոց. որ արարեր զխորս ծովուն ճանապարհ անցից փրկելոցն և ապրելոց: ¹¹Ձի ՚ի Տեառնէ եղիցի դարձ, և եկեսցեն ՚ի Սիովն ցնծութեամբ և ուրախութեամբ յաւիտենից. զի ՚ի վերայ զլիսոց նոցա օրհնութիւն, և ուրախութիւն հասցէ նոցա. մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: ¹²Ե՛ս եմ, ե՛ս եմ # նոյն որ մխիթարեցի զքեզ: Ծանիր զինչ որ էիր. և երկեար ՚ի մահկանացու մարդոց, և յորդոյ մարդոյ որ իբրև զխոտ ցամաքեցան՝: ¹³Եւ մոռացա՞ր զԱստուած զարարիչ քո, որ արար զերկինս և հաստատեաց զերկիր. և երկնչէիր միշտ զամենայն աւուրս յերեսաց սրտմտութեան նեղչին քոյ՝ որպէս խորհեցաւ ջնջել զքեզ: Եւ արդ՝ ո՞ւր է սրտմտութիւն նեղչին քոյ՝. ¹⁴զի ՚ի փրկութեանն քում ո՛չ կարասցէ կեալ. և ո՛չ յամեսցէ, և ո՛չ սպանցէ զքեզ յապականութիւն, և ո՛չ պակասեսցէ հացն քո՝: ¹⁵Ե՛ս

** Ի լուս՝. Որ զհետ երթայք իրաւանց. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Աստանօր օրհնակն մեր ընդ այլ միում հնագունի՝ թերևս վրիպակաւ ունէր. Եւ ՚ի գուր հորոյն. և այլ երկու օրհնակք. Եւ ՚ի գուր խորոյն: Իսկ մնացեալ չորք օրհնակք՝ հորոյն. ըստ որում և պատշաճ թուեցաւ մեզ դնել:*

** Յօրհնակին պակասէր. Եւ օրհնեցի զնա, և սիրեցի զնա, և բազ՝:*

** Ոսկան. Գտցին ՚ի նմա:*

** Ի բազումս պակասի. Լուարո՛ւք ինձ ժողովուրդ, և թագաւորք:*

** Ոմանք. Ամբարձէ՛ք ՚ի յերկինս... իբրև զնոյն կորի՛... մի՛ պակասեսցի:*

** Ոմանք. Եւ որոյ օրէնք իմ... և բամբասանք նոցա զձեզ մի՛ պատրեսցեն:*

** Բազումք. Եւ փրկութիւն իմ ազգաց յազգս:*

** Ոմանք. Ի մահկանացու մարդոյ:*

** Օրհնակ մի. Ջնջել զձեզ:*

** Բազումք. Ո՛չ կարասցէ կալ:*

եմ Տէր Աստուած քո՝ որ խռովեմ զժով, և զոչեցուցանեմ զալիս նորա. Տէր Սաբաւովք անուն է իմ*։ ¹⁶Եղի՛ց զբանս իմ ՚ի բերանս քո, և ընդ հովանեալ ձեռին իմոյ ծածկեցից զքեզ. որով կանգնեցի զերկինս, և արկի զհիմունս երկրի. և ասացի ցՍիովն. ժողովուրդ իմ ես դու։ ¹⁷Ձարթի՛ր զարթի՛ր արի՛ կա՛ց Երուսաղէմ, որ արբեր ՚ի ձեռանէ Տեառն զբաժակն բարկութեան նորա. զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան, զոր արբերն՝ և սթափեցեր*։ ¹⁸Եւ ո՛չ ոք էր որ մխիթարէր զքեզ յամենայն որդւոցն քոց զոր ծնար. և ո՛չ ոք էր որ ձեռնտու լինէր քեզ յամենայն որդւոցն քոց զորս բարձրացուցեր*։ ¹⁹Երկու՛ ինչ հակառակ կան քեզ. և ո՞վ է որ տրտմակից լինիցի քեզ. կործանու՛մն և բեկու՛մն, սո՛վ և սուր. և ո՞ է որ մխիթարիցէ զքեզ*։ ²⁰Որդիքն քո տարակուսեալք՝ որ ննջեն ՚ի կիցս ամենայն ճանապարհաց, իբրև զճակնդէղ կիսեփեաց, լի՛ էին ՚ի բարկութենէ Տեառն. լուծեալք ՚ի Տեառնէ Աստուծոյ*։ ²¹Վասն այնորիկ լուր տառապեալդ՝ որ արբեալդ ես և ո՛չ ՚ի գինւոյ*։ ²²Այսպէս ասէ Տէր Աստուած որ դատի զժողովուրդ իւր. Ահաւասիկ ՚ի բա՛ց արարի ՚ի ձեռանէ քումնէ զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան իմոյ # և ո՛չ ևս յաւելցես ըմպել զնա*։ ²³Եւ տա՛ց ՚ի ձեռս վնասակարացն քոց, և ՚ի ձեռս այնոցիկ որ տառապեցուցինն զքեզ. որք ասէինն ցանձն քո. Խոնարհեա՛ց՝ թո՛ղ անցուք։ Եւ եղին հաւասար երկրի զմէջ քո, արտաքոյ անցաւորաց քոց*։

52

Գլուխ ԾԲ

¹Ձարթի՛ր զարթի՛ր Սիովն. զգեցի՛ր զգորութիւն քո Սիովն. և դու զգեցի՛ր զփառս քո Երուսաղէմ քաղաքդ սուրբ. զի ո՛չ ևս յաւելցեն անցանել ընդ քեզ պիղծք և անբլփատք*։ ²Թօթափեա՛ զփոշիդ, յո՛տն կաց և նի՛ստ Երուսաղէմ. լոյ՛ծ զկապ պարանոցի քոյ գերիդ դուստր Սիովնի։ ³Ձի ա՛յսպէս ասէ Տէր. Ձրի՛ վաճառեցայք, և ո՛չ արծաթով փրկեսցիք։ ⁴Այսպէս ասէ Տէր. Յերկի՛րն Եգիպտացւոց էջ ժողովուրդ իմ զառաջինն՝ բնակել անդ նժդեհութեամբ. և յԱսորեստան բռնութեամբ վարեցան*։ ⁵և արդ՝ ընդէ՞ր էք աստ։ Այսպէս ասէ Տէր. զի՞ վարեցաւ ժողովուրդն իմ ձրի. զարմացեալ էին և լային։ Այսպէս ասէ Տէր. Վասն ձե՛ր անուն իմ հանապազ հայիոյի ՚ի մէջ հեթանոսաց*։ ⁶Վասն այնորիկ ծանիցէ՛ ժողովուրդ իմ զանուն իմ յաւուր յայնմիկ. թէ ես նոյն եմ որ խօսէին, և արդ եկի հասի*։

* *Ոմանք.* Ձի ես եմ Տէր Աստուած քո, որ։

* *Ոմանք.* Եւ արի կա՛ց Երուսաղէմ։ *Բազումք.* Ձոր արբերն և թափեցեր։

* *Յօրհնակիւն.* Եւ ո՛չ ոք է որ մխիթա՛ւ։

* *Ոմանք.* Եւ ո՞ որ մխիթարեսցէ զքեզ։

* *Ոմանք.* Լի են ՚ի բարկութենէ Տեառն։

* *Ոմանք.* Վասն այնորիկ լուր։ *Ուր Ոսկան ՚ի լուս՝.* Լուր այսմ տառապեալդ։

* *Բազումք.* Ահաւաղիկ ՚ի բաց ա՛ւ։

* *Բազումք յաւելլուն.* Եւ տաց զնա՛ ՚ի ձեռս։ *Ոմանք.* Եւ եղի, *կամ՝* եղից հաւասար... արտաքոյ անցաւորաց։

* *Ոմանք.* Եւ զգեցի՛ր զգորութիւն։ *Ոսկան.* Երուսաղէմ քաղաքդ Սրբոյն։

* *Ոմանք.* Ձառաջինն բնակել պանդխտութեամբ։

* *Բազումք դնեն առանց հարցական ուղրակի.* Ձի վարեցաւ ժողովուրդ իմ ձրի։

* *Ոսկան.* Եմ նոյն որ խօսէի։

ԽԳ ⁷Իբրև զի գեղեցիկ են 'ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւուն խաղաղութան, իբրև աւետարանչի բարութեանց. զի լսելի՛ արարից զփրկութիւն քո, ասել ցՍիոն թէ թագաւորեսցէ քեզ Աստուած*։ ⁸Ձի ծայն պահապանաց քոց բարձրացաւ, և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զժամանակ յորում ողորմեսցի Տէր Սիովնի։ ⁹Լերինք գոչեսցեն աւերակօքն հանդերձ Երուսաղեմի զցնծութիւն. զի ողորմեսցաւ նմա Տէր, և փրկեաց զԵրուսաղեմ*։ ¹⁰Եւ յայտնի արասցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն ազգաց. և տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ*։ ¹¹Ի բաց կացէք, 'ի բաց կացէք. ելէք այտի, և 'ի պիղծս մի՛ մերձենայք. ելէք 'ի միջոյ նոցա, և մեկնեցարուք՝ որ բարձեալ բերէք զսպաս Տեառն*։ ¹²Ձի ո՛չ խռովութեամբ ելջիք, և ո՛չ փախստեամբ գնասջիք. զի առաջի ձեր Տէր ինքնին գնասցէ, և որ ժողովէն զձեզ Աստուած Իսրայէլի*։

ԽԴ ¹³Ահաւաղիկ 'ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի՛ և բարձրասցի և փառաւորեսցի՛ յոյժ*։ ¹⁴Ձոր օրինակ զարմասցին բազումք 'ի վերայ քո, այնպէս անշքեսցի տեսիլ քո 'ի մարդկանէ, և փառք քո յորդուց 'ի մարդկանէ*։ ¹⁵Այնպէս զարմասցին ազգք բազումք 'ի վերայ քո, և կարկեսցեն թագաւորք զբերանս իւրեանց. զի որոց ո՛չ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ 'ի միտ առցեն*։

53

Գլուխ ԾԳ

¹Տէր ո՞ հաւատաց լրոյ մերում, և բազուկ Տեառն ո՛ւն յայտնեցաւ։ ²Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ 'ի ծարաւո՛ւտ երկրէ. ո՛չ գոյր նորա տեսիլ՝ և ո՛չ փառք. տեսաք մեք զնա՝ և ո՛չ գոյր նորա տեսիլ՝ և ո՛չ գեղեցկութիւն. ³այլ տեսիլ նորա անարձ՝ նուազեալ քան զամենայն որդուց մարդկան։ Այր մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ, և ո՛չ ինչ համարեցաւ*։ ⁴Նա զմեղս մեր բառնայ՝ և վասն մեր չարչարի՛. և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս իբրև յԱստուծոյ*։ ⁵Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա, և նորա վիրօքն բժշկեցաք*։ ⁶Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք. այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր. ⁷և նա առ վշտին ո՛չ բանայ զբերան իւր։ Իբրև ոչխար՝ 'ի սպանդ վարեցաւ. իբրև որոց

* Ոսկան. Համբաւոյն խաղաղութեան։

* Ոսկան. Երուսաղեմի զփրկութիւն. զի ողոր՞։

* Ոմանք. Եւ յայտնեսցէ՛ Տէր զբազ՞։

* Ոմանք. Ելէք 'ի միջոյ նորա, մեկնեցարուք։

* Ոմանք. Եւ ո՛չ փախստեամբ գնայցէք։

* Օրինակ մի. Ահաւասիկ 'ի միտ առ՞։

* Ոսկան. Յորդուց մարդկանէ։

* Ի լուս՞. Ոչ իցէ լուեալ. համաձայն բազմաց 'ի բնար՞։

* Ոսկան. Ձերեսս՝ անարգեցաւ, և յոչինչ համարե՞։

* Յօրինակին պակասէր. 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչար՞։

* Յօրինակին 'ի կարգի բնաբանի եղեալ. Վասն մերոյ անօրէ՞. 'ի լուս՞. ուղղագրի՞ մերոց. համաձայն այլոց։

առաջի կտրջի անմռունջ կայ. այնպէս ո՛չ բանայ զբերան իւր*։ ⁸Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նորա. յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ՝ ՚ի մահ վարեցաւ։ ⁹Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ո՛չ գործեաց, և ո՛չ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա*։ ¹⁰և Տէր կամի սրբե՛լ զնա ՚ի վիրաց անտի։ Եթէ տաջիք զվասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զգաւակ երկայնակեաց. և կամի Տէր ՚ի ձեռս նորա բառնալ ՚ի ցաւոց անձին նորա*։ ¹¹ցուցանել նմա լոյս՝ և ստեղծուլ իմաստութեամբ. արդարացուցանել զարդարն՝ որ մտադերն ծառայեաց բազմաց, և զմեղս նոցա նա՛ վերացուցէ։ ¹²Վասն այնորիկ նա՛ ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ՚ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյ՛ց՝ և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ*։

54

Գլուխ ԾԴ

ԽԵ ¹Ուրախ լեր ամուլ որ ո՛չ ծնանէիր. գոչեա՛ և աղաղակեա՛ որ ո՛չդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ՝ առաւել քան զարամբւոյն։ Քանզի ասաց Տէր. ²Ընդարձակեա՛ զտեղի խորանաց քոց, և զսրահից քոց. կանգնեա՛, և մի՛ խնայեար. երկայնեա՛ զապաւանդակս քո. հաստատեա՛ զցիցս քո*։ ³յաջ և յահեակ թռուսջիր, և զաւակ քո զհեթանոսս ժառանգեսցէ. և զքաղաքս ւաւրեալս շինեսցես*։ ⁴Մի՛ երկնջիցիս զի յամօթ արարին զքեզ. մի՛ պատկառեսցես զի նախատեսին զքեզ. զի զամօթն յաւիտենից մոռացիս, և նախատինք այրութեան քոյ ո՛չ ևս յուշ լիցին քեզ։ ⁵Ձի Տէր է որ առնէ քեզ զայդ. Տէր Սաբաւովք անուն է նորա. և որ փրկեացն զքեզ նոյն Աստուած Իսրայէլի ամենայն երկրի կոչեսցի։ ⁶Ո՛չ եթէ իբրև զկին մի լքեալ տարակուսեալ կոչեաց զքեզ Տէր. և ո՛չ իբրև զկին մի ատեցեալ ՚ի մանկութենէ. այլ ասաց Աստուած. ⁷Առ ժամանակ մի թողի զքեզ, և ողորմութեամբ մեծաւ ողորմեցայց քեզ։ ⁸Առ փոքր մի սրտմտութեան դարձուցի զերեսս իմ ՚ի քէն, և ողորմութեամբ յաւիտենից ողորմեցայց քեզ. ասաց որ փրկեացն զքեզ Տէր։ ⁹Եւ ՚ի ջուրցն հեղեղէ առ Նոյիւ՝ այս է ինձ, և որպէս երդուայն նմա ՚ի ժամանակին յայնմիկ չբարկանալ երկրի, նոյնպէս և ո՛չ քեզ*։ ¹⁰Եւ ո՛չ սպառնալեօք իմովք շարժել զլերինս, և փոփոխել զբլուրս. ո՛չ ողորմութիւն իմ պակասեսցէ ՚ի քէն, և ո՛չ ուխտ խաղաղութեան քոյ անցցէ։ Ասաց Տէր*։ ¹¹Յաշտեալ են ընդ քեզ տառապեալդ և խախտեալ, մինչև մխիթարեսցիս. ահաւասիկ պատրաստեալ են կարկեհան զքարինս քո, և

* *Ոմանք.* Եւ իբրև որոջ առաջի։

* *Ոմանք.* Ձի անօրէնութիւն ինչ ոչ գոր։

* *Ոմանք.* Տեսցեն զաւակ եր... ՚ի ձեռն նորա բառ։

* *Ոմանք.* Վասն այնորիկ նա ժա։

* *Ի լուս.* Ձտեղի խորանի քո. *համաձայն ոմանց ՚ի բնար։* *Ոմանք.* Եւ մի՛ խնայեար. *կամ՝* և մի՛ անխայեար։

* *Ոմանք.* Յաջ յահեակ թռուսջիր։

* *Ոմանք.* Այս է ինձ, որպէս երդուայն։

* *Ոմանք.* Պակասիցէ ՚ի քէն... խաղաղութեան քո անցանիցէ։

զհիմունն քո շափիղա*։ ¹²Եւ կանգնեցից զաշտարակս քո յասպիս, և զդրունս քո յականց վանեայց. և ածից շուրջ զքն պարիսպ յընտիր ընտիր ականց պատուականաց. ¹³և զամենայն որդիս քո փրկեալս յԱստուծոյ, և ՚ի բազում խաղաղութեան ճանկունք քո*։ ¹⁴և արդարութեամբ շինեսջիր: ՚ի բաց լեր յանիրաւէ անտի, և ո՛չ երկիցես. և դողումն ՚ի քեզ ո՛չ մերձեսցի*։ ¹⁵զի ահաւասիկ եկք՝ առ քեզ վասն իմ մերձեսցին. և առ քեզ պանդխտեսցին, և զքեզ ապաստան արասցեն*։ ¹⁶Ահաւասիկ՝ ես հաստատեցի զքեզ. ո՛չ որպէս դարբին մի որ փքովք կայծակունս արծարծանէ և յառաջ բերէ անօթս ՚ի գործ, այլ ես հաստատեցի զքեզ ո՛չ ՚ի կորուստ ապականութեան*։ ¹⁷Ամենայն անօթ վնասակար ՚ի քեզ ո՛չ աջողեսցի. և զամենայն բարբառ որ յարիցէ ՚ի վերայ քո ՚ի դատաստան, պարտեսցեն. և ամենայն դատախագք քո ՚ի նմին: Ձի գոյ ժառանգութիւն պաշտօնէից Տեառն. և դուք եղիցիք ինձ իրաւացիք՝ ասէ Տէր*։

55

Գլուխ ԾԵ

¹Ո՛ր ծարաւիդ էք՝ երթայք ՚ի ջուր. և որ միանգամ ո՛չ ունիք արծաթ, երթայք գնեցէք. և կերիջիք առանց արծաթոյ՝ և գնոց գինւոյ*։ ²և զճարպ բնաւ ընդէ՞ր իսկ գնէք արծաթոյ՝ և ոչ հացի. և զվաստակս ձեր ո՛չ ՚ի յագուրդ: Լուարո՛ւք ինձ՝ և կերիջիք զբարութիւնս. և վայելեսցեն ՚ի բարութեան անձինք ձեր*։ ³Ունկնդիր լերուք լսելէօք ձերովք՝ զհետ եկայք ճանապարհաց իմոց: Լուարո՛ւք ինձ, և կեցցեն ՚ի բարութեան անձինք ձեր. և եղից ընդ ձեզ ո՛ւխտ յաւիտենական զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս*։ ⁴Ահաւասիկ ՚ի վկայութիւն հեթանոսաց ետու զնա. իշխան և հրամանատար ազգաց*։ ⁵Ազգք որ ո՛չ գիտիցեն, կարդասցեն առ քեզ. և ժողովուրդք որ զքեզ ո՛չ ճանաչէին՝ ապաստան արասցեն զքեզ. վասն Տեառն Աստուծոյ քո Սրբոյն Իսրայէլի. զի փառաւոր արար զքեզ*։ ⁶Խնդրեցէք զՏէր. և յորժամ գտանիցէք զնա, կարդացէք առ նա. և իբրև մերձեսցի առ ձեզ, ⁷թողցէ՛ ամպարիշտն զճանապարհս իւր, և այր անօրէն զխորհուրդս իւր. և դարձցի՛ առ Տէր և գտցէ զողորմութիւն. և առ Աստուած մեր՝ զի բազմապատիկ թողցէ զանօրէնութիւնս ձեր: ⁸Ձի ո՛չ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ո՛չ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր՝ ասէ Տէր: ⁹Այլ որպէս հեռի՛ են երկինք յերկրէ. այնպէս հեռի՛ են ճանապարհք իմ ՚ի ճանապարհաց ձերոց, և խորհուրդք իմ ՚ի խորհրդոց ձերոց: ¹⁰Ձոր օրինակ եթէ իջանիցէ անձրև կամ ձիւն յերկնից, և անդրէն ո՛չ դառնայ մինչև արբուսցէ

* Ոմանք. Ահաւաղիկ պատ՛:

* Բազումք. Որդիս քո խրատեալս Աստուծոյ:

* Ոմանք. ՚ի բաց լեր յանօրինէ ան՛:

* Ոմանք. Ձի ահաւաղիկ եկք: *Առ Ոսկանայ պակասի.* Եւ առ քեզ պանդխտեսցին, և զքեզ ապաստան:

* Յօրինակին. Որպէս դարբինմ որ փքովք:

* Ոմանք. Եւ դուք եղիցիք ինձ:

* Ոմանք. Որ ծարաւիդ էք... առանց արծաթոյ և գնոց գնոյ:

* Ոմանք. Ձեր ո՛չ յագուրդ:

* Ոմանք. Ձիւն երթայք ճանապարհաց ի՛:

* Ոմանք. Ահաւաղիկ ՚ի վկայութիւն:

* Ոմանք. Ձի փառաւոր արար զձեզ:

զերկիր, ծնցի և բղխեսցէ. և տացէ սերմն սերմանողի՝ և հաց՝ ի կերակուր: ¹¹Այնպէս եղիցի բանն իմ, որ ելանէ ՚ի բերանոյ իմմէ. մի՛ դարձցի դատարկ՝ մինչև կատարեսցէ զոր ինչ կամիցիմ. և դիւրեցից զճանապարհս քո, և զճանապարհս իմ պահեսցեն: ¹²Ձի ուրախութեամբ ելջիք, և ցնծութեամբ ուսանիջիք. զի լերինք և բլուրք կայտռեսցեն ընդունել ուրախութեամբ. և ամենայն ծառք անտառի ծափս հարցեն ոստօք իւրեանց*: ¹³Եւ փոխանակ ցրդւոյն նո՛ճ բուսցի, և փոխանակ դժնկին՝ մո՛ւրտ ելցէ. և եղիցի Տեառն յանուն և ՚ի նշան յաւիտենից, և մի՛ պակասեսցէ*:

56

Գլուխ ԾԶ

¹Այսպէս ասէ Տէր. Չգոյշ կացէք իրաւանց՝ և գործեցէք զարդարութիւն. զի եկեալ հասեալ է փրկութիւն իմ, և յայտնելո՛ց է ողորմութիւն իմ: ²Երանի՛ առն որ առնիցէ զայն, և մարդոյ որ կայցէ ՚ի նմին. և պահիցէ զշաբաթս իմ և ո՛չ պղծիցէ, և պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութիւն*:³Մի՛ ասիցէ օտարազգին որ եկեալ յեցեալ իցէ ՚ի Տէր, եթէ մերժելով մերժէ զիս Տէր ՚ի ժողովրդենէ իւրմէ. և մի՛ ասիցէ ներքինին՝ թէ ե՛ս եմ փայտ չոր*:⁴Այսպէս ասէ Տէր ցներքինիսն որ պահիցեն զպահպանութիւնս իմ, և ընտրեսցեն զոր կամիմ, և կայցեն յուխտին իմում. ⁵տա՛ց նոցա ՚ի տան իմում, և ընդ յարկաւ իմով տեղի՛ անուանի, առաւել քան զուստերաց և զդստերաց. և անուն յաւիտենական տաց նոցա՝ և մի՛ պակասեսցէ*:⁶Եւ զայլազգիսն որ եկեալ յեցեալ իցեն ՚ի Տէր՝ ծառայել նմա, և սիրել զանուն նորա, լինել նմա ՚ի ծառայս և յաղախնայս. և զամենայն ոյք պահիցեն զշաբաթս իմ՝ և ո՛չ պղծիցեն, և կայցեն յուխտին իմում*:⁷Տարայց զնոսա ՚ի լեառն սրբութեան իմոյ. և ուրախ արարից զնոսա ՚ի տան աղօթից իմոց. ողջակէզք նոցա և պատարազք նոցա ընդունելի՛ եղիցին ՚ի վերայ սեղանոյ իմոյ. զի տուն իմ տո՛ւն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց*:⁸Ասաց Տէր Տէր, որ ժողովէ զցրուեալսն Խրայէլի, եթէ ժողովեցից ՚ի վերայ նորա ժողովս ամենայն գազանաց անապատի*:⁹Եկայք կերայք ամենայն գազանք անապատի*:¹⁰Տեսէ՛ք զի կուրացան ամենեքին, և ո՛չ գիտեն զհանճար. ամենեքին իբրև շունք համրացեալք որ ո՛չ կարիցեն հաջել. յերազանան յանկողինս իւրեանց. սիրեն զնիրհել*:¹¹Իբրև շո՛ւնք լիրբք եղեն յանձինս իւրեանց՝ որ ո՛չ գիտեն զյագուրդ. և են չարք՝ և ո՛չ ճանաչեն զհանճար. ամենեքին ըստ իւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց գնացին #: ¹²Եկայք առցո՛ւք զինի, և զինեհարեսցո՛ւք արբեցութեամբ. # և եղիցի այնպիսի օրն մեզ

* *Ոմանք.* Կայտռեսցեն ընդունել զձեզ ուրա՛... ոստովք իւրեանց:

* *Ոմանք կրկնեն.* Յաւիտենից. *եղիցի*, և մի՛ պակասեսցէ:

* *Ոմանք.* Որ կացցէ ՚ի նմին. պահիցէ:

* *Ոմանք.* Մի՛ ասասցէ... մերժելով մերժեսցէ զիս... և մի՛ ասասցէ:

* *Ի լուս՝.* Եւ ընդ պարսպաւ իմով տեղի. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝:*

* *Ոմանք.* Եւ զամենեքին ոյք պահիցեն զշա՛... և կացցեն յուխ՛:

* *Ոմանք.* Ընդունելի լիցին ՚ի վերայ:

* *Ոմանք.* Ասէ Տէր Տէր, որ:

* *Ոմանք.* Ամենայն գազանք անտառի:

* *Ոմանք.* Որպէս շունք համրացեալք:

զոհ մեծ առաւել յոյժ*:

57

Գլուխ ԾԵ

¹Տեսէ՞ք զհարդ կորեալ արդարն, և չիք ոք որ անսայ սրտիւ. և արք արդարք բառնան, և ո՛չ ոք հայի. զի յերեսաց անիրաւութեան բառնայ արդար: ²Եղիցի խաղաղութեամբ զերեզման նորա, զի բարձաւ ՚ի միջւոյ*: ³Բայց մատի՛ք յառաջ՝ որդիք անօրէնք. որդիք պոռնկորդիք. որդիք շնութեան*. ⁴Ի՞նչ պերճացարուք, կամ յո՞յր վերայ բացէք զբերանս ձեր, կամ առ ո՞ւր արձակեցէք զլեզուս ձեր. ո՞չ դուք որդիք կորստեան էք՝ զաւակ անօրէնութեան. ⁵որ անկեալ աղաչէիք զկուռսն ձեր ՚ի ներքոյ անտառախիտ ծառոց. զոհէիք զուստերս ձեր ՚ի խորածորս ՚ի մէջ զլիսոց վիմաց*, ⁶և ՚ի կողմանս ձորոցն: Այն է բաժին քո՝ և նոյն վիճակ քո. նոցա՛ հեղեր նուէրս, և նոցին մատուցեր զոհս. ՚ի վերայ այսր ամենայնի ո՞չ բարկանայցեն ասէ Տէր*: ⁷Ի լերինն մեծի և բարձու՝ անդ է անկողին քո. և անդր ելեր զոհել զոհս*: ⁸Եւ յետոյ դրանդեաց դրանց քոց հաստատեցեր զյիշատակս քո. կարծէիր եթէ յինէն ՚ի բաց կայցես՝ աւելի՛ ինչ գտանիցես: Լայնեցեր զանկողինս քո, և տարածեցեր զքեզ առ նոքօք. սիրեցեր զհոմանիս քո*, ⁹և բազմացուցեր զպոռնկութիւնս քո առ նոսա. և զբազունս ՚ի հեռաւորաց արարեր քեզ, և առաքեցեր զիրեշտակս արտաքոյ սահմանաց քոց: Նկուն եղեր և իջեր ՚ի դժոխս. ¹⁰աշխատեցար ՚ի բազում ճանապարհորդութիւնս քո. և ո՛չ ասէիր թէ արդ հանգեայց, զի զայն առ ուժի գործէիր. վասն այնորիկ ո՛չ հնազանդեցար ինձ*: ¹¹Յունէ՞ զանգիտեալ զարհուրեցար. զի ստեցեր ինձ՝ և ո՛չ յիշեցեր զիս՝ և ո՛չ ածեր զմտաւ՝ և ո՛չ եղիր ՚ի սրտի քում. և ես տեսի զքեզ՝ և անտես արարի: Ես այն եմ որ յաւիտենիցն եմ, և դու յինէն ո՛չ զանգիտեցեր: ¹²Արդ ես պատմեցից զարդարութիւն իմ՝ և զչարիսն քո, որք ո՛չ օգնեցեն քեզ* ¹³յորժամ աղաղակիցես. և ո՛չ ապրեցուցեն զքեզ ՚ի նեղութենէ քումնմ. զի զամենեսեան զնոսա հո՞ղմք առցեն և մորի՛կք բաժանեցեն: Իսկ որ յիսն յուսացեալ եմ՝ ստասցին զերկիր, և ժառանգեցեն զլեառն սրբութեան իմոյ. ¹⁴և ասասցեն. Զորդեցէ՛ք առաջի նորա զճանապարհս, և ՚ի բաց արարէք զխոչ և զխութ ՚ի ճանապարհէ ժողովրդեան իմոյ: ¹⁵Այսպէս ասէ Բարձրեալն՝ որ ՚ի բարձունս բնակեալ է յաւիտեան, Սուրբն ՚ի մէջ սրբոց. որոյ անունն Բարձրեալ է՝ և ՚ի սուրբս հանգուցեալ. որ տայ՝ երկայնմտութիւն տարակուսելոց, և կեանս այնոցիկ՝ որ մաշեալ են սրտիւք. ¹⁶և ո՛չ յաւիտեան խնդրեցից վրէժս ՚ի ձեռնք, և ո՛չ ցանգ բարկացայց ձեզ. զի հոգի յինէն ելցէ, և զամենայն շունչ ես արարի*: ¹⁷Վասն մեղաց առ սակաւ մի տրտմեցուցի՛ զնա, հարի՛ զնա՝ և դարձուցի

* Ոսկան. Չոհ մեծ առնել յոյժ:

* Բազունք. Չի բարձաւ ՚ի միջոյ:

* Բազունք յաւելուն. Բայց դուք մատի՛ք յառաջ:

* Բազունք. Չոհէիք զորդիս ձեր ՚ի խո՞:

* Ոմանք. Եւ նոցին մատուցէր զոհս. ՚ի վերայ այդր ամենայնի:

* Ոմանք. Եւ անդ ելեր զո՞:

* Ոմանք. Թէ յինէն ՚ի բաց կացցես:

* Ոմանք. Եւ աշխատեցար:

* Ոմանք. Որք ոչ օգնեցին քեզ:

* Ոմանք. Եւ ո՛չ յաւիտեանս խնդ՞... և ո՛չ ցանկ բար՞:

գերեսս իմ՝ ի նմանէ. և տրտմեցաւ և գնաց թախծեալ առաջի իմ զճանապարհս իւր*։ ¹⁸Չճանապարհս սրտի նորա տեսի, և բժշկեցի զնա. մխիթարեցի զնա, և ետու ի նմա մխիթարութիւն ճշմարտութեան. և սգաւորաց նորա* ¹⁹հաստատեցի՛ պտուղ. խաղաղութիւն ՚ի վերայ խաղաղութեան՝ հեռաւորաց և մերձաւորաց, ասէ Տէր, և ես բժշկեցի՛ց զնոսա*։ ²⁰Այլ անօրէնք իբրև զծո՛վ ծփեցցին, և հանգիստ մի՛ գտցեն. և կորիցէ ջուր նորա ՚ի կոխո՛ւմն և ՚ի կաւ։ ²¹Ո՛չ գոյ խաղաղութիւն անպարշտաց՝ ասէ Տէր։

58

Գլուխ ԾԸ

¹Գոչեա՛ զօրութեամբ, և մի՛ խնայեար. բարձրացո՛ իբրև գփողոյ զբարբառ քո. պատմեա՛ ժողովրդեան ինու՛մ զմեղս նոցա, և տանն Յակովբայ զանօրէնութիւնս նոցա*։ ²Ձիս օր ըստ օրէ խնդրեն՝ և ճանաչել զճանապարհս իմ ցանկան, իբրև ժողովրդեան որոյ զարդարութիւն գործեալ իցէ, և զիրաւունս Աստուծոյ իւրոյ չիցէ՛ թողեալ. արդ եկեալ խնդրեն զիրաւունս արդարութեան։ Կարօտին մերձենա՛լ առ Աստուած, ³և ասեն. Ձի՞՞ է զի պահեցաք մեք՝ և դու ո՛չ տեսեր. խոնարհեցուցաք զանձինս մեր՝ և դու ո՛չ գիտացեր։ Ձի յաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալ. և կսկծեցուցանէք զամենեսեան որ ընդ ձեռամբ ձերով են*։ ⁴Ի հակառակութիւնս և ՚ի կռի՛ւս պահէք, և կռիւք զանաւազն. իսկ զի՞՞նչ պիտոյ է ինձ այնպիսւոյ աւուր պահք. զալ բողոքել ձեր առ իս, և ինձ ո՛չ լսել ձեզ*։ ⁵Ո՛չ զայդպիսի պահս ընտրեցի, և ո՛չ զօրն յորում կարկամեցուցանէ մարդ զանձն իւր։ Ձի եթէ կորացուցես իբրև զանուր զպարանոց քո, և քուրձ և մոխիր ՚ի ներքոյ տարածանիցես. սակայն և ո՛չ զայն կոչեցի պահս՝ և օր ընդունելի*։ ⁶Ո՛չ զայնպիսի պահս ընտրեցի՝ ասէ Տէր։ Այլ լո՛յծ զկնճիռն անիրաւութեան. քակեա՛ զխարդախութիւն բռնութեան վաճառաց քոց. արձակեա՛ զմեղեալս թողութեամբ, և զամենայն մուրհակս անիրաւութեան պատառեա՛*։ ⁷Բողեա՛ քաղցելոց զհաց քո, և զաղքատս անյարկս տար՝ ՚ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկս՝ զգեցուցանիջի՛ր, և յընտանեաց զաւակի քոյ՝ զակն մի՛ արկանիցես*։ ⁸Յայնժամ ծաւալեսցի կանուխ լոյս քո, և բժշկութիւն քեզ վաղվաղակի հասցէ. և զնասցէ առաջի քո արդարութիւն քո, և փա՛ռքն Աստուծոյ զքև փակեսցին։ ⁹Յայնժամ կարդասցես, և Աստուած լուիցէ քեզ. և մինչդեռ խօսիցիս, ասասցէ թէ ահաւասիկ հասեալ կամ։ Եւ եթէ մերժեսցես դու ՚ի քնն զկնճիռն և զձեռնարձակութիւն՝ և զբանս տրտնջման*։ ¹⁰և տացես քաղցելոց

* *Ոմանք.* Առաջի իմ ՚ի ճանապարհս իւր։

* *Ոմանք.* Եւ մխիթարեցի զնա։

* *Ոսկան.* Չպտուղ խաղաղութեան ՚ի վերայ խաղաղութեան։

* *Օրինակ մի՛ ընդ Ոսկանայ.* Եւ մի՛ խնայեր։ *Ոմանք.* Իբրև փողոյ զբար՝... ժողովրդեան իմոյ զմե՛։

* *Ի լուս՝.* Գտանիցին կամք ձեր կա՛։

* *Ոմանք.* Ձի՞նչ պիտոյ են ինձ։ *Ոսկան.* Բողոքել ձեզ առ իս։

* *Ոմանք.* Ո՛չ զայնպիսի պահս... ՚ի ներքոյ քոյ տարա՛... զայն կոչեցից պահս։ *Ի լուս՝.* Եթէ կորացուցանես. *համաձայն ոմանց ՚ի բնար՝.*

* *Յոմանս պակասի.* Չխարդախութիւն բռնութեան վա՛։

* *Ոմանք.* Տեսանիցես զմերկն։

* *Ոմանք.* Եւ մինչդեռ խօսեսցիս... հասեալ են... զկնճիռն և զձեռնարկութիւն՝ և զբանս։

զից քո սրտի մտօք, և զանձինս կարօտեալս յագեցուցես: Յայնժամ ծագեսցէ 'ի խաւարի լոյս քո, և խաւարն քո իբրև զմիջօրեայ. ¹¹և եղիցի Աստուած քո ընդ քե՛զ յամենայն ժամ. և լցցի՛ ըստ ցանկութեան անձին քո, և ոսկերք քո պարարեսցին. և եղիցես իբրև զպարտեզ ջրալից, և իբրև զաղբեր ուստի ջուր ո՛չ պակասեսցէ՛: ¹²Եւ շինեսցին աւերակք քո յաւիտենից, և եղիցին հիմունք քո մշտնջենաւորք ազգաց յազգս. # կանգնեսցիր և կոչեսցիր խրամակարկատ ցանգոյ, և զընդմիջնաշաւիղս նոցա դադարեցուցես՝: ¹³Եթէ դարձուցես զոտն քո չառնել՝ զկամս քո յաւուրն սրբութեան. և կոչեսցեն զշաբաթսն փափուկս նուիրեալս Աստուծոյ, և փառաւորեալս, և ո՛չ փոխեսցես զոտն քո 'ի գործ, և ո՛չ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով քով՝. ¹⁴և եղիցես յուսացեալ 'ի Տէր: Եւ տարցի զքեզ 'ի բարութիւնս երկրին, և ջամբեսցէ քեզ զժառանգութիւն Յակովբայ հօր քոյ. զի բերան Տեառն խօսեցաւ զայս:

59

Գլուխ ԾԹ

¹Միթէ ո՞չ իցէ կարօղ ձեռն Տեառն փրկել. կամ ծանրացոյց ինչ զունկն իւր՝ զի մի՞ լուիցէ՛: ²Այլ մեղք ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Աստուծոյ. և վասն անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի՛: ³Ձի ձեռք ձեր պղծեալ են արեամբ. և մատուցք ձեր 'ի մե՛ղս. շրթունք ձեր խօսեցան զանօրէնութիւն, և լեզուք ձեր խոկան զանիրաւութիւն՝: ⁴Չի՞ք որ խօսի զարդարութիւն, և ո՛չ գոն իրաւունք ճշմարտութեան. յուսացեալ են 'ի սնոտիս, և խօսին զունայնութիւն. զի յղանան զցաւս, և ծնանին զանօրէնութիւն՝: ⁵Ձուս քարբից ծակեցին, և զոստայնս սարդից անկանէին. և որ կամիցի ուտել 'ի նոցանէն, ծակեաց բաց՝ և եգիտ ջուր, և 'ի նմին քա՛րք՝: ⁶Ոստայնք նոցա ո՛չ ձորձեսցին, և ո՛չ զգեցցին 'ի գործոց ձեռաց իւրեանց. քանզի գործք նոցա գործք անօրէնութեան են, և գործք անօրէնութեան 'ի ձեռս նոցա՛: ⁷Ոտք նոցա 'ի չարիս ընթանան, վաղվաղէն հեղուլ զարիւն անպարտ. խորհուրդք նոցա՝ խորհուրդք անզգամաց. բեկումն և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա. ⁸և զճանապարհս խաղաղութեան ո՛չ ծանեան, և ո՛չ գոն իրաւունք 'ի ճանապարհս նոցա. զի շաւիղք նոցա ընդ որ գնան խտտորեալք են, և ո՛չ ծանեան զխաղաղութիւն՝: ⁹Վասն այնորիկ հեռացան 'ի նոցանէ իրաւունք, և մի՛ հասցէ առ նոսա արդարութիւն. մինչդեռ ակն ունէին լուսոյ՝ եղև նոցա խաւար. և մինչդեռ սպասէին նմա, ընդ մո՛ւթ շրջեցան. ¹⁰շօշափեսցեն զորմս իբրև կոյրք, և իբրև զաչացո՛ւ խարխափեսցեն. և զլորեսցին 'ի միջօրէի իբրև 'ի հասարակ

* Այլք. Ըստ ցանկութեան անձն քո: Ոմանք. Եւ եղիցի, կամ՝ եղիցին իբրև զպարտեզ... ո՛չ պակասիցէ:

* Ոմանք. Մշտնջենաւորք յազգս ազգաց... ցանկոց, և զընդմիջնաշաւիղս նոցա դա՛:

* Ոմանք. Եւ կոչեսցես զշաբաթս... բարկութեամբ՝ բերանով քով:

* Ոմանք. Ձի թէ ո՞չ իցէ:

* Բազումք. Այլ մեղքն ձեր:

* Ոմանք. Խօսին զանօրէնութիւն:

* Ոմանք. Չիք որ խօսի:

* Ոմանք. Եւ զոստայն սարդից անկանէն:

* Ոմանք. Եւ գործք անիրաւութեան 'ի ձեռս նոցա:

* Ոմանք. Եւ զճանապարհն խաղաղութեան:

գիշերի. և իբրև օրհասականք ընդ ոգիս ջանայցեն*.¹¹ և իբրև զարջ և իբրև զաղաւնիս առ հասարակ սահեսցին: Կացա՛ք մնացաք իրաւանց՝ և ո՛չ էր. փրկութեան՝ և հեռացաւ ՚ի մէնջ*.¹² Զի բազում են անօրէնութիւնք մեր առաջի քո, և մեղք մեր հակառակ կացին մեզ. զի անօրէնութիւնք մեր ՚ի մե՛զ են, և զանհրաւութիւնս մեր՝ մեք մեզէ՛ն գիտենք: ¹³Ամպարշտեցաք և ստեցաք Տեառն, և դարձա՛ք յետս յԱստուծոյ մերմէ. խօսեցաք զանհրաւութիւն՝ և հեստեցաք. յղացաք՝ և որոճացաք ՚ի սիրտս մեր զբանս անհրաւութեան*.¹⁴ Յե՛տս հարաք զիրաւունս, և արդարութիւն հեռացաւ ՚ի մէնջ: Զի սպառեցաւ ՚ի ճանապարհաց նոցա ճշմարտութիւն, և ընդ ուղորդն ո՛չ կարացին գնալ. ¹⁵և արդարութիւն բարձաւ ՚ի նոցանէ. մերժեցին զսիրտս իւրեանց յիմանալոյ: Ետես Տէր՝ և ո՛չ հաճեցաւ, զի ո՛չ գոյին իրաւունք: ¹⁶Չայեցաւ՝ և ո՛չ գոյր մարդ. ետես՝ և ո՛չ գոյր որ օգնական լինէր. և հատոյց նոցա բազկաւ իւրով, և ըստ ողորմութեան իւրում հաստատեաց: ¹⁷Եւ զգեցաւ իբրև զրա՛հս զարդարութիւն. և եդ՝ ՚ի գլուխ իւր իբրև զսաղաւարտ զփրկութիւն, և արկաւ զիւրև հանդերձ և պատմուճան վրէժխնդրութեան՝ հատուցանել զհատուցումն*.¹⁸ և նախատինս հակառակորդաց # և կղզեաց հատուցէ զհատուցումն: ¹⁹Եւ երկիցեն յարևուտս յանուանէ Տեառն, և յարևելս ՚ի փառաւորեալ անուանէ նորա. զի եկեսցէ իբրև զգետ բռնութեամբ բարկութիւն ՚ի Տեառնէ. հասցէ՛ սրտմտութեամբ: ²⁰Եկեսցէ ՚ի Սիոնէ փրկիչ, և դարձուցէ զամպարշտութիւնս Յակովբայ՝ ասէ Տէր*.²¹ Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ ասէ Տէր. Յոգին իմ որ է ՚ի քեզ, և բանք զոր ետու ՚ի բերան քո, մի՛ պակասեսցէ ՚ի բերանոյ քումմէ, և ՚ի բերանոյ զաւակի քոյ. և ՚ի բերանոյ զաւակէ զաւակի՛ քոյ՝ ասէ Տէր, յայսմհետէ մինչև յաւիտեան*:

60

Գլուխ Կ

¹Լուսաւորեաց՝ լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ՚ի վերայ քո ծագեսցեն: ²Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոսս. բայց ՚ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ՚ի քե՛զ երևեսցին: ³Եւ գնասցեն թագաւորք ՚ի լոյս քո, և հեթանոսք ՚ի ծագել լուսոյ քոյ: ⁴Յամբարձ շուրջ զքն զաչս քո, և տես՝ ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին ՚ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո ՚ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցին*.⁵ Յայնժամ տեսցես՝ և խնդասցես. երկիցես և զարհուրեսցիս ՚ի սրտի քում. զի փոխեսցի ՚ի քեզ մեծութիւն ծովու, և ազգաց՝ և ժողովրդոց: ⁶Եկեսցեն ՚ի քեզ երամակք ուղտուց, և ծածկեսցեն զքեզ

* Ոմանք. Իբրև զաչացուս. կամ՝ զաչացուք. և կամ՝ զաչացաւս... ՚ի մեջօրէի:

* Բազումք. Իբրև զարջս և: Ոմանք. Իրաւանց. և ո՛չ էր փրկութիւն, և հեռա՛: Ուր Ոսկան. Եւ ոչ էր, և փրկութիւն հեռա՛:

* Ոմանք. Եւ որոճեցաք ՚ի սիրտս:

* Բազումք. Եւ եդ՝ ՚ի գլուխ իբրև զսա՛:

* Ոմանք. Եւ եկեսցէ ՚ի Սիոնէ փր՛:

* Յօրինակին՝ զկնի ուխտ՝ ասէ, դատարկ տեղի թողեալ և չակերտիւ նշանակեալ՝ ակնարկի ՚ի ներքս բերել Տէր. համաձայն այլոց: Ոմանք. Մի՛ պակասեսցեն ՚ի բե՛: Ոսկան. Եւ ՚ի բերանոյ զաւակի զաւակի քո:

* Ոմանք. Զի եկին հասին առ քեզ ՚ի հեռաստա՛... և զդստերս քո ՚ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն:

ուղտերամակքն Մադիամու և Գեփայ. ամենեքեան 'ի Սաբայ' եկեսցեն, բերել
 ոսկի' և կնդրուկ' և ականս պատուականս. և գփրկութեան Տեառն առցեն
 զաւետիս*: ⁷Եւ ամենայն խաշինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ, և խոյքն
 Նաբեովթայ ածցին և մատուցին ընդունելի պատարագ 'ի վերայ սեղանոյ իմոյ.
 և տուն աղօթից իմոց փառաւորեսցի*: ⁸Ո՛վ են սոքա որ իբրև զամպս թռուցեալ
 են, և իբրև զաղաւնիս ձագախա՞ռն երամովին գան առ իս*: ⁹Ինձ ակն ունին
 կղզիք և նաւք Թարսսի, յառաջագոյն ածել զորդիս քո 'ի հեռաստանէ. զարծաթն
 և զոսկի ընդ իւրեանս՝ վասն անուան Տեառն սրբոյն, և վասն Սրբոյն Իսրայէլի
 փառաւորելոյ*: ¹⁰Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպ քո, և թագաւորք
 նոցա ընծայեսցին քեզ. զի վասն բարկութեան իմոյ հարի գքեզ, և վասն
 ողորմութեան իմոյ սիրեցի՛ գքեզ*: ¹¹Եւ բացցին դրունք քո հանապազորոք 'ի
 տուէ և 'ի գիշերի. և մի՛ փակեսցին, կրել 'ի քեզ զզօրութիւն ազգաց. և
 զթագաւորս իւրեանց ածիցեն առ քեզ*: ¹²Ձի ազգք և թագաւորք որ քեզ ո՛չ
 ծառայիցեն՝ կորիցեն, և ազգքն աւերելո՛վ աւերեսցին: ¹³Եւ փառքն Լիբանանու
 առ քե՛զ եկեսցեն. սարդիւն և սաւսիւ, և նոճով և մայրիւ՝ առ հասարակ
 փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ #. և զտեղի ոտից իմոց
 փառաւորեցի՛ց*: ¹⁴Եւ եկեսցեն առ քեզ զարհուրեալք որդիք նեղչացն քոց՝ և
 զայրացուցչաց, # երկի՛ր պագցեն հետոյ ոտից քոց, # ամենեքին որ
 զարհուրեցուցանէինն գքեզ. և կոչեսցիր քաղա՛ք Տեառն Սրբոյն Իսրայէլի*:
¹⁵Վասն զի եղեր դու լքեալ և ատեցեալ, և ոչ ոք էր որ օգնէր քեզ. և արարից
 գքեզ յուրախութիւն յաւիտենական. ցնծութիւն ազգաց յազգս*: ¹⁶Եւ դիեսցես
 զկաթն հեթանոսաց, և զնծութիւն թագաւորաց կերիցես. և ծանիցես թէ ես եմ
 Տէր, որ ապրեցուցանեմ և փրկեմ գքեզ Աստուած Իսրայէլի: ¹⁷Եւ փոխանակ
 պղնձոյն՝ բերից քեզ ոսկի, և փոխանակ երկաթոյն՝ բերից քեզ արծաթ, և
 փոխանակ փայտի՝ բերից քեզ պղինձ, և փոխանակ քարի՝ տա՛ց քեզ երկաթ. և
 տաց զիշխանս քո 'ի խաղաղութիւն՝ և զայցելուս քո յարդարութիւն: ¹⁸Եւ ո՛չ ևս
 լիցի անիրաւութիւն յերկրի քում, և ո՛չ բեկումն և թշուառութիւն 'ի սահմանս քո.
 այլ կոչեսցին 'ի փրկութիւն պարիսպք քո, և դրունք քո ցնծութիւն*: ¹⁹Եւ ո՛չ ևս
 եղիցի քեզ արեգակն 'ի լոյս տունջեան, և ո՛չ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս 'ի
 գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական, և փառք քո Աստուած: ²⁰Ո՛չ
 մտցէ քեզ արեգակն, և լուսին 'ի քէն ո՛չ պակասեսցէ. զի եղիցի քեզ Տէր լոյս
 յաւիտենական: Եւ կատարեսցին աւուրք սգոյ քոյ*. ²¹և ժողովուրդ քո ամենակին
 արդար, և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր. և պահել զնորատունկ գործոց

* Ոսկան. Ամենեքեան 'ի Սաբայէ եկես':

* Ոմանք. Եւ մատուցեն ընդունելի պատարագք:

* 'Ի լուս'. 'ի վերայ' Ով. փոխանակ երկարի՛ հարցական ° ուղորակ նշանակի, համաձայն
 ոմանց:

* Ոմանք. Եւ նաւք Թարշշի:

* Ոմանք. Չպարիսպս քո... ընծայեսցեն քեզ:

* Ոմանք. Յանապազորո՞ 'ի տուէ և 'ի... ածցեն առ քեզ:

* Ոսկան. Նոճիւն և մայրիւ:

* Բազումք. Նեղչացն քոց և զարհուրեցուցչաց, և երկիր պագցեն հետոց ոտից... քաղաք
 Տեառն Սիոն Սրբոյն Իսրայէլի:

* Ոմանք. Եւ ցնծութիւն ազ՞:

* Այլք. Եւ ոչ ևս լուիցի անիրաւութիւն յերկր՞... այլ կոչեսցին փրկութիւն պարիսպք:

* Այլք. 'Ի քէն մի՛ պակասեսցէ. և եղիցի քեզ Տէր լոյս:

ծեռաց իւրեանց ՚ի փառս*։ ²²Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեծ. զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա։

61

Գլուխ ԿԱ

ԽՁ ¹Հոգի՛ Տեառն ՚ի վերայ իմ, վասն որոյ և օ՛ծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել. ²Կոչել ան Տեառն ընդունելի # և օր հատուցման Աստուծոյ մերոյ։ Մխիթարել զամենայն սգաւորս. ³տա՛լ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան. և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վիատութեան։ Եւ կոչեսցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ Տեառն ՚ի փառս*։ ⁴Եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից, և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց մինչև յազգս։ ⁵Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց. և այլազգիք մաճակալք և այգեգործք քո*։ ⁶Բայց դուք քահանայք Տեառն կոչեսցիք. պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսցիք. զգօրութիւն ազգաց կերիջիք, և մեծութեամբ նոցա սքանչելի՛ լինիջիք*։ ⁷Փոխանակ ամօթոյ ձերոյ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութիւն. և ապա՛ զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն. և ուրախութիւն յաւիտենից ՚ի վերայ գլխոց նոցա։ ⁸Ձի ե՛ս եմ Տէր որ սիրեմ զարդարութիւն, և ատեամ զյափշտակութիւն յանիրաւութենէ. տա՛ց զվաստակս նոցա արդարոց, և ուխտ յաւիտենից ուխտեցից ընդ նոսա*։ ⁹Եւ ծանիցի՛ ՚ի մէջ ազգաց զաւակն նոցա, և ծնունդք նոցա ՚ի մէջ ժողովրդոց. ամենեքին որ տեսանիցեն՝ ճանաչիցեն զնոսա՝ թէ սոքա են զաւակ օրհնեալ յԱստուծոյ. և ուրախութեամբ ուրախ եղիցին ՚ի Տէր*։ ¹⁰Յնծասցէ՛ անձն իմ ՚ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան՝ և պատմուճան ուրախութեան. իբրև փեսայի ե՛դ ինձ պսակ, և իբրև հարսն զարդու զարդարեաց զիս։ ¹¹Եւ իբրև երկիր որ աճեցուցանէ զծաղիկս իւր, և իբրև զպարտէզ որ բուսուցանէ զսերմանիս իւր. այնպէս ծագեսցէ Տէր զարդարութիւն իւր, և զցնծութիւն առաջի ամենայն ազգաց*։

62

Գլուխ ԿԲ

¹Վասն Սիովնի ո՛չ լռեցից, և վասն Երուսաղեմի ո՛չ ներեցից. մինչև ծագեսցէ իբրև զլոյս արդարութիւն նորա, և փրկութիւն նորա իբրև փայլակն վառեսցի։ ²Եւ տեսցեն ամենայն հեթանոսք զարդարութիւն քո, և թագաւորք զփառս քո. և

* *Ոմանք.* Ձերկիր. պահել զնորա՛։

* *Ոմանք.* Փոխանակ ոգւոյն վիատութեան։ *Ուր օրհնակ մի.* փոխանակ որդւոցն վիա՛։

* *Յօրհնակին.* Մայճակալք և այգե՛։

* *Ոմանք.* Տեառն կոչիջիք և պաշտօնեայք։

* *Ոմանք.* Եւ ատեմ զյափշտակութիւնս... և տաց զվաս՛։

* *Ոմանք.* Ձաւակ նոցա... զնոսա՛ և ասիցեն թէ սոքա են։

* *Ոմանք.* Այնպէս ծագեսցուցէ Տէր զար՛. *ուր Ոսկան.* ծաղկեցուցէ Տէր զարդա՛։

կոչեսցի քեզ անուն նոր, զոր Տէր անուանեսցէ*։ ³Եւ եղիցես պասկ վայելչութեան ՚ի ձեռին Տեառն, և թա՛գ արքայութեան ՚ի ձեռին Աստուծոյ քո. ⁴և ո՛չ ևս կոչեսցիս Լքեալ, և երկիրն քո ո՛չ ևս կոչեսցի Աւերակ։ Ձի քեզ անուն կոչեսցին կա՛նք իմ, և երկիրն քուն շինութիւն բնակութեան. զի հաճեսցի Տէր ընդ քեզ, և երկիրն քո խոնեսցի՝ ՚ի բնակութիւն։ ⁵Չոր օրինակ բնակեսցէ երիտասարդ ընդ կուսի՝ այնպէս բնակեսցեն որդիք քո ՚ի քեզ. և եղիցի զոր օրինակ ուրախ լինի փեսայ առ հարսին, այնպէս ուրախ լիցի Տէր ՚ի քեզ*։ ⁶Եւ ՚ի վերայ պարսպացն քոց Երուսաղէմ՝ պահապանս կացուցից, զօրն ողջոյն և զգիշերն ամենայն. որ մինչև ցայգ՝ մի՛ դադարեսցեն յիշել զՏէր*։ ⁷Ձի ո՛չ գոյ նման քեզ, եթէ ուղղեսցէ՝ և արասցէ զԵրուսաղէմ ՚ի պարծանս ՚ի վերայ երկրի*։ ⁸Երդուա՛ւ Տէր ՚ի փառս իւր՝ և ՚ի զօրութիւն բազկի իւրոյ, եթէ ո՛չ տաց զգորեան քո և զկերակուր ՚ի ձեռս թշնամեաց քոց. և ո՛չ արբցեն որդիք օտարաց զգինի քո յորում դուն վաստակեսցեր։ ⁹Այլ որ ամփոփեսցին կերիցեն զնա՝ և օրինեսցեն զՏէր. և որ ժողովեսցին զնա, արբցեն ՚ի սրահս սրբութեանց իմոց*։ ¹⁰Երթայք մտէ՛ք ընդ դրունս իմ, կազմեցէ՛ք զճանապարհս՝ հորդեցէ՛ք զշաւիղս. զործեցէ՛ք ճանապարհ ժողովրդեան իմոյ, և զքարինս ՚ի ճանապարհէ անտի ՚ի բա՛ց ընկեսցէք. առէք նշան ՚ի հեթանոսս։ ¹¹Ձի ա՛ւասիկ Տէր լսելի՛ արար մինչև ՚ի ծագս երկրի։ Ասացէ՛ք դատեր Սիովնի. Ահաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ իւր. և գործք իւր առաջի երեսաց իւրոց*։ ¹²Եւ կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ՝ փրկեալ ՚ի Տեառնէ. և դու կոչեսցիս Խնդրեալ քաղաք՝ և Ոչ լքեալ։

63

Գլուխ ԿԳ

Խէ ¹Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յեղովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց ՚ի Բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ։ Ե՛ս խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան։ ²Վասն է՞ր կարմիր են ձորձք քո, և հանդերձք իբրև հնձանահարի, լիո՛յ հնձանի կոխելոյ*։ ³Յնձան հարի միայն, և ՚ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զնոսա սրտմտութեամբ՝ և ճնլեցի զնոսա բարկութեամբ՝ և իջուցի յերկիր. և զամենայն հանդերձս իմ թօթափեցի*։ ⁴Գի հասեալ էր ՚ի վերայ նոցա օր հատուցման, և ա՛ն փրկութեան եկեալ հասեալ*։ ⁵Յայեցայ՝ և ո՛չ ոք էր որ օգնէր. զմտա՛ւ ածի՝ և ո՛չ ոք էր որ ՚ի թիկունս հասանէր. փրկեաց զնոսա բազուկ իմ. և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ. ⁶կոխեցի

* *Բազուկ*. Եւ տեսցեն հեթանոսք։

* *Բազուկ*. Չոր օրինակ բնակէ երիտասա՞։ *Ոսկան*. Չոր օրինակ բնակի փեսայ առ։

* *Յօրինակին չակերտիւ նշանակի բառնալ զցո, և առնել՝ պահապանս կացուցի, համաձայն ոմանց։ Ոմանք*. Եւ զգիշերն ողջոյն, որ մինչև ցանգ մի՛ դա՞։ *Ուր օրինակ մի ընդ Ոսկանայ*. որ մինչև յանգ մի՛։

* *Ոմանք*. Ոչ գոյ նման ձեզ... և արասցէ Երուսաղէմի պարծանս։

* *Ոմանք*. Այլ ուր ամփոփեսցին կերիցեն զնոսա... և որ ժողովեսցին զնոսա, արբցեն ՚ի սրահ սր՞։

* *Բազուկ*. Եւ գործ իւր առաջի։

* *Ոսկան*. Եւ հանդերձք քո իբրև հնձա՞։

* *Այլք*. Յանդերձս իմ թաթաւեցի։

* *Ոմանք*. Ի վերայ նորա օր հա՞։

զնոսա բարկութեամբ իմով, և զենի զնոսա սրտմտութեամբ իմով, և իջուցի՝ զնոսա յերկիր:

ԽԸ ⁷Չողորմութիւն Տեառն յիշեցի, զքաջութիւն Տեառն յո՛ւշ արարից, յամենայնի զոր հատուցանէ մեզ Տէր: Տէր դատաւոր բարերար տանն Իսրայէլի, որ ածէ՝ ՚ի վերայ մեր ըստ ողորմութեան իւրում և ըստ բազում արդարութեան իւրոյ՝: ⁸Եւ ասաց՝ եթէ ժողովուրդ իմ են որդիքն իմ, և ո՛չ անարգեսցեն զիս. և եղև նոցա ՚ի փրկութիւն ⁹յամենայն նեղութենէ նոցա: Ո՛չ պատգամաւոր ոք և ո՛չ հրեշտակ, այլ ինքնին Տէր փրկեաց զնոսա. վասն սիրելոյ զնոսա և խնայելոյ ՚ի նոսա ինքնին փրկեաց զնոսա. և վերացոյց և բարձրացոյց զամենայն աւուրս յաւիտենից՝: ¹⁰Բայց նոքա հեստեցին, և բարկացուցին զՅոգի նորա Սուրբ. և դարձաւ նոցա Տէր ՚ի թշնամութիւն. ինքնին Տէր ետ ընդ նոսա պատերազմ՝: ¹¹Եւ յիշեաց զաւուրսն յաւիտենից, թէ ո՞ւր է Մովսէս և ժողովուրդն նորա: Որ եհան յերկրէ զհովիւն հօտից. ո՞ւր է որ եդ ՚ի նոսա զՅոգին Սուրբ՝: ¹²որ վերացոյց աջով իւրով զՄովսէս. և բազուկ փառաց նորա յաղթահարեաց զջուրսն առաջի երեսաց նորա, առնել ի՛ւր անուն յաւիտենական՝: ¹³Անցոյց զնոսա ընդ անդունդս որպէս ձի ընդ անապատ՝, ¹⁴և իբրև զգրաստ ինչ ընդ դաշտ. և ո՛չ վաստակեցին: Եջ Յոգի Տեառն, և առաջնորդեաց նոցա. այնպէս ածեր զժողովուրդն քո առնել քեզ անուն փառաց՝: ¹⁵Եւ արդ դարձ ՚ի յերկնից՝ և տես ՚ի տաճարէ սրբոյ քունմէ՝ և ՚ի փառաց քոց. ո՞ւր է նախանձ քո և զօրութիւն. ո՞ւր է բազում ողորմութիւն գթութեան քոյ, որով ներէիրն մեզ՝: ¹⁶Ձի դու ես Յայր. զի Աբրահամ ո՛չ գիտաց զմեզ, և Իսրայէլ ո՛չ ծանեաւ զմեզ. արդ դու Տէր Յայր մեր փրկեա՛ զմեզ, զի իսկզբանէ անուն քո է ՚ի վերայ մեր՝: ¹⁷Չմէ՞ մոլորեցուցեր զմեզ Տէր ՚ի ճանապարհաց քոց. խստացուցեր զսիրտ մեր չերկնչել ՚ի քէն. դարձ վասն ծառայից քոց. դարձ վասն ազգաց ժառանգութեան քոյ՝: ¹⁸Գուցէ ո՛չ ժառանգիցենք զլեառն սրբութեան քոյ: Հակառակորդք մեր նեղեցին զմեզ՝ և կոխեցին զսրբութիւն քո: ¹⁹Եղեաք իբրև զառաջինն՝ յորժամ ո՛չն տիրէիր մեզ, և ո՛չ կոչեցեալ էր անուն քո ՚ի վերայ մեր՝:

64

Գլուխ ԿԴ

¹Եթէ բացցես զերկինս՝ դողունն կալցի ՚ի քէն զլերինս. ²և հալեցին իբրև զմոմ առաջի հրոյ, և այրեսցէ հուր զհակառակորդս քո, և յայտնի՛ լիցի անուն քո ընդդիմակցաց քոց. և յերեսաց քոց հեթանոսք խռովեցին: ³Յորժամ առնիցես

* *Ոսկան.* Չողորմութիւն Տեառն յիշեցից: *Ոմանք.* Չոր ինչ հատուցանէ... ողորմութեանն իւրոյ:

* *Ոմանք.* Եւ վերացոյց զնոսա, և բարձ՛:

* *Յայլս պակասի.* Ինքնին Տէր ետ ընդ նոսա:

* *Ոսկան.* ՚ի նոսա զՅոգին Տեառն:

* *Ոմանք.* Եւ ՚ի բազուկ փառաց նորա:

* *Ոմանք.* Իբրև ձի ընդ անա՛:

* *Բազումք.* Եջ Յոգի ՚ի Տեառնէ:

* *Ոմանք.* Դարձ յերկնից... և զօրութիւն քո:

* *Բազումք յաւելուն.* Ձի դու ես մեր... այլ դու Տէր Յայր մեր:

* *Բազումք.* Խստացուցեր զսիրտս մեր:

* *Ոսկան.* Իբրև զառաջինն յորժամ ո՛չ նայէիր ՚ի մեզ, և ո՛չ:

փառաւորութիւնս, դողովմն կալցի 'ի քէն զլերինս: ⁴Յաւիտենից ո՛չ լուաք, և ո՛չ աչք մեր տեսին այլ Աստուած բա՛ց 'ի քէն. և զգործս քո զոր արասցես այնոցիկ որ ակն ունին ողորմութեան քում*⁵: ⁵Ձի ընդ առաջ լիցի այնոցիկ ոյք առնեն զիրաւունս, և զճանապարհս քո յիշեսցեն: Արդ՝ ահա դու բարկացար և մեք մեղա՛ք. վասն այնորիկ մոլորեցար: ⁶Եւ եղեաք իբրև զպիղծս ամենեքեան. իբրև զհանդերձս ապարահից ամենայն արդարութիւն մեր. և թօթափեցար իբրև զտերև ամենեքին մեք վասն անօրէնութեանց մերոց. հողմք մերժեցին զմեզ*⁷: ⁷Եւ ո՛չ որ իցէ որ կարդայցէ զանուն քո, և ո՛չ որ յիշիցէ ապաստան առնել զքեզ. զի դարձուցեր զերեսս քո 'ի մէնջ, և մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց*⁸: ⁸Եւ արդ Տէր՝ Յայր մեր դու ես. մեք կաւ, և դու Ստեղծիչ մեր. և գործք ձեռաց քոց ամենեքին մեք. ⁹մի՛ բարկանար մեզ Տէր յոյժ, և մի՛ 'ի ժամանակի յիշեր զմեղս մեր: Եւ արդ հայեա՛ց Տէր. զի ժողովուրդ քո ամենայն, ¹⁰և քաղաք սրբութեան քոյ Սիովն եղև աներա՛կ. իբրև զանապատ եղև Երուսաղէմ. ¹¹յանձնձս մատնեցաւ տունն սրբութեան մերոյ. և փառքն զոր օրհնեցին հարքն մեր՝ եղեն հրձիգ, և ամենայն փառաւորութիւն մեր կործանեցաւ*¹²: ¹²Եւ 'ի վերայ ամենայնի այսորիկ անսա՞ս Տէր, և լռեցե՞ր. և խոնարհ արարեր զմեզ մինչև յոյժ*:

65

Գլուխ ԿԵ

¹Յայտնի՛ եղէ այնոցիկ որ զինէն ո՛չ հարցանէին. գտայ՛ այնոցիկ որ զիսն ո՛չ խնդրէին. ասացի. Աւասիկ եմ, ցազգն ցայն որ զանուն իմ ո՛չ կարդացին*²: ²Ձօ՛ր հանապազ ձգեցի զձեռն իմ առ ժողովուրդն անհաւան և հակառակօղ. որ զնային զճանապարհ որ ո՛չ էր բարուք, այլ զհետ մեղացն իւրեանց*³: ³Ժողովուրդս այս որ բարկացուցանէր զիս. առաջի իմ զօրհանապազ զոհէին 'ի պարտէզս իւրեանց, և արկանէին խունկս յաղիւսեայս իւրեանց*⁴ ⁴դիւացն որք չէին 'ի յիշատակս իւրեանց: Եւ յայրս կողմանեալ ննջին վասն երազ տեսանելոյ. որք ուտէին զխոզեմին և զարգանակ զոհիցն, և ամենայն անօթք նոցա պղծեալ էին*⁵. ⁵որք ասէին. 'Ի բա՛ց կաց յինէն՝ մի՛ մերձենար յիս զի սուրբ եմ: Այս է ծուխ բարկութեան իմոյ՝ յորում հուր բորբոքեալ է զամենայն աւուրս: ⁶Ահաւասիկ գրեալ է առաջի իմ. ո՛չ լռեցից՝ մինչև հատուցի՛ց 'ի ծոցս նոցա ⁷զմեղս նոցա. և զմեղս հարց նոցա 'ի միասին՝ ասէ Տէր. որք արկանէին խունկս 'ի վերայ լերանց, և 'ի վերայ բլրոց ուր նախատէինն զիս. հատուցից զգործս նոցա # յառաջագոյն 'ի ծոցս նոցա*⁸: ⁸Խմ ⁸Այսպէս ասէ Տէր. Ձոր օրինակ եթէ գտանիցի ճի՛ռ 'ի մէջ ողկուզոց, և ասիցեն. Մի՛ ապականեր զդա զի օրհնութիւն Տեառն գոյ՛ 'ի դմա. այնպէս

* *Ոմանք.* Եւ ոչ տեսին աչք մեր այլ:
 * *Օրինակ մի ընդ Ոսկանայ ունի.* Իբրև զհանդերձս ապահարից:
 * *Ոմանք.* Եւ որ ոչ յիշեսցէ:
 * *Ոմանք.* Տուն սրբութեան քո:
 * *Ոմանք.* Խոնարհ արարեր զմեզ յոյժ:
 * *Ոմանք.* Ասացից. Աւասիկ եմ:
 * *Ոմանք.* Ձգեցից զձեռս իմ առ:
 * *Բազումք.* Առաջի իմ հանապազ զոհէին... յաղիւսայս իւր՝:
 * *Ոմանք.* Դիւացն որք չէին յիշատակս: *Այլք.* Կողմանեալ ննջէին:
 * *Ոմանք.* Եւ զմեղս հարց իւրեանց:

արարից վասն ծառային իմոյ, վասն որոյ ո՛չ կորուսից զամենեսեան*։ ⁹Եւ հանից զգաւակ Յակովբայ և Յուդայ, և ժառանգեսցեն զլեառն սրբութեան իմոյ. և ժառանգեսցեն ընտրեալք իմ և ծառայք իմ. և բնակեսցեն ՚ի նմա*։ ¹⁰Եւ եղիցի յանտառին մակաղատե՛ղք հովուաց, և ձորն Աքովրայ հանգիստ անդուց ժողովրդեան իմոյ որ խնդրեցինն զիս*։ ¹¹Այլ դուք որ թողէք զիս, և մոռացարուք զլեառն սրբութեան իմոյ. և կազմէիք դիւաց սեղան, և խառնէիք խառնելիս բախտից*։ ¹²Ե՛ս մատնեցից զձեզ ՚ի սո՛ւր, և ամենեքեան կոտորեսցիք. զի կոչեցի զձեզ՝ և ո՛չ լուարուք. խօսեցայ՝ և ստունգանցէք. և արարէք չա՛ր առաջի իմ. և զոր ո՛չ կամէի՝ ընտրեցէք։ ¹³Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ որ ծառայենն ինձ կերիցեն, և դուք քաղցիցիք. ահաւասիկ որ ծառայենն ինձ արբցեն, և դուք ծարաւեսցիք. ահաւասիկ որ ծառայենն ինձ, ուրախ լիցին և դուք ամաչեսցիք*։ ¹⁴Ահաւասիկ որ ծառայենն ինձ ցնծացեն ուրախութեամբ սրտից, և դուք աղաղակեսցիք առ ցաւս սրտից ձերոց, և առ բեկունն ոգւոց ձերոց ողբասցիք*։ ¹⁵Ձի թողջիք զանուն ձեր ՚ի յագուրդ ընտրելոց իմոց, և զձեզ Տէր սատակեսցէ։ Եւ ծառայիցն իմոց կոչեցից անուն նոր*, ¹⁶որ օրհնեսցի ՚ի վերայ երկրի. զի օրհնեսցեն զԱստուած ճշմարիտ. և որ երդնուցուն ՚ի վերայ երկրի՝ երդուիցեն յԱստուած ճշմարիտ. զի մոռացին զնեղութիւնս առաջինս, և ո՛չ ևս անկցի ՚ի սիրտս նոցա*։ ¹⁷Ձի եղիցին երկինք նոր և երկիր նոր, և ո՛չ ևս յիշեսցեն զառաջինսն. և ո՛չ ևս անկցի ՚ի սիրտս նոցա*։ ¹⁸Այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն ՚ի նմա, # զոր ե՛ս հաստատեցից։ Ձի ահաւասիկ ե՛ս առնեմ զերուսաղէմ ցնծութիւն, և զժողովուրդ իմ ուրախութիւն*։ ¹⁹Եւ ցնծացայ՝ ՚ի վերայ Երուսաղէմի, և ուրախ եղէց ՚ի վերայ ժողովրդեան իմոյ. և ո՛չ ևս լուիցի ՚ի նմա ձայն լալոյ՝ և ձայն գուժի*։ ²⁰Եւ մի՛ լիցի անդ տարածամ աւուրց. և ծեր՝ որոյ ո՛չ իցէ լցեալ զժամանակս իւր. զի եղիցի կրտսեր որդին հարիւրեմեան, և որ հարիւրեմեանն մեռանիցի, մեղաւոր և անիծեալ կոչեսցի*։ ²¹Շինեսցեն տունս՝ և ինքեանք բնակեսցեն. տնկեսցեն այգիս՝ և ինքեանք կերիցեն զպտուղ նոցա*։ ²²Եւ մի՛ ևս նոքա շինեսցեն՝ և այլք բնակեսցեն, և նոքա տնկեսցեն՝ և այլք կերիցեն։ Ըստ աւուրց փայտի կենաց եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ. գործք ձեռաց նոցա հնասցին*։ ²³Եւ ընտրեալք իմ մի՛ ևս վաստակեսցեն ընդունայն. և ո՛չ ևս ծնանիցին որդիս յանձնս, զի զաւակ օրհնեալ են յԱստուծոյ՝ և ծնունդք

* *Ոմանք.* ՚ի մէջ ողկուզաց. և *ոմանք.* ողկուզոյ։

* *Ոմանք.* Ջգաւակ ՚ի Յակովբայ։

* *Այլք.* Եւ եղիցին յանտառին։ *Բազումք.* Եւ ձորն Նաքովրայ հանգիստ անդուց. *կամ՝* անդիոց։

* *Ոսկան.* Այլ դուք թողիք զիս, և։

* *Ոմանք ՚ի չորեսին ևս տեղիս.* Որ ծառայէինն ինձ։

* *Ոմանք.* Եւ առ բեկման ոգւոց։

* *Բազումք.* Իմոց կոչեսցի անուն նորա։

* *Ոսկան.* Օրհնեսցեն զՏէր Աստուած ճշմա՛... երդնուցուն յԱստուած ճշմա՛։ *Բազումք.* Ձնեղութիւնն առաջին. և ոչ և անկանիցի ՚ի սիրտս։

* *Ոմանք.* Ձառաջինն. և ոչ անկցի ՚ի։

* *Ոմանք.* Եւ ցնծութիւն գտցի ՚ի նմա։

* *Ոմանք.* Եւ ոչ ևս լուիցի նմա ձայն։

* *Ոմանք.* Որոյ չիցէ լցեալ զժամանակս... կրտսեր որդին հարիւրամեանն. և որ հարիւրամեան մեռանիցի մեղաւոր է. և անիծ՛։

* *Ոմանք.* Ձպտուղ նորա։

* *Բազումք.* Փայտին կենաց։

նոցա ընդ նոսա*։ ²⁴Եւ եղիցի մինչչև՝ կարդացեալ իցէ նոցա՝ եւ լուայց նոցա. և մինչդեռ խօսեսցին, ասացից՝ թէ զինչ խնդրէք*։ ²⁵Յայնմ ժամանակի գայլք և գառնիք՝ ՚ի միասին ճարակեսցին, և առեւ՝ իբրև զեզն յարդ կերիցէ, և օձ՝ զհող իբրև զհաց կերիցէ. մի՛ մեղիցեն և մի՛ վնասեսցեն ՚ի լերին սրբութեան իմոյ ասէ՛ Տէր*։

66

Գլուխ ԿԶ

¹Այսպէս ասէ Տէր. երկինք արձն իմ եմ՝ և երկիր պատուանդան ոտից իմոց. ո՞րպիսի տուն շինիցէք ինձ ասէ Տէր, կամ ո՞րպիսի ինչ իցէ այն տեղի հանգստեան իմոյ*։ ²Գի գայս ամենայն ձեռն իմ արար, և ի՛մ է ամենայն՝ ասէ Տէր. Եւ ես յո՞ հայեցայց, եթէ ո՛չ ՚ի հեզս և ՚ի խոնարհս, և որ դողան ՚ի բանից իմոց*։ ³Բայց անօրէնն որ մատուցանէ ինձ եզն պատարագ՝ այնպէս է որպէս թէ հարկանիցէ որ զկառաւին մարդոյ. և որ մատուցանէ զոչխար պատարագ, այնպէս է որպէս թէ զշուն որ մորթիցէ. և որ մատուցանէ որ նաշիհ, այնպէս է որպէս թէ հեղուցու որ զարիւն խոզի. և որ տայցէ զկնդրուկն ՚ի խունկս յիշատակաց, այնպէս է՝ որպէս զհայիոյիչն. և ինքեանք ընտրեցին զճանապարհս իւրեանց, և զգարշելիս իւրեանց զոր անձինք իւրեանց ախորժեցին*։ ⁴Եւ ես առի ՚ի ձեռն զխաբէութիւնս նոցա, և ըստ մեղաց նոցա հատուցից նոցա. զի կոչեցի զնոսա՝ և ո՛չ լուան ինձ, խօսեցայ՝ և ո՛չ անսացին. և արարին չար առաջի իմ, և զոր ո՛չն կամէի ընտրեցին*։

Օ ⁵Լուարո՛ւք զպատգամս Տեառն, և որ դողայք ՚ի բանից նորա. խօսեցարո՛ւք եղբարք մեր ընդ ատելիս ձեր և ընդ գարշեցուցիչս. զի անուն Տեառն փառաւորեսցի՛, և երևեսցի յուրախութեանն ձերում և նոքա ամաչեսցեն*։ ⁶Չայն բարբառոյ ՚ի քաղաքէ. ձայն ՚ի տաճարէ. ձայն Տեառն հատուցանէ զհատուցումն հակառակորդաց. ⁷և մինչչև՝ իցէ յղւոյն ծնեալ, և մինչչև՝ հասեալ իցեն ցաւք երկանց, ապրեցաւ և ծնաւ արո՛ւ*։ ⁸Ո՞ լուաւ, ո՞ ետես այսպիսի ինչ. եթէ երկնեաց երկիր ՚ի միում աւուր, և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն. զի երկնեաց Սիոփն, և ծնաւ զմանկունս իւր։ ⁹Եւ ետու քեզ գոյսոյ գայդ, և դու ո՛չ յիշեցեր զիս՝ ասէ Տէր. ո՞չ ապաքէն զամուլն և զծննդականն եւս արարի՛ ասէ Աստուած քո*։ ¹⁰Ուրախ լեր երուսաղէմ, և ժողովեցարո՛ւք առնել տօն ՚ի դմա. ամենեքեան ոյք սիրէք զդա, խնդացէ՛ք և ուրախ լերուք ՚ի միասին որ նստէիք ՚ի սուգ վասն դորա*։ ¹¹Գի դիհցէք և յագիցիք ՚ի ստեանց մխիթարութեան դորա. և

* *Ոմանք.* Եւ մի՛ ևս ծնանիցին:

* *Ոմանք.* Խօսիցին, ասացից եթէ:

* *Ոմանք յաւելուն.* Եւ մի՛ վնասեսցեն *գորք* ՚ի լերին:

* *Ոմանք.* Եւ երկիրս պատ՛... տուն շինեցէք ինձ:

* *Բազունք.* Եւ ես յո՞ հանգեայց, եթէ ոչ: *Ոսկան.* Եւ որ դողայ ՚ի բանից:

* *Օրինակ մի.* Անօրէնն եթէ մատուցանիցէ ինձ եզն: *Ոմանք.* Որ մատուցանիցէ որ նա՛... ՚ի խունկ յիշատակ, այնպէս իցէ:

* *Ոմանք.* Եւ ես առից ՚ի ձեռն:

* *Ոմանք.* Չպատգամս Տեառն, որ դող՛:

* *Ոմանք.* Մինչչև իցէ... և մինչչև իցեն հասեալ:

* *Ոմանք.* Ասէ Տէր Աստուած քո:

* *Ոմանք.* Որ նստիք ՚ի սուգ վասն:

կշտապի՛նդ վայելիցէք ՚ի գալստենէ փառաց դորա*։ ¹²Ձի ա՛յսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես դարձուցանեմ ՚ի դոսա իբրև զգե՛տ զխաղաղութիւն, և իբրև զհեղեղա՛տ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա ՚ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն, և ՚ի վերայ ծնգաց իւրեանց գրգուիցեն*։ ¹³Որպէս մայր որ զմանուկ իւր գրգուիցէ, ա՛յնպէս գրգուեցից զձեզ. և յերուսաղէմ մխիթարեսցիք*։ ¹⁴և տեսցիք և խնդասցեն սիրտք ձեր, և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճասցին. և ծանիցի ձեռն Տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի՛ անհաւատիցն։ ¹⁵Ձի ահաւասիկ Տէր իբրև զհո՛ւր եկեսցէ, և կառք նորա իբրև զմրրի՛կ. հատուցանել սրտմտութեամբ զհատուցումն իւր, և բոցով հրոյ զարհամարհանս իւր։ ¹⁶Ձի ՚ի հուր Տեառն դատեսցի երկիր ամենայն, և ՚ի սո՛ւր նորա ամենայն մարմին. բազումք եղիցին վիրաւորք ՚ի Տեառնէ*, ¹⁷որ սրբինն և մաքրին ՚ի պարտէզս և ՚ի սրահս իւրեանց. որ ուտեն միս խոզենի՝ և զգարշելիսն՝ և զմուկնն, ՚ի միասին սատակեսցին նոքա՝ ասէ Տէր։ ¹⁸Եւ ես զգործս նոցա և զխորհուրդս նոցա գիտեմ։ Գամ ժողովել զամենայն ազգս և զլեզուս. եկեսցեն և տեսցեն զփառս իմ. ¹⁹և թողից ՚ի վերայ նոցա նշան։ Եւ առաքեցից ՚ի նոցանէ փրկեալս յազգս. ՚ի Թարսիս, և ՚ի Փուղ, և ՚ի Լուղ, և ՚ի Մոսոգ, և ՚ի Թոբէլ, և յԵլլադա, և ՚ի կղզիս հեռաւորս՝ որոց չիցէ՛ լուեալ զանուն իմ, և ո՛չ ևս տեսեալ զփառս իմ. և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ ՚ի մէջ ազգաց*։ ²⁰Եւ ածցեն զեղբարս իւրեանց յամենայն ազգաց պատարա՛գ Տեառն. հեծեալս կառօք՝ հանդերձ պալարակապ երիվարօք հովանոցօք ՚ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ասէ Տէր։ Որպէս մատուցին ինձ որդիքն Իսրայէլի զպատարագս իւրեանց սաղմոսիւք ՚ի տա՛ն Տեառն*։ ²¹Եւ ՚ի նոցանէ առի՛ց ինձ ՚ի քահանայս և ՚ի Ղևտացիս՝ ասէ Տէր։ ²²Ձոր օրինակ երկինք նոր՝ և երկիր, զոր ե՛սն առնեմ կալ առաջի իմ, ասէ Տէր. նո՛յնպէս կացցէ զաւակն ձեր*։ ²³Եւ եղիցի ամիս յամսոյ՝ և շաբաթ ՚ի շաբաթ՝ եկեսցէ ամենայն մարմին երկիր պագանել առաջի իմ յերուսաղէմ՝ ասէ Տէր Աստուած։ ²⁴Եւ ելցեն՝ և տեսցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց. զի որդն նոցա ո՛չ վախճանեսցի, և հուր նոցա ո՛չ շիջցի. և եղիցին ՚ի տեսիլ ամենայն մտեղեաց*։

Կատարեցաւ Մարգարէութիւնն Եսայայ*

* *Ոմանք.* Եւ կշտապի՛նդ վայելեցէք։

* *Ոմանք.* Ձմանկունս դորա ՚ի։

* *Ոմանք.* Որպէս մայր զմանուկ իւր։

* *Օրինակ մի.* Ձի հուր Տեառն դատես՞։

* *Այլք.* Եւ ՚ի Մոսոք և ՚ի Թո՞։ *Բազումք.* Եւ ոչ տեսեալ զփա՞։

* *Ոսկան.* Երիվարօք և հովանոցօք։

* *Ոմանք յաւելուն.* Եւ երկիր նոր զոր։

* *Օրինակ մի.* Եւ եղիցի տեսիլ ամենայն։

* *Ի վախճանի՝ ոմանք ունին.* Կատարեցաւ Եսայի Մարգարէ։ *Յօրինակին մերում յաւարտ իւրաքանչիւր մարգարէութեանց յարին համառօտ պատմութիւնք նոցին մարգարէից, զորով և զանց առնեն բազումք. իսկ մեք ՚ի յաւելուած մատենիս թողումք կարգել և զայնոսիկ։*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԳԱՐԵԻՑՆ

Մեծ են շնորհք մարգարեութեան՝ և յայտնապէս աստուածային, զի անյայտից իրաց է գիտութիւն որք ո՛չ են ՚ի միջի, կամ զի չն ևս են եղեալ՝ այլ յետոյ են լինելոց. կամ ՚ի ներկայ ժամանակի ծածուկ ՚ի մարդկանէ, կամ անցելովքն մոռացեալ, կամ բնաւ անծանօթ մնացեալ. որոց գիտութիւնն միայն Աստուծոյ, և որոց նա յայտնէ՝ որք են մարգարէքն: Այսու աստուածօղէն շնորհիւ յայտնի էր Աստուած ՚ի Հրէաստան և յԻսրայէլ. և որպէս զտխրութիւն գիշերոյ աստեղբք, և զԻսրայէլ բազմութեամբ մարգարէիցն մխիթարէր. չորս առաւօտացոյց ՚ի մէջ ժողովրդեանն՝ ՚ի յայտնի ցուցումն աստուածութեանն իւրոյ, և ՚ի խրատ զգուշութեան ժողովրդեանն: Այլ ո՛չ ամենեքեան նոքա գիրս գրեցին. թպէտ և բազմաց ՚ի նոցանէ չեն գրեանք ՚ի միջի. և զի բազումք էին պարք մարգարէից առ Սամուէլիւ՝ ևս և առ Եղիայիւ և Եղիշէիւ, գիրք Թագաւորացն և Մնացորդացն ցուցանեն: Որոց բազմաց, թպէտ և ո՛չ գիրք և ո՛չ մատեանք. այլ բանք ինչ կամ իրք մարգարեականք յիշատակին ՚ի գիրս. որպէս այրն Աստուծոյ որ ՚ի վերայ սեղանոյն ՚ի Բեթէլ առ Յերոբովամաւ. և Սամեաս առ Հոբոբովամաւ, Ազարիաս և Անանիաս առ Ասայիւ. Ոզիէլ առ Յովսաբատաւ, առ որով և Միքիաս՝ ՚ի Սամարիա. և որ կառափնատել ետ զինքն առ Աքաաբաւ, և Ովդեդ առ Աքազաւ. և այլք բազումք որոց անուանքն չեն յայտնի: Իսկ երկոտասան մարգարէքս՝ որոց այս գիրք ՚ի մի գումարեալ, ո՛չ թէ զի ՚ի միում ժամանակի եղեն նոքա, այլ կամ վասն սակաւութեան գրոցն, զի չափ և հասակ առցէ գրոց ՚ի մի եդան. կամ վասն այլ ինչ խորհրդոյ: Չի ահա ժամանակաւ հեռացեալք են ՚ի միմեանց՝ թպէտ և ո՛չ ամենեքեան. քանզի երևի Աբդիու յաւուրս Աքաաբու կանխագոյն քան զՅովնան. իսկ Յովնան՝ ժամանակաւ ինչ կանխագոյն քան զՈվսէէ և զԱմնովս՝ որք առ Եսայաւ. առ որովք ապա և Միքիաս. և ապա Յովէլ և Նաւում առ Եզեկիաւ. և տե՛ս զի այլ է այս Միքիա ՚ի Յուդաս քան զայն որ առ Աքաաբու ՚ի Սամարիա: Իսկ Սոփոնիա յաւուրս Յովսիա. և Ամբակում հուպ առ դարձին, որ և զճաշն տարաւ Դանիէլի: Իսկ Անգէոս և Չաքարիաս և Մաղաքիաս՝ զկնի դարձին ընդ Չորաբաբիլի: Յա՛տ եղև՝ զի կանխագոյն է ՚ի սոսա Աբդիու քան զՅունան. և յետ սոցա Ովսէ՝ որ առաջին է գրոցս. իսկ յաւուրցն անտի Աքաաբու առ որով Աբդիու. և ցՉորաբաբէլ՝ առ որով Մաղաքիաս, չորեքհարիւր և հնգետասան ամք են ՚ի միջի, զկնի որոյ դադարեցին մարգարէքն յԻսրայէլէ մինչև ցՅովհաննէս. այլ ՚ի միջի աստ են իրքն Եսթերայ և Մակաբայեցիքն: Այլ իւրաքանչիւրոք յերկոտասանիցս՝ են որ բանիւք մարգարեացան զլինելոցն, և են որք իրօք նշանակեցին: Որպէս

ա. Ովսէէ՝ հրամանաւ Աստուծոյ ա՛ռ զկինն պոռնիկ՝ յորմէ ծնաւ մանկունս, ՚ի դէմս Աստուծոյ, որ ա՛ռ իւր ՚ի հնումն զպոռնկեալն Իսրայէլի, և ՚ի նորումս զհեթանոսս:

բ. Եւ Ամնովս՝ զդիպուածս աւուր խաչին Քրիստոսի՝ բանիւ, թէ՛ Մտցտ արեգակն ՚ի միջօրէի:

գ. Եւ Միքիաս՝ ցուցանէ զտեղի ծննդեանն Քրիստոսի, թէ՛ Դու Բեթղահէն, ՚ի քէն Ելցէ իշխան:

դ. Եւ Յովէլ՝ գէշս Յոգւոյն Սրբոյ՝ ՚ի վերնատանն:
ե. Եւ Աբդիու՝ ՚ի դէմս Եղովմայեցւոց զկործանումն հպարտութեան դիւաց:
զ. Եւ Յովնան՝ իջնամբն և ելիւքն ՚ի խորոց՝ զերեքօրեայ յարութիւնն Քրիստոսի:
է. Եւ Նաուում՝ զքարոզութիւն առաքելոցն. և ՚ի դէմս Նինուէի զկործանումն դժոխաց:
ը. Եւ Ամբակում՝ վասն գալստեանն Քրիստոսի, և հաւատովք արդարեցելոցն. և վասն Քրիստոսի ՚ի մէջ աւագակացն խաչելոյ:
թ. Սովոնիաս՝ վասն յարութեանն Քրիստոսի, և հաւատացելոցն ՚ի նա:
ժ. Անգէոս՝ յետ դարձին ՚ի Բաբելոնէ վասն շինութեան տաճարին՝ ՚ի խորհուրդ եկեղեցւոյ, և վասն միւսանգամ գալստեանն Քրիստոսի, և անշարժ արքայութեանն:
ժա. Չաքարիաս՝ վասն ՚ի յովանակի նստելոյն Քրիստոսի, և վասն չարչարանացն աւուր:
ժբ. Մաղաքիաս՝ վասն առաջին գալստեանն Քրիստոսի, թէ՛ Յանկարծակի գայ Տէրն ՚ի տաճարն. և վասն երկրորդին թէ՛ Ո՛վ նմա ժուժկալեսցէ:

Գլուխք Ովսէի մարգարէի

ա. Հրամայի՛ առնուլ կին պոռնիկ, և զորդիսն որ ծնանիցին՝ անուանել Յեզրայէլ, և Ոչ ժողովուրդ իմ և Չողորմեալ:
բ. Պատուհասէ զժողովուրդն վասն պոռնկութեան, և կանխաւ գուշակէ զկորուստն, և դիւրութիւնս ինչ յետ կորստեանն: Իսկ ուխտեցից նոցա ուխտ՝ հանդերձ գազանօք անապատի, և խօսեցայց զքեզ ինձ հաւատովք՝ մարթի ՚ի հաւատացեալսն Քրիստոսի առնուլ:
գ. Հրաման առնու առնել կին շուն, այնու զաւերն Հրէաստանի յայտնէ:
դ. Պատուհասէ զժողովուրդն և զքահանայսն վասն բազում և մեծամեծ մեղաց. բամբասէ զնոսա յարբեցութիւն, և ՚ի շնութիւն և ՚ի ցասումն:
ե. Պատուհասէ զի բարձին յԱստուծոյ գոյս, և յԱսորեստանեայսն ապաստան եղեն, և յեգիպտացիսն պանծային. և կանխաւ գուշակէ նոցա զպատիժս:
զ. Ասէ թէ պատերազմաւ ճոխացաւ Եփրեմ. և չարկանէ յօգուտ զաջողութիւն:
է. Տուցանէ Աստուած զիր խնամս առ Իսրայէլացիս, և զնոցա ապախտաւորութիւնն առ նա. և կանխաւ գուշակէ նոցա զվիշտս:

ԳԻՐՔ ՏԵՍԼԵԱՆՑ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷԻՑ*

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՎՍԵԱՅ

* Յոմանս՝ վերնագիրս այս. Գիրք տեսլեանց, դնի ՚ի սկիզբն նախադրութեան: Եւ այս օրինակք ՚ի վերնագիր իւրաքանչիւրոց դնեն. Ովսէ մարգարէ. Ամովս մարգարէ. և այլն:

Գլուխ Ա

¹Քան Տեառն որ եղև առ Ովսէէ որդի Երեայ. Յաւուրս Ոգիայ, և Յովաթամու, և Աբազու, և Եգեկիայ՝ թագաւորաց Յուդայ. և յաւուրս Յերոբովամայ որդւոյ Յովասայ թագաւորի Իսրայէլի:

Ա ²Սկիզբն բանից Տեառն առ Ովսէէ: Եւ ասէ Տէր ցՈվսէէ. Գնա ա՛ռ դու քեզ կին պոռնկութեան, և որդի՛ս պոռնկութեան. զի պոռնկելով պոռնկեսցի երկիր ՚ի Տեառնէ՛: ³Եւ չոգաւ ա՛ռ զԳոմեր՝ դուստր Դաբելայիմայ. և յղացաւ՝ և ծնաւ մնա որդի՛: ⁴Եւ ասէ ցնա Տէր. Կոչեա՛ զանուն մորա Յիզրայէլ. քանզի սակաւիկ մեւս ևս խնդրեցից զարիւնն Յիզրայէլի ՚ի տանէն Յէուայ. և դադարեցուցի՛ց զթագաւորութիւն տանն Իսրայէլի՛: ⁵Եւ եղիցի յաւուր յայնմիկ խորտակեցի՛ց զաղեղն Իսրայէլի ՚ի ծործորն Յիզրայէլի: ⁶Յղացաւ միւսանգամ, և ծնաւ դուստր. և ասէ ցնա. Կոչեա՛ զանուն մորա Չողորմեալ. զի ո՛չ ևս յաւելից ողորմել տանն Իսրայէլի. այլ ընդդէ՛մ կացից մոցա հակառակութեամբ՛: ⁷Բայց որդւոցն Յուդայ ողորմեցայ՛ց, և փրկեցից զնոսա Տերամբ Աստուծով իւրեանց. և ո՛չ փրկեցից զնոսա աղեղամբ, և ո՛չ սրով, և ո՛չ պատերազմաւ. ո՛չ կառօք, և ո՛չ երիվարօք, և ո՛չ հեծելօք՛: ⁸Եւ մեկնեաց ՚ի ստենէ զՉողորմեալն: Դարձեալ յղացաւ և ծնաւ որդի: ⁹Եւ ասէ. Կոչեա՛ զանուն մորա՝ Ո՛չ ժողովուրդ իմ. զի դուք չէ՛ք ժողովուրդ իմ. և ես ո՛չ ինչ եմ ձեր: ¹⁰Եւ էր թիւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւա՛զ ծովու անչափ և անթիւ. և եղիցի ՚ի տեղւոջ յորում ասացաւ՝ Ո՛չ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին մորա Որդիք Աստուծոյ կենդանւոյ՛: ¹¹Եւ ժողովեսցին որդիքն Յուդայ և որդիքն Իսրայէլի ՚ի միասին. և դիցեն իւրեանց իշխանութիւն մի. և ելցեն յերկրէ անտի. զի մե՛ծ է օրն Յեզրայէլի:

Գլուխ Բ

Բ ¹Ասացէ՛ք ցեղբայր ձեր՝ ժողովուրդ իմ. և ցքոյրն Չողորմեալ՛. ²Դատեցարո՛ւք ընդ մօրն ձերում, դատեցարո՛ւք. զի այն ո՛չ է իմ կին, և ես ո՛չ եմ այր մորա. և բարձից զպոռնկութիւն մորա յերեսաց իմոց, և զշնութիւն մորա ՚ի միջոյ ստեանց իւրոց՛: ³Ձի արարից զնա մերկ, և կացուցից զնա ըստ աւուրց ծննդեան իւրոյ. և եղից զնա իբրև զանապատ, և կարգեցից զնա իբրև զերկի՛ր

** Օրինակ մի ՚ի բաց թողեալ զվերնագիր առաջին համարոյն՝ այսպէս սկիզբն առնէ մարգարէութեանս. Եւ եղև բան Տեառն առ Ովսէէ. և ասէ Տէր ցՈվսէէ զնա՛ ա՛ռ դու առ քեզ կին: ՚ի բազումս պակասի. Կին պոռնկութեան, և որդիս պոռնկութեան:*
** Բազումք. Եւ չոգաւ և ա՛ռ զԳոմեր զդուստր:*
** Յօրինակին. Եւ ասէ ցնոսա Տէր: Այլք. Յեզրայէլ... Յեզրայէլի: Ոմանք. ՚ի տանէն Յահովայ. և թագաւորեցուցից զթագաւորութիւն:*
** Ոմանք. Ընդդէմ կացից սոցա:*
** Ոմանք. Եւ ոչ կառօք:*
** Ոմանք յաւելուն. Իբրև զաւազ առ ափն ծովու:*
** Բազումք. Եւ ցքոյրն ձեր Ողորմեալ:*
** Այլք. Ձի նա ոչ է իմ կին: Ոմանք. ՚ի միջոյ ստեանց իմոց:*

անջուր, և սպանից գնա՝ ի ծարաւոյ: ⁴Եւ որդւոց նորա ո՛չ ողորմեցայց, զի որդիք պոռնկութեան են: ⁵Ձի պոռնկելով պոռնկեցաւ մայր նոցա, և յամօք արար որ ծնաւն զնոսա. զի ասաց. Երթայց զհետ հոմանեաց իմոց, ոյք տայցեն ինձ զհաց իմ և զջուր, և զհանդերձ, և զկտաւ իմ, և զգինի իմ, և զձէք իմ, և զամենայն ինչ որ պիտո՛յ է ինձ*:

⁶Վասն այնորիկ ե՛ս փակեցից զճանապարհս նորա պատնիշօք, և առականեցից զճանապարհս նորա, և զշաւիղս իւր մի՛ գտցէ: ⁷Եւ ընթացի զհետ հոմանեաց իւրոց, և մի՛ հասցէ նոցա. խնդրեսցէ զնոսա՝ և մի՛ գտցէ զնոսա. և ասացէ. Երթայց և դարձայց առ այրն իմ առաջին, զի յայնժամ բարի էր ինձ քան արդ: ⁸Եւ նա ո՛չ գիտաց՝ թէ ես ետու նմա զցորեանն, և զգինին, և զձէքն, և բազմացուցի նմա արծաթ. և նա արար արծաթեղէնս, և ոսկեղէնս յաճախեաց Բահաղու: ⁹Վասն այնորիկ դարձուցից՝ և առից զցորեանն իմ ՚ի ժամանակի իւրում՝ և զգինին իմ, և զձէքն ՚ի ժամանակի իւրեանց. և զերծից՝ ՚ի նմանէ զհանդերձ իմ, և զկտաւ իմ. զի մի՛ ծածկեսցէ զճանականս իւր*:

¹⁰Եւ արդ յայտնեցից զպղծութիւն նորա առաջի հոմանեաց իւրոց. և ո՛չ որ հանիցէ զնա ՚ի ձեռաց իմոց: ¹¹Եւ դարձուցից զամենայն բարեկենդանութիւնս նորա, և զտօնս նորա, և զամսագլուխս նորա, և զշաբաթս նորա, և զամենայն վաճառս նորա*:

¹²Եւ ապականեցից զայգիս նորա՝ և զթգենիս նորա. զոր միանգամ ասաց՝ թէ կապէնք իմ են այս՝ զոր ետուն ինձ հոմանիքն իմ. և եղի՛ց զայն ՚ի վկայութիւն. և կերիցեն զայն գազանք անապատի՝ և թռչունք երկնից՝ և սողունք երկրի*:

¹³Եւ խնդրեցից ՚ի նմանէ վրեժ զաւուրցն Բահաղիմայ՝ յորս զոհէր նոցա. դներ գինդս, և արկանէր զքառամանեակս իւր, և երթայր զհետ հոմանեաց իւրոց. և զիս մոռացեալ էր՝ ասէ Տէր*:

¹⁴Վասն այնորիկ ահաւասիկ ես ստերիւրեցի՛ց զնա, և կարգեցի՛ց զնա իբրև զանապատ. և խօսեցայ՛ց ՚ի սիրտ նորա*:

¹⁵Եւ տաց նմա զստացուածս իւր անտի. և զծործորն Աքովրայ՝ բանալ զմիտս նորա. և խոնարհեսցի անդ ըստ աւուրց տղայութեան իւրոյ, և ըստ աւուրց ելանելոյ նորա յերկրն Եգիպտացոց*:

¹⁶Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր, կոչեսցէ զիս Այր իմ, և ո՛չ կոչեսցէ զիս Բահաղիմ*:

¹⁷Եւ բարձից զանուանս Բահաղիմայ ՚ի բերանոյ նորա. և մի՛ ևս յիշեսցին անուանք նոցա*:

¹⁸Եւ եղից նոցա ուխտ յաւուր յայնմիկ հանդերձ գազանօք անապատի՝ և թռչնովք երկնից՝ և սողնօք երկրի. և զաղեղն, և զտուներ, և զճակատամարտ խորտակեցի՛ց յերկրէ. և բնակեցուցից զքեզ յուսով: ¹⁹Եւ խօսեցայց զքեզ ինձ յաւիտեան. և խօսեցայց զքեզ ինձ արդարութեամբ՝ և իրաւամբք՝ և ողորմութեամբ՝ և գթութեամբք. ²⁰և խօսեցայց զքեզ ինձ հաւատովք. և ծանիցես զՏէր: ²¹Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր, լուայց ես երկնից. և երկինք լուիցեն երկրի. ²²և երկիր լուիցէ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա լուիցեն Յեզրայելի. ²³և սերմանեցից զնա ինձ ՚ի վերայ երկրի: Եւ

* *Ոմանք.* Ոյք տացեն ինձ:

* *Ոմանք.* Վասն այնորիկ դարձ... զի մի՛ ծածկեսցէ զառականս իւր:

* *Ոմանք.* Եւ զամսագլուխս նորա:

* *Օրհնակ մի.* Ձի միանգամ ասաց՝ եթէ կա՛: *Ուր Ոսկան.* Այսոքիկ զորս ետուն:

* *Ոմանք.* Եւ արկանէր զքառամանեակն իւր:

* *Ոմանք.* Եւ խօսեցայց ՚ի սրտի նորա:

* *Ոմանք.* Եւ զծործորն Նաքովրայ:

* *Ոմանք.* Կոչեսցէ զիս այր իւր, և ո՛չ:

* *Ոմանք.* Յիշեսցի անուանք նոցա:

ողորմեցայց չողորմելոյն*։²⁴ և ասացից ցոչ ժողովուրդ իմ. ժողովուրդ իմ ես դու։ Եւ նա ասացէ. Տէր Աստուած իմ ես դու*։

3

Գլուխ Գ

Գ¹ Եւ ասէ ցիս Տէր դարձեալ. ասէ. Երբ դու և սիրեա՛ կին մի որ սիրիցէ զչարութիւն և իցէ շո՛ւն. որպէս սիրեաց Աստուած զորդիսն Իսրայէլի, և նոքա հայէին յաստուածս օտարս, և սիրէին կտապս չամչեղէ՛նս*։² Եւ վարձեցայ՝ ես հնգետասան արծաթոյ, և քոռի՛ միոջ գարւոյ և մարո՛ւ միոջ գինւոյ*։³ և ասե՛ն ցնա. Աւո՛ւրս բազումս նստցես դու ինձ՝ և ո՛չ ևս պոռնկեսցիս, և ո՛չ ևս եղիցես առն այլուն։⁴ Ձի աւո՛ւրս բազումս նստցին որդիքն Իսրայէլի առանց թագաւորի՝ և առանց իշխանի՝ և առանց պատարագաց՝ և առանց սեղանոյ՝ և առանց քահանայութեան՝ և առանց յայտնութեանց։⁵ Եւ յետ այնորիկ դարձցին որդիքն Իսրայէլի, և խնդրեսցեն զՏէր Աստուած իւրեանց, և զԴաւիթ արքայ իւրեանց. և զօրասցին ՚ի Տէր՝ և ՚ի բարութիւնս նորա յաւուրս կատարածի*։

4

Գլուխ Դ

Դ¹ Լուարո՛ւք զբանս Տեառն որդիք Իսրայէլի. զի դատաստան Տեառն է ընդ բնակիչս երկրի. զի ո՛չ գոյ ՚ի նոսա ճշմարտութիւն, և ո՛չ ողորմութիւն, և ո՛չ գիտութիւն Աստուծոյ ՚ի վերայ երկրի*։² Անէ՛ծք և ստութիւն և սպանութիւն, և գողութիւն՝ և շնութիւն հեղեալ ՚ի վերայ երկրի. և արիւն ընդ արիւնս խառնեն։³ Վասն այնորիկ սու՛գ առցէ երկիր. և նուաղեսցի ամենայն բնակչօք իւրովք, և գազանօք անապատի, և սողնովք երկրի, և թռչնովք երկնից. և ձկունք ծովու պակասեսցին*։⁴ Ձի ո՛չ ոք իցէ որ դատիցէ, և ո՛չ այն որ յանդիմանեսցէ։ Բայց ժողովուրդ իմ իբրև զքահանայն հակառակօղ*։⁵ Եւ տկարասցին ՚ի տուէ. և տկարասցի և մարգարէն ընդ քեզ. գիշերոյ նմանեցուցի զմայրն քո։⁶ Նմանեցաւ ժողովուրդ իմ այնմիկ՝ յորում ո՛չ գոյր գիտութիւն։ Ձի դու զգիտութիւն մերժեսցեր, մերժեսցից և ե՛ս զքեզ զի մի՛ քահանայացիս ինձ. և մոռացար զօրէնս Աստուծոյ քոյ, մոռացայց և ես զորդիսն քո*։⁷ Ըստ բազմութեան իւրեանց՝ նոյնպէս և մեղան ինձ. զփառս նոցա յանարգութիւն հասուցից։⁸ Չմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն, և անօրէնութեամբք իւրեանց առցեն զանձիմս իւրեանց*։⁹ Եւ եղիցի որպէս ժողովուրդն՝ նոյնպէս և քահանայն. և

* Ոմանք. ՚ի վերայ երկրիդ։

* Ոմանք. Եւ նա ասէ. Տէր Աստուած իմ։

* Ոմանք. Եւ սիրեն կտապս չամչ՛։

* Ոմանք յաւելուն. Ես ինձ հնգետա՛։

* Ոմանք. Եւ ՚ի բարձրութիւնս նորա յաւուր կատարածի։

* Ոմանք. Լուարո՛ւք զբան Տեառն որ՝... ո՛չ գոյ ճշմարտութիւն, ո՛չ ողորմ։

* Ոմանք. Վասն այնորիկ սուգ առ՛։

* Ի լուս՛. Որ յանդիմանիցէ. համաձայն բազմաց ՚ի բնար՛։

* Ոմանք. Ձի մի՛ ևս քահանայացիս։

* Ոմանք. Եւ անիրաւութեամբք իւրեանց առ՛։

խնդրեցից վրէժ՝ի նմանէ. ըստ ճանապարհաց նորա և ըստ խորհրդոց նորա հատուցից նմա: ¹⁰Կերիցեն՝ և մի՛ յագեսցին. պոռնկեցան՝ և մի՛ յաջողեսցին. զի զՏէր թողին, անխտիր լինել ՚ի պոռնկութիւն: ¹¹Եւ զգինի և զարբեցութիւն ընկալա՛ւ սիրտ ժողովրդեան իմոյ: ¹²Ի քուայս հարցանէին՝ և գաւազանօք նորա պատմէին նմա. այսո՛վ պոռնկութեան մոլորեցան, և պոռնկեցան յԱստուծոյ իւրեանց*։ ¹³Ի գլուխս լերանց զոհէին՝ և ՚ի վերայ բլրոց զենուին, ՚ի ներքոյ կաղնեաց՝ և կաղամախեաց՝ և վարսաւոր ծառոց. զի հաճոյ՝ թուէր հովանին: Վասն այնորիկ պոռնկեցին դստերք ձեր, և շնասցին հարսունք ձեր*։ ¹⁴Եւ ո՛չ արարից այց դստերաց ձերոց՝ յորժամ պոռնկեցցին, և հարսանց ձերոց՝ յորժամ շնասցին. զի նոքա ընդ պոռնիկս թաթաւէին, և ընդ նուիրեալսն զոհէին. և ժողովուրդն քո որ ո՛չ իմանայր զայն՝ խառնակէր ընդ պոռնիկս*։ ¹⁵Բայց դու Իսրայէլ մի՛ տգէտ լինիր. և Յուդա՝ մի՛ մտանէք ՚ի Գաղգաղա, և մի՛ ելանէք ՚ի տուն Ովնայ. և մի՛ երդնուցուք ՚ի Տէր կենդանի*։ ¹⁶Զի իբրև երինջ լծընկէ՛ց եղև ինձ Իսրայէլ. արդ՝ արածեսցէ զնոսա Տէր իբրև զգառն յանդորրու*։ ¹⁷Յաղորդ կռոց եփրեմ. եդ անձին իւրում զայթազութիւն. ցանկացան կռոցն Քանանացւոց. ամենեքեան սիրեցին զգինի՝ թողէք նմա*։ ¹⁸Պոռնկեցան պոռնկութեամբ. սիրեցին զանարգութիւն ՚ի հպարտութենէ նորա: ¹⁹Մորիկ հողմոյ շնչեսցէ ՚ի թևս նորա. և ամաչեսցեն ՚ի սեղանոց իւրեանց*։

5

Գլուխ Ե

¹Լուարո՛ւք զայս քահանայք, և անսացէք տունդ Իսրայէլի. և տուն թագաւորիդ ունկնդիր լերուք. քանզի ընդ ձե՛զ է դատաստան. զի որոգայթ եղերուք դիտանոցին, և իբրև զվարձ ձգեալ ՚ի գլուխ գահաւանդի*։ ²Չոր որսորդք յորս հաստատեցին: Ե՛ս եմ խրատիչ ձեր: ³Ես ծանեայ զեփրեմ, և Իսրայէլ ո՛չ է ՚ի բացեայ յինէն. քանզի այժմ պոռնկեցա՛ւ եփրեմ, և պղծեցա՛ւ Իսրայէլ*։ ⁴Ո՛չ ետուն զխորհուրդս իւրեանց դառնալ առ Աստուած իւրեանց. զի այս պոռնկութեան է ՚ի նոսա. և զՏէր ո՛չ ծանեան*։ ⁵Եւ խոնարհեսցի հպարտութիւն Իսրայէլի յերեսս նորա. և Իսրայէլ և եփրեմ տկարացին յանօրէնութիւնս իւրեանց. տկարացի՛ և Յուդայ ընդ նոսա: ⁶Յորձիւք և պատարագօք երթիցեն խնդրել զՏէր, և մի՛ գտցեն զնա. զի խոյս ետ ՚ի նոցանէ*։ ⁷Որ զՏէր թողին. քանզի որդիք օտարք ծնան նոցա. արդ՝ այժմ կերիցէ՛ զնոսա երևիլ, և զվիճակս նոցա:

* *Ոմանք.* ՚ի քուայս հարցանէին, և գաւազանօք պատ՝... այսու պոռնկութեամբ մոլորեցան:

* *Ոմանք.* Եւ կաղամախեաց... զի հաճոյ լինէր հովանին:

* *Յօրինակին ՚ի բնաբանի պակասեր՝ և ՚ի լուս՝.* նշանակի ՚ի մէջ բերել. Եւ ժողովուրդն քո որ ոչ իմանայր: *Ուր ոմանք.* քո ոչ իմանայր:

* *Ոմանք.* Եւ մի՛ երդնուք ՚ի Տէր կեն՝:

* *Ոմանք.* Արածեսցէ զնոսա իբրև զխաշն յանդորրու:

* *Ոմանք.* Եդ անձին իւրում զայթազութիւն կռոցն Քանանացւոց:

* *Ոմանք.* ՚ի սեղանոյ իւրեանց:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ գահաւանդի, *նշանակի՝* տաբիրոն:

* *Յօրինակին.* Ես ծնայ զեփրեմ. և Իսրայէլ: *Ոմանք.* Ո՛չ է ՚ի բացէ յինէն:

* *Օրինակ մի.* Զի այս ՚ի պոռնկութենէ է ՚ի նոսա:

* *Ոմանք.* Եւ ոչ գտցեն զնա... ՚ի նոցանէն:

Ե՞Փո՞ղ հարէք ՚ի վերայ բլրոց. գոչեցէ՞ք ՚ի վերայ բարձանց. քարո՞՛գ կարդացէք ՚ի տուն Ովնայ. թէ յիմարեցաւ Բենիամին*⁹ և Եփրեմ եղև յապականութիւն. յաւուրս յանդիմանութեան ՚ի մէջ ազգաց Իսրայէլի ցուցի՛ զհաւատարմութիւնս*¹⁰:
¹⁰Եղեն իշխանք Յուդայ՝ որպէս որ փոփոխեն զսահմանս. ՚ի վերայ նոցա հեղից իբրև զջո՛ւր զասպատակ իմ: ¹¹Ձրկեաց Եփրեմ զոսոխ իւր, և կոխեաց զիրաւունս. զի սկսաւ երթալ՝ զհետ սնոտեաց: ¹²Եւ ես իբրև զխռո՛վ եղէց Եփրեմի, և իբրև զխայթո՛ց տանն Յուդայ: ¹³Ետես Եփրեմ զախտ իւր, և Յուդա զցաւս իւր. և զնաց Եփրեմ առ Ասորեստանեայս, և առաքեաց հրեշտակս առ արքայն Յարիմայ. և նա ո՛չ կարաց փրկել զձեզ, և ո՛չ հանգուցանել զձեզ ՚ի ցաւոց: ¹⁴Ձի ե՛ս եմ իբրև յաւազ ՚ի վերայ Եփրեմի, և իբրև զառեւծ՝ ՚ի վերայ տանն Յուդայ. և յարձակեցայց և յափշտակեցից զնոսա. առից, և ո՛չ ոք իցէ որ փրկիցէ*¹⁵:
¹⁵Գնացից և դարձայց ՚ի տեղի իմ, մինչև ապականեսցին: Եւ խնդրեսցեն զերեսս իմ

6

Գլուխ Զ

¹Ի նեղութեան իւրեանց. կանխեսցեն առ իս և ասացեն. Դարձցո՛ւք և երթիցո՛ւք առ Տէր Աստուած մեր, ²զի նա եհար զմեզ՝ և նոյն բժշկեսցէ. վիրաւորեաց՝ և պատեսցէ զմեզ. ³և ողջացուցէ՛ զմեզ՝ յետ երկուց աւուրց, և յաւուրն երրորդի յարիցուք և կեցցուք առաջի նորա. և ծանիցուք և զհե՛տ երթիցուք ճանաչել զՏէր: Իբրև զառաւօտ պատրաստական գտցուք զնա. և եկեսցէ մեզ իբրև զանձրև՝ կանուխ և զանագան յերկրի*⁴:
⁴Ձի՞նչ արարից ընդ քեզ Եփրեմ, և կամ զի՞նչ անցուցից ընդ քեզ Յուդայ. զի ողորմութիւն ձեր իբրև զամպ վաղորդայնի, և իբրև զցօղ առաւօտու որ անցանէ*⁵:
⁵Վասն այնորիկ հնձեցի զմարգարէս ձեր, և կոտորեցի՛ զնոսա բանիւ բերանոյ իմոյ. և իրաւունք քո իբրև զլոյս ծագեսցեն: ⁶Ձի զողորմութիւն կամիմ, և ո՛չ զպատարագ. և զգիտութիւն Աստուծոյ՝ քան զողջակէզս: ⁷Եւ նոքա եղեն իբրև զմարդ ոք որ անցանէ զուխտիւ. արդ արհամարհեաց զիս*⁸:
⁸Գաղաադ, քաղաք որ առնէ սնոտիս, և խռովէ զջուրս. ⁹և զօրութիւն քո իբրև զառն աւազակի: Թաքուցին քահանայք զճանապարհս. սպանին զՍիկիմ, զի զանօրէնութիւն գործեցին*¹⁰:
¹⁰Ի տանն Իսրայէլի: Տեսի զարհաւիրս. արդ պոռնկեցաւ Եփրեմ, և պղծեցաւ Իսրայէլ*¹¹:
¹¹և Յուդա սկիզբն արար կթոց. ՚ի դարձուցանել ինձ զգերութիւն ժողովրդեան իմոյ

**Ի լուս՝. ՚ի վերայ՝* Ի վերայ բլրոց, *նշանակի՝* Ի Յռամայ. *զոր ոմանք այսպէս ունին ՚ի բնաբանի.* փող հարէք ՚ի Յռամայ ՚ի վերայ բլրոց:

**Ոմանք.* Ի մէջ Իսրայէլի ցուցի զհա՛:

**Ի լուս՝.* Իբրև յովազ. *համաձայն ոմանց ՚ի բն՝:*

**Ոմանք.* Յարիցուք և կացցուք առաջի:

**Ոմանք.* Իբրև զամպ վաղորդայնոյ:

**Ի լուս՝.* Անդ արհամարհ՝. *համաձայն այլոց ՚ի բնաբ՝:* *Ոմանք.* Արհամարհեցին զիս: (8)
 Գաղաադ քաղաք:

**Ոմանք.* Քահանայք զճանապարհ:

**Ոմանք.* Անդ պոռնկեցաւ Եփրեմ:

Գլուխ Է

¹Ի բժշկել ինձ զԻսրայել. և յայտնեսցին չարիքն Եփրեմայ և չարիքն Շամրնի, զի արարին ստութիւն. զո՞ղ մտցէ առ նա, և աւագակ մերկացուցէ ՚ի ճանապարհս նորա*։ ²Զի մրմնջեսցեն ՚ի միասին, որպէս մրմնջեն ՚ի միտս իւրեանց. զամենայն չարիս նոցա յիշեցի. արդ՝ պաշարեցին զնոսա խորհուրդք նոցա. յանդիման երեսաց իմոց եղեն*։ ³Չարեօք իւրեանց ուրախ արարին զթագաւորն, և ստութեամբ իւրեանց զիշխանս*։ ⁴Ամենեքին շնացեալք, իբրև զթոնիր վառեալ յեփել, բորբոքեալ ՚ի բոցոյ՝ և ՚ի զանգուածոյ ճարպոյ. մինչև խնորեսցին նոյն* ⁵աւուրք թագաւորաց ձերոց. սկսան իշխանք զայրանալ ՚ի զինւոյ. և ձգեսցին զձեռս իւրեանց ՚ի ժանտագործս*։ ⁶Գի բորբոքեցան իբրև զհնոց սիրտք նոցա յանիծանել զնոսա։ Զգիշերն ամենայն քնով յագեցաւ Եփրեմ. եղև առաւօտ՝ և բորբոքեցան իբրև զբոց հրոյ։ ⁷Ամենեքին ջեռան իբրև զհնոց վառեալ, և հո՛ւր եկեր զդատաւորս նոցա. ամենայն դատաւորք նոցա անկան, և ո՛չ ոք էր ՚ի նոցանէ որ կարդայր առ իս*։ ⁸Եփրեմ ընդ ժողովուրդս խառնակէր. և եղև Եփրեմ նկան չդարձուցեալ*։ ⁹Կերան օտարք զգօրութիւն նորա՝ և նա ո՛չ գիտաց։ Ծաղկեցին ալիք նորա, և նա ո՛չ զգաց*։ ¹⁰Եւ խոնարհեսցի հպարտութիւնն Իսրայելի յերեսս նորա. և ո՛չ դարձան առ Տէր Աստուած իւրեանց, և ո՛չ խնդրեցին զնա յամենայնի յայսմիկ։ ¹¹Եւ էր Եփրեմ իբրև զաղաւնի անմիտ՝ որոյ ո՛չ իցէ սիրտ. յեգիպտոս խրախուսէին, և առ Ասորեստանեայս գնացին։ ¹²Ո՛ւր և երթայցեն՝ արկից՝ ՚ի վերայ նոցա զվարմ իմ, և իբրև զթռչունս երկնից իջուցից զնոսա. և խրատեցից զնոսա համբաւով նեղութեան նոցա*։

Զ ¹³Վայ նոցա զի վազեցին զինև. և եղո՛ւկ են՝ զի ամպարշտեցան յիս։ Ե՛ս փրկեցի զնոսա և նոքա բամբասեսցին զիս սուտ, ¹⁴և ո՛չ աղաղակեցին առ իս սիրտք նոցա. այլ ողբացին յանկողինս իւրեանց. և ՚ի վերայ ցորենոյ և զինւոյ ցտէին. խրատեցան ինև* ¹⁵և ես զօրացուցի զբազուկս նոցա. և ՚ի վերայ իմ խորհեցան չարութիւն*։ ¹⁶Դարձան յոչինչ, և եղեն իբրև զաղեղն լարեալ. անկցին ՚ի սո՛ւր իշխանք նոցա, վասն անխրատութեան խստութեան լեզուի իւրեանց. զի այս անզգամութիւն նոցա յերկրին Եգիպտացւոց*։

* *Ոմանք*. Եւ յայտնեսցին չարիքն:

* *Ոմանք*. Մրմնջեն ՚ի սիրտս իւրե՛... չարիս նորա յիշեցի. արդ՝ պաշարեցին զիս խորի՛:

* *Ոմանք*. Ուրախ արարին զթագաւորս:

* *Ոմանք*. Մինչև խնորեսցի նոյն. և *ոմանք*. խնորեսցին ընդ նոյն:

* *Ի լուս՛*. Ընդ ժանտագործս. *համաձայն ոմանց ՚ի բն՛*: *Ուր և ոմանք*. Ձձեռս իւրեանց ժանդագործս:

* *Այլք*. Ամենայն թագաւորք նոցա անկան:

* *Ոմանք*. Ընդ ժողովուրդս իւր խառնակէր: *Ի լուս՛*. Նկան ոչ շրջեալ. *համաձայն ոմանց ՚ի բնար՛*:

* *Ոմանք*. Ծաղկեցին նորա ալիք:

* *Ոմանք*. Նեղութեանց նոցա:

* *Ոմանք*. Այլ ողբային յանկողինս:

* *Ի լուս՛*. Եւ ես ոչ զօրացուցի. *համաձայն ոմանց ՚ի բնար՛*:

* *Ոմանք*. Դարձան և յոչինչ. և եղեն իբրև զաղեղն ընդդէմ դարձեալ. անկցին:

Գլուխ Ը

¹Ի ծոցս նոցա իբրև գերկիր, և իբրև զարծուի՝ ի վերայ տանն Տեառն. փոխանակ զի անցին զուխտիւ իմով, և յօրէնս իմ ամպարշտեցան*։ ²Առ ի՛ս աղաղակեցեն. Աստուած՝ ծանեաք զքեզ։ ³Ձի Իսրայէլ դարձաւ ՚ի բարեաց. հալածեցին զթշնամի*։ ⁴Անձամբ թագաւորեցին՝ և ո՛չ ինն. տիրեցին և ո՛չ ցուցին ինձ. զարծաթ իւրեանց և զոսկի արարին իւրեանց կուռս զի սատակեցին։ ⁵Խորտակեա՛ զորթն քո Շամրին. բարկացաւ սրտմտութիւն իմ ՚ի վերայ նորա. մինչև յե՞րբ ո՛չ կարասցեն սրբել յԻսրայէլի*։ ⁶Եւ զայն հեւսն գործեաց՝ և ո՛չ է Աստուած. քանզի մոլորեցուցիչ է ո՛րթն քո Շամրին*։ ⁷Ձի խորշակահար սերմանեցին, և կործանումն նոցա ընկալցի զայն։ Որայ նոցա ո՛չ արասցէ զօրութիւն խիւսոյ. թէ և առնիցէ զայն՝ օտա՛րք կերիցեն։ ⁸Ընկղմեցա՛ւ Իսրայէլ. արդ ա՛յժմ եղև ՚ի մէջ ազգաց իբրև զանօթ անպիտան։ ⁹Ձի զնացին առ Ասորեստանեայս. զուարթացաւ առանձինն Եփրեմ, սիրեաց զկաշառս*։ ¹⁰Վասն այնորիկ մատնեցին ՚ի մէջ ազգաց։ Բայց ա՛յժմ ընկալայց զնոսա՛ և դադարեցեն փոքր մի յօծանելոյ թագաւորս և իշխանս։ ¹¹Ձի յաճախեաց Եփրեմ սեղանս. և եղեն նմա ՚ի մեղս սեղանքն սիրեցեալք։ ¹²Գրեցից ՚ի վերայ նոցա բազմութիւն. և կրօնք նորա յօտարոտի՛ս համարեցան*։ ¹³Սեղանքն սիրեցեալք. զի թէպէտ և զոհեցեն զոհս, և ուտիցեն զմիսն՝ Տէր ո՛չ ընկալցի զայն. արդ յիշեսցէ զանիրաւութիւնս նոցա, և զանօրէնութեանց նոցա վրէժ խնդրեսցէ. զի նոքա յեգիպտո՛ս դարձան, և ՚ի մէջ Ասորեստանեայց պղծութիւնս կերիցեն*։ ¹⁴Սոռացա՛ւ Իսրայէլ զԱրարիչ իւր, և շինեցին մեհեանս. և յաճախեաց Յուդայ քաղաքս պարսպաւորս. և առաքեցից հուր ՚ի քաղաքս նորա, և կերիցէ՛ զհիմունս նոցա*։

Գլուխ Թ

¹Մի՛ խնդար Իսրայէլ, և մի՛ ուրախ լինիր որպէս ժողովուրդք երկրի. զի պոռնկեցար յԱստուծոյն քունմէ. սիրեցեր զկաշառս ՚ի վերայ ամենայն կալոց ցորենոյ։ ²Կա՛լք և հնծանք զնոսա ո՛չ ծանեան, և զինի ստեա՛ց նոցա։ ³Ո՛չ բնակեցին յերկրի Տեառն. բնակեցէ Եփրեմ յեգիպտոս. և ՚ի մէջ Ասորեստանեայց պիղծս կերիցեն*։ ⁴Ո՛չ նուիրեցին Տեառն զինի, և ո՛չ քաղցրացուցին նմա. զոհք նոցա իբրև զհա՛ց սգոյ եղիցի նոցա. ամենեքեան որ

* *Ոմանք.* Ի ծոց նոցա իբրև... զարծուի ՚ի տան Տեառն։

* *Ի լուս՝.* Դարձաւ ՚ի բարեաց. զհետ չոգան թշնամեաց. *համաձայն ոմանց ՚ի բն՝.* յոր և յաւելուն. թշնամեաց *զթշնամի։ Ուր Ոսկան.* Հալածեցին զնա թշնամիք։

* *Ոմանք.* Իմ ՚ի վերայ նոցա... ո՛չ կարասցեն սրբել զԻսրայէլ։

* *Ոմանք.* Եւ ո՛չ Աստուած. քանզի մոլորեցուցիչ էր որթն։

* *Ոմանք.* Ձուարճացաւ առանձինն Եփրեմ։

* *Ոսկան.* Գրեցի ՚ի վերայ նոցա բազ՛։

* *Օրհնակ մի.* Եւ կուտիցեն զմիսն, Տէր ո՛չ... վրէժն խնդրեսցէ։

* *Ոմանք.* Հուր ՚ի քաղաքս նոցա։

* *Ոմանք.* Ո՛չ բնակեցեն յերկրի Տեառն։

ուտիցեն 'ի նմանէ պղծեսցին. զի հա՛ցն իւրեանց անձանց իւրեանց լիցի, և մի՛ մտցէ 'ի տուն Տեառն՝: ⁵Ձի՛նչ գործիցէք յաւուրս տարեկանի՝ և յաւուրս տօնի Տեառն՝: ⁶Վասն այնորիկ ահա գնասցեն 'ի թշուառութիւն Եգիպտացւոց. և ընկալցի զնոսա Մեմփիս, և թաղեսցէ զնոսա Մաքմաս. զարծաթ նոցա կորո՛ւստ ժառանգեսցէ, և յարկս նոցա փո՛ւշ բուսցի՝: ⁷Հասեալ են իրաւունք վրէժխնդրութեան քոյ. հասեալ են աւուրք հատուցման քոյ. և չարչարեսցի Իսրայէլ իբրև գնարգարէ յիմարեալ, իբրև զա՛յր մի այսակիր. 'ի բազմութենէ անիրաւութեանց քոց յաճախեաց մոլորութիւն՝: ⁸Դէ՛տ է Եփրեմ ընդ Աստուծոյ մարգարէ՝ որոգայթ գայթազողութեան յամենայն ճանապարհս նորա. մոլորութիւն 'ի տան Աստուծոյ տնկեցին՝: ⁹Ապականեցան ըստ աւուրցն բարձանց. յիշեսցէ՛ զանօրէնութիւնս նոցա, և վրէժ՝ խնդրեսցէ մեղաց նոցա: ¹⁰Իբրև զխաղո՛ղ յանապատի գտի զԻսրայէլ. և իբրև զդիտակ 'ի թզենուոջ վաղահասուկ տեսի զհարս նոցա. նոքա մտին 'ի Բելփեգո՛վր, և օտարացան յամօթ իւրեանց. և եղեն զարշելիքն իբրև զսիրեցեալս՝: ¹¹Եփրեմ իբրև զհա՛ւ թռեաւ. և փառք նոցա 'ի տոկոսեաց՝ և յերկանց՝ և յղութեանց՝: ¹²Թէպէտ և սնուցեն զորդիս իւրեանց, անզաւակեսցին 'ի մարդկանէ. քանզի վա՛յ է նոցա. մարմին իմ 'ի նոցանէ՝: ¹³Ձեփրեմ որպէս տեսի՝ յորս կացուցին յանդիման զորդիս իւրեանց. և սկսաւ Եփրեմ հանել 'ի խոցոտումն զորդիս իւր՝: ¹⁴Տո՛ւր նոցա Տէր. զի՞նչ տացես նոցա. տո՛ւր նոցա արգա՛նդ անորդի, և ստի՛նս ցամաքեալս: ¹⁵Ամենայն չարիք նոցա 'ի Գաղգաղա. զի ա՛նդ ատեցի զնոսա վասն չարութեան գնացից նոցա. 'ի տանէ իմնէ մերժեցի՛ց զնոսա, և ո՛չ ևս յաւելից սիրել զնոսա: Ամենայն իշխանք նոցա ապստամբք՝. ¹⁶ախտացան արմատք Եփրեմայ. չորացան և պտուղ ո՛չ ևս տացեն. զի թէպէտ և ծնցին՝ անզաւակեցից զցանկալիս որովայնի՛ց նոցա: ¹⁷Մերժեսցէ՛ զնոսա Աստուած՝ զի ո՛չ լուան նմա, և եղիցին մոլորականք՝ 'ի մէջ ազգաց:

10

Գլուխ Ժ

¹Այգի՛ տաշտաւոր պտղալից Իսրայէլ. ըստ բազմութեան պտղոց նորա յաճախեաց սեղանս. ըստ պարարտութեան երկրի իւրեանց կանգնեցին արծա՛նս՝: ²Բաժանեցին զսիրտս իւրեանց, արդ ապականեսցին. նա կործանեսցէ զսեղանս նոցա. թշուառացին արծա՛նք նոցա: ³Քանզի այժմ ասասցեն. Ո՛չ զոյ մեր թագաւոր՝ զի 'ի Տեառնէ ո՛չ երկեաք. այլ թագաւոր մեզ զի՞՞

* *Ոմանք.* Որ ուտիցեն 'ի նոցանէ պղ՛:

* *Ոմանք.* Յաւուր տարեկանի:

* *Ոմանք.* Եւ ընկալցին զնոսա Մեմփիս... զարծաթ նոցա 'ի կորուստ ժառանգեսցէ. և 'ի յարկս նոցա:

* *Ոմանք.* Հասեալ են աւուրք վրէժ՛:

* *Ոմանք.* Դէտ Եփրեմ ընդ Աստուծոյ:

* *Ոմանք.* Ձդիտակ թզենուոջ վաղա՛:

* *Ոմանք.* 'ի տոկոսաց և յերկանց յղութեանց:

* *Ոմանք.* Մարմին իմ 'ի նոցանէ է:

* *Ոմանք.* Ձի Եփրեմ որպէս տեսից յորս:

* *Ոմանք.* Եւ անդ դատեցի զնոսա վասն չարութեան:

* *Ոմանք.* Պտղոց նոցա յաճա՛... ըստ բարութեան երկրի իւրեանց:

առնիցէ: ⁴Եթէ բանս խօսեսցի՝ պատճառք ստութեան են. ուխտեսցէ ուխտ. և բուսցին իբրև զսէ՛զ իրաւունք՝ ՚ի կո՛րդ ագարակի, ⁵որթուն տանն Ովնայ: Եւ եղիցին պանդո՛ւխտք բնակիչք Շամրնի. զի սո՛ւզ առ ժողովուրդ նորա ՚ի վերայ նորա. և որպէս դառնացուցին զնա, ոտնհա՛ր լիցին ՚ի վերայ փառաց նորա. զի գերեցան ՚ի նմանէն՝: ⁶Եւ զնա յԱսորեստանեայս կապեա՛լս տարցին պատարա՛գ արքային Յարիմայ. կաշառօ՛ք ընկալցի զԵփրեմ. ամաչեսցէ՛ Իսրայէլ ՚ի խորհուրդս իւր՝: ⁷Մերժեաց Շամրին զթագաւոր իւր՝ իբրև զխռիւ յերեսաց ջրոյ: ⁸Եւ բարձցին մեհեանքն Ովնայ՝ մեղքն Իսրայէլի. փուշ և տատա՛սկ բուսցի ՚ի սեղանս նոցա. և ասասցեն լերանց թէ անկերո՛ւք ՚ի վերայ մեր, և ցբլուրս թէ ծածկեցէ՛ք զմեզ: ⁹Յորմէհետէ բարձո՛ւնք են՝ մեղա՛ւ Իսրայէլ. անդ առին զտեղի, և մի՛ հասցէ նոցա ՚ի բարձունս՝: ¹⁰պատերա՛զմ եկն ՚ի վերայ որդւոցն անօրէնութեանց խրատել զնոսա. և ժողովեսցին ՚ի վերայ նոցա ազգք, խրատել զնոսա ՚ի վերայ երկուց անիրաւութեանց նոցա՝: ¹¹Եփրեմ երինջ կիրթ՝ սիրել զհակառակութիւն. բայց ես հասի՛ց ՚ի վերայ գեղոյ պարանոցի նորա. ելի՛ց ՚ի վերայ Եփրեմայ, և անփոյթ արարից զՅուդայէ. և զօրասցի ՚ի վերայ նորա Յակովբ՝: ¹²Սերմանցէ՛ք ձեզ յարդարութիւն, և հնձեցէ՛ք պտուղ կենաց. լուսաւոր արարէք ձեզ զլոյս գիտութեան. խնդրեցէ՛ք զՏէր՝ մինչև եկեսցեն ձեզ արդիւնք արդարութեան՝: ¹³Չմէ՞՞ իսլիսեցէք զամպարշտութիւն, և զանօրէնութիւնս նորա գրգեցէք, և կերայք պտուղ ստութեան. զի յուսացար ՚ի կառս քո ՚ի բազմութիւն զօրութեան քոյ՝: ¹⁴Եւ յարիցէ կորուստ ՚ի վերայ ժողովրդեան քոյ. և ամենայն պարսպաւորք քո կործանեսցին. իբրև իշխան Սաղմանա ՚ի տանէն Յերոբովա յաւուրս պատերազմին՝ զմայր առ որդիս հարին՝, ¹⁵նոյնպէս արասցեն ձեզ տունդ Իսրայէլի. յերեսաց չարեաց ձերոց ընկեցան

11

Գլուխ ԺԱ

¹Ընդ առաւօտս. ընկեցաւ թագաւորն Իսրայէլի:

Է Քանզի տղայ՝ էր Իսրայէլ, և ես սիրեցի զնա, և յեգիպտոսէ՛ կոչեցի զորդիս նորա՝: ²Որպէս կոչեցի զնոսա՝ նոյնպէս մերժեցան յերեսաց իմոց. նոքա Բահաղիմայ՝ զոհէին, և դրօշելոց խո՛ւնկս արկանէին՝: ³Եւ ես խափանեցի զԵփրեմ, և ընկալայ զնա ՚ի վերայ բազկաց իմոց. և ո՛չ գիտացին թէ բժշկեմ

* *Ոմանք.* Տանն Ովնայ եղիցի պան՛:

* *Ոմանք.* Կապեալ տարցին:

* *Ոմանք.* Բարձունք եղեն՝ մեղաւ:

* *Ոմանք.* ՚ի վերայ երկուց անօրէնութեանց:

* *Ոմանք.* Սիրէ զհակառակութիւն... և անփոյթ արարից զՅուդայ:

* *Ոսկան.* Չեզ յարդարութեան... արդիւն արդա՛: *Ոմանք.* Եկեսցէ առ ձեզ արդիւնք արդարութեան:

* *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ իսլիսեցէք, *նշանակի՛* լռիցէք: *Ոմանք.* Եւ զանիրաւութիւն նորա գրգռեցէք, և կե՛: *Ոսկան.* ՚ի կառս քո ՚ի բազմութեան քո:

* *Ոմանք.* ՚ի տանէն Ռոբովայ. և *ոմանք.* Յերոբովաղայ. *իսկ Ոսկան.* Ռօբօամու:

* *Ոսկան թերևս Լատիմական թարգմանութեանն կամելով համաձայնել՝ դնէ.* Եւ յեգիպտոսէ կոչեցի զորդի իմ:

* *Ոմանք.* Որպէս կոչէի զնոսա նոյնպէս:

զնոսա* ⁴յապականութենէն մարդկան. ձգեցի զնոսա կապանօք սիրոյ իմոյ. և եղէց նոցա որպէս ածիցէ ոք ապտակ՝ ՚ի ծնօտս նորա. հայեցայց ՚ի նա՝ և յաղթեցից նմա*։ ⁵Բնակեաց Եփրեմ յԵգիպտոս, և Ասորեստանեայն թագաւոր նմա. զի ո՛չ կամեցան դառնալ։ ⁶Եւ տկարացաւ սրով ՚ի քաղաքս իւր, և դադարեաց ՚ի ձեռս նորա, և կերիցեն ՚ի խորհրդոց իւրեանց*։ ⁷Եւ ժողովուրդ նորա կախեալ կայցէ զքնակութենէ նորա. և Աստուած ՚ի վերայ պատուականաց նորա բարկասցի՛, և մի՛ բարձրացուցէ զնոսա*։ ⁸Ջի՞նչ անցուցից ընդ քեզ Եփրեմ. այլ պաշտպան լինիցին քեզ Իսրայէլ. զի՞նչ անցուցից ընդ քեզ. եղից զքեզ իբրև զԱդամա՝ և իբրև զՍեբոյիմ։ Դարձա՛ւ սիրտ իմ ՚ի նոյն. յուզեցա՛ւ խնամք իմ*։ ⁹Եւ ո՛չ արարից ըստ բարկութեան սրտմտութեան իմոյ, և ոչ թողից ջնջել զԵփրեմ։ Ջի Աստուած եմ ես՝ և ո՛չ մարդ, ՚ի միջի ձերում Սուրբ. և ո՛չ մտից ՚ի քաղաք*։ ¹⁰Այլ զկնի Տեառն գնացից. իբրև առեւծ մռնչեսցէ. զի ինքն մռնչեսցէ, և յիմարեցուցէ զորդիս ջուրց*։ ¹¹Թռիցեն եկեսցեն իբրև զհաւ յԵգիպտոսէ, և իբրև զաղաւնիս յերկրէն Ասորեստանեայց. և պատսպարեցուցից զնոսա ՚ի տունս իւրեանց՝ ասէ՛ Տէր*։ ¹²Պաշարեաց՝ զիս ստութեամբ Եփրեմ, և ամպարշտութեամբ տունն Իսրայէլի և Յուդայ. արդ ծանեա՛ւ զնոսա Աստուած, և ժողովուրդ սուրբ կոչեսցի Աստուծոյ*։

12

Գլուխ ԺԲ

¹Այլ Եփրեմ այս չար՝ զհե՛տ եղև խորշակի. զօրհանապազ զնանրութիւն և զանոտիս յաճախեաց. ե՛ր ուխտ ընդ Ասորեստանեայս՝ և եւր յԵգիպտոս տանէր։ ²Եւ դատաստան Տեառն ընդ Յուդայ. խնդրել վրէժ՝ ՚ի Յակովբայ. ըստ ճանապարհաց նորա և ըստ գնացից՝ նորա հատուցէ՛ նմա*։ ³Յարգանդի խաբեաց զեղբայր իւր, և յաշխատութիւնս իւր զօրացաւ առ Աստուած։ ⁴Եւ ժուժկալեաց ընդ հրեշտակին, և զօրացաւ։ Լացին և խնդրեցին զիս, և ՚ի տան իմում գտին զիս. անդ պատմեցաւ նոցա*։ ⁵և Տէր Աստուած ամենակալ եղիցի յիշատակ նոցա։ ⁶Եւ դու յԱստուած քո դարձցիս. ողորմութիւն և իրաւունս պահեսցես. և մերձեսցիս առ Տէր Աստուած քո յամենայն ժամ*։ ⁷Կշիռք

* *Ի լուս՝* Եւ ես առի զԵփրեմ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*։

* *Բազումք*. Որպէս որ ածիցէ ոք ապտակ։

* *Ոսկան*. Եւ կերիցին ՚ի խորհրդոց։

* *Ոմանք*. Եւ մի՛ բարձրացուցէ զնա։

* *Ոսկան այլազգ կրկնեալ*. զի՞նչ անցուցից, և այլն. *դնէ՛* լինիցին քեզ Իսրայէլի։ *Յօրինակին՝ չակերտ եղեալ առ խնամ ՚իմ, ակնարկի յաւելուլ քէ. ըստ ընտրեւագոյն օրինակաց, ըստ որում եղաք։*

* *Յօրինակին պակասէր*. Սրտմտութեան իմոյ, և ոչ թողից ջնջել զԵփրեմ։ *Ոմանք*. Ո՛չ մտից ՚ի քաղաքդ։

* *Ոսկան*. Այլ զկնի գնացից։

* *Ոմանք*. Իբրև զաղաւնի յերկ՛։

* *Ոմանք*. Ծանեաւ զնոսա Տէր։

* *Ոմանք*. խնդրել վրէժ Յակովբայ. ըստ ճանապարհաց նորա... հատուցի նմա։

* *Ոմանք*. Լային և խնդրեցին։

* *Ոմանք*. Եւ մերձեսցի առ Տէր։

անհրաւութեան ՚ի ձեռս Քանանու, և սիրեաց յաղթահարել^{*}: ⁸Եւ ասաց Եփրեմ. Մեծացայ գտի հանգիստ անձին իմոյ. ամենայն վաստակք նորա մի՛ գտցին նմա, զի վասն անօրէնութեանց յանցեալ^{*}: ⁹Բայց ես Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացոց, դարձեալ բնակեցուցից զքեզ ՚ի խորանս՝ ըստ ասուրցն տօնից. ¹⁰և խօսեցայց ընդ մարգարէսն: Եւ ես տեսիլս յաճախեցից, և ՚ի ձեռս մարգարէից նմանեցայց^{*}: ¹¹Եթէ ո՛չ Գաղաադ էր, ապա սո՛ւտ էին ՚ի Գաղաադայ իշխանքն որ զոհէին. և սեղանք նոցա իբրև զկրայս ՚ի կորդ ազարակի^{*}: ¹²Եւ գնաց Յակովբ ՚ի դաշտն Ասորոց. և ծառայեաց Իսրայէլ վասն կնոջ, և ՚ի ձեռն կնոջ զգուշացաւ: ¹³Եւ ՚ի ձեռն մարգարէին եհան Տէր զԻսրայէլ յերկրէն Եգիպտացոց, և մարգարէիւ պահեցաւ^{*}: ¹⁴Բարկացոյց զիս Իսրայէլ՝ և զայրացոյց, և արիւն նորա ՚ի վերայ նորա հեղցի. զնախատինս նորա հատուցէ նմա Տէր^{*}

13

Գլուխ ԺԳ

¹Ըստ բանիցն Եփրեմայ. իրաւունս առ նա Աստուծոյ Իսրայէլի. և ե՛ր գայն ՚ի Բահաղու՝ և մեռաւ^{*}: ²Եւ արդ դարձեալ յաւելին ՚ի մեղանչել. և արարին իւրեանց ծուլածոյս յարծաթոյ իւրեանց ՚ի նմանութիւն պատկերի կռոց. գործ ճարտարաց նուիրել նոցա. և նոքա ասեն. Ջոհեցէ՛ք մարդիկ, զի պակասեցին որթք: ³Վասն այնորիկ եղիցին իբրև զամպ առաւօտու, և իբրև զցօղ վաղորդայնոյ որ անցանէ. և իբրև զփոշի հոսեալ ՚ի կալոյ, և իբրև զծուխ ՚ի պատուհանից: ⁴Ես եմ Տէր Աստուած քո, որ հաստատեցի զերկինս, և հաստատեցի զերկիր, որոյ ձեռք հաստատեցին զամենայն զօրս երկնից, և ո՛չ ցուցի քեզ երթալ զհետ նոցա. և ես հանի զքեզ յերկրէն Եգիպտացոց. և Աստուած բաց յինէն ո՛չ ծանիցես, և Փրկիչ՝ ո՛չ գոյ բաց յինէն^{*}: ⁵Ես հովուէի՛ քեզ յանապատի յանշէն երկրի^{*}, ⁶ըստ արօտի նոցա յագեցան և զմայլեցան, և հպարտացան սրտիւք իւրեանց. վասն այնորիկ մոռացան զիս^{*}: ⁷Եւ ես եղէց նոցա իբրև զյովազ, և իբրև զինծ ՚ի ճանապարհին Ասորեստանեայց: ⁸Պատահեցից նոցա իբրև արջ քաղցեալ, և պատառեցի՛ց զառազաստ սրտից նոցա. և կերիցեն զնոսա կորիւնք անտառի. և զազանք վայրի կեղեքեսցեն

^{*}Ոսկան. Կշիռք անօրէնութեան:

^{*}Ոմանք. Մեծացայց, գտի հանգ՝... մի՛ գտցի նմա, զի վասն անհրաւութեանց:

^{*}Օրինակ մի. Եւ ՚ի ձեռն մարգարէից իմ խօսեցայց:

^{*}Օրինակ մի. Ապա ո՛ւստի էին Գաղաադայ իշխանքն որ:

^{*}Ոմանք. ՚ի ձեռն մարգարէի եհան:

^{*}Ոմանք. Եւ արիւն նորա հեղցի: *Յօրինակին համաձայն ոմանց՝ սկիզբն յաջորդ գլխոց միահետ զրի ընդ վերջն համարոյս՝ այսպէս. Զատուսցէ նմա Տէր ըստ բանիցն Եփրեմայ:*

^{*}Ոմանք. Բանիցն Եփրեմայ, իրաւունս առն Աստուծոյ Իսրայէլի: *Յօրինակին ՚ի կարգ բնաբանի դատարկ տեղի թողեալ՝ ՚ի լուսանցս չակերտիւ նշանակի ՚ի մէջ բերել և առնել. առ նա Աստուծոյ Իսրայէլի. համաձայն այլոց:*

^{*}Ոմանք յաւելուն. *Չօրս երկնից, և ո՛չ ցուցից քեզ երկնից, և ո՛չ ցու՛:* Ոմանք. Եւ ո՛չ ցուցից քեզ երթալ:

^{*}Ոսկան. Ես հովուէի զքեզ յա՛:

^{*}Ոմանք. Եւ յագեցան... հպարտացան սիրտք իւրեանց:

զնոսա*։ ⁹Յապականութեան քուն Իսրայէլ՝ ո՞վ իցէ որ օգնիցէ քեզ։ ¹⁰Ո՞ւր է թագաւորն քո, նա՛ փրկեսցէ զքեզ. յամենայն քաղաքս քո իրա՛ւ արասցէ քեզ. զորմէ ասացերն թէ տո՛ւր ինձ թագաւոր և իշխան։ ¹¹Եւ ետու քեզ թագաւոր բարկութեամբ իմով, և կարճեցի սրտմտութեամբ իմով։ ¹²Ծրա՛ր անիրաւութեանց Եփրեմ. և ծածկեալ կան մեղքն նորա*։ ¹³Երկունք իբրև ծննդականի հասցեն նմա. դա՛ է որդին քո իմաստուն. վասն այնորիկ այժմիկ չկարասցէ հանդարտել ՚ի բեկման որդւոց*։ ¹⁴Ի ձեռաց դժոխոց ապրեցուցի՛ց զնոսա. և ՚ի մահուանէ փրկեցի՛ց զնոսա։ Ո՞ւր է յաղթութիւն քո մահ. ո՞ւր է խայթոցք քո դժոխք։ Մխիթարութիւն ծածկեալ է յաչաց իմոց*։ ¹⁵Քանզի նա ՚ի մէջ եղբարց զատուցէ։ Աճցէ ՚ի վերայ նորա Տէր հո՛ղմ խորշակի յանապատէ. և ցամաքեցուցէ զերակս նորա. և աւերեսցէ զաղբերս նորա։ Սա ցամաքեցուցէ զերկիր նորա, և զամենայն անօթս նորա ցանկալիս*։

14

Գլուխ ԺԴ

¹Ապականեսցի՛ Շամրին զի ընդդէմ դարձաւ Աստուծոյ իւրոյ. ՚ի սո՛ւր անկցին. և ստնդիացք նորա զբարի՛ հարցին, և յղիք նորա պայթեսցեն*։ ²Ղարձ Իսրայէլ առ Տէր Աստուած քո. զի տկարացա՛ր յանօրէնութիւնս քո։ ³Առէ՛ք ընդ ձեզ բանս՝ և դարձարո՛ւք առ Տէր Աստուած ձեր. և ասացէ՛ք ցնա. Կարօ՛ղ ես թողուլ զմեղս մեր զի մի՛ առնուցուք անիրաւութիւն, այլ ընդունիցիք զբարիս. և հատուցուք զպտուղ շրթանց մերոց. և վայելեսցեն ՚ի բարութեան սիրտք ձեր։ ⁴Ասորեստանեայն ո՛չ փրկէ զմեզ, և յերիվարս ո՛չ հեծցուք. և մի՛ նս ասասցուք Աստուած մեզ զձեռագործս մեր. զի որ ՚ի քեզդ է՝ ողորմեսցի՛ որբոց*։ ⁵Բժշկեցից զբնակութիւնս նոցա. և սիրեցի՛ց զնոսա համօրէն. զի դարձա՛ւ բարկութիւն իմ ՚ի նոցանէ։ ⁶Եւ եղիցի իբրև զցօղ Իսրայէլի. և ծաղկեսցէ իբրև զշուշան. և արձակեսցէ զարմատ իւր իբրև զԼիբանոս*։ ⁷Արձակեսցին ոստք նորա, և եղիցին իբրև զձիթենի պտղալից. և բուրեսցէ հոտ նորա իբրև զկնդրկի*։ ⁸Ղարձցին և նստցին ընդ յարկաւ նորա, կեցցեն և հաստատեսցին ցորենով. և ծաղկեսցէ իբրև զորթ յիշատակ նորա, և իբրև զգինի Լիբանանու եղիցի*։ ⁹Եփրեմայ։ Ջի՞ ևս կայ նորա և կռոց, ե՛ս խոնարհեցուցի զնա, և ես զօրացուցից զնա. ե՛ս իբրև զայգի պտղախայծ՝ յինէն գտաւ պտուղ ՚ի քեզ*։ ¹⁰Ո՞վ է իմաստուն և իմասցի զայս. հանճարեղ՝ և ծանիցէ զայս. զի ուղիղ են ճանապարհք Տեառն. և արդարք զնասցեն ընդ նոսա. և ամպարիշտք

* Ոմանք. Ջառագաստս սրտից նոցա։

* Ոմանք. Անիրաւութեանց է Եփրեմ։

* Ոսկան. Վասն այսորիկ այժմիկ։

* Ոսկան. Խայթոց քո դժոխք։

* Ոմանք. Քանզի նախ ՚ի մէջ եղբարց... աճցէ ՚ի վերայ նոցա Տէր։

* Ոմանք. Եւ ստնդիացք նոցա... և յղիք նոցա պայթեսցին։

* Ոմանք. Աստուածս ձեռագործս։

* Ի լուս՝. Եղէց իբրև զցօղ. համաձայն ոմանց ՚ի բնար՝. Ոմանք. Ջարմատս իւր։

* Բազումք. Եւ եղիցի իբրև զձիթենի։

* Ոմանք. Եւ հաստատեսցեն ցորեն։

* Ոմանք. Եւ ես զօրացուցից զնա։

տկարացիցն 'ի նոսա*:

Կատարեցաւ Մարգարէութիւնն Ովսեայ՝

ԳԼՈՒԽՔ ԱՄՈՎՍԱՅ ՄԱՐԳԱՐԵԻ

ա. Ձանօրէնութիւնս Դամասկոսի, զԳազայ, զՏիրոսի, զԵդովմայեցոց, զԱմոնացոց, զՄովաբացոց, զՅուդայ, զԻսրայէլի՝ համարի. և յառաջագոյն ասէ զպատիժսն որ մի ըստ միոջէ պատահելոց էին նոցա: Բ. Ձերախտիսն որ եղեն յԱստուծոյ՝ թուէ. և զնոցա կարճմտութիւնն և զարհամարհութիւնն և զհարուածսն որ պատահեցին նոցա: Գ. Ձկանայս Սամարեայ՝ յարբեցութիւն և յափշտակութիւն բամբասէ. և յառաջագոյն զուշակէ զսովոյն և զլքանելոյն վասն չղառնալոյ նոցա. զի բազում հարուածովք հարան, և չեղեն պիտանիք: Դ. Պատուհասէ զԻսրայէլ զի ընդ յանդիմանիչս իւրեանց դժկամակ լինէին. և խրատէ դառնալ առ Աստուած: Սպառնայ և անհաւատիցն թէ չարիք հասանելոց են նոցա. քանզի զնոցանէ ասէ՝ թէ վայ՛ որ ցանկան աւուր Տեառն: Իսկ ոմանք զայն 'ի հանդերձեալ դատաստանն առին. որպէս այժմ իսկ ասեն բազումք յանհաւատից թէ չիք դատաստան: Ե. Հրաժեշտ 'ի տօնից նոցա, 'ի զոհից և 'ի պաղատանաց. աստղ աստուածոյն Ռեմփայ, զԿռոնոս կոչէ. քանզի հեթանոսք աստուածոյն իւրեանց Կռոնեայ ասեն թէ աստղ է յերկինս: Միթէ զենունն կամ զոհս մատուցէք ինձ զքառասունն ամ. քանզի ո՛չ թէ ռամիկն մատուցանէր, այլ միայն իշխանն յորժամ կանգնեցաւ խորանն. բայց աստ զամենայն ժողովրդեանն ասէ. և բամբասէ զնոսա յանչափ փափկութիւն, և յառաջագոյն զուշակէ զվիշտս: Զ. Մարախովն և դատաստանաւ և ադամանտիւ՝ զկոտորունն նոցա մարգարէանայ: Եւ զգացոյց զայն Ամասիայ թագաւորին. բռնադատէ զմարգարէն և հալածէ. իսկ նա և նմա մարգարէանայ չարիս և ժողովրդեանն: Է. Տեսանէ գործի հաւորսաց, և այնու զըմբռնիլն նոցա նշանակէ: Ը. Ձանօրէնութիւնս և զամպարշտութիւնս համարի, և զհանդերձելոց չարեացն որ հասանելոց է նոցա՝ զուշակէ: Մտցէ արեգակն 'ի միջօրէի. զչարչարանացն ժամանակէն Քրիստոսի նշանակէ, և զհաւատացելոցն 'ի նա:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԱՄՈՎՍԱՅ

1

Գլուխ Ա

* Ոմանք. Գնացեն 'ի նոսա, և ամ՝:

¹Պատգամք Ամոսայ որ եղեն յԱկկարիմ Թեկուայ, զորս ետես 'ի վերայ Երուսաղեմի. յաւուրս Ոգիայ արքայի Յրէաստանի, և յաւուրս Յերոբովամայ որդւոյ Յովասայ արքայի Իսրայէլի: Երկուք ամօք յառաջ քան զգետնաշարժն. և ասէ.*

Ա ²Տէր 'ի Սիովնէ՝ բարբառեցաւ, և յերուսաղեմն ետ զձայն իւր. և սուգ առին արօտք հօտից. և ցամաքեցան բարձունք Կարմելայ: ³Եւ ասէ՝ Տէր 'ի վերայ երիցն անօրէնութեանցն Դամասկեայ, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նմանէ. փոխանակ զի կտրէին գլղիս Գաղաադացւոց սղոցօք երկաթօք: ⁴Եւ առաքեցից հո՛ւր 'ի տունն Ազայելի, և կերիցէ զհիմունս որդւոյ Ադերայ*: ⁵Եւ խորտակեցից զնիզս Դամասկեայ. և սատակեցից զբնակիչս դաշտացն Աւնայ. և կտտորեցից զազգն յարանց Խառանու. և գերեցի ընտիր ժողովուրդն Ասորւոց՝ ասէ Տէր*: ⁶Այսպէս ասէ Տէր. 'ի վերայ երից անպարշտութեանցն Գազայ, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նոցանէն. փոխանակ զի գերեցին զգերութիւն Սողոմոնի արգելուլ յեդովմ: ⁷Եւ առաքեցից հո՛ւր 'ի վերայ պարսպացն Գազայ, և կերիցէ զհիմունս նորա: ⁸Եւ սատակեցից զբնակիչս յԱզովտայ, և բարձցի՛ ազգն յԱսկաղոնէ. և ածի՛ց զձեռն իմ 'ի վերայ Ակկարոնի, և կորիցեն մնացորդք այլազգեացն ասէ՝ Տէր Տէր: ⁹Այսպէս ասէ Տէր. 'ի վերայ երից անպարշտութեանցն Ծուրայ, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նմանէ. փոխանակ զի արգելին զգերութիւնն Սողոմոնի յեդոմ, և ո՛չ յիշեցին զուխտ եղբարց: ¹⁰Եւ առաքեցից հո՛ւր 'ի վերայ պարսպացն Ծուրայ, և կերիցէ՛ զհիմունս նորա: ¹¹Այսպէս ասէ Տէր. 'ի վերայ երից անպարշտութեանցն Եդոմայ, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նոցանէ. փոխանակ զի հալածեաց սրով զեղբայր իւր, և ապականեաց զեղբայր յերկրի. և յափշտակեաց 'ի վկայութիւն զսոսկո՛ւմն իւր. և գյանդգնութիւն իւր պահեաց 'ի հակառակութիւն: ¹²Եւ առաքեցից հո՛ւր 'ի Թեման, և կերիցէ հուր զհիմունս պարսպաց նորա: ¹³Այսպէս ասէ Տէր. 'ի վերայ երից անպարշտութեանց որդւոցն Ամոնայ, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նոցանէ. փոխանակ զի հերձոյին գլղիս Գաղաադացւոց, զի ընդարձակեցեն զսահմանս իւրեանց*: ¹⁴Բորբոքեցից հո՛ւր 'ի վերայ պարսպացն Ղաթայ, և կերիցէ՛ զհիմունս նորա աղաղակաւ յաւուր պատերազմի. և շարժեցի յաւուր վախճանի իւրոյ: ¹⁵Եւ գնացեն 'ի գերութիւն թագաւորք նոցա. քուրմք նոցա՝ և իշխանք նոցա՝ 'ի միասին, ասէ Տէր Տէր:

2

Գլուխ Բ

¹Այսպէս ասէ Տէր. 'ի վերայ երից անպարշտութեանցն Մովաբու, և 'ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց 'ի նմանէն. փոխանակ զի այրեցին զոսկերս թագաւորացն Եդովմայեցւոց՝ 'ի մոխրե՛լ: ²Առաքեցից հուր 'ի վերայ Մովաբու, և կերիցէ հուր զհիմունս քաղաքաց նորա. և մեռցի 'ի տկարութեան Մովաբ, աղաղակաւ և

* *Ոմանք.* Պատգամ Ամոսայ: *Ոսկան.* Երկու ամօք:

* *Յօրհնակին.* Ջիմունս որդւոց Ադերայ:

* *Ոմանք.* Դաշտացն Ովնայ. և *ոմանք.* Աւնանայ, և կտտորեցից զազգս արանց Խառա՛: *Առ Ոսկանայ պակասի.* Ջնիզս Դամասկեայ:

* *Բազումք.* Յերձուին գլղիս:

ծայնիւ փողոյ*³ և սատակեցից զդատաւոր ՚ի նմանէ, և զամենայն իշխանս նորա կոտորեցից ընդ նմին՝ ասէ Տէր: ⁴Այսպէս ասէ Տէր. ՚ի վերայ երից ամպարշտութեանց որդւոցն Յուդայ, և ՚ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց ՚ի նմանէն. փոխանակ զի մերժեցին զօրէնս Տեառն, և զիրամանս նորա ո՛չ պահեցին. և մոլորեցուցին զնոսա սնոտեօք իւրեանց զոր արարին, զորոց զհետ զնացին հարքն նոցա: ⁵Առաքեցից հո՛ւր ՚ի վերայ Յրէաստանի՝ և կերիցէ՛ զհիմունս Երուսաղէմի*⁶: ⁶Այսպէս ասէ Տէր. ՚ի վերայ երից ամպարշտութեանցն Իսրայէլի, և ՚ի վերայ չորիցն՝ ո՛չ դարձայց ՚ի նմանէ. փոխանակ զի վաճառեցին զարդարն արծաթոյ, և զտնանկն ընդ կօշկաց. ⁷որ կոխեն զհող երկրի. և կռփէին զգլուխս աղքատաց, և զճանապարհս խոնարհաց թիւրէին. և հայր և որդի առ մի բոզ մտանէին, զի պղծեցեն զանուն Աստուծոյ իւրեանց*⁸: ⁸Եւ զձորձս իւրեանց առագաստ ձգէին ընդ ինքեանս՝ և ընդ սեղանն. և գինի զրպարտութեանց ընպէին ՚ի տան աստուծոյ իւրեանց*⁹: ⁹Բայց ես բարձի՛ զԱմովրիացիս յերեսաց նորա. որոյ բարձրութիւն իւր բարձրութիւն մայրի, և հզօր էր իբրև զկաղնի. և բարձի՛ զպտուղ նորա ՚ի վերուստ, և զարմատս նորա ՚ի ներքուստ*¹⁰: ¹⁰Եւ ես հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց, և շրջեցուցի զձեզ յանապատ ամս քառասուն՝ ժառանգեցուցանել զերկիրն Ամովրիացւոց*¹¹: ¹¹Եւ առի՛ յորդոց ձերոց ՚ի մարգարէս, և յերիտասարդաց ձերոց յուխտաւորս. միթէ ո՞չ իցեն այդ որդիք Իսրայէլի՝ ասէ Տէր*¹²: ¹²Եւ արբուցանէիք ուխտաւորացն իմոց ընպէլ գինի, և մարգարէիցն պատուիրէիք զի մի՛ մարգարէացին*¹³: ¹³Վասն այդորիկ ահաւաչիկ ես հոլովեցուցանեմ ՚ի ներքոյ ձեր՝ զոր օրինակ հոլովի սայլ լի օրանալ*¹⁴: ¹⁴Եւ կորիցէ փախուստ յընթացողէն. և որ զօրաւորն իցէ մի՛ զօրացի ՚ի զօրութեան իւրուն, և պատերազմօղն մի՛ ապրեցուցէ զանձն իւր*¹⁵: ¹⁵Եւ աղէղնաւորն՝ մի՛ կարացէ ունել զղէմ. և որ արագն իցէ ոտիւք՝ մի՛ ապրեցի, և հեծեալն՝ մի՛ ապրեցուցէ զանձն իւր*¹⁶: ¹⁶Եւ մի՛ գտցի սիրտ իւր ՚ի զօրութիւն. մերկն հալածեցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր*¹⁷:

3

Գլուխ Գ

Բ ¹Լուարո՛ւք զպատգամս զայս զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ ձեր տունդ

* *Ոմանք*. Աղաղակաւ ձայնիւ փո՛ւ:

* *Ոմանք*. Հուր ՚ի Յրէաստանի:

* *Ոսկան*. Եւ կռփեն... թիւրեն... մտանեն:

* *Ոմանք*. Առագաստս ձգէին... և ընդ սեղանս... ՚ի տան Աստուծոյ իւրեանց:

* *Ոսկան*. ՁԱմովրիացիս յերեսաց նոցա: *Ոմանք*. Եւ հզօր է իբրև զկաղ՛:

* *Ոմանք*. Եւ ես հանի զձեզ յանապատի ամս քա՛ւ: *Ուր Ոսկան*. Եւ աձի զձեզ յանապատի ամս:

* *Ոմանք*. Միթէ ո՞չ իցէ այդ որ՛: *Ուր Ոսկան*. Ոչ իցէ այդպէս որ՛:

* *Ի բազումս պակասի*. Իմոց ընպէլ գինի:

* *Ոմանք*. Վասն այնորիկ ահաւաչիկ... հոլովիցի սայլ լի օրա՛ւ: *Յօրինակիւն*. Հոլովի սայլի աւրանալ:

* *Ոմանք*. Եւ կորիցես փախուստ:

* *Յօրինակիւն պակասէր*. Արագն իցէ ոտիւք՝ մի՛: *Ի բազումս պակասի*. Մի՛ ապրեցուցէ զանձն իւր:

* *Ոմանք*. Սիրտ իւր ՚ի զօրութեան:

Իսրայելի. և ՚ի վերայ ամենայն ազգաց զորս հանի յերկրէն Եգիպտացոց: ²Բայց զձեզ ընտրեցի յամենայն ազգաց երկրի. վասն այնորիկ ՚ի ձէնջ խնդրեցից զվրեժ ամենայն չարեաց ձերոց*: ³Թէ գնասցե՞ն ամենակին երկու ՚ի միասին, թէ ոչ ճանաչիցեն զմիմեանս*: ⁴Եթէ գոչիցէ՞ առեւծ յանտառէ՝ և ո՛չ իցէ որս արարեալ նորա. եթէ տայցէ՞ կորիւն առիւծու զձայն իւր ՚ի մայրոյ իւրմէ, և ո՛չ ինչ իցէ յափշտակեալ նորա*: ⁵Եթէ անկանիցի՞ թռչուն ՚ի յերկիր առանց որսորդի. եթէ ճայթիցէ՞ որոգայթ ՚ի վերայ երկրի՝ և ո՛չ ինչ իցէ ըմբռնեալ: ⁶Եթէ հարկանիցի՞ փող ՚ի քաղաքի, և ազգն ո՛չ խռովեսցի. եթէ իցե՞ն չարիք ՚ի քաղաքի՝ և Տեառն չիցէ արարեալ: ⁷Վասն այնորիկ ո՛չ արասցէ Տէր Աստուած ի՞րս ինչ, եթէ ո՛չ յայտնեսցէ զխրատն ծառայից իւրոց մարգարէից*: ⁸Առեւծ գոչիցէ՝ և ո՞վ իցէ որ ո՛չ սարսիցէ: Տէր Աստուած խօսեցաւ՝ և ո՞վ իցէ որ ո՛չ մարգարեացի*: ⁹Պատմեցէ՛ք ՚ի գաւառս Ասորեստանեայց. և ՚ի գաւառս երկրին Եգիպտացոց, և ասացէ՛ք. Ժողովեցարո՛ւք ՚ի լեառն Շամրնի, և տեսէ՛ք սքանչելիս բազումս ՚ի մէջ նորա. և զբռնութիւն ՚ի մէջ նորա: ¹⁰Եւ ո՛չ ծանեալ զլինելոց եղե՛ռն իւր՝ ասէ Տէր. որ գանձէին անօրէնութիւն և թշուառութիւն ՚ի գաւառս իւրեանց: ¹¹Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Աստուած ցՏիրոս. Երկիրդ որ շուրջ զքե՛ւ է՝ աներեսցի. և խորտակեսցի ՚ի քէն ամենայն զօրութիւն քո, և յափշտակեսցին գաւառք քո*: ¹²Ձի այսպէս ասէ Տէր. Չոր օրինակ թէ կարասցէ թափել հովիւ ՚ի բերանո՛յ առիւծու՝ արեացս երկուս, կամ բլթակ մի ունկան. այնպէս գերծցին որդիքն Իսրայելի որ բնակեալ են ՚ի Սամարիա, դէմ յանդիման ազգին, և ՚ի մէջ Դամասկացոց*: ¹³Քահանայք լուարո՛ւք և վկայութիւն դի՛ք տանդ Յակովբայ՝ ասէ Տէր ամենակալ: ¹⁴Ձի յաւուր յայնմիկ յորժամ խնդրեցից զվրեժ ամպարշտութեանցն Իսրայելի ՚ի նմանէ, առից վրեժ և զսեղանոյն Բեթելայ. և փշրեսցին եղջերք սեղանոյն՝ և անկցին յերկիր*: ¹⁵Եւ խորտակեսցից զապարանս թևաւորս, ՚ի վերայ ամարաստուն ապարանիցն. և ապականեսցին ապարանքն փղոսկրեայք. և բազում և այլ ապարանք անկցին՝ ասէ Տէր:

4

Գլուխ Դ

Գ ¹Լուարո՛ւք զբան Տեառն երինջք Բասանու՝ որ էք ՚ի լերինս Շամրնի. որ զրկէք զաղքատս, և առ ոտն հարկանէք զտնանկն. որ ասէիք ցտեարս ձեր. Մատուցէ՛ք մեզ գինի գի արբցուք: ²Երդնո՛ւ Տէր ՚ի սրբութիւնս իւր. եթէ ահա աւուրք եկեսցեն ՚ի վերայ ձեր, և առցեն զձեզ զինուրք, և զդոսա որ ընդ ձեզդ են արկցեն ՚ի սանս ջեռուցեալս: ³Եւ ելանիցէք մերկք միմեանց դէմ ընդդէմ, և

* *Ոմանք.* Յամենայն յազգաց յերկրէ:

* *Ոսկան.* Միթէ գնասցեն ամենն՝:

* *Ոմանք.* Գոչիցէ առեւծ յանապատէ, և ո՛չ:

* *Ոմանք.* Վասն այսորիկ ո՛չ արասցէ... զխրատ ծա՛:

* *Ոմանք.* Առեւծ գոչեսցէ:

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս:

* *Օրինակ մի.* Եթէ արասցէ թափել... արքաս երկուս: *Ոմանք.* Որ բնակեալ են ՚ի Շամրին:

* *Յօրինակին պակասէր.* Յայնմիկ յորժամ խնդրեցից զվրեժ:

անկանիցիք 'ի լերինն Ռեմանայ՝ ասէ Տէր*։ ⁴Ստէք 'ի Բեթէլ՝ և ամպարշտեցայք, և 'ի Գաղգաղա յաճախեցէք ամպարշտել. և մատուցէք զգոհս ձեր ընդ առաւօտս, և յերիր աւուր զտասանորդս ձեր*։ ⁵Ընթեռնոյին օրէնս արտաքոյ, և կոչէին խոստովանութիւնս. պատմեցէք թէ՛ զայս սիրեցին որդիքն Իսրայէլի՝ ասէ Տէր*։ ⁶Եւ ես արկի՛ զձեւք ցաւ ատամանց յամենայն քաղաքս ձեր, և կարօտութիւն հացի յամենայն տեղիս ձեր. և ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր*։ ⁷Եւ արգելի՛ 'ի ձէնջ զանձրև՝ երիւք ամսօք յառաջ քան զկուրս. 'ի մի քաղաք տեղացից, և 'ի միւս քաղաք ո՛չ տեղացից. մի վիճակ թացից՝ և 'ի միւսն յորում ո՛չ տեղացից՝ ցամաքեացի*։ ⁸Եւ ժողովեցին երկու և երեք քաղաք 'ի մի քաղաք ըմպել ջուր, և մի՛ յագեցին. և ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր։ ⁹Չարի՛ զձեզ տապով, և արկի՛ զձեւք դալուկն. և յաճախեցէք 'ի պարտէզս ձեր, և յայգիս և 'ի թգենիս ձեր՝ և 'ի ձիթենիս. և եկեր թրթուր. սակայն և այնպէս ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր*։ ¹⁰Առաքեցի 'ի վերայ ձեր մահ՝ 'ի ճանապարհին Եգիպտացոց, և կոտորեցի սրով զերիտասարդս ձեր հանդերձ գերութեամբ երիվարաց ձերոց. և ծախեցի զբանակս ձեր հրով բարկութեան իմոյ. սակայն և այնպէս ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր*։ ¹¹Կործանեցի՛ զձեզ որպէս կործանեաց Աստուած զՍողոմ և զԳոմոր. և եղերուք իբրև զխանձող զերծեալ՝ 'ի հրոյ. սակայն և այնպէս ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր։ ¹²Վասն այնորիկ այնպէս արարից զքեզ Իսրայէլ. բայց զի այնպէս առնելոց եմ զքեզ՝ պատրաստեա՛ կարդալ զանուն Տեառն Աստուծոյ քոյ Իսրայէլի*։ ¹³Ձի ահաւասիկ ե՛ս եմ որ հաստատեմ զերկինս, և հաստատեմ զհողմս. և պատմէ՛ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր. առնէ առաւօտ և մեզ, և ելանէ՛ 'ի վերայ բարձանց երկրի. Տէր Աստուած ամենակալ անուն է նորա*։

5

Գլուխ Ե

Դ ¹Լուարուք զբանս զայս զոր ես առից՝ 'ի վերայ ձեր ողբս։

Դ Անկալ՝ տունդ Իսրայէլի, և ո՛չ ևս յաւելուցու յառնել*։ ²Կոյսն Իսրայէլի կործանեցաւ յերկրի իւրում, և չի՛ք ոք որ կանգնիցէ զնա։ ³Քանզի այնպէս ասէ Տէր Տէր. 'ի քաղաքէ յորմէ ելանէին հազարք՝ մնացէ հարեր, և յորմէ ելանէին հարեր՝ մնացէ տասն տանդ Իսրայէլի*։ ⁴Քանզի այնպէս ասէ Տէր առ տունդ Իսրայէլի. խնդրեցէք զիս և կեցջիք. ⁵և մի՛ խնդրէք զԲեթէլ, և 'ի Գաղգաղա մի՛ մտանէք, և 'ի Ջրհորն երդման մի՛ ելանէք. զի Գաղգաղա գերելով գերեսցի, և Բեթէլ եղիցի իբրև զչեղեալ։ ⁶Խնդրեցէք զՏէր և կեցջիք. զի մի՛ բորբոքեցի իբրև

* *Յօրինակին*. Եւ ելանիցէք մերք միմեանց ընդդէմ։

* *Ոսկան*. 'ի Բեթէլ՝ և ամպարշտեցարուք։

* *Ոմանք*. Ընթեռնուին... թէ զայս սիրէին որդիքն։

* *Օրինակ մի*. Ցաւք ատամանց. *ուր Ոսկան*. ցաւս ատամանց։

* *Ոմանք*. Երեք ամսովք։

* *Օրինակ մի*. Եւ 'ի թգենիս ձեր և 'ի թթենիս, և եկեր... սակայն և ոչ այնպէս։ *Ոսկան*

յաւելու. Եւ 'ի ձիթենիս ձեր. և զթգենիս ձեր եկեր թր՝։

* *Ոմանք*. Առաքեցից 'ի վերայ ձեր մահ։

* *Ոմանք*. Այնպէս արարից զքեզ. բայց զի այնպէս առնելոց եմ։

* *Ոսկան*. Ձի ահաւասիկ որ հաստատէ զլերինս, և հաստատէ զհողմս։

* *'ի լուս*՝. Լուարուք զբանս Տեառն Աստուծոյ զոր. *համաձայն ոմանց 'ի բնաք*՝։

* *Ոմանք*. Տասն՝ տանն Իսրայէլի։

զիւր տունն Յովսէփայ՝ և կերիցէ զնա. և ո՛չ ոք իցէ որ շիջուցանիցէ*։ ⁷Որ առնէ ՚ի բարձունս իրաւունս, և արդարութիւն եղ յերկրի. ⁸որ առնէ զամենայն և նորոգէ, և դարձուցանէ յայգ զստուերս մահու, և զտիւ ՚ի գիշեր մթացուցանէ. որ կոչէ զջուրս ծովու՝ և հեղու ՚ի վերայ երեսաց երկրի. Տէր ամենակալ անուն է նորա*։ ⁹որ բաշխէ զբեկումն ՚ի վերայ զօրութեան, և ածէ զթշուառութիւն ՚ի վերայ ամրոցաց։ ¹⁰Ատեցի՛ն ՚ի դրունս զյանդիմանիչս, և զբանս սուրբս պի՛ղծս արարին։ ¹¹Վասն այնորիկ փոխանակ զի կռփէիք զաղքատս, և կաշառս ընտրանաւ առնոյիք ՚ի նոցանէն. ապարանս զարդարեալս շինեսցիք՝ և մի՛ բնակեսցիք ՚ի նոսա. այգիս ցանկալիս տնկեսցիք՝ և զգինի նոցա մի՛ արբջիք*։ ¹²Ձի գիտացի ես զբազում ամպարշտութիւնս ձեր. և սաստի՛կ են մեղք ձեր։ Առ ոտն կոխէիք զարդարն առնլով փոխանակս, և խոտորեցուցանէիք զաղքատն ՚ի դրունս*։ ¹³Վասն այնորիկ որ իմաստունն է՝ ՚ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, զի ժամանակն չար է։ ¹⁴Խնդրեցէք զբարի և մի՛ զչար՝ զի կեցցիք, և եղիցի ընդ ձեզ Տէր Աստուած ամենակալ. զոր օրինակ ասացէք*։ ¹⁵Քէ ատեցաք զչարիս, և սիրեցաք զբարիս։ Հաստատեցէք զիրաւունս ՚ի դրունս ձեր, զի ողորմեսցի Տէր Աստուած մնացորդաց Յովսէփայ։ ¹⁶Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած ամենակալ. Յամենայն հրապարակս կո՛ծ, և յամենայն ճանապարհս ասացի վայ՛ վայ՛. կոչեսցի մշակ ՚ի սուգ և ՚ի կոծ և ՚ի ձայնարկուս. ¹⁷և յամենայն ճանապարհս կոծ. քանզի անցի՛ց ընդ մէջ քո՝ ասէ Տէր։ ¹⁸Վայ՛ որ ցանկայ աւուրն Տեառն. զի՞ կայ ձեր և աւուր Տեառն. և նա խաւար է, և ո՛չ լոյս*։ ¹⁹Ձոր օրինակ թէ փախիցէ մարդ յերեսաց առիծու, և պատահեսցէ նմա արջ, և փախնուցու ՚ի տուն՝ և յեցուսցէ զձեռս իւր յորմն, և հարկանիցէ զնա օծ. ²⁰ո՞չ ապաքէն խաւար է օր Տեառն՝ և ո՛չ լոյս. աղջամղջիմ՝ և ո՛չ զոյ ՚ի նմա ճաճանչ։

Ե ²¹Ատեցի՛ մերժեցի՛ զտօնս ձեր, և ՚ի տարեկանս ձեր ո՛չ հոտոտեցայց։ ²²Ձի թէ մատուցանէք զողջակէզս և զզոս ձեր՝ ո՛չ ընկալայց, և յերևելիս փրկութեանց ձերոց ես ո՛չ հայեցայց*։ ²³Ի բա՛ց արա յինէն զձայն երգոց քոց. և զնուագս սրընգաց քոց ես ո՛չ լուայց։ ²⁴Եւ յորդեսցեն իբրև զջուր իրաւունք, և արդարութիւն իբրև զհեղեղ անհուն։ ²⁵Միթէ սպա՞նդ և զոս մատուցէք ինձ յանապատի՛ անդ զքառասուն ամ տո՛ւնդ Իսրայէլի*։ ²⁶և առէք զվրանն Մողորբայ՝ և զաստղ աստուածոյն ձերոյ զՀռեմփայ, զպատկերս նոցա զոր արարէք ձեզ*։ ²⁷Եւ փոխեսցից զձեզ անդր քան զԴամասկոս՝ ասէ Տէր, Աստուած ամենակալ անուն է նորա*։

6

Գլուխ Զ

* *Ոմանք յաւելուն.* Եւ կերիցեն զնա... շիջուցանիցէ տանդ Իսրայէլի։

* *Ոսկան.* Եւ զտիւ ՚ի գիշեր միացուցանէ։ *Բազունք.* Եւ հեղու ՚ի վերայ երկրի։

* *Ոմանք.* Կռփէիք զաղքատն... ընտրանաւ առնուիք... և զգինի նորա մի։

* *Ոմանք.* Առնելով փոխա՛։

* *Ոմանք.* Խնդրեցէք զբարիս։

* *Ոմանք.* Որ ցանկանայ աւուրն Տեառն։

* *Ոմանք.* Ձի եթէ մատուցանիցէք զող՛։ *Օրինակ մի.* Փրկութեանց, ես ո՛չ հաճեցայց։

* *Ոմանք.* Անդ քառասուն ամ։

* *Ոմանք.* Եւ առէք զխորանն Մողորբայ, և զաստղն աստուածոյն ձերոյ զԲեմ՛։

* *Ոմանք.* Ասէ Տէր, ամենակալ է անուն։

¹Վա՛յ որ անգոսնեն զՍիոն, և յուսացեալ իցեն ՚ի լեա՛ռն Շամրնի. կթեցին զիշխանութիւնս ազգաց, և մտին ՚ի նոսա տունդ Իսրայէլի*։ ²Անցէ՛ք ամենեքին ՚ի Քանան՝ և տեսէ՛ք. և անցէ՛ք անտի ՚ի մեծն Եմա՛թ Յռաբայ, և իջէ՛ք ՚ի Գէթ ալլազգեաց, զօրաւորս քան զամենայն քաղաքսն այնոսիկ, եթէ իցեն մեծ սահմանք նոցա քան զսահմանս ձեր*։ ³Որ գայքդ յօր չարեաց. որ մերձենայքդ հասանել ՚ի շաբաթս ստութեանց։ ⁴Որ ննջէ՛քդ ՚ի գահոյս փղոսկրեայս, և փափկանայք յանկողինս ձեր. և ուտէք ուլս ՚ի հօտից, և որթս դիեցիկս յանդուոց։ ⁵Որ կայթս հարկանէիք ընդդէմ սրընգաց. զորս իբրև հաստատունս համարեցայք՝ և ո՛չ անցաւորս*։ ⁶Եւ ըմպէք պարզեալ գինի. և անոյշ իւղով օծանիք. և ո՛չ ցաւէր ձեզ վասն բեկմանն Յովսեփու։ ⁷Վասն այնորիկ արդ ՚ի գերութիւն վարեցին յիշխանութենէ բռնաւորաց, և հատցի խրխրնջիւն երիվարացն Եփրեմայ։ ⁸Ձի երդուա՛ւ Տէր յանձն իւր. և ասէ Տէր Աստուած զօրութեանց՝ թէ զարշեցուցից զամենայն հպարտութիւնս Յակոբայ, և զաշխարհս նորա ատեցից. և բարձից զքաղաքս նորա ամենայն բնակչօք*։ ⁹Եւ եղիցի եթէ մնացեն տա՛սն այր՝ ՚ի տան միում, և մեռանիցին. ¹⁰և մնացորդքն առնուցուն զընտանիս իւրեանց, և իջանեն հանել զոսկերս նոցա ՚ի տանէ անտի. և ասացեն ցա՛յնոսիկ որք կայցեն առաջի տանն. եթէ ա՛յլ ինչ մնաց ա՛յրդ առ քեզ*։ ¹¹Եւ նա ասացէ՛ թէ ոչ. և մի՛ ասացէ թէ լո՛ւռ լեր. վասն այնորիկ է՛ զի ո՛չ անուանէին զանուն Տեառն*։ ¹²Ձի ահաւասիկ Տէր հրաման տացէ, և հարցէ զմե՛ծ ապարանսն կործանմամբ, և զփոքր ապարանս պատառմամբ։ ¹³Իցէ՞ թէ արշաւեցեն երիվարք ընդ վէմս, կամ հանդարտիցեն ՚ի մէջ մատակաց. զի խտորեցէք զիրաւունս ՚ի ցասումն, և զպտուղ արդարութեան ՚ի դառնութիւն*։ ¹⁴Եւ ուրախ լինէիք յոչինչ բանս։ Ոյք ասէին՝ եթէ՛ Ո՛չ զօրութեամբ մերով եղեն մեզ եղջերք*։ ¹⁵Վասն այդորիկ ահաւաղիկ ես յարուցից ՚ի վերայ ձեր տունդ Իսրայէլի՝ ասէ Տէր զօրութեանց, ազգ մի՛ որ նեղիցեն զձեզ՝ զի մի՛ ևս մտանիցէք յեմաթ, և մինչև ՚ի հեղեղատն արևմտից*։

7

Գլուխ Է

Ձ ¹Ա՛յսպէս եցոյց ինձ Տէր Տէր. և ահա ծնունդ մարախոյ գա՛յր ընդ առաւօտս. և ահա ջորեակ մի Գո՛վգ արքայ։ ²Եւ եղիցի եթէ վախճանեսցէ ուտել զխոտ երկրին։ Եւ ասեմ. Տէր Տէր խնայեա՛. քանզի ո՞վ իցէ որ կանգնեսցէ զՅակոբ, զի սակաւաւոր է*։ ³Ապաշաւեա՛ Տէր ՚ի վերայ այդորիկ. և այդ ևս մի՛ լիցի՝ ասէ Տէր*։

* Ոմանք. Կթէ զիշխանութիւնս ազգաց։

* Ի լուս՝. Անցէ՛ք ամենեքին ՚ի քաղաքէ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝. Ոմանք. ՚ի մեծն Եմաթայ Յռաբայ... քան զքաղաքսն զայնոսիկ։

* Ոմանք. Կայթս հարկանէք ընդդէմ սրընկաց։

* Ոմանք. Եւ ասէ Տէր Տէր զօրութեանց... զքաղաքս նոցա ամենայն բնակ՝։

* Ոսկան. Եւ իջանիցեն հանել զոս՝։

* Ոմանք. Ասացէ՛ եթէ ոչ. մի՛ ասացէ լո՛ւր լեր։

* Ոմանք. Արշաւիցեն երիվ՝... և կամ հանդար՝։

* Ոմանք. Ոյք ասէիք՝ եթէ ո՛չ։

* Ի լուս՝. Ահաւասիկ ես յարու՛. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝. Ոմանք. Ասէ Տէր Աստուած զօրութեանց... որ նեղիցէ զձեզ։

* Ոմանք. Որ կանգնիցէ զՅակոբ։

⁴Այսպէս եցոյց ինձ Տէր Տէր. և ահա կոչեաց դատաստան հրով Տէր Տէր. և եկեր զխորս բազումս, և եկեր զվիճակն*։ ⁵Եւ ասեմ. Տէր Տէր դադարեցո՛ւ զայդ. քանզի ո՞վ է որ յարուցանէ զՅակոբ, զի սակաւաւոր է*։ ⁶Ապաշաւեա՛ Տէր ՚ի վերայ այդորիկ. և այդ ևս մի՛ լիցի՝ ասէ Տէր*։ ⁷Այսպէս եցոյց ինձ Տէր Տէր. և ահա այդ մի կայր ՚ի վերայ ադամանտեայ պարսպի, և ՚ի ձեռին իւրում ադամանտ*։ ⁸Եւ ասէ ցիս Տէր. Ձի՞նչ տեսանես Ամովս։ Եւ ասեմ. Ադամանտ։ Եւ ասէ ցիս Տէր. Ահաւասիկ ես հաստատեցից ադամանտ ՚ի մէջ ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և ո՛չ ևս յաւելից անցուցանել զնովս։ ⁹Եւ ապականեսցին բազինք կատակութեան, և մեհեանք Իսրայէլի աւերեսցին. և յարեայց ՚ի վերայ տանն Յերոբովամայ սրով։ ¹⁰Եւ առաքեաց Ամասիա քուրմ Բեթելայ առ Յերոբովամ արքայ Իսրայէլի՝ և ասէ. Ժողովս կուտէ ՚ի վերայ քո Ամովս ՚ի մէջ տանս Իսրայէլի, և երկիրս ո՛չ կարէ հանդարտել ամենայն բանից նորա։ ¹¹Ձի՛ այսպէս ասէ Ամովս. Յերոբովամ սրով վախճանեսցի, և Իսրայէլ գերելո՛ւ գերեսցի յերկրէ իւրմէ*։ ¹²Եւ ասէ Ամասիա ցԱմովս. Տեսանօղո՛ տո՛ւր տեղի, զնա՛ յերկիրն Յրէաստանի. անդ կեաց՝ և անդէ՛ն մարգարէասջիր։ ¹³Ի Բեթէլ մի՛ ևս յաւելուցուս մարգարէանալ՝ զի սրբութիւն թագաւորի է, և տո՛ւն թագաւորութեան*։ ¹⁴Պատասխանի ետ Ամովս՝ և ասէ ցԱմասիա. Ես ո՛չ մարգարէ էի՝ և ո՛չ որդի մարգարէի, այլ հովիւ էի, և թութ քաղէի. ¹⁵և ա՛ռ զիս Տէր ՚ի հօտից, և ասէ ցիս Տէր. Գնա՛ դու և մարգարէա՛ ՚ի վերայ ժողովրդեան իմում Իսրայէլի։ ¹⁶Եւ արդ՝ լո՛ւր զպատգամս Տեառն. Դու ասես. Մի՛ մարգարէանար ՚ի վերայ Իսրայէլի. և մի՛ ժողովս ժողովեր ՚ի վերայ տանն Յակովբու*։ ¹⁷Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Կին քո ՚ի քաղաքի՛դ պոռնկեսցի. և ուստերք քո և դստերք քո ՚ի սո՛ւր անկցին. և երկիրդ քո լարաբաժին բաժանեսցի. և դու յերկրի պղծում վախճանեսցիս. և Իսրայէլ գերելո՛ւ գերեսցի յերկրէ իւրմէ*։

8

Գլուխ Ը

Է ¹Այսպէս եցոյց ինձ Տէր Տէր, և ահա գործի հաւորսաց։ ²Եւ ասէ. Ձի՛նչ տեսանես Ամովս։ Եւ ասեմ. Գործի՛ հաւորսաց։ Եւ ասէ ցիս Տէր. Հասեալ է վախճան ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և ո՛չ ևս յաւելցին անցուցանել զնովս*։ ³Եւ ողբասցեն յարկք տաճարին յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր. բազումք անկանիցին, և յամենայն տեղիս արկից լռութիւն։ ⁴Լուարո՛ւք զայս, որք նեղէիք զտնանկն ընդ առաւօտս, և զրկէիք զաղքատ յերեկորեայ*։ ⁵և ասէիք. Ե՞րբ անցցէ ամիսս և շահեսցուք, և շաբաթս՝ և բացցուք զգանձս, և առնել զչափ

* Ոսկան. Ապաշաւեաց Տէր ՚ի վերայ։ Ոմանք. ՚ի վերայ այսորիկ. և այդ մի՛ ևս լիցի։

* Օրինակ մի. Եւ եկեր զխոտս բազումս, և եկեր զվի՛։

* Ոմանք. Որ յարուցանիցէ զՅա՛։

* Ոսկան. Ապաշաւեաց Տէր ՚ի վերայ։ Ոմանք. Մի՛ լիցի ասէ Տէր Տէր։

* Այլք. Ադամանդեայ... ադամադ։

* Յօրինակին. Ձի՛ այս ասէ Ամովս։

* Ոմանք. Մի՛ ևս յաւելուր մար՛։

* Ոմանք. Ի վերայ տանն Յերոբովամայ։

* Ոմանք. Դու յերկրի ՚ի պղծումն վախճա՛։

* Ոմանք. Յաւելից անցուցանել զնովս։

* Ոմանք. Ձրկէիք զաղքատս յերեկօրեայ։

փոքր, և մեծացուցանել զկշիռս, և առնել կշիռս ստութեան*։ ⁶ստանալ արծաթով զաղքատս, և զտնանկս ՚ի գնոց կօշկաց. և յամենայն ՚ի վաճառս մեր շահեսցուք*։ ⁷Երդնու՛ Տէր ՚ի վերայ հպարտութեանն Յակովբու. թէ ո՛չ մոռասցին ՚ի սպառ ամենայն գործք ձեր։ ⁸Եւ ՚ի վերայ այդորիկ խռովեսցի՛ երկիր. սու՛գ առցեն ամենայն բնակիչք նորա. և ելցէ իբրև զգետ վախճան նորա, և իջցէ իբրև զգետն Եգիպտացւոց։ ⁹Եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ Տէր Տէր՝ մտցէ՛ արեգակն ՚ի միջօրէի, և խաւարեսցի յերկրի լոյս ՚ի տուէ*։ ¹⁰Եւ դարձուցից ՚ի սուգ զտօնս ձեր, և զամենայն երգս ձեր յողբս. և ածից ՚ի վերայ ամենայն հասակաց քուրձ. և ՚ի վերայ ամենայն գլխոց կնդութիւն. և արարից նմա իբրև սուգ սիրելւոյ, և որոց ընդ նմայն իցեն իբրև օր ցաւոց։ ¹¹Ահա աւուրք գա՛ն ասէ Տէր Տէր. և առաքեսցից սո՛վ յերկիր. ո՛չ սով հացի, և ո՛չ ծարաւ ջրոյ. այլ սով լսելո՛յ զբանն Տեառն։ ¹²Եւ խովեսցին ջուրք ՚ի ծովէ՛ մինչև ՚ի ծով, և ՚ի հիւսւսոյ մինչև յարևելս. ընթասցին խնդրել զբանն Տեառն, և մի՛ գտցեն։ ¹³Յաւուր յայնմիկ նեղեսցին կոյսք գեղեցիկ և երիտասարդք ՚ի ծարաւոյ. ¹⁴ոյք երդնոյին ՚ի քաւութիւնս Շամրնի, և ասէին. Կենդանի՛ է աստուած քո Դա՛ն, և կենդանի՛ է աստուած քո Բերսաբէ. և կործանեսցին, և մի՛ ևս կանգնեսցին*։

9

Գլուխ Թ

¹Տեսի՛ զՏէր զի կայր ՚ի վերայ սեղանոյ՝ և ասէ. Բախեա՛ զսեղանդ՝ և շարժեսցին դրանդիք, և կտրեա՛ արկ ՚ի գլուխս ամենեցուն. և զմնացորդս նոցա սրո՛վ կոտորեսցից. և մի՛ ապրեսցէ ՚ի նոցանէն փախուցեալն. և մի՛ զերծցի ՚ի նոցանէ՛ զերծեալն*։ ²Ձի եթէ ծածկեսցին ՚ի դժոխս, անտի՛ ձեռն իմ կորզեսցէ զնոսա. և եթէ ելանիցեն յերկինս, և անտի՛ իջուցից զնոսա. և եթէ թաքիցեն ՚ի բարձունս Կարմելայ, և անտի՛ յուզեսցից և առից զնոսա։ ³Եւ եթէ ընկեսցին յաչաց իմոց ՚ի խորս ծովու, և անդ հրամայեսցից վիշապին խայթել զնոսա. ⁴և եթէ զնայցեն ՚ի գերութիւն առաջի թշնամեաց իւրեանց, և անդ հրաման տաց սրոյ՝ և սատակեսցէ զնոսա։ Եւ հաստատեսցից ՚ի վերայ նոցա զաչս իմ ՚ի չարութիւն և ո՛չ ՚ի բարութիւն*։ ⁵Եւ Տէր Աստուած ամենակալ որ մերձենայ յերկիր և շարժէ զնա, և սու՛գ առցեն ամենայն բնակիչք նորա. և ելցէ իբրև զգետ վախճան նորա, և իջցէ իբրև զգետն Եգիպտացւոց*։ ⁶Որ շինէ յերկինս զհամբառնալ իւր, և զաւետիս իւր յերկիր հաստատէ. որ կոչէ զջուրս ծովու՝ և հեղու զնա ՚ի վերայ երեսաց երկրի. Տէր ամենակալ անուն է նորա*։ ⁷Ոչ ապաքէն իբրև զորդիս Եթովպացւոց էք դուք ինձ որդիք Իսրայէլի՝ ասէ Տէր. ո՞չ զԻսրայէլ հանի յերկրէն Եգիպտացւոց, և զայլազգիս՝ ՚ի Գամրաց, և զԱսորիս ՚ի Բոթորայ*։ ⁸Ահաւասիկ

* Ոսկան. Անցցէ ամիս, և շահիցուք, և շաբաթ՝ և բացցուք։

* Ոմանք. Եւ զտնանկն... և յամենայն վաճառս։

* Ոմանք. ՚ի միջօրէի, և խաւարեսցի յերկրէ։

* Ոմանք. Ոյք երդնուին։

* Ոսկան. Բախեա՛... և կտրեա՛ յարկ ՚ի գլուխս։

* Ոմանք. Եւ եթէ զնացեն ՚ի գէ՛։

* Ոսկան. Եւ ելցէ իբրև զգետն Եգիպ՛։

* Ոսկան. Յերկրի հաստատէ։

* Ոմանք. Եւ զայլազգիս ՚ի Գամրայ։

աչք Տեառն՝ ՚ի վերայ թագաւորութեանդ մեղաւորաց. և բարձից՝ զդա յերեսաց երկրէ. սակայն՝ ՚ի սպառ ո՛չ ջնջեցից զտունն Յակոբու՝ ասէ՛ Տէր: ⁹Ձի ահաւասիկ ես հրաման տամ, և ցրուեցից՝ զձեզ ընդ ամենայն ազգս տո՛ւնդ Իսրայէլի. զոր օրինակ հոսի հոսչաւ, և մի՛ անկցի մանրուած նորա յերկիր*։ ¹⁰Սրո՛վ վախճանեսցին ամենայն մեղաւորք ժողովրդեան իմոյ. որք ասէին. Ո՛չ մերձեսցին՝ և ո՛չ հասցեն ՚ի վերայ մեր չարիք*։ ¹¹Յաւուր յայնմիկ կանգնեցից՝ զխորանն Դաւթի զանկեալն, և կանգնեցից զկործանեալս նորա. և զյատակեալս նորա վերստին կանգնեցից. և շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից։ ¹²Որպէս զի խնդրեսցեն զիս մնացորդք մարդկան. և ամենայն ազգք յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ. ասէ՛ Տէր՝ որ առնէ զայս*։ ¹³Ահա աւուրք զան ասէ՛ Տէր, և հասցեն կալք կթոց, և խայծեսցի՛ խաղող ՚ի հարաւունս. և բղխեսցեն լերինք զքաղցրութիւն, և ամենայն բլուրք անտառախիտք եղիցին։ ¹⁴Եւ դարձուցից՝ զգերութիւն ժողովրդեան իմոյ Իսրայէլի, և շինեսցեն զքաղաքս ապականեալս և բնակեսցեն. և տնկեսցեն այգիս, և արբցեն զգինի նոցա. արասցեն պարտեզս՝ և կերիցեն զպտուղ նոցա։ ¹⁵Եւ տնկեցից՝ զնոսա յերկրի իւրեանց. և մի՛ ևս մերժեսցին յերկրէ իւրեանց, զոր ետու ես նոցա՝ ասէ՛ Տէր Աստուած ամենակալ։

Կատարեցաւ Մարգարէութիւնն Ամովսայ

ԳԼՈՒԽՔ ՄԻՔԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

ա. Ձիանդերձեալ աւերն Սամարեայ և զերուսաղեմի յառաջագոյն գուշակէ. և զպատճառսն յաւելու. յարէ ՚ի նոյն և զելսն նոցա ՚ի Բաբելոնէ։
բ. Պատուհասք՝ և ամբաստանութիւնք զիշխանաց ժողովրդեանն, և զքահանայից և զսուտ մարգարէից։
գ. Ձեկեղեցոյ՝ որ հաւատալոց էր ՚ի Տէր մեր, և վասն Նորոց Կտակարանաց. քանզի առաջին օրէնքն ՚ի Սինայէ տուան. և սա ՚ի Սիոնէ՛. և վասն խոր խաղաղութեանս։
դ. Ձչարիսն որ միւսանգամ հասանելոց էին Յրէից՝ յառաջագոյն գուշակէ։
ե. Վասն մարմնաւոր ծննդեանն Քրիստոսի, և հաւատացելոց ՚ի նա. և եղիցին ասէ՛ մնացորդքն Յակոբայ. զորս Պաւղոս առաքեալ ասէ՛ թէ մնացորդքն ապրեսցին։
զ. Դատաստան Տեառն ընդ ժողովրդեան իւրոյ, և համար երախտեաց նորա, և հրաժեշտ ՚ի զոհիցն։ Ողբայր մարգարէն զի նուաղեցան արք արիք և արդարք. և մօտ ՚ի կատարածն յետ պատուհասելոյն և սպառնալոյն վիշտս մեծամեծս, և դիւրութիւնս գուշակէ Իսրայէլի։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԷՆ ՄԻՔԻԱՅ

* Ոմանք. եւ ցրուեցից ընդ ամենայն ազգս զտունդ Իսրայէլի։

* Ոմանք. եւ հասցեն ՚ի վերայ մեր։

* Ոմանք. եւ ամենայն ազգ յորոյ վերայ։

Գլուխ Ա

¹ Եւ եղև բան Տեառն առ Միքիէ Մորստացի. յաւուրս Յովաթամայ, և Աքազու, և Եզեկիայ՝ թագաւորաց Յուդայ: Զոր ետես 'ի վերայ Շամրինի և 'ի վերայ Երուսաղեմի*:

Ա ²Լուարուք ժողովուրդք ամենայն. և ունկն դիցէ երկիր՝ և ամենայն բնակիչք նորա. և եղիցի Տէր Աստուած 'ի միջի ձերում 'ի վկայութիւն. Տէր 'ի տանէ սրբոյ իւրմէ: ³Ձի ահաւասիկ խաղասցէ 'ի տեղւոջէ իւրմէ. իջցէ և հասցէ 'ի վերայ բարձանց երկրի. ⁴և շարժեսցին լերինք 'ի ներքոյ նորա. և ձորք հալեսցին իբրև զմոն առաջի հրոյ, և իբրև զջուր հոսեալ ընդ զառիվայր: ⁵Վասն ամպարշտութեանցն Յակովբու է այն ամենայն, և վասն մեղաց տանն Իսրայէլի. իսկ արդ ո՞վ է ամպարշտութիւնն Յակովբայ՝ թէ ոչ Շամրին, և ո՞վ է մեղք տանն Յուդայ՝ եթէ ոչ Երուսաղեմ*: ⁶Եւ եղից զՇամրին իբրև զտաղաւար մրգապահաց ագարակի, և 'ի տոնկն այգւոյ. և կործանեցից 'ի խորխորան զվէմս նորա, և զհիմունս նորա մերկացուցից*: ⁷Եւ զամենայն դրօշեալս նորա կտորեսցեն, և զամենայն արձանս նորա այրեսցեն հրով. և զամենայն կուռս նորա արարից յապականութիւն, զի 'ի կապինաց պռռնկութեան ժողովեաց, և 'ի կապինաց պռռնկութեան ամփոփեաց*: ⁸Վասն այնորիկ կոծեսցի՝ և ողբասցի, և գնասցէ մերկ և բոկ. և արասցէ կո՛ծ իբրև զվիշապաց, և սուգ իբրև զդստերաց համբարեաց*: ⁹Ձի սաստկացան հարուածք նորա. քանզի հասին մինչև 'ի Յուդայ, և մերձեցան մինչև 'ի դրունս ժողովրդեան իմոյ և յԵրուսաղեմ*: ¹⁰Որ 'ի Գէթթէք՝ մի՛ մեծաբանէք. և որ յԱկկարոնդ էք՝ մի՛ նորոգէք 'ի տանէ զկատակութիւն. հող 'ի գլուխ լերուք 'ի վերայ բնակութեան ձերոյ*: ¹¹Բնակեալն բարութեամբ ո՞չ էլ 'ի քաղաքաց իւրոց. բնակիչք Սենարայ կո՛ծ առէք 'ի վերայ տանն որ մերձ է առ նա. բարձցէ՛ 'ի ձէնջ զհարուածս ցաւոց: ¹²Ո՛վ արար սկիզբն բարեաց բնակելոյն 'ի մէջ ցաւոց. զի իջին չարիք 'ի Տեառնէ 'ի վերայ դրանցն Երուսաղեմի: ¹³Շաչիւն կառաց՝ և դրժնդիւն երիվարաց. բնակիչք Լաքիսայ, նա՛ է առաջնորդ մեղաց դստեր Սիոնի. զի 'ի քե՛զ գտան ամպարշտութիւնք Իսրայէլի*: ¹⁴Վասն այնորիկ տացէ արձակեալս մինչև 'ի ժառանգութիւն Գեթթայ, զտունս սնոտիս, 'ի նանի՛ր եղեն թագաւորացն Իսրայէլի. ¹⁵մինչև ցժառանգիչս քո ածցեն բնակիչդ Լաքիսայ ժառանգութեամբ. մինչև յՈղողան հասցէ փառք դստեր Սիոնի*: ¹⁶Գերծի՛ր և կտրեա՛ 'ի վերայ փափուկ որդւոցն քոց. լայնեա՛ զխզումն քո իբրև զարծուոյ՝ զի գերեցան 'ի քէն:

* Ոմանք. Առ Միքիա Մաւրստացի:

* Բազունք. Վասն ամպարշտութեանն Յակովբու է:

* Օրինակ մի. Եւ եղիր զՇամրին: Ոմանք. Եւ զհիմունս նորա մերկացից:

* Ոմանք. 'ի կապեմաց պռռնկութեան:

* Ոսկան. Յամբարուաց:

* Ոմանք. ժողովրդեան իմոյ յԵրուսաղեմ:

* Ոմանք. Եւ որ յԱկկարիմդ էք... հող 'ի գլուխ լերուք 'ի վերայ կատակութեանց ձերոց:

* Ոմանք. Բնակիչ Դաքիսայ, նա:

* Ոմանք. Մինչև 'ի ժառանգիչսն քո ածցեն բնակիչքդ... մինչև 'ի յՈղո՛:

Գլուխ Բ

¹Եղեն խորհել զվաստակս, և գործեն զչարհիս յանկողինս իւրեանց. և ընդ այգ ընդ լոյսն զնոյն կատարեին. զի ո՛չ ամբարձին զձեռս իւրեանց առ Աստուած: ²Յանկային անդոց, և յափշտակեին զորքս, և զտունս բռնադատեին. յափշտակեին զայր՝ և զտուն նորա, զայր՝ և զժառանգութիւն նորա: ³Վասն այնորիկ ա՛յսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես խորհիմ ՚ի վերայ ազգիդ այդորիկ չարիս՝ ուստի ո՛չ համբառնայցեք զպարանոցս ձեր, և ո՛չ գնայցեք կանգուն յանկարծակի. զի ժամանակ չա՛ր է՝: ⁴Յաւուր յայնմիկ առից ՚ի վերայ ձեր առակ. ողբասցեն ո՛ղբս ձայնիւ՝ և ասասցեն. Թշուառութեամբ թշուառացաք: Մասն ժողովրդեան իմոյ լարո՛վ չափեցաւ. և ո՛չ ոք էր որ արգելոյր զնա դարձուցանել. անդք մեր բաժանեցան* . ⁵Վասն այնորիկ ո՛չ ոք իցէ որ արկանիցէ լարաբաժին ՚ի վիճակ: Յեկեղեցւոջ Տեառն* ⁶մի՛ լայք արտասուօք, և մի՛ արտասուեսցեն ՚ի վերայ այդորիկ. զի ո՛չ մերժեսցէ զնախատինս: ⁷Որ ասաց՝ թէ տուն Իսրայէլի բարկացոյց զՈգի Տեառն. եթէ այս գնացք նորա իցեն, ո՛չ են բարւոք բանք նորա ընդ նմա. և ո՛չ ուղիղ գնացեալ է առաջի իմ ժողովուրդ իմ*: ⁸Ի թշնամութիւն հակառակեցաւ ընդդէմ խաղաղութեան իւրոյ: Չմորթ նորա մորթեսցեն բառնա՛լ գոյս, զբեկումն պատերազմի: ⁹Վասն այնորիկ առաջնորդք ժողովրդեան իմոյ անկցին ՚ի տանց փափկութեանց իւրեանց. վասն չարութեան գնացից իւրեանց մերժեցան: Մերժեցարո՛ւք ՚ի լերինսն յաւիտենից*: ¹⁰Յո՛տն կաց և գնա՛, զի ո՛չ գոյ քեզ այդր հանգիստ. վասն պղծութեան ապականեցայք ապականութեամբ*. ¹¹հալածեցայք առանց ուրուք հալածելոյ: Ա՛յս սուտ յարեաւ՝ կաթեաց ՚ի քեզ գինի և արբեցութիւն. և եղիցի ՚ի կաթուածոյ անտի ժողովրդեանս այսմիկ*: ¹²Ժողովելով ժողովեսցի Յակոբ ամենեքումբք հանդերձ, և ընդունելով ընկալցի զմնացորդս Իսրայէլի. և ՚ի միասին արարից զդարձ նոցա. իբրև ոչխարք ՚ի նեղութեան. իբրև հօտք ՚ի մէջ մակաղատեղի իւրեանց. վարեսցին ՚ի մարդկանէ ընդ խրամ*, ¹³զի առաջի երեսաց նոցա խրամատեսցին. և անցին ընդ դուռն, և ելին ընդ նա. ել և թագաւորն առաջի երեսաց նոցա. և Տէր առաջնորդեսցէ նոցա*:

Գլուխ Գ

* *Ոմանք.* Վասն այսորիկ ա՛յսպէս... կանգուն, զի ժամանակն չար է: *Յօրինակին պակասէր.* Ահաւասիկ ես խորհիմ ՚ի վերայ:

* *Ոմանք.* Ի վերայ ձեր առակս. ողբայցեն:

* *Ոմանք.* Լարաբաժին վի՛:

* *Ոմանք.* Որ ասացն եթէ տուն:

* *Ոմանք.* Գնացից իւրեանց մերժեսցին:

* *Օրինակ մի.* Չի ոչ գայ քեզ այդր:

* *Ոսկան.* Կաթեցաւ ՚ի քեզ գի՛:

* *Յօրինակին պակասէր.* Զդարձ նոցա. *իբրև ոչխարք* ՚ի նեղութեան:

* *Ոմանք.* Առաջի երեսաց նորա խրամ*:

Բ¹ Եւ ասացէ. Լուարո՛ւք իշխանք տանն Յակոբայ, և մնացորդք տանն Իսրայէլի: Ո՞չ ձե՛ր է գիտել զիրաւունս. ²որ ատեայյքդ զբարիս, և խնդրէք զչարիս. զերծանէք զմորթ նոցա ՚ի նոցանէ, և զմարմին նոցա յոսկերաց իւրեանց* : ³Չոր օրինակ կերան զմարմինս ժողովրդեան իմոյ, և զմորթ նոցա մորթեցին ՚ի նոցանէն. և զոսկերս նոցա փշրեցին. և յօշեցին զմարմինս նոցա իբրև ՚ի կաթսայս, և զմիս նոցա իբրև ՚ի պուտանս* : ⁴Նո՛յնպէս աղաղակեսցեն առ Տէր՝ և ո՛չ լուիցէ նոցա. և դարձուցէ զերեսս իւր ՚ի նոցանէն ՚ի ժամանակին յայնմիկ. փոխանակ զի չարչարեցին զնոսա ՚ի գործս իւրեանց: ⁵Այսպէս ասէ Տէր ՚ի վերայ մարգարէիցն՝ որ մոլորեցուցանեն զժողովուրդ իմ. որ խածանեն ատամամբք իւրեանց, և քարոզեն նմա զխաղաղութիւն. և ո՛չ տուաւ ՚ի բերան նոցա. և յարուցին ՚ի վերայ նոցա պատերազմ: ⁶Վասն այնորիկ գիշեր լիցի ձեզ ՚ի տեսլենէ, և նսեմասցի ձեզ յղծութենէ. մտցէ արեգակն ՚ի վերայ մարգարէիցն, և խաւարեսցի ՚ի վերայ նոցա տիւ* : ⁷Եւ ամաչեսցեն երազատեսքն, և ծա՛ղր կայցեն իղձքն. և բամբասեսցեն զնոսա ամենեքեան. զի ո՛չ ոք իցէ որ լսիցէ նոցա: ⁸Բայց ես լցայ Յոգևով զօրութեամբ Տեառն, դատաստանաւ և զօրութեամբ. պատմել Յակոբու զամպարշտութիւնս նորա, և Իսրայէլի զմեղս նորա* : ⁹Լուարո՛ւք զայս առաջնորդք տանդ Յակոբայ, և մնացորդք տանդ Իսրայէլի. որ անարգէք զիրաւունս, և թիւրք զամենայն ուղորդս* . ¹⁰որ շինէք զՍիոն արեամբ, և զԵրուսաղէմ անիրաւութեամբ: ¹¹Առաջնորդք նորա կաշառօք դատէին, և քահանայք նորա վարձուք տային պատասխանի. և մարգարէք նորա արծաթով պատմէին զըղծութիւնս. և ՚ի Տէր ապաստան լինէին և ասէին. Ո՞չ ապաքէն Տէր ընդ մե՛զ է՝ և ո՛չ եկեսցէ ՚ի վերայ մեր չարիք* : ¹²Վասն այնորիկ ՚ի ձե՛ր սակս, Սիոն արօրադի՛ր լիցի, և Երուսաղէմ իբրև զտաղաւար մրգապահաց, և լեառն տաճարին յանտաճ մայրւոյ* :

4

Գլուխ Դ

Գ¹ Եւ եղիցի յաւուրս յետինս յայտնի՝ լեառն Տեառն. պատրաստեալ ՚ի գլուխս լերանց. և բարձրացի՛ ՚ի վերայ բլրոց, և փութացին ՚ի նա ժողովուրդք բազումք* . ²և երթիցեն ազգք բազումք և ասիցեն. Եկայյք Ելցուք ՚ի լեառն Տեառն՝ և ՚ի տուն Աստուծոյ Յակոբայ, և ցուցցեն մեզ զճանապարհս նորա՝ և զմասցուք ՚ի շաւիղս նորա: Չի ՚ի Սիոնէ Ելցեն օրէնք, և բան Տեառն յերուսաղէմէ* . ³և դատեսցի ՚ի մէջ ժողովրդոց բազմաց, և յանդիմանեսցէ զազգս հզօրս մինչև ցիեռաւորս. և կոտորեսցեն զսուսերս իւրեանց ՚ի խոփս, և զզեղարդունս իւրեանց ՚ի մանգաղս. և ո՛չ ևս առցէ ազգ յազգի վերայ սուր, և ո՛չ ևս ուսանիցին

* Ի բազումս պակասի. ՚ի նոցանէ. և զմարմին նոցա յոսկերաց իւրեանց:

* Ոմանք. Իբրև ՚ի պուտունս:

* Ոմանք. Եւ մտցէ արեգակն:

* Ոսկան. Յոգևոյ զօրութեամբ: Յօրինակին պակասէր. Եւ զօրութեամբ. պատմել Յակոբու: Ոմանք. Եւ Իսրայէլի զմեղս նոցա:

* Ոմանք. Տանն Յակոբայ... տանն Իսրայէլի:

* Ոմանք. Կաշառօք դատեն... արծաթովք պատմէին զըղծութիւն, ՚ի Տէր ա՛:

* Ոմանք. Վասն այնորիկ ՚ի ձե՛ր սա՛:

* Յօրինակին. Պատրաստել ՚ի գլուխս լե՛:

* Ոսկան. Եկայք, և Ելցուք:

պատերազմել*։ ⁴Եւ հանգիցէ իւրաքանչիւր ընդ որթով իւրով՝ և ընդ թգնեալ իւրով, և ո՛չ ոք իցէ որ զարհուրեցուցանիցէ. զի բերան Տեառն ամենակալի խօսեցաւ զայս*։ ⁵Եթէ ամենայն ժողովուրդք գնասցեն իւրաքանչիւր ՚ի ճանապարհս իւրեանց. այլ մեք գնասցուք յանուն Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս և առ յապայ։ ⁶Յաւուր յայնմիկ ասէ Տէր, ժողովեցից զմանրեալն, և զհեռացեալն ընկալա՛յց՝ և զորս մերժեցին. ⁷և արարից զբեկեալն ՚ի զաւակ, և զմանրեալն յա՛զգ հզօր. և թագաւորեսցէ Տէր ՚ի վերայ նոցա ՚ի լերինն Սիոնի յայսմիտէ մինչև յաւիտեան*։

Դ ⁸Եւ դու աշտարակ հօտի, մթին դուստր Սիոնի, ՚ի վերայ քո եկեսցէ և մտցէ առաջին իշխանութիւն թագաւորութեան ՚ի Բաբելոնէ դստեր Երուսաղէմի։ ⁹Եւ արդ ընդէ՞ր ծանեար զչար. միթէ թագաւոր ո՛չ գոյր քո, կամ թէ խորհուրդն քո կորեա՞ւ. զի սաստկացան երկունք քո իբրև զծննդականի։ ¹⁰Երկնեա՛ և զօրացի՛ր, և մերձեա՛ դուստր Սիոնի իբրև զծննդական։ Ձի այժմ ելցես ՚ի քաղաքէ, և բնակեցուցի՛ց զքեզ ՚ի դաշտի. և հասցես մինչև ՚ի Բաբելոն. և անտի փրկեսցէ զքեզ՝ և անտի ապրեցուցէ զքեզ Տէր Աստուած քո ՚ի ձեռաց թշնամեաց քոց*։ ¹¹Եւ արդ ժողովեցան ՚ի վերայ քո ազգք բազումք. որք ասէին. Եկայք ոտնհար լիցուք, և տեսցեն աչք մեր ՚ի վերայ Սիոնի։ ¹²Եւ նոքա ո՛չ գիտացին զխորհուրդ Տեառն, և ո՛չ ՚ի միտ առին զկամս նորա. զի ժողովեաց զնոսա իբրև զօրան ՚ի կալ. ¹³կանգնեաց և կա՛նս զնոսա դուստր Սիոնի։ Ձի զեղջերս քո արարից երկաթիս, և զկծղակս քո պղնձիս. և մանրեսցես զժողովուրդս բազումս, և փշրեսցես նոքօք զազգս. և մատուցես Տեառն զբազմութիւն նոցա, և զգօրութիւն նոցա Տեառն ամենակալի*։

5

Գլուխ Ե

¹Արդ պաշարեսցի դուստրն ցանգով. զի նեղութիւն կարգեաց ՚ի վերայ ձեր. զաւազանաւ հարցեն զծնօտս ազգաց Իսրայէլի։

Ե ²Եւ դու Բեղդահէմ տուն Եփրաթայ սակաւաւոր՝ իցես լինել ՚ի հազարաւորս Յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի. և ելք նորա իսկզբանէ աւուրց աշխարհի*։ ³Վասն այնորիկ տացէ զնոսա մինչև ՚ի ժամանակ ծննդականին. ծնցի՛ և մնացորդք եղբարց նորա դարձցին առ որդիսն Իսրայէլի*։ ⁴Եւ կացցէ՛, և տեսցէ՛ և հովուեսցէ՛ հօտի իւրոյ զօրութեամբ Տեառն, և ՚ի փառս անուան Տեառն Աստուծոյ իւրեանց հաստատեսցին։ Ձի այժմ մեծացին մինչև ՚ի ծա՛գս երկրի. ⁵և եղիցի նմա խաղաղութիւն. յորժամ եկեսցէ Ասորեստանեայն յերկիր ձեր՝ և յորժամ հասցէ յաշխարհ ձեր. յարուսցէ ՚ի վերայ նորա եւթն հովիւ՝ և ո՛ւր վարիչ մարդկան*։ ⁶Եւ հովուեսցեն զԱսորեստանեայն սրով. և զերկիրն Նեբրովթայ ՚ի

* *Ոմանք.* Ելցէ օրէնք։

* *Ոմանք.* Իւրաքանչիւրոք ընդ որթով։

* *Ոմանք.* Մինչև յաւիտեանս։

* *Բազումք.* Եւ մերձեաց դուստր։

* *Ոմանք.* Եւ կանգնեաց և կանս... և զգօրութիւն նոցա Տեառն ամենայն երկրի։

* *Օրինակ մի.* Ի քէն ելցէ ինձ իշխան Իսրայէլի։

* *Ոմանք.* Եւ մնացորդք եղբարց նոցա։

* *Ոմանք.* Եւ եղիցի ՚ի նմա խաղա՞։ *Յօրինակին՝ զկնի բառիս վարիչ դատարկ տեղի*

պատմիչի իւրում. և փրկեսցէ զքեզ յԱսորեստանւոյն՝ յորժամ եկեսցէ յերկիր ձեր. և յորժամ հասցէ ՚ի վերայ սահմանաց ձերոց: ⁷Եւ եղիցի մնացորդքն Յակոբայ ՚ի հեթանոսս ՚ի մէջ ազգաց բազմաց՝ իբրև զցօղ անկեալ ՚ի Տեառնէ, և իբրև զգառինս ՚ի վերայ սիզոյ, որպէս զի ժողովեսցէ և մի՛ մի. և մի՛ մնասցէ ՚ի մէջ որդւոց մարդկան*։ ⁸Եւ եղիցին մնացորդքն Յակոբայ ՚ի հեթանոսս ՚ի մէջ ազգաց բազմաց իբրև զառեւծ ՚ի մէջ խաշին յանտառի, և իբրև զկորիւն առիւծու՝ ՚ի մէջ հօտից խաշանց. զոր օրինակ յորժամ անցեալ զատուցանիցէ՝ և յափշտակիցէ՝ և ո՛չ ոք իցէ որ թափիցէ*։ ⁹Բարձրացի՛ ձեռն քո ՚ի վերայ նեղչաց քոց, և ամենայն թշնամիք քո սատակեսցին: ¹⁰Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր. սատակեցից զերկարս քո ՚ի միջոյ քումմէ, և կորուսից զկառս քո. ¹¹և սատակեցից զքաղաքս երկրի քոյ, և բարձից զամենայն ամուրս քո. և բարձից զամենայն կախարդութիւնս քո ՚ի ձեռաց քոց. և հարցուկք ո՛չ եղիցին ՚ի քեզ: ¹²Ձնջեցից զդրօշեալս քո, և զարձանս քո ՚ի միջոյ քումմէ. և ո՛չ ևս երկիրպագցես գործոց ձեռաց քոց*։ ¹³Եւ կոտորեցից զանտառսդ ՚ի միջոյ քումմէ, և ապականեցից զքաղաքս քո, ¹⁴և արարից բարկութեամբ և սրտմտութեամբ վրէժխնդրութիւն ՚ի մէջ ազգաց. փոխանակ զի ո՛չ լուան:

6

Գլուխ Զ

Զ ¹Լուարո՛ւք զայս զոր ասաց Տէր. Արի՛ և դատեա՛ց ընդ լերինս, և բլուրք լուիցեն ձայնի քում: ²Լուարո՛ւք բլուրք զդատաստան Տեառն, և ձորք և հո՛ւնք երկրի. զի դատաստան է Տեառն ընդ ժողովրդեան իւրում, և ընդ Իսրայէլի յանդիմանեսցի*։ ³Ժողովուրդ իմ զի՞ արարի քեզ, կամ ի՞նչ տրտմեցուցի զքեզ, կամ ի՞նչ նեղեցի զքեզ. տո՛ւր ինձ պատասխանի: ⁴Փոխանակ զի հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, և ՚ի տանէ ծառայութեան փրկեցի՞ զքեզ. և առաքեցի առաջի քո զՄովսէս և զԱհարոն և զՄարիամ: ⁵Ժողովուրդ իմ յիշեա՛ զինչ խորհեցաւ վասն քո Բաղա՛կ թագաւոր Մովաբացւոց. և զի՞նչ ետ նմա պատասխանի Բաղասան որդի Բեովրայ, ՚ի վիճակացն մինչև ցԳաղգաղ. զի ծանիցի արդարութիւն Տեառն*։ ⁶Ի՞նչ կանխեցից առ Տէր. ապաւինեցայց յԱստուած իմ բարձրեալ, եթէ կանխեցից առ նա ողջակիզօք, և որթովք տարևորօք*։ ⁷Եթէ իցէ՝ ընկալցի՞ Տէր ընդ հազարաւորս խոյոց, կամ ընդ բիւրաւորս նոխագաց պարարտաց. եթէ տա՛ց զանդրանիկս իմ վասն ամպարշտութեանց, և զպտուղ միջոյ իմոյ վասն մեղաց անձին իմոյ*։ ⁸Պատմեցաւ քեզ ո՛վ մարդ՝ զի՞նչ է բարի, կամ զի՞նչ խնդրէ ՚ի քեն Տէր. բայց

թողեալ՝ չակերտիւ նշանակի բերել ինչ ՚ի ներքս, և զանց առնէ դնել զայն ՚ի լուս:՝ Ուր այլ օրինակ մի՛ ՚ի մարգարէական գիրս քան զամենեսին յաւետ համեմատ մերումս, յաւելու անդէն՝ վարիչ մարիչ մարդկան: Ոսկան. Զինգ հովիւս և ութն վարիչ մարդկան:

** Ոմանք. Եւ եղիցի մնացորդն Յա՛... որպէս զի մի՛ ժողովեսցի. և մի մի: Ոսկան. Եւ իբրև կաթիլ ՚ի վերայ սիզոյ, որպէս զի մի՛ ժողովեսցի ՚ի մի, և մի՛ մնասցէ:*

** Ոմանք. Ի մէջ խաշին անտառի:*

** Ոմանք. Եւ ջնջեցից զդրօշեալս:*

** Բազումք. Եւ ձորք և հիմունք երկրի:*

** Ոմանք. Ի վիճակացն մինչև ցԳաղգաղայ:*

** Ոմանք. Եւ կանխեցից առ Տէր:*

** Ոսկան. Միթէ իցէ՝ ընկալցի Տէր... միթէ տաց զանդրա՛:*

առնել՝ զիրաւունս, և սիրել զողորմութիւն. և պատրաստ լինել երթալոյ զկնի Տեառն Աստուծոյ քոյ*։ ⁹Չայն Տեառն՝ ի վերայ քաղաքի կոչեսցի, և ապրեցուցէ զերկիւղածս անուան նորա։ Լո՛ւր ազգ, ո՛ր հանդերձեսցէ զքաղաք*, ¹⁰եթէ ո՛չ հուր, և տուն անօրինի որ գանձէ զգանձս անօրէնս, և հպարտութեամբ անհրաւութեան*։ ¹¹Եւ իցէ՞ թէ արդարասցի կաշառովք անօրէնն, և պայուսակա՛ւ կշռոց նենգութեան. ¹²ուստի գտունս իւրեանց լցին ամպարշտութեամբք. և բնակիչք նորա խօսեցան անհրաւութիւն. և լեզուք նոցա մեծաբանեցին ՚ի բերանս իւրեանց։ ¹³Եւ ես հարի զքեզ ապականութեամբ վասն մեղաց քոց։ ¹⁴Դու կերիցես և մի՛ յագեսցիր. և մերժեցի՛ զքեզ. և ըմբռնեսցիս՝ և մի՛ ապրեսցիս. և որ միանգամ ապրեսցին ՚ի սո՛ւր մատնեսցին*։ ¹⁵Դու սերմանեսցես՝ և ո՛չ հնձեսցես. դու կթեսցես ձէթ՝ և մի՛ օժցիս իւղով. և գինի՝ և մի՛ արբցես գինի*։ ¹⁶Եւ ապականեսցին անօրէնք ժողովրդեան իմոյ, և ամենայն գործք տանն Աքաաբու. և գնացէք ըստ խորհրդոց նորա. զի մատնեցից զձեզ յապականութիւն, և զբնակիչս քո ՚ի շշիւն, և զնախատինս ժողովրդոց ընկալջիք։

7

Գլուխ Է

¹Վա՛յ ինձ, զի եղէ իբրև զհասկաքա՛ղ ՚ի հունձս, և իբրև զճռաքա՛ղ ՚ի կութս. և ո՛չ գոյր ողկոյզ յառաջին բերոյն ուստի ուտէի*։ ²Վա՛յ անձին իմում. զի կորեա՛ւ երկիւղած յերկրէ. և ո՛չ գոյ ուղիղ ՚ի մէջ մարդկան. ամենեքին արեամբ դատին. իւրաքանչիւր զընկեր իւր նեղելով նեղեն*։ ³Ձձեռս իւրեանց պատրաստեն ՚ի չար։ Իշխանն խնդրէ, և դատաւորն խօսի բանս խաղաղութեան ըստ ցանկութեան անձին իւրոյ. ⁴և հանից զբարութիւն նոցա իբրև զցեց որ ուտէ և շրջի ՚ի վերայ կանոնի յաւուր այցելութեան։ Վա՛յ վա՛յ, վրէժխնդրութիւնք քո եկին հասին. արդ եղիցին լալիք նոցա։ ⁵Մի՛ հաւատայք սիրելեաց, և մի՛ յուսայք յիշխանս. և յանկողնակցէ քումնէ զգո՛յշ լեր պատմել ինչ նմա։ ⁶Ձի որդի՛ անարգէ զհայր, և դուստր՝ յարիցէ ՚ի վերայ մօր իւրոյ. նու՛ ՚ի վերայ սկեսրի իւրոյ, և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ ⁷Այլ ես Տեառն ակն կալայց. սպասեցից Աստուծոյ փրկչի իմոյ, և լուիցէ՛ ինձ Տէր Աստուած իմ։ ⁸Մի՛ ոտնհար լինիր ինձ թշնամի իմ. զի գլորեցայ՝ միւսանգամ կանգնեցայց. զի թէ նստայց ՚ի խաւարի՝ Տէր է իմ լոյս։ ⁹Բարկութեան Տեառն համբերեցից՝ զի մեղա՛յ նմա, մինչև արդարացուցէ զդատաստան իմ, և արասցէ ինձ իրաւունս, և հանցէ զիս ՚ի լոյս. և տեսից զարդարութիւն նորա*։ ¹⁰Եւ տեսցէ զիս թշնամի իմ, և ծածկեսցէ զնա ամօթ. որ ասէր ցիս ո՛ւր է Տէր Աստուած քո. աչք իմ տեսցեն ՚ի նա. արդ եղիցի

* Ոմանք. Եւ կամ զինչ... առնել իրաւունս։

* Ոսկան. ՚ի վերայ քաղաքի գոչեսցի։

* Ոմանք. Եւ հպարտութեամբ անհրաւութիւն։

* Ոսկան. Կերիցես, և մի՛ յագեսցիս... որ միանգամ։

* Ոմանք. Եւ մի՛ հնձեսցես... իւղով. և մի՛ արբցես գինի։

* Ոմանք. Վայ է ինձ... ՚ի կութս. ոչ գոյր ող՛։ Ոսկան. Յառաջնոյ բերոյն։

* Ոմանք. Ձընկեր նեղելով նե՛։

* Ոմանք. Բարկութեան Տեառն համբերից... և տացէ ինձ իրաւունս։

կոխան իբրև զկալ ՚ի ճանաարհի*։ ¹¹Օր ծեփոյ աղիւսոյ, և ջնջո՛ւնն քո եղիցի օրն այն. մերժեսցէ զիրաւունս քո օրն այն*։ ¹²Եւ քաղաքք քո եկեսցեն ՚ի պաշարունն և յաւար Ասորեստանեայց. և քաղաքք քո ամուրք ՚ի բաժինս, ՚ի Ծուրայ մինչև ցԳետն, և ՚ի ծովէ մինչև ցժով, և ՚ի լեռնէ մինչև ցլեռն*։ ¹³Եւ եղիցի երկիրն յապականութիւն հանդերձ բնակչօքն իւրովք ՚ի պտղոյ գործոց նոցա։ ¹⁴Արածեա՛ զժողովուրդ քո գաւազանաւ ցեղի՛ցդ քոց, և զխաշինս ժառանգութեան քոյ որ բնակեալ են առանձինն յանտառի՝ ՚ի մէջ Կարմեւայ. արածեսցին ՚ի Բասան, և ՚ի Գաղաադ ըստ աւուրցն յաւիտենից։ ¹⁵Եւ ըստ աւուրց ելիցն քոց յերկրէն Եգիպտացոց, ցուցից նոցա սքանչելիս։ ¹⁶Տեսցեն հեթանոսք և ամաչեսցեն յամենայն զօրութենէ իւրեանց. դիցեն զձեռս ՚ի վերայ բերանոց իւրեանց, և ականջք նոցա խլասցեն*։ ¹⁷Լիզեսցեն զհող իբրև օճք որ սողին ընդ երկիր. խռովեսցին ՚ի պաշարման իւրեանց, և ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ զարհուրեսցին, և երկիցեն ՚ի քէն։ ¹⁸Ո՛վ է Աստուած իբրև զքեզ որ բառնայ զանօրէնութիւնս, և զանց առնէ զանիրաւութեամբք մնացորդաց երկրի ժառանգութեան իւրոյ. և ո՛չ ունի ՚ի վկայութիւն զբարկութիւն իւր, զի կամեցօղ ողորմութեան է*։ ¹⁹Դարձցի և գթասցի ՚ի մեզ. և ընկղմեսցէ՛ զմեղս մեր, և ընկեսցէ ՚ի խորս ծովու զամենայն զանօրէնութիւնս մեր։ ²⁰Տացէ ճշմարտութիւն Յակովբայ, ողորմութիւն Աբրահամու. որպէս երդուաւ հարցն մերոց՝ ըստ աւուրցն առաջնոց։

Կատարեցաւ Մարգարտութիւնն Սիբիայ

ԳԼՈՒԽՔ ՅՈՎԵԼԱՅ ՄԱՐԳԱՐԵԻ

ա. Ջպէսպէս պտղոց նշանակէ, զերկրին ասէ, և խրատ տայ հաշտեցուցանել զԱստուած։

բ. Ձեւս Ասորեստանւոյն գուշակէ. և յետ այնորիկ դիւրութիւն ինչ մարգարեանայ։

գ. Ձդէպս լեզուացն որ Առաքելովքն լինելոց էր գուշակէ. մարգարեանայ և զկորուստ ազգացն՝ որ եղև յետ ելիցն ՚ի Բաբելոնէ առ Ջորաբաբելիւ։ Կայ և այլասացութիւն ինչ ՚ի տեղւոջս յայսմիկ. այլասացութիւն ասի՝ յորժամ զայլ ինչ ասիցէ՝ և զայլ ինչ նշանակէ։

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ՅՈՎԵԼԱՅ

1

* *Ոմանք.* Եւ տեսցէ թշնամին իմ։

* *Ոմանք.* Օր ծեփելոյ աղիւսոյ։

* *Յօրինակին.* Եւ քաղաք քո ամուրք։ *Ոմանք.* Եւ ՚ի ծովէ մինչև ՚ի ծով։

* *Այլք.* Եւ ականջք նոցա խլասցին։

* *Ոմանք.* Որ բառնաս զանօրէնութիւնս, և զանց առնես... երկրի ՚ի ժառանգութեան իւրոյ, և ոչ ունի վկայութիւն։

Գլուխ Ա

¹Պատգամ Տեառն որ եղև առ Յովէլ Բաթուլի յաւելի յաւուրս Եզեկիայ*:

Ա ²Լուարո՛ւք զայս ծերք, և ո՛ւնկն դիք ամենայն բնակիչք երկրի. եթէ եղեա՞լ է այսպիսի ինչ յաւուրս ձեր, կամ յաւուրս հարցն ձերոց: ³Պատմեցէ՛ք զայս որդւոց ձերոց. և որդի՛ք ձեր որդւոց իւրեանց. և որդիք նոցա յա՛զգ յայլ: ⁴Չմնացորդս թրթորյ եկեր մարախ, և զմնացորդս մարախոյ՝ եկեր ջորեակ, և զմնացորդս ջորեկի եկե՛ր երկիլ: ⁵Սթափեցարո՛ւք արբեալք ՚ի գինւոյ, և լացէ՛ք և զգացարո՛ւք ամենեքեան որ ըմպէք գինի ցարբեմալ. զի բարձա՛ւ ՚ի բերանոյ ձերմէ ուրախութիւն և խնդութիւն: ⁶Ձի ա՛զգ մի ել յերկիր իմ հզօր և անթիւ. ատամունք նորա ատամունք առիծու, և ժանիք նորա կորեան՝ առիծու: ⁷Արա՛ր զորթ իմ յապականութիւն, և զթգենիս իմ ՚ի խորտակումն. յուզելո՛ւ՛վ յուզեաց և ընկէ՛ց զնա, և լսնեցոյց զուռս նորա: ⁸Ողբա՛յ առ իս իբրև զհարսն քրձագգած ՚ի վերայ առն իւրոյ ամուսնոյ*: ⁹Բարձան զոհք և սպանդք ՚ի տանէ Տեառն. սո՛ւզ առէք քահանայք, պաշտօնեայք սեղանոյ. ¹⁰զի թշուառացան դաշտք. սո՛ւզ առցէ երկիր՝ զի թշուառացա՛ւ ցորեան, ցամաքեցա՛ւ գինի, նուազեաց ձէթ: ¹¹Ողբացէ՛ք մշակք ստացուածովք ՚ի վերայ ցորենոյ՝ և գարւոյ. զի կորեան կուքք յագարակէ. ¹²ցամաքեցաւ որթ, նուազեաց թուզ՝ և նուռն. և արմաւ՝ և խնձոր, և ամենայն փայտ ագարակի գօսացաւ. զի յամօ՞թ արարին զուրախութիւն. որդիք մարդկան՝ ¹³քրձագգա՛ծք եղերուք. կոծեցարո՛ւք քահանայք. սո՛ւզ առէք պաշտօնեայք սեղանոյ. մտէ՛ք ննջեցէ՛ք խորգով պաշտօնեայք Աստուծոյ. զի պակասեցին ՚ի տանէ Աստուծոյ ձերոյ զոհք և սպանդք: ¹⁴Սրբեցէ՛ք պահս՝ քարոզեցէ՛ք պաղատանս. ժողովեցէ՛ք զծերս ամենայն բնակիչք երկրիդ ՚ի տուն Աստուծոյ ձերոյ, և աղաղակեցէ՛ք առ Տէր սրտի մտօք: ¹⁵Վա՛յ ինձ. վա՛յ ինձ. վա՛յ ինձ յաւուր յայնմիկ. զի մե՛րձ է օր Տեառն. իբրև թշուառութիւն ՚ի թշուառութենէ հասցէ՛* ¹⁶առաջի աչաց ձերոց. պակասեցան կերակուրք ՚ի տանէ Աստուծոյ ձերոյ, ուրախութիւն և խնդութիւն: ¹⁷Խայտացին երինջք ՚ի մտուրս իւրեանց. ապականեցան գանձք. տապալեցան շտեմարանք՝ զի խորշակահար եղև ցորեան: ¹⁸Ձի՞նչ համբարեցից ՚ի նոսա. լացին դասակք անդւոց, զի ո՛չ գոյր նոցա արօտ՝ և հօտք խաշանց սատակեցան*: ¹⁹Առ քեզ Տէր աղաղակեցից՝ զի հուր սատակեաց զգեղեցկութիւն անապատի, և բոց ծախեաց զամենայն փայտս ագարակի*: ²⁰Եւ երէ վայրի ՚ի քե՛զ հայեցաւ. զի ցամաքեցան վտակք ջուրոց, և հուր եկեր զգեղեցկութիւնս անապատի*:

2

* *Ի բազումս պակասի. Յաւուրս Եզեկիայ. յոր օրինակն մեր միայն յաւելու և զայն թէ՛ Յաւելի յաւուրս: Իսկ Ոսկան ունի. Առ Յովէլ որդի Բաթուլի:*

* *Ոմանք. Լացէք և սգացարուք ա՛:*

* *Ոմանք. Իբրև զքրձագգեաց ՚ի վերայ:*

* *Ոսկան. Իբրև ՚ի թշուառութիւն ՚ի թշուառութենէ:*

* *Ոմանք. Ձի՞նչ համբարեցից ՚ի նոսա. լացին դասք անդւոց և հօտք ՚ի խաշանց: Ուր Ոսկան. անդէոց:*

* *Ոմանք. Առ քեզ Տէր աղաղակեցի:*

* *Բազումք. Չգեղեցկութիւն անապատի*:*

Գլուխ Բ

Բ ¹Փող հարէք ՚ի Սիոն. քարո՛գ կարդացէք ՚ի լերին սրբութեան իմոյ. ժողովեսցին ամենայն բնակիչք երկրի. զի հասեալ է օր Տեառն. զի մերձ է* ²օր խաւարի և միգի. օր ամպոյ և մարախոյ. իբրև առաւօտ տարածեսցի ՚ի վերայ լերանց զօր բազում և հզօր. նման նմա ո՛չ եղև յաւիտենից, և զհետ նորա ո՛չ ևս յաւելցի լինել ազգաց մինչև յազգս*։ ³Առաջ նորա հուր ծախիչ, և վերջ նորա բոց բորբոքեալ. իբրև զդրախտ փափկութեան երկիրդ առաջի նորա, և զկնի նորա դա՛շտ ապականութեան. և ապրեալ ո՛չ իցէ ՚ի նմանէն*։ ⁴Իբրև զտեսիլ երիվարաց տեսիլ նորա. իբրև զհեծեալս արշաւեսցեն։ ⁵Եւ իբրև զշաչիւն կառաց ՚ի վերայ գլխոց լերանց ասպատակեսցեն. իբրև զծայն բոցոյ հրոյ որ ուտիցէ զեղէգն. իբրև զօր բազում և հզօր պատրաստեալ ՚ի պատերազմ*։ ⁶Յերեսաց նորա խորտակեսցին ազգք, և ամենայն դէմք իբրև զայրեցած պուտան*։ ⁷Իբրև զախոյանս յարծակեսցին. և իբրև զարս պատերազմօղս ելցեն ՚ի վերայ պարսպաց. իւրաքանչիւր զիւր ճանապարհ գնացեն, և մի՛ խոտորեսցին ՚ի շաւղաց իւրեանց*։ ⁸այր յեղբօրէ և յընկերէ իւրմէ մի՛ զառցի։ Ծանրացեալք զինուք իւրեանց գնացեն, և նետիւք իւրեանց անկցին և մի՛ վախճանեսցին։ ⁹Հասցեն ՚ի վերայ քաղաքին, և ընթացին ՚ի վերայ պարսպաց. ելցեն յապարանս, և մտցեն ընդ պատուհանս իբրև զգողս։ ¹⁰Յերեսաց նորա խռովեսցի երկիր, և երկինք շարժեսցին. արեգակն և լուսին խաւարեսցին, և աստեղք ծածկեսցեն զլոյս իւրեանց։ ¹¹Եւ Տէր տացէ զծայն իւր առաջի երեսաց զօրութեան իւրոյ. զի բազում է յոյժ բանակ նորա, և հզօր գործ պատերազմաց նորա. զի մե՛ծ է օր Տեառն, մե՛ծ և երևելի՛ յոյժ. և ո՞վ իցէ նմա բաւական։ ¹²Եւ արդ ասէ՛ Տէր Աստուած ձեր. Դարձարո՛ւք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք և լալով և կոծելով*։ ¹³Պատառեցէ՛ք զսիրտս ձեր՝ և մի՛ զհանդերձս, և դարձարո՛ւք առ Տէր Աստուած ձեր. զի ողորմած և գթած է, երկայնամիտ և բազում ողորմ. և զղջանայ ՚ի վերայ չարեաց մարդկան*։ ¹⁴Ո՛ր գիտէ եթէ դարձցի՛ և ապաշաւեսցէ, և թողցէ զկնի իւր օրհնութիւն. և զոհս և սպանդ Տեառն Աստուծոյ մերում։ ¹⁵Փող հարէք ՚ի Սիոն. սրբեցէ՛ք պահս. քարոզեցէ՛ք պաղատանս*։ ¹⁶Ժողովեցէ՛ք զժողովուրդսդ. սրբեցէ՛ք զեկեղեցի. ընտրեցէ՛ք զծերս. ժողովեցէ՛ք զտղայս ստնդիացս. ելցէ՛ փեսայ ՚ի սենեկէ իւրմէ, և հարսն յառագաստէ։ ¹⁷Ընդ աստիճանս և ընդ սեղանն լացցեն քահանայք և պաշտօնեայք Տեառն, և ասացեն. Խնայեա՛ Տէր ՚ի ժողովուրդս քո, և մի՛ տար զժառանգութիւն քո ՚ի նախատինս տիրել ՚ի վերայ նորա ազգաց. զի մի՛ ասացեն ՚ի հեթանոսս՝ թէ ո՛ւր է Աստուած նոցա*։ ¹⁸Եւ նախանծեցա՛ւ Տէր վասն երկրի իւրոյ. և խնայեաց ՚ի ժողովուրդ իւր։ ¹⁹Եւ պատասխանի ետ Տէր ժողովորդեան իւրոյ՝ և ասէ. Ահաւասիկ ես առաքեմ ՚ի ձեզ զցորեան և զգինի և

* *Ոմանք.* Եւ ժողովեսցին ամենայն։

* *Ոմանք.* Նման նորա ո՛չ եղև։

* *Օրինակ մի.* Առաջի նորա հուր։

* *Ոմանք.* Որ ուտէ զեղէգն, և իբրև զօր։

* *Ոսկան.* Յերեսաց նոցա խոր՛։

* *Ոմանք.* Իբրև զախոյեանս... իւրաքանչիւր ճանապարհս գնաս՛։

* *Ոմանք.* Լալով և կոծով։

* *Ոմանք.* Որ զղջանայ ՚ի վերայ չարեաց. ո՛ր գիտէ։

* *Ոմանք.* Քարոզ կարդացէք պաղատանս։

* *Ոմանք.* Ընդ աշտիճանս և ընդ սեղանս... զժառանգութիւնս քո։

զելոյ, և լցջի՞ք ՚ի նոցանէն. և ո՛չ ևս տաց զծեզ ՚ի նախատինս ազգաց: ²⁰Եւ զհիւսուսայինն հալածեցի՞ց ՚ի ձէնջ, և մերժեցից զնա յերկիր անջուր. և ապականեցից զառաջ նորա ՚ի ծովն առաջին, և զվերջ նորա ՚ի ծովն վերջին. և ելցէ՛ շարաւ նորա, և բուրեցտէ հոտ նորա. զի մեծացան գործք նորա: ²¹Քաջալերեա՛ց երկիր. խնդա և ուրախ լեր, զի մեծացոյց Տէր զառնել իւր քեզ*:

²²Քաջալերեա՛ երէ վայրի, զի դալարացան դաշտք անապատի. զի ծառ՝ ետ զպտուղ իւր. որթ և թզենի ետուն զգօրութիւն իւրեանց*:

²³Որդիք Սիոնի, ցնծացէ՛ք և ուրախ լերուք ՚ի Տէր Աստուած ձեր. զի ետ ձեզ Տէր կերակուր արդարութեան. և տեղացտէ ձեզ անձրև կանուխ և անագան իբրև զառաջինն*:

²⁴Եւ լցցի՛ն կալք ցորենոյ. և զեղցին հնծանք զինւոյ և իւղոյ: ²⁵Եւ հատուցից ձեզ փոխանակ՝ ամացն յորս եկեր մարախն՝ և ջորեակն՝ և թրթուրն, զօր իմ մեծ զոր առաքեցի ՚ի վերայ ձեր*:

²⁶և ուտելով կերիջիք՝ և յագեսջիք, և օրհնեսջիք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ՝ որ արա՛ր ընդ ձեզ սքանչելիս. և մի՛ ևս ամաչեսցէ ժողովուրդ իմ յաւիտեան: ²⁷Եւ ծանիջիք թէ ՚ի մէջ Իսրայելի եմ ես. և ես Տէր Աստուած ձեր, և չի՞ք ոք բաց յինէն. և ո՛չ ամաչեսցէ ժողովուրդ իմ յաւիտեան:

Գ ²⁸Եւ եղիցի յետ այսորիկ հեղից յՈգւոյ իմոյ ՚ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէացին ուստերք ձեր, և դստերք ձեր. և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն*:

²⁹Եւ ՚ի վերայ ծառայից իմոց, և ՚ի վերայ աղախնաց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, և մարգարէացին: ³⁰Եւ տա՛ց նշանս յերկինս ՚ի վեր, և նշանս յերկիր ՚ի խոնարի, արիւն և հուր և մրրիկ ծխոյ*:

³¹Արեգակն դարձցի ՚ի խաւա՛ր և լուսին յարիւն, մինչչև եկեալ իցէ օր Տեառն մեծն և երևելին*:

³²Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ: Զի ՚ի լեառն Սիոն և յերուսաղէմ եղիցի ապրեալ՝ որպէս և ասաց Տէր. և աւետարանեալ զորս Տէր կոչեսցէ առ ինքմ*:

3

Գլուխ Գ

¹Զի ահաւասիկ ես յաւուրսն յայնոսիկ և ՚ի ժամանակին յայնմիկ՝ դարձուցից զգերութիւն Զրէաստանի և զերուսաղէմի*:

²և ժողովեցից զամենայն ազգս, և իջուցից զնոսա ՚ի ձորն Յովսափաթու. և դատեցայց զնոսա անդ, վասն ժողովրդեան իմոյ՝ և ժառանգութեան իմոյ Իսրայելի. որ ցրուեցան ընդ ամենայն ազգս, և զերկիր իմ բաժանեցին, ³և ՚ի վերայ ժողովրդեան իմոյ վիճակս արկանէին. և ետուն զպատանեակս կապէ՛նս պոռնկաց, և զաղջկունս վաճառէին ընդ գինւոյ՝ և ըմպէին: ⁴Եւ դուք ևս տակաւին ինձ Օ՛ւր և Օ՛այդան՝ և

* *Բազումք.* Չառնել իւր ընդ քեզ:

* *Ոմանք.* Դաշտք յանապատի:

* *Ոմանք.* Որդիք Սիոնի, խնդացէ՛ք և ու՛:

* *Ոսկան.* Ձեզ ամացն փոխանակ:

* *Ոմանք.* Եւ եղիցի յետ այնորիկ հեղից յՈգւոյ իմմէ: *Ոսկան.* Երազովք երազացին:

* *Ի բազումս պակասի.* Եւ նշանս յերկիր ՚ի խո՛:

* *Ոսկան.* Օր Տեառն մեծ և երևելի:

* *Ոմանք.* Եւ աւետարանել զորս:

* *Ոմանք յաւելուն.* Եւ ՚ի ժամանակին յայնմիկ *յորում* դարձու՛:

ամենայն Գալիլեա այլազգեաց. միթէ հատուցո՞ւմն ինչ հատուցանիցէք ինձ, կամ ոխս պահիցէք ինձ. վաղվաղակի տագնապա՛ւ հատուցից զհատուցումն ձեր ՚ի գլուխս ձեր: ⁵Փոխանակ զի զարծաթն իմ և զոսկին առէք, և զընտիր ընտիրսն և զգեղեցիկ անօթսն տարայք ՚ի մեհեանս ձեր* . ⁶և զորդիսն Յուդայ՝ և զորդիսն Երուսաղեմի վաճառեցէք որդւոցն Յունաց. զի մերժեցէք զնոսա ՚ի սահմանաց իւրեանց: ⁷Արդ՝ ե՛ս կանգնեցից զնոսա ՚ի տեղւոջ՝ ուր վաճառեցէք զնոսա անդր, և հատուցից զհատուցումն ձեր ՚ի գլուխս ձեր* . ⁸և մատնեցից զուստերս ձեր՝ և զդստերս ձեր ՚ի ձեռս որդւոցն Յուդայ, և վաճառեցեն զնոսա ՚ի գերութիւն յազգ հեռաւոր բացական. զի Տէր խօսեցաւ՝: ⁹Քարո՛գ կարդացէք զայդ յազգս. ժամ տուք մարտի, զարթուցէ՛ք զպատերազմօղս. ժողովեցարո՛ւք և ելէ՛ք ամենայն արք պատերազմի* . ¹⁰Կոտորեցէ՛ք զխոփս ձեր ՚ի սուսերս, և զգգերանդիս ձեր ՚ի գեղարդունս: Տկարն խրախուսեցէ թէ հզօր եմ ես: ¹¹Ժողովեցարո՛ւք և մտէ՛ք ազգք ամենայն շուրջանակի անդր գումարեցարո՛ւք. հանդարտն պատերազմօղ եղիցի: ¹²Չարթիցեն և ելցեն ամենայն ազգք ՚ի ձորն Յովսափաթու. զի անդ նստայց դատել զամենայն ազգս շուրջանակի: ¹³Արկէ՛ք մանգաղ՝ զի հասեալ են կուրք. մտէ՛ք կոխեցէ՛ք զի լցեալ են հնձանք՝ և զեղուն գուրք. զի բազմացան չարիք նոցա՝: ¹⁴Ձայնք հնչեցին ՚ի Չորն դատաստանի. զի մե՛րձ է օր Տեառն ՚ի Չորն դատաստանի: ¹⁵Արեգակն և լուսին խաւարեցան, և աստղք ծածկեցեն զլոյս իւրեանց: ¹⁶Եւ Տէր ՚ի Սիոնէ գոչեցէ, և յԵրուսաղեմէ տացէ զձայն իւր. և շարժեցին երկինք և երկիր: ¹⁷Այլ Տէր խնայեցէ ՚ի ժողովուրդ իւր՝ և զօրացուցէ զորդիսն Իսրայէլի: ¹⁸Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած որ բնակեալ եմ ՚ի Սիոն լերին սրբութեան իմոյ. և եղիցի Երուսաղեմ սո՛ւրբ, և այլազգիք ո՛չ ևս անցցեն ընդ նա՝: ¹⁹Եւ եղիցի յաւուր յայնմիկ բղխեցեն լերինք զքաղցրութիւն, և բլուրք յորդեցեն զկաթն, և ամենայն աղբերք Յուդայ բղխեցեն ջուրս: Եւ աղբեր ՚ի տանէ Տեառն ելցէ, և արբուսցէ զձորն վիճակաց* : ²⁰Եգիպտոս յապականութիւն եղիցի, և Եդոմ ՚ի դա՛շտ ապականութեան, յանիրաւութեանց որդւոցն Յուդայ. փոխանակ զի հեղին արիւն արդար ՚ի մէջ իւրեանց: ²¹Բայց Յրէաստան յալիտեան բնակեցէ, և Երուսաղեմ ազգաց յազգս: ²²Եւ խնդրեցից զարիւն նոցա, և ո՛չ արարից անպարտ. և Տէր բնակեցէ ՚ի Սիովն:

Կատարեցաւ Մարգարէութիւնն Յովելայ

ԳԼՈՒԽՔ ԱԲԴԻՈՒ ՍԱՐԳԱՐԵԻ

ա. Զպատժոցն Եդովմայեցւոց զոր կրելոց էին՝ յառաջագոյն գուշակէ,

* Ոմանք. Եւ զընտիր ընտիր և զգգե՛:

* Ոմանք. Ուր վաճառեցէք զնոսա անտի: Ուր Ոսկան. զնոսա անդ:

* Ոմանք. Յազգս հեռաւոր: Ուր Ոսկան. Յեռաւոր և բացական:

* Ոմանք. Ամենայն արք պատերազմողք:

* Ոմանք. Ձի լցեալ է հնձան:

* Ոմանք. ՚ի Սիովն ՚ի լերին սր՝: Բազումք. Եւ այլազգիք այլ ոչ ևս:

* Ի լուս՝. Եւ ամենայն եղտերք Յուդայ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:

վասն յառնելոյ նոցա ՚ի վերայ Իսրայէլացւոցն ընդ այլ թշնամեացն վասն եղելոյ:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՈՒ

1

¹ *Տեսիլ Աբդիու որ եղև յառաջ քան զելս Ասորեստանւոյն յաւուրս Աքաաբու*:*

Այսպէս ասէ Տէր ցեղոմ. Լուր լուայ ՚ի Տեառնէ. և պաշարումն առաքեաց ՚ի հեթանոսս. արի՞ք և յարիցուք ՚ի վերայ նորա ՚ի պատերազմ*:² Ահա սակաւաւոր ետու զքեզ յազգս. և անարգեալ ես դու յոյժ*:³ Զպարտութիւն սրտի քոյ բարձրացոյց զքեզ բնակել ՚ի ծախս վիմաց. բարձրացուցանել զբնակութիւն իւր, և ասել ՚ի սրտի իւրում ո՞վ իջուսցէ զիս յերկիր: ⁴ Եթէ բարձրացիս իբրև զարծուի, և եթէ ՚ի մէջ աստեղաց դիցես զբոյն քո, և անտի՛ իջուցից զքեզ ասէ Տէր*:⁵ Եթէ գողոց մտեալ էր առ քեզ՝ կամ աւագակաց գիշերոյ՝ ուր և էր՝ դողէիր. և ո՛չ արդէք գողանային բաւական իւրեանց. և եթէ կթօղք մտեալ էին ՚ի քեզ, և ո՛չ եթէ ճիռ մի ո՛չ թողուին*:⁶ Զիա՞րդ քննեցաւ Եսաւ՝ և ընբռնեցան ծածուկք նորա*:⁷ Մինչև ՚ի սահմանս առաքեցին զքեզ. ամենայն արք ուխտի քոյ դարձան ընդդէմ քո. զօրացան ՚ի վերայ քո արք խաղաղութեան քոյ. վարեցին զքեզ. և ո՛չ գոյր իմաստութիւն ՚ի նմա*:⁸ Յաւուր յայնմիկ, ասէ Տէր. կորուսից զիմաստութիւն յերկրէն Եղոմայ, և զհանճար ՚ի լեռնէն Եսաւայ: ⁹ Եւ սարսեցեն պատերազմօղք քո որ ՚ի Թեմանա. զի բարձցի՛ մարդ ՚ի լեռնէն Եսաւայ, ¹⁰ վասն սպանման և ամպարշտութեան եղբօրն Յակոբայ: Ծածկեցէ զքեզ ամօթ, և ջնջեսցիս յաւիտեան*, ¹¹ յօրէ յորմէ կացեր հակառակ, յաւուրն գերելոյ այլազգեաց զգօրութիւն նորա. և օտարք մտին ընդ դրունս նորա. և ՚ի վերայ Երուսաղեմի վիճակս արկանէին. և դուք էիք իբրև զմի ՚ի նոցանէն: ¹² Եւ մի՛ տեսցես զաւեր եղբօրն քոյ յաւուրն օտարաց, և մի՛ ոտնհար լիցիս որդւոցն Յուդայ յաւուրս կորստեան նոցա. և մի՛ մեծաբանեսցես յաւուր նեղութեան. ¹³ և մի՛ մտանիցես ընդ դրունս ժողովրդոց յաւուր ցաւոց նորա. և մի՛ տեսցես զժողովս նոցա յաւուր սատակման նոցա. և մի՛ ՚ի վերայ հարկանիցիս զօրութեան նոցա յաւուր կորստեան նոցա*:¹⁴ Եւ մի՛ առնուցուս զկիրճս նոցա սատակել զապրեալսն ՚ի նոցանէ. և մի՛ պաշարեսցես զփախստեայս նոցա յաւուր նեղութեան նոցա*.¹⁵ զի մերձ է օր Տեառն ՚ի վերայ ամենայն ազգաց: Զոր օրինակ արարեր դու՝ եղիցի՛

* *Ոմանք առանց յաւելուածոյ՝ որ եղև, և այլն. ունին լոկ՝ Տեսիլ Աբդիու:*

* *Ոմանք.* Լուր լուայք ՚ի Տեառնէ... ՚ի վերայ նոցա ՚ի պատերազմ: *Ուր Ոսկան.* Լուր լուայ ՚ի Տեառնէ:

* *Ոմանք.* Ահաւասիկ սակաւաւոր:

* *Ոմանք.* Եթէ բարձրացին իբրև:

* *Ոմանք.* Ուր և էր՝ դողէիր:

* *Յոմանս պակասի.* Քննեցաւ Եսաւ:

* *Բազումք.* Վարանեցին զքեզ. ոչ գոյր իմաստ:

* *Ոմանք.* Եւ ամբարշտութեան եղբարցն Յակոբայ: *Ուր Ոսկան.* Եղբօր քո Յակ:

* *Ոմանք.* Ժողովրդոց յաւուր աւուրց նոցա:

* *Ոմանք.* Զապրեալս ՚ի նոցանէն:

քեզ. և հատուցումն քո հատուցի՝ ի գլուխ քո: ¹⁶Ձի զոր օրինակ արբեր ՚ի վերայ լերին սրբութեան իմոյ, արբցեն ամենայն ազգք գինի. արբցեն և զիջցին, և եղիցին իբրև չեղեալք: ¹⁷Բայց ՚ի լեառն Սիոն եղիցի փրկութիւն, և եղիցի սո՛ւրբ. և ժառանգեսցեն տունն Յակովբու զժառանգիչս իւրեանց* : ¹⁸Եւ եղիցի տունն Յակովբու հո՛ւր, և տունն Յովսեփու բո՛ց, և տունն Եսաւայ եղեգն. վառեսցին զնովաւ և կերիցեն զնա. և մի՛ մնասցէ կրակաբեր տանն Եսաւայ. զի Տէր խօսեցաւ: ¹⁹Եւ ժառանգեսցեն Նազեբացիք զլեառն Եսաւայ, և Սեփելացիք զայլազգիս. և ժառանգեսցեն զլեառն Եփրեմայ, և զդաշտն Շամրնի և զԲենիամին, և զԳաղաադացին* : ²⁰Եւ գերութեան սկիզբն այն իցէ որդւոցն Իսրայելի. երկիր Քանանացւոց մինչև ՚ի Սարփաթ. և գերութիւնն Երուսաղեմի մինչև յԵփրաթա. և ժառանգեսցեն զքաղաքս Նազեբայ: ²¹Եւ ելցեն ապրեալք ՚ի լեռնէ Սիոնի՝ առնուլ վրէժ՝ ՚ի լեռնէն Եսաւայ. և եղիցի Տեառն արքայութիւն:

Կատարեցաւ Մարգարէութիւնն Արդիու

ԳԼՈՒԽՔ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

ա. Յունանու մարգարէութիւն, և փախուստ ՚ի Թարսիս. և մրրկել ծովուն, և ՚ի ձկանէն կլանել. և կարասւոյն ՚ի նաւէն ընկենուլ. և ապաշխարութիւնն Նինուէացւոցն և փրկութիւն, և ածել դըղմենոյն և կորնչել:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ

1

Գլուխ Ա

Որ եղև յաւուրս Ոգիայ:*

¹Եւ եղև բան Տեառն առ Յովնան Ամաթայ՝ և ասէ*. ²Արի՛ և գնա՛ ՚ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսցի՛ր անդ, զի ե՛լ աղաղակ չարութեան նորա առ իս: ³Եւ յարեաւ Յովնան փախչել ՚ի Թարսիս յերեսաց Տեառն. էջ ՚ի Յոպպէ և եգի՛տ նաւ որ երթայր ՚ի Թարսիս. ե՛տ գինս՝ և եմո՛ւտ ՚ի նա նաւե՛լ ընդ նոսա ՚ի Թարսիս յերեսաց Տեառն: ⁴Եւ Տէր յարոյց հողմ ՚ի ծովուն՝ և եղև մրրիկ մեծ ՚ի ծովուն. և նաւն ՚ի վտանգի կայր ՚ի խորտակել* : ⁵Եւ երկեան նաւավարքն երկեւղ մեծ, և

* Ոսկան. Եւ ժառանգեսցէ... զժառանգիչս իւր:

* Յոմանս պակասի. Ձլեառնն Եփրեմայ ՚ի և զդաշտն Շամրնի:

* Ի լուս՝. ՚ի վերայ Ոգիայ, նշանակի՝ Աքազու. զոր և ոմանք միառեւ դնեն. Ոգիայ, Աքազու: Իսկ ոմանք ՚ի սպառ զանց առնեն զվերնագրովս:

* Ոսկան յաւելու. Առ Յոման որդի Ամաթայ:

* Ի բազումս պակասի. Ի ծովուն՝ և եղև մրրիկ մեծ ՚ի ծովուն:

աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւր. և ընկեցին զկարասին որ էր ՚ի նաւին ՚ի ծով անդր՝ զի թեթևացուցեն յինքեանց: Եւ Յովնան իջեալ ՚ի խորշ մի նաւին՝ ննջէր և խորդայր*: ⁶Մատեաւ առ նա նաւապետն՝ և ասէ. Չի՞նչ է այդ՝ զի խորդասդ, արի՛ կարդա՛ զՏէր Աստուած քո. թերևս ապրեցուցէ զմեզ Աստուած՝ և մի՛ կորիցուք*: ⁷Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. Եկա՛յք արկցուք վիճակս՝ և գիտասցուք. վասն ո՞յր են չարիքս այս ՚ի վերայ մեր: Արկին վիճակս՝ և ել վիճակն Յովնանու*: ⁸Եւ ասեն ցնա. Պատմեա՛ մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեզ. զի՞նչ արուեստ է քո. ուստի՞ զաս՝ կամ յո՞ երթաս, յորմէ՞ աշխարհէ ես՝ կամ յորմէ՞ ժողովրդենէ*: ⁹Ասէ ցնոսա. Ծառայ՛ Տեառն եմ ես, և զՏէր Աստուած երկնից պաշտեմ որ արա՛ր զծով և զցամաք: ¹⁰Եւ երկեան արքն երկելոջ մեծ. և ասեն ցնա. Չի՞նչ գործեցեր զայդ. զի գիտացին թէ յերեսաց Տեառն փախուցեալ էր, քանզի պատմեաց նոցա: ¹¹Եւ ասեն ցնա. Չի՞նչ արասցուք քեզ՝ և դադարեցէ ծովս ՚ի մէնջ: Չի ծովն առաւել ևս խռովեալ էր՝ և յարուցանէր մորիկ ՚ի վերայ նոցա*: ¹²Եւ ասէ ցնոսա Յունան. Առէ՛ք ընկեցէ՛ք զիս ՚ի ծովդ՝ և դադարեցէ ՚ի ձէնջ ծովդ. զի գիտեմ ես եթէ վասն ի՞մ է մորիկս այս մեծ ՚ի վերայ ձեր: ¹³Եւ ջանային արքն դարձուցանել զնաւն ՚ի ցամաք՝ և ո՛չ կարէին. զի ծովն և՛ս քան զնա խռովէր և սաստկանայր ՚ի վերայ նոցա: ¹⁴Աղաղակեցին առ Տէր՝ և ասեն. Քա՛ւ լիցի Տէր. մի՛ կորիցուք վասն անձին առնս այսորիկ. մի՛ ածեր ՚ի վերայ մեր արիւն արդար, զի դու Տէր որպէս կամեցար՝ և արարեր*: ¹⁵Եւ առին զՅովնան և ընկեցին ՚ի ծովն. և դադարեաց ծովն ՚ի խռովութենէ իւրմէ: ¹⁶Եւ երկեան արքն երկելոջ մեծ ՚ի Տեառնէ. զենին զոհս Տեառն՝ և ուխտեցին ուխտս*:

2

Գլուխ Բ

¹Եւ հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան. և էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս: ²Եւ եկաց Յովնան յաղօթս առ Տէր Աստուած ՚ի փոր կիտին*. ³և ասէ. Ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ. և լուաւ ինձ յորովայնէ դժոխսց աղաղակի իմում. լուր Տէր ձայնի իմում: ⁴Ընկեցեր զիս ՚ի խորս սրտից ծովու, և զետք պաշարեցին զիս: Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ՚ի վերայ իմ*. ⁵և ասացի՝ թէ մերժեցայ յաչաց քոց. արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայել ՚ի տաճար սուրբ քո. ⁶հեղան զինն ջուրք մինչև յոգիս. անդունդք անհնարինք պաշարեցին զիս: Եմո՛ւտ գլուխ իմ* ⁷ընդ փապարս լերանց: Իջի յերկիր որոյ նիզք իւր աղխք յաւիտենից. ելցեն

* Ոսկան. Յերկիւղ մեծ... առ իւրաքանչիւր աստուածս իւրեանց: Յոմանս պակասի.

Ձկարասին որ էր ՚ի նաւին:

* Ոմանք. Արի՛ և կարդա՛:

* Ոմանք. Արկցուք վիճակս՝ և տեսցուք:

* Ի լուս՝. Չարիքս այս մեծ. համաձայն այլոց ՚ի բնար՝: Յոմանս պակասի. Չի՞նչ արուեստ է քո:

* Ոմանք. Առաւել ևս խռովէր:

* Բազումք. Եւ մի՛ ածեր ՚ի վերայ:

* Յօրինակ մի պակասի. Ձենին զոհս Տեառն:

* Ոմանք. Առ Տէր Աստուած ՚ի փորոյ կիտին:

* Ոմանք. Եւ ընկեցեր զիս:

* Ոմանք. Յեղաւ ջուրք մինչև յոգիս:

յապականութենէ կեանք իմ: ⁸Առ քեզ Տէր Աստուած իմ 'ի նուագել հոգւոյ իմոյ կարդացի, զՏէր յիշեցի. և եկեցեն աղօթք իմ 'ի տաճար սուրբ քո: ⁹Որ պահէին զունայնութիւն և զստութիւն՝ զողորմութիւնս իւրեանց թողին*:¹⁰Այլ ես 'ի ձայն օրհնութեան և խոստովանութեան՝ մատուցից քեզ պատարագ զոր ուխտեցի, և հատուցից փրկութեան Տեառն: ¹¹Եւ հրամայեցաւ 'ի Տեառնէ վիշապ ձկանն և եթուք զնա 'ի ցամաք:

3

Գլուխ Գ

¹Եւ եղև բան Տեառն առ Յովնան երկրորդ անգամ և ասէ. ²Արի՛ զնա 'ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսցիր 'ի նա ըստ առաջին քարոզութեանն զոր խօսեցայ առ քեզ*:³Յարեա՛ւ Յովնան և զնա՛ց 'ի Նինուէ, որպէս խօսեցաւ ընդ նմա Տէր. և Նինուէ էր քաղաք մեծ Աստուծոյ, իբրև գնաց երից աւուրց ճանապարհի*:⁴Եւ սկսաւ Յովնան մտանել 'ի քաղաքն իբրև աւուր միոջ գնաց ճանապարհի. քարոզեաց և ասէ. Ա՛յլ ևս երեք աւուրք՝ և Նինուէ կործանեսցի*:⁵Եւ հաւատացին արք Նինուէացիք յԱստուած, և քարոզեցին պահս՝ և քուրճ զգեցան 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս իւրեանց: ⁶Էհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեա՛ւ յաթոռոյ իւրմէ՝ և մերկացաւ զպատմուճան իւր. զգեցա՛ւ քուրճ՝ և նստաւ 'ի վերայ մոխրոյ: ⁷Եւ քարոզեցաւ և պատմեցաւ 'ի Նինուէ, 'ի թագաւորէն և 'ի մեծամեծաց իւրոց. թէ մարդ և անասուն՝ խաշն և արջառ՝ մի՛ ինչ ճաշակեսցեն՝ և մի՛ ճարակեսցին, և մի՛ ջուր արբցեն: ⁸Եւ զգեցան քուրճ մարդ և անասուն, և աղաղակեցին առ Աստուած սրտի մտօք. և դարձան յիրաքանջիւր ճանապարհաց իւրեանց չարաց, և յանօրէնութենէ որ 'ի ձեռս իւրեանց*.⁹Ն ասեն. Ո՞ գիտէ ապաշաւեսցէ Աստուած և դարձցի 'ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ, և մի՛ կորիցուք: ¹⁰Եւ ետես Աստուած զգործս նոցա, զի դարձան իւրաքանջիւր 'ի ճանապարհաց իւրեանց չարաց. և զղջացա՛ւ Աստուած 'ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա՝ և ո՛չ արար:

4

Գլուխ Դ

¹Եւ տրտմեցա՛ւ Յովնան տրտմութիւն մեծ՝ և խռովեցաւ. ²և եկաց յաղօթս առ Տէր Աստուած՝ և ասէ. Ո՛վ Տէր՝ ո՞չ այս այն բանք են իմ մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ աճապարեցի փախչել 'ի Թարշիշ. զի գիտէի թէ ողորմա՛ծ ես դու՝ և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանա՛ս 'ի վերայ չարեաց*:³Եւ արդ՝ Տէր Տէր՝ ա՛ռ զոգի իմ յինէն. զի լա՛ւ է ինձ մեռանել՝ քան թէ իցեմ կենդանի: ⁴Եւ ասէ Տէր ցՅունան՝ թէ արդարև յո՞յժ տրտմեալ իցես: ⁵Եւ ել

* Ոմանք. Որ պահեն զունայ՛... զողորմութիւն իւրե՛:

* Ոմանք. Արի՛ և զնա՛ 'ի... և քարոզեսցիր 'ի նմա: Ոսկան. Ըստ առաջնոյ քարո՛:

* Ոմանք. Որպէս և խօսեցաւ ընդ... երից աւուրց ճանապարհի:

* Ոմանք. Աւուր միոյ ճանապարհի:

* Ոմանք. Եւ դարձան իւրաքանջիւր 'ի ճանապարհաց... և յանիրաւութենէ որ 'ի ձեռս:

* Ոմանք. Այն են բանք իմ:

Յունան 'ի քաղաքէ անտի, և նստաւ յանդիման քաղաքին, և արար իւր հովանի, և նստաւ ընդ հովանեաւն. մինչև տեսանիցէ թէ զի՞նչ լինիցի քաղաքին*։ ⁶Եւ հրաման ետ Աստուած դդմենւոյն, և ել 'ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի 'ի վերայ գլխոյ նորա. զովացուցանել զնա 'ի տառապանաց իւրոց. և ուրախ եղև Յունան 'ի վերայ դդմենւոյն ուրախութիւն մեծ*։ ⁷Եւ հրաման ետ Աստուած որդանն՝ առաւօտուն 'ի վաղիւ անդր. եհար զդդմենին՝ և ցամաքեցաւ։ ⁸Եւ եղև 'ի ծագել արևուն հրամայեաց Աստուած հողմոյ խորշակի տապախառնի, և անկաւ արևն զգլխովն Յունանու. և կայր 'ի տարակուսի և քաղէին ոգիք նորա. և ասէր. Լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ*։ ⁹Եւ ասէ Տէր Աստուած ցՅովնան. թէ արդարև յո՞ժ տրտմեալ իցես 'ի վերայ դդմենւոյն։ Եւ ասէ. Յո՞ժ տրտմեալ իցեմ մինչև ցմահ*։ ¹⁰Եւ ասէ Տէր. Դու խնայեցե՞ր 'ի դդմենին՝ յոր ո՛չ եղեր ինչ աշխատ, և ո՛չ սնուցեր զնա. որ գիշերի ել, և միւս գիշերի կորեալ*։ ¹¹Ես՝ ո՞չ խնայեցից 'ի Նինուէ քաղաք մեծ. յորում բնակեալ են անելի՛ քան զերկոտասան բե՛ւր մարդիկ որ ո՛չ ծանեան զաջ և զահեակ իւրեանց, և անասուն բազում։

Կատարեցաւ Մարգարէութիւնն Յովնանու

ԳԼՈՒԽՔ ՆԱԻՌԻՄԱՅ ՄԱՐԳԱՐԵԻ

ա. Վասն Աստուծոյ զօրութեանն ճառէ։

բ. Վասն առաքելոցն զուշակէ, յաւելլու և զելս Բարեւլացոցն 'ի վերայ Նինուէացոցն. ասէ և զզօրութիւն քաղաքին և զմեծութիւն մինչևն գերեալ էր։

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ՆԱԻՌԻՄԱՅ*

1

Գլուխ Ա

¹ Առած Նինուէի։ *Գիրք տեսլեան Նաւունայ Եղկեսացոյ**։

* *Ոմանք.* Թէ զինչ լինիցի 'ի քաղաքին։

* *Ոմանք.* Լինել հովանի 'ի վերայ։ *Ոսկան.* Դդմենւոյն յուրախութիւն։

* *Ոմանք.* Եւ հրամայեաց Աստուած... և ասէր՝ թէ լաւ էր։

* *Բազումք.* Յոյժ տրտմեալ եմ մին*։

* *Ոմանք.* Յոր չեղեր ինչ աշխատ... որ գիշեր ել, և միւս գիշեր կոր*։ և *ոմանք.* Որ 'ի միւս գիշերի ել, և 'ի միւս գիշերի կոր*։

* *Յօրինակին՝ 'ի ստորին կողմ իջիցն նշանակեալ էր կարմրադեղով.* Յաւուրս Եգեկիայ էր Նաւուն։

* *Յօրինակին.* Եղկեսասացոյ։

Ա²Աստուած նախանձո՛տ՝ և վրէժխնդիր Տէր, վրէժխնդիր է Տէր բարկութեամբ. և խնդրէ Տէր վրէժ՝ ՚ի հակառակորդաց իւրոց. և բառնայ ինքն զթշնամիս իւր*:
³Տէր երկայնամիտ՝ և մե՛ծ է զօրութիւն նորա. և արդարացուցանելով ո՛չ արդարացուցանէ Տէր. վախճանա՛ւ և շարժմանք է ճանապարհ նորա. հողմ երիվար նորա, և ամպք փոշի ոտի՛ց նորա*:
⁴Սաստէ՛ ծովու՝ և ցամաքեցուցանէ զնա. և զամենայն գետս ակերէ. նուագեաց Բասանացին և Կարմելոս. և ամենայն ծաղիկք Լիբանանու պակասեցին*:
⁵Լերինք շարժեցան ՚ի նմանէ, և բլուրք սասանեցան. խախտեցան երկիր յերեսաց նորա, և համօրէն ամենայն բնակիչք նորա:
⁶Առաջի բարկութեան նորա ո՛ հանդարտեցէ, և ո՞ կայցէ ընդդէմ բարկութեան սրտմտութեան նորա. սրտմտութիւն նորա հալէ զիշխանութիւնս. և վէմք խորտակեցան ՚ի նմանէ*:
⁷Քաղցր է Տէր որոց սպասէն նմա յաւուր նեղութեան. և ճանաչէ զերկիւղածս իւր:
⁸Եւ հեղեղաւ ճանապարհաց արասցէ վախճան յարուցելոց ՚ի վերայ. և զթշնամիս նորա խաւար հալածեցէ*:
⁹Չինչ խորհի՛ք զՏեառնէ, կատարած ինքն արասցէ. և ո՛չ խնդրեսցէ կրկին զնոյն վրէժխնդրութիւն ՚ի նեղութեան:
¹⁰Չի մինչև ՚ի հիմն իւրեանց խոպանասցին. իբրև զգեղձ պատեալ կերիցի. և իբրև զեղէզն լի երաշտութեամբ:
¹¹Ի՛քն ելցէ խորհուրդ զՏեառնէ, չարիս խորհել հակառակութեամբ:
¹²Այսպէս ասէ Տէր ՚ի վերայ իշխանաց ջուրց բազմաց. Այնպէս զատուցին. և լուր քո ո՛չ ևս լուիցի:
¹³Եւ արդ խորտակեցից զգաւազան նորա ՚ի քէն, և զկապանս քո խզեցից:
¹⁴Եւ պատուիրեսցէ վասն քո Տէր. և ո՛չ ևս սերմանեսցի յանուանէ քումնէ. ՚ի տանէ Աստուծոյ քումնէ ջնջեցից զդրօշեալս, և զձուլածոյսն արարից ՚ի գերեզման քեզ*:
Բ¹⁵Չի ահա երա՛գ են ՚ի վերայ լերանց ոտք ակետարանչին, և որ պատմէ զխաղաղութիւն: Տօնեա՛ զտօնս քո Յուդա. հատո՛ զուխտս քո. զի ո՛չ ևս յաւելցին անցանել ՚ի հնանալ. վախճանեցան՝ մաշեցաւ և բարձաւ*:

2

Գլուխ Բ

¹Քանզի ե՛լ որ փչէ ընդ երեսս քո, և ապրեցուցանէ ՚ի նեղութենէ. դիտեա՛ ճանապարհ, պնդեա՛ զմէջ. զօրացի՛ր զօրութեամբ յոյժ*:
²Չի դարձոյց Տէր զհպարտութիւնն Յակովբայ՝ իբրև զհպարտութիւնն Իսրայէլի: Չի թօթափելով թօթափեցին զնոսա, և զո՛ւռս նորա ապականեցին*
³զգէն զօրութեան նորա ՚ի մարդկանէ. զարս հզօրս որ խաղացին ընդ հրոյ. երասանակք կառաց նոցա

* *Ոսկան.* Եւ վրէժխնդիր է Տէր բարկութեամբ. և խնդրէ Տէր զվրէժ:

* *Ոմանք.* Հողմք երիվար է նորա: *Ուր Ոսկան.* Հողմք երիվարք են նորա:

* *Ոմանք.* Լիբանանու պակասեցին:

* *Ոմանք.* Եւ ո՞ կացցէ ընդդէմ:

* *Ոմանք.* Յարուցելոց ՚ի վերայ նորա:

* *Ոսկան.* Եւ պատուիրեսցէ վասն Տեառն: *Ի լուս.* Եւ ո՛չ ևս ցրուեսցի յանուանէ: *Ուր ոմանք.* և ոչ ևս սերմանեսցէ յան՝:

* *Ոմանք.* Ոտք ակետարանչաց ՚ի վերայ լերանց... հատո՛ զուխտ քո... յաւելցին յանցանել ՚ի հնանալ. վախճանաւ մաշե՛:

* *Ոմանք.* Որ փչէր ընդ երեսս:

* *Ի լուս.* Չի դարձոյց Տէր զփառսն Յակո՛:

խոռվեսցին հեծեալք ՚ի ճանապարհս*⁴ և խոռվեսցին ՚ի հրապարակս. տեսիլ նորա իբրև զլամբարաց հրոյ, և իբրև զփայլակն յա՛յսկոյս և յա՛յնկոյս ընթանան*⁵ Յիշեսցեն մեծամեծք նորա՝ և փախիցեն ՚ի տուէ. և կասեսցին ՚ի ճանապարհս իւրեանց. և փութասցին ՚ի պարիսպս, և պատրաստեսցեն զառաջապահս իւրեանց*⁶ Դրունք քաղաքաց բացան. և կործանեցան արքունիք.⁷ և ստացուածք յայտնեցան: Ինքն ելանէր, և նաժիշտք իւր առաջի գային, իբրև զաղանիս ՚ի սրտից իւրեանց մնչէին: ⁸Եւ ջուրք Նինուէի իբրև զջուրս աւազանի. և նոքա փախեան ՚ի քէն՝ և ո՛չ կալան զտեղի, և ո՛չ ոք էր որ հայէր: ⁹Յափշտակէին զարծաթ. յափշտակէին զոսկի. և ո՛չ գոյր չափ զարդու նորա. ծանրացան քան զամենայն սպասք նորա ցանկալիք: ¹⁰Թօթափումն և ձգտումն և սոսկումն սրտի՝ և լքումն ծնգաց. և երկունք ՚ի վերայ ամենայն միջոյ. և երեսք ամենեցուն իբրև զայրեցած պուտան*¹¹ Ո՞ւր են մայրիք առիւծուցն և որսք կորեանց նոցա. ուր չոգա՛ւ առեւծն մտանել, կորիւն առիւծուն և ո՛չ ոք էր որ զարհուրեցուցանէր*¹² Առեւծ որսացա՛ւ բաւական կորեանց իւրոց, և հեղձո՛յց կորեանց իւրոց. և ելից զմայրիս իւր որսով, և զբնակութիւն իւր յափշտակութեամբ: ¹³Ահաւասիկ են ՚ի վերայ քո՝ ասէ Տէր ամենակալ, և այրեցի՛ց ծխով զբազմութիւն քո՝ և կերիցէ սուր զառեւծս քո. և բարձից յերկրէ զորս քո. և ո՛չ ևս լուիցին գործք քո*:

3

Գլուխ Գ

Գ ¹Ո՛ւ քաղաք արեանց, ամենևին սուտ՝ լի՛ անիրաւութեամբ. որոյ զննեսցի որսո՞ւ*² Չայն հարուածոյ, ծայն շարժման անուոյ, շաչիւն կառաց, շահատակիւն հեծելոց*, ³փայլի՛ւն զինու, շողալ սուսերի. թաւալզոր խաղալ վիրաւորաց, և ո՛չ գոյր չափ ազգաց նոցա. և տկարացին ՚ի մարմինս իւրեանց*⁴ Ի բազում պոռնկութենէ: Պոռնի՛կ գեղապանձ. գլուխ կախարդաց, որ վաճառէր զազգս ՚ի պոռնկութեան իւրում, և զտոհմս կախարդանօք իւրովք: ⁵Ահաւասիկ են ՚ի վերայ քո՝ ասէ Տէր Աստուած ամենակալ. և յայտնեցից գլխուստ քո, և արկից գերեսօք քովք. և ցուցից ազգաց զամօք քո, և թագաւորութեանց զանարգանս քո: ⁶Եւ ընկեցից ՚ի վերայ քո զաղծութիւնս և զաղտեղութիւնս քո. և արարից զքեզ խայտառա՛կ: ⁷Եւ եղիցի ամենայն որ տեսանիցէ զքեզ՝ զիջանիցէ՛ և ասասցէ. Եղո՛ւկ դու Նինուէ, ո՞վ իցէ որ հեծիցէ վասն քո. ուստի՞ խնդրեսցուք քեզ մխիթարութիւն*⁸ Պատրաստեա՛ բաժին՝ կազմեա՛ ջնար վիճակդ Ովնայ. որ

* *Ոմանք յաւելուն.* Ձի զէն գօրութեան նորա ՚ի մարդկա՛... որ խաղային ընդ հրոյ... կառաց նոցա *յաւուր պատրաստութեան նոցա.* խոռվեսցին:

* *Ի լուս.* Եւ շաղեսցին ՚ի հրապարակս: *Ուր ոմանք.* Եւ խոռնեսցին ՚ի հրապարակս. տեսիլ նոցա իբրև լամպարաց հրոյ:

* *Ոմանք.* Եւ պատրաստեսցես զառա՛:

* *Ոմանք.* Եւ ձկտումն և սոսկումն:

* *Ոմանք.* Եւ ոչ ոք էր որ երկեցուցանէր:

* *Ոսկան.* Ջորսս քո: *Ուր օրինակ մի.* Ջօրս քո:

* *Ոսկան.* Ոի քաղաք արեանց:

* *Ոմանք.* Չայն հարուածոց: *Ոսկան.* Շարժման անուոց:

* *Ոմանք.* Չափ ազգաց նորա:

* *Ոմանք.* Տեսանիցէ զքեզ՝ իջանիցէ և ասիցէ:

բնակեալ է՝ ի մէջ գետոց, և ջո՛ւրք շուրջ գնովաւ. որոյ սկիզբն ծով՝ և ջուրք պարիսպ նորա՞: ⁹Եթևովպացիք և Եգիպտոս զօրութիւն նորա, և չի՞ք չափ փախստեան նորա. և Լիբէացիք եղեն օգնականք նորա: ¹⁰Սակայն և նա յողո՞ղդեալ գերի՛ գնայցէ. և գտողայս նորա զքարի՛ հարցեն, իսկզբան ճանապարհաց նորա. և ՚ի վերայ ամենայն պատուականաց նորա վիճա՛կս արկանիցեն. և ամենայն մեծամեծք նորա ձեռակապովք կապեսցին՞: ¹¹Եւ դու արբցես և յիմարեսցիս. և խնդրեսցես քեզ ոտնկայ ՚ի թշնամեաց քոց՞: ¹²Եւ ամենայն ամուրք քո իբրև զդիտակ թզոյ, որ թէ շարժեսցի՝ անկցի՛ ՚ի բերան ուտելեաց՞: ¹³Ահա ազգք քո իբրև զկանայս են ՚ի քեզ. թշնամեաց քոց բացցին բանալով դրունք երկրին քոյ, և կերիցէ հուր զնիզս քո: ¹⁴Լի՛ց քեզ ջուր պաշարման, և պնդեա՛ զամուրս քո. մո՛ւտ ՚ի կաւ՝ և կոխեա՛ ընդ յարդի, և պնդեա՛ քան զաղիւս՞. ¹⁵անդ կերիցէ զքեզ հուր, և սատակեսցէ զքեզ սուր. և կերիցէ զքեզ իբրև զմարախ, և ծարաւեսցի իբրև զջորեակ՞: ¹⁶Բազմացուցեր զվաճառս քո իբրև զաստեղս երկնից. դիմեա՛ց ջորեակ՝ և թռեաւ, ¹⁷խաղաց իբրև զգրուիճ. և խառնիճաղանջն քո իբրև զմարախ մածեալ զցանգով յաւուր ցրտոյ. ծագեա՛ց արև՝ և խաղաց, և ոչ ծանեաւ զտեղի իւր: Վայ՛ նոցա՞. ¹⁸նիրհեցին հովիւք քո. թագաւորն Ասորեստանեայց կոտորեաց զզօրս քո. շուեաց ազգ քո ՚ի լերինս, և ո՛չ ոք էր որ մնայր՞: ¹⁹Թարախեսցան վերք քո, և չի՞ք բժշկութիւն բեկման քում. ամենեքին որ լուան զգոյժ քո՝ ծափս հարցեն ՚ի վերայ բեկման քոյ. քանզի յո՞յր վերայ ո՛չ չոգաւ չարութիւն քո հանապազ՞:

Կատարումն Մարգարէութեանն Նաւումայ

ՉԼՈՒՄ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԵԻ

ա. Ջանիրաւութիւն ժողովրդեանն ճառէ, վասն որոյ և զելս Քաղղեացւոցն գուշակէ:

բ. Վասն Զրէից անհաւատութեանն. և մերոյ հաւատոցն ՚ի Քրիստոս կայ աստ. մարգարեանայ և զկորուստ Բաբելացւոցն. և Արդարն իմ ՚ի հաւատոց կեցցէ աստ կայ: Բայց մեծ մասն մարգարէիս վասն անիրաւութեան ժողովրդեանն և յափշտակութեան (և խաբէութեան) և նենգութեան:

գ. Կայ և յաղօթսն Ամբակումայ մարգարէութիւն վասն Քրիստոսի:

* *Ի լուս՝* Վիճակդ Ամովնայ. *համաձայն բազմաց ՚ի բնար՞: Ոմանք.* Պարիսպք նորա:

* *Ոմանք.* Գերի գնացէ, և գտողայս նոցա: *Օրինակ մի.* Մեծամեծք նորա ՚ի ձեռս կապովք կապեսցին:

* *Ոմանք.* Եւ դու արբեսցիս և յիմա՞... ՚ի թշնամեաց:

* *Ոմանք.* Որ թէ շարժեսցին անկանիցին ՚ի բե՞: *Ոսկան.* ՚ի բերան ուտողաց:

* *Ոսկան.* Լից ՚ի քեզ ջուր:

* *Այլք.* Եւ ծանրացի իբրև զջորեակ:

* *Ոմանք.* Յաւուրս ցրտոյ. ծագեաց արև, խաղաց՝ և ծանեաւ զտեղի իւր:

* *Օրինակ մի.* Չուեաց աղիւք քո:

* *Ոմանք.* Ծափս հարցեն ՚ի վերայ քո:

ՍԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ

1

Գլուխ Ա

¹ Առած զոր ետես Ամբակում մարգարտ:

Ա ²Մինչև յե՞րբ Տէր աղաղակիցեմ, և ո՛չ լուիցես. գոչիցեմ առ քեզ գրկեալ՝ և ո՛չ փրկիցես: ³Ընդէ՞ր ցուցեր ինձ աշխատութիւնս և վաստակս, տեսանել զթշուառութիւն և զամպարշտութիւն: Առաջի իմ եղև դատաստան, և առնոյր դատաւորն կաշառս: ⁴Վասն այնորիկ ցրուեցան օրէնք, և իրաւունք՝ ՚ի գլուխ ո՛չ ելանեն. զի ամպարիշտն յաղթահարէ զարդարն. վասն այնորիկ ելանէր դատաստանն թելր: ⁵Տեսէ՞ք արհամարհոտք՝ և հայեցարո՛ւք, և զարմացարո՛ւք զարմանս՝ և եղծարո՛ւք. զի գործ մի գործե՛մ ես յաւուրս ձեր, որում ո՛չ հաւատայցէք՝ թէպէտ և ոք պատմեսցէ ձեզ: ⁶Ձի ահա ես զարթուցանեմ զՔաղդէացիս, զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի ժառանգել զխորանս որ ո՛չ իւր են: ⁷Ահե՛ղ և երևելի և դատաստան նորա յանձնէ իւրմէ եղիցի. և առած իւր յինքենէ ելցէ: ⁸Վազեսցեն առաւել քան զինծս երիվարք նոցա. երագո՛ւնք քան զգայլս Արաբացւոց. ասպատակեսցեն սպառազէնք նորա, և դիմեսցեն ՚ի հեռաստանէ. և սլասցին իբրև զարծուիս յօժարութեամբ՝ ՚ի վերայ կերակրոյ: ⁹Վատարած ամպարշտաց հասցէ՝ դարձելոցն ընդդէմ երեսաց նորա. կուտեսցէ զգերի իբրև զաւազ: ¹⁰Եւ ինքն ընդ թագաւորս փափկասցի. և բռնաւորք խաղալիկք նորա. և ինքն ընդ ամենայն ամուրս խաղալո՛ւվ խաղասցէ. և կուտեսցէ հողակոյտս, և կալցի՛ զնա: ¹¹Յայնժամ փոխեսցին միտք նորա, անցցէ և հաճեսցի՛. այս զօրութիւն Աստուծոյ իմոյ է: ¹²Ոչ ապաքէն դո՛ւ ես իսկզբանէ Տէր Աստուած մեր. և մի՛ մեռցուք՝ Տէր ՚ի դատաստան եղիր զնա. և ստեղծեր զիս յանդիմանել զխաղ նորա: ¹³Սուրբ է ակն քո՝ ՚ի տեսանելոյ զչարիս, և հայել յաշխատութիւնս ո՛չ կարասցես: Չմէ՞ հայեցար յարհամարհոտս և ստունգանեցեր, ՚ի կլանել ամպարշտի զարդարն: ¹⁴Եւ առնիցես զմարդիկ իբրև զձկո՞ւնս ծովու. և իբրև զսողո՞ւնս որոց ո՛չ գոյ առաջնորդ: ¹⁵Չվախճան կարթիւ կորզեաց, և ձգեաց զնա ցանցիւ իւրով. և ժողովեաց զնա ուռկանօք իւրովք: Վասն այնորիկ ուրախ եղիցի և ցնծացտ սիրտ նորա: ¹⁶Եւ վասն նորին զոհեսցէ ուռկանին իւրում, և խունկս ծխեսցէ ցանցին իւրում. զի նոքօք պարարեաց զբաժին իւր, և կերակուր իւր ընտիր: ^{*}

^{*} *Ոմանք.* Յորում ոչ հաւատայցէք... պատմիցէ ձեզ:

^{*} *Ոմանք.* Չազգ դառն և զերակ:

^{*} *Ոմանք.* Եւ դատաստան իւր... և առած նորա յին: ^{*}

^{*} *Յոմանս պակասի.* Չարծուիս յօժարութեամբ՝ ՚ի վերայ:

^{*} *Ի լուս՝.* Ընդդէմ երեսաց նոցա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

^{*} *Ոմանք.* Հողակոյտս. և ընկալցի զնա:

^{*} *Ոսկան.* Այս զօրութեան իմոյ է:

^{*} *Ի լուս՝.* Եւ հայել յիրաւունս ոչ կարաս: *Ոմանք.* Յարհամարհոտս՝ և լռեցեր, ՚ի կլ: ^{*}

^{*} *Բազումք.* Չվախճանն կար: ^{*}

^{*} *Յօրինակին պակասէր.* Եւ կերակուր իւր ընտիր:

¹⁷Վասն այնորիկ սփռեցտ զգանցն իւր, և միշտ կոտորել զազգս ո՛չ խնայեցտ*:

2

Գլուխ Բ

Բ ¹Ի պահու՛ իմում կացից, և ելից ՚ի վերայ վիմի. և դիտեցից տեսանել զի՞նչ խօսիցի ընդ իս, և զի՞նչ տացէ պատասխանի յանդիմանութեան իմոյ*:
²Պատասխանի ետ ինձ Տէր՝ և ասէ. Գրեա՛ զտեսիլդ զայդ յայտնապէս ՚ի տախտակս. զի որ ընթեռնուն՝ համարձակ ընթեռնուցու: ³Ձի տակաւին տեսիլդ ՚ի ժամանակս է. և ծագեցտ ՚ի սպառ՝ և ո՛չ յունայնութեան: Բայց եթէ անագանեսցի՝ համբեր՝ նմա. զի որ գալոցն է եկեցտ՝ և ո՛չ անագանեսցի*. ⁴Եթէ երկմտեցտ որք՝ ո՛չ հաճեսցի ընդ նա անձն իմ: Ձի արդարն իմ ՚ի հաւատոց իմոց կեցցէ*: ⁵Այլ կարծօղն և արհամարհօղն՝ այդ ամբարտաւան է՝ և ո՛չ ինչ վճարեցտ: Որ ընդարձակեաց իբրև զդժոխս զանձն իւր, և անյա՛գ եղև իբրև զմահ. և ժողովեաց առ ինքն զամենայն հեթանոսս, և զազգս ամենայն յի՛նքն ամփոփեցտ*:
⁶Ոչ ապաքէն զայս ամենայն առակ՝ զնմանէ՛ առակեսցեն. և զնա արկցեն յերգ և ասասցեն. Վայ՛ որ յաճախէ անձին իւրում որ ո՛չ իւր իցէ. և մինչև ցե՞րբ ծանրացուցանէ զանուր իւր ծանրութեամբ: ⁷Ձի յանկարծակի՛ յարիցեն կերիչք նորա, և զարթիցեն դաւաճանք նորա. և եղիցես նոցա յափշտակութիւն*:
⁸Ձի դու՛ կողոպտեցեր զազգս բազումս, և զքեզ կողոպտեսցեն ամենայն մնացորդք ժողովրդոց՝ վասն արեանց մարդկան, և ամպարշտութեան երկրի և քաղաքի՝ և ամենայն բնակչաց նորա: ⁹Վայ՛ որ ազահէ զազահութիւն չար՝ տան իւրոյ, դնել ՚ի բարձունս զբոյն իւր, կորզել ՚ի ձեռաց չարաց: ¹⁰Խորհեցար զամօթ տան քոյ. սպառեցեր զազգս բազումս. և յանցեալ անձն քո: ¹¹Ձի քար՛ ՚ի հիմանէ աղաղակեսցէ. և ո՛րդն ՚ի փայտէ զոչեսցէ զայդ: ¹²Վայ՛ որ շինէ զքաղաք արեամբ, և պատրաստէ զքաղաք անիրաւութեամբ: ¹³Ո՞չ այս ամենայն ՚ի Տեառնէ ամենակալէ է. և պակասեսցին ժողովուրդք բազումք ՚ի հրոյ, և ազգք բազումք նուազեցան*:
¹⁴Ձի լցցի երկիր գիտութեամբ փառաց Տեառն իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս*:
¹⁵Վայ՛ որ արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս. և արբուցանէ զի հայեսցի յայրս նոցա*:
¹⁶Ձյագուրդ անարգանաց ՚ի փառաց, արբ և դու, շարժեաց և դողա՛: Պաշարեաց զքեզ բաժակ աջոյ Տեառն. և ժողովեցաւ անարգութիւն ՚ի վերայ փառաց քոց: ¹⁷Ձի ամպարշտութիւն Լիբանանու ծածկեսցէ զքեզ, և թշուառութիւն զազանաց զարհուրեցուցտ զքեզ. վասն արեանց մարդկան և ամպարշտութեան երկրի և քաղաքի՝ և ամենայն բնակչաց՝ նորա*:
¹⁸Ձի՞նչ օգուտ է դրօշեալ զի դրօշեցին

* Ոմանք. Սփռեաց զգանց իւր: *Յօրինակին պակասէր.* Կոտորել զազգս ոչ խնայ*:

* Օրինակ մի. Վասն պահու իմում: *Ոմանք.* Ձինչ խօսեսցի... յանդիմանութեան իմում: *Ուր Ոսկան.* իւրում:

* Ոմանք. Եւ ոչ յունայնութիւն. բայց թէ անարգեսցի՝ համբեր նմա:

* Ոմանք. Ընդ այն անձն իմ. զի արդարն ՚ի հաւատոց կեցցէ:

* Ոմանք. Եւ ժողովեսցէ առ ինքն:

* Ոմանք. Եւ յանկարծակի յարի*:

* Ոմանք. Ո՞չ այդ ամենայն... և պակասեսցին ժո՞նք:

* Ոմանք. Ձի լցաւ երկիր... իբրև ջուր բազում որ ծածկէ զծովս:

* Ոմանք. Ձի հայեսցի յայս նոցա:

* Ոմանք. Եւ ամբարշտութեանց երկ՞:

զնա. ստեղծին զնա ձուլածոյ, երևոյթ սուտ. զի յուսացաւ որ ստեղծն 'ի ստեղծուածն իւր ամենէլ իւր կուռս անօգուտս: ¹⁹Վայ որ ասէ ցփայտ. Սթափեաց և զարթիր, և ցքարն՝ թէ բարձրացիր, և նա՛ է երևոյթ առ աչօք. և նա՛ է կռած արծաթոյ և ոսկոյ, և ամենկին շունչ ո՛չ գոյ 'ի նոսա՛: ²⁰Այլ Տէր 'ի տաճարի՛ սրբութեան իւրում. և երկիցէ յերեսաց նորա ամենայն երկիր՛:

3

Գլուխ Գ

¹Աղօթք Անբակումայ մարգարէի երգով:

Գ ²Տէր՝ զլուր քո լուայ՝ և երկեայ. Տէր՝ հայեցայ 'ի գործս քո՝ և զարհուրեցայ: 'ի մէջ երկուց գազանաց ծանիցիս. 'ի մերձեմալ ամացն յայտնեսցիս. 'ի հասանել ժամանակին երեսցիս. 'ի խռովել անձին իմոյ 'ի բարկութեան զողորմութիւնս յիշեսցես՝: ³Աստուած 'ի թեմանայ եկեսցէ, և Սուրբն 'ի հովանաւոր և յանտառախիտ լեռնէ: **Յանգիստ:** Ծածկեցին զերկինս փառք նորա. օրհնութեամբ նորա լի՛ եղև երկիր: ⁴Ճառագայթք նորա իբրև զլոյս եղիցին, և եղջերք 'ի ձեռին նորա. ⁵և հաստատեաց զսէր սաստիկ զօրութեան իւրոյ: Առաջի երեսաց նորա զնասցէ բան. և ելցէ 'ի դաշտս զկնի նորա՝: ⁶Եկաց՝ և շարժեցաւ երկիր, հայեցաւ՝ և հալեցան ազգք. լերինք խորտակեցան բռնութեամբ, և բլուրք յաւիտենականք հալեցան: Ջգնացս նորա յաւիտենական՝ ⁷փոխանակ աշխատութեանց տեսի: Խորանք Եթովպացոց զարհուրեցան. և խորանք երկրին Մադիամու: ⁸Սիթէ գետոց բարկացիս Տէր. կամ սրտմտութիւն քո 'ի վերայ գետոց, կամ ասպատակ քո 'ի վերայ ծովու. զի ելցես յերիվարս քո, և հեծելութիւն քո փրկութիւն է՝: ⁹Լարելով լարեսցես զաղեղն քո 'ի վերայ իշխանութեան ասէ Տէր. գետոց պատառեցաւ երկիր՝. ¹⁰տեսցեն զքեզ ազգք՝ և երկնեսցեն. որ ցանես զջուրս գնացից: Ետուն անդունդք զձայնս իւրեանց, զբարձրութիւն սաստկութեան իւրեանց: ¹¹Բարձաւ արեգակն, և լուսին եկաց 'ի կարգի իւրում. զնասցեն նետք քո 'ի լոյս, 'ի փայլիւն փայլատականց զինուց քոց՝: ¹²Սպառնալեօք նուազեցուցեր զերկիր. և բարկութեամբ զիջուցես զազգս: ¹³Ելեր 'ի փրկութիւն ժողովրդեան քոյ՝ փրկել զօժեալս քոյ. արկեր զգլխով անօրինաց մահ. զարթուցեր զկապանս մինչև ցպարանոցս 'ի սպառ: **Յանգիստ՝:** ¹⁴Խորտակեցեր ապշութեամբ զգլուխս բռնաւորաց. սասանեսցին 'ի նմա. արծակեսցեն զերասանակս իւրեանց իբրև

* *Ոմանք.* Որ ասէ ցփայտս. Թափեաց և զար՝... և նա է կրարծաթոյ և ոսկ՛:

* *Ոմանք.* Սրբութեան իւրոյ:

* *Ոմանք.* Ժամանակի... զողորմութիւն յիշեսցես:

* *Ոսկան.* Եւ անդ հաստատեաց զսէր:

* *Ոմանք.* Եւ եկաց և շարժե՛... զգնացս նորա յաւիտենականս. փո՛:

* *Ոմանք.* Կամ ասպատակք քո:

* *Ոմանք.* Գետոց պատառեսցէ:

* *Յօրինակին պակասէր.* Փայլատականց զինուց քոց:

* *Ոմանք.* Արկեր զգլուխ անօրինաց: *Ոմանք յաւելուն.* Ջարթուցեր զպարանոցս զկապանս մին՛:

զտնանկ գաղտակեր*։ ¹⁵Չաներ 'ի ծով զերիվարս քո, պղտորել զջուրս բազումս*։ ¹⁶Ձգուշացայ և զարհուրեցաւ սիրտ իմ 'ի ձայնէ աղօթից շրթանց իմոց. եմուտ դողումն յոսկերս իմ. և խռովեցաւ փո'ր իմ 'ի ներքուստ. հանգեայց յաւուր նեղութեան, ելանել ինձ 'ի ժողովուրդ պանդխտութեան իմոյ։ ¹⁷Ձի թզենի ո'չ տացէ զպտուղ իւր, և մի' եղիցի ծնունդ որթոյ. ստեսցէ՛ բեր ձիթենւոյ, և դաշտք մի' արասցեն զկերակուր. պակասեսցեն հօտք 'ի ճարակոյ, և ո'չ իցեն եզինք 'ի մսուրս*։ ¹⁸Այլ ես 'ի Տէր ցնծացայց, և ուրախ եղէց յԱստուած Փրկիչ իմ։ ¹⁹Տէր Աստուած զօրութիւն իմ, և կարգեսցէ զոտս իմ 'ի վախճան. և հանցէ զիս 'ի բարձունս յաղթել երգով նորա*։

Կատարեցաւ Մարգարէութիւնն Ամբակունայ

ՉԼՈՒԽՔ ՍՈՓՈՆԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

- ա. Սպառնայ մեծամեծ սպառնալիս Յրէից, և խրատէ դառնալ առ Աստուած։
- բ. Ըստ ճառին սպառնայ Մովսէսացւոց և Ամոնացւոց. յաւելու և զՆինուէացւոցն կորուստն, և առակաւ զկործանումն Սատանայի։
- գ. Վասն դարձի այնոցիկ՝ որ 'ի Քրիստոս էին հաւատալոց, խօսի։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՓՈՆԻԱՅ

1

Գլուխ Ա

¹Բանն որ եղև առ Սոփոնիա Քուսեայ, որդւոյ Գողգոթիայ, Ամարեայ՝ Եզեկիայ՝ յաւուրս Յովսիայ որդւոյ Ամովնայ արքայի Յուդայ։*

Ա ²Պակասելով պակասեսցէ ամենայն յերեսաց երկրէ՝ ասէ Տէր։ ³Պակասեսցէ մարդ և անասուն. պակասեսցեն թռչունք երկնից, և ձկունք ծովու. և տկարացին ամպարիշտք. և բարձից զանօրէնս յերեսաց երկրէ՝ ասէ Տէր։ ⁴Եւ ձգեցից զձեռն իմ 'ի վերայ Յուդայ, և 'ի վերայ ամենայն բնակչաց Երուսաղեմի. և բարձից 'ի տեղւոջէդ յայդմանէ զանուն Բահաղու. և զանուն քրմացն հանդերձ քահանայիւքն*, ⁵որ երկի'ր պագանեն 'ի տանիս զօրութեանց երկնից. և որք

* 'ի լուս'. Խոտորեցեր ապշութեամբ. *համաձայն ոմանց 'ի բնաբ*։

* *Ոմանք*. Պղտորեցեր զջուրս բա՛։

* *Ոմանք*. Պակասեսցին հօտք 'ի ճարակաց։

* *Ոմանք*. 'ի բարձունս յաղօթել երգով նորա։

* *Բազումք*. Բան Տեառն որ եղև... Քուսեայ որդւոյ Գողգոթիայ։ *Ուր Ոսկան*. որդի Քուսայ... որդւոյ Ամարայ որդւոյ Եզեկիայ։

* *Ոմանք*. Եւ զանունս քրմացն։ *Ուր Ոսկան*. Եւ զանուանս քր՛։

երդնուին յանուն Տեառն՝ արքային իւրեանց, և որք խոտորէին ՚ի Տեառնէ. ⁶և որք ո՛չ խնդրէին զՏէր. և որք ո՛չ ՚ի Տեառն կողմն լինէին*։ ⁷Երկերուք յերեսաց Տեառն Աստուծոյ. զի մերձ է օր Տեառն. զի պատրաստեաց Տէր զգոհս իւր, և հրաւիրեաց զկոչնականս իւր։ ⁸Եւ եղիցի յաւուր զոհի Տեառն՝ խնդրեցից՝ զվրժ յիշխանաց՝ և ՚ի տանէ թագաւորին, և յամենայնէ որ զգեցեալ են զհանդերձս օտարս*։ ⁹Եւ խնդրեցից վրժ յայտնապէս յամենեցունց առաջի դրանդեացն յաւուր յայնմիկ. որք լնուին զտուն Տեառն Աստուծոյ իւրեանց ամպարչտութեամբ և նենգութեամբ։ ¹⁰Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր. ձայն աղաղակի ՚ի դրանէ խոցոտելոցն, և գոյժ յերկրորդ դրանէն. և բեկումն մեծ ՚ի բլրոց։ ¹¹Ողբացէ՛ք բնակիչք կոտորելոց. զի նմանեցաւ ամենայն ժողովուրդդ Քանանացոց. սատակեցան ամենեքեան որ հպարտացեալ էին արծաթով*։ ¹²Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ քննեցից զերուսաղէն ճրագաւ, և խնդրեցից վրժ յարանցն որ արհամարհեցին զպահպանութիւնս իւրեանց. որ ասէին ՚ի սիրտս իւրեանց. Ո՛չ բարի ինչ առնէ Տէր, և ո՛չ չար։ ¹³Եւ եղիցի զօրութիւն նոցա ՚ի յափշտակութիւն, և տունք նոցա յապականութիւն. շինեցեն տունս և մի՛ բնակեցեն ՚ի նմա. տնկեցեն այգիս և մի՛ արբեցեն զգինի նոցա*։ ¹⁴Ձի մերձ է օր Տեառն մեծն, մերձ է և արագ յոյժ. ձայն աւուր Տեառն խիստ և դառն. կարգեալ զօրաւոր*։ ¹⁵Օր բարկութեան օրն այն. օր նեղութեան և վտանգի. օր թշուառութեան և ապականութեան. օր խաւարի և միգի. օր ամպոյ և մառախոյոյ. ¹⁶օր փողոյ և աղաղակի ՚ի վերայ ամուր քաղաքաց, և ՚ի վերայ անկեանց բարձանց։ ¹⁷Եւ նեղեցից զմարդիկ, և զնասցեն իբրև զկոյրս. զի Տեառն մեղան, և առին զանուն նորա ՚ի վերայ սնոտեաց. որք ո՛չ ինչ կարասցեն օգնել նոցա. և հեղձ զարիւն նոցա իբրև զհող, և զմարմինս նոցա իբրև զաղբ*։ ¹⁸Արծաթ նոցա և ոսկի մի՛ կարասցեն փրկել զնոսա յաւուր բարկութեան Տեառն. և հրով նախանձու նորա մաշեցի ամենայն երկիր. զի վախճան և տագնա՛պ արասցէ ՚ի վերայ ամենայն բնակչաց երկրի*։

2

Գլուխ Բ

¹Ժողովեցարուք և խնդրեցէ՛ք ա՛զգք անխրատք. ²մինչչն՝ եղեալ իցեք իբրև զծաղիկ անցաւոր, մինչչն՝ եկեալ իցէ օր բարկութեան սրտմտութեան Տեառն։ ³Խնդրեցէ՛ք զՏէր ամենայն խոնարիք երկրի. իրաւունս արարէ՛ք և զարդարութիւն խնդրեցէ՛ք. և տուք պատասխանի նոցա, զի ծածկեսցիք յաւուր բարկութեան Տեառն։

Բ ⁴Ձի Գագա յափշտակեալ լիցի. և Ասկաղոն յապականութիւն. և Ազովտոս ՚ի

* *Ոմանք.* ՚ի Տեառն կողմն էին։

* *Յօրինակին պակասէր.* Յիշխանաց՝ և ՚ի տանէ։

* *Ի լուս՝.* Սատակեցին ամենեքեան. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:* Ոմանք. Որ հպարտացեալ են։

* *Ոմանք.* Զօրութիւն նորա ՚ի յափշ՝... և մի՛ բնակեցեն ՚ի նոսա։

* *Ոմանք.* Մերձ և արագ։

* *Ոմանք.* Ոչինչ կարացին օգ՝։

* *Ոմանք.* Մի՛ կարասցէ փրկել։

միջօրէի կործանեցի և Ակկարոն յարմատոյ խլեցի*։ ⁵Վայ որ բնակեալդ էք ՚ի վիճակս ծովու բնակիչք Կրետացոց։ Պատգամ Տեառն ՚ի վերայ ձեր Քանան երկիրդ այլազգեաց. և կորուսից զձեզ ՚ի բնակութենէ։ ⁶Եւ եղիցի Կրետ ճարակս հօտից, և գոնք խաշանց*։ ⁷Եւ եղիցի վիճակ ծովուն մնացորդաց տանն Յուդայ, և ՚ի նոսա՝ ճարակեցին. և ՚ի տունս Ասկաղոնայ առ օթ դադարեցցեն յերեսաց որդւոցն Յուդայ. զի ելեալ է նոցա յայց Տէր Աստուած իւրեանց. և դարձոյց զգերութիւն նոցա*։ ⁸Լուայ զնախատինս Մովաբու, և զկնփանս որդւոցն Ամոնայ որովք նախատէին զժողովուրդ իմ, և մեծաբանէին ՚ի վերայ սահմանաց իմոց։ ⁹Վասն այնորիկ կենդանի՝ եմ ես՝ ասէ Տէր Աստուած զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. զի Մովաբ՝ իբրև զՍոդոմ եղիցի, և որդիքն Ամոնայ իբրև զԳոմոր. և Դամասկոս լքեալ իբրև զշեղջ կալոյ՝ և ապականեալ յաւիտեան. մնացորդք ժողովրդեան իմոյ յափշտակեցցեն զնոսա, և մնացորդք ազգի իմոյ ժառանգեցցեն զնոսա*։ ¹⁰Եւ այն նոցա փոխանակ հպարտութեան նոցա. զի նախատեցին և մեծաբանեցին ՚ի վերայ Տեառն ամենակալի*։ ¹¹Երևեցի՝ Տէր ՚ի վերայ նոցա, և սատակեցէ զամենայն աստուածս ազգաց. և երկիր պագցեն նմա իւրաբանչիւր ՚ի տեղւոջէ իւրեանց՝ ամենայն կղզիք ազգաց։ ¹²Եւ դուք Եթովպացիք հարեալք սուսերի իմոյ էք*։ ¹³Եւ ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ հիւսւոյ, և սատակեցից զԱսորեստանեայն, և եղից զՆինուէ յապականութիւն. անջրդի իբրև զանապատ*։ ¹⁴Եւ արածեցին ՚ի միջի նորա հօտք և ամենայն զազանք երկրի, և գետնառեւծք՝ և ոգնիք ՚ի յարկս նորա բնակեցցեն. և զազանք գոչեցցեն ՚ի նկո՛ղս նորա. և սակռուք ՚ի դրունս նորա. քանզի իբրև զմայր է բարձրութիւն նորա*։ ¹⁵Այս քաղաք վրիժագործ բնակեալ յուսով. որ ասէր ՚ի սրտի իւրում. Ես եմ, և ո՛չ ևս ոք իցէ յետ իմ. զիա՞րդ եղև յապականութիւն ճարակ զազանաց. ամենայն որ անցանիցէ ընդ նա, շէսցէ և շարժեցէ զգլուխ իւր*։

3

Գլուխ Գ

¹Ո՛վ երևելիդ փրկեալ քաղաք Յովնանու*։ ²Ո՛չ լուաւ ձայնի, և ո՛չ ընկալաւ զխրատ. ՚ի Տէր ո՛չ յուսացաւ, և առ Աստուած ո՛չ մերժեցաւ*։ ³Իշխանք նորա իբրև առիւծունք գոչեցցեն, և դատաւորք նորա իբրև զգայլս Արաբացոց, որ ո՛չ

* Ոմանք. ՚ի մէջօրէի կոր... յարմատոց խլես*։

* Ոմանք. Եւ եղիցի Կրիտէս ճարակ հօտից։

* Ոմանք. Եւ ՚ի տունս Ասկաղովնիայ։

* Ոմանք. Ասէ Տէր զօրութեանց... և մնացորդք ժողովրդ*։

* Ոսկան յաւելու. Եւ նոցա եկեցցէ փոխանակ հա՛։ Ոմանք. ՚ի վերայ Տեառն Աստուծոյ ամենակա՛։

* Ոմանք. Հարեալք սուսերոյ իմոյ։

* Ոմանք. Եւ անջրդի իբրև։

* Ոմանք. Գոչեցցեն ՚ի նկողս նորա։ Ի՛ լուս՞. Եւ ազռաւք ՚ի դրունս նորա. համաձայն ոմանց ՚ի բնաք՞։

* Ոմանք. Եւ ոչ ոք ևս իցէ յետ իմ։

* Ոմանք. Ո՛հ երևելիդ փրկ՞։ Ի՛ լուս՞. Փրկեալ քաղաք աղաւնի. համաձայն ոմանց ՚ի բն՞։

* Ոմանք. Եւ առ Աստուած իւր ոչ մեր՞։

թողուն ինչ ՚ի վաղի*։ ⁴Մարգարէք նորա այսակիրք, արհամարիօղք. քահանայք նորա պղծեն զսրբութիւնս, և ամպարշտեն յօրէնս*։ ⁵Այլ Տէր արդար է ՚ի միջի նորա, և ո՛չ արասցէ անիրաւութիւն. ընդ առաւօտս կանխաւ տացէ զիրաւունս իմ ՚ի լոյս, և ո՛չ թաքիցէ. և ո՛չ ծանիցէ զանիրաւութիւն ՚ի պահանջել*։ ⁶և ո՛չ ՚ի սպառ զանօրէնութիւնս. ապականութեամբ կործանեսցէ զամբարտաւանս։ Ապականեցան անկիւնք նոցա. աւերեցից զճանապարհս նորա, ամենկին մի՛ ևս զնալ ընդ նոսա. պակասեցին քաղաքք նոցա առ ՚ի չգոյէ բնակչաց*։ ⁷Ասացի թէ երկերուք յինէն՝ և ընկալարուք զխրատ. և ո՛չ սատակեսցիք յերեսաց նորա ըստ ամենայնի որչափ ինչ առից վրէժ ՚ի նմանէ։ Պատրաստեա՛ կանխեաց ընդ առաւօտս. պակասեցան ամենայն ճիռք նորա*։ ⁸վասն այդորիկ սպասեա՛ ինձ՝ ասէ Տէր՝ յաւուր յարութեան իմոյ ՚ի վկայութիւն։ Ձի դատաստանք իմ ՚ի վերայ ազգաց յըմբռնել զթագաւորս, ՚ի հեղուլ ՚ի վերայ նոցա զբարկութիւն իմ, զամենայն բարկութիւն սրտմտութեան իմոյ. զի հրո՛վ նախանձու իմոյ մաշեսցի՛ ամենայն երկիր*։ ⁹Ձի յայնժամ դարձուցից ՚ի վերայ ժողովրդոց լեզու յազգս նոցա, ՚ի կարդալ ամենեցուն զանուն Տեառն, ՚ի ծառայել նոցա նմա ընդ միո՛վ լծով. ¹⁰ի գետոյն եթուվպացւոց ընկալայց զնոսա ընդ ցրուեալսն, մատուցանիցեն ինձ պատարագ*։ ¹¹Յաւուր յայնմիկ ո՛չ ամաչեսցես յամենայն գործոց քոց, որովք ամպարշտեսցեր առ իս. զի յայնժամ զերծից ՚ի քէն զչարութիւն ամբարտաւանութեան քոյ, և ո՛չ ևս յաւելցես մեծաբանել ՚ի վերայ լերին սրբութեան իմոյ։ ¹²Թողի՛ց քեզ ժողովուրդ հեզ և խոնարի, և երկիցեն յանուանէ Տեառն* ¹³մնացորդք Իսրայէլի. և ո՛չ արասցեն անիրաւութիւն, և ո՛չ խօսիցին սնոտիս. և ո՛չ գտցի ՚ի բերան նոցա լեզու նենգաւոր. զի նոքա արածեսցեն և մակաղեսցին. և ո՛չ որ իցէ որ զարհուրեցուցանիցէ զնոսա*։

Գ ¹⁴Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, և քարոզեա՛ Երուսաղէմ. ուրախ լեր՝ և զուարճացի՛ր յամենայն սրտէ քումնէ դուստր Երուսաղէմի։ ¹⁵Ձի եհան ՚ի քէն Տէր շուրջ զանիրաւութիւնս. փրկեաց՝ զքեզ Տէր ՚ի ձեռաց թշնամեաց քոց. Թագաւոր Իսրայէլի Տէր ՚ի միջի քում, և ո՛չ ևս տեսցես զչարիս։ ¹⁶Ի ժամանակին յայնմիկ ասէ Տէր ցերուսաղէմ. Քաջալերեաց Սիոն՝ մի՛ լքցին ձեռք քո*։ ¹⁷Տէր Աստուած ՚ի քե՛զ է հզօրն, և փրկեսցէ՛ զքեզ. աճցէ՛ ՚ի վերայ քո ուրախութիւն, և նորոգեսցէ զքեզ սիրով իւրով. և ուրախ լիցի ՚ի քեզ զուարճութեամբ իբրև յաւուր տօնի*։ ¹⁸և ժողովեցից զմանրեալսն քո։ Վայ՛ որ նախատիցէ զնա։ ¹⁹Ահաւասիկ ես առնեմ վասն քո ՚ի ժամանակին յայնմիկ. և փրկեցի՛ց զճնշեալն, և զմերժեալն ընկալայց. և արարից զնոսա ՚ի պարծանս, և անուանիս ընդ ամենայն երկիր։ ²⁰Եւ ամաչեսցեն ՚ի ժամանակին յայնմիկ՝ յորժամ բարի՛

* *Ոմանք.* Իշխանք նորա ՚ի նմա իբրև... որ ոչ թողին ինչ ՚ի վաղի։

* *Ոմանք.* Պղծեսցեն զսրբութիւնս։

* *Ոմանք.* Ձանիրաւութիւն պահանջել։

* *Ոմանք.* Եւ ոչ իսպառ զանիրաւութիւն. ապակա՛... ևւերեցից զճանապարհս նոցա... պակասեցին քաղաքք նոցա։

* *Ոմանք.* Կանխել ընդ առաւօտս ապականեցան ամենայն ճիռք։

* *Ոմանք.* Ըմբռնել զթագաւորս... և զամենայն բարկութիւն։

* *Ոմանք.* Ինձ պատարագ։

* *Ոսկան.* Եւ թողից քեզ ժողովուրդ։

* *Ոսկան.* Իսրայէլի ոչ արասցեն զանիրաւութիւն։ *Բագոււնք.* Ձի նոքա արածեսցին։

* *Ոմանք.* Ի ժամանակի յայնմիկ։

* *Ոմանք.* Ի վերայ քո ուրախութիւնս։

արարից ձեզ, և ՚ի ժամանակի յորժամ ընկալայց զձեզ. զի տայց զձեզ անուանիս և ՚ի պարծանս ընդ ամենայն ազգս երկրի. ՚ի դարձուցանել ինձ զգերութիւն ձեր առաջի ձեր՝ ասէ Տէր*:

Կատարումն Մարգարութեանն Սոփոնիայ

ԳԼՈՒԽՔ ԱՆԳԵԻ ՄԱՐԳԱՐԵԻ

ա. Սա յետ ելիցն ՚ի Բաբելոնէ մարգարեանայ, և պատուհասէ զԻսրայէլացիսն. զի զիւրեանց տանց փոյթ յանձին ունէին շինելոյ. և զտաճարին շինուածոյ անփոյթ առնէին: Սպառնայ նոցա վասն այնորիկ սրով: Խրատէ մխիլ ՚ի գործս տաճարին. և դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս՝ զոր ՚ի Յերբայեցւոց թղթին ասէ Պաւղոս՝ աստ կայ:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՅ

1

Գլուխ Ա

¹ Յամին երկրորդի Դարեհի արքայի. յամսեանն վեցերորդի, որ օր մի էր ամսոյն. եղև բան Տեառն ՚ի ձեռն Անգէի մարգարէի, և ասէ.

Ա խօսեայց ընդ Ջորաբաբելի որդւոյ Սաղաթէլի յազգէ Յուդայ, և ընդ Յեսուայ որդւոյ Յովսեդեկեայ քահանայի մեծի՝ և ասացես*. ²Այսպէս ասէ Տէր ամենակալ. ժողովորդդ այդ ասեն. Ո՛չ է հասեալ ժամանակ շինելոյ զտունն Տեառն: ³Եւ եղև բան Տեառն ՚ի ձեռն Անգէի մարգարէի՝ և ասէ. ⁴Եթէ ձեզ միա՞յն իցէ ժամանակ բնակել ՚ի տունս գմբեթեայս. և տունդ իմ աւեր կայ*. ⁵և արդ՝ այսպէս ասէ Տէր ամենակալ. Կարգեցէք զսիրտս ձեր ՚ի ճանապարհս ձեր*: ⁶Վարէիք բազում և ժողովէիք սակաւ. ուտէիք՝ և ո՛չ յագէիք. ընպէիք՝ և ո՛չ լինէր ՚ի յագուրդ. զգենուիք՝ և ո՛չ ջեռնուիք նոքօք. և որ զվարծս իւր ժողովէր՝ ՚ի ծրարս ծակոտեալս ժողովէր*: ⁷Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դի՛ք զսիրտս ձեր ՚ի ճանապարհս ձեր, ⁸եւ լէ՛ք ՚ի լեառն, հարէ՛ք փայտ, և շինեցէ՛ք զտունդ. և հաճեցայց դովաւ՝ և փառաւորեցայց՝ ասէ Տէր: ⁹Յայեցարուք ՚ի բազում և եղև սակաւ. և դուք ՚ի ներքս ՚ի տունս կրեցէք՝ և ես արտաքս փչեցի զայն: Վասն

* Ոմանք. Անուանիս ՚ի պարծանս:

* Որպէս ծանուցար ՚ի վերոյ. Ա Եզր Դ 13. գրեթէ ամենայն գրչագիրք մեր և յառաջիկայդ զանունս Ջորաբաբել գրեալ ունէին՝ Ջաւրաբաբել. որ մեզ պատշաճ թուեցաւ յամենայնի միապէս դնել ըստ սովորականիս: Ոմանք. Յեսուայ որդւոյ Յովսեդեկայ:

* Ոմանք. Եւ տունս իմ աւեր:

* Օրինակ մի. Ջսիրտս ձեր ՚ի ժամանակս ձեր:

* Ոսկան. Ուտէիք, և ոչ լինէր ՚ի յագուրդ:

այդորիկ այսպէս ասէ Տէր ամենակալ. Փոխանակ զի տունդ իմ անէր է, և դուք ճեպեալ էք յիւրաքանչիւր տուն իւր: ¹⁰Վասն այդորիկ երկինք կալցին զանձրև քո. և երկիր արգելցէ զարդիւնս իւր. ¹¹և ածից սուր ՚ի վերայ երկրի, և ՚ի վերայ ցորենոյ. և ՚ի վերայ գինւոյ, և ՚ի վերայ իւղոյ, և ՚ի վերայ ամենայն բուսոյ երկրի, և ՚ի վերայ մարդկան, և ՚ի վերայ անասնոյ, և ՚ի վերայ ամենայն վաստակոց ձեռաց նոցա: ¹²Եւ լուաւ Ջորաբաբէլ որդի Սաղաթիէլի յազգէ Յուդայ, և Յեսու Յովսեփէկէայ քահանայ մեծ, և ամենայն մնացորդք ժողովրդեանն ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց. և զպատգամս Անգէի մարգարէի, որպէս առաքեաց զնա Տէր Աստուած նոցա առ նոսա. և երկեալ ժողովուրդն յերեսաց Տեառն: ¹³Եւ ասէ Անգէս հրեշտակն Տեառն ՚ի հրեշտակս Տեառն ցժողովուրդն. Ես ընդ ձեզ եմ ասէ Տէր: ¹⁴Եւ զարթոյց Տէր զոգի Ջորաբաբիլի որդւոյ Սաղաթիէլի յազգէ Յուդայ, և զոգի Յեսուայ Յովսեփէկէայ քահանայի մեծի, և զոգի ամենայն մնացորդաց ժողովրդեանն. և մտանէին և գործէին զգործ ՚ի տան Տեառն ամենակալի Աստուծոյ իւրեանց*,

2

Գլուխ Բ

¹Ի քսան և ՚ի չորս ամսոյն վեցերորդի:

Բ Յամին երկրորդի Դարեհի արքայի, ²յամսեանն եւթներորդի, որ օր քսան և մի էր ամսոյն: Խօսեցաւ Տէր ՚ի ձեռն Անգէի մարգարէի՝ և ասէ. ³Ասա՛ ցՋորաբաբէլ որդի Սաղաթիէլի յազգէ Յուդայ, և ցՅեսու Յովսեփէկէայ քահանայ մեծ, և ցամենայն մնացորդս ժողովրդեանն: ⁴Ո՞յր ՚ի ձէնջ տեսեալ իցէ զտունս զայս ՚ի փառաւորութեան իւրում զառաջինն. և ո՞րպէս արդ տեսանէք զդա որպէս զոչինչ առաջի ձեր: ⁵Եւ արդ զօրացի՛ր դու Ջորաբաբէլ՝ ասէ Տէր, և զօրացի՛ր Յեսու Յովսեփէկէայ քահանայ մեծ, և զօրացի ամենայն ժողովուրդ երկրիդ՝ ասէ Տէր. և գործեցէք զի ես ընդ ձեզ եմ ասէ Տէր ամենակալ: ⁶Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ՝ յելանելն յերկրէն Եգիպտացոց. և Յոզիմ իմ որ կայ ՚ի միջի ձերում. քաջալերեցարո՛ւք: ⁷Ձի այսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր, և զծով և զցամաք: ⁸Եւ միանգամայն շարժեցից զամենայն ազգս. և եկեսցէ ընտիր ընտիր ընչից ամենայն ազգաց, և լցուցից զտունդ զայդ փառօք՝ ասէ Տէր ամենակալ: ⁹Ի՛մ է արծաթ՝ և ի՛մ է ոսկի, ասէ Տէր ամենակալ: ¹⁰Ձի մեծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն՝ ասէ Տէր ամենակալ: Եւ ՚ի տեղւոջդ յայդմիկ տա՛ց խաղաղութիւն՝ ասէ Տէր ամենակալ. և խաղաղութիւն ոգւոց, փրկութիւն ամենայնի, որ գործիցէ յարուցանել զտաճարդ զայդ*:

Գ ¹¹Ի քսաներորդի և չորրորդի, իններորդի ամսեանն. յամի երկրորդի

* *Օրինակ մի.* Հաճեցարուք ՚ի բազում, և եղև: *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս... յիւրաքանչիւր ՚ի տուն իւր:

* *Յոմանս պակասի.* Հրեշտակն Տեառն ՚ի հրեշտակս Տեառն:

* *Բազումք.* Չգործ տան Տեառն ամենակալ:

* *Ոմանք.* ՑՋորաբաբէլ Սաղաթիէլի... քահանայի մեծի:

* *Ոմանք.* Տեսեալ է զտունս ՚ի փա՛... զդա իբրև զոչինչ առա՛:

* *Ոմանք.* Որ կայր ՚ի միջի ձերում:

* *Ոմանք.* Վերջինն քան զառաջինն... և խաղաղութիւն ոգւոյ ՚ի փրկութիւն:

Դարեհի. եղև բան Տեառն առ Անգէ մարգարէ՝ և ասէ՝. ¹²Այսպէս ասէ Տէր ամենակալ. Զա՛րց օրէնս ՚ի քահանայիցդ և ասասցես. ¹³Եթէ առնուցու՛մ մարդ միս սուրբ ՚ի դրօշակ հանդերձի իւրոյ, և մերձեսցի ձորձք իւր ՚ի հաց, կամ ՚ի թան, կամ ՚ի գինի, կամ յելդ, կամ յամենայն կերակուրս՝ իցէ՞ թէ սրբեսցի: Պատասխանի ետուն քահանայքն և ասեն. Ո՛չ՝: ¹⁴Եւ ասէ Անգէաս. Թէ մերձենայցէ պիղծն՝ կամ անսուրբն ոգւով յամենայն ինչ յայնպիսեաց՝ իցէ՞ թէ պղծեսցի: Պատասխանի ետուն քահանայքն և ասեն. Պղծի՞: ¹⁵Պատասխանի ետ Անգէոս և ասէ. Նո՛յնպէս և ժողովուրդս այս. նո՛յնպէս և ազգս այս առաջի իմ ասէ Տէր. նո՛յնպէս և ամենայն գործք ձեռաց նոցա, որ ինչ մերձենայցէ անդր, պղծեսցի. վասն առիցն իւրեանց առաւօտնոց. և մորմոքեսցին յերեսաց չարեացն իւրեանց. և ատեցիք ՚ի դրունս գյանդիմանիչս՝: ¹⁶Եւ արդ՝ դի՛ք ՚ի սիրտ ձեր յօրէ յայսմ հետէ և յառաջ. մինչչև՝ եղեալ քար ՚ի քարի վերայ տաճարին Տեառն՝: ¹⁷Ո՞վ էիք յորժամ արկանէիք յամանս ձեր քսան քոռ գարւոյ, և լինէր տա՛սն քոռ գարւոյ. և մուծանէիք ՚ի հնծանս ձեր հանել յիսո՛ւն մար, և լինէր քսան: ¹⁸Զարի՛ գծեգ անպտղութեամբ և խորշակաւ՝ և կարկտիւ, և զամենայն գործս ձեռաց ձերոց. և ո՛չ դարձարուք առ իս՝ ասէ Տէր: ¹⁹Կարգեցէ՛ք զսիրտս ձեր յօրէ յայսմանէ՝ և անդր. ՚ի քսաներորդէ և չորրորդէ իններորդի ամսեանդ, և յօրէ յայդմանէ յորում անկաւ հիմն տաճարիդ Տեառն: Դի՛ք ՚ի սիրտս ձեր՝. ²⁰ի՞ցէ թէ յայտնեսցի ինչ ՚ի վերայ կալոյ և յորթ, և ՚ի թզենի՝ և ՚ի նռնենի, և ՚ի փայտ իւղոյ որ պտուղ ո՛չ տային՝ յօրէ յայսմանէ օրհնեցից՝:

Դ ²¹Եւ եղև բան Տեառն կրկին անգամ առ Անգէ մարգարէ, ՚ի քսան և ՚ի չորս ամսոյն՝ և ասէ. ²²Ասա՛ ցՁորաբաբէլ Սաղաթիելի յազգէ Յուդայ. Դարձեալ միւսանգամ շարժեմ զերկինս և զերկիր, զծով և զցամաք՝. ²³և կործանեցից զաթոռս թագաւորաց, և սատակեցից զգօրութիւնս թագաւորաց. և կործանեցից զկառս և զհեծեալս. և իջցեն երկվարք և հեծեալք նոցա՝ իւրաքանչիւր սրով առ եղբայր իւր՝: ²⁴Յաւուր յայնմիկ ասէ Տէր ամենակալ. առի՛ց զքեզ Ձորաբաբէլ Սաղաթիելի զծառայ իմ, և եդից զքեզ իբրև զկնիք: Չի ընդ քեզ հաճեցայ ասէ Տէր ամենակալ:

Կատարեցաւ Մարգարութիւնն Անգեայ

ZEC - Classical Armenian Bible, 1805 (Zohrabian).

ԳԼՈՒԽՔ ԶԱՔԱՐԻԱՅ ՄԱՐԳԱՐԵԻ

* *Ոմանք.* Եւ ՚ի չորրորդի:

* *Ոսկան.* Մարդ սուրբ ՚ի դրօ՛... և մերձեսցի ձորձ իւր:

* *Ոմանք.* Եւ ասէ Անգէոս. Եթէ:

* *Ոմանք.* Ձեռաց դոցա... վասն առիցն: *Բազումք.* Եւ ատէիք ՚ի դրունս:

* *Այլք.* Յօրէ յայսմանէ և յառաջ: *Ոմանք.* Տաճարիդ Տեառն:

* *Ոմանք.* Եւ ՚ի չորրորդէ իններորդ ամսեանն:

* *Ոմանք.* Եւ ՚ի յորթ և ՚ի թզե՛:

* *Ոմանք.* Միւսանգամ շարժիցեմ... և զծով և զցամաք:

* *Ոմանք.* Եւ կործանեցից զգօրութիւնս թագաւորաց, և սատակեցից զգօրութիւնս թագաւորաց ազգաց, և կոր՛... և հեծեալք նորա:

ա. Եւ սա յետ ելիցն ՚ի Բաբելոնէ մարգարեանայ. և յիշեցուցանէ նոցա զմեղս հարցն իւրեանց և գտանջանս զոր կրեցին. և խրատէ մի՛ ՚ի նմին կալ: Յաղաչել հրեշտակին զԱստուած վասն Երուսաղեմի՝ մարգարեանայ դիւրութիւնս քաղաքին մարգարես, և չարիս ազգաց որք ծառայեցուցին զնոսա: Բայց եղջելոքն թագաւորութիւնքն են որ յարեան ՚ի վերայ Յրէիցն, Ասորեստանեայք, Բաբելացիք, Քանանացիք, և Յոյնք. իսկ սրելն աստ տկարագոյնսն առնելն է. քանզի որ ինչ սրի՝ անօսրանայ: ք. Վասն հաւատալոյն ՚ի Քրիստոս. տեսանէ և զՅեսու Յովսեփեկեայ, և զաշտանակն ոսկի. երկուս որդիս պարարտութեան՝ զքահանայն և զթագաւորն կոչէ:

գ. Յայնժամ տեսանէ զգերանդին. քանզի այն ինչ եկեալ էին ՚ի գերութենէ՝ վիճէին ընդ միմեանս վասն վիճակաց և բաժեանց: Ջի մի՛ զմիմեանս զրկիցեն ցուցանէ նոցա զգերանդին անիծից զկշիռն կապարեայ. պատիժք անիրաւաց և անօրինաց են. և վասն չորից կառացն:

դ. Հրամայի առնուլ ոսկի և գործել պսակ քահանային. իսկ զի՝ Ահաւասիկ այր և արևելք անուն նորա՝ ՚ի Քրիստոս առնուն ոմանք, և մարթի առնուլ:

ե. Մնացեալ Հրեայքն պահէին վասն գերութեանն. հարցանեն աստ և ասեն. Հաստատեցաւ սրբութիւնն, այսինքն՝ ամենայն պաշտօնն, և տաճարին առաջին վայելչութիւնն, թէ տակաւին ՚ի տրտմութեան իցենք. և պա՞րտ իցէ տակաւին տրտմել, և սուգ առնուլ: Ո՛չ այնու ինչ պարտ է ասէ հաշտեցուցանել զԱստուած. այլ իրաւունս առնելով, զարդարութիւն գործելով, և չպահելով ոխս ընդ ընկերին, և ողորմելով տնանկին. քանզի զայս ասէ պատուիրեցի զառաջինն, և ո՛չ լուան ինձ. և ցրուեցի զնոսա:

զ. Ջառաջին լիութիւնն մարգարեանայ Երուսաղեմի, և խրատէ զինչ պարտ է գործել՝ և որպէս հաճոյ լինել:

է. Վասն այնորիկ որ ՚ի Քրիստոս դառնալոց էին:

ը. Հակառակ Դամասկոսի, Սիդոնի, Գազայ, Ակկարոնի, Ասկաղոնի:

թ. Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, ահա թագաւոր քոյ գայ, որ վասն Քրիստոսի է ասացեալ, աստ կայ:

ժ. Հովուացն Իսրայէլի սպառնայ, և ժողովրդեանն՝ դիւրութեան անտիս տայ, և զյայտնութեանն՝ որ առ Մակաբայեցուովքն եղև. աստ կայ և զրոյցն երեսուն արծաթոյն:

ժա. ՋԱնտիոքայ անպարշտի զգործսն գուշակէ:

ժբ. Վասն չարչարանացն Քրիստոսի, և հանդերձեալ դատաստանին:

ժգ. Հարից զհովին և ցրուեսցին խաշինքն աստ կայ. զոր յինքն և յառաքեալսն էառ Քրիստոս:

ժդ. Վասն աւուրն յորում խաչեցաւ Քրիստոս:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅ

1

Գլուխ Ա

¹ Յամսեանն ութերորդի՝ յամի երկրորդի Դարեհի արքայի. եղև բան Տեառն առ

Զաքարիա մարգարե որդի Բարաքեայ, որդւոյ Աղդովայ՝ և ասէ՛:

Ա՛ Բարկացա՛ւ Տէր՝ ի վերայ հարցն ձերոց բարկութիւն մեծ: ³Եւ ասացես ցնոսա. Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձարո՛ւք առ իս՝ ասէ Տէր զօրութեանց. և դարձայց առ ձեզ՝ ասէ Տէր զօրութեանց: ⁴Մի՛ լինիք իբրև զհարս ձեր, զոր պատուհասէին մարգարէքն առաջինք՝ և ասէին. Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձարո՛ւք յամենայն ճանապարհաց ձերոց չարաց, և ՚ի գնացից ձերոց չարաց. և ո՛չ լուան, և ո՛չ անսացին լսել ինձ՝ ասէ Տէր՝: ⁵Յարքն ձեր ո՞ւր են և մարգարէքն. միթէ յաւիտեա՞ն կեցին: ⁶Բայց զբանս իմ և զօրէնս իմ ընկալարո՛ւք՝ զոր ե՛ս պատուիրեմ Յոգուով իմով ծառայից իմոց մարգարէից որ ժամանեցին հարցն ձերոց: Պատասխանի ետուն և ասեն. Որպէս կարգեաց Տէր ամենակալ առնել ըստ ճանապարհաց մերոց՝ և ըստ գնացից մերոց, նոյնպէս և արա՛ր մեզ: ⁷Ի քսաներորդի և չորրորդի մետասաներորդ ամսեանն. որ է ինքն Արաց, յերկրորդ ամի Դարեհի. եղև բա՛ն Տեառն առ Զաքարիա մարգարե Բարաքեայ որդւոյ Աղդովայ՝ և ասէ՛. ⁸Տեսի՛ ՚ի տեսլեան գիշերոյ, և ահա այր մի հեծեալ յաշխէ՛տ ձի, և կայր ՚ի մէջ երկուց անտառախիտ լերանցն. և զկնի նորա ձիք աշխէտք՝ և պիսակք՝ և սպիտակք: ⁹Եւ ասեն. Ձի՞նչ են դոքա Տէր: Եւ ասէ ցիս հրեշտակն՝ որ խօսէր յիս. Ե՛ս ցուցից քեզ զինչ են դոքա՛: ¹⁰Պատասխանի ետ այրն որ կայր ՚ի մէջ լերանցն և ասէ ցիս. Դոքա՛ են զորս առաքեաց Տէր շրջել ընդ երկիր: ¹¹Պատասխանի ետուն հրեշտակին Տեառն՝ որ կայր ՚ի մէջ լերանցն և ասեն. Շրջեցա՛ք ընդ ամենայն երկիր. և ահա ամենայն երկիր բնակեալ և դադարեալ է: ¹²Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Տէր ամենակալ, մինչև ցե՞րք ոչ ողորմեսցիս ՚ի վերայ Երուսաղեմի և քաղաքացն Յուդայ, զորս անտե՛ս արարեր այս եւթանասո՛ւն երորդ ամ՝: ¹³Եւ պատասխանի ետ Տէր ամենակալ հրեշտակին՝ որ խօսէր յիս՝ բանս բարեաց՝ և բանս մխիթարութեան: ¹⁴Եւ ասէ ցիս հրեշտակն որ խօսէր յիս. Աղաղակեա՛ւ և ասա՛. Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Նախանձեցայ վասն Երուսաղեմի և վասն Սիոնի նախանձ մեծ. ¹⁵և բարկութեամբ մեծաւ բարկացեալ եմ ՚ի վերայ ազգացն՝ որ միանգամայն հարան ՚ի վերայ նոցա. փոխանակ զի ես սակաւիկ ինչ բարկացեալ էի ՚ի վերայ նոցա, և նոքա միանգամայն հարան ՚ի վերայ ՚ի չարիս՝: ¹⁶Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Դարձայց առ Երուսաղեմ գթութեամբ. և տունն իմ վերստին շինեսցի՝ ասէ Տէր ամենակալ. և չա՛փ ձգեսցի միսանգամ ՚ի վերայ Երուսաղեմի՞: ¹⁷Եւ ասէ ցիս հրեշտակն որ խօսէր յիս. Աղաղակեա՛ւ և ասա՛. Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ զեղցին քաղաքք բարութեամբ, և ողորմեսցի Տէր Սիոնի, և հաճեսցի միսանգամ ընդ Երուսաղեմ՝: ¹⁸Եւ ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա չորք եղջերք: ¹⁹Եւ ասեն ցիս հրեշտակն որ խօսէր յիս. Ձի՞նչ են այդոքիկ տեր: Եւ ասէ ցիս. Ա՛յդ եղջերք են որ ցրուեցին

* *Ոմանք.* Որդւոյ Աղդովայ՝ և ասէ:

* *Բազունք.* Եւ մի՛ լինիք իբրև... զորս պատ՛:

* *Ոմանք.* Եւ ՚ի չորրորդի մետա՛... Բարաքեայ որդի Աղդովայ: *Ոսկան.* Մետասաներորդի ամս՝... յերկրորդի ամի:

* *Ոսկան.* Դոքա Տէր իմ... որ խօսէր ցիս. և ցուցից:

* *Ոմանք.* Ոչ ողորմիս ՚ի վերայ... այս եւթանասաներորդ ամ: *Ուր Ոսկան յաւելու.* ամ է:

* *Ոմանք.* Որ միանգամայն հարեալ եմ... բարկացեալ էի նոցա. և նոքա:

* Եւ տունս իմ վերս՛:

* *Ոմանք.* Եւ ասէր ցիս հրեշ՛:

զՅուդայ՝ և գիսրայէլ: ²⁰Եւ ետո՛յց ինձ Տէր չորս հիւսունս: ²¹Եւ ասեմ. Իսկ դոքա զի՞նչ գան գործել: Եւ ասէ ցիս. Այդ եղջերոք են որ ցրուեցին զՅուդայ՝ և գիսրայէլ խորտակեցին. և ո՛չ որ ՚ի նոցանէ ամբարձ զգլուխ իւր. և ելին սոքա սրել՝ զնոսա ՚ի ձեռս նոցա. զչորս եղջերս՝ զազգս յարուցեալս եղջեր, ՚ի վերայ երկրի Տեառն ցրուել զնա՞:

2

Գլուխ Բ

Բ ¹Ամբարձի՛ զաչս իմ և տեսի, և ահա այր՝ և ՚ի ձեռին իւրում ուներ լար երկրաչափ՞: ²Եւ ասեմ ցնա. Յո՞վ երթաս: Եւ ասէ ցիս. Չափել՝ զերուսաղէմ, և տեսանել թէ ո՞րչափ է լայնութիւն նորա՝ և ո՞րչափ երկայնութիւն՞: ³Եւ ահա հրեշտակն որ խօսէր յիս՝ զտեղի՛ առեալ կայր. և այլ հրեշտակ ելանէր ընդ առաջ նորա՞: ⁴Եւ ասէ ցնա. Ընթա՛ և խօսեա՛ց ընդ երիտասարդին ընդ այնմիկ՝ և ասասցես. Պտղալի՛ց շինեսցի Երուսաղէմ ՚ի բազմութենէ մարդոյ և անասնոյ՝ ՚ի մէջ նորա: ⁵Եւ ես եղէ՛ց նմա պարիսպ հրեղէն շուրջանակի. և ՚ի փառս բնակեցայց ՚ի միջի նորա: ⁶Ո՛ր, փախերուք յերկրէ հիւսւսոյ՝ ասէ Տէր. զի ՚ի չորից հողոնց երկնից ժողովեցից զձեզ՝ ասէ Տէր. ⁷ի Սիոն դիմեալ ապրեցարուք բնակիչք դստեր Բաբելոնի: ⁸Ձի ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Չփառաց զկնի արձակեաց զիս յազգսն՝ որ կողոպտեցին զձեզ. զի որ մերձեանա՛յ ՚ի ձեզ՝ որպէս որ ընդհարկանիցի՛ ընդ բիբ՝ ական իւրոյ՞: ⁹Ձի ահաւասիկ ես ածից զձեռն իմ ՚ի վերայ նոցա. և եղիցին յաւա՛ր ծառայեցուցիչքն նոցա. և ծանիջիք թէ Տէր ամենակալ առաքեաց զիս՞: ¹⁰Խնդա՛ և ուրախ լեր դուստր Սիոնի. զի ահա ես եկից և բնակեցայց ՚ի միջի քում՝ ասէ Տէր. ¹¹և ապաւինեսցին ազգ բազումք ՚ի Տէր յաւուր յայնմիկ. և եղիցին նմա ժողովուրդ, և բնակեսցին ՚ի միջի քում. և ծանիցես՝ թէ Տէր ամենակալ առաքեաց զիս առ քեզ՞: ¹²Եւ ժառանգեսցէ Տէր զՅուդայ զբաժին իւր յերկրին սրբութեան, և հաճեսցի՛ միւսանգամ ընդ Երուսաղէմ. ¹³և երկիցէ ամենայն մարմին յերեսաց Տեառն. զի զարթուցեալ է ՚ի յամպոց սրբոց իւրոց՞:

3

Գլուխ Գ

* *Ոսկան.* Եւ ելին սոքա ցրել զնոսա: *Ոմանք.* Սրել զսոսա... զչորս եղջիրս զայս յարուցեալս եղջիր ՚ի վերայ երկրի Տեառն ցրել զնոսա:

* *Ոմանք.* Ուներ լար երկաչափ. և *օրինակ մի.* երկնաչափ:

* *Ոմանք.* Յո՞վ երթայ:

* *Յոմանս պակասի.* Եւ ահա հրեշտո՞ւ:

* *Ոմանք.* Ո՛վ որ, *կամ՝* ո՛ր փախերուք յերեսաց հիւսիւսոյ:

* *Ոմանք.* Ընդ բիբ՝ ական իմոյ:

* *Ոմանք.* Ձի ահաւաղիկ ես ածից:

* *Ոմանք.* Ազգք բազումք... եղիցին նմա ժողովուրդք և բնակիցեն... թէ Տէր Աստուած ամենակալ ա՞:

* *Ոմանք.* ՁՅուդա և զբաժին իւր:

* *Ոմանք.* Ձարթուցեալ է յամպոց:

¹Եւ եցոյց ինձ Տէր զՅեսու քահանայ մեծ, զի կայր առաջի հրեշտակին Տեառն. և Սատանայ կայր ընդ աջմէ նորա հակառակել ընդ նմա: ²Եւ ասէ Տէր ցՍատանայ. Սաստեցէ՛ ՚ի քեզ Տէր՝ Սատանայ, և սաստեցէ՛ Տէր ՚ի քեզ՝ որ ընտրեացն զԵրուսաղէմ. ո՞չ ապաքէն դա աւաղիկ իբրև զխանձող մի զերծեալ ՚ի հրոյ: ³Եւ Յեսու՝ էր զգեցեալ հանդերձս աղտեղիս, և կայր առաջի հրեշտակին Տեառն*: ⁴Պատասխանի ետ՝ և ասէ ցայնոսիկ որ կային առաջի նորա. ՚ի բաց արարէք զհանդերձս աղտեղիս ՚ի նմանէ: Եւ ասէ ցնա. Ահա բարձի՛ ՚ի քէն զանօրէնութիւնս քո. և ազուցէք դմա պճղնաւոր. ⁵և դիք խոյր սուրբ ՚ի գլուխ դորա: Եւ եղին խոյր սուրբ ՚ի գլուխ նորա. և զգեցուցին նմա հանդերձս: Եւ հրեշտակ Տեառն կայր*, ⁶և դնէր վկայութիւն հրեշտակն Տեառն ընդ Յեսուայ՝ և ասէր. ⁷Այսպէս ասէ Տէր ամենակալ. Եթէ ՚ի ճանապարհս իմ գնացես, և զիրամանս իմ պահեսցես, դո՛ւ դատեսցիս զտուն իմ. և եթէ պահեսցես զսրահս իմ, տաց քեզ որ շրջիցին ՚ի մէջ դոցա որ կանդ աւաղիկ*: ⁸Բայց լո՛ւր Յեսու քահանայ մեծ, դո՛ւ և մերձաւորք քո որ նստինդ առաջի քո. զի արք կիւսահմայք են: Ձի ահաւասիկ ես ածեմ զծառայ իմ զԾագումն*: ⁹Ձի զվէմն զոր ետու առաջի երեսաց Յեսուայ, ՚ի վերայ վիմին եւթն աչք են. ահաւասիկ ես փորեցից խորխորատ՝ ասէ Տէր ամենակալ, և շօշափեցից զամենայն անօրէնութիւնս երկրին այնորիկ յաւուր միում*: ¹⁰Յաւուր յայնմիկ ասէ Տէր ամենակալ, կոչեսցիք ամենեքեան զընկեր իւր ընդ որթով և ընդ թզենեալ:

4

Գլուխ Դ

¹Եւ դարձա՛ւ հրեշտակն որ խօսէր ցիս. և զարթոյց զիս՝ զոր օրինակ յորժամ զարթնուցու այր ՚ի քնոյ իւրմէ. ²և ասէ ցիս. Ձի՞նչ տեսանես դու: Եւ ասեմ. Տեսանեմ ահա՛ աշտանակ ոսկի ձոյլ, և գունդ ՚ի վերայ նորա, և եւթն ճրագ ՚ի վերայ նորա, և եւթն բերանք ճրագացն որ ՚ի վերայ նորա*. ³և երկու ձիթենիք ՚ի վերայ նորա. մի ընդ աջմէ գնդին լուցելոյ, և մի ընդ ահեկէ: ⁴Հարցի, և ասեմ ցհրեշտակն որ խօսէր ցիս. Ձի՞նչ են այդոքիկ, տէր*: ⁵Պատասխանի ետ հրեշտակն որ խօսէր ցիս՝ և ասէ ցիս. Ո՞չ գիտես զինչ են այդոքիկ: Եւ ասեմ. Ո՞չ տէր: ⁶Պատասխանի՛ ետ հրեշտակն և ասէ ցիս. Այս բան Տեառն է առ Ձորաբաբէլ. ասէ. Ո՞չ զօրութեամբ մեծաւ և ո՞չ ուժգնութեամբ, այլ Հոգւով ինով ասէ Տէր ամենակալ: ⁷Ո՞վ ես դու լեառն մեծ կանգնեալ առաջի Ձորաբաբիլի. և հանից զվէմն ժառանգութեան զհաւասարութիւն շնորհաց շնորհել նմա: ⁸Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ⁹Ձեռք Ձորաբաբիլի հիմն արկին տանդ այդմիկ, և ձեռք նորա կանգնեսցեն զդա. և ծանիցես՝ թէ Տէր ամենակալ առաքեաց զիս առ քեզ: ¹⁰Քանզի ո՞վ է որ անգոսնեաց զաւուրս փոքունս՝ և խնդայցէ. և տեսցեն

* Ոմանք. Ձգեցեալ զհանդերձ աղտեղիս:

* Ոմանք. ՚ի գլուխ նորա: Եւ եղին:

* Ոմանք. Եւ եթէ պահես զսրահ... որ կան աւաղիկ:

* Ոմանք ՚ի լուս՝. ՚ի վերայ՝ կիւսահմայք, նշանակիցն՝ հրաշագէտք. զոր և այլ ոմանք ՚ի ներքս առեալ յաւելուն ՚ի բնաբանին. ըստ որում ունի և Ոսկան:

* Ոմանք. Ձամենայն անօրէնութիւն երկ՝:

* Յօրինակին. Տեսանեմ հրեշտակ ոսկի ձոյլ:

* Ոմանք. Յհրեշտակն որ խօսէր յիս:

զվեմն անագեայ՝ ի ձեռնն Ջորաբարիլի. այս են եւթն աչքն որ հային ընդ ամենայն երկիր*։ ¹¹Պատասխանի՛ ետու և ասեմ ցնա. Իսկ զի՞նչ են երկու ձիթենիքն որ կան ընդ աջմէ՛ և ընդ ահեկէ՛ աշտանակին։ ¹²Եւ հարցի կրկին՝ և ասեմ ցնա. Ձի՞նչ երկու ոստք ձիթենեացն որ ՚ի ձեռս երկուց ճրագաբերանացն ոսկեաց, արկանելեաց, և ՚ի վեր հանելեաց զճաշական ոսկիս*։ ¹³Եւ ասէ ցիս. Ո՞չ գիտես զինչ են այդոքիկ։ Եւ ասեմ. Ո՛չ տէր։ Եւ ասէ ցիս. Դոքա՛ են որդիք պարարտութեան՝ որ կան առաջի Տեառն ամենայն երկրի։

5

Գլուխ Ե

Գ ¹Եւ դարձայ ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա գերանդի թռուցեալ։ ²Եւ ասէ ցիս. Ձի՞նչ տեսանես։ Եւ ասեմ. Գերանդի թռուցեալ տեսանեմ ես. քսան կանգուն յերկայնութիւն, և տանն կանգուն լայնութիւն*։ ³Եւ ասէ ցիս. Ա՛յդ են անէծք որ ելանեն ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի. զի ամենայն գողոյ վրէժ մահու՛նչափ, դովա՛ւ խնդրեսցի, և ամենայն ստերդման վրէժ մահու՛նչափ՝ դովա՛ւ խնդրեսցի*։ ⁴Եւ հանից զդա՛ ասէ Տէր ամենակալ, և մտցէ ՚ի տունս գողոց, և ՚ի տունս որոց երդնուցուն սուտ յանուն իմ, և բնակեսցէ ՚ի մէջ տան նորա, և վախճանեսցէ զնա. և զվայտ նորա՛ և զքարինս նորա*։ ⁵Եւ ել հրեշտակն որ խօսէր յիս, և ասէ ցիս. Զայեա՛ց աչօք քովք՝ և տես՛ս զայն որ ելանէմ*։ ⁶Եւ ասեմ. Ձի՞նչ է։ Եւ ասէ ցիս. Ա՛յդ է չափ որ ելանէ։ Եւ ասէ. Ա՛յդ է անիրաւութիւն նոցա ընդ ամենայն երկիր։ ⁷Եւ ահա կշի՛ռ մի կապարեայ ամբարձեալ՝ և կին մի նստէր ՚ի մէջ չափոյն*։ ⁸Եւ ասէ. Ա՛յդ է անիրաւութիւն։ Եւ ընկէց զնա ՚ի մէջ չափոյն և ընկէց զվեմն կապարեայ ՚ի բերան նորա*։ ⁹Եւ ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա երկու կանայք ելանէին, և հողմ ՚ի թևս նոցա. և էին թևք նոցա իբրև զթևս յոպոպոյ. և ամբարձին զչափն ընդ երկիր և ընդ երկինս։ ¹⁰Եւ ասեմ ցհրեշտակն որ խօսէր յիս. Յո՞ տանին նոքա զչափն*։ ¹¹Եւ ասէ ցիս. Շինե՛լ նմա տուն յերկրին Բաբելացոց, և պատրաստել. և դիցեն զնա անդ՝ ՚ի վերայ պատրաստութեան իւրոյ*։

6

Գլուխ Զ

¹Դարձայ ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա չո՛րք կառք ելանէին ՚ի միջոյ

* *Ոսկան.* Եւ խնդայցեն և տեսցեն։

* *Ի լուս.* Եւ հարցի կրկին անգամ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:* *Ոսկան.* Եւ ՚ի վերայ հանելեաց։

* *Ոմանք.* Կանգուն ՚ի լայնութիւն։

* *Ոսկան.* Վրէժ մահու՛նչափ ՚ի դմանէ խնդ՞։

* *Բագոււնք.* Եւ ՚ի տունս որ երդնու՞։

* *Ոմանք.* Եւ տես՛ս զայրն որ ելանէ։

* *Ոսկան.* Ի մէջ չափուն։

* *Ոսկան.* Ի մէջ չափուն։

* *Յօրհնակին.* Եւ ասեմ զհրեշտակն որ։

* *Ոմանք.* Ձնա անդր ՚ի վերայ։

երկուց լերանց. և լերինքն էին լերինք պղնձիք*։ ²Ի կառնսն առաջինս ձի՛ք աշխտք, և ՚ի կառնսն երկրորդս ձի՛ք սեալք. ³և ՚ի կառնսն երրորդս ձի՛ք սպիտակք. և ՚ի կառնսն չորրորդս ձի՛ք պեսպես պիսակք։ ⁴Պատասխանի ետու, և ասեն ցիրեշտակն որ խօսեր յիս. ⁵Զի՞նչ են այդքիկ տեր։ ⁵Պատասխանի ետ հրեշտակն՝ որ խօսեր յիս՝ և ասէ. ⁶Դոքա՛ են չորք հողմք երկնից, որ ելանեն կալ առաջի Տեառն ամենայն երկրի։ ⁶Յորում էին ձիքն սեալք, ելանէին ընդ երկիր հիւսւսոյ. և սպիտակքն ելանէին զհետ նոցա. և պիսակքն ելանէին ընդ երկիր հարաւոյ*։ ⁷և հայէին շրջել ընդ ամենայն երկիր. և ասէ. ⁸Գնացէ՛ք և շրջեցարու՛ք ընդ երկիր։ Եւ շրջեցան ընդ երկիր։ ⁸Եւ աղաղակեաց՝ և ասէ ցիս. ⁹Ահա որ ելանեն ընդ երկիր հիւսւսոյ, հանգուցին զսրտմտութիւն իմ յերկրին հիւսւսոյ*։ ⁹Դ ⁹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁰Ա՛ռ դու ինձ ՚ի գերութենէ անտի յիշխանաց, և ՚ի պիտանեաց նորա, և ՚ի գիտնոց նորա. և մտցես յաւուր յայնմիկ ՚ի տուն Յովսիայ որդւոյ Սոփոնիայ՝ որ եկեալ է ՚ի Բաբելոնէ*։ ¹¹Եւ առցես ոսկի և արծաթ, և արասցես պսակ, և դիցես ՚ի գլուխ Յեսուայ Յովսեդեկեայ քահանայի մեծի*։ ¹²և ասացես ցնա. Այսպէս ասէ Տէր ամենակալ. Ահա այր՝ և Ծագումն անուն նորա, և ՚ի ներքոյ իւրմէ ծագեսցէ. և շինեսցէ զտուն Տեառն։ ¹³Եւ նա՛ առցէ զքաջութիւն. նստցի և տիրեսցէ ՚ի վերայ աթոռոյ իւրոյ. և եղիցի քահանայն ընդ աջմէ նորա, և խորհուրդ խաղաղութեան եղիցի ՚ի մէջ երկոցունց*։ ¹⁴Եւ պսակդ եղիցի այնոցիկ՝ որ ակն ունին. և պիտանեաց նորա, և որոց ճանաչեն զնա, և ՚ի շնորհս որդւոյ Սոփոնիայ և յերգս տան Տեառն*։ ¹⁵Եւ հեռաւորք ՚ի նոցանէ եկեսցեն և շինեսցեն զտուն Տեառն. և ծանիջիք թէ Տէր ամենակալ առաքեաց զիս առ ձեզ. և եղիցի եթէ լսելով լուիցէք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ*։

7

Գլուխ Է

Ե ¹Եւ եղև յամին չորրորդի Դարեհի արքայի, եղև բան Տեառն առ Ջաքարիա. որ օր չորք էին ամսոյն իններորդի, որ է Քասղև*։ ²Եւ առաքեաց ՚ի Բեթելայ Սարասար՝ և Աբուսադ՝ թագաւորք և արք իւրեանց աղաչել զՏէր*։ ³և ասել ցքահանայսն որ էին ՚ի տան Տեառն ամենակալի և ցնարգարեսն. եթէ մո՞տ այդր յամսեանն հինգերորդի սրբութիւն. քանզի առնէին զայն զամս բազումս։ ⁴Եւ եղև բան Տեառն զօրութեանց առ իս՝ և ասէ. ⁵Խօսեաց ընդ ժողովրդեան երկրիդ՝ և ընդ քահանայս՝ և ասացես. Եթէ պահիցէք և կոծիցէք ՚ի հինգերորդս

* Ոսկան. Դարձայ և ամբարձի։ Ոմանք. Եւ տեսանէի, և ահա։

* Ոմանք. Եւ աշխտքն ելանէին ընդ երկիր հարաւոյ։ Եւ պիսակքն ելանէին, (7) հայէին շրջել։

* Ոմանք. Ջարտմտութիւն իմ յերկիր հիւս՝։

* Ոմանք. Ի գերութենէ այտի յիշխա՞։

* Ոմանք. Եւ արասցես պսակս։

* Ոմանք. Եւ եղիցի քահանայ ընդ աջմէ։

* Ոմանք. Ձնա, ՚ի շնորհս... և յերգս տան նորա։

* Ոմանք. Թէ լսելով լուիջիք ձայն։

* Ոմանք. Իններորդի, որ և Քասղև։

* Ոմանք. Եւ Աբուսայ, թագաւորք։

կամ յերթերորդս ամսոց. ահա եւթանասուն ամ. միթէ պա՞հս պահիցէք ինձ* .⁶ Եթէ ուտէք և ըմպէք, ո՞չ ապաքէն դուք ուտէք և ըմպէք: ⁷Ո՞չ այս բանք են զոր խօսեցաւ Տէր ՚ի ձեռս մարգարէիցն իւրոց առաջնոց՝ մինչդեռ շէն էր Երուսաղէմ և ՚ի բարութեան, և քաղաքք նոցա շուրջանակի. և լեռնայի՛նքն և դաշտայի՛նքն բնակեալ էին* :⁸ Եւ եղև բան Տեառն առ Չաքարիա՝ և ասէ. ⁹Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Դատաստան արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և գթութիւն արարէ՛ք իւրաքանչիւր եղբօր իւրոյ. ¹⁰զայրին և զորբն և զպանդուխտն՝ և զտնանկն մի՛ յաղթահարէք. և ոխս չարեաց ընկերի իւրում մի՛ որ կալցի ՚ի սիրտս ձեր* :¹¹ Եւ ո՛չ հաւանեցան անսալ. այլ ետուն զթիկունս իւրեանց ՚ի յիմարութիւն, և ծանրացուցին զականջս իւրեանց առ ՚ի չլսել. ¹²և զսիրտս իւրեանց կարգեցին անհնազանդս, առ ՚ի չլսելոյ օրինաց իմոց և բանից զոր առաքեաց Տէր ամենակալ Յոզու՛վ իւրով ՚ի ձեռն մարգարէիցն առաջնոց. եղև բարկութիւն մե՛ծ ՚ի Տեառնէ ամենակալէ* :¹³ Եւ եղիցի զոր օրինակ խօսեցաւն՝ և ո՛չ լուան նմա. նոյնպէս աղաղակեսցեն՝ և ո՛չ լուիցէ նոցա, ասէ Տէր ամենակալ* :¹⁴ Եւ հանից զնոսա ընդ ամենայն ազգս զորս ո՛չ գիտիցեն. և երկիրդ ապականեսցի զկնի նոցա, զի ո՛չ որ իցէ որ ելանիցէ՝ և դառնայցէ. և եղին զերկիրն ընտիր՝ յապականութիւն* :

8

Գլուխ Ը

¹Եւ եղև բան Տեառն ամենակալի առ իս, և ասէ. Ա՛յսպէս* ²ասէ Տէր ամենակալ. Նախանձեցայ վասն Երուսաղէմի և վասն Սիոնի նախանձ մեծ, և բարկութեամբ մեծաւ նախանձեցայ վասն նորա:

³Ա՛յսպէս ասէ Տէր. Դարձայց ՚ի Սիոն՝ և բնակեցայց ՚ի մէջ Երուսաղէմի. և կոչեսցի Երուսաղէմ Քաղաք ճշմարիտ, և լեռն Տեառն ամենակալի՝ Լեա՛ռն սուրբ: ⁴Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ դարձեալ նստցին ծերք և պառաւունք ՚ի հրապարակս Երուսաղէմի, իւրաքանչիւր ցո՛ւպ ՚ի ձեռին իւրում ՚ի բազմութենէ աւուրց. ⁵և հրապարակք քաղաքին լցցին պատանեկօք և աղջկամբք՝ որ խաղայցեն ՚ի հրապարակս նորա: ⁶Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Եթէ տկարանայցէ ինչ առաջի մնացորդաց ժողովրդեանդ այդորիկ յաւուրս յայտոսիկ. միթէ և առաջի՞ իմ տկարանայցէ, ասէ Տէր ամենակալ* :⁷ Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Ահաւասիկ ես փրկեմ զժողովուրդ իմ յերկրէ արևելից՝ և յերկրէ արևմտից* .⁸ և ածից զնոսա՝ և բնակեցուցից ՚ի մէջ Երուսաղէմի. և եղիցին ինձ ժողովուրդ, և ես եղէց նոցա Աստուած ճշմարտութեամբ՝ և արդարութեամբ* :⁹ Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ. Չօրացի՛ն ձեռք ձեր որ լսէրդ յաւուրս յայտոսիկ

* Ոճանք. Պահիցէք և կոծիցիք:

* Ոճանք. ՚ի ձեռն մարգարէից իւ՛ր... մինչդեռ շինէր Երուսաղէմ, և ՚ի:

* Ոճանք. Ընկերի իւր, մի՛ որ կալցի ՚ի սիրտս իւր:

* Բազումք. Եւ եղև բարկութիւն:

* Այլք. Չոր օրինակ խօսեցան:

* Յոմանս պակասի. Չերկիրն ընտիր յապա՛:

* Ոճանք. Առ իս: Եւ ասէ (2) Տէր ամենա՛:

* Այլք. Յաւուրս յայտոսիկ:

* Ոճանք. Ահաւաղիկ ես փրկեմ:

* Ոճանք. Եւ եղիցի ինձ:

զբանս զայս ՚ի բերանոց մարգարեիցն, յօրէ յօրմէ արկէք հիմն տան Տեառն ամենակալի. և տաճարս յօրմէ հետէ շինեցաւ*։ ¹⁰Ձի յառաջ քան զաւուրսն զայնոսիկ՝ վարձք մարդկան՝ ո՛չ էին յօգուտ. և վարձք անասնոց ո՛չ էին յարգի. և ելողի և մտողի ո՛չ էր խաղաղութիւն ՚ի նեղութենէ. և առաքեցից զամենայն մարդիկ իւրաքանչիւր առ ընկեր իւր*։ ¹¹Եւ արդ՝ ո՛չ ըստ աւուրցն առաջնոց առնեմ ես մնացորդաց ժողովրդեանդ այդորիկ՝ ասէ Տէր ամենակալ. ¹²այլ ցուցից խաղաղութիւն. այգի՝ տացէ զպտուղ իւր, և երկիր՝ տացէ զարմտիս իւր, և երկինք տացեն զցօղ իւրեանց. և ժառանգեցուցից մնացորդաց ժողովրդեան իմոյ զայն ամենայն*։ ¹³Եւ եղիցի որպէս էիքն յանձնս ՚ի մէջ ազգաց տունդ Յուդայ՝ և տունդ Իսրայէլի. նոյնպէս ապրեցուցից զձեզ՝ և եղիցիք յօրհնութիւն։ Քաջալերեցարո՛ւք՝ և զօրասցին ձեռք ձեր*։ ¹⁴Ձի այսպէս ասէ Տէր ամենակալ. Որպէս խորհեցայ չարչարել զձեզ, ՚ի բարկացուցանել զիս հարցն ձերոց, ասէ Տէր ամենակալ, ¹⁵և ո՛չ զղջացայ. նոյնպէս պատրաստեալ և խորհեալ եմ յաւուրս յայտոսիկ՝ բարի՛ առնել Երուսաղեմի՝ և տանդ Յուդայ. քաջալերեցարո՛ւք*։ ¹⁶այս բանք եմ զոր առնիցէք. Խօսեցարո՛ւք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընկերի իւրում. և դատաստան՝ խաղաղութեան և արդար դատեցարուք ՚ի դրունս ձեր*։ ¹⁷և իւրաքանչիւր չար ընկերի իւրում մի՛ խորհիք ՚ի սիրտս ձեր. և զերդումն սուտ՝ մի՛ սիրէք. զի զայն ամենայն ատեցի՝ ասէ Տէր ամենակալ։ ¹⁸Եւ եղև բան Տեառն ամենակալի առ իս՝ և ասէ. ¹⁹Այսպէս ասէ Տէր ամենակալ. Պահքն չորրորդք՝ և պահքն հինգերորդք. պահքն եւթներորդք՝ և պահքն տասներորդք՝ եղիցին տանդ Յուդայ ՚ի խնդութիւն և յուրախութիւն և ՚ի տօնս բարութեանց. և ուրախ լիցիք, և զճշմարտութիւն և զխաղաղութիւն սիրեցէ՛ք*։

Է ²⁰Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ եկեացեն ժողովուրդք բազումք, և բնակիչք քաղաքաց բազմաց. ²¹և ժողովեցին բնակիչք միոյ ՚ի միւս քաղաք, և ասասցեն երթիցո՛ւք աղաչել զերեսս Տեառն, և խնդրել զերեսս Աստուծոյ ամենակալի՝ երթայց և ես. ²²և եկեացեն ժողովուրդք բազումք խնդրել զերեսս Տեառն ամենակալի յերուսաղեմ. և հաշտեցուցանել զերեսս Տեառն։ ²³Այսպէս ասէ Տէր ամենակալ. Յաւուրսն յայնոսիկ, եթէ բո՛ւռն հարկանիցեն արք տասն յամենայն լեզուաց ազգաց, բո՛ւռն հարկանիցեն զորօշակէ առն Յրէի և ասասցեն. Երթիցո՛ւք մեք ընդ քեզ, զի լուաք թէ Աստուած ընդ քե՛զ է*։

9

Գլուխ Թ

Ը ¹Առած բանի Տեառն յերկիր Սեդրաք, և ՚ի Դամասկոս զո՛հ նորա. զի Տէր

* *Ոմանք.* Յաւուրս յայտոսիկ ՚ի բերանոյ մարգարեից։

* *Ոմանք.* Եւ վարձք անասնոյ։

* *Ոմանք.* Տացեն զցօղս... ժողովրդեանդ իմոյ։

* *Յօրհնակին.* Եւ եղիցի որպէս է ինքն յանձնս։ *Ուր ոմանք.* Որպէս և էիքն յա՛։ *Ոսկան.*

Նոյնպէս ես ապրեցուցից զձեզ։

* *Ոմանք.* Եւ զղջացայ. նոյնպէս պատ՛... յաւուրս յայնոսիկ։

* *Բազումք.* Իւրաքանչիւր ընդ ընկերի։

* *Ոմանք.* Եւ պահքն եւթ՛... և ուրախ եղիցիք. և զճշ՛։

* *Օրհնակ մի.* Արք տանս յամենայն լեզուաց։

տեսանէ զմարդիկ՝ և զամենայն ազգս Իսրայէլի*։ ²Եւ յԵմաթ ՚ի սահմանս նորա. Տիւրոս և Սիդոն՝ զի արհամարհեցին յոյժ*։ ³Եւ շինեաց Տիւրոս ամուրս իւր. և զանձեաց զարծաթ իբրև զհող, և զոսկի իբրև զկաւ ճանապարհաց։ ⁴Վասն այնորիկ Տէր ժառանգեցտէ զնա, և ամասցէ ՚ի ծով զգօրութիւն նորա. և նա հրով ծախեսցի։ ⁵Տեսցէ Ասկաղոն՝ և երկիցէ՝. և Գազա՝ մորմոքեցի յոյժ. և Ակկարոն՝ զի յամօթ եղև ՚ի վերայ յանցանաց իւրոց. և կորիցէ թագաւոր ՚ի Գազայ, և Ակկարոն մի՛ բնակեցէ*։ ⁶Եւ բնակեցեն այլազգիք յԱզովտոս. և քակեցից զհպարտութիւն այլազգեաց. ⁷և բարձից զարիւն նոցա ՚ի բերանոյ նոցա, և զգարշէլիս նոցա ՚ի միջոյ ատամանց նոցա. և մնասցեն և նոքա Աստուծոյ մերում. և եղիցին իբրև զհազարապետս ՚ի մէջ Յուդայ. և Ակկարոն իբրև զԵբուսացի*։ ⁸Եւ կացուցից տան իմոյ պաշտպան՝ առ ՚ի չանցանելոյ և չհառնալոյ. և մի՛ ևս եկեսցէ ՚ի վերայ նոցա որ հալածեսցէ զնոսա. զի այժմ տեսի՛ աչօք իմովք*։

Թ ⁹Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա՛ դուստր Երուսաղեմի. ահա Թագաւոր քո գայ առ քեզ, արդար և փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ՚ի վերայ իշոյ՝ և յովանակի նորոյ*։ ¹⁰Եւ սատակեսցէ զկառս յԵփրեմայ, և զերիվարս յԵրուսաղեմէ. և խորտակեսցի աղեղն պատերազմօղ. և բազմութիւն և խաղաղութիւն յազգաց. և տիրեսցէ ջրոց ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, և ՚ի գետոց մինչև ՚ի ծագս երկրի*։ ¹¹Եւ դու արեա՛նք ուխտի քոյ արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ։ ¹²Եւ նստջիք յամուրս կապեալք ժողովրդեանդ. և փոխանակ միոյ աւուր պանդխտութեան քոյ կրկին հատուցից քեզ։ ¹³Ձի լարեցից զքեզ ինձ Յուդայ իբրև զաղեղն. լցի՛ և զԵփրեմ. և զարթուցի՛ց զորդիս քո Սիոն ՚ի վերայ որդւոցն Յունաց. և շօշափեցից զքեզ իբրև զսուսեր պողովատիկ պատերազմողի*։ ¹⁴Եւ Տէր եղիցի վերակացո՛ւ նոցա. և ելցէ իբրև զփայլակն նետ նորա. և Տէր Տէր ամենակալ փո՛ղ հարցէ, և գնասցէ՛ շարժմամբ սպառնալեաց իւրոց. ¹⁵Տէր ամենակալ պաշտպանեսցէ նոցա։ Եւ սպառեսցեն զնոսա, և թաղեսցեն զնոսա քարամբք պարսաքարաց. և արբցեն զարիւն նոցա իբրև զգինի, և լցցեն զտաշտս իբրև զսեղանն. ¹⁶և փրկեսցէ զնոսա Տէր Աստուած նոցա յաւուր յայնմիկ՝ իբրև զոչխարս զժողովուրդ իւր։ Ձի քարինք սուրբք թաւալին յերկրի նորա*։ ¹⁷Ղի որ ինչ բարին իցէ՛ նորա է, և որ ինչ լա՛ւն նորին. ցորեան երիտասարդաց, և զինի անուշարար կուսից*։

10

Գլուխ Ժ

* *Ոմանք.* Եւ Դամասկոսի զոհ նորա։

* *Յօրինակին.* Եւ յԵթամ ՚ի սահմանս նորա։

* *Ոմանք.* Եւ Ասկաղոն մի՛ բնակեցէ։

* *Ոսկան.* Եւ մնասցեն ևս նոքա։

* *Ոմանք.* Առ ՚ի չանցուցանելոյ և դառնալոյ, և մի՛ եկեսցէ ՚ի վերայ։

* *Ոմանք.* Եւ յաւանակի նորոյ։

* *Ոսկան.* Սատակեսցէ... աղեղն պատերազմողի. և բազ՛։ *Ոմանք.* ՅԵփրեմէ... և տիրեսցէ ջրոց։

* *Ոսկան.* Ձի լարեցի զքեզ ինձ։

* *Ոմանք.* Յերկիր նորա։

* *Ոմանք.* Եւ զոր ինչ բարին։

¹Խնդրեցէք ՚ի Տեառնէ անձրև ըստ ժամանակաց՝ զկանուխ և զանագան. Տէր արար զգարմանալիս, և զանձրև ձմերայնոյ տացէ նոցա իւրաքանչիւր խոտ յանդի*։ ²Ձի հարցուկք բարբառեցան աշխատութիւնս, և ըղձապատունք տեսիլս սուտս և երազս սուտս խօսէին. և ՚ի զուր մխիթարէին. վասն այնորիկ ցամաքեցան իբրև խաշինք. և չարագանեցան. զի ո՛չ գոյր բժշկութիւն*։ ³Ի վերայ հովուաց բարկացաւ սրտմտութիւն իմ, և ՚ի վերայ գառանց այցելութիւն արարից. և այց արասցէ Տէր Աստուած ամենակալ խաշին իւրոյ տանն Յուդայ. և յարդարեսցէ զնոսա իւր իբրև զերիվար գեղեցիկ պատերազմի։ ⁴Եւ ՚ի նմանէ դիտեաց, և ՚ի նմանէ յարդարեաց, և ՚ի նմանէ աղէղն իւր բարձրութեամբ. և ՚ի նմանէ՝ ելցէ ամենայն որ հալածիցէ ՚ի նոյն։ ⁵Եւ եղիցին իբրև զպատերազմօք՝ որ կոխիցեն զկաւ ՚ի ճանապարհս պատերազմի. և ճակատեսցին, զի Տէր ընդ նոսա է։ Եւ ամաչեսցեն հեծեալք յերիվարս։ ⁶Եւ զօրացուցից զտունն Յուդայ, և զտունն Յովսեփայ ապրեցուցից, և բնակեցուցից զնոսա զի սիրեցի զնոսա. և եղիցին որպէս թէ չիցեն դարձեալ ՚ի նոցանէ. զի ե՛ս եմ Տէր Աստուած նոցա, և լուայց նոցա*։ ⁷Եւ եղիցին իբրև զպատերազմօսն Եփրեմի, և խնդասցէ սիրտ նոցա իբրև ՚ի գինւոյ. և որդիք նոցա տեսցեն և ուրախ լիցին, և ցնծասցեն սիրտք նոցա ՚ի Տէր*։ ⁸Ազդ արարից նոցա՝ և ընկալայց զնոսա, զի ապրեցուցից զնոսա՝ և բազմասցին որպէս էին բազումք։ ⁹Եւ սերմանեցից զնոսա ընդ ազգս. և որ հեռաւորքն իցեն՝ յիշեսցեն զիս։ Սնուցեն զորդիս իւրեանց և դարձցին։ ¹⁰Եւ դարձուցից զնոսա յերկրէն Եգիպտացւոց, և յԱսորեստանեայց ընկալայց զնոսա, և ՚ի Գաղատա և ՚ի Լիբանան մուծից զնոսա. և ո՛չ պակասեցէ ՚ի նոցանէ՝ և ո՛չ մի։ ¹¹Եւ անցցեն ընդ ծովն անձուկ, և հարցեն զալիս ծովուն. և ցամաքեսցին ամենայն խորք գետոց. և բարձցի՝ ամենայն հպարտութիւն Ասորեստանեայց, և իշխանութիւն Եգիպտացւոց քակեսցի*։ ¹²Եւ զօրացուցից զնոսա ՚ի Տէր Աստուած նոցա. և յանուն նորա պարծեսցին՝ ասէ Տէր։

11

Գլուխ ԺԱ

¹Բայց զդրունս քո Լիբանան, և կերիցէ՝ հուր զմայրս քո։ ²Ողբասցեն սարոյք՝ զի մայրք զլորեցան, զի մեծապէ՛ս մեծամեծք չուառացան. ողբացէք կաղնիք Բասանու, զի քակեցաւ անտառն տնկախիտ*։ ³Չայն ողբալոյ հովուաց, զի թշուառացաւ մեծութիւն նոցա. ձայն զոչելոյ առիւծուց, զի թշուառացաւ բարձրութիւն Յորդանանու։

Ժ ⁴Այսպէս ասէ Տէր ամենակալ. Արածեա՛ զխաշինս կոտորածի, ⁵զոր ստացօղքն կոտորէին. և վաճառէին զնոսա՝ և ասէին. Օրհնեալ Տէր՝ և մեծացաք. և հովուաց նոցա ո՛չինչ ցաւեր վասն նոցա*։ ⁶Վասն այնորիկ ո՛չ ևս խնայեցից ՚ի վերայ բնակչաց երկրիդ՝ ասէ Տէր. և ահաւաղիկ ես մատնեցից զմարդիկ

* *Ոմանք.* Ըստ ժամանակս՝ կանուխ և զանագան։

* *Ոմանք.* Խօսէին. զուր մխիթարէին... և չարագանեցան. զի ոչ գոյ բժշկութիւն։

* *Ոմանք.* Եւ բնակեցուցի զնոսա... որպէս թէ ոչ իցեն դարձեալ ՚ի։

* *Ոմանք.* Եւ ցնծասցեն որդիք նոցա ՚ի Տէր։

* *Ոմանք.* Եւ ցամաքեսցին խորք գետոց։

* *Ոմանք.* Ողբացէք սարոյք... զի քանդեցաւ անտառախիտն։

* *Ոմանք.* Ստացօղքն կոտորեցին. որ վաճառէին զնոսա։

իւրաքանչիւր 'ի ձեռս ընկերի իւրոյ, և 'ի ձեռս թագաւորի իւրոյ՝ և հարցեն, և ո՛չ փրկեցից 'ի ձեռաց նոցա*։ ⁷Եւ հովուեցից խաշիմն կոտորելոյ յերկրին Քանանացւոց։ Եւ առից ինձ երկուս գաւազանս. զմին՝ կոչեցից Գեղեցկութիւն, և զերկրորդն՝ կոչեցից Վիճակ. և արածեցից զխաշիմսն, ⁸և բարձից զերիս հովիւսն 'ի միում ամսեան. և ծանրասցի անձն իմ 'ի վերայ նոցա, քանզի և անձինք նոցա գոչէին 'ի վերայ իմ։ ⁹Եւ ասեմ ո՛չ հովուեցից ձեզ. որ մեռանելոցն է՝ մեռցի՛, և որ սատակելոցն է՝ սատակեսցի՛. և մնացեալքն կերիցեն իւրաքանչիւր զմարմինս ընկերի իւրոյ։ ¹⁰Եւ առից զգաւազանն իմ զԳեղեցիկ, և ընկեցի զնա՝ ցրել զուխտ իմ զոր եդի առ ամենայն ժողովուրդս*։ ¹¹և ցրուեսցի յաւուր յայնմիկ։ Եւ ծանիցեն Քանանացիքն զխաշիմս պահեստի իմոյ. զի բան Տեառն է*։ ¹²Եւ ասացի ցնոսա. Թէ բարուք թուի յաչս ձեր՝ տո՛ւք զվարձս իմ. ապա թէ ոչ՝ զրո՛յց արարէք։ ¹³Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի։ Եւ աստ ցիս Տէր. Արկ դու զայդ 'ի բովս, և քննեա՛ թէ փորձ իցէ, որպէս և ես գտայ փորձ վասն նոցա։ Եւ առի՛ զերեսուն արծաթին, և արկի 'ի տուն Տեառն 'ի բովս*։ ¹⁴Եւ ընկեցի զգաւազանն երկրորդ՝ զՎիճակն, ցրել զուխտ իմ 'ի մէջ Յուդայ և 'ի մէջ Իսրայէլի։

ԺԱ ¹⁵Եւ աստ ցիս Տէր դարձեալ. Ան դու քեզ գործի՛ հովուութեան հովուի՛ տգիտի. ¹⁶զի ահաւասիկ ես յարուցանեմ հովիւ տգէ՛տ 'ի վերայ երկրի. զվտտեալն ո՛չ յանձանձիցէ, և զցրուեալն ո՛չ խնդրիցէ, և զբեկեալն ո՛չ բժշկեսցէ, և զողջն ո՛չ դարմանեսցէ. և զմիս ընտրանացն կերիցէ, և զոտս նոցա փշրեսցէ*։ ¹⁷Ո՛վ տարապարտ արօտք՝ որ ընդ վայր հարէք զխաշիմս. սո՛ւր 'ի բազուկ նորա՝ և յա՛կն իւր աջոյ. բազուկ նորա գօսանալո՛վ գօսասցի, և ակն իւր աջոյ՝ կուրանալո՛վ կուրասցի։

12

Գլուխ ԺԲ

ԺԲ ¹Առած բանի Տեառն 'ի վերայ Իսրայէլի։ Ասէ Տէր որ ձգեաց զերկինս՝ և արկ հիմունս երկրի. և հաստատէ զոգի մարդոյ 'ի նմա. ²Ահաւասիկ ես դնեմ զԵրուսաղէմ իբրև զսեամս շարժունս ամենայն ժողովրդոց որ շուրջ զնովաւ իցեն, և 'ի Զրեաստանի եղիցի պաշարունմ երուսաղէմի։ ³Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ եղից զԵրուսաղէմ իբրև զքար մի կոխան ամենայն հեթանոսաց. ամենայն որ կոխիցէ զնա կատակելո՛վ կատակեսցէ, և ժողովեսցին 'ի վերայ նորա ամենայն ազգք երկրի*։ ⁴Յաւուր յայնմիկ ասէ Տէր ամենակալ, հարից զամենայն երիվարս տազնապաւ, և զհեծեալս նորա յիմարութեամբ. և 'ի վերայ տանն Յուդայ բացից զաչս իմ, և զամենայն երիվարս ազգաց հարից կուրութեամբ*։ ⁵Եւ ասասցեն հազարապետք Յուդայ 'ի սիրտս իւրեանց. Գտցուք

* *Ոսկան.* Վասն այսորիկ ոչ ևս։ *Ոմանք.* Եւ ահաւասիկ ես մատ՛։ 'ի բազունս պակասի. Ընկերի իւրոյ, և 'ի ձեռս թագաւորի իւրոյ։

* *Ոսկան.* Եւ առի զգաւազանն։

* *Ոմանք.* Եւ ցրեսցի յաւուր։

* *Ոմանք.* Որպէս ես գտայ։

* *Օրհնակ մի.* Չվատեալն ո՛չ յանձանձ... և զմիս ընտրանացն ընտրիցէ։

* *Ոմանք.* Կատակելով կատակիցէ։

* *Ոմանք.* Չամենայն երիվար... և զհեծեալ նորա... և 'ի վերայ տանդ Յու՛։

մեք զբնակիչս Երուսաղեմի՝ ի ձեռն Տեառն ամենակալի Աստուծոյ նոցա:
⁶Յաւուր յայնմիկ եղից զհազարապետսն Յուդայ իբրև զխանձողս հրոյ ՚ի մէջ փայտից, և իբրև զլամպարս հրոյ ՚ի մէջ եղեգան, և կերիցեն յաջմէ և յահելէ զամենայն ժողովուրդս շուրջանակի. և դարձեալ բնակեսցէ Երուսաղէմ առանձինն յԵրուսաղէմ:
⁷Եւ ապրեցուցէ Տէր զյարկսն Յուդայ որ իսկզբանէն. զի մի՛ մեծաբանեսցեն պարծանք տանն Դաւթի, և հպարտութիւն բնակչաց Երուսաղեմի ՚ի վերայ տանն Յուդայ*:
⁸Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր ամենայն բնակչաց Երուսաղեմի. և եղիցի որ տկարն իցէ յաւուր յայնմիկ իբրև զԴաւիթ. և տունն Դաւթի՝ իբրև զտունն Աստուծոյ, իբրև զհրեշտակ Տեառն առաջի նոցա*:
⁹Եւ եղիցի յաւուր յայնմիկ խնդրեցից բառնալ՝ զամենայն ազգս եկեալս ՚ի վերայ Երուսաղեմի:
¹⁰Եւ հեղից ՚ի վերայ տանն Դաւթի՝ և ՚ի վերայ բնակչաց Երուսաղեմի հոգի շնորհաց և գթութեան: Եւ հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն. և կոծեսցին ՚ի վերայ նորա կո՛ծ իբրև ՚ի վերայ սիրելոյ. և աշխարեսցեն աշխար իբրև ՚ի վերայ անդրանկան*:
¹¹Յաւուր յայնմիկ սաստկասցի՝ կոծ յԵրուսաղէմ. իբրև զկոծ նոննեաց կոտորելոց ՚ի դաշտի.
¹²Եւ կոծեսցի երկիր ըստ ազգս ազգաց առանձինն:
¹³Ազգ տանն Դաւթի առանձինն, և կանայք նոցա առանձինն. ազգ տանն Նաթանայ առանձինն, և կանայք նոցա առանձինն. ազգ տանն Ղեւայ առանձինն, և կանայք նոցա առանձինն. ազգ տանն Շմաւոնի առանձինն, և կանայք նոցա առանձինն*:
¹⁴Ամենայն ազգք մնացեալք առանձինն, և կանայք նոցա առանձինն:

13

Գլուխ ԺԳ

¹Յաւուր յայնմիկ եղիցի ամենայն տեղի բացեալ տանն Դաւթի՝ ՚ի փոփոխումն և ՚ի սրսկումն*:
²Եւ եղիցի յաւուր յայնմիկ բարձցէ՝ Տէր զանուանս կռոց յերկրէ. և ո՛չ ևս եղիցի յիշատակ նոցա. և զսուտ մարգարէսն և զայսս պիղծս բարձից յերկրէ:
³Եւ եղիցի թէ մարգարեանայցէ ոք տակաւին, և ասասցեն ցնա հայր և մայր իւր որ ծնան զնա. Մի՛ կեցցիր՝ զի սուտ խօսեցար յանուն Տեառն. և խափանեսցեն զնա հայր և մայր նորա որ ծնան զնա՝ ՚ի մարգարեանալոյն:
⁴Եւ եղիցի յաւուր յայնմիկ ամաչեսցեն մարգարէքն յիւրաքանչիւր տեսլենէ ՚ի մարգարեանալն իւրեանց, և զգեցցին փեղկս մազեղէնս՝ փոխանակ զի ստեցին:

* *Բազումք*. Յուդայ. որպէս և իսկզբա՞: *Յօրինակին*. Բնակչաց Երուսաղէմ ՚ի վերայ:

* *Ոմանք*. Որ տկարն իցէ ՚ի նոսա յաւուր... իբրև զհրեշտակ Տեառն առաջի նորա:

* *Ի լուս*. ՚ի վերայ՝ Առ իս փոխանակ կաքաւելոյն. *նշանակի*՝ յոր խոցեցին. *զոր երեք օրինակք համեմատք իրերաց*՝ ՚ի բնաբանի մուծեալ այսպէս գրեն. Եւ հայեսցին առ իս յոր խոցեցին փոխանակ կաքաւելոյն:

* *Յոմանս պակասի*. *Ազգ տանն Նաթանայ առանձինն, և այլն:

* *Ի լուս*. ՚ի վերայ՝ տեղի. *նշանակի*՝ աղբիւր: Եւ ՚ի բնաբանի՝ զկնի՝ տանն Դաւթի, *դատարկ տեղի թողեալ՝ ՚ի լուս*. *նշանակի չակերտիւ* ՚ի մէջ առնուլ՝ ՚ի փոփոխումն և ՚ի սրսկումն. *ըստ որում և եղաք համաձայն ոմանց: Թէպէտ և այլ ոմանք առանց նշանակելոյ ինչ ՚ի լուսանցս՝ ունէին*. Եղիցի ամենայն տեղի բացեալ տանն Դաւթի: Եւ եղիցի յաւուր: Եւ ոմանք ևս. Եղիցի ամենայն տեղի բացեալ տանն Դաւթի աղբիւր ՚ի փոփոխումն և ՚ի սրսկումն: *Իսկ Ոսկան յաւելուածով այսպէս դնէ*. Եղիցի ամենայն տեղի աղբիւր բացեալ տանն Դաւթի՝ և բնակողացն Երուսաղէմ ՚ի լուացումն մեղաւորի և դաշտականաւորի:

⁵Եւ ասասցէ. Չե՛մ ես մարգարէ՝ այլ այր հողագործ եմ, և մա՛րդ ծնաւ զիս ՚ի մանկութենէ իմնէ՛: ⁶Եւ ասացի ցնա. Ձի՞նչ են վերքդ այդոքիկ ՚ի մէջ ձեռաց քոց: Եւ ասասցէ. Ձորս վիրաւորեցայ ՚ի տան սիրելոյ իմոյ՝:

ԺԳ ⁷Ձարթի՛ր սուր ՚ի վերայ Յովուի իմոյ, և ՚ի վերայ առն ընկերի նորա, ասէ Տէր ամենակալ. հարի՛ց զՅովուս և ցրուեսցին խաշինքն. և դարձուցից զձեռն իմ ՚ի վերայ հովուաց: ⁸Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր, երկու՛ մասունք ՚ի նմա սատակեսցին և պակասեսցին. և երրորդն մնասցէ ՚ի նմա: ⁹Եւ անցուցից զերրորդ մասն ընդ հուր, և ջեռուցից զնոսա որպէս ջեռնու արծաթ. և փորձեցից զնոսա որպէս փորձի ոսկի. նա կարդասցէ՛ զանուն իմ, և ես լուայց նմա. և ասացից. Ժողովուրդ իմ է սա: Եւ նա ասասցէ. Տէր Աստուած իմ ես դու:

14

Գլուխ ԺԴ

¹Ահա աւուրք Տեառն եկեսցեն. և բաժանեսցի աւարն քո ՚ի քեզ՝. ²և ժողովեսցէ զամենայն ազգս ՚ի վերայ Երուսաղեմի ՚ի պատերազմ. և առցի՛ քաղաքն, և յափշտակեսցին տունք, և պղծեսցին կանայք, և ելցէ կէս քաղաքին ՚ի գերութիւն. և մնացորդք ժողովրդեան իմոյ մի՛ սատակեսցին ՚ի քաղաքէ անտի: ³Եւ ելցէ՛ Տէր՝ և տացէ պատերազմ ընդ ազգսն ընդ այնոսիկ, իբրև յաւուր ճակատու իւրոյ յաւուր պատերազմի: ⁴Եւ կացցեն ո՛ւտք նորա յաւուր յայնմիկ ՚ի վերայ լերինն Ձիթենեաց՝ հանդէպ Երուսաղեմի յարևելից. և պատահեսցի՛ լեռանն Ձիթենեաց, կէսն նորա յարևելս, և կէսն նորա ՚ի ծով, վի՛հ մե՛ծ յոյժ. և խոնարհեսցի կէս լերինն առ հիւսսի, և կէս նորա առ հարաւ՝: ⁵Եւ կցեսցի՛ ձոր լերանց իմոց մինչև ցԱսայէլ. և խցցի զոր օրինակ խցաւ յերեսաց շարժմանն՝ յաւուրս Ոգիայ արքայի Յուդայ:

ԺԴ Եւ եկեսցէ հասցէ Տէր Աստուած իմ և ամենայն սուրբք ընդ նմա՛: ⁶Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ո՛չ եղիցի լոյս. և ցուրտ և պարզ՝ ⁷եղիցի օր մի. և օրն այն յայտնի Տեառն, ո՛չ տիւ իցէ՛ և ո՛չ գիշեր, և ընդ երեկս եղիցի լոյս: ⁸Յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յերուսաղեմ, կէս նորա ՚ի ծովն առաջին, և կէս նորա ՚ի ծովն որ յետոյ. զամառն և զգարուն նոյնպէս եղիցի. ⁹և եղիցի Տէր Թագաւոր ՚ի վերայ ամենայն երկրի: Յաւուր յայնմիկ եղիցի Տէր մի՛ և անունն նորա մի, ¹⁰պատել զամենայն երկիր, զանապատն՝ ՚ի Գաբայ մինչև ցՌեմոն ընդ կողմն հարաւոյ Երուսաղեմի. և Հռամ ՚ի տեղւո՛ջ իւրում կացցէ. ՚ի դրանէն Բենիամինի մինչև ՚ի տեղի դրանն Առաջնոյ. մինչև ՚ի դուռն Անկեանցն, մինչև ցաշտարակն Անամայելի, մինչև ՚ի հնծանս թագաւորին՝: ¹¹Եւ բնակեսցեն ՚ի նմա, և նզովք ո՛չ ևս լիցին. և բնակեսցէ Երուսաղեմ յուսով: ¹²Եւ այս իցեն հարուածք զոր հարցէ Տէր զազգս ամենայն որ զօրաժողով եղեն ՚ի վերայ Երուսաղեմի. հալեսցին մարմինք նոցա մինչդեռ կայցեն ՚ի վերայ ոտից

* *Ոմանք.* Հողագործ եմ ես:

* *Ոմանք.* Եւ ասացից ցնա. Ձի՛նչ են:

* *Ոմանք.* Ահաւասիկ աւուրք Տեառն:

* *Ոմանք.* Ի՛ լերինն Ձիթենեաց:

* *Ոմանք յաւելուն.* *Եւ խցցի ձոր լերանց իմոց, և կցեսցի ձոր լերանցն մինչև: *Օրինակ մի.* Ձոր օրինակ խցեցաւ:

* *Օրինակ մի.* Դատել զամենայն երկիր: *Ոմանք.* Եւ մինչև ցաշտար՝:

իւրեանց. և ծորեսցին աչք նորա՝ ի կապճաց իւրեանց, և լեզուք նոցա հալեսցին ՚ի բերանս իւրեանց*։ ¹³Եւ եղիցի յաւուր յայնմիկ ահ մե՛ծ ՚ի Տեառնէ՝ ՚ի վերայ նոցա. և բո՛ւնն հարկանիցեն իւրաքանչիւր զձեռանէ ընկերի իւրոյ, և խառնեսցէ զձեռն իւր ընդ ձեռն ընկերի իւրոյ*։ ¹⁴Եւ Յուդայ ճակատեսցի յերուսաղէմ. և ժողովեսցէ զգօրութիւն ամենայն ազգաց շուրջանակի. ոսկի և արծաթ՝ և հանդերձ բազում յոյժ։ ¹⁵Եւ ա՛յս իցեն հարուածք՝ ձիոց և ջորւոց՝ և ուղտուց և իշուց, և ամենայն անասնոյ որ իցեն ՚ի բանակսն յայնոսիկ ըստ նմին հարուածոց*։ ¹⁶Եւ եղիցին որ միանգամ մնասցեն յամենայն ազգաց եկելոցն ՚ի վերայ Երուսաղէմի, ելանիցեն ամ յամէ երկի՛ր պագանել Թագաւորին Տեառն Աստուծոյ ամենակալի, և առնել զտօն տաղաւարահարացն*։ ¹⁷Եւ եղիցի որ միանգամ ո՛չ ելանիցեն յամենայն ազգաց երկրի յերուսաղէմ, երկի՛ր պագանել Թագաւորին Տեառն Աստուծոյ ամենակալի, և սոքա ՚ի նոսա յաւելցին*։ ¹⁸Եւ եթէ ազգն Եգիպտացւոց ո՛չ ելանիցէ և գայցէ, և ՚ի վերայ նոցա եղիցին հարուածքն, զոր հարցէ Տէր զամենայն ազգսն որ ոչ ելանիցեն առնել զտօն տաղաւարահարացն*։ ¹⁹Նո՛յն եղիցի ՚ի մեղս Եգիպտացւոցն, և ՚ի մե՛ղս ամենայն ազգաց, որ ո՛չ ելանիցէ առնել զտօն տաղաւարահարացն*։ ²⁰Յաւուր յայնմիկ որ ՚ի սանձս ձիոյն՝ իցէ Սրբութիւն Տեառն։ Եւ եղիցին սանք ՚ի տան Տեառն՝ իբրև զտաշտս առաջի սեղանոյն։ ²¹Եւ եղիցի ամենայն սան որ յերուսաղէմ և որ ՚ի Յուդայ՝ նուիրեալ Տեառն ամենակալի։ Եւ եկեսցեն ամենեքեան որ մատուցանիցեն պատարագ՝ առնուցուն ՚ի նոցանէ և եփեսցեն նոքօք. և ո՛չ ևս եղիցի Քանանացի ՚ի տան Տեառն ամենակալի յաւուր յայնմիկ*։

Կատարումն Մարգարէութեանն Զաքարեայ

ԳԼՈՒԽՔ ՄԱՂԱՔԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

ա. Եւ սա յետ ելիցն ՚ի Բաբելոնէ մարգարէանայ։ Ստէպ պատուհասէ մարգարէս վասն պատարագացն զոր մատուցանէին. որպէս թէ ո՛չ մտադէւր մատուցանեն քահանայքն. զոգցես՝ քամահանօք ընդ արհամարհանս մատուցանէին զպաշտօն պատարագացն. և եղծանէին ապականէին զօրինացն ուղղութիւն։

բ. Պատուհասէ վասն կնահանութեան։

գ. Վասն Քրիստոսի զալստեանն. իսկ թէ հրեշտակ կոչէ զնա, ընդ այն մի՛ ինչ զարմանար. զի և այլ ուր Զրեշտակ մեծի խորհրդոյ ասէ զնա։ Բայց

* *Օրինակ մի.* Որ զօրաժողովեն ՚ի վերայ Երուսաղէմի։ *Ոմանք.* Աչք նոցա ՚ի կապճաց նորա։

* *Օրինակ մի.* Ձձեռն իւր ընդ ձեռանէ ըն՞։

* *Ոմանք.* Եւ իշոց և ամենայն անասնոց։

* *Ոմանք.* Ես եղիցի որ միանգամ մնայցեն։

* *Ոսկան յաւելու.* Տեառն Աստուծոյ ամենակալի. *ո՛չ եղիցի ՚ի վերայ նոցա անձրև..* և սոքա ՚ի նոսա։

* *Ոմանք.* Ձամենայն ազգսն որ ելանիցեն։

* *Ոմանք.* Որ ոչ ելանիցեն առնել։

* *Ոմանք.* Առնուցուն ՚ի նոցանէ եփեսցեն... եղիցի ՚ի տան Տեառն ամենակալի Քանա՞։

ոմանք ո՛չ գՔրիստոսէ, այլ զԵզրէ ասէն ասացեալ:
դ. Չայս գՔրիստոսէ ասէ, թէ մինչչև եկեալ օր Տեառն, զհանդերձեալ
դատաստանէն ասէ:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ՄԱՂԱՔԻԱՅ

1

Գլուխ Ա

¹Առած բանի Տեառն 'ի վերայ Իսրայէլի 'ի ձեռն հրեշտակի իւրոյ:

Ա Դիք 'ի սիրտս ձեր: ²Սիրեցի՛ զձեզ ասէ Տէր: Եւ ասացէք. Ի՞նչ սիրեցեր զձեզ: Ո՛չ եղբայր էր Եսաւ Յակոբու՝ ասէ Տէր. և սիրեցի զՅակոբ՝. ³և զԵսաւ՝ ատեցի, և կարգեցի զսահմանս նորա յապականութիւն, և զԺառանգութիւն նորա 'ի դաշտ անապատի՛: ⁴Ձի թէ ասիցէ Եդոմ, թէ ահա կործանեցաւ՝ դարձցուք և շինեսցուք զքաղաքս ւերեալս. այսպէս ասէ Տէր ամենակալ. Եդոմ շինեսցեն, և ես կործանեցից. և կոչեսցին նոքա Սահմանք անօրէնութեան. և ժողովուրդ ընդ որում տացէ պատերազմ Տէր մինչև ցյաւիտեան՝: ⁵Եւ այք ձեր տեսցեն. և դուք իսկ ասասցիք եթէ բարձրացաւ Տէր 'ի վերայ սահմանաց Իսրայէլի: ⁶Որդի փառաւոր առնէ զհայր, և ծառայ երկնչի՛ 'ի տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ Յայր են ես՝ ո՞ւր է փառքն իմ. և եթէ Տէր են, ո՞ւր է պատիւն իմ, ասէ Տէր ամենակալ: Դուք քահանայք որ բամբասէք զանուն իմ, և ասէք. Ի՞նչ բամբասեցաք զանուն քո՛: ⁷Ձի մատուցանէք 'ի սեղան իմ հաց պղծութեան. և ասացէք. Ի՞նչ պղծեցաք զնոսա. յասելն ձեր թէ սեղան Տեառն արհամարհեալ է, և զոր ինչ դնի 'ի վերայ նորա՛: ⁸Ձի թէ մատուցանիցէք զկոյրն 'ի պատարագ՝ չիցէ՞ չար. և եթէ մատուցանիցէք զկաղն կամ զհիւանդոտն՝ չիցէ՞ չար. աղէ՛ մատո՛ զնա իշխանին քում, թէ ընդունիցի՞ զքեզ, կամ թէ առնուցո՞ւ քեզ ակն, ասէ Տէր ամենակալ՝: ⁹Եւ այժմ աղաչեցէ՛ք զերեսս Աստուծոյ ձերոյ՝ և հաշտեցուցէ՛ք զնա. 'ի ձեռաց ձերոց եղև այդ. եթէ առի՞ց ինչ 'ի ձեռն ակնառութեամբ, ասէ Տէր ամենակալ: ¹⁰Ձի և ձեզ դրունք փակեսցին, և մի՛ մերձենայք 'ի սեղան իմ վայրապար. զի ո՛չ են կամք իմ 'ի ձեզ՝ ասէ Տէր ամենակալ. և զպատարագս ո՛չ ընկալայց 'ի ձեռաց ձերոց: ¹¹Ձի յարևելից մինչև 'ի մուտս արևու փառաւորեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց. և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ, և պատարագ սուրբ. զի մե՛ծ է անուն իմ 'ի հեթանոսս՝ ասէ Տէր ամենակալ՝: ¹²Եւ դուք պղծեցէք զնա՝ յասելն ձեր՝ թէ սեղան Տեառն պի՛ղծ է, և կերակուրն որ դնի 'ի վերայ նորա՝

** Յօրհնակին. Սիրեցի զքեզ՝ ասէ Տէր: Ոմանք. Եղբայր էր Եսաւայ Յակոբ, ասէ:*

** 'Ի լուս՝. Եդոմ 'ի բաշխ անապատի. համաձայն ոմանց 'ի բնաբ՝: Ուր ոմանք.*

յանապատի:

** Ոմանք. Ձի թէ ասացէ Եդոմ եթէ ահա... և կոչեսցին նոցա սահ՝... տայցէ պատերազմ:*

** Ոմանք. եթէ Յայր են, ո՞ւր են փառքն... քահանայք էր որ բամբա՛:*

** Ոմանք. Եւ ասէք. Ի՞նչ պղ... յասելն ձերում թէ... և զոր ինչ դնին 'ի վերայ: Բազումք յաւելլուն. Դնի 'ի վերայ արհամարհէք:*

** Ոմանք. Ձի եթէ մատուցանէք զկոյրն:*

** Ոսկան. Եւ պատարագս սուրբ:*

արհամարհեալ է*.¹³ և ասէիք թէ այն յաշխատութենէ՛ է. և փչեցի՛ց զայն արտաքս՝
ասէ՛ Տէր ամենակալ: Եւ եթէ մատուցանիցէք ինձ յափշտակեալն՝ և զկաղն՝ և
զվտիտս պատարագ, եթէ ընկալա՞յց զնոսա՛ ՚ի ձեռաց ձերոց՝ ասէ՛ Տէր
ամենակալ*:¹⁴ Անիծեալ՛ լիցի մարդն որ կարօղ իցէ, և կայցէ ՚ի խաշին նորա
ո՛րձ. և ուխտ իւր յանձին իւրում. և մատուցանիցէ՛ Տեառն զարատաւորն. զի
Թագաւոր յաղթօղ եմ ես՝ ասէ՛ Տէր ամենակալ. և անուն իմ երևելի՛ ՚ի մէջ
ազգաց*:

2

Գլուխ Բ

¹Եւ արդ՝ այս պատուէր է իմ առ ձեզ քահանայք: ²Եթէ ո՛չ լսիցէք՝ և ո՛չ դնիցէք
՚ի սրտի ձերում, տալ փառս անուան իմում՝ ասէ՛ Տէր ամենակալ. առաքեցից ՚ի
վերայ ձեր անէծս, և անիծի՛ց զօրհնութիւնս ձեր՝ և նզովեցից զնա, և ցրուեցից
զօրհնութիւնս ձեր. և մի՛ եղիցի ՚ի միջի ձերում. զի դուք ո՛չ եղիք ՚ի սրտի ձերում:
³Ահաւասիկ ես որոշեցից ձեզ թե՛կն, և ցանեցից զապաւառն ընդ երեսս ձեր,
զապաւառն տօնից ձերոց, և բարձից զձեզ նովալ*:⁴ Եւ ծանիջիք՝ եթէ ես
առաքեցի առ ձեզ զպատուէրդ զայդ՝ լինել ուխտի իմոյ առ Ղևտացիսն, ասէ՛ Տէր
ամենակալ:⁵ Ուխտն իմ որ ընդ նմա՛ կենաց և խաղաղութեան. ես ետու նմա
երկելո՞՞ երկնչել յինէն, և յերեսաց անուան իմոյ խորշել*:⁶ Օրէնք ճշմարտութեան
էին ՚ի բերան նորա, և անօրէնութիւն ո՛չ գտաւ ՚ի շրթունս նորա.
խաղաղութեամբ և ուղղութեամբ գնաց ընդ իս. և զբազունս դարձոյց
յանիրաւութենէ*:⁷ Զի շրթունք քահանային զգուշացին գիտութեան. և օրէնս
խնդրեսցեն ՚ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է:⁸ Իսկ դուք
խտտորեցարուք ՚ի ճանապարհէ. և տկարացուցէք զբազունս օրինօքն. և
ապականեցէք զուխտն Ղևեայ՝ ասէ՛ Տէր ամենակալ:⁹ Եւ ես ետու զձեզ
արհամարհեալս և լքեալս ընդ ամենայն ազգս, փոխանակ զի ո՛չ պահեցէք
զճանապարհս իմ. այլ ակն առնուիք օրինօքն:¹⁰ Ոչ ապաքէն մի՞ Չայր է
ամենեցուն ձեր. ո՞չ մի Աստուած հաստատեաց զձեզ. զի՞ է զի թողէք
իւրաքանչիւր զեղբայր իւր, պղծել զուխտ հարցն ձերոց*:¹¹ Լքա՛ւ Յուդայ,
գարշելիք գործեցան յիսրայէլի և յերուսաղէմ. զի պղծեաց Յուդա զսրբութիւնս
Տեառն ՚ի ձեռաց այնոցիկ զոր սիրեացն. և հարա՛ւ յաստուածս օտարս*:
¹² Սատակեսցէ՛ Տէր զմարդն որ առնիցէ զայն, մինչև նկուն լիցի ՚ի յարկացն
Յակոբայ. և ՚ի մատուցանելեացն պատարագաց Տեառն ամենակալի:¹³ Եւ զոր
եսն ատէի՝ առնէիք. ծածկեցէք արտասուօք զսեղան իմ. և լալով և քրքովք
յաշխատութեանց:

Բ Եթէ արժա՞ն ինչ իցէ միւսանգամ հայել՝ ՚ի պատարագս ձեր, կամ առնուլ

* Ի բազունս պակասի. Արհամարհեալ է:

* Բազունք. Մատուցանէք ինձ զյափշտակեալն: Ոմանք. Եթէ ընկալայց զնա ՚ի ձեռաց:

* Ոմանք. Անիծեալ իցէ մարդն:

* Ոմանք. Ահաւաղիկ ես որո՞՞: Ոսկան. Ձձեզ թե՛կն:

* Ոմանք. Իմ որ էր ընդ նմա:

* Բազունք. Եւ անիրաւութիւն ոչ գտաւ:

* Ոսկան. Չայր է ամենեցուն ձեզ:

* Ոսկան. Գարշելի գործեցաւ յիսրայէլի: Բազունք. ՚ի ձեռն այնոցիկ զոր սիրեացն:

ընդունելութիւն 'ի ձեռաց ձերոց*։ ¹⁴Եւ ասացք. Բայ ընդէ՞ր. զի Տէր ե՞ղ ուխտ 'ի մէջ քո, և 'ի մէջ կնոջ մանկութեան քոյ զոր թողերն. և նա էր ամուսին և կին ուխտի քոյ*։ ¹⁵Եւ ո՛չ այլ ոք արար. և հատո՞ր ոգւոյ նորա է։ Եւ ասացք՝ թէ զի՞նչ այլ ինչ խնդրէ Աստուած՝ եթէ ո՛չ զաւակ։ Զգուշացարո՛ւք յոգիս ձեր, և զկին մանկութեան քոյ մի՛ թողուր. ¹⁶բայց եթէ առ ատել արձակեցես՝ ասէ Տէր Աստուած Իսրայէլի. ծածկեցդ ամպարշտութիւն գիտրիւորդս քո՝ ասէ Տէր ամենակալ. զգոյ՛շ լերուք յոգիս ձեր, և մի՛ թողուցուք*։ ¹⁷Որ բարկացուցանէք զԱստուած բանիւք ձերովք, և ասէք ի՞նչ բարկացուցաք զնա. յասելն ձեր թէ ամենայն որ զչար գործէ՝ բարւո՛ք թուի առաջի Տեառն, և ընդ այն իսկ հաճեցաւ նա. և ո՞ւր է Աստուած արդարութեան*։

3

Գլուխ Գ

Գ ¹Ահա ես առաքեմ զիրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ. և յանկարծակի՛ եկեսցէ 'ի տաճար իւր Տէրն զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի զոր դուք կամիք։ Ահաւաղիկ գայ ասէ Տէր ամենակալ*։ ²և ո՞վ ժուժկալեցցէ աւուր մտի նորա, և կամ ո՞ հանդարտեցցէ յայտնութեան նորա. զի նա մտցէ իբրև զբոց հալոցի, և իբրև զաճառ լուալեաց*։ ³Եւ նստցի սրբել և ձուլել իբրև զարծաթ և իբրև զոսկի. և սրբեցէ զորդիս Ղևեայ. և հալեցէ զնոսա իբրև զոսկի և իբրև զարծաթ. և եղիցի Տեառն մատուցանել զպատարագս արդարութեանք*։ ⁴Եւ հաճոյ եղիցի Տեառն պատարագն Յուդայ և Երուսաղեմի. որպէս յաւուրսն յաւիտենից, և որպէս յամսն առաջինս։ ⁵Եւ հասից 'ի վերայ ձեր դատաստանաւ. և եղէց վկայ արագ 'ի վերայ կախարդաց և կանանց շնացելոց, և 'ի վերայ այնոցիկ ոյք երդնուցուն յանուն իմ ստութեանք. և որոց հատանիցեն զվարձս վարձկանի, և որ յաղթահարեն զայրիս՝ և կռփեն զորքս, և խտտորիցեն զիրաւունս պանդխտին. և որ ո՛չ երկնչիցին յինէն՝ ասէ Տէր ամենակալ*։ ⁶Զի ես եմ Տէր Աստուած ձեր, և ո՛չ փոխիմ. և դուք որդիք Յակոբու՝ ⁷ո՛չ կացէք 'ի բաց 'ի մեղաց հարցն ձերոց. խուսափեցէք յօրինաց իմոց, և ո՛չ պահեցէք զնոսա։ Դարձարուք առ իս՝ և ես դառնամ առ ձեզ՝ ասէ Տէր ամենակալ. և ասացք. Ի՞նչ դարձուցուք*։ ⁸Իցէ՞ թէ խաբիցէ մարդ զԱստուած. զի դուք խաբեցէք զիս, և ասացէք. Ի՞նչ խաբեցաք զքեզ։ Զի տասանորդք և պտուղք առ ձեզ եմ. ⁹և չարակնելով չարակնէք՝ և խաբէք զիս*։ ¹⁰Տարին կատարեցաւ, և զարդիւնս ամենայն 'ի շտեմարանս ձեր ժողովեցէք. և եղիցի յափշտակութիւն տանց

* Ոսկան. Եւ լալով քով յաշխա՞։ Բազու՛նք. Եւ կամ առնուլ ընդունե՞։

* Ոմանք. Ուխտ ընդ մէջ քո, և 'ի մէջ։

* Ոմանք. Առ ատել արձակիցես... և զգոյ՛շ լերուք։

* Ոմանք. Բարւոք թուի յաչս Տեառն։

* Ոմանք. Զճանապարհս առաջի իմ... ահաւաղիկ գայ։ Բազու՛նք. Տէր՝ զոր դուքն խնդ՞։

* Ոմանք. Եւ ո՛ ժուժկալեցցէ... և իբրև զաճառ լուանալեաց։

* Ոմանք. Եւ նստցի 'ի ձուլել և 'ի սրբել... մատուցանել պատարագս արդարութեան։

* Ոմանք. Ոյք երգնուն յանուն իմ... և որ հատանիցեն... և որ յաղթահարիցեն զայրիս՝ և կռփիցեն զորքս, և որ խտտորիցեն։

* Յոմանս պակասի. Զերոց. խուսափեցէք յօրինաց իմոց, և ոչ։ Ոմանք. Ասէ Տէր Տէր ամենակալ։

* Ի լուս՞. Եւ չարկանելով չարկանէք և խաբէք զիս. համաձայն ոմանց 'ի բնար՞։

ծերոց. դարձարուք այդուիկ՝ ասէ՛ Տէր ամենակալ. եթէ ո՞չ բացից ձեզ զպատուհանս երկնից, և զեղից ձեզ զօրհնութիւն իմ մինչև ՚ի շատանալ՝: ¹¹Եւ զգուշացայց ՚ի կերակրոց ձերոց, և ո՞չ ապականեցից զպտուղ երկրի ձերոյ. և մի՛ վատեսցէ ո՛րք ձեր յայգւոջ՝ ասէ՛ Տէր ամենակալ: ¹²Եւ երանիցեն ձեզ ամենայն ազգք. զի եղիցիք դուք ինձ երկիր կամաց, ասէ՛ Տէր ամենակալ: ¹³Ծանրացուցէ՛ք ինձ զբանս ձեր. ասէ՛ Տէր. ¹⁴և ասացէք. Ի՞նչ բամբասեցաք զքեզ. զի ասէիք՝ թէ զո՛ւր է ամենայն՝ որ ծառայէ Աստուծոյ. և զի՞նչ աւելի է զի պահեցաք զպահպանութիւնս նորա. և զի գնացաք պաղատանօք առաջի Տեառն ամենակալի: ¹⁵Եւ արդ մեք երանենք այլո՞ց. և բարեշէ՛ն են ամենեքին, որ գործեն զանօրէնութիւն, և ընդդէմ դարձան Աստուծոյ և կեցին: ¹⁶Չայս տրտնջեցին երկիւղածքն Տեառն իւրաքանչիւր ընդ ընկերի՛ իւրում. և անսաց Տէր. և լուա՛ւ և գրեաց զիր յիշատակի առաջի երկիւղածաց Տեառն, և որոց սարսեն յանուանէ նորա: ¹⁷Եւ եղիցին ինձ՝ ասէ՛ Տէր ամենակալ, յաւուր յորում ե՛ս արարից փրկութիւն, և փայփայեցի՞ց զնոսա՝ որպէս փայփայէ հայր զորդի զբարուք ծառայեալն նմա: ¹⁸Եւ դարձջիք և տեսջիք ՚ի մէջ արդարոյն և ՚ի մէջ անօրինին, և ՚ի մէջ ծառայելոյն Աստուծոյ՝ և ՚ի մէջ չծառայելոյն:

4

Գլուխ Դ

¹Ձի ահա եկեսցէ օր Տեառն բորբոքեալ իբրև զհնոց, և այրեսցէ զնոսա. և եղիցին ամենայն այլազգիք, և ամենայն որ գործեն զանօրէնութիւն եղէ՛զն. և վառեսցի զնոքօք օրն որ գալոց իցէ, ասէ՛ Տէր ամենակալ. և մի՛ մնացէ նոցա արմատ և մի՛ ուռ՝: ²Եւ ծագեսցէ՛ ձեզ երկիւղածաց անուան իմոյ արեգակն արդարութեան, և բժշկութիւն ՚ի թևս նորա. և ելջիք և խայտասջիք իբրև ո՛րքք արձակեալք ՚ի կապոյ: ³Եւ կոխեսջիք զանօրէնս, և եղիցին մոխի՛ր ՚ի ներքոյ ոտից ձերոց յաւուրն զոր ե՛ս արարից՝ ասէ՛ Տէր ամենակալ:

Դ ⁵Եւ ահա ե՛ս առաքեմ առ ձեզ զեղիա թեզբացի. մինչև եկեալ է օր Տեառն մեծի և երևելոյ. ⁶որ պատրաստեսցէ զսիրտս հօր առ որդի, և զսիրտս առն առ

* *Ոմանք.* Եւ դարձարուք այդ՝... ոչ բացից զպատուհան՝:

* *Բազումք.* Եւ զգուշացայց կերակրոցն:

* *Յօրինակի մերում, որպէս և յայլս ոմանս՝ թուի թէ սակս նմանօրինակ վերջաւորութեան նախընթաց համարոյն և այսմ՝ ասէ Տէր ամենակալ, ՚ի վրիպմանէ գրչաց ՚ի բաց թողեալ էր համարս 12. *Եւ երանիցեն ձեզ, և այլն. գոր ՚ի դէպ համարեցաք լցուցանել յայլոց գրչագրաց ըստ համեմատութեան բնագրին:*

* *Ոմանք.* Եթէ ՚ի զուր է ամենայն:

* *Ոմանք.* Եւ եղիցի ինձ ասէ՛ Տէր:

* *Յօրինակին պակասէր.* Եւ դարձջիք և տես՝: *Ոմանք.* ՚ի մէջ ծառայելոյն և ՚ի մէջ չծառայելոյն Աստուծոյ:

* *Ոմանք.* Իբրև զբորբոքեալ հնոց: *Բազումք.* Եւ ամենեքին որ գործեն... որ գալոց է՝ ասէ Տէր:

* *Ոմանք.* Երկիւղածաց իմոց արեգակն:

* *Այլք.* Մինչև եկեալ իցէ օր Տեառն: *Աստուծոյ յօրինակս ճաշոցաց գտանի գրեալ՝ Օր Տեառն մեծ և երևելի. ուր ամենայն գրչագիրք՝ ընդ որս և Ոսկան՝ ունին համեմատ մերումս:*

ընկեր իւր, գուցէ՛ եկեալ հարկանիցեն զերկիր միանգամայն*։ ⁴Յիշեցէ՛ք զօրէնսն Մովսիսի ծառայի իմոյ. որպէս պատուիրեցի նմա ՚ի Քորէք, զամենայն զիրամանս և զիրաւունս:

Կատարումն Աստուծով Երկոտասան սուրբ մարգարէիցն*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Երեմիա սկսաւ մարգարեանալ յերեքտասան ամէն Յովսիայ մինչ ՚ի մետասան ամն Սեդեկիայ՝ յորում առաւ Երուսաղէմ, որ լինին ամք քառասուն: Յաւուրսս յայսոսիկ էր և Սոփոնիա, և Ուրիա Սամեայ, և Ողղան կին մարգարէ. և զկնի սոցա և առ սոքօք Դանիէլ և Եզեկիէլ. զի որոց առ գերութեամբն մարգարէք՝ առաջին է սա, և վերջին՝ Եզեկիէլ: Մանուկ կոչի Երեմիա ՚ի մարգարեութիւն, թերևս առ ՚ի չգոյէ կատարելոց կամ ծերոց՝ որպէս Դանիէլ. կամ զի առաքինութիւն յամենայն հասակս պատուելի է՝ որպէս Տիմոթէոս: Մարգարեանայ վասն գերութեանն Յուդայ. զորոց և կշտամբէ զկռապաշտութիւն, խաբելոցն ՚ի սուտ մարգարէիցն. խոտէ զՅրեական զոհսն. և խրատէ չվստահանալ ՚ի տաճարն, այլ ուղղել զճանապարհն: Ի դէմս իւր գուշակէ վասն խաչին, և ՚ի դէմս ձկնորսաց՝ զվռաքելոցն. և ՚ի պատճառս գուժկանաց յերեսաց հինին. վասն մանկանցն սպանելոց ՚ի Յերովդիէ վասն Քրիստոսի: Մարգարեանայ վասն նորոյ ուխտիս, և պատմէ զելանել Բաբելացւոցն և զերել զԵրուսաղէմ. և ըստ ոճոյ մարգարէից սպառնայ այլազգեաց թշնամեացն Իսրայէլի. և խոստանայ զդարձ գերութեանն Յրէից. զի յայսմիկ նշանակէ զկորուստն Սատանայի, և Քրիստոսի զփրկութիւն մարդկան: Իսկ Բարուք ընդ Երեմիայի գնաց յԵգիպտոս՝ յետ առմանն Երուսաղէմի. և իբրև քարկոծեցին զԵրեմիա ՚ի Տափնաս, եկն Նաբուքոդոնոսոր և զերեաց և զՅրեայսն որ իջին յԵգիպտոս. և զԲարուք յԵգիպտոսէ տարաւ ՚ի Բաբելոն. իբր զղջացան որք գերեալն էին անդ, աղաչեցին զԲարուք գրել յԵրուսաղէմ առ քահանայսն մնացեալս անդ՝ աղօթել վասն նոցա. և այս յետ հինգ ամի առմանն Երուսաղէմի: Իսկ զՈղբսն, ըստ օրինակի բժշկաց՝ յո՛չ ընդունել հիւանդին զղեղս՝ յուսահատ եղեալ ողբան, կամ թէ մեռանի. այսպէս շատ հնարեցաւ բժշկել բանիւ զՅրեայսն, որք ո՛չ կամելով բժշկել՝ գերեցան. զորս և ողբայ յոյժ դառնապէս:

Գլուխք Երեմիայ Մարգարէի

* Ոմանք. Ձսիրտ հօր առ որդի, և զսիրտ առն:

* Ի վախճանի ամենայն զրչագիրք ունին համաձայն մերումս, բաց ՚ի միոյ օրինակէ որ դնէ. Կատարումն ՚ի Տէր Մարգարեութեանց Երկոտասանիցն: Օրինակ մի զկնի Երկոտասան մարգարէից կարգէ զԴանիէլ, և ապա զԵրեմիա:

ա. Սկիզբն մարգարտութեան Երեմիայ, և կանխասացութիւն լինելոց չարեացն Իսրայէլի՝ ի Նաբուքոդոնոսորայ:

բ. Յանդիմանութիւն կռապաշտութեանն Իսրայէլի, և յիշատակ Աստուծոյ երախտեացն ՚ի նոսա, և չարեացն զոր կրեցին. վասն զի ապաստան եղեն յեգիպտացիսն, կռոց նոցա տկարութեան յանդիմանութիւն. և Իսրայէլացւոցն մարդագոհ լինելոյ ամբաստանութիւն:

գ. ՁԻսրայէլէ ամբաստանութիւն, և համեմատութիւն Իսրայէլի և Յուդայ անօրէնութեանցն, յորում յաճախագոյն գտանի քան զնա Յուդա. և կանխասացութիւն դիւրութեանց Իսրայէլի՝ եթէ դառնայցէ յԱստուած. և ՚ի մարգարէն իբրև ՚ի ժողովրդենէն խոստովանութիւն:

դ. Վասն ելանելոյ Բաբելացւոցն, և սուգ մարգարէին ՚ի վերայ ցրման մերձեալ աւերածոյն. և նորին իսկ աւերածոյն նկարագիր.

ամբաստանութիւն զժողովրդենէն, զի ո՛չ ունէին զոք արդար՝ ցածուցանել զբարկութիւնն Աստուծոյ, և պոռնկութեանց նոցա յանդիմանութիւն:

ե. Թէ մինչև ՚ի հիմն քակելոց է Երուսաղէմ ՚ի Նաբուքոդոնոսորայ, և ելանելն Բաբելացւոցն. և ամբաստանութիւն զյանդգնութենէն Իսրայէլի:

զ. Ձի չանսացին լսել մարգարէին. և ամբաստանութիւն սուտ մարգարէիցն, որ խաբէին զժողովուրդն. զի Երեմիա ասէր. Պատերա՛զմ յառնելոց է: Եւ նոքա ասէին թէ ո՛չ, այլ խաղաղութիւն լինելոց է:

է. Հրածեշտ ՚ի պատարագաց, և ելանել Բաբելացւոցն, և անդարձ մտաց Հրէիցն յանդիմանութիւն:

ը. Խրատ զՅուդա դառնալ ՚ի լաւութիւն, և սպառնայ թէ ո՛չ դառնայցեն զնոյն կրել զոր Իսրայէլ կրեաց. և արգելու զԵրեմիա յառնելոյ աղօթս վասն նոցա:

թ. Հրածեշտ ՚ի զոհիցն, և ամբաստանութիւն չանսացութեան նոցա, և մարդագոհն լինելոյ դիւաց. և կանխասացութիւն գերեզման լինելոյ նոցա տեղոյ կռոցն. և թաղելոյ ևս արժանի չլինել կոտորելոցն: Դարձեալ վասն ելից թշնամեաց և սգոյ մարգարէին ՚ի վերայ չարեաց նոցա:

ժ. Ամբաստանութիւն զՀրէից իբրև զանթլփատից սրտիւք. և խրատ առ ՚ի չկռապաշտել. և սուգ իբրև ՚ի ժողովրդենէն ՚ի վերայ չարեացն հանդերձելոց, և ամբաստանութիւն յԱստուծոյ:

ժա. Խրատ Իսրայէլի ունկնդիր լինելոյ Աստուծոյ. և ամբաստանութիւն զհարց նոցա և զնոցանէ, և գուշակութիւն չարեացն հանդերձելոց. և արգելու դարձեալ զԵրեմիա յառնելոյ աղօթս վասն նոցա:

ժբ. Ողբայ մարգարէն նենգեալ ՚ի Հրէից յԱնաթովթ. և յառաջագոյն ասէ, թէ վասն այնորիկ լինելոց է նոցա սատակումն:

ժգ. Չառիգածն հրաման առնու Երեմիա թաղել և թաքուցանել, և յառաջագոյն գուշակէ թէ լցջիք և արբեսջիք չարեօք. և վասն երաշտութեան կանխաւ գուշակէ. և արգելու զմարգարէն յաղօթս առնելոյ վասն նոցա. և հրաժարէ Աստուած յողջակիզացն նոցա և ՚ի պահոց. և սպառնայ սուտ մարգարէիցն չարիս. քանզի ասէին թէ չեն հասանելոց վիշտք ժողովրդեանն:

ժդ. Ժողովուրդն աղաչէ զԱստուած. և նա ասէ չլսել նոցա թէ և Մովսէս և Սամուէլ բարեխօս լինիցին. այլ տալ զնոսա ՚ի սուր, ՚ի սով, ՚ի մահ և ՚ի

գերութիւն, և ՚ի պատառումն շանց:

ժե. Երեմիա աղօթս առնէ կրել նոցա պատիժ որ գնայն նախատեցին. և նա (Տէր) ասէ ցնա. Եթէ հանցես զպատուականն յանարժանէ՝ իբրև զբերան իմ լիցիս:

ժզ. Հրաման առնու չամուսնանալ Երեմիա, ո՛չ սուգ առնուլ. և ո՛չ յընթրիս որ վասն մեռելոց լինիցի՝ հաղորդել Իսրայէլացւոցն:

ժէ. Վասն Առաքելոցն:

ժը. Վասն Քրիստոսի մարգարութիւն:

ժթ. Ջբանս այնոցիկ որ չհաւատային նմա թուէ մարգարէն, և լուտայ՝ զնոսա:

ի. Պատուէր տայ Հրէից պահել զշաբաթն:

իա. ՚Ի տուն բրտին առաքի մարգարէն:

իբ. Եթէ վճիռ տաց ասէ Աստուած ՚ի վերայ թագաւորութեան բառնալ. և եթէ դառնայցեն՝ չբարձից. և եթէ վճիռ տաց ՚ի վերայ ազգի և թագաւորութեան շինել, և եթէ առնիցեն զչարիս՝ զղջացայց և ես ՚ի վերայ բարեացն զոր խոստացայ առնել նոցա: Այս գլուխ ՚ի դէպ է Հրէից, յորժամ ասիցեն թէ Աստուած բարիս խոստացաւ նոցա. զի ապստամբեցին ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, անձամբ անձանց իւրեանց եղեն պատճառ չարեաց որ հասին նոցա:

իգ. Որ ՚ի նմանէն զովութիւնք Հրէիցն ասէ մարգարէն. և լուտայ զնոսա, զի չարիս փոխանակ բարեաց հատուցին:

իդ. Հրաման առնու Երեմիա զկուժ կաւեղէն առնուլ, և վկայել զչարեաց ժողովրդեանն. և բեկանել զկուժն առաջի աչաց նոցա, և ասել թէ այսպէս խորտակեսցի Երուսաղէմ: Եմուտ ՚ի Պասքովրա յանձուկ արգել. Ել և մարգարէանայ Պասքովրայ զչարիսն որ հասանելոց էին նմա: Սրտառուչ լինի մարգարէն բամբասանացն, և լուտայ վասն նոցա. և անիծանէ զօր ծննդեան իւրոյ:

իե. Առաքէ Սեղեկիա արքայ ուսանել յԵրեմիայէ թէ անցանիցէ՞ զնովաւ Նաբուքոդոնոսոր. և նա ասէ թէ Աստուած տայ պատերազմ ընդ Հրէայս և ընդ Սեղեկիայ արքայի. բայց եթէ կամեսցի ժողովուրդդ կամօք ձեռս տալ ՚ի Նաբուքոդոնոսոր, ապրեցուցէ զանձն իւր. և թագաւորն չկորնչիցի եթէ հեռանայցէ ՚ի չարեացն իւրոց, և Աստուծոյ հրամանացն անսալ կամիցի. և թէ չառնուցու յանձն՝ կորիցէ:

իզ. Ընդդէմ Յովակիմայ և Յեքոնիայ, և այլոց հովուացն:

իէ. Մարգարութիւն զՏեառնէ. և զստոց մարգարէից ամբաստանութիւն:

իը. Դիւրութիւն Յուդայ մարգարէանայ. հեշտութիւնս մնացելոց ժողովրդեանն Երուսաղէմի՝ հանդերձ Սեղեկիայ չարիս՝ թզոյն օրինակաւ:

իթ. Մարգարէանայ զելանելն Նաբուքոդոնոսորայ. և ամենայն հեթանոսաց կորուստ զուշակէ բաժակաւն:

լ. Յառաջագոյն ասէ զկորուստն Երուսաղէմի. և ընթռնի Երեմիա ՚ի քահանայիցն. և զերծանի ՚ի վտանգէն:

լա. Հրաման առնու մարգարէն արկանել անուր ՚ի պարանոց իւր, և ասել ցիրեշտակս այլազգեացն. Պատմեցէ՛ք թագաւորին ձերոյ լինել հնազանդ Նաբուքոդոնոսորայ. քանզի մահ սպառնայ Աստուած այնոցիկ որ ոչ հնազանդին նմա. զնոյն խրատ տայ և Սեղեկիայ, և ժողովրդեանն և

քահանայիցն: Իսկ սուտ մարգարէ Անանիա՝ հակառակ Երեմիայի մարգարէի. Սպաս քահանայութեանն ասէ այսրէն դառնալոց են, և Յեքոնիա որդի Յովակիմայ՝ եղբորորդի Սեդեկիայ. և խորտակեաց զանուր մարգարէին. առաքի այնուհետև Երեմիա մահ գուշակել նմա՝ ի նմին տարուջ. որ և եղև իսկ:

Լբ. Չարիս սուտ մարգարէիցն որ ՚ի Բաբելոն էին մարգարէանայ յառաջագոյն. և ժողովրդեանն ընդ երկար ժամանակս գերութեան. բայց սակայն թէ լինելոց է դարձ ՚ի Տեառնէ. և ընդ այն բարկանայր Սամեա, և սաստի քահանային, թէ ընդէր ո՛չ արգելու գերեմիա յայնպիսի մարգարէութենէ. և վասն այնորիկ սպառնայ Աստուած նմա կորուստ:

Լգ. Ապա և պատգամ մխիթարութիւն Իսրայէլի գուշակէ, և զժամանակն յոր ելանելոց էին ՚ի Բաբելոնէ, այն էր պասեքն, որ և յեզր իսկ է գտանել: Եթէ ՚ի տօնի բաղարջակերացն ելին. ապա ուրեմն յայտ յանդիմանին Յրէայքն սուտք. զի որում յայսմ վայրի բարութիւնք գրեալ է լինել նոցա, տակաւին ակն ունին. և այն անց և կատարեցաւ:

Լդ. Վասն մանկտւոյն որ ՚ի Յերովդէտ կոտորելոց էին:

Լե. Վասն նորոյ ուխտիս մարգարէութիւն. և որ յայսմ վայրի շինութիւն գրեալ է քաղաքին՝ այնմ տակաւին ակն ունին Յրէայք, և այն վախճան առ յորժամ ելինն ՚ի Բաբելոնէ:

Լզ. Յրաման առնու Երեմիա գնել զագարակն հօրեղբօրն իւրում. գնեաց և ասէ. Քաղաքս մատնեցաւ և հրամայես գնել ագարա՞կ: Իսկ Աստուած ասէ ցնա. Չարիք որ հասին վասն մեղաց ժողովրդեանդ են. բայց եղիցի ժամանակ յորժամ դարձեալ բնակեսցէ քաղաքդ:

Լէ. Կանխաւ գուշակէ Սեդեկիայ թէ ըմբռնելոց է, և պատուհասէ զայնոսիկ որք զժառայսն ազատեցին, և դարձեալ արկին ՚ի ծառայութիւն, և սպառնայ թէ մեծամեծ չարիք հասանելոց են նոցա. վասն այնորիկ հրաման տայ որդւոցն Յովնադաբայ ըմպել գինի, և նոքա չունէին յանձին:

Լը. Յրաման առնու Երեմիա գրել զոր ինչ մարգարէանայ ՚ի վերայ Իսրայէլի. զի գոնէ յայնժամ երկնչիցին, յորժամ լսիցեն թէ չարիք ՚ի վերայ հասանելոց են նոցա. և նա պատուիրեաց Բարուքայ գրել. գրեաց և ընթերցաւ առաջի Յրէիցն. իբրև լուան իշխանքն՝ պատմեցին Յովակիմայ արքայի, և նա ա՛ռ զգիրն, կտրեաց և այրեաց: Յրաման ա՛ռ Երեմիա այլ գիր զնոյն օրինակ գրել. և մարգարէանայ թագաւորին չարիս վասն յանդգնութեանն:

Լթ. Մարգարէանայ դարձեալ թէ առնլոց է Երուսաղէմ. ունին գերեմիա և արկանեն ՚ի բանտ. հանեն անտի և ածեն միւսանգամ առ Սեդեկիա, և ասէ ցնա թէ առնլոց է քաղաքս. և աղաչէ միւսանգամ անդրէն ՚ի բանտ չհրամայել. առին զնա իշխանքն և արկին ՚ի գուր տղմոյն. և հան զնա անտի Աբդամելէք. կոչեցաւ դարձեալ ՚ի թագաւորէն, և գուշակէ նմա փրկութիւն՝ եթէ կամօք ելցէ առ թշնամիսն. ապա թէ ո՛չ՝ սատակումն քաղաքին, և նմա մեծամեծ չարիք հասցեն. իբրև չա՛ռ յանձն ելանել. եկն խուժադուժ Քաղդեացին և ա՛ռ զքաղաքն Սեդեկիաւ հանդերձ. և Երեմիայի դիւրութիւն արարին իշխանքն Նաբուքոդոնոսորայ, զի այնպէս ունէին հրաման:

Խ. Աբդամելէքայ խոստանայ փրկութիւն. և ինքն ա՛ռ կամակարութիւն ՚ի

դահճապետէն՝ երթալ ուր և կամիցի. գա՛յ առ Գողոթիա՝ զոր կացոյց իշխան մնացորդացն Զրէաստանի. ժողովեցան առ նա և Զրէայքն ցրուեալք: Սպանանէ Իսմայէլ զԳողոթիա, և զայլս ոմանս, և առնու զժողովուրդն և երթայ յաշխարհն Ամոնացոց:

Խա. Իբրև զայն ետես Յովնան մի յիշխանացն որ էր մտերիմ բարեկամ Գողոթիայ, ՚ի վերայ չոգաւ, և փախստական լինէր ութ միայն արամբք Իսմայէլ. ա՛ռ զժողովուրդն իւր Յովնան և դարձաւ: Աղաչեցաւ Երեմիա ՚ի Յովնանանց աղօթս մատուցանել վասն նոցա առ Աստուած. մատոյց աղօթս և խրատ ետ նոցա չերթալ յեգիպտոս. Մա՛հ սպառնայ ասէ Աստուած թէ ոք անդր պանդուխտ երթիցէ. և չանսացին: Իբրև եկին մինչև ՚ի Տափնաս՝ պատուէր ետ նոցա ո՛չ կռապաշտել. իբրև ընդ հակառակս ելանէին՝ զուշակէ նոցա սատակումն մեծ լինել, և թագաւորին եգիպտացոց:

Խբ. Ջկորուստ Եգիպտացոցն յառաջագոյն զուշակէ, և զայլազգեացն, և զՄովաբացոց, և զԱմոնացոց, և զԵդովմայեցոց:

Խգ. Ջկորուստն Դամասկոսի և զԵլամայ յառաջագոյն ասէ. և զԲաբելացոցն և զԵլս Զրէիցն:

Խդ. Եւ թէ զիա՞րդ առաւ Երուսաղէմ, և զի յանարգութենէ ՚ի պատիւ եկն Յովակիմ, որ կամօքն ետ ձեռս ՚ի Նաբուքոդոնոսոր մա՛րբն հանդերձ:

Խե. Թուղթն Բարուբայ, զոր գրեցին ՚ի Բաբելոնէ յԵրուսաղէմ:

Խզ. Ողբքն Երեմիայի:

ԳԻՐՔ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ*

1

Գլուխ Ա

Ա ¹Պատգամն Աստուծոյ, որ եղև ՚ի վերայ Երեմիայի Քեղկեայ, ՚ի քահանայի՛ց անտի՝ որ բնակեալ էր յԱնաթովթ յերկրին Բեմիամիմի*։ ²Առ որ եղև բան Տեառն յաւուրս Յովսիայ որդւոյ Ամոնայ արքայի Զրէաստանի. յերեքտասաներորդի ամի թագաւորութեան նորա։ ³Եւ եղև յաւուրս Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Զրէաստանի, մինչև ՚ի վախճան մետասաներորդի ամին Սեղեկիայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ՝ ցգերութիւնն Երուսաղէմի, յամսեանն հինգերորդի։ ⁴Եղև բան Տեառն առ իս և ասէ*։ ⁵Մինչչև՝ ստեղծեալ էիր յորովայնի, զիտեմ զքեզ. և մինչչև՝ ելեալ էիր յարգանդէ, սրբեցի՛ զքեզ. մարգարէ՛ ՚ի հեթանոսս եղի՛ զքեզ*։ ⁶Եւ ասեմ. Որ Ե՛սդ Տէր Տէր. ահաւասիկ և խօսել իսկ ո՛չ զիտեմ, զի մանուկ եմ ես։ ⁷Եւ ասէ ցիս Տէր. Մի՛ ասեր եթէ մանուկ եմ ես. զի առ ամենեսեան առ որս առաքեցից զքեզ՝ երթիցես. և ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեցից քեզ՝ խօսեսցիս։ ⁸Մի՛ երկիցես յերեսաց նոցա՝ զի ընդ

* Բաց յընտրելագոյն օրինակաց որք համեմատ մերումս ունին զվերնագիրս, յայլոց անտի ոմանք դնեն Երեմիա Մարգարէ. և օրինակ մի. Մարգարեութիւն Երեմիայ:

* Ոսկան. Պատգամ Աստուծոյ... որք բնակեալ էին յԱնաթ*:

* Բազումք. Եւ եղև բան Տեառն:

* Բազումք. Ստեղծեալ էր զքեզ յորովայնի:

քե՛զ եմ 'ի փրկել զքեզ՝ ասէ Տէր*։⁹ Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս՝ և մերձեցոյց 'ի բերան իմ, և ասէ ցիս. Ահա ետո՛ւ զբանս իմ 'ի բերան քո. ¹⁰ահա՛ կացուցի՛ զքեզ այսօր 'ի վերայ ազգաց և թագաւորութեան, խլել և բրել, կորուսանել և յատակել, շինել և տնկել*։ ¹¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. Չի՞նչ տեսանես Երեմիա: Եւ ասեմ. Գաւազան ընգուզի՛ տեսանեմ ես: ¹²Եւ ասէ ցիս Տէր. Բարւո՛ք տեսանես. զի զարթուցեալ եմ 'ի բանս իմ առնել՝ զնոսա*։ ¹³Եւ եղև բան Տեառն առ իս կրկին՝ անգամ և ասէ. Չի՞նչ տեսանես: Եւ ասեմ. Կատսա՛ յեռանդան տեսանեմ ես, և երեսք նորա յերեսաց հիւսւսոյ: ¹⁴Եւ ասէ ցիս Տէր. Յերեսաց հիւսւսոյ բորբոքեսցին չարիք 'ի վերայ բնակչաց երկրի: ¹⁵Չի՛ ահաւասիկ ես միախուռն կոչեցից զամենայն թագաւորութիւնս թագաւորութեանց՝ 'ի հիւսւսոյ երկրէ՝ ասէ Տէր. եկեսցեն և արկցեն զիրաքանչիւր աթոռ 'ի վերայ սենոց դրանցն Երուսաղեմի, և 'ի վերայ ամենայն պարսպացն նորա շուրջանակի, և 'ի վերայ ամենայն քաղաքաց Յրէաստանի*։ ¹⁶Եւ խօսեցայց դատաստանա՛ւ ընդ նոսա վասն ամենայն չարեաց իւրեանց. զի թողին զիս և զոհեցին աստուածո՛ց օտարաց, և երկիր պագին գործոց ձեռաց իւրեանց: ¹⁷Եւ դու պնդեա՛ զմէջ քո, արի՛ և ասա՛ նոցա զամենայն զոր միանգամ ես պատուիրեմ քեզ. մի՛ երկիցես յերեսաց նոցա, և մի՛ զանգիտիցես առաջի նոցա. զի ընդ քե՛զ եմ ես՝ 'ի փրկել զքեզ ասէ Տէր*։ ¹⁸Բայց ես ահաւաղիկ եղի՛ զքեզ այսօր իբրև զքաղաք ամուր. և իբրև զսիւն երկաթի, և իբրև զպարիսպ պղնձի ամուր, ամենայն թագաւորաց Յրէաստանի և իշխանաց նորա, և քահանայից նորա, և ժողովրդեան երկրին*։ ¹⁹Եւ մարտիցեն ընդ քեզ՝ և քեզ ինչ ո՛չ կարիցեն ստնանել. զի ես ընդ քե՛զ եմ 'ի փրկել զքեզ ասէ Տէր*։

2

Գլուխ Բ

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Ե՛րբ և ընթերցի՛ր յականջս որդւոցն Երուսաղեմի՝ և ասասցես. Ա՛յսպէս ասէ Տէր. Յիշեցի զքեզ՝ և զգութ մանկութեան քոյ, և զսէր կատարման քոյ՝ 'ի գալն քեզ զհետ Սրբոյն Իսրայէլի: Ասէ Տէր, ³Սուրբն Իսրայէլի. Տեառն է սկիզբն արմտեաց նորա. ամենեքեան որ ուտեն զնա զղջասցին. չարիք հասցեն 'ի վերայ նոցա՝ ասէ Տէր*։

Բ ⁴Լուարուք զբան Տեառն տունդ Յակոբայ՝ և ամենայն ազգ տանդ Իսրայէլի: ⁵Ա՛յսպէս ասէ Տէր. Չի՞նչ վնաս գտին յիս հարքն ձեր զի հեռացան յինէն, և զնացին զհետ սնտեաց և սնտի եղեն. ⁶և ո՛չ ասացին. Ուր է Տէր որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, և առաջնորդեաց մեզ յանապատին, յանբաւ՝ և յանկոխ՝ և յանջուր՝ և յանպտուղ երկրին և 'ի ստուերս մահու. յերկիր՝ ընդ որ ո՛չ անց

* Ոսկան. Չի ես ընդ քեզ եմ 'ի փր՞:

* Ոսկան. Եւ թագաւորութեանց: Ոմանք. Յատակել և շինել:

* Ոմանք. Չարթուցեալ եմ ես 'ի:

* Օրինակ մի. Միախամուռ կոչեցի զամենայն:

* Ոմանք. Եւ ասա՛ ցնոսա զամենայն զոր միանգամ պատուի՞:

* Ոսկան. Եւ իշխանաց նոցա: Ոմանք. Եւ քահանայից նոցա:

* Ոմանք. Ոչ կարացեն ստնանել:

* Ոմանք. Ամենեքին որ ուտիցեն զնա:

մարդ, և ո՛չ բնակեաց ՚ի նմա որդի մարդոյ* .⁷ և տարաւ զմեզ ՚ի Քերմէլ, ուտել զպտուղ նորա և զբարութիւնս: Եւ մտէք և պղծեցէք զերկիրն իմ, և զժառանգութիւն իմ եղիք ՚ի պղծութիւն* :⁸ Եւ քահանայքն ո՛չ ասացին. Ուր է Տէր. և վերակացուք օրինաց իմոց ո՛չ ծանեան զիս, և հովիւքն ամպարշտեցան յիս. և մարգարէքն մարգարէանային Բահաղու. և զկնի անշահիցն երթային: ⁹ Վասն այնորիկ տակաւին դատեցայց ընդ ձեզ՝ ասէ Տէր, և ընդ որդիս որդւոց ձերոց դատեցայց: ¹⁰ Արդ անցէք ընդ կղզիս Քետիմացւոց և տեսէք. և ՚ի Կեդա՛ր առաքեցէք՝ և խելանո՛ւտ եղերուք յոյժ. և տեսէք եթէ եղև՝ այսպիսի ինչ* .¹¹ Եթէ փոխեցին ազգքն զաստուածս իւրեանց, և նոքա ո՛չ են Աստուածք. և ժողովուրդ իմ փոխեաց զՓառս իւր, ուստի ո՛չ օգտիցին* :¹² Յիմարեցան երկինք վասն այսորիկ և սոսկացան յոյժ՝ ասէ Տէր. ¹³ զի երկուս չարիս գործեաց ժողովուրդ իմ. զիս թողին զաղբելս ջրոյ կենդանոյ. և փորեցին իւրեանց գուբս ծակոտս, որք ո՛չ կարացին ունել ջուր* :¹⁴ Միթէ ծառա՞յ իցէ Իսրայէլ, կամ ստրո՞ւկ Յակոբ, զի եղեն յաւար. ¹⁵ ՚ի վերայ նորա գոչեցին առեւծք, և ետուն զձայնս իւրեանց, որ արարին զերկիր նորա աւերակ. և քաղաքք նորա կործանեցան առ ՚ի չգոյէ բնակչաց* .¹⁶ և որդիքն Մենփացւոց և Տափնացւոց՝ ծանեան զքեզ և այսպանեցին: ¹⁷ Ոչ ապաքէն թողո՞ւլն զիս արար քեզ զայդ ասէ Տէր Աստուած քո. ՚ի ժամանակի ածելոյն զքեզ ընդ անապատն* :¹⁸ Եւ արդ՝ զի՞նչ կայ քո և ճանապարհին Եգիպտացւոց, ըմպել քեզ զջուր Գեհոնի. և զի՞նչ քո և ճանապարհին Ասորեստանեայց ըմպել զջուրն գետոց* :¹⁹ Իսրատեսցէ՛ զքեզ ապստամբութիւնդ քո, և չարիք քո կշտամբեսցեն զքեզ. և ծանիցես և տեսցես, թէ չա՛ր և դառն է քեզ թողուլն զիս՝ ասէ Տէր Աստուած քո. և ո՛չ հաճեցայ ընդ քեզ՝ ասէ Տէր Աստուած քո* :²⁰ Ձի յաւիտենի՛ց խորտակեցեր զլուծն քո, և խզեցեր դու զկապանս քո. և ասացեր թէ ոչ ծառայեցից. այլ գնացից ՚ի վերայ ամենայն բլրոց բարձանց, և ՚ի ներքոյ ամենայն հովանաւոր ծառոց՝ և անդ շռայլեցայց ՚ի պոռնկութիւն* :²¹ Եւ ես տնկեցի զքեզ ո՛րթ պտղաբեր ամենակն ճշմարիտ. զիարդ դարձար ինձ ՚ի դառնութիւն ո՛րթդ օտարացեալ: ²² Եթէ լուսացիս բարակաւ, և յաճախեսցես քեզ աճառս. սակայն ծրդեալ՝ կաս յանիրաւութիւնս քո առաջի իմ՝ ասէ Տէր Տէր* :²³ Ձիա՞րդ ասիցես թէ ո՛չ պղծեցայ, և զիետ Բահաղու ո՛չ գնացի. տես զճանապարհս քո ՚ի գերեզմանս, և ծանի՛ր զինչ գործեցեր* :²⁴ Ընդ երեկոյս ձայն լալոյ նորա գութեաց՝ ՚ի ճանապարհս իւր. յաճախեաց ՚ի ջուրս անապատի. ըստ ցանկութեան անձին իւրոյ այսակիր եղև: Մատնեցաւ, և ո՞ դարձուցէ զնա. ամենեքեան որ խնդրիցեն զնա ո՛չ

* *Ոմանք.* Եգիպտացւոց, որ առաջնորդեաց մեզ յանապատն... յերկիր ուր ոչ անց մարդ:

* *Ոմանք.* Չմեզ ՚ի Քարմէլ:

* *Ոսկան.* Քետիմացւոց:

* *Ոմանք.* Եթէ փոխիցեն ազգն... և նոքա չեն աստուածք:

* *Ոմանք.* Թողին զաղբելս ջրոց կենաց. և փո՞... որ ոչ կարիցեն ունել զջուր: *Ոսկան կրկնէ.* Իւրեանց գուբս գուբս ծակոտս:

* *Ոմանք.* Ձերկիր նորա յաւերակ:

* *Ոմանք.* Արար քեզ զայն... ածելոյն զքեզ ընդ ճանապարհն:

* *Ոմանք.* Եւ այժմ զի՞նչ կայ քո... զջուրն Գեհովնայ. և զի՞նչ կայ քո և ճանա՞:

* *Ոմանք.* Եւ ասիցես և տեսցես՝ թէ չա՛ր:

* *Ոմանք.* Այլ երթայց ՚ի վերայ ամենայն բլրոց... անդ շռայլեցայց ՚ի պոռնկութեան: *Ուր Ոսկան.* պոռնկութեամբ:

* *Ոմանք.* Եւ եթէ լուսացիս... քեզ աւճառ... կաս յանօրէնութիւնս քո:

* *Ոմանք.* Եւ զիետ Բահաղու ո՛չ չոգայ:

աշխատեսցին. Ի տառապանս նորա գտցես զնա*։ ²⁵Դարձո՛ւ զսիրտ քո ՚ի խի՛ստ ճանապարհէ, և զկոկորդ քո ՚ի ծարաւոյ. և նա ասէ կարօ՛ղ եմ. քանզի սիրէր զօտարոտիս՝ և երթայր զհետ նոցա։ ²⁶Որպէս ամաչիցէ՛ գող յորժամ ըմբռնիցի, այնպէս ամաչեսցեն որդիքն Իսրայէլի, ինքեանք և թագաւորք իւրեանց, և իշխանք իւրեանց, քահանայք իւրեանց, և մարգարէք իւրեանց*։ ²⁷Յփայտն ասացին թէ հայր իմ ես դու. և քարին՝ թէ դո՛ւ ծնար զիս. և դարձուցին յիս՝ զթիկունս և ո՛չ զերեսս իւրեանց. և ՚ի ժամանակի չարեացն իւրեանց ասացեն. Արի՛ և փրկեա՛ զմեզ*։ ²⁸Եւ ո՞ւր են աստուածքն քո զոր արարեր քեզ. յարիցեն և փրկեսցեն զքեզ ՚ի ժամանակի չարեաց քոց. զի ըստ թուոյ քաղաքացն քոց էին քեզ աստուածքն քո Յուդա, և ըստ թուոյ անցիցն Երուսաղէմի զոհէիք Բահաղու*։ ²⁹Արդ՝ ընդէ՞ր խօսիք ընդ իս. զի ամենեքեան դուք ամպարշտեցայք, և ամենեքեան դուք անօրինեցայք յիս՝ ասէ Տէր։ ³⁰Չո՛ւր հարի զորդիսն ձեր, և խրատ դուք ո՛չ ընկալարուք, սո՛ւր եկեր զմարգարէսն ձեր. իբրև առեւծ սատակէր, և ո՛չ զարհուրեցարուք։ ³¹Լուարո՛ւք զպատգամս Տեառն. Այսպէս ասէ Տէր. միթէ անապա՞տ եղէ տանդ Իսրայէլի, կամ ակեր երկիր խոպանացեա՞լ. զի ասաց ժողովուրդ իմ. Անտերո՛ւնչք շրջեսցուք՝ և առ քեզ ո՛չ եկեսցուք*։ ³²Միթէ մոռացի՞՞ հարսն զգարդ իւր, կամ կոյս զլանջագեղ կամար իւր. բայց ժողովուրդ իմ մոռացաւ զիս զաւուրս անթիւս*։ ³³Չի՞նչ ևս բարի հնարեսցիս ՚ի ճանապարհս քո խնդրել զհաշտութիւն. ո՛չ այդպէս, այլ և դո՛ւ իսկ անզգամեցար պղծել զճանապարհս քո*։ ³⁴Եւ ՚ի ձեռս քո գտաւ արիւն անձանց տնանկաց անմեղաց. ո՛չ ՚ի վիհս գտի զնոսա, այլ առ ամենայն կաղնեօք։ ³⁵Եւ ասացեր թէ անմեղ եմ, դարձցի՛ սրտմտութիւն նորա յինէն։ Ահաւասիկ ե՛ս դատեցայց ընդ քեզ, զի ասացեր թէ ո՛չ մեղայ։ ³⁶Չի արհամարհեցեր յոյժ կրկնեալ զճանապարհս քո. և յեգիպտոսէ՛ ամաչեսցես՝ որպէս ամաչեցերն յԱսորեստանւոյն*։ ³⁷Քի և անտի՛ ևս ձեռս ՚ի զլուխ ելցես. զի մերժեաց Տէր գոյսն քո, և ո՛չ ևս աջողեսցիս ՚ի նմա*։

3

Գլուխ Գ

¹Եթէ արծակեսցէ այր զկին իւր, և զնացէ՛ ՚ի նմանէ՛ և լինիցի անն այլում. եթէ դառնալո՛ւ վ դարձցի անդրէն ՚ի նոյն. ո՞չ ապաքէն պղծելով պղծիցի կինն այն. և դու պոռնկեցար ընդ հովիւս բազումս, և ո՛չ դարձար առ իս՝ ասէ Տէր*։ ²Ամբարձ զաչս քո յուղղութիւն՝ և տես. ո՞ւր ոչ թաթաւեցար ՚ի ճանապարհս քո. նստար

* *Յօրինակին.* Ըստ մանկութեան անձին իւրոյ։ *Ոմանք.* Անձին իւրոյ այսաբեկ լինէր... որ խնդրեսցեն զնա... նորա գտցեն զնա։

* *Ոմանք.* Որպէս ամաչեսցէ գող յորժամ ըմբռնեսցի... և քահանայք իւրեանց։

* *Ոմանք.* Չի փայտին ասացին եթէ։

* *Ոմանք.* Չոհէին Բահաղու։

* *Ոմանք.* Լուարուք զպատգամ Տեառն։ *Ոսկան.* Միթէ անապատ եղել տունդ Իսրայէլի։

* *Ոմանք.* Եւ կոյս զլանջագեղ։

* *Ոմանք.* Բարիս հնարեսցես... այլ դու իսկ անզգա՞։

* *Ոմանք.* Կրկնել զճանապարհս քո։

* *Ոմանք.* Չեռն ՚ի զլուխ ելցես։

* *Ոմանք.* Եթէ դարձցի անդրէն... պղծեսցի կինն այն, և դու պղծեցար ընդ հոմանիս բազումս, և դարձար. *կամ՝* դարձ առ իս՝ ասէ Տէր։

դու նոցա իբրև ագռաւ միայնացեալ թափուր. և պղծեցեր զերկիրդ պոռնկութեամբ քո՝ և չարեօք քովք*.³ և ստացար հովիւս բազումս ՚ի գայթակղութիւն քեզ. երեսք կնոջ պոռնկի՝ եղեն քեզ. անամօթեցար առ ամենեսեան*:⁴ Ոչ իբրև զՏէր կոչեցեր զիս. հայր և իշխան կուսութեան քո*:⁵ Սիթեալ յաւիտեան՝ կայցէ, կամ ՚ի սպա՞ռ պահեսցի. ահա խօսեցար՝ և արարեր զայդ ամենայն չարիս՝ և զօրացար*:

Գ⁶ Եւ ասէ ցիս Տէր յաւուրս Յովսիայ արքայի. Տեսե՞ր զինչ գործեաց բնակիչդ Իսրայէլի. գնաց առանձինն ՚ի վերայ ամենայն լերանց բարձանց՝ և ՚ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոց, և անդ պոռնկեցաւ*:⁷ Եւ ասացի յետ այնչափ պոռնկութեան նորա. Դարձ առ իս, և ո՛չ դարձաւ. և ետես զցոփութիւն նորա ուխտադրուծն Յուդա*:⁸ Եւ տեսի թէ յամենայնի որովք շնացաւ բնակիչն Իսրայէլի ըմբռնեցաւ. արձակեցի՞ զնա, և ետո՞ւ նմա թուղթ ապահարզանի ՚ի ձեռս նորա. և ո՛չ զարհուրեցաւ ուխտադրուծն Յուդա քոյր նորա. այլ գնաց և պոռնկեցաւ և նա*:⁹ Եւ եղև յոչինչ պոռնկութիւն նորա. և շաղախէր զերկիրն, զի շնայր ընդ քարի և ընդ փայտի*:¹⁰ Եւ ՚ի վերայ այսր ամենայնի ո՛չ դարձաւ առ իս ուխտադրուծ քոյր նորա Յուդա՝ յամենայն սրտէ իւրմէ, այլ ստութեամբ՝ ասէ Տէր: ¹¹ Եւ ասէ ցիս Տէր. Արդարացո՞յց զանձն իւր ապստամբութիւնն Իսրայէլի առ ուխտագանցութեամբն Յուդայ: ¹² Այլ ե՛րթ և ընթերցի՞ր զպատգամս զայսոսիկ ՚ի կողմանս հիւսւսոյ, և ասացես. Դարձ առ իս բնակիչդ Իսրայէլի՝ ասէ Տէր. և ո՛չ հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ ձեր, զի ողորմած եմ ես՝ ասէ Տէր. և ո՛չ պահեցից ձեզ դիս յաւիտեան*:¹³ Բայց ծանի՛ր զանիրաւութիւնս քո, զի ՚ի Տէր Աստուած քո ամպարշտեցար. և տարածեցեր զճանապարհս քո օտարաց ՚ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոց. և ձայնի իմում ո՛չ լուար՝ ասէ Տէր*:¹⁴ Դարձարու՛ք առ իս որդիք հեռացեալք՝ ասէ Տէր, զի ես տիրեցից ձեզ. և առից զձեզ մի ՚ի քաղաքէ՝ և երկուս յազգէ, և տարայց զձեզ ՚ի Սիւլմ*:¹⁵ և տաց ձեզ հովիւ ըստ սրտի իմում. և հովուելով հովուեսցեն զձեզ իմաստութեամբ*:¹⁶ Եւ եղիցի եթէ բազմանայցէք և աճիցէք ՚ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ՝ ասէ Տէր, ո՛չ ևս ասիցեն. Տապանակ կտակարանաց Սրբոյն Իսրայէլի. և ո՛չ անկցի ՚ի սիրտ. և ո՛չ անուանեսցի ՚ի նմա. և ո՛չ ևս խնդրեսցի, և ո՛չ գործեսցի: Յաւուրսն յայնոսիկ*¹⁷ և ՚ի ժամանակին յայնմիկ կոչեսցեն զերուսաղէմ աթոռ Տեառն. և ժողովեսցին ամենայն ազգք յանուն Տեառն յերուսաղէմ. և ո՛չ ևս գնացեն

* *Ոմանք.* Ո՞ւր ոչ թաւափեցար... զերկիր պառնկութեամբ քով:

* *Բազումք.* Պոռնկի եղեն քո: *Ոսկան.* Անամօթացար:

* *Ի լուս.* Ոչ իբրև գտուն կոչեցեր զիս. *համաձայն ոմանց ՚ի բնաք:* Ուր և ոմանք. Ոչ իբրև գտուն և Տէր կոչեցեր զիս, և հայր և իշխան կուսութեան քում:

* *Ոսկան յաւելու.* Կայցէ *բարկութիւն քո*, կամ իսպառ պահիցի:

* *Ոմանք.* Բնակիչն Իսրայէլի:

* *Ոմանք.* Չցոփութիւնն ուխտադրո՞ւ:

* *Ոմանք.* Ընդ փայտի և ընդ քարի:

* *Բազումք.* Արդ ե՛րթ և ընթերցի՞ր զպատգամս զայս:

* *Ոմանք.* Ամենայն անտառախիտ փայտից. և ձայ՞:

* *Յօրինակին ՚ի բնաբանի գրեալ.* Ասէ Տէր... սիրեցից զձեզ, և առից զձեզ. *՚ի լուսանցս չակերտիւ. նշանակի ուղղագրեալ՝* տիրեցից զձեզ. *համաձայն բազմաց: Ուր օրինակ մի ունի.* Ասէ Տէր, զի ես ընկալայց զձեզ մի ՚ի քաղաքէ և. *և այլ օրինակ մի.* զի ես ընտրեցից զձեզ մի ՚ի քա՞:

* *Բազումք.* Եւ տաց ձեզ հովիւս ըստ:

* *Ոմանք.* Ո՛չ ևս ասացեն... և ո՛չ անկանիցի ՚ի սիրտ:

զհետ խորհրդոց սրտից իւրեանց չարաց*։ ¹⁸Յաւուրսն յայնոսիկ ժողովեսցին տունն Իսրայէլի առ տունն Յուդայ. և եկեսցեն ՚ի միասին ՚ի հիւսւտյ՝ և յամենայն գաւառաց յերկիրն յորում ժառանգեցուցի զհարս նոցա*։ ¹⁹Եւ եւս ասեն. Եղիցի՛ Տէր։ Ձի կարգեցի՛ց զձեզ յորդիս, և տա՛ց ձեզ զերկիրն ընտիր, ժառանգութիւն անուանի Աստուծոյ ամենակալի ազգաց. և ասացից թէ Յայր կոչեսցես զիս, և ո՛չ ևս դառնայցես յինէն*։ ²⁰Բայց որպէս անգոսնէ կին զամուսին իւր. այնպէս անգոսնեաց զիս տունդ Իսրայէլի՝ ասէ Տէր*։ ²¹Չայն ՚ի շրթանց գութեաց՝ լալոյ և պաղատանաց որդւոցն Իսրայէլի. զի անիրաւեցան ՚ի ճանապարհս իւրեանց և մոռացան զԱստուած Սուրբն իւրեանց*։ ²²Դարձարո՛ւք որդիք՝ դարձիք, և ես բժշկեցից զբեկունն ձեր. և ասացին. Աւասիկ կամք. զի դո՛ւ ես Տէր Աստուած մեր*։ ²³Արդարև՝ սո՛ւտ իսկ էին բլուրք և զօրութիւնք բարձանց. բայց ՚ի ձեռն Տեառն Աստուծոյ մերոյ է փրկութիւն տանն Իսրայէլի*։ ²⁴Եւ ամօք մաշեաց զվաստակս հարցն մերոց ՚ի մանկութենէ իւրեանց. զխաշինս նոցա և զանդեայս, և զուստերս և զդստերս իւրեանց*։ ²⁵Ննջեցաք ամօթով մերով, և ծածկեցին զմեզ անարգանք մեր. քանզի առաջի Աստուծոյ մերոյ մեղաք մեք և հարքն մեր ՚ի մանկութենէ մինչև ցայսօր. և ո՛չ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ*։

4

Գլուխ Դ

Դ ¹Եթէ դարձցի՛ առ իս Իսրայէլ՝ ասէ Տէր Տէր, դարձցի՛. և եթէ ընկեսցէ զգարչելիս իւր ՚ի բերանոյ իւրմէ. վասն Աստուծոյ Երուսաղէմի, և յերեսաց ինոց երկիցէ*։ ²և երդնուցու՛ թէ կենդանի է Տէր ճշմարտութեամբ՝ և իրաւամբք՝ և արդարութեամբ. օրհնեսցին նովաւ ազգք, և նոքիմբք գովեսցին*։ ³Ձի այսպէս ասէ Տէր ցարսդ Յուդայ և ցբնակիչսդ Երուսաղէմի. Յերկեցէ՛ք ձեզ հերկս, և մի՛ սերմանէ՛ք ՚ի վերայ փշոց։ ⁴Թլփատեցարո՛ւք Աստուծոյ ձերուն, և թլփատեցէ՛ք զանթլփատութիւն սրտից ձերոց արք Յուդայ և բնակիչք Երուսաղէմի. գուցէ ելլանիցէ իբրև զհո՛ւր սրտմտութիւն իմ. բորբոքեսցի, և ո՛չ ոք իցէ որ շիջուցանիցէ յերեսաց չար գործոց ձերոց*։ ⁵Գո՛յժ տուր ՚ի Յրեաստան. լու՛ լիցի յերուսաղէմ. և ասացէ՛ք. Փո՛ղ հարէք ՚ի վերայ երկրին. զաղաղակ բարձէք. զոգէք. ժողովեցարո՛ւք և մտէք ՚ի քաղաքս պարսպաւորս*։ ⁶Առէ՛ք՝ փախերո՛ւք ՚ի

* *Ոմանք.* Ոչ ևս գնայցեն զհետ խորհրդոց իւրեանց։

* *Ոմանք.* Տունն Յուդայ առ տունն Իսրայէլի... յորում ժառանգեցուցից։

* *Ոմանք.* Եւ ասացի թէ Յայր կո՛ւ։

* *Ոսկան.* Անգոսնեսցէ կին զհոմանի իւր։

* *Ոմանք.* Լալիւն և պաղատանաց... և անիրաւեցան ՚ի ճա՛։

* *Ոմանք.* Դարձցիք, և ես բժշ՛... ահաւասիկ կամք։

* *Ոմանք.* Բլուրքն և զօրութիւնք լերանց... փրկութիւնն Իսրայէլի։

* *Ոմանք.* Ձխաշինս իւրեանց։

* *Ոմանք.* ՚Ի մանկութենէ մերմէ, *կամ՝* իւրեանց մինչև։

* *Ոմանք.* Ասէ Տէր. Դարձցի... վասն Աստուծոյ յերուսաղէմ։

* *Ոմանք.* Եթէ կենդանի է... և նովին. *կամ՝* նովիմբ գովեսցին։

* *Ոմանք.* Յերեսաց չարաց. *կամ՝* չարեաց գործոցն։

* *Ոմանք.* Լուր լիցի յերուսաղէմ... և մտցուք ՚ի քաղաքս։

Սիովն. փութացարո՛ւք՝ մի՛ կայք. զի ածից ես չարիս 'ի հիւսւսոյ, և բեկումն մեծ*:
⁷Ե՛լ առեւօ 'ի մորոյ իւրմէ սատակե՛լ զագգս. խաղաց և ել 'ի տեղոջէ իւրմէ՝
առնել զերկիր քո աւերակ. և քաղաքք քո քակտեցին առ 'ի չգոյէ բնակչաց 'ի
նոսա: ⁸Ի վերայ այդորիկ քրծագգա՛ծ եղերուք՝ կոծեցարո՛ւք, ճի՛չ բարձէք. զի ո՛չ
դարձաւ սրտմտութիւն բարկութեան Տեառն 'ի ձե՛նջ*:⁹Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝
ասէ Տէր. կորիցէ՛ սիրտ թագաւորին՝ և սիրտ իշխանացն. քահանայքն
յիմարեցին, և մարգարէքն զարմացին: ¹⁰Եւ ասեմ. Ո՛ր Տէր Տէր, խաբելով
ուրեմն խաբեցեր զժողովուրդն զայն՝ և զերուսաղէմ. զի ասացեր թէ
խաղաղութիւն եղիցի ձեզ, և հասանիցէ սուր մինչև յանձինս նոցա*:¹¹Ի
ժամանակին յայնմիկ ասացես ցժողովուրդդ ցայդ՝ և ցերուսաղէմ. Այս
մոլորութեան յանապատի: Ճանապարհ դստեր ժողովրդեան իմոյ՝ ո՛չ 'ի
մաքրութիւն և ո՛չ 'ի սրբութիւն*. ¹²Ոգի՛ լրութեան 'ի նոցանէ եկեցէ ինձ:
Այսուհետև ե՛ս խօսեցայց ընդ նոսա դատաստանօք իմովք: ¹³Ահա իբրև զա՛մպ
ելցէ՛ և իբրև զմրրիկ կառք նորա. արագագոյն քան զարծուիս երիվարք նորա:
Վայ՛ մեզ՝ զի չուառացաք*:¹⁴Լուա՛ 'ի չարեաց զսիրտ քո Երուսաղէմ՝ զի
ապրեցիս. մինչև ցե՛րբ գտանիցին 'ի քեզ խորհուրդք ցաւոց քոց: ¹⁵Ձի ձա՛յն
գութկանի 'ի Ղանայ, և լուիցին ցաւք 'ի լեռնէ Եփրեմի: ¹⁶Գո՛յժ արկէք զայս
ազգաց. ահաւաղիկ հասեալ են յերուսաղէմ. պատմեցէ՛ք թէ գունդք զան յերկրէ
հեռաստանէ, ձա՛յն ետուն 'ի քաղաքս Զրէաստանի*. ¹⁷Իբրև պահապանք
ազարակի շուրջ պատեցան զնովաւ: Ձի անփոյթ արարեր զինն՝ ասէ Տէր:
¹⁸Ճանապարհք քո և գնա՛ցք քո արարին քեզ զայդ ամենայն. այդ իսկ է
չարութիւն քո՝ և դառնութիւն, զի եհաս 'ի սրտի քում*: ¹⁹Որովայն իմ, որովայն
իմ ցաւէ՛, և ճաշակելիք սրտի իմոյ հեծէ՛. սիրտ իմ զելու, և անձն իմ ո՛չ
դադարեցէ. զի ձայն փողոյ՛ լուաւ անձն իմ, զգո՛յժ պատերազմի և
զթշուառութեան*: ²⁰Բեկո՛ւմն 'ի վերայ բեկման. բողոք բարձէք, զի թշուառացաւ
ամենայն երկիր յանկարծակի. չուառացաւ խորանն, և քակտեցան փեղկք
խորանի իմոյ*: ²¹Մինչև յե՛րբ տեսանիցեմ փախստականս. լսիցեմ զձայն փողոյ:
²²Ձի իշխանք ժողովրդեան իմոյ զիս ո՛չ ծանեան. զի որդիք անմիտք են, և ո՛չ
հանճարեղք. իմաստունք են 'ի չար գործել, և զբարի ինչ առնել ո՛չ գիտացին*:
²³Չայեցայ յերկիր՝ և ահա թափուր, և ո՛չ ինչ գոյր, և յերկինս՝ և ո՛չ էր լոյս նոցա:
²⁴Տեսի՛ զլէրինս՝ և կային յերերի, և զամենայն բլուրս խռովեալս*. ²⁵հայեցայ՝ և
ահա ո՛չ գոյր մարդ. և ամենայն թռչունք երկնից սարսեցին: ²⁶Տեսի՛ և ահա
աւերակ էր Կարմելոս, և ամենայն քաղաքք նորա հրձիգք. յերեսաց Տեառն, և
յերեսաց բարկութեան սրտմտութեան նորա ապականեցան*: ²⁷Այսպէս ասէ Տէր.

* *Ոսկան.* Արի՛ք փախերուք 'ի Սիօն:
* *Յօրինակին.* Կոչեցարուք. ճի՛չ բար՛:
* *Ոմանք.* Բախելով ուրեմն բախեցեր զժո՛:
* *Ոմանք.* 'Ի ժամանակի յայնմիկ ասացեն... այս մոլութեան... 'ի ճանապարհ դստեր ժո՛:
* *Ոմանք.* Վայ՛ մեզ զի թշուառացաք:
* *Ոմանք.* Յուշ արարէք ազգաց. ահաւաղիկ:
* *Օրինակ մի.* Ձի եհար 'ի սրտի քում:
* *Ոմանք.* Սրտի իմոյ հեծէին. *կամ՝* հեծեն... պատերազմի և զշուառութեան:
* *Ոմանք.* Թշուառացաւ խորանն... փեղկքն խո՛:
* *Ոմանք.* Եւ զբարին առնել ոչ զի՛:
* *Յօրինակին.* Ձլերինս, և կային յերկրի:
* *Ոսկան.* Սրտմտութեան նորա ապականեցին:

Աւերեսցի երկիր ամենայն. և վախճան ո՛չ արարից՝: ²⁸Ի վերայ այսր ամենայնի սո՛ւգ առցէ երկիր՝ և խաւարեսցին երկինք ՚ի վերուստ. զի խօսեցայ՝ և ո՛չ զղջացայց, դիմեցի՝ և ո՛չ դարձայց ՚ի նոցանէն՝: ²⁹Ի ձայնէ հեծելոց և ՚ի գրկալիիր աղեղանց խուսեաց աշխարհն ամենայն, և սորեցին յայրս, և թաքեան յանտառս, և ելին ՚ի քարանձաւս. ամենայն քաղաքք լքան՝ և ո՛չ բնակէր ՚ի նոսա մարդ: ³⁰Եւ դու թշուառական զի՞ գործեսցես. եթէ կարմիր զգեցցիս, և զարդու ոսկւով զարդարեսցիս, և ամասցես ծիրանիս յաչս քո. ՚ի զո՛ւր են զարդարանքն քո. մերժեցին զքեզ հոմանիքն քո, և խնդրեն զքեզ՝: ³¹Ձի զձայն իբրև զերկանց անդրանկածնի լուայ զհեծութեան քոյ. ձայն դատեր Սիոնի մեղկասցի, և լքցէ զձեռս իւր. Վայ ինձ, զի պակասեաց անձն իմ ՚ի վերայ սպանելոցն՝:

5

Գլուխ Ե

¹Ընթացարո՛ւք յա՛յսկոյս և յայնկոյս ընդ ճանապարհս Երուսաղեմի. և տեսէ՛ք և ծաներո՛ւք և խնդրեցէ՛ք ՚ի հրապարակս նորա, եթէ գտանիցէք այր մի որ առնիցէ զիրաւունս, և խնդրիցէ հաւատս. և եղեց նոցա քաւիչ՝ ասէ Տէր՝: ²Եթէ ասիցեն կենդանի է Տէր. թպէտ և սո՛ւտ իսկ երդնուցուն: ³Տէր Տէր աչք քո ՚ի հաւատս. տանջեցեր զնոսա, և նոցա ո՛չ ցաւեաց. վախճանեցեր զնոսա, և ո՛չ կամեցան ընդունել զխրատ. կարծրացուցին զերեսս իւրեանց քան զվէմ, և ո՛չ կամեցան դառնալ: ⁴Եւ ես ասացի. Թերևս աղքատք իցեն. վասն այնորիկ ո՛չ կարացին իմանալ զճանապարհս Տեառն, և զիրաւունս Աստուծոյ՝. ⁵Երթայց առ հարուստսն՝ և խօսեցայց ընդ նոսա, թէ նոքա գիտացին զճանապարհ Տեառն և զիրաւունս Աստուծոյ. և նոքա աւանիկ առ հասարակ խորտակեցին զլուծն, և խզեցին զսամետէս՝: ⁶Վասն այնորիկ եհար զնոսա առեւծ յանապատի, և գայլ մինչև ՚ի տունս նոցա սատակեաց զնոսա. զարթեալ ինձ ՚ի վերայ քաղաքաց նոցա, և ամենեքեան որ ելանիցեն ՚ի նոցանէ՝ անկցին գէշ. զի յաճախեցին զամպարշտութիւնս իւրեանց, զօրացան յապստամբութեան իւրեանց՝: ⁷Որո՞վք այսոքիւք հաշտեցայց ընդ քեզ. որդիքն քո թողին զիս, և երդնուին ՚ի չաստուածսն. յազեցուցի զնոսա՝ և շնային, և ՚ի պոռնկանոցս օթեվանս առնէին՝: ⁸Ձիք մատակախանձք եղեն, իւրաքանչիւր ՚ի կին ընկերի իւրոյ վրընջէին՝: ⁹Սիթէ ՚ի վերայ այսր ամենայնի ո՞չ առնիցեն այցելութիւն՝ ասէ Տէր. կամ յազգէ այնպիսւոյ ո՞չ խնդրէ վրեժ անձն իմ՝:

* *Ի լուս*. Վախճան ինչ արա՛:

* *Ոմանք*. Եւ ոչ զղջացայ... և դարձայց ՚ի նմանէ:

* *Ոմանք*. Ձի գործեսցես թշ... և ամայես ծարիր... և խնդրեն զանձն քո: *Բազումք*. Եւ ամասցես ծարիր յաչս:

* *Ոմանք*. Եւ լքուցէ զձեռս իւր:

* *Ոմանք*. Յայսկոյս յայնկոյս ընդ ճանապարհն... առնէ իրաւունս:

* *Բազումք*. Տէր աչք քո ՚ի հաւ՛:

* *Ոմանք*. Եւ ասացի... վասն այնորիկ ոչ:

* *Ոմանք*. Թէ նոքա գիտացեն զճանապարհս... և խզեցին զսամետիս:

* *Այլք*. Առեւծ յանտառէ. *կամ*՝ յանտառի: *Ոմանք*. Անկանիցին գէշ:

* *Ոմանք*. Եւ ՚ի պոռնկոցս օթեանս:

* *Ոմանք*. Ձիք մատակախազք եղեն:

* *Ոմանք*. Ո՞չ խնդրիցէ վրեժ:

Ե ¹⁰Ելէք ՚ի մարտկոցս նորա և կործանեցէք. բայց վախճան մի՛ առնիցէք. թողէք զհիմունս նորա՝ զի Տեառն են: ¹¹Ձի արհամարհելով արհամարհեցի՛ն զիս տունն Իսրայէլի՝ և տունն Յուդայ, ասէ Տէր. ¹²ստեցի՛ն Տեառն իւրեանց, և ասեն. Ո՛չ ինչ է այդ. և ո՛չ եկեսցեն ՚ի վերայ մեր չարիք, և զսուր և զսով ո՛չ տեսցուք: ¹³Սարգարէքն մեր էին ՚ի հողմն, և բան Տեառն ո՛չ գոյր ՚ի նոսա. այնպէս եղիցի նոցա: ¹⁴Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած ամենակալ. Փոխանակ զի խօսեցայք զբանդ զայդ՝ ահաւասիկ ես ետու զբան իմ՝ ՚ի բերան քո հո՛ւր, և զժողովուրդդ զայդ փայտ. և կերիցէ՛ զնոսա՝: ¹⁵Ձի ահաւասիկ ես ածից ՚ի վերայ ձեր ա՛զգ ՚ի հեռաստանէ, տունդ Իսրայէլի՝ ասէ Տէր, ա՛զգ որ առաջին. ա՛զգ որ յաւիտենից. ազգ որոյ ո՛չ լսիցես զլեզուս նորա, և ո՛չ իմանայցես զխօսս նորա՝: ¹⁶Կապարճք նորա իբրև զգերեզմանս բա՛ց են. ամենեքին զօրաւորք: ¹⁷Եւ կերիցեն զհունձս ձեր՝ և զհաց. և կերիցեն զուստերս ձեր՝ և զդաստերս. և կերիցեն զոչխար և զարջառ ձեր. և կերիցեն զայգիս և զթգենիս ձեր և զձիթենիս. և կասեսցեն զամուր ամուր քաղաքս ձեր. և յորս դուքն պանծացեալ էք՝ սրով սատակեսցեն՝: ¹⁸Եւ եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր Աստուած քո. ո՛չ արարից զձեզ ՚ի վախճան: ¹⁹Եւ եղիցի յորժամ ասիցեն. Վասն է՞ր արար Տէր Աստուած մեր մեզ զայս ամենայն, ասիցես ցնոսա. Փոխանակ զի թողէք զիս՝ և ծառայեցէք աստուածոց օտարաց յերկրի ձերուն, նոյնպէս ծառայեսցիք օտարաց յերկրի՝ որ ո՛չ ձեր իցէ՛:

Ձ ²⁰Պատմեցէք զայդ ՚ի տուն Յակոբայ, և լսելի՛ լիցի ՚ի տուն Յուդայ, և ասացէք. ²¹Լուարո՛ւք զայս ժողովուրդք յիմար և անմիտ, որոց աչք են և ո՛չ տեսանեն, և ականջք և ո՛չ լսեն՝: ²²Եթէ յինէն ո՞չ երկնչիցիք՝ ասէ Տէր, կամ յերեսաց ինոց ո՞չ սարսիցէք. որ կարգեցի զաւազ սահման ծովու. հրաման յաւիտենական՝ և ո՛չ անցցէ զնովաւ. խռովեսցի՝ և ո՛չ կարասցէ ելանել. գոչեսցեն ալիք նորա՝ և ո՛չ անցանեն զնովաւ՝: ²³Եւ ժողովրդեանս այսորիկ եղև սիրտ անհնազանդ՝ և անհաւան. թիրեցան՝ և անցին գնացին՝. ²⁴և ո՛չ ասացին ՚ի սիրտս իւրեանց. Երկիցուք ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ. որ տայ մեզ զանձրև զկանուխ և զանագան, ըստ ժամանակի լրութեան հրամանի հնձոց՝ և պահեսցէ զմեզ: ²⁵Անօրէնութիւնք մեր վրիպեցուցին զայն, և մեղք մեր մերժեցին զբարութիւնս ՚ի մէնջ: ²⁶Ձի գտան՝ ՚ի մէջ ժողովրդեան իմոյ ամպարիշտք. և որոգայթս իբրև զվարմս հաւորսաց կանգնեցին ապականել՝ զմարդիկ. ²⁷և ըմբռնէին իբրև զորոգայթս անկեալս լի՛ թռչնովք. այնպէս լի են տունք նոցա նենգութեամբ: Վասն այսորիկ ստուարացան մեծացան՝ ²⁸գիրացան և պարարտացան, և անցին զբանիւք իմովք ՚ի չարութիւն. դատաստան արդար ո՛չ դատեցան. զիրաւունս որբոյն՝ ո՛չ իրաւացուցին. և զդատաստան այրւոյն՝ ո՛չ

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս... ահաւաղիկ ես ետու զբանս իմ... և զժողովուրդն զայն փայտ:

* *Ոմանք.* Ձի ահաւաղիկ ես: *Այլք.* Ոչ լսիցես զլեզուս նորա:

* *Ոմանք.* Ձուստերս և զդաստերս ձեր... և զձիթենիս ձեր. և կասցեն զամուր ա՛... յոր դուք պանծ՛... սրով սատակեսցին: *՚ի լուս՝.* Եւ յորս դուքն յուսացեալ էք:

* *Ոմանք.* Յորժամ ասիցէք... ասացես ցնոսա. Փոխանակ զի թո՛:

* *Ոմանք.* Ժողովուրդ յիմար, որոյ աչք են:

* *Ոմանք.* Ոչ երկնչիցիք՝ ասէ Տէր... և ոչ անցանէ զնովաւ... և ոչ կարասցէ. գոչես՛... և ոչ անցցեն զնովաւ: *՚ի լուս՝.* Սահման յաւիտենական:

* *Ոմանք.* Անհնազանդ և անհանճար:

* *Ոմանք.* Վասն այնորիկ ստուարացան և մեծացան, (28) և գիրացան և պարարեցան:

դատեցան: ²⁹Միթե՞ ՚ի վերայ այսր ամենայնի ո՞չ առնիցեն այցելութիւն՝ ասէ Տէր. կամ յազգէ այնպիսւոյ ո՞չ խնդրիցէ վրէժ անձն իմ*: ³⁰Յիմարութիւնք և արհաւիրք եղեն ՚ի վերայ երկրի. ³¹մարգարէք սուտ մարգարեանան, և քահանայք ծափ հարկանեն նոցա. և ժողովուրդ իմ սիրեաց զայն. և զի՞նչ գործիցէք առ յապայ՛:

6

Գլուխ Զ

¹Զօրացարո՛ւք որդիք Բենիամինի ՚ի մէջ Երուսաղեմի. փո՛ղ հարէք ՚ի Թեկուէ, և ՚ի վերայ Բեթաքարմայ առէ՛ք նշան. զի չարիք կարկառեալ գան ՚ի հիւսւսոյ, և բեկումն մե՛ծ ²եղիցի գեղեցկին և փափկացելոյն. և բարձցի՛ բարձրութիւն քո դուստր Սիովնի: ³Եկեսցեն ՚ի նա հովիւք և խաշինք իւրեանց, և կանգնեսցեն շուրջ զնովաւ գխորանս իւրեանց. և հովուեսցեն իւրաքանչի՛ւր ձեռամբ: ⁴Պատրաստեցարո՛ւք ՚ի վերայ նոցա ՚ի պատերազմ. արի՛ք և ելցուք ՚ի վերայ նորա ՚ի միջօրէի. վայ՛ մեզ՝ զի տի՛ւն կարճատեսց, և հասին մեզ ստուերք երեկորոյ*: ⁵Արի՛ք և ելցուք գիշերի, և ապականեսցուք զհիմունս նորա*: ⁶Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ջարդեցէ՛ք զփայտակերտս նորա, արկէ՛ք ՚ի վերայ Երուսաղեմի զօր. զի նա՛ է քաղաք ամենկին սուտ. բռնութիւն ՚ի մէջ նորա*: ⁷Չոր օրինակ ցրտացուցանէ՛ գուր զջուր իւր, այնպէս և նա ցրտացուցանէ՛ զչարիս իւր. ամպարշտութիւն՝ և չարութիւն լուիցի ՚ի միջի նորա, յանդիման իւր հանապազ: Յաւովք և տանջանօք՝ ⁸խրատեսցիս Երուսաղեմ, գուցէ երբէք վերասցի անձն իմ ՚ի քէն. գուցէ երբէք արարից զքեզ անապատ երկիր՝ ուր ո՛չ ոք երբէք բնակեցաւ: ⁹Զի այսպէս ասէ Տէր զօրութեանց. Կթեցէ՛ք՝ կթեցէ՛ք. ճռաքա՛ղ արարէք զմնացորդսդ Իսրայէլի, և անդրէն կրկնեսցիք որպէս կթօղ յո՞ժ իւր*: ¹⁰Արդ՝ ընդ ո՞ւմ խօսեցայց, և ո՞ւմ եղից վկայութիւն՝ և լուիցէ. ահաւաղիկ անթլփատ են ականջք նոցա, և ո՛չ կարեն լսել. ահա բան Տեառն եղև նոցա ՚ի նախատինս, և ո՛չ ևս արտո՞ծեսցեն զնա*: ¹¹Եւ ես զբարկութիւն իմ լցի և արգելի, և ո՛չ վախճանեցի զնոսա. հեղի՛ց ՚ի վերայ տղայոց արտաքուստ, և ՚ի ժողովս երիտասարդաց ՚ի միասին. զի այր և կին առ հասարակ ըմբռնեսցին. ծեր՝ հանդերձ կատարելովն աւուրբք ընկրկեսցին*: ¹²Եւ ըմբռնեսցին տունք նոցա ՚ի ձեռս օտարաց. անդք և կանայք նոցա ՚ի միասին. զի ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ բնակչաց երկրին այնորիկ՝ ասէ Տէր: ¹³Զի ՚ի փոքունց նոցա մինչև ցմեծամեծս, ամենեքեան կատարեցին զանօրէնութիւնս. ՚ի քահանայէ մինչև ՚ի սուտ մարգարէ, ամենեքեան արարին ստութիւն*: ¹⁴Եւ

* Ոմանք. Յազգէ յայնպիսւոյ ոչ խնդրեսցէ վրէժ:

* Ոմանք. Սուտ մարգարեանային: Այլք. Ծափս հարկանեն նոցա:

* Բազումք. ՚ի վերայ նորա ՚ի պատերազմ... ՚ի վերայ նորա ՚ի մէջօրէի: Ոմանք. Եւ հասին ստուերք երեկոյ:

* Ոմանք. Եւ ելցուք ՚ի գիշերի:

* Ոմանք. ՚ի վերայ Երուսաղեմի զօրս:

* Ոմանք. Նոյնպէս և նա ցրտա՛... և թշուառութիւն լուիցի ՚ի միջի:

* Ոմանք. Եւ անդէն կրկնեսցիք:

* Ոմանք. Ընդ որո՞ւմ խօսեցայց, և ո՞ւմ եղեց վկայութիւն... ահաւաղիկ անթլփատք են:

* Ոմանք. Կատարելեան աւուրբք:

* Ոմանք. Մինչև ՚ի մեծամեծս:

բժշկեցին զհարուածս դստեր ժողովրդեան ինոյ ընդ արհամարհանս. և ասէին. Խաղաղութիւն, Խաղաղութիւն. և ո՞ր է Խաղաղութիւն*։ ¹⁵Յամօ՞ք եղեն զի պակասեցան. և ո՛չ որպէս ամաչեցեալք ամաչեցին, և զանարգանս իւրեանց ո՛չ առին ՚ի միտ. վասն այնորիկ անկցին ՚ի կործանումն իւրեանց. և ՚ի ժամանակի այցելութեան իւրեանց սատակեցցին, ասէ Տէր*։

Է ¹⁶Այսպէս ասէ Տէր. Կացէ՞ք ՚ի ճանապարհս և դիտեցէ՞ք, և հարցէ՞ք զյաւիտենական շաւղաց Տեառն. և տեսէ՞ք ո՞ր է ճանապարհ բարի, և գնացէ՞ք ընդ նա, և գտջիք սրբութիւն անձանց ձերոց. և ասացին թէ ո՛չ երթիցուք։ ¹⁷Կացուցի ՚ի վերայ ձեր դէտս, լուարո՛ւք բարբառոյ փողոյն. և ասեն. Ո՛չ լուիցուք*։ ¹⁸Վասն այնորիկ լուան ազգք, և որ հովուէին զհօտս ՚ի նոսա*։ ¹⁹Լո՛ւր երկիր, ահաւաղիկ ես ածից ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ չարի՛ս, ըստ պտղոյ ապստամբութեան իւրեանց. զի բանից ինոց ո՛չ անսացին, և զօրէնս իմ մերժեցին։ ²⁰Ընդէ՞ր է այդ զի բերես ինձ խունկս ՚ի Սաբայ, և կինամոնոն յերկրէ հեռաստանէ. ողջակէզքն ձեր՝ չեն ընդունելի, և զոհք ձեր ինձ ո՛չ քաղցրացան*։ ²¹Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Ահաւաղիկ ես տա՛ց ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ ախտ, և ախտացցին ՚ի նմին, հարք և որդիք ՚ի միասին. դրացին և ընկեր իւր կորիցեն*։ ²²Այսպէս ասէ Տէր. Ահաւաղիկ զօր գայ ՚ի հիւսւոյ, ազգ մեծ. թագաւորք բազումք զարթիցեն ՚ի ծագաց երկրէ*, ²³աղեղնաւորք և տիգաւորք. ազգ ժպի՛րի և անողորմ. ձայն նորա իբրև զձայն ծովու յարուցելոյ. կառօք և երիվարօք ճակատեցցի, և լաստեցցի իբրև զհուր ՚ի պատերազմ ՚ի վերայ քո դուստր Սիովնի։ ²⁴Լուաք զլուր նոցա՝ և լքան ձեռք մեր. նեղութիւնք կալան զմեզ իբրև երկունք ծննդականի։ ²⁵Մի՛ ելանէք յանդս, և ընդ ճանապարհս մի՛ գնայք. զի սուր թշնամեաց շուրջ պատեալ է։ ²⁶Դո՛ւստր ժողովրդեան ինոյ քո՛ւրձ զգեցիր. մոխիր տարածեա՛ւ. ա՛ռ զսուզ սիրելոյ, և կոծեա՛ւ կոծ ողորմ. զի յանկարծակի եկեցէ թշուառութիւն ՚ի վերայ քո*։ ²⁷Փորձի՛չ ետու զքեզ ժողովրդոց պաշարելոց, և գիտասջիր ՚ի փորձել ինձ զճանապարհս դոցա*։ ²⁸Ամենեքեան անհնազանդք գնան կամակարութեամբ. իբրև զպղինձ և զերկաթ՝ ամենեքեան ապականեալք*։ ²⁹Պակասեցին փութք ՚ի հրոյ. պակասեաց կապար. զո՛ւր աշխատի արծաթագործն, և նոցա չարիքն ո՛չ հալեցան։ ³⁰Արծաթ խոտան կոչեցէ զնոսա, զի խոտեաց զնոսա Տէր։ Լուարո՛ւք զպատգամս Տեառն ամենայն Յրէաստան*։

7

* Այլք. Եւ բժշկէին զհարուա՛ւ։ Ոմանք. Եւ ասեն. Խաղաղ՛։

* Ի լուս՛. Իւրեանց տկարացցին, ասէ Տէր. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։

* Ոմանք. Եւ կացուցի ՚ի վերայ ձեր։

* Ոսկան յաւելու. Ձհօտս ՚ի նոսա. որքան ես արարից ընդ նոսա։

* Ոսկան. Խունկս ՚ի Սաբայէ։ Ոմանք. Եւ կինամոն յերկ՛։

* Ոմանք. Այդորիկ ախտս։

* Ոմանք. Ահաւասիկ զօր գայ... և թագաւորք բազումք։

* Բազումք. Կոծեաց կոծ... թշուառութիւն ՚ի վերայ ձեր։

* Ոմանք. Եւ գիտասջիր փորձել ինձ զճանապարհս դոցա։

* Ի լուս՛. Անհնազանդք գտան կամակա՛ւ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։ Ոմանք.

Կամակորութեամբ և իբրև։

* Ոմանք. Տեառն ամենայն Յրէաստանի։

Գլուխ Է

Ը ¹Պատգամն որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ՝ և ասէ. ²Կա՛ց ՚ի դրան տանն Տեառն և ընթերցի՛ր անդ զբանս զայս, և ասասցես. Լուարո՛ւք զբան Տեառն ամենայն Զրեաստան որք մտանէք ընդ դրունսդ ընդ այդոսիկ երկիրպագանել Տեառն: ³Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Ուղի՛ղ արարէք զճանապարհս ձեր՝ և զգնացս, և բնակեցուցից զձեզ ՚ի տեղուջս յայսմիկ: ⁴Եւ մի՛ յանձնապաստան լինիք ՚ի բանս ստութեան. զի ամենկին ո՛չ օգնեսցեն ձեզ՝ որ ասեն. Տաճա՛ր Տեառն է՛: ⁵Թէ ուղղելով ուղղիցէք զճանապարհս ձեր և զգնացս. և եթէ առնելով առնիցէք իրաւունս ՚ի մէջ ա՛ռն և ընկերի իւրոյ՝. ⁶և զե՛կն և զո՛րբն և զայրին ո՛չ յաղթահարիցէք. և արիւն անպա՛րտ ո՛չ հեղուցուք ՚ի տեղուջդ յայդմիկ. և զհետ աստուածոց օտարաց ո՛չ երթիցէք չարի ձերում՝: ⁷Բնակեցուցից զձեզ ՚ի տեղուջդ յայդմիկ, յերկրի զոր ետու հարցն ձերոց յաւիտենից մինչև յաւիտեանս՝: ⁸Ապա թէ դուք յանձնապաստան իցէք ՚ի բանս ստութեան, ուստի ո՛չ ինչ օգտիցիք: ⁹Եւ գողանայցէք, և սպանիցէք, և շնայցէք, և երդնուցուք սուտ, և արկանիցէք խունկս Բահաղու, և երթիցէք զհետ աստուածոց օտարաց. զորս ո՛չ գիտիցէք, ստո՛ց՝ ուստի և չա՛ր լինիցի ձեզ՝: ¹⁰Եւ զայցէք կայցէք առաջի իմ ՚ի տանս յայսմիկ՝ յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ. և ասիցէք. Մերժեցաք յառնելոյ զամենայն գարշելիսն զայնոսիկ: ¹¹Միթէ այրս աւազակա՞ց եղև տունդ իմ. յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ այդր առաջի ձեր. և ես ահաւասիկ տեսի՛ ասէ Տէր՝: ¹²Ձի չոգայք ՚ի տեղին իմ ՚ի Սելով, ուր բնակեցուցի զանուն իմ անդ զառաջինն. և տեսէք զինչ արարի ընդ նա յերեսաց չարեաց ժողովրդեան իմոյ Իսրայէլի՝: ¹³Եւ արդ փոխանակ զի արարէք զայդ ամենայն գործս՝ ասէ Տէր. և խօսեցայ ընդ ձեզ ընդ առաւօտս խօսելով և ո՛չ լուարուք ինձ. կոչեցի՛ զձեզ՝ և ո՛չ ետուք ինձ պատասխանի. ¹⁴և արարից ընդ տունդ ընդ այդ՝ յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ, յոր դուքդ ապաստան էք. և ընդ տեղիդ զոր ետու ձեզ և հարցն ձերոց. որպէս արարի՛ ընդ Սելով՝. ¹⁵և ընկեցից զձեզ յերեսաց իմոց՝ որպէս ընկեցի զեղբարս ձեր՝ զամենայն զաւակն Եփրեմեան՝: ¹⁶Եւ դու մի՛ կար յաղօթս ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ, և մի՛ խնդրեր ՚ի վերայ դոցա ողորմութիւն. և մի՛ աղաչեր՝ և մի՛ անկանիր առաջի իմ վասն դոցա. զի ո՛չ լսեմ քեզ: ¹⁷Եթէ ո՛չ տեսանես զինչ գործեն դոքա ՚ի քաղաքս Յուդայ և ՚ի ճանապարհս Երուսաղեմի: ¹⁸Որդիք նոցա փա՛յտ քաղեն, և հարքն նոցա հրա՛տս արկանեն, և կանայք նոցա հա՛յս հարկանեն, առնել կարկանդակս զօրութեանց երկնից. և նուիրեն նուէրս աստուածոց օտարաց, զի

* *Ոմանք.* Ամենկին ոչ օգտեսցեն ձեզ: *Այլք երիցս ունին այսպէս.* Որ ասեն. *տաճար Տեառն, տաճար Տեառն.* տաճար Տեառն է:

* *Բազումք.* Եթէ ուղղելով ուղ՛:

* *Ոսկան.* Ոչ երթայցէք ՚ի չարիս ձերում:

* *Ոմանք.* Մինչև ցյաւիտեան:

* *Ոմանք.* Եւ սպանանիցէք և շնայցէք... և երթայցէք զհետ... ոչ գիտիցէք. ուստի չար լինիցի:

* *Ոմանք.* Միթէ այրք աւազակա՞ց եղեն տունդ իմ: *Ուր Ոսկան.* Միթէ այր աւազա՞... անուն իմ այդ առա՞:

* *Ոմանք.* Ձի չեղայք ՚ի տեղին իմ ՚ի Շեղով:

* *Ոմանք.* Դուքդ ապաստանէ՛ք:

* *Ի լուս՝.* Զաւակն Եփրեմի. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

բարկացուցանիցեն զիս*։¹⁹Միթէ զի՞ս բարկացուցանիցեն՝ ասէ Տէր. և ո՞չ գանձինս, զի ամաչեսցեն երեսք նոցա*։²⁰Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Ահա զբարկութիւն և զսրտմտութիւն իմ հեղից ՚ի վերայ տեղւոյդ այդմիկ, ՚ի վերայ մարդոյ և անասնոյ, և ՚ի վերայ փայտի՝ ագարակի. և ՚ի վերայ արդեանց երկրի, բորբոքեսցի և ո՞չ շիջցի*։

Թ²¹Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ջողջակէզս ձեր ժողովեցէ՛ք հանդերձ զոհիւք ձերովք, և կերայք միս. ²²զի ո՞չ խօսեսցայ ընդ հարսն ձեր, և ո՞չ պատուէր ետու նոցա յաւուրն յորում հանի զնոսա յերկրէն Եգիպտացոց՝ վասն բանի ողջակիզաց և զոհից։ ²³Այլ զայս բան պատուիրեցի նոցա՝ և ասեմ. Լուարո՛ւք ձայնի իմում, և ես եղէց ձեզ յԱստուած. և դուք եղիջիք ինձ ՚ի ժողովուրդ, և գնասջիք յամենայն ճանապարհս իմ զոր պատուիրեցի ձեզ, զի բարի՛ լինիցի ձեզ*։ ²⁴Եւ ո՞չ լուան ինձ, և ո՞չ անսաց ունկն նոցա. այլ գնացին ըստ խորհրդոց սրտից իւրեանց չարաց. և եղեն յե՛տս և ո՞չ յառաջ, ²⁵յօրէ յորմէ ելին հարքն նոցա յերկրէն Եգիպտացոց մինչև ցայսօր։ Եւ արդ՝ առաքեցի առ ձեզ զամենայն ծառայս իմ զմարգարէս, ՚ի տուէ՛ և ընդ առաւօտս առաքեալ*։ ²⁶Եւ ո՞չ լուան ինձ, և ո՞չ անսաց ունկն նոցա. և խստացուցին զպարանոցս իւրեանց առաւել՝ քան զհարց իւրեանց։ ²⁷Եւ ասացես ցնոսա զբանս զայս, և ո՞չ լուիցեն քեզ. և կոչեսցես զնոսա՝ և ո՞չ տայցեն քեզ պատասխանի*։ ²⁸Եւ ասացես առ նոսա. Այս ա՛գգ է որ ո՞չ լուան ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց. և ո՞չ ընկալան զխրատ. պակասեցին հաւատք, և բարձաւ ճշմարտութիւն ՚ի բերանոց նոցա*։ ²⁹Կտրեա՛ զհերս քո և ՚ի բա՛ց ընկեա. և ա՛ռ զողբս ՚ի շրթունս. զի խտտեաց Տէր՝ և մերժեաց զագգն որ առնէր զայս*։ ³⁰Ձի արարին որդիքն Յուդայ չա՛ր առաջի իմ՝ ասէ Տէր. կարգեցին զգարշելիսն իւրեանց ՚ի տանն յորոյ կոչեցեալ էր անուն իմ ՚ի վերայ նորա պղծել զնա*։ ³¹և շինեցին բազին Տափեթայ, որ է ՚ի ձոր որդւոցն Ենովմայ, այրել զուստերս և զդստերս իւրեանց ՚ի հուր. զոր ո՞չ հրամայեցի նոցա, և ո՞չ զմտաւ ածի ՚ի սրտի իմում*։ ³²Վասն այնորիկ ահա աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր, և ո՞չ ևս ասացեն Բազին Տափեթայ, և Ձոր որդւոցն Ենովմայ, այլ Ձոր կոտորելոց, և թաղեսցեն ՚ի Տափեթն առ ՚ի տեղւոյն չբաւելոյ*։ ³³Եւ եղիցին դիակունք ժողովրդեանդ այդորիկ՝ ՚ի կերակուր թռչնոց երկնից՝ և զագանաց երկրի. և ո՞չ ոք իցէ որ հալածիցէ*։ ³⁴Եւ բարձի՛ց ՚ի քաղաքացն Յուդայ և յանցիցն Երուսաղեմի զձայն խրախճանաց, և զձայն ցնծացելոց. զձայն հարսին, և զձայն փեսայի. զի յանապատ եղիցի երկիրն*։

*Ոմանք. Զրատ հարկանեն... հայս արկանեն, առնեն կարկանդակս զօրութեան երկ՛։

*Ոմանք. Ձիս բարկացուցանեն։

*Ոմանք. Վասն այնորիկ այսպէս... ահաւասիկ բարկութիւն իմ և սրտմտութիւն իմ հեղից ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ։

*Ոմանք. Եւ եղէց ձեզ Աստուած... զի բարի լիցի ձեզ։

*Ոմանք. Յօրէ յորմէ հետէ ելին... և առաքեցի առ քեզ զամենայն զձա՛։

*Ոմանք. Ասացես նոցա զբանս։

*Ոսկան. Այս ագգք են որք ոչ։ *Բագունք*. ՚ի բերանոյ նոցա։

*Ոմանք. Կտրեա զհեր քո... և ա՛ռ ողբս։ *Բագունք*. Ձի խորտակեաց Տէր, և մերժ՛։

*Ոմանք. Յորոյ վերայ կոչեցեալ էր անուն իմ պղծել։

*Ոսկան. Տօփեթայ. (32) ՚ի Տօփեթն։

*Ոմանք. Առ տեղւոյն չբաւ՛. *կամ*. առ ՚ի չբաւելոյ տեղ՛։

*Ոմանք. Այդորիկ՝ կերակուր։

*Ոմանք. Ձի անապատ լիցի երկիր։

Գլուխ Ը

¹Ի ժամանակին յայնմիկ՝ ասէ՛ Տէր, հանցեն զոսկերս թագաւորացն Յուդայ՝ և զոսկերս իշխանաց նոցա, և զոսկերս քահանայից, և զոսկերս մարգարէից, և զոսկերս բնակչացն Երուսաղէմի՝ ՚ի գերեզմանաց իւրեանց. ²և ցամաքեցուսցեն յարևու, և ընդ լուսնով, և ընդ ամենայն աստեղքք, և առաջի ամենայն զօրութեանց երկնից զոր սիրեցինն՝ և որոց ծառայեցինն, և որոց զհետն գնացին, և յորս ապաստան լինէին, և երկիր պագանէին նոցա. ո՛չ կործեսցին, և ո՛չ լայցեն, այլ ՚ի նշաւակ եղիցին ՚ի վերայ երեսաց երկրի՝. ³զի ակտործեցին զմահ՝ և ո՛չ զկեանս: Եւ զմնացորդս որ մնացեալ իցեն յազգէ անտի չարէ. ընդ ամենայն տեղիս մնացելոցն ուր և մերծեցից զնոսա անդր՝ ասէ՛ Տէր զօրութեանց: ⁴Եւ ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Տէր. Միթէ որ գլորինն՝ ո՞չ յառնիցէ. կամ որ խոտորինն՝ ո՞չ ևս դառնայցէ՞: ⁵Արդ՝ ընդէ՞ր խոտորեցաւ ժողովուրդդ այդ և Երուսաղէմ՝ խոտորումն ժպիրի. և պնդեցան կամօք իւրեանց՝ և ո՛չ կամեցան դառնալ: ⁶Ունկնդիք և լուարո՛ւք, ո՛չ այդպէս խօսին. և ո՛չ գոյ մարդ որ զղջանայ ՚ի վերայ չարեաց իւրոց, և ասէ թէ զինչ գործեցի. կասեաց ընթացողն յընթացից իւրոց՝ իբրև զծի՛ ընդ քիրտն մտեալ ՚ի խրխնջել իւրում: ⁷Արդ՝ արսինն յերկինս ծանեաւ զժամանակ իւր. տատրակ և ծիծառն թռչունք վայրի՝ պահեցին զժամանակս մտից իւրեանց. և ժողովուրդ իմ ո՛չ ծանեաւ զիրաւունս Տեառն՝: ⁸Զիա՞րդ ասիցէք՝ թէ իմաստունք ենք, և օրէնք Աստուծո՛յ են ՚ի մեզ. վասն այդորիկ զո՛ւր եղև սուտ վիճակն դպրացն: ⁹Յամօք եղեն իմաստունքն. զարհուրեցան և պարտեցան. զի զբան Տեառն անարգեցին. զի՞նչ իմաստութիւն իցէ ՚ի նոսա: ¹⁰Վասն այնորիկ տա՛ց զկանայս նոցա այլոց, և զազարակս նոցա օտա՛ր ժառանգաց. զի ՚ի փոքուէ մինչև ՚ի մեծամեծս նոցա ամենայն ոք ազահէ՛ զազահութիւն. ՚ի մարգարէ մինչև ցքահանայն՝ ամենայն ոք առնէ անիրաւութիւն: ¹¹Եւ բժշկէին զբեկումն դատեր ժողովրդեան իմոյ ընդ արհամարհանս. և ասէին խաղաղութիւն խաղաղութիւն, և ո՛չ գոյր խաղաղութիւն: ¹²Ամաչեսցեն զի արարին զպղծութիւն. սակայն և այնպէս ո՛չ ամաչեցին անօթով, և զպատկառանս ո՛չ առին ՚ի միտ. վասն այնորիկ անկցին ընդ անկեալսն ՚ի ժամանակի այցելութեան իւրեանց, և տկարասցին՝ ասէ Տէր: ¹³Եւ ժողովեսցեն զարդիւնս իւրեանց՝ ասէ Տէր. չի՞ք խաղող յայգիս նոցա, և ո՛չ թուզ ՚ի թզենիս նոցա. և տերևն թօթափեցաւ. ետու նոցա՝ և անց զնոքօք: ¹⁴Արդ մեք՝ զի՞ նստիցինք. այլ ժողովեցարո՛ւք՝ և մտցո՛ւք ՚ի քաղաքս ամուրս, և անդր անկցուք. զի Տէր Աստուած մեր ընկէց զմեզ, և արբոյց մեզ ջուր դառնութեան,

* Ոմանք. Ընդ ամենայն աստեղօք... և որոց զհետ գնա՞... և ոչ կործեսցին, և ո՛չ լացցեն:

* Ոմանք. Միթէ որ գլորիցին:

* Ոմանք. Ոչ այնպէս խօսին... ՚ի խրխնջել իւրում: *Բազումք.* Զղջանայ ՚ի չարեաց իւրոց:

* Ոմանք. Եւ թռչունք վայրի... զժամանակ մտից... ոչ ծանեան զի՞:

* Ոմանք. Զիա՞րդ ասէք... են ընդ մեզ. վասն այնորիկ: *Ոսկան.* Եղև, և սուտ վիճակն դպրաց:

* Ոմանք. Վասն այնորիկ տաց... և ՚ի մարգարէ մինչև քահանայ:

* Ի լուս՞. Ամաչիցեն զի արա՞: *Ոմանք.* Իւրեանց տկարասցին:

* Ոմանք. Եւ տերևն թափեցաւ:

զի մեղաք առաջի նորա*։ ¹⁵Ժողովեցաք ՚ի խաղաղութիւն, և ո՛չ գոյր բարութիւն. ՚ի ժամանակի բժշկութեան՝ և ահա տագնաւ*։ ¹⁶Ի Դանայ լուիցուք զձայն երագութեան երիվարաց նորա. ՚ի ձայնէ խրխնջելոց հեծելոց նորա շարժեցաւ երկիր ամենայն. եկեսցէ և կերիցէ զերկիր լրիւ իւրով, զքաղաքս և զբնակիչս նորա*։ ¹⁷Քանզի ես աւասիկ արձակեմ ՚ի ձեզ օծս կոտորիչս, յորս ո՛չ մտանիցեն թովչութիւնք, և հարկանիցեն զձեզ՝ ասէ Տէր*։ ¹⁸և յանբժշկական ցաւս սրտից ձերոց տարակուսելոց։ ¹⁹Ահա ձայն գուժի դատեր ժողովրդեան իմոյ յերկրէ՝ հեռաստանէ. Միթէ Տէր ո՞չ գուցէ ՚ի Սիովն, կամ Թագաւոր անդ՝ ո՞չ իցէ. ընդէ՞ր բարկացուցին զիս դրօշելովք իւրեանց, և սնոտուովք օտարոտուովք։ ²⁰Անցին հունձք, անց ամառն. և մեք ո՛չ փրկեցաք։ ²¹Ի վերայ բեկման դատեր ժողովրդեան իմոյ խորտակեցայ. խաւարեցայ տարակուսանօք. յաղթահարեցին զիս երկունք իբրև ծննդականի*։ ²²Միթէ դեղ ո՞չ գուցէ ՚ի Գաղաադ, կամ բժիշկ ո՞չ կայցէ անդ. ընդէ՞ր ոչ եղև բժշկութիւն դատեր ժողովրդեան իմոյ*։

9

Գլուխ Թ

¹Ո՛ տայր զգլուխս իմ ջուր, և զաչս իմ աղբերս արտասուաց. և լայի զժողովուրդս զայս գտիւ և զգիշեր, և զվիրաւորեալս դատեր ժողովրդեան իմոյ։ ²Ո՛ տայր ինձ յանապատի դո՛յզն օթևանս. և թողուի զժողովուրդ իմ, և գնայի ՚ի դոցանէ. զի ամենեքեան շնան՝ առ հասարակ ժողովուրդք արհամարհողաց*։ ³Եւ լարեցին զլեզուս իւրեանց իբրև զաղեղն. ստութիւն՝ և ո՛չ հաւատք զօրացան ՚ի վերայ երկրի. զի ՚ի չարեաց ՚ի չարիս ելին, և զիս ո՛չ ծանեան՝ ասէ Տէր*։ ⁴Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգո՛յշ լերուք, և յեղբարս ձեր մի՛ յուսայք։ Ձի ամենայն եղբայր՝ խաբելով խաբէ, և ամենայն բարեկամ նենգութեամբ գնայ*։ ⁵Իւրաքանչիւր զբարեկամ իւր այպանեն, և ճշմարտութիւն ո՛չ խօսին. ուսաւ լեզու նոցա խօսել ստութիւն. զրկեցին, և ո՛չ դադարեցին* ⁶Ժողովել վաշխս ՚ի վերայ վաշխից, և նենգութիւն ՚ի վերայ նենգութեանց. և ո՛չ կամեցան զիս ճանաչել՝ ասէ Տէր։ ⁷Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր՝ Տէր զօրութեանց. Ահաւաղիկ ես ջեռուցից զնոսա, և փորձեցից զնոսա. զի արարից յերեսաց չարեաց դատեր ժողովրդեան իմոյ* ⁸բալիստր խոցոտիչ. լեզուք նոցա նենգաւորք. և բանք բերանոյ նոցա ընդ ընկերի իւրում խօսին զխաղաղութիւն, և ՚ի սրտի իւրում ունին զթշնամութիւն*։ ⁹Միթէ ՚ի վերայ այսոցիկ ո՞չ արարից

* Ոմանք. Այլ մեք զի նստիցինք. ժողո՛ւ։

* Ոմանք. Ի խաղաղութեան. և ոչ գոյր. ՚ի բարութիւն։

* Ոմանք. Խխնջելոյ հեծելոյ նորա։

* Ոմանք. Ահաւասիկ արձակեմ։

* Օրինակ մի. Խօսեցայ տարակուսանօք։

* Յօրինակին. Ընդ ոչ եղև բժշ։

* Ոմանք. Ժողովք արհամարհողաց։

* Ոսկան. Իբրև զաղեղն ստութեան։

* Յօրինակին բանս այս. Ձի ամենայն եղբայր խաբելով խաբէ. կարմրադեղով նշանակի։

* Ոմանք. Ոչ խօսեցցին. ուսան լեզուք նոցա։

* Բազումք. Վասն այսորիկ այսպէս... ահաւասիկ ես։

* Ոմանք. Ընդ ընկերի իւրեանց... և ՚ի սրտի իւրեանց։ Ոսկան. Ունի զթշնամութիւն։

այցելութիւն՝ ասէ՛ Տէր. կան՝ յազգէ՛ այնպիսւոյ՝ ո՞չ խնդրեսցէ՛ վրէժ՝ անձն իմ՝^{*}
¹⁰Կո՛ժ առէք՝ ՚ի վերայ լերանց, և ձայնս՝ ՚ի վերայ բլրոց անապատի. ողբացէ՛ք,
 քանզի պակասեցին առ ՚ի չգոյէ՛ մարդկան անցաւորաց, և ո՛չ լուան՝ զձայնս
 ստացուածոց. ՚ի թռչնոց երկնից մինչև ցանասունս յիմարեցան և գնացին՝^{*} ¹¹Եւ
 տաց՝ զերուսաղէմ՝ ՚ի գերութիւն և ՚ի բնակութիւն վիշապաց. և զքաղաքս Յուդայ
 եդից յապականութիւն՝ առ ՚ի չգոյէ՛ բնակչաց: ¹²Ո՞վ է՛ այր իմաստուն՝ և ՚ի միտ
 առցէ՛ զայս, և առ ո՞ւմ բան բերանոյ Տեառն, պատմեսցէ՛ մեզ թէ՛ վասն է՞ր
 կորեաւ երկիր. լքա՛ւ իբրև՝ զանապատ առ ՚ի չգոյէ՛ անցաւորաց՝^{*} ¹³Եւ ասէ՛ ցիս
 Տէր. Վասն թողլոյն դոցա՝ զօրէնս իմ՝ զոր եդի՛ առաջի աչաց նոցա, և ո՛չ լուան
 ձայնի իմում՝^{*} ¹⁴և գնացին՝ զհետ հաճոյից սրտից իւրեանց՝ չարաց, և զհետ
 կռոցն՝ զոր ցուցին նոցա՝ հարքն նոցա: ¹⁵Վասն այնորիկ այսպէս՝ ասէ՛ Տէր
 զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես ջամբեմ՝ ժողովրդեանդ
 այդորիկ վտանգ, և արբուցանեմ՝ դոցա ջո՛ւր դառնութեան՝^{*} ¹⁶Եւ ցրուեցից
 զդոսա ընդ ազգս զորս ո՛չ գիտացին՝ դոքա, և ո՛չ հարքն իւրեանց. և արձակեցից
 ՚ի վերայ դոցա սո՛ւր, մինչև սատակեցից՝ զդոսա նովաւ: ¹⁷Այսպէս՝ ասէ՛ Տէր
 զօրութեանց. Ջմտա՛ւ ածէ՛ք՝ և կոչեցէ՛ք զձայնարկուս՝ և եկեսցեն. և առ
 իմաստուն կանայս առաքեցէ՛ք, և ճչեսցեն՝^{*} ¹⁸և ստիպեսցեն, և առցեն ո՞ղբս ՚ի
 վերայ ձեր. և իջուցեն՝ աչք ձեր արտասուս, և արտևանունք՝ ձեր բոխեսցեն
 ջուր: ¹⁹Ձի՛ ձայն ողորմ զուժեաց՝ ՚ի Սիոն. Ջիարդ թշուառացա՛ք, ամաչեցաք
 յո՛յժ, զի լքա՛ք զերկիր, և ընկեցա՛ք զբնակութիւնս մեր՝^{*} ²⁰Լուարո՛ւք կանայք
 զպատգամս Տեառն Աստուծոյ, և ընկալցին՝ ականջք ձեր՝ զբանս բերանոյ նորա.
 և արդ՝ ուսուցէ՛ք դստերաց ձերոց՝ ձայնս. և կին՝ ընկերի իւրում ո՞ղբս՝^{*} ²¹զի՛ ել
 մահ ընդ պատուհանս ձեր, և եմո՛ւտ յերկիր ձեր. ջնջել՝ զտղայս արտաքո՛ւստ, և
 զերիտասարդս ՚ի հրապարակաց: ²²Այսպէս՝ ասէ՛ Տէր. Եդիցին՝ դիակունք
 մարդկան՝ նշաւակ ընդ երեսս դաշտաց երկրի ձերոյ, և իբրև՝ զխոտ զկնի
 հնձողի. և ո՛չ ոք իցէ՛ որ ժողովիցէ՛:

Ժ ²³Այսպէս՝ ասէ՛ Տէր. Մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, և մի՛
 պարծեսցի հզօրն ՚ի զօրութիւն իւր, և մի՛ պարծեսցի մեծն ՚ի մեծութիւն իւր՝^{*}
²⁴այլ՝ այն պարծիցի՝ որ պարծիցի՝ իմանալ և ճանաչել՝ զիս, թէ՛ ես եմ Տէր
 Աստուած. որ առնեմ՝ զիրաւունս և զողորմութիւն, և զարդարութիւն՝ ՚ի վերայ
 երկրի. և ՚ի նոյնս եմ կամք իմ՝ ասէ՛ Տէր՝^{*} ²⁵Ահա՛ աւուրք եկեսցեն՝ ասէ՛ Տէր. և
 արարից՝ այց ՚ի վերայ՝ ամենայն թլփատելոց՝ յանթլփատութեան իւրեանց. ²⁶ի
 վերայ Եգիպտոսի, և ՚ի վերայ Յուդայ, և ՚ի վերայ Եդոմայ, և ՚ի վերայ որդւոցն

* *Ոմանք.* Յազգէ՛ այնպիսւոյ ոչ խնդրիցէ:

* *Ոմանք.* Ձի պակասեցին... մինչև յանասունս:

* *Ոմանք.* Եւ առ որում բան բերա՞... լքաւ որպէս զանապատ:

* *Ոմանք.* Վասն թողլոյ նոցա զօ՞... զոր ետու առաջի երեսաց նոցա:

* *Ոմանք.* Վասն այնորիկ... ահաւասիկ ես ջամբեմ ժողովրդեանդ այդմիկ տագնապ, և արբու՛:

* *Ոմանք.* Ասէ՛ Տէր Տէր զօրութեանց: *Ուր Ոսկան.* ասէ՛ Աստուած զօրութեանց:

* *Ոմանք.* Ամաչեցէ՛ք յոյժ:

* *Բազումք.* Բերանոյ նորա, և ուսուցէք:

* *Ոմանք.* Եւ եդիցին դիա՞... նշանակ ընդ երեսս:

* *Օրինակ մի.* Միթէ՛ պարծեսցի իմաս՞: *Ոմանք.* Յիմաստութեան իւրում... ՚ի զօրութեան իւրում:

* *Բազումք.* Այլ յայն պարծեսցի որ պարծիցին: *Ուր օրինակ մի.* Այլ պարծեսցի որ պարծի... և ՚ի նոյնս եմ կամք:

Անովնայ, և ՚ի վերայ որդւոցն Մովսէսու, և ՚ի վերայ ամենայն յապաւելոցն զերեսօք բնակչաց անապատի. զի ամենայն ազգ անթլփատ են մարմնով. և ամենայն Իսրայէլ անթլփատ են սրտիւք իւրեանց*:

10

Գլուխ Ժ

¹Լուարո՛ւք զպատգամս զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ ձեր՝ տունդ Իսրայէլի*:
²Ա՛յսպէս ասէ Տէր. Ըստ ճանապարհաց հեթանոսաց մի՛ ուսանիք, և ՚ի նշանաց երկնից մի՛ զարհուրիք. զի նոքա երկնչին յերեսաց նոցա: ³Ձի ամենայն կուռք հեթանոսաց սնոտի՛ք են. փայտ յանտառէ հատեալ, գործք ձեռաց հիւսանց*.
⁴ձոյլ արծաթոյ և ոսկւոյ զարդարեալք. ուռամբք և բւեռօք հաստատեցին զնոսա՝ զի ո՛չ չարժեսցին. արծաթ ճախարակեայ, արծաթ ՚ի գործ արկեալ ՚ի Թարշշէ, և ոսկի եկեալ ՚ի Սեմփաթայ*:
⁵Եւ ձեռն ոսկերչի գործեաց գործ ճարտարաց. կապուտակ և ծիրանի զգեցուցանեն նոցա. և ո՛չ գնասցեն, այլ բառնալով բարձցին. և ո՛չ քայլ մի ոտին փոխեսցեն, և ո՛չ ինքնին ՚ի կրելիսն ամբարձցին. մի՛ երկնչիք ՚ի նոցանէ, զի ո՛չ չար առնեն, և բարի իսկ ո՛չ գոյ ՚ի նոսա*:
⁶Չի՛ք որ իբրև զքեզ Տէր. մե՛ծ ես՝ և մե՛ծ է անուն քո զօրութեամբ: ⁷Ո՞չ երկիցէ ՚ի քէն Թագաւոր ազգաց. զի քե՛զ իսկ վայելէ. զի յամենայն իմաստունս հեթանոսաց, և յամենայն թագաւորս նոցա ո՞վ է իբրև զքեզ: ⁸Եւ միանգամայն այրեսցին, և տկարացին սիրտք սնոտեաց. զի փայտ են*.
⁹և արծաթ ընտի՛ր եկեալ ՚ի Թարշշայ, և ոսկի ՚ի Սովփաթայ, գործ ճարտարաց ամենայն, և ձեռաց ոսկերչաց. կապուտակ և ծիրանի հանդերձք նոցա. գործ իմաստնոց ամենայն*:
¹⁰Այլ Տէր Աստուած մեր ճշմարիտ. է Աստուած կենդանի, և Թագաւոր յաւիտենական. և ՚ի սրտմտութենէ նորա շարժեսցի՛ երկիր՝ և ո՛չ հանդարտեսցեն ազգք բարկութեան նորա*:
¹¹Եւ այսպէս ասասջիք ցնոսա. Աստուածք որ զերկինս և զերկիր ո՞չ արարին՝ կորիցեն յերկրէ, և ՚ի ներքոյ երկնիցս այսոցիկ:
¹²Տէր է՝ որ արար զերկիր զօրութեամբ իւրով, և կանգնեաց զտիեզերս իմաստութեամբ իւրով. և խորհրդով իւրով ձգեաց զերկինս*.
¹³և ՚ի տալոյ զձայն իւր՝ լնու՛ բազմութիւն ջուրցն յերկինս. հանէ զամպս ՚ի ծագաց երկրէ՝ և զփայլատակունս իւր յանձրևս արար. հանէ զհողմս յշտեմարանաց իւրոց*:
¹⁴Յիմարեցաւ ամենայն մարդ ՚ի գիտութենէ. յամօթ եղեն ամենայն ոսկերիչք դրօշելովք իւրեանց. զի սո՛ւտ ձուլեցին, և չի՛ք շունչ ՚ի նոսա*.
¹⁵սնոտի՛ են՝ և

* Յոմանս պակասի. ՚ի վերայ Եգիպտոսի, և ՚ի վերայ Յուդայ, և ՚ի վերայ Եդո՞: Բազումք. Ձի ամենայն ազգք... և ամենայն տունն Իսրայէլի անթլփատ սրտ՞:

* Ոմանք. Ձպատգամս զոր խօսէ՞:

* Ոմանք. Ձի ամենայն օրէնք հեթանոսաց... գործ ձեռաց հիւսան:

* Ոմանք. Եւ ձոյլ արծաթոյ... զարդարեալ... ՚ի Թարշշէ ոսկի եկեալ:

* Ոսկան. Եւ մի՛ երկնչիք:

* Ի լուս՞. Եւ սատակեցցին սիրտք սնոտ՞. համաձայն բազմաց ՚ի բն՞:

* Ոսկան. Եւ ոսկի Սօփաթայ: Այլք. Յանդերձն նոցա:

* Բազումք. Տէր Աստուած ճշմարիտ է... ՚ի սրտմտութենէ: Ուր Ոսկան. ՚ի սրտմտութեան նորա:

* Ոմանք. Ո՞ է որ արար զերկիր:

* Ոմանք. Եւ հանէ զամպս... ՚ի շտեմարանաց:

* Ոսկան. Ամենայն մարդ ՚ի գիտութեան:

գործք խաբէութեան. ՚ի ժամանակի այցելութեան իւրեանց կորիցեն: ¹⁶Այլ ո՛չ այնպիսի ինչ է Բաժինն Յակովբայ. զի որ ստեղծն զամենայն՝ նա՛ է բաժին նորա. և Իսրայէլ գաւազան ժառանգութեան նորա: Տէր զօրութեանց անուն է նորա* ¹⁷Ժողովեա՛ ՚ի բացուստ զօրութիւն քո բնակեալդ՝ ՚ի մէջ ընտրելոց* ¹⁸Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես քարընդոտնեմ զբնակիչս երկրիդ այդորիկ նեղութեամբ. և նեղեցի՛ց զնոսա զի մի՛ գտցին* ¹⁹Վա՛յ ՚ի վերայ բեկման քոյ, զի ցաւագի՛ն են հարուածք քո. և ասեմ. Արդարև ա՛յդ իսկ են վերք իմ, և եհաս յիս* ²⁰Խորանն իմ չուռառցաւ, կորեաւ. և ամենայն խորանափեղկք իմ քակտեցան. որդիք իմ և խաշիւք իմ ո՛չ ուրեք էին, և ո՛չ ևս գոյ տեղի խորանի իմոյ, և ո՛չ տեղի խորանափեղկաց իմոց* ²¹Ձի հովիւքն անմտացան, և զՏէր ո՛չ խնդրեցին. վասն այնորիկ ո՛չ իմացան ամենայն արօտականքն, և ցրուեցան: ²²Չայն գուժի եկեսցէ, և շարժումն մե՛ծ յերկրէ հիւսւսոյ, կարգել զքաղաքս Յուդայ յապականութիւն՝ և ՚ի դադարս ջայլամանց: ²³Գիտե՛մ Տէր՝ զի ո՛չ մարդոյ է ճանապարհ իւր. և ո՛չ այր գնացէ, և յաջողեսցէ զճանապարհս իւր: ²⁴Խրատեա՛ զմեզ Տէր. բայց իրաւանքք, և մի՛ ցասմամբ. զի մի՛ սակաւաւորս արասցես զմեզ* ²⁵Չե՛ղ զբարկութիւն քո ՚ի վերայ հեթանոսաց որ ո՛չ գիտեն զքեզ, և ՚ի վերայ ազգաց որ զանուն քո ո՛չ կարդացին. զի կերան զՅակովբ՝ և սպառեցին զնա. և վախճանեցին զնա, և զարօտս նորա ււերեցին:

11

Գլուխ ԺԱ

ԺԱ ¹Բանն որ եղև առ Երեմիա՝ ՚ի Տեառնէ և ասէ. ²Լուարո՛ւք զբան ուխտիս այսորիկ, և խօսեցարո՛ւք ընդ արսո՛ Յուդայ՝ և ընդ բնակիչսո՛ Երուսաղեմի* ³Եւ ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Անիծեա՛լ լիցի մարդն որ ո՛չ լուիցէ բանից ուխտիս այսորիկ* ⁴Գոր պատուիրեցի հարցն ձերոց, յաւուր յորում հանի զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ ՚ի հնոցէ երկաթոյն. և ասեմ. Լուարո՛ւք ձայնի իմուն, և արարէ՛ք զայդ ըստ ամենայնի զոր ինչ պատուիրեմ ձեզ. և եղիջիք ինձ՝ ՚ի ժողովուրդ, և ես եղէց ձե՛զ յԱստուած* ⁵Եւ հաստատեցից զերդումն իմ զոր երդուայ հարցն ձերոց, տա՛լ նոցա զերկիրն որ բղխէ զմեղր և զկաթն. որպէս և այսօր: Պատասխանի՛ ետու՝ և ասեմ. Այո՛ Տէր՝ եղիցի: ⁶Եւ ասէ ցիս Տէր. Ընթերցի՛ր զամենայն զբանսո՛ զայդոսիկ ՚ի քաղաքսո՛ Յուդայ՝ և արտաքոյ Երուսաղեմի, և ասասցես. Լուարո՛ւք զպատգամ ուխտիդ այդորիկ, և արարէ՛ք զդոսա* ⁷Ձի վկայութեամբ եղի զվկայութիւն հարցն ձերոց՝ յաւուրն հանելոյ իմոյ զնոսա յերկրէն Եգիպտացւոց, և մինչև ցայսօր. կանխել ընդ

* *Բազումք.* Ոչ այնպիսի է բա՛:

* *Ոմանք.* Ժողովեաց ՚ի բացուստ... բնակեալք ՚ի մէջ ընտ՛:

* *Ոմանք.* Ձի այսպէս ասէ Տէր... զի մի՛ գտցեն:

* *Յօրինակին պակասէր.* Այդ իսկ են վերք իմ:

* *Բազումք.* Ոչ ուրեք են. և ո՛չ:

* *Օրինակ մի.* Ձի մի՛ սակաւ աւուրս արասցես:

* *Ոմանք.* Ձբանս ուխտիս... ընդ արս... և ընդ բնակիչս Երուսաղեմի:

* *Բազումք.* Բանից խրատուս այսորիկ:

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղիջիք ինձ՝ ՚ի ժողովուրդ:

* *Ոմանք.* Ընթերց զամենայն զբանսո՛... զպատգամս ուխտիդ:

առաւօտս՝ և դնել վկայութիւն՝ և ասել. Լուարո՛ւք ձայնի իմում, և ո՛չ լուան՝: ⁸Եւ խոտորեցուցին զլսելիս իւրեանց, և գնացին այր ըստ յօժարութեան սրտից իւրեանց ՚ի չարիս. և ածից ՚ի վերայ նոցա զամենայն բանս ուխտիս այսորիկ՝ զոր պատուիրեցի նոցա ամենել՝ և ո՛չ արարին՝: ⁹Եւ ասէ ցիս Տէր. Գտա՛ւ կնճիռն յարսդ յայդոսիկ՝ և ՚ի բնակիչսդ Երուսաղեմի՞: ¹⁰դարձան յանիրաւութիւնս հարցն իւրեանց առաջնոց, որք ո՛չ կամեցան լսել բանից իմոց. և ահաւաղիկ երթան զհետ աստուածոց օտարաց ծառայել՝ նոցա. և ցրեցին տունն Իսրայէլի և տունն Յուդայ զուխտն իմ, զոր ուխտեցի ընդ հարս նոցա: ¹¹Վասն այնորիկ ա՛յսպէս ասէ Տէր. Ահաւաղիկ ես ածի՛ց ՚ի վերայ դոցա չարիս, յորոց ո՛չ կարասցեն ելանել. և աղաղակեսցեն առ իս՝ և ո՛չ լուայց նոցա: ¹²Եւ գնասցեն քաղաքք Յուդայ՝ և բնակիչք Երուսաղեմի, և աղաղակեսցեն առ դիսն իւրեանց որոց արկանէին խունկս. և փրկելով ո՛չ փրկեսցեն զնոսա ՚ի ժամանակի չարեաց իւրեանց՝: ¹³Ձի ըստ թուոյ քաղաքացն քոց էին դիքն քո Յուդայ, և ըստ թուոյ անցիցն Երուսաղեմի կարգեցէք բազինս և սեղանս ամօթոյ, արկանել խո՛ւնկս Բահաղու՞: ¹⁴Եւ դու՝ մի՛ կար յաղօթս վասն ժողովրդեանդ այդորիկ, և մի՛ աղաչեր վասն դոցա խնդրուածովք, և պաղատիր. զի ո՛չ լսեմ ՚ի ժամանակի յորում կարդասցեն առ իս՝ ՚ի ժամանակի չարեաց իւրեանց: ¹⁵Ձի ընդ սիրելին ասեմ՝ զի ՚ի ներքս ՚ի տաճարին իմում արա՛ր գարշելիս. միթէ աղօ՞թք, և մի՛ս նուիրեալ՝ անցուցանիցեն ՚ի քէն զչարիս քո. կամ թէ այնպիսեօ՞ք ապրիցիս՞: ¹⁶Ձիթենի գեղեցիկ վարսաւոր տեսլեամբ կոչեաց Տէր զանուն քո. ՚ի ձայնէ թլփատութեան նոցա. մե՛ծ է նեղութիւն ՚ի վերայ քոյ, անպիտանացան ոստք քո՞: ¹⁷Եւ Տէր Աստուած զօրութեանց որ տնկեաց զքեզ՝ խօսեցաւ ՚ի վերայ քոյ չարիս փոխանակ չարեաց տանն Իսրայէլի, և տանն Յուդայ. զի արարին անձամբ անձանց ՚ի բարկացուցանել զիս, յարկանել նոցա խունկս Բահաղու: ԺԲ ¹⁸Տէր ծանո՛ ինձ և ծանեայց. յայնժամ տեսի զգործս նոցա: ¹⁹Ես իբրև զգառն անմեղ վարեալ ՚ի սպանդ. ո՛չ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ չար, և ասեն. Եկա՛յք արկցուք փա՛յտ ՚ի հաց նորա, և ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց. և անուն նորա մի՛ ևս յիշեսցի՞: ²⁰Տէր զօրութեանց որ ընտրե՛ս զիրաւունս, և քննե՛ս զերիկամունս և զսիրտս, տեսից առ ՚ի քէն զվրէժխնդրութիւն առ ՚ի նոսա. զի քե՛զ յայտնեցի զիրաւունս իմ՞: ²¹Վասն այնորիկ ա՛յսպէս ասէ Տէր ՚ի վերայ արանցն Անաթովթայ որ խնդրեն զանձն քո, և ասեն մի՛ մարգարեանար վասն մեր, ապա թէ ո՛չ՝ մեռանիս ՚ի ձեռաց մերոց: ²²Վասն այդորիկ ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց. Ահաւասիկ ես ա՛յց արարից ՚ի վերայ նոցա. երիտասարդք նոցա սրո՛վ մեռցին, և ուստերք և դստերք նոցա սովո՛վ վախճանեսցին՞: ²³Եւ մնացորդք ո՛չ եղիցի նոցա. զի ածից չարիս ՚ի

* *Ոմանք.* Հանելոյ իմ զնոսա յերկ՞:

* *Ոսկան.* Եւ ածի ՚ի վերայ նոցա զամենայն:

* *Ի լուս՞.* Յարսդ Յուդայ և ՚ի բն՞. *համաձայն բազմաց ՚ի բնար՞:*

* *Ոմանք.* Եւ գնասցեն քաղաքդ Յու՞:

* *Յօրինակին պակասէր.* Էին դիքն քո Յուդայ:

* *Յոմանս պակասի.* Ընդ սիրելին *ասեմ՝ զի՞* ՚ի ներքս:

* *Ոսկան.* Մեծ են նեղութիւն:

* *Ի բազումս պակասի.* Խորհուրդ չար, և ասեն:

* *Ոմանք.* Ձերիկամունս և զսիրտ... զի քեզ յայտնեցի զերիկամունս իմ:

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես այց ար՞: *Ոսկան.* Սովու վախճանեսցին:

վերայ բնակչացն Անաթովթայ յամի՛ այցելութեան նոցա՛:

12

Գլուխ ԺԲ

¹Արդար՛ ես դու Տէր, և մատուցից առաջի քո աղէ՛րս. բայց խօսեցայց զիրաւո՛ւնս. զի՞ է զի ճանապարհք ամպարշտաց յաջողեալ են, և երջանկացան ամենեքեան որ արհամարհէին զարհամարհանս՝: ²Տնկեցեր զնոսա՛ և արմատացան. ծնան որդիս՝ և արարին պտո՛ւղ. մե՛րձ ես դու Տէր՝ ՚ի բերանս նոցա, և հեռի ես յերիկամանց նոցա՛: ³Եւ դու Տէր զիտես զիս. տեսեր զիս՝ և փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժողովեա՛ զնոսա իբրև զոչխար՝ ՚ի սպանումն, և նուիրեա՛ զնոսա յաւուր սպանման նոցա՛: ⁴Մինչև յե՞րբ սո՛ւգ ունիցի երկիր, և խո՛տ ամենայն վայրի ցամաքեցի՛. ՚ի չարեաց բնակչաց երկրին ապականեցան անասուն և թռչուն. զի ասացին թէ ո՛չ տեսցէ Աստուած զճանապարհս մեր: ⁵Ոտք քո ընթանան՝ և լքուսցեն զքեզ. զիա՞րդ կազմիցիս երիվարօք. իսկ արդ՝ յերկի՞րդ խաղաղութեան յուսացեալ ես. զի՞ գործիցես ՚ի վերանալ Յորդանան գետոյ՛: ⁶Քանզի և եղբարքն քո՝ և տուն հօր քոյ. և նոքա դաւաճանեցին զքեզ, և նոքին աղաղակեցին զկնի քո, կուտեցան՝ ՚ի վերայ քո. մի՛ հաւատար նոցա զի խօսեսցին զքէն չարութիւն՝: ⁷Լքի՛ զտուն իմ. թողի՛ զժառանգութիւն իմ. ետո՛ւ զսիրելին անձին իմոյ ՚ի ձեռս թշնամեաց իւրոց՝: ⁸Եղև ժառանգութիւն իմ ինձ իբրև առեւծ յանապատի. ե՛տ ՚ի վերայ իմ զբարբառ իւր, վասն այնորիկ ատեցի զնա՛: ⁹Միթէ որջ բորենո՞յ իցէ ժառանգութիւն իմ ինձ, կամ այ՛րք շուրջ զնովաւ. շրջեցարուք ժողովեցէք զամենայն գազանս անապատի՝ և եկեսցեն ուտել զնոսա՛: ¹⁰Չովի՛ւք բազումք ապականեցին զայգի իմ. եղծի՛ն զբաժին իմ. արարին զվիճակն իմ ցանկալի՛ յանապատ անկոխ. ¹¹Եղաւ յապականութիւն կորստեան: Վասն իմ ապականեցաւ ապականութեամբ ամենայն երկիր. զի ո՛չ ընդ հուպ արարի հատուցանել. զի ո՛չ գոյ մարդ որ դնէ ՚ի սրտի՛: ¹²Ընդ ամենայն ելս անապատի անցի՛ն չուառացեալք. զի սուր Տեառն կերիցէ՛ ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի, և ո՛չ գոյ խաղաղութիւն ամենայն մարմնոյ՛: ¹³Յորեան սերմանեցէք, և փո՛ւշ հնձեսցիք. և վիճակքն ձեր ո՛չ եղիցին ձեզ յօգուտ: Յամօթ լերուք ՚ի պարծանաց ձերոց՝ ՚ի նախատանաց առաջի Տեառն՝: ¹⁴Ձի այսպէս ասէ Տէր, վասն ամենայն դրացեացդ չարաց որ մերձենան ՚ի ժառանգութիւն իմ, զոր բաշխեցի ժողովրդեան իմում Իսրայէլի. Ահաւասիկ ես կորզեցի՛ց զնոսա

* *Ոմանք.* Եւ մնացորդք ոչ եղիցին նոցա:

* *Բազումք.* Որ արհամարհեն զարհ՛:

* *Բազումք.* Եւ հեռի յերիկամանց:

* *Ոմանք.* Իբրև զոչխարս ՚ի սպ՛... զնոսա աւուր սպանման: *Ուր Ոսկան.* յօր սպանման:

* *Ոմանք.* Յուսացեալ իցես. զի՞ գործեսցես ՚ի:

* *Բազումք.* Եւ նոքա դաւեցին քեզ, և նոքին:

* *Ոմանք.* Ի ձեռն թշնամեաց իւ՛:

* *Ոմանք.* Եղ ՚ի վերայ իմ զբարբառ:

* *Բազումք.* Եւ եկեսցեն ուտել զնա:

* *Ի բազումս պակասի.* Ամենայն երկիր. *զի ոչ ընդ հուպ արարի հատուցանել.* զի ոչ գոյ:

* *Բազումք.* Անցին թշուառացեալք... և ոչ գոյր խաղաղութիւն ամենայն մարդոյ:

* *Ոսկան.* Եւ մի փուշ հնձեսցիք:

յերկրէն իւրեանց, և զտունն Յուդայ հանից 'ի միջոյ նոցա* .¹⁵ և եղիցի յետ հանելոյն զնոսա. դարձայց և ողորմեցայց նոցա. և բնակեցուցից զնոսա՝ իւրաքանչիւր 'ի ժառանգութեան իւրում, և իւրաքանչիւր յերկրի իւրում* :¹⁶ Եւ եղիցի եթէ ուսանելով ուսանիցին զճանապարհ ժողովրդեան իմոյ, երդնուլ յանուն իմ թէ կենդանի՝ է Տէր. որպէս ուսուցին զժողովուրդն իմ երդնուլ 'ի Բահաղ. և շինեսցին 'ի մէջ ժողովրդեան իմոյ: ¹⁷ Եւ եթէ ոչ դառնայցեն՝ ջնջեցից՝ զազգն զայն, և բարձից կորստեամբ ասէ Տէր:

13

Գլուխ ԺԳ

ԺԳ ¹ Այսպէս ասէ Տէր. Գնա՛ և ստացի՛ր քեզ սփածանելի կտաւի, և ա՛ծ զմիջով քո. և ընդ ջուր մի՛ անցանիցես* : ² Եւ ստացայ սփածանելի ըստ բանին Տեառն, և ածի՛ զմիջով իմով: ³ Եւ եղև բան Տեառն առ իս կրկին անգամ՝ և ասէ. ⁴ Ա՛ն զսփածանելիդ զոր ստացար՝ 'ի միջոյ քումնէ. և արի՛ զնա յափն Եփրատու, և թաքուցես զդա անդ՝ 'ի ծակ վիմի* : ⁵ Եւ չոգայ՝ և թաքուցի զնա յԵփրատ, որպէս պատուիրեաց ինձ Տէր* : ⁶ Եւ եղև յետ բազում աւուրց՝ ասէ ցիս Տէր. Արի զնա յափն Եփրատայ, և առցես անտի զսփածանելին զոր հրամայեցի քեզ անդ թաքուցանել: ⁷ Եւ զնացի յափն Եփրատ գետոյ, փորեցի և առի զսփածանելին 'ի տեղուջէ անդ ուր թաղեցի զնա. և ահա ապականեալ էր սփածանելին, և ահա չէր ինչ իմիք պիտանացու* : ⁸ Եւ եղև բան Տեառն առ իս՝ ⁹ և ասէ. Այսպէս ասէ Տէր. Այդպէս ապականեցից զհպարտութիւն Յուդայ և զհպարտութիւն Երուսաղէմի: ¹⁰ Զքաղաքն և զժողովուրդն իմ չար՝ որք ոչ կամէին լսել բանից իմոց. որք զնան ըստ յօժարութեան սրտից իւրեանց չարաց, և երթան զհետ աստուածոց օտարաց ծառայել նոցա՝ և երկիր պագանել. և եղիցին իբրև զսփածանելիդ զայդ՝ որ ոչ իմիք է՝ պիտանացու* : ¹¹ Զի զոր օրինակ մածանի սփածանելի զմիջով մարդոյ, նոյնպէս մածուցի զինև զամենայն տունդ Իսրայէլի, և զամենայն տունդ Յուդայ՝ ասէ Տէր. լինել ինձ ժողովուրդ անուանի, և 'ի պարծանս և 'ի փառս. և ոչ անսացին ինձ* : ¹² Եւ ասացես ժողովրդեանդ զպատգամսդ զայդ. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ամենայն տիկ գինուով լցցի. և եղիցի եթէ ասիցեն ցքեզ. Միթէ չգիտիցե՞մք գիտելով. եթէ ամենայն տիկ գինուով լցցի* : ¹³ Եւ ասացես ցնոսա. Այսպէս ասէ Տէր. Ահա ես լնու՛մ զամենայն բնակիչս երկրիդ այդորիկ, և զթագաւորս որդիս Դաւթի որ նստին յաթոռ նորա, և զքահանայս և զմարգարէս, և զՅուդա և զամենայն բնակիչս Երուսաղէմի արբեցութեամբ: ¹⁴ Եւ ցրուեցից զդոսա՝ զայր և զեղբայր իւր, զհայր և զորդիս իւրեանց 'ի միասին՝ ասէ Տէր. ոչ գթացայց և ոչ խնայեցից, և ոչ ողորմեցայց

* *Ոմանք.* Ժողովրդեան իմոյ Իսրայէլի... հանից 'ի միջոյ իւրեանց:

* *Ոմանք.* Յիւրաքանչիւր ժառանգութեան իւրում, և յիւ՛:

* *Բազունք.* Այսպէս ասէ Տէր ցիս. Գնա՛: *Ոմանք.* Եւ ա՛ծ ընդ միջով քով:

* *Ոմանք.* Զսփածանելին զոր սփածար:

* *Բազունք.* Որպէս և պատուիրեաց:

* *Ոմանք.* 'Ի տեղուջէ ուր թաքուցի զնա անդ... և չէր ինչ իմիք պի՛:

* *Ոսկան.* Ոչ կամին լսել բա՛: *Ոմանք.* Որ ոչինչ իմիք է պի՛:

* *Ոմանք.* Սփածանելի ընդ միջով... զամենայն տունն Իսրայէլի և զամենայն տունն Յու՛... ինձ 'ի ժողովուրդ:

* *Ոմանք.* Զպատգամդ զայդ... չգիտիցեմ եթէ տիկ: *Ոսկան.* Գինեաւ լցցի:

ապականել զդոսա*։ ¹⁵Լուարո՛ւք և ունկնդի՛ր լերուք, և մի՛ հպարտանայք՝ զի Տէր խօսեցաւ։ ¹⁶Տո՛ւք Տեառն Աստուծոյ ձերում փառս, մինչչև՛ խաւարեալ և գայթազդեալ ոտից ձերոց՝ ՚ի վերայ խաւարին լերանց. ական ունիցիք լուսոյ, և անդ ստուերք մահու. և դնիցիք ՚ի խաւարի*։ ¹⁷Եւ եթէ ո՛չ լսիցէք նմա՝ գաղտագողի լայցեն անձինք ձեր յերեսաց թշնամեաց, և արտասուալից՝ իցէք արտասուօք. և իջուցեն ացք ձեր արտասուս, զի խորտակեցաւ հօտն Տեառն*։ ¹⁸Ասացէ՛ք ցթագաւորն և ցբռնաւորսն, թէ կորացարո՛ւք և նստարո՛ւք. զի անկան՝ ՚ի գլխոց ձերոց պսակ փառաց ձերոց*։ ¹⁹Փակեցան քաղաքք որ ընդ հարաւակողմն, և ո՛չ ոք էր որ բանայր. գերեցաւ Յուդա զվախճանեալ գերութիւն, զկատարեալն հատուցմանց*։ ²⁰Ամբարձ գաչս քո Երուսաղէմ, և տես զարձակեալսդ՝ ՚ի հիւսւսոյ. ո՞ւր է հօտն որ տուաւ ցքեզ, խաշինք փառաց քոց*։ ²¹Ղի՞նչ տացես պատասխանի՝ ՚ի ժամանակի յորում պահանջիցեն ՚ի քէն. դո՛ւ իսկ ուսուցեր զնոսա ուսումն՝ տիրել ՚ի վերայ քո։ Ո՞չ ահա երկունք ունիցին զքեզ իբրև կնոջ ծննդականի։ ²²Եւ եթէ ասիցես ՚ի սրտի քում, թէ ընդէ՞ր պատահեաց ինձ այս. վասն բազմութեան անիրաւութեան քոյ՝ յայտնեցաւ յետուստ քո խայտառակեալ զկրկունս քո*։ ²³Եթէ փոխիցէ Յնդիկ զմորթ իւր, և ինձ զխայտուցս իւր. և դուք կարօղ լինիցիք գործել զբարիս ուսեալք զչարիս*։ ²⁴Եւ ցրուեցից զնոսա իբրև զխռիւ հողմակոծեալ յանապատի*։ ²⁵Ա՛յդ է վիճակ քո՝ և մասն չհաւանելդ ձեզ ինձ. զի մոռացար զիս և յուսացար ՚ի ստութիւնս*։ ²⁶Եւ ես մերկացից զյետուստ քո, և արկից զգլխով քո և զերեսօք, և երևեսցին անարգանք քո*։ ²⁷Հնութիւն և վրընջիւն քո, և օտարանալն յինէն պոռնկութեամբ քով. ՚ի բազինս և յանդս տեսի զգարշելիս քո։ Վայ քեզ Երուսաղէմ՝ զի ո՛չ սրբեսցիս զկնի իմ. մինչև ցե՞րք իցէ քեզ այդ*։

14

Գլուխ ԺԴ

¹Եւ եղև բան Տեառն առ Երեմիա վասն երաշտութեան անձրևի։ ²Սո՛ւզ առ Յրէաստան, և դրունք նորա թափուր եղեն. խաւարեցան ՚ի վերայ երկրի, և աղաղակն Երուսաղէմի բարձրացաւ*։ ³Եւ մեծամեծք նոցա առաքեցին զերիտասարդս իւրեանց զջրոյ. եկին ՚ի ջրհորս, և ո՛չ գտին ջուր. դարձուցին ունայն զամանս իւրեանց։ Ամաչեցին յամօթ եղեն՝ և ծածկեցին զգլուխս

* Ոմանք. Եւ զհարս դոցա, և զորդիս իւրե՛ն։

* Ոմանք. ՚ի վերայ խաւարային լերանց. ական ունէիք լուսոյ։

* Ոմանք. Եթէ ոչ լսէք նմա... լացցեն անձինք... և արտասուիցէք արտասուօք։

* Ոմանք. Ասացէք ցթագաւորս և բռնաւորն։

* Ոմանք. Ձկատարեալն հատուցման։

* Ոմանք. Եւ տես զարձակեալսդ... հօտն որ տուաւ քեզ։

* Ոսկան. Անօրէնութեան քո յետուստ քո խայտառակել։

* Ոմանք. Եւ ինձ զխայտուց իւր։

* Ոմանք. Եւ ցրեցի զնոսա իբրև։

* Ոմանք. Չհաւանելդ ձեր ինձ։

* Ոմանք. Եւ արկից զերեսօք քովք։

* Բազումք. ՚ի բազինս և յաղանդս տեսի զգարշէլ։

* Ոմանք. Եւ դրունք նորա թափուր մնացին։

իւրեանց*։ ⁴Եւ գործ երկրին պակասեաց. զի ո՛չ եղև անձրև ՚ի վերայ երկրի. յամօթ եղեն մշակք, ծածկեցին զգլուխս իւրեանց*։ ⁵Եղինք ՚ի վայրի ծնան, և թողին զծնունդս զի ո՛չ գոյր բանջար*։ ⁶Եւ ցիռք ՚ի դաշտս ծծեցին զօդս իբրև զվիշապս. և սորեցին աչք իւրեանց զի ո՛չ գոյր խոտ։ ⁷Եթէ մեղք մեր հակառակ կացին մեզ. դու Տէր արա՛ վասն անուանդ քոյ. զի բազում են մեղք մեր առաջի քո. քե՛զ մեղաք ⁸ակնկալութիւնդ Իսրայէլի։ Տէր փրկեա՛ զմեզ ՚ի ժամանակի չարեաց. ընդէ՞ր եղեր իբրև զպանդուխտ յերկրի. կամ իբրև զբնակ երկրի որ դառնայցէ յօթեվանս*։ ⁹Միթէ իցես իբրև զմարդ որ ննջէ՞. կամ իբրև զայր որ ո՛չ կարէ ապրեցուցանել. և դու ՚ի միջի մերում ես Տէր, և անուն քո կոչեցեալ է՛ ՚ի վերայ մեր. մի՛ մոռնար զմեզ*։ ¹⁰Այսպէս ասէ Տէր ժողովրդեանդ այդմիկ. Այնպէս սիրեցին շարժել զոտս իւրեանց՝ և ո՛չ խնայեցին. և Աստուած ո՛չ հաճեցաւ ընդ նոսա. արդ յիշեսցէ զանիրաւութիւնս նոցա, և այց արասցէ մեղաց նոցա*։ ¹¹Եւ ասէ ցիս Տէր. Մի՛ կար յաղօթս վասն ժողովրդեանն այնորիկ ՚ի բարիս*։ ¹²Ձի թէ պահեսցեն, ո՛չ լուայց խնդրուածոց նոցա. և եթէ մատուցեն ողջակէզս և զոհս՝ ո՛չ հաճեցայց ընդ այն. զի սրով և սովով և մահուամբ սպառեցից զնոսա*։ ¹³Եւ ասեն. Ո՛վ՛ որ ետդ Տէր Տէր. ահա մարգարէքն ասեն նոցա՝ թէ ո՛չ տեսչիք զսուր, և սով՝ ո՛չ եղիցի ՚ի միջի ձերում. զի ճշմարտութիւն և խաղաղութիւն տացի ՚ի վերայ երկրի, և ՚ի տեղւոջդ յայդմիկ։ ¹⁴Եւ ասէ՛ ցիս Տէր. Սո՛ւտ մարգարեանն մարգարէքն յանուն իմ. ո՛չ առաքեցի զնոսա, և ո՛չ պատուիրեցի նոցա, և ո՛չ խօսեցայ ընդ նոսա. զի տեսիլս սուտս, և ըղձութիւնս, և հմայս, և զկամս սրտից իւրեանց մարգարեանն նոքա ձեզ։ ¹⁵Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր ՚ի վերայ մարգարէիցն, որ մարգարեանն յանուն իմ, և ես ո՛չ առաքեցի զնոսա և ո՛չ պատուիրեցի նոցա. որ ասեն՝ թէ սուր և սով ո՛չ եղիցի յերկրիս յայսմիկ. յախտ ծիրական մահու՛ և ՚ի սուր և ՚ի սով սպառեսցին մարգարէքն այնորիկ*, ¹⁶և ժողովուրդն որոց նոքայն մարգարեանն. և եղիցին ընկեցեալս յանցս Երուսաղեմի՛ յերեսաց սրոյ և սովոյ, և ո՛չ ոք իցէ որ թաղիցէ զնոսա. ինքեանք՝ և կանայք իւրեանց, և ուստերք և դստերք նոցա. և հեղից ՚ի վերայ նոցա զչարիս իւրեանց*։ ¹⁷Եւ ասացես նոսա զայս բան. Իջուցէ՛ք ընդ աչս ձեր արտասուս ՚ի տուէ և ՚ի գիշերի, և մի՛ պակասեսցին. զի բեկմամբ մեծաւ բեկաւ կոյս դուստր ժողովրդեան իմոյ, և ցաւագին հարուածովք յոյժ*։ ¹⁸Եթէ ելի՛ց ՚ի դաշտ՝ ահա վիրաւորք սրոյ, և եթէ մտից ՚ի քաղաք՝ ահա ցաւք սովոյ. զի մարգարէ և քահանայ գնացին յերկիր զոր ո՛չ գիտէին։

ԺԴ. ¹⁹Միթէ խոտելով խոտեցէ՞ր զՅուդայ, կամ վերանալով վերացա՞ւ անձն քո. ընդէ՞ր հարեր զմեզ, և ո՛չ գոյ մեր բժշկութիւն. ակն կալաք խաղաղութան, և ո՛չ

* *Ոմանք.* Եւ մեծամեծք նորա... իւրեանց զջրոց։
 * *Բազումք.* Ձի ոչ գոյր անձրև ՚ի վերայ։
 * *Ոմանք.* Եւ եղինք ՚ի վայրի... և թողին զծնունդս իւրեանց։
 * *Ոմանք.* Ընդէ՞ր եղև իբրև զօտար յերկրի։
 * *Ոմանք.* Որպէս զմարդ որ ն՛... որ ոչ կարիցէ ապ՛։
 * *Ոմանք.* Այսպէս սիրեցին շար՛։
 * *Ոմանք.* Վասն ժողովրդեանդ այդմիկ ՚ի բա՛։
 * *Ոմանք.* Խնդրուածաց նոցա։
 * *Ոսկան.* Վասն այնորիկ այսպէս։
 * *Ոմանք.* Նոքայն մարգարեանային. եղիցին ընկեցեալք յանցս։
 * *Ոմանք.* Ընդ աչս ձեր արտասուք։

գոյր բարութիւն. ժամանակի բժշկութեան՝ և ահա խռովութիւն*։ ²⁰Ծանեա՛ք Տէր
զմեղս մեր, և զանհրաւութիւնս հարց մերոց. զի մեղա՛ք առաջի քո*։
²¹Պաղարեա՛ վասն անուանդ քոյ. մի՛ կորուսաներ զաթոռ փառաց քոց. յիշեա՛,
մի՛ ցրեր զուխտն քո որ ընդ մեզ։ ²²Միթէ՞ իցէ՞ ՚ի կուռս հեթանոսաց՝ որ տեղասցէ.
կամ թէ երկինք տայցե՞ն զլրութիւն իւրեանց. ոչ ապաքէն դո՞ւ ես նոյն Տէր
Աստուած մեր, և ակնկալցուք քեզ զի դու արարեր զայս ամենայն*։

15

Գլուխ ԺԵ

¹Եւ ասէ՛ ցիս Տէր. եթէ կացցեն Մովսէս և Սամուէլ առաջի երեսաց իմոց, ո՛չ
եղիցի անձն իմ ընդ նոսա. ՚ի բա՛ց արձակեա զժողովուրդդ զայդ յերեսաց իմոց՝
և ելցեն*։ ²Եւ եղիցի եթէ ասիցեն ցքեզ. Յո՞վ ելցուք. ասասցես ցնոսա. Այսպէս
ասէ Տէր. Որք ՚ի մահ՝ ՚ի մահ, և որք ՚ի սուր՝ ՚ի սուր, և որք ՚ի սով՝ ՚ի սով, և որք ՚ի
գերութիւն՝ ՚ի գերութիւն*։ ³Եւ խնդրեցից ՚ի նոցանէ վրէժս չորիւք օրինակօք՝ ասէ
Տէր. զսուր ՚ի սպանանել, և զշունս ՚ի պատառել, և զթռչունս երկնից՝ և
զգազանս երկրի՝ յուտել և յապականել*։ ⁴Եւ մատնեցից զնոսա ՚ի վտանգ
ամենայն թագաւորութեանց երկրի. վասն Մանասէի որդւոյ Եզեկիայ
թագաւորին Յուդայ, և վասն ամենայնի զոր արար յերուսաղէմ։ ⁵Ո՞ խնայեսցէ ՚ի
քեզ երուսաղէմ, կամ ո՞ տրտմեսցի ՚ի վերայ քո, կամ ո՞ դարձցի հարցանել
զխաղաղութենէ քումնէ*։ ⁶Գի դու դարձար յինէն՝ ասէ Տէր. և յե՛տս երթիցես։ Եւ
ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ քո, և ապականեցից զքեզ. և ո՛չ ևս անսացից նոցա։
⁷Եւ ցրեցից զնոսա ՚ի սփիւռս. ՚ի դրունս ժողովրդեան իմոյ անգաւակեցան. զի
կորուսին զժողովուրդ իմ վասն չարեաց իւրեանց, և ո՛չ դարձան*։ ⁸Բազմացան
զինև չարիք նոցա քան զաւագ ծովու. ածի ՚ի վերայ նոցա՝ և ՚ի վերայ մօրն
զերիտասարդս. թշնամութիւն ՚ի միջօրէի արկից զնովաւ. եկն յանկարծակի
դողումն և տազնապ*։ ⁹Ունայնացաւ եւթնածինն, ձանձրացաւ անձն նորա.
Եմուտ նմա արև՝ զմիջօրէի, եղև յամօթ և ՚ի նախատինս. զմնացորդս նոցա
տաց ՚ի սուր առաջի թշնամեաց նոցա, ասէ Տէր։

ԺԵ ¹⁰Վայ՛ ինձ, վայ՛ ինձ մայր իմ. իբրև զո՞ որ ծնար զիս. այր դատաւիտեալ և
ձգձգեալ ՚ի դատաստան յամենայն երկրի. ո՛չ պարտիմ ինչ, և ո՛չ որ պարտի ինչ
ինձ. և զօրութիւն պակասեաց՝ յանիծանելեաց իմոց*։ ¹¹Եղիցի Տէր, և յաջողեսցի

* Ոսկան. Եւ ոչ գոյր մեր բժշ*։

* Ոմանք. Եւ զանօրէնութիւնս հարց։

* Ոմանք. Իցէ՞ որ ՚ի հեթանոսաց որ տեղայցէ։ Եւ ոմանք. իցէ՞ որ ՚ի կուռս հեթա*։

* Ոմանք. Թէ կացցէ Մովսէս... անձն իմ ընդ դոսա։

* Ոմանք. Եթէ ասասցեն ցքեզ յո՞ ելցուք։

* Ոմանք. Եւ խնդրեցից վրէժ ՚ի նոցանէ։

* Յօրինակին պակասէր. խնայեսցէ ՚ի քեզ երուսաղէմ, կամ ո՞ տրտմէս*։ Ի լուս՞. ՚ի վերայ՝
Տրտմեսցի. նշանակի՞ Ողորմեսցի։ Ոմանք. Եւ ո՞վ տրտմեսցի... կամ ո՞վ դարձցի ՚ի
հար*։

* Բազումք. Եւ ցրուեցից զնոսա ՚ի սփիւռս։ Ոսկան. Զի կորուսի զժողովուրդ իմ։

* Ի լուս՞. Զինև այրիք նոցա. համաձայն ոմանց ՚ի բնաբ*։ Օրինակ մի. Ա՛ծ ՚ի վերայ նոցա
և ՚ի վերայ մօրն։ Բազումք. Թշուառութիւն ՚ի մեջօրէի արկի զնովաւ։

* Ոսկան միանգամ դնէ. Վայ ինձ մայր իմ... յանիծողաց իմոց։ Բազումք. Եւ ձգեալ ՚ի
դատաստան... և ոչ պարտի որ ինչ ինձ, և զօրութիւն իմ պակասեաց։

նոցա՝ ի բարութիւնս. եթէ ո՛չ կացի առաջի քո, ՚ի ժամանակի չարեաց նոցա, և ՚ի ժամանակի նեղութեան նոցա ՚ի բարիս ընդդէմ թշնամոյ*։ ¹²Իցէ՞ թէ ճանաչիցի երկաթ. և քաղաքո՛րմ պղնձի զօրութիւն քո*։ ¹³Եւ զգանձս քո տա՛ց օտարաց ՚ի փրկանս վասն ամենայն մեղաց քոց՝ յամենայն սահմանս քո*։ ¹⁴Եւ ծառայեցուցից զքեզ թշնամեաց քոց յերկրի զոր ո՛չ գիտիցես. զի հո՛ւր վառեալ է ՚ի սրտմտութենէ իմմէ, ՚ի վերայ ձեր բորբոքեսցի*։ ¹⁵Դո՛ւ գիտես Տէր. յիշեա՛ զիս Տէր. այց արա ինձ. անարա՛տ արա զիս ՚ի հալածչաց իմոց, և մի՛ յերկարեր վասն իմ. ծանիր՝ ո՞րչափ առի վասն քո նախատինս ¹⁶յարհամարհողաց բանից քոց։ Վախճանեա՛ զնոսա, և եղիցի բան քո ինձ յուրախութիւն և ՚ի ցնծութիւն սրտի իմոյ. զի կոչեցեալ է անուն քո ՚ի վերայ իմ, Տէր Աստուած ամենակալ*։ ¹⁷Ո՛չ նստայց յատենի այպանողաց. այլ սարսեցի յերեսաց ձեռին քո. առանձին նստէի զի լցայց դառնութեամբ*։ ¹⁸Ընդէ՛ր որ տրտմեցուցանեն զիս՝ զօրանան, և վերք իմ սաստիկք՝ ուստի՞ բժշկեցայց. լինելով եղև ինձ իբրև զջուր ցուրտ, յորում ո՛չ գոյ հաւատ։ ¹⁹Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. եթէ դարձցիս այսրէն՝ պատսպարեցի՛ց զքեզ, և առաջի երեսաց իմոց կացցես. և եթէ հանցես զպատուականն յանարգէ, իբրև զբերան իմ եղիցես. և եթէ դարձցին նոքա առ քեզ, և ո՛չ ևս դու դարձցիս առ նոսա*։ ²⁰Տա՛ց զքեզ ժողովրդեանդ այդմիկ ՚ի պարիսպ պղնձի ամուր. մարտիցեն ընդ քեզ, և ո՛չ կարիցեն ստնանել. զի ընդ քե՛զ են ապրեցուցանել և փրկել, ասէ Տէր*։ ²¹Եւ զերծուցից զքեզ ՚ի ձեռաց չարաց, և փրկեցից զքեզ ՚ի ձեռաց ժանտաց՝ ասէ Տէր Աստուած Իսրայէլի։

16

Գլուխ ԺԶ

ԺԶ ²Եւ դու* մի՛ առնուցուս քեզ կին. և մի՛ ծնցին քեզ ուստերք և դստերք ՚ի տեղւոջդ յայդմիկ։ ³Զի այսպէս ասէ Տէր վասն ուստերաց և դստերաց որ ծնանիցին ՚ի տեղւոջդ յայդմիկ, և վասն մարց նոցա որ ծնանին զնոսա, և վասն հարց նոցա որ ծնանին զնոսա յերկրիդ յայդմիկ*։ ⁴Ծիւրեալ ախտիւ մեռցին. մի՛ կոծեսցին և մի՛ թաղեսցին, այլ խայտառա՛կ եղիցին ընդ երեսս երկրի. սրով անկցին և սովով սպառեսցին. և եղիցին դիակունք նոցա ՚ի կերակուր թռչնոց երկնից և զազանաց երկրի*։ ⁵Այսպէս ասէ Տէր. Յաշխարումն նոցա մի՛ մտանիցես, և ՚ի կոծ նոցա մի՛ երթիցես, և սուգ ՚ի վերայ նոցա մի՛ առնուցուս. զի ՚ի բա՛ց արարի զխաղաղութիւն իմ ՚ի ժողովրդեանէն յայնմանէ՝ ասէ Տէր. և զողորմութիւնս և զգթութիւնս։ ⁶Եւ մեռանիցին մեծամեծք և փոքունք յերկրին յայնմիկ. մի՛ կոծեսցին, և մի՛ ցտեսցին, և մի՛ խզեսցին, և մի՛ լացցին, և մի՛

* *Ոմանք.* Եթէ ոչ կամիցի առաջի քո։

* *Ոմանք.* Եւ քաղաք որմն պղնձի։

* *Ոմանք.* Տաց օտարի փրկանս։ *Ուր օրհնակ մի.* Տաց յաւար ՚ի փրկանս։

* *Ոմանք.* Յերկիր զոր ոչ գիտիցես. զի հուր վառեալ ՚ի սրտ։

* *Ոմանք.* Յարհամարհանաց բանից քոց։

* *Ոմանք.* Ոչ նստայ յատենի այ՛... այլ սարսէի յերեսաց ձեռին... զի լցայ դառնութեամբ։

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս ա՛... և ոչ դու դարձցիս առ նոսա։

* *Ոմանք.* Յապրեցուցանել և ՚ի փրկել։ *Ուր Ոսկան յաւելու.* և ՚ի փրկել *զքեզ*։

* *Ի գլուխս յայս Ոսկան յաւելու համար 1.* *Եւ եղև բան Տեառն առ իս, ասելով. Եւ դու։

* *Ի բազումս պակասի.* * *Զի այսպէս ասէ Տէր...* ՚ի տեղւոջդ յայդմիկ. և վասն մարց։

* *Ոմանք.* Սրով մեռցին. և սովով։ *Ուր Ոսկան.* սովու սպա՛։

թաղեսցին*։ ⁷Եւ մի՛ բեկցի հաց սոյն նոցա՝ ՚ի մխիթարութիւն ՚ի վերայ մեռելոյ. և մի՛ արբուցեն բաժակ մխիթարութեան ՚ի վերայ հօր և մօր իւրոյ*։ ⁸Ի տուն ընկալեաց մի՛ մտանիցես նստել ընդ նոսա՝ ուտել և ընկալել։ ⁹Ձի ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ՝ ես խափանեցից ՚ի տեղուշէր յայդմանէ առաջի աչաց իմոց՝ և ՚ի ձե՛ր իսկ աւուրս, զձայն ցնծութեան և զձայն ուրախութեան, զձայն փեսայի և զձայն հարսին*։ ¹⁰Եւ եղիցի յորժամ պատմեսցես ժողովրդեանն այնմիկ զամենայն պատգամսդ զայդոսիկ, և ասասցեն քեզ. Ընդէ՞ր խօսեցաւ Տէր ՚ի վերայ մեր զայդ ամենայն չարիս մեծամեծս. զի՞նչ անիրաւութիւն է ՚ի մեզ, կամ ո՞ր մեղք զոր մեղաք առաջի Տեառն Աստուծոյ մերոյ*։ ¹¹Եւ ասասցես ցնոսա. Փոխանակ զի թողին զիս հարքն ձեր՝ ասէ՛ Տէր, և գնացին զհետ աստուածոց օտարաց, և ծառայեցին նոցա, և երկիրպագին նոցա. և զիս թողին, և զօրէնս իմ ո՛չ պահեցին։ ¹²Եւ դուք անզգամեցայք առնել առաւել քան զհարսն ձեր. և ահաւաղիկ դուք երթայք իւրաքանչիւր զհետ հաճոյից սրտից ձերոց չարաց առ ՚ի չլսել ինձ*։ ¹³Եւ ընկեցից զձեզ յերկրդ յայդմանէ յերկիր՝ զոր ո՛չ գիտիցէք դուք և հարքն ձեր. և ծառայեսցիք անդ աստուածոց օտարաց՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի, և ո՛չ արասցեն ձեզ ողորմութիւն*։ ¹⁴Վասն այնորիկ ահա աւուրք գան ասէ Տէր. և ո՛չ ևս ասասցեն. Կենդանի է Տէր որ եհան զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացոց*։ ¹⁵այլ թէ կենդանի է Տէր որ եհան զորդիսն Իսրայէլի յերկրէն հիւսւսոյ, և յամենայն աշխարհաց ուր և մերժեցան անդ. և պատսպարեսցէ զնոսա անդրէն յերկրին իւրեանց զոր ե՛տ հարցն նոցա*։

ԺԷ ¹⁶Ահաւասիկ ես առաքեմ ձկնորսս բազումս՝ ասէ Տէր, և որսասցեն զնոսա. և յետ այնորիկ առաքեցից որսորդս բազումս, և որսասցեն զնոսա ՚ի վերայ ամենայն լերանց՝ և ՚ի վերայ ամենայն բլրոց՝ և ՚ի ծակուց վիմաց*։ ¹⁷Ձի աչք իմ ՚ի վերայ ամենայն ճանապարհաց նոցա, և ո՛չ թաքեան յերեսաց իմոց, և ո՛չ ծածկեցան անիրաւութիւնք նոցա առաջի աչաց իմոց*։ ¹⁸Եւ հատուցից նոցա նախ կրկին զանիրաւութիւնս նոցա. և զմեղս նոցա որովք պղծեցին զերկիր իմ մեռելոտուովք գարշելեացն իւրեանց. և անօրէնութեամբք նոցա՝ որովք լցին զժառանգութիւն իմ*։

ԺԸ ¹⁹Տէր զօրութիւն իմ՝ և օգնութիւն իմ և ապաւեն իմ յաւուր չարեաց. առ քեզ հեթանոսք եկեսցեն ՚ի ծագաց երկրէ և ասասցեն. Որպէս սո՛ւտ գործէին հարքն մեր կուռս, և ո՛չ գոյր օգո՛ւտ ՚ի նոցանէ*։ ²⁰Եթէ առնիցէ մարդ անձամբ անձին աստուածս՝ և նոքա չեն աստուածք*։ ²¹Վասն այնորիկ ահաւասիկ ես ցուցից

* *Ոսկան.* Մի՛ կոծեսցեն, և մի՛ ցետեսցին։

* *Ոմանք.* Ի վերայ մեռելոց... ՚ի վերայ հօր իւրոյ և մօր։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես խա՛... առաջի աչաց ձերոց։

* *Ոմանք.* Եւ ասասցեն քեզ. Ընդէր... կամ որպիսի մեղք զոր մեղաք։

* *Ոմանք.* Իւրաքանչիւր ըստ հաճոյից սրտից... առ ՚ի չլսելոյ ինձ։

* *Յօրինակին պակասէր.* Ձոր ոչ գիտիցէք *դուք* և հարքն։

* *Ոմանք.* Վասն այնորիկ ահա աւ՛։

* *Ոմանք.* Մերժեցան անդր... անդրէն յերկիր իւրէ՛։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես առաքեմ։ *Յօրինակին.* Ձկնորս բազումս՝ ասէ։

* *Ոմանք.* Ի վերայ ճանապարհաց նոցա։

* *Ոմանք.* Եւ հատուցից նախ կրկին զանօրէնութիւնս նոցա... և անիրաւութեամբք նոցա։

* *Ոմանք.* Եւ օգնականութիւն իմ. *կամ՝* օգնական իմ ես յաւուր չարեաց... սուտ գործեցին հարքն... ՚ի նոցանէն։

* *Ոսկան.* Եւ ոչ նոքա են աստուածք։

նոցա՝ ի ժամանակի յայսմիկ զձեռն իմ, ծանուցից նոցա և զգօրութիւն իմ. և գիտասցեն՝ թէ անուն իմ Տէր է՝:

17

Գլուխ ԺԷ

¹Մեղք Յուդայ գրեալ են գրչաւ երկաթեալ, ադամանտեայ՝ եղեգամբ. մածեալ է ՚ի տախտակս սրտից նոցա, և յեղջերս սեղանոց ձերոց՝ ²ի ժամանակի յորում յիշեսցեն որդիք նոցա զմեղանս իւրեանց, և զանտա՛ռս իւրեանց՝ ՚ի վերայ ծառոց վարսաւորաց՝ և ՚ի վերայ բլրոց բարձանց՝, ³և ՚ի վերայ լերանց վայրի. զգօրութիւն քո, և զամենայն զանձս քո բաշխեցի՛ց յաւարի. զբարձունս քո մեղօք յամենայն սահմանս քո: ⁴Եւ լքջիր և նկո՛ւն լիջիր ՚ի ժառանգութենէ քումմէ զոր ետո՛ւ քեզ. և հանի՛ց զքեզ ՚ի ձեռս թշնամեաց քոց յերկիր զոր ո՛չ գիտիցես. զի հուր վառեալ է ՚ի սրտմտութեան իմում. մինչև յաւիտեան բորբոքեսցի՛: ⁵Ա՛յսպէս ասէ Տէր. Անիծեալ լիցի մարդ որ արասցէ գոյս իւր ՚ի մարդ, և ապաստան լինիցի ՚ի մարմին բազկի նորա. և ապստամբիցէ ՚ի Տեառնէ սիրտ նորա՛: ⁶Եւ եղիցի իբրև զմոշավայրի՛ յանապատի. և մի՛ տեսցէ յորժամ գայցէ բարութիւն. և բնակեսցէ յաղտաղտուկս անապատի, յերկիր աղտաղտուկ՝ ուր ո՛չ երբէք բնակիցին՝: ⁷Եւ օրհնեալ լիցի մարդն որ յուսացաւ ՚ի Տէր, և եղիցի Տէր յոյս նորա: ⁸Եւ եղիցի իբրև զծառ զուարճացեալ ՚ի գնացս ջուրց. և ընդ գնացս ջուրց ձգտեցուցէ զարմատս իւր. և մի՛ երկիցէ յորժամ հասանիցէ տօթ. և եղիցի ստեղն նորա անտառացեալ շուրջ գնովաւ. յամէ երաշտութեան մի՛ երկիցէ, և մի՛ կասեսցէ ՚ի տալոյ զպտուղ՝: ⁹Խորին է սիրտ քան զամենայն, և մարդ է՝ և ո՞վ ծանիցէ զնա: ¹⁰Ես Տէր քննեմ զսիրտս՝ և փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոյ գործոց իւրոց: ¹¹Չայն արար կաքաւ. ժողովեաց զոր ո՛չ իւր ծնեալ. որ ժողովէ զմեծութիւն առանց իրաւանց, ՚ի կէս աւուրց իւրոց թողցէ զնա, և ՚ի վախճանի իւրում եղիցի անզգամ՝: ¹²Աթո՛ռ փառաց բարձրացեալ իսկզբանէ տեղի սրբութեան մերոյ: ¹³Ակնկալութիւն Իսրայէլի Տէր. ամենեքեան որ թողին զքեզ՝ ամաչեսցեն. հեռացեալքն՝ յերկրի գերեսցին, զի թողին զՏէր զաղբելր ջրոյ կենաց՝:

ԺԹ ¹⁴Բժշկեա՛ զիս Տէր՝ և բժշկեցայց, փրկեա՛ զիս Տէր՝ և փրկեցայց. զի պարծանք իմ դո՛ւ ես: ¹⁵Ահաւանիկ նոքա ասեն ցիս. Ո՞ւր է բան Տեառն, եկեսցէ՛ այսր՝: ¹⁶Բայց ես ո՛չ ձանձրացայց զալ զկնի քո. և աւուր մարդոյ ո՛չ ցանկացայ. դո՛ւ իսկ գիտես՝ որ ինչ ելանէ ընդ շրթունս իմ, առաջի երեսաց քոց է: ¹⁷Մի՛ լինիր ինձ յօտարութիւն. խնայեա՛ դու յիս յաւուր չարի: ¹⁸Յամօթ լիցին

* Ոմանք. Ահաւադիկ ես ցու՛:

* Ոմանք. Անդամանդեայ եղե՛:

* Ոմանք. ՚Ի ժամանակի յորժամ յիշեսցեն... և յանտառս իւրեանց:

* Ոմանք. Մինչև յաւիտեանս:

* Ոմանք. Եւ ապաստան լիցի... և ապստամբ իցէ:

* Յօրինակին պակասէր. Աղտաղտուկ՝ ուր ո՛չ երբէք բնակիցին:

* Ոմանք. Ջուրցն ձկտեցուցէ... յամի երաշտութեան... և մի՛ կասեսցի ՚ի տալոյ:

* Ոմանք. Եւ ժողովեաց զոր ոչ: Յօրինակին. եղիցի անզգամ:

* Ոմանք. Ջաղբելր ջուրց կենաց:

* Ոմանք. Ահաւասիկ նոքա ասեն:

հալածիչքն իմ, և մի՛ ես ամաչեցից. զարհուրեցիցն նոքա՝ և մի՛ ես զարհուրեցայց. ա՛ծ՝ ՚ի վերայ նոցա օր չար, կրկին բեկմամբ բեկ գնոսա՛:

Ի՛ ¹⁹Այսպէս ասէ ցիս Տէր. Երբ կաց ՚ի դրունս ժողովրդեան քոյ՝ ընդ որ մտանեն և ելանեն թագաւորքն Յուդայ, և յամենայն դրունս Երուսաղեմի. ²⁰և ասացես ցնոսա. Լուարո՛ւք զպատգամս Տեառն թագաւորք Յուդայ, և ամենայն Հրէաստան, և ամենայն բնակիչքդ Երուսաղեմի որ մտանէք ընդ դրունդ ընդ այդոսիկ՝: ²¹Այսպէս ասէ Տէր. Ջգո՛յշ լերուք անձանց ձերոց. և մի՛ բառնայք բռնինս յաւուր շաբաթուց. և մի՛ ելանէք ընդ դրունս Երուսաղեմի՛, ²²և մի՛ հանէք բռնինս ՚ի տանց ձերոց յաւուր շաբաթուց. և զամենայն գործ մի՛ գործէք. և սրբեցէ՛ք զօրն շաբաթուց որպէս պատուիրեցի հարցն ձերոց: ²³Եւ ո՛չ լուան, և ո՛չ խոնարհեցուցին զունկն իւրեանց. և խստացուցին զպարանոցս իւրեանց առաւել՝ քան զհարցն իւրեանց. առ ՚ի չլսելոյ ինձ՝ և ընդունելոյ զխրատ՝: ²⁴Եւ եղիցի եթէ լսելով լուիցէք ինձ՝ ասէ Տէր, չբերել բռն ընդ դրունս քաղաքիս այսորիկ յաւուր շաբաթուց. և սրբել զօրն շաբաթու, չգործել ՚ի նմա զամենայն գործ՝. ²⁵և մտցեն ընդ դրունս քաղաքիդ այդորիկ թագաւորք և իշխանք՝ որ նստիցին յաթոռն Դաւթի. և ելանիցեն ՚ի կառս և յերիվարս իւրեանց, և իշխանք նոցա՝ արք Յուդայ և բնակիչք Երուսաղեմի. և բնակեցի՛ քաղաքդ այդ յաւիտեան: ²⁶Եւ եկեցեն ՚ի քաղաքացն Յուդայ շուրջանակի յԵրուսաղեմ, և ՚ի Բենիամինէ, և ՚ի դաշտականաց, և ՚ի լեռնակողմանց, և ՚ի կողմանց հարաւոյ բերել ողջակէզս՝ և խունկս՝ և մաննա՝ և կնդրուկ. մատուցանելով օրհնութիւն ՚ի տան Տեառն՝: ²⁷Ապա թէ ո՛չ լուիցէք ինձ սրբել զօրն շաբաթուց՝ չբառնալ բռնինս և մտանել ընդ դրունս Երուսաղեմի յաւուր շաբաթուց. վառեցից հո՛ւր ՚ի դրունս նորա, և կերիցէ շուրջ զԵրուսաղեմաւ, և մի՛ շիջցի՛:

18

Գլուխ ԺԸ

Իւ ¹Բանն որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ՝ և ասէ. ²Արի՛ էջ ՚ի տուն բրտին, և անդ լուիցես զբանս իմ՝: ³Իջի՛ ՚ի տուն բրտին, և ահա նա գործէր ՚ի վերայ վիմաց՝: ⁴Եւ անկաւ աման մի՛ գոր ինքն գործէր ՚ի կաւոյն՝ ՚ի ձեռաց նորա. և դարձեալ արար զնա այլ աման, որպէս հաճոյ եղև առաջի նորա առնել: ⁵Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ⁶Եթէ իբրև զբրուտդ զայդ ո՞չ կարիցեն առնել ձեզ տունդ Իսրայէլի՝ ասէ Տէր. ահաւաղիկ իբրև զկաւդ ՚ի ձեռս բրտիդ, այդպէս էք ՚ի ձեռս իմ տունդ Իսրայէլի՛:

ԻԲ ⁷Եթէ վախճան խօսեցայց ՚ի վերայ ազգի՝ կամ թագաւորութեանց, բառնալ

* Ոմանք. Եւ մի՛ ևս ես ամաչեցից... և մի՛ ևս ես զար՛:

* Ոմանք. Ջպատգամ Տեառն: *Բազումք*. Ընդ դրունսդ ընդ այդոսիկ:

* Ոմանք. Բռն յաւուր շաբա՛... ընդ դրունսդ Երուսաղեմի:

* Ոմանք. Առաւել քան զհարս իւրեանց... և չընդունելոյ. *կամ՝* և ընդունել զխրատ:

* Ոմանք. Եւ սրբել զօր շաբաթուց:

* Ոմանք. Եւ ՚ի կողմանց հիւսիսոյ բերել ողջա՛... և կնդրուկս մատուցանել օրհն՛:

* Ոմանք. Սրբել ինձ զօրն շա՛: *Բազումք*. Բառնալ բռն և մտանել ընդ դր՛:

* Ոմանք. Արի և էջ ՚ի տուն:

* Ոմանք. Եւ գործէր ՚ի վերայ վիմի: *Ի լուս՛. ՚ի վերայ՝* Վիմաց. *նշանակի՛* դրգան:

* *Բազումք*. Առնել զձեզ տունդ Իսրայէլի:

զնոսա՝ և քակել և կորուսանել* .⁸ և դարձցի ազգն այն՝ ի չարեաց իւրեանց զոր խօսեցայ ՚ի վերայ նոցա. զղջացայց և ես ՚ի վերայ չարեացն զոր խորհեցայ առնել նոցա* :⁹ Եւ եթէ վախճան խօսեցայց ազգի և թագաւորութեան՝ շինել և տնկել* .¹⁰ և արասցեն չարիս առաջի ին, չլսել բարբառոյ ինոյ. զղջացայց և ես՝ ի վերայ բարեացն զոր խօսեցայ առնել նոցա* :¹¹ Եւ արդ՝ խօսեաց ընդ արսոյ Յուդայ՝ և ընդ բնակիչսոյ Երուսաղեմի, և ասացես. Այսպէս ասէ Տէր. Ահաւանիկ ես նիւթն՝ ՚ի վերայ ձեր չարիս, և խորհիմ ՚ի վերայ ձեր խորհուրդ. արդ՝ դարձցի՝ իւրաքանչիւրոք ՚ի ճանապարհէ իւրնէ չարէ. և ուղիղ արարէք զգնացս ձեր և զճանապարհս ձեր* :¹² Եւ ասեն. Քաջացարուք, զհետ ապստամբութեանց մերոց գնացուք, և իւրաքանչիւրոք զհաճոյս սրտի իւրոյ չարի արասցուք* :

ԻԳ¹³ Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Արդ՝ անդէ հարցէք ընդ ազգս՝ ո՞վ ոք լուաւ այնպիսի արհաւիրս զոր արար յոյժ կոյսոյ Իսրայէլի* :¹⁴ Միթէ պակասեցե՞ն ստինք ՚ի վիմէ, կամ ձիւն ՚ի Լիբանանէ. կամ թէ դառնայցե՞ն ջուրք բռնութեամբ ՚ի սաստկութենէ հողմոյ :¹⁵ Ձի մոռացաւ զիս ժողովուրդ իմ. տարապարտուց արկին խունկս. և տկարացին ՚ի ճանապարհս իւրեանց ՚ի վիճակս յաւիտենից. ելանել ՚ի շաւիղս որ ոչ իցէ ճանապարհ գնալոյ* :¹⁶ Կարգել զերկիր նոցա յապականութիւն և ՚ի շչիւն յաւիտենից. ամենեքին որ անցանեն ընդ այն՝ զարմացին, և շարժեցեն զգլուխս իւրեանց* :¹⁷ Իբրև հողմ տապախառն ցրուեցից զնոսա առաջի թշնամեաց իւրեանց, ՚ի պարանոցս և ոչ յերեսս. ցուցից նոցա զօր կորստեան իւրեանց* :¹⁸ Եւ ասացին. Եկայք խորհեցուք խորհուրդ ՚ի վերայ Երեմիայի՛. զի ոչ կորնչին օրէնք ՚ի քահանայէ, և խորհուրդ յիմաստնոց, և բան ՚ի մարգարէէ. Եկայք և հարցուք զնա լեզուաւ, և ոչ լուիցուք զամենայն բանս նորա* :¹⁹ Լուր ինձ Տէր, և անսա՝ բարբառոյ իրաւանց իմոց :²⁰ Իցե՞ թէ հատուցանիցի չար փոխանակ բարւոյ. զի խորհեցան ՚ի միասին բանս զանձնէ իմնէ, և զտանջանս իւրեանց թաքուցին. յո՛ւշ լիցի քեզ ՚ի կալն իմուն առաջի քո, խօսել վասն նոցա բարութիւն, դարձուցանել զսրտմտութիւն քո ՚ի նոցանէ :²¹ Վասն այնորիկ տուր զորդիս նոցա ՚ի սո՛վ, և ժողովեա՛ զնոսա ՚ի ձեռս սրոյ. եղիցին կանայք նոցա անորդիք և այրիք, և արք նոցա եղիցին կոտորեալք մահուամբ, և երիտասարդք նոցա անկեալք սրով ՚ի պատերազմի* :²² Եղիցի գոյժ ՚ի տունս նոցա. զի աճիցես ՚ի վերայ նոցա յանկարծակի աւազակս. զի բանս ՚ի գործ արարին ունել զիս, և որոգայթս թաքուցին ինձ* :²³ Եւ դու Տէր զիտացեր զամենայն խորհուրդս նոցա զինէն ՚ի մահ. մի՛ քաւեսցես զանօրէնութիւնս նոցա, և զմեղս նոցա յերեսաց քոց մի՛

* *Ոմանք.* Ազգի կամ թագաւորութեան :

* *Ոմանք.* Ի չարեաց իւրոց զորոց խօսեցայ... զոր խօսեցայ առնել նոցա :

* *Ոմանք.* Վախճան խօսեցայ ՚ի վերայ ազգի :

* *Ոմանք.* Ձոր խորհեցայ առնել նոցա :

* *Ոմանք.* Ահաւանիկ. *կամ՝* ահաւասիկ ես նիւթն :

* *Բազումք.* Քաջացուք, զհետ ապստամբ : *Ոմանք.* Եւ իւրաքանչիւր զհաճոյս սրտի իւրեանց չարի :

* *Ոմանք.* Վասն այնորիկ... լուաւ այնպիսի արհաւիրս... կոյսն Իսրայէլի :

* *Բազումք.* Ուր ոչ իցէ ճանապարհ գնալոյ :

* *Ոմանք.* Ամենեքեան որ անցանիցեն ընդ այն :

* *Ոմանք.* Եւ իբրև զհողմն տապա՛ :

* *Ոմանք.* Եւ խորհուրդք յիմաստնոյ :

* *Ոմանք.* Վասն այնորիկ տուր զոր՝... և եղիցին կանայք նոցա :

* *Ոմանք.* Եղիցի գուժ ՚ի տունս նոցա. զի աճցես ՚ի վերայ :

ջնջեսցես. եղիցի հիւանդութիւն նոցա առաջի քո. ՚ի ժամանակի սրտմտութեան քո արա՛ ՚ի նոսա*:

19

Գլուխ ԺԹ

Ի Դ¹Յայնժամ ասէ՛ ցիս Տէր. Ե՛րբ ստացիր քեզ կո՛ւժ մի ստեղծեալ ՚ի կաւոյ, և ասծցես ՚ի ծերոց ժողովրդեանն, և ՚ի ծերոց քահանայիցն. ²և ելցես ՚ի գերեզմանս որդւոցն նոցա՝ որ է առաջի մտից դրանն Քարսիդեայ, և ընթերցցես անդ զամենայն զբանս զոր խօսեցայց ընդ քեզ*։ ³Եւ ասասցեսն ցնոսա. Լուարո՛ւք զպատգամ Տեառն թագաւորք Յուդայ, և արք Յրէաստանի, և բնակիչք Երուսաղեմի: Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւաղիկ ես ասծից՝ ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ չարի՛ս. որպէս զի ամենայնի որ լսիցէ՝ հնչեսցեն ականջք իւր*։ ⁴Վոխանակ զի թողին զիս, և օտարացուցին զտեղիս զայս յինէն. և արկանէին ՚ի սմա խունկս աստուածոց օտարաց, զորս ո՛չ գիտէին ինքեանք և հարք իւրեանց: Եւ թագաւորքն Յուդայ լցին զտեղիս զայս արեամբ անմեղաց*։ ⁵և շինեցին բազինս Բահաղու, այրել զորդիս իւրեանց հրով՝ ողջակէզս Բահաղու. զոր ո՛չ պատուիրեցի և ո՛չ խօսեցայ, և ո՛չ ասծի զմտաւ ՚ի սրտի իմում: ⁶Վասն այդորիկ ահա աւուրք զան ասէ Տէր. և ո՛չ ևս կոչեսցի անուն տեղւոյդ այդորիկ Գլորումն, և գերեզման որդւոցն Ենովմայ, այլ Չոր կոտորածի*։ ⁷Եւ խափանեցից զխորհուրդն Յուդայ, և զխորհուրդն Երուսաղեմի ՚ի տեղւոցն յայնմիկ. և արկից զնոսա տապաստ սրով առաջի թշնամեաց իւրեանց, և ՚ի ձեռս խնդրողաց անձանց նոցա. և տաց զդիակունս նոցա ՚ի կերակուր թռչնոց երկնից, և զազանաց երկրի*։ ⁸Եւ կարգեցից զքաղաքն զայն յապականութիւն և ՚ի շչիւն. ամենայն որ անցանէ ընդ նա տրտմեսցի՛. և շչեսցէ՛ ՚ի վերայ ամենայն հարուածոց նորա*։ ⁹Եւ կերիցեն զմարմինս ուստերաց՝ և զմարմինս դստերաց իւրեանց, և իւրաքանչիւր զմարմին ընկերի իւրոյ, ՚ի նեղութեան և ՚ի պաշարման զոր պաշարեցին զնոսա թշնամիք իւրեանց՝ որք խնդրէին զանձինս նոցա*։ ¹⁰Եւ խորտակեսցես զկուժն առաջի արանցն որ ելանիցեն ընդ քեզ, ¹¹և ասասցես ցնոսա. Այսպէս ասէ ցիս Տէր զօրութեանց. Այդպէս խորտակեցից զժողովուրդդ զայդ՝ և զքաղաքդ, որպէս խորտակի աման խեցեղէն, որ ո՛չ կարիցէ միւսանգամ բժշկել. և ՚ի Տափէթ թաղեսցին առ ՚ի չգոյէ՛ տեղի թաղելոյ*։ ¹²Այսպէս արարից տեղւոյդ այդմիկ՝ ասէ Տէր, և բնակչացդ որ ՚ի դմա. տաց զքաղաքդ զայդ ՚ի գլորումն*։ ¹³և եղիցին տունք Երուսաղեմի և տունք թագաւորացն Յուդայ՝ իբրև զտեղի՝ սպանելոց. վասն պղծութեանց զոր արարին յամենայն տունս, յորս արկանէին խունկս ՚ի վերայ տանեաց իւրեանց՝

* *Բազումք.* Մի՛ քաղաքս զանհրաւրութիւնս նոցա:

* *Ոսկան.* Քարսիդայ. և ընթերցցիս անդ:

* *Բազումք.* Որ լուիցէ, հնչեսցեն ա՛:

* *Ոմանք.* Եւ արկանէին ՚ի սմա խունկս:

* *Ոմանք.* Որդւոյն Ենովմայ:

* *Ի բազումս պակասի.* Եւ արկից զնոսա *տապաստ* սրով:

* *Ոմանք.* Որ անցանիցէ ընդ նա:

* *Ոմանք.* Ձմարմինս ընկերի իւրեանց... զոր պաշարեսցեն զնոսա:

* *Ոմանք.* Այսպէս խորտակեցից... որ ոչ կարէ միւսանգամ... առ ՚ի չգոյէ տեղւոյ թաղելոյ:

* *Բազումք.* Տալ զքաղաքդ զայդ ՚ի գլ՛:

ամենայն զօրութեանց երկնից, և նուիրէին նուէրս աստուածոց օտարաց*։ ¹⁴Եւ եկն Երեմիա ՚ի գլորմանէն Տափեթայ՝ ուր առաքեաց զնա Տէր անդ մարգարեանալ. և եկաց ՚ի սրահի տանն Տեառն, և ասէ ցամենայն ժողովուրդն*։ ¹⁵Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես ասեմ ՚ի վերայ քաղաքիդ այդորիկ, և ՚ի վերայ ամենայն քաղաքաց դորա՝ և աւանաց զամենայն չարիս զոր խօսեցայ ՚ի վերայ դորա, զի խստացուցին զպարանոցս իւրեանց չլսել բանից իմոց*։

20

Գլուխ Ի

¹Եւ լուաւ Պասքովր որդի Եմմերայ քահանայ, և ինքն էր հրամանատար և իշխան տանն Տեառն, յԵրեմիայէ՝ ՚ի մարգարեանալն զքանս զայսոսիկ*։ ²Եւ եհար Պասքովր զԵրեմիա մարգարտ, և արգել զնա ՚ի վերնադրանդն. որ էր ՚ի դրանն Բենիամինի, ՚ի վերնատանն որ էր ՚ի տանն Տեառն*։ ³Եւ եղև ՚ի վաղիւ անդր, եհան Պասքովր զԵրեմիա ՚ի վերնադրանդէ անտի. և ասէ ցնա Երեմիա. Ո՛չ Պասքովր կոչեաց զանուն քո Տէր, այլ Գերի՝ թափառական*։ ⁴Զի այսպէս ասէ Տէր. Ահաւաղիկ ես տաց զքեզ ՚ի գերութիւն հանդերձ ամենայն բարեկամօք քովք, և անկցին ՚ի սուր թշնամեաց իւրեանց. և աչք քո տեսցեն. և զքեզ և զամենայն տունդ Յուդայ տաց ՚ի ձեռս թագաւորին Բաբելացոց. և զերեսցեն զնոսա ՚ի Բաբելոն, և կոտորեսցեն զնոսա սրով։ ⁵Եւ տաց զամենայն զօրութիւնս քաղաքիդ այդորիկ. և զամենայն վաստակս դորա, և զամենայն պատիւ դորա, և զամենայն գանձս թագաւորին Յուդայ, տաց ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց. և յափշտակեսցեն և առցեն զնոսա և տարցին ՚ի Բաբելոն*։ ⁶Եւ դո՛ւ Պասքովր՝ և ամենայն բնակիչք տան քոյ, երթիջիր գերի ՚ի Բաբելոն, երթիցես և անդ մեռանիցիս, և անդ թաղեսցիս. դո՛ւ և ամենայն բարեկամք քո՝ որոց մարգարեացարն ստութիւն*։ ⁷Խաբեցեր զիս Տէր, և խաբեցայ, յաղթահարեցեր և զօրացար. եղէ ՚ի կատականս. զօր ամենայն հանի ՚ի գլուխ այսպանեալ. ⁸զի դառնութեամբ բանից իմոց արարից այսպն զարհամարհութիւն, և ՚ի չուառութենէ բողոք բարձից. զի եղև ինձ բան Տեառն ՚ի նախատինս և ՚ի կատականս զօրհանապազ*։ ⁹Եւ ասացի. Ո՛չ անուանեցից զանուն Տեառն, և ո՛չ ևս խօսեցայց յանուն նորա։ Եւ եղև ՚ի սրտի իմուն իբրև զհո՛ւր վառեալ, բորբոքեալ ընդ ոսկերս իմ. և լքայ յամենայն կողմանց, և ո՛չ կարեմ հանդարտել*։ ¹⁰Զի լուայ զպարսաւանս բազմաց շուրջ զինև միահամուռն ժողովելոց. թէ արի՛ք և յարիցուք ՚ի վերայ նորա ամենայն արք բարեկամք

* Ոմանք. Իբրև տեղիք գլորելոց... և նուիրեցին նուէրս։

* Ոմանք. Ձնա Տէր անդր մար՝։

* Ոմանք. Ահաւաղիկ ես ասեմ։

* Ոմանք. Եւ իշխան ՚ի տանն Տեառն։

* Բազումք. Եհար Պասքովր... զնա ՚ի վերնադրանն որ է ՚ի դրանն Բեն՝։

* Բազումք. Եւ եհան... ՚ի վերնադրանէ անտի։

* Ոմանք. Ձամենայն զօրութիւն քա՛... թագաւորիդ Յուդայ... և տարցեն զնոսա ՚ի Բաբելոն։

* Ոմանք. երթիջիք գերի ՚ի Բա՛։

* Ոմանք. Զի դառնութեան բանից... և ՚ի թշուառութենէ բողոք... ինձ բանն Տեառն։

* Բազումք. Եւ ոչ կարէի հանդարտել։

դորա. հնարեցարուք նմա հնարս, թերևս խաբեսցի՝ և յաղթեսցուք նմա. և խնդրեսցուք զվրժ մեր՝ ի նմանէ՝: ¹¹Եւ Տէր ընդ իս էր իբրև զպատերազմօղ՝ և զօրացուցանէր. վասն այնորիկ հալածեցին, և իմանալ զհնարս ո՛չ կարէին. յամօթ եղեն յոյժ, զի ո՛չ ինչ իմացան. անարգանք նոցա յաւիտենից մի՛ մոռասցին: ¹²Եւ Տէր զօրութեանց որ կշռես զիրաւունս՝ և քննես զսիրտս և զերիկամունս, տեսի՛ց առ ՚ի քէն զվրժխնդրութիւն ՚ի վերայ նոցա. զի առ քե՛զ յայտնեցի զաղերս իմ՝: ¹³Օրհնեցէ՛ք զՏէր. գովեցէ՛ք զնա, զի փրկեաց զանձն տնանկի ՚ի ձեռաց չարաց՝: ¹⁴Անիծեալ լիցի օրն յորում ծնայ, և օրն յորում ծնաւ զիս մայր իմ, մի՛ եղիցի ուխտադրութիւն՝: ¹⁵Անիծեալ լիցի մարդն որ ետ աւետիս հօր իմոյ, և ասէ՛ թէ ծնաւ քեզ արու՛ մանուկ. և ուրախութեամբ ուրախ առնէր զնա՝: ¹⁶Եւ եղիցի մարդն այն իբրև զքաղաքս՝ զոր կործանեաց Տէր սրտմտութեամբ՝ և ո՛չ զղջացաւ. լուիցէ՛ գոյժ ընդ առաւօտս և աղաղակ ՚ի միջօրեայ ժամանակի՝: ¹⁷Ձի ո՛չ սպան զիս անդէն յարգանդի, և լինէր ինձ մայրն իմ զերեզման. և արգանդ յղութեան յաւիտենից՝: ¹⁸Ընդէ՛ր է ինձ այս. զի ելի յարգանդէ տեսանել զցաւս և զվաստակս, և վախճանեցան ամօթով աւուրք իմ:

21

Գլուխ ԻԱ

Ի՞նչ ¹Բան որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ. յորժամ առաքեաց առ նա Սեղեկիա զՊասքովր որդի Սելքեայ, և զՍոփոնիա որդի Մասերայ զքահանայ՝ և ասէ՛. ²Յարց վասն մեր զՏէր. զի Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց եհաս ՚ի վերայ մեր. թերևս արասցէ Տէր ՚ի վերայ մեր՝ ըստ ամենայն իւրոցն սքանչելեաց, և դարձուցէ՛ ՚ի մէնջ՝: ³Եւ ասէ՛ ցնոսա Երեմիա. Այսպէս ասացէ՛ք ցՍեղեկիա՝. ⁴Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ահաւաղիկ ե՛ս դարձուցանեմ զզէնս ձեր ՚ի պատերազմի՝ զոր ունիք ՚ի ձեռս ձեր, որով դուք պատերազմիք ընդ արքային Բաբելացւոց՝ և ընդ Քաղդեացիս որք պաշարեցին զձեզ արտաքոյ պարսպացդ. և ժողովեցից զնոսա ՚ի մէջ քաղաքիդ այդորիկ՝: ⁵Եւ տաց պատերազմ ե՛ս իսկ ընդ ձեզ վերացեալ ձեռամբ՝ և բարձրացեալ բազկաւ, սրտմտութեամբ և բարկութեամբ և մեծա՛ւ ցասմամբ. ⁶և հարից զամենայն բնակիչս քաղաքիդ այդորիկ, զմարդ և զանասուն մեծա՛ւ մահուամբ՝ և մեռցին: ⁷Եւ յետ այնորիկ՝ այսպէս ասէ Տէր. Մատնեցից զՍեղեկիա արքայ Յուդայ՝ և զժառանգս իւր և զժողովուրդ՝ որ մնացեալ իցէ ՚ի քաղաքիդ յայդմիկ, ՚ի մահուանէ, և ՚ի սրոյ, և ՚ի սովոյ, ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, և ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց, և ՚ի ձեռս որ խնդրէին զանձինս

* *Բազուրք*. Ձինն միախուռն ժողովե՛: *Ոմանք*. Ամենայն որք բարեկամք նորա:
 * *Ոսկան*. Եւ դու Տէր զօրութեանց... զսիրտ և զերիկա՛: *Ոմանք*. Ձի քեզ յայտնեցի զա՛:
 * *Ոսկան*. Ի՞ ձեռաց չարարարաց: *Ուր օրհնակ մի*. չարեաց:
 * *Այլք*. Մի՛ եղիցի ուխտադրութեան:
 * *Ոմանք*. Մարդ որ ետ ա՛... ծնաւ արու մա՛:
 * *Ոմանք*. Եւ ոչ զղջացան:
 * *Ոմանք*. Սպան զիս յարգանդի անդ:
 * *Բազուրք*. Բանն որ եղև... որդի Մասեայ զքահանայ:
 * *Ոմանք*. Արասցէ Տէր ընդ մեզ՝ ըստ:
 * *Յօրհնակին*. Եւ ասէ զնոսա Երեմիա:
 * *Ոմանք*. Ձզէնս ձեր պատերազմի... որովք դուք պատե՛:

դոցա. և կոտորեցեն զդոսա՝ ՚ի բերան սրոյ, և ո՛չ խնայեցից ՚ի դոսա, և ոչ ողորմեցայց դոցա, և ո՛չ գթացայց ՚ի դոսա՝: ⁸Եւ ժողովուրդն ասացես. Այսպէս ասէ Տէր. Ահաւաղիկ ես եդի առաջի երեսաց ձերոց զճանապարհս կենաց, և զճանապարհ մահու՝: ⁹Որ նստցի ՚ի քաղաքիդ յայդմիկ՝ սրով և սովով և մահու մեռցի. և որ ելանէ՝ կացցէ առաջի Քաղղէացւոցն, որոց պաշարեալն է զձեզ՝ կեցցէ. անձն իւր ինքեան պարգև լիցի և կեցցէ՝: ¹⁰Ձի հաստատեցի զերեսս իմ ՚ի վերայ քաղաքիդ այդորիկ ՚ի չարիս՝ և ո՛չ ՚ի բարիս՝ ասէ Տէր. ՚ի ձեռս թագաւորին Բաբելացւոց մատնեսցի, և այրեսցէ՝ զդա հրով: ¹¹Տո՛ւն արքայիդ Յուդայ ¹²և տո՛ւն Դաւթի, լուարո՛ւք զպատգամ Տեառն. Այսպէս ասէ Տէր. Դատեցարուք ընդ առաւօտս դատաստան, և իրաւացուցէ՛ք իրաւունս. փրկեցէ՛ք զյափշտակեալն ՚ի ձեռաց զրկողին իւրոյ, զի մի՛ բորբոքեսցի իբրև զհուր բարկութիւն իմ. վառեսցի՛ և ո՛չ ոք իցէ որ շիջուցանիցէ յերեսաց անիրաւութեան գնացից ձերոց՝: ¹³Ահաւաղիկ ե՛ս ՚ի վերայ քո որ բնակեալդ ես ՚ի ծործորս դաշտականս Տիրուսի՝ ասէ Տէր. որք ասէին. Ո՞՞ զարհուրեցուցէ զմեզ, կամ ո՞՞ մտանիցէ ՚ի բնակութիւնս մեր՝: ¹⁴Եւ արարից այցելութիւն ՚ի վերայ ձեր, ըստ չարութեան գնացից ձերոց՝ ասէ Տէր. և վառեցից զհուր յանտառս նորա և կերիցէ շուրջ զնովաւ զամենայն:

22

Գլուխ ԻԲ

¹Այսպէս ասէ Տէր. Երթ և է՛ջ ՚ի տուն թագաւորին Յուդայ, և խօսեսցի՛ս անդ զբանդ զայդ՝, ²և ասացես. Լո՛ւր զպատգամս Տեառն թագաւորդ Յուդայ, որ նստիս յաթոռ Դաւթի. դո՛ւ և ծառայք քո և ժողովուրդ քո, որ մտանեն ընդ դրունս ընդ այնոսիկ՝: ³Այսպէս ասէ Տէր. Արարէ՛ք իրաւունս և արդարութիւն. փրկեցէ՛ք զյափշտակեալն ՚ի ձեռաց զրկողին իւրոյ, զպանդուխտն, և զորբն, և զայրին, մի՛ բռնադատէ՛ք և մի՛ անպարշտէ՛ք. և արիւն անպարտ մի՛ հեղուցուք ՚ի տեղուջդ յայդմիկ՝: ⁴Ձի թէ առնելով առնիցէք զբանդ զայդ՝ մտցեն ընդ դրունս տանդ այդորիկ թագաւորք որ նստիցին յաթոռ Դաւթի. և ելանիցեն ՚ի կառս և յերիվարս, ինքն և ծառայք իւր՝ և ժողովուրդ իւր: ⁵Ապա թէ ո՛չ առնիցէք զբանդ զայդոսիկ, յանձն իմ երդուայ՝ ասէ Տէր, զի յաւերակ եղիցի տունդ այդ: ⁶Ձի այսպէս ասէ Տէր ՚ի վերայ տան թագաւորիդ Յուդայ. Գաղաադ՝ դո՛ւ ես ինձ գլուխ Լիբանանու. եթէ ո՛չ եդից զքեզ յաւերակ և ՚ի քաղաքս չբնակեալս՝: ⁷Եւ հանից ՚ի վերայ քո սատակիչս՝ զայր և զտապար իւր, և կոտորեցեն զընտիր

* Ոմանք. ՚ի քաղաքիդ յայդ, ՚ի մահ՝... ՚ի ձեռն Նաբուզո՞... որ խնդրիցեն զանձինս դոցա, և կոտորիցեն:

* Ոմանք. Երեսաց քոց զճանապարհ կենաց:

* Ոմանք. Որ նստի. կամ՝ նստիցի ՚ի քաղա՞... և մահու մեռցին. և որ ելցէ կացցէ առաջի... ՚ի պարգև լիցի:

* Ոսկան. Դատեցէ՛ք ընդ առաւօ՞:

* Ոմանք. Ոյք ասէին. Ո՞վ զարհուրեցուցէ:

* Ոսկան. Անդ զբանսդ զայդ:

* Բազումք. Եւ որ մտանեն ընդ դրունսդ ընդ այդոսիկ:

* Ոմանք. Մի՛ հեղուք ՚ի տեղուջդ:

* Յօրինակին կրկնի. ՚ի վերայ ՚ի վերայ տան թա՞: Ոմանք. Յաւերակ ՚ի քաղաքս չբնա՞:

ընտիր մայրից քոց, և արկցեն 'ի հուր': ⁸Եւ անցցեն ազգք բազումք ընդ մէջ քաղաքիդ այդորիկ, և ասասցեն իւրաքանչիւր ցրնկեր իւր. Ընդէ՞ր արար Տէր Աստուած այդպէս զայդ քաղաքիդ մեծի*: ⁹Եւ ասասցեն. Փոխանակ զի թողին զուխտ Տեառն Աստուծոյ իւրեանց, և երկիր պագին աստուածոց օտարաց՝ և ծառայեցին նոցա:

ԻՉ ¹⁰Մի՛ լայք զմեռեալն՝ և մի՛ ողբայք զնա. այլ լացէ՛ք լալով 'ի վերայ այնորիկ որ ելանիցէ՛ և այլ ո՛չ դառնայցէ, և ո՛չ տեսցէ զերկիր ազգի իւրոյ*: ¹¹Ձի ա՛յսպէս ասէ Տէր 'ի վերայ Սելէնեայ որդւոյ Յովսիայ, որ թագաւորեաց փոխանակ Յովսիայ հօր իւրոյ. որ ել 'ի տեղւոջէդ յայդմանէ, և ո՛չ ևս դարձցի անդրէն*. ¹²զի 'ի տեղւոջ յորում գերեցին զնա՝ անդ մեռցի, և զերկիրդ զայդ ո՛չ ևս տեսցէ*: ¹³Ո՛հ, որ շինէ գտուն իւր՝ և ո՛չ արդարութեամբ, և զվերնայարկս իւր՝ և ո՛չ իրաւամբք. և 'ի մերձաւորէ իւրմէ գործի նմա գործ ձրի, և զվարձս իւր ո՛չ հատուցանէ նմա*: ¹⁴Ձի շինեցեր քեզ տուն պատշաճօղ՝ վերնատուն հովանոց, յօրինեալ պատուհանիւք, տախտակամածս 'ի մայրից, ծեփեալ նաւթի*: ¹⁵Միթէ թագաւորեսցես՝ զի զայրացար 'ի մայրակերտս հօր քոյ. մի՛ կերիցեն և մի՛ արբցեն, զի զիրաւունս և զարդարութիւն և զբարութիւն ո՛չ ծանեան*. ¹⁶և ո՛չ արարին իրաւունս տնանկին, և զաղքատն ո՛չ իրաւացուցին. ո՛չ այն իսկ է չճանաչելն զիս՝ ասէ Տէր: ¹⁷Ահաւաղիկ ո՛չ իսկ են քո աչք. և սիրտ քո ո՛չ է 'ի բարութիւն, այլ յագահութիւն, և 'ի հեղուլ զարիւն անպարտ, և յանիրաւութիւն՝ և յառնել սպանումն*: ¹⁸Վասն այդորիկ ա՛յսպէս ասէ Տէր 'ի վերայ Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ. Չայդո զայդ մի՛ կոծեսցեն, և մի՛ ասասցեն. Վա՛յ վա՛յ եղբայր. մի՛ կոծեսցեն՝ և ասասցեն վա՛յ վա՛յ Տէր. վա՛յ վա՛յ սիրելի*: ¹⁹Ձթաղղւմն ի՜շոյ թաղեսցի. նեխեալ ընկեսցի արտաքոյ դրանն Երուսաղէմի: ²⁰Ել 'ի Լիբանան՝ և զուժեա՛, և 'ի Բասան տաջիր զձայն քո. աղաղակ բարձ յայնկոյս ծովուն, զի խորտակեցան 'ի միասին ամենայն հոմանիք քո: ²¹Խօսեսցայ՝ ընդ քեզ 'ի սխալելն քում. և ասացեր թէ ո՛չ լուայց քեզ. այդ է ճանապարհ քո 'ի մանկութենէ քումնէ, զի ո՛չ լուար բարբառոյ իմոյ: ²²Ձամենայն հովիւս քո հողմք արածեսցեն, և ամենայն հոմանիք քո 'ի գերութիւն զնասցեն. զի յայնժամ ամաչեսցես և անարգեսցիս յամենայն սիրելեաց քոց: ²³Բնակեալդ 'ի Լիբանան՝ անրացեալդ 'ի մէջ մայրից, հեծեծեսցես 'ի հասանել քեզ ցաւոց և երկանց իբրև ծննդականի*: ²⁴Կենդանի՛ եմ ես՝ ասէ Տէր, եթէ լինելով լինիցի Յեքրոնիա որդի Յովակիմայ արքայի Յուդայ՝ կնիք յաջոյ ձեռին իւրում, և անտի՛ կորզեցից զքեզ*. ²⁵և մատնեցից զքեզ 'ի ձեռս խնդրողաց անձին քոյ, և 'ի ձեռս

* *Յօրինակին պակասէր.* 'ի վերայ քո սատակիչս:

* *Ոմանք.* Ընդէ՞ր արար Աստուած այդպէս:

* *Ոմանք.* Եւ ո՛չ տեսանիցէ զեր՛:

* *Ոմանք.* 'ի վերայ Սելէնայ:

* *Ոմանք.* Յոր գերեցին զնա... ոչ տեսցէ:

* *'ի լուս՛.* Եւ զվարձս նորա ոչ հա՛. *համաձայն բազմաց 'ի բն՛:*

* *Ոմանք.* Շինեցեր քեզ տուն:

* *Օրինակ մի.* Մի՛ թագաւորեսցես, զի զայ՛. *ըստ որում և յօրինակի մերում 'ի կարգի բնաբանին վասն թէի, դատարկ տեղի թողեալ, 'ի լուսանցս չակերտիւ նշանակի 'ի մէջ առնուլ համաձայն բազմաց: Ոմանք.* Եւ զարդարութիւնս. զբարութիւն ոչ:

* *Ոմանք.* Եւ առնել սպանումն:

* *Ոմանք կրկնեն զբանս.* Վա՛յ վա՛յ եղբայր. վա՛յ վա՛յ եղբայր, և մի՛ կո՛:

* *Ոմանք.* Հծեսցես 'ի հասանել քեզ:

* *Բազումք.* Յաջոյ ձեռին իմում. և աստի կորզեցից:

այնոցիկ յորոց զարհուրէիր յերեսաց նոցա. և ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, և ՚ի ձեռս Քաղդէացւոց.²⁶ և ընկեցից զքեզ՝ և զմայր քո յերկիր օտար՝ յոր ո՛չ իջեր, և անդ մեռջիք:²⁷ Եւ յերկիրս յոր ուխտադիր լինիցին ոգւովք իւրեանց դառնալ այսրէն, մի՛ դարձցին.²⁸ զի անկալ ինքն և զաւակ իւր. և եղև տարագիր բերանն արհամարհեալ. թօթափեալ անարգեցաւ այրն Յեքոնիա իբրև զաման մի անպիտան. անկաւ յերկիր զոր ո՛չ գիտէր:²⁹ Երկիր, երկիր, երկիր, լուր զպատգամս Տեառն:³⁰ Ա՛յսպէս ասէ Տէր. Գրեա՛ զայրդ զայդ՝ այր տարագիր. զի մի՛ աճեսցէ յաւուրս իւր, և մի՛ աճեսցէ ՚ի զաւակէ դորա այր՝ որ նստիցի յաթոռն Դաւթի իշխան տանն Յուդայ՝:

23

Գլուխ ԻԳ

Մի՛ հովիւք. որ կորուսին՝ և ցրեցին զխաշինս արօտի քոյ, ասէ Տէր*:² Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի, ՚ի վերայ հովուացդ որ հովուեն զժողովուրդ իմ. Դուք ցրուեցէք զխաշինս իմ, և մերժեցէք զնոսա, և ո՛չ յանձանձեցէք զնոսա: Արդ՝ ահաւասիկ ես խնդրեցից զվրէժս ՚ի ձէնջ, ըստ չարութեան զնացից ձերոց՝ ասէ Տէր*.³ և ես ընկալայց զմնացորդս ժողովրդեան իմոյ յամենայն երկրէ ուր մերժեցից զնոսա անդր, և հաստատեցից զնոսա յարօտս իւրեանց. աճեսցեն և բազմացին*:⁴ Եւ յարուցից հովիւս որ հովուեսցեն նոցա. և ո՛չ ևս երկիցեն, և ո՛չ ևս զարհուրեսցին, և ո՛չ լիցին անտես՝ ասէ Տէր*:

Իէ՛⁵ Ահա աւուրք զան՝ ասէ Տէր. և յարուցից Դաւթի Ծագունն արդարութեան. և թագաւորեսցէ թագաւոր, և ՚ի մի՛տ առցէ. և արասցէ իրաւունս և արդարութիւն ՚ի վերայ երկրի:⁶ Յաւուրս նորա փրկեսցի՛ Յուդա, և Իսրայէլ բնակեսցէ յուսո՛վ. և այս է անուն նորա զոր կոչեսցէ նմա Տէր՝ Յովսեդեկ ՚ի մարգարես արդարութիւն մեր*:⁷ Վասն այդորիկ ահա աւուրք զան՝ ասէ Տէր. և ո՛չ ևս ասացեն՝ եթէ կենդանի՛ է Տէր՝ որ եհան զտունն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց,⁸ այլ թէ կենդանի՛ է Տէր՝ որ եհան զամենայն զաւակ Իսրայէլի յերկրէն հիւսւսոյ, և յամենայն աշխարհաց ուր մերժեաց զնոսա անդր. և պատսպարեցոյց զնոսա անդրէն յերկիր իւրեանց:⁹ Ի վերայ մարգարէից բեկալ սիրտ իմ յիս. շարժեցան ամենայն ոսկերք իմ. և եղէ իբրև զայր մի աղճատեալ, և իբրև զայր մի չարալլուկ ՚ի գինւոյ, յերեսաց Տեառն՝ և յերեսաց մեծվայելչութեան փառաց նորա:¹⁰ Ձի լցալ երկիր շնացողօք. զի յերեսաց երդման սու՛գ առ երկիր. ցամաքեցան արօտք անապատի. և եղեն ընթացք նոցա ՚ի չարութիւն: Եւ ուժգնութիւն նոցա ո՛չ այնպէս*:¹¹ Ձի մարգարէ և քահանայ պղծեցան, և ՚ի տան իմուն՝ զտի զչարիս նոցա՝ ասէ Տէր:¹² Վասն այնորիկ եղիցի ճանապարհն նոցա նոցին ՚ի գայթազողութիւն. ՚ի միգի՛ գայթազղեսցին՝ և կործանեսցին ՚ի նմին. զի

* *Ոմանք.* Որ նստցի յաթոռ Դաւթի:

* *Ոսկան.* Ոի հովիւք: *Ոմանք.* Որ ցրուեցին և կորուսին:

* *Ոմանք.* Արդ աւաղիկ ես խնդրեցից վրէժս:

* *Բազումք.* Ուր մերժեցի զնոսա անդր:

* *Բազումք.* Եւ ոչ զարհուրես՝:

* *Ոմանք.* Յովսեդեկ մարգարէ:

* *Ոմանք.* Եւ եղեն ընթացք նորա չարութիւն:

ածից 'ի վերայ նոցա չարիս յամի այցելութեան իւրեանց՝ ասէ Տէր*։ ¹³Եւ 'ի մարգարէսն Շամրնի տեսի անօրէնութիւն. զի մարգարեացան 'ի ձեռն Բահաղու, և մոլորեցուցին զժողովուրդ իմ զԻսրայէլ*։ ¹⁴Եւ 'ի մարգարէսն Երուսաղեմի տեսի արիաւիրս. զի շնային և երթային զհետ ստութեանց, և օգնական լինէին ձեռաց չարաց, առ 'ի չղառնալոյ իւրաքանչիւր ունեք 'ի ճանապարհէ իւրմէ չարէ. եղեն ինձ ամենեքին իբրև զՍողոմ, և բնակիչք նորա իբրև զԳոմոր*։ ¹⁵Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց 'ի վերայ մարգարէիցն. Ահաւաղիկ ես ջամբեցից դոցա ցաւս, և արբուցից դոցա ջուր դառնութեան. զի 'ի մարգարէիցն Երուսաղեմի ել պղծութիւն ընդ ամենայն երկիր*։ ¹⁶Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Մի՛ լսէք բանից մարգարէիցն որ մարգարեանան ձեզ. զի զրաբանեն դոքա զձեզ. զտեսիլս սրտից իւրեանց խօսին, և ո՛չ 'ի բերանոյ Տեառն*։ ¹⁷Ասեն ապստամբելոցն 'ի բանն Տեառն, թէ խաղաղութիւն եղիցի ձեզ. և ամենեցուն որ գնան ըստ կամաց իւրեանց, և ամենայնի որ գնայ ըստ մոլորութեան սրտի իւրոյ, ասեն. Ո՛չ եկեսցէ 'ի վերայ քո չար։ ¹⁸Ձի ո՞վ եկաց 'ի հաստատութեան Տեառն, և ետես և լուաւ զբան նորա։ Ո՞վ ունկն եղ բանի իմում և լուաւ։ ¹⁹Ահաւաղիկ շարժումն 'ի Տեառնէ, և բարկութիւն մորկեալ շարժմամբ եկեսցէ 'ի վերայ ամպարշտաց. եկեսցէ* ²⁰և մի՛ դարձցի սրտմտութիւն Տեառն, մինչև արասցէ և հաստատեսցէ գլօժարութիւն սրտի նորա. յետին ժամանակս իմասցին զայն իմանալով։ ²¹Ո՛չ առաքեցի զմարգարէսն՝ և նոքա ընթանային. ո՛չ խօսեցայ ընդ նոսա, և նոքա մարգարեանային։ ²²Եթէ կացեալ էիր 'ի հաստատութեան իմում. և լուուցեալ էր զբանս իմ ժողովրդեան իմում, և դարձուցեալ էր զնոսա 'ի ճանապարհաց իւրեանց չարաց, և 'ի գնացից նոցա չարաց*։ ²³Աստուած մերձաւոր եմ ես՝ ասէ Տէր, և ո՛չ Աստուած հեռաւոր*։ ²⁴Եթէ թաքիցէ մարդ 'ի թաքստեան, և ես ո՛չ տեսից զնա՝ ասէ Տէր. միթէ զերկինս և զերկիր ես ո՞չ լնում, ասէ Տէր*։ ²⁵Լուայ՝ զինչ խօսին մարգարէքն՝ զոր մարգարեանային յանուն իմ սուտ. և ասէին. Երա՛զ երազեցաւ ինձ*։ ²⁶Մինչև յե՞րբ լինիցի 'ի սրտի մարգարէիցդ որ մարգարեանան ստութիւն. և 'ի մարգարեանալ զկամս սրտից իւրեանց, խորհին ²⁷մոռանալոյ ժողովրդեան իմոյ զօրէնս իմ երազօք իւրեանց՝ զոր պատմէին իւրաքանչիւր ընկերի՛ իւրում. զոր օրինակ մոռացան հարքն դոցա զանուն իմ 'ի ձեռն Բահաղու*։ ²⁸Մարգարէն յորում երա՛զն իցէ՝ պատմեսցէ՛ զերազն իւր. և յորում բանն իմ իցէ՛ պատմեսցէ զբանն իմ ճշմարտութեամբ։ Ձի՞նչ է յարդ առ ցորենաւ՝ ասէ Տէր*։ ²⁹Ո՞չ ապաքէն բանք իմ իբրև զհուր եմ՝ ասէ Տէր, և իբրև զմուրճ որ

* *Ոմանք.* Եղիցին ճանապարհք նոցա նոցին գայթազութիւն միգի։

* *Ոսկան.* Ձի մարգարեանային 'ի ձե՛ն։

* *Ոսկան.* Առ 'ի դառնալոյ իւրաքանչիւր։

* *Ոմանք.* Եւ արբուցից նոցա ջուր։

* *Բազումք.* Չրաբանեն դոքա ձեզ. զտեսիլ սրտից։

* *Բազումք.* Շարժմամբ ելցէ 'ի վերայ ամբ*։

* *Ոմանք.* Եթէ կացեալ էր 'ի հաստատութեան իմում, և ուսուցեալ էր զբանս... 'ի գնացից իւրեանց չարեաց։ *Ուր Ոսկան.* Եւ լուեալ էր զբանս իմ։

* *Ի լուս՝.* Տէր մերձաւոր եմ ես. *համաձայն ոմանց 'ի բնար՝.*

* *Բազումք.* Ես ո՞չ լնուցում, ասէ։

* *Բազումք.* Ձինչ խօսէին մարգարէքն... յերազեցաւ ինձ։

* *Բազումք.* Մոռանալ ժողովրդեան... երազովք իւրեանց... հարքն նոցա զանուն։ *Ի լուս՝.* 'ի վերայ՝ զօրէնս. *նշանակի՛* զանուն։

* *Ոմանք.* Երազն իցէ՛ պատմեսցէ զբան իւր... առ ցորենով, ասէ Տէր։

հատանէ զվէ՛մ*։ ³⁰Վասն այդորիկ ահա ես ՚ի վերայ մարգարէիցդ՝ ասէ Տէր. որք գողանան զբանս իմ իւրաքանչիւր յընկերէ իւրմէ։ ³¹Ահաւասիկ ես ՚ի վերայ մարգարէիցդ՝ ասէ Տէր. որք մերժեն զմարգարէս ՚ի լեզուոյ, և նիրհեն զնիրհս իւրեանց։ ³²Ահաւասիկ ես ՚ի վերայ մարգարէիցդ, որ մարգարէանան երազս ստութեան՝ ասէ Տէր. և պատմեն զայն. և մոլորեցուցանեն զժողովուրդն իմ ստութեամբ իւրեանց. և ես ո՛չ առաքեցի զնոսա, և ո՛չ պատուիրեցի նոցա. և օգտութիւն ինչ ո՛չ օգտեսցեն ժողովրդեանդ այդմիկ՝ ասէ Տէր*։ ³³Եւ եթէ հարցանիցէ զքեզ ժողովուրդդ այդ, կամ մարգարէ՛ կամ քահանայ՝ և ասասցէ. Չի՞նչ է առածդ Տեառն. և ասասցես ցնոսա. Դո՛ւք էք առածն. և կործանեցի՛ց զձեզ ասէ Տէր։ ³⁴Եւ մարգարէ՛ և քահանայ՝ և ժողովուրդ՝ որ ասիցեն առած Տեառն, և խնդրեցից զվրէժ ՚ի մարդոյն յայնմանէ՛ և ՚ի տանէ նորա*։ ³⁵Չի՞ ո՛չ նոյնպէս ասիցէք իւրաքանչիւր ցընկեր իւր, և իւրաքանչիւր ցեղբայր իւր՝ թէ զի՞նչ պատասխանի արար Տէր. և զի՞նչ խօսեցաւ Տէր։ ³⁶Եւ առած Տեառն մի՛ ևս անուանէք. զի առած Տեառն եղիցի մարդոյ բանն նորա. և դարձուցանիցէք զբանս Աստուծոյ կենդանւոյ՝ Տեառն զօրութեանց Աստուծոյ մերոյ*։ ³⁷Այլ այդպէս ասասցիք ցմարգարէն. Չի՞նչ արար քեզ պատասխանի Տէր, և զի՞նչ խօսեցաւ Տէր*։ ³⁸Եթէ առած Տեառն ասիցէք, վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Փոխանակ զի ասիցէք զբանդ առած Տեառն, և ես ո՛չ առաքեցի առ ձեզ՝ ասել. Մի՛ ասիցէք առած Տեառն*։ ³⁹Վասն այդորիկ ահաւասիկ ես առից զձեզ առիւ. և կործանեցից զձեզ, և զքաղաքդ զոր ետու ձեզ և հարցն ձերոց յերեսաց իմոց*։ ⁴⁰Եւ տա՛ց ՚ի վերայ ձեր նախատինս յաւիտենից, և անարգանս յաւիտենից՝ որ ո՛չ մոռասցին։

24

Գլուխ ԻԴ

ԻԸ ¹Եւ եցոյց ինձ Տէր երկուս կողովս թզոյ, որ կային առաջի տաճարին Տեառն. յետ գերելոյն Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց զՅեքոնիա որդի Յովակիմայ արքայի Յուդայ, և զիշխանս Յուդայ, և զարուեստագէտսն, և զկալանաւորակապսն, և զմեծամեծս յերուսաղէմէ. և տարաւ զնոսա ՚ի Բաբելոն*։ ²Կողովն մի էր յոյժ քաղցր թզոյ՝ իբրև զկանխահաս թզոյ, և կողովն երկրորդ՝ ժանտահամ թզոյ, որ ո՛չ ուտիցի ՚ի ժանտութենէ իւրմէ*։ ³Եւ ասէ ցիս Տէր. Չի՞նչ տեսանես Երեմիա։ Եւ ասեմ. Թո՛ւզ թո՛ւզ քաղցր, և առաւել՝ քաղցր. և թո՛ւզ ժանտ՝ և առաւել՝ ժանտ, որ ո՛չ ուտիցի ՚ի ժանտութենէ իւրմէ։ ⁴Եւ եղև բան Տեառն առ Երեմիա, և ասէ. ⁵Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Իբր զթուզդ

* *Ոմանք.* Ո՞չ ապաքէն նոյնպէս. *կամ՝* այսպէս բանք իմ։

* *Ոմանք յաւելուածով այսպէս ունին.* Չերազս ստութեան... և պատմեն զամենայն, և մոլոր... ստութեամբ իւրեանց. *և մոլորութեամբ իւրեանց.* և ես... ինչ ոչ օգտեսցին. *կամ՝* օգտեսցին։

* *Բազունք.* Որ ասիցէ թէ առած Տեառն. խնդրեցից։

* *Ոմանք.* Եւ դարձուցանէք զբանս։

* *Ոմանք.* Ասասցիք ցմարգարէսն։

* *Բազունք.* Փոխանակ զի ասացէք զբա՛... ասէ մի՛ ասէք առած Տեառն։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես առից։

* *Բազունք.* Եցոյց ինձ Տէր։ *Ոմանք.* Յեքոնիա որդի... և զմեծամեծս Երուսաղէմի։

* *Բազունք.* Կողով մի քաղցր յոյժ թզոյ... որ ոչ ուտիցի ՚ի ժանտութենէ թզոյ։

քաղցր, այդպես ծանեայ զգերեալսդ Յուդայ՝ զորս առաքեցի՝ ի տեղուջէդ յայդմանէ յերկիրն Քաղղեացոց ՚ի բարութիւն*։ ⁶և հաստատեցի՛ց զաչս իմ՝ ի վերայ նոցա ՚ի բարութիւն. և պատսպարեցի՛ց զնոսա ՚ի սո՛յն երկիր. և շինեցից զնոսա, և ո՛չ քակեցից. և տնկեցից զնոսա և ո՛չ խլեցից*։ ⁷Եւ տա՛ց նոցա սիրտ ճանաչել զիս՝ թէ ե՛ս եմ Տէր. և եղիցին ինձ՝ ՚ի ժողովուրդ, և ես եղեց նոցա յԱստուած. զի դարձցին առ իս յամենայն սրտէ իւրեանց։ ⁸Եւ իբրև գթուզ ժանտ որ ո՛չ ուտի ՚ի ժանտութենէ իւրմէ. այսպէս ասէ Տէր՝ այդպէս մատնեցից զՍեդեկիա արքայ Յուդայ, և զմեծամեծս նորա, և զմնացորդս Երուսաղեմի, և զմնացորդս երկրիդ այդորիկ, և զբնակեալսն յեգիպտոս*։ ⁹Եւ տա՛ց զնոսա ՚ի ցրումն ընդ ամենայն ազգս և թագաւորութիւնս երկրի, և ՚ի նախատինս, և յառակ, և յատելութիւն, և յանէծս, և յամենայն տեղիս ուր մերժեցից զնոսա անդր*։ ¹⁰Եւ առաքեցից ՚ի դոսա սով և սուր և մահ, մինչև պակասեսցին յերկրէդ զոր ետու դոցա և հարց իւրեանց*։

25

Գլուխ ԻԵ

ԻԹ ¹Բանն որ եղև առ Երեմիա վասն ժողովրդեանն Յուդայ, յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ. այն ամ առաջին էր Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացոց*։ ²Չբանն զոր խօսեցաւ Երեմիա մարգարէ առ ամենայն ժողովուրդն Յուդայ, և առ բնակիչս Երուսաղեմի՝ և ասէ*։ ³Յերեքտասաներորդէ ամէ Յովսիայ որդւոյ Ամովնայ արքայի Յուդայ մինչև ցայսօր. այս քսան և երեք ամք, զի եղև բան Տեառն առ իս, և խօսեցայ ընդ ձեզ կանխեալ ընդ առաւօտս և ասէի, և ո՛չ լուարուք։ ⁴Եւ առաքեցի առ ձեզ զժառայս իմ զմարգարէս ընդ առաւօտս արձակեալ, և ո՛չ լուարուք, և ո՛չ անսացէք ակրնջօք ձերովք լսել*։ ⁵Ասէի. Դարձարուք իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրմէ չարէ, և ՚ի գնացից ձերոց չարաց. և բնակեսջիք յերկիրդ զոր ետու ձեզ՝ և հարց ձերոց յաւիտենից մինչև ցյաւիտեանս*։ ⁶և մի՛ երթայք զհետ աստուածոց օտարաց ծառայել նոցա՝ և երկիր պագանել. և մի՛ բարկացուցանէք զիս գործովք ձեռաց ձերոց չարչարել զձեզ։ ⁷Եւ ո՛չ լուարուք ինձ՝ ասէ Տէր. զի բարկացուցանիցէք զիս գործովք ձեռաց ձերոց չարչարել զձեզ։ ⁸Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ձի ո՛չ հաւատացէք բանից իմոց, ⁹ահաւասիկ ես առաքեմ, և առի՛ց զամենայն ազգս հիւսւսոյ՝ ասէ Տէր. և զՆաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց զժառայ իմ. և ածից զնոսա ՚ի վերայ երկրիդ այդորիկ՝ և ՚ի վերայ բնակչաց դորա, և ՚ի վերայ ամենայն ազգաց որ շուրջ զդովաւ. և աւերեցից զդոսա, և տա՛ց զդոսա յապականութիւն և ՚ի շչիւն՝ և

* *Բազումք.* Իբրև գթուզ քաղցր:

* *Ի բազումս պակասի.* Եւ ոչ քակեցից. և տնկեցից զնոսա, և ոչ խլեցից:

* *Ոսկան.* Եւ զմնացորդսդ Երուսաղեմի երկրիդ այդորիկ:

* *Բազումք.* Եւ տաց զդոսա ՚ի ցրումն ընդ ամենայն թագաւորութիւնս... մերժեցից զդոսա անդր:

* *Բազումք.* Ի դոսա սուր և սով... պակասեսցեն յերկրիդ:

* *Ոսկան.* Առաջին է Նաբուզո՞:

* *Ոմանք.* Չբանս զոր խօսեցաւ:

* *Բազումք.* Ականջովք ձերովք:

* *Ոմանք.* Չոր ետու հարցն ձերոց:

'ի նախատինս յաւիտենից* : ¹⁰Եւ կորուսից 'ի դոցանէ զձայն ուրախութեան և զձայն ցնծութեան, և զձայն փեսայի և զձայն հարսին. զձայն երկանի և զլոյս ճրագի : ¹¹Եւ եղիցի ամենայն երկիրդ այդ յաւերակ և յապականութիւն. և ծառայեսցեն ազգացն այնոցիկ` և արքային Բաբելացւոց զեւթանասուն ամ* : ¹²Եւ 'ի կատարել ամացն իւթանասնից, խնդրեցից զվրէժս 'ի թագաւորէն Բաբելացւոց. և յազգէն յայնմանէ՝ ասէ Տէր, ըստ անօրէնութեանց նոցա, և յերկրէն Քաղդեացւոց. և եղից զնոսա յապականութիւն յաւիտենական* : ¹³Եւ ածից 'ի վերայ ամենայն երկրին այնորիկ զամենայն բանս իմ զոր խօսեցայ վասն նորա՝ ըստ ամենայն գրելոցս 'ի գիրս յայսմիկ : Չոր մարգարեացաւ Երեմիա 'ի վերայ ամենայն ազգաց*, ¹⁴զի ծառայեցին 'ի մէջ նոցա. քանզի և նոքա ազգք բազումք` և թագաւորութիւնք մեծամեծք են. և հատուցից նոցա ըստ անօրէնութեանն նոցա, և ըստ գործոց ձեռաց նոցա* : ¹⁵Ձի այսպէս ասէ ցիս Տէր Աստուած Իսրայէլի. Ա՜ռ զբաժակ գինոյս անապակիս այսորիկ 'ի ձեռաց իմոց, և արբուցես զդա ամենայն ազգաց առ որս առաքեմ զքեզ* : ¹⁶Արբցեն և քամեսցեն և մոլեսցին յերեսաց սրոյն, զոր ես առաքեցից 'ի մէջ դոցա* : ¹⁷Եւ առի՛ զբաժակն 'ի ձեռանէ Տեառն, և արբուցի՛ ամենայն ազգաց առ որս առաքեաց՝ զիս Տէր. ¹⁸Երուսաղեմի, և քաղաքացն Յուդայ, և թագաւորաց նորա, և իշխանաց նորա. դնել զնոսա յաւերակ` և յանապատ` և 'ի շէլուն, և յանէ՛ծս ըստ աւուրս ըստ այսմիկ : ¹⁹Եւ փարաւոնի արքայի Եգիպտացւոց, և ծառայից նորա, և մեծամեծաց նորա, և ամենայն ազգի նորա* : ²⁰և ամենայն խառնիճադանճ զօրաց նորա, և ամենայն թագաւորաց կղզւոյն, և ամենայն թագաւորաց երկրին այլազգեաց՝ Ասկաղոնի և Գազայ, և Ակկարովնի, և մնացորդացն Ազովտայ* : ²¹և Եդոմայ, և Մովաբացւոցն, և որդւոցն Ամովնայ : ²²Եւ ամենայն թագաւորացն Տիրուսի, և ամենայն թագաւորացն Սիդովնացւոց. և թագաւորաց կղզւոյն որ յայն կոյս ծովուն. ²³և Դեդանայ, և Թեմանայ, և Բովկայ. և ամենայն յապաւելոցն զերեսօք : ²⁴Եւ ամենայն թագաւորացն Արաբացւոց, և ամենայն թագաւորաց խառնադանճից. օթագելոցն յանապատին* : ²⁵և ամենայն թագաւորացն Չամբրեայ, և ամենայն թագաւորացն Ելամայ, և ամենայն թագաւորացն Պարսից* : ²⁶Եւ ամենայն թագաւորացն հիւսւսոյ արևելից. մերձաւորաց և հեռաւորաց իւրաքանչիւր առ եղբօր իւրում և ամենայն թագաւորաց երկրի, որ 'ի վերայ երեսաց երկրի. և թագաւորն Սիսակ արբցէ՛ յետ ամենեցուն* : ²⁷Եւ ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի. Արբէք և արբեցարո՛ւք, յիմարեցարո՛ւք, և կործանեցարո՛ւք. և մի՛ կանգնեսցիք յերեսաց սրոյն զոր եսն առաքեցից 'ի մէջ ձեր* : ²⁸Եւ եղիցի յորժամ ո՛չ կամիցին ընդունել

* Բազումք. Ամենայն ազգաց շուրջ զդո՛ :

* Բազումք. Եղիցի ամենայն երկիրդ :

* Ոմանք. խնդրեցից վրէժ 'ի... ըստ անօրէնութեան նոցա :

* Ոմանք. Չոր խօսեցայ վասն նոցա :

* Ոմանք. Ըստ սատարութեան նոցա, և ըստ գործոց ձե՛ :

* Ոմանք. Այսպէս ասաց ցիս... անապակի այսորիկ... առ որս ես առաքեցից զքեզ :

* Ոմանք. Առաքեցից 'ի մէջ նոցա :

* Ոմանք. Փարաւոնի արքային և Ե՛ :

* Ոմանք. խառնադանճ զօրաց նորա :

* Ոմանք. Օթագայելոցն յանա՛ :

* Ոսկան. Ելամայ. և ամենայն թագաւորացն Մարաց :

* Բազումք 'ի լուս՞. 'ի վերայ՝ Սիսակ. նշանակեն՝ Արշակ :

* Բազումք. Եւ մի կանգնիցէք... զոր ես ա՛ :

զբաժակն 'ի ձեռանէ քունմէ ըմպել, ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ըմպելով արբջի՞ք. ²⁹զի ահա 'ի քաղաքէն յորում կոչեցեալ է անուն ին, 'ի նմա՛ արարից սկիզբն չարչարելոյ. և դուք սրբելով սրբիցի՞ք. ո՛չ սրբեսջիք. զի սուր կոչեցի ես 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են յերկրի, ասէ Տէր զօրութեանց* : ³⁰Եւ դու մարգարէասցիս 'ի վերայ նոցա զամենայն զպատգամս զայսոսիկ, և ասասցես ցնոսա. Տէր 'ի բարձանց 'ի սրբութենէ իւրմէ տացէ՛ հրաման. տացէ՛ զձայն իւր. զբան հրամանի 'ի տեղուջէ՛ իւրմէ. և նոքա իբրև կթօղք տացեն պատասխանի 'ի վերայ ամենայն բնակչաց երկրին* , ³¹թէ եկն սատակումն 'ի կողմանէ երկրին. զի դատաստան Տեառն է 'ի մէջ ազգաց, և դատեսցի ինքն զամենայն մարմին. և ամպարիշտք տուան 'ի սուր՝ ասէ Տէր* :

Լ ³²Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ահաւաղիկ չարիք զան յազգէ 'ի վերայ ազգի, և մրրիկ մեծ ելցէ 'ի ծագաց երկրէ* : ³³Եւ եղիցին վիրաւորք 'ի Տեառնէ յաւուր Տեառն. 'ի կողմանէ մինչև ցկողմ երկրին. մի՛ կոծեսցին և մի՛ ժողովեսցին, ընդ երեսս դաշտին իբրև զա՛ղբ ընկեսցին : ³⁴Գուժեցէ՛ք հովիւք և աղաղակեցէ՛ք, և կոծեցարուք խոյք մաքեաց. զի կատարեցան աւուրք ձեր 'ի սպանումն, և 'ի ցրումն ձեր. կործանեսջիք իբրև խոյք ընտիրք : ³⁵Եւ կորիցէ փախուստ 'ի հովուաց. և փրկութիւն 'ի խոյոցն մաքեաց* : ³⁶Չայն գուժի հովուաց, և աղաղակ խոյոցն մաքեաց. զի սպառեաց Տէր զարօտս նոցա* : ³⁷Եւ դադարեսցէ գեղեցկութիւն խաղաղութեանն յերեսաց բարկութեան սրտմտութեան Տեառն : ³⁸Թողին իբրև առեւծ զմորի իւր. և եղև երկիր նոցա յանապատ, յերեսաց բարկութեան սրտմտութեան սրոյն մեծի, և յերեսաց բարկութեան սրտմտութեան նորա* :

26

Գլուխ ԻԶ

¹Իսկզբան թագաւորութեան Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ. եղև բանս այս 'ի Տեառնէ՛ և ասէ. ²Այսպէս ասէ Տէր. Կա՛ց 'ի սրահի՛ տանն Տեառն, և մարգարէասցիս ամենայն տանն Յուդայ ոյք զայցեն երկիրպագանել 'ի տանն Տեառն. զամենայն բանսդ զոր կարգեցի առ քեզ մարգարէանալ նոցա. մի՛ հատանիցես ինչ 'ի բանիցդ* : ³Թերևս լուիցեն, և դարձցին իւրաքանչիւր 'ի ճանապարհէ իւրմէ չարէ. և մեղմացայց ես 'ի չարեացն զոր խորհիմ ես առնել նոցա վասն չարութեան զնացից նոցա* : ⁴Եւ ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Տէր. Եթէ ո՛չ լսիցէք ինձ զնալ յօրէնս իմ զոր ետու յանդիման ձեր, ⁵լսել՛ բանից ծառայից իմոց մարգարէից՝ զոր ես առաքեցի առ ձեզ կանխաւ. և առաքեցի՛ և

* Ոմանք. Ձի ահա 'ի քաղաքն յորում... արարի սկիզբն... ոչ սրբիցիք զի սուր կոչեցից ես:

* Ոմանք. Իբրև կթող տայցեն պատասխանի... բնակչաց երկրի:

* Ոմանք. 'ի կողմանս երկրին:

* Ոմանք. 'ի ծագաց երկրի:

* Ոմանք. Եւ փրկութիւն խոյոցն մաք՞:

* Ոմանք. Եւ սպառեաց Տէր:

* Ոմանք. Թողին որպէս առեւծ... և եղև երկիր նոցա անապատ: *Յօրինակին*. Առեւծ զկորի իւր:

* Ոմանք. Ամենայն Յուդայ, ոյք զայցեն:

* Յոմանս պակասի. Եւ մեղմացայց ես 'ի չար:

ո՛չ լուարուք* . 6և արարից գտունդ զայդ իբրև զՍելովմ, և զքաղաքս տաց յանէ՛ծս
 ամենայն ազգաց երկրի* : 7Եւ լուան քահանայքն և սուտ մարգարէքն և
 ամենայն ժողովուրդն ՚ի խօսել երեմիայի զբանս զայսոսիկ ՚ի տանն Տեառն: 8Եւ
 եղև ՚ի դադարել երեմիայի ՚ի խօսիցն ըստ ամենայնի զոր հրամանն ետ նմա Տէր
 խօսել առ ամենայն ժողովուրդն. կալան զնա քահանայքն և սուտ մարգարէքն
 և ամենայն ժողովուրդն՝ և ասեն. Մահո՛ւ մեռցիս. 9զի մարգարէացար յանուն
 Տեառն, և ասացեր՝ թէ իբրև զՍելովմ եղիցի տունս այս, և քաղաքս ւաւերեսցի ՚ի
 բնակչաց. և կուտեցաւ ժողովուրդն ՚ի վերայ երեմիայի ՚ի տան Տեառն* : 10Եւ
 լուան իշխանքն Յուդայ զբանս զայսոսիկ, և ելին ՚ի տանէ թագաւորին ՚ի տունն
 Տեառն. և նստան առաջի դրանն Տեառն նորոյ* : 11Եւ ասեն քահանայքն և սուտ
 մարգարէքն ցիշխանսն և ցամենայն ժողովուրդն. Դատաստան մահո՛ւ է առնդ
 այդմիկ, զի մարգարէացաւ զքաղաքս զայսմանէ, որպէս ձերովք իսկ ակընջօք
 լուարուք: 12Եւ ասէ երեմիա ցամենեսին ցիշխանսն և ցամենայն ժողովուրդն.
 Տէր առաքեաց զիս մարգարէանալ ՚ի վերայ տանդ այդորիկ՝ և ՚ի վերայ
 քաղաքիս զամենայն բանսդ զոր լուարուք: 13Եւ արդ՝ ուղղեցէ՛ք զճանապարհս
 ձեր՝ և զգործս ձեր, և լուարու՛ք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ. և մեղմասցի՛ Տէր
 ՚ի չարեացն ձերոց՝ զոր խօսեցաւ ՚ի վերայ ձեր* : 14Եւ ես աւասիկ կամ ՚ի ձեռս
 ձեր, արարէ՛ք ընդ իս որպէս և ձեզ օգո՛ւտ և լա՛ւ իցէ՛ : 15Բայց գիտելով
 գիտասցի՛ք՝ զի թէ սպանանէք դուք զիս՝ արիւն անպարտ արկանէք ՚ի վերայ
 ձեր, և ՚ի վերայ քաղաքիս այսորիկ, և ՚ի վերայ բնակչաց սորա. զի
 ճշմարտութեամբ առաքեաց զիս Տէր առ ձեզ՝ խօսել յականջս ձեր զամենայն
 բանս զայսոսիկ: 16Եւ ասեն իշխանքն և ամենայն ժողովուրդն ցքահանայս և
 ցո՛ւտ մարգարէսն. Ո՛չ է դատաստան մահու առնդ այդորիկ. զի յանուն Տեառն
 Աստուծոյ խօսեցաւ առ մեզ* : 17Յո՛ւտն կացին արք ՚ի ծերոց երկրին, և ասեն
 ցամենայն ժողովս ժողովրդոցն* : 18Միքիէ Մորստացի մարգարէանայր յաւուրս
 Եզեկիայ արքայի Յուդայ. խօսեցաւ ընդ ամենայն ժողովրդեանն Յուդայ՝ և ասէ.
 Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց. Սի՛ովմ իբրև զագարակ արօրադի՛ր լիցի, և
 Երուսաղէմ՝ իբրև զհիղս մրգապահաց, և լեառն տանդ՝ եղիցի՛ իբրև զանտառ
 մայրոյ* : 19Միթէ սպանանելով սպա՞ն զնա Եզեկիա արքայ Յուդայ՝ և ամենայն
 Յրեաստան. ոչ ապաքէն զահի՛ հարան ՚ի Տեառնէ, և խնդրեցին յերեսաց Տեառն.
 և դադարեաց Տէր յամենայն չարեացն զոր խօսեցաւ ՚ի վերայ նոցա: Եւ մեք
 արարաք չարիս մեծամեծ յանձինս մեր* : 20Եւ այր մի մարգարէանայր յանուն
 Տեառն, Ուրիա որդի Սամեայ ՚ի Կարիաթարիմայ. և մարգարէացաւ ՚ի վերայ
 քաղաքիս այսորիկ, և ՚ի վերայ երկրիս այսորիկ ըստ ամենայն բանից

* Ոմանք. Եւ լսել բանից... զոր ես առաքեմ առ ձեզ:

* Ոմանք. Եւ զքաղաքդ տաց յանէծս ամենայն երկրի:

* Ոմանք. Եթէ իբրև զՍելովմ եղի՞:

* Ոմանք. Չբանսն զայնոսիկ:

* Բազումք. Չճանապարհս ձեր և զգնացս ձեր... ՚ի չարեացն զոր խօսեցաւ:

* Բազումք. Եւ ես ահաւասիկ... որպէս ձեր օգուտ և լաւ իցէ:

* Ոմանք. Ցքահանայսն և ցմարգարէսն. ո՛չ է... դատաստան մահու առնդ այդմիկ. զի
 յանուն Տեառն խօ՞:

* Ոմանք. Ցամենայն ժողովմ ժողովրդեանն:

* Ոմանք. Իբրև զանտառս մայր՞:

* Ոմանք. Չարիս մեծամեծս յան՞:

Երեմիայի*։ ²¹Եւ լուաւ արքայ Յովակիմ, և ամենայն զօրաւորք իւր, և ամենայն իշխանք զամենայն բանս նորա. և խնդրէին սպանանել զնա. և լուաւ Ուրիա, երկեալ՝ և փախեալ և գնաց յերկիրն Եգիպտացւոց։ ²²Եւ առաքեաց արքայ Յովակիմ արս յեգիպտոս. զեղնաթան որդի Աքովբերայ և արս ընդ նմա յեգիպտոս*։ ²³և հանին զնա անտի՝ և ածին առ արքայն Յովակիմ. և սպանին զնա սրով. և ընկեց ՚ի շիրիմ որդւոց ժողովրդեան իւրոյ*։ ²⁴Բայց ձեռն Աքիկամայ որդւոյ Սափանայ՝ էր ընդ Երեմիայի. զի մի՛ մատնեսցի ՚ի ձեռս ժողովրդեանն սպանանել զնա*։

27

Գլուխ ԻԷ

ԼԱ ¹Իսկզբան թագաւորութեանն Յովակիմայ որդւոյ Յովսիայ՝ արքայի Յուդայ. եղև բանս այս առ Երեմիայ ՚ի Տեառնէ՝ և ասէ*։ ²Այսպէս ասէ Տէր ցիս. Արա՛ դու քեզ կապանս և անուրս՝ և արկ ընդ պարանոց քո. ³և առաքես զայն առ թագաւորն Եդովմայեցւոց, և առ թագաւորն Մովաբացւոց, և առ թագաւոր որդւոցն Ամովմայ, և առ թագաւորն Տիրոսի, և առ թագաւորն Սիդոնացւոց, ՚ի ձեռն հրեշտակաց նոցա որ գան յերուսաղէմ առ Սեդեկիա արքայ Յուդայ*։ ⁴և պատուիրեսցես նոցա ասել ցտեսարս իւրեանց. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Այսպէս ասասցիք ցտեսարսն ձեր. ⁵Ե՛ս արարի զերկիր, և զմարդիկ, և զանասուն, և որ ինչ ՚ի վերայ երեսաց երկրի, զօրութեամբ իմով մեծաւ, և բազկաւ իւրով բարձու. և տաց զնա՝ ում և կամ իցէ առաջի աչաց իմոց*։ ⁶Եւ արդ ե՛ս եմ որ ետու զամենայն երկիր ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց ծառայի իմոյ. նաև զգազանս անապատի ՚ի գործ արկանել, և ետու՛ նմա ՚ի ծառայութիւն։ ⁷Ծառայեսցեն նմա ամենայն ազգք, և որդւոց նորա, և որդւոց որդւոց նորա, մինչև եկեսցէ ժամանակ բարկութեան երկրի նորա, և նորա. և ծառայեսցեն նմա ազգ բազումք և թագաւորք մեծամեծք*։ ⁸Եւ եղիցի՝ ազգ և թագաւորութիւն որ ո՛չ ծառայեսցեն Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, և որք միանգամ ո՛չ մուծցեն զպարանոցս իւրեանց ընդ լծով արքային Բաբելացւոց. սրով և սովով և մահուամբ արարից այցելութիւն ՚ի վերայ ազգին այնմիկ՝ ասէ Տէր. մինչև սատակեսցին ՚ի ձեռաց նորա*։ ⁹Եւ դուք մի՛ լսէք մարգարեից ձերոց, և ըղձութեանց ձերոց, և երազոց ձերոց, և կիւսից ձերոց, և հաւահմայից ձերոց, և կախարդաց ձերոց. որք ասեն ձեզ թէ ո՛չ հարկիցէք արքային Բաբելացւոց*։ ¹⁰զի սո՛ւտ մարգարեանան դոքա ձեզ՝ առ ՚ի հեռացուցանելոյ զձեզ յերկրէ՛ ձերմէ. և ցրուեցի՛ց զձեզ և կորիջի՛ք։ ¹¹Եւ ազգ որ մուծանիցէ զպարանոց իւր ընդ լծով

* *Ոմանք.* Որդի Սամնեայ ՚ի Կա՛:

* *Ոմանք.* Եւ որ ընդ նմա յԵ՛:

* *Ոմանք.* Եւ սպան զնա սրով։ *Ոսկան.* Եւ ընկեցին ՚ի շի՛:

* *Ոմանք.* Որդւոյ Սափանիայ... մատնեսցի ժողովրդեանն։

* *Ոմանք.* Յովսիայ թագաւորի Յուդայ։

* *Բազումք.* Եւ առաքեսցես զայն առ։

* *Ի բազումս պակասի.* Եւ բազկաւ իւրով բարձու։ *Ուր օրինակ մի.* Եւ բազկաւ իմով։

* *Ոմանք.* Եւ ծառայեսցեն նմա։ *Ի բազումս պակասի.* Երկրի նորա, և նորա։

* *Ոսկան.* Որ ոչ ծառայեսցէ Նա՛։ *Բազումք.* ՚ի վերայ ազգին այնորիկ։

* *Ոմանք.* Եւ հաւահմայից ձերոց... և որք ասեն։ *Ուր Ոսկան.* և հմայից ձերոց։

արքային Բաբելացւոց, և կայցեն նմա՝ ՚ի հարկի՝ թողի՛ց զնա յերկրի իւրում՝ ասէ Տէր. գործեսցէ զնա, և բնակեսցէ՛ ՚ի նմա՛: ¹²Եւ առ Սեղեկիա արքայ Յուդայ խօսեցայ ըստ ամենայն բանիցս այսոցիկ, և ասեմ. Մուծէ՛ք զպարանոցս ձեր ընդ լծով արքային Բաբելացւոց, և ծառայեցէ՛ք նմա և ազգի նորա՝ և կեցջի՛ք: ¹³Եւ ընդէ՞ր մեռանիք դուք, և ժողովուրդ թո, սրով և սովով և մահուամբ. որպէս և խօսեցաւ Տէր առ ազգ՝ որ ո՛չ ծառայիցէ արքային Բաբելացւոց՝: ¹⁴Մի՛ լսէք բանից մարգարեիցն որ ասեն ձեզ՝ թէ մի՛ հարկիք արքային Բաբելացւոց. զո՛ւր մարգարեանան նոքա ձեզ՝: ¹⁵Ձի՛ ոչ առաքեցի զնոսա՝ ասէ Տէր. և նոքա մարգարեանան յանուն իմ սո՛ւտ, առ ՚ի կորուսանելոյ զձեզ. և կորիցէք դուք և մարգարեքո՞ որ մարգարեանան ձեզ տարապարտուց ստութեամբ՝: ¹⁶Եւ ցքահանայս և ցամենայն ժողովուրդն զոր խօսեցայ ասասցես. Ա՛յսպէս ասէ Տէր. Մի՛ լսէք բանից մարգարեիցն որ մարգարեանան ձեզ՝ և ասեն. Ահա սպաս տան Տեառն դարձցի ՚ի Բաբելոնէ այժմ ընդ հուպ. զո՛ւր մարգարեանան ձեզ, և ես ո՛չ առաքեցի զնոսա: ¹⁷Մի՛ լսէք նոցա. այլ ծառայեցէ՛ք արքային Բաբելացւոց՝ և կեցջիք. և ընդէ՞ր լինիցի քաղաքդ ակերակ՝: ¹⁸Եթէ մարգարէ՛ք իցեն, և իցէ բան Տեառն առ նոսա, եկեսցեն և յանդիման լիցին ինձ: Ձի ա՛յսպէս ասէ Տէր. Եւ մնացեալ սպասն զոր ո՛չ առ արքայն Բաբելացւոց՝ յորժամ գերեաց զՅեքոնիա յերուսաղեմէ, ՚ի Բաբելոն երթիցէ՛ ասէ Տէր զօրութեանց: Այլ վասն չերթալոյ սպասուցն մնացելոց ՚ի տան Տեառն և ՚ի տան թագաւորին Յուդայ յերուսաղեմէ՝ ՚ի Բաբելոն՝: ¹⁹Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց վասն սեանցն, և վասն ծովուն, և վասն մեքենովթիցն, և մնացորդաց սպասուցն՝ որ մնացին ՚ի քաղաքիդ յայդմիկ՝. ²⁰զոր ո՛չ առ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց, ՚ի գերելն իւրում զՅեքոնիա որդի Յովակիմայ արքայի Յուդայ յերուսաղեմէ՝ ՚ի Բաբելովն, և զամենայն ազատսն Յուդայ և զերուսաղեմի: ²¹Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. վասն սպասուցն մնացելոց ՚ի տան Տեառն, և ՚ի տան թագաւորին Յուդայ՝ և յերուսաղեմ: ²²Ի Բաբելովն երթիցեն, և անդ եղիցին՝ մինչև յօրն յորում ա՛յց արարից նոցա. ա՛յսպէս ասէ Տէր. Հանի՛ց զնոսա, և դարձուցից ՚ի տեղիդ յայդ՝:

Գլուխ ԻԸ

¹Եւ եղև յամին յայնմիկ իսկզբան թագաւորութեանն Սեղեկիայ արքայի Յուդայ. յամին չորրորդի՝ յամսեանն հինգերորդի. ասէ ցիս Ամանիա որդի Ազովրայ սուտ մարգարէ ՚ի Գաբաւովնէ, ՚ի տան Տեառն առաջի քահանայիցն և

* Այլք. Եւ կայցէ. կամ՝ կացցէ նմա: Ոմանք. Եւ գործեսցէ զնա:

* Ոսկան. Դու և ժողովուրդ թո սր՝: Ոմանք. Եւ ժողովուրդ ձեր... որպէս խօսեցաւ... որ ոչ ծառայեսցէ:

* Ոմանք. Եւ մի՛ լսէք... որ ասեն ցձեզ թէ:

* Ոմանք. Առ ՚ի կորուսանել զձեզ:

* Բազումք. Բաբելացւոց. և կեցէք:

* Ոմանք. Եւ եթէ մարգարէք... բան Տեառն ՚ի նոսա... Այլ վասն չերթալոց սպա՛: Ուր Ոսկան. չերթելոց սպա՛:

* Ոմանք. Եւ վասն մեքենովթացն:

* Ոմանք. Մինչեւ յաւուր յորում:

ամենայն ժողովրդեանն*։²Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Խորտակեցի՛ լուծ արքային Բաբելացւոց³ յետ այլ ևս երկուց ամաց աւուրց. և ես դարձուցից ՚ի տեղիդ յայդ զամենայն սպաս տանն Տեառն, զոր միանգամ ա՛ռ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց ՚ի տեղուջէդ յայդմանէ, և տարա՛ւ ՚ի Բաբելովն*։⁴Եւ զՅեքոնիա որդի Յովակիմայ արքայի Յուդայ, և զամենայն գերութիւն Յրէաստանի որք մտին ՚ի Բաբելոն՝ դարձուցից ես ՚ի տեղիս յայս՝ ասէ Տէր. և զՅեքոնիա, և զգերութիւնն Յուդայ. զի խորտակեցից զլուծ արքային Բաբելացւոց։⁵Եւ ասէ Երեմիա մարգարէ ցԱնանիա սուտ մարգարէ, առաջի քահանայիցն և առաջի ամենայն ժողովրդեանն որ կային ՚ի տան Տեառն. ⁶Արդարև այդպէս արասցէ Տէր. հաստատեցէ զբանսդ քո զոր մարգարէացար, դարձուցանել զսպաս տանդ այդորիկ, և զամենայն գերին ՚ի Բաբելոնէ ՚ի տեղիս յայս*։⁷Բայց լուարո՛ւք զպատգամս Տեառն՝ զոր ես ասեմ յականջս ձեր, և յականջս ամենայն ժողովրդեանդ*։⁸Մարգարէք որ եղեն յառաջ քան զիս՝ և զքեզ՝ յաւիտենից, և մարգարէացան ՚ի վերայ բազում աշխարհաց և մեծամեծ թագաւորութեանց, ՚ի պատերազմ, և ՚ի չարիս, և ՚ի մահ*։⁹մարգարէ որ մարգարէանայ խաղաղութիւն և լիցի՛ բան մարգարէին, ծանիցեն զմարգարէն զոր առաքեաց նոցա Տէր հաստատութեամբ*։¹⁰Եւ ա՛ռ Անանիա մարգարէ առաջի ամենայն ժողովրդեանն զանուրսն ՚ի պարանոցէ Երեմիայ մարգարէի՝ և խորտակեաց։¹¹Եւ ասէ Անանիա առաջի ամենայն ժողովրդեանն. Այսպէս ասէ Տէր. Այդպէս խորտակեցից զլուծ Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, յետ երկուց ամաց աւուրց ՚ի պարանոցէ ամենայն ազգաց։¹²Եւ գնաց Երեմիա մարգարէ զճանապարհս իւր։ Եւ եղև բան Տեառն առ Երեմիա յետ խորտակելոյն Անանիայ մարգարէի զանուրսն ՚ի պարանոցէ Երեմիա մարգարէի, և ասէ. ¹³Երթ խօսեաց ընդ Անանիայ՝ և ասացես. Այսպէս ասէ Տէր. Անուրս փայտեղէնս խորտակեցեր, և արարից ընդ այնր անուրս երկաթիս*։¹⁴զի այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Լո՛ւծ երկաթի եղի ՚ի վերայ պարանոցի ամենայն ազգացդ այդոցիկ՝ հարկել Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, և ծառայեցեն նմա. նա՛ և զգազանս անապատի ետու նմա։¹⁵Եւ ասէ Երեմիա մարգարէ ցԱնանիա մարգարէ. Արդ՝ լո՛ւր Անանիա, ո՛չ առաքեաց զքեզ Տէր, և դու ՚ի զուր յուսացուցեր զժողովուրդդ զայդ ՚ի նանրութիւնս*։¹⁶Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Ահա ես արձակեցից զձեզ յերեսաց երկրիդ. և ՚ի սմին տարուջ մեռջի՛ր դու, զի խտտորումն խօսեցար ՚ի Տեառնէ*։¹⁷Եւ մեռաւ Անանիա մարգարէ յամին յայնմիկ, յամսեանն եւթներորդի։

* *Ոմանք.* Սկզբան թագաւորութեանն Յովակիմայ ար՝:

* *Օրինակ մի.* Ի տունդ յայդ զամենայն սպ՝:

* *Բազումք.* Հաստատեցէ զբան քո:

* *Ոմանք.* Ջպատգամ Տեառն:

* *Ոսկան.* Յառաջ քան զիս, և յառաջ քան զքեզ յա՛:

* *Ոմանք.* Եւ լինիցի բան մարգարէին. ծանիցես: *Բազումք.* Առաքեաց նոցա Տէր հաւատարմութեամբ:

* *Ոմանք.* Խօսեաց ընդ Անանիայի: *Յօրինակին պակասեր.* Այսպէս ասէ Տէր. Անուրս:

* *Օրինակ մի.* ՅԱնանիայ սուտ մարգարէ... և դու զուր յուսա՛:

* *Ոմանք.* Վասն այսորիկ... յերեսաց երկրիդ: *Ոսկան.* Արձակեցից զքեզ յերեսաց:

Գլուխ ԻԹ

ԼԲ ¹Եւ այս բանք են թղթոյն զոր առաքեաց Երեմիա մարգարէ յերուսաղեմէ առ ծերս գերութեանն, և առ քահանայս, և առ սուտ մարգարէսն. Թուղթ ՚ի Բաբելոն առ գերին, և առ ամենայն ժողովուրդն զորս գերեաց Նաբուքոդոնոսոր յերուսաղեմէ ՚ի Բաբելոն. ²Ետ տանելոյ Յեքոնիայ արքայի, և տիկնոջն, և ներքինեաց, և իշխանաց Յուդայ յերուսաղեմէ. և ամենայն ազատաց, և արուեստագիտաց, և կալանաւորակապաց յերուսաղեմէ: ³Ի ձեռն Ելարեայ որդւոյ Սափանայ, և Գամարեայ որդւոյ Քեղկեայ. զորս առաքեաց Սեդեկիա արքայ առ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց ՚ի Բաբելոն. և ասէ*. ⁴Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի, վասն գերութեանդ որ գերեցաւ յերուսաղեմէ ՚ի Բաբելոն. ⁵Տո՛ւնս շինեցէք՝ և բնակեցէք. դրախտս տնկեցէք, և կերայք զպտուղս նոցա. ⁶առէք կանայս, և եղիցին ուստերք և դստերք. և առէք կանայս ուստերաց ձերոց, և զդստերս ձեր տո՛ւք արանց, և ծնցին ուստերս և դստերս. և բազմասջիք այդր, և մի՛ նուազեսջիք: ⁷Եւ կեցջիք խաղաղութեամբ յերկրիդ յոր գերեցի զձեզ այդր, և աղօթս արարէք ՚ի վերայ դոցա առ Տէր. զի ՚ի դոցա խաղաղութեանն եղիցի և ձեզ խաղաղութիւն: ⁸Ձի այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի. Մի՛ հրապուրեսցեն զձեզ սուտ մարգարէքդ ձեր որ ՚ի միջի ձերում են, և ըղծապատումքդ ձեր. և մի՛ անսայք երազոց ձերոց զոր դուք տեսանէք. ⁹զի սո՛ւտ մարգարէանան դոքա ձեզ յանուն իմ. և ես ո՛չ առաքեցի՝ ասէ Տէր: ¹⁰Ձի այսպէս ասէ Տէր. Յորժամ մերձիցի լնուլ Բաբելոնի եւթանասուն ամ, այց արարից ձեզ. և հաստատեցից ՚ի վերայ ձեր զբանս իմ զբարիս, դարձուցանել զձեզ ՚ի տեղիս յայս*. ¹¹Ձի ես գիտեմ զխորհուրդս զոր խորհիմ, և խորհեցայց ՚ի վերայ ձեր՝ ասէ Տէր, խորհուրդ խաղաղութեան և ո՛չ չարութեան. տաց ձեզ յետ այդորիկ յո՛յս*. ¹²Եւ կարդասջիք առ իս. և երթիջիք և յաղօթս կացջիք առ իս, և ես լուայց ձեզ: ¹³Եւ խնդրեսջիք զիս՝ և գտջիք. զի խնդրիցէք զիս յամենայն սրտէ ձերմէ. ¹⁴Եւ երևեցայց ձեզ ասէ Տէր. և դարձուցից զգերութիւն ձեր, և ժողովեցից զձեզ յամենայն ազգաց, և յամենայն տեղեաց ուր ցրուեցի զձեզ անդր՝ ասէ Տէր. և դարձուցից զձեզ ՚ի տեղիդ՝ ուստի գերեցի՛ զձեզ այտի*. ¹⁵զի ասիցէք՝ թէ կացոյց Տէր ՚ի մեզ մարգարէս ՚ի Բաբելոն*: ¹⁶Ձի այսպէս ասէ Տէր ցթագաւորդ որ նստի յաթոռ Դաւթի. և ցամենայն ժողովուրդդ որ բնակեալ է ՚ի քաղաքիդ յայդմիկ: Եղբարք ձեր որ ո՛չ ելին ընդ ձեզ ՚ի գերութիւն. ¹⁷Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ահաւասիկ ես առաքեմ ՚ի նոսա սո՛վ և սո՛ւր և մահ, և արարից զդոսա իբրև զթուզ ժանտ սուարիմ որ ո՛չ ուտիցի ՚ի ժանտութենէ իւրմէ: ¹⁸Եւ հալածեցից զնոսա սրով և սովով և մահուամբ. և տաց զնոսա ՚ի շարժումն ամենայն քաղաւորութեանց երկրի. ՚ի նզովս և յապականութիւն՝ և ՚ի չչիւն և ՚ի նախատինս՝ ՚ի մէջ ամենայն ազգաց ուր

* *Ոսկան.* Եւ արուեստաւորաց և կալանաւորա՛:

* *Ոմանք.* Ի ձեռն Եղամեայ որդւոյ Սափա՛:

* *Ոսկան.* Եւ մի՛ նուազեսջիք:

* *Բազումք.* Յորժամ մերձիցէ Բաբելոնի լնուլ եւ՛: *Ուր Ոսկան.* Սերձ իցէ ՚ի Բաբելոն ՚ի լնուլ: *Յօրինակին պակասէր.* Չբանս իմ զբարիս:

* *Ոմանք.* Եւ խորհեցայ ՚ի վերայ ձեր... տալ ձեզ յետ այդո՛:

* *Ոմանք.* Ուր ցրուեցից զձեզ անդր:

* *Ոմանք.* Ձի ասացէք թէ կացոյց:

* *Ոմանք.* Ես առաքեմ ՚ի ձեզ սով: *Ոսկան.* Եւ արարից զնոսա իբրև:

ցրուեցից զնոսա անդր*։ ¹⁹Փոխանակ զի ո՛չ լուան բանից իմոց՝ ասէ Տէր. զի առաքեցի առ նոսա զժառայս իմ զմարգարէս կանխեալս և առաքեալ, և ոչ լուարուք՝ ասէ Տէր*։ ²⁰Եւ դուք լուարուք զբան Տեառն ամենայն գերիդ՝ զոր առաքեցի յերուսաղէմէ՝ ՚ի Բաբելոն։ ²¹Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի, ՚ի վերայ Աքիաբայ որդւոյ Ուղկեայ, և ՚ի վերայ Սեդեկիայ որդւոյ Մասայ՝ որ մարգարէացան ձեզ յանուն իմ զուր. Ահաւասիկ ես տաց զնոսա ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացոց, և սատակեցտ զնոսա առաջի աչաց ձերոց*։ ²²Եւ առցեն ՚ի նոցանէն անծոս ՚ի մէջ ամենայն գերութեանն Յուդայ որ է ՚ի Բաբելոն և ասասցեն. Արասցէ՛ զքեզ Տէր՝ որպէս արար Սեդեկիայ և Աքիաբայ, զորս տապակեաց արքայն Բաբելացոց ՚ի հուր*։ ²³Վասն զի գործեցին զանօրէնութիւնս յԻսրայէլի, և շնային ընդ կանայս քաղաքայնոց իւրեանց. և խօսէին պատգամս յանուն իմ սուտ, զոր ո՛չ հրամայեցի նոցա. և ես ինձէն իրազէտ և վկայ եմ ասէ Տէր*։ ²⁴Եւ ցՍամեա Ելիմացի ասասցես. ²⁵Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Փոխանակ զի առաքեցեր դու յանուն իմ թուղթս առ ամենայն ժողովուրդն յերուսաղէմ, և ես ո՛չ առաքեցի զքեզ յանուն իմ. և առ Սոփոնիա որդի Մասայ քահանայ՝ և առ ամենայն քահանայսն ասել*, ²⁶թէ Տէր ետ զքեզ քահանայ փոխանակ Յովիդայեայ քահանայի, լինել վերակացու ՚ի տան Տեառն ամենայն մարդոյ որ մարգարէանայ, և ՚ի վերայ ամենայնի որ պատմէ ըղձութիւն. և տացես զնոսա յարգելան ՚ի վերնադրանդն*։ ²⁷Եւ արդ՝ ընդէ՞ր ո՛չ արարէք պատուհաս Երեմիայի Անաթովթացոյ՝ որ մարգարէանայ ձեզ. ²⁸զի առաքեաց առ մեզ ՚ի Բաբելոն և ասէ, թէ հեռի՛ է ժամանակն. շինեցէ՛ք տունս՝ և բնակեցէ՛ք, տնկեցէ՛ք դրախտս՝ և կերայք զպտուղս նոցա։ ²⁹Եւ ընթերցաւ Սոփոնիա քահանայ զթուղթն յականջս Երեմիայի մարգարէի։ ³⁰Եւ եղև բան Տեառն առ Երեմիայ՝ և ասէ. ³¹Առաքեա՛ առ ամենայն գերին՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր ՚ի վերայ Սամեայ Ելիմացոյ. Փոխանակ զի մարգարէացաւ ձեզ Սամեայ՝ և ես ո՛չ առաքեցի զնա. և յուսացո՛յց զձեզ ՚ի նանրութիւն*։ ³²Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես արարից հանդէս ՚ի վերայ Սամեայ Ելիմացոյ, և ՚ի վերայ ազգի դորա. և ո՛չ եղիցի դորա մարդ ոք՝ որ նստիցի ՚ի միջի ձերում տեսանել զբարութիւն զոր ես արարից ձեզ՝ ասէ Տէր. զի խտտորո՛ւմն խօսեցաւ ՚ի Տեառնէ՛։

30

* *Ոմանք.* Հալածեցից զդոսա սրով... և տաց զդոսա... ուր ցրուեցի զնոսա անդր։

* *Օրինակ մի.* Փոխանակ զի ոչ լուան ձայնի իմում, ասէ։

* *Ոմանք.* Աքիաբայ որդւոյ Կովիլիա... որ մարգարէանան ձեզ յա՛։ *Աստանօր ոմանք ՚ի լուսանցս նշանակեն այսպէս.* Ծերքն Շուշանայ են սոքա, զորս անուանէ։

* *Ոմանք.* Արասցէ՛ քեզ Տէր որ արար Սեդեկիայ... զոր տապակեաց արքայ Նաբուգոդոնոսոր ՚ի հուր։

* *Ոմանք.* Վասն զի գործեցին անդ զանօ՞... և շնացին ընդ կանայս։ *Օրինակ մի.* Իրաւազէտ և վկայեմ։

* *Ոմանք.* Առ ամենայն ժողովուրդն իմ. և ես։

* *Ոմանք.* Յարգելան վերնադրանդն։

* *Ոսկան.* Առ ամենայն գերիսն։

* *Ոմանք.* Արարից հանդէս ՚ի վերայ ամենայն Ելիմացոց։

Գլուխ L

1Գ 1Բանն որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ ասել. 2Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Գրեա՛ դու քեզ զամենայն զբանս զոր ետու քեզ հրաման ՚ի մատենի*։ 3Ձի ահա աուրք զան ասէ Տէր, և դարձուցից՝ զգերութիւն ժողովրդեան ինոյ Իսրայէլի և զՅուդայ՝ ասէ Տէր. և դարձուցից զդոսա յերկրիդ՝ զոր ետու հարցն նոցա, և տիրեսցեն դմա*։ 4Եւ այս բանք են զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ Իսրայէլի և Յուդայ. 5Այսպէս ասէ Տէր. Չայն ահի լուիջիք, և զձայն ահեղ զուժի, յորմէ դողայցեն մէջք. և փրկութիւն և խաղաղութիւն ո՛չ իցէ*։ 6Յարցէ՛ք և տեսէ՛ք՝ եթէ ծնա՛ւ երբէք արու. զի տեսի զամենայն այր՝ և ձեռք իւր ՚ի վերայ միջոյ իւրոյ իբրև ծննդականի, և դարձան երեսք ամենայն ՚ի գոյն դալկան*։ 7Քի մեծ է օրն այն, և չի՞ք այնպիսի. և անհնարին նեղութեամբ է ժամանակն Յակովբայ, և ապրեսցի ՚ի նմանէ*։ 8Եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր զօրութեանց, խորտակեցից՝ զլուծն ՚ի պարանոցէ նոցա, և զկապանս նոցա խզեցից. և ո՛չ ևս կայցեն նոքա ՚ի հարկի օտարաց*։ 9այլ հարկեսցին Տեառն Աստուծոյ իւրեանց, և զԴաւիթ արքայ իւրեանց յարուցից նոցա։ 10Բայց դու մի՛ երկնչիր ծառայ իմ Յակովբ՝ ասէ Տէր, և մի՛ զարհուրեսցիս Իսրայէլ. զի ահաւասիկ ես փրկեցից զքեզ ՚ի հեռաստանէ, և զգաւակ քո յերկրէ գերութեան նոցա. և դարձցի Յակովբ՝ և դադարեսցէ, և բարկեցիկ լիցի. և ոչ ոք իցէ որ զարհուրեսցուցէ*։ 11Ձի ընդ քեզ են՝ ես՝ ասէ Տէր՝ ՚ի փրկել զքեզ. զի արարից նուագութիւն ՚ի մէջ ազգաց, յորս ցրուեցից զքեզ անդր. և քեզ ո՛չ արարից վախճան. և խրատեցից զքեզ իրաւամբք, և քաւելով ո՛չ քաւեցից զքեզ*։ 12Այսպէս ասէ Տէր. Սաստկացուցի զբեկումն քո, և ցաւագին են հարուածք քո. 13ո՛չ ոք է որ դատի զդատաստանս քո. ՚ի ցաւս քո բժշկեցար, և օգուտ ո՛չ եղև քեզ*։ 14Ամենայն բարեկամք քո մոռացան զքեզ, և ո՛չ հարցանիցեն զքեզ. զի զհարուածս թշնամոյ հարի զքեզ՝ խրատ սաստիկ. վասն ամենայն անիրաւութեանց քոց, բազմացան մեղք քո։ 15Ձի՞՞ գոչես ՚ի վերայ բեկման քոյ, սակայն ո՛չ արարից քեզ վախճան. բռնուն են ցաւք քո. վասն բազմութեան անօրէնութեան քոյ սաստկացան. մեղք քո արարին քեզ զայդ։ 16Վասն այդորիկ ամենեքին որ ուտէին զքեզ՝ կերիցին. և ամենայն թշնամիք քո կերիցեն զմարմինս իւրեանց. վասն բազում անիրաւութեանց քոց որ յաճախեցին. և մեղք քո արարին քեզ զայդ. և եղիցին ապականիչք քո յապականութիւն, և զամենայն աւարառուս քո տաց յաւար։ 17Ձի աժից զբժշկութիւն քո ՚ի ցաւագին վիրաց քոց, և բժշկեցից զքեզ՝ ասէ Տէր. զի ցրուեալ կոչեցար Սիովն, և դոյն է որս ձեր. զի որ խնդրիցէ ո՛չ գտանիցէ զնոսա*։ 18Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես դարձուցից զվտարանդութիւն յարկացն Յակովբայ, և գերութեանն նորա ողորմեցայց. և շինեսցի քաղաքն ՚ի

* Ոսկան. Չամենայն բան զոր ետու։

* Ոմանք. Իսրայէլի և Յուդայ՝ ասէ Տէր... յերկրիդ զոր ետու։

* Ոմանք. Եւ ձայն ահեղ զուժի։

* Ոմանք. Թէ ծնաւ ուրեք արու... ՚ի գոյն դալկան։

* Ոսկան. Վայ զի մեծ է օրն այն։

* Բազումք. Եւ եղիցի յաւուր յայն՞։

* Ոմանք. Ձի ահաւասիկ ես փր՞... որ զարհուրեսցուցանիցէ։ Բազումք. Եւ բարեկեցիկ լիցի։

* Ոմանք. Յորոց ցրուեցի զքեզ անդ։

* Ոմանք. Եւ ՚ի ցաւս բժշկեցար։

* Բազումք. Ո՛չ գտանիցէ զնա։

բարձրութեան իւրում. և տաճարն ըստ իրաւանց իւրոց կանգնեսցի*։ ¹⁹Եւ ելցեն ՚ի դոցանէ երգիչք և ձայն խաղալկաց, և բազմացուցից զդոսա՝ և մի՛ նուազեսցին. տարածեցից զդոսա, և մի՛ նուազեսցին*։ ²⁰Եւ մտանիցեն դոքա իբրև զառաջինն, և վկայութիւնք դոցա կանգուն կայցեն առաջի աչաց իմոց։ Եւ հանդէս արարից ՚ի վերայ նեղչաց դոցա. ²¹և եղիցին բռնագոյնք քան զնոսա ՚ի վերայ նոցա. և իշխան դոցա ՚ի դոցանէ ելցէ։ Եւ ժողովեցից զդոսա, և դարձցին առ իս. զի ո՛վ է այն որ ետ զսիրտ իւր դառնալ առ Տէր, ասէ Տէր։ ²²Եւ եղիջիք ինձ ՚ի ժողովուրդ, և ես եղէ՛ց ձեզ յԱստուած։ ²³Ձի բարկութիւն Տեառն ե՛լ ցասմամբ. ե՛լ բարկութիւն մրրկեալ ՚ի վերայ ամպարշտաց*։ ²⁴Եկեսցէ՛ և մի՛ դարձցի բարկութիւն սրտմտութեան Տեառն՝ մինչև արասցէ և կատարեսցէ զյօժարութիւն սրտի իւրոյ ՚ի վախճանի աւուրց։ Եւ ծանիջիք զայն*։

31

Գլուխ ԼԱ

¹Ի ժամանակի յայնմիկ՝ ասէ Տէր. և եղէց յԱստուած ազգիդ Իսրայէլի, և դոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ։ ²Այսպէս ասէ Տէր. Գտին տապ յանապատի անդ, սատակելովքն հանդերձ սուսերաւ։ Երթայք՝ մի՛ սատակէք զԻսրայէլ*։ ³բացէ՛ ՚ի բաց Տէր երևեցաւ նմա. սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ՚ի գթութիւն*։ ⁴Դարձեալ շինեցի՛ց զքեզ, և շինեսցիր կոյսդ Իսրայէլի. դարձեալ առցես զթմբուկ քո՝ և ելցես ընդ ժողովս խաղալկաց*։ ⁵Դարձեալ տնկեսցիր այգիս ՚ի լերին Սամարեայ. տնկեսցիք տունկս՝ և օրհնեսցիք։ ⁶Ձի հասեալ է օր կոչման հրաւիրակի ՚ի լերինս Եփրեմի. Արի՛ք և ելցուք ՚ի Սիովն առ Տէր Աստուած մեր։ ⁷Այսպէս ասէ Տէր. Ցնծութիւն առնել Յակովբայ. ուրախ լերուք՝ և գոչեցէք ՚ի վերայ գլխոց ազգաց. լսելի՛ արարէք՝ օրհնեցէ՛ք և ասացէ՛ք. Փրկեաց Տէր զժողովուրդ իւր, զմնացորդս Իսրայէլի*։ ⁸Ահաւասիկ ես ածից զնոսա յերկրէ հիւսւսոյ, և ժողովեցից զնոսա ՚ի ծագաց երկրէ ՚ի տօնն պասեք. և ծնցին որդիս ՚ի բազմութիւն յոյժ ՚ի միջի նոցա. կոյրն, կաղն, յղին և ծնեալն՝ միահամուռ ժողովուրդ մեծ. դարձցին այսր*։ ⁹Լալո՛վ ելին. և մխիթարութեամբ ածից զնոսա, հանգուցանել ՚ի վերայ ջուրց վտակաց, ընդ ճանապարհ ուղիղ՝ և մի՛ մոլորեսցին ՚ի նմա. զի եղէ Իսրայէլի ՚ի հայր, և Եփրեմ անդրանիկ իմ է*։ ¹⁰Լուարո՛ւք զպատգամս Տեառն ազգք և պատմեցէ՛ք ՚ի կղզիս հեռաւորս՝ և ասացէ՛ք. Որ հոսեացն զԻսրայէլ՝ ժողովեսցէ զնա, և պահեսցէ զնա իբրև տուարածական զհօտ իւր*։ ¹¹զի փրկեաց Տէր զՅակովբ, և ասարեցոյց զնա ՚ի

* *Բազումք.* Ահաւաղիկ ես դարձ... ըստ իրաւանց իմոց կանգնեսցի։

* *Ոմանք.* Եւ ձայնք խաղալկաց... և մի՛ նուազեսցին։

* *Ոմանք.* Ել ցասմամբ. և բարկութիւն։

* *Ոսկան.* ՚ի վախճանի աւուրց ծանիջիք զայն։

* *Բազումք.* Գտի տապ յանապատի։

* *Ոսկան.* ՚ի սէր յաւիտենական։

* *Բազումք.* Զթմբուկ, և ելցես։

* *Ոմանք.* Ուրախ եղերուք և գո՛։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես ածից... և կաղն և յղին։ *Ոսկան.* ՚ի ծագաց երկրի ՚ի տօն պասեքի։

* *Ոմանք.* Հանգուցեալ ՚ի վերայ ջուրց։

* *Ոմանք.* Զպատգամ Տեառն... որ հովուեացն զԻսրայէլ՝ ժողովեսցէ զնա. և պահեսցէ

ծեռաց բռնաւորաց նորա: ¹²Եկեացեն և ուրախ լիցին և ցնծացեն ՚ի լերին Սիովնի. եկեացեն ՚ի բարութիւնս Տեառն՝ յերկիր ցորենոյ և գինւոյ՝ և արդեանց և խաշանց, արջառոյ և ոչխարի. և եղիցին անծինք նոցա իբրև զծառ պտղալից, և ո՛չ ևս քաղցիցեն*։ ¹³Յայնժամ ցնծացեն կոյսք ՚ի ժողովս երիտասարդաց. և ծերք խնդասցեն. և դարձուցից զսուգ նոցա ՚ի խնդութիւն, և ուրախ արարից զնոսա ՚ի տրտմութենէ իւրեանց: ¹⁴Չմայլեցուցից և արբեցուցի՛ց զանծինս քահանայից որդւոցն Ղևեայ, և ժողովուրդ իմ լցցի իմովքն բարութեամբք՝ աստ Տէր*։

ԼԴ ¹⁵Ա՛յսպէս աստ Տէր. Չայն ՚ի Հռամայ լսելի եղև՝ ողբումն և լալումն և գուժումն. Ռաքէլ լա՛յր զորդիս իւր, և ո՛չ կամէր մխիթարել ՚ի վերայ որդոց իւրոց՝ զի ո՛չ գոյին: ¹⁶Ա՛յսպէս աստ Տէր. Դադարեսցէ՛ անձն քո ՚ի լալոյ, և աչք քո յարտասուաց. զի գո՛ն վարձք գործոց քոց՝ աստ Տէր, և դարձցին յերկրէ բշնամեաց. ¹⁷և եղիցի յոյս վախճանի քոյ՝ աստ Տէր, բնակաւոր որդւոց քոց ՚ի սահմանս նոցա: ¹⁸Լսելով լուայց զողբումն Եփրեմի. Խրատեցեր զիս Տէր և խրատեցայց, և ո՛չ ուսայ իբրև զընջուղ տրմուղ. դարձո՛ զիս և դարձայց՝ զի դու ես Տէր Աստուած իմ*։ ¹⁹Եւ յետ գերութեան իմոյ ապաշաւեցի, և յետ իմանալոյն իմոյ յոգոց հանէի՝ ՚ի վերայ աւուր ամօթոյն իմոյ. և ցուցի՛ քեզ թէ առի նախատինս ՚ի մանկութենէ իմմէ*։ ²⁰Եւ թէ որդի սիրելի՛ իցէ իմ Եփրեմ մանուկ գրգանաց, փոխանակ զի բանք իմ եմ ՚ի նմա. յիշելով յիշեցից զնա միւսանգամ. վասն այնորիկ փութացայ յաղագս նորա. ողորմելով ողորմեցայց նմա՝ աստ Տէր*։

ԼԵ ²¹Սատի՛ր անձամբ անծին արա՛ դու քեզ Սիոն պատուհաս. ընկեա՛ զսիրտ քո ՚ի թիկունս. գնա՛ զճանապարհ. դարձի՛ր կոյսդ Իսրայէլի, դարձի՛ր անդրէն ՚ի քաղաքս քո զգացեալ*։ ²²Սինչև յե՞րբ թափառիցիս դո՛ւստր անարգեալ. զի հաստատեաց Տէր զփրկութիւն ՚ի ձեռատունկն. նո՛ր փրկութեամբ շրջիցին մարդիկ*։ ²³Ա՛յսպէս աստ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Դարձեալ ասացեն զբանս զայս յերկրին Յուդայ՝ և ՚ի քաղաքս նորա, յորժամ դարձուցից զգերութիւնս նորա. օրհնեալ է Տէր յարդար և ՚ի սուրբ լերին իւրում: ²⁴Եւ բնակիչքն Հրէաստանի ամենայն քաղաքօքն իւրեանց և գործաւորօքն, յղփասցին հօտիւքն: ²⁵Ձի արբուցի զամենայն անձն ծարաւի, և զամենայն անձն քաղցեալ լցուցի. ²⁶վասն այնորիկ զարթեայ և տեսի, և քուն իմ քաղցրացաւ ինձ: ²⁷Ահա աւուրք գա՛ն աստ Տէր. և սերմանեցի՛ց զտունն Իսրայէլի, և զտունն Յուդայ ՚ի զաւակ մարդկան և ՚ի զաւակ անասնոյ: ²⁸Եւ եղիցի զոր օրինակ զարթուցեալ էի ՚ի վերայ նոցա ՚ի խլել՝ և ՚ի կործանել, ՚ի քակել և ՚ի կորուսանել՝ և ՚ի չարչարել, նո՛յնպէս զարթեայց ՚ի վերայ նոցա՝ ՚ի շինել և ՚ի տնկել՝ աստ Տէր: ²⁹Յաւուրսն յայնոսիկ մի՛ ևս ասիցեն՝ թէ հարքն ազոխ կերան, և որդւոց ատամունք առին*։ ³⁰այլ իւրաքանչիւր ՚ի մեղս իւր

զնոսա:

* *Ոմանք.* ՚ի լերինս Սիոնի... ՚ի բարութիւն Տեառն:

* *Բազումք.* Իմովք բարութեամբք:

* *Ոմանք.* Լսելով լուայ զող... և խրատեցայ, և ո՛չ ուսայց իբրև:

* *Ոմանք.* Ի վերայ ամուր ամօթոյն իմոյ:

* *Ոմանք.* Եթէ որդի սիրելի... փութացայց յաղագս նորա:

* *Ոմանք.* Ի քաղաքս քո սգացեալ:

* *Ոմանք.* Ի ձեռատունկն նորա փրկութեամբ շրջեսցին:

* *Ոմանք.* Յաւուրս յայնոսիկ մի՛ ևս ասացեն: *Ոսկան.* Եւ որդւոց ատամունք առան:

մեռցի. ամենայն մարդ որ ուտիցէ զագոխն՝ նորին ատամունքն առցին*:
³¹Ահաւասիկ աւուրք գան ասէ Տէր. և ուխտեցից տանդ Իսրայէլի և տանդ Յուդայ ուխտ նոր: ³²Ո՛չ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում առի զծեռանէ նոցա հանել զնոսա յերկրէն Եփրատացւոց. զի նոքա ո՛չ կացին յուխտին իմում, և ես անփո՛յթ արարի զնոցանէ՝ ասէ Տէր*:
³³Այլ այս է ուխտն զոր ուխտեցից տանդ Իսրայէլի. յետ աւուրցն այնոցիկ ասէ Տէր. Տա՛ց զօրէնս իմ՝ ի միտս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նոցա յԱստուած, և նոքա եղիցին ինձ՝ ի ժողովուրդ: ³⁴Եւ մի՛ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր ասել՝ թէ ծանի՛ր զՏէր, զի ամենեքին ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչև ի մեծամեծս՝ ասէ Տէր. զի քաւիչ եղէց անօրէնութեանց նոցա, և զմեղս նոցա ո՛չ ևս յիշեցից*:
³⁵Այսպէս ասէ Տէր՝ որ ետ զարեգակն ի լոյս տուրնջեան հաստատութեամբ, զլուսին և զաստեղս ի լոյս գիշերոյ, և աղաղակ ի ծովու, և գոչեն ալիք նորա. Տէր ամենակալ անուն է նորա: ³⁶Եթէ դադարեցեն օրէնքս այս յերեսաց իմոց՝ ասէ Տէր. ապա և ազգն Իսրայէլի դադարեցտէ ի լինելոյ յա՛զգ առաջի աչաց իմոց զամենայն աւուրս*:
³⁷Այսպէս ասէ Տէր. եթէ վերացին երկինք ի բարձունս, և եթէ խոնարհեցին յատակք երկրի ի խոնարհ. ես ո՛չ խոտեցից զամենայն ազգո Իսրայէլի՝ ասէ Տէր՝ վասն ամենայնի զոր արարին: ³⁸Ահա աւուրք գան ասէ Տէր. և շինեսցի քաղաք Տեառն յաշտարակէ անտի Անամայելի և մինչև ի դուռն Անկեանն*:
³⁹Եւ ելցէ տակաւին կասկած. և չափ նորա յանդիման նոցա մինչև ցբլուրն Գարեբայ. և բուրբեցի շուրջանակի յընտիր ընտիր վիմաց*:
⁴⁰Եւ ամենայն ձորն Փաքադիմայ և մոխրոցն, և ամենայն Սարենովքն, մինչև ի ձորն Կեդրոնի, մինչև ցանկիւն դրանն Ասպաստանացն արևելից՝ սրբութիւն Տեառն. և մի՛ ևս խլեցին, և մի՛ ևս քակեցին մինչև յաւիտեան*:

Գլուխ ԼԲ

ԼԶ ¹Բանն որ եղև ի Տեառնէ առ Երեմիա, յամին տասներորդի Սեդեկիայ արքայի Յուդայ. այն ամ ութուտասն էր Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց*:
²Եւ յայնժամ զօր արքային Բաբելացւոց պաշարեաց զերուսաղէմ. և Երեմիա մարգարէ կայր ի կալանս ի սրահի բանտին՝ որ էր յապարանս թագաւորին Յուդայ*.
³Յոր արգելն զնա Սեդեկիա՝ և ասէ. Ընդէ՞ր դու մարգարէանաս և ասես. Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես տամ զքաղաքդ զայդ ի

* *Բազումք.* Եւ որ ուտիցէ զագոխն:
 * *Ոմանք.* Ուխտին զոր եղի ընդ հարս:
 * *Յօրինակին պակասէր.* Ձի քիչ եղէց անօրէ՛: Ուր բազումք. անիրաւութեանց նոցա:
 * *Ոմանք.* Եւ եթէ դադարեցեն:
 * *Բազումք.* Անամայելի մինչև ի դուռն:
 * *Ի լուս՝.* Մինչև ցորունս Գարեբայ:
 * *Ոմանք.* Ձորն Փաքադիմայ... մինչև յանկիւն դրան... և մի՛ ևս խլեցի և քակեցի. և մի՛ ևս մինչև:
 * *Բազումք.* Ամենայն ութուտասներորդ էր Նաբու՛: Ուր Ոսկան. Այն է ամ ութնուտասներորդ Նաբուգո՛:
 * *Օրինակ մի.* Եւ յայնժամ զօրք ար՛:

ձեռս թագաւորին Բաբելացւոց՝ և առցէ զդա՞. ⁴և Սեդեկիա արքայ Յուդայ մի՛
 ապրեսցի ՚ի ձեռաց Քաղդէացւոցն. զի մատնելով մատնեսցի ՚ի ձեռս
 թագաւորին Բաբելացւոց. և խօսեսցի բերան ՚ի բերան ընդ նմա, և աչք դորա
 զաչս նորա տեսցեն. ⁵և ՚ի Բաբելովն մտցէ Սեդեկիա, և անդ նստցի մինչև այց
 արարից դմա՝ ասէ Տէր. զի՞ մարտնչիք ընդ Քաղդէացիսն՝ ուստի ո՛չինչ
 յաջողիցիք: ⁶Եւ եղև բան Տեառն առ Երեմիա՝ և ասէ. ⁷Ահաւաղիկ Անամայել որդի
 Սելովմայ հօրեղբօր քոյ զայ՛ առ քեզ՝ և ասէ. Ստացի՛ր դու քեզ զագարակն իմ,
 որ է յԱնաթովք. զի քե՛զ իսկ է անկ ըստ մերձաւորութեան առնու՛լ ՚ի ստացուած՞:
⁸Եւ եկն առ իս Անամայել որդի Սելովմայ հօրեղբօր իմոյ, ըստ բանի Տեառն ՚ի
 սրահ բանտին՝ և ասէ ցիս. Ստացի՛ր զագարակն իմ որ է յԱնաթովք յերկրին
 Բենիամինի. զի քե՛զ պարտ է ստանալ զժառանգութիւնն. և դու՛ իսկ երիցագոյն
 ես: Եւ զհտացի՝ թէ բան Տեառն է՞. ⁹և ստացայ զագարակն յԱնամայելայ որդւոյ
 հօրեղբօր իմոյ՝ որ է յԱնաթովք. և կշռեսցի նմա արծաթ եւթն սիկղ և տասն
 արծաթոյ. ¹⁰և գրեսցի մուրհակս և կնքեսցի. և կացուցի վկայս, և կշռեսցի զարծաթն
 ՚ի կշիռս: ¹¹Եւ առի զմուրհակ ստացուածոյն զկնքեալն՝ ըստ հրամանի և ըստ
 իրաւանց՝ և զարձակն՞. ¹²և ետու զմուրհակ ստացուածոցն ցԲարուք որդի
 Ներեայ որդւոյ Սաասայ առաջի Անամայելի որդւոյ հօրեղբօր իմոյ, և առաջի
 այնոցիկ որ կային անդ. և գրեսցին ՚ի մուրհակի ստացուածոցն առաջի ամենայն
 Յրէից՝ որ նստէին ՚ի սրահի բանտին՞: ¹³Եւ պատուիրեսցի Բարուքայ առաջի
 նոցա և ասեմ. ¹⁴Ա՛յսպէս ասէ Տէր ամենակալ Աստուած Իսրայէլի. Ա՛ռ զմուրհակդ
 զայդ զմուրհակ ստացուածոց զկնքեալն, և զմուրհակն արձակ, և դիցես ՚ի
 խեցեղէն ամանի, զի կացցէ աւուրս բազումս՞: ¹⁵Ձի այսպէս ասէ Տէր ամենակալ
 Աստուած Իսրայէլի. Դարձեալ ստացին տունս և ագարակս՝ և այգիս յերկրիդ
 յայդմիկ: ¹⁶Եւ կացի յաղօթս առ Տէր, յետ տալոյն զմուրհակ ստացուածոյն
 ցԲարուք որդի Ներեայ. և ասեմ՞. ¹⁷Որ ե՛սդ Տէր Տէր. դու արարեր զերկիսն և
 զերկիր զօրութեամբ քո մեծաւ՝ և բազկաւ՝ քով բարձու. զի ո՛չ ինչ է բան որ
 ծածկիցի ՚ի քէն՞. ¹⁸առնես զողորմութիւն ՚ի հազար դար. և հատուցանես զմեղս
 հարց ՚ի ծոց որդւոց իւրեանց յետ նոցա: Աստուած մե՛ծ և հզօր. Տէր
 զօրութեանց անուն նորա՞. ¹⁹մե՛ծդ խորհրդովք՝ և զօրաւոր գործովք: Ամենակալ
 մեծանունդ Տէր. աչք քո բայց են յամենայն ճանապարհս որդւոց մարդկան, տա՛լ
 իւրաքանչիւր ըստ ճանապարհի իւրում, և ըստ պտղոյ գնացից իւրեանց: ²⁰Որ
 արարեր նշանս և արուեստս յերկրին Եգիպտացւոց՝ մինչև ցա՛յսօր ՚ի մէջ
 Իսրայէլի, և ՚ի մէջ ծննդոց երկրի, և արարեր քեզ անուն իբրև յաւուր յայսմիկ.
²¹և հաներ զժողովուրդ քո զԻսրայէլ յերկրէն Եգիպտացւոց՝ նշանօք և
 արուեստիւք. հզօր ձեռամբ՝ և բարձր բազկաւ, և մեծամեծ տեսլեամբք: ²²Եւ
 ետուր նոցա զերկիրս զայս զոր երդուար հարցն նոցա՝ տա՛լ նոցա զերկիր որ

* *Բազումք յաւելոււն.* Արգելն զնա *արքայ* Սեդեկիա... *ահաւաղիկ* ես տամ:

* *Ոմանք.* Առնուլ ՚ի ստացուածս:

* *Ոմանք.* Որ յԱնաթովք:

* *Ոմանք.* Առի զմուրհակս ստացուածոցն:

* *Ոմանք.* Եւ առաջի ամենայն Յրէիցն:

* *Ոմանք.* Եւ զմուրհակ ստացուածոցն... ՚ի խեցեղէն աման զի:

* *Ոմանք.* Ձմուրհակս ստացուածոցն զԲա՞:

* *Ոմանք.* Որ ծածկեսցի ՚ի քէն:

* *Ոմանք.* Ձմեղս հարանց ՚ի ծոց:

բղխէ զկաթն և զմեղր* .²³ և մտին և ժառանգեցին զնա . և ո՛չ լուան ձայնի քում , և ըստ հրամանաց քոց ո՛չ զնացին . ըստ ամենայնի զոր պատուիրեցեր նոցա անել , և ո՛չ արարին . և արարին ՚ի պատահել իւրեանց ամենայն չարեացս այսոցիկ* :²⁴ Եւ արդ՝ ահա հասեալ է զօր ՚ի քաղաքս անուր զսա . և մատնեցաւ քաղաքս ՚ի ձեռս Քաղղեացւոցն որ տան ընդ սմա պատերազմ յերեսաց սրոյ և սովոյ և մահու . որպէս և խօսեցար նոյնպէս և եղև զոր դու իսկ տեսանես :²⁵ Եւ դու Տէր ասես ցիս . Ստացիր քեզ ագարակ արծաթոյ . և գրեցի մուրհակ և կնքեցի , և կացուցի վկայս . և քաղաքս մատնեցաւ ՚ի ձեռս Քաղղեացւոցն :²⁶ Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ .²⁷ Ահա ես Տէր Աստուած ամենայն մտեղեաց . միթէ թաքչիցի՞ ամենայն բան յինէն :²⁸ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր . Մատնելով մատնեսցի քաղաքդ ՚ի ձեռս Քաղղեացւոցն , և ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց , և առցէ զդա* :²⁹ Եւ եկեսցեն Քաղղեացիքն պատերազմել ընդ քաղաքիդ , և այրեսցեն զդա հրով . և հրծի՛գ արասցեն զտունս յորս արկանէին խունկս ՚ի վերայ տանեաց նոցա Բահաղու , և զոհէին զոս աստուածոց օտարաց վասն զիս դառնացուցանելոյ .³⁰ որդիքն Իսրայէլի՝ և որդիքն Յուդայ միայն գործէին զչարիս առաջի աչաց իմոց ՚ի մանկութենէ իւրեանց : Բայց որդիքն Իսրայէլի բարկացուցին զիս գործովք ձեռաց իւրեանց՝ ասէ Տէր :³¹ Ի բարկութիւն և ՚ի սրտմտութիւն էր ինձ քաղաքդ այդ , յորմէ օրէ շինեցի զդա մինչև ցայսօր . ջնջել զդա յերեսաց իմոց* :³² Վասն ամենայն չարեաց որդւոցն Իսրայէլի և որդւոցն Յուդայ՝ զոր արարին ՚ի դառնացուցանել զիս , ինքեանք և թագաւորք իւրեանց , և մեծամեծք իւրեանց , և քահանայք իւրեանց , և մարգարէք իւրեանց , արք Յուդայ և բնակիչք Երուսաղէմի* :³³ Դարձուցին յիս զթիկունս և ո՛չ զերեսս . և ուսուցի զնոսա ընդ առաւօտս . ուսուցի , և ո՛չ անսացին ընդունել զխրատ* .³⁴ և եղին զպղծութիւնս իւրեանց ՚ի տան՝ յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ* :³⁵ Եւ առ պղծութեան իւրեանց շինեցին բազինս Բահաղու ՚ի ձոր որդւոցն Ենովմայ , մատուցանել զուստերս և զգստերս իւրեանց Մողոքայ . զոր ո՛չ պատուիրեցի նոցա . և ո՛չ անկաւ ՚ի սիրտ իմ առնել նոցա զպղծութիւնն զայն առ ՚ի յանցուցանելոյ զՅուդայ* :³⁶ Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի , վասն քաղաքիդ այդորիկ՝ զորմէ դու ասացեր թէ մատնեցաւ ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց , ՚ի սուր՝ և ՚ի սով՝ և ՚ի գերութիւն* :³⁷ Ահա ես ժողովեցից զնոսա յամենայն երկրէ , ուր ցրուեցից զնոսա անդր բարկութեամբ և սրտմտութեամբ իմով , և ցասմամբ մեծաւ . և դարձուցից զնոսա ՚ի տեղիս յայս , և նստուցից զնոսա յուսով* .³⁸ և եղիցին ինձ ՚ի ժողովուրդ , և ես եղէց նոցա յԱստուած .³⁹ և տաց նոցա սիրտ այլ , և ճանապարհ մի՝ երկնչել յինէն զամենայն աւուրս ՚ի բարութիւն իւրեանց , և որդւոց իւրեանց

* *Ոմանք* . Տալ սոցա զերկիր :

* *Բազումք* . Եւ արարին պատահել :

* *Ոմանք* . Վասն այնորիկ այսպէս ասէ... և առցեն զդա :

* *Ոմանք* . Ի բարկութիւն իմ և ՚ի սրտմտութիւն էր... յօր օրէ շինեցին :

* *Ոմանք* . Եւ արք Յուդայ , և :

* *Ոսկան զբան վերոգրեալ համարոյն աստ մուծանէ* . Զթիկունս մարգարէք իւրեանց , և ոչ զե՛ :

* *Ոմանք* . Յորոյ վերայ կոչեցաւ անուն իմ :

* *Օրհնակ մի* . Մատուցանել զորդիս և զգստերս :

* *Ոմանք* . Թէ մատնեսցի ՚ի ձեռս :

* *Բազումք* . Ուր ցրուեցի զնոսա անդր :

յետ նոցա*։ ⁴⁰Եւ ուխտեցից նոցա ուխտ յաւիտեանական, զոր ոչ դարձուցից յետս առնել նոցա բարի. և զերկելոյ իմ տաց ՚ի սիրտս նոցա առ ՚ի չապստամբելոյ նոցա յինէն։ ⁴¹Եւ այց արարից բարի առնել նոցա. և տնկեցից զնոսա յերկրիս յայսմիկ հաւատովք, ամենայն սրտիւ իմով և ամենայն անձամբ իմով։ ⁴²Ձի այսպէս ասէ Տէր. Որպէս ածի ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ զամենայն չարիս մեծամեծս. նոյնպէս ածից ՚ի վերայ դոցա բարիս՝ զոր խօսեցայ ՚ի վերայ դոցա։ ⁴³Եւ ստասցին միւսանգամ ագարակս յերկրիս յայսմիկ, զորմէ դուդ ասացեր թէ անապատ է ՚ի մարդոյ և յանասնոյ, և մատնեցան ՚ի ձեռս Քաղդեացւոցն*։ ⁴⁴Եւ ստասցին ագարակս արծաթոյ, և գրեսցեն մուրհակս. և կնքեսցես, և կացուսցես վկայս յերկրին Բենիամինի՝ և շուրջ գերուսաղեմաւ. և ՚ի քաղաքս Յուդայ, և ՚ի քաղաքս լերինն, և ՚ի քաղաքս Սեփելայ, և ՚ի քաղաքս Նագեբայ. զի դարձուցից զգերութիւնս նոցա՝ ասէ Տէր*։

33

Գլուխ ԼԳ

¹Եւ եղև բա՛ն Տեառն առ Երեմիա երկրորդ անգամ. և նա՝ կա՛յր տակաւին կապեալ ՚ի սրահի բանտին՝ և ասէ. ²Այսպէս ասէ Տէր՝ որ արար զերկիրդ և ստեղծ գդա՝ կանգնել գդա. Տէր անուն է նորա. ³Կարդա՛ առ իս, և տա՛ց քեզ պատասխանի, և պատմեցից քեզ մեծամեծս և զօրաւորս՝ զոր ոչ գիտիցես։ ⁴Ձի այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. վասն տանց քաղաքիդ այդորիկ, և վասն ապարանից արքայիդ Յուդայ, քակելոց է ՚ի մահարձանս՝ և ՚ի մարտկոցս* ⁵Եկելոցն մարտնչել ընդ Քաղդեացիս. և լնուլ զնոսա դիակամբք մարդկան, զորս հարի բարկութեամբ իմով և սրտմտութեամբ, և դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ վասն ամենայն չարութեանց նոցա*։ ⁶Ահաւասիկ ես ածից զսպիսն ՚ի բժշկութիւն, և բժշկեցից զնոսա, և յայտնեցից նոցա զհնչիւն խաղաղութեան և զհաւատս։ ⁷Եւ դարձուցից զգերութիւնն Յուդայ և զգերութիւնն Երուսաղեմի. և շինեցից զնոսա իբրև զառաջինն։ ⁸Եւ սրբեցից զնոսա յամենայն անիրաւութեանց իւրեանց՝ զոր անիրաւեցան յիս. և ոչ ևս յիշեցից զմեղս նոցա զոր մեղան առ իս՝ և ապստամբեցան յինէն*։ ⁹Եւ եղիցին ինձ յուրախութիւն և յօրինութիւն՝ և ՚ի մեծարանս առաջի ամենայն ժողովրդոց երկրի, որք լսիցեն զամենայն բարութիւնս՝ զոր ես արարից դոցա. և երկիցեն՝ և դառնայցեն ՚ի վերայ ամենայն բարութեանցն, և ՚ի վերայ ամենայն խաղաղութեանցն զոր ես արարից դոցա*։ ¹⁰Այսպէս ասէ Տէր. Դարձեալ լուիցի ՚ի տեղուջդ յայդմիկ՝ զորմէ դուքդ ասէք թէ աներակ է ՚ի մարդոյ և յանասնոյ, ՚ի քաղաքս Յուդայ և արտաքոյ Երուսաղեմի յաւերակսն, առ ՚ի չգոյէ մարդկան, և առ ՚ի չգոյէ բնակչաց, և առ ՚ի

* *Ոմանք.* Աւուրս ՚ի բարութեան իւրեանց։

* *Բազումք.* Ագարակս յերկրիդ յայդմիկ։

* *Ոմանք.* Եւ գրեսցես մուրհակս։ *Ի լուս.* Եւ կնքեսցեն և կացուսցեն. *համաձայն ոմանց ՚ի բն.*։

* *Ոմանք.* Արքային Յուդայ. քակելոց ՚ի մահարձանս։

* *Օրինակ մի.* Մարտնչել ընդ քաղաքացիս, և լն՛։ *Ոմանք.* Եւ դարձուցի զերեսս իմ... չարութեան նոցա։

* *Ոմանք.* Յամենայն անիրաւութեանց նոցա։

* *Ոմանք.* Եւ դառնացին ՚ի վերայ ամենայն բար՛։

չգոյէ անասնոց* .¹¹ ձայն ուրախութեան, և ձայն ցնծութեան. ձայն փեսայի, և ձայն հարսին. որք ասիցեն. Գոհացարո՛ւք զՏեառնէ՛ ամենակալէ՛ զի քա՛ղցր է զի յաւիտեան է ողորմ նորա. բերցեն պատարագս օրհնութեան ՚ի տուն Տեառն. զի դարձուցից զգերութիւն երկրիդ այդորիկ՝ ըստ առաջնոյն՝ ասէ Տէր: ¹²Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Դարձեալ եղիցի յաւերակ տեղւոջդ առ ՚ի չգոյէ մարդոյ և անասնոյ, և յամենայն քաղաքս դորա վանք հովուաց, և մակաղատեղք խաշանց* ¹³ի քաղաքս լեռնականս, և ՚ի քաղաքս Սեփեղայ, և ՚ի քաղաքս Նագեբայ, և յերկրին Բենիամինի, և շուրջ գերուսաղեմաւ, և ՚ի քաղաքս Յուդայ. դարձեալ անցանիցեն խաշինք ընդ ձեռն թուղի՝ ասէ Տէր* : ¹⁴Ահա աւուրք գան ասէ Տէր, և հաստատեցի՛ց զբանս իմ բարի զոր խօսեցայ ՚ի վերայ տանդ Իսրայէլի, և ՚ի վերայ տանդ Յուդայ* : ¹⁵Յաւուրս յայնոսիկ՝ և ՚ի ժամանակին յայնմիկ ծագեցից Դաւթի ծագունն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն յերկրի* : ¹⁶Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի Յուդա, և երուսաղէմ բնակեսցէ յուսով. և այս է անուն՝ զոր կոչեսցէ նմա Տէր. արդարութիւն մեր* : ¹⁷Ձի այսպէս ասէ Տէր. Մի՛ պակասեսցէ Դաւթի այր՝ որ նստիցի յաթոռ տանն Իսրայէլի. ¹⁸և քահանայիցն Ղևտացոց՝ մի՛ պակասեսցէ այր յերեսաց իմոց՝ մատուցանել ողջակէզս, և զոհել զոհս, և արկանել խունկս զամենայն աւուրս: ¹⁹Եւ եղև բան Տեառն առ Երեմիա մարգարէ՛ և ասէ. ²⁰Այսպէս ասէ Տէր. Եթէ խափանիցէք զուխտ իմ զտուրնջեան, և զուխտ իմ զգիշերոյ. զի մի՛ լինիցի տիւ և գիշեր ՚ի ժամանակի իւրեանց, ²¹ապա և ուխտն իմ որ ընդ Դաւթի ծառայի՛ իմոյ է՝ խափանեսցի, չլինել նմա որդի որ թագաւորեսցէ յաթոռ նորա, և ՚ի քահանայիցն Ղևտացոց պաշտօնէից իմոց* : ²²Ձոր օրինակ ո՛չ թուին զօրութիւնք երկնից, և ո՛չ չափի աւազ ծովու. նոյնպէս բազմացուցից զգաւակն Դաւթի ծառայի իմոյ, և զՂևտացիսն զպաշտօնեայս իմ: ²³Եւ եղև բան Տեառն առ Երեմիա՝ և ասէ. ²⁴Ո՞չ տեսանես զինչ խօսի ժողովուրդդ՝ և ասեն. Եթէ զագս զերկուս զոր ընտրեաց Աստուած՝ մերժեա՛ց զնոսա. և զժողովուրդն իմ զայրացուցանեն չլինել միւսանգամ յազգ առաջի նոցա* : ²⁵Այսպէս ասէ Տէր. Եթէ զուխտ իմ զտուրնջեան և զգիշերոյ՝ և զերկնից և զերկրի հաստատութեամբ ո՛չ կարգեցի. ²⁶ապա և զգաւակն Յակովբայ և զԴաւթի ծառայի իմոյ՝ անարգեցից, չառնուլ ՚ի գաւակէ նորա իշխան ՚ի վերայ գաւակին Աբրահամու և Սահակայ և Յակովբայ. զի դարձուցի՛ց զդարձ նոցա և զթացայ՛ց ՚ի նոսա:

34

Գլուխ ԼԴ

ԼԷ ¹Բանն որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ: Ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց. և ամենայն զօրականն, և ամենայն երկիր որ ընդ իշխանութեամբ

* Ոմանք. Եւ առ ՚ի չգոյէ անասնոյ:

* Ոմանք. եղիցի ՚ի յաւերակ տեղ՛:

* Ոմանք. Եւ յերկրին Բենիամինի, և որ շուրջ գերուսաղեմաւ, ՚ի քաղաքս:

* Բազումք. խօսեցայ ՚ի վերայ տանն Իսրայէլի:

* Օրինակ մի. Եւ ՚ի ժամուն յայնմիկ ծագե՛:

* Ոմանք. Ձոր կոչեսցէ դմա Տէր:

* Բազումք. Եւ քահանայիցն Ղևտացոց:

* Ոսկան. Ձորս ընտրեաց Տէր. մեր՛:

ձեռին նորա, և ամենայն ազգք, մարտնչէին ընդ Երուսաղէմի, և ընդ ամենայն քաղաքսն Յուդայ: Եւ ասէ՛. ²Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Երթ առ Սեղեկիա արքայ Յուդայ, և ասասցես ցնա. Այսպէս ասէ Տէր. Մատնելով մատնեսցի՛ քաղաքդ այդ՝ ՚ի ձեռս արքային Բաբելացւոց. և առցէ՛ զդա, և այրեսցէ՛ զդա հրով. ³և դու՝ ո՛չ ապրեսցիս ՚ի ձեռաց նորա. այլ ըմբռնելով ըմբռնեսցիս, և ՚ի ձեռս նորա մատնեսցիս, և այք քո զաչս նորա տեսցեն, և բերան ՚ի բերան խօսեսցիս ընդ նմա. և ՚ի Բաբելովն երթիցես: ⁴Արդ լուր զպատգամս Տեառն՝ Սեղեկիա՛ արքայ Յուդայ. Այսպէս ասէ Տէր վասն քո. Ո՛չ մեռցիս սրով՛, ⁵այլ խաղաղութեամբ մեռանիցիս. և որպէս լացին զհարսն քո զթագաւորսն առաջինս, որ եղեն յառաջ քան զձեզ, նոյնպէս լացցեն և զքեզ, թէ վայ՛ վայ՛ տէր, և կոծեսցին զքեզ. զի մեծամեծս խօսեցայ՝ ասէ Տէր՛: ⁶Եւ խօսեցաւ Երեմիա մարգարէ առ Սեղեկիա արքայ Յուդայ զամենայն զբանս զայսոսիկ յերուսաղէմ: ⁷Եւ զօր թագաւորին Բաբելացւոց մարտնչէր ընդ Երուսաղէմի, և ընդ ամենայն քաղաքսն Յուդայ ընդ մնացեալսն, ընդ Լաքիսայ՝ և ընդ Ազեկայ. զի նոքա մնացեալ էին ՚ի քաղաքացն՝ Յուդայ քաղաքք ամուրք: ⁸Բանն որ եղև առ Երեմիա ՚ի Տեառնէ, յետ կատարելոյ Սեղեկիայ արքայի զուխտն ընդ ամենայն ժողովրդեանն որ յերուսաղէմ. կոչել՛ նոցա թողութիւն, ⁹արձակել՛ իւրաքանչիւր ումէք զժառայ իւր, և իւրաքանչիւր զաղախին, զայր Եբրայեցի, և զկին Եբրայեցի ազատս. և մի՛ ծառայել ամենայն առն յազգէ Յուդայ՝ եղբօր իւրում: ¹⁰Եւ դարձան ամենայն մեծամեծք՝ և ամենայն ժողովուրդն որ մտեալ էին յուխտ՝ արձակել իւրաքանչիւր զժառայ իւր, և իւրաքանչիւր զաղախին իւր, զայր Եբրայեցի և զկին Եբրայեցի ազատս, և ո՛չ ևս ծառայել նոցա: Լուան և արձակեցին. ¹¹և յետոյ դարձան, և դարձուցին անդրէն զժառայս և զաղախնայս, զորս արձակեցին ազատս. և կալան զնոսա ՚ի ծառայս և յաղախնայս: ¹²Եւ եղև բան Տեառն առ Երեմիա ՚ի Տեառնէ՝ և ասէ. ¹³Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Ես եդի ուխտ ընդ հարսն ձեր՝ յաւուր յորում փրկեցի զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ ՚ի տանէ ծառայութեան, և ասեմ. ¹⁴Թէ՛ յորժամ վեց ամ լցցի, արձակեսցես զեղբայրն քո զԵբրայեցի՝ որ վաճառեսցի քեզ. և զորձեսցէ քեզ զվեց ամ, և արձակեսցես զնա ազատս ՚ի քէն. և ո՛չ լուան ինձ հարքն ձեր, և ո՛չ խոնարհեցուցին զունկն իւրեանց՛: ¹⁵Եւ դարձան այսօր առնել զհաճոյս առաջի աչաց իմոց, կոչել իւրաքանչիւր թողութիւն ընկերի իւրում. և կատարեցին զուխտն առաջի իմ ՚ի տանն յորոյ վերայ կոչեալ է անուն իմ՛: ¹⁶Եւ շրջեցէք և պղծեցէք զանուն իմ, դառնալ իւրաքանչիւր ՚ի ծառայ իւր, և իւրաքանչիւր յաղախին իւր, զորս արձակեցէք ազատս ոգւոց ձերոց. և դարձուցէք զնոսա լինել ձեզ ՚ի ծառայս և յաղախնայս՛: ¹⁷Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր. Դուք ո՛չ լուարուք ինձ կոչել արձակուրդ իւրաքանչիւր եղբօր իւրում, և իւրաքանչիւր մերձաւորի՛ իւրում. ահաւասիկ ես կոչեցից ձեզ արձակուրդ՝ ասէ Տէր, ՚ի սուր՝ և ՚ի սով՝ և ՚ի մահ՛. ¹⁸և տաց զձեզ ՚ի

* Ոսկան. Եւ ամենայն զօր նորա. և ամենայն եր՛: Բազումք. Մարտնչել ընդ Երուսաղէմի:

* Բազումք. Այլ լուր զպատգամ:

* Ոմանք. Որ եղեն յառաջագոյն զքեզ... խօսեցայ ես՝ ասէ Տէր:

* Բազումք. Եւ մի՛ ծառայել առն յազ՛:

* Ոսկան. Թէ՛ յորժամ եօթն ամ լցցի: Ոմանք. Որ վաճառիցի քեզ... զնա ազատ ՚ի քէն:

* Ոմանք. Յորոյ վերայ կոչեցեալ է. կամ՝ կոչեցաւ անուն իմ:

* Ոսկան. Ազատս հոգոց ձերոց:

* Յօրինակին պակասէր. Կոչեցից ձեզ արձակուրդ: Ուր ոմանք. կոչեցից զձեզ արձա՛:

ցրումն ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի. և տա՛ց զարսդ որ անցին զուխտիւ իմով, և ո՛չ կացին ՚ի բանս ուխտի իմոյ զոր արարին առաջի իմ. զորթն զոր կտրեցին, և անցին ընդ մէջ յօշուածոյն նորա՝ զիշխանս Յուդայ՝¹⁹ և զիշխանս Երուսաղեմի, և զներքինիս, և զքահանայս. և զամենայն ժողովուրդ երկրին՝ որ անցին ընդ մէջ յօշուածոյ որթուն: ²⁰Տա՛ց զնոսա ՚ի ձեռս թշնամեաց նոցա, և ՚ի ձեռս խնդրողաց անձանց նոցա. և արկից զդիակունս նոցա կերակուր թռչնոց երկնից՝ և զազանա՛ց երկրի՝: ²¹Եւ զՍեդեկիա արքայ Յրեաստանի՝ և զիշխանս նորա տա՛ց ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց, և ՚ի ձեռս խնդրողաց անձանց նոցա, և ՚ի ձեռս զօրու արքային Բաբելացոց, որ եկեալ հասեալ են ՚ի վերայ նոցա: ²²Ահաւասիկ ես հրաման տաց՝ ասէ Տէր, և դարձուցից զնոսա այդրէն ՚ի քաղաքդ. մարտիցեն ընդ դմա, և առցեն զդա, և այրեսցեն զդա հրով. և զքաղաքսն Յուդայ տա՛ց յանապատ ՚ի բնակչաց իւրեանց՝:

35

Գլուխ ԼԵ

¹Բանն որ եղև՝ առ Երեմիա ՚ի Տեառնէ՝ յաւուրս Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ՝ և ասէ. ²Երթ ՚ի տուն Ռաքաբիմայ, և կոչեա՛ զնոսա՝ և ածցես ՚ի տուն Տեառն ՚ի մի ՚ի սրահից անտի, և արքուսցես նոցա զինի՛: ³Եւ ածի զՅեքոնիա որդի Երեմայ որդւոյ Քարասիմեայ, և զեղբարս նորա, և զամենայն որդիս նորա. և զամենայն տուն Ռաքաբիմայ՝ ⁴ածի ՚ի տուն Տեառն, ՚ի դահլիճ որդւոյն Անանայ որդւոյ Գոդոդեայ առն Աստուծոյ. որ էր մերձ ՚ի տուն իշխանացն, ՚ի վերայ ապարանիցն Մայասայ՝ որդւոյ Սելուվմայ վտառապահի՛: ⁵Եւ եդի առաջի որդւոցն Ռաքաբիմայ աման մի լի զինուով՝ և բաժակս. և ասեն ցնոսա. Արբէք զինի այտի՛: ⁶Եւ ասեն. Ո՛չ արբցուք զինի. զի Յովնադաբ որդի Ռեքեբայ հայր մեր պատուիրեաց մեզ՝ և ասէ. Մի՛ ընպիցէք զինի դուք՝ և որդիքն ձեր մինչև ցյաւիտեան՝. ⁷և մի՛ շինիցէք տունս, և մի՛ սերմանիցէք սերմանս, և մի՛ տնկէք այգիս. այլ ՚ի վրանս բնակիցէք զամենայն աւուրս ձեր, զի կայցէք աւուրս բազունս յերկրիդ յորում շրջիցիք դուք ՚ի դմա՛: ⁸Եւ լուա՛ք բարբառոյ Յովնադաբայ որդւոյ Ռեքեբայ հօր մերում՝ ըստ ամենայնի զոր պատուիրեաց մեզ չընպել զինի զամենայն աւուրս մեր. մեք՝ և կանայք մեր՝ և ուստերք և դստերք մեր՝. ⁹և ո՛չ շինել տունս՝ և ո՛չ բնակել ՚ի նոսա. և այգիք՝ և անդք՝ և սերմանիք ո՛չ եղեն մեր՝. ¹⁰և բնակեցաք վրանօք. և լուաք և արարաք ըստ

* *Ոմանք.* Յօշուածոց նորա. (19) զիշխանսն Երուսաղեմի, և զներ՛:
 * *Ոմանք.* ՚ի ձեռս թշնամեաց իւրե՛:
 * *Ոմանք.* Եւ դարձուցից զնոսա անդրէն... և զքաղաքն Յուդայ տաց:
 * *Ոսկան.* ՚ի տուն Ռեքաբիմայ:
 * *Ոմանք.* Ջորդի Երեմիայի որդւոյ Քարասիմայ:
 * *Ոմանք.* ՚ի դահլիճ որդւոցն... ապարանիցն Մասսիայ:
 * *Անունս.* Ռեքեբայ, *յօրինակին այլ և այլ եղանակաւ գրեալ էր.* Ռեքեբայ. *կամ.* Ռեքաբայ. *և կամ* Ռաքեբայ. *զոր մեք յամենայնի միապէս եղաք:*
 * *Ոսկան.* Եւ մի՛ սերմանիցէք սերմանիս: *Ոմանք.* Եւ մի՛ տնկիցէք այգիս... բնակեցէք զամենայն աւ՛... զի կեցցէք աւ՛:
 * *Յայլս պակասի.* Եւ լուաք *բարբառոյ Յովնա՛:* *Ոմանք.* Եւ ուստերք մեր և դս՛:
 * *Բազունք.* Այլ և այգիք և անդք:

ամենայնի՝ զոր պատուիրեաց մեզ Յովնադաբ հայր մեր: ¹¹Եւ եղև իբրև ել Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց յերկիրս յայս՝ ասացաք. Ելցուք և մտցուք յերուսաղէմ, յերեսաց զօրուն Քաղդէացոց, և յերեսաց զօրուն Ասորեստանեայց, և բնակեսցուք անդ: ¹²Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹³Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի. Երթ և ասա՛ ցարս Յուդայ՝ և ցքնակիչս Երուսաղէմի. Ո՞չ առնուցուք խրատ լսել բանից իմոց՝ ասէ Տէր*:

¹⁴Կացին՝ ի բանի՛ որդիքն Յովնադաբայ որդւոյ Ռեքեբայ զոր պատուիրեաց որդւոց իւրոց, չըմպել գինի, և ո՛չ արբին մինչև ցա՛յսօր. զի լուան պատուիրանի հօրն իւրեանց: Եւ ես խօսեցայ՝ ընդ ձեզ կանխաւ, և ո՛չ լուարուք ինձ: ¹⁵Եւ առաքեցի առ ձեզ զամենայն ծառայս իմ զմարգարէս կանխեալ և առաքեալ բան. Դարձարուք իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրմէ չարէ, և լաւագոյնս արարէք զիրս ձեր. և մի՛ երթայք զհետ աստուածոց օտարաց ծառայել նոցա. և բնակիցէք յերկրիդ զոր ետու ձեզ և հարցն ձերոց. և ո՛չ խոնարհեցուցէք զունկն ձեր, և ո՛չ լուարուք ինձ*:

¹⁶Եւ կացուցին որդիքն Յովնադաբայ որդւոյ Ռեքեբայ զպատուէր հօրն իւրեանց զոր պատուիրեաց նոցա. և ժողովորդդ այդ ո՛չ լուան ինձ*:

¹⁷Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւադիկ ես ածից՝ ի վերայ Յուդայ՝ և ՚ի վերայ ամենայն բնակչաց Երուսաղէմի զամենայն չարիս զոր խօսեցայ՝ ՚ի վերայ նոցա. փոխանակ զի խօսեցայ առ նոսա՝ և ո՛չ լուան. կոչեցի զնոսա՝ և ո՛չ ետուն ինձ պատասխանի*:

¹⁸Եւ առ տուն Ռեքեբայ ասաց Երեմիա. Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Փոխանակ զի լուան որդիք Յովնադաբայ որդւոյ Ռեքեբայ պատուիրանի հօր իւրեանց. և պահեցին զամենայն հրամանս նորա, առնել ըստ ամենայնի զոր պատուիրեաց նոցա հայրն իւրեանց: ¹⁹Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Մի՛ պակասեսցէ այր յորդւոցն Յովնադաբայ որդւոյ Ռեքեբայ յանդիման կալ առաջի իմ զամենայն աւուրս երկրիդ*:

36

Գլուխ ԼԶ

ԼԸ ¹Եւ յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ, եղև բան Տեառն առ իս՝ և ասէ*.

²Ա՛ռ դու քեզ քարտէս մատենի, և գրեա՛ ՚ի նմա զամենայն զբանս՝ զոր հրաման ետու քեզ ՚ի վերայ Իսրայէլի, և ՚ի վերայ Յուդայ, և ՚ի վերայ ամենայն ազգաց՝ յօրէ յօրմէ խօսեցայ ես ընդ քեզ՝ յաւուրցն Յովսիայ արքայի Յուդայ և մինչև ցա՛յսօր. ³Յերևս լուիցեն տունն Յուդայ զամենայն չարիս, զոր խորհեալ եմ ես առնել նոցա. զի դարձցին իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրմէ չարէ. և քաւի՛չ եղէց անօրէնութեանց նոցա և մեղաց նոցա*:

* Ոմանք. Եւ ասա՛ ցայր Յու՛:

* Ոսկան. Եւ լաւագոյնս արարէք զսիրտս ձեր: Ոմանք. Եւ բնակեցէք յերկրիդ... և խոնարհեցուցէք զունկն ձեր:

* Ոսկան. Այդ ոչ լուաւ ինձ:

* Ոմանք. Ահաւասիկ ես ածից... և կոչեցի զնոսա:

* Ոմանք. Ռեքեբայ յանդիմանակաց. կամ՝ յանդիմանակաց առաջի իմ:

* Ոմանք. Յաւուրսն Յովսիայ արքայի Յուդայ մինչև:

* Ոմանք. Անիրաւութեան և մեղաց նոցա:

⁴Եւ կոչեաց Երեմիա զԲարուք որդի Ներեայ. և գրեաց Բարուք ՚ի բերանոյ Երեմիայի զամենայն զբանս Տեառն՝ զոր հրաման ետ նմա ՚ի քարտիսի մատենին: ⁵Եւ պատուիրեաց Երեմիա Բարուքայ և ասէ. Ես ՚ի կալանս եմ, և ո՛չ կարեմ մտանել ՚ի տուն Տեառն*.⁶ և դու մտցես և ընթերցցիս ՚ի մատենեդ՝ զոր գրեցեր ՚ի բերանոյ իմոյ զբանս Տեառն յականջս ժողովրդեանն ՚ի տան Տեառն յաւուր պահոց. և յականջս ամենայն Յուդայ որ մտանեն ՚ի քաղաքաց իւրեանց՝ ընթերցցիս*:⁷ Թերևս անկցի գութ ՚ի սիրտ նոցա առաջի Տեառն, և դարձցին իւրաքանչիւր ՚ի ճանապարհաց իւրեանց չարաց. զի մե՛ծ է սրտմտութիւն և բարկութիւն Տեառն, զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ*:⁸ Եւ արա՛ր Բարուք որդի Ներեայ ըստ ամենայնի՝ զոր պատուիրեաց նմա Երեմիա մարգարէ, ընթերցանել ՚ի մատենէն զպատգամս Տեառն ՚ի տան Տեառն*:⁹ Եւ եղև յամին հինգերորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ՝ յամսեանն իններորդի, ժողովեցաւ ՚ի պահս առաջի Տեառն, ամենայն ժողովուրդն Երուսաղէմի, և ամենայն ժողովուրդն որ գային ՚ի քաղաքացն Յուդայ յԵրուսաղէմ, և տունն Յուդայ*:¹⁰ Եւ ընթերցաւ Բարուք ՚ի մատենէն զբանս Երեմիայի ՚ի տան Տեառն, ՚ի սրահին Գամարեայ որդւոյ Սափանեայ դպրապետի, ՚ի մուտս նորոյ դրանն տան Տեառն՝ յականջս ամենայն ժողովրդեանն:¹¹ Եւ իբրև լուաւ Միքիա որդի Գամարեայ որդւոյ Սափանեայ զամենայն պատգամս Տեառն ՚ի մատենէ անտի,¹² էջ ՚ի տուն թագաւորին ՚ի դիւան դպրապետին. և անդ նստէին ամենայն իշխանքն. Ելիսամա դպրապետ, և Գադիա որդի Սամեի, և Եղնաթան որդի Աքոբովրայ, և Գամարիա որդի Սափանեայ, և Սեդեկիա որդի Անանիայ, և ամենայն իշխանքն*:¹³ Եւ պատմեաց նոցա Միքիայ զամենայն զբանս զոր լուաւ յընթեռնուլ Բարուքայ ՚ի մատենէ անտի յականջս ամենայն ժողովրդեանն*:¹⁴ Եւ առաքեցին ամենայն իշխանքն առ Բարուք զՅուդի որդի Նաթանայ որդւոյ Սելովմայ որդւոյ Քուսեայ և ասեն. Չմատեանն զոր ընթեռնուիր յականջս ժողովրդեանն, ա՛ռ ՚ի ձեռս քո և ե՛կ այսր: Եւ ա՛ռ Բարուք որդի Ներեայ զմատեանն ՚ի ձեռս իւր՝ և է՛ջ առ նոսա*.¹⁵ և ասեն ցնա. Աղէ՛ դարձեալ ընթերցի՛ր յականջս մեր: Եւ ընթերցաւ Բարուք յականջս նոցա:¹⁶ Եւ եղև իբրև լուան զամենայն զպատգամսն, խորհեցան իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում և ասեն ցԲարուք. Պատմելով պատմեսցո՛ւք արքայի զամենայն զբանսդ զայդոսիկ*:¹⁷ Չարցին ցԲարուք և ասեն. Աղէ՛ պատմեա՛ մեզ, ուստի՞ գրեցեր զամենայն զբանսդ զայդոսիկ՝ յո՞յր բերանոյ: ¹⁸ Եւ ասէ ցնոսա Բարուք. Ի բերանոյ Երեմիայի. նա՛ պատմեաց ինձ զամենայն զբանս զայսոսիկ, և ես գրեցի ՚ի մատենիդ սևակաւ*:¹⁹ Եւ ասեն իշխանքն ցԲարուք. Ե՛րթ թաքի՛ր՝

* *Յօրինակին.* Երեմա Բարուքայ:

* *Ոմանք.* Յաւուրս պահոց:

* *Ոմանք.* ՚ի վերայ ժողովրդեանդ այդմիկ:

* *Ոսկան.* Ընթեռնուլ ՚ի մատենէն զպատգամս:

* *Օրինակ մի.* Ժողովեցաւ ՚ի սրահն առաջի Տեառն... յԵրուսաղէմ և ՚ի տունն Յուդայ:

Ոսկան. Ժողովուրդն յԵրուսաղէմ:

* *Ոմանք.* Եղիսամ դպրապետ... և Նաթան որդի Աքոբո՛ւ:

* *Ոմանք.* Պատմեաց նորա Միքէ զամենայն բանս... յականջս ժողովր՛:

* *Ոմանք.* Նաթանայ որդւոյ Սեմելեայ:

* *Ոմանք.* Չամենայն զպատգամս Տեառն:

* *Բազումք.* Գրեցի ՚ի մատենիս սևակաւ:

դո՛ւ և Երեմիա, և մի՛ ոք գիտասցէ թէ ո՛ւր իցէք*։ ²⁰Եւ մտին առ արքայ ՚ի սրահ անդր. և զմատեանն ետուն պահել ՚ի տան Ելիսամայ դպրապետի, և պատմեցին արքայի զամենայն զբանսն։ ²¹Եւ առաքեաց արքայն զՅուդի առնուլ զմատեանն. և ա՛ն զայն ՚ի տանէ Ելիսամայ դպրապետի, և ընթերցաւ Յուդի յականջս թագաւորին, և յականջս ամենայն իշխանացն որ կային շուրջ թագաւորան։ ²²Եւ թագաւորն նստէր ՚ի ձմերատանն յամսեանն իններորդի, և կրակարան հրոյ առաջի նորա։ ²³Եւ եղև իբրև ընթերցաւ Յուդի երիս էջս՝ կամ չորս. և կտրեա՛ց զայն զմելինաւ դպրապետին. և ընկեց ՚ի կրակն որ կայր ՚ի վերայ կրակարանին, մինչև սպառեցաւ ամենայն քարտեսն ՚ի հուր կրակարանին*։ ²⁴Եւ ո՛չ խնդրեցին, և ո՛չ պատառեցին զպատմուճանս իւրեանց թագաւորն և ամենայն ծառայք իւր որք լուան զամենայն զբանսն զայնոսիկ։ ²⁵Եւ Եղնաթան, և Գաղեա, և Գամարիա՝ եղին ՚ի մտի՛ արքայի՝ չայրել զքարտեսն. և ո՛չ անսաց նոցա*։ ²⁶Եւ հրաման ետ արքայ Յերեմիելի որդւոյ արքայի, և Սարեայ որդւոյ Եսրիելի, և Սեմելիայ որդւոյ Աբդիելի, ունել զԲարուք դպրապետ՝ և զԵրեմիա մարգարէ. և նոքա չոգան թաքեան*։ ²⁷Եւ եղև բան Տեառն առ Երեմիա յե՛տ այրելոյ թագաւորին զքարտեսն, և զամենայն բանս զոր գրեաց Բարուք ՚ի բերանոյ Երեմիայի։ ²⁸Եւ ասէ դարձեալ. Ա՛ն դու ա՛յլ քարտես՝ և գրեա՛ ՚ի նմա զամենայն զբանսն զառաջինս՝ որ էին յառաջնում քարտիսին, զոր այրեաց Յովակիմ արքայ Յուդայ*։ ²⁹Եւ ցՅովակիմ արքայ Յուդայ ասասցես՝. Ա՛յսպէս ասէ Տէր. Դու՛ այրեցեր զմատեանն զայն և ասացեր, թէ ընդէ՞ր գրեցեր ՚ի նմա՝ և ասացեր. Մտանելով մտցէ՛ արքայն Բաբելացւոց. և ջնջելով ջնջեսցէ՛ զերկիրդ զայդ. պակաս արասցէ ՚ի դմանէ զմարդ և զանասուն*։ ³⁰Վասն այսորիկ ա՛յսպէս ասէ Տէր ՚ի վերայ Յովակիմայ արքայի Յուդայ. Մի՛ մնասցէ նորա որ նստցի յաթոռն Դաւթի, և դիակունք նորա եղիցին անկեալ ՚ի տուէ ՚ի տօթի, և զհշերի ՚ի ցուրտ*։ ³¹և այց արարից ՚ի վերայ նորա, և ՚ի վերայ ազգի նորա, և ՚ի վերայ ծառայից նորա՝ ըստ անօրէնութեանց նորա. և ածից ՚ի վերայ նոցա՝ և ՚ի վերայ բնակչաց Երուսաղեմի և ՚ի վերայ երկրիդ Յուդայ զամենայն չարիս զոր խօսեցայ ՚ի վերայ դոցա, և ո՛չ լուան։ ³²Եւ ա՛ն Երեմիա ա՛յլ քարտես՝ և ետ ցԲարուք որդի Ներեայ ցդպրապետ. և գրեաց ՚ի նմա ՚ի բերանոյ Երեմիայի զամենայն բանս մատենին զոր այրեաց Յովակիմ արքայ Յուդայ ՚ի կրակի. և ա՛յլ ևս բանք յաւելան ՚ի նոյն առաւել՝ քան զայնս*։

37

Գլուխ ԼԵ

ԼԹ ¹Եւ թագաւորեաց Սեդեկիա որդի Յովակիայ փոխանակ Յեքոնիայ որդւոյ Յովակիմայ, զոր թագաւորեցոյց Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց՝

* *Ոմանք.* Եւ ոք մի՛ գիտասցէ:

* *Ոմանք.* Երիս կամ չորս էջս. կտրեաց զայն զմիլանաւ:

* *Ոմանք.* Եւ Գաղիա և Գամարիա:

* *Ոմանք.* Եւ Սելեմիայ որդւոյ Տաբդիելի, ունել:

* *Ոմանք.* Որ էր յառաջնում քար՝:

* *Յայլս պակասի.* Եւ ջնջելով ջնջեսցէ... և պակաս ա՛:

* *Ոմանք.* Վասն այդորիկ այսպէս... մի՛ մնասցէ նմա որ նս՛... և ՚ի զհշերի ՚ի ցրտոյ:

* *Ոմանք.* Որդի Ներեայ դպրապետն... յաւելան ՚ի նոյն աւելի քան զայնս:

թագաւորել ՚ի վերայ Յուդայ: ²Եւ ո՛չ լուաւ նա՝ և ծառայք իւր, և ժողովուրդ երկրին զբանս Տեառն՝ զոր խօսեցաւ ՚ի ձեռն Երեմիայի մարգարէի: ³Եւ առաքեաց արքայ Սեդեկիա զՅովաքազ զորդի Սելիմայ, և զՍոփոնիայ որդի Մայասեայ զքահանայս առ Երեմիա մարգարէ՝ և ասէ. Կա՛ց դու յաղօթս ՚ի վերայ մեր առ Տէր Աստուած մեր՝: ⁴Եւ Երեմիա անց ընդ մէջ ամբոխին՝ և եկն, և ո՛չ արկին զնա ՚ի բանտ: Եւ զօրն փարաւոնի ել յերկրէն Եգիպտացւոց. և լուան Քաղդէացիքն որոց պաշարեալ էր զԵրուսաղէմ զլուր նոցա՝ և ելին յԵրուսաղէմ: ⁵Եւ եղև բան Տեառն առ Երեմիա մարգարէ՝ և ասէ. ⁶Ա՛յսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Այսպէս ասասցի՞ք ցարքայն Յուդայ՝ որ առաքեացն զձեզ առ իս խնդրել զիս. Ահա զօրն փարաւովնի որ ել ձեզ յօգնականութիւն՝ դարձցի՛ անդրէն յեգիպտոս՝. ⁷և Քաղդէացիքն դարձցին այսրէն. և մարտիցեն ընդ քաղաքիս ընդ այսմիկ, և առցեն զսա, և այրեսցեն զսա հրով: ⁸Ա՛յսպէս ասէ Տէր. Մի՛ կարծէք յանձինս ձեր՝ թէ ելին զնացին Քաղդէացիքն ՚ի մէնջ. չեն թափելոց ՚ի ձէնջ. ⁹թէպէտ և զամենայն զօրն Քաղդէացւոց որ մարտնչէին ընդ ձեզ՝ կոտորիցէք, խոցքն որ մնայցեն ՚ի նոցանէ՝ յիւրաքանչիւր տեղուջէ յարիցեն և այրեսցեն հրով զքաղաքդ՝: ¹⁰Եւ եղև իբրև մերժեցաւ զօր Քաղդէացւոցն յԵրուսաղէմէ, յերեսաց զօրացն փարաւոնի՝, ¹¹ե՛լ Երեմիա յԵրուսաղէմէ երթալ յերկիրն Բենիամինի, զնե՛լ անդ բաժին ՚ի մէջ ժողովրդեանն՝. ¹²և եկն եհաս ՚ի դուռն Բենիամինի: Եւ անդ էր այր մի՝ առ ում մտեալ էր նորա, անուն Սարու որդի Սելեմեայ, որդւոյ Անանիայ. կալա՛ւ զԵրեմիա մարգարէ՝ և ասէ. Առ Քաղդէացի՞սն փախուցեալ երթաս՝: ¹³Եւ ասէ Երեմիա. Սո՛ւտ ասես, չերթամ փախուցեալ առ Քաղդէացիսն: Եւ ո՛չ անսաց նմա. և կալաւ Սարու զԵրեմիա, և ա՛ծ առ իշխանսն՝: ¹⁴Եւ զայրացան իշխանքն ՚ի վերայ Երեմիայի, զան հարին և ետուն զնա ՚ի տուն բանտի, յապարանս Յովնաթանու դպրապետի. քանզի զնորա՛ ապարանսն արարին բանտ: ¹⁵Եկն Երեմիա ՚ի տուն զբոյն յԱյերիմովքն, և նստաւ անդ Երեմիա զաւուրս բազումս՝: ¹⁶Առաքեաց արքայ Սեդեկիա՝ և կոչեաց զնա. և եհա՛րց զնա թագաւորն ՚ի տան իւրում ՚ի ծածուկ՝ և ասէ ցնա. Եթէ իցէ՞ ինչ պատգամ ՚ի Տեառնէ: Եւ ասէ Երեմիա. Այո՛, է՛: Եւ ասէ. Ի՞ ձեռս թագաւորին Բաբելացւոց մատնեսցիս: ¹⁷Եւ ասէ Երեմիա ցթագաւորն Սեդեկիա. Ձի՞նչ մեղայ քեզ՝ և ծառայից քոց՝ և ժողովրդեանն. զի տաս դու զիս ՚ի տո՛ւն բանտին. ¹⁸և ո՞ւր են մարգարէքն ձեր որ մարգարէանային և ասէին՝ թէ ոչ է զալոց արքայն Բաբելացւոց ՚ի վերայ ձեր յերկիրս յայս: ¹⁹Եւ արդ՝ լո՛ւր. աղաչեն տէ՛ր իմ արքայ, անկցի՛ ողորմ իմ առաջի քո. և ընդէ՞ր դարձուցանես զիս ՚ի տուն Յովնաթանայ դպրապետի. և անդ մեռանիցիմ: ²⁰Հրաման ետ արքայ Սեդեկիա, և արկին զնա ՚ի տուն բանտի. և տային նմա աւուրն նկանա՛կ մի հաց արտաքուստ ՚ի հացարանացն, մինչև հատա՛ւ ամենևին հաց ՚ի քաղաքէն. և

* *Ոմանք.* ՁՅովաքազ զորդի Սելեմիայ, և:

* *Յօրինակին.* Այսպէս ասասցիր ցարքայն Յու՛:

* *Ոմանք.* Որ մարտնչին. *կամ՝* մարտնչիցին ընդ ձեզ... որ մնացեն ՚ի: *Ոսկան.* խոցեալքն որ մնացեն:

* *Ոմանք.* Իբրև մերժեցաւ զօրն Քաղ՛:

* *Ոմանք.* Դնել անդ բաժին:

* *Ոմանք.* Առ որ. *կամ՝* առ որում մտեալ էր նորա... Սարու որդի Սեմելիայ:

* *Ոմանք.* Չերթամ փախստական առ:

* *Ոմանք.* Ի՛ տուն յԱյերիմովքն:

նստաւ Երեմիա ՚ի սրահի բանտին*:

38

Գլուխ ԼԸ

¹Եւ լուաւ Սափատիա որդի Մատթանայ, և Գողողիա որդի Պասքովրայ, և Յովաքազ որդի Սելեմիայ, և Պասքովր որդի Սելքեայ, զբանս Երեմիայի՝ զոր խօսէր առ ամենայն ժողովուրդն՝ և ասէր*։ ²Այսպէս ասէ Տէր. Որ նստի ՚ի քաղաքիս յայսմիկ՝ մեռցի՝ սրով և սովով և մահուամբ. և որ ելանէ առ Քաղդէացիսն՝ կեցցէ, և եղիցի նմա անձն իւր ՚ի գի՛ւտս, և կեցցէ: ³Ձի այսպէս ասէ Տէր. Մատնելով մատնեսցի քաղաքդ ՚ի ձեռս զօրու թագաւորին Բաբելացւոց, և առցեն զդա*։ ⁴Եւ ասեն իշխանքն ցթագաւորն. Սպանցի՛ այրն այն. զի այնու՛ լուծանէ նա զձեռս արանց պատերազմողաց մնացորդաց քաղաքիս այսորիկ, և զձեռս ամենայն ժողովրդեանդ, խօսել ընդ դոսա ըստ բանիցդ այրոցիկ. զի այրն այն ո՛չ օգտի և խաղաղութեան բանս խօսի ընդ ժողովրդեանն՝ այլ չարի*։ ⁵Եւ ասէ արքայ Սեդեկիա. Ահաւանիկ կայ ՚ի ձեռս ձեր. քանզի ոչ ինչ էր ձեռնհաս առ նոսա՝ և ո՛չ իւրք*։ ⁶Եւ առին զԵրեմիա, և ընկեցին զնա ՚ի գուբն Սելքեայ որդւոյ թագաւորին, որ էր ՚ի սրահի բանտին. և իջուցին զԵրեմիա պարանօք ՚ի գուբն. և ՚ի գբի անդ ջուր ո՛չ էր, այլ լոկ տի՛ղմ. և կայր Երեմիա ՚ի տղմին*։ ⁷Եւ լուաւ Աբդամելէք Եթովպացի՝ այր ներքինի, և ինքն էր յապարանս թագաւորին, թէ արկին զԵրեմիա ՚ի գուբն. և արքայ նստէր առ դրան Բենիամինի*։ ⁸Եւ առ նա Աբդամելէք յապարանից թագաւորին, և խօսեցաւ ընդ թագաւորին՝ և ասէ. ⁹Տէր արքայ՝ չարի՛ս գործեցին արքն այնոքիկ ըստ ամենայնի զոր արարին Երեմիայի մարգարէի, զի արկին զնա ՚ի գուբն, և մեռանի՛ ՚ի ներքս. չարի՛ս գործեցեր սպանանել զայրն Աստուծոյ յերեսաց սովոյս այսորիկ. զի ո՛չ գտանի հաց ՚ի քաղաքիս*։ ¹⁰Եւ հրամայեաց թագաւորն Աբդիմելէքայ Եթովպացւոյ՝ և ասէ. Ա՛ռ դու ընդ քեզ աստի արս երեսուն, և հանէ՛ք զմարգարէն ՚ի գբոյ անտի՝ զի մի՛ մեռցի: ¹¹Եւ առ Աբդիմելէք զարսն ընդ իւր, և եկն յապարանս թագաւորին ՚ի գետնափոր տուն գանձին. ա՛ռ անտի կապերտս հինս և պարանս հինս. և ընկէ՛ց զայն առ Երեմիա ՚ի գուբն*։ ¹²Եւ ասէ Աբդիմելէք Եթովպացի ցԵրեմիա. Դի՛ր զհին կապերտսդ և զբուրդսդ ընդ անթովք ձեռաց քոց ՚ի ներքոյ պարանացդ: Եւ արար Երեմիա այնպէս*։ ¹³Եւ ձգեցին զնա պարանօքն, և հանին զնա ՚ի գբոյ անտի. և նստաւ Երեմիա ՚ի սրահի՛ բանտին: ¹⁴Եւ առաքեաց արքայ Սեդեկիա, և կոչեաց առ ինքն զմարգարէն ՚ի տուն Ասսաղիսայն, որ էր ՚ի տան Տեառն. և ասէ ցնա արքայն.

* *Բազումք.* Նկանակ մի հաց ՚ի հացարարացն, մինչև:

* *Այլք.* Եւ Յովաքազ որդի Սելեմիայ, և:

* *Ոմանք.* Բաբելացւոց, և առցէ զդա:

* *Ոմանք.* Ընդ նոսա ըստ բանիցս ըստ այսոցիկ... ընդ ժողովրդեանն, այլ չարիս:

* *Ոմանք.* Ահաւասիկ կայ ՚ի ձեռս ձեր:

* *Ոմանք.* Որ է ՚ի սրահի բանտ:

* *Ոմանք.* Եւ լուաւ Աբդամելէք... և էր ինքն յապարանս:

* *Ոսկան.* Սպանանել զայրն յերեսաց սովուս:

* *Ոմանք.* Եւ ա՛ռ անտի կապերտս հինս. և ընկէց:

* *Ոմանք.* Եւ զբուրդդ ընդ անթ:

Չարցանեմ ինչ ցքեզ բան, մի՞ իցե՞ք թե՞ թաքուցանիցես յինէն զբանն*։ ¹⁵Եւ ասէ Երեմիա ցթագաւորն. Եթէ պատմեցից քեզ՝ ո՛չ ապաքէն մահու՛ն սպանանիցես զիս. և եթէ տա՛ց ինչ քեզ խրատ՝ ո՛չ անսաս ինձ*։ ¹⁶Եւ երդուաւ նմա արքայ Սեդեկիա գահոտ, և ասէ. Կենդանի՛ է՛ Տէր որ արար ՚ի մեզ զշունչս զայս, թէ իցէ սպանից զքեզ, կամ թէ և մատնեցից՝ ՚ի ձեռս արանցն, որ խնդրեն զանձն քո՛։ ¹⁷Եւ ասէ ցնա Երեմիա. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Եթէ ելանելով ելցես առ զօրավարն արքային Բաբելացւոց՝ կեցցէ՛ անձն քո, և քաղաքս ո՛չ այրեսցի հրով, և կեցցես ղու՛ և տուն քո՛։ ¹⁸Ապա թէ ո՛չ ելցես առ իշխանս արքային Բաբելացւոց, մատնեսցի քաղաքս ՚ի ձեռս Քաղդէացւոց, և այրեսցեն զդա հրով. և ղու ո՛չ ապրեսցիս ՚ի ձեռաց նոցա*։ ¹⁹Եւ ասէ Սեդեկիա արքայ ցերեմիա. Իմ բանք ինչ են ընդ Չրէայսն փախստականս առ Քաղդէացիսն, գուցէ՛ տացեն զիս ՚ի ձեռս նոցա, և ձաղիցեն զիս*։ ²⁰Եւ ասէ Երեմիա. Ո՛չ մատնեսցեն զքեզ. բայց լու՛ր զբանս Տեառն զոր ես խօսիմ ընդ քեզ, և լա՛ւ լիցի քեզ՝ և կեցցէ՛ անձն քո*։ ²¹Ապա թէ ո՛չ կամիցիս ելանել՝ այս բան է զոր եցոյց ինձ Տէր. ²²Ահաւաղիկ ամենայն կանայք որ մնացեալ են ՚ի տան թագաւորիդ Յուդայ, հանցին առ իշխանս արքային Բաբելացւոց. և նոքա ասիցեն. Խաբեցին զքեզ՝ և յաղթեցին քեզ արք խաղաղարարք, և արկցեն ՚ի գայթազողութիւն զոտս քո, և դարձցին ՚ի քէն*։ ²³Եւ զամենայն կանայս քո և զորդիս քո հանցեն առ Քաղդէացիսն, և ղու ո՛չ ապրեսցիս ՚ի ձեռաց նորա. զի ՚ի ձեռս թագաւորին Բաբելացւոց ըմբռնեսցիս, և քաղաքս այրեսցի՛ հրով*։ ²⁴Եւ ասէ ցնա թագաւորն. Այր ղու՝ մի՛ ոք իմասցի ինչ ՚ի բանից այտի յայցանէ, գուցէ՛ մեռանիցիս*։ ²⁵Եւ եթէ լսիցեն իշխանքն եթէ խօսեցայ ընդ քեզ, և զայցեն առ քեզ և ասիցեն. Պատմեա՛ մեզ՝ զի՞նչ խօսեցար ընդ արքայի, մի՛ թաքուցաներ ՚ի մէնջ՝ և ո՛չ սպանցուք զքեզ. և կամ թէ զի՞նչ խօսեցաւ ընդ քեզ արքայ. ²⁶ասասցես ցնոսա. Արկի՛ գութս առաջի արքայի՛ զի մի՛ դարձուցէ զիս անդրէն ՚ի տուն Յովնաթանայ մեռանել ինձ անդ*։ ²⁷Եւ եկին ամենայն իշխանքն առ Երեմիա՝ և հարցին ցնա. և պատմեաց նոցա զամենայն բանսն զոր պատուիրեաց նմա թագաւորն, և լռեցին ՚ի նմանէ զի ո՛չ ել՛ ՚ի վեր բանն*։ ²⁸Եւ նստաւ Երեմիա ՚ի սրահի բանտին, մինչև ՚ի ժամանակն յորում առաւն Երուսաղէմ։ Եւ եղև յորժամ առաւ Երուսաղէմ.

* *Ոմանք.* ՚ի տուն Ասաղիմայն. *կամ՝* Ասաղիայն... հարցանեն ինչ զքեզ բան... զբանն զայն յինէն:

* *Ոսկան.* Ոչ անսայցես ինձ:

* *Ի լուս՝.* Որ արար մեզ զշնորհս զայս. *համաձայն ոմանց ՚ի բն՝:* *Ոմանք.* Եւ կամ թէ իցէ մատնեցից զքեզ ՚ի ձեռս արանց:

* *Ոմանք.* Առ զօրավարս արքային:

* *Ոմանք.* Եւ այրեսցեն զսա հրով:

* *Ոմանք.* Բանք ինչ են առ Չրէայսն... և ձաղեսցեն զիս:

* *Ոմանք.* Բայց լուր զպատգամս Տեառն:

* *Ոմանք.* ՚ի ձեռաց նոցա. զի ՚ի ձեռս արքային Բաբելացւոց:

* *Ոմանք.* ՚ի բանիցդ այտի յայցանէ: *Ուր Ոսկան.* ՚ի բանիցդ յայցանէ:

* *Ոմանք.* Արկի գութ առաջի... ՚ի տան Յովնաթանայ: *Յօրինակին պակասեր.* Զի մի՛ դարձուցէ զիս:

Գլուխ ԼԹ

¹Յամին իններորդի Սեդեկիա արքայի Յուդայ՝ յամսեանն տասներորդի. եկն եհաս Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց, ինքն և ամենայն զօրք իւր յերուսաղէմ, և պաշարեցին զնա: ²Եւ յամին մետասաներորդի Սեդեկիայ՝ յամսեանն չորրորդի՝ որ օր ի՛նն էր ամսոյն, պատառեցաւ քաղաքն. ³և մտին ամենայն զօրավարք արքային Բաբելացոց, և նստան ՚ի դրանն միջնումն. Ներգեղ՝, Սարասար, Սարմագադ, Նաբուսարսեքիմ, Ռափսարիս. և Ներգեղ՝, Սարասար, Ռաբմագ. և ամենայն այլ ևս իշխանք արքային Բաբելացոց*: ⁴Եւ եղև իբրև ետես զնոսա Սեդեկիա արքայ Յուդայ, և ամենայն արք պատերազմօղք. փախեան և ելին գիշերի ՚ի քաղաքէ անտի ընդ ճանապարհ բուրաստանին արքունի, ընդ դուռնն որ էր ՚ի մէջ պարսպացն. և ելին ընդ ճանապարհն Արաբիայ*: ⁵Եւ զհետ եղեն նոցա զօրք Քաղդէացոցն, և հասին Սեդեկիայ յԱրաբովք Երիքովայ. կալան զնա՝ և ածին առ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց ՚ի Գերլաթա յերկիրն Եմաթայ: Եւ խօսեցաւ ընդ նմա դատաստանօք*. ⁶և սպան արքայն Բաբելացոց զորդիսն Սեդեկիայ ՚ի Դերլաթա առաջի նորա. և զամենայն ազատսն Յուդայ կոտորեաց արքայն Բաբելացոց: ⁷Եւ զաչսն Սեդեկիայ կուրացոյց, և կապեաց զնա պղնձի շղթայիւք տանել զնա ՚ի Բաբելովն: ⁸Եւ զտուն թագաւորին և զտունս ժողովրդեանն, այրեցին Քաղդէացիքն հրով, և զպարիսպն Երուսաղէմի քակեցին*: ⁹Եւ զմնացորդս ժողովրդեանն որ մնացին ՚ի քաղաքին, և զանկեալսն որ անկան ՚ի նա. և զսինլքորսն ժողովրդեանն որ մնացին, խաղացոյց Նաբուզարդան դահճապետ ՚ի Բաբելոն*: ¹⁰Եւ յաղքատաց ժողովրդեանն՝ որոց ո՛չ ինչ գոյր, եթո՛ղ Նաբուզարդան դահճապետ անդրէն յերկրին Յուդայ. և ետ նոցա այգիս և ջրարբիս յաւուր յայնմիկ*: ¹¹Եւ ետ պատուիրանաւ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց զԵրեմիա ՚ի ձեռս Նաբուզարդանայ դահճապետին և ասէ*. ¹²Ա՛ռ զդա՝ և անկն ած ՚ի վերայ դորա, և մի՛ ինչ արասցես դմա չար. այլ զոր ինչ ասասցէ ցքեզ՝ արասցես դմա*: ¹³Եւ առաքեցին Նաբուզարդան դահճապետ, և Նաբուսազաբան ներքինապետ, և Ներգեղ և Սարասար. և Ռոբոզոմ, և ամենայն մեծամեծք արքային Բաբելացոց*. ¹⁴և առին զԵրեմիա ՚ի բանտէ անտի, և ետուն ցԳողղոհա որդի Աքիկանայ՝ որդւոյ Սափանայ, և հանին զնա ՚ի տունն. և անդ նստէր ՚ի մէջ ժողովրդեանն: Իս ¹⁵Եւ առ Երեմիա եղև բան Տեառն՝ մինչ էր ՚ի նեղութեանն ՚ի սրահի բանտին՝ և ասէ. ¹⁶Ե՛րթ և ասա՝ ցԱբդամելէք Եթովպացի. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւաղիկ ածեն ես զբանն իմ ՚ի վերայ քաղաքիդ այդորիկ ՚ի չարիս և ո՛չ ՚ի բարիս. և եղիցի առաջի աչաց քոց յաւուր յայնմիկ*: ¹⁷Եւ զքեզ

* Ոմանք. Եւ մտին ամենայն զօրք ար՝... ՚ի դրանն միջնում... Սամագադ, Նաբուսարսեքիմ, Ռափսարիմ:

* Ոմանք. Եւ զօրք պատերազմօղք փախն:

* Ոմանք. Եւ զհետ եղեն նորա զօրավարք Քաղդէաց:

* Ոմանք. Եւ զպարիսպն Երուսաղէմի:

* Ոմանք. Եւ զսինլքեալսն ժողովրդեանն:

* Ոմանք. Որոյ ոչինչ գոյր... անդէն յերկրին Յուդայ... այգիս և ջրարբս յաւուր յայ՛:

* Ոմանք. Ի ձեռս Նաբուզարդան դահճապետի:

* Ոմանք. Ջոր ինչ ասասցէ քեզ:

* Ոմանք. Եւ Նաբուսազան... և Ռոբոզո. կամ՝ Ռաբմագ. կամ՝ Ռոբոսոնո:

* Ոմանք. Ես ածեն զբանն իմ... առաջի երեսաց քոց յաւուր յայն՛:

փրկեցից յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր, և ո՛չ տաց զքեզ ՚ի ձեռս արանցն յորոց դու երկնչիս յերեսաց նոցա*։ ¹⁸Չի ապրեցուցանելով ապրեցուցից զքեզ, և ՚ի սուր մի՛ անկցիս. և եղիցի քեզ անձն քո ՚ի գի՛ւտս, զի յուսացար յիս՝ ասէ Տէր։

40

Գլուխ Խ

¹Բանն որ եղև ՚ի վերայ Երեմիայի ՚ի Տեառնէ՝ յետ արձակելոյն զնա Նաբուզարդանայ դահճապետի ՚ի Ղազար. քանզի առին զնա կապեալ ձեռակապօք ՚ի միջոյ ամենայն գերութեանն Երուսաղեմի և Յուդայ՝ զոր խաղացուցին ՚ի Բաբելոն*։ ²Առ զնա դահճապետն և ասէ ցնա. Տէր Աստուած բարբառեցաւ զչարիսդ զայդ ՚ի վերայ տեղւոյս այսորիկ*։ ³և ած՝ և արար Տէր որպէս և խօսեցաւ. զի մեղայք Տեառն, և ո՛չ լուայք ձայնի նորա, և եղև ընդ ձեզ բանդ այդ*։ ⁴Եւ արդ՝ ահա այժմ լուծի զքեզ այսօր ՚ի ձեռակապացդ որ էին ՚ի ձեռս քո. եթէ բարութք թուի առաջի քո զա՛լ ընդ իս ՚ի Բաբելոն՝ ե՛կ, և ածից ՚ի վերայ քո ակն. և եթէ չար թուի յաչս քո զա՛լ ընդ իս ՚ի Բաբելոն, դադարեա՛ աստէն. ահա ամենայն երկիրս առաջի քո է ՚ի բարիս, ուր հաճոյ է քեզ երթալ՝ անդր երթիցես*։ ⁵Եւ մինչդեռ աստ եմ, ե՛րթ յով և կամիս. և դարձի՛ր առ Գողողիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ. զոր կացոյց արքայն Բաբելացւոց ՚ի վերայ երկրիդ Ղազարեանի, և բնակեցես ընդ նմա ՚ի մէջ ժողովրդեանն. ապա թէ ոչ՝ ըստ ամենայն հաճութեան աչաց քոց երթալոյ երթիցես. և ետ նմա դահճապետն նպարակս, և պարզես՝ և արձակեաց*։ ⁶Եւ եկն Երեմիա առ Գողողիա որդի Աքիկամայ ՚ի Մասեփա, և նստաւ անդ ՚ի մէջ ժողովրդեան երկրին մնացելոց*։ ⁷Եւ լուան ամենայն զօրավարք զօրաց որ էին ՚ի բացի, ինքեանք և զօրք իւրեանց, թէ կացոյց արքայն Բաբելացւոց զԳողողիա որդի Աքիկամայ ՚ի վերայ երկրին. և յանձն արար նմա զարս՝ և զկանայս, և ժողովուրդ բազում. և յաղքատաց ժողովրդեան երկրին զորս ո՛չ խաղացոյց ՚ի Բաբելոն*։ ⁸Եկին առ Գողողիա ՚ի Մասեփայ, Իսմայէլ որդի Նաթանայ, և Յովնան և Յովնաթան որդիք Կարէի. և Սարեա որդի Թանաթեմայ, և որդիք Ուփիերի որդւոյ Նետոփատայ, և Յեզոնիա որդի Մաքաթայ. ինքեանք և արք որ ընդ նոսա*։ ⁹Եւ երդուաւ նոցա Գողողիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ, և արանցն որ ընդ նոսա՝ և ասէ. Մի՛ երկնչիք յերեսաց ծառայիցն Քաղդեացւոց, այլ բնակեցէք յերկրիս. և հարկեցարո՛ւք արքային Բաբելացւոց, և բարի՛ եղիցի ձեզ*։ ¹⁰Եւ ես ահաւասիկ նստիմ ՚ի Մասեփա. կա՛լ ընդդէմ Քաղդեացւոցն որ ելանիցեն ՚ի վերայ ձեր. և դուք ժողովեցէ՛ք զգինի և զմիրզ, և ժողովեցէ՛ք եւլ յամանս ձեր. և բնակեցէ՛ք ՚ի քաղաքս ձեր զորս կալայք քաջութեամբ։ ¹¹Եւ

* *Ոմանք.* Յորոց դու երկնչիցիս յերեսաց։

* *Ոսկան.* Կապեալ ձեռնակապօք։

* *Բազումք.* Տէր Աստուած քո բարբառե՛։

* *Ոմանք.* Եւ ած արար... և եղև ձեզ բանդ այդ։

* *Ոմանք.* Ի ձեռակապանացդ որ են ՚ի ձեռս քո... առաջի քո ՚ի բարիս։

* *Ոմանք.* Հաճութեան աչաց քոց երթ յո երթիցես։

* *Բազումք.* Ժողովրդեան երկրին մնացելոյ։

* *Ոմանք.* Եւ յաղքատաց երկրին զոր ոչ խա՛։

* *Ոմանք.* Եւ Սարա. *կամ՝* Սարեմ որդի... և որդի Քովիերի որդւոյն Ետսփատայ։

* *Ոմանք.* Այլ բնակեցայք յերկրիս։ *Ուր Ոսկան.* բնակեցարո՛ւք։

ամենայն Յրեայք որ էին յերկրին Մովաբացւոց, և ՚ի մէջ որդւոցն Ամովնայ, և որք յեդովմ՝ և որք յամենայն երկիր, լուան եթէ թող արքայն Բաբելացւոց մնացորդս ՚ի Յրեաստանի. և կացոյց նոցա վերակացու՝ զԳողողիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ*, ¹²դարձան անդրէն ամենայն Յրեայք յամենայն տեղեաց ուր ցրուեցան անդր, և եկին յերկիրն Յուդայ առ Գողողիա ՚ի Մասեփա, և ժողովեցին զհինի և մի՛րձ բազում յոյժ*։ ¹³Եւ Յովնան որդի Կարէի, և ամենայն զօրավարք զօրացն որ էին ՚ի բացի՝ եկին առ Գողողիա ՚ի Մասեփա. ¹⁴և ասեն ցնա. Ջայն զհտիցե՞ս զի Բայաելիս թագաւոր որդւոցն Ամովնայ արձակեաց առ Իսմայէլ որդի Նաթանայ սպանանել՝ զքեզ: Եւ ո՛չ հաւատաց նոցա Գողողիա որդի Աքիկամայ*։ ¹⁵Եւ Յովնան որդի Կարէի՝ ասէ գաղտ ցԳողողիա ՚ի Մասեփա. Երթա՞յց սպանից զԻսմայէլ որդի Նաթանայ, և մի՛ ոք զհտասցէ. գուցէ՞ երբէք սպանանիցէ զքեզ, և ցրուեսցին Յրեայք որ ժողովեալ են առ քեզ. և կորնչիցին մնացորդք Յուդայ*։ ¹⁶Եւ ասէ Գողողիա որդի Աքիկամայ ցՅովնան որդի Կարէի. Մի՛ արասցես ըստ բանիդ այդորիկ, զի սո՛ւտ խօսեցար դու զԻսմայէլէ:

41

Գլուխ ԽԱ

¹Եւ եղև յամսեանն եւթներորդի՝ եկն Իսմայէլ որդի Նաթանայ, որդւոյ Ելիսամայ յազգէ թագաւորին, և ծառայք թագաւորին, և տասն այր ընդ նմա առ Գողողիա որդի Աքիկամայ ՚ի Մասեփա. և կերան հաց ՚ի միասին ՚ի Մասեփա: ²Եւ յարեաւ Իսմայէլ որդի Նաթանայ, և տասներին արքն որ ընդ նմա, և եհար զԳողողիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ սրով՝ և սպան զնա. զոր կացուցեալ էր արքային Բաբելացւոց ՚ի վերայ երկրին*։ ³և զամենայն Յրեայսն որ էին ընդ Գողողիայ ՚ի Մասեփա, և զամենայն Քաղղեացիս որ անդ գտան զարս պատերազմօղս, կտտորեաց Իսմայէլ: ⁴Եւ եղև յերկրորդում աւուր սպանանելոյ անդ զԳողողիա. և ո՛չ ոք զհտէր*։ ⁵Եկին արք ՚ի Սիւքիմայ, և ՚ի Սաղեմայ, և ՚ի Շամրնէ, արք ութսուն. զերծեալ զմօրուս և պատառեալ զհանդերձս՝ կոծելով, և մաննա և կնդրուկ ՚ի ձեռս նոցա տանել ՚ի տուն Տեառն*։ ⁶Եւ ել Իսմայէլ որդի Նաթանայ ընդ առաջ նոցա ՚ի Մասեփայ, երթալով երթայր և լայր. և եղև իբրև մերձեցաւ ՚ի նոսա՝ ասէ ցնոսա. Մտէ՞ք առ Գողողիա որդի Աքիկամայ*։ ⁷Եւ եղև իբրև մտին ՚ի մէջ քաղաքին, կտտորեաց զնոսա Իսմայէլ որդի Նաթանայ ՚ի մէջ քաղաքին, և ամաց ՚ի ջրհոր՝ ինքն և արքն որ ընդ նմա*։ ⁸Եւ արք տասն գտան անդ, և ասեն ցԻսմայէլ. Մի՛ սպանաներ զմեզ, զի գոն մեզ զանձք ՚ի բացի, ցորեան և զարի՝ մեղր և եւղ: Եւ զանց արար և ո՛չ սպան զնոսա ՚ի մէջ եղբարց իւրեանց*։ ⁹Եւ ջրհորն յոր ամաց Իսմայէլ զամենայն մարմինս արանցն զոր

* Այլք. Եւ որք յամենայն երկրի:

* Ոմանք. Ուր և ցրուեցան անդր:

* Բազումք. Ձի Բարելիս թագաւոր որդի:

* Յօրինակին անունս՝ Յովնան, ուրեք ուրեք գրի և՝ Յովանան:

* Ոմանք. Եւ եսպան զնա, զոր կա՛:

* Ոսկան. Յերկրորդում աւուր յետ սպանանելոյ անդ: Ոմանք. Եւ ոք ոչ զհտէր:

* Ոմանք. ՚ի Սիքիմայ, և ՚ի Սմայելէ, և ՚ի Շամր: Ուր Ոսկան. ՚ի Սելովմայ, և ՚ի Շամր՞:

* Ոմանք. Ել Իսմայէլ... մերձեցաւ առ նոսա. ասէ. Մտէք առ:

* Ոմանք. Եւ արքն որ էին ընդ նմա:

* Ոմանք. Ձի գոն մեր զանձք: ՚ի լուս՞. Յորեան և զհինի, մեղր. համաձայն ոմանց ՚ի բնար՞:

կոտորեաց վասն Գողողիա, ջրհոր մեծ էր՝ զոր արար արքայ Ասա յերեսաց Բաասայ արքայի Իսրայելի. զայն ելի՛ց Իսմայել որդի Նաթանայ վիրաւորոք՝¹⁰ Եւ դարձոյց Իսմայել զամենայն ժողովուրդն որ մնացեալ էր ՚ի Մասեփա. և զդստերս թագաւորին հանդերձ ամենայն սինլքորօք ժողովրդեանն որ էին ՚ի Մասեփա. զորս յանձնարարեալ էր Նաբուզարդանայ դահճապետի Գողողիայ որդւոյ Աքիկամայ. և կանխեաց Իսմայել որդի Նաթանայ ընդ առաւօտս, և գնաց յայն կոյս առ որդիսն Ամովնայ՝:

Իսկ ¹¹Եւ լուաւ Յովնան որդի Կարէի՝ և ամենայն զօրավարք զօրացն որ ընդ նմա էին՝ զամենայն չարիսն զոր գործեաց Իսմայել որդի Նաթանայ՝:

¹²Ժողովեցին զամենայն զօրականս իւրեանց, և խաղացին երթալ տալ պատերազմ ընդ Իսմայելի որդւոյ Նաթանայ. և գտին գնա ՚ի վերայ ջուրցն բազմաց որ էին ՚ի Գաբաւոն՝: ¹³Եւ եղև իբրև տեսին ամենայն ժողովուրդն որ էին ընդ Իսմայելի, զՅովնան որդի Կարէի, և զամենայն զօրավարս զօրացն որ էին ընդ նմա՝ ուրախ եղեն: ¹⁴Եւ դարձան առ նոսա ամենայն ժողովուրդն զոր գերեաց Իսմայել ՚ի Մասեփայ, և եկին առ Յովնան որդի Կարէի՝: ¹⁵Բայց Իսմայել որդի Նաթանայ՝ ապրեցաւ ութ արամբք յերեսացն Յովնանայ, և անկաւ առ որդիսն Ամովնայ: ¹⁶Եւ ա՛ռ Յովնան որդի Կարէի, և ամենայն զօրավարք զօրացն որ էին ընդ նմա, զամենայն մնացորդս ժողովրդեանն զորս թափեաց յԻսմայելէ յորդւոյ Նաթանայ ՚ի Մասեփայ. յետ սպանանելոյն զԳողողիա որդի Աքիկամայ զարս հօզօս պատերազմօղս, և զկանայս, և զայլս, և զներքինիս, զոր ա՛ռ յերկրէն Գաբաւոնացւոց՝, ¹⁷և գնաց. և նստան յերկրին Բերուքքամայ հանդէպ Բեթղահեմի, երթալ մտանել յերկիրն Եգիպտացւոց՝: ¹⁸Յերեսաց Քաղդեացւոցն. քանզի զահի՛ հարան յերեսաց նոցա. զի սպան Իսմայել զԳողողիա որդի Աքիկամայ՝ զոր կացոյց արքայն Բաբելացւոց ՚ի վերայ երկրին՝:

42

Գլուխ ԽԲ

¹Եւ մատեան ամենայն զօրավարք զօրացն, և Յովնան որդի Կարէի, և Յեզոնիա որդի Ովսէի, և ամենայն ժողովուրդն ՚ի փոքրուէ մինչև ցմեճամեճս. ²և ասեն ցերեմիա մարգարէ. Անկցի գուք մեր առաջի երեսաց քոց, և կա՛ց յաղօթս վասն մեր առ Տէր Աստուած քո, և վասն մնացորդացս այսոցիկ. զի մնացաք սակաւք ՚ի բազմաց. որպէս քո աչք տեսանեն զմեզ. ³և պատմեսցէ՛ մեզ Տէր Աստուած քո զճանապարհս՝ ընդ որ գնացուք, և զբանն զոր արասցուք՝: ⁴Եւ ասէ ցնոսա Երեմիա մարգարէ. Լուայ՝ ահաւաղիկ ե՛ս կացից յաղօթս առ Տէր Աստուած մեր վասն բանից ձերոց. և եղիցի զոր ինչ բան պատասխանի տացէ

* Ոմանք. Եւ ՚ի ջրհորն... Իսմայել զմարմինս արանցն զորս կո՛ւ:

* Ոմանք. Եւ կանխեաց... ընդ առաւօտն:

* Բազումք. Եւ ամենայն զօրաւորք արանցն որ ընդ:

* Ոմանք. Ձամենայն զօրականս իւրեանց... որ ՚ի Գաբաւոն էին:

* Ոմանք. Եւ դարձան առ նա ամենայն:

* Ի լուս՝. Եւ զկանայս և զարս, և զներ՝. համաձայն բազմաց ՚ի բն՝:

* Ոսկան. Եւ գնացին և նստան յեր՝: Ոմանք. Յերկրին Բերուքքամամայ:

* Յօրինակին. Ի վերայ երկրի:

* Բազումք. Ձճանապարհ ընդ որ:

Տէր՝ պատմեցի՛ց ձեզ, և ո՛չ թաքուցից ՚ի ձե՛նջ բան մի՞*։ ⁵Եւ նոքա ասեն ցերեմիայ. եղիցի մեզ Տէր ՚ի վկայ արդարև հաւատարիմ. եթէ ոչ ըստ ամենայն բանի զոր առաքեսցէ զքեզ Տէր Աստուած քո առ մեզ՝ այնպէս արասցուք. ⁶Եթէ բարի՝ և եթէ չար, և ձայնի Տեառն Աստուծոյ մերում առ որ առաքենք զքեզ՝ լուիցուք, զի բարի եղիցի մեզ. և լուիցուք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ*։ ⁷Եւ եղև յետ աւուրց տասանց, եղև բան Տեառն առ Երեմիա. ⁸և կոչեաց զՅովնան որդի Կարէի, և զամենայն զօրավարս զօրացն որ էին ընդ նմա, և զամենայն ժողովուրդն ՚ի փոքրուէ մինչև ցմեծամեծսն*։ ⁹և ասէ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Առ որ առաքեսցէքն զիս արկանել գութս առաջի նորա. ¹⁰Եթէ նստելով նստիցիք յերկրիս յայսմիկ, շինեցի՛ց զձեզ՝ և ո՛չ քակեցից. տնկեցից զձեզ՝ և ո՛չ խլեցից. զի մեղմացեալ եմ ՚ի չարեաց զոր ասացի առնել ձեզ*։ ¹¹Մի՛ երկնչիք յերեսաց արքային Բաբելացւոց. յորմէ զարհուրեալ էիք յերեսաց նորա. մի՛ երկնչիք ՚ի նմանէ՛ ասէ Տէր. զի ընդ՝ ձե՛զ եմ ես ՚ի փրկել զձեզ, և ապրեցուցանել ՚ի ձեռաց նոցա*։ ¹²և արկից զձեւք գութ, և ողորմեցայց ձեզ. և դարձուցից զձեզ յերկիր ձեր*։ ¹³Եւ եթէ ասիցէք. Ո՛չ նստցուք յերկրիս յայսմիկ, և ո՛չ լուիցուք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ. ¹⁴այլ երթիցուք յերկիրն Եգիպտացւոց, և ո՛չ տեսցուք պատերազմ, և զձայն փողոյ ո՛չ լուիցուք, և հացի ո՛չ քաղցիցուք. և անդ բնակեսցուք*։ ¹⁵Եւ արդ վասն այդորիկ լուարովք զպատգամս Տեառն մնացորդք Յրեաստանի. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Եթէ դուք տալով տացէք զերեսս ձեր մտանել յԵգիպտոս՝ և անդ բնակիլ*։ ¹⁶և եղիցի սուրն յորմէ երկնչէիք, անդ գտցէ զձեզ յերկրին Եգիպտացւոց. և սովն յորմէ կասկածէք՝ անդ հասցէ ձեզ յերկրին Եգիպտացւոց, և անդ մեռանիցիք*։ ¹⁷Եւ եղիցի ամենայն արք որք դէ՛մ եղին մտանել յերկիրն Եգիպտացւոց բնակել անդ, սրով և սովով՝ և մահուանք սատակեսցին, և ո՛չ ոք եղիցի ՚ի նոցանէ ապրեալ ՚ի չարեացն զոր ես ածի՛ց ՚ի վերայ նոցա*։ ¹⁸Ձի այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Որպէս կաթեաց սրտմտութիւն բարկութեան իմոյ ՚ի վերայ բնակչաց Երուսաղէմի. նոյնպէս կաթեսցէ սրտմտութիւն իմ ՚ի վերայ ձեր ՚ի մտանելն ձեր յԵգիպտոս. և եղիցի յանապատ, և վտարանդիք, և ՚ի նզովս, և ՚ի նախատինս. և մի՛ ևս տեսանիցէք զտեղիս զայս*։ ¹⁹զորմէ խօսեցաւ Տէր ՚ի վերայ ձեր, և ՚ի վերայ մնացորդացն Յուդայ՝ թէ մի՛ մտանիցէք յԵգիպտոս. Բայց այժմ գիտելով գիտասցիք. քանզի վկայութիւն դնեմ ձեզ այսօր*։ ²⁰զի չարիս գործեցէք յանձինս ձեր, զի առաքեսցէք զիս առ Տէր Աստուած ձեր՝ և ասացէք. Յաղօթս կա՛ց վասն մեր առ Տէր Աստուած մեր. և ըստ ամենայնի զոր ինչ խօսեսցի ընդ քեզ Տէր Աստուած

* *Բազումք.* Աւաղիկ ես կացից: *Ոմանք.* Եղիցի որ ինչ բան:

* *Ոսկան.* Առաքենք զքեզ. հնազանդիմք. զի բարի ե՛: *Ոմանք.* Ձայնի Տեառն Աստուծոյ մերում:

* *Ոմանք.* Մինչև ՚ի մեծամեծս:

* *Ոմանք.* ՚Ի չարեացն զորս ասացի:

* *Ոմանք.* Ձարհուրեալք էք յե՛... փրկել զձեզ:

* *Ոմանք.* Ողորմեցայց ձեզ յերկիր ձեր, և դարձ: *Ուր Ոսկան.* Յերկրի ձերում:

* *Ոսկան.* Եւ հացի ոչ քաղցիցուք:

* *Այլք.* Եւ անդ բնակել:

* *Բազումք.* Յորմէ կասկածէիք:

* *Ոմանք.* Եւ եղիցին ամենայն արք... մտանել և բնակել անդ:

* *Ոմանք.* ՚Ի մտանել ձեզ յԵգի՛:

* *Ոսկան.* Յորմէ խօսեցաւ Տէր: *Ոմանք.* Դնեմ ես ձեզ այսօր:

մեր, նոյնպէս պատմեա՛ մեզ՝ և արասցուք*։ ²¹Եւ պատմեցի ձեզ այսօր՝ և ո՛չ լուարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ, զոր առաքեացն առ ձեզ։ ²²Եւ արդ՝ գիտասցիք, եթէ սրով և սովով՝ և մահուանք սատակեսցիք՝ ՚ի տեղւո՛ջն յորում դուք կամիք մտանել բնակել անդ*։

43

Գլուխ ԽԳ

¹Եւ եղև իբրև դադարեաց Երեմիա ՚ի խօսելոյ ընդ ամենայն ժողովրդեանն զամենայն բանս Տեառն Աստուծոյ նոցա, զորս առաքեաց Տէր Աստուած նոցա առ նոսա։ ²Եւ ասեն Յեզղնիա որդի Ովսէի, և Յովնան որդի Կարէի, և ամենայն արք ամբարտաւանք՝ ցերեմիա. Սո՛ւտ խօսիս դու, ո՛չ առաքեաց զքեզ Տէր Աստուած մեր առ մեզ՝ ասել, թէ մի՛ մտանէք յԵգիպտոս բնակել անդ. ³այլ Բարուք որդի Ներեայ գրգռէ՛ զքեզ ընդ մեզ, զի տացես զմեզ ՚ի ձեռս Քաղդէացւոց կոտորել՝ և տանել զմեզ գերի՛ ՚ի Բաբելոն։ ⁴Եւ ո՛չ լուան Յովնան որդի Կարէի և ամենայն զօրավարք զօրացն և ամենայն ժողովուրդն՝ ձայնի Տեառն բնակել յերկրին Յուդայ։ ⁵Եւ ա՛ռ Յովնան որդի Կարէի՝ և ամենայն զօրավարք զօրացն զամենայն մնացորդս Յուդայ՝ որ դարձեալ էին յամենայն ազգաց՝ ուր ցրուեալ էին անդր, բնակել յերկրին Յուդայ*։ ⁶զարս և զկանայս և զմանկտիս, և զդատերս թագաւորին, և զանձինս որ մնացեալ էին ՚ի Նաբուզարդանայ դահճապետէ առ Գողողիա որդի Աքիկամայ որդւոյ Սափանայ. և զԵրեմիա մարգարէ, և զԲարուք որդի Ներեայ*։ ⁷և գնացին յերկիրն Եգիպտացւոց, վասն չլսելոյ ձայնի Տեառն. և չոգան ՚ի Տափնաս։ ⁸Եւ եղև բան Տեառն առ Երեմիա ՚ի Տափնաս՝ և ասէ. ⁹Ա՛ռ դու քեզ քարինս մեծամեծս, և թաղեա՛ զնոսա յաղիւսադրանն թաքստեան, ՚ի մուտս ապարանիցն փարաւոնի ՚ի Տափնաս առաջի արանցո՛յ Յուդայ*, ¹⁰և ասացես ցնոսա. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես առաքեմ՝ և ածեմ զՆաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց զժառայ իմ, և արկցէ զաթոռ իւր ՚ի վերայ քարանցո՛յ այդոցիկ զորս ծածկեցեր. և առցէ զգէն իւր զինքեամբ ՚ի վերայ դոցա*։ ¹¹և մտցէ հարցէ զերկիրո՛յ Եգիպտացւոց, զոր ՚ի մահ՝ ՚ի մահ, և զոր ՚ի գերութիւն՝ ՚ի գերութիւն, և զոր ՚ի սուր՝ ՚ի սուր*։ ¹²Եւ արկցէ հուր ՚ի տուն աստուածոց նոցա՝ և այրեսցէ զնոսա, և տարցի գերի. և որոնեսցէ զերկիրո՛յ Եգիպտացւոց. որպէս որոնեսցէ հովիւ զհանդերձս իւր, և ելցէ այտի խաղաղութեամբ*։ ¹³Եւ խորտակեսցէ զսիւնս Արեգ քաղաքի, որ է յերկրիո՛յ Եգիպտացւոց, և զմեհեանս դից նոցա այրեսցէ՛ հրով*։

* *Ոմանք.* Ձի չարիս գործէք... խօսեցի ընդ մեզ։

* *Ոսկան.* Մտանել և բնակիլ։

* *Ոմանք.* Ցրուեալ էին անդ։

* *Ոմանք.* Եւ զկանայս և զմանկտի... առ Գողողիայ որդւոյ Աքիկամայ որդւոյ Սափատայ։

* *Ոմանք.* Յաղիւսադրան ՚ի թաքստեան։

* *Ոմանք.* Եւ ասա՛ ցնոսա... Տէր Աստուած Իսրայէլի։ *Ոսկան.* Ձորս ծածկեցի։

* *Ոմանք.* Հարցէ զերկիրո՛յ Եգիպտոսի։

* *Ոմանք.* Ի տունս աստուածոց... որպէս որոնէ հովիւ։

* *Ոմանք.* Որ յերկրիո՛յ Եգիպտաց՝։

Գլուխ ԽԴ

¹Բանն Տեառն որ եղև առ Երեմիա, ՚ի վերայ ամենայն Յրեիցն որ բնակեալ էին յերկրին Եգիպտացւոց, և որք նստէին ՚ի Մագդովղ, և ՚ի Տափնաս, և ՚ի Մենփիս, և յերկրին Պաթուրէս. և ասէ*։ ²Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Դուք ինքնին իսկ գիտէք զամենայն չարիս զոր ածի ՚ի վերայ Երուսաղեմի, և ՚ի վերայ ամենայն քաղաքացն Յրեաստանի. և ահա կան աւերակ այսօր ՚ի բնակչաց, ³յերեսաց չարեաց իւրեանց զոր արարին ՚ի դառնացուցանել զիս. զի գնացին խո՛ւնկս արկանել և պաշտել զաստուածս օտարս, զոր ո՛չ գիտէիք դուք և հարքն ձեր*։ ⁴Եւ առաքեցի առ ձեզ զամենայն զծառայս իմ զմարգարտս ընդ առաւօտս առաւօտս, և ասէի. Մի՛ գործէք զիրս պղծութեանդ այդորիկ զոր ատեցի*։ ⁵Եւ ո՛չ լուան ինձ, և ո՛չ խոնարհեցուցին զունկն իւրեանց դառնալ ՚ի չարեացն իւրեանց՝ չարկանել խոնկս աստուածոց օտարաց։ ⁶Եւ կաթեաց բարկութիւն սրտմտութեան իմոյ, և բորբոքեցաւ ՚ի դրունս Յուդայ՝ և արտաքոյ Երուսաղեմի, և եղեն յաւեր և յանապատ որպէս և այսօր*։ ⁷Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Սաբաւովք՝ Աստուած Իսրայէլի. Ընդէ՞ր առնէք դուք չարիս մեծամեծս յանձինս ձեր, սատակել զձեր զայր և զկին, և զմանուկ ստինդիացս ՚ի միջոյ Յուդայ, առ ՚ի չմնալոյ ումեք ՚ի ձէնջ*։ ⁸Դառնացուցանել զիս գործովք ձեռաց ձերոց, արկանել խոնկս աստուածոց օտարաց յերկրիդ Եգիպտացւոց, յոր դուք մտէք բնակել այդր. զի սատակիցիք՝ և լինիցիք յանէծս և ՚ի նախատինս ընդ ամենայն ազգս երկրի*։ ⁹առ ՚ի չմոռնալոյ ձեզ զչարիս հարցն ձերոց, և զչարիս թագաւորացն Յուդայ, և զչարիս կանանց նոցա. և զչարիս ձեր, և զչարիս կանանց ձերոց. զոր արարին յերկիրն Յուդայ և արտաքոյ Երուսաղեմի*։ ¹⁰Եւ ո՛չ դադարեցին մինչև ցայսօր, և ո՛չ երկեան, և ո՛չ կացին յօրէնս իմ և ՚ի հրամանս զոր ետու առաջի երեսաց ձերոց, և առաջի երեսաց հարցն ձերոց։ ¹¹Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես հաստատեմ զերեսս իմ ՚ի վերայ ձեր ՚ի չարիս, սատակել զամենայն զՅուդայ*։ ¹²Եւ առցեն զմնացորդս Յուդայ՝ որ դէմ եղին մտանել յերկիրս Եգիպտացւոց բնակել աստ, կորուսանել զամենայն մնացորդս որ են յեգիպտոս. և անկցին ՚ի սուր, և սատակեսցին սովով, ՚ի փոքուէ մինչև ցմեծամեծս՝ սրով և սովով մեռանիցին. և եղիցին ՚ի նզովս և ՚ի կորուստ՝ և յանէծս և ՚ի նախատինս*։ ¹³Եւ այց արարից ՚ի վերայ նոցա որ նստին յերկրիդ Եգիպտացւոց. որպէս արարի այց Երուսաղեմի սրով և սովով և մահուամբ*։ ¹⁴Եւ ո՛չ ոք ապրեսցի ՚ի մնացորդացդ Յուդայ, որ բնակեալ են յերկրիդ Եգիպտացւոց՝ դառնալ յերկիրն Յուդայ որում ակն ունէին յանձինս

* Ոմանք. Բանն որ եղև... և յերկիրն Պաթուրէս:

* Ոմանք. Արարին առ ՚ի դառնա՞:

* Բազունք. Չամենայն ծառայս իմ:

* Այլք. Սրտմտութիւն բարկութեան իմոյ:

* Բազունք. Եւ զմանկունս ստինդիայս ՚ի միջոյ:

* Ոմանք. Մտէք բնակել անդր:

* Ոմանք. Յերկրին Յուդայ:

* Ոմանք. Ահաւաղիկ ես հաս՞... զամենայն Յուդայ:

* Ոմանք. Չմնացորդսն Յուդայ, որպէս եղեն ՚ի մտանել յեր՞:

* Ոմանք. Նստին յերկիրն Եգ՞:

իւրեանց դառնալ բնակել անդ. և մի՛ դարձցին բայց միայն ապրեալքն*։ ¹⁵Եւ պատասխանի ետուն Երեմիայի ամենայն արք որք գիտէին՝ թէ արկանեն խունկս կանայք իւրեանց աստուածոց օտարաց. և ամենայն կանայք որք կային անդ ժողովք մեծամեծք, և ամենայն ժողովուրդն որ բնակեալն էին յերկրին Եգիպտացոց ՚ի Պաթուրէս՝ և ասեն. ¹⁶Բանիդ զոր խօսեցար առ մեզ յանուն Տեառն՝ ո՛չ լուիցուք. ¹⁷զի առնելով արասցուք զամենայն բան որ ելանէ ՚ի բերանոյ մերմէ. արկանել խունկս տիկնոջն երկնից, և նուիրել նմա նուէրս, որպէս արարաք մեք և հարքն մեր. և թագաւորքն մեր, և իշխանքն մեր՝ ՚ի քաղաքս Յուդայ և արտաքոյ Երուսաղեմի, և էաք հացալիցք և փափկացեալք. և չա՛ր ինչ ո՛չ տեսանէաք*։ ¹⁸Եւ իբրև դադարեցաք յարկանելոյ խունկս տիկնոջն երկնից, և նուիրելոյ նմա նուէրս, նուազեցաք յամենայնէ, և սրով և սովով սատակեցաք*։ ¹⁹Եւ զի մե՛ք արկաք խունկս տիկնոջն երկնից, և նուիրեցաք նմա նուէրս. միթէ առանց արա՞նց մերոց արարաք նմա հաստեայս և կարկանդակս, և նուիրեցաք նմա նուէրս։ ²⁰Ետ պատասխանի Երեմիա ամենայն զօրաւորաց ժողովրդեանն հանդերձ կանամբքն, և ամենայն ժողովրդեանն որ ետուն նմա զայն բանս պատասխանի՝ և ասէ*։ ²¹Ոչ ապաքէն զխո՞նկսն զոր արկանէիք ՚ի քաղաքսն Յուդայ և արտաքոյ Երուսաղեմի. դուք և հարք ձեր և թագաւորքն ձեր և իշխանքն ձեր և ժողովուրդ երկրին, յիշեաց Տէր՝ և անկաւ ՚ի սիրտ նորա*։ ²²Եւ ո՛չ կարաց Տէր համբերել յերեսաց չարա՛ց իրաց ձերոց, և գարշելեացն զոր առնէիք. և եղև երկիրն ձեր յաւերակ, և յանապատ, և ՚ի նզովս առ ՚ի չգոյէ բնակչաց որպէս այսօր. յերեսաց դոցա՞* ²³որոց խունկսդ արկանէքդ՝ և որովք մեղանչէք Տեառն. և ո՛չ լսէք ձայնի Տեառն. և ըստ օրինաց նորա և ըստ վկայութեանց, և ըստ հրամանաց նորա ո՛չ գնայք. վասն այնորիկ գտին զձեզ չարիքդ այդոքիկ որպէս և այսօրդ*։ ²⁴Եւ ասէ Երեմիա ցամենայն ժողովուրդսն, և ցամենայն կանայսն. Լուարո՛ւք զպատգամս Տեառն ամենայն Յուդայ, որ էք յերկրիս Եգիպտացոց*։ ²⁵Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Դո՛ւք և կանայք ձեր խօսեցարուք բերանովք ձերովք, և ձեռօք ձերովք վճարեցէք. ասէք. Առնելով արասցուք զդաւանութիւնն մեր զոր դաւանեցաք՝ արկանել խունկս տիկնոջ երկնից, և նուիրել նուէրս. և կալով կացէք ՚ի դաւանութեանն ձերում, և առնելով արարէք զուխտն ձեր*։ ²⁶Վասն այդորիկ լուարո՛ւք զպատգամ Տեառն ամենայն Յուդայ որ բնակեալդ էք յերկրիդ Եգիպտացոց. Ահաւասիկ երդուայ յանձն իմ մեծ՝ ասէ Տէր Աստուած. եթէ կոչեսցի՛ ևս անուն իմ ՚ի բերանոյ ամենայն առն Յուդայ, ասել թէ կենդանի՛ է Տէր յամենայն երկիրս Եգիպտացոց*։ ²⁷Ձի ահաւասիկ ես զարթուցեալ եմ ՚ի վերայ դոցա չարչարել զդոսս, և ո՛չ առնել բարի։ Եւ սատակեսցին ամենայն արք

* Ոմանք. ՚ի մնացորդացն Յուդայ... յերկրին Ե՛։

* Ոմանք. Եւ նուիրել նուէրս։ Ոսկան. Եւ ՚ի քաղաքս Յուդայ։

* Ոմանք. Յարկանել խունկս տիկ՛։

* Յօրհնակին պակասէր. ժողովրդեանն հանդերձ կանամբքն, և ամենայն ժողովրդեանն որ ետուն նմա։

* Ոմանք. Ձոր արկանէք ՚ի քաղաքսն։

* Ոմանք. Յերեսաց չարեաց իրաց... երկիրդ ձեր աւէ՛։

* Ոմանք. Որպէս և այսօր։

* Բազումք. Յամենայն ժողովուրդն։

* Ոմանք. Տիկնոջն երկնից... զուխտսն ձեր։

* Բազումք. Յամենայն երկրիս Եգիպտացոց։

Յուդայ որ բնակեալ են յերկրիդ Եգիպտացւոց սրով և սովով, մինչև նուազեսցին*։²⁸ և ապրեալքն ՚ի սրոյ դարձցին յերկրես Եգիպտացւոց յերկիրն Յուդայ՝ արք սակա՛ւք թուով։ Եւ ծանիցեն ամենայն մնացորդքն Յուդայ որ բնակեալ են յերկրիդ Եգիպտացւոց, թէ ո՞ր բան կայ, ի՞նչ թէ նոցա*։²⁹ Եւ այս ձեզ նշանակ՝ ասէ Տէր, եթէ արարից ձեզ այց ՚ի տեղւոջդ յայդմիկ. զի գիտասցիք եթէ կալով կայցեն բանք իմ ՚ի վերայ ձեր ՚ի չարիս*։³⁰ Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ես տաց զփարաւոն Վափառ արքայ Եգիպտացւոց ՚ի ձեռս թշնամւոյ իւրոյ, և ՚ի ձեռս խնդրողաց անձին իւրոյ. որպէս ետու զՍեղեկիա արքայ ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց թշնամւոյ իւրոյ, և խնդրողի անձին նորա*։

45

Գլուխ ԽԵ

¹ Բանն զոր խօսեցաւ Երեմիա մարգարէ՝ առ Բարուք որդի Ներեայ. յորժամ գրեաց զբանսս զայսոսիկ ՚ի մատենի ՚ի բերանոյ Երեմիայի, յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի Յուդայ։² Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի ՚ի վերայ քո Բարուք.³ Որ ասացեր թէ վայ ինձ՝ վայ ինձ, զի յաւել Տէր աշխատութիւն ՚ի վերայ ցաւոց իմոց. ննջեցի հեծութեամբք, և հանգիստ ո՛չ գտի*։⁴ Այսպէս ասացես ցնա. այսպէս ասէ Տէր. Ահա զոր ես շինեցի, ես ինձէ՛ն քակեցից, և զոր ես տնկեցի, ես ինձէ՛ն խլեցից՝ զամենայն զերկիրն զայն*։⁵ Եւ դու խնդրես քեզ մեծամե՞ծս. մի՛ խնդրեր. զի ահա ես ածից չարիս ՚ի վերայ ամենայն մարմնոյ՝ ասէ Տէր. և տաց քեզ զանձն քո ՚ի զի՛ւտս յամենայն տեղւոջ ուր և երթայցես անդր*։

46

Գլուխ ԽԶ

ԽԲ ¹ Ի վերայ Եգիպտոսի։ Բանն Տեառն՝ որ եղև առ Երեմիա մարգարէ ՚ի վերայ ամենայն ազգացն Եգիպտացւոց.² և ՚ի վերայ զօրացն փարաւովնի Նեքաւովայ արքային Եգիպտացւոց, որ էր առ Եփրատ գետով ՚ի Քարքամիս. զոր եհար Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց. յամին չորրորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ արքայի՝ Յրէաստանի*։³ Առէ՞ք զէն և վահանս. մատերո՛ւք ՚ի պատերազմ*։⁴ Կազմեցէ՞ք զերիվարս. հեծարո՞ւք սպառազէնք. դի՞ք

* *Ոմանք.* Եւ որ բնակեալ են յերկ՛։
 * *Ոմանք.* Որ բնակեալ էին յերկրիդ։
 * *Ոմանք.* Թէ կալով կացցեն։
 * *Օրինակ մի.* Չփարաւոն Վայ Փառ արքայ Ե՛... ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։
 * *Ոմանք.* Ննջեցի հեծութեամբք։
 * *Ոմանք.* Եւ զոր ես տնկեցից։
 * *Ոմանք.* Ուր երթիցես անդր։
 * *Օրինակ մի.* Փարաւոնի Նեքաբովայ։
 * *Ի բազումս պակասի.* Եւ վահանս. *մատերուք ՚ի պա՛*։ *Յօրինակի մերում և եթ հարցական ոլորակաւ դնին բառքս.* Առէ՞ք. (4) կազմեցէ՞ք. հեծարո՞ւք. և այլն. *զորս այլք շեշտողորիւ դնեն ՚ի հրամայական եղանակաւ.:*

զսաղաւարտ. առէ՞ք յառաջ զգեղարդունս. զգեցարո՞ւք զգրահս ձեր*։ ⁵Իսկ այդ զի՞նչ է. դա՛ աւաղիկ զարհուրեալ իմն են, և յետս ընդդէմ շարժին, զի զօրաւորք նոցա հարան. ՚ի փախուստ կացին, և ո՛չ դարձցին ՚ի դոցանէ պատեալքն շուրջանակի՝ ասէ Տէր*։ ⁶Մի՛ փախիցէ թեթևն, և մի՛ ապրեսցի հզօրն. ՚ի կողմանս հիւսւսոյ առ Եփրատ գետով տկարացան, կործանեցան։ ⁷Ո՞վ է սա որ իբրև զգետ յարուցեալ է, և իբրև զգետս կուտակեալս ջուր զջուրքք*։ ⁸Ջուրքն Եգիպտացւոց իբրև զգետ ելանէ, և իբրև զգետ խռովին ջուրք նորա. և ասէ. Ելի՛ց և ծածկեցից զերկիր, կորուսից զքաղաքս և զբնակիչս նորա*։ ⁹Յեծեայք յերիվարս, կազմեցէ՛ք կառս, ելէ՛ք պատերազմաօղբ Եթովպացւոց. և Լիբեացիք վառեալք զինու. և Լիդացիք ելէ՛ք լարեցէ՛ք զաղեղունս*։ ¹⁰Ձի օրն այն Տեառն Աստուծոյ մերոյ, օր վրէժխնդրութեան է, առնուլ վրէժ ՚ի թշնամեաց իւրոց. և կերիցէ՛ սուր և յագեսցի, և արբեսցի յարեմէ նոցա. զի զոհ Տեառն զօրութեանց է յերկրէն հիւսւսոյ ՚ի վերայ գետոյն Եփրատայ*։ ¹¹Ել՛ ՚ի Քաղաադ, և առ դէ՛ղ ռետին կուսի դստերն Եգիպտացւոց. ՚ի զո՛ւր յաճախեցեր զբժշկութիւնս քո, և օգուտ չի՛ք ուստեք քեզ*։ ¹²Լուան՝ զգոյժ քո ազգք, և աղաղակաւ քով լի՛ եղև երկիր. զի պատերազմօղ առ պատերազմողի տկարացաւ, և անկան երկոքեան ՚ի միասին*։ ¹³Բանն զոր խօսեցաւ Տէր ՚ի ձեռն Երեմիայ մարգարէի ՚ի գալ Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, հարկանել զերկիրն Եգիպտացւոց*։ ¹⁴Գոյժ արարէք յեգիպտոս, և հնչեցէ՛ք ՚ի Մակդոդ, և պատուէր տուք ՚ի Մեմփիս, ա՛գդ արարէք ՚ի Տափնաս. թէ արի՛ և պատրաստեա՛ց, զի եկէ՛ր սուր զուռս քո*։ ¹⁵Ի՛ փախուստ դարձաւ ցուլն քո ընտիր, ո՛չ մնաց՝ զի Տէր լքոյց զնա։ ¹⁶Եւ բազմութիւնն տկարացաւ, և անկան իւրաքանչիւր առ ընկերի իւրում. և ասեն. Արի՛ք և դարձցուք առ իւրաքանչիւր ժողովուրդ մեր, և յիւրաքանչիւր աշխարհի իւր՝ յերեսաց Յունական սրոյն*։ ¹⁷Կոչեցէ՛ք զանուն փարաւովնի արքային Եգիպտացւոց՝ Սաովն, և Եբիր, և Մովեդ*։ ¹⁸Կենդանի՛ են են՝ ասէ Տէր, որոյ Թագաւոր զօրութեանց անուն է նորա. զի իբրև զգահաւանդակ ՚ի լերինս, և իբրև զԿարմելոս ՚ի ծովու եկեսցէ՛*։ ¹⁹Հանդերձ գերութեան արա քեզ բնակեալ դուստրդ Եգիպտացւոց. զի Մեմփիս յապականութիւն եղիցի, և կոչեսցի նմա վայ՝ առ ՚ի չգոյէ բնակչաց նորա*։ ²⁰Երինջ զարդարեալ զեղեցիկ՝ Եգիպտոս։

* Ոմանք. Դի՛ք զսաղաւարտս։

* Ոսկան. Դոքա աւաղիկ զար՞։ Ոմանք. ՚ի նոցանէ պատեալքն։

* Բազոււնք. Կուտակեալ զջուրս ջուրքք։

* Ոսկան. Ջուրն Եգիպտացւոց իբրև զ՞։

* Ոմանք. Յեծեալք յերիվարս... և ելէ՛ք պա՞։

* Ոմանք. Եւ ՚ի վերայ գետոյն Եփ՞։

* Ոմանք. Ել Քաղաադ և առ։

* Ոմանք. Եւ աղաղակով քով։

* Բազոււնք. ՚ի ձեռն Երեմիայի մարգա՞։ Ոսկան. Եւ հարկանել զեր՞։

* Ոսկան. Եկեր սուր զկուռս քո։

* Ոմանք. Եւ բազմութիւնն տկարացան. և դարձցուք իւրաքանչիւր առ ժողովուրդ մեր... յաշխարհի իւր... Յունական որսոյն։

* Ոմանք. Սաովն, և Եբեր Եմովդ։

* Ոմանք. Իբրև զգահաւանդ ՚ի լերինս։ Ի՛ լուս՞. ՚ի վերայ՝ զգահաւանդակ, նշանակի՛ Թաբար։

* Յոմանս պակասի. Արա՛ քեզ բնակեալ դուստր Եգիպտաց՞։ Օրինակ մի. Նմա վկայ առ ՚ի չգոյէ բն՞։

Չա՛տ հատաւ ՚ի հիւսւոյ՝ եկն ՚ի վերայ նորա*։ ²¹Եւ վարձկանք նորա ՚ի նմա իբրև եզինք պարարակք. զի և նոքա ՚ի փախուստ դարձան առ հասարակ, և ո՛չ հանդարտեցին. զի օր կորստեան եկն ՚ի վերայ նոցա, և ժամանակ վրեժխնդրութեան*։ ²²Չա՛յն նորա իբրև զօձի՝ որ չչիցէ, զի ընդ աւագ գնայցեն. տապարաւորք եկեցսն ՚ի վերայ նորա իբրև զփայտահարս*։ ²³հարէք զանտառս նորա՝ ասէ Տէր Աստուած՝ զորոյ ո՛չ որ առնուցու զչափ. զի բազմասցի առաւել քան զմարախ, և ո՛չ է նոցա թիւ*։ ²⁴Յամօ՞թ եղև դուստրն Եգիպտացւոց. մատնեցաւ ՚ի ձեռս հիւսւային զօրացն*։ ²⁵Ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես խնդրեցից զվրեժ յԱմովնայ որդւոյ նորա, ՚ի փարաւոնէ, և յԵգիպտացւոց, և ՚ի դից նոցա, և ՚ի թագաւորաց նորա. և ՚ի փարաւովնէ՝ և ՚ի յուսացելոց ՚ի նա*։ ²⁶Եւ մատնեցից զնոսա ՚ի ձեռս խնդրողաց անձանց նոցա, և ՚ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, և ՚ի ձեռս ծառայից նորա։ Եւ յետ այնորիկ բնակեցէ իբրև զառաջինն՝ ասէ Տէր*։ ²⁷Բայց դու մի՛ երկնչիցիս ծառայ իմ Յակոբ. և մի՛ զարհուրիցիս Իսրայէլ. զի ահաւասիկ ես զերծուցանեմ զքեզ ՚ի հեռաստանէ, և զգաւակ քո ՚ի գերութենէ նոցա. և դարձցի Յակովբ և դադարեցէ, և ննջեցէ. և ո՛չ որ իցէ որ լլկիցէ զնա*։ ²⁸Եւ դու մի՛ երկնչի որ ծառայ իմ Յակոբ՝ ասէ Տէր. զի ես ընդ քեզ եմ, թէ արարից վախճան ամենայն ազգաց ուր ցրուեցի զքեզ անդր, այլ քեզ ո՛չ արարից վախճան. և խրատեցից զքեզ յիրաւունս, և քաւելով ո՛չ քաւեցից զքեզ*։

47

Գլուխ ԽԵ

1^Ի վերայ այլազգեաց: Բանն Տեառն՝ որ եղև առ Երեմիա մարգարտ ՚ի վերայ այլազգեաց, մինչևն՝ հարեալ էր փարաւոնի զԳազա*։ ²Այսպէս ասէ Տէր. Ահաւադիկ ջուրք ելանեն ՚ի հիւսւոյ, և եղիցին հեղեղատք յողողանել, և ողողեցսն զերկիրն լրիւ իւրով, զքաղաքն և զբնակիչս նորա։ Բողոք բարձցեն մարդիկ, և աղաղակեցսն ամենայն բնակիչք երկրին, ³ի ձայնէ՝ ասպատակի նորա, ՚ի զինուց ոտից նորա, և ՚ի շաչելոյ կառաց նորա, և ՚ի շառաչելոյ անուոցն նորա։ Եւ ո՛չ դարձցին հարք առ որդիս իւրեանց ՚ի լքմանէ ձեռաց իւրեանց*։ ⁴յաւուրն յորում զայցէ կորուսանել զամենայն այլազգիսն։ Եւ կորուսից զԾո՛ւր և զԾայդան, և զամենայն մնացորդս օգնականութեան նոցա. և սատակեցէ Տէր զայլազգիս զմնացորդս կղզեացն՝ և զԳամրաց։ ⁵Չասցէ՛ կնդութիւն ՚ի վերայ Գազայ. կործանեցաւ Ասկաղոն, և մնացորդքն Ենակիմայ։

* *Ոսկան.* Ջարդարեալ և գեղէ՛:

* *Բազոււնք.* Եւ վարձանք նորա ՚ի նմա։ *Յօրիմակին պակասէր.* Նորա ՚ի նմա իբրև ե՛:

* *Ոմանք.* Իբրև զձայն օձի որ... եկեցսն ՚ի վերայ նոցա։

* *Ոմանք.* Ձի բազմասցի իբրև զմարախ, և ոչ իցէ նոցա թիւ։

* *Ոմանք.* Դուստր Եգիպտոսի։

* *Ոմանք.* Եւ ՚ի դից նորա, ՚ի թագաւորաց նորա։

* *Բազոււնք.* Բնակեցուցից իբրև զառ՛:

* *Ոմանք.* Որ լլկեցէ զնա։

* *Ոմանք.* Ուր մերժեցի զքեզ անդ. այլ քեզ ոչ արասցի վախճան։

* *Ոմանք.* Ջքաղաքս և զբնակիչս։

* *Ոմանք.* Եւ ՚ի զինուց ոտից։ *Ոմանք.* Իւրեանց։ Լքան ՚ի ձեռաց իւրեանց... (4) զի սատակեցէ Տէր զայ՛:

Մինչև յեօրք կոտորեսցես* ճտուրդ Տեառն. մինչև ցեօրք ո՛չ դադարիցես. դարձի՛ր ՚ի պատեանս քո, դադարեա՛ն և վերացի՛ր: ⁷Ձիաօրդ դադարիցէ. զի Տէր հրամայեաց զնա ՚ի վերայ Ասկաղովնի, և ՚ի վերայ ծովեզերեայցն մնացելոց զարթնուլ:

48

Գլուխ ԽԸ

¹Ի վերայ Մովաբու: Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Վայ՛ ՚ի վերայ Նաբաւայ, զի կորեաւ. յամօթ եղև առաւ Կարիաթեմ. յամօթ եղև Մասոգամբ. ՚ի պարտութիւն մատնեցաւ*: ²Եւ ո՛չ ևս իցեն պարծանք Մովաբու յեսեբոն. խորհեցաւ ՚ի վերայ նորա չարիս. Եկայք հարցուք զնա յազգէ՛ և լռելով լռեսցէ, զկնի քո շրջեսցի հուր: ³Ձի գոյժ գուժողաց յՈրովնայիմայ. սատակումն և բեկումն մեծ ⁴բեկաւ Մովաբ. գոյժ տուք ՚ի Սեգովր*: ⁵զի լցաւ Աղովթ լալովք. ելցէ՛ լալով ընդ ճանապարհն Որովնայիմայ: Տագնա՛յ և գոյժ բեկման լուայ՛: ⁶Փախերո՛ւք՝ և ապրեցուցէ՛ք զանձինս ձեր. և եղիջիք իբրև զցիռ յանապատի: ⁷Քանզի յուսացեալ էի յամուրս քո. եկեսցեն նեղութիւնք և դու ըմբռնեսցիս, և ելցէ Քամովս ՚ի գերութիւն, քուրմք նորա և իշխանք նորա. միանգամայն ⁸հասցէ սատակումն ՚ի վերայ ամենայն քաղաքաց, և մի քաղաք մի՛ ապրեսցի, և կորիցէ բնակիչ՝ և սատակեսցի դաշտականն: Այսպէս ասէ Տէր. ⁹Տուք նշանակ Մովաբու. զի տոչորելով տոչորեսցի, և ամենայն քաղաքք նորա յանապատ եղիցին առ ՚ի չգոյէ բնակչաց*: ¹⁰Անիծեալ լիցի որ գործէ զգործ Տեառն հեղզութեամբ. և անիծեալ լիցի որ վերացուցէ զսուր իւր յարեմէ նորա*: ¹¹Չանգուցեալ էր ՚ի մանկութենէ իւրմէ Մովաբ. և յուսացեալ էր ՚ի փառս իւր. և ո՛չ թափեալ աման յամանոյ, և ո՛չ երթեալ ՚ի գերութիւն. վասն այնորիկ կայր համ նորա ՚ի նմին, և հոտ նորա ո՛չ պակասեաց*: ¹²Վասն այնորիկ ահա աւուրք զան՝ ասէ Տէր, և առաքեցից նմա կորացուցիչս, և կորացուցեն զնա. և զանօթս նորա մանրեսցեն, և զամանս նորա փշրեսցեն*: ¹³Եւ ամաչեսցէ Մովաբ ՚ի Քամովսայ, որպէս ամաչեաց տունն Իսրայէլի ՚ի Բեթելայ յուսոյն իւրեանց*: ¹⁴Ձիաօրդ ասիցէք թէ հզօրք եմք, և արք զօրաւորք պատերազմի: ¹⁵Կորեաւ Մովաբ՝ և քաղաք նորա, և ընտիր ընտիր երիտասարդք նորա անկան ՚ի սպանումն. ասէ Արքայ՝ որոյ Տէր զօրութեանց անուն է նորա*: ¹⁶Մերձ է ՚ի հասանել օր Մովաբու, և չարիք նորա արագեն՝ յոյժ*. ¹⁷Խախտեցէ՛ք զնա շուրջանակի. ամենեքին ոյք զհտէք զանուն նորա, ասացէ՛ք. Ձիաօրդ խորտակեցաւ ցուպն զեղեցիկ, զաւազանն մեծարանաց: ¹⁸Է՛ջ ՚ի փառաց, և նիստ ՚ի գիջի ետեղակալ դուստրդ

* Ոմանք. Ենակեմայ. մինչև յերբ կոտորիցես:

* Ոմանք. Վայ ՚ի վերայ Նաբաւայ... յամօթ եղև Մասոգամբ:

* Ոմանք. Գոյժ տուք ՚ի Սեգովր. կամ՝ ՚ի Չոգար:

* Ոմանք. Ձի լցաւ Աղաւովթ լալեօք... և գոյժ և բեկումն լուայ:

* Ոմանք. Տուք նշան Մովաբայ:

* Ոմանք. Որ գործիցէ զգործ Տեառն... որ վերացուցանէ զսուր իմ յարեմ՝:

* Բազումք. Եւ չէր թափեալ աման:

* Ոմանք. Եւ առաքեցից ՚ի նմա կորա՞ն:

* Ոսկան. ՚ի Բեթելայ յուսոյ իւրոյ:

* Ոմանք. Եւ քաղաքք նորա:

* Օրինակ մի. Մերձ էր հասանել սուր Մովաբու:

Դեբովնայ, զի կորեալ Մովաբ. եհաս ապականիչ ամրոցաց քոց* : ¹⁹Կա՛ց յանցս ճանապարհաց և հայեա՛ց՝ որ նստիսդ յԱրովեր, և հա՛րց ցփախստականս՝ և ցապրեալս, և ասասջի՛ր զի՞նչ գործեցաւ* : ²⁰Յամո՛թ եղև Մովաբ զի խորտակեցաւ. ճչեա՛ և աղաղակեա՛ և գո՛յժ տուր յԱռնովն՝ թէ կորեալ Մովաբ* : ²¹Եւ դատաստանք հասեալ գոն յերկրին Միսովրայ, ՚ի Քիլովն, և Յասա, և ՚ի Մովփաթ*, ²²և ՚ի Դեբոն, և ՚ի Նաբաւ, և ՚ի տունն Գերգաթեմայ*, ²³և ՚ի Կարաթեմ, և ՚ի տունն Գամովղայ, և ՚ի տունն Մաւովնայ*, ²⁴և ՚ի Կարիաւովթ. և ՚ի Բոսոր, և յամենայն քաղաքս երկրիդ Մովաբայ ՚ի հեռաւորս և ՚ի մերձաւորս* : ²⁵Խորտակեցաւ եղջերն Մովաբու, և յանդգնութիւն նորա խորտակեցաւ՝ ասէ Տէր: ²⁶Արբեցուցէ՛ք զնա, զի ՚ի վերայ Տեառն մեծաբանեաց. ծափզծափի հարցէ՛ Մովաբ, և եղիցի ՚ի կատականս և ինքն* : ²⁷Չի ո՛չ եթէ ՚ի ծաղր ինչ էր քեզ Իսրայէլ, և ՚ի գողօնս գտան. յորժամ մարտնչէիր ընդ նմա նովաւ գերեսցիս* : ²⁸Թողին զքաղաքս՝ և բնակեցան ՚ի քարածերպս բնակիչք Մովաբու. եղեն իբրև զաղաւնիս բունեալք ՚ի քարածերպս և ՚ի բերանս սորոց* : ²⁹Լուա՛յ զհպարտութիւնն Մովաբու. զի հպարտացաւ յոյժ բարձրութիւն նորա՝ և հպարտութիւն իւր՝ և ամբարտաւանութիւն իւր. և բարձրացաւ սիրտ նորա. ³⁰և ես ծանեայ զգործս նորա. ոչ ապաքէն ըստ կարի՞ նորա իցեն բազուկք նորա. այլ նա ո՛չ այնպէս արար: ³¹Վասն այնորիկ ճի՛չ բարձէք ՚ի վերայ Մովաբու. գուժեցէ՛ք յամենայն կողմանց Մովաբու. ՚ի վերայ արանց խզելոց՝ փետելոց՝ մրելոց* : ³²և մրմնջեսցէ իբրև զլալիւնն Յազերայ. լացցուք զքեզ այգիդ Սաբեմայ. բարունակք քո ձգեցան ընդ ծով. քաղաքք Յազերայ հասին ՚ի վերայ մրգոց քոց, և ՚ի վերայ կթոց քոց եհաս սատակումն* : ³³Մաշեցաւ ուրախութիւն և ցնծութիւն ՚ի Կարմելայ՝ և յերկրէն Մովաբացոց. զինի՛ էր ՚ի հնծանս քո. ընդ առաւօտս ո՛չ կոխեցին, և ընդ երեկս ո՛չ հանին զձայն հնծանահարաց* : ³⁴Յաղաղակէն յեսերոնայ մինչև յելելայ, և մինչև Յասաս. քաղաքք նոցա ետուն զձայնս իւրեանց ՚ի Սեգովրայ մինչև յերովնայիմ, և գո՛յժ ՚ի Սալեսայ. զի և ջուրն եբերիմայ ՚ի տապ խորշակի եղիցի* : ³⁵Եւ կորուսի՛ց զՄովաբ՝ ասէ Տէր. որ ելանէր ՚ի բազինս՝ և արկանէր խունկս աստուածոց օտարաց: ³⁶Վասն այնորիկ սիրտ իմ ՚ի վերայ Մովաբու իբրև զփող գոչեսցէ. սիրտ իմ ՚ի վերայ արանց առ որմովքն խզելոց իբրև զհնչիւն փողոյ. վասն այնորիկ զոր ինչ ստացաւն՝ կորեալ ՚ի մարդկանէ: ³⁷Ամենայն զլուխք ընդ ամենայն տեղիս գերօցին. և

* *Ոմանք.* Դուստրդ Եդեբովնայ... և եհաս ապակա՛:

* *Ոմանք.* ՅԱրուէր. հա՛րց ցփախստականս և ասասջի՛ր:

* *Ոսկան.* ՅԱռնօն և ՚ի քէն թէ կոր՛:

* *Բազոււմք.* Հասեալ գան յերկիրն Միսովրայ:

* *Բազոււմք.* Եւ ՚ի տունն Գերղաթամայ. *կամ*՝ Գեաղաթամայ:

* *Բազոււմք.* Եւ ՚ի Կարիաթեմ:

* *Ոսկան.* Եւ ՚ի Կարիօթ, և ՚ի Բո՛:

* *Ոմանք.* Արբուցէ՛ք զնա, զի... ծափս զծափի հարցէ՛:

* *Բազոււմք.* Եւ ոչ ՚ի գողօնս գտան:

* *Ոմանք.* Եւ բնակեցին ՚ի քարածերպս բնակիչք Մովաբայ... ՚ի քարածերպս ՚ի բերանս սո՛:

* *Ոսկան.* Փետտելոց՝ մրելոց:

* *Ոմանք.* Այգիդ Սեբեմայ... ձկտեցան ընդ ծով... հասին ՚ի վերայ մարգաց քոց:

* *Ոմանք.* Եւ ընդ երեկոյս ոչ հանին: *Ոսկան.* Ոչ հանին զձայնն ձայնահարաց:

* *Ոմանք.* Մինչև ցՅելայելայ, և մինչև ցՅասայ... և գոյժ ՚ի Սաղիմիայ. զի և ջուրն եբերիմայ: *Ոսկան.* Մինչև Յասաս... մինչև յՈրոնայիմ:

ամենայն մորուք խզեսցին. և ամենայն ձեռք կոծեսցին. և ամենայն հասակ քրձագգածք եղիցին*։ ³⁸Եւ յամենայն տանիս Մովսէսայ և ՚ի հրապարակս նորա ամենակին կո՛ծ. զի խորտակեցի զՄովսէս իբրև զաման՝ որ ո՛չ իմիք իցէ պիտանացու՝ ասէ Տէր*։ ³⁹Զիա՞րդ փոփոխեցաւ. ո՛ղբս առէք. զիա՞րդ դարձոյց զթիկունս իւր. ամաչեաց և եղև ՚ի ծաղր և ՚ի քէնս ամենեցուն որ շուրջ զնովա*։ ⁴⁰Զի այսպէս ասէ Տէր. Ահաւադիկ իբրև զարծուի՛ դիմեսցէ, և տարածեսցէ զձեռս իւր ՚ի վերայ Մովսէսու։ ⁴¹Առա՛ւ Կարիաւովք, և ըմբռնեցան ամուրք նորա. և եղիցի սիրտ զօրաւորացն Մովսէսայ յաւուր յայնմիկ իբրև զսիրտ կանանց յերկունս*։ ⁴²Եւ կորիցէ Մովսէս ՚ի բազմութենէ. զի ՚ի վերայ Տեառն մեծաբանեաց*։ ⁴³Վի՛հ, և ա՛հ, և որոգայթ ՚ի վերայ քո որ բնակեալդ ես ՚ի Մովսէս։ ⁴⁴Եւ որ փախիցէ յերեսաց ահին՝ անկցի ՚ի վի՛հն. և որ ելանիցէ ՚ի վի՛հ անտի՛ ըմբռնեսցի յորոգայթն. զի ածից զամենայն ՚ի վերայ Մովսէսու յամին յորում հանդէ՛ս արարից նմա՝ ասէ Տէր*։ ⁴⁵Եւ յարկսն յեսերոնայ հասին փախուցեալք յորոգայթն. զի հո՛ւր ել յեսերոնայ, և բո՛ց ՚ի քաղաքէն Սեհոնայ, և եկէ՛ր զիշխանս Մովսէսայ, և քննեաց զորդիսն Անովնայ*։ ⁴⁶Վայ՛ քեզ Մովսէս, կորուսեր զժողովուրդն Քանովսայ. զի առան՝ ուստերք նորա և դստերք նորա ՚ի գերութիւն։ ⁴⁷Եւ դարձուցից զգերութիւնն Մովսէսու յաւուրս յետինս՝ ասէ Տէր*։
Մինչև ցայս վայր են դատաստանք Մովսէսու։

Գլուխ ԽԹ

1՚ի վերայ որդւոցն Անովնայ։ Այսպէս ասէ Տէր. Միթէ որդիք ո՞չ իցեն Իսրայէլի. կամ յանձանձիչս ո՞չ իցէ նոցա. ընդէ՞ր ամփոփեաց Մեղքովմ զԳադ. և ժողովուրդ սոցա ՚ի քաղաքս նոցա բնակէ*։ ²Վասն այդորիկ ահա աւուրք զան՝ ասէ Տէր, և լուր արարից յՌաբովք որդւոցն Անովնայ զգոյժ քաղաքացն. և եղիցին յանապատ և ՚ի կորուստ, և բազինք նոցա հրով այրեսցին. և առցէ Իսրայէլ զիշխանութիւն իւր՝ ասէ Տէր*։ ³Գուժեա՛ յեսերոն՝ զի կորեաւ Գեհ. բողո՛ք բարձէք դստերք Յռաբայ. քրձագգածք եղերուք՝ և մոլեցարուք. սո՛ւզ առէք՝ և յայսկոյս յայնկոյս ընթացարուք զցանկովք. զի Մեղքովմ ՚ի գերութիւն երթիցէ, քուրմք նորա և իշխանք ՚ի միասին*։ ⁴Զի՞ ցնծայցես ՚ի խորանս քո Ձեփ, և ՚ի դաշտս քո դուստր ժպրիութեան. որ յուսացեալ էիր ՚ի գանձս քո և ասէիր. Ո՞ գայցէ ՚ի վերայ իմ*։ ⁵Ահաւասիկ ե՛ս ածից ՚ի վերայ քո երկելո՛ւ ասէ Տէր զօրութեանց յամենայն կողմանց շուրջ զքև բնակելոցդ. և ցրուեսցիք

* *Ոսկան.* Եւ ամենայն ձեռք կործանեսցի։ *Բազումք.* Եւ ամենայն հասակք քր՛։

* *Ոսկան.* Զի խորտակեցից։

* *Ոսկան.* Եւ եղև ՚ի ծաղր ամենեցուն։

* *Ոսկան.* Առաւ Կարիօթ։

* *Ոմանք.* Եւ կորեաւ Մովսէս։

* *Ոմանք.* Որ փախիցէ։

* *Ոմանք.* Ի յարկսն յեսերոնայ... և քննեաց զորդիսն Սաովնայ։

* *Ոմանք.* Եւ դարձուցից զգերութիւնն Յակոբու յա՛։ *Յօրինակին.* Յաւուրս յետին։

* *Ոմանք.* Կամ յանձանձիչ չիցէ նորա... Մեղ՛որքն. *կամ՝* Մող՛որքն զԳադ։

* *Ոմանք.* Եւ լուր արարից... և բազինք նորա հրով այ՛։

* *Ոմանք.* Գուժեաց յեսերոն... և յայսկոյս և յայնկոյս... զցանկով. զի Մեղքովմ։

* *Ոմանք.* Զի ցնծացես. *կամ՝* ցնծացայց ես ՚ի խորանս քո... և ասէիր ո՛վ գայցէ։

յիւրաքանչիւր կողմ. և ո՛չ ոք իցէ որ ժողովիցէ զթափառականսն*։ ⁶Եւ յետ այնորիկ դարձուցից զգերութիւն որդւոցն Ամոնայ՝ ասէ Տէր։

⁷**Ի վերայ Եդովմայ։** Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ոչ ևս գոյ իմաստութիւն ՚ի Թենան. կորեալ խորհուրդ ՚ի հանճարեղաց. գնաց իմաստութիւն նորա։ ⁸Խաբեցաւ տեղի նորա. ծանրացուցէք ՚ի նստել բնակիչք Դեդանայ, զի դժուարինս արար. ածի ՚ի վերայ նոցա ժամանակ՝ յորում այց արարից նմա*։ ⁹Ձի կթողք հասին ՚ի վերայ քո, և ո՛չ թողցեն ՚ի քեզ մնացորդս. իբրև գողք գիշերոյ դիցեն զձեռս իւրեանց ՚ի վերայ նոցա։ ¹⁰Ձի ես կործանեցի զեսաւ. և յայտնեցի զձաժուկս նորա, և թաքչել ո՛չ կարասցեն. կորեալ զաւակ նորա ՚ի ձեռանէ եղբօր և դրացւոյ իւրոյ. ¹¹և չի՞ք մնալ որբւոյն քում թէ կեցցէ. և այրիք նոցա յիս յուսացան*։ ¹²Ձի այսպէս ասէ Տէր. Ահա որոց ո՛չ էր օրէն ընպէլ զբաժակն՝ արբին ընպէլով. և դու արդարանալով արդարանայցե՞ս. ո՛չ արդարասցիս, այլ ընպէլով արբցես*։ ¹³Ձի յանձն իմ երդուայ՝ ասէ Տէր, թէ յապականութիւն և ՚ի նախատինս՝ և յանապատս, և յանէ՛ծս եղիցիս ՚ի մէջ բաժնի նորա, և ամենայն քաղաքք նոցա եղիցին աւերակք յաւիտեան*։ ¹⁴Լուր լուայ ՚ի Տեառէ, և հրեշտակս յազգս ազգս արձակեաց. ժողովեցարուք և հասէք ՚ի վերայ նորա. արի՛ք ելէք ՚ի պատերազմ*։ ¹⁵զի ահաւաղիկ ես փոքր մեւս ևս՝ և տա՛ց զքեզ ՚ի մէջ ազգաց արհամարհեալ ՚ի մէջ մարդկան։ ¹⁶Այպանութիւն քո հասոյց քեզ զայդ. լրբութիւն սրտի քոյ արար զքեզ ծակամուտ վիմաց, և ա՛ռ զզօրութիւն բարձրացեալ բլրոյն քոյ. զի եթէ բարձրացուցես իբրև զարժուի զբոյն քո, և անտի՛ իջուցից զքեզ՝ ասէ Տէր*։ ¹⁷Եւ եղիցի Եդովմ յանապատ. և ամենայն որ անցանիցէ ընդ նա՝ զարմասցի՛, և չչեսցէ ՚ի վերայ ամենայն հարուածոց նորա. ¹⁸որպէս կործանեցաւ Սողոմ և Գոմոր և բնակիչք նորա ասէ Տէր. և մի՛ նստցի ՚ի նա մարդ՝ և մի՛ բնակեսցէ ՚ի նմա որդի մարդոյ*։ ¹⁹Ահաւասիկ իբրև զամբուծ ելցէ ՚ի միջոյ Յորդանանու ՚ի տեղին Եթեմմա. զի վաղվաղակի հալածական արարից զնոսա ՚ի նմանէ. և ո՞վ է ընտրեալ ՚ի նմա, և այց արարից նմա, կամ ո՞վ ընդդէմ դառնայցէ ինձ. կամ ո՞վ իցէ այն հովիւ որ ընդդէմ կայցէ երեսաց իմոց*։ ²⁰Վասն այդորիկ լուարուք զխորհուրդ Տեառն զոր խորհեցաւ ՚ի վերայ Եդովմայեցւոց, և զխորհուրդ նորա զոր խորհեցաւ ՚ի վերայ բնակչաց Թենանայ։ Եթէ ո՛չ հարցին յետինք ոչխարացն, բայց եթէ յաւիտեան կայցեն քակտումն նոցա*։ ²¹Ի ձայնէ կործանման նորա շարժեցաւ երկիր. գո՛յժ քո եհաս ՚ի ծով Կարմիր, և լսելի՛ եղև աղաղակ քո*։ ²²Ահաւանիկ իբրև զարժուի երևեսցի, և սլասցի, և տարածեսցէ զթևս իւր ՚ի վերայ ամրոցացն նորա։ Եւ եղիցի սիրտ զօրաւորացն Եդովմայ յաւուր յայնմիկ իբրև զսիրտ կանանց յերկունս*։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես ՚ի վերայ... որ ժողովեսցէ զթափառականն։

* *Ոմանք.* Խաբեցաւ տեղի նոցա... բնակիչք Դեդանայ... այց արարի նմա։ *Ի լուս՝.* Դժուարինս արար Աստուած ՚ի վերայ նոցա. *համաձայն ոմանց ՚ի բնար՝.*

* *Բազումք.* Որբոյն քում։

* *Ոմանք.* Ահա որոյ ոչ... արբին ընպես. *կամ՝* ընպես և դու. ար՝։

* *Բազումք.* Եղիցին ՚ի մէջ բաժնի... քաղաքք նոցա եղիցին աւերակք յաւիտենից։

* *Ի բազումս պակասի.* Յազգս *ազգս* արձակեաց... արիք և ելէք ՚ի։

* *Ոմանք.* Բլրոցն քոց... որպէս արժուի զբոյն քո։

* *Այլք.* Եւ մի՛ նստցի ՚ի նմա մարդ։

* *Ոմանք.* Ահաւաղիկ... ՚ի տեղին Եթեմայ... հալածականս ա՛... և կամ ո՞վ իցէ։

* *Ոմանք.* Եւ ոչ հարցին յետինք... եթէ յաւեր կայցեն քակումն. *կամ՝* քանդումն նոցա։

* *Ոմանք.* Կործանման նոցա։

* *Ոմանք.* Ահաւասիկ իբրև զարժուի վերասցի... զթևս իւր ՚ի վերայ ամրոցն. *կամ՝* ամրոյն

ԽԳ ²³**Ի վերայ Դամասկոսի:** Յամօթ եղև Եմաթ՝ և Արփաթ. զի լուր չարեաց լուան, յիմարեցան ՚ի ծովուն. զայրացան և հանգչել ո՛չ կարասցեն: ²⁴Լքա՛ւ Դամասկոս. դարձաւ ՚ի փախուստ և կործանեցաւ. դողունն կալաւ զնա, և երկունք ճեպեցին զնա իբրև զծննդականի՝: ²⁵Եւ զիա՞րդ է. զի ո՛չ թողոյր զքաղաքն իմ, զաւանն զոր սիրեցի՝: ²⁶Վասն այնորիկ անկցի՛ն երիտասարդք ՚ի հրապարակս քո, և ամենայն արք պատերազմօղք կործանեցին յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր զօրութեանց: ²⁷Ե՛ս վառեցից հուր ՚ի պարիսպն Դամասկոսի, և կերիցէ՛ զհրապարակս որդւոցն Ադերայ՝:

²⁸**Ի վերայ Կեդարու:** Ի վերայ տիկնոջ հանգրուանին զոր եհար Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց: Այսպէս ասէ Տէր. Արի՛ք ելէ՛ք ՚ի վերայ Կեդարու, և հարէ՛ք զորդիսն Կեդեմայ՝: ²⁹Ձխորանս նոցա և զխաշի՛նս նոցա. առցեն զհանդերձս նոցա և զամենայն կահ և զկարասի նոցա. և զուղտերամակս նոցա առցեն իւրեանց. և կոչեցէ՛ք ՚ի վերայ նոցա կորուստ շուրջանակի՝: ³⁰Փախուցէ՛ք սաստիկ. խորեցէ՛ք ՚ի նստել բնակիչք հանգրուանիդ՝ ասէ Տէր. զի խորհուրդ խորհեցաւ ՚ի վերայ ձեր Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց. խորհեցաւ ՚ի վերայ քո խորհուրդ՝: ³¹Արի ե՛լ ՚ի վերայ ազգին դադարելոյ որ նստի ՚ի հանգստեան՝ ասէ Տէր. որոց ո՛չ դրունք, և ո՛չ նիգք, առանձինն բնակեալք: ³²Եւ եղիցին ուղտերամակք նոցա յաւար, և բազմութիւն խաշանց նոցա ՚ի կորուստ. և հոսեցից ընդ ամենայն հողմս զյապաւեալսն առ երեսօք, և յամենայն կողմանց նոցա ածից նոցա կործանումն՝ ասէ Տէր: ³³Եւ եղիցի հանգրուանն բնակութիւն ջայլամանց, և անապատ մինչև յաւիտեան. և մի՛ բնակեսցէ ՚ի նմա մարդ, և մի՛ նստցի ՚ի նմա որդի հողածնի՝:

³⁴**Ի վերայ Ելամայ:** Բանն Տեառն՝ որ եղև առ Երեմիա մարգարէ վասն Ելամայ յիսկզբան թագաւորութեանն Սեդեկիայ արքայի Յուդայ՝ և ասէ՛. ³⁵Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի. Ահաւաղիկ խորտակեցա՛ւ աղեղն Ելամայ, իշխանութիւն բռնաւորութեան նոցա՝: ³⁶Եւ ածից ՚ի վերայ Ելամայ չորս հողմս ՚ի չորից կողմանց երկնից, և ցրուեցից զնոսա ընդ ամենայն հողմս ընդ այնոսիկ. և ո՛չ իցէ ազգ յոր ո՛չ հասանիցեն թափառականքն Ելամայ: ³⁷Եւ զարհուրեցուցից զնոսա առաջի թշնամեաց նոցա որք խնդրէին զանձինս նոցա. և ածից ՚ի վերայ նոցա ըստ բարկութեան սրտմտութեան իմոյ՝ ասէ Տէր. և արձակեցից զսուր իմ զկնի նոցա մինչև սպառեցէ՛ զնոսա՝: ³⁸Արկից զաթոռ իմ յԵլամ, և կորուսից

նորա: *Ուր Ոսկան.* Ի վերայ Բօսրանայ:

* *Ոմանք.* Դողունն կալաւ զնոսա:

* *Ոմանք.* Եւ զհարդ էր... զոր սիրեցին: *Օրինակ մի.* Ձի ոչ թողոյր զերուսաղէմ ասէ զքաղաքն իմ:

* *Ոմանք.* Ի պարիսպս Դամասկոսի... որդւոյն Ադերայ:

* *Օրինակ մի յաւելու.* Ի վերայ Կեդարու. *որ են Արաբացիք: Յօրինակին.* Ելէք ՚ի վերայ Կենդարու: *Ոմանք.* Ձորդիսն Կեդամայ:

* *Ոմանք.* Եւ զամենայն զկահ... ՚ի վերայ նորա կորուստ:

* *Ոսկան.* Փախերու՛ք սաստիկ. խո՛ւ:

* *Ոմանք.* Եւ մի՛ բնակեսցէ անդ մարդ:

* *Օրինակ մի յաւելու.* Ի վերայ Ելամայ, *ազգք են Պարսիկք: Ոմանք.* Վասն Ելամայ. իսկզբան:

* *Ոմանք.* Ահաւասիկ խորտակեցաւ աղեղնն Եղովմայ. իշխանութիւն բռնութեան նորա:

Ուր Ոսկան. Ձիշխանութիւն բռնաւորութեան նորա առից:

* *Ոմանք.* Որք խնդրէին զանձինս իւրեանց:

անտի զթագաւորս՝ և զմեծամեծս՝ ասէ Տէր: ³⁹Եւ եղիցի յաւուրս յետինս
դարձուցից զգերութիւն Ելամայ՝ ասէ Տէր: Իսկզբան թագաւորութեան Սեդեկիայ
արքայի եղև բանս այս ՚ի վերայ Ելամայ:

50

Գլուխ Ծ

¹Ի վերայ Բաբելացւոց: Բանն զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ Բաբելոնի, առ
երկիրն Քաղդէացւոց ՚ի ձեռն Երեմիայ մարգարէի*: ²Պատմեցէք յազգս և լու
արարէք. նշան կանգնեցէք, լսելի՛ արարէք. մի՛ ծածկիցէք. ասասջի՛ք առ
Բաբելոն. յամօթ եղև Բէլ. փափուկքն աներկելոք. մատնեցաւ Սեովդաք. յամօթ
եղեն կուռք նորա. ամաչեցին գարշելիք նորա*: ³Ձի ե՛լ ՚ի վերայ նորա ա՛զգ ՚ի
հիւսւտյ. նա՛ դիցէ զերկիր նորա յապականութիւն. և ո՛չ ոք իցէ որ բնակիցէ ՚ի
նմա ՚ի մարդոյ մինչև յանասուն, զի խախտեցան և գնացին: ⁴Յաւուրսն
յայնոսիկ, և ՚ի ժամանակին յայնմիկ ասէ Տէր՝ եկեսցեն որդիքն Իսրայէլի.
ինքեանք և որդիքն Յուդայ ՚ի միասին, շրջեցին և լալով գայցեն առ Տէր
Աստուած իւրեանց. խնդրեսցեն* ⁵մինչև ՚ի Սիոն, հարցցեն զճանապարհէ, այսր
դիմեսցեն, և եկեսցեն և ապաւինեսցին ՚ի Տէր. զի ուխտ յաւիտենից է՝ և ո՛չ
մոռացին*: ⁶Իբրև զոչխարս կորուսեալս եղև ժողովուրդ իմ. հովիւք նոցա
մերժեցին զնոսա ՚ի վերայ լերանց, մոլորեցուցին զնոսա ՚ի լեռնէ ՚ի բլուր,
գնացին մոռացան զմակադատեղս իւրեանց: ⁷Ամենքեան որ գտանէին՝
սատակէին զնոսա. թշնամիք նոցա ասացին. Մի՛ ներեսցուք նոցա. փոխանակ
զի մեղան Տեառն. արօտք արդարութեան է, և Տեառն որ ժողովեաց զհարսն
նոցա*: ⁸Օտարացարո՛ւք ՚ի միջոյ Բաբելոնի. և յերկրէդ Բաբելացւոց ելէ՛ք, և
եղերո՛ւք իբրև զվիշապս առաջի խաշանց*: ⁹Ձի ահաւասիկ ես յարուցից՝ և
ածից ՚ի վերայ Բաբելացւոց զժողովս ազգաց մեծամեծաց յերկրէ հիւսւտյ, և
ճակատեսցին զնովաւ. և անտի ըմբռնեսցի. իբրև նետ՝ իմաստուն
պատերազմողի որ ո՛չ դարձցի ունայն*: ¹⁰Եւ եղիցի երկիրն Քաղդէացւոց յաւար.
և ամենայն աւարառութիւն նորա յագեսցին՝ ասէ Տէր. զի ուրախ լինէիք և
պարծէիք յափշտակել զժառանգութիւն իմ. ¹¹զի խայտայիք իբրև զուարալս ՚ի
վերայ դալարոյ, և ոգորէիք իբրև զցուլս: ¹²Յամօթ եղև մայրն ձեր յոյժ. մայրն որ
՚ի բարութեան էր. ահաւաղիկ վախճան ազգաց՝ աւեր, անջուրք, և անապատ*
¹³ի բարկութենէ Տեառն. և մի՛ բնակեսցի, այլ եղիցի յապականութիւն առ
հասարակ. և ամենայն որ անցանիցէ ընդ Բաբելոն՝ տրտմեսցի, և չչեսցէ ՚ի
վերայ ամենայն հարուածոց նորա: ¹⁴Ճակատեցարո՛ւք շուրջ զԲաբելոնիս
ամենայն աղեղնաւորք. ձի՛գ դիք ՚ի նա, և մի՛ խնայէք ՚ի նետս ձեր՝ զի Տեառն

* *Օրինակ մի.* Ի վերայ Բաբելացւոց պատգամ:

* *Ոմանք.* Եւ լուր արարէք... մի՛ ծածկէք: *Ոսկան.* Նշանակեցէք, լսելի արարէք... առաւ
Բաբելոն... մատնեցաւ Սեովդաք:

* *Ոսկան.* Իւրեանց, և խնդրեսցեն:

* *Ոմանք.* Յաւիտենից է, և ո՛չ մոռացի:

* *Ոմանք.* Արօտ արդարութեան է, և Տէր որ ժողովեաց:

* *Ի լուս՝.* Եւ յերկրէդ Քաղդէացւոց ելէք. *համաձայն բազմաց ՚ի բն՝:* *Ոսկան.* Իբրև
նոխագս առաջի խաշանց:

* *Ի լուս՝.* Եւ անտի ըմբռնեսցիս. իբ՛:

* *Օրինակ մի.* Ահաւաղիկ վաստակ ազգաց աւեր, անջուր:

մեղաւ*։ ¹⁵Իրախոյս բարձեք շուրջ զնովաւ, զի լքան ձեռք իւր. անկան մահարձանք՝ և կործանեցան պարիսպք նորա՝ զի վրէժխնդրութիւն յԱստուծոյ է. խնդրեցէք վրէժս ՚ի դմանէ. որպէս արարն՝ արարէք դմա*։ ¹⁶Սատակեցէք զգաւակ ՚ի Բաբելոնէ. և առնուցու մանգաղ ՚ի ժամանակի հնձոց. յերեսաց Յունական սրոյն իւրաքանչիւր ՚ի ժողովուրդ իւր դարձցին, և իւրաքանչիւր յերկիր իւր փախիցեն*։ ¹⁷Ոչխար մուրեալ Իսրայէլ. առեւծք մերժեցին զնա. նախ եկեր զնա թագաւորն Ասորեստանեայց, և յետոյ զոսկերս նորա արքայն Բաբելացոց։ ¹⁸Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես խնդրեցից վրէժ յարքայէն Բաբելացոց և յերկրէ՛ նորա, որպէս խնդրեցի վրէժ յարքայէն Ասորեստանեայց*։ ¹⁹Եւ պատսպարեցուցից զԻսրայէլ անդրէն ՚ի ճարակս իւր. և արածեսցի ՚ի Կարմելոս, և ՚ի Բասան, և ՚ի լերինն Եփրեմի, և ՚ի Գաղաադ. և յագեսցին անձինք նոցա*։ ²⁰Յաւուրսն յայնոսիկ, և ՚ի ժամանակին յայնմիկ՝ ասէ Տէր, խնդրեսցեն զանիրաւութիւնն Իսրայէլի, և ո՛չ ևս իցէ. և զմեղս Յուդայ՝ և ո՛չ գտանիցեն. զի քաւի՛չ եղէց անիրաւութեանց նոցա* ²¹Ի վերայ երկրի։ Ե՛լ դառնութեամբ ՚ի վերայ նորա, և ՚ի բնակչաց նորա խնդրեսցիր վրէժս. սո՛ւր և ապականութիւն զկնի նորա՝ ասէ Տէր. և արասջի՛ր ըստ ամենայնի զոր պատուիրեցի քեզ*։ ²²Չայն պատերազմի յերկրէն Քաղդէացոց, և բեկումն մեծ։ ²³Չիա՞րդ խորտակեցաւ և մանրեցաւ ուռնն ամենայն երկրի. զիա՞րդ եղև Բաբելոն յապականութիւն ՚ի մեջ ազգաց*։ ²⁴Յարձակեսցին ՚ի վերայ, և ըմբռնեսցիս՝ Բաբելոն, և ո՛չ իմասցիս. գտար և ըմբռնեցար, զի Տեառն ընդդէմ դարձար*։ ²⁵Եբաց Տէր զգանձս իւր, և եհան զանօթս բարկութեան իւրոյ. զի գործ Տեառն զօրութեանց է յերկրին Քաղդէացոց*։ ²⁶Եկին հասին նմա ժամանակք իւր. բացէք զշտեմարանս նորա. որոնեցէք զնա իբրև զայրս, և սատակեցէք զնա. մի՛ մնասցեն նոցա մնացորդք*։ ²⁷Յամաքեցուցէք զամենայն պտուղս նորա, և իջցեն ՚ի սպանումն. վայ՛ նոցա՝ զի եկն օր նոցա, և ժամանակ վրէժխնդրութեան նոցա։ ²⁸Չայն փախուցելոց և ապրելոց յերկրէն Քաղդէացոց, պատմե՛լ ՚ի Սիովն զվրէժխնդրութիւն ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ, զվրէժխնդրութիւն տաճարի իւրոյ*։ ²⁹Պատուէ՛ր տուք բազմաց ՚ի վերայ Բաբելոնի, ամենայն աղեղնաւորաց՝ թէ բանակեցարուք զդովաւ շուրջանակի. զի մի՛ ոք իցէ որ ապրիցի ՚ի դմանէ. հատուցէք դմա ըստ գործոց իւրոց, ըստ ամենայնի զոր արար՝ արարէք դմա. զի Տեառն ընդդէմ դարձաւ, Աստուծոյ Սրբոյն Իսրայէլի։ ³⁰Վասն այնորիկ անկցին երիտասարդք նորա ՚ի հրապարակս նորա, և ամենայն արք պատերազմօղք նորա անկեալ դնիցին յաւուր յայնմիկ՝ ասէ Տէր։ ³¹Ահաւասիկ ես ՚ի վերայ քո՝ ասէ Տէր զօրութեանց, ՚ի

* *Ոմանք*. Չիզ դիք ՚ի նմա։

* *Բազումք*. Վրէժխնդրութիւն է յԱստուծոյ։

* *Բազումք*. Ի Բաբելոնէ, որ առնուցու։ *Ոմանք*. Ի ժողովուրդ իւր դարձցի... փախիցէ։

* *Ոմանք*. Վասն այնորիկ այսպէս... ահաւասիկ ես խնդրեցից զվրէժ։

* *Օրինակ մի*. Անդրէն ՚ի ճակատս իւր։

* *Ոմանք*. Յուդայ. և ոչ գտանիցին։

* *Բազումք*. Դառնութեամբ ՚ի վերայ բլրոց... խնդրեցից վրէժս... զկնի նոցա, ասէ։

* *Ոմանք*. Եւ մատնեցաւ սիւնն ամենայն... յապականութիւն ամենայն ազգաց։

* *Բազումք*. Ի վերայ քո, և ըմբռնեսցիս։

* *Ոմանք*. Եբաց Տէր զաչս իւր։

* *Ոմանք*. Մի՛ մնասցէ նորա. *կամ՝* նմա մնաց՞։

* *Ոմանք*. Եւ ապրեցելոց յերկ՞։ *Ի լուս՞*. Յերկրէն Բաբելացոց. պատ՞. *համաձայն բազմաց ՚ի բնաք՞*։

վերայ հպարտիդ. զի հասեալ է օր քո՝ և ժամանակ վրէժխնդրութեան քոյ: ³²Եւ տկարացի հպարտութիւն քո, և կործանեսցի. և ո՛չ ոք իցէ որ յարուցանիցէ զնա. և վառեցից հո՛ւր յանտառս նորա, և կերիցէ շուրջ զնովաւ զամենայն: ³³Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Բռնադատեցան որդիքն Իսրայէլի և որդիքն Յուդայ. ամենեքեան որ գերեցին զնոսա, բռնաբարեցին զնոսա, և ո՛չ կամէին արծակել զնոսա*: ³⁴Որ փրկեաց զնոսա Յօզորն. Տէր ամենակալ անուն է նորա. դատեսցի՝ դատաստան ընդ ոսոխս իւր. զի բարձցէ զերկիրն, և զայրացի՝ բնակչաց Բաբելոնի*: ³⁵Սո՛ւր՝ ՚ի վերայ Քաղդէացւոցն՝ ասէ Տէր. և ՚ի վերայ բնակչացն Բաբելոնի, և ՚ի վերայ ամենայն մեծամեծաց նորա, և ՚ի վերայ խորհրդակցաց նորա*: ³⁶Սո՛ւր՝ ՚ի վերայ ըղձութեանց նորա, և բարձցին. սո՛ւր՝ ՚ի վերայ պատերազմողաց նորա, և լքցին: ³⁷Սո՛ւր՝ ՚ի վերայ երիվարաց և կառաց նորա. սո՛ւր՝ ՚ի վերայ նահատակաց նոցա, և ՚ի վերայ ամենայն խառնադանճիցն որ ՚ի մէջ նորա՝ և եղիցին իբրև զկանախ: Սուր՝ ՚ի վերայ գանձուց նորա, և յափշտակեսցին*: ³⁸Սո՛ւր՝ ՚ի վերայ ջուրց նորա, և ամաչեսցեն. զի երկիր դրօշելոց է. և ՚ի վերայ կղզեացն որովք պարծէին: ³⁹Վասն այնորիկ ճիւղաբնակեսցեն ՚ի կղզիսն, և բնակեսցեն ՚ի նմա դստերք համբարեաց. և մի՛ ևս շինեսցի ՚ի սպառ, և մի՛ ևս բնակեսցէ յաւիտեան*. ⁴⁰որպէս սատակեաց Աստուած զերկիրն Սոդոմացւոց և Գոմորացւոց, և զսահմանակիցս նորա՝ ասէ Տէր, և մի՛ բնակեսցէ անդ մարդ, և մի՛ պանդխտեսցի ՚ի նմա որդի մարդոյ*: ⁴¹Ահաւասիկ գո՛ւնդ գայ ՚ի հիւսիսոյ, և ա՛զգ մեծ. և թագաւորք բազումք զարթիցեն ՚ի ծագաց երկրէ: ⁴²Աղեղն և վաղակաւո՛ր ՚ի ձեռին իւրում ժպի՛րի է, և մի՛ ողորմեսցի. ձայն նոցա իբրև զծով գոչեսցէ. հեծեալք յերիվարս, պատրաստեալք իբրև զհուր ՚ի պատերազմ ՚ի վերայ քո դո՛ւստր Բաբելացւոց: ⁴³Լուաւ զլուր նոցա արքայն Բաբելացւոց, և լքան ձեռք նորա. նեղութիւն տազնապեաց զնա, երկունք իբրև ծննդականի: ⁴⁴Ահաւաղիկ իբրև զառեւծ ելցէ ՚ի յորձանացն Յորդանանու ՚ի տեղին Եթամայ. զի երագերա՛գ հալածեցից զնա ՚ի նմանէ. և զամենայն երիտասարդս յարուցից ՚ի վերայ նորա: Զի ո՞վ ոք է իբրև զիս. և ո՞վ ընդդէմ դառնայցէ ինձ. և ո՞վ ոք հովիւ կայցէ հակառակ*: ⁴⁵Վասն այդորիկ լուարո՛ւք զխորհուրդ Տեառն զոր խորհեցաւ ՚ի վերայ Բաբելոնի, և զխորհուրդս նորա զոր խորհեցաւ ՚ի վերայ բնակչաց Քաղդէացւոց. Եթէ ո՞չ ապականեցէք զգառչնս հօտից նոցա. Եթէ ոչ ապականիցին ՚ի նոցանէ արօտք*. ⁴⁶զի ՚ի ձայնէ կործանման Բաբելոնի շարժեսցի՝ երկիր, և գոյժ նորա լուիցի՝ ՚ի հեթանոսս:

51

* *Օրինակ մի.* Ամենեքին ոգորեցին զնոսա, բռնա՞:

* *Ոմանք.* Եւ որ փրկէ զնոսա Յօզորն:

* *Այլք.* Եւ ՚ի վերայ խորհրդականաց նորա:

* *Օրինակ մի.* Սուր ՚ի վերայ երիտասարդաց նորա և կառաց: *Ոմանք.* Նահատակաց նորա... խառնադանճից: *Ուր Ոսկան.* խառնիճադանճիցն:

* *Ոսկան.* Դստերք համբարուաց:

* *Ոմանք.* Եւ զԳոմորացւոց:

* *Ոմանք.* Ահաւասիկ իբրև... ՚ի տեղին Եթեմայ... կացցէ ինձ հակառակ: *Բազումք.*

Հալածեցից զնոսա ՚ի նմանէ:

* *Բազումք.* Եթէ ո՛չ ապականիցէք... Եթէ ոչ ապականեսցին:

Գլուխ ԾԱ

¹Այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ ե՛ս յարուցից 'ի վերայ Բաբելոնի՝ և 'ի վերայ բնակչաց նորա զսիրտ յարուցելոց, և հողմ խորշակի սատակիչ*։ ²Եւ առաքեցից 'ի Բաբելովն դարովիչս և դարովեսցեն գնա, և ապականեսցեն զերկիր նորա. զի վայ 'ի վերայ Բաբելոնի շուրջանակի յաւուր չարչարանց իւրոց*։ ³Լարեսցէ՛ որ լարելոցն իցէ զաղեղն իւր, և առցէ զանձամբ ոյր իցէ զէն. մի՛ խնայէք յերիտասարդս նորա, և ապականեցէ՛ք զամենայն զօրութիւն նորա*։ ⁴Եւ անկցին վիրաւորք յերկրին Քաղդէացւոց, և խոցուեալք շուրջ գնովաւ. ⁵զի ո՛չ եղև այրի Իսրայէլ և Յուդայ յԱստուծոյ իւրեանց և 'ի Տեառնէ ամենակալէ. զի երկիր նոցա լցա՛ւ անօրէնութեամբ 'ի սրբութեանցն Իսրայէլի*։ ⁶Փախերուք 'ի միջոյ Բաբելոնի, և ապրեցուցէք իւրաքանչիւր զանձն իւր, և մի՛ կործանիցիք յանիրաւութեանց նորա. զի ժամանակ վրէժխնդրութեան է նորա 'ի Տեառնէ. զհատուցումն նորա ի՛նքն հատուցէ*։ ⁷Բաժակ ոսկի Բաբելովն 'ի ձեռին Տեառն, որ արբուցանէ զամենայն երկիր 'ի գինւոյ իւրմէ. արբին հեթանոսք, վասն այնորիկ շարժեցան ազգք։ ⁸Եւ յանկարծակի կործանեցաւ Բաբելովն, և խորտակեցաւ։ Ո՛րք առէք 'ի վերայ դորա. առէք դեղ 'ի վիրաց դորա, թերևս բժշկեսցի*։ ⁹Բժշկեցա՛ք զԲաբելոն, և նա ո՛չ բժշկեցաւ. թողցուք զնա և զնասցուք իւրաքանչի՛ւր յերկիր իւր. զի մերձեցան մինչև յերկինս դատաստանք նորա. ամբարձան մինչև ցաստեղս*։ ¹⁰Եւ ա՛ծ Տէր դատաստան 'ի վերայ նորա. եկայ՛ք՝ և պատմեսցուք 'ի Սիոն զգործս Տեառն Աստուծոյ մերոյ։ ¹¹Կազմեցէ՛ք աղեղունս, լցէ՛ք զկապարճս. զի զարթոյց Տէր զոգի թագաւորին Մարաց. զի բարկութիւն նորա 'ի վերայ Բաբելոնի, և ջնջեսցէ զնա. զի վրէժխնդրութիւն Տեառն է, վրէժխնդրութիւն տաճարի նորա։ ¹²'ի վերայ պարսպացն Բաբելոնի կանգնեցէ՛ք նշան. կացուցէ՛ք պահապանս. զարթուցէ՛ք զառաջապահս. պատրաստեցէ՛ք զզէնս. զի ձեռն 'ի գործ արար. և արասցէ Տէր զոր ինչ խօսեցաւ 'ի վերայ բնակչացն Բաբելոնի*, ¹³բնակելոց առ ջուրքքն բազմօք, 'ի վերայ բազմութեան զանձուց նորա. հասեա՛լ է վախճան քո. արդարև՝ ստոյգ 'ի փոր քո եմուտ*։ ¹⁴Ձի երդուաւ Տէր զօրութեանց 'ի բազուկ իւր, թէ լցից զքեզ զօրօք իբրև մարախով, և բարբառեսցին 'ի վերայ քո որ իջանեն 'ի քեզ*։ ¹⁵Որ արար զերկինս զօրութեամբ իւրով, պատրաստեաց զտիեզերս իմաստութեամբ իւրով. ձգեաց զերկինս հանճարով իւրով*։ ¹⁶Եղ 'ի բարբառ զբազմութիւն ջուրց շառաչմանց յերկինս, և հանէ զամպս 'ի ծագաց երկրէ, և զփայլատակունս յանձրևս արար. եհան զլոյս յըշտեմարանց իւրոց*։

* *Ոմանք.* Ահաւաղիկ ես յարու՛։

* *Ոմանք.* 'ի Բաբելոն գորովիչս, և գորովեսցեն գնա։

* *Ոմանք.* Որ լարելոցն է զա՛... որոյ իցէ զէն։

* *Ոմանք.* Լցաւ անիրաւութեամբ 'ի սր՛։

* *Ոսկան.* Եւ ապրեցուցէ իւրաք՛։ *Ոմանք.* Իւրաքանչիւր զանձինս և մի՛ կործանիցիք յանիրաւութեան. *կամ՝* յանօրէնութեան։

* *Բազուկք.* Ողբս առէք 'ի վերայ դորա. առէք դեղ վիրաց դորա։

* *Ոմանք.* Մինչև յաստեղս։

* *Ոսկան.* Կանգնեցէք նշանս։

* *Բազուկք.* Բնակելովք առ ջուրքքն... և 'ի վերայ բազմութեան զանձու նորա։

* *Ոմանք.* Իբրև մարախաւ։

* *Ոմանք.* Որ արար զերկին գօրու՛։ *Ուր Ոսկան.* որ արար զերկիր։

* *Ոմանք.* Զլոյս 'ի շտեմարանաց։

¹⁷Յիմարեցա՛ւ ամենայն մարդ ՚ի գիտութենէ. յամօթ եղև ամենայն ոսկերիչ ՚ի դրօշելոց իւրոց, զի սո՛ւտ ձուլեցին, չի՛ք ոգի ՚ի նոսա: ¹⁸Սնտի՛ են գործքն ձաղանաց. ՚ի ժամանակի այցելութեան իւրեանց կորիցեն*: ¹⁹Ո՛չ այնպէս ինչ իցէ Բաժինն Յակովբայ. զի որ ստեղծ զամենայն՝ նա՛ է բաժին նորա, և գաւազան ժառանգութեան նորա. Տէր զօրութեանց է անուն նորա*: ²⁰Յրուեսցե՛ս դու ինձ զանօթդ պատերազմիդ, և ցրուեցից ես ՚ի քեզ զազգս. և բարձից ՚ի միջոյ քունմէ զթագաւորս*. ²¹և ցրուեցից ՚ի քեզ զայրուծի նորա. և ցրուեցի՛ց ՚ի վերայ քո զկառս և զհեծեալս նորա*: ²²Եւ ցրուեցի՛ց ՚ի քեզ զայր և զկին. և ցրուեցի՛ց ՚ի քեզ զօճերն և զերիտասարդն. և ցրուեցի՛ց ՚ի քեզ զընտիրն և զկոյսն. ²³և ցրուեցից ՚ի քեզ զհովիւն և զհօտ իւր. և ցրուեցի՛ց ՚ի քեզ զհողագործն և զհողագործութիւն իւր. և ցրուեցից ՚ի քեզ զգօրավարս և զգօրագլուխս իւր*: ²⁴Եւ հատուցից Բաբելոնի և բնակչաց Քաղդեացւոցն ըստ ամենայնի՝ չարեացն նոցա զոր արարին ընդ Սիոն, առաջի աչաց ձերոց՝ ասէ Տէր*: ²⁵Ահաւասիկ ե՛ս ՚ի վերայ քո լեառնդ ապականիչ՝ ասէ Տէր, որ ապականէիր զամենայն երկիր. և ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ քո, և թաւալեցուցից զքեզ ՚ի վիմացդ. և տա՛ց զքեզ ՚ի լեառն այրեցեալ*. ²⁶և ո՛չ ևս առնուցուն ՚ի քէն վէ՛մ անկեան՝ և վէ՛մ հիման. զի յապականութիւն յաւիտենի՛ց եղիցես՝ ասէ Տէր: ²⁷Առէ՛ք նշան ՚ի վերայ երկրիդ. փո՛ղ հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէ՛ք ՚ի վերայ դորա գունդս: Պատուէ՛ր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ազքանագեան գնդին. կանգնեցէ՛ք զնովաւ նետակալս. ելէ՛ք ՚ի վերայ. շարժեցաւ՝ և չարչարեցաւ, զի եկն եհաս ՚ի վերայ Բաբելոնի խորհուրդ Տեառն. երիվարք իբրև զբազմութիւն մարախոյ*: ²⁸Յրաւիրեցէ՛ք ՚ի վերայ նորա զազգս՝ և զթագաւորն Մարաց. զգօրավարս նորա, և զամենայն գօրագլուխս նոցա անդր. և զամենայն երկրի զիշխանութիւնս. ²⁹դնէ՛լ զերկիրն Բաբելացւոց յապականութիւն. զի մի՛ լինիցի ՚ի նմա բնակութիւն: ³⁰Կասիցին նահատակքն Բաբելոնի ՚ի պատերազմէ. նստցին ՚ի պաշարման. բեկա՛ւ զօրութիւն նոցա, և եղեն իբրև զկանայս. հրձի՛գ եղեն յարկք նոցա. խորտակեցան նիզք նոցա*: ³¹Փախստեայ փախստէի՛ պատահեսցէ. և գուժկան գուժկանի՛ դիպեսցի, գո՛յժ առնել թագաւորին Բաբելացւոց, թէ առաւ քաղաքն նորա. ՚ի ծագաց ելի՛ց իւրոց ³²ըմբռնեցան, և ժողովք նոցա ՚ի հո՛ւր այրեցան. և արք պատերազմօղք ՚ի դրո՛ւնս դիմեցին: ³³Ձի ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Տուն Բաբելացւոց իբրև գօրան վականակ կացի. սակաւիկ մեւս ևս՝ և հասցեն հունձք նորա: ³⁴Եկէ՛ր զիս՝ եհաս ՚ի վերայ իմ, բաժանեա՛ց զիս Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց. կացո՛յց զիս իբրև զաման մի ունայն. եկո՛ւ՛լ զիս իբրև զվիշապ. ելից զկուշտ իւր

* *Ոսկան.* Սնտիք են գործք, և ձաղանաց արժանիք, ՚ի ժամանակի: *Ոմանք.* ՚ի ժամանակի այցելութեան իւրեանց տկարացին:
 * *Ոմանք.* Այնպէս ինչ է Բա՛... որ ստեղծն զամենայն: *Ի բազումս պակասի.* Բաժին նորա. և գաւազան ժառանգութեան նորա:
 * *Ոմանք.* Ձանօթս պատերազմիդ:
 * *Ոմանք.* Եւ ցրուեցից ես ՚ի քեզ զայր և զձի նորա:
 * *Բազումք.* Եւ զգօրագլուխս քո:
 * *Ոմանք.* Ըստ ամենայն չարեաց զոր արարին:
 * *Ոմանք.* Ահաւաղիկ ես ՚ի վերայ քո:
 * *Ոսկան.* Արարատեան թա՛: *Ոմանք.* Այրարատեան թագաւորութեանն և Ասքանագեան գնդին: *Ուր և ոմանք ՚ի լուս՝. նշանակեն.* Յայք:
 * *Ոմանք.* Կասեցին նահատակք... նիզք նորա:

'ի փափկութենէ իմմէ. մերժեցան վաստակք իմ, ³⁵և տառապանք իմ 'ի Բաբելոն գնացին. ասասցէ բնակիչն Սիովնի. և արին իմ 'ի վերայ բնակչացն Քաղդէացւոց. ասասցէ Երուսաղէմ: ³⁶Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր.

Ահաւասիկ ես դատեցայ զոսոխն քո, և խնդրեցի զվրժ քո, և աւերեցի զժով նորա, և ցամաքեցուցի զաղբերս նորա*: ³⁷Եւ եղիցի Բաբելոն 'ի բլուրս՝ բնակութիւն վիշապաց, յապականութիւն և 'ի շէն, և մի՛ բնակեսցի ³⁸համօրէն. իբրև առիւծունք պատրաստեցան որդիք նոցա. և իբրև գկորիւնս առիւծուց: ³⁹Ի ջերմն խշտաց իւրեանց տա՛ց նոցա արհաւիրս, և արբուցից զնոսա. զի թմբրեսցին և ննջեսցեն քո՛ւն յաւիտենից. և մի՛ զարթիցեն՝ ասէ Տէր*: ⁴⁰Իջո՛ զնոսա իբրև զոչխարս 'ի սպանումն, և իբրև զխոյս այծեօք հանդերձ: ⁴¹Չիա՞րո՛ղ 'ի պարտութիւն՝ մատնեցար Սիսակ, և անկար յորս պարծանքդ ամենայն երկրի: Չիա՞րո՛ղ եղև Բաբելոն յապականութիւն 'ի մէջ ամենայն ազգաց*: ⁴²Ե՛լ 'ի վերայ Բաբելոնի ծովն գոչմամբ ալեաց իւրոց, և ծածկեցաւ: ⁴³Եղեն քաղաքք նորա յապականութիւն յերկիր անջուր և յանապատ. և մի՛ ոք իցէ որ բնակիցէ 'ի նմա, և մի՛ հանգիցէ 'ի նմա որդի մարդոյ*: ⁴⁴Եւ խնդրեցի զվրժ 'ի Բելայ 'ի Բաբելոն, և հանից զոր եկուլն 'ի բերանոյ նորա, և մի՛ ևս ժողովեսցին առ նա ազգք. նաև պարիսպքն Բաբելացւոց անկան: ⁴⁵Ելէ՛ք 'ի միջոյ նոցա ժողովուրդ իմ, և ապրեցուցէ՛ք իւրաքանչիւր զանձինս ձեր 'ի սրտմտութենէ բարկութեան Տեառն: ⁴⁶Մի՛ երբէք զանգիտիցեն սիրտք ձեր. և մի՛ երկնչիք 'ի համբաւաց զոր լսիցէք յերկրին. զի 'ի նմին տարուոջ մտցէ՛ լուրն, և յետ այնր տարուոյ՝ այլ լուր, և անհրաւութիւն յերկրին. առա՛կ 'ի վերայ առակի*: ⁴⁷Վասն այդորիկ ահա աւուրք գան՝ ասէ Տէր, և արարից հանդէս 'ի վերայ դրօշելոցն Բաբելացւոց, և ամենայն երկիր նորա ամաչեսցէ, և ամենայն վիրաւորք նորա անկցին 'ի միջի նորա*: ⁴⁸Եւ ցնծասցեն 'ի վերայ Բաբելոնի երկինք և երկիր և ամենայն որ 'ի նոսա. զի 'ի հիւսուոյ եկեսցեն թշուառացուցիչք նորա՝ ասէ Տէր: ⁴⁹Եւ 'ի Բաբելոն անկցին վիրաւորք ամենայն երկրին: ⁵⁰Ելէ՛ք ապրեալք յերկրէդ. մի՛ կայք. յիշեցէք զՏէր հեռաւորքդ, և Երուսաղէմ անկցի 'ի սիրտ ձեր*: ⁵¹Յամօ՞ք եղաք՝ զի լուաք զնախատինս մեր. ծածկեցին անարգանք գերեսս մեր. մտին այլազգիք 'ի սրբութիւնս մեր 'ի տան Տեառն: ⁵²Վասն այդորիկ ահա աւուրք գան՝ ասէ Տէր, և խնդրեցի զվրժ 'ի դրօշելոց նորա, և յամենայն երկրի անկանիցին վիրաւորք*: ⁵³Եւ եթէ բարձրացի Բաբելոն իբրև զերկինս, և եթէ ամրացուցէ զբարձրութիւն զօրութեան իւրոյ. յինէ՛ն եկեսցեն նմա սատակիչք՝ ասէ Տէր*: ⁵⁴Չայն գուժի 'ի Բաբելոն, և բեկումն մեծ յերկրին Քաղդէացւոց. ⁵⁵զի սատակեաց Տէր զԲաբելոն, և կորոյս 'ի նմանէն զձայն մեծ՝ զգոչիւն ալեաց իւրոց. իբրև ջուրք բազումք ետուն զբարբառ սատակման նորա: ⁵⁶Չի եկն 'ի վերայ Բաբելոնի թշուառութիւն. ըմբռնեցան սպառազէնքն նորա. զարհուրեցան աղեղնաւորքն նորա: Չի Աստուած հատուցի՛չ է. ինքն Տէր հատուցանէ նմա զհատուցումն: ⁵⁷Եւ

* Ոմանք. Ահաւաղիկ ես դատե՛... և աւարեցից զժով:

* Ոմանք. Ի ջերմ խշտաց իւ՛... և արբեցուցից զնոսա:

* Ոմանք. Ի պարտութիւն մատնեցար Սիսակիս:

* Բազումք. Եւ ոչ հանգիցէ 'ի նմա:

* Ոսկան. Ի համբաւաց զոր լսիցէք:

* Բազումք. Վասն այնորիկ ահա աւուրք: Օրհնակ մի. Անկցին 'ի միջոյ նորա:

* Ոմանք. Անկցի 'ի սիրտս ձեր:

* Այլք. Անկցին վիրաւորք:

* Բազումք. Եւ եթէ բարձրացուցէ զբարձրութիւն զօ՛:

արբեցուցէ՛ արբեցութեամբ զգորավարս նորա, և զհմաստունս նորա. զհշխանս նորա՝ և զգորագլուխս նորա, և զգորաւորս նորա. և ննջեսցեն ՚ի քուն յաւիտենից, և մի՛ զարթիցեն. ասէ Արքայ՝ Տէր ամենակալ անուն է նորա*:

⁵⁸Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Պարիսպն Բաբելոնի լայնեցա՛ւ. կործանելով կործանեսցի, և դրունք նորա բարձունք հրո՛վ այրեսցին. և ջանասցին ժողովուրդք ընդ այն, և ազգ իսկզբան սատակեսցին*:

⁵⁹Բանն զոր պատուիրեաց Տէր Երեմիայի մարգարէի ասել ցՍարեա որդի Ներեայ՝ որդւոյ Մասայ, յորժամ երթայր ՚ի Սեղեկիայ արքայէ Յուդայ ՚ի Բաբելոն, յամին չորրորդի թագաւորութեան նորա. և Սարեա է՛ր պարգևապետ նորա*:

⁶⁰Եւ գրեաց Երեմիա զամենայն չարիս որ գալոց էին ՚ի վերայ Բաբելոնի ՚ի մատենի միում. զամենայն զբանս զայսոսիկ գրեալս ՚ի վերայ Բաբելոնի: ⁶¹Եւ ասէ Երեմիա ցՍարեա. Յորժամ երթայցես ՚ի Բաբելոն, և տեսցես՝ և ընթեռնուցուս զամենայն զբանսդ զայդոսիկ. ⁶²և ասասցես. Տէր՝ դո՛ւ խօսեցար ՚ի վերայ տեղւոյս այսորիկ սատակել զսա. մի՛ ևս լինել ՚ի սմա բնակիչ ՚ի մարդոյ՝ մինչև յանասուն. զի յապականութիւն յաւիտենից եղիցի: ⁶³Եւ եղիցի յորժամ դադարեսցես յընթեռնւոյ՝ զմատեանդ զայդ, կապեսցես ՚ի դմա քա՛ր և ընկեսցես ՚ի մէջ Եփրատայ. ⁶⁴և ասասցես. Այսպէս ընկղմեսցի Բաբելոն, և մի՛ կանգնեսցի ՚ի չարեացն զոր ես ածից ՚ի վերայ դորա: **Եւ կացին մինչև ցայսվայր բանք Երեմիայ մարգարէի*:**

՚ի Թագաւորութենէն է այս բանք*:
Կատարումն գրոցս:

52

Գլուխ ԾԲ

ԽԴ ¹Քսան և մի ամաց էր Սեղեկիա արքայ ՚ի թագաւորել իւրում. և մետասան ամ թագաւորեաց յերուսաղէմ, և անուն մօր նորա Ամիտաաղ դուստր Երեմիայ ՚ի Ղուբենայ*:

²Եւ արար չա՛ր առաջի Տեառն, որպէս արար Յովակիմ: ³Չի ՚ի ցասունն Տեառն էր Երուսաղէմ և Յուդայ, մինչև մերժեաց զնոսա յերեսաց իւրոց. և ապստամբեաց Սեղեկիա յարքայէն Բաբելացոց*:

⁴Եւ եղև յիններորդի ամի թագաւորութեան նորա, և յամսեանն տասներորդի որ օր տասն էր ամսոյն. ե՛կն Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց ամենայն զօրօք իւրովք յերուսաղէմ, և պաշարեաց զնա. և շինեաց շուրջ զնովաւ պարիսպ առ պարիսպ ՚ի չորեքկուսի վիմաց: ⁵Եւ եհաս քաղաքն ՚ի նեղութիւն մինչև յամն մետասաներորդի Սեղեկիայ արքայի, ⁶և յամիսն չորրորդ՝ որ օր ինն էր ամսոյն.

* *Ոմանք.* Եւ արբուցէ արբեց՝... և զհշխանս նորա: *Բազունք.* Եւ ննջեսցեն քուն յա՛... Տէր զօրութեան անուն է նորա:

* *Ոմանք.* Ժողովուրդք ընդունայն, և ազգք ՚ի սկզբան կատակեսցին:

* *Ոսկան.* Յորժամ երթայր ընդ Սեղեկիա արքայի Յու՛:

* *Բազունք.* Չոր ես ածից ՚ի վերայ նորա:

* *Ամենայն գրչագիրք մեր այսու ծանօթութեամբ՝* Ի Թագաւորութենէն է, և այլն. *կնքեն զմարգարէութիւնս Երեմիայ, աստէն եղեալ զվախճանն՝* Կատարումն: *Չորով օրինակ մի և եթ զանց արարեալ՝ այսպիսի վերնագիր կարգէ յաջորդ բանիցն.* Պատմութիւն գերութեանն Յրեաստանի:

* *Այլք.* Ամիտաղ դուստր Երե՛:

* *Ոսկան.* Չի ցասունն Տեառն էր յերուսաղէմ և Յու՛:

և զօրացա՛ւ սով՝ ՚ի քաղաքին. և ո՛չ գտանէր հաց ուտելոյ ժողովրդեան երկրին: ⁷Եւ խրամատեցաւ քաղաքն, և ամենայն արք պատերազմօք փախեան, և ելին ՚ի քաղաքէ անտի՝ ՚ի գիշերի ընդ ճանապարհի դրանն՝ ընդ պարիսպ և ընդ պատուհան, ընդ կողմն պարտիզին արքունի. և Քաղդեացիքն շուրջ զքաղաքաւն էին. և գնացին ընդ ճանապարհս Արաբացոց*։ ⁸Եւ զհետ եղեն զօրք թագաւորին Քաղդեացոց, և հասին Սեղեկիա՛յ արքայի յանցս Երիթովի. և ամենայն ծառայք նորա ցրուեցան ՚ի նմանէ: ⁹Եւ կալան զթագաւորն և ածին առ արքայն Բաբելացոց ՚ի Դեբլաթա յերկիրն Եմաթայ. և խօսեցաւ ընդ նմա դատաստանօք*։ ¹⁰Եւ կոտորեաց արքայն Բաբելացոց զորդիսն Սեղեկիայ յանդիման նորա. և զամենայն իշխանս Յուդայ կոտորեաց ՚ի Դեբլաթա*։ ¹¹Եւ զաչսն Սեղեկիայ կուրացո՛յց. և կապեաց զնա ձեռակապօք. և տարաւ զնա արքայն Բաբելացոց ՚ի Բաբելոն, և եղ զնա ՚ի տուն աղօրեաց, մինչև յօր մահուան իւրոյ*։ ¹²Եւ յամսեանն հինգերորդի որ օր տասն էր ամսոյն. այն ամ իննուտասն էր Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացոց. եկն Նաբուզարդան դահճապետ որ կայր առաջի արքային Բաբելացոց. ¹³և հրծի՛գ արար զտունն Տեառն, և զապարանսն արքունի, և զամենայն տունս քաղաքին. և զամենայն ապարանս մեծամեծս այրեաց հրով: ¹⁴Եւ զամենայն պարիսպսն Երուսաղեմի շուրջանակի՝ ամենայն զօրօք Քաղդեացոց քակեցին որ էին ընդ դահճապետին*։ ¹⁵Բայց յաղքատաց ժողովրդեանն և ՚ի մնացորդաց, և զսինքրօրսն որ մնացին ՚ի քաղաքին. և զփախստականս որ փախեան առ արքայն Բաբելացոց, և զմնացորդս ժողովրդեանն եթո՛ղ Նաբուզարդան դահճապետ*։ ¹⁶Եւ յաղքատաց երկրին եթող Նաբուզարդան դահճապետ յայգեգործս և յարդիւնարարս: ¹⁷Եւ զսինսն պղնձիս տան Տեառն, և զխարիսխսն, և զծովն պղնձի որ էր ՚ի տան Տեառն՝ խորտակեցին Քաղդեացիքն, և խաղացուցին զամենայն պղինձն ՚ի Բաբելոն: ¹⁸Եւ զտսն և զվերնախարիսխսն, և զպսակսն, և զտաշտսն, և զմսահանսն. և զամենայն կահ պղնձի որովք առնէին սպաս՝ ա՛ռ*։ ¹⁹Եւ զապփովքն, և զամասարակովք, և զպարզուտսն, և զաշտանակսն, և զճաշակսն. և զտուփսն, որ ոսկի՝ ոսկի, և որ արծաթի՝ արծաթի, ա՛ռ դահճապետն*։ ²⁰Եւ սինքր երկու էին, և ծով մի. և ցուլքն երկուտասան էին որ կային ընդ ծովուն. զորս արար արքայ Սողոմոն ՚ի տան Տեառն. և ո՛չ գոյր չափ պղնձոյն, և ամենայն կահին պղնձոյ*։ ²¹Եւ սեանցն՝ երեսուն և հինգ կանգո՛ւն էր բարձրութիւն միո՛յ միո՛յ սեան. և մանեակ յերկուտասան կանգոյ շուրջ զնովաւ. և թանձրութիւն նորա շուրջ առ չորս մասունս*։ ²²Եւ ախաւեղագէտք նորա պղնձիք. և բարձրութիւն միոյ ախաւեղագիսին, ՚ի հինգ կանգոյ. և վանդակապատք և նռնաձեք ՚ի վերայ ախաւեղագիսին շուրջ շրջանակաւ՝ ամենայն պղնձի. ըստ նմին օրինակի և

* *Ի լուս՝* Ընդ պարիսպ և ընդ պատուար: *Բազումք*. Ընդ ճանապարհ Արաբաց՝:

* *Ոմանք*. Յերկրին Եմաթայ:

* *Յօրինակին*. Չորդիսն Եգեկիայ յանդիման նորա:

* *Բազումք*. Եւ ետ զնա ՚ի տուն... մինչև ցօր մահուան:

* *Ոմանք*. Եւ զամենայն պարիսպ Երուսաղեմի: *Այլք*. Ամենայն զօրք Քաղդեացոց:

* *Ոսկան*. Եթող ՚ի Նաբուզարդան:

* *Յօրինակին*. Եւ զվերնախարիսխսն. և զպսակսն և զտաշտն:

* *Օրինակ մի*. Եւ զապփովն, և զամա՛ սարակովքն, և զպարզուտայն:

* *Ոմանք*. Երկուտասան, որ կային... կահին պղնձոյ:

* *Ոմանք*. Առ չորս մասունս:

երկրորդի սեանն, ութ նոնաձև, կանգուն առ կանգուն, յերկոտասան կանգնոյ*:
²³Եւ էին նոնաձևք իննսուն և վեց, ՚ի միոջէ կողմանէ. և էին ամենայն նոնաձևքն հարելր ՚ի վերայ վանդակին շուրջանակի: ²⁴Եւ ա՛ռ դահճապետն զՍարեա զքահանայ զգլխաւորն, և զՍոփոնիա զերկրորդ, և երիս բարապանս*. ²⁵Եւ ՚ի քաղաքէ անտի ա՛ռ ներքինի մի, որ էր ոստիկան արանց պատերազմողաց. և եւթն այր անուանի որ կային առաջի թագաւորին՝ գտեա՛լս ՚ի քաղաքին. և զդպրապետն զիշխան զօրացն, և զդպրապետ ժողովրդեան երկրին, և վաթսուն այր ՚ի ժողովրդեան երկրին՝ որ գտան ՚ի քաղաքին: ²⁶Եւ ա՛ռ զնոսա Նաբուզարդան դահճապետ, և տարաւ առ արքայն Բաբելացոց ՚ի Դեբլաթա: ²⁷Եւ եհա՛ր զնոսա արքայն Բաբելացոց, և սպան զնոսա ՚ի Դեբլաթա յերկրին Եմաթայ: Եւ գերեցաւ Յուդայ անդուստ յերկրէ իւրմէ*: ²⁸Եւ այս ժողովուրդ է զոր գերեաց Նաբուքոդոնոսոր արքայ Յամին եւթներորդի ՚ի Յրէից երիս հազարս և քսան և երեք*. ²⁹Եւ յամին ութուտասաներորդի Նաբուքոդոնոսորայ, տարան յերուսաղէմէ՛ն ոգիս եւթն հարիւր երեսուն և երկուս*. ³⁰Եւ յամին քսաներորդի և երրորդի Նաբուքոդոնոսորայ խաղացոյց Նաբուզարդան դահճապետ ՚ի Յրէից ոգիս եւթն հարիւր քառասուն և հինգ. ընդ ամենայն ոգիք չորք հազար և վեց հարիւր*: ³¹Եւ եղև յերեսներորդի եւթներորդի ամի գերութեան Յովակիմայ արքայի Յուդայ, յերկոտասաներորդ ամսեանն ՚ի քսան և ՚ի չորս ամսոյն, բարձրացոյց Ուղ՛մարոդաք արքայ Բաբելացոց՝ յամին յորում թագաւորեաց՝ զգլուխ Յովակիմայ արքայի Յուդայ. և եհան զնա ՚ի տանէն ուր կայր ՚ի պահեստի*, ³²և խօսեցաւ ընդ նմա քաղցրութեամբ. և էարկ զաթո՛ռ նորա ՚ի վերոյ քան զաթոռս թագաւորացն որ էին ընդ նմա ՚ի Բաբելոնն*. ³³Եւ փոխեաց զպատմուճան բանտի նորա. և ուտէր հա՛ց հանապա՛զ առաջի նորա զամենայն աւուրս որչափ և եկեաց*: ³⁴Եւ կարգեցաւ նմա ռոճիկ հանապազորդ, զոր տային յարքայէն Բաբելացոց օր ըստ օրէ մինչև ցօր մահու զամենայն աւուրս կենաց իւրոց:

Տունք ՎՊ*:

ԹՈՒՂԹ ԲԱՐՈՒՔԱՅ*

* *Ի լուս՛*. Եւ ահաւեղագէսք նորա պղնձիք: *Ոմանք*. ՚ի վերայ ախաւեղագիսին... ութ նոնաձևս կանգուն առ կանգնոյ: *Ուր Ոսկան*. Եւ երկրորդի սեանն. և նոնաձևք կանգուն առ կան՛:

* *Ոմանք յաւելուն*. Եւ զՍոփոնիա *զքահանայ* զերկրորդն:

* *Ոմանք*. Յերկիրն Եմաթայ:

* *Ոմանք*. Եւ քսան և երիս:

* *Ոմանք*. Ոգիս ութ հարիւր և երե՛:

* *Ոմանք*. Ոգիք չորք հազարք:

* *Ոմանք*. Եւ եղև յամին երեսներորդի և եւթներ՛... ՚ի քսան և չորս ամսոյն... Ուղ՛մարոդաք արքայ:

* *Բագունք*. Եւ արկ զաթոռ:

* *Ոմանք*. Բանտին նորա, և ուտէր նա հաց հանա՛... որչափ և եկաց:

* *Աստանօր ՚ի վախճանի օրինակս մեր և եթ նշանակէ զհամարաթիւ տանց, զորով զանց առնեն այլք*:

* *Ամենայն զրչագիրք մեր կարգեն զԲարուք աստէն յառաջ քան զՈղբսն երեսնիայ. այլ*

Գլուխ Ա

ԽԵ/ա. ¹Եւ այս են բանք թղթոյն զոր գրեաց Բարուք որդի Ներեայ որդւոյ Մասսայ որդւոյ Սեղեկիայ որդւոյ Ասադայ, որդւոյ Քեղկեայ ՚ի Բաբելոն^{*}: ²Յամին հինգերորդի՝ որ օր եւթն էր ամսոյն, ՚ի ժամանակի յորում առին Քաղդէացիքն գերուսաղէմ, և այրեցին զնա հրով: ³Եւ ընթերցաւ Բարուք զբանս թղթոյս այսորիկ յականջս Յեթրոնիայ որդւոյ Յովակիմայ արքայի Յուդայ, և յականջս ամենայն ժողովրդեանն որ գային ՚ի մատեանն. ⁴և յականջս զօրացն, և որդւոց թագաւորացն. և յականջս ծերոցն. և յականջս ամենայն ժողովրդեանն, ՚ի փոքուէ մինչև ցնեծամեծս. ամենեցուն որ բնակեալն էին ՚ի Բաբելոն, առ Սուր զետով^{*}. ⁵և լային և պահէին, և կային յաղօթս առաջի Տեառն^{*}: ⁶Եւ ժողովեցին արծաթ ըստ իւրաքանչիւր կարի. ⁷և առաքեցին յերուսաղէմ առ Յովակիմ որդի Քեղկեայ՝ որդւոյ Սաղովմայ առ քահանայ. և առ այլ քահանայս գտեալս ընդ նմա յերուսաղէմ: ⁸Յառնուլ նորա զսպաս տանն Տեառն որ ել ՚ի տաճարէն՝ դարձուցանել յերկիրն Յուդայ, ՚ի տասներորդում Սիւան ամսոյ զսպասն արծաթեղէնս՝ զոր արար Սեղեկիայ որդի Յովսիայ արքայի Յուդայ^{*}. ⁹Ետ գերելոյ Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց՝ զՅեթրոնիա և զիշխանսն՝ և զկալանաւորակապսն՝ և զզօրաւորսն՝ և զժողովուրդ երկրին՝ յերուսաղէմ. և տարաւ զնոսա ՚ի Բաբելոն: ¹⁰Եւ ասէն. Ահաւասիկ առաքեցաք առ ձեզ արծաթ. և գնեցէք արծաթոյդ ողջակէզս՝ և զվասն մեղացն, և կնդրուկ՝ և արարէք մաննա. և հանէք ՚ի սեղանն Տեառն Աստուծոյ մերոյ^{*}: ¹¹Եւ աղօթս արարէք ՚ի վերայ կենաց Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացւոց, և ՚ի վերայ կենաց Բաղտասարայ որդւոյ նորա. զի եղիցին աւուրք նոցա իբրև զաւուրս երկնից՝ ՚ի վերայ երկրի: ¹²Եւ տացէ մեզ Տէր զօրութիւն, և լուսաւոր արասցէ զաչս մեր. և կեցցուք ընդ հովանեաւ Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացւոց, և ընդ հովանեաւ Բաղտասարայ որդւոյ նորա. և ծառայեսցուք նոցա աւուրս բազումս, և գտցուք շնորհս առաջի նոցա^{*}: ¹³Աղօթս արարէք և ՚ի վերայ մեր առ Տէր Աստուած մեր. զի մեղաք Տեառն Աստուծոյ մերում, և ո՛չ դարձաւ սրտմտութիւն Տեառն և բարկութիւն նորա ՚ի մէնջ մինչև ցայսօր: ¹⁴Եւ ընթերցջիք զթուղթդ զայդ զոր առաքեցաք առ ձեզ, դնել ՚ի տունդ Տեառն յաւուրս տօնի, և յաւուրս ժամանակի^{*}: ¹⁵Եւ ասասջիք. Տեառն Աստուծոյ մերոյ արդարութիւն է, և մեր՝ անօթ երեսաց, որպէս յաւուրս յայսմիկ առն Յուդայ՝ և բնակչաց Երուսաղէմի: ¹⁶և թագաւորաց մերոց, և իշխանաց մերոց, և քահանայից մերոց, և մարգարէից մերոց, և հարց մերոց առաջի Տեառն^{*}: ¹⁸Ջի

ոմանք զանագանին միայն ՚ի վերնագիրն՝ դնելով լոկ Բարուք:

** Ոմանք. Բանք թղթին զոր: Յօրինակին. Որդւոյ Ասադայ:*

** Ոմանք. ՚ի փոքուէ մինչև ՚ի մեծա՞: Յօրինակին. Առ Սուր զետով:*

** Ոսկան. Որք լուեալ լային և պա՞:*

** Ոմանք. ՚ի տասներորդում Նիսան ամսոյ... զսպասսն զարծաթեղէնս:*

** Ոմանք. Արծաթոյդ յողջակէզս:*

** Բազումք. Տացէ մեզ Տէր:*

** Ոմանք. Դնել ՚ի տուն Տեառն:*

** Ոսկան յաւելու յետ՝ առաջի Տեառն. համար 17. Սեղաք առաջի Տեառն Աստուծոյ մերոյ. և ո՛չ հաւատացաք՝ ապստամբեալք ՚ի նմանէ. (18) զի անհնա՞:*

անհնազանդ եղաք նմա, և ո՛չ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ գնա՛լ ըստ հրամանաց Տեառն՝ զոր ե՛դ առաջի մեր*։ ¹⁹Յօրէ յորմէ եհան Տէր զհարսն մեր յերկրէն Եգիպտացւոց մինչև ցայսօր էաք անհնազանդք Տեառն Աստուծոյ մերոյ, և խուսափեալք չլսել ձայնի նորա*։ ²⁰Եւ պատեցան զմեւք չարիքն, և նզո՛վք զոր կարգեաց Տէր ՚ի ձեռն Մովսիսի ծառայի իւրոյ, յաւուր յորում եհան զհարսն մեր յերկրէն Եգիպտացւոց՝ տա՛լ մեզ զերկիրդ որ բոխտ գկաթն և զմեղր՝ որպէս և այսօր։ ²¹Եւ ո՛չ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ ըստ ամենայն բանից մարգարէիցն զոր առաքեաց առ մեզ*։ ²²Եւ գնացաք իւրաքանչիւր ըստ մտաց սրտի իւրոյ չարի, հարկել աստուածոց օտարաց, առնել չար առաջի Տեառն Աստուծոյ մերոյ։

2

Գլուխ Բ

¹Եւ կացոյց Տէր զբանս իւր զոր խօսեցաւ ՚ի վերայ մեր, և ՚ի վերայ դատաւորաց մերոց որ դատէին զԻսրայէլ, և ՚ի վերայ թագաւորաց մերոց, և ՚ի վերայ իշխանաց մերոց, և ՚ի վերայ անճ Իսրայէլի և Յուդայ*։ ²ածել ՚ի վերայ մեր չարիս մեծամեծս, որ ո՛չ երբէք գործեցան ՚ի ներքոյ ամենայն երկնից, որպէս արարա՛ւ Իսրայէլի՝ ըստ գրելոցն յօրէնսն Մովսիսի*։ ³ուտել մեզ զմարմին որդւոց մերոց, և անճ զմարմին դստեր իւրոյ*։ ⁴Եւ մատնեաց զմեզ ՚ի ստրկութիւն ամենայն թագաւորաց որ շուրջ զմեւք էին. ՚ի նախատինս և յանապատ ՚ի մէջ ամենայն ժողովրդոց շուրջանակի՝ ուր ցրուեաց զմեզ Տէր անդր։ ⁵Եւ եղաք ՚ի վայր՝ և ո՛չ ՚ի վեր. զի մեղաք Տեառն Աստուծոյ մերոյ առ ՚ի չլսելոյ ձայնի նորա*։ ⁶Տեառն Աստուծոյ մերոյ արդարութիւն. և մեր՝ և հարցն մերոց ամօթ երեսաց, որպէս և յաւուրս յայսմիկ*։ ⁷զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ մեր զամենայն չարիսս զայսոսիկ որ եկին ՚ի վերայ մեր։ ⁸Եւ ո՛չ աղաչեցաք զերեսս Տեառն, դառնալ իւրաքանչիւր ՚ի խորհրդոց սրտի իւրոյ չարի։ ⁹Եւ զարթեա՛ւ Տէր ՚ի վերայ չարեացն, զորս զարթոյց Տէր ՚ի վերայ մեր. զի արդար է Տէր յամենայն ՚ի գործս իւր՝ զոր պատուիրեաց մեզ*։ ¹⁰Եւ ո՛չ լուաք ձայնի նորա երթալ զհետ հրամանաց Տեառն զոր ետ առաջի մեր*։

գ. ¹¹Եւ արդ Տէր Աստուած Իսրայէլի, որ հաներ զժողովուրդ քո յերկրէն Եգիպտացւոց, հզօր ձեռամբ՝ նշանօք և արուեստիւք՝ և մեծամեծ զօրութեամբք՝ և բարձր բազկաւ, և արարեր քեզ անուն որպէս յաւուր յայսմիկ*։ ¹²Մեղաք ամպարշտեցա՛ք՝ անիրաւեցաք Տէր Աստուած մեր յամենայն իրաւունս քո։ ¹³Դարձցի սրտմտութիւն քո ՚ի մենջ. զի մնացաք նուազք ՚ի մէջ հեթանոսաց՝ ուր

* *Բազումք*. Չոր ետ առաջի մեր։

* *Ոմանք*. Եւ մինչև ցայսօր... և խուսափեալք չլսել ձայն։

* *Ոմանք*. Տեառն Աստուծոյ մերում։

* *Ոմանք*. Եւ կացոյց Տէր զբան իւր։

* *Ոմանք*. Որպէս և արարաւ։

* *Ոմանք*. Չմարմինս որդւոյ մերոյ. *կամ*՝ իւրոյ... (5) ամենայն թագաւորութեանց որ շուրջ։

* *Ոմանք*. Եւ եղեաք ՚ի վայր... Տեառն Աստուծոյ մերում։

* *Ոսկան*. Եւ մեզ և հարց մերոց։

* *Ոմանք*. Յամենայնի գործս իւր։

* *Ի լուս*՝. Չոր եդ առաջի մեր։

* *Ոմանք*. Տէր Աստուած մեր որ հաներ... որպէս և յաւուր յայսմիկ*։

ցրուեցեր զմեզ անդր: ¹⁴Լուր Տէր աղօթից մերոց, և խնդրուածոց մերոց, և փրկեա՛ զմեզ վասն անուան քոյ. և տուր մեզ շնորհս առաջի գերչաց մերոց*:

¹⁵Ձի ծանիցէ ամենայն երկիր՝ թէ դու ես Տէր Աստուած մեր. զի անուն քո կոչեցաւ ՚ի վերայ Իսրայէլի, և ՚ի վերայ ազգի նորա: ¹⁶Տէր՝ նայեաց՝ ՚ի տաճարէ սրբոյ քումմէ, և խորհեաց զմեզ. խոնարհեցո՛ Տէր զունկն քո՝ և լուր*:

¹⁷Բաց զաչս քո՝ և տես. զի ո՛չ եթէ մեռեալք ՚ի դժոխս որոց առան ոգիք ՚ի միջոյ նոցա, տացեն փառաւորութիւն և իրաւունս Տեառն: ¹⁸Այլ անձինք տրտմեալք յանհնարին տրտմութիւնս, որ գնան կորացեալք՝ և հիւանդացեալք, և աչք առկայծեալք՝ և անձինք քաղցեալք՝ տացեն քեզ փառս և արդարութիւն: ¹⁹Տէր՝ ո՛չ եթէ առ իրաւանց հարցն մերոց և թագաւորաց մերոց արկանենք գութս առաջի քո Տէր Աստուած մեր: ²⁰Ձի ածեր զսրտմտութիւն քո և զբարկութիւն քո ՚ի վերայ մեր, որպէս և խօսեցար ՚ի ձեռն ծառայից քոց մարգարէից. եթէ ²¹այսպէս ասէ Տէր. խոնարհեցուցէք զպարանոցս ձեր, և հարկեցարո՛ւք արքային Բաբելացւոց. և նստարո՛ւք յերկրին զոր ետու հարցն ձերոց*:

²²Եւ եթէ ոչ լուիցէք ձայնի Տեառն հարկել արքային Բաբելացւոց, պակաս արարից ՚ի քաղաքացոյ Յուդայ և արտաքոյ երուսաղէմի՝ ²³զձայն ուրախութեան, և զձայն ցնծութեան, զձայն փեսայի և զձայն հարսին. և եղիցի ամենայն երկիրդ յանապատ ՚ի բնակչաց*:

²⁴Եւ ո՛չ լուաք ձայնի քում հարկել արքային Բաբելացւոց: Եւ կացուցեր զբանս քո զոր խօսեցար ՚ի ձեռն ծառայիցն քոց մարգարէից, հանել զոսկերս թագաւորացն մերոց, և զոսկերս հարց մերոց ՚ի տեղուջէ իւրեանց: ²⁵Եւ ահա անկեա՛լ կան ՚ի տօթի տունջեան, և ՚ի ցուրտ գիշերոյ. և մեռան ՚ի ցաւս չարաչարս՝ ՚ի սով և ՚ի սուր և ՚ի գերութիւն: ²⁶Եւ արարեր զտաճարն քո յորոյ վերայ կոչեցաւ անուն քո, որպէս յաւուրս յայսմիկ՝ վասն չարութեան տանն Իսրայէլի և տանն Յուդայ: ²⁷Եւ արարեր ընդ մեզ Տէր Աստուած մեր ըստ ամենայն հեզութեան քում, և ըստ ամենայնի մեծի գթութեան քոյ*:

²⁸Որպէս խօսեցար ՚ի ձեռն ծառայի քոյ Մովսիսի, յաւուր պատուիրելոյ քոյ նմա գրել՝ զօրէնս քո առաջի որդւոցն Իսրայէլի: ²⁹Եւ ասել. եթէ ոչ լուիցէք ձայնի իմում. եթէ ոչ շըռինդդ մեծ և յոյժ դարձցի ՚ի փոքրկութիւն ՚ի մէջ ազգաց ուր ցրուեցից զձեզ անդր*:

³⁰Ձի գիտեմ եթէ ո՛չ լսիցեն ինձ, զի ժողովուրդ խստապարանո՛ց է. և դարձուցանեն զսիրտս իւրեանց յերկրին պանդխտութեան իւրեանց*:

³¹Եւ ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր Աստուած նոցա. և տաց նոցա սիրտ՝ և ականջս լսելոյ: ³²Եւ օրհնեսցեն զիս յերկրին գերութեան իւրեանց. և յիշեսցեն զանուն իմ: ³³Եւ դարձցին ՚ի խստութենէ պարանոցի իւրեանց, և յիրաց չարեաց իւրեանց. զի յիշեսցեն զճանապարհս հարց իւրեանց մեղուցելոց առաջի իմ*:

³⁴Եւ դարձուցից զնոսա յերկիրն զոր երդուայ տա՛լ հարցն նոցա Աբրահամու և Սահակայ և Յակոբայ, և տիրեսցեն նմա. և բազմացուցից զնոսա, և ո՛չ նուաղեսցին*:

³⁵Եւ հաստատեցից նոցա ո՛ւխտ

* *Ոմանք.* Եւ փրկեա՛ զմեզ վասն քո:

* *Ոսկան.* Ձունկն քո՝ և լուր մեզ:

* *Բազումք.* Եւ հարկեցէք արքային:

* *Ոսկան.* Երկիրդ անապատ ՚ի բն*:

* *Ոմանք.* Յեզութեան քո, և ընդ ամենայն մեծի:

* *Ոսկան.* Եւ ասել եթէ լուիցէք: *Ոմանք.* Շռինդն մեծ և յոյժ դարձցի փոքրկութիւն:

* *Ոմանք.* Եթէ ո՛չ լուիցեն ինձ... յերկիրն պանդխտութեան:

* *Ոմանք.* Եւ յիրաց չարաց իւ՛... զճանապարհ հարցն իւ՛:

* *Ոմանք.* Եւ Յակոբու... և ոչ նուաղեսցին:

յաւիտենական լինել ինձ նոցա յԱստուած, և նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ: Եւ ո՛չ ևս խախտեցից զժողովուրդ իմ զԻսրայէլ յերկրէն զոր ետու նոցա:

3

Գլուխ Գ

¹Տէր ամենակալ՝ Աստուած Իսրայէլի, անձինք նեղեալք՝ և հոգիք ձանձրացեալք աղաղակեն առ քեզ՝: ²Լո՛ւր Տէր և ողորմեա՛ց, զի Աստուած ողորմա՛ծ ես, և ողորմեա՛ց՝ զի մեղաք առաջի քո. ³զի դու բնակեալ ես յաւիտեան, և մեք կորստակա՛նք յաւիտեան: ⁴Տէր ամենակալ՝ Աստուած Իսրայէլի, լո՛ւր աղօթից մեռելոցն Իսրայէլի, և որդւոցն մեղուցելոց առաջի քո. որք ո՛չ լուան ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց. և պատեցին զմեզ չարիք: ⁵Մի՛ յիշեր զանիրաւութիւնս հարցն մերոց, այլ յիշեա՛ զձեռն քո, և զանուն քո ՚ի ժամանակի յայսմիկ. ⁶զի դու՛ Տէր Աստուած մեր. և օրհնեսցուք զքեզ Տէր: ⁷Ձի վասն այսորիկ ետուր զերկելո քո ՚ի սիրտս մեր կարդա՛լ զանուն քո. և օրհնեսցուք զքեզ ՚ի գերութեանս մերում. զի դարձուցաք ՚ի սիրտս մեր զամենայն անիրաւութիւնս հարցն մերոց մեղուցելոց առաջի քո՝: ⁸Ահաւասիկ մեք այսօր ՚ի գերութեան մերում. ուր ցրուցեր զմեզ այսր ՚ի նախատինս՝ և ՚ի նզովս՝ և ՚ի պարտիսս ըստ ամենայն անօրէնութեանց հարց մերոց՝ որ ապստամբեցին ՚ի Տեառնէ Աստուծոյ մերմէ՛:

դ. ⁹Լո՛ւր Իսրայէլ զպատուէրս կենաց. ո՛ւնկն դիք ճանաչել զիմաստութիւն: ¹⁰Ձի՛նչ է Իսրայէլ. զի՞ է զի յերկիրդ թշնամեաց ես՝: ¹¹Յնացար յերկրի օտարութեան, խառնակեցար ընդ դիակունս. համարեցար ընդ իջեալս ՚ի դժոխս՝: ¹²Թողեր զերկիրն իմաստութեան: ¹³Եթէ ՚ի ճանապարհն Աստուծոյ գնացեալ էիր, բնակեալ էիր խաղաղութեամբ յաւիտեանս ժամանակաց՝: ¹⁴Ուսի՛ր՝ ո՞ւր է իմաստութիւն, ո՞ւր է զօրութիւն, ո՞ւր է հանճար, ճանաչել միանգամայն՝ թէ ո՞ր են կեանք երկայնակեացք. ո՞ւր է լոյս աչաց և խաղաղութիւն. ¹⁵ո՞ եգիտ զտեղի նորա, և ո՞ եմուտ ՚ի զանձս նորա: ¹⁶Ո՞ւր են իշխանք հեթանոսաց՝ և որ տիրէին զազանաց երկրի՞. ¹⁷որ ընդ թռչունս երկնից ճախրէին. ¹⁸և զանձէին արծաթ և ոսկի՝ յոր յուսացան մարդիկ. և ո՛չ գոյր բաւ ստացուածոց նոցա. և որք գործեն զարծաթն և զոսկին, և հոգան. և ո՛չ գոն հանգամանք գործոց նոցա՝: ¹⁹Ապականեցան և ՚ի դժոխս իջին. և այլք փոխանակ նոցա կանգնեցան: ²⁰Երիտասարդք տեսին լո՛յս, և բնակեցին յերկրի. և զճանապարհս իմաստութեան ո՛չ ծանեան. ²¹և ո՛չ ՚ի միտ առին զշաւիղս նորա, և ո՛չ կացին ՚ի վերայ նորա. որդիք նոցա ՚ի ճանապարհէ նորա հեռի՛ եղեն՝: ²²Ո՛չ լու եղև ՚ի Քանան, և ո՛չ երևեցաւ ՚ի Թեման: ²³Եւ ո՛չ որդիքն

* *Ոմանք.* Եւ ոգիք ձանձրաց՝:

* *Ոսկան.* Ձի վասն այնորիկ: *Ոմանք.* Չամենայն անօրէնութիւնս հարցն:

* *Ոմանք.* Չմեզ այսօր ՚ի նախատի՞... ըստ ամենայն անիրաւութեանց:

* *Ոսկան.* Իսրայէլ, զի յերկիրդ թշ՝:

* *Ոմանք.* Յերկիրդ օտարութեան, խառնեցար ընդ:

* *Յօրինակին պակասէր.* Գնացեալ էիր, *բնակեալ էիր* խաղա՞: *Ուր ոմանք.* բնակէիր խա՞:

* *Ոմանք.* Եւ որ տիրեն զազա՞. և *ոմանք.* և որ իշխեն զազա՞:

* *Ի բազումս պակասի.* Չարծաթն և զոսկին. և:

* *Բազումք.* Ի ճանապարհէ նոցա հեռի:

Հագարու խնդրեն զիմաստութիւն. վաճառականք Մերանայ և Թեմանայ. և առասպելախօսք՝ և քննիչք իմաստութեան զճանապարհն իմաստութեան ո՛չ ծանեան, և ո՛չ յուշ եղեն նոցա շաւիղք նորա*։ ²⁴Ո՛վ Իսրայէլ՝ որպէս զի մեծ է տունն Աստուծոյ, և ընդարձակ է տեղի ստացուածոց նորա։ ²⁵Մեծ է՝ և ո՛չ գոյ բաւ. բարձր և անչափ։ ²⁶Ա՛նդ ծնան սկայքն անուանիք, իսկզբանէ եղեալք մեծամեծք, հմո՛ւտք պատերազմաց։ ²⁷Ո՛չ եթէ զնոսա ընտրեաց Աստուած, և ո՛չ զճանապարհ իմաստութեան ետ նոցա։ ²⁸Եւ կորեան առ ՚ի չգոյէ իմաստութեան, և սատակեցան վասն անմտութեան իւրեանց։ ²⁹Ո՞ ել յերկինս և ա՛ռ զնա՝ և իջոյց զնա յամպոց*։ ³⁰Ո՛ անց յայնկոյս ծովու՝ և եգիտ զնա, և բերիցէ զնա ընդ ընտիրս ոսկւոյ*։ ³¹Չի՞ք որ գիտէ զճանապարհս նորա, և ո՛չ որ զմտա՛ւ ածիցէ զշաւիղս նորա*։ ³²Այլ որ գիտէն զամենայն՝ նա՛ ճանաչէ զնա, եգիտ զնա իմաստութեամբ իւրով. և որ կազմեաց զերկիր յաւիտեանս ժամանակաց, ելի՛ց զսա անասնօք և չորքոտանեօք։ ³³Որ առաքէ զլոյս՝ և զնայ. կոչեաց զնա՝ և նա լուա՛ւ նմա դողութեամբ։ ³⁴Եւ աստեղք ծագեցին յիւրաքանչիւր պահպանութեան՝ և ուրախ եղեն։ ³⁵Կոչեաց զնոսա՝ և ասեն. Ահա՛ւասիկ կամք. ծագեցին ուրախութեամբ Արարչի իւրեանց։ ³⁶Սա՛ է Աստուած մեր՝ ընդ որում ո՛չ համարեսցի այլ*։ ³⁷Եգիտ զամենայն ճանապարհս իմաստութեան. և ետ զնա Յակոբու ծառայի իւրում, և Իսրայէլի սիրեցելոյ ՚ի նմանէ*։ ³⁸Յետ այսորիկ յերկրի երևեցաւ՝ և ընդ մարդկան շրջեցաւ։

4

Գլուխ Դ

¹Այս են գիրք հրամանաց Աստուծոյ, և օրէնք որ կան յաւիտեան։ Ամենեքին որ ընդունին զնա կեան, և որք թողուն զնա մեռցին*։ ²Դարձ Յակովբ՝ և բո՛ւռն հար զնմանէ, ընդ ծագումն առաջի լուսոյ նորա։ ³Մի՛ տար այլում զփառս քո, և մի՛ զօգուտ ազգի օտարոտւոյ*։ ⁴Երանի՛ է մեզ Իսրայէլ, զի հաճոյքն Աստուծոյ ծանօթք մեր են։ ⁵Քաջալերեաց ժողովուրդ իմ. յիշեա՛ Իսրայէլ. ⁶զի վաճառեցարուք յազգս՝ և ո՛չ ՚ի կորուստ. փոխանակ զի բարկացուցէք դուք զԱստուած՝ մատնեցայք հակառակորդաց. ⁷քանզի զայրացուցէք զԱրարիչ ձեր. զոհեցէք դիւաց՝ և ո՛չ Աստուծոյ։ ⁸Մոռացարուք զկերակրիչն ձեր զԱստուած յաւիտեան. տրտմեցուցէք և զդայեակն ձեր զԵրուսաղէմ*։ ⁹զի ետես զեկեալ ՚ի վերայ ձեր զբարկութիւն յԱստուծոյ՝ և ասէ.

Ե. Լուարո՛ւք պանդուխտք Սիովնի, զի ած ՚ի վերայ իմ Տէր սուգ մեծ։ ¹⁰Տեսի զգերութիւն ուստերաց և դստերաց իմոց, զոր ած ՚ի վերայ նոցա յաւիտենականն։ ¹¹Սնուցի զնոսա ուրախութեամբ, և յուղարկեցի զնոսա լալն՛վ

* *Ի բազումս պակասի.* Եւ Թեմանայ. և ա՛:

* *Յօրինակին.* Եւ ա՛ռ զնոսա, և իջոյց զնա:

* *Ոմանք.* Ո՛վ անց... և բերիցէ զնա ընտիրս ոսկւոյ:

* *Ոմանք.* Չի՞ք որ գիտէ:

* *Բազումք.* Սա Աստուած մեր՝ ընդ:

* *Ոմանք.* Ծառայի իւրոյ և Իսրայէլի սիրելոյ ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Եւ ամենեքեան որ ընդ ունին զնա ՚ի կեանս. և որք: *Ի լուս՝. նշանակի.* Մեռցին զմահ հոգւոց: *Ձոր և օրինակ մի յաւելեալ դնէ ՚ի բնաբանի:*

* *Բազումք.* Եւ մի՛ զօգուտս քո ազգի:

* *Բազումք.* Ձեր՝ զԱստուած յաւիտենական:

և սգով*։ ¹²Մի՛ որ ոտնհար լիցի այրոյս, որ մնացի միայնացեալս՝ ՚ի բազմաց. թափո՛ւր եղէ վասն բազում մեղաց որդւոց իմոց. զի խտորեցան յօրինացն Աստուծոյ, ¹³և զիրաւունս նորա ո՛չ ծանեան. և ո՛չ գնացին ՚ի ճանապարհս պատուիրանաց Աստուծոյ, և ո՛չ ՚ի շաւիղս խրատու արդարութեան նորա ելին։ ¹⁴Եկեսցեն պանդուխտք Սիովնի, և յիշեսցեն զգերութիւն ուստերաց և դստերաց իմոց զոր ած ՚ի վերայ նոցա Յաւիտենականն։ ¹⁵Ած ՚ի վերայ նոցա ա՛զգ հեռաւոր, ազգ լի՛րբ և այլալեզու. ¹⁶որ ո՛չ ակն ածէին ՚ի ծերոյն, և ո՛չ ողորմէին տղայոյն. տարան զսիրելիս այրոյս, և ՚ի դստերաց թափո՛ւր արարին զմնացեալս*։ ¹⁷Եւ ես՝ զի չէի ձեռնհաս օգնել ձեզ*։ ¹⁸Որ ած զչարիսն ՚ի վերայ, փրկեսցէ՛ զձեզ ՚ի ձեռաց թշնամեաց ձերոց։ ¹⁹Գնացէ՛ք որդեակք զնացէ՛ք, զի ես մնացի աւերակ։ ²⁰Մերկացայ զպատմուճան խաղաղութեան, և զգեցայ զքո՛ւրծ խնդրուածոց իմոց. աղաղակեցի առ յաւիտենականն յաւուրս իմ*։ ²¹Քաջալերեցարո՛ւք որդեակք. զոչեցէ՛ք առ Աստուած և փրկեսցէ զձեզ ՚ի բռնութենէ ձեռաց թշնամեաց*։ ²²Ձի ես յուսացայ ՚ի յաւիտենականն վասն փրկութեան ձերոյ. և եկն ինձ ուրախութիւն ՚ի սրբոյն ՚ի վերայ ողորմութեանն, որ եկեսցէ ձեզ ընդ հուպ ՚ի յաւիտենականէ Փրկչէ՛ ձերմէ։ ²³Ձի յուղարկեցի զձեզ սգով և լալով՝ և տացէ ինձ Աստուած զձեզ ցնծութեամբ և ուրախութեամբ յաւիտեանս*։ ²⁴Ձի որպէս այժմ տեսին պանդուխտքն Սիովնի զգերութիւն ձեր. նոյնպէս տեսցեն ընդ հո՛ւպ յԱստուծոյ զփրկութիւնն ձեր, որ եկեսցէ ՚ի վերայ ձեր փառօք մեծօք՝ և լուսաւորութեամբ ՚ի յաւիտենականէն*։ ²⁵Ո՛րդեակք՝ երկայնամիտ եղերուք ՚ի վերայ բարկութեան հասելոյ ձեզ յԱստուծոյ։ Հալածեաց զքեզ թշնամին քո, և տեսցես զկորուստ նորա ընդ հո՛ւպ, և ելցես ՚ի վերայ պարանոցի նորա։ ²⁶Փափկասունք իմ գնացին զճանապարհս խիստս. վարեցան իբրև զհօտ յափշտակեալ ՚ի թշնամեաց*։ ²⁷Քաջալերեցարո՛ւք որդեակք՝ և զոչեցէ՛ք առ Աստուած, զի եղիցի ձեզ յիշատակ ՚ի վարչէն. ²⁸զի որպէս եղեն ձեր միտք մոլորեալք յԱստուծոյ. տասնպատիկ եղերուք դառնալ և խնդրել զնա. ²⁹զի որ ածն ՚ի վերայ ձեր չարիս, ածցէ՛ ՚ի վերայ ձեր զյաւիտենական ուրախութիւնն հանդերձ փափկութեամբն ձերով*։

զ. ³⁰Քաջալերեա՛ց երուսաղէմ, մխիթարեսցէ զքեզ որ անուանեաց զքեզ*։ ³¹Եղուկ որ չարչարեացն զքեզ, և որ խնդացին ընդ կործանումն քո*։ ³²Եղուկ եմ քաղաքքն որոց ծառայեցին մանկունք քո. և եղուկ է որ ընկալաւ զորդիսն քո։ ³³Ձի որպէս խնդաց նա ՚ի վերայ կործանման քոյ, և ուրախ եղև յանկանելն քում. նոյնպէս տրտմեսցի ՚ի վերայ աւերածին իւրոյ*։ ³⁴Եւ բարձից՝ ՚ի նմանէ զուրախութիւն բազում խրախճանութեանն. և դարձուցից ՚ի սո՛ւգ զպերճութիւն

* *Ոմանք*. Լալով և սգալով։

* *Ոմանք*. Ոչ ակնածէին ծերոյն... զսիրելիս այրոյն։

* *Ոմանք*. Եւ ես զինչ էի ձեռնհաս։

* *Ոմանք*. Խնդրուածաց իմոց. աղաղակեցից առ յաւի՛։

* *Յօրինակին պակասէր*. ՚ի բռնութենէ ձեռաց թշնամեաց։

* *Ոմանք*. Լալով և սգով, և տացէ ինձ զձեզ Աստուած ցն՛։

* *Ոմանք*. Ընդ հուպ զԱստուծոյ զփրկութիւնն... փառօք մեծաւ, և լուսաւորութեամբ յաւիտենականին։

* *Բազունք*. Գնացին ՚ի ճանապարհս խիստս։

* *Ոմանք*. Հանդերձ փրկութեամբ ձերով։

* *Ոմանք*. Մխիթարել զքեզ որ։

* *Ոմանք*. Եղուկ որ չարչարեցին զքեզ։

* *Ոմանք*. ՚ի վերայ կործանմանն... յանկանելն քո... ՚ի վերայ իւրոյ աւերածին։

նորա: ³⁵Եկեացք է՛ի վերայ նորա հո՛ւր է՛ի յաւիտեանականէն աւո՛րս բազումս. և եղիցի բնակութիւն դիւաց զբազում ժամանակս*:

Է. ³⁶Յայեաց ընդ արևելս Երուսաղէմ, և տես զեկեալ ուրախութիւնն քեզ յԱստուծոյ: ³⁷Ահաւաղիկ գան որդիքն քո զորս յուղարկեցեր. գան ժողովեալք յարևելից մինչև է՛ի մուտս արևու բանի՛ւ Սրբոյն. խնդացեալք փառօքն Աստուծոյ*:

5

Գլուխ Ե

¹Մերկեա՛ Երուսաղէմ զհանդերձ սգոյ և լալականաց քոց. և զգեցի՛ր զվայելչութիւն փառացն Աստուծոյ՝ յաւիտեան*:²Ա՛րկ զքև զկրկնոցն արդարութեան յԱստուծոյ. դի՛ր խոյր է՛ի գլուխ քո զփառաց Յաւիտեանականին*:³Ձի ցուցցէ՛ Աստուած է՛ի ներքոյ երկնից զամենայն լուսաւորութիւնս քո*.⁴Եւ կոչեսցի քեզ անուն յԱստուծոյ յաւիտեան՝ խաղաղութիւն, արդարութիւն՝ և փառք աստուածպաշտութեան*:⁵Արի՛ Երուսաղէմ, և կաց է՛ի վերայ բարձու, և հայեաց ընդ արևելս, և տես ժողովեալ զորդիսն քո յարևելից մինչև յարևմուտս՝ բանիւ Սրբոյն զուարճացեալս յԱստուծոյ յիշատակօք*:⁶Ձի ելին է՛ի քէն հետևակք՝ վարեալք է՛ի թշնամեաց. և աճցէ զնոսա առ քեզ Աստուած ամբարձեալս փառօք իբրև զաթոռ թագաւորութեան:⁷Ձի հրաման ետ Աստուած խոնարհել ամենայն լերանց բարձանց, և բլրոց մշտնջենաւորաց, և լնո՛ւլ ձորոց է՛ի հարթութիւն երկրի. զի գնացէ Իսրայէլ զգուշութեամբ փառացն Աստուծոյ:⁸Եւ հովանի՛ լիցին նմա ամենայն անտառք. և ամենայն փայտ անուշութեան Իսրայէլի հրամանաւ Աստուծոյ:⁹Ձի առաջնորդեսցէ Աստուած Իսրայէլի ուրախութեամբ լուսով փառաց իւրոց հանդերձ ողորմութեամբ և արդարութեամբ է՛ի նմանէ*:

Բարութք*

ՈՂՔՔ ՍՐԲՈՅՆ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ*

* Ոմանք. Դիւաց բազում ժամանակս: *Ուր Ոսկան.* է՛ի բազում ժամանակս:

* Ոմանք. Մինչ է՛ի մուտս արևու:

* Բազումք. Սգոյ և լլկանաց քոց... է՛ի յաւիտեան:

* Ոմանք. Եւ արկ զքև կրկնոցն ար՛:

* Ոմանք. Լուսաւորութիւն քո:

* Ոմանք. ՅԱստուծոյ է՛ի յաւիտեան: *Ոսկան.* Արդարութեան, և փառք:

* Բազումք. Եւ կաց է՛ի բարձու:

* Բազումք. Աստուած Իսրայէլի խաղաղութեամբ լուսով:

* Ի վախճանի՝ ոմանք. Կատարեցաւ Բարութք: *Ոսկան է՛ի Լատինական օրինակէն թարգմանեալ կարգէ աստէն գլուխ Վեցերորդ՝ Բարութայ, մակագրեալ՝ Օրինակ Թղթոյն զոր առաքեաց Երեմիաս, և այլն. որ ոչ ուրեք նշմարի է՛ի գրչագիրս որ առ մեօք:*

* Բազումք այլազգ է՛ի մերմէս՝ այսպէս ունին զվերնագիրս. Սրբոյն Երեմիայի ողբք:

Գլուխ Ա

ԽՁ Եւ եղև յետ գերութեանն Իսրայէլի և աւերածոյն Երուսաղէմի, նստէր և լայր և ողբայր Երեմիա զողբս զայս ՚ի վերայ Երուսաղէմի՝ և ասէր.*

¹**ալիփ** Ձիա՞րդ զատաւ, նստաւ միայնացեալ քաղաքն բազմաժողով, և եղև իբրև կին մի այրի լցեալ տրտմութեամբ ՚ի մէջ հեթանոսաց. իշխանն աշխարհի եղև հարկատու*։ ²**բէթ** Լալո՞վ ելաց ՚ի գիշերի, և արտասուք իւր ՚ի վերայ ծնօտից իւրոց. և ո՛չ գտաւ մխիթարիչ նմա յայնմ աւուր ՚ի սիրելեաց իւրոց. ամենայն բարեկամք նորա անարգեցին զնա. և եղեն նմա իբրև թշնամիք*։ ³**գամիլ** Վարեցա՞ւ ՚ի գերութիւն Յուդայ, ՚ի բազում տառապանս. ՚ի նեղութեան, ստրկութեան, ծառայութեան. նստաւ ՚ի մէջ հեթանոսաց, և ո՛չ եգիտ հանգիստ. ամենայն հալածիչք իւր հասին նմա ՚ի մէջ թշնամեաց իւրոց*։ ⁴**դալէթ** Սո՞ւգ առին ճանապարհք Սիոնի. զի ո՛չ գոյր երթևեկ տօնից տարեկանաց նորա. ամենայն դրունք նորա եղեն յապականութիւն. և քահանայք նորա հաչեն՝ հառաչեն՝ և յոգոց հանեն. կուսանք նորա ՚ի գերութիւն վարեցան. և ինքն դառնացեալ յանձն իւր*։ ⁵**հէ** Եւ եղեն նեղիչք նորա ՚ի գլուխս, և թշնամիք նորա յուրախութիւն. զի Տէր կորացոյց զնա վասն բազում անպարշտութեան նորա. տղայք նորա վարեցան ՚ի գերութիւն առաջի նեղչաց նորա*։ ⁶**վաւ** Բարձա՞ւ ՚ի դստերացն Սիոնի ամենայն վայելչութիւն նոցա. եղեն իշխանք նոցա իբրև խոյք, որոց ո՛չ գտանէր նոցա ճարակ. ետուն զցանկալի ցանկալի ինչս իւրեանց կերակրոց. զի հանգուսցեն զանձինս իւրեանց. երթային և ո՛չ ՚ի միտս իւրեանց՝ առաջի նեղչաց ըստ վարել հալածչացն*։ ⁷**զէ** Յիշեա՞ց Երուսաղէմ զօր տառապանաց, և զօր անջատման իւրոյ. թախծեցաւ ընդ ամենայն ցանկալի ինչս որ ստացեալ էր իսկզբանէ. յանկանել ժողովրդեանն ՚ի ձեռս թշնամեացն, և ո՛չ ոք էր որ օգնէր նմա. տեսին ատելիք նորա, ո՛տն հարին և ծիծաղեցան ՚ի վերայ գերութեան նորա*։ ⁸**խէթ** Սե՞ղս մեղաւ Երուսաղէմ, վասն այսորիկ ամենայն գովիչք նորա կոր ՚ի գլուխ առնէին զնա. զի տեսին զանարգանս նորա. զի նա ինքնին յետս դարձեալ յոգոց ելանէր*։ ⁹**տէթ** Պղծութիւն նորա առաջի ոտից իւրոց, և ո՛չ յիշեաց նա զյետինս իւր. իջոյց արտասուս մեծամեծս, և ո՛չ ոք էր որ մխիթարէր զնա. տես Տէր զտառապանս իմ, զի բարձրացան

* *Ոմանք.* Եւ աւերածոցն Երուսաղէմի:

* *Օրինակ մի.* Նստաւ մնացեալ: *Բազունք.* Սենացեալ քաղաքն... իբրև այրի լցեալ... իշխան աշխարհին եղև:

* *Բազունք.* Եւ եղեն նորա իբրև թշնամիք:

* *Ոմանք.* ՚ի նեղութիւնս տրտմութեան. *կամ՝* տրտմութեան:

* *Ոմանք.* Հաչեն և հառաչեն, և հոգւոց ելանեն... և ինքն դառնացեալ անձամբ: *Ուր յօրինակին.* Եւ ինքն դառնա՞:

* *Ոմանք.* Նորա ՚ի գլուխ... տղայք նոցա վարեցան ՚ի գերութեան:

* *Ոմանք.* Դարձաւ ՚ի դստերաց Սիոնի ամենայն վայելչութիւն նորա:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Թախծեաց ընդ ամենայն ցանկա՞:

* *Ոմանք.* Վասն այնորիկ ամենայն... յոգւոց ելանէ:

թշնամիք իմ՝ ի վերայ իմ*։ ¹⁰ **յող** Ջծեռն իւր ձգեաց նեղիչն ՚ի վերայ ցանկալեաց իմոց. տեսի ես զհեթանոսս զի մտին ՚ի սրբութիւն քո. որոց պատուիրեցեր թէ մի՛ մտցեն ՚ի տեղի ժողովորոց քոց*։ ¹¹ **քափ** Ամենայն ժողովուրդք յոգո՛ց ելանէին ՚ի խնդի՛ր հացի. տային զամենայն ցանկալի ինչս իւրեանց ՚ի զի՛նս հացի. զի դարձուցեն զանձինս իւրեանց յինքեանս. տես՛ Տէր՝ և հայեա՛ց. զի եղէ ես անարգեալ և արհամարհեալ*։ ¹² **լամէք** Ձեզ ասեն, ձե՛զ ասեն անցաւորք ճանապարհաց՝ դարձայք հայեցարո՛ւք և տեսէ՛ք, թէ իցե՞ն երբէք ցաւք ըստ ցաւոց լեալ՝ որ ՚ի վերայ իմ հասին. բարբառեցաւ յիս Տէր, և կորացոյց զիս յաւուր բարկութեան և սրտմտութեան իւրոյ*։ ¹³ **մեմ** Ի բարձանց իւրոց առաքեաց հո՛ւր յոսկերս իմ. ցանց ձգեաց ոտից իմոց, և դարձոյց զիս յետս իմ. արար յապականութիւն զանձն իմ, զօրհանապագ ՚ի տառապանս տրտմութեան։ ¹⁴ **նուն** Կանխեաց՛ց Տէր ՚ի վերայ ամպարշտութեան իմոյ, և արկ զինն զծեռն իւր։ Ծանրացոյց զլուծ իւր ՚ի վերայ պարանոցի իմոյ. տկարացաւ զօրութիւն իմ. մատնեաց զիս Տէր ՚ի ձեռս ցաւոց իմոց, և ո՛չ կարեմ հանդարտել*։ ¹⁵ **սամքաթ** Ջնջեաց՛ց ՚ի միջոյ իմմէ՛ զընտիր ընտիր զօրուց իմոց. կոչեաց ՚ի վերայ ընտրելոց իմոց ժամանակ բեկման. հնձան՛ եհար Տէր կուսի դստերն Յուդայ*։ ¹⁶ Կասն այսորիկ ես ահաւասիկ ՚ի լալ մատուցեալ եմ։ Էյ Ակն իմ իջոյց արտասուս. զի հեռի եղեն յինէն մխիթարիչք իմ, որ դարձուցանէ զանձն իմ յիս. մատնեցան որդիք իմ յապականութիւն, զի զօրացան թշնամիք իմ*։ ¹⁷ **փե** Տարածեաց Սիովն զբազուկս իւր առ Աստուած, և ո՛չ ոք էր որ մխիթարէր զնա. շուրջ զնովաւ նեղիչք նորա. եղև երուսաղէն աղտեղեալ իբրև կին մի ՚ի մէջ նոցա։ ¹⁸ **ծաղէ** Արդար է Տէր Աստուած. զի ես դառնացուցի զնա. լուարո՛ւք զայս ամենայն ժողովուրդք և տեսէ՛ք զցաւս իմ. օրհորդք իմ և երիտասարդք իմ վարեցան ՚ի գերութիւն*։ ¹⁹ **կոփ** Կոչեցի ես զսիրելիսն իմ, և նոքա արհամարհեցին՛ զիս. քահանայք իմ և երիցունք իմ աստէ՛ն ՚ի քաղաքիս սատակեցան. խնդրեցին կերակուր զի դարձուցեն զոգիս իւրեանց, և ո՛չ գտաւ*։ ²⁰ **ռէ** Տես Տէր զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովեցան, սիրտ իմ գելա՛ւ յիս, և ես գտայ դառնացեալ. արտաքուստ ժառանգեաց զիս սո՛ւր, որպէս և մա՛հ ՚ի ներքուստ։ ²¹ **շին** Լուարո՛ւք լուարո՛ւք զայս. զի ես հեծեմ հառաչեմ, և ո՛չ ոք է որ մխիթարէ զիս. ամենայն թշնամիք իմ լուան զչարիս իմ, և ո՛տն հարին ինձ. զի դո՛ւ արարեր զօրն զայն, և դո՛ւ կոչեցեր զժամանակն զայն. և եղև ինձ վայ՛ վայ՛*։ ²² **թաւ** Ստին չարիքն ամենայն առաջի քո, և ճռաքա՛ղ արարեր դու զնոսա. զոր օրինակ արարեր ճռաքա՛ղ զիս ՚ի վերայ ամենայն մեղաց իմոց. զի բազում եղեն հեծութիւնք իմ, և սիրտ իմ լի՛ եղև տրտմութեամբ*։

* *Ոմանք*. Եւ ոչ յիշեաց նա զտեղին իւր։

* *Բազունք*. Ձգեալ նեղիչն ՚ի վերայ ցան՛։

* *Ոմանք*. Ինչս իւրեանց զի՛նս հա՛... զի եղէ անարգեալ։

* *Ոսկան*. Դարձարուք հայեց՛։ *Բազունք*. Բարկութեան սրտմտութեան։

* *Ոմանք*. Տէր ՚ի վերայ տրտմութեան. *կամ*՝ սրտմտութեան իմոյ... և ոչ ևս կարեմ հանդարտել։

* *Ոմանք*. Ի վերայ ընտրելեաց իմոց ժամանակս բեկման։

* *Ոմանք*. Ես աւասիկ... իջոյց արտօսը... զի զօրացաւ թշնամին։

* *Բազունք*. Ջայս ամենայն ժողովք։ *Ոմանք*. Կարեցան ՚ի գերութեան։

* *Ոմանք*. Եւ երիցունք աստէն ՚ի քաղաքի... զկերակուր զի դարձուցեն զորդիս իւրեանց։

* *Ոմանք*. Ձի դու արարեր զամենայն, և դու... և ինձ վայ վայ։

* *Ոմանք*. Գտին չարիքն ամենայն առա՛։ *Ոսկան*. Եւ ճռաքաղ արա՛ դու զնոսա։

Գլուխ Բ

Բ ¹**ալիփ** Ձիա՞րդ խաւարեցաւ սրտմտութեամբ և բարկութեամբ Տեառն դուստր Սիոնի. ընկեց յերկնից յերկիր գփառան Իսրայէլի, և ո՛չ յիշեաց զպատուանդան ոտից իւրոց*։ ²**բէթ** Յաւուր սրտմտութեան բարկութեան իւրոյ ընկլոյց Տէր յանխնայ զամենայն գեղ Յակովբայ. քակեաց և ո՛չ անխայեաց. զամուրս դստերն Յուդայ կործանեաց յերկիր. անարգեաց զիշխանս և զթագաւորս նոցա*։ ³**գամիլ** Փշրեաց Տէր յաւուր սրտմտութեան բարկութեան իւրոյ զամենայն եղջերս Իսրայէլի, և դարձոյց յետս զառաջ նորա առաջի թշնամեաց նորա. հո՛ւր պատեաց զՅակոբ. հաշեաց և մաշեաց զամենայն որ շուրջ էր զնովաւ*։ ⁴**դալէթ** Սո՛ւտ ընդ գիրկս իւր իբրև զթշնամի. հաստատեաց զաջ իւր ՚ի վերայ նորա, և սպան զամենայն ցանկալիս դստեր Սիոնի. հեղ ՚ի վերայ նորա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ հրով*։ ⁵**հէ** Եղև Տէր իբրև թշնամի, և կործանեաց զԻսրայէլ. կործանեաց զթագաւոր նորա, կործանեաց զամենայն ամուրս նորա. և բազմացոյց դստերն Յուդայ տառապանս ՚ի վերայ տառապանաց*։ ⁶**վաւ** Խզեաց իբրև զայգի զխորանս նորա, և ապականեաց զտօն տարեկանաց նորա. մոռացաւ Տէր զոր արար Սիովն տօնս տարեկանաց և զշաբաթս. և զայրացոյց ՚ի մռնչել բարկութեան իւրոյ՝ զթագաւորս և զիշխանս և զքահանայս*։ ⁷**զէ** Մերժեաց Տէր զսեղան իւր, և ՚ի բաց ընկեց զսրբութիւնս իւր. կործանեաց զպարիսպս աշտարակեայս տաճարաց նորա. ձայն ետուն՝ գոչեցին ՚ի տան Տեառն. իբրև յաւուրս տօնից տարեկանաց նորա*։ ⁸**խէթ** Ընկեցաւ կործանեալ պարիսպ դստեր Սիոնի. չափ արկին՝ և ո՛չ անդրէն դարձուցին զձեռս իւրեանց. սո՛ւգ առին մահարձանք, և պարիսպք առ հասարակ դողացեալ կործանեցան։ ⁹**տէթ** Կործանեցին յերկիր զդրունս նորա, և խորտակեցին զնիգս նորա. թագաւորք նոցա և իշխանք նոցա ՚ի մէջ հեթանոսաց. ո՛չ գոյին օրէնք և մարգարէք. և ո՛չ էին այնք որ տեսանէին տեսիլս ՚ի Տեառն։ ¹⁰**յող** Իջին հա՛րթ եղեն գետնոյ. կարկեցան ծերք դստեր Սիոնի. հո՛ղ արկին զզլխով իւրեանց. քրձագգա՛ծք եղեն. յերկիր կործանեցին զիշխանս կուսանացն Երուսաղէմի*։ ¹¹**քալի** Պակասեցին աչք իմ յարտասուաց. խռովեցաւ որովայն իմ. յերկիր յուժան փառք իմ ՚ի վերայ բեկման դստեր ժողովրդեան իմոյ. ՚ի սատակիլ տղայոց ստնդիեցաց ընդ ամենայն փողոցս քաղաքին*։ ¹²**լամէթ** Ի մարց իւրեանց պահանջէին հաց և զինի. ՚ի պակասել

* *Բազումք*. Սրտմտութեամբ բարկութեամբ։ *Ուր Ոսկան*. բարկութեան։ *Ոմանք*. Եւ ոչ ևս յիշեաց զպատուանդան ոտից նորա։

* *Բազումք*. Ընկլոյց Տէր յանխնայ զամենայն։ *Ոմանք*. Չամուրս դստեր Յակովբայ, կործանեաց յերկրի։

* *Ոսկան*. Դարձոյց յետս զաջ նորա... որ շուրջ զնովաւ է։

* *Յօրինակին*. Սուտ ընդ գիրկս քո իբրև։ *Ոմանք*. Իբրև թշնամի... զամենայն ցանկալի դստեր։

* *Բազումք*. Զթագաւորս նորա։ *Յօրինակին*. Տառապան ՚ի վերայ տառա՞։

* *Ոմանք*. Չտօնս տարեկանաց նորա... և շաբաթս։

* *Ոմանք*. Չսրբութիւն իւր։

* *Յօրինակին*. Ծերք դստերք Սիոնի։ *Ոմանք*. Չզլխովք իւրեանց։

* *Բազումք*. Յերկիր լուժան փառք իմ։ *Ոմանք*. Ի սատակել տղայոց ըստնդիացոց։

թափել հանել զոգիս իւրեանց, ընկեցեալ ցրուեալ կային ՚ի մէջ քաղաքին: ¹³**մէմ** Չի՞նչ վկայութիւն վկայեցից քեզ. կամ զի՞նչ նմանութիւն նմանեցուցից զքեզ, դուստր Երուսաղեմի. ո՛վ մխիթարեսցէ զքեզ օրիորդ դուստր Սիոնի. զի ծանրացաւ բաժակ բեկման քոյ. իսկ ո՞վ իցէ որ բժշկեսցէ զքեզ* : ¹⁴**նուն** Մարգարէքն տեսին քեզ տեսիլս զո՛ւր տարապարտուց և անօգուտ. և ո՛չ յայտնեցին քեզ զանիրաւութիւնս քո, զի դա՛րձ լիցի քեզ ՚ի գերութենէ քումմէ. այլ պատմեցին քեզ առեղծուածս սնոտի, և մերժումն ՚ի տեղւոջէ իւրմէ* : ¹⁵**սամբաթ** Ծափ զծափի՛ հարին ամենայն անցաւորք ճանապարհի. շէնին շարժէին զգլուխս իւրեանց ՚ի վերայ դստեր Սիոնի. Այս այն քաղաք է ասէին, պսակ փառաց ուրախութեան ամենայն երկրի* : ¹⁷**էյ** Արար Տէր՝ զոր խօսեցաւ. կատարեաց զբանս իւր զոր պատուիրեաց յաւուրցն առաջնոց. քակեաց, և ո՛չ անխայեաց. ուրախ արար ՚ի վերայ քո զթշնամիս քո, և բա՛րձր արար զեղջեր նեղչաց քոց* : ¹⁶**փէ** Բացին զբերանս իւրեանց ՚ի վերայ քո ամենայն թշնամիք քո. շէնին և կրճտէին զատամունս իւրեանց՝ և ասէին. Եկա՛յք կլցուք զսա. զի այս՝ ա՛յն օր է որում ակնունէաք. ահաւասիկ տեսա՛ք և գտա՛ք և հասա՛ք մեք նմա* : ¹⁸**ծաղէ** Գոչեսցեն սիրտք նոցա առ պարիսպս դստեր Սիոնի. և հոսեսցեն իբրև զհեղեղ զարտասուս ՚ի տուն և ՚ի գիշերի. մի՛ լռեր և մի՛ դադարեր և մի՛ տար դու՛՛ ական քում յարտասուաց* : ¹⁹**կոփ** Արի՛ ՚ի խոստովանութիւն ՚ի գիշերի, ՚ի սկիզբն ՚ի գլուխ պահոց քոց. հե՛ղ իբրև զջուր զսիրտ քո առաջի Տեառն. համբարձ զձեռն քո վասն անձանց տղայոց՝ որ լուծանէին ՚ի սովոյ ՚ի գլուխ ճանապարհաց ելից և մտից քոց* : ²⁰**ռէշ** Տես Տէր և հայեա՛ց. ո՞ւմ արարեր ա՛յսպէս ճռաքաղ, եթէ կերիցեն կանայք զպտուղ որովայնի իւրեանց. արարեր ճռաքա՛ղ. արկեր ՚ի ներքս զխոհակերս, զենուլ ՚ի ներքս ՚ի սրբութեան Տեառն զտղայս ստնդիայս, զքահանայն և զմարգարէն* : ²¹**շին** Ննջեցին ՚ի վերայ ելիցն ճանապարհաց, առ հասարակ ծերն և տղայն, կուսանն և երիտասարդն վարեցան ՚ի գերութիւն. ՚ի սո՛ւր արկեր՝ կոտորեցեր յաւուր բարկութեան քոյ, զեներ, խոհակերեցեր, և ո՛չ անխայեցեր* : ²²**թաւ** Կոչեցեր իբրև զօր տարեկանաց պանդխտութեան իմոյ շո՛ւրջ զինև. և ո՛չ ոք էր որ գտանէր յաւուր սրտմտութեան բարկութեան Տեառն. ապրեալք և մնացեալք, ՚ի բախել ՚ի բազմանալ թշնամեաց իմոց ամենեցուն* :

* Այլք. Նմանեցուցից քեզ դուստր: *Ի բազումս պակասի.* Չքեզ օրիորդ դուստր:

* Ոսկան. Մարգարէքն քո տեսին: *Ոմանք.* Տարապարտուց անօգուտ... առեղծուածս սնոտիս, և մերժումն ՚ի տեղւոջէ քումմէ:

* Յօրինակին պակասէր. Պսակ փառաց ուրախութեան ամենայն երկ՛:

* Ամենայն գրչագիրք համեմատ մերումս ունին զկարգ տանցս, դնելով մախ՝ Արար Տէր. և ապա՝ Բացին զբէ՛. զոր Ոսկան այլայլէ ըստ թուահամարոյ Լատինացւոց: *Ոմանք.* Արար Տէր զոր խորհեցաւ:

* Ոմանք. Կլցուք մեք զսա... և հասաք մեք սմա:

* Բազումք. Սի՛ տար դու՛՛ արտասուաց:

* Ոմանք. Սկիզբն ՚ի գլուխ... որ լուծան ՚ի սովոյ... ճանապարհացն ելից մտից քոց:

* Ոմանք. Չպտուղս որովայնի... ստնդիացս, զքահանայս և զմարգարէս: *Ոսկան.* Արկին ՚ի ներքս զխոհակերս:

* Օրինակ մի. Չեներ խորտակեցեր, և ոչ:

* Ոմանք. Պանդխտութեան իւրում: *Բազումք.* Եւ ոչ ոք գտանէր... ՚ի պահել բազմանալ թշ՛: *Ոսկան յաւելու.* Բարկութեան Տեառն, զի փախչիւր. ապրեալք:

Գլուխ Գ

Գ ¹**ալիփ** Աստուած հզօր, հայեաց յաղքատութիւն իմ. ՚ի ձեռն գաւազանի սրտմտութեան իւրոյ ²ընկլոյց զիս, և ած ՚ի վերայ իմ խաւար՝ և ո՛չ լոյս ³բայց սակայն դարձոյց ՚ի վերայ իմ զձեռն իւր հանապազ: ⁴**բէթ** Մաշեաց գնորթ և զմարմին իմ. զոսկերս իմ փշրեաց առ հասարակ ⁵Շիմեաց ՚ի վերայ իմ, և պատեաց զգլխով իմով. ⁶և ջանացաւ նստոյց զիս ՚ի խաւարի իբրև զմեռեալ յաւիտենից: ⁷**գամիլ** Կուտեաց ՚ի վերայ իմ, և ո՛չ ևս կարեմ խլրտել. ծանրացոյց ՚ի վերայ իմ քան զպղինձ ⁸: ⁸Զի թեպէտ և ասացի՝ թէ կարդացից և աղաղակեցից. փակեալ և արգելեալ է առաջի իւր զաղօթս իմ ⁹: ⁹**դալէթ** Արկ արգել ճանապարհաց իմոց, և խից ՚ի խրտուիլ զշաւիղս իմ ¹⁰: ¹⁰Եղև ինձ իբրև արջ դարանակալ՝ և իբրև առեւծ թաքուցեալ ¹¹եմուտ զհետ իմ. հալածեաց և եհաս, և լքոյց զիս և արար զիս յապականութիւն ¹²: ¹²**հէ** Մուտ ընդ գիրկս իւր, և ելից զիս նետիւք իբրև զնպատակ: ¹³Կտրեաց ընդ մէջ զերիկամունս իմ. արար զիս նետալից, ¹⁴և ծաղր ժողովրդեան իմոյ, և երգք նոցա զօրհանապազ ¹⁵: ¹⁵**վաւ** Ջամբեաց ինձ լեղի, և արբոյց զիս դառնութեամբ ¹⁶: ¹⁶Քարալից արար զատամունս իմ, և ջամբեաց ինձ մոխիր: ¹⁷Մերժեաց ՚ի խաղաղութենէ զանձն իմ. մոռացայ զբարիս: ¹⁸Կորեաւ յաղթութիւն իմ, և յոյս իմ ՚ի Տեառնէ: ¹⁹**զէ** Յիշեցի յաղքատութենէ իմնէ և ՚ի հալածանաց իմոց. դառնութիւն և բարկութիւն ²⁰յո՛ւշ եղեն ինձ միանգամայն. ծանձրացաւ յիս անձն իմ: ²¹Չայս ինչ կարգեցի ՚ի սրտի իմում. վասն այսորիկ համբերից նմա ²²: ²²**խէթ** Ողորմութիւնք Տեառն անսպան են, և ո՛չ նուազեն գթութիւնք նորա: ²³Ի նորոգումն առաւօտու բազմանայ ճշմարտութիւն քո Տէր: ²⁴Ասաց անձն իմ բայ բաժին իմ է նա. վասն այնորիկ ակն կալայց նմա ²⁵: ²⁵**տէթ** Բարերար է Աստուած ՚ի վերայ համբերողաց իւրոց. զի անձն որ խնդրէ զնա ²⁶բարի է որ համբերէ նմա ճշմարտութեամբ, և հանգչի նա ՚ի փրկութեան Տեառն: ²⁷Բարի է մարդոյ առնուլ զլուծ խոնարհութեան ՚ի մանկութենէ իւրմէ ²⁸: ²⁸**յող** Նստցի միայն լռիկ ՚ի տան իւրում. զի անձամբ իւրով ա՛ռ յանձն զլուծ քո ²⁹: ²⁹Տացէ՛ հողոյ զբերան իւր, վասն զի կայ յոյս. ³⁰մատուցէ հարկանելեաց զծնօտս իւր. լցցի՛ նախատանօք ³¹: ³¹Այլ ո՛չ թէ

* *Ոսկան*. Հայեցաւ յաղքատութիւն իմ:

* *Ի լուս*. Ընկլաւ զիս և ած: *Ուր ոմանք*. ընկլոյց. *կամ*՝ ընկալաւ զիս:

* *Ոմանք*. Եւ զմարմինս իմ և զոսկերս:

* *Ոմանք*. Եւ ոչ կարեմ խլրտ:

* *Բազումք*. Թեպէտ և ասացից, և աղաղակեցից:

* *Ոսկան յայսմ վայրի այլազգ կարգէ գեբրայական նշանագիրս*:

* *Ոսկան*. Եւ եղև ինձ իբրև:

* *Ի բազումս պակասի*. Եւ լքոյց զիս, և արար զիս յապակա՛:

* *Ոսկան*. Եւ եղէ ծաղր ժողովրդեան: *Ոմանք*. Եւ երգս նոցա զօրհա՛:

* *Ոսկան*. Եւ արբեցոյց զիս դառ՛:

* *Ոմանք*. Վասն այնորիկ և համբերից:

* *Յօրինակին*. Ասա՛ ցանձն իմ. Բա բաժ՛: *Ոմանք*. Վասն այսորիկ ակնկալայց:

* *Ոսկան*. Եւ անձն որ խնդ՛:

* *Բազումք*. Մարդոյ որ առնու զլուծ:

* *Բազումք*. Միայն լուռ ՚ի տան իւ՛:

* *Ոմանք*. Հարկանելեաց իւրոց զծնօտ:

յաւիտեան մերժեցէ Տէր*։ ³²**քափ** Որ տառապեցոյց, նոյն ողորմեացի ըստ
 բազում ողորմութեան իւրում։ ³³Ոչ ետ պատասխանի՝ ի սրտէ իւրմէ. և
 խոնարհեցոյց զորդիս մարդկան*։ ³⁴**լամեք** խոնարհեցուցանել ՚ի ներքոյ ոտից
 նորա զամենայն կապեալս երկրի. մատնել զմարդ ՚ի դատաստանի Տեառն.
³⁵Խոտել զիրաւունս առն առաջի երեսաց Բարձրելոյն. ³⁶պատժել զմարդ ՚ի
 դատաստանի Տէր ոչ տեսանէ*։ ³⁷**մէմ** Ոչ ասաց՝ թէ այսպէս ասաց Տէր՝ և եղև. ոչ
 պատուիրեաց* ³⁸բերան Բարձրելոյն. ոչ ելցեն աստի չարիք՝ և ոչ բարիք։
³⁹Չի՛նչ տրտնջեցէ մարդ կենդանի, կամ այր ՚ի սիրոյ եղբօր իւրոյ ՚ի վերայ
 մեղաց իւրոց*։ ⁴⁰**նուն** Քննեցան ճանապարհք մեր, և կշտամբեցան. դարձցուք
 մեք ՚ի Տէր, ⁴¹համբարձցուք զձեռս մեր սրտիւք հանդերձ ՚ի բարձունս երկնից*։
⁴²Մեղաք, ամպարշտեցաք. և ոչ հաճեցար ընդ մեզ*։ ⁴³**սամքաք** Յայց ելեր
 սրտմտութեամբ և բարկութեամբ, և հալածեցեր զմեզ. կոտորեցեր և ոչ
 անխայեցեր*։ ⁴⁴Փակեցեր ամպօք զերկինս՝ զի մի՛ հասցեն աղօթք մեր առ քեզ։
⁴⁵Ընկեցեր մերժեցեր զմեզ. արհամարհեալս և անարգեալս արարեր զմեզ ՚ի մէջ
 զօրաց հեթանոսաց։ ⁴⁹**էյ** Աչք իմ ընկալան՝ և ոչ լռեցից, և ոչ լուայց*, ⁵⁰մի՛նչ և
 երևեցի՝ և տեսցէ Տէր յերկնից։ ⁵¹Ակն իմ կաթեցէ ՚ի վերայ անձին իմոյ, քան
 զամենայն դստերս քաղաքաց իմոց։ ⁴⁶**փէ** Բացեր ՚ի մեզ զամենայն բերանս
 թշնամեաց մերոց. ⁴⁷ա՛հ և երկելո եկն ՚ի վերայ մեր, բեկումն և սատակումն։ ⁴⁸Եւ
 հոսանս ջուրց իջուցին աչք մեր ՚ի վերայ բեկման դստեր ժողովրդեան իմոյ։
⁵²**ճաղէ** Որսալով որսացան զիս իբրև հաւորսք թշնամիք իմ. որսացան զիս
 տարապարտուց*։ ⁵³հեղձուցին ՚ի գբի զկեանս իմ. եղին վէ՛մ ՚ի վերայ իմ*։ ⁵⁴Եւ
 զեղան ջուրք զգլխով իմով. և ասացի բամ ահա մերժեցայ։ ⁵⁵**կոփ** Կարդացի ես
 զանուն քո Տէր ՚ի գբոյ տառապանաց*, ⁵⁶և դու լուարձայնի իմում. մի՛
 թաքուցաներ զանուն քո ՚ի խնդրուածոց իմոց. այլ ընդարձակեա՛ ինձ և փրկեա՛
 զիս*։ ⁵⁷Դու յօգնել ինձ մերձեցար, և ասացեր բամ յորում աւուր կարդացես առ
 իս, մի՛ երկիցես*։ ⁵⁸**ռէ** Դատեա՛ Տէր զդատաստան անձին իմոյ. փրկեցեր
 զկեանս իմ*։ ⁵⁹Տեսեր զխռովութիւնս իմ. դատեցար Տէր զդատաստանս իմ*։
⁶⁰Տեսե՛ր զամենայն իրաւունս իմ. հայեցար յամենայն խորհուրդս իմ։ ⁶¹**չիմ**

* Ոմանք. Այլ ոչ ՚ի յաւիտեան մերժեցէ։

* Բազումք. Չետ պատասխանի ՚ի... և խոնարհեցոյց զօրդիս մարդկան։ *Ուր Ոսկան.* Չի չետ։

* Ոսկան. ՚ի դատաստանի Տեառն ոչ տե՛ն։

* Ոմանք. Ոչ պատուիրեաց։ (38) ՚ի բերանոյ Բարձրելոյն։

* Ի բազումս պակասի. Կամ այր ՚ի սիրոյ եղբօր իւրոյ ՚ի վերայ մեղաց։

* Օրինակ մի. Համբարձցուք զսիրտս մեր ձեռօք հանդերձ։

* Ոմանք. Մեք ամպարշտեցաք, և ոչ հաճեցաւ ընդ մեզ։

* Օրինակ մի. Բայց ելեր սրտմտութեամբ բարկութեամբ։

* Ոսկան աստէն ևս այլազգ ունի զկարգ տանցս ըստ *Լատինական թուահամարոյն։*

Ոսկան. Աչք իմ ընկալան՝ և ոչ լռե՛ց։

* Ոմանք. Չիս որպէս հաւորսք։

* Օրինակ մի. Հեղձուցին զիս ՚ի գբի։

* Բազումք. Կարդացի զանուն քո։

* Ոմանք. Մի՛ թաքուցաներ զունկն քո ՚ի խնդրուածաց ի՛նձ։

* Ոմանք. Չի դու յօգնել ինձ։

* Ի լուս՝. Դատեցար Տէր զդատաստան... փրկեցեր Տէր զզրկեալս. *համաձայն ոմանց ՚ի բնար՝*։

* Ոմանք. Տես Տէր զբռնութիւն իմ. դատեցար։

Լուսնի Տէր զնախատինս և զամենայն խորհուրդս նոցա որ զիննն*։⁶² Ի շրթունս յարուցեալս ՚ի վերայ իմ զօրհանապազ։⁶³ զնստելն նոցա և զյառնել նոցա ՚ի միտ առի ես ՚ի խորհրդոց անտի նոցա։⁶⁴ **Քաւ** Հայեաց՝ ՚ի հպարտութիւն աչաց նոցա. և հատուցես նոցա Տէր զհատուցունն նոցա ՚ի գլուխս նոցա*։
⁶⁵ հատուցես նոցա ըստ պանդխտութեան սրտից նոցա*։⁶⁶ Հալածեսցես զնոսս սրտմտութեամբ քով, և մաշեսցես զնոսս բարկութեամբ քո ՚ի ներքոյ երեսաց երկնից։

4

Գլուխ Դ

Դ **Վալիփ** Զհա՞րդ շլացաւ ոսկին. այլագունեաց արծաթն սպիտակ. հալեցան սփռեցան ականք նոցա ՚ի գլուխ անցից ճանապարհաց նոցա*։² **Բեթ** Որդիք Սիոնի պատուականք, որ առաւել քան զականս պատուականս. զհա՞րդ համարեցան իբրև ամանք խեցեղէնք ձեռագործք որդւոց բրտից*։³ **Քամիլ** Մերկացուցին իբրև վիշապ զստինս իւրեանց, և դիեցուցին զկորիւնս իւրեանց. եղեն ուստերք ժողովրդեան իմոյ ՚ի տանջանս հարուածոց, զի չի՞ք նոցա բժշկութիւն. և տառապեցան իբրև ջայլամունք յանապատի*։⁴ **Պալէթ** Կցեցան լեզուք դիեցիկ մանկանց ՚ի քիմս իւրեանց ՚ի ծարաւս իւրեանց. տղայք հաց խնդրեցին, և ո՛չ ոք էր որ բրդէր նոցա*։⁵ **Իէ** Որ ուտէին զկերակուր՝ եղծան ՚ի վերայ անցից ճանապարհաց. որ ՚ի գիրկս զրգեալք և զգուեալք էին, գիրկս արկեալ աղբակաց թաթաւեալ թաւալէին*։⁶ **Վաւ** Բազմացաւ անիրաւութիւն դստեր ժողովրդեան իմոյ, քան զանօրէնութիւնս Սողոմայ կործանելոյ. ՚ի ճեպս ՚ի փոյթս յառնէին. և ո՛չ ուրեք էր վաստակ ձեռաց իւրեանց*։⁷ **Ղէ** Սրբեցան ուխտաւորք նոցա, իբրև զծիւն սպիտակացան. իբրև զկաթն զտեցան, իբրև զականս շափիղայ ՚ի հատուցման իւրեանց*։⁸ **Խէթ** Թխացան քան զածուխ տեսիլք իւրեանց՝ և ո՛չ ոք ճանաչէր զնոսս, զի դնէին յանցս ճանապարհաց. մածեալ էր մորթ նոցա յոսկերս նոցա. բրտացան նոքա, և եղեն իբրև զփայտ չորացեալ*։⁹ **Ստեթ** Գեղեցիկ էին վիրաւորքն դիականց անկելոց ՚ի սրոյ, քան զանկեալսն ՚ի սովոյ. երթային վիրաւորք ազգք ազգք յարանց*։¹⁰ **Յող** Ձեռք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց, և եղև նոցա ՚ի կերակուր,

* *Ոմանք*. Լուսնի Տէր զնախատինս նոցա և։

* *Ի լուս*՝ Ի հպարտութիւն անձանց նոցա. *համաձայն բազմաց ՚ի բն*՝։

* *Բազոււմք*. Ըստ պնդութեան սրտից նոցա։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ*. Ակունք նոցա ՚ի գլ՝։

* *Ոմանք*. Որդւոց բրտի։

* *Ոմանք*. Իբրև վիշապ զստինս... եղեն դստերք ժողովրդեան... զի չի՞ք նորա բժշկութիւն, և տապեցան իբրև ջայլա՞ն։ *Ոսկան*. Ջայլամանք յանա՞ն։

* *Ոմանք*. Դիացիկք մանկանց... ՚ի ծարաւոյ իւրեանց... հաց խնդրէին։ *Բազոււմք*. Եւ ոչ ոք էր որ բերէր նոցա։

* *Ոմանք*. Եղծանէին ՚ի վերայ ան՝... որ ՚ի գիրկս զգուեալք էին... թօթափեալ. *կամ*՝ թաթաւեալ թաւալէին։

* *Բազոււմք*. Բազմացաւ անօրէնութիւն դստեր ժո՞ն... ՚ի ճեպս փոյթս յառ՞։

* *Ոսկան*. Իբրև զականս շափիղայից։ *Օրինակ մի*. Շափիղայ ՚ի հատուցանել իւրեանց։

* *Ոմանք*. Ձի դնին յանցս... մորթ յոսկերս նոցա, բրտացան և եղեն նոքա իբրև։

* *Ոմանք*. Ազգք ազգք արանց։

առ ՚ի բեկումն դստեր ժողովրդեան իմոյ*։ ¹¹**քալի Աճ** և կատարեաց Տեր
 զսրտմտութիւն բարկութեան իւրոյ. եհե՛ղ զսրտմտութիւն բարկութեան իւրոյ, և
 բորբոքեցոյց հուր ՚ի Սիոն, և եկե՛ր զհիմունս նորա*։ ¹²**լամէք Ո՛չ** հաւատացին
 թագաւորք ամենայն երկրի որ բնակեալ էին ընդ տիեզերս, եթէ մտցէ թշնամի
 ընդ դրունս Երուսաղեմի*։ ¹³**մէմ** ՚ի մեղս մարգարէիցն իւրեանց, և ՚ի մեղս
 քահանայիցն իւրեանց, որ հեղոյին զարիւն արդարոցն ՚ի միջի իւրեանց*։
¹⁴**նուն** Շարժեցան սասանեցան զօրութիւնք նոցա յելս ճանապարհաց.
 պղծեցան թաթաւեցան յարեան մեռելոտուոց. զի ո՛չ կարէին զհանդերձս նոցա
 անարատ հանել ՚ի նոցանէ*։ ¹⁵**սամբաթ** ՚ի բա՛ց կացէք՝ պի՛ղծս կարդացէք
 զնոսա. ՚ի բա՛ց կացէք, ՚ի բա՛ց կացէք, մի՛ մերձենայք՝ զի շարժեցան
 բորբոքեցան. ասացէ՛ք ՚ի հեթանոսս՝ զի մի՛ ևս յաւելցին բնակիլ ՚ի նոսա*։ ¹⁶**էյ**
 Կենդանութեամբ մերով նուաղեցին աչք մեր յօգնականութենէ մերմէ. զի
 տարապարտո՛ւց կացուցեալ էր մեր զնոսա դէտս ՚ի սնոտիս*։ ¹⁷**փէ** Երեսք
 Տեառն բաժանեալ են ՚ի նոցանէ, և ո՛չ ևս յաւելցի հայել ՚ի նոսա. երեսք
 քահանայից ակն ո՛չ առին ծերոց. ո՛չ ողորմեցան ՚ի վերայ տղայոց նոցա. դէ՛տ
 ակն կալեալ հայեաք յազգս որ ո՛չ փրկէին զմեզ*։ ¹⁸**ծաղէ** որսացան զմեզ, փոքր
 մեւս ևս սատակել ջնջեալ էր զմեզ ՚ի քաղաքաց մերոց։ Հաս ժամ, հասեալ է
 ժամանակ, կատարեցան աւուրք մեր, լցան ժամանակք*։ ¹⁹**կոփ** Թեթևացան
 հալածիչք մեր ՚ի վերայ լերանց. իբրև զարծուիս երկնից՝ ՚ի վերայ լերանց
 բարձանց ճախրեցին, և յանապատի ՚ի դարան մտեալ պաշարեցին զմեզ*։ ²⁰**ռէշ**
 Հոգի երեսաց մերոց Տեր Քրիստոս, պատեցան զնովաւ յապականութեան
 իւրեանց. մինչդեռ մեք խորհեաք թէ ընդ հովանեա՛ւ նորա նստցուք և կեցցուք ՚ի
 մէջ հեթանոսաց*։ ²¹**շին Յնժա՛** դու և ուրախ լեր դուստր Եդոմայեցուոց. որ
 բնակեալդ ես յերկրիդ Աւստացուոց. եկեսցէ բաժակս այս ՚ի վերայ քո. յարիցես և
 արբցես, արբեսցիս և անդրէ՛ն դարձուցես*։ ²²**թաւ** Պակասեցին անօրէնութիւնք
 քո Սիոն, և ո՛չ ևս յաւելցէ խախտել զքեզ. այց արար անօրէնութեանդ քոյ
 դուստր Եդոմայ. յայտնեաց զամենայն ամպարշտութիւնս քո*։

* *Քաղունք.* Եւ եղեն նոցա ՚ի կերակուր։

* *Ոմանք.* Եւ բորբոքեաց հուր ՚ի։

* *Քաղունք.* Ոչ հաւատացին ամենայն թագաւորք երկրի որ բնակեալ էին ՚ի տիեզերս։

* *Ոմանք.* Հեղուին զարիւնս ար՛։

* *Ոմանք.* Թօթափեցան յարեան... զհանդերձս նոքա անարատ պահել ՚ի նոցանէ։

* *Ոմանք.* ՚ի բաց կացէք ՚ի բաց կացէք. պիղծս կար՛... մի՛ մերձենայք ՚ի նոսա... բնակել։

* *Ոմանք.* Կենդանեաւ մերով նուա՛... կացուցեալ էր մեզ զնոսա։

* *Քաղունք.* Բաժանեալ է ՚ի նոցանէ... ոչ ողորմեցան տղայոց նոցա... յազգս որ ոչ
 փրկեցին զմեզ. *ուր Ոսկան.* յազգս ձեր։

* *Քաղունք.* Սատակեալ ջնջեալ էր։

* *Օրինակ մի միայն համաձայն մերումս ունի անստուգութեամբ.* իբրև զարծուիս
 երկնից. *ուր մնացեալ քաղունք դնեն համեմատ բնագրիւն.* իբրև զարծուիս երկնից։
Յօրինակիւն. ՚ի դարման մտեալ պաշա՛։

* *Յօրինակիւն կարմրադեղով գրի.* Տեր Քրիստոս։ *Ոմանք.* խորհեաք՝ ընդ հովանեաւ
 նորա նստեաք ՚ի մէջ հեթա՛։

* *Ոմանք.* Յերկրիդ Աւստրացուոց. եկեսցէ բաժակս ՚ի վերայ քո արբցես արբեսցի՛ս և
 այսրէն դարձուցես։

* *Ոմանք.* Պատեցին անօրէնութիւնք... ոչ ևս յաւելցէ խախտել զքեզ... անօրէնութեան
 քուն... ամբարշտութիւնդ քո։

ԱՂՕԹՔ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԻԻ*:

¹Յիշեա՛ Տէր որ ինչ անցք անցին ընդ մեզ. նայեա՛ց և տե՛ս զնախատինս մեր:
²Ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն, և բնակութիւն մեր ՚ի նշդեհութիւն*:
³Ո՛րք մնացաք մեք՝ և ո՛չ գոյր մեր հայր. մարք մեր իբրև այրիք ՚ի ժամանակաց մերոց:
⁴Ձջուր մեր գնո՛յ արբաք. և փայտն մեր առանց փոխանակի* ⁵Եկն ՚ի վերայ պարանոցի մերոյ: Յալածակա՛ն եղեաք, և ո՛չ գտաք հանգիստ:
⁶Ձեռնածի՛գ եղեն Եգիպտացիքն՝ և ոչ Ասորեստանեայքն յագեցուցանել հացի*:
⁷Հարքն մեր մեղան, և չի՛ք ուրեք ՚ի միջի. և մեղք հարցն այն ընդ մեզ ելին*:
⁸Ծառայք տիրեցին մեզ. և այն որ փրկէրն զմեզ ՚ի ձեռաց նոցա՝ չի՛ք ՚ի միջի*:
⁹Եկա՛յք համբարս ՚ի ներքս արասցուք յերեսաց սրոյն անապատի: ¹⁰Սորթք մեր կարկամեցան իբրև զթոնիր հնացեալ յերեսաց բարկութեան սովոյն:
¹¹Ձկանայս խայտառակեցին ՚ի Սիոն, և զկուսանս ՚ի քաղաքս Յուդայ: ¹²Ձծերս կախեցին զբութաց, և ՚ի պառաւունս ո՛չ խնայեցին: ¹³Ընտիր ընտիրքն զձայն բարձեալ կականէին, և երիտասարդքն զփայտի հարեալ տկարացան*:
¹⁴Ծերք ՚ի գրոց մեկնեցան, և ընտիրքն յօրհնութեանցն լռեցին*:
¹⁵Լքան յուրախութենէ սիրտք մեր, և դարձան ՚ի սուգ օրհնութիւնք պարուց մերոց*:
¹⁶Անկաւ պսակն ՚ի գլխոց մերոց. վա՛յ մեզ վա՛յ մեզ՝ զի աղքատացաք*:
¹⁷Վասն այսորիկ տուաւ մեզ սիրտ ցաւագին. վասն այսորիկ և խաւարեցան աչք մեր ¹⁸ի վերայ լերին Սիովնի, զի դարձաւ յապականութիւն. և աղուէսք մուտ և ել առնէին ՚ի սրահս նորա*:
¹⁹Եւ դու Տէր յաւիտեան կաս, և աթոռ քո ազգէ մինչև յազգ*:
²⁰Ընդէ՞ր մինչև ՚ի սպառ մոռացար զմեզ. հարեր թողեր և լքցես զմեզ մինչև յերկար ժամանակ*:
²¹Դարձո՛ զմեզ Տէր՝ և դարձցուք. նորոգեա՛ զմեզ Տէր իբրև զաւուրսն զառաջինս*:
²²Ձի մերժելո՛վ մերժեցեր զմեզ. բարկացաւ սրտմտութիւն բարկութեան քոյ ՚ի վերայ մեր մինչև ՚ի սպառ:

Կատարումն ՚ի Տէր Մարգարէութեանն Երեմիայ*:

* *Ոմանք.* Աղօթք սրբոյն Երեմիայի:
* *Այլք.* ՚ի նժդեհութիւն:
* *Ոմանք.* Ձջուրս մեր... և փայտ մեր:
* *Յոմանս պակասի.* Եւ ոչ Ասորեստանեայք:
* *՚ի բազումս պակասի.* Հարցն այն ընդ մեզ ե՛:
* *Ոմանք.* Չի՛ք ուրեք ՚ի միջի:
* *Ոմանք.* Եւ ընտիր ընտիրքն:
* *՚ի լուս՝.* Ծերք ՚ի դպրացն մեկնեցան: *Ուր ոմանք.* ՚ի դրանցն մեկնեցան. և *ոմանք.* ՚ի գրոց դրացն մեկնեցան, և ընտիր ընտիրքն յօրհն՛:
* *Ոմանք.* Լքան սիրտք մեր յուրա՛:
* *Բազումք.* Վայ մեզ՝ զի մեղաք:
* *Ոմանք.* Ձի դարձան յապականութիւն:
* *Ոմանք.* Եւ աթոռ քո ազգէ յազգ:
* *Յօրինակին պակասէր.* Հարեր թողեր և: *Ուր ոմանք.* Հարցես թողցես: *՚ի լուս՝.* Եւ լքեր զմեզ:
* *Բազումք.* Իբրև զաւուրսն առաջինս:
* *՚ի վախճանի ոմանք.* Կատարումն ՚ի Տէր Երեմիայ մարգարէի. և *ոմանք.* Կատարեցաւ Երեմիա մարգարէ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Ասի՝ Դանիել որդի գոլ Յովհաննու որդւոյ Յովսիայ բարեպաշտն արքայի, հօրեղբօրորդի երից մանկանցն, որք ասին որդիք գոլ Յովակիմայ, և թոռունք Յովսիայ: Ջսոսա Նաբուքոդոնոսոր յառաջին ելանելն ՚ի վերայ Երուսաղեմի տարաւ ՚ի Բաբելոն: Եւ մինչ մանուկն էր Դանիել ընկալաւ զՅոզիմ Սուրբ Աստուծոյ, որով դատապարտեաց զչարածերսն, և ապրեցոյց զպարկեշտն Շուշան: Մտեալ ապա Դանիելեանքն յարքունիսն ճգնէին պահօք, զորս և փառաւորեաց Աստուած. զի Դանիել զխորհուրդ պատկերին զոր ետես Նաբուքոդոնոսոր մեկնեաց հաւաստի. յորում գուշակեաց զանսերմն ծնունդն Քրիստոսի ՚ի Կուսէն վիմովն որ հատաւ առանց ձեռին. և պատուեցաւ ՚ի թագաւորէն: Իսկ երեք մանկունքն ՚ի հնոցին զարմացուցին զնա: Յաւել ևս մեկնել Դանիել զխորհուրդ ծառոյն ՚ի վերայ Նաբուքոդոնոսորայ, և զգիր ձեռինն ՚ի վերայ Բաղտասարայ: Նենգեցաւ Դանիել յիշխանացն և ապրեցաւ. և տեսլեամբ գագանացն մինչ ՚ի կատարած երկրի գուշակեաց զերկրորդ զալուստն Քրիստոսի. հաստատեաց ՚ի լնուլ եւթանասուն ամին զդարձ գերւոյն. և եւթանասուն եւթներորդօքն սահմանեաց զմիջոցն մինչ ՚ի ծնունդն Քրիստոսի: Պահեաց երիս եւթներորդս, և ուսաւ ՚ի հրեշտակէն զոր ինչ յետ դարձին պատահէր Յրէիցն յԱնտիոքայ. յորում նկարէ զլինել նեղութեանցն որ ՚ի Նեռնէն. և զորոշումն յարուցելոցն, կնքեալ զտեսիլն մինչև ՚ի ժամանակն: Խնու զբերանս առիծուցն. կերակրի յԱմբակումայ, և պատուի ՚ի Կիւրոսէ: Եւ ունի Գիրքս Դանիելի պատմութիւն ամաց յիսուն և երկուց:

Գլուխք Դանիելի մարգարէի

ա. Մարգարեանայ նախ վասն Շուշանայ, փրկէ զգրպարտեալ արդարն, և մահու մատնէ զանօրէն ծերսն:

բ. Ընտրին Դանիելեանք և առնին յանձն ներքինապետին. և ուտեն ունտս. և ՚ի ժամանակի իբրև կացին առաջի թագաւորին՝ երևեցան գտան գեղեցկագոյն քան զամենեսին:

գ. Տեսանէ երազ Նաբուքոդոնոսոր. և իբրև ՚ի վարանս մտին և չկարէին գիտել մոգքն զերագն և զմեկնութիւնն. հրամայէ կոտորել զնոսա. և ՚ի տագնապի կացին և Դանիելեանք, և ապրեցոյց զնոսա Աստուած. քանզի յայտնեաց Դանիելի զգիտութիւն երագոյն:

դ. Մտանէ Դանիել և ասէ թագաւորին զերագն, և զմեկնութիւն նորա: Իսկ վէմն որ հատաւ առանց ձեռին Քրիստոս է. զի առանց ամուսնութեան ծնաւ ՚ի Կուսէն:

ե. Կանգնեաց զպատկերն Նաբուքոդոնոսոր, և հրամայէ ամենեցուն երկիրպագանել. և զերիս մանկունսն արկանէ ՚ի հնոց. վասն զի ո՛չ պագին երկիր պատկերին. իբրև որ շուրջ զհնոցաւն էին սատակեցան, և նոքա ապրեցան, և օրհնէին զԱստուած. կոչեաց զնոսա՝ ետես կենդանիս և զարմացաւ. և փառաւոր արար զԱստուած. և զնոսա իշխանութեամբն Յրէից պատուեաց. և հրաման ետ՝ թէ ոք հայիոյէ զԱստուած՝ մահու մեռցի:

զ. Տեսանէ այլ երազ Նաբուքոդոնոսոր, և ՚ի տարակուսի է միւսանգամ, ասէ իմաստնոցն Բաբելացւոց, և ո՛չ գիտացին. մեկնէ զերագն Դանիել. և խրատ թագաւորին՝ զանօրէնութիւնս իւր ողորմութեամբ քաւել. և յետ բազում ժամանակաց ել ՚ի գլուխ երագն, և օրհնեաց զԱստուած Նաբուքոդոնոսոր:

է. Ի մտանել սուրբ սպասուցն ՚ի հրամանէ Բաղտասարայ արքայի որդւոյ Նաբուքոդոնոսորայ, մինչդեռ ըմպէին նոքօք կոչնականքն, ել թաթ ձեռին և զրեաց յորմն. իբրև զայն ևս տարակուսէին ճանաչել իմաստունքն Բաբելացւոց,

եկն Դանիէլ, ծանեաւ զգիրն և մեկնեաց. զգեցաւ ծիրանիս, և արկին մանեակ ոսկի ՚ի պարանոցի նորա. և քարոզ կարդացաւ լինել երրորդ իշխան թագաւորութեան նորա:

ը. Թագաւորեաց Դարեհ Սար, և կացոյց իշխան զԴանիէլ. բռնադատէր թագաւորն ՚ի նախարարացն հաստատել հրաման, զի եթէ իշխեսցէ ոք խնդրել խնդրուածս յԱստուծոյ կամ ՚ի մարդոյ, բաց միայն յարքայէ մինչև ցերեսուն օր՝ անկցի ՚ի գուբն առիւծուց: Իբրև այնպէս կարգէր. սպասէին Դանիէլի մինչդեռ կայր յաղօթս, և չարախօսէին. կուտէին ՚ի վերայ թագաւորին, և ստիպէին զնա արկանել ՚ի գուբ, և արկ. և կանխեաց եկն եգիտ զնա կենդանի, եհան զնա ՚ի գբոյն. և զչարախօսսն կանամբք հանդերձ մատնեաց ՚ի սատակումն առիւծուցն. և հրաման երկնչել յԱստուծոյ:

թ. Տեսանէ զտեսիլ զազանացն. առիւծովն՝ զթագաւորութիւնն Բաբելացւոց. արջովն՝ զՄարաց և զՊարսից. ընծուն՝ զՄակեդոնացւոցն. և չորրորդին՝ զՀռոմայեցւոցն: Մարգարեանայ վասն Քրիստոսի, և վասն Նեռինն, և Անտիոքու ամպարշտի. զի նա է եղջերն փոքրիկ որ ընկեց զերիսն՝ որ յառաջ քան զնա էին:

ժ. Մարգարեանայ թէ զհարդ Աղէքսանդրոս Մակեդոնացի քակեաց զթագաւորութիւնն Պարսից. խոյ՝ զթագաւորն Պարսից ասէ. և քօշ՝ զԱղէքսանդրոս Մակեդոնացի: Աստ կայ եւթանասուն եւթներորդքն:

ժա. Իսկ վերջին տեսիլն՝ ուր զհարաւային տիկնոջն ասէ՝ ՚ի Մակաբայեցւոց գիրսն գտանի. յորում և վասն Նեռինն և կատարածի:

ժբ. ԶԲէլ կործանէ, զվիշապն սպանանէ, և ՚ի գուբն արկանի և ապրէ. և որք պատճառք արկանելոյն նորա եղեն՝ արկան ՚ի գուբն և ծախեցան յառիւծուցն:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԵԼԻ

ԴԱՆԻԵԼ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ*

13

Գլուխ ԺԳ*

Ա ¹ Եւ էր այր մի բնակեալ ՚ի Բաբելովն, և անուն նորա Յովակիմ: ² Եւ ա՛ռ իւր կին՝ անուն Շուշան, դուստր Քեղկեայ, գեղեցիկ յոյժ՝ երկիւղած ՚ի Տեառնէ*: ³ Եւ ծնօղք նորա արդարք, և ուսուցին զդուստրն իւրեանց ըստ օրինացն Մովսիսի*: ⁴ Եւ էր Յովակիմ մեծատո՛ւն յոյժ. և էր նորա բուրաստան՝ մերձ յապարանս իւր. և առ նա՛ ժողովէին Յրէայք, զի փառաւորագոյն էր քան զամենեսեան: ⁵ Եւ երևեցան երկու ծերք ՚ի ժողովրդենէ անտի դատաւորք տարւոյն այնմիկ. զորոց խօսեցաւ Տէր՝ եթէ ել անօրէնութիւն ՚ի Բաբելովնէ՝ ՚ի ծերոցն դատաւորաց. որ համարէին առաջնորդել

* Ի բազումս պակասի. Մարգարութիւն Դանիէլի. և ունին միայն զերկրորդ վերնագիրս. Դանիէլ Դատաստանաց:

* Վասն այլևայլութեան գլխոց ինչ և ՚ի գիրս յայս՝ տես՝ զոր նշանակեցաք ՚ի գիրսն եսթերայ:

* Ոմանք. Եւ երկիւղած ՚ի Տեառնէ:

* Ոմանք. Եւ ուսուցանէին զդուս՛:

ժողովրդեանն*։⁶ Եւ նոքա հանապազորդէին ՚ի տանն Յովակիմայ. և գային առ նոսա ամենեքեան ՚ի դատաստան*։⁷ Եւ լինէր իբրև ժողովուրդն մեկնէր զհասարակ աւուրքք՝ մտանէր Շուշան, և զգնայր ՚ի բուրաստանի առն իւրոյ*։⁸ Եւ տեսանէին զնա երկոքին ծերքն հանապազ՝ զի մտանէր և զգնայր. և ցանկացան նմա։⁹ Եւ դարձուցին զմիտս իւրեանց, և խոտորեցուցին զաչս իւրեանց չհայել յերկինս՝ և չիշել զարդար դատաստանսն*։¹⁰ Եւ էին երկոքեան հարեալ ՚ի նմա. և չպատմէին միմեանց զցաւս իւրեանց,¹¹ զի պատկառէին պատմել զցանկութիւնն իւրեանց. քանզի կամէին լինել ընդ նմա*։¹² Եւ սպասէին նմա ստէպ հանապազ տեսանել զնա։ Եւ ասեն ցմիմեանս.¹³ Երթիցուք ՚ի տուն, զի ճաշոյ ժամ է։ Ելին մեկնեցան ՚ի միմեանց*։¹⁴ և դարձեալ անդրէն եկին միւսանգամ առ միմեանս, և հարցեալ միմեանց զպատճառսն, խոստովան եղեն զցանկութիւնն իւրեանց. ապա եղեն ժամադիր միմեանց՝ թէ ե՞րբ կարասցեն զնա միայն գտանել*։¹⁵ Եւ եղև ՚ի սպասելն նոցա նմա ՚ի դիպող աւուր. եկն ենուտ երբեմն որպէս յերէկն և յեռանդն, երկու միայն աղջկամբք, և ցանկացաւ լուանալ ՚ի բուրաստանի անդ. քանզի տօ՞թ էր*,¹⁶ և չէր ոք անդ. բայց միայն երկու ծերքն թաքուցեալք՝ որ սպասէին նմա*։¹⁷ Եւ ասէ ցաղջկունսն. Երթայք բերէք ինձ եւղ և աճառ, և զդուրս բուրաստանիս փակեցէք՝ զի լուացայց*։¹⁸ Եւ արարին որպէս ասաց նոցա. փակեցին զդուրս բուրաստանին, և ելին ՚ի կողմանէ դրանցն բերել զոր ինչ հրամայեաց նոցա. և չտեսին զծերսն՝ քանզի թաքուցեալ էին*։¹⁹ Եւ եղև իբրև ելին աղջկունքն, յարեան երկու ծերքն, և դիմեցին ՚ի վերայ նորա և ասեն.²⁰ Ահա դուրք բուրաստանիս փակեալ են, և չի՞ք ոք որ տեսանէ զմեզ, և մեք ցանկացեալ ենք քեզ. վասն որոյ և քո հաւանեալ մեզ՝ լեր ընդ մեզ*։²¹ Ապա թէ ոչ՝ վկայեմք զքէն, թէ ոմն պատանի՞ էր ընդ քեզ, և վասն այնորիկ արձակեցեր զաղջկունսն ՚ի քէն։²² Յոգո՛ց եհան Շուշան և ասէ. Տագնա՛պ է ինձ յամենայն կողմանց. եթէ զայդ գործեցից՝ մա՛հ է ինձ, և եթէ ո՛չ գործեցից՝ չեմ ապրելոց ՚ի ձեռաց ձերոց*։²³ Բայց լաւ է ինձ չգործել զայդ՝ և անկանել ՚ի ձեռս ձեր, քան թէ մեղայց առաջի Տեառն*։²⁴ Եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ Շուշան. աղաղակեցին և երկոքին ծերքն կի՛ց նմին*։²⁵ Եւ ընթացաւ մին եբաց զդուրս բուրաստանին։²⁶ Իբրև լուան զձայն ճչոյն ՚ի բուրաստանի անդ ընտանիքն՝ անկան ընդ կողմն դրանն ՚ի ներքս, տեսանել թէ զի՞նչ իրք ընդ նմա անցեալ իցեն*։²⁷ Եւ իբրև ասացին ծերքն զբանս իւրեանց՝ զամօթի հարան ծնօղքն յոյժ. զի ո՛չ երբէք այնպիսի բանք ասացան զՇուշանայ։ Եւ եղև ՚ի վաղիւ անդր*²⁸ իբրև եկն ժողովուրդն առ այրն նորա Յովակիմ. եկին և երկու ծերքն անօրէն մտօք

* *Ոմանք.* Դատաւորք տարւոյն այնորիկ... և համարէին առաջ*։ *Ուր ևս ոմանք.* Որ արհամարտէին առաջնորդել։

* *Ոսկան.* ՚Ի տունն Յովակիմայ։

* *Ոմանք.* Առն իւրում։

* *Ոմանք.* Եւ դարձուցին զսիրտս իւրեանց։

* *Ոմանք.* Ձցանկութիւնս իւրեանց։

* *Ոմանք.* Քանզի ճաշոյ ժամ է. և ելին մեկնե՛ն։ *Ուր Ոսկան.* ճաշու ժամ է։

* *Ոմանք.* Եւ հարցեալ ՚ի միմեանց զպատճ... զցանկութիւնս իւրեանց, ապա ժամադիր եղեն միմե՛ն։

* *Ոմանք.* Երկուք միայն աղջ՛ք։

* *Ոմանք.* Եւ ոչ ոք էր անդ։

* *Յօրինակին.* Եւ ասէ զաղջկունսն։ *Ոմանք.* Եւղ և աւճառ։

* *Ոմանք.* Որպէս և ասաց նոցա... և ելին ընդ կողմանէ դր՛... և ոչ տեսին զծերսն։

* *Օրինակ մի.* Եւ քո հաւանեալ յանձն առ և լեր ընդ մեզ։

* *Բագունք.* Յոգուոց եհան։ *Ոմանք.* Եթէ զայդ գործ գործեցից։

* *Ոմանք.* Բայց լաւ լիցի ինձ։

* *Ոմանք.* Եւ երկու ծերքն կից։

* *Օրինակ մի.* ՚Ի մէջ բուրաստանի։ *Բագունք.* Ընդ նա անցեալ իցեն։

* *Ոմանք յաւելուն.* Ձամօթի հարան ծառայքն և ծնողքն յոյժ։

զՇուշանայ՝ սպանանել զնա՝²⁹ Եւ ասեն առաջի ժողովրդեանն. Յղեցէք զՇուշանայ զդատերէ Քեղկեայ, որ է կին Յովակիմայ: Եւ նոքա յղեցին.³⁰ Եւ եկն նա՝ և ծնօղք իւր՝ և որդիք իւր՝ և ամենայն ազգականք նորա: ³¹ Եւ Շուշան՝ էր փափովկ յոյժ և գեղեցիկ տեսլեամբ: ³² Եւ անօրէնքն հրամայեցին հոլանի՝ առնել զնա՝ քանզի սքողեալ էր, զի լցցին գեղով նորա: ³³ Եւ իւրքն լային. և ամենեքին որ ճանաչէին զնա: ³⁴ Յարեան երկոքին ծերքն՝ ՚ի միջոյ ժողովրդեանն՝ և եղին զձեռս իւրեանց՝ ՚ի վերայ գլխոյ նորա՝: ³⁵ Եւ նա լալով հայեցաւ յերկինս. քանզի էր սիրտ նորա յուսացեալ ՚ի Տէր: ³⁶ Ասեն ծերքն երկոքեան. Մինչդեռ մեք միայն զգնայաք ՚ի մէջ բուրաստանին, եմուտ դա անդր երկու աղջկամբք, և փակեաց զդուրս բուրաստանին, և արծակեաց զաղջկունսն՝: ³⁷ Եկն առ նա պատանի մի որ էր թաքուցեալ, և անկաւ ընդ դնա՝: ³⁸ Եւ մեք էաք յանկեան բուրաստանին. իբրև տեսաք զանօրէնութիւնն՝ ընթացաք առ դոսա, և տեսաք զլինելն դոցա ընդ միմեանս: ³⁹ Չնա ո՛չ կարացաք ունել, քանզի բոլորն էր քան զմեզ, և եբաց զդուրսն և փախեաւ արտաքս: ⁴⁰ Չդա զոր ըմբռնեցաքդ՝ հարցաք թէ ո՞վ էր պատանին, և ո՛չ կամեցաւ պատմել մեզ. զայդ վկայեմք՝: ⁴¹ Եւ հաւատաց նոցա ատեանն իբրև ծերոց ժողովրդեան՝ և դատաւորաց. և դատեցան զնա մեռանել: ⁴² Աղաղակեաց ՚ի ձայն բարձր Շուշան՝ և ասէ. Աստուած յաւիտենական ծածկագէտ, որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. ⁴³ դու գիտես զի սուտ վկայեն զինն. և ահա մեռանիմ որ ոչ ինչ գործեցի՝ զոր դոքայդ անօրինեն զինն: ⁴⁴ Եւ լուաւ Տէր ձայնի նորա. ⁴⁵ և մինչդեռ տանէին զնա կորուսանել, զարթոյց Աստուած զՅոզիմ Սուրբ ՚ի վերայ մանկան միոյ տղայոյ որում անուն էր Դանիէլ՝: ⁴⁶ Եւ աղաղակեաց ՚ի ձայն բարձր՝ և ասէ. Անպարտ եմ ես յարեմէ դորա: ⁴⁷ Եւ դարձաւ ամենայն ժողովուրդն առ նա՝ և ասեն. Չի՞նչ է բանդ այդ զոր դուդ խօսեցար՝: ⁴⁸ Եւ նա եկաց ՚ի մէջ նոցա և ասէ. Այդպէս անմի՞տք էք որդիք Իսրայէլի. ո՛չ քննեցէք, և ո՛չ յիրաւանց վերայ հասէք, և դատապարտեցէ՞ք զդուստրդ Իսրայէլի՝: ⁴⁹ Դարձայք անդրէն յատեան. քանզի սուտ վկայեցին դոքա զնմանէ՝: ⁵⁰ Եւ դարձաւ ժողովուրդն վաղվաղակի: Եւ ասեն ցնա ծերքն. Եկ միստ ՚ի միջի մերում և պատմեա՛ մեզ. զի քե՛զ ետ Աստուած զերիցութիւն: ⁵¹ Եւ ասէ ցնոսա Դանիէլ. Մեկնեցէք զդոսա ՚ի միմեանց ՚ի բաց և քննեսցու՛ք զդոսա: ⁵² Իբրև մեկնեցան ՚ի միմեանց, կոչեաց զմին ՚ի նոցանէ և ասէ ցնա. Այ հնացեալ աւուրքք չարութեան. այժմ ահա եկին հասին մեղք քո՝ զոր գործէիր յառաջագոյն՝: ⁵³ Չի դատէիր զդատաստանս անիրաւութեամբ, զանմեղս դատապարտէիր, և զվնասակարս արծակէիր. ուր Աստուծոյ ասացեալ էր՝ թէ զանմեղն և զարդարն մի՛ սպանանիցես՝: ⁵⁴ Բայց արդ՝ եթէ տեսե՞ր զդոսա, ընդ որո՞վ ծառով հասեր առ դոսա՝ մինչ խօսէին ընդ միմեանս: Եւ նա ասէ. Ընդ հերձեանն՝: ⁵⁵ Ասէ Դանիէլ. Բարւո՛ք ստեցեր ՚ի քոյին գլուխդ. ահաւասիկ հրեշտակի Աստուծոյ առեալ հրաման, հերձցէ՛ զքեզ ընդ մէջ: ⁵⁶ Եւ ՚ի բաց մերժեաց զնա: Հրամայեաց ածել զմեւսն, և ասէ ցնա. Չաւակ Քանանու՝ և ո՛չ Յուդայ.

* *Ոմանք.* Եկին և երկոքին ծերքն անօրէնք մտօք:

* *Ոմանք.* Ծերքն երկոքեան ՚ի միջոյ ժողովրդեանն, եղին:

* *Ոմանք.* Միայն զնայաք ՚ի մէջ... դա անդ:

* *Ոմանք.* Եւ եկն առ դա պատանի ոմն որ թաքուցեալ էր:

* *Ոմանք.* Եւ չկամեցաւ պատմել:

* *Ոմանք.* Եւ դու գիտես:

* *Ոմանք.* Տանէին զնա ՚ի կորուսանել:

* *Ոմանք.* Եւ ամենայն ժողովուրդն դարձան առ:

* *Ոմանք.* Եւ կաց ՚ի միջի՝ և ասէ:

* *Ոմանք.* Դարձիք յատեանն, զի սուտ վկայեցին զնմանէ:

* *Ոմանք.* Եւ իբրև մեկնեցան... այժմ, եկին հասին:

* *Օրինակ մի.* Չի առնէիր զդատաստան անիրաւութեամբ... որում Աստուծոյ ասացեալ էր:

* *Օրինակ մի.* Թէ տեսեր զդա՝ ասա՛ ընդ որո՞վ ծառով տեսեր զդոսա մինչդեռ խօսէին:

զեղ դորա պատրեա՞ց զքեզ՝ և ցանկութիւն շրջեա՞ց զսիրտ քո՞: ⁵⁷ Ա՞յդպէս առնէիք զդատերս Իսրայէլի, և նոքա առ երկիւղի մերձենային առ ձեզ. այլ և ո՛չ դուստրդ Յուդայ կալաւ յանձին զանօրէնութիւնս ձեր՞: ⁵⁸ Բայց արդ՝ աղէ՛ ասա՛, ընդ որո՞վ ծառով հասեր առ դոսա մինչդեռ խօսէին ընդ միմեանս: Եւ նա ասէ. Ընդ սղոցեա՛ն: ⁵⁹ Ասէ՛ ցնա Դանիէլ. Բարութք ստեցեր և դու՛ ՚ի քոյին գլուխ, զի կայ աւասիկ հրեշտակ Աստուծոյ, սուսեր մերկ ՚ի ձեռին սղոցել՝ զքեզ ընդ մէջ՝ զի սատակեսցէ զքեզ՞: ⁶⁰ Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն ՚ի ձայն մեծ, և օրհնեցին զԱստուած որ ապրեցուցանէ զյուսացեալս իւր: ⁶¹ Եւ յարեան ՚ի վերայ երկուց ծերոցն. քանզի յանդիմանեաց զնոսա Դանիէլ ՚ի նոցին բերանոց սուտ վկայս. և արարին ընդ նոսա՝ որպէս և եղին չարութիւն ՚ի մտի առնել ընդ ընկերի՞, ⁶² ըստ օրինացն Մովսիսի. և սպանին զնոսա. և ապրեցաւ արիւն արդար յաւուր յայնմիկ՞: ⁶³ Իսկ Քեղկեա և կին նորա օրհնեցին զԱստուած վասն դատերն իւրեանց Շուշանայ՝ հանդերձ Յովակիմաւ արամբ նորա, և ամենայն ազգականօք նորա. զի ո՛չ գտան իրք զարշուօթեան ՚ի նմա՞: ⁶⁴ Եւ Դանիէլ եղև մեծ առաջի ժողովրդեանն յօրէ յայնմանէ և անդր:

1

Գլուխ Ա

Տեսիլ երկրորդ:

Բ ԴՅամին երրորդի թագաւորութեանն Յովակիմայ արքայի Յուդայ. եկն Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացոց յերուսաղէմ, և պաշարեաց զնա: ²Եւ ետ Տէր ՚ի ձեռս նորա զՅովակիմ արքայ Յուդայ, և ՚ի մասնէ սպասուց տանն Աստուծոյ. և տարաւ զայն յերկիրն Սենայար ՚ի տուն աստուծոյ իւրոյ. և զսպասն եմոյժ ՚ի տուն զանձի աստուծոյ իւրոյ: ³Եւ ասէ թագաւորն ցԱզգիանէս ներքինապետ իւր, ածել յորդոց զերութեանն Իսրայէլի, և ՚ի զաւակէ թագաւորութեանն, և ՚ի Պարթևաց՞, ⁴մանկունս անարատս՝ զեղեցիկս երեսօ՞ք, և խելամուտս ամենայն իմաստութեան՝ և հմուտս գիտութեան, մտավարժս հանճարով՝ և զօրաւորս, կալ՝ ՚ի տաճարին առաջի թագաւորին. և ուսուցանել նոցա դպրութիւն, և զլեզու Քաղդէացոց՞: ⁵Եւ կարգեաց նոցա թագաւորն ռոճիկս օր ըստ օրէ ՚ի սեղանոյ արքայի, և ՚ի գինւոյ զոր ինքն ըմպէր. սնուցանել զնոսա ամս երիս. և ապա՝ կացուցանել առաջի թագաւորին: ⁶Եւ էին ՚ի նոսա յորդոցն Յուդայ՝ Դանիէլ, և Անանիա, և Միսայէլ, և Ազարիա: ⁷Եւ եղ նոցա ներքինապետն անուանս. Դանիէլի՝ Բաղտասար. և Անանիայի՝ Սեդրաք, և Միսայէլի՝ Միսաք, և Ազարիայ՝ Աբեղնագով: ⁸Եւ եղ Դանիէլ ՚ի մտի իւրում չճաշակել ՚ի սեղանոյ թագաւորին, և ո՛չ ՚ի գինւոյ ըմպելոյ նորա. և աղաչեաց զներքինապետն զի մի՛

* *Ոմանք.* Եւ հրամայեաց ածել:

* *Ոմանք.* Այլ ոչ և դուստր Յուդայ... զանօրէնութիւնն ձեր:

* *Ոմանք.* Աւաղիկ հրեշտակ Աստուծոյ սուսեր ՚ի ձեռին... սատակեսցէ զձեզ:

* *Օրինակ մի.* Բերանոց սուտ վկայիցն:

* *Ոմանք.* Արիւն արդարոյ յա՛:

* *Ոսկան.* Օրհնեցին զՏէր: *Ոմանք.* Եւ ամենայն ազգականօքն. զի:

* *Ի բազումս պակասի.* Ի Սենայար ՚ի տուն աստուծոյ իւրոյ. և զսպասն եմոյժ ՚ի տուն զանձի աստուծոյ իւրոյ: *Ուր օրինակ մի.* Եւ տարաւ զայն յերկիրն իւր բարի տուն աստուծոյ իւրոյ և զսպասն ե՛:

* *Ոմանք.* ՅԱսիանէզ ներքինապետն:

* *Ոմանք.* Ամենայն իմաստութեամբ:

* *Ոմանք.* Ի սեղանոյ թագաւորին... սնուցանել զնոսա ամիսս երիս:

* *Ոմանք.* Եւ Անանիայ՝ Սեդրաք, և Միսայէլի՝ Միսաք:

ճաշակեսցէ՞: ⁹Եւ ետ Աստուած զԴանիէլ ՚ի շնորհս և յողորմութիւն առաջի
 ներքինապետին՞: ¹⁰Եւ ասէ ներքինապետն ցԴանիէլ. Երկնչիմ ես ՚ի տեառնէ իմնէ
 արքայէ, որ կարգեաց ձեզ զկերակուող ձեր և զըմպելի. գուցէ՛ տեսանիցէ զերեսս ձեր
 տրտմագոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց. և առնիցէք զիս
 զլխապարտ թագաւորին՞: ¹¹Եւ ասէ Դանիէլ ցԱմեղասաղ, զոր կացուցեալն էր
 ներքինապետն ՚ի վերայ Դանիէլի՝ և Անանիայ՝ և Միսայելի՝ և Ազարիայ՞: ¹²Աղէ փորձեա՛
 զժառայս քո աւուրս տա՛սն, և տացեն մեզ ունտս՝ և կերիցուք, և ջուր արբցուք՞: ¹³Եւ
 երևեսցին առաջի քո գոյնք մեր, և գոյն մանկանցո՞ր որ ուտեն զսեղան թագաւորին. և
 որպէս տեսանիցես արասջի՛ր ընդ ծառայս քո՞: ¹⁴Եւ անսաց նոցա՝ և փորձեաց զնոսա
 աւուրս տասն: ¹⁵Եւ յետ կատարելոյ աւուրցն տասանց, երևեցան երեսք նոցա մնա՛
 բարիք, և հզօրք մարմնով քան զամենայն մանկունսն որ ուտէին զսեղան թագաւորին:
¹⁶Եւ առնոյր Ամեղասաղ զընթրիս նոցա, և զգինի ըմպելոյ նոցա, և տայր ունտս
 չորեցունց մանկանցն՞: ¹⁷Եւ ետ նոցա Աստուած իմաստութիւն և հանճար յամենայն
 դպրութեան՝ և իմաստութեան. և Դանիէլ խելամուտ էր ամենայն տեսլեան երազոց՞:
¹⁸Եւ յետ կատարածի աւուրցն՝ հրամանն ետ թագաւորն ածել զնոսա. և ան զնոսա
 ներքինապետն առաջի Նաբուքոդոնոսորայ. ¹⁹Եւ խօսեցաւ ընդ նոսա արքայն: Եւ ո՛չ
 գտան յամենայնի նման Դանիէլի՝ և Անանիայ՝ և Միսայելի՝ և Ազարիայ. և կային առաջի
 թագաւորին՞: ²⁰Եւ յամենայն բանս իմաստութեան և զիտութեան զոր խնդրէր ՚ի նոցանէ
 թագաւորն՝ գտանէր զնոսա տասնպատիկ առաւել քան զամենայն գէտս և զմոգս որ
 էին ՚ի թագաւորութեան նորա՞:

Տեսիլ երրորդ:

²¹Եւ եղև Դանիէլ մինչև յամս Կիւրոսի արքայի՞:

2

Գլուխ Բ

Գ ¹Յամին երկրորդի թագաւորութեան իւրոյ, ետես երա՛զ Նաբուքոդոնոսոր. և
 յիմարեցաւ ոգի նորա, և քուն հատաւ ՚ի նմանէ՞: ²Եւ ասէ թագաւորն. Կոչեցէք զգէտս, և
 զմոգս, և զկախարդս, և զքաղդեայս, պատմել թագաւորին զերազ իւր: Եւ եկին կացին
 առաջի թագաւորին՞: ³Եւ ասէ ցնոսա թագաւորն. Երա՛զ տեսի, և յիմարեցաւ ոգի իմ
 խելամուտ լինել երազոյն: ⁴Եւ խօսեցան քաղդեայն ընդ թագաւորին Ասորերէն. Արքայ
 յաւիտեան կեաց. ասա՛ դու զերազն ծառայից քոց, և զմեկնութիւն նորա ասասցուք՞:
⁵Պատասխանի ետ արքայն և ասէ ցքաղդեայսն. Բանն վերացաւ յինէն. արդ եթէ ո՛չ

* *Ոմանք.* Ոչ ճաշակել ՚ի սեղանոյ: *Ոսկան.* Եւ ոչ ՚ի գինւոյ և յըմպելոյ նորա:

* *Օրինակ մի.* Եւ ետ Աստուած Դանիէլի շնորհս առաջի ներքինա՞:

* *Ոմանք.* Տրամագոյն քան զայ՞: *Յօրինակին պակասէր.* Եւ առնիցէք *զիս* զլխապարտ:

* *Ոմանք.* ՅԱմաղեսաղ: *Իսկ Ոսկան.* ցՄալասաղ:

* *Ոմանք.* Եւ ջուր՝ և արբցուք: *Իսկ Ոսկան.* զի արբցուք:

* *Օրինակ մի.* Եւ որպէս տեսանիցես այնպէս արասցես ընդ ծառայսս:

* *Ոմանք.* ՅԱմաղեսաղ: *Իսկ Ոսկան.* ցՄալասաղ:

* *Ոմանք.* Տեսլեան և երազոց:

* *Ոմանք.* Եւ ոչ գտան յամենեսին նման Դա՞:

* *Ոմանք.* Եւ յամենայն բան իմաս՞:

* *Ոմանք.* Մինչև յամի Կիւ՞: *Ոսկան.* Բայց եղև Դանիէլ մինչև յամն առաջներորդ Կիւրոսի
 ար՞: *Յօրինակին.* Կիւրոսի արքայ:

* *Օրինակ մի յաւելու.* Նաբուքոդոնոսոր *արքայ:*

* *Օրինակ մի.* Եւ ասաց թագաւորն կոչել զամենայն գէտս և զմոգ՞:

* *Բազումք.* Եւ խօսեցան քաղդեայքն: *Ոմանք.* Յաւիտեան կեաց:

ցուցանիցէք ինձ զերազն և զմեկնութիւն նորա՝ ի կորուստ լինիցիք, և տունք ձեր յաւար լինիցին: ⁶Ապա թէ զերազն և զմեկնութիւն նորա ցուցանիցէք ինձ՝ պարզաւ և տուրս բազումս՝ և պատիւս առնուցուք յինէն. բայց միայն զերազն և զմեկնութիւն նորա պատմեցէք ինձ*։ ⁷Պատասխանի՛ ետուն կրկին անգամ, և ասեն. Ասացէ՛ք արքայ զերազն ծառայից իւրոց, և զմեկնութիւն նորա պատմեցուք*։ ⁸Պատասխանի՛ ետ արքայ և ասէ. Շշմարտի՛ւ գիտեն եթէ ժամավաճառ լինիք, զի տեսէք թէ բանն վերացաւ յինէն: ⁹Արդ՝ եթէ զերազն ո՛չ պատմիցէք ինձ, գիտեն զի բան սուտ և զեղծուցանելի՝ միաբանեալ էք ասել առաջի իմ մինչև ժամանակն անցցէ. ասացէ՛ք ինձ զերազն իմ, և գիտացից եթէ և զմեկնութիւն նորա պատմելոց էք ինձ*։ ¹⁰Պատասխանի՛ ետուն միւսանգամ քաղղեացիք առաջի թագաւորին՝ և ասեն. Ոչ գոյ մարդ ՚ի վերայ երկրի՝ որ զբան թագաւորի կարօղ է ցուցանել. զի ամենայն թագաւոր մեծ և իշխան, բան՝ զայդպիսի ո՛չ հարցանէ զգէտ՝ և ցմոգ՝ և ցքաղղեայ*։ ¹¹Գի բան զոր արքայ հարցանէ՝ ծանր է. և այլ ոք չի՞ք որ պատմիցէ զայդ առաջի արքայի, բայց եթէ դիքն որոց ո՛չ է բնակութիւն ՚ի մէջ ամենայն մսեղեաց*։ ¹²Յայնժամ թագաւորն բարկութեամբ և սրտմտութեամբ բազմաւ ասաց կոտորել զամենայն իմաստունս Բաբելացւոց*։ ¹³Եւ հրամանն ել, և իմաստունքն կոտորէին. և խնդրէին զԴանիէլ՝ և զբարեկամս նորա սպանանել*։ ¹⁴Յայնժամ Դանիէլ խօսեցաւ խորհուրդ և խրատ ընդ Արիովքայ դահճապետին արքային որ ելեալ կոտորէր զիմաստունս Բաբելացւոց՝ իշխան թագաւորին*։ ¹⁵Եհարց զնա և ասէ. Վասն է՞ր ել հրամանդ այդ խիստ յերեսաց արքայի: Եւ յայտնեաց զբանն Արիովք Դանիէլի: ¹⁶Եւ ասէ Դանիէլ. Մուտ և աղաչեա՛ զարքայն, զի տացէ նմա ժամ. և զմեկնութիւն նորա պատմեցէ թագաւորին*։ ¹⁷Եւ եմուտ Դանիէլ՝ ՚ի տուն իւր. և Անանիայ և Ազարիայ և Միսայելի բարեկամաց իւրոց՝ եցոյց զբանն*։ ¹⁸Եւ խնդրէին գթութիւն յԱստուծոյ երկնից, զի մի՛ կորիցէ Դանիէլ՝ և բարեկամք իւր ընդ այլ իմաստունս Բաբելացւոց*։ ¹⁹Յայնժամ Դանիէլի ՚ի տեսլեան գիշերոյ յայտնեցաւ խորհուրդն. և օրհնեաց զԱստուած երկնից Դանիէլ, ²⁰և ասէ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեանից մինչև յաւիտեանս. զի իմաստութիւն և հանճար և զօրութիւն՝ նորա է*։ ²¹և նա փոփոխէ զժամանակս՝ և զժամս. կացուցանէ զթագաւորս և փոփոխէ տայ իմաստութիւն իմաստնոց՝ և խորհուրդ խորհրդականաց*։ ²²Ինքն յայտնէ զխորհնս՝ և զգաղտնիս. գիտէ՛ որ կայ ՚ի խաւարի և լոյս ընդ նմա*։ ²³Ձքէն Աստուած հարցն մերոց գոհանամ և օրհնենք. զի իմաստութիւն և զօրութիւն ետուր ինձ. և ծանուցեր ինձ որ ինչ աղօթիւք խնդրեցաք մեք ՚ի քէն. և զտեսիլ թագաւորին ցուցեր ինձ:

Դ ²⁴Եւ եմուտ Դանիէլ առ Արիովք՝ զոր կացուցեալ էր թագաւորին կորուսանել զիմաստունս Բաբելացւոց. և ասաց ցնա զիմաստունս Բաբելացւոց մի՛ կոտորեր. բայց

* *Ոմանք.* Ապա եթէ... ցուցանէք ինձ:

* *Օրինակ մի.* Պատասխանի ետուն քաղղեայքն կրկին:

* *Ոմանք.* Ոչ պատմէք ինձ... մինչև ժամանակ անցցէ:

* *Բազումք.* Միւսանգամ քաղղեայքն, առաջի: *Ոմանք.* Ջբանդ զայդպիսի... զգէտս և ցմոգս և ցքաղղեայս:

* *Ոմանք.* Ձի բանդ զոր... որոց բնակութիւնն չէ ՚ի մէջ ամենայն մսե՛: *Յօրինակին թուի թէ վրիպակաւ գրի.* Որոց ո՛չ է բնութիւն ՚ի մէջ:

* *Օրինակ մի.* Եւ սրտմտութեամբ բազմաւ հրամայեաց կո՞:

* *Ոմանք.* Խնդրեցին զԴանիէլ:

* *Օրինակ մի.* Դանիէլ խորհեցաւ խորհուրդ... որ ելեալ էր կոտորել զիմաստունս թագաւորին Բաբելացւոց:

* *Ոմանք.* Եւ Դանիէլ եմուտ և աղաչեաց զարքայն, զի տացէ:

* *Ոմանք.* Բարեկամաց իւրոց յայտնեաց զբանն:

* *Ոմանք.* Եւ խնդրեցին յԱստուծոյ երկնից գթութիւն:

* *Ոսկան.* Եղիցի անուն Աստուծոյ օրհ՞:

* *Ոմանք.* Տայ զիմաստութիւնս իմաստնոց, և զխորհուրդս:

* *Ոմանք.* Յայտնէ զխորս... և լոյս ընդ նմա է:

զիս տա՛ր առաջի թագաւորին, և ես պատմեցից զմեկնութիւնն թագաւորին*։²⁵ Յայնժամ Արիովք փութապէ՛ս տարաւ զԴանիէլ առաջի թագաւորին, և ասէ ցնա. Գտի՛ այր մի յորդոց գերութեանն Յրէաստանի, որ զմեկնութիւնն պատմեսցէ արքայի:

²⁶Պատասխանի ետ թագաւորն և ասէ ցԴանիէլ՝ որում անուն էր Բաղտասար. եթէ կարո՞ղ իցես պատմել ինձ զերազն զոր տեսի՛ և զմեկնութիւն նորա*։²⁷ Պատասխանի՛ ետ Դանիէլ առաջի թագաւորին և ասէ. Ձխորհուրդդ զայդ զոր արքայ հարցանէ, ո՛չ է իմաստնոց՝ և մոգուց՝ և գիտաց՝ և ըղձից՝ պատմել առաջի արքայի*։²⁸ Այլ գոյ Աստուած յերկինս՝ որ յայտնէ զխորհուրդս. և եցո՛յց Նաբուքոդոնոսորայ արքայի՝ որ ինչ լինելոց է յաւուրս յետինս: Երազն և տեսիլ զլիտյ քոյ յանկողնի քում, այն է արքայ: ²⁹Խորհուրդք քո մտայո՛յզ առնէին զքեզ յանկողնի քում, թէ զինչ լինելոց է՝ յետ այսորիկ. և յայտնիչն խորհրդոց եցո՛յց քեզ զինչ լինելոց է*։³⁰ Եւ ինձ՝ ո՛չ առ իմաստութեան ինչ՝ որ իցէ յիս քան յամենայն կենդանիս՝ յայտնեցաւ խորհուրդն. այլ վասն ցուցանելոյ արքայի զմեկնութիւնն, զի ծանիցես զխորհուրդս սրտի քոյ: ³¹Դու արքայ տեսանէիր. և ահա պատկեր մի մեծ պատկեր. և երեսք նորա և տեսիլ նորա ահագին յոյժ. և կայր առաջի քո. ահաւոր էր յոյժ պատկերն*։³² Որոյ գլուխն յոսկոյ սրբոյ. ձեռքն և լանջքն և բազուկք իւր՝ արծաթիք. մէջք նորա և բարձք՝ պղնձիք*։³³ և սրունքն՝ երկաթիք. և ոտքն՝ կէսն յերկաթոյ՝ և կէսն՝ ՚ի խեցւոյ: ³⁴ Յայէիր մինչև հատաւ վէմ առանց ձեռնի՝ և եհար զպատկերն ՚ի վերայ երկաթեղէն և խեցեղէն ոտիցն՝ և մանրեաց զնոսա ՚ի սպառ: ³⁵ Յայնժամ առ հասարակ մանրեցան՝ խեցին և երկաթ, պղինձն և արծաթ՝ և ոսկին, և եղեն իբրև զփոշի՝ կալոյ ամարայնոյ. և ա՛ռ զնոսա սաստկութիւն հողմոյ. և տեղի ո՛չ գտանէր նոցա: Եւ վէմն որ եհար զպատկերն՝ եղև լեառն մեծ, և ելից զամենայն երկիր: ³⁶ Այս է երազն. և զմեկնութիւն նորա՝ ասասցուք առաջի արքայի*։³⁷ Դու ես արքայ՝ արքայից արքայ. որում Աստուած երկնից թագաւորութիւն հզօր և պատուական ետ*, ³⁸ և ընդ ամենայն տեղիս ուր բնակեալ են որդիք մարդկան. զգագանս վայրի՝ և զթռչունս երկնից՝ և զձկունս ծովու ետ ՚ի ձեռս քո. և կացոյց զքեզ տէր ամենայնի: Դո՛ւ ես գլուխն ոսկի. ³⁹ և զկնի քո յարիցէ՛ այլ թագաւորութիւն խոնարհագոյն քան զքեզ. և թագաւորութիւնն երրորդ՝ որ է պղինձն՝ տիրեսցէ ամենայն երկրի: ⁴⁰ Եւ թագաւորութիւնն չորրորդ՝ հզօր իբրև զերկաթ. զոր օրինակ երկաթ մանրէ և մալէ զամենայն, նոյնպէս մանրեսցէ՛ և մալեսցէ զամենայն*։⁴¹ Եւ զի տեսանէիր զոտսն և զմատուռսն, կէս կողմն յերկաթոյ, և կէս կողմն ՚ի խեցւոյ. թագաւորութիւնն բաժանեալ լիցի. և յարմատոյ երկաթոյն եղիցի ՚ի նմա, զոր օրինակ տեսանէիր զերկաթն ընդ խեցին խառնեալ*։⁴² Եւ մատուռք ոտիցն՝ կողմն մի յերկաթոյ, և կողմն մի ՚ի խեցւոյ. մի կողմն թագաւորութեանն հզօր կայցէ. և ՚ի նմանէ եղիցի ջախջախն*։⁴³ զի տեսանէիր զերկաթն ընդ խեցին խառնեալ. եղիցին խառն ՚ի զաւակէ մարդկան, և ՚ի միմեանս ո՛չ

* *Ոմանք.* Ձիմաստունս Բաբելոնի: *Ի լուս՝.* Եւ ասէ ցնա. Ձիմաս՝. *համաձայն բազմաց ՚ի բն՝:* Յոմանս պակասի. Առաջի թագաւորին, և ես պատմեցից, և այլն:

* *Ոմանք.* Որոյ անունն Բաղտասար. եթէ կարո՞ղ ես:

* *Օրինակ մի.* Եւ գիտնոց և ըղձից:

* *Ոմանք.* Յայտնելոց իցէ յետ:

* *Յոմանս պակասի.* Պատկեր մի մեծ *պատկեր...* էր *յոյժ* պատկերն:

* *Ոմանք.* Ձեռք իւր և լանջքն:

* *Օրինակ մի.* Ասասցուք առաջի քո:

* *Օրինակ մի.* Ձթագաւորութիւն հզօր և հաստատուն և պատուական (38) ընդ ամենայն տեղիս:

* *Ոմանք.* Այնպէս մանրեսցէ և:

* *Ոմանք.* Կէս կողմն ՚ի խեցւոյ, և կէս կողմն յերկաթ... եղիցի նմա. և զոր օրինակ տեսա՞... ընդ խեցւոյն խառն՝:

* *Ոմանք.* Եւ կողմն մի խեցւոյ... հզօր կացցէ: *Օրինակ մի.* Կայցէ. և մինն ՚ի նոցանէ եղիցի ջաղջախ:

յարիցեն. զոր օրինակ ո՛չ խառնի երկաթ ընդ խեցի՝⁴⁴Եւ յաւուրս թագաւորացն այնոցիկ յարուսցէ Աստուած երկնից թագաւորութիւն՝ որ յաւիտեանս ո՛չ եղծանիցի. և թագաւորութիւնն նորա ազգի այլուն ո՛չ մնասցէ. մանրեսցէ և հոսեսցէ՝ զամենայն թագաւորութիւնս, և ինքն կացցէ՝ յաւիտեանս՝⁴⁵Որպէս տեսանէիր՝ զի ՚ի լեռնէն հատաւ վէմն առանց ձեռին, և մանրեաց զխեցին և զերկաթ՝ զպղինձն և զարծաթ և զոսկի: Աստուած մեծ եցոյց արքայի որ ինչ լինելոց է առ յապա. և ճշմարիտ է երագն՝ և հաւատարիմ մեկնութիւնն նորա՝⁴⁶Յայնժամ արքայն Նաբուքոդոնոսոր անկաւ՝ ՚ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ Դանիելի. և զոհս և խունկս անուշութեան հրամայեաց մատուցանել նմա: ⁴⁷Պատասխանի ետ թագաւորն և ասէ ցԴանիել. Արդարև՝ Աստուածն ձեր՝ նա՛ է Աստուած աստուծոց՝ և Տէր տերանց՝ և Թագաւոր թագաւորաց, որ յայտնէ՝ զխորհուրդս. զի յայտնել կարացեր զխորհուրդդ զայդ՝⁴⁸Եւ մեծացոյց թագաւորն ցԴանիել, և պարգևս մեծամեծս և բազումս ետ նմա. և կացոյց զնա ՚ի վերայ աշխարհին Բաբելացւոց, և իշխան նախարարացն. և ՚ի վերայ ամենայն իմաստնոցն Բաբելացւոց՝⁴⁹Եւ Դանիել խնդրեաց յարքայէ, և կացոյց ՚ի վերայ գործոց աշխարհին Բաբելացւոց՝ զՍեդրաբ, Միսաբ, և զԱբեղնագով. և Դանիել էր ՚ի դրան արքային՝:

3

Գլուխ Գ

Տեսիլ չորրորդ:

Ե Յամին ութուտասներորդի Նաբուքոդոնոսորայ արքայի, արա՛ր պատկեր ոսկի. բարձրութիւնն նորա վաթսուն կանգուն, և լայնութիւնն նորա կանգուն վեց. և կանգնեաց զնա ՚ի դաշտին Դէերայ յաշխարհին Բաբելացւոց՝²Եւ արձակեաց ժողովել զգորավարս, և զգորագլուխս, և զկուսակալս, զպետս և զբռնաւորս և զգործակալս՝ և զամենայն իշխանս աշխարհաց գալ՝ ՚ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր: ³Եւ ժողովեցան կուսակալք, գորավարք և գորագլուխք՝ պետք և բռնաւորք. մեծամեծք՝ գործակալք, և ամենայն իշխանք աշխարհաց, գալ՝ ՚ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր. և կային առաջի պատկերին զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր՝⁴Եւ քարո՛գ կարդայր զօրութեամբ և ասէր. Չե՛գ ասի ազգք և ազինք և լեզուք. ⁵յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրընկի, թմբկի, և քնարի, և տաւղի և զերգոց միաբանութեան, և զամենայն ազգաց արուեստականաց, անկանիջիք և երկիրպագանիջիք պատկերին զոր կանգնեաց Նաբուքոդոնոսոր՝ արքայ: ⁶Եւ որ ո՛չ անկեալ երկիր պագանիցէ՝ ՚ի մին ժամու ընկեսցի ՚ի հնոցն հրոյն բորբոքելոյ՝⁷Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն՝ զսրընկին զտաւղի, և զնուագարանաց, և զամենայն ազգաց արուեստականաց, անկանէին ամենայն ազգքն և ազինք և լեզուք՝ և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր: ⁸Յայնժամ մատեան արք քաղդեացիք՝ և եղեն

* *Օրինակ մի.* Եւ զի տեսա՛... և ՚ի միմեանս ոչ խառնեսցին. զոր օրինակ չխառնիցի:

* *Ոմանք.* Որ յաւիտեան ոչ եղ՛:

* *Ոմանք.* Աստուած եցոյց արքայի:

* *Ոսկան.* Եւ զի յայտնել կարա՛:

* *Ոմանք.* Ի վերայ ամենայնի իմաստնոցն:

* *Օրինակ մի.* Եր ՚ի դրան արքունի:

* *Ոմանք.* Ի դաշտին Դեհերայ աշ՛:

* *Ոմանք.* Եւ զօրավարք... և մեծամեծք և գործա՛:

* *Օրինակ մի.* Ի մին ժամու անկցի ՚ի հնոցն հրոյն:

չարախօս զՅրէից առ Նաբուքոդոնոսորայ*, ⁹և ասեն. Արքայ՝ յաւիտեան կեաց. ¹⁰դու հրաման ետուր ամենայն մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ՝ զսրընկի՝ և զքնարի՝ և զտաւղի՝ և զնուագարանաց. և զամենայն ազգաց արուեստականաց. ¹¹և որ ո՛չն անկեալ երկիրպագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի՝ ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ*։ ¹²Արդ՝ ե՛ն աստ արք Յրէայք՝ զորս կացուցեր ՚ի վերայ գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով. որ ո՛չ հնագանդեցան հրամանի քում արքայ. և զդիս քո ո՛չ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ո՛չ պագանեն։ ¹³Յայնժամ Նաբուքոդոնոսոր սրտմտութեամբ և բարկութեամբ հրամայեաց ածել զՍեդրաք, Միսաք, և զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին։ ¹⁴Պատասխանի ետ Նաբուքոդոնոսոր՝ և ասէ ցնոսա. Թէ արդարն՞ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, զդիս իմ ո՞չ պաշտիցէք՝ և պատկերին ոսկւոյ զոր կանգնեցի երկիր ո՞չ պագանիցէք*։ ¹⁵Բայց արդ՝ եթէ պատրաստք լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ սրընկի և թմբկի և քնարի, և զմիաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիր պագանիցէք պատկերին զոր արարի. ապա թէ ո՛չ պագանիցէք երկիր՝ ՚ի նմին ժամու անկանիցիք ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է Աստուած՝ որ փրկէ զձեզ ՚ի ձեռաց իմոց*։ ¹⁶Պատասխանի ետուն՝ Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով. և ասեն ցարքայ Նաբուքոդոնոսոր. Ո՛չինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի. ¹⁷զի է՛ մեր Աստուած յերկինս՝ զոր մե՛քն պաշտենք. կարօղ է փրկել զձեզ ՚ի հնոցէ հրոյոյ բորբոքելոյ, և ՚ի ձեռաց քոց արքայ՝ ապրեցուցանել զձեզ։ ¹⁸Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի՝ լիցի քեզ արքայ՝ զի զդիս քո մեք ո՛չ պաշտենք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ո՛չ պագանենք։ ¹⁹Յայնժամ Նաբուքոդոնոսոր լի՛ եղև սրտմտութեամբ. և գոյն երեսաց նորա շրջեցաւ՝ ՚ի վերայ Սեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի. և ասէ. Ջեռուցէք զհնոցն եւթնպատիկ, զի մինչև ՚ի վախճան այրեսցին*։ ²⁰Եւ արք հինգ՝ զօրաւորք զօրութեամբ՝ կապեցեն զՍեդրաք Միսաք և զԱբեդնագով՝ արկանել ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ*։ ²¹Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք և վարտօք, արտախուրակօք և զանկապանօք իւրեանց, և ընկեցան ՚ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ*։ ²²Ձի հրաման թագաւորին սաստկանայր, և հնոցն բորբոքէր եւթնպատիկ առաւել յոյժ։ ²³Եւ երեքեան նոքա՝ Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով, անկան ՚ի մէջ հնոցին կապեալք։ ²⁴Գնային ՚ի մէջ հրոյն. օրհնէին և գովէին զՏէր Աստուած*։ ²⁵Յարեաւ Ազարիա, և կաց յաղօթս այսպէս. Եբաց զքերան իւր ՚ի մէջ հրոյն՝ և ասէ*։ ²⁶Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, զովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս*։ ²⁷զի արդար ես յամենայնի զոր ածեր ՚ի վերայ մեր, և ամենայն գործք քո ճշմարիտ են. և ուղիղ են ճանապարհք քո, և ամենայն դատաստանք քո ճշմարտութիւն։ ²⁸Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր ըստ ամենայնի զոր արարեր մեզ, և քաղաքին սրբոյ հարցն մերոց երուսաղէմի։ Ձի ճշմարտութեամբ և յիրաւի՝ ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց. ²⁹զի մեղաք և անօրինեցաք յապստամբ լինելն ՚ի քէն, և առաւել մեղաք յամենայնի*։ ³⁰և պատուիրանաց քոց ո՛չ անսացաք։ Ո՛չ պահեցաք և ո՛չ արարաք որպէս պատուիրեցեր մեզ՝ զի բարի լինիցի մեզ։ ³¹Եւ զամենայն զոր ածեր ՚ի վերայ մեր, և

* *Ոմանք.* Առ Նաբուքոդոնոսոր, (9) և ասեն. Արքայ՝ յաւիտեան կաց։

* *Ոմանք.* Եւ որ ոչ երկիրպագա՞։

* *Ոմանք.* Ձդիս իմ ո՞չ պաշտէք... երկիր ո՞չ պագանէք։

* *Ոմանք.* Բայց եթէ պատ՝... և զմիաբանութեան ամենայն ազ՝... անկցիք ՚ի հնոց... որ փրկեցէ զձեզ։

* *Օրհնակ մի յաւելու.* Լի եղև սրտմտութեամբ և բարկութեամբ։

* *Ոմանք.* Կապեցին զՍեդրաք։

* *Ոմանք.* Եւ վարտօք։

* *Ոմանք.* Եւ գնային ՚ի մէջ։

* *Յօրհնակին պակասէր.* Ձքերան իւր ՚ի մէջ։

* *Բազումք.* Անուն քո յաւիտեան։

* *Այլք.* Ապստամբ լինել ՚ի քէն։

զամենայն զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ արարեր: ³²Եւ մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց խստաց և ապստամբողաց. և թագաւորի՝ անիրաւի և չարի՝ քան զամենայն երկիր: ³³Եւ արդ ո՛չ գոյ մեզ բանալ զբերանս մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից: ³⁴Այլ մի՛ մատներ զմեզ ՚ի սպառ վասն անուան քոյ, և մի՛ ցրեր զուխտ քո, ³⁵և մի՛ ՚ի բացէ՛ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ: Վասն Աբրահամու սիրելոյ քոյ և վասն Իսահակայ ծառայի քոյ՝ և վասն Իսրայէլի սրբոյ քոյ. ³⁶որոց խոստացար բազմացուցանել զգաւակ նոցա իբրև գաստեղս երկնից, և իբրև գաւազ առ ափն ծովու: ³⁷Եւ արդ Տէր՝ նուաղեցա՛ք քան զամենայն ազգս. և եմք տառապեալք յամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց: ³⁸Եւ ո՛չ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մարգարէ՛ և առաջնորդ. ո՛չ ողջակէզք և ո՛չ զոհք, և ո՛չ պատարագք և ո՛չ խունկք. և ո՛չ տեղի տալոյ երախայրիս առաջի քո, ³⁹և գտանել զողորմութիւն: Այլ անձամբք բեկելովք՝ և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք: ⁴⁰Իբրև զողջակէզս խոյոց և զուարակաց. և իբրև զբիրաւորս գառանց պարարտաց. այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո լինել կատարեալ զկնի քո, զի չի՞ք ամօթ յուսացելոցս ՚ի քեզ: ⁴¹Եւ արդ գամք զհետ քո ամենայն սրտիւք մերովք, և երկնչիմք մեք ՚ի քէն, և խնդրենք զերեսս քո. ⁴²մի՛ յամօթ առներ զմեզ. այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազում ողորմութեան քում: ⁴³Եւ փրկեա՛ զմեզ վասն սքանչելեաց քոց. և տո՛ւր փառս անուան քում Տէր: ⁴⁴Եւ յամօթ լիցին ամենեքեան ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ամաչեսցեն յամենայն բռնութեան իւրեանց. և զօրութիւն նոցա խորտակեսցի՛: ⁴⁵Եւ ծանիցեն զի դո՛ւ ես Տէր Աստուած միայն, և փառաւորեալ ՚ի վերայ ամենայն տիեզերաց: ⁴⁶Եւ ո՛չ դադարէին որք արկին զնոսա սպասաւորք թագաւորին՝ զհնոցն բորբոքելոյ, նաւթի և ձիթով և վշով և որթով: ⁴⁷Եւ ելանէր դիզանայր բոցն ՚ի վերոյ քան զհնոցն ՚ի քառասուն և յինն կանգուն: ⁴⁸Եւ շրջէր պատէր շուրջ զհնոցան. և այրէր զորս գտանէր ՚ի Քաղդէացոց անտի: ⁴⁹Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ Ազարիանս ՚ի հնոցի անդ, և թօթափեաց զբոց հրոյն ՚ի հնոցէ անտի: ⁵⁰Եւ արար ՚ի մէջ հնոցին իբրև զհողմ որ ցողագին շնչիցէ, և ո՛չ մերձեցայր ամենկին հուրն ՚ի նոսա, ո՛չ տրտմեցուցանէր և ո՛չ նեղէր զնոսա: ⁵¹Յայնժամ երեքեան իբրև ՚ի միոջէ բերանոյ, օրհնէին և զովէին և փառաւոր առնէին զԱստուած ՚ի մէջ հնոցին՝ և ասէին: ⁵²Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց, զովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս. և օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. զովեալ և ա՛: ⁵³Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբութեան քոյ, զովեալ և ա՛: ⁵⁴Օրհնեալ ես որ հայիս յանդունդս, և նստիս ՚ի քրովբէս, զովէ՛: ⁵⁵Օրհնեալ ես՝ որ նստիս ՚ի հաստատութեան երկնից, զովեալ և ա՛:

* *Օրհնակ մի.* Եւ ՚ի ձեռս թագաւորի անօրինի և չարի:

* *Օրհնակ մի.* Ոչ գոյ մեզ ժամ բա՛... եղեն ծառայից քոց և պաշտօն:՝

* *Բազումք.* Որոց խօսեցար բազմացու՛... որպէս գաստեղս երկնից, և որպէս գաւ՛:

* *Ոսկան.* Չողորմութիւն ՚ի քէն:

* *Ոմանք.* Որպէս զողջակէզս... և որպէս զբիրաւորս գառանց պարարտից. այնպէս ընդունելի լիցի պատարագս մեր... և չիք ամօթ:

* *Ոմանք.* Տէր մի՛ յամօթ առներ զմեզ. այլ արա՛ առ մեզ ըստ:

* *Ոսկան.* Յամենայն բռնութենէ իւրեանց, և զօրութիւնք նոցա խորտակեսցին:

* *Ոմանք.* Որ փառաւորեալդ ես:

* *Ոմանք.* Թագաւորին ՚ի զհնոցն բորբո՛: *Ոսկան.* Նաւթի և ձիթով:

* *Ոմանք.* Դիզանէր բոցն:

* *Օրհնակ մի.* Եւ շրջեալ պատէր:

* *Օրհնակ մի.* Որպէս հողմ ցողագին որ շնչիցէ:

* *Օրհնակ մի.* Որպէս ՚ի միոջէ բե՛... ՚ի մէջ հնոցի հրոյն:

* *Բազումք.* Ի վերայ աթոռոյ ար՛:

* *Ոմանք զտունս զայստիկ ունին ըստ կարգի Լատինական թուահամարոյ:*

* *Ոսկան ՚ի լուս.* Որ նստիս ՚ի վերայ հաս՛:

⁵⁷Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէր. օրհնեցէ՛ք և բա՛րձր արարէք զնա յաւիտեան: ⁵⁸Օրհնեցէ՛ք երկինք զՏէր, օրհ՛ն: ⁵⁹Օրհնեցէ՛ք հրեշտակք Տեառն զՏէր օրհնե՛ք: ⁶⁰Օրհնեցէ՛ք ջուրք ամենայն որ ՚ի վերոյ քան զերկինս օրհ՛ն: ⁶¹Օրհնեցէ՛ք ամենայն զօրութիւնք Տեառն: ⁶²Օրհնեցէ՛ք արև և լուսին զՏէր. օրհ՛ն: ⁶³Օրհնեցէ՛ք ամենայն աստեղք երկնից զՏէր. օրհ՛ն: ⁶⁴Օրհնեցէ՛ք ամենայն անձրևք և ցօղք զՏէր. օրհ՛ն: ⁶⁵Օրհնեցէ՛ք ամենայն հողնք զՏէր. օրհնե՛ք: ⁶⁶Օրհնեցէ՛ք հուր և տապ զՏէր. օրհնեցէ՛ք, և: ⁶⁷Օրհնեցէ՛ք ցուրտ և սառն զՏէր. օրհնե՛ք: ⁶⁸Օրհնեցէ՛ք եղեամն և ձիւն զՏէր. օրհնե՛ք: ⁷¹Օրհնեցէ՛ք տիւր և գիշերք զՏէր. օրհ՛ն: ⁷²Օրհնեցէ՛ք լոյս և խաւար զՏէր. օրհնեցէ՛ք: ⁷³Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք զՏէր. օրհ՛ն: ⁷⁴Օրհնեցէ՛ք երկիր զՏէր. օրհնեցէ՛ք և բարձ՛: ⁷⁵Օրհնեցէ՛ք լեռինք և բարձունք զՏէր. օրհնե՛ք: ⁷⁶Օրհնեցէ՛ք ամենայն բոյսք երկրի զՏէր. օրհ՛ն: ⁷⁷Օրհնեցէ՛ք աղբւրք զՏէր. օրհնե՛ք: ⁷⁸Օրհնեցէ՛ք ծով և գետք զՏէր. օրհնեցէ՛ք և՛: ⁷⁹Օրհնեցէ՛ք կէտք և ամենայն կայտառք որ ՚ի ջուրս զՏէր. օրհ՛ն: ⁸⁰Օրհնեցէ՛ք թռչունք երկնից զՏէր. օրհ՛ն: ⁸¹Օրհնեցէ՛ք ամենայն զագանք՝ և անասուն զՏէր. օրհ՛ն: ⁸²Օրհնեցէ՛ք որդիք մարդկան զՏէր. օրհնե՛ք: ⁸³Օրհնեցէ՛ք Իսրայէլ զՏէր. օրհնե՛ք: ⁸⁴Օրհնեցէ՛ք քահանայք զՏէր. օրհնեցէ՛ք և: ⁸⁵Օրհնեցէ՛ք ծառայք Տեառն զՏէր. օրհնեցէ՛ք: ⁸⁶Օրհնեցէ՛ք հօգիք և շունչք արդարոց զՏէր. օրհ՛ն: ⁸⁷Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարիք սրտիւք զՏէր. օրհ՛ն: ⁸⁸Օրհնեցէ՛ք Անանիա՛ Ազարիա՛ և Միսայէլ զՏէր. օրհնեցէ՛ք և բա՛րձր արարէք զնա յաւիտեան: Չի փրկեաց զմեզ ՚ի դժոխոց, և ՚ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ. և փրկեաց զմեզ ՚ի հնոցես, և ՚ի միջոյ բորբոքեալ բոցոյս, և ՚ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ: ⁸⁹Գոհացարո՛ւք զՏեառնէ, զի քաղցր է զի յաւիտեան է ողորմ նորա՛: ⁹⁰Օրհնեցէ՛ք ամենայն պաշտօնեայք Տեառն զԱստուածն աստուծոց, օրհնեցէ՛ք և գոհացարո՛ւք, զի յաւիտեան է ողորմ նորա՛: ⁹¹Եւ Նաբուքոդոնոսոր իբրև լուաւ զօրհնութիւնս նոցա՝ զարմացաւ. յարեաւ տագնապաւ՝ և ասէ ցնեծամեծս իւր. Ո՞չ արս երիս կապեալս արկաք ՚ի մէջ հրոյն: Եւ ասեն ցթագաւորն. Այո՛՛ արդա՛ր ասես արքայ: ⁹²Եւ ասէ թագաւորն. Այլ ես տեսանեմ արս չո՛րս արձակս, և զնան ՚ի մէջ հրոյն. և ապականութիւն ինչ՝ ո՛չ գոյ ՚ի նոսա. և տեսիլ չորրորդին նման է որդւոյ Աստուծոյ: ⁹³Յայնժամ մատեաւ Նաբուքոդոնոսոր ՚ի դուռն հնոցին հրոյն բորբոքելոյ. և ասէ. Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեղնագով՝ ծառայք Աստուծոյ բարձրելոյ, ելէ՛ք և եկայք: Եւ ելին Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեղնագով ՚ի միջոյ հրոյն: ⁹⁴Եւ ժողովեցան նախարարքն և կուսակալք՝ և զօրավարքն և զօրաւորք թագաւորին. և տեսանէին զարսն զի ո՛չ տիրեաց հուրն ՚ի մարմինս նոցա, և հեր գլխոյ նոցա ո՛չ խանձատեցաւ, և վարտիք նոցա ո՛չ այլագունեցան, և հոտ հրոյ ո՛չ գոյր ՚ի նոսա՛: ⁹⁵Եւ երկիր եպագ թագաւորն առաջի նոցա Տեառն: Եւ պատասխանի ետ Նաբուքոդոնոսոր՝ և ասէ. Օրհնեալ է Աստուած Սեդրաքայ, Միսաքայ, և Աբեղնագովի. որ առաքեաց զհրեշտակ իւր և փրկեաց զձառայս իւր զի յուսացան ՚ի նա, և զքան թագաւորի անարգեցին. և մատնեցին զմարմինս իւրեանց ՚ի հուր. զի մի՛ պաշտեցեն և մի՛ երկիր պագանիցեն ամենայն աստուածոց, բայց միայն Աստուծոյ իւրեանց՛: ⁹⁶Եւ արդ ե՛ս տամ հրաման. ամենայն ազգք և ազինք և լեզուք, որ խօսիցին հայիոյութիւն զԱստուծոյ Սեդրաքայ Միսաքայ և զԱբեղնագովի՝ ՚ի կորո՛ւստ մատնեցին, և տունք նոցա ՚ի յափշտակութիւն. զի ո՛չ գոյ այլ աստուած՝ որ կարօղ իցէ այնպէս փրկել: ⁹⁷Յայնժամ թագաւորն առաւել

* Ոմանք. Ցուրտ և տօթ:

* Ոմանք յաւելուն. Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն և: *Իսկ Ոսկան. Եղեամն և ձիւնաբեր զՏէր: Ուր և յաւելու համար 69. Օրհնեցէ՛ք սառն և պարզ զՏէր: 70. Օրհնեցէ՛ք պաղ և ձիւն, զՏէր. օրհ՛ն:*

* Ոսկան. Ծովք և գետք:

* Ոսկան. Եւ անասունք:

* Ոմանք. Չի յաւիտեան է ողորմութիւն նորա:

* Ոմանք. Չի յաւիտեան է ողորմութիւն նորա:

* Ոմանք. Եւ զօրավարք և կուսակալք. և զօ՛:

* Ոմանք. Օրհնեալ Աստուած Սեդր՛... և մի՛ երկիրպագեն ամենայն աստուծոց:

շքեղացոյց զԱեդրաք Միսաք և զԱբեդնագով յերկրին Բաբելացոց, և բարձրացոյց զնոսա. և աղաչեաց լինել նոցա իշխան ամենայն Հրէիցն որ էին ՚ի թագաւորութեան նորա:

Տեսիլ հինգերորդ:

Ձ⁹⁸Նաբուքոդոնոսոր արքայ, առ ամենայն ազգս և լեզուս որ բնակեալ են յամենայն երկրի, խաղաղութիւն բազմասցի ձեզ^{*}: ⁹⁹Ձնշանս և զարուեստս զոր արա՛ր ընդ իս Բարձրեալն՝ հաճո՛յ թուեցաւ առաջի իմ պատմել ձեզ, ¹⁰⁰թէ ո՞րպէս մեծամեծք՝ և զօրաւորք են. արքայութիւն նորա արքայութիւն յաւիտենից, և իշխանութիւն նորա ազգաց յազգս:

4

Գլուխ Դ

¹Ես Նաբուքոդոնոսոր՝ ուրախ էի ՚ի տան իմում և զուարճացեալ: ²Երա՛զ տեսի՛ և զարհուրեցոյց զիս, և խռովեցայ յանկողնի իմում. և տեսիլ գլխոյ իմոյ տազնապեա՛ց զիս: ³Եւ տուաւ հրաման յինէն ածել առաջի իմ զամենայն իմաստունս Բաբելացոց, զի զմեկնութիւն երագոյն ցուցցեն ինձ: ⁴Եւ մտին առաջի իմ զէ՛տք՝ և մոգք՝ և իղձք՝ և քաղդեայք. և զերագն իմ ասացի առաջի նոցա. և զմեկնութիւն նորա ո՛չ ցուցին ինձ^{*}. ⁵Մինչև եկն Դանիէլ՝ որում անուն էր Բաղտասար՝ ըստ անուան աստուծոյ իմոյ. զի Հոգի Սուրբ Աստուծոյ գոյ ՚ի նմա: Տոր և ասացի^{*}, ⁶թէ Բաղտասար իշխան՝ գիտեա՛ զոր ես տեսի. գիտեմ եթէ Հոգի Սուրբ Աստուծոյ գոյ ՚ի քեզ, և ամենայն խորհուրդք ո՛չ ծածկին ՚ի քէն. արդ լո՛ւր դու զտեսիլ երագոյն իմոյ զոր տեսի, և զմեկնութիւն նորա ասացես ՚ի ինձ^{*}: ⁷Տեսանէի յանկողնի իմում, և ահա ծա՛ռ մի ՚ի մէջ երկրի. և բարձրութիւն նորա բազում յոյժ: ⁸Մեծացաւ ծառն և զօրացաւ, և բարձրութիւն նորա եհա՛ս մինչև յերկինս, և լայնութիւն նորա ՚ի ծագս ամենայն երկրի: ⁹Տերն նորա զեղեցիկ, և պտուղ նորա բազում. և կերակուր ամենայնի ՚ի նմա. ՚ի ներքոյ նորա բնակեալ էին զազանք վայրի. և յոստս նորա հանգուցեալ էին թռչունք երկնից. և ՚ի նմանէ կերակրէր ամենայն մարմին^{*}: ¹⁰Տեսանէի ՚ի տեսլեան գիշերոյ յանկողնի իմում, և ահա զուարթուն և սուրբ իջանէր յերկնից. ¹¹և բարբառէր զօրութեամբ՝ և ասէր ա՛յսպէս. Հատէ՛ք զծառո՛ղ և քշտեցէ՛ք զոստս դորա. թօթափեցէ՛ք զտերև դորա, և զպտուղ դորա ցրուեցէ՛ք. շարժեցին զազանքը ՚ի ներքոյ դորա, և թռչունքը յոստս դորա^{*}: ¹²Բայց զշառաւիղ արմատոյ դորա թողէ՛ք յերկրի, երկաթապատ և պղնձապատ ՚ի դալար վայրի՛ և ՚ի ցօղոյ երկնից հանգիցէ. և ընդ զազանս անապատի բաժին դորա, և ՚ի խոտ երկրի^{*}. ¹³Սիրտ նորա ՚ի մարդկանէ փոխեսցի, և սիրտ զազանաց տացի նմա. և եւթն ժամանակք փոխեսցին ՚ի վերայ նորա: ¹⁴Մեկնութեամբ զուարթոն՝ է բանս. և պատգամ սրբո՛ց է հարցուածս. զի ծանիցեն կենդանիք՝ եթէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ում կամի տացէ զնա. և զարհամարհն ՚ի մարդկանէ յարուցանէ ՚ի վերայ նորա^{*}: ¹⁵Այս է երագն

^{*} *Ոսկան.* Խաղաղութիւն բազմասցի ՚ի ձեզ:

^{*} *Ոմանք.* Եւ զերագն ասացի:

^{*} *Ոմանք.* Որոյ անուն էր... յոր ասացի. թէ:

^{*} *Ոմանք.* Իշխան՝ գիտեա՛ զոր ես գիտեմ, եթէ: *Ուր Ոսկան.* Իշխան գիտաց, զոր ես:

^{*} *Ոմանք.* Եւ պտուղ նորա բազում յոյժ. և կերակուր ամենայն ՚ի նմա:

^{*} *Օրինակ մի.* Եւ թռչունքը յոստոյ դորա:

^{*} *Ոմանք.* Բայց զշառաւիղս արմատոց դորա... ՚ի դալար ՚ի վայրի և ՚ի ցօղ երկնից դադարեսցէ, և ընդ զազանս բաժին նորա:

^{*} *Ոմանք.* Եւ պատգամ սրբոյ է... ծանիցեն կենդանիքս՝ թէ Տէր է Բարձրեալն... յարուցէ ՚ի վերայ նորա:

զոր տեսի ե՛ս Նաբուքոդոնոսոր արքայ: Եւ դու Բաղտասար՝ ասա՛ ինձ զմեկնութիւն նորա. զի ամենայն իմաստունք թագաւորութեան իմոյ ո՛չ կարացին ցուցանել ինձ զմեկնութիւն նորա. այլ դու Դանիէլ կարօղ ես՝ զի Զոգի Սուրբ Աստուծոյ գոյ՛ ՚ի քեզ: ¹⁶Յայնժամ Դանիէլ՝ որում անուն էր Բաղտասար՝ հիացաւ իբրև ժամ մի և խորհուրդք նորա խռովեցուցանէին զնա: Պատասխանի ետ թագաւորն՝ և ասէ ցնա. Բաղտասար, երազն և մեկնութիւն նորա մի՛ տազնապեցուցանեն զքեզ: Ետ պատասխանի Բաղտասար՝ և ասէ. Տէ՛ր՝ երազն ատելեաց քոց, և մեկնութիւն նորա թշնամեաց քոց՝: ¹⁷Ծառն զոր տեսանէիր մեծացեալ և զօրացեալ, որոյ բարձրութիւնն հասանէր յերկինս, և լայնութիւն նորա յամենայն երկիր* . ¹⁸տերև նորա գեղեցիկ, և պտուղ նորա բազում, և կերակուր ամենայնի՛ ՚ի նմա. ՚ի ներքոյ նորա բնակեալ էին զազանք անապատի, և յոստս նորա հանգուցեալ թռչունք երկնից* . ¹⁹դու՛ ես արքայ: Չի մեծացար և զօրացար, և մեծութիւն քո բարձրացաւ եհա՛ս մինչև յերկինս. և տէրութիւն քո ՚ի ծագս ամենայն երկրի* : ²⁰Եւ զի տեսանէիր արքայ՝ զի զուարթունն և սուրբ՝ իջանէ՛ր յերկնից՝ և ասէր. Կտրեցէ՛ք զծառոց և ապականեցէ՛ք զդա. բայց զշառաւիղ արմատոյ դորա թողէ՛ք յերկրի. երկաթապատ և պղնձապատ, և ՚ի դալար վայրի՛ և ՚ի ցօղոյ երկնից հանգիցէ. և ընդ զազանս անապատի բաժին նորա, մինչև եւթն ժամանակք փոխեսցին ՚ի վերայ նորա* : ²¹Այս է մեկնութիւն նորա արքայ: Եւ դատաստանք Բարձրելոյն հասեալ ՚ի վերայ տեառն իմոյ արքայի* . ²²և զքեզ հալածեսցեն ՚ի մարդկանէ. և ընդ զազանս անապատի՛ եղիցի բնակութիւն քո. և խոտ իբրև արջառոյ ջամբեսցեն քեզ, և ՚ի ցօղոյ երկնից հանգիցես. և եւթն ժամանակք փոխեսցին ՚ի վերայ քո, մինչև ծանիցես թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան. և ուն կամի, տացէ զնա: ²³Եւ զի ասաց՝ թէ թողէ՛ք զշառաւիղ արմատոյ ծառոյն. թագաւորութիւն քո քեզ մնայ, մինչև ծանիցես զիշխանութիւն երկնաւորին* : ²⁴Վասն այդորիկ արքայ, խրատ իմ հաճոյ թուեսցի քեզ. և զմեղս քո ողորմութեամբ քաւեսցիր, և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց. թերևս երկայնամիտ լիցի ՚ի վերայ յանցանաց քոց Աստուած* : ²⁵Այս ամենայն եկն եհա՛ս ՚ի վերայ Նաբուքոդոնոսորայ արքայի ²⁶յետ երկոտասան ամսոյն, մինչդեռ ՚ի վերայ տաճարի թագաւորութեան իւրոյ ճեմէր ՚ի Բաբելոն: ²⁷Խօսել սկսաւ թագաւորն՝ և ասէ. Ո՞չ այս՝ այն մեծ Բաբելոն է զոր ե՛սն շինեցի ՚ի տուն թագաւորութեան հաստատութեամբ զօրութեան իմոյ՝ ՚ի պատիւ փառաց իմոց* : ²⁸Եւ մինչդեռ բանքն ՚ի բերան էին թագաւորին, ձայն եղև յերկնից և ասէ. Քե՛զ ասեմ Նաբուքոդոնոսոր արքայ. թագաւորութիւն քո անցեալ է ՚ի քէն* . ²⁹և ՚ի մարդկանէ հալածեսցեն զքեզ, և ընդ զազանս անապատի բնակութիւն քո, և խոտ իբրև արջառոյ ջամբեսցեն քեզ. և եւթն ժամանակք փոխեսցին ՚ի վերայ քո, մինչև ծանիցես՝ թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ուն կամի տացէ զնա* : ³⁰Ի նմին ժամու բանն կատարեցաւ ՚ի վերայ Նաբուքոդոնոսորայ. և ՚ի մարդկանէ հալածեցաւ, և խոտ՝ իբրև արջառոց ուտէր. և ՚ի ցօղոյ երկնից մարմին նորա ներկաւ, մինչև վարսք նորա իբրև զառիճուց մեծացան, և եղնզունք նորա իբրև զթռչնոց* : ³¹Եւ յետ կատարածի աւուրցն,

* *Ոմանք.* Որոյ անուն էր Բաղտասար... մի՛ տազնապեցուցեն. *կամ՝* պեցուցէ զքեզ:

* *Ոմանք.* Նորա յամենայն երկրի:

* *Բազունք.* Եւ կերակուր ամենայն ՚ի նմա:

* *Ոմանք.* Եւ եհաս յերկինս:

* *Ոմանք.* Տեսանէիր զզուարթունն և զսուրբ զի իջանէր... զշառաւիղս արմատոց դորա... և ՚ի դալարի վայրի և ՚ի ցօղ երկնից հան՝... փոխեսցին ՚ի վերայ դորա:

* *Ոմանք.* Դատաստանք Բարձրելոյն են հասեալ ՚ի վերայ տեառն իմում ար՛:

* *Ոմանք.* Չշառաւիղս արմա՛... զիշխանութիւնն երկնաւոր:

* *Օրինակ մի.* Վասն որոյ արքայ... քեզ. զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես և զա՛:

* *Օրինակ մի.* Բաբելովնն է զոր ես շինեցի տուն թագաւորութեան իմոյ:

* *Ոմանք.* Չայն եղև յերկնից. քեզ ասեն Նաբու՛: *Ուր Ոսկան.* քեզ ասի Նա՛:

* *Ոմանք.* Եւ խոտ որպէս արջառոյ... և եւթն ժամանակ փոխեսցի:

* *Օրինակ մի.* Որպէս զարջառ ուտէր, և ՚ի ցօղ երկնից... ներկեաւ. և վարսք իւր իբրև

ե՛ս Նաբուքոդոնոսոր՝ զաչս իմ յերկինս համբարծի, և միտք իմ առ ի՛ս դարձան. և զԲարձրեալն օրհնեցի, և զԿենդանին յաւիտենից գովեցի և փառաւորեցի. զի իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական. և տէրութիւն նորա ազգաց յազգս՝³²Եւ ամենայն բնակիչք երկրի իբրև զոչինչ համարեցան: Ըստ կամաց իւրոց առնէ՛ի զօրութեան երկնից, և ՚ի բնակութեան երկրի. և չի՞ք որ ընդդէմ դառնայցէ ձեռին նորա և ասիցէ թէ զինչ գործեցեր՝: ³³Ի նմին ժամանակի միտք իմ առ ի՛ս դարձան, և ՚ի պատիւ թագաւորութեան իմոյ եկի. և կերպարանք իմ առ ի՛ս դարձան. և իշխանք իմ և մեծամեծք իմ խնդրեցին զիս. և անդէն՝ ՚ի թագաւորութիւն իմ հաստատեցայ. և մեծութիւն առաւել՝ յաւելաւ ինձ՝: ³⁴Արդ ես Նաբուքոդոնոսոր օրհնեմ և առաւել բարձրացուցանեմ, և փառաւոր առնեմ զԱրքայն երկնից. զի ամենայն գործք նորա ճշմարիտ են, և շաւիղք նորա իրաւունք. և զամենեսին ոյք գնան ամբարտաւանութեամբ՝ կարօ՛ղ է խոնարհեցուցանել՝:

5

Գլուխ Ե

Է ¹Բաղտասար արքայ՝ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հազար առն. և ըստ հազարացն նոյնպէս և զինի. և իբրև ընդ զինիս եմուտ Բաղտասար՝, ²հրամայեաց բերել զսպաս արծաթոյ և զոսկոյ, զոր եհան Նաբուքոդոնոսոր հայր նորա ՚ի տաճարէն որ յերուսաղէմ. զի արբցեն նոքօք թագաւորն և մեծամեծք իւր, և հարճք և կանայք իւր՝: ³Եւ բերին զսպասսն զոսկեղէնս և զարծաթեղէնս, զոր բերեալ էր ՚ի տաճարէն Աստուծոյ՝ որ էր յերուսաղէմ. և ըմպէին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր, և հարճք նորա՝ և կանայք: ⁴Ընպէին զինի, և օրհնէին զաստուածս զոսկեղէնս՝ և զարծաթեղէնս՝ և պղնձիս՝ և զերկաթիս, և զփայտեղէնս՝ և զքարեղէնս. և զԱստուածն յաւիտենից ո՛չ օրհնեցին, որ ունէր իշխանութիւն ոգւոց նոցա՝: ⁵Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ, և գրէին հանդէպ զնոյն ՚ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին. և թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն որ գրէր: ⁶Յայնժամ հատան գոյնք թագաւորին, և խորհուրդք նորա խռովեցուցանէին զնա, և յօղք միջոյ նորա լուծանէին, և ծունկք նորա զմիմեանս բաբախտէին՝: ⁷Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ ածել զնոզս և զքաղղեայս, և զգէտս. և ասէ ցիմաստունս Բաբելացւոց. Որ ոք ընթերցցի՞ զգիրդ զայդ, և զմեկնութիւն դորա ցուցանէ ինձ, ծիրանիս զգեցցի, և մանեակ ոսկի ՚ի պարանոց իւր. և երրորդի՞ թագաւորութեան իմում տիրեսցէ՞: ⁸Եւ մտանէին ամենայն իմաստունք Բաբելացւոց. և ո՛չ կարէին զգիրն ընթեռնուլ, և ո՛չ զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին՝: ⁹Եւ արքայ Բաղտասար խռովեցաւ, և գոյն երեսաց նորա շրջեցաւ.

զառիւ՛... որպէս թռչնոց երկնից:

* *Ոմանք.* Չաչս իմ ՚ի յերկինս:

* *Օրհնակ մի.* Իբրև ոչինչ համարեցան նմա: *Ոմանք.* Առնէ զօրութեան երկնից և բնակութեան երկրի... ընդդէմ դառնայ ձեռին:

* *Օրհնակ մի.* Խնդրէին զիս. և անդէն ՚ի թագա՛... և մեծութիւն առաւելաւ ինձ:

* *Օրհնակ մի.* Ես Նաբուքոդոնոսոր արքայ օրհնեմ և առաւել բարձր առնեմ, և փառաւորեմ զարքայն երկնից... և շաւիղք նորա իրաւամբք... կարող ես խոնարհե՛:

* *Ոմանք.* Պաղտասար արքայ:

* *Բազումք.* Չսպասս արծաթոյ:

* *Ոմանք.* Եւ զպղնձեղէնս և զերկաթեղէնս... ոչ օրհնէին, որ ունէր զիշխանութիւն հոգւոց նոցա:

* *Բազումք.* Եւ խորհուրդք նորա խռովէին զնա:

* *Ոմանք.* Որ ընթերցցի զգիրդ... դորա ցուցցէ ինձ, ծիրանիս զգեցուցից... ՚ի պարանոցի իւրում, և երրորդ ՚ի թագաւորութեան իմում:

* *Ոմանք.* Ամենայն իմաստունք թագաւորին:

խոռվեցան և մեծամեծք նորա ընդ նմա: ¹⁰Եւ եմուտ տիկինն ՚ի տաճարն խրախուրթեան և ասէ. Արքայ՝ յաւիտեան կեաց. մի՛ խոռվեցուցեն զքեզ խորհուրդք քո, և գոյն երեսաց քոց մի՛ եղծցի՞: ¹¹Գի է՛ այր մի ՚ի թագաւորութեան քում, յորում գոյ՝ Յոզի Սուրբ Աստուծոյ. և յաւուրս հօր քոյ՝ զօրութիւնք և իմաստութիւնք գտանէին ՚ի նմա. և արքայ Նաբուքոդոնոսոր հայր քո՝ իշխան կացոյց զնա ՚ի վերայ գիտաց և մոգուց՝ և քաղդէից՝ և ըղծից՞: ¹²Ձի ոգի առաւել գոյ ՚ի նմա իմաստութեան և հանճարոյ. մեկնէ գերագո՛ւ և պատմէ զառակս, և լուծանէ զիրս կապեալս՝ Դանիէլ, և արքայ՝ Բաղտասար անուն եղ նմա. արդ կոչեսցի՞ և զմեկնութիւն դորա պատմէ՞: ¹³Յայնժամ ածին ՚ի ներքս զԴանիէլ առաջի թագաւորին: Եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. Դո՛ւ ես Դանիէլ յորդուց գերութեանն Յրէաստանի, զոր ա՛ծ Նաբուքոդոնոսոր հայր իմ. ¹⁴լուայ զքէն թէ Յոզի՛ Սուրբ Աստուծոյ է՛ ՚ի քեզ, և զօրութիւն՝ և հանճար՝ և իմաստութիւն առաւել գտաւ ՚ի քեզ՞: ¹⁵Եւ արդ՝ աւասիկ մտին առաջի իմ իմաստունք և մոգք և իղծք, զի զգիրդ զայդ ընթեռնուցուն՝ և զմեկնութիւն դորա ցուցցեն ինձ, և ո՛չ կարացին պատմել ինձ՞: ¹⁶Եւ ես լուայ զքէն թէ կարո՞ղ ես մեկնել մեկնութիւնս. և արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ՝ և զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս, և մանեակ ոսկի ՚ի պարանոցի քում. և երրորդի՛ թագաւորութեան իմում տիրեսցես՞: ¹⁷Եւ ասէ Դանիէլ առաջի թագաւորին. Պարզեք քո քե՛զ լիցին, և զպատիւ տան քոյ այլում տուր. բայց զգիրդ ե՛ս ընթերցայց, և զմեկնութիւն դորա ցուցի՛ց քեզ՞: ¹⁸Արքայ՝ Աստուած Բարձրեալ՝ զմեծութիւն՝ և զթագաւորութիւն՝ և զպատիւ և զփառս ե՛տ Նաբուքոդոնոսորայ հօր քում. ¹⁹և ՚ի մեծութենէն զոր ետ նմա, ամենայն ազգք և ազինք և լեզուք զարհուրեալ դողային յերեսաց նորա. զորս կամէր հարկանէ՛ր, զորս կամէր սպանանէ՛ր, և զորս կամէր ի՛նքն բարձրացուցանէր, և զորս կամէր ինքն խոնարհեցուցանէր՞: ²⁰Եւ յորժամ բարձրացաւ սիրտ նորա, և ոգի նորա զօրացաւ յամբարտաւանել, անկա՛ւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ. և պատիւն բարձա՛ւ ՚ի նմանէն. ²¹և ՚ի մարդկանէ հալածեցաւ. և սիրտ ընդ զազանս տուաւ նմա, և ընդ ցի՛ռս բնակութիւն նորա. և խոտ՝ իբրև արջառոյ ջամբէին նմա. և ՚ի ցօղոյ երկնից մարմին նորա ներկա՛ւ. մինչև ծանեաւ թէ տիրէ՛ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, և ուն կամի՛ տացէ՛ զնա՞: ²²Եւ դու՛ որդի նորա Բաղտասար՝ ո՛չ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ՝ ուստի զայդ ամենայն գտեր՞: ²³և ընդդէմ Աստուծոյ երկնից հպարտացար. և զսպաս տան նորա բերին առաջի քո, և դո՛ւ և մեծամեծք քո՝ հարձք քո և կանայք քո ըմպէին նոքօք գինի. և զաստուածս զոսկեղէնս և զարծաթեղէնս՝ և զպղնձիս և զերկաթիս՝ և զփայտեղէնս և զքարեղէնս, որ ո՛չ տեսանեն և ո՛չ լսեն և ո՛չ իմանան՝ օրհնէիր. և զԱստուած՝ որոյ շունչ քո ՚ի ձեռին նորա է՛ և ամենայն ճանապարհք քո, զնա ո՛չ փառաւորեցեր՞: ²⁴Վասն այսորիկ յերեսաց նորա առաքեցաւ թա՛թ ձեռինն՝ և զգիրդ զայդ գրեաց՞: ²⁵Եւ այս ինչ է գիրդ որ գրեալ է. Մանէ՛,

* *Ոմանք.* Յաւիտեան կաց:

* *Ոմանք.* Յօր քո՝ զուարթութիւնք և իմաստութիւնք գտան ՚ի նմա... և քաղդէայց և ըղծից:

* *Ոմանք.* Ձի հոգի առաւել գոյ ՚ի նմա, իմաստութիւն և հանճար... դորա պատմեսցէ:

Օրինակ մի յաւելլու. Դանիէլ էր անուն նորա, և արքայ՝ Բաղտասար անուն:

* *Ոմանք.* Թէ Յոզի Աստուծոյ է ՚ի քեզ, և զուարթութիւն, և հան՞:

* *Ոմանք.* Եւ արդ՝ ահաւասիկ մտին:

* *Օրինակ մի.* Եւ մանեակ ոսկի լիցի ՚ի պարա՞... և երրորդ ՚ի թագաւորութեան:

* *Ոմանք.* Եւ զպատիւ տան քում:

* *Յօրինակին ՚ի բնաբանի դատարկ տեղի թողեալ ՚ի մէջ* ամենայն և և ազինք, *ակնարկի ՚ի ներքս բերել* ազգ՝ *համաձայն բազմաց:* *Ուր թէպէտ և օրինակ մի ունի.* ամենայն ազինք:

* *Օրինակ մի.* Որպէս արջառոյ ջամ՞... մարմին նորա ներկեալ... թէ տիրէ Աստուած բարձրեալն:

* *Բազումք.* Եւ արդ՝ դու որդի նորա... ուստի զայդ ամենայն գիտէիր:

* *Օրինակ մի յաւելլու.* Որ ոչ տեսանեն, և ոչ գնան, և ոչ լսեն:

* *Ոմանք.* Վասն այնորիկ յե՞:

Թէկէղ՝ Փարէս*։²⁶Եւ այն է մեկնութիւն բանիդ. Մանէ, չափեաց Աստուած զթագաւորութիւն քո՝ և վախճանեաց զնա*։²⁷Թէկէղ՝ կշռեցաւ ՚ի կշիռս՝ և գտաւ պակասեալ։²⁸Փարէս, բաժանեցաւ թագաւորութիւն քո, և տուաւ Մարաց և Պարսից։²⁹Եւ հրաման ետ Բաղտասար՝ և զգեցուցին մնա ծիրանիս, և մանեակ ոսկի ՚ի պարանոցի նորա, և քարո՛զ կարդայր առաջի նորա լինել իշխան երրորդի՝ թագաւորութեան նորա*։³⁰Եւ ՚ի մին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղդէացւոց*։

Ը ³¹Եւ Դարեհ արքայ՝ ա՛ռ թագաւորութիւնն, որ էր ամաց վաթսուն և երկուց*։

6

Գլուխ 2

¹Եւ հաճոյ թուեցաւ առաջի Դարեհի, և կացոյց ՚ի վերայ թագաւորութեանն նախարարս հարելր և քսան. զի իցեն յամենայն թագաւորութեան նորա. ²և ՚ի վերայ նոցա երիս հրամատարս, և մի ՚ի նոցանէ էր Դանիէլ. տալ նոցա նախարարացն հրաման, զի արքայ՝ աշխատ ինչ մի՝ լիցի*։ ³Եւ Դանիէլ առաւել էր քան զնոսա. զի հոգի առաւել զոյր ՚ի մնա*։ ⁴և թագաւորն կացոյց զնա ՚ի վերայ ամենայն արքայութեան իւրոյ։ Եւ հրամատարքն և նախարարքն նախանձէին՝ և խնդրէին պատճառս զԴանիէլէ. և ամենկին պատճառս և յանցանս և բաղբաղայս ո՛չ գտանէին զմնանէ. քանզի հաւատարիմ էր*։ ⁵Եւ ասեն հրամատարքն. Զգտանենք ուստեք պատճառս զԴանիէլէ, բայց եթէ յօրէնս Աստուծոյ իւրոյ։ ⁶Յայնժամ հրամատարքն և նախարարքն կացին առաջի թագաւորին՝ և ասեն ցնա. Դարեհ արքայ՝ յաւիտեան կեաց։ ⁷Խորհուրդ արարին ամենեքեան որ են ՚ի թագաւորութեան քում, զօրավարք և նախարարք՝ իշխանք և կուսակալք, հաստատել արքունի հաստատութեամբ, և զօրացուցանել ուխտ մի. զի եթէ խնդրեսցէ ոք խնդրուածս յամենայն աստուծոյ՝ կամ ՚ի մարդոյ մինչև յաւուրս երեսուն՝ բաց ՚ի քէն արքայ, անկցի ՚ի գուր առիւծուց*։ ⁸Արդ հաստատեա՛ր արքայ զուխտն, և գրեա՛ր գիր. զի մի՛ եղծանիցի հրաման Մարաց և Պարսից։ ⁹Յայնժամ Դարեհ արքայ պատուէր ետ գրել զհրամանն։ ¹⁰Եւ Դանիէլ իբրև գիտաց թէ կարգեցաւ հրամանն, եմուտ ՚ի տուն իւր, և պատուհանք բաց էին մնա ՚ի վերնատունս իւր ընդդէմ երուսաղէմի. և երիս ժամս յաւուր դնէ՛ր ծունր և կայր յաղօթս, և գոհանայր առաջի Աստուծոյ իւրոյ. որպէս առնէր յառաջագոյն*։ ¹¹Յայնժամ արքն այնոքիկ դիտեցին՝ և գտին զԴանիէլ զի կայր յաղօթս և աղաչէր զԱստուած իւր*։ ¹²Սատեան և ասեն ցթագաւորն. Ա՛րքայ՝ ո՞չ ուխտ մի կարգեցեր, զի ամենայն մարդ որ խնդրիցէ խնդրուածս յամենայն աստուծոյ՝ կամ ՚ի մարդոյ մինչև յաւուրս երեսուն, բաց եթէ ՚ի քէն արքայէ, անկցի ՚ի գուր առիւծուց։ Եւ ասէ արքայ. Ե՛շմարիտ է բանդ, և զհրաման

* *Օրինակ մի.* Եւ այս ինչ է ՚ի գիրդ։

* *Յօրինակին պակասէր.* Զափեաց *Աստուած* զթագաւորութիւն։

* *Օրինակ մի.* Ոսկի արկին ՚ի պարանոցի նորա... երրորդ ՚ի թագաւորութեան նորա։

* *Օրինակ մի.* Բաղտասար արքայ Քաղդէացի։

* *Օրինակ մի.* Ամաց վաթսուն և չորից։

* *Ոմանք աստ և ստորև ուրեք ուրեք գրեն* հրամանատար. *տես զոր նշանակեցաք ՚ի Գ Թագ. Դ 6:*

* *Օրինակ մի.* Զի Զոգի Սուրբ առաւել։

* *Օրինակ մի.* ՚ի վերայ ամենայն թագաւորութեան իւրոյ... նախանձէին ընդ նա, և խնդ*։

* *Ոմանք.* Որ էին ՚ի թագաւորութեան... հաստատեալք արքունի հաս*։ *Օրինակ մի.* Եթէ խնդրիցէ խնդրուածս ոք... բայց եթէ ՚ի քէն արքայէ, անկցի ՚ի։

* *Ոմանք.* Եւ երիս ժամս աւուր... որպէս և առնէր յառա*։

* *Ոմանք.* Գիտացին և գտին զԴանիէլ։

Մարաց և գՊարսից չէ՝ օրէն շրջել՝: ¹³Յայնժամ պատասխանի ետուն արքայի՝ և ասեն. Դանիէլ՝ որ յորդոց գերութեանն Յրէաստանի, ո՛չ հնազանդեցաւ հրամանի քուն արքայ. և երիս ժամ խնդրէ խնդրուածս յԱստուծոյ իւրմէ՝: ¹⁴Յայնժամ թագաւորն իբրև լուաւ զբանն՝ տրտմեցաւ յոյժ վասն Դանիէլի, և ջանայր փրկել զնա. և մինչև ցընթրեկերս ջանացաւ փրկել զնա՝: ¹⁵Յայնժամ արքն այնոքիկ ասեն ցթագաւորն. Գիտասցի՛ր արքայ, զի հրամանի Մարաց և Պարսից՝ և ամենայն ուխտի և հաստատութեան զոր արքայ հաստատիցէ, ո՛չ է օրէն շրջել: ¹⁶Յայնժամ հրաման ետ թագաւորն՝ և ածին զԴանիէլ, և արկին զնա՝ ՚ի գուրն առիւծուց. և ասէ արքայն ցԴանիէլ. Աստուածն զոր դուն պաշտես յաճախ, նա՛ փրկեսցէ զքեզ՝: ¹⁷Եւ բերին վէմ մի, և եղին ՚ի վերայ զբոյն. և կնքեաց թագաւորն մատանեաւ իւրով, և մատանեօք մեծամեծացն. զի մի՛ այլ ազգ ինչ շրջեսցին վասն Դանիէլի՝: ¹⁸Եւ զնաց թագաւորն ՚ի տուն իւր. և ննջեաց առանց ընթրեաց, և խորտիկ ո՛չ մուծին առաջի նորա. և քուն՝ հատաւ ՚ի նմանէ: Եւ եխից Աստուած զբերանս առիւծուցն, և ո՛չ լլկեցին զԴանիէլ՝: ¹⁹Յայնժամ յարեաւ արքայն ընդ առաւօտս լուսով, և փութով եկն ՚ի գուրն առիւծուց. ²⁰և իբրև մերձեցաւ ՚ի գուրն՝ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և ասէ. Դանիէլ ծառայ Աստուծոյ կենդանւոյ. Աստուածն քո զոր դու յաճախ պաշտէիր, եթէ կարա՞ց փրկել զքեզ ՚ի բերանոյ առիւծուցոյ: ²¹Եւ ասէ Դանիէլ ցարքայ. Արքայ՝ յաւիտեան կեաց. ²²Աստուած իմ առաքեաց զիրեշտակ իւր և եխից զբերանս առիւծուցս, և ո՛չ ապականեցին զիս. զի առաջի նորա ուղղութիւն գտաւ իմ. և առաջի քո արքայ վնաս ինչ՝ ո՛չ արարի: ²³Յայնժամ թագաւորն զուարճացաւ յանձն իւր. և հրաման ետ հանել զԴանիէլ ՚ի գբոյ անտի. հանաւ Դանիէլ ՚ի գբոյ անտի, և ամենկին ապականութիւն ո՛չ գտաւ ՚ի նմա. զի հաւատաց յԱստուած իւր՝: ²⁴Եւ հրաման ետ թագաւորն՝ և ածին զարսն չարախօսս զԴանիէլէ. և ընկեցան ՚ի գուրն առիւծուց, ինքեանք և որդիք իւրեանց, և կանայք նոցա. և չև՝ էին յատակս գբոյն հասեալ՝ մինչև տիրեցին նոցա առիւծքն, և զամենայն ոսկերս նոցա մանրեցին՝: ²⁵Յայնժամ Դարեհ արքայ գրեաց առ ամենայն ազգս և ազինս և լեզուս, որ բնակեալ էին յամենայն երկրի. Խաղաղութիւն ձեզ բազմասցի՞: ²⁶Յերեսաց իմոց եղաւ հրամանս այս ընդ ամենայն իշխանութիւն թագաւորութեան իմուն. զի երկնչիցին և դողայցեն յերեսաց Աստուծոյն Դանիէլի. զի նա՛ է Աստուած կենդանի՝ և կայ յաւիտեանս. և արքայութիւն նորա ո՛չ եղծանի, և տէրութիւն նորա մինչև ցվախճան՝: ²⁷Օգնական լինի և փրկէ, և առնէ մշանս յերկինս և յերկրի. որ փրկեաց զԴանիէլ ՚ի բերանոյ առիւծուցն: ²⁸Եւ Դանիէլի աջողէ՛ր ՚ի թագաւորութեանն Դարեհի՞՝ և Կիրոսի Պարսկի՞:

Գլուխ Է

* *Ոմանք.* Բայց եթէ ՚ի քէն արքայէ... բանդ. զհրաման Մարաց:

* *Օրինակ մի.* Գերութեանն էր Յրէաս՞: *Բազումք.* Եւ երիս ժամս աւ՞:

* *Ոմանք պակասութեամբ ունին զբանս այսպէս.* Եւ վասն Դանիէլի ջանայր փրկել զնա: Յայնժամ արքն: *Օրինակ մի.* Եւ մինչև ցերեկս ջանացաւ փր՞:

* *Յոմանս պակասի.* Չոր դուն պաշտես յաճախ:

* *Ոմանք.* Այլազգ իրք. *կամ՝* ինչ իրք շրջիցին:

* *Ոմանք.* Եւ խորտիկս ոչ մու՞:

* *Օրինակ մի.* Յանձն իւր յոյժ... և հանաւ Դա՞... ապականութիւն ինչ ոչ գտաւ ՚ի նա: *Յօրինակին պակասէր.* Յանել *զԴանիէլ* ՚ի գբոյ:

* *Ոմանք.* Եւ ՚ի գուրն առիւծուց ընկեցան:

* *Օրինակ մի.* Որ բնակեալ էք յամենայն երկրի:

* *Ոմանք.* Եղաւ հրամանս յամենայն իշխանութեան թագաւորութեանս իմուն:

* *Ոմանք.* Եւ Դանիէլ յաջողէր: *Յորս և պակասի.* Եւ Կիրոսի Պարսկի:

¹Յամին առաջնորդի Բաղտասարայ արքայի Քաղղեացոց, երա՛գ ետես Դանիէլ. և տեսիլ գլխոյ նորա յանկողնի իւրում. և գերագն գրեա՛ց՝

Թ ²Ես Դանիէլ տեսանէի՝ ի տեսլեան գիշերոյ. և ահա չո՛րք հողմք երկնից բախէին զծով մեծ՝: ³Եւ չորք գազանք մեծամեծք ելանէին ՚ի ծովէ անտի՝ այլակերպք միմեանց՝: ⁴Առաջինն՝ իբրև զմատակ առեւծ թևաւոր. և թևք նորա իբրև արծուոյ. հայէի մինչ թափեցան թևք նորա և ջնջեցաւ յերկրէ. և եկա՛ց իբրև ՚ի վերայ ոտի՛ց մարդոյ, և սիրտ մարդոյ տուաւ նմա՛: ⁵Եւ ահա երկրորդ գազանն նմա՛ն արջոյ, և եկաց ՚ի կողմն մի. և կողք երեք ՚ի բերան նորա՝ ՚ի մէջ ժանեաց նորա. և այսպէս ասէին ցնա. Արի՛ կեր զմարմինս բազմաց: ⁶Եւ զկնի նորա հայէի, և ահա այլ գազան իբրև զինծ. և չորք թևք թռչնոյ ՚ի վերայ նորա. և չո՛րք գլուխք գազանին. և իշխանութիւն տուաւ նմա՛: ⁷Եւ զկնի նորա հայէի. և ահա գազանն չորրորդ՝ ահե՛ղ և զարմանալի՝ և հզօր առաւել, և ժանիք նորա երկաթիք. ուտէր և մանրէր, և զմնացորդսն առ ո՛տն կոտորէր. և ինքն առաւել այլակերպ քան զամենայն գազանսն որ յառաջ քան գնա. և եղջերք տասն ՚ի նմա՛: ⁸Պշուցեալ հայէի ընդ եղջերս նորա. և ահա այլ եղջեր կոքրիկ ելանէր ՚ի մէջ նոցա, և երեք եղջերք յառաջնոցն ՚ի բա՛ց խլէին յերեսաց նորա. և ահա ա՛ջք իբրև զաչս մարդոյ յեղջերն յայնմիկ, և բերան որ խօսէր զմեծամեծս՝: ⁹Տեսանէի մինչև արեւը անկանէին, և Զինաւուրցն նստէր. հանդերձ նորա սպիտակ իբրև զծիւն, և հեր գլխոյ նորա իբրև զասր սուրբ. արե՛ւ նորա իբրև զբո՛ց հրոյ, անիւք նորա իբրև զհուր բորբոքեալ՝: ¹⁰Գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նորա. հազարք հազարաց պաշտէին զնա, և բերք բիրուց կային առաջի նորա. ատեան նստաւ՝ և դպրութիւնք բացան: ¹¹Տեսանէի յայնժամ ՚ի բարբառոյ մեծամեծ բանիցն զոր եղջերն այն խօսէր, մինչև բարձաւ գազանն և կորեաւ. և մարմին նորա տուաւ յայրումն հրոյ: ¹²Եւ այլոց գազանացն իշխանութիւն փոփոխեցաւ. և երկայնութիւն կենաց տուաւ նոցա մինչև ՚ի ժամանակ՝: ¹³Տեսանէի ՚ի տեսլեան գիշերոյ՝ և ահա ընդ ամպս երկնից իբրև Որդի մարդոյ գայր՝ և հասանէր մինչև ՚ի Զինաւուրցն, և մատուցաւ առաջի նորա: ¹⁴Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն. և ամենայն ազգք և ազիւնք և լեզուք նմա՛ ծառայեցցեն. և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտեանական որ ո՛չ անցանէ, և թագաւորութիւն նորա ո՛չ եղծանիցի՝: ¹⁵Սոսկացաւ մարմին իմ յանձին իմում. Ես Դանիէլ և տեսիլ գլխոյ իմոյ խռովեցո՛յց զիս: ¹⁶Եւ մատեայ առ մի ոմն որ կային անդ, և զճմարտութիւն խնդրէի ուսանել՝ վասն ամենայնի այնորիկ. և ասաց ինձ զճմարտութիւնն, և զմեկնութիւն բանիցն եցո՛յց ինձ՝: ¹⁷Այդ գազանք մեծամեծք՝ չորք թագաւորութիւնք յարիցեն ՚ի վերայ երկրի՛. ¹⁸բարձցին. և առցեն զթագաւորութիւնն սուրբք Բարձրելոյն, և կալցին զնա մինչև յաւիտեանս յաւիտենից: ¹⁹Եւ քննէի ճշմարտիւ վասն գազանին չորրորդի. զի առաւել այլակերպ էր քան զամենայն գազանսն՝ որ յառաջ քան գնա, և ահագին յոյժ. և ժանիք նորա երկաթիք, և մագիլք

* *Ոմանք.* Յամին առաջնորդի:

* *Ոմանք.* Ջծովն մեծ:

* *Այլք.* Անտի այլակերպք ՚ի միմեանց:

* *Ոմանք.* Որպէս արծուոյ. և հայէի: *Այլք.* Մինչև թափեցան:

* *Օրինակ մի.* Այլ գազան ելանէր իբրև զինծ. և չորս թև:

* *Օրինակ մի յաւելու.* Երկաթիք, և մագիլք նորա պղնձիք, ուտէր... այլակերպ էր քան:

* *Ոմանք.* Եւ պշուցեալ: *Բազումք.* Եւ բերան նորա խօսէր:

* *Ոմանք.* Եւ Զինաւուրցն նստէր: *Օրինակ մի.* Որպէս զբոց հրոյ. անիւք կառաց նորա որպէս զհուր:

* *Այլք.* Իշխանութիւն փոխեցաւ: *Ոսկան յաւելու.* Մինչև ՚ի ժամանակս և ՚ի ժամանակս:

* *Յօրինակին պակասէր.* Եւ թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի:

* *Օրինակ մի.* Ամենայնի այսոցիկ:

* *Օրինակ մի.* Չորք թագաւորք յարիցեն... (18) բարձցեն և առցեն զթագաւորութիւնն սուրբ Բարձ՝:

նորա պղնձիք. ուտէր և մանրէր՝ և զմնացորդսն առ ո՛տն կոտորէր*.²⁰ և վասն եղջերացն տասանց որ էր ՚ի գլուխ նորա. և վասն միւսոյն որ ելանէր՝ և գերիսն ՚ի բաց թափէր. որոյ ա՛չք էին՝ և բերան որ խօսէր զմեծամեծս. և տեսիլ նորա առաւել էր քան զայլոցն*:²¹ Տեսանէի՝ և եղջերն այն տայր պատերազմ ընդ սուրբս. և զօրանայր ՚ի վերայ նոցա*.²² մինչև եկն Յիմաւուրցն՝ և ետ իրաւունս սրբոց Բարձրելոյն. ժամանակ եհաս, և զարքայութիւնն սուրբք ըմբռնեցին*.²³ Եւ ասէ. Գազանն չորրորդ՝ թագաւորութիւն չորրորդ կացցէ յերկրի, որ առաւել իցէ քան զամենայն թագաւորութիւնս. և կերիցէ զամենայն երկիր, և կոխիցէ և հարցէ զնա: ²⁴Եւ տասն եղջերք նորա՝ տա՛սն թագաւորք յարիցեն. և զկնի նոցա յարիցէ այլ, որ առաւել իցէ չարեօք քան զամենայն առաջինսն. և երիս թագաւորս խոնարհեցուցէ*.²⁵ Բանս առ Բարձրեալն խօսիցի. և զսուրբս Բարձրելոյն մուրեցուցէ. և կարծեսցէ զժամանակս և զօրէնս փոփոխել. և տացի ՚ի ձեռս նորա մինչև ՚ի ժամանակ, և ՚ի ժամանակս, և ՚ի կէս ժամանակաց: ²⁶Ատեան նստցի. զիշխանութիւն նորա փոխեսցեն, յապականել և ՚ի կորուսանել մինչև ՚ի սպառ*:²⁷ Եւ թագաւորութիւն և մեծութիւն թագաւորաց որ ՚ի ներքոյ երկնից՝ տուաւ սրբոց Բարձրելոյն. և արքայութիւն նորա արքայութիւն յաւիտեանական, և ամենայն իշխանութիւնք նմա՝ ծառայեսցեն, և հնազանդեսցին*:²⁸ Մինչև ցա՛յս վա՛յր է վախճան բանիս: Ե՛ս Դանիէլ՝ և խորհուրդք իմ յո՛յժ խոսվեցուցանէին զիս. և գոյն երեսաց իմոց շրջեցաւ. և զբանն ՚ի սրտի՛ իմում պահէի*:

8

Գլուխ Ը

¹Յամին երրորդի թագաւորութեանն Բաղտասարայ արքայի, տեսիլ երևեցաւ ինձ: Ժ Ես Դանիէլ յետ տեսլեանն առաջնոյ, ²էի ՚ի Շաւշ յապարանսն՝ որ է յերկրին Էլամայ, և կայի ՚ի վերայ Ուբաղայ*:³ Ամբարծի զաչս իմ և տեսի, և ահա խոյ մի կայր հանդէպ Ուբաղայ. և եղջերք նորա բարձունք, և մին բարձրագոյն էր քան զմեւսն. և որ բարձրն էր՝ յետոյ ելանէր*:⁴ Տեսանէի զխոյն՝ զի ոգորէր ընդ ծով և ընդ հիւսսի և ընդ հարաւ. և ամենայն գազանք ո՛չ կային առաջի նորա, և չէր որ ապրէր ՚ի ձեռաց նորա. և առնէր ըստ կամաց իւրոց՝ և մեծանայր*.⁵ Ես միտ դնէի: Եւ ահա քօշ մի այծեաց գայր յարևմտից ընդ երեսս երկրի, և յերկիր ո՛չ մերձենայր. և քօշին եղջեր մի էր ՚ի մէջ աչաց նորա*.⁶ Եւ եհաս մինչև ՚ի խոյն եղջերաւոր, զոր տեսանէի զի կայր հանդէպ Ուբաղայ. և յարձակեցաւ ՚ի վերայ նորա զօրութեամբ ուժոյ իւրոյ*.⁷ Եւ տեսանէի զնա հասեալ մինչև ցխոյն: Չայրացաւ և եհար զխոյն՝ և խորտակեաց զերկոսին եղջեր նորա. և ո՛չ գոյր զօրութիւն խոյին ունել զդէմ նորա, արկ զնա յերկիր՝ և ոտից իւրոց կոխան արար զնա.

* *Ի բազումս պակասի.* Չամենայն գազանսն՝ որ յառաջ քան զնա:

* *Բազումք.* Որ ՚ի գլուխ նորա: *Ոմանք.* Ի բաց թօթափէր... և բերան նորա. *կամ՝* և բերանն խօսէր:

* *Ոմանք.* Տեսանէի որ եղջիրն այն: *Ուր Ոսկան.* զի եղջիրն:

* *Ոմանք.* Եւ եղ իրաւունս:

* *Ոմանք.* Եւ զկնի նորա յարիցէ... առաւել է չարեօք:

* *Օրհնակ մի.* Ատեանն նստցի, և զիշխա՛:

* *Օրհնակ մի յաւելու.* Եւ թագաւորութիւն և իշխանութիւն և մեծութիւն: *Ոմանք յաւելուն.* Որ ՚ի ներքոյ *ամենայն* երկնից:

* *Օրհնակ մի.* Վախճան բանին... և զբանսն ՚ի սրտի իմում: *Ոմանք.* Եւ գոյն իմ շրջեցաւ:

* *Ոմանք.* Ի Շոշայ ապարանս:

* *Օրհնակ մի.* Խոյ մի գայր հանդէպ:

* *Յօրհնակին.* Տեսանէ զխոյն զի:

* *Ոմանք.* Եւ ես միտ դնէի նմա: *Եւ ոմանք.* և ես ՚ի մտի դնէի, և ահա:

* *Ոմանք.* Մինչև ցխոյն եղջերա՛:

և ո՛չոք էր որ թափեր զխոյն ՚ի ձեռաց քօշին*։⁸ Եւ քօշն այծեաց մեծացաւ մեծութիւն յոյժ. և ՚ի զօրանալ նորա խորտակեցաւ եղջեր նորա մեծ. և ելին այլ չորք եղջերք ՚ի ներքոյ նորա ընդ չորս հողմս երկնից*։⁹ Եւ ՚ի միոջէ ՚ի նոցանէ ել եղջեր մի հզօր. և մեծացաւ առաւել ընդ հիւսուսի*։¹⁰ և ա՛ռ զօրութիւն և բարձրացաւ մինչև ՚ի զօրութիւնս երկնից. և ընկէց յերկիր ՚ի զօրութենէ երկնից՝ և յաստեղաց, և կոխեաց զնոսա*։¹¹ մինչև զօրավարն փրկեսցէ զգերութիւնն. և նովաւ պատարագք խռովեցան. և եղև՝ և յաջողեցաւ նմա. և սրբութիւնն աւերեսցի։¹² Եւ տուան ՚ի վերայ պատարագացն մեղք. և անկաւ յերկիր արդարութիւն. և արար՝ և յաջողեցաւ։¹³ Եւ լուայ՝ ՚ի միոջէ սրբոյ որ խօսէր. և ասէր սուրբ մի ցՓէլմոնին որ խօսէր. Մինչև ցե՞րք տեսիլդ այդ կացցէ. պատարագք բարձեալք, և մեղքդ աւերածի տուեալք, և սրբութիւնդ և զօրութիւն կոխեսցի*։¹⁴ Եւ ասէ ցնա. Մինչև յերեկոյ և ՚ի վաղորդայն, աւուրս հազար երկերիւր և վաթսուն և ութ. և սրբեսցի սրբութիւնն*։¹⁵ Եւ եղև իբրև տեսի ե՛ս Դանիէլ զտեսիլն, և խնդրէի խելամո՛ւտ լինել, և ահա առաջի իմ եկաց իբրև զտեսիլ մարդոյ։¹⁶ Եւ լուայ բարբառ մարդոյ ՚ի միջոյ Ուբաղայ, և կոչեաց՝ և ասէ. Գաբրիէլ՝ իմացո՛ դմա զտեսիլդ*։¹⁷ Եւ եկն եկաց ուր ե՛սն կայի. և ՚ի գալն նորա՝ յիմարեցայ և անկայ ՚ի վերայ երեսաց իմոց. և ասէ ցիս. Ի մի՛տ առ որդի մարդոյ՝ զի տակաւին ՚ի ժամանակս վախճանի է տեսիլդ*։¹⁸ Եւ մինչդեռ խօսէր նա ընդ իս, յիմարեցայ և անկայ ՚ի վերայ երեսաց իմոց յերկիր. և բուռն եհար զինէն՝ և կացոյց ՚ի վերայ ոտից իմոց.¹⁹ և ասէ ցիս. Ահաւասիկ ե՛ս ցուցից քեզ որ ինչ լինելոց է ՚ի վախճանի ՚ի վերայ երկրի. քանզի տակաւին ՚ի ժամանակս է վախճանն*։²⁰ Խոյն զոր տեսանէիր եղջերաւոր՝ թագաւորն Պարսից և Մարաց է։²¹ Եւ քօշն այծեաց՝ թագաւորն Յունաց է. և եղջերն մեծ որ էր ՚ի մէջ աչաց նորա, նոյն ինքն է թագաւորն առաջին*։²² Եւ ՚ի խորտակելն նորա ընդ որով էին այլ եղջերքն, չորք թագաւորք յազգէ նորա յարիցեն, և ո՛չ իւրեանց զօրութեամբ*։²³ Եւ յետ թագաւորութեան նոցա և ՚ի կատարել մեղաց նոցա. յարիցէ՛ թագաւոր՝ ժպի՛րհ երեսօք. յառակս խորհրդական. ²⁴ և հզօր զօրութիւն նորա, և զքանչելիսն ապականեսցէ. և յաջողեսցի՝ և արասցէ. և ապականեսցէ զհզօրս, և զժողովուրդն սուրբ.²⁵ և լուծ՝ անրոյ նորա յաջողեսցի. և նենգութիւն ՚ի ձեռս նորա. և ՚ի սրտի իւրում մեծամտեսցի. և նենգութեամբ ապականեսցէ զբազումս, և ՚ի կորստեան բազմաց կացցէ. և իբրև զծուս ՚ի ձեռին մանրեսցէ*։²⁶ Եւ տեսիլն երեկորին և առաւօտին որ ասացաւ՝ ճշմարիտ է. և դու կնքեա՛ զտեսիլդ՝ զի յաւուրս բազումս է։²⁷ Եւ ես Դանիէլ ննջեցի և խօթացայ, և յարեայ և գործեցի զգործ արքունի, և զարմացեալ էի ընդ տեսիլն. և ո՛չոք էր որ իմացուցանէր։

9

* *Ոմանք.* Ջերկոսեան եղջիրս նորա... կոխան առնէր զնա... զխոյն ՚ի ձեռաց նորա։
 * *Ոմանք.* Մեծացաւ յոյժ. և ՚ի։
 * *Ոմանք.* Եւ ՚ի միոյ. *կամ*՝ ՚ի միջոյ ՚ի նոցանէ ել եղ՞։
 * *Ոմանք.* Եւ առ զօրութիւնն բարձրացաւ։
 * *Ոմանք.* Եւ ասէ սուրբ մի ցՓեղմոնին... մինչև յերբ... սրբութիւնդ կոխիցի։
 * *Ոմանք.* Եւ ՚ի վաղորդեան աւուրս երկուս հազարս և երեք հարիւր։ *Եւ ոմանք.* Աւուրս հազար երկերիւր եւթանասուն և ութ։
 * *Ոմանք.* Իմացո՛ նմա զտեսիլդ։
 * *Ոմանք.* Ի ժամանակ վախճանի է տեսիլս։
 * *Ոմանք.* Ջոր ինչ լինելոցն է ՚ի։
 * *Ոմանք.* Եւ քօշն յայծեաց։
 * *Ոմանք.* Ի խորտակել նորա, ընդ որով էին այլ եղջիրքն չորք, չորք թա՞։
 * *Ոսկան.* Եւ լուծ ծանրոյ նորա յա՞։ *Ոմանք.* Եւ կորստեան բազմաց կայցէ։ *Առ որս և պակասի.* Եւ իբրև զծուս ՚ի ձեռին մանրեսցէ։

Գլուխ Թ

¹Յամին առաջնորդի Դարեհի որդւոյ Արշարայ 'ի զաւակէ՛ Սարաց, որ թագաւորեաց 'ի թագաւորութեանն Քաղղեացոց՝: ²Ե՛ս Դանիէլ խելամուտ եղէ 'ի գրոց, թուոյ ամացն որ եղև բան Տեառն առ Երեմիայ մարգարտ. 'ի կատարումն աւերածոյն Երուսաղեմի յամս եւթանասուն՝: ³և դարձուցի՛ զերեսս իմ առ Տէր Աստուած իմ խնդրել աղօթիւք և խնդրուածովք, պահօք և խորգով: ⁴Կացի յաղօթս առ Տէր Աստուած. գոհացայ՝ և ասեմ. Տէր Աստուած մեծո՛ղ և սքանչելի. որ պահես զուխտ և զողորմութիւն սիրելեաց քոց, որոց պահեն զպատուիրանս քո՞: ⁵Մեղաք, անօրինեցաք, անիրաւեցաք և ապստամբեցաք, և խտորեցաք 'ի պատուիրանաց քոց, և յիրաւանց քոց. ⁶և ո՛չ լուաք ծառայից քոց մարգարէիցն որք խօսեցան յամուսն քո առ թագաւորս մեր, և առ իշխանս մեր, և առ հարս մեր, և առ ամենայն ժողովուրդս երկրին՝: ⁷Քո Տէր արդարութիւն, և մեր ամօթ երեսաց իբրև յաւուր յայսմիկ, առն Յուդայ՝ և բնակչաց Երուսաղեմի, և ամենայն Իսրայէլի մերձաւորաց և հեռաւորաց յամենայն երկրի ուր ցրուեցեր զնոսա անդր վասն անհնազանդութեան իւրեանց՝ զոր անհնազանդեցան քեզ Տէր: ⁸Մեր ամօթ երեսաց մերոց, և թագաւորաց մերոց՝ և իշխանաց մերոց, և հարցն մերոց որք մեղա՞ք՝: ⁹և Տեառն Աստուծոյ մերոյ գթութիւնք և քաւութիւնք. զի ապստամբեցաք 'ի Տեառնէ: ¹⁰և ո՛չ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ, զնալ՝ յօրէնս նորա զոր ետ առաջի մեր 'ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից: ¹¹Եւ ամենայն Իսրայէլ անցին զօրինօք քովք, և խտորեցան զի մի՛ լուիցեն ձայնի քում. և եկին 'ի վերայ մեր անէծն և երդումնն, գրեալ յօրէնս Մովսիսի ծառայի քո՝ Տէր. զի մեղա՞ք նմա՞: ¹²և հաստատեաց զբանս իւր զոր խօսեցաւ 'ի վերայ մեր, և 'ի վերայ դատաւորաց մերոց որ դատէին զմեզ՝ ածել 'ի վերայ մեր չարիս մեծամեծս, որ ո՛չ եղեն 'ի ներքոյ ամենայն երկնից՝ ըստ այնմ որ եղեն յերուսաղէմ՝: ¹³Որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի. այն ամենայն չարիք եկին 'ի վերայ մեր, և ո՛չ աղաչեցաք զերեսս Տեառն Աստուծոյ մերոյ, դառնալ յանիրաւութեանց հարցն մերոց. և խելամուտ լինել ամենայն ճշմարտութեան քում: ¹⁴Եւ զարթեաւ Տէր Աստուած մեր 'ի վերայ չարեացն մերոց՝ և ա՛ծ զնոսա 'ի վերայ մեր. զի արդար է Տէր Աստուած մեր 'ի վերայ ամենայն գործոց իւրոց զոր արար ընդ մեզ. և ո՛չ լուաք ձայնի նորա՞: ¹⁵Եւ արդ Տէր Աստուած մեր որ հաներ զժողովուրդ քո յերկրն Եգիպտացոց հզօր ձեռամբ, և արարեր քեզ անուն որպէս և յաւուր յայսմիկ. մեղաք և անօրինեցաք՝: ¹⁶Տէր ամենայն ողորմութեամբ քով դարձցի՛ սրտմտութիւն քո, և բարձցի բարկութիւն քո 'ի քաղաքէ քումնէ յերուսաղէմէ, և 'ի լեռնէ սրբոյ քոյ. զի մեղաք, և առ անօրէնութեան մերում և հարցն մերոց՝ Երուսաղէմ և ամենայն ժողովուրդ քո եղև 'ի նախատինս ամենեցուն որ շուրջ զմեք էին՝: ¹⁷Եւ արդ լո՛ւր Տէր Աստուած մեր աղօթից ծառայի քոյ և խնդրուածոց. և երևեցո՛ զերեսս քո վասն քո 'ի սրբութիւնն որ աւերեցաւ: ¹⁸Խոնարհեցո՛ Աստուած իմ զունկն քո՝ և լո՛ւր ինձ. բաց՝ զաչս քո և տես՝ զապականութիւն մեր, և զքաղաքին քո յորոյ վերայ կոչեցեալ է անուն քո. զի ո՛չ առ արդարութեանց մերոց արկանեմք զգութս մեր առաջի քո, այլ վասն բազում գթութեան

* *Ոմանք.* Յամին առաջնորդի:

* *Ոմանք.* Թուոց ամացն:

* *Ոմանք.* Եւ որոց պահեն:

* *Ոմանք.* Որք խօսէին յամուսն:

* *Ոմանք.* Մեզ ամօթ երեսաց... և հարց մերոց որք մեղան:

* *Օրինակ մի.* Անց զօրինօք քով... որ գրեալ է յօրէնս: *Բազումք.* 'ի վերայ մեր անէծք և երդումն, գրեալ:

* *Ոմանք.* Ձբան իւր զոր խօսէ՛:

* *Բազումք.* Չի ոչ լուաք ձայնի նորա:

* *Ոմանք յաւելուն.* Քեզ անուն նոր՝ որպէս և յաւուրս:

* *Յոմանս պակասի.* Եւ բարձցի բարկութիւն: *Բազումք.* Որ շուրջ զմեք են:

քոյ Տէր*։¹⁹Լուր Տէր. քաւեա՛ Տէր. անսա՛ Տէր. և մի՛ յամեր վասն քո՛ Աստուած իմ. զի անուն քո կոչեցեալ է՝ ի վերայ քաղաքին քոյ*։²⁰Եւ մինչդեռ ես խօսէի և յաղօթս կայի, և խոստովան լինէի զմեղս իմ, և զմեղս ժողովրդեանն Իսրայէլի. և արկանէի զգութս առաջի Տեառն Աստուծոյ իմոյ վասն լերինն սրբոյ*։²¹Եւ մինչդեռ խօսէի յաղօթսն։ Եւ ահա այրն Քաբրիէլ՝ զոր տեսանէի յառաջնում տեսլեանն, թուցեալ և մերծեցաւ առ իս, իբրև ՚ի ժամ երեկոյին պատարագին*։²²Եւ խելամուտ արար զիս, և խօսեցաւ ընդ իս՝ և ասէ. Դանիէլ՝ այժմ եկի խելամուտ առնել զքեզ։²³Իսկզբան աղօթից քոց ել պատգամ, և ես եկի պատմել քեզ. զի այր ցանկալի՛ ես դու. արդ՝ ա՛ծ զմտաւ զբանդ, և ՚ի մի՛տ առ զտեսիլդ*։²⁴Եւթանասուն եւթներորդք համառօտեցան ՚ի վերայ ժողովրդեան քոյ, և ՚ի վերայ քաղաքին սրբոյ. ՚ի վախճանել մեղաց, և ՚ի կնքել անօրէնութեանց, և ՚ի ջնջել անիրաւութեանց, և ՚ի քաւել ամպարշտութեանց, և ՚ի գա՛լ յաւիտենական արդարութեանն. և ՚ի կնքել տեսլեան և մարգարէի. և յօժանել սրբութեան սրբութեանցն։²⁵Եւ գիտասցես և խելամուտ լիցիս յելի՛ց բանին տալ պատասխանի։ Եւ ՚ի շինելն Երուսաղէմի մինչև ցՕծեալն առաջնորդ՝ եւթներորդք եւթն, և եւթներորդ վաթսուն և երկու. և դարձցին և շինեսցին հրապարակքն և պարիսպք, և նորոգեսցին ժամանակք*։²⁶Եւ յետ վաթսուն և երկուց եւթներորդաց, բարձցի՛ Օծութիւնն, և իրաւունք ո՛չ իցեն ՚ի նմա. և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ որ գայցէ. և ջնջեսցին հեղեղաւ. և մինչև ՚ի վախճան պատերազմին համառօտելոյ կարգեսցէ զապականութիւն. և զօրացուցէ զուխտ բազմաց. եւթներորդ մի և կէս եւթներորդի, դադարեցուցէ զսեղանս և զպատարագս. և մինչև ՚ի ծայրս անկեանն ապականութիւն. և մինչև ցվախճան և ցտագնապ կարգեսցէ ՚ի վերայ ապականութեանն*։²⁷Եւ զօրացուցէ զուխտ բազմաց։ Եւթներորդ մի՛ և կէս եւթներորդի բարձցին զոհք և նուէրք. և ՚ի վերայ տաճարին պղծութիւն ակերածոյն կացցէ. և մինչև ՚ի վախճան ժամանակի կատարած տացի ՚ի վերայ ակերածին*։

10

Գլուխ Ժ

Տեսիլ վեցերորդ։

ԺԱ 13ամին երրորդի Կիւրոսի արքայի Պարսից, բանն յայտնեցաւ Դանիէլի՝ որոյ անուն կոչեցաւ Բաղտասար. և ճշմարիտ է բանն. և զօրութիւն մեծ և հանճար տուաւ նմա ՚ի տեսլեանն։²Յաւուրսն յայնոսիկ՝ ես Դանիէլ էի ՚ի սուգ երիս եւթներորդս ակուրց. ³իաց ցանկութեան ո՛չ կերայ, և միս և գինի ո՛չ եմուտ ՚ի բերան իմ, և իւղով ո՛չ օծայ, մինչև ՚ի կատարել երից եւթներորդաց ակուրց։⁴Յաւուրն քսաներորդի և չորրորդի ամսեանն առաջնոյ. կայի ես առ ափն զետոյն մեծի՝ որ է Տիգրիս Դկլաթ*։⁵Ամբարձի զաչս իմ, և ահա այր մի զգեցեալ փառս. և ընդ մէջ իւր ածեալ կամար յոսկւոյն

* *Ոմանք.* Յորոյ վերայ է անուն քո։

* *Ոսկան.* ՚ի վերայ քաղաքին քո Աստուծոյ։

* *Ոմանք.* Մինչդեռ ես... զգութս իմ առաջի։ *Առ որս և պակասի. Վասն լերինն սրբոյ։*

* *Ոմանք.* Իբրև ՚ի ժամ երեկոյին պատարագի։

* *Յօրինակին՝ բանս.* Այր ցանկալի ես դու. *կարմրադեղով նշանակի։ Յօրինակին՝ ընդ այլոց ոմանց պակասէր. Ա՛ծ զմտաւ զբանդ, և ՚ի մի՛տ առ զտեսիլդ։*

* *Օրինակ մի.* ՏՕծեալն և առաջնորդ։

* *Օրինակ մի.* Որ կայցէ. և ջնջես՛... և կէս եւթներորդ, և դա՛։ *Ոսկան.* Եւ մինչև վախճան պատե՛։

* *Ոսկան.* Եւ եօթներորդ մի և կէս։

* *Օրինակ մի.* Մեծի՝ որ է Դկլաթ։

Ուփազայ* .⁶ և մարմին նորա ծովագոյն . և երեսք նորա իբրև զտեսիլ փայլատական , և աչք նորա իբրև ճառագայթք հրոյ . բազուկք և բարձք նորա իբրև զտեսիլ փայլուն պղնձոյ . և բարբառ բանից նորա իբրև զբարբառ զօրու* :⁷ Եւ տեսի ես Դանիէլ միայն զտեսիլն . և արքն որ ընդ իս էին՝ ո՛չ տեսին զտեսիլն , այլ ա՛հ մեծ անկաւ ՚ի վերայ նոցա , և փախեան զարհուրեալք :⁸ Եւ ես միայն մնացի , և տեսի զտեսիլն զայն մեծ . և ոչ մնա՛ց յիս զօրութիւն . և փառք իմ յապականութիւն դարձան , և չհանդարտեցի զօրութեանն* :⁹ Եւ լուայ զբարբառ բանից նորա . և ՚ի լսելն իմուն զբարբառ բանից նորա՝ կայի հիացեալ , և երեսք իմ յերկիր խոնարհեալ* :¹⁰ Եւ ահա ձեռն ձգեալ առ իս՝ կանգնեաց զիս ՚ի ծունգս իմ և ՚ի թաթս ձեռաց իմոց* .¹¹ և ասէ ցիս . Դանիէլ՛ ա՛յր ցանկալի , խելամո՛ւտ լեր բանիցս զոր խօսեցայց ընդ քեզ , և կա՛ց ՚ի կայի քում՝ զի այժմ առաքեցայ առ քեզ . և ՚ի խօսել նորա ընդ իս զբանս զայս՝ յոտն կացի դողութեամբ* :¹² Եւ ասէ ցիս . Մի՛ երկնչիր Դանիէլ . զի յօրէ յորմէ ետուր զսիրտ քո խելամո՛ւտ լինել , և վշտանալ առաջի Աստուծոյ քոյ , լսելի՛ եղեն բանք քո , և ես եկի ընդ բանից քոց :¹³ Եւ իշխան թագաւորութեանն Պարսից կայր հակառակ ինձ զքսան և զմի օր . և ահա Միքայել՛ մի յառաջին իշխանացն եկն օգնել ինձ . և թողի՛ զնա անդ ընդ իշխանի թագաւորութեանն Պարսից .¹⁴ և եկի խելամո՛ւտ առնել զքեզ որչափ ինչ ա՛նցք անցանելոց իցեն ընդ ժողովուրդ քո յաւուրս յետինս . զի տեսիլդ յաւուրս է* :¹⁵ Եւ ՚ի խօսելն նորա ընդ իս ըստ բանիցս այսոցիկ , անկա՛յ ՚ի վերայ երեսաց իմոց յերկիր՝ և կայի հիացեալ :¹⁶ Եւ ահա իբրև ՚ի նմանութիւն որդւոյ մարդոյ մերձեցայր ՚ի շրթունս իմ . բացի զբերան իմ և խօսեցայ . և ասեմ ցայրն որ կայր յանդիման ինձ . Տէր՝ յերևելդ քո ինձ՝ խռովեցա՛ւ փոր իմ յիս , և ո՛չ գոյ յիս զօրութիւն :¹⁷ Եւ զիա՞րդ կարիցէ ծառայ քո տէր խօսել ընդ տեառն իմուն . և ո՛չ ևս է յիս զօրութիւն կալոյ , և շունչ ո՛չ մնաց յիս :¹⁸ Եւ յաւել ևս մերձեցաւ յիս իբրև զտեսիլ մարդոյ , և զօրացոյց զիս* ,¹⁹ և ասէ . Մի՛ երկնչիր ա՛յր ցանկալի . խաղաղութիւն ընդ քեզ . զօրացիր և քա՛ջ լեր . և ՚ի խօսել նորա ընդ իս՝ զօրացայ և ասեմ . Խօսեսցի՛ տէր՝ զի զօրացուցեր զիս* :²⁰ Եւ ասէ . Եթէ՛ զիտիցե՞ս վասն էր եկի առ քեզ . և արդ դառնամ անդրէն տա՛լ պատերազմ ընդ իշխանին Պարսից . և ես երթայի՛ և իշխանն Յունաց գայր* :²¹ Բայց պատմեցի՛ց քեզ զինչ կարգեալ է ՚ի զիրս ճշմարտութեան . և ո՛չ ոք է ինձ օգնական այսոցիկ , բայց Միքայել իշխանն ձեր :

11

Գլուխ ԺԱ

¹Եւ ես յառաջնուն ամին Կիրոսի՝ կայի ՚ի հաստատութեան և ՚ի զօրութեան* :² Եւ արդ պատմեցի՛ց քեզ զճշմարտութիւնն . Ահա երե՛ք թագաւորք յարիցեն յերկրիդ Պարսից , և չորրորդն մեծացի մեծութիւն մեծ քան զամենեսեան . և յետ զօրանալոյ նորա ՚ի մեծութեան իւրում , յարիցէ ՚ի վերայ թագաւորութեանցն Յունաց :³ Եւ յարիցէ թագաւոր

* *Օրհնակ մի* . Այր մի զգեցեալ բաղէն փառս :

* *Յօրհնակին* . Իբրև զտեսիլ փայլատական : *Ունանք* . Չտեսիլ փայլական . և աչք նորա իբրև զճառագայթս հրոյ , և բա՛ :

* *Յօրհնակին պակասէր* . Եւ ոչ մնաց յիս զօ՞ : *Ուր ունանք* . Եւ չմնաց յիս... և ոչ հանդարտեցի :

* *Ունանք* . Բանիցն . կայի հիա՛ :

* *Օրհնակ մի* . Եւ ահա ձեռն մերձեցեալ առ :

* *Ունանք* . Չոր ես խօսեցայց... զբանս զայս ընդ իս , կացի յոտն դողութեամբ :

* *Ունանք* . Անցք անցանիցեն ընդ :

* *Ունանք* . Եւ յաւել և մերձեցաւ :

* *Օրհնակ մի* . Խօսեսցի տէր իմ , զի :

* *Օրհնակ մի* . Եւ ասէ ցիս , թէ զիտիցես :

* *Ունանք* . Կացի ՚ի հաստատութեան :

հզօր, և տիրեսցէ տէրութեամբ բազմաւ. և արասցէ ըստ կամս իւր. ⁴և իբրև յարիցէ՝
 թագաւորութիւն նորա փշրեսցի, և բաժանեսցի՝ ՚ի չորս հողմս երկնից. և ո՛չ ըստ
 վախճանի նորա, և ո՛չ ըստ տէրութեան նորա զոր տիրեաց. զի խլեսցի թագաւորութիւն
 նորա, և այլոց՝ թող զնոցայն՝: ⁵Եւ զօրասցի թագաւորն հարաւոյ. և մի յիշխանացն
 զօրասցի ՚ի վերայ նորա, և տիրեսցէ տէրութիւն մեծ. ⁶և յետ ամացն իւրեանց
 խառնակեսցին ընդ միմեանս: Եւ դուստր արքային հարաւոյ մտցէ առ արքայն
 հիւսւսոյ, ամենլ դաշինս ընդ նմա. և ո՛չ հանդարտեսցէ զօրութեան բազկին. և ո՛չ կացցէ
 զաւակ նորա. և մատնեսցի ինքն և ածելիքն իւր. և օրւորդն, և որ զօրացուցանէր զնա՝ ՚ի
 ժամանակին՝: ⁷Եւ յարիցէ ՚ի ծաղկէ արմատոյ նորա ՚ի վերայ պատրաստութեան իւրոյ.
 և եկեսցէ առ զօրութիւնն. և մտցէ ՚ի հաստատութիւնս թագաւորութեանն հիւսւսոյ. և
 արասցէ ընդ նոսա, և զօրասցի՝: ⁸Եւ զաստուածս նոցա կործանեսցէ՝ հանդերձ
 ձուլածոյիւք նոցա. և զամենայն սպաս ցանկալիս նոցա՝ զոսկւոյ և զարծաթոյ գերի՝
 առեալ բերիցէ յեգիպտոս. և ինքն հաստատեսցի քան զթագաւորն հիւսւսոյ՝: ⁹և մտցէ ՚ի
 թագաւորութիւն արքային հարաւոյ. և դարձցի՝ անդրէն յերկիր իւր: ¹⁰Եւ որդիք նորա
 ժողովեսցեն ամբոխ զօրաց բազմաց. և մտցէ դիմեալ, և հեղեղատեսցէ. և անցցէ և
 դադարեսցէ, և գրգռեսցի մինչև ՚ի զօրութիւն նորա: ¹¹Եւ զազանասցի՝ թագաւորն
 հարաւոյ, և ելցէ և տացէ պատերազմ ընդ թագաւորին հիւսւսոյ. և զումարեսցէ զօր
 բազում, և մատնեսցի զօրն ՚ի ձեռս նորա՝: ¹²Եւ առցէ զամբոխն՝ և բարձրասցի սիրտ
 նորա. և կործանեսցէ զբիւրաւորս, և ո՛չ զօրասցի՝: ¹³Եւ դարձցի արքայն հիւսւսոյ, և
 ածցէ զօր բազում քան զառաջինն. և ՚ի վախճանի ժամանակաց եկեսցէ մտանել զօրաւ
 մեծաւ և բազում ստացուածովք՝: ¹⁴Եւ ՚ի ժամանակսն յայնոսիկ բազումք յարիցեն ՚ի
 վերայ թագաւորին հարաւոյ. և որդիք մնացելոց ժողովրդեան քոյ բարձրասցին ՚ի
 հաստատել զտեսիլն, և տկարասցին՝: ¹⁵Եւ մտցէ թագաւորն հարաւոյ, և կուտեսցէ հող՝
 և առցէ զբաղաքս ամուրս. և բազուկք արքային ոչ հաստատեսցին. և յարիցեն
 ընտրեալք նորա, և ո՛չ իցէ զօրութիւն կալոյ՝: ¹⁶Եւ արասցէ ՚ի մտանելն իւրում առ նա
 զկամս իւր. և ո՛չ ոք իցէ որ ունիցի զդէմ նորա. և կացցէ յերկրին Սաբիմայ, և
 վախճանեսցի ՚ի ձեռս նորա՝: ¹⁷Եւ դիցէ զերեսս իւր մտանել զօրութեամբ իւրով
 յամենայն թագաւորութիւնս նորա, և զամենայն ուղղութիւնս առնիցէ ընդ նմա. և
 զդուստր կանանց տացէ նմա յապականութիւն. և մի՛ յամրասցի, և մի՛ եղիցի նա նորա:
¹⁸Եւ դարձուցէ զերեսս իւր ՚ի կղզիս, և առցէ զբազումս. և այրեսցէ զիշխանսն որ
 նախատեսցին զնոսա. և զնախատինս նոցա դարձուցէ յերեսս նոցա՝: ¹⁹Եւ դարձցի
 զօրութեամբ յերկիր իւր, և տկարասցի՝ և անկցի, և ո՛չ զտանիցի: ²⁰Եւ յարիցէ
 յարմատոյ նորա տունկ թագաւորութեան ՚ի վերայ պատրաստութեան նորա, և
 բռնադատիցէ առնել շուք թագաւորութեան. և յաւուրսն յայնոսիկ խորտակեսցի. և ո՛չ
 երեսօք և պատերազմաւ՝ ²¹կացցէ ՚ի վերայ պատրաստութեան իւրոյ, զի

* *Ոսկան.* Ձի խզեսցի թագաւորութիւն նորա:

* *Ոմանք.* Եւ չհանդարտեսցէ... և օրհորդն. և որ զօրացուցանեն զնա: *Ուր Ոսկան.* և օրհորդքն:

* *Օրհնակ մի.* Եւ ՚ի հաստատութիւնս թագաւորին հիւսւսոյ:

* *Ոմանք.* Հանդերձ ձուլածիւք նոցա:

* *Ոսկան.* Եւ ելցէ պատերազմ... և զումարեսցէ զօրս բազումս:

* *Օրհնակ մի.* Ձբիւրաւորս և զզօրաւորս. և դարձցի:

* *Ոմանք.* Եկեսցէ ՚ի մտանել զօրաւ: *Ուր Ոսկան.* զօրու մեծաւ:

* *Յօրհնակին պակասէր.* Եւ ՚ի ժամանակսն յայնոսիկ բազումք: *Ոմանք.* Բարձրասցին հաստատել:

* *Ոմանք յաւելուածով ունին.* Եւ բազուկք արքային *հարաւոյ* հաստատեսցին:

* *Ոմանք.* Կացցէ յերկրին Սաբային: *Ուր Ոսկան.* Սաբիրայ:

* *Ոմանք.* Ձիշխանն որ նախատին զնոսա և զնախատինս նոցա:

* *Բազումք.* Եւ ոչ երեսօք և ոչ պատերազմաւ: *Ուր օրհնակ մի.* և ոչ պատարագօք կացցէ:

արհամարհեցաւ. և ո՛չ ետուն նմա փառս թագաւորութեան. և եկեսցէ յաջողութեամբ, և բռնադատեսցի թագաւորութեանց գայթաղութեամբք*։ ²²Եւ բազուկք այնր որ հեղեղատիցեն, և հեղեղատեսցին յերեսաց նորա. և խորտակեսցի և առաջնորդ ուխտին։ ²³Եւ այնոցիկ որ խառնիցինն ՚ի նա արասցէ նենգութիւն։ Եւ ելցէ և զօրասցի ՚ի վերայ նոցա սակա՛ւ ազգաւ։ ²⁴Եւ յաջողութեամբ բազում աշխարհօք եկեսցէ՝ և արասցէ զոր ո՛չ արարին հարք նորա, և ո՛չ հարք հարց նորա. և զաւար և զկապուտ և զստացուածս բաշխեսցէ նոցա. և ՚ի վերայ Եգիպտացւոց խորհուրդ խորհեսցի մինչև ՚ի ժամանակ*։ ²⁵և զարթիցէ զօրութիւն նորա, և սիրտ նորա ՚ի վերայ թագաւորին հարաւոյ զօրութեամբ մեծաւ։ Եւ թագաւորն հարաւոյ խմբեսցէ պատերազմ զօրաւ մեծաւ և հզօրա՛ւ յոյժ, և ո՛չ հանդարտեսցէ. զի խորհեսցին ՚ի վերայ նորա խորհուրդս*։ ²⁶Եւ կերիցեն որ ինչ նմա ա՛նկ իցէ. և խորտակեսցեն զնա, և զզօրսն այրեսցեն, և անկցին վիրաւորք բազումք։ ²⁷Եւ երկոցունց թագաւորացն սիրտք իւրեանց ՚ի չարութեան. և ՚ի միուն սեղան սուտ խօսեսցին, և մի՛ յաջողեսցի. զի վախճանն ՚ի ժամանակս է*։ ²⁸Եւ դարձցի յերկիր իւր մեծութեամբ բազմաւ. և սիրտ նորա ՚ի վերայ ուխտի սրբոյ. և արասցէ և դարձցի յերկիր իւր։ ²⁹Ի ժամանակի դարձցի՝ և եկեսցէ ՚ի վերայ հարաւոյ. և ո՛չ եղիցի իբրև զառաջինն վերջինն*։ ³⁰Եւ մտցեն ՚ի նա բանակք Կիտացւոց, և խոնարհեսցին. և դարձցի և բարկասցի ՚ի վերայ ուխտին սրբոյ. և արասցէ և դարձցի և զունարեսցի ՚ի վերայ այնոցիկ ոյք թողին զուխտն սուրբ*։ ³¹Եւ յարիցեն զաւակք ՚ի նմանէ, և պղծիցեն զսրբութիւնն բռնութեամբ. և փոխեսցեն զհանապազօրոյութիւնն, և տացեն պղծութիւն ապականութեան։ ³²Եւ ապականիչք ուխտին ածցեն ՚ի վերայ իւրեանց զգայթաղութիւն։ Եւ ժողովուրդ որ ճանաչէ զԱստուած իւր՝ զօրասցին՝ և արասցեն։ ³³Եւ հանճարեղք ժողովորդեանն բազում իմիք խելամուտ եղիցին. և տկարասցին սրով և հրով՝ և գերութեամբ և յափշտակութեամբ զաւուրս։ ³⁴Եւ ՚ի տկարանալ նոցա՝ օգնականութիւն ինչ սակա՛ւ գտցեն. և յաւելցին ՚ի նոսա բազումք գայթաղութեամբք։ ³⁵Եւ ՚ի հանճարեղացն տկարասցին ՚ի փորձել զնոսա և ընտրել, և յայտնել մինչև ՚ի վախճան ժամանակի. զի տակաւին ժամանակ է. ³⁶և արասցէ ըստ կանաց իւրոց։ Եւ բարձրասցի թագաւորն, և հպարտասցի ՚ի վերայ ամենայն աստուածոց, և ՚ի վերայ Աստուծոյն աստուծոց խօսեսցի ամբարտաւանս. և յաջողեսցի մինչև վախճանեսցի բարկութիւն, քանզի ՚ի վախճան լինելոց է*։ ³⁷Եւ ՚ի վերայ աստուծոց հարց իւրեանց զմտաւ ածցէ, և վասն ցանկութեան կանանց. և զամենայն դիս զմտաւ ո՛չ ածցէ. և ՚ի վերայ ամենայնի հպարտասցի*։ ³⁸և զԱստուած հզօր ՚ի տեղուջէ իւրմէ փառաւորեսցէ. և զաստուած զոր ո՛չ ծանեան հարք նորա՝ փառաւորեսցէ, ոսկւով և արծաթով և ակամբք պատուականօք և ցանկալեօք*։ ³⁹Եւ անցցէ յաւուրս փախստականաց ըստ աստուծոյ օտարի, և յաճախեսցէ փառս. և հնազանդեսցուցէ նմա զբազումս, և զերկիրն բաժանեսցէ ՚ի պարզկի*։ ⁴⁰Եւ ՚ի ժամանակի վախճանի ոգորեսցի՝ ընդ արքային հարաւոյ. և զօրաժողով լիցի ՚ի վերայ նորա արքայն հիւսւսոյ, կառօք և հեծելովք և նաւօք բազմօք, և մտցէ յերկիրն՝ և խորտակեսցէ. և անցցէ՝ ⁴¹և մտցէ յերկիրն Սաբային. և բազումք տկարասցին։ Եւ սոքա

* *Ոմանք.* Եւ բռնաւորեսցի թագաւորութեանց։

* *Ոմանք.* Եւ բազումք աշխարհօք... մինչև ՚ի ժամանակս։

* *Յօրինակին.* Բիխեսցէ պատերազմ զօրաւ։ *Ուր Ոսկան.* զօրու։

* *Ոմանք.* Իւրեանց ՚ի չարութիւն... զի վախճանի ժամանակ է։

* *Օրինակ մի.* Եւ ՚ի ժամանակին դարձցին և եկեսցեն ՚ի վերայ թագաւորին հարաւոյ։

* *Ոմանք.* Բնակք Կիտացւոց։

* *Ոմանք.* Ի վերայ ամենայն աստուծոյ... քանզի վախճան լինելոց է։

* *Ոմանք.* Եւ ՚ի վերայ աստուծոյն հարցն իւրե՛ն... զմտաւ ոչ ածիցէ։ *Օրինակ մի.* Եւ ՚ի վերայ ամենայն աստուածոց հարց իւրոց զմտաւ ածիցէ. և վասն բազում ցանկութեան կա՛ն։

* *Ոմանք.* Եւ զԱստուածն հզօր։

* *Ոմանք.* Յաւուրս փախստականաց ընդ աստուծոյ օտարի... նոցա. *կամ՝* նա զբազումս։

իցեն որ ապրիցեն 'ի ձեռաց նորա. Եդովմ, և Մովաբ, և իշխանութիւն որդւոցն Անովնայ: ⁴²Եւ ձգեսցէ զձեռն իւր յերկիրն. և երկիրն Եգիպտացւոց ո՛չ եղիցի 'ի փրկութիւն. ⁴³և տիրեսցէ 'ի վերայ գաղտնեաց ոսկւոյ և արծաթոյ, և 'ի վերայ ամենայն ցանկալեացն Եգիպտացւոց՝ և Լիբեացւոց, և Եթովպացւոց յամուրս նոցա՞: ⁴⁴Եւ ապա համբաւք և տագնապք ճեպեսցեն զնա յարևելից, և 'ի հիւսւտոյ եկեսցէ սրտմտութեամբ բազմաւ ապականել զբազունս՞: ⁴⁵Եւ հարցէ զխորան իւր յեփազնոն, 'ի մէջ ծովուցն 'ի լեառն Սաբային սուրբ, և եկեսցէ մինչև 'ի կողմն մի նորա. և ո՛չ ոք իցէ որ փրկիցէ՞:

12

Գլուխ ԺԲ

¹Եւ 'ի ժամանակին յայնմիկ յարիցէ Միքայել իշխան մեծ, որ կայ 'ի վերայ որդւոց ժողովրդեան քո. և եղիցի ժամանակ նեղութեան. նեղութիւն որպիսի ո՛չ եղև յորմէ հետէ եղև ա՛զգ 'ի վերայ երկրի մինչև 'ի ժամանակն յայն. և 'ի ժամանակին յայնմիկ ապրեսցի ժողովուրդ քո, ամենայն որ գտցի գրեալ 'ի դպրութեան: ²Եւ բազումք 'ի ննջեցելոց 'ի հող երկրի՝ յարիցեն, ոմանք 'ի կեանսն յաւիտենականս, և ոմանք 'ի նախատինս և յամօթ յաւիտենականս՞: ³Եւ իմաստունք ծագեսցեն իբրև զլուսաւորութիւն 'ի հաստատութեան. և բազումք յարդարոց իբրև զաստե՛ղս յաւիտեանս՝ և ևս՞: ⁴Եւ դու Դանիէլ փակեա՛ զբանսդ, և կնքեա՛ զգիրդ՝ մինչև 'ի ժամանակ վախճանի. մինչև սրբեսցին բազումք, և բազմացի գիտութիւնս՞: ⁵Եւ տեսի ես Դանիէլ, և ահա երկու՛ կային յայսկոյս և յայնկոյս գետոյն՞: ⁶և ասեն ցայրն որ զգեսցեալն էր զբաղէնն, և կայր 'ի վերայ ջուրց գետոյն. Մինչև ցե՞րբ իցէ վախճան սքանչելեացդ զոր ասացեր՞: ⁷Եւ լուայ յառնեն որ զգեսցեալն էր զբաղէնն, և կայր 'ի վերայ ջուրց գետոյն. ամբարծ զա՛ջ իւր և զծախ իւր յերկինս, և երդուաւ 'ի կենդանին յաւիտենից, թէ 'ի ժամանակ՝ և 'ի ժամանակս՝ և 'ի կէս ժամանակի. և 'ի կատարել ցրման ձեռին ժողովրդեանն սրբեցելոյ, ծանիցեն զայս ամենայն՞: ⁸Եւ ես լուայ՝ և ո՛չ առի 'ի միտ. և ասեմ. Տէ՛ր զի՞նչ է վախճան այդոցիկ՞: ⁹Եւ ասէ. Ե՛րթ Դանիէլ. զի արգելեալ և կնքեալ են բանքս մինչև ցժամանակ վախճանի՞: ¹⁰Ընտրեսցին՝ և սպիտակասցին՝ և փորձեսցին՝ և սրբեսցին բազումք, և անօրինեսցին անօրէնք, և ո՛չ առնուցուն 'ի միտ ամպարիշտք. և իմաստունք իմասցին ¹¹'ի ժամանակէ փոփոխմանն յաճախութեան: Եւ տացի պղծութիւն աւերածին աւուրս հազար երկերիւր երեսուն և հինգ՞: ¹²և երանի՛ որ համբերեսցէ՝ և հասցէ յաւուրս հազար երեք հարեր երեսուն և հինգ: ¹³Եւ դու եկ հանգի՛ր, զի տակաւին են աւուրք՝ և ժամք 'ի կատարումն վախճանի, և հանգիցես. և յարիցես 'ի ժամանակի քում 'ի վախճանի աւուրց:

* *Ոմանք.* Եւ Լիբացւոց:

* *Ոմանք.* Եւ եկեսցէ սրտմտ՞:

* *Ոմանք.* Յեփազովն: *'Ի լուս՞. 'ի վերայ՝* յեփազնոն. *նշանակի՝* յապարանս: *Ջոր օրինակ մի՝ 'ի մէջ առեալ գրէ.* Ջխորան իւր յապարանս յեփազնոն: *Բազումք.* Որ փրկիցէ զնա:

* *Ոմանք.* Եւ յամօթս յաւիտենականս:

* *Ոմանք.* Իբրև լուսաւորք 'ի հաստա՞:

* *Ոմանք.* 'Ի ժամանակս վախճանի: *'Ի լուս՞.* Մինչև ուսցին բազումք. *համաձայն ոմանց 'ի բնար՞:* Ուր օրինակ մի. մինչև ուսցին և սրբեսցին բազումք:

* *Օրինակ մի.* Եւ ահա երկուք կացին յայս՞:

* *Ոմանք.* Եւ ասեն ցայրն որ զգեսցեալ էր զբաղէնն... վախճան ժամանակի սքանչելեացդ զոր ա՞:

* *Ոմանք.* Եւ 'ի կէս ժամանակաց:

* *Ոմանք.* Եւ ես Դանիէլ լուայ:

* *Ոմանք.* Մինչև ցվախճան ժամանակի:

* *Ոմանք.* Եւ 'ի ժամանակէ փոփոխման... հազար երեքհարիւր երեսուն:

Գլուխ ԺԴ

⁶⁵ Եւ թագաւորն Աստիագէս յաւելաւ առ հարս իւր, և ա՛ռ Կիրոս Պարսիկ զթագաւորութիւն նորա՛: ¹ Եւ Դանիէլ էր կենաց կցորդ թագաւորին. և փառաւոր քան զամենայն բարեկամս նորա՛:

ԺԲ ² Եւ էին կուռք մի Բաբելացւոց անուն Բէլ. և ելանէր ՚ի նմա ռոճիկ՝ աւուր միոջ, նաշիհ՝ երկոտասան արդու. և քառասուն ոչխար. և զհնի վեց մար՛: ³ Եւ թագաւորն պաշտէր զնա. և երթայր հանապազ երկիր պագանէր նմա: Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ. և ասէ ցնա թագաւորն. Դու ընդէ՞ր ո՛չ երկիր պագանես Բելայ՛: ⁴ Եւ նա ասէ. Քանզի ո՛չ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի զԱրարիչն երկնի և երկրի, որ ունի իշխանութիւն ամենայն մարմնոյ: ⁵ Եւ ասէ ցնա թագաւորն. Իսկ Բէլ ո՞չ թուի քեզ թէ իցէ Աստուած կենդանի. եթէ ո՞չ տեսիցես՝ որչափ ուտէ և ըմպէ հանապազ՛: ⁶ Եւ ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի՛ խաբիր արքայ, զի դա է ՚ի ներքոյ կաւեայ, և արտաքոյ պղնձի. ո՛չ կերեալ դորա երբէք՝ և ո՛չ արբեալ՛: ⁷ Եւ բարկացեալ թագաւորն, կոչեաց զքուրմսն նորա, և ասէ ցնոսա թագաւորն. Եթէ ոչ ասիցք ինձ, ո՛վ ուտէ զսեղանն զայն՝ մահու՛ մեռանիցիք՛: ⁸ ապա եթէ յայտ առնիցք՝ թէ զայն ամենայն Բէլ ուտէ՝ մեռանիցի Դանիէլ՝ զի հայիոյեաց զԲէլ: Եւ ասէ Դանիէլ զթագաւորն. Եղիցի՛ ըստ բանի քում՛: ⁹ Եւ էին քուրմք Բելայ եւթանասուն, թո՛ղ զկանայս և զմանկտի: Եւ եկն թագաւորն Դանիէլիս հանդերձ ՚ի տուն Բելայ: ¹⁰ Եւ ասեմ քուրմք Բելայ. Ահաւասիկ մեք արտաքս ելցուք. և դու արքայ՝ դի՛ր առաջի դորա զկերակուրսդ և զզհինդ խառնեալ դիցես. և փակեա՛ զդուրսդ, և կնքեա՛ մատանեալ քով՛: ¹¹ Եւ եկեալ ընդ առաւօտս, եթէ ոչ գտցի այդ ամենայն կերեալ ՚ի Բելայ, մեռցու՛ք մեք. ապա թէ ոչ Դանիէլ որ տուտ խօսեցաւ զմէնջ՛: ¹² Եւ նոքա վստահ էին, զի արարեալ էին ընդ սեղանովն մո՛ւտ անյայտ. և ընդ այն մտանէին հանապազ և ուտէին զայն: ¹³ Եւ եղև իբրև ելին արտաքս, և թագաւորն ե՛դ զկերակուրսն առաջի Բելայ: Եւ հրաման ետ Դանիէլ իւրում մանկտոյ, և բերին մոխիր, և ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի թագաւորին միայնոյ. և ելեալ արտաքս փակեցին զդուռնն, և կնքեցին մատանեալ թագաւորին՝ և զմացին՛: ¹⁴ Եւ քուրմքն մտին գիշերի ըստ սովորութեան իւրեանց, կանամբք և որդուվք իւրեանց. կերան զամենայն և արբին և ոչ ինչ թողին: ¹⁵ Եւ կանխեաց թագաւորն ընդ առաւօտն Դանիէլիս հանդերձ. ¹⁶ և ասէ. Ո՞ղջ են կնիքդ Դանիէլ: Եւ նա ասէ. Ո՞ղջ են արքայ: ¹⁷ Եւ եղև ընդ բանալ դրանցն՝ հայեցաւ թագաւորն ՚ի սեղանն, ՚ի ձայն մեծ աղաղակեաց՝ և ասէ. Մե՛ծ ես Բէլ, և ո՛չ գոյ

** Այս է վերջին համարն ԺԳ զլիտյն ըստ Լատինացւոց, զոր գրչագիրք մեր ընդ Յունական բնագրին ունին աստանօր, և Ոսկան ՚ի սպառ զանց առնէ զնովաւ:*

** Ոմանք. Քան զամենայն բարեկամս իւր:*

** Ոսկան. Եւ էր կուռք մի: Բագոււմք. Եւ ելանէր նմա ռո՛:*

** Օրինակ մի. Երկիր պագանէլ նմա... երկիր Աստուծոյ իւրում:*

** Ոմանք. Ո՞չ թուիցի քեզ Աստուած կենդանի: Ոմանք. Եթէ ոչ տեսանես. և ոմանք. Եթէ ոչ տեսանիցես:*

** Ոսկան. Ոչ է կերեալ դորա:*

** Ոմանք. Եթէ ո՛վ ուտիցէ զսեղանն:*

** Ոմանք. Մեռցի Դանիէլ:*

** Յունանս պակասի. Չկերակուրսդ. և զզհինդ խառնեալ դիցես. և փակեա՛ զդուրսդ, և կնք՛:*

** Օրինակ մի. Եթէ ոչ գտցես զայդ ամենայն կերեալ:*

** Ոմանք. Իբրև ելին նոքա արտաքս... փակեցին զդուրսն:*

նենգութիւն 'ի քեզ' և ո՛չ մի՞: ¹⁸ Եւ ծիծաղեցաւ Դանիէլ. և կալաւ զթագաւորն զի մի՛ մտցէ 'ի ներքս, և ասէ. Աղէ՛ հայեաց ընդ ատակսդ, և տես ո՞յր է հետդ այդ՞: ¹⁹ Եւ ասէ թագաւորն. Տեսանեմ հետ արանց՝ կանանց՝ և մանկտույ՞: ²⁰ Յայնժամ բարկացեալ թագաւորն կալաւ զքուրմսն, և զկանայս և զորդիս նոցա. և ցուցին նմա զգաղտնի դրունս՝ ընդ որ մտանէին՝ և ծախէին զսեղանն: ²¹ Եւ կոտորեաց զնոսա թագաւորն, և զԲէլ ետ 'ի ձեռս Դանիէլի, և կործանեաց զնա՝ և զմեհեան նորա: ²² Եւ է՛ր վիշապ մի մեծ, և պաշտէին զնա Բաբելացիքն: ²³ Եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. Միթէ և զոմանէ՞ ասիցես թէ պղնձի է. ահաւաղիկ կենդանի՛ է, ուտէ՛ և ըմպէ. և ո՛չ կարես ասել թէ չիցէ դա աստուած կենդանի. արդ ե՛կ պագ դմա երկիր՞: ²⁴ Եւ ասէ ցնա Դանիէլ. Ես՝ Տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա՛ է Աստուած կենդանի՞: ²⁵ Բայց դու արքայ՝ տո՛ւր իշխանութիւն, և սպանի՛ց զվիշապդ առաջի քո առանց սրոյ և զաւազանի: Եւ ասէ թագաւորն. Տուեա՛լ քեզ՞: ²⁶ Եւ ա՛ռ Դանիէլ՝ եւղ, ձիւթ, և ճարպ, և մագ. և եփեաց 'ի միասին՝ և արար զնդակս, և եհար 'ի բերան վիշապին. և իբրև կերաւ՝ պայթեաց վիշապն. և ասէ. Տեսէ՛ք զպաշտամունսդ ձեր: ²⁷ Եւ եղև իբրև լուան Բաբելացիքն՝ բարկացան յոյժ, և կուտեցան 'ի վերայ թագաւորին՝ և ասեն. Զրեայ՛ եղև թագաւորն. զԲէլ կործանեաց, և զվիշապն սպան, զքուրմսն կոտորեաց: ²⁸ Եւ իբրև եկին, ասեն ցթագաւորն. Տո՛ւր մեզ 'ի ձեռս զԴանիէլ. ապա թէ ոչ՝ սպանանեմք զքեզ և զտուն քո: ²⁹ Եւ իբրև ետես թագաւորն՝ եթէ կարի՛ տագնապեն զնա, հարկաւ 'ի ձեռս ետ նոցա զԴանիէլ՞: ³⁰ Եւ նոքա արկին զնա 'ի գուրբն առիւծուց. և անդ էր զվեց օր: ³¹ Եւ էին 'ի գբին եւթն առեւծք. և տային նոցա հանապազ երկուս մարդս, և երկուս պատրուճակս. բայց յայնժամ ո՛չ ինչ արկին նոցա, զի վաղվաղակի՛ կերիցեն զԴանիէլ: ³² Եւ էր Ամբակում մարգարէ 'ի Զրեաստանի. և եփեաց թան, և բրդեաց հաց 'ի կուր. և երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց՞: ³³ Եւ ասէ հրեշտակ Տեառն ցԱմբակում. Տար՛ զճաշդ զոր ունիս՝ 'ի Բաբելոն Դանիէլի՝ 'ի գուրբն առիւծուց: ³⁴ Եւ ասէ Ամբակում. Տէր՝ զԲաբելոն՝ իմ չիք տեսեալ, և զգուրբն ո՛չ զիտեմ ո՛ւր իցէ: ³⁵ Եւ բուռն եհար հրեշտակն զգագաթանէ նորա, և կալաւ զվարսից գլխոյ նորա, և եղ զնա 'ի Բաբելոն 'ի վերայ գբոյն սաստկութեամբ հոգւոյ իւրոյ: ³⁶ Եւ աղաղակեաց Ամբակում՝ և ասէ. Դանիէլ՝ Դանիէլ՝ արի՛ ա՛ռ զճաշդ զոր առաքեաց քեզ Աստուած: ³⁷ Եւ ասէ Դանիէլ. Յիշեցեր զիս Աստուած, և ո՛չ ընդ վայր հարեր զսիրելիս քո: ³⁸ Եւ յարեաւ Դանիէլ՝ և եկեր. և հրեշտակ Աստուծոյ տարաւ զԱմբակում նոյնժամայն անդրէն 'ի տեղի իւր: ³⁹ Եւ թագաւորն եկն յաւուրն եւթներորդի աշխարել զԴանիէլ. և իբրև եկն 'ի բերան գբոյն, և հայեցաւ, և ետես զի նստեր Դանիէլ՞: ⁴⁰ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և ասէ. Մե՛ծ ես Տէր Աստուած Դանիէլի. և չիք այլ ոք բաց 'ի քէն: Եւ ա՛ռ զնա 'ի վեր: ⁴¹ Եւ զվնասակարս կորստեան նորա արկին 'ի գուրբն. և գէշ գէշ պատառեցան նոյնժամայն առաջի նորա՞:

* *Ոմանք.* Ընդ բանալ դրացն՝ հայեցեալ թագաւորին 'ի սե՞:

* *Ոմանք.* Զի մի՛ մտանիցէ 'ի... ընդ յատակսդ:

* *Ոսկան.* Տեսանեմ հետս ար՞:

* *Բագոււմք.* Զգաղտնի դուրսն:

* *Ոսկան.* Ահաւասիկ կենդանի է:

* *Ոմանք.* Երկիր պագից. զի նա:

* *Բագոււմք.* Տուր ինձ իշխա՞... զվիշապդ առանց սրոյ: *Ոսկան.* Տուեալ է քեզ:

* *Ոմանք.* Տագնապէին զնա. հարկաւ ետ 'ի ձեռս նոցա: *Ուր Ոսկան.* հարկիւ ետ 'ի ձե՞:

* *Օրհնակ մի.* Զաց 'ի կերակուր:

* *Ոմանք.* Եւ եկն 'ի բերան գբ՞... և ետես զԴանիէլ զի նստեր. և աղա՞:

* *Ամենայն գրչագիրք մեր յայս բան կատարեն զՄարգարէութիւնս Դանիէլի.*

պատառեցան նոյն ժամայն առաջի նորա: *Ուր Ոսկան յաւելու համար 42.* Յայնժամ ասէ թագաւորն. Պակնուցուն ամենայն բնակիչք յընդհանրոյ երկրի յԱստուծոյ Դանիէլի. զի նա է փրկիչ՝ արարող նշանաց և սքանչելեաց երկրի. որ փրկեաց զԴանիէլ 'ի գբոյ առիւծուց:

Կատարեցաւ Մարգարտութիւնն Դանիելի

ՆԱԽԱԴԴՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷ

Եզեկիէլ՝ Նաբուքոդոնոսորայ յերրորդ ելանելն յերուսաղէմ, գերի վարեցաւ ընդ Յովակիմայ արքայի, որ նա ինքն է Յեքոնիա՝ հայր Սաղաթելի. յորոյ հինգերորդ ամի գերութեանն սկսաւ մարգարեանալ Եզեկիէլ ՚ի Բաբելոն: Եւ է պատճառ սքանչելի տեսլեանն՝ զոր ետես, այսպէս: Ի գլուխ ամպարշտութեան հասեալ Յրէիցն՝ բազումք գերեալ եղեն ՚ի Բաբելոն, ընդ որս և արքայն Յեքոնիա. իսկ մնացեալքն անդէն ո՛չ զգաստանային, այլ վստահացեալք ՚ի տաճարն որ չև էր հրկիզեալ, ուր համարէին բնակել զԱստուած. և անհնար կարծէին մատնել զնա հեթանոսաց, որով ամբարտաւանեալք՝ ևս ՚ի չարիս յառաջէին: Եւ զի ՚ի ժամանակի անդ՝ Երեմիաս ՚ի միջի նոցա էր յերուսաղէմ. որ թպէտ խրատեր և յանդիմաներ զնոսա՝ ո՛չ հաւանէին. այլ ընդ հակառակս ելեալ ատէին զնա, և իբրև ընդ թշնամի ինքեանց հայելով ընդ նա, և ընդ բարեկամ Քաղդէացոց, ո՛չ միայն չլսէին նմա, այլ և սպանանել ևս ջանային: Առնու՛ Աստուած ՚ի ձեռն մարգարեական շնորհիւ զԵզեկիէլ ՚ի Բաբելոն, ընդ որում ո՛չ գոյր Յրէիցն իրք նախանձու՝ որպէս ընդ Երեմիայի. և տայ՛ նմա համաձայնել Երեմիայի ՚ի կշտամբանս չարեաց Յրէիցն, և ՚ի սպառնալիս կործանման քաղաքին և տաճարին՝ թէ ոչ դարձցին: Զի ՚ի հեռուստ ՚ի Բաբելոնէ սպառնալով նորա, զոր ՚ի ձեռն երթեկաց ունէին լսել որք յերուսաղէմ, թերևս հաւանեսցին անսալ՝ զի ապրեսցին: Արդ՝ ետես մարգարես զտեսիլ փառացն Աստուծոյ ՚ի վերայ քրովբէից, ընդդէմ կարծեացն Յրէից՝ թէ չէ՛ Աստուած կարօտ տաճարին, կամ քրովբէիցն որ անդ. զի յևս զարմանալի կենդանեաց պաշտի. և չխնայէ մատնել զտաճարն հանդերձ անդարձ Յրէիւքն՝ Նաբուքոդոնոսորայ. զոր և կերպարանօք գազանացն դրոշմէ զնա: Զի թպէտ մարդ է բնութեամբ՝ բուռն է իբրև զառեւծ, և սուր իբրև զարծուի, կասօղ և մանրօղ իբրև զզուարակ. զոր և ածելոց էր ՚ի վերայ նոցա և տաճարին: Եւ զի կատարելոց էր զսպառնալիսս, ածէ տեսլեամբ զմարգարես յերուսաղէմ և ցուցանէ նմա զժածուկ և զյայտնի չարիս նոցա, ընդ որոց յաճախէ սպառնալիս յիշմամբ երախտեացն՝ որ առ նոսա՝ յեզիպտոսէ և յառաջ. և զանազան օրինակօք ցուցանէ զանհրաժեշտ պատուհասն, յորում ո՛չ ունէին գտանել մխիթարութիւն. օրինակաւ չմխիթարելոյն Եզեկիելի ՚ի մեռանել կնոջն: Սպառնայ և ՚ի վերայ այլազգեացն որք ոտնհար լինէին Յրէից: Յիշէ և զառնուլն Երուսաղէմի. և դարձեալ կշտամբէ զոմանս. և ապա տայ աւետիս դարձի առ լերինսն որոց սպառնացաւ ՚ի ժամ բարկութեանն: Եւ յարութեամբ ոսկերացն, և շինուածով տաճարին, և սահմանօք ցեղիցն, և դրամբք քաղաքին ըստ ցեղիցն՝ հաստատէ զդարձ Յրէիցն. և զշինուած տաճարին, և զկանգնել պարսպին և դրանցն Երուսաղէմի. և ՚ի նոյն նկարէ զշինութիւն եկեղեցւոյ, և զվայելչութիւն անձեռագործ վերնոյն Երուսաղէմի, և սքանչելի դրանցն. զոր ևս յայտնի ցուցանէ Յովիաննես ՚ի

Յայտնութեանն: Եւ ունի մարգարես պատմութիւն ժամանակի ամաց քսանից:

Գլուխք գրոց Եզեկիելի Մարգարէի

ա. Տեսիլ գազանացն ըստ նկարագրին, ՚ի վերայ բանաւորաց, գազանաց անասնոց և թռչնոց. և անիւքն ՚ի վերայ ժամանակի՝ զտիրելն Աստուծոյ յայտնէ. և նովաւ զվերջին գալն Քաղդէացւոցն, և զաւերն Երուսաղէմի: Իսկ ըստ մարգարէութեան՝ զմարդանալն Քրիստոսի, և զկառավարելն ՚ի խաչն. և զԵզեկիելոյ յայտնէ. իսկ ըստ բարոյից՝ զչորս առաքինութիւնսն յորս հանգչի Աստուած. ևս և վասն հանդերձեալ զալստեանն Քրիստոսի: Ամբաստանէ Աստուած զԻսրայէլէ, և ջամբեալ զմատեանն՝ կարգէ զնա դէտ ՚ի վերայ Իսրայէլի:

բ. Ի կշտամբանս անարժանիցն՝ կապանօք և լռութեամբ ճգնի մարգարէն: Դրոշմէ աղիւսովն զկործանումն Երուսաղէմի. և ՚ի կողմն ննջելովն՝ չափէ զժամանակն ՚ի մարգարէութենէն իւրմէ մինչև յառաջին ամն Կիրոսի՝ քառասուն ամ. և յաւերածէ տաճարին մինչ ՚ի կանգնումն պարսպացն Երուսաղէմի առ Նէնաւ, հարելր և յիսուն ամ. և ճնշելով զինքն՝ գուշակէ զսով և զգերութիւն. որ և առ մեզ պաշտի դատաստանս՝ ա՛ստ և ՚ի հանդերձեալն:

գ. Սպառնալով լերանցն զանվրէպ սուրն նշանակէ, և զկործանումն բազնացն. և կրկնելովն զվախճանն և զծախումն նոցա՝ ՚ի սրոյ և ՚ի սովոյ. և զըմբռնիլն Սեդեկիայ:

դ. Համբարձեալ զմարգարէն ածէ յԵրուսաղէմ, և ցուցանէ նմա զկուռսն ՚ի դրունս և յորմս տաճարին. և զի լային զԹամուզ, որ է Ադոնիսն յառասպելս. ընդ որոյ վեց տապարաւորս արծակէ ՚ի կոտորել, իսկ ՚ի դրոշմեալսն խորհրդով խաչին՝ խնայել. և ցանել հուր ՚ի քաղաքին:

ե. Հակառակ մարգարէանայ չարախրատիցն. որք ասէին թէ ո՛չ գերիմք՝ այլ աստ վախճանիմք իբրև ՚ի կաթսա. որոց սպառնայ ցրել, և յետ փոքր ինչ դարձեալ ժողովել:

զ. Գերոյ զգեստիւն և գաղտ ելանելովն՝ զփախչիլն Սեդեկիայ և զըմբռնիլն, և զկուրութեամբ ածիլն ՚ի Բաբելոն նշանակէ:

է. Դարձեալ իւրով կարօտութեամբն նշանակէ մարգարէն զլլկանս սովոյն ՚ի պաշարմանն. և թէ փութով հասանեն նոցա չարիքն:

ը. Տարագրէ Իսրայէլէ զսուտ մարգարէսն, որք զխարխուլ ժողովուրդն իբրև զորմն ծեփէին՝ խաղաղութիւն ըղձանալով. անիծանէ և քրմուհեացն ընդ սուտ տեսլեանցն. և զի պահպանական հմայս ՚ի բազուկս և ՚ի գլուխս նոցա կապէին, զորս ՚ի միջոյ բառնալ սպառնայ:

թ. Ասէ և վասն խտորելոցն ՚ի կուռսն և ՚ի մոլիսն, թէ ե՛ս Տէր թոյլ տաց ստոցն ըստ ախորժելոյ նոցա տալ պատասխանի, որպէս Սեդեկիայն Աքաաբու, և կորուսից զխաբօղսն և զխաբեալսն ՚ի զգուշութիւն այլոց:

ժ. Ջի ո՛չ շահողացն ապաշխարութեամբ զփրկութիւն՝ ո՛չ կարեն օգնել արդարքն. և որ երբեմն զմի ոք խնդրէ ՚ի խրամ ցանգոյն՝ զի մի՛ գոյսն բարձցէ. այժմ զերիսն ասէ անկարս, զի մի՛ ծոյլս արասցէ: Պաշտի բանս և ՚ի հանդերձեալն դատաստան:

ժա. Փայտիւ որթուն զհրկիզութիւն քաղաքին նշանակէ, որք ՚ի հրոյ

յեզիպտոս էլին, և ՚ի հուր Բաբելացւոցն մաշին վասն յանցման կռապաշտութեանն:

ժբ. ՚ի դէմս մանկաբարձի և փեսայի դնէ զխնամս իւր առ Երուսաղէմ՝ յեզիպտոս և յառաջ, որոյ զընդդէմսն փոխարինեալ՝ քան զՇամրին, և զԱողոմ, որ է Ռոբէն և Գադ, ընդ որոյ կրել ասէ պատիժս առ ՚ի քաւել:

Պաշտի այժմ և առ մեզ ամբաստանելս, և անդ սպառնալիքս:

ժգ. Արծուին մեծ Նաբուքոդոնոսոր, որ գերեաց զՅեքոնիա և կացոյց զՍեդեկիա. մա՛յր Լիբանանու թագաւորքն Երուսաղէմի. իսկ այլ արծուի՝ փարաւոն, յոր ձեռս ետ Սեդեկիա և անց զերդմամբն, զոր եկեալ գերեաց Բաբելացին. խոստանայ և զդարձն. բայց ճշմարտութիւնն ՚ի Քրիստոս հայի, որ կախեցաւ զխաչէն ՚ի լեռն Գողգոթա:

ժդ. Ուղղէ զթելր կարծիսն, զի ասէին թէ հարքն մեղան՝ և մեք գերիմք. և յայտնէ թէ յորում մասին վախճան կենաց հասանէ՝ այնր մասին լինիմք վիճակեալք:

ժե. Ողբայ զՍեդեկիա և զեղբարս նորա, ամբաստանելով զվայրենի գնացս նոցա:

ժզ. Ամբաստանէ զանհնազանդութենէ նոցա յեզիպտոս և յառաջ, և սպառնայ թէ հանից զձեզ յազգաց, յեզիպտոս և ուր ապաստանն եղեն. և ածից զձեզ յանապատ, ՚ի տեղին ուր զետեղեալ էր գերին ՚ի Բաբել, որպէս յեզիպտոս ՚ի Գեսեմն:

ժէ. Թէմանն և Նագբէն հարաւ ասի, և է Երուսաղէմ որոյ հուր սպառնայ արծակել, զերիցս և զչորիցս գալ Բաբելացւոյն:

ժը. Գուշակէ՝ զի հասեալ Բաբելացւոյն յեմաթ, ուստի բաժանի ճանապարհն յԻւրաթ և յԵրուսաղէմ, և հմայիւքն յԵրուսաղէմ դիմէ. ոչ թէ զի դէքն զիտելով ինչ զեկուցին նմա յաղթութիւն. այլ ՚ի մարգարէիցն լուեալ էր նոցա: Սպառնայ Սեդեկիայ որ անգոսնեաց զԲաբելացին, և ձեռս ետ յեզիպտացին, մինչև եկեսցէ Ջորաբաբել և Քրիստոս: Իսկ Ամոն՝ ոմանք զՆաբուքոդոնոսոր ասեն աստ:

ժթ. Բամբասէ զԻսրայէլ ՚ի սպանութիւնս և ՚ի պէսպէս աղտեղութիւնս, և հրով սպառնայ՝ Բաբելացւովն և գեհենիւն այրմամբ:

ի. Ջանհրաւութիւն իշխանացն ամբաստանէ:

իա. ՚ի դէմս երկուց պոռնկացն բամբասէ զԻսրայէլի և զՅուդայ կռապաշտութիւնն:

իբ. Տեսլեամբ եռացեալ կաթսայի՝ զսաստկութիւն վշտացն Երուսաղէմի ՚ի Բաբելացւոյն գուշակէ:

իգ. Հրաման առնու եզեկիէլ չառնուլ սուգ ՚ի մեռանելն կնոջն յօրինակ ժողովրդեանն:

իդ. Կորուստ Ամոնացւոց, Մովաբացւոց, Եդովմայեցւոց, Փղշտացւոց, որ ձգի և ՚ի վերայ ապստամբելոց յԱստուծոյ:

իե. Սպառնացեալն ՚ի վերայ իշխանին Ծուրայ, ձգի և յԱդամ և ՚ի բանսարկուն:

իզ. Եւ ՚ի վերայ փարաւոնի ասացեալն՝ ձգի և յիմանալի փարաւոնն. բայց նախատէ դարձեալ Բաբելացւովն և Սատանայիւ որք անկան, զհպարտութիւն Եզիպտացւոցն որ զի անկցի:

իէ. Երկրորդէ վասն դիտին. զի պարտ է վարդապետին խրատել, և լսողին՝ անսալ. և զի ուղիղ է դատաստանն Տեառն առ խտորեալս և առ

զղջացեալս. սփոփէ այսու զծնեալսն 'ի գերութեանն. թէ որ վասն հարցն մեղաց մատնեաց գերուսաղէմ, զորդիսն դարձուցէ անդրէն:

իը. Նախ քան զլուր գուժի առնանն Երուսաղէմի՝ յառաջէ մարգարէս պատուհասել զբնակիչս երկրին այլ և այլ հարուածովք 'ի զգուշութիւն զկնի դարձին. նա և մե՛զ ևս 'ի խրատ:

իթ. Թէպէտ և 'ի լսելն յօժարք էին, և յառնելն՝ ո՛չ. այլ յորդորէ Աստուած խօսել առ նոսա մարգարէին. զի վիճմամբ կանխասացութեամբն շահեսցին յետոյ:

լ. Մեղադրէ իշխանացն ընդ ագահութեան և ծուլութեան. ևս և հարուստ իշխեսցելոցն, և խոստանայ 'ի դէմս Դաւթի՝ զՁորաբաբէլ Յրէից, և զՔրիստոս հասարակաց:

լա. Կորուստ սպառնայ Եդոմայ 'ի դառնալ գերւոյն. վասն որ ընդ Յրէայսն նախանձուն. ձգի բանս և 'ի վերայ ամենայն նախանձոտաց:

լբ. Շինութիւն խոստանայ 'ի դարձին՝ նկարելով զհաստատութիւն եկեղեցւոյ. և զլուացումն աւազանին. և որոշէ Յրէիցն զայս ևս միայն առնել նոցա դարձ 'ի գերութենէ:

լգ. Մարգարեական տեսլեամբ, և ո՛չ զգալի իրօք կանգնէին ոսկերքն. 'ի հաստատութիւն խոստման դարձին, և 'ի հաւատ վերջնոյ յարութեանն:

լդ. Չի յետ դարձին ընդ Ձորաբաբիլի նուաճին ցեղքն բաժանեալք նկարելով զառ 'ի Քրիստոս միութիւն Յրէից և հեթանոսաց:

լե. 'Ի վերայ Գովգայ ասացեալն՝ է ինչ վճարեալ յետ դարձին, և է ինչ լինելոց յերևել Նեռինն:

լզ. Տուցանէ մարգարէին անմարմնապէս զձև տաճարին. և զի դուռնն արևելից փակեալ կացցէ՝ 'ի խորհուրդ Կուսին:

լէ. Մերժէ զօտարածինսն 'ի սպասաւորելոյ. և օրինադրէ վասն քահանայից, զորս և կարգէ դատաւորս:

լը. Խրատէ զիշխանս և օրինադրէ վասն արդար չափոց, և վասն տօնից և պատարագաց, որ և պաշտի առ մեզ հոգեպէս:

լթ. Նկարէ գետոյն յորդութեամբ զդարձն նոցա յետոյետէ. և զաճումն աւետարանին Քրիստոսի որ սկսան 'ի Գալիլէէ. ուստի չափէ չորս հազար ամիս մինչ 'ի Կոստանդիանոս:

խ. Ծրագրէ զաշխարհն, զոր և վիճակաւ բաժանեն ցեղիցն, և կանգնել դրանց քաղաքին՝ 'ի նշանակ եկեղեցւոյ և հանդերձելոյն:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ ԵՋԵԿԻԵԼԻ

1

Գլուխ Ա

Տեսիլ Եզեկիելի քահանայի որդւոյ Բուզեայ. զոր ետես յերկրին Քաղդէացւոց 'ի վերայ Քովբար գետոյ:*

* 'Ի բազումս պակասի այսպիսի վերնագիր Մարգարեութեանս. այլ միայն ունին. Տեսիլ Եզեկիելի մարգարէի:

Ա ¹Եւ եղև յամին երեսներորդի, յամսեանն չորրորդի, որ օր հինգ էր ամսոյն. և էի ես ՚ի մէջ գերութեանն առ ասին Քովբար գետոյ. և բացան երկինք, և տեսիլ գտեսիլ Աստուծոյ*.² Եր օր հինգ էր ամսոյն. այն ամ հինգերորդ էր գերութեանն Յովաքիմայ արքայի*:³ Եւ եղև բա՛ն Տեառն առ Եզեկիէլ քահանայ՝ որդի Բուզայ, յերկրին Քաղդեացոց ՚ի վերայ Քովբար գետոյ: Եւ անդ եղև ՚ի վերայ իմ ձեռն Տեառն*:⁴ Եւ տեսի՛ և ահա հողմ վերացեալ գայր ՚ի հիւսւտոյ, և ամպ մեծ ՚ի կողման նորա. և լոյս շուրջ զնովաւ, և հուր փայլատակէր ՚ի նմանէ. և ՚ի մէջ նորա իբրև գտեսիլ բազմագունի ականց, և ճառագայթք ՚ի նմա*:⁵ Եւ ՚ի մէջ նորա կերպարանք չորից կենդանեաց. և այս տեսիլ նոցա. կերպարանք մարդոյ ՚ի վերայ նոցա*:⁶ Եւ չորք դէմք միոյ, և չորք թևք միոյ միոյ ՚ի նոցանէ:⁷ Եւ բարձք նոցա բարձք ուղո՛րդք. և ոտք նոցա թևաւորք էին, և կճղակք նոցա իբրև զկճղակս որթուց. և կայծակունք թօթափէին ՚ի նոցանէ իբրև ՚ի փայլատականց պղնձոյ: Եւ թևք իւրեանց երագունք էին.⁸ և ձեռն մարդոյ ՚ի ներքոյ թևոց նոցա ՚ի չորեսին կողմանս նոցա. և երեսք նոցա⁹ և թևք չորեցունց ընդ միմեանս թևակից էին խառնեալ. և զերեսս իւրեանց ՚ի գնալն յետս ընդդէմ ո՛չ դարձուցանէին. իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային*:¹⁰ Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ՝ և կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց. և կերպարանք եզին, և կերպարանք արծուոյ ՚ի ձախմէ չորեցունց.¹¹ այս կերպարանք նոցա: Եւ թևք նոցա տարածեալ ՚ի վերուստ չորեցունց. իւրաքանչիւր երկու երկու խառնեալ ընդ միմեանս, և երկու երկու ծածկէին ՚ի վերուստ զմարմինս իւրեանց*:¹² Եւ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց գնային. յոր կողմն դիմէր հողմնն՝ գնային, և յետս ընդդէմ ո՛չ դառնային ՚ի գնացս իւրեանց*:¹³ Եւ ՚ի մէջ գազանացն տեսիլ իբրև զկայծականց հրոյ բորբոքելոյ. և իբրև գտեսիլ ղ՛ամբարաց խառնելոց ՚ի մէջ գազանացն, և լոյս հրոյ. և ՚ի հրոյ անտի փայլատակունք հատանէին*.¹⁴ և գազանքն երագս ընթանային, և թթևս դառնային ՚ի նմանութիւն արեգական: ¹⁵ Եւ տեսանէի և ահաւասիկ անիւ մի յերկրի զհետ գազանացն չորեցունց. և կերպարանք անուոցն և արա՛ր նոցա՝ իբրև գտեսիլ ականց Թարշշի*.¹⁶ և կերպարանք չորեցունց՝ և տեսիլ նոցա, և գործուած իւրեանց, որպէս թէ շրջիցի անիւ ՚ի մէջ անուոյ*:¹⁷ Ի չորեսին կողմանս իւրեանց գնային, և յետս ընդդէմ ո՛չ դառնային ՚ի թիկունս իւրեանց.¹⁸ և բարձունք էին. Յայէի ընդ նոսա՝ և տեսանէի զի լի էին աչօք թիկունք նոցա շուրջ զչորեքումբք*.¹⁹ և ՚ի գալ գազանացն, գնային և անիւքն ընդ նոսա, և ՚ի վերանալ գազանացն յերկրէ՝ վերանային և անիւքն*:

* *Բազունք.* Եւ ես էի ՚ի մէջ գե՛...տեսիլ Աստուծոյ:

* *Բազունք.* Յովակիմայ ար՛: *Ուր օրհնակ մի.* Գերութեանն Յեքոնիայ արքայի:

* *Ոմանք.* Եղև ձեռն Տեառն ՚ի վերայ իմ:

* *Բազունք.* ՚ի կողման նմա: *Ուր օրհնակ մի.* Եւ ամպ մեծ ՚ի նմա:

* *Ի լոյս՝.* Կերպարանք չորից գազանաց. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՛:*

* *Այլք.* Ընդ միմեանս թևակցէին: *Ուր և ՚ի բազունս պակասի.* խառնեալ:

* *Ոմանք.* Եւ այս կերպարանք նոցա թևք նոցա տա՛:

* *Բազունք.* Ոչ դառնային ՚ի գնալն իւր՛:

* *Բազունք.* Ղամբարաց խռնելոց:

* *Ոմանք.* Ական Թարշշի:

* *Ոմանք.* Եւ գործած իւրեանց:

* *Բազունք.* Եւ բարձունք էին՝ և հայէին ընդ նոսա:

* *Բազունք.* Եւ ՚ի գնալն գազանացն:

²⁰Ընդ որ կողմ դիմէր ամպն և հողմն, երթային գազանքն՝ և անիւքն ընդ նոսին վերանային. զի ոգի կենդանի՝ գոյր յանիւսն*։ ²¹Ի գնալն նոցա գնային, և ՚ի կալն նոցա՝ զտեղի առնուին, և ՚ի վերանալ նոցա յերկրէ, և անիւքն ընդ նոսին վերանային. զի ոգի կենդանի՝ գոյր յանիւսն*։ ²²Եւ նմանութիւն հաստատութեան ՚ի վերայ գլխոյ գազանացն իբրև զտեսիլ ական վանի՝ տարածեալ ՚ի վերայ թևոց նոցա ՚ի վերուստ։ ²³Եւ ՚ի ներքոյ հաստատութեանն թևք իւրեանց տարածեալ սաւառնէին ընդ միմեանս. և իւրաքանչիւր երկու երկու ծածկէին զմարմինս իւրեանց։ ²⁴Եւ լսէի զձայն թևոց նոցա ՚ի սաւառնելն իբրև զձայն ջուրոց բազմաց, և իբրև զձայն Աստուծոյ Սաղայի. և ՚ի գնալն իւրեանց ձայն պատգամաց իբրև զձայն բանակի. և ՚ի կալն իւրեանց յանկչէին թևք իւրեանց*։ ²⁵Եւ ահա բարբառ ՚ի վերուստ քան զհաստատութիւնն որ էր ՚ի վերայ գլխոց նոցա ՚ի կալն իւրեանց, և յամբառնալն զթևս իւրեանց*։ ²⁶Եւ ՚ի վերոյ քան զհաստատութիւնն որ ՚ի վերայ գլխոց նոցա իբրև զտեսիլ ական շափիղձայ. և նմանութիւն աթոռոյ ՚ի վերայ նորա. և ՚ի վերայ աթոռոյն՝ նմանութիւն կերպարանաց մարդոյ։ ²⁷Եւ տեսանէի իբրև զտեսիլ ական բազմագունի, և իբրև զտեսիլ հրոյ ՚ի ներքոյ քան զնա շուրջանակի. միջովք չափ ՚ի վեր՝ նմանութիւն արեգական, և միջովք չափ ՚ի խոնարհ՝ նմանութիւն հրոյ. և լոյսն որ շուրջ զնովաւ բա՛կ ունէր*, ²⁸իբրև տեսիլ աղեղանդ որ ձգի յամպս յաւուրս անձրևաց. և այսպէս ահագին տեսիլ լուսոյ շուրջ զնովաւ։

2

Գլուխ Բ

¹Եւ այս տեսիլ նմանութիւն փառացն Տեառն։ Իբրև տեսի՝ անկա՛յ ՚ի վերայ երեսաց իմոց, և լուայ բարբառ որ խօսէր ընդ իս՝ և ասէր. Որդի՛ մարդոյ կա՛ց ՚ի վերայ ոտից քոց և խօսեցայ՛ց ընդ քեզ*։ ²Եւ եկն ՚ի վերայ Յոգի, վերացոյց և կանգնեաց կացոյ՛ց ՚ի վերայ ոտից իմոց. և լսէի զի խօսէր նա ընդ իս*, ³և ասէր. Որդի՛ մարդոյ՝ ես առաքեցից զքեզ առ դառնացուցիչ տունդ Իսրայէլի. որք դառնացուցին զիս, ինքեանք և հա՛րք իւրեանց, անարգեցին զիս մինչև ցա՛յսօր։ ⁴Որդիք եղջերիկք և խստասիրտք են առ որս առաքեմն զքեզ, և ասացես ցնոսա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր*։ ⁵Եթէ իցէ լուիցե՞ն կամ սարսեցե՞ն, զի տուն դառնացողա՛ց են. և կամ բնաւ ծանիցեն թէ մարգարէ՛ ես դու ՚ի մէջ նոցա։ ⁶Եւ դո՛ւ որդի մարդոյ՝ մի՛ երկնչիցիս ՚ի նոցանէ, և մի՛ զանգիտիցես յերեսաց նոցա. զի զայրանալով զայրասցին և յարիցեն ՚ի վերայ քո. զի ՚ի մէջ կարճաց բնակեալ ես դու՝ մի՛ երկնչիցիս ՚ի բանից նոցա, և յերեսաց նոցա մի՛ զանգիտիցես, զի տուն դառնացողա՛ց են*։ ⁷Եւ խօսեցիս ընդ նոսա զբանս

* *Ի լուս՝* Ընթանային գազանքն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*։

* *Ոմանք*. Եւ ՚ի գնալ նոցա գնային։

* *Ոմանք*. Իբրև զձայնն Սաղայի. ՚ի գնալն.. հանգչէին թևք իւր՝։

* *Ոմանք*. Ի վերայ գլխոյ նոցա ՚ի կալ իւր՝։

* *Ոմանք*. Ի ներքս քան զնա... միջով չափ... և միջով չափ... որ զնովաւ շուրջ փակ։

* *Ոմանք*. Տեսիլ նմանութեան փառացն Աստուծոյ։

* *Ոմանք յաւելուն*. Ի վերայ իմ Յոգի, վերացոյց զիս և կանգնեալ կացոյց։

* *Ոմանք*. Եղջիւրիկք են և խստա՛։

* *Ոմանք*. Եւ մի՛ զանգիտեցես։

զայսոսիկ. եթէ իցէ լուիցե՞ն կամ սարսեցե՞ն, զի տուն դառնացողաց են*։ ⁸Եւ դո՛ւ որդի մարդոյ՝ լո՛ւր բանից զոր խօսիմ ընդ քեզ. մի՛ լինիր դառնացող իբրև զտուն դառնացողաց. բաց զբերան քո և կե՛ր զոր ջամբեցից քեզ։ ⁹Տեսի՛ և ահա ձեռն ձգեալ առ իս, և ՚ի նմա մատեան մի գրոյ, և պարզեաց առաջի իմ. և էր գրեալ ՚ի նմա ներքոյ և արտաքոյ՝ ո՛ղբս, և ձա՛յնս և վա՛յս*։

3

Գլուխ Գ

¹Եւ ասէ ցիս. Որդի՛ մարդոյ՝ զոր ինչ գտանես ՚ի դմա՝ կե՛ր. կե՛ր մանր զմատեանդ զայդ. և գնա՛ և խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի*։ ²Եբաց զբերան իմ, և ջամբեաց զմատեանն. ³և ասէ ցիս. Որդի՛ մարդոյ՝ բերան քո կերիցէ, և որովայն քո լցցի ՚ի մատենէ այտի որ տուաւ քեզ։ Կերայ՝ զայն, և եղև ՚ի բերան իմ իբրև զքաղցրութիւն մեղու*։ ⁴Եւ ասէ ցիս. Որդի՛ մարդոյ՝ գնա՛ դու և մո՛ւտ ՚ի տունն Իսրայէլի, և խօսեսցի՛ս ընդ նոսա զպատգամս իմ*։ ⁵Ձի ո՛չ եթէ առ ժողովուրդ խորախօս ծանրալեզու առաքեսցիս առ տունն Իսրայէլի. ⁶և ո՛չ առ ժողովուրդս բազումս այլազգիս կամ այլալեզուս. և ո՛չ առ թանձրալեզուս, զորոց ո՛չ լսիցես զբանս նոցա. զի թէ առ այնպիսիսն առաքէի զքեզ. սակայն և նոքա՛ լսէին քեզ*։ ⁷Այլ տունն Իսրայէլի ո՛չ հաւանին լսել քեզ, քանզի ո՛չ կամին լսել ինձ. զի ամենայն տունն Իսրայէլի հակառակօք և խստասիրտք են։ ⁸Եւ ահաւասիկ արարի զդէմս քո հաստատուն առաջի երեսաց նոցա. և զյաղթութիւն քո զօրացուցից առաջի հակառակութեան նոցա*։ ⁹և եղիցի յամենայն ժամ հաստատուն իբրև զվէմ յաղթութիւն քո։ Մի՛ երկնչիր ՚ի նոցանէ, և մի՛ զանգիտիցես յերեսաց նոցա. զի տո՛ւն դառնացողաց են։ ¹⁰Եւ ասէ ցիս Տէր. Որդի՛ մարդոյ՝ զամենայն զբանս զոր խօսեսցայ ընդ քեզ, լո՛ւր ակրնջովք քովք, և դի՛ր ՚ի սրտի քում. ¹¹և ե՛րթ մո՛ւտ ՚ի մէջ գերութեանն առ որդիս ժողովրդեանն քո. խօսեսցի՛ս ընդ նոսա՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր Տէր՝ եթէ իցէ լուիցե՞ն և անսայցե՞ն*։ ¹²Եւ վերացոյց զիս Ոգի. և լուայ զկնի իմ ձայն շարժման մեծի՛ որ ասէին. Օրհնեալ են փառք Տեառն ՚ի տեղւոջէ իւրմէ*։ ¹³և տեսի ձայն թևոց զազանացն սաւառնելոց ընդ միմեանս, և ձայն անուոցն զհետ նոցա, և ձայն շարժման*։ ¹⁴Եւ Յոգի Տեառն վերացոյց զիս և բարձրացոյց, և երթայի՛ համբարձեալ ՚ի դիմել հոգւոյն իմոյ։ Եւ ձեռն Տեառն եղև ՚ի վերայ իմ զօրութեամբ*։ ¹⁵և մտի վերամբարձ ՚ի մէջ գերութեանն, և շրջեցայ առ բնակչօքն Քոբար գետոյ որ էին անդ. և նստայ աւուրս եւթն դարձեալ ՚ի մէջ նոցա*։ ¹⁶Եւ

* Օրհնակ մի յաւելու. Եւ դու որդի մարդոյ խօսեսցիս ընդ։

* Բազումք. Եւ պարզեաց զնա առաջի իմ։

* Ոմանք. Ձոր ինչ գտանիցես ՚ի դմա։

* Ոմանք. Եւ եղև ՚ի բերանի իմում։

* Այլք. Եւ խօսեսցիս առ նոսա զպատ՛։

* Բազումք. Ձորոց ոչ լուիցես զբա՛... թէ և առ այնպիսիս առաքէի։

* Ոմանք. Եւ ահաւասիկ արարի։ Ոսկան. Ձօրացուցի առաջի։

* Ոմանք. Լուիցեն և անսասցեն։ Ուր Ոսկան. և ասասցեն։

* Ոմանք. Եւ վերացոյց զիս Յոգի։

* Ի լուս՛. Եւ տեսի զձայն... և զձայն անուոց. համաձայն ոմանց ՚ի բնաբ՛։

* Յօրհնակին. Յոգւոյն իմոյն։

* Ոմանք. Եւ նստայ անդ աւուրս եւթն դարձեալ ՚ի մէջ նոցա։

եղև յետ եւթն աւուրն, եղև բան Տեառն առ իս` և ասէ. ¹⁷Որդի՛ մարդոյ, դէ՛տ կացուցի զքեզ տանն Իսրայէլի. լուիցես յինէն զպատգամս` և սպառնասցես նոցա իբրև յինէն*։ ¹⁸Յորժամ ասիցեն ցանօրէնն, թէ մահո՛ւ մեռանիցիս. և դու ո՛չ զգուշացուցանիցես նմա, և ո՛չ խօսեսցիս զգուշանալ անօրինին, և դառնալ ՚ի չա՛ր ճանապարհաց իւրոց և կեալ. անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից*։ ¹⁹Իսկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, և նա ո՛չ դարձցի յանօրէնութենէ իւրմէ՝ և ՚ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն` յանօրէնութեան իւրում մեռցի. և դու զանձն քո ապրեցուցես։ ²⁰Եւ յորժամ դարձցի՛ արդարն յարդարութեանց իւրոց` և արասցէ յանցանս, արկից տանջանս զգլխով նորա. ինքն մեռցի. քանզի ո՛չ եթէ յիշեսցին արդարութիւնք նորա զոր արար. բայց քանզի դու ո՛չ զգուշացուցեր նմա՝ զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից*։ ²¹Ապա եթէ դու զգուշացուցանիցես զարդարն զի մի՛ մեղիցէ, արդարն կելով կեցցէ. զի դու զգուշացուցեր նմա. և դու զանձն քո ապրեցուցես*։

Բ ²²Եւ եղև ՚ի վերայ իմ անդ ձեռն Տեառն, և ասէ ցիս. Արի՛ և ե՛լ դու ՚ի դաշտ անդր, և անդ խօսեսցայց ընդ քեզ*։ ²³Յարեայ և ելի ՚ի դաշտ անդր. և ահա իջեալ կային անդ փառքն Տեառն, իբրև զտեսիլն և զփառսն` զոր տեսի առ ասին Քոբար զետոյ. և անկայ ՚ի վերայ երեսաց իմոց։ ²⁴Եւ եկն ՚ի վերայ իմ Յոզի, և կացոյց ՚ի վերայ ոտից իմոց. և խօսեցան ընդ իս` և ասէ. Մո՛ւտ և արգելի՛ր ՚ի մէջ տան քոյ*։ ²⁵Եւ դու որդի մարդոյ, ահաւաղիկ տուեալ են ՚ի վերայ քո կապանք, և կապեսցեն զքեզ նոքօք. և ո՛չ ելցես ՚ի միջոյ նոցա*։ ²⁶Եւ զլեզու քո կապեցից ՚ի քի՛նս քո, և եղիջիր դու հա՛մր. և ո՛չ եղիցիս դու նոցա իբրև զայր մի յանդիմանիչ, զի տուն դառնացողաց են։ ²⁷Եւ յորժամ խօսիցիմ ընդ քեզ` բա՛ց զբերան քո, և ասասցես ցնոսա. Այսպէս ասէ Ադոնայի Տէր Տէր. Որ լսելոցն է՝ լուիցէ, և որ արհամարհելոցն՝ արհամարհեսցէ. քանզի տուն դառնացողաց են*։

4

Գլուխ Դ

¹Եւ դո՛ւ որդի մարդոյ, ա՛ռ դու քեզ աղիւս մի, և դիցես զնա առաջի երեսաց քոց. և նկարեսցես ՚ի նմա զքաղաքն Երուսաղէմի*։ ²և տացես շուրջ զնովաւ պաշարումն. և շինեսցես շուրջ զնովաւ մարտկոցս. և պատեսցես շուրջ զնովաւ պատնէշ. և տացես շուրջ զնովաւ բանակս, և ածցես շուրջ զնովաւ նետակալս։ ³Եւ առցես դու քեզ տապալկ երկաթի, և կանգնեսցես զնա իբրև զպարիսպ երկաթի ընդ քեզ և ընդ քաղաքն. և պատրաստեսցես զերեսս քո ՚ի վերայ նորա,

* *Ի լուս*. Ջքեզ տանդ Իսրայէլի. *համաձայն այլոց ՚ի բնաբ*։

* *Բազումք*. Ի ճանապարհաց իւրոց չարաց և կեալ, անօրէնն յանօրէ՛ն։

* *Ոմանք*. Ոչ զգուշացուցեր զնա։

* *Բազումք*. Ապա թէ զգուշացուցես զարդարն։

* *Օրհնակ մի աստէն կարգէ վերնագիր*. Տեսիլ երկրորդ։ *Ոմանք*. Արի՛ ել դու... և անդ խօսեսցի ընդ քեզ։

* *Ոմանք*. Ի վերայ իմ Ոգի, և կացոյց զիս ՚ի վերայ ոտից։

* *Յօրինակին պակասէր*. Ի վերայ քո կապանք։

* *Բազումք*. Բացից զբերան քո... որ լսելոցն իցէ լուիցէ... արհամարհելոցն իցէ արհա՛ն։

* *Օրհնակ մի*. Առ քեզ ինքեան աղիւս մի։ *Բազումք*. Եւ նկարեսցես ՚ի նա զքաղաքն Երուսաղէմ։

և եղիցի ՚ի պաշարումն, և պաշարեսցես զնա. զի այն նշանակ է որդւոցն Իսրայէլի*։ ⁴Եւ դու ննջեսցես ՚ի ձախակողմն քո, և դիցես զանհրաւութիւնս տանն Իսրայէլի ՚ի վերայ դորա. ըստ թուոյ աւուրց զոր ննջեսցես ՚ի վերայ դորա հարեւր և յիսուն օր. և առցես զանհրաւութիւնս նոցա։ ⁵Եւ ես ետու քեզ զերկուս անհրաւութիւնս նոցա ՚ի թիւ աւուրց՝ հարեւր և իննսուն օր. և առցես զանհրաւութիւնս տանն Իսրայէլի, ⁶և բովանդակեսցես ՚ի միասին զամենայն։ Եւ դարձեալ ննջեսցես յաջակողմն քո, և առցես զանհրաւութիւն տանն Յուդայ զքառասուն օր. զի օր ընդ տարւոյ եդի՝ քեզ*։ ⁷Եւ ՚ի պաշարումն Երուսաղէմի պատրաստեսցես զերեսս քո, և զօրացուցես զբազուկս քո, և մարգարէացիս ՚ի վերայ նորա*։ ⁸Եւ ես ահա ետու ՚ի վերայ քո կապանս, և մի՛ փոխեսցես կողմն ՚ի կողմանէ մինչև կատարեսցին աւուրք արգելանին քոյ*։ ⁹Եւ դու՛ ա՛ռ քեզ ցորեան, և զարի, ոսպն, և ոլոռն, և կորեակ, և հաճար, և արկցես զայն յաման մի խեցեղէն, և արասցես դու զայն քեզ հաց. և ըստ թուոյ աւուրցն զոր ննջեսցես դու ՚ի կողմն քո, հարեւր և իննսուն օր կերիցես զայն*։ ¹⁰Եւ զկերակուրն քո կերիջիր կշռով. քսան սիկղ յաւուր, ժամէ՛ ՚ի ժամ կերիջիր անտի*։ ¹¹և ջուր չափով արբջիր. զվեցերորդ մասն դորակի միոյ՝ ժամէ՛ ՚ի ժամ արբջիր*։ ¹²Եւ նկան գարեղէն արկեալ կերիցես անտի. յա՛ղբ մարդոյ եփեսջիր զայն առաջի երեսաց նոցա*։ ¹³Եւ ասացես. Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. Այսպէս կերիցեն որդիքն Իսրայէլի զհաց իւրեանց պղծութեամբ ՚ի մէջ ազգաց ուր ցրուեցից զնոսա անդր*։ ¹⁴Եւ ասեն. Քա՛ւ լիցի Տէր Աստուած Իսրայէլի, եթէ պղծեալ իցէ երբէք անձն իմ ՚ի պղծութիւնս. և մեռելոտի՝ և ՚ի զազանաբեկ ո՛չ երբէք կերայ ՚ի ծննդենէ իմմէ մինչև ցայժմ. և ո՛չ եմուտ ՚ի բերան իմ ամենայն միս պիղծ*։ ¹⁵Եւ ասէ ցիս. Ահա ետու քեզ քակոր արջառոյ փոխանակ աղբոյն մարդոյ, և նովա՛ւ արասցես զհաց քո*։ ¹⁶Եւ ասէ ցիս Տէր. Որդի՛ մարդոյ, ահաւանիկ ես բեկանեն զհաստատութիւն հացի յերուսաղէմ. և կերիցեն հաց կշռով՝ և կարօտանաց, և ջուր չափով՝ և կարօտութեամբ արբցեն*։ ¹⁷զի եղիցին կարօտեալք ՚ի հացէ և ՚ի ջրոյ. և ապականեսցի մարդ և եղբայր իւր, և հաշեսցին յանհրաւութիւնս իւրեանց։

5

* Ի լուս՝. Եւ պաշարեսցեն զդա. *համաձայն բազմաց ՚ի բնար՝: Ոմանք. Զի այդ նշանակ է:*

* Ի լուս՝. Եւ դիցես զանհրաւութիւն տանն. *համաձայն բազմաց ՚ի բնար՝:*

* *Յօրինակին պակասէր. Պատրաստեսցես զերեսս քո և զօրացուցես զբազուկս քո:*

* *Ոմանք. Մի՛ փոխիցիս:*

* *Օրինակ մի. Աւուրցն քոց զոր:*

* *Այլք. Կերիցես կշռով:*

* *Յօրինակին ՚ի կարգի բնաբանի՝ և ջուր՝ չափով. չակերտիւք գրեալ ՚ի լուս՝. նշանակի՝ քո: Ոմանք. Եւ զվեցերորդ մասն:*

* *Ոմանք. Ի յաղբ մարդոյ: Ուր Ոսկան. յաղբս մար՝:*

* *Բազումք. Այդպէս կերիցեն որ՝:*

* *Ոմանք. Եւ մեռելոտի և զազանաբեկ... ՚ի բերան իմ միս պիղծ:*

* *Ոմանք. Փոխանակ աղբին մարդոյ:*

* *Ոմանք. Ահաւասիկ ես բեկա՞: Ուր Ոսկան. Ահաւաղիկ ես բեկա՞... հացի յերուսաղէմն: Ոմանք. Զափով և ապականութեամբ. կամ՝ և պակասութեամբ արբցեն:*

Գլուխ Ե

¹Եւ դու որդի մարդոյ՝ ա՛ն քեզ սուսեր յեսանաւոր սո՛ւր քան զսուսեր վարսավիրայից. ստանայցես զայն քեզ, և ածիցես զայն զգլխով քով՝ և զմօրուօք. և առցես կշիռս՝ և կշռեսցես զնոսա՛: ²Ջորրորդ մասնն հրով այրեսցես՝ ի մէջ քաղաքին, ըստ լրութեան աւուրցն արգելանին. և զչորրորդ մասնն կոտորեսցես սրով շուրջ զնովաւ. և զչորրորդ մասն հոսեսցես հողմոյ, և սուր արծակեցից զկնի նորա՛: ³Եւ առցես անտի սակա՛ւ ինչ թուով, և ծրարեսցես ՚ի մեկնոցի քում: ⁴Եւ դարձեալ առցես անտի, և ընկեսցես ՚ի մէջ հրոյ, և այրեսցես զնոսա՛ ՚ի հուր, և անտի ելցէ հուր՝. ⁵և ասասցես ամենայն տանն Իսրայէլի. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Այս ա՛յն Երուսաղէմ է զոր եդի ՚ի մէջ հեթանոսաց զդա, և որ շուրջ զդովաւ գաւառք: ⁶Ձի փոխեցին զիրաւունս իմ ընդ անիրաւութեանն հեթանոսաց. և զօրէնս իմ ընդ օրէնս աշխարհացն, որ շուրջ էին զնովաւ. զի զիրաւունս իմ մերժեցին, և յօրէնս իմ ո՛չ գնացին՝: ⁷Վասն այսորիկ ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի պատճառք ձեր յազգացդ են որ շո՛ւրջ են զձեւք. և յօրէնս իմ ո՛չ գնացէք, և զիրաւունս իմ ո՛չ արարէք. այլ և ո՛չ ըստ իրաւանցն հեթանոսաց՝ որ շո՛ւրջ են զձեւք արարէք՝: ⁸Վասն այսորիկ ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Ահաւասիկ ես ՚ի վերայ քո, և արարից ՚ի միջի քում դատաստան առաջի ազգացդ՝: ⁹Եւ արարից ընդ քեզ՝ զոր ո՛չ երբէք արարի. և ո՛չ ա՛յլ ևս նմին նման արարից ըստ ամենայն պղծութեանցն քոց: ¹⁰Վասն այնորիկ հարք կերիցեն զորդիս ՚ի միջի քում, և որդիք կերիցեն զհարս. և արարից ՚ի քեզ դատաստանս, և ցրուեցից զամենայն մնացորդս քո ընդ ամենայն հողմս՝: ¹¹Վասն այդորիկ կենդանի՛ են ես՝ ասէ Ադովնայի Տէր. փոխանակ զի զսրբութիւնս իմ պղծեցեր ամենայն գարշելեօքն քովք, և ամենայն պղծալից պաշտամամբքն քովք. և ես մերժեցի՛ց զքեզ, և ո՛չ խնայեսցէ ՚ի քեզ ակն իմ. և ո՛չ ողորմեցայց քեզ՝: ¹²Չորիք մասն քո մահո՛ւ սպառեսցի. և չորիք մասն քո սովով վախճանեսցի ՚ի միջի քում. և զչորիք մասն քո ընդ ամենայն հողմս ցրուեցից. և չորրորդ մասն քո շուրջ զքե՛ս ՚ի սո՛ւր անկցի, և սո՛ւր արծակեցից զկնի նոցա՛: ¹³Եւ կատարեսցի սրտմտութիւն բարկութեան իմոյ ՚ի վերայ նոցա, և մխիթարեցայց. և ծանիցեն զի ե՛ս Տէր խօսեցայ նախանձո՛ւ իմով՝ ՚ի կատարել ինձ զբարկութիւն իմ ՚ի վերայ նոցա՛: ¹⁴Եւ եդից զքեզ յանապա՛տ և ՚ի նախատիւնս հեթանոսաց որ շուրջ զքե՛ս իցեն. և զդստերս քո

* *Բազումք.* Ա՛ն դու քեզ սուսեր յեսանասուր, սուր քան զսրբիչ վար՝... և ածիցես զգլխով... և առցես քեզ կշիռս: *Ուր Ոսկան.* քան զսրբիչ վարսավիրաց ... քեզ ՚ի կշիռս:

* *Ոսկան.* Հոսեսցես հողմով: *Ոմանք.* Արծակեցից զկնի նոցա:

* *Օրինակ մի յաւելու.* Եւ անտի ելցէ հուր յամենայն տունն Իսրայէլի:

* *Ոմանք.* Ձի փոփոխեցին զիրաւունս:

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս ա՛... զի պատճառք ձեզ ՚ի յազգացդ... ոչ ըստ օրինաց հեթանոսաց որ շուրջ զձեւք են ա՛: *՚ի լուս՝.* Փոխանակ զի կերպարանք ձեր յազգացդ. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝:*

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս ա՛... ՚ի միջի քո դատաստանս:

* *Ոմանք.* Վասն այսորիկ հարք:

* *Ոմանք.* Պղծալից ցանկութեամբքն քո... և ոչ խնայիցէ ՚ի քեզ:

* *Յօրինակին ՚ի բնաբանի գրի.* սրով վախճանեսցի, *այլ ՚ի լուս՝.* ուղղագրի՝ սովով.

համաձայն այլոց, ըստ որում և մեք եղաք: Ոմանք. Եւ չորիք մասն քո շուրջ:

* *Ոմանք.* Եւ ծանիցես թէ ես եմ Տէր, խօսեցայ նա՛:

շուրջ զքև առաջի ամենայն անցաւորաց ճանապարհի*։ ¹⁵Եւ եղիցես հեծեծելի՛ և եղկելի, ծաղր և երևոյթ՝ ի մէջ ազգացն որ շուրջ զքև՝ իցեն. յառնել՝ ինձ ՚ի քեզ դատաստանս բարկութեամբ, և սրտմտութեամբ և վրեժխնդրութեամբ ցասման։ ¹⁶Ես Տէր խօսեցայ, ՚ի յարձակել ինձ զչարաչար զնետս իմ սովոյ ՚ի վերայ նոցա, և եղիցին ՚ի սատակումն. արձակեցից զայս ՚ի վերայ նոցա. և սով գումարեցից ՚ի վերայ ձեր. և խորտակեցից զհաստատութիւն հացի քոյ։ ¹⁷Եւ առաքեցից ՚ի վերայ քո սով՝ և գազանս չա՛րս, և պատժեցից զքեզ. և մահ և արիւն անցցեն ՚ի քեզ, և ածից շուրջ զքև սո՛ւր. զի ես Տէր խօսեցայ*։

6

Գլուխ Զ

Գ ¹Եւ եղև բա՛ն Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի՛ մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո ՚ի վերայ լերանցո՞ւ Իսրայէլի. մարգարեա՛ց ՚ի վերայ դոցա, ³և ասասցես. Լերի՛նք Իսրայէլի՛ լուարո՛ւք զպատգամս Ադովնայի Տեառն. Այսպէս ասէ Ադովնայի Տէր ցլերինս և ցբլուրս՝ և ցճորս և ցոպշտս. Ահաւաղիկ ես ածեմ՝ ՚ի վերայ ձեր սուր, և ապականեսցին բարձունք ձեր. ⁴և կործանեսցին սեղանք ձեր. և խորտակեսցին մեհեանք ձեր. և տապա՛ստ արկից զվիրաւորս ձեր առաջի կռոց ձերոց։ ⁵Եւ դի՛ թաւա՛լ կացուցից վիրաւորս զորդիսո՞ւ Իսրայէլի առաջի պատկերաց ձերոց. և ցրուեցից զոսկերս ձեր շուրջ զսեղանօք ձերովք* ⁶յամենայն բնակութեան ձերում. քաղաքք աւերեսցին, և բարձունք ապականեսցին. զի ջնջեսցին և պականեսցին սեղանք ձեր, և խորտակեսցին՝ և դադարեսցեն կուռք ձեր. և բարձցին մեհեանք ձեր. և ջնջեսցին գործք ձեռաց ձերոց*։ ⁷և անկցին վիրաւորք ՚ի միջի ձերում. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր։ ⁸Եւ թողից ՚ի ձէնջ ապրեալս ՚ի սրոյ ՚ի մէջ ազգաց, և ՚ի վարատման ձերում ՚ի մէջ աշխարհաց. ⁹և յիշեսցեն զիս ապրեալքն ձեր ՚ի մէջ ազգաց ուր գերեցան՝ ՚ի նոսա. զի երդուայ ես սրտի նոցա շնացելոյ և ապստամբելոյ յինէն, և աչաց նոցա պոռնկացելոց զհետ գնացիցն իւրեանց. և կոծեսցին յերեսս իւրեանց, վասն չարեացն զոր արարին յամենայն գարշելիսն իւրեանց և յամենայն ՚ի գնացս իւրեանց*։ ¹⁰Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր, և ո՛չ ՚ի զուր ինչ խօսեցայ առնել ընդ նոսա զայս ամենայն չարիս։ ¹¹Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ծա՛փս հար ձեռամբ, և դոփեա՛ ոտամբ, և ասասցես. Վա՛շ վա՛շ ՚ի վերայ գարշելեացն և չարեաց տանն Իսրայէլի. զի սրով և մահուամբ և սովով անկցին։ ¹²Յեռաւորն՝ մահո՛ւ վախճանեսցի, և մերձաւորն՝ սրո՛վ անկցի, և մնացեալն և պաշարեալն սովով սատակեսցին. և կատարեցից զբարկութիւն իմ ՚ի վերայ նոցա*։ ¹³Եւ ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր, յորժամ անկցին վիրաւորքն ձեր ՚ի մէջ կռոցն ձերոց, շուրջ զսեղանովքն ձերովք. ՚ի վերայ ամենայն բլրոցն բարձանց, և յամենայն

* *Ոմանք.* Եւ եղից զքեզ անապատ։

* *Ոմանք.* ՚ի վերայ քո սուր և գազանս... և ածից զքև շուրջ։

* *Ոմանք.* Ձվիրաւոր զորդ... զոսկերս նոցա շուրջ զսեղանովք իւրեանց։ *՚ի լուս՝.* Որդւոցո՞ւ Իսրայէլի առաջի պատկերաց իւրեանց. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝.*

* *Ոմանք.* Յամենայն բնակութեան նոցա։

* *Ոսկան.* ՚ի մէջ ազգաց որք գերեցանն... և ապստամբեցելոյ... և կործեսցին յերեսս։

Ոմանք. Եւ յամենայն գնացս իւրեանց։

* *Ոմանք.* Եւ հաստատեցից զբարկութիւն իմ։

գլուխս լերանց, և ՚ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց, և ՚ի ներքոյ ամուր կաղնեաց՝ ուր արկանէին խունկս ամենայն կռոցն իւրեանց՝: ¹⁴Եւ ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ նոցա, և եղից զերկիրն յապականութիւն և ՚ի սատակումն. յանապատէն Դեբղաթայ յամենայն բնակութեան նոցա. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր:

7

Գլուխ Է

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Եւ դու որդի մարդոյ ասացես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Երկրիդ Իսրայէլացւոց վախճան հասեալ է. հասեալ է վախճան ՚ի վերայ չորեցունց կողմանց երկրիդ՝: ³Ահաւասիկ հասեալ է ՚ի վերայ քո վախճան: Եւ առաքեցից ՚ի վերայ քո, և խնդրեցից ՚ի քէն վրէժս ըստ ճանապարհաց քոց. և հատուցից քեզ ըստ ամենայն գարշելեացն քոց՝: ⁴Եւ ո՛չ խնայեսցէ ակն իմ ՚ի քեզ և ո՛չ ողորմեցայց. զի ըստ գնացից քոց հատուցից քեզ, և գարշելիքն քո ՚ի միջի քում եղիցին. և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր՝: ⁵Քանզի այսպէս ասէ Տէր Տէր. Չարիք մի ահաւասիկ՝ չարիք մի հասեալ են. ⁶Եհաս վախճան. զարթեաւ ՚ի վերայ քո: ⁷Ահաւաղիկ հասեալ է զըմբա՛ղ ՚ի վերայ քո, որ բնակեալդ էք յերկրիդ. հասեալ է ժամանակ, մերձեցաւ օր՝ և ո՛չ աղմկաւ և ո՛չ երկամբք՝: ⁸Այլ այժմ ՚ի մօտո՛յ հեղից զբարկութիւն իմ ՚ի վերայ քո, և կատարեցից ՚ի քեզ զսրտմտութիւն իմ. և դատեցայց զքեզ ըստ ճանապարհաց քոց, և տաց ՚ի վերայ քո զամենայն պղծութիւնս պաշտամանց քոց՝: ⁹Եւ մի՛ խնայեսցէ ակն իմ ՚ի քեզ, և ո՛չ ևս ողորմեցայց. զի ըստ ճանապարհաց քոց հատուցից քեզ, և գարշելիքդ քո ՚ի միջի քում եղիցին. և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր որ հարկանեն զքեզ: ¹⁰Ահաւասիկ օր Տեառն, ահա հասեալ է վախճան. ե՛կն զըմբաղն, ծաղկեցաւ գաւազանն. յարեա՛ւ ամբարտաւանութիւնն. ¹¹և խորտակեսցեն զհաստատութիւն անօրինին. ո՛չ աղմկաւ և ո՛չ փութով. ո՛չ են ՚ի միտս իւրեանց գեղեցկութիւն ՚ի նոսա՛: ¹²Հասեալ է ժամանակ. ահա եկն օր. ստացօղն՝ մի՛ խնդասցէ, և որ վաճառէն՝ մի՛ ողբասցի. զի բարկութիւն ՚ի վերայ ամենայն անիրաւութեան մարդկան, և ՚ի վերայ ամենայն բազմութեան նոցա՝: ¹³Ձի որ ստանայն, ՚ի վաճառական անդր այլ մի՛ դարձցի, և ո՛չ ևս է՛ կեալ՝ ՚ի կենդանութեան նոցա. զի տեսիլս ՚ի վերայ ամենայն բազմութեան նոցա ո՛չ դարձցի. և մարդ յաչս կենաց իւրոց՝ մի՛ հաստատեսցի՝: ¹⁴Փո՛ղ հարէք և ընտրեցէ՛ք զամենայն. և ո՛չ ոք իցէ որ երթայցէ ՚ի պատերազմ, զի բարկութիւն ՚ի

* *Ոմանք.* Յորժամ անկանիցին: *Բազումք.* Եւ ՚ի ներքոյ ամենայն ամուր կաղն՝:

* *Յօրինակին.* Երկրիդ Իսրայէլացւոց վախճան հա՛:

* *Բազումք.* Ահաւաղիկ հասեալ է... ՚ի քէն վրէժս ըստ ճանա՛: *Օրինակ մի յաւելու.* ՚ի վերայ քո վախճան, որ բնակեալդ ես յերկրիդ: Եւ առաքեցից ես զսրտմտութիւն իմ ՚ի վերայ քո. և դատեցայց զքեզ ըստ ճանապարհաց քոց, և հա՛:

* *Ոմանք.* Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր:

* *Ոմանք.* Բնակեալդ ես յերկրիդ... օր՝ ոչ աղմկաւ:

* *Ոմանք.* Չբարկութիւն ՚ի վերայ քո:

* *Բազումք.* Ի միտս իւրեանց, և ոչ գեղեցկութիւն:

* *Բազումք.* Ահա հասեալ է ժա՛... զի բարկութիւն է յամենայն բազմութեան նորա:

* *Ոմանք.* Այլ մի՛ ևս դարձցի. ոչ ևս եկեալ ՚ի կեն՛... զի տեսիլն ՚ի վերայ ամենայն բազմութեանց նորա: *Օրինակ մի.* Յաչս կենաց իւրոց ոչ կալցի յոյս:

վերայ բազմութեան նորա*։ ¹⁵Պատերազմ սրոյ արտաքուստ, և սով և մահ ՚ի ներքուստ. և որ ՚ի բացի՝ իցեն, սրով վախճանեսցին, և որ ՚ի քաղաքի իցեն, սովով և մահուամբ վախճանեսցին*։ ¹⁶Եւ ապրեսցին որք ապրելոց իցեն ՚ի նոցանէ. և եղիցին ՚ի վերայ լերանց իբրև զաղաւնիս անձանձրոյթ մնչել։ Ջամենեսեան կոտորեցից՝ զիւրաքանչիւրոք յանիրաւութեան իւրում*։ ¹⁷Ամենայն ձեռք լքցին, և ամենայն երանք զարշասցին խոնաւութեամբ*։ ¹⁸Սփածոցին քուրձս, և ծածկեսցեն զնոսա ցնորք. յամենայն երեսս ամօթ, և յամենայն զլուխս կնդութիւն*։ ¹⁹Արծաթ նոցա անկեալ կայցէ ՚ի հրապարակս, և ոսկի նոցա արհամարհեսցի։ Արծաթ նոցա և ոսկի նոցա ո՛չ կարասցէ փրկել զնոսա յաւուր բարկութեան Տեառն. և անձինք նոցա մի՛ յագեսցին, և որովայնք նոցա մի՛ լցցին. զի տանջանք եղեն անիրաւութեանց նոցա*։ ²⁰Ձընտիր ընտիր զարդուցն եղին ՚ի հպարտութիւն. և պատկերս զարշելեաց պաշտամանցն իւրեանց արարին ՚ի նոցանէ. վասն այնորիկ տաց զայն նոցա ՚ի պղծութիւն, ²¹և մատնեցից ՚ի ձեռս օտարաց յափշտակել զնոսա. և ժանտագործաց երկրի յաւար, և պղծեսցեն զնոսա*։ ²²Եւ դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ՝ և զոր արարէք ձե՛զ ինքեանց պէսպէս զարդս, և պղծեսցեն զնոսա։ Եւ պղծեսցեն զայցելութիւնս իմ, և մտցեն ՚ի նոսա անխտիր. և պղծեսցեն զնոսա*, ²³և արասցեն խառնակութիւն. զի լցա՛ւ երկիր ՚ի դատաստանաց արեանց նոցա, և քաղաքք լի՛ եղեն անօրէնութեամբք։ ²⁴Եւ աճից զչարս ազգաց՝ և ժառանգեսցեն զտունս նոցա. և կործանեցից զամբարտաւանութիւն բռնութեանց նոցա. և պղծեսցին սրբութիւնք նոցա*։ ²⁵Եկեսցէ քաւութիւն, և խնդրեսցէ զխաղաղութիւն՝ և ո՛չ գտանիցէ։ ²⁶Վայ ՚ի վայի՛ վերայ եղիցի, և գոյժ ՚ի գուժի. խնդրեսցին տեսիլք ՚ի մարգարէից, և օրէնք դիւրիչք ՚ի քահանայէ, և խորհուրդք ՚ի ծերոց. և ո՛չ գտանիցին։ ²⁷Թագաւորն սգասցի, և իշխանն զգեցցի զապականութիւն, և ձեռք ժողովրդեան երկրին լքցին. ըստ ճանապարհաց նոցա արարի՛ց նոցա. և ըստ դատաստանաց նոցա առից վրէժ ՚ի նոցանէն. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր։

8

Գլուխ Ը

Դ ¹Եւ եղև յամին վեցերորդի յամսեանն հինգերորդի, որ օր հինգ էր ամսոյն. ես նստէի ՚ի տան իմում, և ծերքն Յուդայ նստէին առաջի իմ։ Եւ եղև ՚ի վերայ իմ անդ ձեռն Աղովնայի Տեառն. ²և տեսանէի՝ և ահա նմանութիւն առն, ՚ի միջոյն և

* *Ոմանք.* Որ երթիցէ ՚ի պա՛։

* *Օրինակ մի.* Պատերազմ և սուր արտաքուստ։ *Ոմանք.* Եւ որ ՚ի բացին իցեն... սով և մահ վախճանեսցէ։ *Ուր օրինակ մի.* սովով և մահուամբ սպառեսցին։

* *Ոմանք.* Յանօրէնութեան իւրում։

* *Բազումք.* Գարշեսցին խոնաւութեամբ։ *Յօրինակին՝* Գարշասցին խոնարհութեամբ։

* *Օրինակ մի.* Յամենայն երեսս ամօթ ՚ի վերայ նոցա. և յամենայն։

* *Ոմանք.* Անկեալ կացցէ... քանզի արծաթ նոցա և ոս՛... և որովայնք նոցա ոչ լցցին. զի տանջանք անիրաւութեան նոցա եղև։

* *Բազումք.* Եւ մատնեցից զայն ՚ի ձեռս օտա՛։

* *Յոմանս պակասի.* ՚ի նոցանէ. և զոր արարէք ձե՛զ ինքեանց պէսպէս զարդս, և պղծեսցեն զնոսա։ և պղ՛։ *Բազումք.* Եւ մտանիցեն ՚ի նոսա։

* *Ոմանք.* Զչարիս ազգաց... բռնութեան նոցա։

'ի խոնարհ՝ հո՛ւր, և 'ի միջոյն և 'ի վեր՝ իբրև զտեսիլ փայլական. իբրև զգոյն բազմագունի ականն*։ ³Եւ ձգեաց նմանութիւն ձեռին՝ և արկ զգագաթանք գլխոյ իմոյ, և վերացոյց զիս Ոգի ընդ երկինս և ընդ երկիր. և տարաւ զիս յերուսաղէմ 'ի տեսլեանն Աստուծոյ, և կացոյց զիս 'ի նախադուռն դրանն ներքնոյ որ հայի ընդ հիւսւսի. ուր էր արծան պատկերին Նախանձու ստացողին*։ ⁴Եւ անդ էին փառք Աստուծոյ Իսրայէլի, ըստ տեսլեանն զոր տեսի 'ի դաշտի անդ։ ⁵Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ՝ հայեաց աչօք քովք 'ի կողմն հիւսւսոյ։ Զամբարձի՛ զաչս իմ 'ի կողմն հիւսւսոյ, և ահա 'ի հիւսւսոյ կողմանէ 'ի վերայ դրան սեղանոյն ուր կայր պատկերն Նախանձու 'ի մուտս դրանն որ հայէր ընդ արևելս*։ ⁶Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ՝ տեսանե՞ս զի՛նչ գործեն դոքա աստ անօրէնութիւն մեծ տունդ Իսրայէլի, հեռանալ 'ի սրբութեանց իմոց. դարձեալ ևս մեծամեծս քան զայս տեսցես անօրէնութիւնս*։ ⁷Եւ եմոյժ զիս առաջի դրաց սրահին. և տեսի և ահա ծա՛կ մի յորմն։ ⁸Եւ ասէ՛ ցիս. Որդի մարդոյ բրեա՛ զորմդ։ Եւ բրեցի՛ զորմն, և ահա դուռն մի*։ ⁹Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ՝ մո՛ւտ տես զանօրէնութիւնսդ՝ և զչարիսդ զոր գործեն դոքա այդր։ ¹⁰Մտի՛ և տեսի, և ահա ամենայն նմանութիւն սողնոց և անասնոց, սնոտի գարշելիք. և տեսի զամենայն կուռս տանն Իսրայէլի նկարեալ շուրջ զնոքօք*։ ¹¹Եւ եւթանասուն այր 'ի ծերոց անտի տանն Իսրայէլի, և Յեզոնիա որդի Սափանայ 'ի մէջ նոցա կայր առաջի նոցա. և իւրաքանչիւր բուրուառ 'ի ձեռին իւրում, և ծուխ խնկոյն ելանէր դիզանէր իբրև զամպ*։ ¹²Եւ ասէ ցիս Տէր. Որդի մարդոյ՝ տեսանե՞ս զի՛նչ ծերք տանդ Իսրայէլի գործեն այդր ընդ խաւար, իւրաքանչիւր 'ի ծածուկ 'ի սենեկի իւրում. զի ասեն. Եթո՛ղ Տէր, և ո՛չ հայի յերկիր*։ ¹³Եւ ասէ ցիս. Դարձեալ ևս մեծամեծ անօրէնութիւնս տեսցես՝ զոր գործեն դոքա։ ¹⁴Եւ եմոյժ զիս առաջի դրան տանն Տեառն, որ հայէր ընդ հիւսւսի. և ահա նստէին անդ կանայք՝ և ողբային զԹամուզ։ ¹⁵Եւ ասէ ցիս. Տեսանե՞ս զայդ որդի մարդոյ. դարձեալ ևս մեծամեծ գործս քան զայդ տեսանիցես։ ¹⁶Եւ եմոյժ զիս 'ի ներքին սրահ տանն Տեառն, և ահա 'ի վերայ դրաց տաճարին Տեառն ընդ սեղանն և ընդ վանդակն՝ իբրև արք քսանհինգ, որոց զթիկունս 'ի տաճարն Տեառն դարձուցեալ էր, և զերեսս ընդ արևելս, և երկի՛ր պագանէին արեգական։ ¹⁷Եւ ասէ ցիս. Տեսե՛ր զայդ որդի մարդոյ. միթէ փո՞քր ինչ իցէ անօրէնութիւն տանդ Իսրայէլի զոր գործեն աստ. զի լցին զերկիրդ անօրէնութեամբք, և դարձան 'ի բարկացուցանել զիս. և ահա ձգեն զբազուկ որթուն ընդ արհամարհանս*։ ¹⁸Եւ ես արարից ընդ դոսա բարկութեամբ, և ո՛չ խնայեսցէ ական իմ, և ո՛չ ողորմեսցայց

* *Ի լուս՝*. Իբրև զտեսիլ օդոյ. *համաձայն բազմաց 'ի բնաբ՝*: Ուր և ոմանք. իբրև զտեսիլ օդոց. և իբրև զգոյն... ական:

* *Բազուկք*. Եւ վերացոյց զիս ընդ երկինս... յերուսաղէմ 'ի լեառն Աստուծոյ: *Ի լուս՝*. Զիս յանդիման դրանն ներքնոյ. *համաձայն բազմաց 'ի բնաբ՝*:

* *Ի բազունս պակասի*. Զիւսւսոյ. *համբարձի զաչս իմ 'ի կողմն հիւսւսոյ*. և ահա:

* *Ոմանք*. Աստ անիրաւութիւն տունդ Իսրայէլի... քան զայդ տեսցես:

* *Ոմանք*. Եւ բրեցի զորմնն:

* *Բազուկք*. Նմանութիւն սողնոյ և անասնոյ սնոտի գարշելեաց:

* *Ոմանք*. Որդի Սափանայ... բուրուառ իւր 'ի ձեռին իւ՛ր: *Ոսկան*. Ելանէր դիզանայր:

* *Ոմանք*. 'Ի ծածուկ սենեկի իւրեանց: *Ուր օրինակ մի*. իւրաքանչիւր 'ի սենեակ իւրում ծածուկ. զի:

* *Յօրինակին պակասէր*. Միթէ փոքր ինչ իցէ: *Բազուկք*. Զի լցին զերկիրն... և ահա ձկտեն զբազուկ որթոյն:

նոցա. և աղաղակեցեն յականջս իմ մեծածայն, և ո՛չ լուայց նոցա*:

9

Գլուխ Թ

¹Եւ աղաղակեաց յականջս իմ մեծածայն և ասէ. Սերծեալ է վրէժխնդրութիւն քաղաքիդ. և իւրաքանչիւրոք զգործի սատակման ՚ի ձեռին իւրում ունէր*։ ²Եւ ահա արք վե՛ց գային ընդ ճանապարհ բարձու՝ դրանն՝ որ հայի ընդ հիւսւսի, և իւրաքանչիւր տապար ՚ի ձեռին իւրում. և այր մի ՚ի մէջ նոցա զգեցեալ պճղնաւոր, և կամար ականակապ յականց շափիղ՛այ ընդ մէջ իւր. և մտին կացին առաջի պղնձի սեղանոյն*։ ³Եւ փառք Աստուծոյ Իսրայէլի վերացան ՚ի քրովբէիցն յօղն որ ՚ի մէջ տաճարին։ Եւ կոչեաց գայրն որ զգեցեալ էր զպճղնաւորն, և ունէր զկամարն ընդ մէջ իւր*։ ⁴Եւ ասէ ցնա Տէր. Անց ընդ մէջ քաղաքիդ Երուսաղեմի, և դի՛ր նշան ՚ի ճակատ արանցդ որ հեծեն և յոգոց հանեն ՚ի վերայ անօրէնութեանցն գործելոց ՚ի մէջ դոցա*։ ⁵Եւ ցնոսա ասէ՝ ինձ լու՛ ՚ի լու. Գնացէ՛ք զհետ նորա ՚ի քաղաքն՝ և կոտորեցէ՛ք. և մի՛ խնայեցեն աչք ձեր, և մի՛ ողորմեսցիք, ⁶ծերոյն և տղայոյն, կուսին և երիտասարդին. և զկանայս կոտորեսցիք ՚ի սատակումն. բայց յորոյ վերայ նշանն իցէ՝ մի՛ մերծենայցէք. և սկիզբն՝ ՚ի սրբութեանց իմոց արասցիք։ Եւ սկսան յարանց ծերոց որ էին ՚ի ներքս ՚ի տաճարին*։ ⁷Եւ ասէ ցնոսա. Պղծեցէ՛ք զտունդ, և լցէ՛ք զտունդ դիակամբք. և ելէ՛ք կոտորեցէք և հարէ՛ք զքաղաքդ*։ ⁸Եւ եղև ՚ի կոտորելն զնոսա, հայեցայ՝ և տեսի, և անկայ ՚ի վերայ երեսաց իմոց, աղաղակեցի՛ և ասեմ. Վայ ինձ Ադովնայի Տէր, ջնջես՝ ո՞ր ւաւորիկ զմնացորդս տանդ Իսրայէլի, ՚ի հեղուլ զսրտմտութիւն քո ՚ի վերայ Երուսաղեմի*։ ⁹Եւ ասէ ցիս. Անիրաւութիւն տանդ Իսրայէլի և Յուդայ մեծացաւ՝ յոյժ յոյժ. զի լցաւ երկիրդ ժողովրդովք բազմօք, և քաղաքդ լի՛ եղև անօրէնութեամբ և պղծութեամբ. զի ասացին եթէ եթո՛ղ Տէր զերկիրն, և ո՛չ ևս հայի Տէր*։ ¹⁰Եւ արդ ո՛չ խնայեցէ ակն իմ ՚ի նա, և ո՛չ ողորմեցայց, այլ ըստ ճանապարհաց նոցա տալ ՚ի գլուխ նոցա*։ ¹¹Եւ ահա այրն որ զգեցեալն էր զպճղնաւորն, և ունէր զկամարն ընդ մէջ իւր, պատասխանի ետ և ասէ. Արարի՛ որպէս և հրամայեցեր ինձ։

10

Գլուխ Ժ

* *Ոմանք.* Եւ ոչ ողորմեցայց դոցա... իմ մեծածայնս։

* *Բազումք.* Վրէժխնդրութիւն քաղաքին։

* *Ոմանք.* ՚Ի միջի նոցա զգեց՝... կացին առ պղնձի սեղանոյն։

* *Ոմանք.* Եւ փառքն Աստուծոյ Իսրայէլի վերացաւ։

* *Ոմանք.* Անօրէնութեանց գործելոց ՚ի մէջ նոցա. *ուր Ոսկան.* Գործեցելոց։

* *Ոմանք.* Ծերոց և տղայոց, կու՛... և զկանայս նոցա կոտորեսցիք։

* *Օրինակ մի յաւելու.* Եւ հարէք զքաղաքդ. և ելեալ կոտորեցին զքաղաքն։

* *Օրինակ մի.* Եւ եղև ՚ի կոտորելն զնոսա, ես մնացի միայն, և անկայ ՚ի վերայ երես՝... վայ է ինձ Ադո՛ւ։ *Ոմանք.* ՚Ի հեղուլ սրտմտութեան քո։

* *Ոմանք.* Եւ զի ասացին եթէ։

* *Բազումք.* Ակն իմ, և ոչ ողորմեցայց, ըստ ճանապարհաց նոցա տաց ՚ի գլուխս նոցա։

¹Եւ տեսանէի ահա ՚ի վերայ հաստատութեանն որ էր ՚ի վերայ գլխոց քերովբէիցն իբրև զվէմ շափիղճայ ական, և ՚ի վերայ նորա նմանութիւն աթոռոյ*:
²Եւ ասէ ցայրն՝ որ զգեցեալն էր զպատմութեանն սուրբ. Մուտ ՚ի մէջ անուոցդ և ՚ի ներքոյ քրովբէիցդ՝ և լից զագուռս քո կայծակամբք հրոյ ՚ի միջոյ քրովբէիցդ. և ցանեա՛ ՚ի վերայ քաղաքին, և եմուտ այրն առաջի իմ*:
³Եւ քերովբէքն կային ընդ աջմէ տաճարին ՚ի մտանել առնն. և ամպն ելից զսրահն ներքին*:
⁴Եւ փառքն Տեառն վերացան ՚ի քրովբէից անտի յօղն որ ՚ի մէջ տաճարին. և տաճարն լի՛ եղև ամպով, և սրահն լի՛ եղև լուսով փառացն Տեառն:
⁵Եւ ձայն թևոց քրովբէիցն լսելի լինէր մինչև ՚ի սրահն արտաքին. իբրև զձայն Աստուծոյ Սաղայի՛ որ խօսէր:
⁶Եւ եղև մինչդեռ տայր զպատուէր առնն որ զգեցեալ էր զպատմութեանն սուրբ, և ասէր. Ա՛ռ հուր ՚ի միջոյ անուոցդ ՚ի միջոյ քրովբէիցդ. և եմուտ և եկաց ՚ի մէջ անուոցն:
⁷Եւ ձգեաց քերոք մի զձեռն իւր ՚ի միջոյ քերովբէիցն ՚ի մէջ հրոյն որ էր ՚ի մէջ քրովբէիցն, ա՛ռ և ե՛տ ՚ի ձեռս նորա. և որ զգեցեալ էր զպատմութեանն սուրբ, ա՛ռ և ե՛լ անտի*:
⁸Հայէի ընդ քերովբէսն, և տեսանէի նմանութիւն ձեռաց մարդոյ ՚ի ներքոյ թևոց նոցա*:
⁹Տեսանէի՛ և ահա անիւք չորք կային մերձ առ քերովբէսն. մի մի անիւ զհետ միոյ միոյ քերովբէի. և տեսիլ անուոցն իբրև զտեսիլ ական կարկեհանի*:
¹⁰Եւ տեսիլ նոցա և նմանութիւն չորեցունց, որպէս զի իցէ տեսանել անիւ ընդ մէջ անուոյ*:
¹¹Եւ ՚ի գնալն իւրեանց՝ ՚ի չորեսին կողմանս իւրեանց գնային, և յետս ընդդէմ ո՛չ դառնային. զի յոր կողմն հայէր մի առաջն, զհետ նորա երթային և յետս ընդդէմ ո՛չ դառնային:
¹²Եւ ամենայն մարմինք իւրեանց, և ձեռք, և թևք նոցա, և անիւք, լի՛ էին աչօք՝ շուրջ զչորեքուձբք անուովք նոցա:
¹³Եւ անուոցն անուն՝ կոչեցաւ Գեղ գեղ, իմո՛վ իսկ լսելով*:
¹⁴Եւ չորք դէմք միոյ. դէմք միոյն՝ դէմք եզին. դէմք երկորդին՝ դէմք մարդոյ. և դէմք երրորդին՝ դէմք առիծու. և դէմք չորրորդին՝ դէմք արծուոյ*:
¹⁵Եւ վերացան քերովբէքն: Ա՛յս այն գազան է՝ զոր տեսի ՚ի վերայ Քոբա՛ր գետոյ:
¹⁶Եւ ՚ի գնալ քերովբէիցն, գնային և անիւքն զհետ նոցա. և յամբառնալ քերովբէիցն զթևս իւրեանց ՚ի վերանալն յերկրէ, ո՛չ դառնային յետս անիւքն. քանզի զհետ նոցա էին:
¹⁷Ի կալն նոցա դադարէին, և յամբառնալ նոցա՝ ընդ նոսին վերանային. զի ոգի կենդանութեան էր ՚ի նոսա:
¹⁸Եւ ելին փառքն Տեառն ՚ի միջոցոյ տաճարին, և նստան ՚ի վերայ քերովբէիցն*:
¹⁹Եւ ամբարձին քերովբէքն զթևս իւրեանց, և վերացան յերկրէ առաջի իմ, յելանելն նոցա և անիւքն զհետ նոցա. և կացին առաջի դրանդեաց դրան տանն Տեառն որ հայէր ընդ արևելս. և փառքն Աստուծոյ Իսրայէլի ՚ի վերայ նոցա*:
²⁰Ա՛յս այն

* *Ոմանք.* Եւ ահա ՚ի վերայ... ՚ի վերայ գլխոյ քրով՝. իբր վէմ շափիղճայ:
 * *Ի բազումս պակասի.* Չպատմութեանն սուրբ... և եմուտ այրն առաջի իմ: *Ի լուս՝.* Ի վերայ քաղաքիդ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*
 * *Ոմանք.* Կային ընդ մէջ տաճարին .. և ամպ ելից:
 * *Ի լուս՝.* Ի միջոց քերովբէիցն: *Յոմանս պակասի.* Ի միջոյ քրովբէիցն. *՚ի մէջ հրոյն որ էր ՚ի մէջ քրովբէիցն, ա՛ռ և ե՛տ:* *Ուր Ոսկան.* Չձեռն իւր առ հուրն. որ էր ՚ի միջոյ քրովբէիցն. և ետ ՚ի ձեռս:
 * *Բազումք.* Նմանութիւն ձեռին մար*:
 * *Ոմանք.* Մի՛ անիւ զհետ միոյ քրովբէի... իբրև տեսիլ:
 * *Բազումք.* Անիւ ՚ի մէջ անուոյ:
 * *Ոսկան.* Եւ անուոցն կոչեցաւ Գեղգեղ:
 * *Բազումք.* Դէմք միոյն դէմք քրովբէի, և դէմք երկ՝:
 * *Բազումք.* Տեառն ՚ի միջոյ օդոյ տաճարին: *Ուր Ոսկան.* Ի միջոցոյ:
 * *Ոմանք.* Չհետ երթային նոցա և կային:

գազան է զոր տեսի՛ի ներքոյ Աստուծոյ Իսրայէլի՛ի վերայ Քոբար գետոյ, և գիտացի թէ այն քերովբէք են՝: ²¹Չորք չորք դէմք միոյ միոյ, և ութ թևք միոյ միոյ. և նմանութիւն ձեռաց մարդոյ՛ի ներքոյ թևոց նոցա՛. ²²և նմանութիւն երեսաց նոցա: Այս դէմք են զոր տեսի՛ի ներքոյ փառացն Աստուծոյ Իսրայէլի՛ի վերայ Քոբար գետոյ. զտեսիլ նոցա և զնոսա. զի ըստ իւրաքանչի՛ւր դիմաց գնային:

11

Գլուխ ԺԱ

Ե ¹Եւ ամբարձ զիս Յոգի, և ա՛ծ զիս յանդիման դրան տանն Տեառն որ հայէր ընդ արևելս. և ահա առաջի դրան սրահին արք իբրև քսանևհինգ, և տեսի՛ի մէջ նոցա զՅեզոնիա զորդի Յազերայ՝ և զՓաղտիա Բանեայ՝ զառաջնորդս ժողովրդեանն՝: ²Եւ ասէ՛ցիս Տէր. Որդի մարդոյ, այս արք են որ խորհին սնուոիս, և տան խրատ չար՝ի քաղաքիդ յայդմիկ. ³և ասեն. Ո՛չ եթէ նորո՛գ ինչ շինեալ են տունքս, այլ սա՛ է կաթսա՛ և մեք միս: ⁴Վասն այդորիկ մարգարեաց՝ի վերայ նոցա. մարգարեաց որդի մարդոյ՝: ⁵Եւ եհաս ՚ի վերայ իմ Ոգի Տեառն՝ և ասէ. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Այդպէս ասացէք տո՛ւնդ Իսրայէլի, և զխորհուրդ ոգւոց ձերոց ես գիտեմ՝: ⁶Յաճախեցէք զդիակունս ձեր՝ի քաղաքիդ յայդմիկ, և լցէք զճանապարհս դորա վիրաւորօք: ⁷Վասն այդորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ձի դիակունս ձեր զոր կոտորէիք ՚ի մէջ դորա, նոքա միսն են, և կաթսայն դա՛ է. և զձեզ հանից ՚ի միջոյ դորա՛: ⁸Ի սրոյ երկնչիք՝ սուր ածից ՚ի վերայ ձեր՝ ասէ Ադովնայի Տէր՝: ⁹Եւ հանից զձեզ ՚ի միջոյ դորա, և մատնեցից զձեզ ՚ի ձեռս օտարաց. և արարից ՚ի ձեզ դատաստան՝ ¹⁰զի անկանիցիք ՚ի սուր. և ՚ի վերայ լերանց Իսրայէլի դատեցայց զձեզ. և ծանիջիք թէ ես եմ Տէր՝: ¹¹Եւ դա չիցէ՛ ձեզ կաթսա, և դուք չլինիցիք ՚ի դմա միս: Ի վերայ լերանցն Իսրայէլի դատեցայց զձեզ, ¹²և գիտասջիք թէ ես եմ Տէր. զի ըստ արդարութեանց իմոց դուք ո՛չ գնացէք, և զիրաւունս իմ դուք ո՛չ արարէք. այլ և ոչ ըստ կրօնից ազգացն որ շուրջ զձեւք էին՝ արարէք՝: ¹³Եւ եղև միմչդեռ մարգարեանայի, մեռաւ Փաղտիա որդի Բանեայ. անկայ՛ի վերայ երեսաց իմոց, և ՚ի ձայն մեծ աղաղակեցի՛ և ասեն. Վայ ինձ՝ վայ ինձ Ադովնայի Տէր. զի ՚ի կատարա՛ծ հասուցեր զմնացորդս Իսրայէլի: ¹⁴Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁵Որդի մարդոյ, եղբարք քո՛ և արք գերութեան քոյ՛ և ամենայն տունդ Իսրայէլի հասեալ են ՚ի վախճան. որոց ասացին բնակիչքն Երուսաղեմի. Ի բաց մերժեցարուք ՚ի Տեառնէ. զի մե՛զ տուեալ է զերկիրդ ՚ի ժառանգութիւն: ¹⁶Վասն այնորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Թէ մերժեցից զնոսա յազգս, և ցրուեցից զնոսա ընդ ամենայն երկիր. և եղէ՛ց նոցա փոքր մի՛ի սրբութիւն՝ի գաւառսն յոր մտանիցեն

* *Օրինակ մի.* Այս այն կենդանի է զոր... թէ այն քերովբէք էին:

* *Ոսկան.* Չորք դէմք միոյ միոյ: *Ոմանք.* Չեռին մարդոյ:

* *Ոմանք.* Եւ ամբարձ զիս Ոգի... զորդի Ազերայ, և զՓաղտիա զԲանեայ:

* *Ոմանք.* Վասն այնորիկ մարգարեաց ՚ի վերայ դոցա:

* *Ոմանք.* Եւ ասէցիս. Այսպէս ասէ... այսպէս ասացէք... և զխորհուրդս ոգ՛:

* *Բազումք.* Տէր. Ձդիակունս ձեր... ՚ի միջի դորա:

* *Ոմանք.* Ի սրոյ երկնչիք սուր:

* *Բազումք.* Եւ ծանիցէք թէ ես:

* *Բազումք.* Այլ ըստ կրօնից ազգացն որ շուրջ զձեւք են ա՛:

ի նոսա*։ ¹⁷Վասն այնորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Եւ ընկալա՛յց զնոսա յազգացն, և ժողովեցի՛ց զնոսա ՚ի գաւառացն ուր ցրուեցից զնոսա ՚ի նոսա. և տա՛ց նոցա զերկիրն Իսրայէլի։ ¹⁸Եւ մտցեն անդր, և բարձցեն զամենայն գարշելիս նորա, և զամենայն զանօրէնութիւնս նորա ՚ի նմանէ*։ ¹⁹Եւ տաց նոցա սիրտ այլ. և ոգի նո՛ր նորոգեցից նոցա. և հանի՛ց զսիրտն քարեղէն ՚ի մարմնոց նոցա, և տա՛ց նոցա սիրտ մարմնեղէն*։ ²⁰Չի ըստ հրամանաց իմ զնասցեն, և զիրաւունս իմ պահեսցեն, և արասցեն զնոսա. և եղիցին ինձ ՚ի ժողովուրդ՝ և ես եղեց նոցա Աստուած*։ ²¹Եւ ըստ գարշելեաց սրտից նոցա, և ըստ անօրէնութեանցն նոցա զոր արարին, և ըստ ճանապարհացն յոր գնային՝ հատուցից ՚ի գլուխս նոցա՝ ասէ Ադովնայի Տէր*։

Ձ ²²Եւ ամբարձին քերովբէքն զթևս իւրեանց, և անիւքն զհետ նոցա. և փառքն Աստուծոյ Իսրայէլի ՚ի վերայ նոցա։ ²³Եւ ամբարձան փառքն Տեառն ՚ի միջոյ քաղաքին. և կացին ՚ի վերայ լերինն որ էր յանդիման քաղաքին*։ ²⁴Եւ վերացոյց զիս Ոգի, և ա՛ծ ՚ի յերկիրն Քաղդեացւոց ՚ի մէջ զերութեանն, տեսլեամբ Յոգւոյն Աստուծոյ։ Եւ յարեայ ՚ի տեսլենէ անտի զոր տեսի*։ ²⁵և խօսեցայ առ զերութեանն զամենայն բանս Տեառն զոր եցոյց ինձ։

12

Գլուխ ԺԲ

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ ՚ի մէջ անօրէնութեանց նոցա բնակեալ ես դու. որ աչս ունին տեսանելոյ՝ և ո՛չ տեսանեն, և ականջս լսելոյ՝ և ո՛չ լսեն. զի տուն դառնացողաց են։ ³Եւ դու որդի մարդոյ՝ արա՛ դու քեզ հանդերձ զերութեան, և վարեա՛ց ՚ի զերութիւն զաւուրս առաջի նոցա. և զերեսջի՛ր ՚ի տեղուղէ քունմէ յայլ տեղի առաջի դոցա՝ զի տեսցեն. քանզի տուն դառնացողաց են*։ ⁴Եւ մերկասցիս զհանդերձս քո, իբրև զհանդերձ զերութեան* ⁵առաջի աչաց նոցա։ Եւ դու ելցես ընդ երեկոյս առաջի նոցա, որպէս ելանիցէ զերի, առաջի աչաց նոցա ծակեա՛ դու քեզ որմ, և ելցես ընդ այն* ⁶առաջի նոցա. կորակո՛ր զնասցես՝ գաղտագողի՛ ելանիցես. ձորձ զգլխով պատիցես, և մի՛ տեսանիցես զերկիրն. զի նշանակ ետու զքեզ տանն Իսրայէլի*։ ⁷Եւ արարի այնպէս ըստ ամենայնի զոր պատուիրեաց ինձ Տէր, և արկայ հանդերձ զերութեան զաւուրս. և փորեցի ընդ երեկոյս զորմն ձեռամբ իմով, և երթայի գաղտագողի՛ կորակո՛ր առաջի նոցա*։ ⁸Եւ եղև բան Տեառն ընդ առաւօտն ՚ի

* *Ոմանք.* Փոքր մի սրբութիւն։

* *Ոմանք.* Ձամենայն գարշելիս նոցա։

* *Բազումք.* Եւ հոգի նոր պարգևեցից նոցա։

* *Բազումք.* Ըստ հրամանաց իմոց զն՝... նոցա յԱստուած։

* *Ոմանք.* Յոր գնացին՝ հա՛։

* *Ոմանք.* Եւ կային ՚ի վերայ լե՛։

* *Ոմանք.* Եւ վերացոյց զիս Յոգի, և ա՛ծ զիս յերկիրն... տեսլեամբ Յոգւովն Աստուծոյ։

* *Ոմանք.* Արա՛ դու հան՝... առաջի դոցա։

* *Ոմանք.* Մերկասցիս զհանդերձ քո։

* *Ոմանք.* Որպէս ելցէ զերի... և ծակեսցես դու քեզ։

* *Ոմանք.* Գաղտագողի զնասցես... պատիցիս։

* *Ոսկան.* Եւ արկի հանդերձ։

վերայ իմ և ասէ՛. ⁹Որդի մարդոյ՝ ո՞չ ասացին քեզ տունդ Իսրայէլի տուն դառնացողաց, թէ զի՞նչ է զոր գործեսդ՝: ¹⁰Եւ արդ ասա՛ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Տէր ցիշխանսդ՝ և ցառաջնորդս Երուսաղէմի՝ և ցամենայն տունդ Իսրայէլի որ են՝ ՚ի մէջ դոցա՛. ¹¹Թէ ես նշանակ արարից ՚ի մէջ դորա. որպէս արարիդ՝ այնպէս եղիցի դմա. զի ՚ի պանդխտութիւն և ՚ի գերութիւն երթիցեն՝: ¹²Եւ իշխանն ՚ի մէջ նոցա կորակո՛ր գնասցէ, գաղտագողի՛ շրջեսցի, զորմն հատեալ՝ ելցէ, զերեսս ծածկեալ՝ գնասցէ. և մի՛ տեսցէ զերկիրդ՝: ¹³Եւ արկից զցանց իմ զնովաւ՝ և պատեսցի ուռկանաւ ՚ի պաշարունմն. և ածից զնա ՚ի Բաբելոն յերկիրդ Քաղդէացոց. և զդա մի՛ տեսցէ, և այդր վախճանեսցի: ¹⁴Եւ զամենայն օգնականս նորա որ շուրջ զնովաւ իցեն, և զամենայն պաշտպանս նորա ընդ ամենայն հողմս ցրուեսցից, և սուր զկնի նոցա արծակեցից՝: ¹⁵Եւ ծանիցես թէ ե՛ս եմ Տէր. ՚ի ցրուել իմ զնոսա ընդ ամենայն ազգս, և ցանել զնոսա ընդ գաւառս՝: ¹⁶Եւ թողից ՚ի նոցանէ արս թուով՝ ՚ի սովոյ, և ՚ի սրոյ, և ՚ի մահուանէ. զի պատմեսցեն զամենայն անօրէնութիւնս նոցա ՚ի մէջ ազգացն՝ յորս մտանիցեն անդր. և ծանիցեն թէ ես եմ Տէր:

Է ¹⁷Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁸Որդի մարդոյ՝ զհաց քո կարօտութեամբ կերիջիր, և զջուր քո՝ տանջանօք և նեղութեամբ արբջիր. ¹⁹և ասասցես ցժողովուրդ երկրին. Այսպէս ասէ Ադովնայի Տէր ցբնակիչս Երուսաղէմի յերկիրն Իսրայէլի. Ձիաց իւրեանց կարօտութեամբ կերիցեն, և զջուր իւրեանց ապականութեամբ արբցեն. զի ապականեսցի երկիր լրիւ իւրով, զի յամպարշտութեան են ամենայն բնակիչք նորա՝: ²⁰Եւ քաղաքք նոցա բնակեալք՝ ւաւերեսցին. և երկիր նոցա յապականութիւն եղիցի. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր՝: ²¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²²Որդի մարդոյ, զի՞նչ է ձեզ առակդ այդ յերկրիդ Իսրայէլացոց՝ զոր ասեն. Հեռի՛ են աւուրքն, և կորեան տեսիլք ամենայն՝: ²³Վասն այդորիկ ասա՛ ցնոսա. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Դարծուցի՛ց զառակդ զայդ՝ և մի՛ ևս ասասցեն տունդ Իսրայէլի զառակդ զայդ. զի խօսեսցիս առ նոսա, թէ հասեալ են աւուրք՝ և պատգամք ամենայն տեսլեանց: ²⁴Ձի ո՛չ ևս եղիցի ամենայն տեսիլ սուտ, և որ խօսիցի ըղձութեամբ և շնորհուկս ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի՝: ²⁵Քանզի ե՛ս Տէր խօսեցայ զբանս իմ, խօսեցայ և արարից, և ո՛չ ևս յերկարեցից. զի յաւուրս ձե՛ր տուն դառնացողաց խօսեցայ զբանն, և արարից ասէ Ադովնայի Տէր՝: ²⁶Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²⁷Որդի մարդոյ՝ ահաւաղիկ տունդ Իսրայէլի տուն դառնացողաց ասեն. Տեսիլդ զոր տեսանէ՛ դա՝ յաւուրս բազումս և ՚ի ժամանակս հեռաւորս լինելոց է

* *Ոմանք.* Բան Տեառն առաւօտուն. *կամ՝* ընդ առաւօտս:

* *Բազունք.* Ո՞չ ասացին ցքեզ:

* *Ոմանք.* Ասէ Տէր ցիշխանսդ և ցառաջնորդսդ:

* *Բազունք.* ՚ի միջի դորա. որպէս արարիդ այդպէս եղիցի:

* *Ոսկան.* Եւ իշխանն որ է ՚ի մէջ նոցա:

* *Ոմանք.* Ձկնի նորա արծակեցից:

* *Բազունք.* Եւ ծանիցեն թէ ես... ՚ի ցրուելն ինձ զնոսա ընդ ազգս, և ցանել զնոսա ընդ ամենայն գաւ՛:

* *Բազունք.* Յերկրին Իսրայէլի:

* *Ոմանք.* Յապականութեան եղիցի:

* *Ոմանք.* Ձոր ասեն. Հեղան աւուրք և կորեան աւուրքն ամենայն:

* *Ոմանք.* Այլ որ խօսիցի ըղձութեամբ շնորհուկս:

* *Ոմանք.* Տունդ դառնացողաց խօսեցայց զբանն:

այդ զոր դայ՞ դարգարեանայ՞: ²⁸Վասն այդորիկ ասա՛ ցնոսա. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ո՛չ ևս յերկարեցին ամենայն բանք իմ զոր խօսեցայց, այլ զոր խօսեցայց՝ արարի՛ց ասէ Ադովնայի Տէր:

13

Գլուխ ԺԳ

Ը ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ մարգարեաց՝ ՚ի վերայ մարգարեիցդ Իսրայէլի որ մարգարեանան անդ, և ասացես ցմարգարեսդ որ մարգարեանան ՚ի սրտից իւրեանց. մարգարեանայցես և ասացես ցնոսա. Լուարո՛ւք զպատգամս Տեառն՞. ³Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Վայ դոցա որ մարգարեանանդ ՚ի սրտից իւրեանց, որ երթան զհետ ոգւոց իւրեանց, և ամենևին ո՛չ տեսանեն՞: ⁴Իբրև աղուեսք յաւերակս էին մարգարէք քո Իսրայէլ՞. ⁵և ո՛չ կացին ՚ի հաստատութեան. և ժողովեցին հօտս ՚ի վերայ տանդ Իսրայէլի, և ո՛չ հաստատեցան ոյք խօսէին յանուն Տեառն՞. ⁶որ տեսանէին զստութիւն, և պատմէին զըղծութիւն սնոտի. որք ասէին. Այսպէս ասէ Տէր. և ես Տէր ո՛չ առաքեցի զնոսա. և սկսան յարուցանել բանս՞: ⁷Ոչ ապաքէն տեսիլս սո՛ւտս տեսէք, և ըղծութիւնս սնոտիս պատմէիք. և ասէիք. Այսպէս ասէ Տէր, և ես Տէր ո՛չ խօսեցայ՞: ⁸Վասն այդորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի բանք ձեր սո՛ւտ եմ, և ըղծութիւնք ձեր սնոտի՛ք. վասն այնորիկ ես ՚ի վերայ ձեր՝ ասէ Ադովնայի Տէր՞. ⁹և ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ մարգարեիցն, որ տեսանէին ստութիւնս, և խօսէին սնոտիս. ՚ի խրատու ժողովրդեան իմոյ մի՛ կացցեն. և մի՛ ՚ի գիրս տանն Իսրայէլի գրեցին, և յերկիրն Իսրայէլի մի՛ մտցեն. և ծանիցեն թէ ես եմ Ադովնայի Տէր՞: ¹⁰Փոխանակ զի մոլորեցուցանէին զժողովուրդ իմ, և ասէին. Խաղաղութիւն խաղաղութիւն, և ո՛չ զոյր խաղաղութիւն. և ինքն շինէր որմ, և նոքա ծեփէին, զի փլցի՞. ¹¹ասէ ցնոսա որ ծեփէինն, թէ անզգամութիւն է այդ, քանզի փլանելոց է. եկեսցէ անձրև՝ և ողողեսցէ, և տաց քարինս ռըմբաքարաց ՚ի պահանկս նոցա՝ և կործանեսցին. հողմ յարիցէ՛ և տապալեսցէ՞: ¹²Եւ ահա կործանեցաւ որմն. և ո՛չ ևս ասացեն ցձեզ, թէ ուր է ծեփն ձեր՝ զոր ծեփեցէքն՞: ¹³Ձի այսպէս ասէ Ադովնայի Տէր. Արծակեցից հողմս որ բառնայցէ սրտմտութեամբ իմով, և եկեսցէ անձրև ողողանել բարկութեամբ իմով. և զվէնս ռըմբաքարացն ածից ցասմամբ ՚ի վերայ նորա ՚ի վախճան՞. ¹⁴և

* *Յօրինակին.* Ե այդ զդայդ մարգա՞:

* *Ոմանք.* Որ մարգարեանանդ, և աս՞... որ մարգարեանային ՚ի սիրտս իւրեանց. մարգարեացես և ա՞:

* *Ոմանք.* Ի սիրտս իւրեանց:

* *Ոմանք.* Յաւերակք էին մար՞:

* *Ոմանք.* Եւ ոչ հաստեցան ոյք:

* *Ոմանք.* Եւ տեսանէին ստութիւն:

* *Ոմանք.* Սնոտիս պատմեցէք:

* *Ոմանք.* Վասն այնորիկ ասա՞:

* *Ոմանք.* Ի խրամու ժողովրդեան իմոյ մի՛ կայցեն:

* *Ոմանք.* Մոլորեցուցին զժողովուրդն իմ: *Յօրինակին.* Եւ ինք շինէր որմ:

* *Ոմանք.* Ասա՛ ցնոսա որ ծեփէինն... ՚ի պահանգս նոցա:

* *Ոմանք.* Եւ ասացեն ձեզ:

* *Ոմանք.* Արծակեցի հողմս: *Ուր Ոսկան.* հողմ որ բառ՞... ՚ի վերայ նորա ՚ի վախճանս:

յատակեցից զորմն զոր ծեփէիք՝ և կործանեսցի. և ընկեցից զնա յերկիր, և յայտնեսցին հիմունք նորա, և անկցի և վախճանեսցի յանդիմանութեամբ: Եւ գիտասցիք թէ ես եմ Տէր*։¹⁵ Եւ կատարեցից զսրտմտութիւն իմ՝ ՚ի վերայ որմոյն, և ՚ի վերայ ծեփողաց նորա. և կործանեսցի: Եւ ասացից ցձեզ՝ թէ չիք ուրեք որմ, և ո՛չ ծեփօղք նորա*։¹⁶ Եւ արգարէքն Իսրայէլի՝ որ մարգարեանային ՚ի վերայ Երուսաղեմի. և տեսանէին նմա խաղաղութիւն, և ո՛չ գոյր խաղաղութիւն. ասէ Ադովնայի Տէր: ¹⁷ Եւ դու որդի մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո ՚ի վերայ դստերաց ժողովրդեան քոյ, որ մարգարեանային ՚ի սրտից իւրեանց. մարգարեաց՝ ՚ի վերայ նոցա*, ¹⁸ և ասասցես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Վայ այնոցիկ որ կարեն կարկատեն զբարձկնեարդ ՚ի ներքոյ ամենայն արմկան ձեռին. և առնեն զլխադիրս զլխոյ ամենայն հասակաց թիւրել զանձինս. զի թիւրեցան անձինք ժողովրդեան ինոյ. և ապշեցուցանէին զանձինս*, ¹⁹ և բամբասէին զիս առաջի ժողովրդեան ինոյ վասն ավոյ՝ միոյ գարւոյ՝ և կոտորոյ՝ միոյ հացի, սպանանել զանձինս որ ո՛չ էին մահապարտք. և ապրեցուցանել զանձինս որոց ո՛չ էր պարտ կեալ, ՚ի բարբառելն ձեր յականջս ժողովրդեանն, որ ախորժէ զբարբառ նանրութեան*։²⁰ Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ՚ի վերայ բարձկներոյդ ձերոյ, յոր դուք ժողովէիք զանձինս, և պատառեցից զայդ ՚ի բազկաց ձերոց. և առաքեցից զանձինս զոր դուքն թիւրէիք ՚ի ցրումն*։²¹ Եւ պատառեցից զգլխադիրսն ձեր. և ապրեցուցից զժողովուրդ իմ ՚ի ձեռաց ձերոց, և ո՛չ ևս եղիցին ՚ի ձեռս ձեր ՚ի ժողովս: Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր*։²² Փոխանակ զի խտորէիք զսիրտ արդարոյն անհրաւութեամբ, և իմ ո՛չ էր թիւրեալ զնա. և զօրացուցանէիք զձեռս անօրինին չդառնալ ամենևին յանօրէնութենէ իւրմէ, և ՚ի ճանապարհաց իւրոց չարաց՝ և կեալ*։²³ Վասն այնորիկ զստութիւնսն մի՛ ևս տեսանիցէք, և ըղձութիւնս այլ ո՛չ ևս ըղձանայցէք. և ապրեցուցից զժողովուրդ իմ ՚ի ձեռաց ձերոց. և ծանիջիք թէ ես եմ Տէր*։

14

Գլուխ ԺԴ

Թ ¹ Եւ եկին առ իս արք ՚ի ձերոցն Իսրայէլի, և նստան առաջի իմ: ² Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ³ Որդի մարդոյ, արքդ այդոքիկ եղին զխորհուրդս իւրեանց ՚ի սիրտս իւրեանց, և զտանջանս անհրաւութեանց իւրեանց եղին առաջի երեսաց իւրեանց. թէ իցէ տալով տաց դոցա պատասխանի*։ ⁴ Վասն այնորիկ խօսեաց ընդ դոսա՝ և ասասցես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Այր ոք այր՝ ՚ի

* *Ոմանք.* Եւ յատակեցին հիմունք նորա:

* *Յօրինակին պակասէր.* Չսրտմտութիւն իմ՝ ՚ի վերա: *Ոմանք.* Եւ ասացից ձեզ թէ:

* *Բազումք.* ՚ի վերայ դստեր ժողովրդեան քո որ մարգարեանան ՚ի սր՝:

* *Բազումք.* Չգլխադիրս գլխոց... թիւրեալ զանձինս: *Ոմանք.* Եւ ապրեցուցանէին զանձինս:

* *Ոմանք.* Ի բարբառել յականջս ժողովրդեան:

* *Բազումք.* Վասն այնորիկ այսպէս:

* *Բազումք.* Եւ ծանիջիք զի ես եմ:

* *Ոմանք.* Չսիրտ արդարոցն: *Բազումք.* Չդառնալ անօրինին յանօրէնութենէ իւրմէ:

* *Բազումք.* Այլ մի՛ ևս ըղձանայցէք:

* *Ոմանք.* Տալով տացէ դոցա պատասխանի:

տանդ Իսրայէլի, որ դիցէ զխորհուրդս իւր ՚ի սրտի իւրում. և զտանջանս անիրաւութեան իւրոյ կարգեսցէ առաջի աչաց իւրոց, և եկեսցէ առ մարգարէ հարցանել նովաւ յինէն. Եւ Տէր՝ պատասխանի տաց նմա ըստ այնմ զոր ՚ի մտի՛ ունիցի*.⁵ Գի մի՛ խոտորեցուցեն զտունդ Իսրայէլի ըստ օտարացելոց սրտից իւրեանց յինէն ՚ի գնացս իւրեանց*:⁶ Վասն այնորիկ ասա՛ տանդ Իսրայէլի. Այսպէս ասէ Տէր՝ Տէր Աստուած. Դարձայք և դարձարուք ՚ի գնացից ձերոց, և յամենայն ամպարշտութեանց ձերոց, և դարձուցէք զերեսս ձեր առ իս: ⁷Քանզի այր ոք՝ այր ՚ի տանդ Իսրայէլի, և յեկաց և պանդխտացդ Իսրայէլի, որ օտարացի յինէն, և դիցէ զխորհուրդս իւր ՚ի սրտի իւրում, և զտանջանս անիրաւութեան իւրոյ կարգեսցէ առաջի երեսաց իւրոց. և եկեսցէ առ մարգարէ հարցանել նովաւ զիս. Եւ Տէր պատասխանի՛ տաց նմա ըստ այնմ զոր ՚ի մտին ունիցի*.⁸ և հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ մարդոյն այնորիկ. եղից զնա ՚ի նշան և յապականութիւն, և բարձից զնա ՚ի միջոյ ժողովրդեան իմոյ. և ծանիջիք զի ես եմ Տէր*:⁹ Եւ մարգարէ՛ ոք թէ խաբեսցի՝ և խօսեսցի բան ինչ. Եւ Տէր մոլորեցուցի զմարգարէն զայն. և ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ նորա, և սատակեցից զնա ՚ի միջոյ ժողովրդեան իմոյ Իսրայէլի*:¹⁰ Եւ ընկալցին զանիրաւութիւն իւրեանց ըստ անիրաւութեան հարցողին. նոյնպէս և անիրաւութիւն մարգարէին եղիցի.¹¹ Գի մի՛ ևս մոլորեսցի տունն Իսրայէլի յինէն. և զի մի՛ ևս պղծեսցին յամենայն յանցանս իւրեանց. և եղիցին ինձ ՚ի ժողովուրդ, և ես եղէց նոցա յԱստուած՝ ասէ Աղովնայի Տէր*:

Ժ ¹²Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹³Որդի մարդոյ, երկիր մի որ յանցանիցէ ինչ ինձ յանցանս. և ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ նորա, և խորտակեցից զհաստատութիւն հացի նորա, և արձակեցից ՚ի վերայ նորա սով. և բարձից ՚ի նմանէ զմարդ և զանասուն: ¹⁴Եւ եթէ իցեն արքն այն երեքին՝ ՚ի միջի նորա, Նոյ, և Յովբ, և Դանիէլ. նոքա արդարութեամբն իւրեանց ապրեսցին՝ ասէ Աղովնայի Տէր*:¹⁵ Եւ եթէ զազանս չարս ածից ՚ի վերայ երկրին՝ և պատժեցից զնա, և եղիցի յապականութիւն. մինչև անց ո՛չ լինիցի ընդ նա յերեսաց զազանաց: ¹⁶Եւ այն արք ՚ի միջի նորա իցեն. կենդանի՛ եմ ես՝ ասէ Աղովնայի Տէր, եթէ իցէ ուստերք նոցա և դստերք՝ ապրեսցին. այլ ինքեանք ապրեսցին, և երկիրն եղիցի՛ ՚ի սատակումն*:¹⁷ Եւ եթէ սուր ածից յերկիրն յայն, և ասացից սրոյն անցանել ընդ երկիրն, և բարձից ՚ի նոցանէ զմարդ և զանասուն*:¹⁸ Եւ արքն այն երեքեան ՚ի միջի նորա իցեն. կենդանի՛ եմ ես՝ ասէ Աղովնայի Տէր, ո՛չ ապրեսցուցեն զուստերս և զդստերս, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին: ¹⁹Եւ եթէ մա՛հ առաքեցից յերկիրն յայն, և հեղից զսրտմտութիւն իմ ՚ի վերայ նորա՝ արեամբ սատակել ՚ի նմանէ զմարդ և զանասուն: ²⁰Եւ Նոյ, և Յովբ, և Դանիէլ ՚ի միջի

* *Ոմանք.* Խօսեաց ընդ նոսա... այր ոք այլ ոք ՚ի տանդ... առաջի աչաց իմոց... և ես Տէր պատասխանի:

* *Ոմանք.* Ըստ օտարացելոյ սրտից:

* *Բազումք.* Այր ոք այր ոք ՚ի տանդ Իսրայէլի, յեկաց: *Ոմանք.* Եւ զտանջանս անօրէնութեան իւ՛ր:

* *Ոմանք.* Եւ եղից ՚ի նշան և յապակա՛ւ:

* *Ոմանք.* Մոլորեցուցից զմար՛:

* *Ոմանք.* Մոլորեսցին տունն Իսրայիլի:

* *Ոմանք.* Երեքին ՚ի միջոյ նորա:

* *Բազումք.* Եթէ իցեն ուստերք նոցա: *Ոսկան.* Եւ դստերք՝ ոչ ապրեսցին:

* *Ոմանք.* Եւ բարձից ՚ի նմանէ զմարդ:

նորա իցեն. կենդանի՝ են ես ասէ Ադովնայի Տէր, եթէ իցէ ուստերք և դստերք նոցա մնասցեն. այլ նոքա արդարութեամբ իւրեանց զանձինս իւրեանց ապրեցուցեն*։ ²¹Այսպէս ասէ Ադովնայի Տէր. եւ եթէ զչորեսին իսկ զանհնարին վրէժսն արծակեցից, զսուր, և զսով, և զգազանս չարս, և զմահ ՚ի վերայ Երուսաղէմի, սատակել՝ ՚ի նմանէ զմարդ և զանասուն. ²²սինլքորքն ապրեալքն ՚ի նմա հանցեն զուստերս և զդստերս իւրեանց: Ահաւասիկ ընդ նոսա ելցեն առ ձեզ, և տեսջիք զճանապարհս նոցա և զխորհուրդս նոցա. և զղջանայցէք ՚ի վերայ չարեացն զոր ածի ՚ի վերայ Երուսաղէմի, զամենայն զչարիսն զոր ածի ՚ի վերայ նորա*։ ²³Եւ մխիթարեսցեն զձեզ. և տեսանիցէք զճանապարհս նոցա և զխորհուրդս նոցա, և ՚ի միտ առնուցուք՝ թէ ո՛չ տարապարտուց արարի զամենայնն զոր ինչ արարի ընդ նոսա՝ ասէ Ադովնայի Տէր*։

15

Գլուխ ԺԵ

Վասն փայտի՝ որթուն։*

ԺԱ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ, զի՞նչ լինիցի փայտ որթուն՝ յամենայն փայտից ոստոց որ են ՚ի փայտս անտառի*։ ³Միթէ առնուցո՞ւն ՚ի նմանէ փայտ մի առնել զորժի ինչ, կամ առնուցո՞ւն ՚ի նմանէ ցի՛ց մի կախել զնմանէ անօթ ինչ։ ⁴Բայց զի ՚ի հրոյ՝ ծախս տուեալ է. զի ամ ՚ի յամէ գյաւտ նորա ծախտ հուր, և պակասէ ՚ի սպառ. միթէ պիտանացո՞ւ ինչ իցէ ՚ի գործ*։ ⁵Թէպէտ և նոյնպէս ողջոյն հաստանիցէ, չէ ինչ պիտոյ ՚ի գործ. բայց թէ հրոյ՝ ճարակ լինիցի ՚ի սպառ. և ո՛չ ինչ ամենևին պիտանացու ՚ի գործ*։ ⁶Վասն այնորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Որպէս զփայտ որթուն ՚ի փայտս անտառի ետու ճարակ հրոյ, այնպէս տաց զբնակիչսդ Երուսաղէմի*։ ⁷Եւ հաստատեցից զերեսս իմ ՚ի վերայ նոցա. ՚ի հրոյ ելցեն և հուր կերիցէ զնոսա. և ծանիցեն թէ ես եմ Տէր։ ՚ի հաստատել ինձ զերեսս իմ ՚ի վերայ նոցա, ⁸և տաց զերկիրն յապականութիւն, փոխանակ զի անկան ընդ յանցանօք՝ ասէ Ադովնայի Տէր։

16

Գլուխ ԺԶ

* *Ոսկան.* Եթէ իցեն ուստերք և դստերք նոցա՝ մի՛ մնասցեն։ *Ի բազումս պակասի.*

Արդարութեամբ *իւրեանց* զանձինս իւրեանց։

* *Ոմանք.* Ահաւասիկ ընդ նոսա։ *Ոսկան.* Չոր ածի ՚ի վերայ նոցա։

* *Բազումք.* Չձեզ. զի տեսանիցէք... եթէ ոչ... արարի զամենայն։

* *Ոսկան.* Վասն փայտի որթոյն։

* *Ոսկան.* Փայտ որթոյն յամենայն փայտից ոստից։

* *Երկու նոր օրինակք համեմատք իրերաց՝ ընդ Ոսկանայ գրեն.* Չի ամ յամէ զհօտ նորա ծախտ. *այլ բազումք ունին համաձայն մերումս։ Իսկ նորագիր օրինակ մի.* Չի ամի յամէ զոստս զօտ նորա ծախտ։ *Ոմանք.* Պիտանացո՞ւ ինչ է։

* *Ոսկան.* Նոյնպէս ողջոյն հանիցի։ *Ոմանք.* Ապա թէ հրոյ ճարակ։

* *Ոմանք.* Վասն այսորիկ ասա՛։

ԺԲ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ՝ ²Որդի մարդոյ, դիր վկայութիւն Երուսաղէմի զանօրէնութեանց նորա, ³և ասասցես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր ցերուսաղէմ. Արմատ քո և ծնունդ քո յերկրէն Քանանացւոց. և հայր քո Անովրիացի, և մայր քո Քետացի. ⁴և ծնունդն քո յորում աւուր ծնար՝ ո՛չ որ եհար զպորտ քո, և ո՛չ պնդեցին զստինս քո. և ջրով ո՛չ լուացար ՚ի փրկութիւն, և աղիւ ո՛չ յաղեցար, և ՚ի խանձարուրս ո՛չ պատեցար՝: ⁵Եւ ո՛չ խնայեաց ՚ի քեզ ակն իմ, և ո՛չ արարի քեզ ինչ մի յայսմ ամենայնէ զգուշանալ, թէ զուցէ՛ անցանիցէ ինչ ընդ քեզ. և ընկեցեալ ղնէիր ընդ երեսս դաշտին վասն խտտորնակ մտաց քոց. յաւուրն յորում ծնար՝ ⁶անցի՛ առ քև, և տեսի արեամբ թաթաւեալ. և ասացի ցքեզ. Կենդանասցի՛ր յարենէ քումմէ, և կեանք քո յարենէ բազմասցի՛ր. ⁷քանզի իբրև զբո՛յս ազարակի ետու զքեզ. և բազմացար՝ և մեծացար, և եկիր մտե՛ր դու ՚ի քաղաքս քաղաքաց. ստինք անկան քո՝ և մազք արծակեցան. և դու էիր մե՛րկ խայտառակ՝: ⁸Եւ եկի հասի ՚ի վերայ քո, և տեսի զքեզ զի հասեալ էր ժամանակ քո, և ժամանակ խախտողաց քոց. տարածեցի զթևս իմ ՚ի վերայ քո և ծածկեցի՛ զխայտառակութիւն քո. և երդուայ քեզ երդումն, և յուխտ մտի ընդ քեզ. ասէ Ադովնայի Տէր: Եւ եղեր ինձ՝: ⁹Եւ լուացի զքեզ ջուրբ, և սրբեցի զքեզ յարենէ քումմէ, և օծի զքեզ իւղով. ¹⁰և զգեցուցի զքեզ պէսպէսս, և ազուցի քեզ զերկնագոյնն, և ածի ընդ մէջ քո բեհեզ, և արկի զքև սնդուս՝. ¹¹և զարդարեցի զքեզ զարդու, և եդի ապարանջանս ՚ի ձեռս քո, և քառամանեալ՝ ՚ի պարանոց քո. ¹²եդի քեզ զինդս, և զորշապահանգս յականջս քո. և պսակ պարծանաց ՚ի գլուխ քո՝. ¹³և զարդարեցար ՚ի զարդ ոսկւոյ և արծաթոյ: Եւ հանդերձ քո բեհեզ և զառնաւուխտ և ճաճանջանաւուխտ. և կերար նաշիի և եւղ և մեղր, և եղեր զեղեցիկ յոյժ յոյժ. և գրգեցար ՚ի գրգանս թագաւորութեան՝: ¹⁴Եւ ել անուն զեղեցկութեան քոյ ընդ ամենայն ազգս. զի էր կատարեալ վայելչութիւն զեղոյ քոյ զոր յօրինեցի ՚ի վերայ քո, ասէ Ադովնայի Տէր: ¹⁵Եւ դու զեղապանձ եղեր ՚ի զեղ քո, և պոռնկեցար ՚ի հոմանիսն քո. և տարածեցեր զպոռնկութիւն քո առ ամենայն անցաւորս, որոց ո՛չ լինէր այնպիսի ինչ՝: ¹⁶Եւ առեր ՚ի հանդերձիցն քոց և արարեր քեզ կուռս կարկատունս, և պոռնկեցար ընդ նոսա. և մի՛ մտցես անդր, զի ո՛չ էին՝ և ո՛չ լիցին: ¹⁷Եւ առեր զսպաս պարծանացն քոց յոսկւոյն իմոյ և յարծաթոյն զոր ետու քեզ, և արարեր քեզ պատկերս արուականս, և պոռնկեցար ընդ նոսա՝: ¹⁸Եւ առեր զհանդերձն զեղեցիկ քո՝ և արկե՛ր զնքօք. և

** Ի բազումս պակասի. Ծնար, ոչ որ եհար զպորտ քո. և ո՛չ պնդ՝: Ուր օրինակ մի. Ոչ որ եհատ զպորտ: Զոր և երկու այլ օրինակք ՚ի լուս՝. միայն նշանակեն՝ Ակ. այսինքն՝ Ակիւղաս: Ոչ հատաւ պորտ քո:*

** Օրինակ մի. Եւ ոչ խնայեցի քեզ ակն իմ:*

** Ոմանք. Եւ եկիր մտել դու: Ուր Ոսկան. և եկեալ մտեր դու... մերկ և խայտառակ: Օրինակ մի. Եւ մեղք արծակեցան:*

** Ոսկան. Եւ ուխտեցի ընդ քեզ, ասէ Ադո՞:*

** Ոսկան. Եւ զգեցուցի քեզ պէսպէսս: Ոմանք. Քեզ երկնագոյնս:*

** Զօրինակին ՚ի բնաբանի գրեալ համեմատ միում և եթ օրինակի. Եւ զոշապահանգս, ՚ի լուսանցսն ուղղագրի՝ զորշապահանգս, համաձայն այլոց բազմաց:*

** Օրինակ մի. Բեհեզ և զազնաւուխտ: Զօրինակին բառս ճաճանջանաւուխտ, առաջնոյն քերմամբ և վերստին գրութեամբ էր յարմարեալ, համեմատ այլ միում օրինակի. ուր մնացեալ հինգ օրինակք ունին՝ ճաճանաւուխտ: Իսկ Ոսկան. ճաճանջաւուխտ:*

** Ոսկան. Եւ պոռնկեցար յանուն քո. և տարա՞:*

** Զօրինակին ՚ի բնաբանի ՚ի մէջ ար ականս դատարկ թողեալ, ՚ի լուս՝. նշանակի վանկս ու ՚ի ներքս բերել, և առնել՝ արուականս. համաձայն այլոց:*

զելոսն իմ և գիտունկսն եդիր առաջի երեսաց նոցա.¹⁹ և զհացն իմ զոր ետու քեզ՝ և զնաշիհն և զելո և զմեղր զոր ջամբեցի քեզ՝ եդիր առաջի երեսաց նոցա՝ ի հոտ անուշից: Եւ եղև յետ այնորիկ՝ ասէ Ադովնայի Տէր,²⁰ առեր զուստերսն քո և զդստերս զոր ինձ ծնար՝ զոհեցեր նոցա՝ ի սատակունն: Իբրև զփոքր ինչ համարեցար զպոռնկութիւնն*.²¹ և զեներ զորդիսն իմ, և արարեր զնոսա նոցա ջնջոցս: ²²Եւ այն անհնարին եղև քան զամենայն պոռնկութիւնս և պղծութիւնս քո. և ո՛չ յիշեցեր զաւուրս տղայութեան քոյ, ի ժամանակի յորում էիր մերկ և խայտառակեալ, և թաւալեալ յարեան քում, ուստի կենդանացարն*.²³ և եղև յետ ամենայն չարեացն քոց՝ վայ՛ վայ՛ քեզ՝ ասէ Ադովնայի Տէր: ²⁴Եւ շինեցեր դու քեզ տուն պոռնկութեան, և արարեր քեզ բազինս յամենայն հրապարակս քո*:²⁵ Եւ ի գլուխս ամենայն ճանապարհաց քոց շինեցեր զպոռնկոցս քո, և ապականեցեր զգեղ երեսաց քոց, և լայնեցար ամենայն անցաւորաց ճանապարհի՝ և յաճախեցեր զպոռնկութիւնս քո: ²⁶Եւ պոռնկեցար ընդ որդիսն Եգիպտացոց սահմանակիցս քո ընդ մեծանդամս. և բազմապատիկ պոռնկեցար՝ զի զիս բարկացուցես: ²⁷Արդ՝ ես ձգեցից զձեռն իմ ի վերայ քո և բարձից զիրաւունս քո, և մատնեցից զքեզ ի ձեռս ատելեաց քոց դստերաց այլազգեացն, որք թիրեին զքեզ ի ճանապարհէ քումն: ²⁸Ամպարշտեցար և պոռնկեցար ընդ որդիսն Ասորեստանեայց, սակայն և այնպէս ո՛չ յազեցար. յաճախեցեր ի պոռնկութիւնս քո, սակայն և այնպէս ո՛չ յազեցար: ²⁹Յաճախեցեր դաշինս ընդ երկիրն Քանանու և Քաղդեացոց, համայն և այնպէս ո՛չ յազեցար*:³⁰ Զի՞նչ արարից ընդ դստերս քո. ասէ Ադովնայի Տէր. յետ գործելոյ քո զայդ ամենայն գործս կնոջ պոռնկի. զի պոռնկեցար բազմապատիկ ընդ դստերսն քո*:³¹ Եւ շինեցեր զպոռնկոցս ի գլուխս ամենայն ճանապարհաց, և կոթողս կոթողէիր յամենայն հրապարակս. և ո՛չ եղեր իբրև զկին մի պոռնիկ որ ժողովէ զկապէնս. ³²զի ամենայն կին պոռնիկ նմանօր քո, որ շնայցէ ընդ արամբ իւրով, ո՛չ առնու զանձս յառնէ իւրմէ՝ և տայ վարձս հոմանեաց իւրոց*:³³ Ամենայն պոռնիկք կապէնս առնուն անձանց իւրեանց, և դու տայիր վարձս սիղեխաց քոց, և աւերծէիր զնոսա զա՛լ առ քեզ յամենայն կողմանց ի պոռնկութիւնս քո*:³⁴ Եւ եղև քեզ ի խոտորնակի քան զամենայն կանանց ի պոռնկութեան քում. և յետ քո ո՛չ պոռնկեցան. զի նոքա կապէնս առնուն յարանց, և դու տայիր վարձս սիղեխաց. և եղև քեզ այն ի խոտորնակի*:³⁵ Վասն այդորիկ պոռնիկ լո՛ւր զպատգամս Տեառն*.³⁶ Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի հեղեր արկեր զպղինձ քո. և յայտնեսցի ամօթ պոռնկութեան քոյ առաջի հոմանեաց քոց. և յամենայն խորհուրդս անօրէնութեանց քոց, և յարիւնս որդւոց քոց զորս տայիր նոցա: ³⁷ Վասն այնորիկ ահաւասիկ ես ժողովեցից ի վերայ քո զամենայն հոմանիս քո, ընդ որս դու խառնակէիր. և յարուցից ի վերայ քո զամենայն սիրելիս և զատելիս քո. և ժողովեցից

* *Ոմանք.* Իբրև փոքր ինչ հա՛:

* *Այլք.* Եւ թաթաւեալ յարեան քում: *Ուր Ոսկան.* Եւ թօթափեալ յար՛:

* *Ոմանք.* Բազին յամենայն հրա՛:

* *Բազուք.* Սակայն և այնպէս ո՛չ յազե՛:

* *Յօրինակին պակասէր.* Գործելոյ քո զայդ:

* *Ոմանք.* Որ շնայցէն ընդ արամբ:

* *Ոսկան.* Սեղեխաց քոց: *Բազուք.* Եւ ուղերծէիր զնոսա:

* *Ոսկան.* Սեղեխաց քոց: *Բազուք.* Եւ եղև քեզ խոտորնակի քան ամենայն:

* *Ոմանք.* Վասն այնորիկ պոռնիկ: *Ոսկան.* Վասն այդորիկ պոռնկիս, լո՛ւր:

պատեցից զնոսա շուրջ զքև. և յայտնեցից զչարիս քո առաջի նոցա, և տեսցեն զամենայն խայտառակութիւնս քո*։ ³⁸Եւ խնդրեցի՛ց ՚ի քէն զվրեժ շնացելոյ և արիւնահեղի. և եղից զքեզ յարիւն քո, և եղից զքեզ յարիւն սրտմտութեան և նախանձու։ ³⁹Եւ մատնեցից զքեզ ՚ի ձեռս նոցա. և կործանեսցեն զպոռնկոցս քո, և քակեսցեն զկոթողս քո, և մերկասցեն ՚ի քէն զհանդերձս քո, և առցեն զպսակս պարծանաց քոց. և թողցեն զքեզ մե՛րկ խայտառակեալ*։ ⁴⁰և աճցեն ՚ի վերայ քո ամբոխ, և քարկոծեսցեն զքեզ վիմօք. և կոտորեսցեն զքեզ սրով իւրեանց. ⁴¹և այրեսցեն զտոււնս քո հրով՝ և արասցեն ՚ի քեզ վրեժխնդրութիւն առաջի կանանց բազմաց. և դարձուցից զքեզ ՚ի պոռնկութենէ քումմէ, և վարձս ո՛չ ևս տացես նոցա։ ⁴²Եւ արձակեցի՛ց զսրտմտութիւն իմ ՚ի վերայ քո, և բարձցի նախանձն իմ ՚ի քէն. և հանգեայ՛ց՝ և ո՛չ ևս հոգացայց. ⁴³փոխանակ զի ո՛չ ևս յիշեցեր զօր տղայութեան քոյ. և տրտմեցուցանէիր զիս ՚ի վերայ ամենայնի այդորիկ. և ես ահաւասիկ ըստ ճանապարհացն քոց ետու ՚ի գլուխս քո. ասէ Ադովնայի Տէր. և այնպէս արարեր ամպարշտութիւնս ՚ի վերայ ամենայն անօրէնութեանց քոց*։ ⁴⁴Այս ամենայն է զոր մրմնջէին զքէն առակօք՝ և ասէին, եթէ որպէս մայրն՝ նոյնպէս և դուստրն։ ⁴⁵Արդ՝ դուստր մօրն դու՛ ես, որ մերժեաց զայր իւր և զորդիս իւր, և քոյր քերցն քոց որք մերժեցին զարս իւրեանց՝ և զորդիս իւրեանց։ Մայր ձեր Քետացի, և հայր ձեր Ամովրիացի*։ ⁴⁶և քոյր ձեր երէց Շամրինի, ինքն և դստերք իւր, որ բնակեալ է ՚ի ձախմէ քումմէ. և քոյր քո կրտսեր, որ բնակեալ է ընդ աջմէ քումմէ, Սողոմ և դստերք իւր*։ ⁴⁷Սակայն ո՛չ ևս ըստ ճանապարհաց նոցա զնացեր, և ո՛չ ըստ անօրէնութեանց նոցա արարեր. զի փոքր մի առաւել՝ գտար քան զնոսա յամենայն ճանապարհս քո*։ ⁴⁸Կենդանի՛ եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր՝ եթէ արար ինչ աւելի Սողոմ քոյրն քո, ինքն և դստերք իւր, քան զոր արարեր դու՛ և դստերք քո։ ⁴⁹Բայց այս է անօրէնութիւն Սողոմայ քեռ քոյ. ամբարտաւանութիւն, ՚ի լիութեան հացի և յղփութեան զինւոյ՝ փափկանայր ինքն և դստերք իւր. այնու՛ առաւել էր ինքն և դստերք իւր։ Եւ ձեռն յաղքատն և ՚ի տնանկն ո՛չ կարկառէին*։ ⁵⁰մեծամտէին և զործէին զանօրէնութիւն առաջի իմ. իբրև զայն տեսի՝ բարձի զնոսա*։ ⁵¹Նա՛ և Շամրին զկէս յանցանաց քոց ո՛չ յանցեաւ. և յաճախեցեր զանօրէնութիւնս քո առաւել քան զնոսա, և արդարացուցեր զքորս քո յամենայն անօրէնութիւնս քո զոր արարեր։ ⁵²Եւ արդ ընկալ՝ զտանջանս քո որ ապականեցեր զքորսն քո, անօրէնութեամբքն զոր անօրինեցար առաւել քան զնոսա. և արդարացուցեր զնոսա յո՛յժ քան զքեզ. և արդ յամօթ լեր և կրեա՛ զանարգանս ՚ի յարդարացուցանել զքորսն քո քան զքեզ։ ⁵³Եւ դարձուցից զդարձուածս նոցա, զդարձուածս Սողոմայ՝ և զդստերաց իւրոց. և դարձուցից զդարձուածս

* *Ոմանք.* Դուն խառնակէիր, յարուց՝... և ժողովեցից և պատեցից։

* *Ոմանք.* Եւ առցեն զպսակ պար՝... և խայտառակեալ։ *Ուր Ոսկան.* Եւ առցեն զպասս պարծա՛։

* *Բազումք.* Չի ոչ յիշեցեր զօրն։ *Ոմանք.* Եւ ես աւասիկ զճանապարհացն քոց ետու ՚ի գլուխս քո. ասէ Ադովնայի Տէր Տէր... ամպարշտութիւն ՚ի վերայ ամենայն։

* *Ոմանք յաւելուն.* Մօրն քո դու՛ ես։

* *Բազումք.* Եւ քոյր ձեր երէց Շամրին։ *Ոմանք յաւելուն.* Եւ քոյր քո *Քետացի* կրտսեր։

* *Ոմանք.* Սակայն և ոչ ըստ ճա՛։

* *Բազումք.* Բայց այս էր տնօ՛։

* *Ոմանք.* Եւ իբրև զայն տես՛։

Շամրնի, և զդստերաց նորա. և դարձուցից զդարձուածս քո՝ ի միջի քո՝.⁵⁴ զի ընկալցիս զտանջանս քո, և անարգեսցիս յամենայնէ զոր արարեր ՚ի բարկացուցանել զիս: ⁵⁵Եւ քոյր քո Սողոմ, և դստերք իւր անդրէն հաստատեսցին, որպէս և էինն իսկզբանէ. և Շամրին՝ և դստերք իւր հաստատեսցին անդրէն որպէս և էինն իսկզբանէ. և դու և դստերք քո հաստատեսցիք ՚ի նոյն՝ որպէս և էիք իսկզբանէ: ⁵⁶Եւ եթէ ո՛չ էր Սողոմ քոյր քո համբաւ ՚ի բերան քո՝ յաւուրս հպարտութեան քոյ՝.⁵⁷ մինչև յայտնեալ էին չարիքն քո, որպէս այժմոյ նախատ եղեր դստերացն Ասորոց, և ամենեցուն որ շուրջ զնովաւ էին դստերք այլազգեաց, և պատեալ շուրջ զքե: ⁵⁸Արդ՝ կրեա՛ զամպարշտութիւնս քո և զանօրէնութիւնս քո՝ ասէ Տէր*:⁵⁹ Ձի ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Եւ արարից ընդ քեզ՝ որպէս արարե՛րն, որպէս անարգեցեր զայն ամենայն անցանել զուխտիւ իմով: ⁶⁰Եւ յիշեցի՛ց զուխտն իմ որ ընդ քե՛զն էր յաւուրս տղայութեան քոյ. և կանգնեցից ինձ ուխտ յաւիտենական*.⁶¹ և յիշեցից զճանապարհսն քո՝ և անարգեսցիս, յորժամ զնտա՛ւ ածիցես զքորսն քո՝ զերիցունսն հանդերձ կրսերօքն. և տաց զնոսա քեզ ՚ի փորձ, և ո՛չ ՚ի դաշնաւորս*:⁶² Եւ կանգնեցի՛ց ես զուխտ իմ որ ընդ քեզ, և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր*.⁶³ զի յիշեսցես՝ և ամաչեսցես, և մի՛ ևս լիցի քեզ բանալ զբերան քո առաջի անարգանաց քոց, ՚ի քաւել ինձ զամենայն գործս քո զոր գործեցեր. ասէ Ադովնայի Տէր:

17

Գլուխ ԺԷ

Առակ վասն արծուեացն:*

ԺԳ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ.² Որդի՛ մարդոյ՝ պատմեա՛ պատմութիւն, և խօսեա՛ց առակ առ տունդ Իսրայէլի,³ և ասասցես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Արծուին մեծ՝ մեծաթև՝ երկայնատարած՝ լի՛ լիամագիլ որ խորհեցաւ մտանել ՚ի Լիբանան, և ա՛ռ զընտիր ընտիր մայրիցն*.⁴ և եհան զմատաղատունկն՝ և տարաւ յերկիրն Քանանացւոց, և տնկեաց զնա՝ ՚ի պարսպաւոր քաղաքին*:⁵ Եւ ա՛ռ ՚ի սերմանէ երկրին, և ցանեաց ընդ երես դաշտին՝ տունկ մանրատունկ, ընդ առատութեամբ ջրոյ երևելի՝ առնել կարգեաց զնա*.⁶ և բուսա՛ւ՝ և եղև յորթ տկար. և փոքր տեսութեամբ, յերևել ուռոց իւրոց ՚ի նմա. և արմատք նորա ՚ի ներքոյ նորա էին, և եղև յորթ մեծ. և եհան անդ ողկոյզս, և արծակեաց զբարունակս իւր*:⁷ Եւ երևեցաւ ա՛յլ արծուի մեծ, մեծաթև՝ բազմամագիլ, և ահա

* *Բազումք.* Չդարձուածս քո ՚ի միջի նոցա:

* *Ոմանք.* Համբաւ ՚ի բերանոյ քո:

* *Ոմանք.* Եւ զանհրաւութիւն քո, ասէ:

* *Բազումք.* Եւ ոչ յիշեցից զուխտն իմ:

* *Օրինակ մի.* Եւ յիշեսցես զճանապարհսն քո:

* *Ոմանք.* Չուխտ իմ ընդ քեզ:

* *Յոմանս պակասի այս վերնագիր*՝ Առակ վասն արծուեացն:

* *Ի բազումս պակասի.* Լի լիամագիլ:

* *Ոմանք.* Եւ տնկեաց զնոսա ՚ի պարսպաւոր քաղաքի:

* *Բազումք.* Ընդ երեսս դաշտին:

* *Ոսկան.* Տկար. փոքր մեծութեամբ:

որթս այս պատեալ է զնովաւ, և արմատք սորա 'ի նմա, և ուռք նորա 'ի ներքոյ նորա. և առաքեաց արբուցանել զնա հանդերձ բուսով տնկոյ նորա. 'ի զեղեցիկ դաշտին* ⁸ընդ բազում ջրով պարարեսցի, արձակել շառաւիղս, և բերել պտուղս, և լինել յորթ մեծ: ⁹Վասն այսորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Եթէ իցէ աջողեսցի. ոչ ապաքէն արմատք փափկութեան նորա, և պտուղ նորա նեխեսցին. և չորասցին ամենայն շառաւիղք նորա. և ո՛չ բազկաւ մեծաւ՝ և ո՛չ ազգաւ բազմաւ՝ բուռն հարկանել և խլել զնա յարմատոց իւրոց*: ¹⁰Եւ արդ պարարեսցի՞, մի՛ յաջողեսցի. ո՞չ ապաքէն ընդ մերձեալն հողմոյ խորշակի՝ ցամաքեսցի հանդերձ բուսովն և շառաւիղօք իւրովք*: ¹¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. Որդի մարդոյ, ¹²ասա՛ ցտունդ Իսրայէլի տուն դառնացողաց. Ո՛չ գիտէք զի՞նչ է այդ զոր ասացիդ. յորժամ եկեսցէ թագաւորն Բաբելացոց յերուսաղէմ, առցէ զթագաւոր նորա և զիշխանս, և տարցի զնոսա առ ինքն 'ի Բաբելովն*: ¹³Եւ առցէ 'ի զաւակէ թագաւորութեանն, և դիցէ ընդ նմա ուխտ, և անցուցէ ընդ նզովս. և զիշխանս երկրին առցէ*, ¹⁴լինել 'ի թագաւորութիւն տկար, ամենկին ո՛չ բարձրանալ. պահել զուխտ նորա՝ և կալ 'ի նմին: ¹⁵Եւ սա՛ ապստամբեսցի՞ 'ի նմանէ առաքել հրեշտակս յեգիպտոս, տալ նմա երիվարս և զօրս բազումս. եթէ իցէ աջողեսցի՞, եթէ իցէ ապրեսցի՞. որ առնէ իրս հակառակս, և անցանէ ըստ ուխտ. եթէ իցէ ապրեսցի՞: ¹⁶Կենդանի՛ եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր. եթէ ո՛չ 'ի տեղուք յորում թագաւորն թագաւորեցոյց զնա. որ անարգեաց զնզովսն իմ, և անց ըստ ուխտն իմ որ ընդ նմա. 'ի մէջ Բաբելոնի վախճանեսցի*: ¹⁷Եւ ո՛չ զօրութեամբ մեծաւ, և ո՛չ զնդաւ բազմաւ տացէ ընդ նմա պատերազմ փարաւոն. պատնէշս և նետակալս շինեսցէ սատակել զանձինս բազմաց. ¹⁸զի անարգեաց զերդումն, և անց զուխտին. և ահա ետու 'ի ձեռս նորա, և արարի զայս ամենայն ընդ նմա, միթէ ապրեսցէ՞: ¹⁹Վասն այսորիկ ասա՛. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Կենդանի՛ եմ ես ասէ Ադովնայի Տէր՝ եթէ ոչ ըստ ուխտին իմում զորով անց, և ըստ երդմանն իմոյ զոր անարգեաց, հատուցից 'ի գլուխ նորա*: ²⁰Եւ սփռեցից 'ի վերայ նորա զվարմ իմ, և ըմբռնեսցի ընդ պաշարմամբ իմով. և ածից զնա 'ի Բաբելոն, և անդ դատեցայց ընդ նմա ըստ անիրաւութեան նորա զոր անիրաւեցաւ առ իս*. ²¹Եւ ըստ ամենայն խուսափանաց նորա. յամենայն պատերազմունս նորա սրով անկցին, և զմնացորդս նորա ընդ ամենայն հողմս ցրուեցից. և ծանիջիք զի ես Տէր խօսեցայ: ²²Վասն այնորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Եւ առից ես յընտիր ընտիր մայրից բարձուանդակին. և տա՛ց ես 'ի գլխոյ շառաւիղացն նորա 'ի սիրտս նոցա. քշտեցից և տնկեցից 'ի վերայ լերինն բարձու*. ²³Եւ կախեցից զնա

* *Ոսկան.* Պատեալ էր զնովաւ, և արմատք սորա 'ի նա:

* *Ոմանք.* Եւ պտուղ նորա նեխեսցի:

* *Բազումք.* Ընդ մերձեմալ հողմոյ:

* *Ոմանք.* Ասա՛ դու ցտունդ Իսրայէլի... եկեսցէ արքայն Բաբելացոց:

* *Ոսկան.* Եւ անցուցէ նզովս:

* *Բազումք.* Եւ ապստամբեսցի... որ առնեն իրս հակա՛: *Ոսկան.* Եթէ իցէ ապրեսցին:

* *Ոսկան.* Եթէ ոչ և 'ի տեղ՛:

* *Բազումք.* Միթէ ապրեսցի:

* *Յօրինակին պակասէր.* Վասն այսորիկ ասա՛, այսպէս:

* *Բազումք.* Եւ ըմբռնեցից ընդ պաշարմամբ:

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս... մայրիցն բարձուանդակէն: *Ուր Ոսկան.* բարձու աւանդակին: *Բազումք.* Եւ տնկեցից 'ի լերինն բարձու՛:

զբարձրացեալ լեռնէն Իսրայէլի. տնկեցից՝ և ոստս արձակեսցէ և պտուղ բերցէ, և եղիցի ՚ի մայր մեծ. և հանգիցեն ընդ նովաւ ամենայն գազանք, և ամենայն հաւք թռչունք ընդ հովանեալ նորա դադարեսցին. և բարունակք նորա ՚ի նմին հաստատեսցին*։ ²⁴Եւ ծանիցեն ամենայն փայտք դաշտի՝ թէ ես եմ Տէր. որ խոնարհեցուցանեն զփայտ բարձրացեալ, և բարձրացուցանեն զփայտ խոնարհեալ. ցամաքեցուցանեն զփայտ դալար, և դալարացուցանեն զփայտ զօսացեալ. ես Տէր խօսեցայ՝ և արարից*։

18

Գլուխ ԺԸ

ԺԴ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ զի՞նչ է ձեզ առակդ այդ՝ ՚ի մէջ որդւոցդ Իսրայէլի զոր ասեն. թէ հարք ազոխ կերան, և որդւոց ատամունք առան*։ ³Կենդանի՛ եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր, եթէ լինիցի առակդ այդ որ ասի ՚ի մէջ Իսրայէլի*։ ⁴Զի ամենայն անձինք իմ են. որպէս անձն հօր՝ նոյնպէս և անձն որդւոյ. անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի։ ⁵Այլ մարդն որ արդար իցէ, և առնիցէ զիրաւունս և զարդարութիւն. ⁶ի վերայ լերանց զոհեալ՝ ոչ ուտիցէ. և զաչս իւր ՚ի կուռս տանն Իսրայէլի ոչ արձակիցէ. և զկին ընկերի իւրոյ ոչ ապականիցէ. և ՚ի կին իւր ապարահ ոչ մերժենայցէ*։ ⁷Եւ մարդոյ՝ բուռն ոչ լինիցի. զգրաւ պարտապանի դարձուցանիցէ. յափշտակութիւն ոչ յափշտակիցէ. զհաց իւր տացէ քաղցելոց, և զմերկն զգեցուցանիցէ. ⁸զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տացէ, և տոկոսեօք անդրէն ոչ պահանջիցէ. յանիրաւութենէ զձեռս իւր դարձուցանիցէ. դատաստան արդար առնիցէ ընդ այր և ընդ ընկեր իւր*։ ⁹Ըստ հրամանաց իմոց գնայցէ, զիրաւունս իմ պահիցէ և առնիցէ զնոսա. արդար է նա՝ կելով կեցցէ, ասէ Ադովնայի Տէր։ ¹⁰Եւ եթէ ծնանիցի որդի խառնագնաց, արիւնահեղ, և առնիցէ զմեղս. ¹¹ի ճանապարհս հօրն իւրոյ արդարոյ՝ ոչ գնաց. և ՚ի վերայ լերանց եկեր զոհեալ. և զկին ընկերի իւրոյ պղծեաց. ¹²և զաղքատն և զտնանկն յաղթահարեաց, և յափշտակութիւն յափշտակեաց, և զգրաւ ոչ դարձոյց, և ՚ի պաշտօն դից զաչս իւր արձակեաց, անօրէնութիւն գործեաց. ¹³զարծաթ իւր ՚ի վարձու ետ, և վաշխիւ և տոկոսեօք պահանջեաց. նա՝ մի՛ կեցցէ որ զայն ամենայն անօրէնութիւնս արար՝ մահու մեռցի. և արիւն նորա ՚ի վերայ նորին եղիցի*։ ¹⁴Եւ եթէ ծնանիցի որդի՝ և տեսանիցէ զամենայն մեղս հօր իւրոյ զոր գործեաց. և երկիցէ՝ և ոչ արասցէ զնոյնս։ ¹⁵Ի վերայ լերանց զոհեալ ոչ եկեր. և զաչս իւր ՚ի խորհուրդս տանն Իսրայէլի ոչ արձակեաց. և զկին ընկերի իւրոյ ոչ ապականեաց. ¹⁶և զմարդ ոք ոչ յաղթահարեաց. և զգրաւ ոչ գրաւեաց. և յափշտակութիւն ոչ յափշտակեաց. զհաց իւր ետ քաղցելոց, և զմերկն զգեցոյց. ¹⁷և յանիրաւութենէ դարձոյց զձեռս

* Ոսկան. Եւ պտուղ բերիցէ և եղիցի մայր մեծ: *Բազումք.* Դադարեսցեն:

* Ոմանք. Զփայտն խոնարհացեալ... և դալարեցուցանեն... խօսեցայ և արարի:

* *Օրինակ մի.* Եւ որդւոցն ատամունք առին:

* *Բազումք.* Եթէ լիցի առակդ:

* *Երկու նոր օրինակք համաձայնք իրերաց.* Եւ ՚ի կին իւր ապահար ոչ:

* *Ոմանք.* Եւ զարծաթ իւր ՚ի վարձ ոչ տայցէ, և տոկոսիւք: *Ոսկան.* Յանիրաւութենէ զաչս իւր դարձ: *Օրինակ մի.* Ընդ այր և ընդ կին իւր:

* *Ոմանք.* Անօրէնութիւն արար... և արիւն նորին ՚ի վերայ նորին:

իւր. վաշխս և տոկոսիս ո՛չ առ. արդարութիւն գործեաց. և ըստ հրամանաց իմոց գնաց. նա՝ մի՛ վախճանեսցի յանիրաւութիւնս հօր իւրոյ, այլ կելո՛վ կեցցէ՛:

¹⁸Բայց հայրն նորա թէ նեղելով նեղիցէ, և յափշտակելով յափշտակիցէ զեղբայր իւր, հակառակութեան գործս գործեաց ՚ի մէջ ժողովրդեան իմոյ. մեռցի՛ յանիրաւութեան իւրում՝: ¹⁹Եւ ասէք թէ զի՞ է զի ո՛չ եհաս անիրաւութիւն հօրն՝ որդւոյն. զի որդին ողորմութիւն և արդարութիւն արար. զամենայն օրէնս իմ պահեաց և արար զնոսա, կելո՛վ կեցցէ՛:

²⁰Անձն որ մեղիցէ, նոյն և մեռցի. և որդի զհօր մեղս մի՛ առցէ. և մի՛ հայր առցէ զանիրաւութիւնս որդւոյ իւրոյ: Արդարութիւն արդարոյն՝ ՚ի վերայ նորին եղիցի, և անօրէնութիւն անօրինին՝ ՚ի վերայ նորին եղիցի՝: ²¹Եւ անօրէնն եթէ դարձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր արար. և պահիցէ զամենայն պատուիրանս իմ, և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կելով կեցցէ, և մի՛ մեռանիցի՝: ²²Ամենայն յանցանք նորա զոր գործեալ իցէ, և ամենայն անիրաւութիւնք նորա զոր անիրաւեալ իցէ՝ մի՛ յիշեսցին. այլ արդարութեանք իւրով զոր արար՝ կեցցէ՛:

²³Միթէ կամելով կամիցի՞մ զմահ մեղաւորին ասէ Տէր Տէր՝ որպէս զդառնալ նորա ՚ի չար ճանապարհէ՝ և կեալ՝: ²⁴Ի դառնալ արդարոյն յարդարութենէ իւրմէ, և առնել զանիրաւութիւն, ըստ ամենայն անօրէնութեանց՝ զոր առնիցէ անօրէնն. ամենայն արդարութիւնք նորա զոր արար՝ մի՛ յիշեսցին. ՚ի յանցանսն իւր յոր անկաւ, և ՚ի մեղս իւր զոր մեղաւ՝ ՚ի նոսին մեռցի՝: ²⁵Եւ ասէք՝ թէ ո՛չ աջող է ճանապարհ Տեառն. արդ լուարուք տունդ Իսրայէլի. միթէ ի՞մ ճանապարհ չիցէ աջող, ոչ ապաքէն ձեր ճանապարհք չեն աջող՝: ²⁶Եւ ՚ի դառնալ արդարոյն յարդարութենէ իւրմէ, և առնել զանիրաւութիւն մեռցի յանօրէնութեանն զոր գործեաց՝: ²⁷Եւ ՚ի դառնալ անօրինին յանօրէնութենէ իւրմէ զոր արար, և առնիցէ իրաւունս և արդարութիւն, ինքն զանձն իւր ապրեցոյց. ²⁸զի ետես և դարձաւ յամենայն ամպարշտութեանց իւրոց զոր արար. կելով կեցցէ և մի՛ մեռցի: ²⁹Եւ ասեն տունդ Իսրայէլի. Ո՛չ ուղիդ է ճանապարհ Տեառն. միթէ ի՞մ ճանապարհ չիցէ ուղիդ տունդ Իսրայէլի, ոչ ապաքէն ձեր ճանապարհք չեն ուղիդ: ³⁰Վասն այսորիկ զհւրաքանչիւրոք ըստ իւրում ճանապարհի դատեցայց տունդ Իսրայէլի. ասէ Ադովնայի Տէր: Դարձայք և դարձարուք յամենայն ամպարշտութեանց ձերոց. և ո՛չ լինիցի ձեզ ՚ի տանջանս անիրաւութեան՝: ³¹Ընկեցէ՛ք յանձանց ձերոց զամենայն ամպարշտութիւնս ձեր զոր ամպարշտեցայք յիս. և արարէ՛ք ձեզ սիրտ՝ նոր, և ոգի՛ նոր. և արարէ՛ք զամենայն զպատուիրանս իմ. և ընդէ՛ր մեռանիք տունդ Իսրայէլի, ասէ Տէր: ³²Ձի ո՛չ կամին զմահ մեղուցելոյն՝ ասէ Ադովնայի Տէր. այլ զի դարձցի ՚ի

* *Ոմանք.* Դարձոյց զձեռն իւր: *Ի լուս*՝. Յանօրէնութիւնս հօր իւր՝. *համաձայն ոմանց ՚ի բնար*՝:

* *Ոմանք.* Եւ մեռցի յանօրէնութեան իւ՞ն:

* *Ոսկան.* Եւ ասէ թէ զի՞ է:

* *Ոսկան.* Նոյն մեռցի. և որդի զհօրն զմեղս:

* *Ոմանք.* Եւ պահեսցէ զամենայն... և մի՛ մեռցի:

* *Բազումք.* Ամենայն մեղք նորա զոր գոր՝... անիրաւութիւնք իւր զոր:

* *Ոմանք.* Ձմահ անօրինին, ասէ Տէր Տէր... ՚ի չար ճանապարհէն և զկեալն:

* *Ոմանք.* Եւ ՚ի դառնալ ար՝... ՚ի յանցանս իւրում յոր անկաւ, և ՚ի մեղսն իւրում զոր մե՛ն:

* *Ոմանք.* Իմ ճանապարհ ո՞չ իցէ յաջող... ձեր ճանապարհք չիցեն աջողք:

* *Բազումք.* Ի դառնալ ար՝:

* *Յօրինակին պակասէր.* Յամենայն ամպարշտութեանց *ձերոց*:

ճանապարհաց իւրոց չարեաց, և կեցուցէ զանձն իւր. արդ՝ եկայ՞ք դարձարո՛ւք՝
և կեցէ՞ք՝:

19

Գլուխ ԺԹ

Ողբ ՚ի վերայ իշխանին Իսրայէլի՝:

ԺԵ ¹Եւ դու որդի մարդոյ, ո՛ղբս առ ՚ի վերայ իշխանին Իսրայէլի. ²և ասացես. Զի՞ է զի եղև մայր քո ՚ի մէջ առիւծուց. կորիւնդ ՚ի մէջ առիւծուց բազմացոյց զկորիւնս իւր: ³Եւ զարգացաւ կորիւն մի ՚ի կորեանց նորա. և առիւծացա՛ւ, և ուսաւ յափշտակել զյափշտակութիւն, և եղև մարդախանձ՝: ⁴Լուա՛ն զնմանէ ազգք, ըմբռնեցին զնա յապականութիւն. և տարան զնա գայլիբերան՝ յերկիրն Եգիպտացոց՝: ⁵Եւ ետես զի անջատեցաւ ՚ի նմանէ, և կորեա՛ւ յոյս նորա. և նա մի՛ւս ևս այլ կորիւն ՚ի կորեանց իւրոց առիւծացոյց՝. ⁶և շրջէր ՚ի մէջ առիւծուց: Առիւծացաւ, և ուսաւ յափշտակել յափշտակութիւն, և եղև մարդախանձ: ⁷Որսայր յանդգնութեամբ իւրով. զքաղաքս կործանէր, և զերկիրն լրիւ իւրով ապականէր մռնչելով բարբառոյ իւրոյ՝: ⁸Եւ յարեան ՚ի վերայ նորա ազգք յիւրաքանչիւր աշխարհաց շուրջանակի, և պատեցին զնա թակարդօք յապականութիւն: ⁹Գայլիբերան հարին, և տարան զայռագղիւ առ արքայն Բաբելացոց, և արկին զնա ՚ի բանտ. զի մի՛ ևս լուիցի բարբառ նորա ՚ի վերայ լերանցն Իսրայէլի՝: ¹⁰Սայր քո իբրև զորթ, և իբրև զծաղիկ նմենեաց տնկեալ ՚ի զնացս ջուրց. բոյս նորա և պտուղ նորա եղև ՚ի ջուրց բազմաց՝: ¹¹Եւ եղև նորա գաւազան զօրութեան ՚ի վերայ ազգին իշխանաց, և բարձրացաւ մեծութեամբ ՚ի մէջ դարաստանաց. և ետես՝ զմեծութիւն իւր ՚ի բազմութեան ուռոց իւրոց՝. ¹²և բեկա՛ւ ՚ի բարկութեան՝ և յերկիր կործանեցաւ, և հողմ խորշակի ցամաքեցոյց զշառաւիղս նորա. խնդրեցաւ ՚ի նմանէ վրէժ, և ցամաքեցաւ գաւազան զօրութեան նորա. և հուր մաշեաց զնա՝: ¹³Եւ անդ տնկեցին զնա յանապատի յերկրի յանջրդին՝. ¹⁴և ել հուր յընտիր ընտիր գաւազանաց նորա՝ և եկեր զնա. և ո՛չ գոյր ՚ի նմա գաւազան զօրութեան. ա՛զգ յառակս ողբոց և յո՛ղբս եղիցի՝:

20

* Այլք. ՚ի ճանապարհաց իւրոց չարաց:

* Բազոււնք. Ողբք ՚ի վերայ իշ՞:

* Ոսկան. Եւ կորիւն մի ՚ի կորեանց նորա առիւծա՞:

* Բազոււնք. Գայլ ՚ի բերան:

* Օրհնակ մի. Եւ նա մի ևս կորիւն ՚ի կորեանցն իւրոց:

* Օրհնակ մի. Ապականէր ՚ի մռնչելոյ բար՞:

* Ոմանք. Գայլ ՚ի բերան հարին, և տարան զառագաղիւ:

* Ոմանք. Եւ պտուղ եղև:

* Օրհնակ մի. Եւ բարձրացաւ զօրութեամբ ՚ի մէջ:

* Ոսկան. Եւ բեկաւ ՚ի բարկութենէ... և ցամաքեցաւ պնդութիւն զօրութեան նորա:

* Բազոււնք. Եւ արդ տնկեցին զնա... յերկրի անջրդի:

* Ոսկան. Յառակս ողբացէ, և յողբս եղի՞:

Գլուխ Ի

Առ ծերս տանն Իսրայէլի:

ԺՁ ¹Եւ եղև յամին եւթներորդի, յամսեանն հինգերորդի որ օր տասն էր ամսոյն. եկին արք ՚ի ծերոց տանն Իսրայէլի հարցանել ՚ի Տեառնէ՝ և նստան առաջի իմ: ²Եւ եղև բան Տեառն առ իս և ասէ. ³Որդի մարդոյ՝ խօսեաց ընդ ծերսդ տանդ Իսրայէլի՝ և ասացես ցոյսա. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Եթէ հարցանե՞լ գայք դուք առ իս. կենդանի՞ եմ ես եթէ տաց ինչ ձեզ պատասխանի՞ ասէ Ադովնայի Տէր: ⁴Եթէ իցէ խնդրեցից զվրէժ նոցա որդի մարդոյ. զմեղաց հարց դոցա դի՛ր դոցա վկայութիւն. ⁵և ասացես ցոյսա. Այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Յօրէ յորմէհետէ ցանկացայ ես տանդ Իսրայէլի, և ծանուցայ զաւակի տանդ Յակոբու. և ծանուցայ նոցա յերկրին Եգիպտացոց, ձեռն ետու նոցա և ասես. Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր*. ⁶յաւուր յայնմիկ ես ձեռն ետու նոցա հանել զնոսա յերկրէն Եգիպտացոց, յերկիրն զոր պատրաստեցի նոցա. երկիր որ բղխէ զկաթն և զմեղր, քա՛ղցր քան զամենայն երկիր*: ⁷Եւ ասացի ցնոսա. Իւրաքանչիւրք զգարչելիս իւր յաչաց իւրոց ՚ի բա՛ց ընկեսցէ, և ՚ի գնացսն Եգիպտացոց մի՛ պղծիք. Ե՛ս եմ Տէր Աստուած ձեր: ⁸Եւ ապստամբեցան յինէն, և ո՛չ կամեցան լսել ինձ. իւրաքանչիւրք զգարչելիս իւր յաչաց իւրոց ո՛չ ընկէց ՚ի բաց, և զգնացսն Եգիպտացոց՝ ո՛չ թողին. և ասացի հեղուլ զսրտմտութիւն իմ ՚ի վերայ նոցա, կատարել զբարկութիւն իմ ՚ի նոսա ՚ի մէջ Եգիպտացոցն: ⁹Բայց ոչ արարի, զի մի անուն իմ ամենկին մի՛ պղծեսցի առաջի ազգացն յորոց միջի իցեն նոքա. յորս ծանուցայ նոցա առաջի նոցա, հանել զնոսա յերկրէն Եգիպտացոց*: ¹⁰Եւ հանի՛ զնոսա յերկրէն Եգիպտացոց՝ և ածի զնոսա յանապատն. ¹¹և ետու նոցա զհրամանս իմ. և զհրաւունս իմ ցուցի նոցա, զոր առնիցէ մարդ՝ և կեցցէ ՚ի նոսա: ¹²Եւ զշաբաթս իմ ետու նոցա լինել նշանակ ընդ իս և ընդ նոսա. ճանաչել նոցա թէ ե՛ս եմ Տէր որ սրբեմ զնոսա: Եւ ասացի ցտունն Իսրայէլի յանապատի անդ՝ թէ ՚ի հրամանս իմ գնացէ՛ք, և ո՛չ գնացին. և զհրաւունս իմ պահեցէ՛ք, առնել զնոսա. զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ նոքօք*: ¹³Եւ դառնացուցին զիս տունն Իսրայէլի յանապատին. ըստ հրամանաց իմոց ո՛չ գնացին, և զհրաւունս իմ մերժեցին. զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ նոքօք. և զշաբաթս իմ պղծեցին յոյժ: Եւ ասացի հեղուլ զսրտմտութիւն իմ յանապատին սատակել զնոսա. ¹⁴և արարի զի անուն իմ ամենկին մի՛ պղծեսցի առաջի ազգացն յորոց հանի զնոսա յանդիման նոցա*: ¹⁵Եւ ես համբարծի զձեռս իմ ՚ի վերայ նոցա յանապատին, համօրէն չտանել զնոսա յերկրին՝ զոր ետու նոցա. երկիր որ բղխէ զկաթն և զմեղր. քա՛ղցր քան զամենայն երկիր*: ¹⁶Փոխանակ զի զհրաւունս իմ մերժեցին, և ըստ հրամանաց իմոց ո՛չ գնացին, և զշաբաթս իմ պղծեցին, և զհետ խորհրդոց սրտից իւրեանց գնացին: ¹⁷Եւ խնայեաց ՚ի նոսա

* Ոսկան. Եկին արք յորդւոց տանն:

* Բազումք. Այսպէս ասէ Տէր Աստուած:

* Ի բազումս պակասի. Յաւուր յայնմիկ ես ձեռն ե՛մ:

* Բազումք. Բայց արարի զի անուն իմ ամենկին մի՛:

* Ոմանք. Պահիցէք և առնիցէք զնոսա:

* Ոսկան. Իմ մի՛ ամենկին պղծեսցի:

* Ոմանք. Համբարծի զձեռն իմ: Բազումք. Ձնոսա յերկիրն զոր ե՛մ:

ակն իմ ջնջել զնոսա. և ո՛չ արար զնոսա ՚ի վախճան յանապատին*։ ¹⁸Եւ ասացի ցնոսա յանապատին. Ըստ կրօնից հարցն ձերոց մի՛ գնայք, և զիրաւունս նոցա մի՛ պահէք. և ՚ի գնացս նոցա մի՛ խառնակիք և մի՛ պղծիք*։ ¹⁹Ես եմ Տէր Աստուած ձեր, ըստ հրամանաց իմոց գնացէք, և զիրաւունս իմ պահեցէք՝ և արարէք զնոսա. ²⁰և զշաբաթս իմ սրբեցէք. և եղիցի նշանակ ընդ իս և ընդ ձեզ, ճանաչել ձեզ թէ ես եմ Տէր Աստուած ձեր։ ²¹Դառնացուցին զիս և որդիք նոցա, ըստ հրամանաց իմոց ո՛չ գնացին, և օրինաց իմոց ո՛չ զգուշացան առնել զնոսա. զոր թէ առնիցէ մարդ՝ կեցցէ նոքօք. և զշաբաթս իմ պղծեցին. և ասացի հեղուլ զսրտմտութիւն իմ ՚ի վերայ նոցա յանապատին, կատարել զբարկութիւն իմ ՚ի վերայ նոցա*։ ²²Եւ դարձուցի զձեռն իմ ՚ի նոցանէ. և արարի զի անուն իմ ամենևին մի՛ պղծեսցի առաջի ազգացն՝ յորոց հանի զնոսա յանդիման նոցա։ ²³Եւ ես ամբարձի զձեռն իմ ՚ի վերայ նոցա յանապատի անդ, ցրուել զնոսա ընդ ազգս, և ցանել զնոսա ընդ գաւառս*։ ²⁴Վոխանակ զի զիրաւունս իմ ո՛չ արարին, և զհրամանս իմ մերժեցին, և զշաբաթս իմ պղծեցին. և զհետ խորհրդոց հարցն իւրեանց էին աչք նոցա։ ²⁵Եւ ես ետու նոցա հրամանս անբարիս, և իրաւունս՝ որովք ո՛չ կեցցեն*։ ²⁶Եւ պղծեցից զնոսա ՚ի պատարագս իւրեանց. ընդ անցանել ինձ ընդ ամենայն՝ որ բանայ զարգանդ, զի սատակեցից զնոսա. և ծանիցեն եթէ ես եմ Տէր*։ ²⁷Վասն այդորիկ խօսեաց ընդ ծերս տանդ Իսրայէլի, որդի մարդոյ՝ և ասացես ցոյսա. Ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Մինչև ցա՛յսչափ բարկացուցին զիս հարքն ձեր յանցանօքն իւրեանց զոր յանցեան առ իս*։ ²⁸Եւ տարայ զնոսա յերկիրն յոր ամբարձի զձեռն իմ տալ նոցա զնա. և տեսին անդ զամենայն բլուրս բարձր, և զամենայն ծառ վարսաւոր, և զոհեցին անդ դիցն իւրեանց. և կարգեցին անդ զոհս պատարագաց իւրեանց. և արկին զխունկս անուշութեան իւրեանց, և նուիրեցին անդ զնուէրս իւրեանց*։ ²⁹Եւ ասացի ցնոսա. Ձի՞նչ է արբանայդ այդ յոր դուքդ մտանէք. և կոչեցին զանուն նորա Արբանա, մինչև ցայսօր ժամանակի*։ ³⁰Վասն այնորիկ ասա՛ ցտունն Իսրայէլի. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Եթէ յանօրէնութիւն հարցն ձերոց պղծիք, և զհետ գարշելեացն նոցա պորնկիք*։ ³¹Եւ ՚ի պտուղս պատարագացն ձերոց, և յընծայս որդւոցն ձերոց. և ՚ի զատուցանել որդւոցն ձերոց ածել զբոցով. պղծիք յամենայն խորհուրդս ձեր մինչև ցա՛յսօր ժամանակի. և ես տայցեմ ձեզ պատասխանի՞ տունդ Իսրայէլի։ Կենդանի եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր, եթէ տաց ձեզ պատասխանի։ ³²Եւ եթէ անկցի յոգիս ձեր այդ, և ոչ լիցի որպէս դուքդ ասէք, եթէ եղիցուք մեք իբրև զհեթանոսս, և իբրև զազգս երկրի պաշտել զփայտս՝ և զքարինս*։ ³³Վասն այդորիկ կենդանի՛ եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր, եթէ ոչ հզօր ձեռամբ և

* *Բազումք*. Եւ ոչ արարի զնոսա ՚ի վախճան։

* *Ոմանք*. Մի՛ խառնիք և մի՛ պղծիք։

* *Բազումք*. Եւ իրաւանց իմոց ոչ զգու՛... իմ պղծեին։

* *Յօրինակին*. Ձնոսա ընդ յազգս։

* *Ոմանք*. Եւ զիրաւունս որովք։

* *Ոսկան*. Եւ պղծեցի զնոսա։

* *Բազումք*. Խօսեաց ընդ տանդ Իսրայէլի։

* *Ոսկան*. Յերկիրն զոր ամբարձի... զամենայն բլուր բարձր։

* *Ոմանք*. Ձի՞նչ է արբան այդ, յոր դուք մտա՛։

* *Բազումք*. Այսպէս ասէ Տէր Աստուած։

* *Ոսկան*. Եւ ոչ լինի որպէս դուքդ։ *Ոմանք*. Մեք որպէս զհեթանոսս։

բարձրացեալ բազկաւ. և հեղեալ ցասմամբ թագաւորեցից 'ի վերայ ձեր: ³⁴Եւ հանից զձեզ յազգաց, և ընկալայց զձեզ յաշխարհաց ուր ցրուեալ իցէք 'ի նոսա, հօգ'ր ձեռամբ և բարձրացեալ բազկաւ, և հեղեալ ցասմամբ. ³⁵և ածից զձեզ յանապատ ազգացն. և դատեցից ընդ զձեզ անդ դէմ յանդիման* : ³⁶Չոր օրինակ եդի դատ ընդ հարսն ձեր յանապատի անդ՝ յորժամ հանի գնոսա յերկրէն Եգիպտացոց. այնպէս դատեցայց ընդ ձեզ՝ ասէ Տէր Տէր Աստուած* : ³⁷Եւ անցուցից զձեզ ընդ ցաղ՝ իմով, և մուծից զձեզ ընդ թուով ուխտի իմոյ: ³⁸Եւ որոշեցից 'ի ձեռն զամպարիշտս և զապստամբս. զի 'ի բնակութենէ նոցա հանից գնոսա, և յերկիրն Իսրայէլի ո՛չ մտցեն. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր Աստուած: ³⁹Եւ դուք տունդ Իսրայէլի՝ այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Նախ՝ 'ի բաց ընկեցէք զհարաքանջիւր զգնացս ձեր. և ապա թէ լսիցէք ինձ, և զանուն իմ սուրբ ո՛չ պղծիցէք պատարագօք ձերովք՝ և գնացիւք ձերովք* : ⁴⁰Չի 'ի վերայ լերին սրբոյ իմոյ, և 'ի վերայ լերին բարձու Իսրայէլի՝ ասէ Տէր Տէր. անդ ծառայեսցեն ինձ ամենայն տունդ Իսրայէլի՝ 'ի սպառ, և անդ ընկալայց, և անդ այց արարից ընծայից ձերոց, և զպտուղս երախայրեաց ձերոց յամենայն սրբութիւնս ձեր* . ⁴¹'ի հոտ անուշից ընկալայց, հանել զձեզ 'ի ժողովրդոց, և ընդունել զձեզ յաշխարհաց ուր ցրուեալն էիք 'ի նոսա. և սուրբ եղէց 'ի ձեզ յանդիման ժողովրդոց: ⁴²Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր, 'ի տանել զձեզ յերկիրն Իսրայէլի, յերկիրն յոր ամբարձի զձեռն իմ տալ գնա հարցն ձերոց: ⁴³Եւ յիշեսցիք անդ զճանապարհս ձեր և զգնացս ձեր, որովք պղծեցայք 'ի նոսա. և կոծեսցիք զերեսս ձեր 'ի վերայ ամենայն անիրաւութեանցն զոր արարէք* : ⁴⁴Եւ ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր, առնել ձեզ զայն այնպէս. զի մի՛ անուն իմ պղծեսցի ըստ ճանապարհաց ձերոց չարաց. և ըստ ապականեալ գնացից ձերոց. ասէ Աղովնայի Տէր* :

ԺԷ ⁴⁵Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ⁴⁶Որդի մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո 'ի Թենան, և հայեաց 'ի Դագովն. և մարգարեա՛ 'ի վերայ անտառի իշխանին Նագեբայ* . ⁴⁷և ասացես ցանտառն Նագեբայ. Լո՛ւր զպատգամս Տեառն. Այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Ահաւասիկ ես հարից զքէն հուր, և կերիցէ 'ի քեզ զամենայն փայտ դալար և զամենայն փայտ չոր, և ո՛չ շրջիցի բոցն բորբոքեալ. և այրեսցին 'ի նմա ամենայն դէմք յարևելից մինչև 'ի հիւսիսի* : ⁴⁸Եւ ծանիցէ ամենայն մարմին, եթէ ե՛ս Տէր վառեցի զնա՝ և ո՛չ շիջցի: ⁴⁹Եւ ասեն. Քա՛ւ լիցի Տէր Տէր: Եւ նոքա ասեն ցիս. Ո՛չ ապաքէն առա՛կ է այդ որ ասիդ* :

21

* *Բազուկ*. Ազգաց, և դատ եդից անդ ընդ ձեզ:

* *Ոմանք*. Այնպէս դատեցայց զձեզ ասէ:

* *Բազուկ*. Չհարաքանջիւր զգնացս իւր:

* *Ոմանք*. Ասէ Տէր Տէր Աստուած. անդ:

* *Բազուկ*. Անիրաւութեանց ձերոց զոր արար՝:

* *Յօրինակի մերում՝ համաձայն այլ միում օրինակի, գրեալ՝* գնացից իմոց, չակերտիւ նշանակի. որով ակնարկի առնել՝ գնացից ձերոց, ըստ որում ունին մնացեալ օրինակք:

* *Ի լուս՝* Եւ հայեաց 'ի Դագովն. *համաձայն բազմաց 'ի բնաբ՝* Ուր օրինակ մի. Ի

Դարգոն: *Ոմանք*. Եւ մարգարեաց 'ի վերայ անտառի իշխանին Դաբեղայ:

* *Ոմանք*. Յանտառն Գաբեղայ... այսպէս ասէ Տէր Աստուած... և կերիցէ 'ի քէն զամենայն...

մինչև ցիւսիսի: *Ի լուս՝* Եւ ոչ շիջցի բոցն բոր՝. *համաձայն բազմաց 'ի բնաբ՝*:

* *Բազուկ*. Տէր Տէր. նոքա ասեն:

Գլուխ ԻԱ

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Վասն այրորիկ մարգարեա՛ւ որդի մարդոյ, և հաստատեա՛ւ զերեսս քո՝ ի վերայ Երուսաղեմի. և հայեաց՛ց ՚ի սրբութիւնս նոցա, և մարգարեացիս ՚ի վերայ երկրին Իսրայէլի, ³և ասացես՛ս ցերկիրն Իսրայէլի. Այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Վիաւասիկ ես ՚ի վերայ քո, և մերկացի՛ց զվաղակաւորն իմ ՚ի պատենից իւրոց, և սատակեցից ՚ի միջոյ քումն՝ զանհրաւն և զանօրէնն. ⁴Վոխսանակ զի սատակեցից ՚ի քէն զանհրաւն և զանօրէնն: Վասն այնորիկ ելցէ՛ վաղակաւորն իմ ՚ի պատենից իւրոց ՚ի վերայ ամենայն մարմնոյ, յարևելից մինչև ՚ի հիւսիսի՛: ⁵Եւ ծանիցէ ամենայն մարմին թէ ես Տէր մերկացի զվաղակաւորն իմ ՚ի պատենից իւրոց. և անդէն ո՛չ ևս դարձցի՛: ⁶Եւ դու որդի մարդոյ՝ հեծեծեսջիր բեկեալ միջովք քով, և հեծեծեսջիր ցաւովք յանդիման նոցա՛: ⁷Եւ եղիցի թէ ասիցեն ցքեզ. Վասն է՞ր հեծես, ասացես. Ձի բօթ լուայ՝ և զալոց է. և բեկցին ամենայն սիրտք, և ամենայն ձեռք լքցին. և ցամաքեսցի ամենայն մարմին և ամենայն շունչ, և ամենայն երանք ապականեսցին զիջութեամբ. ահաւասիկ գայ և եղիցի, ասէ Տէր Տէր Աստուած՝: ⁸Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ⁹Որդի մարդոյ մարգարեաց և ասացես. Այսպէս ասէ Աղովնայի Տէր. Եւ ասացես. Սո՛ւր սո՛ւր՝ սրեաց և զայրացի՛ր, ¹⁰զի սպանցես զսպանումն. սրեաց՝ ջի՛նջ լեր. պատրաստեաց՝ ՚ի հաշումն, կոտորեա՛ւ. արհամարհեա՛ւ որդեակ իմ. յապաւեա՛ւ զամենայն ծառ: ¹¹Եւ ետ զնա ՚ի պատրաստ, ունել ՚ի ձեռին իւրում. սրեցաւ պատրաստ է սուրն տալ ՚ի ձեռս կոտորչի՛: ¹²Չայն առ, ճի՛չ բարձ որդի մարդոյ. զի եկն՝ եհաս այն ՚ի վերայ ժողովրդեան իմոյ, և ՚ի վերայ իշխանացն Իսրայէլի. պանդուխտք եղիցին, քանզի եհաս սուրն ՚ի վերայ ժողովրդեան իմոյ. վասն այնորիկ ծափս հար ձեռամբ քով, ¹³զի արդարացաւ. և զի՞նչ է, ապրիցի՞ ազգն. ո՛չ եղիցի՝ ասէ Տէր Տէր: ¹⁴Եւ դու որդի մարդոյ մարգարեաց, ծափս հար ձեռամբ. կրկնեա՛ զսուրն, զի երրորդ սուրն վիրաւորաց է. սուր վիրաւորացն սաստկացեալ է. և զարհուրեցուցէ զնոսա՛, ¹⁵զի բեկցին սիրտք իւրեանց, բազմացին տկարացեալք յամենայն դրունս նոցա, զի մատնեցան ՚ի սպանումն սրոյ. գեղեցկացաւ ՚ի փայլիւն, պիտանի եղև ՚ի սպանումն՝: ¹⁶Շրջեաց յածեաց սրեաց յաջմէ և յահեկէ. զի ուր քո՝ երեսք զարթիցեն, ¹⁷և ես անդ ծափս հարից, և կայթեցից, և արծակեցից զբարբառ իմ. Եւ Տէր խօսեցայ՝: ¹⁸Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁹Եւ դու որդի մարդոյ՝ պատրաստեա՛ւ դու քեզ երկուս ճանապարհս, մտանել սրոյ արքային Բաբելացոց. զի ՚ի միողէ աշխարհէ ելցեն երկու առաջք, և ձեռնպատրաստ՝ ել ՚ի գլուխ ճանապարհի քաղաքին՝: ²⁰Իսկզբան ճանապարհին կարգեսցիս. և դու պատրաստեա՛ և

* Ոմանք. Վասն այսորիկ ելցէ... մինչև ցիւսիսի:

* Ոմանք. Թէ ես եմ Տէր. մերկա՛... և անդէն ոչ ևս:

* Բազումք. Միջով քով:

* Ոմանք. Թէ ասացեն ցքեզ... և ասացես. Ձի: *՚ի լուս՝. ՚ի վերայ՝* ամենայն երանք ապա՛. *նշանակի՝* յամենայն ծնգաց իջցէ ջուր. *զնոյն և ոմանք նշանակեալ յաւելուն ՚ի վերայ՝* Սիմ. *այսինքն՝ ըստ Սիմաքոսի:*

* Ոմանք. Եւ ետ պատրաստ ունել զնա ՚ի ձեռին իւր՝:

* Ոմանք. Ձի երկրորդ սուրն վի՛... և զարհուրեցուցես զնոսա:

* Ոմանք. Ի սպանումն. որոյ գեղեց՝: *Ուր ոմանք.* Ձի մատնեցան ՚ի սրումն սրոյ:

* Ոսկան. Եւ արծակեցից զբարկութիւն իմ. ես Տէր:

* Ի բազումս պակասի. Եւ դու որդի մարդոյ: *Ոմանք.* Եւ ձեռն պատրաստեալ ՚ի գլուխ ճա՛:

յարդարեա՛ ճանապարհ մտանել սրոյն ընդ Ռաբովթ որդւոցն Անովնայ՝ ՚ի վերայ Յրեաստանի և ՚ի վերայ Երուսաղեմի ՚ի մէջ նորա*։ ²¹Ձի եկեցէ կացցէ արքայն Բաբելացւոց ՚ի վերայ հին ճանապարհին, ՚ի գլուխ երկուց ճանապարհաց, հմայս հմայել՝ գաւազանս ընկենուլ. հարցունն հարցանել ՚ի դոշելոց, լերդահմայ՝ լինել*։ ²²Ընդ աջմէ իւրմէ ելին նմա հմայքն ՚ի վերայ Երուսաղեմի, արկանել պատնէշ, բերանալի՛ր գոչել, բարձրացուցանել զձայն աղաղակի. արկանել խի՛ց ՚ի վերայ դրանց նորա, և արկանել հո՛ղ և շինել նետակալս։ ²³Եւ նա նոցա այնպէս թուիցի՝ որպէս հմայիցէ ոք հմայս առաջի նոցա, և եւթներորդիցէ նոցա եւթներորդս. և ինքն յուշ արասցէ զանիրաւութիւնս նոցա յիշել։ ²⁴Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Փոխանակ զի յուշ արարէք զանիրաւութիւնս ձեր, ՚ի յայտնել ամպարշտութեանցն ձերոց, յերևել մեղացն ձերոց՝ յամենայն ամպարշտութիւնս ձեր և ՚ի գնացս ձեր. փոխանակ զի դուք ինքնին յիշեցուցէք, ՚ի նոսին սատակեսջիք*։ ²⁵Եւ դու պի՛ղծ և անօրէն իշխանդ Իսրայէլի, որոյ եկեալ է օր վախճանի ՚ի ժամանակի անիրաւութեան։ ²⁶Այսպէս ասէ Տէր Տէր. Ի բա՛ց առ ՚ի քէն զխոյրդ, և հա՛ն զպսակդ. զի այդ՝ ո՛չ այդպէս վճարեսցի. խոնարհեցուցեր զբարձրացեալն, և բարձրացուցեր զխոնարհեալն*։ ²⁷արդ՝ անիրաւութիւն յանիրաւութեանց վերայ եղից գնա. և այդ՝ ո՛չ այդպէս եղիցի, մինչև եկեսցէ որում անկն է, և տա՛ց ՚ի ձեռս նորա*։

Առ որդիսն Անովնայ։ ²⁸Եւ դո՛ւ որդի մարդոյ՝ մարգարեա՛ց և ասասցես. Այսպէս ասէ Տէր Տէր Աստուած ցորդիսն Անովնայ. և վասն նախատանացն նոցա ասասցես. Սո՛ւր՝ սո՛ւր հանեալ ՚ի սպանումն, մերկացեալ ՚ի վախճան*։

²⁹Ձարթի՛ր զի փայլեսցես տեսլեամբ նանրութեան, և ՚ի հմայել հմայս ստութեան. մատնել գնա քեզ, ՚ի պարանոցս վիրաւորացն անօրինացն, որոց եկեալ հասեալ է օր վախճանի ՚ի ժամանակի անիրաւութեան։ ³⁰Դարձ անդրէն, մի՛ աստէն լուծանիր ՚ի տեղուջ յորում ծնեալդ ես. անդրէն յերկրին քում դատեցայ՛ց զքեզ*։ ³¹և հեղից ՚ի վերայ քո զբարկութիւն ին. հրով բարկութեան իմոյ փչեցից ՚ի քեզ, և մատնեցից զքեզ ՚ի ձեռս արանց բարբարոսաց՝ որ գործեն զապականութիւն։ ³²Եւ եղիցես կերակուր հրոյ, և արիւն քո եղիցի ՚ի մէջ երկրի քոյ, և յիշատակ քո մի՛ գտցի. զի ե՛ս Տէր խօսեցայ։

22

Գլուխ ԻԲ

Առ որդիսն Իսրայէլի։

ԺԹ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Եւ դո՛ւ որդի մարդոյ, եթէ դատիցես՝ դատեսցի՛ր զքաղաքն արեանց*։ ³և խայտառակեսցես զամենայն

* *Ոսկան.* Պատրաստեա՛ և յորդորեա՛ ճանապարհ։

* *Ոսկան.* Գաւազանս զընկենուլ։

* *Ոմանք.* Վասն այսորիկ այսպէս... ՚ի յերևել մեղաց ձե՛ր։

* *Բազումք.* Ձի ոչ այդպէս վճարիցի... և բարձրացուցեր զխոնարհին։

* *Օրինակ մի.* Եկեսցէ որում ակն է։

* *Ի բազումս պակասի վերնագիրս.* Առ որդիսն Անովնայ։ *Ոմանք.* Եւ ասասցես. Սուր։

* *Ի լուս՝.* Այդրէն յերկրին քում. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝.*

* *Ոմանք.* եթէ դատեսցիս դատես՝։

զանօրէնութիւնս նորա՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր Տէր Աստուած. Ո՛րքապ որ հեղու գարիւն ՚ի միջի իւրում, ՚ի հասանել ժամանակի իւրոյ. և խորհի խորհուրդ զանձնէ՝ պղծել զանձն իւր՝ ⁴յարիւնս նոցա: Չո՛ւր հեղեր՝ քաթաւեցար, և ՚ի խորհուրդսն քո զոր խորհեցար՝ պղծեցար, և մերձեցուցեր զաւուրս քո, և ածեր զժամանակ ամաց քոց: Վասն այնորիկ ետու զքեզ ՚ի նախատինս ազգաց, և յայսն ամենայն աշխարհաց՝: ⁵Որ մօտ ՚ի քեզ էին՝ և հեռի՛ ՚ի քէն, այպանեսցեն զքեզ՝ և ասասցեն, թէ անուանիդ ՚ի պղծութիւն մատնեցար. քանզի յաճախեցեր յանօրէնութիւնս՝: ⁶Ահաւասիկ առաջնորդք տանդ Իսրայէլի, իւրաքանչիւր ընդ մերձաւորս ազգի իւրեանց խառնակէին ՚ի քեզ՝ զի հեղցեն արիւն: ⁷Չհայր և զմայր անարգէին ՚ի քեզ, և ընդ եկին և ընդ պանդխտին՝ անիրաւութեամբ գնային ՚ի քեզ. զորքն և զայրին բռնադատէին ՚ի քեզ. ⁸զարբութիւնս իմ արհամարհէին, և զշաբաթս իմ պղծէին ՚ի քեզ՝: ⁹Արք աւագակք կային ՚ի միջի քում զի հեղուցուն ՚ի քեզ արիւն. և ՚ի վերայ լերանց զոհէին ՚ի քեզ, և զործս անսուրբս գործէին ՚ի միջի քում՝: ¹⁰Չամօք հօր յայտնէին ՚ի քեզ, և պղծութեամբ զդաշտանն լլկէին ՚ի քեզ: ¹¹Եւ իւրաքանչիւր ՚ի կին ընկերի՛ իւրում պղծէին, և իւրաքանչիւր զնու իւր պղծէին ամպարշտութեամբ, և իւրաքանչիւր զքոյր իւր զդուստր հօր իւրոյ լլկէին ՚ի քեզ՝: ¹²Կաշառս առնուին ՚ի միջի քում զի հեղուցուն արիւն, վաշխս և տոկոսիս առնուին ՚ի միջի քում. և ածից կատարեցից զվախճան չարեաց քոց ըստ բռնութեան քում. քանզի մոռացար զիս՝ ասէ Տէր Տէր՝: ¹³Ահաւասիկ հարից ծափս զծափի ՚ի վերայ զործոցն քոց զոր արարեր, և ՚ի վերայ արեանցն գործելոց ՚ի միջի քում: ¹⁴Եւ եթէ ժուժկալեցի սիրտ քո. եթէ զօրասցին ձեռք քո յաւուրսն յորս ես արարից ընդ քեզ. ես Տէր խօսեցայ՝ և արարից՝: ¹⁵Եւ ցրուեցից զքեզ ընդ ազգս՝ և ցանեցից զքեզ ընդ գաւառս, և պակասեսցէ պղծութիւն քո ՚ի քէն. ¹⁶և ժառանգեցից ՚ի քեզ յանդիման ազգացն. և ծանիջիք թէ ես եմ Տէր՝: ¹⁷Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁸Որդի մարդոյ, աւասիկ եղեն ինձ տունդ Իսրայէլի խառնակեալ, որպէս խառնակեալ իցէ պղինձ և երկաթ, և անագ, և կապար, և արծաթ ՚ի հալոցի՝: ¹⁹Վասն այնորիկ ասա՛. Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի եղերուք դուք ամենեքեան ՚ի մի խառնակութիւն, վասն այնորիկ ես ընկալայց զձեզ ՚ի մէջ Երուսաղեմի, ²⁰որպէս ընդունիցի ոք զարծաթ և զպղինձ, զերկաթ և զկապար՝ ՚ի մէջ հալոցի փչել՝ ՚ի նա հուր և ձուլել. նոյնպէս ընկալայց զձեզ բարկութեամբ իմով, ²¹և հաւաքեցից և ձուլեցից զձեզ. և փչեցից ՚ի ձեզ հոգուով բարկութեամբ իմով. և ձուլեսցիք ՚ի մէջ նորա՝, ²²զոր օրինակ ձուլեսցի արծաթ ՚ի մէջ բովոյ, այնպէս ձուլեսցիք ՚ի միջի դորա. և ծանիջիք, թէ ես Տէր հեղի զսրտմտութիւն իմ

* *Ոմանք.* Յարիւնս նոցա զոր հեղեր:

* *Օրինակ մի.* Քանզի յաճախեցեր զանօրէնութիւնս:

* *Յօրինակին.* Իմ արհամարհին:

* *Ոմանք.* Աւագակք էին ՚ի միջի:

* *Բազունք.* Ձկին ընկերի իւրոյ պղծ՝: *Ոմանք.* Չքոյր և զդուստր հօր:

* *Յոմանս պակասի.* ՚ի միջի քում, *զի հեղուցուն արիւն. վաշխս և տոկոսիս առնուին ՚ի միջի քում.* և ածից:

* *Ոմանք.* Եթէ ժուժկալեցի:

* *Ոմանք.* Եւ ժառանգեցից զքեզ:

* *Ոմանք.* Ահաւասիկ եղեն ինձ:

* *Ոմանք.* Եւ առաքեցից և ձուլեցից զձեզ... բարկութեան իմոյ: *՚ի լուս՝.* ՚ի ձեզ հրով բարկութեամբ... *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝:*

ի վերայ ծեր*:

Ի ²³Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²⁴Որդի մարդոյ ասա՛ ցոյա. Դու՛ անցն
երկիր ես որ ո՛չ թանաս. և ո՛չ եկն անձրև ՚ի վերայ քո յաւուրս բարկութեան*.
²⁵որոյ իշխանք իւր ՚ի միջի իւրում իբրև զառիւծունս գոչէին յափշտակել
զյափշտակութիւնս. ուտեն զանձինս տնանկաց բռնութեամբ, և առնուն
պատիւս անհրաւութեամբ. և բազմացան այրիք ՚ի միջի քում*:
²⁶Եւ քահանայք նորա անարգէին զօրէնս իմ և պղծէին զսրբութիւնս իմ. և զսուրբն ՚ի պղծոյն ո՛չ
ընտրէին, և զարատաւորն յանարատէ անտի ո՛չ զատուցանէին. և ՚ի շաբաթուց
իմոց ծածկէին զաչս իւրեանց, և զշաբաթս իմ պղծէին ՚ի միջի նոցա*:
²⁷Իշխանք նորա ՚ի միջի նորա իբրև զգայլք յափշտակօղք, յափշտակել յափշտակութիւնս,
հեղուլ զարիւնս. կորուսանել զանձինս, զի ազահութիւն յոյժ ստասցին*:
²⁸Եւ մարգարէք նորա՝ որ ծեփէին զնոսա անկցին. որք տեսանէին սնոտիս. ըղձային
նոցա ստութիւն, և ասէին. Այսպէս ասէ Աղովնայի Տէր. և Տեառն չէ՛ր խօսեցեալ*.
²⁹զժողովուրդ երկրին տառապեցուցանէին անհրաւութեամբ, և յափշտակէին
յափշտակութիւնս. զաղքատն և զտնանկն բռնադատէին, ընդ պանդխտին
իրաւամբք ո՛չ զնային*:
³⁰Եւ խնդրեցի ՚ի նոցանէ այր մի որ ուղիղ զնայցէ, և
կայցէ առաջի իմ մտադիւր ՚ի ժամանակի բարկութեան՝ զի մի՛ ջնջեցից զնոսա,
և ո՛չ գտի: ³¹Եւ հեղի ՚ի վերայ նոցա զսրտմտութիւն իմ հրով բարկութեան իմոյ
կատարել ՚ի նոսա. ըստ ճանապարհաց նոցա ետուն ՚ի գլուխս նոցա ասէ Տէր
Տէր*:

23

Գլուխ ԻԳ

ԻԱ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի՛ մարդոյ, կանայք երկուն էին՝
դստերք միոյ մօր. ³և պոռնկեցան յեգիպտոս ՚ի մանկութեան իւրեանց. անդ
անկան ստինք իւրեանց. անդ արկան ՚ի կուսութենէ իւրեանց*:
⁴Անուն դստերն երիցու Ողա, և քեռ նորա Ողիբա. և եղեն ինձ՝ և ծնան ուստերս և դստերս, և
անուն նոցա՝ անուն Շամրնի Ողա, և Երուսաղեմի Ողիբա*:
⁵Եւ պոռնկեցան Ողայն յինէն. և արձակեաց զաչս իւր զհետ հոմանեաց իւրոց,
յԱսորեստանեայսն որ մերձ էին առ նա*.
⁶Ի զգեցեալ հիրս և կարմիրս, յիշխանս և ՚ի զօրագլուխս, յերիտասարդս, յընտրեալս յամենեսին, ՚ի
սպառազէնս ՚ի հեծեալս յերիվարս*:
⁷Եւ տարածեաց զպոռնկութիւնս առ նոսա,

* Ոմանք. Չուլի արծաթ ՚ի մէջ բովուց... թէ ես եմ Տէր. հեղից զսրտմտութիւն:

* Բազունք. Յաւուր բարկութեան:

* Ոմանք. Գոչեն յափշտակել յափշ՝... և բազմանան այ՛:

* Ոսկան. Քահանայքն որք անարգէին զօրէնս. և:

* Բազունք. Որպէս գայլք յափշ՝... հեղուլ զարիւն:

* Ոմանք. Որ ծեփէինն զնոսա... տեսանէին զստութիւն, ըղձանային ՚ի սնոտիս նոցա, և ասէին. Այսպէս:

* Ոմանք յաւելուն. Ընդ տնանկին և ընդ պանդխտն:

* Ոմանք. Եւ հեղի ՚ի վերայ նորա զսրտ՝: Ոսկան. Նոցա՝ ետուն նոցա ՚ի գլուխս նոցա:

* Ոմանք. Եւ անդ անկան ՚ի կուսութենէ:

* Ոմանք. Եւ անուանք նոցա. անուն:

* Ոսկան. Առ նա: (6) Չգեցեալ հիրս... յընտրեալս զամենեսին:

* Ոմանք. Հիրս և ՚ի կարմիրս... յընտրեալս ամենեսին:

առ ամենայն ընտրեալս որդիսն Ասորեստանեայց. և առ ամենեսին զորոց չոգաւ զկնի ամենայն խորհրդովք իւրովք՝ և պղծեցաւ*։⁸ Եւ զպոռնկութիւն իւր յերկրէն Եգիպտացւոց ո՛չ եթող. զի ընդ նոսա պղծեր ՚ի մանկութենէ իւրմէ. և նոքա արկին զնա ՚ի կուսութենէ, և հեղին ՚ի վերայ նորա զպոռնկութիւնս իւրեանց։⁹ Վասն այնորիկ մատնեցին զնա ՚ի ձեռս հոմանեաց իւրեանց, ՚ի ձեռս որդւոցն Ասորեստանեայց զորոց զհետ երթայր*։¹⁰ Նոքա յայտնեցին զխայտառակութիւնն նորա. զուստերս և զդատերս նորա առին, և զնա սրով սպանին. և եղև խօսք կանանց, և խնդրեցին վրէժ ՚ի նմանէ ՚ի դատերս իւր*։¹¹ Եւ ետես քոյր նորա Ողորբա. և առաւել զանցոյց զաչարձակութիւն ապականութեան իւրոյ քան զնորայն. և զպոռնկութիւն իւր քան զպոռնկութիւն քեռ իւրոյ։¹² Ձի չոգաւ զհետ որդւոցն Ասորեստանեայց. իշխանաց և զօրավարաց, որ մերձ էին առ նա, զգեցելոց հանդերձս ծիրանիս ազնուականս. սպառազինաց հեծելոց յերիվարս, երիտասարդաց՝ ընտրելոց ամենեցուն։¹³ Եւ տեսի զի պոռնկեցան՝ և մի ճանապարհ էր երկոցունց*։¹⁴ Եւ յաւել ՚ի պոռնկութիւնս իւր. և ետես արս նկարեալս յորմս պատկերս Քաղդեացւոց՝ նկարեալս գրչաւ ՚ի նկարս*։¹⁵ Կծեալ պէսպէս կանարս ընդ մէջ իւրեանց, և խոյրս ներկեալս ՚ի գլուխս իւրեանց. երփն երփն հարկաներ յամենեցունց ՚ի նմանութիւն որդւոցն Բաբելացւոց՝ յերկրին Քաղդեացւոց՝ յաշխարհն իւրեանց*։¹⁶ Եւ ակն ետ նոցա հայեցուածովք աչաց իւրեանց. և առաքեաց հրեշտակս առ նոսա յերկիրն Քաղդեացւոց*։¹⁷ Եւ եկին առ նա որդիքն Բաբելացւոց յանկողինս օթի, և պղծեցին զնա ՚ի պոռնկութեան իւրում. և պղծեցաւ ընդ նոսա, և յափրացաւ անձն նորա ՚ի նոցանէ։¹⁸ Եւ յայտնեաց զպոռնկութիւն իւր, և առակեաց զամօթ իւր։ Եւ մեկնեցաւ անձն իմ ՚ի նմանէ. որպէս և մեկնեցաւ անձն իմ ՚ի քեռէ՝ նորա*։¹⁹ Եւ յաճախեցեր զպոռնկութիւն քո յիշեցուցանել զաւուրս մանկութեան քոյ յորս պոռնկէիրն յեգիպտոս. ²⁰ և արձակեցեր զաչս քո առ Քաղդեացիսն՝ յիշանդամս և ՚ի ձիանդամս*։²¹ Եւ այց արարից անօրէնութեան մանկութեան քոյ՝ զոր գործէիրն յերկրին Եգիպտացւոց յօթեվանս քո. ուր անկան ստինք քո և լուծաւ կուսութիւն քո*։²² Վասն այնորիկ Ողորբա՝ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ահաւասիկ ես յարուցից ՚ի վերայ քո զհոմանիսն յորոց յափրացաւ անձն քո, և ածից պատեցից զնոսա զքև* ²³ զորդիսն Բաբելացւոց, և զամենայն Քաղդեացիսն, զՓակուդ և զՍուէ և զԿուէ, և զամենայն որդիսն Ասորեստանեայց ընդ նոսա. զերիտասարդս ընտիրս, զիշխանս, զզօրավարս, զսպառազէնս զանուանիս՝ զհեծեալս յերիվարս*։²⁴ Ամենեքին եկեսցեն ՚ի վերայ քո ՚ի հիւսւսոյ. կառք և անիւք ազգաց բազմութեան, սաղաւարտաւորք և վահանաւորք. և

* Ոմանք. Որդիսն Ասորեստանեայս։

* Ոմանք. Մատնեցի զնա ՚ի ձեռս։ Այլք. ՚ի ձեռս հոմանեաց իւրոց։

* Ոսկան. Եւ եղեն խօսք կանանց։

* Բազումք. Եւ տեսի զի պղծեցան, և մի։

* Բազումք. Նկարեալ գրչաւ ՚ի նկարու։

* Ոմանք. Եւ երփն երփն... յերկիրն Քաղդեացւոց յաշխարհին իւրեանց։

* Բազումք. Եւ ակն եղ նոցա... աչաց իւրոց։

* Ի բազումս պակասի. Որպէս և մեկնեցաւ անձն իմ ՚ի քեռէ նորա։

* Յօրինակին. Եւ ձիանդամս։

* Ոմանք. Յերկիրն Եգիպտացւոց։

* Բազումք. Վասն այնորիկ... այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես յա՛։

* Ոմանք. Եւ զորդիսն Բաբելացւոց և զամենայն Քաղդեացւոց։ Յօրինակին. Քաղդեացիսն, զՓակուդ և զՍուէ, և զԿուէ։

արկցեն շուրջ զքև պահ. և տաց առաջի երեսաց նոցա դատաստանս, և խնդրեսցեն ՚ի քէն վրէժս դատաստանօք իւրեանց: ²⁵Եւ տաց զնախանձ իմ ՚ի քեզ, և արասցեն ընդ քեզ ըստ բարկութեան սրտմտութեան իմոյ. և զունչս և զականջս քո կտրեսցեն. և զմնացորդս քո սրով կտորեսցեն, և զուստերս քո և զդստերս քո առցեն, և զմնացորդս քո հրով սատակեսցեն: ²⁶Եւ մերկասցեն ՚ի քէն զհանդերձս քո, և առցեն զգարդ պարծանաց քոց: ²⁷Եւ դարձուցից զամպարշտութիւնս քո ՚ի քեզ, և զպոռնկութիւնս քո որ յերկրին եգիպտացւոց. և ո՛չ ամբառնայցես զաչս քո ՚ի նա, և ո՛չ ևս յիշեսցես զեգիպտոս: ²⁸Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ ե՛ս մատնեցից զքեզ ՚ի ձեռս ատելեաց յորոց յարփացաւ անձն քո ՚ի նոցանէ: ²⁹Եւ զնասցեն ընդ քեզ ատելութեամբ, և առցեն զամենայն վաստակս քո և զերկս քո. և եղիցես մե՛րկ և խայտառակեալ. և յայտնեսցի ամօք պոռնկութեան քոյ. ամպարշտութիւնն քո և պոռնկութիւն քո ³⁰արարին քեզ զայդ, ՚ի պոռնկելն քում զհետ ազգաց, ուր պղծէիր ՚ի խորհուրդս նոցա: ³¹Ձճանապարհս քեռ քո գնացեր. և տա՛ց զբաժակ նորա ՚ի ձեռս քո: ³²Այսպէս ասէ Տէր Տէր. Ջբաժակն քեռ քո արբցես, զխորն և զլայնն. # և եղիցես ՚ի ծաղր և ՚ի կատականս. յաճախել կատարել զարբեցութիւն: ³³Եւ լցցիս լքմամբ. զբաժակն ապականութեան, զբաժակն քեռ քո Շամրնի՛, ³⁴արբցես՝ և քամեսցես. և զհերս քո խզեսցես, և զստինս քո կոծեսցես. և զտօնս քո և զամսագլուխս քո դարձուցից ՚ի քէն. զի ե՛ս խօսեցայ՝ ասէ Ադովնայի Տէր: ³⁵Վասն այդորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի մոռացար զիս, և ընկեցեր զիս զկնի մարմնոյ քոյ. և դու ընկալ զամպարշտութիւնս քո և զպոռնկութիւնս քո: ³⁶Եւ ասէ ցիս Տէր. Որդի մարդոյ, եթէ դատեսցիս զՈռդայն և զՈռդիբայն, և պատմեսցես նոցա զանօրէնութիւնս իւրեանց: ³⁷Ձի շնացան՝ և արիւն է ՚ի ձեռս նոցա և ՚ի խորհուրդս նոցա. շնային՝ և զորդիս իւրեանց զոր ինձ ծնան՝ ատէին զբոցով: ³⁸Մինչ ցայնչափ ևս արարին ինձ. զի զսրբութիւնս իմ պղծէին ՚ի նմին աւուր, և զշաբաթսն իմ ապականէին* ³⁹ի զոհել նոցա զորդիս իւրեանց կոռցն իւրեանց. և մտանէին ՚ի նմին աւուր ՚ի սրբութիւնս իմ և պղծէին զնոսա. և այսպէս առնէին ՚ի մէջ տան իմոյ: ⁴⁰Ձի և արանց եկելոց ՚ի հեռաստանէ, առ որս հրեշտակս արձակէին. իսկ և իսկ իբրև գային, ՚ի բաղանիս մտանէիր. ՚ի ծարիր և ՚ի սնգոյր շպարէիր. և զարդարէիր զարդու՛, ⁴¹և նստէիր ՚ի գահոյս զարդարեալս. և սեղան յօրհնեալ՝ և դնէիր առաջի. և զխունկս իմ և զեւղսն առնուիր՝ և ուրախ լինէիր ընդ նոսա. ⁴²և ՚ի ձայն արուեստականաց նուագէին: Եւ առ այն արամբք, այլ ևս բազմութիւն

* *Ի լուս՝* Եւ արասցեն ՚ի քեզ ըստ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*: *Ի լուս՝*. Սրով սատակեսցեն. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*: *Առ Ոսկանայ պակասի*. Եւ զմնացորդս քո սրով կտորեսցեն, և զուստերս քո և զդստերս քո առցեն, և զմնացորդս քո հրով սա՛:

* *Ոմանք*. Ջամբարշտութիւնս քո ՚ի քէն... որ յերկրէն եգիպտացւոց:

* *Ոմանք*. Ահաւասիկ ես մատն: *Բազումք*. Ատելեաց քոց յորոց յափրացաւ. *կամ՝* յափրեցաւ անձն քո ՚ի նոցանէն:

* *Ոսկան*. Յաճախել և կատարել:

* *Ի լուս՝* Եւ լքցիս լքմամբ: *Ոմանք*. Ջբաժակն ապականութեամբ:

* *Ոսկան*. Եւ դու ընկալար զամբար՛: *Ի լուս՝*. Ընկալ զամբարտաւանութիւնս քո:

* *Բազումք*. Եւ խորհուրդք նոցա շնային:

* *Բազումք*. Մինչ այնչափ արարին ևս ինձ: *Ի լուս՝*. Պղծէին և ՚ի նմին աւուր:

* *Ոսկան*. Առ որ հրեշտակսն արձակէին, իսկ իբրև գային: *Երկու օրհնակք համաձայնք իրերաց*. Եւ ՚ի սնգոյր պաշարէիր:

* *Բազումք*. Յօրհնեալ դնէիր առաջի քո. և:

արանց գինեմուլաց եկելոց յանապատէ, տայի՛ր ապարանջանս ՚ի ձեռս նոցա և պսակ պարծանաց ՚ի գլուխս նոցա*։ ⁴³Եւ ասացի՝ թէ մի՛ շնասցի ընդ նոսա զգործ պոռնկութեան. և նա պոռնկէր*։ ⁴⁴Եւ մտանէին առ նա՝ որպէս մտանիցեն առ կի՛ն պոռնիկ. նոյնպէս մտանէին առ Ոռղայն և առ Ոռղիբայն՝ գործել զանօրէնութիւն։ ⁴⁵Եւ արք արդարք էին նոքա, և խնդրեսցեն վրէժս ՚ի նոցանէ, զվրէժ շնացելոց և զվրէժ արեան. զի շնացօղք էին, և արիւն ՚ի ձեռս նոցա*։ ⁴⁶Ձի՛ ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ա՜ծ ՚ի վերայ զօր՝ և արկ զնոքօք խռովութիւն և յափշտակութիւն*։ ⁴⁷Եւ քարածի՛գ լեր ՚ի նոսա քարամբք զօրաց, և խոցոտեա՛ զնոսա սրովք նոցա. ուստերք նոցա և դստերք կոտորեսցին, և զտունս նոցա հրծի՛գ արասցեն*։ ⁴⁸Եւ դարձուցից զամպարշտութիւնս յերկրէ. և խրատեսցին ամենայն կանայք, և մի՛ ևս արասցեն ըստ ամպարշտութեան նոցա*։ ⁴⁹Եւ տացի ամպարշտութիւն ձեր ՚ի վերայ ձեր, և ըստ խորհրդոց ձերոց ընկալջիք. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր Տէր*։

24

Գլուխ ԻԴ

ԻԲ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ յամին իններորդի, յամսեանն տասներորդի, որ օր տասն էր ամսոյն։ ²Եւ ասէ. Որդի մարդոյ, գրեա՛ դու քեզ զնշան աւուրն, յորմէհետէ եհաս արքայն Բաբելացւոց ՚ի վերայ Երուսաղեմի*։ ³Յօրէ յայնմանէ առակեսցես տանն դառնացողաց զառակս զայս, և ասասցես ցնոսա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Կառո՛ զկաթսայդ, կառո՛ և արկցես ՚ի դմա ջուր*։ ⁴Եւ դիցես զանդամաթիւղ, զամենայն յօշուած գեղեցիկ, զազդր՝ և զերի, քանցեալ յոսկերաց*, ⁵առեալ յընտիր ընտիր անասնոց. և զոսկերսն ՚ի ներքոյ կաթսային այրեսջիք. եռա՛ց՝ զեղաւ՝ քա՛ջ եռաց, եփեսցան ոսկերքն ՚ի միջի նոցա*։ ⁶Վասն այնորիկ ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Ո՛վ քաղաք արեանց, կաթսա լի ժանգով. և ժանգն ՚ի նմանէ ո՛չ պարզեցաւ. անդամ անդամ եհան ՚ի նմանէ, և վիճակ ո՛չ անկաւ ՚ի վերայ նորա*։ ⁷Ղի արիւն նորա ՚ի միջի նորա է. ՚ի սալաքարի՛ վերայ եդի զնա, և ո՛չ հեղի զնա յերկիր ծածկել զնա հողով*։ ⁸Մինչև ելցէ սրտմտութիւն իմ ՚ի վրէժսնդութիւն պահանջել զվրէժս, և ետու զարիւն նորա ՚ի վերայ սալաքարին զի մի՛ ծածկեսցի։ ⁹Վասն այդորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Վա՛յ

* Ոմանք. Եւ ձայնս արուեստա՛:

* Ոմանք. Թէ մի՛ շնասցիս ընդ նոսա:

* Ոմանք. Վրէժ շնացելոյ:

* Ոմանք. Ա՜ծ ՚ի վերայ նոցա զօր:

* Ոմանք. Եւ դստերք նոցա կոտո՛:

* Յօրինակին. Եւ խայտեսցին ամենայն կանայք:

* Բազումք յաւելուն. Եւ ըստ մեղաց խորհրդոց: Ոսկան. խորհրդոց ձերոց սզասջիք. և ծանիջիք:

* Ոմանք. Քեզ զնշանաւորն, յօրէ յորմէ հետէ եհաս:

* Ոմանք. Տանն դառնացողի .. և արկցես ՚ի դա ջուր:

* Ոմանք. Եւ դիցես ՚ի դմա զանդա՛:

* Բազումք. Ոսկերքն ՚ի միջի նորա:

* Ոմանք. Վասն այսորիկ այսպէս:

* Ոմանք. Արիւն նորա ՚ի մէջ նորա է... ծածկել հողով:

քաղաք արեանց. և ես զփայտն բազմացուցից, և յաճախեցից* ¹⁰զխանձողն. և հուր բորբոքեցից զի միսն հալեացի, և արգանակն նուաղեացի, և ոսկերքն փխրեացին*, ¹¹և կացցէ 'ի վերայ կայծականց իւրոց: Բորբոքեցաւ զի վառեացի՝ ջեռցի՝, և պղինձ նորա հալեացի՝, և 'ի միջի նորա պղծութիւն նորա. և պակասեացի ժանգ նորա. ¹²և նուաղեացի ժանգ նորա, և մի՛ ելցէ 'ի միջոյ նորա բազում ժանգ նորա. և յամօթ լիցի ժանգ նորա պղծութեամբ արգանակին*.
¹³Փոխանակ զի պղծէիր դու, և ո՛չ սրբեցիս 'ի պղծութենէ քունմէ. և զի՞նչ իցէ զի ո՛չ սրբեցի տակաւին, մինչև կատարեցից զսրտմտութիւն իմ 'ի նմա*: ¹⁴Ես Տէր խօսեցայ, և եկեացէ և արարից՝ և ո՛չ խորշեցայց, և ո՛չ ողորմեցայց, և ո՛չ մխիթարեցայց. այլ ըստ ճանապարհաց քոց՝ և ըստ գնացից քոց դատեցայց զքեզ, ասէ Ադովնայի Տէր: Վասն այդորիկ ես դատեցայց զքեզ ըստ արեանց քոց. և ըստ խորհրդոց քոց դատեցայց զքեզ պիղծոյ և անուանարկ, որ յաճախեցեր 'ի դառնութիւնս:

ԻԳ ¹⁵Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁶Որդի մարդոյ. Ահաւաղիկ ես բառնամ 'ի քէն զցանկալիս աչաց քոց պատերազմաւ, և ո՛չ կոծեցիս, և ո՛չ լայցես, և ո՛չ ելանիցէ արտօսը 'ի քէն*: ¹⁷Ձի հեծութիւն արեան միջոյ և սզոյ է, և ո՛չ հիւսցին գէսք քո, և կօշիկք քո այդրէն յոտս քո. և մի՛ մխիթարեցիս 'ի շրթանց նոցա, և զհաց արանց մի՛ կերիցես*: ¹⁸Եւ խօսեցայ ժողովորդեանն ընդ առաւօտս, որպէս հրամայեաց ինձ Տէր. և մեռաւ կինն իմ յերեկորեայ. և արարի ընդ առաւօտն որպէս հրամայեցաւ ինձ*: ¹⁹Եւ ասէ ցիս ժողովորդն. Ո՛չ պատմես մեզ՝ զի՞նչ է այդ գոր գործեսոյ: ²⁰Եւ ասե՛մ ցնոսա. Բան Տեառն եղև առ իս՝ և ասէ. ²¹Ասա՛ ցտունդ Իսրայէլի. Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւաղիկ ես պղծեցից զսրբութիւնս իմ, զհպարտութիւն զօրութեան ձերոյ, զցանկալիս աչաց ձերոց, և յորս խնայեանն անձիք ձեր. ուստերքն ձեր և դստերք ձեր որ 'ի ձէնջ մնացեալ են՝ 'ի սո՛ւր անկցին*: ²²Եւ արասջիք նոյնպէս որպէս ես արարի. 'ի բերանոց նոցա մի՛ մխիթարիցիք, և զհաց արանց ո՛չ ուտիցէք*: ²³Եւ վարսք ձեր 'ի վերայ զլիսոց ձերոց, և կօշիկք ձեր յոտս ձեր. ո՛չ կոծիցիք, և ո՛չ լայցէք. և հաշեսջիք յանիրաւութիւնս ձեր, և ո՛չ մխիթարեցէ իւրաքանչիւրոք զեղբայր իւր: ²⁴Եւ եղիցի ձեզ Եզեկիէլ 'ի նշան. ըստ ամենայնի զոր ինչ արար, առնիցէք յորժամ հասանիցէ այդ. և ծանիջիք թէ ես եմ Ադովնայի Տէր*: ²⁵Եւ դու որդի մարդոյ, ոչ ապաքէն յաւուր յայնմիկ յորժամ բարձից՝ 'ի նոցանէ զօրութիւն նոցա, և զհպարտութիւն պարծանաց նոցա, և զցանկալիս աչաց նոցա, և զհպարտութիւն անձանց նոցա, զուստերս և զդստերս նոցա. ²⁶յաւուրն յայնմիկ գայցէ ապրեալն առ քեզ՝ տալ գոյժ յականջս քո*: ²⁷Յաւուր յայնմիկ բացցի՛

* *Բազումք.* Չփայտն յաճախեցից (10) զխանձողն բազմացուցից. հուր բորբոք՝:

* *Ոսկան.* Եւ ոսկերքն փշրեացին:

* *Ոմանք.* Նուազեացի ժանգ նորա:

* *Բազումք.* Իցէ եթէ ոչ սրբեցի: 'Ի լուս՝. Ոչ սրբիցի. *համաձայն ոմանց:*

* *Ոմանք.* Եւ ոչ ելցէ արտօսը:

* *Ոմանք.* Կօշիկք քո անդրէն յոտս... արանց մի՛ ուտիցես:

* *Բազումք.* Եւ խօսեցայ ընդ ժողո՛ւ: *Ոմանք.* Ընդ առաւօտս որպէս հրամայեաց ինձ:

* *Ոմանք.* Եւ պղծեցի զսրբութիւն... և յոր խնայեցես ան՝... և դստերքն որ 'ի ձէնջ մնացեալ էին 'ի:

* *Ոմանք.* Եւ արասջիք սոյնպէս: *Յօրինակին պակասէր.* 'ի բերանոց նոցա մի՛ մխիթարիցիք: *Ուր բազումք.* մի՛ մխիթարեսջիք:

* *Օրինակ մի.* Եւ եղիցի ձեզ Եզեկիէլին նշան. ըստ ամենայնի զոր արար:

* *Բազումք.* Յաւուր յայնմիկ գայցէ:

բերան քո առ ապրեալն. խօսեսցիս և մի՛ ևս համրասցիս, և եղիցիս նոցա ՚ի նշան. և ծանիցեն քե՛ք ե՛ս եմ Տէր:

25

Գլուխ ԻԵ

՚ի վերայ որդւոցն Անովնայ:

ԻԴ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի՛ մարդոյ՝ հաստատեա՛ գերեսս քո ՚ի վերայ որդւոցն Անովնայ. մարգարեա՛ց՝ ՚ի վերայ նոցա, ³և ասացես ցորդիսն Անովնայ. Լուարո՛ւք զպատգամս Ադովնայի Տեառն. Ա՛յսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի ոտնհա՛ր եղերուք ՚ի վերայ սրբութեանց ինոց որ պղծեցան, և ՚ի վերայ երկրին Իսրայէլի որ ապականեցաւ, և ՚ի վերայ տանն Յուդայ որ գնաց ՚ի գերութիւն: ⁴Վասն այնորիկ ահաւաղիկ ե՛ս մատնեն զձեզ որդւոցն Կեղեմայ ՚ի ժառանգութիւն, և բնակեսցեն մեղօքն իւրեանց ՚ի քեզ, և կանգնեսցեն զխորանս իւրեանց ՚ի քեզ. նոքա կերիցեն զպտուղ քո, և նոքա արբցեն զպարարութիւն քո՝: ⁵Եւ տաց զքաղաքն Անովնացւոց յարօտս ուղտուց, և զորդիսն Անովնայ յարօտս հօտից, և ծանիցեն քե՛ք ես եմ Տէր՝: ⁶Զի այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի կայթեցե՛ր դու ձեռամբ քով, և տոփեցեր ոտամբ քով, և ուրախ եղեր անձամբ քով ՚ի վերայ երկրին Իսրայէլի՝. ⁷վասն այնորիկ ահաւաղիկ ե՛ս ձգեցից զձեռն իմ ՚ի վերայ քո, և տաց զքեզ ՚ի յափշտակութիւն ՚ի մէջ ազգաց, և աստակեցի՛ց զքեզ ՚ի ժողովրդոց, և կորուսից զքեզ ՚ի գաւառաց կորստեամբ. և ծանիցես քե՛ք ե՛ս եմ Տէր՝:

՚ի վերայ Մովաբու: ⁸Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի ասացին Մովաբ և Սէիր, քե՛ ահա որպէս ամենայն ա՛զգ են, նո՛յնպէս և տունն Իսրայէլի և Յուդայ՝: ⁹Վասն այնորիկ ահաւաղիկ ես քակեցի՛ց զթիկունս Մովաբու ՚ի բարձուանդակաց քաղաքաց իւրոց, զընտիր ընտիր երկիրն՝ զտունն Բեթայ և զԱսերովթայ, ՚ի վերոյ քան զաղբելր քաղաքին առ ծովեզերքն՝. ¹⁰զորդիսն Կեղեմայ ՚ի վերայ որդւոցն Անովնայ՝ ետու նմա ՚ի ժառանգութիւն. զի մի՛ եղիցի յիշատակ որդւոցն Անովնայ ՚ի մէջ ազգաց՝. ¹¹և ՚ի Մովաբայ վրէժ խնդրեցից: Եւ ծանիցեն քե՛ք ե՛ս եմ Տէր:

՚ի վերայ Եդոմայ: ¹²Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Փոխանակ զի խնդրեաց վրէժ Եդոմ ՚ի տանէն Յուդայ, և ոխակալ եղեն՝ և պահանջեցին վրէժս: ¹³Վասն այնորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Չգեցից զձեռն իմ ՚ի վերայ Եդովնայ, և աստակեցից ՚ի նմանէ զմարդ և զանասուն, և եղից զնա անապատ. և

* *Ոմանք.* Ահաւասիկ ես: *Բազումք.* Որդւոցն Կեղամայ... մեղաւորք իւրեանց ՚ի քեզ:

* *Բազումք.* Եւ ծանիցիք քե՛ք ես եմ Տէր:

* *Այլք.* Եւ դոփեցեր ոտամբ:

* *Ոմանք.* Ահաւասիկ ես ձգե՛... և ծանիցիք քե՛ք ես եմ: *Ոսկան.* ՚ի յափշտակութիւն ազգաց:

* *Բազումք.* Որպէս ամենայն ազգք են:

* *Ոմանք.* Ահաւասիկ ես քակեցից զթիկունս Մովաբայ ՚ի բարձրաւանդակաց քաղաքացն: *Ուր Ոսկան յաւելու.* ՚ի բարձրաւ. *պարսպաց* քաղաքացն: *՚ի լուս՝.* Բեթայ և զԱսիմովթայ. *ուր ոմանք.* զԱսիմովթայ:

* *Ոմանք.* Զորդիսն Կեղեմայ ՚ի վերայ:

հալածեալք ՚ի Թենանայ անկցին ՚ի սուր*։ ¹⁴Եւ խնդրեցից վրէժս յԵդովմայ ՚ի ձեռն ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և արասցեն ընդ Եդովմ ըստ բարկութեան սրտմտութեան իմոյ։ Եւ ծանիցեն զվրէժխնդրութիւն իմ, ասէ Ադովմայի Տէր*։

՚ի վերայ Փղշտացւոցն։ ¹⁵Վասն այդորիկ այսպէս ասէ Ադովմայի Տէր. Փոխանակ զի ոխակալ եղեն այլազգիքն, և յարուցին վրէժխնդրութիւն սրտի մտօք յոտնհարութիւն՝ սատակել մինչև յաւիտեան*։ ¹⁶Վասն այնորիկ այսպէս ասէ Ադովմայի Տէր. Ահաւադիկ ես ձգեցի՛ց զձեռն իմ ՚ի վերայ այլազգեացոյ, և սատակեցից զԿրետացիսոյ, և կորուսից զմնացորդս ծովեզերեայցոյ*։ ¹⁷և խնդրեցից ՚ի նոցանէ վրէժս մեծամեծս կշտամբութեամբ և բարկութեամբ։ Եւ ծանիցեն թէ ե՛ս եմ Ադովմայի Տէր, ՚ի պահանջել զվրէժխնդրութիւն իմ ՚ի նոցանէ*։

26

Գլուխ ԻԶ

՚ի վերայ Տիրոսի։*

ԻԵ ¹Եւ եղև յամին մետասաներորդի որ օր մի էր ամսոյն. եղև բա՛ն Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ, փոխանակ զի ոտնհար եղև Տիրոսս ՚ի վերայ Երուսաղէմի, և ասէ. Վա՛շ վա՛շ, զի բեկաւ կորեաւ. առ իս դարձցին ազգքն, որովհետև լի՛ն աւերեցաւ։ ³Վասն այսորիկ այսպէս ասէ Ադովմայի Տէր. Ահաւադիկ ես ՚ի վերայ քո՝ Տիրոսս, և հանից ՚ի վերայ քո ազգս բազումս, որպէս ելանէ ծովդ ալեօք իւրովք*։ ⁴և կործանեսցեն զպարիսպս Տիրոսի, և կործանեսցեն զաշտարակս նորա. և հոսեցից զհող նորա ՚ի նմանէ, և արարից զնա յապառաժ*։ ⁵և ձգանք ուռկանաց եղիցի ՚ի մէջ ծովուն. զի ե՛ս խօսեցայ՝ ասէ Տէր Տէր. և եղիցի յաւա՛ր ազգացն*, ⁶և դատերք նորա ՚ի դաշտի սրով սպանցին. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր*։ ⁷Ձի այսպէս ասէ Ադովմայի Տէր. Ահաւադիկ ես ածից ՚ի վերայ քո Տիրոսս՝ զՆաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց ՚ի հիւսւսոյ, որ է արքայ արքայից. կառօք և երիվարօք, զունդագունդ հեծելօք ազգաց բազմաց յոյժ։ ⁸և ա զդատերս քո ՚ի դաշտի սրով կոտորեսցէ. և շուրջ զքև պա՛հ դիցէ, և փո՛ս փորեսցէ, և պատնէշ կանգնեսցէ. և զամրութիւն զինուց*, ⁹և զգեղարդունս իւր յանդիման քո կանգնեսցէ. և զպարիսպ քո և զաշտարակս կործանեսցէ սրով իւրով։ ¹⁰Եւ ՚ի բազմութենէ հեծելոց նորա՝ ծածկեսցէ՛ զքեզ փոշի նոցա. ՚ի ձայնէ հեծելոց՝ և յանուոց կառաց նոցա շարժեսցին պարիսպք քո ՚ի մտանելն նորա ՚ի

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս... և սատակեցից ՚ի նմա զմարդ... զնա յանապատ։

* *Ոմանք.* Եւ խնդրեցից զվրէժս ընդ Եդովմայ։

* *Ոսկան.* Ոտնհարութեամբ սատակել։

* *Ոմանք.* Ահաւասիկ ես ձգե՛... զմնացորդս ծովեզերեայոյ. *ուր Ոսկան.* ծովեզերայոյ։

* *Յօրինակին պակասէր.* Չվրէժխնդրութիւն իմ՝ ՚ի նոցանէ։

* *Յառաջիկայ և ՚ի յաջորդ գլուխսոյ բազումք փոխանակ Տիրոսի, դնեն՝* Ծուր. Ծուրայ։

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս... ահաւասիկ ես ՚ի վերայ... որպէս ելանիցէ ծով ալեօք։

* *Ոմանք.* Ձաշտարակն նորա... և արարից զնա ապառաժ։

* *Բազումք.* Եղիցին ՚ի մէջ ծովուն։

* *Ոսկան.* ՚ի դաշտի սպանցին։ *Բազումք.* Եւ ծանիցեն զի ես եմ Տէր։

* *Բազումք.* ՚ի դաշտին սրով կոտորեսցէ. և զքև շուրջ... և ամրութիւն զինուոց։

դրունս քո, որպէս որ մտանիցէ 'ի դաշտէ 'ի քաղաք* : ¹¹Սմբակօք երիվարաց իւրեանց կոխեսցեն զիրապարակս քո, և զազգո քո սրով սատակեսցեն, և զհաստատութիւն զօրութեան քոյ յերկիր կործանեսցէ* : ¹²Եւ աւար առցէ զգօրութիւնս քո, և կողպատեսցէ զինչս քո, և կործանեսցէ զպարիսպս քո, և զցանկալի ապարանս քո տապալեսցէ. և զքարինս և զփայտս և զհողն 'ի ծովն ամասցէ : ¹³Եւ քակտեսցէ զբազմութիւն արուեստականաց քոց, և ձայն երգոց մի՛ ևս լուիցի 'ի քեզ* : ¹⁴Եւ արարից զքեզ յապառաժ, և եղիցիս 'ի ձգանս ուռկանաց. և մի՛ ևս շինեսցիս. զի ես խօսեցայ՝ ասէ Աղովնայի Տէր : ¹⁵Ձի այսպէս ասէ Տէր Տէր ցՏիրոս. Ոչ ապաքէն 'ի ձայնէ կործանման քոյ, 'ի հեծելոյ վիրաւորաց քոց, 'ի մերկանալոյ սրոյ 'ի միջի քում, շարժեսցին կղզիք քո : ¹⁶Եւ իջցեն յաթոռոց իւրեանց ամենայն իշխանք ազգաց ծովուդ, և վերացուցեն զխոյրս իւրեանց 'ի գլխոց իւրեանց, և զպէսպէս հանդերձս իւրեանց մերկասցին, տագնապելով տագնապեսցին. յերկիր կործանեսցին, և զարհուրեսցին 'ի կորստեան իւրեանց, և յոգոց հանցեն 'ի վերայ քո* : ¹⁷ողբս առցեն 'ի վերայ քո՝ և ասասցեն. Չիա՞րո՞ կորեար, քակտեսցար 'ի մէջ ծովու քաղաքդ հոյակապ. որ եղեր զօրացեալ 'ի մէջ ծովու՝ դու և բնակիչք քո, որ զարհուրեցուցանէիր զամենայն բնակիչս քո* : ¹⁸Եւ երկիցեն կղզիք յօրէ կործանման քոյ. և խռովեսցին կղզիք ծովուդ 'ի հերքելոյն քումնէ* : ¹⁹Ձի այսպէս ասէ Տէր Տէր. Յորժամ տա՛ց զքեզ քաղաքդ յաւերակ, իբրև զքաղաքս որ բնա՛ւ չիցեն բնակեալ, 'ի հանել ինձ 'ի վերայ քո զանդունդսն, և ծածկեսցեն զքեզ ջուրք բազումք* : ²⁰և իջուցից զքեզ առ իջեալսն 'ի խորխորատ, առ ժողովն յաւիտենից. և բնակեցուցից զքեզ 'ի խորս երկրի, իբրև զաւերակսն յաւիտենից, ընդ իջեալսն յաւիտենից 'ի խորխորատ : Չի մի՛ ևս բնակեսցես, և մի՛ կանգնեսցիս յերկիր կենաց* : ²¹'ի կորուստ մատնեցից զքեզ՝ և ո՛չ ևս իցես. և խնդրեսցիս՝ և ո՛չ գտանիցիս յաւիտեան* :

27

Գլուխ ԻԵ

Ողբք 'ի վերայ Տիրոսի :

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ ո՞ղբս առ 'ի վերայ Տիրոսի. ³և ասասցես ցՏիրոս. Որ բնակեալդ ես 'ի մուտս ծովուդ վաճառաշահ ազգաց 'ի կղզեաց բազմաց : Այսպէս ասէ Տէր Տէր ցՏիրոս. Դու ասէիր. Ես զարդարեցի զիս 'ի զարդ գեղոյ՝ իմոյ՝ ⁴'ի սիրտ ծովու Բէէլիմայ : Սահմանակիցք քո որդիքն քո

* *Ոմանք.* Չքեզ փոշի նորա :

* *Բազումք.* Եւ զազգո քո սրով կոտորեսցէ : *Ոսկան.* Յերկիր կործանեցից :

* *Ոմանք.* Եւ քակտեսցէ զբազմութիւն... երգոց քոց մի՛ ևս :

* *Բազումք.* 'ի գլխոյ իւրեանց :

* *Օրհնակ մի.* Չամենայն բնակիչս երկրի քո :

* *Ոսկան.* Կղզիք յարենէ կործ* : *Բազումք.* Կղզիք ծովու 'ի քերքելոյն քումնէ :

* *Ոմանք.* Քաղաքդ աւերակ... զանդունդսն, ծածկեսցեն զքեզ :

* *Ոմանք.* Առ ժողովսն յաւիտենից :

* *Ոմանք.* Խնդրեսցիս՝ և ոչ գտցիս :

զարդարեցին զքեզ*։ ⁵Մայրք 'ի Սանայիր լեռնէ շինեցան քեզ պահանգք, և տախտակք նոճիք 'ի Լիբանանէ առան, առնել քեզ կայմս եղևնափայտեայս*։ ⁶Ի Բասանէ արարին զղեկս նաւաց քոց. և զմեհեանս քո շինեցին 'ի փղոսկրէից. ապարանս անտառախիտս 'ի կղզեաց Քետիմացոց։ ⁷Բեհեզ ընդ դիպակի գործեցաւ քեզ. 'ի պաստառս յեգիպտոսէ՝ արկանելիք քեզ 'ի փառս, և հանդերձ ծիրանի և կապուտակ 'ի կղզեացն յելիմացոց եղեն 'ի զարդ պաճուճանաց քոց*։ ⁸Եւ իշխանք քո բնակիչք Սիդովնացոց. և եղեն Արադացիք նաւավարք քո, և իմաստունք քո Տիրոս որ եղեն 'ի քեզ. նոքա եղեն քեզ նաւապետք*։ ⁹Եւ ծերքն մատենագէտք, և իմաստունք նոցա որ էին 'ի քեզ, նոքա զօրացուցանէին զխորհուրդս քո. և ամենայն նաւք ծովուն և նաւավարք նոցա եղեն քեզ երթալ յարևմուտս արևմտից*։ ¹⁰Լիդացիք և Լիբէացիք թիկունք զօրութեան քոյ՝ արք ընտիրք պատերազմօղք, որ կախեցին զվահանս և սաղաւարտս իւրեանց 'ի քեզ, և նոքա փառաւորեցին զքեզ։ ¹¹Որդիքն Արադացոց զօրութեամբք իւրեանց զպարսպօք քովք պատեալ կային՝ և պահէին զաշտարակս քո, զկապարճս իւրեանց կախէին շուրջանակի 'ի պարիսպս քո. և նոքա իսկ բովանդակեցին զգեղեցկութիւն քո*։ ¹²Կարքեդովնացիք վաճառականք քո 'ի բազմութենէ ամենայն զօրութեան քոյ. զարծաթ և զոսկի և զպղինձ՝ և զերկաթ և զանագ՝ և զկապար ետուն 'ի վաճառս քո. ¹³Յոյնք և ամենայն որ շուրջ զնովաւ էին մարդավաճառք քո, և անօթս պղնձիս ետուն 'ի վաճառս քո։ ¹⁴Եւ 'ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորովք լցին զվաճառս քո։ ¹⁵Որդիք Յռոդացոց վաճառականք քո յաճախեցին 'ի կղզեաց զվաճառս քո, ժանեօք փղոսկրէիւք. և երթևեկացն մարդիկ տայիր 'ի գինս*։ ¹⁶Եւ վաճառք քո բազմացեալք յաղխամաղխէ քունմէ. յԱփեկայ գտաշխն, և երփն երփն նարօտուց 'ի Թարշայ. և Յռանովք և Կարքովդ լցին զվաճառս քո*։ ¹⁷Հրէաստան և որդիքն Իսրայէլի՝ վաճառականք քո ցորենով՝ և խնկովք՝ և կասեալ՝ և ընտիր ընտիր մեղու, և իւղով, և ռետամբ լցին զաղխամաղխեայ վաճառաց քոց*։ ¹⁸Դամասկոս վաճառականք քո. և բազմաղխի՝ և 'ի բազում զօրութենէ քունմէ. գինի 'ի Քեդ՝ բովմայ, և ասր 'ի Միլիտեայ*։ ¹⁹Դան՝ և Յաւան՝ 'ի Մեովզեմայ՝ բերէին քեզ գինի 'ի վաճառս քո. յԱսելայ երկաթ գործեալ անիւս պատրաստեալս 'ի վաճառս քո*։ ²⁰Դեդանացիք վաճառականք քո, ածէին կառս ընտիրս ջորովք հանդերձ*։ ²¹Արաբացիք՝ և ամենայն իշխանք Կեդարու, և նոքա վաճառականք

* *Ի բազումս պակասի. Բէլիմայ: Սահմանակիցք քո որդիքն:*

* *Ոմանք. Մայրք 'ի սանիր լեռնէ: Ոսկան. Եւ տախտակք և նոճիք 'ի Լիբանան:*

* *Բազումք. Քեզ, պաստառս յԵ՛: Օրինակ մի. 'ի զարդ պատմուճանաց քոց:*

* *Յօրինակին. Արդացիք նաւավարք քո: Ոմանք. Որ էին 'ի քեզ:*

* *Ոմանք. Որ են 'ի քեզ, նոքա... նաւք ծովուն և նաւավարք իւրեանց եղեն 'ի քեզ երթալ:*

* *Օրինակ մի. Չպարսպաւ քոյովք: Յօրինակին. Չճարպս իւրեանց կախէին շուրջանակի:*

ըստ որում ունի վրիպակաւ և այլ օրինակ մի: Բազումք. Կախեցին շուրջանակի:

* *Ոսկան. Որդիք Յռոմայեցոց վաճառականք քո յաճա՛: Օրինակ մի. ժանեօք*

փեղոսկրօք: Բազումք. Մարդիկ տայիր գինս:

* *Բազումք. ՅԱփեկայ ստաշխն: Ոսկան. Եւ կորքող՝ լցին:*

* *Ոմանք. Չաղխամաղխս վաճառաց:*

* *Ոմանք. Եւ 'ի բազում աղխի և 'ի բազմազօրութենէ քունմէ. և ասր 'ի Մելիտայ: Ուր Ոսկան.*

'ի բազում աղխէ՝ և 'ի բազում:

* *Բազումք. Անիւս պատեալս 'ի վաճա՛:*

* *Ոմանք. Դեդեմացիք վաճա՛... ջորեօք հան՛:*

ընդ ձեռամբ քով՝ ուղտս, և խոյս, և որոջս՝ վաճառէին ՚ի քեզ*։ ²²Սաբա և Յեզեքիա, և նոքա վաճառականք քո. եւղս անուշունս, և ականս պատուականս, և ոսկի, ետուն ՚ի վաճառս քո*։ ²³Խառան, և Քանան, և Դեղան, և նոքա վաճառականք քո. Սաբա, և Ասուր, և Քաղման վաճառականք քո*։ ²⁴որք բերեն քեզ վաճառս ընդ Մաքղիմ, և ընդ Գալիմ՝ հիր, և կարմիր, և կապուտակ, և երփն երփն նարօտուց. և գանձս ընտիրս վանդակեալս չուանօք*։ ²⁵ի նաւս նոճիս, որովք էր վաճառն քո. նաւք ՚ի բազմութեան վաճառաց քոց, և ՚ի յաճախութենէ աղխամաղխի քոյ, լցա՛ր ծանրացար յոյժ*։ Ի սիրտ ծովու՝ ²⁶ի ջուրս բազումս վարեցին զքեզ նաւավարք քո. հողմ հարաւոյ խորտակեաց զքեզ ՚ի սիրտ ծովու*։ ²⁷Եւ զօրութիւն քո, և վարձք քո, և խառնադանջիցն քոց, և նաւավարք քո, և նաւապետք քո, և խորհրդականք քո, և խառնադանջք խառնադանճից քոց. և ամենայն արք պատերազմօղք քո որ ՚ի քեզ, և ամենայն ժողովք որ ՚ի միջի քում անկցին ՚ի սիրտ ծովու՝ յաւուր կործանման քոյ*։ ²⁸Ի ձայնէ բարբառոյ քոյ նաւավարք քո երկիւղիւ զարհուրեցցին. ²⁹և իջցեն ՚ի նաւաց իւրեանց. ամենայն նաւավարք քո և նաւամուտք քո առաջապահք նաւաց, յափն ծովուն կացցեն*։ ³⁰և աղաղակեցցեն ՚ի վերայ քո, և փոխեցցեն զձայնս իւրեանց. գուժեցցին դառնապէս, հող ՚ի գլուխ լիցին*, ³¹ընդ մոխիր թաւալեցցին. գերծցեն զգլուխս ՚ի կնդութիւն, և քրձագգածք լիցին, և լացցեն ՚ի վերայ քո դառնացեալ սրտիւք*։ ³²Կոճ դառնութեան առցեն որդիք նոցա ՚ի վերայ քո, ո՛ղբս առցեն և ողբացցեն. Ո՛վ էր իբրև զՏիրոս որ լռեաց դադարեաց ՚ի մէջ ծովուն*։ ³³Որչափ ինչ գտեր քեզ վարձս ՚ի ծովէ այտի. լցուցեր զազգս ՚ի բազմութենէ քումնէ, և յաղխամաղխէ վաճառաց քոց մեծացուցեր զամենայն թագաւորս երկրի*։ ³⁴Արդ բեկա՛ր ՚ի ծովուդ ՚ի խորս ջուրց վաճառք քո. և ամենայն ժողովք քո ՚ի միջի քում, անկան ամենայն նաւավարք քո*։ ³⁵Ամենայն բնակիչք կղզեաց տրտմեցան ՚ի վերայ քո. և թագաւորք նոցա զարհուրելով զարհուրեցան. և հեղին արտասուք զերեսօք իւրեանց ՚ի վերայ քո*։ ³⁶Վաճառականք ազգաց շէջցին ՚ի վերայ քո. ՚ի կորուստ մատնեցար, և այլ ո՛չ ևս իցես յաւիտեան՝ ասէ Տէր Աստուած*։

28

* Առ Ոսկանայ պակասի. Ընդ ձեռամբ քով ուղտս, և խոյս, և որոջս՝ վաճառէին ՚ի քեզ:

* Ոմանք. Սաբա և Յեզեքիա:

* Ոմանք. Եւ Քանան և Դեղան:

* Ի լուս՝. Նարօտից:

* Ոմանք. Նաւօք ՚ի բազմութեան... և յա՛:

* Յօրինակին ՚ի կարգ բնաբանի զանց արարեալ՝ և վարձք քո. և դատարկ տեղի պատրաստեալ, ՚ի լուս՝. նշանակի ՚ի մէջ բերել, համաձայն այլոց: Բազումք. Եւ խառնադանջք քո ՚ի խառնադանջից:

* Ոսկան. Յափին ծովու կացցեն:

* Բազումք. Գուժեցցեն դառնապէս:

* Ոմանք. Եւ քրձագգեացք լիցին:

* Ոսկան. Լռեաց և դադարեաց:

* Ոմանք. Ի ծովէ անտի:

* Ոմանք. Արդ բեկաւ ՚ի ծովուդ... և ամենայն ժողովուրդք քո ՚ի միջի:

* Ոմանք. Եւ հեղին զարտասուս զերէ՛:

* Ոմանք. Ոչ ևս իցես յաւիտեանս:

Գլուխ ԻԸ

Ի վերայ իշխանին Տիրոսի:

¹Եւ եղև բան Տեառն առ իս` և ասէ. ²Եւ դու որդի մարդոյ՝ ասա՛ ցիշխանդ Տիրոսի. Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի հպարտացաւ սիրտ քո, և ասացեր՝ թէ Աստուած եմ ես, և զբնակութիւն Աստուծոյ բնակեցի՝ ի սիրտ ծովու. մարդ ես դու՝ և ո՛չ Աստուած. և ետուր զսիրտ քո իբրև զսիրտն Աստուծոյ՝: ³Սիթէ իմաստնագո՞յն իցես քան զԴանիէլ, կամ իմաստունք խրատեցին զքեզ հանճարովն իւրեանց՝. ⁴միթէ իմաստութեամբ քով կամ խորհրդով՝ արարեր դու քեզ զօրութիւն, և ստացար ոսկի և արծաթ՝ ի գանձս քո. ⁵կամ բազմութեամբ իմաստութեան քոյ և վաճառաց՝ յաճախեցեր զզօրութիւն քո, և բարձրացաւ սիրտ քո զօրութեամբն քով: ⁶Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Վասն զի ետուր զսիրտ քո իբրև զսիրտն Աստուծոյ՝. ⁷փոխանակ այնորիկ ահաւադիկ ես ածից՝ ի վերայ քո օտարս ժամտագործս յազգաց, և թափեցեն զսուր իւրեանց՝ ի քեզ, և ի վերայ գեղոյ՝ իմաստութեան քոյ, և տարածեցեն զգեղ քո ի կորուստ՝. ⁸և կործանեցեն զքեզ՝ և մեռանիցիս մահու վիրաւորաց ի սիրտ ծովու՝: ⁹Սիթէ ասելով ասիցես. Աստուած եմ ես՝ առաջի վիրագացն քոց. բայց դու մարդ ես՝ և ո՛չ Աստուած. և ի բազմութեան վիրաւորաց քոց՝ ¹⁰մեռելոց անթլփատից մեռանիցիս ի ձեռաց օտարաց. զի ես խօսեցայ ասէ Ադովնայի Տէր: ¹¹Եւ եղև բան Տեառն առ իս` և ասէ. Որդի մարդոյ՝ ո՞ղբս առ ի վերայ իշխանին Տիրոսի, ¹²և ասացես ցնա. Այսպէս ասէ Տէր Տէր. Դու ես կնիք նմանութեան լի՛ իմաստութեամբ՝ և պսակ գեղեցկութեան՝. ¹³ի գրգանս դրախտին Աստուծոյ եղեր, և զամենայն ականս պատուականս ի քեզ կապեցեր. Չսարդիոնն. և զտպագիոն. և զզմրուխտ. և զկարկեհան. և զշափիղձայ. և զյասպիսն. զարծաթ և զոսկի. և զգոճազմն. զակատն. զմելեսիկն. զոսկեքարն. զբիւրեղն. զեղեգնաքարն. և ոսկով լցուցեր զգանձս քո, և զշտեմարանս քո ի քեզ. յօրէ յօրմէ հաստատեցար և հանդերձեցար՝ ¹⁴ընդ օծելոյ քրորէին, ետուր զքեզ ի լեառն սուրբ Աստուծոյ, և եղեր ի մէջ հրեղէն վիմացն: ¹⁵Եղեր անարատ յաւուրսն քո, յօրէ յօրմէ հաստատեցար դու, մինչև գտան անիրաւութիւնք ի քեզ: ¹⁶Ի բազմութենէ վաճառաց քոց լցեր զշտեմարանս քո անիրաւութեամբք. մեղար՝ և վիրաւորեցար: Ի լեռնէն Աստուծոյ իջոյց զքեզ քերովքն վարսաւոր, ի միջոյ հրեղէն վիմացն՝. ¹⁷և բարձրացաւ սիրտ քո ի գեղեցկութեան քում, և ապականեցաւ հանճար քո հանդերձ գեղովն քո: Վասն բազմութեան մեղաց քոց ընկեցի զքեզ յերկիր. յանդիման թագաւորաց ետուր զքեզ ի խայտառակութիւն: ¹⁸Վասն բազմութեան

* *Ոմանք.* Եւ բնակութիւն Աստուծոյ բնակիցի... մարդ ես դու՝ և ոչ ես Աստուած: *Ոսկան.* Եւ ի բնակութեան Աստուծոյ բնակեցայ:

* *Ոմանք.* Հանճարովք իւրեանց:

* *Ոմանք.* Վասն այդորիկ այս՝:

* *Ոմանք.* Ահաւասիկ ես ածից... զսուրս իւրեանց... զգեղեցկութիւն քո ի կո՞:

* *Ոսկան.* Եւ կործանեցեն զքեզ՝ և մի՛ յառնիցես. և մահու վի՞:

* *Ոսկան.* Առաջի վիրաւորացն քոց. բայց դու: *Ոմանք.* Վիրաւորաց (10) և մեռելոց անթլ՞:

* *Ոսկան.* Լի իմաստութեամբ և կատարեալ դեղով: (13) Ի փափկութեան դրախտին Աստուծոյ եղեր:

* *Ոմանք.* Չմեղեսիկ... զեղենգնաքարն. *կամ՝* զեղընգնաքարն:

* *Ոմանք.* Չշտեմարանս քո անօրէնութեամբ:

մեղաց քոց, և խարդախութեան վաճառաց քոց՝ պղծեցեր զսրբութիւնս քո. հանից հուր ՚ի միջոյ քունմէ՝ և նոյն կերիցէ զքեզ. և տա՛ց զքեզ ՚ի մոխիր յերկրին քում առաջի ամենայն տեսողացն քոց: ¹⁹Եւ ամենեքին որ ճանաչիցեն զքեզ ՚ի մէջ ազգաց տրտմեսցին վասն քո. զի եղեր ՚ի կորուստ, և ո՛չ ևս իցես յաւիտեան՝:

Ի վերայ Սիդոնի: ²⁰Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ՝. ²¹Որդի մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո ՚ի վերայ Սիդովնի. մարգարեաց՝ ՚ի վերայ նորա՝, ²²և ասասցես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ահաւասիկ ես ՚ի վերայ քո Սիդոն, և փառաւորեցայց ես ՚ի քեզ. և ծանիցես թէ ես եմ Տէր յառնել ինձ ՚ի քեզ դատաստանս, և սուրբ եղէց ես ՚ի քեզ՝: ²³Եւ առաքեցից ՚ի վերայ քո մահ, և արիւն ՚ի հրապարակս քո. և անկցին վիրաւորք ՚ի միջի քում, պատեսցին շուրջ զքև սրովք. և ծանիցեն թէ ես եմ Տէր: ²⁴Եւ ո՛չ ևս եղիցիս տանն Իսրայէլի խո՛չ դառնութեան, և փո՛ւշ ցաւոց յամենեցունց որ շուրջանակի անարգեցին զնոսա. և ծանիցես թէ ես եմ Ադովնայի Տէր՝: ²⁵Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Եւ ժողովեցից զտունն Իսրայէլի յազգաց ուր ցրուեցան անդր. և սուրբ եղէց ՚ի նոսա առաջի ազգաց և ժողովրդոց. և բնակեցեն յերկրին իւրեանց զոր ետու ծառային իմում Յակովբու՝, ²⁶և բնակեցեն ՚ի նմա յուսով. շինեցեն տունս, և տնկեցեն այգիս՝ և բնակեցեն յուսով. յորժամ արարից դատաստան յամենեսին որ շուրջանակի անարգեցին զնոսա: Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր Աստուած նոցա, և Աստուած հարց նոցա՝:

29

Գլուխ ԻԹ

Ի վերայ Եգիպտոսի, և փարաւոնի արքային Եգիպտացւոց՝:

ԻՉ ¹Յամին տասներորդի՝ յամսեանն տասներորդի՝ որ օր մի էր ամսոյն, եղև բան Տեառն առ իս՝ և ասէ՝. ²Որդի մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո ՚ի վերայ փարաւովնի արքային Եգիպտացւոց. մարգարեաց՝ ՚ի վերայ նորա՝ և ՚ի վերայ ամենայն Եգիպտոսի՝, ³Իսուեաց՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ՚ի վերայ քո փարաւովն արքայ Եգիպտացւոց վիշա՛պ մեծ՝ որ նստիս ՚ի մէջ գետոց. որ ասես թէ ի՛մ են գետքս՝ և ե՛ս արարի զսոսա՝: ⁴Եւ ե՛ս արկից դանդանաւանդ ՚ի կզակս քո, և մածուցից զձկունս գետոյդ ՚ի թևս քո, և հանից ՚ի

* *Ոմանք.* Ձի եղիցես ՚ի կորուստ:

* *Բազումք.* Ի վերայ Ծայրանու:

* *Ի լուս՝.* Քո ՚ի վերայ Ծայրանու. *համաձայն բազմաց ՚ի բնար՝:*

* *Ոմանք.* Ահաւասիկ ես ՚ի վերայ քո Ծայրան:

* *Բազումք.* Եւ ո՛չ ևս եղիցին տանն... և ծանիցեն թէ ես եմ:

* *Ոսկան.* Եւ սուրբ եղէց առաջի... ծառային իմոյ յա՛:

* *Ոմանք.* Դատաստանս յամենեսեան:

* *Բազումք.* Եւ փարաւոնի թագաւորին Եգ՝:

* *Ոսկան.* Եւ եղև բան Տեառն:

* *Բազումք.* Ի վերայ փարաւոնի թագաւորին:

* *Բազումք.* Վիշապ մեծ:

միջոյ քունմէ՛ զգետոյ՛ քո. և ամենայն ձկունք՛ գետոյդ կցեսցին՝ ՚ի թևս քո՞. ⁵և կործանեցից՝ զքեզ արագ արագ, և զամենայն ձկունս գետոյդ քոյ. ընդ երեսս դաշտին անկանիցիս, և մի՛ ժողովեսցիս, և մի՛ ևս աւաքեսցիս. զի գազանաց երկրի՛ և թռչնոց երկնից՝ ետուն՝ զքեզ ՚ի կերակուր՞: ⁶Եւ ծանիցեն ամենայն բնակիչքդ՝ Եգիպտացւոց թէ՛ ես եմ Տէր. փոխանակ զի եղեր գաւազան եղեգնեայ տանդ Իսրայէլի՞. ⁷և յորժամ յենուին՝ ՚ի քեզ՝ ելանէիր ընդ ձեռս նոցա, և յորժամ բուռն հարկանէր զքէն ամենայն ձեռն, և յորժամ յենուին՝ ՚ի քեզ՝ խորտակէիր և բեկանէիր զամենայն մէջս նոցա՞: ⁸Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւաղիկ ես ածեմ՝ ՚ի վերայ քո սուր, և կորուսից՝ ՚ի քէն զմարդ և զանասուն՞: ⁹Եւ եղիցի երկիրդ Եգիպտացւոց ՚ի կորուստ՝ և յաւերակ. և ծանիցեն թէ՛ ես եմ Տէր. փոխանակ զի ասէիր՝ թէ՛ գետքս իմ եմ, և ես արարի զսոսա՞: ¹⁰Վասն այնորիկ ահաւաղիկ ես ՚ի վերայ քո՝ և ՚ի վերայ ամենայն գետոցդ քոց, և տաց զերկիրդ Եգիպտացւոց յաւերակ՝ և ՚ի սուր, և ՚ի կորուստ, ՚ի Մակդովղայ՝ և ՚ի Սուհենայ մինչև ՚ի սահմանս Եթովպացւոց՞: ¹¹Եւ մի՛ անցցէ ընդ նա ոտն մարդոյ. և կճղակ անասնոյ մի՛ գնասցէ ընդ նա. և մի՛ բնակեսցէ անս քառասուն՞: ¹²Եւ տաց զերկիրն նորա ՚ի կորուստ ՚ի մէջ աւերակ երկրին. և քաղաքք նոցա ՚ի մէջ աւերեալ քաղաքաց. և եղիցին յապականութիւն անս քառասուն. և ցրուեցից զԵգիպտոս ՚ի մէջ ազգաց. և հոսեցից զնոսա ընդ գաւառս՞: ¹³Զի այսպէս ասէ Տէր Տէր. Յետ ամացն քառասնից ժողովեցից զԵգիպտացիս յազգաց ուր ցրուեցան ՚ի նոսա. ¹⁴և դարձուցից զգերութիւն Եգիպտացւոցն, և բնակեցուցից զնոսա յերկրին Պաթուրէս՝ յերկրին ուստի առան. և եղիցի անդ իշխանութիւն մի՛ տառապեալ քան զամենայն իշխանութիւնս՞: ¹⁵Եւ եղիցի խոնարհագոյն, և մի՛ ևս բարձրացի ՚ի վերայ ազգաց. և սակաւաւորս արարից զնոսա, զի մի՛ բազմասցին ՚ի մէջ ազգաց: ¹⁶Եւ մի՛ ևս եղիցին տանն Իսրայէլի յոյս յիշատակի անօրէնութեան, երթալ զհետ սրտից նոցա. և ծանիցեն թէ՛ ես եմ Ադոնայի Տէր:

Պարծեալ ՚ի վերայ Եգիպտոսի: ¹⁷Եւ եղև ՚ի քսաներորդի և յերթերորդի ամին, որ օր մի էր ամսոյն առաջնոյ. եղև բան Տեառն առ իս՝ և ասէ՞. ¹⁸Որդի մարդոյ, Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելացւոց աշխատեցոյց զզօրս իւր աշխատութեամբ մեծաւ ՚ի վերայ Տիւրոսի: Ամենայն գլուխք կնդացեալք՝ և ամենայն ուսք գերծեալք. և վարձք նմա և զօրաց նորա ո՛չ եղեն առ ՚ի Տիւրոսէ

* *Յօրինակին ՚ի վերայ՝* Եւ ես արկից, չակերտ եղեալ ակնարկէ բառնալ զևն համաձայն այլ միում օրինակի: *Ոմանք.* Եւ ես արկի դանդա՞: *Ոսկան.* Եւ մեծացուցից զձկունս գետոյդ:

* *Ոմանք.* Ջքեզ երագ երագ: *Ոսկան.* Անկանիցին, և մի՛ ժողովեսցին: *Ուր օրինակ մի ընդ Ոսկանայ.* և մի ևս հաւաքեսցիս:

* *Ոմանք.* Բնակիչք Եգիպտացւոցն:

* *Ոսկան.* Եւ բեկանէիր զմէջս նոցա:

* *Ոսկան.* ՚Ի քէն զամենայն մարդ՝ և զա՞:

* *Ոմանք.* Եւ ծանիցեն թէ՛ ես եմ:

* *Ոմանք.* Վասն այնորիկ ահաւա՞:

* *Ոմանք.* Ընդ նա մի՛ գնասցէ:

* *Ոմանք.* Եւ քաղաքք նորա ՚ի մէջ աւերեալ քաղաքաց եղիցին յապա՞... և ցրուեցից զնոսա ընդ գաւառս:

* *Ոսկան.* Յերկրին Պաթուրէ:

* *Ի բազումս պակասի վերնագիրս այս՝* Պարծեալ ՚ի վերայ Եգիպտոսի:

ծառայութեանն՝ զոր ծառայեցին ինձ՝ ՚ի նմա՝: ¹⁹Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր, Ահաւասիկ տաց Նաբուքոդոնոսորայ արքայի Բաբելացոց զերկիրն Եգիպտացոց. և առցէ զբազմութիւն նորա, և աւարեցէ զաւար նորա, և կողոպտեցէ զկապուտ նորա, և եղիցի վաճճ զօրաց նորա՝: ²⁰Փոխանակ հարկին յորում ծառայեաց ինձ՝ ՚ի Տիրոս, ետու նմա զերկիրն Եգիպտացոց ընդ ամենայնի զոր արարին ինձ: Այսպէս ասէ Տէր Տէր. ²¹Յաւուր յայնմիկ ծագեցէ եղջիր յամենայն տանն Իսրայէլի. և քեզ տաց բերան բաց՝ ՚ի մէջ նոցա. և ծանիցեն թէ ես եմ Տէր՝:

30

Գլուխ L

¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ մարգարեաց՝ և ասացես. Այսպէս ասէ Ադովնայի Տէր Տէր. Ո՛հ ո՛հ, օր. ³զի մե՛րձ է օր Տեառն, օր միգի. զի հասեալ է վախճան ազգաց՝: ⁴Եւ եկեցէ սուր ՚ի վերայ Եգիպտացոց, և եղիցի խռովութիւն ՚ի կողմանս Եթովպացոց. և անկցին վիրաւորք յԵգիպտոս, և առցեն զբազմութիւն նորա, և տապալեցին հիմունք նորա: ⁵Պարսիկք, և Կրետացիք, և Լիդացիք, և Լիբեացիք, և ամենայն խառնադանճքն. և յորդոց ուխտին ինոյ ՚ի նմա սրով կոտորեցին՝: ⁶Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Կործանեցին մո՛յթքն Եգիպտացոց, և իջցէ հպարտութիւն զօրութեան նորա, ՚ի Մակդոնոյայ մինչև ցՍուհէն սրով անկցին ՚ի նմա, ասէ Ադովնայի Տէր. ⁷և աւերեցի ՚ի մէջ ապականեալ աշխարհաց, և քաղաքք նոցա ՚ի մէջ քաղաքաց աւերելոց՝: ⁸Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր, յորժամ արկից հուր ՚ի վերայ Եգիպտացոցն. և խորտակեցին ամենայն օգնականք նորա: ⁹Յաւուր յայնմիկ ելցեն հրեշտակք յերեսաց իմոց տագնապաւ՝ ապականել զսնոտի յոյսն Եթովպացոց, և եղիցի խռովութիւն ՚ի նոսա յաւուրն Եգիպտացոց. քանզի ահաւասիկ հասեալ է՝: ¹⁰Այսպէս ասէ Տէր Տէր. Եւ կորուսից զբազմութիւն Եգիպտացոցն, ՚ի ձեռն Նաբուքոդոնոսորայ արքային Բաբելացոց. ¹¹զնա՝ և զազգ նորա ընդ նմա. ժանտագործք յազգաց առաքեցին կործանել զերկիրն, և թափեցեն զամենայն սուրս իւրեանց ՚ի վերայ Եգիպտոսի, և լցցի երկիրն վիրաւորք՝: ¹²Եւ տաց զգետս նորա յանապատ, և մատնեցից զերկիրն ՚ի ձեռս չարաց. և կորուսից զերկիրն լրիւ իւրով ձեռօք այլազգեաց. զի ես Տէր խօսեցայ՝: ¹³Այսպէս ասէ Տէր Տէր. Կորուսից զգարշելիսն, և դադարեցուցից զմեծամեծս ՚ի Մենփացոց. և զիշխանս յերկրէն Եգիպտացոց, և ո՛չ ևս լինիցին. և արկից ա՛հ ՚ի վերայ երկրին Եգիպտացոց. ¹⁴և կորուսից զերկիրն Պաթուրես,

* *Ի լուս՝*. Ուսք քերծեալք. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝*: Ոսկան. Եւ զօրացն իւրոց ոչ եղեն: *Բազումք*. Առ ՚ի Ծուրայ ծառայ՝:

* *Բազումք*. Վասն այսորիկ այսպէս... ահաւասիկ ես տաց: *Ոմանք*. Եւ առից զբազմութիւն... և կողոպտեցէ զկողոպուտ նորա:

* *Բազումք*. Եղջեր ամենայն տանն: *Ոսկան*. Եւ ծանիցես, թէ ես եմ:

* *Բազումք*. Օր միգի. հասեալ է վա՛:

* *Այլք*. Խառնադանճքն:

* *Ոսկան*. Եւ աւարեցի ՚ի մէջ ա՛:

* *Ոմանք*. Ջսնոտի յոյսն Եգիպտացոց:

* *Բազումք*. Եւ թափեցեն զսուրս իւր՝:

* *Բազումք*. Ջգետս նոցա յանապատ: *Յօրինակին*. Ի ձեռս չարեաց:

և արկից հուր զՏայանու, և խնդրեցից զվրէժ 'ի Դիոսպոլացոց*։ ¹⁵Եւ հեղից զսրտմտութիւն իմ 'ի վերայ Սասիսայ զօրութեանն Եգիպտացոց, և կորուսից զբազմութիւն Մեմփացոց*։ ¹⁶Եւ տաց հուր յԵգիպտոս, և խռովութեամբ խռովեցի Սայիս. և եղիցի քաղաքն Դիոսպոլացոց յերգիծումն. և բղխեսցեն ջուրք*։ ¹⁷Երիտասարդք Արեգ քաղաքի և Բուբաստայ՝ անկցին սրով, և կանայք նոցա 'ի գերութիւն վարեսցին*։ ¹⁸Եւ խաւարեսցի՝ տիւ 'ի Տափնաս, 'ի փշրել ինձ անդ զգաւազան իշխանութեան Եգիպտացոցն. և կորիցէ անդ հպարտութիւն զօրութեան նորա, և զնոյն մէ՛գ ծածկեսցէ. և դստերք նորա 'ի գերութիւն վարեսցին*։ ¹⁹Եւ արարից դատաստան յԵգիպտոս. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր*։

Դարձեալ 'ի վերայ Եգիպտոսի։ ²⁰Եւ եղև 'ի մետասաներորդի ամի անդ՝ յամսեանն առաջնում, որ օր եւթն էր ամսոյն. եղև բան Տեառն առ իս և ասէ*։ ²¹Որդի մարդոյ, զբազուկս փարաւովնի արքային Եգիպտացոց խորտակեցից, և ահա ո՛չ ևս պատեսցի 'ի բժշկութիւն. և ո՛չ տացին 'ի վերայ նորա դեղք, կամ թէ զօրանայցէ առնուլ սուր 'ի ձեռին*։ ²²Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես 'ի վերայ փարաւոնի արքային Եգիպտացոց, և խորտակեցից զբազուկս նորա հօօրս, զներդապատս և զաճառապատս. և ընկեցից զսուրն 'ի ձեռանէ նորա*։ ²³և ցրուեցից զԵգիպտոս ընդ ազգս, և հոսեցի՛ց զնոսա ընդ գաւառս։ ²⁴Եւ զօրացուցից զբազուկս արքային Բաբելացոց, և տա՛ց զսուր իմ 'ի ձեռս նորա. և աճցէ զայն 'ի վերայ երկրին Եգիպտացոց, և աւարեսցէ զաւար նորա, և կողոպտեսցէ զկապուտ նորա*։ ²⁵Եւ զօրացուցից զբազուկս արքային Բաբելացոց. և բազուկքն փարաւոնի լքցին։ Եւ ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր, 'ի տալն ինձ զսուրն իմ 'ի ձեռս արքային Բաբելացոց, և ձգեցից զնա 'ի վերայ արքային Եգիպտացոց*։ ²⁶Եւ ցրուեցից զԵգիպտոս ընդ ազգս, և հոսեցից զնոսա ընդ գաւառս. և ծանիցեն ամենայն Եգիպտացիքն թէ ե՛ս եմ Տէր։

31

Գլուխ ԼԱ*

¹Եւ եղև յամին մետասաներորդի՝ յամսեանն երրորդի, որ օր մի էր ամսոյն. եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ ասա՛ ցարքայն Եգիպտացոց ցփարաւովն և ցօօրս իւր. Ո՞ւմ նմանեցուցեր զքեզ 'ի հպարտութեանդ քում. ³ահաւանիկ Ասուր իբրև նոճ մի 'ի Լիբանան գեղեցիկ շառաւիղօք և խիտ

* *Ոմանք.* Չվրէժ Եդիոսպոլացոց։

* *Բազունք.* 'ի վերայ Սայիսայ. և *ոմանք.* Սայիմայ։

* *Ոմանք.* Քաղաքն Եդիոսպոլացոց։

* *Ոմանք.* Եւ երիտասարդք... 'ի գերութեան վարեսցին։

* *Ոմանք.* Եւ փշրել անդ ինձ զգաւազանն... 'ի զօրութեան նորա... դստերք նորա 'ի գերութեան վարես'։

* *Ոմանք.* Դատաստանս յԵգիպ'։

* *Ի բազունս պակասի վերնագիրս*՝ Դարձեալ 'ի վերայ Եգիպ'։

* *Ոմանք.* խորտակեցի. և ահա... սուր 'ի ձեռն։

* *Ոմանք.* Վասն այնորիկ... ահաւաղիկ ես... զներդապատս և զաճա'։

* *Բազունք.* Չայն 'ի վերայ Եգիպտացոց։

* *Բազունք.* 'ի տալ ինձ... և ձգեցից զնա 'ի վերայ երկրին Եգիպտացոց։

* *Օրինակ մի աստէն յաւելու վերնագիր.* Դարձեալ 'ի վերայ Եգիպտոսի։

ոստովք՝ և բարձր մեծութեամբ. ՚ի մէջ ամպոց եղև գլուխ նորա*, ⁴և ջուր սնոյց
 զնա, և անդունդք բարձրացուցին զնա. և զգետս նորա ա՛ծ շուրջ զտնկովք
 իւրովք, և զանտառախիտս իւր արծակեաց ընդ ամենայն փայտս դաշտին*:
⁵Վասն այնորիկ բարձրացաւ մեծութիւն նորա քան զամենայն ծառս դաշտին, և
 տարածեցան ոստք նորա. և բարձրացան շառաւիղք նորա ՚ի ջուրց բազմաց. ⁶ի
 տարածանել իւրում ՚ի շառաւիղս նորա բնակեցին ամենայն թռչունք երկնից, և
 ՚ի ներքոյ ոստոցն նորա ծնան ամենայն գազանք դաշտի, և ընդ հովանեաւ
 նորա բնակեցին ամենայն բազմութիւնք ազգաց*: ⁷Եւ եղև գեղեցիկ
 բարձրութեամբ իւրով, վասն երկայնութեան ոստոց իւրոց. զի եղեն արմատք
 նորա ՚ի ջուրս բազումս: ⁸Սա՛րդն և սարոյն և նոճ ՚ի դրախտին Աստուծոյ, և ո՛չ
 հաւասարեցին շառաւիղաց նորա մայրքն և սաւսոյք՝ ո՛չ նմանեցին ոստոց
 նորա: Ամենայն փայտ ՚ի դրախտին Աստուծոյ ո՛չ նմանեցին նմա
 գեղեցկութեամբ*. ⁹Վասն անտառախիտ ոստոց նորա. և նախանձեցան ընդ նմա
 ամենայն ծառք դրախտին փափկութեան Աստուծոյ*: ¹⁰Վասն այսորիկ այսպէս
 ասէ Տէր Տէր. Փոխանակ զի մեծացար մեծութեամբ, և հասին ծայրք քո յամպս. և
 տեսի զհպարտութիւն քո*, ¹¹մատնեցից զքեզ ՚ի ձեռս իշխանին ազգաց, և
 արարին զնա ՚ի կորուստ*: ¹²Եւ հանին զնա, և սատակեցին զնա օտարք
 ժանտագործք յազգաց, և տապալեցին զնա ՚ի վերայ լերանց. յամենայն ձորս
 անկան ոստք նորա, և խորտակեցաւ ստեղն նորա ընդ ամենայն դաշտս երկրի.
 և իջին ՚ի հովանւոյ նորա ամենայն ազգք ազանց, և յատակեցին զնա*: ¹³Եւ ՚ի
 գլորելն նորա՝ հանգի՛ստ եղև ամենայն թռչնոց երկնից, և ՚ի ստեղն նորա հասին
 ամենայն գազանք վայրի: ¹⁴Ձի մի՛ ևս հպարտասցին ՚ի մեծութեան իւրեանց
 ամենայն փայտք ջրասունք, և ո՛չ արծակեսցեն զծայրս իւրեանց ընդ ամպս, և
 մի՛ կացցեն ՚ի հպարտութեան իւրեանց իբրև զնա որ ըմպիցէն ջուր. ամենեքին
 ՚ի մի մահ մատնեցան ՚ի խորս երկրի՝ ՚ի մէջ որդւոց մարդկան իջելոց ՚ի
 խորխորատ*: ¹⁵Այսպէս ասէ Տէր Տէր. Յաւուր յորում էջ ՚ի դժոխս՝ սո՛ւզ առին ՚ի
 վերայ նորա անդունդք. և արգելի զգետս նորա, և խի՛ց արկի ջուրց բազմաց. և
 տխրեցաւ ՚ի վերայ նորա Լիբանան, և ամենայն ծառք դաշտի լքան վասն
 նորա*: ¹⁶Ի ձայնէ կործանման նորա դղրդեցան ազգք, յորժամ իջուցի զնա ՚ի
 դժոխս ընդ իջեալսն ՚ի գուբ. և մխիթարէին զնա ՚ի սանդարամետսն ամենայն
 ծառք փափկութեան. և ընտիր ընտիր գեղեցիկքն Լիբանանու որ էին ջրարբիք*:
¹⁷Քանզի նոքա իջին ընդ նմա վիրաւորօք սրոյ ՚ի դժոխս. և զաւակք նորա որ
 բնակեալ էին ընդ հովանեաւ նորա, յընդմիջել կենաց իւրեանց սատակեցան*:

* *Ոմանք.* Շառաւեղաւ և խիտ ոստօք:

* *Ոմանք.* Ջուր սնոյց զնա:

* *Յօրինակին.* Ի շաւիղս նորա բնակեցին:

* *Բազումք.* Ի դրախտին Աստուծոյ ոչ հա՛:

* *Ոսկան.* Եւ նախանձեցան ընդ նա:

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս:

* *Բազումք.* Եւ մատնեցի զքեզ ՚ի ձեռս: *՚ի լուս՛.* Եւ արարից զնա ՚ի կոր՛. *համաձայն
 ոմանց ՚ի բնաք՛:*

* *Օրինակ մի.* Յամենայն ազգաց գազանաց:

* *Ոմանք.* Ամենեքին ՚ի մահ մատնեցին ՚ի խորս երկ՛:

* *Յօրինակին.* Եւ արգելի զգետս նորա: *Ոմանք.* Եւ խից արկից ջուրց:

* *Բազումք.* Եւ մխիթարեցին զնա ՚ի սանդարամետսն: *Ոսկան.* Գեղեցիկքն ՚ի Լիբանան
 որք էին:

* *Բազումք.* Ընդմիջեալ կենաց իւր՛:

¹⁸Ո՞ւմ նմանեցար զօրութեամբ և փառօք և մեծութեամբ՝ ՚ի ծառս փափկութեան. է՛ջ՝ և զիջի՛ր հանդերձ ծառովք փափկութեան քոյ ՚ի խորս երկրի, ՚ի մէջ անթլփատից ննջեցելոց ընդ վիրաւորս սրոյ. այնպէս փարաւոն և ամենայն բազմութիւն զօրութեան իւրոյ՝ ասէ Տէր Տէր՝:

32

Գլուխ ԼԲ*

¹Եւ եղև յամին երկոտասաներորդի՝ յամսեանն երկոտասաներորդի, որ օր մի էր ամսոյն. եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ ո՛ղբս առ ՚ի վերայ փարաւովնի արքային Եգիպտացոց՝ և ասացես ցնա. Առիւծացար ՚ի մէջ ազգաց, և նմանեցար վիշապի՝ ՚ի մէջ ծովու. և ոգորէիր ընդ գետս քո, և առ սմբակ պղտորէիր զջուրսն, և առաթուր կոխան առնէիր զգետս քո: ³Այսպէս ասէ Տէր Տէր. Պատեցից զքեզ թակարդօք իմովք, և ժողովովք զօրաց բազմաց. և հանից զքեզ կարթիւ իմով՝. ⁴տախտապարեցից զքեզ ՚ի վերայ երկրի, և լցցին քև դաշտք. և իջուցից ՚ի վերայ քո զամենայն թռչունս երկնից, և յագեցուցից ՚ի քէն զամենայն զազանս երկրի: ⁵Եւ տաց զմարմինս քո ՚ի վերայ լերանց, և լցուցից զձորս յարենէ քունմէ. ⁶և արբեցի երկիր յապաւառէ քունմէ՝ ՚ի բազմութեան քոյ ՚ի վերայ լերանց, զձորս լցից ՚ի քէն: ⁷Եւ պատրուակեցից զերկինս ՚ի շիջանել քուն, և խաւարեցուցից զաստեղս նորա. զարեգակն ամպով ծածկեցից, և լուսին մի՛ տացէ զլոյս իւր՝. ⁸և զամենայն լուսաւորս խաւարեցուցից ՚ի վերայ քո. և տաց խաւար՝ ՚ի վերայ քո՝ ասէ Տէր Տէր: ⁹Եւ զայրացուցից զսիրտս ազգաց բազմաց, ՚ի ժամանակի իբրև հանից զգերութիւն քո ընդ ա՛զգս յերկիր զոր ո՛չ գիտիցես: ¹⁰Եւ տրտմեսցին ՚ի վերայ քո ազգք բազումք, և թագաւորք նոցա զարհուրելով զարհուրեսցին, ՚ի թռչել սրոյ իմոյ առաջի երեսաց նոցա ա՛կն ունել կործանման իւրեանց յօրէ կործանման քոյ: ¹¹Զի այսպէս ասէ Տէր Տէր. Սուր արքային Բաբելացոց եկեսցէ ՚ի վերայ քո ¹²հանդերձ սրով սկայից, և կործանեցից զզօրութիւն քո. եկեսցեն ամենայն ժանտագործք ազգաց՝ և կորուսցեն զհպարտութիւն Եգիպտացոց. և խորտակեսցի՛ ամենայն զօրութիւն նորա՝: ¹³Եւ կորուսից զամենայն անասունս նորա ՚ի ջուրց բազմաց. և մի՛ պղտորեսցէ զնա ոտն մարդոյ, և կճղակ անասնոյ մի՛ կոխեսցէ զնա՝: ¹⁴Եւ ապա դադարեսցեն ջուրք նոցա, և գետք նոցա նման իւղոյ գնացեն. ասէ Աղովնայի Տէր: ¹⁵Յորժամ տաց զԵգիպտոս ՚ի կորուստ. և աւերեսցի՛ երկիրն լրիւ իւրով. յորժամ ցրուեցից զամենայն բնակիչսն ՚ի նմանէ, և ծանիցեն թէ ես եմ Տէր Տէր՝: ¹⁶Ո՛ղբք են՝ և ողբացեն զնա, և դստերք ազգաց ողբացեն զնա. ՚ի վերայ Եգիպտոսի և ՚ի վերայ ամենայն զօրութեան նորա

* *Ոմանք.* Ո՞ւմ նմանեցաւ զօրութեամբ... և մեծութեամբ ծառօք փափկ՝: *Ուր Ոսկան.* Ո՞ւմ նմանեցուցեր զօր՝... և ծառօք փափկ՝: *Բազումք.* Սոյնպէս փարաւոն, և:

* *Օրինակ մի յաւելու վերնագիր.* Դարձեալ ՚ի վերայ Եգիպտացոց թագաւորին:

* *Ոմանք.* Եւ ժողովք զօրաց բազմաց:

* *Ոմանք.* Ամպովք ծածկեցից:

* *Ոսկան.* Եւ յարուսցեն զհպարտութիւն Եգիպտաց՝: *Ոմանք.* Եւ սատակեսցին ամենայն զօրութիւնք նորա:

* *Ի լուս՝.* Եւ կճղակ անասնոց:

* *Ոմանք.* Թէ ես եմ Տէր:

ողբասցեն զնա, ասէ Տէր Տէր:

Ողբք ՚ի վերայ փարաւոնի և Եգիպտոսի*: ¹⁷Եւ եղև յամին երկոտասաներորդի՝ յամսեանն առաջնում, որ օր հնգետասան էր ամսոյն. եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁸Որդի մարդոյ ո՛ղբս առ ՚ի վերայ զօրութեանն Եգիպտոսի, և իջուցեն զդստերս նորա ազգքն՝ զմեռեալս ՚ի խորս երկրի, առ իջեալսն ՚ի խորխորատս* ¹⁹ի ջուրց վայելչութեան. էջ մնջեա՛ ընդ անթլփատս ²⁰ի մէջ վիրաւորաց. սրով անկցին ընդ մնա, և դադարեսցէ ամենայն զօրութիւն նորա: ²¹Եւ ասասցեն ցքեզ սկայքն. Ե՛կ էջ ՚ի խորս խորինս, զի քան զո՞վ լաւ էիր դու. էջ և դադարեա՛ ընդ անթլփատս ՚ի մէջ վիրաւորաց սրոյ*: ²²Անդ Ասուր և ամենայն ժողովուրդք նորա՝ ամենեքին վիրաւորք. անդ* ²³տուաւ գերեզման նոցա ՚ի խորս խորխորատին, և եղեն ժողովուրդք նոցա շուրջ զշիրմօք նորա. ամենայն վիրաւորք անկան սրով. որ արարին զգերեզմանս իւրեանց ՚ի յատակս գբոց, և եղեն ժողովք շուրջ զգերեզմանօք նորա. ամենեքին վիրաւորք անկեալք ՚ի սրոյ, որ ետուն զահ իւրեանց ՚ի վերայ երկրին կենդանութեան*: ²⁴Անդ Էդ՛ամ, և ամենայն զօրութիւն նորա շուրջ զգերեզմանաւ նորա. ամենեքին վիրաւորք անկեալք ՚ի սրոյ իջին անթլփատք ՚ի խորս երկրի. որ ետուն զահ իւրեանց ՚ի վերայ երկրին կենդանութեան, և ընկալան զտանջանս իւրեանց ընդ իջեալսն ՚ի խորխորատ* ²⁵ի մէջ վիրաւորաց: ²⁶Անդ տուան Մոսոք՝ և Թոբէլ, և ամենայն զօրութիւնք նոցա շուրջ զգերեզմանաւ նորա. ամենայն վիրաւորք նորա ամենեքեան անթլփատք վիրաւորք անկեալք ՚ի սրոյ, որ ետուն զահ իւրեանց ՚ի վերայ երկրին կենդանութեան*: ²⁷Եւ մնջեցին ընդ հսկայսն անկեալսն յաւիտենից. որ իջին ՚ի դժոխս պատերազմօղ զինուքն իւրեանց, և եդան անօրէնութիւնք նոցա ՚ի վերայ ոսկերաց իւրեանց. զի զարհուրեցուցին զհսկայս ՚ի կենդանութեան իւրեանց*: ²⁸Եւ դու ՚ի մէջ անթլփատիցն խորտակեսցիս, և մնջեսցես ՚ի մէջ վիրաւորացն սրոյ: ²⁹Անդ Եդոմ և թագաւորք իւր և ամենայն իշխանք նորա, որ ետուն զզօրութիւն իւրեանց ՚ի հարուածս սրոյ. և նոքա ընդ վիրաւորս մնջեցին ընդ իջեալսն ՚ի խորխորատ*: ³⁰Անդ ամենայն իշխանք հիւսւսոյ, և ամենեքեան նոքա զօրավարք Ասորեստանւոյն, իջեալք վիրաւորք հանդերձ ահիւն զօրութեանք իւրեանց. ամօթալից մնջեցին անթլփատք ընդ վիրաւորս սուսերաց, և տարան զտանջանս իւրեանց ընդ իջեալսն ՚ի խորխորատ: ³¹Ձնոսա տեսցէ փարաւոն և մխիթարեսցի ՚ի վերայ ամենայն զօրութեան նոցա: Վիրաւորք փարաւոնի ՚ի սրոյ, և ամենայն զօրութիւն նորա՝ ասէ Տէր Տէր: ³²Ձի ետ զահ իւր յերկիրն կենդանութեան, և մնջեսցէ ՚ի մէջ անթլփատիցն վիրաւորելոց սրոյ, փարաւոն՝ և ամենայն բազմութիւն իւր ընդ մմին՝ ասէ Տէր Տէր*:

* *ի բազումս պակասի վերնագիրս.* Ողբք ՚ի վերայ փարաւոնի և Եգիպ՛:

* *Բազումք.* Առ իջեալսն ՚ի խորխորատ:

* *Ոմանք.* Ասասցեն քեզ. *կամ՝* ընդ քեզ սկայքն. Ե՛կ էջ ՚ի խորխորինս. զի քան զո՞վ լաւ:

* *Բազումք.* Եւ ամենայն ժողովք նորա ամենայն վիրաւորք:

* *Բազումք.* Եւ եղև ժողովք նոցա շուրջ... իւրեանց յատակս գբ՛:

* *Բազումք.* Ձահ իւրեանց յերկիրն կենդ՛:

* *Յօրինակին.* Եւ ամենայն զօրութիւնք նոքա շուրջ:

* *Ոմանք.* Եւ ոչ մնջեցին ընդ հսկայսն:

* *Բազումք.* Անդ Եդովմ, և թագաւորք:

* *Բազումք.* Վիրաւորելոց սրով:

Գլուխ ԼԳ

Առ որդիսն Յակովբու:

Ի՛նչ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ խօսեաց ընդ որդիսդ ժողովրդեան քոյ, և ասասցես ցնոսա. Երկիր մի յորոյ վերայ ածիցեմ ես սուր. և առնուցուն ազգք երկրին այր մի յինքեանց, և կացուցանիցեն զնա դէտ*.³ և տեսանիցէ սուր եկեալ յերկիրն, և փո՛ղ հարկանիցէ՝ և ա՛զդ առնիցէ ժողովրդեանն: ⁴Եւ լսելով լսիցէ՝ զծայն փողոյն՝ և ո՛չ զգուշացի. և հասանիցէ սուրն՝ և ըմբռնեսցէ զնա, արիւն նորա՝ ՚ի գլուխ նորին եղիցի*:⁵ Զի զծայն լուաւ զփողոյն և ո՛չ զգուշացաւ, արիւն նորա՝ ՚ի վերայ նորին եղիցի. և նա՝ զի զգուշացոյց, զանձն իւր ապրեցոյց*:⁶ Եւ եթէ տեսանիցէ դէտն զսուրն եկեալ՝ և ո՛չ նշանակիցէ փողով, և ազգն ո՛չ զգուշանայցէ. և եկեալ սուրն ըմբռնիցէ՝ ՚ի նոցանէ անձն մի. նա վասն անօրէնութեան իւրում ըմբռնեցաւ, և զարիւն նորա՝ ՚ի ձեռաց դիտին խնդրեցից*:⁷ Եւ դո՛ւ որդի մարդոյ, դէ՛տ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, և լուիցես բանից բերանոյ իմոյ, և զգուշացուցիր զնոսա իբրև յինէմ*:⁸ Յասե՛լ ինձ ցմեղաւորն թէ մահու մեռանիցիս. և դու ո՛չ խօսիցիս զգուշացուցանել զամպարիշտն ՚ի ճանապարհէ իւրմէ. ինքն անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, և զարիւն նորա՝ ՚ի ձեռաց քոց խնդրեցից:⁹ Ապա թէ դու յառաջագոյն պատմեսցես ամպարշտին զճանապարհս իւր՝ դառնա՛լ նմա՝ ՚ի նմանէ, և ո՛չ դարձցի՝ ՚ի ճանապարհէ իւրմէ. ինքն յամպարշտութեան իւրում մեռցի, և դու զանձն քո ապրեցուցես*:¹⁰ Եւ դու որդի մարդոյ՝ ասա՛ ցտունդ Իսրայէլի. Այսպէս խօսեցարուք և ասացէ՛ք, եթէ մոլորութիւնք մեր և անօրէնութիւնք մեր ՚ի մե՛զ են, և մեք ՚ի նոսին մաշիմք. և զիա՞րդ ապրեսցուք:¹¹ Ասա՛ ցնոսա. Կենդանի՛ եմ ես՝ ասէ Ադովնայի Տէր. ո՛չ կամիմ զմահ ամպարշտին, որպէս զդառնա՛լ ամպարշտին ՚ի չար ճանապարհէ իւրմէ՝ և կեալ. դառնալով դարձարուք՝ ՚ի ճանապարհաց ձերոց չարաց. և ընդէ՞ր մեռանիք տունդ Իսրայէլի:¹² Եւ դու որդի մարդոյ՝ ասա՛ ցորդիս ժողովրդեան քոյ. Արդարութիւն արդարոյն ո՛չ փրկեսցէ զնա՝ յաւուր յորում մոլորեսցի. և անօրէնութիւն անօրինին ո՛չ չարչարեսցէ զնա՝ յաւուր յորում դառնայցէ յամենայն անօրէնութենէ իւրմէ: Եւ արդարն ո՛չ կարասցէ ապրել յաւուր մեղաց իւրոց.¹³ Եւ յասե՛լ ինձ ցարդարն՝ թէ կելով կեցցես, և նա յուսացեալ յարդարութիւն իւր՝ առնիցէ անօրէնութիւն. ամենայն արդարութիւնք նորա մի՛ յիշեսցին, այլ անօրէնութեամբն իւրով զոր արար՝ նովին մեռցի*:¹⁴ Եւ յասե՛լ ինձ ցամպարիշտն թէ մահու մեռջիր. և դարձցի՝ ՚ի մեղաց իւրոց, և արասցէ իրաւունս և արդարութիւն.¹⁵ և զգրաւ պարտապանին՝ ՚ի բա՛ց տացէ, և զյափշտակութիւնն դարձուցանիցէ, ՚ի հրամանս կենաց զնասցէ չառնել

* Այլք. Ընդ որդիս ժողո՞ւ: Ոմանք. Եւ առնուցու ազգ երկ՞:

* Այլք. Եւ ըմբռնիցէ զնա:

* Ոմանք. Զծայն լուաւ փողոյն:

* Բազումք. Վասն անօրէնութեան իւրոյ:

* Բազումք. Դէտ ետու զքեզ տանդ Իսրայէլի... զգուշացուցես զնոսա իբրև:

* Ոմանք. Ինքն յանօրէնութեան իւրում մեռցի, և դու:

* Ոմանք. Զոր արար՝ նովին մեռցի:

զանհրաւութիւն. կելո՛վ կեցցէ՝ և մի՛ մեռցի՞*. ¹⁶ամենայն մեղք իւր զոր մեղաւ՝ մի՛ յիշեսցին. զի իրաւունս և արդարութիւն արար, նոքիմբք կեցցէ: ¹⁷Եւ ասեն որդիք ժողովրդեան քոյ. Ո՛չ ուղիղ են ճանապարհք Տեառն. նա՛ նոցա ճանապարհն չէ՛ ուղիղ՞: ¹⁸Ի դառնալն արդարոյն յարդարութենէ իւրմէ և առնել անհրաւութիւնս՝ նոքիմբք մեռցի: ¹⁹Եւ ՚ի դառնալ մեղաւորին յանօրէնութենէ իւրմէ՝ և առնիցէ իրաւունս և արդարութիւն՝ նոքիմբք կեցցէ՞: ²⁰Եւ ա՞յս է զոր ասացէքն թէ ո՛չ ուղիղ է ճանապարհ Տեառն. զիւրաքանչիւրոք ըստ ճանապարհաց ձերոց դատեցայց զձեզ տունդ Իսրայէլի՞*:

ԻԸ ²¹Եւ եղև յամին երկոտասաներորդի՝ ՚ի տասներորդ ամսեանն, որ օր հինգ էր ամսոյն գերութեան մերոյ, եհաս առ իս ոմն գերծեալ յերուսաղեմէ, և ասէ. Առա՛ւ քաղաքն՞: ²²Եւ ձեռն Տեառն եղեալ ՚ի վերայ իմ յերեկորեայն՝ մինչչև՛ եկեալ էր նորա, և եբաց զբերան իմ մինչչև՛ եկեալ էր ընդ առաւօտն. և ՚ի բանալ բերանոյ իմոյ՝ ո՛չ ևս ամփոփեցաւ անդրէն՞: ²³Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²⁴Որդի մարդոյ՝ բնակիչք ակերակաց երկրին Իսրայէլի ասեն. Մի մարդ էր Աբրահամ՝ և կալաւ զերկիրն. և արդ մեք բազումք ենք, և մե՛զ տուեալ է երկիրն ՚ի ժառանգութիւն. ո՞չ ժառանգիցենք զնա: ²⁵Վասն այսորիկ ասա՛ ցնոսա. Այսպէս ասէ Ադովնայի Տէր. Որովհետև ՚ի վերայ արեան ուտէք, և զաչս ձեր արծակեցէք ՚ի կուռս, և արիւն հեղուք, և կամիք զերկիրն ժառանգել՞: ²⁶Եղիցի դա ձեզ ՚ի սուր, զի արարէք պղծութիւնս, իւրաքանչիւր զկին ընկերի իւրոյ պղծէիք. և արդ այսի՞ ժառանգիցէք զերկիրն՞: ²⁷Վասն այդորիկ ասա՛ ցնոսա. Այսպէս ասէ Տէր Տէր. Կենդանի՛ եմ ես Տէր, եթէ ոչ որ յաւերակսն իցեն՝ սրով անկցին. և որ ընդ երեսս դաշտին իցեն՝ զազանաց անապատի՛ տացին ՚ի կերակուր. և որ ընդ պարսպօքն և այսր իցեն՝ մահու կոտորեցից՞. ²⁸և տաց զերկիրն յաւերակ և յապականութիւն. և կորիցէ՛ հպարտութիւն զօրութեան նորա. և ակերեսցին լերինք Իսրայէլի, զի մի՛ ոք իցէ որ գնայցէ ընդ նոսա: ²⁹Եւ ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր. և արարից զերկիր նորա ակերակ. և ակերեսցի վասն ամենայն զարշելեաց իւրեանց զոր արարին՞:

ԻԹ ³⁰Եւ դու որդի մարդոյ, որդիք ժողովրդեան քոյ շրջին, քրթմնջեն զքէն առ պարսպօքն և ՚ի դրունս ասպարանիցն, և ասեն մի ցմի՛ այր ցեղբայր իւր. ժողովեսցուք երթիցուք լուիցուք զպատգամսն որ ելին ՚ի Տեառնէ: ³¹Եւ արդ՝ զան առ քեզ որպէս ժողովեալք ՚ի ժողովուրդ. և նստին առաջի քոյ ժողովուրդն իմ, լսել զբանս քո՝ և ո՛չ առնեն զնոսա. զի ստութիւն է ՚ի բերանս նոցա, և զհետ պղծութեան իւրեանց զնան սիրտք իւրեանց՞: ³²Եւ դու լինիցիս նոցա իբրև

* *Ոմանք.* Ի բաց տայցէ... ՚ի հրաման կենաց զն՞:

* *Բազումք.* Ո՛չ ուղիղ է ճանապարհ Տեառն... ո՛չ է ուղիղ:

* *Ոմանք.* Իւրմէ, առնիցէ իրա՞:

* *Բազումք.* Ըստ ճանապարհաց իւրոց դա՞:

* *Ոսկան.* Ի տասներորդի յամսեանն:

* *Ոմանք.* Ընդ առաւօտսն:

* *Բազումք.* Վասն այնորիկ ասա՛:

* *Օրինակ մի.* Եղիցի դա ձեզ դարձեալ ՚ի սուր: *՚ի լուս՞.* Եւ արդ այդիւ ժա՞. *համաձայն բազմաց ՚ի բնաք՞:* *Ուր Ոսկան.* այդու ժառանգի՞:

* *Բազումք.* Վասն այնորիկ ասա՛: *Ոմանք.* Եւ որ ընդ պարսպաւորօքն իցեն, և յայրս մահու կոտո՞:

* *Ոմանք.* Եւ արարի զերկիր նոցա ակերակ... զարշելեացն զոր արա՞:

* *Ոմանք.* Լսեն զբանս քո, և ոչ առնեն զնա... զնան սիրտք նոցա. *կամ՞* սրտիւք իւրեանց:

զծայն երգոյ քաղցրաբարբառ յօրհնելոյ. և լուիցեն զբանս քո՝ և ո՛չ արասցեն*:
³³Եւ յորժամ գայցէ՝ ասասցեն, թէ ահաւասիկ եհաս. և ծանիցեն թէ
մարգարեութիւն գոյ՝ ՚ի մէջ նոցա*:

34

Գլուխ ԼԴ

Առ հովիւսն Իսրայէլի:

Լ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ մարգարեաց՝ ՚ի վերայ
հովուացոյ Իսրայէլի, մարգարեաց՝ և ասասցես ցհովիւսդ. Այսպէս ասէ Տէր Տէր.
Ո՛ հովիւք Իսրայէլի. միթէ հովիւք զանձի՞նս արածեն. ո՛չ հովիւք զխաշինս
արածեն*:³Արդ՝ աւասիկ զկաթնդ ուտէք, և զասրդ ագանիք. զպարարտսն
զենուք. և զխաշն իմ ո՛չ արածէք*:⁴Ձտկարացեալն ո՛չ զօրացուցանէք, և
զհիւանդացեալն ո՛չ բժշկեցէք, զչարչարեալն ո՛չ յանձանձեցէք, և զբեկեալն ո՛չ
պատեցէք. զմոլորեալն ո՛չ դարձուցի՞ք, և զկորուսեալն ո՛չ խնդրեցիք.
զհաստահարուստն աշխատ արարի՞ք*:⁵Եւ ցրուեցան խաշինք իմ, քանզի ո՛չ
գոյն նոցա հովիւք. և եղեն կերակուր գազանաց անապատի. և ցրուեցան*,⁶և
մոլորեցան խաշինքն իմ ընդ ամենայն լերինս, և ընդ ամենայն բլուրս
բարձունս, և ընդ ամենայն երեսս երկրի ցրուեցան խաշինքն իմ. և ո՛չ ոք էր որ
խնդրէր, և ո՛չ այն որ դարձուցանէր*:⁷Վասն այնորիկ հովիւք լուարո՛ւք
զպատգամս Տեառն*. ⁸Կենդանի՛ եմ ես ասէ Ադովնայի Տէր Տէր. եթէ ոչ
փոխանակ զի եղեն խաշինք իմ յաւար, և մատնեցան խաշինք իմ ՚ի կերակուր
գազանաց անապատի. վասն զի ո՛չ գոյին հովիւք, և ո՛չ խնդրեցին հովիւք
զխաշինս իմ. և բուծին հովիւքն զանձինս իւրեանց, և զխաշինս իմ ո՛չ
արածէին*. ⁹Փոխանակ այնորիկ լուարո՛ւք հովիւք զպատգամս Տեառն:
¹⁰Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ե՛ս ՚ի վերայ հովուացոյ. և պահանջեցի՞ց
զխաշինս իմ ՚ի ձեռաց դոցա, և դադարեցուցից զդոսա յարածելոյ զխաշինս իմ,
և ո՛չ ևս արածեսցեն զնոսա. և փրկեցի՞ց զխաշինս իմ ՚ի ձեռաց դոցա, և ո՛չ ևս
եղիցին դոցա ՚ի կերակուր*:¹¹Ձի այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ինքնին
խնդրեցից զխաշինս իմ, և այ՛ց արարից դոցա*:¹²Ձոր օրինակ խնդրիցէ հովիւ
զհօտ իւր, յաւուր յորում իցէ մէզ և մառախուղ ՚ի մէջ խաշանց իւրոց վատնելոց.

* *Բազումք.* Իբրև զծայն երգոց:

* *Ոմանք.* Գայցեն ասասցեն ահաւասիկ... թէ մարգարէ գոյ ՚ի մէջ նոցա:

* *Ոսկան.* Ո՛հ հովիւք Իսրայէլի միթէ:

* *Ոմանք.* Ահաւաղիկ զկաթնդ: *Բազումք.* Եւ զխաշինս իմ ոչ արա՞:

* *Ոմանք.* Ձտկարացեալն ոչ զօրացուցէք: *՚ի լուս.* Ո՛չ դարձուցէք... ո՛չ խնդրեցէք...
աշխատ արարէք. *համաձայն այլոց ՚ի բնար՞:*

* *Բազումք.* Ոչ գոյին նոցա հով՞:

* *Ոսկան.* Եւ ընդ ամենայն երկիր ցրուե՞:

* *Ոմանք.* Ձպատգամ Տեառն:

* *Առ Ոսկանայ պակասի.* Խաշինք իմ *յաւար.* և *մատնեցան խաշինք իմ* ՚ի կերա՞:

Բազումք. Եւ ոչ խնդրէին հովիւքն:

* *Ոմանք.* Ի՞ ձեռաց նոցա... ՚ի ձեռաց նոցա, և ոչ եղիցին դոցա:

* *Բազումք.* Ահաւաղիկ ես ինքնին:

ա՛յսպէս խնդրեցից զխաշինս իմ, և ժողովեցից զնոսա յամենայն տեղեաց ուր
 ցրուեցան ՚ի նոսա յաւուր միգի՛ և մառախղի՛*։ ¹³Եւ հանի՛ց զնոսա յազգաց, և
 ժողովեցից զնոսա ՚ի գաւառաց, և տարա՛յց զնոսա յերկիրն իւրեանց, և
 արածեցի՛ց զնոսա ՚ի վերայ լերանց Իսրայէլի, ¹⁴և ՚ի ձորս՝ և յամենայն
 բնակութեան երկրին. յարօտս փափկութեան արածեցից զնոսա ՚ի լերինն
 բարձու Իսրայէլի. և անդ եղիցին մակաղատեղք նոցա, անդ դադարեցեն՝ և
 անդ հանգիցեն ՚ի գրգութեան բարութեանց. և յարօտս պարարտութեան
 արածեցին ՚ի վերայ լերանցն Իսրայէլի՛*։ ¹⁵Ե՛ս արածեցից զխաշինս իմ, և ե՛ս
 հանգուցից զնոսա. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր։ Ա՛յսպէս ասէ Տէր Տէր.

¹⁶Ձկորուսեալն՝ խնդրեցից, և զմոլորեալն՝ դարձուցից, զբեկեալն՝ պատեցից, և
 զվտեալն՝ զօրացուցից, զգէրն և զհզօրն՝ պահեցից. և արածեցից զնոսա
 իրաւամբբ՛*։ ¹⁷Եւ դուք խաշինք իմ, ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես՝ ոչխար
 առ ոչխար դատեցայց, և խոյ՝ առ խոյ՛*։ ¹⁸Չիցէ՞ ձեզ բաւական զգեղեցիկ
 արօտսն յառաջագոյն արածել. այլ և զմնացեալ ճարակն ՚ի ձէնջ առ ո՛տն
 կոտորէիք, և զջուրսն յստակ ըմպէիք, և զմնացեալն առ ոտն պղտորէիք՛*։ ¹⁹Եւ
 խաշինք իմ զկոխան ոտից ձերոց ճարակէին. և զջուրսն պղտորեալ ՚ի կնդակաց
 ձերոց ըմպէին։ ²⁰Վասն այդորիկ ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ահաւադիկ ե՛ս
 դատեցայց ՚ի մէջ հարուստ և անաւագ ոչխարաց՛*։ ²¹Փոխանակ զի կողմբբ և
 ուսովք ձերովք գրթցէիք և ոգորէիք, և եղջերովք ձերովք խեթկէիք զամենայն
 անաւագն. և ՚ի բա՛ց մերժէիք զնոսա, մինչև ցրուեցան խաշինք իմ՛*։ ²²Եւ
 փրկեցից զխաշինս իմ, և ո՛չ ևս լինիցին ՚ի յափշտակութիւն. դատեցայց խոյ՝ առ
 խոյ՛։ ²³Եւ կացուցից ՚ի վերայ նոցա Դովիւ մի զծառայ իմ զԴաւիթ, և նա
 հովուեսցէ զնոսա. նա՛ եղիցի նոցա հովիւ՛*։ ²⁴և ես Տէր եղեց նոցա յԱստուած. և
 Դաւիթ ծառայ իմ իշխան ՚ի մէջ նոցա։ Ե՛ս Տէր խօսեցայ։ ²⁵Եւ եղից ընդ Դաւթի
 ո՛ւխտ խաղաղութեան, և ապականեցից զգազանս չար յերկրէ, և բնակեցին
 յանապատին յուսով, և ննջեսցեն յանտառս՛*։ ²⁶Եւ տա՛ց նոցա շուրջ զլերամբ
 իմով օրհնութիւն. և տաց ձեզ անձրև, և եղիցին անձրևք օրհնութեան՛*։ ²⁷Ծառք
 ազարակի տացեն զպտուղս իւրեանց, և երկիր տացէ զգօրութիւն իւր. և
 բնակեսցեն յերկրի իւրեանց յուսով խաղաղութեանց. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր.
 ՚ի խորտակել ինձ զլուծ պարանոցի նոցա։ Եւ փրկեցից զնոսա ՚ի ձեռաց
 ծառայեցուցչա՛ց իւրեանց՛*։ ²⁸Եւ ո՛չ ևս եղիցին յաւա՛ր ՚ի մէջ ազգաց. և գազանք
 երկրի մի՛ ևս կերիցեն զնոսա. և բնակեսցեն յուսով, և ո՛չ ոք իցէ որ
 զարհուրեցուցանիցէ զնոսա։ ²⁹Եւ կանգնեցից նոցա տունկ խաղաղութեան. և
 ո՛չ ևս վտտեսցին ՚ի սովոյ ՚ի վերայ երկրի, և նախատինս յազգաց ո՛չ ևս

* *Բազումք*. Այնպէս խնդրեցից: *Ոսկան*. ՚Ի նոսա, միգի և մառախղի՛:

* *Ոսկան*. Եւ յամենայն բնակութիւն երկ՛: *Ոմանք*. Եղիցի մակաղատեղ նոցա: *Ոսկան*. ՚Ի գրգութեանց. և յարօտս:

* *Ոմանք*. Ձվտտեալն. և *ոմանք*. զվատեալն:

* *Բազումք*. Եւ խոյ ընդ խոյ:

* *Ոսկան*. Յառաջագունոյն արածել... յստակս ըմպէիք: *Բազումք*. Ձմնացեալ ևս ճարակն... առ ոտն կոտորէք:

* *Ոմանք*. Վասն այնորիկ... ահաւասիկ ես դատե՛:

* *Այլք*. Կողմամբբ և ուսովք: *Օրհնակ մի*. Գրթցէիք ոգորէիք:

* *Յօրհնակին պակասէր*. Ձծառայ իմ զԴաւիթ:

* *Բազումք*. Ձգազանս չարս յերկրէ, և բնակեսցեն:

* *Ոմանք*. Շուրջ զլերամբբ ի՛:

* *Ոսկան*. Ձնոսա ՚ի ծառայեցուցչաց:

կրեսցեն*։ ³⁰Եւ ծանիցեն թէ ե՛ս Տէր Աստուած նոցա՝ ընդ նոսա՛ եմ. և նոքա ժողովուրդ իմ՝ տունն Իսրայէլի, ասէ Տէր Տէր*։ ³¹Եւ դուք խաշինք իմ ոչխարք արօտի իմոյ՝ մարդիկ էք, և ես Տէր Աստուած ձեր, ասէ Տէր Տէր։

35

Գլուխ ԼԵ

Ի վերայ եղովմայեցւոցն։

ԼԱ ¹Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ դարձո՛ գերեսս քո՝ ի վերայ լերինդ Սէիրայ. մարգարեաց՝ ի վերայ դորա՝ և ասացես ցոյա. ³Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ե՛ս ՚ի վերայ քո լեառնդ Սէիր, և ձգեցից զձեռն իմ ՚ի քեզ, և տաց զքեզ յանապատ՝ և աւերեսցիս. ⁴և զքաղաքս քո յաւեր դարձուցից, և եղիցիս աւերակ. և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր*։ ⁵Փոխանակ զի եղեր ՚ի թշնամութիւն յաւիտենից, և դարանակալ նստէիր նենգութեամբ տանն Իսրայէլի, ՚ի ձեռն թշնամեաց սրոյ ՚ի ժամանակի նեղութեան, ՚ի ժամանակի անիրաւութեան յետին վախճանի։ ⁶Վասն այնորիկ կենդանի՝ եմ ես՝ ասէ Տէր Տէր. եթէ ոչ յարիւն մեղար՝ և արիւն հալածեսցէ զքեզ, և զարիւնն զոր ատեցեր՝ նոյն արիւն հալածեսցէ զքեզ*։ ⁷Եւ տաց զլեառնդ Սէիր յաւերակ և յանապատ. և կորուսից ՚ի դմանէ զմարդ և զանասուն. ⁸և լցից զլերինս վիրաւորօք քովք, զբլուրս քո և զծորս քո. և յամենայն դաշտս քո՝ վիրաւորեալք ՚ի սրոյ անկցին ՚ի քեզ։ ⁹Յաւերակ յաւիտենից եղից զքեզ. և քաղաք քո ո՛չ ևս շինեսցին. և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր*։ ¹⁰Փոխանակ ասելոյն թէ երկու ազգքն և երկու աշխարհք ի՛մ եղիցին. և ժառանգեցից զնոսա. և Տէր անդ էր*։ ¹¹Վասն այնորիկ կենդանի եմ ես՝ ասէ Տէր Տէր. և արարից ընդ քեզ ըստ թշնամութեան քում, և ըստ նախանձուն քում զոր արարեր ատել զնոսա. և ծանուցայց քեզ յորժամ դատեցայց զքեզ. ¹²և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր։ Լուայ զձայն հայիոյութեանց քոց զի ասէիր, թէ լերինք Իսրայէլի աւերակք՝ մե՛զ տուեալ են ՚ի կերակուր. ¹³և մեծաբանեցեր ՚ի վերայ իմ բերանովք քովք. և հնչեցէք առ իս զբանս ձեր, և ես լուայ*։ ¹⁴Այսպէս ասէ Տէր Տէր. Յուրախութիւն ամենայն երկրի արարից զքեզ յաւերակ*։ ¹⁵Փոխանակ զի ոտնհար եղեր ժառանգութեան տանն Իսրայէլի՝ զի ապականեցաւ. ¹⁶նոյնպէս արարից զքեզ, և եղիցիս աւերակ լեառնդ Սէիր, և ամենայն Իդովմա սատակեսցի. և ծանիցես թէ ե՛ս եմ Տէր Աստուած նոցա*։

* *Ոսկան.* Եւ ոչ ևս վատեսցին ՚ի սովու։

* *Ոմանք.* Եւ ընդ նոսա եմ։

* *Ոմանք.* Քո աւեր դարձուցից, և եղիցես։

* *Ոմանք.* Վասն այնորիկ կենդանի։ *Ի բազումս պակասի.* Չքեզ, և զարիւնն զոր ատեցեր՝ նոյն արիւն հալածեսցէ զքեզ։

* *Ոսկան.* Եւ յաւերակ յաւի՛ր։ *Ոմանք.* Եւ քաղաքք քո ոչ ևս... և ծանիցեն թէ ես եմ։

* *Ոմանք.* Եւ երկու աշխարհք ՚ի մեզ իցեն։

* *Ոմանք.* Բերանով քով։

* *Ոմանք.* Արարից զքեզ աւերակ։

* *Ոսկան.* Եւ Իդումեա սատակեսցի։ *Օրինակ մի.* Եւ ամենայն Իդովմա սատակեսցի։ *Ուր և այլ օրինակ մի.* Եւ յամենայնի դու միայն կատակեսցիս. և ծանիցեն։

Գլուխ ԼԶ

՚ի վերայ լերանցն Իսրայէլի:

ԼԲ ¹Եւ դու որդի մարդոյ մարգարեաց ՚ի վերայ լերանցն Իսրայէլի, և ասացես ցլերինսն Իսրայէլի. Լուարո՛ւք զպատգամս Տեառն. ²Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի ասաց թշնամին ՚ի վերայ ձեր. Վա՛շ վա՛շ. ւաւերակք յաւիտենից ՚ի ժառանգութիւն եղեն մեզ. ³Վասն այդորիկ մարգարեա՛ն և ասացես. Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի եղէք յանարգութիւն ամենայն ազգաց որ շուրջ զձեւք են, և վտարանդի՛ եղէք ազգաց բազմաց, խօսք լեզուաց և նախատինք ազգաց*. ⁴Վասն այդորիկ լերինք Իսրայէլի՝ լուարո՛ւք զպատգամս Ադովնայի Տեառն. Այսպէս ասէ Ադովնայի Տէր Տէր ցլերինս և ցբլուրս և ցխորս և ցծորս և ցաւերակս ապականեալս և ցքաղաքս լքեալս՝ որ եղեն յաւեր և ՚ի կոխունն մնացելոց ազգաց որ շուրջ զձեւք են*: ⁵Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Եթէ ո՛չ հրով բարկութեան իմոյ խօսեցայց ՚ի վերայ այլոց ազգացն, և ՚ի վերայ ամենայն Եդովմայեցւոցն, զի արարին զերկիրն իմ իւրեանց ՚ի վտարանդի. ոտնհարութեամբ անարգեցին զանձինս ապականել աւարաւ*: ⁶Վասն այնորիկ մարգարեաց ՚ի վերայ երկրին Իսրայէլի, և ասացես ցլերինս և ցբլուրս և ցծորս և ցղաշտս. Այսպէս ասէ Տէր Տէր. Սհաւասիկ ես նախանձո՛ւ իմով և բարկութեամբ խօսեցայ. փոխանակ կրելոյն ձերոյ նախատինս ՚ի հեթանոսաց: ⁷Վասն այնորիկ այսպէս ասէ Ադովնայի Տէր. Ամբարձից զձեռն իմ ՚ի վերայ ազգաց որ շուրջ զձեւքդ են. նոքա ընկալցին զանարգանս իւրեանց*: ⁸Բայց զձեր լե՛րինքդ Իսրայէլի՝ զխաղող և զարդիւնս կերիցէ ժողովուրդ իմ Իսրայէլ. զի ա՛կն ունին դառնալոյ: ⁹Սհաւասիկ ես հայեցայց ՚ի ձեզ, և անկանիցիք ՚ի գործ. և սերմանիցիք*, ¹⁰և բազմացուցից ՚ի ձեզ մարդիկ, և համօրէն զտունն Իսրայէլի ՚ի սպառ. և բնակեցցին քաղաքք, և ւաւերակք շինեցցին: ¹¹Եւ բազմացուցից ՚ի ձեզ զմարդ և զանասուն. բազմացցին և աճեցցեն, և բնակեցուցից զձեզ որպէս իսկզբանէն, և բարի՛ արարից ձեզ որպէս և յառաջագոյն. և ծանիցիք թէ ես եմ Տէր: ¹²Եւ տիրեցուցի ձեզ մարդիկ զժողովուրդն իմ Իսրայէլ. ժառանգեցցեն զձեզ, և եղիցիք նոցա ՚ի բնակութիւն, և ո՛չ ևս լինիցիք անգաւա՛կ ՚ի նոցանէն*: ¹³Այսպէս ասէ Տէր Տէր. Փոխանակ զի ասացին ցքեզ թէ երկիր մարդավա՛ր ես դու, և անգաւա՛կ յազգէ քումնէ եղեր. ¹⁴Վասն այնորիկ ո՛չ ևս լինիցիս մարդավար, և զազգդ քո անգաւակ ո՛չ ևս արասցես, ասէ Տէր Տէր*: ¹⁵Եւ անարգանք ազգաց ՚ի ձեզ ո՛չ ևս լինիցին. և նախատինս ՚ի ժողովրդոց՝ այլ ո՛չ ևս կրեսցես, և ազգդ քո այլ ո՛չ ևս անգաւակեցցի՝ ասէ Տէր Տէր*: ¹⁶Եւ եղև բան

* *Բազումք.* Մարգարեաց և ասացես: *Յօրինակին.* Որ շուրջ ձեւք են:

* *Ոսկան.* Այսպէս ասէ Տէր Տէր:

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Եթէ: *Յօրինակին պակասէր.* Եւ ՚ի վերայ ամենայն Եդովմայ՝:

* *Ոմանք.* Վասն այնորիկ այսպէս... ՚ի վերայ ազգացն որ:

* *Ոսկան.* Եւ սերմանիցէք:

* *Բազումք ՚ի բնաբանի ունին.* Եւ տիրեցից ձեզ. և ՚ի լուս՝. *նշանակեն՝* սերմանեցից: *Ուր և ոմանք.* Եւ սերեցից ձեզ... և ժառանգեցցեն:

* *Ոսկան.* Ոչ ևս արասցեն:

* *Ոսկան.* Եւ նախատինս ժողովրդոց այլոց ոչ ևս: *Ոմանք.* Ոչ ևս կրեսցեն:

Տեառն առ իս և ասէ. ¹⁷Որդի մարդոյ՝ տունդ Իսրայէլի բնակեցան յերկրին իւրեանց, և պղծեցին զնա ճանապարհօք իւրեանց՝ և կռովք իւրեանց՝ և պղծութեամբք իւրեանց, ըստ պղծութեան ապարահի. և եղև ճանապարհ դոցա առաջի իմ*։ ¹⁸Եւ հեղի՛ զսրտմտութիւն իմ ՚ի վերայ դոցա վասն արեանն զոր հեղին յերկրին, և կռովք իւրեանց պղծեցին զնա. ¹⁹և ցրուեցի զդոսա ընդ ազգս, և հոսեցից զդոսա ընդ գաւառս. ըստ ճանապարհաց դոցա, և ըստ մեղաց իւրեանց դատեցայ՝ զդոսա։ ²⁰Եւ մտին յազգս. և ուր մտինն, և անդ պղծեցին զանուն իմ սուրբ, յասելն ցնոսա թէ ժողովուրդ Տեառն են դոքա, և յերկրէն նորա ելին։ ²¹Եւ խնայեցի ՚ի դոսա վասն անուան իմոյ սրբոյ, զոր պղծեցին տունդ Իսրայէլի ՚ի մէջ ազգացոյ յոր մտին ՚ի նոսա*։ ²²Վասն այդորիկ ասա՛ ցտունդ Իսրայէլի. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ո՛չ ձեզ ինչ առնեն տունդ Իսրայէլի, այլ վասն անուան իմոյ սրբոյ զոր պղծեցէք ՚ի մէջ ազգացոյ յորս մտէք ՚ի դոսա*։ ²³Եւ սրբեցից զանուն իմ մե՛ծ որ պղծեցաւ ՚ի մէջ ազգացոյ՝ զորս դուք պղծեցէք ՚ի մէջ դոցա. և ծանիցեն ազգքդ եթէ ե՛ս եմ Տէր, ասէ Աղովնայի Տէր. ՚ի սրբելն իմուն՝ ՚ի ձեզ յանդիման դոցա։ ²⁴Եւ առից զձեզ ՚ի հեթանոսաց, և ժողովեցից զձեզ յամենայն ազգաց, և տարայց զձեզ յերկիրն ձեր։ ²⁵Եւ ցանեցից ՚ի վերայ ձեր ջուր սուրբ, և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ. ²⁶և տա՛ց ձեզ սիրտ նոր, և ոգի նոր նորոգեցից ՚ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն ՚ի մարմնոց ձերոց, և տա՛ց ձեզ սիրտ մարմնեղէն. ²⁷և զՈգի իմ տաց ՚ի ձեզ։ Եւ արարից, զի յարդարութիւնս զնայցէք, և զիրաւունս իմ պահիցէք, և առնիցէք զնոսա*։ ²⁸Եւ բնակիցէք յերկրին՝ զոր ետու հարցն ձերոց. և եղիջիք ինձ ՚ի ժողովուրդ, և ես եղէց ձեզ յԱստուած*։ ²⁹Եւ զերծուցից զձեզ յամենայն պղծութեանց ձերոց. և կոչեցից զցորեան և բազմացուցից զնա, և ո՛չ ածից ՚ի վերայ ձեր սով։ ³⁰Եւ բազմացուցից զպտուղ ծառոց, և զարդիւնս անդոց, զի մի՛ ևս ընդունիցիք զնախատինս սովոյ ՚ի մէջ ազգաց*։ ³¹Եւ յիշեսջիք զճանապարհսն ձեր չարս և զգնացս ձեր զանբարիս. և տաղտկասջիք յերեսաց անօրէնութեանցն ձերոց, և ՚ի գարշելեացն ձերոց*։ ³²Ո՛չ վասն ձեր ինչ առնեն զայս՝ ասէ՛ Տէր Տէր, այլ յայտնի՛ լիցի ձեզ. ամաչեցէք և պատկառեցէք ՚ի ճանապարհաց ձերոց տունդ Իսրայէլի։ ³³Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Յաւուր յորուն սրբեցից զձեզ յամենայն անօրէնութեանցն ձերոց, և շինեսցին ակերակք, և բնակեցուցից զքաղաքս*։ ³⁴Եւ երկիրն ապականեալ՝ գործեսցի՛. փոխանակ զի ապականեցաւ յանդիման ամենայն անցաւորաց։ ³⁵Եւ ասասցեն. Երկիրն ապականեալ՝ եղև իբրև զպարտէ՛զ փափկութեան. և քաղաքքն ակերակք՝ ապականեալք և քանդեալք՝ անրացեալք նստան։ ³⁶Եւ ծանիցեն ազգք որ միանգամ շուրջ զձեւք մնացեալք իցեն, թէ ե՛ս եմ Տէր, որ շինեցի զակերեալսն, և հաստատեցի զապականեալսն. ե՛ս Տէր խօսեցայ՝ և արարից։ ³⁷Ա՛յսպէս ասէ Տէր

* *Ի լուս՝* Բնակեցին յերկ՝. *համաձայն բազմաց ՚ի բնաք՝*: *Օրինակ մի*. Ըստ պղծութեան ապահարի: *Ուր Ոսկան*. ըստ պղծութեան ճանապարհի եղև ճանա՛:

* *Ոսկան*. Յոր մտինն ՚ի դոսա:

* *Ոմանք*. Յոր մտէք ՚ի դոսա:

* *Բազումք*. Եւ զՈգի իմ տաց ձեզ... յարդարութիւնս իմ զնասջիք:

* *Ոմանք*. Յերկիրն զոր ետու... ինձ ժողովուրդ, և ես եղէց ձեզ Աստուած:

* *Ոսկան*. Զպտուղ ծառոյ:

* *Ոսկան*. Եւ ՚ի գարշելեացն նոցա:

* *Բազումք*. Անօրէնութեանց ձերոց, և բնակեցուցից զձեզ ՚ի քաղաքս, և շինեսցին ակերակք:

Տէր. Չա՛յս ևս ա՛յց արարից տանդ Իսրայէլի առնել դոցա. և բազմացուցից զմարդիկ դոցա իբրև զխաշինս*, ³⁸և իբրև զոչխարս սուրբս. և իբրև զոչխարս Երուսաղեմի՝ ՚ի տունս իւրեանց՝ ա՛յնպէս եղիցին քաղաքքն ակերեալք, լի՛ խաշամբք և մարդկաւ. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր*:

37

Գլուխ ԼԵ

Վասն Յարութեան:

ԼԳ ¹Եւ եղև ՚ի վերայ իմ ձեռն Տեառն. և եհան զիս Յոգուովն Տեառն, և եդ զիս ՚ի մէջ դաշտին. և այն լի՛ էր ոսկերօք մարդկան. ²և շրջեցոյց զիս շուրջ զոսկերօքն. և ահա բազում յոյժ էին ՚ի վերայ երեսաց դաշտին, և ցամաքեալք յոյժ: ³Եւ ասէ ցիս. Որդի՛ մարդոյ՝ իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ: Եւ ասեմ. Տէր Տէր, դո՛ւ գիտես զայդ: ⁴Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ մարգարեաց՝ ՚ի վերայ ոսկերացդ այդոքիկ՝ և ասացես ցոյսա. Ոսկերք ցամաքեալք՝ լուարուք զպատգամս Տեառն: ⁵Ա՛յսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ ցայդոսիկ. Սիաւասիկ ե՛ս ածից ՚ի վերայ ձեր շո՛ւնչ կենդանի*. ⁶և տաց ՚ի ձեզ ջիւս, և ածից ՚ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ՚ի վերայ ձեր մորթ. և տաց զոգի իմ ՚ի ձեզ, և լինիջիք կենդանի. և ծանիջիք թէ ես եմ Տէր*. ⁷և մարգարեացայ որպէս և հրաման ետ ինձ Տէր: Եւ եղև բարբառ ՚ի մարգարեանալն իմում, և ահա շարժումն. և մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս. ⁸և տեսի և ահա ջիւք և մարմինք պատէին, և ձգէր ՚ի վերայ նոցա մորթ. և շունչ ո՛չ գոյր ՚ի նոսա: ⁹Եւ ասէ ցիս. Մարգարեաց որդի մարդոյ, մարգարեաց ՚ի վերայ շնչոյն, և ասացես ցշունչն. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ե՛կ շունչ ՚ի չորից հողմոց, և փչեա՛ ՚ի մեռեալս յայսոսիկ՝ և կեցցեն*: ¹⁰Եւ մարգարեացայ որպէս և հրաման ետ ինձ Տէր. և եմուտ ՚ի նոսա շունչն, և եղեն կենդանի. և կանգնեցան՝ կացին ՚ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ*: ¹¹Եւ խօսեցաւ ընդ իս Տէր՝ և ասէ. Որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ ամենայն տունդ Իսրայէլի է. և դոքա ասեն. Չորացան ոսկերք մեր՝ հատա՛ւ յոյս մեր՝ և մեռաք*: ¹²Վասն այդորիկ մարգարեա՛ և ասացես ցոյսա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Սիաւասիկ ես բացից զգերեզմանս ձեր, և հանի՛ց զձեզ ՚ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ. և տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի*: ¹³Եւ ծանիջիք՝ եթէ ե՛ս եմ Տէր, ՚ի բանալ ինձ զգերեզմանս ձեր՝ և հանել ինձ զձեզ ՚ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ*: ¹⁴Եւ տաց զոգի իմ ՚ի ձեզ, և լինիջիք կենդանի. և եղի՛ց զձեզ յերկրին ձերում. և ծանիջիք թէ ե՛ս եմ Տէր. և խօսեցայ և արարից, ասէ Տէր Տէր:

* Ոսկան. Եւ բազմացուցանել զմարդիկ դոցա իբ՛:

* Ոմանք. Իբրև զոչխարս Երուսաղեմի ՚ի տունս իւր, այնպէս... լի խաշամբք մարդկան:

* Ոմանք. Ես ածեմ ՚ի վերայ ձեր:

* Ոմանք. Եւ տաց ձեզ ջիւս: Ոսկան. Եւ տաց ՚ի ձեզ մար՛:

* Ոմանք. Եւ փչեաց ՚ի մեռեալս յայսոսիկ:

* Ոմանք. Ժողովք բազումք յոյժ:

* Ոմանք. Տունդ Իսրայէլի եմ... հատան յոյս մեր:

* Բազումք. Մարգարեաց և ասաս՛... ահաւաղիկ ես բացից:

* Բազումք. Եւ հանել զձեզ ՚ի գե՛:

ԼԴ ¹⁵Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ. ¹⁶Եւ դու որդի մարդոյ՝ ա՛ն դու քեզ
 գաւազան մի, և գրեա՛ ՚ի նմա զՅուդա և զորդիսն Իսրայէլի զմերձաւորս նորա:
 Եւ առցես քեզ գաւազան երկրորդ, և գրեսցես ՚ի նմա զՅովսէփ՝ և զգաւազանն
 Եփրեմի. և զամենայն որդիսն Իսրայէլի զյաւելեալսն ՚ի նոսա՛: ¹⁷Եւ կցեսցես
 զնոսա ընդ միմեանս կապեալ լինել ՚ի գաւազան մի. և եղիցի ՚ի ձեռին քում՝:
¹⁸Եւ եղիցի յորժամ ասասցեն ցքեզ որդիք ժողովրդեան քոյ. Ո՞չ պատմես մեզ
 զինչ է ա՛յդ ՚ի քեզ՝. ¹⁹և ասասցես ցնոսա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես
 առից զազգդ Յովսէփոս՝ որ է՝ ՚ի ձեռին Եփրեմայ, և զազգդ Իսրայէլի
 զմերձաւորս դորա. և տա՛ց զդոսա յազգն Յուդայ, և եղիցին ՚ի մի գաւազան. և
 եղիցին մի՝ ՚ի ձեռին Յուդայ՝. ²⁰և եղիցին գաւազանքդ յորս դու գրեցեր ՚ի ձեռին
 քում առաջի նոցա: ²¹Եւ ասացես ցնոսա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես
 առնում զտունդ Իսրայէլի ՚ի միջոյ ազգացդ յորս մտին ՚ի նոսա. և ժողովեցից
 զդոսա յամենայն ազգաց որ շուրջ զդոքօք են, և տարայց զդոսա յերկիրն
 Իսրայէլի՛, ²²և տա՛ց զդոսա յազգ մի յերկրին իմում ՚ի լերինսն Իսրայէլի. և մի
 իշխան եղիցի ՚ի վերայ ամենեցուն դոցա ՚ի թագաւոր. և ո՛չ ևս եղիցին յերկուս
 ազգս, և ո՛չ ևս բաժանեսցին յերկուս թագաւորութիւնս՝: ²³Ձի մի՛ ևս պղծեսցին ՚ի
 կուռս իւրեանց և ՚ի գարշելիս իւրեանց, և յամենայն ամպարշտութիւնս
 իւրեանց. և փրկեցից զդոսա յամենայն անօրէնութեանց դոցա զոր մեղան ՚ի
 նոսա, և սրբեցից զդոսա. և եղիցին ինձ ՚ի ժողովուրդ, և ես եղէց դոցա
 յԱստուած: ²⁴Եւ ծառայ իմ Դաւիթ՝ իշխան ՚ի մէջ դոցա. և մի հովիւ եղիցի
 ամենեցուն դոցա. զի ըստ հրամանաց իմոց գնասցեն և զիրաւունս իմ
 պահեսցեն, և արասցեն զնոսա՛: ²⁵Եւ բնակեսցեն յերկրին իւրեանց զոր ետու ես
 ծառային իմում Յակովբայ ուր բնակեցին հարք իւրեանց. և բնակեսցեն դոքա ՚ի
 նմա, և որդիք դոցա, և որդիք որդւոց դոցա մինչև յաւիտեան: Եւ Դաւիթ ծառայ
 իմ եղիցի իշխան դոցա յաւիտեան՝: ²⁶Եւ եղից դոցա ուխտ խաղաղութեան, և
 ուխտ յաւիտեանական եղիցի ընդ նոսա. և տա՛ց դոցա՝ և բազմացուցից զդոսա, և
 եղից զսրբութիւնս իմ ՚ի մէջ դոցա յաւիտեան՝: ²⁷Եւ եղիցի բնակութիւն իմ ՚ի
 դոսա. և եղէց դոցա յԱստուած, և դոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ՝: ²⁸Եւ ծանիցեն
 ազգք թէ ե՛ս եմ Տէր որ սրբեցի զդոսա, ՚ի լինել՝ սրբութեանց իմոց ՚ի միջի դոցա
 յաւիտեան:

Գլուխ ԼԸ

* *Ոմանք.* ՚ի նմա զՅովսէփայ զգաւազանն Եփրեմի... յաւելեալսն ՚ի նա:

* *Ոմանք.* Լինել գաւազան մի, և եղիցին ՚ի ձեռին:

* *Յօրինակին պակասէր.* Ոչ պատմես մեզ զինչ է:

* *Յօրինակին.* Եւ տաց զդոսա զազգն Յուդայ: *Ուր ոմանք.* Ջնոսա ցազգն Յուդայ:

* *Բազումք.* Ահաւաղիկ ես առ՝: *Ոսկան.* Յորս մտին ՚ի նոսին:

* *Ոսկան.* Դոցա՝ և թագաւոր:

* *Առ Ոսկանայ պակասի.* Գնասցեն և զիրաւունս իմ պահեսցեն, և արասցեն զնոսա:

* *Ոմանք.* Մինչև ցյաւիտեան:

* *Բազումք.* Եղիցի ընդ դոսա: *Յօրինակին պակասէր.* Ջսրբութիւնս իմ՝ ՚ի մէջ դոցա:

* *Բազումք.* Եղիցին իմ ժողովուրդ:

Ի վերայ Գովգայ՝ և Մագովգայ՝:

ԼԵ ¹Եւ եղև բա՛ն Տեառն առ իս՝ և ասէ. ²Որդի մարդոյ՝ հաստատեա՛ զերեսս քո ՚ի վերայ Գովգայ, և երկրին Մագովգայ, իշխանին Ռովսմեսովքայ և Թորելայ. և մարգարեա՛ ՚ի վերայ նորա՛, ³և ասասցես ցնա. Ա՛յսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ՚ի վերայ քո իշխանդ Ռովսմեսովքայ և Թովբելայ. ⁴և պաշարեցից զքեզ, և արկից դանդանաւանդ ՚ի կզակս քո, և ժողովեցից զքեզ և զամենայն զօրութիւնս քո. զհեծեալս և զերիվարս, զվառեալս և զսպառազէնս ազգաց բազմաց. վահանաւորս և սաղաւարտաւորս, և սուսերաւորս. և ամենեքին սորա ընդ նոսա՛: ⁵Պարսիկք և Եթովպացիք, Լիբեացիք և Լիդացիք, ամենեքին սաղաւարտեալք՝ և վահանաւորք. ⁶Գոմեր՝ և ամենեքին որ շուրջ են զնովաւ. և տունն Թորգոմայ ՚ի ծագացն հիւսւսոյ, և ամենեքին որ շուրջ զնովաւ, և ազգք բազումք ընդ քեզ՛: ⁷Պատրաստեա՛ց, պատրաստեա՛ զանձն քո՝ դու՛ և ամենայն ժողովք որ ժողովեալ են ընդ քեզ. և եղիցես ինձ յառաջապահ՛: ⁸Յաւուրց բազմաց պատրաստեսցի, և ՚ի վախճան ժամանակաց եկեսցէ՛ և հասցէ՛ յերկիրն յապահով ՚ի սրոյ. ժողովեալ յազգաց բազմաց յերկիրն Իսրայէլի, որ եղև աւերակ համօրէն. և նոյն յազգաց ժողովեալ՝ և բնակեն խաղաղութեամբ ամենեքին՛: ⁹Եւ ելցես իբրև զանձրև, և հասցես իբրև զամպ և ծածկեսցես զերկիրն. և եղիցես դու՛ և ամենայն ազգք բազումք՝ որ շուրջ զքե՛զ իցեն ընդ քեզ: ¹⁰Այսպէս ասէ Տէր Տէր. Եւ եղիցի յաւուր յայնմիկ անկանիցին բանք ՚ի սիրտ քո, և խորհեսցիս խորհուրդս չարս. ¹¹և ասասցես. Ելի՛ց ՚ի վերայ յապահով երկրին. հասի՛ց ՚ի վերայ հանդարտացելոցն յանհոգութեան, և բնակեցելոցն ՚ի խաղաղութեան, ամենեցուն որ բնակեալ են յերկրին. որոց ո՛չ պարիսպք և ո՛չ նիզք և ո՛չ դրունք՛, ¹²աւարել զաւար, կողոպտել զկապուտ նոցա. արկանել զձեռն իմ ՚ի վերայ երկրին աւերելոյ՝ և բնակեցելոյ, և ՚ի վերայ ազգին ժողովելոյ յազգաց բազմաց. ստացելոց ինչս և դաստակերտս, բնակելոց ՚ի սիրտ երկրի՛: ¹³Սաբա և Դեդան, և վաճառականք Կարբեդովնացւոց, և ամենայն աւանք նորա ասիցեն ցքեզ. Յա՛ռ յաւա՛ր արշաւեալ գաս. ժողովեցեր զժողովս քո առնուլ զարծաթ և զոսկի, վարել՝ ՚ի գերութիւն զստացուածս, և կողոպտել զկապուտ մեծ՛: ¹⁴Վասն այնորիկ մարգարեաց որդի մարդոյ, և ասասցես ցԳովգ. Այսպէս ասէ Տէր Տէր. Ոչ ապաքէն յաւուր յայնմիկ յորում բնակեսցէ ժողովուրդ իմ Իսրայէլ խաղաղութեամբ, զարթիցես ¹⁵և եկեսցես ՚ի տեղւոջէ քումմէ՛ ՚ի ծագաց հիւսւսոյ, դու՛ և բազում ազգք ընդ քեզ հեծեալ յերիվարս. ամենեքին ընդ գունդս բազումս զօրաց բազմաց: ¹⁶Եւ ելանիցես ՚ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայէլի՝ իբրև զամպ ծածկեալ զերկիրն. ՚ի յետին ժամանակի եղիցի այն. և ածից զքեզ յերկիր իմ, զի ծանիցեն զիս ամենայն ազգք, ՚ի լինել ինձ սուրբ ՚ի

** Ի բազումս պակասի. Ի վերայ Գովգայ՝ և Մագովգայ:*

** Բազումք. Մարգարեաց ՚ի վերայ նորա:*

** Ոմանք. Եւ արկից դանդանաւանդ:*

** Ոմանք. Որ շուրջ զնովաւ... որ շուրջ են զնովաւ:*

** Ոսկան. Պատրաստեա՛. պատրաստեա՛ զանձն՝: Ոմանք. Եւ ամենայն ժողովուրդք որ ժողովեալ են:*

** Ոսկան. Յետ աւուրց բազմաց պատ՛: Ոմանք. Ապահով ՚ի սրոյ:*

** Ոմանք. Ի վերայ ապահով երկ՛... հանդարտելոցն յանհոգութեան և բնակելոցն ՚ի խա՛:*

** Ոմանք. Աւերել զաւար... ստացելոյ ինչս: Ոսկան. Եւ բնակելոյ ՚ի վերայ ազ՛:*

** Ոսկան. Առ յաւար արշաւեալ: Ոմանք. Վարեալ ՚ի գերութեան:*

միջի քուն առաջի նոցա*։ ¹⁷Այսպէս ասէ Տէր Տէր ցԳովգ. Դո՛ւ ես վասն որոյ խօսեցայ յաւուրցն առաջնոց ՚ի ձեռն ծառայիցն իմոց մարգարէիցն Իսրայէլի յաւուրսն յայնոսիկ՝ և յամսն, ածել զքեզ ՚ի վերայ նոցա*։ ¹⁸Եւ եղիցի յաւուր յայնմիկ յորում եկեսցէ Գովգ ՚ի վերայ երկրիդ Իսրայէլի՝ ասէ Տէր Տէր. Ելցէ սրտմտութիւն իմ բարկութեամբ, ¹⁹և նախանձ իմ հրով բարկութեան իմոյ. խօսեցայ թէ ո՛չ յաւուր յայնմիկ եղիցի շարժումն մեծ ՚ի վերայ երկրին Իսրայէլի. ²⁰և խռովեսցին յերեսաց իմոց ձկունք ծովու, և թռչունք երկնից, և գազանք դաշտաց, և ամենայն սողունք երկրի, և ամենայն մարդիկ որ ՚ի վերայ երեսաց երկրի. լերինք պատառեսցին, և ձորք տապալեսցին, և ամենայն պարիսպք երկրին կործանեսցին։ ²¹Եւ կոչեսցից զահ սրոյ ՚ի վերայ նորա՝ ասէ Տէր Տէր. սո՛ւր առն ՚ի վերայ եղբօր իւրոյ լինիցի*։ ²²և դատեցայց զնա արեամբ և մահու. և հեղեղօք անձրևաց, և վիմօք կարկտի. և հուր և ծծումբ տեղացից ՚ի վերայ նորա, և ՚ի վերայ ամենեցուն որ ընդ նմա իցեն, և ՚ի վերայ ազգաց բազմաց որ ընդ նմա։ ²³Եւ մեծացայց և սուրբ եղէց, և փառաւորեցայց և ծանուցայց առաջի ազգաց բազմաց. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր։

39

Գլուխ ԼԹ

¹Եւ դու որդի մարդոյ մարգարեա՝ ՚ի վերայ Գովգայ՝ և ասասցես. Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ե՛ս ՚ի վերայ քո Գովգ՝ իշխանդ Ռովմեստովբայ և Թոբէլայ*։ ²և ժողովեսցից զքեզ և առաջնորդեսցից քեզ. և հանից զքեզ ՚ի ծագաց հիւսւսոյ, և ածից զքեզ ՚ի վերայ լերանցն Իսրայէլի*։ ³Եւ կորուսից զաղեղն քո ՚ի ձախմէ ձեռանէ քումմէ, և զնետս քո յաջմէ ձեռանէ քումմէ. և կործանեսցից զքեզ ⁴ի վերայ լերանցն Իսրայէլի. և անկանիցիս դո՛ւ և ամենեքին որ զքև իցեն. և ազգքն որ ընդ քեզ իցեն, մատնեսցին ՚ի կերակուր հաւուց և ամենայն թռչնոց. և ամենայն գազանաց անապատի ետու զքեզ ՚ի կերակուր. ⁵ընդ երեսս դաշտին անկցիս. զի ե՛ս խօսեցայ՝ ասէ Տէր Տէր*։ ⁶Եւ առաքեսցից հո՛ւր ՚ի վերայ Մագովգայ. և բնակեսցեն կղզիք ՚ի խաղաղութեան. և ծանիցեն թէ ե՛ս եմ Տէր Տէր։ ⁷Եւ անուն իմ սուրբ ծանիցի ՚ի մէջ ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և մի՛ ևս պղծեսցի անուն իմ սուրբ. և ծանիցեն ամենայն ազգք երկրի՝ թէ ե՛ս եմ Տէր Սուրբն Իսրայէլի։ ⁸Ահաւասիկ հասեալ է. և ծանիցես թէ լինիցի՝ ասէ Տէր Տէր. այ՛ս է օրն զորմէ խօսեցայ։ ⁹Եւ ելցեն բնակիչք քաղաքաց Իսրայէլի. և այրեսցեն զգէնս, զնիզակաբեկս, զասպարաբեկս, զնետս, զբեկորս աղեղանց, զտիգարունս, զսրունակոթս, և այրեսցեն իւրեանց այրելիս եւթն ամի*։ ¹⁰և մի՛ առցեն փայտ ՚ի վայրաց, և յատցեն փայտ յանտառաց. այլ զգէնսն այրեսցեն ՚ի

* *Ոմանք.* Յետին ժամանակի եղիցի... և ծանիցեն զիս ամենայն։ *Ոսկան յաւելու.* ՚ի միջի քուն առաջի նոցա *զօգ:*

* *Օրինակ մի աստէն վերստին կարգէ վերնագիր.* ՚ի վերայ Գովգայ։ *Ոմանք.* խօսեցայ յաւուր յառաջնոյ ՚ի ձեռն։ *Ոսկան.* Եւ յայսս ածել զքեզ։

* *Ոմանք.* Եւ կոչեսցից զմահ սրոյ ՚ի վերայ։

* *Ոսկան.* Իշխան Ռովմեստոբայ։

* *Առ Ոսկանայ պակասի.* ժողովեսցից զքեզ. և առաջնորդեսցից քեզ։

* *Ոմանք.* Ընդ երեսս դաշտին անկանիցին։

* *Ոմանք.* Ձսունակոթս. *կամ՝* զսունակոթս, և արասցեն այրելի իւրեանց։ *Ոսկան.* Իւրեանց եօթն ամ։

կրակի. և առցեն յաւարի զաւարառուս իւրեանց, և կողոպտեսցեն զկողոպտիչս իւրեանց՝ ասէ Տէր Տէր*։ ¹¹Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ տաց Գովգայ տեղի անուանի գերեզման յԻսրայէլի. զշիրիմ եկելոցն ՚ի կողմանց ծովուն, և շինեսցեն շուրջ զափամբք ձորոյն և թաղեսցեն անդ զԳովգ, և զամենայն ժողովս նորա. և կոչեսցի Գեհ գերեզման Գովգայ*։ ¹²Եւ թաղեսցեն զնոսա տուն Իսրայէլի, զի սրբեսցի երկիրն. զէւթն ամիս ¹³թաղեսցեն զնոսա ամենայն ժողովուրդք երկիրն. և եղիցի նոցա անուանի օրն յորում փառաւորեցայց՝ ասէ Տէր Տէր։ ¹⁴Եւ արս նմին իրի գումարեսցեն երթալ շրջել ընդ երկիրն, և թաղել զմնացորդս ՚ի վերայ երեսաց երկիրն. և սրբել զնա յետ ւեթն ամսոյ*։ ¹⁵Եւ խնդրեսցէ ամենայն որ անցանիցէ ընդ երկիրն. և յորժամ տեսանիցէ ոսկր մարդոյ՝ շինեսցէ առ նովաւ նշանակ ինչ, մինչև թաղեսցեն զայն որք թաղենն ՚ի Գեհ ՚ի գերեզմանին Գովգայ*։ ¹⁶Ղի և անուն քաղաքին Գերեզման կոչեսցի. և սրբեսցի երկիրն։ ¹⁷Եւ դու որդի մարդոյ՝ այսպէս ասէ Տէր Տէր. Ասա՛ դու ցամենայն հաւս թռչունս, և ցամենայն գազանս դաշտի. ժողովեցարո՛ւք և եկայք, ժողովեցարո՛ւք յամենայն կողմանց երկրի ՚ի զենունն իմ զոր ես զենի ձեզ՝ զենունն մեծ ՚ի վերայ լեռանցն Իսրայէլի. կերէք միս և արբէք արիւն*։ ¹⁸Կերէք զմիս սկայից, և արբէք զարիւն իշխանաց երկիրն, զխոյս՝ և զգուարակս՝ զնոխագս. զի զուարակք պարարեալք են ամենեքեան*։ ¹⁹և կերիջիք ճարպ ցյագ, և արբջիք արիւն ցարբենալ ՚ի զենլեաց իմոց զոր զենի ձեզ. ²⁰և յագեսցիք ՚ի սեղանոյ իմմէ. ՚ի հեծելոց, և յերիվարաց, և ՚ի սկայից, և յամենայն արանց պատերազմողաց՝ ասէ Տէր Տէր*։ ²¹Եւ տաց զփառս իմ ՚ի ձեզ. և տեսցեն ամենայն ազգք զդատաստանն իմ զոր արարի, և զձեռն իմ զոր ածից ՚ի վերայ նոցա*։ ²²Եւ ծանիցեն տունն Իսրայէլի թէ ես եմ Տէր Աստուած նոցա, յօրէ յայնմանէ և առ յապայ*։ ²³Եւ ծանիցեն ամենայն ազգք, թէ վասն մեղաց իւրեանց գերեցան տունն Իսրայէլի. փոխանակ զի անարգեցին զիս, դարձուցի զերեսս իմ ՚ի նոցանէ, և մատնեցի զնոսա ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց. և անկան ամենեքեան ՚ի սուր. ²⁴վասն պղծութեան նոցա՝ և անօրէնութեանց՝ արարի նոցա զայն. և դարձան երեսք իմ ՚ի նոցանէ*։ ²⁵վասն այնորիկ այսպէս ասէ Տէր Տէր. Արդ՝ դարձուցից զգերութիւնն Յակովբայ, և ողորմեցայց տանն Իսրայէլի, և նախանձեցայց վասն անուան իմոյ սրբոյ*։ ²⁶Եւ ընկալցին զանարգանս իւրեանց և զանիրաւութիւնս զոր անիրաւեցան. ՚ի բնակեցուցանել զնոսա յերկիրն իւրեանց խաղաղութեամբ, և ո՛չ որ իցէ որ զարհուրեցուցանիցէ*։ ²⁷ի դարձուցանել ինձ զնոսա յազգաց, և ժողովել զնոսա ՚ի գաւառաց հեթանոսաց։ Եւ սուրբ եղէ՛ց ՚ի նոսա առաջի ազգաց. ²⁸և ծանիցեն թէ ես եմ Տէր Աստուած նոցա, յերևել ինձ նոցա ՚ի մէջ ազգաց. և ժողովեցից

* *Ի լուս՝* Եւ հասցեն փայտ։ *Ուր բազումք*. Եւ մի հասցեն։

* *Բազումք*. ԶԳովգ անդ։

* *Օրինակ մի*. Եւ արս սմին իրի գու՛ն։

* *Ոսկան*. Որք թաղենն ՚ի գեհի Գօգայ։

* *Բազումք*. Ասա ցամենայն հաւս... կերայք միս և արբէք։

* *Բազումք*. Կերայք զմիս հսկայից... և զնոխագս։

* *Յօրինակին պակասէր*. Եւ յագեսցիք... և յամենայն *արանց* պատերազմողաց։

* *Ոմանք*. Զոր ածի ՚ի վերայ նոցա։ *Ուր և ոմանք*. զոր արարից ՚ի վերայ նոցա։

* *Ոսկան*. Յօրէ յայսմանէ և առ յապայ։

* *Բազումք*. Եւ անօրէնութեանց նոցա արարի նոցա։

* *Ոսկան*. Վասն այսորիկ այսպէս։

* *Բազումք*. Եւ զանիրաւութիւնն զոր։

զնոսա յերկրին իւրեանց, և ո՛չ ևս թողից ՚ի նոցանէ ուրեք*։ ²⁹և ո՛չ ևս դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ. փոխանակ հեղլոյ զսրտմտութիւն իմ ՚ի վերայ տանն Իսրայէլի. ասէ Տէր Տէր:

40

Գլուխ Խ

Վասն շինուածոյ Տաճարիմ:*

ԼԶ ¹Եւ եղև ՚ի քսաներորդի և ՚ի հինգերորդի ամի գերութեան մերոյ, յամսեանն առաջնում որ օր մետասան էր ամսոյն. ՚ի չորեքտասաներորդի ամի առնլոյ քաղաքին. յաւուր յայնմիկ եղև ՚ի վերայ իմ ձեռն Տեառն*։ ²Եւ ա՛ծ զիս ՚ի տեսլեան Աստուծոյ յերկիրն Իսրայէլի, և եդ զիս ՚ի վերայ լերին միոյ բարձու յոյժ. և ՚ի վերայ նորա իբրև զշինուած քաղաքի դէմ յանդիման. ³և տարաւ զիս ՚ի ներքս: Եւ ահա ա՛յր մի, և տեսիլ նորա իբրև զտեսիլ փայլուն պղնձոյ. և ՚ի ձեռին նորա էր լա՛ր շինողաց, և ձո՛ղ չափոյ. և ինքն կա՛յր ՚ի վերայ դրանն*։ ⁴Եւ ասէ զիս այրն. Տեսե՛ր որդի մարդոյ. արդ՝ հայեաց աչօք քովք, և լուր ակընջօք քովք, և հաստատեա՛ ՚ի մտի քում զամենայն զոր ես ցուցից քեզ. զի վասն ցուցանելոյ՝ քեզ եկի այսր. և ցուցցես՝ զամենայն զոր դո՛ւդ տեսանես՝ տանն Իսրայէլի: ⁵Եւ ահա շուրջ զտաճարաւն փողոցս. և ՚ի ձեռին առն՝ ձո՛ղ չափոյ ՚ի վե՛ց կանգնոյ և թզաւ. և չափեաց զլայնութիւն պարսպացն հաւասար ձողոյն, և զբարձրութիւն նորա հաւասար ձողոյն: ⁶Եւ եմուտ ընդ դուռնն որ հայէր ընդ արևելս՝ զե՛ւթն աստիճանօք. և չափեաց զկողակսն վեց վեց զկամարօք դրանն հաւասար ձողոյն. և զերկայնութիւն կողակին հաւասար ձողոյն, և զլայնութիւն նորին հաւասար ձողոյն. և կամարս ՚ի մեջ կողակացն ՚ի վեց կանգնոյ*։ ⁷Եւ կողակն երկորդ հաւասար ձողոյն ՚ի լայնութիւն, և հաւասար ձողոյն յերկայնութիւն. և կամարն ՚ի հինգ կանգնոյ: ⁸Եւ կողակն երրորդ հաւասար ձողոյն յերկայնութիւն, և հաւասար ձողոյն ՚ի լայնութիւն. և կամարք դրանն* ⁹մերձ ՚ի կոնք դրանն յութ կանգնոյ. և կամարք յերկուց կանգնոց, և կամարք ներքին դրանն*։ ¹⁰Եւ կողակք դրանն՝ դէմ յանդիման միմեանց երեք աստի և երեք անտի. և չափ մի էր երեցուն. և չափ մի կամարացն՝ աստի և անտի: ¹¹Եւ չափեաց զլայնութիւն մտից դրանն ՚ի տասն կանգնոյ, և զերկայնութիւն դրանն յերեքտասան կանգնոյ: ¹²Եւ ՚ի մի կանգուն բովանդակեալ դէմ յանդիման կողակացն՝ ՚ի մի կանգուն սահմանեալ յայս կոյս յայն կոյս. և կողակքն աստի և անտի ՚ի վեց վեց կանգնոյ*։ ¹³Եւ չափեաց զդուռնն ՚ի պարսպէ կողակին մինչև յորմ կողակին, ՚ի լայնութիւն քսան և հինգ կանգուն. և ա՛յն էր դուռն ՚ի դրան

* *Բազումք.* Չնոսա յերկիրն իւրեանց:

* *Ոմանք.* ՚ի վերայ շինութեան տաճարին:

* *Բազումք.* Եւ հինգերորդի:

* *Ոմանք.* Եւ տեսիլ նորա էր իբրև:

* *Բազումք.* Չեւթն աստիճանօք: *Ոմանք.* Վեց վեց կամարօք դր՞:

* *Ոմանք.* Եւ կամար դրանն:

* *Բազումք.* Եւ այլ կամարք յերկուց կանգ՞:

* *Ոմանք.* Ի կողակքն աստի անտի:

վերայ*։ ¹⁴Եւ զմիջոց կամարի դրանն, և զկոզակս նորին ՚ի վաթսուն կանգոյ շուրջ գորամբն. և զմիջոց սրահին արտաքնոյ, ¹⁵և զմիջոց կամարի դրանն ներքնոյ, ՚ի յիսուն կանգոյ*։ ¹⁶Եւ պատուհանք ծածուկ էին ՚ի կոզակսն, և ՚ի կամարսն ներքուստ դրան սրահին շուրջ շրջանակաւ. նոյնպէս և կամարացն, և պատուհանք շուրջ ներքոյ և արտաքոյ. և ՚ի վերայ կամարացն արմաւենիք աստի և անտի։ Եւ տարաւ զիս ՚ի ներքին սրահն*։ ¹⁷և ասա դահլիճք, և սիւնք շրջանակօք, շուրջ զսրահիւքն յօրինեալք. երեսուն դահլիճք ՚ի մէջ սեանցն շրջանակաց։ ¹⁸Եւ սիւնք դէմ յանդիման դրանցն ըստ երկայնութեան դրանցն, ¹⁹և սիւնք շրջանակաւ ՚ի ներքոյ։ Եւ չափեաց զլայնութիւն սրահին ՚ի միջոցէ դրանն արտաքնոյ մինչև ցմիջոց դրանն ներքնոյ որ հայէր ընդ արևելս. հարեւր կանգուն*։ ²⁰Եւ տարաւ զիս ՚ի կողմն հիւսւսոյ, և ասա դուռն մի որ հայէր ընդ հիւսւսի սրահին արտաքնոյ. և չափեաց զնա յերկայնութիւն և ՚ի լայնութիւն. ²¹և զկոզակս նորա աստի և անտի, և զկամարն, և զկոնքն, և զարմաւենիս։ Եւ եղև ըստ չափոյ դրանն որ հայէր ընդ արևելս, յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ կանգուն ՚ի լայնութիւն*։ ²²Եւ պատուհանք նորա, և կամարք. և արմաւենիք ըստ դրանն որ հայէր ընդ արևելս. և ընդ եւթն սանդուխս ելանէին ՚ի նա. և էր կամարակապ ՚ի ներքոյ*։ ²³Եւ դուռն ներքին սրահին հայէր ընդ դուռն հիւսւսոյ, ըստ օրինակի դրանն որ հայէր ընդ արևելս. և չափեաց զսրահն դրանն ՚ի դուռն՝ հարեւր կանգուն*։ ²⁴Եւ տարաւ զիս ընդ կողմն հարաւոյ, և ասա դուռն մի որ հայէր ընդ հարաւ. և չափեաց զնա և զկոզակս նորա, և զկոնքս, և զկամարս ըստ նմին չափոյ*։ ²⁵Եւ պատուհանք նորա և կամարք շրջանակաւ, ըստ օրինակի պատուհանիցն և կամարացն առաջնոցն, յիսուն կանգուն յերկայնութիւն՝ և քսան և հինգ կանգուն ՚ի լայնութիւն*։ ²⁶Եւ եւթն սանդուխք ՚ի նմա. և կամարք ՚ի ներքս, և արմաւենիք աստի և անտի ՚ի վերայ կոնքիցն*։ ²⁷և դուռն ներքոյ հանդէպ դրան սրահին՝ որ հայէր ընդ հարաւ։ Եւ չափեաց զսրահն դրանն ՚ի դուռն ՚ի լայնութիւն՝ հարեւր կանգուն ՚ի կողմն հարաւոյ*։ ²⁸Եւ տարաւ զիս ՚ի սրահն ներքին դրանն որ հայէր ընդ կողմն հարաւոյ. և չափեաց զդուռնն որ ընդ հարաւ ըստ նմին չափոյ*։ ²⁹Եւ զկոզակսն, և զկամարս և զկոնքս նովին չափով. և պատուհանք նորա և կամարք շուրջ շրջանակաւ. յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ ՚ի լայնութիւն*։ ³⁰Եւ շուրջ զնովաւ կամարք՝ յիսուն կանգուն յերկայնութիւն և քսան և հինգ ՚ի լայնութիւն։ ³¹Եւ կամարք ՚ի յարտաքնում սրահին, և արմաւենիք ՚ի կամարսն. և եւթն սանդուխք ելանելիք

* *Ոսկան.* Եւ այն դուռնն էր ՚ի դրան վե՞։

* *Ոմանք.* Դրանն ներքոյ։

* *Ոմանք.* Ի կամարսն ՚ի ներքուստ դրան։

* *Յօրինակին.* Ի միոջէ դրանն արտաքնոյ։ *Ոմանք.* Դրանն արտաքոյ... դրանն ներքոյ։

* *Ոմանք.* Նորա աստի անտի... և զկոնքս, և զար... հայէր յարևելս։

* *Բազումք.* Եւ էր կամարապատ ՚ի ներքոյ։

* *Ոմանք.* Հայէր ՚ի դուռն հիւսւսի՞։ *Յօրինակին.* Ընդ արևել. և։

* *Ոմանք.* Ձիս ՚ի կողմն հարաւոյ։ *Յօրինակին.* Ընդ նմին չափոյ։

* *Բազումք.* Եւ կամարք շուրջանակաւ... և կամարացն առաջնոյն։

* *Բազումք.* Ի վերայ կոնքացն։

* *Ոսկան.* Ձսրահ դրանն և զդուռնն ՚ի լայ՞։

* *Ոմանք.* Որ ընդ կողմն հարա՞։

* *Ոսկան.* Եւ զկամարսն նովին չափու, և զկոնքսն։ *Ոմանք.* Շուրջ շրջանակի, յիս՞... և քսան և հինգ կանգուն ՚ի լայ՞։

նորա*։ ³²Եւ տարաւ զիս ՚ի դուռնն որ հայեր ընդ ճանապարհ արևելից, և չափեաց զնա ըստ առաջին չափոյն*։ ³³Վկոզակսն, և զկամարսն, և զկոնքսն՝ ըստ նմին չափոյ. և պատուհանք ՚ի նմա, և կամարք շուրջանակի. յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ ՚ի լայնութիւն*։ ³⁴Եւ կամարք ՚ի ներքնում սրահին, և արմաւենիք ՚ի վերայ կամարացն աստի և անտի, և եւթն սանդուխք ՚ի նմա։ ³⁵Եւ տարաւ զիս ՚ի դուռնն որ ընդ հիւսւսի. և չափեաց ըստ նմին չափոյ*, ³⁶զկոզակսն և զկամարսն և զկոնքս. և պատուհանք ՚ի նմա շուրջանակի, և կամարք յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ կանգուն ՚ի լայնութիւն։ ³⁷Եւ կամարք արտաքոյ դրանն. և արմաւենիք կամարացն աստի և անտի, և ութ սանդուխք ՚ի նմա։ ³⁸Եւ դահլիճք նորա՝ և լայնութիւնք նորա՝ և կամարք նորա հանդէպ երկրորդ դրանն՝ ուր լուանային զողջակէզսն։ ³⁹Եւ ՚ի կամարի դրանն երկու սեղանք յայսկոյս, և երկու սեղանք յայնկոյս. զի զենուցուն ՚ի նմա զողջակէզսն՝ և զվասն մեղացն՝ և զվասն անգիտութեանն*։ ⁴⁰Եւ ընդ հարաւակողմն խողովակի ողջակիզացն ՚ի մուտս դրանն որ հայեր ընդ հիւսւսի, երկու սեղանս որ հայեր ընդ արևելս. և ՚ի հարաւակողմ կուսէ երկրորդի դրանն՝ հանդէպ կամարաց դրանն երկու սեղանք։ Եւ ընդ արևելս ութ սեղանք*։ ⁴¹չորք սեղանք յայսկոյս, և չորք սեղանք յայնկոյս, հանդէպ հարաւոյ դրանն. և անդ զենուցուն զզոհսն և զողջակէզսն, յանդիման ութից սեղանոց ողջակիզացն*։ ⁴²Եւ չորք սեղանք ողջակիզացն քարեղէնք կոփածոյք. կանգնաւ և կիսով երկայնութիւն, և կանգնաւ և կիսով ՚ի լայնութիւն, և կանգնաւ և կիսով ՚ի բարձրութիւն. զի ՚ի վերայ նոցա դիցեն զգործին՝ որով զենուցուն անդ զողջակէզսն և զզոհսն*։ ⁴³Եւ ծնօտս ուղկեանս քանդակագործս ունիցին ՚ի ներքուստ շուրջանակի. և ՚ի վերայ սեղանոյն յարկ առ ՚ի ծածկել յանձրևոյ և յերաշտութենէ*։ ⁴⁴Եւ տարաւ զիս ՚ի սրահն ներքին. և ահա երկու պատշգամք ՚ի ներքոյ սրահին, մի ընդ հարաւոյ դրանն որ հայեր ընդ հիւսւսի, և հանէր ընդ հարաւ. և մի ընդ հիւսւսոյ դրանն որ հայեր ընդ հարաւ, և հանէր ընդ հիւսւսի*։ ⁴⁵Եւ ասէ ցիս. Այս պատշգամ, որ հայի ընդ կողմանս հարաւոյ՝ քահանայիցն եղիցի որ պահեն զպահպանութիւնս տանն*։ ⁴⁶Եւ պատշգամն որ հայի ընդ հիւսւսի՝ քահանայիցն եղիցի որ պահեն զպահպանութիւն սեղանոյն. նոքա են որդիք Սադովկայ՝ որ մերձեանան ՚ի Ղևտացւոց անտի պաշտել զՏէր։ ⁴⁷Եւ չափեաց զսրահն յերկայնութիւն հարեր կանգուն, և ՚ի լայնութիւն հարեր կանգուն, զչորեսին կողմանս նորա, և ՚ի

* *Ոմանք.* Կամարք յարտաքնում։

* *Ոսկան.* Ըստ առաջնոյ չափուն։

* *Ոմանք.* Եւ զկոզակսն և զկա՞։

* *Ոսկան.* Որ հիւսիսի, չափեաց։

* *Ոսկան.* Եւ ՚ի կամար դրանն... զենուցուն ՚ի նոսա։

* *Ոմանք.* Խողովակի ողջակիզացն... երկու սեղանք որ հայ... երկրորդի հանդէպ դրանն. կա՞։

* *Ոմանք.* Չորս սեղանք... և չորս սե՞... և անդ զենուին զզոհսն։ *Ոսկան.* Յանդիման օթից սեղանոյ։

* *Ոմանք.* Եւ կիսաւ երկայնութիւն... և կիսաւ լայնութիւն... և կիսաւ բարձրութիւն. զի ՚ի վերայ նորա դնիցեն։

* *Ոմանք.* Քանդակագործ առնիցեն ՚ի ներքուստ... և ՚ի վերայ սեղանոցն։

* *Ոմանք.* Երկու պատշգամք... և միւս ընդ հիւսիւսոյ։

* *Ոմանք.* Այս պատշգամք որ հայի ընդ կողմն հա՞։

սեղան՝ յանդիման տաճարին*։ ⁴⁸Եւ տարաւ զիս ՚ի կոնք տաճարին, և չափեաց զլայնութիւն կոնքին, ՚ի միոջէ կողմանէ հինգ կանգուն, և ՚ի միւսմէ կողմանէ հինգ կանգուն, և զլայնութիւն մտին՝ չորեքտասան կանգուն. և զխոյակս ուսոց դրան կոնքին յայնկոյս յայնկոյս՝ երիս երիս կանգունս։ ⁴⁹Եւ զբարձրութիւն կոնքին քսան կանգուն. և զլայնութիւն նորին՝ մետասան կանգուն. և ընդ տասն աշտիճան ելանէին ՚ի նա, և սիւնք երկու՛ էին աստի և անտի*։

41

Գլուխ ԽԱ

¹Եւ տարաւ զիս ՚ի տաճարն զորոյ չափեաց զկամարն, վեց կանգուն զլայնութիւն ՚ի միոջէ կողմանէ. և վեց կանգուն զերկայնութիւն կամարին ՚ի միւսմէ կողմանէ*։ ²Եւ զլայնութիւն դրանն տասն կանգուն. և զխոյակս կոճոց դրանն յայնկոյս յայնկոյս հինգ հինգ կանգուն. և չափեաց զերկայնութիւն նորա քառասուն կանգուն, և զլայնութիւնն քսան կանգուն*։ ³Եւ եմուտ ՚ի ներքին սրահն՝ և չափեաց զլայնութիւն մտին երկուս կանգունս, և զմուտսն վեց կանգուն, և զխոյակս կոճոց մտիցն յայնկոյս յայնկոյս հինգ հինգ կանգուն*։ ⁴Եւ չափեաց զերկայնութիւն դրանն՝ քառասուն կանգուն, և զլայնութիւնն քսան կանգուն՝ առաջի տաճարին. և ասէ ցիս. Այս է սրբութիւն սրբութեանցն*։ ⁵Եւ չափեաց զորմ տաճարին ՚ի վեց կանգոյ. և զլայնութիւն կողման տանն, ՚ի չորից կանգոնոց շուրջ շրջանակաւ. ⁶և ՚ի կողմանէ ՚ի կողմ երեսուն և երիս կանգունս կրկին. և անջրպետ ՚ի մէջ որմոց տաճարին շուրջանակի շուրջ զկողմամբքն. զի լինիցի այնոցիկ որք անկանիցին զնոքօք հայել. և ամենևին մի՛ մերձեանայցեն յորմ տաճարին։ ⁷Եւ զլայնութիւն կողմանց վերին դրանն, ըստ առանցից կողմանց յորմոցն առ ՚ի վերին կողմն շուրջ զտամբն. զի ընդարձակութիւն լինիցի տանն ՚ի վերուստ և ՚ի ներքուստ, որոց ելանիցենն ՚ի վերնայարկսն, և ՚ի միջնայարկացն յերրորդ յարկսն*։ ⁸Եւ ձեղուան տանն բարձրութիւն շուրջ շրջանակաւ զանջրպետօք կողմանցն, հաւասար ձողոյն ՚ի վեց կանգոյ անջրպետ մի*։ ⁹Եւ լայնութիւն որմոյ արտաքին կողմանն ՚ի հինգ կանգոյ. և առանցք ՚ի մէջ կողմանց տանն. ¹⁰և ՚ի մէջ պատշգամացն ՚ի լայնութիւն քսան կանգուն, և շրջանակաւ շրջանակք տանն*։ ¹¹Եւ դուրք պատշգամացն յառանցս՝ դրան միոյ ընդ հիւսիսի, և դուռն մի որ ընդ հարաւ. և լայնութիւն տեղոյն ընդարձակութեան վասն լուսոյ առանցիցն, հինգ կանգուն ՚ի լայնութիւն շուրջանակի*։ ¹²Եւ անջրպետ ՚ի մէջ առանցիցն ՚ի ծովակողմ

* *Բազումք*. Եւ սեղանն յանդիման տաճարին*։

* *Բազումք*. Աստի անտի*։

* *Ոմանք*. Վեց կանգուն ՚ի լայնութիւնն*։

* *Բազումք*. Եւ զլայնութիւն նորա քսան*։

* *Բազումք*. Եւ եմուտ ՚ի ներքս ՚ի սրահն։ *՚ի լուս*՝ Եւ չափեաց զկամար մտին... յայնկոյս եւթն եւթն կանգուն. *համաձայն բազմաց ՚ի բնար*՝։

* *Ոսկան*. Ձերկայնութիւն դրանն քսան կանգուն*։

* *Յօրինակին*. Կողմանց որմոցն առ։ *Ոսկան*. Ձի արձակութիւն լինիցի տանն։ *Ոմանք*. Յերկրորդ յարկսն*։

* *Բազումք*. Եւ ձեղուն տանն բարձր*։

* *Ոմանք*. ՚ի մէջ պատշգամբացն*։

* *Բազումք*. Դրան միոյ որ ընդ հիւսիսի... և դուռն մի որ ընդ հարաւ... յառանցիցն*։

ճանապարհին, յերկայնութիւն ութսուն կանգուն, և լայնութիւն որմոյն անջրպետի հինգ կանգուն, և երկայնութիւն նորա իննսուն կանգուն*։ ¹³Եւ չափեաց առաջի տանն յերկայնութիւն հարելր կանգուն. և խորշքն և անջրպետք և որմք նոցա՝ յերկայնութիւն հարելր կանգուն. ¹⁴և լայնութիւն առաջի տանն, և խորշքն յանդիման նորին՝ հարելր կանգուն։ ¹⁵Եւ չափեաց զերկայնութիւն անջրպետին ընդդէմ խորշիցն՝ ՚ի թիկանց տանն. և զխորշսն աստի և անտի հարելր կանգուն յերկայնութիւն։ Եւ տաճարն արտաքին, և անկիւնքն, և կամարքն*, ¹⁶և յարկքն, և պատուհանքն վանդակապատքն, լուսանցոյցք շուրջ զերեքումբք վասն հայելոյ. և տունն՝ և որ զնովաւ յարկքն առ հասարակ շուրջ շրջանակաւ տախտակամա՛ծ ՚ի յատակացն մինչև ՚ի պատուհանսն. և պատուհանք բացեալք երեքկին առ ՚ի հայել* . ¹⁷որպէս և ՚ի ներքոյ կողմանն մինչև յարտաքինն։ Եւ ՚ի վերայ ամենայն տանն շուրջ շրջանակաւ, և ՚ի վերայ ամենայն տանն շուրջանակի ներքոյ և արտաքոյ*, ¹⁸քերովք քանդակեալ՝ և արմաւենիք. և արմաւենի մի ՚ի մէջ քերովքէիցն, և երկու քերովքէքն հանդէպ միմեանց. միոյ քերովքէին* ¹⁹դէմքն մարդոյ՝ ՚ի միոջէ՛ կողմանէ արմաւենւոյն. և դէմք առիւծու՝ ՚ի միւսմէ կողմանէ արմաւենւոյն. և այսպէս քանդակեալ էր ամենայն տաճարն շուրջանակի, ²⁰յատակաց մինչև ցյարկսն քերովքէք և արմաւենիք քանդակեալք. և սրբութիւնն՝ և տաճարն՝ թռուցեալ* ²¹և բացեալ չորեքկուսի։ Եւ դէմ յանդիման սրբութեանցն տեսիլ*, ²²իբրև նմանութիւն փայտեղէն սեղանոյ՝ երեք կանգուն ՚ի բարձրութիւն, և երկու կանգուն յերկայնութիւն, և երկու կանգուն ՚ի լայնութիւն՝ և եղջերք ՚ի նմա. և յատակքն նորա և որմք փայտեղէնք։ Եւ ասէ ցիս. Այս է սեղան էրեսաց Տեառն*։ ²³Եւ երկու մուտք տաճարին, և երկու մուտք սրբութեանց. երկոցունց շրջանակաւ մտիցն* ²⁴երկու մուտք միոյ, և երկու մուտք միւսոյ դրանն. ²⁵և քանդակագործք ՚ի վերայ նոցա. և ՚ի վերայ մտից տաճարին քերովքէք և արմաւենիք քանդակեալք ըստ քանդակի սրբութեանցն. և փայտակերտ ազնիւ դէմ յանդիման կամարին արտաքուստ կողմանէ՛. ²⁶և պատուհանք ծածուկք։ Եւ չափեաց յայսկոյս յայնկոյս զյարկս կամարին, և զկողմանս տանն խառնեալ ընդ միմեանս*։

42

Գլուխ ԽԲ

* *Ի լուս՝* Եւ անջրպետ ընդդէմ առանցիցն. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝*։ *Ոմանք*։

Յերկայնութիւն եւթանասուն կանգուն... և երկայնութիւն նորին իննսուն։

* *Ոմանք*։ Եւ զխորշն աստի անտի։

* *Ոմանք*։ Եւ որ զնովաւ յատակքն առ հասարակ։

* *Ոսկան*։ Մինչև ցարտաքին... շուրջանակի ՚ի ներ՝։

* *Ոմանք*։ Եւ երկու քերովքէք հանդէպ։ *Ուր Ոսկան*։ Միոյ քերովքին։

* *Ոմանք*։ ՚ի յատակացն մինչև յարկսն։

* *Ոսկան*։ Եւ մուտ բացեալ չորեքկուսի։

* *Ոմանք*։ Իբրև նմանութեան փայտ... և յատակ նորա... այս սեղան է երեսաց։ *Ի լուս՝* Եւ երեք կանգուն յերկայնութիւն. *համաձայն բազմաց ՚ի բն՝*։

* *Ոսկան*։ Եւ երկոցունց շրջա՝։

* *Օրինակ մի*։ Եւ փայտակերտ ազնիւ։

* *Ոսկան*։ Խառնել ընդ միմեանս։

¹Եւ եհան՝ զիս ՚ի սրահն արտաքին ընդ արևելս դէմ յանդիման դրանն հիւսւսոյ. և տարաւ զիս ՚ի ներքս: Եւ ահա պատշգամք հինգ առանցիւք և խորշիւք ընդ կողմ հիւսւսոյ. ²հարելր կանգուն յերկայնութիւն, և յիսուն կանգուն ՚ի լայնութիւն. ³նկարեալք ըստ օրինակի դրան սրահին ներքնոյ, և ըստ օրինակի շրջանակի սեանցն սրահին արտաքնոյ. դէմ ընդ դէմ կարգեալ երեք սրահեան* : ⁴Եւ դէմ ընդ դէմ պատշգամացն գնացք ՚ի տասն կանգնոյ լայնութիւն, և հարելր կանգուն յերկայնութիւն. և ներգսագոյն կողմ ճանապարհին կանգուն մի. և դրունք նոցա ընդ հիւսւսի* : ⁵Եւ գնացք ՚ի վերնատունսն նոյնպէս, զի խառնեալ էին սիւնքն շրջանակաւ ՚ի ներքուստ մինչև ՚ի վեր. և անջրպետն նոյնպէս. և սիւնքն շրջանակօք, և անջրպետք և մոյթք. ⁶քանզի երեքսրահեանք էին. և սիւնք ո՛չ գոյին իբրև զսիւնս պատշգամացն. վասն այնորիկ առանցք էին ՚ի ներքոյ կողմանէն. և ՚ի միջնայարկացն ՚ի գետնոյ կողմանէ յիսուն: ⁷Եւ լոյս արտաքուստ, որպէս և պատշգամք սրահին արտաքնոյ որ հային դէմ յանդիման պատշգամացն՝ որ ընդ հիւսւսոյ՝ յերկայնութիւն յիսուն կանգուն* : ⁸Քանզի երկայնութիւն պատշգամացն որ հայէին ՚ի սրահն արտաքին՝ էր ՚ի յիսուն կանգնոյ. և նոքա էին դէմ յանդիման միմեանց. ընդ ամենայն հարելր կանգուն* : ⁹Եւ դրունք պատշգամացն որ ընդ մուտս արևելից՝ վասն մտանելոյ ընդ նոսա յարտաքին սրահին անտի* . ¹⁰ըստ լուսամտին առաջին գնացին որ ընդ կողմն հարաւոյ՝ դէմ յանդիման հարաւոյ, և ընդդէմ անջրպետացն, և հանդէպ խորշիցն: Եւ պատշգամքն* , ¹¹և գնացն հանդէպ նոցուն ըստ չափոյ պատշգամացն ճանապարհին՝ որ ընդ հիւսւսի. և ըստ երկայնութեան նոցա՝ և ըստ լայնութեան նոցա՝ և ըստ ելից նոցա. և ըստ շրջանակաց նոցին, և ըստ լուսանցուցաց* . ¹²և ըստ մտից պատշգամացն՝ որ ընդ հիւսւս, և ըստ մտից պատշգամացն որ ընդ հարաւ. և ըստ մտից առաջին գնացիցն առ ՚ի զլոյսն տալոյ անջրպետութեան ձողոյն, և հանդէպ արևելից գնալ ընդ նոսա* : ¹³Եւ ասէ ցիս. Պատշգամք որ են ընդ հիւսւսի, և պատշգամք որ են ընդ հարաւ՝ հանդէպ բացատանցն, դոքա են պատշգամք սրբութեանն ուր ուտեն քահանայքն որդիքն Սաղովկայ մերձաւորք տանն զսրբութիւն սրբութեանցն. և անդ դիցեն զսրբութիւն սրբութեանցն, և զգոհսն, և զվասն մեղացն, և զվասն անգիտութեանն. քանզի սո՛ւրբ է տեղին* : ¹⁴Եւ մի՛ ոք մտցէ անդր, բա՛ց ՚ի քահանայիցն: Եւ ո՛չ ելանիցեն ՚ի սրբութենէ անտի ՚ի սրահն արտաքին. զի յամենայն ժամանակի որ մերձենանն՝ սո՛ւրբ կացցեն. և մի՛ մատչիցին ՚ի պատմութեանս իւրեանց որով պաշտիցինն, զի սո՛ւրբ է այն. և զգեցցին այլ հանդերձ յորժամ մերձենայցեն ՚ի ժողովուրդն* : ¹⁵Եւ

* *Ոսկան.* Կարգեալք ըստ օրինակի դրան: *Բազումք.* Եւ ըստ օրինակի շրջանակաւ սեանց:

* *Ոմանք.* Եւ ընդդէմ պաշտկամբացն գնացի՝ տասն կանգնոյ ՚ի լայնութիւն:

* *Ոսկան.* Որք հայէին դէմ յանդի՞:

* *Ոմանք.* Էր ՚ի յիսուն կանգուն:

* *Ոսկան.* Որք արևելից վասն մտա՞: *Ոմանք.* Յարտաքին սրահէ:

* *Ոմանք.* Եւ որ ընդ կողմն հա՞:

* *Բազումք.* Եւ գնացքն հանդէպ նոցա:

* *Ոմանք.* Առաջին գնացին առ ՚ի:

* *Ոմանք.* Պաշտկամբք որ հիւսիւսի... որ ընդ հարաւոյ են հանդէպ բացատանցն: *՚Ի լուս՞.* Մերձաւորք Տեառն զսրբութիւն սր՞. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՞:*

* *Բազումք.* Եւ մի՛ ոք մտանիցէ... որով պաշտեցինն. *կամ՞* պաշտիցեն. քանզի սուրբ է այն:

կատարեցաւ չափ տաճարին ներքնոյ: Եւ եհան զիս ընդ ճանապարհ դրանն որ հայեր ընդ արևելս. և չափեաց զձև տանն շուրջանակի ըստ յօրինուածոյ: ¹⁶Եւ եկն եկաց առ հարաւային դրանն որ հայեր ընդ արևելս, և չափեաց հինգ հարելր չափով ձողոյն: Եւ դարձաւ 'ի կողմ հիւսւսոյ*. ¹⁷և չափեաց հանդէպ հիւսւսոյ, հինգ հարելր չափով ձողոյն*: ¹⁸Եւ դարձաւ 'ի ծովակողմն, և չափեաց հանդէպ ծովուն, հինգ հարելր չափով ձողոյն*: ¹⁹Եւ դարձաւ 'ի կողմն հարաւոյ, և չափեաց հանդէպ հարաւոյ հինգ հարելր չափով ձողոյն: ²⁰Եւ զփողոցս նորա շուրջանակի 'ի չորեսին կողմանսն նովին չափով. և յօրինեաց զնա և զփողոցս նորա շուրջանակի, 'ի հինգ հարելր կանգնոյ հանդէպ արևելից, և 'ի հինգ հարելր կանգնոյ զլայնութիւնն՝ անջրպետել 'ի մէջ սրբութեանցն, և 'ի մէջ պարսպացն յօրինուածոյ տաճարին*:

43

Գլուխ ԽԳ

¹Եւ ա՛ծ զիս 'ի դուռնն որ հայեր ընդ արևելս, և եհան զիս ընդ այն: ²Եւ ահա փառքն Աստուծոյ Իսրայէլի զային ընդ ճանապարհն արևելից, և ձայն բանակին իբրև զձայն կրկնելոյ՝ բազմաց. և երկիրն լուսաւորեցաւ 'ի նմանութիւն լուսաւորաց 'ի փառացն շուրջանակի*: ³Եւ տեսիլն զոր տեսանէի, էր ըստ տեսլեանն զոր տեսի 'ի ժամանակի իբրև մտանէի օժանել զքաղաքն: Եւ տեսիլ կառացն զոր տեսի, էր ըստ տեսլեանն զոր տեսանէի 'ի վերայ Քովբար գետոյ. և անկայ 'ի վերայ երեսաց իմոց*: ⁴Եւ փառքն Տեառն մտին 'ի տաճարն ընդ ճանապարհ դրանն՝ որ հայեր ընդ արևելս*: ⁵Եւ համբարձ զիս Յոգի, և տարաւ զիս 'ի սրահն ներքին. և ահա լի՛ էր փառօք Տեառն տաճարն, և կայի անդ*. ⁶և ահա ձայն 'ի տաճարէ անտի որ խօսէր ընդ իս: Եւ այր մի կայր մօտ առ իս*, ⁷և ասէ ցիս. Որդի մարդոյ՝ տեսե՞ր զտեղի աթոռոյ իմոյ, և զտեղի հետոց ոտից իմոց. որովք բնակեսցէ անուն իմ 'ի մէջ տանն Իսրայէլի յաւիտեան. և մի՛ ևս պղծեսցեն տունն Իսրայէլի զանուն իմ սուրբ, ինքեանք և առաջնորդք իւրեանց պոռնկութեամբ իւրեանց, և սպանութեամբ իշխանացն որ 'ի մէջ նոցա*. ⁸ի դնել ինձ զդրանդս իմ 'ի մէջ դրանդեաց նոցա, և զսեամս իմ առ սեամս նոցա: Եւ արկին զպարիսպս նեղել ընդ իս և ընդ նոսա. և պղծեցին զանուն իմ սուրբ անօրէնութեամբ իւրեանց զոր առնէին. և խորտակեցից զնոսա բարկութեամբ իմով և սպանմամբ*: ⁹Գոնեայ արդ մերժեսցեն զպոռնկութիւնս իւրեանց, և

* Ոմանք. Եւ դարձաւ ընդ կողմն հիւս՝:

* Ոմանք. Հինգ հարիւր կանգուն չափով ձողոյն:

* Ոմանք. Եւ դարձաւ ընդ ծովա՝:

* Առ Ոսկանայ պակասի. Շուրջանակի 'ի չորեսին կողմանսն նովին չափով. և յօրինեաց զնա և զփողոցս նորա շուրջանակի, 'ի հինգ հար՝... անջրպետել... յօրինուած տաճարին:

* Յօրինակին. 'ի նմանութիւն լուսաց 'ի փա՝:

* Բազումք. Չոր տեսանէի 'ի ժամանակի... զոր տեսի 'ի վերայ քովբար:

* Ոմանք. Ընդ ճանապարհն որ հայեր:

* Ոմանք. Համբարձ զիս Յոգի:

* Ոմանք. Ձայն 'ի տաճարէն որ:

* Ոմանք. Տես զտեղի աթո՝: Բազումք. Եւ ապականութեամբք իշխանացն:

* Ոմանք. 'ի դնել զդրանդս իմ 'ի մէջ դրանդից նոցա... զպարիսպս իմ նեղել ընդ իս.... և

զսպանութիւնս իշխանաց նոցա յինէն. և բնակեցայց ՚ի մէջ նոցա յաւիտեան*:
¹⁰Եւ դու որդի մարդոյ՝ ցոյց տանդ Իսրայէլի զտաճարդ, և դադարեցեն ՚ի
մեղաց իւրեանց, զտեսիլ դորա և զձև և զօրինումս*.¹¹ և նոքա ընկալցին
զտանջանս իւրեանց վասն ամենայնի զոր արարին: Եւ նկարեցես զտունդ և
զպատրաստութիւնդ իւր, և զել և զմուտ դորա, և զկահ և զամենայն հրամանս
դորա. և զամենայն օրէնս և զիրաւունս դորա ցուցցես նոցա. և գրեցես առաջի
նոցա. և պահեցեն զամենայն իրաւունս և զհրամանս իմ, և արասցեն զնոսա*:
¹²Եւ նկարագիր տանն ՚ի վերայ գլխոյ լերինն, և ամենայն սահմանք նորա
շուրջանակի. սրբութիւն սրբութեանց են: Այս օրէն է տաճարին*.¹³ Եւ այս չափ
սեղանոյն. կանգուն մի ՚ի կանգնոց, և կանգուն մի և ուղուկ գոգած խորութեան
նորա. և կանգուն մի լայնութիւն. և պսակ շուրջ զծնօտիւք նորա շուրջանակի
թզաւ մի: Եւ այս բարձրութիւն սեղանոյն*.¹⁴ Ի խորութենէ սկզբան փորուածոյն
մինչև ՚ի մեծ քաւութիւնն, կանգունք երկուք ՚ի ներքուստ, և ՚ի լայնութիւն
կանգուն մի. և փոքր քաւութենէն մինչև ՚ի մեծ քաւութիւնն կանգունք չորք, և ՚ի
լայնութիւն կանգուն մի*.¹⁵ և բունն ՚ի չորից կանգնոց. և ՚ի բնէն ՚ի վեր
ցեղջերսն՝ կանգուն մի*:¹⁶ Եւ բունն յերկոտասան կանգնոյ, առ երկոտասան
կանգուն ՚ի լայնութիւն, չորեքուսի ՚ի չորեսին կողմանս իւր: ¹⁷ Եւ քաւութիւնն
չորեքտասան կանգուն յերկայնութիւն, և չորեքտասան կանգուն ՚ի լայնութիւն,
հասարակ ՚ի չորեցունց կողմանց. և ծնօտքն պատուածոյք շուրջանակի
պատեալ զնովաւ ՚ի կէս կանգնոյ, և բոլորակն նորա շուրջանակի կանգուն մի. և
աշտիճանքն նորա ընդ արևելս*:¹⁸ Եւ ասէ ցիս Տէր. Որդի մարդոյ՝ այսպէս ասէ
Տէր Տէր. Այս հրամանք են սեղանոյն. յաւուր գործուածոյ իւրոյ մատուցանել ՚ի
վերայ նորա ողջակէզս, և հեղուկ առ նովաւ արիւն*:¹⁹ Եւ տացես քահանայիցն
Ղևտացւոց որք ՚ի զաւակէ Սաղովկայ մերձեսցին առ իս՝ ասէ Տէր Տէր պաշտել
զիս, զուարակ մի յանդոյ վասն մեղաց*:²⁰ Եւ առցեն յարենէ նորա, և դիցեն ՚ի
վերայ չորեցունց եղջերաց սեղանոյն, և ՚ի վերայ չորեցունց անկեանց
քաւութեանն. և շուրջ զյատակաւն, և ցանեսցեն և քաւեսցեն*:²¹ Եւ առցեն
զզուարակն զվասն մեղացն՝ և այրեսցի ՚ի զատեալ տեղոջ տաճարին՝
արտաքոյ սրբութեանցն: ²² Եւ յաւուրն երկրորդի առցեն նոխագս երկուս
յայծեաց անարատից վասն մեղաց, և քաւեսցեն զսեղանն՝ որպէս քաւեսցին
զուարակաւն*:²³ Եւ յետ վախճանելոյ զքաւութիւնն, մատուցեն զուարակ
յարջառոց անարատ՝ և խոյ ՚ի հօտից անարատ: ²⁴ Եւ մատուցին առաջի
Տեառն, և ցանեսցեն ՚ի վերայ նորա քահանայքն աղ. և հանցեն զնոսա

խորտակեցի զնոսա բարձր:

* *Ոսկան.* Եւ բնակեցից ՚ի միջի նոցա:

* *Ոմանք.* Ցոյց տանն Իսրայէլի:

* *Ոմանք.* Ցուցցես դոցա:

* *Բագունք.* Եւ զնկարագիր տանն:

* *Ոմանք.* Եւ այս չափք սե՛... և ողուկ գոգած: *Ուր Ոսկան.* Ուղկ գոգ՝:

* *Ոմանք.* Սկզբան փորածոյն... և ՚ի լայնութիւնն կան՝: *Այլք.* Եւ ՚ի փոքր քաւութենէն:

* *Ոմանք.* Եւ ՚ի բնէն և ՚ի վեր:

* *Ոսկան.* Ի կողմանց լայնութիւն հասարակ ՚ի չորեցունց:

* *Ոսկան.* Յաւուր գործուածոց իւրոց:

* *Ոմանք.* Զուարակ մի յանդոյ:

* *Ոսկան.* Եւ շուրջ զյարկաւն ցանեսցեն:

* *Ոմանք.* Յայծեաց անարատս վասն:

յողջակէզս Տեառն*։ ²⁵Ձեւթն օր արասցեն նոխազ մի վասն մեղաց հանապազ, և զուարակ մի յարջառոց, և խոյ մի՝ ի հօտից անարատ արասցեն* ²⁶զեւթն օր, և քաւեցեն զսեղանն՝ և սրբեցեն զնա։ Եւ կատարեցեն զձեռս իւրեանց. ²⁷և վախճանեցեն զաւուրսն. և եղիցի յօրէն ութերորդէ և անդր՝ արասցեն քահանայքն՝ ի վերայ սեղանոյն զողջակէզս ձեր, և զվասն փրկութեան ձերոյ, և ընկալայց զձեզ՝ ասէ Տէր Տէր*։

44

Գլուխ ԽԴ

¹Եւ դարձոյց զիս ընդ ճանապարհ արտաքին դրան՝ սրբութեանցն՝ որ հայեր յարևելս. և այն էր փակեալ*։ ²Եւ ասէ ցիս Տէր. Այդ դուռն փակեալ կացցէ՝ և մի՛ բացցի՝ և մի՛ ոք անցցէ ընդ դա, զի Տէր Աստուած Իսրայէլի մտցէ ընդ դա. և եղիցի փակեալ։ ³Քանզի առաջնորդ իշխանն նա՛ նստցի ՚ի դմա ուտել հաց առաջի Տեառն, ընդ ճանապարհ կամարի դրանն մտցէ, և ընդ նոյն ճանապարհ ելցէ*։

ԼԷ ⁴Եւ տարաւ զիս ընդ ճանապարհ դրանն որ ընդ հիւսիսի յանդիման տաճարին. տեսանէի և ահա փառօք Տեառն լի՛ էր տունն Տեառն. և անկայ՝ ՚ի վերայ երեսաց իմոց։ ⁵Եւ ասէ ցիս Տէր. Որդի մարդոյ, դի՛ր ՚ի սրտի քում, և տես աչօք քովք, և լո՛ւր ակընջօք քովք զամենայն ինչ զոր ես ընդ քեզ խօսեցայց, ըստ ամենայն հրամանաց տանդ Տեառն, և ըստ ամենայն իրաւանց դորա. և կարգեցես ՚ի սրտի քում զմուտ տանդ ըստ ամենայն ելից դորա, և ըստ ամենայն սրբութեանցն*։ ⁶Եւ ասացես ցտունդ Իսրայէլի տուն դառնացողաց. Այսպէս ասէ Տէր Տէր. Շա՛տ լիցի ձեզ առ ամենայն անօրէնութեամբք ձերովք տունդ Իսրայէլի, ⁷մութանել ձեզ զորդիս այլազգիս անթլփատս սրտիւ՝ և անթլփատս մարմնով՝ լինել ՚ի սրբութիւնս իմ և պղծել զնոսա, ՚ի մատուցանել ձեզ զհացդ իմ ճարպով և արեամբ, և անցանէք զուխտիւ իմով ամենայն անօրէնութեամբք ձերովք*։ ⁸Եւ ո՛չ պահեցէք զպահպանութիւնս սրբութեանց իմոց. և կարգեցէք զնոսա պահել զպահպանութիւն սրբութեան սրբութեանց իմոց*։ ⁹Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստուած. Ամենայն որդի օտարածին անթլփատ սրտիւ և անթլփատ մարմնով, մի՛ մտցէ ՚ի սրբութիւնս իմ. յամենայն որդւոց այլազգեացն որ իցեն ՚ի տանդ Իսրայէլի։ ¹⁰Այլ և Ղևտացիքն որք հեռացան յինէն ՚ի մոլորել ժողովրդանն. որ մոլորեցան յինէն զհետ խորհրդոցն իւրեանց, և ընկալցին ըստ անօրէնութեանց իւրեանց*։ ¹¹Եւ եղիցին ՚ի սրբութիւնս իմ պաշտօնեայք բարապանք դրանց տանդ, և սպասաւորք

* Այլք. Եւ մատուցեն առաջի Տեառն։ *Ի լուս՝* Եւ ցանեցեն ՚ի վերայ նոցա. *համաձայն այլոց ՚ի բն՝*։

* Օրինակ մի. Ձեւթն օր արածեցեն նոխազ։

* Բազումք. Յօրէն ութերորդի և անդր։

* Ոմանք. Որ հայեր ընդ արևելս։

* Ոսկան. Նստցի ՚ի դա ուտել զհաց։

* Ոմանք. Ըստ ամենայնի հրամանաց տանն Իսրայէլի, և ըստ ամենայն... ամենայն ելից նորա։

* Ոմանք. Անթլփատս սրտիւք։ *Ոսկան.* Եւ անցանել զուխտիւ իմով։

* Բազումք. Պահել զպահպանութիւնս։

* Ոմանք. Ըստ անօրէնութեան իւրեանց։

տաճարիդ. նոքա զենուցուն զողջակէզս և զզոհս ժողովրդեանն. և նոքա կացցեն առաջի ժողովրդեանն լինել նոցա 'ի սպասաւորս. ¹²Վիոխանակ զի էին նոքա սպասաւորք առաջի կռոցն նոցա. և եղև տանն Իսրայէլի այն 'ի տանջանս անիրաւութեան: Վասն այնորիկ ամբարծի զծեռն իմ 'ի վերայ նոցա ասէ Տէր Աստուած. և ընկալցին ըստ անօրէնութեան իւրեանց*.¹³ և մի՛ մերծեսցին առ իս քահանայանալ ինձ, և մի՛ հպել յամենայն սրբութիւնս որդւոցն Իսրայէլի, և մի՛ յամենայն սրբութիւն սրբութեանց իմոց. և ընկալցին զանարգանս իւրեանց մոլորութեամբն զոր մոլորեցան*:¹⁴ Եւ կարգեսցեն զնոսա պահել զպահպանութիւնս տանն. յամենայն 'ի գործս նորա, և յամենայն ինչ զոր գործեսցեն անդ*:¹⁵ Եւ քահանայքն Ղևտացիք որդիքն Սադովկայ որք պահեցին զպահպանութիւնս սրբութեանց իմոց 'ի մոլորել տանն Իսրայէլի յինէն, նոքա՛ մերծեսցին առ իս պաշտել զիս. և կացցեն առաջի երեսաց իմոց մատուցանել ինձ զոհս և ճարպ և արիւն՝ ասէ Տէր Աստուած:¹⁶ Նոքա մտցեն 'ի սրբութիւնս իմ, և նոքա մերծեսցին 'ի սեղան իմ պաշտել զիս. և պահեսցեն զպահպանութիւնս իմ:¹⁷ Եւ եղիցի 'ի մտանելն նոցա ընդ դուռն սրահին ներքնոյ, զգեցցին զպատմուճանս կտաւիս. և մի՛ զզենուցուն ասուիս 'ի պաշտամանն իւրեանց, 'ի դրանէ ներքին սրահին*:¹⁸ Եւ խոյրս կտաւիս ունիցին 'ի գլուխս իւրեանց, և անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց, և ո՛չ զզենուցուն բռնութիւն*:¹⁹ Եւ յելանելն իւրեանց յարտաքին սրահն առ ժողովուրդն, մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտիցենն. և դիցեն զնոսա 'ի սենեակն սրբութեանց, և զգեցցին այլ պատմուճանս. և մի՛ սրբեսցեն զժողովուրդն պատմուճանօք իւրեանց:²⁰ Եւ զգլուխս իւրեանց մի՛ գերծցեն, և զվարսս իւրեանց մի՛ անօտրացուցեն. ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց:²¹ Եւ զինի մի՛ արբցեն ամենայն քահանայքն 'ի մտանելն իւրեանց 'ի ներքին սրահն:²² Եւ զայրի, և զհանեալ մի՛ առնուցուն իւրեանց 'ի կանայս, այլ զկոյսս 'ի զաւակէ տանն Իսրայէլի. և այրի թէ իցէ 'ի քահանայէ մնացեալ՝ առցեն*:²³ Եւ զժողովուրդն իմ ուսուցեն ընտրել 'ի մէջ սրբոյն և պղծոյն. և 'ի մէջ անարատին և արատաւորին*:²⁴ Եւ 'ի վերայ դատաստանի արեան նոքա՛ կացցեն քննել. զարդարութիւնս իմ արդարացուցեն, և զիրաւունս իմ իրաւացուցեն. և զօրէնս իմ, և զիրամանս իմ յամենայն տօնս պատմեսցեն, և զշաբաթս իմ սրբեսցեն*:²⁵ Եւ 'ի դի՛ մարդոյ մի՛ մտցեն պղծիլ. բայց թէ 'ի հօր կամ 'ի մօր՝ և յուստերս և 'ի դստերս՝ ևս յեղբօր և 'ի քեռ՝ որ առն չիցէ տուեալ՝ պղծեսցին*:²⁶ Եւ յետ սրբելոյն նորա՝ եւթն օր թուեսցէ իւր:²⁷ Եւ յորում աուր մտանիցէ 'ի սրբութիւն սրահին ներքնոյ պաշտել 'ի սրբութեանն՝ մատուցանէ քաւութիւն՝ ասէ Տէր Աստուած*:²⁸ Եւ ո՛չ եղիցի նոցա ժառանգութիւն, զի ես եմ նոցա

* *Բազումք.* Ըստ անիրաւութեան իւրեանց:

* *Բազումք.* Մերծեսցին առ 'ի քահանայանալ ինձ:

* *Ոսկան.* Յամենայնի գործս նորա, և յամենայն ինչ զոր գործիցէ անդ: *Բազումք.* Ջոր գործիցեն անդ (15) քահանայքն Ղև՛:

* *Ոսկան.* Սրահին 'ի ներքնոյ: *Ոմանք.* 'Ի դրանէ սրահին ներքին:

* *Ոսկան.* Եւ ոչ զզենուցուն 'ի բռնութեան:

* *Ոսկան.* Իւրեանց կանայս:

* *Ոմանք.* 'Ի մէջ սրբոցն և պղծոց:

* *Բազումք.* Եւ զիրամանս իմ յամենայն տօնս պահեսցեն:

* *Ոմանք.* Եւ յուստեր և 'ի դստեր և յեղբօր և 'ի քեռ, որ առն չիցէ լեալ՝ պղ՛:

* *Բազումք.* Մատուցէ քաւութիւն:

ժառանգութիւն. և կալուածք մի՛ տացին նոցա՝ ի մէջ որդւոցն Իսրայէլի, զի ե՛ս եմ նոցա ժառանգութիւն՝: ²⁹Եւ զգոհսն, և զվասն մեղացն, և զվասն անգիտութեանն՝ նորա՛ կերիցեն. և ամենայն նուէրք Իսրայէլի՝ նոցա լիցին: ³⁰Պտուղ ամենայնի և անդրանիկք ամենեցուն, և երախայրիք յամենայն պտղոց ձերոց՝ քահանայիցն եղիցի: Եւ զառաջին մուտ արդեանց ձերոց տաջի՛ք քահանային՝ դնել օրհնութիւն ՚ի վերայ տանց ձերոց՝: ³¹Չամենայն զմեռելոտի և զգազանաբեկ, ՚ի թռչնոց և յանասնոց, մի՛ ուտիցեն քահանայքն՝:

45

Գլուխ ԽԵ

¹Եւ ՚ի վիճակել ձեզ զերկիրն ՚ի ժառանգութիւն, զատուցի՛ք պտուղ Տեառն սուրբ ՚ի յերկրէն. քսան և հինգ հազար յերկայնութիւն, և տասն հազար ՚ի լայնութիւն, նուիրեալ եղիցի յամենայն սահմանս նորա շուրջանակի՝: ²Եւ եղիցի յայնմանէ ՚ի սրբութիւն. հինգ հարելր առ հինգ հարելր չորեքկուսի շուրջանակի. և յիսուն կանգուն բացատացն շուրջանակի՝: ³Եւ յայսմ չափոյ չափեսցի քսան և հինգ հազար յերկայնութիւն, և տասն հազար ՚ի լայնութիւն. և ՚ի նմա՛ եղիցի սրբութիւն սրբութեանցն՝ ⁴նուիրեալ յերկրէն. և եղիցի քահանայիցն որ պաշտիցեն ՚ի սրբութեանն, և այնոցիկ որ մերձենան պաշտել զՏէր: Եւ եղիցի նոցա տեղի մի զատեալ ՚ի տուն սրբութեան իւրեանց՝, ⁵քսան և հինգ հազար յերկայնութիւն, և տասն հազար ՚ի լայնութիւն: Եւ Ղևտացւոցն որ պաշտեն ՚ի տաճարին, եղիցի ՚ի կալուածս քաղաքի ՚ի բնակութիւն՝: ⁶Ոստ բնակութեան քաղաքի տացես, հինգ հազար ՚ի լայնութիւն, և քսան և հինգ հազար յերկայնութիւն ըստ երախտեաց սրբութեանցն. յամենայն տանէն Իսրայէլի եղիցի՝: ⁷Եւ առաջնորդին յայնմանէ և անտի յերախայրիս սրբոցն ՚ի միստ քաղաքին յանդիման երախայրեաց սրբութեանցն, ընդդէմ բնակութեան քաղաքին ընդ կողմ ծովու. և ՚ի ծովէն ընդ արևելս. և երկայնութիւն ըստ միոյ վիճակաց ՚ի սահմանացն որ ընդ ծովակողմն, և լայնութիւն ըստ սահմանաց երկրին որ ընդ արևելս՝: ⁸Եւ եղիցի նմա ՚ի կալուածս ՚ի մէջ Իսրայէլի: Եւ ո՛չ ևս բուռն լիցին իշխանք որդւոցն Իսրայէլի ժողովրդեան իմում. և զերկիրն վիճակեալ ժառանգեսցեն տունն Իսրայէլի ըստ ազգս իւրեանց:

ԼԸ ⁹Այսպէս ասէ Տէր Տէր. Շա՛տ լիցի ձեզ իշխանքդ Իսրայէլի. արդ՝ ՚ի բա՛ց

* *Ոմանք.* Եւ եղիցի նոցա ժա՛... և կալուածք մի՛ տացի նոցա: *Ուր Ոսկան.* Ի՛ ժառանգութիւն, և կալուածք մի՛... նոցա ՚ի ժառան՛:

* *Ոմանք.* Քահանայիցն եղիցին:

* *Բազումք.* Սի՛ կերիցեն քահանայքն:

* *Բազումք.* Տեառն սուրբ յերկրէն:

* *Ոմանք.* Յայնմանէ սրբութիւն... չորեքկուսի շուրջանակաւ, և յիսուն կանգուն բացատան. *կամ՝* բացատանցն. *կամ՝* բացատ տանցն շուր՛:

* *Ոմանք.* Չափեսցեն. *կամ՝* չափեսցես քսան և հինգ հա՛:

* *Բազումք.* Յերկրէն եղիցի քահանայիցն որ պաշտեն... զատեալ ՚ի տուն սրբութեանցն:

* *Ոսկան.* Ի՛ լայնութիւն եղիցի Ղևտացւոցն... եղիցի կալուածս քա՛:

* *Ոմանք.* Ի՛ լայնութիւն, և հինգ հազար յերկայնութիւն: *Բազումք.* Ըստ երախայրեաց սրբութեանցն: *Ոսկան.* Ամենայնի տանն Իսրայէլի եղիցի:

* *Ոսկան.* Եւ անտի յերախայրից սրբոցն: *Բազումք.* Եւ երկայնութիւն ըստ սահմանաց երկ՛:

արարէք զապիրատութիւն և զշուառութիւն. իրաւունս և արդարութիւն արարէք. ՚ի բա՛ց մերժեցէք զբռնութիւն ՚ի ժողովրդենէ իմմէ՝ ասէ Տէր Աստուած*։ ¹⁰Կշիռք արդար, և չափ արդար, և կապիճ արդար եղիցի չափոց ձերոց*։ ¹¹Եւ կապիճ նոյն լիցի տալոյ և առնլոյ. տասներորդն գրուի եղիցի կապիճ. և տասներորդ գրուի կապիճն, կշի՛ռ ըստ գրուին, և ըստ արդուին եղիցի*։ ¹²Եւ կշիռն քսան դանգ, և քսան սիկղ, և քսան և հինգ սիկղ, և ՚ի քսան և ՚ի հինգ սկեղէ՝ եղիցի ձեզ մնաս մի։ ¹³Եւ ա՛յս պտուղ իցէ զոր զատանիցէք. զվեցերորդ չափոյն ՚ի գրուէ ցորենոյ, և զվեցերորդ արդուի ՚ի բռռէ գարւոյ։ ¹⁴Եւ հրաման ձիթոյ, քստս մի իւղոյ, տասներորդ սափորոյն. զի տասն քստսն է՝ սափոր մի*։ ¹⁵Եւ ոչխար մի ՚ի տասն ոչխարէ, նուէրք յամենայն ազգացն Իսրայէլի, ՚ի զոհս և յողջակէզս քաւութեան և փրկութեան ձերոյ՝ ասէ Տէր Աստուած։ ¹⁶Եւ ամենայն ժողովուրդ երկրիդ՝ տացէ՛ զերախայրիսն ցառաջնորդս Իսրայէլի*։ ¹⁷Եւ ՚ի ձեռն առաջնորդին եղիցին ողջակէզքն՝ և զոհքն՝ և սպանդքն, ՚ի տօնս և յամսագլուխս և ՚ի շաբաթս. և յամենայն տօնս տանդ Իսրայէլի նա մատուցէ զվասն մեղացն, և զզոհսն՝ և զողջակէզսն, և զվասն փրկութեանն քաւել՝ զտունդ Իսրայէլի*։ ¹⁸Ա՛յսպէս ասէ Տէր Աստուած. Յառաջնում ամսեանն որ օր մի իցէ ամսոյն, առնուցուր զուարակ մի յանդույ անարատ՝ քաւել զսրբութիւնն*։ ¹⁹Եւ առցէ քահանայն յարենէ քաւութեանն, և ցանեսցէ ՚ի վերայ սեմոց տանն, և ՚ի վերայ չորեցունց անկեանց տաճարին, և ՚ի վերայ սեղանոյն, և ՚ի վերայ սեմոց դրանն ներքին սրահին*։ ²⁰Եւ ա՛յսպէս արասցէ, որ օր եւթն իցէ ամսոյն, յամենայն յանգէտս յանցանաւորէ և ՚ի տղայոց քաւել զտունն*։ ²¹Եւ յամսեանն առաջնում, որ օր չորեքտասան իցէ ամսոյն, եղիցի ձեզ տօնն պասէք, զեւթն օր բաղարջ կերիջիք*։ ²²Եւ արասցէ առաջնորդն յաւուրն յայնմիկ վասն իւր՝ և վասն տանն՝ և վասն ամենայն ժողովրդեան երկրին, զուարակ մի յարջառոց վասն մեղաց*։ ²³Եւ զեւթն օր տօնին արասցեն ողջակէզս Տեառն, եւթն զուարակ՝ և եւթն խոյ. անարատ աւուր աւուր զեւթն օր. և վասն մեղաց նոխազ մի յայծեաց աւուր աւուր*։ ²⁴Եւ զոհ և նաշիհ գործեալ ըստ զուարակին, և հաց գործեալ ըստ խոյին. և քստս մի եւղ ըստ հացին։ ²⁵Եւ յամսեանն երրորդի որ օր հինգետասան իցէ ամսոյն արասցեն տօն ըստ օրինակի եւթանց աւուրց. որպէս վասն մեղացն՝ և վասն ողջակիզացն. և ըստ նաշիւոյն՝ և ըստ ձիթոյն*։

* *Յօրինակին.* Շատ լիցի ձեզ իշխանդ Իսրայէլի։ *Ոսկան.* Չապիրատութիւն և զթշնամութիւն. զիրաւունս և զար՞։ *Բազոււմք.* ՚ի բա՛ց մերժեցէք զբռնաւորութիւն։

* *Ոմանք.* Չափոյ ձերոյ։

* *Ոմանք.* Եղիցի քսան. (12) և կշիռն դանկ։

* *Բազոււմք.* Քստս։

* *Ոմանք.* Չերախայրիս ցառաջնորդսն Իսրայէլի։

* *Ոմանք.* Եւ նա մատուցէ։

* *Ոմանք.* Ասէ Տէր Տէր Աստուած... որ օր մի է ամսոյն։

* *Ոմանք.* Եւ ցանեսցեն ՚ի վերայ սեմոց։

* *Ոմանք.* Որ օր եւթն էր ամսոյն։ *Այլք.* Յանգէտս յանցանորէ, և ՚ի։

* *Ոմանք.* Չորեքտասան է ամսոյն։

* *Առ Ոսկանայ պակասի.* Առաջնորդն *յաւուրն յայնմիկ* վասն։

* *Ոմանք.* Արասցէ ողջակէզս։ *Յօրինակին.* Նոխազ մի յածեաց։

* *Օրինակ մի.* Եւ յամսեանն եօթներորդի որ օր հինգ է։ *Ուր Ոսկան.* Վեցերորդի ՚ի հինգետասան օր ամսոյն ա՛... վասն մեղացն՝ նոյնպէս և վասն ողջա՞։

Գլուխ ԽՁ

¹Այսպես ասէ Տէր Աստուած. Դուռնն որ 'ի ներքնում սրահին հայի ընդ արևելս. եղիցի փակեալ զվեց արուրսն արգոյս, և յարուրն շաբաթու բացցի, և յարուրն ամսագլխոցն բացցի*: ²Եւ մտցէ առաջնորդն ընդ ճանապարհի կամարի դրանն արտաքնոյ, և կացցէ 'ի վերայ սենոց դրանն. և արասցեն վասն նորա ողջակէզս քահանայքն. և զփրկութեանցն վասն նորա. և երկի՛ր պագցէ 'ի վերայ սենոց դրանն՝ և ելցէ. և դուռն մի՛ փակեսցի մինչև ցերեկոյ*: ³Եւ երկի՛ր պագանիցէ ժողովուրդ երկրին առաջի մտից դրանն յարուր շաբաթուց՝ և յամսագլուխս՝ առաջի Տեառն: ⁴Եւ զողջակէզսն զոր մատուցանէ Տեառն առաջնորդն յարուր շաբաթուց, վեց որոջ անարատ՝ և խոյ մի անարատ*. ⁵և մաննա եփեալ առ խոյն և առ որոջսն և զոհս և տուրս ընդ ձեռնին նորա, և քստտ իւղոյ ըստ հացին*: ⁶Եւ յարուրն ամսամտից զուարակ մի՛ որդի պառակամօր՝ անարատ. և վեց որոջքն և խոյն, անարատք եղիցին: ⁷Եւ նաշիի ըստ զուարակին, և նաշիի և մաննա ըստ խոյին՝ և ըստ որոջացն. որպէս և պատրաստեսցի 'ի ձեռս իւր. և եւղ ըստ նաշիւոյն*: ⁸Եւ 'ի մտանել առաջնորդին՝ ընդ ճանապարհի կամարի դրանն մտցէ, և ընդ նոյն ճանապարհի դրանն ելցէ: ⁹Եւ յորժամ մտանիցէ ժողովուրդ երկրին առաջի Տեառն 'ի տօնս, որ մտանիցէ ընդ ճանապարհի դրանն հիւսւսոյ երկի՛ր պագանել ելցէ ընդ ճանապարհի դրանն հարաւոյ. և որ մտցէ ընդ ճանապարհի դրանն հարաւոյ, ելցէ ընդ ճանապարհի դրանն հիւսւսոյ. և մի՛ դարձցի ընդ ճանապարհի դրանն ընդ որ եմուտ. այլ ուղորդ ընդ նոյն ելցէ*: ¹⁰Եւ առաջնորդն 'ի մէջ նոցա, 'ի մտանելն նոցա՝ ընդ նոսին մտցէ, և ընդ ելանելն նոցա՝ ընդ նոսին ելցէ*: ¹¹Եւ 'ի տօնս և 'ի ժողովս՝ եղիցի մաննա եփեալ ըստ զուարակին, և մաննա ըստ խոյին և ըստ որոջացն, որպէս պատրաստեսցի 'ի ձեռս նորա և քստտ մի իւղոյ ըստ հացին: ¹²Ապա թէ առնիցէ առաջնորդն զխոստովանութեան ողջակէզս, և զկամաւն փրկութեան Տեառն. բացցէ իւր զդուռնն որ հայի ընդ արևելս, և արասցէ զողջակէզս՝ և զվասն փրկութեանն, ըստ օրինակին որպէս առնիցէ յարուր շաբաթուցն. և ելցէ և փակեսցէ զդուռնսն յետ ելանելոյն իւրոյ*: ¹³Եւ բուծ մի տարևոր անարատ արասցէ յողջակէզ Տեառն, հանապազօր այգուն այգուն արասցէ զայն* ¹⁴և մաննա ընդ նմին այգուն այգուն, զվեցերորդ մասն չափոյն. և երրորդ մասն քստտի եւղ խառնեալ 'ի նաշիին. մաննա Տեառն՝ հրաման յաւիտենական*. ¹⁵հանապազ մատուցանիցէ զգառնն և զմաննայն, և զեւղն արասցէ այգուն այգուն ողջակէզ հանապազորդ: ¹⁶Այսպէս ասէ Տէր Տէր.

* *Ոմանք.* Սրահին որ հայի ընդ... և յարուրս շաբաթուց բացցի... և յարուրս ամսագլխոցն:
Ոսկան. Չվեց արուրսն արգոյս... ամսագլխոյն:

* *Ոմանք.* Քահանայքն ողջակէզս վասն նորա:

* *Ոմանք.* Չոր մատուցէ Տեառն յարուր: *Յօրինակին պակասէր.* Որոջք անարատ, և խոյ մի անարատ:

* *Ոմանք.* Եւ առ որոջսն զոհս և տուրս, ըստ ձեռնին նորա:

* *Ոմանք.* Եւ նաշիի 'ի մաննայ ըստ:

* *Այլք.* Եւ որ մտանիցէ ընդ ճանապարհ:

* *Ոմանք.* Եւ առաջնորդն ընդ մէջ նոցա 'ի մտ՝:

* *Բազումք.* Եւ արասցէ զողջակէզսն իւր, և զվասն... որպէս և առնիցէ յա՛:

* *Ոմանք.* Այգոյն այգոյն:

* *Ոմանք.* Այգոյն այգոյն: *Ոմանք.* Եւ երրորդ մասն քստտ մի իւղ խառնեալ:

Եւ եթէ տացէ առաջնորդն պարզև միում յորդոց իւրոց՝ ի ժառանգութենէ իւրմէ. եղիցի այն որդոց նորա ՚ի կալուածս ժառանգութեան*։ ¹⁷Եւ եթէ տացէ պարզև ՚ի ժառանգութենէ իւրմէ միում ՚ի ծառայից իւրոց, եղիցի նմա այն մինչև ցտարին թողութեան, և ապա դարձցի անդրէն առ առաջնորդն. բայց ժառանգութիւն որդոց նորա՝ նոցին եղիցի։ ¹⁸Եւ մի՛ առցէ առաջնորդն ՚ի ժառանգութենէ ժողովրդեանն իւրոյ բռնադատել՝ զնոսա. այլ յիւրմէ կալուածոց և յիւրմէ ժառանգութենէ ժառանգեցուցէ որդոց իւրոց. զի մի՛ ցրուեսցի ժողովուրդ իմ ՚ի յիւրաքանչիւր բնակութենէ*։ ¹⁹Եւ տարաւ զիս ընդ ճանապարհ դրանն հարաւոյ. ՚ի պատշգամ սրբութեանց քահանայիցն որ հայէր ընդ հիւսւսի, և ահա անդ տեղի զատեալ*։ ²⁰և ասէ ցիս. Այս է տեղի յորում եփիցեն քահանայքն զվասն անգիտութեանն՝ և զվասն մեղացն. անդ եփեսցեն և զմաննայն, ամենևին մի՛ ելանել ՚ի սրահն արտաքին սրբել զժողովուրդն*։ ²¹Եւ եհան զիս ՚ի սրահն արտաքին, և շրջեցոյց զիս ընդ չորս կողմանս սրահին. և ահա գաւիթ առ գաւիթս*։ ²²ընդ չորս կողմանս սրահին։ Գաւթին փոքու՝ քառասուն կանգուն երկայնութիւն. և երեսուն կանգուն լայնութիւն. մի չափ էր չորեցունց*։ ²³Եւ պատշգամք շուրջանակի գչորեքումբք. և խոհակերոցք շինեալք ՚ի ներքոյ պատշգամացն շուրջանակի։ ²⁴Եւ ասէ ցիս. Այս տունք են խոհակերաց, ուր հասուցանիցեն պաշտօնեայքն տանն զգեւելիս ժողովրդեանն։

47

Գլուխ ԽԵ

ԼԹ ¹Եւ եմոյծ զիս առաջի դրան տաճարին, և ահա ելանէր ջուր ՚ի ներքոյ վարագուրաց տաճարին ընդ արևելս. զի երեսք տաճարին հայէին ընդ արևելս. և ջուրն հոսէր յաջմէ կողմանէ տաճարին հիւսւսոյ՝ ՚ի սեղանն կոյս*։ ²Եւ եհան զիս ընդ ճանապարհ դրանն հիւսւսոյ, և շրջեցոյց զիս ընդ ճանապարհ դրանն արտաքնոյ առ դրամբն արտաքնով, որ հայէր ընդ արևելս. և ահա ջուրն հոսէր յաջմէ կողմանէ։ ³Եւ իբրև զելս առն դէմ յանդիման, և չափ ՚ի ձեռին իւրում։ Եւ չափեաց հազար, չափովն՝ և անց ընդ ջուրն յորդութեանց*։ ⁴և չափեաց հազար, չափովն՝ և անց ընդ ջուրն, և հարկանէր ջուրն մինչև ցերանսն. և չափեաց հազար, չափովն՝ և անց ընդ ջուրն. և հարկանէր ջուրն մինչև ցօտին. ⁵և չափեաց հազար, չափովն զուխսն՝ և ո՛չ կարէր անցանել. զի յորդեաց ջուրն իբրև գյորձանս հեղեղաց ընդ որ ո՛չ ոք անցանիցէ*։ ⁶Եւ ասէ ցիս. Տես որդի մարդոյ։ Եւ դարձոյց զիս և տարաւ յափն գետոյն*։ ⁷Եւ ՚ի շրջելն անդ իմում, և

* *Բազումք.* Եւ եղիցի այն որդի՝:

* *Ոսկան.* Բռնադատեալ զնոսա։ *Բազումք.* ժողովուրդն իմ յիւրաքանչիւր։

* *Ոմանք.* ՚ի պաշտգամք սրբ՝:

* *Ոմանք.* Յորում եփեսցեն. *կամ՝* եփեցին քահանայքն։

* *Ոմանք.* Գաւիթք առ գաւիթս։

* *Ոմանք.* Յերկայնութիւն, և ՚ի լայնութիւն երեսուն կան՝:

* *՚ի լուս՝.* ՚ի ներքոյ վայրագաւթաց տաճարին. *համաձայն ոմանց ՚ի բն՝:* *Ոսկան.* ՚ի հիւսիսոյ ՚ի սեղանն։

* *Բազումք.* Եւ անց ընդ ջուրն ջուր յորդութեան։

* *Յօրինակին ՚ի բնաբանի դատարկ տեղի թողեալ վասն՝* որ. *՚ի լուս՝.* *նշանակի ՚ի մէջ բերել, և առնել՝* ընդ որ ո՛չ ոք անցա՞. *համաձայն բազմաց։*

* *Բազումք.* Տեսն՞ որ որդի մարդոյ։

ահա յափն գետոյն ծառատունկ բազում յոյժ յա՛յսկոյս յա՛յնկոյս*։ ⁸Եւ ասէ ցիս. Ջուրս այս որ ելանէ՛ ՚ի կողմ Գալիլեացոց ընդ արևելս, և իջանէ յԱրաբիա, և գայ մինչև ցծով՝ ՚ի ջուրց ելիցն, և բժշկեսցէ զջուրս։ ⁹Եւ եղիցի ամենայն շունչ անասնոց թքելոց. յամենայնի յորոց վերայ եկեսցէ գետն՝ կենդանասցին։ Եւ եղիցի անդ ձուկն բազում յոյժ, զի հասեալ անդր ջրոյս այտորիկ՝ բժշկեսցէ. և կենդանասցին յորոց վերայ հասցէ գետն՝ և կեցցէ*։ ¹⁰Եւ կացցեն ՚ի նմա որսորդք յԵնգադեայ մինչև ցԵնգադիս. ձգանք ուռկանաց առանձինն եղիցին. և ձկունք նորա իբրև զձկունս ծովուն մեծի, և բազմութիւն բազում յոյժ*։ ¹¹յէլս նորա՝ և ՚ի դարձս նորին, և ՚ի համբառնալ նորին մի՛ սրբեսցին. այլ յայլս մատնեսցին*։ ¹²Եւ առ գետովն ելցեն զափամբն յայսկոյս յայնկոյս՝ ամենայն ծառ ուտելի, և մի՛ հնասցի շուրջ զնովաւ, և մի՛ պակասեսցի պտուղ նորա, և զդալարութիւն իւր յառաջագոյն արծակեսցէ. զի ջուրք նորա ՚ի սրբութեանց ելանիցեն. և եղիցի պտուղ նոցա ՚ի կերակուր, և ելք նոցա ՚ի բշխութիւն*։

Իս ¹³Ա՛յսպէս ասէ Տէր Աստուած. Ա՛յս են սահմանք ժառանգութեան երկրին, զոր ժառանգեցուցանիցեն երկոտասան ազգացն որդւոցն Իսրայէլի յաւելուած վիճակաց*։ ¹⁴և ժառանգեսցեն զնա իւրաքանչիւրք՝ որպէս և եղբայրն իւր, յոր ամբարձի զձեռն իմ տալ հարցն նոցա. և անկցի երկիրն այն ձեզ ՚ի վիճակ ժառանգութեան*։ ¹⁵Եւ այս են սահմանք երկրին որ ընդ կողմ հիւսւսոյ։ ՚ի ծովէն մեծէ, որ իջանէ և մեկնէ ՚ի մուտս Եղ՛ղադայ* ¹⁶և Եմաթայ, և Բերովթայ, Սաբարսիմայ. ՚ի մէջ սահմանացն Դամասկոսի, և ՚ի մէջ սահմանացն Եմաթայ՝ բնակութիւնք Աւանայ որ են ՚ի սահմանս Աւրանացոց*։ ¹⁷Ա՛յս են սահմանք ՚ի ծովէ ՚ի հանգրուանէ Աւանայ՝ սահմանք Դամասկոսի. և ՚ի կողմ հիւսւսոյ ըստ հիւսւսոյ, և սահմանն Եմաթայ սահման հիւսւսոյ*, ¹⁸դէն յանդիման արևելից ՚ի մէջ Աւրանացոցն և ՚ի մէջ Դամասկոսի. ՚ի մէջ Գաղաադացոցն և ՚ի մէջ երկրին Իսրայէլի, Յորդանան մեկնէ ընդ ծովակողմ արևելից ընդ արմաւաստանն. այս ընդ արևելս*, ¹⁹և ընդ հարաւ. և առ հարաւով ՚ի Թեմանայ և յարմաւաստանէ՝ մինչև ՚ի ջուրն Մարիքովթկադէս որ ձգի ՚ի ծովն մեծ։ Այս բաժին հարաւային՝ և առ հարաւով*։ ²⁰Եւ սոյն բաժին ծովուն մեծի, որ որոշէ մինչև հանդէպ մտիցն Եմաթայ, մինչև ՚ի մուտս նորին. այս ինքն են ընդ ծովակողմն Եմաթայ*։ ²¹Եւ բաժանեսցիք զերկիրն զայն նոցա, և ազգացն Իսրայէլի ²²արկջիք զնա ՚ի

* *Ոսկան.* ՚ի շրջիլ իմուն անդ, և յափին գետոյն։

* *Բազումք.* Անասնոց ՚ի բաց թքելոց... եկեսցէ գետն՝ կենդանի լիցին... և կենդանասցի յորոյ վերայ եկեսցէ գետն։

* *Ոմանք.* ՅԵնգադէ մինչև ցԵնգադիս. և ձգանք ուռկանաց առանձինն... բազմութեանք բազում յոյժ։

* *Ոմանք.* Եւ յէլս նորա, և ՚ի մուտս նորա և ՚ի համբառնալ նորա... այլ յաղ մատնեսցին։

* *Ոմանք.* Ելցէ զափամբքն յայսկոյս... ՚ի սրբութեանցն ելանեն։

* *Ոմանք.* Ջոր ժառանգեցուցանիցես։

* *Ոսկան.* Այն ՚ի ձեզ ՚ի վիճակ։

* *Ոմանք.* Որ իջանէ և մեկնի։ *Ոսկան.* ՚ի մուտս Եղադայ։

* *Ոմանք.* Եմաթայ Բերովթայ... ՚ի սահմանս Աւրանացոյն։

* *Բազումք.* ՚ի ծովէն հանգրուանին աւ... և ընդ կողմն հիւսիւսոյ... և սահմանքն Եմաթայ սահմանք հիւ՛։

* *Ոմանք.* ՚ի մէջ Աւրանացոյն... ՚ի մէջ Գաղաադացոյն... Յորդանան մեկնէր։ *Յորինակին.* Ընդ արմաւաստաննայս ընդ արևելս։

* *Ոմանք.* Եւ ընդ հարաւով ՚ի Թեմանայ... ՚ի ջուրն Մարիովթ Կադէս։

* *Ոմանք.* Եւ այն բաժին... այսինքն է ընդ։

վիճակս. ձե՛զ և եկացն, և պանդխտացն որ ՚ի միջի ձերուն, որք ծնան որդիս ՚ի միջի ձերուն. և եղիցին ձեզ իբրև այդրենածինք ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի. եղիցին ընդ ձեզ. կերիցեն ժառանգութեամբ ՚ի մէջ ազգացդ Իսրայէլի*։ ²³Եւ եղիցին յազգ պանդխտաց ՚ի մէջ պանդխտաց՝ որ իցեն ՚ի ձեզ. անդ տաջիք նոցա ժառանգութիւն՝ ասէ Տէր Աստուած:

48

Գլուխ ԽԸ

¹Եւ այս են սահմանք ցեղիցն. իսկզբանէ կողմանն հիւսւտոյ ըստ կողման զառիթափին, որ զատանէ ընդ մուտս Էմաթու հանգրուանին Աւնանու. սահման Դամասկոսի առ հիւսւտով ըստ կողման բնակութեանն Եմաթայ: Եւ եղիցի նոցա արևելակողմ մինչև ՚ի ծովակողմ՝ Դանայ բաժին մի*։ ²Եւ ՚ի սահմանաց անտի Դանայ յարևելակողմ մինչև ՚ի ծովակողմ՝ Ասերայ բաժին մի: ³Եւ ՚ի սահմանացն Ասերայ յարևելից կուտ մինչև ցծովակողմ՝ Նեփթաղիմայ բաժին մի: ⁴Եւ ՚ի սահմանացն Նեփթաղիմայ յարևելից կուտ մինչև ցծովակողմ՝ Մանասէի բաժին մի*։ ⁵Եւ ՚ի սահմանացն Մանասէի յարևելից կուտ մինչև ցծովակողմ՝ Եփրեմի բաժին մի*։ ⁶Եւ ՚ի սահմանացն Եփրեմի յարևելից կուտ մինչև ՚ի ծովակողմ՝ Ռոբինի բաժին մի: ⁷Եւ ՚ի սահմանացն Ռոբինի յարևելից կուտ մինչև ցծովակողմ՝ Յուդայի բաժին մի*։ ⁸Եւ ՚ի սահմանացն Յուդայի յարևելից կողմանէ մինչև ցծովակողմ. և եղիցի պտուղ նուիրաց քսան և հինգ հազար յերկայնութիւն, և տասն հազար ՚ի լայնութիւն. իբրև զմի ՚ի վիճակաց ՚ի կողմանցն արևելից մինչև ցծովակողմն: Եւ եղիցի սուրբ ՚ի մէջ նոցա. ⁹պտուղ զոր նուիրիցեն Տեառն, յերկայնութիւն քսան և հինգ հազար կանգուն, և ՚ի լայնութիւն տասն հազար*։ ¹⁰Եղիցի պտուղ սրբութեանց քահանայիցն. ընդ հարաւակողմ յերկայնութիւն քսան և հինգ հազար, և ընդ ծովակողմ ՚ի լայնութիւն տասն հազար, և ընդ արևելս ՚ի լայնութիւն տասն հազար, և ընդ հիւսւսակողմ յերկայնութիւն քսան և հինգ հազար: Եւ եղիցի սահման սրբութեանցն ՚ի միջի նոցա*, ¹¹քահանայիցն սրբեցելոց որդւոցն Սադովկայ, որք պահեն զպահպանութիւնս տանն Տեառն. որք ո՛չ մոլորեցան ՚ի մոլորութիւն որդւոցն Իսրայէլի՝ որպէս մոլորեցան Ղևտացիքն: ¹²Եւ եղիցի նոցա պտուղ տուեալ ՚ի պտղոյ երկրին սրբութիւն սրբութեանցն, ՚ի սահմանաց Ղևտացւոցն*։ ¹³Եւ Ղևտացւոցն որ զհետ սահմանաց քահանայիցն, եղիցէ յերկայնութիւն քսան և հինգ հազար՝ և ՚ի լայնութիւն տասն հազար*։ ¹⁴ո՛չ վաճառեսցի ՚ի նոցանէն, և ո՛չ չափեսցի, և ո՛չ առջի առաջին արդեանց երկրին. զի սրբութիւն

* Ոմանք. Իբրև այդրենածինք:

* Ոմանք. Որ զատանէր ընդ մուտսն Եմա... սահմանն Դամասկոսի առ հիւսւտոյ... նոցա յարևելակողմն:

* Բազումք. Նեփթաղիմի յարևելից մինչև ՚ի ծովակողմն Մա՛:

* Ոմանք. Մինչև ՚ի ծովակողմն:

* Ոմանք. Մինչև ՚ի ծովակողմն:

* Ի բազումս պակասի. Քսան և հինգ հազար կանգուն:

* Ի բազումս պակասի. Ընդ հարաւակողմն յերկայնութիւն: Առ Ոսկանայ պակասի. Եւ ընդ արևելս... և ընդ հիւսւսակողմն յերկայ՛:

* Ոմանք. Ի պտղոց երկրին:

* Բազումք. Քահանայիցն իցէ. յերկայնութիւն:

Տեառն է: ¹⁵Բայց հինգ հազարն աւելորդ լայնութեամբ առ քսան և հինգ հազարին, պատուար արտաքոյ քաղաքին լիցին 'ի բնակութիւն և յարձակավայրս նորին. և եղիցի քաղաքն 'ի միջի նորա*: ¹⁶Եւ այս է չափ նորա. և 'ի կողմանէ հիւսւսոյ՝ չորք հազար և հինգ հարելր. և 'ի կողմանէ հարաւոյ՝ չորք հազար և հինգ հարելր. և 'ի կողմանէ արևելից՝ չորք հազար և հինգ հարելր. և 'ի կողմանէ ծովուն՝ չորք հազար և հինգ հարելր*: ¹⁷Եւ եղիցի բացատ քաղաքին ընդ հիւսւսի՝ երկերիւր և յիսուն. և ընդ հարաւ՝ երկերիւր և յիսուն. և ընդ արևելս՝ երկերիւր և յիսուն. և ընդ ծով՝ երկերիւր և յիսուն*: ¹⁸Եւ աւելորդ երկայնութեանն մերձ առ երախայրեօք սրբութեանցն տասն հազար ընդ արևելս, և տասն հազար ընդ ծով. և եղիցին երախայրիք 'ի սրբութեանն. և եղիցին արդիւնք նորա 'ի հաց գործաւորի քաղաքին*. ¹⁹Եւ գործաւորք քաղաքին գործեսցեն զնա ամենայն ցեղիցն Իսրայէլի*: ²⁰Եւ ամենայն պտուղ քսան և հինգ հազար՝ առ քսան և հինգ հազար. չորեքկուսի զատանիջիք զպտուղ սրբութեանն 'ի բնակութենէ քաղաքին*: ²¹Եւ աւելորդ նորուն՝ զլիսաւորին եղիցի. և անտի 'ի պտուղ սրբութեան, և 'ի նիստ քաղաքին յանդիման նորին, քսան և հինգ հազար յերկայնութիւն՝ մինչև 'ի սահմանս արևելից կողմանն. և 'ի ծովակողմ դէմ յանդիման նմին, քսան և հինգ հազար մինչև 'ի սահմանս ծովակողմանն մերձ առ վիճակ զլիսաւորին: Եւ եղիցի պտուղ սրբութեանցն, և սրբութիւն տաճարին 'ի մէջ նորա*. ²²Եւ ժառանգութիւն Ղևտացւոցն: Եւ 'ի բնակութենէ քաղաքին, միջոցն զլիսաւորացն եղիցի. և 'ի մէջ սահմանացն Յուդայ. և 'ի մէջ սահմանացն Բենիամինի՝ զլիսաւորին եղիցի*: ²³Եւ աւելորդ ցեղիցն՝ 'ի կողմանցն արևելից մինչև ցծովակողմ Բենիամինի բաժին մի: ²⁴Եւ 'ի սահմանացն Բենիամինի՝ 'ի կողմանցն արևելից մինչև 'ի ծովակողմ Շնաւոնի բաժին մի*: ²⁵Եւ 'ի սահմանացն Շնաւոնի՝ 'ի կողմանցն արևելից մինչև 'ի ծովակողմ Իսաքարայ բաժին մի: ²⁶Եւ 'ի սահմանացն Իսաքարայ՝ 'ի կողմանցն արևելից մինչև 'ի ծովակողմ Ջաբուղոնի բաժին մի*: ²⁷Եւ 'ի սահմանացն Ջաբուղոնի՝ 'ի կողմանցն արևելից մինչև 'ի ծովակողմ Գադայ բաժին մի*: ²⁸Եւ 'ի սահմանացն Գադայ մինչև ցհարաւ եղիցի սահմանք նորա՝ 'ի Թեմանայ և 'ի ջրոցն Ռաբովթկադէս՝ ժառանգութիւն մի մինչև ցծովն մեծ*: ²⁹Այս երկիր է զոր բաժանիցէք վիճակաւ ազգացն Իսրայէլի. և այս բաժինք նոցա ասէ Տէր Աստուած*: ³⁰Եւ այս ելամուտ քաղաքին. ընդ կողմ հիւսւսոյ չորք հազար և հինգ հարելր չափովն*: ³¹Եւ

* *Բազումք.* Քաղաքին լինիցի 'ի բնա՞:

* *Յոմանս պակասի.* Եւ այս է չափ նորա... և հինգ հարելր, և 'ի կողմանէ հարաւոյ՝ չորք հազար և հինգ հարելր, և 'ի կողմ՞:

* *Առ Ոսկանայ պակասի.* Եւ յիսուն, և ընդ ծով երկերիւր և յիսուն:

* *Ոմանք.* Երախայրիք սրբութեանն:

* *Ոմանք.* Ձնա յամենայն ցեղիցն:

* *Ոմանք.* Չպտուղ սրբութեանցն:

* *Բազումք.* Եւ աւելորդն նորին: *Առ Ոսկանայ պակասի.* Եւ 'ի ծովակողմն դէմ յանդիման նմին:

* *Ոմանք.* Եւ 'ի ժառանգութիւն. Ղևտ... եղիցի. 'ի մէջ սահմանացն Յու՞:

* *Ոմանք.* Մինչև ցծովակողմն Շնա՞:

* *Ոմանք.* Մինչև ցծովակողմն:

* *Ոմանք.* Մինչև ցծովակողմն:

* *Ոմանք.* Եւ եղիցին սահմանք նորա... և 'ի ջրոյն Ռաբովթ Կադէս:

* *Ոմանք.* Ձոր բաժանեցէք վի՞:

* *Ոմանք.* Ելամուտք քաղաքին:

դրունք քաղաքին ըստ անուանց ազգացն Իսրայելի. դրունք երեք ընդ կողմ հիւսւսոյ. դուռն մի Ռոբինի, և դուռն մի Յուդայ, և դուռն մի Ղևեայ: ³²Եւ ընդ կողմ արևելից չորք հազարք՝ և հինգ հարեր չափովն. և դրունք երեք. դուռն մի Յովսեփայ, և դուռն մի Բենիամինի, և դուռն մի Դանայ: ³³Եւ ընդ կողմ հարաւոյ չորք հազարք՝ և հինգ հարեր չափովն. և դրունք երեք. դուռն մի Շմաւոնի, և դուռն մի Իսաքարայ, և դուռն մի Ջաբուղոնի: ³⁴Եւ ընդ կողմն ծովու չորք հազար՝ և հինգ հարեր չափովն. և դրունք երեք. դուռն մի Գադայ, և դուռն մի Ասերայ, և դուռն մի Նեփթալիմայ: ³⁵Շուրջ շրջանակաւ՝ ութուտասն հազար. և անուն քաղաքին յորմէտէ եղիցի անդ Տէր, Տէր եղիցի անուն նորա*:

Կատարեցաւ Մարգարէութիւնն Եզեկիելի*:

* Ոմանք. Ութ և տասն հազար: Ուր Ոսկան. Ութ և տասն. և անուն: Բազունք. Յորմէտէ լինիցի անդ, Տէր եղիցի ա՛:

* Ի վախճանի ոմանք. Կատարեցաւ Եզեկիել:

ՍԿԻԶԲՆ ՉԼԽՈՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

Վասն մոգուցն.... Մատ. Ա,
Վասն կոտորածի մանկանցն.... Մատ. Բ,
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու մկրտչին.... Մատ. Գ, ...
Ղուկ. Ե, ...
Վասն վարդապետութեան Փրկչին.... Մատ. Դ,
Վասն երանութեանն.... Մատ. Ե, ... Ղուկ. ԺԷ, ...
Վասն բորոտին.... Մատ. Զ, Մարկ. Դ, Ղուկ. ԺԲ, ...
Վասն հարիւրապետին.... Մատ. Է, ... Ղուկ. ԺԸ, Յովհ. Զ
Վասն զըքանչին Պետրոսի.... Մատ. Ը, Մարկ. Բ, Ղուկ. Թ, ...
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց.... Մատ. Թ, Մարկ. Գ, Ղուկ. Ժ, ...
Վասն՝ որ ո՛չ ետ հրաման երթալ զկնի.... Մատ. Ժ, ... Ղուկ. ԼԳ, ...
Վասն սաստելոյն՝ ի վերայ ջրոցն.... Մատ. ԺԱ, Մարկ. Ժ, Ղուկ. ԻԳ, ...
Վասն դիւահարացն.... Մատ. ԺԲ, Մարկ. ԺԱ, Ղուկ. ԻԴ, ...
Վասն անդամալուծին.... Մատ. ԺԳ, Մարկ. Ե, Ղուկ. ԺԴ, Յովհ. ԺԳ
Վասն Մատթէի.... Մատ. ԺԴ, Մարկ. Զ, Ղուկ. ԺԳ, ...
Վասն դատեր ժողովրդապետին.... Մատ. ԺԵ, Մարկ. ԺԲ, Ղուկ. ԻԵ, ...
Վասն տեռատեսին.... Մատ. ԺԶ, Մարկ. ԺԳ, Ղուկ. ԻԶ, ...
Վասն երկուց կուրացն.... Մատ. ԺԷ,
Վասն խլին և համր դիւահարին.... Մատ. ԺԸ,
Վասն առաքելոցն իշխանութեան.... Մատ. ԺԹ, Մարկ. ԺԴ, Ղուկ. ԻԷ, ...
Վասն առաքելոցն ՚ի Յովհաննէ.... Մատ. Ի, ... Ղուկ. Ի, ...
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր.... Մատ. ԻԱ, Մարկ. Է, Ղուկ. ԺԷ, ...
Վասն կոյր և խուլ դիւահարին.... Մատ. ԻԲ, ... Ղուկ. ԼԹ, ...
Վասն՝ որ խնդրէին նշանս.... Մատ. ԻԳ, ... Ղուկ. ԽԱ, ...
Վասն առակացն.... Մատ. ԻԴ, Մարկ. Թ, Ղուկ. ԽԹ, ...
Վասն Յովհաննու, և Յերովղէի.... Մատ. ԻԵ, Մարկ. ԺԵ,
Վասն հինգ հացիցն.... Մատ. ԻԶ, Մարկ. ԺԶ, Ղուկ. ԻԸ, Յովհ. ԺԵ
Վասն երթալոյն ՚ի վերայ ծովուն.... Մատ. ԻԷ, Մարկ. ԺԷ, ... Յովհ. ԺԶ
Վասն անցելոցն զպատուիրանաւն Աստուծոյ.... Մատ. ԻԸ, Մարկ. ԺԸ,
Վասն կնոջն Քանանացւոյ.... Մատ. ԻԹ, Մարկ. ԺԹ,
Վասն բժշկելոյ զժողովուրդն.... Մատ. Լ,
Վասն եւթն հացիցն.... Մատ. ԼԱ, Մարկ. ԻԱ,
Վասն խմորոյ փարիսեցւոցն.... Մատ. ԼԲ, Մարկ. ԻԲ, Ղուկ. ԽԴ, ...
Վասն՝ որ ՚ի Կեսարիա հարցմանն.... Մատ. ԼԳ, Մարկ. ԻԴ, Ղուկ. ԻԹ, ...
Վասն այլակերպութեանն Տեառն.... Մատ. ԼԴ, Մարկ. ԻԵ, Ղուկ. Լ, ...
Վասն լուսնահարին.... Մատ. ԼԵ, Մարկ. ԻԶ, Ղուկ. ԼԱ, ...
Վասն խնդրելոյ զերկդրամեանն.... Մատ. ԼԶ,
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ր է ՚ի մէնջ մեծ.... Մատ. ԼԷ, Մարկ. ԻԷ, Ղուկ. ՅԷ, ...
Վասն առակի հարելր ոչխարին.... Մատ. ԼԸ, ... Ղուկ. ԾԶ, ...
Վասն թողլոյն զբեր տաղանտն.... Մատ. ԼԹ,
Վասն հարցանելոյն թէ արժան է արձակել առն զկին.... Մատ. Խ, Մարկ.
ԻԸ,
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.... Մատ. ԽԱ, Մարկ. ԻԹ, Ղուկ.
ԿԳ, ...

վասն վարձկանութեան մշակացն.... Մատ. ԽԲ,
 վասն որդւոցն Ձերեդեայ.... Մատ. ԽԳ, Մարկ. Լ,
 վասն երկուց կուրացն.... Մատ. ԽԴ, Մարկ. ԼԱ, Ղուկ. ԿԴ, ...
 վասն իշուն, և յովանակին.... Մատ. ԽԵ, Մարկ. ԼԲ, Ղուկ. ԿԸ, Յովհ. ԻԶ
 վասն կուրացն, և կաղացն.... Մատ. ԽԶ,
 վասն չորանալոյ թզենւոյն.... Մատ. ԽԷ, Մարկ. ԼԳ,
 վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետիցն, և ծերոց.... Մատ. ԽԸ,
 Մարկ. ԼԵ, Ղուկ. ԿԹ, ...
 վասն երկուց որդւոցն՝ առակաց.... Մատ. ԽԹ,
 վասն այգւոյն առակին.... Մատ. Ծ, Մարկ. ԼԶ, Ղուկ. Զ, ...
 վասն կոչեցելոց ՚ի հարսանիսն.... Մատ. ԾԱ, ... Ղուկ. ԾԴ ...
 վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն.... Մատ. ԾԲ, Մարկ. ԼԷ, Ղուկ.
 ԶԱ, ...
 վասն սաղուկեցւոցն.... Մատ. ԾԳ, Մարկ. ԼԸ, Ղուկ. ԶԲ, ...
 վասն օրինականացն.... Մատ. ԾԴ, Մարկ. ԼԹ,
 վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.... Մատ. ԾԵ, Մարկ. Խ, Ղուկ.
 ԶԳ, ...
 վասն վայ տալոյ դպրացն, և փարիսեցւոցն.... Մատ. ԾԶ, ... Ղուկ. ԽԴ, ...
 վասն կատարածի.... Մատ. ԾԷ, Մարկ. ԽԲ, Ղուկ. ԶԵ, ...
 վասն աւուրն և ժամուն.... Մատ. ԾԸ, Մարկ. ԽԳ, Ղուկ. ԽԶ, ...
 վասն տասն կուսանացն.... Մատ. ԾԹ,
 վասն զտաղանտսն տալոյ.... Մատ. Կ, ... Ղուկ. ԿԷ, ...
 վասն զալստեանն Տեառն.... Մատ. ԿԱ,
 վասն օճանելոյ զՏէրն իւղով.... Մատ. ԿԲ, Մարկ. ԽԴ, Ղուկ. ԻԱ, Յովհ. ԻԴ
 վասն պատրաստելոյ զպասեքն.... Մատ. ԿԳ, Մարկ. ԽԵ, Ղուկ. ԶԶ, ...
 վասն օրինաւոր խորհրդոյն.... Մատ. ԿԴ,
 վասն մատնութեանն Տեառն.... Մատ. ԿԵ, Մարկ. ԽԶ,
 վասն ուրացութեանն Պետրոսի.... Մատ. ԿԶ, Մարկ. ԽԷ,
 վասն Յուդայի զղջմանն.... Մատ. ԿԷ,
 վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.... Մատ. ԿԸ, Մարկ. ԽԸ, Ղուկ.
 ԶԲ, Յովհ. ԼԷ

Համաձայնութիւն նախասացեալ գլխոցս

՚ի հինգ տեղւոց՝ չորս աւետարանիչն համաձայնին միմեանց:
՚ի Մատթէոս՝ ԻԶ տեղի երեքն համաձայնին:
՚ի Մարկոս՝ ԻԸ տեղի երեքն համաձայնին:
Ղուկաս՝ ԻԷ տեղի երեքն համաձայնին:
Յովհաննէս՝ Բ տեղի երեքն համաձայնին:
Մատթէոս՝ Ի տեղի երկուքն համաձայնին:
Մարկոս՝ ԺԲ տեղի երկուքն համաձայնին:
Ղուկաս՝ ԺԲ տեղի երկուքն համաձայնին:
Յովհաննէս չունի:

*Մատթեոս ՚ի ժԵ տեղի՝ միայն:
Մարկոս Գ տեղի՝ միայն:
Ղուկաս ԼԹ տեղի՝ միայն:
Յովհաննէս ԼԶ տեղի՝ միայն:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ՝*

Աւետարանս որ ըստ Մատթեոսի գրեալ է. զի ինքն Մատթեոս աշակերտ Տեառն գրեաց զաւետարանս զայս: Եւ պատմէ՝ մեզ իսկզբանն զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին ՚ի զաւակէ՝ Դաւթի. վասն որոյ և զազգահամարն ժողովէ՝ մինչև ՚ի Քրիստոս՝ ազգս քառասուն և երկու: Բերէ՝ ըստ կարգի և զմկրտութիւնն Յովհաննու, և ՚ի լերինն ՚ի դիւա՛ց զփորձութիւն, և նշանս և արուեստս մեծամեծս ՚ի Փրկչէն եղեալ. և զընտրութիւն աշակերտացն. և վասն խորհրդոյ մատնութեանն. և զկատարածն, զի մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով, և մարմինն եդաւ ՚ի գերեզմանի, և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն և զերկու աւուր յարութիւնն. և զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս և մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոսա՝ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի:
Մատթեոս՝ գրեաց զաւետարանս իւր յերուսաղէմ քաղաքի ՚ի լեզու եբրայեցի, զկնի ութ ամի համբառնալոյ Փրկչին, ՚ի խնդրոյ Եկեղեցւոյն Երուսաղէմի: Ունի գլուխս ՅԾԵ: Վկայութիւնս ԼԲ: Տունս ՍՈ:
Մատթեոս թարգմանի՝ Երգ կենաց՝*:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ՝

1

Գլուխ Ա

¹Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու:
²Աբրահամ ծնաւ զԻսահակ: Իսահակ ծնաւ զՅակոբ: Յակոբ ծնաւ զՅուդա՛, և

** Յօրինակին՝ վերնագիրք զլիցոց աւետարանացս ըստ բերման իմն անհամաձայն էին գրեալ. զի ՚ի Մատթեոսին եղեալ էր. Սկիզբն զլիցոց Մատթեոսի աւետարանին. և Յովհաննու. Գլուխք ըստ Յովհաննու աւետարանին: Իսկ Մարկոսի և Ղուկասու՝ Սկիզբն զլիցոց աւետարանին որ ըստ Մարկոսի. կամ՝ Ղուկայ. յորս մեք հայեցեալ յայլս ևս ուղղագոյն օրինակս՝ միապէս եդաք ըստ պատշաճին:*

** Ի գումարումն համաձայնութեանց՝ որպէս և ՚ի սկզբունս զլիցոց և ՚ի թուագիրս նոցին՝ գտանէին բազում տարբերութիւնք օրինակաց ՚ի միմեանց. զորս աւելորդ համարեալ մի ըստ միոջէ՝ նշանակել աստանօր, զյայտնի վրիպակս մերումս օրինակի ըստ կարի ուղղագրեցաք ՚ի նոցանէ:*

** Յօրինակին մերում՝ որպէս և յայլս ոմանս պակասէր վերնագիր աւետարանիս Մատթեոսի. զոր մեր առեալ յայլոց բազմաց՝ լցուցաք համեմատ վերնագրաց յաջորդ աւետարանացն: Յորս Ոսկան ըստ Լատինականին դնէ. Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթեի. կամ՝ ըստ Մարկոսի. և այլն:*

զեղբարս նորա*։ ³Յուդա ծնաւ զՓարէս և զՉարա՝ ՚ի Թամարայ։ Փարէս ծնաւ զԵզրովն։ Եզրովն ծնաւ զԱրամ*։ ⁴Արամ ծնաւ զԱմինադաբ։ Ամինադաբ ծնաւ զՆասսովն։ Նասսովն ծնաւ զՍաղմովն։ ⁵Սաղմովն ծնաւ զԲոոս՝ ՚ի Ղեքքաբայ։ Բոոս ծնաւ զՈվբէդ՝ ՚ի Ղուքայ։ Ովբէդ ծնաւ զՅեսսէ։ Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ*։ ⁶Դաւիթ ծնաւ զՍողովմոն՝ ՚ի կնոջէն Ուրիայ*։ ⁷Սողովմոն ծնաւ զԸռորովան։ Ըռորովան ծնաւ զԱբիա։ Աբիա ծնաւ զԱսափ*։ ⁸Ասափ ծնաւ զՅովսափաթ։ Յովսափաթ ծնաւ զՅովրամ։ Յովրամ ծնաւ զՈզիա*։ ⁹Ոզիա ծնաւ զՅովաթան։ Յովաթան ծնաւ զԱբազ։ Աբազ ծնաւ զԵզեկիա։ ¹⁰Եզեկիա ծնաւ զՄանասէ։ Մանասէ ծնաւ զԱմովս։ Ամովս ծնաւ զՅովսիա*։ ¹¹Յովսիա ծնաւ զՅեքոնիա, և զեղբարս նորա առ գերութեամբն Բաբելացւոց։ ¹²Յետ գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ։ Սաղաթիէլ ծնաւ զՉորաբաբէլ*։ ¹³Չորաբաբէլ ծնաւ զԱբիուդ։ Աբիուդ ծնաւ զԵղիակիմ։ Եղիակիմ ծնաւ զԱզովր։ ¹⁴Ազովր ծնաւ զՍաղովկ։ Սաղովկ ծնաւ զԱքին։ Աքին ծնաւ զԵղիուդ։ ¹⁵Եղիուդ ծնաւ զԵղէազար։ Եղէազար ծնաւ զՄատթան։ Մատթան ծնաւ զՅակովբ*։ ¹⁶Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որուն խօսեցեալ զՄարիամ կոյս. յորմէ ծնաւն Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս*։ ¹⁷Արդ՝ ամենայն ազգքն յԱբրահամէ մինչև ՚ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք։ Եւ ՚ի Դաւթ մինչև ՚ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք։ Եւ ՚ի գերութենէն Բաբելացւոց մինչև ՚ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք*։

¹⁸Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն՝ էր այսպէս։ Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու, մինչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ՚ի Ղուրյոյ Սրբոյ*։ ¹⁹Եւ Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր՝ և ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա*։ ²⁰Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ՚ի տեսլեան՝ երևեցաւ նմա՝ և ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ՚ի նմայն ծնեալ է՝ ՚ի Ղուրյոյ Սրբոյ է*։ ²¹Ծնցի որդի, և կոչեսցես զանունն նորա Յիսուս. զի նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց*։ ²²Այլ այս ամենայն եղև, զի լցցի որ ասացաւն ՚ի Տեառնէ ՚ի ձեռն Եսայայ՝ մարգարէի*։ ²³Ահա կոյսն յղացի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանունն նորա Էմանուէլ. որ թարգմանի՝ Ընդ մե՛զ Աստուած*։ ²⁴Եւ

* *Ոմանք.* Եւ զեղբարսն նորա։

* *Ոսկան.* Եւ Չարա ՚ի Թամարայ։

* *Ոմանք.* ՚ի Ղեքքաբայ. *կամ*՝ ՚ի Ղաքքաբայ։ Բոոս ծնաւ զՈվբէթ ՚ի Ղո՞։

* *Ոսկան յաւելիւ.* Դաւիթ արքայ ծնաւ զՍո՞։

* *Բազումք.* ՉՌռորովան. *կամ*՝ զՌռորովան։ Ռռորովան ծնաւ։

* *Ոմանք.* ՉՅովսափատ. Յովսափատ ծն՞։ *Յօրինակին.* Ծնաւ զՈվրամ։

* *Ոմանք.* ՉՄանասսէ. Մանասսէ ծն՞։ *Ոսկան.* ՉԱմօն. Ամօն ծնաւ։

* *Ոմանք.* ՉՉաւրորբաբէլ։

* *Ոմանք.* ՉԵղիազար. Եղիա՞։

* *Ոմանք.* Չայրն Մարիամու... ծնաւ Յիսուս, որ անուանեցաւն։

* *Ոսկան.* Ամենայն ազգք յԱբ՞։ *Ոմանք երիցս ևս.* Ազգ չորեքտասանք։

* *Ոմանք.* Խօսեցեալ զմայրն նորա... ՚ի Ղուրյոյ Սրբոյ։

* *Ոմանք.* Այր նորա։ *Ոսկան.* Եւ ոչ կամեցաւ ա՞։

* *Ոմանք.* Նա զայն ածէր... ՚ի տեսլեանն երև՞... որ ՚ի նմա ծնեալ է՝ ՚ի Ղուրյոյ Սրբոյ։

* *Ոմանք.* Կոչեսցեն զանունն նորա։ *Ուր օրինակ մի.* Կոչեսցէ զա՞։

* *Ոմանք.* Ասացաւ ՚ի Տեառնէ... Եսայայ մար՞։

* *Բազումք.* Ահա կոյս յղացի... Եմանուէլ. և *օրինակ մի.* Եմանուիլ. և այլ *օրինակ մի.* Եմանուէլ։

զարթուցեալ Յովսէփի՝ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց՝ նմա հրեշտակն Տեառն, և ա՛ն յինքն զկինն իւր՝: ²⁵Եւ ո՛չ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ. և կոչեաց զանուն նորա Յիսուս՝:

2

Գլուխ Բ

Ա՛ ¹Եւ ՚ի ծնանելն Յիսուսի՝ ՚ի Բեթղահէմ Յրեաստանի յաւուրս Յերովղի՛ արքայի: Ահա մոգք յարևելից եկին յերուսաղէմ՝, ²և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Յրէից. զի տեսաք զաստղն նորա յարևելս, և եկաք երկի՛ր պագանել նմա՛: ³Եւ իբրև լուաւ արքայ Յերովղէս՝ խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա: ⁴Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետսն և զդպիրս ժողովրդեանն, հարցանէ՛ր ՚ի նոցանէ՝ թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն՝: ⁵Եւ նոքա ասեն ցնա. ՚ի Բեթղահէմ Յրեաստանի: Զի ա՛յսպէս գրեալ է ՚ի ձեռն մարգարէին՝. ⁶Եւ դու Բեթղահէմ երկի՛ր Յուդայ՝ ո՛չինչ կրտսէ՛ր ես յիշխանս Յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ՝: ⁷Յայնժամ Յերովղէս գա՛ղտ կոչեաց զմոզսն, և ստուգեաց ՚ի նոցանէ՝ զժամանակն աստեղն երևելոյ՝. ⁸և արձակեալ զնոսա ՚ի Բեթղահէմ, ասէ. Գնացէ՛ք ստուգեցէ՛ք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ա՛զդ արասջիք ինձ, զի և ե՛ս եկեալ երկի՛ր պագից նմա՛: ⁹Եւ նոքա իբրև լուան ՚ի թագաւորէն՝ զնացին. և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց ՚ի վերայ՝ ուր է՛ր մանուկն: ¹⁰Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ՝: ¹¹Եւ իբրև մտին ՚ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մա՛րբն իւրով, և անկեալ երկի՛ր պագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի, և կնդրուկ, և զմուռս՝: ¹²Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան, չդառնալ անդրէն առ Յերովղէս, ընդ ա՛յլ ճանապարհ զնացին յաշխարհն իւրեանց՝: ¹³Եւ իբրև զնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երևէ՛ր ՚ի տեսլեան Յովսէփու, և ասէր. Արի՛ ա՛ն զմանուկդ՝ և զմայր իւր՝ և փախի՛ր յեգիպտոս, և անդ լինիջի՛ր՝ ցորժամ ասացից քեզ. քանզի ՚ի խնդիր է Յերովղէս կորուսանել զմանուկդ՝: ¹⁴Եւ նա յարուցեալ ա՛ն զմանուկն և զմայր իւր զհշերի՛ և զնաց յեգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Յերովղի՛: ¹⁵Զի լցցի՛ ասացեալն ՚ի Տեառնէ՛ ՚ի ձեռն

* *Ոմանք.* Յինքն զկին իւր:

* *Օրինակ մի.* Ջորդին զանդրա՛:

* *Ոմանք.* ՚ի Բեթղեւեմ Յրեաստա՛:

* *Ոմանք.* Զաստղ նորա... երկիրպագա՛:

* *Ոմանք.* Զամենայն քահանայապետս և զդպ՛:

* *Ոմանք.* ՚ի Բեթղեւեմ Յրեաստա՛: *Օրինակ մի.* ՚ի ձեռն մարգարէին:

* *Ոմանք.* Ոչինչ կրտսեր ես:

* *Ոմանք.* Զժամանակ աստեղն:

* *Ոմանք.* Եւ արձակեաց զնոսա ՚ի Բեթ՛:

* *Ոմանք.* Եւ իբրև տեսին:

* *Ոմանք.* Մտին ՚ի տունն... մատուցանէին նմա... և զըմուռ:

* *Ոմանք.* Յաշխարհ իւրեանց:

* *Ոմանք.* ՚ի տեսլեան երևէ՛ր Յովսէփու, և ասէ. Արի՛... քանզի խնդիր է Յեր՛:

* *Ոմանք.* Իւր ՚ի զհշերի... և անդ լինէր մինչև ցվախճանն:

մարգարեին որ ասէ. Յեզիպտոսէ՛ կոչեցից զորդի իմ՝:

Բ ¹⁶Յայնժամ իբրև ետես Յերովդէս թէ խաբեցաւ ՚ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ՚ի Բեթղահէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկենեցից և ՚ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ՚ի մոգուցն: ¹⁷Յայնժամ կատարեցաւ ասացեալն ՚ի ձեռն Երեմիայ մարգարեի՝ որ ասէ՝. ¹⁸Չայն գութեաց ՚ի Յռամայ, ողբունն և լալունն և աշխարունն յոյժ. Յռաքէլ լայր զորդիս իւր, և ո՛չ կամէր մխիթարել՝ զի ո՛չ էին՝: ¹⁹Եւ ՚ի վախճանելն Յերովդի, ահա հրեշտակ Տեառն ՚ի տեսլեան երևէր Յովսեփայ յեզիպտոսէ՛, ²⁰և ասէր. Արի՛ ա՛ռ զմանուկդ և զմայր իւր, և գնա՛ յերկիրն Իսրայէլի. զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ: ²¹Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Իսրայէլի՝: ²²Եւ իբրև լուաւ եթէ Արքեղաոս թագաւորեաց Յրէաստանի փոխանակ Յերովդի հօրն իւրոյ, երկեալ երթալ անդր. և հրաման ամեալ ՚ի տեսլեան, զնաց ՚ի կողմանս Գալիլեացոց՝: ²³Եւ եկեալ բնակեցաւ ՚ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ. զի լցցի՛ բան մարգարեին, թէ Նազովրեցի կոչեսցի՝:

3

Գլուխ Գ

Գ ¹Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ՝ քարոզել յանապատին Յրէաստանի, ²և ասել. Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից. ³զի սա՛ է՛ վասն որոյ ասացաւ ՚ի ձեռն Եսայայ մարգարեի, որ ասէ. Չայն բարբառոյ յանապատի. Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղի՛ղ արարէք զշաւիղս նորա՝: ⁴Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ՚ի ստևոյ ուղտու, և զօտի՛ մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և մե՛ղր վայրենի՝: ⁵Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք՝ և ամենայն Յրէաստան՝ և ամենայն կողմն Յորդանանու, ⁶մկրտէին ՚ի նմանէ՛ ՚ի Յորդանան գետ, և խոստովան լինէին զմեղս իւրեանց՝: ⁷Եւ տեսեալ զբազումս ՚ի սաղուկեցոցն և ՚ի փարիսեցոց եկեալս ՚ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ծնունդք իժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն որ գալոցն է՝: ⁸Արարէ՛ք այսուիետև պտուղ արժանի՛ ապաշխարութեան՝. ⁹և մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասե՛ն ձեզ, զի կարօ՛ղ է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու՝: ¹⁰Զի աւասիկ տապար՝ առ արմի՛ն ծառոց դնի.

* Յոմանս պակասի. Ասացեալն ՚ի Տեառնէ՛ ՚ի ձեռն:

* Ոմանք. Երեմիայի մարգարեի:

* Ոմանք. Ռաքէլ լայր:

* Ոմանք. Ի տեսլեանն երևէր:

* Ոմանք. Եւ զմայր իւր, և ե՛:

* Ոմանք. Թէ Արքեղայոս... հօր իւրոյ... ՚ի տեսլեանն, զնացին ՚ի կողմանս:

* Բազումք. Բան մարգարեցն, թէ Նազովրացի:

* Յոմանս պակասի. Մարգարեի, որ ասէ. Չայն: Ոմանք. Ջճանապարհս Տեառն:

* Ոմանք. Յանդերձ ստև ուղտու:

* Ոմանք. Եւ մկրտէին ՚ի նմանէ: Ի բազումս պակասի. Ի Յորդանան գետ, և:

* Ոսկան. Ո՞ ցոյց ձեզ:

* Ոմանք. Արժանիս ապաշ՛:

* Ոմանք. Եւ մի՛ համարիք:

ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և 'ի հո՛ւր արկանի*։ ¹¹Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ զկնին իմ գայ՝ հզօրագո՛յն է քան զիս, և ես չե՛մ բաւական բառնալ զկօշիկս նորա. նա՛ մկրտեսցէ զձեզ 'ի Յոգին Սուրբ՝ և 'ի հուր*։ ¹²Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում. և սրբեսցէ՛ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն 'ի շտեմարանս իւր, և գյարդն այրեսցէ՛ անշէջ հրով*։ ¹³Յայնժամ գայ Յիսուս 'ի Գալիլէէ 'ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմանէ։ ¹⁴Եւ Յովհաննէս արգելո՛ւ զնա՝ և ասէ. Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել՝ և դու՝ առ ի՞նչ գաս*։ ¹⁵Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս։ Եւ ապա թո՛յլ ետ նմա*։ ¹⁶Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զՅոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գա՛յր 'ի վերայ նորա։ ¹⁷Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա՛ է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ*։

4

Գլուխ Դ

¹Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապա՛տ 'ի Յոզւոյն՝ փորձել 'ի Սատանայէ*։ ²Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեալ։ ³Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա՛ զի քարինքս այսոքիկ հա՛ց լինիցին*։ ⁴Նա պատասխանի ետ և ասէ. Գրեալ է՝ թէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։ ⁵Յայնժամ առեալ ածէ զնա Սատանայ՝ 'ի քաղաքն սուրբ, և կացուցանէ՛ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, ⁶և ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է՝ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ և 'ի վերայ ձեռաց բարձրեն զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զո՛տն քո*։ ⁷Ասէ ցնա դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո։ ⁸Դարձեալ առնու ածէ՛ զնա Սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զփառս նոցա*, ⁹և ասէ՛ ցնա. Չայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ*։ ¹⁰Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Երթ յետս իմ Սատանայ. զի գրեալ է. Տեսառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա՛ միայն պաշտեսցես։ ¹¹Ապա եթո՛ղ զնա Սատանայ. և ահա՛ հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

բբ. ¹²Եւ իբրև լուաւ Յիսուս՝ եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ զնա՛ց 'ի

* Ոմանք. Ձի ահաւասիկ տա՛... առնիցէ պտուղ։

* Բազումք. Ձկնի իմ գայ։

* Ոմանք. Իւրում, սրբեսցէ։

* Օրինակ մի. Արգելոյր զնա՝ և ասէր։

* Բազումք. Չամենայն արդարութիւն, և։

* Ոմանք. Որ ասէ. Դա է։

* Օրինակ մի. 'ի Յոզւոյն յանապ'։ 'ի լուս'։ Փորձեալ 'ի Սատանայէ. համաձայն ոմանց 'ի բնաբ'։

* Ոմանք. Հաց լիցին։

* Ոմանք. Եթէ հրեշտակաց։

* Ոսկան. Դարձեալ առեալ ածէ զնա։ Ոմանք. Թագաւորութիւնս աշխարհիս։

* Օրինակ մի. Եւ ասէ. Չայր ամենայն քեզ տաց։

Գալիլեա*.¹³ և թողեալ զՆազարեթ, եկն բնակեցաւ ՚ի Կափառնաուն՝ ՚ի ծովեզերին, ՚ի սահմանս Զաբուղովնի և Նեփթաղիմայ: ¹⁴Ձի լցցի՛ բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն Եսայայ մարգարէի. ¹⁵Երկիր Զաբուղովնի և երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա Յեթանոսաց*.¹⁶ Ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի՝ ետես լո՛յս մեծ. և որոց նստէին յաշխարհին և ՚ի ստուերս մահու՝ լո՛յս ծագեաց նոցա*.¹⁷ Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս՝ և ասել. Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: ¹⁸Մինչ դեռ զգնա՛յր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացոց, ետես երկուս եղբարս զՍիմովն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան ՚ի ծով. քանզի ձկնորսք էին*.¹⁹ Եւ ասէ ցնոսա. Եկա՛յք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան: ²⁰ Եւ նոցա թողեալ վաղվաղակի զգործիսն՝ զնացին զհետ նորա: ²¹ Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես ա՛յլ երկուս եղբարս, զՅակովբոս Չերեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ՚ի նաւի՝ Չերեդեալ հանդերձ հարբն իւրեանց, մինչդեռ կազմէին զուռկանս իւրեանց. և կոչեաց զնոսա*.²² Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայր իւրեանց, զնացին զհետ նորա*:

Դ ²³Եւ շրջեր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և զամենայն ախտս ՚ի ժողովրդեանն*.²⁴ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ՚ի պէսպէս ցաւս և ՚ի տանջանս, և զղիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս. և բժշկեաց զնոսա*.²⁵ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլէէ, և ՚ի Դեկապօլեայ, և յԵրուսաղէմէ և ՚ի Յրեաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա:

5

Գլուխ Ե

Ե բգ. ¹Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. և իբրև նստա՛ւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա*.² և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր. ³Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից*:⁴ Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: ⁵ Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: ⁶ Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: ⁷ Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: ⁸ Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն*:⁹ Երանի՛

* *Ոմանք.* Մեկնեցաւ և զնաց ՚ի Գալիլէէ:
 * *Ոմանք.* ճանապարհ ծովուն:
 * *Ոմանք.* Եւ որ նստէին յաշխարհի:
 * *Ոմանք.* Յիսուս յեզր ծովուն:
 * *Ոմանք.* Եղբայր նորա ՚ի նաւին... մինչ կազմէին:
 * *Ոմանք.* Եւ նոցա թողեալ վաղ՝: *՚ի լուս*՝. Եւ զհայրն իւրե՞ն. *համաձայն ոմանց ՚ի բնար*՝:
 * *Օրինակ մի.* Ուսուցանէր զնոսա՝ և քարոզէր:
 * *Ոմանք.* Եւ ել լուրն նորա... և զանդամալոյծս:
 * *Ոմանք.* Ել ՚ի լեառն... աշակերտք նորա:
 * *Ոմանք.* Արքայութիւնն երկնից:
 * *Ոմանք.* Որ սուրբն են սրտիւք:

խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: ¹⁰Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա՛ է արքայութիւն երկնից*։ ¹¹Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձեզ սուտ՝ վասն իմ*։ ¹²Գնձացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս։ զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին*։ ¹³Պո՛ւք էք աղ երկրի։ Եթէ աղն անհամի՝ ի՞նչ յաղիցի։ ո՛չ իմիք ազդիցէ՛ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ՚ի մարդկանէ*։ ¹⁴Պո՛ւք էք լոյս աշխարհի։ ո՛չ կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ։ ¹⁵Եւ ո՛չ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի։ և լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն։ ¹⁶Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՅայր ձեր որ յերկինս է*։ բո։ ¹⁷Մի՛ համարիք եթէ եկի՛ լուծանել զօրէնս կամ զմարգարէս։ ո՛չ եկի լուծանել՝ այլ լնուլ։ ¹⁸Ամէն ասե՛ն ձեզ։ Մինչև անցցեն երկինք և երկիր, յո՛վտ մի՛ որ նշանախեց մի է, ո՛չ անցցէ յօրինացն և ՚ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի*։ ¹⁹Որ որ լուծոցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ՛ ՚ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից։ Իսկ որ արասցէ՛ և ուսուցէ, նա՛ մե՛ծ կոչեսցի յարքայութեան երկնից։ ²⁰Բայց ասե՛ն ձեզ։ զի եթէ ո՛չ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցուց, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից*։ ²¹Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի՛ սպանաներ։ զի որ սպանանիցէ՛ պարտական լիցի դատաստանի*։ ²²Այլ ես ասե՛ն ձեզ։ եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի։ Եւ որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի։ Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի ՚ի գեհեն հրոյն*։ ²³Եթէ մատուցանիցես զպատարագ քո ՚ի վերայ սեղանոյ, և անդ յիշիցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն*, ²⁴թող զպատարագն քո առաջի սեղանոյն։ և երթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր քում, և ապա՛ եկեալ մատուցի՛ր զպատարագն քո*։ ²⁵Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ՚ի ճանապարհի։ գուցէ՛ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի։ և արկանիցիս ՚ի բանտ*։ ²⁶Ամէն ասե՛ն քեզ։ ո՛չ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն։ ²⁷Լուարուք զի ասացաւ։ Մի՛ շնար։ ²⁸Բայց ես՝ ասե՛ն ձեզ։ թէ ամենայն որ հայի ՚ի կի՛ն մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէ՛ն շնացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում։ ²⁹Եթէ ակն քո աջ գայթազեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա՛ և ընկեա՛ ՚ի քէն։ զի լա՛ւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ՚ի գեհեն։ ³⁰Եւ

* *Ոմանք*. Արքայութիւնն երկնից։

* *Ոմանք*. Նախատեսցեն զձեզ, և հալածիցեն և ասացեն։

* *Ոմանք*. Քան զձեզն էին։

* *Այլք*. Երկրի. ապա թէ աղն ան՛։ *Ոմանք*. Ի՞նչ յաղեսցի։

* *Օրինակ մի*. Եւ փառաւոր արասցեն զՅայր ձեր։

* *Օրինակ մի*. Ամէն ամէն ասե՛ն ձեզ։ *Ոմանք*. Մինչև ամենայն եղիցի։

* *Ոմանք*. Ձեզ. եթէ ոչ առաւելուցու։ *Այլք*. Ձեր աւելի քան զդպրացն։

* *Ոմանք*. Ձի որ սպանանէ... լինիցի։

* *Ոմանք*. Պարտական լիցի դա՛... լիցի գեհեն հրոյն. և *ոմանք*. գեհենի հրոյն։

* *Բազումք*. Եւ անդ յիշեսցես՝ եթէ եղ՛։ *Ոմանք*. Ունի ինչ խէթ։

* *Ոմանք*. Սեղանոյն. երթ նախ։

* *Ոմանք*. Լե՛ր իրաւախորհ... դատաւորին։

եթէ ա՛ջ ձեռն քո գայթազդեցուցանէ զքեզ, հա՛տ զնա՝ և ընկեա՛ ՚ի քէն. զի լա՛ւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ՚ի գեհեն՝: ³¹Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ՛ նմա զարձակմանն՝: ³²Բայց ե՛ս ասեմ ձեզ. եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա՛ տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ՝: ³³Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն. Մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուցե՛ս Տեառն գերդմունս քո: ³⁴Այլ ե՛ս ասեմ ձեզ. Ամենկին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս՝ զի աթո՛ռ է Աստուծոյ՝. ³⁵և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է սոսից նորա. և մի՛ յերուսաղէմ՝ զի քաղաք է մեծի Արքայի. ³⁶և մի՛ ՚ի գլուխ քո երդնուցուս, զի ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ թուխ: ³⁷Այլ եղիցի ձեր բան, այո՛ն այո, և ոչն՝ ո՛չ. զի աւելին քան զայն ՚ի չարէն է՝: ³⁸Լուարուք զի ասացաւ. Ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման: ³⁹Այլ ե՛ս ասեմ ձեզ. Մի՛ կալ հակառակ չարին: Այլ եթէ ոք ածիցէ ապտակ յա՛ջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա և զմեւսն՝: ⁴⁰Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ ՚ի նա և զբաճկոն քո՝: ⁴¹Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս՝: ⁴²Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր. և որ կամի փոխ առնուլ ՚ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս՝: ⁴³Լուարուք ապաքէն զի ասացաւ. Սիրեսցե՛ս զընկեր քո, և ատեսցես զթշամին քո: ⁴⁴Այլ ե՛ս ասեմ ձեզ. Սիրեցէ՛ք զթշամիս ձեր. օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր. բարի՛ արարէք ատելեաց ձերոց. և աղօթս ՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալածեն՝. ⁴⁵զի եղիջիք որդիք Զօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև՝ ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց: ⁴⁶Ձի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն՝: ⁴⁷Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն: ⁴⁸Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և Զայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

6

Գլուխ Զ

բե. ¹Ձգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ՚ի ցոյց ինչ նոցա. գուցէ՛ և վարձս ո՛չ ընդունիցիք ՚ի Զօրէն ձերմէ՛ որ յերկինսն է՝: ²Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փո՛ղ առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին

* *Յօրինակին պակասէր.* Ամենայն մարմինդ քո: *Ոմանք.* Անկանիցի ՚ի գեհեն:

* *Ոմանք.* Եթէ որ արձակէ զկին:

* *Ոմանք.* Չարձակեալն առնու:

* *Ոմանք.* Ամենկին մի՛ երդնուր:

* *Ոմանք.* Ձեր բանն... զի աւելի:

* *Բազումք.* Զակառակ չարի: *Ոմանք.* Ածիցէ ոք:

* *Ոմանք.* Թո՛ղ ՚ի նմա և զբաճկոն:

* *Ոմանք.* Տարապարհակ վա՛:

* *Ոսկան.* Որ ոք խնդրէ ՚ի քէն:

* *Առ Ոսկանայ պակասի.* Չթշամիս ձեր. *օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր: Ոմանք յաւելուն.* Եւ աղօթս *արարէք* ՚ի վերայ այնոցիկ որ լլկենն:

* *Ոմանք.* Սիրեն զձեզ:

* *Ոմանք.* Ի Զօրէ ձերմէ՛ որ յերկինս է:

ի մարդկանէ: Ամէն ասե՛ն ձեզ. Ա՛յն իսկ են վարձք նոցա: ³Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործե՛ աջ քո. ⁴որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ՚ի ծածո՛ւկ. և Յայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուցէ քեզ յայտնապէս՝: ⁵Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ՚ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կա՛լ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկան: Ամէն ասե՛ն ձեզ. Ա՛յն իսկ են վարձք նոցա՝: ⁶Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ ՚ի սենեակ քո՝ և փակեա՛ զդուրս քո, և կա՛ց յաղօթս առ Յայր քո ՚ի ծածո՛ւկ. և Յայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս՝: ⁷Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատխօսք լինիք իբրև զհեթանոսսն. զի համարին թէ ՚ի բազում խօսի՛ց իւրեանց լսելի լինիցին՝: ⁸Արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Յայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչև՝ ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ: ⁹Եւ արդ՝ ա՛յսպէս կացէք դուք յաղօթս. Յայր մեր որ յերկինս, սո՛ւրբ եղիցի անուն քո՝. ¹⁰Եկեսցէ՛ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. ¹¹զիսո՛ց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր. ¹²և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողունք մերոց պարտապանաց. ¹³և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէն. զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փա՛ռք յաւիտեանս ամէն՝: ¹⁴Ձի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ՛ և ձեզ Յայրն ձեր երկնաւոր՝: ¹⁵Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ Յայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր՝: ¹⁶Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն: Ամէն ասե՛ն ձեզ. Ա՛յն իսկ են վարձք նոցա՝: ¹⁷Այլ դու՛ յորժամ պահիցես, օ՛ժ զգլուխ քո՝ և լուա՛ զերեսս քո, ¹⁸զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպաշօղ. այլ Յօր քուն ՚ի ծածո՛ւկ. և Յայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուցէ՛ քեզ՝: ¹⁹Մի՛ զանձէք ձեզ զանձս յերկրի. ուր ցե՛ց և ուտի՛ճ ապականեն, և ուր գողք ակա՛ն հատանեն և գողանան՝: ²⁰Այլ զանձեցէք ձեզ զանձս յերկինս, ուր ո՛չ ցեց և ո՛չ ուտի՛ճ ապականեն, և ո՛չ գողք ական հատանեն և գողանան. ²¹զի ուր զանձք ձեր են, անդ և սիրտք ձեր լիցին՝: ²²Ճրագ մարմնոյ ա՛կն է. եթէ ակն քո առա՛տ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի: ²³Ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի: Իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է, խաւարն՝ ո՞րչափ ևս՝: ²⁴Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ՛ և զմեւսն սիրիցէ՛, կամ զմին մեծարիցէ՛ և զմեւսն արհամարհիցէ. ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի: ²⁵Վասն այդորիկ ասե՛ն ձեզ. Մի՛ հոգայք վասն ուրոց ձերոց՝ զինչ ուտիցէք՝ կամ զինչ

* *Ոմանք.* Ողորմութիւն քո:

* *Ոմանք.* Յաղօթս կացցես. և *ոմանք.* Կայցէք, մի՛ լինիցիք:

* *Ոմանք.* Կացցես յաղօթս... զդրունս քո... առ Յայրն քո:

* *Բազունք.* Մի՛ շատախօսք լի: *Ոմանք.* Շատախօս լինիցիք... եթէ ՚ի բազում:

* *Օրինակ մի.* Կայցէք դուք: *Ոսկան յաւելու.* Որ յերկինս *ես*:

* *Օրինակ մի.* Եւ մի՛ տար զմեզ: *Ոմանք.* Այլ փրկեա՛ ՚ի չարէ: *Առ Ոսկանայ պակասի.* Յաւիտեանս *ամէն*:

* *Ոսկան յաւելու.* Երկնաւոր *զյանցանս ձեր*:

* *Ոսկան յաւելու.* Յայրն ձեր *երկնաւոր թող*՝:

* *Ոմանք.* Իբրև զկեղծաւորքն տրտ՝:

* *Ոմանք յաւելուն.* Յօրն քուն... հատուցէ քեզ *յայտնապէս*:

* *Ոմանք.* Եւ գողք ական հա՛:

* *Բազունք.* Եւ սիրտք ձեր եղիցին:

* *Ոմանք.* Ապա թէ ակնդ չար է:

ընպիցէք. և մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ազանիցիք. ո՞չ ապաքէն ոգի՛ առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ*։ ²⁶Հայեցարուք՝ ի թռչունս երկնից՝ զի ո՛չ վարեն և ո՛չ հնծեն, և ո՛չ ժողովեն ՚ի շտեմարանս. և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ՛ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա*։ ²⁷Իսկ արդ՝ ո՞ ՚ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ՚ի հասակ իւր կանգուն մի։ ²⁸Եւ վասն հանդերձի զի՞՞ հոգայք. հայեցարուք՝ ի շուշանն վայրենի՝ ո՛րպէս աճէ. ո՛չ ջանայ, և ո՛չ նիւթ*։ ²⁹Ասեն ձեզ՝ զի և ո՛չ Սողովմովն յամենայն ՚ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ՚ի նոցանէ*։ ³⁰Իսկ եթէ զխո՛տն ՚ի վայրի, որ այսօր է և վաղիւ ՚ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք*։ ³¹Մի՛ այսուհետև հոգայցէք՝ և ասիցէք. Ձինչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք. ³²զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի զիտէ՛ Հայրն ձեր երկնաւոր, թէ պիտո՛յ է ձեզ այդ ամենայն։ ³³Խնդրեցէ՛ք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի՛ ձեզ։ ³⁴Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի, զի վաղիւն վասն ի՛ւր հոգասցի. շա՛տ է աւուրն չա՛ր իւր*։

7

Գլուխ Է

բէ. ¹Մի՛ դատիք, զի մի դատիցիք. ²զի որով դատաստանաւ դատիք՝ դատելո՛ց էք. և որով չափով չափէք՝ չափեսցի՛ ձեզ։ ³Ձի՞՞ տեսանես զշիղ յական եղբօր քոյ, և ՚ի քում ական զգերանդ ո՛չ նշմարես*։ ⁴Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո. Թող հանի՛ց զշիղդ յականէ քումմէ։ Եւ ահաւաղիկ ՚ի քում ականդ գերան կայ*։ ⁵Կե՛ղծաւոր՝ հան՛ նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա՛ հայեսցես հանել զշիղն յականէ եղբօր քոյ։ ⁶Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց. և մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ո՛տն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ*։ ⁷Խնդրեցէ՛ք և տացի՛ ձեզ, հայցեցէ՛ք և գտջի՛ք, բախեցէ՛ք և բացցի՛ ձեզ. ⁸զի ամենայն որ խնդրէ՛ առնու, և որ հայցէ՛ գտանէ՛, և որ բախէ՛ բացցի՛ նմա։ ⁹Ո՞ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա*։ ¹⁰Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ճ տայցէ նմա։ ¹¹Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ զիտէք պարզևս բարիս տալ՝ որդւոց ձերոց, ո՛րչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա*։ ¹²Ձամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք*։ ¹³Մտէ՛ք ընդ նեղ դուռն. քանի

* Առ Ոսկանայ պակասի. Ուտիցէք, կամ զինչ ընպիցէք, և։

* Ոմանք. Հայեցարուք ընդ թռչունս։

* Ոմանք. ՚ի շուշանս վայրե՛... որպէս աճեն. ոչ ջանան, և ոչ նիւթեն։

* Ոմանք. Յամենայն փառսն։

* Ոմանք. Եւ վաղիւն ՚ի հնոց։

* Ոմանք. Վասն վաղուին։

* Ոմանք. Ձշիւղ յական... ՚ի քում ականդ։ Այլք. Ձգերանդ ո՛չ տեսանես։

* Ոմանք. Ձշիւղդ... ՚ի քում ական։

* Ոմանք. Ձմարգարիտս ձեր... խոզից... կոխեսցեն զնոսա։

* Ոմանք. Ո՛վ է ՚ի ձէնջ մարդ։

* Ոմանք. Որ չարք էք. կամ՝ չարք էք... տայցէ բարիս։

* Ոմանք. Ձամենայն որ միանգամ... զի այն իսկ են օրէնք և։

ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի՝ ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա՝: ¹⁴Քանի անծուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի՝ ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա: ¹⁵Զգոյշ լերուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտակօղբ: ¹⁶Ի պտղոյ՝ նոցա ծանիջիք զնոսա: Միթէ քաղիցե՞ն ՚ի փշոց խաղող՝ կամ ՚ի տատասկէ թո՞ւզ: ¹⁷Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: ¹⁸Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ո՛չ ծառ չար՝ պտուղ բարի՝ առնել: ¹⁹Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ՚ի հո՛ւր արկանի: ²⁰Ապա ՚ի պտղոյ՝ նոցա ծանիջիք զնոսա: ²¹Ո՛չ ամենայն որ ասէ ցիս. Տէ՛ր Տէ՛ր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Զօր իմոյ որ յերկինսն է՞: ²²Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէ՛ր Տէ՛ր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դէս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք՞: ²³Եւ յայնժամ ասացի՛ց ցնոսա՝ եթէ ո՛չ երբէք գիտի զձեզ. ՚ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէք զանօրէնութիւն: ²⁴Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսցէ ա՛ռն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի. ²⁵իջին անծրւք՝ և խաղացին զետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ո՛չ կործանեցաւ, քանզի ՚ի վերայ վիմի՝ հաստատեալ էր: ²⁶Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ո՛չ առնէ զսոսա, նմանեսցէ ա՛ռն յիմարի, որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ աւազոյ. ²⁷իջին անծրւք՝ յարեան զետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ: ²⁸Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանսս զայսոսիկ, զարմանայի՛ն ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա՞. ²⁹զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր՝ և ո՛չ որպէս դպիրքն նոցա՞:

8

Գլուխ Ը

Զ ¹Այլ իբրև էջ ՚ի լեռնէ անտի, զնացին զկնի նորա ժողովուրդք բազումք՞: ²Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր պագանէր նմա, և ասէր. Տէ՛ր, եթէ կամիս կարօ՞ղ ես զիս սրբել: ³Զգեաց զձեռն իւր և հասոյց ՚ի նա Յիսուս՝ և ասէ. Կամի՛մ սրբեաց: Եւ վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն: ⁴Եւ ասէ ցնա Յիսուս. Զգոյշ լեր՝ մի՛ ունեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. և

** Ի յերեսուն հին և նոր գրչագիր օրինակաց մերոց՝ երեքն և եթ ոչ այնչափ հնագիրք՝ ունէին. Քանզի ընդարձակ է. (14) քանզի անծուկ է: Եւ երկուք՝ միայն յառաջնում տեղւոջ՝ քանզի: Իսկ այլ մնացեալք առհասարակ՝ համաձայն մերումս դնեն՝ քանի. այսու և եթ զանազանութեամբ, զի ոմանք ՚ի սոցանէ ունին ՚ի վերայ զզարմացական ոլորակս՝. և կէսք զհարցականս՝. Իսկ այլ ևս ոմանք զսղանշան՝ օ. որպէս մերս:*

** Ոսկան. ՚ի փշոյ խաղող:*

** Ոմանք. Այլ որ արասցէ զկամս:*

** Ոմանք. Յաւուր յայնմիկ:*

** Ոսկան. Ոյք գործէք զանօ՞:*

** Բազումք. Զբանս զայսոսիկ:*

** Ի բազումս պակասի. Որպէս դպիրքն նոցա: Ուր Ոսկան յաւելու. դպիրքն և փարիսեցիք:*

** Ոմանք. Ժողովուրդ բազում:*

մատո՛ղ զպատարագն, զոր հրամայեա՛ց Մովսէս ՚ի վկայութիւն նոցա՛:

Է ⁵Եւ մտեալ ՚ի Կափառնաւում, մատեա՛ւ առ նա հարիւրապետ մի, աղաչէ՛ր զնա՛, ⁶և ասէր. Տէ՛ր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան անդամալոյ՞ծ՝ չարաչա՛ր տանջեալ: ⁷Ասէ ցնա Յիսուս. Ես եկից՝ և բժշկեցից զնա: ⁸Պատասխանի ետ հարիւրապետն՝ և ասէ. Տէ՛ր՝ չե՛մ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեցի՛ մանուկն իմ: ⁹Քանզի և ես ա՛յր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինն զինուորս. ասե՛մ սմա ե՛րթ՝ և երթայ. և այլում թէ ե՛կ և գայ. և ծառայի իմում թէ արա՛ զայս՝ և առնէ: ¹⁰Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացա՛ւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. Ամէն ասե՛մ ձեզ և ո՛չ յիսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք՛: ¹¹Բայց ասե՛մ ձեզ, զի բազումք յարեւելից և յարևմտից եկեցեան և բազմեցի՛ն ընդ Աբրահամու՝ և ընդ Սահակայ՝ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից՛. ¹²և որդիքն արքայութեան ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճե՛լ ատամանց: ¹³Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Ե՛րթ՝ և որպէս հաւատացերդ եղիցի՛ քեզ: Եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ:

Ը ¹⁴Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչն նորա անկեալ՝ դնէր տապացեալ՛. ¹⁵կալա՛ւ զձեռանէ նորա՝ և եթո՛ղ զնա ջերմնն. յո՛տն եկաց՝ և պաշտէր զնա՛:

Թ ¹⁶Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհա՛ն զայսսն բանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեա՛ց: ¹⁷Ձի լցցի՛ բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն Եսայայ մարգարէի. Նա՛ զհիւանդութիւնս մեր վերացոյ՛ց, և զցաւս մեր եբա՛րծ:

Ժ գկ. ¹⁸Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զհարև, հրամայեաց երթա՛լ յայնկոյս՛: ¹⁹Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. Վարդապետ՝ եկից և ես զկնի քո յո՛ր վայր և երթիցես: ²⁰Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք. այլ Որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր՛: ²¹Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա. Տէ՛ր՝ տո՛ւր ինձ հրաման՝ զի երթայ՛ց նախ թաղեցից զհայր իմ: ²²Ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ, և թո՛յլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց՛:

ԺԱ ²³Եւ իբրև եմուտ ՚ի նաւն, զնացին զկնի նորա աշակերտքն նորա՛. ²⁴և ահա շարժումն մեծ եղև ՚ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի. և ինքն ննջէր՛: ²⁵Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէ՛ր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչի՛մք՛: ²⁶Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր վատասի՛րտք էք սակաւահաւատք: Յայնժամ յարուցեալ սաստեա՛ց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ՛:

* *Օրինակ մի.* Քո քահանայիցն. և մատո՛ղ վասն սրբութեան քո զպատարագն զոր:

* *Յոմանս պակասի.* Մատեաւ առ նա հարիւ՛:

* *Ոմանք.* Իբրև լուաւ զայս Յիսուս: *՚Ի լուս՛. ՚ի վերայ՝* Եւ ոչ յիսրայէլի, *նշանակի.* Առ ումեք:

* *Ոմանք.* Եւ բազմեցեն ընդ:

* *Ոմանք.* Ջոքանչ նորա:

* *Բազումք.* Եւ պաշտէր զնոսա:

* *Ոմանք.* Ժողովուրդ բազում զհարեալ:

* *Ոմանք.* Ոչ գոյ տեղի ուր դի՛:

* *Ոմանք.* Ձմեռեալս իւրեանց:

* *Օրինակ մի.* Ձկնի նորա ժողովուրդք բազում: (24) Եւ ահա:

* *Ոմանք.* Մինչև նաւն ծած՛:

* *Ոմանք.* Աշակերտքն զարթուցին և ասեն:

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա Յիսուս... հողմոյն և ծովուն:

27Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. Որպիսի՞ ոք իցէ սա, զի և հո՛ղմք և ծով հնազանդին սմա՛:

ԺԲ 28Եւ իբրև անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք՝ ՚ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ունէք ընդ այն ճանապարհ՝: 29Եւ ահա՛ աղաղակեցին և ասեն. Ձի՞ կայ մեր և քո՛ Յիսուս Որդի՛ Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: 30Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: 31Եւ դւքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես՝ զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն: 32Եւ ասէ ցնոսա. Երթայք: Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ՚ի դարէ՛ անտի ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրսմ՝: 33Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամենայն, և զի՛րս դիւահարացն: 34Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ՛ ՚ի սահմանաց նոցա՛:

9

Գլուխ Թ

ԺԳ 1Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, և եկն ՚ի քաղաք իւր: 2Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի որ դնէր ՚ի մահիճս: Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: 3Եւ ահա՛ ո՞նանք ՚ի դարացն ասեն ընդ միտս. Յայիոյէ՛ դա: 4Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր՝. 5զի՞նչ դիւրին է. ասել. Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ՛ ասել. Արի՛ և շրջեաց՛: 6Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողո՛ւլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. Արի՛ ա՛ռ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո: 7Եւ յարուցեալ զնաց ՚ի տուն իւր: 8Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւոր առնէին զԱստուած զտուի՛չն այնպիսի իշխանութեան՝ մարդկան՝:

ԺԴ գբ. 9Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՛ ետես այր մի՛ զի մտէր ՚ի մաքսաւորութեան, Մատթէ՛ոս անուն. և ասէ ցնա. Եկ զկնի իմ: Եւ յարուցեալ զնաց զկնի նորա՛: 10Եւ եղև իբրև բազմեալ էր նա ՚ի տանն, և ահա մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի՛ և ընդ աշակերտս նորա՛: 11Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ՛ վարդապետն ձեր: 12Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա. Ո՛չ պիտոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց՛: 13Երթայք ուսարո՛ւք, զինչ է. Ձողորմութիւն կամիմ, և ո՛չ զգոհ. զի ո՛չ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: 14Յայնժամ մատնան առ նա աշակերտքն Յովհաննու՛ և ասեն. Ընդէ՞ր մեք և

* Ո՞նանք. Ձարմացան և ասեն:

* Ո՞նանք. Եւ իբրև անց յայնկոյս... ելեալ ՚ի գերեզ՝... որպէս զի ոչ էր հնար:

* Ո՞նանք. Յերամակ խոզիցն... անտի ՚ի ծովն:

* Ոսկան. Աղաչէին զի գնասցէ:

* Ո՞նանք. Չար ՚ի սիրտս:

* Ո՞նանք. Եթէ ասել. Արի՛:

* Ո՞նանք. Ձտուիչ այնպիսի:

* Յօրինակին պակասէր. Եւ ասէ ցնա. Եկ:

* Ո՞նանք յաւելուն. Ի՛ տանն. և ահա բազում մաքսաւորք:

* Ո՞նանք. Ոչ է պիտոյ բժ՛:

փարիսեցիքն պահենք յաճախ, և քո աշակերտքդ ո՛չ պահեն: ¹⁵Ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ եթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագաստի սո՛ւգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա՛ իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի՛ ՚ի նոցանէ փեսայն, և ապա՛ պահեսցեն*։ ¹⁶Ո՛չ որ արկանէ՛ կապերտ անթափ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնո՛ւ ելանէ զլրութիւն նորա ՚ի հանդերձէն, և ևս չար պատահումն լինի: ¹⁷Եւ ո՛չ արկանեն զհնի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատահին, և զհնին հեղու, և տիկքն կորնչին. այլ արկանեն զհնի նոր ՚ի տիկս նորս, և երկոքին պահին*։

ԺԵ գգ. ¹⁸Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա՛ և ասէր. Դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ՝ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վերայ նորա՛ և կեցցէ*։ ¹⁹Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա աշակերտքն հանդերձ*։

ԺԶ ²⁰Եւ ահա կին մի՝ տեռատեսն երկոտասանամեայ, մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի դրօշակ հանդերձի նորա*։ ²¹Քանզի ասէր ՚ի մտի իւրում. Թէ միայն մերձեցամ ՚ի հանդերձս նորա՛ փրկիմ*։ ²²Իսկ Յիսուս իբրև դարձաւ և ետես զնա, ասէ. Քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ փրկեցաւ կինն ՚ի ժամէն յայնմանէ: ²³Իբրև եկն Յիսուս ՚ի տուն իշխանին, և ետես զփողարսն և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. Ի՛ բաց գնացէք*, ²⁴զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ*։ ²⁵Եւ ծաղր առնէին զնա: Եւ իբրև ել ամբոխն ՚ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն: ²⁶Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն:

ԺԷ գգ. ²⁷Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ասէին. Ողորմեաց մեզ որդի՛ Դաւթի: ²⁸Եւ իբրև եկն ՚ի տուն, մատեան առ նա կոյրքն: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ: Ասեն ցնա. Այո՛ Տէր: ²⁹Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՛ և ասէ. Ըստ հաւատոց ձերոց եղիցի՛ ձեզ*։ ³⁰Եւ բացան աչք նոցա: Եւ սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. Չգո՛յշ կացէք՝ մի՛ որ զիտասցէ: ³¹Եւ նոքա ելեալ՝ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն:

ԺԸ ³²Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար: ³³Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն: Եւ զարմացան ժողովուրդքն՝ և ասեն, թէ և ո՛չ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի*։ ³⁴Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւ դիւաց հանէ դա զդև*։ զԵ. ³⁵Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գեղս, ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամենայն ախտս և զամենայն

* *Բազումք.* Մի թէ մարթ ինչ... ՚ի նոցանէն: *Յօրինակին.* Մանկաց առագաստի:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Եւ ոչ որ արկանէ զհնի նոր:

* *Ոմանք.* Մինչդեռ նա զայն խօ՛:

* *Ոմանք.* Յարուցեալ Յիսուս և գնաց:

* *Ոմանք.* Ի դրօշակս, հանդ՛:

* *Ոմանք.* Ասէր ՚ի սրտի իւրում, թէ միայն մերձանամ ՚ի:

* *Ոմանք.* Չփողահարսն:

* *Ոմանք.* Չի ոչ թէ մեռեալ է:

* *Ոմանք.* Ի յաչս նոցա:

* *Ոմանք.* Թէ ոչ յերբէք երևեցաւ:

* *Ոմանք.* Ասեն թէ իշխանաւն դի՛:

հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն*։ ³⁶Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս՝ որոց ո՛չ իցէ հովիւ*։ ³⁷Յայնժամ ասէ ցաշակերտս իւր. Զունձք բազում են, և մշակք սակաւ*։ ³⁸Արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ՛ մշակս 'ի հունձս իւր։

10

Գլուխ Ժ

ԺԹ ¹Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին՝ աշակերտսն իւր, ե՛տ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս*։ ²Եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանք այսոքիկ. առաջին՝ Սիմովն՝ անուանեալն Պե՛տրոս, և Անդրե՛աս եղբայր նորա*։ ³Յակովբոս Ջերեդեայ, և Յովհաննէս եղբայր նորա. Փիլիպպոս, և Բարթողովմէնոս. Թովմաս, և Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Ալփեայ, և Ղաբէ՛ոս՝ որ անուանեցաւն Թադէոս*։ ⁴Սիմովն Կանանացի, և Յոնդա Սկարիովտացի՝ որ և մատնեացն զնա*։ ⁵Չնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և ասէ. 'Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, և 'ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք*։ ⁶այլ երթայք առաւել առ ոչխարսն կորուսեալս տան Իսրայէլի*։ ⁷Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ ⁸Ձհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զղևա հանէք. ձրի՛ առէք՝ և ձրի՛ տուր։ ⁹Մի՛ ստանայք ոսկի, և մի՛ արծաթ, և մի՛ պղինձ 'ի գօտիս ձեր. ¹⁰մի՛ պարկ 'ի ճանապարհ. և մի՛ երկուս հանդերձս. մի՛ կօշիկս. մի՛ ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւրուն*։ ¹¹Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի գեղ, հարցանիցէք թէ ո՞ր է 'ի նմա արժանի. և անդ լինիջիք մինչև ելանիցէք անտի*։ ¹²Եւ իբրև մտանիցէք 'ի տունն, ողջոյն տաջիք նմա՝ և ասասջիք. Ողջոյն տանս այսմիկ։ ¹³Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ՛ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. ասպա թէ ո՛չ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձե՛զ դարձցի*։ ¹⁴Եւ որ ո՛չ ընկալցի զձեզ՝ և ո՛չ լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք 'ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց*։ ¹⁵Ամէն ասե՛ն ձեզ. Դիւրագոյն լիցի երկրին Սողովմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։ զգ. ¹⁶Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց. եղերո՛ւք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև

* Ոմանք. Ընդ գելդս. կամ՝ գեաւդս։

* Առ Ոսկանայ պակասի. Աշխատեալք և ցրուեալք իբրև։

* Ոմանք. Ցաշակերտսն... բազումք են՝ և մշակք սակաւք։

* Ոսկան. Եւ կոչեալ առ ինքն զերկոտասան աշա՛... և բժշկել զամենայն փստս և զամենայն հի՛։ Ուր յոմանս պակասի. Եւ բշկել զամենայն ցաւս և զամենայն հիւ՛։

* Ոմանք. Առաջինն Սիմոն։

* Ոսկան. Բարդուղոմէոս։ Ոմանք. Եւ Ղաբբիոս, կամ՝ Ղերբեոս, որ անուանեցաւ։

* Ոմանք. Կանանացի։

* Ոմանք. 'Ի ճանապարհս հեթա՛։

* 'Ի լուս՛. Տանն Իսրայէլի. համաձայն ոմանց՝ 'ի բնաք՛։

* Ոմանք. Պարկ 'ի ճանապարհի... մի՛ կօշիկ... կերակրոյ իւրոյ։

* Ոմանք. Անդ լինիցիք։

* Ոմանք. Ողջոյն ձեր 'ի ձեզ դարձցի։

* Ոմանք յաւելուն. Ելանիցէք 'ի տանէն կամ՝ 'ի քաղաքէն։

զաղաւնիս*։ ¹⁷Ձգո՛յշ լինիջիք ՚ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, և ՚ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ*։ ¹⁸և առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ, ՚ի վկայութիւն նոցա և հեթանոսաց*։ ¹⁹Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք*։ ²⁰Զի ո՛չ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Զոգին Զօր ձերոյ որ խօսիցի ՚ի ձեզ*։ ²¹Մատնեսցէ եղբայր գեղբայր ՚ի մա՛հ, և հայր՝ զորդի՛. և յանիցեն որդիք ՚ի վերայ հարց՝ և սպանանիցեն՝ գնոսա*։ ²²Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ՚ի սպառ, նա կեցցէ*։ ²³Եւ յորժամ հալածիցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ՚ի մե՛ւսն. ամէն ասե՛ն ձեզ. Ո՛չ ապառնեսիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ Որդի մարդոյ*։ ²⁴Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ո՛չ ծառայ քան զտէր իւր*։ ²⁵Շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր իւր։ Եթէ զտանուտէրն Բէեղզբուղ կոչեցին, ո՛րչափ ևս առաւել զընտանիս նորա*։ ²⁶Մի՛ այտուհետև երկնչիցիք ՚ի նոցանէ, զի ո՛չ ինչ է ՚ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և զաղտնի՝ որ ոչ ծանիցի*։ ²⁷Ձոր ասեմ ձեզ ՚ի խաւարի՝ ասացէք ՚ի լոյս. և զոր լսիցէք յունկանէ՝ քարոզեցէք ՚ի վերայ տանեաց*։ ²⁸Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ո՛չ կարեն սպանանել։ Այլ երկերո՛ւք դուք առաւել յայնմանէ՝ որ կարօղն է զոգի՛ և զմարմին կորուսանել ՚ի գեհեմի*։ ²⁹Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի՛ միոջ վաճառին, և մի ՚ի նոցանէ յերկիր ո՛չ անկցի առանց Զօր ձերոյ*։ ³⁰Այլ ձեր և ամենայն իսկ հե՛ր գլխոյ թուեալ է։ ³¹Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք՝ զի լա՛ւ էք քան զբազում ճնճղուկս*։ ³²Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից՝ և ես զնմանէ առաջի Զօր իմոյ որ յերկինսն է։ ³³Եւ որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Զօր իմոյ որ յերկինս է*։ ³⁴Մի՛ համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սո՛ւր. ³⁵քանզի եկի քակել զայր՝ ՚ի հօրէ իւրմէ, և զդուստր ՚ի մօրէ, և զհարսն ՚ի սկեսրէ՝ իւրմէ*։ ³⁶և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ ³⁷Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ է ինձ արժանի։ Եւ որ սիրէ զուստր կամ զղուստր առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի*։ ³⁸Եւ որ ո՛չ առնու զխա՛չ իւր՝ և գայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի։ ³⁹Որ գտանէ զանձն իւր՝

* *Ոմանք.* Որպէս զոչխարս ՚ի մէջ։

* *Ոմանք.* Ձգո՛յշ լերուք ՚ի մարդ՝։

* *Ի լուս.*՝ Տանիցեն զձեզ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ.*՝

* *Ոմանք.* Մատնեսցեն զձեզ։

* *Ոմանք.* Զոգի Զօր ձերոյ խօսեսցի ՚ի։

* *Ոմանք.* Եւ յարիցեն որդիք։

* *Ոմանք.* Զալածեսցեն զձեզ... եսցեն զձեզ՝ փախիջիք ՚ի միւս։

* *Ոմանք յաւելուն.* Քան զվարդապետ *իւր*, և ոչ ծառայ *մեծ* քան։

* *Ոմանք.* Շատ է աշակերտին եթէ լինիցի իբ՞։

* *Ոմանք.* Ոչինչ է ծածուկ։

* *Ոմանք.* Լսէք յունկանէ։ *Ուր յօրհնակին.* լսիցէք յուկանէ։

* *Ոմանք.* Եւ մի՛ երկնչիցիք ՚ի նոցանէ որ սպանանիցեն։

* *Ոմանք.* Ոչ անկանիցի։

* *Ոմանք.* Մի՛ երկնչիք։

* *Յոմանս պակասի.* Որ յերկինսն է։

* *Ոմանք յաւելուն.* ՚ի մօրէ *իւրմէ*։

* *Ոմանք.* Չէ՛ ինձ արժ՝։

կորուսցէ՛ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ՛ զնա՛: ⁴⁰Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքի՛չն իմ: ⁴¹Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ: Եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ: ⁴²Եւ որ արբուսցէ միում՝ ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասե՛մ ձեզ, ո՛չ կորուսցէ զվարձս իւր:

11

Գլուխ ԺԱ

զէ. ¹Եւ եղև իբրև կատարեա՛ց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, զնա՛ց անտի քարոզե՛լ և ուսուցանե՛լ ՚ի քաղաքս նոցա: Ի ²Իսկ Յովհաննէս իբրև լուսաւ ՚ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց ՚ի ձեռն աշակերտաց իւրոց, ³և ասէ ցնա. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք: ⁴Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Գնացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննու, զոր լուայք և տեսէք՝. ⁵կոյրք՝ տեսանէն, կաղք՝ զնան, բորոտք՝ սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին: ⁶Եւ երանեալ է՝ որ ոչ գայթազղեսցի յիս՝. ⁷Եւ իբրև նոքա զնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովորդսն զՅովհաննէ. Զի՞նչ ելէք տեսանել յանապատին. եղէ՞զն շարժուն ՚ի հողմոյ՞: ⁸Այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ ՚ի հանդերձս փափկութեան զարդարեալ: Ահաւանիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ ՚ի տունս թագաւորաց են: ⁹Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՞ ասեմ ձեզ, և առաւել ևս քան զմարգարէ: ¹⁰Զի նա՛ է՝ վասն որոյ գրեալն է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քոյ՞: ¹¹Ամէն ասե՛մ ձեզ. Զէ՛ յարուցեալ ՚ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ: Բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա: ¹²Բայց յաւուրցն Յովհաննու մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, և բռնւնք յափշտակեն զնա՛: ¹³Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅովհան մարգարէացան՝: ¹⁴Եւ եթէ կամիք ընդունել՝ նա՛ է Եղիա՝ որ գալոցն է՞: ¹⁵Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: ¹⁶Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտոյ՝ որ նստիցին ՚ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց, ¹⁷և ասիցեն. Փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք: ¹⁸Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր. և ասեն. Դև՛ զոյ ՚ի նմա: ¹⁹Եկն Որդի մարդոյ՝ ուտէ՛ և ըմպէ՛. և ասեն. Ահա այր կերօղ և արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց: Եւ արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց՝: ²⁰Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա,

* Ոմանք. Եւ որ կորուսցէ զան՝:

* Ոսկան. Գնացէ՛ք և պատմեցէ՛ք:

* Ոմանք. Եւ երանի է որ ոչ գայթ՝:

* Ոմանք. Զեղե՞զն:

* Ոսկան. Զի սա է, վասն որոյ գրեալ: Ոմանք. Ահաւասիկ ես առաքեմ... զճանապարհ քո:

* Ոմանք. Արքայութիւնն երկ՞:

* Ոմանք. Մինչև ցՅովհաննէս մարգա՞: Ուր օրինակ մի եղեալ համաձայն մերումս, ՚ի լուս՞. նշանակէ՛ ստոյգն այս է:

* Ոմանք. Եւ թէ կամիք:

* Ի լուս՞. ՚ի վերայ Որդոց իւրոց. նշանակի՞ ՚ի գործոց. համաձայն ոմանց:

և ո՛չ ապաշխարեցին. ²¹Վա՞յ քեզ Քո՛րագին, վա՛յ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՚ի Տիրոս և ՚ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ՚ի ձեզ եղեն, վաղու՛ և սարդեր խորզո՛ւ և մոխրով ապաշխարեալ էր*։ ²²Բայց ասե՛ն ձեզ. Դիւրագո՛յն լիցի երկրին Տիրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։ ²³Եւ դու Կա՛փառնաւմ, մի՛ մինչև յերկինս բարձրասցիս, այլ մինչև ՚ի դժոխս իջցես։ Ձի եթէ ՚ի Սողոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ՚ի քեզ, ապաքէն կային ևս մինչև ցայսօր*։ ²⁴Բայց ասե՛ն ձեզ՝ եթէ երկրին Սողոմնացւոց դիւրագո՛յն լիցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ*։ դկ. ²⁵Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Գոհանամ զքէն Յայր՝ Տէր երկնի՛ և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց։ ²⁶Այո՛ Յայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քոյ։ ²⁷Ամենայն ինչ տուա՛ւ ինձ ՚ի Յօրէ իմնէ։ Եւ ոչ որ ճանաչէ զՈրդի՛ եթէ ոչ Յայր. և ո՛չ զՅայր որ ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, և ում Որդի՛ն կամիցի յայտնել։ ²⁸Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ ²⁹Առէ՛ք զլուծ իմ ՚ի ձեզ, և ուսարո՛ւք յինէն՝ զի հե՛զ եմ և խոնարի սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց*։ ³⁰Ձի լուծ իմ քա՛ղցր է. և բեռն իմ փոքրօգի՛։

12

Գլուխ ԺԲ

դք. ¹Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորա՛յսն նոցա ՚ի շաբաթու. և աշակերտքն նորա քաղցեա՛ն, և սկսան հասկ կորզել և ուտել։ ²Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. Ահաւասիկ աշակերտքն քո գործեն, զոր ո՛չ է արժան գործել ՚ի շաբաթու*։ ³Եւ նա ասէ ցնոսա. Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արա՛ր Դաւիթ, յորժամ քաղցեաւմ, և որ ընդ նմայն էին*։ ⁴Ձիա՞րդ եմուտ ՚ի տունն Աստուծոյ՝ և եկեր զհաց զառաջաւորութեանն. զոր ո՛չ էր օրէն նմա ուտել, և ո՛չ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից*։ ⁵Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի ՚ի շաբաթս քահանայքն ՚ի տաճարին՝ պղծեն զշաբաթն, և անմեղք են*։ ⁶Բայց ասե՛ն ձեզ՝ զի մե՛ծ քան զտաճարն է՝ աստ։ ⁷Եւ եթէ գիտէիք զինչ է Ձողորմութիւն կամիմ՝ և ո՛չ զգոհ. ապա ո՛չ դատապարտէիք դուք զանպարտսն*։ ⁸Ձի տէր է շաբաթու՝ Որդին մարդոյ։ ⁹Եւ գնացեալ անտի Յիսուս, եկն ՚ի ժողովուրդն նոցա*։

ԻԱ ¹⁰Եւ անդ էր ա՛յր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պա՞րտ իցէ ՚ի շաբաթու բժշկել. զի չարախօսեցցեն զնմանէ։ ¹¹Եւ նա՝ ասէ ցնոսա. Ո՞վ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ՚ի խորխորա՛տ ՚ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա*։ ¹²Իսկ արդ՝

* *Յօրինակին.* Եւ ՚ի Սիդոնովն։

* *Ոմանք.* Որ ՚ի քեզ եղեն։

* *Ոմանք.* Քան ձեզ։

* *Ոմանք.* Խոնարի սրտիւք։

* *Ոմանք.* Ահաւասիկ աշա՛... զոր չէ արժան գոր՛։

* *Ոմանք.* Չիցէ ընթերցեալ։

* *Ոսկան.* Ձիացն առաջաւո՛։

* *Ոմանք.* Ընթերցեալ ձեր յօրէնս... պղծեն զշաբաթն։

* *Ոմանք.* Ձողորմութիւնն կամիմ, և ոչ զգոհ։

* *Ոմանք.* Ի ժողովուրդսն նոցա։

* *Ոմանք.* Ո՞վ է ՚ի ձէնջ մարդ։

ո՞րչափ ևս՝ առաւել է մա՛րդ քան զոչխար. ապա ուրեմն պա՛րտ է՝ ի շաբաթու
բարի՛ս գործել՝*։ ¹³Յայնժամ ասէ ցայրն. Չգեա՛ զձեռն քո: Եւ նա ձգեաց՝ և եղև
ո՛ղջ իբրև զմեւսն: ¹⁴Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհո՛ւրդ արարին
զմնանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն զնա՝*։ ¹⁵Եւ Յիսուս իբրև գիտաց, մեկնեցաւ
անտի: Եւ զնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց
զամենեսեան*։ ¹⁶Եւ սաստեաց նոցա՝ զի մի՛ յայտնեցեն զմնանէ ումեք: ¹⁷Ձի
լցցի՛ որ ասացաւն ՚ի ձեռն Եսայայ մարգարէի. ¹⁸Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի,
և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եղից զՈգի իմ՝ ի վերայ նորա, և
իրաւունս հեթանոսաց պատմեցէ: ¹⁹Ո՛չ հակառակեցի՝ և ո՛չ աղաղակեցէ, և
ո՛չ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբարբառ նորա: ²⁰Ձեղէզն ջաղջախեալ՝ ո՛չ
փշրեցէ, և զպատրոյկն առկայծեալ՝ ո՛չ շիջուցէ. մինչև հանցէ ՚ի յաղթութիւն
զդատաստանն*։ ²¹Եւ յանուն նորա հեթանոսք յուսացին:

ԻԲ դգ. ²²Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կո՛յր և համր, և բժշկեաց
զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ: ²³Ձարմացան ամենայն
ժողովուրդքն՝ և ասէին. Մի՛թէ սա՛ իցէ Քրիստոսն որդի Դաւթի*։ ²⁴Բայց
փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. Ո՛չ իւրք հանէ դա զդև՝ եթէ ոչ Բեղզերուղաւ
իշխանաւն դիւաց: ²⁵Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա.
Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի՛. և ամենայն քաղաք
կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ո՛չ կացցէ: ²⁶Եւ եթէ Սատանայ զՍատանայ
հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիարդ կացցէ թագաւորութիւնն նորա*։ ²⁷Եւ
եթէ ես Բեղզերուղաւ հանեն զդև՝ որդիքն ձեր ի՞նչ հանիցեն. վասն այնորիկ
նոքա՛ եղիցին ձեր դատաւորք*։ ²⁸Ապա եթէ Յոգուով Աստուծոյ հանեն ես զդև,
ուրեմն հասեալ է ՚ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: ²⁹Կամ զիա՞րդ կարէ ոք
մտանել ՚ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ
զհզօրն, և ապա՝ զտունն նորա յափշտակիցէ*։ ³⁰Որ ո՛չ ընդ իս է՝ հակառակ իմ է.
և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ: ³¹Վասն այդորիկ ասեն ձեզ. Ամենայն մեղք և
հայիոյութիւնք թողցին մարդկան, բայց զՅոգուոյն հայիոյութիւն մի՛ թողցի*։ ³²Եւ
որ ոք ասիցէ բան զՈրդոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՅոգուոյն Սրբոյ ասիցէ՝
մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի, և մի՛ ՚ի հանդերձելումն: ³³Կամ արարէ՞ք
զձառն բարի՝ և զպտուղ նորա բարի, կամ արարէ՞ք զձառն չար՝ և զպտուղ
նորա չար. քանզի ՚ի պտղոյ՝ անտի ծառն ճանաչի: ³⁴Ծնունդք իժից, զիա՞րդ
կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք. քանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի՛
բերան*։ ³⁵Մարդ բարի՝ ՚ի բարի՝ զանձուց սրտի իւրոյ հանէ՛ զբարիս. և մարդ
չար՝ ՚ի չար՝ զանձուց սրտի իւրոյ հանէ՛ զչարիս: ³⁶Բայց ասեն ձեզ. թէ ընդ
ամենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն համա՛ր յաւուրն
դատաստանի: ³⁷Ձի ՚ի բանից քոց՝ արդարացիս, և ՚ի բանից քոց՝

* Ոմանք. Ապա պարտ է ՚ի շա՛:

* Այլք. Խորհուրդ առին զմնանէ:

* Ոսկան. Ձիտո նորա ժողովուրդքն, և բժ՛: Ոմանք. Եւ բժշկեաց զնոսա:

* Ոմանք. Ձեղէզնն ջախջախեալ... զդատաստան:

* Ոմանք. Եւ ասեն. Մի՛թէ սա:

* Բազումք. Թագաւորութիւն նորա:

* Ոմանք. Վասն այդորիկ նոքա ե՛:

* Ոմանք. Ձտուն նորա:

* Ոմանք. Ձի ամենայն մեղք և: Ոսկան. Բայց Յոգուոյն հայ՛:

* Ոմանք. Քանզի յաւելուածոյ սրտին խօսի բերան:

պարտաւորեցիս:

ԻԳ դդ. ³⁸Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք 'ի դպրացն և 'ի փարիսեցւոց և ասեն. Վարդապետ՝ կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն*: ³⁹Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշան՝ մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի*: ⁴⁰Ձի որպէս էր Յովնան 'ի փոր կիտին գերիս տիւս և գերիս գիշերս, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ 'ի սիրտ երկրի գերիս տիւս և գերիս գիշերս*: ⁴¹Ա՛րք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցեն զսա, զի զղջացան 'ի քարոզութեանն Յունանու: Եւ արդ անասիկ մե՛ծ քան զՅովնան է՝ աստ*: ⁴²Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցէ զսա. զի եկն 'ի ծագաց երկրի լսել զինաստութիւնն Սողովմոնի: Եւ ահա մե՛ծ քան զՍողովմովն է՝ աստ*: ⁴³Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ո՛չ գտանէ*. ⁴⁴յայնժամ ասէ. Դարձայց 'ի տուն իմ՝ ուստի ելին: Եւ եկեալ գտանէ պարապորդ մաքրեալ և յարդարեալ*: ⁴⁵Յայնժամ երթայ և առնու ընդ իւր՝ եւթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ՝ անդ. և լինի յետին մարդոյն այնորիկ չար քան զառաջինն: Այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի*: ⁴⁶Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ և խնդրէին խօսել ընդ նմա: ⁴⁷Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր քո՝ և եղբարք քո՝ կան արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ: ⁴⁸Նա պատասխանի՝ ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. Ո՛վ է իմ մայր, կամ ո՛վ եմ իմ եղբարք*: ⁴⁹Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. Ահաւասիկ մայր իմ և եղբարք իմ*: ⁵⁰Ձի որ առնիցէ կկամս Զօր իմոյ որ յերկինսն է, նա՛ է իմ եղբայր՝ և քոյր՝ և մայր:

13

Գլուխ ԺԳ

ԻԴ դե. ¹Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տանէն՝ նստէր առ ծովեզերն*. ²և ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա 'ի նաւն և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերքն*: ³Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք, և ասէր. ⁴Ահա՛ ել սերմանահան սերմանել. և 'ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն երկնից՝ և եկէր զնա: ⁵Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ո՛չ գոյր հող բազում, և վաղվաղակի՛ բուսաւ. առ 'ի չգոյէ՛ հիւթոյ երկրին՝ ⁶'ի ծագել արևուն տապացաւ, և զի ո՛չ գոյին արմատք՝

* *Ոմանք.* Ետուն ոմանք... և ասեն ցնա. Վար՛:

* *Ոմանք.* Յունանու մարգարէին:

* *Ոմանք.* 'Ի փոր կետին զե՛ն:

* *Ոմանք.* 'Ի քարոզութիւնն Յովնանու:

* *Ոմանք.* Եւ դատապարտեսցէ զսոսա:

* *Ոմանք.* Ելանէ 'ի մարդոյ:

* *Ոմանք.* Ուստի ելի... գտանէ զնա պարապորդ:

* *Բազումք.* Յետինն մարդոյն: *Ոմանք.* Այսպէս, եղիցի ազգիս:

* *Ոմանք.* Կամ ո՛վ իմ եղբարք:

* *Ոմանք.* Ահա մայր իմ:

* *Ոմանք.* Նստաւ առ ծովեզերքն:

* *Ոմանք.* Կայր առ ծովեզերն:

չորացաւ*։ ⁷Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղծուցին զնա։ ⁸Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտո՛ւղ։ Էր՝ որ հարիւրաւոր, և էր՝ որ վաթսնաւոր, և էր՝ որ երեսնաւոր։ ⁹Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ ¹⁰Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա։ ¹¹Նա պատասխանի ետ և ասէ՛ ցնոսա. Քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից, և նոցա չէ՛ տուեալ։ ¹²Ձի ոյր գուցէ՛ տացի՛ նմա և յաւելցի՛. և ոյր ոչն՝ գուցէ՛ և զոր ունիցին բարձցի ՚ի նմանէ։ ¹³Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ և ո՛չ տեսանեն, և լսեն՝ և ո՛չ լսեն, և ո՛չ առնուն ՚ի միտ*։ ¹⁴Եւ կատարի՛ առ նոսա մարգարէութիւնն Եսայայ՝ որ ասէ. Լսելով լուիցիք՝ և մի՛ իմասցիք. և տեսանելով տեսցիք՝ և մի՛ տեսցիք։ ¹⁵Ձի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ակընջօք իւրեանց ծանունս լուան. և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօք՝ և ակնջօքն լուիցեն՝ և սրտիւքն իմասցին, և դարձցին՝ և բժշկեցի՛ց զնոսա*։ ¹⁶Բայց ձեր երանի՛ է աչացո՞ զի տեսանեն, և ակընջաց ձերոց՝ զի լսեն։ ¹⁷Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէք՝ և ո՛չ տեսին, և լսել զոր լսէք՝ և ո՛չ լուան։ ¹⁸Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմնացանին*։ ¹⁹Յամենայնէ՛ որ լսէ զբանն արքայութեան և ո՛չ ա՛ռնու ՚ի միտ, զայ՛ չարն՝ և յափշտակէ՛ զսերմանեալն ՚ի սիրտ նորա. այն է՛ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ*։ ²⁰Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա*։ ²¹Բայց քանզի ո՛չ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. ՚ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի՛ գայթազդին*։ ²²Իսկ որ ՚ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է՛ որ իբրև լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղծուցանեն զբանն, և լինի անպտուղ։ ²³Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՛ որ իբրև լսէ զբանն՝ և ՚ի միտ առնու, և տայ զպտո՛ւղ, է՛ որ հարե՛ւր, և է՛ որ վաթսո՛ւն. և է՛ որ երեսո՛ւն։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ*։ ²⁴Այլ առակ արկ առ նոսա՛ և ասէ. Նմանեցաւ արքայութիւնն երկնից՝ առն որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում*։ ²⁵Եւ ՚ի քուն լինել մարդկան, եկն թշնամի նորա. և ցանեաց ՚ի վերայ որոմն ՚ի մէջ ցորենոյն՝ և զնաց*։ ²⁶Եւ իբրև բուսաւ խոտն՝ և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմն*։ ²⁷Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. Տէր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն։ ²⁸Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն։ Ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս՝ զի երթիցուք քաղեսցուք զայն ՚ի բաց։ ²⁹Եւ նա ասէ ցնոսա. Մի՛. գուցէ՛ մինչ քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք։ ³⁰Թո՛յլ տուք երկոցունց աճել ՚ի միասին մինչև ՚ի հունձս, և ՚ի

* *Ոմանք.* ՚ի ծագել արևու։

* *Ոմանք.* Վասն այդորիկ առա՛։ *Ոմանք.* Ձի տեսանեն, և ոչ տեսցեն։

* *Բազումք.* Եւ ականջօք լուիցեն, և սրտիւք իմաս՛։

* *Ոմանք.* Սերմնացանին։

* *Ոսկան.* Ամենայն որ լսէ։

* *Յոմանս պակասի.* Ընդունի զնա։

* *Ոմանք.* Վաղվաղակի գայթազդի։

* *Յոմանս պակասի.* Եւ է որ երեսուն։ *Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։* Այլ։

* *Ոմանք.* Արքայութիւն երկնից։

* *Ոմանք.* Եւ եկն թշնամին նորա։

* *Բազումք.* Եւ որոմնն... (27) զորոմնն։

Ժամանակի հնձոց ասացի՛ց ցինձօղսն. Քաղեցե՛ք նախ զորոմնդ, և կապեցե՛ք զայդ խրճուսն առ ՚ի յայրել. և զցորեանն ժողովեցե՛ք ՚ի շտեմարանս իմ՝: ³¹Այլ առակ արկ առ նոսա՝ և ասէ. Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում. ³²որ փոքր է քան զամենայն սերմանիս. և յորժամ աճիցէ, մե՛ծ է քան զամենայն բանջարս. և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից և հանգչե՛լ յոստս նորա՝: ³³Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Նման է արքայութիւն երկնից խմորոյ. զոր առեալ կնոջ թաքոյց ՚ի գրիւս երիս ալեր՝ մինչև ամենայն խմորեցաւ՝: ³⁴Չայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն. և առանց առակի՝ ո՛չինչ խօսէր ընդ նոսա՝. ³⁵զի լցցի ասացեալն ՚ի մարգարէ. Բացից առակօք զբերան իմ, բղխեցի՛ց զծածկեալսն իսկզբանէ աշխարհի՝: ղէ. ³⁶Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ՚ի տուն. մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն. Մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի՝: ³⁷Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. Որ սերմանէ սերմն բարի՝ է Որդի՛ մարդոյ՝. ³⁸և ագարակն աշխարհս է. սերմն բարի՛ նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ որոմնն որդիք չարին են՝. ³⁹և թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է՛. և հունձքն կատարած աշխարհիս է, և հնձօղքն՝ հրեշտակք են: ⁴⁰Որպէս ժողովի որոմնն՝ և ՚ի հուր այրի, այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս: ⁴¹Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն զայթազողութիւնս՝ և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն՝: ⁴²Եւ արկցեն զնոսա ՚ի հնո՛ց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց: ⁴³Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ՛: ⁴⁴Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից զանձի՛ ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց. և ՚ի խնդութենէ անտի՛ երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ՛ զագարակն զայն՝: ⁴⁵Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից անձ վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս: ⁴⁶Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն ինչ զոր ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ՝: ⁴⁷Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի՛ արկելոյ ՚ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ՝. ⁴⁸զոր՝ իբրև լցաւ, հանեալ ՚ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխտտանն ՚ի բաց ընկեցին՝: ⁴⁹Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս. Ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց, ⁵⁰և արկցեն զնոսա ՚ի հնո՛ց հրոյն. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց: ⁵¹Ատ՝ ցնոսա Յիսուս. Իմացարո՞ւք զայս

* *Ոմանք.* Չայդ ՚ի խրճուսն:

* *Ոմանք.* Քան զամենայն բանջար:

* *Ոմանք.* Նմանեցաւ արքայութիւն եր՝:

* *Ոմանք.* Ընդ ժողովրդեանն:

* *Ոմանք.* Ի մարգարէն:

* *Ոմանք յաւելուն.* Ի տուն իւր... աշակերտքն նորա: Եւ ոմանք. Աշակերտքն իւր և ասեն:

* *Ոմանք.* Չսերմն բարի:

* *Ոմանք.* Իսկ որոմն:

* *Ոմանք.* Որ գործեն զանօ՞:

* *Բազումք.* Ծագեսցեն իբրև:

* *Ոմանք.* Երթեալ վաճառէ զամենայն ինչ զոր ունէր:

* *Բազումք.* Չամենայն զոր ինչ ունէր:

* *Օրինակ մի.* Ազգաց ժողովելոց:

* *Ոսկան.* Որ իբրև լցաւ:

ամենայն: Ասե՛ն ցնա. Այո՛ Տէր: ⁵²Եւ նա ասէ ցնոսա. Վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին: Եկ. ⁵³Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: ⁵⁴Եւ եկեալ ՚ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ՚ի ժողովրդեանն նոցա. մինչև զարմանալ նոցա՝ և ասել. Սմա՛ ուստի՞ իցէ այս իմաստութիւն և զօրութիւնք*: ⁵⁵Ո՛չ սա՛ է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիա՛ն, և եղբարք սորա Յակովբոս՝ և Յովսէ՛ս և Սիմոն՝ և Յուդա՛. ⁵⁶և քորք սորա ո՛չ ամենեքեան առ մե՛զ են. և արդ՝ ուստի՞ է սմա այս ամենայն*: ⁵⁷Եւ գայթագղէին ՚ի նա: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Չի՞ք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի՝ և յիւրում տան: ⁵⁸Եւ ո՛չ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա*:

14

Գլուխ ԺԴ

Ի Ե եք. ¹Յայնմ ժամանակի լուա՛ւ Յերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի. ²և ասէ ցճառայս իւր. Նա՛ է Յովհաննէս մկրտիչ, նա՛ յարեաւ ՚ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովալ*: ³Քանզի Յերովդէս կալաւ զՅովհաննէս՝ կապեաց զնա՝ և եղ ՚ի բանտի՝ վասն Յերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբոր նորա*: ⁴Ձի ասէր ցնա Յովհաննէս. Չէ՛ արժան քեզ ունել զդա: ⁵Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր ՚ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմարգարէ՝ ունէին զնա*: ⁶Եւ իբրև եղեն ծնունդք Յերովդի, կաքաւեաց դուստրն Յերովդիայ ՚ի մէջ բազմականին. և հաճո՛յ թուեցաւ Յերովդի*: ⁷ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ: ⁸Եւ նա յառաջագոյն խրատեալ ՚ի մօրէ իւրմէ. Տո՛ւր ինձ ասէ այսր՝ ՚ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: ⁹Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն, և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա*: ¹⁰Եւ առաքեաց զխատեաց զՅովհաննէս ՚ի բանտի: ¹¹Եւ բերաւ զլուխն նորա սկտեղը՝ և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր*: ¹²Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն և թաղեցին. և եկեալ պատմեցին Յիսուսի: Եզ. ¹³Եւ իբրև լուաւ Յիսուս, զնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն: Իբրև լուան ժողովուրդքն՝ զնացին զհետ նորա հետի ՚ի քաղաքաց անտի: ¹⁴Եւ իբրև ել, ետես ժողովուրդ բազում, գթացաւ ՚ի նոսա, և բժշկեաց

* Ոմանք. Եւ զօրութիւն:

* Օրինակ մի. Յակովբոս և Յովսէփ:

* Առ Ոսկանայ պակասի. Սորա ո՛չ ամենեքեան: Ոմանք. Արդ ուստի:

* Ոմանք. Վասն անհաւատութեանն նոցա:

* Ի լուս՝. Նա՞ է... նա՞ յարեաւ. հարցական ուղորակաւս նշանակին:

* Յօրինակին ՚ի բնաբանի յետ բառիս՝ Յերովդիայ, դատարկ թողեալ՝ և չակերտի նշանակեալ, թերևս ակնարկի առնել Յերովդիադայ, ըստ սակաւուց ոմանց:

* Յօրինակին պակասէր. Եւ կամէր զնա սպանալ:

* Յօրինակին ՚ի բնաբանի յետ բառիս՝ Յերովդիայ, դատարկ թողեալ՝ և չակերտի նշանակեալ, թերևս ակնարկի առնել Յերովդիադայ, ըստ սակաւուց ոմանց: Ոսկան. Ի մէջ բազմականացն:

* Ոմանք. Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն:

* Բազումք. Գլուխ նորա:

զհիւանդս նոցա*:

ԻՉ¹⁵Իբրև ընդ երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն. Տեղիս անապատ է, և օրս՝ տարածամեալ, արծակեա՛ զժողովուրդսդ՝ զի երթիցեն շո՛ւրջ ՚ի շէնսն, գնեսցեն իւրեանց կերակուրս: ¹⁶Եւ ասէ Յիսուս. Ո՛չինչ պիտոյ է դոցա երթալ, դո՛ւք տո՛ւք դոցա ուտել*։ ¹⁷Եւ նոքա ասեն ցնա. Ո՛չինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ և երկուս ձկունս: ¹⁸Եւ ասէ ցնոսա. Բերէ՛ք այսր զայն: ¹⁹Եւ հրամայեաց բազմեցուցանել՝ զժողովուրդն ՚ի վերայ խոտոյ. և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց. և եբե՛կ՝ և ետ ցաշակերտսն զնկանակսն, և աշակերտքն ժողովրդոցն*։ ²⁰Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն երկուտասան սակառի՛ լի*։ ²¹Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հազար. թո՛ղ զկանայս և զմանկտի*։ Եդ. ²²Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ՚ի նաւ, և յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդսն արծակիցէ*։ ²³Եւ իբրև արծակեաց զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն առանձինն կալ յաղօթս: Եւ իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն:

Իէ ²⁴Եւ նաւն մեկնեալ էր ՚ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն*։ ²⁵Եւ ՚ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ՚ի վերայ ծովուն*։ ²⁶Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր ՚ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն թէ առաջօք ինչ իցէ. և առ ահին՝ աղաղակեցին: ²⁷Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս՝ և ասէ. Քաջալերեցարո՛ւք, ե՛ս եմ մի՛ երկնչիք: ²⁸Պատասխանի ետ նմա Պե՛տրոս և ասէ. Տեր՝ եթէ դո՛ւ ես, հրամայեա՛ ինձ գալ առ քեզ ՚ի վերայ ջրոյս*։ ²⁹Եւ նա ասէ. Ե՛կ: Եւ իջեալ ՚ի նաւէն Պե՛տրոս՝ գնաց ՚ի վերայ ջուրցն, և եկն առ Յիսուս*։ ³⁰Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝ և ասէ. Տեր՝ փրկեա՛ զիս: ³¹Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր կալաւ զնա և ասէ. Թերահաւատ՝ ընդէ՛ր երկմտեցեր: ³²Եւ իբրև ելին ՚ի նաւն՝ հանդարտեաց հողմն*։ ³³Եւ որ ՚ի նաւին էին՝ մատեան երկիրպագին նմա՝ և ասեն. Արդարև Որդի՛ Աստուծոյ ես դու: ³⁴Եւ անցեալ եկին ՚ի ցամաք ՚ի Գեննեսարեթ*։ ³⁵Եւ իբրև ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և ածին առ նա զամենայն հիւանդս: ³⁶Եւ աղաչէին զնա, զի գոնէ՛ միայն ՚ի քղանցս հանդերձի նորա մերձեցին. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան*:

15

* Ոսկան. Եւ գթացաւ:

* Ոմանք. Ո՛չ է պիտոյ դոցա երթալ:

* Ոմանք. Ձժողովուրդսն ՚ի վերայ: Ոսկան. Չհինգ նկանակսն:

* Ոմանք. Չնշխար կոտորոցն:

* Ոմանք. էին իբրև արք:

* Ոմանք. Ձժողովուրդ արծակեցէ:

* Ոմանք. Ընդդէմ էր հողմն:

* Ոմանք. Եւ ՚ի չորրորդ պահու:

* Ոմանք. Նմա Պետրոս. Տեր եթէ: Բազումք. Առ քեզ ՚ի վերայ ջրոցս:

* Ոմանք. Ի վերայ ջրոցն:

* Ոսկան. Եւ իբրև ել ՚ի նաւն՝ հանդարտեցաւ հողմն:

* Ոսկան. Եւ անցեալ ՚ի ցամաք եկին ՚ի Գեննեսարեթ:

* Ոմանք. Մերձեցան փրկեալ:

Գլուխ ԺԵ

ԻԸ ¹Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յերուսաղեմէ փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն. ²Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ո՛չ լուանան զձեռս յորժամ հա՛ց ուտեն: ³Նա պատասխանի՛ ետ՝ և ասէ ցնոսա. Իսկ դուք՝ ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեանն: ⁴Ձի Աստուած ասաց. Պատուեա՛ զհայր քո և զմայր. ⁵և. Որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու՛ վախճանեսցի: ⁶Եւ դուք ասէք. Որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս, և ո՛չ պատուիցէ զհայր իւր և զմայր իւր. և խտտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն*: ⁷Կեղծաւորք՝ բարւո՛ք մարգարեացաւ ՚ի վերայ ձեր Եսայի՛ և ասէ. ⁸Ժողովուրդս այս շրթանքք պատուէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի՛ է յինէն*. ⁹զո՛ւր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան՝ պատուիրեալս: ¹⁰Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդսն՝ ասէ ցնոսա. Լուարո՛ւք և ՚ի մի՛տ առէք. ¹¹ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ: ¹²Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրև լուան զբանն՝ գայթազդեցին*: ¹³Նա պատասխանի ետ նոցա՝ և ասէ. Ամենայն տունկ՝ զոր ո՛չ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի: ¹⁴Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՛ սխալէ՛, և երկոքին՝ ՚ի խորխորատ անկանին: ¹⁵Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ. Մեկնեա՛ մեզ զառակս զայս: ¹⁶Ասէ՛ Յիսուս. Տակաւին՝ և դո՛ւք անմիտք էք, ¹⁷և ո՛չ իմանայք. եթէ ամենայն որ մտանէ ՚ի բերան, յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ*: ¹⁸Իսկ որ ելանէ ՚ի բերանոյ՝ ՚ի սրտէ՛ անտի գայ. և այն պղծէ զմարդ: ¹⁹Ձի՛ ՚ի սրտէ՛ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք*: ²⁰Ա՛յս ամենայն է՝ որ պղծէ զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ո՛չ պղծէ զմարդ: Եզ. ²¹Եւ ելեալ անտի Յիսուսի զմա՛ց ՚ի կողմանս Տիրոսի և Սիդովնի:

ԻԹ ²²Եւ ահա՛ կին մի Քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր և ասէր. Ողորմեաց ինձ Տէր որդի Դաւթի, դուստր իմ՝ չարաչար այսահարի: ²³Եւ նա ո՛չ ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. Արձակեա՛ զնա՝ զի աղաղակէ՛ զհետ մեր: ²⁴Նա պատասխանի՛ ետ և ասէ. Ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի*: ²⁵Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա և ասէր. Տէր՝ օգնեա՛ ինձ: ²⁶Պատասխանի ետ նմա և ասէ. Ո՛չ է բարւոք առնուլ զհա՛ց մանկանց՝ և արկանել շանց*: ²⁷Եւ նա ասէ. Այո՛ Տէր, քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տեառն իւրեանց: ²⁸Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. Ո՛վ կին դու՝ մե՛ծ են հաւատք քո, եղիցի՛ քեզ՝ որպէս և կամիս: Եւ բժշկեցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու:

* Ոմանք. Ձոր յինէնն օգտի՛... և խտտէք զպատուիրանն Աստուծոյ:

* Ոմանք. Եւ սիրտ իւրեանց. կամ՝ և սրտիւք իւրեանց հե՛:

* Ոսկան. Մատուցեալ ոմանք յաշակերտացն նորա, ասեն. Գիտես:

* Ոմանք. Որ մտանէ ընդ բերան:

* Ոմանք. Եւ այն պղծէ զմարդն:

* Ոմանք. Խորհուրդ չարք:

* Ոմանք. Տան Իսրայէլի:

* Ոմանք. Ոչ է բարիոք:

Լ եւ. ²⁹Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ՚ի ծովեզերն Գալիլեացոց. և ելեալ ՚ի լեառն նստէր անդ: ³⁰Մատեան առ նա ժողովորդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համերս, միակողմանիս, և այլս բազումս. և ընկեցին գնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց գնոսա: ³¹Մինչև զարմանալ ժողովորդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի:

ԼԱ ³²Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. Գթան ՚ի ժողովորդդ, զի արդ՝ երեք աւուրք են՝ զի կան առ իս, և ո՛չ ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսա նօթս՝ չկամիմ, գուցէ՛ նքթիցեն զճանապարհայն*։ ³³Ասեն ցնա աշակերտքն. Իսկ արդ՝ մեզ յանապատի աստ՝ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ ժողովորդ*։ ³⁴Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ ունիք: Եւ նոքա ասեն. Եւթն, և սակա՛ւ ձկունս: ³⁵Եւ հրամայեաց ժողովորդեանն բազմել ՚ի վերայ գետնոյ: ³⁶Եւ առեալ զեւթն նկանակն և զձկունսն՝ գոհացաւ և եբէկ, և ետ ցաշակերտսն, և նոքա ժողովորդեանն*։ ³⁷Կերան ամենեքեան և յագեցան. և բարձին զնշխարս կոտորոցն՝ եւթն զամբիղ լի*։ ³⁸Եւ որք կերանն՝ էին իբրև արք չորք հազարք. թո՛ղ զկանայս և զմանկտի: ³⁹Իբրև արձակեաց զժողովորդսն՝ ել ՚ի նաւ՝ և եկն ՚ի սահմանս Մագդաղեայ*։

16

Գլուխ ԺԶ

¹Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք փորձելով խնդրէին ՚ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա: ²Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա*։ ⁴Ազգ չար և շնացող՝ նշան խնդրէ, և նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի: Եւ եթող գնոսա և գնաց:

ԼԲ ⁵Գնացին և աշակերտքն յայնկոյս, և մոռացան առնուլ հաց: ⁶Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէք և զգոյշ լերուք ՚ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոց: ⁷Նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին՝ թէ հաց ո՛չ բարձաք: ⁸Գիտաց Յիսուս՝ և ասէ. Չի՞ խորհիք ՚ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ ունիք*։ ⁹Տակաւին չիմանայք՝ և ո՛չ յիշէք զհինգ նկանակն ՚ի հինգ հազարսն, և քանի՛ սակառի բարձէք*։ ¹⁰և ոչ զեւթն նկանակն ՚ի չորս հազարսն, և քանի՛ զամբիղս բարձէք*։

* Ոսկան. Եւ կոչեալ առ ինքն:

* Ոսկան. Արդ մեզ յանապատի: Ոմանք. Մինչև յագեցուցանել:

* Ոսկան. Չեթն նկանակսն:

* Ոմանք. Եւթն զամբիղ լի:

* Ոմանք. Եւ գնաց ՚ի սահմանս Մա՛:

* Ոսկան աստանօր ՚ի Լատինականէն առեալ յաւելու. Եւ ասէ ցնոսա. Յորժամ երեկոյ լինի՝ ասէք. Պարզ լինիցի. զի կարմրացեալ է երկին: (3) *Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ. զի շառագունի տրտմութեամբ երկին. արդ զերեսս երկնի կարէք քննել. իսկ զնշան ժամանակիս ոչ կարէք գիտել: (4) Ազգ չար և շնա՛: Ըստ որում ունին և ոմանք ՚ի Յունական օրինակաց: Սակայն ՚ի յերեսումն Հայկական գրչագիրս մեր ՚ի նմին միայն է տեսանել զբանս զայս՝ այսպէս թարգմանեալ: *Յորժամ երեկոյ լինի, ասէք թէ ջեր լինելոց է. քանզի կարմրացան խռովեցան երկինք. զերեսս երկնից գիտէք քննել, և զնշանս ժամանակաց ո՛չ կարիցէք: (4) Ազգ չար:

* Ոմանք. Խորհիք ՚ի սիրտս ձեր:

* Ոսկան. Նկանակսն:

¹¹Արդ՝ զհա՞րդ ոչ իմանայք՝ եթէ ո՛չ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ լինել ՚ի խմորոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց՝: ¹²Յայնժամ ՚ի մի՛տ առին, եթէ ո՛չ ասաց զգուշանալ ՚ի խմորոյ, այլ յաղանդո՛յ փարիսեցւոցն և սադուկեցւոց՝:

ԼԳ զկ. ¹³Եւ ելեալ Յիսուս ՚ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր. Չո՞ք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ: ¹⁴Եւ նոքա ասեն. Ոմն՝ զՅովհաննէս մկրտիչ, և այլք՝ զԵղիա՛, և կէսք՝ զԵրեմիա, կամ զմի ոք ՚ի մարգարէիցն: ¹⁵Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ դուք զո՞ք ասէք զինէն թէ իցեն: ¹⁶Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս և ասէ. Դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանոյ: ¹⁷Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Երանի՛ քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ո՛չ յայտնեաց քեզ՝ այլ Յայր իմ որ յերկինս է՞: ¹⁸Եւ ես՝ քեզ ասեմ. զի դո՛ւ ես վե՛մ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: ¹⁹Եւ տա՛ց քեզ զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: ²⁰Յայնժամ սաստեա՛ց աշակերտացն, զի մի՛ ունեք ասացեն՝ թէ նա՛ է Քրիստոսն: ²¹Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն, թէ պա՛րտ է նմա երթալ յերուսաղէմ, և բազում չարչարանս չարչարել և անարգել ՚ի քահանայապետից և ՚ի դպրաց և ՚ի ծերոց ժողովրդեանն, և սպանանել, և յերի՛ր աւուր յառնել: ²²Եւ առեալ զնա մեկուսի՝ Պետրոսի, սկսաւ կազել ընդ նմա՝ և ասել. Քա՛ւ լիցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ: ²³Եւ նա դարձեալ ՚ի Պետրոս՝ ասէ. Ե՛րթ յե՛տս իմ Սատանայ, զայթազողութիւն իմ ես. զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյսն, այլ զմարդկան: ²⁴Յայնժամ Յիսուս ասէ՛ ցաշակերտսն իւր. Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ՝ ուրասցի՛ զանձն, և առցէ՛ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ: ²⁵Ձի որ կամիցի՛ զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ՛ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ՛ զնա: ²⁶Ձի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրում: ²⁷Ձի գալոց է Որդի մարդոյ փառօք Յօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուցէ՛ իւրաքանչիւր ըստ գործս իւր: ²⁸Ամէն ասե՛մ ձեզ. զի իցեն ոմանք ՚ի սոցանէ՛ որ աստ կան. որք ո՛չ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսանիցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով:՝

* Ոսկան. Նկանակսն:

* Ոմանք. Ձգուշանալ ՚ի խմորոյ սադու՛:

* Ոմանք. Ձգոյշ լինել ՚ի խմորոյ:

* Յոմանս պակասի. Ցնոսա Յիսուս... զո՞ք ասէք:

* Ի բազումս պակասի. Պատասխանի ետ նմա: Ոսկան. Եւ ասէ ցնա:

* Ոմանք. Երանի է քեզ:

* Ոմանք. Քեզ փականս արքայութեանն:

* Ոմանք. Ասիցեն՝ թէ նա:

* Ոսկան յաւելու. Աշակերտացն իւրոց: Ոմանք. Եւ թէ բազում... չարչարել ՚ի քահա՛: Ի լուս՛. Եւ անարգիլ:

* Յոմանս պակասի. Ո՛չ խորհիս դու:

* Ոմանք. Կամի գալ զկնի իմ: Ի լուս՛. Ի բաց ուրասցի:

* Ոմանք. Թէ զաշխարհ ամենայն... տուժեսցէ... ընդ անձին իւրոյ:

* Ոմանք. Յատուցանէ իւրաքանչիւր զգործս իւր:

* Ոսկան. Ոմանք ՚ի դոցանէ: Ոմանք. Մինչև տեսցեն:

Գլուխ ԺԷ

ԼԴ¹ Եւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր Յիսուս զՊե՛տրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա՝ ՚ի լեառն մի բարձր առանձինն*։² և այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս*։³ Եւ ահա՝ երևեցան նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա։⁴ Պատասխանի՛ ետ Պե՛տրոս և ասէ ցՅիսուս. Տէր՝ բարութք է մեզ աստ լինել. թէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս. մի՛ քեզ, և մի՛ Մովսիսի՛, և մի՛ Եղիայի*։⁵ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա անպ լուսաւոր՝ հովանի՛ եղև ՚ի վերայ նոցա։ Չայն եղև յամպոյն՝ և ասէ. Դա՛ է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դնա՛ լուարուք*։⁶ Իբրև լուան աշակերտքն, անկան՝ ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկեան յոյժ*։⁷ Եւ մատուցեալ Յիսուս բո՛ւռն եհար զնոցանէ՛ և ասէ. Յո՛ւն կացէք՝ և մի՛ երկնչիք։⁸ Ամբարձին զաչս իւրեանց, և ո՛չ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։⁹ Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս՝ և ասէ. Մի՛ ունեք ասիցէք զտեսիլդ զայդ, մինչև Որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ*։¹⁰ Հարցին ցնա աշակերտքն և ասեն. Ձիա՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի՛ նախ պարտ է զալ։¹¹ Պատասխանի՛ ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Եղիա՛ զայն, և հաստատեսցէ՛ զամենայն։¹² Այլ ասե՛մ ձեզ՝ զի և Եղիա եկեալ իսկ է. և ո՛չ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՝ զոր ինչ կամեցան. նոյնպէս և Որդի՛ մարդոյ չարչարելոց է ՚ի նոցանէ*։¹³ Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն, թէ վասն Յովհաննո՛ւ մկրտչի՝ ասաց ցնոսա։

ԼԵ զբ. ¹⁴Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն, մատեալ այր մի՛ ՚ի ծո՛ւնր իջաներ և ասէր. Տէր՝ ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՛ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ՚ի հուր, և երբէք ՚ի քո՛ւր*։¹⁵ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց, և ո՛չ կարացին բժշկել։¹⁶ Պատասխանի՛ ետ Յիսուս՝ և ասէ. Ո՞վ ազգ՝ անհաւատ և թելր, մինչև ցե՞րք իցեն ընդ ձեզ. մինչև յե՞րք անսայցեն ձեզ. ա՛ծ զնա առ իս*։¹⁷ Եւ սաստեաց ՚ի նա Յիսուս՝ և ե՛լ ՚ի նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ։¹⁸ Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս. Մեք՝ ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։¹⁹ Եւ նա՝ ասէ ցնոսա. Վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասե՛մ ձեզ. եթէ ունիցիք հաւատս քան զհա՛տ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ. Փոխեաց աստի անդր, և փոխեսցի՛. և ո՛չինչ անհնարին լիցի ձեզ*։²⁰ Բայց այս ազգ ո՛չ իւրք

* Յոմանս պակասի. Առնու ընդ իւր Յիսուս։

* Ոմանք. Սպիտակ իբրև զծիւն։

* Բազումք. Լինել. եթէ կամիս։

* Ոմանք. Հովանի լինէր ՚ի վերայ նոցա։

* Օրինակ մի. ՚ի վերայ երեսաց իւրեանց յերկիր։ (7) Եւ մա՛։

* Օրինակ մի. Եւ մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէն, պատ՛։ ՚ի բազումս պակասի. Չտեսիլդ զայդ։

* ՚ի բազումս պակասի. Ձի և Եղիա եկեալ։ Ոսկան. Արարին ընդ նմա։ Ուր ոմանք. Ընդ նա զոր կամեցան։

* Ոսկան. Եւ իբրև եկն ՚ի ժո՛ւ։ Ոմանք. Մատեալ առ նա այր մի... որդւոյ իմոյ։

* Ոսկան յաւելու. Առ իս. և աժին զնա առ Յիսուս։

* Օրինակ մի. Վասն անհաւատութեան ձերոյ։ Ոսկան. Քան զհատն ման՛։ Բազումք. Անհնարին լինիցի։

ելանէ, եթէ ոչ՝ աղօթիւք և պահովք*:

ԼԶ զգ. ²¹Եւ մինչ դեռ շրջէին նոքա ՚ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս. Մատնելոց է Որդի մարդոյ ՚ի ձեռս մարդկան, ²²և սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ: Եւ տրտմեցան յոյժ: ²³Իբրև եկին նոքա ՚ի Կափառնաուս, մատնան՝ որք զերկրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, և ասեն. Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկրամեանն: Եւ նա ասէ. Այո՞: ²⁴Եւ իբրև եմուտ ՚ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և ասէ. Ջիւրոյ թուի քեզ Սինովն. թագաւորք ազգաց՝ յումմէ՞ արնուն զհարկս կամ զհասն, յորդոց իւրեանց՝ թէ յօտարաց: ²⁵Եւ իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն: ²⁶Բայց զի մի՞ գայթաղեցուցուք զնոսա, երթ ՚ի ծով՝ և ընկեա՛ կարթ, և զառաջին ձուկնն որ ելանէ՛ ա՛ռ, և բաց զբերան նորա, և գտանիցես սատեր. և զայն առեալ՝ տացես նոցա ընդ ի՛ն և ընդ քո՛:

18

Գլուխ ԺԸ

ԼԷ ¹Յայնմ աւուր մատնան՝ աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն. Ո՞վ իցէ ՚ի մէնջ մեծ յարքայութեան երկնից*:² Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ՚ի մէջ նոցա*,³ և ասէ. Ամէն ասե՛ն ձեզ, եթէ ոչ դարձջիք, և լինիջիք իբրև զմանկտի, ո՞չ մտանիցէք յարքայութիւն երկնից*:⁴ Արդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա՛ է մեծ յարքայութեան երկնից*:⁵ Եւ որ ոք ընկալցի մանուկ մի՝ այսպիսի յանուն իմ, զի՛ս ընդունի: ⁶ Եւ որ ոք գայթաղեցուցէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ յի՛ս հաւատացելոց, լա՛ւ է նմա՛ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի՝ ՚ի խորս ծովու*:⁷ Վա՛յ աշխարհի գայթաղութեանց. հարկ է գա՛լ գայթաղութեանց. բայց վայ՝ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթաղութիւն*:⁸ Եթէ ձեռն քո կամ ոտն գայթաղեցուցանէ զքեզ, հա՛տ զնա՛ և ընկեա՛ ՚ի քէն. լա՛ւ իցէ քեզ՝ միաձեռանի՛ կամ կա՛ղ մտանել ՚ի կեանս, քան թէ երկուս ձեռս և երկուս ոտս ունիցիս, և անկանել ՚ի հուրն յաւիտենից*:⁹ Եւ եթէ ա՛կն քո գայթաղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ՚ի քէն. լա՛ւ իցէ քեզ միականի՛ մտանել ՚ի կեանս, քան երկուս աչս ունել՝ և անկանել ՚ի գեհե՛ն հրոյն: զդ. ¹⁰ Զգո՛յշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ. ասե՛ն ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս Յօր իմոյ՝ որ յերկինս է: ¹¹ Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել

* Յոմանս պակասի. Ոչ իւիք ելանէ:

* Ի բազումս պակասի. Եւ նա ասէ. Այո՞:

* Ոսկան. Թագաւորք երկրի յումմէ՞: Ըստ որում ոմանք նշանակեն ՚ի լուսանցս:

* Ոմանք. Ձուկն որ ելանիցէ: Ոսկան. Տացես ընդ իմ և:

* Ոմանք. Յայնժամ մատնան... յարքայութեանն:

* Ոմանք. Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուս:

* Ոմանք. Եւ եղիցիք իբրև զմանկ՞:

* Ոմանք. Որ խոնարհեցուցէ զանձն իւր որպէս զմա:

* Ոմանք. Եթէ կախիցէ... և ընկղմեսցի:

* Բազումք. Աշխարհի ՚ի գայթաղութեանց:

* Ոմանք. Միաձեռն, կամ՝ միաձեռնի կամ կաղ... քան երկուս ձե՛... ոտս ունել և անկանիցիս ՚ի հուրն յաւիտենական: Յօրինակին. Երկու ձեռս և երկուս ո՞:

զկորուսեալն*:

ԼԸ ¹²Ձիա՞րդ թուի ձեզ՝ եթէ լինիցի մարդոյ հարե՛լր ոչխար, և մոլորիցի մի՛ ՚ի նոցանէ, ո՞չ թողուցու զի՛ննսո՛ւնն և զի՛նն ոչխարն ՚ի լերինս, և երթայցէ խնդրիցէ զմոլորեալն*։ ¹³Եւ եթէ լինիցի գտանել զնա. ամէն ասեմ ձեզ՝ զի ուրախ լինի՛ ՚ի վերայ նորա, առաւել քան ՚ի վերայ իննսո՛ւն և յինուոցն որ չիցեն մոլորեալ*։ ¹⁴Այսպէս՝ ո՛չ են կամք առաջի Յօր իմոյ որ յերկինս է, եթէ կորիցէ մի՛ ՚ի փոքրկանցս յայսցանէ։ ¹⁵Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա՛ զնա՝ յորժամ դու և նա՛ միայն իցեք. եթէ լուիցէ քեզ, շահեցա՛ր զեղբայրն քո։ ¹⁶Ապա թէ ո՛չ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ մի ևս՝ կամ երկուս. զի ՚ի բերանոյ երկուց և յերկից վկայից հաստատեսցի՛ ամենայն բան*։ ¹⁷Իսկ և թէ նոցա՛ ո՛չ լուիցէ, ասասցի՛ր յեկեղեցւո՛ջ։ Ապա թէ և եկեղեցւո՛յն ո՛չ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր*։ ¹⁸Ամէն ասեմ ձեզ. Ձի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս*։ ¹⁹Դարձեալ ասեմ ձեզ. Եթէ երկու՛ ՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղիցի՛ նոցա ՚ի Յօրէ իմմէ որ յերկինսն է*։ ²⁰Ձի ուր իցեն երկու՛ կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ են ես ՚ի մէջ նոցա։ ²¹Յայնժամ մատեալ առ նա Պե՛տրոս՝ և ասէ. Տե՛ր քանի՞ցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցե՞օրն անգամ։ ²²Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչև յեւթն անգամ, այլ՝ մինչև յեւթանասնեկի՛ն եւթն*։

ԼԹ ²³Վասն այսորիկ նմանեցա՛ւ արքայութիւն երկնից ա՛ռն թագաւորի, որ կամեցաւ համա՛ր առնել ՚ի մէջ ծառայից իւրոց*։ ²⁴Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բե՛լր քանքարոյ։ ²⁵Իբրև ո՛չ ունէր հատուցանել, հրամայեաց՝ զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա, և զորդիս, և զամենայն որ զինչ և ունիցի՝ և հատուցանել*։ ²⁶Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա՝ և ասէր. Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ։ ²⁷Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, և զփոխն եթո՛ղ նմա։ ²⁸Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի՛ ՚ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարելր դահեկան. և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր. Յատո՛ ինձ զոր պարտիս*։ ²⁹Արդ՝ անկեալ ծառայակցին՝ առ ոտս նորա, աղաչէր զնա՝ և ասէր. Երկայնամիտ լեր առ իս՝ և հատուցից քեզ*։ ³⁰Եւ նա ո՛չ կամէր. այլ չոգաւ արկ զնա ՚ի բանտ՝ մինչև հատուցէ՛ զպարտսն։ ³¹Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղևն՝ տրտմեցան յոյժ, և եկեալ ցուցին տեսառն իւրեանց զամենայն որ ինչ եղևն*։ ³²Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ և ասէ. Ծառայ՛ չար, զամենայն զպարտսն

* Ոսկան. Ձկորուսեալսն:

* Ոսկան. Ոչխարսն ՚ի լերինս: Ոմանք. Թուիցի ձեզ... զիննսուն... և երթիցէ խնդրիցէ:

* Ոմանք. Եւ ինուցն որք:

* Ոմանք. Թէ ոչ լսիցէ քեզ... միւս ևս կամ երկուս... երկուց և երկից:

* Ոմանք. Իսկ եթէ և նոցա ոչ լու՞... ապա եթէ եկեղեցւոյն... զհեթանոսս և զմաքսաւորս:

* Ի բազումս պակասի. Ձեզ. զի զոր կա՞:

* Ոմանք. Ձինչ և խնդրիցեն:

* Ոսկան. Մինչև ցեօրն անգամ... ցեօրանասնեկին:

* Ոմանք. Յամար առնուլ ՚ի մէջ:

* Ոմանք. Եւ զամենայն զոր ինչ և:

* Բազումք յաւելուն. Ծառայն այն եգիտ զմի: Ոմանք. Ձոր պարտիս:

* Ոմանք. Անկեալ ծառայակիցն առ:

* Ոմանք. Տեսառնն իւրեանց զամենայն ինչ որ եղևն:

թողի՝ քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս*։ ³³Իսկ արդ՝ ո՞չ էր պա՛րտ և քեզ՝ ողորմե՛լ ծառայակցին քուն, որպէս և ես քե՛զ ողորմեցայ։ ³⁴Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչև հատուցե՛լ զամենայն զպարտսն։ ³⁵Նո՛յնպէս և Չայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ո՛չ թողուցուք իւրաքանչի՛ւր եղբօր իւրում՝ ՚ի սրտի՛ց ձերոց զյանցանս նոցա*։

19

Գլուխ ԺԹ

Խ զե. ¹Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ ՚ի Գալիլէէ՝ և եկն ՚ի սահմանս Յրեաստանի յայնկոյս Յորդանանու*։ ²Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնոսա անդ։ ³Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձեին զնա՝ և ասէին, եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր, ըստ ամենայն վնասու։ ⁴Պատասխանի՛ ետ նոցա և ասէ. Չիցե՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն իսկզբանէ՝ արո՛ւ և է՛գ արար զնոսա՝ և ասէ. ⁵Վասն այնորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի*։ ⁶Ապա ուրեմն ո՛չ են երկու՝ այլ մի՛ մարմին։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ՝ մի՛ մեկնեցցէ։ ⁷Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տա՛լ թուղթ մեկնելոյ՝ և արձակել*։ ⁸Ասէ ցնոսա. Մովսէս՝ վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ իսկզբանէ՝ ո՛չ եղև այնպէս։ ⁹Բայց ասե՛մ ձեզ, զի ամենայն որ արձակէ զկին իւր՝ և ո՛չ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ*։ ¹⁰Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է՝ չամուսնանալ։ ¹¹Եւ նա՝ ասէ ցնոսա. Ո՛չ ամենեքեան բաւական են այդքն բանի, այլ որոց տուեալ է*։ ¹²Ձի են ներքինիք՝ որ յորովայնէ՛ մօր իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք՝ որ ՚ի մարդկանէ՛ եղեն ներքինիք. և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից. որ կարօղն է տանել՝ տարցի*։ ¹³Յայնժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ ՚ի վերայ նոցա՝ և աղօթս արասցէ. և աշակերտքն նորա՝ սաստէին նոցա*։ ¹⁴Ասէ Յիսուս. Թո՛յլ տուք մանկտուոյդ՝ և մի՛ արգելուք զդոսա զա՛լ առ իս, զի այդպիսեացո՞ւ է արքայութիւն երկնից։ ¹⁵Եւ եղեալ ձեռս ՚ի վերայ նոցա՝ զնաց անտի*։

ԽԱ զգ. ¹⁶Եւ ահա, մատուցեալ ոմն առ նա՝ ասէ. Վարդապետ բարի՛ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցին զկեանսն, յաւիտենականս*։ ¹⁷Եւ նա՝ ասէ ցնա.

* *Ոմանք.* Չամենայն պարտսն։

* *Յօրինակին պակասէր.* եթէ ոչ թողուցուք։

* *Ոմանք.* ՚ի Գալիլէէ՝ եկն։

* *Ոմանք.* Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և։

* *Յօրինակին այսպէս գրեալ՝* Մեկնելոյ և արձակելոյ, չակերտիւ ակնարկի բառնալ զվանկս ոյ. *համաձայն այլոց բազմաց։*

* *Ոմանք.* Որ արձակեցցէ զկին իւր... առնիցէ՝ շնայ։

* *Ոմանք.* Ոչ ամենեքին... այդքն բանի. այլ որոց տուեալ իցէ։

* *Ոմանք.* Որ կարօղ է տա՞լ։

* *Ոսկան.* Մատուցին առ նա։ *Ոմանք.* Սաստեցին նոցա։

* *Ոմանք.* Եւ եղեալ ձեռն ՚ի վերայ։

* *Առ Ոսկանայ պակասի.* Ոմն առ նա ասէ։

Չի՞ հարցանես զիս զբարւոյ, մի՞ է բարի. եթէ կամիս ՚ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա՛ զպատուիրանսն*։ ¹⁸Ասէ ցնա. Չո՞րս։ Ասէ ցնա Յիսուս. ՉՄի՛ սպանաներն, և՛ Մի՛ շնար, և՛ Մի՛ զողանար, և՛ Մի՛ սուտ վկայեր* , ¹⁹Պատուեա՛ զհայր քո և զմայր. և՛ Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ ²⁰Ասէ ցնա պատանին. Չայդ՞ ամենայն պահեցի՞ ՚ի մանկութենէ իմմէ. արդ՞ ի՞նչ իւրիք պակաս իցեն՞*։ ²¹Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճառեա՛ զինչս քո՝ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս զանձս յերկինս, և եկ զկնի իմ։ ²²Իբրև լուսա պատանին զբանն, զնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս։ ²³Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն ասե՛մ ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից*։ ²⁴Դարձեալ ասե՛մ ձեզ. Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։ ²⁵Իբրև լուսան աշակերտքն՝ զարմացան յոյժ և ասեն. Իսկ՞ ո՞ր կարիցէ ապրել։ ²⁶Յայեցաւ ՚ի նոսա Յիսուս՝ և ասէ. Առ ՚ի մարդկանէ՛ այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր*։ ²⁷Յայնժամ պատասխանի՛ ետ Պե՛տրոս և ասէ ցնա. Աւասիկ մեք՝ թողաք զամենայն, և եկա՛ք զկնի քո. արդ՞ զի՞նչ լինիցի մեզ*։ ²⁸Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասե՛մ ձեզ. զի դուք որ եկիք զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի՛ Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց. նստջի՛ք և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայէլի*։ ²⁹Եւ ամենայն որ ոք եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքոյրս, կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՛ և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ*։ ³⁰Բազումք եղիցին առաջինք յետինք, և յետինք առաջինք։

20

Գլուխ Ի

ԽԲ ¹Քանզի նման է արքայութիւն երկնից ան տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ՚ի վարձու ունել մշակս յայգի իւր։ ²Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր։ ³Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկք ՚ի հրապարակս* . ⁴ասէ՛ և ցնոսա. Երթայ՛ք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՛ տաց ձեզ։ ⁵Գնացին և նոքա։ Եւ դարձեալ՝ ելեալ զվե՛ց ժամու, և զինն ժամու՝ արար այնպէս*։ ⁶Եւ զմետասաներորդ ժամու ելեալ, եգիտ այլս՝ զի կային դատարկք. ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք*։ ⁷Ասեն ցա. Չի ո՛չ ոք կալաւ զմեզ ՚ի վարձու։ Ասէ ցնոսա. Երթայ՛ք և

* Ոմանք. Պահեա զպատուիրանն։

* Առ Ոսկանայ պակասի. Եւ մի՛ շնար, և մի՛ զողանար։

* Ոմանք. Իւրիք պակասիցեն։

* Ոմանք. Մտցէ մեծատուն յարք՞։

* Ոմանք. Այլ յԱստուծոյ ամենայն։

* Ոմանք. Ահաւասիկ մեք։

* Ոմանք. Ազգն Իսրայէլի։

* Ոմանք. Եւ ամենայն ոք որ ե՛։

* Ոմանք. Դատարկ ՚ի հրապարակ։

* Բազումք. Արար նոյնպէս։

* Ոմանք. Դատարկ. և ասէ ցնոսա. Չօրս ցերեակ։

դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցո՛ւք*։ ⁸Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր
այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա՛ զմշակսն՝ և տո՛ւր նոցա վարձս, սկսեալ՝ ՚ի
յետնոցն մինչև ցառաջինսն։ ⁹Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն, և առին
մէն մի դահեկան*։ ¹⁰Եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի՛ առնուցուն. և
առին մէն մի դահեկան և նոքա։ ¹¹Իբրև առին՝ տրտնջէին զտանուտեռնէն՝ և
ասէին*։ ¹²Թէ դոքա՛ յետինքդ՝ մի՛ ժամ զորժեցին, և հասարակո՞րդս մեզ արարեր
զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ ¹³Նա պատասխանի ետ
միում ՚ի նոցանէ՝ և ասէ. Ը՛նկեր՝ չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սա՛կ արկեր
ընդ իս. ¹⁴ա՛ռ զքոյդ՝ և ե՛րթ. եթէ կամիմ յետնոցս տա՛լ որպէս քեզ*։ ¹⁵Եթէ չիցէ՞
ինձ իշխանութիւն յիմսս առնե՛լ զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես
առատս եմ*։ ¹⁶Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք՝ յետինք. զի
բազում են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք*։ զէ. ¹⁷Իբրև ելանէր Յիսուս
յերուսաղէմ, ա՛ռ զերկոտասանսն առանձինն, և ՚ի ճանապարհին՝ ասէ ցնոսա.
¹⁸Ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի՛
քահանայապետիցն՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա ՚ի մահ. ¹⁹և
մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այսպանել, և հարկանել, և ՚ի խա՛չ հանել, և յերիր
աւուր յարիցէ՛։

ԽԳ ²⁰Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Ջեբեդեայ՝ որդւովք իւրովք
հանդերձ, երկիր պագաներ՝ և խնդրէր ինչ ՚ի նմանէ։ ²¹Եւ նա՛ ասէ ցնա. Ջի՞նչ
կամիս։ Ասէ ցնա. Ասա՛ զի նստցի՛ն սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՛
և մի ընդ ահեկէ յարքայութեան քում*։ ²²Պատասխանի՛ ետ Յիսուս և ասէ. Ո՛չ
գիտէք զինչ խնդրէք. կարե՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ
զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ մկրտել։ Ասեն ցնա. Կարօ՞ղ ենք։ ²³Ասէ՛
ցնոսա Յիսուս. Ջբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝
մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՛՝ ո՛չ է իմ տալ, այլ
որոց տուեալ է ՚ի Զօրէ իմմէ*։ ²⁴Եւ լուեալ տասանցն, բարկացան ՚ի վերայ
երկուցն եղբարց։ ²⁵Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ. Գիտէք՝ զի իշխանք
ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա։ ²⁶Ո՛չ այնպէս իցէ և ՚ի ձերում
միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. ²⁷և որ կամիցի
՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։ ²⁸Որպէս Որդի մարդոյ ո՛չ եկն
պաշտօն առնուլ, այլ պաշտել. և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։

ԽԴ էկ. ²⁹Եւ յեկանելն նոցա յերիքովէ, զնացին զհետ նորա ժողովուրդք
բազումք*։ ³⁰Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ
Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. Ողորմեա՛ց մեզ Յիսուս որդի Դաւթի։
³¹Եւ ամբոխն սաստեա՛ց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա և՛ս առաւել աղաղակէին և
ասէին. Տէր՝ ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի։ ³²Չտեղի՛ առ Յիսուս, կոչեաց զնոսա և
ասէ. Ջի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ ³³Ասեն ցնա. Տէր՝ զի բացցի՛ն աչք մեր։ ³⁴Եւ

* Ոմանք. Արժան իցէ առ՞։

* Ի բազումս պակասի. Եւ առին մէն մի։

* Ոմանք ՚ի նոր օրինակաց գրեն. Չտանուտեռնէն։

* Ոսկան. Եթէ կամիցիմ յետնոցս։ Բազումք. Տալ որպէս քեզ։

* Ոմանք. Չիցէ իշխանութիւն յիմս առնել։

* Ոմանք. Այնպէս եղիցին։ Բազումք. Չի բազումք են կոչեմ։

* Ոմանք. Եւ մի յահեկէ ՚ի յարքայութեան։

* Ոմանք. Եւ զմկրտութիւնն իմ մկրտիցիք։ Եւ ոմանք. Չոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք։

* Ոմանք. Եւ յեկանել նորա յերիքովէ։

գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի՛ տեսին՝ և գնացին զհետ նորա:

21

Գլուխ ԻԱ

ԽԵ 1 Իբրև մօտ եղեն յերուսաղէմ, և եկին ՚ի Բեթփագէ մերձ ՚ի լեառն Ձիթենեաց. յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց: 2 Եւ ասէ ցնոսա. երթայք ՚ի գեղդ՝ որ առաջի ձեր է, և անդէն գտանիցէք էջ կապեալ, և յաւանակ ընդ նմին, լուծէք՝ ածէք ինձ*: 3 Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջի՛ք, եթէ Տե՛առն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի՛ առաքէ գնոսա*: 4 Բայց այս ամենայն եղև, զի լցցի՛ բան մարգարէին՝ որ ասէ. 5 Ասացէք դստեր Սիովնի. Ահա՛ թագաւոր քո գայ քեզ հեզ՝ և հեծեալ յէջ և ՚ի յաւանակի իշոյ*: 6 Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեացն նոցա Յիսուս: 7 Եւ ածին զէջն և զյաւանակն. և արկին զնոքօք ձորձս, և նստաւ ՚ի վերայ նոցա*: 8 Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին. և այլք հատանէին ոստս ՚ի ծառոց՝ և տարածանէին ՚ի ճանապարհին*: 9 Եւ ժողովուրդն՝ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն ՚ի բարձունս*: 10 Եւ ՚ի մտանելն նորա յերուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէ. Ո՞վ իցէ սա*: 11 Եւ ժողովուրդքն ասեն. Սա՛ է մարգարէն Յիսուս՝ որ ՚ի Նազարեթ՝ Գալիլեացոց: 12 Եւ եմուտ Յիսուս ՚ի տաճարն, և եհան արտաքս զամենեսին, որ վաճառէինն և գնէին ՚ի տաճարի անդ. և զսեղանս հատավաճառացն կործանեաց՝ և զաթո՛նս աղաւնեվաճառացն*: 13 Եւ ասէ ցնոսա. Գրեալ է. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք արարէք զդա՛ այրս աւազակաց:

ԽԶ 14 Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ՚ի տաճարին, և բժշկեաց զնոսա: 15 Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք՝ զսքանչելիսն զոր արար, և զմանկտին որ աղաղակէին ՚ի տաճարին և ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի. բարկացան. 16 և ասեն ցնա. Լսե՛ս զինչ ասեն դոքա: Ասէ ցնոսա Յիսուս. Այո՛. չիցէ՛ ընթերցեալ ձեր՝ եթէ ՚ի բերանոյ տղայոց և ստընդիեցաց կատարեցէր զօրհնութիւն*: 17 Եւ թողեալ զնոսա, ել արտաքոյ քաղաքին ՚ի Բեթանիա, և անդ ագաւ:

ԽԷ էք. 18 Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն ՚ի քաղաքն՝ քաղցե՛աւ: 19 Եւ տեսեալ թզենի մի ՚ի վերայ ճանապարհին, եկն ՚ի նա, և ո՛չինչ եգիտ ՚ի նմա՝ բայց միայն տերն: Եւ ասէ ցնա. Մի՛ այտուհետև ՚ի քէն պտուղ եղիցի յաւիտեան: Եւ առ

* Ոմանք. ՚ի գեաւդդ... գտանէք էջ կապեալ. և յովանակ:

* Բազունք. Եւ վաղվաղակի առաքեսցէ գնոսա:

* Ոմանք. Յէջ և յաւանակի ի՛:

* Ի լուս՝. Ձնոքօք ձորձս իւրեանց. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:

* Ոմանք. Տարածանէին. կամ՝ տարածէին զհանդ՝:

* Ոմանք. Եւ ժողովուրդքն որ առաջի և:

* Ոմանք. Դղրդեցաւ քա՛:

* Ոմանք. Անդ ՚ի տաճարին... աղաւնավաճառացն:

* Յօրինակին պակասէր. Ասէ ցնոսա Յիսուս: Ոմանք. Ստնդիացաց. կամ՝ ստնդիեցոց հաստատեցէր զօրհ՝:

Ժամայն չորացաւ թզենին*։ ²⁰Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, թէ զհա՞րոյ վաղվադակի ցամաքեցաւ թզենին։ ²¹Պատասխանի՛ ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ամէն ասե՛ն ձեզ. Եթէ ունիցիք հաւատս՝ և ո՛չ երկնտիցէք՝ ոչ միայն զթզենւոյդ առնիցէք, այլ թպտո և լերինդ ասիցէք. Բարձի՛ր և անկի՛ր՝ ՚ի ծով, եղիցի*։ ²²Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցո՛ւք։

ԽԸ ²³Եւ իբրև եկն ՚ի տաճարն, մատե՛ան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն՝ և ասեն. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ. և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ*։ ²⁴Պատասխանի՛ ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից և ե՛ս զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և ես ձե՛զ ասացից՝ որով իշխանութեամբ առնեն զայս*։ ²⁵Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր՝ յերկնի՞ց՝ թէ՛ ՚ի մարդկանէ։ Եւ նորա խորհէին ընդ միմեանս և ասէին*։ ²⁶Եթէ ասենք յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէ՞ր ո՛չ հաւատացէք նմա. և եթէ ասենք ՚ի մարդկանէ, երկնչի՛նք ՚ի ժողովրդեանն. զի ամենեքին զՅովհաննէս իբրև զմարգարէ՛ ունին*։ ²⁷Պատասխանի՛ ետուն Յիսուսի և ասեն. Ո՛չ գիտենք։ Ասէ ցնոսա և նա. Եւ ո՛չ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեն զայս*։

ԽԹ ²⁸Բայց զհա՞րոյ թուի ձեզ. առն միոջ էին երկու՛ որդիք, և մատուցեալ առ առաջինն՝ ասէ. Ո՛րդեակ՝ երթ այսօր գործեա՛ յայգւոջ։ ²⁹Նա՛ պատասխանի՛ ետ՝ և ասէ. Երթա՛մ տէր՝ և ո՛չ չոգաւ։ ³⁰Սատեաւ և առ մեւսն, և ասէ՛ նոյնպէս. Նա՛ պատասխանի՛ ետ՝ և ասէ. Ո՛չ կամիմ։ Բայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայգին։ ³¹Արդ՝ ո՞ յերկոցունց արա՛ր զկամս հօրն։ Ասեն. Յետինն։ Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասե՛ն ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք՝ յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից*։ ³²Ձի եկն Յովհաննէս ճանապարհա՛ւ արդարութեան՝ և ո՛չ հաւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսէք՝ և ո՛չ զղջացարուք յետոյ հաւատալ նմա*։

Ծ Էզ. ³³Ա՛յլ առա՛կ լուարո՛ւք. Ա՛յր մի էր տանուտէր՝ որ տնկեաց այգի՛, և ցանգով պատեաց զնա, և փորեաց ՚ի նմա հնձան, և շինեաց աշտարա՛կ. և ե՛տ զնա ցնչակս, և զնա՛ց ՚ի տա՛ր աշխարհ*։ ³⁴Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա*։ ³⁵Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ ³⁶Դարձեալ առաքեաց ա՛յլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա՛ նոյնպէս։ ³⁷Յետոյ առաքեաց առ նոսա զորդի՛ իւր, և ասէ. Թե՛րևս՝ ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ*։ ³⁸Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. Սա՛ է ժառանգն եկա՛յք սպանցուք զսա, և կալցուք զծառանգութիւն սորա։ ³⁹Եւ առեալ՝ հանին զնա արտաքոյ քան զայգին, և սպանին։ ⁴⁰Արդ՝ յորժամ եկեսցէ

* Ոմանք. Եւ ետես թզե՛ն։ Ոսկան. Եւ ոչ եգիտ ՚ի նմա։ Ոմանք. Ելցէ յաւիտեան։

* Բազունք. Ոչ միայն թզենւոյդ առ՞։

* Ոսկան. Եւ իբրև եկին ՚ի տա՞ն։ Ոմանք. Եւ ո՞ ետ քեզ։

* Ոմանք. Եւ ես ձեզ ասեմ. Որով։

* Ի լուս՞. Խորհէին ընդ միտս, և. համաձայն ոմանց ՚ի բնար՞։

* Բազունք. Իբրև զմարգարէ ունէին։

* Յօրինակին պակասէր. Ասէ ցնոսա և նա և ո՛չ։

* Օրինակ մի. Յարքայութիւն Աստուծոյ։

* Ոմանք յաւելուն. Ձի եկն առ ձեզ Յովհ՞։

* Ոմանք. Ի՛ նմա հնձան... և ինքն զնաց ՚ի տարաշխարհ։

* Ոմանք. Ձպտուղ նորա։

* Ոմանք. Ձորդին իւր։

տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ: ⁴¹Ասէ՛ն ցնա. Ջշարսն չարա՛ւ կորուսցէ. և զայգին տացէ այլո՛ց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ՚ի ժամու իւրեանց* : ⁴²Ասէ ցնոսա Յիսուս. Չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ՚ի գիրս. Չվէ՛ն՝ զոր անարգեցին շինօղբ, նա՛ եղև գլուխ անկեան. ՚ի Տեառնէ եղև այս, և է՛ սքանչելի յաչս մեր: ⁴³Վասն այսորիկ ասէ՛մ ձեզ, զի բարձցի ՚ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ, և տացի ազգի որ առնիցէ՛ զպտուղս նորա* : ⁴⁴Եւ որ անկցի ՚ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի՛, և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ՛ զնա: ⁴⁵Իբրև լուան քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք զառակս նորա, գիտացին թէ վասն նոցա ասաց* : ⁴⁶Եւ խնդրէին զնա ունե՛լ, բայց երկեան ՚ի ժողովորոցն. քանզի իբրև զմարգարէ՛ ունէին զնա* :

22

Գլուխ ԻԲ

ՕԱ եդ. ¹Պարծեալ պատասխանի ետ Յիսուս, և ասէ՛ ցնոսա առակօք. ²Նմանեցաւ արքայութիւն երկնից՝ ա՛ռն թագաւորի, որ արա՛ր հարսանիս որդւոյ իւրում* : ³Եւ առաքեաց զծառայս իւր կոչել՝ զհրաւիրեալսն ՚ի հարսանիս. և ո՛չ կամեցան գալ: ⁴Պարծեալ՝ առաքեաց այլ ծառայս՝ և ասէ. Ասացէ՛ք հրաւիրելոցն. Ահաւասիկ զճա՛շ իմ պատրաստեցի. զուարակք իմ և պարարակք զենեա՛լ են, և ամենայն ինչ պատրա՛ստ է. եկայ՛ք ՚ի հարսանիս* : ⁵Եւ նոքա յուլացեալ՝ զնացին ոմն յագարակ իւր, և ոմն ՚ի վաճա՛ռ իւր* . ⁶և այլք՝ կալան զծառայս նորա, թշնամանեցին, և սպանի՛ն: ⁷Իսկ թագաւորն իբրև լուա՛ւ բարկացա՛ւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց* : ⁸Յայնժամ ասէ՛ ցծառայս իւր. Հարսանիքս պատրա՛ստ են, և հրաւիրեալքն չէին արժանի: ⁹Արդ՝ երթայ՛ք յանցս ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէ՛ք ՚ի հարսանիս* : ¹⁰Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զոր և գտին՝ զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականօք* : ¹¹Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն, ետես անդ ա՛յր մի՝ որ ո՛չ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց: ¹²Եւ ասէ ցնա. Ը՛նկեր՝ զիա՞րդ մտեր այսր, զի ո՛չ ունէիր հանդերձ հարսանեաց: Եւ նա պապանձեցա՛ւ: ¹³Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. Կապեցէ՛ք զդորա զոտս և զձեռս՝ և հանէ՛ք զդա ՚ի խաւարն արտաքին, անդ եղիցի լա՛լ և կրճել ատամանց: ¹⁴Չի բազումք են կոչեցեալք՝ և սակաւք ընտրեալք* : ¹⁵ՕԲ էե. ¹⁵Յայնժամ զնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ, թէ ո՞րպէս դնիցեն նմա որոգայթ բանիւք: ¹⁶Եւ առաքեն առ նա զաշակերտսն

* *Ոմանք.* Ջշարսն չարաւ կո՞... տայցէ... տացեն:
 * *Օրինակ մի.* Որ առնիցէ զկամս նորա:
 * *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Ջառակս զայս, գիտացին:
 * *Ոմանք.* Եւ խնդրեցին զնա ու՞:
 * *Ոմանք.* Արքայութիւնն երկնից:
 * *Ոմանք.* Ջուարակք և պարարակք իմ զեն՞:
 * *Ոմանք.* Եւ նոցա յուղացեալ զնա՞:
 * *Ոմանք.* Եւ զքաղաքս նոցա այրեաց:
 * *Ոմանք.* Երթայք ՚ի յանցս... և զոր միանգամ:
 * *Ոմանք.* Եւ ժողովեցին զամենեսին զոր գտին:
 * *Ոմանք.* Եւ սակաւք են ընտրեալք:

իւրեանց Յերովդիանոսօ՛քն հանդերձ՝ և ասեն. Վարդապետ՝ գիտենք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ո՛չ է քեզ փոյթ զումեքէ, և ո՛չ հայիս յերեսս մարդոյ՝: ¹⁷Արդ՝ ասա՛ մեզ, զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ: ¹⁸Գիտաց Յիսուս զխորամանկութիւնն նոցա, և ասէ. Չի՞ փորձէք զիս կեղծաւորք՝: ¹⁹Գուցէ՛ք ինձ զդահեկան հարկին: Եւ նորա մատուցին նմա դահեկան մի: ²⁰Եւ ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս՝ կամ զիր՝: ²¹Ասեն. Կայսեր: Յայնժամ ասէ ցնոսա. Երթա՛յք՝ տու՛ք զկայսեր՝ կայսեր, և զԱստուծոյ՝ Աստուծոյ՝: ²²Իբրև լուան՝ զարմացան. և թողին զնա և զնացին:

ԾԳ ²³Յայնմ աւուր մատեան առ նա սաղուկեցիքն, որ ասէին՝ թէ չի՛ք յարութիւն. հարցին ցնա՞: ²⁴և ասեն. Վարդապետ՝ Մովսէս ասաց. Եթէ ոք մեռցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուցցէ զաւակ եղբոր իւրում: ²⁵Եին առ մեզ եղբարք եւթն. առաջինն՝ արար կին՝ և մեռաւ. և զի ո՛չ ունէր զաւակ, եթող զկինն իւր՝ եղբոր իւրում: ²⁶Նոյնպէս և երկրորդն՝ և երրորդն, մինչև ցեւթներորդն: ²⁷Յետ ամենեցուն՝ մեռաւ և կինն: ²⁸Արդ՝ ՚ի յարութեանն ո՞յր յիւթանցն եղիցի՝ նա՛ կին. զի ամենեքին կալան զնա կին: ²⁹Պատասխանի՛ ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Մո՛լորեալք՝ ո՛չ գիտէք զգիրս և ո՛չ զզօրութիւն Աստուծոյ: ³⁰Չի՛ ՚ի յարութեանն ո՛չ կանայս առնեն՝ և ո՛չ արանց լինին, այլ են իբրև զիրեշտակս յերկինս: ³¹Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ զասացեալն ձեզ յԱստուծոյ: ³²Ե՛ս եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ. և չէ՛ Աստուած՝ Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց: ³³Իբրև լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետութիւն նորա:

ԾԴ ³⁴Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ պապանձեցոյց զսաղուկեցիսն, ժողովեցան ՚ի միասին: ³⁵Եւ եհարց մի ոմն ՚ի նոցանէ զնա՝ փորձելով, և ասէ. ³⁶Վարդապետ՝ ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս: ³⁷Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրեցես՝ս զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ՛ քումմէ, և յամենայն մտաց քոց: ³⁸Ա՛յս է մեծն և առաջին պատուիրան: ³⁹Եւ երկրորդն՝ նման սմին. Սիրեցես՝ս զընկեր քո՝ իբրև զանձն քո: ⁴⁰Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք՝ կախեալ կան:՝

ԾԵ ⁴¹Եւ ՚ի ժողովել փարիսեցւոցն, եհարց ցնոսա Յիսուս՝ և ասէ. ⁴²Չիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի. ո՞յր որդի է: Ասեն ցնա. Դաւթի: ⁴³Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ զիա՞րդ Դաւիթ Յոգուովն՝ կոչէ զնա Տէր, և ասէ. ⁴⁴Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ

* *Ոմանք.* Յերեսս մարդոյն. *կամ՝* մարդկան:

* *Ոմանք.* Ձխորամանկութիւն նոցա:

* *Ոմանք յաւելուն.* Եւ ասէ ցնոսա *Յիսուս.* Ո՞յր:

* *Ոմանք.* Ձկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ:

* *Ոմանք.* Որ ասեն, թէ չիք յա՞:

* *Ոմանք.* Եին առ մեզ: *Ոմանք.* Ձկին իւր:

* *Ոմանք.* Եւ երրորդ:

* *Ոմանք.* ՚ի յարութեան ո՞յր ՚ի յիւթանցն:

* *Ոմանք.* Ձզօրութիւնն:

* *Ոմանք յաւելուն.* Ընթերցեալ *ձեր* զասացեալսն ձեզ:

* *Ոմանք.* Եւ ոչ է Աստուած, Աստուած մե՞:

* *Բազումք.* Պապանձեցոյց:

* *Ոմանք.* Է մեծ յօրէնս:

* *Ոմանք.* Երկրորդն նման:

* *Ոմանք.* Յայս երկու պատ՞:

ընդ աջմէ իմմէ, մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց*։ ⁴⁵Իսկ եթէ Դաւիթ՝ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։ ⁴⁶Եւ ո՛չ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի. և ո՛չ իշխեր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչինչ։

23

Գլուխ ԻԳ

էզ. ¹Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն և ընդ աշակերտսն իւր՝ և ասէ. ²Յաթոռն Մովսիսի նստան դպիրքն և փարիսեցիք. ³զամենայն ինչ՝ որ ասիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք. բայց ըստ գործոցն նոցա՝ մի՛ առնէք, զի ասեն և ո՛չ առնեն*։ ⁴Կապեն բեռինս ծանո՛ւնս և դժուարակիրս, և դնեն ՚ի վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւրեանց ո՛չ կամին շարժել զնոսա*։ ⁵Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ՚ի ցոյցս մարդկան. լայնեն զգրապանակս իւրեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց*։ ⁶Սիրեն զյառաջագահս յընթիս, և զնախաթոռս ՚ի ժողովուրդս՝ և զողջոյնս ՚ի հրապարակս. ⁷և կոչել ՚ի մարդկանէ՝ Ռաբբի Ռաբբի։ ⁸Բայց դուք՝ մի՛ զոք կոչէք Վարդապետ, զի մի՛ է ձեր Ուսուցիչ, և ամենեքին դուք՝ եղբարք էք*։ ⁹Եւ Յայր՝ մի՛ կոչէք ձեզ յերկրի. զի ձեր՝ մի՛ է Յայր՝ որ յերկինսն է։ ¹⁰Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք. զի Ուսուցիչ ձեր՝ Քրիստոս է։ ¹¹Եւ մեծն ՚ի ձեռք եղիցի ձեր սպասաւոր։ ¹²Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի։

ԾԶ ¹³Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ո՛չ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել*։ ¹⁴Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք՝ առնել եկամուտ մի. և յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի՝ կրկին ևս քան զձեզ։ ¹⁵Վայ՝ ձեզ՝ առաջնորդք կոյրք. զի ասէք. Որ երդնու ՚ի տաճարն՝ չէ՛ ինչ, բայց որ երդնու յսկին որ ՚ի տաճարին է՝ արժան է։ ¹⁶Մորոսք և կոյրք՝ զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ՛ զոսկին։ ¹⁷Եւ որ երդնու ՚ի սեղանն՝ չէ՛ ինչ, բայց որ երդնու ՚ի պատարագն, որ ՚ի վերայ նորա է՝ արժան է։ ¹⁸Յիմարք և կոյրք՝ զի՞նչ մեծ է. պատարա՞գն, եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն։ ¹⁹Իսկ արդ՝ որ երդուաւ ՚ի սեղանն, երդուաւ ՚ի նա՛ և յամենայն որ ՚ի վերայ նորա է*։ ²⁰Եւ որ երդուաւ ՚ի տաճարն, երդուաւ ՚ի նա՛ և ՚ի բնակիչն նորա*։ ²¹Եւ որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ՝ և յայն որ նստին ՚ի վերայ նորա*։ ²²Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասանորդէք

* Ոմանք. Ասաց Տէրն ցՏէր իմ։

* Ոմանք. Ձամենայն ինչ զոր ասի՞։

* Ոսկան յաւելու. Կապեն մարդկան բեռինս։ Ոմանք. Շարժել զնա։

* Ոմանք. Եւ զամենայն զգործս իւր՝... ՚ի ցոյց մարդկան, լայնեն զգրապանս։

* Ոմանք. Մի՛ զոք կոչիցէք։

* Ոմանք. Եւ որ մտանենն։ Աստանօր՝ ըստ համեմատութեան Լատինական օրինակաց՝ Ոսկան յաւելու համար 14. *Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուստք զտունս յարեաց. պատճառանօք երկարէք զաղօթս. վասն զի աւելի դատաստան ընդունիցիք։ Այլ զայսու զանց առնեն առհասարակ ամենայն զրչագիրք մեր. համաձայն հնագոյն և հաւատարմագոյն Յունական օրինակաց։

* Ոմանք. Երդնու ՚ի նա... ՚ի վերայ նորա։

* Ոմանք. Երդնու ՚ի նա և։

* Ոմանք. Եւ որ երդնու յերկ՞։

զանաճուխ և զսամիթ և զչաման, և թողէք զժանր ծանր օրինացն՝
զդատաստան, և զողորմութիւն, և զհաւատս. զայս արժան էր առնել՝ և զայն՝
չթողուլ: ²⁴Առաջնորդք կոյրք, որ զմեղուկս քամէք, և զուղտս կլանէք: ²⁵Վայ՝ ձեզ
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի սրբէք զարտաքին զբաժակին և
զսկաւառակի, և ՚ի ներքոյ լի՛ են յափշտակութեամբ և անխառնութեամբ*:
²⁶Փարիսեցի՛ կոյր՝ սրբեա՛ նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի
և արտաքինն նոցա սուրբ: ²⁷Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի
նման էք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երկին գեղեցիկք, և ՚ի ներքոյ լի՛ են
ոսկերօք մեռելոց, և ամենայն պղծութեամբ*:
²⁸Նոյնպէս և դուք՝ արտաքոյ երկիք մարդկան արդարք, և ՚ի ներքոյ լի՛ էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ:
²⁹Վայ՝ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի շինէք զշիրիմս մարգարեից,
և զարդարէք զգերեզմանս արդարոց: ³⁰Եւ ասէք. Եթէ էա՛ք յաւուրս հարցն
մերոց՝ ո՛չ հաղորդէք արեան մարգարեիցն: ³¹Ապա ուրեմն վկայէք զանձանց՝
եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն*:
³²Եւ դուք՝ լցէք զչափ հարցն ձերոց: ³³Օ՛ձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ՚ի դատաստանէ
գեհեներին: ³⁴Վասն այդորիկ՝ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս, և
իմաստունս, և դպիրս. ՚ի նոցանէ սպանանիցէք, և ՚ի խաչ հանիցէք, և ՚ի նոցանէ
տանջիցէք ՚ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ՚ի քաղաքէ ՚ի քաղաք*:
³⁵Որպէս զի եկեսցէ ՚ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի. յարեմնէն Աբելի՛
արդարոյ մինչև ցարիւնն Ջաքարիայ որդւոյ Բարաքայ՝ զոր սպանէք ընդ մէջ
տաճարին և սեղանոյ*:
³⁶Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ՛ այն ամենայն ՚ի վերայ ազգիս
այսորիկ: ³⁷Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ. որ կոտորէր զմարգարէս և քարկոծ առնէր
զառաքեալսն առ նա. քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր
օրինակ ժողովէ հաւ զծագս իւր ընդ թևովք, և ո՛չ կամեցարուք*:
³⁸Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: ³⁹Բայց ասեմ ձեզ, թէ ո՛չ ևս տեսանիցէք զիս յայսմ
հետէ, մինչև ասիցէք. Օրհնեալ եկեալն յանուն Տեառն*:

Գլուխ ԻԴ

Էէ. ¹Եւ ելեալ արտաքս Յիսուս ՚ի տաճարէն՝ զնայր. և մատեան աշակերտքն
ցուցանել նմա զշինուածս տաճարին*:
²Եւ նա՛ պատասխանի՛ ետ՝ և ասէ ցնոսա. Տեսանիցէ՞ք զայդ ամենայն, ամէն ամէն ասեմ ձեզ. ո՛չ մնասցէ այդր քար՝ ՚ի
քարի վերայ որ ո՛չ քակտեսցի*:

* *Ոմանք.* Եւ սկաւառակին:
* *Ոմանք.* Ձի նմանէք... երկին գեղեցիկ, և ներքոյ:
* *Ոմանք.* Որ կոտորեցին զմարգա՛րէս:
* *Ոմանք.* Վասն այսորիկ ահաւա՛ս... և դպիրս. և ՚ի նոցանէ:
* *Ոմանք.* Որդւոյ Բարաքայ:
* *Ի յերեսունն գրչագրաց մերոց՝ իբր ութ օրինակք ընդ հին և ընդ նոր՝ ունին.* Որ
կոտորէր զմարգարէս և քարկոծ առնէր զառաքեալսն առ նա. և ՚ի սոցանէ երեք
միայն՝ զառաքեալսն առ քեզ: *Իսկ մնացեալքն առհասարակ հնագոյնք և
ընտրելագոյնք՝ դնեն համաձայն մերունս:*
* *Ոմանք.* Եկեալ յանուն Տեառն:
* *Ոմանք.* Ձշինուած տաճարին:
* *Այլք.* Տեսանէք զայդ ամենայն: *Բազումք միանգամ ունին.* Ամէն ասեմ ձեզ:

Ծե՞ Եւ մինչդեռ նստէր ՚ի լերինն Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն՝ և ասեն. Ասա՛ մեզ, ե՞րբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս: ⁴Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ձգո՛յշ լերուք՝ գուցէ որ զձեզ խաբիցէ՛. ⁵զի բազումք գայցեն յանուն ին, և ասիցեն՝ թէ ե՛ս եմ Քրիստոսն, և զբազո՛ւմս մոլորեցուցանիցեն՝: ⁶Լսելո՛ց էք պատերազմունս՝ և զհամբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի՛ խռովեսցիք, զի պա՛րտ է լինել այնմ ամենայնի, այլ չն՛ է կատարած՝: ⁷Յարիցէ՛ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան. և եղիցին սո՛վք և սրածութիւնք, և սասանութիւնք ՚ի տեղիս տեղիս՝: ⁸Սակայն և այն ամենայն՝ սկի՛զբն է երկանց: ⁹Յայնժամ մատնեսցեն զձեզ ՚ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ. և եղիցիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ՝: ¹⁰Եւ յայնժամ գայթազդեսցեն բազումք, և զմիմեանս մատնեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս: ¹¹Եւ բազո՛ւմ սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուցեն: ¹²Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն, ցամաքեսցի՛ սէր բազմաց: ¹³Բայց որ համբերեսցն ՚ի սպառ, նա կեցցէ՛: ¹⁴Եւ քարոզեսցի՛ ակետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ՚ի վկայութիւն ամենայն հեթանոսաց. և ապա՛ եկեսցէ կատարած: ¹⁵Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն ակետաճոյն, որ ասացեալն է ՚ի ձեռն Դանիէլի մարգարէի. զի կայցէ ՚ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռնուն՝ ՚ի միտ առցէ՛: ¹⁶Յայնժամ որ ՚ի Յրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս. ¹⁷և որ ՚ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ՚ի տանէ իւրմէ. ¹⁸և որ յանդի իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր: ¹⁹Բայց վա՛յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ: ²⁰Յաղօթս կացէք՝ զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերանի, և մի՛ ՚ի շարաթու: ²¹Ձի եղիցի յայնժամ նեղութիւն մե՛ծ, որպիսի ո՛չ եղև իսկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ո՛չ այլ լիցի: ²²Եւ եթէ ո՛չ կարճէին ակուրքն այնոքիկ, ո՛չ ապրէր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն՝ կարճեսցին ակուրքն այնոքիկ՝: ²³Յայնժամ՝ թէ որ ասիցէ ձեզ. Ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի՛ հաւատայցէք: ²⁴Ձի յարիցեն սո՛ւտ քրիստոսք և սո՛ւտ մարգարէք. և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչ մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ՝ և զընտրեալսն՝: ²⁵Ահա յառաջագոյն ասացի ձեզ՝: ²⁶Ապա թէ ասիցեն ձեզ. Ահաւանիկ յանապատի է, մի՛ ելանիցէք. և թէ ահա՛ յըշտեմարանս է, մի՛ հաւատայցէք: ²⁷Ձի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ: ²⁸Ձի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք՝: ²⁹Վաղվաղակի յետ նեղութեան ակուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի՛ և լուսին՝ ո՛չ տացէ զլոյս իւր. և աստեղք՝ անկցին՝ երկնից և զօրութիւնք երկնից՝ շարժեսցին: ³⁰Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ

* *Ոմանք.* Ձձեզ խաբեսցէ:

* *Բազումք.* Եւ ասացեն թէ... և զբազումս մոլորեցուցանեն:

* *Ոմանք.* Եւ համբաւս պա՛. զգո՛յշ կացէք, մի՛ խռո՛:

* *Ոմանք յաւելուն.* ՚ի թագաւորութեան *վերայ*:

* *Ոմանք.* Ձձեզ ՚ի նեղութիւնս:

* *Ոմանք.* Որ համբերեսցէ, *կամ՝* համբերէ իսպառ:

* *Ոմանք.* Ձպղծութիւն ակետաճին... ՚ի Դանիէլէ մարգարէէ, զի կացցէ ՚ի տեղ՛:

* *Ոմանք.* Այլ վասն ընտրելոցն:

* *Ոմանք.* Եւ տացեն նշանս... մինչև մոլորեցու՛... հնար իցէ:

* *Ոմանք.* Ապա եթէ ասիցեն:

* *Ոմանք.* Անդր և արծուիք ժողովեսցին:

մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ՝ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: ³¹Եւ առաքեսցէ զիրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նոցա: ³²Ի թզենւոյ՝ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին, և տերևն ցրցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն*: ³³Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասցիք թէ մերձ է ՚ի դուրս*: ³⁴Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի: ³⁵Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն:

ԾԸ ³⁶Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք երկնից, և ոչ Որդի՝ բայց միայն Հայր: ³⁷Այլ որպէս աւուրքն Նոյի, նոյնպէս եղիցի զալուստն Որդւոյ մարդոյ*: ³⁸Ձի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս ամենին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ՝ ՚ի տապանն, ³⁹և ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի և զալուստն Որդւոյ մարդոյ: ⁴⁰Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առնուցու և մեւսն թողուցու*: ⁴¹Եւ եթէ երկու աղայցեն ՚ի մի երկանս, մին առնուցու և մեւսն թողուցու*: ⁴²Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ*: ⁴³Ձայն գիտասցիք, եթէ գիտէր տանուտէր՝ յորում պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր ական հատանել զտանն իւրոյ*: ⁴⁴Վասն այսորիկ և դուք՝ եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ զայ՝ Որդի մարդոյ: ⁴⁵Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ՚ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ՚ի ժամու: ⁴⁶Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս*: ⁴⁷Ամէն ասեմ ձեզ, զի ՚ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա: ⁴⁸Ապա թէ ասիցէ ծառայն չար՝ ՚ի սրտի իւրում. Տէր իմ յամէ՛ զգալ*: ⁴⁹և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցօղս. ⁵⁰գայցէ՛ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի, և ՚ի ժամու յորում ոչ գիտիցէ*: ⁵¹և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց*:

25

Գլուխ ԻԵ

ԾԹ ¹Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տանն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և հարսին*: ²Հինգն ՚ի

* *Ոմանք.* Ոստքն նորա կակ՝... ցցուեսցի:

* *Ոմանք.* Ձայս ամենայն եղեալ, գիտասցիք թէ մերձ է առ դուրս:

* *Բազումք.* Այնպէս եղիցի զալ*:

* *Ոմանք.* Յայնժամ եթէ:

* *Օրինակ մի.* Երկու աղալ իցեն ՚ի:

* *Ոմանք նշանակեն ՚ի լուս.* Յորում աւուր Տէրն ձեր:

* *Ոմանք.* Ձայս գիտասցիք... տանուտէրն... զտան իւրոյ: *Օրինակ մի.* Յայն գիտասցիք:

* *Բազումք.* Երանի է ծա*:

* *Ոմանք.* Ապա եթէ ասիցէ:

* *Ոմանք.* Յորում ակն ոչ ունիցին:

* *Ոմանք.* Ընդ կեղծաւորսն:

* *Ոմանք.* Փեսային և հար*:

նոցանէ յիմարք էին՝ և հինգն իմաստունք: ³Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ո՛չ բարձին: ⁴Իսկ իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց*: ⁵Եւ ՚ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ՚ի քուն մտին: ⁶Եւ ՚ի մէջ գիշերի եղև բարբառ. Ահա՛ փեսայ գայ արի՛ք ընդ առաջ նորա*: ⁷Յայնժամ յարեան ամենայն կուսանքն, և կազմեցին զլապտերս իւրեանց: ⁸Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա՛ շիջանին լապտերքս մեր: ⁹Պատասխանի՛ ետուն իմաստունքն՝ և ասեն. Գուցէ ո՛չ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք ՚ի վաճառականս՝ և գնեսջի՛ք ձեզ: ¹⁰Իբրև նոքա գնացին գնել՝ և եկն փեսայն և պատրաստքն մտին ընդ մնա ՚ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռնն*: ¹¹Յետոյ՝ գան և այլ կուսանքն՝ և ասեն. Տէ՛ր տէ՛ր՝ բաց մեզ: ¹²Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ ո՛չ գիտեմ զձեզ*: ¹³Արթուն կացէք՝ զի ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամ*:

Կ ¹⁴Որպէս այր մի գնացեալ ՚ի տա՛ր աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր: ¹⁵Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն երկուս, և ումեմն մի. իւրաքանչիւր ըստ իւրո՛ւմ կարի, և գնաց*: ¹⁶Չոգաւ վաղվաղակի՝ որ ա՛ռ զհինգն, զործեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս հինգ: ¹⁷Նոյնպէս և որ զերկուսն շահեցաւ այլ ևս երկուս: ¹⁸Եւ որ զմիւսն առ՝ գնաց փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ տեա՛ռն իւրոյ: ¹⁹Յետ բազում ժամանակի, գայ տէր ծառայիցն այնոցիկ, և առնէ համարս ՚ի մէջ նոցա: ²⁰Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. Տէ՛ր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ ահաւասիկ՝ հինգ այլ ևս քանքար ՚ի վերայ շահեցայ*: ²¹Ասէ ցնա տէրն իւր. Ազնի՛ւ ծառայ՝ բարի՛ և հաւատարիմ, որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացուցի զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քոյ*: ²²Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր, և ասէ. Տէ՛ր՝ երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս՝ զոր ՚ի վերայ շահեցայ: ²³Ասէ ցնա տէրն իւր. Ազնի՛ւ ծառայ՝ բարի՛ և հաւատարիմ, որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քոյ: ²⁴Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. Տէ՛ր՝ զիտէի զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր, և ժողովե՛ս՝ ուստի ո՛չ սփռեցեր*. ²⁵Երկեայ՝ գնացի և թաքուցի՛ զքանքարս քո յերկրի. արդ՝ աւասիկ քոյդ՝ ցքե՛զ*: ²⁶Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա. Ծառայ՝ չար և վատ՝ զիտէիր թէ հնձեմ՝ ուստի ո՛չ սերմանեցի, և ժողովե՛մ՝ ուստի ո՛չ սփռեցի. ²⁷պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ՚ի սեղանաւորս, և եկեալ ես՝ տոկոսե՛օք պահանջի զիմն: ²⁸Արդ՝ առէ՛ք ՚ի դմանէ զքանքարդ՝ և տո՛ւք այնմ որ ունիցի զտա՛սն քանքարն: ²⁹Զի ամենայնի որ ունիցի՝ տացի՛ և յաւելցի, և որ ո՛չն

* Ոմանք. Առին ձէթ ամանովք:

* Ոմանք. Ահա գայ փեսայ:

* Ոմանք. Իբրև գնացին նոքա գնել, եկն փե՛:

* Ոմանք. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ երբէք զի՛:

* Ոմանք. Եւ ոչ զժամն:

* Ի բազումս պակասի. Եւ ումեմն մի:

* Ոմանք. Արդ աւասիկ:

* Բազումք. Կացուցից զքեզ:

* Ոմանք. Մատուցեալ և որ զմիւս քանքարն:

* Ոմանք. Զքանքարն քո յերկրի. ահաւաղիկ քոյդ:

* Ոմանք. Եթէ հնձեմ:

ունիցի, և զոր ունիցի՛ն՝ բարձցի՛ ՚ի նմանե՛: ³⁰Եւ զժառայդ անպիտան հանէ՛ք ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց:

ԿԱ ³¹Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի՛ յաթոռ փառաց իւրոց: ³²Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զօղիս յայծեաց*. ³³Եւ կացուցէ զօղիսն ընդ աջմէ՛ իւրմէ և զայծիսն ՚ի ձախմէ՛:

³⁴Յայնժամ ասասցէ՛ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. Եկայք օրհնեալք Յօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն իսկզբանէ աշխարհի՛: ³⁵Ձի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՛ և արբուցէք ինձ. օտար էի՛ և ժողովեցէք զիս. ³⁶մերկ՝ և զգեցուցէք զիս. հիւանդ էի՛ և տեսէք զիս. ՚ի բանտի էի՛ և եկի՛ք առ իս*: ³⁷Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք. կամ ծարաւի՛ և արբուցաք*. ³⁸Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք: ³⁹Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ ՚ի բանտի, և եկաք առ քեզ: ⁴⁰Պատասխանի՛ տացէ Թագաւորն՝ և ասասցէ ցնոսա. Ամէն ասե՛մ ձեզ. Որովհետև արարէք միում յեղբարցս յայսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք*:

⁴¹Յայնժամ ասասցէ՛ և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. Երթայք յինէն՝ անիծեալք ՚ի հուրն յաւիտեանական, որ պատրաստեալ է Սատանայի՛ և հրեշտակաց նորա: ⁴²Ձի քաղցեայ՝ և ո՛չ ետուք ինձ ուտել, ծարաւեցի՛ և ո՛չ արբուցէք զիս. ⁴³օտար էի՛ և ո՛չ ժողովեցէք զիս, մերկ էի՛ և ո՛չ զգեցուցէք զիս, հիւանդ՝ և ՚ի բանտի՛ և ո՛չ տեսէք զիս*: ⁴⁴Յայնժամ պատասխանի՛ տացեն և նոքա՝ և ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ ՚ի բանտի, և ո՛չ պաշտեցաք զքեզ: ⁴⁵Յայնժամ պատասխանի՛ տացէ նոցա՝ և ասասցէ. Ամէն ասե՛մ ձեզ. Որովհետև ո՛չ արարէք միում ՚ի փոքրկանցս յայսոցանէ, և ո՛չ ինձ արարէք: ⁴⁶Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանսն յաւիտեանականս, և արդարքն ՚ի կեանսն յաւիտեանականս:

26

Գլուխ ԻԶ

¹Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ՛ ցաշակերտսն իւր*. ²Գիտէ՛ք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և Որդի մարդոյ մատնի ՚ի խա՛ջ ելանել: ՎՋ. ³Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրք և ծերք ժողովրդեանն ՚ի սրա՛հ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափա. ⁴և արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս՝ և սպանցեն*: ⁵Բայց

* Ոմանք. Ձի ամենայն որ ունիցի:

* Ոմանք. Որպէս հովիւ մի զի: ՚ի լուս՝. Ձի մեկնեսցէ զօղիս յայծ՝. համաձայն ոմանց ՚ի բնար՝: Յօրինակին. Յածեաց:

* Ոսկան յաւելու. ՚ի ձախմէ իւրմէ:

* Ոմանք. Ձեզ զարքայութիւնն:

* Յօրինակին պակասէր. Ձիս. հիւանդ էի՛ և տեսէք զիս:

* Ոմանք. Պատասխանի տայցեն նմա:

* Յօրինակին. Թագաւորն՝ և ասէ ցնոսա: Ոմանք. Յեղբարցս յայսոցիկ:

* Ոմանք. Հիւանդ էի և ՚ի բանտի:

* Ոմանք. Ձբանսս զայսոսիկ:

* Ոմանք. Կալցեն զՅիսուս:

ասէին, թէ մի՛ ՚ի տօնի աստ՝ զի մի՛ խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն՝:

ԿԲ ⁶Իբրև եկն Յիսուս ՚ի Բեթանիա ՚ի տուն Սիմոնի բորոտի՝, ⁷մատեալ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և թափեաց ՚ի գլուխ նորա ՚ի բազմականին՝: ⁸Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան և ասեն. Ընդէ՞ր է կորուստոյ այդ իւղոյդ՝: ⁹զի մա՛րթ էր վաճառել զդա մեծագնի և տա՛լ աղքատաց՝: ¹⁰Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ձի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բարի՝ գործեաց դա յիս: ¹¹Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք: ¹²Արկանել դորա զելդդ ՚ի մարմին իմ, առ ՚ի թաղելոյ՝ զիս նշանակեաց: ¹³Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհի՝ խօսեսցի և զոր արար դա՝ ՚ի յիշատակ դորա՝: ¹⁴Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալն Յուդա Սկարիովտացի՝ առ քահանայապետսն, և ասէ՝: ¹⁵Ձի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցի՞ց զնա ձեզ: Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի՝: ¹⁶Եւ յայնմ հետէ խնդրէր պարա՛յ զի մատնեսցէ՛ զնա նոցա՛:

ԿԳ ¹⁷Եւ յառաջնուն աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. Ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք քեզ ուտել զգատիկն՝: ¹⁸Եւ նա՛ ասէ ցնոսա. Երթայք ՚ի քաղաքն առ այս անուն, և ասացէք ցնա. Վարդապետ ասէ. ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեն զգատիկ աշակերտօքս հանդերձ՝: ¹⁹Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, և պատրաստեցին զգատիկն: ²⁰Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն: ²¹Եւ մինչ դեռ ուտէին նոքա, ասէ. Ամէն ասեմ ձեզ, զի մի՛ ոմն ՚ի ձեցն մատնելոց է զիս: ²²Եւ տրտմեցան յոյժ. և սկսան ասել ցնա՝ իւրաքանչի՛ւր ոք ՚ի նոցանէ. Միթէ ե՛ս իցեմ Տէր՝: ²³Նա՛ պատասխանի ետ՝ և ասէ. Որ միսեաց ընդ իս զձեռն իւր ՚ի սկաւառակն՝ նա՛ մատնելոց է զիս՝: ²⁴Որդի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա. բայց վայ՝ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս Որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՛ թէ չէր ծնեալ մարդն այն՝: ²⁵Պատասխանի ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՛ և ասէ. Միթէ ե՛ս իցեմ վարդապետ: Ասէ ցնա. Դո՛ւ ասացեր:

ԿԴ ²⁶Եւ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց՝ օրհնեաց և երեկ, և ետ աշակերտացն՝ և ասէ. Առէք կերայք՝ այս է մարմին իմ՝: ²⁷Եւ առեալ բաժակ զոհացալ՝ ետ նոցա և ասէ. Արբէք ՚ի դմանէ ամենեքին՝. ²⁸զի այդ է արիւն իմ

* *Ոմանք.* Լինիցի ժողովրդեանն:

* *Յօրինակին.* Ի տուն Սիմոնի բորտի:

* *Ոմանք.* Ի գլուխն նորա ՚ի բազ՝:

* *Ոմանք.* Կորուստ այդ իւ՛:

* *Ոմանք.* Ձդա մեծագնոյ:

* *Ոմանք.* Բայց ամէն ամէն ասեմ ձեզ, զի ուր քարո՞: *Ոսկան.* Ի յիշատակի դորա:

* *Ոմանք.* Անուանեալ Յուդա Սկարովտացի:

* *Օրհնակ մի նշանակէ ՚ի լուս՝.* Եւ նոքա ուխտեցին նմա երեսուն:

* *Ոմանք.* Խնդրէր պարապով, զի:

* *Օրհնակ մի յաւելու.* Ձի երթիցուք պատրաստեսցուք... զգատիկն:

* *Ոսկան.* Վարդապետն ասէ: *Ոմանք.* Առնեն զգատիկս:

* *Ի բազումս պակասի.* Եւ սկսան:

* *Ոմանք.* Ձձեռն իւր ընդ իս ՚ի սկաւառակս:

* *Ոմանք.* Որպէս և գրեալ է... բայց վայ՝ իցէ... յոյր ձեռն Որդի մար՝:

* *Ոմանք.* Օրհնեաց երեկ, և ետ ցաշակերտսն:

* *Ոմանք.* Եւ առ բաժակ:

նորոյ ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղու ՚ի թողութիւն մեղաց: ²⁹Բայց ասե՛մ ձեզ. Ո՛չ ևս արբից յայսմ հետե՛ ՚ի բերոյ որոջ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նո՛ր յարքայութեան Զօր իմոյ՝: ³⁰Եւ օրհնեցին, և ելին ՚ի լեռն Զիթենեաց:

³¹Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին դուք՝ գայթազդելո՛ց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցին ոչխարք հօտին՝: ³²Եւ յետ յառնելոյն իմոյ, յառաջեցի՛ց քան զձեզ ՚ի Գալիլեա: ³³Պատասխանի ետ Պետրոս՝ և ասէ ցնա. Թեպէտ և ամենեքեան գայթազդեսցին ՚ի քէն, սակայն ես ո՛չ գայթազդեսցայց՝: ³⁴Ասէ ցնա Յիսուս. Ամէն ասե՛մ քեզ. զի յայսմ գիշերի՝ մինչև՛ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զիս: ³⁵Ասէ ցնա Պետրոս. Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ո՛չ ուրացայց: Նո՛յնպէս և ամենայն աշակերտքն ասէին: ³⁶Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ՚ի գեղ մի՝ որում անուն էր Գեթսամանի, և ասէ ցնոսա. Նստարո՛ւք այդո՛ մինչև երթայց կացից յաղօ՛թս՝: ³⁷Եւ առեալ ընդ իւր զՊե՛տրոս՝ և զերկուս որդիսն Ջեբեդեայ, սկսաւ տրտմել և հոգալ: ³⁸Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ մինչև ՚ի մահ, կացէ՛ք աստ՝ և սկեցէ՛ք ընդ իս՝: ³⁹Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ՝ ՚ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս՝ և ասէ. Զայ՛ր իմ, եթէ հնա՛ր է՝ անցցէ՛ բաժակս այս յինէն. բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դո՛ւ: ⁴⁰Գա՛յ առ աշակերտսն, և գտանէ զնոսա ՚ի քո՛ւն, և ասէ՛ ցՊետրոս. Այդպէս ո՛չ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս՝: ⁴¹Արթուն կացէք և աղօ՛թս արարէք՝ զի մի՛ անկանիցիք ՚ի փորձութիւն. հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկա՛ր՝: ⁴²Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկա՛ց յաղօթս Յիսուս՝ և ասէ. Զայ՛ր իմ՝ եթէ հնա՛ր իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ո՛չ՝ արբից զսա, եղիցին կամք քո՞: ⁴³Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ՚ի քո՛ւն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք: ⁴⁴Եթող զնոսա՝ և գնաց կաց յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց՝: ⁴⁵Յայնժամ գայ առ աշակերտսն՝ և ասէ ցնոսա. Ննջեցէ՛ք այսուհետև՝ և հանգերո՛ւք. զի ահա՛ հասեալ է ժամ, և Որդի մարդոյ մատնի՝ ՚ի ձեռս մեղաւորաց՝: ⁴⁶Արիք երթիցո՛ւք աստի, զի ահաւասիկ եհա՛ս որ մատնելոց է զիս:

Կէ ⁴⁷Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յո՛ւդա՝ մի յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրօք՝ ՚ի քահանայապետիցն և ՚ի ծերոց ժողովրդեանն՝: ⁴⁸Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նոցա նշան և ասէ. Ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա՛ ունիցիք: ⁴⁹Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս ասէ. Ո՛ղջ եր վա՛րդապետ: Եւ համբուրեաց ընդ նմա՝: ⁵⁰Եւ Յիսուս ասէ ցնա. Ը՛նկեր՝ վասն որո՞յ եկի՛րդ: Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յիսուս և

* *Յօրինակին պակասէր. Ջոզա ընդ ձեզ նոր յար՝:*

* *Յոմանս պակասի. Ոչխարքն հօտին:*

* *Ոմանք. Եւ ամենեքին՝ գայթազդեսցեն:*

* *՚ի լուս՝. Գեթսեմանի. համաձայն բազմաց ՚ի բնար՝:*

* *Օրինակ մի. Տրտում է անձն իմ:*

* *Ոսկան. Եկաց յաղօթս:*

* *Ոմանք. Ոչ կարացեր մի ժամ:*

* *Ոմանք. Ձի մի մտանիցէք ՚ի փորձութիւնն:*

* *Ոմանք. Կաց յաղօթս... եթէ հնար ինչ իցէ:*

* *Ոսկան. Եկաց յաղօթս:*

* *Օրինակ մի նշանակէ ՚ի լուս՝. Մատնի ՚ի ձեռս մարդկան:*

* *Ոմանք. Սրօք և բրովք:*

* *Ոմանք. Ո՛ղջ լեր:*

կալան զնա: ⁵¹Եւ ահա՛ մի ոմն յայնցանէ՛ որ էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան զսուր իւր՝ և եհար զժառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան զունկն նորա*։ ⁵²Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Դարձո՛ զսուր քո ՚ի տեղի իւր, զի ամենեքեան՝ որ սուր առնուցուն՝ սրով անկցին*։ ⁵³Թէ համարիցիս՝ թէ ո՞չ կարիցեմ աղաչել զՅայն իմ. և հասուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց*։ ⁵⁴Այլ զիա՞րդ լնուցուն զիրք եթէ այսպէս պարտ է լինել։ ⁵⁵Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխսն. Իբրև ՚ի վերայ աւագակի ելէք սուսերօք և բրօք՝ ունել զիս. հանապազ առ ձեզ ՚ի տաճարին նստի և ուսուցանէի, և ո՛չ կալայք զիս*։ ⁵⁶Այլ այս ամենայն եղև՝ զի լցցին զիրք մարգարէիցն։ Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան։ ⁵⁷Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին։ ⁵⁸Եւ Պե՛տրոս զհե՛տ նորա երթայր բացագոյն մինչև ՚ի սրահ քահանայապետին. և մտեալ ՚ի ներքս նստէր ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն։ ⁵⁹Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ. զի սպանանիցեն զնա*։ ⁶⁰և ո՛չ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց։ Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք, ⁶¹ասէին՝ թէ սա՛ ասէր. Կարօ՞ղ եմ քակել զտաճարն Աստուծոյ, և զերիս աւուրս շինել։ ⁶²Եւ յարուցեալ քահանայապետն ասէ ցնա. Չտա՞ս ինչ պատասխանի, զինչ դոքա ամբաստանեն զքէն*։ ⁶³Եւ Յիսուս լու՛ռ կայր։ Պատասխանի՛ ետ քահանայապետն և ասէ ցնա. Երդմնեցուցանեն զքեզ յԱստուած կենդանի, զի ասացես մեզ՝ թէ դու ես Զրիստոսն Որդի Աստուծոյ։ ⁶⁴Ասէ ցնա Յիսուս. Դու՛ ասացեր. բայց ասե՛մ ձեզ. Յայնս՛մ հետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Չորութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից*։ ⁶⁵Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ. Յայիոյեաց. զի՞՞ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա արդ՝ լուայք զհայիոյութիւն դորա*։ ⁶⁶զի՞նչ հաճոյ է ձեզ։ Նոքա պատասխանի՛ ետուն և ասեն. Մահապարտ է։ ⁶⁷Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կռփեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն. ⁶⁸Մարգարեաց մեզ Զրիստոսդ, ո՞վ է՝ որ եհարն զքեզ։

ԿՁ ⁶⁹Իսկ Պե՛տրոս նստէր արտաքոյ ՚ի գաւթին. մատեալ առ նա աղախին մի՛ և ասէ. Եւ դու՛ ընդ Յիսուսի Գալիլեացոյ էիր։ ⁷⁰Նա՛ ուրացալ առաջի ամենեցուն՝ և ասէ, թէ ո՛չ գիտեմ զինչ խօսիսդ։ ⁷¹Եւ իբրև ել նա արտաքս քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. Եւ սա՛ ընդ Յիսուսի Նագովրեցոյ էր*։ ⁷²Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ ո՛չ գիտեմ զայրն։ ⁷³Եւ յետ՝ սակալ միոյ մատուցեալ որք կայինն անդ՝ և ասեն ցՊե՛տրոս.

* Ոմանք. Որ ընդ Յիսուսի էին... զունկնն նորա։

* Այլք. Սրով անկանիցին։

* Ոմանք. Թէ համարեսցիս թէ ոչ կարեմ աղա՛։ *Յօրինակին պակասէր.* Հասուցանիցէ ինձ այժմ։ *Ուր ոմանք.* Ինձ աւելի քան։

* Ոմանք. Յիսուս ցամբոխսն... առ ձեզ էի ՚ի տաճա՛։

* Ոմանք. Ձի սպանցեն զնա։

* Ոմանք. Ամբաստանենդ զքէն։

* Ոմանք. Ասեմ ձեզ. զի յայնս՛մ հետէ։

* *Յօրինակին.* Պիտոյ է մեզ վկայք։ *Ոմանք.* Լուաք. և *ոմանք.* Լուարուք զհայիոյութիւնն նորա։

* *Բազումք.* Նագովրացոյ էր։

Արդարև և դո՛ւ 'ի նոցանէ ես, քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ*։ ⁷⁴Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ, թէ ո՛չ գիտեն զայրն։ Եւ իսկոյն՝ հա՛ւ խօսեցաւ։ ⁷⁵Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց, թէ մինչչև՝ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս։ Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս։

27

Գլուխ ԻԷ

¹Իբրև այգ եղև, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել զնա։ ²Կապեցին զնա, և առին զնացին. և ետուն 'ի ձեռս Պոնտացոյ Պիղատոսի՝ դատաւորի*։

Կէ ³Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեացն զնա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ. և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն* ⁴և ասէ. Մեղայ՛ զի մատնեցի զարիւն արդար։ Եւ նոքա ասեն. Մեզ՝ չէ՛ փոյթ, դո՛ւ գիտես։ ⁵Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարին՝ և զնաց, և չոգաւ խեղդեցաւ*։ ⁶Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ ասեն. Ո՛չ է արժան ընդունել զայդ՝ 'ի կորբանն, քանզի գինք արեան են*։ ⁷Խորհուրդ արարեալ, զնեցին այնու զագարակն բրտի 'ի գերեզման օտարաց*։ ⁸Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն Ագարակ արեան՝ մինչև ցայսօր։ ⁹Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն 'ի ձեռն Երեմիայի մարգարէի. Եւ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորդոցն Իսրայէլի*, ¹⁰և ետուն զնա յագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր։ ¹¹Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. եհարց ցնա դատաւորն՝ և ասէ. Դո՞ւ ես թագաւորն Յրէից։ Եւ Յիսուս ասէ. Դո՛ւ ասես։ ¹²Եւ 'ի չարախօսելն նորա 'ի քահանայապետիցն և 'ի ծերոց, ո՛չ ինչ ետ պատասխանի։ ¹³Յայնժամ ասէ ցնա Պեղատոս. Ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն*։ ¹⁴Եւ ո՛չ ետ նմա պատասխանի՝ և ո՛չ բան մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ։ ¹⁵Բայց ըստ տօնի սովոր՝ էր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին*։ ¹⁶Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որուն անուն էր Յեսու՛ Բարաբբայ*։ ¹⁷Իբրև ժողովեցան, ասէ ցնոսա Պեղատոս. Ձո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ, զՅեսու՛ Բարաբբա՝ եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ ¹⁸Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա։ ¹⁹Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. Չկայ՛ ինչ՝ քո և արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր

* Ոմանք. Եւ յետ սակաւիկ միոյ... քանզի խօս քո յայտ։ Այլք. Անդ. ասեն ցՊետրոս։

* Ոմանք. Ձնա, և առեալ զնացին։ Յօրինակին՝ անունս Պիղատոս, այլև այլ եղանակաւ գրի, ըստ որում և մեք համաձայնեցաք։

* Ոմանք. Որ մատնեաց զնա... և առ ծերս. կամ՝ ցծերս ժո՞։

* Ոմանք. Ձարծաթն 'ի տաճարն։

* Ոմանք. Ոչ է արժան արկանել զայդ։

* Ոմանք. Խորհուրդ առեալ՝ զնա՞... 'ի գերեզմանս օտարաց։

* Ոմանք. 'Ի ձեռն Երեմիայ մար՞... զերեսուն արծաթի. կամ՝ արծաթն. որպէս։ Ոսկան. Ձոր առին յորդոցն Իսրայէլի։

* Ոմանք. Ասէ ցնոսա Պիղատոս։

* Ոմանք. Ըստ տօնին։

* Ոմանք. Եւ ունէին յայնժամ... անունն էր։

յանուրջս վասն նորա*։ ²⁰Իսկ քահանայապետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն զԲարաբբայն և զՅիսուս կորուսցեն*։
²¹Պատասխանի ետ դատաւորն և ասէ ցնոսա. Ձո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց աստի։ Եւ նոքա ասեն. զԲարաբբա*։ ²²Ասէ ցնոսա Պեղատոս. Իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ ²³Ասեն ամենեքեան. Խաչեսցի։ Եւ նա՝ ասէ. Ձի՞նչ չար արար։ Եւ նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին. Խաչեսցի։ ²⁴Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ո՛չ ինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զծեռս առաջի ժողովողեանն և ասէ. Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դո՛ւք գիտասջիք*։ ²⁵Պատասխանի՝ ետ ամենայն ժողովուրդն և ասէ. Արիւն դորա՝ ՚ի վերայ մեր և ՚ի վերայ որդւոց մերոց։ ²⁶Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն. և զՅիսուս զան հարեալ ետ ՚ի ձեռս՝ զի խաչեսցի։ ²⁷Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս. և ժողովեցին ՚ի վերայ նորա զամենայն զգունդն։ ²⁸Մերկացին զնա, և արկին զնովաւ քղամիդ կարմիր*։ ²⁹Եւ բոլորեալ պսակ ՚ի փշոց՝ եղին ՚ի գլուխ նորա, և եղէզն յաջու ձեռին նորա. ՚ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. Ո՞ղջ եր՝ թագաւոր Յրեից*։ ³⁰Եւ թքեալ ՚ի նա՝ առնուին զեղէզնն և ծեծէին զգլուխ նորա։ ³¹Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին ՚ի նմանէ զքղամիդն կարմիր՝ և ագուցին նմա զիւր հանդերձն, և տարան զնա ՚ի խաչ հանել*։ ³²Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիրենացի՝ անուն Սիմովն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն նորա։ ³³Եւ եկեալ ՚ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի՝ կառափելոյ*։ ³⁴Ետուն նմա ընպել գինի՝ ընդ լեղի՝ խառնեալ. և իբրև ճաշակեաց, ո՛չ կամէր ընպել*։ ³⁵Եւ հանեալ զնա ՚ի խաչ, բաժանեցին զհանդերձսն նորա վիճակաւ. զի լցցի՝ բանն՝ որ ասացաւ ՚ի մարգարէն. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։ ³⁶Եւ նստեալ՝ պահէին զնա։ ³⁷Եւ եղին ՚ի վերայ զխոյ նորա գրեալ՝ զվնաս նորա, թէ՛ Այս է Յիսուս թագաւորն Յրեից*։ ³⁸Յայնժամ հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի՝ յաջմէ՝ նորա, և մի յահեկէ։ ³⁹Եւ որ անցանէինն՝ հայիոյէին զնա. շարժէին զգլուխս իւրեանց, ⁴⁰և ասէին. Վա՞հ. որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո՞ զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ*։ ⁴¹Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ասէին*։ ⁴²Ձայլս ապրեցոյց, զինքն ո՛չ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ՛ այժմ ՚ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա. ⁴³եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ՛ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ Որդի եմ։ ⁴⁴Ձնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին

* *Ոսկան.* Եւ մինչդեռ նստէր։ *Ոմանք.* Յանուրջ վասն նորա։

* *Ոմանք.* Ձժողովուրդսն, զի։

* *Ոմանք.* Յերկուց այտի։

* *Ոմանք.* Արդարոյն այնորիկ։

* *Ոմանք.* Մերկացուցին. *կամ՝* մերկեցին... և արկին զնոքօք։

* *Ոմանք.* Յաջոյ ձեռին նորա... ո՞ղջ լեր թա՛։

* *Ի բազումս պակասի.* Ձքղամիդն *կարմիր* և։

* *Ոմանք.* Անուանեալն Գողգոթայ։

* *Յոմանս պակասի.* Նմա *ընպել* գինի։

* *Ոմանք.* Թէ սա է Յիսուս թա՛։

* *Ոմանք.* Եթէ Որդի ես։

* *Ոմանք յաւելուն.* Դպրօքն և ծերովք՝ և ասէին։

զնա: ⁴⁵Եւ ՚ի վե՛ց ժամե՛ աւուրն՝ խաւա՛ր եղև ՚ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ*։ ⁴⁶Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս ՚ի ձայն մե՛ծ՝ և ասէ. Է՛ղի, Է՛ղի, դ՛ամա սաբաքթանի. ա՛յս ինքն է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս*։ ⁴⁷Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին. Ջեղիա՛ կարդայ դա*։ ⁴⁸Եւ վաղվաղակի ընթացաւ միոմն ՚ի նոցանէ, ա՛ն սպունգ լի՛ քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպե՛լ նմա*։ ⁴⁹Եւ կէսքն ասէին. Թո՛ղ տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա*։ ⁵⁰Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և արձակեաց զոգին։ ⁵¹Եւ ահա՛ վարագոյր տաճարին ցեւալ յերկուս, ՚ի վերուստ մինչև ՚ի վայր։ Եւ երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան։ ⁵²Եւ գերեզմանք՝ բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։ ⁵³Եւ ելեալ ՚ի գերեզմանաց յետ յարութեանն նորա, մտի՛ն ՚ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց։ ⁵⁴Իսկ հարիւրապետն՝ և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն, երկեան յոյժ՝ և ասեն. Արդարև՝ Աստուծոյ Որդի էր սա*։ ⁵⁵Էին անդ կանայք բազումք, կային ՚ի հեռաստանէ՝ և հայէին, որք եկին զկնի Յիսուսի ՚ի Գալիլեէ պաշտել զնա*։ ⁵⁶Եւ ի՛ր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր, և մայր որդւոցն Ջեբեղեայ։ ⁵⁷Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ, որում անուն էր՝ Յովսէփ. որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի*։ ⁵⁸Սա՛ մատուցեալ առ Պեղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պեղատոս հրամայեաց տա՛լ զմարմինն*։ ⁵⁹Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, ⁶⁰և ե՛ր ՚ի նո՛ր գերեզմանի՝ զոր փորեաց ՚ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ զնաց*։ ⁶¹Անդ էր Մարիամ Մագդաղենացի, և մեւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։ ⁶²Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պեղատոս, ⁶³և ասեն. Տե՛ր յիշեցա՛ք զի մոլորեցուցիչն այն՝ ասէ՛ր մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառնեն։ ⁶⁴Արդ՝ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս, զուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեալ ՚ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չա՛ր քան զառաջինն*։ ⁶⁵Ասէ ցնոսա Պեղատոս. Ունիք զգորականն, երթա՛յք զգուշացարուք որպէս և գիտէք*։ ⁶⁶Եւ նոքա երթեալ՝ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

* Ոմանք. Յինն ժամն։

* Յօրինակին. Ղամասա՝ բաքթանի։ Ոմանք միանգամ ունին. Աստուած իմ։

* Յոմանս պակասի. Կարդայ դա։

* Ոմանք. Ընթացեալ միոմն... և ետ ըմպել։

* Ոմանք. Տեսցուք, գայ Եղիա։

* Բազումք. Ջշարժումնն։ Ոմանք. Որդի Աստուծոյ էր։

* Ոմանք. Որք եկեալ էին զկնի Յիսուսի ՚ի Գալիլեայ։

* Ոմանք. Որ և աշակեր՛։

* Յօրինակին պակասէր. Սա մատուցեալ։

* Ոմանք. Վէմ մի մեծ, և զնաց։

* Յօրինակին պակասէր. Թէ յարեալ։

* Օրինակ մի. Ունիք զօրականս. և Ոսկան. Ունիք զգորականս։

Գլուխ ԻԸ

ԿԸ ¹Եւ յերեկոյի՝ շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, և մե՛ւս Մարիամն՝ տեսանել՝ զգերեզմանն: ²Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից, մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվեմն ՚ի դրաց անտի՝ և նստէր ՚ի վերայ նորա. ³և էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զծիւն: ⁴Եւ յահէ՛ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալ: ⁵Պատասխանի՛ ետ հրեշտակն՝ և ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք, զիտեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. ⁶չէ՛ աստ. քանզի յարեալ՝ որպէս ասացն. եկայք, տեսէք զտեղին ուր կայր: ⁷Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա թէ յարեալ. և ահա՛ յառաջանայ քան զձեզ ՚ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա. ահա՛ ասացի՛ ձեզ: ⁸Եւ ելեալ վաղվաղակի՝ ՚ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն: ⁹Եւ ահա՛ պատահեաց նոցա Յիսուս՝ և ասէ. Ո՞րչ էք: Եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիր պագին նմա: ¹⁰Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթցեն ՚ի Գալիլեա՝ և անդ տեսցեն զիս: ¹¹Իբրև նոքա գնացին, ահա՛ ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղևն: ¹²Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն, ¹³և ասեն. Ասասջի՛ք եթէ աշակերտքն նորա եկեալ զիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք: ¹⁴Եւ եթէ լուր լիցի այդ՝ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա, և զձեզ անհոգս արասցուք: ¹⁵Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս ՚ի Յրէից՝ մինչև ցայսօր:

¹⁶Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի Գալիլեա ՚ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս: ¹⁷Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա. և ոմանք յերկուացան: ¹⁸Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Տուա՛ւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Յայր, և ես առաքեմ զձեզ: ¹⁹Գնացէ՛ք այսուհետև՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝ և Որդոյ՝ և Հոգւոյ Սրբոյ: ²⁰Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ՚ի կատարած աշխարհի:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ*

* *Ոմանք.* Եւ եղեն իբրև զմեռեալս:

* *Ոմանք.* Որպէս ասաց: *Ոսկան.* Եկայք և տեսէք:

* *Ոմանք.* ՚ի գերեզմանէն՝ ահիւ և:

* *Ոմանք.* Եղբարց իմոց:

* *Ոմանք.* Ծերովքն ՚ի խորհուրդ. առեալ արծաթ:

* *Ոմանք.* Եկեալ ՚ի գիշերի:

* *Ոմանք.* Եւ Հոգւոյն Սրբոյ:

* *Ոսկան.* Ջամենայն զոր ինչ պատ:

* *Ի վախճան իւրաքանչիւր աւետարանաց գրեթէ ամենայն գրչագիրք սովին եղանակաւ կնքեն զգիրս. Աւետարան ըստ Մատթեոսի. կամ՝ Մարկոսի. և այլն. բաց ՚ի սակաւուց ոմանց, որք ունին՝ Կատարեցաւ Աւետարան ըստ, և այլն. և ոմանք. Կատարեցաւ զլուիք Աւետարանին որ ըստ, և այլն: Եւս՝ ոմանք աստէն ՚ի վախճանի փոխադրեն*

ՍԿԻՋՔՆ ԳԼԽՈՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Վասն դիւահարին.... Մարկ. Ա, Ղուկ. Ը,
Վասն Պետրոսի զոքընչին.... Մարկ. Բ, Ղուկ. Թ, ... Մատ. Ը
Վասն բժշկութեան պեսպես հիւանդութեանց.... Մարկ. Գ, Ղուկ. Ժ, ... Մատ.
Թ
Վասն բորոտին.... Մարկ. Դ, Ղուկ. ԺԲ, ... Մատ. Զ
Վասն անդամալուծին.... Մարկ. Ե, Ղուկ. ԺԳ, Յովհ. ԺԳ, Մատ. ԺԳ
Վասն Ղևեայ մաքսաւորի.... Մարկ. Զ, Ղուկ. ԺԴ, ... Մատ. ԺԴ
Վասն գօսացեալ ձեռնին.... Մարկ. Է, Ղուկ. ԺԵ, ... Մատ. ԻԱ
Վասն առաքելոցն ընտրութեան.... Մարկ. Ը, Ղուկ. ԻԵ, ... Մատ. ԺԹ
Վասն սերմանեացն առակի.... Մարկ. Թ, Ղուկ. ԻԲ, ... Մատ. ԻԴ
Վասն սաստելոյ ջուրցն.... Մարկ. Ժ, Ղուկ. ԻԳ, ... Մատ. ԺԱ
Վասն լէգեովնացն.... Մարկ. ԺԱ, Ղուկ. ԻԴ, ... Մատ. ԺԲ
Վասն դատեր ժողովրդապետին.... Մարկ. ԺԲ, Ղուկ. ԻԵ, ... Մատ. ԺԵ
Վասն տեռատեսին.... Մարկ. ԺԳ, Ղուկ. ԻԶ, ... Մատ. ԺԶ
Վասն համարոյ առաքելոցն.... Մարկ. ԺԴ, Ղուկ. ԻԷ, ... Մատ. ԺԸ
Վասն Յովհաննու, և Յերովդէի.... Մարկ. ԺԵ, Մատ. ԻԵ
Վասն հինգ հացին՝ և երկուց ձկանցն.... Մարկ. ԺԶ, Ղուկ. ԻԸ, Յովհ. ԺԵ,
Մատ. ԻԶ
Վասն ՚ի վերայ ծովուն գնալոյ.... Մարկ. ԺԵ, ... Յովհ. ԺԶ, Մատ. ԻԵ
Վասն անցանելոյն զպատուհրանան.... Մարկ. ԺԸ, Մատ. ԻԸ
Վասն Ասորոյ կնոջն Փիւնիկեցոյ.... Մարկ. ԺԹ, Մատ. ԻԹ
Վասն համերն և խլին.... Մարկ. Ի, Ղուկ. ԼԹ, ... Մատ. ԻԲ
Վասն եւթն հացին.... Մարկ. ԻԱ, Մատ. ԼԱ
Վասն խմորոյ փարիսեցոցն.... Մարկ. ԻԲ, Ղուկ. ԽԴ, ... Մատ. ԼԲ
Վասն կուրին.... Մարկ. ԻԳ,
Վասն հարցանելոյն ՚ի Կեսարիա.... Մարկ. ԻԴ, Ղուկ. ԻԹ, ... Մատ. ԼԳ
Վասն այլակերպութեանն Տեառն.... Մարկ. ԻԵ, Ղուկ. Լ, ... Մատ. ԼԴ
Վասն լուսնահարին.... Մարկ. ԻԶ, Ղուկ. ԼԱ, ... Մատ. ԼԵ
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ.... Մարկ. ԻԷ, Ղուկ. ԼԲ, ... Մատ. ԼԵ
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին.... Մարկ. ԻԸ, Մատ.
Խ
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.... Մարկ. ԻԹ, Ղուկ. ԿԳ, ... Մատ.
ԽԱ
Վասն որդւոցն Ձերեղեայ.... Մարկ. Լ, Մատ. ԽԳ
Վասն Բարտեմէոսի.... Մարկ. ԼԱ, Ղուկ. ԿԴ, ... Մատ. ԽԴ
Վասն յաւանակին.... Մարկ. ԼԲ, Ղուկ. ԿԸ, Յովհ. ԻԶ, Մատ. ԽԵ
Վասն չորանալոյ թզենւոյն.... Մարկ. ԼԳ, Մատ. ԽԵ
Վասն անյիշաչարութեան.... Մարկ. ԼԴ,
Վասն հարցանելոյ քահանայապետիցն զՏէրն.... Մարկ. ԼԵ, Ղուկ. ԿԹ, ...
Մատ. ԽԸ

զայն բան նախադրութեան. Մատթեոս գրեաց. և այլն: Ունի գլուխս. և այլն: Տունս. և
այլն:

Վասն այգւոյն.... Մարկ. ԼԶ, Ղուկ. Զ, ... Մատ. Ծ
 Վասն հարցանելոյ զդահեկանէն.... Մարկ. ԼԷ, Ղուկ. ԶԱ, ... Մատ. ԾԲ
 Վասն սաղուկեցւոցն.... Մարկ. ԼԸ, Ղուկ. ԶԲ, ... Մատ. ԾԳ
 Վասն դպրացն.... Մարկ. ԼԹ, ... Մատ. ԾԴ
 Վասն Տեառն հարցանելոյ զփարիսեցիսն.... Մարկ. Խ, Ղուկ. ԶԳ, ... Մատ. ԾԵ
 Վասն երկու լումայիցն.... Մարկ. ԽԱ, Ղուկ. ԶԴ, ...
 Վասն կատարածին.... Մարկ. ԽԲ, Ղուկ. ԶԵ, ... Մատ. ԾԶ
 Վասն աւուրն, և ժամուն.... Մարկ. ԽԳ, ... Մատ. ԾԸ
 Վասն օժանելոյ կնոջն զՏէրն իւղով.... Մարկ. ԽԴ, Ղուկ. ԻԱ, Յովի. ԻԴ,
 Մատ. ԿԲ
 Վասն զատկին.... Մարկ. ԽԵ, Ղուկ. ԶԶ, ... Մատ. ԿԳ
 Վասն մատնութեանն մարգարէանալոյ.... Մարկ. ԽԶ, ... Մատ. ԿԵ
 Վասն Պետրոսի ուրացութեանն.... Մարկ. ԽԷ, ... Մատ. ԿԶ
 Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.... Մարկ. ԽԸ, Ղուկ. ԶԲ, Յովի. ԼԷ,
 Մատ. ԿԸ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի, գրեալ է սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի, և ընթացակից Պաւլոսի, գրեաց զաւետարանս զայս: Եւ դնէ սկիզբն և ասէ. Սկիզբն աւետարանի, ՚ի Յովհաննո՛ւ քարոզութենէն. և զմկրտութիւնն Յովհաննոս. և առնու վկայութիւն յիսայայ մարգարէէ. նշանակէ և զփորձութիւնն ՚ի լէրինն, և ո՛չ ասէ զփորձանքն. պատմէ և վասն ընտրութեան աշակերտացն, և նշանս և արուեստս զոր արար. և զխորհուրդ մատնութեանն, և զկատարածն. և որ մատնեցաւ Պիղատոսի, և խաչեցաւ մարմնով. և զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. և զի մարմինն եղաւ ՚ի գերեզմանի, և յարեաւ երեքօրեայ. և զիջանել հրեշտակին, և երևել կանանցն, և զնոյնն պատմել աշակերտացն:

Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի՛ գրեաց զաւետարանս իւր՝ յԱղէքսանդր քաղաքի ՚ի լեզու Եգիպտացի, զկնի ժե ամի համբառնալոյ Փրկչին: Ունի գլուխս ՄԼԳ: Վկայութիւնս ժե: Տունս ՌՌ:

Մարկոս՝ Բարձ պատուար, կամ ՚ի վերայ տանեացն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

1

Գլուխ Ա

¹Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ: ²Որպէս և գրեալ է ՚ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քոյ, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քոյ*: ³Չայն բարբառոյ յանապատի.

* Ոճանք. Որպէս և գրեալ է Եսայի. *կամ*՝ յԵսայի մարգարէ... զճանապարհ քո:

Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղս արարէք զշաւիղս նորա*:
⁴Եւ եղև՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր մկրտութիւն
ապաշխարութեան՝ ի թողութիւն մեղաց: ⁵Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն
Հրեաստանի, և Երուսաղէմացիք ամենեքեան. և մկրտէին ՚ի նմանէ՝ ՚ի Յորդանան
գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց*:
⁶Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստև՝ ուղտու, և գօտի՝ մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա մարախ՝ և մեղր վայրենի:
⁷Քարոզէր և ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական
խոնարհել՝ լուծանել զխրացս կօշկաց նորա*:
⁸Ես՝ մկրտեցի զձեզ ջրով, և նա
մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով*:
⁹Եւ եղև յաւուրսն յայնոսիկ Եկն Յիսուս ՚ի
Նազարեթ Գալիլեացոց, և մկրտեցաւ ՚ի Յովհաննէ ՚ի Յորդանան*:
¹⁰Եւ
նոյնժամայն ընդ վերանալ ՚ի ջրոցն, ետես ցելեալ գերկինս, և զՀոգին
Աստուծոյ իբրև զաղաւնի՝ զի իջանէր ՚ի վերայ նորա*:
¹¹Չայն եղև յերկնից՝ և
ասէ. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ*:
¹²Եւ նոյնժամայն՝ Հոգին հանէ՝
զնա յանապատ: ¹³Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի Սատանայէ. և
էր ընդ զազանս, և հրեշտակք պաշտէին զնա*:
բբ. ¹⁴Եւ յետ մատնելոյն
Յովհաննու, Եկն Յիսուս ՚ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝ և ասէր.
¹⁵Քէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ.
ապաշխարեցէք և հաւատացէք յաւետարանն: ¹⁶Իբրև անցանէր առ ծովեզերքն
Գալիլեացոց, ետես զՍիմոն և զԱնդրէաս եղբայր Սիմոնի, զի արկեալ էր
նոցա ուռկանս ՚ի ծով. քանզի ձկնորսք էին*:
¹⁷Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք
զկնի իմ, և արարից զձեզ՝ լինել որսորդս մարդկան: ¹⁸Եւ վաղվաղակի թողեալ
զուռկանսն, զնացին զհետ նորա: ¹⁹Եւ մատուցեալ անտի՝ սակաւիկ մի յառաջ,
ետես զՅակովբոս Չեբեդեայ՝ և զՅովհաննէս եղբայր նորա, և զնոսա ՚ի նաւին
մինչ կազմէին զուռկանս, և կոչեաց զնոսա*:
²⁰Եւ վաղվաղակի թողեալ զհայրն
իւրեանց Չեբեդոս ՚ի նաւին վարձկանօքն հանդերձ, զնացին զհետ նորա*:
բգ.
²¹Եւ մտանէն ՚ի Կափառնաում. և իսկ և իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն,
ուսուցանէր զնոսա: ²²Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի
ուսուցանէր զնոսա իբրև իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն:
Ա ²³Եւ էր ՚ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր ՚ի նմա. որ
աղաղակեաց՝ և ասէ*.
²⁴Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր
կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՞վ ես, Սուրբն Աստուծոյ*:
²⁵Սաստեաց ՚ի նա
Յիսուս՝ և ասէ. Կարկեաց՝ և ել ՚ի դմանէ: ²⁶Եւ զարկոյց զնա այսն պիղծ. և
աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և ել ՚ի նմանէ: ²⁷Եւ զարմացան ամենեքին, մինչև
հծծել ընդ միմեանս՝ և ասել. Չի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի

* *Ոմանք.* Ձճանապարհս Տեառն, և ուղիղ արա՞:

* *Ոմանք.* Խոստովանել զմեղս իւրե՞:

* *Ոմանք.* Ջօրագոյն քան զիս... խոնարհել և լուծա՞:

* *Ոմանք.* Ես մկրտեմ զձեզ ջրով... Հոգւովն Սրբով: *Ուր ևս ոմանք.* Ես մկրտեցից զձեզ:

* *Ոմանք.* ՚ի Յորդանան գետ:

* *Ոմանք.* Ընդ վերանալն ՚ի:

* *Ոմանք.* Ընդ որ հաճեցայ:

* *Յոմանս պակասի.* Եւ էր նա անդ:

* *Ոմանք.* Չեղբայր Սիմոնի:

* *Ոմանք.* Չեղբայր նորա... կազմէին ուռկանս:

* *Ոմանք.* ՉՉեբեդեոս ՚ի նաւին:

* *Ոմանք.* ՚ի ժողովրդեան նոցա: *Առ Ոսկանայ պակասի.* Գոյր ՚ի նմա:

* *Ոմանք.* Չի կայ իմ և քո... սուրբն Աստուծոյ:

իշխանութեամբ և այսոց պղծոց սաստ, և հնազանդին սմա*։ 28Եւ ե՛լ լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացոց*։

Բ 29Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժորովրդեան, ե՛կն ՚ի տուն Սիմովնի՝ և Անդրեայ՝ Յակովբայ և Յովհաննո՛ւ հանդերձ։ 30Եւ զոքանչ Սիմովնի դներ ջերմացեալ և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։ 31Եւ մատուցեալ յարո՛յց զնա՝ կալեալ զձեռանէ նորա և եթող զնա տենդն, և պաշտէր զնոսա։

Գ 32Եւ իբրև երեկոյ՝ եղև ՚ի մտանել արեգականն, բերին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս*։ 33Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դուրսն*։ 34Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պէսպէս արտից և դևս բազումս եհան և ո՛չ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա՝ թէ Քրիստոսն է*։ Բդ. 35Եւ ընդ այժ ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ե՛լ և զնա՛ց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթ*։ 36Եւ զնա՛ց զհետ նորա Սիմովն՝ և որ ընդ նմայն էին. 37և իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենքին խնդրեն զքեզ*։ 38Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գեղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայն իսկ եկեալ եմ։ 39Եւ քարոզէր ՚ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դևս հանէր։

Դ 40Գայ առ նա բորոտ մի, աղաչէր ՚ի ծունր իջանէր՝ և ասէր. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս բժշկել*։ 41Իսկ Յիսուս գրացեալ՝ ձգեաց ձեռն, մերձեցաւ ՚ի նա՝ և ասէ ցնա. Կամիմ՝ սրբեաց*։ 42Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի զնաց ՚ի նմանէ բորոտութիւնն, և սրբեցաւ։ 43Եւ սաստեալ՝ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ ցնա*։ 44Զգո՛յշ լեր, մի՛ ունեք ինչ ասիցես. այլ ե՛րթ ցոյց զքեզ քահանային. և մատո՛ վասն սրբութեան քոյ պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս՝ ՚ի վկայութիւն նոցա։ 45Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ, և հռչակ հարկանել զբանն, մինչ ո՛չ ևս կարող լինել նմա յայտնապէս ՚ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց*։

2

Գլուխ Բ

ԲԵ. 1Եւ մտեալ դարձեալ ՚ի Կափառնաւում, յետ աւուրց 2լո՛ւ եղև եթէ ՚ի տան է. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ո՛չ լինել՝ և ո՛չ առ դրանն. և խօսէր նոցա զբանն*։

Ե 3Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ՝ ՚ի չորից։ 4Եւ իբրև ո՛չ կարէին մերձենալ առ նա՝ յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր Յիսուս, և

* *Ոմանք.* Հօծեալ ընդ միմեանս ասել։ *Ուր ևս ոմանք.* հեծօել. *և ոմանք.* հեծօծել։

* *Ոմանք.* Ընդ ամենայն կողմանս։ *Ուր օրինակ մի.* Ընդ ամենայն սահմանս Գա՛։

* *Ի լուս՛.* Բերէին առ նա զամենայն. *համաձայն ոմանց ՚ի բնաք՛.*

* *Ոմանք.* ժողովեալ առ դրունսն։

* *Ոմանք.* Ջբազում հիւանդս։

* *Ոմանք.* Ընդ այդն ընդ առա՛։

* *Ոմանք.* Թէ ամենեքեան։

* *Այլք.* Կարող ես զիս սրբել։

* *Ոմանք.* Եւ Յիսուս գրացեալ ձգեաց զձեռն... և ասէ. Կամիմ։

* *Ի բազումս պակասի.* Եւ ասէ *ցնա*։

* *Ոմանք.* Ի քաղաքս մտանել։

* *Բազումք.* Լուր եղև թէ ՚ի։ *Ուր օրինակ մի.* Լուր եղև ՚ի տանէ։

բացեալ զառաստաղն՝ իջուցին զմահիծսն յորում կայր անդամալոյծն*։ ⁵Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. Ո՛րդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ ⁶Եւ էին ոմանք՝ ՚ի դպրաց անտի որ անդ նստէին. և խորհէին ՚ի սիրտս իւրեանց. ⁷Ձի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայիոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի՛ Աստուած*։ ⁸Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին ՚ի սիրտս իւրեանց, և ասէ. Ձի՞ խորհիք զայդ ՚ի սիրտս ձեր*։ ⁹Ձի՞նչ դիւրին է ասել ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել. Արի՛ առ զմահիծս քո և ե՛րթ ՚ի տուն քո։ ¹⁰Այլ զի գիտասցիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ՚ի վերայ երկրի՝ թողուլ զմեղս։ Ասէ ցանդամալոյծն. ¹¹Քե՛զ ասեմ. Արի՛ առ զմահիծս քո՝ և ե՛րթ ՚ի տուն քո։ ¹²Եւ յարեալ. և վաղվաղակի առեալ զմահիծսն, ե՛լ առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զԱստուած՝ և ասել, թէ այսպիսի ինչ երբէք՝ ո՛չ տեսաք*։ բզ. ¹³Եւ ե՛լ դարձեալ ՚ի ծովեզրն, և ամենայն ժողովուրդն գա՛յր առ նա. և ուսուցանէր զնոսա։

Ձ ¹⁴Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂևի՛ Ալփեայ՝ զի նստէր ՚ի մաքսաւորութեան. և ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ Եւ յարուցեալ՝ զնաց զկնի նորա։ ¹⁵Եւ եղև ՚ի բազմելն նորա ՚ի տան նորա, և բազում մաքսաւորք և մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի՝ և ընդ աշակերտսն նորա. քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա*։ ¹⁶Իսկ դպիրքն և փարիսեցիք իբրև տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտսն նորա. Ձի՞նչ է՝ զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք*։ ¹⁷Իբրև լուաւ Յիսուս՝ ասէ ցնոսա. Ո՛չ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց և ո՛չ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս*։ ¹⁸Եւ էին աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն ՚ի պահս. գան և ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու՝ և փարիսեցիքն պահեն, և քո՛ աշակերտքդ ո՛չ պահեն։ ¹⁹Եւ ասէ ցնոսա Յիսուս. Մի եթէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա՝ իցէ փեսայն՝ պահե՞լ. ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ո՛չ է մա՛րթ պահել*։ ²⁰Այլ եկեացն աւուրք՝ յորժամ վերասցի ՚ի նոցանէ փեսայն, և ապա՛ պահեացն յաւուրն յայնմիկ*։ ²¹Ո՛չ ոք կապերտ նոր անթափ արկանէ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն ՚ի հնոյ անտի, և չա՛ր ևս պատառումն լինի*։ ²²Եւ ո՛չ ոք արկանէ զինի նոր՝ ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ՛ զինին զտիկսն, զինի հեղու, և տիկքն կորնչի՛ն. այլ զինի նոր՝ ՚ի տիկս նորս արկանելի է*։ բէ. ²³Եւ եղև նմա ՚ի շաբաթու անցանել ընդ արտորայս. և աշակերտքն ՚ի գնալն իւրեանց սկսան հասկ կորզել և ուտել։ ²⁴Եւ փարիսեցիքն՝ ասեն ցնա. Տե՛ս՝ զինչ գործեն աշակերտքն քո ՚ի շաբաթուս զոր չէ՛ արժան*։ ²⁵Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՛չ երբէք իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն

* *Ոմանք.* Մերձանալ ՚ի յամբոխտ ան՞։

* *Ոմանք.* Ո՞վ կարէ թողուլ զմեղս։

* *Ոմանք.* Ի՞նչ յոգի իւր թէ, այնպէս խորհէին։

* *Ոմանք.* Եւ յարեաւ վաղվաղակի առ՞... ինչ ոչ երբէք տեսաք։

* *Առ Ոսկանայ պակասի.* Մաքսաւորք և մեղաւորք բազմեալ։

* *Ոմանք.* Ձի ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ և ըմպէ։

* *Ոմանք.* Ոչինչ պիտոյ է բժիշկ ողջաց։

* *Ոմանք.* Մի թէ մարթ ինչ իցէ մանկանց։

* *Ոմանք.* Ի՞նչ նոցանէն, և ապա պահ՞։

* *Յովհաննայ պակասի.* Կապերտ նոր անթափ։

* *Օրինակ մի.* Պայթեցուցանէ զինին։ *Բազումք.* Գինին հեղու։

* *Ոմանք.* Ի՞նչ շաբաթու, զոր չէ։

Դաւիթ, յորժամ պիտոյն եղև, և քաղցեալ՝ նա և որ ընդ նմայն էին: ²⁶Ձիա՞րդ եմուտ ՚ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ե՛տ և այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ո՛չ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն*: ²⁷Եւ ասէ ցնոսա. Շաբաթ՝ վասն մարդոյ՝ եղև, և ո՛չ եթէ մարդ վասն շաբաթու, ²⁸ապա ուրեմն՝ տէ՛ր է Որդի մարդոյ՝ և շաբաթու:

3

Գլուխ Գ

¹Եւ եմո՛ւտ միւսանգամ ՚ի ժողովուրդն. և էր անդ ա՛յր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր*: ²Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկեսցէ՛ զնա ՚ի շաբաթուն. զի չարախօսեսցեն զնմանէ*: ³Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. Արի ա՛նց ՚ի մէջ*: ⁴Եւ ասէ ցնոսա. Ձի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել: Եւ նորա լռեցին*: ⁵Եւ հայեցեալ Յիսուսի գնոքօք լի՛ ցասմամբ, տրտմեալ վասն կորութեան սրտից նոցա, ասէ ցայրն. Ձըգեա՛ զձեռն քո: Եւ նա ձըգեաց, և ողջացաւ ձեռն նորա: զկ. ⁶Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն Յերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա: ⁷Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք զնա՛ց ՚ի ծովեզրն: Եւ բազում ժողովուրդ ՚ի Գալիլեացոց երթային զհետ նորա. և ՚ի Յրէաստանէ*, ⁸և յերուսաղեմէ, և յայնկոյս Յորդանանու, և որք ՚ի Տիրոսէ և ՚ի Սիդովնէ. բազում ժողովուրդ իբրև լսէին որչափ ինչ առնէր, գային առ նա: ⁹Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւա՛կ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա: ¹⁰Քանզի զբազո՛ւնս բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ*: ¹¹Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին. ¹²Թէ դո՛ւ ես Որդի Աստուծոյ: Եւ նա՛ յո՛յժ սաստեր նոցա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա*:

Ը գբ. ¹³Ելանէ՛ ՚ի լեառն՝ և կոչէ՛ առ ինքն զորս ի՛նքն կամեցաւ. և չոգա՛ն առ նա*: ¹⁴Եւ արա՛ր երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեսցէ՛ զնոսա քարոզել. ¹⁵և ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ զդէս: ¹⁶Եւ ե՛դ անուն Սիմովնի՝ Պետրոս. ¹⁷և Յակովբո՛ւ Չերբեղեայ՝ և Յովհաննո՛ւ եղբորն Յակովբայ՝ ե՛դ նոցա անուանս Բաներեզէս, որ է՝ Որդի՛ք որոտման*, ¹⁸և զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողովմէ՛նս, և զՄատթէ՛նս զմաքսաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէնոս, և զՍիմովն Կաննանացի*. ¹⁹և

* *Ոմանք.* Ձիա՛րդ եմուտ նա ՚ի... և զհացն զառաջ... և ետ այնոցիկ... միայն քահանայից:

* *Ոսկան.* Որոյ ձեռն գօսացեալ:

* *Ոմանք.* Եթէ բժշկիցէ զնա:

* *Ոմանք.* Որոյ ձեռն գօ՞:

* *Օրինակ մի.* Ձի՛նչ դիւրին է ՚ի շաբ՞... ոգի մի կեցուցանել՝ եթէ կոր՞:

* *Ոմանք.* Բազում ժողովուրդք Գալիլեացոց:

* *Ոմանք.* Մինչև գալ՞: *Ոսկան.* Գալ և խռնիլ:

* *Ոմանք.* Որդին Աստուծոյ.. առնիցեն զնմանէ:

* *Ոմանք.* Եւ ելանէ ՚ի լեառնն:

* *Ոմանք.* Բաներզէս:

* *Ոմանք.* Ջբարթողիմէնս. և *ոմանք.* զԲարթաղովմէնս... և զԹադէնոս. և զՍիմոն Կաննանացի:

զՅո՛ւդա Սկարիովտացի, որ և մատնեա՛ցն զնա: զգ. ²⁰Գա՛ն ՚ի տուն, և գա՛յ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն. մինչ զի և հա՛ց ևս՝ ո՛չ ժամանել ուտել նոցա՛: ²¹Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ: ²²Եւ դպիրքն՝ որ յերուսաղեմէ իջեալ էին, ասէին թէ Բէեղզերո՛ւղ գոյ ՚ի դմա, և իշխանա՛ւ դիւացն հանէ դա զդևս: ²³Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօ՛ք խօսէր ընդ նոսա. Ջիա՞րդ կարէ Սատանայ զՍատանայ հանել՝. ²⁴և արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ո՛չ կարէ կալ թագաւորութիւնն այն: ²⁵Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեսցի, ո՛չ կարէ՛ կալ տունն: ²⁶Եւ եթէ Սատանայ ՚ի վերայ անձին իւրոյ յարեալ՝ և բաժանեալ իցէ, ո՛չ կարէ կալ. այլ վախճանեալ է՛: ²⁷Այլ ո՛չ ոք կարէ զկարասի՝ հզօրի մտեալ ՚ի տուն նորա աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ, և ապա՛ զտուն նորա աւար հարկանիցէ՛: ²⁸Ամէն ասե՛մ ձեզ, զի ամենայն թողցի՝ որդւոց մարդկան մեղք՝ և հայիոյութիւնք՝ ո՛րչափ և հայիոյեսցեն՝, ²⁹բայց որ հայիոյեսցէ զՅոզիմ Սուրբ, ո՛չ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենիցն մեղաց՝: ³⁰Ձի ասէին՝ թէ այս պիղծ գոյ ՚ի նմա: զդ. ³¹Գա՛ն եղբարքն և մայր նորա, և արտաքոյ կացեալ՝ յղեցին և կոչէին զնա՛: ³²Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև ասացին ցնա. Ահաւասիկ մայր քո և եղբարք քո՝ կա՛ն արտաքոյ, և խնդրեն զքեզ: ³³Պատասխանի ետ նոցա և ասէ. Ո՞վ է իմ մայր՝ կամ եղբարք: ³⁴Հայեցաւ շուրջ զիւրև զաշակերտսն զի նստէին, և ասէ. Ահա՛ւասիկ մայր իմ, և եղբարք իմ՝. ³⁵զի որ առնէ զկամս Աստուծոյ, նա՛ է իմ եղբայր՝ և քո՛յր և մայր՛:

4

Գլուխ Դ

զե. ¹Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերքն. և խոնեցա՛ն զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև ՚ի նա՛ւ մտանել նմա, և նստել ՚ի ծովուն. և ամենայն ժողովուրդքն զծովեզերքն՝ զցամաքն ունէին՝: ²Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ:

Թ Եւ ասէր նոցա ՚ի վարդապետութեան իւրուն. ³Լսէ՛ք ահաւասիկ ել սերմանօղ սերմանել՝: ⁴Եւ եղև ՚ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկեր զնա՛: ⁵Եւ այլն անկաւ յապառաժի՝ ուր ո՛չ գոյր հող բազում. և վաղվաղակի՛ բուսաւ. քանզի ո՛չ գոյր հիւթ երկրին, ⁶և յորժամ ծագեաց արև՝

* *Ոմանք.* Ընդ նմա ժողովուրդն, մինչև հաց ևս: *Ուր Ոսկան.* Մինչ զի զհաց ևս:

* *Ոսկան.* Եւ կոչեալ զնոսա առ:

* *Ոմանք.* Եւ բաժանեալ է... վախճանեալ իցէ:

* *Օրինակ մի.* Ստանել ՚ի տուն նորա աւ՛: *Ոմանք.* ՚ի տունն նորա:

* *Ոմանք.* Որչափ և հայիոյիցեն:

* *Ոմանք.* Այլ պարտական լիցի յաւիտենից մեղացն:

* *Ոմանք.* Եւ կոչեն. *կամ՝* կոչեցին զնա:

* *Ոմանք.* Հայեցեալ շուրջ:

* *Ոմանք.* Ձի որ առնիցէ զկամս:

* *Բազումք.* Եւ ամենայն ժողովուրդն:

* *Ոսկան.* Լուարո՛ւք. ահաւ՛:

* *Ոմանք.* Առ ճանապարհաւն:

ջեռա՛ւ, և զի ո՛չ գոյին արմատք՝ ցամաքեցա՛ւ*։ ⁷Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղծուցին զնա, և պտուղ ո՛չ ետ։ ⁸Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. և ելեալ աճեցեալ տայր պտո՛ւղ, և բերէր ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարելր*։ ⁹Եւ ասէր. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ զգ. ¹⁰Եւ իբրև եղև առանձինն, հարցին ցնա որ զնովան էին աշակերտօքն հանդերձ՝ զառակսն*։ ¹¹Եւ ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է գիտել՝ զխորհուրդս արքայութեան Աստուծոյ. բայց նոցա որ արտաքինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի*։ ¹²Որ տեսանելով տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն՝ և մի՛ իմասցին. զի մի՛ երբէք դարձցին՝ և թողցի նոցա։ ¹³Եւ ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք զառակս զայս, և զհա՛րոզ զամենայն առակսն գիտիցէք։ ¹⁴Որ սերմանէն՝ զբա՛նն սերմանէ։ ¹⁵Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բա՛նն սերմանի. և յորժամ լսեն զնա, զայ Սատանայ՝ և հանէ՛ զբանն սերմանեալ ՚ի սիրտս նոցա*։ ¹⁶Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան. որք յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին*։ ¹⁷Եւ զի ո՛չ ունին արմատս յանձինս, այլ առ ժամանակ մի են. ապա ՚ի հասանել նեղութեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի՛ գայթազդին։ ¹⁸Իսկ որ ՚ի մէջ փշոցն սերմանեցան, նոքա են՝ որ իբրև զբանն լսեն, ¹⁹և հոգք աշխարհիս, և պատրանք մեծութեան մտանեն և հեղծուցանեն զբանն՝ և անպտո՛ւղ լինի։ ²⁰Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն՝ և ընդունին, և տան պտո՛ւղ, ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարելր*։ զէ. ²¹Եւ ասէ ցնոսա. Մի եթէ՛ գայ ճրագ զի ընդ գրուանաւ դնիցի, կամ ընդ մահճօք. ոչ ապաքէն ՚ի վերայ աշտանակի դնիցի*։ ²²Ձի՛ չէ՛ ինչ ՚ի ծածուկ, որ թէ ո՛չ յայտնեսցի. և ո՛չ եղև ինչ գաղտնի, եթէ ո՛չ ՚ի յայտ գայցէ։ ²³Եթէ՛ ոք ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։ ²⁴Եւ ասէ ցնոսա. Տեսէ՛ք զինչ լսէք, և յաւելցի՛ ձեզ որոց լսէք. որով չափով չափէք՝ նովին չափեսցի՛ ձեզ։ ²⁵Որ ոք ունիցի՛ տացի՛ նմա. և որ ո՛չն ունիցի, և զոր ունին բարձցի՛ ՚ի նմանէ*։ ոկ. ²⁶Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկրի*։ ²⁷Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ո՛չ գիտէ* ²⁸Երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ՝ զխո՛տն, և ապա՝ զհասկն, և ապա՝ ցորեան ատոք ՚ի հասկին*։ ²⁹Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ. զի հասեալ են հունձք*։ ³⁰Եւ ասէր. Ո՛ւն նմանեցուցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ՝ առակեսցուք զնա*։ ³¹Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի

* *Ոմանք.* Վասն զի ոչ գոյին արմ*։

* *Ոմանք.* Յերկիր բարիոք։

* *Ոմանք.* Ջառակն։

* *Ոմանք.* Ձխորհուրդ արքայութեանն Աստուծոյ... որ արտաքինն են։

* *Ոսկան.* Եւ հանէ զսերմանեալն ՚ի։

* *Ոմանք.* Յորժամ լսեն. *կամ՝* լուիցեն զբանն։

* *Ոմանք.* Բարիոք սերմա՛... և տան զպտուղ։

* *Ոմանք.* Միթէ գայ ճրագ։

* *Ոմանք.* Եւ զոր ունիցին՝ բարձ*։

* *Ոմանք.* Եւ ասէ. Այսպէս... սերմանիս յերկիր։

* *Ոմանք.* Ջցայգ և զցերեակ։

* *Ոմանք.* Ապա զցորեանն ատոք։ *Ուր օրինակ մի.* Ապա ցորեանատք ՚ի հաս*։

* *Ոսկան.* Եւ յորժամ տայցէ։

* *Օրինակ մի.* Ո՛ւն նմանեցուցից զարք*։

յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի՝, ³²և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մե՛ծ քան զամենայն բանջար և արձակէ՛ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: ³³Եւ այնպիսի՛ առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարօ՞ղ լինէին լսել՝. ³⁴և առանց առակի ո՛չինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէ՛ր զամենայն:

Ժ դբ. ³⁵Եւ ասէ ցնոսա յաւուր յայնմիկ՝ իբրև ընդ երեկս լինէր. Եկայք անցցո՛ւք յայն կողմն՝: ³⁶Թողուն զժողովուրդն, և առնուն զնա նաւան հանդերձ, և զա՛յլ ևս նաւսն որ էին ընդ նմա: ³⁷Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն ՚ի նա՛ւն զեղոյր մինչ գրեթէ լի՛ իսկ լինել. ³⁸և ինքն ցնջէ՛ր ՚ի խելս նաւին ՚ի վերայ բարձի: Ջարթուցանէին զնա՝ և ասէին. Վարդապե՛տ՝ ո՛չինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ՝: ³⁹Եւ զարթուցեալ սաստեա՛ց հողմոյն, և ծովուն՝ ասէ. Դադարեա՛ կարկեա՛ց: Եւ դադարեաց հողմն, և եղև խաղաղութիւն մեծ՝: ⁴⁰Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չև՛ ևս ունիք հաւատս: Եւ երկեան երկե՛ւղ մեծ, և ասէին ցմիեանս. Ո՞ որ արդեւք իցէ սա, զի և հո՞ղմ և ծո՛վ հնազանդին սմա՛:

5

Գլուխ Ե

ԺԱ ¹Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն Գերգեսացոց: ²Եւ ընդ ելանելն նորա ՚ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ՚ի գերեզմանացն՝ զոր ունէր ա՛յս պիղծ. ³որոյ և բնակութիւնն իւր իսկ ՚ի գերեզմանս էր. և ո՛չ շղթայի՛ւք ոք ևս՝ կարէր կապել զնա՛. ⁴վասն բազում անգամ ոտնկապովք և շղթայի՛ւք կապելոյ, և խզելոյ ՚ի նման զշղթայսն, և զոտնկապսն խորտակելոյ. և ո՛չ ոք կարէր պարտել զնա՛. ⁵քանզի հանապազ զցայգ և զցերեկ ՚ի գերեզմանս և ՚ի լերինս աղաղակէր, և կոծեր զանձն իւր քարամբք՝: ⁶Իբրև ետես զՅիսուս ՚ի հեռաստանէ, ընթացաւ և երկի՛ր եպագ նմա: ⁷Աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և ասէ. Ջի՞ կայ ի՛ն և քո՞ Յիսուս Որդի Աստուծոյ Բարձրելոյ. երդմնեցուցանե՛մ զքեզ յԱստուած, մի՛ տանջեր զիս՝: ⁸Քանզի ասէր ցնա. Ե՛լ ա՛յսդ պիղծ ՚ի մարդոյ այտի: ⁹Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո: Եւ ասէր ցնա. Լեզու՛վն է անուն իմ, քանզի բազումք եմք՝: ¹⁰Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն՝: ¹¹Եւ անդ էր առ լերամբն՝ երամա՛կ մի խոզաց արօտական մեծ՝: ¹²Աղաչեցին զնա ամենայն դէքն՝ և ասեն. Առաքե՛ա զմեզ ՚ի

* *Ոմանք.* Սերմանեսցէ յերկրի:

* *Ոմանք.* խօսէր նոցա զբանն:

* *Ոմանք.* Յաւուրն յայնմիկ:

* *Ոմանք.* Ջարթուցանեն զնա և ասեն:

* *Ոմանք.* Դադարեաց կարկեա՛:

* *Ոմանք.* Վատասիրտք էք այդպէս... ո՞ արդեւք իցէ: *Ոսկան.* Յերկիւղ մեծ:

* *Ոսկան.* Որոյ բնակութիւնն իսկ:

* *Բազումք.* Ոտնակապօք և շղ՞... և զոտնակապսն խոր՞:

* *Ոմանք.* Ջցայգ և զցերեակ:

* *Յոմանս պակասի.* Որդի Աստուծոյ Բարձրե՛:

* *Ոմանք.* Եւ հարցանէր զնա... և նա ասէր, ցնա. Լեզու՛վն անուն է իմ:

* *Ոմանք.* Եւ աղաչեցին զնա յոյժ:

* *Ոմանք.* Խոզից արօտա՞:

խոզան, զի մտցուք ՚ի նոսա*։ ¹³Եւ հրամայեաց նոցա։ Եւ իբրև ելին այսքն պիղծ՝ մտին ՚ի խոզան, և դիմեաց երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծովն։ Էին իբրև երկու հազարք, և հեղձնուին ՚ի ծովուն*։ ¹⁴Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին ՚ի քաղաքին և յագարակս՝ և ելին տեսանել զինչ իցէ որ գործեցան*։ ¹⁵Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլեզեռնն։ և զահի՛ հարան*։ ¹⁶Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղև այսահարին, և զի՞նչ վասն խոզիցն*։ ¹⁷Եւ սկսան աղաչել զնա՝ զնալ ՚ի սահմանաց նոցա։ ¹⁸Եւ իբրև եմուտ նա ՚ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա՝ իցէ։ ¹⁹Եւ Յիսուս ո՛չ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. Երթ ՚ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա՛ նոցա որ ինչ միանգամ Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ*։ ²⁰Եւ չոգաւ՝ և սկսաւ քարոզել ՚ի Դեկապոլին, զոր ինչ արար նմա Յիսուս. և ամենեքին զարմանային։ դգ. ²¹Եւ իբրև անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերքն։

ԺԳ ²²Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, որուն անունն էր Յայրոս. իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա*։ ²³աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է ՚ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ասրեսցի և կեցցէ*։ ²⁴Եւ զնա՛ց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա։

ԺԳ ²⁵Եւ կին մի՝ էր ՚ի տեռատեսութեան արեան զերկոտասան ամ*, ²⁶և յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն, և չէր ինչ օգտեալ, այլ նս առաւել զայրացեալ։ ²⁷Իբրև լուաւ զՅիսուսէ, եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բռնն եհար զհանդերձէ նորա. ²⁸քանզի խորհէր ՚ի մտի. Թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա՝ փրկեցայց*։ ²⁹Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբեր արեան նորա. և զիտաց ՚ի մարմին իւր՝ թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն։ ³⁰Եւ անդէն վաղվաղակի՝ զիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. Ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ*։ ³¹Եւ ասեն ցնա աշակերտքն. Տեսանես՝ զի ամբոխդ նեղէ՛ զքեզ, և ասես թէ ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ*։ ³²Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար*։ ³³Եւ կինն՝ զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քանզի զիտէր զինչ եղև նմա. եկն՝ անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրսն ստուգութեամբ*։ ³⁴Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. Երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջի՛ր ո՛ղջ ՚ի տանջանաց քոց*։ դդ. ³⁵Մինչ դեռ նա զայն խօսէր, զան ոմանք ՚ի տանէ ժողովրդապետին՝ և ասեն, թէ դուստրն քո մեռաւ,

* *Ոմանք*. Աղաչէին զնա ամենայն։

* *Ոմանք*. Այսքն պիղծք... և էին իբրև... և հեղձնուին ՚ի ծովն։

* *Ոմանք*. Ի քաղաքն և յագար*։

* *Ոմանք*. Որ ունէր զլեզեռնն։

* *Ոսկան*. Թէ զինչ եղև դիւահարին։

* *Ոսկան*. Չոր ինչ միանգամ։

* *Ոմանք*. Եւ իբրև ետես։

* *Յօրինակին պակասէր*. Աղաչէր զնա յոյժ։ *Ոմանք*. Մերձ ՚ի մահ է... դիցէ նմա ձեռն։

* *Ոմանք*. Ի տեռատեսութեանն արեան։

* *Ոսկան*. Քանզի ասէր ՚ի մտի թէ։

* *Ոմանք*. Ո՞ մերձեցաւ ՚ի հան*։

* *Ոմանք*. Ո՞ մերձեցաւ ՚ի հան*։

* *Ոմանք*. Թէ ո՞վ զայն ար*։

* *Ոմանք*. Եղևն նմա։

* *Ոմանք*. Ի տանջանացդ քոց։

զի՞ ևս աշխատ առնես զվարդապետո՞*։ ³⁶Ի՛սկ Յիսուս իբրև լուաւ զբա՛նն ասացեալ, ասէ՛ ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր. բայց միայն՝ հաւատա՛։ ³⁷Եւ ո՛չ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊե՛տրոս և զՅա՛կովբոս և զՅովհա՛ննէս՝ զեղբայրն Յակովբայ։ ³⁸Գա՛յ՝ ՚ի տուն ժողովրդապետին, և տեսանէ՛ ամբոխ յոյժ, և լալականս և աղաղակ յոյժ։ ³⁹Եւ մտեալ՝ ՚ի ներքս՝ ասէ՛ ցնոսա. Ջի՞ խռովեալ էք և լայք, մանուկն ո՛չ է մեռեալ, այլ ննջէ՛*։ ⁴⁰Եւ ծաղր առնէին զնա։ Եւ նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնո՛ւ ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ ընդ նմայն էին, և մտանէ՛ ուր դնէր մանուկն։ ⁴¹Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ՛ ցնա. Տա՛լիթա կո՛ւմի. որ թարգմանի. Աղջի՛կ դու՛ քե՛զ ասեմ արի՛։ ⁴²Եւ վաղվաղակի՛ յարեաւ աղջիկն, և զմայր. քանզի էր ամա՛ց իբրև երկոտասանից. և զարմացան մեծա՛ւ զարմանալեօք*։ ⁴³Եւ պատուէ՛ր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց՝ տալ նմա ուտել։

6

Գլուխ Զ

դէ. ¹Եւ ե՛լ անտի, ե՛կն ՚ի գաւառ իւր. և երթայի՛ն զհետ նորա աշակերտքն իւր*։ ²Եւ եղև ՚ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել ՚ի ժողովրդեանն. և բազումք իբրև լսէին՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, և ասէին. Ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա. զի զօրութիւնք այսպիսիք ՚ի ձեռաց սորա լինիցին*։ ³Ո՞չ սա է մանուկ հիւսանն, և որդին Մարեմայ, եղբայր Յակովբայ և Յովսեայ և Յուդայի՛ և Սիմոնի. և չիցե՞նք որքն դորա աստ առ մեզ։ Եւ գայթաղէին ՚ի նա*։ ⁴Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՛չ է մարգարէ՛ անարգ, բայց եթէ ՚ի գաւառի՛ իւրում, և յազգատոհմի, և ՚ի տան իւրում*։ ⁵Եւ ո՛չ կարէր անդ՝ և ո՛չ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եղեալ՝ բժշկէ՛ր զնոսա*։ ⁶Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա։

ԺԴ դգ. Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, և ուսուցանէր*։ ⁷Եւ կոչեա՛ց առ ինքն զերկոտասանսն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն ՚ի վերայ այսոց պղծոց*։ ⁸Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ՚ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ ՚ի գօտիս*։ ⁹Այլ ազանել հողաթա՛փս, և. Մի՛ զգեմուցուք ասէ՛ երկուս պարեգօտս։ ¹⁰Եւ ասէ՛ր ցնոսա. Յոր տուն մտանիցէք, անդէ՛ն օթեվանս կալջի՛ք՝ մինչև ելանիցէք անտի։ ¹¹Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ո՛չ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջի՛ք զփոշի ոտից ձերոց ՚ի վկայութիւն նոցա։ ¹²Եւ

* *Ոմանք.* Եւ մինչդեռ նա... զան ոմանք ՚ի ժողովրդապետէն. *կամ*՝ ՚ի ժողովրդապետն, և ասեն։

* *Ոսկան.* Մանուկդ ոչ է մեռեալ։

* *Ոսկան.* Մեծաւ զարմանալեալ։

* *Ոմանք.* Ել անտի և եկն ՚ի գա՛։

* *Ոսկան.* Ուստի իցէ սմա այս, կամ զի՞նչ իցէ իմաստ... ՚ի ձեռաց սորա լինին։

* *Ոմանք.* Քորք դորա։

* *Յոմանս պակասի.* Եւ ասէ ցնոսա *Յիսուս*։

* *Ոմանք.* Զօրութիւնս առնել... բժշկեաց զնոսա։ *Ոսկան.* Սակաւ ինչ հիւանդաց։

* *Ոսկան.* Անհաւատութեանց նոցա։

* *Ոմանք.* Եւ կոչեցեալ առ ինքն։

* *Ոսկան.* Բարձցեն ՚ի ճանապարհի։

ելեալ քարոզիմն՝ զի ապաշխարեսցեն: ¹³Եւ դէն բազումս հանէին և օծանէին իւրով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա:

ԺԵ ղէ. ¹⁴Եւ լուաւ արքայ Յերովդէս. քանզի յայտնի եղև անուն նորա. և ասէր, թէ Յովհաննէս մկրտիչ յարեալ՝ ՚ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: ¹⁵Այլք ասէին՝ թէ եղիա՛ է. իսկ այլքն՝ թէ մարգարէ՛ է, կամ թէ՛ իբրև զմի՛ ՚ի մարգարէից: ¹⁶Իբրև լուաւ Յերովդէս, ասէ. Ջորոյ՝ ես զգլուխն հատի զՅովհաննու, սա է՛ նա յարեալ՝ ՚ի մեռելոց: ¹⁷Ձի ինքն Յերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա և եղ՝ ՚ի բանտի, վասն Յերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, քանզի նա՝ կին արար զնա: ¹⁸Քանզի ասէր Յովհաննէս ցՅերովդէս՝ թէ ո՛չ է օրէն քեզ ունել զկին եղբօր քոյ: ¹⁹Եւ Յերովդիա ռխացեալ էր ընդ նմա՝ և կամէր սպանանել զնա, և ո՛չ կարէր: ²⁰Ձի Յերովդէս՝ երկնչէր ՚ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ. և սպասէր նմա. և լուեալ ՚ի նմանէ բազում ինչ՝ առնէր, և քաղցրութեամբ՝ լսէր նմա: ²¹Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Յերովդէս՝ յաւուր ծննդոց իւրոց, նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեացոց: ²²և ՚ի մտանել դատերն Յերովդիայ՝ և ՚ի կաքաւել, հաճոյ՛ եղև Յերովդի և բազմականացն: Ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ: ²³Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես ոյու յինէն, տաց քեզ՝ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ: ²⁴Նա՛ ելեալ ասէ՛ ցմայր իւր. Ձի՞նչ խնդրեցից: Եւ նա՛ ասէ. Ջգլուխն Յովհաննու մկրտչի: ²⁵Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. Կամիմ՝ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ՚ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: ²⁶Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն՝ և կոչնականացն՝ ո՛չ կամեցաւ անարգել զնա. ²⁷և առաքեաց վաղվաղակի թագաւորն՝ դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա: Եւ չոգաւ զլխատեաց զնա ՚ի բանտին. ²⁸և եբէր զգլուխն նորա սկտեղք՝ և ետ ցաղջիկն. և աղջիկն տարաւ՝ ետ մօր իւրուն: ²⁹Իբրև լուան աշակերտքն նորա, եկին՝ բարձին զմարմինն՝ և եղին ՚ի գերեզմանի: Եկ. ³⁰Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին: ³¹Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ոյուք առանձինն յանապատ տեղի, և հանգիջիք սակաւ մի: Ձի էին բազումք որ երթային և գային, և հաց անգամ՝ չժամանէին ուտել: ³²Եւ զնացին նաու յանապատ տեղի առանձինն: ³³Եւ տեսին զնոսա զի երթային, և զգացին բազումք. և հետի յամենայն քաղաքաց խուռն ընթանային անդր, և մերձենային առ նոսա: ³⁴Եւ ելեալ ետես ամբոխ բազում, և գթացաւ ՚ի նոսա զի էին իբրև ոչխարք՝ որոց ո՛չ

* *Ոմանք.* Եւ ասէ, թէ Յովհաննէս:

* *Ոմանք.* Թէ մարգարէ. կամ իբրև:

* *Ոմանք.* Վասն Յերովդիադայ կնոջ... զի նա կին ա՛:

* *Ոմանք.* Եւ Յերովդիադա ռխացեալ ընդ նմա:

* *Ոմանք.* Յաւուրս ծննդոց:

* *Ոմանք.* Յինէն զոր կամիս:

* *Ոմանք.* Ձոր ինչ խնդրեսցես:

* *Ոսկան.* Ձի տացես ինձ վաղ՛:

* *Ոմանք.* Ձմարմին նորա, և ե՛:

* *Ոմանք.* Եւ հանգիջիք սակաւիկ մի:

* *Ոմանք.* Եւ տեսին զնա զի եր՛. և *ոմանք.* Եւ տեսին զի երթային, և գային բազումք. և հետ ՚ի յամենայն քաղա՛:

իցէ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ:

ԺԶ ³⁵Եւ իբրև բազում ժամ եղև, մատուցեալ աշակերտքն՝ ասէին. Տեղիս՝
անապատ է, մինչդեռ աւուր կայ*, ³⁶արձակեա՛ զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ
յագարակս և ՚ի գեղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ՝ ինչ ուտել՝ ո՛չ
ունին՝: ³⁷Նա պատասխանի՛ ետ՝ և ասէ ցնոսա. Դուք տուք դոցա՛ ուտել: Ասեն
ցնա. Երթիցուք գնեսցուք երկերի՛ւր դահեկանի հաց, և տացու՛ք դոցա ուտել՝:
³⁸Ասէ ցնոսա. Քանի՞՞ նկանակ ունիք, երթայք տեսէ՛ք: Իբրև գիտացին, ասեն
ցնա. Յինգ. և երկուս ձկունս՝: ³⁹Եւ հրամայեաց նոցա բազմել՝ երախանս
երախանս ՚ի վերայ դալար խոտոյ: ⁴⁰Եւ բազմեցան դասք դասք, ուր հարելր և
ուր յիսուն: ⁴¹Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցա՛ւ յերկինս,
օրհնեաց՝, մանրեաց՝ զնկանակսն, և ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա, և
զերկուս ձկունսն՝ բաշխեաց՝ ամենեցուն: ⁴²Կերան՝ և յագեցան՝*. ⁴³Եւ բարձին
զնշխարսն երկոտասան սակառի՛ լի, և ՚ի ձկանց անտի: ⁴⁴Եւ էին որք կերանն՝
իբրև արք հինգ հազար: Եբ. ⁴⁵Եւ նոյնժամայն ճեպեաց՝ զաշակերտսն մտանել՝ ՚ի
նաւ, և յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ՚ի Բեթսայիդա, մինչ ինքն
զժողովուրդսն արձակիցէ՝: ⁴⁶Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ ել՝ ՚ի լեռան կալ
յաղօթս:

ԺԷ ⁴⁷Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն ՚ի մէջ ծովուն, և ինքն ՚ի ցամաքի՝: ⁴⁸Եւ ետես
զնոսա հողմակոծեալս ՚ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. և զչորրորդ
պահու գիշերոյն զայ՛ առ նոսա գնալով ՚ի վերայ ծովուն. և կամէր զանց առնել
առ նոքօք՝: ⁴⁹Նորա իբրև տեսին զի գնայր ՚ի վերայ ծովուն, համարեցան թէ
առաջօք ինչ լինիցի, և զաղաղակ բարձին: ⁵⁰Քանզի ամենեքեան տեսին զնա՝ և
խռովեցան: Եւ նա՝ անդէն վաղվաղակի խօսեցա՛ւ ընդ նոսա, և ասէ.
Քաջալերեցարուք, ես եմ՝ մի՛ երկնչիք: ⁵¹Եւ ել՝ ՚ի նաւն առ նոսա, և դադարեաց
հողմն: Եւ առաւել ևս յիմարեալ էին ՚ի միտս իւրեանց, և զարմանային յոյժ.
⁵²Քանզի և ՚ի վերայ հացին ո՛չ իմացան զի էր սիրտ նոցա թմբրեալ՝: ⁵³Եւ իբրև
անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարեթ՝: ⁵⁴Եւ իբրև ելին ՚ի նաւէ անտի, իսկ
և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ՝. ⁵⁵Եւ ընթացեալ այսր անդր ընդ
ամենայն զաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին թէ անդ իցէ՝: ⁵⁶Եւ
ուր և մտանէր՝ ՚ի գեղս կամ ՚ի քաղաքս կամ յագարակս, ՚ի հրապարակս դնէին
զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ՝ ՚ի քղանցս հանդերձից նորա
մերձենայցեն. և որք միանգամ մերձեցանն՝ փրկեցան՝:

7

* *Ոմանք.* Ասեն. Տեղիս անապատ՝: *Ոսկան.* Մինչ օր կայ:

* *Ոսկան.* Ուտել ինչ ոչ ունին:

* *Ոմանք յաւելուն.* Ասեն ցնա *աշակերտքն.* Եր՛:

* *Ոսկան.* Երթայք և տեսէք:

* *Ոսկան.* Կերան ամենեքին և յագէ՛:

* *Ոմանք.* Զժողովուրդսն արձակեսցէ:

* *Ոմանք.* Եւ տեսեալ զնոսա հող՝... զանց առնել զնոքօք:

* *Ոմանք.* Քանզի ՚ի վերայ հացի ոչ իմա... թմբրեալ:

* *Ոմանք.* Եկին ՚ի Գեննեսարեթ:

* *Ոմանք.* Եւ իբրև ել ՚ի նաւէ:

* *Ոսկան յաւելու.* Բերել *զամենայն* հիւանդս:

* *Ոմանք.* Զի գոնեա ՚ի քղանցս հանդերձի նորա մերձենայցեն. և որ միանգամ:

Գլուխ Է

ԺԸ եգ. ¹Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և ոմանք՝ ՚ի դպրացն որ եկեալ էին յերուսաղէմէ: ²Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի՝ զի խառնակ ձեռօք, ա՛յս ինքն է՝ անլուա՛յ ուտէին հաց, բամբասեցի՛ն: ³Չի փարիսեցիքն՝ և ամենայն Յրէայք, եթէ ոչ բռնալի՛ր լուանան զձեռս, հաց՝ ո՛չ ուտեն. քանզի ունին զաւանդութիւն ծերոցն. ⁴և ՚ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ո՛չ ուտեն. և ա՛յլ ինչ բազում է՝ զոր ընկալա՛ն ունել, մկրտութիւնս բաժակաց, և ստոմանաց, և պղնձեաց, և մահճաց*: ⁵Ապա հարցանեն զնա փարիսեցիքն՝ և դպիրք՝ թէ ընդէ՞ր աշակերտքն քո ո՛չ զնան ըստ աւանդութեան ծերոցն. այլ խառնակ ձեռօք հաց ուտեն*: ⁶Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա, թէ բարւո՛ք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. ժողովուրդս այս շրթա՛մբք մեծարէ զիս, և սիրտք նոցա հեռացեալ ՚ի բացեա՛յ են յինէն*. ⁷Գո՛ւր պաշտեն զիս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս: ⁸Թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւն*: ⁹Եւ ասէ ցնոսա. Բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ, զի զձե՛ր աւանդութիւնն հաստատիցէք*: ¹⁰Չի Մովսէս ասէ. Պատուեա՛ զհայր քո և զմայր. և. Որ չարախօսեցէ զհօրէ՛ կամ զմօրէ՛, մահո՛ւ վախճանեսցի: ¹¹Եւ դուք ասէք. եթէ ասիցէ՛ որ ցհայր կամ ցմայր՝ կորբան, որ է՝ պատարագ, զոր յինէն օգտեսցիս*. ¹²և ո՛չ ևս տայք թոյլ նմա չառնել ինչ հօրն, կամ մօր*: ¹³Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցէք. և բազում ինչ այլ՝ որ այսմ նման է՝ առնէք*: ¹⁴Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ ամենեքեան՝ և ՚ի միտ առէք*: ¹⁵Ո՛չ ինչ արտաքուստ ՚ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ՛ ՚ի նմանէ՛ այն է որ պղծէ զմարդն*: ¹⁶Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ՛: Եդ. ¹⁷Եւ իբրև եմուտ ՚ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին*: ¹⁸Եւ ասէ՛ ցնոսա. Այդպէս և դուք անմիտք էք. ո՛չ իմանայք, եթէ ամենայն որ արտաքուստ ՚ի ներքս մտանէ ՚ի մարդ, ո՛չ կարէ զնա պղծել*. ¹⁹զի ո՛չ եթէ ՚ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն. և արտաքս ելանէ. և սրբէ՛ զամենայն կերակուրսն: ²⁰Եւ ասէ՛ր, թէ որ ինչ ՚ի մարդոյն ելանէ՛ այն պղծէ զմարդ: ²¹Չի ՚ի ներքուստ ՚ի սրտէ՛ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն՝ շնութիւնք, պոռնկութիւնք, ²²գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, զիջութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: ²³Ա՛յս

* Ոմանք. Այս ինքն անլուայ:

* Ոմանք. Մկրտութիւն բաժակաց:

* Յօրինակին պակասէր. Հարցանեն զնա փարի՛: Ուր ոմանք. Հարցանեն ցնա:

* Ոմանք. Թէ բարիոք մար՛:

* Ոսկան յաւելու. Չմարդկան աւանդութիւնս. մկրտութիւնս ստոմանաց և բաժակաց և այլոց նմանեաց սոցին առնէք բազումս: Որ ոչ ուրեք ՚ի գրչագիրս մեր տեսանի:

* Ոմանք. Բարիոք խոտէք... հաստիցէք:

* Յօրինակին. Կամ զմայր՝ կոր՛: Ոմանք. Օգտիցիս:

* Ոսկան. Թոյլ նմա առնել ինչ:

* Ոսկան. Բազում ինչ որ այսմ նմ՛:

* Ոմանք. Եւ կոչեցեալ առ ինքն զամենայն ժողովուրդսն:

* Ոմանք. Ոչ որինչ արտաքուստ... այլ որ ելանէն ՚ի նմանէ, այն պղծէ զմարդ:

* Ոմանք. Հարցին զնա աշա՛:

* Ոմանք. Անմիտ էք, և ոչ իմա՛... ոչ կարէ պղծել զնա:

ամենայն չարիք՝ ՚ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ:

ԺԹ ²⁴Եւ անտի յարուցեալ եկն ՚ի սահմանս Տիրոսի և Սիդոնի. և մտեալ ՚ի տուն՝ ո՛չ ումեք կամէր յայտնել, և ո՛չ կարաց ծածկել*²⁵ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայտոյ պղծոյ. եկն՝ անկաւ առաջի նորա:²⁶ Եւ կինն էր հեթանոս, Փիւնիկ Ասորի՛ յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդն հանցէ ՚ի դատերէ նորա:²⁷ Եւ Յիսուս ասէ՝ ցնա. Թո՛յլ տուր, նախ յազեցիցն մանկունք. զի ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց*²⁸ Եւ պատասխանի՛ ետ և ասէ. Տէր՝ և շո՛ւնք ՚ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին:²⁹ Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի՛ ե՛րթ, ե՛լ դն ՚ի դատերէ քունմէ:³⁰ Գնա՛ց ՚ի տուն իւր, և եգիտ ելեալ զդն. և զդուստրն, զի անկեալ դներ ՚ի մահիճս:

Ի եէ. ³¹Եւ ելեալ միւսանգամ ՚ի սահմանացն Տիրոսի և Սիդոնի, և եկն ՚ի ծովեզրն Գալիլեացոց ՚ի մէջ սահմանացն ՚ի Դեկապոլիս*³² Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր. և աղաչեցին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա*³³ Եւ առեալ զնա մեկուսի՛ յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթո՛ւք անդր. և կալաւ զլեզուէ նորա.³⁴ Կայեցաւ յերկինս՝ յոգոց եհան՝ և ասէ. Ե՛փփաթա, որ է՛ բացիր*³⁵ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և խօսէր՝ ուղիղ:³⁶ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն: Եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա և՛ս առաւել քարոզէին.³⁷ Եւ և՛ս քան զևս զարմանային և ասէին. Չամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի իսկից լսել տայ, և համերց խօսել*³⁸:

8

Գլուխ Ը

ԻՎ եգ. ¹Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, և ինչ՝ ո՛չ ունէին ուտել. կոչեաց զաշակերտսն իւր՝ և ասէ ցնոսա.² Գթան ես ՚ի վերայ ժողովրդեանդ. զի արդ՝ երեք աւուրք են՝ մինչ առ ի՛ս են, և ո՛չ ունին զինչ ուտիցեն*.³ Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս ՚ի տունս իւրեանց, նքթիցեն ՚ի ճանապարհի. զի ոմանք ՚ի դոցանէ ՚ի հեռաստանէ՛ եկեալ են:⁴ Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. Ուստի՞ կարես յազեցուցանել զդոսա հացի յանապատի աստ:⁵ Եւ հարցանէր զնոսա. Քանի՞ նկանակ հաց ունիք: Եւ նոքա ասեն. Եւթն*⁶ Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ՚ի վերայ երկրի. և առեալ զեւթն նկանակն՝ գոհացաւ՝ եբէկ, և տայր ցաշակերտսն զի արկցեն. և արկին առաջի ժողովրդեանն*⁷ Եւ ձկունս՝ սակաւ ունէին. և զայն ևս օրհնեաց, և հրամայեաց արկանել*⁸ Կերան և յազեցան, և բարձին զնշխարս կոտորոցն՝ եւթն զամբիղ:⁹ Եւ էին որք կերանն՝ իբրև չորք հազարք. և արձակեաց զնոսա:

* Ոսկան. Ոչ կամէր յայտնել:

* Ոսկան. Թոյլ տուր՝ զի նախ յազ՞:

* Ոմանք. Եւ Սիդոնի, եկն ՚ի ծո՞:

* Ոմանք. խուլ մի համր, և աղաչէին զի:

* Ոմանք. Եւ ասէ ցնա. Ե՛փփաթա:

* Ոմանք. Բարիոք գոր՞:

* Ոմանք. Են՝ զի կան առ իս:

* Ոմանք. Եւ հարցանէր ցնոսա. Քանի նկանակ հացի ունիք:

* Ոսկան. Չեթն նկանակս:

* Ոմանք. Եւ ձկունս սակաւ ու՞:

եւ. ¹⁰Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ ե'կն 'ի կողմանս Դաղմանունեայ*։ ¹¹Եկին փարիսեցքն՝ և սկսան վիճել ընդ նմա, և խնդրէին 'ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա։ ¹²Եւ զայրացաւ յոգի իւր՝ և ասէ. Ձի՞ք է՝ զի ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ՛ տացի նշան ազգիս այսմիկ։ ¹³Եթող զնոսա. դարձեալ եմուտ 'ի նաւ, և զնա'ց յայնկոյս։ ¹⁴Եւ մոռացան հաց բառնալ. բայց մի նկանակ ունէին ընդ իւրեանս 'ի նաւին*։

ԻԲ ¹⁵Եւ պատուիրէր նոցա և ասէր. Ձգոյ՛ջ եղերուք 'ի խմորոյ անտի փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ Յերովդիանոսաց*։ ¹⁶Եւ խորիէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ո՛չ ունիմք։ ¹⁷Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ձի՞ք խորիիք 'ի սիրտս ձեր թերահաւատք՝ թէ հաց ո՛չ ունիք. տակաւին ո՛չ իմանայք և ո՛չ յիշէք. ապշութիւն ունի զսիրտս ձեր*։ ¹⁸աչք զո՛ն և ո՛չ տեսանէք, ականջք եմ և ո՛չ լսէք և ո՛չ իմանայք տակաւին. և ո՛չ յիշէք, ¹⁹յորժամ զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն, և քանի՞ սակառի բարձէր զկոտորոցն լի։ Եւ ասեն ցնա. Երկոտասան*։ ²⁰Եւ յորժամ զելթն նկանակն 'ի չորս հազարսն, և քանի՞ զամբիղ լի՝ բարձէր զկոտորոցն։ Եւ նոքա ասեն. Ելթն։ ²¹Եւ ասէ ցնոսա. Իսկ զիա՞րդ ո՛չ իմանայք։

ԻԳ ²²Գա՛ն 'ի Բեթսայիդա. և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեցի 'ի նա։ ²³Եւ առեալ զծեռանէ կուրի՛ն՝ եհա՛ն արտաքոյ շինին, եթուք յա՛ջս նորա, և ձեռն եղ 'ի վերայ նորա. և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ*։ ²⁴Բացաւ՝ և ասէր. Տեսանե՛մ զմարդիկս՝ զի շրջին իբրև զծառս։ ²⁵Դարձեալ եղ ձեռս 'ի վերայ աչաց նորա՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ և տեսանէր համարձակ զամենայն*։ ²⁶Արձակեա՛ց զնա 'ի տուն իւր՝ և ասէ. 'Ի շէնդ մի՛ մտանիցես, այլ երթ 'ի տուն քո. և յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես 'ի շինին։

ԻԴ գլ. ²⁷Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս Կեսարեայ Փիլիպեայ. և 'ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր. Ձո՞ ուստեք՝ ասեն զինէն մարդիկն՝ թէ իցեն*։ ²⁸Նոքա ետո՛ւն պատասխանի՝ և ասեն. ՁՅովհաննէս մկրտիչ, և այլք՝ ՁԵղիա՛, և այլք՝ Ձմի ոք՝ 'ի մարգարէից անտի*։ ²⁹Ասէ ցնոսա. Իսկ դուք՝ զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեն։ Պատասխանի՛ ետ Պե՛տրոս, և ասէ ցնա. Դո՛ւ ես Քրիստոսն։ ³⁰Եւ սաստեա՛ց 'ի նոսա՝ զի ումեք՝ մի՛ ասիցեն զնմանէ*։ ³¹Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պա՛րտ է Որդւոյ մարդոյ բազո՛ւմ չարչարանս ընդունել, և անարգել յերիցանց և 'ի քահանայապետից և 'ի դպրաց, և մեռանել. և յերիր աւուր յառնել. ³²և համարձակ զբանն խօսեցաւ։ Եւ առեալ զնա մեկուսի՛ Պետրոսի՛ սկսաւ սաստել նմա։ ³³Եւ նա՝ դարձաւ ետես զաշակերտսն, սաստեա՛ց Պետրոսի և ասէ. Երթ յետս՝ ի՛մ Սատանայ. զի ո՛չ խորիիս դու

* Ոսկան. Եկն 'ի սահմանս Դաղմա՛։

* Ոմանք յաւելուն. Բայց միայն մի նկա՛։

* Ոմանք. Եւ պատուիրեաց նոցա և ասէր. Ձգոյ՛ջ լերուք։

* Ոմանք. Ապշութիւն կալաւ զսիրտս ձեր։

* Ոմանք. Սակառի լի բարձ... և ասեն. Երկոտա՛։

* Ոմանք. Եւ ձեռն եղ 'ի վերայ գլխոյ նորա. և։

* Ոմանք. Եղ ձեռն 'ի վերայ ա՛։

* Ոմանք. Փիլիպպեայ... մարդիկս թէ իցեն։

* Ոմանք. Ձմի 'ի մարգա՛։

* Ոմանք. Ձի մի՛ ումեք ասիցեն։

զԱստուծոյսն, այլ զմարդկանս*։ ³⁴Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. Եթէ որք՝ կամի գալ զկնի իմ, ուրասցի՝ զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ՝ զկնի իմ։ ³⁵Ձի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր, կորուսցէ՝ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, ապրեցուցցէ՝ զնա*։ ³⁶Ձի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհի ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի*։ ³⁷քանզի՞ զի՞նչ տացէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ։ ³⁸Ձի որ որք՝ անօթ համարեսցի զիս և զբանս իմ՝ ի շնացօղ և ի մեղաւոր ազգիս յայսմիկ, և Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք Յօր իւրոյ և հրեշտակաց սրբոց*։ ³⁹Եւ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք՝ ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

9

Գլուխ Թ

Ի Ե ¹Եւ յետ վեց աւուր՝ առնուլ ընդ իւր Յիսուս զՊե՛տրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա ՚ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղև առաջի նոցա*։ ²Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ո՛չ կարեն այնպէս սպիտակացուցանել*։ ³Եւ երևեցաւ նոցա եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի*։ ⁴Պատասխանի ետ Պե՛տրոս՝ և ասէ ցՅիսուս. Ռա՛բբի՛ բարու՛ք է մեզ աստ լինել. և արասցուք՝ երիս տաղաւարս՝ մի՛ քեզ, և մի՛ Մովսիսի՛, և մի՛ Եղիայի՛. ⁵քանզի ո՛չ գիտեր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին։ ⁶Եւ եղև ամպ մի՛ հովանի՛ ՚ի վերայ նոցա. ձայն եղև յամպոյ անտի՛ և ասէ. Դա՛ է Որդի իմ սիրելի՛ դմա՛ լուարուք*։ ⁷Եւ յանկարծակի հայեցեալ ա՛յսր անդր, ո՛չ ևս զոք ուրեք տեսին, բայց միայն՝ զՅիսուս ընդ իւրեանս։ ⁸Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց յորժամ Որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ*։ ⁹Եւ նոքա զբանն ՚ի մտի՛ ունէին. և խնդրէին ընդ միմեանս՝ թէ զի՞նչ իցէ ՚ի մեռելոցն յառնել։ ¹⁰Հարցին ցնա և ասեն. Ձի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարտ է գալ։ ¹¹Նա՛ պատասխանի ետ նոցա և ասէ. Եղիա նախ եկեալ՝ յարդարեսցէ՝ զամենայն. իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդոյ մարդոյ, զի բազում ինչ չարչարեսցի և անգոսնեսցի։ ¹²Այլ ես՝ ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, և արարին ընդ նա զինչ և կամեցան. որպէս և գրեալ է վասն նորա*։ զբ. ¹³Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ շուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։ ¹⁴Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջո՛յն տային նմա։ ¹⁵Եւ եհարց ցնոսա թէ զի՞նչ վիճէիք ընդ

* Ոսկան. Դարձաւ և ետես։ Ոմանք. Այլ զմարդկան։

* Ոմանք. Ձի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կոր՝։

* Ոմանք. Ձաշխարհս ամենայն... տուժեսցէ։

* Ոմանք. Ազգիս յայսմիկ։

* Ոմանք. Եւ յայլակերպ եղև։

* Ոմանք. Սպիտակեցուցանել։

* Ոսկան. Որք խօսէին ընդ Յիսուսի։

* Ոմանք. Յամպոյն՝ և ասէ. և ոմանք. յամպոյ անտի. Դա է։

* Ոմանք. Ի լեռնէն, պատուի՛։

* Ոմանք. Եւ արարին ընդ նմա զոր ինչ կամեցան։

նոսա*:

ԻՉ ¹⁶Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդեննն՝ և ասէ. Վարդապետ՝ ածի՛ զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. ¹⁷և ուր հասանէ՛ զարկուցանէ՛ զնա, և փրփրէ՛, և կրճտէ՛ զատամունս իւր՝ և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, և ո՛չ կարացին հանել զնա: ¹⁸Պատասխանի՛ ետ նոցա և ասէ. Ո՛վ ա՛զգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեն ընդ ձեզ, մինչև ցե՛րբ անսայցեն ձեզ. ածէ՛ք զնա առ իս* : ¹⁹Եւ ածին զնա առ նա. իբրև ետես զնա այսն, վաղվադակի շարժեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէ՛ր և փրփրեայր* : ²⁰Եհա՛րց ցհայր նորա և ասէ. Քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղև դմա: Եւ նա ասէ. Ի մանկութենէ. ²¹բազում անգամ 'ի հո՛ւր արկանէ և 'ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարօ՞ղ ինչ ես, օգնեա՛ մեզ Տէր՝ զթացեալ 'ի վերայ մեր* : ²²Եւ Յիսուս ասէ ցնա. Ասացեր՝ եթէ կարօղ ես. ամենայն ինչ՝ հնարաւոր է այնմ որ հաւատայն: ²³Եւ վաղվադակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ. Հաւատամ, օգնեա՛ անհաւատութեանս իմում* : ²⁴Իբրև ետես Յիսուս՝ եթէ կուտի՛ ժողովուրդն 'ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ՝ և ասէ. Համրդ՝ և խո՛ւլ այս՝ ես տամ քեզ հրաման, ե՛լ 'ի դմանէ, և այլ ևս՝ մի՛ մտանիցես 'ի դա* : ²⁵Եւ աղաղակեաց՝ և յո՛ժ լլկեաց զնա՝ և ե՛լ. և եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել թէ մեռա՛լ: ²⁶Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա յարոյց զնա, և կանգնեցաւ: ²⁷Եւ իբրև եմուտ նա 'ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. Մեք՝ ընդէ՞ր ո՛չ կարացաք հանել զնա* : ²⁸Եւ ասէ ցնոսա. Այդ ազգ՝ ո՛չ իւիք ելանէ, եթէ ոչ պահօ՞ք և աղօթիւք: զգ. ²⁹Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեացւոյք. և ո՛չ կամէր եթէ ոք գիտասցէ* : ³⁰Քանզի ուսուցանէր զաշակերտսն իւր՝ և ասէր ցնոսա, թէ Որդի մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա. և իբրև սպանցի՝ յերիր աւուր յառնէ* : ³¹Եւ նոքա ո՛չ գիտէին զբանն, և երկնչէին հարցանել ցնա* : Իէ ³²Եկն 'ի Կափառնառում. և իբրև եմուտ 'ի տուն, հարցանէր զնոսա. Ձի՞նչ վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս: ³³Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին 'ի ճանապարհին թէ՛ ո՞վ մե՞ծ իցէ: ³⁴Եւ իբրև նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն, և ասէ ցնոսա. Եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշտօնեայ: ³⁵Եւ առեալ մանուկ մի կացոյց 'ի մէջ նոցա. և ընկալեալ զնա 'ի գիրկս իւր, ասէ ցնոսա* . ³⁶Որ միանգամ յայսպիսի մանկուոյ ընկալցի յանուն իմ, զի՛ս ընդունի. և որ զիս ընդունի, ո՛չ զիս ընդունի՝ այլ զայն որ առաքեացն զիս* : ³⁷Պատասխանի ետ նմա Յովհաննէս և ասէ. Վարդապետ՝ տեսա՞ք զոմն զի յանուն քո դևս հանէր՝ և զմեր կնի ո՛չ շրջէր, և արգելա՞ք զնա: ³⁸Եւ նա ասէ. Մի՛ արգելուք զնա. զի ո՛չ ոք է որ առնէ զօրութիւնս յանուն իմ, և

* *Ոմանք.* Եհարց ցնոսա, թէ:

* *Ոմանք.* Մինչև ցերբ իցեն առ ձեզ. մինչև յերբ ան՞:

* *Ոմանք.* Եւ փրփրայր:

* *Ոմանք.* Արկանէ զդա և 'ի ջուր:

* *Ոսկան յաւելու.* Հաւատամ *Տէր.* օգ՞:

* *Ոմանք.* Համր դև խուլ... և այլ մի՛ ևս:

* *Ոմանք.* Ոչ կարացաք հանել զդա:

* *Ոմանք.* Անցանէր առ Գալիլեացւոյքն:

* *Ոմանք.* Եւ սպանանիցեն զնա: *Ոսկան.* Յերիր աւուր յարիցէ:

* *Ոմանք.* Հարցանել զնա:

* *Ոմանք.* Ի գիրկս իւր, ասէր ցնոսա:

* *Ոմանք.* Եւ որ զիսն ընդունիցի:

կարից հայիոյել զիս: ³⁹Ձի որ ո՛չն է ընդ մեզ հակառակ, ՚ի մե՛ր կոյս է*: ⁴⁰Եւ որ որ արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս յայս, թէ դուք՝ Քրիստոսի՛ էք, ամէն ասե՛ն ձեզ՝ մի՛ կորուսցէ զվարձս իւր: ⁴¹Եւ որ որ՝ գայթազդեցուսցէ զմի՛ ՚ի փոքրկանցս որ հաւատան յիս, լա՛ւ էր նմա առաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոցաւ նորա երկա՛ն իշոյ, և ընկեցեալ ՚ի ծով*: ⁴²Եւ եթէ գայթազդեցուսցէ զքեզ ձեռն քո, հա՛տ՝ ընկեա՛ ՚ի քէն. զի լա՛ւ իցէ քեզ խեղ՝ ՚ի կեանսն յաւիտեանից մտանել, քան երկուս ձեռս ունել՝ և երթալ ՚ի գեհե՛ն ՚ի հուրն անշէջ*: ⁴⁴Եւ եթէ ոտն քո գայթազդեցուսցէ զքեզ, հա՛տ ընկեա՛ զնա ՚ի քէն. լա՛ւ իցէ քեզ կա՛ղ մտանել ՚ի կեանսն յաւիտեանից, քան երկուս ոտս ունել՝ և անկանել ՚ի գեհե՛ն*: ⁴⁶Եւ եթէ ակն քո գայթազդեցուսցէ զքեզ, հա՛ն զնա ՚ի բաց. լա՛ւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել՝ և անկանել ՚ի գեհե՛ն*: ⁴⁷Ուր որդն նոցա ո՛չ մեռանի՝ և հուրն ո՛չ շիջանի: ⁴⁸Ձի ամենայն ինչ հրով յաղեսցի*: ⁴⁹Բարութք է աղ. եթէ աղն անհամեսցի, ի՞նչ համեսեսցի. արդ՝ դուք կալարութք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէ՛ք ընդ միմեանս*:

10

Գլուխ Ժ

զդ. ¹Եւ անտի յարուցեալ՝ զայ՛ ՚ի սահմանս Զրեաստանի, յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ խոնեալ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա*:

Ի՞նչ ²Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին, եթէ արժա՞ն իցէ առն զկնի իւր արձակել: ³Նա՛ պատասխանի ետ նոցա՝ և ասէ. Ձի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս: ⁴Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ՝ զի՛ր մեկնելոյ գրել, և արձակել: ⁵Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց զպատուիրանն զայն*. ⁶այլ իսկզբանէ արարածոց, արո՛ւ և է՛զ արար զնոսա Աստուած, և ասէ. ⁷Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ*. ⁸և եղիցին երկուքն ՚ի մարմին մի. և այնուհետև ո՛չ են երկու՝ այլ մարմին մի: ⁹Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ: ¹⁰Եւ ՚ի տան դարձեալ՝ աշակերտքն զնոյն

* Ոմանք. ՚ի մեր կողմն է:

* Ոմանք. Թէ արկեալ էր ընդ պարանոց նորա:

* Ոմանք. խեղ մտանել ՚ի կեանս: *Աստանօր Ոսկան առեալ ՚ի Լատինականէն յաւելու համար 43 և 45. Երիցս դնելով զբանն.* Ուր որդն նոցա ո՛չ մեռանի, և հուրն ոչ շիջանի: *Ձոր ամենայն գրչագիրք մեր միանգամ ունին ՚ի համարն 48:*

* Ոմանք. Գայթազդեցուցանէ զքեզ... և արկանել ՚ի գեհե՛ն: *Ուր Ոսկան յաւելու.* ՚ի գեհե՛ն ՚ի հուրն անշէջ:

* Ոմանք. Զատ զնա ՚ի բաց:

* Ոսկան ՚ի Լատինականէն առեալ յաւելու. Զրով յաղեսցի. և ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի:

* Բազումք. Եւ եթէ աղն անհա՛:

* Ոմանք. խոնել ժողովուրդ առ նա:

* Յօրինակին պակասէր. Պատասխանի ետ Յիսուս: *Ոմանք յաւելուն.* Գրեաց ձեզ զպատ՛:

* Ոմանք. Վասն այնորիկ թողցէ:

հարցին ցնա*։ ¹¹Եւ ասէ ցնոսա. Եթէ այր՝ արծակեացէ զկին իւր, և արասցէ այլ, շնայ։ ¹²Եւ կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլուն, շնայ։ զե. ¹³Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռնն դիցէ նոցա. իսկ աշակերտքն՝ սաստի՛ն այնոցիկ որ մատուցանէինն*։ ¹⁴Իբրև ետես Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտուոյ՞ գալ՝ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ*։ ¹⁵Ամէն ասեմ ձեզ. Որ ո՛չ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ, ո՛չ մտցէ ՚ի նա։ ¹⁶Եւ առեալ զնոսա ՚ի գիրկս ձեռնն եդ ՚ի վերայ և օրհնեաց զնոսա։

Ի՞նչ ¹⁷Եւ ընդ ելանելն նորա անտի ՚ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ՚ի ծունր իջանէր, հարցանէր ցնա՝ և ասէր. Վարդապետ բարի՝ զի՞նչ արարից զի զկեանսն յաւիտեանական ժառանգեցից*։ ¹⁸Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Զի՞ ասես զիս բարի. չի՞ք որ բարի՝ բայց մի Աստուած Հայր*։ ¹⁹Զպատուիրանս գիտես. Մի՛ շնար. Մի՛ սպանաներ. Մի՛ գողանար. Մի՛ սուտ վկայեր. Պատուեա՛ զհայր քո և զմայր։ ²⁰Նա՛ պատասխանի ետ՝ և ասէ ցնա. Վարդապետ՝ զայդ ամենայն արարի՛ ՚ի մանկութենէ իմմէ, արդ՝ զի՞նչ ևս պակաս իցեն։ ²¹Եւ Յիսուս հայեցեալ ՚ի նա՝ սիրեաց զնա և ասէ ցնա. Մի ինչ պակաս է ՚ի քեն, եթէ կամիս կատարեալ լինել, երթ զոր ինչ ունիս վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և ա՛ռ զխաչն՝ և ե՛կ զկնի իմ*։ ²²Եւ նա՝ խոժոռեալ ընդ բանն՝ զնաց տրտում. զի ունէր ինչս բազումս։ ²³Եւ հայեցեալ յայնս կոյս՝ յայն կոյս Յիսուս՝ ասէ ցաշակերտսն. Զիա՞րդ դժուարին է՝ որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ*։ ²⁴Եւ աշակերտքն զարմացեալ էին ՚ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա՝ և ասէ. Ո՛րդեակք՝ ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ ²⁵Դիրին է մալխոյ ընդ ծակ ասդան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։ ²⁶Եւ նորա առաւել ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. Իսկ ո՞վ կարասցէ ապրել*։ ²⁷Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ. Առ ՚ի մարդկանէ՛ այդ անհնարին է, այլ ո՛չ առ ՚ի յԱստուծոյ*։ զզ. ²⁸Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք՝ թողաք զամենայն, և եկաք զկնի՛ քո։ ²⁹Պատասխանի՛ ետ Յիսուս և ասէ. Ամէն ասեմ ձեզ. Ո՛չ որ է որ եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զհայր, կամ զմայր, կամ զորդիս, կամ զագարակս՝ վասն իմ կամ վասն աւետարանին*։ ³⁰Եթէ ոչ առնուցու՛ հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս, և եղբարս, և քորս, և մայրս, և որդիս, և ագարակս հալածանօք հանդերձ, և յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտեանական*։ ³¹Զի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք։ ³²Եւ էին ՚ի

* *Ոմանք.* Աշակերտքն զնոյն հարցանէին ցնա։

* *Ոմանք.* Ձեռն դիցէ ՚ի վերայ նոցա։

* *Ոմանք.* Թոյլ տուք մանկտուոյն։

* *Ոմանք.* Ահա ոմն մեծա՛... զինչ գործեցից զի զկեանս։

* *Սակաւ օրինակք յաւելուն համաձայն մերումս.* Մի Աստուած Հայր։

* *Ոմանք.* Պակասէ ՚ի քեն։

* *Յօրինակին պակասէր.* Յայն կոյս Յիսուս, ասէ։ *Ոմանք.* Որ զինչսն ունին։

* *Ոմանք.* Իսկ ո՛վ կարիցէ ապրել։

* *Ոմանք.* Ընդ նոսա Յիսուս՝ և ասէ։ *Ոսկան յաւելու.* Առ ՚ի յԱստուծոյ. *զի ամենեքեան կարելիք են առ Աստուած։*

* *Ոմանք.* Վասն անուան իմոյ, կամ վասն աւետարանին։

* *Ոմանք.* Եւ մարս։ և *ոմանք.* և մայր։

ճանապարհի՝ մինչ դեռ ելանէին յերուսաղէմ. և երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և զարմացեալ էին որ զհետն երթային. և երկնչէին: զէ. Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա՝: ³³Թէ ահաւասիկ ելանենք յերուսաղէմ. և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և դպրաց. և դատեսցին զնա ՚ի մահ, և մատնեսցեն զնա հեթանոսաց՝: ³⁴և կատակեսցեն զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքանիցեն ՚ի նա, և սպանցեն. և յերի՛ր աւուր յարիցէ՝:

Լ ³⁵Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս՝ որդիքն Ձերեդեայ. և ասեն ցնա. Վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ՚ի քէն՝ արասցեն մեզ՝: ³⁶Եւ նա՝ ասէ ցնոսա. Չի՞նչ կամիք յինէն՝ զի արարից՝ ձեզ: ³⁷Եւ նոքա՝ ասեն ցնա. Տո՛ւր մեզ՝ զի նստցուք մի՝ յաջմէ՝ քունմէ և մի յահեկէ՝ ՚ի փառսն քուն՝: ³⁸Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոցն եմ մկրտել՝: ³⁹Եւ նոքա՝ ասեն ցնա. Կարենք: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Ջբաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէ՞ք, և զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցի՞ք. ⁴⁰այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ո՛չ է իմ տալ, այլ որոց տուեալ իցէ՞: ⁴¹Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ Յակովբայ և Յովհաննոս: ⁴²Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա. Գիտէ՞ք. զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա. և մեծամեծքն նոցա իշխեն նոցա՝: ⁴³Ո՛չ նոյնպէս իցէ և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մե՛ծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ՝: ⁴⁴և որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ամենեցուն ծառայ՝: ⁴⁵Քանզի և Որդի մարդոյ՝ ո՛չ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:

Լ և էկ. ⁴⁶Եւ գան յերիքով. և ընդ ելանելն նորա յերիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդովք, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի՝: ⁴⁷Իբրև լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի՛ է, սկսաւ աղաղակել՝ և ասել. Որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեաց ինձ: ⁴⁸Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա՝ առաւել ևս աղաղակէր. Որդի Դաւթի ողորմեաց ինձ՝: ⁴⁹Ձտեղի՛ առ Յիսուս, և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալերեաց՝ արի՛ կոչէ՛ զքեզ: ⁵⁰Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ եկն առ Յիսուս՝: ⁵¹Պատասխանի՛ ետ նմա Յիսուս՝ և ասէ. Չի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ: Ասէ ցնա կոյրն. Ռա՛բբունի, զի բացայց: ⁵²Եւ Յիսուս ասէ ցնա. Երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ վաղվաղակի՛ բացաւ, և երթայր զհետ նորա ՚ի ճանապարհին:

* *Ոմանք.* Սկսաւ ասել ցնոսա, զինչ... ընդ նմա: *Ոսկան.* Նոցա որ ինչ անցք ան՝:

* *Ոմանք.* Եւ դատեսցեն զնա ՚ի մահ: *Եւ ոմանք.* Եւ դատապարտեսցեն զնա ՚ի:

* *Ոմանք.* Եւ կատակիցեն:

* *Օրինակ մի.* Եւ երթային զնովաւ:

* *Ոմանք.* ՚ի յահեկէ՛ ՚ի փառսն քո:

* *Բազումք.* Ձմկրտութիւնն մկրտել՝ զոր:

* *Այլք.* Այլ որոց պատրաստեալ իցէ:

* *Ոմանք.* Եւ մեծամեծքն նոցա:

* *Ոմանք.* Ոչ այնպէս իցէ և ՚ի ձերում:

* *Ի բազումս պակասի.* Եղիցի ձեր ամենեցուն:

* *Ոմանք.* Ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս. *կամ՝* Բարտիմէոս:

* *Ոմանք.* Եւ նա ևս առաւել:

* *Ոսկան.* Յարեաւ և եկն առ:

Գլուխ ԺԱ

ԼԲ ¹Եւ յորժամ մերձ եղեն յերուսաղէմ 'ի Բեթփազէ և 'ի Բեթանիա մօտ 'ի լեառն Չիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի*, ²և ասէ ցնոսա. Երթայք դուք 'ի գեղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյն ժամայն իբրև մտանէք 'ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ, յորոյ վերայ ո՛չ ոք 'ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա՝ և ածէք*: ³Եւ եթէ ոք ասասցէ զձեզ՝ թէ զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասցիք՝ թէ Տեա՛ռն իւրում պիտոյ է. և վաղվաղակի՛ առաքեսցէ զնա այսր*: ⁴Չոգան՝ և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ, և լուծին զնա*: ⁵Եւ ոմանք յորոց անդն կային, ասեն ցնոսա. Չի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ*: ⁶Եւ նորա՝ ասեն ցնոսա որպէս ասացն Յիսուս. և թո՛յլ ետուն նոցա: ⁷Ածեն զյաւանակն առ Յիսուս. և արկանեն 'ի վերայ նորա զհանդերձս, և նստա՛ւ 'ի վերայ նորա*: ⁸Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին 'ի վերայ ճանապարհին. և այլք ո՛ստս 'ի ծառոց հատանէին՝ և արկանէին զճանապարհաւն*: ⁹Եւ որ առաջին՝ և զկնի երթային, աղաղակէին և ասէին. Ովսաննա՛ Բարձրելոյն. ¹⁰օրհնեա՛լ որ գասդ յանուն Տեառն. օրհնեա՛լ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութիւն յերկինս՝ և փա՛ռք 'ի բարձունս*: ¹¹Եւ եմուտ Յիսուս յերուսաղէմ, 'ի տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումքք. և զի էր երեկոյացեալ ժամն, ել 'ի Բեթանիա՝ երկուսասանիւքն հանդերձ*:

ԼԳ էք. ¹²Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին 'ի Բեթանիայ՝ քաղցեալ*: ¹³Եւ ետես թզենի մի 'ի բացուստ տերևալից. և եկն թէ գտանիցէ ինչ 'ի նմա. և իբրև եկն 'ի նմա ո՛չինչ եգիտ՝ բայց միայն տերև՝. զի ո՛չ իսկ էր ժամանակ թոյ*: ¹⁴Պատասխանի ետ՝ և ասէ ցնա. Մի՛ ևս ոք՝ յաւիտեան 'ի քէն պտուղ կերիցէ: Եւ լսէին աշակերտքն նորա: ¹⁵Գան 'ի յերուսաղէմ. և մտեալ 'ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն և զգնօղս՝ որ էին 'ի տաճարին. և զսեղանս հատավաճառացն ցրուեաց, և զաթոռս աղանեվաճառացն կործանեաց*. ¹⁶և ո՛չ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն: ¹⁷Ուսուցանէր զնոսա և ասէր. Գրեալ է, թէ տունդ իմ տո՛ւն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, և դուք արարէք զդա այրս աւազակաց*: ¹⁸Լուան քահանայապետքն և դպիրք, և

* Ոմանք. Առաքեաց երկուս յա՛:

* Ոմանք. 'Ի գեղդ որ... իբրև մտանիցէք 'ի նա, գտանէք յաւա՛:

* Բազումք 'ի հնագոյն և յընտրելագոյն օրհնակաց ունին համաձայն մերումս. Ասասցէ զձեզ՝ թէ զի՞. և սակաւք միայն դնեն՝ ասիցէ ձեզ. կամ՝ ցձեզ եթէ:

* Ոմանք. 'Ի փողոցի անդր:

* Ոմանք. Յորոց անդ կային:

* Ոմանք. Ածին զյաւանակն... և արկին 'ի վերայ նորա հանդերձս... 'ի վերայ նոցա:

* Ոմանք. Ոստս ծառոց հատա՛:

* Առ Ոսկանայ պակասի. Թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ: Ուր ոմանք. Յօր մերում:

* Ոմանք. Եւ հայեցեալ շուրջ:

* Ոմանք. Եւ 'ի վաղիւն մինչդեռ:

* Ոմանք. Եկն 'ի նա:

* Ոմանք. Գան յերուսաղէմ:

* Ոմանք. Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա. Գրեալ է. Տուն իմ տուն ա՛:

խնդրէին թէ ո՞րպէս կորուսցեն զնա, բայց երկնչէին՝ ՚ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա*։ ¹⁹Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին:

²⁰Եւ մինչ դեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց: ²¹Յիշեա՛ց Պե՛տրոս՝ և ասէ ցնա. Ռաբբի՛ ահաւասիկ թզենին զոր անիծեր՝ ցամաքեցա՛ւ*։ ²²Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ, ²³ամէն ասեմ ձեզ. Որոք ասիցէ լերինս այսմիկ. Բարձի՛ր և անկի՛ր ՚ի ծով, և ո՛չ երկմտիցէ ՚ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի՛ նմա զոր ինչ և ասիցէ*։ ²⁴Վասն այսորիկ ասե՛մ ձեզ. Ջամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուք, եղիցի՛ ձեզ*։

ԼԴ ²⁵Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զուներք. զի և Յայրն ձեր որ յերկինս է, թողցէ՛ ձեզ զյանցանս ձեր:

ԼԵ էգ. ²⁷Գա՛ն միւսանգամ ՚ի յերուսաղէմ. և մինչ դեռ ՚ի տաճարի անդ զգնայր, գա՛ն առ նա քահանայապետքն և դպիրք և ծերք*, ²⁸և ասեն ցնա. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:

²⁹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Յարցի՛ց և ես զձեզ բան մի, տո՛ւք ինձ պատասխանի. և ես ասացի՛ց ձեզ՝ որով իշխանութեամբ առնեն զայս:

³⁰Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց էր՝ թէ ՚ի մարդկանէ, տո՛ւք ինձ պատասխանի: ³¹Խորհէին ընդ միմեանս՝ և ասէին. Եթէ ասենք եթէ յերկնից, ասէ ցնեզ. Իսկ ընդէ՞ր ո՛չ հաւատացէք նմա: ³²Այլ եթէ ասենք. ՚ի մարդկանէ, երկնչի՛նք ՚ի ժողովրդենն. զի ամենեքին գիտէին զՅովհաննես՝ թէ մարգարէ՛ էր*։

³³Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս. Չգիտենք: Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի՝ և ասէ. Եւ ո՛չ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեն զայս:

12

Գլուխ ԺԲ

ԼԶ ¹Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և ասել. Այր մի՛ տնկեաց այգի, և ա՛ծ շուրջ զնովաւ ցանգ, և գո՛ւք իրնծան փորեաց և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս՝ և զնա՛ց ՚ի տա՛ր աշխարհ: ²Եւ առաքեաց առ մշակսն ՚ի ժամանակի ծառայ մի, զի ՚ի մշակաց անտի առցէ՛ ՚ի պտղոյ այգւոյն*։ ³Եւ նոցա կալեալ՝ զա՛ն հարին զնա, և արձակեցին ունա՛յն: ⁴Դարձեալ առաքեաց ա՛յլ ծառայս, և զնա կառափնատեցին՝ և արձակեցին անարգեալ*։ ⁵Եւ դարձեալ՝ ա՛յլ առաքեաց, և զնա սպանի՛ն. և զբազումս այլս, զոմանս՝ հարկանէին, և զոմանս՝ սպանանէին*։

* Ոմանք. Ընդ ուսումնն նորա:

* Ոսկան. Եւ յիշեաց Պետո՛ս:

* Ոմանք. Ջոր ասէն՝ լինիցի. եղի՞:

* Ոմանք. Ձի ամենայն ինչ վասն որոյ... թէ առնուցուք, եղիցի: *Աստանօր Ոսկան առեալ ՚ի Լատինականէն յաւելու համար 26. *Ձի եթէ դուք ոչ թողուցուք. և ոչ Յայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր: Որ ոչ երկի ՚ի գրչագիրս մեր:

* Ոմանք. Միւսանգամ յերուսաղէմ... ՚ի տաճարին զգնայր: Ուր օրինակ մի. ՚ի ճանապարհի անդ զգնայր:

* Ոմանք. Եթէ ասենք եթէ ՚ի մարդկանէ:

* Ոմանք. Ձի ՚ի մշակացն առցէ:

* Ոմանք. Առաքեաց առ նոսա այլ ծառայ. և զնա:

* Ոմանք. Եւ զայլս բազումս:

⁶Ապա՝ որդի մի էր իւր սիրելի. զնա՝ առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդոյ աստի իմնէ՞: ⁷Իսկ մշակքն իբրև տեսին զնա զի գայր, ասեն ցմիմեանս. Սա՛ է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մե՛ր լիցի ժառանգութիւնն: ⁸Եւ կալեալ զնա՝ սպանին, և հանին արտաքոյ այգւոյն: ⁹Արդ՝ զի՞նչ արասցէ տէր այգւոյն. եկեսցէ՛ և կորուսցէ՛ զմշակսն, և տացէ զայգին՝ ի ձեռս այլոց: ¹⁰Եւ ոչ զգի՞րն զայն՝ իցէ ընթերցեալ ձեր, թէ. Չվէմն զոր անարգեցին շինօղքն, նա եղև զլուխ անկեան. ¹¹Ի Տեառնէ եղև այս. և է՝ սքանչելի յաչս մեր: ¹²Եւ խնդրէին զնա ունել. և երկեան՝ ի ժողովրդենէ անտի, զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն. և թողին զնա և զնացին՞:

ԼԷ ¹³Եւ առաքեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց անտի՝ և ՚ի Յերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ: ¹⁴Եւ նոքա եկեալ՝ հարցանէին զնա նենգութեամբ՝ և ասէին. Վարդապե՞տ՝, գիտեմք զի ճշմարիտ ես, և ո՛չ ինչ փոյթ է քեզ զուներք. զի ո՛չ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. արդ՝ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկ տալ կայսեր՝ թէ ո՛չ. տացո՞ւք՝ թէ ո՛չ տացուք: ¹⁵Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ՛ ցնոսա. Ձի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից: ¹⁶Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞րք է պատկերս այս՝ կամ գիր: Եւ նոքա ասեն ցնա. Կայսեր: ¹⁷Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Երթայք տո՛ւք՝ զկայսեր, կայսեր, և զԱստուծոյ՝ Աստուծոյ: Եւ զարմացան ընդ նա՞:

ԼԸ էդ. ¹⁸Գան առ նա սաղուկեցիքն որ ասեն՝ թէ չի՞ք յարութիւն. հարցանէին ցնա՝ և ասէին. ¹⁹Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցո՛ւ կին, և որդի ո՛չ թողուցու. զի առցէ եղբայր նորա զկինն նորա, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում: ²⁰Արդ՝ եղբարք ե՛ւթն էին առ մեզ. առաջինն ա՛ռ կին՝ և մեռաւ, և ո՛չ եթող զաւակ: ²¹Եւ երկրորդն առ զնոյն և մեռաւ. և ոչ նա՛ եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն. ²²և եւթներեան իսկ. և ո՛չ թողին զաւակ. յետ ամենեցուն՝ մեռաւ և կինն: ²³Արդ՝ ՚ի յարութեանն յորժամ յառնիցեն, ո՞րք ՚ի նոցանէ լինիցի կինն. զի եւթներեան կալան զնա կին: ²⁴Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ո՛չդ գիտէք զԳիրս՝ և ո՛չ զզօրութիւն Աստուծոյ: ²⁵Ձի յորժամ ՚ի մեռելոց յարիցեն, ո՛չ արք՝ կանայս առնեն, և ո՛չ կանայք՝ արանց լինին. այլ իբրև զիրեշտակս իցեն՝ որ յերկինսն են: ²⁶Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ ՚ի գիրսն Մովսիսի, ՚ի մորենւոջն ո՛րպէս ասաց ցնա Աստուած. Ես եմ ասէ՛

* *Օրինակ մի.* Ամաչեսցեն յորդոյս իմնէ:

* *Ոմանք.* Տեսին զնա թէ գայ, ա՞:

* *Ոմանք.* Եւ կալան զնա, սպ՞:

* *Ոմանք.* Ի՞ ժողովրդենէն. զի:

* *Ոմանք.* Որսասցեն բանիւք:

* *Ոմանք.* Եւ ոչինչ է քեզ փոյթ. հարկս տալ կայսեր՝ թէ ո՛չ: *Յոմանս պակասի բանս.*

Տացո՞ւք՝ թէ ոչ տացուք: Ըստ որում և յօրինակի մերում զառաջինն միաձեռն գրեալ էր, և յետոյ քերեալ:

* *Ոմանք.* Չկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ:

* *Ոմանք.* Որ ասէին թէ չի՞ք... հարցանէին զնա՝ և:

* *Ոսկան.* Ոչ թողուցու, առցէ եղբայրն նորա զկին նորա:

* *Ոմանք.* Առաջինն առեալ կին՝ և մեռաւ. *կամ՝* արար կին՝ և մե՞:

* *Յօրինակին պակասէր.* Վասն այդորիկ *իսկ* մոլոր՞: *Ոմանք.* Ձի ո՛չ գիտէք... զզօրութիւնն Աստուծոյ:

Աստուած Աբրահամու, և Աստուած Իսահակայ, և Աստուած Յակովբայ*։ ²⁷Եւ ո՛չ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց. և արդ դուք՝ յո՛ժ մոլորեալ էք։

ԼԹ ²⁸Եւ մատուցեալ մի ոմն՝ ՚ի դպրացն՝ լսէ՛ր նոցա մինչ վիճէինն. իբրև ետես թէ բարւո՛ք ետ նոցա զպատասխանին, եհարց ցնա՝ և ասէ. Ո՞ր պատուիրան է առաջին*։ ²⁹Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Առաջին քան զամենայն. Լո՛ւր Իսրայէլ՝ Տէր Աստուած մեր՝ Տէր՝ մի՛ է, ³⁰և սիրեսցեն՝ զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։ ³¹Եւ երկրորդն՝ նման սմին. Սիրեսցեն՝ զընկեր քո՝ իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ՝ պատուիրան ո՛չ գոյ։ ³²Եւ ասէ ցնա դպիրն. Բարւո՛ք է վարդապետ. ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած, և ո՛չ գոյ այլ՝ բաց՝ ՚ի նմանէ*. ³³և սիրելն զնա՝ յամենայն սրտէ, և յամենայն զօրութենէ, և յամենայն մտաց. և սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել է քան զողջակէզս և զզոհս։ ³⁴Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին՝ ասէ ցնա. Չես՝ հեռի յարքայութենէ Աստուծոյ։ Եւ ո՛չ ևս որ իշխեր ինչ հարցանել զնա*։

Խ էէ. ³⁵Պատասխանի՛ ետ Յիսուս և ասէ, մինչ ուսուցաներ ՚ի տաճարին. Ջիա՞րդ ասեն դպիրքն, թէ Քրիստոսն որդի Դաւթի է։ ³⁶Եւ ինքն Դաւիթ Յոգուովն Սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ. Նի՛ստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ ³⁷Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա։ Եւ բազում ժողովուրդ լսէ՛ր նմա քաղցրութեամբ*։ ³⁸Եւ ասէ՛ր ուսուցանելով ՚ի վարդապետութեան իւրում. Ջգո՛յշ լերուք ՚ի դպրաց անտի՝ որ կամին ՚ի հանդերձս երևելիս շրջել, զնախողջո՛յնս խնդրել ՚ի հրապարակս*, ³⁹և զնախաթո՛ռս ՚ի ժողովուրդս, և զգահագլուխս յընթրիս։ ⁴⁰Որ ուտեն զտունս այրեաց, պատճառաւնօք յերկարեալ զաղօթս, զի աւելի՛ ևս դատաստանս ընկալցին*։

ԽԱ ⁴¹Կայր Յիսուս ընդդէմ զանձանակին, տեսանէր զիարդ ժողովուրդն արկաներ պղինձ ՚ի զանձանակն. և բազում մեծատունք՝ արկին բազում ինչ*։ ⁴²Եկն այրի՛ մի՝ և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։ ⁴³Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսա. Ամէն ասե՛ն ձեզ, զի այրին այն տառապեալ՝ շատ արկ քան զամենեսեան որ արկին ՚ի զանձանակն*։ ⁴⁴Քանզի ամենեքին՝ յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա՝ ՚ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ. գոյիւ չափ զկեանս իւր*։

13

* Ոմանք. Չիցէ ընթերցեալ ձեզ ՚ի գիրսն։

* Ոմանք. Մատուցեալ ոմն ՚ի դպ՛։

* Ոմանք. Բայց ՚ի նմանէ։

* Ոմանք. Յարքայութենէն Աստուծոյ... հարցանել ինչ ցնա։

* Ոմանք. Ջիարդ որդի նորա իցէ. և բազում ժողովուրդ լսէին նմա քաղց՛։

* Ոմանք. Ջգո՛յշ եղերուք ՚ի դպր՛։

* Ոմանք. Յերկարեն զաղօթս... դատաստան ընդունիցին։

* Ոմանք. Տեսանէր թէ զիարդ։

* Ի բազումս պակասի. Ջաշակերտսն իւր, ասէ։ Ոսկան. Եւ կոչեալ առ ինքն... շատ էարկ քան զամենայնսն ՚ի զանձանակն։

* Ոմանք. Ամենեքեան ՚ի յաւելորդաց իւր՛։

Գլուխ ԺԳ

էգ. ¹Եւ յելանելն նորա 'ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտաց նորա. Վարդապետ, տե՛ս՝ որպիսի՛ են քարինքս, և որպիսի՛ շինուածք՝: ²Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Տեսանե՞ս զայդ ամենայն շինուածս. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ թողցի այդը՝ քա՛ր 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի՝:

ԽԲ ³Եւ մինչ նստէր նա 'ի լերինն Չիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պե՛տրոս և Յա՛կովբոս և Յովհաննէս և Անդրէ՛աս*.
⁴Ասա՛ մեզ՝ ե՞րբ լինիցի այդ. և զի՞նչ նշան է յորժամ կատարելո՞ց իցէ այդ ամենայն՝: ⁵Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. Չգո՛յշ կացէք, մի՛ որ զձեզ խաբեսցէ: ⁶Չի բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ե՛ս եմ Քրիստոսն. և զբազումս մոլորեցուցեն՝: ⁷Այլ յորժամ լսիցէք պատերազմունս, և համբաւս պատերազմաց՝ մի՛ խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չէ՛ է կատարած՝: ⁸Չի յարիցէ ազգ՝ յազգի՛ վերայ, և թագաւորութիւն 'ի թագաւորութեան վերայ, և եղիցին շարժմունք 'ի տեղիս տեղիս, սո՛վք, և սրածութիւնք, և խռովութիւնք. այլ՝ այն ամենայն սկիզբն է երկանց՝: ⁹Եւ զձե՛զ իսկ՝ մատնեսցեն յատեանս, և 'ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ, 'ի վկայութիւն նոցա* ¹⁰և ամենայն հեթանոսաց. բայց նախ՝ պարտ է աւետարանիս քարոզել՝: ¹¹Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, և մի՛ զմտաւ ածիցէք՝ թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ո՛չ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին Սուրբ՝: ¹²Մատնեսցէ եղբայր զեղբայր՝ 'ի մահ, և հայր՝ զորդի՛. և յարիցեն որդիք 'ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա* ¹³Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն 'ի սպառ՝ նա կեցցէ՝: ¹⁴Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին՝ զի կայցէ 'ի տեղոջ՝ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն 'ի միտ առցէ: Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս. ¹⁵և որ 'ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ 'ի տուն, և մի՛ մտցէ բառնալ ինչ 'ի տանէ իւրմէ. ¹⁶և որ յազարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր: ¹⁷Բայց վա՛յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ՝: ¹⁸Յաղո՛թս կացէք՝ զի մի՛ ձմերանի լինիցի այն՝: ¹⁹Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի ո՛չ եղեն երբէք այնպիսիք իսկզբանէ մինչև ցայժմ, և մի՛ այլ լիցի՝: ²⁰Եւ եթէ ո՛չ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ՝ վասն ընտրելոց իւրոց, ո՛չ ապրէր ամենայն

* Ոմանք. Նորա 'ի տաճարէն. ասէ ցնա մի ոմն յաշա՛:

* Ոմանք. Ամէն ամէն ասեմ ձեզ:

* Յոմանս պակասի. Եւ մինչ նստէր նա 'ի լե՛:

* Ոմանք. Կամ զինչ նշան իցէ:

* Ոմանք. Չի բազումք գայցեն յանուն... մոլորեցուցանիցեն:

* Ոմանք. Չի այնմ պարտ է... կատարածն:

* Ոմանք. Եւ խռովութիւնք. սակայն ամենայն սկիզբն:

* Ոմանք. Մատնեն յատեանս:

* Յոմանս պակասի. Եւ ամենայն հեթանոսաց. բայց նախ՝ պարտ է:

* Ոմանք. Տանիցեն զձեզ... զի ո՛չ դուք իցէ որ:

* Ոմանք. Եւ յառնիցեն որդիք:

* Ոմանք. Որ համբերեսցէ. կամ՝ համբերէն իսպառ:

* Ոմանք. Եւ ստնդուացն:

* Առ Ոսկանայ պակասի. Լինիցի այն:

* Ոմանք. Որպէս ոչ եղեն երբէք: Բազումք յաւելուն. Իսկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի՛ այլ լիցի:

մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց, կարճեաց զաւուրսն զայնոսիկ:
²¹Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ՝ եթէ ահաւասիկ է Քրիստոսն՝ կամ անանիկ, մի՛
հաւատայցէք*։ ²²Ձի յարիցեն սո՛ւտ քրիստոսք և սո՛ւտ մարգարէք, և տացեն
նշանս և արուեստս՝ առ՝ի մոլորեցուցանելո՛յ եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն*։
²³Բայց դուք՝ զգո՛յշ եղերուք, ահաւասիկ յառաջագո՛յն ասացի ձեզ զամենայն*։
²⁴Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն խաւարեսցի՛, և
լուսին՝ ո՛չ տացէ զլոյս իւր*։ ²⁵և աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք
յերկինս՝ շարժեսցին*։ ²⁶Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք, և
զօրութեամբ՝ և փառօք բազմօք*։ ²⁷Եւ յայնժամ առաքեսցէ զիրեշտակս իւր, և
ժողովեսցէ՛ զընտրեալս իւր՝ի չորի՛ց հողմոց՝ ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծա՛գս
երկնից*։ ²⁸Բայց դուք՝ ՚ի թգենւոյ՝ անտի ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն
նորա կակղանայցեն, և տերն՝ արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն*։
²⁹Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք՝ թէ
մերձ է առ դուրս*։ ³⁰Ամէն ասեմ ձեզ, թէ ո՛չ անցցէ ազգս այս, մինչև այս
ամենայն եղիցի*։ ³¹Երկինք՝ և երկիր անցցեն, և բանք իմ ո՛չ անցանիցեն*։
ԽԳ ³²Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ո՛չ ոք գիտէ, ո՛չ իրեշտակք յերկինս՝
և ո՛չ Որդի, բայց միայն Յայր*։ ³³Ձգո՛յշ եղերուք, սկեցէք և կացէք յաղօթս. զի ո՛չ
գիտէք ե՛րբ ժամանակն իցէ*։ ³⁴Որպէս այր մի գնացեալ ՚ի տա՛ր աշխարհ,
թողուցու զտուն իւր, և տացէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր
զգործ իւր. և դռնապանին պատուէր տայցէ՛ զի արթուն լինիցի*։ ³⁵Արդ՝ արթուն
կացէք, զի ո՛չ գիտէք ե՛րբ տէր տանն զայցէ, յերեկորեայ, եթէ ՚ի մէ՛ջ գիշերի, եթէ
՚ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս*։ ³⁶Գուցէ՛ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ
՚ի քուն։ ³⁷Բայց զոր ձե՛զդ ասեմ, ամենեցուն ասեմ. Արթուն կացէք։

Գլուխ ԺԴ

էէ. ¹Եւ էր զատիկն և բաղարջակե՛րք յետ երկուց աւուրց. խնդրէին
բահանայապետքն և դպիրք՝ եթէ զիա՞րդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն*։

* *Ոմանք.* Եթէ ոք ասիցէ զձեզ, եթէ:
* *Ոմանք.* Եւ տայցեն նշ՞:
* *Ոմանք.* Ձգոյշ լերուք:
* *Օրինակ մի.* Յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արե՛ն:
* *Ոմանք.* Եւ աստեղք երկնից թօ՞... և զօրութիւնք երկնից շար՞:
* *Ոմանք.* Ամպովք զօրութեամբ և փառօք:
* *Ոմանք.* Եւ ժողովեսցեն զընտրեալս:
* *Ոմանք.* ՚ի թգենւոյն ուսարուք զառակն:
* *Ոմանք.* Մերձ է ՚ի դուրս:
* *Ոմանք.* Մինչ այս ամենայն եղի՞:
* *Ոմանք.* Իմ մի՛ անցցեն:
* *Ոմանք.* Եւ ժամուն... բայց Յայր միայն:
* *Ոմանք.* Ձգո՛յշ լերուք, հսկեցէք:
* *Ոմանք.* Եւ տայցէ ծառայից... զգործս իւր... պատուէր տացէ:
* *Ոմանք.* Ոչ գիտէք թէ ե՛րբ... յերեկարեայ:
* *Ոմանք.* Նենգութեամբ կալեալ սպա՞ն:

²Բայց ասէին՝ թէ մի՛ ՚ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն լինիցի ժողովրդեանն*:

ԽԴ ³Եւ մինչ էր ՚ի Բեթանիա ՚ի տան Սիմովնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան՝ ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ ՚ի վերայ գլխոյ նորա*։ ⁴Եւ աշակերտքն՝ զչարէին և ասէին. Ընդէ՞ր է կորուստ իւղոյոյ այդորիկ*։ ⁵Սա՛րթ էր զայդ եւղ վաճառել՝ աւելի՛ քան երեք հարելու դահեկանի, և տալ աղքատաց։ Եւ զայրանային նմա յոյժ*։ ⁶Եւ Յիսուս՝ ասէ ցնոսա. Թո՛յլ տուք դմա. զի՞ աշխատ ամէնք, զի գործ մի՛ բարի՝ գործեաց դա յիս։ ⁷Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարօ՛ղ էք ամենլ նոցա բարիս. այլ զիս՝ ո՛չ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք։ ⁸Դա՛՛ զոր ունէրդ, արա՛ր. յառաջագոյն խնդեաց զմարմին իմ՝ ՚ի նշան պատանաց*։ ⁹Ամէն ասե՛մ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր արար դա՛ խօսեսցի՝ վասն յիշատակի դորին*։ ¹⁰Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ՛ զնա նոցա*։ ¹¹Նոքա իբրև լուսն՝ խնդացին, և խոստացան նմա տալ արծաթ. և խնդրէր՝ թէ զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա*։

ԽԵ ¹²Եւ յառաջնուն աւուր բաղարջակերացն՝ յորժամ զգատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն. Ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք, զի կերիցես զգատիկն*։ ¹³Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա. Երթա՛յք ՚ի քաղաքն, և իբրև մտանիցէք ՚ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ ա՛յր մի, որ սափոր ջրոյ յո՛ւս ունիցի, երթա՛յք զհետ նորա*։ ¹⁴Եւ յո՛ր տուն մտանիցէ, ասասցիք ցտանուտէրն. Վարդապե՛տ ասէ. Ո՞ւր են իջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեն զգատիկն*։ ¹⁵Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ՝ զարդարեալ. անդ պատրաստեսցիք մեզ*։ ¹⁶Եւ գնացին պատրաստել աշակերտքն նորա. եկին ՚ի քաղաքն, և գտին որպէս ասացն նոցա. և պատրաստեցին զգատիկն*։ ¹⁷Եւ իբրև երեկոյ եղև՝ զա՛յ երկոտասանիւքն հանդերձ։

ԽԶ ¹⁸Եւ իբրև բազմեցան՝ և դեռ ուտէին, ասէ Յիսուս. Ամէն ասե՛մ ձեզ՝ զի մի ոմն ՚ի ձէնջ՝ մատնելոց է զիս, որ ուտէ՛ իսկ ընդ իս։ ¹⁹Եւ նոքա սկսան տրտմել՝ և ասել մի ըստ միոջէ. Միթէ՛ ե՞ս իցեմ, և մեւսն՝ Միթէ՛ ե՞ս իցեմ*։ ²⁰Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. Մի յերկոտասանից այտի, որ մխեաց ընդ իս ՚ի սկաւառակդ*։ ²¹Այլ Որդի մարդոյ երթա՛յ՝ որպէս և գրեալ է վասն նորա. բայց վա՛յ իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս Որդին մարդոյ մատնեսցի. լա՛ւ էր նմա՛ եթէ չէր

* *Ոմանք.* Լինիցի ՚ի ժողովրդեանն:

* *Ոմանք.* Շիշ մի իւղոյ:

* *Բազումք.* Ընդէր եղև կորուստ:

* *Ոմանք.* Քան երեք հարիւր դեմարի:

* *Ոմանք.* Չոր ունէր արար:

* *Ոմանք.* Չոր արարդ դա: *Ոսկան.* Խօսեսցի յիշատակի դորա:

* *Ոմանք.* Մի յերկոտասանիցն գնաց:

* *Բազումք.* Տալ նմա արծաթ:

* *Ոսկան.* Յորուն զպատեքն զենուին:

* *Ոմանք.* Եւ առաքեաց երկուս յաշակերտացն և... ՚ի քաղաք. և իբրև մտանէք. պատահիցէ:

* *Ոսկան յաւելու.* Իջեվանքն իմ:

* *Յօրինակին.* Ձեզ տուն մի մեծ:

* *Օրինակ մի.* Եւ արարին որպէս ասաց նոցա:

* *Ոմանք.* Եւ միւսն ասէ. Միթէ՛ ես իցեմ:

* *Ոմանք.* Մի յերկոտասանիցդ որ:

իսկ ծնեալ մարդն այն*։ ²²Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց և երբեկ՝ ետ նոցա՝ և ասէ. Առէ՛ք՝ այդ է մարմին իմ*։ ²³Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ ետ նոցա, և արբին՝ ՚ի նմանէ ամենեքեան*։ ²⁴Եւ ասէ ցնոսա. Այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու։ ²⁵Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս յաւելից ընպէլ ՚ի բերոյ որթոյ, մինչև ցօրն ցայն, յորժամ արբից զնա նոր յարքայութեան Աստուծոյ*։ ²⁶Եւ գոհացեալ՝ ելին ՚ի լեռն Չիթենեաց։ ²⁷Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին գայթաղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ հարից զհովիւն և ոչխարքն ցրուեսցին*։ ²⁸Այլ յետ յարութեան իմոյ՝ յառաջագոյն երթայց քան զձեզ ՚ի Գալիլեա*։ ²⁹Պատասխանի ետ Պետրոս՝ և ասէ ցնա. Թէպէտ և ամենեքեան գայթաղեսցին, այլ ես՝ ոչ*։ ³⁰Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ. թէ դու՛ իսկ յայսմ գիշերի մինչև՛ հաւու խօսեալ իցէ՛ երիցս ուրասցես զիս*։ ³¹Իսկ Պետրոս առաւել ևս պնդէր և ասէր. Եթէ մեռանել ևս հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց։ Նոյնպէս և ամենեքեան ասէին։ ³²Գա՛ն ՚ի գեղն՝ որում անուն էր՝ Գեսեմանի. և ասէ ցաշակերտսն. Նստարուք աստ՝ մինչ ես յաղօթս կացից*։ ³³Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և սկսաւ տխրել՝ և հոգալ։ ³⁴Յայնժամ ասէ ցնոսա. Տրտուն է անձն իմ մինչև ՚ի մահ, մնացէ՛ք աստ՝ և արթուն կացէք։ ³⁵Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկա՛ւ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է՝ անցցէ ՚ի նմանէ ժամն։ ³⁶Եւ ասէ. Աբբա՛, Հայր, ամենայն ինչ՝ քեզ հնարաւոր է, անցո՛ւ զբաժակս զայս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու՛ կամիս*։ ³⁷Եւ գայ՝ գտանէ զնոսա զի ննջէին, և ասէ ցՊետրոս. Սիմովն ննջե՞ս. ո՞չ կարացեր ժամ մի արթուն կալ։ ³⁸Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի մի՛ մտջիք ՚ի փորձութիւն. ոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար*։ ³⁹Եւ դարձեալ՝ չոգաւ եկաց յաղօթս, և զնոյն բանս ասաց*։ ⁴⁰Դարձաւ միւսանգամ անդրէն՝ և եգիտ զնոսա ՚ի քուն. քանզի էին աչք նոցա ծանրացեալ՝ և ոչ գիտէին թէ զի՞նչ պատասխանի տայցեն նմա։ ⁴¹Գայ՝ երրորդ անգամ, և ասէ ցնոսա. Ննջեցէ՛ք այսուհետև և հանգերուք, զի հասեալ է վախճան. եկն ժամ, և ահա մատնի՛ Որդի մարդոյ ՚ի ձեռս մեղաւորաց*։ ⁴²Աւն արիք գնասցուք. զի ահաւասիկ՝ մերձեցաւ որ մատնելոցն է զիս։ ⁴³Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գայ Յուդա Սկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի, և ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ՚ի քահանայապետիցն և ՚ի դպրաց և ՚ի ծերոց*։ ⁴⁴Տուեալ էր նշան մատնչին և ասէր. Ընդ որում ես համբուրեցից՝ նա՛ է. կալջիք զնա՝ և տարջիք

* *Ոմանք.* որպէս գրեալ է... Որդի մարդոյ... այնորիկ՝ յոյր ձեռն Որ՞:

* *Ոմանք.* ետ ցնոսա և ասէ:

* *Ոմանք.* Գոհացաւ և ետ նոցա:

* *Ոմանք.* ՚ի բերոյ որթու... յորժամ արբից զսա. *կամ՝* զդա նոր:

* *Օրինակ մի.* Այլ յետ յառնելոյն իմոյ:

* *Ոմանք.* Գայթաղեսցին ՚ի քէն. այլ ես ոչ:

* *Ոմանք.* Ուրասցիս զիս:

* *Աստէն բաց ՚ի սակաւուց ոմանց նոր օրհնակաց՝ գրեթէ ամենայն գրչագիրք մեր միաբան գրեն.* Գեսեմանի. *կամ՝* Գեսամանի. *զոր ՚ի Սատթ.* ԻՉ 36 *դնեն՝* Գեսեմանի:

Ոմանք. ՚ի գեաւդն. *կամ՝* ՚ի գեւդն... մինչև ես յաղօթս:

* *Ոմանք.* Աբբա՛ հայր:

* *Ոմանք.* Հոգիս յօժար է:

* *Ոմանք.* Կաց յաղօթս... բան ասաց:

* *Ոմանք.* Ձի ահա հասեալ է:

* *Ոմանք.* Մի յերկոտասանից. և ընդ:

զգուշութեամբ*։ ⁴⁵Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ՛ ցնա. Ռաբբի, ռաբբի։ Եւ համբուրեաց՝ զնա։ ⁴⁶Եւ նոքա արկին՝ ՚ի նա ձեռս՝ և կալան զնա։ ⁴⁷Եւ մի ոմն յայնցանէ որ զնովան կային՝ ձգեաց սուր, և եհար՝ զճառայ քահանայապետին, և ՚ի բաց եհան զունկն նորա։ ⁴⁸Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Իբրև ՚ի վերայ աւազակի՝ ելէք սուսերօք և բրօք՝ ունել զիս։ ⁴⁹Հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի ՚ի տաճարին, և ո՛չ կալարուք զիս. այլ զի լցցին զիրք մարգարէիցն*։ ⁵⁰Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին՝ և փախեան։ ⁵¹Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զիւրև կտաւ մի ՚ի մերկուց. ունէին զնա երիտասարդքն. ⁵²և նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ՚ի նոցանէ։ ⁵³Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն Կայիափա. և գային ընդ նմա ամենայն քահանայապետքն՝ և դպիրք և ծերք*։ ⁵⁴Եւ Պե՛տրոս երթայր ՚ի հեռաստանէ զհետ նորա՝ մինչև ՚ի ներքս իսկ ՚ի գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ սպասաւորսն. և ջեռնոյր առ լուսովն*։ ⁵⁵Իսկ քահանայապետքն՝ և ամենայն ատեանն՝ խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա. և ո՛չ գտանէին*։ ⁵⁶Զի բազում սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց՝ ո՛չ էին վկայութիւնք*։ ⁵⁷Այլք՝ յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին. ⁵⁸թէ մեք լուաք ՚ի դմանէ զի ասէր. ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից ա՛յլ առանց ձեռագործի։ ⁵⁹Սակայն և այնպէս՝ չէր նման վկայութիւնն նոցա։ ⁶⁰Ապա յարուցեալ քահանայապետն ՚ի մէջ՝ հարցանէր զՅիսուս՝ և ասէր. Ո՞չինչ տաս պատասխանի, զի՛նչ դոքա՛ զքէն վկայեն։ ⁶¹Եւ նա՝ լուռ և եթ կայր՝ և չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ և ասէր. Դո՞ւ ես Քրիստոս Որդի Աստուծոյ օրհնելոյն*։ ⁶²Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Դո՛ւ ասացեր թէ ես եմ. բայց տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Ձօրութեան, և եկեալ ընդ ամպս երկնից*։ ⁶³Եւ քահանայապետն պատառեաց՝ վաղվաղակի զպատմուճանս իւր՝ և ասէ. Չի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք*, ⁶⁴ահա՛ լուայք ամենեքին զհայիոյութիւն ՚ի բերանոյ՝ դորա, զիա՞րդ թուի ձեզ։ Եւ ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է։ ⁶⁵Եւ ոմանք՝ սկսան թքանել ընդ երեսս նորա. ձո՛րձ զզխոյվ արկանել՝ կռփել և ասել. Մարգարեաց մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է այն որ եհարն զքեզ։ Եւ սպասաւորքն ապտա՛կս հանէին նմա։ ⁶⁶Եւ Պե՛տրոս մինչդեռ էր ՚ի խոնարհ ՚ի գաւթին, գա՛յ աղախին մի քահանայապետին*, ⁶⁷և տեսանէ զնա զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա՝ և ասէ. Եւ դո՛ւ ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր*։

Խէ՛ ⁶⁸Նա՛ ուրացաւ և ասէ. Ո՛չ ճանաչեմ, և ո՛չ գիտեմ զի՛նչ դո՛ւդ ասես։ Եւ իբրև

* *Ոմանք.* Մատնչի՝ և ասէ։

* *Ոմանք.* Հանապազ ընդ ձեզ էի։

* *Ոսկան.* Ամենայն քահանայքն և դպիրք։

* *Առ Ոսկանայ պակասի.* Երթայր ՚ի հեռաստանէ զհետ։ *Ոմանք.* ՚ի ներքս իսկ ՚ի սրահ քահանայա՛յ... և ջեռնոյր առ լոյսն։

* *Ոսկան.* Վկայութիւն ինչ զի չարախօսեցեն զնա։

* *Ոմանք.* Զի բազումք սուտ վկայք։

* *Ոսկան.* Եւ Յիսուս լուռ և եթ կայր։ *Ոմանք.* Հարցանէր ցնա կր՛... Քրիստոս Որդի Օրհնելոյն։

* *Ոմանք.* Ընդ աջմէ զօրութեանն։ *Ուր Ոսկան յաւելու.* զօրութեան *Աստուծոյ։*

* *Ոմանք.* Զպատմուճանն իւր։

* *Ոմանք.* ՚ի խոնարհ գաւթին։

* *Ոմանք.* Հայեցաւ ընդ նա և ասէր։

ե՛լ յարտաքին գաւիթն, և հա՛ւ խօսեցաւ: ⁶⁹Դարձեալ ետես զնա աղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն կային, թէ և սա՛ ՚ի նոցանէ է՛: ⁷⁰Եւ նա դարձեալ ուրացաւ: Եւ յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային ասե՛ն ցՊե՛տրոս. Արդարև և դո՛ւ ՚ի նոցանէ՛ ես, քանզի Գալիլեացի՛ ես, և խօսքդ իսկ քո նման են: ⁷¹Եւ սկսաւ նզովել՝ երդնուլ և ասել, թէ ո՛չ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ ասէք՝: ⁷²Եւ նոյն ժամայն կրկին հա՛ւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պե՛տրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, թէ չէ՛ իցէ հաւու երիցս խօսեալ՝ զի դու երիցս ուրացես զիս, և սկսաւ լալ՝*:

15

Գլուխ ԺԵ

¹Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն՝ հանդերձ ծերո՞վքն և դպրօք՝ և ամենայն ատեանն կապեցին զՅիսուս՝ և տարան մատնեցին Պիղատոսի՛: ²Եւ հա՛րց զնա Պեղատոս՝ և ասէ. Դո՞ւ ես թագաւորն Յրէից: Եւ պատասխանի՛ ետ նմա և ասէ. Դո՛ւ ասես՝: ³Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն. և նա՝ ո՛չինչ տայր պատասխանի: ⁴Իսկ Պեղատոս դարձեալ հարցանէ՛ր զնա. Ո՞չինչ տաս պատասխանի, տես՝ քանի ամբաստանեն զքէն: ⁵Եւ Յիսուս այնուհետև՝ ո՛չինչ ետ պատասխանի, մինչև զարմանալ յոյժ Պիղատոսի: ⁶Բայց ըստ տօնի՝ արձակէ՛ր նոցա զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին՝: ⁷Եւ էր՝ որում անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ՚ի խռովելն՝ այր մի սպանեալ էր՝: ⁸Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն՝ և խնդրել որպէս սովոր էր, զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն: ⁹Պատասխանի ետ Պեղատոս և ասէ ցնոսա. Կամի՞ք զի արձակեսցից ձեզ զարքայն Յրէից: ¹⁰Քանզի գիտէր՝ թէ առ նախանձո՛ւ մատնեցին զնա քահանայապետքն: ¹¹Որք՝ և զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն: ¹²Դարձեալ պատասխանի ետ Պեղատոս՝ և ասէ ցնոսա. Իսկ՝ զի՞նչ կամիք թէ արարից զարքայն Յրէից՝: ¹³Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ յուզեալք ՚ի քահանայապետիցն. ՚ի խա՛չ հան զդա: ¹⁴Ասէ ցնոսա Պեղատոս. Զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դորա: Եւ նոքա առաւել և աղաղակէին և ասէին. ՚ի խա՛չ հան զդա՝: ¹⁵Իսկ Պեղատոս՝ իբրև զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն. և զՅիսուս զան հարեալ՝ ետ ՚ի ձեռս զի ՚ի խա՛չ ելանիցէ: ¹⁶Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ ուր հրապարակն էր. և կոչեն միանգամայն զամենայն զգունդն՝. ¹⁷և

* *Օրինակ մի.* Եւ ասէ ցայնոսիկ որ:

* *Ոմանք.* Եւ նա սկսաւ նզովել և երդ՞:

* *Ոմանք.* Զբանն Յիսուսի զոր ասաց թէ մինչև իցէ: *Ոմանք.* Հաւու խօսել երկիցս. *կամ՝* երկիցս խօսեալ՝ զի դու երիցս:

* *Ոմանք.* Ընդ առաւօտսն: *Յօրինակին՝ յայսմ վայրի երկիցս գրի՝* Պիղատոսի. *որ ամենայն ուրեք դնի՝* Պեղատոս. Պեղատոսի. *համաձայն ընտրելագոյն օրինակաց:*

* *Ոմանք.* Եհարց զնա... թագաւոր Յրէից:

* *Ոմանք.* Զմի ոք կապեալ:

* *Ոսկան.* Որոց ընդ խռովելն՝ զայր մի:

* *Ոմանք.* Կամք զի արարից զար՞:

* *Յօրինակին պակասէր.* Զի՞նչ ինչ չար արարեալ: *Ուր ոմանք.* Զի՞նչ չար արարեալ:

* *Ոմանք.* Որ հրապարակն էր:

զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս, և եղին ՚ի գլուխ նորա պսակ արարեալ ՚ի փշոց: ¹⁸Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ և ասել. Ո՛ղջ եր արքայդ Յրէից*:
¹⁹Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և ՚ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա: ²⁰Եւ իբրև կատակեցին զնա, մերկացուցին զքղամիդն և զծիրանիս, և զզեցուցին նմա զիւր հանդերձ. և ածին արտաքս զի ՚ի խաջ հանցեն զնա*:
²¹Եւ ունէին պահակ զՍիմովն Կիւրենացի՝ որ ընդ ա՛յն անցանէր եկեալ յագարակէ. զհայրն Աղէքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նորա*:
²²Եւ ածեն զնա ՚ի Գողգոթա տեղի մի, որ թարգմանի՝ Տեղի՝ կառափելոյ: ²³Եւ տային նմա զինի զըմռսեալ, և նա ո՛չ առ. և հանեն զնա ՚ի խաջ*:
²⁴Եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ՚ի վերայ՝ թէ ո՛ր զինչ առնուցու*:
²⁵Է՛ր ժամ՝ երրորդ, և հանին զնա ՚ի խաջ: ²⁶Եւ էր զիր վնասու նորա գրեալ, թէ թագաւոր է Յրէից: ²⁷Եւ ընդ նմա հանին ՚ի խաջ երկուս աւազակս, մի ընդ աջմէ՛ և մի ընդ ահեկէ նորա*:
²⁸Եւ լցա՛ւ զիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ*:
²⁹Եւ որք անցանէինն հայիոյէին զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. Վա՛հ, որ քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէին*:
³⁰Ապրեցո՛ր զանձն քո՝ և էջ ՚ի խաչէդ: ³¹Նոյնպէս և քահանայապետիցն ա՛յպն արարեալ՝ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ և ասէին. Ձայլս ապրեցոյց՝ զանձն ո՛չ կարասցէ ապրեցուցանել*:
³²Քրիստոսդ արքայդ Իսրայէլի. իջցէ՛ այժմ ՚ի խաչէ՛ այտի, զի տեսցուք և հաւատասցուք դմա: Եւ որ ընդ նմա ՚ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա: ³³Եւ իբրև վեց ժամ եղև խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցինն ժամն*:
³⁴Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. Ե՛ղի՛ Ե՛ղի՛՝ դա՛նա սաքաքթանի. որ թարգմանի՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս*:
³⁵Եւ ոմանք ՚ի նոցանէ՛ որ շուրջն կային զնովաւ՝ իբրև լուան, ասէին թէ զեղիա՛ կարդայ*:
³⁶Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և ասէ. Թո՛յլ տուր, տեսցուք՝ զա՞յ եղիա իջուցանել զդա*:
³⁷Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ՝ և եհան զոգի*:
³⁸Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս՝ ՚ի վերուստ մինչև ՚ի խոնարի*:
³⁹Եւ տեսեալ հարիւրապետին որ կա՛յր անդ՝ թէ աղաղակեաց և եհան զոգի, և ասէ. Արդարև՝ այս այս Որդի՛ Աստուծոյ էր*:
⁴⁰Եին և կանայք որ հայէին ՚ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբու փոքրկան

* *Ոմանք.* Ո՛ղջ լեր արքայդ:

* *Ոմանք.* Մերկացին զքղամիդն... զիւր հանդերձն... ՚ի խաջ հանիցեն զնա:

* *Օրինակ մի.* Աղէքսանդրու և Ռուփեայ:

* *Ոմանք.* Եւ հանին զնա ՚ի խաջ:

* *Ոսկան յաւելու.* Եւ իբրև խաչեցին զնա՝ բաժանեցին: *Ոմանք.* Ձհանդերձ նորա:

* *Ոմանք.* Եւ մի յահեկէ, նորա:

* *Ոմանք.* Գիրն որ ասէր, թէ ընդ անօրէնսն:

* *Ոմանք.* Շարժէին զգլուխս:

* *Ոմանք.* Դպրօք՝ ասէին... ոչ կարէ. *կամ՝* ոչ կարէր ապրեցուց՛:

* *Բագոււմք.* Յինն ժամ:

* *Ոմանք.* Էլի էլի՛ լամայ՝ սափաքթանի: *Յօրինակին.* Ղամասա՝ բաքթանի:

* *Ոմանք.* Ասէին. Ձեղիա կար՛:

* *Ոսկան.* Թոյլ տուր, տեսց՛:

* *Ոմանք.* Եհան զոգին:

* *Ոմանք.* Մինչ ՚ի խոնարի:

* *Ոմանք.* Թէ աղաղակեաց... զոգի, ասէ:

և Յովսեայ՝ մայրն, և Սողովմէ՝⁴¹ որք յորժամ էրն ՚ի Գալիլեա՝ զհե՛տ շրջէին նորա, և պաշտէին զնա. և այլ բազում կանայք՝ որք ընդ նմա՛ իսկ եկեալ էին յերուսաղէմ՝:

ԽԸ ⁴²Եւ իբրև երեկոյ եղև, քանզի ուրբաթ էր՝ որ շաբաթն մտանէր՝,⁴³ եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր. այր պարկեշտ, նախարար, որ և ինքն իսկ անկ ունէր արքայութեան Աստուծոյ. համարձակեցաւ եմո՛ւտ առ Պեղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի՝:⁴⁴ Եւ Պեղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարև՝ այնչափ վա՞ղ մեռաւ:⁴⁵ Եւ իբրև ստուգեաց ՚ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ:⁴⁶ Եւ Յովսէփ զնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և ե՞ղ ՚ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ՚ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի դո՛ւռն գերեզմանին՝:⁴⁷ Իսկ Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբայ՝ և Յովսեայ՝ տեսին՝ զտեղին ուր եղաւ:

16

Գլուխ ԺԶ

¹Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի՝ և Մարիամ Յակովբայ՝ և Սողովմէ՝ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օժցեն զնա՝:² Եւ ընդ առաւօտս միաշաբաթոյն զան ՚ի գերեզմանն ընդ արևագալն,³ և ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն ՚ի դրաց գերեզմանին՝:⁴ Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ՚ի գերեզմանէն. քանզի էր մե՛ծ յոյժ՝:⁵ Եւ մտեալ ՚ի ներքս ՚ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան:⁶ Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրացի զխաչելեալն, յարեալ՝ չէ՛ աստ. ահաւաղիկ տեղին ուր եղին զնա:⁷ Այլ երթայք ասացէ՛ք ցաշակերտս նորա և ցՊե՛տրոս, եթէ ահա՛ յառաջագոյն երթայ քան զձեզ ՚ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ՝:⁸ Եւ իբրև լուան՝ ելին և փախեան ՚ի գերեզմանէն, քանզի զահի՛ հարեալ էին. և ո՛չ ումեք ինչ ասացին, զի երկնչէին՝:

* Ոմանք. էին կանայք... Յակովբայ փոքրկանն:

* Բազումք. Որ ընդ նմա իսկ եկեալ էին:

* Բազումք. Որ ՚ի շաբաթն. կամ՝ ՚ի շաբաթ մտա՛:

* Բազումք. Արքայութեանն Աստուծոյ:

* Ոսկան. Որ էր փորեալ: Օրինակ մի ընդ Ոսկանայ. Վէմ մի՛ ՚ի դուռն գե՛:

* Ոսկան. Եկեսցեն և օժցեն:

* Բազումք. Միաշաբաթուն:

* Ոմանք. Ո՞ թաւալեցուցէ:

* Ոսկան. Թաւալեցուցեալ էր վէմն:

* Ոմանք. Ցաշակերտսն նորա:

* Ոմանք յառաւել հնագոյն օրինակաց յայս բան՝ Զի երկնչէին. աւարտեն զաւետարանս Մարկոսի, աստէն դմելով զվախճանն. Կատարեցաւ աւետարան ըստ Մարկոսի. որք և իսպառ զանց առնեն զյաջորդաւս Յարուցեալ Յիսուս, և այլն: Իսկ օրինակս մեր՝ համաձայն բազմաց, դրոշմեալ աստէն զվախճանականն՝ Աւետարան ըստ Մարկոսի. և անդրէն նորոգ վերնագիր կարգեալ յաջորդին, իբր յաւելուածոյ. Աւետարան ըստ Մարկոսի. այնպէս սկսանի՝ Յարուցեալ Յիսուս. և այլն: Որում և մեք համեմատեալ եղաք ըստ այնմ եղանակի: Ուր Ոսկան միայն ըստ Լատինականին առանց ինչ

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Աւետարան ըստ Մարկոսի

⁹Յարուցեալ Յիսուս, առաւօտուն առաջին միաշաբաթուն՝ երևեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեւթն դէն*։ ¹⁰Եւ նա՝ երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչ դեռ լային և սգային*։ ¹¹Նոքա իբրև լուան թէ կենդանի՝ է՝ և երևեցաւ նմա, ոչ հաւատացին*։ ¹²Յետոյ՝ երևեցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան*։ ¹³Նոքա չոգան պատմեցին այլոց, և ոչ նոքա հաւատացին*։ ¹⁴Յետոյ՝ մինչդեռ բազմեալ էին մետասանքն, երևեցաւ նոցա, և թշնամանեաց զանհաւատութիւն նոցա, և զխտաստութիւն զի որ երևեցաւ նոցա յարուցեալ՝ ՚ի մեռելոց, և նոքա ոչ հաւատացին*։ ¹⁵Եւ ասէ՛ցնուսա. երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց*։ ¹⁶Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ՛, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի*։ ¹⁷Նշանք այնոցիկ՝ որ հաւատանն, երթիցեն զհետ այսոցիկ. յանուն իմ՝ դէս հանցեն. լեզուս խօսեսցին*։ ¹⁸՚ի ձեռս իւրեանց՝ օձս բարձցեն. և եթէ մահացու ինչ դեղ արբցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ. ՚ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցեն*։ ¹⁹Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Զօր։ ²⁰Եւ նոքա ելեալ՝ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն զործակցութեամբ. և զբանն հաստատէին ամենայն նշանօք՝ որ երթայր զհետ նոցա*։

անջրպետութեան շարունակեալ դնէ զնոյն ընդ վերնոյն:

*Ոսկան. Ձեօթն դէսն:

*Ոմանք. Սգային և լային:

*Ոմանք. Եւ երևեցաւ նոցա, ոչ հա՛:

*Ոմանք. Երևեցաւ և այլով կեր՛:

*Ոմանք. Եւ ոչ Աստուծոյ հաւատացին:

*Ոմանք. Եւ ոչ նոքա հաւատացին:

*Ոսկան յաւելու. Ձաւետարանն արքայութեան ամենայն ա՛:

*Ոսկան. Որ հաւատասցէ և մկրտեսցի... ոչն հաւատասցէ դա՛:

*Ոմանք. Նշանք այսոցիկ, կամ՝ այնոցիկ որ հաւատան, երթիցեն զհետ այնոցիկ:

*Ոմանք. Օձք բարձցեն, նոցա ոչինչ մեղիցեն, և եթէ մահացու դեղ ինչ արբցեն. մի՛ վնասեսցէ նոցա:

*Ոմանք. Գործակցութեամբ. զբանն հաստատեցին ամենայն նշանօք որ երթային զհետ նոցա: Ոմանք աստէն դրոշմեն զվախճանականն. Աւետարան ըստ Մարկոսի. կամ՝ Կատարեցաւ գլուխք աւետարանին որ ըստ Մարկոսի: Իսկ օրինակս մեր աստանօր ՚ի վախճանի նշանակէ՛ Զամբարձմանն կարդա՛ զվերոգրեալս:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՅ

Վասն աշխարհագրին.... Ղուկ. Ա,
Վասն բացօթեայ հովուացն.... Ղուկ. Բ,
Վասն Սիմէովնի.... Ղուկ. Գ,
Վասն մարգարէին Աննայի.... Ղուկ. Դ,
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս.... Ղուկ. Ե, ... Մատ. Գ ...
Վասն՝ որոց հարցանէինն զՅովհաննէս.... Ղուկ. Զ,
Վասն փորձութեանց Փրկչին.... Ղուկ. Է,
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական.... Ղուկ. Ը,
Վասն զըքանչին Պետրոսի.... Ղուկ. Թ, ... Մատ. Ը, Մարկ. Բ
Վասն՝ որոց բժշկէին ՚ի պէսպէս հիւանդութեանց.... Ղուկ. ժ, ... Մատ. Թ, Մարկ. Գ
Վասն որսոյ ձկանցն.... Ղուկ. ժԱ,
Վասն բորոտին.... Ղուկ. ժԲ, ... Մատ. Զ, Մարկ. Դ
Վասն անդամալուծին.... Ղուկ. ժԳ, Յովհ. ժԳ, Մատ. ժԳ, Մարկ. Ե
Վասն Ղնեայ մաքսաւորին.... Ղուկ. ժԴ, ... Մատ. ժԴ, Մարկ. Զ
Վասն զօսացեալ ձեռնին.... Ղուկ. ժԵ, ... Մատ. ԻԱ, Մարկ. Է
Վասն առաքելոցն համարոյ.... Ղուկ. ժԶ, ... Մատ. ժԹ, Մարկ. Ը
Վասն երանութեանցն.... Ղուկ. ժԷ, ... Մատ. Ե, ...
Վասն հարիւրապետին.... Ղուկ. ժԸ, ... Մատ. Է, ...
Վասն որդւոյ՝ այրւոյն.... Ղուկ. ժԹ,
Վասն՝ որոց առաքեցանն ՚ի Յովհաննէ.... Ղուկ. Ի, ... Մատ. Ի, ...
Վասն օծանելոյ զՏէրն մեռնաւն.... Ղուկ. ԻԱ, Յովհ. ԻԴ, Մատ. ԿԲ, Մարկ. ԽԴ
Վասն առակի սերմնացանին.... Ղուկ. ԻԲ, ... Մատ. ԻԴ, Մարկ. Թ
Վասն սաստելոյ ջուրցն.... Ղուկ. ԻԳ, ... Մատ. ժԱ, Մարկ. ժ
Վասն՝ որ ունէր զլէգէովնն.... Ղուկ. ԻԴ, ... Մատ. ժԲ, Մարկ. ժԱ
Վասն դստեր ժողովրդապետին.... Ղուկ. ԻԵ, ... Մատ. ժԵ, Մարկ. ժԲ
Վասն տեռատէ՛ս կնոջն.... Ղուկ. ԻԶ, ... Մատ. ժԶ, Մարկ. ժԳ
Վասն առաքելոյ զերկոտասանսն.... Ղուկ. ԻԷ, ... Մատ. ժԹ, Մարկ. ժԴ
Վասն հինգ հացիցն, և երկու ձկանցն.... Ղուկ. ԻԸ, Յովհ. ժԵ, Մատ. ԻԶ, Մարկ. ժԶ
Վասն ցաշակերտսն հարցանելոյ.... Ղուկ. ԻԹ, ... Մատ. ԼԳ, Մարկ. ԻԴ
Վասն այլակերպութեանն Յիսուսի.... Ղուկ. Լ, ... Մատ. ԼԴ, Մարկ. ԻԵ
Վասն լուսնահարին.... Ղուկ. ԼԱ, ... Մատ. ԼԵ, Մարկ. ԻԶ
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ մեծ իցէ.... Ղուկ. ԼԲ, ... Մատ. ԼԷ, Մարկ. ԻԷ
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ.... Ղուկ. ԼԳ, ... Մատ. ժ, ...
Վասն երևեցուցանելոյ զԵթանասունսն.... Ղուկ. ԼԴ,
Վասն հարցանելոյ օրինականին.... Ղուկ. ԼԵ,
Վասն անկելոյն ՚ի ձեռս աւագակաց.... Ղուկ. ԼԶ,
Վասն Մարիամու և Մարթայի.... Ղուկ. ԼԷ,
Վասն յաղօթս կալոյն.... Ղուկ. ԼԸ,
Վասն խուլ դիւին.... Ղուկ. ԼԹ, ... Մատ. ԻԲ, ...
Վասն՝ որ կինն ձայն եբարձ ՚ի ժողովրդեանն.... Ղուկ. Խ,

Վասն նշան խնդրելոյն.... Ղուկ. ԽԱ, ... Մատ. ԻԳ, ...
 Վասն՝ որ փարիսեցին կոչեաց զՏէրն.... Ղուկ. ԽԲ,
 Վասն վայ տալոյ օրինականացն.... Ղուկ. ԽԳ, ... Մատ. ԾԶ ...
 Վասն խնորոյ փարիսեցւոցն.... Ղուկ. ԽԴ, ... Մատ. ԼԲ, Մարկ. ԻԲ
 Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն.... Ղուկ. ԽԵ,
 Վասն պտղաբերելոյ անդոյ մեծատանն.... Ղուկ. ԽԶ,
 Վասն Գալիլեացւոցն՝ և որոց ՚ի Սելուվամ. և վասն թգենւոյն.... Ղուկ. ԽԷ, ...

 Վասն կարկամեալ կնոջն այսահարի.... Ղուկ. ԽԸ,
 Վասն առակացն.... Ղուկ. ԽԹ, ... Մատ. ԻԴ, ...
 Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն.... Ղուկ. Ծ,
 Վասն՝ որք ասացին ցՅիսուս զՅերովդէէ.... Ղուկ. ԾԱ,
 Վասն՝ որ ջրգողեալ էր.... Ղուկ. ԾԲ,
 Վասն՝ որք սիրեն զնախագահսն.... Ղուկ. ԾԳ,
 Վասն կոչելոյն յընթրիսն.... Ղուկ. ԾԴ, ... Մատ. ԾԱ, ...
 Վասն շինելոյ աշտարակին.... Ղուկ. ԾԵ,
 Վասն հարելու ոչխարացն.... Ղուկ. ԾԶ, ... Մատ. ԼԸ, ...
 Վասն զնացելոյն յաշխարհի հեռի անառակին.... Ղուկ. ԾԷ,
 Վասն անիրաւ տնտեսին.... Ղուկ. ԾԸ,
 Վասն մեծատանն, և Ղազարու.... Ղուկ. ԾԹ,
 Վասն տասն բորոտացն.... Ղուկ. Կ,
 Վասն անիրաւ դատաւորին.... Ղուկ. ԿԱ,
 Վասն փարիսեցւոյն, և մաքսաւորին.... Ղուկ. ԿԲ,
 Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.... Ղուկ. ԿԳ, ... Մատ. ԽԱ, Մարկ. ԻԹ
 Վասն կուրին.... Ղուկ. ԿԴ, ... Մատ. ԽԳ, Մարկ. ԼԱ
 Վասն Ջակքէոսի.... Ղուկ. ԿԵ,
 Վասն զնալոյ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ.... Ղուկ. ԿԶ,
 Վասն առնլոյ զտասն մնասն.... Ղուկ. ԿԷ, ... Մատ. Կ ...
 Վասն յաւանակին.... Ղուկ. ԿԸ, Յովի. ԻԶ, Մատ. ԽԵ, Մարկ. ԼԲ
 Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր.... Ղուկ. ԿԹ, ... Մատ. ԽԸ, Մարկ. ԼԵ
 Վասն առակի՝ այգւոյն.... Ղուկ. Զ, ... Մատ. Ծ, Մարկ. ԼԶ
 Վասն դահեկանին.... Ղուկ. ԶԱ, ... Մատ. ԾԲ, Մարկ. ԼԷ
 Վասն սադուկեցւոցն.... Ղուկ. ԶԲ, ... Մատ. ԾԳ, Մարկ. ԼԸ
 Վասն՝ թէ զիա՞րդ է որդի Դաւթի Քրիստոս.... Ղուկ. ԶԳ, ... Մատ. ԾԵ, Մարկ. Խ
 Վասն երկու լուծայի այրւոյն.... Ղուկ. ԶԴ, Մարկ. ԽԱ
 Վասն հարցման կատարածին.... Ղուկ. ԶԵ, ... Մատ. ԾԷ, Մարկ. ԽԲ
 Վասն զատկին.... Ղուկ. ԶԶ, ... Մատ. ԿԳ, Մարկ. ԽԵ
 Վասն վիճելոյն թէ ո՞վ մեծ իցէ.... Ղուկ. ԶԷ, ... Մատ. ԼԷ, Մարկ. ԻԷ
 Վասն խնդրելոյն Սատանայի.... Ղուկ. ԶԸ,
 Վասն նախատանաց Յերովդի զՏէրն.... Ղուկ. ԶԹ,
 Վասն կոծելոյ կանանցն.... Ղուկ. Զ,
 Վասն ապաշխարելոյ աւազակին.... Ղուկ. ԶԱ,
 Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.... Ղուկ. ԶԲ, Յովի. ԼԷ, Մատ. ԿԸ, Մարկ. ԽԸ

Վասն Կղեովպեանցն.... Ղուկ. 29,
Վասն համբառնալոյն Տեառն.... Ղուկ. 27,

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՅ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս՝ որ ըստ Ղուկայ գրեալ է: Նոյն ինքն Ղուկաս՝ աշակերտ էր Պետրոսի, և ձեռնադրեցաւ ընթացակից Պաւղոսի, և վկայեցաւ ՚ի նմանէ: Սա գրեաց զԱւետարանս զայս: Սկիզբն առնէ ՚ի ծննդենն Յովհաննու, և զոր ըստ նմին. պատմէ՝ և զմարմնանալ Փրկչին, ազգաթիւ առնէ՝ և ելանէ ՚ի Յովսեփայ ՚ի Դաւիթ, և ՚ի Դաւթայ մինչև յԱդամ: Պատմէ՝ սա՛ և զմկրտութիւնն Յովհաննու. և լինելով ՚ի լեառնն զփորձելն ՚ի Սատանայէ. և զընտրութիւնն աշակերտացն, և այլ եւթանասունս. եցոյց նշանս և արուեստս բազումս եղեալս. և զխորհուրդ մատնութեան, և զկատարածն որ մատնեցաւ Պիղատոսի Պոնտացոյ, և խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. և որք խաչեցան յերկուց աւազակացն մին՝ ապաշխարեաց խոստովանութեամբ: Եւ զի մարմինն նորա եղաւ ՚ի գերեզման, և յարեաւ յերրորդ աւուրն. և յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով հրեշտակացն: Ղուկաս՝ արուեստիւ բժիշկ գոլով. սա՛ աշակերտեցաւ Փրկչին. և համարեալ կոչեցաւ ՚ի թիւս իւթանասնիցն: Իսկ յետոյ՝ աշակերտեցաւ Պաւղոսի. վասն որոյ ասի. Գովութիւն սորա յաւետարանին: Սա՛ հրամանաւ Պաւղոսի՝ գրեաց զաւետարանս իւր յԱնտիոք քաղաքի ՚ի լեզու Ասորի՝ զկնի ժէ ամի համբառնալոյ Փրկչին: Ունի գլուխս ՅԽԲ: Վկայութիւնս ժէ: Տունս ՍՊ: Ղուկաս՝ Յարութիւն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ*

1

Գլուխ Ա

¹Քանզի բազումք յօժարեցին վերըստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց ՚ի մեզ*.²որպէս աւանդեցին մեզ՝ որ իսկզբանէ ականատես և սպասաւորք եղեն բանին*:³Կան եղև և ինձ որ իսկզբանէ զիտ երթեալ էի ամենայնի ճշմարտութեամբ, կարգաւ գրել քեզ՝ քաջոյ թէոփիլէ*.⁴զի ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար, զճշմարտութիւնն*:⁵Եւ եղև յաւուրս Յերովդի արքայի Յրեաստանի, քահանայ ոմն՝ անունն Զաքարիա ՚ի դասակարգէ՝ Աբիայ. և կինն նորա ՚ի դստերաց Ահարովնի, և անունն նորա եղիսաբէթ:⁶Եւ էին

* *Յօրինակին.* Աւետարան ըստ Ղուկայսու: *Ուր ևս՝ ոմանք ունին.* Աւետարան ըստ Ղուկայ:

* *Ոմանք.* Ձպատմութիւն:

* *Ոմանք.* Ականատեսք:

* *Ոմանք.* Ամենայն ճշմարտութեամբ:

* *Ոմանք.* Ձճշմարտութիւն. և *ոմանք.* զճշմարտութեան:

արդարձք երկոքին առաջի Աստուծոյ, գնային յամենայն պատուիրանս և յիրաւունս Տեառն՝ անարատք*։ ⁷Եւ ո՛չ գոյր նոցա որդեակ. քանզի Եղիսաբեթ ամուլ էր, և երկոքեան՝ անցեալ էին զաւուրբք իւրեանց։ ⁸Եւ եղև ՚ի քահանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ, ⁹ըստ օրինի քահանայութեանն՝ եհաս նմա խոնկ արկանել՝ մտեալ ՚ի տաճարն Տեառն։ ¹⁰Եւ ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝ ՚ի ժամու խնկոցն*։ ¹¹Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն. զի կայր ընդ աջմէ սեղանոյ խընկոցն*։ ¹²Եւ խռովեցաւ Ջաքարիա՝ իբրև ետես, և անկաւ ահ ՚ի վերայ նորա։ ¹³Ասէ ցնա հրեշտակն Տեառն. Մի՛ երկնչիր Ջաքարիա, զի լսելի՛ եղեն աղօթք քո, և կին քո Եղիսաբեթ՝ ծնցի՛ քեզ որդի՛, և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս*։ ¹⁴Եւ եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն. և բազումք ՚ի ծնընդեան նորա խնդասցեն. ¹⁵զի եղիցի մեծ առաջի Տեառն. և զինի՛ և օղի՛ մի՛ արբցէ. և Յոզուով Սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ*։ ¹⁶և զբազումս յորդուցն Իսրայէլի դարձուցէ ՚ի Տէր Աստուած իւրեանց։ ¹⁷Եւ ինքն եկեցէ՛ առաջի նորա հոգևով զօրութեամբ Եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յորդիս, և զանհաւանս յիմաստութիւն արդարոց. պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ*։ ¹⁸Եւ ասէ Ջաքարիա ցհրեշտակն. Եւ ի՞նչ գիտացից զայդ. զի ես՝ ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրբք իւրովք*։ ¹⁹Պատասխանի ետ հրեշտակն՝ և ասէ ցնա. Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ, և առաքեցայ խօսել ընդ քեզ՝ և աւետարանել քեզ զայդ։ ²⁰Եւ ահա՛ եղիցես համր, և մի՛ կարասցես խօսել մինչև ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխանակ զի ո՛չ հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին ՚ի ժամանակի իւրեանց։ ²¹Եւ ժողովուրդն՝ ակն ունէր Ջաքարիայ, և զարմանային ընդ յամելն նորա ՚ի տաճարին, ²²և իբրև ել՝ ո՛չ կարէր խօսել ընդ նոսա. և իմացան՝ եթէ տեսիլ՝ ետես ՚ի տաճարին. և նա՛ նշանացի խօսէր ընդ նոսա, և կայր պապանձեալ։ ²³Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ՚ի տուն իւր*։ ²⁴Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ յղացաւ Եղիսաբեթ կինն նորա, և թաքուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր*։ ²⁵Զի՞նչ գործ գործեաց ընդ իս Տէր, յաւուրս յոր հայեցաւ յիս բառնալ՝ զնախատինս իմ ՚ի մարդկանէ*։ ²⁶Եւ յամսեանն վեցերորդի, առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ՚ի քաղաք մի Գալիլեացոց, որում անուն էր Նազարեթ, ²⁷առ կոյս խօսեցեալ՝ առն՝ որում անուն էր Յովսէփ՝ ՚ի տանէ Դաւթի. և անուն կուսին Մարիամ։ ²⁸Եւ եկեալ առ նա՛ ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ*։ ²⁹Եւ նա՛ ընդ բանսն խռովեցաւ, և խորհէր ընդ միտս՝ թէ ո՞րպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ ³⁰Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ։ ³¹Եւ ահա՛

* *Ոմանք.* Երկոքինն առաջի:

* *Ոմանք.* ՚ի ժամ խնկոցն:

* *Ոմանք.* Հրեշտակն Տեառն:

* *Ոմանք.* Քանզի լսելի եղեն... ծնցէ քեզ:

* *Օրինակ մի.* Գինի և եղ մի՛ արբցէ:

* *Ոսկան.* Հոգևով և զօրութեամբ: *Ոմանք.* Պատրաստել ժողովուրդ Տեառն կազմեալ:

* *Ոմանք.* Անցեալ է զաւ՛:

* *Ոմանք.* Պաշտամանն նորա:

* *Ոմանք.* Կին նորա. և թաքուցանէր զանձնն:

* *Բազումք.* Յորս հայեցաւ:

* *Ոսկան յաւելու.* Առ նա՛ հրեշտակն ասէ:

յղասջիր՝ և ծնցես որդի. և կոչեսցեն զանուն նորա Յիսուս*։³² Եւ եղիցի մեծ, և Որդի՝ Բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօրն նորա. և թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակովբայ ՚ի յաւիտեանս*։³³ Եւ թագաւորութեան նորա՝ վախճան մի՛ լիցի*։³⁴ Եւ ասէ Մարիամ ցիրեշտակն. Ձիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ո՛չ գիտեմ։³⁵ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. Զոգի՛ Սուրբ եկեսցէ ՚ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյ հովանի՛ լիցի ՚ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է, և Որդի՛ Աստուծոյ կոչեսցի*։³⁶ Եւ ահա՛ Եղիսաբեթ ազգական քո, և նա՛ յղի՛ է ՚ի ծերութեան իւրում. և այս՝ վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեսցեալ էր*։³⁷ զի ո՛չ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան*։³⁸ Եւ ասէ Մարիամ. Ահա՛ւասիկ՝ կանաղախին Տեառն, եղիցի՛ ինձ ըստ բանի քում։ Եւ զնաց ՚ի նմանէ հրեշտակն։

³⁹Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, զնաց ՚ի լեռնակողմ փութապէս ՚ի քաղաքն Յուդայ*։⁴⁰ Եւ եմուտ ՚ի տուն Ջաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի։⁴¹ Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա։ Եւ լցաւ Եղիսաբեթ Զոգուով Սրբով։⁴² Եւ ՚ի ծայն բարձր աղաղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ։⁴³ Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։⁴⁴ Ձի ահաւասիկ՝ իբրև եղև ծայն ողջունի քոյ յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում։⁴⁵ Եւ երանի՛ որ հաւատայցէ՛ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա ՚ի Տեառնէ*։⁴⁶ Եւ ասէր Մարիամ. Մեծացուցէ՛ անձն իմ զՏէր*։⁴⁷ Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ։⁴⁸ Ձի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ։ Ձի ահա՛ յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք*։⁴⁹ Ձի արար ինձ մեծամեծս Զօրն, և սուրբ է անուն նորա։⁵⁰ Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց։⁵¹ Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։⁵² Քակեաց զհօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս*։⁵³ Ձքաղցեալս լցոյց բարութեանք, և զմեծատունս արձակեաց ունայնս։⁵⁴ Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում, յիշել զողորմութիւնս*։⁵⁵ Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա ՚ի յաւիտեան*։⁵⁶ Եկաց Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս, և դարձաւ ՚ի տուն իւր։⁵⁷ Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, և ծնաւ որդի*։⁵⁸ Եւ լուան որ շուրջ զնովաւ էին, և ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր

* *Բազումք*. Եւ կոչեսցես զանուն։

* *Ոմանք*. ՚ի յաւիտեան։

* *Ոմանք*. Եւ թագաւորութեանն։

* *Ոմանք*. Զոգին Սուրբ եկե՛։ *Յոմանս պակասի*. Ծնանելոցն է ՚ի քէն սուրբ է։

* *Ոմանք*. Կոչեսցեալն է. զի։

* *Ոմանք*. Ձի ոչ տկարանայ առ ՚ի յԱստուծոյ։

* *Բազումք*. ՚ի լեռնակողմն։

* *Ոմանք*. Որ հաւատասցէ... ասացելոց նմա։

* *Ոմանք*. Եւ ասէ Մարիամ։

* *Ոմանք*. Երանիցեն ինձ։

* *Ոսկան*. Եւ քակեաց։

* *Ոմանք*. Ծառայի իւրոյ. յիշելով զո՛։ *Ուր Ոսկան*. Ձողորմութիւն իւր։

* *Ոմանք*. Նորա յաւիտեան։

* *Օրհնակ մի*. Լցան աւուրք ծնանելոյ։

ընդ նմա. և խնդացին ընդ նմա*։ ⁵⁹Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն, և կոչէին զնա յանուն հօր իւրոյ Չաքարիա։ ⁶⁰Պատասխանի ետ մայր նորա՝ և ասէ. Ո՛չ, այլ կոչեսցի Յովհաննէս։ ⁶¹Եւ ասեն ցնա. Քանզի ո՛չ ոք է յազգի քում՝ որոյ կոչի անուն Յովհաննէս*։ ⁶²Ակն արկէին հօրն նորա՝ թէ զի՞նչ կամիցի կոչել զնա։ ⁶³Եւ խնդրեաց տախտակ՝ գրեաց և ասէ. Յովհաննէս է անուն դորա։ Եւ զարմացան ամենեքին։ ⁶⁴Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի՝ և լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱստուած։ ⁶⁵Եւ եղև ա՛հ ՚ի վերայ ամենեցուն որ լսէին զայս, և որ շուրջ բնակեալն էին զնոքօք. և ընդ ամենայն լեռնակողմնն Յրէաստանի, պատմէին ամենայն բանքս այսոքիկ*։ ⁶⁶Եւ եղին ամենեքեան որ լսէին՝ ՚ի սիրտս իրեանց՝ և ասեն. Չի՞նչ լինիցի մանուկս այս։ Եւ ձեռն Տեառն էր ընդ նմա*։ ⁶⁷Եւ Չաքարիա հայր նորա լցաւ Յոզուով Սրբով, մարգարեացաւ և ասէ. ⁶⁸Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ՝ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում*։ ⁶⁹Եւ յարոյց եղջեր փրկութեան մեզ ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ*։ ⁷⁰որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն նորա էին։ ⁷¹Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց. ⁷²առնել ողորմութիւն ընդ հարս մեր, և յիշել զուխտն իւր սուրբ*։ ⁷³Ձերդումնն զոր երդուաւ Աբրահամու հօր մերում, տալ մեզ* ⁷⁴առանց երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց փրկեալս։ Պաշտել զնա ⁷⁵սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա՝ զամենայն աւուրս կենաց մերոց։ ⁷⁶Եւ դու մանուկ՝ մարգարէ՛ Բարձրելոյ կոչեսցի՛ր. զի երթիցես առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա*։ ⁷⁷Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ՚ի թողութիւն մեղաց նոցա*։ ⁷⁸Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ Արեգակն ՚ի բարձանց*, ⁷⁹երևել որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու նստէին. ուղղել զօտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան*։ ⁸⁰Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով. և էր յանապատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայէլի*։

2

Գլուխ Բ

Ա ¹Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ե՛լ հրաման յԱւգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս*։ ²Այս՝ առաջին աշխարհագիր

* *Ոմանք.* Ձողորմութիւն իւր. և խնդային ընդ նմա։

* *Ոմանք.* Որոյ անուն կոչի Յով*։

* *Ոմանք.* Բնակեալ էին... լեռնակողմն Յր*։

* *Ոմանք.* Որ լսէին... և ասէին զի՛նչ։

* *Ոմանք.* Ժողովրդեան իւրոյ։

* *Օրհնակ մի.* Մեզ ՚ի տան Դաւթի։

* *Ոմանք.* Առ հարս մեր։

* *Ոմանք.* Ձերդումն զոր... թշնամեաց մերոց փրկ*։

* *Ոմանք.* Բարձրելոյն կո՛... առաջի Տեառն։

* *Ոմանք.* Տալ զփրկութիւն ժո՛... ՚ի թողութիւն մեղաց մերոց։

* *[Ոմանք.]* Ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ։ *Ոսկան.* Այց արար մեզ։

* *Ոմանք.* Ի՛ ճանապարհ խաղա՛*։

* *Ոմանք.* Յանապատ... երևելոյն նորա Իսրայէլի։

* *Ոմանք.* Աշխարագիր առ*։

եղև 'ի դատաւորութեան Ասորոց՝ Կիւրենայ*։ ³Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի։ ⁴Ե՛լ և Յովսէփ 'ի Գալիլէէ 'ի քաղաքէ Նազարէթէ 'ի Զրէաստան, 'ի քաղաք Ղաւթի, որ կոչի Բեթղահէմ. վասն լինելոյ նորա 'ի տանէ և յազգէ՝ Ղաւթի, ⁵մտանել յաշխարհագիր Սարեմաւ հանդերձ զոր խօսեալն էր նմա, և էր յղի*։ ⁶Եւ եղև 'ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա*։ ⁷Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց 'ի խանձարուրս, և եղև զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջավանհն*։

Բ ⁸Եւ հովիւք էին 'ի տեղուոցն յայնմիկ բացօթեագք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց*։ ⁹Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցին առ նոսա. և երկեան՝ երկելո մեծ*։ ¹⁰Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն*։ ¹¹Ղի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է՝ Օծեալ Տէր. 'ի քաղաքի՝ Ղաւթի։ ¹²Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եղեալ 'ի մսուր։ ¹³Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած՝ և ասէին. ¹⁴Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։ ¹⁵Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. Եկայք երթիցուք մինչև ցԲեթղահէմ, և տեսցուք զինչ է բանս այս որ եղև. զոր Տէր եցոյց մեզ*։ ¹⁶Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ, և զմանուկն եղեալ 'ի մսուր։ ¹⁷Եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։ ¹⁸Եւ ամենեքին որ լսէին՝ զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն։ ¹⁹Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, և խելամո՛ւտ լինէր 'ի սրտի իւրում։ ²⁰Եւ դարձան հովիւքն՝ փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած, վասն ամենայնի զոր լուան և տեսին, որպէս պատմեցաւ նոցա*։ ²¹Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատել զնա, և կոչեցաւ անուն նորա Յիսուս. որ կոչեցեալ էր 'ի հրեշտակէն, մինչչև՝ յղացեալ էր զնա յորովայնի*։ ²²Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի, ածին զնա յերուսաղէմ յանդիման առնել Տեառն*։ ²³որպէս և գրեալ է յօրէնս Տեառն, թէ ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի։ ²⁴Եւ տալ պատարագս՝ ըստ ասացելոյն յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց*։

Գ ²⁵Եւ ահա՛ էր այր մի յերուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն. և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի. և Զոգի՛ Սուրբ՝ էր

* *Ոմանք.* Կիւրենայ։

* *Ոմանք.* Մտանել յաշխարհագիրն։ *Ոսկան.* Որ խօսեցեալ էր նմա։

* *Ոմանք.* Նոցա անդ, լցան։

* *Ոմանք.* Եւ պատեաց զնա 'ի... յիջևանին։ *Ուր Ոսկան.* Տեղի իջևանի։

* *Օրհնակ մի ընդ Ոսկանայ.* Բացօթեայք. և այլ. բացօթեայք. և այլ. բացօթաք։ *Ոմանք.*

Որ պահէին։ *Ոմանք.* Գիշերոյ հո՛ւ։

* *Ոմանք.* Յերկելո մեծ։

* *Օրհնակ մի ընդ Ոսկանայ.* Ձուրախութիւն մեծ։

* *Ոմանք.* Մինչև 'ի Բեթղէհէմ, և տեսցուք զինչ է նշանս այս, զոր Տէր ե՛ւ։

* *Ոմանք.* Ձոր լուանն և տե՛ւ։

* *Ոմանք.* Որ կոչեցեալն էր... զնա յորովայնէ։

* *Ոսկան.* Աւուրք սրբութեան նրա։

* *Ոմանք.* Ըստ ասացելոցն յօրէնս։

ի նմա*։ ²⁶Եւ էր նորա հրաման առեալ ՚ի Յոզուոյն Սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչև տեսցէ զՕծեալն Տեառն։ ²⁷Եւ եկն Յոզուովն ՚ի տաճարն։ Եւ իբրև ածին ծնօղքն զմանուկն Յիսուս, առնել նոցա ըստ սովորութեան օրինացն ՚ի վերայ նորա. ²⁸և նա՛ ա՛ռ ընկալա՛ւ զնա՛ ՚ի գիրկս իւր, և օրհնեաց զԱստուած, և ասէ*։ ²⁹Արդ՝ արձակէ՛ս զծառայս քո Տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութիւն*։ ³⁰զի տեսի՛ն աչք իմ զփրկութիւն քո. ³¹զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։ ³²Լո՛յս ՚ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայէլի*։ ³³Եւ էին հայրն և մայր նորա զարմացեալ ՚ի վերայ բանիցն, որ խօսէին զնմանէ*։ ³⁴Եւ օրհնեաց զնոսա Սիմէոն, և ասէ ցՄարիամ մայրն նորա. Ահա սա՛ կայ ՚ի գլորումն և ՚ի կանգնումն բազմաց ՚ի մէջ Իսրայէլի, և ՚ի նշան հակառակութեան. ³⁵և ընդ քո՛ իսկ անձն անցցէ՛ սուր. զի յայտնեսցին ՚ի բազում սրտից խորհուրդք*։

Դ ³⁶Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուելի յազգէ Ասերայ. սա՛ ինքն անցեալ էր զաւուրքք բազմօք, կեցեալ ընդ առն ամս եւթն ՚ի կուսութենէ իւրմէ*։ ³⁷Եւ էր՝ այրի՛ ամաց իբրև ութսուն և չորից. որ ո՛չ մեկնէր ՚ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զցա՛յգ և զցերեկ*։ ³⁸Եւ սա՛ ՚ի նմին ժամու յարուցեալ, գոհանայր զՏեառնէ, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ա՛կն ունէին փրկութեանն Երուսաղէմի։ ³⁹Եւ իբրև կատարեցին զամենայն ըստ օրինացն Տեառն, դարձան անդրէն ՚ի Գալիլէա ՚ի քաղաքն իւրեանց Նազարէթ։ ⁴⁰Եւ մանուկն աճէր և զօրանայր լի՛ իմաստութեամբ. և շնորհք Աստուծոյ էին ՚ի վերայ նորա։ ⁴¹Եւ երթային ծնօղքն նորա ամի՛ ամի՛ յԵրուսաղէմ ՚ի տօն զատկին*։ ⁴²Եւ իբրև եղեն նորա ամբ երկուտասան, յելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին, ⁴³և կատարել զաւուրսն՝ և դառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ. և ո՛չ գիտացին ծնօղքն նորա. ⁴⁴կարծէին զնմանէ՛ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրև աւուր միոյ ճանապարհ, և խնդրէին զնա ընդ դրացիս և ընդ ծանօթս*։ ⁴⁵Եւ իբրև ո՛չ գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա։ ⁴⁶Եւ եղև յետ երից աւուրց, գտին զնա ՚ի տաճարին զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ՚ի նոցանէ՛ և հարցանէր զնոսա։ Ջարմանային ամենեքեան որ լսէինն ՚ի նմանէ՛ ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա*։ ⁴⁷և իբրև տեսին զնա՛ սքանչացան։ Եւ ասէ ցնա մայրն իւր. Ո՛րդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո՛ և ես՝ տառապեաք՝ խնդրեաք զքեզ*։ ⁴⁸Եւ ասէ ցնոսա. Ձի՞ խնդրէիք զիս ո՛չ գիտէիք եթէ ՚ի տան Յօր իմոյ պարտ է ինձ լինել*։ ⁴⁹Եւ նոքա՛ ո՛չ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա։ ⁵⁰Եւ

* *Ոմանք*. Ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անունն էր Սիմէոն։

* *Ոմանք*. Առ ընկալաւ զնա ՚ի։

* *Ոմանք հարցական ուղորակաւ այսպէս ունին զբանս*. Արդ արձակէ՞ս զծառայս քո։ *Ուր օրինակ մի*. Արդ արձակեա՛ զծա՛։

* *Ոմանք*. Լոյս յայտնութիւն... և փառք ժողո՞։

* *Ոմանք*. Հայր և մայրն նորա... զոր խօսէին զնմանէ։

* *Ոմանք*. Անձնդ անցցէ... յայտնեսցին բազում սրտից։

* *Ոմանք*. Կացեալ ընդ առն։

* *Ոմանք*. Իբր ութսուն... և զցերեակ։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ*. ՚ի տօնի զատկին։

* *Ոմանք*. Աւուր միոյ ճանապարհք։

* *Ոմանք*. Որ լսէին ՚ի նմանէ։

* *Օրինակ մի*. Եւ իբրև գտին զնա սք՞։ *Ոմանք*. Տառապեաք և խնդ՞։

* *Ոմանք*. Ձի խնդրէք զիս, ոչ գիտէք թէ ՚ի տան Յօր իմում։

էջ ընդ նոսա, և զնա՛ց ՚ի Նազարեթ. և էր նոցա հնազանդ. և մայրն նորա պահէր զամենայն զբանսն ՚ի սրտի իւրում*։ ⁵¹Եւ Յիսուս զարգանա՛յր իմաստութեամբ և հասակաւ` և շնորհօ՛ք յԱստուծոյ և ՚ի մարդկանէ։

3

Գլուխ Գ

Ե ¹Ի հինգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ՚ի դատաւորութեան Զրեաստանի Պիղատոսի՝ Պոնտացւոյ, և ՚ի չորրորդայետութեան Գալիլեացւոց Զերովդի՛, և ՚ի Փիլիպոսի եղբօր նորա չորրորդայետութեան ՚ի Տուրացւոց և ՚ի Տրաքոնացւոց աշխարհին, և ՚ի չորրորդայետութեան Լիսանեայ Աբիլենացւոյ*։ ²Եւ ՚ի քահանայապետութեան Անայի և Կայիափայ. եղև բա՛ն Աստուծոյ ՚ի վերայ Յովհաննու որդւոյ Ջաքարիայ՝ յանապատի անդ*։ ³Եւ ե՛կն յամենայն կողմն Յորդանանու, քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց։ ⁴Որպէս և գրեալ է ՚ի գիրս պատգամաց Եսայայ մարգարէի. Չա՛յն բարբառոյ յանապատի. Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղի՛ղ արարէք զշաւիղս նորա*։ ⁵Ամենայն ձորք լցցի՛ն, և ամենայն լերինք և բլուրք՝ խոնարհեսցին. և եղիցին դժուարինքն ՚ի դիրինս, և առապարքն՝ ՚ի հարթ ճանապարհս*։ ⁶Եւ տեսցէ՛ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ։ ⁷Եւ ասէր ցժողովուրդսն Ելեալս մկրտել ՚ի նմանէ. Ծնո՛ւնդք իժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն որ գալոց է*։ ⁸Արարէք այսուհետև պտուղս արժանիս ապաշխարութեան։ Եւ մի՛ սկսանիցիք ասել՝ եթէ ունիմք հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կարօղ է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու*։ ⁹Բայց ահաւասիկ տապար՝ առ արմի՛ն ծառոց կայ. ամենայն ծառ որ ո՛չ առնէ զպտուղ բարուք, հատանի և ՚ի հո՛ւր արկանի։

Ձ ¹⁰Չարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. Իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք։ ¹¹Պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. Ոյր իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ ոյր ոչ գուցէ. և ոյր կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ*։ ¹²Եկին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա. Վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք։ ¹³Եւ նա՝ ասէ ցնոսա. Մի՛ ինչ աւելի քան զհրամայեալսն ձեզ առնիցէք*։ ¹⁴Չարցանէին զնա և զինուորքն՝ և ասէին. Եւ մեք զի՞նչ գործեսցուք։ Ասէ ցնոսա. Մի՛ զոք խուիցէք՝ և մի՛ զոք զրպարտիցէք, շա՛տ լիցին ձեզ թոշակքն ձեր*։ ¹⁵Մինչ ակն ունէր ժողովուրդն, և խորհէին ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու. Միթէ՛ սա՛ իցէ

* *Ոմանք.* Եւ մայր նորա պահէր զամենայն բանս։

* *Ոմանք.* Ի հինգետասաներորդի... և Փիլիպպոսի եղ... և Արաքոնացւոց աշխ...

Լիսանեայ Աբիլենացւոց։ *Ուր բազումք համաձայն մերումս մակակետիւ գրեն զ՚ի Տուրացւոց։*

* *Ոմանք.* Անայի և Կայիա՛։ *Օրինակ մի յաւելու.* Բան Աստուծոյ յերկնից ՚ի վերայ։

* *Ոմանք.* Ջճանապարհս Տեառն, ուղիղ արա՛։

* *Ոմանք.* Ի հարթ ճանապարհ։

* *Ոմանք.* Եւ ասէ ցժողովուրդսն։

* *Ոմանք.* Պտուղ արժանի ա՛։

* *Ոմանք.* Ձմին այնմ ո՛յր ոչն գուցէ։

* *Ոմանք.* Քան զհրամայեալն ձեզ։

* *Օրինակ մի.* Մի՛ զոք խոսվիցէք, և մի՛ զոք զրպա՛։

Քրիստոսն*։ ¹⁶Պատասխանի ետ ամենեցուն՝ և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս. նա՛ մկրտեսցէ զձեզ Յոզուով Սրբով և հրով*։ ¹⁷Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում սրբել զկալ իւր, և ժողովել զգորեանն ՚ի շտեմարանս իւր, և գյարդն՝ այրեսցէ անշէջ հրով։ ¹⁸Բազում և այլ ինչ մխիթարութեամբ ատարարանէր ժողովրդեանն։ ¹⁹Բայց Յերովդէս չորրորդապետ յանդիմանեալ ՚ի նմանէ վասն Յերովդիայ կնոջ եղբոր իւրոյ, և վասն ամենայն չարեացն զոր գործեաց Յերովդէս* , ²⁰յաւել և զայն ևս ՚ի վերայ ամենայնի, և եղ ՚ի բանտի զՅովհաննէս։ ²¹Եւ եղև ՚ի մկրտել ամենայն ժողովրդեանն, և ընդ Յիսուսի մկրտելն՝ և կալ յաղօթս, բանալ երկնից, ²²և իջանել Յոզուոյն Սրբոյ նարմնաւոր տեսեամբ իբրև զաղանի ՚ի վերայ նորա. և զալ ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ*։ ²³Եւ ինքն Յիսուս՝ էր ամաց իբրև երեսնից սկսեալ՝ որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ. որ Յակովբայն. որ Յեղեայն. որ Մատաթեայն*։ ²⁴Որ Ղևեայն. որ Մեղքեայն. որ Յաննեայն. որ Յովսեփեայն*։ ²⁵Որ Մատթեայն. որ Անովսեայն. որ Նաոււմայն. որ Էսղեայն. որ Նանգեայն*։ ²⁶Որ Մատթեայն. որ Մատաթեայն. որ Սենեայն. որ Յովսեփեայն. որ Յովդայն*։ ²⁷Որ Յովնանայն. որ Ռեսայն. որ Ջորաբաբելին. որ Սաղաթիելին. որ Ներայն*։ ²⁸Որ Մեղքեայն. որ Ադդեայն. որ Կովսամայն. որ Ելմովդադայն. որ Երայն*։ ²⁹Որ Յեսուայն. որ Եղիագարայն. որ Յովրամայն. որ Մատթայն. որ Ղևեայն*։ ³⁰Որ Սիմէովնին. որ Յուդային, որ Յովսեփայն. որ Յովնամայն. որ Էղէկիմայն*։ ³¹Որ Մեղքեայն. որ Մէննայն. որ Մատտաթայն. որ Նաթանայն. որ Ղաւթին։ ³²Որ Յեսսեայն. որ Ովբեդայն. որ Բոոսայն. որ Սաղմանայն. որ Նաասովնին*։ ³³Որ Ամինադաբայն. որ Արամայն. որ Ադմեայն. որ Առնեայն. որ Եսրովմայն. որ Փարէսին. որ Յուդային։ ³⁴Որ Յակովբայն. որ Իսահակայն. որ Աբրահամուն. որ Թառային. որ Նաքովրայն*։ ³⁵Որ Սերուբայն. որ Ռագաւայն. որ Փաղեկայն. որ Եբերայն. որ Սաղ՛ային։ ³⁶Որ Կայնանայն. որ Արփաքսադայն. որ Սէմայն. որ Նոյին. որ Ղամէթայն։ ³⁷Որ Մաթուսաղային. որ Ենոքայն. որ Յարեդին. որ Մաղաղայելին. որ Կայնանայն*։ ³⁸Որ Էնովսայն. որ Սէթայն. որ Ադամայն, որ Աստուծոյն։

4

* Ոմանք. Սա իցէ Քրիստոս։

* Ոմանք. Ջկօշիկս նորա. նա։

* Ոմանք. Վասն Յերովդիադայ կնոջ Փիլիպպոսի եղբոր իւ՛ր։

* Ոմանք. Չայն ՚ի յերկնից։

* Ոմանք. Որպէս և կարծէր։ *Յօրինակին ՚ի բնաբանի գրի.* Որ Յակովբայն. և ՚ի լուս՛ ուղղագրի՝ Յակովբայն. *համաձայն այլոց։*

* Ոմանք. Որ Յովսեփայն։

* Ոմանք. Որ Անովսայն. որ Նաոււմայն... որ Նենգեայն։

* Ոմանք. Որ Մատթայն... Մատտաթայն։ *Ուր Ոսկան.* Մահաթայն։

* Ոմանք. Որ Ջորաբաբելին... որ Ներեայն։

* Ոմանք. Որ Յեսուեայն։

* Ոմանք. Որ Յովնանայն. որ Եղիակիմայն։

* Ոմանք. Որ Սաղմոնայն։

* Ոմանք. Որ Թարային։

* Ոմանք. Որ Սաղաղեիլին. *կամ՝* Մաղաղիլիլին։

Գլուխ Դ

Ե՛ 1Եւ Յիսուս լի՛ Յոգութիւն Սրբով դարձա՛ւ ՚ի Յորդանանէ. և վարէ՛ր Յոգութիւն յանապատ, 2աւուրս քառասուն փորձեալ՝ ՚ի Սատանայէ. և ո՛չ եկեր, և ո՛չ արք յաւուրսն յայնոսիկ. և ՚ի կատարելն նոցա՝ քաղցեալ՝*: 3Եւ ասէ ցնա Սատանայ. Եթէ Որդի՛ ես Աստուծոյ, ասա՛ քարիդ այդմիկ՝ զի հա՛ց լիցի՝*: 4Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Գրեալ է՝ եթէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ՝*: 5Եւ հանեալ զնա՝ ՚ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի ՚ի վայրկեան ժամանակի: 6Եւ ասէ ցնա Սատանայ. Քե՛զ տաց զայս ամենայն իշխանութիւն և զփառս սոցա, զի ինձ տուեալ է. և ում կամի՞մ տա՛մ զսա՛: 7Արդ դու՛ եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, քե՛զ եղիցի ամենայն: 8Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Գրեալ է. Երկիր պագցես Տեառն Աստուծոյ քում, և զնա՛ միայն պաշտեսցես: 9Եւ ած զնա յերուսաղէմ, և կացոյց ՚ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ ցնա. Եթէ Որդի՛ ես Աստուծոյ, արկ զքեզ աստի ՚ի վայր՝*. 10Ղի գրեալ է՝ եթէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ. 11Ղի ՚ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո՝*: 12Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Ասացեալ է, թէ ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո: 13Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս Սատանայի՝ ՚ի բա՛ց եկաց ՚ի նմանէ առ ժամանակ մի՝: բկ. 14Եւ դարձա՛ւ Յիսուս զօրութեամբ Յոգութեան ՚ի Գալիլեա. և ել համբա՛ւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին: 15Եւ նա՛ ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց: 16Եւ եկն ՚ի Նազարեթ՝ ուր սնեալն էր. և եմո՛ւտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ՚ի ժողովուրդն՝*: 17Եւ ետուն նմա գիրս զեսայայ մարգարէի, և յարեալ ընթեռնո՛ւլ. և իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր՝*. 18Յոգի՛ Տեառն ՚ի վերայ իմ, վասն որոյ և օ՛ծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ՝*. 19Քարոզել զերեաց զթողութիւն և կուրաց տեսանել. արձակել զվիրաւորս ՚ի թողութիւն. քարոզել զտարեկան Տեառն ընդունելի՝*: 20Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն՝ և նստա՛ւ. և ամենեցուն որ ՚ի ժողովրդեանն էին աչք՝ ՚ի նա՛ հայէին: 21Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր: 22Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն որ ելանէին ՚ի բերանոյ նորա. և ասէին. Ո՞չ սա է որդին Յովսեփայ՝*: 23Եւ ասէ ցնոսա. Ապաքեն ասիցէք առ իս զառա՛կս զայս. Բժիշկ՝ բժշկեա՛ զանձն քո. որչափ լուաք՝ զոր արարէր ՚ի Կափառնաում, արա՛ և աստ ՚ի քում գաւառի՝*: 24Եւ ասէ. Ամէն ասե՛մ

* Ոսկան. Յաւուրս քառասն՝: Ոմանք. Փորձել ՚ի Սատանայէ:

* Ոմանք. Քարինդ այդմիկ, զի:

* Ոմանք. Բանիւն Աստուծոյ:

* Ոմանք. Իշխանութիւն և զփառսն:

* Ոմանք. Եւ կացոյց զնա ՚ի վերայ:

* Ոմանք. Յարցես քարի:

* Ոմանք. Չամենայն փորձութիւնն Սա՞:

* Ոմանք. Յաւուրն շաբաթուց:

* Ոմանք. Գիր զեսայայ մար՞:

* Ի բազումս պակասի. Առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւ:

* Ոսկան յաւելու. Ընդունելի և զօր հատուցման:

* Ոմանք. Որ ելանէր ՚ի բերա՞:

* Յօրինակին՝ աստ և ստորև յերկուս տեղիս և եթ գրի՝ Կապիառնաում:

ծեզ, թէ չէ՝ մարգարէ ընդունելի՜ ՚ի քաղաքի՜ իւրում: ²⁵Արդարև՝ ասե՛մ ձեզ. զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի՜ ՚ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցանն երկինք զերիս ամս և զվե՛ց ամիս. և եղև սո՛վ մեծ ընդ ամենայն երկիր: ²⁶Եւ ո՛չ առ մի՜ ՚ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ՚ի Սարեփթա՛ Սիդովնացոց՝ առ կին մի այրի՛: ²⁷Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսեի՛ւ մարգարէիւ. և ո՛չ ոք ՚ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեմա՛ն Ասորի: ²⁸Եւ լցա՛ն ամենեքին բարկութեամբ ՚ի ժողովրդեանն՝ իբրև լսէին զայս՝. ²⁹և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտևանն լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավե՛ժ առնել զնա՛: ³⁰Եւ նա՛ անցեալ ընդ մէջն նոցա զնա՛յր՝: բբ. ³¹Եւ էջ ՚ի Կափառնաում ՚ի քաղաքն Գալիլեացոց, և ուսուցանէ՛ր զնոսա ՚ի շաբաթսն: ³²Եւ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշխանութեամբ էր բանն նորա՛:

Ը ³³Եւ էր ՚ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր՝ այս դիւի պղծոյ, և աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝. ³⁴և ասէ. Թուլացո՞ զի՞ կայ՝ մեր և քո Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանե՞լ զմեզ. գիտե՛մք զքեզ ո՛վ ես՝ Սուրբդ Աստուծոյ՛: ³⁵Սաստեաց՝ ՚ի նա Յիսուս՝ և ասէ. Պապանծեաց՝ և ե՛լ ՚ի դմանէ: Ձգետնեաց զնա դևն ՚ի միջի անդ, և ել ՚ի նմանէ, և ո՛չ ինչ վնասեաց նմա՛: ³⁶Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին. Չի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ՛ այսոց պղծոց՝ և ելանեն՛: ³⁷Եւ երթայր հռչակ զնմանէ յամենայն տեղիս շուրջ զգաւառաւն՛:

Թ ³⁸Եւ յարուցեալ ՚ի ժողովրդենէ անտի, եմուտ ՚ի տո՛ւն Սիմովնի՛: ³⁹Ձոքանչ Սիմովնի տագնապէ՛ր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա՛: ⁴⁰Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա՛:

Ժ ⁴¹Եւ ընդ արևուն մտանել՝ ամենեքին որոց էին հիւանդք ՚ի պէսպէ՛ս ցաւս, բերէին զնոսա առ նա: Եւ նա՛ իւրաքանչիւր ունէք ՚ի նոցանէ դներ ձեռս, և բժշկէր զնոսա՛: ⁴²Ելանէին և դևք ՚ի բազմաց՝ աղաղակէին և ասէին, եթէ դո՛ւ ես Որդի Աստուծոյ: Եւ նա՛ սաստէր և ո՛չ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է՛: բգ. ⁴³Եւ իբրև տի՛ւ եղև՝ ե՛լ զնաց յանապատ տեղի. և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչև առ նա՛ և արգելուին զնա, զի մի՛ գնասցէ ՚ի նոցանէ: ⁴⁴Եւ նա՛ ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել

* Ոսկան. Սիդովնացոյ:

* Ոմանք. Լցան ամենեքեան բար՝... իբրև լուան զայս:

* Ոմանք. Յարտևան լերինն:

* Բազումք. Ընդ մէջ նոցա:

* Ոմանք. Վարդապետութիւն նորա... բան նորա:

* Ոմանք. Եւ աղաղակեալ ՚ի ձայն մեծ, ասէ:

* Բազումք երկար ուղորակաւ գրեն. Կորուսանե՛լ զմեզ: Ոմանք նշանակեն ՚ի լուս՝. Ձքեզ որ ես սուրբդ:

* Ոմանք. Եւ ինչ ոչ վնասեաց:

* Ոմանք. Եւ եղև զարմանալիք ՚ի:

* Ոմանք. Ձնմանէ ընդ ամենայն տեղիս:

* Ոմանք. Ի ժողովրդենէն, եմուտ:

* Ոմանք. Եւ աղաչէին զնա վասն նորա:

* Ոմանք. Յարուցեալ պաշտէր զնոսա:

* Ոմանք. Դներ ձեռն:

* Յոմանս պակասի. Ելանէին և դևք: Ուր ոմանք. Դևքն ՚ի:

զարքայութիւնն Աստուծոյ, զի յայն իսկ առաքեցայ: ⁴⁵Եւ քարոզէր ՚ի ժողովուրդսն Գալիլեացոց:

5

Գլուխ Ե

¹Եւ եղև ՚ի խոնել զնովաւ ժողովրդեանն, և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գէննէսարեթայ*: ²Եւ ետես երկուս նաւս զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ ՚ի նոցանէ՝ լուանային զգործիսն: ³Ել նա ՚ի մի՝ նաւուցն որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա՝ սակաւիկ մի տանել ՚ի ներքս ՚ի ցամաքէն. նստաւ և ուսուցանէր ՚ի նաւէ անտի զժողովուրդսն:

ԺԱ ⁴Եւ իբրև լռեաց ՚ի խօսիցն, ասէ ցՍիմովն. Խաղացո՞ր ՚ի խորն, և արկէ՞ք զգործիս ձեր յորս: ⁵Պատասխանի ետ Սիմովն՝ և ասէ ցնա. Վարդապետ՝ զամենայն զիշերս աշխատ եղեաք, և ո՛չինչ կալաք. բայց վասն քո բանիդ՝ արկցո՞ւք զգործիսս*: ⁶Չայս իբրև արարին՝ փակեցին ՚ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչև պարպատէին ուռկանք նոցա: ⁷Եւ ակնարկէին որսակցացն ՚ի մեւս նաւն՝ գալ օգնել նոցա. և եկին: Եւ լցան երկոքին նաւքն՝ մինչև մերձ յընկղմել նոցա*: ⁸Իբրև ետես Սիմովն Պետրոս՝ անկաւ առ ծունկսն Յիսուսի՝ և ասէ. Ի՞ բաց գնա յինէն Տէր, զի այր՝ մեղաւոր եմ ես*: ⁹Քանզի ա՛հ պատեաց զնա, և զամենեսեան որ ընդ նմայն էին, վասն որսոյ՝ ձկանցն զոր ըմբռնեցին*. ¹⁰նոյնպէս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ զորդիսն Ձերեղեայ, որ էին որսակիցք Սիմովնի: Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. Մի՛ երկնչիր՝ յայսմ հետէ զմարդիկ որսայցես ՚ի կեանս*: ¹¹Եւ հանեալ զնաւն ՚ի ցամաք, թողին զամենայն, և գնացին զհետ նորա:

ԺԲ բդ. ¹²Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի՝ ՚ի քաղաքացն, ահա՛ այր մի լի՝ բորոտութեամբ՝ իբրև ետես զՅիսուս, անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. Տէր՝ եթէ կամիս, կարօ՞ղ ես զիս սրբել*: ¹³Չգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա՝ և ասէ. Կամիմ՝ սրբեաց: Եւ վաղվաղակի՝ գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն: ¹⁴Եւ նա՝ պատուիրեաց նմա՝ մի՛ ումեք ասել, այլ թէ՛ երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո՞ պատարագ վասն սրբութեան քոյ, որպէս և հրամայեաց Մովսէս՝ ՚ի վկայութիւն նոցա*: ¹⁵Եւ յորդէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել ՚ի հիւանդութեանէ իւրեանց*: ¹⁶Եւ նա՝ խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս:

ԺԳ բե. ¹⁷Եւ եղև ՚ի միո՛ւմ աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որք ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացոց՝ և Յրէաստանի, և Երուսաղեմի. և զօրութիւն Տեառն էր ՚ի բժշկել

* *Ոմանք.* Եւ եղև խոնել զնովաւ:

* *Ոմանք.* Չամենայն զիշերս աշխատեցաք, և... քո բանից արկ՝:

* *Յօրինակին պակասէր.* Ակնարկէին որսակցացն ՚ի մեւս:

* *Օրինակ մի.* Չի այր մի մեղաւոր մի եմ:

* *Ոմանք.* Չամենեսին որք ընդ նոսայն էին... զորս ըմբռնէ՛:

* *Ոմանք.* Որսացես ՚ի կեանս:

* *Բազումք.* Ի՛ մի քաղաքացն: *Ոսկան.* Եւ ահա այր մի: *Ոմանք.* Անկաւ ՚ի վերայ երե՛:

* *Ոմանք.* Սրբութեան քո զոր հրամայեաց:

* *Ոմանք.* Ի՛ հիւանդութեանց իւրեանց:

զնոսա*։ ¹⁸Եւ ահա արք՝ բերէին մահճօք զա՛յր մի՝ որ էր անդամալո՛յծ, և խնդրէին զնա մուծանել՝ ՚ի ներքս, և դնել՝ առաջի նորա։ ¹⁹Եւ իբրև ո՛չ գտանէին թէ ընդ ո՛ր մուծանիցեն զնա ՚ի ներքս՝ վասն ամբոխին, ելին՝ ՚ի տանիս, և ՚ի ցուո՛ցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ՝ ՚ի մէջ առաջի Յիսուսի։ ²⁰Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. Ա՛յր դու՛ թողեա՛լ լիցին քեզ մեղք քո*։ ²¹Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիք՝ և ասեն. Ո՞վ է սա՛՝ որ խօսի՛ զհայիոյութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս, բայց միայն Աստուած*։ ²²Իբրև զիտաց Յիսուս զխորհուրդսն նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. Չի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր։ ²³Չի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ և զնա։ ²⁴Այլ զի զիտասցիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի՝ թողուլ զմեղս։ Ատ՝ ցանդամալոյծն. Քե՛զ ասեմ՝ արի՛ ա՛ն զմահիծս քո, և երթ՝ ՚ի տուն քո*։ ²⁵Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն, առ զիւրև՝ յորոյ վերայ անկեալն դներ, զնա՛ց ՚ի տուն իւր, և փառաւոր՝ առնէր զԱստուած*։ ²⁶Չարմանք կալան զամենեսին, և փառաւոր՝ առնէին զԱստուած. լի՛ եղեն ահիւ՛ և ասեն, եթէ տեսա՞ք այսօր՝ նոր նշան*։

ԺԴ բգ. ²⁷Եւ յետ այնորիկ՝ ե՛լ անտի, և ետես մաքսաւոր մի՝ որուն անուն էր Ղևի, զի նստէր ՚ի մաքսաւորութեան. և ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ։ ²⁸Եւ թողեալ զամենայն՝ յարեաւ զնաց զկնի նորա*։ ²⁹Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղևի ՚ի տան իւրում. և էր ժողովուրդ բազում մաքսաւորաց, և այլոց՝ որ էին բազմեալ ընդ նոսա*։ ³⁰Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝ և ասէին. Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք*։ ³¹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ո՛չ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ՝ հիւանդաց*։ ³²Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն*։ ³³Եւ նոքա ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն ստեպ, և խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն. և քոյքդ ուտեն և ըմպեն*։ ³⁴Եւ նա՛ ասէ ցնոսա. Միթէ՛ կարօ՞ղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ՛ հրաման տալ պահել։ ³⁵Եկեցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, ապա՛ պահեցեն յաւուրսն յայնոսիկ*։ ³⁶Ասաց և առակ մի առ նոսա, թէ ո՛չ ոք արկանէ ՚ի նոր հանդերձէ՛ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ՚ի նորոյն*։ ³⁷Եւ ո՛չ ոք արկանէ զինի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ՛ զինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու, և տիկքն կորնչին։ ³⁸Այլ զինի նոր՝ ՚ի տիկս նորս արկանելի է, և երկոքին պահին։ ³⁹Եւ ո՛չ ոք ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն. քանզի ասէ՛ թէ հինն

* *Ոմանք.* Օրինաց վարդապետքն։

* *Ոմանք յաւելուն.* Եւ տեսեալ Յիսուսի զհաւատսն։

* *Ոմանք.* Ո՞վ է սա... ո՞վ կարէ։

* *Յօրինակին պակասէր.* Յանդամալոյծն. *Քեզ ասեմ՝* արի՛։

* *Ոմանք.* Չիրեաւ... անկեալ դներ։

* *Ոմանք.* Չարմանք կալաւ զամենեսեան։

* *Ոսկան.* Յարեաւ և զնաց։

* *Ոմանք.* Եւ էր ժողով բազում։

* *Ոմանք.* Եւ ասեն. Ընդէ՞ր ընդ։

* *Բազումք.* Ոչինչ են պիտոյ. և *ոմանք.* ո՛չ ինչ է պիտոյ բժիշկ ո՛ղջաց։

* *Ոմանք.* Եւ ոչ եկի կոչել։

* *Ոմանք.* Եւ քոյդ ուտեն և ըմ՞։

* *Ոմանք.* Եւ ապա պահես՞։

* *Ոմանք.* Կապերտն որ ՚ի նորուն։

քաղցրագոյն է*:

6

Գլուխ Զ

բէ. ¹Եւ եղև ՚ի շաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափ, և ուտէին: ²Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. Չի՞նչ գործէք՝ զոր չէ՛ օրէն ՚ի շաբաթու*:

³Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեալն ինքն՝ և որ ընդ նմայն էին*:

⁴Չիա՞րդ եմո՛ւտ նա ՚ի տունն Աստուծոյ, և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ո՛չ էր օրէն ուտել, բայց միայն քահանայապետիցն*:

⁵Եւ ասէ ցնոսա. Տէր է Որդի մարդոյ և շաբաթու:

ԺԵ ⁶Եւ եղև ՚ի միւսում շաբաթուն մտանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի, և ձեռն իւր աջ՝ գօսացեալ էր*:

⁷Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ:

⁸Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. Արի՛ անց ՚ի մէջ: Եւ նա յարուցեալ եկաց*:

⁹Ասէ ցնոսա Յիսուս. Զարցից ինչ զձեզ. Չի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չա՛ր գործել, ոգի մի ապրեցուցանել թէ կորուսանել*:

¹⁰Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա. Չըզեա՞ զձեռն քո: Եւ նա ձրզեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմեւսն*:

¹¹Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս, թէ զի՞նչ առնիցեն Յիսուսի*:

գկ. ¹²Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ ել ՚ի լեռն կալ յաղօթս. և հաներ զգիշերն ՚ի գլո՛ւխ յաղօթսն Աստուծոյ:

ԺԶ ¹³Եւ իբրև այդ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ՚ի նոցանէ երկուսասանս. զորս և առաքեալս անուանեաց:

¹⁴ՉՍի՛նովն՝ զոր և Պետրոսն անուանեաց, և զԱնդրէաս եղբայր նորին, և զՅակովբոս, և զՅովհաննէս, և զՓիլիպպոս, և զԲարթողովմէոս*,

¹⁵և զՄատթէոս, և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զՍի՛նովն զկոչեցեալն Նախանձայոյզ,

¹⁶և զՅուդա Յակովբայ, և զՅուդա Սկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ*:

¹⁷Եւ իջեալ նոքո՛ք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նորա, և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Զրեաստանէ, և յերուսաղեմէ, և յայնմ կողմանէ, և ՚ի ծովեզերէն Տիրոսի և Սիդոնի.

¹⁸որ եկին լսել ՚ի նմանէ, և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին:

¹⁹Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ՚ի նմանէ՝ և

* Ոմանք. Ասէ եթէ հինն քաղց՞:

* Ոմանք. Որ չէ՛ օրէնք:

* Ոմանք. Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա... քաղցեալ ինքն:

* Բազումք յաւելուն. Օրէնք ումեք ուտել:

* Ոմանք. Այր մի, որոյ ձեռն իւր:

* Ոմանք. Ձեռն գօսացեալն էր:

* Ոսկան. Զարցից ինչ ձեզ:

* Ոմանք. Ասէ ցայրն. Չզեա՛:

* Ոսկան. Եւ նոքա լցան յիմա՞:

* Ոմանք. Պետրոս անուանեաց... զեղբայր նորին:

* Ոմանք. Եւ զՅուդա Յակովբեան, և զՅուդա Իսկարիով՞:

բժշկէ՛ր զամենեսիմ՝:

ԺԷ ²⁰Եւ նա՛ անբա՛րձ գաչս իւր յաշակերտսն իւր՝ և ասէ. Երանի՛ աղքատացո՛ հոգւով, զի ձե՛ր է արքայութիւն Աստուծոյ՝: ²¹Երանի՛ որ քաղցեալ են այժմ, զի յագեսցին: Երանի՛ որ լան այժմ, զի ծիծաղեսցին՝: ²²Երանի՛ է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ՝ և ատիցեն, և հանիցեն անուն չար զձե՛նց վասն Որդւոյ մարդոյ՝: ²³Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ասիա՛ վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմի՛ն օրինակի արնէին մարգարէիցն հարք իւրեանց՝: ²⁴Բայց վա՛յ ձեզ մեծատանցո՛. զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: ²⁵Վա՛յ ձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վա՛յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք և լայցէք՝: ²⁶Վա՛յ ձեզ՝ յորժամ բարի՛ ասիցեն զձե՛նց ամենայն մարդիկ, զի այ՛դպէս արնէին սուտ մարգարէիցն հարք նոցա՝: ²⁷Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձերոց: ²⁸Օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր. աղօթս արարէք ՚ի վերայ նեղչաց ձերոց: ²⁹Որ հարկանէ զծնօտ քո, մատո՛ր նմա և զմեւսն. և որ հանէ ՚ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ՚ի նմանէ և զշապիկս՝: ³⁰Ամենայնի՛ որ խնդրէ ՚ի քէն՝ տո՛ւր, և զոր ինչ հանէ ոք ՚ի քէն՝ մի՛ պահանջեր՝: ³¹Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա: ³²Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր. զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց՝: ³³Եւ եթէ բարի՛ արնէք բարերարաց ձերոց, ո՞ր շնորհ է ձեր. զի և մեղաւորք զնոյն գործեն: ³⁴Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիք արնուլ, ո՞ր շնորհ է ձեր. քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի արցեն անդէն զկշիռն՝: ³⁵Բայց սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, և բարի՛ արարէք ատելեաց ձերոց, և տո՛ւք փոխ՝ ուստի ո՛չ ակն ունիցիք արնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա՛ քաղցր է ՚ի վերայ չարաց և ապաշնորհաց՝: ³⁶Եւ եղերուք զթա՛ծք՝ որպէս և Յայրն ձեր զթա՛ծ է՝: ³⁷Մի՛ դատիք՝ և ո՛չ դատիցիք. մի՛ պատժէք՝ և ո՛չ պատժիցիք, արձակիցէ՛ք և արձակիցի՛ք՝: ³⁸Տո՛ւք՝ և տացի՛ ձեզ. չափ բարուք թաթաղուն շարժուն զեղուն տացեն ՚ի գոգս ձեր. նովին չափով որով չափէք՝ չափեսցի՛ ձեզ՝: ³⁹Ասա՛ց և առակ մի առ նոսա. Միթէ կարիցէ՞ կոյր

* Ոսկան. Եւ ժողովուրդն խնդ՛:

* Ոմանք. Երանի է աղքատա՛... (21) Երանի է որ քաղ՛... Երանի է որ լան:

* Օրհնակ մի. Քաղցեալ իցէք այժմ, զի յագեսցիք... լացէք այժմ զի ծիծաղիցիք:

* Յօրհնակին ՚ի վերայ բառիս՝ նախատիցեն ___ և ատիցեն, *աստղանիշ՝ եղեալ, թերևս ակնարկի տարբերութիւնն օրհնակաց ոմանց. որք յառաջինն ՚ի բաց թողուն զնախն, և դնեն լոկ՝ ատիցեն. և յերկրորդն յաւելեալ զնախ, ունին. և նախատիցեն, և հանիցեն: Թէպէտ են և ոմանք որք յերկրոսին ևս տեղիս գրեն՝ նախատիցեն:*

* Ոմանք յաւելուն. Ուրախ լիջիք վասն Որդւոյ մարդոյ յաւուր յայնմ՝... ըստ նմին օրի՛:

* Յօրհնակին. Ձի զգայցէք և լայցէք:

* Ոմանք. Ձի այսպէս. կամ՝ այնպէս առ՛:

* Յօրհնակին պակասէր. ՚ի նմանէ և զշապիկս:

* Ոմանք. Ամենայն որ խնդրէ ոք ՚ի քէն:

* Յոմանս պակասի. Եւ եթէ սիրէք դուք:

* Ոմանք. Ակն ունիցիք առ՛: Բազումք. Անդրէն զկշիռն:

* Ոմանք համեմատ մերունս օրհնակի գրեն աստէն. ապաշնորհաց:

* Յոմանս պակասի. Եւ եղերուք:

* Բազումք. Արձակեցէ՛ք և արձակիցիք:

* Ոմանք. Տացին ՚ի գոգս:

կուրի՝ առաջնորդել, ոչ ապաքեն երկոքին՝ ի խորխորատ անկանիցին*։ ⁴⁰Ո՛չ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամենայն կատարեալն՝ եղիցի իբրև զվարդապետ իւր։ ⁴¹Ձի՞՞ տեսանես զշիւղ յական եղբօր քոյ, և ՚ի քում ական զգերանդ՝ ո՛չ նշմարես*։ ⁴²Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. Եղբայր՝ թող հանի՛ց զշիւղ յականէ քումնէ, և դու ՚ի քում ական զգերանդ ո՛չ տեսանես. կե՛ղծաւոր՝ հա՛ն նախ զգերանդ յականէ քումնէ, և ապա՛ հայեսցիր հանել զշիւղ յականէ՛ եղբօր քոյ*։ ⁴³Ձի ո՛չ է ծառ բարի՛, որ առնէ պտուղ չար և ո՛չ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի*։ ⁴⁴Ղի իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրնէ ճանաչի։ Ձի ո՛չ եթէ ՚ի փշոց քաղեն թուզ, և ո՛չ ՚ի մորենւոյ կթեն խաղող։ ⁴⁵Սարդ բարի՛ ՚ի բարի՛ զանձուց սրտի իւրոյ բղխէ՛ զբարի, և մարդ չար՝ ՚ի չարէն բղխէ՛ զչար. քանզի ՚ի յաւելուածո՛յ սրտին խօսի բերան նորա*։ ⁴⁶Ձի՞՞ կոչէք զիս՝ Տէր՝ Տէր, և զոր ասեմն ո՛չ առնէք։ ⁴⁷Ամենայն որ գայ առ իս, և լսէ զբանս իմ՝ և առնէ զնոսա, ցուցի՛ց ձեզ ո՛ւմ նման է*։ ⁴⁸Նման է առն, որ շինիցէ տուն. որ փորեաց և խորեաց, և ե՛ր հիմն ՚ի վերայ վիմի. ՚ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ զտունն, և ո՛չ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հիմնն ՚ի վերայ վիմի*։ ⁴⁹Իսկ որ լսէ զբանս իմ՝ և ո՛չ առնէ, նման է առն որ շինիցէ տուն ՚ի վերայ հողոյ առանց հիման. զոր բախեաց գետ, և վաղվաղակի՛ անկաւ. և եղև կործանումն տանն այնորիկ մե՛ծ։

7

Գլուխ Է

ԺԸ գր. ¹Եւ իբրև կատարեաց զամենայն բանս իւր ՚ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի Կափառնաում*։ ²Հարիւրապետի՛ ուրումն ծառայ՝ չարաչար հիւանդացեալ՝ մե՛րձ էր ՚ի վախճանել, որ էր նմա պատուական։ ³Իբրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զժերսն ՚ի Հրեից, աղաչել զնա՝ զի եկեսցէ ապրեցուցէ՛ զծառայն նորա*։ ⁴Եւ նորա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստեալ և ասէին, թէ արժանի՛ է որում զշնորհս զայս առնես. ⁵զի սիրէ՛ զազգս մեր, և զժողովրդանոցն՝ նա՛ շինեաց մեզ։ ⁶Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչինչ կարի հեռի էր ՚ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս՝ և ասէ ցնա. Տէր՝ մի՛ ինչ աշխատ լինիր, զի չե՛մ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես*։ ⁷Վասն որոյ և ո՛չ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա՛ բանիւ՛ և բժշկեսցի՛ մանուկս իմ։ ⁸Քանզի և ես այ՛ր մի եմ՝ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս. և ասեմ սմա. Ե՛րթ, և երթայ. և այլում՝ թէ եկ, և գայ. և ծառայի իմում՝ թէ արա՛ զայս, և առնէ։ ⁹Եւ իբրև լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ,

* Ոմանք. ՚ի խորխորատ անկանիցին։

* Ոմանք. Ձշիղ... ականդ զգերան՝ ո՛չ։

* Ոմանք. Հանել զշիւղդ։

* Ոմանք. Որ առնիցէ պտուղ։

* Ոմանք. ՚ի յաւելուածոց սրտի խօսի։

* Ոմանք. Ում նմանէ։

* Բազումք. Հիմն ՚ի վերայ վի՛։

* Ոսկան. Եւ եղև իբրև կատ՝ Ոմանք. Ձամենայն զբանս իւր։ *Յօրինակին*. ՚ի Կափառնաում։

* Ոմանք. Եւ իբրև լուաւ զՅիսուսէ՝ առաքեաց զժերս Հրեից, աղաչէր զնա, զի ե՛։

* Ոմանք. Եւ իբրև ոչինչ։

դարձա՛ւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա և ասէ. Ամէն ասե՛ն ձեզ՝ թէ և ո՛չ յիսրայէլի՛ այսչափ հաւատս գտի՛*։ ¹⁰Եւ դարձա՛ն անդրէն պատգամաւորքն ՚ի տուն, և գտին զժառայն հիւանդ՝ բժշկեալ։

ԺԹ գգ. ¹¹Եւ եղև ՚ի վաղիւն երթայր ՚ի քաղաք մի, որուն անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա, և ժողովուրդ բազում*։ ¹²Իբրև մե՛րձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա՛ ելանէ՛ր մեռեալ մի, որդի՝ միամօ՛ր մօր իւրոյ, և նա՛ էր այրի՛. և ժողովուրդ բազում քաղաքին՝ է՛ր ընդ նմա*։ ¹³Իբրև ետես զնա Տէր՝ գթացա՛ւ ՚ի նա՛ և ասէ. Մի՛ լար*։ ¹⁴Եւ մատուցեալ մերձեցա՛ւ ՚ի դագաղսն. և որ բարձեալն տանէին՝ զտեղի՛ առին. և ասէ. Պատանի՛ դու՛ քեզ ասեմ, արի՛։ ¹⁵Կանգնեցա՛ւ նստա՛ւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր*։ ¹⁶Եւ ա՛հ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին զԱստուած՝ և ասէին, թէ մարգարէ՛ ոմն մեծ յարուցեալ է ՚ի միջի մերուն, և թէ այ՛ց արար Աստուած ժողովրդեան իւրուն ՚ի բարութիւն։ ¹⁷Եւ ե՛լ զրոյցս այս ընդ ամենայն Հրեաստան վասն նորա. և ընդ ամենայն կողմանս աշխարհին։

Ի ¹⁸Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։ ¹⁹Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտաց իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. Դու՛ ես որ գալոցն ես՝ եթէ այլուն ակն կալցուք։ ²⁰Եւ եկեալ առ նա արքն՝ ասեն. Յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ. Դու՛ ես որ գալոցն ես եթէ այլուն ակն կալցուք*։ ²¹Եւ ՚ի նմին ժամու բժշկեաց զբազումս ՚ի հիւանդութեանց և ՚ի հարուածոց և յայսո՛ց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ ²²Պատասխանի ետ նոցա և ասէ. Երթայք պատմեցէ՛ք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լուայք. զի կոյրք՝ տեսանեն, և կաղք զնա՛ն, բորտք՝ սրբին, խուլք՝ լսեն, մեռեալք՝ յառնեն, աղքատք՝ աւետարանին*։ ²³Ա երանի՛ իցէ՛ որ ո՛չ գայթաղիցի յիս*։ ²⁴Եւ իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. Ջի՞ոնչ ելէք յանապատն տեսանել, եղէ՞զն շարժուն ՚ի հողմոյ*։ ²⁵Այլ զի՞ոնչ ելէք տեսանել, ա՞յր ՚ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւանիկ՝ որ ՚ի հանդերձս երևելիս և ՚ի փափկութեան են՝ յարքունիս են։ ²⁶Այլ զի՞ոնչ ելէք տեսանել, մարգարէ՞. այո՛, ասե՛ն ձեզ՝ առաւել ևս քան զմարգարէ*։ ²⁷Ձի սա՛ է՛ վասն որոյ գրեալն է, թէ ահա՛ առաքեն զհրեշտակ իմ առաջի քոյ՝ որ յարդարեսցէ զճանապարհ քո առաջի քոյ*։ ²⁸Ամէն ասե՛ն ձեզ. Մեծ ՚ի ծնունդս կանանց՝ մարգարէ, քան զՅովհաննէս ո՛չ որ է. բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ՝ մեծ է քան զնա։ ²⁹Եւ ամենայն ժողովուրդն իբրև լուան, և մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած. զի մկրտեցան ՚ի մկրտութիւնն

* *Ոմանք.* Առ ժողովուրդսն որ երթայր զհետ։

* *Բազումք.* Եւ աշակերտքն նորա։

* *Յովհանն պակասի.* Եւ ժողովուրդ բազում քաղաքին։

* *Օրինակ մի ՚ի լուս՝. նշանակէ.* Ձնա Յիսուս, գթա՛ւ։ *Յօրինակին.* Մի լար։

* *Բազումք.* Կանգնեցաւ և նստաւ։

* *Ոսկան.* Արքն առ նա՛ ասեն։

* *Ոմանք.* Եւ խուլք լսեն։

* *Ոմանք.* Որ ո՛չ գայթաղիցէ. *կամ՝* գայթաղեսցի յիս։

* *Ոսկան.* Գնացին աշակերտքն Յովհաննու, սկսաւ ասել ընդ ժո՛... Ջի՞ ո՛նչ։ *Ոմանք.* Եղէ՞զն ՚ի հողմոյ շարժուն։

* *Ոմանք.* Եւ առաւել։

* *Ոմանք.* Առաջի երեսաց քոց... զճանապարհս քո։

Յովիաննու*։ ³⁰Իսկ փարիսեցիքն և օրինականքն, գխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ո՛չ մկրտեցան ՚ի նմանէ։ ³¹Արդ՝ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ, և ո՞ւմ իցեն նմանօրք։ ³²Նման են մանկտւոյ՝ որ ՚ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս և ասիցեն. Փողս հարա՛ք ձեզ՝ և ո՛չ կաքաւեցէք. ողբացաք՝ և ո՛չ լացէք*։ ³³Եկն՝ Յովիաննէս մկրտիչ՝ ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր, և ասէիք. Դե՛ գոյ ՚ի նմա*։ ³⁴Եկն Որդի մարդոյ՝ ուտէ՛ և ըմպէ, և ասէք. Ահա՛ այր կերօղ և արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց*։ ³⁵Եւ արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց*։

Ի՛վ գդ. ³⁶Աղաչէր ոմն զնա ՚ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ՛ ճաշ ընդ նմա. և մտեալ ՚ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ*։ ³⁷Եւ կին մի էր ՚ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է ՚ի տան փարիսեցոյն, բերեալ շի՛շ մի իւղոյ ազնուի*։ ³⁸Կայր յետոյ առ ոտս նորա, լայր. և արտասուօքն սկսաւ թանալ՝ զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր. և համբուրէր զոտս նորա, և օծանէր իւղովն։ ³⁹Եւ տեսեալ փարիսեցոյն որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւր. Սա՛ թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՞վ՝ կամ որպիսի՞ ոք կին մերձենայ ՚ի սա. զի մեղաւոր է*։ ⁴⁰Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Սի՛մովն, ունիմ ինչ ասել քեզ։ Եւ նա ասէ. Ասա՛ վարդապետ։ Եւ ասէ. ⁴¹Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մի՛ն պարտէր հինգ հարելր դահեկան, և մեւսն յիսուն։ ⁴²Եւ իբրև ո՛չ գոյր նոցա հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ զնա*։ ⁴³Ասէ Սիմովն. Ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն շնորհեաց։ Եւ նա ասէ ցնա. Ուղի՛ղ դատեցար։ ⁴⁴Եւ դարձեալ ՚ի կինն կողմն, ասէ՛ ցՍիմովն. Տեսանես զայս կին, մտի՛ ՚ի տուն քո ջուր ոտից իմոց ո՛չ ետուր, իսկ սա՛ արտասուօք իւրովք եթա՛ց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց*։ ⁴⁵Համբոյր մի դու ո՛չ ետուր ինձ, սա՛՛ անասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ո՛չ դադարեաց ՚ի համբուրելոյ զոտս իմ։ ⁴⁶Իւղով զգլուխ իմ ո՛չ օծեր, սա՛՛ իւղով անուշիւ օծ։ ⁴⁷Վասն որոյ ասե՛մ քեզ. Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց. զի որում շա՛տ թողուցու՛ շա՛տ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ*։ ⁴⁸Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ ⁴⁹Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. Ո՞վ է սա՛՛ որ զմեղս թողու*։ ⁵⁰Եւ նա՛ ասէ ցկինն. Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն։

Գլուխ Ը

* Այլք. Ամենայն ժողովուրդն իբրև լուաւ. և։

* Ոմանք. Նմանեն մանկտ՝։

* Օրինակ մի ՚ի լուս՝. նշանակէ ընդ Ոսկանայ. Ոչ ուտէր հաց, և ոչ ըմպէր գինի։

* Ոմանք. Եւ ասէիք. Ահա այր կե՛։

* Ոմանք. Իմաստութիւն որդւոց։

* Ոմանք. Աղաչէր զնա ոմն... կերիցէ ընդ նմա ճաշ։

* Ոսկան. Իւղոյ նարդեան ազնուի։

* Ոմանք. Ասէ ընդ միտս։ Բազումք. Ո՛վ՝ և որպիսի ոք։

* Ոմանք. Ո՞ առաւել սիրեաց զնա։

* Ոմանք. Ի կին կողմն։

* Ոմանք. Մեղք իւր բազում։

* Ոմանք. Ո՞ է սա որ և զմեղս թողու։

զե. ¹Եւ եղև յետ այնորիկ, և ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս, քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ. և երկոտասանքն ընդ նմա*. ²Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայտոց չարաց և ՚ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղէնացի, յորմէ եւթն դևն ելեալ էր*. ³Եւ Յովաննա՝ կին՝ Քուզայ հազարապետին Յերովդի. և Շուշան, և այլք բազումք որք պաշտէին զնա յընչից իւրեանց:

Իբ ⁴Եւ ՚ի ժողովել բազում ժողովրդոց, և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ՝ առական*: ⁵Եւ սերմանացան՝ սերմանել զսերմանիս իւր. և ՚ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղև կոխան, և թռչունք երկնից կերան զնա*: ⁶Եւ այլն անկաւ յապառաժի. և ընդ բուսանելն՝ չորացաւ, առ ՚ի չոյէ հիւթոյ: ⁷Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա: ⁸Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ՝ արար պտո՛ղ հարիւրապատիկ: Չայս իբրև խօսեցաւ, ասէ՝. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ*: ⁹Զարցանէին զնա աշակերտքն՝ թէ զի՞նչ իցէ առական: ¹⁰Եւ նա՝ ասէ. Չե՛զ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօ՛ք, զի տեսցեն՝ և մի՛ տեսցեն, և լուիցեն՝ և մի՛ իմասցին: ¹¹Բայց առական այս ինչ է: Սերմն՝ բանն Աստուծոյ է: ¹²Եւ որք առ ճանապարհաւն, այնորիկ են՝ որ լսենն, և ապա զայ՝ Սատանայ՝ հանէ՝ զբանն ՚ի սրտից նոցա, զի մի՛ հաւատասցեն՝ և ապրեսցին*: ¹³Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն, խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս ո՛չ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, և ՚ի ժամանակի փորձութեան հեռանան*: ¹⁴Իսկ որ ՚ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա՛ են, որ իբրև լսեն զբանն՝ և ՚ի հոգս և ՚ի մեծութիւն և ՚ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ՝ հեղձնուն և անպտո՛ղ լինին: ¹⁵Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ*: ¹⁶Ո՛չ որ լուցանէ ճրագ՝ և թաքուցանէ ընդ կարասեաւ, կամ դնէ ընդ մահճօք. այլ ՚ի վերայ աշտանակի՛ դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն*: ¹⁷Չի՛ք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, և եկեսցէ ՚ի յայտ: ¹⁸Տեսէ՛ք այսուհետև զհարդ լսէք. զի ոյր գուցէ՝ տացի՛ նմա, և ոյր ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի՛ ՚ի նմանէ: ¹⁹Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէին հասանել ՚ի նա՝ վասն բազմութեանն: ²⁰Ա՛զդ եղև նմա՝ և ասեն. Մայր քո և եղբարք քո՝ կան արտաքոյ՝ և կամին զքեզ տեսանել: ²¹Եւ ասէ ցնոսա. Մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն: ²²Եւ եղև ՚ի միում աւուրց, ինքն ել ՚ի նաւ՝ և աշակերտք նորա, և ասէ ցնոսա. Եկայք անցցուր յայնկոյս ծովակիս: Եւ զնացին*: ²³Եւ մինչ դեռ նաւէին՝ ՚ի քո՛ւն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ ՚ի ծովակն՝ և ուռնոյր, և տագնապէին:

²⁴Աստուցեալ զարթուցին զնա՝ և ասեն. Վարդապետ վարդապետ՝ կորնչի՛մք

* Ոմանք. Եւ ընդ գեաւոս:

* Ոմանք. Եւ ՚ի հիւանդութեանց:

* Ոմանք. Ասէ առակօք:

* Յոմանս պակասի. Սերմանել զսերմանիս իւր:

* Ոմանք. Եւ ՚ի պարարտ:

* Ոմանք. Եւ հանէ զբանն:

* Ոսկան. Արմատս ոչ ունին: Ոմանք. Այլ առ ժամանակ մի:

* Յօրինակին պակասէր. Չբանն՝ ընդունին. և տան:

* Ոմանք. Ո՛չ որ լուցեալ ճրագ... զլոյսն տեսանիցեն:

* Ոմանք. Ի միում աւուրց:

աւասիկ: Եւ նա՝ յարուցեալ սաստեաց հողմոյն, և խռովութեան ջրոցն՝ և հանդարտեցին, և եղև խաղաղութիւն*։²⁵ Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք ծեր: Եւ զահի՛ հարեալ զարմացան, և ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեւք իցէ սա՛ զի և հողմոց և ջրոց հրաման տայ, և հնազանդին սմա*։

Ի Դ²⁶ Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացոց. որ է յայն կոյս հանդէպ Գալիլեա: ²⁷Եւ ընդ ելանելն նորա՝ ի ցամաք, պատահեաց այր մի՝ ի քաղաքէն՝ յորում էին դէք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ո՛չ ՚ի տան բնակեալ, այլ ՚ի գերեզմանս*։²⁸ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկալ առաջի նորա, և ասէ մեծածայն. Չի՞ կայ իմ և քո՝ Յիսուս Որդի Աստուծոյ Բարձրելոյ, աղաչեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս: ²⁹Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ՝ ելանել ՚ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ՚ի շղթայս՝ և պահեր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր ՚ի դիւէն յանապատ*։³⁰ Եհարց ցնա Յիսուս՝ և ասէ. Չի՞նչ անուն է քեզ: Եւ նա՛ ասէ. Լեզնովն: Չի դէք բազումք մտեալ էին ՚ի նա*։³¹ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա երթալ յանդունդս: ³²Եւ էր անդ՝ երամակ մի խոզից բազմաց՝ արօտական ՚ի լերինն. և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել ՚ի նոսա. և հրամայեաց նոցա*։³³ Եւ ելեալ դէքն յառնէն, մտին ՚ի խոզեանն. և դիմեաց երամակն ՚ի գահէ անտի ՚ի ծովակն՝ և հեղձալ*։³⁴ Իբրև տեսին խոզարածքն զիրսն որ եղեն՝ փախեան, և պատմեցին ՚ի քաղաքին և յազարակսն: ³⁵Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն ուստի դէքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտսն Յիսուսի, և երկեան*։³⁶ Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զիա՞րդ փրկեցաւ դիւահարն: ³⁷Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմանքքն Գերգեսացոց՝ զնալ ՚ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ տազնապէին. և նա՛ մտեալ ՚ի նաւ, դարձաւ անդրէն: ³⁸ Աղաչէր զնա՝ այրն ուստի դէքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ և ասէ. ³⁹Ղարձ ՚ի տուն քո և պատմեա՛ զոր միանգամ արար քեզ Աստուած: Գնաց ՚ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս: ⁴⁰Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա:

Ի Ե⁴¹ Եւ ահա՛ եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի, աղաչէր զնա՝ մտանել ՚ի տուն նորա*։⁴² զի դուստր մի՝ միամօր էր նորա, ամաց իբրև երկոտասանից, և էր մե՛րծ ՚ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա*։

Ի Զ⁴³ Եւ կին մի՝ էր ՚ի տեռատեսութեան արեան յամաց երկոտասանից, որում ո՛չ էր լիեալ հնար յունեքէ բժշկել*։⁴⁴ Մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի քղանցս

* Ոմանք միանգամ դնեն. Վարդապետ կորնչիմք... և խռովութեան ջուրցն:

* Ոմանք. Եւ ասէ ցնոսա... և ասեն ցմիմեանս:

* Ոմանք. Պատահեաց նմա այր մի:

* Ոսկան. Քանզի բազում ժամա՛: Ոմանք. ՚ի դիւէն յանապատս:

* Ոմանք. Եհարց զնա Յիսուս:

* Ոմանք. Եւ աղաչէին զնա:

* Օրինակ մի. ՚ի դարէ անտի ՚ի ծովակն՝ և հեղձան:

* Ոմանք. Եւ տեսին զայրն ուս՛:

* Ոմանք. Որոյ անուն էր:

* Ի բազումս պակասի. Չի դուստր մի միամօր:

* Ոմանք. Ամաց երկոտասա՛: Ոսկան թերևս առեալ ՚ի Լատինականէն՝ յաւելլու.

հանդերձի նորա. և նոյն ժամայն՝ եկաց բոլորունն արեան նորա*։ ⁴⁵Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է որ մերձեցան յիս: Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պե՛տրոս՝ և որ ընդ նմա էին. Վարդապետ՝ ժողովուրդդ պնդեն և նեղեն զքեզ*։ ⁴⁶Եւ ասէ Յիսուս. Ո՞նք մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն: ⁴⁷Իբրև ետես կինն՝ թէ ո՛չ ծածկեցաւ ՚ի նմանէ, եկն դողալով՝ և անկա՛ւ առաջի նորա թէ վասն որո՞յ իրաց մերձեցաւ ՚ի նա, և պատմեաց՝ առաջի ամենայն ժողովրդեանն. և թէ ո՞րպէս բժշկեցաւ առժամայն*։ ⁴⁸Եւ ասէ. Քաջալերեաց՝ դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն*։ ⁴⁹Եւ մինչ դեռ նա խօսէր, գայ ոմն ՚ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. Մեռա՛ւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա: ⁵⁰Իսկ Յիսուս՝ իբրև լուաւ, պատասխանի՛ ետ նմա և ասէ. Մի՛ երկնչիր, միայն հաւատա՛ւ և կեցցէ՛: ⁵¹Եւ մտեալ ՚ի տունն, ո՛չ զոք եթող մտանել, բայց միայն զՊե՛տրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա: ⁵²Լայի՛ն ամենեքեան՝ և կոծէին զնա. և նա՛ ասէ. Մի՛ լայք, զի չէ՛ մեռեալ, այլ ննջէ՛: ⁵³Եւ նոքա՛ ծա՛ղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռա՛ւ: ⁵⁴Եւ նորա՛ հանեալ զամենեսին արտաքս, ⁵⁵կալա՛ւ զծեռանէ նորա, բարբառեցա՛ւ և ասէ. Արի կաց մանուկ դու*։ ⁵⁶Եւ դարձա՛ւ ոզի նորա, և կանգնեցա՛ւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել: ⁵⁷Եւ զարմացան ծնօղքն նորա. և նա՛ պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղևն:

9

Գլուխ Թ

Իէ՛ ¹Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն ՚ի վերայ ամենայն դիւսց, և բժշկել զհիւանդութիւնս: ²Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, և բժշկել զախտաժեսս: ³Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ՚ի ճանապարհ. մի՛ գաւազան, և մի՛ մախաղ, մի՛ հաց, և մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունիցիք*։ ⁴Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ազօրք, և անտի՛ զնայցէք: ⁵Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսցիք ՚ի վկայութիւն նոցա: ⁶Եւ ելեալ շրջի՛ն ընդ քաղաքս և ընդ գեղս, աւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս*։ ⁷Լուաւ Յերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն, և զարմանայր՝ վասն ասելոյն յոմանց, ⁸եթէ Յովհաննէս յարեա՛ւ ՚ի մեռելոց, և յոմանց՝ թէ եղիա՛ յայտնեցաւ, և յայլոց՝ թէ մարգարէ՛ ոմն յառաջնոցն յարեաւ: ⁹Ասէ Յերովդէս. ՉՅովհաննէս՝ ե՛ս գլխատեցի. իսկ սա՛ ո՞վ իցէ զորմէ զայսպիսի իրս լսեն: Եւ խնդրէ՛ տեսանել զնա*։ ¹⁰Դարձան առաքեալքն, և պատմեցին

Երկոտասանից. որ ՚ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր: *Ոմանք.*

Որում չէր հնար լեալ յումեքէ:

*Ոմանք. Եւ մատուցեալ յե՛ս: *Ոսկան.* Ի դրօշակ հանդերձի նորա:

*Ոմանք. ժողովուրդդ պնդ՛:

**Բազումք.* Ի նա՛ պատմեաց:

*Ոմանք. Եւ նա ասէ ցնա. Քաջալերեա՛ դուս՛:

*Ոմանք. Ձի ոչ է մեռեալ:

**Յօրինակին պակասէր.* Ձծեռանէ *նորա*, բար՛:

*Ոսկան. Բառնայք ՚ի ճանապարհի:

*Ոմանք. Գեաւդս. *կամ՝* գեւդս:

*Ոմանք. Ո՞վ է, զորմէ:

նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնոսա խուսեաց առանձինն՝ ՚ի տեղի անապատ քաղաքի միոյ, որուն անուն էր Բեթսայիդա*։ ¹¹Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, զնացին զհետ նորա. և ընկալեալ զնոսա խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:

ԻԸ ¹²Եւ օրն սկսաւ տարածամել. մատեան երկոտասանքն և ասեն ցնա. Արձակեա՛ զժողովուրդսդ, զի երթեալ շուրջ ՚ի գեղսն և յագարակս հանգիցեն, և գտցեն կերակուր, զի աստ՝ յանապատի՛ տեղւոջ ենք: ¹³Ասէ ցնոսա. Դո՛ւք տուք դոցա՛ ուտել: Եւ նոքա ասեն. Ոչ գոյր մեր՝ աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս, բայց եթէ երթիցուք զնեսցո՛ւք բաւական ժողովրդեանդ կերակուր՝:

¹⁴Քանզի էին արք՝ իբրև հինգ հազար: Ասէ ցաշակերտսն. Բազմեցուցէ՛ք զդոսա դասս դասս, յիսուն յիսուն*։ ¹⁵Եւ արարին այնպէս, և բազմեցուցին զամենեսեան: ¹⁶Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցա՛ւ յերկինս՝ օրհնեա՛ց, և եբէկ՝ և տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն*։

¹⁷Կերան և յագեցան ամենեքեան. և բարձին զնշխարս կոտորոցն՝ երկոտասան սակառի*։

ԻԹ ԴԿ. ¹⁸Եւ եղև ՚ի կալն նորա յաղօթս առանձինն, էին ընդ նմա և աշակերտքն նորա. եհարց զնոսա և ասէ. Ձո՞ք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեն*։ ¹⁹Եւ նոցա պատասխանի տուեալ՝ ասեն. ՁՅովհաննէս մկրտիչ. և այլք՝ Ձեղիա՛: Իսկ այլք՝ թէ մարգարէ՛ որ յառաջնոցն յարեալ*։ ²⁰Ասէ ցնոսա. Դուք՝ զո՞վ որ ասէք զինէն թէ իցեն: Պատասխանի՛ ետ Պե՛տրոս՝ և ասէ. Ձթրիստո՛սն Աստուծոյ*։ ²¹Նա՛ սաստեաց ՚ի նոսա, և պատուիրեաց մի՛ ումեք ասել զայն: ²²Եւ ասէ՝ թէ պարտ է Որդւոյ մարդոյ բազո՛ւմ չարչարել, և անարգել ՚ի քահանայապետից և ՚ի ծերոց և ՚ի դպրաց, և սպանանել և յերիւր աւուր յառնել*։ ²³Եւ ասէր առ ամենեսին. Եթէ որ կամի զկնի իմ գալ, ուրացի՛ զանձն, և առցէ զխաչ իւր հանապազ, և եկեցէ՛ զհետ իմ: ²⁴Ձի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ՛ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ՛ զնա*։ ²⁵Ձի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ՛ կամ տուժեսցի*։ ²⁶Ձի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա՛ և Որդի մարդոյ յամօթ արասցէ՛ յորժամ զայցէ փառօք իւրովք՝ և Զօր, և հրեշտակաց սրբոց*։

Լ ²⁷Բայց արդարև՝ ասեն ձեզ, եթէ են ոմանք ՚ի դոցանէ որ այդր կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ*։ ²⁸Եւ եղև յետ այսց բանից՝ իբրև աւուրք ութ, առեալ զՊե՛տրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, ել ՚ի լեռնն կալ յաղօթս: ²⁹Եւ ՚ի կալն նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նորա

* *Ոմանք.* Քաղաքի միուն:

* *Ոմանք.* Տուք նոցա ուտել:

* *Ոմանք.* Հինգ հազարք: Ասէ ցաշակերտսն իւր:

* *Ոսկան.* Ձհինգ նկանակսն:

* *Ոմանք.* Ձնշխար կոտորոցն:

* *Ոմանք.* Եւ հարց զնոսա:

* *Ոմանք.* Եւ նոքա պատասխանի տու՛:

* *Ոմանք.* Իսկ դուք զո՛ւք ա՛:

* *Ոսկան.* Եւ ասէր թէ պարտ: *Ոմանք.* Բազունս չարչարել:

* *Ոմանք.* Ձի որ կամեսցի:

* *Ոմանք.* Ձինչ օգուտ իցէ... եթէ զաշխարհս շահիցի: *Ոսկան.* Կամ տուժեսցէ:

* *Ոմանք.* Յամօթ համարիցի:

* *Ոմանք.* Ձի են ոմանք ՚ի դոցա՛... զարքայութիւնն:

այլակերպ. և փոխեցաւ հանդերձ նորա՝ և եղև սպիտակ փայլուն*։ ³⁰Եւ ահա՝ արք երկու խօսէին ընդ մմա. որ էին Մովսէս և Եղիա, ³¹Երևեալ փառօք. և ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յերուսաղէմ*։ ³²Իսկ Պետրոս և որ ընդ մմայն էին՝ ծանրացեալք ՚ի քնոյ, զարթեան, տեսին զփառսն նորա, և զերկուս արսն որ կային առ մմա*։ ³³Եւ եղև ՚ի մեկնելն նոցա ՚ի մմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս.

Վարդապետ՝ բարուք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի քե՛զ, և մի՝ Մովսիսի, և մի՝ Եղիայի՛։ Եւ ո՛չ գիտէր զինչ խօսէր։ ³⁴Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հովանի՛ եղև ՚ի վերայ նոցա. և երկեան՝ ՚ի մտանելն նոցա ընդ ամպովն։ ³⁵Չայն եղև յամպոյն և ասէ. Դա՛ է Որդի իմ ընտրեալ, դմա՛ լուարուք։ ³⁶Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. և ինքեանք լռեցին. և ո՛չ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ, և ո՛չինչ յորոց տեսինն։ դք. ³⁷Եւ եղև ՚ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև մմա ժողովուրդ բազում։

ԼԱ ³⁸Եւ ահա՝ այր մի՛ ՚ի ժողովրդենէ անտի, աղաղակեաց և ասէ. Վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ. զի միամօր է ինձ։ ³⁹Եւ ահա՝ այս հարկանի՛ ՚ի մմա, և յանկարծ գոչէ՛, և զարկուցանէ՛ զնա՝ թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ՛, և հազիւ մեկնի՛ ՚ի մմանէ՝ խորտակեալ զնա*։ ⁴⁰և աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ո՛չ կարացին։ ⁴¹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Ո՞վ ա՛զգ անհաւատ և թելր, մինչև յե՞րբ իցեն ընդ ձեզ, և անսայցեն ձեզ. մատո՛ այսր զորդին քո*։ ⁴²Եւ մինչ ղեռ մատչէր, զարկո՛յց զնա դևն, և շարժեաց։ ⁴³Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն. և ետ զնա ցհայր իւր*։ ⁴⁴Եւ զարմանային ամենեքեան ՚ի վերայ մեծամեծացն Աստուծոյ։ Եւ ՚ի զարմանալն ամենեցուն ՚ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. Դի՛ք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան։ ⁴⁵Եւ նոքա ո՛չ գիտէին զբանն, և էր ծածկեալ ՚ի նոցանէ զի մի՛ գիտասցեն. և երկնչէին հարցանել զնա վասն բանին այնորիկ*։

ԼԲ ⁴⁶Եմուտ խորհուրդ ՚ի նոսա, թէ ո՞ արդէք մե՛ծ իցէ ՚ի նոցանէ*։ ⁴⁷Յիսուս իբրև ծանեալ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՛ կացոյց ՚ի մէջ նոցա առ իւր*, ⁴⁸և ասէ ցնոսա. Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի. և որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ՚ի ձեզ՝ նա՛ եղիցի մեծ*։ դգ. ⁴⁹Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ. Վարդապետ, տեսաք զոմն զի յանուն քո դևս հանէր՝ և արգելաք զնա, զի ո՛չ շրջի ընդ մեզ*։ ⁵⁰Ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ արգելուք զնա, զի որ ո՛չն է ձեր թշնամի՝ ՚ի ձեր կողմն է*։ ⁵¹Եւ եղև ՚ի կատարել աւուրց վերանալոյ նորա, և ինքն զերեսս հաստատեաց երթալ յերուսաղէմ։ ⁵²Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց. և իբրև

* *Ոմանք.* Եւ ՚ի կալ նորա յաղօթս։

* *Ոմանք.* Էր ՚ի յերուսաղէմ։

* *Ոմանք.* Որ ընդ մմա էին։ *Ոսկան.* Չարթեան և տեսին։

* *Ոմանք.* Եւ յանկարծակի գոչէ։

* *Բազունք.* Յե՞րբ եղէց ընդ ձեզ։ *Ոմանք.* Ընդ ձեզ. մինչև ե՞րբ անսայցեն։

* *Ոմանք.* Այսուն պղծոյ։

* *Ոմանք.* Հարցանել զնա վասն։

* *Ոմանք.* Եւ եմուտ խոր՞. թէ ո՛վ։

* *Ոմանք.* Յիսուս իբրև գիտաց զխորի՞։

* *Ոմանք.* Եւ որ զիսն ընդունի։

* *Ոմանք.* Որ յանուն քո։

* *Ի բազումս պակասի.* Արգելուք զնա. *զի։*

չոգան, մտին 'ի գեղ մի Սամարացոց՝ պատրաստել ինչ նմա: ⁵³Եւ ո՛չ ընկալան զնա զի դէմ եղեալ էր նորա երթալ յերուսաղէմ: ⁵⁴Իբրև տեսին աշակերտքն՝ Յակովբոս և Յովհաննէս, ասեն. Տէր՝ կամի՞ս զի ասացուք, և իջցէ հուր յերկնից՝ և սատակեսցէ՛ զնոսա: ⁵⁵Դարձաւ՝ սաստեաց՝ 'ի նոսա՝ և ասէ. Ո՛չ գիտք որո՞յ հոգւոյ էք դուք. ⁵⁶զի Որդի մարդոյ՝ ո՛չ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել: Եւ գնացին յայլ գեղ:

ԼԳ ⁵⁷Եւ մինչդեռ երթային նոքա՝ 'ի ճանապարհի, ասէ ոմն ցնա. Եկի՛ց զկնի քո՝ յոր վայր և երթայցես: ⁵⁸Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց՝ ո՛րջք գոն, և թռչնոց երկնից՝ դադարք, և Որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցէ զգլուխ: ⁵⁹Ասէ ցնէս ևս. Ե՛կ զկնի իմ: Եւ նա՝ ասէ. Տէր՝ հրաման տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ: ⁶⁰Ասէ ցնա Յիսուս. Թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու երթ՝ պատմեա՛ զարքայութիւն Աստուծոյ: ⁶¹Ասէ և այլ ոմն. Եկի՛ց զկնի քո Տէր, բայց նախ հրաման տուր ինձ՝ հրաժարել 'ի տանէ իմն: ⁶²Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ որ արկանէ ձեռն զմաճով, և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ:

10

Գլուխ Ժ

ԼԴ դդ. ¹Յետ այսորիկ երևցոյց Տէր և այլ ևս եւթանասուն և երկուս. և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր, յամենայն քաղաքս և 'ի տեղիս՝ ուր ինքն երթալոց էր: ²Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են՝ և մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէ՛ք զՏէր հնձոց, զի հանցէ՛ մշակս 'ի հունձս իւր: ³Երթայք, ահա՝ առաքեմ զձեզ իբրև զգառի՛նս 'ի մեջ գայլոց: ⁴Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ, մի՛ կօշիկս. և 'ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք: ⁵Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. ⁶Եթէ իցէ՛ անդ որդի ողջունի՝ հանգիցէ՛ 'ի վերայ նորա ողջոյնն ձեր. ասպ թէ ոչ՝ 'ի ձե՛զ դարձցի: ⁷Եւ 'ի նմին տան ազանիջիք, ուտիջիք և ըմպիջիք՝ 'ի նոցանէ. զի արժանի՛ է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ՛ 'ի տուն: ⁸Յոր քաղաք մտանիցէք՝ և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. ⁹և բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք իցեն. և ասասջիք նոցա. Մերձեալ է՛ 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: ¹⁰Իսկ յոր քաղաք մտանիցէք, և ո՛չ ընդունիցին զձեզ. իբրև ելանիցէք՝ 'ի հրապարակս նորա՝ ասասջիք: ¹¹և զփոշիս որ կռուեալ է՝ 'ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք՝ 'ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ: ¹²Ասեն՝ ձեզ, զի Սողոմայեցոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ: ¹³Վայ՛ քեզ Քորազին. վայ՛ քեզ Բեթսայիդա. զի

* Ոսկան. Եկից և ես զկնի քո: Բազումք. Յոր վայր և երթիցես:

* Ոմանք. Ձգլուխ իւր:

* Ոմանք. Ձարքայութիւնն Աստուծոյ:

* Ոմանք. Ձձեռն զմաճ՝... յաջողեալ է արքայութիւն Աստուծոյ:

* Ոմանք. Եւ այլս եւթանասուն և:

* Ոմանք. Եւ մի՛ մախաղ, մի՛ կօշիկ... ողջոյն մի՛ տայք:

* Ոմանք. Եւ եթէ իցէ... հանգիցէ 'ի նոսա ողջոյն ձեր:

* Ոսկան. 'Ի տանէ՛ 'ի տուն:

* Ոմանք. 'Ի հրապարակս նոցա:

* Ոմանք. Մերձեալ է՛ 'ի վերայ ձեր ար՝:

* Ոմանք. Ձի Սողոմացոցն:

եթէ 'ի Տիրոս և 'ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն 'ի ձեզ, վաղու ևս արդելք 'ի խորգ և 'ի մոխիր նստեալ և ապաշխարեալ էր*։ ¹⁴Բայց Տիրոսի և Սիդովնի ընդարձակագոյն լիցի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ*։ ¹⁵Եւ դու Կափառնաուն, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև 'ի դժոխս իջցես։ ¹⁶Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զի՛ս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ, լսէ՛ այնմիկ որ զի՛սն առաքեաց*։ ¹⁷Պարծան եւթանասուն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր՝ և դէք հնազանդին մեզ յանուն քո։ ¹⁸Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զՍատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն։ ¹⁹Ահա՛ ետու ձեզ իշխանութիւն կոխել զօծս և զկարիծս, և զամենայն զօրութիւն թշնամոյն, և ձեզ ո՛չինչ մեղանչիցեն*։ ²⁰Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացէ՛ք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս*։ ²¹Ի նմին ժամու՝ ցնծացաւ Յիսուս Յոգուովն Սրբով և ասէ. Գոհանամ զքէն Հայր Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստոնց և 'ի գիտոնց, և յայտնեցեր զայս տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քոյ*։ ²²Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ. և ո՛չ ոք զիտէ թէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր. և ո՛ է Հայր՝ եթէ ոչ՝ Որդի, և ուն կամիցի՛ Որդին յայտնել*։ ²³Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն՝ ասէ. Երանի՛ աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէք*։ ²⁴Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք՝ և ո՛չ տեսին. և լսել զոր լսէքդ՝ և ո՛չ լուան*։

Լէ դե. ²⁵Եւ ահա՛ յարեաւ ոմն օրինական փորձէր զնա և ասէր. Վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից*։ ²⁶Եւ նա՛ ասէ ցնա. Յօրէնս՝ զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս։ ²⁷Նա՛ պատասխանի ետ՝ և ասէ. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց. և զընկեր քո իբրև զանձն քո։ ²⁸Եւ ասէ ցնա. Ուղիղ ետուր զպատասխանիդ, զայդ արա՛ և կեցցես։

ԼԶ ²⁹Նա՛ իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է իմ ընկեր*։ ³⁰Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Ա՛յր մի՛ իջանէր յերուսաղեմէ յերիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց, որք մերկացին զնա, և վէրս 'ի վերայ եղին, թողին կիսամահ և գնացին*։ ³¹Ղէ՛պ եղև քահանայի միոջ՝ իջանել ընդ նոյն ճանապարհի, և տեսեալ զնա՝ զանց արար*։ ³²Նոյնպէս և Ղևտացի մի՛ եկեալ ընդ նոյն տեղի, ետես և զանց արար*։ ³³Սամարացի ոմն ճանապարհորդեալ, եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա՝ զթացաւ*։ ³⁴և

* *Բազոււմք*. Վաղուց ևս... նստեալ ապաշխարեալ էր: *Ուր Ոսկան*. ապաշխարեալ էին:

* *Բազոււմք*. Լիցի 'ի դատաստանի:

* *Ոմանք*. Եւ որ զիսն անարգէ:

* *Ոմանք*. Եւ ձեզ ինչ ոչ մեղ՛:

* *Ոմանք*. Եթէ այսք:

* *Ոմանք*. Երկնի և երկրի:

* *Ոմանք*. Եթէ ո՞ է Որդի... և ոչ զՀայր ոք զիտէ, եթէ ոչ Որդի:

* *Ոմանք*. Աչացն որ տեսանեն:

* *Ոմանք*. Եւ ոչ կարացին տեսանել. և լսել զոր լուայքդ, և:

* *Ոմանք*. Օրինական ոմն:

* *Ոմանք*. Եւ ո՞ է իմ ըն՛:

* *Ոմանք*. Մերկացուցին զնա:

* *Ոմանք*. Ընդ այն ճանապարհի:

* *Ոմանք*. Եկեալ ընդ այն տեղի:

* *Ոմանք*. Եկն ընդ այն առ նով՛:

մատուցեալ պատեանց զվերս նորա, արկեալ՝ ՚ի վերայ ձեթ և գինի. և եղեալ ՚ի վերայ գրաստու իւրոյ՝ ա՛ծ զնա ՚ի պանդոկի մի, և դարմանեաց զնա՝: ³⁵Եւ ՚ի վաղի՛ւ անդր՝ իբրև ելանէ՛ր անտի, հանեալ ե՛տ ցպանդոկապետն երկուս դահեկանս՝ և ասէ. Դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես ՚ի դա՝ ՚ի միւսանգամ՝ զալստեան իմուն՝ հատուցից քեզ՝: ³⁶Արդ՝ ո՞ յերեցունց ՚ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լինել անկելոյն ՚ի ձեռս ակազակացն՝: ³⁷Եւ նա՛ ասէ. Որ արա՛ր զողորմութիւնն ՚ի վերայ նորա: Ասէ ցնա Յիսուս. Երթ և դու՛ արա նո՛յնպէս:

Լէ ³⁸Եւ եղև ՚ի գալն նոցա, և ինքն եմո՛ւտ ՚ի գեղ մի. և կի՛ն ոմն անուն Մարթա՝ ընկալաւ զնա ՚ի տան իւրում՝: ³⁹Եւ նորա էր քոյր մի, որուն անուն էր Մարիամ. որ և եկն նստաւ առ ոտսն Տեառնն, և լսէր զբանս նորա՝: ⁴⁰Եւ Մարթա զբաղեալ էր ՚ի բազում սպասու. եկն եկաց առ նմա՝ և ասէ. Տէր՝ ո՛չինչ փոյթ է քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ՚ի սպասու. արդ՝ ասա՛ դմա զի օգնեսցէ ինձ՝: ⁴¹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Մարթա՛ Մարթա, դու հոգաս՝ և զբազումս իւր զբաղեալ ես՝. ⁴²բայց աստ՝ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ո՛չ բարձցի ՚ի սմանէ՛:

11

Գլուխ ԺԱ

ԼԸ դգ. ¹Եւ եղև ՚ի տեղուոջ ուրեք կալ յաղօթս. և իբրև դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէր՝ ուսո՛ մեզ յաղօթս կալ, որպէս Յովհաննէս ուսոյց աշակերտացն իւրոց՝: ²Ասէ ցնա. Յորժամ կայցէք յաղօթս, ասասջի՛ք. Հայր մեր, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ՛ արքայութիւն քո՝: ³Ձեաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ զօրըստօրէն: ⁴Եւ թող մեզ զմեղս մեր. զի և մեք թողունք ամենայնի՛ որ պարտիցին մեզ. և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն՝: ⁵Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ՚ի ձեռն՝ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա ՚ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. Բարեկամ՝ տուր ինձ փոխ երիս նկանակս՝. ⁶զի բարեկամ իմ եկն առ իս յուղոյ, և ո՛չինչ ունիմ դմել առաջի նորա՝: ⁷Եւ նա ՚ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ. Մի՛ աշխատ առներ զիս, զի դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինկան յանկողնի. ո՛չ կարեմ յառնել և տալ քեզ՝: ⁸Ասե՛մ ձեզ. Եթէ ոչ յարուցեալ

** Ամենայն զրչագիրք միաբան գրեն. ՚ի պանդոկի մի. որպէս և Ոսկան:*

** Ոսկան. Ծախեսցես ՚ի դմա:*

** Բազումք. Մերձաւոր լեալ անկէ՛:*

** Ոմանք. Եւ եղև ՚ի գնալն նորա:*

** Ոմանք. Որոյ անունն էր... առ ոտս Տեառն, և լսել զբանն նորա:*

** Ոսկան. Եկն և եկաց: Ոմանք. Ոչ ինչ է փոյթ քեզ:*

** Ոմանք. Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և... և բազում իւրք:*

** Ոմանք. Ո՛չ բարձցի ՚ի սմանէ:*

** Ոմանք. Կալ յաղօթս: Ոսկան. Որպէս և Յօհաննէս:*

** ՚ի լուս՝. Ասէ ցնոսա. Յոր՝. համաձայն ոմանց ՚ի բնար՝:*

** Բազումք. Որ պարտիցի մեզ:*

** Ոմանք. Եւ ասէ ցնա. Բարե՛:*

** Բազումք. Առ իս յուղոյ:*

** Ոմանք. Տացէ պատասխանի և ասացէ... զի դուրնքդ: Ոսկան արեալ ՚ի Լատինականէն յաւելու. Եւ տալ քեզ: *Եթէ նա ստիպեսցէ բաշխելով, (8) ասեմ ձեզ:*

տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տացէ՛ նմա՝ զինչ և պիտոյ իցէ՛: ⁹Եւ ես՝ ասե՛մ ձեզ. խնդրեցէք՝ և տացի՛ ձեզ, հայցեցէք՝ և գտջի՛ք, բախեցէք՝ և բացցի՛ ձեզ: ¹⁰Ձի ամենայն որ խնդրէ՝ առնու՛, և որ հայցէ՝ գտանէ՛, և որ բախէ՝ բացցի՛ նմա: ¹¹Յո՛րք ՚ի ձենջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն՝ օ՞ճ տայցէ նմա՛: ¹²Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա: ¹³Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել Յայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդրենն ՚ի նմանէ:

ԼԹ դէ. ¹⁴Եւ հանէ՛ր դև մի համր. և եղև յելանել դիւին՝ խօսեցա՛ւ համրն, և զարմացա՛ն ամենայն ժողովորդքն՝: ¹⁵Եւ ոմանք ՚ի նոցանէ ասեն. Բեեղզեբուղա՛ւ իշխանա՛ւն դիւաց հանէ դա զդևս՝: ¹⁶Եւ այլք՝ փորձէին և նշան յերկնից խնդրէին ՚ի նմանէ՛: ¹⁷Իսկ նորա՝ զիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամենայն թագաւորութիւն բաժանեա՛լ յանձն, աւերի՛, և տուն բաժանեա՛լ յանձն՝ կործանի՛: ¹⁸Ապա եթէ և Սատանայ բաժանեցա՛ւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ Բեեղզեբուղաւ իշխանա՛ւն դիւաց հանէ դա զդևս՝: ¹⁹Եթէ ես Բեեղզեբուղա՛ւ հանեմ զդևս, որդիքն ձեր՝ ի՞նչ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք՝: ²⁰Իսկ եթէ մատա՛մք Աստուծոյ հանեմ զդևս, ապա հասեա՛լ է ՚ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: ²¹Յորժամ հզօր, վառեալ՝ պահիցէ՛ զտուն իւր, ՚ի խաղաղութեան են ինչք նորա: ²²Բայց եթէ հզօրագոյն քան զնա ՚ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն նորա հանէ՛ յոր յուսացեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ՛: ²³Որ ո՛չ է ընդ իս՝ հակառա՛կ իմ է, և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ՛: ²⁴Յորժամ այսն պիղծ ելանիցէ ՚ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ո՛չ գտանէ, ասէ. Դարձայց անդրէն ՚ի տուն իմ ուստի ելիմ՝: ²⁵Եւ զայ գտանէ մաքրեալ և յարդարեալ: ²⁶Յայնժամ երթայ և առնու եւթն այլ այս չար ևս քան զինքն, և մտանէ բնակէ՛ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն՝:

Խ ²⁷Եւ եղև մինչդեռ խօսէր զայս. ձայն եբարձ կին մի ՚ի ժողովորդէն անտի՛ և ասէ. Երանի՛ է որովայնին՝ որ կրեացն զքեզ, և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ՝: ²⁸Եւ նա՛ ասէ. Նա՛՝ երանի՛ այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ, և առնիցեն՝:

ԽԱ ²⁹Եւ ՚ի դիզանել ՚ի վերայ նորա ժողովորդոցն՝ սկսաւ ասել. Ազգս այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, և նշան յերկնից՝ ո՛չ տացի սմա՛՝ բայց նշանն Յովնանու՛: ³⁰Ձի որպէս եղև Յովնան նշան Նինուէացւոց, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ

* *Ոմանք.* Տայցէ նմա զինչ պիտոյ իցէ:

* *Ոմանք.* Փոխանակ ձկան:

* *Յօրինակին պակասէր.* Եւ եղև յելանել դիւ՛:

* *Ոմանք.* ՚ի նոցանէ ասէին:

* *Յոմանս պակասի.* Եւ նշան յերկնից խնդրէ:

* *Ոմանք.* Ապա թէ Սատանայ... իշխանաւ հանէ դա զդևս:

* *Ոմանք.* Վասն այնորիկ նոքա եղի՛:

* *Ոմանք.* Ջսպառազինութիւնն հանէ:

* *Ոմանք.* Որ ոչ ընդ իս է:

* *Ի բազումս պակասի.* Այսն պիղծ ելա՛: *Ոմանք.* Եւ ոչ գտանէ, ասէ... ուստի ելի:

* *Ոմանք.* Երթայ առնու եւթն այլ այսս չար... և լինիցի յետինն: *Ոսկան.* Եւ մտեալ բնակի:

* *Ոմանք.* ՚ի ժողովորդէնէն՝ և ասէ. Երանի՛ որովայնին որ կրեաց:

* *Ոմանք.* Ջբանն Աստուծոյ, և առնեն: *Ուր և ոմանք.* Ջբանն Աստուծոյ՝ և պահիցեն:

* *Ոմանք.* Եւ ՚ի դիզանելն. ՚ի վերայ նոցա ժողո՞ր... մի՛ տացի... Յովնանու մարգարէի:

ազգիս այսմիկ*։ ³¹Դշխոյն հարաւոյ յարիցէ՛ ՚ի դատաստանի ընդ անս ազգիս այսորիկ, և դատապարտեսցէ՛ զսա. զի եկն ՚ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սաղովմոնի. և ահա՛ առաւել քան զՍաղովմոն է՛ աստ*։ ³²Արք Նինուէացիք յարիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին ՚ի քարոզութեանն Յովնանու. և ահա՛ առաւել քան զՅովնան է՛ աստ*։ եկ. ³³Ո՛չ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ՛ ՚ի թաքստեան, այլ ՚ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն*։ ³⁴Ճրագ մարմնոյ անն է. յորժամ անն առանտ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն խաւարին եղիցի*։ ³⁵Արդ՝ զգոյշ լեր, գուցէ՛ լոյսոյ որ ՚ի քեզ է՛ խաւարիցէ։ ³⁶Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է, և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշուիւք լուսաւորիցէ զքեզ*։

ԽԲ ³⁷Եւ մինչ դեռ խօսէր զայս, աղաչէր զնա ո՛նն փարսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. և նա՛ մտեալ բազմեցաւ*։ ³⁸Իբրև ետես փարսեցին՝ զարմացաւ զի նախ ո՛չ մկրտեցաւ յառաջ քան զճաշ*։ ³⁹Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարսեցիք զարտաքին զբաժակին և զպնակին սրբէք. և ներքինն ձեր լի՛ է յափշտակութեամբ և չարութեամբ*։ ⁴⁰Անմիտք՝ ոչ ապաքէն որ զարտաքինն արար, և զներքինն նոյն արար։ ⁴¹Բայց աղէ՛ զարժանն իսկ. տուք ողորմութիւն, և ահա՛ ամենայն սուրբ է ձեր։

ԽԳ ⁴²Այլ վայ՛ ձեզ փարսեցուց, զի տասանորդէք զանանուխ և զփեզանա, և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրովն Աստուծոյ. զայս՝ արժան էր առնել՝ և զայնու՛ ո՛չ անցանել*։ ⁴³Վայ՛ ձեզ փարսեցուց. զի սիրէք զբարձրագահս ՚ի ժողովուրդս, և զնախողջոյնս ՚ի հրապարակս*։ ⁴⁴Վայ՛ ձեզ, զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և մարդիկ զնան ՚ի վերայ՝ և ո՛չ գիտեն։ ⁴⁵Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ ցնա. Վարդապետ՝ զայդ բանս ասելով, և զնեզ թշնամանես*։ ⁴⁶Եւ նա՛ ասէ. Եւ ձեզ վայ՛ օրինականացդ. զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ միով ՚ի բեռինսն ո՛չ մերձենայք։ ⁴⁷Վայ՛ ձեզ՝ զի շինէք զշիրինս մարգարէիցն. և հարքն ձեր սպանին զնոսա։ ⁴⁸Ապա ուրեմն վկայէք, եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք զգերեզմանս նոցա շինէք*։ ⁴⁹Վասն այսորիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց. Առաքեցի՛ց ՚ի նոսա մարգարէս և առաքեալս, և

* Ոմանք. Այնպէս եղիցի և Որ՞։

* Ոմանք. Եւ դատապարտեսցէ զսոսա... ՚ի ծագաց երկրէ։

* Ոմանք. Ձի զղջացան ՚ի քարո՞։

* Ոսկան առեալ ՚ի Լատինականէն յաւելու. ՚ի թաքստեան, և ոչ ընդ գրուանաւ. այլ։

Ոմանք. Ձի որ մտանիցեն՝ լոյս տեսցեն։

* Ոմանք. Խաւար եղիցի։

* Ոմանք. Եւ ոչ գուցէ մասն... նշողիւք լուսաւորեսցէ զքեզ։

* Ոմանք. Եւ մինչ խօսէր զայս... ճաշ կերիցէ ընդ նմա։ Ուր օրինակ մի. Ձնա ոմն ՚ի փարսեցուցն՝ զի ճաշ կերիցէ առ նա։

* Ոմանք. Ձի ո՛չ նախ մկրտեցաւ։

* Բազումք. Բաժակին։

* Ոմանք. Եւ զփեզանայ... և զայն ո՛չ անցանել։

* Ոմանք. Ձբարձագահս ՚ի ժողովս։

* Ոմանք. Ետ մի ոմն յօրինա՞... զայդ բանդ ասելով։

* Ոմանք. Կոտորեցին զմարգարէսն, և դուք։

ի նոցանէ սպանանիցեն և հալածիցեն*։ ⁵⁰Ձի խնդրեսցի՝ արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ իսկզբանէ աշխարհի՝ յազգէ յայսմանէ*։ ⁵¹Երբեքն Աբելի մինչև յարիւնն Չաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն. այո՛ ասեմ ձեզ, խնդրեսցի՝ յազգէ՝ յայդմանէ*։ ⁵²Վայ ձեզ օրինականացոյ. զի թաքուցանէք զփականս գիտութեանն. դուք՝ ո՛չ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելո՛ւք։ ⁵³Եւ ՚ի խօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն՝ զամօթի՝ հարկանէին։ Եւ սկսան դպիրքն և փարիսեցիք զչարել և գրգռել ընդ նմա վասն բազում իրաց. ⁵⁴և սպասել որսալ ինչ բանս ՚ի բերանոյ նորա, զի չարախօսեսցեն զնմանէ*։

12

Գլուխ ԺԲ

¹Որովք ՚ի կուտել բիրաւորաց ժողովրդեանն՝ մինչև կոխել զմիմեանս։

ԽԴ Սկսաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ՝ զգոյշ լերուք անձանց ՚ի խնորոյ սաղուկեցւոցն, որ է կեղծաւորութիւն*։ ²Ձի ո՛չինչ է ՚ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և զաղտնի՝ որ ո՛չ ծանիցի*։ ³Վասն զի զոր ինչ ասիցէք ՚ի խաւարի, լսելի լիցի ՚ի լոյս. և զոր յունկանէն խօսեցարուք ՚ի շտեմարանս, քարոզեսցի ՚ի վերայ տանեաց*։ ⁴Բայց ձե՛զ ասեմ սիրելեաց իմոց. Մի՛ զարհուրիցիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ո՛չ ունիցին առնել։ ⁵Այլ ցուցի՛ց ձեզ յունմէ երկնչիցիք. երկնչիցիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ՚ի գեհեն. այո՛ ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիցիք*։ ⁶Ոչ ապաքէն հինգ ձագ՝ երկուց դանգաց վաճառի, և մի ՚ի նոցանէ ո՛չ է մոռացեալ առաջի Աստուծոյ*։ ⁷Այլ ձեր՝ և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛ երկնչիք, զի քան զբազում ձագս լաւ էք դուք։ ⁸Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, և Որդի մարդոյ խոստովանեսցի՝ զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ*։ ⁹Եւ որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ*։ ¹⁰Եւ ամենայն որ ասէ բան զՈրդոյ մարդոյ, թողցի՛ նմա. բայց որ զՅոգին Սուրբ հայիոյիցէ, մի՛ թողցի նմա*։ ¹¹Այլ յորժամ տանիցին զձեզ ՚ի ժողովուրդս, և ՚ի պետութիւնս, և յիշխանութիւնս, մի՛ հոգայցէք՝ որպէս թէ զինչ պատասխանի տայցէք, կամ զինչ ասիցէք*։ ¹²Ձի Յոգին Սուրբ ուսուցէ ձեզ ՚ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել*։

* *Ոմանք.* Վասն այնորիկ և իմաստութիւնն։

* *Ոմանք.* Յազգէ յայդմանէ։

* *Ոմանք.* Մինչև ցարիւնն... ամէն ասեմ ձեզ. խնդրեսցի։

* *Ոմանք.* Ձի չարախօսեն զնմանէ։

* *Ոմանք.* ՚ի խնորոյ փարիսեցւոցն, որ է։

* *Ոմանք.* Ոչինչ է ծածուկ։

* *Ոսկան.* Վասն այնորիկ զոր ինչ ասի՞։ *Ոմանք.* Եւ գյունկանէ։

* *Ոմանք.* Երկնչիցիք յայնմանէ... յայնմանէ երկնչիցիք։ *Յորս Ոսկան.* երկերո՛ւք։

* *Ոսկան.* Հինգ ձագք... վաճառին։

* *Օրինակ մի.* Որ խոստովանեսցի զիս։

* *Ոմանք.* Ուրացեալ եղիցի։

* *Ոմանք.* Որ ասիցէ բան... հայիոյեսցէ։

* *Ոմանք.* Տանիցեն զձեզ... կամ զինչ խօսիցիք։

* *Ոմանք.* Ուսուցէ զձեզ ՚ի նմ՞։ *Օրինակ մի.* Ձինչ պիտոյ իցէ խօսեալ։

ԽԵ ԵՔ. ¹³Ասէ ոմն 'ի ժողովրդեանցն ցնա. Վարդապետ՝ ասա ցեղբայր իմ՝
բաժանել ընդ իս գժառանգութիւնն*։ ¹⁴Եւ նա՝ ասէ ցնա. Այր դու՝ ո՞ կացոյց զիս
դատաւոր կամ բաժանարար՝ ՚ի վերայ ձեր։ ¹⁵Եւ ասէ ցնոսա. Տեսէք և զգոյշ
լերուք յամենայն ագահութենէ, զի ո՛չ եթէ ՚ի սթերից ընչից ուրուք իցեն կեանք
նորա։

ԽԶ ¹⁶Խօսեցաւ առ նոսա առակ մի՝ և ասէ. Ա՛ռն ուրումն մեծատան ետուն
անդք տոհմականս. ¹⁷և խորհէր ՚ի միտս իւր՝ և ասէր. Ձի՞ գործեցից՝ զի ո՛չ գոյ
տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ*։ ¹⁸Եւ ասէ. Գիտե՛մ զինչ արարից. քակեցի՛ց
զշտեմարանս իմ՝ և ևս մեծամեծս շինեցից. և անդր ժողովեցից զգորեան և
զամենայն բարութիւնս իմ. ¹⁹և ասացից ցանձն իմ. Ա՛նձն՝ ունի՛ս բազում
բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգի՛ր՝ կե՛ր արբ՝ և ուրախ լեր։
²⁰Ասէ ցնա Աստուած. Ա՛նմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ ՚ի քէն ՚ի բաց պահանջիցեն,
իսկ զոր պատրաստեցերն՝ ո՛ւն լինիցի*։ ²¹Նոյնպէս և որ գանձէ անձին, և ո՛չ
յԱստուած մեծանայցէ։ ²²Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այդորիկ ասեմ՝ ձեզ. Մի՛
հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք*.
²³Գի ոգի՝ առաւել է քան զկերակուր, և մարմին քան զհանդերձ։ ²⁴Հայեցարո՛ւք
ընդ ագռաւս, զի ո՛չ սերմանեն և ո՛չ հնձեն, որոց ո՛չ գոն շտեմարանք՝ և ո՛չ
համբարանոցք, և Աստուած կերակրէ՛ զնոսա. ո՛րչափ ևս առաւել զձե՛զ՝ որ լա՛ւ
էք քան զթռչունս։ ²⁵Ո՞վ ՚ի ձէնք առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ՚ի հասակ իւր
կանգուն մի։ ²⁶Իսկ արդ՝ եթէ ՚ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞
հոգայցէք*։ ²⁷Հայեցարո՛ւք ընդ շուշանն՝ ո՛րպէս աճէ, ո՛չ ջանայ՝ և ո՛չ նիւթէ՛.
ասեմ՝ ձեզ. Եւ ո՛չ Սողովմոն յամենայն ՚ի փառսն իւր զգեցաւ իբրև զմի ՚ի
նոցանէ*։ ²⁸Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ՚ի բացի՛ է՝ և վաղիւ ՚ի հնոց արկանելի,
Աստուած այնպէս զգեցուցանէ. ո՛րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք։ ²⁹Եւ
դուք մի խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի՛ զբաղնուք*։ ³⁰Գի զայն
ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր՝ գիտէ՛ զի պիտոյ է այն
ամենայն*։ ³¹Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ. և այն յաւելցի ձեզ*։ Եզ.
³²Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տա՛լ ձեզ զարքայութիւնն*։
³³Վաճառեցէք զինչս ձեր, և տո՛ւք ողորմութիւն. և արարէ՛ք ձեզ քսակս առանց
հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ո՛չ գող մերծենայ, և ո՛չ ցեց
ապականէ*։ ³⁴Ձի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։ ³⁵Եղիցին գօտիք
ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալք։ ³⁶Եւ դուք նմանօրք մարդկան՝ որ
ա՛կն ունիցին տեառն իւրեանց՝ թէ ե՛րբ դառնայցէ ՚ի հարսանեաց. զի յորժամ
զայցէ և բախիցէ, վաղվաղակի՛ բանայցեն նմա։ ³⁷Երանի՛ իցէ ծառայիցն

* *Ոմանք.* Ասէ մի ոմն ՚ի ժողո՞ր... գժառանգութիւն։ *Ուր Ոսկան.* Ասէ մի ՚ի ժո՞ր։

* *Ոմանք.* Ձի՞նչ գործեցից՝ զի։

* *Ոմանք.* ՚ի բաց պահանջեցեն. և *ոմանք.* պահանջեն։

* *Ոմանք.* Վասն այսորիկ ասեմ... թէ զի՛նչ ուտիցէ, և։

* *Ոմանք.* Եթէ փոքուն չէք... զի հոգայք։

* *Ոմանք.* Հայեցարուք ՚ի շուշանն։

* *Ոմանք.* Եւ մի՛ զբաղնուցուք։

* *Ոմանք.* Այլ ձեր Հայրն զի՞... այդ ամենայն։

* *Ոսկան յաւելու.* Բայց խնդրեցէք *նախ* զարքայութիւն Աստուծոյ և *զարդարութիւն նորա.*
և այն յա՛ւ։ *Ոմանք յաւելուն.* Եւ այն *ամենայն* յաւել՛։

* *Բազունք.* Չարքայութիւն։

* *Ոմանք.* Քսակ առանց... և ոչ ցեց և ուտիչ ապականեն։

այնոցիկ, զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասե՛ն ձեզ՝ զի գօտի ընդ մէջ
 ածցէ, և բազմեցուցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ՝ զնոսա՝: ³⁸Եւ եթէ յերկրորդ՝
 կամ յերրորդ պահու՛ եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի՛ են ծառայքն այնոցիկ՝:
³⁹Բայց զայն գիտասօ՛իք, եթէ գիտէ՛ր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր
 թոյլ ական հատանել՝ ՚ի տան իւրում՝: ⁴⁰Եւ դուք՝ եղերուք պատրաստք, զի
 յորում ժամու ո՛չ կարծիցէք, գայ՝ Որդի մարդոյ: ⁴¹Ասէ՛ Պե՛տրոս. Տէր՝ առ մե՞զ
 ասացեր զառակո՞ գայո՞ թէ առ ամենեսեան՝: ⁴²Եւ ասէ՛ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ
 տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ՚ի վերայ գերդաստանի իւրոյ տա՛լ ՚ի
 ժամու զկերակուրս՝: ⁴³Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր
 գտանիցէ արարեալ այնպէս: ⁴⁴Արդարև ասե՛ն ձեզ, զի ՚ի վերայ ամենայն ընչից
 իւրոց կացուցէ զնա: ⁴⁵Ապա թէ ասիցէ ծառայն այն ՚ի սրտի իւրում. Յամէ՛ տէր
 իմ ՚ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայսն, ուտել և ըմպել և
 արբենալ՝: ⁴⁶Եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ո՛չ ունիցի, և ՚ի
 ժամու յորում ո՛չ գիտիցէ. ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ
 անհաւատս դիցէ: ⁴⁷Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեսնն իւրոյ՝ և ո՛չ
 պատրաստեսցի ըստ կամաց նորա, արբցէ գան բազում՝: ⁴⁸Եւ որ ոչն գիտիցէ՝ և
 արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակա՛ւ. ամենայն որում շատ տուաւ,
 շա՛տ խնդրեսցի ՚ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել՝ ևս
 պահանջեսցեն ՚ի նմանէ՝: Եդ. ⁴⁹Յո՛ւր եկի արկանել յերկիր. և զի՞նչ. կամիմ թէ
 արդէ՛ն իսկ բորբոքէր: ⁵⁰Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել. և զիա՞րդ, փութամ
 մինչև կատարեսցի՝: ⁵¹Յամարիք եթէ խաղաղութի՞ւն եկի տալ յերկիր, ո՛չ. ասե՛ն
 ձեզ, այլ բաժի՛նս: ⁵²Ձի եղիցին յայսմ հետէ հինգ ՚ի տան միում բաժանեալք,
 երեքն՝ յերկուց, և երկուքն՝ յերից: ⁵³Բաժանեսցի՛ հայր՝ յորդուոյ, և որդի՝ ՚ի հօրէ.
 մայր՝ ՚ի դստերէ, և դուստր՝ ՚ի մօրէ. սկեսուր՝ ՚ի հարսնէ, և հարսն՝ ՚ի սկեսրէ
 իւրմէ: ⁵⁴Ասաց և ցժողովուրդսն. Յորժամ տեսանիցէք անպ ծագեալ յարևմտից,
 իսկոյն ասէք՝ թէ անծրև գայ, և լինի՛ այնպէս. ⁵⁵և յորժամ հարա՛ւ շնչեալ, ասէք
 թէ խորշակ լինի, և լինի՛ այնպէս: ⁵⁶Կե՛ղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք
 փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ո՛չ փորձէք: ⁵⁷Ընդէ՞ր և յանձանց իսկ ո՛չ
 ընտրեսցէք զարժանն՝: ⁵⁸Յորժամ երթայցես ընդ ոսոխի՛ քում առ իշխան, ՚ի
 ճանապարհի՛ տուր զհաշիւն զերժանել ՚ի նմանէ. զի գուցէ քարշիցէ՛ զքեզ առ
 դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի՛, և դահիճն արկանիցէ ՚ի բանտ՝:
⁵⁹Ասե՛ն քեզ, ո՛չ ելանիցես անտի՛ մինչև հատուցանիցես զյետին՝ բնիոնն՝:

* *Ոմանք.* Գտցէ արթուն:

* *Ոմանք.* Եւ գտցէ նոյնպէս, երա՞:

* *Ոսկան յաւելու.* Գող գայ, *հսկէր*, և չտայր թոյլ: *Ոմանք.* Ձտան իւրում:

* *Ոմանք.* Ձառակս զայս, եթէ առ:

* *Ոմանք.* Ձոր կացուցէ տէր իւր... ՚ի ժամու կերակուրս:

* *Ոմանք.* Ապա եթէ ասիցէ ծառայն ՚ի սր՞:

* *Ի լուս՞.* Եւ ո՛չ պատրաստիցի. *համաձայն ոմանց ՚ի բնար՞:* Ուր բազումք դնեն՝

պատրաստեսցէ. *կամ՝* պատրաստիցէ:

* *Բազումք.* Ամենայնի որում շատ: *Ոմանք.* Պահանջեսցի ՚ի նմանէ:

* *Ոմանք.* Ասաց և ցժողովուրդն:

* *Բազումք.* Ոչ ընտրէք զարժանն:

* *Ոմանք.* Առ իշխանն... մատնիցէ զքեզ դահճի:

* *Ոմանք.* Ձյետին բնուոնն:

Գլուխ ԺԳ

ԽԵ ¹Եկին ոմանք ՚ի նմին ժամանակի, և պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պեղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա: ²Պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. Զամարիք եթէ այն Գալիլեացի՞ք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի այնպիսի անցս կրեցին*: ³Ո՛չ. ասե՛ն ձեզ, այլ եթէ ո՛չ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք: ⁴Կամ նոքա ութուտասանքն յորոց վերայ աշտարակն անկաւ ՚ի Սիլովամ, և սպան զնոսա. համարիք թէ նոքա՞ պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են յերուսաղէմ*: ⁵Ո՛չ. ասե՛ն ձեզ, այլ թէ ո՛չ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք: ⁶Ասաց և զառա՛կս զայս. Թզենի՛ մի էր ուրումն տնկեալ յայգոջ իւրում. և եկն խնդրել պտուղ ՚ի նմանէ՝ և ո՛չ եգիտ*: ⁷Ասէ ցայգեգործն. Ահա՛ երեք անք են՝ յորմէ հետէ զամ խնդրել պտուղ ՚ի թզենուջո՞ւ և ո՛չ գտանեն. արդ՞ կտրեա՛ զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ: ⁸Եւ պատասխանի ետ՝ և ասէ. Տէ՛ր, թո՞ղ զդա՛ այս ամ ևս, մինչև շո՛ւրջ զդովաւ բրեցից՝ և արկից աղբ*. ⁹Թերևս արասցէ՛ պտուղ. ապա թէ ո՛չ՝ յամէ՛ ևս հատցես զդա:

ԽԸ եէ. ¹⁰Եւ ուսուցանէ՛ր ՚ի միում ժողովրդանոցացն ՚ի շաբաթս*: ¹¹Եւ ահա կին մի՝ զոր ունէ՛ր այս հիւանդութեան ամս ութուտասն. և էր կարկամեալ, և ո՛չ կարէր ամենևին ՚ի վէ՛ր հայել: ¹²Եւ տեսեալ զնա Յիսուսի, կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա. Կի՛ն դու՛ արձակեալ ես ՚ի հիւանդութենէ քումմէ: ¹³Եւ ե՞դ ՚ի վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և փառաւոր առնէր զԱստուած:

¹⁴Պատասխանի ետ ժողովրդապետն՝ ցասուցեալ թէ ընդէ՞ր ՚ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. Վե՛ց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարո՛ւք, և մի՛ յաւուր շաբաթու*: ¹⁵Պատասխանի ետ նմա Տէ՛ր և ասէ. Կե՛ղծաւորք, իւրաքանչիւրք ՚ի ձէնջ ՚ի շաբաթու՝ ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէ՛ջ ՚ի մարոյ, և տանի տայ ջուր*: ¹⁶Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր՝ զոր կապեաց Սատանայ՝ ահաւասիկ ութուտասն ամ, ո՞չ արժան էր արձակել ՚ի կապանաց անտի ՚ի շաբաթու*: ¹⁷Եւ զայս իբրև ասաց, յամօ՞թ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա. և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ՚ի վերայ ամենայն փառաւորութեանցն՝ որ գործէին ՚ի նմանէ՛:

ԽԹ ¹⁸Եւ ասէր. Ո՛ւմ նման է արքայութիւն Աստուծոյ, և որո՛ւմ նմանութեան նմանեցուցից զնա: ¹⁹Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ արկ ՚ի պարտէզ իւր. աճեաց և եղև ծա՛ռ, և թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա: ²⁰Եւ դարձեալ ասէ. Ո՛ւմ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ. ²¹նման է խմորոյ, զոր առեալ կնոջ թաքոյց յալէ՛ր երից գրուաց՝ մինչև ամենայն

* Ոմանք. եղեն մեղաւոր, զի: *Բազումք*. Ձի զայնպիսի:

* Ոմանք. Անկաւ աշտարակն ՚ի Սելովամ... եթէ նոքա պար՞:

* Ոմանք. Ասաց զառա՛կս... որումն անկեալ... պտուղ ՚ի նմա, և ոչ:

* Ոսկան. Ձդա յայս ամ ևս: *Ոմանք*. Մինչ զդովաւ բրե՞:

* Ոմանք. Ի միում ՚ի ժողովրդանո՞:

* Ոսկան. Եկայք և բժշ՞:

* Օրինակ մի. Նմա Յիսուս և ասէ: *Ոմանք*. Ի մարոյ անտի:

* Ոմանք. Ահաւաղիկ ութուտասն ամ, ո՞չ էր ար՞... անտի ՚ի յաւուր շաբաթու:

* Ոսկան. Եւ զայս իբրև ասէր: *Ոմանք*. Ուրախ լինէին ՚ի վերայ:

խմորեցաւ*:

Ծ եզ. ²²Եւ շրջեր ընդ քաղաքս և ընդ գեղս, ուսուցանէր. և ճանապարհ արարեալ յերուսաղէմ, ²³ասէ ոմն ցնա. Տէր՝ եթէ սակաւք իցեն՝ որ ապրելոց իցեն: Եւ նա ասէ ցնոսա. ²⁴Ջանացարո՛ւք մտանել ընդ դո՛ւռն նեղ. ասե՛ն ձեզ, զի բազումք խնդրեսցեն մտանել՝ և ո՛չ կարացցեն: ²⁵Յորմէ հետէ մտցէ տանուտէրն, և փակեսցէ զդուռնն. և սկսանիցիք կալ արտաքոյ՝ և բախել զդուռնն, և ասել. Տէր Տէր՝ բա՛ց մեզ: Եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. Ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք*:²⁶Յայնժամ սկսանիցիք ասել. Կերա՛ք առաջի քոյ և արբաք, և ՚ի հրապարակս մեր ուսուցեր: ²⁷Եւ ասիցէ. Ասե՛ն ձեզ. Ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք. ՚ի բա՛ց կացէք յինէն ամենայն մշակոյ անիրաւութեան*:²⁸Անդ եղիցի լալ և կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ՝ և զամենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, և զձեզ հանեալ արտաքս: ²⁹Եւ եկեսցեն յարևելից և յարևմտից, և ՚ի հիւսւոյ և ՚ի հարաւոյ, և բազմեսցին յարքայութեան Աստուծոյ: ³⁰Եւ ահա յետինք՝ որ եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք*:

ԾԱ ³¹Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք՝ և ասեն ցնա. Ել և գնա՛ աստի, զի Յերովդէս կամի՛ սպանանել զքեզ*:³²Եւ ասէ ցնոսա. Երթայք ասացէք աղուեստո՛ւն այնմիկ. Ահաւասիկ հանեն դէս՝ և բժշկութիւնս կատարեն այսօր և վաղիւ, և յերիւր աւուր կատարի՛մ*:³³Բայց պարտ է այսօր և վաղիւ և ՚ի միւսո՛ւմ աւուր գնալ. զի ո՛չ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան զերուսաղէմ: ³⁴Երուսաղէմ Երուսաղէմ՝ որ կոտորէիր զմարգարէս, և քարկո՛ծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո, որպէս հա՛ւ զձագս իւր ընդ թևովք, և ո՛չ կամեցարուք: ³⁵Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր: Բայց ասե՛ն ձեզ, եթէ ո՛չ ևս տեսանիցէք զիս, մինչև ասիցէք. Օրհնեալ եկեալն յանուն Տեառն*:

14

Գլուխ ԺԴ

ԾԲ եէ. ¹Եւ եղև ՚ի մտանելն նորա ՚ի տո՛ւն ուրումն իշխանացն փարիսեցւոց ՚ի շաբաթո՛ւ ուտել հաց. և նոքա սպասէին նմա*:²Եւ ահա՛ այր ոմն էր անդ ջրգողեալ առաջի նորա: ³Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցորինաւորսն և ցփարիսեցիսն. եթէ արժա՞ն իցէ ՚ի շաբաթու բժշկել: ⁴Եւ նոքա լո՛ւռ եղեն: Եւ բո՛ւռն հարեալ զնմանէ՛ բժշկեաց զնա, և արձակեաց: ⁵Եւ ասէ ցնոսա. Ո՞ր ուրուք ՚ի ձէնջ է՛շ կամ ե՛զն անկանիցի ՚ի ջրհոր, և ո՛չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: ⁶Եւ ո՛չ կարացին տալ նմա պատասխանի առ այն:

ԾԳ ⁷Ասաց և առ կոչնականսն՝ առա՛կ մի, հայեցեալ թէ զիա՞րդ բարձրնտի՛ր

* *Բազումք*. խմորեցաւ ամենայն:

* *Ոմանք*. Եւ սկսանիցիք կալ:

* *Ոսկան*. Եւ ասիցէ ձեզ. ոչ գի՛: *Բազումք*. Ամենայն մշակքդ անի՛:

* *Բազումք*. Եւ ահա իցեն յետինք:

* *Օրհնակ մի*. Յերովդէս կամի կորուսանել զքեզ:

* *Ոսկան*. Եւ նա ասէ ցնոսա: *Ոմանք*. Աւասիկ հանեն:

* *Ոմանք*. Ոչ ևս տեսանէք զիս... եկեալ անուամբ Տեառն:

* *Ոմանք*. Ի մտանել նրա ՚ի տուն որումն:

լինէին, ասէ ցնոսա*.⁸ Յորժամ կոչիցէ որ զքեզ 'ի հարսանիս՝ կամ 'ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալն 'ի նմանէ*.⁹ և եկեալ՝ որ զքեզն և զնա՛ կոչեաց, ասիցէ ցքեզ. Տո՛ւր սնա տեղի. և ասպա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել: ¹⁰Այլ յորժամ կոչիցիս, երթիջի՛ր՝ բազմիջի՛ր 'ի յետին տեղւոջ. զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ՛ ցքեզ. Բա՛րեկամ 'ի վե՛ր մատիր: Յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց*:¹¹ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի՛. և որ խոնարհեսցուցանէ զանձն՝ բարձրասցի՛: ¹²Ասէ՛ և ցկոչնատերն. Յորժամ առնիցես ճա՛շ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգականս քո, և մի՛ զդրացիս քո, և մի՛ զմեծամեծս. զի մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն*:¹³ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս, և զխեղս, զկահս և զկոյրս*.¹⁴ և երանելի՛ լինիցիս. զի ո՛չ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուցի քեզ փոխարէն 'ի յարութեան արդարոց*:¹⁵ Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝ ասէ ցնա. Երանի՛ որ կերիցէ ճա՛շ յարքայութեան Աստուծոյ*:

ԾՂ ¹⁶Եւ նա ասէ. Այր ոմն գործեաց ընթրիս, և հրաւիրեա՛ց զբազումս*:¹⁷ Եւ առաքեաց զծառայ՝ իւր 'ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ*:¹⁸ Եւ սկսան մի ըստ միոջէ՝ ամենեքեան հրաժարել: Առաջինն ասէ. Ազարակ գնեցի, և հարկ է ելանել տեսանել զնա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ*:¹⁹ Եւ մեւսն ասէ. Լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ*:²⁰ Եւ մեւսն ասէ. Կին ածի, և վասն այնորիկ ո՛չ կարեմ գալ: ²¹Եւ եկեալ ծառայն՝ պատմեաց զայն տեսառն իւրում: Յայնժամ բարկացեալ տանուտէրն, ասէ՛ ցծառայն իւր. Ե՛լ վաղվաղակի 'ի հրապարակս և 'ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս, և զխեղս, և զկահս, և զկոյրս մո՛յժ այսր*:²² Եւ ասէ ծառայն. Տէր՝ եղև՝ զոր հրամայեցերն, և կայ՝ ևս տեղի: ²³Եւ ասէ Տէրն ցծառայն. Ե՛լ 'ի ճանապարհս և 'ի ցանգս, և արա ա՛յսր մտանել, զի լցցի՛ տունս իմ*:²⁴ Ասեմ ձեզ, զի ո՛չ որ յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց: զկ. ²⁵Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք. դարձաւ՝ և ասէ ցնոսա. ²⁶Եթէ որ՝ գայ առ իս, և ո՛չ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս, և զեղբարս և զքորս, նա՛ և զանձն ևս իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել*.²⁷ զի որ ո՛չ բառնայ զխա՛չ իւր՝ և

* *Ոմանք.* Ասէ և առ կոչնականսն ա՛... և ասէ ցնոսա:

* *Ոմանք.* Իցէ կոչեցեալ 'ի նմանէ:

* *Ոմանք.* Բազմեսջիր յետին տեղւոջն... ասիցէ քեզ... եղիցի քեզ փառք:

* *Ոմանք.* Զմեծամեծս քո:

* *Ոմանք.* Եւ զկահս և զկոյրս:

* *Ոմանք.* Եւ երանելի լիցիս զի ոչ ունիցին փո՛... և լինիցի քեզ փոխարէն 'ի յա՛: *Ուր օրհնակ մի.* Փոխարէն հատուցանել քեզ. և հատուցից քեզ 'ի յարքայութեանն արդարոց:

* *Ոմանք.* Մի ոմն 'ի բազ՛... երանի իցէ որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ:

* *Ոմանք.* Եւ նա ասէ ցնա:

* *Ոմանք.* Զծառայս իւր 'ի ժա՛... կոչեաց զհրա՛: ըստ միոջէ հրաժ՛:

* *Ոմանք.* Ամենեքին մի ըստ միոջէ հրաժ՛: *Ոսկան.* Ելանել և տեսանել:

* *Օրհնակ մի.* Եւ երկորդն ասէ. Լուծս: *Ոմանք.* Երթամ փորձել զնա. ա՛:

* *Ոսկան.* Պատմեաց զամենայն տեսառն իւր՛:

* *Բազումք.* Եւ 'ի ցանկս:

* *Ոմանք.* Եւ զկին իւր, և զոր՛:

գայ զկնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել:

ԾԵ ²⁸Ո՞վ որ ՚ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, և ո՛չ նախ նստեալ համարիցի՝ զծախսն՝ եթէ ունիցի բաւական ՚ի կատարումն*։ ²⁹Ձի գուցէ իբրև արկանիցէ հիմն և ո՛չ կարիցէ կատարել, ամենեքին որ տեսանիցեն՝ սկսանիցին ծաղր առնել զնա՝ ³⁰և ասել. թէ այս այր սկսաւ շինել և ո՛չ կարաց կատարել*։ ³¹Կամ ո՞ր թագաւոր՝ երթեալ տայցէ պատերազմ ընդ այլո՛ւմ թագաւորի. և ո՛չ նստեալ նախ խորհիցի, եթէ կարօ՞ղ իցէ տասն հազարաւ զդէ՛ն ունել զայնորիկ որ գայցէ ՚ի վերայ նորա քսան հազարաւ*։ ³²Ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն՝ առաքեալ՝ աղաչեսցէ՝ ՚ի խաղաղութիւն։ ³³Արդ՝ այսպէս ամենայն որ ՚ի ձէնջ, որ ո՛չ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել։ ³⁴Բարութք է աղ. ապա թէ աղն անհամեսցի, ի՞նչ համեսնեսցի*։ ³⁵Ո՛չ յերկիր՝ և ո՛չ յաղբ է՝ պիտանացու, այլ ընկենո՛ւլ զնա արտաքս։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:

15

Գլուխ ԺԵ

¹Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ՚ի նմանէ։ ²Տրտնջէին փարիսեցիքն և դպիրք՝ և ասէին. Ընդէ՞ր սա՛ զմեղաւորս ընդունի՝ և ուտէ՛ ընդ նոսա:

ԾԶ ³Ասաց առ նոսա զառա՛կս գայս։ ⁴Ո՞վ որ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարելո ռչխար, և կորուսանիցէ մի ՚ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսո՛ւն և զինն յանապատի, և երթիցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ զնա*։ ⁵Եւ իբրև գտանէ՛ դնէ՛ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց խնդալով, ⁶և երթայ ՚ի տուն. կոչէ զբարեկամս և զղրացիս՝ և ասէ ցնոսա. Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի՛ զոչխարս իմ զկորուսեալ*։ ⁷Ասե՛մ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննսո՛ւն և ինն արդարոյ՝ որոց չիցէ՛ պիտոյ ապաշխարութիւն*։ ⁸Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. և եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանէ ճրագ, և ածիցէ աւել ՚ի տան, և խնդրիցէ՛ ստեալ մինչև գտանիցէ*։ ⁹Եւ իբրև գտանէ, կոչէ՛ զբարեկամս և զղրացիս՝ և ասէ. Ուրախ լերուք ընդ իս, զի գտի՛ զդրամն իմ զոր կորուսի*։ ¹⁰Այնպէս՝ ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ՝ ՚ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ*։

* *Յօրինակին պակասէր.* Եւ ոչ նախ նստեալ: *Ոմանք.* Համարեսցի զծախսն... առ ՚ի կատարումն:

* *Ոմանք.* Եւ ոչ կարասցէ կա՛... ամենեքեան որ:

* *Ոմանք.* Եթէ այրս այս սկ՛:

* *Ոմանք.* Երթեալ տացէ... և ոչ նախ նստեալ:

* *Ոմանք.* Ապա եթէ աղն:

* *Յօրինակին պակասէր.* Ով որ իցէ: *Ուր ոմանք.* Ո՛ր որ ՚ի ձէնջ մարդ... և կորուսանիցի մի ՚ի... զիննսուն և... և երթայցէ զհետ:

* *Ոմանք.* Ուրախ լերուք ընդ իս, քանզի գտի զոչխարն զիմ զկորուսեալ:

* *Ոմանք.* Արդարոց, որոց չիցէ:

* *Բազումք.* Ո՞չ լուցանիցէ ճրագ:

* *Ոմանք.* Ուրախ եղերուք ընդ:

* *Ոմանք.* Այսպէս ասեմ ձեզ:

Ծե 11Եւ ասէ. Ա՛նն միոջ էին երկու՛ որդիք. 12ասէ կրտսերն՝ ՚ի նոցանէ ցհայրն. Յայր՝ տուր ինձ բաժին որ անկանի յընչիցոյ: Եւ նա՛ բաժանեաց նոցա զկեանսն*: 13Եւ յետ ո՛չ բազում ատուրց՝ ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ զնաց յաշխարհի հեռի. և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ*: 14Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև տո՛վ սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսա՛ւ ինքն չքաւորել: 15Եւ զնացեալ յարեցա՛ւ ՚ի մի՛ ոմն քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարա՛կ իւր՝ արածել խոզս*: 16Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ո՛չ ոք տայր նմա*: 17Եւ եկեալ ՚ի միտս իւր՝ ասէ. Քանի՞ վարձկանք իցեն ՚ի տան հօ՛ր իմոյ հացալիցք, և ես աստ՝ սովամահ կորնչիմ*. 18Եւ յարուցեալ զնացից առ հայր իմ, և ասացի՛ց ցնա. Յայր՝ մեղայ՛ յերկինս՝ և առաջի քոյ*, 19և ո՛չ ևս եմ արժանի կոչել որդի քո. արա՛՛ զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց: 20Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչ դեռ հեռագոյն էր, ետես՛ս զնա հայրն՝ և գթացա՛ւ. յարեալ և ընթացա՛ւ ընդ առաջ, անկա՛ւ զպարանոցաւն նորա, և համբուրեաց զնա*: 21Եւ ասէ ցնա որդին. Յայր՝ մեղայ՛ յերկինս՝ և առաջի քոյ, և ո՛չ ևս եմ արժանի կոչել որդի քո*: 22Ասէ հայրն ցճառայսն իւր. Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին, և ազուցէ՛ք նմա, և տուր զմատանին ՚ի ձեռն նորա, և կօշիկս յո՛տս նորա*. 23և աճէ՛ք զեզն պարարակ, զենէ՛ք կերիցուրք և ուրախ լիցուրք*. 24զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտա՛ւ. և սկսան ուրախ լինել*: 25Եւ է՛ր երէց որդի նորա յագարակի. և մինչ դեռ գայր՝ և մերձ եղև ՚ի տունն, լուա՛ւ զձայն երգոց և զպարուց. 26և կոչեցեալ առ ինքն զմի ՚ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ այն*: 27Եւ նա՛ ասէ ցնա. Ձի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: 28Բարկացաւ՝ և ո՛չ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: 29Պատասխանի՛ ետ՝ և ասէ ցհայրն. Այս քանի ամբ են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանա՛ւ քով ո՛չ անցի. ո՛ւլ մի երբէք ո՛չ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկանս իմ*: 30Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկէր զկեանս քո ընդ պոռնիկս, զենէր դմա զեզն պարարակ*: 31Եւ ասէ ցնա. Որդեակ, դու հանապա՛զ ընդ իս ես, և ամենայն որ ինչ ի՛մ է՝ քո՛ է. 32այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս՝ մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ, և գտաւ*:

* Ոմանք. Ասէ կրտսերն... որ ինչ անկանի յընչիցոյ:

* Ոմանք. Կրտսերոյն որդւոյն. կամ՝ կրտսեր որդւոյն... զի կայր անա՞:

* Ոմանք. ՚ի մի ոմն ՚ի քաղաքացւոց:

* Ոմանք. Յեղջիւրէն զոր:

* Յոմանս պակասի. Եւ եկեալ ՚ի միտս... վարձկանք են ՚ի տան:

* Ոմանք. Առ հայրն իմ:

* Ոմանք. Անկեալ զպարանո՞:

* Բազուկք. Առաջի քո, ոչ ևս եմ:

* Ոմանք. Եւ ազուցէք դմա:

* Ոսկան. Եւ զենէք:

* Ոմանք. Եւ եկաց:

* Ոմանք. Եւ կոչեաց առ ինքն... և հարցանէր թէ:

* Յօրհնակին. Այսքանի ամբ են: Ոմանք. Ձի ծառայեցի քեզ... ուրախ եղայց ընդ:

* Ոսկան. Եւ յորժամ եկն: Ոմանք. Ձեզն պարարա՞կն:

* Ոմանք. Պարտ է, զի եղբայրս քո այս... կորուսեալ էր՝ և գտաւ:

Գլուխ ԺԶ

ԾԸ զբ. ¹Եւ ասէ առ աշակերտսն. Այր մի էր մեծատուն, որոյ էր՝ տնտէս. և եղև զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ՝ զինչս նորա*։ ²Կոչեաց՝ և ասէ ցնա. Զի՞նչ է այս զոր լսենս զքէն, տուր զհամար տնտեսութեան քոյ, զի ո՛չ ևս կարես լինել տնտես։ ³Ասէ՝ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ՝ զտնտեսութիւնս. գործել՝ ո՛չ կարեմ. մուրանալ՝ ամաչեմ*։ ⁴Գիտեմ զինչ արարից. զի յորժամ ՚ի բաց լինիցիմ ՚ի տնտեսութենէս, ընկալցիմ զիս ՚ի տունս իւրեանց*։ ⁵Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ՝ ՚ի պարտապանաց տեա՛ռն իւրոյ. ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեա՛ռն իմում*։ ⁶Եւ նա ասէ. Զարեւր մար ձիթոյ։ Ասէ ցնա. Կա՛ զգիր քո, և նիստ գրեա վաղվաղակի յիսուն։ ⁷Դարձեալ՝ ասէ ցնեսն. Դու՛ քանի՞ ինչ պարտիս։ Եւ նա ասէ. Զարեւր քո ցորենոյ։ Եւ ասէ ցնա. Կա՛ զգիր քո՝ և նիստ գրեա ութսուն*։ ⁸Եւ զովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յա՛զգս իւրեանց։ ⁹Եւ էս ձեզ ասեմ. Արարէ՛ք ձեզ բարեկանս ՚ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ՛ այն, ընկալցիմ զձեզ ՚ի յարկսն յաւիտեանականս*։ ¹⁰Որ ՚ի փոքուն հաւատարիմ է, և ՚ի բազմին հաւատարիմ է. և որ ՚ի փոքուն՝ անիրաւ, և ՚ի բազմին անիրաւ է*։ ¹¹Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մամոնային չեղէ՛ք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ՝ ո՞ հաւատասցէ։ ¹²Եւ եթէ յօտարին չեղէ՛ք հաւատարիմք, զձերն՝ ո՞ տայցէ ձեզ*։ ¹³Ո՛չ որ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին՝ ատիցէ, զմեսն սիրէ՛. կամ զմին՝ մեծարիցէ, և զմեսն արհամարհիցէ՛. ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի*։ ¹⁴Իբրև լսին զայս ամենայն փարիսեցիքն՝ քանզի արծաթաէրք էին, անկոսնէին զնա*։ ¹⁵Եւ ասէ ցնոսա. Դուք՝ որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ՛ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պի՛ղծ է առաջի Աստուծոյ*։ ¹⁶Օրէնքն և մարգարէք մինչև ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ աւետարանի, և ամենայն որ զնա բռնաբարէ*։ ¹⁷Դիւրին իցէ երկնից և երկրի անցանել, քան յօրինացն միոյ՝ նշանախեցի անկանել։ ¹⁸Ամենայն որ արձակէ զկին իւր, և առնէ այլ՝ շնայ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

ԾԹ ¹⁹Այր ոմն էր մեծատուն, և ազանէր բեհէզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս։ ²⁰Եւ աղքատ ոմն անուն Դա՛զարոս, անկեալ դներ առ դրան նորա վիրաւորեալ. ²¹և ցանկայր լնուլ զորովայն իւր ՚ի փշրանացն՝ որ

* Օրինակ մի ընդ Ոսկանայ. Եւ ասէր առ աշա՛:

* Ոմանք. ՚ի բաց լինիմ ՚ի տնտէ՛:

* Ոմանք. Եւ ասէ ցառաջինն:

* Ոմանք. Գրեա՛ վաղվաղակի ութսուն:

* Ոմանք. Պակասեցէ այն... զձեզ յարկսն:

* Ոմանք. ՚ի փոքուն անիրաւ է:

* Բազումք. Ո՞ տայցէ ձեզ:

* Ոմանք յաւելուն. Ո՛չ որ ծառայ կարէ... զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ:

* Ոմանք. Եւ անգոսնէին զնա:

* Ոմանք. Դուք էք որ արդա՛... զանձինս ձեր առաջի:

* Ոսկան. Արքայութիւն Աստուծոյ բռնաբարի, և ամենայն որ: Օրինակ մի. Յայնմ հետէ տեսանիցէք զարքայութիւն Աստուծոյ աւետարանեալ, և ամենայն որ:

անկանէին 'ի սեղանոյ մեծատանն. այլ և շո՛ւնք ևս՝ գային և լիզուին զվէրս նորա*։ ²²Եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակացն զնա 'ի գո՛գ Աբրահամու. մեռա՛ւ և մեծատունն՝ և թաղեցաւ*։ ²³Եւ 'ի դժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր. ետե՛ս զԱբրահամ 'ի հեռաստանէ, և զՂազարոս 'ի գո՛գ նորա հանգուցեալ*։ ²⁴Եւ նա՝ աղաղակեաց և ասէ. Յայր Աբրահամ՝ ողորմեաց ինձ, և առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զժագ մատին իւրոյ 'ի ջուր, և զովացուցցէ՛ զլեզու ինձ, զի պապակի՛մ 'ի տապոյ աստի։ ²⁵Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ՝ յիշեա՛ զի ընկալա՛ր անդէն զբարիս քո 'ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ՝ սա աստ մխիթարի, և դու այդդ՝ պապակի՛ս*։ ²⁶Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մե՛ծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի՝ առ ձեզ անցանել, ո՛չ կարեն. և ո՛չ այտի որ՝ առ մեզ անցանել։ ²⁷Եւ ասէ. Արդ աղաչեմ զքեզ հայր, զի արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ. ²⁸Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն. զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց*։ ²⁹Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէ՛ս և զմարգարէսն, նոցա լուիցեն*։ ³⁰Եւ նա՛ ասէ. Ո՛չ՝ հայր Աբրահամ, բայց թէ 'ի մեռելոց որ երթիցէ առ նոսա, և ապաշխարիցեն*։ ³¹Եւ ասէ ցնա. Եթէ Մովսիսի և մարգարեիցն ո՛չ լսեն, և ո՛չ թէ 'ի մեռելոց որ յառնիցէ՛ հաւանեսցին*։

17

Գլուխ ԺԷ

զգ. ¹Ասաց և առ աշակերտսն իւր. Ո՛չ է մարթ չգալ՝ գայթաղութեան. բայց վայ այնմիկ է՝ յոր ձեռն գայցէ։ ²Լա՛ւ էր նմա՝ թէ վէ՛մ երկանաքար կախէր զպարանոցէ նորա, և անկանէր 'ի ծո՛վ, քան թէ գայթաղեցուցանիցէ զմի որ 'ի փոքրկանցս յայսցանէ*։ ³Զգո՛յշ կացէք անձանց. եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա՛ նմա. և եթէ ապաշխարիցէ, թո՛ղ նմա*։ ⁴Եւ եթէ եւթն անգամ մեղիցէ քեզ, և եւթն անգամ դարձցի 'ի քեզ և ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա։ ⁵Եւ ասեն առաքեալքն ցՏէր. Յաւել մեզ հաւատու։ ⁶Եւ ասէ՛ Տէր. Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, և ասիցէք թրթենուոյս այսմիկ. Խլեաց և տնկեաց 'ի ծովու, և հնազանդեսցի՛ ձեզ։ ⁷Իսկ ո՞վ որ 'ի ձէնջ որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրև մտանիցէ՛ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց բազմեաց*։ ⁸Այլ ո՛չ ասիցէ ցնա, թէ պատրաստեա՛ զինչ ընթրելոց իցեն, և զօտի ածեալ պաշտեա՛ զիս՝ մինչև կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես դու։ ⁹Սիթէ շնո՞րի ունիցի ծառային այնմիկ, զի արար զամենայն

* *Ոմանք.* Եւ ցանկայր յագել 'ի փշրանացն՝ որ։ *Ի լուս՝.* Եւ լեզոյին։
 * *Ոմանք.* Եւ եղև մեռանել... և տանել զնա հրեշտակաց 'ի գոգն Աբ*։
 * *Ոմանք.* Եւ զՂազար 'ի գոգ նորա։
 * *Ոմանք.* Անդրէն 'ի կեանսն քո։
 * *Ոմանք.* Տացէ նոցա վկայ... յայսմ տեղի։
 * *Ոմանք.* Եւ զմարգարէս։
 * *Ոմանք.* Բայց եթէ 'ի մե՛... և ապաշխարեսցեն։
 * *Ոմանք.* Ոչ լուիցեն... որ յառնիցէ՛ հաւատասցեն։
 * *Ոմանք.* Կախեալ էր զպարանոցէ նորա, և անկեալ 'ի ծով քան թէ գայթաղեցուցանէ։
 * *Ոսկան.* Մեղիցէ քեզ եղբայր քո։
 * *Ոմանք.* Իսկ ո՞վ է 'ի ձէնջ։

է, անդր և արծուի՞ք ժողովեցիցն:

18

Գլուխ ԺԸ

ԿԱ զԵ. ¹Ասաց և առա՛կ մի նոցա, առ այն՝ թէ պարտ է յամենայն ժամ կա՛լ նոցա յաղօթս՝ և մի՛ ձանձրանալ: ²Ասէ. Դատաւոր մի էր՝ ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ո՛չ երկնչէր՝ և ՚ի մարդկանէ ո՛չ ամաչէր: ³Եւ այրի՛ մի էր ՚ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր. Դատ արա ինձ յոսոյսէ իմնէ: ⁴Եւ ո՛չ կամէր ՚ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ՛ ՚ի մտի իւրում, թէ և յԱստուծոյ ո՛չ երկնչիմ, և ՚ի մարդկանէ ո՛չ ամաչեմ՝, ⁵Գոնէ՛ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարի՛ց նմա դատ, զի մի՛ ՚ի սպառ եկեալ թախանձիցէ՛ զիս՝: ⁶Եւ ասէ Տէր. Լուարո՞ւք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր՝: ⁷Իսկ Աստուած՝ ո՛չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայի՛ց իւրոց, որ աղաղակե՛ն առ նա ՚ի տուէ՛ և ՚ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա՛: ⁸Այո՛ ասե՛ն ձեզ. զի արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ, գտանիցէ՛ արդեւք հաւատս յերկրի:

ԿԲ ⁹Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զբազումս, զառա՛կս զայս: ¹⁰Ա՛րք երկո՛ւ ելին ՚ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՛ և մեւսն մաքսաւոր: ¹¹Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձին աղօթս մատուցանէր. Աստուած իմ՝ զոհանամ զքէն. զի ո՛չ եմ իբրև զայլս ՚ի մարդկանէ, զյափշտակօղս՝ և զանիրաւս՝ և զշո՛ւնս, կամ իբրև զայս մաքսաւոր՝: ¹²Այլ պահեմ երկի՛ցս ՚ի շաբաթու, և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: ¹³Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և ո՛չ կամէր՝ և ո՛չ զաչս ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկո՛ւրծս իւր՝ և ասէր. Աստուած՝ քաւեա՛ զիս զմեղաւորս՝: ¹⁴Ասե՛ն ձեզ. էջ սա արդարացեալ՝ ՚ի տո՛ւն իւր քան զնա: Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեցի՛. և որ խոնարհեցուցանէ՛ զանձն՝ բարձրացի՛: զգ. ¹⁵Մատուցանէին առ նա և մանկտի՛ զի մերձեմայցէ՛ ՚ի նոսա. իբրև տեսին աշակերտքն՝ սաստէին նոցա՛: ¹⁶Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գա՛լ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացո՛ւ է արքայութիւն Աստուծոյ՝: ¹⁷Ամէն ասե՛ն ձեզ. Որ ո՛չ ընդունիցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ, ո՛չ մտցէ ՚ի նա՛:

ԿԳ ¹⁸Եւ եհարց զնա ո՛մն իշխան՝ և ասէ. Վարդապետ բարի՛ զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից՝: ¹⁹Ասէ ցնա Յիսուս. Զի՞ ասես զիս բարի. չի՞ք ոք բարի, բայց մի Աստուած, Դայր՝: ²⁰Զպատուիրանս զիտես. Մի՛

* Ոմանք. Յետ այսորիկ ասէ ՚ի:

* Ոմանք. Գոնեա վասն աշխատ... արարից նմա դատաստան զի... թախանձեցէ զիս:

* Բազունք հրամայականին շեշտիւ ունին. Լուարո՞ւք զինչ:

* Ոմանք. Ո՛չ արասցէ վրէժխնդ՛:

* Ոմանք. Եւ զայս առանձինն:

* Ոմանք. Եւ չկամէր և ոչ զաչսն:

* Ոմանք. Առ նա մանկտի՛ զի մերձեմայցէ:

* Ոմանք. Կոչեաց զնոսա:

* Ոմանք. Որ ոչ ընկալցի զար՛:

* Ոմանք. Եւ եհարց ցնա ոմն իշ՛:

* Սակաւ. օրինակք յաւելուն և աստանօր համաձայն մերումս. Մի Աստուած, Դայր:

շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր, Պատուեա՛ զհայր քո և զմայր: ²¹Եւ նա՛ ասէ. Ջայդ ամենայն պահեցի՛ ՚ի մանկութենէ իմն: ²²Իբրև լուա՛ւ զայն Յիսուս, ասէ ցնա. Մեւս ևս պակաս է քեզ. զամենայն ինչ զոր ունիս վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գա՛նձ յերկինս. և ե՛կ զկնի իմ՛: ²³Նա՛ իբրև լուաւ զայս, տրտմեցա՛ւ. քանզի էր մեծատուն յոյժ՛: ²⁴Իբրև ետես զնա Յիսուս տրտմեալ, ասէ. Ո՞րպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ՛: ²⁵Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծա՛կ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: ²⁶Եւ որ լուանն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ապրել: ²⁷Եւ նա ասէ. Անհնարի՛նք առ ՚ի մարդկանէ, հնարաւորք են յԱստուծոյ՛: ²⁸Եւ ասէ Պե՛տրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր, և եկա՛ք զկնի քո: ²⁹Եւ նա՛ ասէ ցնոսա. Ամէն ասե՛մ ձեզ. եթէ ո՛չ որ է՝ որ եթող զտունս, կամ զծնօղս, կամ զեղբարս, կամ զկին, կամ զորդիս՝ վասն արքայութեան Աստուծոյ՛, ³⁰եթէ ո՛չ առնուցու բազմապատիկ ՚ի ժամանակի յայսմիկ. և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանսն յաւիտեանականս ժառանգեսցէ՛: ³¹Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ՛ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ. և կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ: ³²Ձի մատնեսցի հեթանոսաց, և կատակեսցի՛. ³³և հարկանիցեն, և սպանանիցեն զնա. և յերիւր աւուր յարիցէ՛: ³⁴Եւ նոքա՛ ո՛չինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ՚ի նոցանէ, և ո՛չ գիտէին զասացեալն՛: ³⁵Եւ եղև ՚ի մօտելն նորա յերիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: ³⁶Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն: ³⁷Եւ պատմեցին նմա՛ թէ Յիսո՛ւս Նազովրեցի անցանէ: ³⁸Աղաղակեաց և ասէ. Յիսուս որդի՛ Դաւթի՛ ողորմեաց ինձ՛: ³⁹Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ՛. և նա՛ ևս առաւել աղաղակէր. Որդի՛ Դաւթի՛ ողորմեաց ինձ: ⁴⁰Չտեղի՛ առ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ. ⁴¹Ձի՞նչ կամիս դու՛ զի արարից քեզ: Եւ նա ասէ. Տէր զի բացցին աչք իմ և տեսի՛ց: ⁴²Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ: ⁴³Եւ առժամայն ետես, և երթայր զհե՛տ նորա՛ և փառաւոր առնէր զԱստուած. և ամենայն ժողովրդեանն տեսեալ, տայր օրհնութիւն Աստուծոյ:

19

Գլուխ ԺԹ

Կէ ¹Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: ²Եւ ահա՛ այր մի անուն կոչեցեալ Ջակքէ՛ոս.

Որպէս ՚ի Մարկ. Ժ 18:

* *Ոմանք.* Լուաւ զայս Յիսուս... մի ևս պակաս: *Բազունք.* Գանձս յերկինս:

* *Ոմանք.* Ձի էր մեծատուն:

* *Ոսկան.* Ո՞րպէս դժուարին է որք ինչս:

* *Ոմանք.* Անհնարինք ՚ի մարդկա՛... են Աստուծոյ:

* *Ոմանք.* Եթող զտուն:

* *Ոմանք.* Բազմապատիկ և ՚ի ժամանակի:

* *Ոսկան յաւելու.* Եւ կատակեսցի, և հարկանիցի և թքանիցի: *Եւ իբրև (33)

հարկանիցեն:

* *Ոմանք.* Չասացեալսն:

* *Ոմանք.* Աղաղակէր և ասէր. Յիսուս:

և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն*.³ և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս, և ո՞չ կարէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ: ⁴Եւ ընթացեալ յառաջս, ել ՚ի ժանտաթզենին զի տեսանիցէ՛ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր: ⁵Իբրև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. Չակրթ փութա՛ւ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ազանել: ⁶Փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ: ⁷Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ անն մեղաւորի ենուտ լուծանել*:⁸ Եկն՝ եկաց Չակրթնս՝ և ասէ ցՏէր. Տէր՝ ահա զկէս ընչից իմոց տա՛ց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին*:⁹ Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա՛ որդի Աբրահամո՛ւ էր*:¹⁰ Զի եկն Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն: ¹¹Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել՝ առակ մի՝ և ասէ, վասն մերձենալոյ նորա յերուսաղէմ, և համարելոյ նոցա թէ առժամայն յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ*:

ԿԶ ¹²Ասէ՛. Այր ոմն՝ ազնուական զնաց յաշխարհի հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն. և դառնալ*:

ԿԷ ¹³Եւ կոչեցեալ զժառայս իւր՝ ետ նոցա տանն մնաս, և ասէ ցնոսա. Յարգեցէք զայդ՝ մինչև եկի՛ց: ¹⁴Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նորա՝ և ասեն, թէ ո՛չ կամիմք թագաւորել դնա ՚ի վերայ մեր*:¹⁵ Եւ եղև դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն. և կոչեալ զժառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ՛ թէ ո՛ զինչ շահեցաւ*:¹⁶ Եկն առաջինն և ասէ. Տէր, մնասն քո՛ տանն մնաս արար: ¹⁷Եւ ասէ ցնա. Ազնի՛ւ ծառայ և բարի, զի ՚ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջի՛ր իշխանութիւն ունել ՚ի վերայ տանն քաղաքի: ¹⁸Եկն երկրորդն՝ և ասէ. Մնասն քո՛ արար հինգ մնաս: ¹⁹Ասէ ցնա. Եւ դո՛ւ լիջիր ՚ի վերայ հինգ քաղաքաց*:²⁰ Եկն մեւսն և ասէ. Տէր՝ ահա մնասն քո զոր ունէի, ծրարեալ ՚ի վարշամակի. ²¹երկնչէի ՚ի քէն, զի այր ստամբալ ես. բառնաս՝ զոր ո՛չ եղիր, և հնձես՝ զոր ո՛չ սերմանեցեր: ²²Եւ ասէ ցնա. Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. զիտէիր թէ ես այր մի ստամբալ եմ, բառնամ զոր ո՛չ եղի, և հնձեմ՝ ուր ո՛չ սերմանեցի*.²³ Եւ ընդէ՛ր ո՛չ ետուր զարծաթն իմ ՚ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի*:²⁴ Եւ ասէ ցսպասաւորսն. Առէք ՚ի դմանէ զմնասն, և տարայք տուք այնմ՝ որ ունիցի զտանն մնասն: ²⁵Եւ ասեն ցնա. Տէր՝ ունի՛ տասն մնաս: ²⁶Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի՝ տացի՛. և յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ*:²⁷ Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ո՛չն կամէին զիս թագաւորել ՚ի վերայ նոցա, աձէք այսր, և սպանէք առաջի իմ: ²⁸Եւ իբրև զայս ասաց, զնաց

* Ոմանք. Չաքէնս: Ոմանք. Եւ ինքն էր մեծատուն:

* Ոմանք. Տեսին զնա ամենեքեան:

* Ոմանք. Չաքէնս:

* Ոմանք. Աբրահամու է:

* Ոմանք. Եւ մինչդեռ նոքա զայս խօսէին, յաւել... մերձանալոյ... յայտնելոց իցէ արքայութիւնն Աստուծոյ:

* Ոմանք. Առնել իւր թագաւորութիւն:

* Ոմանք. Եւ քաղաքացիքն որ ատէին զնա՝ առա՛:

* Ոմանք. Ի դառնալն նմա... և կոչել զժառայսն որոց:

* Ոմանք. Ասէ և ցնա. Եւ դու:

* Ոմանք. Չոր ոչ սերմանեցի:

* Ոմանք. Չարծաթդ իմ ՚ի սե՛... և ես եկեալ տոկոսիւք պա՛:

* Ոմանք. Թէ ամենայն որ ունիցի:

յառաջ՝ ելանել յերուսաղէմ:

ԿԸ էկ. ²⁹Եւ եղև իբրև մերձեցաւ ՚ի Բեթփագէ և ՚ի Բեթանիա մօտ ՚ի լեառնն որ կոչի Չիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ և ասէ. ³⁰Երթայք դուք ՚ի գեղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբրև մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ո՛ք ՚ի մարդկանէ երբէք ո՛չ նստաւ. լուծէք զնա և ածէք*։ ³¹Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ եթէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասասցիք ցնա, թէ Տեա՛ռն իւրում պիտոյ է*։ ³²Իբրև չոգան որ առաքեցանն, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն: ³³Եւ մինչ դեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնոսա. Ձի՞ լուծանէք զյաւանակդ: ³⁴Եւ նոքա ասեն. Տեա՛ռն իւրում պիտոյ է: ³⁵Եւ ածին զնա առ Յիսուս, և արկին զնովաւ զհանդերձս, և հեծուցին զՅիսուս*։ ³⁶Եւ մինչ դեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն*։ ³⁷Եւ իբրև այն ինչ՝ մերձ եղև ՚ի զառ ՚ի վայր լերինն Չիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած ՚ի ձայն մեծ՝ վասն ամենայն եղելոց զօրութեանցն զոր տեսին*, ³⁸և ասէին. Օրհնեա՛լ որ գայ թագաւորդ յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս, և փառք ՚ի բարձունս: ³⁹Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն յամբոխէ անտի՛ ասեն ցնա. Վա՛րդապետ՝ սաստեա՛ աշակերտացդ քոց: ⁴⁰Պատասխանի ետ՝ և ասէ. Ասե՛ն ձեզ՝ զի և թէ դոքա՛ լռեսցեն՝ քարի՛նքդ աղաղակեսցեն*։ ⁴¹Եւ իբրև մերձեցաւ, տեսեալ զքաղաքն ելաց ՚ի վերայ նորա, և ասէ. ⁴²Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց այժմ ծածկեցա՛ւ յերեսաց քոց: ⁴³Ձի եկեսցեն աւուրք ՚ի վերայ քո, և պատեսցեն զքե՛ն թշնամիք քո պատնէշ. և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց. ⁴⁴և յատակեսցեն զքեզ, և զորդի՛ս քո ՚ի քեզ. և ո՛չ թողուցուն քար ՚ի վերայ քարի յամենայն ՚ի քեզ. փոխանակ զի ո՛չ ծանեար զժամանակ այցելութեան քոյ*։ ⁴⁵Եւ մտեալ ՚ի տաճարն սկսաւ հանել զաղանէվաճառն, և զգնօղս. և զսեղանս հատավաճառացն ցրուեաց: ⁴⁶Եւ ասէ ցնոսա. Գրեալ է. Եւ եղիցի տուն իմ տուն աղօթից, և դուք արարէք զդա՛ այրս աւազակաց*։ ⁴⁷Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ՚ի տաճարին. իսկ քահանայապետքն և դպի՛րք՝ և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել, ⁴⁸և ո՛չ գտանէին թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ամենայն կախեալ կային զնմանէ ՚ի լսել*։

20

Գլուխ Ի

ԿԹ էք. ¹Եւ եղև ՚ի մի՞ում աւուրցն յայնցանէ, մինչ դեռ ուսուցանէր զժողովուրդն ՚ի տաճարի անդ՝ և աւետարանէր, հասին ՚ի վերայ

* *Ոմանք.* Երթայք ՚ի գեաւղն:

* *Ոմանք.* Ասասցիք նոցա:

* *Ոմանք.* Եւ ածեն զնա առ.. զնովաւ հանդերձս:

* *Ոմանք.* Տարածանէին զճանապարհայն:

* *Ոմանք.* Մերձ եղև զառ ՚ի վայր:

* *Ոմանք.* Պատասխանի ետ Յիսուս և ասէ: *Ոսկան.* Ձի եթէ դոքա լը՞:

* *Բազումք.* Քար ՚ի քարի վերայ յամենայնի ՚ի քեզ:

* *Ոմանք.* Գրեալ է. Եղիցի... և դուք զդա արա՞:

* *Ոմանք.* Եւ ոչ գիտէին թէ զինչ ա՞: *Յօրինակին պակասէր.* Չնմանէ ՚ի լսել:

քահանայապետքն և դպիրք ծերովքն հանդերձ*, ²և ասեն ցնա. Ասա՛ մեզ՝ որո՞վ իշխանութեամբ զործես դու զայդ, կամ ո՞վ է որ ետ քեզ զայդ իշխանութիւն*:
³Պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. Հարցից և ես ցձեզ բան մի, և ասացէ՛ք ինձ*:
⁴Սկրտութիւնն Յովհաննու՝ յերկնի՞ց էր եթէ՛ ՚ի մարդկանէ: ⁵Եւ նոքա խորհեցան ՚ի միտս իւրեանց՝ և ասեն*.
⁶Եթէ ասեմք յերկնից, ասէ. Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք ՚ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկո՛ծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ՚ի միտս զՅովհաննէ թէ մարգարէ՛ է*:
⁷Եւ պատասխանի ետուն՝ չգիտել թէ ուստի իցէ*:
⁸Եւ Յիսուս ասէ ցնոսա. Եւ ո՛չ ե՛ս ասեմ ձեզ, որո՞վ իշխանութեամբ առնեն զայս:

Հ էգ. ⁹Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառա՛կս զայս. Այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն զնաց ճանապարհ ժամանակս բազումս: ¹⁰Եւ ՚ի ժամու՝ առաքեաց առ մշակսն ծառայ, զի ՚ի պտղոյ՛ այգւոյն տացեն նմա. և մշակքն զան հարին զնա՝ և արձակեցին ունայն*:
¹¹Եւ յաւել՛ մեւս ևս ծառայ յղել. նոքա՝ և զնա՝ ևս զան հարին, անարգեցին, և առաքեցին ունայն*:
¹²Եւ յաւել՛ զերրորդն առաքել. նոքա՝ և զնա՛ վիրաւորեցին, և հանին արտաքս: ¹³Ասէ տէր այգւոյն. Ձի՞նչ արարից, առաքեցից զորդի իմ սիրելի, թերևս ՚ի սմանէ պատկառեսցեն: ¹⁴Իբրև տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս՝ և ասեն. Սա՛ է ժառանգն, սպանցու՛ք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն*:
¹⁵Եւ հանին զնա արտաքս քան զայգին՝ և սպանին: Արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն*.
¹⁶Ո՛չ ապաքէն զայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, և տայցէ զայգին՝ այլոց: Իբրև լուան՝ ասեն. Քա՛ւ մի՛ լիցի*:
¹⁷Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. Իսկ զի՞նչ իցէ այն որ գրեալն է՝ եթէ վէ՛մն զոր անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ անկեան*:
¹⁸Ամենայն՝ որ ընդհարցի ընդ վէ՛մս ընդ այս, խորտակեսցի, և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ՛ զնա*:
¹⁹Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու, և երկեան ՚ի ժողովրդենէն. զի գիտէին՝ թէ առ նոսա՛ ասաց զառակն զայն*:

ՀԱ էդ. ²⁰Եւ ապա սպասեցին, և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս՝ զանձինս առ արդարս ունել. զի ըմբռնեսցեն զնա բանիւք, առ ՚ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին: ²¹Հարցին ցնա՝ և ասեն. Վարդապետ՝ զիտեմք եթէ ուղիղ խօսիս և ուսուցանես, և ո՛չ առնուս ակն. այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես*.
²²Արժա՞ն է մեզ՝ կայսեր հարկս տալ՝ թէ ո՛չ: ²³Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա՝ ասէ

* Ոմանք. ՚ի տաճարին և աւետա՛:

* Ոմանք. Իշխանութեամբ առնես դու զայդ, կամ ո՞ է որ ետ:

* Ոմանք. Եւ ես ձեզ. կամ՝ զձեզ բան մի:

* Ոմանք. Եւ նոքա խորհէին ՚ի միտս իւրեանց՝ և ասէին:

* Ոմանք. Հաստատեալ էր ՚ի:

* Ոմանք. Թէ ուստի է:

* Ոմանք. Տայցեն նմա:

* Ոմանք. Նոքա և զայն ևս... և անարգեցին:

* Օրինակ մի. խորհեցան ընդ միտս իւրեանց և ասեն... զի մեր լիցի:

* Ոմանք. Արտաքոյ քան զայ՛:

* Ոմանք. Եւ կորուսցէ... և տացէ զայգին:

* Ոմանք. Թէ զվէ՛մն զոր:

* Ոմանք. Եւ յոր վերայ անկցի:

* Ոմանք. Ձի գիտացին թէ առ:

* Ոսկան. Գիտեմք զի ուղիղ:

ցնոսա. ²⁴Ցուցէ՛ք ինձ գրահեկանն: Եւ նորա՝ ցուցին. և ասէ. Ձո՞յր պատկեր և զգիր ունի: Պատասխանի ետուն՝ և ասեն. Չկայսեր՝: ²⁵Եւ նա՝ ասէ ցնոսա. Արդ՝ երթա՛յք տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: ²⁶Եւ ո՛չ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն. և զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին՝:

ՀԲ էե. ²⁷Մատուցեալ ոմանք՝ ՚ի սադուկեցոցն, որք հակառակէին չլինել յարութեան, հարցին ցնա՝ ²⁸և ասեն. Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ. Եթէ ուրուք եղբայր մեռանիցի՝ որոյ իցէ կին, և նա անորդի՝ իցէ, զի ամուսնու եղբայր նորա զկինն, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում՝: ²⁹Արդ՝ եւթն եղբարք էին. և առաջնոյն առեալ կին, մեռաւ անորդի՞: ³⁰Ա՛ռ զնա և երկրորդն, մեռաւ և նա՝ անորդի՞: ³¹Ա՛ռ զնա և երրորդն, նոյնպէս և իւթանեքին, և ո՛չ թողին որդիս՝: ³²Մեռաւ և կինն՝: ³³Արդ՝ ՚ի յարութեանն ո՞ւմ ՚ի նոցանէ լինիցի կին. զի իւթանեքին կալան զնա կին՝: ³⁴Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն՝ և արանց լինին. ³⁵Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել, և յարութեանն որ ՚ի մեռելոց՝ ո՛չ կանայս առնեն, և ո՛չ արանց լինին՝: ³⁶Քանզի և ո՛չ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Աստուծոյ. քանզի յարութեան որդիք են: ³⁷Այլ զի յառնեն մեռեալք, և Մովսէս գուշակեաց ՚ի մորենուոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու, և զԱստուծոյ Սահակայ, և զԱստուծոյ Յակովբայ: ³⁸Եւ Աստուած չէ՛ մեռելոց՝ այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են: ³⁹Պատասխանի՛ ետուն նմա ոմանք ՚ի դպրացն՝ և ասեն. Վարդապետ՝ բարու՛ք ասացեր: ⁴⁰Եւ ո՛չ ևս որ իշխեր հարցանել զնա՝ և ո՛չինչ՝:

ՀԳ էզ. ⁴¹Ասէ և առ նոսա. Չիա՞րդ ասեն զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւիթ. ⁴²և ինքն Դաւիթ ասէ ՚ի գիրս Սաղմոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ՛, ⁴³մինչև եդից զքշնամիս քո պատուանդան ոտից քոց: ⁴⁴Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ: ⁴⁵Եւ լո՛ւ ՚ի լո՛ւ ամենայն ժողովրդեանն, ասէ ցաշակերտսն. ⁴⁶զգո՛յշ լերուք ՚ի դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, և սիրեն ողջոյնս ՚ի հրապարակս, և զնախաթո՛ռս ՚ի ժողովուրդս, և զբարձրերէցս յընթրիս՝: ⁴⁷Որ ուտեն՝ զտունս այրեաց, և պատճառանօք յերկարեն զաղօթս. նորա՝ ընկալցին աւելի՛ դատաստանս՝:

21

* Ոմանք. Ձո՞յր զպատկեր:

* Ոմանք. Ընդ պատասխանիս նորա:

* Ոմանք. Չլինել յարութիւն:

* Ոմանք. Որ ունիցի կին, և նա:

* Ոմանք. Եւ առաջինն առեալ:

* Ոմանք. Ա՛ռ զնոյն և երկ՛:

* Ոմանք. Նոյնպէս և եւթանեքին:

* Ոսկան յաւելու. *Յետ ամենեցուն՝ մեռաւ և կինն:

* Ոմանք. Չի եւթանեքին կա՛:

* Ոմանք. Յարութեանն ՚ի մեռելոց:

* Ոմանք. Եւ ոչ որ ևս:

* Բազումք. Չի ինքն Դաւիթ ասէ:

* Ոմանք. Չողջոյնս ՚ի հրա՛... և զբարձրերէցս յընթրիս:

* Ոմանք. Աւելի դատաստան:

Գլուխ ԻԱ

ՉԴ ¹Եւ հայեցեալ՝ ետե՛ս զմեծատունսն որ արկանէին զտուրս իւրեանց՝ ՚ի գանձանակն: ²Ետե՛ս և զկին ոմն այրի՛ աղքատ, որ արկ անդր երկուս լումայս՝: ³Եւ ասէ. Արդարև ասե՛մ ձեզ. զի այրի՛ն այն աղքատ՝ աւելի՛ արկ քան զամենեսին: ⁴Ամենեքին նոքա՝ ՚ի մթերի՛ց իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ. բայց նա ՚ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր՝ զոր ունէր արկ՝: Էէ. ⁵Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ. ⁶Չայդ ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ո՛չ թողցի այդր քա՛ր ՚ի քարի՛ վերայ, որ ոչ քակտեսցի՝:

ՉԵ ⁷Չարցին ցնա և ասեն. Վարդապետ՝ ե՞րբ լինիցի այդ, և զի՞նչ նշան իցէ՛ յորժամ այդ լինելոց իցէ: ⁸Եւ նա՛ ասէ. Չգո՛յշ կացէք. մի՛ խաբիցիք. զի բազո՛ւնք գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ ե՛ս եմ. և մերձեցա՛ւ ժամանակ. մի՛ երթայցէք զկնի նորա՝: ⁹Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի՛ զարհուրիցիք, զի պարտ է նախ՝ այնմ լինել, այլ ո՛չ առժամայնն կատարած՝: ¹⁰Յայնժամ ասէ ցնոսա. Յարիցէ ազգ յազգի՛ վերայ, և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ՝. ¹¹և շարժունք մեծամեծք. և ՚ի տեղիս տեղիս սուվ և սրածութիւնք. եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից՝: ¹²Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց ՚ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն ՚ի ժողովուրդս և ՚ի բանտս, և տանիցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ՝. ¹³և լինիցի ձեզ այն ՚ի վկայութիւն՝: ¹⁴Արդ՝ դի՛ք ՚ի սիրտս ձեր, մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: ¹⁵Ձի ե՛ս տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ո՛չ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր՝: ¹⁶Սատնեսջի՛ք և ՚ի ծնողաց, և յեղբարց, և յազգականաց և ՚ի բարեկամաց, և սպանանիցեն ՚ի ձեմք. ¹⁷և եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. ¹⁸և մա՛զ մի ՚ի գլխոյ ձերմէ՝ ո՛չ կորիցէ՛. ¹⁹և համբերութեամբ՝ ձերով ստասջիք զոգիս ձեր: ²⁰Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զերուսաղէմ, յայնժամ գիտասջի՛ք թէ մերձ է օր նորա՝: ²¹Յայնժամ որ ՚ի Չրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս, և որ ՚ի միջի նորա իցեն՝ խուսեսցեն, և որ ՚ի գաւառսն իցեն՝ մի՛ մտցեն ՚ի նա՛: ²²Ձի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ, առ ՚ի կատարելոյ ամենայն գրելոց: ²³Բայց վայ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնա՛պ մեծ՝ ՚ի վերայ երկրի, և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ: ²⁴Եւ անկցին ՚ի սու՛ր սուսերի, և գերեսցին յամենայն հեթանոսաց. և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց, մինչև

* *Ոմանք.* Անդ երկուս լու՛:

* *Յօրինակին պակասէր.* ՚ի կարօտութենէ *իւրմէ*:

* *Ոսկան.* Այդ ամենայն զոր տեսա՛:

* *Ոմանք.* Եւ ասացեն թէ ես: *Բազունք.* Մի՛ երթայցէք զկնի նոցա:

* *Ոմանք.* Առ ժամայն կատարած:

* *Ոմանք.* ՚ի յազգի վերայ:

* *Ոմանք.* Եւ եղիցին արհա՛... մեծամեծք յերկինս:

* *Ոսկան.* Եւ մատնեսցեն ՚ի: *Ոմանք.* Եւ տանիցեն առաջի:

* *Ոմանք.* Եւ լինիցի ՚ի ձեզ այն ՚ի վկ՛:

* *Ոմանք.* Ոչ կարասցեն կալ:

* *Ոմանք.* ՚ի գլխոյ ձերոյ:

* *Բազունք.* Թէ մերձ է աւեր նորա:

* *Ոմանք.* Նորա իցեն խուսեսցին:

կատարեսցին ժամանակք հեթանոսաց*։²⁵ Եւ եղիցին նշանք յարեգակն և ՚ի լուսին և յաստեղս. և յերկրի տագնապ հեթանոսաց՝ ՚ի յահեղ բարբառոյ իբրև ծովու և խռովութեան*։²⁶ Եւ անելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ՝ և ՚ի կարծեաց եկելոց ՚ի վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին։²⁷ Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ՝ ամպովք զօրութեամբ և փառօք բազմօք։²⁸ Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք և բարձրացուցիք զգլուխս ձեր. զի մե՛րձ է փրկութիւն ձեր։²⁹ Եւ ասա՛ց առակ մի նոցա. Տեսանիցէք զթզենիդ, և զամենայն ծառ*։³⁰ Եւ յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝ և ՚ի նոցանէ ճանաչէք եթէ մե՛րձ է ամառն*։³¹ Եւ յայնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, զիտասցիք թէ մե՛րձ է արքայութիւն Աստուծոյ։³² Ամէն ասե՛ն ձեզ. թէ ո՛չ անցցէ ազգս այս, մինչև ամենայն այս լինիցի*։³³ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ո՛չ անցանիցեն։³⁴ Զգո՛յշ լերուք անձանց, զուցէ՛ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգուովք աշխարհականօք, և յանկարծակի՝ հասանիցէ ՚ի վերայ ձեր օրն այն*։³⁵ Զի իբրև զորոգայթ հասանիցէ ՚ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։³⁶ Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերժանել յայն ամենայնէ որ լինելոց է, և կա՛լ առաջի Որդւոյ մարդոյ*։³⁷ Եւ ՚ի տուէ ՚ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ազանէ՛ր ՚ի լերինն՝ որ կոչէր Զիթենեաց։³⁸ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ՚ի տաճարն լսել ՚ի նմանէ*։ Վջ

22

Գլուխ ԻԲ

ԶԶ¹ Մերձեցա՛ւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր Պանքա*։² Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ ո՛րպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ՚ի ժողովրդենն անտի։³ Ապա եմուտ Սատանայ՝ ՚ի Յուդա ՚ի կոչեցեալն Իսկարիոփտացի, որ էր ՚ի թուոյ երկոտասանիցն։⁴ Զոգա՛ւ եդ բանս ընդ քահանայապետսն՝ և ընդ դպիրս, և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ՛ զնա նոցա*։⁵ Եւ խնդացին, և խոստացան տա՛լ նմա արծաթ. ⁶ և յանձն առ՝ և խնդրէր պարա՛պ մատնել զնա նոցա՝ մեկուսի՝ յամբոխէն*։⁷ Ե՛կն օր բաղարջակերացն, յորում օրէ՛ն էր զենուլ զպասեքն։⁸ Եւ առաքեա՛ց զՊետրոս, և զՅովհաննէս՝ և ասէ. Երթայք պատրաստեցէ՛ք մեզ զպասեքն զի կերիցուք։⁹ Եւ նոքա ասեն. Ո՞ր կամիս զի պատրաստեսցուք։¹⁰ Եւ ասէ ցնոսա. Ահա՛ իբրև մտանիցէք ՚ի քաղաքն, պատահեսցէ՛ ձեզ այր մի բարձեալ սափո՛ր ջրոյ.

* *Ոմանք.* Յամենայն հեթանոսս... կոխան ազգաց։
 * *Ոմանք.* Եւ եղիցի նշան... յահեղ բարբառոյ։
 * *Ոմանք.* Տեսանէք. *կամ՝* տեսէք զթզենիդ և զամենայն ծառս։
 * *Ոմանք.* Զպտուղս իւրեանց։
 * *Բազուկք.* Մինչև այս ամենայն։ *Ոմանք.* Ամենայն եղիցի։
 * *Բազուկք.* Եւ հոգովք. *կամ՝* հոգաւք։
 * *Ոմանք.* Եւ յամենայն ժամ աղ՛... արժանի լինիցիք... յամենայնէ որ լինելոց է։
 * *Ոմանք.* Ընդ առաւօտն առ նա։
 * *Ոմանք.* Որ կոչէր Պասէք։
 * *Ոմանք.* Զոգաւ ետ բանս։
 * *Ոմանք.* Յամբոխէ անտի։

երթիջի՞ք զհետ նորա՝ ի տո՛ւնն յոր մտանիցե՛ք*։ ¹¹Եւ ասասցի՞ք ցտանուտէ՛ր տանն. Վարդապետ ասէ քեզ. Ո՞ւր են վանքն իմ, յորում զպասե՛քն ուտիցեն աշակերտօքս հանդերձ։ ¹²Եւ նա ցուցցէ՛ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսցի՞ք*։ ¹³Եւ գնացեալ գտին՝ որպէս և ասացն նոցա և պատրաստեցին զպասե՛քն։ ¹⁴Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցա՛ւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։ ¹⁵Եւ ասէ ցնոսա. Ցանկալո՛վ ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչև չարչարեալ իցեն*։ ¹⁶Բայց ասե՛ն ձեզ, թէ ո՛չ ևս կերայց՝ ի սմանէ, մինչև լցցի՛ յարքայութեան Աստուծոյ։ ¹⁷Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացա՛ւ և ասէ. Առէ՛ք զայդ՝ և բաժանեցէ՛ք ՚ի ձեզ։ ¹⁸Ասե՛ն ձեզ, թէ յայսմ հետէ՛ ո՛չ արբից ՚ի բերոյ որթոյ, մինչև եկեսցէ արքայութիւն Աստուծոյ*։ ¹⁹Եւ առեալ հաց, գոհացա՛ւ, եբե՛կ և ետ նոցա՝ և ասէ. Այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասցի՞ք առ իմոյ յիշատակի*։ ²⁰Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեա՛ցն առ՝ և ասէ. Այս բաժակ է նոր ուխտ՝ իմով արեամբ վասն ձեր հեղելոյ*։ ²¹Բայց ա՛ւասիկ՝ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ՚ի սեղանս։ ²²Եւ Որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ՝, բայց՝ վայ՛ մարդոյն այնմիկ յոյր ձեռն մատնիցի*։ ²³Եւ նոքա՝ սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ՚ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ*։

Դէ ²⁴Եղև՝ և հակառակութիւն ՚ի մէջ նոցա, թէ ո՞վ ՚ի նոցանէ համարիցի մեծ*։ ²⁵Եւ նա՝ ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն՝ նոցա, և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչին. ²⁶այլ դուք՝ ո՛չ այնպէս. այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև զսպասաւորն։ ²⁷Ո՞վ է մեծ, բազմեա՞լն՝ եթէ սպասաւորն. ո՞չ ապաքեն՝ բազմեա՞լն. բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրև զսպասաւոր*։ ²⁸Եւ դուք էք՝ որ ցանգ կայի՞ք ընդ իս ՚ի փորձութիւնս իմ. ²⁹և ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Զայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն*։ ³⁰զի ուտիցէք և ընպիցէք ՚ի սեղան իմ յարքայութեանն իմում. և նստիցի՞ք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայէլի*։

ԴԸ ³¹Եւ ասէ Տէր. Սիմովն Սիմովն, ահա՛ Սատանայ խնդրեաց զքեզ խարբալել իբրև զգորեան*։ ³²այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցեն հաւատք քո. և դու երբեմն դարձցիս՝ և հաստատեսցես զեղբարս քո*։ ³³Եւ նա՝ ասէ ցնա. Տէր՝ ընդ քեզ պատրաստ եմ և ՚ի բանտ և ՚ի մահ երթալ։ ³⁴Եւ նա՝ ասէ ցնա. Ասե՛ն քեզ Պետրէ՛ չիցէ՛ այսօր հաւու խօսեալ, մինչև երիցս ուրացիս զիս չգիտել*։ ³⁵Եւ ասէ ցնոսա. Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և կօշկաց, միթէ՛

* *Ոմանք.* Իբրև մտանէք ՚ի քաղաք... յոր մտանիցեն:

* *Ոմանք.* Ձարդարեալ. անդ:

* *Ոմանք.* Ցանկանալով ցանկա՛:

* *Ոմանք.* Ձի յայսմ հետէ ոչ:

* *Ոմանք.* Եբեկ ետ նոցա:

* *Ոմանք.* Բաժակ նոր ուխտ... վասն ձեր հեղելոյ. *կամ՝* հեղելով:

* *Ոմանք.* Մատնեցի:

* *Ոմանք.* Թէ ո՞ է:

* *Ոմանք.* Եւ եղև հակառակութիւն. *կամ՝* և եղև և հակա՛... թէ ո՞ ՚ի նոցանէ:

* *Ոմանք.* Այլ ես եմ ՚ի միջի... իբրև սպասաւոր:

* *Ոմանք.* Ինձ զարքայութիւնն:

* *Օրինակ մի.* Ի սեղան հօր իմ յարքայութեան ի՛... և նստիջիք:

* *Ոմանք.* Խնդրեաց զձեզ խար՛:

* *Ոմանք.* Աղաչեցից վասն քո: *Ուր օրինակ մի.* Վասն քո զԶայր, զի մի՛:

* *Ոմանք.* Մինչ երիցս ուր՛:

կարօտացա՞յք իմիք*։ ³⁶Եւ նոքա ասեն. Եւ ո՛չ իմիք։ Ապա՝ ասէ. Այլ այժմ որ ունի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախա՛ղ. և որ ոչ ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր՝ և գնեսցէ իւր սուսե՛ր*։ ³⁷Բայց ասեն՝ ձեզ. զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է՝ զի կատարեսցի՛ յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է*։ ³⁸Եւ նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ են աստ երկո՛ւ սուրբ։ Եւ նա ասէ ցնոսա. Բաւական են։ ³⁹Եւ ելեալ գնա՛ց ըստ սովորութեանն՝ ՚ի լեառն Չիթենեաց. գնացին զհետ նորա և աշակերտքն։ ⁴⁰Իբրև եհաս ՚ի տեղին՝ ասէ ցնոսա. Յաղօթս կացէք չմտանել՝ ՚ի փորձութիւն։ ⁴¹Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրև քարընկէց մի, ե՛ր ծունը՝ կայր յաղօթս, ⁴²և ասէր. Չայր՝ եթէ կամիս՝ անցո՛՛ գրաժակս զայս յինէն. բայց ո՛չ իմ կամք՝ այլ քո՛յդ լիցին*։ ⁴³Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր ՚ի տազնապի՛, և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս*։ ⁴⁴Եւ հոսէին ՚ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ ՚ի յերկիր*։ ⁴⁵Եւ յարուցեալ յաղօթիցն, եկն առ աշակերտսն՝ եգիտ զնոսա ՚ի քո՛ւն ՚ի տրտմութենէն*։ ⁴⁶և ասէ ցնոսա. Չի՞ մնջէք, արի՛ք կացէք յաղօթս՝ զի մի՛ մտամիցէք ՚ի փորձութիւն։ ⁴⁷Եւ մինչ դեռ խօսէր, ահաւասիկ ամբո՛խ. և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր նոցա։ Իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա. թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա՛ է, զնա՛ ունիցիք։ ⁴⁸Ասէ ցնա Յիսուս. Յուդա՛՛ համբուրելո՞վ մատնես զՈրդի Աստուծոյ*։ ⁴⁹Իբրև տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ եղևն, ասեն ցնա. Տէր՝ հարցուք զնոսա սրով*։ ⁵⁰Եւ եհար մի ոմն ՚ի նոցանէ զբահանայապետին ծառայ, և ՚ի բաց եհան զաջոյ ունկն նորա։ ⁵¹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Թո՛յլ տուր մինչև ցայդ վայր։ Եւ մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա*։ ⁵²Եւ ասէ ցեկեալսն ՚ի վերայ նորա ցրահանայապետսն, և ցիշխանս տաճարին և ցժերսն. Իբրև ՚ի վերայ աւազակի՞՞ ելէք սուսերօք և բրօք*։ ⁵³Չանապազ ընդ ձե՛զ էի ՚ի տաճարին, և ո՛չ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, և իշխանութիւն խաւարի*։ ⁵⁴Եւ կալեալ զնա՝ ածին և մուծին ՚ի տուն քահանայապետին. և Պե՛տրոս երթայր զկնի նորա հեռագոյն։ ⁵⁵Իբրև լուցին կրակ ՚ի մէջ գաւթին՝ և նստան շուրջ, նստաւ և Պե՛տրոս ՚ի մէջ

* *Ոմանք.* Կարօտեցայք իմիք։

* *Ոմանք.* Որ ունիցի քսակ... և որ ոչ ունի։

* *Ոմանք.* Ձոր գրեալ է։

* *Ոմանք.* Այլ քոյդ լիցի։

* *Ոմանք յօրինակաց ՚ի սպառ զանց առնեն զայս երկու համարս.* *Եւ երևեցաւ նմա հրեշ... (44) Եւ հոսէին ՚ի նմանէ քր՝...: Եւ այլ ոմանք՝ զառաջին համարն միայն դնեն, և զերկրորդին զանց առնեն։ Իսկ օրինակ մի այսպէս ունի. Եւ զօրութեամբ և մտադիւրութեամբ ևս կայր յա՛: Եւ զանց առնէ՛ ոլոռն ոլոռն հեղեալ ՚ի յերկիր։ Ուր մերս համաձայն բազմաց ունէր զերկոսին ևս ամբողջ. որպէս և եղաք։

* *Ոմանք.* Չեղեալ յերկիր։

* *Ոմանք.* Եւ եգիտ զնոսա ՚ի։

* *Միայն օրինակս մեր ընդ այլ միում ունի՝* Մատնես զՈրդի Աստուծոյ. ուր այլք ամենեքին դնեն զՈրդի մարդոյ. ըստ որում և ՚ի լուսանց մերումս նշանակի։

* *Ոմանք.* Չարցուք զսոսա սրով։

* *Բազումք.* Թոյլ տուր մինչև։ *Օրինակ մի.* Եւ մատեաւ ա՛ն զունկն նորա. և եղ անդէն ՚ի տեղուջ իւրում։ Եւ մատուցեալ յունկն բժշկ՛։

* *Ոմանք.* Եւ ցժերս։

* *Ոմանք.* Յիս ձեռս։

նոցա*։ ⁵⁶Ետես զնա աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն. հայեցաւ ընդ նա՝ և ասէ. Եւ սա՛ ընդ նոսա էր որ ընդ նմայն էին։ ⁵⁷Իսկ Պե՛տրոս ուրացաւ և ասէ. Ո՛չ զհտեմ զնա կի՛ն դու։ ⁵⁸Եւ յետ սակաւ միոյ՝ այլ ոմն ետես զնա՝ և ասէ. Եւ դո՛ւ ՚ի նոցանէ ես։ Եւ Պե՛տրոս ասէ. Այր դու՛ չե՛մ ՚ի նոցանէ։ ⁵⁹Եւ իբրև ժամ մի անց ՚ի վերայ, այլ ոմն վիճէր և ասէր. Ստո՛յգ և սա ընդ նմա էր, քանզի Գալիլեացի՛ է։ ⁶⁰Ասէ Պե՛տրոս. Այր դու՛ չգիտե՛մ զի՛նչ խօսիսդ։ Եւ առժամայն մինչդեռ նա զայն ասէր, խօսեցաւ հաւ։ ⁶¹Դարձաւ Տէր՝ և հայեցաւ ՚ի Պե՛տրոս. և յիշեաց Պե՛տրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա. Մինչչև՛ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս՝ չգիտել զիս։ ⁶²Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս։ ⁶³Եւ արքն, որ պահէին զնա. այլն առնէին զնովաւ, և հարկանէին։ ⁶⁴Ծածկէին զերեսս նորա՝ և տանջէին. և հարցանէին ցնա՝ և ասէին. Մարգարեաց՝ ո՞վ է որ եհարն զքեզ*։ ⁶⁵Եւ այլ բազում ինչ հայիոյութեամբ խօսէին ՚ի նա*։ ⁶⁶Եւ իբրև այգ եղև, ժողովեցաւ ծերակոյտ ժողովորդեանն՝ քահանայապետքն և դպիրք, և հանին ածին զնա յատեանն իւրեանց՝ և ասեն. Եթէ դու ես Քրիստոսն, ասա՛ մեզ*։ ⁶⁷Ասէ ցնոսա. Թէ ասացից ձեզ, սակայն ո՛չ հաւատայք. ⁶⁸և եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք ինձ պատասխանի՝ կան արձակիցէք*։ ⁶⁹Բայց յայսմ հետէ նստցի՛ Որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ։ ⁷⁰Եւ ասեն ամենեքեան. Ուրեմն դո՛ւ ես Որդին Աստուծոյ։ Եւ նա՝ ասէ ցնոսա. Դուք ասէք թէ ես եմ*։ ⁷¹Եւ նոքա ասեն. Ձի՞նչ ևս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք ՚ի բերանոյ դորա*։

23

Գլուխ ԻԳ

¹Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ Պեղատոս։ ²Եւ սկսան չարախօս լինել զնմանէ՝ և ասել. Գտաք զսա զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր ՚ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ՝ թէ Քրիստոսն իցէ թագաւոր*։ ³Իսկ Պեղատոս եհարց զնա՝ և ասէ. Դո՞ւ ես թագաւորն Յրէից։ Նա՛ պատասխանի՛ ետ նմա և ասէ. Դո՛ւ ասացեր*։ ⁴Ասէ Պեղատոս ցքահանայապետսն և ցժողովորդսն. Չգտանե՛մ ինչ վնաս յայսմիկ։ ⁵Եւ նոքա պնդէին, և ասէին, թէ խռովէ՛ զժողովորդս, ուսուցանէ՛ ընդ ամենայն Յրէաստան՝ սկսեալ ՚ի Գալիլեէ մինչև ցայսր։ ⁶Իսկ Պեղատոս իբրև լուաւ զԳալիլեէ, եհարց եթէ Գալիլեացի՛ է այրն*։ ⁷Եւ իբրև գիտաց թէ յիշխանութենէ Յերովդի է, ետ տանել զնա առ Յերովդէս. քանզի և նա՛ յերուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ*։ ⁸Եւ Յերովդէս իբրև ետես զՅիսուս, ուրախ եղև յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, և

* Ոմանք. Եւ իբրև լուցին։

* Ոմանք. Եւ հարցանէին զնա։

* Ոմանք. Եւ այլ ինչ բազում։

* Ոմանք. Ժողովեցան ծերա՛... և ասէին եթէ դու ես։

* Ոմանք. Ինչ ցձեզ, չտայք։

* Ոմանք. Դուք ասացէք թէ ես։

* Ոմանք. Պիտոյ են մեզ վկայութիւն։

* Ոմանք. Չարախօսել զնմանէ՛ և։

* Ոմանք. Թագաւոր Յրէից։

* Ոմանք. Գալիլեացի իցէ այրն։

* Ոմանք. Ձի և նա յերուսաղէմ։

ակն ունէր նշան ինչ լիեալ տեսանել ՚ի նմանէ: ⁹Չարցանէր զնա բանիւք բազմօք, և նա՛ ո՛չ ինչ ետ նմա պատասխանի՞: ¹⁰Կայի՛ն քահանայապետքն և դպիրք՝ և պնդագոյնս չարախօսէին զնմանէ՞:

ՅԹ ¹¹Արհամարհեաց զնա և Յերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն. և այսպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, և ետ տանել անդրէն առ Պեղատոս՞: ¹²Եւ եղեն բարեկամք Պեղատոս և Յերովդէս յաւուր յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց՞: ¹³Կոչեաց Պեղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն, ¹⁴և ասէ ցնոսա. Ածէք մատուցէք ինձ զայրս զայս իբրև զխտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ առաջի ձե՛ր դատեցայ, և վնաս ինչ՝ ո՛չ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարախօսեցէքդ զդմանէ՞: ¹⁵Այլ և ո՛չ Յերովդէս, քանզի ետու՛ տանել զդա առ նա. և արդ՝ ոչ ինչ մահու արժանի է գործեալ դորա. ¹⁶Խրատեցից զդա, և արծակեցից՞: ¹⁷Ձի հարկ էր մի մի ըստ տօնի արծակել նոցա՞: ¹⁸Եւ նոքա՝ աղաղակէին ամենայն բազմութեամբն՝ և ասէին. Բարձ զդա, և արծակեա՛ մեզ զԲարաբբա, ¹⁹որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ՚ի քաղաքին և սպանութեան մտեալ ՚ի բանտ: ²⁰Դարծեալ Պեղատոս սկսաւ խօսել, քանզի կամեր արծակել զՅիսուս: ²¹Եւ նոքա՝ անդրէն աղաղակէին և ասէին. Ի՛ խաչ հան զդա՞: ²²Եւ նա՝ երիցս ասէ ցնոսա. Չի՞նչ չար արար սա. ո՛չ ինչ վնաս մահու գտի ՚ի սմա. խրատեցից զսա և արծակեցից՞: ²³Եւ նոքա ստիպէին մեծածայն և խնդրէին զնա՝ ՚ի խաչ հանել. և զօրանայի՛ն բարբառքն նոցա և քահանայապետիցն՞: ²⁴Եւ Պեղատոս հաւանեցաւ՝ առնել զհայցուածս նոցա: ²⁵Արծակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր ՚ի բանտ, զոր և խնդրէին ն իսկ. և զՅիսուս մատնեաց կամացն նոցա՞: ²⁶Իբրև առին զնացին զնա, ըմբռնեցին զոմն Սիմովն Կիւրենացի՝ որ զայր յանդէ. եղին ՚ի վերայ նորա զխաչն՝ բերել զկնի Յիսուսի: ²⁷Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա:

Ձ ²⁸Դարծաւ Յիսուս և ասէ՛ ցնոսա. Դստերք Երուսաղէմի՝ մի՛ լայք ՚ի վերայ իմ, այլ լացէք ՚ի վերայ անձանց և ՚ի վերայ որդւոց ձերոց: ²⁹Ձի եկեցցեն աւուրք յորս ասիցեն, թէ երանի՛ անլոց և որովայնից՝ որ ո՛չ ծնան, և ստեանց՝ որ ո՛չ դիեցուցին: ³⁰Յայնժամ սկսանիցին ասել լերանց՝ թէ անկերուք ՚ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ: ³¹Ձի եթէ ընդ փայտ դալար՝ զայս առնեն, ընդ չորն՝ զի՞նչ լինիցի: ³²Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա: ³³Իբրև չոգան ՚ի տեղին՝ կոչեցեալ Գազաթն, անդ հանին զնա ՚ի խաչ, և զչարագործսն՝ զոմն ընդ աջմէ՛ և զոմն ընդ ձախմէ՛ խաչեցին՞: ³⁴Եւ Յիսուս ասէ. Չայր՝ թո՛ղ դոցա՝ զի ո՛չ գիտեն զինչ գործեն: Եւ ՚ի բաժանել զհանդերձս նորա, արկին

* *Ոմանք.* Եւ նա ինչ ո՛չ ետ նմա:

* *Ոմանք.* Եւ պնդագոյն չա՞:

* *Ոմանք.* Յանդերձ սպիտակ:

* *Ոմանք.* Յառաջն թշնամիք:

* *Ոմանք.* Ձորոյ դուք չարախօսէքդ:

* *Ոմանք.* Ըստ տօնին արծա՞:

* *Ոմանք.* Եւ նոքա անդէն աղա՞:

* *Ոմանք.* Ձի՛նչ ինչ չար արար... մահու գտի ՚ի սա:

* *Ոմանք.* Բարբառք նոցա:

* *Ոմանք.* Որ վասն խռովութեան:

* *Ոմանք.* Ի՛ տեղին անուանեալ Գազաթն. և *ոմանք.* Կոչեցեալն Գազաթն:

վիճակս*³⁵ և կայր ժողովուրդն հայեցեալ: Անգոսնէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին. Չայլս ապրեցոյց, ապրեցուցէ՛ և զանձն՝ եթէ դա՛ է Քրիստոս Որդի Աստուծոյ ընտրեալն*³⁶ Այլն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ*³⁷ և ասէին. Եթէ դու ես թագաւորն Յրէից՝ փրկեա՛ զանձն քո*³⁸ Եւ էր գի՛ր գրեալ՝ ՚ի վերայ նորա, Յունարէն և Դաղմատերէն և Եբրայեցերէն գրով, թէ՛ Սա՛ է արքայն Յրէից*³⁹ Իսկ մի ոմն՝ ՚ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա՝ և ասէր. Ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա՛ զանձն քո և զմեզ:

ՉԱ՛⁴⁰ Պատասխանի՛ ետ ընկերն սաստելո՛վ նմա և ասէ. Չերկնչի՞ս դու յԱստուծոյ՝ զի ՚ի նմին պատժի կաս*⁴¹ Եւ մեք՝ յիրաւի՛, զի արժանի՛ որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա՛ ապիրատ ինչ՝ ո՛չ գործեաց: ⁴²Եւ ասէ ցՅիսուս. Յիշեա՛ զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով*⁴³ Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ. այսօր ընդ ՚իս իցես ՚ի դրախտին: ⁴⁴Եւ էր իբրև վեցերորդ ժամ. և խաւար եղև ՚ի վերայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամն. խաւարեցա՛ւ արեգակն*⁴⁵ Եւ հերձա՛ւ վարագոյր տաճարին ընդ մէջ: ⁴⁶Եւ կարդաց Յիսուս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. Հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Չայս իբրև ասաց՝ եհան զոգի*⁴⁷ Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ եղևն, փառաւոր արար զԱստուած՝ և ասէ. Արդարև՝ այրս այս՝ արդար էր*⁴⁸ Եւ ամենայն ժողովուրդքն որ եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն՝ և զգործ, բախտին զկուրծս՝ և դառնայի՛ն*⁴⁹ Կային և ամենայն ծանօթքն նորա ՚ի հեռաստանէ. և կանայք որ եկեալ էին զհետ նորա՝ ՚ի Գալիլեէ՝ և տեսանէին զայն*⁵⁰

ՉԲ՝⁵⁰ Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար*⁵¹ սա՛ չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. յԱրիմաթեայ քաղաքէ Յրէից, որ և ի՛նքն իսկ՝ ակն ունէր արքայութեան Աստուծոյ*⁵² Սա՛ մատուցեալ առ Պեղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. ⁵³ և իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ, և ե՛ր ՚ի կռածոյ գերեզմանի. ուր չէր զոք բնաւ եղեալ*⁵⁴ Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր*⁵⁵ Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ՚ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, և որպէս եղաւ մարմինն նորա: ⁵⁶ Դարձան, և պատրաստեցին խունկս և եւղս. և ՚ի շաբաթուն

* *Ոմանք.* Թո՛ղ սոցա, զի:

* *Ոմանք.* Չնա և իշխանքն:

* *Ոմանք.* Առաջի նորա մատու՛:

* *Ոմանք.* Եթէ դու ես Քրիստոս թագաւորն:

* *Ոմանք.* Դաղմատարէն... եթէ՛ Սա է թագաւորն Յրէ՛:

* *Բազումք.* Չերկնչիցիս դու յԱստուծոյ: *Ոմանք.* Չի և ՚ի նմին պատժի:

* *Ոմանք.* Գաս արքայութեամբ քով:

* *Ոմանք.* Տի՛նն ժամ:

* *Ոմանք.* Աւանդեմ զոգիս. և:

* *Ոմանք.* Որ ինչ եղևն:

* *Օրհնակ մի.* Եկեալ էին ՚ի տեսանել զտեսիլն զայն, և զգործս:

* *Յայլս պակասի.* Ի՛ Գալիլեէ՛ և տեսա՛: *Ոմանք.* Ի՛ Գալիլեայ՝ տեսանէին:

* *Ոմանք.* Անունն Յովսէփ:

* *Ոմանք.* ՅԱրեմաթեայ... արքայութեանն:

* *Ոմանք.* Գերեզմանին. ուր չէր բնաւ զոք:

* *Ոմանք.* Եւ ՚ի շաբաթն լուսանայր:

հանդարտեցին վասն պատուիրանին*:

24

Գլուխ ԻԴ

¹Բայց ՚ի միաշաբաթուն վաղ՝ քաջ ընդ առաւօտն, եկին ՚ի գերեզմանն. բերին զխունկսն զոր պատրաստեցին. և այլ կանայք ընդ նոսա*։ ²Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ՚ի գերեզմանէ անտի*։ ³Եւ մտեալ ՚ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։ ⁴Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա՛ արք երկու հասին առ նոսա ՚ի հանդերձս լուսաւորս*։ ⁵Եւ իբրև զահի հարան՝ և խոնարհեցուցին գերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Ձի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս՝ ⁶չէ՛ աստ, այլ յարեալ։ Յիշեցէ՛ք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ՚ի Գալիլեա, ⁷և ասէր՝ թէ պարտ է Որդւոյ մարդոյ մատնել ՚ի ձեռս մարդոց մեղաւորաց, և ՚ի խա՛ջ ելանել, և յերրորդ աւուր յառնել*։ ⁸Եւ յիշեցին զբանսն նորա։ ⁹Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, և այլոցն ամենեցուն։ ¹⁰Եւ էին Մարիամ Մագդաղենացի, և Յովիաննա, և Մարիամ Յակովբայ, և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն։ ¹¹Եւ երևեցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանքն նոցա՝ և չհաւատային նոցա։ ¹²Բայց Պետրոս յարուցեալ՝ ընթացաւ ՚ի գերեզմանն, և հայեցեալ՝ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և զնա՛ց ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղև*։

¹³Եւ ահա՛ երկուք ՚ի նոցանէ երթային ՚ի նմին աւուր ՚ի գեղ մի, որ հեռի՛ էր յերուսաղէմէ հարեւր և վաթսուն ասպարիսաւ. և էր անուն նորա Եմմաւո՛ւս*։ ¹⁴Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց*։ ¹⁵Եւ եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճել, և ի՛նքն իսկ Յիսուս մերձեցաւ և երթայր ընդ նոսա։ ¹⁶Եւ նոցա աչք՝ կալեալ էին առ ՚ի չճանաչելոյ զնա։ ¹⁷Եւ ասէ ցնոսա. Ձի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ զնայքդ, և տրտմեալ էք*։ ¹⁸Պատասխանի ետ մի ոմն ՚ի նոցանէ՝ որում անուն էր Կղեո՛վպաս, և ասէ ցնա. Դու՛ միայն կաս յերուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ՚ի նմա յաւուրսս յայտոսիկ*։ ¹⁹Եւ ասէ ցնոսա. Ձի՞նչ։ Եւ նոքա՛ ասեն. ՁՅիսուսէ՛ Նագովրացւոյ. որ եղև այր մարգարէ, հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ, և ամենայն ժողովրդեանն։ ²⁰Որպէս մատնեցին զնա քահանայապետքն՝ և իշխանքն մեր ՚ի դատաստան մահու, և հանին զնա ՚ի խաջ։ ²¹Մեք՝ ակն ունեալք թէ նա՛ է որ փրկելոցն է զԻսրայէլ. այլ և հանդերձ այսո՛ւ ամենայնիւ, այս՝ երրորդ օր է յորմէ հետէ այն գործեցաւ*։ ²²Այլ և կանայք ոմանք ՚ի մէնջ զարմացուցին զմեզ. որք

* *Ոմանք.* Դարձան պատ՞. խունկս եւղս։

* *Ոմանք.* Ի միաշաբաթոջն, վաղքաջ ընդ։

* *Ոմանք.* Ի գերեզմանէն. և մտեալ։

* *Ոմանք.* Եւ եղև ՚ի հիանալն նոցա վասն այսորիկ. և ահա։

* *Ոմանք.* Եւ յերիր աւուր յառ՞։

* *Ոմանք.* Ձկտաւսն լոկ՝ զի։

* *Ոմանք.* Երկու ՚ի նոցանէ... Եմմաւուս։ *Օրինակ մի.* Արք երկու ՚ի նոցանէ եր՞... հարիւր և յիսուն ասպա՞... Եմաւուս։

* *Ոմանք.* Անցիցն անցելոյ։

* *Ոսկան.* Մինչ դեռ երթայքդ, և տրտ՞։

* *Ոմանք.* Դու միայն կեաս յերուսաղէմ... յաւուրս յայտոսիկ։

* *Ոմանք.* Նա իցէ որ փրկելոցն իցէ. *կամ՞* էր զԻսրայէլ. երկրորդ օր է... այդ գործեցաւ։

կանխեալ ընդ առաւօտս չոգան՝ ՚ի գերեզմանն՝²³ և ո՛չ գտին զմարմինն նորա. եկին և ասեն, թէ և տեսի՛լ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ թէ կենդանի է՝: ²⁴Եւ զնացին ոմանք ՚ի մէնջ ՚ի գերեզմանն, և գտին նո՛յնպէս՝ որպէս կանայքն ասացին. բայց զնա ո՛չ տեսին՝: ²⁵Եւ նա՛ ասէ ցնոսա. Ո՞վ անմիտք և հեղգասիրտք ՚ի հաւատալ. յամենայնի, զոր խօսեցան մարգարէքն՝: ²⁶Ո՛չ զնոյնս պա՛րտ էր չարչարել Քրիստոսի, և մտանել ՚ի փառս իւր: ²⁷Եւ սկսեալ ՚ի Մովսիսէ և յամենայն մարգարէիցն, մեկնէ՛ր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ՝: ²⁸Իբրև մերձեցան ՚ի գեղն յոր երթային, և նա պատճառէր՝ հեռագոյն ևս ուրեք երթալ: ²⁹Եւ բռնադատեցին զնա՛ և ասեն. Առ մե՛զ ագիր, զի ընդ երեկս է, և տարածանեալ է օրս: Եւ եմո՛ւտ՝ ազանել անդ ընդ նոսա: ³⁰Եւ եղև ՚ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, երեկ՝ և ե՛տ նոցա: ³¹Եւ նոցա՛ բացան աչք, և ծանեան զնա. և նա՛ եղև ՚ի նոցանէ աներևոյթ: ³²Եւ ասեն ցմիմեանս. Ո՛չ իսկ և սիրտք մեր ճմլէին ՚ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն, և ո՛րպէս բանայր մեզ զգիրս՝: ³³Եւ յարուցեալ նոյնժամայն՝ դարձան յերուսաղէմ, և գտին ժողովեալ զմետասանսն՝ և զորս ընդ նոսայն էին, ³⁴և ասեն՝ թէ արդարև յարեալ Տէր՝ և երևեցաւ Սիմովնի՝: ³⁵Եւ նոքա պատմէին զայն որ առ ճանապարհայնն, և թէ զհարոյ՝ ետ ծանօթս նոցա ՚ի բեկանել հացին՝: ³⁶Մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ՚ի մեջ նոցա՝ և ասէ ցնոսա. Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ՝ մի՛ երկնչիք՝: ³⁷Եւ զահի հարեալ՝ երկնչէին. և համարէին ոգի՛ ինչ տեսանել՝: ³⁸Եւ ասէ ցնոսա. Ձի՞՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ՚ի սիրտս ձեր: ³⁹Տեսէ՛ք զձեռս իմ և զոտս, զի ես՝ նոյն եմ. շօշափեցէ՛ք զիս՝ և տեսէ՛ք. զի ոգի՛ մարմին և ոսկերս ո՛չ ունի, որպէս զիսս տեսանէք զի ունիմ: ⁴⁰Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն և զոտս: ⁴¹Եւ մինչ դեռ տակաւին չհաւատային ՚ի խնդութենէն, և զարմացեալ էին, ասէ ցնոսա. Ունի՞՞ք ինչ կերակուր աստ: ⁴²Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն. և խորհիսխ մեղու: ⁴³Եւ առ՝ եկէ՛ր առաջի նոցա, և զմնացորդսն ե՛տ ցնոսա՝: ⁴⁴Եւ ասէ ցնոսա. Այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի, թէ պա՛րտ է՝ լնո՛ւլ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի, և ՚ի մարգարէս, և ՚ի սաղմոսն վասն իմ՝: ⁴⁵Յայնժամ եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս: ⁴⁶Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պա՛րտ էր չարչարել Քրիստոսի, և յառնել ՚ի մեռելոց յաւուր երրորդի. ⁴⁷և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յերուսաղէմէ. ⁴⁸և դուք էք վկայք այսոցիկ՝: ⁴⁹Եւ ահա ես առաքե՛մ զաւետիս Յօր իմոյ ՚ի ձեզ. և դուք՝ նստարո՛ւք ՚ի քաղաքիս յերուսաղէմ, մինչև զգենուցո՛ւք զօրութիւն ՚ի բարձանց: ⁵⁰Եհան զնոսա՝ մինչև ՚ի

* *Ոմանք.* Ընդ առաւօտն:

* *Ոմանք.* Չմարմին նորա... եթէ տեսիլ ևս հր՛:

* *Ոմանք.* Եւ գտին այնպէս, որպէս և կա՛:

* *Ի լուս՛.* Ի հաւատալ ամենայնի զոր խօ՛. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՛:*

* *Ոմանք.* Գրեալ էր զնմանէ:

* *Ոմանք.* Եւ ասէին ցմիմե՛ն: զմեզ: *Յօրինակին պակասէր.* Ոչ *իսկ* և սիրտք:

* *Ոմանք.* Եւ ասեն ցնոսա, եթէ արդարև յարեաւ Տէրն:

* *Ոմանք.* Պատմեցին զայն որ: *Բազումք.* Որ զճանապարհայնն:

* *Ոմանք.* Եւ մինչդեռ զայն:

* *Օրինակ մի.* Եւ զարհուրեալ երկն՛:

* *Ոմանք.* Եւ առեալ եկեր... ետ նոցա:

* *Ոմանք.* Եւ ՚ի սաղմոսս վասն իմ:

* *Ոմանք.* Եւ դուք վկայք բանիցս այսոցիկ:

Բեթանիա. և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա*։ ⁵¹Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, և վերանայր յերկինս։ ⁵²Եւ նոցա երկիր պագեալ նմա՝ դարձան յերուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։ ⁵³Եւ էին հանապազ ՚ի տաճարին, գովէին և օրհնէին զԱստուած։

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՅ*

ՍԿԻՋԲՆ ՂԼԽՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆՈՒ

Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած.... Յովհ. Ա,
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ.... Յովհ. Բ,
Վասն գալոյն առ նա Գառինն Աստուծոյ.... Յովհ. Գ,
Վասն աշակերտացն առ Յիսուս ազանելոյն.... Յովհ. Դ,
Վասն գտանելոյն զՄեսիա.... Յովհ. Ե,
Վասն ՚ի Կանա հարսանեացն.... Յովհ. Զ,
Վասն արտաքս հանելոյն ՚ի տաճարէն.... Յովհ. Է,
Վասն Նիկողիմոսի՝.... Յովհ. Ը,
Վասն ՚ի յԱյեմոն մկրտելոյն.... Յովհ. Թ,
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան.... Յովհ. Ժ,
Վասն կնոջն Սամարացւոյ.... Յովհ. ԺԱ,
Վասն թագաւորագինն.... Յովհ. ԺԲ,
Վասն երեսուն և ո՛ւթ ամեայ հիւրընդին.... Յովհ. ԺԳ, Մատ. ԺԳ, Մարկ. Ե, Ղուկ. ԺԴ
Վասն՝ զի Յայր՝ սիրէ՛ զՈրդի.... Յովհ. ԺԴ,
Վասն հինգ հացին, և երկու՛ ձկանն.... Յովհ. ԺԵ, Մատ. ԻԶ, Մարկ. ԺԸ, Ղուկ. ԻԸ
Վասն գնալոյն ՚ի վերայ ծովուն.... Յովհ. ԺԶ, Մատ. ԻԷ, Մարկ. ԺԷ ...
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Յրէից.... Յովհ. ԺԷ,
Վասն շրջելոյն Յիսուսի ՚ի Գալիլէ, և խրատու եղբարցն.... Յովհ. ԺԸ,
Վասն խնդրելոյն Յրէից ունել զՅիսուս.... Յովհ. ԺԹ,
Վասն ՚ի ծնէ՛ կուրին.... Յովհ. Ի,
Վասն դնելոյն Յիսուսի զանձն ՚ի վերայ ոչխարացն.... Յովհ. ԻԱ,
Վասն նաւակատեացն յերուսաղէմ.... Յովհ. ԻԲ,
Վասն Ղազարու յարութեանն.... Յովհ. ԻԳ,
Վասն օծանելոյն զՏէրն.... Յովհ. ԻԴ, Մատ. ԿԲ, Մարկ. ԽԳ, Ղուկ. ԻԱ
Վասն՝ որ ասաց Յուդա զհիւղոյն.... Յովհ. ԻԵ, Մատ. ԿԲ, Մարկ. ԽԴ, ...
Վասն յովանակին.... Յովհ. ԻԶ, Մատ. ԽԵ, Մարկ. ԼԲ, Ղուկ. ԿԸ
Վասն մատչելոյ հեթանոսացն.... Յովհ. ԻԷ,
Վասն հատին ցորենոյ.... Յովհ. ԻԸ,
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ.... Յովհ. ԻԹ,
Վասն ընթրեացն՝ և լուանալոյ զոտս աշակերտացն.... Յովհ. Լ,
Վասն չարչարանացն Յիսուսի, և սփոփելոյ զաշակերտսն.... Յովհ. ԼԱ,
Վասն գալոյ Յոգւոյն՝ և մխիթարելոյ զաշակերտսն.... Յովհ. ԼԲ,
Վասն ուրացութեանն Պետրոսի, և հաւուն խօսելոյ.... Յովհ. ԼԳ,
Վասն ածելոյն զՅիսուս ՚ի վանացն Կայիափայ.... Յովհ. ԼԴ,

* Ոճանք. Եւ եհան զնոսա:

* Ի վախճանի՝ ոճանք. Կատարեցաւ զլուխք աւետարանին որ ըստ Ղուկասու:

Վասն տանելոյն զՅիսուս ՚ի Գողգոթա.... Յովի. ԼԵ,
 Վասն աւանդելոյ զհոգին.... Յովի. ԼԶ,
 Վասն խնդրելոյն զտէրունական մարմինն.... Յովի. ԼԷ, Մատ. ԿԸ, Մարկ. ԽԸ,
 Ղուկ. ԶԲ
 Վասն բերելոյն Նիկողիմոսի զընունս.... Յովի. ԼԸ,
 Վասն գալոյ կանանցն ՚ի գերեզմանն.... Յովի. ԼԹ,
 Վասն դրօքն փակելովք մտանելոյ.... Յովի. Խ,
 Վասն զԹովմաս հաստատելոյ Տեառն.... Յովի. ԽԱ,
 Վասն ուտելոյն ընդ նոսա, և հարցմանն զՊետրոս.... Յովի. ԽԲ,
 Վասն սիրելոյ աշակերտին, և գրելոյ զԱւետարանն.... Յովի. ԽԳ,

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՅԱՆՆՈՒ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

Յովիաննու Աւետարանն՝ գրեալ է Յովիաննո՛ւ, որ եղբայր է Յակովբայ Ջեբեդեայ. որ անկաւ ՚ի վերայ լանջացն Տեառն. նոյն սա՛ գրեաց զԱւետարանս զայս: Եւ սկիզբն առնէ յաստուածական բանեն. և զըստ մարմնոյ ծնունդն յիշատակէ՛ յասելն, և Բանն մարմին եղև: Եւ յիշատակէ զմկրտութիւնն Յովիաննու, և զընտրութիւն աշակերտացն. այլ և զնշանս և զարուեստս զոր եղեն: Եւ զկատարածն՝ որ մատնեցաւ Պոնտացոյ Պիղատոսի, և խաչեցաւ. յորում և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և ՚ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին. և մարմին նորա եղաւ ՚ի գերեզմանի. և յարեաւ յերրորդ աւուր, երևեցաւ աշակերտացն ինքն:
 Յովիաննէս՝ որ և որդի որոտման, զվերինն որոտալով պատմեաց մեզ: Սա՛ զկնի ԾԳ ամի համբառնալոյ Փրկչին գրեաց զԱւետարանս իւր յեփեսոս քաղաքի, ՚ի խնդրելոյ եկեղեցւոյն Ասիայ՝ ՚ի լեզու Յոյն: Եւ է՛ զլուխս ՍԼԲ: Վկայութիւնս ժԵ: Տունս ՌՊ: Միանգամայն Չորեքեան աւետարանքս. Գլուխք ՌԵԿԲ: Վկայութիւնք ՅԹ: Տունք ՓՊ:
 Յովիաննէս՝ Յնագանդութիւն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆՈՒ

1

Գլուխ Ա

Ա բկ. ¹Իսկզբանէ էր Բանն. և Բանն է՛ր առ Աստուած. և Աստուած էր Բանն*։ ²Նա՛ է՛ր իսկզբանէ առ Աստուած։ ³Ամենայն ինչ՝ նովաւ եղև. և առանց նորա եղև և ո՛չինչ՝ որ ինչ եղև*։ ⁴Նովաւ՝ կեանք էր, և կեանքն՝ էր լոյս մարդկան. ⁵և լոյսն՝ ՚ի խաւարի անդ՝ լուսաւոր էր, և խաւար՝ նմա ո՛չ եղև հասու*։
 Բ ⁶Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ. անուն նմա Յովիաննէս*։ ⁷Սա՛ եկն ՚ի վկայութիւն զի վկայեսցէ՛ վասն Լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ ⁸Ո՛չ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն։ ⁹Է՛ր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ ¹⁰Յաշխարհի՛ էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ո՛չ ծանեաւ։ ¹¹Յիրսն եկն, և իւրքն զնա ո՛չ ընկալան։ ¹²Իսկ որք ընկալան զնա, ետ նոցա

* Օրինակ մի. Եւ Բանն էր Աստուած:

* Օրինակ մի. Եղև և ոչինչ. որ ինչ եղև նովաւ: Կեանք էր. և:

* Ոմանք. Անդ լուսաւոր է. և ոմանք. Լուսաւորէ:

* Ոմանք. Անուն նորա Յովի՛:

իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն նորա*.¹³ ոյք ո՛չ յարենէ, և ո՛չ ՚ի կամաց մարմնոյ, և ո՛չ ՚ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: ¹⁴Եւ Բանն մարմին եղև, և բնակեաց ՚ի մեզ. և տեսա՛ք զփառս նորա զփառս իբրև զմիածնի առ ՚ի Դօրէ, լի՛ շնորհօք և ճշմարտութեամբ: ¹⁵Յովհաննէս վկայէ՛ վասն նորա, աղաղակեաց և ասէ. Սա՛ է՛ զորմէ ասէի. Որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր*:¹⁶ Ձի ՚ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առա՛ք շնորհս փոխանակ շնորհաց: ¹⁷Ձի օրէնքն ՚ի ձեռն Սովսիսի տուան. շնորհքն և ճշմարտութիւնն ՚ի ձեռն Յիսուսի՝ Քրիստոսի եղեն*:^{բբ.} ¹⁸ՁԱստուած ո՛չ ոք ետես երբէք, բայց միածինն Որդի՝ որ է ՚ի ծոց Դօր՝ նա՛ պատմեաց: ¹⁹Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Դրեայքն յերուսաղէմէ քահանայս և Ղևտացիս, զի հարցցեն ցնա՛ թէ դու ո՛ ես*:²⁰ Եւ խոստովան եղև և ո՛չ ուրացաւ. և խոստովան եղև եթէ ես ո՛չ եմ Քրիստոսն*:²¹ Եւ հարցին ցնա. Իսկ՝ ո՛վ ես դու, եղիա՞՞ ես: Եւ ասէ. Ո՛չ եմ: Իսկ՝ մարգարէ՞ն ես դու: Պատասխանի ետ, թէ ո՛չ*:²² Իսկ ասա՛ մեզ. Դու ո՞վ ես, զի պատասխանի՛ տարցուք որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո*:²³ Ասէ. Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհն Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ*:²⁴ Եւ որք առաքեցանն՝ ՚ի փարիսեցւոց անտի էին: ²⁵ Զարցին ցնա՛ և ասեն. Իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, և ո՛չ եղիա, և ո՛չ մարգարէն: ²⁶ Պատասխանի՛ ետ նոցա Յովհաննէս՝ և ասէ. Ես՝ մկրտեսն զձեզ ջրով. ՚ի միջի ձերում կայ զոր դուքն ո՛չ գիտէք. ²⁷ որ զկնի իմ գալոցն է, որում չեմն արժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա*:²⁸ Այս՝ ՚ի Բեթաբրա՛ եղև յայն կոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս և մկրտէր*:

Գ բգ. ²⁹ Ի վաղիս անդր տեսանէ զՅիսուս զի գա՛յր առ նա, և ասէ. Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի*:³⁰ Սա՛ է՛ վասն որոյ եսն ասէի. Ջկնի իմ գայ՝ այր, որ առաջի իմ եղև, զի յառաջ իսկ էր քան զիս: ³¹ Եւ ես՝ ո՛չ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել*:³² Վկայեաց Յովհաննէս՝ և ասէ, թէ տեսանէի զԴոգիմ՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր ՚ի վերայ նորա: ³³ Եւ ես՝ ո՛չ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա՛ ասաց ցիս. Յոյր վերայ տեսանիցես զԴոգիմ, զի իջանիցէ և հանգչիցի ՚ի վերայ նորա, նա՛ է՛ որ մկրտէ Դոգուովն Սրբով*:³⁴ Եւ ես՝ տեսի, և վկայեցի՝ եթէ սա՛ է Որդին Աստուծոյ:

Դ բգ. ³⁵ Ի վաղիս անդր կա՛յր Յովհաննէս, և յաշակերտաց անտի նորա՝ երկու: ³⁶ Եւ նայեցեալ ընդ Յիսուսի՝ զի զգնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ*:³⁷ Լուան ՚ի սմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, և զնացին զհետ Յիսուսի: ³⁸ Իբրև դարձաւ Յիսուս, և ետես զնոսա՛ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Ձի՞նչ խնդրէք: Սոքա ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանեալ կոչի՛ վարդապետ, ո՞ւր եմ օթեվանք քո*:³⁹ Ասէ ցնոսա. Եկայք և տեսէք: Եկին և տեսին ուր էին օթեվանք նորա. և առ նմա՛ ազան այն օր, զի ժամ էր՝ իբրև տասներորդ: ⁴⁰ Էր Անդրէաս՝ եղբայր Սիմոնի Վիմի՛ մի

* *Ոմանք.* Որք ընկալանն... որոց հաւատացին յանունն:
 * *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Յովհաննէս վկայեաց: *Ոմանք.* Եւ ասէր. Սա էր զորմէ:
 * *Ոմանք.* Շնորհք և ճշմարտութիւնն:
 * *Ոմանք.* Ձի հարցցեն զնա... ո՛վ ես:
 * *Ոմանք.* Ուրացաւ. խոստո՞ւ:
 * *Ոմանք.* Իսկ ո՞ ես... և նա ասէ. Ո՛չ եմ:
 * *Ոմանք.* Դու ո՞ ես, զի պատասխանի տարցուք ո՞ւր:
 * *Ոմանք.* Ձճանապարհս Տեառնն:
 * *Ոսկան յաւելու.* Գալոցն է, որ առաջի իմ եղև, որում չեմ: *Ոմանք.* Չեմ արժանի թէ:
 * *Ոսկան յաւելու.* Եւ մկրտէր, և անդ լինէր:
 * *Ոմանք.* Գառնն Աստուծոյ:
 * *Ոմանք.* Յայտնի լիցի Իսրայէլի:
 * *Օրինակ մի.* Յորոյ վերայ... և հանգիցէ ՚ի վերայ նորա:
 * *Ոմանք.* Եւ նայեցեալ ընդ Յիսուս զի զգնայր... Գառնն Աստուծոյ:
 * *Բազումք.* Նոքա ասեն ցնա:

յերկուց անտի, որ լուանն ՚ի Յովհաննէ՝ և գնացին զկնի նորա՝:

Ե 41Գտանէ՝ սա՝ նախ զեղբայր իւր զՍիմովն, և ասէ ցնա. Գտա՛ք զՄեսիայն՝ որ թարգմանի Քրիստոսն՝: 42Սա՛ ած գնա առ Յիսուս: Հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դո՛ւ ես Սիմովն որդի Յովնանու, դու կոչեսցի՛ս Կեփաս, որ թարգմանի՝ Պետրոս: բե. 43Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ՚ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ: 44Եւ էր Փիլիպպոս ՚ի Բեթսայիղայ, ՚ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի: 45Գտանէ՝ Փիլիպպոս զՆաթանայէլ, և ասէ ցնա. Ձորմէ՛ գրեաց Մովսէս յօրէնսն, և մարգարէքն. գտա՛ք զՅիսուս զորդի Յովսեփայ ՚ի Նազարեթ: 46Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ ՚ի Նազարեթ՝ մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել: Ասէ ցնա Փիլիպպոս. Ե՛կ և տես: 47Իբրև ետես Յիսուս զՆաթանայէլ զի զայր առ նա, ասէ՛ վասն նորա. Ահա՛ արդարև Իսրայէլացի, յորում նենգութիւն ո՛չ գոյ: 48Ասէ ցնա Նաթանայէլ. Ուստի՞ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Մինչչև՝ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ՚ի ներքոյ թզենւոյն, տեսի՛ զքեզ: 49Պատասխանի ետ նմա Նաթանայէլ՝ և ասէ. Ռա՛բբի՛ դու ես Որդի Աստուծոյ, դո՛ւ ես թագաւորն Իսրայէլի՞: 50Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Փոխանակ զի ասացի՛ քեզ՝ թէ տեսի ՚ի ներքոյ թզենւոյն՝ հաւատաս, մեծամեծ՝ ևս քան զայս տեսցես՝: 51Եւ ասէ ցնոսա. Ամեն՝ ամեն՝ ասե՛ն ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ, և զիրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն ՚ի վերայ Որդւոյ մարդոյ՝:

2

Գլուխ Բ

Ձ բզ. 1Եւ յաւուրն երրորդի, հարսանիք էին ՚ի Կանա Գալիլեացոց. և անդ էր մայրն Յիսուսի: 2Կոչեցան և Յիսուս և աշակերտքն նորա ՚ի հարսանիսն: 3Եւ ՚ի պակասել զինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի՛ ո՛չ ունին: 4Եւ ասէ ցնա Յիսուս. Ձի՞ կայ իմ և քո՛ կին դու, չև՛ է հասեալ ժամանակ իմ: 5Ասէ մայրն նորա ցպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասցի՛ք: 6Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեանն Հրէից. տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս՝: 7Ասէ ցնոսա Յիսուս. Լցէ՛ք զթակոյկսդ ջրով: Եւ լցին զնոսա մինչև ՚ի վեր: 8Եւ ասէ ցնոսա. Արդ՝ առէ՛ք՝ և բերէ՛ք տաճարապետիդ: Եւ նոքա՛ բերին: 9Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն զինի՛ եղեալ, և ո՛չ գիտէր ուստի իցէ. բայց սպասաւորքն՝ զիտէին որք արկին զջուրն: Խօսի՛ ընդ փեսային տաճարապետն, 10և ասէ. Ամենայն մարդ՝ զանոյշ զինիդ մինչև ցայժմ՝: 11Ձայս արար սկիզբն նշանաց Յիսուս ՚ի Կանա Գալիլեացոց, և յայտնեաց զփառս իւր. և հաւատացին ՚ի նա աշակերտքն նորա: բե. 12Յետ այսորիկ էջ Յիսուս ՚ի Կափառնաում, ինքն և մայր իւր և եղբարք իւր. և անդ լինէր՝ ո՛չ բազում ինչ աւուրս: 13Եւ էր՝ մերձ գատիկն Հրէից, և ել Յիսուս յերուսաղէմ:

Ե 14Եւ եգիտ ՚ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս, և զլուծայափողսն որ նստէին: 15Եւ արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին ՚ի

* Ոմանք. Եւ գնացին զհետ նորա:

* Բազունք. ՉՄեսիա՛ որ թարգմանի Քրիստոս:

* Ոմանք. Որդին Աստուծոյ:

* Բազունք. Մեծամեծս ևս քան:

* Ի լուս՝. Եւ ասէ ցնա. համաճայն ոմանց ՚ի բնար՝:

* Յօրինակին. Թակոյք կճեայք:

* Ոմանք. Չթակոյսդ ջրով:

* Ոմանք. Տաճարապետիս:

* Ոմանք. Չանոյշ զինին յա՞:

* Յօրինակին պակասէր. էջ Յիսուս ՚ի Կափ՝:

* Բազունք. Եւ զլուծայափոխսն. կամ՝ զլուծայափոխսն:

տաճարէն, զոչխարսն և զարջառս, և զպղինձս հատավաճառացն՝ ցրուեա՛ց, և զսեղանսն կործանեա՛ց: ¹⁶Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէ՛ք զայդ աստի, և մի՛ առնէք զտուն Զօր իմոյ՝ տուն վաճառի: ¹⁷Ապա յիշեցին աշակերտքն նորա՝ թէ գրեալ է. Նախանձ տան քո կերիցէ զիս՝: ¹⁸Պատասխանի՛ ետուն Զրեայքն՝ և ասեն ցնա. Չի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես: ¹⁹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Քակեցէ՛ք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցի՛ց զդա՝: ²⁰Ասեն ցնա Զրեայքն. Չքառասուն և զվե՛ց ամ շինեցաւ տաճարս այս, և դու՛ զերիս աւուրս կանգնե՞ս զդա՝: ²¹Բայց նա՛ ասէր վասն տաճարի՛ մարմնոյ իւրոյ՝: ²²Իսկ յորժամ յարեաւն ՚ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է զոր ասացն. և հաւատացին գրոյն՝ և բանին զոր ասաց Յիսուս՝: զկ. ²³Եւ իբրև էր յերուսաղէմ ՚ի զատկին ՚ի տօնի, բազումք հաւատացին յանուն նորա. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր՝: ²⁴Բայց ինքն Յիսուս ո՛չ հաւատայր զանձն նոցա. քանզի ինքն գիտէր զամենայն՝. ²⁵և զի ո՛չ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ՝ գիտէր զինչ կրէր ՚ի մարդն:

3

Գլուխ Գ

Ը ¹Եւ էր՝ այր մի ՚ի փարիսեցւոց անտի՝ Նիկողեմնոս անուն նորա, իշխան Զրէից՝: ²Սա՛ եկն առ նա զիշերի՛ և ասէ ցնա. Ռա՛բբի՛ գիտեմք թէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ո՛չ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա՝: ³Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Ամեն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի վերստին, ո՛չ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ՝: ⁴Ասէ ցնա Նիկողեմնոս. Ձիա՞րդ կարէ մարդ ծնանել որ ծնեալն իցէ. միեթէ՛ մա՞րթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել՝: ⁵Պատասխանի՛ ետ Յիսուս՝ և ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ՛ և ՚ի Զոգւոյ, ո՛չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ: ⁶Ձի ծնեալն ՚ի մարմնոյ՛ մարմին է, և ծնեալն ՚ի Զոգւոյ՛՝ հոգի է: ⁷Դու՛ մի՛ զարմանար, թէ ասացի քեզ. Պա՛րտ է ձեզ ծնանել վերստին: ⁸Ձի հողմ՝ ուր կամի շնչէ՛. և զձայն նորա լսես. այլ ո՛չ գիտես ուստի՛ զայ՛ կամ յո՛ երթայ. տոյնպէս՝ և ամենայն ծնեալն ՚ի Զոգւոյն՝: ⁹Պատասխանի ետ Նիկողեմնոս՝ և ասէ ցնա. Ձիա՞րդ մարթի այդմ լինել: ¹⁰Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Դու ես վարդապետ Իսրայէլի՛ և զայդ՝ ո՛չ գիտես: ¹¹Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք. և զվկայութիւնն մեր ո՛չ ընդունիք՝: ¹²Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ, և ո՛չ հաւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք՝: զբ. ¹³Եւ ո՛չ ոք յերկինս ել, եթէ ոչ՝ որ է՛ջն յերկնից Որդին մարդոյ՝ որ է՛ն յերկինս՝: ¹⁴Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն

* *Ոմանք.* Տան քո եկեր զիս:

* *Ոսկան.* Եւ զերիս աւուրս շինեցից զդա:

* *Ոմանք.* Կանգնես զսա:

* *Ոմանք.* Մարմնոյն իւրոյ:

* *Ոմանք.* Ասացն Յիսուս:

* *Ոմանք.* Ի՞ գատկին տօնի:

* *Ոսկան.* Ոչ հաւատայր յանձն նոցա:

* *Ոմանք.* Նիկողեմնոս. *կամ՝* Նեկովդեմնոս ա՛:

* *Ոմանք.* Եթէ յԱստուծոյ եկ՛... զայդ նշանսդ:

* *Ոմանք.* Ծնցի վերստին, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ:

* *Ոմանք.* Ծնանել որ ծերն իցէ. միթէ մարթ իցէ:

* *Ոմանք.* Եւ զձայնն նորա... նոյնպէս և ամենայն:

* *Ոմանք.* Տեսաքն վկայ՛:

* *Ոմանք.* Ձերկնաւորն ասա՛:

* *Ոմանք.* Եւ ո՛չ ոք ել յերկինս... Որդի մարդոյ:

յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ: ¹⁵Ձի ամենայն որ հաւատայ 'ի նա՝ ընկալցի զկեանսն յաւիտեանականս: ¹⁶Ձի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ 'ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի՛ զկեանսն յաւիտեանականս: ¹⁷Ձի ո՛չ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովա: ¹⁸Որ հաւատայ 'ի նա՝ ո՛չ դատապարտեսցի. և որ ո՛չ հաւատայ 'ի նա՝ արդէ՛ն իսկ դատապարտեալ է. զի ո՛չ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ: ¹⁹Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան: ²⁰Ձի ամենայն որ գչար գործէ՝ ատեայ զլոյս. և ո՛չ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա: ²¹Իսկ որ առնէ զճշմարտութիւն, գայ առ լոյսն. զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան: զգ. ²²Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտք նորա յերկիրն Զրէաստանի. և անդ շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր:

Թ ²³Մկրտէր և Յովհաննէս 'ի յԱյենովն, մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ. և գային և մկրտէին: ²⁴Ձի չն՛ ևս էր արկեալ զՅովհաննէս 'ի բանս:

Ժ ²⁵Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Զրէի՝ վասն սրբութեան. ²⁶Եկին առ Յովհաննէս՝ և ասեն ցնա. Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որուն դուն վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ և ամենեքին զան առ նա: ²⁷Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ. Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ՝ և ո՛չ ինչ, եթէ ո՛չ իցէ տուեալ նմա յերկնից 'ի վերուստ: ²⁸Դուք ձեզէ՛ն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա: ²⁹Որ ունի հարսն, նա՛ է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ՝ այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: ³⁰Նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ: ³¹Որ 'ի վերուստն գայ, 'ի վերոյ՛ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ՛ է՝ և յերկրէ՛ խօսի: ³²Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես և զոր լուաւ, վկայէ՛. և զվկայութիւն նորա ո՛չ ոք ընդունի: ³³Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է: ³⁴Ձի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ո՛չ եթէ չափով տայ Աստուած զՌոգին: ³⁵Հայր սիրէ՛ զՈրդի, և զամենայն ինչ՝ ետ 'ի ձեռս նորա: ³⁶Որ հաւատայ յՈրդի, ընդունի՛ զկեանսն յաւիտեանականս. և որ ո՛չ հնազանդի Որդւոյ, ո՛չ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ 'ի վերայ նորա:

4

Գլուխ Դ

գդ. ¹Իբրև գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ, և մկրտէ քան զՅովհաննէս. ²քանզի ո՛չ եթէ Յիսուս ինքնին մկրտէր, այլ աշակերտքն նորա. ³եթող զՅրէաստան երկիր. և եկն միւսանգամ 'ի Գալիլէա: ⁴Եւ էր

* Օրինակ մի ընդ Ոսկանայ յաւելու. Հաւատայ 'ի նա, մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկե՛ն:

* Ոմանք. Ձի այնչափ սիրեաց:

* Ոմանք. Թէ դատեսցէ զաշխարհ:

* Ոմանք. Եւ որ ոչն հա՛... Որդւոյ նորա:

* Ոմանք. Եւ սիրեաց մարդիկ զխա՛:

* Ոմանք. Արկեալ էր զՅով՛:

* Ոսկան. Ընդ Զրէից վասն սր՛:

* Ոմանք. Ահաւանիկ նա մկրտէ:

* Ոմանք. Առնել յանձնէ և:

* Ոմանք. Ոք ոչ ընդունի:

* Ոմանք. Ձբանն Աստուծոյ խօսի:

* Ոմանք. Յիսուս ինքն մկրտէր:

նմա անցանել ընդ Սամարիա*:

ԺԱ Գա՛յ նա ՚ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սեքար. մերձ ՚ի գեղն զոր ետ Յակովբ որդւո՛յ իւրում Յովսեփայ՝. ⁶և անդ էր աղբեր մի Յակովբայ: Եւ Յիսուս վաստակեալ ՚ի ճանապարհէն, նստէր ՚ի վերայ աղբերն, և էր ժամ իբրև վեցերորդ*:
⁷Գա՛յ կին մի ՚ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տո՛ւր ինձ ըմպել: ⁸Ձի աշակերտքն նորա երթեալ էին ՚ի քաղաք անդո՛ զի կերակուրս գնեսցեն: ⁹Ասէ ցնա կինն Սամարացի. Դու՛ որ Յրեայո՛ւ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ՚ի կնոջէ Սամարացւոյ: Ձի ո՛չ երբէք խառնակին Յրեայք ընդ Սամարացիս: ¹⁰Պատասխանի՛ ետ նմա Յիսուս՝ և ասէ. Եթէ գիտէիր դու զպարզևսն Աստուծոյ, և ո՞վ է՛ որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդէք խնդրէիր ՚ի նմանէ, և տայո՛ք եզ ջուր կենդանի*:
¹¹Ասէ ցնա կինն. Տեր՝ դու քանզի և դոյլ իսկ ո՛չ ունիս, և ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի*:
¹²Միթէ՛ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն աստի արբ՝ և որդիք նորա, և խաշինք նորա:
¹³Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Ամենայն որ ըմպէ՛ ՚ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ՛. բայց որ ըմպէ ՚ի ջրոյն զոր ես տաց նմա, մի՛ ծարաւեսցէ յաւիտեան*:
¹⁴Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբեր ջրոյ բղխելոյ ՚ի կեանսն յաւիտեանական*:
¹⁵Ասէ ցնա կինն. Տեր՝ տո՛ւր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեսցից՝ և մի՛ եկից այսր հանել ջուր: ¹⁶Ասէ ցնա Յիսուս. Երթ՛ կոչեա զայո՛ք քո՛ և ե՛կ այսր:
¹⁷Պատասխանի ետ նմա կինն՝ և ասէ. Չի՞ք իմ այր: Ասէ ցնա Յիսուս. Բարւո՛ք ասացեր՝ թէ չի՞ք իմ այր: ¹⁸Գի հինգ այր փոխեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ՛ քո այր. զայդ արդար ասացեր*:
¹⁹Ասէ ցնա կինն. Տեր՝ թուի ինձ թէ մարգարէ՛ իցես դու: ²⁰Հարքն մեր ՚ի լերինս յայսմիկ երկիր պագին. և դուք ասէք՝ թէ յերուսաղէն և եթ՝ է՛ տեղի ուր արժան իցէ երկիր պագանել:
²¹Ասէ ցնա Յիսուս. Կին՝ դու՛ հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ո՛չ ՚ի լերինս յայսմիկ, և ո՛չ յերուսաղէն երկիր պագանիցեն Յօր*:
²²Դուք երկիր պագանէք՝ որում ո՛չն զհտէք, մեք երկիր պագանեմք որում զհտեմքն. զի փրկութիւն ՚ի Յրէի՛ց է:
²³Այլ եկեսցէ ժամանակ, և այժմ իսկ է. յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիր պագանիցեն Յօր՝ հոգւո՛վ և ճշմարտութեամբ. քանզի և Հայր՝ այնպիսի՛ երկրպագուս իւր խնդրէ*:
²⁴Հոգի՛ է Աստուած, և երկրպագուացն նորա հոգւո՛վ և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել:
²⁵Ասէ ցնա կինն. Գիտեմ զի Մեսիա գա՛յ անուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ, նա՛ պատմեսցէ մեզ զամենայն*:
²⁶Ասէ ցնա Յիսուս. Ես եմ, որ խօսիմս ընդ քեզ: ²⁷Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, և զարմանային զի ընդ կնոջն խօսէր. բայց ո՛չ ոք ասաց ՚ի նոցանէ թէ զինչ խնդրես, կամ զինչ խօսիս ընդ դմա:
²⁸Եթո՛ղ կինն զսփորն իւր՝ և չոգաւ ՚ի քաղաքն, և ասէ ցնարդիկն. ²⁹Եկայք տեսէ՛ք զայր մի որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ զործեալ է. մի՞թէ՛ նա՛ իցէ Քրիստոսն*:
³⁰Ելին ՚ի քաղաքէն՝ և գային առ նա: ³¹Եւ մինչչև՝ եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն և ասէին. Ռա՛բբի՛ հա՛ց կեր: ³²Նա՛ ասէ ցնոսա. Ես՝ կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ո՛չ գիտէք: ³³Ասէին աշակերտքն ընդ միմեանս. Մի՞թէ՛ եբեր ինչ ոք դմա ուտել: ³⁴Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կերակուր այն է զի արարի՛ց զկամս այնորիկ որ առաքեացն զիս, և

* Ումանք. Անցանել ընդ մեջ Սամարիայ:

* Ումանք. Սիքար. կամ՝ Սիւքար:

* Ումանք. Վաստակեալ ՚ի ճանապարհին:

* Ումանք. Քեզ զջուրն կենդանի:

* Ումանք. Քանզի դոյլ ոչ ունիս:

* Ումանք. ՚ի ջրոյ յայսմանէ, միւսանգամ ծարաւեսցի:

* Ոսկան. եղիցի ՚ի նմա աղբիւր ջրոյ բղխեցելոյ: Ումանք. Աղբեր ջրոց բղխեալ ՚ի:

* Ումանք. Եւ զոր այժմն ունիս:

* Ումանք. ժամանակ՝ յորում ոչ ՚ի լե՛... երկիր պագեն Յօր:

* Ումանք. ճշմարիտն երկրպա՛:

* Ումանք. Գիտեմք զի Մեսիա գայ:

* Ոսկան. Եկայք և տեսէք:

կատարեցի՛ց զգործն նորա՛: ³⁵Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ ևս չորք ամիսք են՝ և հո՛ւնծք գան. ահաւասիկ ես՝ ասեմ ձեզ. Ամբարձէք զա՛յս ձեր, և տեսէք զարտորայն, զի սպիտակացեալ՝ են՝ և ՚ի հո՛ւնծս հասեալ՛: ³⁶Եւ որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ զպտուղ ՚ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէն՝ և որ հնձէ, հասարակաց ցնծացեն՛: ³⁷Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի այլ է որ սերմանէ, և այլ է որ հնձէ՛: ³⁸Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ո՛չ դուք սերմանեցէք. այլք վաստակեցին, և դուք ՚ի վաստակս նոցա մտէք՛: ³⁹Եւ ՚ի քաղաքէն յայնմանէ Սամարացոց՝ բազումք հաւատացին ՚ի նա, վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ էր՛: ⁴⁰Իսկ իբրև եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. և եղև անդ աւուրս երկուս: ⁴¹Եւ ևս բազումք հաւատացին ՚ի նա վասն բանի՛ն նորա: ⁴²Եւ ասէին ցկի՛նն թէ ոչ այսուհետև վասն քո խօսիցո՞ւ հաւատամք. զի մեզէ՛ն իսկ լուաք ՚ի դմանէ. և զիտեմք եթէ դա՛ է ճշմարտիւ Փրկիչ աշխարհաց: զգ. ⁴³Եւ յետ երկուց աւուրց ել՝ անտի և զնաց ՚ի Գալիլեա: ⁴⁴Ձի ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ յիւրում զաւառի պատիւ ո՛չ ունի: ⁴⁵Այլ յորժամ եկն նա ՚ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն զոր արար յերուսաղէմ ՚ի տօնին. քանզի և նոքա՛ եկեալ էին ՚ի տօնն: ⁴⁶Եկն դարձեալ ՚ի Կանա Գալիլեացոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր:

ԺԲ Թագաւորա՛զն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի Կափառնաում՛: ⁴⁷Նա՛ իբրև լուաւ, եթէ Յիսուս եկեալ է ՚ի Յրեաստանէ ՚ի Գալիլեա, եկն առ նա, և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ՛ զորդի նորա. քանզի մերձ էր ՚ի մեռանել՛: ⁴⁸Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք, ո՛չ հաւատայք: ⁴⁹Ասէ ցնա թագաւորազն. Տէր՝ էջ մինչչև՝ մեռեալ իցէ մանուկն իմ՛: ⁵⁰Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կենդանի՛ է: Եւ հաւատաց այրն բանին զոր ասաց նա Յիսուս, և զնաց: ⁵¹Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետի՛ս ետուն՝ և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է՛: ⁵²Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. Երէկ յեթներորդ ժամու եթող զնա ջերմն: ⁵³Գիտաց հայրն նորա՛ թէ յայնմ ժամու՛ յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր՛: ⁵⁴Չայս դարձեալ՝ երկրորդ նշանս արար Յիսուս՝ եկեալ ՚ի Յրեաստանէ ՚ի Գալիլեա՛:

5

Գլուխ Ե

զէ. ¹Յետ այսորիկ տօն էր Յրէից. և ել Յիսուս յերուսաղէմ: ²Եւ էր յերուսաղէմ ՚ի Պրոբատիկէ աւագանին՝ որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ՛: ³Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց կաղաց գօսացելոց, որ ական ունէին

* *Ոմանք.* Ջգործսն նորա:
 * *Ոմանք.* Եւ տեսէք զարտորայսն, զի:
 * *Բազումք.* Հասարակ ցնծացեն: *Ուր օրինակ մի.* Հաւասար ցնծ՛:
 * *Ոմանք.* Յայսմիկ է բանն ճշ՛... որ սերմանէն:
 * *Բազումք.* Հնձել՝ զոր ո՛չ դուք վաստակեցէք:
 * *Ոմանք.* Իմ գործեալ է:
 * *Ոմանք միտաւետ ընթեռնուն.* Եւ անդ էր թագաւորազն մի. *այլ բազումք համաձայն մերումս զատանեն:* *Ուր և ոմանք.* թագաւորազն միոյ որդի նորա հիւանդ:
 * *Ոմանք.* Եւ աղաչէր զնա. զի:
 * *Ոմանք.* Թագաւորազնն:
 * *Ոմանք.* Եթէ մանուկ նորա:
 * *Ոմանք.* Եւ ամենայն տունն իւր:
 * *Ոմանք.* Երկրորդ նշանս ա՛... ՚ի Գալիլիէ:
 * *Ոմանք.* Ի Պրոպատիկէ:

ջրոցն յուզելոյ*։ ⁴Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ո՛չ ունելով նշան հիւանդութեան*։

ԺԳ ⁵Եւ անդ էր այր մի՝ որոյ երեսուն և ութ ամ էր ՚ի հիւանդութեան իւրում։ ⁶Ձնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դներ, և զիտաց թէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա. Կամի՞ս ողջ լինել։ ⁷Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր՝ ո՛չ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ*։ ⁸Ասէ ցնա Յիսուս. Արի՛ անձ զմահիծս քո՝ և գնա։ ⁹Եւ ողջացաւ այրն. և յարեալ, անձ զմահիծս իւր՝ և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ ¹⁰Ասեն Յրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է, և ո՛չ էր արժան առնուլ քեզ զմահիծս քո*։

¹¹Պատասխանի ետ նոցա՝ և ասէ. Որ բժշկեացն զիս, նա՛ ասաց ցիս. Ա՛ն զմահիծս քո և գնա։ ¹²Հարցին ցնա՝ և ասեն. Ո՞վ է այրն որ ասացն ցքեզ. Ա՛ն զմահիծս քո և շրջեաց*։ ¹³Եւ բժշկեալն ո՛չ զիտէր թէ ո՞վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի։ ¹⁴Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ՚ի տաճարին, և ասէ ցնա. Ահաւաղիկ ողջացար, մի՛ ևս մեղանչեր. զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ*։ ¹⁵Գնաց այրն՝ և պատմեաց Յրեիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զիս։ ¹⁶Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Յրեայք, զի զայն առնէր ՚ի շաբաթու։ ¹⁷Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ե՛ս գործեմ։ ¹⁸Վասն այնորիկ առաւել խնդրէին Յրեայքն սպանանել զնա. զի ո՛չ միայն լուծանէր զշաբաթս, այլ և Հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէր զանձն Աստուծոյ։

ԺԴ դկ. ¹⁹Պատասխանի՛ ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ամէն ամէն ասե՛մ ձեզ. Ո՛չ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ և ո՛չինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և Որդի՛ն նմին նման գործէ։ ²⁰Ձի Հայր սիրտ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ։ Եւ մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուրք զարմանայք*։ ²¹Ձի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի՛ գորս կամի կենդանի առնէ։ ²²Եւ ո՛չ եթէ Հայր դատի զոք՝ այլ զամենայն դատաստանն ետ Որդւոյ իւրոյ*։ ²³Գի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն. որ ո՛չ պատուէ զՈրդին, ո՛չ պատուէ զՀայր զառաքիչն նորա։ ²⁴Ամէն ամէն ասե՛մ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի՛ զկեանսն յաւիտեանականս. և ՚ի դատաստան ո՛չ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս*։ ²⁵Ամէն ամէն ասե՛մ ձեզ. զի զայ՛ ժամանակ՝ և արդէ՛ն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լսիցեն՝ կեցցեն*։ ²⁶Ձի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ՛ ունել կեանս յանձին իւրում*։ ²⁷Եւ իշխանութիւնն ետ նմա դատաստան առնել. և զի Որդի մարդոյ է, ²⁸ընդ այն զի՞ զարմանայք, զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, ²⁹և եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութիւն կենաց, և որոց զչար

* *Ոմանք.* Ջուրցն յուզելոց։

* *Ի բազումս պակասի այս 4 համար.* *Եւ հրեշտակ Տեառն... նշան հիւանդութեան. և ՚ի սակաւուց անտի որք ունին համեմատ մերումս՝ ոմանք ՚ի լուսանցս չակերտիւ նշանակեն զբանս։ *Ոսկան.* Իջանէր յաւազանն, բժշկիւր. ոչ։

* *Ոմանք.* Ջուրքն յուզիցեն. կամ՝ յուզին։

* *Ոմանք.* Է արժան քեզ առնուլ։

* *Ոմանք.* Որ ասաց ցքեզ։

* *Ոմանք.* Ահաւասիկ ողջա՞... զի մի չար ինչ լի՞։

* *Ոմանք.* Եւ մեծամեծ ևս քան զնոյնս ցու՞... ընդ որում դուրք։

* *Ոմանք.* Դատաստանս ետ Որդւոյ իւրում։

* *Ոմանք.* Եւ հաւատայ յայն որ։

* *Ոմանք.* Եւ որ լսիցենն՝ կե՞։

* *Ոմանք.* Նոյնպէս և ետ Որդւոյ։

արարեալ իցէ՝ ՚ի յարութիւն դատաստանաց*։ ³⁰Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել՝ և ո՛չ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է. զի ո՛չ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս*։ դբ. ³¹Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ չէ՝ ճշմարիտ*։ ³²Այլ է որ վկայէ վասն իմ. և դուք գիտէք եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց վասն իմ*։ ³³Դուք առաքեցէք առ Յովհաննէս, և վկայեաց՝ ճշմարտութեանն։ ³⁴Այլ ես՝ ո՛չ եթէ ՚ի մարդկանէ՝ առնում վկայութիւն, այլ զայս ասեմ զի դուք ապրեսցիք*։ ³⁵Նա՛ էր ճրագն՝ որ լուցեալ էր և ծագէր. և դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի ՚ի լոյս նորա։ ³⁶Այլ ես ունիմ վկայութիւն մե՛ծ ևս քան զՅովհաննու. զգործսն՝ զոր ետ ցիս Յայր՝ զի կատարեցից զնոսա, նոքի՛ն իսկ գործքն զոր գործեմ վկայեմ վասն իմ, եթէ Յայր առաքեաց զիս։ ³⁷Եւ որ առաքեացն զիս Յայր, նա՛ վկայեաց վասն իմ։ Դուք ո՛չ զծայն նորա երբէք լուարուք. և ո՛չ զտեսիլ նորա տեսէք։ ³⁸Եւ ո՛չ զբան նորա ունիք ՚ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց, դուք նմա ո՛չ հաւատայք։ ³⁹Քննեցէ՛ք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտեանականս. և նոքի՛ն իսկ են որ վկայեմ վասն իմ, որովք համարիքն ունել կեանս. ⁴⁰և դուք ո՛չ կամիք գալ առ իս, զի զկեանսն ունիցիք։ ⁴¹Ես փառս ՚ի մարդկանէ ո՛չ առնում։ ⁴²Այլ գիտեմ զձեզ՝ զի զսէրն Աստուծոյ ո՛չ ունիք յանձինս*։ ⁴³Ես եկի յանուն Յօր իմոյ, և ո՛չ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա՛ ընդունիցիք*։ ⁴⁴Զիա՞րդ կարէք դուք հաւատալ. զի փառս ՚ի միմեանց առնուք, և զփառս զառ ՚ի միոյն Աստուծոյ ո՛չ խնդրէք*։ ⁴⁵Մի՛ համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձեց առ Յօր. գոյ որ չարախօս կայ զձեց՝ Մովսէս. յոր դուքն յուսացեալ էք։ ⁴⁶Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեւ և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց*։ ⁴⁷Զի եթէ նորա գրոցն ո՛չ հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք*։

6

Փոքիւ Զ

դգ. ¹Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Քալիլեացոց Տիբերեայ*։ ²և զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ՚ի վերայ հիւանդաց*։ ³Եւ ՚ի լեառն Յիսուս, և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։ ⁴Եւ էր մերձ գատիկ տօմն Յրէից։

ԺԵ ⁵Բարձ ՚ի վեր զաչս իւր Յիսուս, և ետես զի ժողովուրդ բազում գայր առ նա. ասէ ցՓիլիպպոս. Ուստի՞ զնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա*։ ⁶Զայս ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոց էր։ ⁷Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. Երկերիւր դահեկանի հաց չէ՛ դոցա բաւական, թէպէտ և իւրաքանչիւրոք սակաւ ինչ առնուցու*։

* *Ոմանք.* Որոց բարիս... յարութիւն... արարեալ է։ *Ի բազումս պակասի.* Արարեալ իցէ՝ ՚ի յար՝։

* *Ոմանք.* Առնել ՚ի յանձնէ... որպէս լսեմն, դա՛։

* *Ոսկան.* Ես վկայեմ վասն անձին իմոյ։

* *Ոմանք.* Որ վկայեաց վասն։

* *Ոմանք.* Այլ զայս ասացի, զի։

* *Ոմանք.* Թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք։

* *Ոմանք.* Ես իսկ եկի յանուն... ՚ի յիւր ա՛։

* *Յոմանս պակասի.* Զառ ՚ի միոյն *Աստուծոյ* ոչ խնդ՞։

* *Յօրինակին պակասէր.* Զի նա վասն իմ իսկ։

* *Ոմանք.* Նորա գրոյն ոչ հաւա՛։

* *Ոմանք.* Գայ Յիսուս յայնկոյս։

* *Ոմանք.* Եւ զհետ երթային նորա ժո՛։

* *Ոսկան.* Գնեսցուք հացս։

* *Ոմանք.* Պատասխանի ետ Փիլիպպոս։

⁸Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Անդրէ՛աս՝ եղբայր Սիմովնի՛ Վիմի. ⁹Է՛ աստ՝ պատանեակ մի որ ունի հի՛նգ նկանակ գարեղէն՝ և երկուս ձկուսս, այլ այն զի՞նչ է առ ա՛յդչափ մարդիկդ՝: ¹⁰Ասէ Յիսուս. Բազմեցուցէ՛ք զմարդիկդ: Եւ էր խոտ յո՛յժ՝ ՚ի տեղուոցն. և բազմեցան մարդիկն թուով իբրև հի՛նգ հազար: ¹¹Եւ ա՛ռ զհացն Յիսուս, և գոհացա՛ւ. և բաշխեաց բազմականացն. նոյնպէս և ՚ի ձկանցն որչափ և կամեցան: ¹²Եւ իբրև յագեցան, ասէ ցաշակերտսն. Ժողովեցէ՛ք զնշխարեալ կոտորսդ, զի մի՛ ինչ կորիցէ՛: ¹³Ժողովեցին. և լցին երկուտասան սակառի գկոտորոցն՝ ՚ի հի՛նգ գարեղէն նկանակէ՛ անտի, որ յաւելաւ ՚ի կերողացն: ¹⁴Իսկ մարդիկն՝ իբրև տեսին զնշանսն զոր արար, ասէին, թէ սա՛ է ճշմարիտ մարգարէն՝ որ զալո՛ց էր յաշխարհ՝: դդ. ¹⁵Յիսուս իբրև գիտաց եթէ զալոց են յափշտակել զնա, զի արասցեն զնա թագաւոր, զնա՛ց դարձեալ ՚ի լեառնն միայն:

ԺՁ ¹⁶Եւ իբրև երեկոյ եղև, իջին աշակերտքն նորա ՚ի ծովեզրն: ¹⁷Եւ մտեալ ՚ի նաւ՝ զնացին յայնկոյս ծովուն ՚ի Կափառնառում. և իբրև նսեմացաւ, և չն՝ ևս եկեալ էր առ նոսա Յիսուս՝. ¹⁸և ծովն ՚ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէ՛ր: ¹⁹Եւ վարեալ իբրև ասպարէսս քսան և հի՛նգ կամ երեսուն, տեսանէին զՅիսուս՝ զի գա՛յր ՚ի վերայ ծովուն և մերձ էր ՚ի նաւն, և զարհուրեցան յոյժ՝: ²⁰Եւ նա՛ ասէ ցնոսա. Ե՛ս եմ՝ մի՛ երկնչիք՝: ²¹Եւ կամէին զնա ընդունել ՚ի նաւն. և վաղվաղակի՛ եհաս նաւն յերկիրն յոր երթային՝: դե. ²²Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր յայն կոյս ծովուն. տեսանէր թէ այլ նաւ ո՛չ գոյր անդ բայց միայն ՚ի միոյն՝ յոր մտին աշակերտքն Յիսուսի. և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ՚ի նաւն. բայց միայն աշակերտքն նորա զնացին՝: ²³Իբրև ա՛յլ նաւք գային ՚ի Տիբերեայ մօտ յայն տեղի՝ ուր զհա՛ցն կերան: ²⁴Իսկ իբրև ետես ժողովուրդն եթէ Յիսուս ո՛չ է անդ՝ և ո՛չ աշակերտքն նորա, առին նոքա զնա՛ւսն, և եկին ՚ի Կափառնառում խնդրել զՅիսուս: ²⁵Եւ իբրև գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ուա՛բբի՛ ե՞րբ եկիր այսր: ²⁶Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէ՛ք զուք զիս, իբրև ո՛չ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայ՞ք ՚ի հացէ անտի՛ և յագեցարո՛ւք՝: ²⁷Երթայ՞ք գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ՚ի կեանսն յաւիտեանականս, զոր Որդին մարդոյ տացէ՛ ձեզ. քանզի զնա Յայր կնքեաց Աստուած՝: ²⁸Ասեն ցնա. Ձի՞նչ առնիցենք զի զգործսն Աստուծոյ գործեսցուք: ²⁹Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Այն է գործն Աստուծոյ, զի հաւատասցիք յայն, զոր առաքեացն նա՝: ³⁰Ասեն ցնա. Ձի՞նչ նշան առնիցես, զի տեսցուք և հաւատասցուք, զի՞նչ գործիցես՝: ³¹Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ, որպէս և գրեալ է. Հա՛ց երկնից ետ նոցա ուտել՝: ³²Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. թէ ո՛չ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից. այլ Հայրն իմ տացէ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ՝: ³³Ձի՛ հաց յԱստուծոյ է, որ իջանէն յերկնից՝ և կեանս տայ աշխարհի՛: ³⁴Ասեն ցնա. Տէր՝ յամենայն ժամ տո՛ւր մեզ զհացն զայն՝: ³⁵Ասէ

* *Ոմանք.* Եկանակս գարեղէնս... առ այդ չափ մարդիկ:

* *Ոսկան.* Ցաշակերտսն իւր:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Որ զալոց է յաշ՛:

* *Բազուկք.* Ի՛ նաւ՝ զային յայն կոյս:

* *Ոմանք.* Եւ վարէր իբրև ասպարէսս... զՅիսուս զի գնայր ՚ի վերայ ծո՞... ՚ի նաւն՝ զարհուրե՛:

* *Ի բազուկս պակասի.* Եւ նա ասէ:

* *Բազուկք.* Ընդունել զնա ՚ի նաւն:

* *Ոմանք.* Բայց միայն միոյն: *Ուր Ոսկան.* Բաց ՚ի միոյն:

* *Ոմանք.* Խնդրէք զիս. իբր ոչ եթէ նշանս ինչ տե՛:

* *Ոմանք.* Յայն՝ որ առաքեացն զիս. և *ոմանք.* զոր առաքեացն զնա:

* *Ոմանք.* Ձի՛նչ ինչ նշանս առնես... զինչ գործեսցես:

* *Ոմանք.* Հաց յերկնից ետ:

* *Ոմանք.* Եթէ ոչ Մով՛... տայ ձեզ զհացն:

* *Ոսկան.* Ձի՛ հաց Աստուծոյ է: *Ոմանք.* Որ իջանէ յերկ՛:

ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ո՛չ երբէք ծարաւեսցի: ³⁶Այլ ասացի ձեզ՝ եթէ տեսէք զիս, և ո՛չ հաւատայք՝: ³⁷Չամենայն զոր տայ՝ ինձ Յայր, առ իս եկեսցէ. և որ գայ առ իս, ո՛չ հանից արտաքս: ³⁸Ձի իջի՛ ես յերկնից, ո՛չ զի զկանս իմ արարից, այլ զկանս այնորիկ որ առաքեացն զիս: զգ. ³⁹Այս եմ կամք Յօր իմոյ որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ե՛տ ցիս Յայր՝ ո՛չ կորուսից ՚ի նմանէ, այլ յարուցից՝ զնա յաւուրն յետնում: ⁴⁰Այս եմ կամք Յօր իմոյ. զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի՝ և հաւատայցէ ՚ի նա, ընկալցի՛ զկեանսն յաւիտենականս. և ես՝ յարուցից՝ զնա յաւուրն յետնում: ⁴¹Տրտնջէին զնմանէ Յրէայքն, զի ասաց թէ՛ ես եմ հացն իջեալ յերկնից. ⁴²և ասէին. Ո՞չ սա է որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն. իսկ արդ՝ զիարդ ասէ՛ եթէ ես յերկնից իջի՛: ⁴³Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ միմեանս. ⁴⁴ո՛չ ոք կարէ զալ առ իս, եթէ ոչ Յայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում: ⁴⁵Գրեալ է ՚ի մարգարես. Եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լսէ ՚ի Յօրէ՝ և ուսանի՝ զայ՛ առ իս: ⁴⁶Իբրև ո՛չ եթէ զՅայր՝ ուրուք տեսեալ իցէ. եթէ ոչ որ է՛ն յԱստուծոյ, նա՛՛ ետես զՅայր: ⁴⁷Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ հաւատայ՝ ընդունի՛ զկեանսն յաւիտենականս: ⁴⁸Ես եմ հացն կենաց: ⁴⁹Յարքն ձեր կերան զմանանայն յանապատին՝ և մեռան: ⁵⁰Այս է հացն, որ յերկնիցն իջեալ է. զի որ ուտիցէ ոք ՚ի սմանէ՝ մի՛ մեռանիցի: ⁵¹Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ: ⁵²Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ՝ կեցցէ՛ ՚ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի՛:

ԺԷ ⁵³Մարտնչէին ընդ միմեանս Յրէայքն և ասէին. Չիա՞րդ կարէ սա՛՛ տալ մեզ զմարմին իւր յուտել: ⁵⁴Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ո՛չ ունիք կեանս յանձինս: ⁵⁵Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում: ⁵⁶Ձի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է: ⁵⁷Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա: ⁵⁸Որպէս առաքեաց զիս կենդանին Յայր, և ես կենդանի՛ եմ վասն Յօր. և որ ուտէն զիս՝ և նա՛՛ կեցցէ վասն իմ: ⁵⁹Այս է հացն՝ որ յերկնից իջեալ. ո՛չ որպէս կերան հարքն ձեր զմանանայն՝ և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ՛ յաւիտեան: ⁶⁰Չայս ասաց ՚ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ՚ի Կափառնաուս: ⁶¹Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան՝ ասեն. Իսիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել դմա: ⁶²Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նորա, ասէ ցնոսա. Այդ՝ զայթազդեցուցանէ՞ զձեզ: ⁶³Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ՛ ուր էր զառաջինն: ⁶⁴Յոգին է կենդանարար, մարմին՝ ինչ ո՛չ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք: ⁶⁵Այլ եմ ոմանք ՚ի ձեռք՝ որ ո՛չ հաւատան: Քանզի գիտէ՛ր Յիսուս իսկզբանէ,

* *Յօրինակին.* Մեզ հացն զայն:

* *Ոսկան.* Թէ տեսանէք զիս:

* *Ոմանք.* Ձի ամենայն զոր ետ ցիս... յետնումն:

* *Ոսկան.* Որ տեսանէ զՈրդի և հաւատայ ՚ի նա:

* *Ոմանք յաւելուն.* Ո՞չ սա է Յիսուս՝ որդին Յով... զհայրն և զմայր:

* *Ոմանք.* Իբր ոչ եթէ զՅայր... որ ենն:

* *Ոսկան յաւելու.* Որ հաւատայ յիս՝ ընդունի:

* *Ոմանք.* Որ յերկնից իջեալ. զի... մի՛ մեռցի:

* *Ոսկան.* Կեցցէ յաւիտեան:

* *Ոմանք.* Չմարմին իւր ուտել:

* *Օրինակ մի.* Եւ որ սիրէն զիս, և նա կեցցէ:

* *Ոմանք.* Չայս ասաց ժողովրդ:՝

* *Ոսկան.* Իբրև լուան՝ ասէին:

* *Ոսկան.* Աշակերտքն իւր, ասէ:

* *Ոմանք.* Չբանսն զոր ես խօ:՝

ո՛վ են այնոքիկ որ ո՛չն հաւատան, և ո՛վ այն է որ մատնելոցն է զնա: Եւ ասէր* .⁶⁶Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ո՛չ ոք կարէ զալ առ իս, եթէ ո՛չ իցէ տուեալ ՚ի Զօրէ իմմէ՛: ⁶⁷Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս, և ո՛չ ևս շրջէին ընդ նմա՛: ⁶⁸Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն. Մի՞թէ՛ և դո՛ւք կամիք երթալ: ⁶⁹Պատասխանի ետ նմա Սիմովն Պետրոս. Տէր՝ առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս. ⁷⁰և մեք՝ հաւատացա՛ք և ծանեաք՝ եթէ դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ: ⁷¹Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, և մի՞դ ՚ի ձեցց սատանայ է՛: ⁷²Եւ ասէր զՍիմովնեան Յուդայէ՛ Սկարիովտացւոյ. զի նա՛ իսկ մատնելոց էր զնա. և մի էր յերկոտասանիցմ՛:

7

Գլուխ Է

ԺԸ դէ. ¹Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ՚ի Գալիլեա. քանզի ո՛չ կամէր ՚ի Զրեաստանի շրջել, զի խնդրէին զնա Զրեայքն սպանանել՛: ²Եւ էր մերձ տօնն Զրէից տաղաւարահարաց: ³Ասէն ցնա եղբարքն նորա. Գնա՛ աստի և երթ ՚ի Զրեաստան, զի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո զոր գործես: ⁴Ձի ո՛չ ոք է որ ՚ի ծածուկ ինչ գործէ, և խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա՛ զանձն քո աշխարհի՛: ⁵Քանզի և եղբարքն իսկ՝ չէին հաւատացեալ ՚ի նա: ⁶Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ չն է հասեալ. բայց ձեր ժամանակ՝ յամենայն ժամու պատրաստ է: ⁷Ո՛չ կարէ աշխարհի ատել զձեզ. բայց զիս ատեալ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են՛: ⁸Դո՛ւք երթայք ՚ի տօնն յայն, ես ո՛չ երթամ ՚ի տօնն յայն. զի իմ ժամանակ՝ չն է լցեալ: ⁹Չայս իբրև ասաց, ինքն մնաց անդէն ՚ի Գալիլեա՛: ¹⁰Իբրև ելին եղբարքն նորա, ապա՛ և ինքն ել ՚ի տօնն՝ ո՛չ յայտնի, այլ իբրև ՚ի ծածուկ՛: ¹¹Եւ Զրեայքն խնդրէին զնա ՚ի տօնի անդ՝ և ասէին. Ո՞ւր իցէ նա՛: ¹²Եւ քթմնջին էր զնմանէ ՚ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝ թէ բարուք է. այլք ասէին. Ո՛չ, այլ մոլորեցուցանէ՛ զժողովուրդսն: ¹³Եւ ո՛չ ոք համարձակ խօսէր զնմանէ վասն երկիւղին Զրէից. եկ. ¹⁴Իբրև տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս ՚ի տաճարն և ուսուցանէր: ¹⁵Չարմանային Զրեայքն և ասէին. Չիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք: ¹⁶Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Ի՛մ վարդապետութիւնս չէ՛ իմ, այլ այնորիկ որ առաքեացն զիս: ¹⁷Եթէ ոք կամի զկամս նորա առնել, գիտասցէ՛ վասն վարդապետութեանս, յԱստուծո՞յ իցէ արդեւք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ: ¹⁸Որ յանձնէ իւրմէ խօսի, փառս անծին իւրում խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա՛՝ նա ճշմարիտ է, և անիրաւութիւն ո՛չ գոյ ՚ի նմա՛: ¹⁹Ոչ Մովսէ՛ս ետ ձեզ զօրէնսն, և ո՛չ ոք ՚ի ձեցց առնէ զօրէնսն. ²⁰զի խնդրէք զիս սպանանել: Պատասխանի ետ ժողովուրդն՝ և ասէ. Դե՛ գոյ ՚ի քեզ, ո՞վ խնդրէ զքեզ

* Ոմանք. Եւ ո՛վ է այն որ մատնելոցն էր զնա:

* Ոմանք. Տուեալ նմա ՚ի Զօրէ:

* Ոմանք. Նորա՝ դարձան յետս, և ո՛չ շր՛:

* Ոմանք. Ձերկոտասանդ ընտրեցի, և մի՛նդ. կամ՝ մի՛նն. կամ՝ մի ՚ի ձեցց:

* Ոմանք. Ձի նա մատնելոց:

* Ոմանք. Եւ յետ այնորիկ: Ուր Ոսկան. Յետ այսորիկ:

* Ոսկան. Եւ խնդրէ զինքն համար՛:

* Ոմանք. Աշխարհս ատեալ զձեզ:

* Ոմանք. Մնաց անդրէն ՚ի Գա՛:

* Ոմանք. Եւ իբրև ելին եղբարքն, ապա:

* Ոմանք. Ի տօնին, և ասէին. Ուր իցէ սա:

* Ոմանք. Այլքն ասէին... զժողովուրդսն:

* Ոմանք. Անծին իւրոյ խնդրէ:

սպանանել*։ ²¹Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. Գործ մի գործեցի, և ամենեքին զարմացեալ էք։ ²²Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն. զի ոչ եթէ ՚ի Մովսէս էր, այլ ՚ի հարց անտի. և ՚ի շաբաթու թլփատէք զմարդ։ ²³Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն ամնու մարդ ՚ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսէսի լուծցին. ընդ իս ցասուցեալ էք՝ զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ՚ի շաբաթու։ եք. ²⁴Մի՛ ըստ ա՛յս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք։ ²⁵Ասէին ոմանք յերուսաղեմացւոց անտի. Ո՞չ նա է սա զոր խնդրէին սպանանել*։ ²⁶և ա՛ւասիկ՝ յայտնապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա. գուցէ արդեւք և իշխանքն գիտացին՝ թէ սա՛ իցէ Քրիստոսն*։ ²⁷Այլ՝ զսա գիտե՛մք ուստի է. իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ո՛չ ոք գիտէ ուստի՛ է*։ ²⁸Աղաղակեաց Յիսուս ՚ի տաճարին, ուսուցանէր՝ և ասէր. Եւ զի՛ս գիտէք, և ուստի եմ գիտէք. և յանձնէ իմնէ ո՛չ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս. զոր դուքն ո՛չ գիտէք*։ ²⁹Ես գիտեմ զնա. զի ՚ի նմանէ՛ իսկ եմ, և նա՛ առաքեաց զիս։

ԺՅ ³⁰Խնդրէին զնա ունել, և ել ՚ի ձեռաց նոցա. և ո՛չ ոք արկ ՚ի նա ձեռն, զի չն էր հասեալ ժամ նորա*։ ³¹Եւ բազումք ՚ի ժողովրդենէն հաւատացին ՚ի նա, և ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝ մի՞թէ՛ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սայս առնէ*։ ³²Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին քահանայապետքն և փարիսեցիքն սպասաւորս՝ զի կալցին զնա*։ ³³Ատ Յիսուս. Փոքր մեւս ևս ժամանակ ընդ ձե՛զ եմ. և երթամ առ այն՝ որ առաքեացն զիս*։ ³⁴Խնդրիցէք զիս՝ և ո՛չ գտանիցէք. և ուր եսն երթամ՝ դուք ո՛չ կարէք գալ*։ ³⁵Ասեն Յրեայքն ընդ միմեանս. Իսկ յո՞ երթայցէ դա՛ զի մեր ո՛չ գտանիցենք զդա. մի՞թէ՛ ՚ի սփիռս հեթանոսաց երթիցէ՛ և ուսուցանիցէ՛ զհեթանոսս*։ ³⁶Զի՞նչ է բանն այն զոր ասաց. Խնդրեցէք զիս՝ և ո՛չ գտանիցէք. և ուր եսն երթամ, դուք ո՛չ կարիցէք գալ*։ եզ. ³⁷Ի վերջնում ավուր մեծի՛ տօնին, կայր Յիսուս՝ աղաղակէր և ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս՝ և արբցէ։ ³⁸Որ հաւատայ յիս՝ որպէս և ասեն զիրք. Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան*։ ³⁹Չայս ասէր՝ վասն Յոզուոյն զոր ընդունելոց էին որ հաւատային ՚ի նա. զի չն էր Յոզի, քանզի Յիսուս չն էր փառաւորեալ*։ ⁴⁰Ոմանք ՚ի ժողովրդենէն իբրև լսէին զբանս զայս, ասէին. Սա՛ է ճշմարիտ մարգարէն։ ⁴¹Այլքն ասէին. Սա՛ է Քրիստոսն։ Իսկ կէսքն ասէին. Մի՞թէ՛ ՚ի Գալիլէ՞ գալոց իցէ Քրիստոս։ ⁴²Ո՞չ զիրք ասեն՝ եթէ ՚ի զաւակէ Դաւթի, և ՚ի Բեթղահէմ գեղջէ՛ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոս։ ⁴³Եւ եղև հերձուած ՚ի մէջ ժողովրդեանն վասն նորա*։ ⁴⁴Եւ ոմանք ՚ի նոցանէ կամեցան ունել զնա. այլ ո՛չ ոք մխեսաց ՚ի նա ձեռն*։ ⁴⁵Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փարիսեցիս. և ասեն սոքա ցնոսա. Ընդէ՞ր ո՛չ ածէք զնա այսր*։ ⁴⁶Պատասխանի ետուն սպասաւորքն և ասեն. Ո՛չ երբէք խօսեցաւ մարդ, որպէս այրն

*Ոմանք. Ո՞ խնդրէ զքեզ։

*Ոմանք. Յերուսաղեմացւոցն. Ո՛չ նա... զոր խնդրէին։

*Ոմանք. Եւ չասեն ինչ ընդ նա։ Ոմանք. Եթէ սա է Քրիստոսն։

*Ոմանք. Ոչ ոք գիտէ ուստի իցէ։

*Ոմանք. Եւ ուստի եմ գի... իմնէ չեմ եկեալ։

*Ոմանք. Արկ ՚ի նա ձեռս։

*Ոմանք. Քան զորս այս արար։

*Ոմանք. Եւ առաքեն քահա՞։

*Ոմանք. Փոքր մի ևս ժա՞։

*Ոմանք. Խնդրէք զիս՝ և ոչ... և ուր եսն եմ, դուք ոչ։

*Ոմանք. Ասէին Յրեայքն... ՚ի սփիռս հեթանոսաց երթայցէ։

*Ոմանք. Խնդրիցէք զիս... դուք ոչ կարէք գալ։

*Ոմանք. Որպէս ասեն... բղխեսցեն ջր՞։

*Ոմանք. Վասն զի Յիսուս չն էր փա՞։

*Ոսկան. Ի՞ ժողովրդեանն վասն նորա։

*Ոմանք. Ո՛չ ոք արկ ՚ի նա ձեռս։

*Ոմանք. Եւ առ փարիսեց՞։

այն՝: ⁴⁷Պատասխանի ետուն փարիսեցիքն և ասեն. Մի՞թե՛ և դուք մոլորեցարո՞ւք:
⁴⁸Մի՞թե՛ որ յիշխանացն հաւատա՞ց ՚ի նա՛ կամ ՚ի փարիսեցւոցն՞. ⁴⁹այլ այն խաժամու՛ժ
 ամբոխ՝ որ ո՛չ գիտէ զօրէնս, և նզովեալք են՞: ⁵⁰Ասէ Նիկողեմնոս ցնոսա՛ որ եկեալն էր
 առ նա ՚ի գիշերին յառաջագոյն և մի՛ էր ՚ի նոցանէ՞. ⁵¹Մի՞թե՛ օրէնքն մեր՝ դատի՞ն
 զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ՚ի նմանէ, կամ գիտեն զինչ գործէ՞: ⁵²Պատասխանի ետուն
 նմա և ասեն. Մի՞թե՛ և դո՛ւ ևս ՚ի Գալիլեէ՛ իցես. քննեա՛ և տես, զի մարգարէ ՚ի Գալիլեէ
 ո՛չ յառնէ՛:

8

Գլուխ Ը

Եդ. ¹²Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս՝ և ասէ. Ե՛ս եմ լո՛յս աշխարհի. որ գայ զկնի
 իմ՝ ընդ խաւար մի՛ գնասցէ. այլ ընկալցի՛ զլոյսն կենաց: ¹³Ասեն ցնա փարիսեցիքն. Դու
 վասն անձի՞ն քոյ վկայես, և վկայութիւն քո չէ՛ ճշմարիտ՞: ¹⁴Պատասխանի ետ Յիսուս՝ և
 ասէ ցնոսա. Թեպէտ և ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է. զի
 գիտեմ ուստի եկի՛ և յո՛ երթամ. բայց դուք ո՛չ գիտէք ուստի գամ՝ կամ յո՛ երթամ՞: ¹⁵Դուք
 ըստ մարմնոյ դատիք. ես ո՛չ դատիմ և ո՛չ զոք՞. ¹⁶Թեպէտ և դատի՛մ ևս զոք՝
 դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես՝ և որ առաքեացն զիս Յայր: ¹⁷Եւ
 յօրէնսն իսկ ձեր գրեալ է, թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է: ¹⁸Ես եմ որ
 վկայեմ վասն իմ. և վկայէ վասն իմ որ առաքեացն զիս Յայր: ¹⁹Ասէին ցնա. Ո՞ւր է Յայր
 քո: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Ո՛չ զիս գիտէք՝ և ո՛չ զՅայրն իմ. եթէ զիս
 գիտէիք՝ և զՅայրն իմ թերևս գիտէիք՞: ²⁰Ձայս բանս խօսեցաւ Յիսուս ընդ նոսա ՚ի տան
 գանձին, յորժամ ուսուցանէր ՚ի տաճարի անդ. և ո՛չ որ կալաւ զնա, զի չէ՛ ևս հասեալ էր
 ժամ նորա՞: Եե. ²¹Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես երթամ, և խնդրիցէք զիս. և ՚ի մե՛ղս
 ձեր մեռանիջիք. զի ուր եսն երթամ, դուք ո՛չ կարէք գալ՞: ²²Ասէին Յրեայքն. Մի՞թե՛

* Ոմանք. Ոչ երբէք այնպէս խօսեցաւ:

* Ոմանք. Յիշխանացն որ հաւա՞:

* Յոմանս պակասի. Այն խաժամու՛ժ ամբոխ. և ոմանք միտեստ գրեն. խաժամու՛ժ ամբոխ,
 որ ոչ գիտեն:

* Ոմանք. Առ նա գիշերին յառա՞:

* Ոմանք. Նախ ինչ ՚ի նմանէ:

* Ոսկան. Եւ դու ևս Գալիլեացի իցես: *Ի յերեսուն գրչագիր օրինակաց մերոց՝ իբր հինգ
 միայն նորագոյնք՝ աստէն յետ 52 համարոյ՝ ըստ Լատինականին յաւելեալ համար 53.*

* Գնացին իւրաքան՞. *Հարունակեալ դնեն զպատմութիւն շնացեալ կնոջն: Իսկ
 մնացելքն առհասարակ համաձայն մերունս օրինակի՝ ՚ի վախճան Յովհաննու
 Աւետարանիս ուրոյն կարգեն, որպէս և մեք եղաք: Բաց ՚ի վեցից հնագոյն օրինակաց՝
 որք աստ և անդ իսպառ զանց առնեն զնովաւ. որպէս և գրչագիր ճաշոցք ՚ի կարգի անդ
 յինանց աւետարանացն զընթերցուած հինգերորդ երեքշաբթի յայս բան աւարտեն՝ ՚ի
 Գալիլեէ ոչ յառնէ. և թողեալ զնոյն՝ զընթերցուած չորեքշաբթին սկսանին՝ Դարձեալ
 խօսեցաւ Յիսուս: Ուր թաղեհսեան ճաշոցին տպագրութիւնն՝ թերևս առեալ յոսկանայ
 ենոյժ յայն ընթերցուած:*

* Ոմանք. Ոչ է ճշմարիտ:

* Ոմանք. Եւ ես վկայեմ վասն իմ, վկ՛... ոչ գիտէք ուստի եկի, և յո՛:

* Ոմանք. Ես ոչ ըստ մարմնոյ դատիմ և ոչ զոք:

* Ոմանք. Ասեն ցնա. Ո՞ւր է... ո՛չ զիս գիտէք, և զՅայրն թերևս գիտէք:

* Ի բազումս պակասի. խօսեցաւ Յիսուս ընդ նոսա ՚ի տան գան՞: *Օրինակ մի. Ի տան
 գանձանակին:*

* Ոմանք. Մեռանիջիք:

զիրովին երթայցէ, զի ասէ՝ թէ ուր եսն երթամ դուք ո՛չ կարէք գալ*։²³ Եւ ասէ ցնոսա. Դուք՝ ՚ի ներքուստ աստի էք, և ես՝ ՚ի վերուստ անտի եմ. դուք՝ յաշխարհէ՛ աստի էք, ես՝ չեմ յայսմ աշխարհէ*։²⁴ Բայց ասացի ձեզ՝ թէ ՚ի մեղս ձեր մեռանիցիք. զի թէ ո՛չ հաւատայցէք թէ ես եմ, մեռանիցիք ՚ի մեղս ձեր*։²⁵ Ասեն ցնա. Դու ո՞վ ես։ Ասէ ցնոսա Յիսուս. Նախ՝ զի և խօսիմս իսկ ընդ ձեզ*։²⁶ Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել և դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. և ես զոր լուայն՝ ՚ի նմանէ՛ զայն խօսիմ յաշխարհի*։²⁷ Եւ ո՛չ գիտացին՝ թէ զՅօրէ ասէր ցնոսա։²⁸ Ասէ ցնոսա Յիսուս. Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասցիք՝ թէ ես եմ. և յանձնէ իմնէ ինչ ո՛չ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս Յայրն իմ, զայն խօսիմ*։²⁹ Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ո՛չ եթող զիս միայն, զի ես զհաճոյս նորա առնեմ հանապազ։³⁰ Իբրև զայս խօսեցաւ, բազումք հաւատացին ՚ի նա։ Եզ. ³¹Եւ ասէր Յիսուս առ Յրէայսն հաւատացեալս. Եթէ դուք կացցիք ՚ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք*։³² Եւ ծանիցիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։³³ Պատասխանի ետուն նմա՝ և ասեն. Չաւակ Աբրահամո՛ւ եմք, և ո՛չ ումեք երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես եթէ ազատք լինիցիք*։³⁴ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ամեն ասեն ձեզ. թէ ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։³⁵ Եւ ծառայն՝ ո՛չ յաւիտեան կայ ՚ի տան, իսկ որդին ՚ի յաւիտեան կայ*։³⁶ Իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք լինիցիք։³⁷ Գիտեն զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել զիս. զի բանին իմոյ չիք տեղի ՚ի ձեզ*։³⁸ Ես՝ զոր տեսի առ Յօր իմում՝ խօսիմ. և դուք՝ զոր լուայն ՚ի Յօրէն ձերմէ՛ առնէք*։³⁹ Պատասխանի ետուն նմա՝ և ասեն. Յայր մեր՝ Աբրահամ է։ Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք Աբրահամո՛ւ էիք՝ զգործսն Աբրահամու գործէիք։⁴⁰ Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս. զայր մի որ ձեզ զճշմարտութիւնն խօսեցայ՝ զոր լուայն ՚ի Յօրէ իմնէ. զայդ՝ Աբրահամ ո՛չ արար*։⁴¹ Դուք առնէք զգործս հօրն ձերոյ։ Ասեն ցնա. Մեք ՚ի պռնկութենէ չենք ծնեալ. մի է Յայր մեր, Աստուած։⁴² Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Աստուած էր Յայր ձեր, սիրէիք արդէք զիս, զի ես յԱստուծոյ ելի՝ և եկի. և ո՛չ եթէ յանձնէ՛ ինչ եկի, այլ նա՛ առաքեաց զիս։⁴³ Ընդէ՞ր զիսո՛սս իմ ո՛չ գիտէք դուք. վասն զի ո՛չ կարէք լսել զբանն իմ*։⁴⁴ Դուք՝ ՚ի հօրէ ՚ի Սատանայէ՛ էք, և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր իսկզբանէ, և ՚ի ճշմարտութեան ո՛չ եկաց. զի ո՛չ գոյ ճշմարտութիւն ՚ի նմա. յորժամ խօսիցի՝ սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սո՛ւտ է և հայր նորա*։⁴⁵ Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ, ո՛չ հաւատայք ինձ*։⁴⁶ Ո՞րք ՚ի ձէնց յանդիմանեսցէ զիս վասն մեղաց. եթէ զճշմարտիտն ասեն, ընդէ՞ր ո՛չ հաւատայք ինձ*։⁴⁷ Որ է՛ն յԱստուծոյ, զբանս Աստուծոյ լսէ. և դուք վասն այնորիկ ո՛չ լսէք, զի չէք

* *Ոմանք.* Ասեն Յրէայքն։

* *Ոմանք.* Եւ ես չեմ յաշխարհէ։

* *Ոմանք.* Ձեր մեռանիցիք... մեռանիցիք ՚ի մեղս ձեր։

* *Ոմանք.* Դու ո՞ ես։

* *Օրհնակ մի.* Չայն խօսիմ յաշխարհէս։

* *Ոմանք.* Ինչ ոչ խօսիմ. այլ։

* *Ոմանք.* Ի բանին իմում։

* *Ոմանք.* Պատասխանի ետուն նմա Յրէայքն և ասեն... թէ ազատ լինիցիք։

* *Ոմանք.* Որդին յաւիտեան կայ ՚ի տանն։

* *Ոմանք.* Ձի բանի իմում չիք։

* *Ոմանք.* Առ ՚ի Յօր իմում... առ ՚ի Յօրէն ձերմէ։ *Բազումք.* Չոր լուարուք ՚ի Յօրէն։

* *Ոսկան.* Այլ այժմ խնդրէք։ *Յոմանս պակասի.* Սպանանել զիս՝ զայր մի։

* *Ոմանք.* Վասն զի ոչ կամիք լսել։

* *Ոմանք.* Ի Յօրէ Սատանայէ էք, և ցանկութիւն... և ՚ի ճշմարտութիւն ոչ եկաց... զի

յորժամ խօսեսցի սուտ... հայրն նորա։

* *Ոմանք.* Ես զճշմարտութիւնն խօսիմ։

* *Ի լուս՝.* Ո՞րք ՚ի ձէնց յանդիմանէ զիս վասն. *համաձայն բազմաց ՚ի բնար՝.* Ոսկան. Եթէ զճշմարտութիւն ասեն ձեզ՝ ընդէր ոչ։

յԱստուծոյ*։ ⁴⁸Պատասխանի ետուն Յրեայքն և ասեն ցնա. Ո՞չ բարուք ասենք մեք՝ եթէ Սամարացի ես դու, և դև՝ գոյ ՚ի քեզ*։ ⁴⁹Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Յիս դև՝ ո՞չ գոյ. այլ պատուեն՝ զՅայր իմ, և դուք՝ անարգէք զիս*։ ⁵⁰Ես՝ ո՞չ խնդրեն զփառս իմ. է՛ որ խնդրեն և դատի։ ⁵¹Ամէն ամէն ասեն ձեզ. Եթէ որ զբանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ ՚ի յաւիտեան*։ ⁵²Ասեն ցնա Յրեայքն. Արդ՝ զհտացաք թէ՛ դև՝ գոյ ՚ի քեզ. Աբրահամ մեռաւ և մարգարէքն, և դու ասես. Եթէ որ զբանն իմ պահեսցէ, մի՛ ճաշակեսցէ զմահ ՚ի յաւիտեան*։ ⁵³Միթէ՛ դու մե՞ծ ինչ որ իցես քան զհայրն մեր Աբրահամ որ մեռաւ, և մարգարէքն մեռան. արդ՝ դու զո՞վ առնես զքեզ*։ ⁵⁴Պատասխանի ետ Յիսուս. Եթէ ես փառաւորեն զանձն իմ, փառքն իմ՝ ո՞չ ինչ են. է՛ Յայր որ փառաւորէ զիս, զորմէ՛ դուքն ասէք՝ թէ Աստուած մեր է. ⁵⁵և ո՞չ ճանաչէք զնա։ Բայց ես գիտեմ զնա. և թէ ասեն, թէ ո՞չ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա, և զբան նորա պահեմ*։ ⁵⁶Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, ետես և ուրախ եղև։ ⁵⁷Ասեն ցնա Յրեայքն. Յիսուսն ամ չև՛ ևս է քո, և զԱբրահամ տեսե՞ր*։ ⁵⁸Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեն ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես*։ ⁵⁹Վէ՛մս առին Յրեայքն, զի արկցեն ՚ի վերայ նորա. և Յիսուս խոյս ետ և ել զնաց ՚ի տաճարէ անտի*։

9

Գլուխ Թ

՚ի եւ. ¹Եւ մինչդեռ անցաներ, ետես այր մի կոյր ՚ի ծնէ. ²և հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն. Ռաբբի՛ ո՞ր վնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնաւ*։ ³Պատասխանի ետ Յիսուս. Ո՞չ դորա՞ վնաս է, և ո՞չ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի՛ լիցին գործքն Աստուծոյ ՚ի դմա*։ ⁴Եւ ինձ պարտ է՛ գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ՝ զիչեր՝ յորժամ ո՞չ որ կարէ գործել*։ ⁵Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։ ⁶Ձայս իբրև ասաց, եթուք ՚ի գետին՝ և արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին. ⁷և ասէ ցնա. Երթ լուս՝ յաւազանին Սիլովամայ. որ թարգմանի՛ Առաքեալ. չոգաւ լուացաւ, եկն և տեսանէր*։ ⁸Իսկ դրացիքն և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր։ Կէսքն ասէին. Նա՛ է*։ ⁹Այլքն ասէին. Ո՞չ. այլ նման է նմա։ Եւ ինքն ասէր՝ թէ ես եմ։ ¹⁰Ասեն ցնա. Իսկ զիա՞րդ բացան աչք քո։ ¹¹Նա՛ ետ պատասխանի. Այր մի՛ որում Յիսուսն ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. Երթ ՚ի Սիլովամ՝ և լուս՛. չոգայ լուացայ և տեսանեմ*։ ¹²Ասեն ցնա. Ուր է նա։ Ասէ ցնոսա. Ո՞չ գիտեմ։ ¹³Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։ ¹⁴Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս. և

* *Յօրինակին պակասէր. Եւ դուք։*
 * *Յօրինակին պակասէր. Ասենք մեք՝ եթէ։*
 * *Օրինակ մի. Եւ դուք անարգէք զնա։*
 * *Ոմանք. Ձի որ զբանն իմ պա՛... մի՛ տեսցէ յաւիտեան։*
 * *Ոմանք. Ձմահ մի՛ ճաշակեսցէ յաւիտեան։*
 * *Յօրինակին պակասէր. Արդ՝ դու։ Ոմանք. Ձո՞ առնես զքեզ։*
 * *Ոմանք. Եւ եթէ ասեմ... զբանն նորա։*
 * *Ոմանք. Ամ չև՛ է քո։ Ուր օրինակ մի. Ձև ևս է լցեալ քո, և զԱբրա՛։*
 * *Ոմանք. Ձլինել Աբրահա՛։*
 * *՚ի բազումս պակասի. Վէմս առին Յրեայքն զի։*
 * *Բազումք. Ձի կոյր ծնցի։*
 * *Ոմանք. Յայտնի լինիցին։*
 * *Ոսկան. Մինչ օր կայ։ Ոմանք. Յորում ոչ որ կարէ գոր՛։*
 * *Ոմանք. Յաւազանին Սելովմայ։*
 * *Ոմանք. Ոչ սա է որ նա՛. և ոմանք. Ոչ սա էր նա որ։*
 * *Ոմանք. Յիսուսն ասէին։*

եբաց զաչս կուրին: ¹⁵Դարձեալ հարցանէին զնա և փարիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես: Եւ նա՝ ասէ ցնոսա. Կա՛ւ եդ՝ ՚ի վերայ աչաց իմոց, և լուացայ՝ և տեսանեմ՞: ¹⁶Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն. Ո՛չ է ա՛յրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ո՛չ պահէ: Կէսքն ասէին. Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր՝ այսպիսի նշանս առնել: Եւ էին հերձուածք ՚ի մէջ նոցա: ¹⁷Ասեն դարձեալ ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո: Եւ նա ասէ՝ թէ մարգարէ՛ է: ¹⁸Եւ ո՛չ հաւատային Յրէայքն զնմանէ՝ թէ կո՛յր էր՝ և բացաւ, մինչև կոչեցին զժնօղս բացելոյն՞. ¹⁹հարցին ցնոսա և ասեն. Սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ կո՛յր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ: ²⁰Պատասխանի ետուն ծնօղքն նորա՝ և ասեն. Գիտեմք զի սա՛ է որդին մեր, և զի կո՛յր ծնաւ՞. ²¹բայց զիա՞րդ այժմդ տեսանէ, ո՛չ գիտեմք. կամ թէ՛ ո՞վ եբաց զաչս դորա, մեք ո՛չ գիտեմք. ցոա՛ իսկ հարցէք, ինքնին ՚ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեցցի վասն իւր՞: ²²Ձայս ասացին ծնօղքն նորա, զի երկնչէին ՚ի Յրէիցն. քանզի ո՛ւխտ եղեալ էր Յրէից, եթէ ոք խոստովանեսցէ զնա Քրիստոս ՚ի բա՛ց կացցէ ՚ի ժողովրդեանէն՞: ²³Վասն այնորիկ ասացին ծնօղքն նորա, թէ ինքնին ՚ի չափ հասեալ է՝ ցնա՛ իսկ հարցէք: ²⁴Դարձեալ կրկին՝ անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա. Տո՛ւր փառս Աստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է: ²⁵Եւ նա՝ ասէ. Թէ մեղաւոր իցէ՛ ես ո՛չ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ՞: ²⁶Դարձեալ՝ ասեն ցնա. Ձի՞նչ արար քեզ. զիա՞րդ եբաց զաչս քո: ²⁷Պատասխանի ետ նոցա. Այժմ ասացի ձեզ՝ և ո՛չ լուարուք, զի՞ կամիք միւսանգամ լսել. մի՞թէ՛ և դուք կամիք աշակերտել նմա: ²⁸Նոքա հայիոյէին զնա՝ և ասէին. Դո՛ւ լիջիր նորա աշակերտ. մեք՝ Մովսիսի աշակերտք եմք: ²⁹Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի՛ խօսեցաւ Աստուած. զսա՛ ո՛չ գիտեմք ուստի՛ է՞: ³⁰Պատասխանի ետ այրն՝ և ասէ ցնոսա. Ա՛յդ իսկ են սքանչելիք. զի դուք ո՛չ գիտէք ուստի՛ իցէ, և զիմ զաչս եբաց՞: ³¹Գիտեմք զի Աստուած՝ մեղաւորաց ո՛չ լսէ. բայց թէ աստուածապա՛շտ ոք իցէ, և զկամս նորա առնիցէ, նմա՛ լսէ՞: ³²Ի յաւիտենից ոք ո՛չ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ՛ կոյր ծնելոյ՞: ³³Եթէ ո՛չ յԱստուծոյ էր այրն այն, ո՛չ կարէր առնել ինչ: ³⁴Պատասխանի ետուն՝ և ասեն ցնա. Ի՛ մեղս իսկ ծնեալ ես ամենկին, և դու վարդապե՞տ լինիս մեր: Եւ հանին զնա արտաքս: ³⁵Լուա՛ւ Յիսուս եթէ հանին զնա արտաքս, և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու՛ հաւատա՞ս յորդի Աստուծոյ: ³⁶Նա պատասխանի ետ՝ և ասէ. Տէր ո՞վ է՛ զի հաւատացից ՚ի նա: ³⁷Ասէ ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա՛ է: ³⁸Եւ նա ասէ. Հաւատամ Տէր: Եւ երկիր եպագ զնա: զկ. ³⁹Եւ ասէ Յիսուս. Ի՛ դատաստանս եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք տեսանենն՝ կուրացին՞: ⁴⁰Լուան ոմանք ՚ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. Մի՞թէ՛ և մե՞ք կոյրք իցեմք՞: ⁴¹Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ո՛չ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ թէ տեսանեմք, և մեղքն ձեր ՚ի ձե՛զ հաստատեալ են՞:

10

* *Ոմանք.* Հարցանէին ցնա փարիսեցիքն:

* *Ոմանք.* Եւ ոչ հաւատացին Յր՞:

* *Ոմանք.* Պատասխանի ետուն նոցա ծն՞:

* *Ոմանք.* Այժմ տեսանէ... ո՛ եբաց զաչս... ինքդ իսկ խօ՞:

* *Ոմանք.* Խոստովանեսցի զնա:

* *Ոմանք.* Թէ մեղաւոր է՛ ես:

* *Ոմանք.* Ուստի իցէ:

* *Ոմանք.* Ուստի է, և զիմ զա՞:

* *Ոմանք.* Գիտեմ զի Աստուած... բայց եթէ:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Ի՛ ծնէ կոյր ծնիցելոյ:

* *Ոմանք.* Ի՛ դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչ տեսանենն:

* *Ոմանք.* Ի՛ փարիսեցւոցն՝ և որ ընդ նմայն էին:

* *Յօրինակին.* Եթէ կոյրք էիք: *Ոմանք.* Ձեր մեղս:

Գլուխ Ժ

¹Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ ո՛չ մտանէ ընդ դուռն ՚ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ ա՛յլ ելանէ, նա՛ գո՛ղ է, և աւազակ՛: ²Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց: ³Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայնի նորա լսեն. և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ զնոսա: ⁴Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, և ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա: ⁵Ձօտարի զհետ ո՛չ երթիցեն, այլ փախիցեն ՚ի նմանէ, զի ո՛չ ճանաչեն զձայն օտարաց: ⁶Ձայս առակ՝ ասաց նոցա՝ Յիսուս, և նոքա ո՛չ գիտէին՝ թէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսա: ⁷Դարձեալ՝ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ե՛ս եմ դուռն ոչխարաց: ⁸Ամենեքեան որ յառաջ քան զիս եկին, գո՛ղք էին և աւազակք. այլ ո՛չ լուան նոցա ոչխարքն: ⁹Ես եմ դուռն. ընդ իս թէ որ մտանիցէ, կեցցէ՛. մտցէ, և ելցէ, և ճարակ գտցէ՛: ¹⁰Գող ո՛չ գայ՝ եթէ ոչ զի գողասցի և սպանցէ՛ և կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին:

ԻԱ զբ. ¹¹Ե՛ս եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զամձն իւր դնէ՛ ՚ի վերայ ոչխարաց: ¹²Իսկ վարձկանն որ ո՛չ է հովիւ, որոյ ո՛չ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի՛. և գայլն յափշտակէ՛ զնոսա և ցրուէ. ¹³քանզի վարձկան է, և չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն: ¹⁴Ե՛ս եմ հովիւն քաջ. և ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն: ¹⁵Որպէս գիտէ զիս Յայր, գիտեմ և ես զՅայրն. և զամձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց: ¹⁶Նա՛ և ա՛յլ ևս ոչխարք են իմ, որ ո՛չ են յայսմ գաւթէ. և զայնս ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի իմուն լուիցեն, և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ: ¹⁷Վասն այնորիկ սիրէ զիս Յայր իմ, զի ես դնեմ զամձն իմ. զի միւսնգամ առից գնա՛: ¹⁸Ո՛չ որ հանէ գնա յինէն. այլ ե՛ս դնեմ գնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել գնա. և իշխանութիւն ունիմ միւսնգամ առնուլ գնա. զայս պատուէր առի՛ ՚ի Յօրէ իմմէ: ¹⁹Դարձեալ հերձուած լինէր ՚ի մէջ Յրէիցն վասն բանիցս այսոցիկ: ²⁰Եւ ասէին բազումք ՚ի նոցանէ. Դե՛ գոյ ՚ի նմա՝ և մոլեգնի՛, զի՞ բնաւ լսէք նմա: ²¹Կէսքն ասէին. Այսպիսի բանք ո՛չ դիւստարի են. մի՞թէ՛ դե՞ կարէ զաչս կուրի բանալ:

ԻԲ զգ. ²²Եղեն յայնժամ նաւակատիքն յերուսաղէմ, և ձմեռն էր: ²³Եւ շրջէր Յիսուս ՚ի տաճարին ՚ի սրահին Սաղովմոնի: ²⁴Շո՛ւրջ եղեն զնովաւ Յրեայքն և ասեն. Մինչև յերթ թափես զոգիս մեր, եթէ դու ես Քրիստոսն՝ ասա՛ մեզ համարձակ: ²⁵Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Ասացի՛ ձեզ՝ և ո՛չ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Յօր իմոյ՝ նոքին վկայեն վասն իմ: ²⁶Այլ դուք ո՛չ հաւատայք, զի չէ՛ք յոչխարաց անտի իմոց: ²⁷Ոչխարք իմ ձայնի իմուն լսեն, և ե՛ս ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան. ²⁸և ես տան նոցա զկեանսն յաւիտեանականս. և մի՛ կորիցեն ՚ի յաւիտեան. և մի՛ որ յափշտակեսցէ զնոսա ՚ի ձեռաց իմոց: ²⁹Յայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մե՛ծ է քան զամենայն, և ո՛չ որ կարէ յափշտակել ՚ի ձեռաց Յօր իմոյ: ³⁰Ես և Յայր իմ մի ենք: ³¹Վէմս առին Յրեայքն՝ զի քարկո՛ծ արասցեն գնա: ³²Պատասխանի ետ նոցա Յիսուս. Բազում գործս բարիս ցուցի ձեզ ՚ի Յօրէ իմմէ. վասն որո՞յ գործոյ ՚ի նոցանէ քարկո՛ծ առնէք զիս: ³³Պատասխանի ետուն նմա Յրեայքն. Վասն բարւոյ գործոյ ո՛չ առնենք զքեզ քարկո՛ծ, այլ վասն հայիոյութեան. և զի դու մարդ ես, և զամձն քո Աստուած առնես:՝

* *Ոմանք.* Ընդ դուռնն ՚ի գաւիթ ոչխարաց:

* *Ոմանք.* Ոչ գիտէին զինչ էր:

* *Ոմանք.* Ես եմ դուռնն... եթէ որ մտցէ:

* *Ի լուս՝.* Եւ զայն ևս պարտ. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

* *Ոմանք.* Վասն այսորիկ սիրէ:

* *Ոմանք.* Եւ եղեն... նաւակատիք յերուսաղէմ:

* *Օրինակ մի.* Եւ ոչ հաւատացէք ինձ: *Ոմանք.* Նոքին իսկ վկայեն վասն:

* *Ոմանք.* Ոչ հաւատայք ինձ զի չէ՛ք ՚ի յոչխարաց անտի իմոյ:

* *Օրինակ մի.* Եւ մի ՚ի նոցանէ ոչ կորիցեն յաւիտեան:

* *Ոմանք.* Նոցա Յիսուս՝ և ասէ. Բազում:

* *Ոմանք.* Յրեայքն և ասեն:

³⁴Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցէք: ³⁵Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղև. և չէ՛ մարթ եղծանել գրոյն՝. ³⁶Իսկ զոր Հայր սրբեաց՝ և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝ թէ հայհոյե՛ս. զի ասացի՝ թէ Որդի Աստուծոյ եմ՝: ³⁷Եթէ ո՛չ գործեն զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ: ³⁸Ապա թէ գործեն, թէ և ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործոցն հաւատայցէ՛ք. զի գիտասցիք և ծանիջի՛ք՝ եթէ Հայր յիս, և ես ՚ի Հայր՝: ³⁹Դարձեալ խնդրէին զնա ունել, և ե՛լ ՚ի ձեռաց նոցա: ⁴⁰Եւ գնաց միւսանգամ յայն կոյս Յորդանանու, ՚ի տեղին ուր էր Յովհաննէս զառաջինն՝ և մկրտէր. և անդ լինէր: ⁴¹Եկին բազումք առ նա՝ և ասեն. Չի Յովհաննէս նշան ինչ ո՛չ արար՝. ⁴²բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր. և բազումք հաւատացին ՚ի նա անդ՝:

11

Գլուխ ԺԱ

ԻԳ զդ. ¹Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ՚ի Բեթանիայ, ՚ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռ նորա: ²Այս այն Մարիամ էր որ օ՛ծ զՏէրն իւղով, և ջընջեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր: ³Առաքեցին առ նա քորքն նորա՝ և ասեն. Տէր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է: ⁴Իբրև լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ՛ ՚ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ՝: ⁵Եւ սիրէր Յիսուս՝ զՄարիամ, և զՄարթա զքոյր նորա, և զՂազար՝: ⁶Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի՛ կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս: ⁷Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէաստան: ⁸Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի, այժմ ևս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ անել, և դարձեալ երթա՞ս անդդն: ⁹Պատասխանի ետ Յիսուս. Ոչ երկոտասա՞ն ժամ է յաւուր. եթէ որ զնայ ՚ի տուընջեան՝ ո՛չ գայթազի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ՛. ¹⁰ապա թէ որ զնայ գիշերի՛ գայթազի՛, զի լոյս ո՛չ գոյ ընդ նմա՛: ¹¹Չայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցի՛ց զնա: ¹²Ասեն ցնա աշակերտքն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի՞: ¹³Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. Նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյ ասէր՝: ¹⁴Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս՝ յայտնապէս. Ղազարոս մեռաւ. ¹⁵և ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասցիք ինձ, զի ես չէի՛ անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա: ¹⁶Ասէ Թովմաս՝ անուանեալն Երկուորեակ՝ ցաշակերտակիցսն. Աւն եկայք և մեք՝ զի ընդ նմա՛ մեռցուք: ¹⁷Եկն Յիսուս՝ եգիտ զնա չորեքօրեայ՝ ՚ի գերեզմանի՛: ¹⁸Եւ էր Բեթանիա մերձ յերուսաղէն, իբրև ասպարիսօք հնգետասան: ¹⁹Բազումք ՚ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն: ²⁰Մարթա իբրև լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդ առաջ զնաց նորա. բայց Մարիամ նստէր անդէն ՚ի տան: ²¹Ասէ

* Ոմանք. Եթէ զնոսա աստուածս անուանէ, առ որս:

* Ոմանք. Եւ առաքեաց յաշխարհս... Աստուծոյ Որդի եմ:

* Բազումք. Սակայն գործոցն հաւատացէ՛ք. զի:

* Ոմանք. Նշանս ինչ ո՛չ արար՝:

* Ոմանք. Վասն սորա՝ ճշմարիտ էր:

* Ոմանք. Չի փառաւորեսցի Որդի:

* Ոմանք. Եւ սիրէր Յիսուս զՄարթա, և զքոյր նորա զՄարիամ, և զՂազար:

* Ոմանք. Ժամ է աւուր:

* Ոմանք. Գնայ ՚ի գիշերի:

* Ոսկան. Աշակերտքն նորա. Տէր:

* Ոմանք. Վասն ննջելոյ քնոյն ասէ:

* Ոմանք. Եկն Յիսուս և եգիտ զնա:

* Ոմանք. Եթէ Յիսուս գայ... անդէն ՚ի տան:

Մարթա ցՅիսուս. Տէր՝ եթէ աստ լիեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. ²²այլ և արդ գիտե՛մ, թէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ՛քեզ Աստուած՝: ²³Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ՛ եղբայրն քո: ²⁴Ասէ ցնա Մարթա. Գիտե՛մ զի յարիցէ՛ ՚ի յարութեան՝ յաւուրն յետնում: ²⁵Ասէ ցնա Յիսուս. Ե՛ս եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ՛. ²⁶և ամենայն որ կենդանի՛ է՝ և հաւատայ յիս, մի՛ մեռցի ՚ի յաւիտեան. հաւատա՛ս այսմիկ: ²⁷Ասէ ցնա. Ա՛յո, Տէր. ես հաւատացի՝ եթէ դո՛ւ ես Քրիստոսն Որդի՛ Աստուծոյ, որ յաշխարհ գալո՛ց էիր՝: ²⁸Եւ զայս իբրև ասաց, գնաց կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն՝ և ասէ. Վարդապետն եկեալ է՝ և կոչէ՛ զքեզ՝: ²⁹Նա՛ իբրև լուաւ, յարեաւ վաղվաղակի, և եկն առ Յիսուս՝: ³⁰Չն՛ ևս էր եկեալ Յիսուս ՚ի գեղն. այլ է՛ր անդրէն ՚ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղև նմա Մարթա՝: ³¹Իսկ Յրեայքն որ էին ընդ նմա ՚ի տան անդ, և մխիթարէին զնա, իբրև տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, զնացին և նոքա զհետ նորա. համարէին թէ ՚ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ՝: ³²Իսկ Մարիամ իբրև եկն ուր էրն Յիսուս՝ և ետես զնա, անկա՛ւ առ ոտս նորա՝ և ասէ. Տէր՝ եթէ աստ էիր դիպեալ՝ ո՛չ էր մեռեալ եղբայրն իմ: ³³Յիսուս իբրև ետես զնա զի լայր. և որ ընդ նմայն էին Յրեայքն՝ լային, խռովեցա՛ւ յոգի իւր իբրև զայրացեալ՝, ³⁴և ասէ. Ո՞ւր եղիք զնա: Ասեն ցնա. Տէր՝ եկ և տես: ³⁵Եւ արտասուեաց Յիսուս: ³⁶Ասէին Յրեայքն. Տեսէ՛ք, ո՞րչափ սիրէր զնա՝: ³⁷Կէսքն ՚ի նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա, որ երաց զա՛չս կուրին, առնել զի և սա՝ մի՛ մեռցի: ³⁸Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, զայ՛ ՚ի գերեզմանն. և էր այր մի, և վէ՛մ մի եղեալ ՚ի վերայ նորա: ³⁹Եւ ասէ Յիսուս. Ի՛ բաց արարէք զվէնդ: Ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն. Տէր՝ արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: ⁴⁰Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ եթէ հաւատասցես՝ տեսցես զփառնսն Աստուծոյ: ⁴¹Եւ իբրև ՚ի վեր առին զվէնն, Յիսուս ամբարձ զաչս իւր ՚ի վեր և ասէ. Հայր՝ գոհանա՛մ զքէն զի լուար ինձ՝: ⁴²Եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շո՛ւրջ կան առնեմ՝ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս: ⁴³Չայս իբրև ասաց, ՚ի ծայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ՛ արի եկ արտաքս: ⁴⁴Եւ ել՝ մեռեալն ոտիւք կապելովք, և ձեռօքն՝ երիզապընդօք, և երեսօքն՝ վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս. Լուծէ՛ք զդա՛ և թողէ՛ք երթալ: ⁴⁵Բազումք ՚ի Հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս, իբրև տեսին զոր արարն՝ հաւատացին ՚ի նա: ⁴⁶Եւ ոմանք ՚ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն, և պատմեցին նոցա զոր արարն Յիսուս՝: զգ. ⁴⁷Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիքն ատեան, և ասեն. Չի՞նչ արասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ՞: ⁴⁸Եթէ թողումք զնա այնպէս, ամենեքին հաւատան ՚ի նա. և զայցեն Հռոմք՝ և բառնայցեն զազգս մեր և զտեղի՞: ⁴⁹Մի ոմն ՚ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. Դուք՝ ո՛չինչ գիտէք, ⁵⁰և ո՛չ բնաւ խորհել իսկ, թէ լա՛ւ է մեզ, զի այր մի մեռանիցի ՚ի վերայ ժողովրդեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ՞: ⁵¹Չայս՝ ո՛չ յանձնէ ինչ ասաց, այլ քանզի

* Ոմանք. Եթէ զոր ինչ և խնդրես՝:

* Բազումք. Ես իսկ եմ յար՝:

* Ոմանք. Ես հաւատամ:

* Ոմանք. Գնաց և կոչեաց... Վարդապետ եկեալ է:

* Բազումք. Եւ եկն առ նա:

* Բազումք. Անդէն ՚ի տեղ՝:

* Ոմանք. Ի՛ տան անդր:

* Բազումք. Եւ որ ընդ նմա էին:

* Ոմանք. Ասեն Յրեայքն. Տե՛՛:

* Ոմանք. Ո՞չ կարէր սա:

* Ոմանք. Ի՛ վեր յերկինս:

* Ոմանք. Չոր արար Յիսուս:

* Ոմանք. Ժողովեցան քահա՞... յատեան, և ասեն:

* Օրինակ մի. Եւ զայցեն Հռոմք և:

* Ոմանք. Չի լաւ է մեզ եթէ այր մի:

քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարեացաւ՝ եթէ մեռանելոց էր Յիսուս ՚ի վերայ ազգին⁵²։ Եւ ո՛չ ՚ի վերայ ազգին միայն, այլ զի և զորոհիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ ՚ի մի։⁵³ Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա։⁵⁴ Եւ Յիսուս այնուհետև ո՛չ եթէ համարձակ շրջէր ՚ի մէջ Յրէիցն. այլ զնա՛ց անտի յերկիր մի՝ որ մե՛րձ էր յանապատ, ՚ի քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։ զէ. ⁵⁵Եւ էր մե՛րձ գատիկն Յրէից. և բազումք ելին յերուսաղէմ ՚ի գաւառէ անտի յառաջագոյն քան զգատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց։⁵⁶ Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս մինչ կային ՚ի տաճարին. Չիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ո՞չ գայցէ՛ ՚ի տօն այսր։ Պատուէ՛ր տուեալ էր քահանայապետիցն և փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ո՛ւր է, գուշակեսցէ՛ զնմանէ, զի կալցին զնա՞:

12

Գլուխ ԺԲ

¹Իսկ Յիսուս վե՛ց աւուրբ յառաջ քան զգատիկն եկն ՚ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ՚ի մեռելոց²։ Եւ արարին անդ նմա ընթրի՛ս. և ՚ի սպասու կայր Մարթա, և Ղազար մի՛ էր ՚ի բազմելոց ընդ նմա։

Ի՞դ ³Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օճ զո՛տսն Յիսուսի, և հերով իւրով մաքրէ՛ր զոտս նորա. և տունն լի՛ եղև ՚ի հոտոյ իւղոյն⁴։

Ի՛ե ⁴Ասէ մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա՛ Իսկարիովտացի, որ մատնելոց էր զնա. ⁵Ընդէ՞ր ո՛չ եւղդ այդ վաճառեցաւ երեք արելր դենարի, և տուա՛ւ աղքատաց⁶։ ⁶Չայս ասաց՝ ո՛չ զի զաղքատաց ինչ փոյ՞թ էր նմա. այլ զի գո՛ղ էր, և զարկոյն ի՛նքն ունէր, և որ ինչ անկանէրն՝ նա կրէր⁷։ ⁷Ասէ Յիսուս. Թո՛յլ տուք դմա, զի յօ՛րն պատանաց իմոց պահեսցէ զայդ⁸։ ⁸Չաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք. զիս՝ ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք⁹։ ⁹Իբրև գիտաց ժողովուրդ բազում ՚ի Յրէիցն թէ անդ է՝ եկին, ո՛չ միայն վասն Յիսուսի, այլ զի և զՂազար տեսցեն՝ զոր յարոյցն ՚ի մեռելոց։ ¹⁰Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի և զՂազար սպանցեն. ¹¹քանզի բազումք ՚ի Յրէից երթային և հաւատային ՚ի Յիսուս։ Եկ. ¹²Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր ՚ի տօնն, իբրև լուան եթէ գա՛յ Յիսուս յերուսաղէմ, ¹³առի՛ն ո՛տս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ նորա. աղաղակէին և ասէին. Աւսանա՛ւ օրհնեալ որ գասդ յանուն Տեառն՝ թագաւորդ Իսրայէլի¹⁴։

Ի՛ճ ¹⁴Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստա՛ւ ՚ի վերայ նորա. որպէս և գրեալ է. ¹⁵Մի՛ երկնչիր դո՛ւստր Սիովմի, ահաւասիկ թագաւոր քո գա՛յ նստեալ ՚ի վերայ յաւանակի՛ իշոյ¹⁶։ ¹⁶Եւ զայն ինչ՝ ո՛չ գիտացին աշակերտքն նորա զառաջինն. այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին եթէ այն էր որ գրեալն էր վասն նորա. և զայն արարին նմա¹⁷։ ¹⁷Եւ ժողովուրդն վկայէր՝ որ է՛ր ընդ նմա, եթէ զՂազար կոչեաց և եթէ ՚ի գերեզմանէն, և յարոյց զնա ՚ի մեռելոց։ ¹⁸Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղև նմա ժողովուրդն, զի լուան

* *Ոմանք.* Այլ զի քահանայապետ էր... թէ մեռանելոց էր։

* *Յօրհնակին պակասէր.* Գիտասցէ թէ ուր է։ *Ոմանք.* Գիտիցէ թէ... գուշակեսցեն զնմանէ. զի կալցեն զնա։

* *Ոսկան.* Վեց աւուրբք։

* *Ոմանք.* Մեծագնոյ։

* *Ոմանք.* Երեք հարիւր դէ՛։

* *Ոմանք.* Եւ զարկոյն ունէր, և զոր ինչ անկանէր նա կրէր։

* *Ոմանք.* Թո՛յլ տուր դմա։

* *Օրհնակ մի.* Չաղքատս հանապազ ընդ ձեզ... զիս ո՛չ յամենայն ժամ։

* *Բազումք.* Եւ ասէին Ովսաննայ։

* *Ոմանք.* Ահաւաղիկ թագաւոր քո։

* *Ոմանք.* Թէ այն է որ գրեալն էր։

եթէ զայն նշանս արարեալ էր նորա: ¹⁹Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէ՞ք՝ զի ո՛չինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի՛ նորա գնաց*:

Իէ ²⁰էին անդ ոմանք և հեթանոսք յելելո՛ցն անդր, զի երկիր պագանիցեն ՚ի տօնին*:

²¹Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ՚ի Բեթսայիդայ Գալիլեացոցն էր, աղաչէին զնա և ասէին. Տէր՝ կամի՞մք զՅիսուս տեսանե՛լ*:

²²Գայ՝ Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս, Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս: ²³Եւ Յիսուս պատասխանի՛ ետ նոցա՝ և ասէ. Եհանս ժամ զի փառաւորեսցի՛ Որդի մարդոյ:

ԻԸ էք. ²⁴Ամէն ամէն ասե՛մ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ²⁵ի՛նքն միայն կայ. ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ՛ զնա. և որ ատեայ՝ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանսն յաւիտեանականս պահեսցէ զնա*:

²⁶Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի՛ իմ եկեսցէ. և ուր ե՛սն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ՛ զնա Յայրն իմ*:

էզ. ²⁷Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ ասացից՝ եթէ Յայր ապրեցո՛ր զիս ՚ի ժամանակէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ՚ի ժամս յայս*:

²⁸Յայր՝ փառաւորեա՛ զՈրդի քո: Ե՛կն բարբառ յերկնից. և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից*:

²⁹Եւ ժողովուրդն որ կայր և լւեր, ասէին՝ որոտումն լինել: Կէսքն ասէին. Յրեշտակ խօսեցաւ ընդ նմա*:

³⁰Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Ո՛չ վասն ի՛մ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձե՛ր*:

³¹Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս: ³²Եւ ես՝ յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս: ³³Ձայս ասեր, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ:

³⁴Պատասխանի ետ նմա ժողովուրդն. Մեք լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ, և դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ. ով է այն Որդին մարդոյ*:

³⁵Ասէ ցնոսա Յիսուս. Փոքր մեւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. զնացէ՞ք մինչդեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ. զի որ զնայ՝ ՚ի խաւարի, ո՛չ գիտէ յո՛ երթայ*:

³⁶Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՞ք ՚ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք: Ձայս խօսեցաւ Յիսուս, և չոգաւ՝ թաքեալ ՚ի նոցանէ: ³⁷Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա. և նոքա ո՛չ հաւատային ՚ի նա*:

³⁸Գի լցցի՛ բանն Եսայայ մարգարէի՝ զոր ասացն. Տէր՝ ո՞՞ հաւատաց ՚ի լուր մեր, և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ: ³⁹Վասն այնորիկ ո՛չ կարէին հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի*:

⁴⁰Թէ. Կուրացոյց զա՛չս նոցա, և ավշեցոյց զսիրտս նոցա. զի մի՛ տեսցեն աչօք, և իմասցին սրտիւք, և դարձցին՝ և բժշկեցից զնոսա*:

⁴¹Ձայս ասաց Եսայի՝ զի ետես զփառսն նորա, և խօսեցաւ վասն նորա*:

⁴²Բայց սակայն և յիշխանաց անտի բազումք հաւատացին ՚ի նա. այլ վասն փարիսեցւոցն ո՛չ յայտնէին, զի մի՛ ՚ի ժողովրդենն ելանիցեն: ⁴³Քանզի սիրեցին զփառս մարդկան, առաւել քան զփառս Աստուծոյ: էդ. ⁴⁴Եւ Յիսուս աղաղակէր և ասէր. Որ հաւատայ յիս, ո՛չ հաւատայ յիս, այլ յայն որ

* *Ոմանք.* Ձի ոչ ինչ օգտի. ա՛:

* *Օրինակ մի.* Յեկելոցն անդր, զի:

* *Ոմանք.* ՚ի Բեթսայիդայ Գալի՛:

* *Ոմանք.* Միայն կեայ. ապա եթէ մե՛. և *ոմանք.* Ապ եթէ:

* *Ոմանք.* Ձիս պաշտեսցէ, զկնի:

* *Ոսկան.* Ձիս ՚ի ժամէ աստի յայս՛... եկի ես ՚ի ժամս յայս:

* *Բազումք.* Յայր փառաւորեա՛ զանուն քո:

* *Ոմանք.* Ասէին որոտումն լինի:

* *Օրինակ մի.* Վասն իմ ինչ եղև բարբառս:

* *Ոմանք.* Յաւիտեան կեայ:

* *Բազումք.* Փոքր մեւս ևս ժամանակ:

* *Ոմանք.* Էր արարեալ... ո՛չ հաւատացին ՚ի նա:

* *Ոսկան.* Ոչ կարէին հաւատալ ՚ի նա:

* *Ոմանք.* Եւ ապշեցոյց:

* *Ոսկան.* Եսայի՛ յորժամ ետես:

առաքեացն զիս: ⁴⁵Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ որ առաքեացն զիս:

ԻԹ ⁴⁶Ես լոյս յաշխարհ եկի. զի ամենայն որ հաւատայ յիս, ՚ի խաւարի մի՛ մնասցէ՛:
⁴⁷Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց՝ և ո՛չ պահեսցէ, ես ո՛չ դատիմ զնա. քանզի ո՛չ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցի՛ց զաշխարհ՝: ⁴⁸Որ անարգէ զիս, և ո՛չ ընդունի զբանս իմ. գոյ՛ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա՛ դատի զնա յաւուրն յետնում:
⁴⁹Զի ես յանձնէ իմնէ ո՛չ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Յայր, նա՛ ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց: ⁵⁰Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ՝ զոր ե՛սն խօսիմ, որպէս ասաց ինձ Յայրն, այնպէս խօսիմ:

13

Գլուխ ԺԳ

է. ¹Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց Յիսուս՝ թէ հասեալ է ժամ նորա զի փոխեսցի յաշխարհէ՛ աստի առ Յայր. սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ են. ՚ի սպա՛ն սիրեաց զնոսա՛:

²Եւ ՚ի լինել ընթրեացն, Սատանայի՛ իսկ արկեալ էր ՚ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի՛ Իսկարիոփտացոյ՛: ³Գիտաց Յիսուս՝ զի ամենայն ինչ ետ Յայր ՚ի ձեռս նորա և թէ յԱստուծոյ՛ ել՝ և առ Աստուած երթայ՛, ⁴յառնէ՛ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձսն, և առեալ ղենջեակ մի՛ սփածաւ՛: ⁵Եւ ապա առեալ ջուր՝ արկ ՚ի կոնք, և սկսաւ լուանալ՝ զոտս աշակերտացն, և սրբէր ղենջեակն զոր սփածեալ էր՝: ⁶Գայ՛ առ Սիմովն Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր՝ դու զիմ զոտս՝ լուանա՞ս: ⁷Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ. Ձոր ինչ ե՛սս գործեմ, դու այժմ ո՛չ գիտես, բայց ապա գիտասցի՛ր: ⁸Ասէ ցնա Պետրոս. Ո՛չ լուսացես զոտս իմ յաւիտեան: Պատասխանի ետ Յիսուս. Եթէ ո՛չ լուացից զքեզ, ո՛չ ունիս ընդ իս մասն՝: ⁹Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր՝ մի՛ միայն զոտս իմ, այլ և զձե՛ռս՝ և զգլուխ: ¹⁰Ասէ ցնա Յիսուս. Լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ, բայց զի զո՛տսն լուանայցէ, քանզի ամենևին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ո՛չ ամենեքեան: ¹¹Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց՝ թէ ո՛չ ամենեքեան սուրբ էք: ¹²Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձսն իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. Գիտէ՛ք զինչ արարիդ ձեզ: ¹³Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարուք առնէք. քանզի ե՛մ իսկ՝: ¹⁴Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ: ¹⁵Զի օրինակ մի ետուն՝ ձեզ, զի որպէս ե՛ս ձեզ արարի, և դուք առնիցիք՝:

ԼԱ էզ. ¹⁶Ամեն ամէն ասեմ ձեզ. Ո՛չ է ծառայ՝ մեծ քան զտէր իւր. և ո՛չ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա: ¹⁷Եթէ զայս գիտէք, երանելի՛ ևս էք՝ եթէ առնիցէք զայս: ¹⁸Ո՛չ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցիդ. այլ զի լցցի՛ գիրն, թէ.

* *Ոմանք.* Լոյս աշխարհի եկի... ՚ի խաւար մի՛ մնասցէ:

* *Ոմանք.* Եւ ոչ պահիցէ:

* *Ոմանք.* Քան զտօն զատկին... եթէ հասեալ է:

* *Ոմանք.* Սիմովնի Սկարիոփտացի:

* *Ոմանք.* Նորա. եթէ յԱստուծոյ ել:

* *Ոմանք.* Ձհանդերձն. և առեալ ղենջակ մի սփածեալ:

* *Յօրինակին՝ յետ քերմամբ յարմարեալ երևէր՝* (Գ) ղենճեկաւն. որպէս ունիմ ոմանք: Ուր և այլ ոմանք ղենճեկաւն, կամ՝ ղենճակաւն:

* *Ոմանք.* Ձոր ինչ ես գործեմ... բայց յապա գիտաս՝:

* *Ոմանք.* Պատասխանի ետ նմա Յիսուս:

* *Ոմանք.* Եւ բարիոք ասէք. զի և եմ իսկ:

* *Ոմանք.* Ձմիմեանց զոտս լու՛:

* *Ոսկան.* Օրինակ մի ետու ես ձեզ: *Օրինակ մի.* Ետու ձեզ՝ որպէս դուք առնիցիք:

* *Ոմանք.* Եթէ զայս գիտիք. երա՛... թէ առնիցէք:

Որ ուտէր ընդ իս հաց՝ արա՛ր ինձ խաբէութիւն: ¹⁹Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչև՛ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասցիք թէ ե՛ս եմ: ²⁰Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ ընդունի զոր ոք ես առաքեցից, զի՛ս ընդունի. և որ զիս ընդունի՝ ընդունի՝ զայն որ առաքեացն զիս: ²¹Չայս իբրև ասաց Յիսուս, խռովեցա՛ւ յոգի իւր, վկայեաց և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս: ²²Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք, թէ զուսմէ՞ ասիցէ՞: ²³Եւ էր մի՛ ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս: ²⁴Ակնարկէ՛ր նմա Սիմոն Պետրոս հարցանել՝ ո՞վ իցէ վասն որոյ ասէն: ²⁵Եւ նա՝ անկեալ զլանջօքն Յիսուսի, ասէ ցնա. Տէր՝ ո՞վ է՞: ²⁶Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Այն է՝ որում ե՛ս թացից զպատառն՝ և տաց: Եւ թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Իսկարիոփտացւոյ: ²⁷Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ ՚ի նա Սատանայ: Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ՝ որ զինչ առնելոցն ես՝ արա՛ վաղվաղակի՞: ²⁸Եւ զայս ո՛չ ոք իմացաւ ՚ի բազմականաց անտի՝ թէ առ ի՞նչ ասաց ցնա: ²⁹Զի ոմանք՝ համարէին թէ զի զարկոյն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս. Գնեա՛ ինչ որ պիտոյ իցէ մեզ ՚ի տօնիս. և կամ՝ զի աղքատաց ինչ տացէ՞: ³⁰Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի, և էր գիշեր՝: Էէ. ³¹Եւ իբրև ել, ասէ Յիսուս. Այժմ փառաւորեցա՛ւ Որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցա՛ւ ՚ի նմա: ³²Զի եթէ Աստուած փառաւորեցա՛ւ ՚ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վաղվաղակի՛ փառաւորեսցէ զնա: ³³Որդեա՛կք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրեցէք զիս. և որպէս ասացի ց՜րեայսն, եթէ ուր եսն երթամ դուք ո՛չ կարէք գալ. և արդ՝ ձեզ ասեմ: ³⁴Պատուիրան նոր տան ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսցիք զմիմեանս: ³⁵Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ ի՛մ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս: ³⁶Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր՝ յո՞վ երթաս: Պատասխանի ետ Յիսուս. Ուր ե՛սն երթամ, դու՝ ո՛չ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ: ³⁷Ասէ ցնա Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեն գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եղից ՚ի վերայ քո: ³⁸Պատասխանի՛ ետ Յիսուս. Չանձն քո դիցես ՚ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չև՛ իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրացիս զիս:

14

Գլուխ ԺԴ

¹Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱստուած, և յի՛ս հաւատացէք: ²Ի տան Հօր ինոյ օթեվանք բազում եմ. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ. Եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի: ³Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գա՛մ և

* *Ոմանք.* Թէ զուսմէ ասիցէ:

* *Օրհնակ մի.* Բազմեալ առ Յիսուսի. և այլ *օրհնակ մի.* ընդ Յիսուսի:

* *Բազումք.* Ակնարկէ նմա Սիմոն... հարցանել ո՞վ իցէ:

* *Ոմանք.* Տէր ո՞վ է:

* *Ոմանք.* Արդ զոր ինչ առնելոց ես:

* *Ոմանք.* Գնեա՛ որ ինչ պիտոյ է մեզ ՚ի տօնիս, և կամ թէ զի աղքա՞:

* *Օրհնակ մի.* Եւ ել արտաքս. և էր գիշեր (31) իբրև ել: Ասէ Յիսուս:

* *Յօրհնակին ՚ի բնաբանի յետ՝* Եւ իբրև ել, *դատարկ տեղի թողեալ՝ ՚ի լուս՝. նշանակի՛ Յուդա, ՚ի ներքս բերել. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:*

* *Ոմանք.* Եւ վաղվաղակի փառաւոր արասցէ զնա:

* *Ոմանք.* Փոքր ինչ ժամանակս ընդ: *Ոսկան.* Ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս:

* *Յօրհնակին պակասէր.* Զի և դուք սի՞:

* *Ոմանք.* Թէ ի՛մ աշակերտք էք:

* *Ոմանք.* Տէր՝ յո՞վ երթաս: Պատասխանի ետ նմա Յիսուս:

* *Ոմանք.* Թէ երթամ պատրաստեմ:

առնում զձեզ առ իս. զի ուր ե՛սն իցեմ, և դո՛ւք անդ իցեք՝: ⁴Եւ ուր երթամն՝ գիտիցե՛ք, և զճանապարհն գիտիցեք: ⁵Ասէ ցնա Թովմաս. Տէր՝ ո՛չ գիտեմք յո՛վ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել՞: ⁶Ասէ ցնա Յիսուս. Ե՛ս եմ ճանապարհն՝ և ճշմարտութիւն և կեանք. ո՛չ որ զայ առ Յայր՝ եթէ ո՛չ ինն՞: ⁷Եթէ զիս գիտէիք, ապա և զՅայր իմ գիտէիք, և այսուհետև գիտասցի՛ք զնա, և տեսէք զնա՞: ⁸Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր՝ ցո՛յց մեզ զՅայր՝ և շա՛տ է մեզ: ⁹Ասէ ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս՝ ընդ ձե՛զ եմ, և ոչ ծանեար զիս Փիլիպպէ. որ ետես՝ զիս՝ ետես զՅայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցո՛յց մեզ զՅայր՞: ¹⁰Ո՞չ հաւատաս եթէ ես ՚ի Յայր՝ և Յայր յի՛ս է. բանն զոր ես խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Յայրն որ յիս բնակեալ, նա գործէ զգործսն՞: ¹¹Հաւատա՞յք ինձ՝ եթէ ես ՚ի Յայր՝ և Յայր յիս՞. ¹²ապա թէ ոչ՝ զոնէ վասն զործոցն հաւատացե՛ք ինձ: Ամէն ամէն ասե՛մ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա՛ զործեսցէ, և մեծամեծս՝ նա քան զնոյնս զործեսցէ. զի ես առ Յայր երթամ՞: ¹³Եւ զոր ինչ խնդրիցեք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի՛ Յայր յորդի՞: ՎՋ

ԼԲ ըկ. ¹⁵Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսցիք: ¹⁶Եւ ես աղաչեցից զՅայր, և այլ Մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձե՛զ բնակեսցէ ՚ի յաւիտեան. ¹⁷զՅոգին ճշմարտութեան. զոր աշխարհս ո՛չ կարէ ընդունել, զի ո՛չ տեսանէ զնա՝ և ո՛չ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձե՛զ եղիցի՞: ¹⁸Ո՛չ թողից զձեզ որբս. զա՛մ առ ձեզ: ¹⁹Փոքր մեւս ևս, և աշխարհս ո՛չ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցեք զիս. զի ես կենդանի՛ եմ, և դուք՝ կենդանի՛ լինելոց էք՞: ²⁰Յայնմ աւուր գիտասցիք դուք, զի ես ՚ի Յօր իմուն, և դուք յիս, և ես ՚ի ձեզ: ²¹Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա՛ է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի՛ ՚ի Յօրէ իմնէ. և ես սիրեցի՛ց զնա, և երևեցուցի՛ց նմա զիս: ²²Ասէ ցնա Յուդա՝ ո՛չ Սկարիովտացին. Տէր՝ զի՞ եղև զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ո՛չ աշխարհի: ²³Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Եթէ որ սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Յայր իմ սիրեսցէ՛ զնա. և առ նա՛ եկեսցուք, և օթեվանս առ նմա արասցուք: ²⁴Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ո՛չ է իմ, այլ Յօրն՝ որ առաքեացն զիս՞: ²⁵Ձայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ: ²⁶Իսկ Մխիթարիչն Յոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Յայր յանուն իմ, նա՛ ուսուցէ ձեզ զամենայն, որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուցէ՛ ձեզ՞: ²⁷Խաղաղութիւն թողուն ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, և մի՛ զանգիտեսցեն՞: ²⁸Լուայք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և զա՛մ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լիեալ էր ձեր՝ եթէ ես առ Յայր երթամ, զի Յայր իմ մեծ է քան զիս՞: ²⁹Եւ այժմ ասացի ձեզ մինչչև՝ եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասցիք: ³⁰Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. զայ՛ իշխան աշխարհիս այսորիկ,

* *Յոմանս պակասի կրկնութիւնս.* *Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի: *Ոմանք.* Եսն եմ, և դուք ընդ իս իցեք:

* *Ոմանք.* Յո՛ երթաս:

* *Ոմանք.* Ես իսկ եմ ճանապարհ, ճշմարտութիւնն:

* *Ի բազումս պակասի.* Գիտասցիք զնա, և տեսէք զնա:

* *Ոմանք.* Որ ետեսն զիս... ցոյց մեզ զՅայրն:

* *Ոմանք.* Եւ Յայր ՚ի յիս. զբանս զոր ես խօսեցայ: *Բազումք.* Որ յիս բնակեալ է, նա:

* *Ոսկան.* Եւ Յայր յիս է:

* *Ոմանք.* Ձգործսն զոր եսս... մեծամեծ քան զնոյնս:

* *Ոմանք.* Յայր ՚ի յորդի: *Ոսկան յետ այսր համարոյ յաւելու համար 14. առեալ ՚ի Լատինականէն.* Յայր յորդի: **Եթէ զոր ինչ խնդրիցեք յինէն՝ արարից զայն:*

* *Ոմանք.* ՁՅոգին ճշմարտութիւն:

* *Ոմանք.* Եւ աշխարհս ոչ տեսանէ զիս. բայց դուք տեսանէք զիս:

* *Ոմանք.* Ձբանն իմ ոչ պահէ:

* *Ոմանք.* Իսկ Մխիթարիչ Յո՞... զձեզ զամենայն, և յիշեցուցէ զամենայն զոր ինչ ասա՞:

* *Ոսկան.* Ձխաղաղութիւն թող՞: *Ոմանք.* Որպէս աշխարհ տայ:

* *Օրինակ մի.* Լուարուք զի ասա՞... և եթէ սիրէիք զիս:

և յիս ինչ ո՛չ գտանէ՞: ³¹Այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՅայր. և որպէս պատուիրեաց ինձ Յայրն ա՛յսպէս առնեմ. ա՛նն արիք գնասցու՛ր աստի՞:

15

Գլուխ ԺԵ

¹Ես եմ ո՛րթն ճշմարիտ՝ և Յայր իմ մշակե՞: ²Ամենայն ուռ որ յի՛ս է՝ և ո՛չ բերէ պտուղ, կտրէ՛ զնա. և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ՛ զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի՞: ³Դուք արդէն իսկ սո՛ւրբ էք վասն բանի՛ն՝ զոր խօսեցայ ընդ ձեզ: ⁴Կացէ՛ք յիս՝ և ես ՚ի ձեզ. որպէս ո՛ւռն ո՛չ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ՛ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ո՛չ յիս հաստատեալ իցէք՞: ⁵Ես եմ որթ՝ և դուք ո՛ւռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ՚ի նա, նա՛ բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ո՛չինչ կարեք առնել՞: ⁶Եթէ որ ո՛չ է հաստատեալ յիս, ե՛լ նա արտաքս իբրև զո՛ւռն, և ցամաքեցա՛ւ. և ժողովեն զնա, և ՚ի հո՛ւր արկանեն՝ և այրի: ⁷Եթէ կացէք յիս, և բա՛նքն իմ ՚ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք խնդրեսցի՛ք՝ և լինիցի՛ ձեզ՞: ⁸Յայսմիկ փառաւորեցա՛ւ Յայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. և եղիջիք իմ աշակերտք: ⁹Որպէս սիրեաց զիս Յայրն իմ, և ես սիրեցի զձեզ. հաստատու՛ն կացէք ՚ի սէր իմ՞: ¹⁰Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջի՛ք ՚ի սէր իմ. որպէս ես զպատուիրանս Յօր իմոյ պահեցի, և կա՛մ ՚ի սէր նորա՞: ¹¹Ձայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ՚ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւնն լցեա՛լ եղիցի: ¹²Այս է պատուեր իմ, զի սիրեսցի՛ք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ՞: ¹³Մեծ ևս՝ քան զայս սէր՝ ո՛չ որ ունիցի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց՞: ¹⁴Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր եսն պատուիրեմ ձեզ՞: ¹⁵Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ո՛չ զիտ զինչ գործէ՛ տերն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս. զի զամենայն զոր լուա՛յ ՚ի Յօրէ իմմէ՛ ծանուցի ձեզ՞: ¹⁶Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ. և եղի զձեզ՝ զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կացցէ՛: Եւ զոր ինչ խնդրիցէք ՚ի Յօրէ իմմէ՛ յանուն իմ, տացէ՛ ձեզ՞: ¹⁷Ձայս պատուիրեմ, զի սիրեսցի՛ք զմիմեանս՞: ¹⁸Եթէ աշխարհ զձեզ ատեայ. զիտասջի՛ք զի նախ զիս ատեայ՞: ¹⁹Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրսն սիրէ՛ր արդեւք. բայց զի յաշխարհէ չէ՛ք. այլ ես ընտրեցի՛ զձեզ յաշխարհէ, վասն ա՛յնորիկ ատեայ զձեզ աշխարհ՞: ²⁰Յիշեցէ՛ք զբանն զոր ասացի, թէ ո՛չ է ծառայ՝ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն՞: ²¹Այլ զնոյնս

* *Ոմանք.* Շատ խօսեցայ ընդ:

* *Ոմանք.* Ինձ Յայր՝ այնպէս առնեմ:

* *Ոսկան.* Եւ Յայր իմ մշակ է:

* *Ոմանք.* Որ բերէ զպտուղ՝ սր՞:

* *Ոմանք.* Եթէ ոչ իցէ հաստա՞:

* *Ոմանք.* Եւ ես ՚ի նա, նա:

* *Բազումք.* Եթէ կայցէք յիս: *Ոմանք.* Եւ բանք իմ ՚ի ձեզ կայցեն, որ ինչ կամիցիք:

* *Ոմանք.* Սիրեաց զիս Յայր, և ես:

* *Ոսկան.* Որպէս և ես զպատու՞:

* *Ոմանք.* Որպէս ես զձեզ սիրեցի:

* *Ոմանք.* Սէր ոչ որ ունի, եթէ:

* *Ոմանք.* Բարեկամք իմ էք:

* *Օրինակ մի.* Ոչ ևս կոչեցից զձեզ... կոչեցից բարեկամս:

* *Ոմանք.* Եւ պտուղն ձեր կայցէ. *կամ՝* կեցցէ:

* *Ոմանք.* Ձայս պատուիրեմ ձեզ, զի սի՞:

* *Ոմանք.* Եթէ աշխարհս զձեզ: *Ի լուս՞.* Նախ զիս ատեաց. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:*

* *Ոմանք.* Աշխարհ զիւրն սի՞... բայց զի չէք յաշ՞:

* *Ոմանք յաւելուն.* Ձոր ասացի ձեզ, թէ:

արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ. զի ո՛չ ծանեան զայն որ առաքեացն զիս՝: ²²Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա. բայց արդ՝ չի՞ք ինչ պատճառք վասն մեղաց իւրեանց՝: ²³Որ զիս ատեայ, և զՅայրն իմ ատեայ՝: ²⁴Եթէ զգործսն չէր գործեալ ՚ի նոսա՝ զոր ո՛չ այլ ոք գործեաց, մեղ ինչ ո՛չ գոյր նոցա, բայց արդ՝ տեսին, և ատեցին և զիս և զՅայր իմ՝: ²⁵Այլ զի լցցի՛ բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ. Ատեցին զիս տարապարտուց՝: ²⁶Բայց յորժամ եկեսցէ Մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ՚ի Զօրէ, զՅոգիմ ճշմարտութեան որ ՚ի Զօրէ ելանէ, նա՛ վկայեսցէ վասն իմ՝: ²⁷և դուք վկայէ՛ք, զի իսկզբանէ՛ ընդ իս էք:

16

Գլուխ ԺԶ

¹Ձայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթաղեսջիք. ²Ի ժողովրդոց իւրեանց հանցեն զձեզ: Այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ՝: ³Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ո՛չ ծանեան զՅայր՝ և ո՛չ զիս: ⁴Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշեցէ՛ք՝ թէ ես ասացի ձեզ՝: ⁵Ձայս իսկզբանէ՛ ո՛չ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: Բայց արդ երթան ես առ առաքիչն իմ. և ո՛չ ոք ՚ի ձեռք հարցանէ ցիս, թէ յո՞վ երթաս՝: ⁶Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր՝: ⁷Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լա՛ւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ Մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից՝ զնա առ ձեզ՝: ⁸Եւ նա՛ եկեալ, յանդիմանեսցէ՛ զաշխարհ, վասն մեղաց, և վասն արդարութեան, և վասն դատաստանի՝: ⁹Վասն մեղաց՝ զի ո՛չ հաւատան յիս՝: ¹⁰Վասն արդարութեան՝ զի առ Յայր իմ երթամ, և ո՛չ ևս տեսանէք զիս. ¹¹վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է: ¹²Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ո՛չ կարէք հանդարտել այժմիկ: ¹³Յորժամ եկեսցէ նա Յոգիմ ճշմարտութեան, առաջնորդեսցէ՛ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՛ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ՝: ¹⁴Նա զիս փառաւորեսցէ, զի յիմնէ՛ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ: ¹⁵Ձամենայն ինչ զոր ունի Յայր իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմնէ՛ անտի առնու՛ և պատմէ՛ ձեզ՝: ¹⁶Փոքր մի, և ո՛չ ևս տեսանիցէք զիս. և ապա սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Յայր՝: ¹⁷Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. Ձի՞նչ է այս՝ զոր ասէս ցնեզ, թէ փոքր մի՛ և ո՛չ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՛ և տեսանիցէք զիս. և եթէ ես առ

* *Բազումք.* Ձի ո՛չ գիտեն զայն որ առա՞:

* *Ի բազումս պակասի.* Չի՞ք ինչ պատճառք:

* *Ոմանք.* Եւ զՅայրն իմ ատեաց:

* *Ոմանք.* Եւ ատեցին զիս և զՅայր:

* *Ոմանք.* Ձիս ՚ի տարապարտուց:

* *Յօրիմակիմ.* Ձոր ես առաքեցի ձեզ ՚ի: *Ոմանք.* Ի Զօրէ Յոգիմ ճշմար՞:

* *Բազումք.* Իւրեանց հանիցեն զձեզ: *Ի լուս՞.* Ձձեզ, և համարիցի պաշ՞. *համաձայն ոմանց ՚ի բնաք՞:*

* *Ոմանք.* Եկեսցէ ժամանակն՝ յիշիցէք թէ:

* *Ոմանք.* Հարցանիցէ ցիս թէ յո՞ եր՞:

* *Ոմանք.* Տրտմութիւնն ելից:

* *Յօրիմակիմ պակասէր.* Ասեմ ձեզ լաւ է:

* *Օրիմակ մի.* Վասն մեղաւորաց, զի ո՛չ հաւատան:

* *Ոմանք.* Ձամենայն ճշմարտութեամբ... զոր լսիցէ խօսիցի:

* *Ոմանք.* Ամենայն զոր ունի Յայր... յիմնէ՛ անտի առնուցու, և պատմեսցէ ձեզ:

* *Ոմանք.* Փոքր մի՛ և ոչ տեսանէք զիս. դարձեալ սակաւիկ մի ևս տեսա՞: *Ոսկան.* Եւ զի ես երթամ առ:

Հայր իմ երթամ*։ ¹⁸Եւ ասէին. Չի՞նչ իցէ այն փոքր մեւս ևսն, չգիտենք զինչ խօսի*։
¹⁹Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա՝ հարցանել. և ասէ ցնոսա. Վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի՝ թէ փոքր մի՝ և ո՛չ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մեւս ևս տեսանիցէք զիս*։ ²⁰Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ՛. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի*։ ²¹Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի գնանուկն, ո՛չ ևս յիշէ գնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ*։ ²²Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ո՛չ որ հանիցէ ՚ի ձեզ*։ ²³Եւ յայնմ աւուր զիս ինչ ո՛չ հարցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի զոր ինչ խնդրիցէք ՚ի Զօրէ իմմէ յանուն իմ, տացէ՛ ձեզ*։ ²⁴Մինչև ցայժմ ո՛չինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի*։ ²⁵Ձայս առակօ՛ք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ, յորժամ ո՛չ ևս առակօք խօսեցայք ընդ ձեզ. այլ յայտնապէս զԶօրէ պատմեցից ձեզ*։ ²⁶Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ո՛չ ասեմ ձեզ՝ եթէ ես հարցից զՀայր վասն ձեր*։ ²⁷Գի ինքն իսկ Հայր սիրտ զձեզ, զի դուք զիս սիրիցէք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի*։ ²⁸Ելի ՚ի Զօրէ՛ և եկի յաշխարհ. դարձեալ թողուն զաշխարհ, և երթամ առ Հայր*։ ²⁹Ասեմ ցնա աշակերտքն. Ահա՛ արդ յայտնութեամբ խօսիս. և առակ և ո՛չ մի ինչ ասես։ ³⁰Այժմիկ գիտենք՝ եթէ գիտենս զամենայն. և ոչինչ պիտոյ է՝ եթէ որ հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատանք եթէ յԱստուծոյ ելեր*։ ³¹Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ և ասէ. Այժմ հաւատա՛նք. ³²ահա՛ եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է. զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է*։ ³³Ձայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ՝ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարո՛ւք զի ես յաղթեցի աշխարհի*։

17

Գլուխ ԺԷ

¹Ձայս իբրև խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս՝ և ասէ. Հայր՝ հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեցէ՛ զքեզ*։ ²Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտեանականս։ ³Այս են յաւիտեանական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս*։ ⁴Ես զքեզ փառաւորեցի՛ յերկրի.

* *Ոմանք.* Չոր ասէ. *կամ՝* ասեմ ցնեզ... առ Հայր երթամ:

* *Ոմանք.* Չգիտենք զինչ խօսիս:

* *Ոմանք.* Եթէ կամէին ցնա հար՞... վասն այդորիկ խնդրեցէք... միւս ևս, և տեսա՞:

* *Ոմանք.* Եւ աշխարհս խն՞... ուրախութիւն եղիցի:

* *Ոմանք.* Ո՛չ ևս յիշեսցէ գնեղ՞:

* *Ոմանք.* Չի զոր խնդրիցէք... տացի ձեզ:

* *Ոմանք.* Ուրախութիւնն ձեր լցեալ է. *կամ՝* իցէ:

* *Օրհնակ մի.* Ձայս ամենայն առակօք:

* *Ոմանք.* Եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր:

* *Ոմանք.* Ձիս սիրեցէք. *կամ՝* սիրեսջիք, և հաւատայցէք:

* *Օրհնակ մի.* Յաշխարհս... զաշխարհս:

* *Ոսկան.* Այժմ գիտենք: *Ոմանք.* Հարցանիցէ ցքեզ:

* *Ոմանք.* Ահա եկեսցէ ժամանակ... զի Հայր իմ ընդ իս է:

* *Ոմանք.* Քաջալերացարո՛ւք:

* *Ոսկան.* Համբարձ զաչս իւր:

* *Ոմանք.* Յաւիտեանական կեանք... ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցերս զՅիսուս:

զգործն կատարեցի՝ զոր ետուր ցիս զի արարից*։⁵ Եւ այժմ փառաւորեա՛ զիս Չայր առ ՚ի քէն, փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ՚ի քէն*։⁶ Յայտնեցի՛ զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո՛ էին, և ինձ ետուր զնոսա. և զբանն քո պահեցի՛ն։⁷ Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ*,⁸ ետու՛ն նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ՚ի քէն ելի. և հաւատացին՝ եթէ դո՛ւ առաքեցեր զիս։⁹ Արդ ես՝ վասն նոցա աղաչեմ, և ո՛չ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՛ զորս ետուրն ինձ. զի քո՛ էին*։¹⁰ Եւ որ ինչ ի՛մ է, ամենայն քո՛ է. և որ ինչ քո՛ է, այն ի՛մ է. և փառաւորեալ եմ ՚ի նոսա։¹¹ Եւ ես՝ ոչ և՛ս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի՛ եմ, և ես՝ առ քե՛զ գամ. Չայր. սուրբ պահեա՛ զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի՛, որպէս և մեք մի՛ եմք*։¹² Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ե՛ս պահէի զնոսա յանուն քո՛ որով ետուրն ինձ. և պահեցի՛. և ոչ ոք ՚ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի՛։

¹³ Բայց արդ առ քե՛զ գամ. և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։¹⁴ Ես ետու՛ն նոցա զբանն քո, և աշխարհս ատեա՛ց զնոսա. զի չե՛ն յաշխարհէ, որպէս և ես չե՛ն յաշխարհէ*։¹⁵ Ո՛չ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ՚ի չարէ։¹⁶ Յաշխարհէ աստի չե՛ն, որպէս և ես՝ չե՛ն յաշխարհէ։¹⁷ Սուրբ արա՛ զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանը ճշմարտութիւն է։¹⁸ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ. և ե՛ս առաքեցի զնոսա յաշխարհ. ¹⁹ և ՚ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա՛ սրբեալք ճշմարտութեամբ։²⁰ Այլ ո՛չ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւտացելոց բանին նոցա յիս՛. ²¹ զի ամենեքին մի՛ իցեն, որպէս դու Չայր յիս՝ և ես ՚ի քեզ, զի և նոքա ՚ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատացէ՛ եթէ դու առաքեցեր զիս։²² Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու՛ն նոցա, զի իցեն մի՛ որպէս և մեք մի՛ եմք։²³ Ե՛ս ՚ի նոսա, և դու՛ յիս, զի եղիցին կատարեալք ՚ի մի։ Եւ գիտացէ՛ աշխարհ՝ եթէ դո՛ւ առաքեցեր զիս. և սիրեցի՛ զնոսա որպէս դու զիս սիրեցեր*։²⁴ Չայր, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա՛ իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն զիմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի*։²⁵ Չայր արդար՝ և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ. և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս*։²⁶ Եւ ծանուցի՛ նոցա զանուն քո՛ և ծանուցի՛ց. զի սերն զոր սիրեցեր զիս՝ ՚ի նոսա՛ իցէ, և ե՛ս ՚ի նոսա*։

* *Ոմանք.* Ջգործսն կատարեցի զի ետուր։

* *Բազումք.* Առ ՚ի քէն փառօքն, զոր ուն։

* *Ոսկան յաւելու.* Ջոր ետուր ինձ, առ ՚ի քէն եմ։ *Ձի բանն զոր ետուր ինձ՝ (8) ետու նոցա։

* *Բազումք.* Ետուրն ինձ, զի քո եմ։

* *Յօրինակին չակերտ ՚ի վերայ եղեալ վերջակտիսն* Չայր (:), *թերևս ակնարկի կամ փոխել զնոյն և առնել բթանիչ (') կամ ստորակէտ (,) որպէս ունին բազումք.* և *կամ զլխովին բառնալ անտի զկէտադրութիւնն՝ և ընթեռնուլ,* Չայր սուրբ, պահեա՛ զնոսա. որպէս գրեն *ոմանք ՚ի նոր օրինակաց։*

* *Ոմանք.* Ետու նոցա զբանս քո։

* *Ոմանք.* Այլ վասն ամենայն հաւա՛։

* *Ոմանք.* Եւ ես սիրեցից զնոսա, որպէս և դու զիս։

* *Ոմանք.* Ձի ուր եսն եմ... զփառսն իմ, զոր ետուր ցիս... զլինել աշ՛։

* *Յօրինակին յետ գրելոյ* Չայր արդար՝ *նշան ինչ եղեալ ՚ի միջոցին և ապա ամենակին յար գրեալ* և աշխարհ զքեզ ո՛չ և այլն. *թերևս ակնարկի զգուշանալ յընթեռնոյ* Չայր արդարն աշխարհ զքեզ. *ըստ որում վրիպակաւ ունին ոմանք. մինչ զի և օրինակ մի կրկնէ զան, գրելով այսպէս.* Չայր՝ արդարն և աշխարհ զքեզ։ *Յօրինակին.* Եւ նոքա ծանեան. և դու առաքեցեր զիս։

* *Առ Ոսկանայ պակասի.* Եւ ծանուցի նոցա զանուն։

Գլուխ ԺԸ

¹Ձայնս իբրև ասաց Յիսուս, ել՝ աշակերտօքն հանդերձ յայն կոյս ձորոյն Կեղոսի՝ ուր էր պարտեզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր՝:

²Գիտէր և Յուդա, որ զնայն մատնելոց էր՝ զտեղին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն հանդերձ՝: ³Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ՚ի քահանայապետիցն և ՚ի փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք: ⁴Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն եկեալ ՚ի վերայ նորա, ել և ասէ՝ ցնոսա. Ձո՞ խնդրէք: ⁵Պատասխանի ետուն նմա. ՁՅիսուս Նազովրեցի: Ասէ ցնոսա Յիսուս. Ե՛ս եմ: Կայր ընդ նոսա և Յուդա՝ որ մատներն զնա՞: ⁶Իբրև ասաց՝ թէ ե՛ս եմ, յետս յետս չոգան և զարկան զգետնի: ⁷Դարձեալ եհարց զնոսա. Ձո՞ խնդրէք: Եւ նոքա ասեն. ՁՅիսուս Նազովրեցի՞: ⁸Պատասխանի՝ ետ նոցա Յիսուս. Ասացի ձեզ թէ ե՛ս եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛յլ տուք դոցա երթալ: ⁹Զի լցցի բանն՝ զոր ասաց թէ. Ձորս ետուրն ցիս, ո՛չ կորուսից ՚ի նոցանէ և ո՛չ զոք՞: ¹⁰Իսկ Սիմոն Պետրոս քանզի ունէր սուր, ձգեաց զնա՝ և եհար զքահանայապետին ծառայ, և ՚ի բաց առ զունկն նորա զաջոյ. և էր անուն ծառային Մաթթոս: ¹¹Ասէ Յիսուս ցՊետրոս. Արկ զսուրդ անդրէն ՚ի պատեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ Յայր ո՞չ ըմպիցեմ զնա: ¹²Իսկ գունդն և հազարապետն և սպասաւորք Յրէիցն կալան զՅիսուս և կապեցին: ¹³Եւ ածին զնա նախ՝ առ Անա՛, որ էր՝ անէր Կայիափայի. որ քահանայապետն էր տարուոյն այնորիկ: ¹⁴Այս՝ այն Կայիափայ էր՝ որ խրատն ետ Յրէից, թէ լա՛ւ է առն միում մեռանել ՚ի վերայ ժողովրդեանն: ¹⁵Եւ երթային զհետ Յիսուսի Սիմոն Պետրոս և մեսս աշակերտն: Եւ աշակերտն այն քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ՚ի գաւիթ քահանայապետին: ¹⁶Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ. ել՝ մեսս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց ցդռնապանն՝ և եմո՛յծ ՚ի ներքս զՊետրոս: ¹⁷Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. Մի՞ թէ՛ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես: Եւ նա ասէ. Ո՛չ եմ: ¹⁸Կային անդ ծառայքն և սպասաւորք, խարոյկ արկեալ՝ քանզի ցո՛ւրտ էր, և ջեռնուին. կայր ընդ նոսա և Պետրոս՝ և ջեռնոյր: ¹⁹Եւ քահանայապետն եհարց ցՅիսուս վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան նորա: ²⁰Պատասխանի ետ նմա Յիսուս. Ես՝ յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես՝ յամենայն ժամ ուսուցի ՚ի ժողովրդեանն, և ՚ի տաճարի անդ՝ ուր ամենայն Յրեայք ժողովեալ էին, և ՚ի ծածուկ ինչ ո՛չ խօսեցայ: ²¹Զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ խօսեցայ: ²²Իբրև նա՛ զայն ասաց, մի ոմն ՚ի սպասաւորացն որ անդ կայր, ած աստակ Յիսուսի՝ և ասէ. Ա՞յդպէս

* *Ոմանք.* Որ էր պարտեզ:

* *Ոմանք.* Որ զնա մատնելոց:

* *Յօրհիմակին.* Գայր ընդ նոսա և Յուդա՝ որ:

* *Ոմանք.* Դարձեալ եհարց ցնոսա:

* *Օրհնակ մի.* Զի լցցի բանն Յիսուսի: *Ոմանք.* Թէ զոր ետուրն ցիս:

* *Ոմանք.* Առ Աննա, որ էր անէր Կայիափայ. որ քահանայապետ էր:

* *Ոմանք.* Որ խրատ ետ Յրէից՝ եթէ:

* *Ոմանք.* Երթայր զհետ Յիսուսի Սիմոն Պետրոս, և միւս ևս աշակերտ: *Ուր ևս ոմանք.* Չհետ նորա Սիմոն Պետո՞:

* *Ոմանք.* Կայր արտաքոյ առ դրանն... և ասէ ցդռնապանն:

* *Ոմանք.* Վասն աշակերտացն նորա, և:

* *Օրհնակ մի.* Խօսեցայ աշխարհի... և ծածուկ ինչ ո՛չ խօ՞:

* *Ոսկան.* Որք լուանն եթէ զինչ ասացի ցնոսա: *Ոմանք.* Ահաւանիկ նոքա գիտեն զինչ ասացի: *Ի լուս՞.* Գիտեն զինչ ասացի. *համաձայն ոմանց ՚ի բնար՞:*

պատասխանի տաս քահանայապետիդ*։ ²³Եւ Յիսուս՝ ասէ ցնա. Եթէ չա՛ր ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս։ ²⁴Եւ առաքեաց զնա Անա կապեա՛լ առ Կայիափա քահանայապետ։

ԼԳ ²⁵Եւ Սի՛մոն Պետրոս կա՛յր անդ՝ և ջեռնոյր. ասեն ցնա. Մի՞թէ՛ և դու յաշակերտաց անտի նորա իցես։ Եւ ուրացա՛ւ և ասէ՛ թէ չե՛մ։ ²⁶Եւ ասէ մի ոմն՝ ՚ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ զունկն եհա՛տ Պետրոս. Ո՞չ ես իսկ տեսի զքեզ ՚ի պարտիզի անդ ընդ՝ նմա՛։ ²⁷Դարձեալ ուրացա՛ւ Պետրոս. և վաղվաղակի հա՛ւ խօսեցաւ։

ԼԴ ²⁸Եւ ածեն՝ զՅիսուս ՚ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին. և էր այգո՛ւց։ Եւ նոքա ո՛չ մտին յապարանսն, զի մի՛ պղծիցին, այլ զի ուտիցեն՝ զգատիկն*։ ²⁹Եւ առ նոսա Պեղատոս արտաքս՝ և ասէ. Ձի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ՛։ ³⁰Պատասխանի ետուն և ասեն ցնա. Եթէ չէ՛ր չարագործ այրն այն, ապա ո՛չ մատնէք զնա քեզ։ ³¹Ասէ ցնոսա Պեղատոս. Առէ՛ք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարու՛ք։ Ասեն ցնա Յրեայքն. Մեզ չէ՛ արժան սպանանել զոք*։ ³²Ձի՛ լցցի՛ բանն Յիսուսի զոր ասաց, նշանակեալ թէ որո՞վ մահու մեռանելոց իցէ։ ³³Եմո՛ւտ միւսանգամ յապարանսն Պեղատոս, կոչեաց զՅիսուս, և ասէ ցնա. Դո՛ւ ես թագաւորն Յրեից։

³⁴Պատասխանի ետ Յիսուս. Ի՛ քէն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն։

³⁵Պատասխանի ետ Պեղատոս. Մի՞թէ՛ և ես Յրեա՞յ իցեմ. ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ, զի՞նչ գործ գործեալ է քո*։ ³⁶Պատասխանի ետ Յիսուս. Ի՛նձ արքայութիւն չէ՛ յայսմ աշխարհէ. եթէ աշխարհէ աստի՛ էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէի՛ն արդեւք՝ զի մի՛ մատնեցայց Յրեից. բայց արդ թագաւորութիւն իմ չէ՛ աստի*։ ³⁷Ասէ ցնա Պեղատոս. Ապա թէ այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու։ Պատասխանի ետ Յիսուս. Դո՛ւ ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես՝ յայդ իսկ ծնեալ եմ, և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ ՚ի ճշմարտութենէ է, լսէ՛ բարբառոյ իմոյ*։ ³⁸Ասէ ցնա Պեղատոս. Ձի՞նչ է ճշմարտութիւն։ Ձայս իբրև ասաց, դարձեալ ել առ Յրեայսն՝ և ասէ ցնոսա. Ես՝ և ո՛չ մի՛ ինչ պատճառս գտանեմ ՚ի նմա՛։ ³⁹Բայց է ձեր սովորութիւն զի զմի ոք արձակեցից՝ ձեզ ՚ի զատկիս. արդ՝ կամի՞ք զի արձակեցից ձեզ զթագաւորն Յրեից*։ ⁴⁰Աղաղակեցին ամենեքեան՝ և ասէին. Մի՛ զդա, այլ զԲարա՛բբա։ Եւ էր Բարաբբայն այն աւազակ*։

19

Գլուխ ԺԹ

¹Յայնժամ ա՛ռ Պեղատոս զՅիսուս, և զա՛ն եհար։ ²Եւ զինուորացն արարեալ պսա՛կ ՚ի փշոց՝ եղին ՚ի գլուխ նորա, և զզեցուցին նմա հանդերձ ծիրանի. ³և զային առ նա՛ և

* *Ոսկան.* Եւ զայս ասաց։

* *Ոմանք.* Որոյ զունկնն եհատ։

* *Ոմանք.* Ձի մի՛ պղծեցին։

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա. Ձի՛նչ... մատուցանիցէք զառնէն։

* *Բազունք.* Մեզ ո՛չ է արժան սպա՛։

* *Ոմանք.* Ազգք քո և քահանայապետքն։

* *Ոմանք.* Թագաւորութիւնն իմ չէ աստ։

* *Ոմանք.* Պիղատոս, թէ այդպէս իցէ՝ թագաւոր ոմն իցես դու... ծնեալ իցեմ, և ՚ի դոյն իսկ եկեալ յաշխարհ։

* *Ոմանք.* Ձի՛նչ է ճշմարտութիւնն... գտանեմ ՚ի նա։ *Յօրինակին պակասէր.* Ես և ո՛չ մի՛ ինչ։

* *Ոմանք.* Բայց ձեր սովորութիւն է։

* *Ոմանք.* Ամենեքեան և ասեն։ *Ուր Ոսկան.* և ասացին։

ասէին. Ողջ եր արքայ Յրէից: Եւ հանէին նմա ապտակա՞: ⁴Ել դարձեալ Պեղատոս արտաքս և ասէ ցնոսա. Ահա՛ ածեն զնա արտաքս առ ձեզ, զի գիտասցիք թէ ես՝ վնաս ինչ՝ ՚ի նմա ո՛չ գտանեմ՞: ⁵Ել Յիսուս արտաքս, և ունէր պսակ ՚ի փշոց՝ և հանդէրձ ծիրանի. և ասէ ցնոսա. Ահա՛ այրո՞ց զձեզ: ⁶Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք, զաղաղակ բարձին՝ և ասեն. Ի խա՛ջ հան՝ ՚ի խա՛ջ հան զդա: Ասէ ցնոսա Պեղատոս. Առէ՞ք զդա ՚ի ձեզ, և ձեզէն հանէք ՚ի խաջ. զի ես՝ ՚ի դմա վնաս ինչ ո՛չ գտանեմ՞: ⁷Պատասխանի ետուն նմա Յրէայքն. Մեք՝ օրէնս ունինք. և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել. զի զանձն իւր Որդի՛ Աստուծոյ արար՞: ⁸Իբրև լուաւ զբանս զայսոսիկ Պեղատոս, առաւել ևս երկեալ: ⁹Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցՅիսուս. Ուստի՞ ես դու: Եւ Յիսուս ո՛չ ետ նմա պատասխանի: ¹⁰Ասէ ցնա Պեղատոս. Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ՚ի խաջ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ: ¹¹Պատասխանի ետ Յիսուս. Ո՛չ ունէիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ՝ և ո՛չ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեաց զիս քեզ, նորա՛ մեծ մեղք եմ՞: ¹²Եւ յայնմանէ Պեղատոս խնդրէր արձակել զնա. և Յրէայքն աղաղակէին և ասէին. Եթէ զդա՛ արձակես, չեն բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր: ¹³Իսկ Պեղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս արտաքս՝ և նստաւ ՚ի վերայ բեմին՝ ՚ի տեղուջն որ կոչէր Քարայատակ, և Եբրայեցերէն Կա՛պ պաթա՞: ¹⁴Էր ուրբա՛թն զատկի. և էր ժամ իբրև վեցերորդ, և ասէ ցՅրէայսն. Ահա՛ թագաւորո՞ւ ձեր՝ ցձեզ՞: ¹⁵Եւ նոքա աղաղակէին. Բարձ՝ ՚ի մենջ բարձ՝ ՚ի մենջ՝ և հան զդա ՚ի խա՛ջ: Ասէ ցնոսա Պեղատոս. Ես՝ զթագաւորո՞ւ ձեր՝ ՚ի խա՞ջ հանիցեմ: Պատասխանի ետուն քահանայապետքն չի՞ք մեր թագաւոր՝ բաց ՚ի կայսերէ՞: ¹⁶Յայնժամ ետ զնա ՚ի ձեռս նոցա, զի ՚ի խա՛ջ ելանիցէ: Եւ ¹⁷Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ՚ի տեղին՝ որ անուանէր Գագաթան, և կոչէր Եբրայեցերէն Գողգոթա՞. ¹⁸ուր և ՚ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ՚ի միջի զՅիսուս՞: ¹⁹Գրեաց և տախտակ Պեղատոս, և ե՛ր ՚ի վերայ խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի թագաւոր Յրէից՞: ²⁰Չայն տախտակ ընթերցան բազումք ՚ի Յրէից, զի մօտ էր ՚ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցան Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն, Դաղմատարէն, և Յունարէն՞: ²¹Ասեն ցՊեղատոս քահանայապետքն Յրէից. Մի՛ գրեր թագաւոր Յրէից, այլ թէ նա՛ ասաց. Թագաւոր եմ Յրէից: ²²Պատասխանի ետ Պեղատոս. Չոր ինչ գրեցին՝ գրեցի՞: ²³Իսկ զինուորքն իբրև հանին ՚ի խաջ զՅիսուս, առին զհանդերձս նորա՛ և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմութեանն քանզի էր առանց կարանի՝ ՚ի վերուստ՝ փոր՝ անկեալ ամենակին՞, ²⁴ասեն ցմիմեանս. Մի՛ պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ՚ի վերայ դորա՛ ուն և ելցէ.

* *Ոմանք.* Ողջ լեր արքայ Յրէից: Եւ հանին նմա ապտո՞:

* *Ոմանք.* Ել Պիղատոս դարձեալ... զնա առ ձեզ արտաքս:

* *Յոմանս պակասի.* Քահանայապետքն և սպասաւորք:

* *Ոմանք.* Եւ ըստ մերոց օրինաց:

* *Ոմանք.* Չբանս զայս Պիղ՞:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Վասն այսորիկ որ մատնեացն զիս: *Ոմանք.* Չիս քեզ, նմա մեծ մեղք:

* *Ոմանք.* Լուաւ զբանս զայս: *Ոմանք.* Կապապ՝ թա:

* *Ոմանք.* Եւ էր իբրև ժամ... ահա թագաւոր ձեր:

* *Ոմանք.* Եւ նոքա աղաղակեցին... բայց ՚ի կայսերէ:

* *Ոմանք.* Որ անուանեալ էր Գագաթն:

* *Ոմանք.* Որ և ՚ի խաջ իսկ հա՞... այլ աստի... և միջի Յիսուս:

* *Ոմանք.* Գրեաց և տախտակ մի Պիղատոս:

* *Ոմանք.* Դաղմատերէն և:

* *Ոմանք.* Չոր ինչ գրեցի՞ գրեցի:

* *Ոմանք.* Ի վերուստ փորանկեալ ամենակին:

զի լցցի՝ գիրն որ ասէ. Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս, և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին: Ձինուորքն՝ զայն ինչ գործեցին՝: ²⁵Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղեովպայ, և Մարիամ Մագդաղենացի:

²⁶Յիսուս իբրև ետես զմայրն և զաշակերտն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կի՞ն դու՝ ահա՛ որդի քո՞: ²⁷Ապա ասէ ցաշակերտն. Ահա՛ մայր քո: Եւ յայնմ ժամանակէ ա՛ռ աշակերտն՝ զնա առ իւր: ²⁸Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի՝ գիրն, ասէ. Ծարաւի՛ եմ՞: ²⁹Եւ անդ կայր աման ինչ՝ լի՛ քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղոյ շուրջ եղեալ զմշտկաւ զոպայի, մատուցին ՚ի բերան նորա՞: ³⁰Իբրև ա՛ռ Յիսուս զքացախն հանդերձ լեղովն՝ ասէ. Ամենայն ինչ կատարեալ է:

Լ2 Եւ խոնարհեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին՞: ³¹Իսկ Յրեայքն՝ քանզի ուրբա՞թ էր, զի մի՛ անդէն ՚ի խաչին ազանիցին մարմինքն մինչ ցշաբաթն, զի էր օր մե՛ծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊեղատոս զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին՞: ³²Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա ՚ի խաչն ելեալ էր՞: ³³Բայց իբրև եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ո՛չ խորտակեցին զբարձս նորա. ³⁴այլ մի՛ ոմն ՚ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա. և վաղվաղակի ել արիւն և ջուր՞: ³⁵Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութիւն նորա. և նա գիտէ՛ թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասցի՞ք՞: ³⁶Այս եղև, զի լցցի՛ գիրն եթէ ո՛սկր նորա մի՛ փշրեսցի: ³⁷Եւ դարձեալ մեւս զիր ասէ, եթէ հայեսցին ՚ի նա՛ յոր խոցեցինն՞:

Լէ ³⁸Յետ այսորիկ աղաչեաց զՊեղատոս Յովսէփ որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յիսուսի ՚ի ծածուկ վասն ահին Յրէից. զի բարձցէ՛ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պեղատոս. եկին և բարձին զնա՞:

ԼԸ ³⁹Եկն և Նիկողոմնոս որ եկեալն էր առ Յիսուս՝ ՚ի գիշերի զառաջինն, և եբեր զնուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լտերս հարելը՞: ⁴⁰Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք՝ խնկովքն հանդերձ, որպէս օրէն էր Յրէից պատել՞: ⁴¹Եւ էր ՚ի տեղուջն յորում խաչեցաւ՝ պարտէ՛զ. և ՚ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ո՛չ ոք երբէք՝ էր եղեալ: ⁴²Անդ՝ վասն ուրբաթուն Յրէից, զի մօտ էր գերեզմանն՝ եղին զՅիսուս:

20

Գլուխ Ի

ԼԹ ¹Եւ ՚ի միաշաբաթուջն՝ Մարիամ Մագդաղենացի զայ՛ առաւօտուն ընդ արշալուռսն ՚ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ՝ ՚ի դրաց գերեզմանին՞:

* *Ոմանք.* ՚ի վերայ դորա վիճակս. *կամ՝* վիճակ՝ ո՛ւմ... պատմուճանի իմոյ վիճակս արկանէին: *Բագոււնք.* Չայս ինչ գործեցին:

* *Ոմանք.* Եւ ասէ ցմայրն:

* *Ոմանք.* Յետ այնորիկ գիտաց Յիսուս եթէ ահա:

* *Ոմանք.* Չմշտիկ զոպայի. *կամ՝* զմշտկաւ զոպայի:

* *Ոմանք.* Չգլուխն՝ աւանդեաց զոգին:

* *Բագոււնք.* Մինչև ցշաբաթն... զբարձս նոցա, և բարձցեն:

* *Ոմանք.* ՚ի խաչ ելեալ էր:

* *Ոմանք.* Եւ ել վաղվաղակի:

* *Ոմանք.* Եւ զի դուք հաւա՞:

* *Ոմանք.* Թէ հայեսցեն ՚ի նա որ խոցեցինն:

* *Ոսկան.* Պիղատոս. եկն և եբարձ զնա:

* *Ոմանք.* Առ Յիսուս գիշերի զառա՞... խառն ընդ հալուէս:

* *Ոսկան.* Կտաւովք և խնկովք: *Ոմանք.* Յրէիցն պատել:

* *Ոմանք.* Եւ ՚ի միաշաբաթուջն... ընդ արշալուռսն. և *ոմանք.* աշալուռսն ՚ի գերեզման

²Ապա ընթանայ և գայ առ Սի՛նովն Պե՛տրոս՝ և առ մեւս աշակերտն զոր սիրէր Յիսուս, և ասէ ցնոսա. Բարձի՛ն զՏէր՝ ՚ի գերեզմանէ անտի, և ո՛չ գիտեմք՝ ուր եղին զնա՛: ³Ե՛լ Պե՛տրոս և մեւս աշակերտն՝ և գային ՚ի գերեզմանն. ⁴ընթանային երկոքի՛ն ՚ի միասին: Եւ մեւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ ՚ի գերեզմանն: ⁵Եւ խոնարհեալ տեսանէ՛ զի կային անդ կտաւքն, բայց ՚ի ներքս ո՛չ եմուտ: ⁶Եկն և Սի՛նովն Պե՛տրոս՝ որ գայրն զկնի նորա, և եմուտ ՚ի գերեզմանն. և տեսանէ՛ զկտաւսն զի կային անդ՝. ⁷և վարշամակն որ էր ՚ի գլուխ նորա, ո՛չ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ՚ի մի կողմն: ⁸Յայնժամ եմուտ և մե՛ւս աշակերտն, որ եկեալ էր յառաջագոյն ՚ի գերեզմանն, ետես և հաւատաց. ⁹զի չև՛ ևս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել՝: ¹⁰Չոգան՝ դարձեալ առ միմեանս աշակերտքն: ¹¹Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ՚ի գերեզմանն, ¹²և տեսանէ երկուս հրեշտակս ՚ի սպիտակս, զի նստէին մի՛ ՚ի սնարից, և մի՛ յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի՛: ¹³Եւ նոքա՛ ասեն ցնա. Կին դու, զի՞ լաս: Ատ ցնոսա. Ձի բարձի՛ն զՏէրն իմ՝ ՚ի գերեզմանէ աստի՛ և ո՛չ գիտեմ ուր եղին զնա՛: ¹⁴Ձայս իբրև ասաց, դարձաւ ՚ի թիկո՛ւնս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր, և ո՛չ գիտէր թէ Յիսուս իցէ: ¹⁵Ատ ցնա Յիսուս. Կին դու՛ զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա՛ այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէր՝ եթէ դու բարձեր զնա՛ ասա՛ ինձ ուր եղիր զնա, զի ես առից զնա՛: ¹⁶Ատ ցնա Յիսուս. Մարիամ: Եւ նա՛ դարձաւ և ասէ ցնա Եբրայեցերէն. Բաբբունի, որ թարգմանի՛ վարդապետ՝: ¹⁷Ատ ցնա Յիսուս. Սի՛ մերձանար յիս, զի չև՛ ևս ելեալ եմ առ Չայր իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա՛ ցնոսա. Ելանեմ ես առ Չայրն իմ՝ և առ Չայր ձեր. և Աստուածն իմ՝ և Աստուած ձեր՝: ¹⁸Գայ Մարիամ Մագդաղենացի՛ և պատմէ աշակերտացն եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ՝ ասաց ցնա:

Իս ¹⁹Եւ էր երեկոյ՛ ՚ի միաշաբաթոնջ աւուրն. և դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Չրէից, եկն Յիսուս և եկաց ՚ի միջի նոցա, և ասէ ցնոսա. Ողջոյն ընդ ձեզ՝: ²⁰Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռս և զկողսն իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր՝: ²¹Ատ ցնոսա դարձեալ. Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Չայր իմ, և ե՛ս առաքեմ զձեզ: ²²Եւ զայս իբրև ասաց, փչեաց ՚ի նոսա՛ և ասէ. Առէք Չոգի Սուրբ՝. ²³Եթէ ունեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք՝ ունիցիք, կալեալ լիցի՛: ²⁴Իսկ թո՛վմաս՝ մի յերկուտասանիցն անուանեալն երկուորեակ, ո՛չ էր ընդ նոսա յորժամ եկն Յիսուս: ²⁵Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք զՏէր: Եւ նա՛ ասէ ցնոսա. Եթէ ո՛չ տեսից ՚ի ձեռս նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ՝ ՚ի տեղիս բևեռացն, և մխեցից զձեռս իմ՝ ՚ի կողս նորա, ո՛չ հաւատամ՝:

Իսկ ²⁶Եւ յետ ո՛ւրբ աւուր, դարձեալ էին ՚ի ներքս աշակերտքն, և թո՛վմաս ընդ նոսա.

անդ:

* *Ոմանք.* Չոր սիրէրն Յիսուս... բարձին զՏէրն ՚ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ո՛ւր:

* *Օրինակ մի.* Ձկտաւսն լոկ զի կային:

* *Ոմանք.* Թէ պարտ էր նմա:

* *Ոմանք.* Չրեշտակս սպիտակս:

* *Ոմանք.* Ձի բարձին զՏէր ՚ի գերեզմանէ:

* *Ոմանք.* Թէ պարտիզպանն իցէ:

* *Բագու՛մք.* Բաբբունի. և *ոմանք.* Բաբբի:

* *Ի լուս՝.* Սի՛ մերձանար յիս. *համաձայն ոմանց ՚ի բնար՝:* *Ոմանք.* Ձի չև ևս ելեալ եմ ես առ... առ Չայր իմ... և Աստուած իմ և:

* *Ոմանք.* Եկն եկաց Յիսուս ՚ի միջի. *կամ՝* ՚ի մէջ նոցա:

* *Ոմանք.* Ձձեռսն և զոտս... իբրև տեսին զՏէրն:

* *Ոմանք.* Առէք զՉոգին Սուրբ:

* *Ոմանք.* Եւ եթէ զուրուք ունից՝:

* *Յօրինակին պակասէր.* Ասէին ցնա *այլ* աշակերտքն: *Ոմանք.* Ի տեղի բևեռացն. և մխեցից զձեռն իմ:

զայ Յիսուս դրօքն փակելովք. և եկաց՝ ՚ի մէջ, և ասէ. Ողջոյն ընդ ձեզ*։²⁷ Ապա ասէ ցԹովմաս. Բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո, և մխտա՛ ՚ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։²⁸ Պատասխանի ետ Թովմաս՝ և ասէ ցնա. Տէր իմ՝ և Աստուած իմ։²⁹ Ասէ ցնա Յիսուս. Այդ զի տեսերդ զիս՝ և հաւատացեր, երանի որոց ո՛չ իցէ տեսեալ՝ և հաւատացեմ*։³⁰ Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտացն իւրոց՝ որ ո՛չ է գրեալ ՚ի գիրս յայսմիկ*։³¹ Այլ այս՝ այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի՛ Աստուծոյ. և զի հաւատայցէք, և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա*։

21

Գլուխ ԻԱ

ԽԲ ¹Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերքն Տիբերեայ. և յայտնեաց այսպէս. ²Եին ՚ի միասին Սիմովն Պետրոս, և Թովմաս՝ անուանեալն Երկուորեակ, և Նաթանայէլ որ ՚ի Կանայ Գալիլեացոց, և որդիքն Ջեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու*։ ³Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս. Երթամ ձուկն որսալ։ Ասեն ցնա. Գամբ և մեք ընդ քեզ։ Գնացին և մտին ՚ի նաւ, և յայնմ գիշերի կալան՝ և ոչ ինչ*։ ⁴Իբրև այգ եղև՝ կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ո՛չ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ։ ⁵Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք՝ մի՞թէ՛ ունի՞ք ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. Ո՛չ*։ ⁶Ասէ ցնոսա. Արկէ՛ք յաջակողմն նաւին զուռկանդ՝ և գտանիցէք։ Արկին՝ և ո՛չ կարեին ձգել ՚ի բազմութենէ անտի ձկանցն*։ ⁷Ասէ աշակերտն այն զոր սիրերն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն։ Սիմովն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրև՝ ըզսփածանելին՝ քանզի մերկ էր, և ընկէ՛ց զինքն ՚ի ծովն*։ ⁸Եւ այլ աշակերտքն նաւան իսկ գային, քանզի չէին հեռի ՚ի ցամաքէն. այլ իբրև երկերիւր կանգնաւ, քարշէին զգործիսն հանդերձ ձկանքն*։ ⁹Իբրև ելին ՚ի ցամաք, տեսանեն կրակետղ կայծականց, և ձուկն մի ՚ի վերայ, և հաց*։ ¹⁰Ասէ ցնոսա Յիսուս. Բերէ՛ք ինձ ՚ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալարուք այժմիկ*։ ¹¹Եմուտ Սիմովն Պետրոս, և ձգէր զգործին ՚ի ցամաք՝ լի՛ մեծամեծ ձկանքք, հարելր և յիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր, և ո՛չ պատառեցաւ գործին*։ ¹²Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք։ Եւ ո՛չ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՛վ ես, զի գիտէին թէ Տէրն է*։ ¹³Գայ Յիսուս՝ և առնու զհացն և տայ՝ նոցա, նոյնպէս և զձկնկն*։ ¹⁴Ձայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն՝ յարուցեալ ՚ի մեռելոց*։ ¹⁵Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍիմովն

* *Յորինակին.* Եւ եկեաց ՚ի մէջ, և ասէ։ *Ուր ոմանք.* Եւ եկաց ՚ի մէջ նոցա, և ա՛։

* *Ոմանք.* Այլ զի տեսեր զիս և հաւ... որոց չիցէ տեսեալ և հաւատայցեն։

* *Օրինակ մի.* Եւ այլ նշանս եցոյց Յիսուս։ *Ոմանք.* Ի գիրսս յայսոսիկ։

* *Յորինակին պակասէր.* Այնչափ ինչ գրեցաւ։ *Ոմանք.* Յաւիտենականս ունիցիք յանուն։

* *Ոմանք.* Եին ՚ի միասին... անտի նորա երկու։

* *Ոմանք.* Երթամք ձուկն որ՛։

* *Ոմանք.* Պատասխանի ետուն նմա և ասեն. Ոչ։

* *Ոսկան.* Ասէ ցնոսա Յիսուս. Ար՛։ *Ոմանք.* Յաջակողմ. *կամ՝* յաջոյ կողմ նաւիդ զուռկանն. *կամ՝* զուռկանսդ... ՚ի բազմութենէ ձկանցն։

* *Ոմանք.* Արկ զիւրեաւ զսփածանելին։

* *Ոմանք.* Ձգործին հանդերձ ձկանքքն։

* *Ոմանք.* Տեսին. *կամ՝* տեսանէին կրակետղ։

* *Ի բազումս պակասի.* Բերէ՛ք ինձ ՚ի ձկն*։ *Օրինակ մի.* Ձոր դուք ըմբռնեցէք այժմ։

* *Ոմանք.* Եւ ձգէր զգործիսն... ձկանք, հարիւր յիսուն և։

* *Ոմանք.* Եկայք ճաշակեցէք... դու ո՞ ես։

* *Ոմանք.* Նոյնպէս և զձկունսն։

* *Ոմանք.* Աշակերտացն իւրոց, յարուցեալ։

Պե՛տրոս Յիսուս. Սի՛նովն Յովնանու, սիրե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. Այո՛ Տէր, և դո՛ւ գիտես զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա՛ր զգառիմս իմ: ¹⁶Դարձեալ ասէ ցնա. Սի՛նովն Յովնանու սիրե՞ս զիս: Ասէ ցնա. Այո՛ Տէր, և դու գիտես զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա՛ր զոչխարս իմ: ¹⁷Ասէ ցնա երիցս անգամ. Սի՛նովն Յովնանու սիրե՞ս զիս: Տրտմեցա՛ւ Պե՛տրոս՝ զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես. և դու իսկ՝ զամենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յիսուս. Արածեա՛ր զոչխարս իմ: ¹⁸Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին՝ գօտի ածէիր, և երթայիր յո՛ւ և կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կալցես՝ և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին ուր ոչ կամիցիս: ¹⁹Չայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած. և զայս իբրև ասաց՝ ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ:

ԽԳ ²⁰Դարձաւ Պե՛տրոս՝ և տեսանէ զաշակերտն զոր սիրէր Յիսուս՝ զի երթայր զկնի. որ և անկաւ զլանջօքն նորա՝ և ասէ. Տէր ո՞վ է որ մատնելոցն է զքեզ: ²¹Ձնա՛ տեսեալ Պե՛տրոսի, ասէ ցՅիսուս. Տէր, իսկ սա՛ զի: ²²Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ զի կացցէ դա՛ մինչև ե՛ս գամ. քեզ զի՞ փոյթ է, դու ե՛կ զկնի իմ: ²³Եւ ե՛կ բանս այս յեղբարս, և համարեցան թէ աշակերտն այն ո՛չ մեռանիցի. և ո՛չ ասաց նմա Յիսուս, եթէ ոչ մեռանիցի. այլ թէ կամիմ ես թէ կացցէ դա մինչև ե՛ս գամ: ²⁴Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսոցիկ. որ և գրեացն իսկ զայսոսիկ. և գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա: ²⁵Բայց է և այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ՛ և ո՛չ աշխարհս բաւական էր տանել զգիրսն, որ թէ գրեալ էին՝:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒՄ

Աւետարան ըստ Յովհաննու

(*Իրբ կնոջն շնացելոյ՝*)

22

⁵³ Գնացին իւրաքանչիւրք ՚ի տեղի իւր: ¹ Իսկ Յիսուս գնաց ՚ի լեռն Ձիթենեաց: ² Եւ ընդ առաւօտսն դարձեալ եկն ՚ի տաճարն. և զայր առ նա ամենայն ժողովուրդն, և ուսուցանէր զնոսա: ³ Ածին քահանայապետքն և փարիսեցիք՝ կին մի ըմբռնեալ ՚ի շնութեան. և կացուցեալ զնա առաջի, ⁴ ասեն. Կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս

* *Ոմանք.* Ձի ասացն ցնա երիցս եթէ սի՞:

* *Ոմանք.* Դու գօտի ածէիր... ՚ի վեր կալցիս... տարցեն ուր ոչ կամեսցիս:

* *Ոմանք.* Փառաւոր առնելոց իցէ զԱստուած:

* *Ի լուս՝.* Եւ տեսանէ զաշակերտն զայն, զոր: *Ոմանք.* Երթայր զկնի նորա:

* *Ոմանք.* Եւ ոչ ասաց Յիսուս թէ ոչ մե՞... թէ կայցէ դա միմ՞:

* *Ոմանք.* Թէ ճշմարիտ է վկայութիւնն նորա:

* *Ոմանք.* Ձոր եթէ գրեալ էին մի ըստ միոջէ: *Ուր Ոսկան.* Որ եթէ գրեալ էր:

* *Ի վախճանի՝ ոմանք.* Կատարեցաւ զլուխք Աւետարանին որ ըստ Յովհաննու:

* *Տես զոր նշանակեցաք ՚ի վերոյ. Գլ. Է 52: Ուր համաձայնելով բազմաթիւ հնագոյն գրչագրաց՝ զայս հատուած բանից աւետարանի նովին հանգամանօք եղաք աստանօր:*

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Եւ գնացին իւրաքանչիւր:

* *Ոմանք.* Եւ ընդ առաւօտն... և նստեալ ուսուցանէր զնոսա:

* *Ոմանք յաւելուն.* Ածին առ նա դպիրքն և քահանայապետքն... կին մի ՚ի շնութենէ ըմբռնեալ:

շնացեալ է՝ ⁵ Եւ յօրէնսն՝ Մովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել. արդ դու՝ զի՞նչ ասես վասն դորա: ⁶ Չայս ասէին՝ փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն զնմանէ: Իսկ Յիսուս ՚ի խոնարհ հայելով՝ զրէ՛ր մատամբն յերկրի: ⁷ Իսկ իբրև ստիպեցին հարցանելով ցնա, հայեցեալ ՚ի վեր՝ ասէ ցնոսա. Անմեղն ՚ի ձէնջ, նախ՝ նա՛ ընկեսցէ քա՛ր ՚ի վերայ դորա: ⁸ Եւ դարձեալ ՚ի խոնարհ նայելով՝ զրէ՛ր յերկրի: ⁹ Եւ լուեալ՝ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնո՛ցն մինչև ՚ի վերջինսն. և մնաց միայն Յիսուս, և կինն՝ կայր առաջի նորա*: ¹⁰ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. Կի՛ն դու՝ ո՛ւր եմ, ո՛չոք զքեզ դատապարտեաց: ¹¹ Եւ ասէ. Ո՛չ Տէր: Եւ ասէ Յիսուս. Եւ ո՛չ ես դատապարտեմ զքեզ. ե՛րթ՝ յայսմիետէ՛ մի՛ մեղանչեր*:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԳՐՈՑ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Որք միանգամ ճշմարտիւ և կարևոր աստուածամերձ և աստուածատէր անմահութեանն իցեն ցանկացօրք, երկնաւոր և աստուածազարդ առաքինութեանն են պաշտօնեայք, նոցա կէտ ազնուական սահմանեալ անձանց զառաջինսն, զաստուածերգոյն Դաւթի զերանութիւնն, զաստուածեղէն բանիցն որոճումն՝ զցայգ և զցերեկ գանձեն զանձ անձանց իւրեանց ճշմարտիւ ցնծալից բարբառովք. և երանութեանս այսմիկ պարապեալք, և ՚ի սորին սէր հարեալք. և յաստուածեղէն պտղոյն խորհրդիւ ճաշակեալ, զամենայն միտս իւրեանց յամենայն կողմանց ամփոփեալ, անդ ուրեմն ՚ի վեր այնուհետև մտադիւրութեամբ՝ ՚ի վերին իսկ անմահութիւնն հային: Եւ արդ՝ նոցա որ զայնպիսի հրամանս տան,

* *Ոմանք.* Եւ փորձելով ասեն ցնա. Վարդապետ. կինս այս զտաք ըմբռնեալ: *Ուր օրինակ մի.* Կինս այս ըմբռնեցաւ ակնտեսութեամբ յանդիմանելի շնութենէ: *Եւ յօրէնս Մովսէսի պատուիրեաց մեզ որ զայսպիսիս քարկոծ առնէին. արդ դու զի՞նչ ասես զսմանէ: *Չայս ասացին փորձելով. զի ունիցին չարախօսութիւն զնմանէ: Եւ Յիսուս հայեցեալ ՚ի կինն. և կինն ահիւ և դողութեամբ կայր առաջի նորա: Եւ քահանայապետիցն ստիպէին հարցանել զնա: Իսկ Յիսուս գթացեալ ՚ի կին. և խոնարհեալ մատամբն զրեաց ՚ի գետնի. և ասէր ցնոսա. Եկա՛յք ամենեքին ընթերցիք զգիրս զայս. և որ անմեղն է ՚ի ձէնջ արկցէ՛ քար ՚ի վերայ դորա: Իբրև լուան զայն՝ զային ամենեքեան և ընթերցումին մի ըստ միոջէ՛ զյանցանս իւրեանց. և որ ընթերցոյր ելանէր ՚ի տաճարէն. սկսեալ քահանայապետիցն մինչև ցփարիսեցիսն ելին ամենեքեան. և մնաց միայն կինն: Ասէ Յիսուս. Կին դու ո՛վ է որ դատապարտեացն զքեզ: Ասէ կինն. Ոչ ևս երկին Տէր: Ասէ Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ. այսու հետև մի՛ ևս մեղանչիր. այլ երթ խաղաղութեամբ ՚ի տուն քո, թողեալ լիցին քեզ մեղք քո:

* *Ոմանք.* Եւ լուեալ իւրաքանչիւրոք զյանցանս իւր, սկսան ելանել մի ըստ միոջէ. ՚ի քահանայապետիցն սկսեալ յառաջնոյն մինչև ցվերջինսն. մնաց միայն Յիսուս: Եւ կինն կայր առաջի նորա: Իսկ Յիսուս հայեցեալ ՚ի վեր ոչ զոք ետես, բայց միայն զկինն. և ասէ ցնա. Ուր եմ դատախազք քո ո՛չ ոք զքեզ դատապարտեաց: Եւ ասէ կինն. Ոչ ուրեք երկին Տէր: Եւ ասէ Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ:

* *Ի վախճանի. յօրինակին մերում ՚ի ստորին լուսանցս նշանակի.* Այս բանս ՅԶԶ համարն է. որով յայտ առնէ՝ թէ ըստ կարգի պատմութեանն ՚ի ՅԶԶ համարն համարբարառին Եւսեբեայ պարտ է ընթերցուլ, ըստ որում և ունին կէտք ՚ի Յունական օրինակաց. և թարգմանութիւնն Լատինացոց. յորմէ՛ ոմանք և ՚ի մերոցս ՚ի յետին դարու զրչաց մուծին անդէն՝ որպէս նշանակեցաք անդանօր:

պարտ է հնազանդել, և լինել նոցա սպասաւոր յամենայն ժամ յօգուտ. զի օրէն է մեզ, որք յայլոց օգտեցաք՝ պիտանի՝ լինել միշտ կարօտելոց, և փախչել ՚ի դէպ ժամանակի ՚ի դատապարտութենէ նախանձու որ յաւետարանսն կայ: Նախ՝ աւասիկ իմ իսկ զառաքելական գիրս տուն առ տուն ընթերցեալ և գրեալ, կանխագոյն առաքեցի առ ոմն ըստ Քրիստոսի ՚ի հարցն մերոց՝ սակաւ ինչ իմովսանն տկարութեամբ ջանացեալ. իբրև զաւանակ մի անվարժ նորուսունն ընդ անապատ ընդ անկոխ ճանապարհ անցանել մտանել ՚ի հրահանգս հրամայեալս: Ձի ո՛չ զոք յայնցանէ որք աստուածեղէն բանին եղեն պատգամաւորք մինչև ցայսօր գիտէի՝ թէ վասն գրոցս այսոցիկ փոյթ յանձին կալեալ եցոյց զկերպարանս աշխատութեան. քանզի ո՛չ իսկ այնպէս յանդուգն և ժպիրի էի, եթէ զայլոյ ջան վաստակոց յի՛ս առեալ անխնայ թշնամանէի տկարութեամբ՝ սակաւ գիտութեանս մերոյ զընթերցուածոցն ընտրութիւնս: Արդ՝ վաղագոյն ՚ի մօտոյ, որպէս յառաջագոյն ասացի՝ զգիրսն Պաւղոսի ընթերցեալ, և անդէն առ նմին զԳործոցս առաքելոց, միանգամայն և զԿաթողիկեայց թղթոցն առաքելոց, զշաբաթ մի ողջ ջանացեալ, այժմ առ քեզ առաքեցի: Աղաչեմ յոյժ չլինել մեղադիր ՚ի վերայ երկոցուն յանդգնութեանս իմոյ և ժպրիութեան. զամենեսեան ՚ի դէպ ժամանակի առ հասարակ աղաչեմ զեղբարս և զհարս՝ սիրով այդմ պատահել, և զիմ գյանցանս և զսխալութիւնս ՚ի խամութենէ չյիշատակել, այլ մանաւանդ ուղղել եղբայրաբար, զիջանելով ըստ իս որ ինչ այդր կայցէ. զի անտի զմեզ հայրենի հրամանն յանդգնել աւելի քան զկար մեր գրաւեաց: Եւ աստ եղբայրական մտերիմ խնամոց հաւանեալք՝ արասցուք միւսանգամ ձեռն ՚ի գործ ՚ի մեծամեծսն քան զմեզ համարձակութեամբ. քանզի յեղբարս և ՚ի հարս յամենայնի մտանէ սերն. և ո՛չ մի ինչ ամբարհաւաճութիւն ինքն հակառակ ինքեան յիւր մարմինն ցուցանէ. զի օրէնք կան ՚ի վերայ մեր աստուածեղէնք, ճշմարտիւ արդարև եղբայրասէր, որ յօժարեցուցանելով ՚ի սերն՝ ասեն յայտնապէս, եթէ սեր ծածկէ զբազմութիւն յանցանաց: Իսկ ես՝ արդարագոյն և առաւել ուղղագոյն զսննդակիցն և զբարեկամ նշանակեցից, և մանր պատմեցից զգեղցկանուն զհռչակաւորն անուն, զանուանակիրն աստուածեղէն պատգամացն զմիջամուխ իմաստութեան զմշտակոխ որոճումնն՝ որ ցանգ յաճախէ ՚ի քեզ ո՞վ քրիստոսասէր, որ զշուրջ զքն թակարդապատեալ կայ, և զցանկալի անուն նորա ստացեալ շահեալ ունիս յանձին, յաճախ և անքուն կրթութեամբք վարժեալ, ծաղկալից ծաղկաւէտ հաստատեալ կաս. որպէս ոք ուստեք ՚ի պւետիկոսացն ասաց զճշմարիտն, և երաշխաւորեալ մեզ անտի զգեղեցկագոյն օգտութիւն, գրեթէ աղաղակէ իսկ և ասէ այսպէս, թէ կրթութիւն գործոյ օգտակար է. և դարձեալ՝ քան զամենայն իմաստունս իմաստնագոյն և ամենաբարի կենդանատուր, զամենան ինչ կրթութեանն համարեցաւ: Եւ արդ՝ եթէ ոք երբէք հեղգայցէ անտի, անձամբ անձին զշահ ընթացից երանութեանն, իւրով հեղգութեամբն վրիպեցոյց. քանզի ասէ. Երանեալ է այր, որ յօրէնս Տեառն խորհեսցի ՚ի տուէ և ՚ի գիշերի: Ձի զամենեսին անտուստ ՚ի վերուստ մտավարժս և աստուածապաշտս կամէր լինել Աստուած, ՚ի խորհել և ՚ի կրթել զմիտս ամենայն, յառաջագոյն յորդորելով յիւրոց պատուիրանացն ՚ի հնազանդութիւնս, և ասէր. Լուր Իսրայէլ՝ Տէր

Աստուած քո Տէր մի է: Եւ Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ: Եւ եղիցին պատգամքս այսոցիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝ ՚ի սրտի քում և յանձին քում. և խելամուտ արասցես զայդ որդւոց քոց, և խօսեսցիս դու ՚ի դոսա յորժամ նստիցիս ՚ի տան, և զնայցես ՚ի ճանապարհ, և ՚ի ննջել և ՚ի յառնել. և այսպէս անքուն և հանապազորդ ընդ կրթութեանս այսմիկ ունել մեզ գութ կամի

Աստուած: Եւ արդ՝ աւասիկ ՚ի պահպանութիւն աստուածեղէն հրամանին համարձակութիւն առեալ աստուածերգոյն Դաւթի՝ ասէր ցԱստուած, թէ խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, Տէր օգնական իմ և փրկիչ իմ: Եւ արդ՝ հատուցումն անվրէպ և անսխալ առ ՚ի կրթութիւն աստուածեղէն վարդապետութեանցս զթոյ է մեզ երանութիւնս այս. քանզի հեղգացելոցն ՚ի սմանէ, անվրէպ և անհրաժեշտ յաստուածակոյս կողմանէ անտի է եղկութիւն. արդ՝ եթէ իցեն ոմանք որ անփոյթ այսմ առնիցեն, կրեսցեն զայն զոր առ յապայ թշուառացեալքն կրիցեն. որպէս և ասէ, եթէ անիծեալ ամենայն որ ոչ կայցէ յամենայն ՚ի զրեալս ՚ի գիրս օրինաց առնել զնոսա: Ապա ո՛չ երբէք հեղգալ պարտ է, և խուսափել յաստուածապաշտ և յազնուական մերձաւորութենէ կրթութեանն. զի ընդելասէր է և զթասէր. և առաւել խնամոտ և արդիւնակատար, զիրաքանչիւր օգուտս վաստակոց չափեալ միշտ. զի որչափ ոք ՚ի չափ և ՚ի գիտութիւն բազում ուսմանն հասանիցէ, բազմապատիկ ևս մեծամեծաց և կարևորաց ցանկալ յորդորէ: Զոր օրինակ ոք ՚ի մերձաւոր ձեռագիտացոյ զազնուագոյն ինչ արուեստ գտեալ՝ ՚ի մանրագոյնն ևս դարձեալ քան զնոյնս անտուստ մատուցեալ քննիցէ և խնդրիցէ՝ միշտ բազում մեքենայիւք ինքնին զիւր միտսն ՚ի կատարեալսն ձգտիցէ, և ևս առաւելագոյն յարդարիցէ. ըստ նմին օրինակի և մեզ դիպիցի քաղցրուսոյց ընթերցուածոցն վաճառաշահութիւն, որ օր ըստ օրէ ՚ի հանդէս բարեպաշտիցն գիտութեան առ փոքր փոքր զոգիսն կրթիցէ և խելամուտ առնիցէ: Արդ՝ որպիսի՞ օրինակաւ պարտ իցէ ընթերցուածասէր լինել, և աննիազ զնորին պարտն մեծարել. մանաւանդ մե՛զ իսկ զօրհանապագ, և ՚ի մօտոյ ինձ իսկ գլխովին, որ զԳործոց առաքելոցն գիրս, միանգամայն և զԹղթոցն կաթողիկեայց մտաբերեցի ընթերցումը ըստ գլխոցն և ըստ տանցն, և եթէ որչափ պարտ իցէ ընտրել զգլուխս և զտունս, և զատանել զմիտսն ՚ի միմեանց մանր մանր մասամբք, որպէս հրամայեցեր մեզ եղբայր սիրելի Աթանասիէ: Եւ զայս իմ առանց դանդաղութեան մտադիւրութեամբ արարեալ, տուն առ տուն կարգեցի միանգամայն ամենևին զյստակն ըստ իմում տկարութեան, առ ՚ի զարդարուն առնելոյ զընթերցուածն, և առաքեցի առ քեզ կարճ ՚ի կարճոյդ, ըստ իւրաքանչիւր կարգի յօրինեալ զսակաւատուն բովանդակութիւնդ: Նախ՝ վասն որոյ Ղուկաս աստարանիչ արար սկիզբն կարգելոյ, որ Անտիոքացին էր յազգէ, յարուեստէ բժիշկ, աշակերտեալ առ Պաւղոսի՝ երկուս գիրս զրեաց. մի և առաջին զԱւետարանին, երկրորդ՝ զԳործոց առաքելոց: Եւ արդ՝ են ամենայն բանք գրոցս այսոցիկ վասն յարութեանն և յերկինս վերանալոյն Քրիստոսի, և վասն Սրբոյ Զոգւոյն յառաքեալսն իջանելոյ. և եթէ որպէս զաստուածապաշտութիւնն ՚ի Քրիստոս աստարանեցին աշակերտքն. և եթէ ո՞րչափ ինչ աղօթիւք, և ՚ի նա հաւատովք արարին սքանչելիս: Վասն

յերկնից աստուածեղէն կոչմանն Պաւղոսի, և առաքելութեանն նորա. և ծաղկալից քարոզութեանն: Եւ միանգամայն իսկ ասել, թէ վասն համբերութեան առաքելոցն զոր յաղագս Քրիստոսի համբերեցին բազում և մեծամեծ վշտաց:

Դիր Գլխոյ Գործոց Առաքելոց

Ի հարցն և ՚ի վարդապետաց զօրինակն և զպայմանն ընկալեալ և շահեալ, ձեռն ՚ի գործ արկանեմք նիազութեամբ գլխակարգութեանս. աղաչեմք չլինել մեղադիր մերոյ յանդգնութեանս, որք կրսերք ենք ժամանակօք և ուսմամբ՝ յիրաքանչիւր ումեք ՚ի ձէնջ որ ընթեմնուցուք, աղօթք վասն մեր ըստ մեզ զիջանելոյ լինիցին՝ ձերով օգտութեամբ: Եւ արդ՝ դիցուք զայս ըստ պատմութեանն Ղուկայ մատենագրի. սևադեղով զգլուխսն և եթ. և կարմրադեղով զմասնաւորս մօտ առ նոսին զներքնաբաժինսն նշանակեսցուք: Տունք ԺԴ:

Գլուխք Գործոց Առաքելոց

ա. Վասն առ ՚ի յարութենէ վարդապետութեանն Քրիստոսի և երևելոյ աշակերտացն, և վասն աւետեաց Սրբոյ Յոգւոյն պարգևաց, և տեսանելոյ՝ և պայմանի վերանալոյն Քրիստոսի. և վասն փառաւոր և երկրորդ գալստեան նորա:

բ. Պետրոսի խօսք առ աշակերտեալսն վասն մահու և խոտմանն Յուդայի մատնչի: *ա.* Յորում փոխանակ նորա՝ մուտն Մատաթայ՝ վիճակելոյն շնորհօք ՚ի ձեռն աղօթից:

գ. Վասն աստուածեղէն Սրբոյ Յոգւոյն իջանելոյ յաւուրն Պենտակոստից ՚ի վերայ հաւատացելոցն: *ա.* Յորում Պետրոսի վարդապետութիւնն վասն նորին ՚ի մարգարէից վասն չարչարանացն, և յարութեանն, և վերանալոյն Քրիստոսի, և պարգևաց Յոգւոյն Սրբոյ: *բ.* Վասն հաւատոց այնոցիկ, որ անդ դիպեցան, և մկրտութեամբ փրկութեանն նոցա: *գ.* Վասն միաբանութեան հասարակացն օգտի, և յաւելուածութեան հաւատացելոցն:

դ. Վասն Քրիստոսի բժշկութեանն ՚ի ծննդենէ կաղոյն, և Պետրոսի յանդիմանաւոր վարդապետութեանն, վշտակցութեամբ և խրատութեամբ վասն փրկութեան նոցա: *ա.* Յորում խուժանն յարուցեալ քահանայապետիցն առ նախանձու վասն իրացն գործելոց, և անքնին սքանչելեացն, և Պետրոսի դաւանութեանն Քրիստոսի և շնորհաց: *բ.* Վասն սպառնալեաց քահանայապետիցն թէ չէ՛ օրէն համարձակել յանուն Քրիստոսի, և չառնելոյ յանձն առաքելոցն: *գ.* Գոհութիւն յեկեղեցւոյն վասն առաքելոցն՝ յաղագս հաւատոցն ժուժկալութեան:

ե. Վասն համաշունչ համօրէն հաւատացելոցն միաբանութեան: *ա.* Յորում և վասն Անանիայ և Սափիրայ, և դառն վախճանի նոցա:

զ. Թէ զառաքեալսն արկեալ ՚ի բանտ, հրեշտակ Աստուծոյ եհան ՚ի գիշերի. և համարձակեաց նոցա անխափան քարոզել զՔրիստոս: *ա.*

Յորում 'ի վաղիւ անդր զնոսա միւսանգամ քահանայապետիցն ըմբռնեալ պատուիրէին զի մի՛ իշխեսցեն այլ ուսուցանել. և զան հարեալ արծակեցին: *բ.* Եւ Քանաղիէլի հաւատարիմ խրատն վասն առաքելոցն, և օրինակս ինչ 'ի մէջ բերելով և յայտնի առնելով:

է. Վասն ձեռնադրութեան եւթանցն սարկաւագաց:

ը. Վասն Յրէիցն 'ի վերայ յառնելոյ, և զրպարտութիւն զՍտեփանոսէ խօսելոյ, և նորա հրապարակախօս լինելոյ վասն առ Աբրահամ ուխտին Աստուծոյ, և վասն երկոտասանից նահապետացն: *ա.* Յորում վասն սովին և ցորենավաճառութեանն, և ճանաչելոյ որդւոցն Յակովբայ զՅովսէփ. և վասն ծննդեանն Սովսիսի և աստուածյայտնութեանն նմա 'ի լերինն Սինայի. վասն ելիցն, և որ թագաւոր օծութեանն Իսրայէլի մինչև 'ի ժամանակսն Սողովմոնի և տաճարին շինելոյ. դաւանութիւն վասն երկնաւոր փառացն Յիսուսի Քրիստոսի որ յայտնեցան նմա. վասն որոյ քարկոծ եղեալ Ստեփանոսի հանգեալ աստուածպաշտութեամբ:

թ. Վասն հալածանաց եկեղեցւոյն, և թաղմանն Ստեփանոսի: *ա.* Յորում վասն Փիլիպպոսի առաքելոյ 'ի Շամրին զբազումս բժշկելոյ:

ժ. Վասն Սիմոնի կախարդի որ հաւատացն և մկրտեցաւ հանդերձ բազում ընկերօք: *ա.* Եւ վասն Պետրոսի, և Յովհաննու առ նոսա առաքելութեան, և կոչման Յոգւոյն Սրբոյ 'ի վերայ մկրտելոցն:

ժա. Զի ո՛չ արծաթով, և ո՛չ կեղծաւորաց, այլ արժանեացն հաւատովք հաղորդութիւն Յոգւոյն Սրբոյ պարզկի: *ա.* Յորում վասն կեղծաւորութեանն, և սաստելոյ Սիմոնի:

ժբ. Թէ բարեաց և հաւատացելոց աջողէ Աստուած զփրկութիւն, և յայտ 'ի ներքինւոյն իրաց է:

ժգ. Վասն յերկնից աստուածեղէն կոչմանն Պաւղոսի յառաքելութիւնն Քրիստոսի: *ա.* Յորում վասն բժշկութեան և մկրտութեան Պաւղոսի 'ի ձեռն Անանիայ՝ ըստ յայտնութեանն Աստուծոյ համարձակութեան նորա, և հասանելոյ առ առաքեալսն 'ի ձեռն Բառնաբայ:

ժդ. Վասն Ենեայ անդամալուծի բժշկելոյ 'ի Լիդիա 'ի ձեռն Պետրոսի: *ա.* Յորում վասն Տաբիթայ որ զայրիսն սիրէր, զոր յարոյց 'ի մեռելոց Պետրոս աղօթիւք 'ի Յոպպէ:

ժե. Վասն Կոռնիելի, որչափ ընդ նմա հրեշտակն խօսեցաւ, և որքան դարձեալ Պետրոսի յերկնից վասն կոչման հեթանոսաց ասացաւ: *ա.* Յորում թէ յորժամ կոչեցաւ Պետրոս՝ եկն առ Կոռնելիոս: *բ.* Երկրորդութիւն բանիցն զոր հրեշտակն ուխտեաց և պատմեաց Կոռնելի:

զ. Պետրոսի վարդապետութիւնն 'ի Քրիստոս. և Յոգւոյն Սրբոյ 'ի վերայ լսողացն պարզեք. և թէ զհարդ մկրտեցան նոյն ժամայն 'ի հեթանոսացն հաւատացեալք:

ժզ. Պետրոս մի ըստ միոջէ զեղեալ գործսն պատմէր առաքելոցն, որք էին խղճի 'ի նմանէ, յորժամ զԲառնաբաս առաքեցին առ եղբարսն որ յԱնտիոքն էին:

ժէ. Մարգարեութիւն Ագաբայ վասն համաշխարհական սովոյն, և վասն երախայրեաց եղբարցն որ յերուսաղէն:

ժը. Յակովբայ առաքելոյ սպանումնն, և ըմբռնելն Պետրոսի 'ի Յերովղէ. և թէ ո՞րպէս հրեշտակ Աստուծոյ զերծոյց զնա 'ի բանտէն, և թէ որպէս Պետրոս գիշերոյն յայտնեցաւ եղբարցն և զնաց: *ա.* Յորում վասն

պահապանացն տանջանացն. և յետոյ վասն ամպարշտին Յերովդի դառն և սատակիչ կործանմանն:

ժթ. Առաքելութիւն Բառնաբայ և Պաւղոսի յաստուածեղէն հոգւոյն 'ի Կիպրոս. և զոր ինչ միանգամ արարին նոքա ընդ Ելիմաս մոգ:

ի. Պաւղոսի ծաղկազարդ վարդապետութիւնն 'ի Քրիստոս յօրինաց անտի, և կարգաւ 'ի մարգարէից՝ պատմականն և աւետարանականն: *ա.*

Յորում և ընտրականն և խորհրդականն: *բ.* Վասն փոփոխելոյ քարոզութեանն 'ի հեթանոսս, և հալածանացն նոցա անտի, և երթալոյ յիկոնիոն:

իա. Թէ զիա՞րդ յիկոնիոն քարոզեցին զՔրիստոս, ուր բազումք հաւատացին, և հալածեցան առաքեալքն:

իբ. Վասն 'ի Լիւստրոս 'ի ծննդենէ կաղին բժշկելոյ 'ի ձեռն առաքելոցն.

վասն որոյ և աստուածս եկեալս համարեցան զնոսա որ էին 'ի տեղիսն:

ա. Ուր և յետոյ քարկոծ լինէր Պաւղոս յարուարծանեաց:

իգ. Թէ ո՞չ է պարտ թլփատել զհաւատացեալսն 'ի հեթանոսաց, հրամանաւ և ընտրութեամբ առաքելոցն: *ա.* Յորում և թուղթն նոցա առ այնոսիկ որ 'ի հեթանոսացն էին վասն պահելեացն պարտոյիցն: *բ.*

Դիմադարձութիւն Պաւղոսի ընդդէմ Բառնաբայ վասն Մարկոսի:

իդ. Վասն նորընծայ խրատուն Տիմոթեայ, և ըստ յայտնութեան երթալոյն Պաւղոսի 'ի Մակեդոնիա: *ա.* Յորում վասն հաւատոցն և փրկութեան կնոջ

ուրումն Լիդիա անուն. և վասն բժշկութեան աղախնոյն որ զհարցուկ

այսն ունէր. վասն որոյ զՊաւղոս արկին 'ի բանտ տեարք նորա: *բ.* Վասն

լինելոյ անդ շարժմանն և սքանչելեաց. և թէ որպէս հաւատաց

բանտապետն, և 'ի նմին զիշերի մկրտեցաւ ամենայն ընտանեօք իւրովք. և թէ աղաչեցեալք ելին 'ի բանտէն առաքեալքն:

իե. Վասն խռովութեանն որ եղև 'ի Թեսաղոնիկէ. յաղագս քարոզութեանն և փախստեանն Պաւղոսի 'ի Բերիա, և անտի յԱթէնս:

իզ. Վասն յԱթէնս մեհենին գրոյ, և իմաստասէր քարոզութեանն և աստուածապաշտութեանն Պաւղոսի:

իէ. Վասն Ակիւլայ և Պրիսկիղեայ, և Կորնթացւոց անհնազանդութեան, և ըստ յառաջգիտութեան զնոցանէ հաճութեանն Աստուծոյ որ յայտնեցաւ Պաւղոսի: *ա.* Յորում վասն Կրիսպոսի ժողովրդապետի, որ հաւատացն հանդերձ ոմամբք և մկրտեցաւ: *բ.* Թէ 'ի յուզել խռովութեանն 'ի Կորնթոս՝ խուսեաց Պաւղոս. և եկեալ յեփեսոս խօսեցաւ ընդ նոսա և զնաց. և վասն Պաւղոսի առն ճարտարաբանի և հաւատացելոյ:

իը. Վասն մկրտութեան և Յոգւոյն Սրբոյ պարգևաց որ տուան 'ի ձեռն աղօթիցն Պաւղոսի, հաւատացելոցն յեփեսոս, և վասն բժշկութեան

ժողովրդեանն: *ա.* Յորում վասն որդւոցն Սկևեայ, թէ չէ՛ պարտ ձեռնամուխ լինել անհաւատից և անարժանից յիրս ինչ որ հաւատովք

գործիցին, և խոստովանութեանն վասն հաւատացելոցն: *բ.* Վասն յեփեսոս խռովութեանն՝ շարժելոյ 'ի Դեմետրեայ արծաթագործի 'ի վերայ

առաքելոցն:

իթ. Շրջելն Պաւղոսի: *ա.* Յորում վասն մահուն և դարձին Տիւքա աղօթիքն Պաւղոսի 'ի Տրուադայ: *բ.* Յորում նաւաչուն Պաւղոսի

յեփեսեայ մինչև 'ի Կեսարիա Պաղեստինացւոց:

լ. Ազաբու մարգարէութիւնն վասն անցիցն՝ որ անցանելոցն էին ընդ

Պաւղոս յերուսաղէմ:

լա. Խրատ Յակովբու առ Պաւղոս վասն չտալոյ կարծիս արգելուլ զԵբրայեցիսն ՚ի թլփատելոյ:

լբ. Վասն յերուսաղէմ ամբոխին ՚ի վերայ Պաւղոսի յառնելոյ, և թէ ո՞րպէս զնա հազարապետն ՚ի բազմութենէ անտի փրկեաց: ա. Յորում Պաւղոսի վասն իւրոյ հաստատութեանն և յառաքելութիւն կոչելոյ՝ վասն որոյ Անանիա ցՊաւղոս ասէր ՚ի Դամասկոս, յայտնութեան և բարբառոյ Աստուծոյ առ նա երբեմն եկելոյ ՚ի տաճարին. թէ վասն այնորիկ գան ընպելոց էր Պաւղոս՝ ասէր թէ Զոռնայեցի իցէ և արձակեցաւ:

լգ. Վասն որոյ միանգամ Պաւղոսի մտեալ յատեան լըլկեցա՛ւ դաւանեաց և վաղվաղակի վճարեաց:

լդ. Վասն դաւաճանութեանն խորհելոյ Զրէիցն զՊաւղոսէ, և գուշակելոյ զայն առ Լիւսիա: ա. Յորում թէ առաքեցաւ Պաւղոս առ դատաւորն ՚ի Կեսարիա զինուորօք և թղթովք:

լե. Տերտիղայ ամբաստանութիւն զՊաւղոսէ, և նորա պատասխանատրութիւն առաջի դատաւորին:

լզ. Վասն Փիլիկեայ փոխանակելոյ, և Փեստոսի յառաջ մատչելոյ, և առ նովաւ Պաւղոսի դատելոյ և արձակելոյ:

լէ. Ագրիպայ և Բերինիկեայ գալուստն և հարցումն զՊաւղոսէ: ա. Յորում Պաւղոսի պատասխանատրութիւն առ նոքօք վասն օրինաւոր կրօնիցն իւրոց, և կոչմանն յաւետարանն, և թէ ոչ իւիք վնասակար է Զրէից Պաւղոս՝ ասէր Ագրիպայս ցՓեստոս:

լը. Նաւարկութիւն Պաւղոսի ՚ի Զոռն՝ բազում և մեծամեծ ճգամք լի: ա. Յորում խրատ Պաւղոսի առ այնոսիկ որ ընդ նմայն էին՝ վասն յուսոյն փրկութեան: ղ. Նաւակոծութիւն Պաւղոսի, և թէ զհարդ զերծան ՚ի Մելիտէս կղզի. և թէ որչափ անդ սքանչելիս արար Պաւղոս:

լթ. Թէ ո՞րպէս ՚ի Մելիտեայ ՚ի Զոռն եհաս առաքեալն:

խ. Վասն վիճելոյն Պաւղոսի ընդ Զրէայսն որ էին ՚ի Զոռն:

ԳՈՐԾՔ ԱՈՎՔԵԼՈՑ

*ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ**

1

Գլուխ Ա

Ա ¹Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի ո՛ր Թեոփիլէ. զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել ^{*}. ²մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն ՚ի ձեռն Զոգւոյն Սրբոյ, զորս ընտրեացն, և վերացա՛ւ: ³Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի՝ յետ չարչարանացն իւրոց, ՚ի բազում արուեստս յաւուրս քառասուն երևել նոցա՝ և ասել վասն արքայութեանն Աստուծոյ: ⁴Եւ ՚ի հաղորդել ընդ

^{*} Ամենայն գրչագիր օրինակք համաձայն մերումս յաւելուն ՚ի վերնագիրս՝ Ղուկայ, կամ՝ Ղուկասու աւետարանչին:

^{*} Ոմանք. Ո՞վ Թեոփիլէ:

^{*} Ոմանք. Զարչարանաց իւրոց... յաւուրս քառասուն երևեալ նոցա... արքայութեան

նոսա հացիւ, պատուէր տայր նոցա՝ յերուսաղէմէ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Զօր՝ զոր լուարուքն յինէն*։ ⁵Չի Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր. այլ դուք մկրտիցիք ՚ի Զոգին՝ Սուրբ, ո՛չ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ*։ ⁶Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա՝ և ասէին. Տէր՝ եթէ ՚ի ժամանակի՞ աստ յայսմիկ հասուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայէլի։ ⁷Ասէ ցնոսա. Ո՛չ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Զայր եղ յիւրում իշխանութեան*։ ⁸այլ առջիք զօրութիւն ՚ի հասանել Զոգւոյն Սրբոյ ՚ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք յերուսաղէմ, և յամենայն Զրեաստանի՝ և ՚ի Սամարիայ, և մինչև ՚ի ծագս երկրի*։ ⁹Եւ զայս իբրև ասաց՝ մինչ դեռ հայէին նոքա՝ վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նոցա։ ¹⁰Եւ մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա, և ահաւասիկ արք երկու երևեցան նոցա ՚ի հանդերձս սպիտակս*, ¹¹որք և ասացինն. Ա՛րք Գալիլեացիք՝ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս։ Այս Յիսուս՝ որ վերացաւն ՚ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ՛ զորօրինակ տեսէք զնա երթեալ յերկինս*։

Բ ¹²Ապա դարձան յերուսաղէմ յանուանեալ լեռնէն Չիթենեաց. որ է մերձ յերուսաղէմ ըստ շաբաթու ճանապարհի*։ ¹³Եւ իբրև մտին, ելին ՚ի վերնատունն ուր վանքն իսկ էին. Պետրոս, և Յակովբոս, և Յովհաննէս, և Անդրէաս, Փիլիպպոս, և Թովմաս, Բարթողոմէոս, և Մատթէոս, Յակովբոս Ալփեան, և Շնաւոն Նախանձայոյզ, և Յովնա Յակովբեան*։ ¹⁴Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամբք, և Մարեմաւ մարբն Յիսուսի՝ և եղբարք նորա*։

ա. ¹⁵Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. և էր անդ բազմութիւն անուանց իբրև հարեր և քսանից*։ ¹⁶Ա՛րք եղբարք՝ պարտ էր կատարել գրոյն. զոր յառաջագոյն ասաց Զոգին՝ Սուրբ ՚ի բերանոյ Դաւթի, վասն Յուդայի՝ որ եղև առաջնորդ ունելեացն Յիսուսի*։ ¹⁷զի ՚ի թիւս մեր էր ընդ մեզ, և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։ ¹⁸Սա՛ ստացաւ գեաւը ՚ի վարձուց անիրաւութեան. և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նորա։ ¹⁹Եւ յայտնի եղև ամենեցուն որ բնակեալ են յերուսաղէմ. մինչև կոչել գեաւըն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամա. այսինքն է՝ Գեաւը արեան*։ ²⁰Չի գրեալ է ՚ի գիրս Սաղմոսաց. Եղիցի բնակութիւն նորա աւերակ, և մի՛ ոք

Աստուծոյ։

**Ոմանք.* Եւ ՚ի հաղորդելն... զոր լուարուք յինէն։

**Ոսկան.* Բազմաց ինչ աւուրց։

**Ոմանք.* Եւ նա ասէ ցնոսա. Ո՛չ է... յիւրում իշխանութեանն։

**Ոմանք.* Եւ ՚ի Շամրին, և մինչ ՚ի ծագս։

**Ոմանք.* Եւ մինչդեռ պշուցեալ էին... ահա արք եր... ՚ի հանդերձս լուսաւորս. որք ասացին։

**Ոմանք.* Վերացաւ ՚ի ձէնջ... նոյնպէս և եկեսցէ։ *Ոսկան.* Տեսիք զդա երթալ յերկինս։ (12) Յայնժամ ապա դարձան։

**Ոմանք.* Ըստ շաբաթու ճանապարհին։

**Ոսկան.* Եւ իբրև մտին ՚ի վերնատունն, ելին ուր վանքն... Պետրոս և Յօհաննէս. Յակովբոս և Անդր... Բարթողոմէոս։ *Ուր ոմանք.* Յակովբոս, Յովհաննէս։

**Ոմանք.* Միաբան յաղօթսն... և եղբարք նորա։

**Առ Ոսկանայ պակասի.* Անուանց իբրև հար։

**Օրինակ մի.* Արդ եղբարք... յունելեացն Յիսուսի։ *Ոմանք.* Պարտ է կատարել։

**Օրինակ մի.* Բնակեալ էին յերուսաղէմ... Ակեղդամայ. այսինքն գեաւը։

իցէ որ բնակիցէ 'ի նմա: Եւ Ձկարգ նորա առցէ ա՛յլ: ²¹Արդ՝ պա՛րտ է յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ և ե՛լ առ մեզ Տէր Յիսուս* . ²²սկսեալ 'ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն՝ յորում վերացաւ 'ի մենջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում 'ի սոցանէ*: ²³Եւ կացուցին երկո՛ւս, զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստո՛ս. և զՄատաթեայ* . ²⁴և կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ւ Տէր՝ սրտագէտ ամենայնի՝ յայտնեա՛ զմի ոք զոր ընտրեցեր 'ի սոցանէ յերկոցունց*, ²⁵առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս գնալ 'ի տեղի իւր*: ²⁶Եւ ետուն վիճակս նոցա, և ելանէր վիճակն Մատաթեայ. և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն*: վջ.

2

Գլուխ Բ

Գ ¹Եւ 'ի կատարել աւուրցն Պենտակոստէից, էին ամենեքեան միաբան 'ի միասին*: ²Եւ եղև յանկարծակի հնչի՛ւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ. և ելի՛ց զամենայն տունն յորում նստէին*: ³Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա: ⁴Եւ լցա՛ն ամենեքեան Յոգուով Սրբով, և սկսան խօսել յա՛յլ լեզուս՝ որպէս և Յոգին տայր բարբառել նոցա*: ⁵Եւ էին յերուսաղէմ բնակեալ Յրեայք արք երկիւղածք, յամենայն ազգաց որ 'ի ներքոյ երկնից: ⁶Եւ իբրև եղև բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն և խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա: ⁷Սքանչանային ամենեքեան, և զարմանային՝ և ասէին ընդ միմեանս. Ո՞չ աւասիկ ամենեքեան տոքա որ խօսինս՝ Գալիլեացիք են*. ⁸և զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ ենք*: ⁹Պարթեւք, և Մարք, և Իլամացիք. և որ բնակեալ են 'ի Սիջագետս, 'ի Յրեաստանի՛, և 'ի Գամիրս, 'ի Պոնտոս, և յԱսիա. ¹⁰'ի Փռիզիա՝ և 'ի Պամփիլիա, յեգիպտոս, և 'ի կողմանս Լիբացոց, որ ընդ Կիւրենացիս, և որ եկք Յռոմայեցիք*: ¹¹Յրեայք, և եկք նոցուն, Կրետացիք, և Արաբացիք, լսեմք խօսից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ*: ¹²Սքանչանային ամենեքեան զարմացեալք՝ և ասէին ցմիմեանս. Ձի՞ոնչ կամիցի այս լինել: ¹³Եւ կիսոցն ընդ խա՛ղ արկեալ ասէին, եթէ

* *Ոմանք.* Եղիցին բնակութիւն... բնակիցէ 'ի նոսա: *Ոսկան.* Բնակութիւն նոցա:

* *Ոսկան.* Յորում եմուտ:

* *Ոմանք.* Միում 'ի նոցանէ:

* *Օրինակ մի.* Որում Բարսաբայն կոչեցաւ: *Ոմանք.* Յոստոս և զՄատաթիա:

* *Ոմանք.* Սրտագէտ յամենայնի... 'ի սոցանէ երկոցունց:

* *Օրինակ մի.* Յորում անկաւ Յուդաս:

* *Ոսկան.* Եւ ել վիճակն Մա՛:

* *Ոմանք.* Պենտէկոստէից:

* *Օրինակ մի.* Իբրև 'ի սաստիկ հողմոյ: *Ոմանք.* Չամենայն զտունն:

* *Ոմանք.* Խօսել յայլ և այլ լեզուս:

* *Յռոմանս պակասի.* Եւ զարմանային և ասէին... որք խօսին՝ Գա՛:

* *Ոմանք.* Յիւրաքանչիւր բարբառ մեր:

* *Ոմանք.* Եւ 'ի Փռիզիա... և 'ի կողմանս Լիբեացոց:

* *Ոմանք.* Եւ եկք նոցին, Կո՛:

քաղցուալից իցեն*։ ¹⁴Յարուցեալ Պե՛տրոս հանդերձ մետասանիւքն, ամբա՛րձ
 զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա. Արք Յրեաստանեայք՝ և որ բնակեալ էք
 յերուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի՛ լիցի՝ և ո՛ւնկն դիք բանից իմոց*։ ¹⁵ո՛չ
 որպէս դուք կարժէք՝ թէ սոքա արբեալ իցեն. զի դեռ երե՛ք ժամք են աւուրս*։
¹⁶Այլ այս է որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին Յովելայ*։ ¹⁷և եղիցի յետ այսորիկ
 յաւուրս յետինս՝ ասէ՛ Աստուած, հեղի՛ց յովույ իմմէ՛ ՚ի վերայ ամենայն մարմնոյ,
 և մարգարեացին ուստերք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսի՛լս
 տեսցեն, և ծերք ձեր երագո՛վք յերագեսցին*։ ¹⁸Եւ ՚ի վերայ ծառայից իմոց՝ և ՚ի
 վերայ աղախնանց իմոց՝ յաւուրսն յայնոսիկ հեղի՛ց յովույ իմմէ, և
 մարգարեացին*։ ¹⁹Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր, և նշանս յերկիր ՚ի խոնարհ,
 արիւն և հուր և մրրիկ ծխոյ։ ²⁰Արեգակն դարձցի ՚ի խաւար՝ և լուսին յարին,
 մինչև՛ եկեալ իցէ օր Տեառն մեծ և երևելի*։ ²¹Եւ եղիցի ամենայն որ կարդացտ
 զանուն Տեառն՝ կեցցէ՛ բ. ²²Արք Իսրայէլացիք. լուարո՛ւք զբանս զայսոսիկ.
 զՅիսուս Նազովրացի զայր ցուցեալ յԱստուծոյ ՚ի ձեզ, զօրութեամբ և նշանօ՛ք և
 արուեստիւք, զոր արար նովաւ Աստուած ՚ի միջի ձերում. որպէս և դո՛ւք իսկ
 գիտէք* ²³զնա. նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ,
 մատնեալ ՚ի ձեռաց անօրինաց՝ բևեռեալ ՚ի փայտի սպանէք*։ ²⁴զոր Աստուած
 յարո՛յց լուծեալ զերկունս մահու. քանզի ո՛չ էր հնար ըմբռնել նմա ՚ի նմանէ*։
²⁵Դաւիթ իսկ ասէ զնմանէ. Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն
 ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց*։ ²⁶վասն այսորիկ ուրախ եղև
 սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. և ս և մարմին իմ բնակեսցէ յուսով։ ²⁷Ձի ո՛չ
 թողցես զանձն իմ ՚ի դժոխս, և ո՛չ տացես Սրբոյ քում տեսանել
 զապականութիւն։ ²⁸Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուցեր զիս
 ուրախութեամբ երեսաց քոց*։ ²⁹Արք եղբարք պարտ է համարձակութեամբ
 ասել ձեզ վասն նահապետին Դաւթի. զի և մեռաւ, և թաղեցաւ. և գերեզման
 նորա կայ ՚ի միջի մերում մինչև ցայսօր*։ ³⁰Ձի մարգարէ՛ էր և գիտեր, եթէ

* *Օրինակ մի.* Եթէ քաղցուալիցք են:

* *Օրինակ մի.* Ընդ նոսա, և ասէ:

* *Ոմանք.* Դուքդ կարժէք՝ եթէ:

* *Ոմանք.* Որ ասացաւն... Յովելայ:

* *Ոմանք.* Երագեսցին: *Ուր Ոսկան.* Երագօք երագացին:

* *Ոմանք.* Աղախնաց իմոց յաւուրս յայնոսիկ հեղից Յովույ իմոյ:

* *Ոմանք.* Մեծն և երևելի. *կամ՝* մեծ և երևելին:

* *Ոմանք.* Ցուցեալ ձեզ յԱստուծոյ զօրութեամբ: *Ամենայն գրչագիրք համաձայն մերումս
 դնեն զկետն յետոյ.* Գիտէք (23) զնա. նկատեալ. *ուր Ոսկան ըստ Լատինականին տրոհէ՛*
 գիտէք: (23) Չնա նկա՛:

* *Ի լուս՝* ՚ի վերայ՝ նկատեալ, *նշանակի՛* սամանեալ. *զոր ոմանք առեալ մուծին ՚ի
 կարգի բնաբանին, գրելով.* զնա՝ սահմանեալ խորհրդով: *Ամենայն գրչագիրք
 համաձայն մերումս ունին՝* ՚ի ձեռաց անօր՞. *բաց ՚ի միոյ նոր օրինակէ որ գրէ՛* ՚ի ձեռն
 անօ՞. *և այլ միում որ ընդ Ոսկանայ դնէ՛* ՚ի ձեռս անօ՞: *Օրինակ մի.* ՚ի խաչափայտի
 սպանէք:

* *Ոմանք յաւելուն.* Յարոյց ՚ի մեռելոց՝ լուծեալ... ոչ իսկ էր հնար:

* *Ոմանք.* Ձի էր ընդ աջմէ. *կամ՝* յաջմէ իմմէ:

* *Ոմանք.* զճանապարհս քո կենաց... յերեսաց քոց ՚ի քաղցրութենէ: *Ոսկան.* Լցուցես
 զիս ուրա՛:

* *Ի լուս՝* Արդ՝ եղբարք. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՞:* *Ոմանք.* Ասել վասն... զի մեռաւ... ՚ի
 միջի ձերում մինչև ցայսօր:

երդմանը երդուաւ նմա Աստուած՝ ՚ի պողոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա*։ ³¹յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի. զի ո՛չ թողաւ ոգի նորա ՚ի դժոխս, և ո՛չ մարմին նորա ետես զապականութիւն*։ ³²Ձայս Յիսուս՝ յարոյց Աստուած, որուն ամենեքին մեք վկայեմք*։ ³³Աջովն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս Յոգւոյն Սրբոյ ընկալեալ ՚ի Յօրէ, սփռեաց զայս՝ զոր դուք իսկ և տեսանէք, և լսէք*։ ³⁴Ձի ո՛չ եթէ Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն. Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ*։ ³⁵մինչև եղից զքշնամիս քո պատուանդան ոտից քոց։ ³⁶Արդ՝ ճշմարտիւ գիտացել ամենայն տունդ Իսրայէլի, զի և Տէր զնա՝ և Օծեալ Աստուած արար. զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք*։ ³⁷Եւ լուեալ զայս՝ զղջացան ՚ի սիրտս իւրեանց. և ասեն ցՊե՛տրոս և ցա՛յլ առաքեալսն. Չի՞նչ գործեսցուք արք եղբարք։ ³⁸Ասէ ցնոսա Պե՛տրոս. Ապաշաւեցէք, և մկրտեսցի՛ իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ՚ի թողութիւն մեղաց, և ընկալջի՛ք զաւետիս Յոգւոյն Սրբոյ*։ ³⁹Ձի ձե՛զ են աւետիքս և որդւոց ձերոց, և ամենայն հեռաւորաց զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր*։ ⁴⁰Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, և մխիթարէր զնոսա՝ և ասէր. Ապրեցարո՛ւք յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ*։ ⁴¹Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք*։ ⁴²Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, և հաղորդութեան և բեկանելոյ հացին և աղօթից։ ⁴³Եւ լինէր ամենայն անձին ա՛հ և երկելոյ, և բազում նշանք և արուեստք ՚ի ձեռս առաքելոցն գործէին*։ ⁴⁴Ամենայն հաւատացեալքն էին ՚ի միասին, և ունէին զամենայն ինչս հասարակաց*։ ⁴⁵Եւ զստացուածս և զինչս վաճառէին, և բաշխէին զայն ամենեցուն ում զհարդ պիտոյ՝ ինչ լինէր։ ⁴⁶Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ՚ի տաճարն. և առտնին բեկանէին զհացն, և առնուին կերակուր ուրախութեամբ, և միամտութեամբ սրտի* ⁴⁷օրհնէին զԱստուած. և ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն. և Տէր յաւելոյր ՚ի փրկեալսն հանապազօր ՚ի նոյն։

3

Գլուխ 4

* Ոմանք. Ձի և մարգարէ էր։ *Բազումք*. Յորովայնէ. *կամ՝* որովայնէ նորա։

* *Ի լուս՝*. Ծանուցեալ խոստացաւ վասն։

* Ոմանք. Մեք վկայ՛ ենք։

* *Ի բազումս պակասի*. Դուք իսկ և տեսա՛։

* Ոմանք. Ձի ոչ թէ... Տէր ցՏէրն իմ։

* *Օրհնակ մի*. Ամենայն տունդ Իսրայէլի, զի և Տէր զնա Օծեալ Աստուած ա՛։ *Ուր Ոսկան*. զի Տէր զնա և։

* Ոմանք. Յանուն Տեառն մերոյ Յիսուսի։

* Ոմանք *յաւելուն*. Հեռաւորաց և մերձաւորաց զորս։

* Ոմանք. Եւ այլ բանիւք։

* Ոմանք. Ոմանց յօժա՛... զբանն. *կամ՝* զբանս նորա մկրտե՛... ոգիք իբրև։

* *Ի բազումս պակասի*. Եւ երկիւղ, և բազում նշ՛։

* *Բազումք*. Ձամենայն ինչ հասարա՛։

* Ոմանք. Ի տաճարն և առտն՛... Միամտութեամբ սրտիւ օրհ՛։

Դ ¹Պե՛տրոսս և Յովհաննէս ելանէին ՚ի տաճարն յիններո՛րդ ժամու աղօթիցն*:
²Եւ էր այր մի կա՛ղ յորովայնէ մօր իւրոյ, զոր բարձեալ դնէին հանապազօր առ
 դրա՛ն տաճարին՝ որ կոչէր Գեղեցիկ. խնդրել ողորմութիւն յայնցանէ որ
 մտանէին ՚ի տաճարն*:
³Որոյ տեսեալ զՊե՛տրոսս և զՅովհաննէս զի մտանէին ՚ի
 տաճարն, աղաչէր ողորմութի՛ւն առնուլ: ⁴Հայեցաւ ՚ի նա Պե՛տրոսս Յովհաննո՛ւ
 հանդերձ, և ասէ. Հայեա՛ց ՚ի մեզ: ⁵Նա դարձաւ ՚ի նոսա, և ակն ունէր առնուլ ի՛նչ
 ՚ի նոցանէ*:
⁶Եւ ասէ Պետրոսս. Արձաթ և ոսկի ո՛չ ունիմ. բայց զոր ունիմս զայս
 տա՛ց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ արի՛ և գնա՛*:
⁷Եւ կալեալ
 զաջոյ ձեռանէ նորա յարոյց գնա: Եւ անդէն հաստատեցան բարձք նորա՝ և
 սրունք*:
⁸Ի վեր վազեաց և սկսաւ գնալ. և եմո՛ւտ ընդ նոսա ՚ի տաճարն. գնայր և
 վազվազէր, և օրհնէր զԱստուած*:
⁹Եւ ետես ամենայն ժողովուրդն գնա, զի
 գնայր և օրհնէր զԱստուած. ¹⁰և գիտէին գնա զի սա՛ էր, որ նստէր վասն
 ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին. և լցան զարմանալեօք ՚ի վերայ
 նշանին որ եղև: ¹¹Եւ մինչդեռ նա ունէր զՊե՛տրոսս և զՅովհաննէս, ընթացաւ
 ամենայն ժողովուրդն առ նոսա ՚ի սրահն՝ որ կոչէր Սաղովմոնի՝ զարմացեալք*:
¹²Իբրև ետես Պետրոսս՝ պատասխանի ետ ժողովրդեանն և ասէ. Արք
 Իսրայէլացիք՝ զի՞ զարմացեալ էք ՚ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ էք
 պշուցեալ, իբրու թէ անձի՛ն զօրութեամբ ինչ՝ կամ քաջութեամբ արարեալ իցէ
 զգնալդ դմա՛*:
¹³Աստուած Աբրահամու, և Աստուած Սահակայ, և Աստուած
 Յակովբայ, Աստուած հարցն մերոց փառաւորեաց՝ զՈրդի իւր զՅիսուս, զոր
 դուքն մատնեցէք՝ և ուրացարուք առաջի Պոնտացւոյ Պիղատոսի, ՚ի դատելն
 նորա արձակել*:
¹⁴Եւ դուք զՍուրբն և զԱրդարն ուրացարուք, և խնդրեցէք այր
 մի մահապարտ շնորհել ձեզ*:
¹⁵Եւ զԱռաջնորդ կենացն սպանէք, զոր Աստուած
 յարոյց ՚ի մեռելոց. որում մե՛ք իսկ վկայեմք*:
¹⁶Եւ հաւատովք անուան նորա
 զսա զոր տեսանէ՛քս և գիտէք, հաստատեաց՝ անուն նորա. և հաւատքն որ
 նովաւ՝ ետուն դմա զառողջութիւնս զայս՝ յանդիման ձեր ամենեցուն*:
¹⁷Եւ արդ՝
 եղբարք գիտեն զի անգիտութեամբ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր*:
¹⁸Այլ
 Աստուած՝ որպէս յառաջագոյն պատմեաց ՚ի բերանոյ ամենայն մարգարէից՝
 զչարչարելն Քրիստոսի իւրոյ, նոյնպէս և կատարեաց*:
¹⁹Արդ՝ ապաշաւեցէք և
 դարձարուք ՚ի ջնջել զմեղս ձեր. ²⁰որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան
 յերեսաց Տեառն. և առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ՝ զՅիսուս

* *Բազումք.* ՚ի տաճար անդր յինն՝:

* *Ոմանք.* Եւ էր անդ այր մի... հանապազ առ դր՝... խնդրելով ողորմութիւն:

* *Օրհնակ մի.* ՚ի նոցանէ ինչ առնուլ:

* *Ոմանք.* Եւ ասէ ցնա Պետ՝... զոր ունիմ, զայս:

* *Ոմանք.* Եւ կալաւ զաջոս:

* *Ոմանք.* Գնայր և վազէր և օրհ՝:

* *Բազումք.* Եւ մինչ նա ունէր:

* *Ի բազումս պակասի.* ժողովրդեանն, և ասէ: *Ոմանք.* Իբր. *կամ՝* իբրև թէ անձին ինչ
 զօրութեամբ կամ... գնալ դորա:

* *Ի բազումս պակասի.* Առաջի Պոնտացւոյ Պիղատոսի:

* *Ոմանք.* Եւ խնդրեցէք ձեզ:

* *Ոմանք.* Եւ զառաջնորդն կենաց... որում և մեք իսկ վկայ եմք:

* *Ի լուս՝.* Ետուն նմա զառող՝. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

* *Ոմանք.* Գիտեմք զի անգի՛:

* *Ոմանք.* Որպէս և յառաջագոյն:

Քրիստոս*։ ²¹Ձոր պարտ է երկնից ընդունել՝ մինչև 'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ. զորոց խօսեցաւ Աստուած 'ի բերանոյ սրբոց իւրոց մարգարէից*։
 Դ. ²²Սովսէս ասաց ցհարսն մեր, թէ մարգարէ՛ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարոց ձերոց իբրև զիս, նմա՛ լուիջիք՝ ըստ ամենայնի՛ որ զինչ և խօսեսցի առ ձեզ*։ ²³Եւ եղիցի ամենայն անձն՝ որ ո՛չ լուիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի՛ 'ի ժողովրդեանն։ ²⁴Եւ ամենայն մարգարէք որ 'ի Սամելէ՛ և այսր, մարգարէացան և պատմեցին զաւուրսս զայսոսիկ*։ ²⁵Դո՛ւք էք որդիք մարգարէիցն, և ուխտին զոր ուխտեաց Աստուած ընդ հարսն մեր, և ասէ ցԱբրահամ. 'ի զաւակի՛ քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի*։ ²⁶Ձեզ նախ յարոյց Աստուած զՈրդին իւր, և առաքեաց զնա օրհնել զձեզ, 'ի դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց*։

4

Գլուխ Դ

¹Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հասին 'ի վերայ նոցա քահանայապետք և իշխանք տաճարին՝ և սադուկեցիքն*, ²զայրագնեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն, և պատմելոյ Յիսուսի՛ւ զյարութիւն մեռելոց։ ³Մխեցին 'ի նոսա զձեռս իւրեանց, և եղին զնոսա 'ի բանտի մինչև 'ի վաղիւն, զի էր ընդ երեկս։ ⁴Իսկ բազումք 'ի լսողաց բանին հաւատացին. և եղև թիւ մարդկան իբրև հազարաց հնգից*։ ⁵Եւ եղև 'ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն և զերիցունսն և զդպիրս յերուսաղէմ*, ⁶և զԱննա՛ քահանայապետ՝ և զԿայիափա, և զՅովհաննէս և զԱղէքսանդրոս, և որք միանգամ էին յազգէ՛ քահանայութեանն*։ ⁷Եւ կացուցեալ զնոսա 'ի մէջ հարցանէին. Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս*։ ⁸Յայնժամ Պետրոս լցեալ Յոգուով Սրբով՝ ասէ՛ ցնոսա. Իշխանք ժողովրդեան՝ և երիցունք Իսրայէլի*, ⁹թէ արժա՞ն ինչ իցէ դատել զնեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա՛ բժշկեցաւ*։ ¹⁰Յայտնի՛ լիցի ամենեցուն ձեզ, և ամենայն ժողովրդեանդ Իսրայէլի. զի յանուն Յիսուսի Քրիստոսի՛ Նազովրեցոյ զոր դո՛ւքն խաչեցէք՝ զոր Աստուած յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա՛ կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ։

* *Ոմանք 'ի լուս՞. 'ի վերայ՝ նկատեալն, նշանակեն՝ պատրաստեալն։ Օրինակ մի. Նկատեալն 'ի ձեզ։*
 * *Ոմանք. Պարտ էր երկնից... զոր խօսեցաւ։*
 * *Ի բազումս պակասի. Ցհարսն մեր։ Ոմանք. Ձոր ինչ և խօ՞։*
 * *Ի լուս՞. Որ 'ի Սամուելէ և այսր խօսեցան և պատ՞. համաձայն բազմաց 'ի բնաբ՞։*
 * *Ի լուս՞. Ընդ հարսն ձեր. համաձայն բազմաց 'ի բնաբ՞։ Ուր և օրինակ մի ունի. Ընդ հարցն ձերոց։*
 * *Ոմանք. Յիւրաքանչիւր 'ի չարեաց։*
 * *Ոմանք. 'ի վերայ նոցա քահանայքն և իշ՞։*
 * *Ոմանք. Թիւ մարդկանն իբրև։*
 * *Ոմանք. 'ի վաղիւն ժողո՞... և զդպիրսն յերուսաղէմէ։*
 * *Ոմանք. Եւ զԱննա քահանայապետ։*
 * *Օրինակ մի. Որով իշխանութեամբ. կամ որով ան՞. արարէք դուք զայս։*
 * *Ոմանք 'ի լուս՞. 'ի վերայ՝ երիցունք. նշանակեն՝ ձերք. զոր և օրինակ մի առեալ դնէ 'ի բնաբանի։*
 * *Ոմանք. Եթէ արժա՞ն իցէ։*

¹¹Նա՛ է վէմն անարգեալ՝ ի ձէնջ շինողաց, որ եղև գլուխ անկեան* . ¹²և չի՛ք այլով իւիք փրկութիւն. զի և ո՛չ անուն այլ գոյ՝ ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ* : Ե. ¹³Հայեցեալ ՚ի համարձակութիւնն Պետրոսի՛ և Յովհաննու, և ՚ի վերայ հասեալք թէ արք տգէտք և առանց դպրութեան են, զարմանային. զի ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին* : ¹⁴Եւ զայրն ևս տեսանէին զբժշկեալն զի կայր ընդ նոսա. և ո՛չինչ կարէին տալ պատասխանի* : ¹⁵Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհեցան ընդ միմեանս* , ¹⁶և ասեն. Ձի՞նչ արասցուք արանցս այսոցիկ. զի երևելի՛ նշան եղև ՚ի ձեռս նոցա. ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է, և ո՛չ կարենք ուրանալ* : ¹⁷Այլ զի մի՛ առաւել ճարակեցի ՚ի ժողովրդեանն, սպառնասցուք նոցա մի՛ ևս խօսել յանունն յայն, մի՛ ումեք ՚ի մարդկանէ* : ¹⁸Եւ կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենահին մի՛ խօսել, և մի՛ ևս ուսուցանել յանունն Յիսուսի* : ¹⁹Իսկ Պե՛տրոս և Յովհաննէս պատասխանի ետուն՝ և ասեն ցնոսա. Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէ՛ք : ²⁰Այլ մեք ո՛չ կարենք զոր տեսաքն և լուսաք՝ չխօսել : ²¹Նոքա սպառնացեալ արձակեցին զնոսա, և ո՛չինչ գտեալ՝ թէ ո՛րպէս պատուհասեցեն զնոսա՝ վասն ժողովրդեանն. զի ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած՝ վասն իրացն եղելոց* : ²²Ձի ամաց էր այրն աւելի՛ քան զքառասուն, յորոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան : ²³Եւ անտի արձակեալ եկին առ իւրեանսն, և պատմեցին՝ որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն և երիցունքն* : ²⁴Եւ նոցա լուեալ, ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած՝ և ասեն. Դո՛ւ Տէր Աստուած՝ որ արարեր զերկինս և զերկիր՝ և զծով և զամենայն որ ՚ի նոսա* . ²⁵որ ՚ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քոյ խօսեցար և ասացեր, ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ. Ձմէ՛ խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խորհեցան սնոտիս* . ²⁶յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին վասն Տեառն և վասն Օծելոյ նորա : ²⁷Ժողովեցան արդարև ՚ի քաղաքիս յայսմիկ ՚ի վերայ սրբոյ Որդւոյ՝ քոյ Յիսուսի՛ զոր օծերն, Հերովդէս և Պոնտոս Պիղատոս՝ ազգօք և ժողովրդօք Իսրայէլի* , ²⁸առնել որչափ ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լինել : ²⁹Եւ արդ Տէր՝ հայեաց՝ ՚ի սպառնալիս նոցա, և տուր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո* . ³⁰ի ձգել զձեռն քո ՚ի բժշկութիւն, և նշանս և արուեստս՝ լինել անուամբն սրբոյ Որդւոյ քոյ

* *Օրինակ մի.* Վէմ անար՝... եղև ՚ի գլուխ ան՝ :
* *Ոմանք.* Ձի և չիք այլով՝... արժանի իցէ կեալ :
* *Ոմանք.* Հասեալ, եթէ արք :
* *Ոմանք.* Զբժշկեալ զի կայր ընդ նոսա. ոչ կարէին :
* *Ի լուս՝.* Եւ հրամայեցին նոցա. *համաձայն ոմանց ՚ի բնաք՝* :
* *Ոմանք.* Ի ձեռն սոցա. ամենայն բնակչաց Երուսաղէմի յայտնի է :
* *Այլք.* ճարակեցի ՚ի ժողովուրդն : *Ուր ոմանք.* ճարակեցեն ՚ի ժո՞ : *Օրինակ մի.* Յայն, և մի՛ ումեք :
* *Բազունք.* Եւ մի՛ ուսուցանել յանունն Յիսուսի :
* *Օրինակ մի.* Ձնոսա. ոչինչ գտ՞ :
* *Բազունք.* Առ իւրեանցսն : *Ոմանք.* Եւ պատմեցին նոցա : *Օրինակ մի.* Արարին ցնոսա :
* *Ոմանք.* Դո՛ւ ես Տէր Աստուած :
* *Բազունք.* Ծառայի քո ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ասացեր... խորհեցան ՚ի սնոտիս :
* *Ոմանք.* Եւ Պոնտիոս Պիղատոս՝... ժողովրդովք Իսրայէլի :
* *Ոմանք.* Զբան քո :

Յիսուսի*։ ³¹Եւ մինչ կային նոքա յաղօթս, շարժեցա՛ւ տեղին յորում էին ժողովեալ, և լցա՛ն ամենեքին Յոզուով Սրբով. և խօսե՛ին զբանն Աստուծոյ համարձակութեամբ։

Ե գ. ³²Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և անձն մի՛. և ո՛չ ոք ՚ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ ի՛ւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց*։ ³³Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն առաքեալքն զյարութեանն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ շնորհք մեծամեծք էին ՚ի վերայ ամենեցուն նոցա*։ ³⁴Եւ ո՛չ ոք կարօտէր ՚ի նոսա. զի որ միանգամ տեա՛րք էին գեւղից կամ ապարանից՝ վաճառէին, և բերէին զգինս վաճառելոցն* ³⁵դնէին առ ոտս առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս ունէք պիտոյ՝ ինչ լինէր*։ ³⁶Յովսէփ՝ որ կոչեցաւն Բառնաբաս յառաքելոց անտի, որ թարգմանի որդի՝ մխիթարութեան. Ղևտացի՛ յազգէ, Կիւպրացի*։ ³⁷Էր նորա գեաւղ մի, և վաճառեաց և երբեր զգինսն՝ և եղ առ ոտս առաքելոցն*։

5

Գլուխ Ե

¹Իսկ այր ոմն Անանիա՛ անուն, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ, վաճառեաց ազարա՛կ, ²և խորեաց ՚ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն. և երբեր մասն ինչ՝ ե՛ր առ ոտս առաքելոցն*։ ³Ասէ Պետրոս. Անանիա՛ ընդէ՞ր ելից Սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Յոզուոյն Սրբոյ, և խորել՝ ՚ի գնոց գեաւղջն*։ ⁴ոչ ապաքէն մինչ կայրն քո՛ էր, և ՚ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է՝ զի եղիր ՚ի սրտի քում զիրս զայս. ո՛չ ստեցեր մարդկան՝ այլ Աստուծոյ*։ ⁵Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի. և եղև ա՛հ մեծ՝ ՚ի վերայ ամենեցուն որ լուան զայն*։ ⁶Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփոփեցին զնա, և տարան թաղեցին։ ⁷Եւ եղև իբրև ժամք երեք անցին, և կին նորա ո՛չ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ ՚ի ներքս։ ⁸Պատասխանի ետ նմա Պետրոս՝ և ասէ ցնա. Ասա՛ դու ինձ՝ թէ այնչափ գնոց զգեաւղն վաճառեցէք։ Եւ նա ասէ. Այո՛ այնչափ*։ ⁹Եւ ասէ ցնա Պետրոս. Ձի՞ է՝ զի միաբանեցէք դուք փորձել զՅոզին Տեառն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո ՚ի դրանն, հանցեն և զքեզ*։ ¹⁰Եւ անկաւ անդէն առ ոտս նորա՝ և եհան զոգի. մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին առ առն իւրում*։ ¹¹Եւ եղև երկեւղ մեծ՝ ՚ի վերայ ամենայն եկեղեցւոյն, և

* *Ոմանք.* Ի բժշկութիւնս և ՚ի նշանս, և յարուեստս... անուամբ։

* *Ոմանք.* Եւ բազմութիւն հաւա՛... զընչից իւրեանց։

* *Ոմանք.* Չյարութենէ Տեառն Յիսուսի։

* *Ոմանք.* Տեարքն էին գեղից... զգինս վաճառելոյն։

* *Ոմանք.* Եւ դնէին առ... ունէք ինչ պիտոյ լի՞։

* *Բազումք.* Կիւպրացի։

* *Ի բազումս պակասի.* Նորա գեաւղ մի, և վաճառեաց... և եղ։

* *Ոմանք.* Եւ եղ առ ոտս։

* *Օրինակ մի.* Ասէ Պետրոս ցԱնանիա. Ընդէ՞ր... ՚ի գնոյ գեղջն։

* *Ոմանք.* Եղիր ՚ի մտի քում... և ոչ ստեցեր դու մարդկան։

* *Ոմանք.* Եւ եհան զոգին... որ լուանն զայն։

* *Օրինակ մի.* Եթէ այնչափ գնոջ։

* *Բազումք.* Ի դրան, հանցեն։

* *Օրինակ մի.* Եւ հանեալ թաղեցին զնա առ։

ի վերայ ամենեցուն որ լուան զայս՝ է. ¹²Եւ ՚ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և արուեստք բազումք ՚ի ժողովրդեանն. և էին միաբան ամենեքեան ՚ի սրահին Սողոմոնի՝ ¹³Եւ յայլոց անտի ո՛չ որ իշխէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնոսա ժողովուրդն՝ ¹⁴Եւ առաւել ևս յաւելլուին հաւատացեալքն ՚ի Տէր, բազմութիւն արանց և կանանց. ¹⁵մինչև ՚ի հրապարակսն հանել զհիւանդս՝ և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց, զի ընդ անցանելն Պետրոսի՝ զոնէ հովանին նորա հասցէ ունէք ՚ի նոցանէ՝ ¹⁶Եւ ժողովէր բազմութիւնն շուրջ ՚ի քաղաքաց անտի յերուսաղէմ. բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան՝ ¹⁷Յարուցեալ քահանայապետն, և ամենեքին որ ընդ նմա՝ և աղանդ սադուկեցոց՝ լցան նախանձու՝ ¹⁸Եւ արկին զձեռս յառաքեալսն, և եդին զնոսա հրապարակաւ ՚ի բանտի:

Ձ ¹⁹Ապա հրեշտակ Տեառն գիշերի եբա՛ց զդուրս բանտին, և հանեալ զնոսա՝ ասէ՝ ²⁰Գնացէք կացէք ՚ի տաճարին, և խօսեցարո՛ւք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այսոցիկ: ²¹Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն ՚ի տաճարն՝ և ուսուցանէին: Եկն քահանայապետն՝ և որ ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն, և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի. և առաքեցին ՚ի բանտն, ածել զնոսա՝ ²²Եւ իբրև եկին սպասաւորքն, ո՛չ գտին զնոսա ՚ի բանտին. դարձեալ անդրէն պատմեցին, ²³և ասեն. թէ զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբն, և զպահապանսն զի կային առ դրանն. բացաք՝ և ՚ի ներքս զոք ո՛չ գտաք՝ ²⁴Իբրև լուան զբանս զայսոսիկ իշխանք տաճարին և քահանայապետքն, հիանային վասն նոցա, թէ զի՞նչ արդեւ լինիցի այն՝ ²⁵Եւ եկն ոմն պատմեաց նոցա, թէ ահա արքն զորս եդիք ՚ի բանտին՝ կան ՚ի տաճարին, և ուսուցանեն զժողովուրդն՝ ²⁶Յայնժամ երթեալ իշխանքն սպասաւորօքն հանդերձ՝ ածին զնոսա ո՛չ բռնութեամբ. քանզի երկնչէին ՚ի ժողովրդեանն՝ զի մի՛ քարկոծեցին՝ ²⁷Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց զնոսա քահանայապետն՝ ²⁸և ասէ. Ո՛չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել յանունն յայն. և արդ աւասիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբդ ձերով, և կամիք ածել ՚ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ՝ ²⁹Պատասխանի ետ Պետրոս և առաքեալքն՝ և ասեն. Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան՝ ³⁰Աստուած հարցն մերոց յարո՛յց զՅիսուս՝ զոր դուքն սպանէք

* *Բազումք.* Որ լուանն զայն:

* *Օրինակ մի.* Եւ արուեստք մեծամեծք ՚ի ժո՞... ամենեքին միաբան:

* *Ոմանք.* Այլ արգէր:

* *Ոմանք.* Ի հրապարակս... զոնեա հովանի նորա:

* *Ոմանք.* Յայսոց չարաց. որք:

* *Ոսկան.* Որ ընդ նմա աղանդն: *Ոմանք.* Եւ լցան:

* *Ոմանք.* Ի գիշերի եբաց:

* *Ոմանք.* Ընդ առաւօտս ՚ի տա՞... և որ ընդ նմայն էին, և կոչէին:

* *Ոմանք.* Եթէ զբանտն... ամենայն զգուշութեամբ... զոք ո՛չ ևս գտաք:

* *Բազումք.* Ձբանս զայս իշ՞: *Ոսկան.* Հիացան վասն նոցա:

* *Ոմանք.* Նոցա և ասէ. եթէ ահա:

* *Այլք.* Իշխանն սպասաւորօքն... ած զնոսա ո՛չ բռ՞:

* *Ոմանք.* Յատենին. եհարց ցնոսա քա՞:

* *Ոմանք.* Արդ՝ ահաւասիկ լցէք... ուսմամբ ձե՞... զարիւն զառնն զայնորիկ: *Յօրինակին՝ ՚ի գիրս զործոց և եթ՝ աստի սկսեալ արիւնն զրեալ էր եջիւ, արեւն. զոր մեք առ ՚ի չտալ շփոթումն՝ միապէս եղաք ըստ սովորականին՝ արիւն:*

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ յաւելլու.* Պետրոս և այլ առաք՞:

կախեալ զփայտէ: ³¹Ձնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի, և թողութիւն մեղաց*: ³²Եւ մեք ենք նորա վկայք բանիցս այսոցիկ, և Յոզիմ Սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց իւրոց*: ³³Եւ նոքա իբրև լուան, առատանային և խորհէին սպանանել զնոսա*: բա. ³⁴Յարուցեալ ոմն ՚ի մէջ ատենին փարիսացի, որում անուն էր Գամաղիէլ՝ օրէնսուսոյց, պատուական ամենայն ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ մի զարսն արտաքս տանել*: ³⁵Եւ ասէ ցնոսա. Ա՛րք Իսրայէլացիք՝ հայեցարո՛ւք ՚ի ձեզ վասն արանցս այսոցիկ, զի՞նչ արժան իցէ գործել*: ³⁶Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւոզաս՝ ասել զանձնէ թէ իցէ՛ ոմն. յոր անկան արք թուով իբրև չորեքհարեր. որ սպանաւ, և ամենեքեան որ միաբանեալ էին ընդ նմա՝ քակտեցան՝ և եղեն յոչինչ*: ³⁷Յետ նորա յարեաւ Յուզաս Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ, և ամենեքեան որ ընդ նմայն հաւանեալ էին՝ ցրուեցան*: ³⁸Եւ զարդիս ասեմ ձեզ. ՚ի բա՛ց կացէք յարանցոյ յայոցանէ, և թո՛յլ տուք դոցա. զի եթէ ՚ի մարդկանէ իցէ խորհուրդոյ այդ կամ գործո՞ք քակտեսցի*: ³⁹Ապա թէ յԱստուծոյ է՝ ո՛չ կարէք քակտել զդոսա. գուցէ և աստուածամարտք գտանիցիք: Հաւանեցան նմա*. ⁴⁰և կոչեցեալ զառաքեալսն՝ զան հարին, և պատուիրեցին՝ մի՛ ևս խօսել յանուն Յիսուսի. և արձակեցին զնոսա*: ⁴¹Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուանն արժանի՝ եղեն անարգելոյ*: ⁴²Եւ զամենայն օր ՚ի տաճարին և առտնին ո՛չ դադարէին աւետարանել և ուսուցանել՝ զՅիսուս Քրիստոս*:

6

Գլուխ Զ

Է ¹Եւ յաւուրսն յայնոսիկ ՚ի բազմանալ աշակերտացն՝ եղև տրտո՛ւնջ Յունացն առ Հեբրայեցիսն. զի արհամարհեալ լինէին ՚ի պաշտամանն հանապազորդի այրիք նոցա*: ²Կոչեցին երկուտասանքն զբազմութիւն աշակերտացն՝ և ասեն. Ո՛չ է հաճոյ թողուլ մեզ զբանն Աստուծոյ՝ և պաշտել զսեղանն*: ³Ընտրեցէք ե՛դրարք վկայեալս ՚ի ձէնջ արս եւթն, զորս կացուսցո՛ւք ՚ի վերայ պիտոյիցս

* *Ոմանք.* Աջով իւրով. տալով ապաշ*:

* *Առ Ոսկանայ պակասի.* Եմք նորա: *Ուր ոմանք.* Վկայք նորա բա*:

* *Ոմանք.* Առատանէին և:

* *Բազումք.* Փարիսեցի. որում:

* *Ոմանք.* Արժան է առնել:

* *Ոմանք.* Ձաւուրսս զայսոսիկ... եթէ իցէ ոմն. յորս... չորեք արիւր. որ և սպանաւ... որ միաբան էին... և եղեն ոչինչ: *Օրինակ մի.* Իցէ ոմն մեծ:

* *Ոմանք.* Յուզա Գալի՛... որ նմայն հաւանեալ էին: *Ուր օրինակ մի.* Որ նմա հնազանդեալ էին՝ ցր՛: *Եւ այլ օրինակ մի.* Ընդ նմայն հաւաքեալ էին:

* *Ոմանք.* Ձի թէ ՚ի մար՛... խորհուրդ այդ կամ գործ: *Եւ ոմանք.* Խորհուրդոյ կամ:

* *Ոմանք.* Ապա եթէ յԱստուծոյ իցէ:

* *Ոսկան.* Եւ կոչեալ զա՛: *Ոմանք.* Մի՛ խօսել յանուն:

* *Ոսկան յաւելու.* Վասն անուանն *Տեառն* արժանի:

* *Բազումք.* Ուսուցանել և աւետարանել: *Ուր Ոսկան.* յուսուցանել: *Օրինակ մի.*

Ուսուցանել զՏէր Յիսուս Քրիստոս:

* *Ոմանք.* Յունաց առ Եբրայեցիս... հանապազորդ այրիք:

* *Այլք.* Հաճոյ մեզ թո՛... զսեղանս:

այսոցիկ* .⁴ և մեք՝ աղօթից և պաշտաման և բանին հպատակ լիցուք: ⁵ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեանն. և ընտրեցին զՍտեփանոս, այր՝ լի՝ հաւատով՝ և Յոզուով Սրբով, և զՓիլիպպոս, և զՊրոքորոն, և զՆիկանովրայ, և զՏիմոնովնայ, և զՊարմենայ, և զՆիկողայոս զեկն Անտիոքացի* . ⁶ զորս կացուցին առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ՝ եղին ՚ի վերայ նոցա զձեռն* : ⁷ Եւ բանն Աստուծոյ աճէր. և բազմանայր թիւ աշակերտելոցն յոյժ յԵրուսաղէմ. և բազում ժողովք ՚ի քահանայիցն անսային հաւատոցն* :

Ը բբ. ⁸ Ստեփանոս այր՝ լի՝ շնորհօք և զօրութեամբ, առնէր արուեստս և նշանս մեծամեծս ՚ի ժողովրդեանն: ⁹ Յարեան ոմանք ՚ի ժողովրդեանն, որ կոչէր Լիբեացոց՝ և Կիրենացոց՝ և Աղեքսանդրացոց՝ և որ ՚ի Կիլիկեցոց՝ և յԱսիայ, վիճել ընդ Ստեփանոսի* . ¹⁰ և ոչ կարէին զղէմ ունել զիմաստութեանն և զհոգւոյն, որով խօսէր* : ¹¹ Յայնժամ հրապուրեցին անոնս ասել զնմանէ, թէ լուաք զդորա խօսել բանս հայիոյութեան ՚ի Մովսէս և յԱստուած* : ¹² Եւ խռովեցին զժողովուրդն և զերիցունսն և զդպիրսն. և հասեալ ՚ի վերայ յափշտակեցին զնա՝ և ածին յատեանն* : ¹³ Եւ կացուցին վկայս սոնտս որ ասէին. Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայիոյութեան զտեղւոյն սրբոյ՝ և զօրինացն* : ¹⁴ Լուաք ՚ի դմանէ զի ասէր, թէ Յիսուս Նազովրեցի՝ նա՝ քակեսցէ զտեղիս զայս, և փոխեսցէ զօրէնսս զոր ետ մեզ Մովսէս* : ¹⁵ Եւ հայեցեալ ՚ի նա ամենեցուն որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի* :

7

Գլուխ Է

¹ Ասէ քահանայապետն՝ եթէ արդարև՝ այդ ամոյպէս իցէ* : ² Եւ նա՝ ասէ. Արք եղբարք և հարք՝ լուարուք ինձ: Աստուած փառաց երևեցաւ իմ մերում Աբրահամու, մինչդեռ ՚ի Միջագետս էր, մինչև՝ բնակեցուցեալ էր զնա ՚ի Խառան. և ասէ ցնա. ³ Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ* : ⁴ Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդեացոց բնակեցաւ ՚ի Խառան. և անտի յետ մեռանելոյ իմ նորա, փոխեաց պանդխտեցոյց զնա յերկրիս յայսմիկ, յորում

* *Ի լուս*. Ընտրեցէք եղբարս վկայեալս ՚ի ձեռք. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*: *Ոմանք ՚ի նոր օրինակաց յաւելուն*. Եօթն՝ *լի Յոզուով Սրբով և իմաստունս*. զորս կացուս: *Ուր Ոսկան*. Լիս Յոզուով Սրբով և իմաստութեամբ:

* *Առ Ոսկանայ պակասի*. Թուեցաւ բանն առա: *Ոմանք զանունս*՝ Ստեփանոս *գրեն կրկին նիւ*. բայց բազմագոյնքն և ընտրելագոյնքն ունին որպէս և եղաք, *համեմատ բնագրին Յունաց*: *Ոմանք*. Լի հաւատովք... և զՊրոքորոն:

* *Ոմանք*. Ջոր կացուցին... նոցա ձեռս:

* *Բազումք*. Թիւ աշակերտացն յոյժ: *Օրինակ մի*. Եւ բազում ժողովուրդք ՚ի քա:

* *Ոմանք*. ՚ի ժողովրդեանն որ... ՚ի Կիլիկեցոց:

* *Ոմանք*. Իմաստութեանն և հոգւոյն որով խօսէրն:

* *Ոմանք*. Ասել եթէ լուաք... զբանս հայիոյութեան:

* *Օրինակ մի*. Եւ խռովեցուցին զժողովուրդսն... ՚ի վերայ նորա յափշտա... յատեան:

* *Ոմանք*. Խօսել զբանս... և զօրինաց:

* *Ոմանք*. Ջօրէնս զոր ետ:

* *Ոմանք*. Նստէին յատենի:

* *Ոմանք*. Թէ արդարև... այդպէս է:

* *Ոմանք*. Յերկիրն որ ցուցից. և *ոմանք*. յոր ցուցից:

դո՛ւք այժմ բնակեալ էք*։ ⁵Եւ ո՛չ ետ նմա ժառանգութիւն ՚ի սմա, և ո՛չ քայլ մի ոտին. և խոստացաւ տալ նմա զսա ՚ի բնակութիւն, և զաւակի՛ նորա յետ նորա. և մինչ ո՛չ գոյր նորա որդի*։ ⁶Խօսեցաւ Աստուած ա՛յսպէս, թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտա՛ր երկիր. և ծառայեցուցեն զնա՝ և չարչարեցեն անս չորեքհարելր. ⁷և զազգն որուն ծառայեցեն՝ դատեցայց ես ասէ Աստուած. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտեցեն զիս ՚ի տեղոջս յայսմիկ։ ⁸Եւ ետ նմա ո՛ւխտ թլփատութեան. և ապա ծնաւ զԻսահակ, և թլփատեաց զնա յաւուր ութերորդի. և Իսահակ զՅակո՛վբ, և Յակովբ զերկուասան՝ նահապետսն*։ ⁹Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին յեգիպտոս. և էր Աստուած ընդ նմա*։ ¹⁰և փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա. և ետ նմա շնորհս և իմաստութիւն առաջի փարաւոնի արքային Եգիպտացոց. և կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն՝ և ամենայն տան նորա։ ¹¹Եւ եկն սո՛վ յամենայն երկիրն Եգիպտոսի, և ՚ի Քանան. և էր նեղութիւն մեծ. և ո՛չ գտանէին կերակուրս հարքն մեր*։ ¹²Եւ լուեալ Յակովբայ թէ գտանի՛ կերակուր յեգիպտոս, առաքեաց զհարսն մեր յառաջագոյն*։ ¹³Եւ յերկրորդունն ե՛տ ծանօթս Յովսեփ եղբարց իւրոց. և յայտնի՛ եղև փարաւոնի ազգն նորա*։ ¹⁴Առաքեաց Յովսեփ և կոչեաց զՅակոբ զհայր իւր, և զամենայն ազգատոհմն՝ ոգիս եւթանասուն և հինգ։ ¹⁵Եւ է՛ջ Յակոբ յեգիպտոս. և վախճանեցաւ ինքն և հարքն մեր։ ¹⁶Եւ փոխեցան ՚ի Սիւքէ՛ն, և եղան յայրին զոր ստացաւ Աբրահամ գնոց արծաթոյ յորդոցն Եմովբայ ՚ի Սիւքէն*։ ¹⁷Իբրև մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Աստուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ յոյժ յեգիպտոս*։ ¹⁸մինչև յարեաւ ա՛յլ թագաւոր յեգիպտոս, որ ո՛չ ճանաչէր զՅովսեփ։ ¹⁹Նա՛ հնարեցաւ ազգին մերուն, և չարչարեաց զհարսն մեր, առնել ընկեցիկ զմանկունս նոցա զի մի՛ ապրեսցին*։ ²⁰Յորուն ժամանակի ծնաւ Մովսէս, և էր կայտա՛ռ առաջի Աստուծոյ. որ և սնաւ՝ ՚ի տան հօր իւրոյ ամիսս երիս*։ ²¹Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստրն փարաւոնի, և սնոյց զնա ի՛ւր յորդեգիրս*։ ²²Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն. և էր զօրաւոր բանիւք և զործովք իւրովք*։ ²³Իբրև լցաւ նորա քառասնամեայ ժամանակք, անկաւ ՚ի սիրտ նորա շրջել զեղբարք իւրովք՝ զորդուովքն

* *Ոսկան.* Փոխեաց և պանդիս՝: *Ոմանք.* Դուքս այժմիկ էք բնա՛:

* *Ոմանք զանց արարեալ զ և ն, այսպէս գրեն զբանս.* Յետ նորա մինչ ո՛չ գոյր նորա որդի: (6) Խօսեցաւ... երկրի՛ և չարչարեցեն զնա անս չորեքհարելր:

* *Ոմանք.* Յաւուրն ութերորդի:

* *Ոմանք.* Վաճառեցին զնա յեգ՛: *Յօրինակին աստի սկսեալ՝ ըստ սովորութեան ոմանց գրեալ էր* յեգւպտոս, Եգւպտացւոցն:

* *Ոմանք.* Յամենայն երկրին Եգիպտացւոց... կերակուր հար՛: *Ի բազունս պակասի.* Եւ ՚ի Քանան. *և էր* նեղութիւն մեծ:

* *Ոմանք.* Յակոբու եթէ գտա՛:

* *Ոմանք.* Ազգ նորա փարաւոնի:

* *Օրինակ մի.* Եւ եղան յայրի անդ: *Ոսկան.* Յորդոցն Եմօրայ որդւոյ Սիւքենայ:

* *Յայլս պակասի.* Եւ բազմացաւ յոյժ յեգիպ՛:

* *Ոմանք.* Եւ չարչարեալ զհարսն:

* *Ոմանք.* Ծնաւ և Մովսէս... ուր և սնաւ:

* *Ոմանք ՚ի լուս՝.* ՚ի վերայ՝ դուստր, *նշանակեն՝* Թերմութիս անուն. *կամ՝* Թերմովքս է անուն:

* *Ոմանք.* Իմաստութեամբն Եգիպտացւոց: *Ոմանք ՚ի լուս՝.* ՚ի վերայ՝ վարժեցաւ *նշանակեն* իրատեցաւ:

Իսրայէլի*։ ²⁴Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ զչարեցաւ, և խնդրեա՛ց զվրէժ զրկելոյն՝ սպանեալ զԵգիպտացին*։ ²⁵Չմտաւ ածեր թէ իմասցին եղբարք նորա, զի Աստուած ՚ի ձեռն նորա՛ տալոց էր զփրկութիւն նոցա. և նոքա ո՛չ իմացան*։ ²⁶Եւ ՚ի վաղիւ անդր երևեցաւ նոցա մինչդեռ մարտնչէինն, և վարեաց զնոսա ՚ի խաղաղութիւն, ասէ. Արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս*։ ²⁷Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց զնա, և ասէ. Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ՚ի վերայ մեր*։ ²⁸Մի՞թէ՝ սպանանե՞լ կամիցիս զիս, զոր օրինակ սպաներ երէկ զԵգիպտացին*։ ²⁹Եւ փախեալ Մովսէս ՚ի բանիցս յայսցանէ, և եղև պանդո՛ւխտ յերկրին Մադիամու. ուր ծնաւն երկուս որդիս*։ բգ. ³⁰Եւ ՚ի կատարել ամացն քառասնից, երևեցաւ նմա յանապատին լերինն Սինայ հրեշտակ Տեառն ՚ի բոց հրոյ մորենւոյն*։ ³¹Եւ Մովսիսի տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. և ՚ի մատչելն նորա նշմարել, եղև ձայն Տեառն՝ և ասէ*։ ³²Ես եմ Աստուած հարց քոց, Աստուած Աբրահամու՝ և Սահակայ՝ և Յակովբայ. և զահի հարեալ Մովսէս՝ ո՛չ իշխեր հայել*։ ³³Եւ ասէ ցնա Տէր. Լո՛յժ զկօշիկս ոտից քոց, զի տեղիդ յորում դուդ կացեր՝ երկիր սուրբ է*։ ³⁴Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս, և լուսայ հեծութեան նոցա, և իջի փրկել զնոսա. և արդ՝ ե՛կ առաքեցից զքեզ յԵգիպտոս։ ³⁵Չայն Մովսէս՝ զոր ուրացան և ասէին. Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ՚ի վերայ մեր, զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց ՚ի ձեռն հրեշտակին, որ երևեցաւ նմա ՚ի մորենւոջն*։ ³⁶Նա՛ եհան զնոսա՝ արարեալ նշանս և արուեստս յերկրին Եգիպտացւոց, և ՚ի Կարմիր ծովուն, և յանապատի՝ ամս քառասուն։ ³⁷Այս Մովսէս՝ որ ասաց ցորդիսն Իսրայէլի. Մարգարէ՛ ձեզ յարուսցէ Տէր Աստուած յեղբարց ձերոց՝ իբրև զիս, նմա՛ լուիջիք*։ ³⁸Սա է որ եղև յեկեղեցւոջն յանապատին ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա ՚ի լերինն Սինայ՝ և ընդ հարսն մեր. որ ընկալաւ զպատգամս կենդանիս տալ մեզ*։ ³⁹Որում ո՛չ կամեցան հնազանդ լինել հարքն մեր, այլ մերժեցին և դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս*։ ⁴⁰Եւ ասեն ցԱհարոն. Արա՛ մեզ աստուածս որ երթայցեն առաջի մեր. զի Մովսէսն այն որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ո՛չ գիտեմք զի՛ եղև նմա։ ⁴¹Եւ արարին յաւուրսն

* Ոմանք. Իբրև լցան նորա... ժամանակ: Ոմանք ՚ի լուս՝. ՚ի վերայ՝ շրջել. նշանակեն՝ այց առնել. զոր և օրինակ մի առեալ մուծանէ ՚ի բնաբանն:

* Ոմանք. Չչարացաւ, խնդրեալ զվրէժ զրկելոյն՝ սպանանել զԵգիպ*:

* Ոմանք. Եթէ իմասցին եղբարքն նորա... տալոց է զփրկ*:

* Օրինակ մի. Եւ ասէ. Արք... զրկէք ընդ միմեանս:

* Ոմանք. Ջրկէրն զընկերն:

* Ոմանք. Երէկ սպաներ:

* Ոսկան. Յերկրին Մադիամու: Ոմանք. Ուր և ծնաւ երկու որ՝:

* Ի լուս՝. Ի լերինն Սինայ. համաձայն ոմանց ՚ի բնաբ՝: Յօրինակին ՚ի բնաբանի ՚ի վերայ՝ մորենւոյն յետոյ յաւելեալ գրի, ՚ի, առնել՝ ՚ի մորենւոյն. զորով զանց արարաք, եղեալ համաձայն այլոց:

* Ոսկան. Եւ Մովսէս տեսեալ: Ի բազումս պակասի. Չայն Տեառն. և ասէ. Ես եմ:

* Ոսկան յաւելու. Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակոբու:

* Ոմանք. Չկօշիկս յոտից քոց:

* Ոմանք. Չոր ուրացանն և ասեն. Ո՛:

* Ոմանք. Այս է Մովսէս. կամ՝ այս Մովսէս է... Իսրայէլի յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղ՝:

* Ոմանք. Նա եղև յեկեղեցւոջն յանապատի... պատգամս կեն՝:

* Ոսկան. Յնազանդիլ հարքն մեր:

յայնոսիկ որթ, և մատուցին զո՛հս կոռց, և ուրախ լինէին ՚ի զործս ձեռաց իւրեանց*։ ⁴²Դարձոյց Աստուած՝ և մատնեաց զնոսա ՚ի պաշտօն զօրութեան երկնից. որպէս և գրեալ է ՚ի գիրս մարգարեից. Միթէ զո՛հս և պատարագս մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին՝ տո՛ւնդ Իսրայէլի*։ ⁴³Եւ առէք զվրանն Մողոքայ, և զաստղն աստուածոյն Զռենփայ, զպատկերսն զոր արարէք երկիր պագանել նոցա. և փոխեցից զձեզ յայն կողմն Բաբելացւոց*։ ⁴⁴Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին. որպէս հրաման ետ որ խօսէրն ընդ Մովսիսի, առնել զայն ըստ օրինակին զոր ետես։ ⁴⁵Ձոր և ընկալեալ բերէին հարքն մեր հանդերձ Յեսուաւ ՚ի վիճակ ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց. մինչև յաւուրս Դաւթի*։ ⁴⁶որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, և խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ Յակովբայ։ ⁴⁷Եւ և Մողովմոն շինեաց նմա տուն։ ⁴⁸Այլ ո՛չ եթէ Բարձրեալն ՚ի ձեռագործ տաճարս բնակէ։ Այլ որպէս մարգարէն ասէ. ⁴⁹Երկինք աթո՛ռ իմ եմ, և երկիր պատուանդան ոսից իմոց. որպիսի՞ տուն շինեցէք ինձ՝ ասէ Տէր. կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ*։ ⁵⁰ո՛չ ձեռն իմ արար զայս ամենայն*։ ⁵¹Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ակընջօք, դուք հանապա՛զ Զոգւոյն Սրբոյ հակառակ կայք. որպէս հարքն ձեր, և դուք*։ ⁵²Ձո՛րք ՚ի մարգարեիցն ո՛չ հալածեցին հարքն ձեր. և սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատմեցին վասն գալստեան Արդարոյն. որոյ դուք այժմ մատնիչք և սպանօղք եղերուք*։ ⁵³ոյք առէք զօրէնս ՚ի հրամանս հրեշտակաց, և ո՛չ պահեցէք։ ⁵⁴Եւ լուեալ զայս զայրանային ՚ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամուսնս ՚ի վերայ նորա։ ⁵⁵Եւ նա էր լի՛ Զոգւով Սրբով. հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս Աստուծոյ. և զՅիսուս զի կայր ընդ աջմէ Աստուծոյ. և ասէ. Ահա տեսանես՝ զերկինս բացեալ՝ և զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ*։ ⁵⁶Աղաղակեալ ՚ի ձայն մեծ, խցին զականջս իւրեանց, և դիմեցին առ հասարակ ՚ի վերայ նորա*։ ⁵⁷Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին զնա. և վկայքն դնէին զձործս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուդ*։ ⁵⁸Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս, որ կարդայր և ասէր. Տէր Յիսուս՝ ընկալ զոգի իմ*։ ⁵⁹Եդ ծուներ՝ և աղաղակեաց ՚ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս։ Եւ զայս իբրև ասաց՝ ննջեաց. և Սաւուդս էր կամակից սպանման նորա*։

8

* *Յօրինակին.* Յաւուրսն յայնմիկ որթ։ *Ուր ոմանք.* Յաւուր յայնմիկ։

* *Ոմանք.* Որպէս գրեալ է... մարգարեիցն... տուն Իսրայէլի։

* *Ոմանք.* Չպատկերն զոր... յայն կողմն Բա՛։

* *Ոմանք.* Բերին հարքն մեր... Յեսուաւ ՚ի վի՛... յաւուրսն Դաւթի։

* *Յօրինակին պակասէր.* Աթոռ իմ եմ, և։ *Ոմանք.* Եւ երկիրս պատ՛։

* *Ոմանք.* Ո՛չ ձեռք իմ արար։

* *Ոմանք.* Որպէս և հարքն ձեր։

* *Բազումք.* Ձո՞ր ՚ի մարգարեիցն։

* *Օրինակ մի.* Զայեցեալ յեր... զի կայր ընդ աջմէ, և ասէ։

* *Ոմանք.* Աղաղակեցին ՚ի ձայն։

* *Ի բազումս պակասի.* Քարկոծէին զնա։

* *Ոմանք.* Ընկալ զհոգի իմ։

* *Ոմանք.* Եդ ծուր. աղաղակեաց... մի՛ համարիր սոցա։

Գլուխ Ը

Թ ¹Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն մեծ՝ ՚ի վերայ եկեղեցւոյն յերուսաղէմ. և ամենեքեան ցրուեցան ՚ի գեաւոյս Զրէաստանի և ՚ի Սամարիա՝ բայց յառաքելոցն՝: ²Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք, և արարին կոծ մեծ ՚ի վերայ նորա: բդ. ³Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. ՚ի տունս տունս մտանէր, քարշեալ զարս և զկանայս՝ մատնէր ՚ի բանտ: ⁴Եւ սփռեալքն՝ շրջէին աւետարանէին զբանն: ⁵Իսկ Փիլիպպոս իջեալ ՚ի քաղաքն Սամարացոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս Յիսուս: ⁶Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան, ՚ի լսել նոցա և ՚ի տեսանել զնշանսն զոր առնէր: ⁷Քանզի բազումք որ ունէին զայսս պիղծս, աղաղակէին ՚ի ծայն մեծ և ելանէին: ⁸Եւ բազում անդամալոյծք և կաղք բժշկէին: ⁹և եղև ուրախութիւն մեծ ՚ի քաղաքին յայնմիկ:

Ժ Այր ոմն Սիմովն անուն, յառաջագոյն էր ՚ի քաղաքին. մոզէր և ապշեցուցանէր զազգն Սամարացոց. ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն: ¹⁰Յոր հայէին ամենեքեան ՚ի փոքուէ մինչև ՚ի մեծամեծս՝ և ասէին. Սա՛ է զօրութիւն Աստուծոյ՝ որ կոչի մեծ: ¹¹Հայէին ՚ի նա վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա: ¹²Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի, որ աւետարանէր վասն արքայութեանն Աստուծոյ, և անուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան արք և կանայք: ¹³Այլ և ինքն Սիմովն հաւատաց, և մկրտեալ կանխէր առ Փիլիպպոս. տեսեալ զնշանսն և զմեծամեծ զօրութիւնսն որ լինէին՝ զարմանայր: ¹⁴Իբրև լուան որ յերուսաղէմ առաքեալքն էին, թէ և ՚ի Սամարիայ ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊե՛տրոս և զՅովհաննէս. ¹⁵որք իջեալ կացին յաղօթս ՚ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՅոզի Սուրբ: ¹⁶զի ցայնժամ չև ևս էր և ոչ ՚ի վերայ միոյն նոցա հասեալ. բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառն Յիսուսի: ¹⁷Յայնժամ եղին զծեռս ՚ի վերայ նոցա՝ և առնուին Զոզի Սուրբ:

ԺԱ ¹⁸Տեսեալ Սիմոնի՝ թէ ձեռն ՚ի վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ լինի Զոզի Սուրբ, մատոյց նոցա ինչս՝ և ասէ. ¹⁹Տուր և ինձ զհշխանութիւնս զայս, զի յոյր վերայ դնիցեն զծեռս՝ առցէ՛ զՅոզի Սուրբ: Եւ Պե՛տրոս ասէ ցնա. ²⁰Արժաթ քո ընդ քեզ լիցի ՚ի կորուստ, զի զպարզան Աստուծոյ համարեցար ընչիւք

* *Ոմանք.* Յաւուրն յայնմիկ. *Ուր Ոսկան.* Յաւուրսն յայնոսիկ: *Ոմանք.* Զրէաստանի և Սամարեայ, բայց յա՛: *Ուր օրինակ մի.* Եւ ՚ի Շամրին:

* *Ոմանք.* Քարշէր զարս և զկանայս, և մատ:

* *Օրինակ մի.* Եւ առաքեալքն շրջէին և աւե՛:

* *Ոմանք.* Քարոզէր նոցա զՔրիստոս. *և այլ ոմանք.* Նոցա զՅիսուս:

* *Ոմանք.* Չայս պիղծս:

* *Ոմանք.* Անդամալոյծք:

* *Ոմանք.* Անուն Սիմովն: *Օրինակ մի.* Եւ մո՛գ էր... եթէ իցէ:

* *Ոմանք.* Մինչև ցմեծամեծս:

* *Օրինակ մի.* Զաւատացին բանիցն Փիլիպպ... և յանուն Յիսուսի Քրիստոսի. *և այլ օրինակ մի.* և անուամբն Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք ՚ի լուս՝ ՚ի վերա՝* կանխէր. *նշանակեն.* ցանկորդէր: *Օրինակ մի.* Եւ զմեծամեծ սքանչելագործութիւնսն զոր լինէր, և զար՛:

* *Ոմանք.* Չի առցեն զՅոզին Սուրբ:

* *Ոմանք.* Չի յայնժամ չև:

* *Ոմանք.* Չի ձեռս ՚ի վերայ դնե՛... Զոզին Սուրբ:

* *Ոմանք.* Տուր ինձ զհշխանութիւնդ զայդ... առցէ Զոզի Սուրբ:

ստանալ*։ ²¹Ո՛չ գոյ մասն և վիճակ ՚ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ քո ո՛չ է ուղիղ առաջի Աստուծոյ*։ ²²Ապաշաւեա՛ր դու ՚ի չարեացդ քո յայդցանէ, և աղաչեա՛ր զՏէր. թերևս թողութիւն լիցի քեզ ՚ի մեղմէխ խորհրդոց սրտի քոյ*։ ²³Քանզի ՚ի դառնութիւն մաղծի, և ՚ի կնճիռն անիրաւութեան տեսանեն զքեզ։

²⁴Պատասխանի ետ Սիմոն և ասէ. Աղաչեցէ՛ք դուք վասն իմ զՏէր, զի մի՛ ինչ եկեսցէ ՚ի վերայ իմ՝ յորոց դուքդ ասացէք*։ ²⁵Եւ նոցա եղեալ վկայութիւն խօսեցան զբանն Աստուծոյ, և դարձան յերուսաղէմ. և ՚ի բազում ՚ի գեաւոս Սամարացւոցն աւետարանէին*։

ԺԲ ԲԵ. ²⁶Յրեշտա՛կ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս՝ և ասէ. Արի՛ և գնա դու ՚ի կողմն հարաւոյ՝ ընդ ճանապարհ որ իջանէ յերուսաղէմէ ՚ի Գազայ. զի այս է անապատ*։ ²⁷Եւ յարեաւ գնաց։ Եւ ահաւասիկ այր մի Եթովպացի ներքինի, հզօր Կանդակայ՝ տիկնոջ Եթովպացւոց, որ էր ՚ի վերայ ամենայն գանձուց նորա. որ եկեալ էր երկիր պագանել յերուսաղէմ*։ ²⁸Եւ անդրէն դարձեալ և նստեալ ՚ի կառս իւրում, ընթեռնոյր զմարգարէն զԵսայի*։ ²⁹Ասէ Յոզիակն ցՓիլիպպոս. Մատի՛ր և յարեաց ՚ի կառսդ յայդոսիկ*։ ³⁰Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵսայի՝ մարգարէ. և ասէ. Գիտիցե՞ս արդեւք զոր ընթեռնուցուսդ*։ ³¹Եւ նա ասէ. Ձիա՞րդ կարիցեմ, թէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ։ Եւ աղաչեաց զՓիլիպպոս՝ ելանել նստել ընդ նմա*։ ³²Եւ գլուխ գրոցն զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրև զոչխար ՚ի սպանդ վարեցաւ, և իբրև զորոջ առաջի կտրջի իւրոյ անմռունչ, այնպէս ո՛չ բանայ զբերան իւր*։ ³³Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձա՛ւ, և զազգատոհմ նորա ո՛ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նորա*։ ³⁴Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի, և ասէ. Աղաչեմ զքեզ՝ վասն ո՞ր ասէ մարգարէն զայս. վասն ի՞ւր, եթէ վասն այլոյ՝ ուրուք։ ³⁵Եբաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ ՚ի գրոցս յայսմանէ՝ աւետարանեաց նմա զՅիսուս Քրիստոս*։ ³⁶Իբրև երթային զճանապարհայնն, եկին ՚ի ջո՛ւր ինչ. և ասէ ներքինին. Ահաւասիկ ջուր՝ զի՞նչ արգելու զիս ՚ի մկրտելոյ*։ ³⁷Եւ ասէ ցնա. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով մարթ է։ Պատասխանի ետ ներքինին և ասէ. Հաւատամ՝ եթէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ*։ ³⁸Եւ հրամայեաց կացուցանել զկառսն. և իջին երկրքին ՚ի ջուրն՝

* *Ոմանք.* Ձի զպարզան Աստուծոյ։

* *Օրինակ մի.* Մասն և բաժին յիրիդ յայդմիկ։

* *Օրինակ մի.* Ի մեղմէ խորհրդոց։ *Ոմանք.* Ի չարեաց քոց յայդցանէ։

* *Ոմանք.* Մի՛ եկեսցէ... յորոց ասացէք։

* *Բազումք.* Եւ ՚ի բազում գեւոս Սամարաց՝։ *Օրինակ մի.* Աւետարանէին զՔրիստոս։

* *Ոմանք.* Եւ գնա՛ ընդ կողմն... այն է անապատ։

* *Ոմանք.* Տիկնոջ Եթովպացւոյ։

* *Ոմանք.* Եւ էր անդրէն դար՝... զմարգարէ Եսայի։

* *Ոմանք.* Մատի՛ր յարեաց։

* *Ոմանք.* Եւ ընթացաւ Փի՞։ *Ոմանք.* Ձոր ընթեռնուսդ։

* *Ոմանք.* Կարիցեմ գիտել, թէ ոք ո՛չ առաջ՞։

* *Ոսկան.* Եւ գլուխ գրոյն։ *Օրինակ մի.* Անմռունչ կայ. այնպէս։

* *Ոմանք.* Առ խոնարհութեան նորա։

* *Ոմանք.* Եւ սկսաւ խօսել ՚ի գրոցս յասցանէ, աւետարանեաց նմա զՅիսուս։

* *Ոմանք.* Ձճանապարհայն... զի՞նչ արգելուս զիս ՚ի մկր՞։

* *Ոսկան յաւելու.* Ասէ ցնա *Փիլիպպոս։* Ի բազումս պակասի. Պատասխանի ետ ներքինին, և։ *Ոմանք.* Եթէ է Յիսուս Քրիստոս. և *ոմանք.* Եթէ Յիսուս Քրիստոս է։

Փիլիպպոս և ներքինին, և մկրտեաց զնա*։³⁹ Եւ իբրև ելին ՚ի ջրոյ անտի, Յոզի Սուրբ եկն ՚ի վերայ ներքինւոյն. և հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ո՛չ ևս ետես զնա ներքինին. և գնայր զճանապարհս իւր ուրախութեամբ*։
⁴⁰ Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս. և շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն, մինչև ՚ի գալ նորա ՚ի Կեսարիայ*։

9

Գլուխ Թ

ԺԳ ԲԳ. ¹ Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն Տեառն, մատուցեալ առ քահանայապետսն*։ ² Խնդրեաց ՚ի նոցանէ թուղթս ՚ի Դամասկոս առ ժողովսն. որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ յերուսաղէմ*։ ³ Եւ ընդ երթալն նորա՝ եղև մերձենալ ՚ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից*։ ⁴ Եւ անկեալ յերկիր, լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. Սաւո՞ւղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս*։ ⁵ Եւ ասէ. Ո՞վ ես Տէր։ Եւ նա ասէ. Ես եմ Յիսուս զոր դուն հալածես*։ ⁷ Կալ յոտն կաց և մո՛ւտ ՚ի քաղաք, և պատմեսցի՛ քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել։ Իսկ արքն որ ընդ նմայն երթային, կային անշըշունջ. զճայնն միայն լսէին, բայց տեսանէին և ո՛չ ինչ*։ ⁸ Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի, և աչօք բացօք ո՛չ զոք տեսանէր. զձեռանէ նորա առեալ մուծին ՚ի Դամասկոս*։ ⁹ Եւ էր անդ աուրս երիս և ո՛չ տեսանէր. և ո՛չ եկեր և ո՛չ արբ։ ¹⁰ Եւ էր ոմն աշակերտ ՚ի Դամասկոս՝ Անանիայ՝ անուն. ասէ ցնա Տէր ՚ի տեսլեան. Անանիայ։ Եւ նա ասէ. Ահա՛ւասիկ եմ Տէր*։ ¹¹ Եւ ասէ ցնա Տէր. Յո՛ւտն կաց և գնա՛ ընդ փողոցն՝ որ կոչի Ուղիղ, և խնդրեսցես յապարանս Յուդայ՝ Սաւղոս անուն զՏարսոնացի, զի կայ դեռ յաղօթս*։ ¹² Եւ ետես ՚ի տեսլեան այր մի Անանիայ անուն, մտեալ և եղեալ ՚ի վերայ նորա զձեռն, որպէս զի տեսցէ*։
¹³ Պատասխանի ետ Անանիա. Տէր՝ լուայ՝ ՚ի բազմաց վասն առնն այնորիկ՝

* Ոմանք. երկոքեանն ՚ի ջուրն։

* Ոմանք. Յոզին Սուրբ եկն... զճանապարհ իւր։

* Ոմանք. Գտեալ յԱզով... քաղաքաց մինչև ՚ի գնալ նորա ՚ի Կեսարիա։

* Օրինակ մի. Սպառնալեօք և ցասմամբ աշա՛։ Ոմանք. Առ քահանայապետն։

* Ոմանք. Խնդրեաց ՚ի նմանէ... առ ժողովուրդսն... զայնր ճանապարհի. արս։

* Ոմանք. Ընդ երթալ նորա... մերձանալ ՚ի Դամասկոս առ ժողովուրդն... փայլատակեալ։

* Ոմանք. Եւ լուաւ բար՛։

* Ոսկան աստանօր առեալ ՚ի Լատինականէն (առ որս երկի հաւաքեալ ՚ի ստորև գլ. ԻԲ. և ԻՁ) յաւելու. Հալածես. իսիստ է քեզ ընդդէմ իսթանի արացել։ 6 *Եւ զարհուրեալ և անշըշունջ լեալ՝ ասաց. Տէր, զիս զի՞նչ կամիս առնել։ *Եւ ասէ ցնա Տէր. Այլ յոտն։ Չորով զանց առնեն ամենայն գրչագիրք մեր՝ համաձայն հնագոյն և ընտրելագոյն օրինակաց Յունաց։

* Ոմանք. Ի քաղաքն. կամ՝ ՚ի քաղաքդ... զինչ պարտ իցէ. կամ՝ զոր ինչ պարտ իցէ... որ ընդ նմա եր՛... զճայն միայն։

* Ոմանք. Եւ աչօք ո՛չ զոք տեսա՛։ Բազումք. Ձձեռանէ առեալ նորա։

* Ոմանք. Անանիա անուն... և ասէ ցնա Տէր. Անանիա՛։ Եւ նա ասէ աւասիկ եմ։

* Ոսկան. Անուն Տարսոնացի։

* Ոսկան. Անանիա անուամբ։ Ոմանք. Ի վերայ նորա ձեռս։

որչափ արար չարիս սրբոց քոց յերուսաղէմ*¹⁴ և աստ ունի՝ իշխանութիւն ՚ի քահանայապետիցն, կապել զամենեսեան որ կարդան զանուն քո: ¹⁵Ասէ ցնա Տէր. Ե՛րթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրե՛լ զանուն իմ առաջի հեթանոսաց՝ և թագաւորաց՝ և որդւոցն Իսրայէլի*¹⁶ Քանզի ե՛ս իսկ ցուցի նմա՝ որչափ պա՛րտ իցէ նմա չարչարել վասն անուան իմոյ*¹⁷ Եւ զնաց Անանիայ և Եմո՛ւտ յապարանսն. և եղեալ ՚ի վերայ նորա ծեռս, և ասէ. Սաւուղ եղբայր՝ ՚ի վեր հայեաց, Տէ՛ր առաքեաց զիս, Յիսուս որ երևեցաւն քեզ ՚ի ճանապարհին յորում գայիրն. որպէս զի տեսցես, և լցցիս Յոգուվ Սրբով*¹⁸ Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղևանք. ետես, և յարեաւ մկրտեցա՛ւ*¹⁹ և առեալ կերակուր զօրացա՛ւ: Եւ եղև ՚ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ*²⁰ Եւ վաղվաղակի ՚ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ սա՛ է Որդին Աստուծոյ*²¹ Չարմացեա՛լ էին ամենեքեան, որ լսէին, և ասէին. Ո՞չ սա էր որ աւա՛րն հարկանէր յերուսաղէմ զայնոսիկ որ կարդային զանուն Յիսուսի. և այսր նմին իրի եկեալ էր, զի կապեալս զսոսա տարցի առ քահանայապետսն*²² Այլ Սաւղոս առաւել ևս զօրանայր՝ և յաղթահարէր զՅրեայսն, որ բնակեալ էին ՚ի Դամասկոս. և խելամտեցուցանէր թէ սա՛ է Քրիստոսն*²³ Իբրև կատարէին աւուրք բազումք, խորհեցան Յրեայքն սպանանել զնա: ²⁴Յայտնեցա՛ւ Սաւղոսի նենգութիւնն նոցա. քանզի պահէին զդրունսն ՚ի տուէ և ՚ի գիշերի, որպէս զի սպանցեն զնա: ²⁵Եւ առեալ զնա աշակերտացն ՚ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ: ²⁶Իբրև եկն Սաւղոս յերուսաղէմ, ընդէլանէր յարել յաշակերտսն. և ամենեքեան երկնչէին ՚ի նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ*²⁷ Բայց Բառնաբայ առեալ զնա ա՛ծ առ առաքեալսն. և պատմեաց նոցա՝ ո՛րպէս ՚ի ճանապարհին ետես զՏէր, և զի խօսեցա՛ւ ընդ նմա. և զի ՚ի Դամասկոս համարձակեցա՛ւ յանուն Յիսուսի*²⁸ Եւ էր ընդ նոսա մտանել և ելանել յերուսաղէմ, համարձակեալ յանուն Տեառն*²⁹ Խօսեր և վիճէր ընդ Յոյնսն. և նոքա խոկային սպանանել զնա: ³⁰Եւ իմացեալ եղբարց՝ իջուցին զնա ՚ի Կեսարիա, և առաքեցին զնա ՚ի Տարսոն: ³¹Բայց եկեղեցին ընդ ամենայն Յրեաստան՝ և ՚ի Սամարիայ և ՚ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ և երթեալ զհետ երկիրի Տեառն. և մխիթարութեամբ Յոգույն Սրբոյ բազմանայր*³² ԺԴ բէ. ³²Եւ եղև ՚ի շրջելն Պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա և առ սուրբսն՝ որ բնակեալ էին ՚ի Լիւդիա*³³ Եւ եգիտ անդ ա՛յր մի, որում անուն էր

* *Ոմանք.* Պատասխանի ետ նմա Ա՛... վասն առնս այսորիկ:

* *Ոմանք.* Է նա ինձ:

* *Ոմանք.* Քանզի և ես իսկ ցուցից նմա... չարչարել նմա:

* *Ոմանք.* Ձծեռս, ասէ... յորում գայիր:

* *Օրինակ մի յաւելու.* *Եւ նոյն ժամայն ՚ի վեր հայեցաւ. և վաղվաղակի անկաւ:

Յօրինակին. Իբրև կեւեղանք:

* *Ոմանք.* Աւուրս ինչ ընդ աշա՛:

* *Ոմանք.* Քարոզեաց զՔրիստոս:

* *Օրինակ մի.* Չարմանային ամենեքին, որ լսէին: *Ոմանք.* Որ աւար հար՛... եկեալ է, զի:

* *Օրինակ մի.* Եւ խելամուտ առնէր թէ:

* *Ոմանք.* Ընտելանէր յա՛... եթէ իցէ աշակերտ՛:

* *Ոմանք.* Առեալ ա՛ծ զնա:

* *Օրինակ մի.* Ի՛ մտանել և յելանել:

* *Ոմանք.* Շինել և երթալ:

* *Ոմանք.* Ի՛ Լիւդիա. *կամ՝* ՚ի Լիւդա:

Ենեայ, ութնեան դներ ՚ի մահիճս անդամալոյծ*։ ³⁴Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեայ՝ բժշկէ՛ գրեզ Տէր Յիսուս Քրիստոս, արի՛ և քեզէ՛ն թօթափեա՛ զանկողինս քո։ Եւ վաղվաղակի յարեալ*։ ³⁵Եւ տեսի՛ն զնա ամենեքեան որ բնակեալ էին ՚ի Լիդիայ, և ՚ի Սարովնայ, որք և դարձան իսկ ՚ի Տէր*։ ³⁶Եւ ՚ի Յոպպէ էր կի՛ն ոմն աշակերտեալ՝ անուն Տաբիթայ, որ անուանեալ կոչի Այծեմնիկ. սա էր լի՛ գործովք բարեօք և ողորմութեամբք զոր առնէր*։ ³⁷Եւ եղև յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանէ՛լ. լուացի՛ն զնա՝ և եղին ՚ի դստիկոնի՛ անդ. ³⁸և մե՛րձ էր Լիւդիայ ՚ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթ Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա, աղաչել՝ զի մի՛ դանդաղեսցի գալ առ նոսա*։ ³⁹Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա. զոր իբրև եկն՝ հանի՛ն ՚ի վերնատունն, և կացի՛ն շուրջ զնովաւ այրիքն ամենայն. լայի՛ն և ցուցանէին զձործս և զհանդերձս, որչափ առնէր նոցա Այծեմնիկն*։ ⁴⁰Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի, ե՛դ ծունր՝ եկաց յաղօթս. և դարձաւ ՚ի մարմինն՝ և ասէ. Տաբիթայ արի կա՛ց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ նա եբա՛ց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստա՛լ կանգուն*։ ⁴¹Չեռն ետ նմա՝ և յարոյց զնա. կոչեաց զսուրբսն և զայրիսն, առաջի՛ կացոյց զնա կենդանի*։ ⁴²Եւ յայտնի՛ եղև ընդ ամենայն Յոպպէ. և հաւատացին բազումք ՚ի Տէր*։ ⁴³Եւ եղև աւուրս բազունս լինել նմա ՚ի Յոպպէ՝ առ ումեմն Սիմովնի Խաղախորդի։

10

Գլուխ Ժ

ԺԵ գա. ¹Այր մի էր ՚ի Կեսարիայ՝ անուն Կոռնէլիոս. հարիւրապետ, ՚ի գնդէ որ կոչէր Իտալիացի*։ ²բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ իւրով. առնէր ողորմութիւնս բազումս ՚ի ժողովրդեանն. և յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ*։ ³Ետես ՚ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն, զիրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա՝ և ասէր ցնա. Կոռնէլիէ*։ ⁴Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ. և ասէ. Չի՞ է Տէր։ Եւ ասէ ցնա. Աղօթք քո՛ և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ*։ ⁵Եւ արդ յղեա՛ արս ՚ի Յոպպէ և կոչեա՛ զՍիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս*։ ⁶Նա մտեալ է առ Սիմոնի

* *Ոմանք.* Ենեա, ութամեան։

* *Օրինակ մի ՚ի լուս՝.* ՚ի վերայ՝ թօթափեա՛. նշանակէ՛ տարածեա՛։

* *Ոմանք.* Ի Լիւդիա, և ՚ի Սարովնա։

* *Ի լուս՝.* Որ թարգմանեալ կոչի. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝.*

* *Ոմանք.* Լիդիա. *կամ՝* Լիդիա... թէ Պետրոս... երկու... զի մի՛ դան՝։

* *Ոմանք.* Եկն առ նոսա։ *Ոսկան.* Որ իբրև եկն։

* *Ոմանք.* Ի մարմինն, ասէ։

* *Ի լուս՝.* Չորբսն և զայրիս. *համաձայն բազմաց ՚ի բնաբ՝.* *Ուր օրինակ մի.* Չկոչեցեալ զորբսն։ *Իսկ Ոսկան.* Եւ կոչեաց զորբսն։ *Ոմանք.* Չեռն եղ նմա։

* *Ոմանք.* Եղև յամենայն Յոպպէ։

* *Ոմանք.* Ի Կեսարիա՝ անուն Կոռնէլիոս... ՚ի գնդէն որ կոչի Իտալացի։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Բազումս ժողովրդեանն։

* *Օրինակ մի.* Եւ ետես... զի հրեշտակ Աստուծոյ մտանէր... և ասէ ցնա. Կոռնէլիէ։

* *Ոմանք.* Հայեցեալ ՚ի նա, զարհուրեցաւ, ասէ... ելին յիշատակ առա՛։

* *Ոմանք.* ՉՍիմովն որ կոչի։

ումենն խաղախորդի, որոյ է՛ տունն մերձ ՚ի ծով՝: ⁷Եւ իբրև գնաց հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ՚ի ծառայիցն, և զինուոր մի բարեպաշտօն ՚ի սպասաւորացն իւրոց*, ⁸և պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ՚ի Յոպպէ: ⁹Եւ ՚ի վաղիւ անդր ՚ի ճանապարհ անկանել նոցա՝ և մօտ ՚ի քաղաքն լինել, ել Պետրոս ՚ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն*։ ¹⁰Քաղցեալ, և կամէր ճաշակել: Եւ ՚ի պատրաստելն նոցա՝ եղև ՚ի վերայ նորա զարմացումն: ¹¹Եւ տեսանէ զերկինս բացեալ. և զչորեցունց տըտնոց կախեալ անօթ ինչ իբրև կտաւոյ՝ մեծի իջեալ նստեալ ՚ի վերայ երկրի*։ ¹²Յորում էր ամենայն չորքոտանիք, և սողունք երկրի, և թռչունք երկնից*։ ¹³Եւ եղև ձայն առ նա յերկնից. Արի Պետրոս՝ զեն և կեր*։ ¹⁴Եւ Պետրոս ասէ. Քաւ լիցի Տէր, զի ո՛չ երբէք կերայ խառնակ ինչ և անսուրբ: ¹⁵Չայն եղև առ նա կրկին անգամ. Ջոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր*։ ¹⁶Այս եղև երկիցս, և վերացաւ անօթն յերկինս*։ ¹⁷Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես. ահա՛ արքն առաքեալք ՚ի Կոռնելեայ՝ հարցին զապարանիցն Սիմոնի, կացին առ դրանն*, ¹⁸կոչեցին և հարցանէին, եթէ Սիմոն՝ որ կոչի Պետրոս՝ աստ մտեալ իցէ*։ ¹⁹Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ասէր վասն տեսլեանն, ասէ Յոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ*։ ²⁰Այլ արի՛ էջ՝ և երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ե՛ս առաքեցի զնոսա*։ ²¹Եւ իբրև էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ահաւասիկ ե՛ս եմ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն որոյ եկիք: ²²Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրապետ՝ այր արդարև երկիւղա՛ծ յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Յրէից. հրաման առեալ ՚ի հրեշտակէ՝ սրբոյ՝ կոչել զքեզ ՚ի տուն իւր՝ և լսել բանս ՚ի քէն*։ ²³Կոչեաց զնոսա ՚ի ներքս՝ և առ իւր ազոյց: Եւ ՚ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս զնա՛ց ընդ նոսա. և ոմանք յեղբարց անտի որ ՚ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա*։ ²⁴Եւ ՚ի վաղիւ անդր՝ մտին ՚ի Կեսարիա. և Կոռնելիոս մնայր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր՝ և զկարևոր բարեկամսն*։ զբ. ²⁵Եւ եղև ՚ի մտանելն Պետրոսի, ընդ առաջ եղև նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտսն նորա երկիր պագանէր*։ ²⁶Եւ Պետրոս կանգնեաց զնա՝ և ասէ. Յօտն կաց՝ և ե՛ս ինքն մարդ եմ: ²⁷Եւ խօսելով ընդ նմա եմուտ ՚ի

* *Ոմանք.* Տունն մերձ է:

* *Ոմանք.* Ի ծառայից իւրոց և զինուոր մի:

* *Ոմանք.* Ի ճանապարհ անկեալ նոցա:

* *Ոմանք.* Եւ տեսանէր զեր... տոնոց կապեալ անօթ ինչ իբրև զկտաւոյ. *կամ* զկտաւի մեծի:

* *Ոսկան.* Յորում էին ամենայն:

* *Ի բազումս պակասի.* Առ նա յերկնից: *Ոսկան.* Արի՛ Պետրե. զէն:

* *Բազումք.* Կրկին անգամ առ նա:

* *Այլք թէպէտ գրեն՝* եղև երիցս, *բայց ոմանք ՚ի նոցանէ զատարար գրեալ* եր իցս, *թերևս ակնարկեն զվ ՚ի միջոցին յաւելուլ՝ և առնել* երկիցս, *համաձայն մերումս օրինակի:*

* *Ոմանք.* Ընդ միտս իւր Պետրոս եթէ... և ահա արքն... ՚ի Կոռնելիէ հար՛:

* *Ոսկան.* Կոչեցին զոմն, և հար՛:

* *Ոմանք.* Եւ մինչ Պետրոս:

* *Ոմանք.* Ձի ես իսկ առաքե՛:

* *Ոմանք.* Արդար և եր՛... հրաման առ ՚ի հրեշտակէն սրբոյ:

* *Օրինակ մի.* Կոչեաց զնա ՚ի ներքս... եկին ընդ նոսա:

* *Ոմանք.* Կոչեաց զազգատոհմս իւր... բարեկամս:

* *Ոմանք.* Ընդ առաջ եղև նորա... և անկեալ առ ոտսն երկիրպագանէր նմա:

ներքս. և գտանէր անդ ժողովեալ՝ զբազունս*։ ²⁸Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ ո՞րպէս անմարթ է առն Յրէի հպել՝ կամ մերձենալ առ այլազգի. և ինձ Աստուած եցոյց՝ մի՛ զոք խառնակ կամ անսուրբ ասել ՚ի մարդկանէ*։ ²⁹Վասն այսորիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի՛ կոչեցեալ. բայց արդ՝ հարցանեմ. Յի՞նչ պէտս կոչեցէք զիս*։ ³⁰Եւ Կոռնելիոս ասէ. Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցա՛յս ժամ կայի յաղօթս յինն ժամն ՚ի տան իմուն, և ահա՛ այր մի եկն եկաց առաջի իմ ՚ի հանդերձս սպիտակս, և ասէ*։ ³¹Կոռնելիէ, լսելի՛ եղեն աղօթք քո. և ողորմութիւնք քո յիշատակեցան առաջի Աստուծոյ*։ ³²Եւ արդ՝ յղեա՛ արս ՚ի Յոպպէ, և կոչեա՛ զՍիմոն՝ որ կոչեցեալն է Պետրոս. սա՛ մտեալ է ՚ի տան Սիմոնի որումն խաղախորդի մերձ ՚ի ծով. որ եկեսցէ և խօսեսցի՛ ընդ քեզ*։ ³³Եւ ես իսկևի՛սկ յղեցի՛ առ քեզ. դու բարուք արարեր զի եկիր. արդ՝ ամենքեան մէք առաջի Աստուծոյ կամք, լսել՛ զամենայն որ հրամայեալ է քեզ ՚ի Տեառնէ*։ ³⁴Եբա՛ց Պետրոս զբերան իւր, և ասէ. ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ո՛չ գոյ ակնառութիւն առաջի Աստուծոյ*։ ³⁵Այլ առ ամենայն ազգս որ երկնչին ՚ի նմանէ՝ և գործեն զարդարութիւն, ընդունելի՛ է նմա*։ ³⁶Ձբանն առաքեաց որդւոցն Իսրայէլի՛ աւետարանել զխաղաղութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա՛ է ամենայնի Տէր։ ³⁷Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամենայն Յրէաստան սկսեալ ՚ի Գալիլէէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս. ³⁸զՅիսուս որ ՚ի Նազարեթ, զոր օ՛ծն Աստուած Յոգւով Սրբով և զօրութեամբ. որ շրջեցաւ բարի՛ առնել՝ և բժշկել՝ զամենայն ըմբռնեալսն ՚ի Սատանայէ. զի Աստուած էր ընդ նմա*։ ³⁹Եւ մէք վկայեմք ամենայնի զոր արար յերկրին Յրէաստանի՛ և յերուսաղէմ. զոր և սպանի՛ն կախեալ զփայտէ*։ ⁴⁰Ձնա Աստուած յարո՛յց յերրորդ աւուր. և ետ նմա յայտնի՛ լինել*։ ⁴¹Ո՛չ ամենայն ժողովրդեանն, այլ մե՛զ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ. որք և կերպք և արբա՛ք ընդ նմա՛ յետ յարութեան նորա ՚ի մեռելոց*։ ⁴²Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն՝ և վկայութիւն դնել թէ նա՛ է սահմանեալն յԱստուծոյ, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ ⁴³Նմա ամենայն մարգարէքն վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ՚ի նա*։ ⁴⁴Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեալ Յոգին Սուրբ ՚ի վերայ ամենեցուն՝ որ լսին զբանն*։ ⁴⁵Ձարմացան՝ որք ՚ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին

* *Ոմանք.* Ընդ նոսա եմուտ... և գտանէ անդ... բազունս:

* *Ոսկան.* Առ այլազգիս:

* *Ոմանք.* Վասն այնորիկ և ա՛:

* *Օրինակ մի.* Յաղօթս զինն ժամուն... առաջի իմ ՚ի կերպարանս լուսոյ, և ասէ:

* *Այլք.* Յիշեցան առաջի Աստուծոյ:

* *Յայլս պակասի.* Յղեա՛ արս ՚ի Յոպպէ: *Ոմանք.* ՁՍիմոն զկոչեցեալն Պետրոս, նա մտեալ է ՚ի տուն ուրեմն Սիմովնի. *կամ՝* Սիմոնի ունեմն խա՛... և խօսեսցի բանս ընդ քեզ:

* *Ոսկան.* Վաղվաղակի ուրեմն առաքեցի առ քեզ. և դու բարուք... առաջի քո կամք:

Ոմանք. Ձի եկիրդ... զամենայն զոր հրա՛:

* *Ոմանք.* Ակնառութիւն առ ՚ի յԱստուծոյ:

* *Բազունք.* Այլ յամենայն ազգս: *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Եւ գործէ զարդարութիւն:

* *Ոմանք.* Յոգւով և զօրութեամբ:

* *Ոմանք.* Վկայ եմք. *կամ՝* եմք վկայ:

* *Ոմանք.* Յարոյց յաւուր երրորդի:

* *Ոմանք.* Ընտրելոց յԱստուծոյ:

* *Ոմանք.* Անուամբն նորա:

* *Ոմանք.* Պետրոս խօսէր զբանսս զայս:

ընդ Պետրոսի. զի և ՚ի հեթանոսս պարզեք Յոզուայն Սրբոյ զեղուին: ⁴⁶Քանզի լսէին ՚ի նոցանէ խօսել լեզուս, և մեծացուցանել զԱստուած*: ⁴⁷Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ. Սիթէ զջո՞ւրն որ արգելու կարէ առ ՚ի չմկրտելոյ զսոսա, որք և զՅոզին Սուրբ ընկալան որպէս և մեք*: ⁴⁸Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ*:

11

Գլուխ ԺԱ

ԺԶ զգ. ¹Լուան առաքելքն և եղբարքն որք էին ՚ի կողմանս Յրեաստանի, զի և ՚ի հեթանոսս ընկալան զբանն Աստուծոյ*: ²Բայց յորժամ ել Պետրոս յերուսաղէմ, խղճէին ՚ի նմանէ որ ՚ի թլփատութենէ անտի հաւատացեալքն*. ³և ասէին, եթէ եմուտ առ արս անթլփատս՝ և եկեր ընդ նոսա*: ⁴Եւ սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ՝ և ասէ. ⁵Ես էի ՚ի քաղաքին Յոպպէ յաղօթս, և տեսի զարմացման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի, զչորեցունց տոնոց կախեալ յերկնից՝ և եհան մինչև առ իս*: ⁶Յոր պշուցեալ հայէի. և տեսի զչորքոտանիս երկրի, և զգազանս, և զսողունս, և զթռչունս երկնից: ⁷Եւ լուայ բարբառ որ ասէր ցիս. Արի՛ Պետրոս՝ զեն և կեր: ⁸Եւ ասեմ. Քա՛ւ լիցի Տէր, զի խառնակ ինչ և անսուրբ ո՛չ երբէք եմուտ ՚ի բերան իմ: ⁹Պատասխանի ետ ինձ երկիցս անգամ բարբառն յերկնից. Ջոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր*: ¹⁰Այս եղև երկիցս, և վերացաւ դարձեալ ամենայն անօթն յերկինս*: ¹¹Եւ ահա անդէն երեք արք եկին կացին առ ապարանիցն՝ ուր եսն էի, առաքելք ՚ի Կեսարեայ առ իս*: ¹²Եւ ասէ ցիս Յոզին՝ երթա՛լ ընդ նոսա, և մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս, և մտաք ՚ի տուն ա՛ռնն այնորիկ*: ¹³Եւ պատմեաց մեզ՝ որպէս ետես զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր և ասէր ցնա. Առաքեա՛ ՚ի Յոպպէ, և կոչեա՛ զՍիմոն զկոչեցեալն Պետրոս. ¹⁴որ խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեցցես դու և ամենայն տուն քո*: ¹⁵Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն Յոզին Սուրբ ՚ի վերայ նոցա. որպէս ՚ի վերայ մեր իսկզբանն*: ¹⁶Յիշեցի՛ զբանն Տեառն զոր ասէրն. Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր. բայց դուք

* Ոմանք. խօսել ՚ի լեզուս:

* Ի բազումս պակասի. Պետրոս և ասէ: Ոմանք. Ջջուր որ ար՞... առ ՚ի չմկրտել զնոսա:

* Ոմանք. Յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի:

* Ոմանք. Եւ եղբարք որ էին:

* Ոմանք. Ի թլփատութենէ հաւատացեալքն էին:

* Ոսկան. Եթէ մտեր առ արս... և կերեր ընդ նոսա:

* Ոմանք. Ի քաղաքին ՚ի Յոպպէ... և տեսանէի ՚ի զարմացման տեսիլ. իջեալ անօթ... և հասեալ մինչև առ իս:

* Ոսկան. Պատասխանի ետ բարբառն երկիցս անգամ յերկնից:

* Ոմանք. Այս եղև երկիցս: Ոմանք. Եւ վերացաւ անօթն յերկինս: Եւ ոմանք. Եւ վերացաւ դարձեալ ամենայն յերկինս:

* Ոմանք. Եւ ահա անդրէն... ուր էին, առաքելք ՚ի Կեսարիա առ իս: Յօրինակին պակասէր. Արք եկին կացին: Եւս աստէն և զկնի ուրեք ուրեք գրեալ էր՝ Կեսարեայ:

* Ոմանք. Ի տունն առն այ՞:

* Ոմանք. Որով կեցցես:

* Ոմանք. Որպէս և ՚ի վերայ մեր իս՞:

մկրտիցիք 'ի Յոզիմ Սուրբ*։ ¹⁷Իսկ եթէ զհասարակաց պարզևն ետ Աստուած նոցա՝ որպէս և մեզ՝ 'ի հաւատալն 'ի Տէր Յիսուս Քրիստոս. ես զի՞նչ կարող էի արգելուլ զԱստուած*։ ¹⁸Եւ լուեալ զայս՝ լռեցին, և փառաւոր առնէին զԱստուած՝ և ասէին. Ուրեմն և 'ի հեթանոսս ետ Աստուած զապաշխարութիւն կենաց։ ¹⁹Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն որ եղև 'ի վերայ Ստեփանոսի՝ հասին մինչև 'ի Փիւնիկէ՝, և 'ի Կիւպրոս, և յԱնտիոքիայ. ոչ ումեք խօսէին զբանն՝ բայց միայն Յրէից*։ ²⁰Եւ էին ոմանք 'ի նոցանէ արք Կիւպրացիք և Կիւրենացիք. որք մտեալ յԱնտիոք՝ խօսէին ընդ Յոյնսն, աւետարանեալ Տէր զՅիսուս*։ ²¹Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա, և բազմութիւն հաւատացելոց դարձաւ 'ի Տէր*։ ²²Լու եղև բանս այս յականջս եկեղեցւոյն՝ որ էր յերուսաղէմ, վասն նոցա. և առաքեցին զԲառնաբաս մինչև յԱնտիոք*։ ²³Որ իբրև եկն ետես զշնորհսն Աստուծոյ՝ ուրախ եղև, և մխիթարէր զամենեսեան՝ յօժարութեամբ սրտի կալ նոցա 'ի Տէր*։ ²⁴Ձի էր այր զուարթամիտ՝ և լի՝ Յոզուվ Սրբով և հաւատովք. և յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն*։ ²⁵Եւ ել 'ի Տարսոն խնդրել զՍաւղոս, և գտեալ զնա ա՛ծ յԱնտիոք։ ²⁶Եւ եղև նոցա զամն ողջոյն ժողովել յեկեղեցին, և ուսուցանել ժողովուրդ բազում, և անուանել նախ յԱնտիոք զաշակերտեալսն՝ քրիստոնեայս*։

Ժէ գր. ²⁷Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յերուսաղէմէ մարգարէք յԱնտիոք։ ²⁸Յարուցեալ մի ոմն 'ի նոցանէ անուն Ագաբոս, նշանակեաց Յոզուվն սո՛վ մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև առ Կղաւղեաւ*։ ²⁹Բայց յաշակերտաց անտի որպէս զիարդ կարօ՛ղ ոք էր, իւրաքանչիւրոք 'ի նոցանէ որոշեցին առաքել 'ի պէտս եղբարցն, որ բնակեալ էին 'ի Յրեաստանի. ³⁰զոր և արարին իսկ առաքեալք առ երիցունսն 'ի ձեռն Բառնաբայ և Սաւղոսի*։

12

Գլուխ ԺԲ

ԺԸ գե. ¹Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արև Յերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն*։ ²Եւ սպան զՅակովբոս զեղբայր Յովհաննու սրով։ ³Ետես եթէ հաճոյ է Յրէիցն, յաւել ևս ունել զՊետրոս. և էին աւուրք բաղարջակերաց*։

* *Ոմանք.* Տեառն որ ասերն. *կամ*՝ զոր ասաց... մկրտիցիք։

* *Ոմանք.* Իսկ արդ եթէ զհա՛... ետ Աստուած և նոցա։

* *Առ Ոսկանայ պակասի.* 'Ի նեղութենէն որ եղև 'ի վերայ ստե՛ն։ *Ոմանք.* Որ եղեն... հասին 'ի Փիւնիկէ և 'ի Կւպրոս և յԱնտիոք։

* *Առ Ոսկանայ պակասի.* Ոմանք 'ի նոցանէ արք Կիւպրացիք և Կիւրենացիք որք։ *Ոմանք.* Աւետարանել զՏէր Յիսուս։

* *Ոմանք.* Եւ ձեռն Տեառն էր ընդ։

* *Ոսկան.* Լուր եղև բանս։ *Ոմանք.* Որ յերուսաղէմ։

* *Ոմանք.* Եկն և ետես... զամենեսին յօժարութեամբ սրտի կեալ նոցա։

* *Ոմանք.* Ժողովուրդ բազում 'ի Տէր։

* *Ոսկան.* Ձաշակերտսն քրիստոնեայ։

* *Առ Ոսկանայ պակասի.* 'Ի նոցանէ *անուն* Ագաբոս։ *Օրիճակ մի.* Ընդ ամենայն աշխարհն։ *Ոմանք.* Որ եղև իսկ առ։

* *Յօրիճակին.* Առաքեալքն առ երիցունսն։ *Ուր օրիճակ մի.* Առաքել առ երի՛։

* *Ոմանք.* Ընդ ժամանակս ընդ այ՛։

* *Ոմանք.* Ետես թէ հաճոյ է... աւուրքն բաղար՛։

⁴Չոր իբրև կալաւ՝ ե՛ր ՚ի բանտի, և մատնեաց չորի՛ց չորրորդաց զհնուորաց պահե՛լ զնա. և կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն՝: ⁵Եւ Պետրոս ՚ի պահեստի՛ էր ՚ի բանտին. և աղօթք ստէ՛պ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած՝: ⁶Իբրև կամեցաւ զնա ածել Յերովդէս. ՚ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ՚ի քո՛ւն ՚ի մէջ երկուց զհնուորաց՝ կապեալ կրկի՛ն շղթայիւք. և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն՝: ⁷Եւ ահա՛ հրեշտակ Տեառն եկն եկաց՝ ՚ի վերայ, և լո՛յս ծագեաց ՚ի տանն՝ և խթեաց զկողսն Պետրոսի, յարո՛յց զնա՝ և ասէ. Արի՛ վաղվաղակի: Եւ անկան շղթայքն ՚ի ձեռաց նորա՝: ⁸Եւ ասէ ցնա հրեշտակն. Ա՛ծ զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո: Եւ արա՛ր այնպէս. և ասէ ցնա. Ա՛րկ զձորձս քո, և եկ զկնի իմ՝: ⁹Եւ ելեալ երթայր զհետ, և ո՛չ գիտէր՝ եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղևն ՚ի հրեշտակէն. զի համարէր երա՛զ տեսանել՝: ¹⁰Եւ իբրև անցին նոքա ըստ մի պահ և ըստ երկուս, եկին մինչև ՚ի դուռնն երկաթի՝ որ հանէր ՚ի քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա. և մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղվաղակի ՚ի բաց եկաց ՚ի նմանէ հրեշտակն՝: ¹¹Եւ Պետրոս իբրև ՚ի միտս եղև, ասէ. Արդ՝ գիտեմ ճշմարիտ եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր, և փրկեաց զիս ՚ի ձեռաց Յերովդի, և յամենայն ակնկալութենէ՛ ժողովրդեանն Յրէից՝: ¹²Եւ լեալ ՚ի միտս՝ եկն ՚ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին: ¹³Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Յռովդէ՝: ¹⁴Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի, ՚ի խնդալոյն ո՛չ եբաց զդուռն. ՚ի ներքս ընթացեալ պատմեաց, եթէ Պետրոս առ դրանն կայ՝: ¹⁵Նոքա ասեն ցնա. Մոլի՛ս: Եւ նա ևս պնդէր՝ թէ այնպէս է. և նոքա ասէին. Յրեշտակ նորա իցէ՝: ¹⁶Եւ Պետրոս ստէ՛պ բախէր. իբրև բացին, տեսին զնա՝ և զարմացան՝: ¹⁷Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել. և պատմեաց որպէս և Տէր եհան զնա ՚ի բանտէն. և ասէ. Պատմեցէք Յակոբայ և եղբարց զայս: Եւ ելեալ զնաց յայլ տեղի՝: ¹⁸Եւ իբրև եղև այգ, էր խռովութիւն մեծ՝ ՚ի մէջ զհնուորացն, թէ զի՞ արդեւք Պետրոսն եղև՝: ¹⁹Իսկ Յերովդէս իբրև խնդրեաց զնա՝ և ո՛չ եգիտ, հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց սպանանել. և իջեալ ՚ի Յրէաստանէ՛ ՚ի Կեսարիայ, և անդ լինէր՝: ²⁰Եւ էր Յերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդովնացիս. և նոքա առհասարակ եկին առ նա. և ՚ի բանի արարեալ զԲղաստո՛ս սենեկապետ

* *Օրինակ մի.* Եւ կամեաց յետ զատ՝:
 * *Օրինակ մի.* Յեկեղեցին վասն նորա:
 * *Ոմանք.* Ածել զնա Յերովդէս:
 * *Յօրինակին պակասէր.* Յրեշտակ Տեառի *եկն* եկաց: *Ոմանք.* Եւ խթեաց զկողսն Պետրոսի, զարթոյց զնա:
 * *Ոմանք.* Եւ ասէ հրեշտակն ցնա... ՚ի յոտս քո... և եկ զհետ իմ: *Յօրինակին պակասէր.* Չհողաթափս *յոտս* քո:
 * *Ոմանք.* Թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղև:
 * *Ոմանք.* Եւ ըստ երկու:
 * *Ոսկան.* Գիտեմ ճշմարտիւ թէ:
 * *Ոմանք.* Եւ ՚ի բաղխել զդուրս դրանն, մա՛... ունկն դնէր, որում:
 * *Ոմանք.* Ձձայն Պետ՝... զդուռնն... թէ Պետրոս. առ դրան կայ:
 * *Ոմանք.* Թէ այսպէս է. և նոքա ասեն. Յրեշ՛:
 * *Ոմանք.* Եւ իբրև բացին:
 * *Ոմանք.* Ձեռամբն ցու՛... որպէս Տէր եհան զնա... և ել զնաց յայլ:
 * *Ոմանք.* Եւ իբրև այգ եղև: *Յայլս պակասի.* Թէ զի՛ արդեւք:
 * *Օրինակ մի.* Իջեալ Պետրոս ՚ի Յրէաստանէ՛ ՚ի Գալիլեա, և անդ:

արքայի, խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին նոցա
 յարքունուստ*։ ²¹Յաւուր միում յերևելոջ՝ Յերովդէս զգեցեալ էր զհանդերձ
 թագաւորութեան՝ և նստէր յատենի, և խօսէր ընդ նոսա հրապարակաւ*։ ²²Եւ
 ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, և ո՛չ մարդոյ։ ²³Եւ անդէն եհար
 զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ո՛չ ետ փառս Աստուծոյ. և եղեալ
 որդնալից՝ սատակեցաւ։ ²⁴Եւ բանն Աստուծոյ աճէր և բազմանայր։ զգ.
²⁵Բառնաբաս և Սաւղոս դարձան յերուսաղէմէ՝ իբրև կատարեցին զպաշտօնն.
 առեալ էր ընդ իւրեանս և զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս*։

13

Գլուխ ԺԳ

ԺԹ ¹Եին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն, մարգարէք և վարդապետք.
 Բառնաբաս՝ և Շմաւովն կոչեցեալն Նւզէր, և Ղուկիոս Կիւրենացի, և Մանայեն
 դայեկորդի՝ Յերովդի չորրորդապետի, և Սաւղոս*։ ²Մինչդեռ ՚ի պաշտաման
 Տեառն կային և պահէին. ասէ Յոզիմ Սուրբ. Որոշեցէ՞ք ինձ զԲառնաբաս և
 զՍաւղոս ՚ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա*։ ³Յայնժամ պահեալ՝ և աղօթս
 արարեալ, եղին ձեռն ՚ի վերայ նոցա՝ և արձակեցին*։ ⁴Եւ նոքա առաքեալք ՚ի
 Յոզւոյն Սրբոյ՝ իջին ՚ի Սելևկիայ, և անտի մաւեցին ՚ի Կիւպրոս*։ ⁵Եւ հասեալ ՚ի
 Սաղամինայ՝ պատմէին զբանն Աստուծոյ ՚ի ժողովուրդս Յրէիցն. ունէին և
 զՅովհաննէս պաշտօնեայ։ ⁶Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև ՚ի Պափոս,
 գտին անդ այր զոմն մո՛գ, սո՛ւտ մարգարէ՝ Յրեայ, որում անուն էր Բարեյեսուս*.
⁷որ էր ընդ փոխանակի բղեշխին Սերգեայ Պաւղոսի առն իմաստնոյ. նորա
 աղաչեալ զԲառնաբաս և զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ*։ ⁸Ընդդէմ
 եկաց նորա Ելիմաս մոգ, քանզի այսպէս թարգմանի անուն նորա. որ խնդրէր
 շրջել զփոխանակ բղեշխին ՚ի հաւատոց*։ ⁹Իսկ Սաւղոս, որ և Պաւղոսն՝ լցեալ
 Յոզւով Սրբով, հայեցաւ ՚ի նա, ¹⁰և ասէ. Ո՛վ լի ամենայն նենգութեամբ և
 խորամանգութեամբ՝ որդի՛ Սատանայի, և թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ
 լռես ՚ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս*։ ¹¹Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն ՚ի

* Ոմանք. Սենեկապետն ար՝... երկրի նոցա:

* Օրինակ մի. Յաւուր միոյ երևելոջ: Ուր այլ օրինակ մի ՚ի լուս՝. նշանակէ. ՚ի ժամանելում: Ոմանք. Չգեցեալ էր զգեստ:

* Ոմանք. Ընդ իւրեանս զՅովհաննէս՝ որ կոչեցաւն Մար՝:

* Ոմանք. Եւ էին ոմանք: Ոմանք. Նիւզէր. կամ՝ Նիզէր... դայեկորդի:

* Ոմանք. ՚ի պաշտամանն Տեառն... կոչեցեալ էր իմ:

* Ոմանք. եղին զձեռն:

* Օրինակ մի. Եւ նոքա արձակեալք ՚ի Յոզ՝... ՚ի Կիւպրոս:

* Ոմանք. Մինչև ՚ի Պամփոս... այր ոմն մոգ... Բարեյեսուս: Ուր օրինակ մի. այր մի զոմն մոգ... Բարեյուսու:

* Ի լուս՝. ՚ի վերայ՝ Փոխանակի բղեշխին. նշանակի՝ անթիպատին, որ է Յունական ձայն մերումս թարգմանութեան, փոխանակի բղեշխին: Օրինակ մի. Ընդ փոխանակ բղեշխին Սերգեայ Պաւղոսի:

* Ոմանք. Ընդդէմ եկաց նոցա. և ոմանք. եկաց նմա... այսպէս թարգմանեն զանուն նորա: Ուր Ոսկան. Այնպէս թարգմանի: Յոր օրինակ մի յաւելու. Անուն նորա Անթիպատրոս: Ի բազումս պակասի. Որ խնդրէր:

* Ոմանք. Թշնամի ամենայն:

վերայ քո, և եղիցես կոյր, չտեսանել՝ զարև մինչև ՚ի ժամանակ մի: Եւ անդէն անկաւ ՚ի վերայ նորա մէ՛զ և խաւար, և շրջէր խնդրէր առաջնորդս՝: ¹²Յայնժամ տեսեալ փոխանակի բղէշխին զիրսն որ եղեն, հաւատաց, զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն՝: ¹³Եւ ամբարձեալ ՚ի Պափե Պաւղոսեանց՝ եկին ՚ի Պերգէ Պամփիլեայ: Յովհաննէս մեկնեալ ՚ի նոցանէ դարձաւ յերուսաղէմ՝: ¹⁴Եւ նոքա գնացեալ ՚ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ. և մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան՝: ¹⁵Եւ յետ ընթեռնոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին առ նոսա ժողովրդապետքն՝ և ասեն. Ա՛րք եղբարք՝ եթէ իցեն ՚ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովորդդ՝ խօսեցարուք՝:

Ի՛ գէ. ¹⁶Յո՛ւն եկաց Պաւղոս՝ շարժեաց զձեռն իւր, և ասէ. Ա՛րք Իսրայէլացիք՝ և ոյք երկնչիք յԱստուծոյ, լուարուք՝: ¹⁷Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր. և զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութեան յերկրին Եգիպտացոց. և ՚ի բազուկ բարձր եհան զնոսա անտի՝: ¹⁸Եւ իբրև քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի. ¹⁹և քակեալ ա՛զգս եւթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա՝ ²⁰իբրև անս չորեքհարելր և յիսուն: Եւ յետ այսորիկ ետ նոցա դատաւորս մինչև ՚ի Սամուէլ մարգարէ: ²¹Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր, և ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի՛ Կիսեայ, այր յազգէ Բենիամինի, անս քառասուն՝: ²²Եւ իբրև փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր. որում և ասաց վկայութեամբ. Գո՛ի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ արասցէ՛ զամենայն զկամս իմ՝: ²³Ի սորա՛ զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զՓրկիչն Յիսուս. ²⁴ըստ յառաջագոյն քարոզութեանն Յովհաննու առաջի երեսաց մտի՛ նորա, մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի՝: ²⁵Եւ իբրև լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. Չո՞ որ կարծէք զինէն թէ իցեն. չե՛մ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չե՛մ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել՝: ²⁶Ա՛րք եղբարք՝ որդիք Աբրահամեան տոհմին, և որ ՚ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ. ձե՛զ բանս այս փրկութեան առաքեցաւ՝: ²⁷Բայց որ բնակեալ են յերուսաղէմ, և իշխանք նոցա՝ անձանօթ եղեն ՚ի նմանէ. և ըստ բարբառոց մարգարէիցն, որ զամենայն շաբաթսն ընթեռնուին՝ դատեալ կատարեցին՝. ²⁸և ո՛չ մի ինչ պատճառ մահու գտեալ՝ խնդրեցին ՚ի Պիղատոսէ

* *Ոսկան.* Եւ դու եղիցիս կոյր... և շրջեալ խնդրէր: *Ոմանք.* խնդրել առաջն՝:

* *Յօրինակին.* Փոխանակի բղէշխին:

* *Յօրինակին միայար գրին բառքս՝ ըստ այսմ օրինակի՝* ՚ի Պափեպաւղոսեանց. *ըստ որում ունին և ոմանք յայլ օրինակաց: Չոր ևս ոմանք գրեն* ՚ի Պամփե. *կամ* ՚ի Պանփե Պաւղոսեանց. *և օրինակ մի* ՚ի Պափեայ... Պամփիլեանց:

* *Ոմանք.* Յաւուր շաբաթուց:

* *Ոմանք.* Ընդեռնելոյ զօրէնս... առ ժողովուրդն խօսեցա՛:

* *Բազուկք.* Ձձեռն, և ասէ:

* *Ոմանք.* Ի պանդխտութենէ երկրին:

* *Ոմանք.* Չորդի Կիսսայ. այր:

* *Ոմանք.* Եւ ասացաւ վկայութեամբ: *Ոմանք.* Չորդի Յեսսեայ այլ ըստ սրտի իմոյ...

զամենայն կամս իմ:

* *Ոմանք.* Մտին նորա մկրտութեանն ա՛:

* *Ոմանք.* Ոտից նորա լուծանել:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Փրկութիւն առաքէ՛:

* *Ոմանք.* Անձանօթք եղեն ՚ի սմանէ... դատել կատարեցին: *Ի լուս՝* Ըստ բարբառոյ. *հանաձայն բազմաց ՚ի բնաբ՝: Ոսկան.* Չամենայն շաբաթսն ընթերցեալ լինէին,

սպանանել զնա*։ ²⁹Եւ իբրև կատարեցին զամենայն որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ՚ի փայտէն՝ եղին ՚ի գերեզմանի։ ³⁰Այլ Աստուած յարոյց զնա ՚ի մեռելոց. որ երևեցաւ աւուրբբ բազմօք այնոցիկ, ³¹որ ելեալ էին ընդ նմա ՚ի Գալիլէէ յերուսաղէմ. որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն*։ ³²Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումնն որ առ հարսն եղեալ էր*։ ³³Ձի գնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս. որպէս և ՚ի Սաղմոսին գրեալ է՝ յերկրորդում. Որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ*։ ³⁴Եւ զի յարոյց զնա ՚ի մեռելոց, և ո՛չ ևս դառնալոց է յապականութիւն. այսպէս ասէ, թէ տա՛ց քեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս*։ ³⁵Քանզի և ՚ի միւսումն ասէ. Ո՛չ տացես Սրբոյ քում տեսանել զապականութիւն*։ ³⁶Այլ Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց, և ՚ի կամս Աստուծոյ ննջեաց՝ և յաւելաւ առ հարս իւր, և ետես զապականութիւն։ ³⁷Բայց զոր Աստուած յարոյց, ո՛չ ետես զապականութիւն*։ ³⁸Յայտնի՛ լիցի ձեզ արք եղբարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. և յամենայնէ յորմէ ո՛չ կարացէք օրինօքն Մովսիսի արդարանալ, ³⁹սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ*։ ⁴⁰Ձգոյ՛շ կացէք, զուցէ՛ եկեսցէ՛ ՚ի վերայ ձեր որ ասացեալն է ՚ի մարգարէս*։ ⁴¹Տեսէ՛ք արհամարհոտք՝ և զարմացարուք, և եղծարուք. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր. գործ՝ որում ո՛չ հաւատայցէք՝ եթէ ոք պատմեսցէ ձեզ*։ ⁴²Եւ իբրև ելին անտի, աղաչէին ՚ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բան*։ ⁴³Եւ իբրև արձակեցաւ ժողովուրդն, զհետ երթային բազումք ՚ի Յրէից անտի, և ՚ի պաշտօնէիցն եկամտից զՊաւղոսի և զԲառնաբայ, որք խօսէին ընդ նոսա, և հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ ՚ի շնորհսն Աստուծոյ*։ դա. ⁴⁴Եւ ՚ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ։ ⁴⁵Իբրև տեսին Յրեայքն զամբոխն, լցան նախանձու. և ընդդէմ դարձեալ ասացելոցն ՚ի Պաւղոսէ, հայիոյէին*։ ⁴⁶Համարձակեալ Պաւղոսի և Բառնաբայ՝ ասէին. Առ ձե՛զ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ. և քանզի դուք մերժէք զնա, և ո՛չ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենից, ահաւասիկ դառնանք ՚ի հեթանոսս*։ ⁴⁷Ձի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. եղի զքեզ ՚ի լոյս հեթանոսաց, լինել քեզ ՚ի փրկութիւն մինչև ՚ի ծագս երկրի։ ⁴⁸Ձայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, և փառաւոր առնէին զբանն Տեառն. և հաւատացին որք էին կարգեալ ՚ի կեանսն

դատեալ կա՞:

*Ոմանք. Պատճառս մահու գտ՞:

*Ի լուս՞. Որ եկեալ էին ընդ նմա. համաձայն ոմանց ՚ի բնաբ՞: Օրինակ մի. Որք և աստ իսկ վկայ են:

*Ոմանք. Ձխոստումն որ առ:

*Օրինակ մի. Որդի նոցա յարու՞: Ոմանք. Եւ ես այսօր:

*Ոմանք. Որպէս ասէ, եթէ տաց, ձեզ զսր՞... զհաւատարիմսն:

*Յօրինակին պակասէր. Քում տեսանել զապա՞:

*Ոմանք. Աստուածն յարոյց. կամ՞ Աստուած յարոյցն:

*Ոմանք. Ի սա ամենայն որ հաւա՞:

*Ոմանք. Ի վերայ ձեր ասացեալն ՚ի մարգարէէն:

*Ոմանք. Թէ ոք պատ՞:

*Ոմանք. Շաբաթուն խօսել նոցա զնոյն բանս:

*Ոմանք. Իբրև արձա՞... Պաւղոսի և Բառնաբայ:

*Ոմանք. Եւ ընդդէմ դարձան:

*Ոմանք. Ասեն. Առ ձեզ նախ պարտ է խօ՞... դուք մերժեցէք զնա, և ո՛չ արժանի հա՞:

Բազումք. Կենացն յաւիտենականաց:

յաւիտենականս: ⁴⁹Եւ շրջէր բանն ընդ ամենայն գաւառն*: ⁵⁰Բայց Յրեայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս, և զլխաւորս քաղաքին՝ և յարուցեալ հալածանս ՚ի վերայ Պաւղոսի և Բառնաբայ, հանին զնոսա ՚ի սահմանացն իւրեանց*: ⁵¹Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից ՚ի վերայ նոցա, եկին յիկոնիոն*: ⁵²Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ՝ և Յոգուով Սրբով*:

14

Գլուխ ԺԴ

ԻԱ ¹Եւ եղև յիկոնիոն ՚ի միասին մտանել նոցա ՚ի ժողովուրդ Յրէիցն, և խօսել նոյնպէս. մինչև հաւանել Յրէից և Յունաց բազմաց յոյժ*: ²Բայց անհաւան Յրեայքն յարուցին և չարացուցին զանձինս հեթանոսացն ՚ի վերայ եղբարց: ³Բազում ժամանակս շրջէին, համարձակեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհաց իւրոց. և տալ նշանս և արուեստս լինելոյ ՚ի ձեռս նոցա*: ⁴Եւ եղեն հերձուածք բազմութեան քաղաքին. ոմանք ՚ի Յրեայսն, և ոմանք յառաքեալսն*: ⁵Իբրև եղև դիմել հեթանոսացն և Յրէից իշխանօքն իւրեանց՝ ՚ի թշնամանել և ՚ի քարկոծել զնոսա*, ⁶ազդ եղեալ նոցա՝ փախեան ՚ի քաղաքսն Լիկոնացւոց, ՚ի Լիւստրայ և ՚ի Դերբէ՝ և շուրջ զգաւառաւն, և անդ աւետարանէին*: դբ. ⁷Եւ այր ոմն Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կա՛ղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբէք չէր գնացեալ*:

ԻԲ ⁸Սա՛ լուա՛ն զխօսսն Պաւղոսի, որոյ հայեցեալ ՚ի նա և տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկութեան*, ⁹ասէ՛ մեծածայն. Քե՛զ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Յո՛տն կաց ՚ի վերայ ոտից քոց ուղիղ: Եւ վազվազէր՝ և գնայր*: ¹⁰Եւ ժողովրդոցն տեսեալ զոր արարն Պաւղոս, բարձին զձայնս իւրեանց Լիկոնարէն, և ասեն. Աստուածք նմանեալ մարդկան իջին առ մեզ*: ¹¹Եւ կոչէին զԲառնաբաս Դիոն, և զՊաւղոս Յերմէս, քանզի նա՛ էր առաջնորդ բանին*: ¹²Իսկ քուրմն Դիայ որ կայր առաջի՛ քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ՚ի դուռն հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել*։ ¹³Եւ լուեալ առաքելոցն Բառնաբայ և Պաւղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտա՛քս վազեցին յամբոխէն. աղաղակէին՝ ¹⁴և ասէին. Արբ՝ զի՞նչ գործէք զայդ.

* *Ոմանք յաւելուն.* Բանն *Աստուծոյ* ընդ ամենայն:

* *Ոմանք.* Եւ զգլխաւոր... և հանին զնոսա ՚ի:

* *Ոսկան.* Չփոշին յոտից ՚ի վերայ:

* *Ոմանք.* Եւ աշակերտեալքն լնուին:

* *Այլք.* Մինչև հաւատալ Յրէից: *Օրհնակ մի.* Յրէից և հեթանոսաց բազմաց:

* *Ոմանք.* Շնորհացն իւրոց. *կամ* իւրեանց:

* *Բազումք.* Եւ էին հերձուածք ՚ի բազմութեան քաղաքին, ոմանք էին ՚ի Յրեայսն:

* *Ոմանք.* Դիմեալ հեթանոսաց... իւրեանց թշնամանել և քարկոծել զնոսա:

* *Ոմանք.* Ազդ եղև նոցա... ՚ի քաղաքս Լիկոնացւոց և Լիւստրա և ՚ի Դերբէ:

* *Ոմանք.* Եւ այր մի Լիւստ՛:

* *Ոմանք.* Ձխօսն Պաւղոսի. որ հայեցեալ... եթէ:

* *Ոմանք.* Յո՛տն կա ՚ի վերայ:

* *Ոմանք.* Լիկոնարէն... աստուածքն նմանեալք:

* *Ոմանք.* Եւ կոչեցին զբառ՛: *Ոմանք ՚ի լուս՛.* ՚ի վերայ՝ Դիոս. *նշանակեն՝* Որմիսդ. *և ՚ի վերայ՝* Յերմէս՝ Տիր դից դպիր:

* *Ոմանք.* Ի դուռնն հանդերձ բազմութեամբն:

մեք ձեզ նմանօք կարեօք մարդիկ եմք, անտարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի. որ արար գերկինս և գերկիր, և զծով՝ և զամենայն որ ՚ի նոսա՝: ¹⁵Որ յանցեալ ազգսն թո՛յլ ետ ամենայն հեթանոսաց գնա՛լ ՚ի ճանապարհս իւրեանց: ¹⁶Եւ սակայն ո՛չ եթէ առանց վկայութեան զինքն եթող, բարերարութեամբն տա՛լ յերկնից ձեզ անձրևս, և ժամանակս պտղաբերս, լնո՛ւլ կերակրովք և ուրախութեամբ զսիրտս ձեր՝: ¹⁷Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ՚ի չզոհելոյ նոցա. այլ գնա՛լ յիրաքանչիւր տեղիս՝: դգ. ¹⁸Եւ ՚ի շրջելն նոցա և յուսուցանել, եկի՛ն հասի՛ն յԱնտիոքէ և յԻկոնիէ Զրեայք: Եւ ՚ի վիճել նոցա համարձակութեամբ, պատրեցին զժողովուրդսն ՚ի բա՛ց կալ ՚ի նոցանէ, և ասէին թէ ոչինչ ճշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն: Եւ քարկոծեալ զՊաւղոս քարշեցին արտա՛քս քան զքաղաքն, և համարէին զնա մեռեալ՝: ¹⁹Եւ ՚ի պատել զնովաւ աշակերտացն, յարեա՛ւ եմուտ ՚ի քաղաքն. և ՚ի վաղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ ՚ի Դերբէ՝: ²⁰Աւետարանեալ ՚ի քաղաքին յայնմիկ՝ և աշակերտեալ զբազումս, և դարձան ՚ի Լիւստրայ՝ և յԻկոնիոն՝ և յԱնտիոքիայ՝, ²¹հաստատեալ զանձինս աշակերտելոցն՝ և մխիթարեալ. կալ հաստատուն՝ ՚ի հաւատսն. և թէ բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ՝: ²²Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս. աղօթս արարեալ հանդերձ պահովք, յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հաւատացեալ էին՝: ²³Եւ շրջեալ ընդ Պիսիդիայ՝ եկի՛ն ՚ի Պամփիլիւեայ՝: ²⁴Եւ խօսեցեալ ՚ի Պերզէ զբանն Տեառն, իջի՛ն յԱտտալիայ՝: ²⁵Եւ անտի նաւարկեալ՝ գնացին յԱնտիոք ուստի էին. յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ ՚ի գործն զոր կատարեցին՝: ²⁶Եկեալ ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա. և զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոց՝. ²⁷շրջեցան ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն՝:

15

Գլուխ ԺԵ

* *Ոմանք.* Ձեզ նմանեալք կար՝... ՚ի յԱստուած կեն՝... և գերկիր, զծով և զամենայն որ է ՚ի նոսա:

* *Ոմանք.* Եւ ՚ի ժամանակս պտ՝:

* *Ոմանք.* Ձժողովուրդն չզոհելոյ նոցա: *Ուր Ոսկան.* ՚Ի զոհելոյ նոցա:

* *Ոմանք.* Եւ յԻկոնիոնէ Զրէ՝... պատրեցին զժողովուրդն... ճշմարտութեամբ ասեն... քարշէին ար՝: *Ոսկան.* Ձժողովն ՚ի բաց կալ: *Ոմանք.* Եւ ասեն թէ ոչինչ... այլ զամենայն: *Յօրինակին.* Թէ ոչ ճշմարտութիւն:

* *Ոմանք.* Ե՛լ Պաւղոս Բառնաբաւ հան՝:

* *Ոմանք.* Աւետարանել ՚ի քա՝... և աշակերտել զբազումս, դարձան:

* *Բազումք.* Զաստատել զանձինս... և մխիթարել: *Ոմանք.* Նեղութեամբք... յարքայութիւնն Աստուծոյ: *Ի լուս՝.* Պարտ է ձեզ մտա՝: *Յօրինակին.* Յարքայութեան Աստուծոյ:

* *Ոմանք.* Ըստ եկեղեցւոյ երիցունս... հանդերձ պահօք... յոր հաստատեալն էին:

* *Ոմանք.* Ընդ Պիսիդիայ... ՚ի Պամփիլիայ:

* *Ոմանք.* ՅԱտալիա:

* *Ոմանք.* Ուստի եկին. յանձն ա՛... ՚ի գործն յոր կատարեցին:

* *Ոմանք.* Եկեալ և ժողովեալ:

* *Այլք.* Շրջէին ժամանակս ոչ սա՛: *Ոմանք.* Ոչ սակաւ ընդ ա՛:

ԻԳ դդ. ¹Եւ ոմանք իջեալ ՚ի Յրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս. Եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մովսիսի՝ ո՛չ կարէք ապրել: ²Եւ լինել ո՛չ սակաւ հակառակութեան և խնդրոյ՝ Պաւղոսի և Բառնաբայ ընդ նոսա, եղին ելանել Պաւղոսի և Բառնաբայ և ոմանց ՚ի նոցանէ՝ առ առաքեալսն և երիցունս յերուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ՝: ³Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջեցան ընդ Փիւնիկէ, և ընդ Սամարիայ, պատմէին զդարձն հեթանոսաց, և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց՝: ⁴Եւ հասեալք յերուսաղէմ, ընկալեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանց, պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած՝: ⁵Յարեան ոմանք ՚ի հերձուածոն՝ փարիսեցւոց հաւատացեալք, և ասէին՝ թէ պարտ է թլփատել զդոսա, և պատուիրել պահել զօրէնսն Մովսիսի՝: ⁶Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ՝: ⁷Եւ յետ բազում խնդիր լինելոյ, յո՛տն եկաց Պետրոս՝ և ասէ ցնոսա. Արք եղբարք՝ դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն առաջնոց ՚ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի, և հաւատալ՝: ⁸Եւ սրտագէտն Աստուած վկայեաց նոցա, տալով նոցա զՅոզիմ Սուրբ՝ որպէս և մեզ. ⁹և ոչինչ ընտրութիւն արար ՚ի մէջ նոցա և մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա՝: ¹⁰Արդ՝ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լո՛ւծ ՚ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ո՛չ հարքն մեր՝ և ո՛չ մէք կարացաք բառնալ: ¹¹Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի՝ հաւատամք ապրել, զորօրինակ և նոքա՝: ¹²Լռեաց ամենայն ժողովուրդն, և լսէին Բառնաբայ և Պաւղոսի պատմելոյն՝ որչափ արար Աստուած նշանս և արուեստս ՚ի հեթանոսս ՚ի ձեռս նոցա՝: դե. ¹³Եւ յետ լռելոյն նոցա, պատասխանի ետ Յակովբոս՝ և ասէ. Արք եղբարք՝ լուարովք ինձ: ¹⁴Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց արար առնուլ ժողովուրդ ՚ի հեթանոսաց՝ անուան իւրոյ: ¹⁵Եւ այնմ միաբանին բանք մարգարէիցն. որպէս և գրեալ է՝. ¹⁶Յետ այսորիկ դարձայց՝ և շինեցից զյարկսն Դաւթի, զանկեալն և զկործանեալն նորա վերստին շինեցից, և կանգնեցից զնա՝. ¹⁷որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր. և ամենայն հեթանոսք յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր. որ առնէ զայս ամենայն՝. ¹⁸յայտնի՛ է ՚ի յաւիտեանցն՝: ¹⁹Վասն որոյ և ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ ոյք ՚ի

* Ոմանք. Եւ ՚ի լինել ոչ սակաւ: *Յօրինակին պակասէր.* Եւ Բառնաբայ ընդ նոսա. *եղին ելանել Պաւղոսի և Բառնաբայ* և ոմանց ՚ի նոցանէ: *Ուր օրինակ մի.* Եւ ոմանք ՚ի նոցանէ առաքեալ առ առաքեալսն:

* Ոմանք. Ընդ Փիւնիկս: *[Ոմանք.]* Սամարիայ, որ պատմէին զդարձն: *Ուր Ոսկան.* Պատմեցին զդարձն:

* Ոմանք. Եւ հասեալ... պատմեցին որչափ ինչ արար Աստուած ՚ի ձեռն նոցա:

* Ոմանք. ՚ի հերձուածոցն փա՛. հաւատացեալ. և ասեն:

* *Յօրինակին.* ժողովեցան առ առաքեալքն:

* Ոմանք. Բանի աւետարանի՝ և հա՛:

* Ոմանք. Հաւատովքն սրբեալ:

* Ոմանք. Տեառն մերոյ Յիսուսի:

* Ոմանք. ՚ի ձեռն նոցա:

* *Օրինակ մի.* Միաբանին զիրք մարգար՝:

* Ոմանք. Չյարկն Դաւթի... և զկործանեալսն:

* Ոմանք. Յորոյ վերայ կո՛:

* *Աստանօր գրչագիրք մեր այլ և այլ կերպիւ ունին զբանս. բազումք ըստ մերումս. բայց առանց բայի՝ դնելով այսպէս.* Չայս ամենայն յայտնի ՚ի յաւիտենից. *կամ՝* Չայս

հեթանոսացն դառնան առ Աստուած*։ ²⁰Այլ տալ թուղթս առ նոսա, խորշել՝ ՚ի կերակրոց կռոց, և ՚ի պոռնկութենէ, և ՚ի մեռելոտոյ՝ և յարենէ*։ ²¹Ձի Մովսէս յազգացն առաջնոց ըստ քաղաքաց, զքարոզիչսն իւր ունի ՚ի ժողովսն ըստ ամենայն շաբաթոց ընթերցեալ*։ ²²Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն և ամենայն եկեղեցւոյն, արս ընտրեալս ՚ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պաւղոսի և ընդ Բառնաբայ. զՅուդա՝ զկոչեցեալն Բարսաբա՝ և զՇիղա, արս զԼիսաւորս*։ ²³Գրեալ առ եղբարս ՚ի ձեռն նոցա զայս ինչ. Առաքեալք և երիցունք և եղբարք, յԱնտիոք և ՚ի Սիւրիայ և ՚ի Կիլիկիայ, եղբարցդ որ ՚ի հեթանոսաց էք, ողջոյն*։ ²⁴Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրև ՚ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել և պահել զօրէնսն, որոց ոչ հրամայեցաք*։ ²⁵Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ, ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ և ընդ Պաւղոսի*, ²⁶արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ ²⁷Արդ՝ առաքեցաք զՅուդա՝ և զՇիղա. և նոցա ՚ի բանից զնոյն պատմել։ ²⁸Ձի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց միայն ՚ի կարևորացս յայսոցիկ*։ ²⁹Ի բաց կալ ՚ի զոհելոյ կռոց, և յարենէ, և ՚ի հեղձուցելոյ, և ՚ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործիցէք. ողջ լերուք։ ³⁰Եւ նոքա արձակեալք՝ իջին յԱնտիոք, և ժողովեալ զժողովուրդսն՝ ետուն զթուղթն*։ ³¹Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն ՚ի վերայ մխիթարութեանն։ ³²Յուդա և Շիղա՝ զի և նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս՝ և հաստատեցին։ ³³Եւ եղեալ անդ ժամանակս, արձակեցան յեղբարց խաղաղութեամբ առ առաքեալսն*։ ³⁴Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն։ ³⁵Բայց Պաւղոս և Բառնաբաս շրջէին յԱնտիոք, ուսուցանել և աւետարանել և այլովք բազմօք՝ զբանն Աստուծոյ*։ ³⁶Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս ցԲառնաբաս. Դարձցուք և շրջեսցուք զեղբարքք, ըստ

ամենայն յայտնի յաւիտեանս։ *Իսկ երկու ՚ի նորագոյն օրինակաց՝ հպագոյն այժմեան բնագրի Յունաց՝ յաւելուածով դնեն ըստ այսմ եղանակի.* Չայս ամենայն. յայտնի է ՚ի յաւիտեանցն. և Տեառն է ամենայն գործք իւր։ *Ըստ որում ևս Ոսկան ՚ի Լատինականէն առեալ ունի.* ՚ի յաւիտեանցն է Տեառն գործ իւր։

* *Ոմանք.* Չայնոսիկ որ ՚ի։

* *Ոմանք.* Տալ թուղթ առ։

* *Ոմանք.* Յազգացն յառաջնոց... զքարոզիչս իւր։

* *Ոմանք.* Եւ երիցանցն, ամենայն եկե՛... արս ընտրեալ առաքեալ ՚ի նոցանէ։ *Այլք.*

Ամենայն եկեղեցեալն։

* *Ոմանք.* Գրել առ եղբարսն ՚ի... և ՚ի Սիւրա և ՚ի Կիլիկիա... ՚ի հեթանոսացդ էք։ *Ոսկան.* Եւ երիցունք եղբարք։

* *Ոմանք.* Եթէ ոմանք։

* *Ոսկան.* Ընդ սիրելիսս մեր։ *Ոմանք.* Պաւղոսի. (26) որք մատ... վասն անուան Տեառն։

* *Ոմանք.* Ի կարևորացս այսոցիկ... (29) յորոց պահել զանձինս, բարւոք գործէք։

Օրինակ մի. Ի կա՛. յայսցանէ։

* *Օրինակ մի յաւելու.* Արձակեալք *յեկեղեցւոյն* իջին։ *Ոմանք.* Չժողովուրդն ետուն։

* *Ոմանք.* Ժամանակս ինչ, արձակեցան խաղաղութեամբ յեղբարց։

* *Ոսկան աստէն ՚ի Լատինականէն առեալ յաւելու.* Մնալ անդէն. *Իսկ Յուդասս միայն գնաց յերուսաղէմ։ Որ ոչ ուրեք ՚ի գրչագիրս մեր գտանի, որպէս և ոչ ՚ի Յունական սկզբնագրին։*

* *Ոմանք.* Եւ Բառնաբաս իջին յԱնտիոք... զբանն Տեառն։

ամենայն քաղաքաց յորս քարոզեցա՞ք զբանն Տեառն, թէ ո՞րպէս ունիցին*:
³⁷Բառնաբաս կամէր առնուլ և գՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս*.³⁸Բայց Պաւղոս աղաչէր՝ թէ զմեկնեալն ՚ի նոցանէ ՚ի Պամփիլիայ և զչեկեալն ընդ նոսա ՚ի գործն, մի՛ առնուլ ընդ ինքեանս*:³⁹Եւ եղև գժտութիւն ՚ի մէջ նոցա՝ մինչև մեկնել ՚ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել ՚ի Կիւպրոս*:
 Ի Դ⁴⁰Եւ Պաւղոսի ընտրեալ զՇիղայ՝ ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անտի*.⁴¹և շրջէր ՚ի կողմանս Ասորւոց և Կիւլիկեցւոց, և հաստատէր զեկեղեցին*:

Գլուխ ԺԶ

¹Եւ եկն եհաս ՚ի Դերբէ՛ և ՚ի Լիւստրա. և ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ Զրէի հաւատացելոյ՝ և հօր հեթանոսի*.²որ վկայեալ էր ՚ի Լիւստրացւոց և յիկոնացւոց եղբարց:³Ձսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել. և առեալ թլփատեաց զնա վասն Զրէիցն՝ որ էին ՚ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա թէ հեթանոս էր*:⁴Իբրև անցանէին ընդ քաղաքսն, աւանդեցին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն՝ որք յերուսաղէմ*:⁵Եւ եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս, և յաւելուին ՚ի թիւն հանապազօր ՚ի նոյն*:⁶էւ շրջեցան ընդ Փռիւզայ և ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք ՚ի Զոզւոյն Սրբոյ խօսել զբանն յԱսիայ*:⁷Բայց եկեալ առ Մլսաւ՝ թևակոխէին երթալ ՚ի Բիւթանիա, և ո՛չ համարձակեաց նոցա Զոզին Քրիստոսի*:⁸Եւ անցեալ ընդ Միսիա՝ իջին ՚ի Տրովադայ*:⁹Եւ տեսիլ երևեցաւ ՚ի գիշերին Պաւղոսի. այր ոմն Մակեդոնացի կայր աղաչէր զնա՝ և ասէր. Անցեալ ՚ի Մակեդոնիայ՝ օգնեսցես մեզ*:¹⁰Եւ իբրև զտեսիլն

* Ոսկան. Աւուրց ասէ Պօ՞:
 * Ոմանք. Ձկոչեցեալն զՄարկոս:
 * Ոմանք. Ի Պամփիլիայ... ՚ի գործ:
 * Ոմանք. Եւ եղև գժտութիւն՝ մինչև մեկնել նոցա ՚ի միմեանց: Ուր օրինակ մի. Եւ եղև դժուարութիւն ՚ի մէջ նոցա, մինչև մեկնել նոցա ՚ի:
 * Օրինակ մի. Եւ Պաւղոսի առեալ զՇիղայ, և յանձն ա՞:
 * Ոմանք. Ձեկեղեցիսն: Ոսկան և աստանօր առեալ ՚ի Լատիմականէն յաւելու. Զաստատէր զեկեղեցիսն, պատուիրելով պահել զպատուիրանս առաքելոցն և երիցանցն: Որ ոչ ՚ի բնագիրն Յունաց և ոչ ՚ի գրչագիրս մեր երևի բնաւ:
 * Ի բազումս պակասի. Եւ եկն եհաս: Յօրինակին պակասէր. Ոմն էր անդ անուն Տի՞:
 * Ոմանք. Ամենեքեան... թէ հեթանոս է:
 * Ոմանք. Աւանդէին նոցա պա՞: Յօրինակին. Ձհրամանն պատուիրեալս: Ոմանք ՚ի լուս՞. ՚ի վերայ Պատուիրեալս յառա՞, նշանակեն ՚իրաւացուցեալս յառա՞:
 * Ի բազումս պակասի. Զանապազօր ՚ի նոյն:
 * Ոմանք. Եւ շրջէին ընդ Փռիզիա և ՚ի կողմանս Գաղա՞... զբանն յԱսիա: Յօրինակին վրիպակաւ գրի՞ Կողմանս Գաղատաց՞:
 * Ոմանք. Առ Միւսեաւ... ՚ի Բեթնիայ: Յօրինակին. Երթալ ՚ի Բեթնիա: Իբր ՚ի չորեքտասան օրինակաց Գործոցս առաքելոց՝ վեցքն դնեն. Զոզին Սուրբ. երեքն՝ Զոզին Յիսուսի. և այլ երեք՝ լոկ. Զոզին. իսկ մին միայն ընդ մերումս. Զոզին Քրիստոսի:
 * Ոմանք. Եւ անցեալ ընդ Միսիաց:
 * Բազումք. Ի գիշերի Պաւղոսի... կայր և աղա՞:

ետես, վաղվադակի՝ խնդրեցաք ելանել՝ ՚ի Մակեդոնիայ. տեղեկացեալ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել՝ նոցա*։ ¹¹Եւ ելեալ ՚ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի Սամոթրակէ. և ՚ի վաղիւ անդր ՚ի Նոր քաղաք*։ ¹²և անտի ՚ի Փիլիպպոս, որ է առաջին վիճակ Մակեդոնացւոց՝ քաղաք Կողովնիայ։ Եւ անդ ՚ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ*։ ¹³յաւուր շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափնն՝ ուր համարէին աղօթս մատուցանել Պաւղոս. և նստեալ խօսեաք ընդ ժողովեալ կանայսն*։ ¹⁴Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ՚ի Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ. զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւղոսի*։ ¹⁵Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր. Եթէ համարիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ՚ի տուն իմ ագերուր։ Եւ բռնադատեաց տարաւ զմեզ*։ ¹⁶Եւ եղև մինչդեռ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ. որ շահս բազումս տայր տերանց իւրոց մոլելովն*։ ¹⁷Նա զհետ եղեալ Պաւղոսի՝ և մեր՝ աղաղակէր և ասէր. Արքս այս ծառայք Աստուծոյ Բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան*։ ¹⁸Եւ զայս առնէր ՚ի բազում աւուրս։ Զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ և ասէ՝ ցայսն. Պատուիրեն քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել ՚ի դմանէ։ Եւ ել այսն ՚ի նմին ժամու*։ ¹⁹Իբրև տեսին տեսարք նորա՝ եթէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս և զՇիղա՝ ձգեցին ՚ի հրապարակն առ իշխանսն*։ ²⁰Եւ ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն. Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Զրեայք են*, ²¹և պատմեն մեզ օրէնս, զոր չէ՝ արժան մեզ ընդունել և ոչ առնել. զի Զռոմայեցիք ենք*։ ²²Եւ կուտեցաւ ամբոխն ՚ի վերայ նոցա։ Եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւրեանց. և հրամայեցին զան հարկանել. ²³և բազում վերս եղեալ ՚ի վերայ նոցա արկին ՚ի բանտ, պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ՝ պահել զնոսա։ ²⁴Որոյ առեալ զայսպիսի պատուէր, արկ զնոսա ՚ի ներքին բանտն, և զոտս նոցա պնդեաց ՚ի կոճեղ*։ ²⁵Եւ ՚ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղայ կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա կալանաւորքն*։ ²⁶Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ, մինչև շարժել հիմանց բանտին, և բացան անդրէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան*։ ²⁷Իբրև զարթեալ

* *Ոմանք.* Տեղեկացեալք եթէ։

* *Ոմանք.* Ի Նոր քաղաքն։

* *Օրհնակ մի.* Ի Փիլիպս. և այլ. ՚ի Փիլիպպուպօլիս։ *Իսկ Ոսկան.* Ի Փիլիպպոս։ *Ի լուս.* ՚ի վերայ՝ Կողովնիայ. *Նշանակի*՝ Կորնթիս։

* *Ոմանք.* Յաւուրն շաբա՞... առ գետափն. ուր համարէր աղօ՞։ *Ի բազումս պակասի.* Մատուցանել Պաւղոս։

* *Ոմանք.* Ծիրանեվաճառ... եբաց զսիրտ։ *Օրհնակ մի.* Անսալ բանիցն Պաւ՞։

* *Ոմանք.* Թէ համարիցիք զիս։ *Ոսկան.* Եւ բռնադատել տարաւ։

* *Բազումք.* Մինչ երթայաք մեք։ *Ոսկան.* Որ ունէր զայս հարցուկ։

* *Ոմանք.* Զհետ ելեալ Պաւ՞։ *Ոսկան.* Արքս այսոքիկ։

* *Բազումք.* Յիսուսի Քրիստոսի, ել ՚ի դմանէ։ Եւ ել ՚ի նմին ժամու։

* *Ոմանք.* Շահին նոցա. *կամ*՝ շահից նոցա, կալեալ զՊաւ՞... ՚ի հրապարակ առ իշ՞։

* *Ոմանք.* Ասէին. Արքս այս։

* *Ոմանք.* Եւ պատուիրեն մեզ օրէնս, զոր ոչ է։ *Ոսկան.* Զի Զռոմայեցի ենք։ (22) Եւ ընթացաւ ժողովուրդն ընդդէմ նոցա. և զօրագլուխքն... հրամայէին զան հարկանել։

* *Ոսկան.* Պնդեաց ՚ի կոճեղս։

* *Ոմանք.* Ի մէջ գիշերին։

* *Ոմանք.* Մինչև ՚ի շարժել... և բացան անդէն... կապանք լու՞։

բանտապետն՝ և ետես բացեալ՝ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր՝ և կամեր երթալ՝ զհիւրովին. կարծեր փախուցեալ զկապեալսն*։ ²⁸Եւ կոչեցեալ ՚ի ձայն մեծ Պաւղոս՝ և ասէ. Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ ենք*։ ²⁹Ինդրեաց լոյս՝ և դիմեաց ՚ի ներքս. և զահի հարեալ՝ անկալ առաջի Պաւղոսի և Շիղայի*։ ³⁰և ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. Տեա՛րք՝ զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց։ ³¹Եւ նոքա ասեն. Հաւատա՛ ՚ի Տէր Յիսուս Քրիստոս, և ապրեսցիս դու՝ և ամենայն տուն քո*։ ³²Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և ամենեցուն որ էին ՚ի տան նորա*։ ³³Եւ առեալ զնոսա ՚ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ՚ի վիրաց անտի. և մկրտեցան ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվադակի*։ ³⁴Եւ ածեալ զնոսա ՚ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան. և ուրախ եղև ամենայն տամբն հաւատացեալ յԱստուած*։ ³⁵Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն, և ասեն. Արձակեա՛ զարսդ զայդոսիկ*։ ³⁶Եւ պատմեաց բանտապետն զբանսն՝ Պաւղոսի, եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ՝ ելէ՛ք և երթայք խաղաղութեամբ*։ ³⁷Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. Գան հարեալ զմեզ հրապարակալ՝ արս անմեղս Հռովմայեցիս արկին ՚ի բանտ, և արդ լռելեալ՝ յն հանեն զմեզ. ո՛չ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ*։ ³⁸Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի՛ հարան իբրև լուան՝ թէ Հռովմայեցիք են. և եկեալ աղաչեցին զնոսա*։ ³⁹Եւ իբրև հանին, աղաչեցին գնալ ՚ի քաղաքն*։ ⁴⁰Եւ ելեալ ՚ի բանտէն՝ մտին ՚ի Լիւդեայ. և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, և զնացին*։

17

Գլուխ ԺԷ

Ի՛ է եա. ¹Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողոնիայ, եկին ՚ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ Հրէիցն*։ ²Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ առ նոսա, և ՚ի շաբաթս երիս խօսեցալ ընդ նոսա ՚ի գրոց։ ³Բանայր և դնէր առաջի, եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել և յառնել ՚ի մեռելոց. և թէ նա՛ է Քրիստոսն Յիսուս՝ զոր եսն պատուիրեմ ձեզ*։ ⁴Եւ ոմանք ՚ի նոցանէ հաւանեցան, և

* *Ոմանք.* Ձորունս բանտին... ձգեաց սուր, և կամեր:

* *Ոմանք.* Եւ կոչեաց Պաւղոս ՚ի ձայն մեծ: *Ուր Ոսկան.* Եւ գոչեաց ՚ի ձայն մեծ:

* *Ոմանք.* Եւ էր զահի հարեալ. ան՝:

* *Ոմանք.* Եւ ապրեսցես դու:

* *Ոմանք.* Որ ՚ի տան նորա:

* *Ոմանք.* Ի նմին ժամու գիշերոյն:

* *Ոմանք.* Եդ առաջի սեղան:

* *Ոմանք.* Ջորագլուխքն զնուիրակսն... Արձակեցէ՛ք զարսդ:

* *Ոմանք.* Ձի արձակեսցիք. արդ՝ ելէ՛ք երթայք:

* *Ոմանք.* Ոչ այդպէս է... ինքեանք հանցեն:

* *Ոսկան.* Ջորագլխոցն նու՛: *Ոմանք.* Եկեալ աղաչեին զնոսա:

* *Ոմանք.* Աղաչեին գնալ ՚ի քաղա՛:

* *Ոմանք.* Մտին ՚ի Լիւդիա. *Կամ՝* առ Լիդիա:

* *Օրինակ մի.* Եւ ՚ի շրջելն ընդ Ամփիպոլիս... ժողովուրդն Հրէից: *Յօրինակին.* Ընդ Ամփիպալիս:

* *Ոմանք.* Թէ պարտ է Քրիստոսի... և եթէ նա է Յիսուս Քրիստոս: *Բազունք.* Ձոր ես պատմեմ ձեզ:

վիճակեցան Պաւղոսի և Շիղայի. բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, և ՚ի կանանց գլխաւորաց ո՛չ սակաւք: ⁵Եւ նախանձեցան Զրեայքն, և առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս, ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն. և կուտեալ առ ապարանսն Յասովնի, խնդրէին զնոսա ածել ՚ի հրապարակ*:

⁶Եւ իբրև ոչ գտին զնոսա, քարշէին զՅասո՛ն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն. բողոք բարձեալ՝ թէ որք զաշխարհս խռովեցուցին՝ սոքա և ա՛յսր հասին*:

⁷Չորս ընկալեալ է Յասովնի. և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն. թագաւոր զոմն ասեն զՅիսուս*:

⁸Եւ խռովեցուցին զժողովսն և զքաղաքապետսն, որ լսէին զայն*:

⁹Եւ առեալ երաշխաւորութիւն առ ՚ի Յասովնայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա*:

¹⁰Բայց եղբարք վաղվաղակի գիշերեայն յուղարկեցին զՊաւղոս և զՇիղայ ՚ի Բերեայ. որք իբրև հասին անդր, ՚ի ժողովուրդն Զրէից գնացին*:

¹¹Զի սոքա էին ազնուագոյնք՝ քան որ ՚ի Թեսաղոնիկն էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ. հանապազ քննէին զԳիոս՝ եթէ իցէ՞ այս ա՛յսպէս*:

¹²Եւ բազումք իսկ ՚ի նոցանէ հաւատացին. և ՚ի Զելլենացւոց կանանց զգաստից՝ և յարանց ո՛չ սակաւք*:

¹³Բայց իբրև գիտացին՝ որ ՚ի Թեսաղոնիկէ Զրեայքն էին, եթէ և ՚ի Բերիայ՝ պատմեցաւ ՚ի Պաւղոսէ բանն Աստուծոյ. եկին և անդր շարժել և խռովեցուցանել զժողովսն*:

¹⁴Յայնժամ զՊաւղոս վաղվաղակի առաքեցին եղբարք գնալ մինչև ՚ի ծովեզր. և մնային Շիղայ և Տիմոթէոս անդէն*:

¹⁵Եւ որք տանէին զՊաւղոս, ածին զնա մինչև յԱթէ՛նս. և առեալ պատուէր առ Շիղայ՝ և Տիմոթէոս, զի վաղվաղակի՝ եկեցցեն առ նա. և գնացին*:

ԻՉ եք. ¹⁶Եւ յԱթէնս ՚ի մնալն նոցա Պաւղոսի, զայրանա՛յր հոգի նորա ՚ի նմա. զի տեսանէր ՚ի կռապաշտութեան՝ զքաղաքն*:

¹⁷Եւ խօսէ՛ր ՚ի ժողովրդեանն ընդ Զրեայսն, և ընդ պաշտօնեայսն, և ՚ի հրապարակսն զամենայն օր՝ որոց և պատահէին*:

¹⁸Ոմանք յեպիկուրեանցն և ՚ի Ստուկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին. Զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել: Իսկ այլք՝ թէ օտարոտի՛ իմն դից թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս և զյարութիւնն աւետարանէր*:

¹⁹Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն, և ասէին. Կարասցո՞ւք իմանալ՝ թէ զի՛նչ է նոր վարդապետութիւնդ՝ որ ՚ի քէն պատմի*:

* *Ոմանք.* խռովեցուցին զքաղաքն. և կուտեալ յապարանսն: *Ուր օրինակ մի.* Առ ապարանիցն... ածել ՚ի հրապարակսն: *Ոսկան.* խնդրեցին զնա ա՛:

* *Ոմանք.* եթէ որք զաշխարհ խռովեցին. նոքա և այսր հասին:

* *Ոմանք.* Չորս ընկալեալ էր Յասովնի:

* *Ոմանք.* Զժողովուրդսն, և զքաղաքապետն որ լսէինն զայս:

* *Ոմանք.* Առ Յասովնայ:

* *Բազումք.* Գիշերայն յու՛... ՚ի Բերիա: *Օրինակ մի.* Որք իբրև գնացին անդ:

* *Ոմանք.* էին ազնուականագոյնք՝ քան որ:

* *Ոմանք.* Եւ բազումք ՚ի նոցանէ: *Այլք.* Եւ ՚ի Յունաց կանանց զգաստից:

* *Ոմանք.* Եւ խռովեցուցանել զժողովուրդսն:

* *Ոմանք.* Վաղվաղակի զՊաւղոս առա՛... և մնացին Շիղայ և Տի՛:

* *Ոմանք.* Տանէինն զՊաւղոս... գնացցեն առ նա, և գնացին: *Ոսկան յաւելու.* Պատուէր ՚ի նմանէ՛ առ Շիղայ:

* *Ոմանք.* Ի մնալ նոցա:

* *Ոմանք.* Ընդ ժողովրդեանն ընդ Զրեայս:

* *Ոմանք.* Եւ ՚ի Ստուկեանց. և սակաւք ընդ *Ոսկանայ.* և ՚ի Ստոյիկեանց: *Ոմանք.* Թուի պատմիչ լինել:

* *Ոմանք.* Եւ առեալ ածին զնոսա յԱրիսպագոսն, և ասեն:

²⁰Օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր. կամիմք գիտել՝ թե՞ զի՞նչ կամիցի այս լինել*։ ²¹Ձի Աթենացիք ամենեքին՝ և եկքն օտարք՝ ո՛չ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ, կամ լսել նորագոյնս*։ ²²Եկաց Պաւղոս 'ի մէջ Արիսպագին՝ և ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ*։ ²³Քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր. գտի՛ բագին մի՝ յորում գրեալ էր. Անծանօթի Աստուծոյ. զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնո՛յն պատմեմ ձեզ*։ ²⁴Աստուած՝ որ արար զաշխարհս և զամենայն որ 'ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ո՛չ 'ի ձեռագործ տաճարս բնակէ*, ²⁵և ո՛չ 'ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա՛ տայ ամենայնի կեանս և շունչ՝ և զամենայն ինչ։ ²⁶Արար՝ 'ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել՝ 'ի վերայ երեսաց ամենայն երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել՝ զԱստուած* ²⁷զի թերևս զննիցեն զնա՝ և գտանիցեն. նա՝ և ո՛չ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ*։ ²⁸Ձի նովա՛ւ կեանք և շարժի՛մք և եմք, որպէս ոմանք 'ի ձերո՛ց ճարտարաց ասացին, թէ նորա և ա՛զգ իսկ եմք*։ ²⁹Եւ արդ՝ որովհետև ազգ եմք Աստուծոյ, ո՛չ պարտիմք համարել ոսկոյ՝ կամ արծաթոյ՝ կամ քարի, որ 'ի ճարտարութենէ՛ և 'ի մտաց մարդկան քանդակեալ իցէ՛ զաստուածականն լինել նմանօղ*։ ³⁰Բայց զժամանակս անգիտութեանն անտես արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել*։ ³¹Քանզի հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ, 'ի ձեռն առնն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա՝ 'ի մեռելոց*։ ³²Իբրև լուան գյարութիւն մեռելոց, ոմանք ծա՛ղր առնէին. կէսքն ասէին. Լուիցուք 'ի քէն վասն այդորիկ մի՛ւսանգամ*։ ³³Եւ ապա Պաւղոս ե՛լ զնա՛ց 'ի միջոյ նոցա*։ ³⁴Եւ ոմանք արք անկեալք 'ի նա հաւատացին. ընդ որս էր և Դիոնեսիոս Արիոսպագացի, և կին մի անուն Դամարիս՝ և այլք ընդ նոսա*։

Գլուխ ԺԸ

* *Ոմանք.* Օտարացուցիչ իմն:

* *Ոմանք.* Ամենեքեան և եկք օտ՛ն:

* *Ոմանք.* 'Ի մէջ Արիոսպագին՝ և ասէ... իբր պաշտօնա՛ն:

* *Ոմանք.* Շրջեալ իմ և տեսեալ... զոր դուքն յանծա՛ն:

* *Ոմանք.* Ձաշխարհ և զամենայն... նա է երկնի և երկրի Տէր:

* *Ոմանք.* Բնակեալ 'ի վերայ ամենայն երեսաց երկ՛... կարգեաց ժամանակս:

* *Օրինակ մի.* Ումեքէ 'ի մէնջ:

* *Ոմանք.* Ձի նովաւ կեանք և... որպէս և ոմանք:

* *Ոսկան.* Ազգք եմք Աստուծոյ: *Ոմանք.* Եւ 'ի մտաց մարդոյ քանդա՛ն:

* *Ոմանք.* Արարեալ է Աստուծոյ:

* *Ոմանք.* 'Ի ձեռն առն, որով:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Ծաղր առնէին զնա:

* *Ոսկան.* Ել և զնաց:

* *Անունս՝* Արիոսպագացի, *համաձայն մերունս գրի և յայլ երկու օրինակս. և օրինակ մի գրէ՝* Արիոսպագացի, *ըստ Յունականին: Իսկ մնացեալ հինք և նորք ունին՝* Արիսպագացի. *կամ՝* Արիսպագացին. *ըստ եղծեալ սովորութեանն մտելոյ՝ 'ի բարբառս մեր 'ի գրչաց անտի՝ 'ի վաղուց հետէ, որպէս կարծի:*

Ի է եզ. ¹Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթենացոց անտի, եկն 'ի Կորինթոս*.² Եզիտ զոմն Յրեայ անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ յԻտալիայ, և Պրիսկիլլայ կին նորա, վասն հրամանին Կղաւղեայ որոշել զամենայն Յրեայս 'ի Յռովմայ. և յարեցաւ 'ի նոսա*.³ Եւ վասն զի համարուեստ էր, եղև առ նոսա՝ և գործէր. քանզի էին խորանակարք արուեստիւք*.⁴ Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբաթուց, և հաւանեցուցանէր զՅրեայս և զհեթանոսս*.⁵ Իբրև իջին 'ի Մակեդոնիայ Շիղայ և Տիմոթէոս, ստիպէր հոգւովն Պաւղոս դնել վկայութիւն Յրէիցն՝ թէ Յիսուս է Քրիստոսն*.⁶ Եւ յընդդէմ դառնալ նոցա՝ և հայիոյել, թօթափեալ զձործս՝ և ասէ ցնոսա. Արիւն ձեր 'ի գլուխս ձեր, քաւեալ են ես. յայսմ հետէ 'ի հեթանոսս երթամ*.⁷ Եւ զնացեալ անտի եմո՛ւտ 'ի տուն ուրումն, որոյ անուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ. որոյ ապարանքն էին մերձ 'ի ժողովետոյն*.⁸ Կրիսպոս ժողովրդապետ հաւատաց 'ի Տէր ամենայն տամբ իւրով. և բազմաց 'ի Կորնթացոցն լուեալ՝ հաւատացին և մկրտեցան*.⁹ Եւ ասէ Տէր 'ի զիշերի տեսլեամբ ցՊաւղոս. Մի՛ երկնչիր, այլ խօսեաց՝ և մի՛ լռեր*. ¹⁰Քանզի ես ընդ քեզ եմ, և ո՛չ ոք ընդդէմ դարձցի քո՝ 'ի չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում 'ի քաղաքիս յայսմիկ*.¹¹ Եւ նստաւ անդ տարի մի, և ամիսս վեց, ուսուցանէր նոցա զբանն Աստուծոյ*։ Եդ.¹² Առ Գաղիովնաւ փոխանակաւ բոքշիսին Աքայեցոց, յարեան միաբան Յրեայքն 'ի վերայ Պաւղոսի, և ածէին զնա յատեան*. ¹³ Եւ ասէին, եթէ արտաքոյ օրինաց պատրէ՛ սա զմարդիկ՝ պաշտել զԱստուած*։ ¹⁴ Եւ իբրև մերձ էր Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղուովն ցՅրեայսն. Եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն չարեաց՝ ո՛վ Յրեայք, 'ի դէպ էր ինձ անսալ ձեզ*։ ¹⁵ Ապա թէ 'ի խնդիրք ինչ են վասն բանի՛ և անուանց և օրինաց ձերոց, տեսէք ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել*։ ¹⁶ Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի*։ ¹⁷ Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին. և ո՛չ ինչ զայնմանէ Գաղուովնի փոյթ լինէր*։ ¹⁸ Բայց Պաւղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս, յեղբարցն հրաժարեալ՝ նաւեր յԱսորիս. և

* Ոմանք. Պաւղոս 'ի յԱթենաց՝։ Երեք այլ ևս հնագոյն օրինակք, գրեն աստեն համաձայն մերումս. 'ի Կորինթոս. ուր բազումք ըստ սովորականին ունին՝ 'ի Կորնթոս։
 * Ոմանք. Եւ եզիտ անդ Յրեայ զոմն... և զՊրիսկիլլա կին նորա... որոշել զՅրեայս 'ի Յռովմէ. կամ՝ զամենայն Յրեայ 'ի։
 * Բազումք. Խորանակարք արուեստիւ։
 * Ոսկան. Ըստ ամենայն շաբաթու։
 * Ոմանք. Եւ թէ Յիսուս է Քրիստոսն։
 * Ոմանք. Եւ ընդդէմ դառնալն նոցա, և 'ի հայիոյել թօթափեաց զձործս իւր... 'ի գլուխս ձեր... այսուհետև 'ի հեթանոսս երթամք։
 * Ոմանք. 'ի տուն որումն. որում անուն... Յոստոս պաշտ՝։
 * Ոմանք. Եւ բազմաց Կորնթացոց լուեալ՝ հաւատային և մկրտէին։ Ոսկան. Հաւատային 'ի Տէր, և։
 * Ոմանք. 'ի զիշերին տեսլեամբ։
 * Ոմանք. Ձի ես ընդ քեզ։
 * Բազումք. Ուսուցանել նոցա զբանն։
 * Բազումք. Եւ ածին զնա յատեան։
 * Ոմանք. Եւ ասեն թէ արտաքոյ։
 * Բազումք. Գաղիովն. Գաղիովնի։
 * Բազումք. Ապա եթէ խնդիրք ինչ են. կամ՝ իցեն վասն։ Ուր օրինակ մի. Ինչ եղեն վասն։
 * Բազումք. Գաղիովն. Գաղիովնի։

ընդ նմա Պրիսկիլլայ և Ակիւղաս, փոքրել զգլուխ ՚ի Կենքրեայ, քանզի ուխտադիր էր*։ ¹⁹Եւ հասեալ յեփեսոս՝ զնոսա եթող անդ, և ինքն մտեալ ՚ի ժողովուրդն խօսէր ընդ Յրեայսն*։ ²⁰Եւ աղաչէին զնա բազում ժամանակս լինել անդ. և ո՛չ առ յանձն*, ²¹այլ հրաժարեաց ՚ի նոցանէն՝ և ասէ. Դարձեալ շրջեցայց Աստուծոյ կամօքն առ ձեզ։ Զամբարձա՛ւ յեփեսեայ*, ²²և իջեալ ՚ի Կեսարիայ՝ ել և ետ ողջոյն եկեղեցւոյն։ Էջ յԱնտիոք։ ²³Եւ եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց աշխարհն և ընդ Փռիւզիայ, հաստատել զամենայն աշակերտեալսն*։ ²⁴Զրեայ ոմն Ապեղէս անուն՝ Աղէքսանդրացի՝ յազգէ, այր ճարտարաբան, եկն եհաս յեփեսոս. զօրաւոր էր գրովք*։ ²⁵Սա՛ էր տեղեկացեալ ճանապարհին Տեառն, և եռայր հոգւով. խօսէր՝ և ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի. գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննոս*։ ²⁶Սա՛ սկսաւ համարձակել ՚ի ժողովրդեանն։ Եւ լուեալ ՚ի նմանէ Ակիւղայ և Պրիսկիլեայ, և առին զնա առ իւրեանս, և ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանապարհն Աստուծոյ*։ ²⁷Իբրև կամեցաւ նա զնալ յԱքայիայ, յօժարեալ եղբարք՝ զրեցին առ աշակերտսն ընդունել զնա։ Որ իբրև եհաս անդր, բազում նպաստ լինէր հաւատացելոցն ՚ի ձեռն շնորհացն*։ ²⁸Քանզի պնդագոյն զՅրեայսն յանդիմանէր հրապարակաւ. ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յիսուս։

19

Գլուխ ԺԹ

ԻԸ ԵՇ. ¹Եւ եղև մինչդեռ Ապաւղոսն ՚ի Կորնթոսն էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝ և իջանել յեփեսոս. և գտանել զոմանս զաշակերտսն*, ²ասէ ցնոսա, եթէ Զոգի Սուրբ ընկալարո՞ւք ՚ի հաւատալն։ Նոքա ասեն ցնա. Այլ և ո՛չ թէ Զոգի Սուրբ գուցէ՝ լուեալ է մեր*։ ³Եւ ասէ. Իսկ յի՞նչ մկրտեցարուք։ Նոքա ասեն. Ի Յովհաննոս մկրտութիւնն։ ⁴Եւ ասէ Պաւղոս. Յովհաննէս քարոզեաց մկրտութիւնս պաշխարութեան ամենայն ժողովրդեանն. և ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝

* *Օրինակ մի.* Աւուրս բազումս առ եղբարս. հրաժա՛ւ։ *Ոմանք.* Եւ ընդ Պրիսկիլայ և Ակիւղա... ՚ի Կենքրայ. քանզի ուխտադիրք էին։

* *Օրինակ մի.* Բայց իբրև եհաս յեփեսոս, զնոսա եթող անդր. և ինքն մտեալ անդրէն առ ժողովուրդն, խօսէր առ Յրէ՛։

* *Բազումք.* Եւ աղաչեցին զնա՝ բազում։

* *Ոմանք.* Զրաժարեալ ՚ի նոցանէ... առ ձեզ. *կամ՝* առ ձեւք. Աստուծոյ կամօք. ամբարձաւ։

* *Ոմանք.* Ժամանակս ինչ։

* *Ոմանք.* Անուն Ապեղէս... և զօրաւոր էր։

* *Ոմանք.* Վասն Յիսուսի Քրիստոսի։

* *Ոմանք.* Սա սկսեալ համար... ՚ի նմանէն Ակիւղայ և Պրիսկիլեայ, առին։ *Օրինակ մի.* Եւ ստուգագոյն պատմեցին նմա։

* *Ոմանք.* Յօժարեալ եղբարց։

* *Անունս՝ աստէն և ստորև. Ա Կորն. Ա 12 և որ զկնի, զրեթէ յամենայն զրչագիրս մեր՝ թերևս եղծեալ իմն սովորութեամբ գրի՝ Ապաւղոս, ըստ որում և մեք եղաք։ Ուր ՚ի Յունականէն ՚ի մեզ փոխագրեալ՝ պարտ էր առնել՝ Ապողոս։ Ոմանք.* Շրջեալ զվերին կողմանցն. *կամ՝* կողմանսն, և իջանէր յեփեսոս... զոմանս զաշակերտեալս։ *Ուր երկու օրինակք միայն՝ ընդ Ոսկանայ.* Եւ իջեալ յեփեսոս, և գտեալ զոմանս զաշակերտս։

* *Ոմանք.* Եթէ գուցէ Զոգի Սուրբ։

ի նա՝ հաւատասցեն. այսինքն է՝ ՚ի Յիսուս Քրիստոս*։ ⁵Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի։ ⁶Եւ ՚ի դնել ՚ի վերայ նոցա Պաւղոսի զծեռն, եկն Յոզի Սուրբ ՚ի վերայ նոցա. խօսէին լեզուս՝ և մարգարեանային*։ ⁷Եւ էին ամենեքեան արք իբրև երկոտասան*։ ⁸Եւ մտեալ ՚ի ժողովուրդն՝ համարծակեր ամիսս երիս. խօսէր և հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ։ ⁹Իբրև ոմանք խստանային՝ և ընդդէմ դառնային բամբասել զճանապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ ՚ի նոցանէ որոշեաց զաշակերտսն. հանապազօր խօսէր ՚ի դիւանին Տիրանեայ որումն*։ ¹⁰Եւ այս եղև զերկեան մի, մինչև ամենայն բնակչացն Ասիացոց լսել զբանն Տեառն, Յրէից և հեթանոսաց*։ ¹¹Եւ զօրութիւնս ո՛չ սակաւս առնէր Աստուած ՚ի ձեռն Պաւղոսի*։ ¹²մինչև ՚ի հիւանդս տանել ՚ի քրտանէ նորա՝ թաշկինակս կամ վարշամակս, և մերժել ՚ի նոցանէ ախտիցն, և այսոց չարաց ելանել*։ ¹³Յանդգնեցան ոմանք ՚ի շրջող Յրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին, անուանել ՚ի վերայ այնոցիկ որք ունէին այսս չարս՝ զանուն Տեառն Յիսուսի, և ասէին. Երդմնեցուցանեն զծեզ ՚ի Յիսուս՝ զոր Պաւղոսն քարոզէ*։ ¹⁴Եին որումն Սկևեայ Յրէի քահանայի եւթն որդի որ զայս առնէին*։ ¹⁵Պատասխանի ետ այսն չար՝ և ասէ ցնոսա. ՁՅիսուս գիտեն և զՊաւղոս ճանաչեն, բայց դուք ո՞վ էք։ ¹⁶Եւ վազեաց այրն յորում էր այսն չար, ըմբռնեալ զերկոսեան յաղթահարեաց զնոսա, մինչև մերկս և վիրաւորս փախչել ՚ի տանէ անտի*։ ¹⁷Եւ այս յայտնի՝ եղև ամենայն Յրէից և հեթանոսաց՝ որ բնակեալ էին յԵփեսոս. և անկաւ երկեղ յամենեսեան ՚ի նոսա. և մեծանայր անուն Տեառն Յիսուսի։ ¹⁸Եւ բազումք ՚ի հաւատացելոցն գային և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց։ ¹⁹Եւ բազումք ՚ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն. և համարեցան զգինս նոցա՝ և գտանէին արծաթոյ բերս հինգ*։ Եզ. ²⁰Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր և հզօրանայր*։ ²¹Եւ իբրև կատարեցաւ այս, եղ Պաւղոս ՚ի մտի շրջել ընդ Մակեդոնիայ և ընդ Աքայիայ՝ և գալ յԵրուսաղէմ. ասէր, եթէ յետ երթալոյն իմ անդր, պարտ է ինձ և զՌոմ տեսանել*։ ²²Առաքեաց ՚ի Մակեդոնիայ երկուս ՚ի պաշտօնէիցն իւրոց, զՏիմոթէոս և զԵրաստոս. և ինքն մնաց ժամանակս ինչ

* *Ոմանք.* Յովհաննէս մկրտեաց. *կամ՝* մկրտեալ մկրտութիւն ապա՞... որ գալոցն էր յետ... այսինքն Յիսուս Քրիստոս:

* *Ոմանք.* Եւ ՚ի դնելն... զծեռնն, *կամ՝* զծեռս, եկն Յոզիս Սուրբ:

* *Ոմանք.* Երկոտասանք:

* *Ոմանք.* Տիրանեայ ուրումն:

* *Ոսկան.* Ձերկամ մի:

* *Ոմանք.* Աստուած առնէր ՚ի ձեռն Պաւլոս:

* *Ոմանք.* Մինչ զի և ՚ի հիւանդս... ՚ի քրտանէն նորա: *Օրինակ մի.* Թարշինակս, և կամ վարշամակս. և մերժեալ ՚ի նո՞:

* *Ոմանք.* Ոմանք և ՚ի շրջող... անուանեալ ՚ի վերայ այնոցիկ, որ ունէինն... երդմնեցուցանենք զծեզ:

* *Ոմանք.* Էին և ուրումն Սկևեայ քա՞: *Բազումք.* Յրէի քահանայապետի, եւթն:

* *Ոմանք.* Յորում էր այս չար, և ըմբռնեալ զերկոսին:

* *Օրինակ մի.* Եւ բազումք ՚ի կախարդասիրացն բե՞. և այլ. ՚ի կախարդ արանցն: *Ոսկան.* ՚ի կախարդացն բե՞... և այրէին. առաջի ամենեցուն, համարեցին զգի՞... արծաթ դահեկանի բիւր հինգ:

* *Բազումք.* Աճէր և զօրանայր:

* *Ոսկան.* Եւ գնալ յԵրուսաղէմ: *Ոմանք.* Եւ ասէր՝ թէ յետ երթալոյն իմոյ:

յԱսիայ*։ ²³Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ո՛չ սակաւ, վասն ճանապարհին*։ ²⁴Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմիս դից. և տայր ճարտարացն լինել ո՛չ սակաւ շահ*։ ²⁵որ ժողովեացն իսկ և զձեռագէտս արուեստին, և ասէ. Արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ*։ ²⁶Եւ տեսանէք՝ և լսէք եթէ ո՛չ միայն զԵփեսացոց, այլ զրեթէ ամենայն իսկ Ասիացոց՝ Պաւղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս, ասել թէ ո՛չ են աստուածք ձեռագործք*։ ²⁷Եւ ո՛չ միայն այս ճգնէ զմեր կողմս՝ գա՛լ ՚ի յանդիմանութիւն, այլ և զմեծին աստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարեալ. նա՛ և քակելոց ևս իցէ մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիայ՝ և տիեզերք պաշտեն*։ ²⁸Եւ զայս իբրև լուան, լի՛ եղեն բարկութեամբ. աղաղակէին և ասէին. Մե՛ծ է Արտեմիս Եփեսացոց։ ²⁹Եւ լցա՛ւ քաղաքն խռովութեամբ. դիմեցին առ հասարակ ՚ի թատրոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիստարքոս Մակեդոնացի՝ զուղղելիցսն Պաւղոսի*։ ³⁰Բայց Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն, ո՛չ թողին զնա աշակերտքն*։ ³¹Ոմանք և յԱսիապետացն՝ որ էին նորա բարեկամք, յղէին առ նա՛ և աղաչէին, մի՛ տալ զանձն ՚ի թատրոնն*։ ³²Այլք այլ իմն աղաղակէին յամբոխին. զի եր ժողովն նոցա խռովեա՛լ. և բազումք ՚ի նոցանէ ո՛չ գիտէին թէ վասն ո՛ր ժողովեալ իցեն*։ ³³Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զԱղէքսանդրոս. և իբրև ածին զնա յառաջ Զրեայքն, Աղէքսանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր պատասխանի՛ առնել ամբոխին*։ ³⁴Իբրև գիտացին թէ այրն Զրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբրև ժամս երկուս աղաղակել, թէ մե՛ծ է Արտեմիս Եփեսացոց*։ ³⁵Լռեցոյց դպրապետն զամբոխն՝ և ասէ. Արք Եփեսացիք, իսկ ո՞վ է ՚ի մարդկանէ՝ որ ո՛չ գիտէ զԵփեսացոց քաղաքս մեհեանագարդ՝ մեծին Արտեմեայ դիցն և Դիոպիտեայ*։ ³⁶և զի այդ՝ այդպէս է անշուշտ, պարտ է ձեզ հանդարտել, և մի՛ ինչ յանդգնութեամբ գործել*։ ³⁷Ածէք զարսդ զայդոսիկ այսր, ո՛չ մեհեանակապուտս՝ և ո՛չ հայիոյիչս աստուածոյն մերոյ*։ ³⁸Ձի եթէ Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք՝ ունիցին ինչ ընդ ունեք

* *Ոսկան.* Ի ժամանակս ինչ յԱսիայ։
 * *Ոսկան յաւելու.* Վասն ճանապարհին *Տեառն:*
 * *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Դեմետրիոս ուրումն ան՝: *Ոմանք.* Արծաթի՝ Արտեմի դիցն... ոչ սակաւ շահս:
 * *Ոմանք.* Որ ժողովեաց իսկ զձե՛... դուք ինքնին գիտէք... է շահ մեր:
 * *Ոմանք.* Եւ լսէք զի ոչ միայն... զամենայն իսկ Ասիացոց՝ Պաւղոսս հա՛... զբազում ժողովս:
 * *Ոմանք.* Ձմեր կողմանս... աստուծոյն... յոչինչ համարել. նա և քակելոց է մեծութիւն նորա. *կամ՝* իցէ զմեծութիւն նորա:
 * *Ոմանք.* Եւ դիմեցին առ հա՛... յափշտակէին զԳայիոս... Մակեդոնացիս, զուղղելիցսն:
Ուր Ոսկան. յափշտակելով:
 * *Ոմանք.* Ոչ թողուին զնա ա՛:
 * *Ոմանք.* Յղեցին առ նա և աղա՛:
 * *Ի բազումս պակասի.* Աղաղակէին *յամբոխին:* *Ուր ոմանք.* Աղաղակէին զնմանէ:
 * *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Եւ յամբոխին բազմութենէ... ածին յառաջ զնա Զրէ՛:
 * *Ոմանք.* Միաբարբառ եղև ամենեցունց. *և այլ ոմանք.* Միաբան բարբառ եղև յամենեցունց, աղաղակել իբրև ժա՛:
 * *Ոսկան.* Արք եղբարք, իսկ ո՞վ է... և Դիոպիտեայ:
 * *Ոմանք.* Ձեզ պարտ է հնազանդել, և մի՛ ինչ յանդգնագոյնս գործել:
 * *Ոմանք.* Աստուածոցն մերոց: *Ուր Ոսկան.* Աստուծոյ մերոյ:

բանս, յատեան երթիցեն, և դատաւորք զոն, և ամբաստան լիցին զմիմեանց*:
³⁹Ապա թէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինաւոր ժողովսն վճարեսցեն*:
⁴⁰Քանզի և մեզ վիշտ վտանկի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք
յանցանաց լինելոյ՝ զորմէ ո՛չ կարասցուք պատասխանի տալ վասն ժողովոյս
այսորիկ: Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժողովսն*:

20

Գլուխ Ի

ԻԹ եէ. ¹Եւ յետ դադարելոյ ամբոխին, կոչեաց Պաւղոս զաշակերտսն և
մխիթարեաց. ողջոյն ետ, և ել գնաց ՚ի Մակեդոնիայ*:
²Եւ շրջեալ ընդ
կողմանսն ընդ այնոսիկ. և մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք, եկն յԵլլադայ:
³Իբրև արար անդ ամիսս երիս, եղև նմա դա՛ւ ՚ի Յրէիցն, մինչդեռ կամէր ելանել
յԱսորիս. խորհուրդ կալաւ դառնա՛լ ընդ Մակեդոնիայ*:
⁴Եւ երթայր ընդ նմա
մինչև յԱսիա՝ Սոսիպատրոս Պուռայ Բերիացի. և ՚ի Թեսաղոնիկեցոց՝
Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս Դերբացի, և Տիմոթէոս, և Ասիացիք՝
Տիւքիկոս և Տրոփիմոս*:
⁵Նոքա յառաջ երթեալ մնային մեզ ՚ի Տրովադայ*:
⁶Եւ
մէք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ՚ի Փիլիպպեայ, և եկաք առ նոսա
՚ի Տրովադայ մինչև յաւուրս հինգ. անդ դադարեցաք աւուրս եւթն*:
⁷Եւ յաւուրն
շաբաթուց մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա,
զի գնալոց էր ՚ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն մինչև ՚ի մէջ զիշերոյն*:
⁸Եւ
էին լապտերք բազումք ՚ի վերնատանն, ուր էաք ժողովեալ*:
⁹Եւ նստեր ոմն
երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝ ՚ի վերայ պատուհանին, նիրհէր ՚ի քուն
թանձրութեան, ՚ի խօսելն Պաւղոսի յաճախ. ընկղմեալ ՚ի քնոյ անտի՝ անկաւ
յերրորդ դատիկոնէն ՚ի վայր, և բարձաւ մեռեալ*:
¹⁰Եւ իջեալ Պաւղոս՝ անկանէր
զնովաւ. և առնոյր զնա ընդ գիրկս՝ և ասէր. Մի՛ խռովիք, քանզի ոգի սորա ՚ի
սմին է*:
¹¹Եւ ել եբեկ զհացն՝ և ճաշակեաց. և բազում ևս խօսեցաւ մինչև
յառաւօտ. և ասա ել գնաց*:
¹²Եւ աժ զպատանին կենդանի՝ և մխիթարեցան ո՛չ

* *Ոմանք.* Եւ որ ընդ նմայն ճար՝... լինիցին զմիմեանց:

* *Օրինակ մի.* Ապա եթէ վասն այլ իրաց խնդիրք ինչ իցեն, յօրինաւոր ժողովն
վճարեսցի:

* *Օրինակ մի.* Վիշտս վտանգի է վասն կռուոյս այսորիկ առանց իրիք: *Ոմանք.*
Արձակեաց զժողովուրդն. *կամ՝* զժողովուրդսն:

* *Ոմանք.* Եւ ողջոյն ետ. *կամ՝* ողջոյն տուեալ:

* *Ոմանք.* Եւ իբրև արար... և եղև նմա:

* *Ոմանք.* Եւ երթային ընդ նմա... Պիւռայ Բերիացի... և Գայիոս Դերբացի: *Յօրինակին*
պակասէր. Եւ *Գայիոս Դերբացի* Տիմոթէոս:

* *Ոմանք.* Նոքա յառաջ երթեալ մնա՛ն:

* *Ոմանք.* Անդ դադարեաց աւուրս: *Յօրինակին.* Աւուր եւթն:

* *Ոմանք.* Յաւուրն շաբաթու մինչդեռ ժողովեաք ՚ի բեկանել զհացն: *Ոսկան.* ՚ի մէջ
զիշերին:

* *Ոմանք.* Էին լապտերք... ուր էաքն:

* *Ոմանք.* Եւտիքոս... անկաւ յերրորդ դատիկոնէն:

* *Ոմանք.* Եւ իջեալ Պաւղոսի... առնոյր զնա ՚ի գիրկս... զի հոգի սորա ՚ի սմա է:

* *Ոմանք.* Եւ եբեկ զհացն... և բազումս խօսեցաւ մինչև յառաւօտ. *կամ՝* ցառաւօտ... ել և
զնաց:

սակաւ*։ ¹³Եւ մեք մտեալ 'ի նաւն՝ ամբարձաք յԱսովն, անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ զՊաւղոս. զի այնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր*։ ¹⁴Եւ իբրև դիպեցաւ մեզ 'ի յԱսովն, առեալ զնա եկա՛ք 'ի Միտիլիւնէ*։ ¹⁵Եւ անտի նաւեալ՝ 'ի վաղիւ անդր հասա՛ք հանդէպ Քիայ. և 'ի միւս օրն հասա՛ք 'ի Սամոս. և 'ի վաղիւ անդր եկա՛ք 'ի Մելիտոն*։ ¹⁶Ձի 'ի մտի եղեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսեաւ. որպէս զի մի՛ լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիայ. քանզի փութայր, եթէ հնա՛ր ինչ իցէ նմա՝ զօրն Պենտակոստէից երթալ՝ յերուսաղէմ*։ զա. ¹⁷Եւ 'ի Մելիտեայ յղեալ յԵփեսոս, կոչեաց՝ զերիցունս եկեղեցւոյն։ ¹⁸Եւ իբրև եկին առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէ՛ն գիտէք յօրէ յառաջմէ՛ յորմէ եկի յԱսիայ, որպէս ընդ՝ ձեզ զամենայն ժամանակսն եղէ*։ ¹⁹Ճառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ և բազում արտասուօք և փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ՝ 'ի նենգութեանց Յրէից*։ ²⁰Որպէս ո՛չ ինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ, և ուսուցանել ձեզ հրապարակաւ և առտնին*։ ²¹տալ վկայութիւն Յրէից և հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած, և զհաւատո՛ցն որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս*։ ²²Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւովն, երթամ յերուսաղէմ. և որ ինչ անդ ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ*։ ²³Բայց զի Յոզիւն Սուրբ ըստ քաղաքաց վկայէ՛ ինձ՝ և ասէ, եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ*։ ²⁴Այլ և ո՛չ իւրիք համարիմ զանձն իմ պատուական, որպէս զկատարեալ զընթացս իմ ուրախութեամբ, և զպաշտօնն զոր առի՛ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ*։ ²⁵Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ո՛չ ևս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն Աստուծոյ*։ ²⁶Վասն որոյ և վկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ, զի սուրբ եմ յարեմէ ամենեցուն*։ ²⁷Քանզի ո՛չ խորշեցայ 'ի պատմելոյ ձեզ զամենայն կանս Աստուծոյ*։ ²⁸Ձգո՛յձ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եղ զձեզ Յոզիւն Սուրբ տեսուչս, հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցո՛յց արեամբ իւրով*։ ²⁹Քանզի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ զայցեն զայլք յափշտակօղք 'ի ձեզ որ ո՛չ խնայեսցեն

* *Բազումք.* Եւ ածին զպատանին։

* *Ոմանք.* Եւ անտի ակն ունէաք։

* *Ոմանք.* 'Ի Մելետիւնէ. *կամ*՝ 'ի Մելիտիւնէ։

* *Ոսկան.* Եւ անտի նաւարկեալ. և 'ի վա՛ր։ *Ոմանք.* 'Ի հանդէպ Աքիա. և 'ի միւս ևս աւուրն հա՛... անդր հասաք 'ի Մեղետոն. *կամ*՝ 'ի Մելիտիւնէ։ *Ուր օրինակ մի.* 'ի Լետոն։

* *Ոմանք.* Մի՛ լինիցի նմա... Պենտակոստէից։

* *Ոմանք.* Ձի յօրէ յառաջմէ՛ յորմէ հետէ եկի... զամենայն ժամանակս եղէ։

* *Ոմանք.* Դիպեցաւ ինձ՝ 'ի նեղութեանցն Յրէից։

* *Ոմանք.* Յօգտակարացն պատմել ձեզ, և ուսուցանել զձեզ։

* *Ոմանք.* Ձապաշխարութիւնն որ։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Կապեալ հոգւով երթամ։ *Ոմանք.* Եւ որ ինչ անդ ընդ իս անցք անցանելոց իցէ՝ ոչ գիտեմ։

* *Ոմանք.* Բայց Յոզիւն Սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց։

* *Ոմանք.* Այլ ես ոչ իւրիք... որպէս զի կատարել զըն՝... 'ի Տեառնէ Յիսուսէ վկայ լինել...

շնորհաց։ *Ոսկան.* Որպէս զի կատարեցից, զընթացս իմ։

* *Ոմանք.* Թէ ո՛չ ևս տեսանելոց էք զերեսս իմ դուք ամենեքին... քարոզել զարքայութիւնն։

* *Ոմանք.* Վասն որոյ վկայ՝... յաւուրս յայսմիկ, զի սուրբ եմ ես յարեմէ ամենեցուն ձեր։

* *Ոմանք.* 'Ի չպատմելոյ ձեզ զամենայն կանսն Աստուծոյ։

* *Ոմանք.* Արեամբն իւրով։

հօտիդ*։ ³⁰Եւ ՚ի ձէնջ յարիցեն արք որ խօսիցին թե՛րս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց*։ ³¹Վասն այսորիկ արթուն կացէք, և յիշեցէ՛ք՝ զի զերկեան մի զցա՛յգ և զցերեկ՝ ո՛չ դադարեցի արտասուօք խրատել զմի մի՛ իւրաքանչիւր*։ ³²Եւ արդ՝ յանձն առնեն զձեզ Աստուծոյ՝ և բանի շնորհաց նորա, որ կարօղն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան*։ ³³Արժաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ ո՛չ ուրուք ՚ի ձէնջ ցանկացայ. ³⁴դուք ինքնի՛ն գիտէք, զի զպէտսն իմ, և որոց ընդ իսն էին՝ պաշտեցին ձեռքս այս*։ ³⁵Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել, և դարմանել զհիւանդս. և յիշել զբանն Տեառն Յիսուսի զոր ինքն իսկ ասաց. Երանելի՛ է մանաւանդ տալն քան առնուլն*։ ³⁶Եւ զայս իբրև ասաց, եղեալ ծո՛ւնր ամենեքումբք՝ եկաց յաղօթս*։ ³⁷Բազում լալիւն եղև ամենեցուն. և անկեալ զպարանոցաւն Պաւղոսի համբուրէին զնա*։ ³⁸Նորմոքէին մանաւանդ ՚ի վերայ բանին զոր ասէր, թէ ո՛չ ևս տեսանելոց են զերեսս նորա. և յուղարկեցին զնա ՚ի նաւ անդր*։

21

Գլուխ ԻԱ

զք. ¹Եւ իբրև եղև ելանել մեզ և մեկնել ՚ի նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ՚ի Կով. և ՚ի վաղիւ անդր ՚ի Յռովդոն, և անտի ՚ի Պատարայ*։ ²Եւ գտեալ նաւ մի զի երթայր ՚ի Փիւնիկէ, ելեալ ՚ի նա գնացաք*։ ³Եւ յայտ եղեալ Կիպրեայ, թողաք զնա ՚ի ձախակողմ, նաւեցաք յԱսորիս և իջա՛ք ՚ի Տիւրոս. քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինսն*։ ⁴Եւ գտեալ զաշակերտսն, կացա՛ք անդ աւուրս եւթն. որք ասէին ցՊաւղոս ՚ի ձեռն Յոգուոյն, մի՛ ելանել յերուսաղէմ։ ⁵Եւ իբրև եղև մեզ կատարել զաւուրսն, ելեալ գնացաք. և յուղարկեալ զմեզ ամենեցուն, հանդերձ կանամբք և որդւովք՝ մինչև արտաքոյ քաղաքին։ Եղեալ ծու՛նր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս*։ ⁶Եւ հրաժարեալք ՚ի միմեանց՝ և ելա՛ք ՚ի նաւն. և նոքա դարձան իւրեանց տեղիս*։ ⁷Եւ մեր զնաւն առխեթեալ ՚ի Տիւրոսէ՝ հասաք ՚ի Պտղոմեդայ.

* Ոմանք. Թէ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս գայցեն... ոչ խնայիցեն հօ՛ւ։ *Ի լուս*՝. Յօտին. *համաձայն ոմանց ՚ի բնաք*։

* Ոմանք. խօսեսցին... ձգել զաշակերտեալսն։

* Ոմանք. Վասն այնորիկ... զի զերեան մի... իւրաքանչիւրք ՚ի ձէնջ։ *Ոսկան*. Ձի զերկամ մի։

* Ոմանք. Եւ տալ ժառանգութիւն ձեզ ընդ սուրբսն ամենայն։

* Ոմանք. Գիտէք իսկ... ընդ իս են՝ պաշտէին ձեռքս։

* Օրինակ մի. Եւ դարմանել զաղքատս։ *Ոմանք*. Ձբան Տեառն, զոր ինքն ա՛... մանաւանդ տալ քան գառնուլ։

* Ոմանք. Ամենեքումբք հանդերձ՝ եկաց։

* Ոմանք. Եւ բազում լալիւն։

* Ոմանք. Ի վերայ բանիցն զոր ասէր... և յուղարկէին. *կամ*՝ յուղարկեցին զնա։

* Օրինակ մի. Եւ անտի ՚ի Տիւրոս։

* Ոմանք. Եւ ելեալ ՚ի նա գնացաք։

* Ոմանք. Կիպրեայ. *կամ*՝ Կիպրայ... ՚ի ձախակողմ... թօթափելոց զբեռինս։

* Ոմանք. Ելեալ զնայաք, յուղարկեալ... ծու՛նր կայաք յաղ՛։ *Բազումք*. Եւ եղեալ ծու՛նր։

* *Բազումք*. Եւ հրաժարեցաք ՚ի միմեանց։ *Ոսկան յաւելու*. Ի միմեանց *առ ծովեզրն*, և ելաք։

և ողջոյն տուեալ եղբարց, եղեաք օր մի առ նոսա*:

Լ⁸Եւ ՚ի վաղիւ անդր ելեալ անտի՝ եկա՛ք ՚ի Կեսարիայ. և մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի, որ էր յեւթանց անտի, ագա՛ք առ նմա*։⁹Նորա էին դստերք չորք կոյսք՝ մարգարէք։¹⁰Եւ ՚ի լինելն մեր անդ աւուրս բազումս, էջ ոմն ՚ի Զրեաստանէ անուն Ագաբոս*։¹¹և եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պաւղոսի՝ կապեա՛ց զոտս և զծեռս իւր, և ասէ. Այսպէս ասէ Զոգին Սուրբ. Ձայրն որոյ գօտիս այս է, այսպէս կապեսցեն յերուսաղէմ Զրեայք, և մատնեսցեն զնա ՚ի ձեռս հեթանոսաց*։¹²Եւ իբրև լուաք զայն, աղաչեցաք մեք, և որ ՚ի տեղուջն էին՝ չելանել՝ նմա յերուսաղէմ*։¹³Յայնժամ պատասխանի ետ Պաւղոս և ասէ. Չի՞նչ գործեցէք՞ զի՞ լայքդ և ճմլեցուցանէք զսիրտ իմ. քանզի ես՝ ո՛չ միայն կապելոյ, այլ և մեռանելոյ յերուսաղէմ պատրաստեմ վասն անուանն Տեառն Յիսուսի Քրիստոսի*։¹⁴Եւ ՚ի չանսալն նորա՝ լռեցաք, և ասեմք. Տեա՛ռն կամք լիցին*։

ԼԱ զգ. ¹⁵Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ելանեա՛ք յերուսաղէմ։¹⁶Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի Կեսարացւոց, և տանէին զմեզ առ որում վանս ունելոց էաք՝ Մնասովնի ունեմն Կիւպրացւոյ առաջին աշակերտի*։¹⁷Եւ ՚ի մտանելն մեր յերուսաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք։¹⁸Իսկ ՚ի վաղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակոբոս. և եկին ամենայն երիցունքն*։¹⁹Եւ ողջոյն տուեալ նոցա՝ պատմէ՛ր մի ըստ միոջէ զոր արար Աստուած ՚ի հեթանոսս ՚ի ձեռն պաշտաման նորա*։²⁰Եւ նոցա լուեալ՝ փառաւոր՝ առնէին զԱստուած. և ասեն ցնա. Տեսանե՞ս ե՛ղբայր՝ քանի՛ բիւրք են հաւատացելոցն Զրէից, և ամենեքեան նախանձաւոր օրինացն են։²¹Բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես ՚ի Սովսիսէ՝ որոց ՚ի հեթանոսս ամենայն Զրեայք են, ասես՝ մի՛ թլփատել նոցա զորդիս, և մի՛ ըստ կրօնից օրինացն զնալ*։²²Արդ՝ զի՞նչ լինիցի ապաքէն լսեն, թէ եկեալ ես*։²³Արդ զայս արա՛ զոր ասեմք քեզ. եւ ՚ի մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց,²⁴զնոսա առեալ սրբեսցիս ընդ նոսա. և ծախեա՛ ինչ ՚ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս իւրեանց. և գիտասցեն ամենեքին, թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝ ո՛չինչ է. այլ միաբանիս և դու պահել զօրէնսն*։²⁵Բայց վասն հաւատացելոցն հեթանոսաց, մեք առաքեցա՛ք՝ որպէս ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի պահել նոցա. բայց միայն զգուշանալ նոցա ՚ի կռոց զոհելոյ, և յարենէ, և ՚ի հեղձուցելոյ, և ՚ի պոռնկութենէ*։²⁶Յայնժամ Պաւղոսի առեալ զարսն՝ ՚ի վաղիւ

* *Ոմանք.* Առխթեալ ՚ի Տիրոսէ հասաք ՚ի Պտողմայիդա. *կամ*՝ ՚ի Պտողմայիդա, և ողջոյն տուաք... եղաք օր մի:

* *Ոմանք.* Որ է յեւթանց:

* *Ոմանք յաւելուն.* ՚ի Զրեաստանէ մարգարէ՝ անուն Ա՛:

* *Ոմանք.* Որոյ գօտիս է, այսպէս կապեսցեն Զրեայք, և մատնեսցեն ՚ի ձե՛:

* *Ոմանք.* Աղաչեաք մեք, և որ ՚ի տեղուջ էին:

* *Այլք.* Չի՞նչ գործէք. զի լայքդ:

* *Բազունք.* Լռեցաք. ասեմք. Տեառն:

* *Ոմանք.* Առ որումն վանսն ունելոց էաք: *Ուր օրինակ մի.* Առ որոյ վանս... Կւպրացւոյ ա՛:

* *Ի բազումս պակասի.* Իսկ ՚ի վաղիւ ան՛:

* *Յօրինակին.* Ի ձեռնն պաշտաման:

* *Ոմանք.* Ի Սովսես... զորդիս նոցա, և մի՛ ըստ կրօնիցի զնալ:

* *Ոսկան.* Ապաքէն լսիցեն թէ ե՛:

* *Ոմանք.* Սրբեսցես ընդ նոսա... զգլուխս. և գիտասցեն ամենեքեան, եթէ:

* *Ոմանք.* Որպէս և ընտրեցաք... զգուշանալ ՚ի կռոց զոհելոց:

անդր ընդ նոսա սրբեալ եմո՛ւտ ՚ի տաճարն. յա՛յտ առնել զկատարումն աւուրցն սրբութեան, մինչև մատեաւ ՚ի վերայ իւրաքանչիւր ուրուք ՚ի նոցանէ պատարագ*:

ԼԲ զդ. ²⁷Եւ իբրև մերձ էին եւթն աւուրքն ՚ի կատարել, տեսեալ զնա ՚ի տաճարին Ասիացոց Յրէիցն՝ զեղուին զնովաւ զամենայն ամբոխն. և արկեալ ՚ի նա ձեռս՝ աղաղակէին*.²⁸Ա՛րք Իսրայէլացիք՝ օգնեցէ՛ք. ա՛յս ա՛յր է՝ որ հակառակ ժողովրդեանն և օրինացն և տեղոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ. մինչև հեթանոսս ևս եմոյժ ՚ի տաճարն՝ և պղծեաց՝ զսուրբ տեղիսն*:²⁹Քանզի էր յառաջագոյն տեսեալ զՏրիփիմոս զեփեսացի ՚ի քաղաքին ընդ նմա. զոր կարծէին եթէ ՚ի տաճարն անդր եմոյժ Պաւղոս*:³⁰Շարժեցա՛ւ քաղաքն ամենայն, և կուտեցա՛ւ ժողովուրդն. և առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ տաճարին. և վաղվաղակի փակեցան դրունքն*,³¹ և խնդրէին զնա սպանանել: Եհաս զրոյց ՚ի հազարապետ գնդին, եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ:³²Որոյ անդէն առեալ զօրականս և հարիւրապետս՝ դիմեաց ՚ի վերայ նոցա. և նոցա տեսեալ զհազարապետն և զօրականսն, դադարեցին ՚ի հարկանելոյ զՊաւղոս*:³³Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա, և հրամայեաց կապել կրկին շղթայիւք, և հարցանէր թէ ո՞վ իցէ, և զի՞նչ իցէ արարեալ*:³⁴Այլք՝ ա՛յլ իմն աղաղակէին զնմանէ յամբոխին. իբրև ո՛չ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ՚ի բանակն*:³⁵Եւ իբրև եհաս յաշտիճանսն, դէպ եղև բառնալ՝ բերել զնա ՚ի զօրականացն՝ վասն բռնութեան ամբոխին*:³⁶Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն, և ասէին. Բարձ զդա: ³⁷Մինչ դեռ մտանելոց էր Պաւղոս ՚ի բանակն, ասէ ցհազարապետն. Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ: Եւ նա ասէ. Յունարէն գիտե՞ս. ³⁸մի արդէւք՝ դո՞ւ իցես Եգիպտացին, որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազարս արս՝ սիկարեանս*:³⁹Եւ ասէ Պաւղոս. Ես եմ այր Յրեայ, ՚ի Տարսոնէ Կիլիկեցոց, ո՛չ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ հրամայեալ ինձ խօսել առ ժողովուրդդ:⁴⁰Եւ ՚ի հրամայելն նորա, Պաւղոս կացեալ ՚ի վերայ աշտիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն. իբրև բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբառել Յեբրայեցւոց՝ բարբառովն՝ և ասէ*.

22

Գլուխ ԻԲ

¹Արք եղբարք և հարք՝ լուարո՛ւք ինձ այժմ առ ձեզ պատասխանատութեանս*:

* *Օրինակ մի.* Կատարումն օրինացն սրբութեան:

* *Ոմանք.* Աւուրքն կատարել... աղաղակէին և ասէին: *Ոսկան.* Ջամենայն զամբոխն:

* *Ոմանք.* Հեթանոսս եմոյժ... զսուրբ տեղին:

* *Յօրինակին.* ՋՏրիփիմոս զեփես*:

* *Յօրինակին պակասէր.* Քաղաքն ամենայն:

* *Օրինակ մի.* Անդէն տուեալ զօրա՞... տեսեալ զհարիւրապետն:

* *Ոմանք.* Եթէ ո՛վ իցէ, և զի՞նչ է արա՞:

* *Ոմանք.* Ջնմանէ յամբոխն:

* *Բազումք.* Եհաս յաստիճանսն: *Ոսկան.* Բառնալ և բերել:

* *Ոմանք.* Միթէ արդէւք դու... չորս հազար արս:

* *Ոմանք.* Ջձեռնն ժողովրդ: *Ոսկան.* Եւ իբրև բազում լռութիւն:

* *Յօրինակին պակասէր.* Եղբարք և հարք: *Ոմանք.* Առ ձեզ պատասխանատութեանս. և

²Իբրև լուան՝ թէ Յերբայեցւոց լեզուան բարբառեցաւ նոցա, առաւել՝ ևս դադարեցին ՚ի լռութան*։ ³Եւ նա ասէ. Ես եմ այր Յրեայ, ծնեալ ՚ի Տարսովնի Կիւիկեցւոց, սնեալ ՚ի քաղաքիս յայսմիկ, առ ո՛տս Գամաղիէի խրատեալ. ըստ ճշմարտութեան հայրենի օրինացն նախանձայոյ՞ զ էի Աստուծոյ, որպէս ամենեքեան դուք այսօր*։ ⁴Որ զտոյն ճանապարհ վարեցի մինչև ՚ի մահ, կապել և մատնել ՚ի բանտս արս և կանայս*։ ⁵Որպէս և քահանայապետդ վկայէ՝ ինձ՝ և ամենայն ծերակոյտդ. յորոց և թո՛ւղթս առեալ առ եղբարս ՚ի Դամասկոս երթայի, ածել և անտի՛ կապեալս յերուսաղէմ, զի պատժեսցին*։ ⁶Եւ եղև ինձ ՚ի գնալն և ՚ի մերձեանալ ՚ի Դամասկոս, զմիջաւուրբն յանկարծակի յերկնից՝ փայլատակեալ լոյս սաստիկ զինն*, ⁷և անկայ յերկիր. և լուայ բարբառ որ ասէր ցիս. Սաւո՛ւղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս։ ⁸Եւ ես ետու պատասխանի՝ թէ ո՞վ ես Տէր։ Եւ ասէ ցիս. Ե՛ս եմ Յիսուս Նազովրեցի՝ զոր դուն հալածես։ ⁹Բայց որ ընդ իսն էին՝ զլոյսն տեսին, այլ զձայնն ո՛չ լսէին՝ որ խօսէր ընդ իս*։ ¹⁰Եւ ասեմ. Չի՞նչ արարից Տէր։ Եւ ասէ ցիս Տէր. Յարուցեալ երթի՛ցես ՚ի Դամասկոս, և անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի որ հրաման է քեզ առնել*։ ¹¹Իբրև ո՛չ տեսանէի ՚ի փառաց լուսոյն այնորիկ, զձեռանէ՛ ձգեալ ՚ի նոցանէ որ ընդ իսն էին, մտի ՚ի Դամասկոս*։ ¹²Անանիայ ոմն այր երկիւղա՛ծ ըստ օրինացն, վկայեալ յամենայն բնակչաց որ ՚ի Դամասկոս Յրեայքն էին. ¹³Եկն եկա՛ց առ իս՝ և ասէ. Սաւո՛ւղ եղբայր ՚ի վե՛ր հայեաց։ ¹⁴Եւ ես նոյնժամայն ՚ի վե՛ր հայեցայ ՚ի նա. և նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա, և տեսանել զվրդարն, և լսել բարբառ ՚ի բերանոյ նորա*։ ¹⁵Ղի եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ, որոց տեսերն և լուար։ ¹⁶Եւ արդ՝ զի՞ հեղգաս, արի՛ մկրտեաց, և լուա՛ զմեղս քո ՚ի կարդալ զանուն նորա*։ ¹⁷Եւ եղև ինձ ՚ի դառնալն յերուսաղէմ և կալ յաղօթս ՚ի տաճարին, լինել ՚ի զարմացման. ¹⁸և տեսանել զնա զի ասէր ցիս. Փութա՛ւ ել յերուսաղէմէ վաղվաղակի, քանզի չէն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ։ ¹⁹Եւ ես ասեմ. Տէր՝ ինքեանք իսկ գիտեն՝ զի ես էի որ ՚ի բանտն տայի, և զան հարկանէի ըստ ժողովրդոցն զհաւատացեալսն ՚ի քեզ*։ ²⁰Եւ յորժամ հեղոյր արիւնն Ստեփանոսի վկայի քոյ, ես ինքն էի որ ՚ի վերայ կայի, և կամակից լինէի սպանման նորա, և պահէի՛ զհանդերձս սպանողացն նորա*։ ²¹Եւ ասէ ցիս. Գնա՛, զի ես ՚ի հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ*։ ²²Եւ ունկն դնէին նմա մինչև ցայս բան. ապա բարձին զձայնս իւրեանց՝ և ասեն. Բարձ յերկրէ զայդպիսիդ, զի չէ՛ պարտ

ոմանք. պատասխանատուութեանս։

* *Ոմանք.* Թէ Յերբայեցւոց լեզուովն բարձ։ *Բազումք.* Դադարեցին ՚ի լռութիւն։

* *Ոմանք.* Եւ ասէ. Ես եմ... ՚ի Տարսովն Կիւիկ՝... ամենեքին դուք էք այսօր։

* *Ոմանք.* Ձնոյն ճանապարհ վարեցին մինչ ՚ի մահ... ՚ի բանտ արս։

* *Օրինակ մի.* Կապեալս յերուսաղէմ զի տուժեսցին։

* *Ոմանք.* ՚ի գնալն և մերձանալ... փայլատակեաց։

* *Ոմանք.* Ձլոյսն տեսանէին։

* *Ոմանք.* Որ ինչ հրաման է քեզ։ *Եւ օրինակ մի.* Որ հրամայեալ է քեզ։

* *Օրինակ մի.* Ի՞նչ ձեռանէ այնոցիկ որ ընդ իսն։

* *Յօրինակին պակասէր.* Հայեցայ ՚ի նա։ *Օրինակ մի.* Եւ ընտրել զվրդարն, և լսել բանս ՚ի։

* *Օրինակ մի.* Քո, և կարդա՛ զանուն նորա։

* *Ոմանք.* Տէր ինքնին իսկ զի՞։

* *Ոմանք.* Վկային քո, ես ինքնին էի կայի ՚ի վերայ։

* *Ոմանք.* Գնա՛ դու, զի ես։

այդպիսւոյդ կեալ: ²³Եւ յաղաղակելն նոցա՝ և ընկենուլ զհանդերձս՝ և զփոշին ցանել յօղսն*, ²⁴հրամայեաց հազարապետն մուծանել զնա՝ ՚ի բանակն. ասէր՝ զանի՛ւ հարցանել զնա, զի գիտացից վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմանէ*: ²⁵Եւ իբրև պրկեցին զնա փոկովք, ասէ Պաւղոս ցհարիւրապետն որ ՚ի վերայ կայր. Եթէ՛ զայր Զոռմայեցի և անարատ պարտ իցէ ձեզ զան հարկանել*: ²⁶Իբրև լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ հազարապետն պատմեաց և ասէ. Ձի՞նչ կամիցիս առնել. քանզի այրն այն Զոռվմայեցի՛ է*: ²⁷Եւ մատուցեալ հազարապետն, ասէ ցնա. Ասա՛ դու ցիս՝ Զոռմայեցի՞ ես: Եւ նա ասէ. Այո՛: ²⁸Պատասխանի ետ հազարապետն. Ես բազում գլխոց զգինուորութիւնս զայս ստացայ: Ասէ Պաւղոս. Ես ծնեալ իսկ ՚ի դմին եմ*: ²⁹Եւ վաղվաղակի ՚ի բաց կացին ՚ի նմանէ՛ որ հարկանելոցն էին զնա. և հազարապետն իսկ երկեալ, իբրև գիտաց եթէ Զոռվմայեցի իցէ. և զի կապեալն ևս էր զնա*:

ԼԳ զգ. ³⁰Եւ ՚ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմարիտն, թէ զինչ չարախօսութիւն իցէ Զրէիցն. արծակեաց զնա, և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զամենայն ատեանն. և իջուցեալ զՊաւղոս, կացոյց ՚ի մէջ նոցա*:

23

Գլուխ ԻԳ

¹Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ. Արք եղբարք՝ ես ամենայն ուղիղ մտօք զնացեալ եմ առաջի Աստուծոյ՝ մինչև ցայսօր*: ²Եւ քահանայապետն Անանիայ հրամայեաց սպասաւորացն հարկանել զբերան նորա: ³Յայնժամ Պաւղոս ասէ ցնա. Զարկանելոց է զքեզ Աստուած՝ որմ բռեալ. և դու նստիս դատել զիս ըստ օրինաց. և առանց օրինաց հրամայես զիս հարկանել: ⁴Եւ որ շուրջն կային՝ ասեն. Ձքահանայապետ Աստուծոյ հայիոյե՞ս: ⁵Եւ ասէ Պաւղոս. Ոչ գիտի եղբարք, եթէ իցէ քահանայապետ. գրեալ իսկ է. Ձիշխան ժողովրդեան քո ոչ հայիոյեցես*: ⁶Իբրև գիտաց Պաւղոս՝ եթէ մի կողմն սաղուկեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց, աղաղակէր ՚ի մէջ ատենին. Արք եղբարք՝ ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց՝ ես աւասիկ դատիմ*: ⁷Եւ զայս իբրև ասաց՝ եղեն հերձուածք փարիսեցւոցն և սաղուկեցւոց. և պատառեցաւ բազմութիւնն: ⁸Քանզի սաղուկեցիքն ասեն. Ձիք յարութիւն, և ոչ հրեշտակ՝ և ոչ հոգի. բայց փարիսեցիքն խոստովանին

* *Ոմանք.* Ձփոշին ցանեալ յօղս:

* *Ոմանք.* Աղաղակեն զնմանէ:

* *Ոսկան.* Պարտ է ձեզ զան:

* *Ոսկան.* Եւ իբրև լուաւ հար՞: *Բազումք.* Ձինչ կամիս առնել. քանզի այրս այս Զոռվմայե՞:

* *Ոմանք.* Ձինուորութիւնս զայս:

* *Օրինակ մի.* ՚ի բաց կաց ՚ի նմանէ որ հարկանելոցն էր զնա: *Ոմանք.* Որ հարկանէին զնա... թէ Զոռվմայեցի է. և զի կապեալ ևս:

* *Ոմանք.* Եթէ զինչ... իցէ ՚ի Զրէիցն:

* *Ոմանք.* Ես յամենայն ուղիղ:

* *Ոսկան.* Ձիշխանս ժողովրդ՞:

* *Ոմանք.* Վասն յուսոյն և յա՞:

գերկոսեան*։ ⁹Եւ եղև աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք 'ի դպրաց անտի 'ի կողմանէն փարիսեցւոց, հակառակէին և ասէին. Ո՛չինչ չարութիւն գտանենք յառն յայսմիկ, բայց եթէ հոգի խօսեցաւ 'ի դմա՝ կամ հրեշտակ*։ ¹⁰Եւ 'ի բազմանալ ամբոխին, երկուցեալ հազարապետն՝ թէ գուցէ ճեղքիցի՝ Պաւղոս 'ի նոցանէ, հրամայեաց զօրականին իջանել յափշտակել՝ զնա 'ի միջոյ նոցա, և ածել 'ի բանակն։ ¹¹Եւ 'ի վաղուեան գիշերին՝ եկաց առ նմա Տէր և ասէ. Քաջալերեաց՝ Պաւղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ և 'ի Հռովմ վկայել*։

ԼԴ գլ. ¹²Եւ իբրև այգ եղև՝ արարեալ ժողով Հրէիցն, նզովեցին զանծինս ո՛չ ուտել և ո՛չ ըմպել՝ մինչև սպանցեն զՊաւղոս։ ¹³Եւ էին աւելի՛ քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդնունս արարեալ էր*։ ¹⁴Որք մատեան առ քահանայապետսն և երիցունս՝ և ասեն. Նզովիւք նզովեցաք զանծինս՝ ոչինչ ճաշակել՝ մինչև սպանցուք զՊաւղոս*։ ¹⁵Բայց դուք զգացուցէք հազարապետին հանդերձ ատենին, զի իջուցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և մեր յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստենք 'ի սպանանել զնա*։ ¹⁶Եւ լուեալ քեռորդոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն, եկն եմուտ 'ի բանակ անդր՝ պատմեաց՝ Պաւղոսի*։ ¹⁷Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի 'ի հարիւրապետաց անտի՝ ասէ. Ջպատանիս զայս տա՛ր առ հազարապետն, զի ունի՛ ինչ պատմել նմա*։ ¹⁸Եւ նորա առեալ զնա տարա՛ւ առ հազարապետն՝ և ասէ. Կապեալն Պաւղոս կոչեաց զիս, և աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ*։ ¹⁹Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ զնա՛ց մեկուսի, հարցանէր՝ թէ զի՞նչ ունիս խօսել ընդ իս*։ ²⁰Եւ նա ասէ. Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ զՊաւղոս իջուցեն յատեան, իբրև թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա*։ ²¹Արդ՝ դու մի՛ անսայցես նոցա. քանզի դարան գործեալ է նմա 'ի նոցանէ արանց աւելի՛ քան զքառասուն, որք նզովեցին զանծինս՝ ո՛չ ուտել և ո՛չ ըմպել՝ մինչև սպանցեն զնա. արդ՝ պատրաստ են, և սպասեն քում հրամանի*։ ²²Ապա հազարապետն արձակեաց զպատանին, պատուիրեալ մի՛ ունեք ասել՝ թէ զայս զգացուցեր ինձ*։ ²³Եւ կոչեաց երկուս 'ի հարիւրապետացն՝ և ասէ. Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչև 'ի Կեսարիա. և

* Ոմանք. Ասէին. Չիք... խոստովանէին:

* Ոմանք. 'Ի կողմանէ Փարիսեցւոցն: Ոսկան. Ոչ ինչ չարախօսութիւն գտանենք... բայց թէ:

* Յոմանս պակասի. Քաջալերեաց՝ Պաւղէ: Ոմանք. Նոյնպէս պարտ է քեզ. և ոմանք. Այնպէս պարտ է:

* Ոմանք. Քան զքառասունս: Ոմանք. Ջայս երդումն արարեալ:

* Ոմանք. Որոց մատուցեալ:

* Ոմանք. Հանդերձ ատենին զի իջուցեն զնա... որպէս զի կամիցիք ճշգրտագոյնս ինչ գի՛... յառաջ քան զմտանելն նորա: Ոսկան. Պատրաստիմք 'ի սպա՛:

* Ոմանք. Եւ պատմեաց Պաւ՛:

* Յոմանս պակասի. Պաւղոսի առ իւր: Օրինակ մի. Ունի ինչ ասել նմա:

* Ոսկան. Որ ունի ինչ խօսիլ:

* Ոմանք. Հազարապետն զնաց... հարցանէր եթէ զինչ:

* Ոմանք. Միաբանեցան աղա՛... զի 'ի վաղիւ... իբր թէ: Ուր Ոսկան. զի 'ի վաղուեան զՊողոս: Յօրինակին. Աղաչել զձեզ զի... կամիցին ճշմարտա՛:

* Ոմանք. Մի՛ անսայցես նոցա. զի դարան... որ նզովէ՛:

* Ոմանք. Պատուիրեաց մի՛ ու՛:

հեծեալս իւթանասուն՝ և տիգաւորս երկերիւր, յերից ժամու գիշերոյն*։²⁴ և գրաստս պատրաստական, որպէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուցեն. և առ Փելիքս դատաւոր*²⁵ գրեալ թուղթ, որ ունէր օրինակ զայն*։²⁶ Կղաւղիոս Լիւսիաս, առ քաջ դատաւոր Փելիքս, ողջոյն։²⁷ Չայրս զայս կապեալ ՚ի Յրէից՝ և մերձ ՚ի սպանանել ՚ի նոցանէ, հասեալ ՚ի վերայ զօրականաւ ապրեցուցի. իմացեալ թէ Հռոմայեցի է*։²⁸ Կամեցայ գիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի՛ զդա յատեան նոցա*։²⁹ Չոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ո՛չինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս*։³⁰ Իբրև ազդ եղև ինձ նենգութեան՝ յայրդ լինելոյ ՚ի նոցանէ՝ յղեցի՛ առ քեզ. հրաման տուեալ և չարախօսացն խօսել զդմանէ առաջի քոյ. ո՛ղջ լեր*։³¹ Եւ զօրականացն ըստ հրամանի նորա՝ առեալ զՊաւղոս ածին ՚ի գիշերեայն յԱնտիպատրիս*։³² Եւ ՚ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն զընդ նմա երթեալ, դարձան ՚ի բանակն*։³³ Նոքա մտին ՚ի Կեսարի՛ա. և տուեալ ցղատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և զՊաւղոս։³⁴ Իբրև ընթերցաւ, եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. և ստուգեալ եթէ ՚ի Կիլիկեայ է*։³⁵ Լուայց քեզ ասէ՛ յորժամ և չարախօսքն քո եկեսցեն։ Եւ հրամայեաց յապարանսն Հերովդի՛ պահել զնա։

24

Գլուխ ԻԴ

ԼԵ Էա. ¹Եւ յետ հինգ ւուր էջ քահանայապետն Անանիայ հանդերձ ծերովք ոնամբք, և ճարտարախօսաւ Տերտեղեաւ ոնամբ. որք և զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի*։² Եւ ՚ի կոչելն զնա, սկսաւ Տերտիղոսն ամբաստան լինել և ասել. Բազում խաղաղութիւն գտեալ ՚ի քէն, և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով*։³ ամենայնիւ, և ամենայն ուրեք

* *Ոնանք.* Եւթանասուն... ՚ի յերից ժամուց գիշերոյն։

* *Ոնանք միահետ գրեն զբանս առանց կետադրութեան այսպէս.* Ապրեցուցեն առ Փելիքս դա՛. *Ոսկան՝ առեալ ՚ի Լատինականէն՝ յաւելու.* Ապրեցուցեն. *երկեաւ մի՛ գուցէ յափշտակեսցեն զնա Յրէայքն, և սպանցեն. և ինքն յետոյ զգրպարտութիւն կրեսցէ. իբրու թէ առնլոց իցէ զգանձս. և առ Փելիքս։ Որ չիք ուրեք ՚ի գրչագիրս մեր, որպէս և ոչ ՚ի Յունական սկզբնագիրն։*

* *Ոնանք.* Գրեաց թուղթ։ *Ոսկան.* Ջօրինակ զայս։

* *Ոնանք.* Կալեալ ՚ի Յրէից, և մերձ սպանանել ՚ի նոցանէն... զօրականաւ ապ՛... եթէ Հռով՛։ *Ուր Ոսկան.* զօրականօք ապ՛։

* *Ոսկան.* Ամբաստանէինն զնմանէ։

* *Ոնանք.* Ամբաստանել վասն խնդրոց իրիք։

* *Ոսկան.* Ազդ եղև ինձ սակս նենգութեան։ *Ոնանք.* Նենգութիւն յայրդ։

* *Ոնանք.* Ըստ հրամանին իւրեանց ածին գիշերայն յԱնտիպատրիս։ *Բազումք.* Ածին գիշերեայն։ *Ուր Ոսկան.* Տարան ՚ի գիշերի առ Անտիպատրոսն։

* *Ոնանք.* Արձակեաց զհեծեալս ընդ նմա երթալ։

* *Ոնանք.* Հարցաներ եթէ յորմէ... թէ ՚ի Կիլիկեայէ է. և *ոնանք՝ լոկ.* թէ ՚ի Կիլիկեայ։

* *Ոսկան.* Հինգ ւուրոց։ *Ոնանք.* Եւ ճարտարախօս Տերտիղեաւ. *կամ՝* Տերտիղաւ ոնամբք։

* *Ոսկան.* Եւ ՚ի կոչելն զնոսա... զբազում խաղա՛. *Ոնանք.* Տերտեղոսն. *կամ՝* Տերտիղոսն... գտեալ է ՚ի քէն... քոյով խնամով։

շնորհակալ եմք՝ քաջո՛ր Փիլիքս՝ ամենայն գոհութեամբ*։ ⁴Բայց զի մի՛ ևս աւելի աշխատ արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ՝ ի կարճո՛յ քոյին հեզութեամբդ*։ ⁵Քանզի գտաք զայրս զայս ապականի՛չ և խռովի՛չ ամենայն Յրէից՝ որք են ընդ տիեզերս, և առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն*։ ⁶Որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել. զոր և կալաք, և ըստ մերոց օրինացն դատել կամեցաք*։ ⁷Եկեալ Լիւսիաս հազարապետ՝ մեծա՛ւ բռնութեամբ՝ ի ձեռաց մերոց եհան*։ ⁸Հրամայեաց և չարախօսացն նորա գա՛լ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լինիցիս ՚ի վերստին դատեալ, ամենայնի հասու լինել՝ զորոց մեքս ամբաստանս եմք զդմանէ*։ ⁹Միաբանեցին և Յրեայքն, ասեն. Այդպէս է*։ ¹⁰Պատասխանի ետ Պաւղոս, յակնարկելն նմա դատաւորին խօսել. ՚Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն ինոց իրաց պատասխանի առնեմ*։ ¹¹Քանզի կարող ես գիտել, զի ո՛չինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան, յորմէ հետէ ելի երկիրպագանել յերուսաղէմ*։ ¹²Եւ ո՛չ ՚ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողովս արարեալ բազմաց. ո՛չ ՚ի ժողովուրդս*, ¹³և ո՛չ ՚ի քաղաքի. և ո՛չ յանդիման առնել կարեն քեզ, վասն որոյ այժմս չարախօսե՛ն զինէն*։ ¹⁴Բայց զայս խոստանան քեզ, եթէ ըստ ճանապարհին զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեն զհայրենի Աստուածն. հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն և ՚ի մարգարէս գրեալ է*։ ¹⁵Ունիմ յոյս առ Աստուած. որում և դոքա՛ իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց*։ ¹⁶Յորում և ես իսկ ճգնիմ անխիղճ միտս ունել առ Աստուած և առ մարդիկ յամենայն ժամ*։ ¹⁷Ի բազում ամաց ողորմութիւնս եկի առնել յազգդ իմ. և ետու պատարագիս*։ ¹⁸որովք գտին զիս սրբեալ՝ ՚ի տաճարին, ո՛չ բազմօք և ո՛չ ամբոխիւ։ ¹⁹Ոմանք յԱսիացւոց անտի Յրեայք, որոց պարտ էր գալ առաջի քոյ և ամբաստան լինել, եթէ ունիցին ինչ զինէն*։ ²⁰և կամ ինքեանք սոքա՛ ասացեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ կայի յատենին։ ²¹Բայց միայն վասն միո՛յ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կային ՚ի մէջ նոցա, եթէ վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր ՚ի ձէնջ*։ ²²Եւ յապաղեա՛ց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին՝

*Ոմանք. Եւ շնորհա՛ւ. քաջո՛ր Փեղիքս։

*Բազումք. Մի՛ աւելի ևս։

*Ոմանք. Որ ընդ Տիեզերս։

*Ոսկան. Եւ զտաճարն ևս կա՞։

*Ոմանք. Լսիաս հազարապետն։

*Ոմանք. Յորմէ և դու իսկ բաւական լիցիս վերստին դատեալ... զոր մեքս

ամբաստանեմք զդմանէ։ Ոմանք. Ամենայնի հասու։

*Ոմանք. Միաբանեցին Յրեայքն ասեն. Այդ այդպէս է։

*Ոսկան. ՚Ի յակնարկելն նմա... լինիլ զքեզ դատա՞ւ։ Ոմանք. Ազգիս այսմիկ... վասն ինոյ իրաց պա՞։

*Ոմանք. Ելին երկրպագանել։

*Ոսկան. Եւ կամ ժողով ար՞։

*Ոմանք. Կարեն առնել քեզ. վասն որոյ այժմո՞ չար՞։

*Ոմանք. Թէ ըստ ճանա՞... զորս ասեն... յամենայնի որ ինչ յօրէնս։

*Ոմանք. Ունիմք յոյս առ Աստուած... եթէ յա՞։

*Ոմանք. Միտս ունելով առ Աստուած։

*Ոմանք. Ողորմութիւն եկի առնել յազգիդ իմում։

*Օրհնակ մի. Ունիցին զինչ զին՞։

*Ոմանք. Աղաղակեցի մինչ կայի ՚ի մէջ դոցա, թէ վասն։

ասէ. Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացայց վասն ձեր:
23Յրամայեաց հարիւրապետին պահել զնա. և ունել յընդարձակի, և մի՛ զոք
յիւրոց անտի արգելուլ ՚ի պաշտելոյ զնա*: 24Եւ յետ աւուրց ինչ, եկն Փելիքս
հանդերձ Դրուսիլաւ կնաւ իւրով՝ որ էր Յրեայ. կոչեաց զՊաւղոս, և լուաւ ՚ի
նմանէ վասն որ ՚ի Յիսուս Քրիստոս հաւատոցն*: 25Եւ ՚ի խօսելն նորա՝ վասն
արդարութեան և ժուժկալութեան, և հանդերձեալ դատաստանին, զահի
հարեալ Փիլիքս, ետ պատասխանի. Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լինիցի,
կոչեցից՝ զքեզ*: 26Միանգամայն և ակն ունէր, թէ տացի՛ ինչ նմա ՚ի Պաւղոսէ,
վասն որոյ և ստէ՛պ կոչեցեալ զնա՝ խօսէ՛ր ընդ նմա:

ԼԶ 27Եւ ՚ի կատարել երկուց ամաց, եկն փոխանակ Փիլիքսի՝ Փետտոս
Պորկիոս. իբրև կամեցաւ շնորհս առնել Յրէիցն Փելիքս, եթող զՊաւղոս
կապեալ*:

25

Գլուխ ԻԵ

1Փետտոս իբրև եհաս յիշխանութիւնն, յետ երից՝ աւուրց ել յերուսաղէմ ՚ի
Կեսարեայ*: 2Եւ զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորք Յրէիցն
զՊաւղոսէ. 3և աղաչէին՝ խնդրեալ շնորհս ՚ի նմանէ. զի կոչեսցէ զնա
յերուսաղէմ. դարան գործեալ սպանանել զնա ՚ի ճանապարհի*: 4Իսկ Փետտոս
արար պատասխանի՝ պահել զնա ՚ի Կեսարիա. թէ ինքն իսկ ընդ հուպ անդր
երթալոց էր*: 5Եւ որ ՚ի ձէնջ կարօղքդ իցեն՝ ասէ, ընդ իս իջցեն, և թէ իցէ ինչ
յառնն վնաս՝ անբաստան լիցին զնմանէ*: 6Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի քան
զուր կամ զտասն, եկն էջ ՚ի Կեսարիա. և ՚ի վաղիւ անդր նստեալ յատենի,
հրամայեաց ածել զՊաւղոս: 7Եւ իբրև եկն, կացին շուրջ զնովաւ որ
յերուսաղէմէ՝ իջեալ էին Յրեայքն. բազում և ծանր վնաս դնէին, զորս ոչ կարէին
ցուցանել*: 8Քանզի առնէր պատասխանի Պաւղոս, եթէ ոչ յօրէնս Յրէից, և ոչ ՚ի
տաճարն, և ոչ ՚ի կայսր ինչ վնասակար եմ: 9Բայց Փետտոս կամեցեալ Յրէիցն
շնորհս առնել. պատասխանի ետ Պաւղոսի՝ և ասէ. Կամի՞ս յերուսաղէմ ելանել,
և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ*: 10Եւ ասէ Պաւղոս. Յատենի
կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Յրէից ինչ չեմ վնասակար,
որպէս և դու իսկ քաջ գիտես*: 11Ապա եթէ վնասակար եմ՝ և արժանի ինչ մահու

* *Յօրինակին.* Յրամայեաց հազարապետին:

* *Ոմանք.* Եկն Փիլիքս հանդերձ Դրուսեղաւ... և լուաւ ինչ ՚ի նմանէ վասն որ ՚ի Քրիստոս
Յիսուս: *Յօրինակին.* Դրիսուլաւ կնաւ:

* *Ոմանք.* Յորժամ ժամ լիցի. *կամ՝* լինի: *Ուր օրինակ մի ընդ Ոսկանայ.* Յորժամ լինիցի՝
կոչե՛ն:

* *Ոմանք.* Կամեցաւ Փելիքս շնորհ առ՝:

* *Ոմանք.* ՚ի Կեսարիոյ:

* *Ոմանք.* Խնդրել շնորհս... դարան գործել:

* *Ոմանք.* Երթալոց իցէ:

* *Ոմանք.* Կարողք իցեն... և եթէ իցէ ինչ յառն... լինիցին զնմանէ:

* *Ոմանք.* Եւ ծանր վնասս դնէին զնմանէ, զոր:

* *Յօրինակին պակասէր.* Կամեցեալ Յրէիցն: *Ոմանք.* Շնորհս ինչ առ՝... Վասն նոցին.
կամ՝ սոցին իրաց:

* *Ոմանք.* Որպէս դու իսկ քաջ:

գործեցի, ո՛չ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ եթէ՝ ո՛չինչ է՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ո՛չ որ կարէ զիս դոցա շնորհել. 'ի կա'յս բողոքեմ*:
¹²Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի. 'ի կա'յս բողոքեցեր՝ առ կա'յս երթիջի'ր*:

Լէ եգ. ¹³Իբրև անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ և Բերինիկէ եկին 'ի Կեսարիա՝ յողջոյն Փեստոսի*:
¹⁴Եւ իբրև աւուրս բազումս հանէին անդ, Փեստոս զեկոյց արքայի զՊաւղոսէ՝ և ասէ. Այր մի է՝ աստ մնացեալ, կապեալ 'ի Փելիքսէ*:
¹⁵Վասն որոյ իբրև չոգայ յերուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք Յրէիցն. խնդրէին՝ յինէն առնել նմա պատուհան*:
¹⁶Որոց ետու պատասխանի, եթէ չէ՝ օրէն Յռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչչև՝ ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազսն, և տեղի պատասխանոյ առնուցու՝ վասն ամբաստանութեանն*:
¹⁷Եւ իբրև եկին այսր, ո՛չինչ յապաղեցի, այլ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն*:
¹⁸Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն, և ո՛չ մի ինչ վնաս չարութեան 'ի մէջ բերէին՝ զորոց եսն կարծէի*:
¹⁹Բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա. և վասն Յիսուսի՝ որումն մեռելոյ, զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է*:
²⁰Իբրև յանհնարս մտի վասն այնպիսի՝ իրաց քննութեան, ասեմ եթէ կամիցի՞ երթալ յերուսաղէմ, և անդր դատել վասն նոցին իրաց*:
²¹Բայց 'ի Պաւղոսի բողոքելն՝ զի պահեսցի 'ի Քաջի՝ արանցն յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա՝ մինչև տա՛ց տանել առ կայսր*:
²²Ագրիպպաս ցՓեստոսն ասէ. Կամ էի և ես լսել առնն: Եւ նա ասէ. 'Ի վաղիւ լուիցես*:
²³Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն Ագրիպպաս և Բերինիկէ՝ բազում և երևելի՝ սպասուք, և մտին յատեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պատուաւորօք քաղաքին. և հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս*:
²⁴Եւ ասէ Փեստոս. Արքայ Ագրիպպայ՝ և ամենայն արք որք ընդ մեզ էք, տեսանէ՞ք զսա. վասն սորա ամենայն ժողովք Յրէից ամբաստան եղեն ինձ յերուսաղէմ, և աստ աղաղակէին՝ թէ չէ՝ պարտ դմա կեալ*:
²⁵Բայց ես 'ի վերայ հասի, թէ ո՛չինչ է դմա արժանի մահու գործեալ, և դորա ինքնին բողոք կալեալ առ Քաջ արանցն, խորհեցայ յղել*:
²⁶Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ո՛չ ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր, և մանաւանդ առաջի քոյ արքայ

* *Ոմանք.* Ապա թէ վնասակար իցեմ... մահու ինչ... ոչինչ իցէ՝ զորոց սոքայս ամբաստանեն զի՞: *Յօրինակին պակասէր.* Եմ. և արժանի:

* *Ոսկան.* Փեստոս խօսեցեալ ընդ:

* *Ոմանք.* Յողջոյն Փեստոսի 'ի Կեսա՞:

* *Ոմանք.* Հանէին անդր... արքայի վասն Պաւղոսի:

* *Ոմանք.* Եւ խնդրէին յինէն:

* *Ոմանք.* Մինչև ամբաստանեալն. *կամ՝* յանդիմանեալն յանդիման ունիցի զդատախազն:

* *Ոմանք.* 'Ի վաղիւ նստեալ:

* *Ոմանք.* Ձոր եսն կարծէի:

* *Ոմանք.* Ինչ վասն իւրեանց... վասն Յիսուսի ուրումն... զորմէ ասէ Պաւ՞:

* *Ոմանք.* Մտի ես վասն այսպիսի... եթէ կամիցիս երթալ յերուսաղէմ, և անդ դա՞:

* *Ոմանք.* Բայց Պաւղոս 'ի բողոքելն զի պահեսցի 'ի Քաջ ար՞... տանել զնա առ կայսր:

* *Ոմանք.* Լսել առն... վաղիւ լուիցես:

* *Ոմանք.* Իբրև եկին Ագրի՞... բազում երևելի... և արամբք պատուականօք քա՞:

* *Ոմանք.* Արք որ ընդ մեզ... ամենայն ժողովուրդք Յրէից:

* *Ոմանք.* Ոչինչ է դորա արժա՞... առ Քաջի արանցն:

Ագրիպպա. որպէս վերստին քննեալ՝ նարթացից ինչ գրել*։²⁷ Քանզի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի, և ոչինչ վնաս գնմանէ նշանակել։

26

Գլուխ ԻԶ

¹Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. Զրամայեալ է վասն քո խօսել։ Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն՝ առնէր պատասխանի*։²Վասն ամենայն ամբաստանութեան Զրէիցոյ զինէն արքայ Ագրիպպա, համարին զանձն երանելի*։ զի քո՛ առաջի այսօր տալոց եմ պատասխանի*։³Մանաւանդ՝ զի գիտա՛յ իսկ ես ամենայն կրօնից և խնդրոց Զրէից. վասն որոյ աղաչեմ երկայնամտութեամբ լսել ինձ*։⁴Քանզի կենաց իմոց որ ՚ի մանկութենէ, իսկզբանէ լեալ յազգի անդ իմուն յերուսաղէմ, տեղեա՛կ եմ ամենայն Զրեայք*։⁵Յառաջագոյն գիտեմ ՚ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել. զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի*։⁶Եւ արդ վասն յուսոյն առ հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ կամ յատենի*։⁷Յոր երկոտասան ազգատոհմին մերոյ անպակաս զցայձ և զցերեկ պաշտեալ, ական ունէին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ արքայ ՚ի Զրէիցոյ*։⁸Զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ։⁹Ես իսկ ինքնին պատշաճ համարէի, զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցոյ գործել*։¹⁰Չոր և արարի՛ իսկ յերուսաղէմ. և զբազումս ՚ի սրբոցն ես բանտարգել առնէի, ՚ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն. և զսպանելոցն նոցա բերէի՝ համար*։¹¹Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա, բռնադատի հայիոյել. առաւել ևս մոլեալ ՚ի վերայ նոցա, հալածէի՝ մինչև յարտաքին քաղաքսն*։ Էդ. ¹²Որովք գնացեալ ՚ի Դամասկոս՝ իշխանութեամբ և հրամանօք քահանայապետիցն*, ¹³զմիջաւորբն ՚ի ճանապարհի տեսի՝ արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական՝ ծագեալ զինև լոյս, և զնոքօք որ ընդ իսն երթային*։¹⁴Եւ յամենեցուն մեր անկանելն յերկիր, լուայ՝ ձայն որ ասէր ցիս՝ Զերբայեցոնց բարբառովն. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ իւթանի՛ արացել*։¹⁵Եւ ես ասեմ. Ո՞ ես Տէր։ Եւ Տէր ասէ. Ես եմ Յիսուս զոր դուն

* *Ոմանք.* Վասն այսորիկ ածի... որպէս զի վերստին քննել նարթացից գրել ինչ։

* *Բազումք.* Զրամայեալ է քեզ վասն քո։ *Ոմանք.* Յայնժամ Պաւղոս ձգէր զձե՛։

* *Ոմանք.* Ամբաստանութեանդ Զրէից... զանձն իմ երանելի։

* *Ոմանք.* Երկայնամտութեամբ լսել։

* *Ոմանք.* Քանզի զկենաց ի՞... լիեալ յազգի իմուն։

* *Ոսկան.* Արդ՝ վասն յուսոյն որ առ հարսն մեր եղելոց աւե՛։ *Ոմանք.* Աւետեացն Աստուծոյ։

* *Ոմանք.* Ազգատոհմիս մերոյ... պաշտել ական ունին. *կամ՝* ական ունիմ... ՚ի Զրէից։

* *Ոմանք.* Ես ինքնին պատ՝... հակառակ անուան Յիսուսի Նազովրաց՛։

* *Ոմանք.* Բանդարգել ունէի։

* *Ոմանք.* Առաւել մոլել ՚ի վերայ։

* *Ոմանք.* Եւ հրամանաւ քահանայապետից։

* *Ոմանք.* Զմեջաւորբն։

* *Ոմանք.* Եւ ամենեցուն մեր անկեալ յերկիր... Երբայեցոնց բար՛։

հալածես*։ ¹⁶Այլ արի՛ և կա՛ց ՚ի վերայ ոտից քոց. զի վասն այսորիկ երևեցայ քեզ՝ առնուլ զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ և վկայ՝ որոց տեսերդ զիս, և որոց երևեցայց քեզ*։ ¹⁷Վիրկել զքեզ ՚ի ժողովրդեանդ և ՚ի հեթանոսաց՝ յորս ես առաքեցից զքեզ*։ ¹⁸Բանա՛լ զաչս նոցա, դարձուցանել ՚ի խաւարե՛ ՚ի լոյս, և յիշխանութենէ Սատանայի՝ յԱստուած. առնուլ նոցա զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբսն հաւատովքն որ յիս։ ¹⁹Ուստի արքայ՝ Ագրիպպա, ո՛չ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն*։ ²⁰Այլ նախ որոց ՚ի Դամասկոս և յերուսաղէմ էին, և ընդ ամենայն գաւառսն Զրէաստանի, և ՚ի հեթանոսս, պատմեցի զղջանալ՝ և դառնալ յԱստուած կենդանի. արժանի՛ ապաշխարութեան գործս գործել*։ ²¹Վասն այսորիկ Զրէից կալեալ զիս ՚ի տաճարին, կամէին սպանանել*։ ²²Օգնութիւն հասեալ առ ՚ի յԱստուծոյ, մինչև յայսօր կացի վկայեալ փոքու և մեծի. ո՛չինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ*։ ²³Եթէ չարչարելո՛ց է Քրիստոսն, եթէ առաջին ՚ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն՝ և հեթանոսաց*։ ²⁴Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փետտոս ՚ի ձայն մեծ ասէ. Մոլի՛ս Պաւղէ. բազում դպրութիւնք զքեզ ՚ի մոլորութիւն դարձուցանեն*։ ²⁵Իսկ Պաւղոս ասէ. Ո՛չ մոլիմ՝ քաջո՞ Փետտոս, այլ զգածութեան և զճշմարտութեան բանս բարբառիմ*։ ²⁶Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել ՚ի քէն իմիք ՚ի սոցանէ՛ չառնո՛ւմ յանձն. զի ո՛չ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս*։ ²⁷Հաւատա՞ս արքայ՝ Ագրիպպաս մարգարէից. զիտեն զի հաւատաս*։ ²⁸Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. Փոքո՛ւ իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ*։ ²⁹Եւ Պաւղոս ասէ. Խնդրէի յԱստուծոյ՝ և փոքու և մեծաւ, ո՛չ միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝ լինել այսպիսի որպէս և ե՛սս եմ, բա՛ց ՚ի կապանաց աստի*։ ³⁰Յո՛տն եկաց արքայն և դատաւորն և Բերինիկէ, և որք ընդ նոսայն նստէին*։ ³¹Եւ իբրև գնացին, խօսէին ընդ միմեանս և ասէին. Թէ ո՛չինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս*։ ³²Իսկ Ագրիպպաս ցՓետտոս ասէ. Արձակել մարթ էր զայրս զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ ՚ի կայսր*։

* *Յօրինակին պակասէր.* Եւ *ես* ասեմ։ *Ոմանք.* Ո՞վ *ես* Տէր։
 * *Ոմանք.* Ձի վասն այնորիկ եր՞... և որոց երևեցայ քեզ։ *Ուր Ոսկան.* և որով երևեցայց։
 * *Յօրինակին պակասէր.* Յորս *ես* առա՞։
 * *Ոմանք.* Ոչ եղէ անհաւատ երկ՞։
 * *Ոմանք.* Նախ ՚ի Դամասկոս և որոց յերուսաղէմ էին. *կամ՝* որոց ՚ի Դամասկոսն էին և յերուսաղէմ։ *Ոսկան.* Ձղջանալ՝ և դառնալ պատմեցի յԱստուած։
 * *Ոմանք.* Վասն այնորիկ Զրէիցն կա՞։
 * *Ոմանք.* Առ յԱստուծոյ մինչև յայսօր կացի վկայել մեծի և փոքու։
 * *Ոմանք.* Եւ թէ առաջին ՚ի յա՞։
 * *Ոմանք.* Եւ իբրև նորա զայս... մոլի՞ս Պաւղէ. բազում դպրութիւնդ զքեզ ՚ի մոլորութիւն դար՞։
 * *Օրինակ մի հնագոյն.* Այլ զգածութեան և զճշ՞։
 * *Ոմանք.* Ընդ որում և համարձա՞։
 * *Ոմանք.* Արքայ Ագրիպպա մար՞... զիտեն զի հաւատասն։
 * *Ի լուս՝ ՚ի վերայ՝* Քրիստոնեայ. *նշանակի՞* Հաւատացեալ։
 * *Ոմանք.* Եւ ասէ Պաւղոս... այլ և զամենեսին... բայց ՚ի կապանաց։
 * *Ոմանք.* Եւ որ ընդ նոսայն նստէինն։
 * *Ոմանք.* Գործեալ է այրս այս։
 * *Ոմանք.* Ոչ էր բողոքել ՚ի կայսր։

Գլուխ ԻԵ

ԼԸ էե. ¹Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիայ, տային զՊաւղոս՝ և զա՛յլս ոմանս կապեալս ՚ի հարիւրապետ մի, որուն անուն էր Յուլիոս, Սեբաստեան գնդին*։ ²Եւ ելեալ ՚ի նաւ մի Անդրամինտացի, որ երթալոց էր ՚ի կողմանս Ասիացոց՝ գնացա՛ք. էր ընդ մեզ Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի*։ ³Եւ ՚ի վաղիւ անդր իջա՛ք ՚ի Սիդոն. և մարդասիրութիւն ցուցեալ Յուլիայ առ Պաւղոս, հրամայեաց առ բարեկամսն երթալ՝ և դարման գտանել։ ⁴Եւ անտի ելեալ խոնարհագոյն, նաւեցա՛ք ՚ի Կիպրոս՝ և վասն հողմոցն ընդդէմ լինելոյ*։ ⁵Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլիկեայ և Պամփիլեայ նաւեալ՝ իջա՛ք ՚ի Սմիռնա Լիկիացոց*։ ⁶Եւ անդ գտեալ հարիւրապետին նա՛ւ մի Աղեքսանդրացի՝ որ երթայր յԻտալիա, եմո՛յծ զմեզ անդր*։ ⁷Եւ ՚ի բազում աւուրս ծանրանաւեալք հազիւ հասա՛ք առ Կնիդեաւ. և ՚ի չթողացուցանել մեզ հողմոյն, նաւեցա՛ք խոնարհագոյն ՚ի Կրիտէ առ Սաղամինեաւ*։ ⁸Յագիւ անցեալ առ նովաւ՝ եկա՛ք ՚ի տեղի ինչ՝ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ. յոր հո՛ւպ էր քաղաքն Ղասեայ*։ ⁹Եւ իբրև բազում ժամանակք անցանէին, և սխա՛լ ևս լինէր նաւելոյն. և վասն ա՛յն ինչ ևս պահոցն անցանելոյ, տայր խրատ Պաւղոս*, ¹⁰և ասէր ցնոսա. Ա՛րք՝ տեսանեմ զի թշնամանօ՛ք և բազում վնասու՛ ոչ միայն բեռինդ՝ և նաւիդ, այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս*։ ¹¹Իսկ հարիւրապետն նաւապետին՝ և նաւավարին առաւել անսայր, քան բանիցն Պաւղոսի։ ¹²Իբրև դժպատե՛հ իմն թուէր նաւահանգիստն առ ձմերել, բազումք խորհեցան զնա՛լ անտի. թերևս կարացեն հասանել ՚ի Փիւնիկէ, ձմերել՝ ՚ի նաւահանգստին Կրետացոց, որ հայեր ընդ հարաւակողմն և ընդ աշխարհն*։ ¹³Եւ ՚ի շնչել հարաւոյն, համարեցան ուր դիմեալն էին հասանել. և արկեալ՝ մօտ անցանէին առ Կրիտեաւ*։ ¹⁴Եւ ո՛չ յետ բազում ժամուց՝ անկա՛ւ զնովաւ հողմ ուռուցիկ որ կոչի Իւրակիկլովն*։ ¹⁵Ընդ յափշտակել նաւին, և ՚ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և գայա՛ք։ ¹⁶Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր Կղաւդա, հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն*։ ¹⁷Չոր առեալ՝ յօգնականութիւն կապէին ընդ նաւն։ Երկուցեալք թէ գուցէ՛ ՚ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառազաստն՝

* *Ոմանք.* Եւ զայլ ոմանս... ցհարիւրապետ մի։ *Ուր օրինակ մի.* ցհազարապետ մի։ *Յօրինակին պակասէր.* Անուն էր Յուլիոս։

* *Ոմանք.* Ընդ մեզ և Արիստարքոս Մակեդովնացի։

* *Յոմանս պակասի.* Ի Կիպրոս՝ և վասն հող՝։ *Ուր ոմանք.* Վասն հողմոյն ընդդէմ։

* *Ոմանք.* Կիլիկիայ և Պամփիլիայ... ՚ի Ձմիւռնիա Լիկացոց։ *Յօրինակին.* Լիկիացոց։

* *Ոմանք.* Եմոյծ զնա անդր։

* *Ոմանք.* Առ Կնիդոն, և ՚ի չթուլացուցանել զմեզ հողմոյն... ՚ի Կրետէ առ Սաղմոնեաւ. *կամ՝* Սաղմինեաւ։ *Ուր օրինակ մի.* Հասաք առ Նիկողիմեաւ։ *Ոսկան.* Ի խոնարհագոյն ՚ի Կրետէ։

* *Ոմանք.* Յագիւ անցուցանել առ նո՛ւ... նաւահանգիստք։

* *Ոմանք.* Եւս լինէին նաւելոյն... և վասն այնր ինչ պահոցն ևս։

* *Ոմանք.* Եւ ասէ ցնոսա. Ա՛րք տեսա՛ք։

* *Ոմանք.* Դժպատե՛հ իմն լինէր նաւահանգիստն առ ՚ի ձմերել... հասանել ՚ի Փիւնիկա... ընդ հարաւակողմն։

* *Ոմանք.* Եւ անկեալ մօտ առ ցամաքաւն անցանէին զՎրետեաւ։

* *Բազումք.* Որ կոչի Եւրակիկլոն։ *Ուր և ոմանք.* Իւրակիկլովն։

* *Ոմանք.* Որ կոչէր Կղաւդիա. *կամ՝* Կղաւդեայ։

այնպէս երթային և գային*։ ¹⁸Եւ ՚ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ ՚ի վաղիւ
 անդր զկարասին ընկեցիկ առնէին։ ¹⁹Եւ յերիւր աւուր ընդ իւրեանց ձեռն
 զգործին նաւին ընկեցին*։ ²⁰Իբրև ո՛չ արև և ո՛չ աստեղք երևէին ՚ի բազում
 աւուրս, և ձմեռն ո՛չ սակաւ կայր ՚ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս
 փրկութեան մերոյ*։ ²¹Եւ զի բազում աւուրս մօթի էին։ Յայնժամ Պաւղոս կացեալ
 ՚ի մէջ նոցա՝ ասէ. Պարտ էր ձեզ ո՛վ արք՝ անսալ ինձ, և ո՛չ ելանել ՚ի Կրետեայ՝ և
 շահել զվիճտս զայս և զվնաս*։ ²²Եւ արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել։ զի վնաս
 անծին և ո՛չ միում ՚ի ձեռն լինիցի, բաց ՚ի նաւեդ*։ ²³Քանզի երևեցաւ ինձ յայսմ
 գիշերի հրեշտակ Աստուծոյ՝ որոյ եսն եմ և պաշտեմ զնա*։ ²⁴Եւ ասէ. Մի՛ երկնչիր
 Պաւղ, կայսեր ևս քեզ պարտ է յանդիման լինել. և ահա շնորհեալ է քեզ
 յԱստուծոյ զամենեսեան, որ եմ ընդ քեզ ՚ի նաւիդ*։ ²⁵Վասն այսորիկ
 քաջալերեցարո՛ւք արք, զի հաւատամ յԱստուած՝ եթէ այսպէս լինի՝ զորօրինակ
 խօսեցաւ ընդ իս*։ ²⁶Բայց ՚ի կղզի՝ ինչ հասանէ մեզ անկանել։ Էգ. ²⁷Իբրև
 չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչդեռ ծփեաք ՚ի Յանդրին անդունդս, ՚ի մէջ
 գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք*։ ²⁸Եւ
 ընկեցեալ զգունդսն՝ գտին գիրկս քսան. և սակաւ ինչ դադարեալ, դարձեալ
 ընկեցին և գտին գիրկս հինգետասան*։ ²⁹Ձահի՛ հարեալ թէ գուցէ ՚ի խիստ ինչ
 տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս. ըղձանային
 այգուն լինելոյ*։ ³⁰Բայց նաւավարքն խնդրէին փախչել ՚ի նաւէ անտի. և
 իջուցեալ զկուրն ՚ի ծով անդր՝ պատճառաւոր, որպէս թէ առաջոյ կողմանէ
 զխարիսխն ձգելոց իցեն*։ ³¹Ասէ Պաւղոս ցհարիւրապետն և ցօրականսն. Եթէ
 ոչ դոքա մնան ՚ի նաւիս՝ դուք ապրել ո՛չ կարեք*։ ³²Յայնժամ զօրականքն
 հատին զլարս կրին, և ՚ի բաց ընկեցին։ ³³Եւ մինչդեռ այգն կամէր լինել,
 աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր՝ ասէ. Այս չորեքտասաներորդ
 օր է՝ որում ակն ունիք մօթիս կատարել, և չէ՛ ինչ ճաշակեալ*։ ³⁴Վասն որոյ
 աղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ո՛չ
 ուրուք ՚ի ձեռն մազ մի ՚ի գլխոյ կորիցէ*։ ³⁵Եւ իբրև ասաց զայս, առեալ հաց՝
 գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, երեկ և սկսաւ ուտել։ ³⁶Եւ
 քաջալերեցան ամենեքին, և նոքա՝ առին կերակուր։ ³⁷Եւ էաք ամենայն հոգիք ՚ի
 նաւին՝ երկերիւր իւթանասուն և վեց*։ ³⁸Իբրև յագեցան կերակրովն,

* *Ոմանք.* Կապէին ընդ նաւին... և իջուցեալ զառագաս*։

* *Ոմանք.* Եւ յերիւր աւուրն... զգործի նաւին։

* *Ոմանք.* Իբրև ոչ արև... և ձմեռնն ոչ սա*։

* *Ոսկան.* Եւ զի ՚ի բազում աւ*։

* *Օրինակ մի.* Եւ արդ խրատ տամ ձեզ քա՛... բայց միայն ՚ի նաւեդ։

* *Օրինակ մի.* Յրեշտակ յԱստուծոյ, որ եսն եմ ծառայ, և պաշ*։

* *Բազումք.* Մի՛ երկնչիր Պաւղէ, կայսեր ևս պարտ է քեզ։ *Ուր օրինակ մի.* Պաւղոս... քեզ
 Աստուծոյ զամենեսին։

* *Ոմանք.* Թէ այսպէս լինիցի, զոր խօսե՛*։

* *Օրինակ մի.* Ծփեաք ՚ի Յանդրին անդո՛*։

* *Ոմանք.* Ձգունտն՝ գտին... հնգետա*։

* *Ոմանք.* Եթէ գուցէ ՚ի խիստ տեղի ինչ։

* *Ոմանք.* Յառաջոյ կողմանէ. և *ոմանք.* Կողմանն խարիսխս ձգելոց են։

* *Ոմանք.* Եթէ դոքա ոչ մնան ՚ի նաւիդ։

* *Ոմանք.* Որում ակն ունիմք մօթի կատա՛*։

* *Օրինակ մի.* Այն իսկ վարձք ձերոյ փրկ*։ *Ոմանք.* Ի՛ գլխոց կորիցէ։

* *Ոմանք.* Եւ եւթանասուն և։

թեթևացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն ՚ի ծով*։³⁹ Եւ իբրև ա՛յգ եղև՝ զերկիրն ո՛չ ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծովուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զերծանել զնաւն*։⁴⁰ Եւ զխարիսխն հաստատեալ ընկեցին ՚ի ծովն, թուլացուցին զխառնելիս թևոցն, և ՚ի բա՛ց առին զառագաստն. և ետուն հողմոյն յա՛փն կոյս ծովուն*։⁴¹ Անկեալ ՚ի տեղի մի երկծո՛վ՝ թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ անշա՛րժ մնայր, և յետին կողմն քակէր ՚ի բռնութենէն*։⁴² Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, և զի մի՛ ոք լուղիցի և փախիցէ*։⁴³ Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս, արգել զնոսա ՚ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցէ լուղել՝ անկանիցին նախ և ՚ի ցամաքն ելանիցեն*։⁴⁴ Եւ զայլսն զորս ՚ի տախտա՛կս, և զորս յա՛յլ ինչ ՚ի կահէ անտի. և ա՛յսպէս եղև ամենեցուն փրծանել յերկիր, և ապրեալք*։

28

Գլուխ ԻԸ

¹Յայնժամ գիտացաք եթէ Սելիտինէ՛ էր անուն կղզւոյն։ Բայց բարբարոսքն շնորհեցին ո՛չ սակաւ մարդասիրութիւն մեզ*։² Քանզի լուցին խարոյկ՝ և ընկալան զամենեսեան զմեզ, վասն անձրևին որ ստիպէր՝ և վասն ցրտոյն։³ Եւ ՚ի ժողովել Պաւղոսի խռի՛ւ ինչ բազում և դնել ՚ի վերայ խարուկին, ի՛ժ մի ՚ի ջերմութենէն ելեալ կալա՛ւ զձեռանէն նորա*։⁴ Եւ իբրև տեսին բարբարոսքն կախեալ՝ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ուրեմն սպանո՛ղ է այրս այս. որ թպէտ ապրեցաւ ՚ի ծովէն, իրաւունքն ո՛չ ետուն կեալ*։⁵ Եւ նորա թօթափեալ զգազանն ՚ի հուրն, եղև նմա չար և ո՛չինչ.⁶ Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ, կամ անկանելոյ՝ և յանկարծակի՛ մեռանելոյ. իբրև շա՛տ ակն կալեալ, և տեսանէին թէ ո՛չինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցին զբանսն՝ և ասէին թէ աստուած ոմն է*։⁷ Եւ շուրջ զտեղեան զայնուիկ էին գեաւոք, զլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպլիոս. որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ և սիրով

* Ոմանք. Եւ իբրև յագեցան կերակրովքն... թափել զցորեանն ՚ի ծովն։

* Օրինակ մի ընդ Ոսկանայ. Թէ առ ափն ծովուն իցէ... եթէ հնար ինչ։ Բազումք. Ջերմութեանն զնաւն։

* Ի լուս՝. Եւ զխարիսխն հատեալ, ըն՝. համաձայն բազմաց ՚ի բնաբ՝. Ոմանք. Եւ զխարիսխսն հա՛... թողացուցին զխառնելիս թևոցն։

* Օրինակ մի. Եւ յետ կողմն քա՛։

* Ոմանք. Եւ մի ոք լուղիցի։ Յօրինակին պակասէր. Մի՛ ոք լուղիցի։

* Ոմանք. ՚ի խորհրդոցն... զի որ կարողն իցեն ղուղել... և ՚ի ցամաք ելա՛։

* Ոմանք. Յայլ ինչ կահ ՚ի նաւէ անտի։ Ամենայն գրչագիր օրինակք համաձայն մերունս ՚ի մի համար գրեն զբանս՝ այսպէս. Փրծանել յերկիր, և ապրեալք. և գյաջորդն սկսանին զլխագրով. Յայնժամ գիտացաք։

* Ոմանք. Եթէ Սելիտինէ՛ս անուն էր... մարդասիրութիւն առ մեզ։

* Ոմանք. Եւ ՚ի ժողովելն... ՚ի վերայ խարոյկին։

* Ոմանք. Ասեն ցմիմեանս... սպանո՛ղ էր այրս այս, որ թպէտ և ապրեցաւ... իրաւունքն չէտուն դմա կեալ։

* Ոմանք. Դարձեալ դարձուցեալ զբանն ասէին թէ։ Օրինակ մի ՚ի լուս՝. ՚ի վերայ՝ աստուած, նշանակէ՛ ՚ի Բեթղազմէ։

ընկալալ⁸: ⁸Եւ եղև հօրն Պոպլեայ՝ ի ջերմ և յախտ թանջից հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պաւղոս՝ և կացեալ յաղօթս եդ ծունր՝ և բժշկեաց զնա⁹: ⁹Իբրև այս եղև, այլ հիւանդք որ էին ՚ի կղզւոջն՝ գային և բժշկեին¹⁰: ¹⁰որք և բազում պատուով պատուեցին զմեզ. և իբրև գնացաք, ետուն որ ինչ պէտք էին¹¹:

ԼԹ էէ. ¹¹Եւ յետ երից ամսոց ելաք ՚ի նաւ մի Աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր ՚ի կղզւոջն նշանաւորալ Ղիոսկորացւոց¹²: ¹²Եւ իջեալ ՚ի Սիրակուսաս, եղեաք աւուրս երկուս¹³. ¹³ուստի գնացեալ հասաք ՚ի Յռեգիովն: Եւ յետ աւուր միոյ ՚ի շնչել հարաւոյն, երկօրեայք եկաք ՚ի Պատիոլոս¹⁴: ¹⁴Ուր և գտաք եղբարս, աղաչեցեալք ՚ի նոցանէ լինել աւուրս եւթն: Եւ ապա ելաք ՚ի Յռովմ¹⁵. ¹⁵և անտի լուեալ եղբարց զմէնջ, ելին ընդ առաջ մեր մինչև յՈրդոստայն Ապփեայ և Երիցն Կրպակաց. զորս տեսեալ Պաւղոսի գոհացալ զԱստուծոյ՝ և քաջալերեցաւ¹⁶: ¹⁶Եւ իբրև մտաք ՚ի Յռովմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել՝ առանձինն հանդերձ զհնուորաւն՝ պահպանաւ իւրով¹⁷:

¹⁷Եւ եղև յետ երից աւուրց, կոչել նմա զՅրէից գլխաւորս. և իբրև եկին, ասէ ցնոսա. Ես՝ արք եղբարք՝ ոչինչ հակառակ գործեալ ժողովրդեան՝ կամ կրօնիցն հայրենեաց, կապեալ յերուսաղեմէ՝ մատնեցայ ՚ի ձեռս Յռովմայեցւոց¹⁸: ¹⁸Որք իբրև դատեցանն զիս, կամեցան արձակել, վասն և ոչ մի ինչ վնաս մահու գտանելոյ յիս¹⁹: ¹⁹Ի հակառակել Յրէիցն, հարկ եղև բողոքել ՚ի կայսր. իբր ոչ եթէ զազգէն իմնէ ունէի ինչ չարախօսել²⁰: ²⁰վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել և խօսել. քանզի վասն յուսոյն Իսրայէլի կամ ՚ի շղթայս յայսոսիկ²¹: ²¹Եւ նոքա ասեն ցնա. Մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք ՚ի Յրէից, և ոչ եկեալ որ յեղբարց պատմեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն²²: ²²Բայց աղաչեմք ՚ի քէն լսել՝ թէ զինչ խորհիցիս. զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ²³: ²³Ժամ եղեալ նմա օր մի, եկին ՚ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ. և հաւանեցուցանէր զնոսա վասն

* Ոմանք. Ձտեղեան զայն էին: *Յօրինակին*. Գլխաւորք կղզւոյն: *Ուր և ոմանք*. Գլխաւոր կղզոյն... Պոպղիոս:

* Ոմանք. ՚ի ջերմն և յախտ... եդ զձեռն և բժշկեաց:

* Ոմանք. Եւ իբրև այս եղև. և այլ:

* *Օրինակ մի*. Եւ իբրև գնացաք ՚ի տուն՝ տային մեզ որ ինչ պէտքն էին:

* *Յօրինակին*. Որ մերձ էր ՚ի կղզւոջն: *Ոմանք*. Նշանաւոր Ղիոսկորացւոց. և *ոմանք*. նշանաւոր Ղիոս Կուրացւոց:

* Ոմանք. ՚ի Սարակուսաս, եղաք անդ աւուրս երիս: *Ուր Ոսկան*. ՚ի Սիրակուսայ:

* Ոմանք. ՚ի Յռեգիովն. *կամ* ՚ի Յռեգովն... ՚ի Պատիոլոս. *կամ* ՚ի Պատիոլոս:

* Ոմանք. Եւ աղաչեցաք ՚ի նոցանէն լինել անդ. *կամ* լինել առ նոսա աւուրս:

* *Յինգ հնագոյն օրինակք համաձայն մերումս ունին*՝ յՈրդոստայն. *իսկ մնացեալքն գրեն*՝ յՈրդոստայն: *Ուր և օրինակ մի*՝ յՈրդոստեան Ափեա... և Երից Կրպակացն: *Ի լուս*. ՚ի վերայ՝ Երիցն Կրպակաց, *նշանակի*՝ տանձավաճառացն:

* Ոմանք. Պահպանաւ իւրով:

* Ոմանք. ՁՅրէիցն զգլխաւորս... Ես եղբարք... ժողովրդեանն:

* Ոմանք. Դատեցան զիս:

* Ոմանք. ՚ի հակառակելն Յրէից... իբրև ոչ թէ զազ՝:

* Ոմանք. ՚ի շղթայս յայսոսիկ:

* *Այլք*. Ընկալաք ՚ի Յրէաստանէ, և ոչ եկեալ: *Ոմանք*. Եւ կամ խօսեցաւ չարութիւն վասն քո:

* Ոմանք. Յայտնի իսկ է մեզ:

Յիսուսի՝ յօրինացն Սովսիսի և ՚ի մարգարեից՝ յայգուէ մինչև ցերեկոյ*։²⁴ Եւ ոմանք հաւանէին բանիցն, և կէսք չհաւատային*։²⁵ Եւ անմիաբանք լիեալ միմեանց՝ արծակէին։ Յասելն Պաւղոսի բան մի. թէ բարւոք խօսեցաւ Յոզիմ Սուրբ ՚ի ձեռն Եսայեայ մարգարեի առ հարսն մեր*,²⁶ և ասէ. Երթ առ ժողովուրդն, և ասասցես. Լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք*։²⁷ Ձի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, և ակընջօք իւրեանց ծանր լուան, և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօք, և ակընջօք լուիցեն, և սրտիւքն իմասցին, և դարձցին և բժշկեցից զնոսա*։²⁸ Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւնս Աստուծոյ. նոքին և լուիցեն*։³⁰ Եւ եղև զերկեամ մի բովանդակ իւրով վարձու*։³¹ Եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա։³² Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, և ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն համարձակութեամբ*։

Տունք ՍղծՁ։*

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ՆԱԽԱԿԱՐԳԵԱԼ Ի ԳԼՈՒԽ ԳՐՈՑՍ

Ընդ ուսումնասէր և ընդ փոյթ քոյոյ սիրոյդ զարմացեալ՝ ո՛ հայր պատուական, ակնածութեան և հաւանութեան անսացեալ, ընդ նեղ և

* *Ոմանք.* Ջարքայութիւնն Աստուծոյ։

* *Ոսկան.* Եւ ոմանք հաւանէին և կէսք բանիցն չհաւատային։ *Ոմանք.* Եւ կէսքն ոչ հաւատացին։

* *Ոմանք.* Եւ անմիաբան լեալք ՚ի միմեանց... բարւոք ասաց Յոզիմ ՚ի։

* *Ոմանք.* Եւ ասասցես ցնոսա. Լս՛... և տեսանելով տես՛։

* *Ոմանք.* Ծանունս լուան... տեսանիցեն աչօք... և սրտիւք իմաս՛։

* *Ոմանք.* Փրկութիւն յԱստուծոյ. և նոքին և լուիցեն։ *Աստուծոյ Ոսկան ՚ի Լատինականէն առեալ յաւելու համար 29. *Եւ իբրեւ զայս ասաց՝ արտաքս զնացին ՚ի նմանէ Հրէայքն, որք ունէին ՚ի մէջ ինքեանց զբազում խնդիրս։ Որ ոչ ուրեք ՚ի գրչագիրս մեր երևի, որպէս և ոչ յընտրելագոյն օրինակս Յունաց։*

* *Ոսկան.* Ձերկամ մի։

* *Ոմանք.* Ջարքայութիւն Աստուծոյ... վասն Տեառն Յիսուսի, անխափան։

* *Ի վախճանի ոմանք յետ դնելոյ. Տունք և այլն յաւելուն.* Կատարումն Աստուծով Գործոց առաքելոցն. *կամ սոսկ.* Գործք առաքելոցն. *Տունք. և այլն։* *Ձկնի Գործոցս առաքելոց՝ Ոսկան ըստ Լատինական կանոնին կարգէ զՉորեքտասան թուղթսն Պաւղոսի, և ասպա զԹուղթս կաթողիկեայց. ըստ որում ունին և Յունական օրինակք ՚ի լոյս ածեալք յԵրոստացւոց անտի։ Այլ առ հասարակ ամենայն գրչագիրք մեր համաձայն հաւատարիմ Յելլենական գրչագրաց՝ նախ կարգեալ ունին զԹուղթսն կաթողիկեայս, և ասպա զՊաւղոսին. որպէս և մեր եղաք ըստ պատշաճի։*

ընդ նուրբ ծերպս պատմութեան զանձն 'ի ներքս արկի. գյառաջարան Պաւղոսի 'ի մատենիս գրել: Եւ կարի' իսկ յոյժ մեծ քան զմեզ գործ առեալ զանձամբ՝ առ երկիւղի՝ անհնազանդութեան. զմտաւ ածեալ՝ զայն որ յԱռակսն պատմի, եթէ որդի անհնազանդ 'ի կորուստ եղիցի, և հնազանդ՝ արտաքոյ նորին եղիցի: Արդ՝ ան առեալ զքո աղօթսդ տացես ինձ 'ի սատարութիւն. և ըստ օրինակի նաւա՛ցն թևոց թռուցես զիս նոքօք առ Աստուած. որպէս և յայնժամ մեծին Մովսիսի տարածեալ զբազուկս լինէր պաշտպան Իսրայելեան բանակին. զի և ի՛ն խուսափեալ յօղական այսոցն 'ի վերայ յարուցելոց, ուղղեալ զմակոյկ բանին՝ դիմեցից յապահով և 'ի խաղաղ նաւահանգիստ: Եւ արդ՝ սկսեալ 'ի ճառիս ըստ օրինակի ճշմարտութեանն, որպէս և է՛ն իսկ, ըստ իմում կարի կարգեցից զպատմութիւնն: Պաւղոս առաքեալ՝ Եբրայեցի էր յազգէ, 'ի գնդէ Բենիամենի. փարիսեցի ուսմամբ, առ ոտս Գամաղիելի հաւատարիմ վարդապետի ըստ օրինացն Մովսիսի խրատեալ և վարժեալ. հանդերձ այսոքիւք՝ և 'ի Կիւլիկեցւոց 'ի հոյակապ և 'ի հռչակաւոր և յականաւոր՝ 'ի Տարսոն քաղաքի բնակէր. հալածէր և աւար հարկանէր գեկեղեցին Աստուծոյ: Վասն որոյ և այնոցիկ որ սպանանէինն զՍտեփանոս զառաքեալն և զնախավկայն՝ կամակից և հաղորդ էր սպանութեանն. զամենայն զքարկոծչացն զհանդերձս առեալ յինքն ամփոփեալ պահէր. զի զամենեցուն զձեռս պարապեցուցէ՝ 'ի սպանութիւնն. և զլխաւոր ընդ խազմարարսն երևեալ՝ ամենայն ուրեք ջանայր զաստուածութեանն պատգամաւորսն շիջուցանել: Բազում ինչ և մեծամեծ այն էր՝ որ 'ի մմանէ անցք ընդ եկեղեցին անցանէին. և ո՛չ իւիք 'ի յաճախութենէ մոլորութեանն նուազեալ գտանէր. և այնու աստուածապաշտ լինել կամէր, և մեծամեծ ինչ ուղղութիւնս կարգել կարծէր: Որպէս և ինքն իսկ իւրովին 'ի թուղթսն խոստովան լինի. և Ղուկաս պատմէ յերկորորդում գիրսն իւրում: Ոչ միայն 'ի վաղուց հետէ ըստ օրինակի բազմաց 'ի Յրէից անտի՝ ատեա՛յր, և աւուրո՛ց ելանէր 'ի քարոզութեան ճշմարտութեանն, այլ և՛ս առաւել զամենայն ազգն զրգռէր 'ի բարկութիւն: Քանզի իբրև ետես զքարոզութիւնն պայծառացեալ, և զԲանն ճշմարտութեան առաւել քան զՅրէական վարդապետութիւնն ծաղկեալ, խանտացեալ ընդ իրսն՝ կարծէր եղծանել զմեծամեծ կարգս վարդապետութեան նոցա, և զամենայն զփոյթ և զյօժարութիւն հակառակ եկեղեցւոյ խաշանցն սրէր. որպէս զի զնոսա՝ 'ի ճշմարիտ վարդապետութենէն մերժիցէ. կամ վրէժս ինչ արժանի հաւատոցն որ 'ի Քրիստոս իցէ՝ գործիցէ: Արդ՝ առեալ Պաւղոսի թուղթս 'ի քահանայապետիցն և 'ի վարդապետաց որ 'ի ժամանակի անդ էին՝ առ այնոսիկ որ 'ի Դամասկոս Յրեայքն էին՝ տանէր. դիմեալ երթայր, մրմռեալ յարուցեալ իբրև զհեղեղատ սաստիկ. ողողել գերփել կարծէր զայնոսիկ որ 'ի Դամասկոս աշակերտքն էին, և յիւր կորստեան խորխորատն յուղարկել: Իբրև գիտաց Տէր եթէ ապիրատ մոլորութիւն՝ զոգցես թէ իբրև 'ի պատճառս արդարութեան կամաց ստացեալ ունէր, զմիջոցաւ ճանապարհին երևեալ, շրտոյց զնա յաչաց՝ սաստկութեամբ լուսոյն, որ երևեցաւ: Եւ այնպիսի փոփոխումն առնոյր, մինչ զայն, որ այնչափ լլկանս հակառակ եկեղեցւոյն հնարէր, և զամենայն աշակերտեալսն միանգամայն կորուսանել կարծէր, յանկարծակի և առժամայն ի՛ւր սիրելի և հաւատարիմ պատրաստէր. զի

պաշտօնեայ Յիսուսի վաղվաղակի՝ հակառակորդն լինէր. և նոյնժամայն զիրամանս մոլորութեանն՝ ՚ի բաց ընկեցեալ՝ ՚ի պատգամաւորութեան պայման փոխէր, և զՔրիստոսի աստուածպաշտութիւնն խոստովանէր. և առաքել առ Անանիա ոմն աշակերտ Ռամասկացի: Իբրև ետես ճշմարտութեանն քննիչ Աստուած ցածուցեալ զայրն՝ և ՚ի լաւութիւն եկեալ ՚ի չարութենէ անտի, ո՛չ այլազգ ինչ եթէ ո՛չ այնպէս գերծանել նմա ՚ի պատժո՛ց անտի համարէր Տէր. երթայր այնուհետև մկրտէր, և անճառ խորհրդոցն լինէր խորհրդակից, և պաշտպան և հմուտ, մարտակի՛ց քարոզութեանն, և զնոր քարոզութիւնն հաւատացեալ նմա յԱստուծոյ, նորոյ փրկութեան գտանէր պատճառս: Այնչափ փոփոխումն գտեալ երանելոյն Պաւղոսի, մինչև անուանն ևս փոփոխումն լինէր. Սաւղոսն ընդ ընդհանուր լցեալ եկեղեցիս՝ Պաւղոս անուանէր: Եւ այնպէս ՚ի գլխաւոր աստուածպաշտութեան նախանձ հասեալ, մինչ զի ՚ի ճշմարտութենէ աշակերտացն թէ երբէք մեկուսի լինել դիպէր, թղթովք հաստատէր. զի մի՛ միայն ՚ի գործոց, այլ և ՚ի բանից առ յապայ ստացեալ ունիցին զվարդապետութիւնն. և յերկոցունց կողմանց ամրացեալք, անշարժ զաստուածպաշտութեանն հաստատութիւն կրիցեն յանձինս: Յետ սակաւ ինչ ժամանակի դարձեալ յերուսաղէմ դիմեալ երթայր՝ տեսանել զՊետրոս. ուր և բաժանէինն իսկ ՚ի միջի իւրեանց զամենայն տիեզերս. զհեթանոսաց զկողմն առեալ ՚ի բաժնի Պաւղոսի. քանզի Յրէական կողմն հասեալ էր ուսուցանել Պետրոսի: Ընդ բազում քաղաքս և ընդ բազում աշխարհս հատեալ անցեալ՝ գրեթէ զամենայն իսկ Լիւրիկեցիս կրօնիւք աստուածպաշտութեամբն Քրիստոսի ելից. բազում և պէսպէս չարչարանս կրեալ ժուժկալութեամբ վասն Քրիստոսի հաւատոցն, տարեալ բազում և ազգի ազգի վշտաց, զորս ինքն մի ըստ միոջէ գրէ. Լկեալ վասն Աւետարանին: Եւ ամենայնի այնմ յաղթեալ և մերժեալ ՚ի բաց հաւատովքն: Եւ այլ ևս յառաջադէմ կամէր առնել զնա Աստուած, զի եղեալ կիտի՛ւն շրջելոյ նմա ընդ մարդկան, թերևս յամենայն հեթանոսս քարոզեսցի ավետարանն: Անագան ուրեմն երբեմն դարձեալ Պաւղոս ելանէր յերուսաղէմ յանձանձել զսուրբսն որ անդ էին, և աղքատացն դարմանս բաշխել. այն ինչ լինէր նորա անդր հասանել, և ամբոխ յուզէր ՚ի քաղաքին, և ռամիկն զրգռէր զաղմուկ, մինչև ամենայն Յրէայքն առհասարակ խռովէին. զի անհնարին և ծանր աղէտս համարէին զնա ամբաստան ունել, որ երբեմն առաջնորդ և հաղորդ էր մոլորութեանն նոցա. և փոյթ յանձին կալեալ՝ կամէին սպանանել զնա, այլ հասեալ վաղվաղակի Լիւսիայ հազարապետի՝ թափէր զնա ՚ի ձեռաց նոցա, և զօրական օգնականութեամբ՝ իբրև զայր մի պարտաւոր ՚ի Կեսարիա՝ առաքէր. և առեալ ածէին զնա առ դատաւոր ազգին, որում անուն էր Փելիքս: Եւ արդ՝ ինացեալ Պաւղոսի, թէ դաւաճանութիւն իմն լինէր նմա ՚ի Յրէից անտի, վաղվաղակի յատեան կայսեր բողոք հարկանէր. հրաման լինէր նմա առժամանակն մերժել յատենէ անտի. ՚ի դերև ելանէր և Յրէիցն խոկացեալ դաւաճանութիւնն: Ապա և ՚ի Յռովմ իսկ առաքէր յիշխանաց անտի՝ առ կայսր, և անդ զիւր նահատակութիւնս ցուցեալ. և ՚ի վերայ նոցին ճգնութեանց աշխատութիւն յանձին կալեալ, վախճան ևս կենաց ՚ի վերայ ճշմարտութեանն կրօնից ընդունէր. քանզի լաւ համարէր ընդ Քրիստոսի

լինել, քան 'ի մահկանացո՛ւ և յանցաւոր կեանս յամել: Յետ սակաւ միոյ ժամանակի կամեցեալ Ներոնի կայսեր հանել զնա յայսց կենաց, զճշմարիտ և զարդարն՝ կեանսն շնորհէր նմա, և ժառանգաւոր երկնից կացուցանէր, զոր յերկրէն վրիպեցուցանէր: Եւ անդ իսկ երանելոյն Պաւլոսի զբարւոք պատերազմ պատերազմեալ՝ որպէս և ինքն իսկ ասէ. Աստուածայա՛ղթ պսակօք Քրիստոսի վկայիցն պսակեցաւ: Եւ 'ի Յռոմայեցւոց 'ի գեղեցիկ և յարքունական ապարանսն զնորա նշխարս ոսկերացն ամփոփեալ, ամի ամի զօր յիշատակի նորա տօնախմբէն. յառաջ քան զերիս կաղանդացն Յուլեայ, որ օր վե՛ց է Նոոմոն ամսոյ որ է Մարտի, առնեն տօն մարտիրոսութեան նորա: Եւ բազում ևս յառաջ քան զայն ժամանակ՝ խրատ ևս վասն վարուց և առաքինութեան կարգեաց երանելին յաշխարհի. և բազում ինչ վասն պատշաճ գործոց մարդկան յօրինեաց թելադրութիւն. և ամենկին բնաւին իսկ չորեքտասանեքումբք թղթովք այսոքիւք զմարդկան նկարեաց զառաքինութիւն:

Ա. Եւ արդ՝ ունի Յռովմայեցւոց թուղթն, խրատ 'ի Քրիստոս, և մանաւանդ բնական խորհրդոցն օրինակաւ. վասն որոյ և յառաջագոյն կարգեալ է այնպիսի՝ ինչ՝ որպէս առ նորընծայս աստուածպաշտութեան գրեալ:

Բ. Եւ երկրորդն ըստ նմանէ, Կորնթացւո՛ցն է, առ մարդս վաղո՛ւց հաւատացեալս. և ըստ հաւատոցն ո՛չ զնացս արժանաւորս ցուցեալ. որով առաւել՝ նոցա մեղադիր լինի, և 'ի սաստ մատուցեալ:

Գ. Դարձեալ այլ թուղթ գրէ առ նոսա, որ զնոյն նշանակէ. որով հաստատէ զնոսա յուղղութիւն, և զի՛ւր գալուստն առ նոսա խոստացեալ. և սպառնայ:

Դ. Յետ սոցա չորրորդ Գաղատացւոցն, հակառակ այնոցիկ որ 'ի Յրեութիւնն թիւրեալ էին՝ գրեալ. որոց յետ արդեամբք յայտ առնելոյ՝ որպէս թէ հրաժարիցէ՛ 'ի նոցանէ, ասէ. Այսուհետև աշխատ ոք զիս մի՛ արասցէ, զի ես զչարչարանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի մարմնի իմում կրեմ:

Ե. Հինգերորդ՝ առ Եփեսացիսն կայ. առ մարդս հաւատացեալս և հպատակս. յորում իսկզբանն զխորհուրդն իսկ ճառէ՝ հանգոյն Յռոմայեցւոց թղթոյն. երկոցունց 'ի համբաւոյ՝ ծանուցելոց. և են երկոքին անջրպէտ 'ի մէջ արկանելոյ, սկզբունք երախայից և հաւատացելոց նորընծայ վարդապետութիւնք:

Զ. Վեցերորդ՝ կարգեալ է Փիլիպեցւոցն՝ ըստ աճման հաւատացելոց. միանգամայն և պտղաբերաց. զորոց զբարեաց վկայէ 'ի մօտոյ՝ գիտել, և 'ի հեռուստ 'ի նոյն յաւելեալ յօժարեցուցանէ: Ախոյանակից իմն է թուղթս այս Կորնթացւոց թղթոյն, զի ցնոսա ասէ. Նմանօրք ինձ եղերուք: Եւ ցՓիլիպեցիսն, թէ. Նմանողակից ինձ եղերուք: Այլ և պսակ և ուրախութիւն իւր անուանէ զնոսա, զի այնչափ լաւագոյնք էին նոքա քան զԿորնթացիսն:

Է. Եւ յետ սորա կայ, որ առ Կողոսացիսն գրեալ է. առ որս իբրև առ անծանօթս մարմնով, բայց հաւատացեալս հաստատունս. զորս և յառաջադէմս անուանէ. և զգուշանալ՝ հրամայէ 'ի փիլիսոփայութեանն խաբէութենէ, և Հրեական խտրութեանցն չանսալ, և թէ չեն սուրբք 'ի կրօնս, այլ յանխայութեան մարմնոյ: Որոց և զգօրութիւնս թղթոցն քննել՝ հրամայէ: Գրէ և առ Արքիպպոս պատուիրել նոցա զգուշութիւն:

Ը. Յետ ասացելոցս՝ և առ Թեսաղոնիկեցիսն յիրաւի՝ գրեցան երկու թուղթք. յորոց ՚ի միումն գովութիւն նոցա մտադիր հաւանութեանն է, առ յաճմանէ. մինչև զնեղութեանց ևս զփորձ յանձին կրելոց. զորս համենատէ ընդ Յրեաստանի՝ հաւատացեալսն. նոյնօրինակ յիրեանց ազգականաց չարչարանս կրեալ ասէ. Որպէս և նոցա յիրեանցայոցն: Ջորս և պսակ իւրոց պարծանաց և ուրախութիւն անուանէ, և առաւել ևս վասն չարչարանացն մխիթարութիւն մատուցանէ:

Թ. Եւ յետ այսր թղթոյ այլ ևս առ նոսին գրէ, որ ունի՝ զնոցա աճմանն վկայութիւն, և զհամբերութեանն զոր կրէին ՚ի նեղութիւնսն, և վասն վախճանի աշխարհիս վարդապետութիւն, և վասն զգուշանալոյ ՚ի վարս և ՚ի զնացս:

Ժ. Եւ յետ սոցա Եբրայեցւոցն. որոց նմանողս պատուիրեաց լինել յառաջագոյն ասացելոցն. Որ ունի՝ զՅրեական խորհուրդսն, և զանտի փոփոխումնն ՚ի Քրիստոս՝ ըստ յառաջագոյն գուշակելոյ ՚ի մարգարեից անտի: Աստ՝ ՚ի սոյն ածեն փակեն զժողովրդեանն զտգիտական աճումնն թուղթքս:

ԺԱ. Եւ յետ այսորիկ առ Տիմոթէոս կարգեցան երկու թուղթք. յորոց առաջինն ունի զվարդապետաց զգուշութիւն, և զեկեղեցւոյ կարգս, և որով օրինակաւ պարտ իցէ ունել զիշխանութիւն, և տալ հրաման:

ԺԲ. Եւ երկրորդն առ նոյն գրեալ, ունի ըստ աճմանն գովութիւն.

զհաւատոցն նորա որ ՚ի նախնեաց անտի, որպէս թէ ՚ի հանոյ և ՚ի մօրէ՝ ՚ի նա հասեալ. և ՚ի նմին ևս յառաջ մատուցեալ, և այնոցիկ որ ընդ նմայն էին մեղադիր լինի իբրև թերահաւատից: Բայց միայն զՈՆԵՍԻՓորայ զբազում փութոյ վկայէ. և Տիմոթէայ յօժարութիւն տայ յերկրաւորաց զանձն օտարացուցանել. և յիշեցուցանէ և վկայութիւն դնէ վասն քարոզութեանն՝ գովեալ յառաջագոյն զնորա լաւութիւնս: Յետոյ և վասն իւրոյ վախճանաւոր ելին գրէ. Յառաջագոյն ասացեալ զխուժան հերձուածողացն ՚ի վերայ յառնելոյ: Եւ եթէ. Չէ՛ պարտ օտար ինչ համարել զիրսն: Եւ իբրև զբազում իրաց զհանգամանս եցոյց, ապա հրամայէ առ ինքն գալ. թերևս և մարթ իսկ էր զայն ՚ի վախճանին տեսանել՝ ՚ի ժամանակի իւրոյ կատարմանն. զոր և յայտ իսկ արար ասելովն, թէ. Ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ ՚ի վերայ:

ԺԳ. Իսկ ՚ի Տիտոսի Թղթին, թէ ո՛րպիսի ինչ պարտ իցէ լինել քահանայից. նկարէ միանգամայն և զեկեղեցւոյ կարգս:

ԺԴ. Գրէ թուղթ և առ Փիլեմոն վասն հաւատացելոյ ծառային ՈՆԻՍԻՄԱյ, որ յառաջագոյն անպիտան էր, և յետոյ շրջեալ յայնց բարուց, ազատութեան արժանի լինէր բարեխօսութեամբ առաքելոյն. այլ և վկայ ևս Քրիստոսի լինէր ՚ի Յռովմայեցւոց քաղաքի անդ՝ առ Տերտիղեաւ, որ զայնպիսի իշխանութիւն հազարապետութեան ունէր, բարձաբեկութեան հարուածովք զվճիռ մարտիրոսութեանն ելից համբերութեամբ: Եւ այսպէս ամենայն գիրքս ազգի ազգի՝ օրինակս առաքինութեան ունին առ ՚ի յաճումն. և ի՛նչ ինչ համառօտիւք վասն նոցունց ասասցի ՚ի մէնջ. և զիւրաքանչիւր թղթոցն մի ըստ միոջէ. նախ՝ զգլխոցն դիր կարգեսցուք. զոր ուրումն իմաստնոյ և քրիստոսասիրի՝ ՚ի հարցն մերոց աշխատեալ է: Եւ ոչ զայն միայն, այլ և զընթերցուածոցն հաւաստեաւ որոշմունս, և

զաստուածեղէն գրոց վկայութիւնս, զդիւրացոյցն զգիւտս մեզէն իսկ արուեստախօսեալ բովանդակեսցուք. որով երթեալ զհետ միատարր ընթերցուածոցն, դիցուք զայն առընթեր յետ իւրաքանչիւր միոյ միոյ յառաջաբանութեանցն:

Բայց կարևոր համարեցայ սակաւուք և զժամանակ քարոզութեանն Պաւլոսի նշանակել ՚ի ժամանակական կանոնաց Եւսեբի Պամփիլեայ, առնել զբովանդակութիւնն: Ուստի և զգիրսն իսկ ՚ի ձեռն առեալ, և զնոյն բացեալ՝ գտի՝ զչարչարանս Փրկչին մերոյ յութեամբսն աներորդի ամի Տիբերեայ կայսեր լիեալ. և իսկ և իսկ յերրորդում աւուր գյարութիւնն. և դարձեալ ՚ի քառասներորդումն զվերանալն Քրիստոսի յերկինս: Եւ յետ սակաւ ինչ աւուրց տեսի՝ անդէն զընտրութիւն առաքելոցն ՚ի սպասաւորութիւն. և զնոյն իսկ զանուանակիրն զՍտեփանոս, և զայլս նորատունկս ընդ նմա. և յետ այսորիկ ամբոխ յոյժ ՚ի Յրէից ՚ի վերայ հասեալ տեսանէի, որպէս այժմ ևս վերագոյնն ասացաք. և զՍտեփանոս պատերազմեալ անդ, և զՊաւլոս կամակից սպանմանն. որ յետ սակաւ ինչ միոյ մատուցեալ առ իշխանս Յրէիցն՝ թուղթս առեալ տանէր առ Յրեայսն որ ՚ի Դամասկոս՝ զաշակերտացն. և զմիջոցաւ ճանապարհին լինէր նմա բարբառ յԱստուծոյ: Եւ մօտ ՚ի վերանալ ամին այնորիկ ՚ի մտանել իննևտասներորդի ամին Տիբերեայ կայսեր, սկեզբն առնելոյ քարոզութեանն Պաւլոսի՝ ասէ պատմութիւնն: Եւ ընդ ամենայն տիեզերս ընթացեալ աւետարանէր զՔրիստոսի աստուածայաշտութիւնն, մինչև ցերեքտասան ամն Կղաւդեայ կայսեր, ՚ի դատաւորութեան Յրէից Փիլիպեայ. առ որով ամբաստանութիւն կրեալ Պաւլոսի ՚ի Յրէիցն, առնէր ընդ անձին պատասխանի. որ զառաքեալն ՚ի Կեսարիա ՚ի բանտին կալաւ զերկուս ամս. յետ որոյ յաջորդեալ ՚ի նմանէ զիշխանութիւնն Պորկեայ Փեստոսի, իսկ և իսկ դատել զՊաւլոս յօժարեաց, Յրէիցն մեծ իմն երախտիս համարեալ: Ապա յայնժամ զմտաւ ածեալ երանելոյն, թէ ո՛չ այլազգ կարէ զերծանել ՚ի դաւաճանութեան անտի, թէ ոչ հասեալ յատեանն առ կայսր բողոք հարկանիցէ. և ապա անտի առաքէր ՚ի Յռոմ առ Ներոն կայսր: Էր ընդ նմա և Արիստարքոս. զոր և ՚ի դէպ իսկ ՚ի միում թղթոցն գերեկից իւր կոչէ. և Ղուկաս՝ որ զԳործս առաքելոցն գրեաց ՚ի գիրս և աւանդեաց: Եւ անդ ՚ի Յռովմայեցւոց քաղաքին գերկեամ մի ողջոյն՝ դարձեալ նովին կապանօքն պահէր Պաւլոս: Ձայս՝ և մինչև ցոյն պատմէ Ղուկաս ՚ի Գործս առաքելոցն, որ ՚ի նմին իսկ ժամանակի զգիրսն մատենագրեաց. և մանաւանդ զի զայլսն ո՛չ այնպէս ինչ ստուգիւ գիտացեալ, և ո՛չ զվկայութիւնն Պաւլոսի կարգեաց ՚ի գիրս. քանզի թողին զնա Ղուկաս և Արիստարքոս՝ և գնացին: Բայց Եւսեբի զժամանակն որ յետ այնորիկ էին, ճշդիւ խուզեալ պատմեաց մեզ. և յերկրորդ տոմարին Եկեղեցական պատմութեանն զվկայութիւն նորա. և ասէ զՊաւլոսն եթէ արծաւ շրջէր. և նշանակէ՝ թէ անարգել զԲանն Աստուծոյ քարոզէր. և թէ յայնժամ առաջի՝ Ներոնի կայր յատենի Պաւլոս, և առնէր ընդ անձին պատասխանի. և դարձեալ ՚ի քարոզութեանն սպասաւորութիւն հասեալ. վասն արծակելոյն ՚ի կայսերէ. և այլ ևս երկուս ամս աւետարանեաց: Եւ ՚ի գլուխ մոլորութեանն հասեալ Ներոնի՝ սպան նախ զԱգրիպինա զիւր մայր, և ապա զԽորաքոյր իւր, և զՅոգտաբիա զկին իւր, և զայլս բազումս ազգականս իւր. ապա համօրէն

իսկ շարժեաց զհալածանս 'ի վերայ քրիստոնէից. ապա և յառաքելոցն սպանութիւնս մտաբերեալ, կոչեաց զՊաւղոս և միւսանգամ կացոյց յատենի. էր ընդ նմա դարձեալ և Ղուկաս. և անդ հասանէր Պաւղոս 'ի յերեսներորդուն և վեցերորդուն ամի կենարար չարչարանացն Տեառն. և յերեքտասներորդուն ամի Ներոնի կայսեր վկայեաց, սրով զգլուխ երանելոյն կտրեալ: Եւ արդ՝ է յիննուտասներորդէ ամէ Տիբերեայ կայսեր՝ յորմէ քարոզել զվեւտարանն սկսաւ մինչև 'ի քսաներորդն երկրորդ ամբ չորք. և Գայիոսի նոյնպէս ամբ չորք. դարձեալ՝ և Կղաւղեայ սակաւ՝ ինչ պակաս քան զամս չորեքտասան. զոր և յաջորդեալ Ներոնի՝ յերեքտասներորդուն ամի իւրոյ իշխանութեանն սպան զառաքեալն: Եւ արդ՝ գրէ ինքն իսկ Պաւղոս առաքեալ առ Տիմոթէոս՝ վասն առաջին պատասխանատրութեանն իւրոյ, և ասէ այսպէս, թէ. Յառաջին պատասխանատրութեանն իմուն՝ ո՛չ որ եղև ընդ իս. այլ ամենեքեան թողին զիս. մի՛ համարեսցի նոցա այն. այլ Տէր պաշտպանեաց ինձ և զօրացոյց զիս. զի ինև քարոզութիւնն հաստատեսցի. և լուիցեն ամենայն հեթանոսք. և ապրեցայ 'ի բերանոյ առիւծուն: Եւ զայս՝ զՆերոնէ ասէր: Այլ վասն երկրորդին՝ յորուն վախճանելոց էր. ըստ վկայութեանն ասէ. Ջբարուք պաշտօնդ քո կատարեալ կալ. զի ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ 'ի վերայ: Եւ զի Ղուկաս միւսանգամ ընդ նմա էր, յետ սակաւ միոյ ասէ 'ի թղթին, թէ. Ողջոյն տայ քեզ Ղուկաս որ ընդ իս է: Եւ արդ՝ է ամենայն ժամանակ քարոզութեանն Պաւղոսի՝ քսան և մի ամ. և այլ ևս երկու ամբ, զորս 'ի Կեսարիա 'ի բանտին կատարեաց. և առ նոքիմբք դարձեալ այլ ևս 'ի Յռոմ գերկուս ամսն առաջինս. և յետոյ տասն ամ. որպէս լինել ամենայն ամաց միահամուռ 'ի կոչմանէ նորա մինչև ցկատարումն՝ երեսուն և հինգ ամ: Այլք մի՛ որք այսոքիւք մեղադիր լիցի և աղարտիցէ զոր ասեմս, թէ 'ի Գործս առաքելոց Ղուկայ զայդ չի՞ք ասացեալ: Ո՞ այր դու մտացի որ հարցանեսդ, եթէ վասն զի 'ի Գործս առաքելոցն չի՞ք գրեալ՝ չընդունիցիս. և ասիցես, թէ Ա՛ծ այսր զՂուկաս, որ զվկայութիւնն Պաւղոսի պատմէ: Եթէ երկուք միայն ամօքն այնոքիւք թուեալ էր Ղուկայ զՊաւղոսի կեանսն 'ի Յռոմ, և զվկայութիւն նորա պատմեալ էր մեզ. ապա և ո՛չ միոյ ինչ իրիք մեզ պէտք էին քննութեան ժամանակացն: Այլ քանզի զվկայութիւն նորա սա ո՛չ գրեաց. զի յետոյ այլուր զգիրսն գրեաց, հաւանեաց Եւսեբի ժամանակագրի. և իբրև սիրելի մտադիւրութեամբ ընկալ զպատմութիւնն: Քանզի Քրիստոսի՛ աշակերտացն հաւանութեամբ, և հաւատովք զհարցն վարդապետութիւն և զաւանդութիւնս ընկալեալ 'ի շինուած անձանց, արքայութեանն երկնից լինին ժառանգաւորք:

Վկայութիւնք Պաւղոսի առաքելոյ

Առ Ներոնիւ կայսերբ Յռովմայեցւոց վկայեաց անդ Պաւղոս առաքեալ. կտրեալ զգլուխ սուսերաւ, յերեսներորդի և վեցերորդի ամի կենարար չարչարանաց: Ջբարուք պատերազմ պատերազմեալ 'ի Յռոմ քաղաքի. որ օր հինգ էր Պաննոնս ամսոյ, որ կոչի Յռոմայեցւոց յառաջ քան զերիս կաղանդացն Յուլիս ամսոյ, որ է Մարգաց ամիս. յորուն կատարեցաւ

սուրբ առաքեալն իւրով վկայութեամբ, ՚ի վաթսներորդի և յիններորդի ամի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն գալստեան: Եւ արդ՝ է ամենայն ժամանակն, յորմէ հետէ վկայեացն Պաւղոս, երեք հարելւր և երեսուն ամ. մինչև ցշորրորդ հիպատին Արկադեայ. երկուց եղբարց ինքնակալաց Աւգոստից թագաւորաց, յիններորդում Ինդիքտիոնին. ՚ի հինգետասներորդում շրջանակի ամացն յամսեանն Յունի, որ է Մարերի, որ օր քսան և ինն էր ամսոյն: Եւ ես ստոյգ նշանակեցի զժամանակ վկայութեանն Պաւղոսի*:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Հռոմայեցիս Թղթոյն

Ձայս առաքեաց ՚ի Կորնթոսէ, մինչդեռ ո՛չ էր տեսեալ զՀռոմայեցիսն. և անձկացեալ էր տեսանել զնոսա. և յառաջագոյն ընկալաւ՝ զհաւատս նոցա, իբր թէ ետես զնոսա յետ այնորիկ, նշանակէ թէ բազում անգամ անձկացեալ էր գալ առ նոսա՝ և ո՛չ կարացեալ: Ապա և վարդապետական զթուղթս արար վասն կոչմանն հեթանոսաց. և զի թլփատութիւնն ժամանակաւ էր՝ և այժմ խափանեալ է, և թէ Քրիստոսիւ արձակեցաւ յանցաւորութիւնն Ադամայ, և ստուեր օրինացն էանց. և զկոչումն հեթանոսաց ըստ կարգի տպաւորէր սա, և ցուցանէր ամենայն մարդկան թէ անկցորդ եղեաք օրինացն. և զամենեսեան ուսուցանէ բնութիւնն, և յայսմ յարարածոցս կարօղ են ճանաչել զԱստուած: Եւ այժմ կամաւ պատճառէ յառաջագոյն զԲելլենացիսն, եթէ Աստուած յայտնեաց նոցա զիւր գիտութիւնն ՚ի գործոց աշխարհիս, և զմշտնջենաւոր զօրութիւն նորա, որ է Բան նորա որով զամենայնն արար: Իսկ սոքա ո՛չ ծանեան յարարածոցս, եթէ է Աստուած նոցա Արարիչ, և արարածքն աստուածագործք. այլ մանաւանդ նոքա և զարարածս պաշտեն: Պատժէ այսուհետև զՀրէայսն եթէ ո՛չ պահեցին զօրէնսն, այլ և մանաւանդ անցանելով ընդ օրէնսն՝ զԱստուած անարգեցին: Եւ այսպէս ՚ի միասին վիճակեալ զՀրէայսն և զԲելլենացիսն, կոչէ և քննութիւն առնէ վասն անօրէնութեան. զի ցուցցէ եթէ հաւասարք են ամենեքեան. ասացեալ զամենեսեան պարտաւոր՝ զՓրկիչն աղաչել վասն շնորհացն և ազատութեանն: Ասէ և առ Հրէայսն գալ, և կոչօղ եղեալ հեթանոսաց, սակայն բռնութեամբ. դադարեալ թլփատութեանն և ստուերական օրինացն, զի Աբրահամ ասէ ո՛չ ՚ի թլփատութեան, այլ նախ քան զթլփատութիւնն արդարացաւ, և անուանեցաւ Աբրահամ. զի հայր բազմաց առ յապա լինելոց էր որք յանթլփատութեան հաւատսն էին, որ

* Բաց ՚ի Յառաջաբանից աստի և ՚ի ցուցակաց զլիսոց Գործոց և Թղթոցն առաքելոց, Եւթադիոսի արարեալ է նաև Բովանդակութիւնս ընթերցուածոց՝ որ ՚ի նոցանէ յիւրումն եկեղեցւոց պաշտէին ՚ի նախնումն. հանդերձ այլ ևս ընդարձակ ցուցակօք վկայութեանց Հին Կտակարանաց յիւրաքանչիւր գիրսն յայնոսիկ, որպէս տեսանի ՚ի Յունական սկզբնագիրս: Այլ Հայկական օրինակք մեր ունելով և եթ զՊաւղոսեան թղթոցն, պատշաճ համարեցաք զանց առնել և զսովաւ, իբրև անկատար՝ և անպէտ մեզ առայժմ. նա և միջամուխ երկարածգութեամբ՝ թերևս և ոտնառութեան առիթ վերծանողաց մատենիս:

և յետ արդարութեանն էառ զթլփատութիւնն 'ի մարմինն. զի նշան լիցի որոց մարմնով լինելոց էին 'ի նմանէ: Դադարելոց էր երբեմն թլփատութիւնն յորժամ հեթանոսք լինէին որդիք Աբրահամու, սկսեալք քաղաքավարիլ ըստ հաւատոցն Աբրահամու, որով արդարացաւն մինչ էր յանթլփատութիւնն. զսա շնորհիւն անուանեաց Աբրահամ, և բռնութեամբ եկն առ նշանակն, զի դադարելոց էր նշանակն: Եւ եթ հեթանոսք բռնադատէին թլփատել խափաներ անունն Աբրահամ, և կոչէր Աբրամ. որ Աբրահամ յԱստուծոյ անուանեցաւ: Ո՛չ իւիք թլփատել հեթանոսաց. այլ ո՛չ և սոքա ևս որ մարմնով էին Յրեայք. զի ո՛չ երբէք այսու հաստատէր անունն, և հայր ազգաց բազմաց կոչէր. և ո՛չ ինչ ապա պիտոյ է սոցա թլփատել, բաւական է հաւատքն Աբրահամու: Այլ և ո՛չ ինչ 'ի ստուերական օրինացն, և ո՛չ 'ի նմանէ՝ այլ 'ի հաւատոց արդարացաք. որպէս և Աբրահամն: Ջայս ամենայն այսպէս տպաւորեաց. և ցուցանէ դարձեալ, եթէ այլ ոք երբէք ո՛չ եղև փրկիչ շնորհօք՝ Իսրայէլի և հեթանոսաց, և ջնջիչ առաջին մեղացն Ադամայ որ առ ամենեսեան եղև, և այլ իւիք ո՛չ կարացին մաքրիլ, բայց Քրիստոսիւ Աստուծով: Ջի զանէծսն որ իսկզբանէ եղև, այլ ումեք անկար էր արձակել, կամ զգրեալսն. քանզի և այլ ումեք անկար էր, եթէ ո՛չ էր զգեցեալ զմարմին Որդին Աստուծոյ և եղեալ մարդ. և զայս մատուցեալ վասն ամենեցուն, զի զամենեսեան ազատեսցէ 'ի մահուանէ. և վասն զի միով մարդով մեղք եկն յաշխարհ, յաղագս այսորիկ և միով մարդով շնորհն եղև: Եւ իբրև զբարի տնօրէն զՅրեայսն մխիթարէ, զի. Ո՛չ երբէք յանցաւոր ասէ՝ էք օրինացն, եթէ 'ի Քրիստոս հաւատայք: Եւ ընտանենայ առ հեթանոսն մի՛ երբէք ամբարտաւանել 'ի վերայ Իսրայէլի. այլ գիտել եթէ ոստք են 'ի վերայ արմատոյն. քանզի ինքեանք 'ի նոցանէ արմատացան: Յետ այսորիկ յորդորական առնէ զբան վարդապետութեանն կատարեալ զթուղթն:

Գլուխք Յոսվմայեցոց Թղթոյն

Աւետարանական վարդապետութիւն վասն առ արտաքինսն շնորհացն Քրիստոսի, և որ ընդ շնորհօքս են. և վասն յուսոյն և հոգևոր առաքինութեան:

ա. Արդ՝ նախ յետ սկզբանն, վասն դատաստանաց հեթանոսաց՝ որք ո՛չ պահեցին զբնականսն:

բ. Վասն դատաստանաց Իսրայէլի՝ որ ո՛չ պահեաց զօրինականսն:

գ. Վասն առաւելութեան Իսրայէլի՝ որ եհաս աւետեացն:

դ. Վասն շնորհացն որով միայն արդարանան մարդիկ, և ո՛չ ըստ ազգի ընտրութեան, այլ ըստ Աստուծոյ պարգևացն՝ հասարակապատիւք ըստ օրինակին Աբրահամու:

ե. Վասն հանդերձեալ յուսոյն:

զ. Վասն ընծայութեան առ 'ի մերոյ փրկութեան եղելոյ մարդոյն Յիսուսի Քրիստոսի, փոխանակ անկելոյն իսկզբանէ երկրածնին Ադամայ:

է. Վասն պարտական հաւատովք գործոցն բարութեան:

ը. Երկրորդութիւն վասն շնորհօքն կենաց:

թ. Վասն յօրինաց անտի դատապարտութեան յաղագս մեղաց:

ժ. Վասն մարդկութեան բնութեան կարեաց, անհնարին լինելոյ առ 'ի

միաբանութիւնն օրինացն:

ժա. Վասն մերկանալոյ ՚ի բնական կարեաց միաբանութեամբ ընդ հոգւոյն:

ժբ. Երկրորդութիւն՝ վասն հանդերձեալ փառացն սրբոց:

ժգ. Վասն պարտական առ ՚ի մէնջ սիրոյն Քրիստոսի:

ժդ. Վասն անկանելոյն Իսրայէլի՝ և տարագիր լինելոյ, և կոչման ճշմարտին որ ընտրեցաւ ՚ի հեթանոսաց:

ժե. Ջի ըստ ապստամբութեանն եղև տարագրութիւնն առ ՚ի յանգիտութիւնն կործանելոյ, և ո՛չ պատշաճելոյ նոցա ըստ քարոզութեանն:

ժզ. Վասն կիտին որով ելին նոքա, որպէս զի յերկրորդում անդրէն մտանել ջանայցեն, առ նախանձու մեծարելոյ հեթանոսաց, և կարգելոյ ըստ հաւատացելոցն Իսրայէլի:

ժէ. Խրատ վասն առաքինութեան որ առ Աստուած և առ մարդիկ. ա. Յորս ընդ միմեանս միաբանութիւնն է: բ. Վասն Աստուծոյ պաշտամանն: գ.

Վասն առ հակառակօղսն անոխակալ լինելոյ: դ. Վասն իշխանաց

հնազանդ լինելոյ: ե. Վասն զգաստութեան և հեզութեան: զ. Վասն ՚ի կերակուրս և յաւուրս անկշիւ միտս ունելոյ:

ժը. Վասն նմանօղ Քրիստոսի անոխակալութեանն լինելոյ:

ժթ. Վասն իւրոյ սպասաւորութեանն որ յարևելս և յարևմուտս:

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՈՌՎՍԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

աբ. ¹Պաւղոս ծառայ Քրիստոսի Յիսուսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ* . ²որ յառաջ խոստացաւ ՚ի ձեռն մարգարէի՛ց իւրոց գրովք սրբովք* , ³վասն Որդւոյ իւրոյ. եղելոյ ՚ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ* . ⁴սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան. ՚ի յարութենէ՝ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ* . ⁵որով ընկալաք շնորհս և առաքելութիւն ՚ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս վասն անուան նորա* . ⁶յորս և դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի* . ⁷ամենեցուն

* Յօրինակին պակասէր ՚ի վերնագրիս անուն՝ Պաւղոսի առաքելոյ. զոր առեալ յայլոց գրչագրաց՝ եղաք զառաջինն ըստ պատշաճի:

* Ոմանք. Ծառայ Յիսուսի Քրիստոսի:

* Ոսկան. Ջոր յառաջ խոստա՞: Ոմանք. Որ յառաջն խոս՞:

* Ոմանք. Դաւթի ըստ մարմնոյն: Օրինակ մի յաւելու. Դաւթի, ըստ աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ մարմնոյ սահմա՞:

* Ոմանք. Ըստ Հոգւոյն սրբութեամբ:

* Ոմանք. Եւ հնազանդութիւն հաւատոյ:

* Ոսկան. Ընդ որս և դուք էք:

որոց էք 'ի Զոռվմ՝ սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Զօրէ մերմէ և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ*։ ⁸Նախ՝ գոհանամ զԱստուծոյ իմոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն ձե՛ր ամենեցուն. զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ*։ ⁹Վկայ է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգևով իմով յաւետարանի Որդւոյ նորա, թէ ո՞րպէս գիշատակս ձեր առնեմ*։ ¹⁰յամենայն ժամ յաղօթս իմ աղաչելով, զի թերևս երբէք յաջողեսցի ինձ կամօքն Աստուծոյ գալ առ ձեզ: ¹¹Քանզի անձկացեալ են տեսանել զձեզ, զի փոխեցից 'ի ձեզ շնորհս ինչ հոգևորս՝ առ 'ի հաստատել զձեզ*։ ¹²այսինքն է, մխիթարակից լինել ձեզ վասն ընդ միմեանց՝ իմոյ և ձերդ հաւատոց*։ ¹³Ո՛չ կամիմ եթէ տգէտք իցէք եղբարք. զի բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ, և արգելայ մինչև ցայժմ. զի և 'ի ձե՛զ գտից պտուղ ինչ՝ որպէս և յայլ հեթանոսս: ¹⁴Քանզի Յունաց և բարբարոսաց, իմաստնոց և անմտից պարտապան են. ¹⁵այնպէս որչափ իմովսանն յօժարութեամբ, և ձե՛զ որ 'ի Զոռնդ էք աւետարանել*։ ¹⁶Ձի ո՛չ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց. նախ Զրէի՛ և ապա՝ հեթանոսի*։ ¹⁷Ձի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի հաւատոց 'ի հաւատս. որպէս և գրեալ է, թէ արդարն 'ի հաւատոց կեցցէ*։

Ա ազ. ¹⁸Քանզի յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ յերկնից՝ 'ի վերայ ամենայն անպարշտութեան և անիրաւութեան մարդկան. որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին*։ ¹⁹Վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է 'ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա: ²⁰Ձի աներևոյթք նորա իսկզբանէ աշխարհի՛՝ արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն, և աստուածութիւն նորա. զի ո՛չ գտանիցեն ամենկին տալ պատասխանի*։ ²¹Ձի ծանեան զԱստուած, և ո՛չ իբրև զԱստուած փառաւորեցին՝ կամ գոհացան. այլ նանրացան 'ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա*։ ²²զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան: ²³Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ՝ 'ի նմանութիւն պատկերի եղծանելի՛ մարդոյ, և թռչնոց, և չորքոտանեաց, և սողնոց: ²⁴Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած 'ի ցանկութիւն սրտից նոցա՝ 'ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց*։ ²⁵որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան. հնազանդեցան՝ և պաշտեցին զարարածս, և ո՛չ զՎրարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն: ²⁶Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած՝ 'ի կարիս անարգութեան. զի է՛գք նոցա փոխանակեցին զպէտս բնականս 'ի պէտս

* *Ոմանք.* Ամենեցուն որ էքդ 'ի Զոռն, սիրելեացդ:

* *Ոմանք.* 'Ի ձեռն Տեառն Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք.* Պաշտեմ հոգ... Որդւոյն նորա... գիշատակ ձեր. *և օրհնակ մի.* Ձյիշատակսն նորա առնեմ:

* *Յօրհնակին պակասէր.* Շնորհս ինչ:

* *Ոմանք.* Վասն ընդ միմեանս իմոց և ձերոյդ հաւատոց:

* *Ոմանք.* Այնչափ, որպէս իմովսան յօժա՛:

* *Ոմանք.* Զրէին՝ և ապա հեթանոսին:

* *Ոմանք.* Արդարութիւնն Աստուծոյ նովաւ յայտնեսցի 'ի հաւատոց 'ի հա՛:

* *Ոմանք.* Բարկութիւնն Աստուծոյ... 'ի վերայ ամբարշտութեան: *Ոսկան յաւելլու.*

Ձճշմարտութիւնն Աստուծոյ անիրա՛:

* *Յօրհնակին.* Իմացեալ տեսանի: *Ոմանք.* Մշտնջենաւորութիւնն... և աստուածութիւնն:

* *Ոմանք.* Անմտութեամբք սիրտք նոցա:

* *Օրհնակ մի.* Ձմարմինս նոցա յանձինս իւրեանց:

անբնական*։²⁷Նոյնպես և արուստն թողեալ զբնական պէտս իզութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց՝ ի միմեանս. արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին, և զդարձ փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին*։²⁸Եւ որպէս զի ո՛չ ընտրեցին զԱստուած ունել ՚ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ՚ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս. ²⁹զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ազահութեամբ, չարութեամբ, լի՛ նախանձու, սպանութեամբ, հեռի՛ւ, նենգութեամբ, չարաբարութեամբ, շոգմո՛գք*, ³⁰չարախօսք, աստուածատեացք, թշնամանօղք, ամբարտաւանք, ամբարիաւաճք, գտի՛չք չարեաց, զծնօղս անարգութ. ³¹անմիտք, ուխտադրութք, անագորոյնք, աննուէ՛րք, անողորմք*։ ³²Ոյք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ, եթէ ոյք զայսպիսիսն գործեն արժանի՛ են մահու. և ո՛չ միայն որ զայն առնեն, այլ և որ կամակիցն լինին գործելեացն*։

2

Գլուխ Բ

¹Վասն որոյ առանց պատասխանի՝ տալոց ես ո՛վ մարդ՝ որ դատիսդ. զի որո՛վ դատիս զընկերն, զանձն քո դատապարտես. զի դու զնոյն գործես՝ որով դատիսն*։ ադ. ²Քանզի գիտեմք՝ եթէ Աստուծոյ՝ դատաստանն ճշմարտութեամբ է, ՚ի վերայ այնոցիկ որ զայնպիսիսն գործեն*։ ³Իսկ արդ՝ խորհիցի՞ս զայս ո՛վ մարդ, որ դատիս զայնոսիկ որ զայնպիսիսն գործեն՝ և դու զնոյն գործես, եթէ դու ապրելո՞ց իցես ՚ի դատաստանացն Աստուծոյ*։ ⁴Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա, և զմերելո՛վն և զերկայնմտութեամբն արհամարհիցես. չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապախշարութիւնն ածէ։ ⁵Այլ ըստ խստութեան քում, և ըստ անզեղջ սրտի՝ զանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան, և յայտնութեան արդար դատաւորութեանն Աստուծոյ*, ⁶որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց*։ ⁷որ համբերութեամբ են ՚ի գործս բարութեան՝ և զփառս և զպատիւ և զանեղծութիւն՝ խնդրեն, զկեանսն յաւիտենից*։ ⁸Իսկ որ ՚ի հակառակութենէ անտի են, և ապստամբք ՚ի ճշմարտութենէն, և զհետ երթեալ զանիրաւութեան, բարկութիւն և սրտմտութիւն*։ ⁹Նեղութիւն և անձկութիւն ՚ի վերայ ամենայն մարդոյ որ գործէ

* *Ոսկան.* Վասն այսորիկ մատնեաց։

* *Ոմանք.* Եւ արուստ թող՝... իզութեան... մոլորութեան նոցա։

* *Ոսկան.* Նենգութեամբ, չարաբարոյութեամբ։

* *Ոմանք.* Անագորոնք, աննու՛ն։

* *Ոմանք.* Որք հասեալ էին... թէ ո՛յք զայնպիսիսն. *կամ՝* զայսպիսիսն գործեն... որ զայնն առնեն... կամակից լինին։

* *Բազունք.* Պատասխանի տալոյ ես։ *Օրինակ մի.* Ձի որով դատապարտես զընկերն։

* *Ոմանք.* Ձայսպիսիսն գործեն։

* *Ոմանք.* Իսկ արդ՝ գիտիցես ո՛վ մարդ... զնոյն գործես... ապրելոց ես ՚ի դատաստանաց անտի Աստուծոյ։

* *Օրինակ մի.* Ըստ խստասրտութեան քում։ *Ոմանք.* Անզեղջ սրտի քո զան՛ն։

* *Ոմանք.* Ըստ գործոց իւրոց. *կամ՝* ըստ գործս իւր։

* *Ոմանք.* Որ համբերութեամբն են։ *Ոսկան.* Ի՛ գործս բարկութեան, զփառս և զպատիւ։

* *Ոմանք.* Անտի իցեն։ *Ոսկան.* Եւ զհետ երթան անիրաւութեան. բար՛ն։

զար. նախ՝ Զրէին, և ապա՝ հեթանոսի*։ ¹⁰Փառք և պատիւ և խաղաղութիւն ամենայնի որ գործէ՝ զբարի. նախ՝ Զրէին, և ապա՝ հեթանոսի*։

Բ աե. ¹¹Ձի ո՛չ է ակնառութիւն առաջի Աստուծոյ։ ¹²Որք միանգամ արտաքո՛յ օրինացն մեղան, արտաքո՛յ օրինացն և կորնչին. և որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն դատեսցին*։ ¹³Ձի ո՛չ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարացին*։ ¹⁴Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնսն ո՛չ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն. նոքա որ զօրէնսն ո՛չ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք*։ ¹⁵որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ՝ ՚ի սիրտս իւրեանց. վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել՝ զմիմեանս ՚ի խորհրդո՛ց իւրեանց, կամ թէ պատասխանի՝ իսկ տալ*։ ¹⁶յաւուրն յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան, ըստ աւետարանիս իմում ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի*։ ¹⁷Ապա թէ դու Զրեայ՝ անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնսն, և պարծիս յԱստուած*, ¹⁸և գիտես զկամս նորա, և ընտրես զլաւն, և խրատեալ ես յօրինացն. ¹⁹վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց, լո՛յս խաւարելոց, ²⁰խրատի՛չ անզգամաց, վարդապետ տղայոց. ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան յօրինացն*։ ²¹Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն, զանձն քո՝ ո՛չ ուսուցանես. որ քորոզես չգողանալ՝ գողանաւ. ²²որ ասես չչնալ՝ շնաւ. որ գարշիս ՚ի մեհենեաց՝ զսեղանս կողոպտես*։ ²³որ օրինօքն պարծիս, յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես*։ ²⁴Ձի անուն Աստուծոյ վասն ձե՛ր հայիոյի ՚ի մեջ հեթանոսաց՝ որպէս և գրեալ է*։ ազ. ²⁵Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես. ապա թէ յանցաւոր օրինացն իցես, թլփատութիւն քո անթլփատութիւն եղև*։ ²⁶Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ. ոչ ապաքէն անթլփատութիւն նորա ՚ի թլփատութիւն համարեսցի*։ ²⁷և դատիցի որ ՚ի բնէ՝ անթլփատութիւնն է, զօրէնսն կատարելով, զքե՛զ որ գրովն և թլփատութեամբն յանցաւոր օրինացն իցես*։ ²⁸Ձի ո՛չ եթէ որ յայտնի Զրեայն է, և ո՛չ որ յայտնի մարմնով թլփատութիւնն*։ ²⁹այլ որ ՚ի ծածուկ Զրեայն է, և թլփատութիւն սրտի՛. հոգւո՛վ՝ և ո՛չ գրով. որոյ գովութիւնն, ո՛չ ՚ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ*։

* *Ոմանք.* նախ Զրէի և ապա հեթանոսին։

* *Ոմանք.* նախ Զրէի և ապա հեթանոսին։ *Ոմանք.* Փառք պատիւ և խաղաղութիւն ՚ի վերայ ամենայնի որ գոր՛։

* *Ոմանք.* Օրինօքն և դատեսցին։

* *Ոսկան.* Որք լսողք... այլ առնողք։

* *Ոմանք.* Ձօրէնս ոչ ունին... զօրինացն գործեցին. և *ոմանք.* զօրինացն գործեն։

* *Ոմանք.* Յանդիմանեալ զմիմե՛ն։

* *Ոմանք.* Յորում դատի Աստուած... աւետարանս իմոյ։

* *Ոմանք.* Ապա եթէ դու որ հր՛։

* *Ոմանք.* Եւ ճշմարտութեան օրինացն։

* *Ոմանք.* ՚ի մեհենաց։ *Ուր օրինակ մի.* ՚ի մեհենոյ։

* *Ոմանք.* Յանցանել ընդ օրէնս։

* *Ոմանք.* Ձի անունն Աստուծոյ... հեթանոսացն։

* *Ոմանք.* Պահեսցես. ապա եթէ յանցա՛։

* *Ոմանք.* Անթլփատութիւնն նորա... համարիցի։

* *Ոմանք.* Եւ դատեսցի որ։

* *Ոմանք.* Զրեայն իցէ։

* *Օրինակ մի.* Որով գովութիւն, ոչ։

Գլուխ Գ

Գ ¹Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է Յրէիմ, կամ զի՞նչ օգուտ 'ի թլփատութենէ՛ անտի: ²Բազում ինչ, ամենայն իրօք. նախ՝ այն իսկ, զի հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ: ³Իսկ արդ՝ եթէ չէ՛ր հաւատացեալ ոմանց, մի՞թէ՛ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատսն խափանէ՞ր. քա՛ւ լիցի՞*: ⁴Արդ՝ եղիցի Աստուած ճշմարիտ, և ամենայն մարդ սո՛ւտ. որպէս և գրեալ է. որպէս արդար եղիցես 'ի բանս քո, և յաղթիցես 'ի դատել քեզ՞*: ⁵Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւնն մեր զԱստուծոյ արդարութիւնն յանդիման կացուցանէ, զի՞նչ ասեմք. միթէ՛ անիրա՞ւ ինչ է Աստուած՝ որ ածէ՛ զբարկութիւնն*, ⁶ըստ մարդկութեան ասեմ. քա՛ւ լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Աստուած զաշխարհ՞*: ⁷Զի եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ յիմուն ստութեանն առաւելա՛ւ 'ի փառս նորա, զի՞ ևս ես իբրև զմեղաւոր դատիմ: ⁸Եւ կամ թէ՛ որպէս հայիոյիմքն, և որպէս ասեն ոմանք զմէնց ասել, թէ արասցուք զչար՝ զի եկեսցէ՛ բարի. որոց դատաստանքն յիրաւի՛ են՞:

Դ ⁹Եւ արդ՝ ի՞նչ իւրիք առաւել իցեմք. ապաքէն և ո՛չ իւրիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Յրէից և հեթանոսաց, ամենեցուն ընդ մեղօք լինելոյ՞*: ¹⁰որպէս և գրեալ է. թէ ո՛չ գոյ արդար՝ և ո՛չ մի՞*. ¹¹և ո՛չ գոյ՝ որ իմանայ, և ո՛չ ոք է որ խնդրէ՛ զԱստուած՞*: ¹²Ամենեքեան խտորեցան 'ի միասին և անպիտանացան. ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն, ո՛չ ոք է մինչև 'ի մի՞*: ¹³Գերեզման բա՛ց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն: Թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա՞*. ¹⁴որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի՛ են: ¹⁵Երա՛գ են ո՛տք նոցա հեղուլ զարիւն՞*. ¹⁶բեկումն և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա. ¹⁷և զճանապարհն խաղաղութեան ո՛չ ծանեան: ¹⁸Ո՛չ է երկելոյ Աստուծոյ առաջի աչաց նոցա: բդ. ¹⁹Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են՝ ասեն. զի ամենայն բերան խցցի, և դատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ՞*: ²⁰Զի 'ի գործոց օրինաց, ո՛չ արդարացի ամենայն մարմին առաջի նորա. քանզի օրինօքն է գիտութիւն մեղաց՞*: ²¹Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ

* Ոմանք. Անհաւատութիւնն նոցա:

* Ոմանք. եղիցիս 'ի բանս քո, և յաղթեսցես 'ի:

* Ոմանք. Ինչ իցէ Աստուած, որ ածէ՛ զբարկութիւն:

* Ոմանք. Ապա եթէ ոչ:

* Բազումք. Ասեն զմէնց ոմանք: Եւ ոմանք. Հայիոյիմքն ասել ոմանց զմէնց: Ոսկան.

Արասցուք զչարն:

* Ոմանք. Եւ ոչ մի իւրիք... մեղադիր եղաք:

* Այլք. Թէ ոչ ոք է արդար, և ոչ:

* Օրինակ մի. Եւ ոչ ոք է որ իմանայ:

* Ոմանք. 'ի միասին, անպիտա՞: Ոսկան. Ոչ ոք է որ առնէ զբարի, և ոչ:

* Ոմանք. Եւ լեզուօք իւ՞ն:

* Ոմանք. Երագեն ոտք: Ուր Ոսկան. Երագունք են ոտք:

* Ոմանք. Բերան խցցին:

* Ոմանք. Ոչ արդարանայ ամենայն մար՞:

է, վկայեալ յօրինաց անտի՝ և ՚ի մարգարէից՝: ²²Քանզի արդարութիւնն Աստուծոյ ՚ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի, յամենայն հաւատացեալս. և ո՛չինչ է խտիր: ²³Քանզի ամենեքին մեղան. և նուազեալ են ՚ի փառացն Աստուծոյ: ²⁴Եւ արդարանան ձրի նորին շնորհօք ՚ի ձեռն փրկութեանն որ ՚ի Քրիստոս Յիսուս. ²⁵զոր յառաջն եղ Աստուած քաւութիւն ՚ի ձեռն հաւատոցն արեամբ նորա ՚ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց. ²⁶ի ներելն Աստուծոյ. ՚ի հանդէս արդարութեանն նորա ՚ի ժամանակի յայսմիկ. զի եղիցի նա՛ արդար, և արդարացուցէ՛ զայն որ ՚ի հաւատոցն Յիսուսի՝: ²⁷Իսկ արդ՝ ո՞ւր են պարծանքն. արգելան. յորո՞ց օրինաց, ՚ի գործո՞ց անտի. ո՛չ, այլ ՚ի հաւատոցն օրինաց: ²⁸Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օրինաց: ²⁹Եթէ Յիսուս միայն իցէ Աստուած՝ և հեթանոսաց ո՞չ. այո՛ և հեթանոսաց՝: ³⁰Ձի եթէ մի է Աստուած, որ արդարացուցանէ՛ զթլփատութիւն ՚ի հաւատոց, ապա և զանթլփատութիւնն նովին հաւատովք՝: ³¹Արդ՝ զօրէնսն ինչ խափանե՞մք հաւատովքս. քա՛լ լիցի. այլ զօրէնսն հաստատե՞մք՝:

4

Գլուխ Դ

բզ. ¹Իսկ արդ՝ զի՞նչ ասիցենք զգտանելն Աբրահամու նահապետին մերոյ ըստ մարմնոյ՝: ²Ձի եթէ Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել ունէ՛ր պարծանս, այլ ո՛չ առ Աստուած՝: ³Իսկ զի՞նչ ասիցէ գիր. Հաւատաց Աբրահամ յԱստուած, և համարեցա՛ն նմա յարդարութիւն: ⁴Բայց այնմ որ գործիցէն, ո՛չ համարին վարձքն ըստ շնորհաց, այլ ըստ պարտեաց՝: ⁵Իսկ այնմ որ ո՛չն գործիցէ, բայց հաւատայցէ յայն որ արդարացուցանէ զամպարիշտս, համարին հաւատք նորա յարդարութիւն: ⁶Որպէս և Ղաւիթ ասէ զերանութիւն մարդոյ, որուն Աստուած համարի արդարութիւն առանց գործոց: ⁷Երանի՛ որոց թողան անօրէնութիւնք, և որոց ծածկեցան մեղք իւրեանց՝: ⁸Երանեալ է այո՛ որուն ո՛չ համարեսցի Տէր զմեղս նորա: ⁹Արդ՝ երանութիւնս այս ՚ի վերայ

* *Ոմանք.* Բայց առանց օրի՞... յօրինացն անտի:

* *Ոմանք.* Քանզի ամենեքեան... ՚ի փառաց անտի Աստուծոյ:

* *Ոմանք.* Եղ Աստուած ՚ի քաւութիւն ՚ի ձեռն հաւատոց արեամբն նորա... արդարութեանն նորա:

* *Ոմանք.* Եւ արդարացուցանէ զայն որ ՚ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք.* Միայն է Աստուած, և հեթանո՞:

* *Ոմանք.* Ձի թէ մի... զթլփատութիւնն ՚ի հաւատոց... և զանթլփատութիւն նո՞:

* *Ոմանք.* Ջօրէնս ինչ խափանիցենք հաւատովք:

* *Ոմանք.* Ասեմք... նահապետին մեր ըստ:

* *Ոմանք.* Աբրահամ գործովք:

* *Ոմանք.* Ձինչ ասէ գիր... նմա արդարութիւն:

* *Ոմանք.* Որ գործիցեն... վարձք ըստ շնորհացն, այլ ըստ պարտեացն:

* *Ոմանք.* Այն որ գործիցէ... զամբարիշտսն, համարին նմա հաւատքն յարդա՞: *Ոսկան յաւելլու.* Յարդարութեան, ըստ առաջադրութեան շնորհին Աստուծոյ:

* *Ոմանք.* Համարի յարդարութիւն: *Ուր Ոսկան.* Համարի զարդարութիւն:

* *Ոմանք.* Մեղք նոցա:

* *Ոմանք.* Ոչ համարիցի. *կամ՝* համարի:

թվատուրեանն է, թէ՛ ի վերայ անթվատուրեան. քանզի ասեմք եթէ համարեցան Աբրահամու հաւատքն յարդարութիւն՝: ¹⁰Արդ՝ զիա՞րդ համարեցան. մինչդեռ ՚ի թվատուրեանն էր՝ եթէ յանթվատուրեանն. ո՛չ ՚ի թվատուրեանն, այլ յանթվատուրեանն՝: ¹¹Եւ նշանակ առ զթվատութիւնն, կնի՞ք արդարութեան հաւատոց, որ յանթվատութենէ անտի: Չի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց որ յանթվատութենէ անտի իցեն. առ ՚ի համարելո՛յ և նոցա յարդարութիւն՝: ¹²և հայր թվատութեան, որոց ո՛չ ՚ի թվատութենէ անտի և եթ, այլև որոց երթայցեն ընդ հետս անթվատութեան հաւատոց հօր մերոյ Աբրահամու՝: զդ. ¹³Չի ո՛չ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու՝ և զաւակի նորա՝ ժառանգ լինել աշխարհի, այլ ՚ի հաւատոցն արդարութենէ՝: ¹⁴Չի եթէ որք յօրինացն են, ժառանգք իցեն. ապա ընդունայն են հաւատքն՝ և դատարկ աւետիքն՝: ¹⁵Քանզի օրէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր ո՛չ են օրէնք, և ո՛չ յանցանք ինչ՝: ¹⁶Վասն այսորիկ ՚ի հաւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ. առ ՚ի լինելոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին. ո՛չ այնմ միայն՝ որ յօրինաց անտի, այլ և այնմ որ ՚ի հաւատոցն Աբրահամու. որ է հայր մեր ամենեցուն՝: ¹⁷որպէս և գրեալ է՝ եթէ հայր ազգաց բազմաց արարից զքեզ, առաջի Աստուծոյ. որում հաւատացն՝ եթէ կենդանի՝ առնէ զմեռեալս, և կոչէ զչգոյն իբրև զգոյ՝: ¹⁸Որ յանյոյսն յուսով հաւատաց, լինել նմա հայր ազգաց բազմաց. որպէս և ասացան, թէ այնպէս եղիցի զաւակ քո՝: ¹⁹Եւ նա՝ ո՛չ երկմտեաց ՚ի հաւատոցն, թպէտ և հայեցաւ ՚ի մարմին իւր՝ այնուհետև իբրև ՚ի մեռեալ. քանզի զհարիւրամենիւք ուրեմն էր. և ՚ի մեռելութիւն արգանդին Սառայի՝: ²⁰Բայց աւետեացն Աստուծոյ՝ ո՛չ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ՝: ²¹և հաստատեցաւ ՚ի միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կարօղ է առնել՝: ²²Վասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն՝: ²³Այլ զի գրեցաւն, ո՛չ եթէ վասն նորա միայն՝ թէ համարեցաւ նմա՝: ²⁴այլ և վասն մերոց համարելոց է. որք հաւատամք յայն որ յարոյցն զՅիսուս զՏէր մեր ՚ի մեռելոց՝: ²⁵որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց. և յարեալ՝ վասն զմե՛զ արդարացուցանելոյ՝:

* *Ոմանք.* ՚ի վերայ թվատութեան է, թէ... եթէ համարեցաւ Աբ՝:

* *Ոմանք.* Մինչ ՚ի թվատութեան էր՝ թէ յանթլ՝:

* *Ոմանք.* Արդարութեան հաւատոցն որ ՚ի թվատութենէ անտի... և նոցա արդարութիւն:

* *Ոմանք.* Այլ և որոց երթիցեն զհետ անթվատութեանն... հօր մերում Աբ՝: *Յօրինակին պակասէր.* Անթվատութեան *հաւատոց* հօր:

* *Ոմանք.* ՚ի հաւատոցն արդարութեան:

* *Ոմանք.* Չի թէ... ժառանգ են: *Յօրինակին պակասէր.* Ընդունայն են հաւ՝:

* *Ոմանք.* Ուր ոչ էին օրէնք:

* *Բազումք.* Վասն այնորիկ ՚ի հաւ՝:

* *Ոմանք.* Թէ հայր... առաջի Աստուծոյ. որում հաւատաց, թէ կենդանի:

* *Ոմանք.* Որ անյոյսն յու՞... որպէս ասացաւն, եթէ: *Ուր օրինակ մի.* Բազմաց, որում ասացաւն, թէ հայր ազգաց բազմաց արարի զքեզ. և եթէ այսպէս եղիցի զա՞:

* *Ոմանք.* ՚ի մարմինն իւր... քանզի հարիւրամենիւք... յարգանտին Սառայի:

* *Ոմանք.* Բայց յաւետեացն Աստուծոյ:

* *Ոմանք.* եթէ որ խոստաց՝:

* *Ոմանք.* Վասն որոյ և համարեցաւ նմա արդա՞:

* *Ոմանք.* Արդ զի գրեցաւ... եթէ համարեցաւ:

* *Ոմանք.* Վասն մերոցս: *Ուր Ոսկան.* վասն մեր՝ որոց համարելոց է:

* *Ոմանք.* Վասն մեղաց մերոց, և յարեալ:

Գլուխ Ե

Ե ¹Այսուհետև արդարացեալք ՚ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ²որով և զընծայութիւնն ընկալալք հաւատովք ՚ի շնորհս յայտոսիկ. յորում կամք, և պարծիմք յուսով փառացն Աստուծոյ*: ³Եւ ո՛չ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս ՚ի նեղութիւնս մեր. քանզի գիտենք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն. ⁴համբերութիւն՝ զհանդէս. հանդէս՝ գոյս*. ⁵յոյս՝ ո՛չ երբէք ամաչեցուցանէ. զի սէ՛րն Աստուծոյ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն Յոգևոյն Սրբոյ՝ որ տուաւ մեզ*: ⁶Ձի մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս վասն մեր ՚ի ժամանակի ՚ի վերայ ամապարշտաց մեռաւ: ⁷Ձի վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի, այլ վասն բարւոյ թերևս համարձակիցի՝ ոք մեռանել*: ⁸Յայտնեաց Աստուած զսէ՛րն իւր ՚ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք*, ⁹Քրիստոս վասն մեր մեռաւ. որչափ ևս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա, ապրեսցուք նովաւ ՚ի բարկութենէ՝ անտի*: ¹⁰Ձի եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցալք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյն նորա. որչափ ևս առաւել ՚ի հաշտելս մերում ապրեսցուք կենօրն նորա*: ¹¹Եւ ո՛չ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս յԱստուած ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով և զհաշտութիւնն իսկ ընկալալք*:

Ձ գգ. ¹²Ձի որպէս ՚ի միոջէ՛ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և ՚ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքի՛ն մեղան: ¹³Քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի, բայց մեղք ո՛չ համարին ուր օրէնք ո՛չ իցեն*: ¹⁴Այլ թագաւորեաց մահ յԱդամայ մինչև ՚ի Մովսէս, և ՚ի վերայ չյանցուցելոցն, ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն*: ¹⁵Այլ ո՛չ որպէս յանցանքն, նոյնպէս և շնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ ևս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգևք շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի բազումս առաւելաւ*: ¹⁶Եւ ո՛չ որպէս ՚ի միոջէ՛ յանցուցելոյն պարգևքս. զի դատաստանն ՚ի միոջէ՛ յանցուածոց անտի ՚ի դատապարտութիւն. այլ շնորհքն՝ ՚ի բազմաց յանցուածոցն յարդարութիւն*: ¹⁷Ձի եթէ միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն, ո՞րչափ

* *Ոմանք.* Որով և զընծայութիւն իսկ ընկալալք: *Ուր օրինակ մի.* Որով զհաշտութիւն իսկ ըն՛:

* *Ոմանք.* Հանդէսն գոյս:

* *Ոմանք.* Յոյսն ոչ երբէք:

* *Բազումք.* Հազիւ ոք մեռանիցի: *Ոմանք.* Թերևս համարձակեսցի:

* *Ոմանք.* Ձի մինչ մեղաւորքն էաք: *Ուր Ոսկան.* Տկարքն էաք:

* *Օրինակ մի.* Այժմիկ ապրեսցուք արեամբն նորա. և նովաւ ՚ի բար՛:

* *Ոմանք.* Ձի թէ մինչ թշնա՛:

* *Ոմանք.* Եւ զհաշտութիւն իսկ ըն՛:

* *Ոմանք.* Մինչև յօրէնքն մեղք էին յաշխարհ... Մեղք ոչ համարէին, ուր օրէնք ոչ են:

* *Ոսկան.* Մինչև ցՄօսէս: *Ոմանք.* Ըստ նմանութեան... օրինակ հանդերձելոյն:

* *Ոմանք.* Ձի թէ... բազումք մեղան, որչ՛... և պարգևքն շնորհօք միոյն մարդոյն:

* *Ոսկան.* Քանզի դատաստանն ՚ի միոջէ՛ յանցուածոյ անտի: *Ոմանք.* Ի միոջէ՛ յանցուածոցն ՚ի դատապարտութիւն: *Ուր օրինակ մի.* Ի միոջէ՛ յանցուցելոց անտի ՚ի դատապարտութենէ:

և առաւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և զպարզևաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն՝ ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի*։ ¹⁸Ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն կենաց*։ ¹⁹Չի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս և հնազանդութեամբ միոյն՝ արդարք բազումք եղիցին*։ ²⁰Բայց օրէնք ՚ի ներքս անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն*։ ²¹Չի որպէս թագաւորեսց մեղքն ՚ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ՚ի կեանսն յաւիտենից ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ*։ ԿԶ

6

Գլուխ Զ

Է ՚իսկ արդ՝ զի՞նչ ասիցենք, յաճախեսցուք ՚ի մեղսն՝ զի շնորհքն բազմասցին*։ ²Քա՛ւ լիցի. որք մեռա՛ք մեղացն, զիա՞րդ տակաւին ՚ի նմին կեցենք*։ ³Եթէ ո՞չ գիտէք, զի ո՞ր միանգամ մկրտեցաք ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի մա՛հ անդր նորա մկրտեցաք։ ⁴Թաղեցա՛ք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ. զի որպէս յարեա՛ւ Քրիստոս ՚ի մեռելոց փառօքն Զօր. նոյնպէս և մեք ՚ի նորոգումն կենաց շրջեսցուք*։ ⁵Չի եթէ տնկակից եղեաք նմանութեան մահու նորա. այլ և յարութեան նորա լինիցինք*։ ⁶Չայս գիտասցի՛ք զի հին մարդն մեր խաչակից եղև նորա, զի խափանեսցի մարմին մեղացն, մի՛ ևս ծառայել մեզ մեղացն*։ ⁷Չի որ մեռանին՝ արդարացեալ է ՚ի մեղաց անտի*։ ⁸Իսկ եթէ մեռա՛ք ընդ Քրիստոսի, հաւատամք թէ և կեցցուք ընդ նմա*։ ⁹Գիտենք եթէ Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց. այսուհետև ո՛չ մեռանի, և մահ նմա ո՛չ ևս տիրէ*։ ¹⁰Չի որ մեռան, մեղացն մեռաւ մի՛ անգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ։ ¹¹Նոյնպէս և դուք համարեսցի՛ք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։ դկ. ¹²Մի՛ այսուհետև թագաւորեսցեն մեղք ՚ի մահկանացու մարմինս ձեր, հնազանդել ցանկութեանց նորա*։ ¹³Եւ մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մեղացն. այլ պատրաստեցէ՛ք

* *Ոմանք.* Չի եթէ ՚ի միոյն յանցանաց մահ։ *Ուր Ոսկան.* եթէ միոյն յանցանօք մահ։

* *Ոմանք.* Որպէս միուեն յանցանօք... դատապարտութիւնն։

* *Ոմանք.* Միոյն մարդոյն... բազում ե՞ն։ *Օրինակ մի.* Եւ ՚ի հնազանդութիւն միոյն արդարք բազումք եղեն։

* *Ոմանք.* Բայց օրէնքն ՚ի ներ՞։

* *Այլք.* Թագաւորեցին մեղքն ՚ի մահու։

* *Օրինակ մի.* Չինչ ասենք։

* *Ոմանք.* Ի նմին կեցցուք. և *ոմանք.* ՚ի նմին կեցէք։

* *Ոմանք.* Փառօք Զօր։

* *Ոմանք.* Տնկակիցք եղաք նմանութեամբ մահու։

* *Ոմանք.* Խաչակից եղև նմա։

* *Ոմանք.* Չի որ մեռանի՝ ար՞։

* *Ոմանք.* Եթէ կեցցուք ընդ նմա։

* *Ոմանք.* Գիտենք թէ և Քրիստոս յա՞... և մահ նորա ոչ ևս տիրէ։ *Ուր Ոսկան.* գիտենք զի Քրիստոս։

* *Ոմանք.* Զնազանդեալ ցանկութեանցն նորա։

զանձինս ձեր Աստուծոյ, որպէս ՚ի մեռելոց՝ ՚ի կենդանիս. և զանդանս ձեր՝ զէն արդարութեանն Աստուծոյ՝: ¹⁴Ձի մեղք ձեզ ո՛չ տիրեսցեն. քանզի ո՛չ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք՝: ¹⁵Իսկ արդ՝ զիա՞րդ. մեղիցո՞ւք՝ զի չե՛նք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք. քա՛ւ լիցի՞: ¹⁶Ո՛չ գիտէք՝ եթէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն, ծառայ՛ էք որում հնազանդիքն. եթէ մեղաց, և եթէ ՚ի հնազանդութիւն արդարութեան՝: ¹⁷Այլ շնորհք Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց, հնազանդեցարուք ՚ի սրտէ՛ որում աւանդեցայք յառա՛կ վարդապետութեան՝: ¹⁸Արդ՝ ազատեալք ՚ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեանն՝: ¹⁹Մարդկօրէ՛ն ասեմ վասն տկարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցէք զանդանս ձեր ծառայս պղծութեան և անօրէնութեան յանօրէնութիւն. նո՛յնպէս և այժմ՝ պատրաստեցէք զանդանս ձեր ծառայս արդարութեան ՚ի սրբութիւն՝: ²⁰Ձի մինչ ծառայքն էիք մեղաց, ազատացեալք էիք յարդարութենէն՝: ²¹Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի հարեալ էք. զի վախճան նոցա՝ մահ է՝:

Ը ²²Բայց արդ՝ ազատացեալք ՚ի մեղացն՝ և ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ ձեր ՚ի սրբութիւն, և վախճան նորա՝ կեանք յաւիտենից՝: ²³Ձի թոշակն մեղաց՝ մահ է. այլ շնորհք Աստուծոյ, կեանք յաւիտենից ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր՝:

7

Գլուխ Է

դդ. ¹Եթէ ո՛չ գիտէք եղբարք, զի ընդ գիտունս օրինացն խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդանի է՝: ²Քանզի կին առնակին, ՚ի կենդանի՛ այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց առն՝: ³Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շո՛ւն կոչի՛ եթէ լինիցի առն այլում. և եթէ մեռանիցի այրն, ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում՝: ⁴Այսուհետև և դո՛ւք եղբարք, մեռարուք օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում որ ՚ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբերք լիցուք Աստուծոյ՝: ⁵Քանզի մինչ էաքն մարմնով, կարիք մեղաց որ օրինօքն էին,

* *Օրինակ մի.* Չանձինս ձեր զէն անիրա՞... որպէս և մեռելոց կեն՞:

* *Օրինակ մի.* Քանզի մեղք ձեր մի՛ տիրեսցեն:

* *Ոմանք.* Իսկ զիա՞րդ. մեղի՞:

* *Բազումք.* Թէ որում պատրաստ՞: *Ոմանք յաւելուն.* Եթէ մեղաց՝ *մահու.* և եթէ հնազանդութիւն արդարութեան՝ *ի կեանս:* *Ուր Ոսկան.* Եթէ մեղաց՝ ՚ի մահ:

* *Ոմանք.* Որում աւանդեցաքն:

* *Ոմանք.* Ազատացեալք ՚ի մեղաց: *Ուր օրինակ մի.* Ազատեցարուք ՚ի մեղաց:

* *Ոսկան.* Չանձինս ձեր ծառայս պղծութեան: *Ոմանք.* Անօրէնութեան յանիրաւութիւն:

* *Ոմանք.* Ծառայք էիք մեղաց, ազատեալք էիք յար՞:

* *Ոմանք.* Որով այժմ զամօ՞... զի վախճանն նոցա:

* *Ոմանք.* Ազատեալք ՚ի մեղաց... և վախճան նոցա կեանք յաւ՞:

* *Ոմանք.* Մեղաց մահ. այլ շնորհքն Աստուծոյ, կեանք են յաւիտենից:

* *Ոմանք.* Յորչափ ժամանակս: *Բազումք.* Կենդանի իցէ:

* *Բազումք.* Իսկ եթէ մեռցի այրն... յօրինաց առն:

* *Ոմանք.* Եւ եթէ մեռցի այրն... եթէ լինիցի այլում:

* *Յօրինակին պակասէր.* Այսուհետև և դուք: *Ոմանք.* Պտղաբեր լիցուք:

գորանային յանդամս մեր, առ ՚ի պտղաբերս առնելոյ զմեզ մահու՛ն: ⁶Բայց այժմ դատարկացա՛ք յօրինաց անտի. քանզի մեռա՛ք այնմիկ որով ընթռնեալն էաք, առ ՚ի ծառայել մեզ նորոգութեամբ Հոգւոյն՝ և ո՛չ հնութեամբ գրոյն*:

Թ ⁷Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք իցեն. քա՛ւ լիցի. այլ զմեղս ո՛չ գիտի, եթէ ո՛չ օրինօ՛քն. և զցանկութիւն ո՛չ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ. Մի՛ ցանկանայցես*:⁸Պատճառս առին մեղքն պատուիրանաւն, և գործեցին յիս զամենայն ցանկութիւն. զի առանց օրինաց մեղքն մեռեալ էին*:⁹Եւ ես առանց օրինացն երբեմն էի կենդանի՛. այլ իբրև եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդանացան.¹⁰Եւ ես մեռայ. և գտա՛ւ ինձ պատուիրանն որ ՚ի կեանսն էր, նոյն ՚ի մահ*:¹¹Զի մեղացն պատճառս առեալ պատուիրանաւն խաբեցին զիս, և նովին սպանին:

Ժ ¹²Այսուհետև օրէնքն սո՛ւրբ են և պատուիրանն, սո՛ւրբ և արդար և բարերար*:¹³Իսկ արդ՝ ինձ բարին մահ եղև. քա՛ւ լիցի. այլ մեղքն. զի երևեսցին մեղքն բարեալն գործել ինձ զմահ, զի եղիցին ըստ առաւելութեան մեղքն մեղաւոր ՚ի ձեռն պատուիրանին*:¹⁴Գիտեմ զի օրէնքն հոգևոր են. այլ ես մարմնաւոր եմ ընդ մեղօ՛ք վաճառեալ*:¹⁵Զի զոր գործեմն՝ ո՛չ գիտեմ. ո՛չ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն զայն գործեմ*:¹⁶Ապա եթէ զոր ո՛չն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն թէ բարւո՛ք են*:¹⁷Այլ արդ՝ ո՛չ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն*:¹⁸Գիտեմ զի ո՛չ բնակեալ է յիս, այնպէս ինչ ՚ի մարմնի՛ իմում, բարի ինչ. զի կամքն առաջի կան ինձ. և առնել զբարին ոչ*:¹⁹Զի ո՛չ եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ո՛չն կամիմ զչարն զայն գործեմ*:²⁰Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ո՛չ ևս ես առնեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն*:²¹Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այնորիկ որ կամիցին առնել յիս զբարին. և ինձ չարն առաջի կայ*:²²Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն.²³Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս օրինօքն մեղաց որ են յանդամս իմ*:²⁴Այր մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուցէ զիս ՚ի մարմնոյ աստի մահու: ²⁵Այլ շնորհքն Աստուծոյ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

ԺԱ Եկ. Ապա ուրեմն, ես ինքնին մտօ՛ք իմովք ծառայ եմ օրինացն Աստուծոյ. և

* *Ոմանք.* Առ ՚ի պտղաբեր առնել զմեզ մահու:

* *Օրինակ մի.* Քանզի մեղաք այնմիկ: *Ոմանք.* Եւ ոչ հնութեան՝ գրոյն:

* *Ոմանք.* Իսկ զի՞նչ ասեմք... եթէ ոչ օրինօք. և զցանկութիւնն ոչ ճա՛... օրինօքն էր ասացեալ:

* *Ոմանք.* Մեղքն պատուիրանին... առանց օրինացն մեղք մեռեալ էին:

* *Ոմանք.* Որ ՚ի կեանս էր:

* *Ոմանք.* Օրէնք սուրբ են, և պատուիրանքն սուրբ են և ար՞:

* *Ոմանք.* Ըստ առաւելութեանն:

* *Ոմանք.* Գիտեմք զի օրէնքն:

* *Ոսկան յաւելու.* Զոր կամիմն *զբարին*՝ զայն առ՞... ատեամն *զչարն*՝ զայն գոր՞: *Ոմանք.* Զոր ատեմն:

* *Ոմանք.* Ապա թէ... եթէ բարիոք են:

* *Օրինակ մի.* Արդ ոչ ես գործեմ զայն, այլ որ բնակեալ յիս:

* *Ոմանք.* Առաջի կայ ինձ:

* *Ոմանք.* Կամիմն զբարին... կամիմն զչարն: *Ոսկան.* Զբարին՝ զայն առնեմ:

* *Օրինակ մի.* Ապա թէ զոր ոչ կամիմ:

* *Ոմանք.* Զօրէնսն այնորիկ, որ կամիցին յիս առնել:

* *Ոմանք.* Մտացն իմոց:

մարմնով օրինացն մեղաց*:

8

Գլուխ Ը

¹Թէ այդպէս իցէ, ո՛չինչ դատապարտութիւն է այնոցիկ որ ՚ի Քրիստոս Յիսուս, որ ո՛չ գնան ըստ մարմնոյ*։ ²Ձի օրէնք հոգւոյն կենաց ՚ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու*։ ³Ձի որ անհնարինն էր օրինացն՝ որով տկարանայրն մարմնով. Աստուած զՈրդի՛ն իւր առաքեաց ՚ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց, և դատապարտեաց զմեզս ՚ի մարմնի՛ անդ*։ ⁴Գի արդարութիւն օրինացն կատարեսցի ՚ի մեզ, որք ո՛չ ըստ մարմնոյ գնայցենք՝ այլ ըստ հոգւոյն*։ ⁵Ձի որք ըստ մարմնոյն են, զմարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն*։ ⁶Ձի խորհուրդ մարմնոյ՝ մա՛հ է. և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խաղաղութիւն*։ ⁷Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած. զի օրինացն Աստուծոյ ո՛չ հնազանդի. նա՛ և կարէ՛ իսկ ոչ։ ⁸Ձի որ մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ո՛չ կարեն*։ ⁹Բայց դուք՝ ո՛չ էք մարմնով՝ այլ հոգւով. եթէ իցէ Յոգին Աստուծոյ ՚ի ձեզ բնակեալ. ապա եթէ որ զՅոգի Քրիստոսի ո՛չ ունի, սա՛ չէ՛ նորա*։ ¹⁰Իսկ եթէ Քրիստոս ՚ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և հոգին կենդանի՛ է վասն արդարութեան*։ ¹¹Եթէ Յոգի այնորիկ որ յարոյցն զՅիսուս ՚ի մեռելոց՝ բնակեալ է ՚ի ձեզ. ապա և որ յարոյցն զՔրիստոս ՚ի մեռելոց՝ կենդանացուցէ՛ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Ոգւովն իւրով ՚ի ձեզ*։ ¹²Այսուհետև ե՛ղբարք՝ պարտապան ենք, ո՛չ մարմնով ըստ մարմնոյ կեալ*։ ¹³Ձի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց՝ էք. իսկ եթէ Յոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք*։ ¹⁴Ձի որ Յոգւովն Աստուծոյ վարին, նոքա՛ են որդիք Աստուծոյ։ ¹⁵Ձի ո՛չ առէք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկելդ, այլ առէք զհոգին որդեգրութեան. որով աղաղակենք. Աբբար, Հայր։ ¹⁶Նոյն ինքն Յոգին վկայէ հոգւոյս մերուն, եթէ ենք որդիք Աստուծոյ*։ ¹⁷Եւ եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ և

*Ոմանք. Այլ շնորհք Աստուծոյ... Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ *Բազումք*. Ծառայեն օրինաց Աստուծոյ, և մարմնոյ օրինաց մեղաց։ *Ուր օրինակ մի*. Եւ մարմնով իմով օրի՛։
*Ոմանք. Եթէ այսպէս իցէ... որ ՚ի Յիսուս Քրիստոս։ *Ի բազումս պակասի*. Ի Քրիստոս Յիսուս, որ ո՛չ գնան ըստ մարմնոյ։ *Ուր ոմանք*. Որք ոչ մարմնով գնան։ *Իսկ Ոսկան*. որք ոչ ըստ մարմնոյ վարին։

*Ոմանք. Ի Յիսուս Քրիստոս ազատեցին յօրինաց։

*Ոմանք. Անհնարին էր... որով տկարանայր... մարմնոյն մեղաց... ՚ի մարմին անդ։

*Ոմանք. Այլ ըստ հոգւոյ։

*Ոմանք. Ըստ հոգւոյ՝ զհոգւոյն։

*Ոմանք. Եւ խորհուրդ հոգւոյ։

*Ոմանք. Հաճոյ ոչ կարեն լինել։

*Ոմանք. Դուք էք ոչ մարմնով... իցէ Աստուծոյ Յոգին... ապա թէ որ զՅոգին Քրիստոսի։

*Ոմանք. Եւ հոգի կենդանի է։

*Ոսկան յաւելու. Եւ որ յարոյցն զՅիսուս Քրիստոս ՚ի մեռել։ *Ոմանք*. Կենդանացուցէ և զմահկա՛... Յոգւովն իւրով։

*Ոմանք. Ոչ մարմնոյ ըստ մարմնոյ կեալ։

*Ոսկան. Ձի թէ ըստ մարմնոյ կեցջիք, մե՛։

*Ոմանք. Յոգւոյս մերոյ՝ թէ ենք որ՛։

ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լինելոց ենք*:

ԺԲ ¹⁸Ինձ ա՛յսպէս թուի, եթէ ո՛չ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ*:¹⁹Ձի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասե՛ք*:²⁰Ձի ընդունայնութեան արարածքն հնազանդեցան, ո՛չ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յուսով*.²¹Ղի և ինքեանք իսկ արարածքն ազատեցին ՚ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ*:²²Քանզի գիտենք, եթէ ամենայն արարածք հեծեն և երկնեն մինչև ցայժմ:²³Եւ ո՛չ այսչափ միայն. այլ և մեք իսկ՝ որ զպտուղ Յոգւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հեծենք՝ որդեգրութեանն ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ*:²⁴Ձի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ՛ յոյս. զի զոր տեսանէ որ՝ զի՞ ևս յուսայ*:²⁵Ապա եթէ զոր ո՛չն տեսանենք յուսամք, համբերութեամբ ակն ունիմք*:²⁶Նոյնպէս և Յոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեանս մերուն. զի զոր կամքն յաղօթս, որպէս արժան իցէ՝ ո՛չ գիտենք. այլ ի՛նքն Յոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս*:²⁷Բայց որ քննէ գսիրտս, գիտէ զինչ խորհուրդ է Յոգւոյն. զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց*:²⁸Բայց գիտենք՝ եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի՛ գործակից լինի ՚ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան*:²⁹Ձի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանի՛կ ՚ի մէջ եղբարց բազմաց*:³⁰Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց. և զորս կոչեացն, զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյցն, զնոսին և փառաւորս արար*:³¹Իսկ արդ՝ զի՞նչ ասենք առ այս. եթէ Աստուած ՚ի մե՛ր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ*:³²Որ յիւր Որդին ո՛չ խնայեաց, այլ վասն մե՛ր ամենեցուն մատնեաց զնա. զիա՞րդ ո՛չ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ*:³³Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ, ³⁴իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ: Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ՛ Աստուծոյ, որ և

**Ոմանք.* Չարչարանացն Քրիստոսի կցորդ լինիցիմք:

**Ոմանք.* Յայտնելոցն են:

**Ոմանք.* Արարածոցս յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասեն: *Ուր ոմանք ՚ի լուս.*՝ *նշանակեն.* որդւոցն Աստուծոյ սպա՛ն:

**Ոմանք.* Արարածք հնա՞... այլ վասն այնորիկ որ հնա՞:

**Բազումք.* Ազատեցին ՚ի ծառայ՞: *Ոմանք ՚ի լուս.*՝ *նշանակեն.* Փառաց որդւոցն Աստուծոյ:

**Ոմանք.* Որդեգրութեան ակնկալեալք:

**Օրհնակ մի.* Ձի զոր տեսանենք, զի՞ ևս յուսամք:

**Ոմանք.* Ապա թէ զոր ոչն:

**Ոմանք.* Սոյնպէս և Յոգին... տկարութեան մե՞... զոր կամք... որպէս արժանն իցէ՛ չգիտենք... զի ինքն Յոգին վասն մեր բարեխօս լինի ՚ի հեծութեանս ան՞: *Ուր օրհնակ մի.* Յոգին Սուրբ բարեխօս լինի առ հեծութիւնս:

**Ոմանք.* Այլ որ քննէ գսիրտս... բարխօս է վասն սրբոց:

**Ոմանք.* Գործակից լինին ՚ի բարիս:

**Ոմանք.* Յառաջագոյն և հրաւի՞: *Ոմանք.* Որդւոյ իւրոյ:

**Ոմանք.* Յառաջագոյն հրաւի՞:

**Ոմանք.* Ո՞վ իցէ մեզ հակառակ:

**Ոմանք.* Շնորհեսցէ մեզ:

բարեխօս իսկ է վասն մեր*:

ԺԳ ³⁵Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն, թէ անցկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ սո՞ւր*.
³⁶որպէս և գրեալ է. Վասն քո՛ մեռանիմք զօրհանապագ, համարեցաք իբրև զոչխար ՚ի սպանո՞ւ*:
³⁷Այլ յայսմ ամենայնի՝ առաւել յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ*:
³⁸Քանզի հաստատեալ են, եթէ ո՛չ մահ, և ո՛չ կեանք, և ո՛չ հրեշտակք, և ո՛չ իշխանութիւնք, և ո՛չ որ կանս, և ո՛չ հանդերձեալքն և ո՛չ զօրութիւնք*,
³⁹և ո՛չ բարձրութիւն, և ո՛չ խորութիւն. և ո՛չ այլ ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ՝ անտի Աստուծոյ, որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր*:

9

Գլուխ Թ

ԺԴ եղ. ¹Աստուգութեանք ասեմ ՚ի Քրիստոս և ո՛չ ստեմ վկայեն ինձ մի՛տք իմ ՚ի Հոգի Սուրբ*. ²զի տրտմութիւն է ինձ յոյժ, և անպակաս ցաւք սրտի իմոյ: ³Ձի ուխտիւք խնդրէի, ե՛ս ինքնին նզով լինել ՚ի Քրիստոսէ, վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ մարմնոյ*, ⁴որ են Իսրայէլացիք. որոց որդեգրութիւնն, և փառքն, և կտակարանքն, և օրէնսդրութիւնն, և պաշտօնն, և աւետիքն*. ⁵որոց հա՛րքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ՚ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն: ⁶Ո՛չինչ է մարթ՝ եթէ անկա՛ծ լինիցի բանն Աստուծոյ. զի ո՛չ ամենեքեան որ յԻսրայէլէ՛ն են, նոքա Իսրայէլեանք իցեն*. ⁷և ո՛չ որ զաւակն Աբրահամու են, ամենեքեան որդի՛ք իցեն. այլ Իսահակա՛ւ կոչեսցի քեզ զաւակ*: ⁸Այս ինքն՝ թէ ո՛չ որ որդիք մարմնոյն են, են որդիք Աստուծոյ. այլ որդիք աւետեացն համարեսցին ՚ի զաւակ*: ⁹Քանզի աւետեաց իսկ է բանս այս, թէ ՚ի ժամանակի յայսմիկ եկից, և եղիցի որդի՛ Սառայի*: ¹⁰Եւ ո՛չ այնչափ միայն, այլ և ՚ի Հռեբեկայ ՚ի միոջէ՛ անկողնոյ Սահակայ հօր մերոյ*: ¹¹Ձի մինչ չև՛ ծնեալ էին, և մինչ չև՛ բարի ինչ՝ կամ չար գործեալ էր. զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն Աստուծոյ հաստատեսցի*. ¹²ո՛չ ՚ի գործոց, այլ

* Ոմանք. Մանաւանդ եթէ յա՞:

* Ոմանք. Թէ անձկութիւն: Ոսկան. Թէ վիշտ, թէ:

* Օրինակ մի. Որպէս զոչխար ՚ի սպանո՞ւ ՚ի զենումն:

* Ոմանք. Այլ յայսմ ամենայնի:

* Ոմանք. Քանզի հաստատեալ ենք: Ոսկան այլայլութեանք յաւելու. Եւ ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ որկանս, և ոչ հանդերձեալքն. և ոչ կարողութիւն. և ոչ բարձրութիւն:

* Ոմանք. Եւ ոչ բարձրութիւնք, և ոչ խորութիւնք... անտի որ ՚ի Քրիստոսի Յիսուսի:

* Ոմանք. Ասեմ ՚ի Քրիստոս Յիսուս, և ոչ... վկայ են:

* Բազումք. Եւ իսկ ինքնին նզով... եղբարց իմոց և ազգա՞:

* Ոսկան. Եւ կտակարանն: Ոմանք. Եւ օրէնսդրութիւնքն:

* Ոմանք. Նոքա Իսրայէլացիք իցեն:

* Ոմանք. Այլ Իսահակայ՝ կոչեսցի:

* Ոմանք. Այս ինքն է՝ ոչ եթէ. կամ՝ այս ինքն է եթէ ոչ... համարին ՚ի զաւակ: Յօրինակին պակասէր. Թէ ոչ որ որդի՞:

* Ոմանք. եթէ ՚ի ժամանակի:

* Ոմանք. Եւ ոչ այսչափ միայն... ՚ի միոջէ՛ ընկողնոյ Սա՞:

* Ոսկան. Կամ չար գործեալ էին. զի ըստ... առաջադրութիւնն Աստուծոյ: Ուր օրինակ մի.

յայնմանէ որ կոչեացն, ասացաւ նմա. ¹³թէ երեցն կրտսերոյն ծառայեսցէ. որպէս և գրեալ է. թէ զՅակոբ սիրեցի, և զԻսակ ատեցի*։ ¹⁴Իսկ արդ՝ զի՞նչ ասենք. միթէ անհրաւութի՞ւնն իցէ յԱստուծոյ. քաւ լիցի*։ ¹⁵Ձի Մովսիսի՝ ասէ. Ողորմեցայց՝ որուն ողորմեցայցն, և գթացայց՝ յոր գթացայցն*։ ¹⁶Ապա ո՛չ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին, և ո՛չ ըստ այնմ՝ որ ընթանայցէ. այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմի*։ Եզ. ¹⁷Քանզի ասէ զիր ցփարաւովն. թէ վասն այնորիկ գրգռեցի զքեզ, զի՞ ի քե՛զ ցուցից զգորութիւն իմ, և պատմեսցի՝ անուն իմ ընդ ամենայն երկիր*։ ¹⁸Ապա ուրեմն՝ ում կամի ողորմի, և ում կամի՝ խստանայ*։ ¹⁹Իսկ արդ՝ ասիցե՞ս թէ մե՛զ ևս զի՞ դնէ՝ զի կամաց նորա ո՛չ ոք կայ հակառակ*։ ²⁰Իսկ արդ՝ դու ո՞վ ես մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցե՞ս ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՛ր այդպէս արարեր զիս*։ ²¹Եթէ ո՛չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն՝ ՚ի նմին զանգուածոյ առնել անօթ, զոմն ՚ի պատիւ և զոմն յանարգանս*։ ²²Ապա թէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, և յայտնի՝ առնել զգորութիւն իւր, զոր համբերն բազում երկայնատութեամբ անօթոցն բարկութեան՝ պատրաստելոցն ՚ի կորուստ*։ ²³Ձի յայտնի՝ արասցէ զմեծութիւն փառաց իւրոց ՚ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր պատրաստեաց ՚ի փառս։ ²⁴Ձորս և կոչեաց զմեզ ո՛չ միայն ՚ի Յրեից՝ այլ և ՚ի հեթանոսաց։ ²⁵Որպէս և յովսէէ՛ ասէ. Կոչեցից զոր ո՛չ ժողովուրդն իմ, ժողովուրդ ինձ. և զչսիրեցեալն՝ սիրեցեալ*։ ²⁶Եւ եղիցի ՚ի տեղոջ յորում ասացաւ նոցա, թէ ո՛չ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանոյ։ ²⁷Եսայի աղաղակէ վասն Իսրայէլի. Եթէ իցէ թի՛ւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւազ ծովու, սակա՛ւ ինչ մնացորդք մնասցեն*։ ²⁸Ձի բան մի հակիրճ և համառօտ արդարութեամբ. զբանն հակիրճ արասցէ Տէր ՚ի վերայ երկրի։ ²⁹Եւ որպէս ասէ Եսայի. Եթէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրև զՍողոմ լինէաք՝ և Գոմորոյ՝ նմանէաք*։

ԺԵ զկ. ³⁰Իսկ արդ՝ զի՞նչ ասիցենք. զի թէ հեթանոսք՝ որ ո՛չ երթային զհետ արդարութեան, հասին արդարութեան. այնմ արդարութեան որ ՚ի հաւատոց անտի*։ ³¹Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան, և յօրէնս արդարութեանն ո՛չ ժամանեաց*։ ³²Ընդէ՛ր. զի ո՛չ ՚ի հաւատոց, այլ իբրև ՚ի գործոց օրինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին գայթաղութեան*։ ³³որպէս և

Յառաջնորդութիւնն Աստուծոյ:

*Ոմանք. Եթէ երեցն կրտսերոյն... և զԵսաւ ատե՛:

*Ոմանք. Անհրաւութիւն իցէ Աստուծոյ:

*Ոմանք. Յորս գթացայցն:

*Օրինակ մի. Որ ողորմի:

*Ոմանք. Ասէր զիր ցփարա՛: Օրինակ մի. ՚ի քեզ լցուցից զգորութիւն:

*Ոմանք. Ոչ ոք կաց հակառակ:

*Ոմանք. Ցստեղծիչն իւր թէ:

*Ոմանք. Թէ ոչ ունիցի... բրուտն կաւուն... առնել անօթս զոմն ՚ի պատուի, և զո՛:

*Ոմանք. Ապա եթէ... զբարկութիւն իւր, և յայտ՛: Ոսկան. Որ համբեր բազմաւ երկայնմ՛:

*Ոմանք. Յովսէ ասէ... ժողովուրդ իմ: Ոսկան յաւելու. Եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ. և զչողորմեալն՝ ողորմեալ:

*Ոմանք. Աղաղակէ վասն որդւոցն Իսրայէլի:

*Ոմանք. Որպէս Եսայի ասէ, թէ ոչ... և Գոմորայ նմանէաք:

*Ոմանք. Ձի՞նչ ասենք. զի հեթանոսք, որ ոչ երթիցեն զհետ: Յայլս պակասի. Ձի թէ հեթանոսք:

*Ոմանք. Եւ յօրէնսն արդարութեան ոչ ժա՛:

*Ոմանք. Այլ ՚ի գործոց օրի՛:

գրեալ է. Ահաւասիկ դնեն 'ի Սիովն քա՛ր գայթազդութեան և վէ՛ն գլորման. և ամենայն որ հաւատասցէ 'ի նա՛ մի ամաչեսցէ՛:

10

Գլուխ Ժ

¹Եղբարք, իմ կամք սրտի, և աղօթք առ Աստուած վասն նոցա՛ են 'ի փրկութիւն՝: ²Քանզի վկայեն նոցա՛ եթէ գնախանձ Աստուծոյ ունին, այլ ո՛չ գիտութեամբ՝: ³Ձի տգէտ են Աստուծոյ արդարութեանն, և զիրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութեանն Աստուծոյ ո՛չ հնազանդեցան՝: ⁴Քանզի կատարած օրինացն Քրիստոսն է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց՝: զդ. ⁵Մովսէս գրէ զարդարութիւն որ յօրինաց անտի. եթէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ՛ նովին՝: ⁶Իսկ զհաւատոցն արդարութենէ՛ն ա՛յսպէս ասէ. Մի՛ ասիցես 'ի սրտի քում. Ո՛վ ելանիցէ յերկինս, ա՛յս ինքն է՝ զՔրիստոս իջուցանել. ⁷կամ. Ով իջանիցէ յանդունդս, ա՛յս ինքն է՝ զՔրիստոս հանել 'ի մեռելոց: ⁸Այլ զի՞նչ ասէ գիր. Մերձ է՛ բանն, 'ի բերան քո՛ և 'ի սրտի՛ քում է. ա՛յս ինքն է՛ բանն հաւատոյ զոր քարոզենք՝: ⁹Ձի եթէ խոստովանեսցես բերանո՛վ քով Տէր զՅիսուս. և հաւատասցես 'ի սրտի քում, թէ Աստուած յարո՛յց զնա՛ 'ի մեռելոց՝ կեցցես՝: ¹⁰Ձի սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանո՛վ խոստովանիք՝ 'ի փրկութիւն՝: ¹¹Քանզի ասէ գիր. Ամենայն՝ որ հաւատասցէ 'ի նա, մի՛ ամաչեսցէ՛: ¹²Ձի ո՛չ գոյ խտիր Յրէի՛ և հեթանոսի. քանզի նո՛յն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին ոյք կարդան առ նա. ¹³զի ամենայն որ կարդասցէ զանո՛ւն Տեառն՝ կեցցէ՛: ¹⁴Իսկ արդ՝ զիա՛րդ կարդասցեն, յոր ո՛չն հաւատացին. կամ զիա՛րդ հաւատասցեն՝ որում ո՛չն լուան. կամ զիա՛րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ՝. ¹⁵կամ զիա՛րդ քարոզեսցեն, եթէ ո՛չ առաքեսցին: Որպէս և գրեալ է. Իբրև զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան, և աւետարանչացն բարութեան: ¹⁶Այլ ո՛չ ամենեքեան հնազանդ եղեն աւետարանին: Եսայի ասէ. Տէր՝ ո՞ հաւատաց լրոյ մերում՝: ¹⁷Ապա ուրեմն՝ հաւատք 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն Քրիստոսի՛: ՎՋ ¹⁸Այլ ասեն. Միթէ ո՞չ լուան. մանաւանդ զի՛ ընդ ամենայն իսկ երկիր ել

* *Ոմանք.* Ահաւաղիկ դնեն 'ի... և որ 'ի նա հաւատասցէ՛ մի՛ ա՛:

* *Ոմանք.* Եղբարք իմ. կամք... վասն նոցա են փրկութիւն:

* *Ոմանք.* Թէ գնախանձն Աստուծոյ ու՛:

* *Ոմանք.* Ձի Աստուծոյ արդարութեան ոչ:

* *Ոմանք.* Քանզի և կատարած:

* *Ոմանք.* Մովսէս ասէ զարդարութիւնն: *Բազումք.* Որ յօրինաց անտի է. Թէ ա՛: *Ոսկան.* Կեցցէ 'ի նոսին:

* *Ոմանք.* Բանն հաւատոց:

* *Ոմանք.* խոստովանեսցիս: *Օրինակ մի.* Եւ հաստատեսցիս 'ի սրտի:

* *Օրինակ մի.* խոստովանիք զփրկութիւն. և այլ. խոստովանիմք 'ի փրկ՝:

* *Ոմանք.* Որ հաւատայ 'ի նա:

* *Ոմանք.* Որ կարդայցէ զա՛:

* *Այլք.* Իսկ զիա՛րդ կարդ՝: *Ոմանք.* Կարդայցեն յոր ոչն հաւատայցեն. *կամ՝* հաւատային... ո՛չ լուան:

* *Ոմանք.* Հնազանդեալ են աւետարանին: *Ոմանք.* Եսայի աղաղակէ. Տէր ո՞:

* *Օրինակ մի.* Այլ ուրեմն հաւատք: *Ոմանք.* 'ի լսելոյ եղեն. և:

բարբառ նոցա, և ընդ ծա՛գս տիեզերաց խօսք նոցա*։ ¹⁹Այլ ասեմ. Միթէ Իսրայէլ
ն՞չ լուաւ. նախ Մովսէ՛ս ասէ. Ես նախանձեցուցի՛ց զձեզ ո՛չինչ ժողովրդեամբ, և
ազգաւ անմտաւ զկծեցուցի՛ց զձեզ*։ ²⁰Բայց Եսայի համարձակի՛ իսկ և ասէ.
Գտայ՛ այնոցիկ որ զիս ո՛չ խնդրէին. յայտնի՛ եղէ այնոցիկ՝ որ զինէն ո՛չ
հարցանէին*։ ²¹Այլ առ Իսրայէլ ասէ. Ջօր ամենայն ձգեցից զձեռն իմ առ
ժողովուրդն անհաւան՝ և հակառակօղ*։

11

Գլուխ ԺԱ

ԺՁ զգ. ¹Իսկ արդ՝ ասեմ. Միթէ մերժեա՞ց Աստուած զժողովուրդ իւր. քա՛ւ լիցի.
քանզի և Ես Իսրայէլացի՛ եմ, ՚ի զաւակէ՛ Աբրահամու յազգէ՛ Բենիամենի*։ ²Ո՛չ
մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թէ ո՞չ գիտէք յեղիա
զինչ ասէ գիր. որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ*։ ³Տէր՝ զմարգարէս
քո կոտորեցին, և զսեղանս քո կործանեցին. Ես մնացի միայն, և խնդրեմ զանձն
իմ*։ ⁴Այլ զինչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ ասէ՛ եւթն հազար այր, որ ո՛չ
կրկնեցին ծունր Բահաղու*։ ⁵Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ
ընտրութեան շնորհացն եղեն*։ ⁶Իսկ եթէ շնորհօք, ո՛չ ևս ՚ի գործոց. ապա թէ ոչ՝
շնորհքն ո՛չ ևս շնորհք լինին*։ ⁷Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ. այնմ ո՛չ եհաս.
բայց ընտրութեանն եհաս. և այլքն կուրացան. ⁸որպէս և գրեալ է. Ե՛տ նոցա
Աստուած հոգի յիմարութեան. աչս որովք ո՛չ տեսանիցեն, և ականջս որովք ո՛չ
լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի*։ ⁹Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սեղանք նոցա
յորոգայթ, և յորս, և ՚ի գայթազդութիւն, և ՚ի հատուցումն նոցին*։ ¹⁰Խաւարեսցին
աչք նոցա զի մի՛ տեսցեն, և զթիկունս նոցա հանապա՛զ կորացո՛ւ։ ¹¹Իսկ արդ՝
ասեմ. Մի թէ վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեսցի՞ն. քա՛ւ լիցի. այլ նոցա
յանցանօքն փրկութիւն հեթանոսաց. զի նախանձ արկցէ նոցա*։ ¹²Իսկ եթէ
յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, և պարտութիւն նոցա մեծութիւն
հեթանոսաց, որչափ ևս առաւել լրութիւն նոցա*։ Էկ. ¹³Այլ ձե՛զ ասեմ
հեթանոսաց, ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ
փառաւոր առնեմ*։ ¹⁴զի թերևս նախանձ արկից նոցա մարմնով իմով, և

* *Ի բազումս պակասի.* Ամենայն *իսկ* երկիր:

* *Օրինակ մի.* Մի թէ Իսրայէլ ո՛չ գիտաց:

* *Ոմանք.* Որ զիսն ոչ խնդ՛:

* *Ոմանք.* Ջօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւատ և հակառակորդ:

* *Ոմանք.* Իսկ արդ ասիցեմ. Միթէ... զժողովուրդն իւր:

* *Ոմանք.* Եթէ ո՞չ գիտէք: *Օրինակ մի.* Որպէս ամբաստան լինի Աստուծոյ:

* *Ոմանք.* Ես միայն մնացի:

* *Օրինակ մի.* Ապա զինչ ասէ նմա պատասխանին... որ ոչ կրկնեսցեն ծունր:

* *Ոմանք.* Մոյնպէս և յայսմ:

* *Ոմանք.* Ապա եթէ ոչ... շնորհք լինէին:

* *Ոմանք.* Որպէս գրեալ է:

* *Ոմանք.* Եւ եղիցին սե՛... և ՚ի յորս... և ՚ի հատուցումն նոցա:

* *Ոմանք.* Ձի նախանձ արկցեն նոցա: *Եւ օրինակ մի.* Բայց զի նախանձ արկից նոցա:

* *Օրինակ մի.* Իսկ արդ եթէ յանցանք նոցա... և հպարտութիւն նոցա մեծութիւն...

լրութիւնն նոցա:

* *Ոմանք.* Ցորչափ ժամանակս իցեմ... զպաշտօնն իմ:

ապրեցուցից զոմանս ՚ի նոցանէ*։ ¹⁵Ձի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է. իսկ ընտրութիւնն զի՛նչ է, եթէ ոչ կենդանութիւն ՚ի մեռելոց*։ ¹⁶Իսկ եթէ սկիզբն սուրբ է, և զանգուածն, և արմատն, ապա և ո՛ստքն*։ ¹⁷Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, և դու որ ձիթենի վայրենի՛ էիր՝ պատուաստեցար ՚ի նոսա, և բաժանորդ եղեր արմատոյն, և պարարտութեան ձիթենւոյն*, ¹⁸մի՛ պարծիր առ ոստովքն. ապա թէ պարծիցիս, ո՛չ եթէ դու զարմատն ՚ի վեր ունիս, այլ արմատն զքեզ*։ ¹⁹Իսկ արդ՝ ասիցե՞ս. Ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայ*։ ²⁰Բարւո՛ք է, անհաւատութեամբն փշրեցան, և դու հաւատովք հաստատեցար. մի՛ հպարտանար, այլ երկի՛ր*։ ²¹Ձի եթէ Աստուած ՚ի բուն ոստն ո՛չ խնայեաց, զուցէ երբէք և ՚ի քեզ ո՛չ խնայեսցէ*։ ²²Արդ՝ տես զքաղցրութիւն՝ և զսասկութիւնն Աստուծոյ. ՚ի վերայ կործանելոցն սասկութիւն, և ՚ի վերայ քո քաղցրութիւն Աստուծոյ, եթէ կայցես ՚ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ և դո՛ւ կոճոպեսցիս*։ ²³Եւ նոքա եթէ ո՛չ ՚ի նմին անհաւատութեանն կայցեն, պատուաստեսցին. զի կարօ՞ղ է Աստուած միւսանգամ պատուաստել զնոսա*։ ²⁴Ձի եթէ դու՝ ՚ի բուն վայրենի՛ ձիթենւոյ անտի հատար, և յանբուն քո ՚ի բարի՛ ձիթենւոջն պատուաստեցար, ո՛րչափ ևս առաւել նոքա՞ որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիրեանց ձիթենւոջն*։ Էք. ²⁵Ո՛չ կամիմ ե՛ղբարք, եթէ տգէտք իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր ՚ի շատէ եղև Իսրայէլի. մի՛նչև լրումն հեթանոսաց մտցէ*, ²⁶և ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. որպէս և գրեալ է. Եկեսցէ ՚ի Սիովնէ Փրկիչ, և դարձուցէ՛ զամբարշտութիւնս Յակովբայ*։ ²⁷Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա։ ²⁸Ըստ անտարանիս՝ թշնամի՛ք են վասն ձեր, ըստ ընտրութեանն՝ սիրելի՛ք վասն հարցն։ ²⁹Քանզի անգեղջ են շնորհքն՝ և կոչումն Աստուծոյ*։ ³⁰Ձի որպէս և դուք երբեմն ապստամբք էիք յԱստուծոյ, և արդ՝ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն*։ ³¹Ո՛յնպէս և նոքա այժմ ապստամբք եղեն առ ձերով ողորմութեամբդ. զի և նոքա ողորմութիւն գտցեն*։ ³²Քանզի արգել Աստուած զամենեսին յանհաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի*։ ³³Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ. որպէս առանց քննելոյ՞ են դատաստանք նորա, և

*Յօրինակին պակասէր. Մարմնով իմով. և ապ՛։

*Բազումք. Աշխարհի է, իսկ ընդունելութիւնն զի՛նչ իցէ. եթէ։

*Բազումք. Եւ զանկուածն։ Օրինակ մի. Եւ եթէ արմատն։

*Բազումք. Որ ձիթենիդ վայրեն. ուր ոմանք. վայրի էիր։

*Ոմանք. Ապա եթէ պարծիս, կամ՝ պարծեսցիս, ո՛չ։

*Ոմանք. Եւ ես պատուաստեցայց։

*Ոմանք. Փշրեցան նոքա, և դու հաւատովք պատուաստեցար. մի՛ հպ՛։

*Ոմանք. Ձի թէ Աստուած ՚ի բուն ոստն ո՛չ խն՛... ո՛չ խնայիցէ։

*Ոմանք. Քաղցրութիւնն Աստուծոյ. եթէ կացցես ՚ի նմին... ապա եթէ ոչ՝ և դու կոճոպիցիս։

*Ոմանք. Թէ ոչ ՚ի նմին անհաւանութեան կացցեն, պատ՛։

*Ոմանք. Ի բուն վայրի ձիթենւոջ անտի... որ բունքն իցեն՝ պատուաստես՛։ Ոսկան. Եւ յանբուն ՚ի բարւոջ ձիթենւոջն։

*Ոմանք. Ձի կուրութիւնն փոքր ՚ի։

*Օրինակ մի. Ի Սիովն Փրկիչ, և դար՛... զամբարշտութիւնն ՚ի Յակովբայ։

*Ոմանք. Շնորհք և կոչումն։

*Ոմանք. Ապստամբ էիք յԱստուծոյ... գտէք նոցա ապստամ՛։

*Ոմանք. Ապստամբ եղեն։

*Ոմանք. Ձամենեսեան յանհաւանութիւնն, զի։ Ուր Ոսկան. յանհաւանութեան։

առանց զննելո՛յ են ճանապարհք նորա*։ ³⁴Չի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա*։ ³⁵Կամ ո՞վ ետ նմա փոխ, և առնուցու փոխարէն ՚ի նմանէ*։ ³⁶Չի ՚ի նմանէ՝ և նովաւ՝ և ՚ի նո՛յն ամենայն. նմա փառք յաւիտեանս. ամէն*։

12

Գլուխ ԺԲ

ԺԷ ¹Աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբքն Աստուծոյ՝ պատրաստել զանրմինս ձեր պատարա՛գ կենդանի, սուրբ, հաճո՛յ Աստուծոյ, զխօսո՛ւն պաշտօնդ ձեր*։ ²և մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարո՛ւք ՚ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ՚ի քննել ձեզ զլա՛ւն, և եթէ զինչ են կամքն Աստուծոյ, բարին և հաճոյն և կատարեալ*։ ³Ձայս ասեմ շնորհօ՛քն Աստուծոյ որ տուեալ են ինձ՝ ամենայնի որ է ՚ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ ՚ի խորհելն զգաստանալ՝ իւրաքանչիւր, որպէս բաժանեաց Աստուած չա՛փ հաւատոց*։ ⁴Որպէս ՚ի միում մարմնի անդամս բազումս ունիմք. և անդամքն ամենայն ո՛չ զնոյն գործ ունին*։ ⁵նո՛յնպէս և բազումքս մի մարմին ենք ՚ի Քրիստոս. այլ իւրաքանչիւր միմեանց անդամք ենք։ ⁶Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն ըստ չափոյն հաւատոց*, ⁷եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն ըստ վարդապետութեանն*։ ⁸եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առա՛տն է՝ զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝ լրջմտութեամբ։ ⁹Սեր՝ առանց կեղծաւորութեան, ատեալ՝ զչար, զհե՛տ երթալ բարեաց*։ ¹⁰Եղբայրսիրութեան առ միմեանս գթա՛ծք. ՚ի պատիւ զմիմեամբք ելանել*։ ¹¹Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք. հոգւով եռացէ՛ք, Տեառն ծառայեցէ՛ք. ¹²յուսով խնդացէ՛ք. նեղութեան համբերեցէ՛ք, աղօթից ստե՛պ կացէք*, ¹³ի պէտս սրբոց հաղորդեցարո՛ւք. զհիւրասիրութեան զհե՛տ երթայք. ¹⁴օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, օրհնեցէ՛ք և մի՛ անիծանէք*։ ¹⁵Խնդալ ընդ խնդացօղս, լա՛լ ընդ լացօղս. ¹⁶զնո՛յն միմեանց խորհիջի՛ք. մի՛ ամբարտաւանէք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցի՛ք։ Մի՛

* *Ոմանք*. Մեծութեանն և իմաստութեանն։ *Օրհնակ մի ընդ Ոսկանայ*. Որպէս զի առանց քննելոյ։

* *Ոմանք*. Եւ կամ ո՞վ եղև նմա խորհրդակից։

* *Ոմանք*. Փոխ յառաջագոյն... փոխարէն ՚ի նմանէն։

* *Ոմանք*. Եւ նմա փառք։

* *Ոմանք*. Գթութեամբն Աստուծոյ պատրաստել զանձինս ձեր։

* *Ոմանք*. ՚ի նորոգումն մտաց ձերոց... կամքն Աստուծոյ... և կատարեալն։

* *Ոսկան*. Ամենայնիւ որք են ՚ի ձեզ։ *Ոմանք*. Մի՛ աւելի ինչ խորհել քան... Աստուած ըստ չափոյ հաւա՛ր։ *Բազումք*. Այլ խորհել ՚ի զգաստանալ՝ իւրաքանչիւր որպէս և բաժանեաց։

* *Ոմանք*. Անդամս բազումս ունիցիմք։

* *Ոսկան*. Ըստ չափուն։

* *Ոմանք*. Ըստ պաշտմանն, եթէ որ ուսուցանեն։

* *Ոմանք*. Ատել զչար. զհետ երթալ բարեացն։

* *Ոսկան*. Եղբայրսիրութեամբ առ միմե՛ն։

* *Ոմանք*. Նեղութեանց համբերեցէք։

* *Ի լուս՛*. Օրհնեցէ՛ք զհալածիչս ձեր. *համաձայն այլոց ՚ի բնաբ՛*։

լինիք իմաստունք յանձինս ձեր*։¹⁷ մի՛ ունեք չարի չար հատուցանեք։
 Խորհեցարո՛ւք զբարի՛ս առաջի ամենայն մարդկան*։¹⁸ Եթե՛ հնար ինչ իցե՛ ձեզ՝
 ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք*։¹⁹ Մի՛ զանձանց վրեժ խնդրեք
 սիրելիք, այլ տո՛ւք տեղի բարկութեան. քանզի գրեալ է. Իմ է վրեժխնդրութիւն,
 և ես հատուցից՝ ասէ՛ Տէր*։²⁰ Այլ եթե՛ քաղցեալ է թշնամին քո, հա՛ց տուր նմա, և
 եթե՛ ծարաւի, ջո՛ւր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակո՛ւնս հրոյ կուտեսցես ՚ի
 գլուխ նորա*։²¹ Մի՛ յաղթիր ՚ի չարէ. այլ յաղթեա՛ բարեան չարին*։

13

Գլուխ ԺԳ

¹ Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ՚ի հնազանդութեան կացցէ. քանզի
 ո՛չ ուստեք է իշխանութիւն, եթէ ո՛չ յԱստուծոյ. և որ ենն, յԱստուծոյ կարգեալ են*։
² Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ
 կայ. և որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին*։³ զի իշխանքն
 ո՛չ են յերկեւոյ բարեաց գործոց, այլ չարեաց։ Կամիս չերկնչե՞լ յիշխանութենէ
 անտի, զբարիս գործեա՛, և ընկալցիս գովութիւն ՚ի նմանէ*։⁴ զի Աստուծոյ
 պաշտօնեայ է քեզ ՚ի բարիս. ապա եթէ չարագործ իցես, երկիր. զի ո՛չ եթէ
 վայրապար ածեալ է սուսեր ընդ մեք. Աստուծոյ սպասաւոր է՝ վրեժխնդիր ՚ի
 բարկութիւն այնմ՝ որ զչարն գործիցէ*։⁵ Կասն որոյ հարկ է հնազանդ լինել, ո՛չ
 միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի՛ մտացն*։⁶ Կասն այնորիկ և
 հարկս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են ՚ի նո՛յն կանխեալք։⁷ Արդ՝
 հատուցէք ամենեցուն զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն,
 որում զերկեւոյ՝ զերկեւոյն, որում զպատիւ՝ զպատիւն*։⁸ Եւ մի՛ ունեք
 պարտապան գտանիցիք, բա՛ց զմիմեանս սիրելոյ. զի որ սիրէ զընկերն,
 զօրէնսն կատարէ*։⁹ զՄի՛ շնայցեսն, և Մի՛ սպանանիցես, և Մի՛ զողանայցես, և
 Մի՛ սուտ վկայիցես, և Մի՛ ցանկանայցես. և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան
 բովանդակին, եթէ. Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո*։¹⁰ Սէր՝ ընկերի իւրում
 չար ո՛չ առնէ. լրո՛ւմն օրինացն սէ՛ր է։¹¹ Եւ զայս գիտասցիք վասն ժամանակիս.
 զի արդ՝ ժա՛ն իսկ է մեզ ՚ի քնո՛յ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան

* *Ոմանք.* Միմեանց խորհեսցիք... զիջանիցիք։

* *Ոմանք.* Եւ մի՛ ունեք չարի չար։ *Ոսկան յաւելու.* Զբարիս մի՛ միայն առաջի Աստուծոյ,
 այլ և առաջի։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Զխաղաղութիւն ունիցիք։

* *Ոմանք.* Իմ են վրեժխնդրութիւնք։

* *Ոմանք.* Քաղցեալ իցէ թշնամի քո։

* *Ոսկան.* Մի՛ յաղթիր ՚ի չարէն։

* *Ոմանք.* Ընդ իշխանութեամբք իցէ, ՚ի հնազանդութեան կայցէ։

* *Ոմանք.* Եւ որ հակառակ կան... դատաստան ընդուն՛։

* *Ոմանք.* Այլ չարաց։ *Ոմանք.* Զգովութիւն ՚ի նմանէն։

* *Այլք.* Ապա եթէ չար գործիցես, երկիր։ *Ոսկան.* Զի Աստուծոյ սպասաւոր է։

* *Ոմանք.* Այլ վասն մտացն խղճի։

* *Բազումք.* Արդ՝ հատուցէք իւրաքանչիւր զպարտս։

* *Ոմանք.* Եւ մի՛ պարտապան գտանիցէք, բայց զմիմե՛ն։

* *Օրինակ մի.* Զի Մի՛ շնայցեսն... յայն բովանդակի. եթէ։

յորժամ հաւատացա՛քն*.¹² զիշերն մերժեցաւ, և տի՛ւն մերժեցաւ. ՚ի բա՛ց արասցուք այսուհետև զգործսն խաւարի, և զգեցցուք զգէնն լուսոյ՛: ¹³Իբրև ՚ի տունջեան զգաստացեալք շրջեսցուք. մի՛ անառակութեամբք՝ և արբեցութեամբք, և մի՛ խառն ընկողնօք՝ և պղծութեամբք, և մի՛ նախանձու՝ և հակառակութեամբք*.¹⁴ Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս. և մարմնոյ խնամ մի՛ տանիք ՚ի ցանկութիւն*:

14

Գլուխ ԺԴ

¹Այլ զտկարացեալն ՚ի հաւատս՝ ընկալարուք, մի՛ խղճիւ երկմտութեանց*:
²Ոմն հաւատայ ուտել՝ զամենայն. և որ հիւանդն է՝ բանջար կերիցէ*:
³Որ ուտեն, զայն որ ո՛չն ուտէ, մի՛ անգոսնեսցէ. և որ ո՛չն ուտէ, զայն որ ուտեն, մի՛ դատեսցի. քանզի Աստուած զնա ընկալաւ*:
⁴Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ. իւրո՛ւմ Տեառն կայ կամ անկանի. բայց կացցէ, զի կարօղ է Տէրն հաստատել զնա*:
⁵Ոմն պահէ օ՛ր ըստ օրէ, և ոմն պահէ զօ՛ր հանապազ. իւրաքանչիւրոք զի՛ւր միտս հաճեսցէ*:
⁶Որ խորհի զօրն, Տեառն խորհի. և որ ո՛չն խորհի զօրն, Տեառն չխորհի. և որ ուտէ, Տեառն ուտէ, և գոհանայ զԱստուծոյ. և որ ո՛չն ուտէ, Տեառն չուտէ, և գոհանայ զԱստուծոյ*:
⁷Ձի ո՛չ ոք ՚ի մէնջ անձամբ կեայ, և ո՛չ անձամբ մեռանի*:
⁸Եթէ կեամք՝ Տեառն կեամք, և եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք. և արդ՝ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն ենք*:
⁹Քանզի ՚ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ՝ և եկեաց, զի մեռելոց և կնդանեաց առ հասարակ տիրեսցէ*:
¹⁰Դու զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո. քանզի ամենեքին կալոց ենք առաջի ատենին Քրիստոսի*:
¹¹Ձի գրեալ է. Կենդանի՛ եմ ես՝ ասէ Տէր. զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր, և ամենայն լեզու խոստովան լիցի Աստուծոյ*:
¹²Ապա ուրեմն իւրաքանչիւրոք ՚ի մէնջ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ*:
¹³Այսուհետև մի՛ զմիմեանս դատեսցուք. այլ առաւել զայս դիք ՚ի մտի, չդնել զայթազողութիւն եղբօրն:
¹⁴Չայս զիտեն և հաստատեալ են ՚ի Քրիստոս Յիսուս, զի ո՛չինչ է պիղծ նովաւ. բայց այնմ որ համարիցի ոք ինչ պիղծ, նմա՛ է պիղծ*:
¹⁵Ձի եթէ վասն կերակրոյ

* Ոսկան. Վասն ժամանակի. զի: Ոմանք. Մեզ փրկութիւն. քանզի յորժամ հաւա՛:

* Ոմանք. Ձգործն խաւարի... զգէն լուսոյ:

* Ոմանք. խառն անկողնովք... և հակառակութեամբ:

* Ոմանք. ՚ի ցանկութիւնս:

* Ոմանք. երկմտութեամբ:

* Ոմանք. եւ ուտել զամենայն:

* Օրհնակ մի. Մի՛ անգոսնեսցէ... և որ ոչն ուտեն՝ զայն որ ուտեն:

* Ոմանք. Իւրում Տեառնն... բայց կեցցէ: Ոսկան. Տէր հաստատել:

* Ոմանք. Ձիւր միտս հաճեսցի:

* Ոմանք. եւ որ ուտեն, Տեառն:

* Ոմանք. եթէ կամք և եթէ:

* Ոմանք. Քանզի նոյն իսկ. կամ՝ ՚ի սոյն իսկ... և եկաց. զոր մեռելոց և կեն՛:

* Ոմանք. Առաջի ատենին Աստուծոյ:

* Ոմանք. խոստովան եղիցի Աստուծոյ:

* Ոմանք. Յամարս տացէ. կամ՝ տալոց է Աստուծոյ:

* Ոմանք. Չայս զիտենք և հաստատեալ ենք ՚ի:

եղբայրն քո տրտմի, ո՛չ ևս սիրով գնացեր. մի՛ կերակրովն քո գնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն մեռա՞: ¹⁶Մի՛ հայիոյեսցի բարին ձեր: ¹⁷Ձի ո՛չ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ընպելի, այլ արդարութիւն, և խաղաղութիւն, և խնդութիւն ՚ի Յոզիւն Սուրբ՞: ¹⁸Ձի որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ՝ և ընտի՛ր մարդկան: ¹⁹Ապա այսուհետև զիե՛տ երթիցուք խաղաղութան, և զշինութեան որ առ միմեանս՞: ²⁰Մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է. այլ չար այնմ մարդոյ է, որ խղճիւն ուտիցէ: ²¹Լա՛ւ է ո՛չ ուտել միս, և ո՛չ ընպել գինի. և ո՛չ որով եղբայրն քո գայթազդի, կամ գթէ, կամ տկարանայ: ²²Դու՛ ապաքէն հաւատս ունիս, կա՛լ առանձինն առաջի Աստուծոյ. երանի՛ որ ո՛չ դատեսցի զանձն, որով զընկերն փորձիցէ՞: ²³Բայց որ խղճէն, թէպէտ և ուտիցէ՛ դատապարտեալ է. զի ո՛չ ըստ հաւատոց. զի ամենայն ինչ որ ո՛չ ՚ի հաւատոց է՝ մե՛ղք են՞: ²⁴Այլ այնմ որ կարօղն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն, ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ՞, ²⁵և յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն գրոց մարգարեականաց, ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ՚ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն՞:

15

Գլուխ ԺԵ

ԺԸ էգ. ¹Պարտ է մեզ որ կարօղս ենք՝ զտկարութիւն տկարացն բառնա՛լ. և մի՛ անձանց և եթ հաճոյ լինել՞: ²Այլ իւրաքանչիւրոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ՚ի բարիս՝ վասն շինութեան՞: ³Քանզի և Քրիստոս ո՛չ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ է. Նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վերայ իմ՞: ⁴Բայց որ ինչ գրեցան, ՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ. զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց գոյսն ընկալցուք՞: ⁵Այլ Աստուած համբերութեան և ամենայն մխիթարութեան՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի՞. ⁶զի միաբանութեամբ ՚ի մի բերան՝ փառաւոր առնիցէք զԱստուած և զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: ⁷Վասն որոյ ընկալարո՛ւք զմիմեանս,

* *Ոմանք.* Վասն կերակրոյն... կերակրովն քով զնա կորուսանել:

* *Բազումք.* Եւ խնդութիւն և խա՞:

* *Ոմանք.* Ձխաղաղութեան և զշինութեան որ առ միմեանս է:

* *Ոմանք.* Կա՛լ առանձին... որ ոչ դատիցի:

* *Ոմանք.* Բայց այնմ որ խզ՞... Որ ոչ ՚ի հաւատոց են. և *ոմանք.* Որոց ՚ի հաւատոց է, մեղք են:

* *Առ հասարակ ամենայն գրչագիր օրինակք մեր կրկին անգամ ունին զայս հատուածս բանի.* Այլ այնմ որ կա՞, և այլն. մի՛ աստէն՝ և դարձեալ ՚ի կատարած թղթոյս:

Յօրինակին պակասէր. Լռեցելոյ, (25) և յայտնելոյ այժմիկ... յամենայն հեթանոսս ծա՞:

* *Օրինակ մի.* Ի՛ ձեռն գրելոց մարգա՞:

* *Ոմանք.* Կարօղքս ենք:

* *Ոմանք.* Իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ... հաճոյ լինիցի:

* *Ոմանք.* Քանզի Քրիստոս ո՛չ:

* *Ոմանք.* Գրեցան ՚ի մեր վարդապետութիւնդ գրեցան:

* *Ոմանք.* Ընդ Քրիստոսի Յիսուսի:

որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ՝ ՚ի փառս Աստուծոյ: ⁸Այլ ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ ՚ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն: ⁹Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած. որպէս և գրեալ է. Վասն այսորիկ գոհացայց զքէն ՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասացից: ¹⁰Եւ դարձեալ՝ թէ. Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա: ¹¹Եւ դարձեալ՝ թէ. Օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր, և զովեցէք զնա ամենայն ժողովուրդք: ¹²Եւ դարձեալ Եսայի ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ՚ի նա հեթանոսք յուսացին: ¹³Այլ Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելու՛ ձեզ յուսով՝ զօրութեամբ Յոգուոյն Սրբոյ:

ԺԹ էր. ¹⁴Հաստատեալ են և են ինքնին եղբարք իմ՝ վասն ձեր, զի դուք լի՛ էք բարութեամբ, լի՛ էք ամենայն գիտութեամբ, կարօ՛ղ էք զմիմեանս խրատել: ¹⁵Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ եղբարք՝ փոքր ՚ի շատէ, իբրև յիշեցուցանելով՝ ձեզ վասն շնորհացն որ տուեալ են ինձ յԱստուծոյ: ¹⁶Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի ՚ի հեթանոսս. ըղձակերտս առնել զաւետարանն Աստուծոյ, զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի, սրբեալ Յոգուովն Սրբով: ¹⁷Ունիմք այսուհետև պարծանս ՚ի Քրիստոս Յիսուս առ Աստուած: ¹⁸Քանզի ո՛չ իշխեմ խօսել ինչ զոր ոչ գործեաց Քրիստոս ինև ՚ի հնազանդութիւն հեթանոսաց՝ բանիւք և արդեամբք, ¹⁹զօրութեամբ նշանաց և արուեստից, զօրութեամբ Յոգուոյն Սրբոյ. որպէս ինձ յերուսաղէմէ մինչև ՚ի կողմանս Լիւրիկացոց, լնու՛լ զաւետարանն Քրիստոսի: ²⁰Այնպէս առատացեալ յաւետարանել, ո՛չ ուր անուանեցաւ Քրիստոս, զի մի՛ իբրև յայլոյ հիման վերայ շինիցեմ. այլ որպէս և գրեալ է՝, ²¹թէ որոց ո՛չ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն. և որոց ո՛չ իցէ լուեալ՝ ՚ի միտ առցեն: ²²Վասն որոյ շատ խափանեցայ զա՛լ առ ձեզ: ²³Բայց արդ՝ ո՛չ ևս գոյ ինձ տեղի ՚ի կողմանս յայսոսիկ. և անձուկ յոյժ ունիմ ՚ի բազում ամաց զալ առ ձեզ: ²⁴Յորժամ անցանիցեմ ՚ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ նոսա՝ տեսանել զձեզ. և ՚ի ձէնջ յուղարկել՝ անդր, եթէ նախ իսկ փոքր ՚ի շատէ ձեւք լցայց: ²⁵Բայց այժմ երթամ յերուսաղէմ պաշտել զսուրբսն: ²⁶Քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնացոցն և Աքայեցոցն՝ հաղորդութիւն ինչ առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ ենն յերուսաղէմ: ²⁷Հաճոյ թուեցաւ, քանզի և պարտապան իսկ են նոցա. զի եթէ հոգևորացն նոցա

* *Ի բազումս պակասի. Այլ ասեմ. թէ:*

* *Ոմանք. Եւ դարձեալ ասէ՝ թէ. Ուրախ լերուք հեթա՞:*

* *Ոմանք. ՁՏէր ամենայն հեթանոսք. և ոմանք. ամենայն հեթանոսք զԱստուած:*

* *Ոմանք. Առաւելու՛ զձեզ յու՞:*

* *Ոմանք. Եւ են ինքն սիրելիք... զի և դուք լի էք... կարող էք և զմիմեանս խրատելոյ:*

* *Ոմանք. Եղբարք իմ փոքր ՚ի շա՞:*

* *Ոմանք. Ըղձակերտ առնելով զա՞:*

* *Ոմանք. Ունիմ այսուհետև և պար՞:*

* *Ոմանք. Ի հնազանդութիւնն հե՞:*

* *Օրհնակ մի. Զօրութեամբ շնորհաց և արուեսն: Ոմանք յաւելուն. Եւ որպէս ինձ յերուսաղէմէ և շուրջ մինչև:*

* *Ոմանք. Այսպէս առատացեալ... յայլոց հիման:*

* *Ոմանք. Ոչ գոյ ինձ... և անձուկ:*

* *Ոմանք. Տեսանել և զձեզ... յղարկել անդր... ձեւք լցաք:*

հաղորդ եղեն հեթանոսք, պարտին և մարմնաւորացն կցորդ լինել*։²⁸Արդ՝ զայս կատարեալ, և կնքեալ զպտուղն նոցա, անցից առ ձեւք ՚ի Սպանիա*։²⁹Չայս գիտեն, զի ՚ի գալն իմուն առ ձեզ, լրութեամբ օրհնութեան եկից*։ էե. ³⁰Աղաչեմ զձեզ եղբարք ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սիրով Յոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած*։³¹զի ապրեցայց յապստամբացն որ ՚ի Յրէաստանի են. և պաշտօնն իմ որ յերուսաղէմ, ընդունելի՛ լիցի սրբոցն*։³²զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ՚ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ*։³³Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան. ամէն*։

16

Գլուխ ԺԶ

¹Յանձն առնեն ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց. ²զի զնա ընկալջիք ՚ի Տէր՝ արժանի՛ սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ. քանզի և նա վերակացու եղև բազմաց, և ինձ իսկ ՚ի գլխովին*։³Ողջոյն տաջիք Պրիսկեայ և Ակիւղեայ՝ զործակցաց իմոց ՚ի Քրիստոս Յիսուս*։⁴որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց ո՛չ ես միայն գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց. ⁵և առտնին եկեղեցւոյն նոցա։ Ողջոյն տաջիք Եպենտեայ սիրելոյ իմոյ, որ է պտուղ Ասիացւոց ՚ի Քրիստոս։⁶Ողջոյն տաջիք Մարեայ, որ բազում վաստակս վաստակեաց ՚ի ձեզ։⁷Ողջոյն տաջիք Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց՝ և գերակցաց, որք երևելիքն իսկ են յառաքեալս. որք և յառաջ իսկ քան զիս եղեն ՚ի Քրիստոս*։⁸Ողջոյն տաջիք Ամպղեայ սիրելոյ իմոյ ՚ի Տէր։⁹Ողջոյն տաջիք Ուրբանեայ զործակցի իմոյ ՚ի Տէր, և Ստաքեայ սիրելոյ իմոյ*։¹⁰Ողջոյն տաջիք Ապելլեայ՝ որ ընտիրն է ՚ի Տէր։¹¹Ողջոյն տաջիք նոցա որ յԱրիստաբուլեայ տանէ անտի իցեն։ Ողջոյն տաջիք Յերովդիոնեայ՝ ազգականի իմուն։ Ողջոյն տաջիք այնոցիկ՝ որ ՚ի Նարկիսեայ տանէն իցեն ՚ի Տէր*։¹²Ողջոյն տաջիք Տրիփոսեայ և Տրիփոնեայ, վաստակաւորաց ՚ի Տէր։ Ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելոյ, որ բազում վաստակս վաստակեաց ՚ի Տէր*։¹³Ողջոյն

* *Ոմանք.* Եւ պարտական իսկ էին նոցա... կցորդ լինել նոցա. *կամ՝* նոցա կցորդ։

* *Բազումք.* Չպտուղ նոցա։

* *Ոմանք.* Չայս գիտենք. զի ՚ի գալն առ ձեզ, լրութեամբ օրհնութեամբն եկից։ *Ուր և ոմանք յաւելուն.* Օրհնութեան *աւետարանին Քրիստոսի* եկից։

* *Ոսկան.* Եւ սիրով Յոգւոյն Սրբոյ։

* *Ոմանք.* Որ են ՚ի Յրէաստան, և պաշտօնն իմ յերուսաղէմ։

* *Ոմանք.* Եկեալ առ ձեզ։

* *Ոմանք.* Խաղաղութեան և սիրոյ եղիցի. ընդ ձեզ ամենեսին։

* *Ոմանք.* Եւ ինձ իսկ գլխովին։

* *Ոմանք.* Պրիսկայ և Ակիւղայ. *կամ՝* և Ակուիղայ։

* *Ոմանք.* Եւ գերակցաց, որ երևէ։

* *Ոմանք.* Գործակցաց իմոց ՚ի Տէր։ *Յօրինակին.* Եւ Ստաքեայ։

* *Ոմանք.* Տանէ անտի են... ազգականի իմոյ... ՚ի Նարկիսայ։

* *Օրինակ մի.* Ողջոյն տաջիք Արիփոսեայ և Ողարիգենեայ վաստակաւորաց կանանցն ՚ի Տէր... Պերսիդեայ կնոջ սիրելոյ։

տաջիք Ռուփայ ընտրելոյ՝ ՚ի Տէր, և մօր նորա և իմոյ՝: ¹⁴Ողջոյն տաջիք Ասինկրիտեայ, Փլեգոնտեայ, Երմեայ, Պատրովբայ, Երմեայ, և որ ընդ նոսա եղբարք իցեն՝: ¹⁵Ողջոյն տաջիք Փիլոդոգեայ, և Յուլեայ, Ներեայ, և քեռ նորա Ողիմպիայ, և որ ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն՝: ¹⁶Ողջոյն տաջիք միմեանց ՚ի համբոյր սրբութեան: Ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի: Էզ. ¹⁷Աղաչեն զձեզ եղբարք, գիտե՛լ զայնպիսիսն, որ հերձուածս և զայթազողութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք. և խորշեցարու՛ք ՚ի նոցան: ¹⁸Ձի այնպիսիքն Տեառն մերոյ Քրիստոսի ո՛չ ծառայեն, այլ իւրեանց որովայնին. և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց՝: ¹⁹Ձի ձե՛ր հնազանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է. և արդ՝ ՚ի ձեզ ուրախ են. բայց կամի՛ն զձեզ իմաստունս լինել ՚ի բարիս, և անմեղս ՚ի չարիս՝: ²⁰Եւ Աստուած խաղաղութեան խորտակեսցէ՛ զԱստանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: ²¹Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր, և գործակից իմ, և Ղուկիոս, և Յասովն, և Սոսիպատրոս, ազգականք իմ: ²²Ողջոյն տան ձեզ և ես Տերտիոս, որ զթուղթս գրեցի ՚ի Տէր՝: ²³Ողջոյն տայ ձեզ Գայիոս ասպնջական իմ, և ամենայն եկեղեցւոյն: Ողջոյն տայ ձեզ Երաստոս շահապ քաղաքիս, և Կուարտոս եղբայր՝: ²⁴Այլ այնմ որ կարօ՛ղն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն, ժամանակօք յաւիտենից լռեցելոյ. ²⁵և յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն գրոց մարգարեականաց, ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ՚ի հնազանդութիւն հաւատոց. յամենայն հեթանոսս ծանուցելոյ՝, ²⁶Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն՝: ²⁷Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան՝:

Առ Հռոմայեցիս գրեցաւ ՚ի Կորնթոսէ՛ ՚ի ձեռն Փիբեայ սարկաւազի: Տունք Ձի՝:

* *Ոմանք.* Ռուփեայ ընտրե՛:

* *Ոմանք.* Ասինկրիմտեայ, Փղենգոնտեայ, Պատրովբայ Երմայ:

* *Յօրինակին.* Եւ քեռ նորա Իւղիմպիայ: *Ուր ոմանք.* Ուղիմպեայ:

* *Ոմանք.* Մերոյ Յիսուսի Քրիստոսի... և քաղցրաբանութեամբ և օրհնաբանութեամբ պատրեն:

* *Ոմանք.* Ձեր հնազանդութիւնն առ ամենեսին... ուրախ են ՚ի ձեզ:

* *Ոմանք.* Եւ ես Տերտիոս:

* *Ոմանք.* Ամենայն եկեղեցեաց... շահապետ քաղաքիս: *Ոսկան ըստ Լատինական օրինակին աստէն կարգէ՝* Շնորհք Տեառն մերոյ. *և այլն. զոր ամենայն գրչագիրք մեր ունին ՚ի վախճանի, որպէս և եղաք:*

* *Ոմանք.* Խորհրդոյս այսորիկ, ժամանակօք յաւիտենից լռեցելոյս... ՚ի հնազանդութիւն հաւատոցս:

* *Ոմանք.* Քրիստոսի. որում փառք: *Ուր Ոսկան յաւելու. Նմա պատիւ և փառք:*

Յօրինակին պակասէր. Յաւիտեանս յաւիտենից ամէն:

* *Ոմանք կրկնեն զամէնն, դնելով և ՚ի վախճանի՝* ամենեսին. ամէն:

* *Ի վախճանի՝ երկու օրինակք ունին.* Ի ձեռն Փիբեայ կնոջ միոյ սարկաւազի:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Կորնթացիս Առաջին Թղթոյն

Ձայս առաքեաց յԵփեսոսէ Ասիացւոց. զի տեսեալ էր զնոսա որոց վարդապետեաց. յիշատակէ՛ի ձեռն թղթիս զայս. և է պատճառ թղթիս այս: Կորնթոսի ժողովն յաղթահարեալ էր զսէրն, և նտածէին պառակտել, և էր առ նոսա բաժանումն. և յայնպիսի հերձուածոյն յառաջ եկին առնուլ զկին հորն: Այլք խորհէին որոշել՝ի կանանց իւրեանց՝ պատճառանօք կրօնից: Ոմանք ուտէին՝ի զոհից կոնցն, և յաճախէին յուտելն: Այլք զոմանս անգոսնէին, և որք խօսէին՝ի լեզուս սքանչելիք կարծէին. և յայս գնային կատարած: Եւ վասն յարութեան խորհրդոյն՝ ասէին ո՛չ յառնիցէ մարմինս այս: Սորա ամենեքեան ՚ի Կորնթոս շարժեալ, գրէին ժողովն առ առաքեալն. և նա առ ամենեսեան դարձուցանէր թուղթ: Եւ նախ միայն վկայէ նոցա յիմաստութեան գիտութիւն, և ո՛չ համարձակէ նոցա առնել այսպիսի հերձուած. այլ խորհրդակցի նոցա՝ մի՛ բանիւք կրօնաւորել, այլ ջանիւ և զօրութեամբ ցուցանել: Եւ սաստէ նմա որ առեալ էր զմօրուն: Խրատ և վասն որոյ ո՛չ ունէին յանցանս ՚ի յանձինս, և վասն որոյ գրեցինն: Դատէ զամուսնութիւն. վարդապետէ եթէ սուրբ է ամուսնութիւնն, և ՚ի դէպ ժամանակի խափանի վասն աղօթից: Եւ առ այնոսիկ որ սիրէին զժուժկալութիւն՝ գրէ վասն կուսութեան, բայց ո՛չ բռնութեամբ, այլ զի հաւատով այսպէս եղէն: Եւ վասն զոհից կոնցն՝ զի մի՛ աղտեղացուցեն զգիտակցութիւնն, այլ սիրով քաղաքավարեսցին: Դադարեցուցանէ զոր ՚ի զոհիցն ընթրիս, զի մի՛ տրտմեսցին փոքունքն: Եւ որք ՚ի հոգևոր շնորհսն էին՝ գրէ, զի մի՛ ամբարտաւանեսցին ՚ի շնորհսն. կամ դատապարտեսցեն զորս ո՛չ ունին այսպիսի շնորհս. կամ որ են այսպէս. Ձամենայն մի և նոյն Դոգւոյն ասէ եղեալ:

Վարդապետութեամբ ցուցանէ և վասն յարութեանն, եթէ մարմինս յառնէ, եթէ վախճանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապականութեան ըստ Քրիստոսի շնորհացն. և նոյն որ յարոյցն զՔրիստոս, և զձե՛զ ընդ նմա: Եւ ՚ի կատարածն զովութեան բանս առ իւրսն գրէ, և վասն որոց առ սուրբսն պատուիրէ, և այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք առ Կորնթացիս Առաջին Թղթոյն

Ձբազուն և զպէսպէս յանցուածոց Կորնթացւոց ունի Թուղթս զուղղութիւն:

ա. Յետ իսկզբանցն վասն չլինելոյ յերկմիտս ընդ միմեանս ՚ի փառասիրութենէ մարդկեղէն իմաստութեան, բ. Յորում վասն աստուածեղէն իմաստութեան: գ. Վասն սպասաւորաց: դ. Վասն չդատելոյ զվարդապետս, է. Վասն չհպարտանալոյ: բ. Վասն պոռնկաց և պոռնկութեան, և այնոցիկ, որ նոցունց հաղորդիցին: գ. Վասն չկարօտանալոյ արդարոց արտաքին դատաւորաց, և այն զի առաջի անհաւատից: ը. Յորում և վասն չպոռնկելոյ: դ. Վասն ամուսնութենէ և այրութեան, և չամուսնանալոյ: թ. Յորում վասն չմեկնելոյ արանց ՚ի կանանց, թէպէտ և յանհաւատիցն իցեն

իւրաքանչիւր կողմանքն: *գ.* Վասն սրբութեան և երկրորդ ամուսնութեան:
ե. Վասն խտրութեան կերակրոց, և մեկնելոյ ՚ի դիցն պաշտամանէ: *բ.*
Յորում ընդ ամենեցուն զիջանելոյ: *գ.* Վասն իւրոյ իսկ բազմապատիկ
պէսպէսն զիջանելոյ: *դ.* Վասն չլինելոյ հաղորդ դիւաց: *ե.* Վասն անխտիր
՚ի վաճառս և ՚ի կոչունս լինելոյ:
զ. Վասն կերպարանաց արանց և կանանց յաղօթս և ՚ի մարգարէութիւնս:
է. Վասն օրէնս ըստ Աստուծոյ պատշաճիցն առնլոյ, և մի՛ յագուրդ:
ը. Վասն պէսպէս շնորհաց՝ և նոցունց մատակարարութեան: *բ.* Յորում
վասն սիրոյ՝ իբրև վասն մեծի շնորհաց: *գ.* Վասն մարգարէութեան, զի
մեծ է քան զլեզուս:
թ. Վասն յարութեան համօրէն մարմնոյ: *բ.* Յորում վասն Քրիստոսի
ուղղութեան և յարդարման: *գ.* Նմանութիւն յարուցելոցն առ ՚ի սերմանցն
բուսոյ: *դ.* Վասն ՚ի փառս և ՚ի զօրութիւնս փոփոխելոյ:

ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

ադ. ¹Պա՛ւղոս կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ, և
Սոսթենէ՛ս եղբայր. ²Եկեղեցւոյդ Աստուծոյ որ է ՚ի Կորնթոս, նուիրելոց ՚ի
Քրիստոս Յիսուս՝ կոչեցելոց սրբոց, ամենեքունքք հանդերձ որ կարդան
զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն տեղիս նոցա՝ և մեր*:
³Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Դօրէ մերմէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ: ⁴Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝ ՚ի վերայ
շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ձեզ ՚ի Քրիստոս Յիսուս* . ⁵զի յամենայնի՛
մեծացարուք դուք նովալ՝ ամենայն բանիւ, և ամենայն գիտութեամբ. ⁶որպէս
վկայութիւնն իսկ Աստուծոյ հաստատեցաւ ՚ի ձեզ* . ⁷զի դուք մի՛ նուազիցիք՝ և
մի՛ իւիք շնորհօք, ա՛կն կալեալ յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի* . ⁸որ և հաստատեսցէ զձեզ մինչև ՚ի կատարած, անարատս՝ յօրն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի* : ⁹Չաւատարիմ է Աստուած, որով կոչեցարուք
՚ի հաղորդութիւն Որդւոյ՝ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ* :

* ՚ի վերնագրիս ոմանք յաւելուն. Առ Կորնթացիսն առաջին թուղթ առաքելոյ: Այլ բաց
յառաջնոյն որ Առ Դոմվնայեցիս՝ գրեթէ ամենայն գրչագիրք մեր համաձայն
Չալլենական սկզբնագրին զանց առնեն յաւելուլ ՚ի վերնագիրս յաջորդ թղթոցն՝
զանուն Պաւղոսի առաքելոյ: Յորս Ոսկան համեմատեալ Լատինականին դնէ
յիւրաքանչիւրս. Թուղթ երանելոյն Պօղոսի առաքելոյ առ. և այլն:

* Յոմանս պակասի. Եկեղեցւոյդ Աստուծոյ:

* Ոմանք. Որ տուեալ են ինձ ՚ի Քրիստոս:

* Ոմանք. Որպէս և վկայութիւնն:

* Ոմանք. Ակնկալեալ յայտնութեան Տեառն:

* Ոմանք. Յօր Տեառն մերոյ:

* Ոսկան. Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ոմանք. Որ կոչեցարուք ՚ի:

Ա ազ. ¹⁰Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի՛ իցեն ՚ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք ՚ի նոյն միտս և ՚ի նոյն հանճար*։ ¹¹Ա՛զդ եղև ինձ վասն ձեր եղբարք՝ ՚ի Քղուացւոց անտի, թէ հակառակութիւնք են ՚ի ձեզ*։ ¹²Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւրք ՚ի ձէնջ ասէ. Ես Պաւղոսեան եմ. և մեւսն՝ եթէ ես Ապաւղոսեան, և մեւսն՝ եթէ ես Կեփայեան. և մեւսն՝ եթէ ես Քրիստոսեան*։ ¹³Իսկ արդ՝ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս. մի՞թէ՛ Պաւղոս ՚ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յան՞ուն Պաւղոսի՞ մկրտեցարուք*։ ¹⁴Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ զի ո՛չ զոք ՚ի ձէնջ մկրտեցի, բայց միայն զԿրիսպոս՝ և զԳայիոս. զի մի՛ ոք ասիցէ, ¹⁵թէ յիմ անուն մկրտեցարուք*։ ¹⁶Տալ ետու կնիք և տանն Ստեփանեայ. զայլ ոք ո՛չ գիտեմ ամենկին թէ մկրտեցի*։ ¹⁷Ձի ո՛չ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝ այլ աւետարանել. ո՛չ ճարտարութեամբ բանից, զի մի՛ ընդունայն լիցի խաչն Քրիստոսի*։ ¹⁸Ձի ճա՛ն խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ։ ¹⁹Ձի գրեալ է. Կորուսից զիմաստութիւն իմաստնոց. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ ²⁰Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ոչ ապաքեն յիմար եցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս*։ ²¹Քանզի իմաստութեամբն Աստուծոյ՝ ո՛չ ծանեալ աշխարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս*։ բկ. ²²Իսկ որովիետև Յրեայք նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն*։ ²³մեք քարոզեցուք զխաչելեալն Քրիստոս, Յրէից գայթազութիւն, և հեթանոսաց յիմարութիւն. ²⁴բայց նոցին իսկ կոչեցելոցն Յրէից և հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն, և Աստուծոյ իմաստութիւն։ ²⁵Ձի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ. և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ։ ²⁶Թէպէտ և զձեր իսկ կոչումնդ տեսէք եղբարք, զի ո՛չ բազում իմաստունք ըստ մարմնոյ, և ո՛չ բազում հզօրք, և ո՛չ բազում ազնուականք*։ ²⁷այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս. ²⁸և զանտոհմս աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն, զի զէսն իմն խափանեցէ*։ ²⁹որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ*։ ³⁰Ձի ՚ի նմանէ՛ դուք էք ՚ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ,

* *Ոմանք.* Եւ մի՛ իցէ ՚ի ձեզ... և ՚ի նոյն հանճարք. *կամ՝* հանճարս։

* *Ոմանք.* Եթէ հակառակութիւնք իցեն։

* *Վասն անուանս՝* Ապաւղոս. *տես՝ զոր ծանուցաք.* Գործ. ԺԹ 1։ *Ոմանք.* Եթէ Քրիստոսեան։

* *Ոմանք.* ՚ի խաչ ելեալ է վասն։

* *Ոմանք.* Եթէ յիմ անուն։

* *Ոմանք.* Ստեփաննեայ, և զայլ ոք։

* *Ոմանք.* Ձիս Աստուած մկրտել... լինիցի խաչն Քրիստոսի։

* *Բազումք.* Յիմարեցոյց Աստուած զիմաս*։ *Ոմանք յաւելուն.* Աշխարհիս այսորիկ։

* *Յոմանս պակասի.* Քանզի *իմաստութեամբն Աստուծոյ* ոչ ծա*։ *Ուր ոմանք.*

Ապրեցուցանել զհաւատացեալքս։

* *Ոմանք.* Յրեայքն նշան... և հեթանոսքն զիմաստութիւն։

* *Ոմանք.* Իսկ կոչումն. *կամ՝* զկոչումնդ։

* *Ոմանք.* Եւ զանտոհմս աշխարհիս ընտրեաց Աստուած, և զարհամարհեալս և զոչինչս, զի զէսն իմ։

* *Ոսկան.* Առաջի նորա։

արդարութիւն, և սրբութիւն, և փրկութիւն*.³¹ զի որպէս և գրեալ է. Որ պարծօնն ՚ի Տէր պարծեսցի*:

2

Գլուխ Բ

¹Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբարք, ո՛չ ըստ առաւելութեան ինչ բանից իմաստութեան պատմել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ*:² Ձի ո՛չ եթէ ՚ի մտի եդի գիտել ինչ ՚ի ձեզ, բայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնոյն ՚ի խա՛ջ ելեալ*:³ Եւ ես տկարութեամբ՝ և երկիւղիւ, և դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ*.⁴ Եւ բանն իմ և քարոզութիւն, ո՛չ պատիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբք Յոգւոյն և զօրութեամբ*.⁵ զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ*:⁶ Վ զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն, ո՛չ զաշխարհիս այսորիկ, և ո՛չ զիշխանաց աշխարհի՛ս այսորիկ զխափանելեացս*.⁷ Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ՚ի փառս մեր*.⁸ զոր ո՛չ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ է՛ր ծանուցեալ, ո՛չ արդեւք զՏէր փառացն ՚ի խա՛ջ հանէին*:⁹ Այլ որպէս և գրեալ է. Ձոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց*:¹⁰ Այլ մեզ յայտնեաց Աստուած Յոգւովն իւրով. զի Յոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ*:¹¹ Ձի ո՞ ոք ՚ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի՛ մարդոյն որ ՚ի նմա. նոյնպէս և ո՛չ զԱստուծոյսն ոք գիտէ, եթէ ո՛չ Յոգին Աստուծոյ*:¹² Այլ մեք ո՛չ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՅոգին որ յԱստուծոյ. զի ծանիցո՛ւք զայն որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ*:¹³ Եւ զոր խօսիմքս՝ ո՛չ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ Յոգւոյն, ընդ հոգևորս զհոգևորսն համեմատեմք*:¹⁴ Քանզի շնչաւոր մարդ՝ ո՛չ ընդունի զՅոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. և ո՛չ կարէ գիտել՝ եթէ հոգեպէս քննիցի*:¹⁵ Իսկ հոգևորն քննէ զամենայն, և ինքն յունեքէ ո՛չ քննի*:¹⁶ Իսկ արդ՝ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ և խրատտու լինիցի

* *Ոմանք.* Իմաստութիւն Աստուծոյ. արդարութիւն և փրկութիւն և սրբութիւն:

* *Ոմանք.* Որպէս գրեալ է. Որ պարծօնցին ՚ի Տէր պարծեսցին:

* *Ոսկան.* Չվկայութիւն Քրիստոսի:

* *Ոմանք.* Գիտել ինչ ձեզ... ՚ի խա՛ջ ելեալն:

* *Ոմանք.* Եղէ ընդ ձեզ:

* *Ոմանք.* Եւ բան իմ... բանիւք իմաստութեամբ, այլ արդեամբ Յոգւոյն զօրութեան:

* *Ոմանք.* Հաւատքն ձեր:

* *Ոմանք.* Ոչ աշխարհիս այսորիկ զխափա՛:

* *Ոմանք.* ՉԱստուծոյ իմաստութիւն ծածուկ խորհրդովք:

* *Ոմանք.* Ձի թէ էր... զՏէրն փառաց ՚ի:

* *Ոսկան.* Անկաւ, զոր պատրաստեաց:

* *Ոմանք.* Յոգւով իւրով... զամենայն քննէ:

* *Ոմանք.* Ձի ո՞վ ոք ՚ի մարդ... թէ ոչ հոգին որ ՚ի նմա է... և զԱստուծոյսն ոք գի՛:

* *Ոմանք.* Աշխարհիս... որ յԱստուծոյն շնորհէ՛:

* *Ոմանք.* Ուսման ճարտարութեամբ բա՛... ընդ հոգևորսն զհոգևորս:

* *Ոմանք.* Ոչ ընդունի զՅոգին Աստուծոյ... քանզի յիմարութիւն է... հոգեպէս քննիցէ:

* *Ոմանք.* Չամենայն քննէ: *Ուր օրինակ մի.* քննելով զամենայն, և ինքն:

նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք*:

3

Գլուխ Գ

¹Եւ ես եղբարք՝ ո՛չ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգևորս՝ այլ իբրև ընդ մարմնաւորս: ²Իբրև տղայոց ՚ի Քրիստոս կա՞թն ջամբեցի ձեզ՝ և ո՛չ կերակուր. զի ո՛չ ևս կարէիք. նա և արդ իսկ ո՛չ կարէք. քանզի դեռ մարմնաւոր էք*: ³Ուր և արդէն իսկ ՚ի ձեզ հե՛ռ և նախանձ. ոչ ապաքէն մարմնաւոր էք՝ և ըստ մարդկան գնայք*: ⁴Յորժամ ասէ ոք ՚ի ձե՛նջ. ես Պաւղոսեան եմ. և մեւսն՝ եթէ ես Ապաւղոսեան, ոչ մարդի՞կ էք: Իսկ արդ՝ ո՞վ է Պաւղոսն, կամ ո՞վ Ապաւղոս*, ⁵պաշտօնեայք. որովք հաւատացէքն, և իւրաքանչիւր որպէս Տէր ետ*: ⁶Ես տնկեցի՞, Ապաւղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցո՛յց: ⁷Այսուհետև ո՛չ այն ինչ ոք է՝ որ տնկեացն, և ո՛չ այն՝ որ զջուրն ետ. այլ որ աճեցոյցն Աստուած*: ⁸Որ տնկեացն, և որ զջուրն ետ, մի՛ են. բայց իւրաքանչիւրոք զի՛ւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց*: ⁹Ձի Աստուծո՛յ գործակից ենք, Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած էք*: ¹⁰Ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ինձ, իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եղի. բայց այլ է որ շինէն. այլ իւրաքանչիւրոք զգոյ՜ լիցի՝ թէ որպէս շինիցէ*: ¹¹Ձի հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս*: Վջ ¹²Եթէ ոք շինէ ՚ի վերայ հիմանս այսորիկ՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն*, ¹³իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օ՛րն ընտրեսցէ. զի հրո՛վ յայտնելոց է*. ¹⁴և զիւրաքանչիւր գործն զհարդ և իցէ՛ հո՛ւրն փորձեսցէ*: ¹⁵Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի՞, բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ ՚ի հո՛ւր*: ¹⁶Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ*: ¹⁷Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ՛ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սու՛րբ է, որ էք դուք*: ¹⁸Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կամիցի ՚ի ձե՛նջ իմաստուն լինելի՝ յաշխարհիս յայսմիկ, յիմար լիցի՞ զի եղիցի

*Յօրինակին պակասէր. Որ և խրատ՝: Ոմանք. Խրատատու լինիցի նմա. բայց մեք:
*Ոմանք. Ջամբեցից ձեզ, և ո՛չ հաստատուն կերակուր... քանզի դեռևս մարմնաւոր:
*Ոմանք զբառս արդէն գրեմ՝ արդէն. յորմէ և ոմանք ևս զատարար՝ արդ եմ իսկ: Ուր օրինակ մի. Արդ իսկ եմ ՚ի ձեզ... և ըստ մարմնոյ գնայք:
*Ոմանք. Ես Պաւղոսեան եմ. և միւսն թէ ես Ապաւղոսեան, ո՞չ մարդիկ իցեն... կամ ո՞վ է Ապաւղոսն:
*Ոմանք. Եւ իւրաքանչիւր ումեք որպէս և Տէր ետ:
*Օրինակ մի. Ոչ այն ինչ է: Ուր Ոսկան. Ոչ այն ոք ինչ է:
*Ոմանք. Ձիւր վարձս առցէ:
*Ոմանք. Գործակից էք, Աստուծոյ արդիւնք էք. Աստուծոյ շինուած էք:
*Ոմանք. Ըստ շնորհացն որ... որ շինէ... զգոյ՜ լիցիցի եթէ որպէս շինեսցէ:
*Ոմանք. Այլ ոչ ոք կարէ:
*Ոմանք. Եւ եթէ ոք շինէ:
*Օրինակ մի. Ձի հուրք յայտնէ՛:
*Ոմանք. Եւ իւրաքանչիւր գոր՝... հուրն փորձիցէ: Ուր Ոսկան. Եւ զիւրաքանչիւրոյ:
*Ոմանք. Շինեաց՝ կայցէ: Ի լուս՝. Որպէս թէ ՚ի հրոյ:
*Ոմանք. Եւ Հոգին Աստուծոյ:
*Օրինակ մի. Ձի տաճարն Աստուծոյ... որ է դուք:

իմաստուն*։¹⁹Ձի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ. քանզի գրեալ է, թէ որ ըմբռնէ զիմաստունս ՚ի խորագիտութեան իւրեանց*։²⁰Եւ դարձեալ՝ թէ Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց, զի են ընդունայն*։²¹Այսուհետև մի՛ ոք պարծեսցի ՚ի մարդկանէ. ²²զի ամենայն ինչ ձեր է, եթէ Պա՛ւղոս, եթէ Ապաւղոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս, եթէ հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է*։²³դուք Քրիստոսի՛, Քրիստոս Աստուծոյ՛:

4

Գլուխ Դ

¹Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի՝ և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ: ²Արդ՝ խնդիր է ՚ի մէջ հազարապետաց, եթէ ոք հաւատարիմ գտցի*։ ³Այլ ինձ և այս անարգանք են, եթէ ՚ի ձէնջ դատեցայց, կամ բնաւ իսկ ՚ի մարդկանէ. նաև զանձն իմ ո՛չ քննեմ*։ ⁴Ձի ո՛չի՛նչ գիտեմ զանձին իմոյ. այլ ո՛չ եթէ՝ այսու արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է*։ ⁵Այսուհետև մի՛ յառաջ քան զժամանակն դատիք, մինչև եկեսցէ Տէր որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս սրտից. և ապա՝ իւրաքանչիւր գովութիւն եղիցի յԱստուծոյ*։ ⁶Ձայս եղբարք՝ առակեցի յանձն իմ և յԱպաւղոս՝ վասն ձեր. զի ՚ի մէնջ ուսջիք՝ մի՛ ինչ առաւել քան զգրեալսն իմանալ. զի մի՛ այր քան զընկեր հպարտանայցէք ՚ի վերայ ընկերին: ⁷Իսկ արդ ո՞վ է որ քննիցէ զքեզ. զի՞նչ ունիս զոր ո՛չ իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ*։ ⁸Արդէն իսկ յագեալ իցէք, և արդէն մեծացարուք, առանց մեր թագաւորեցէք. և երանի՛ թէ թագաւորէիք, զի և մեք ընդ ձե՛զ թագաւորէաք: ⁹Ինձ այսպէս թուի՝ թէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Աստուած՝ իբրև զմահապարտս. զի տեսիլ եղեաք աշխարհի, և հրեշտակաց և մարդկան*։ ¹⁰Մեք յիմարք վասն Քրիստոսի, և դուք իմաստունք ՚ի Քրիստոս. մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառաւորեալք՝ և մեք անարգք* ¹¹մինչև ցայսօր ժամանակի. և քաղցեաք, և ծարաւեցաք, և մերկ գնացաք, և կռփահարեցաք, և անհանգիստ եղեաք*։ ¹²և աշխատեցաք ձեռօք մերովք.

* Ամենայն գրչագիրք համաձայն մերունս ՚ի լուս՝. այսր համարոյ նշանակեն. Աստիկեցի է կանոնս: Ոմանք. Ձանձինս խաբեսցէ, եթէ ոք կամեսցի... յաշխարհի յայսմիկ:

* Ոմանք. Որ ըմբռնէն զիմաստունս*:

* Ոմանք. Ձխորհուրդս մարդկան՝ զի են:

* Ոմանք միայար գրեն՝ մի բառ ձևացուցեալ այսպէս. եթէ որկանս. այլ բազումք համաձայն մերունս բաժանմամբ ունին, որպէս և ՚ի Հռովմ. Ը 38: Ուր և երկու օրինակք գրեն. եթէ որ կեանս:

* Ոմանք. Եւ եթէ ոք հաւա՞:

* Ոմանք. Թէ ՚ի ձէնջ դա՞:

* Ոսկան. Գիտեմ անձին իմոյ: Օրինակ մի. Այլ ոչ այսու արդար են, զի:

* Ոմանք. Լուսաւոր առնէ զգա՞: Ոսկան. Իւրաքանչիւրոյ գով՞:

* Ոսկան. Ունիս՝ որ ոչ իցէ... իբրև զչառօղ: Ոմանք. Իբր զչառեալ:

* Ոմանք. եթէ զմեզ առաքեալսս... տեսիլ եղաք:

* Ոմանք. Անարգք: (11) Մինչև ցայ՞:

* Ոսկան. Եւ քաղցեցաք: Յօրինակին պակասէր. Գնացաք, և կռփահարեցաք:

բամբաստին զմեզ՝ օրհնեաք. հալածէին՝ յանձն առնուեաք*.¹³ Կայիոյէին՝ աղաչեաք, իբրև առակ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի. ամենեցուն փարելի լինել մինչև ցայժմ*:¹⁴ Ո՛չ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս, այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ:¹⁵ Թէպէտ և բեր դաստիարակս ունիցիք՝ ի Քրիստոս, այլ ո՛չ եթէ բազում հարս. զի ՚ի Քրիստոս Յիսուս՝ աւետարանաւն են ծնայ զձեզ*:¹⁶ Արդ աղաչեմ զձեզ՝ նմանօրէք ինձ եղիջիք*:¹⁷ Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ ՚ի Տէր. որ յիշեցուցէ՛ ձեզ զճանապարհս իմ որ ՚ի Քրիստոս Յիսուս. որպէս և ամենայն ուրեք յամենայն եկեղեցիս ուսուցանեմ*:¹⁸ Որպէս թէ չիցեն՝ զալոց առ ձեզ, ոմանք հպարտացան*:¹⁹ Այլ եկի՛ց հուլայ ընդ հուլայ՝ եթէ Տէր կամեսցի. և ՚ի միտ առից՝ ո՛չ զբանս հպարտացելոցն, այլ զգօրութիւն*:²⁰ Զի ո՛չ եթէ բանիւք է արքայութիւն Աստուծոյ, այլ զօրութեամբ*:

Բ²¹ Արդ՝ ո՞րպէս կամիք, գաւազանա՞ւ եկից առ ձեզ, եթէ սիրով հոգւոյն հեզութեան, և արդարութեան, և խոնարհութեան*:

5

Գլուխ Ե

¹ Բնաւ՝ և անուանի՞ իսկ ՚ի ձեզ ընդէր պոռնկութիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ո՛չ և ՚ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ունել*:² Եւ դուք հպարտացեալ էք. և ո՛չ առաւել զգացարուք, զի բարձցի՛ ՚ի միջոյ՝ ձերմէ՝ որ զգործն զայն գործեաց*:³ Զի ես թէպէտ և մարմնով մեկուսի՛ եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրև ՚ի մօտոյ ընտրեցի. զայն որ այնպէսն գործեաց*.⁴ Եւստի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ժողովել ձեզ ՚ի միասին, և իմոյ հոգւոյս՝ զօրութեամբն հանդերձ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*,⁵ մատնել զայնպիսին Սատանայի ՚ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի՛ յօրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*:⁶ Ո՛չ բարուք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ*:⁷ Սրբեցէք ՚ի բա՛ց զիին խմորն, զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք. քանզի գատիկ մեր

* Ոմանք. Յանձն առնուաք. և ոմանք. առնեաք:

* Ոմանք. եւ ամենեցուն փարելի:

* Ոմանք. Դաստիարակ ունի՛:

* Ոմանք. Եւստի յիշեցուցէք ինձ եղերուք: Ոսկան առեալ ՚ի Լատինականեն յաւելու. Ինձ եղիջիք. որպէս և ես Քրիստոսի: Որ չիք ՚ի զրջագիրս մեր, որպէս և ո՛չ ՚ի Յունական օրհնակս:

* Ոմանք. Որ և յիշեցուցէ:

* Ոմանք. Որպէս թէ ես չիցեմ:

* Ոմանք. Այլ զգօրութիւնսն:

* Ոմանք. Արքայութիւնն Աստուծոյ:

* Ոմանք. Արդ ո՞րպիսի կամիք... հոգւոյն զօրութեան և:

* Ոմանք. Որ և ո՛չ ՚ի հեթանոսս: Ոսկան. Զօր իւրոյ որ ունիլ:

* Օրհնակ մի ընդ Ոսկանայ. Առաւել սզացա՛:

* Օրհնակ մի. Թէպէտ մարմնով... այլ հոգւով մերձ:

* Ոմանք. եւ իմով հոգւոյս զօրութեամբ:

* Յոմանս պակասի. Զայնպիսին Սատանայի ՚ի սատա՛: Բազումք. Յաւուրն Տեառն մերոյ:

* Ոմանք. Զանկուածն խմոր՝:

զենաւ Քրիստոս*։⁸Այսուհետև արասցուք տօնս. մի՛ ՚ի խմորն հին, և մի՛ ՚ի խմորն չարութեան և անզգամութեան. այլ յանխմոր ստուգութեան և ճշմարտութեան*։ բզ. ⁹Գրեցի ձեզ ՚ի թղթի այդր չխառնակել ընդ պոռնիկս։ ¹⁰Եւ ո՛չ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ, կամ ընդ ագահս, կամ ընդ յափշտակօղս, կամ ընդ կռապարիշտս. ապա թէ ոչ՝ պարտ էիք և յաշխարհէ՛ իսկ ելանել*։ ¹¹Բայց արդ՝ գրեցի ձեզ չխառնակել*։ Եթէ ոք եղբայր անուանեալ կամ պոռնիկ իցէ, կամ կռապարիշտ, կամ ագահ, կամ բամբասօղ, կամ արբեցօղ, կամ յափշտակօղ, ընդ այնպիսունն և հա՛ց մի՛ ուտել*։ ¹²Ձի կայ իմ և զարտաքինսն դատելոյ. ոչ ապաքէն դուք զներքինսն դատիցիք*։ ¹³և զարտաքինսն Աստուած դատիցի. բարձէք զչարն ՚ի միջոյ ձերմէ*։

6

Գլուխ Զ

Գ ¹Իշխէ՞ ոք ՚ի ձէնջ՝ եթէ ի՞րք ինչ իցեն ընդ ընկերի՛ իւրում, դատել առաջի անիրաւաց, և ո՛չ առաջի սրբոց*։ ²Եթէ ո՞չ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին. և եթէ ձե՛ւք դատի աշխարհ, ապա ո՛չ էք արժանի անարգ ատենից*։ ³Ո՞չ գիտէք եթէ զիրեշտակս դատիմք, թո՛ղ թէ զերկրաւորս*։ ⁴Ձերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգս եկեղեցւոյ դատաւորս նստուցանէք*։ ⁵Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ո՛չ գոյ ոք իմաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ՚ի մէջ եղբօր իւրոյ*։ ⁶Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն ՚ի մէջ անհաւատից*։ ⁷Եւ արդ՝ ամենակին իսկ վատթարութիւն է ՚ի ձեզ, զի՞ դատաստանք իսկ զոն ՚ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ո՞չ դուք առաւել նեղիք*։ ⁸Այլ դուք զրկէք և նեղէք, և այդ զեղբարս ևս*։ ⁹Եթէ ո՞չ գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ո՛չ ժառանգեն. մի՛ խաբիք, ո՛չ պոռնիկք, ո՛չ կռապարիշտք, ո՛չ շունք*, ¹⁰ո՛չ իզագեալք, ո՛չ արուագէտք, ո՛չ գողք, ո՛չ ագահք, ո՛չ արբեցօղք, ո՛չ բամբասօղք, և ո՛չ յափշտակօղք՝ զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն*։ ¹¹Եւ դուք՝ այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք. այլ սրբեցարուք. այլ

* Ոմանք. Ձիին զխմորն... որպէս էք իսկ ան*։

* Ոմանք. Արասցուք տօն... այլ անխմորն. կամ՝ յանխմորս։

* Ոմանք. Եւ ոչ ընդ պոռն... և ընդ յափշ*։

* Ոմանք. Բայց գրեցի ձեզ։ *Յօրինակին պակասէր.* Կամ բամբասօղ, կամ արբեցօղ, կամ յափշտակօղ։ *Օրինակ մի.* Ընդ այնպիսոյն և հաց մի՛ ուտեր։

* Ոմանք. Ձներքինսդ դատիք։

* Ոմանք. Աստուած դատեցի. կամ՝ դատեցէ. բարձէք զչար ՚ի միջոյ։

* Ոմանք. Առաջի անօրինաց։

* Ոմանք. Եթէ սուրբք զաշխարհս դա*։

* Ոմանք. Թո՛ղ թէ զերկրաւորքս։

* Ոմանք. Ձանարգս... դատաւոր նս*։ *Ոսկան.* Դատաւորս նստուցէք։

* *Օրինակ մի.* Ձերոյ ասեմք... եղբօր իւրում։

* Ոմանք. Եղբայր ընդ եղբայր դա*։

* Ոմանք. Եւ ընդէր դուք ոչ զր*։

* *Օրինակ մի.* Եւ եթ զեղբարս ևս։

* Ոմանք. Թէ անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ։ *Յօրինակին պակասէր.* Ոչ կռա՞. ոչ շունք։

* Ոմանք. Ձարքայութիւն Աստուծոյ։

արդարացարուք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ՚ի Յոզիմ Աստուծոյ մերոյ*։ զկ. ¹²Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ո՛չ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ո՛չ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ։ ¹³Կերակուր որովայնի, և որովայն կերակրոյ. այլ Աստուած զսա՛ և զնոսա խափանեցէ՛. բայց մարմին՝ ո՛չ պոռնկութեան, այլ Տեառն, և Տէր մարմնոյ։ ¹⁴Այլ Աստուած՝ որ և զՏէրն յարոյց, և զձե՛զ յարուցէ զօրութեամբ իւրով*։ ¹⁵Ո՛չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամս Քրիստոսի, առնիցենք անդամս պոռնկի՞. քաւ լիցի*։ ¹⁶Եթէ ո՛չ գիտէք, զի որ մերձենայ ՚ի պոռնիկ՝ մի մարմին է. եղիցին ասէ, երկոքին ՚ի մարմին մի*։ ¹⁷Եւ որ մերձենայ ՚ի Տէր, մի հոգի են*։ ¹⁸Փախերո՛ւք ՚ի պոռնկութենէ։ Ձամենայն մեղս զոր և զորձե՛ մարդ՝ արտաքո՛յ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ*։ ¹⁹Եթէ ո՛չ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են Յոզուոյն որ է ՚ի ձեզ՝ զոր ունիքն յԱստուծոյ. և չէք անձանց տէր* ²⁰Քանզի զնո՛ց գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած ՚ի մարմինս ձեր և յոգիս ձեր*։

7

Գլուխ Է

Դ ¹Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարիո՛ք է մարդոյ ՚ի կի՛ն մարդ չմերձենալ*։ ²Բայց վասն պոռնկութեան, իւրաքանչիւրոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւրոք կին՝ զիւր այր կալցի*։ ³Կնոջ՝ այր իւր, զպարտն հատուցէ. նոյնպէս և կինն՝ անն իւրում*։ ⁴Ձի կին՝ մարմնոյ իւրում ո՛չ իշխէ, այլ այրն. նոյնպէս և այրն՝ իւրում մարմնոյ ո՛չ իշխէ, այլ կինն*։ ⁵Մի՛ զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ՛ առ ժամանակ մի, զի ուխտի՛ցն պարապիցէք, և դարձեալ ՚ի նոյն դարձջի՛ք, զի մի՛ փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անխառնութեանն ձերոյ*։ ⁶Ձայս ասեն ներելով, և ո՛չ հրաման տալով*։ ⁷Քանզի

* *Ոմանք.* Այսպիսիք ոմանք էիք։

* *Ոմանք.* Որ զՏէրն յարոյց.. զօրութեամբն իւրով։

* *Ոմանք.* Առնիցէք անդամս պո՛ր։ *Առ Ոսկանայ պակասի.* Պոռնկի. *քաւ լիցի։*

* *Ոմանք.* Եղիցին երկոքեան ասէ։

* *Ոսկան.* Մի հոգի է։

* *Ոմանք.* Ձոր զորձե՛ մարդ... իւրոյ են. իսկ որ պոռնկի, յիւր։

* *Ոսկան յաւելու.* Յոզուոյն *Սրբոյ* որ է ՚ի ձեզ։ *Ոմանք.* Որ ՚ի ձեզ է, զոր ունիք յԱստուծոյ, և ո՛չ էք։

* *Ի բազումս պակասի.* Ի մարմինս ձեր, և յոգիս ձեր։ *Օրինակ մի յաւելու.* Եւ յոգիս՝ որ էք Աստուծոյ։ *Ուր և այլ նոր օրինակ մի.* Եւ ՚ի հոգիս ձեր, զի հաճոյ լինիցիք Աստուծոյ։ *Իսկ Ոսկան.* Եւ յոգիս որ է յԱստուծոյ։

* *Օրինակ մի.* Արդ վասն որոյ գրեցէքն։

* *Ոմանք.* Ձիւր կինն կալցի. և իւրաքանչիւր կին զիւր այրն կալցի։

* *Օրինակ մի.* Կնոջն՝ այր զիւր պարտսն հա՛ւ։ *Բազումք.* Ձպարտսն հատուցէ... և կին՝ առն իւ՛։

* *Օրինակ մի.* Եւ կին մարմնոյ իւրոյ... և այրն մարմնոյ իւրում ոչ. և այլ *օրինակ մի.* Իւրում մարմնոյն։

* *Օրինակ մի.* Սատանայ վասն խառնակութեան ձերոյ. և այլ *օրինակ մի.* Վասն անխառնակութեան ձե՛։

* *Ոմանք.* Եւ ոչ հրաման տալոյ։

կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զի՛ս. այլ իւրաքանչիւրոք զի՛ւր շնորհս ունի յԱստուծոյ, ո՛մն այսպէս և ո՛մն այնպէս*։ ⁸Բայց ամուրեացն և այրեացն ասեմ. Լաւ է նոցա թէ կայցեն իբրև զի՛ս*։ ⁹Ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ, ամուսնացի՛ն. զի լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ*։ ¹⁰Այլ կանամբեացն պատուիրեմ, ո՛չ ես՝ այլ Տէր. Կնոջ յառնէ մի՛ մեկնել։ ¹¹Ապա եթէ մեկնեսցի, անա՛յր մնասցէ, կամ անդրէ՛ն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր մի՛ թողուլ*։ Վջ ¹²Բայց այլոց ես պատուիրեմ, ո՛չ եթէ Տէր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակիլ ընդ նմա, մի՛ թողցէ զնա*։ ¹³Եւ կին որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն. ¹⁴զի սո՛ւրբ է այրն անհաւատ, կնա՛ւն. և սուրբ է կինն անհաւա՛տ, արա՛մբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պի՛ղծ են. բայց այժմ սո՛ւրբ են*։ ¹⁵Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի՛. զի ո՛չինչ հարկ ՚ի վերայ կայ եղբօրն կամ քեռն յայնպիսի իրս. քանզի ՚ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած*։ ¹⁶Չի՞ զհտես կին դու՝ եթէ զայր քո ասպրեցուսցես. կամ զի՞ զհտես ա՛յր դու՝ եթէ զկին քո ասպրեցուսցես*։ ¹⁷Եթէ ոչ իւրաքանչիւր ումեք որպէս և բաժանեա՛ց Տէր, զիւրաքանչիւրոք որպէս և կոչեա՛ց Աստուած, ա՛յնպէս զնասցէ. և ա՛յսպէս ընդ ամենայն եկեղեցիս պատուէ՛ր տամ*։ ¹⁸Թլփատեա՛լ ոք կոչեցաւ. մի՛ ցանկասցի անթլփատութեան. յանթլփատութենէ՛ ոք կոչեցաւ, մի՛ թլփատեսցի. ¹⁹զի թլփատութիւն ո՛չինչ է, և անթլփատութիւն ո՛չինչ. այլ պահպանութիւն Աստուծոյ պատուիրանացն. ²⁰բայց իւրաքանչիւրոք յոր կոչումն կոչեցաւ, ՚ի նմին կացցէ*։ ²¹Ծառա՛յ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ կարիցես ևս ազա՛տ լինել, քեզ ա՛յնպէս լաւ իցէ*։ ²²Չի որ ՚ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն, ազա՛տ Տեառն է. նոյնպէս և որ ազատն կոչեցեալ է, ծառա՛յ Քրիստոսի է*։ ²³Գնոց գնեցայք՝ մի՛ լինիք ծառայք մարդկան։ ²⁴Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ եղբա՛րք, ՚ի նմին կացցէ առաջի Աստուծոյ*։ զդ. ²⁵Այլ վասն կուսանաց հրաման ինչ ՚ի Տեառնէ ոչ ունիմ. բայց խրատ տա՛մ, որպէս ողորմելոյ ուրուք ՚ի Տեառնէ, հաւատարիմ լինել*։ ²⁶Համարիմ թէ ա՛յնպէս լաւ իցէ. բայց վասն վտանկին որ ՚ի վերայ կայ, բարիո՛ք է մարդոյ թէ այնպէս իցէ*։ ²⁷Կապեա՛լ ես ՚ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձակեալ ես ՚ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։ ²⁸Չի եթէ ամուսնանայցես՝ ո՛չ մեղար. և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ո՛չ մեղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն. այլ ես խնայեցի՛ ՚ի ձեզ*։ ²⁹Բայց զա՛յս ասեմ ե՛ղբարք, եթէ

* *Ոմանք.* Իւրաքանչիւր՝ զիւր շնորհ ունիցի յԱստուծոյ։

* *Օրինակ մի.* Լաւ էր նոցա եթէ կացցեն։

* *Ոմանք.* Ամուսնանալն քան զջեռնուլն։

* *Ոմանք.* Ապա թէ մեկնեսցի... զկին իւր մի՛ թողուր։

* *Բազումք.* Բնակել ընդ նմա։

* *Ոմանք.* Ապա եթէ ոչ՝ որ՞։

* *Ոմանք.* Ապա թէ անհաւատն մեկնեսցի։

* *Ոմանք.* Եթէ զայրն քո։

* *Օրինակ մի.* Բաժանեաց Աստուած... ընդ ամենայն տեղիս պա՛ր։

* *Ոմանք.* Իւրաքանչիւր յոր կո՞... ՚ի նմին կայցէ։

* *Ոմանք.* Այլ թէ և կարիցես ազատ։

* *Ոմանք.* Կոչեցեալ է ծառայն։

* *Ոմանք.* Իւրաքանչիւրոք յոր կո՞։

* *Ոմանք.* Հրաման ՚ի Տեառնէ ինչ ոչ ու՞։

* *Ոմանք.* Եթէ այդպէս. *կամ՝* այսպէս իցէ։

* *Ոմանք.* Ես խնայեմ ՚ի ձեզ։

ժամանակս կարճեալ է այսուհետև. զի որ ունիցիմ կանայս՝ որպէս թէ չունիցիմ*.
³⁰և որ լայցենն, որպէս թէ ո՛չ լայցեն. և որ խնդանն, որպէս թէ ո՛չ խնդայցեն. և որ
 գնենն, որպէս թէ չունիցիմ*. ³¹և որ վարենն զաշխարհս, որպէս թէ չվայելիցեն.
 զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ*.³²Այլ կամիմ զձեզ անհոգս
 լինել. զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ ո՛րպէս հաճոյ լիցի Տեառն*. ³³և որ
 կանամբին է, հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում: ³⁴Եւ ահա
 մեկնեցան՝ ՚ի միմեանց առնակինն և կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն, զի իցէ
 սուրբ մարմնով և հոգւով, և առնակինն հոգայ զաշխարհիս՝ թէ ո՛րպէս հաճոյ
 լիցի առն իւրում*: ³⁵Այլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ո՛չ եթէ խեղդ ինչ
 արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտութեան՝ և հպատակութեան Տեառն առանց
 զբաղանաց*: զգ. ³⁶Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կուսին իւրոյ՝ եթէ իցէ
 ելեալ ըստ չափ, և այնպէս ինչ պարտ իցէ լինել. զոր կամի արասցէ, ո՛չ
 մեղանչէ. ամուսնասցի*.³⁷Իսկ որ հաստատեալ է ՚ի սրտի իւրում, և վտանկ ինչ
 ո՛չ իցէ նմա, իշխանութիւն ունի ՚ի վերայ կամաց իւրոց. և զայն ընտրեաց ՚ի
 սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր, բարւո՛ք առնէ*: ³⁸Եւ որ ամուսնացուցանէ
 զկոյսն իւր, բարւո՛ք առնէ. և որ ո՛չն ամուսնացուցանէ՝ լա՛ւ ևս առնէ: ³⁹Կին
 կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր
 նորա, ազա՛տ է, ում կամիցի ամուսնանալ. բայց միայն Տէրամբ*: ⁴⁰Բայց
 երանելի՛ ևս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու. ես այսպէս համարիմ՝ թէ և
 յի՛ս իցէ Յոգի Աստուծոյ*:

8

Գլուխ Ը

Ե՛ 1Այլ վասն զոհի՛ց կռոցն, գիտեմք եթէ ամենեքի՛ն գիտութիւն ունիք.
 գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ*.²Եթէ ոք կամիցի գիտել ինչ, չէ՛ ևս
 գիտաց՝ որպէս արժան է գիտել*.³Բայց որ սիրէ զԱստուած, նա՛ է տեղեկացեալ
 ՚ի նմանէ*.⁴Այլ վասն կերակրոցն զոհելոց՝ գիտեմք եթէ ո՛չինչ իսկ կուռքդ եմ

* *Ոմանք.* Եթէ կարճեալ է ժամանակս այսուհետև՝ զի... որպէս թէ ոչ ունիցիմ: *Ուր Ոսկան*
 միայն ունի զկենտարդութիւնն այսպէս. ժամանակս կարճեալ է. այսուհետև զի որ: *Այլ*
 ամենայն զրչագիրք մեր ընթեռնուն որպէս և եղաք:
 * *Ոմանք.* Որ լացցեն, որպէս թէ ոչ լացցենն... որպէս թէ չխնդացցեն... որպէս չունի՞:
 * *Ոմանք.* Չվայելեսցեն:
 * *Ոմանք.* Կամիմ ես զձեզ... հաճոյ լինիցի:
 * *Ոմանք.* Ի՞ միմեանց կանամբին և կոյսն... սուրբ մարմնով և հոգւով... հաճոյ լինիցի:
 * *Ոմանք.* Այլ պարկեշտութեան և:
 * *Ոմանք.* Այլ թէ ոք ամօթ համարի... եթէ ելեալ իցէ ըստ... զոր կամեսցի. *կամ՝* կամիցի
 արասցէ:
 * *Յօրինակին պակասէր.* Հաստատեալ է՛ի սր՞: *Ոմանք.* Եւ վտանգ ինչ ոչ իցէ ՚ի նմա...
 ունի ՚ի կամաց իւ՞:
 * *Ոմանք.* Տորքան ժամանակս կեն՞... ապա թէ ննջիցէ այրն նորա... ում կամի
 ամուսնանայ, այլ միայն: *Ուր Ոսկան.* Ում կամիցի ամուսնասցի, բայց միայն:
 * *Ոմանք.* Եւս է՝ եթէ առնիցէ ըստ իմում խրատու:
 * *Օրինակ մի.* Վասն զոհելից կռոցն: *Բազումք.* Գիտութիւն ունիմք:
 * *Ոմանք.* Արժանն էր գիտել:
 * *Օրինակ մի.* Տեղեկացեալ ամենայնի:

յաշխարհի. զի չի՞ք ոք Աստուած բաց՝ ՚ի միոյն*։ ⁵Ձի թէպէտ և իցեն անուանեալ աստուածո՞ք՝ եթէ յերկինս, և եթէ յերկրի. որպէս և են աստուածք բազումք՝ և տեարք բազումք*։ ⁶Այլ մեզ մի՛ է Աստուած, Յայր՝ յորմէ ամենայն, և մե՛ք ՚ի նա. և մի՛ Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մե՛ք նովաւ*։ Վջ ⁷Այլ ո՛չ յամենեսեան գիտութիւն է. ոմանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն իբրև զգոհեալ ուտեն. և խիղճ մտաց նոցա քանզի տկար է, պղծի*։ ⁸Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ո՛չ կացուցանէ. ո՛չ եթէ չուտենք՝ պակասենք ինչ, և ո՛չ եթէ ուտենք՝ առաւելումք ինչ*։ ⁹Բայց զգո՛յշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթազողութիւն լիցի տկարաց*։ ¹⁰Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ՝ ՚ի մեհենի, ոչ ապաքէն խիղճ մտաց նորա, որ տկարութեամբն զգածեալ է, անդրէն շինիցի ուտել զգոհեալն*։ ¹¹Եւ կորնչիցի տկար եղբայրն ՚ի քում գիտութեանն, վասն որոյ Քրիստոսն մեռաւ։ ¹²Եւ այսպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, ՚ի Քրիստոս մեղանչէ*։ ¹³Վասն որոյ եթէ կերակուր գայթազեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յախտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթազեցուցից*։

9

Գլուխ Թ

¹Ոչ ապաքէն ազատ են, ոչ ապաքէն առաքեալ են. ոչ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմովք տեսի՛, ոչ ապաքէն գործ իմ դուք էք ՚ի Տէր։ ²Թէպէտ և այլոց չիցեն առաքեալ, այլ դէպ ձեզ են. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ՚ի Տէր*։ ³Իմ պատասխանի ուր զիս հարցանիցեն՝ այս է*։ ⁴Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել։ ⁵Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն զքորս կանայս շրջեցուցանել ընդ մեզ. որպէս և այլ առաքեալքն, և եղբարքն Տեառն, և Կեկիաս*։ ⁶Եթէ միայն են և Բառնաբաս ո՛չ ունիցիմք իշխանութիւն չգործել ինչ*։ ⁷Ո՞ք երբէք զինուորիցի իւրովք թոշակօք. ո՞ք տնկիցէ այգի՝ և ՚ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ք արածիցէ խաշն՝ և ՚ի կաթանէ խաշինն ո՛չ ուտիցէ*։ ⁸Մի՞թէ

* Ոմանք. Կերակրոցն զոհելոյ... բայց ՚ի միոյն։

* Ոմանք. Որպէս են աստու՛։

* Ոմանք. Այլ մեր մի է Աստուած... և մեք նովաւ, և մի է Տէր Յիսուս։ *Յոմանս պակասի.* Եւ մեք ՚ի նա, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նովաւ։

* Ոմանք. Ոչ յամենեսին... և խիղճ մտացն նորա։

* Ոմանք. Պակասիմք ինչ, և ոչ թէ ուտենք աւելումք ինչ։

* Բազումք. Լինիցի տկարացն։

* Ոմանք. Ո՞չ ապա խիղճ մտաց։ *Ոմանք.* Տկարութեամբ զգա՛... անդէն շին՛։

* Բազումք. Եւ այնպէս յանց՛։

* Ոմանք. Թէ կերակուր զեղբայրն իմ գայ՛։

* Ոմանք. Եւ կնիք իսկ առա՛։

* Ոմանք. Որ զիս հարցա՛։

* Ոմանք. Ձքորս և զկանայս։ *Ոսկան.* Եւ եղբայրն Տեառն։ *Ուր ամենայն գրչագիրք համաձայն մերումս ունին՝* եղբարքն Տեառն, և ՚ի լուս՛. *Նշանակեն.* Որդիք Յովսեփայ՝ Յակոբոս գլուխ եպիսկոպոսաց, Յովսէս, Սիմոն, Յուդա. *բաց ՚ի միոյ օրինակէ որ զանց առնէ դնել՝* գլուխ եպիսկոպոսաց. և այլ *օրինակ մի գրէ* զլիսաւոր եպիսկոպոսաց։

* Ոմանք. Ոչ ունիմք իշ՛։ *Ուր Ոսկան.* Չունիցիմք իշխանութիւն գործել։

* Ոմանք. Ո՞ք երբէք զինուորեցի. *կամ՝* զինուորեցէ իւ՛... ՚ի պտղոյ այգւոյն ո՛չ։

ըստ մարդկութեան խօսիցիմ զայս. կամ թէ և օրէնքն զսոյն ո՞չ ասիցեն*։ ⁹Ի Մովսիսի իսկ օրէնսն գրեալ է. Ո՛չ կապեսցես զցռո՛ւկ եզին կալոտոյ։ Միթէ՛ զեզա՞նց ինչ փո՞թ էր Աստուծոյ*։ ¹⁰Ոչ ապաքէն վասն մե՛ր ասէ. քանզի վասն մե՛ր գրեցաւ. զի յուսո՛վ պարտի որ սերմանեն՝ սերմանել. և որ կասուն՝ յուսո՛վ վայելել*։ ¹¹Եթէ մեք ՚ի ձեզ զհոգևորսն սերմանեցաք, մե՛ծ ինչ է, եթէ ՚ի ձեցո՞ զմարմնաւորսդ հնծիցեմք*։ ¹²Եթէ այլք ձերո՛վ իշխանութեամբդ վայելեն, ոչ առաւել ևս մե՛ք. այլ ո՛չ ՚ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք, զի մի՛ խափան ինչ լինիցիմք ւաւետարանին*։ ¹³Ո՞չ գիտէք՝ եթէ որ ՚ի տաճարին գործեն, ՚ի տաճարէ՛ անտի ուտեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են, ՚ի սեղանո՛յ անտի վայելեն*։ ¹⁴Նոյնպէս և Տէր հրաման ետ. որոց զաւետարանն ւաւետարանեն, յաւետարանէ՛ անտի կեալ։ ¹⁵Բայց ես և ո՛չ զմի ինչ յայսցանէ արկի ՚ի գործ, և ո՛չ գրեցի զայդ, զի ինձ այսպէս ինչ լինիցի. լա՛ւ է ինձ մանաւանդ մեռանել, և ո՛չ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի*։ ¹⁶Չի եթէ ւաւետարանեն, ո՛չ ինչ են ինձ պարծանք. քանզի հարկ ՚ի վերայ կայ. բայց վա՛յ է ինձ թէ ոչ ւաւետարանեն*։ ¹⁷Եթէ կամաւ զայն առնեն, վարձք են ինձ. և եթէ ակամայ, տնտեսութիւն յանձն է ինձ։ ¹⁸Եւ արդ՝ զի՞նչ վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի՛ տաց զաւետարանն, զի մի՛ զեղծցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի՛ անդ*։ ¹⁹Քանզի ազա՛տ էի յամենայնէ, և ամենեցուն զանձն ՚ի ծառայութեան կացուցի, զի զբազումս շահեցայց*։ ²⁰Եղէ ընդ Յրեայսն իբրև զՅրեայ, զի զՅրեայսն շահեցայց*։ ²¹Եղէ ընդ օրինօք, իբրև զայնոսիկ որ ընդ օրինօքն էին. իբրև ո՛չ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ և զնոսա՛ շահեցայց. ընդ անօրէնս եղէ՛ իբրև զանօրէն. իբր ո՛չ եթէ անօրէն ինչ էի յԱստուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիստոսի. զի շահեցայց զանօրէնս*։ ²²Եղէ ընդ տկարս իբրև զտկար, զի զտկարսն շահեցայց. ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերևս ապրեցուցի՞ց զմանս։ ²³Չայս ամենայն առնեն վասն ւաւետարանին, զի կցորդ եղէց մնա։ դկ. ²⁴Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթանան, ընթանալ՝ ամենեքին ընթանան. բայց մի՛ ոք առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք՝ զի հասանիցէք*։ ²⁵Ամենայն որ պատերազմի, ամենայնի՛ ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի՛ պսակն առնուցուն, և մեք զանեղծութեանն*։ ²⁶Արդ՝ ե՛ս իսկ այնպէս ընթանամ, ո՛չ որպէս

* *Ոմանք.* Միթէ օրէնքն զսոյն ոչ ասացին։

* *Ոմանք.* Ի Մովսէսի իսկ յօրէնս գր՞։

* *Օրինակ մի.* Վասն մեր իսկ գր՞։

* *Ոմանք.* Ձհոգևորն սերմա՞։

* *Օրինակ մի.* Վայելեն, որչափ առաւել։ *Ուր Ոսկան.* Ընդէր ոչ առաւել... զի մի՛ խափանիչք լինիցիմք ւաւետարանին Քրիստոսի։

* *Ոմանք.* Թէ որ ՚ի տաճա՞... պաշտօնեայքն են։

* *Ոմանք.* Ինձ այնպէս ինչ... ընդունայն համարեսցի։

* *Ոմանք.* Չի թէ ւաւետա՞... եթէ ոչ ւաւետա՞։

* *Ոմանք.* Վարձք են ինձ։ *Բազումք.* Չի մի՛ զեղծիցիմ ինչ։

* *Ոմանք.* Ի ծառայութիւն կացու՞։

* *Ոմանք.* Ընդ Յրեայս իբրև զՅրեայսն։

* *Ոմանք.* Իբր ոչ եթէ ընդ օրինօք էին, այլ զի և որ... անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ ընդ օրինօք Քրիստոսի։

* *Ոմանք.* Ընթանալն ամենեքեան ընթա՞... առնու զյաղթութիւնն. այսպէս ընթա՞։

* *Ոմանք.* Յամենայնի ժուժկալ լիցի. *կամ՝* ժուժկալեալ լինի... զանեղծութեան։

յաներևոյթս այնպէս մրցիմ, որպէս ո՛չ թէ զհողմս ինչ կոծելով*.²⁷ այլ ճնշե՛մ
զմարմինս իմ, և հնազանդեցուցանեմ. զի գուցե՞ որ այլո՛ցն քարոզեցի՝ ես ինքն
անպիտան գտանիցիմ*:

10

Գլուխ Ժ

¹Ո՛չ կամիմ եթէ տգէտք իցէք ե՛ղբարք, զի հա՛րքն մեր ամենեքի՛ն ընդ ամպովն
էին. և ամենեքի՛ն ընդ ծովն անցին*.² և ամենեքեան ՚ի Մովսէս մկրտեցան յանպն
և ՚ի ծովն.³ և ամենեքի՛ն զնոյն զհոգևոր զկերակուրն կերան*.⁴ և ամենեքի՛ն
զնոյն զհոգևոր ըմպելին արբին, զի ըմպելին ՚ի հոգևոր վիմէն որ երթայր զհետ
նոցա. և վէմն էր ինքն Քրիստոս*:⁵ Այլ ո՛չ եթէ ընդ բազումս ՚ի նոցանէ հաճեցաւ
Աստուած. քանզի տապաստ անկան յանապատի անդ:⁶ Եւ այն օրինակաւ լինէր
վասն մեր. զի մի՛ լիցուք ցանկացօրք չարեաց, որպէս նոքայն ցանկացան*:⁷ Եւ
մի՛ կռապա՛շտք լինել՝ որպէս ոմանք ՚ի նոցանէ, որպէս և գրեալ է. Նստա՛ւ
ժողովուրդն ուտել և ըմպել՝ և յարեան ՚ի խաղա՛լ*:⁸ Եւ մի՛ պոռնկեցուք, որպէս
ոմանք պոռնկեցան ՚ի նոցանէ՝ և անկան ՚ի միո՛ւմ աւուր քսան և չո՛րք հազարք:
⁹ Եւ մի՛ փորձեցուք զՏէր. որպէս ոմանք ՚ի նոցանէ փորձեցին, և յօձի՛ց անտի
սատակեցան*:¹⁰ Եւ մի՛ տրտնջեցուք. որպէս ոմանք ՚ի նոցանէ տրտնջեցին, և
կորեան ՚ի սատակչէ՛ անտի:¹¹ Այլ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա.
բայց գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախճան յաւիտեանցն եհաս*:¹² Դդ.
¹² Այսուհետև որ համարիցի հաստատուն կալ, զգոյ՛շ լիցի գուցէ անկանիցի*:
¹³ Փորձութիւն ՚ի ձեր վերայ ո՛չ է եկեալ՝ բաց ՚ի մարդկանէ. այլ հաւատարիմ է
Աստուած, որ ո՛չ արկցէ զձեզ ՚ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ
արասցէ ընդ փորձութեանն և զե՛լսն, զի համբերել կարասջիք*:¹⁴ Վասն որոյ
սիրելիք իմ փախերուք ՚ի կռապաշտութենէ*:¹⁵ Իբրև ընդ իմաստունս խօսիմ.
ընտրեցէ՛ք ձեզէն զոր ասեմս:¹⁶ Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն
հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն զոր բեկանեմք, ոչ ապաքէն
հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի:¹⁷ Չի մի հաց՝ մի՛ մարմին եմք բազումքս.
զի ամենեքի՛ն ՚ի միօջէ՛ հացէ անտի վայելեմք:¹⁸ Տեսէ՛ք զԻսրայէլն ըստ մարմնոյ.

* *Ոմանք.* Այլ ես այնպէս... որպէս եթէ զհողմս ինչ կոծիցեմ: *Ուր Ոսկան.* Ոչ որպէս թէ զհող՛: *Ամենայն գրչագիրք համաձայն մերումս ՚ի լուս՛.* այսր համարոյ նշանակեն. Ատտիկեցի է կանոնս:

* *Ոմանք.* Ձմարմին իմ... զի մի՛ գուցէ... ես ինքնին անպիտան:

* *Ոմանք.* Եղբարք եթէ տգ՛... ամենեքեան ընդ ամպովս էին... ընդ ծովս անցին:

* *Ոմանք.* Ամենեքեան զնոյն հոգևոր կերա՛... զնոյն հոգևոր ըմպ՛:

* *Ոմանք.* Ինքն էր Քրիստոս:

* *Ոմանք.* Որպէս և նոքայն ցան՛:

* *Բազումք.* Եւ մի՛ կռապարիշտք լինել: *Օրինակ մի.* Նստան ժողովուրդն. յուտել և յըմպել:

* *Ոմանք.* Ի նոցանէն փորձեցին:

* *Ոմանք.* Յաւիտեանց եհաս:

* *Օրինակ մի.* Որ կամիցի հաստատուն կեալ, զգոյ՛շ լինիցի:

* *Ոմանք.* Ի վերայ ձեր ոչ է եկեալ. բայց ՚ի մարդկանէ... զկարն ձեր... և զե՛լս, զի համ՛:

* *Օրինակ մի.* Սիրելիք փախերուք ՚ի պոռնկութենէ:

ոչ ապաքեն որ ուտեն 'ի զոհիցն, հաղորդք են սեղանոյն*։¹⁹Իսկ արդ՝ զի՞նչ
 ասեն, եթէ զոհեալն իցե՞ ինչ. և կամ կուռքն իսկ՝ իցե՞ն ինչ*։²⁰Այլ զոր զոհենն
 հեթանոսք, դիւաց՝ և ո՛չ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զծեզ հաղորդս դիւաց լինել.
 քանզի ո՛չ կարէք զբաժակն Տեառն ընպել՝ և զբաժակն դիւաց*։²¹և ո՛չ կարէք 'ի
 սեղանոյ Տեառն վայելել՝ և 'ի սեղանոյ դիւաց*։²²Եթէ նախանձ ինչ արկանիցենք
 Տեառն. մի թէ զօրագոյնք իցենք քան զնա*։²³Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ո՛չ
 ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ո՛չ ամենայն ինչ շինե՞*։²⁴Մի՛
 ոք զանձին և եթ խնդրեսցէ՝ այլ և զընկերի՛ն*։²⁵Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի
 վաճառի, կերայք՝ և մի՛ խնդրէք վասն խղճի մտաց*։²⁶զի Տեառն է երկիր լրիւ
 իւրով։ վջ²⁷Եթէ ոք կոչեսցէ զծեզ յանհաւատից, և կամիցիք երթալ. զամենայն
 ինչ որ առաջի դնիցի, կերայք՝ և մի՛ խտրէք վասն խղճի մտաց*։²⁸Ապա թէ ոք
 ասասցէ ձեզ՝ թէ այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն նորա՝ որ գուշակն եղև, և
 վասն խղճի մտացն*։²⁹Այլ զխիղճ մտացն ասեն, ո՛չ զիրն, այլ զընկերին. իսկ
 ընդէ՞ր բնաւ ազատութիւնս իմ դատիցի յայլո՛յ խղճէ մտաց*։³⁰Եթէ ես շնորհօք
 վայելեմ, ընդէ՞ր հայիոյիցիմ, վասն որոյ ե՛սն զօհանամ*։³¹Արդ՝ եթէ ուտիցէք, եթէ
 ընպիցէք, եթէ զինչ և զործիցէք, զամենայն ինչ 'ի փա՛ռս Աստուծոյ արասջիք*։
³²Առանց գայթազողութիւն դնելոյ Յրէից և հեթանոսաց՝ լինիցիք, և եկեղեցւոյն
 Աստուծոյ*։³³Որպէս և ես ամենևին ամենեցուն հաճոյ լինիմ. ո՛չ խնդրեմ զանձին
 օգուտ, այլ զբազմաց զի ապրեսցին։

11

Գլուխ ԺԱ

Զ¹Նմանօրք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի*։

դզ. ²Գովեն զծեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք. և որպէս աւանդեցի՝ ձեզ՝
 զաւանդութիւնսն ունիցիք*։³Կամիմ զի զիտիցէք դուք. եթէ ա՛ռն ամենայնի
 գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ ա՛յր, և գլուխ Քրիստոսի Աստուած*։⁴Ամենայն
 այր յորժամ յաղօթս կայցէ, կամ մարգարեանայցէ, և զգլուխն ծածկեալ ունիցի,

* Ոմանք. ԶԻսրայէլ ըստ մարմնոյն... հաղորդ են սե՞ն։

* Ոմանք. Ասեն թէ զոհեալն ի՞... և կամ թէ կուռքն իսկ։

* Ոմանք. Այլ զոր զոհեն հե՞ն։

* Ոմանք. Եւ 'ի սեղանոյն դի՞ն։

* Ոմանք. Իցենք մեք քան զնա։

* Ոմանք. Յօգուտ է։ Օրհնակ մի. Ամենայն ինչ օգտէ։

* Ոմանք. Մի՛ ոք զանձն և եթ խնդրիցէ։ Յօրհնակին պակասէր. Այլ և զընկերին։

* Այլք. Կերայք՝ և մի՛ խտրէք վասն խղճ։

* Բազումք. Եթէ ոք կոչէ զծեզ։ Ոմանք. Առաջի դնիցէ. կամ՝ դնիցեն։ Ուր Ոսկան. առաջի
 ձեր դնիցի։

* Ոմանք. Ապա եթէ ոք ասիցէ ցծեզ եթէ։

* Ոսկան. Յայլոց խղճէ մտ՞։

* Ոմանք. Ընդէր հայիոյիցին։

* Ոմանք. Եթէ ուտիցէք և ընպիցէք։ Ոսկան. Եթէ զինչ և առնիցէք, զամենայն ինչ։

* Ոմանք. Լինիցիք, և եկեղեց՞։

* Ոմանք. Նմանօրք եղերուք ինձ։

* Օրհնակ մի. Գովեն զծեզ Կորնթացիք. զի։ Ոմանք. Զաւանդութիւնն ունիցիք։

* Ոմանք. Թէ առն ամենայնի։

յամօթ առնէ զգլուխն իւր*։ ⁵Եւ ամենայն կին յորժամ յաղօթս կայցէ, կամ մարգարեանայցէ բացաւ զլիսով, յամօթ առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարէ՝ թէ գերծեալ իցէ*։ ⁶Չի եթէ ո՛չ սքողեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա թէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գերծով սքողեսցի*։ ⁷Անն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ, զի պատկեր և փառք Աստուծոյ է. իսկ կին՝ փառք առն իւրոյ*։ ⁸Չի ո՛չ եթէ այր ՚ի կնոջ է, այլ կին յառնէ*։ ⁹Քանզի ո՛չ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կին վասն առն*։ ¹⁰Վասն այնորիկ պարտի կինն շո՛ւք դնել զլիսոյն վասն հրեշտակաց։ ¹¹Բայց ո՛չ կին առանց առն, և ո՛չ այր առանց կնոջ ՚ի Տէր*։ ¹²Չի որպէս կին յառնէ, նոյնպէս և այր ՚ի կնոջէ. բայց ամենայն յԱստուծոյ*։ ¹³Այլ դուք ձեզէն տո՛ւք զիրաւոյ. արժա՞ն է կնոջ մարդոյ հոլանի՛ յաղօթս կալ առաջի Աստուծոյ*։ ¹⁴Եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ. զի այր եթէ զհսաւոր է, անարգանք են նմա*։ ¹⁵Բայց կին եթէ զհսաւոր է, փառք են նմա. զի գէ՛սք փոխանակ զգեստու տուեալ են նմա*։ ¹⁶Ապա թէ ոք կամի հակառակօղ լինել, մեք չունի՛մք այնպիսի սովորութիւն, և ո՛չ եկեղեցիքն Աստուծոյ*։ Վջ

Է ¹⁷Այլ զայս պատուիրեն, ո՛չ որպէս թէ զովիցեն, զի ո՛չ ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն նկրտիք։ ¹⁸Նախ յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեն եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ. և սակաւ ինչ հաւատացի*։ ¹⁹Բայց և հերձուածք լինելոց են ՚ի ձեզ. զի որ ընտիրքն իցեն ՚ի ձեզ՝ երեսցի՛ն*։ ²⁰Եւ արդ՝ ՚ի ժողովելն ձեզ ՚ի միասին, ո՛չ է տուն Տեառն ձեզ տեղի հա՛ց ուտելոյ*։ ²¹Չի իւրաքանչի՛ւրոք զիւր ընթրիս յառաջանայ ուտել. և ոմն քաղցեալ, և ոմն արբեալ։ ²²Միթէ տո՞ւնս ոչ ունիցիք ուտելոյ և ըմպելոյ. եթէ զեկեղեցեալն Աստուծոյ արհամարիք, և յամօթ առնէք զչքաւորսն. զի՞նչ ասացից, զովեցի՞ց զձեզ. յա՛յդն ո՛չ զովեն*։ ²³Չի ես ընկալայ ՚ի Տեառնէ՛, զոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ՚ի գիշերին յորում մատներ, առ հաց. ²⁴գոհացաւ. երէկ և ասէ. Այս է իմ մարմին որ վասն ձեր. զայս արարէք առ իմոյ յիշատակի*։ ²⁵Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն, առ և ասէ. Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ թէ

*Ոմանք. Յաղօթս կացցէ... ծածուկ ունիցի։

*Ոմանք. Եւ կամ մարգա՛... բացաւ զլիսաւ... զգլուխ իւր։ *Օրինակ մի.* Չի այնպէս համարեալ է։

*Ոմանք. Չի թէ ոչ սքաւղեսցի կինն... ապա եթէ անպա՛։

*Ոմանք *յաւելուն.* Ծածկել զգլուխ *իւր*... առն իւրոյ է։

*Ոմանք. Քանզի և ոչ հաս՛։

*Ոմանք. Բայց կին ոչ առանց։

*Ոմանք. Ամենայնն յԱստուծոյ։

*Ոմանք. Տո՛ւք զիրաւն։

*Ոմանք. Ուսուցանիցէ զձեզ։

*Ոմանք. Բայց կինն եթէ։

*Ոմանք. Ապա եթէ կամի ոք։

*Ոմանք. Ժողովիք յեկեղեցին։

*Ոմանք. Չի որ ընտիրքն են ՚ի։ *Յայս համար ոմանք ՚ի լուս՛. նշանակեն.* Ատտիկացի.

կամ՝ Ատտիկոսի էր կանոնս։

*Ոմանք. Ոչ է տունն Տեառն։

**Բազումք.* Ուտելոյ կամ ըմպելոյ։ *Ոմանք.* Չեկեղեցեալն Աստուծոյ արհամարիցէք... զինչ ասացից ձեզ։

**Ոսկան յաւելու.* Եւ ասէ. *Առէք և կերայք,* այս է... որ վասն ձեր *բաշխի.* զայս ա՛։ *Ոմանք.* Այս է մարմին իմ։

ընպիցէք՝ առ իմոյ յիշատակի*։ ²⁶Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս՝ և զբաժակս ընպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա*։
²⁷Այսուհետև՝ որ ուտիցէ զհացս, կամ ընպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն*։
²⁸Փորձեսցէ՛ մարդ զանձն իւր, և ապա՛ ՚ի հացէ անտի կերիցէ, և ՚ի բաժակէն արբցէ։ ²⁹Չի որ ուտէ և ընպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրուն ուտէ և ընպէ. զի ո՛չ խտրէ զմարմինն Տեառն*։ ³⁰Վասն այնորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք և ախտաժտք. և շատ ևս այն են, որ և ննջեցեալքն իսկ իցեն*։ ³¹Չի եթէ զանձինս քննեաք, ապա ո՛չ դատապարտեաք։ ³²Եւ եթէ դատիմք՝ ՚ի Տեառնէ խրատիմք. զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք*։
³³Այսուհետև եղբարք, յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք ուտել, միմեանց մնասջիք*։ ³⁴Ապա թէ որ քաղցեալ իցէ, ՚ի տան իւրուն կերիցէ՛. զի մի՛ ՚ի դատապարտութիւն ժողովիցիք։ Բայց զայլ ինչ յորժամ եկից, յայնժամ պատուիրեցից։

12

Գլուխ ԺԲ

Ը եկ. ¹Այլ վասն հոգևորացն եղբարք՝ ո՛չ կամին եթէ տգետք իցէք։ ²Գիտէք իսկ, զի մինչ հեթանոսքն էիք, առ կուռս անմունչս որպէս երթայիք և գայիք*։ ³Վասն որոյ ցուցանեմ ձեզ. զի ո՛չ որ Յոզուվ Աստուծոյ խօսի, և ասիցէ թէ նզովեալ Յիսուս. և ո՛չ որ կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ո՛չ Յոզուվն Սրբով*։ ⁴Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Յոզի նոյն է։ ⁵Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։ ⁶Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է՝ որ աջողէ զամենայն յամենայնի*։ ⁷Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Յոզույն՝ առ իւրաքանչիւր օգուտ։ ⁸Ումեմն ՚ի Յոզույն տուեալ է բան իմաստութեան. այլուն բան գիտութեան ըստ նմին Յոզույ. ⁹միսուսն հաւատք՝ նովին Յոզուվ. այլուն շնորհս բժշկութեանց նովին Յոզուվ*։ ¹⁰Այլուն աջողութիւնք զօրութեանց. այլուն մարգարտութիւն. այլուն ընտրութիւն հոգւոյ. այլուն ազգք լեզուաց. այլուն թարգմանութիւնք լեզուաց*։ ¹¹Այլ զայս ամենայն աջողէ մի և նոյն Յոզի, և բաժանէ՛ իւրաքանչիւր որպէս և կամի*։ Եդ. ¹²Որպէս

* *Ոմանք.* Եթէ ընպիցէք։

* *Ոմանք.* Եթէ ուտիցէք... կամ զբաժ՝... զմահ Տեառն։

* *Ոմանք.* Որ ուտիցէ զհացս զայս... պարտական լիցի մարմնոյ և արեան Տեառն։

* *Ոմանք.* Դատաստան անձին իւրոյ ու՛... և ոչ խտրէ։

* *Ոմանք.* Այնոքիկ են որ ննջեցեալք իսկ են։

* *Ոմանք.* Ընդ աշխարհիս։

* *Օրինակ մի.* ՚ի մի վայր գայցէք յուտել։

* *Ոմանք.* Հեթանոսք էիք՝ առ կուռսն։

* *Օրինակ մի.* ՚ի Յոզի Աստուծոյ խօսի... և ոչ որ ասիցէ Տէր զՅիսուս, եթէ ոչ ՚ի Յոզի Սուրբ։

* *Ոմանք.* Աջողութեանց են... որ աջողէ։

* *Ոմանք.* Շնորհք բժշկութեան նովին։

* *Ոմանք.* Յաջողութիւնք զօ՛... մարգարտութիւնք... ընտրութիւնք հոգւոց, այլուն ազգս լեզուաց... թարգմանութիւն լեզ՛։

* *Ոմանք.* Յաջողէ մի և։

մարմին մի է, և անդամս բազումս ունի. և ամենայն բազում անդամք մարմնոյն մի մարմին է. նոյնպէս և Քրիստոս*։ ¹³Քանզի միով Յոզուով մեք ամենեքեան ՚ի մի մարմին մկրտեցաք. եթէ Յրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամենեքին զմի Յոզի արբաք*։ ¹⁴Քանզի մարմին ո՛չ մի անդամ է, այլ բազում։ ¹⁵Եթէ ասիցէ ոտն. Ձի չեմ ձեռն չեմ ՚ի մարմնոյ անտի, ո՛չ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի*։ ¹⁶Եւ եթէ ասիցէ ունկն. Վասն զի չեմ ակն չեմ ՚ի մարմնոյ անտի, ո՛չ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի։ ¹⁷Եթէ ամենայն մարմինն ակն էր, ո՞ւր էր ունկն. և եթէ ամենայն լսելիք էին, ո՞ւր էին հոտոտելիք*։ ¹⁸Բայց արդ՝ Աստուած եղ զանդամսն՝ զմի՝ մի՝ իւրաքանչիւր ՚ի նոցանէն ՚ի մարմին՝ որպէս և կամեցաւ*։ ¹⁹Ապա թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մարմին*։ ²⁰Բայց արդ՝ անդամք բազումք են, և մարմին մի*։ ²¹Ոչ կարէ ակն ասել ցձեռն, թէ չե՛ս ինձ պիտոյ, և կամ դարձեալ զլուխն ցոտսն՝ թէ չե՛ք ինձ պիտոյ*։ ²²Այլ առաւել որ թուին անդամք մարմնոյն՝ թէ տկարագոյնք իցեն, կարևորք են. ²³և որ թուին թէ անարգագոյնք իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնենք. և ամօթոյքն մեր առաւել ևս պարկեշտութիւն ունին*։ ²⁴Եւ պարկեշտիցն մերոց չէ՛ ինչ պիտոյ. քանզի Աստուած խառնեաց զմարմինն, և նուազին առաւել ևս պատիւ ետ*։ ²⁵զի մի իցեն հերձուածք ՚ի մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն*։ ²⁶Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա*։ ²⁷Այլ դուք մարմինք Քրիստոսի էք, և անդամք յանդամոց նորա*։ վջ ²⁸Եւ զորս եղն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, ապա՝ զօրութիւնս, ապա՝ շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց*։ ²⁹Մի թէ ամենեքի՞ն առաքելք իցեն. մի թէ ամենեքի՞ն մարգարէք իցեն. մի թէ ամենեքի՞ն վարդապետք իցեն. մի թէ ամենեքի՞ն զօրութիւնք իցեն*։ ³⁰մի թէ ամենեքի՞ն շնորհս բժշկութեան ունիցին. մի թէ ամենեքի՞ն ՚ի լեզուս խօսեսցին. մի թէ ամենեքի՞ն թարգմանիցեն*։ ³¹Բայց նախանձաւորք լերուք շնորհացն, որ լաւն են. այլ ես՝ առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ*։

* Ոսկան. Մի մարմին են։

* Ոմանք. Մեք ամենեքին։

* Աստուանօր թէպէտ օրինակս մեր՝ ըստ նախնի եղանակի գրութեան ոմանց, ունէր երկիցս եղեալ. ոչ այնքալ չիցէ, այլ մեք ըստ սովորականին եղաք և աստէն՝ այնու։

* Ոմանք. Ամենայն մարմին ակն... ունկն... լսելիք էր, ուր էր։

* Ոմանք. Ի նոցանէ ՚ի մարմինն։

* Ոմանք. Ապա եթէ էր... ուր էր մարմինն։

* Ոմանք. Բազում են։

* Ոմանք. Եթէ չես... զլուխ ցոտս, եթէ։

* Ոմանք. Թէ անարգագոյնք են... պարկեշտութիւն ունիցին։

* Ոմանք. Եւ պարկեշտիցն մեր չեն ինչ պիտոյ։

* Ոմանք. Յոգասցեն ան՞։

* Ոմանք. Փառաւորի ինչ մի։

* Ոմանք. Մարմին Քրիստոսի էք... անդամոց նորա։

* Ոմանք. Եղ Աստուած յեկե՞... զառաքեալսն... շնորհս բժշկութեան։

* Առ Ոսկանայ պակասի. Վարդապետք իցեն, մի թէ ամենեքին զօրութիւնք իցեն։

* Ոմանք. Ի լեզուս խօսիցին... թարգմանեսցեն։

* Ոմանք. Նախանձաւոր լերուք, որ լաւ են։

Գլուխ ԺԳ

Եզ. ¹Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զիրեշտակաց, և սէր ո՛չ ունիցիմ, եղէ Ես իբրև զպղինձ որ հնչէ, կամ իբրև զծնծղայս որ դաւղաջեն*։ ²Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն, և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ո՛չինչ եմ*։ ³Եւ եթէ ջանքիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ո՛չ ունիցիմ, ո՛չ ինչ օգտիմ*։ ⁴Սէր՝ երկայնամիտ է, քաղցրանայ. սէր՝ ո՛չ նախանձի, ո՛չ անպարհաւաճէ, ո՛չ հպարտանայ*։ ⁵Ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիր, ո՛չ գրգռի, ո՛չ խորհի զչար*։ ⁶Ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն*։ ⁷Ամենայնի՛ տւե. ամենայնի՛ հաւատայ. ամենեկին՛ յուսայ. ամենայնի՛ համբերէ։ ⁸Սէր՝ ո՛չ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնք եմ՝ խափանեցիմ. եթէ լեզուք՝ լռեսցեմ. եթէ գիտութիւն՝ խափանեցի*։ ⁹Քանզի փոքր ՚ի շատէ գիտեմք, և փոքր ՚ի շատէ մարգարէանամք։ ¹⁰Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ՚ի շատէ խափանեցի*։ զկ. ¹¹Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ՚ի բաց խափանեցի*։ ¹²Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի՛ օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամո՛ւտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտացի՛ց՝ որպէս և նայն ծանեա՛ւ զիս*։ ¹³Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա՝ սէր է*։

Գլուխ ԺԴ

¹Ձիե՛տ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն, առաւել զի և դո՛ւք մարգարէանայցէք*։ ²Ձի որ խօսի ՚ի լեզուս՝ ո՛չ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ. զի ո՛չ ոք է որ լսէ, բայց հոգւո՛վ խօսի խորհուրդս*։ ³Իսկ որ մարգարէանայն, մարդկան խօսի շինութիւն և մխիթարութիւն և սփոփութիւն*։ ⁴Որ խօսի ՚ի լեզուս, զանձն իւր շինէ. և որ մարգարէանայ, զեկեղեցիմ շինէ*։

*Ոմանք. Եղէ որպէս պղինձ... կամ որպէս զծնծղայս որ դաւղանջեն։

*Ոմանք. Մարգարէութիւն... և զամենայն գիտութիւնս։

Ոմանք. Չմարմին իմ յայր։

*Բազումք. Ոչ անպարհաւաճէ։

*Ոմանք. Ոչ խնդրէ զիրն։

*Ոմանք. Ընդ ստուգութեան։

*Ոմանք. Մարգարէութիւն իցեն... լեզուք, լռեսցիմ, եթէ գիտութիւնք խափանեցիմ։

*Ոմանք. Կատարումն։

*Ոմանք. Չտղայութիւնն ՚ի բաց խա՛։

*Ոմանք. Այժմ տեսանեմ իբ՛։

*Ոմանք. Բայց մնան... քան զնոսա սէր է։

*Ոմանք. Հոգևորացն առաւել։

*Ոմանք. Խօսի ՚ի խորհուրդս։

*Ոմանք. Շինութիւն և խաղաղութիւն և սփո՛։ Ոսկան. Խօսի ՚ի շինութիւն և սփոփ՛։

*Ոմանք. Եւ որ խօսի ՚ի լե՛... որ մարգարէանայն։ Ոսկան. Իսկ որ մարգարէանայ։

⁵Կամին զի ամենեքին դուք ՚ի լեզուս խօսիցիք, առաւել զի մարգարեանայցէք. զի լաւ է որ մարգարեանայն, քան զայն որ ՚ի լեզուսն խօսիցի. բայց եթէ թարգմանեսցէ, զի եկեղեցին շինութիւն առնուցու՝: ⁶Բայց այժմ եղբարք, եթէ եկից առ ձեզ ՚ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լինիցին ձեզ, եթէ ոչ խօսիցին, կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ, կամ մարգարեութեամբ, կամ վարդապետութեամբ: ⁷Այնպէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն, եթէ փող և եթէ քնար. զի եթէ ընտրութիւն ինչ բարբառոյն չառնիցեն, զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանել՝ կամ քնարին հնչել՝: ⁸Քանզի եթէ խառնաձայն արծակիցէ փողն, ո՞վ պատրաստեսցի ՚ի պատերազմ՝: ⁹Նոյնպէս և դուք՝ եթէ լեզուօք ոչ նշանակիցէք զբանն, զիա՞րդ ճանաչիցին խօսքն. զի լինիցիք այնուհետև իբրև ընդ օդս խօսեցեալք: ¹⁰Չի այնչափ ազգք ձայնից են յաշխարհի, և ոչինչ է՝ անձայն՝: ¹¹Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեն զգօրութիւն ձայնին, լինիցին այնմ որ խօսիցին ընդ իս խո՛ւժ, և նա որ խօսիցին ընդ իս՝ դուժ՝: ¹²Նոյնպէս և դուք՝ քանզի նախանձորդք էք հոգևորացն, վասն շինածոյ եկեղեցւոյն, խնդրէք զի առաւել ևս իցէք՝: ¹³Վասն որոյ որ խօսին ՚ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի և թարգմանիցէ՝: ¹⁴Եթէ կամ յաղօթս լեզուաւ, հոգին իմ կայ յաղօթս. այլ միտք իմ անպտո՛ղ են: ¹⁵Իսկ արդ՝ զի՞նչ իցէ. կացից յաղօթս և հոգւով, կացից յաղօթս և մտօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մտօք՝: ¹⁶Ապա թէ ոչ՝ եթէ օրհնեսցես հոգւով, որ կայցէ ՚ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ ՚ի քում գովութեանն՝ զամենն. քանզի զոր ասեսն՝ նա ոչ գիտէ՝: ¹⁷Չի դու բարւո՛ք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի: զբ. ¹⁸Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ՝: ¹⁹Այլ ՚ի մէջ եկեղեցւոյն կամին բանս հինգ՝ մտօք խօսել, զի և զայլս խրատիցեն, քան զբազում բանս լեզուաւ՝: ²⁰Եղբարք մի՛ տղայք լինիք մտօք, այլ ՚ի չարեաց տղայացարո՛ւք, և մտօք կատարեալք լինիջիք՝: ²¹Քանզի և յօրէնս գրեալ է, եթէ յօտար լեզուս՝ և ՚ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սակայն և ոչ այնպէս լուիցեն ինձ՝: ²²Ապա ուրեմն լեզուք նշանակի՛ վասն են. ոչ հաւատացելոց, այլ անհաւատից. իսկ մարգարեութիւն, ոչ անհաւատից՝ այլ հաւատացելոց: ²³Ապա թէ զայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի վայր, և ամենեքին ՚ի լեզուս խօսիցին, և մտանիցեն անդր տգէտք կամ անհաւատք. ոչ ասիցեն եթէ զի՛ մոլիքդ՝: ²⁴Իսկ եթէ ամենեքեան մարգարեանայցեն, և մտանիցէ ոք անդր, անհաւատ կամ

* *Ոմանք.* Առաւելն զի և մարգա՞ր... ՚ի լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանիցէ:

* *Ոմանք.* Եւ եթէ ընտրութիւն:

* *Ոմանք.* Արծակիցի փողն, ո՞վ պատրաստիցի:

* *Ոմանք.* Եւ ոչինչ անձայն է:

* *Ոմանք.* Որ խօսին. *կամ*՝ խօսիցին ընդ իս խուժ:

* *Ոմանք.* Քանզի նախանձաւորդք էք... վասն շինուածոյ:

* *Ոմանք.* Չի թարգմանեսցէ:

* *Ոմանք.* Յաղօթս հոգւով:

* *Ոմանք.* Ապա եթէ ոչ՝ թէ օրհնիցես... ՚ի քում գոհութեանն զամենն:

* *Ոսկան.* ՉԱստուծոյ իմոյ վասն ձեր: *Ոմանք.* Լեզուաւ խօսել:

* *Ոմանք.* Ի մէջ եկեղեցւոյն... խրատիցենք քան բազում բանս լեզուով:

* *Ոմանք.* Մի՛ լինիք տղայք... կատարեալ լինիցիք:

* *Ոմանք.* Եւ յօրէնս գր՞... և այնպէս ոչ լուի՞: *Ոսկան յաւելու.* Լուիցեն ինձ *ստէք*:

* *Ոմանք.* Ապա եթէ զայցէ ամենայն եկեղե՞ն... և ամենեքեան ՚ի լեզուս... մտանիցէ... տգէտ. թէ զի՞ մո՞:

տոգտ, յանդիմանի՝ յամենեցունց, և քննի՝ յամենեցունց*, ²⁵և գաղտնիք սրտի նորա յայտնի՝ լինին. և ապա անկեալ՝ ի վերայ երեսաց՝ երկիր պագանիցէ Աստուծոյ, և խոստովան լինիցի՝ թէ արդարև Աստուած է՝ ի ձեզ*: զգ. ²⁶Եւ արդ՝ զի՞նչ իցէ եղբարք. յորժամ ՚ի մի՛ վայր ժողովիցիք, իւրաքանչի՛րոք ՚ի ձեռք, եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզու ունիցի, եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ՚ի շինած լինիցի*: ²⁷Եթէ ՚ի լեզու ոք խօսիցի, երկուք. և եթէ նս աւելի, երեք, և ապա մի ըստ միոջէ. և մինն թարգմանեսցէ*: ²⁸Ապա թէ չիցէ՝ ոք որ թարգմանիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր՝ և ընդ Աստուծոյ խօսեսցի*: ²⁹Բայց մարգարէք երկու կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն*: ³⁰Ապա թէ այլ ունեք որ նստիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ*: ³¹Քանզի կարօղ էք ամենեքեան մի ըստ միոջէ մարգարեանալ. զի ամենեքեան ուսանիցին, և ամենեքեան մխիթարեսցին*: ³²Քանզի և ոգիք իսկ մարգարէից, մարգարէից հնազանդին*: ³³Չի ո՛չ եթէ խռովութեան է Աստուած, այլ խաղաղութեան՝ որպէս յամենայն եկեղեցիս սրբոց*: ³⁴Կանայք՝ յամենայն եկեղեցիս, լուռ լիցին. զի ո՛չ հրամայի նոցա խօսել, այլ հնազանդ լինել. որպէս և օրէնքն իսկ ասեն: ³⁵Ապա եթէ ուսանել ինչ կամիցին, ՚ի տան գարս իւրեանց հարցանիցեն. քանզի անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել*: ³⁶Եթէ ՚ի ձեռք բանն Աստուծոյ ել. և կամ առ ձե՞զ միայն եհաս*: ³⁷Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել, կամ հոգևոր, զիտասցէ զոր գրեցիդ առ ձեզ, թէ Տեառն պատուիրանք են*: ³⁸Ապա թէ ոք տգիտանայցէ, տգիտասցի*: ³⁹Այսուհետև եղբարք, նախանձեցարո՛ւք մարգարեանալ, և զխօսելն լեզուօք մի՛ արգելուք: ⁴⁰Եւ ամենեայն ինչ ձեր պարկեշտութեանք և ըստ կարգի լինիցի: Վջ

15

Գլուխ ԺԵ

Թ ¹Տուցանեմ ձեզ եղբարք՝ զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր և ընկալարուք, յոր և հաստատեալդ էք. ²որով ապրեցէքն. որով բանիւ աւետարանեցի թէ ունիցիք. բայց եթէ ՚ի զուր ինչ հաւատացէք*: ³Չի ես ձեզ

* *Ոմանք.* Եթէ ամենեքին:

* *Ոմանք.* Յայտնի լինի... ՚ի վերայ երեսաց իւրոց... և խոստովան լինի:

* *Ոմանք.* Եթէ սաղմոս ունի. թէ վարդա... ՚ի շինուած լինիցի:

* *Ոմանք.* Խօսեսցի երկուք, և թէ ևս առաւել երեք... թարգմանիցէ:

* *Ոմանք.* Ապա եթէ չիցէ... լուռ լիցին:

* *Ոմանք.* Երկուք կամ երեք:

* *Ոմանք.* Ապա եթէ այլ... նստիցեն:

* *Ոմանք.* Ամենեքին մի ըստ:

* *Ոմանք.* Եւ հոգիք իսկ մարգարէիցն մարգարէից հնազանդեսցին:

* *Ոմանք.* Որպէս և յամենայն եկե՛:

* *Ոմանք.* Ապա թէ ուսա՛:

* *Ոմանք.* Եւ կամ թէ առ ձեզ:

* *Ոսկան.* Իսկ եթէ ոք կամիցի մար՛:

* *Ոմանք.* Ապա եթէ ոք տգի՛: *Յօրինակին պակասէր.* Ապա՛ թէ ոք տգիտա՛:

* *Ամենայն ընտիր գրչագիրք համաձայն մերուսն ունին՝* Որով ապրեցէքն: *Ոմանք* յաւելուն. Աւետարանեցի ձեզ թէ... ՚ի զուր ինչ հաւատացէք:

զայն նախ ականդեցի, զոր և ենն ընկալայ, թէ և Քրիստոս մեռա՛ւ վասն մեղաց մերոց ըստ գրոց*, ⁴և զի թաղեցա՛ւ, թէ և յարեա՛ւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. ⁵և թէ երևեցաւ Կեփայի՛, և ապա երկոտասանիցն* . ⁶ապա երևեցաւ աւելի՛ ևս քան զհինգ հարեր եղբարց միանգամայն. յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին. ⁷և ապա երևեցաւ Յակովբայ՛, ապա առաքելոցն ամենեցուն: ⁸Հո՛ւսկ յետոյ քան զամենեսին՝ իբրև անարգի՛ միոջ՝ երևեցաւ և ինձ*: ⁹Չի են իսկ եմ տրո՛ւպն առաքելոց. որ չեն իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի՛ զեկեղեցին Աստուծոյ: ¹⁰Այլ շնորհօ՛քն Աստուծոյ, եմ զինչ և իցեմ. և շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ո՛չ եղեն. այլ առաւել քան գնոսա ամենեսին վաստակեցի. և ո՛չ եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս*: ¹¹Արդ՝ եթէ ես, և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, և դուք այսպէս հաւատացեք*: ¹²Ապա եթէ Քրիստոս քարոզի՛ թէ ՚ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ՚ի ձե՛նջ՝ եթէ յարութիւն մեռելոց չի՞ք*: ¹³Եթէ յարութիւն մեռելոց չի՞ք, ապա և Քրիստոս չէ՛ յարուցեալ: ¹⁴Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր. ընդունայն են և հաւատքն ձեր*. ¹⁵և գտանիցիմք սո՛ւտ վկայք Աստուծոյ. զի վկայեցաք զԱստուծոյ՝ եթէ յարոյց զՔրիստոս. զոր ո՛չն արդէք յարոյց՝ եթէ մեռեալք ո՛չ յառնիցեն*: ¹⁶Իսկ եթէ մեռեալք ո՛չ յառնեն, ապա և Քրիստոս չէ՛ յարուցեալ: ¹⁷Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. և տակաւին՝ ՚ի նմին ՚ի մեղս կայցեք*: ¹⁸Իսկ արդ՝ որ ննջեցիմն ՚ի Քրիստոս, կորեա՞ն արդէք*: ¹⁹Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ ենք ՚ի Քրիստոս, ապա ողորմելի՛ ենք քան զամենայն մարդիկ*: զդ. ²⁰Այլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց, առաջին պտուղն ննջեցելոց*. ²¹քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց*: ²²Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին կենդանացին*, ²³իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ՝ Քրիստոս, և ապա Քրիստոսեանք ՚ի գալստեան նորա*. ²⁴և ապա կատարած: Յորժամ տացէ՛ ՚ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ և Հօր. յորժամ խափանեցէ՛ զամենայն իշխանութիւնս, և զամենայն պետութիւն և զգօրութիւն*: ²⁵Չի պարտ է նմա թագաւորել, մինչև դիցէ զամենայն թշնամիս ՚ի ներքոյ ոտից իւրոց: ²⁶Յետին թշնամին խափանի՛ մահ. և զամենայն ինչ

* *Ոմանք.* Ես ընկալայ, եթէ Քրիստոս մեռաւ:

* *Ոմանք.* Թէ և երևեցաւ... և ապա երկոտասանցն: *Ուր Ոսկան ըստ Լատինականին.* Եւ ապայ մետասանիցն:

* *Ոմանք.* Երևեցաւ ինձ:

* *Ոմանք.* Եւ շնորհքն նորա:

* *Օրինակ մի.* Այսպէս քարոզեմք:

* *Ոմանք.* Ապա թէ Քրիստոս քարոզի եթէ:

* *Ոմանք.* Ընդունայն եղեն և հաւ՛:

* *Ոմանք.* Եւ գտանիմք սուտ... թէ յարոյց... ոչ յառնեն:

* *Օրինակ մի.* Են և հաւատքն ձեր: *Ոմանք.* ՚ի նմին մեղս կայք:

* *Ոմանք.* Որ ննջեցին ՚ի:

* *Ոմանք.* Կենօք միայն: *Յայլս պակասի.* ՚ի Քրիստոս, *ապա* ողորմելի ենք:

* *Բազումք.* Պտուղ ննջեցելոց:

* *Օրինակ մի.* Քանզի մարդով յարութեան եղև մահ:

* *Ոմանք.* Ամենեքեան մեռա՞... ամենեքեան կենդա՞:

* *Ոմանք.* Քրիստոսեանքն ՚ի գա՞:

* *Ոմանք.* Տայցէ ՚ի ձեռս զթագաւորութիւն... պետութիւնս և զգօրութիւնս:

հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա*։ ²⁷Այլ յորժամ ասիցէ, թէ հնազանդեալ է նմա ամենայն, յայտ է թէ բա՛ց յայնմանէ որ հնազանդեցոյց նմա զամենայն*։ ²⁸Այլ յորժամ հնազանդեսցի՛ նմա ամենայն, յայնժամ և ինքն Որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն. զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի*։ ²⁹Ապա թէ ոչ, զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն մեռելոց, եթէ արդարև՝ մեռեալք ո՛չ յառնիցեն. ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վասն նոցա*։ ³⁰ընդէ՞ր և մեք ճգնիմք յամենայն ժամ, ³¹և հանապազ մեռանիմք. ՚ի պարծա՛նս ձեր երդնո՛ւն եղբարք, զոր ունիմ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր*։ ³²Եթէ վասն մարդոյ ՚ի գազանամարտի՛ լիեալ էի յեփեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մեռեալք ո՛չ յառնեն. կերիցուք արբցուք, քանզի վաղիւ մեռանի՞մք*։ ³³Մի՛ խաբիք. ապականեն զբարս քաղցունս բանք չարք*։ զե. ³⁴Սթափեցարուք արդարութեամբ, և մի՛ մեղանչէք. զի զգիտութիւն Աստուծոյ ո՛չ ունիմ ոմանք. առ ամօթոյ՛ ձերոյ ասեմ*։ ³⁵Այլ ասիցէ՞ որք. Ջիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով զայցեն։ ³⁶Ա՛նմիտ, դու զոր սերմանեսն, ո՛չ կենդանանայ՝ եթէ ո՛չ մեռանիցի*։ ³⁷Եւ զոր սերմանեսն, ո՛չ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՛ սերմանես, այլ հա՛տ մերկ. եթէ ցորենոյ՛ իցէ, և եթէ այլոց սերմանաց*։ ³⁸Եւ Աստուած տայ՛ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանացն զիւր մարմին*։ ³⁹Ո՛չ ամենայն մարմին՝ նոյն մարմին է. այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց՝ և այլ մարմին ձկանց*։ ⁴⁰Եւ մարմինք երկնաւորք, և մարմինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւորաց են, և այլ փառք երկրաւորաց*։ ⁴¹Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք*։ ⁴²Նոյնպէս և յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապականութեան*։ ⁴³Սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ. ⁴⁴սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր. եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ և հոգևոր։ ⁴⁵Ա՛յսպէս և գրեալ է. Եղև մարդն առաջին Ադամ շո՛ւնչ կենդանի. երկրորդ Ադամ ՚ի հոգի

* *Ոմանք.* Խափանի մահն։

* *Ոմանք.* Եթէ հնազ... թէ բայց։

* *Ոմանք.* Յամենայն յամենայնի։

* *Ոմանք.* Մեռեալք ոչ յառնեն։

* *Օրինակ մի.* Ջոր ունիմք առաւելապէս ՚ի Քրիստոս Յիսուս։

* *Ոսկան.* Մեռեալք ոչ յառնէին։ *Ոմանք.* Վասն մարդոյ գազանամարտիկ լեալ էի։ *Յայս բան.* Կերիցուք արբ՞. *ամենայն գրչագիրք համաձայն նշանակեն ՚ի լուս՞.* Գռեհիկ լակոնացի առասպել, զոր յիշէ և Եսայի։

* *Իսկ յայս.* Ապականեն զբա՞. *ի լուս՞.* *մերումս նշանակի.* Մենանդրի արագագրի. *զոր այլք ոմանք ուղղագոյն ևս ունին.* Մենենդրի երգագրի, *կամ՝* Երզնի խրատ։ *Ոմանք.* Ջբանս քաղցունս։

* *Օրինակ մի.* Այլ սթափեցարուք արդարութեամբ... զի զգիտութիւնն Աստուծոյ։

* *Ոմանք.* Թէ ոչ նախ մեռանիցի։

* *Ոմանք.* Ջոր ծնանելոցն։ *Բազումք.* Այլոց սերմանեաց. *և ոմանք.* սերմանց։

* *Ոմանք.* Սերմանեացն զիւր մարմինն։

* *Ոմանք.* Ամենայն մարմին որպէս զնոյն մարմին է... Մարմին ձկանցն. *կամ՝* ձկան։

* *Առ ոմանս պակասի.* Այլ այլ փառք։ *Առ Ոսկանայ պակասի.* Երկնաւորաց են։

* *Ոմանք.* Արեգական են։ *Ոմանք.* Եւ այլ փառք աստե՞։

* *Ոմանք.* Նոյնպէս և ՚ի յարութիւն մե՞։

կենդանարար*։ ⁴⁶Բայց ո՛չ նախ հոգևորն, այլ շնչաւորն, և ապա՝ հոգևորն։
⁴⁷Առաջին մարդն յերկրէ, հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ Տէր, յերկնից*։ ⁴⁸Որպէս
հողեղէնն, նոյնպէս և հողեղէնքս, և որպէս երկնաւորն, նոյնպէս և երկնաւորքն*։
⁴⁹Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին. զգեցցո՛ւք և զպատկեր
երկնաւորին*։ զգ. ⁵⁰Բայց զայս ասեմ ե՛ղբարք, եթէ մարմին և արին
զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ո՛չ կարեն. և ո՛չ ապականութիւն
զանապականութիւն ժառանգէ*։ ⁵¹Արդ՝ խորհուրդ մի՛ ասեմ ձեզ. Ամենեքեան
ննջեսցո՛ւք, այլ ո՛չ եթէ ամենեքեան։ Նորոգեսցո՛ւք* ⁵²Յանկարծակի յական
թօթափել ՚ի փող յետին. քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց
ապականութեան, և մեք նորոգեսցո՛ւք*։ ⁵³Չի պարտ է ապականութեանս
այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ
զանմահութիւն։ ⁵⁴Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և
ապականութիւնս զանապականութիւն, յայնժամ եղիցի՝ բանն որ գրեցաւ, եթէ
ընկլա՛ւ մահ յաղթութիւն քո*։ ⁵⁵Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ւր է դժոխք
խայթոցքն քո*։ ⁵⁶Խայթոց մահու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝ օրէնք։ ⁵⁷Այլ
շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի*։ ադ. ⁵⁸Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք,
անշարժ կացէք, առաւել լերուք ՚ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասցի՛ք՝ զի
վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն*։

16

Գլուխ ԺԶ

¹Այլ վասն հաշուին որ ՚ի սո՛ւրբսն է, որպէս պատուէր ետու եկեղեցեացն
Գաղատացւոց, նոյնպէս և դուք առնիջիք*։ ²Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն.
իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ անձին իւրում զանձեսցէ որ ինչ և աշողեսցի*։ ³Չի մի՛
յորժամ գայցեն, յայնժամ հաշիւք լինիցին. այլ յորժամ եկից, զոր միանգամ
ընտրեցէք թղթովք, զնոսա առաքեցից տանել զշնորհսն ձեր յերուսաղէմ*։
⁴Ապա թէ արժան իցէ և ինձ երթալ, ընդ իս երթիցեն։ ⁵Այլ եկի՛ց առ ձեզ՝ յորժամ

* *Ոսկան.* Որպէս և գրեալ է։ *Ոմանք.* Ադամ ՚ի շունչ կենդանի, երկրորդն Ադամ։

* *Ոմանք.* Իսկ երկրորդն Տէր։

* *Ոմանք.* Որպէս և հողեղէնն... նոյնպէս և երկրաւորքս։

* *Ոմանք.* Ձգեցաք զմարմին հողեղինին. զգեց՞։

* *Ոմանք.* Չարքայութիւն Աստուծոյ։

* *Ոմանք.* Այլ ոչ ամենեքին նո՞ւ։ *Ուր Ոսկան և եթ այսպէս ընթերնու.* Նորոգիցուք։ (52)
Յանկարծակի յա՞։

* *Ոմանք.* Ի՞նչ փողն յետին... և մեռեալք յառնիցեն ա՞։

* *Ոսկան.* Եւ ապականացուս զանապակա՞։ *Ոմանք.* Յայնժամ լցցի բանն... մահ ՚ի
յաղթութիւն քո. *կամ՝* մահ ՚ի յաղթութիւն։

* *Ոմանք.* Ո՞ւր են դժոխք խայթոց քո։

* *Ոմանք.* Մեզ յաղթութիւն։

* *Ոմանք.* Հաստատուն երուք... ՚ի գործս Տեառն... առաջի Աստուծոյ։

* *Օրինակ մի.* Եկեղեցւոյն Գաղատաց՝... նոյնպէս և դուք լինիջիք։

* *Ոմանք.* Իւրաքանչիւր միաշաբաթիցն... որ ինչ յաշողեսցի։

* *Օրինակ մի.* Հաշիւք ինչ լինիցին։ *Բազումք.* Ընտրեցէք թղթովք։ *Ուր օրինակ մի.*
Ընտրեցի թղթովք։

ի Մակեդոնիա անցանիցեմ. բայց իբրև շրջեցայց ընդ Մակեդոնիա*, 6թէ դէպ լիցի, առ ձե՛զ մնացից՝ և կամ ձմերեցից. զի դո՛ւք յուղարկիցէք զիս՝ ուր և երթալոցն իցեմ*: 7Ձի ո՛չ կամիմ զձեզ այժմ՝ ՚ի հարևանցի՝ տեսանել. ակն ունիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ, եթէ Տէր հրամայեսցէ*: 8Բայց այժմ լինիմ յեփեսոս մինչև ցՊենտակոստ*: 9զի դուռն բացեալ է ինձ մե՛ծ և կարևոր, և հակառակորդք բազում են*: 10Արդ՝ եթէ եկեսցէ Տիմոթէոս, տեսցի՛ք զհարդ աներկելո լինիցի առ ձեզ. զի զգործ Տեառն գործէ, որպէս և ե՛ս*. 11մի՛ որ զնա անգոսնեսցէ. և յուղարկեսցի՛ք զնա խաղաղութեամբ, զի եկեսցէ առ իս. քանզի ակն ունիմ նմա եղբարքք հանդերձ: ազ. 12Այլ վասն Ապաղոսի եղբոր՝ յո՛յժ աղաչեցի զնա, զի եկեսցէ առ ձեզ եղբարքք հանդերձ. և արդէլք՝ ո՛չ էին կամք զի այժմ եկեսցէ. այլ եկեսցէ՛ յորժամ և պարապեսցէ*: 13Յսկեցէ՛ք. հաստատուն կացէք ՚ի հաւատս. ժրացարո՛ւք. զօրացարո՛ւք: 14Ամենայն ինչ ձեր սիրով լիցի*: 15Աղաչեմ զձեզ ե՛ղբարք, զիտէ՛ք զտունն Ստեփանեայ և Փորտունատեայ, որ են պտուղ Աքայեցոց, և ՚ի պաշտօն սրբոցն կարգեցին զանձինս*. 16զի և դո՛ւք հնազանդ լինիցիք այնպիսեացն. և ամենայնի՝ որ գործակից իցէ և վաստակակից*: 17Ուրախ եղէ ՚ի գալ Ստեփանեայ, և Փորտունատեայ, և Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն նորա՛ լցին*. 18քանզի հանգուցին զհոգի իմ և զձեր. արդ՝ ծանիջի՛ք զայնպիսիսն*: 19Ողջո՛յն տան ձեզ եկեղեցիքն Ասիացոց: Ողջո՛յն շատ տան ձեզ ՚ի Տէր Ակիւղաս, և Պրիսկա, հանդերձ առտնին եկեղեցեալն իւրեանց*: 20Ողջո՛յն տան ձեզ եղբարք ամենեքին*: 21Ողջո՛յն տուք միմեանց ՚ի համբոյր սրբութեան*: 22Ողջո՛յնդ այդ՝ իմո՛յ ձեռին Պաւղոսի է. եթէ որ ո՛չ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ, Սարանաթա՛: 23Շնորիք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: 24Եւ սէ՛րն իմ ընդ ամենեսին ձեզ ՚ի Քրիստոս Յիսուս: Ամէն*:

Առ Կորնթացիս առաջին թուղթ՝ գրեցաւ ՚ի Փիլիպեայ, ՚ի ձեռն Ստեփանեայ և Փորտունատեայ և Աքայիկոսի: Տունք ՊԳ՝:

* Ոմանք. Բայց յորժամ շրջեցայց ՚ի Մակեդոնիա:

* Ոմանք. Թէ դէպ լինիցի... մնացից՝ կամ ձմերեցից, զի և դուք յղարկիցէք... ուր երթալոց եմ:

* Ոմանք. Քանզի.. զձեզ հարևանցի տե՛:

* Ոմանք. Լինիցիմ յեփեսոս: Բազումք. Մինչև ցՊենտակոստ:

* Ոմանք. Բաց է ինձ: Ոսկան. Եւ հակառակօղք բազում:

* Ոմանք. Գործեաց՝ որպէս և ես:

* Ոմանք. Կամք իմ զի այժմ... յորժամ պարապեսցի:

* Ոմանք. Սիրով լինիցի: Ուր օրինակ մի. սիրով եղիցի:

* Օրինակ մի. Գիտել զտունն Ստե՛. որ են պտուղք Աք՝... զանձինս իւրեանց:

* Ոմանք. Եւ ամենայն որ գործակից է և վաստա՛:

* Օրինակ մի. ՚ի գալն Ստեփանն... և Աքակիոսի: Ոմանք. Պակասութիւնդ դորա լցին:

* Ոմանք. Ձոգի իմ... ծանիջիք զայդպիսիսդ:

* Ոմանք. Տայ ձեզ ՚ի Տէր... և Պրիսկեայ: Ուր Ոսկան. Տան ձեզ Ակուլիղաս և Պրիս՛:

* Ոմանք. Ձեզ եղբարք ամենեքեան:

* Ոմանք. Եւ թէ ոչ որ սիրէ... Սարանաթայ:

* Օրինակ մի. Եւ ընդ սէրն իմ ընդ ամե՛:

* Ի վախճանի՝ օրինակ մի. Թուղթ առաջին... և Աքակիոսի: Ուր և օրինակ մի. Գրեցաւ յեփեսոս:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Կորնթացիս Երկրորդ Թղթոյն

Ձայս թուղթ առաքեաց ՚ի Մակեդոնիոյ. և է պատճառ թղթիս այս: Ընկալան Կորնթացիքն զԱռաջին թուղթն. և ապաշխարեաց ՚ի վերայ մեղացն որ արար զնօրուն. և տրտմեցան յորժամ ծանեան զայսպիսի մեղս. խլեցին ՚ի միջոյ զպատճառ բաժանմանն: Եւ որք կային ՚ի վերայ գրոյ օրինացն, շահեցուցանէ զնոսին յայտնելով զշնորհսն Քրիստոսի. և մանաւանդ զգուշանալ յորոց առ այս պարծէին: Եւ վասն որ առ սուրբսն հաշուոյն ստիպէ բարւոք, և յառաջագոյն ընդունի որ բարձին ՚ի միջոյ զանօրինեալն. և յետ այսորիկ արժանաւորէ զնա աղաչանօքն և ապաշխարութեամբն, և հրաման տայ ընդունել: Եւ ՚ի նոյն վարդապետ վասն օրինացն՝ ո՛չ ունել զգիրս ըստ գրոյ օրինացն միայն. այլ այս գրովս զմիտսն յայտնել. զի ո՛չ է վայրապար օրէնքն, այլ ունի զհանճար Յոգւոյն Սրբոյ: Յետ այսորիկ ՚ի գալստեանն Քրիստոսի նոր արարած եղև, և ո՛չ որ ըստ հնոյն կարէ կեալ, այլ ՚ի նոր արարածս ամենեցուն նորոգել, և դադարել ՚ի թլփատութէ: Ընդունի զնոսա և վասն պաշտամանն, և նախ ապացուցին յորդորէ զնոսա առաւելով ՚ի սոյն. և զինքն ցուցանէ պատճառ նոցա որ առ երեսս պարծին. աւտ առ ամենեսեան որք փափաքէին ՚ի Տէր. և զտեսիլն յայտնէ զոր ետես, և զյափշտակելն իւր ՚ի դրախտն և յերրորդ երկնից: Յետ այսորիկ պատուիրէ մի՛ մեղանչել՝ այլ զղջանալ մեղուցելոցն. և զոհութեամբ կատարէ զթուղթն:

Գլուխք առ Կորնթացիս Երկրորդ Թղթոյն

Ամենայն բանք թղթոյս վասն իւր են և վասն Կորնթացւոցն, և վասն սուտ առաքելոցն: Եւ յայնց պատճառանաց մատչի յառաջ ասել վասն Աստուծոյ շնորհացն և վասն բարւոք առաքինութեան, ըստ բարւոք մտաց և պատերազմողաց, և անընչասէր լինելոյ. և վասն առատամիտ առաքինութեան, և վասն սուտ առաքելոցն ամբարհաւաճութեան և չարութեան:

ա. Գոհութիւն վասն Աստուծոյ օգնականութեանն, յոր յորդորէ ապաստան լինել:

բ. Վասն սիրոյն առ նոսա և խնայելոյ ՚ի տրտմեցուցանել, թէպէտ և տրտմեցուցանելովն օգուտ գործէր. որպէս այնմ որում վասն պոռնկութեանն սաստեաց, և ապա շնորհել հրամայեաց:

գ. Վասն իւրոյ աստուածեղէն շահիցն ՚ի կարևոր պէտս, վասն որոյ ընծայեցուցանելով ասէ:

դ. Վասն ըստ Յոգւոյն պաշտաման, և աստուածեղէն փառացն որ ըստ օրինացն:

ե. Վասն աստուածեղէն փառաց, և կարգաւոր կենաց, զի իւրովքն ճանաչիցի:

զ. Վասն մարմնոյ տկարութեան, և նորին մերկանալոյ և միւսանգամ

զգենլոյ:

է. Վասն իւրոյ աստուածսիրութեան և եղբայրսիրութեան ըստ Քրիստոսի:
ը. Ընդունելութիւն Կորնթացւոցն հնազանդութեան, և սիրոյ, որ ուրախ
առնէր զնա:

թ. Յօժարեցութիւն տուրս սրբոցն տալոյ, և պատիւ այնոցիկ, որ վասն
նոցին իրաց գայցեն առնելոյ: թ. Յորում վասն Տիտոսի առաքելութեան, և
այլոց եղբարց առ նոսա:

ժ. Պատմութիւն վասն իւրոյ աշխատութեանց և յօժարութեան, և
շնորհացն որ եղեն առ նա, և վասն չանկանելոյ Կորնթացւոցն ՚ի
հրապոյրս խաբեբայիցն: թ. Յորում իւր հակառակ համեմատութիւն ընդ
նոսա: զ. Յանդիմանութիւն այնպիսեացն: ղ. Վասն իւրոյ ձեռացն
աշխատութեան, որ Աստուծոյն պատուական է, և նմա օգտութեամբ
կերակրիչ: է. Պատրաստութիւն իւրոյ հանդերձեալ գալստեանն առ
նոսա:

ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՍ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

բկ. ¹Պա՛ւղոս առաքեա՛լ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս
եղբայր. եկեղեցւոյդ Աստուծոյ որ է ՚ի Կորնթոս՝ սրբովքդ ամենեքումք՝ որ են
յամենայն կողմանս Աքայեցւոց՝ ²Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ՝:

Ա ³Օրհնեա՛լ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Հայր
գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեան՝ ⁴որ մխիթարէ՛ն զմեզ
յամենայն նեղութիւնս մեր. առ ՚ի կարօղ լինելո՛յ մեզ մխիթարել զայնոսիկ, որ
յամենայն նեղութիւնսն իցեն, մխիթարութեամբն որով մե՛ք մխիթարիմք
յԱստուծոյ՝ ⁵Ձի որպէս առաւելա՛ն չարչարանքն Քրիստոսի ՚ի մեզ, նո՛յնպէս և ՚ի
ձեռն Քրիստոսի առաւել լիցի և մխիթարութիւնն մեր՝ ⁶Ձի եթէ նեղիմք, վասն
ձերո՛յ մխիթարութեան և փրկութեան, և եթէ մխիթարիմք, վասն ձերո՛յ
մխիթարութեան. որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանաց, զոր և
մե՛քն չարչարիմք՝ ⁷և յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ

* *Ի վերնագրիս՝ ոմանք.* Առ Կորնթացիսն թուղթ երկրորդ: *Եւ ոմանք.* Թուղթ երկրորդ առ
Կորնթացիս:

* *Օրհնակ մի.* Յիսուսի Քրիստոսի խնամօքն Աստուծոյ, և Սոսթենէս եղբայր: *Ոմանք.*
Ամենեքումք:

* *Ոմանք.* ՅԱստուծոյ ՚ի Հօրէ մեր՝:

* *Ոմանք.* Ամենայն մխիթարութեանց:

* *Ոմանք.* Որ մխիթարէ:

* *Ոմանք.* Ի ձեռն Յիսուսի առաւել լիցին մխիթարութիւնն մեր:

* *Ոսկան առեալ ՚ի Լատինականէն յաւելու.* Մխիթարութեան. *կամ քաջալերիմք վասն
ձերոյ քաջալերութեան և փրկութեան,* որ յաջողեալն: *Ոմանք.* Որ յաջողեալն է ՚ի մեզ

որպէս կցորդ ե՛նք չարչարանացն, նոյնպէս և մխիթարութեանն*։ ⁸Քանզի ո՛չ կամիմ տգէտ լինել ձեզ ե՛ղբարք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչև անյո՛յս լինելոյ մեզ և ՚ի կենաց*։ ⁹Այլ անձամբ յանձինս զվճի՛ռ մահու ընկալաք. զի մի՛ յանձինս ապաստան իցեմք, այլ յԱստուած որ յարուցանէ զմեռեալս*։ ¹⁰որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ՛. ¹¹քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ՛ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։ Ձի՛ ՚ի բազմադէմ շնորհացն՝ որ ՚ի մեզ, բազմօք յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր*։ բդ. ¹²Քանզի պարծանք մեր այս են. վկայութիւն մտաց մերոց. զի սրբութեամբ և ստուգութեամբ Աստուծոյ, և ո՛չ մարմնեղէն իմաստութեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի. բայց առաւել ևս առ ձե՛զ*։ ¹³Քանզի ո՛չ եթէ այլ ազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցո՛ւքն՝ և գիտակ լինիցիք. քանզի յուսամ, թէ մինչև ՚ի վախճան գիտիցէք*։ ¹⁴որպէս և խելամուտ եղէք մեզ փոքր ՚ի շատէ. զի պարծանք ձեր եմք՝ որպէս և դուք մեր, յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*։ ¹⁵Եւ յայս ապաստան, կամէի նախ առ ձե՛զ գալ. զի դուք կրկին շնորհս ընդունիցիք*։ ¹⁶և ՚ի ձէնջ երթալ՝ ՚ի Մակեդոնիա. և դարձեալ ՚ի Մակեդոնիայ գալ առ ձեզ, և ՚ի ձէնջ յուղարկել ՚ի Յրէաստան*։ ¹⁷Իսկ եթէ զայս խորհեցայ՝ մի թէ՛ թեթևութեա՞մբ ինչ գնացի. և կամ զոր խորհիմնս, ըստ մարմնո՞յ ինչ խորհիցիմ, այլ զի եղիցի՛ յինէն կողմանէ, այոն՝ այո՛, և ոչն՝ ոչ*։ ¹⁸Հաւատարիմ է Աստուած. զի բանն մեր որ առ ձեզ եհաս՝ ո՛չ է այո, և ոչ։ ¹⁹Քանզի Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ՚ի ձեզ մեւք քարոզեցաւ, ինև և Սիդուանոսի՛ւ և Տիմոթէի՛ւ, ո՛չ եղև այո և ոչ. այլ այոն՝ ՚ի նմին եղև*։ ²⁰Ձի որչափ աւետիքն Աստուծոյ են ՚ի նմա Այոն. վասն որոյ և նովին Ամենն մեւք ՚ի փառս Աստուծոյ*։

Բ ²¹Այլ որ հաստատեացն զմեզ ձեւք հանդերձ ՚ի Քրիստոս, և օ՛ծ զմեզ, Աստուած է*։ ²²որ և կնքեացն զմեզ, և ետ զառչաւատչեայ Յոգույն ՚ի սիրտս մեր։ բգ. ²³Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին իմոյ. զի վասն խնայելոյ՛ ՚ի ձեզ՝ ո՛չ ևս եկի ՚ի Կորնթոս. զի ո՛չ եթէ տիրեմք հաւատովքս, այլ գործակից եմք շնորհացդ՝ ձերոց. քանզի հաւատովք հաստատեալ կայք*։

համ՝. նոցին չարչարանօք, զոր և մեք չարչա՞մ։

* *Ոմանք.* Թէ որպէս կցորդք եմք։

* *Ոմանք.* Ոչ կամիմ զձեզ. և *ոմանք.* տգէտս լինելոյ զձեզ եղբարք՝ վասն նեղութեանն... քան զկարն մեր... լինել մեզ ՚ի կենացս։

* *Ոմանք.* Ապաստանիցիմք, այլ յԱստուած որ յարուցեալ է զմեռ՞։

* *Ոսկան.* Յուսացեալ եմ... շնորհացն որ են ՚ի մեզ։ *Օրինակ մի.* Ձի բազմադիմի շնորհացն որ ՚ի մեզ՝ բազումք յաճախեսցին գովութիւնք վասն մեր։

* *Ոմանք.* Վկայութիւնք մտաց։ *Յօրինակին պակասէր.* Յաշխարհի, *բայց առաւել ևս առ ձեզ։*

* *Ոմանք.* Գրեմ առ ձեզ... և գիտակ իսկ լինիցիք... եթէ մինչ ցվախճան։

* *Ոմանք.* Խելամուտ էք... յօրն Տեառն մերոյ Յիսուսի։

* *Ոմանք.* Շնորհս ընդունիցիք։

* *Ոսկան.* Եւ ՚ի Մակեդոնիոյ գալ առ։ *Ոմանք.* Յուղարկեալ ՚ի Յրէ։

* *Ոմանք.* Եւ կամ զոր խորհիմն... կողմանէն՝ այոյն այոյ, և ոչն։

* *Ոմանք.* Այլ այոյն ՚ի։

* *Ոմանք.* Աստուծոյ են ՚ի նմին և Այոյն... և նովին և մեւք Ամենն ՚ի փառս։

* *Ոմանք.* Որ հաստատեսցէ զմեզ... և որ օ՛ծ զմեզ։

* *Ոմանք.* Տիրեմք ձեզ հաւատովքս... շնորհաց ձերոց։

Գլուխ Բ

¹Բայց զայս և եթ ընտրեցի, զի մի՛ միլսանգամ տրտմութեամբ եկից առ ձեզ.
²Գի եթե ես տրտմեցուցանեմ զձեզ. և ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս, եթե ոչ որ տրտմիցին յինեմ՝: ³Եւ զայս գրեցի, զի մի՛ յորժամ գայցեն տրտմութիւն ինչ կրիցեն, ուստի արժանի՞դ իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենեցուն է՝: ⁴Ձի ՚ի բազում վշտաց և ՚ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմիցիք, այլ զի գտնիմ իմ գիտասջի՞ք, զոր ունիմ առաւելապէս առ ձեզ՝: ⁵Ապա թե որ տրտմեցոյց, ոչ եթե զիս տրտմեցոյց, այլ փոքր ՚ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամենեցուն ձեզ՝: ⁶Շա՛տ է այնպիսւոյն պատուհասն այն, որ ՚ի բազմաց անտի է՝: ⁷Այսուհետև նմին հակառակ, մանաւանդ շնորհել ձեզ նմա՝ և մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին՝: ⁸Վասն որոյ աղաչեմ զձեզ, հաստատել ՚ի նա գտնիմ: ⁹Վասն այնորիկ իսկ և գրեցի, զի զչա՛փ առից զձեր, եթե յամենայնի հպատակ իցէք՝: ¹⁰Ձի եթե ումեք շնորհիցէք՝ և ե՛ս. քանզի և ե՛ս եթե շնորհիցեն, զոր ինչ շնորհիցեն մն՝ վասն ձե՛ր ՚ի դէմս Քրիստոսի՝: ¹¹Գի մի՛ զրկիցիմք ՚ի Սատանայէ. քանզի չենք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա:

⁹ Գ ԳԼ. ¹²Այլ իբրև հասի ես ՚ի Տրովադա յաւետարանն Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ ՚ի Տէր, ¹³ոչ ետու հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ գնացի ՚ի Մակեդոնիա՝: ¹⁴Այլ Աստուծոյ շնորհքն որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ՚ի Քրիստոս Յիսուս, և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի՝ առնէ մեւք յամենայն տեղիս՝: ¹⁵Գի հոտ անո՛յշ ենք Քրիստոսի առ Աստուած՝ ՚ի մէջ փրկելոցն, և ՚ի մէջ կորուսելոցն. ¹⁶ոմանց հո՛տ մահուանէ ՚ի մահ, և ոմանց հոտ կենդանութենէ ՚ի կեանս. և առ այս՝ ո՞ բաւական իցէ՝: ¹⁷Քանզի ոչ ենք իբրև զայլսն, որ վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրև ՚ի հաստատութենէ՛, այլ իբրև յԱստուծոյ առաջի Աստուծոյ, ՚ի Քրիստոս խօսիմք՝:

* *Ոմանք.* Ուրախ առնէ զձեզ. եթե ոչ որ տրտմիցին: *Ոսկան.* Տրտմիցի յինեմ:

* *Բազումք.* Արժանդ իցէ ինձ: *Ուր ոմանք.* Արժան է ինձ ու՛: *Ոմանք.* Եւ զայս զի գրեցի, զի... իմ ուրախութիւնն ձեր:

* *Ոմանք.* Ոչ զի տրտմիցիք... առաւել ևս առ ձեզ:

* *Ոմանք.* Ապա եթե... ծանրացայց ձեզ:

* *Ոմանք.* Պատուհասն որ ՚ի բազ՛:

* *Ոմանք.* Հակառակ նմին... ընկղմիցի:

* *Ոմանք.* Հպատակ իցենք:

* *Առ Ոսկանայ պակասի.* Ձի եթե ումեք:

* *Օրհնակ մի.* Հանգիստ հոգւոյ իմոյ... անդ զՏիտոս զեղ՛... գնաց ՚ի Մա՛:

* *Օրհնակ մի.* Յայտնի առնենք ընդ ամենայն երկիր:

* *Ոմանք.* Ի՛ մահուանէ ՚ի մահ. և ոմանց ՚ի կենաց ՚ի կեանս... ո՛ բաւական է:

* *Ոմանք.* Չայլս, որ վաճառականք են... այլ որպէս յԱստուծոյ:

Գլուխ Գ

¹Սկսանիմք այսուհետև վերստին զանձինս ընծայեցուցանել. թպէտ և ո՛չ պիտոյ իցեն մեզ, որպէս ոմանց թուղթք ընծայութեան առ ձեզ, կամ ՚ի ձէնջ^{*}: ²Այլ թուղթք մեր դուք էք՝ գրեալ ՚ի սիրտս մեր, ծանուցեալ և ընթերցեալ. յամենայն մարդկանէ՝ ³յայտնեալք, զի էք թուղթք Քրիստոսի, պաշտեցեալ ՚ի մէնջ. և գրեալ ո՛չ մրով, այլ Յոգուովն Աստուծոյ կենդանոյ. ո՛չ ՚ի տախտակս քարեղէնս, այլ ՚ի տախտակս սրտի մարմնեղէնս^{*}:

Դ գդ. ⁴Յոյս մի այսպիսի ունիմք ՚ի ձեռն Քրիստոսի առ Աստուած^{*}. ⁵Իբր ո՛չ եթէ անձամբ բաւական ենք խորհել ինչ իբրև ՚ի մէնջ. այլ բաւականութիւնն մեր՝ յԱստուծոյ է^{*}, ⁶որ և բաւականս արար զմեզ՝ պաշտօնեայս Նորո՛ց Կտակարանացս, ո՛չ գրով, այլ հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ^{*}: ⁷Ձի եթէ պաշտօն մահու գրով դրոշմեալ ՚ի տախտակսն քարեղէնս, եղև փառօք, զի մի՛ կարացեն հայել որդիքն Իսրայէլի յերեսն Սովսեսի, վասն փառաց երեսաց նորա՝ որ խափանելոցն էր^{*}. ⁸Որչափ ևս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք^{*}: ⁹Ձի եթէ պաշտօն դատապարտութեանն փառօք էր, ո՞րչափ ևս առաւել պաշտօն արդարութեանն փառօք^{*}: ¹⁰Քանզի ո՛չ եթէ փառաւորի՛ փառաւորեալն յայսմ մասին, վասն առաւելութեան փառացն: ¹¹Ձի եթէ որ խափանելոցն էր՝ այն փառօք էր, որչափ ևս առաւել որ գալոցն է՝ փառօք իցէ^{*}: ¹²Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ վարեսցուք^{*}. ¹³և ո՛չ որպէս Սովսես արկանէր քող ՚ի վերայ երեսաց իւրոց, վասն չհայելոյ որդւոցն Իսրայէլի ՚ի վախճան խափանելոցն^{*}: ¹⁴Այլ կուրացան միտք նոցա. քանզի մինչև ցայսօր ժամանակի, նոյն քող ձգեալ կայ ՚ի վերայ ընթերցուածոց Հին Կտակարանացն. և ո՛չ վերանայ, զի Քրիստոսի՛ւ խափանելոց է^{*}: ¹⁵Այլ մինչև ցայսօր յորժամ ընթեռնուն զՍովսես, նոյն առագաստ կայ ՚ի վերայ սրտից նոցա^{*}: ¹⁶Այլ յորժամ դարձցին առ Տէր, ապա՛ վերացի առագաստն: Վջ ¹⁷Ձի Տէր Հոգին է. ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է^{*}: ¹⁸Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրև ընդ հայելի տեսեալ, ՚ի նոյն պատկեր նորոգիմք՝ փառաց ՚ի փառս. որպէս և Տեառն Հոգւոյ^{*}:

^{*} Ոսկան. Ընծայեցուցանել ձեզ: Ոմանք. Չանձինս վերստին ըն՝... թուղթք ընծայ՝:

^{*} Օրինակ մի. Պաշտեալք ՚ի մէնջ... ո՛չ մարմնով, այլ Հոգւով:

^{*} Ոմանք. Ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ:

^{*} Ոմանք. Իբրև ոչ եթէ անձամբ... իբրև թէ ՚ի մէնջ:

^{*} Ոսկան. Որով բաւականս արար: Ոմանք. Նորոյ Կտակարանացն... այլ և հոգւովն. զի գիրն սպանանէ՝ և հոգին կէ՛:

^{*} Ոմանք. Պաշտօնն մահու դրոշմեալ... յերեսն Սովսեսի:

^{*} Օրինակ մի. Պաշտօն հոգւոցն:

^{*} Ոմանք. Առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք:

^{*} Ոմանք. Ձի թէ խափանելոց էր... որ կալոցն է այն փառօք ՚ի՛: Ուր և ոմանք. որ մնալոցն է՝ փա՛:

^{*} Օրինակ մի յաւելու. Վարեսցուք զկեանս մեր:

^{*} Ոմանք. Որպէս Սովսեսն որ արկանէր քաղ ՚ի վերայ... խափանելոյն:

^{*} Ոմանք. Քանզի Քրիստոսի՛ւ խափանելոց էր:

^{*} Օրինակ մի. Այլ մինչ ցայսօր յորժամ ընթեռնուցուն զՍով՝:

^{*} Ոմանք. Ձի ուր Հոգին Տեառն է:

^{*} Օրինակ մի. Բայց երեսօք զփառս Տեառն... ՚ի նոյն կերպարան նո՛: Ոմանք. Որպէս և ՚ի Տեառն Հոգւոյ: Ուր օրինակ մի. որպէս և ՚ի Տեառնէ Հոգ՛:

Գլուխ Դ

Ե ¹Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս և գտաք զողորմութիւն, և ո՛չ ձանձրանամք* ²այլ հրաժարեցա՛ք ՚ի գաղտնեաց ամօթոյն. զի մի՛ գնասցուք խորամանգութեամբ, և մի՛ նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտնութեան ճշմարտութեանն ընծայեցուցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ* ³Ապա թէ իցէ ևս ծածկեալ աւետարանն մեր, ՚ի մէջ կորուսելո՛ցն է ծածկեալ* ⁴որոց աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ ՚ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի. որ է պատկեր՝ աներևութիւն Աստուծոյ* ⁵Ձի ո՛չ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՔրիստոս Յիսուս զՏէր, և զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի* ⁶Ձի Աստուած որ ասաց ՚ի խաւարէ լոյս ծագել, որ և ծագեաց իսկ ՚ի սիրտս մեր ՚ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ՚ի դէմս Յիսուսի Քրիստոսի*:

⁷Այսուհետև ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս. զի առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, և ո՛չ ՚ի մէնջ: ⁸Յամենայնի նեղեալք, այլ ո՛չ նուազեալք. կարօտեալք, այլ ո՛չ տարակուսեալք* ⁹հալածեալք, այլ ո՛չ լքեալք. չարչարեալք, այլ ո՛չ սատակեալք ¹⁰յամենայն ժամ զմահն Յիսուսի ՚ի մարմինս մեր կրեսցուք, զի և կեանքն Յիսուսի ՚ի մարմինս մեր յայտնեսցին* ¹¹Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք, ՚ի մահ մատնիմք վասն Յիսուսի. զի և կեանքն Յիսուսի յայտնի՝ լիցին ՚ի մահկանացու մարմինս մեր* ¹²Այսուհետև մահ ՚ի մեզ զօրանայ, և կեանք ՚ի ձե՛զ: ¹³Արդ՝ ունիմք զնոյն հոգի հաւատոց, որպէս և գրեալ է. Հաւատացի՛ վասն որոյ և խօսեցայ: Եւ մեք հաւատամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ* ¹⁴Ձայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ, և յանդիման կացուսցէ ձեւք հանդերձ* ¹⁵Քանզի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհք յաճախեալք ՚ի բազմաց գոհութենէ անտի, առաւելեսցին ՚ի փառս Աստուծոյ* ¹⁶Վասն որոյ և ո՛չ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդս մեր նորոգի՛ օրըստօրէ* ¹⁷զի առժամայն յաճախութիւն թեթև նեղութեանս մերոյ ՚ի յաւիտենական առաւելութիւն,

* *Ոմանք.* Վասն այնորիկ ունիմք:

* *Ոմանք.* Այլ յայտնութեամբ ճմարտութեանն ընծայեցուք:

* *Ոմանք.* Ապա եթէ իցէ:

* *Ոսկան.* Նորոց աստուած աշխարհ: *Ոմանք.* Կուրացոյց զմիտս անհա՛:

* *Ոմանք.* Այլ զՅիսուս Քրիստոս զՏէր: *Ուր Ոսկան յաւելու.* զՏէր մեր:

* *Ոմանք.* ՚ի խաւարի լոյս ծա՛... զլուսաւորութիւն գիտութեան... ՚ի դէմս Քրիստոսի:

* *Ոմանք.* Կարօտացեալք՝ այլ ոչ:

* *Ոմանք.* Ձմահն Քրիստոսի ՚ի մար՛... կեանքն Քրիստոսի ՚ի մահկանացու մարմինս մեր յայտ՛:

* *Ոմանք.* Յայտնեսցին ՚ի մահկանացու:

* *Ոմանք.* Ձնոյն հոգի հաւատոյ:

* *Ոմանք.* Թէ որ յարոյց:

* *Ոմանք.* Ձի ամենայն ինչ վասն... զի շնորհքն... ՚ի գոհութենէ անտի՝ առաւելեսցին ՚ի փա՛: *Յօրհնակին.* Ամենայն ինձ վասն ձեր... գովութենէ անտի:

* *Բազումք.* Ներքին մարդն մեր:

զմեծութիւնն փառացն գործէ՝ ի մեզ*։¹⁸Քանզի ո՛չ գիտենք զերևելիսս, այլ զաներևոյթսն. զի երևելիքս առ ժամանակ մի են, և աներևոյթքն յաւիտենականք*։

5

Գլուխ Ե

¹Քանզի գիտենք՝ զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք, տաճար առանց ձեռագործի՝ յաւիտենական՝ յերկինս*։²Եւ ընդ այս տաղտկամք. քանզի զբնակութիւնն երկնից փափագենք զգեցնուլ*։³միայն թէ յորժամ զգենուցունքն, ո՛չ մերկ գտանիցիմք*։⁴Քանզի որ ենք ընդ յարկաւս ընդ այսուիկ, տաղտկամք ծանրացեալք. զի ո՛չ կամիմք մերկանալ, այլ զայն ՚ի վերայ այսր զգեցնուլ. զի ընկղմեսցի՝ մահկանացուս ՚ի կենաց անտի*։⁵Այլ որ յաջողէն մեզ ՚ի սոյն, Աստուած է. որ ետ մեզ զառհաւատչեայն Յոգւոյն*։ զգ. ⁶Արդ՝ համարձակիմք յամենայն ժամ, և գիտենք եթէ որչափ յամենք ՚ի մարմնի աստ, օտարանամք ՚ի Տեառնէ*։⁷զի հաւատովք զնամք, և ո՛չ կարծեօք։⁸Այլ համարձակիմք, և առաւել ևս հաճեալ ենք ելանել ՚ի մարմնոյ աստի՝ և մտանել առ Աստուած։⁹Վասն որոյ և առատանամք. զի եթէ յամիցենք՝ և եթէ ելանիցենք, հաճոյ և եթ իցենք նմա*։¹⁰Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի, և եթէ չար*։

Է ¹¹Իսկ արդ՝ զա՛հ Տեառն գիտելով չափ, զմարդկան ինչ զմի՛տս հաճենք. սակայն առաջի՝ Աստուծոյ յայտնելոց ենք. բայց ես յուսամ և ՚ի ձեր միտս յայտնի լինել*։¹²Իբր ո՛չ եթէ միւսանգամ զանձինս ինչ ընծայեցուցանենք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր. զի ունիցիք առ այնոսիկ որ առ ա՛չսն պարծիցին, և ո՛չ սրտիւք*։¹³Ձի եթէ առանցաք ինչ, այն Աստուծոյ է. և եթէ զգաստանամք, այն ձեր է*։¹⁴Ձի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ, քննել զայս. զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին*։¹⁵և ՚ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ ՚ի վերայ նոցայն մեռաւ, և յարեաւ*։¹⁶Այսուհետև մեք ո՛չ

Ոմանք. Նեղութեանս մեր. կամ՝ մերում... ՚ի յաւիտենականն առաւել։

*Ոմանք. Ոչ գիտենք զերևելիսդ, այլ զաներևոյթն։

Ոմանք. Գիտենք եթէ երկրաւոր... մերոյ քակտիցի, շինուած յԱստուծոյ ու՛։

Ոմանք. Զբնակութիւնս երկնից փափաքիմք զգե՛։

*Օրհնակ մի. Սի՛ միայն թէ յորժամ։

*Ոմանք. Ընդ հարկաւս այսուիկ... քանզի ոչ կամիմք։

*Ոմանք. Յաջողէն զմեզ ՚ի սոյն... Յոգւոյն ՚ի մեզ։

Ոմանք. Թէ որչափ յամենք ՚ի մարմնի՝ օտա՛։

Ոմանք. Վասն որոյ առատա՛... զի թէ յամի՛։

*Ոմանք. Իւրաքանչիւրոք իւրով մարմնովն... գործեաց եթէ բարի։

*Ոմանք. Ձահն Տեառն գիտելով չափ, զմարդկան միտս... միտսդ յայտնի լինել։

Յօրհնակին պակասէր. Բայց ես յուսամ։

*Ոմանք. Ձանձինս ընծայեցուցանել ձեզ... տամ ձեզ... զի ունիցիմք։

*Ոմանք. Առանցանք ինչ՝ այն Աստուծոյ, և թէ։

*Ոմանք. Ձի եթէ մինն փոխանակ ամենեցուն մեռանի, ապա։

*Ոսկան յաւելու. Մեռաւ Քրիստոս. զի։ Ոմանք. Որ կենդանիք իցեն... այնմ որ ՚ի վերայ

զոք գիտենք մարմնով. զի թեպետ և գիտեալք մարմնով զՔրիստոս, այլ արդ ո՛չ ևս նոյնպէս գիտենք*։ ¹⁷Բայց եթէ ինչ ՚ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, և արդ նոր եղև*։ ¹⁸Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ՚ի ձեռն Քրիստոսի. և ետ մեզ զպաշտօնն հաշտութեան*։ Վջ ¹⁹Եւ քանզի Աստուած էր, Քրիստոսի՛ւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս իւրեանց, և եղ ՚ի մե՛զ զբանն հաշտութեան*։ ²⁰Արդ՝ վասն Քրիստոսի պատգամաւորի՛նք որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեւր. աղաչենք վասն Քրիստոսի՝ հաշտեցարո՛ւք ընդ Աստուծոյ*։ ²¹Ձի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ*։

6

Գլուխ Զ

¹Գործակից ենք ձեր՝ և աղաչենք. մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ*։ ²Ձի. ՚ի ժամանակի ընդունելութեան՝ ասէ, լուայ քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի՛ քեզ։ Ահա՛ւասիկ ժամանակ ընդունելի. ահա օ՛ր փրկութեան։ ³Մի՛ և մի՛ իւիք տայցէք պատճառս, զի մի՛ արատեսցի պաշտօնն*։ ⁴Այլ յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև զպաշտօնեայն Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, ՚ի նեղութիւնս, ՚ի վիճտս, ՚ի չարչարանս, ⁵ի գանս, ՚ի բանտս, ՚ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ՚ի հսկմունս, ՚ի պահս, ⁶ի սրբութեան, ՚ի գիտութեան, յերկայնմտութեան, ՚ի քաղցրութեան, ՚ի Յոգի՛ Սուրբ, ՚ի սէր առանց կեղծաւորութեան*, ⁷ի բանս ճշմարտութեան, ՚ի զօրութեան Աստուծոյ. վասն զինուն արդարութեան՝ որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է. ⁸փառօք և անարգութեամբ, զովութեամբ և պարսաւանօք, իբրև մոլարք՝ և ճշմարիտք. իբրև անծանօթք՝ և ծանուցեալք*, ⁹իբրև մահկանացուք՝ և ահա՛ւասիկ կենդանի ենք, իբրև խրատեալք՝ և ո՛չ մահապարտեալք. ¹⁰իբրև տրտմեալք, և հանապազ ուրախ ենք. իբրև տնանկք՝ և զբազունս մեծացուցանենք. իբրև ոչինչ ունիցիմք, և զամենայն ինչ ունիմք*։ ¹¹Բերանք մեր բացեալ են առ ձեզ՝ Կորնթացիք. և սիրտք մեր ընդարձակեալք։ ¹²Ոչինչ նեղիք ՚ի մէնջ, բայց եթէ ՚ի գութս ձեր նեղիցիք. ¹³արդ՝ զնոյն հատուցունն իբրև ընդ որդեակս ունիմ.

ամենեցուն մեռաւ։

*Ոմանք. Այսուհետև և մեք... զի թեպետ և գիտենք մարմնով զՔրիստոս։

*Ոմանք. Բայց եթէ ՚ի Քրիստոս նոր արարած ինչ իցէ։ Ոմանք յաւելուն. Նոր եղև ամենայն։

*Ոմանք. Այլ զամենայն ինչ յԱստուծոյ։

*Ոմանք. Եւ ոչ համարել նոցա։

*Ոմանք. Եւ արդ վասն Քրիստոսի... որպէս և Աստուած Աստուծոյ բարեխօս... աղաչեմ վասն Քրիստոսի հաշ՛։

*Ոմանք. Ձի այն որ ոչն գիտէր մեղս։

*Ոմանք. Գործակից են ձեր... զշնորհն Աստուծոյ ընդուն։

*Ոմանք. Մի՛ և մի՛ իրիք. կամ՝ իրօք տացէք պատ՛։

*Ոմանք. ՚ի սրբութիւն, ՚ի գիտութեան... ՚ի քաղցրութեան, ՚ի հեզութեան, ՚ի Յոգի Սուրբ։

*Յօրինակին. Փառօք և անարգութեան։ Ոմանք յաւելուն. Եւ անարգութեամբն զօրութեամբ, զով՝... իբր անծա՛։

*Ոմանք. Իբրև ոչ ինչ ունիմք, և զամենայն ինչ ունիցիմք։

ընդարձակեցարուք և դուք. ¹⁴և մի՛ լինիք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի*. ¹⁵և կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. ¹⁶կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենաց: Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանոյ էք. որպէս ասաց Աստուած, թէ բնակեցայց ՚ի նոսա, և զնացից ՚ի նոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդք*: ¹⁷Վասն որոյ ելէք ՚ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր. և ՚ի պիղծս մի՛ մերձենայք*. ¹⁸և ես ընկալայց զձեզ. և ես եղէց ձեզ ՚ի Յայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ՚ի դստերս, ասէ Տէր ամենակալ*:

7

Գլուխ Է

¹Իսկ որովհետև զայս անտիս ունիմք սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ. կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ*: ²Տարայք մեզ, զի ո՛չ ունեք մեղաք, և ո՛չ զոք եղծաք, և ո՛չ զոք զրկեցաք: ³Ո՛չ եթէ ՚ի դատապարտութիւն ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ ասացի, եթէ ՚ի սրտի մերում կայք՝ ՚ի կեալ և ՚ի մեռանել ընդ ձեզ*:

Ը դկ. ⁴Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ. բազում պարծանք եմ ինձ վասն ձեր. լի՛ եմ մխիթարութեամբ. առաւելեալ՝ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր*: ⁵Քանզի յորժամ հասաք մեք ՚ի Մակեդոնիա, և ո՛չ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի՛ նեղեալք. քանզի արտաքոյ մարտք՝ և ՚ի ներքոյ արհաւիրք*: ⁶Այլ որ մխիթարէն զխոնարիս, մխիթարեաց զմեզ Աստուած ՚ի գալստեանն Տիտոսի: ⁷Ո՛չ միայն ՚ի գալստեան նորա, այլ և ՚ի մխիթարութեանն զոր մխիթարեցաւ նա ՚ի ձեզ, ՚ի պատմել մեզ զանձուկն ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչև առաւել ուրախ լինել ինձ*: ⁸Ձի թէ և տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ո՛չ զղջանամ, թէպէտ և զղջացեալ էի. քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ*. ⁹արդ ուրախ եմ, ո՛չ զի տրտմիցիք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք. քանզի տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ. զի մի՛ իւիք զրկիցիք ՚ի մէնջ*: ¹⁰Ձի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ապաշխարութիւն ՚ի փրկութիւն առանց զղջանալոյ՝

* *Ոմանք.* Անհաւատիցն... ընդ անօրէնութիւն, և կամ զինչ հաւ:՝ *Եւ ոմանք.* Ընդ անիրաւութեան:
 * *Ոմանք.* Տաճարի Աստուծոյ և մեհենաց... որպէս և ասաց Աստուած... նոցա յԱստուած, և նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ:
 * *Ոմանք.* Եւ ՚ի պիղծ մի՛:
 * *Ոմանք.* Եւ եղէց ձեզ ՚ի Յայր:
 * *Ոմանք յաւելուն.* Հոգւոյ և մարմնոյ... զսրբութիւն *անձանց մերոց* ահիւն Աստուծոյ:
 * *Օրհնակ մի.* Ինչ ասեմք... եթէ կալ, և ՚ի սրտի մերում կեայք, և ՚ի մե՛:
 * *Ոմանք.* Առաւել ես լի եմ մխիթարութեամբ յամենայն:
 * *Ոմանք.* Հանգիստ գտաք մարմնոյս մե՛:
 * *Ոմանք.* Այլ և մխիթարութեանն... մինչ առաւել ուրախ:
 * *Ոմանք.* Ձի թէ տրտմեցուցի... թէ և առ ժամանակ մի:
 * *Ոմանք.* Արդ՝ ՚ի ձեզ ուրախ եմ:

գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝ մահ գործէ*։ ¹¹Արդ՝ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցարուք, ո՛րչափ ինչ փոյթ գործեաց ՚ի ձեզ, կամ աղերս, կամ սաստ, կամ երկելոյ, կամ անձուկ, կամ նախանձ, կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր՝ սուրբս լինել յիրիդ յայդմիկ*։ ¹²Ապա ուրեմն՝ թէ և գրեցի ես առ ձեզ, ո՛չ վասն այնորիկ որ զրկեացն, և ո՛չ վասն այնորիկ որ զրկեցա՛ւն. այլ վասն յայտնի՝ լինելոյ փութոյն ձերոյ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ*։ ¹³Վասն այնորիկ մխիթարեալ եմք ՚ի վերայ մխիթարութեանն մերոյ. առաւել ևս խնդացաք ՚ի վերայ խնդութեանն Տիտոսի. քանզի հանգուցեալ էր հոգի նորա ՚ի ձէնջ ամենեցունց։ ¹⁴Ձի զինչ և պարծեցա՛յ առ նմա վասն ձեր, ո՛չ անաչեցի. այլ որպէս զամենայն ճշմարտութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր առ Տիտոս ճշմարիտ եղեն*։ ¹⁵Նա՛ և գութք նորա առաւել ևս են ՚ի ձեզ. քանզի յիշեցուցանէր մեզ զամենեցուն զձեր հնազանդութիւն. թէ ո՛րպէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա*։ ¹⁶Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի՛ համարձակ եմ առ ձեզ։

8

Գլուխ Ը

Թ դբ. ¹Յուցանեմ ձեզ ե՛ղբարք զշնորհսն Աստուծոյ, որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց. ²զի մեծա՛ւ հանդիսիւ նեղութեան՝ առաւելութիւն խնդութեանն նոցա, և ծանր աղքատութիւնն նոցա առաւել եղև ՚ի մեծութիւն առատութեան նոցա*։ ³Ձի ըստ կարի նոցա վկայեմ, և աւելի՛ քան զկար. ⁴ինքնակա՛ն բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն, և զհաղորդութիւն պաշտամանն որ ՚ի սուրբսն՝ տալ՝ ցմեզ*։ ⁵Ո՛չ որչափ ա՛կն ունէաք, այլ և զանձինս ևս ետուն, նախ՝ Տեառն և ապա մե՛զ կամօքն Աստուծոյ. ⁶աղաչել զՏիտոս, զի որպէս սկսան յառաջագոյն, նոյնպէս և կատարեսցէ՛ ՚ի ձեզ և զայ՛դ ևս շնորհս*։ ⁷Այլ որպէս յամենայնի առաւել էք հաւատովք, և բանիւ, և գիտութեամբ, և ամենայն փութով, և որ ՚ի մէնջ ՚ի ձեզ սէրն է, զի և յայդմ ևս շնորհի առաւել լինիցիք*։ ⁸Ո՛չ որպէս հրաման տալոյ ասեմ. այլ վասն այլոց փութոյ, և վասն ձերոյ սիրոյ՝ զմտերմութիւնդ փորձեմ*։ ⁹Քանզի գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի վասն ձեր աղքատացաւ, որ մեծատունն էր, զի դուք նորա՛ աղքատութեամբն մեծասջիք*։ ¹⁰Եւ խրա՛տ մի յայսմիկ տամ. զի այն իսկ յօգուտ է ձեզ. որք ո՛չ միայն զառնելն, այլ և զկամելն

* Ոմանք. Ձի որ ըստ Աստուծոյ տրտմ*։

* Ոմանք. Որ ըստ Աստուծոյ տրտմ*։

* Ոմանք. Վասն այսորիկ որ զրկ*։ Ոսկան. Փութոյն մերոյ զոր ունիմք վասն ձեր առաջի Աստուծոյ։

* Ոմանք. Առ Տիտոսի ճշմարիտք։

* Ոմանք. Ձամենեցուն ձեր հնազանդութիւնդ։

* Ոմանք. Նեղութեանն առաւել... աղքատութիւն նոցա... ՚ի մեծութեան առատութեան։

* Ոմանք. Աղաչեցին զշնորհն և զհա՛... տալ մեզ։

* Ոմանք. Յառաջագոյն կատարեսցէ... ևս շնորհ։

* Ոմանք. Ի՛ ձէնջ ՚ի ձեզ սէրն է. զի և այդմ ևս... լինիցիք։

* Ոմանք. Ոչ իբրև հրաման տալով ասեմ։

* Ոմանք. Գիտէք դուք զշն՛... որ վասն մեր աղքատացաւ որ մեծատունն է. զի։

յառաջագոյն սկսայք ՚ի հերո՛ւն հետէ*։ ¹¹Բայց արդ՝ և զամենլն իսկ կատարեցէ՛ք. զի որպէս յօժարութիւնն ՚ի կամաց է, նոյնպէս և առնելն ըստ գոյին։ ¹²Ձի եթէ յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է, և ո՛չ եթէ ըստ չգոյին*։ ¹³Ձի ո՛չ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, և ձեզ նեղութիւն*։ ¹⁴այլ հաւասարութեամբ յայժմու ժամանակիս, ձեր առաւելութիւնդ ՚ի նոցա պակասութիւնն. զի և նոցա առաւելութիւնն եղիցի ՚ի ձերո՛ւն պակասութեանդ. զի եղիցի հաւասարութիւն, որպէս և գրեալ է*։ ¹⁵թէ որ բազումն առ՝ ո՛չ առաւելաւ. և որ սակաւն՝ ո՛չ նուազեցաւ*։ ¹⁶Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ գնոյն փոյթ վասն ձեր ՚ի սիրտ Տիտոսի*։ ¹⁷զի զաղաչանսն ընկալաւ, և փութացաւ յօժարագոյնս դիմեաց զա՛լ առ ձեզ*։ ¹⁸Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն, որոյ գովութիւնն յաւետարանի՛ անդ է՝ ընդ ամենայն եկեղեցիս*։ ¹⁹Եւ ո՛չ այսչափ միայն, այլ և ձեռնադրեալ յեկեղեցեաց անտի, նշդեհակից մեր եղև ՚ի շնորիս յայտսիկ, որ պաշտին ՚ի մէնջ ՚ի փառս Տեառն, և ՚ի մեր յօժարութիւն*։ ²⁰Բայց զայս խղճեաք իսկ, թէ զուցէ՞ արատ ինչ որ դնիցէ ՚ի հաստատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւս ՚ի մէնջ*։ ²¹Քանզի խորհիմք զբարիս՝ ո՛չ միայն առաջի Տեառն, այլ և առաջի մարդկան։ ²²Եւ առաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրեցաք ՚ի բազում իրս, բազում անգամ պինդ գտեալ. և առաւել ևս այժմ պնդագոյն յուսով մեծաւ ՚ի ձեզ*։ ²³Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, ի՛նչ հաւասար է, և ձեր գործակից. և եթէ եղբարք մեր առաքեալքն եկեղեցւոյ, և փա՛ռք Քրիստոսի*։ ²⁴Եւ արդ՝ զհանդէս սիրոյ՝ ձերոյ՝ և զմերոյ պարծանաց վասն ձեր, ՚ի դոսա՛ ցուցչի՛ք յանդիման ամենայն եկեղեցեաց*։

9

Գլուխ Թ

դդ. ¹Այլ վասն պաշտամանն որ ՚ի սուրբսն է, աւելի՛ է ինձ և գրել առ ձեզ*։ ²Ձի գիտեն զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ են ՚ի մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն ՚ի հերո՛ւն հետէ պատրաստ են. և ձեր նախանձն զբազումս յորդորեաց*։ ³Եւ առաքեցաք զեղբարսն, զի մի՛ պարծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցի ՚ի մասինդ յայդմիկ. այլ որպէս

* *Ոմանք.* Տամ ձեզ. զի այն։ *Այլք.* Այն իսկ օգտի է ձեզ, որք։ *Ուր Ոսկան.* Օգտի ձեզ է։

* *Օրինակ մի.* Յօժարութիւնն առաջի կացցէ։

* *Ոմանք.* Հանգիստ կամիմ։

* *Ոմանք.* Ձեր առաւելութիւն ՚ի նոցա պակասութեանն։

* *Ոմանք.* Եւ որ սակաւն առ՝ ոչ։

* *Ոմանք.* Շնորհքն Աստուծոյ որ... ՚ի սիրտս Տիտոսի։

* *Ոմանք.* Եւ փութացեալ յօժ*։

* *Յայս համար ՚ի լուս՝. մերունս նշանակի համաձայն բազմաց թէ՛* Ձրուկայ ասէ։

* *Ոմանք.* Եկեղեցակից մեր... որ պաշտինս ՚ի մէնջ։

* *Բազումք.* Արատ որ ինչ դնի*։

* *Օրինակ մի.* Եւ առաքենք ընդ նմա զեղբայրն զոր ընտրե՛ն։

* *Ոմանք.* Վասն Տիտոսի բանք իցեն... և ձեզ գործակից։

* *Ոմանք.* Պարծանացն որ վասն... ամենայն եկեղեցեացդ։

* *Ոմանք.* Ինձ գրել առ ձեզ։

* *Ոմանք.* Պատրաստք են։

ասէի՛ իսկ, պատրաստագոյնք գտանիցիք՝. ⁴գուցէ՛ յորժամ գայցեն ընդ մեզ Մակեդոնացիքն, և գտանիցեն զձեզ անպատրաստս, և ամաչեսցուք մեք. զի մի՛ ասացուք՝ թէ դուք, ՚ի մասինդ յայդմիկ պարծանաց՝: ⁵Արդ՝ կարևոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն պատմեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր ՚ի պատրաստի ունել. այնպէս իբրև զօրհնութիւն, և մի՛ իբրև զագահութիւն՝: ⁶Քանզի զայդ որ սերմանէ ճժղելով՝ ճժղելով և հնձեսցէ. և որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ՝, ⁷իւրաքանչիւր որպէս և յօժարեսցի որք սրտիւ, մի՛ առ հարկի և տրտմութեան. քանզի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած՝: ⁸Այլ կարօղ է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ ՚ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ, առաւելուցուր յամենայն գործս բարութեան՝, ⁹որպէս և գրեալ է. Սփռեաց և ետ տնանկաց՝ արդարութիւն նորա մնայ՝ յաւիտեան՝: դե. ¹⁰Այլ այն որ պարզէ սերմն սերմանահանաց՝ և հաց ՚ի կերակուր, պարզեսցէ՛ և բազմացուցէ զսերմանիս ձեր, և աճեցուցէ՛ զարդիւնս արդարութեան ձերոյ՝. ¹¹յամենայնի՛ մեծացեալք ամենայն առատութեամբ, որ յօրինէն մեք գոհութիւն Աստուծոյ՝: ¹²Ձի պաշտօն հարկիս այսորիկ՝ ո՛չ միայն առ ՚ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ առաւելուլ բազմօք գոհութիւն Աստուծոյ՝. ¹³հանդիսիւ պաշտամանս այսորիկ, փառաւորել՝ զԱստուած ՚ի վերայ հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւետարանն Քրիստոսի. և առատութեամբ հաղորդութեանն ՚ի նոսա և յամենեսին՝: ¹⁴Եւ նոցա աղօթք վասն ձե՛ր քանզի անձկացեալ են առ մեզ վասն առաւել շնորհացն Աստուծոյ՝ որ ՚ի մեզ՝: ¹⁵Այլ շնորհք Աստուծոյ ՚ի վերայ անպատում պարզեացն նորա՝:

10

Գլուխ Ժ

Ժ ¹Այլ ես իսկ Պաւղոս աղաչեմ զձեզ հեզութեամբ և հանդարտութեամբն

* *Ոմանք.* Ձեղբարսդ. զի մի՛... ընդունայն լիցի. և *ոմանք.* լինիցին ՚ի մասինդ... ասէ իսկ՝ պատրաստագոյն գտանիցիք:

* *Ոմանք.* Գայցեն առ մեզ... ասացուք ձեզ թէ դուք:

* *Ոմանք.* Յառաջագոյն իսկ եկեսցէ առ ձեզ: *Բազումք.* Եւ յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն խոս՝:

* *Առ Ոսկանայ պակասի.* Քանզի զայդ որ սերմանէ: *Ոմանք.* ճժղելով՝ ճժղելով և հնձ՝:

* *Ոմանք.* Որպէս և յօժարիցի. և *ոմանք.* յօժարեսցէ: *Ոսկան.* Ձտուրս զուարթս առատս սի՛:

* *Ոմանք.* Ձամենայն շնորհն... բաւականութիւնս կալեալ առաւելուցուր ՚ի գործս բար՝:

* *Ոմանք.* Եւ ետ. տնանկաց՝ ար՝:

* *Ոմանք.* Որ պարզէն սերմն սերմանողի. *կամ՝* սերմանողաց... և հաց ՚ի կերակուր որդւոց մարդկան, պար՝... զսերմանիսն ձեր:

* *Ոմանք.* Ձմեք գոհութիւն:

* *Ոմանք.* Այլ և առաւելուլ... գոհութիւնս Աստուծոյ:

* *Ոմանք.* Յաւետարանս Քրիստոսի... հաղորդութեամբ ՚ի նոսա և յամենեսեան:

* *Ոմանք.* Եւ նոցա աղօթս վասն ձեր. քանզի անձկացեալ են առ ձեզ... շնորհացն Աստուծոյ որ են ՚ի ձեզ:

* *Ոմանք.* Այլ շնորհքն Աստուծոյ... պարզեացն նորա:

Քրիստոսի, որ յանդիման ձեզ իբրև տառապեալ մի եմ ՚ի միջի ձերում. բայց ՚ի հեռուստ համարձակիմ առ ձեզ*։ ²Աղաչեմ, զի մի՛ ՚ի մօտոյ և եթ համարձակիցիմ վստահութեամբ. կամ համարիցիմ յանդգնել ՚ի վերայ ոմանց, որ կարծեն զմէնջ եթ ըստ մարմնոյ զնայցեմք*։ ³Ձի թեպէտ և մարմնով զնամք, այլ ո՛չ եթ ըստ մարմնոյ զինուորիմք*։ ⁴Ձի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ ՚ի քակելոյ զամուրս. զխորհուրդս քակեմք*, ⁵և զամենայն բարձրութիւն հպարտացեալ ՚ի վերայ գիտութեանն Աստուծոյ. և գերեմք զամենայն միտս ՚ի հնազանդութիւն Քրիստոսի*։ ⁶և ՚ի պատրաստի՛ ունիմք խնդրել զվրէժ յամենայն անհնազանդութեան, յորժամ ձե՛ր ևս հնազանդութիւնդ կատարեսցի*։ ղզ. ⁷Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսցիք. եթ որ վստահ յանձն իցէ Քրիստոսի՛ լինել, զայն խորհեսցի՛ դարձեալ ՚ի միտս իւր. թ որպէս նայն Քրիստոսի է, նոյնպէս և մերք*։ ⁸Ձի թ առաւել ևս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ՝ զոր ետ մեզ Տէր, ՚ի շինել և ո՛չ ՚ի քակել զձեզ, ո՛չինչ ամաչեսցից*։ ⁹զի մի՛ թուեցայց իբրև ահ ինչ արկանել ձեզ թղթովքս։ ¹⁰Ասիցե՞ք. Թուղթքս ծանուցեմ և սաստիկք. բայց տեսիլ մարմնոյ տկար, և բանն արհամարհեալ*։ ¹¹զայն խորհեսցի այնպիսին, զի որպիսիք ենք բանիւք թղթոցդ ՚ի հեռուստ, նոյնպիսիք և ՚ի մօտոյ արդեամբք։ ¹²Քանզի ո՛չ իշխեմք կշռել և հաւասարել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցանեն. այլ անձամբ յանձինս՝ զանձինս չափեն և ՚ի կշռել անձամբ յանձինս, ո՛չ առնուն ՚ի միտ*։ ¹³Այլ մեր ո՛չ եթ յանչափս ինչ պարծեսցուք. այլ ըստ չափոյ կանոնին, զոր բաժանեաց մեզ Աստուած չափով՝ հասանել մինչև առ ձեզ*։ ¹⁴Իբր ո՛չ եթ հասու ինչ չիցեմք ՚ի ձեզ, և ձկտեցուցանիցեմք զանձինս. քանզի մինչև առ ձեզ հասաք աւետարանաւն Քրիստոսի*։ ¹⁵և ո՛չ յանչափս ինչ պարծիմք օտար վաստակօք։ Բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց՝ ձերոց, այդրէն ՚ի ձեզ մեծանալոյ, ըստ կանոնիս մերոյ՝ յառաւելութիւն. ¹⁶ի վեր ևս քան զձեզ աւետարանել. ո՛չ օտար կանոնաւ ՚ի պատրաստականս ինչ պարծել։ ¹⁷Ձի որ պարծիցիմ ՚ի Տէր պարծեսցի*։ բկ. ¹⁸Ձի ո՛չ եթ որ զանձն իւր ընծայեցուցանէ, նա՛ է ընտրեալ. այլ զոր Տէրն ընծայեցուցանէ*։

11

* *Ոմանք.* Յեզութեամբն և... յանդիման ձեր՝ իբրև:

* *Ոմանք.* Համարիցիմ յանդգնեալ... որ կարծենն զմէնջ թ ըստ:

* *Ոմանք.* Ձի թեպէտ և ըստ մարմնոյ զն՛:

* *Օրինակ մի.* Այլ հոգևոր յԱստուծոյ, առ ՚ի քակել զամուրս:

* *Ոմանք.* Ի հնազանդութիւնն Քրիստոսի:

* *Բազումք.* Չվրէժ ամենայն անհնա՞: *Ուր օրինակ մի.* Չամենայն անհնա՞... ևս հնազանդութիւն կատա՞:

* *Օրինակ մի.* Վստահ յանձն Քրիստոսի լինել... նոյնպէս և մեր:

* *Ոմանք.* Վասն իշխանութեան մերոյ:

* *Ոմանք.* Ասիցեն. Թուղթ քո ծանուցեմք... բայց տեսիլ մարմնոյ տկար է, և:

* *Ոսկան.* Ձի ոչ իշխեմք: *Ոմանք.* Եւ ՚ի կշռելն անձամբ զանձինս:

* *Ոսկան.* Ըստ չափու... Աստուած չափու:

* *Ոմանք.* Եւ ձկտեցուցանեմք զան՞:

* *Ոսկան.* Ձի որ պարծի ՚ի Տէր պար՞:

* *Յօրինակին.* Որ զանձինս իւր ընծայե՞: *Առ Ոսկանայ պակասի.* Չանձն իւր ըն՞:

Գլուխ ԺԱ

¹Լա՛ւ էր եթէ ներէի՛ք փոքր մի և իմում անզգամութեանս. այլ և անսացէ՛ք իսկ:
²Նախանձեցուցանե՛մ զձեզ ՚ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայց զձեզ ա՛ռն միում, իբրև զկո՛յս մի սուրբ՝ յանդիմա՛ն կացուցանել Քրիստոսի՛*:
³Բայց երկնչիմ, գուցէ՛ որպէս օ՛ճն խաբեաց զԵւա խորամանկութեա՛մբ իւրով՝ ապականեսցի՛ն միտք ձեր ՚ի միամտութենէն որ ՚ի Քրիստոս*:
⁴Ձի եթէ որ գալոցն իցէ ա՛յլ Քրիստոս քարոզիցէ՛ զոր մեքն ո՛չ քարոզեցաք, կամ ոգի օտա՛ր առնուցուք՝ զոր ո՛չ առէք, կամ աւետարան օտա՛ր՝ զոր ո՛չ ընկալարուք, բարւո՛ք անսայիք նոցա*:
⁵Բայց ես ա՛յսպէս համարիմ, թէ ո՛չինչ իւիք պակաս իցեմ քան զլա՛ւ առաքեալսն*:
⁶Թէպէտ և տգէտ ևս իցեմ բանիւ, այլ ո՛չ եթէ գիտութեամբ. սակայն յամենայնի՛ յայտնեցաք զանձինս ամենևին առ ձեզ*:
⁷Եւ եթէ վնա՞օս ինչ գործեցի՛ զի գանձն խոնարհեցուցի. և այն՝ զի դուք բարձրասցիք. զի ձրի՛ զաւետարանն Աստուծոյ աւետարանեցի ձեզ:
⁸Ձա՛յլ եկեղեցիս կողոպտեցի՛, առեալ թոշակ ՚ի ձե՛ր սպասաւորութիւն*:
⁹Եւ յորժամ եկի առ ձեզ. թէպէտ և պակասեաց ինչ, ո՛չ զոք ՚ի ձե՛նջ ձանձրացուցի, զի զպակասութիւնն իմ լցին եղբարքն եկեալք ՚ի Մակեդոնացւոց. և յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ գանձն իմ պահեցի՛ և պահեցիցի*:
¹⁰Ձի գո՛յ յիս ճշմարտութիւնն Քրիստոսի: բո. Ձի պարծանքս այս ո՛չ արգելցին յինէն ՚ի կողմանս Աքայեցւոց*:
¹¹Ընդէ՞ր. իբրու թէ ո՛չ սիրիցեմ զձեզ. զայն Աստուած գիտէ. ¹²զոր առնե՛մն՝ և արարից. զի հատի՛ց զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառնս կամիցին. զի որով պարծիմն, և նոքա՛ իբրև զմե՛զ գտանիցին*:
¹³Ձի այնպիսիքն սո՛ւտ առաքեալք, մշակք նենգաւորք, կերպարանին ՚ի կերպարանս առաքելոց Քրիստոսի:
¹⁴Եւ չե՛ն ինչ զարմանք. քանզի և ինքն Սատանայ կերպարանի ՚ի հրեշտակ լուսոյ. ¹⁵և ո՛չինչ է մե՛ծ՝ թէ և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև զպաշտօնեայք արդարութեան. որոց կատարածն եղիցի ըստ գործո՛ց իւրեանց*:
¹⁶Դարձեալ ասեմ, մի՛ ոք համարեսցի զիս անզգամ. ապա թէ ոչ, գո՛նէ՛ իբրև զանզգամ ընկալարուք զիս, զի և ե՛ս փոքր մի ինչ պարծեցայց:
¹⁷Եւ զոր խօսիմս, ո՛չ եթէ ըստ Տեառն ինչ խօսիմ, այլ իբրև անզգամութեամբ՝ ըստ կարգի այ՛դ պարծանաց*:
¹⁸Եւ քանզի բազումք պարծին ըստ մարմնոյ, որպէս և ես պարծեցայց*:
¹⁹Մտադիւրութեամբ անսայիք անմտացն՝ ձերովդ իմաստութեամբ*:
²⁰Քանզի անսայք, եթէ ոք խաբէ՛ զձեզ, եթէ ոք

* *Ոմանք.* Ձի խօսեցայ զձեզ առն:

* *Ոմանք.* Այլ երկնչիմ, գուցէ իբրև օճն խա՛... խորամանկութեամբն իւրով ապականիցին:

* *Ոմանք.* Ձի թէ որ գա՛... զոք մեք ոչ քա՛... զոր ոչն առէք:

* *Ոմանք.* Թէ ոչ իւիք պակաս գտայ քան զլաւ:

* *Օրինակ մի.* Ձի թէպէտ և տգ՛... այլ ոչ գիտութեամբ. սակայն ամենայնի յետնեցաք զանձինս:

* *Օրինակ մի.* Կողոպտեցի ոչ առեալ զթո՛:

* *Ոմանք.* Ձպակասութիւն իմ... պահեցի, և պարհեցից:

* *Ոմանք.* Քանզի գոյ իսկ ճ՛:

* *Ոմանք.* Առնեմն արարից... զպատճառս այսոցիկ՝ որ զպատճառս կամիցին, զի որով պարծիցիմն:

* *Ոմանք.* Իբրև պաշտօնեայք:

* *Ի բազումս պակասի.* Ըստ Տեառն ինչ խօսիմ:

* *Ի բազումս պակասի.* Ըստ մարմնոյ, որպէս և ես:

* *Այլք.* Մտադիւր իմն անսայիք:

ծառայեցուցանէ՛, եթէ որ ուտէ՛ զծեր, եթէ որ առնու՛ ինչ, եթէ որ հպարտանայ՛, եթէ որ զծեզ յանդիման հարկանէ՛*։ ²¹ըստ անարգանացո՛ւ ասեն, իբրև թէ մեք տկարացա՛ք արդելք։ յոր ինչ որ համարծակիցի, անզգամութեամբ ասեն, համարծակի՛մ և ես՛*։ ²²Եբրայեցի՞ք իցեն, և ես։ Իսրայելացի՞ք իցեն, և ես։ զաւակ Աբրահամո՞ւ իցեն, և ես՛*։ ²³Կաշտօնեայք Քրիստոսի՞ք իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել ևս ես։ Եթէ վաստակօք՝ առաւել, եթէ գանիւք՝ ևս առաւել։ Եթէ բանտիւ՝ աւելի՛ քան զնոսա, եթէ մահուամբք՝ բազում անգամ՛*։ ²⁴Ի հրէից, հնգիցս՝ քառասուն միով պակաս արբի։ ²⁵Երիցս ծաղկեցայ։ միանգամ քարկո՛ծ եղէ։ երիցս նաւակո՛ծ եղէ։ զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ։ ²⁶Ի ճանապարհս բազում անգամ։ Վիշտս ՚ի գետոց, Վիշտս յաւազակաց, Վիշտս յազգէ, Վիշտս ՚ի հեթանոսաց, Վիշտս ՚ի քաղաքի, Վիշտս յանապատի, Վիշտս ՚ի ծովու, Վիշտս ՚ի սուտ եղբարց՛*։ ²⁷Ի ջանս՝ և ՚ի վաստակս։ ՚ի տքնութիւնս բազում անգամ, ՚ի քաղց՝ և ՚ի ծարաւ։ ՚ի պահս բազում անգամ։ ՚ի ցո՛ւրտ և ՚ի մերկութեան՛*։ ²⁸Թող զայլ նեղութիւնսն։ և զի հանապազ խուժանն ՚ի վերայ իմ կուտեր, և հոգք ամենայն եկեղեցեացն՛*։ ²⁹Ո՞ հիւանդանայ, և ո՛չ ես հիւանդանամ։ ո՞ գայթազդի, և ո՛չ ես տապանամ՛*։ բզ։ ³⁰Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարութեանն պարծեցայց։ ³¹Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի գիտէ՛ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ո՛չ ստեմ՛*։ ³²Ի Դամասկոս ազգապետն Արետայ՛ արքայի պահէր զքաղաքն Դամասկացուց ունել զիս՛*։ ³³և ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ ՚ի ձեռաց նորա՛*։

12

Գլուխ ԺԲ

¹Արդ պարծել ինչ պարտ իցէ. այլ օգնէ ինչ ո՛չ։ Բայց եկից ՚ի տեսիլս և յայտնութիւնս Տեառն՛*։ ²Գիտեն՛ այր մի ՚ի Քրիստոս յառաջ քան զչորեքտասան ամ. եթէ մարմնով՝ ո՛չ գիտեն, և եթէ առանց մարմնոյ՝ ո՛չ գիտեն, Աստուած գիտէ. յափշտակեալ՝ զայնպիսին մինչև յերրորդ երկնից՛*։ ³Եւ գիտեն՛ զայնպիսի այր.

* *Ոմանք.* Թէ որ խաբէ:

* *Ոմանք.* Յորս ինչ որ համարծակեցի:

* *Ոսկան.* Չաւակք Աբրա՞:

* *Ոմանք.* Եւ ես յանդգնագոյնս ա՞: *Յօրինակիմ.* Եթէ բանիւ, աւելի քան: *Ուր ոմանք.* Եթէ բանտիւք:

* *Ի լուս՞.* *Նշանակի ց,* ՚ի վերայ տ՛ի բառիս՝ ՚ի գետոց. *թերևս ակնարկելով առնել ՚ի գեցոց. որոյ իմաստն անյայտ է: Ոմանք.* Վիշտս ՚ի քաղաքէ:

* *Ոմանք.* Եւ ՚ի մերկութիւն:

* *Ոմանք.* Նեղութիւնս... եկեղեցեացն:

* *Ոմանք.* Եւ ես ոչ հիւան՛:

* *Ոմանք.* Աստուած Հայր Տեառն մե՞: *Ոսկան յաւելու.* Յիսուսի *Քրիստոսի* գիտէ: *Ոմանք.* Յաւիտեանս ամեն:

* *Ոմանք.* Արետ արքայի: *Ուր ՚ի լուս՞.* ամենայն գրչագիրք՝ համաձայն մերումս նշանակեն. Աներ Հերովդի էր Արետս այս:

* *Ոմանք.* Կախեալ ընդ պարիսպն փախեայ:

* *Ոմանք.* Ի տեսիլս և ՚ի յայտնութիւնս:

* *Ոսկան.* Գիտեն զայր մի... մինչև յերրորդ երկնս: *Ոմանք.* Յափշտակել զայնպիսին:

եթէ մարմնով՝ և եթէ առանց մարմնոյ՝ ո՛չ գիտեն. Աստուած գիտէ, ⁴զի
 յափշտակեցաւ ՚ի դրախտն. և լուաւ բանս անճառս, զոր ո՛չ է պարտ մարդոյ
 խօսել՝: ⁵Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին ինչ ո՛չ պարծեցայց.
 բայց եթէ ՚ի տկարութիւնս՝: ⁶Ձի եթէ և կամիցիմ պարծել, ո՛չ եղէց անգգամ,
 քանզի զարդարն ասեն. այլ անխայեմ, գուցէ՛ որ համարիցի՛ յիս աւելի, քան
 զոր տեսանիցէ՛ յիս՝ կամ լսիցէ՛ յինէն՝: ⁷Եւ զի մի՛ առաւելութեամբ
 յայտնութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ, հրեշտակ Սատան՝
 կռփել զիս. զի մի՛ հպարտացայց՝: ⁸Եւ վասն այնորիկ երիցս անգամ աղաչեցի
 զՏէր՝ զի ՚ի բաց արասցէ յինէն՝: ⁹և ասէ ցիս. Շատ են քեզ շնորհք իմ, զի
 զօրութիւն իմ ՚ի տկարութեան կատարի: Եւ արդ՝ լաւ ևս լիցի՛ ինձ պարծել ՚ի
 տկարութիւնս, զի բնակեցցէ՛ յիս զօրութիւնն Քրիստոսի՝: զդ. ¹⁰Վասն որոյ
 հաճեալ են ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս, և
 ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի. զի յորժամ տկարանամ, յայն ժամ
 զօրանամ՝: ¹¹Եղէ անգգամ, քանզի դուք ստիպեցէք. զի ինձ պարտ էր ՚ի ձէնջ
 վկայութիւն առնուլ, թէ ոչինչ պակաս գտայ քան զլաւ առաքեալսն. զի թպէտ և
 ես ոչինչ եմ՝. ¹²սակայն նշանք առաքելոյ՛ զործեցան ՚ի ձեզ, ամենայն
 համբերութեամբ, նշանօք և արուեստիք՝ և զօրութեամբք՝: ¹³Եւ արդ զի՞նչ իցէ,
 որո՞վ պակաս գտայք քան զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու, զի ես զձեզ ո՛չ
 ձանձրացուցի. շնորհեցէք ինձ զվնասդ զայդ՝: ¹⁴Ահաւասիկ այս երիցս անգամ
 պատրաստեալ եմ գալ առ ձեզ. և ձեզ բեռն ինչ ո՛չ եղէց. զի ո՛չ խնդրեմ ինչ
 զձեր, այլ զձե՛զ. քանզի ո՛չ պարտին որդիք հարց գանձել, այլ հարք որդւոց՝:
¹⁵Բայց ես մտադիրութեամբ ծախեցից և ծախեցայց վասն անձանց ձերոց. զի
 թպէտ և յառաւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ: ¹⁶Այլ գրեթէ ես ո՛չինչ
 ծանրացայ ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ՝: ¹⁷Մի թէ որովք
 առաքեցին առ ձեզ, նոքօք ինչ ազահեցի ՚ի ձէնջ՝: ¹⁸Աղաչեցի զՏիտոս՝ և
 առաքեցի ընդ նմա զեղբայրն. մի թէ ազահեա՞ց ինչ զձեր Տիտոս. ոչ նովի՞ն
 ոգւով գնացաք. ոչ նովի՞ն շաւղօք շրջեցաք՝: զգ. ¹⁹Դարձեալ՝ համարիցիք եթէ
 յողոք անկեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք. առաջի Աստուծոյ ՚ի Քրիստոս խօսիմք,
 զի ամենայն ինչ սիրելիք վասն ձերոյ շինութեան է՝: ²⁰Այլ երկնչիմ, գուցէ՛ եկեալ՝
 ո՛չ որպիսիս կամիցիմն գտանիցեմ զձեզ. և ես՝ գտանիցիմ ձեզ՝ որպէս և դուք
 ո՛չ կամիցիք: Գուցէ՛ դարձեալ՝ հե՛ռ, նախանձ, սրտմտութիւնք, զրգռութիւնք,

* *Ոմանք.* Բանսն անճառս, զոր:

* *Յօրինակին.* Բաց եթէ ՚ի տկարութիւնս:

* *Ոմանք.* Ձի թէ և կամիցիմ... համարեցի ինչ յիս աւելի:

* *Ոմանք.* Առաւելութեամբն հպարտ: *Օրինակ մի.* Յրեշտակ Սատանայ:

* *Ոմանք.* Երիցս աղաչեցի:

* *Ոմանք.* Ի տկարութիւն կատա՞:

* *Յօրինակին պակասէր.* Հաճեալ եմ ընդ:

* *Յօրինակին.* Դուք ստիպեցէք. զի ինձ: *Ուր Ոսկան.* Ստիպեցիք զիս. զի: *Օրինակ մի.* Թէ
 ոչ պակաս գտայ քան զայլ առա՞. թպէտ և ես ոչ ունիմ:

* *Ոմանք.* Նշանք առաքելոց:

* *Ոմանք.* Պակաս գտայ քան... զձեզ ինչ ոչ ձանձ՞:

* *Ոմանք.* Ձի և ձեր բեռն ինչ ոչ եղէ: *Ոմանք.* Քանզի ոչ խնդրեմ:

* *Ոմանք.* Էի, և խելօք կալայ:

* *Ոմանք.* Առաքեցի առ ձեզ, նոքօք ազահեցի՞ ինչ ՚ի ձէնջ:

* *Ոմանք.* Եւ աղաչեցի... հոգւով գնա՞:

* *Ոմանք.* Վասն ձեր փրկութեան և շինութեան է:

չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովութիւնք*։ ²¹Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկո՛ւն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. և սո՛ւզ առնուցուն վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց, և ո՛չ ապաշխարելոց՝ ՚ի վերայ պղծութեան, և պոռնկութեան, և գիշութեան՝ զոր գործեցին*։

13

Գլուխ ԺԳ

¹Այս երիցս անգամ գան առ ձեզ. զի ՚ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան*։ ²Յառաջ ասացի, և դարձեալ կանխաւ ասեմ, յանդիման երկիցս անգամ. և այժմ ՚ի բացո՛ւստ գրեմ յառաջագոյն յանցուցելոցն՝ և այլոցն ամենեցուն. զի եթէ եկից՝ դարձեալ՝ ո՛չ խնայեցից*։ ³Եթէ զվորձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ իննս ընդ ձե՛զ խօսի. որ հզօրացեալն է ՚ի ձեզ, և ո՛չ տկարացեալ*։ ⁴Զի թէպէտ և խաչեցաւ ՚ի մերմէ՛ տկարութենէ, այլ կենդանի՛ է զօրութեամբն Աստուծոյ. և մեք թէպէտ և տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ*։ ⁵Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ՚ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ո՛չ գիտէք զանձինս, զի Քրիստոս Յիսուս ՚ի ձե՛զ է, բայց եթէ անպիտանք իցէք*։ ⁶Այլ ական ունիմ թէ գիտիցէք. զի մեք ո՛չ ենք անպիտանք*։ ⁷Այլ խնդրեմք յԱստուծոյ՝ զի մի՛ ինչ արասցէ ձեզ չար. ո՛չ զի մեք ընտիրք երևեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք. և մեք անպիտանք գտանիցիմք*։ ⁸Զի ո՛չ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն. այլ վերակացու ենք ճշմարտութեանն։ ⁹Խրախ ենք՝ յորժամ մեք տկարանայցեմք, և դուք զօրաւորք իցէք. զդոյն իսկ և աղօթս առնեմք զձե՛ր հաստատութիւնդ։ ¹⁰Վասն այնորիկ զայս ՚ի հեռո՛ւստ գրեմ. զի մի՛ յորժամ եկից՝ սաստկութեամբ վարեցայց՝ ըստ իշխանութեանս, զոր ե՛տ ինձ Տէր ՚ի շինել՝ և ո՛չ ՚ի քակել*։ ¹¹Այսուհետև ե՛ղբարք, ո՛ղջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարո՛ւք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ։ ¹²Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սրբութեան։ Ողջոյն տան ձեզ սո՛ւրբք ամենայն։ ¹³Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ, և հաղորդութիւն Յոգևոյն Սրբոյ, ընդ ձեզ ամենեսին, ամեն*։

* *Ի լուս՝*. Ոչ որպէս ես կամի՞. *համաձայն բազմաց ՚ի բնար՝*: Ոմանք. Ոչ որպէս կամիմն գտա՞... նախանձ, տրտմութիւնք, գրգռ՞: *Ուր օրհնակ մի*. Գրգռութիւնք, ստութիւն, խռովութիւն: *Ոսկան յաւելու*. Որպիսի և դուք ոչ... խռովութիւնք *իցեն ՚ի մէջ ձեր*:

* *Ոմանք*. Ի վերայ գիծութեան և պղծութեան և պոռն՞:

* *Յոմանս պակասի*. Երից վկայից հաստա՞:

* *Ոմանք*. Յանդիման երիցս... գրեմ վասն յառա՞... դարձեալ՝ ոչ անխայեցից:

* *Ոմանք*. ԶՔրիստոսէ, որ ինն ընդ ձեզ:

* *Ոմանք*. Այլ և կենդանի է զօ՞: *Ոմանք յաւելուն*. Նմա զօրութեամբն Աստուծոյ ՚ի ձեզ:

* *Ոմանք*. Եթէ կա՞յք ՚ի նոյն... եթէ ոչ գիտիցէք... եթէ անպիտանք իցէք:

* *Ոմանք*. Բայց ական ունիմ եթէ գիտի՞:

* *Բազումք*. Եւ մեք անպիտանք իցեմք:

* *Ոմանք*. Ի հեռուստ գրեմք:

* *Օրհնակ մի*. Եւ խաղաղութիւն Յոգևոյն Սրբոյ: *Ի բազումս պակասի*. Ընդ ձեզ ամենեսին. *ամեն*:

*Առ Կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ ՚ի Փիլիպեայ, ՚ի ձեռն Տիտոսի՝ և Ղուկայ:
Տունք ՇԴ:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Գաղատացիս Թղթոյն

Ձայս առաքել ՚ի Հռովմայ առ որս տեսեալ էր և գիտեր, և աշակերտեալ էր: Եւ է պատճառ թղթիս՝ այս: Ուսեալ էին բարուք Գաղատացիքն յառաքելոյ, և հաստատեալք էին ընտանեգոյն Քրիստոսի. և ընթացակիցք էին առաքելոյս, հրապուրեցան յոմանց թլփատել: Ձայս ամենայն յոմանց լուեալ առաքեալն գրէ առ նոսա: Եւ յառաջագոյն վկայէ նոցա՝ յաղագս որոյ ունէին զհաւատսն ընտանացեալք Քրիստոսի ուխտին, մեղադրէ թէ յիմարութեամբ գործեցին, և այպանէ զնոսա: Յետ այսորիկ ո՛չ ընդունի զօրէնսն ըստ հաւատոցն Աբրահամու. և ցուցանէ յօրինացն, և ՚ի կանանցն Աբրահամու առակ օրինակի, զի մինչև ՚ի դէպ ժամանակի տուաւ թլփատութիւնն, և այժմ դադարեալ է վասն Քրիստոսի գալստեանն: Եւ այսպէս եցոյց զի մի՛ երբէք յանցանիցեն. այլ մանաւանդ ունել ՚ի Քրիստոս զհաւատս, և գիտել, եթէ որ ՚ի Քրիստոս շնորհս, հալածէ զթլփատութիւնն որ ՚ի մարմնի: Եւ այսպէս դարձեալ սովորական ներբողիւն յայտնեալ. կատարէ զթուղթն:

Գլուխք առ Գաղատացիս Թղթոյն

- ա. Յետ սկզբանն՝ պատմութիւն իւրոյ ՚ի Հրեութենէն փոխելոյ ըստ յայտնութեանն:
- բ. Վասն առաքելոցն վկայ ՚ի հաւատոց անտի կենացն լինելոյ:
- գ. Վասն Կեփայի դիմադարձ լինելոյ, և թէ ՚ի հաւատոցն՝ և ո՛չ յօրինացն է փրկութիւն:
- դ. Թէ ՚ի հաւատոցն է սրբութիւն՝ և ո՛չ յօրինաց անտի:
- ե. Թէ և Աբրահամ ՚ի հաւատոցն արդարացաւ՝ ա՛ռ մերոյ օրինակէ:
- զ. Թէ և օրէնքն ո՛չ արդարացուցանեն, այլ յանդիմանեն և անէծս ՚ի վերայ դնեն՝ զոր Քրիստոսն լուծանէ:
- է. Թէ ո՛չ յօրինաց անտի, այլ յաւետեացն են բարութիւնք, և օրէնքն յառաջագոյն կազմիչք են յանդիմանութեամբն:
- ը. Թէ ընդ արարածովք էին՝ որք ընդ օրինօքն էին:

** Ի վախճանի ոմանք. Երկրորդ թուղթ՝ գրեցաւ... Տիտոսի և Ղուկայ: Ի գրչագիր օրինակաց ոմանք յայսմ վայրի յետ Երկրորդ թղթոյս Կորնթացւոց, յարեն զթուղթ մի Կորնթացւոց առ Պաւղոս. և Պաւղոսի առ նոսա, մակագրեալ. Թուղթ երրորդ առ Կորնթացիսն. զորս օրինակ մեր ընդ այլոց բազմաց դնէ ՚ի վախճանի Չորեքտասան թղթոց առաքելոյն. ըստ որում և մեր ունիմք կարգել ՚ի յաւելուած մատենիս:*

թ. Թէ յազատ կինն Աբրահամու և ՚ի բուն որդին օրինակ եղելոյ՝ չէ՛ պարտ ծառայել օրինացն:

Ժ. Թէ կոչումնս մեր չէ՛ ընդ թլփատութեամբ և ընդ օրինօք՝ վասն Քրիստոսի չարչարանացն:

Ժա. Հաստատութիւն գրով ըստ հոգւոյն ազատութեան:

Ժբ. Հրաժեշտ յայնցանէ, որք ՚ի թլփատութիւնն ձգեն. և յօժարութիւն ՚ի նոր կեանս ընդ հոգւոյն:

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

գդ. ¹Պաւղոս առաքեալ ոչ ՚ի մարդկանէ և ոչ ՚ի ձեռն մարդոյ, այլ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, և Աստուծոյ Հօր՝ որ յարոյց զնա ՚ի մեռելոց. ²և որ ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացոյ Գաղատացւոց*։ ³Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի Հօրէ, և ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ*։ ⁴որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ՝ յաշխարհէ աստի չարէ, ըստ կամացն Աստուծոյ և Հօր մերոյ*։ ⁵որում փա՛ռք յաւիտեանս. ամէն*։ ⁶Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ՚ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան*։ ⁷որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի*։ ⁸Այլ թէ մեք, կամ հրեշտա՛կ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի՛ քան զոր աւետարանեսցաքն ձեզ, նզովեա՛լ լիցի*։ ⁹Որպէս յառաջագոյնն ասացաք և արդ դարձեա՛լ ասեմ. եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի՛ քան զոր առէքն, նզովեա՛լ լիցի*։ ¹⁰Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի*։

Ա դգ. ¹¹Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ*։ ¹²Քանզի և ոչ ես ՚ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ, այլ ՚ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։ ¹³Քանզի լուեա՛լ իսկ է ձեր զիմ զնացսն որ

* Յօրինակին մերում աստանօր ՚ի վերնագրիս՝ և ՚ի յաջորդս ոմանս զանց արարեալ էր դնել ՚Թուղթ. զոր մեք յամենեսին միապէս եղաք ըստ պատշաճի:

* Ոմանք. եղբարք ամենեքեան, եկեղեցւոյդ Գա՛:

* Ոմանք. ՅԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

* Ոմանք. Աստուծոյ և Հօր մերում:

* Ոմանք յաւելումն. Յաւիտեանս յաւիտենից՝ ամէն:

* Ոմանք. Զարմանամք զի... ՚ի շնորհն Քրիստոսի:

* Ոմանք. Որ խռովեցուցանեն զձեզ, և կամին շր՞:

* Ոմանք. Այլ եթէ մեք... աւետարանեսք ձեզ:

* Յօրինակին պակասէր. Եւ արդ դարձեալ: Ոմանք. Դարձեալ ասեմք... նզովեալ եղիցի:

* Ոմանք. Եւ եթէ տակաւին:

* Ոմանք. Քանզի և ես ոչ ՚ի մար՞:

երբեմն 'ի Զրեութեան անդ, զի անչա'փ հալածեի զԵկեղեցին Աստուծոյ, և ավա'ր հարկանեի զնա*։ ¹⁴Եւ յառաջադէմ էի 'ի Զրեութեանն՝ քան զբազում հասակակիցս իմ որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի ավանդութեանցն։ ¹⁵Այլ յորժամ կամեցաւ Աստուած, որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց*, ¹⁶յայտնել զՈրդին իւր ինն, զի ավետարանեցի'ց զնա 'ի հեթանոսս. անդէն վաղվաղակի ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան*։ ¹⁷և ո'չ էլի յերուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին. այլ չոգայ յԱրաբիա, և դարձեալ դարձայ 'ի Դամասկոս։ ¹⁸Ապա յետ երից ամաց էլի' յերուսաղէմ տեսանել զՊե'տրոս. և եղէ առ նմա ավուրս հինգետասան*։ ¹⁹Չայլ որ յառաքելոց անտի ո'չ տեսի, բայց միայն զՅակոբքոս. զեղբայրն Տեառն։ ²⁰Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ առաջի Աստուծոյ, զի ո'չ ստեմ*։ ²¹Ապա եկի 'ի կողմանս Ասորոց և Կիլիկեցոց։ ²²Եւ յանձանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ 'ի թլփատութենէ անտի էին 'ի Քրիստոս*։ ²³Բայց զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ ավետարանէ՛ զհաւատսն՝ զոր երբեմն խախտէր*։ ²⁴և փառաւոր առնէին ինն զԱստուած։

2

Գլուխ Բ

Բ եկ. ¹Ապա յետ ամաց չորեքտասանից, մի'ւս անգամ ե'լի յերուսաղէմ ընդ Բառնարայ, առեալ ընդ իս և զՏիտոս*։ ²Եւ էլի ըստ յայտնութեանն, և զգացուցի՝ նոցա զավետարանն՝ զոր քարոզէի 'ի հեթանոսս, առանձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին, գուցէ՛ ընդունայն ինչ ընթացեալ իցեն, կամ ընթանայցեն*։ ³Այլ և ո'չ Տիտոս որ ընդ իս 'ի հեթանոսաց էր, բռնադատեցաւ թլփատել*։ ⁴այլ վասն սպրդողաց սո'ւտ եղբարցն, որք սպրդեցին մտանել դիտել զազատութիւնն մեր՝ զոր ունինք 'ի Քրիստոս Յիսուս. զի զմեզ ծառայեցուցեն*։ ⁵Որոց և ո'չ առժամանակ մի անսացաք հնազանդութեանն. զի ճշմարտութիւն ավետարանին հաստատեսցի առ ձեզ*։ ⁶Բայց զկարծելոցն եթէ իցեն ինչ, որպիսիք որ երբեմն էին, չէ՛ ինչ ինձ փոյթ. քանզի Աստուած ակն մարդկան ո'չ առնու. զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ո'չ զգացուցին*։ ⁷այլ զնորին հակառակն, իբրև տեսին եթէ հաւատացեալ է ինձ ավետարանն

* *Ոմանք.* Ձիմ զնացս, որ... 'ի Զրեութեան անդր։

* *Ոմանք.* Եւ կոչեաց զիս 'ի ձե'։

* *Ոմանք.* Արդէն վաղվաղակի ոչ զգացու'։ *Ոսկան.* Ոչ ինչ առի հանգամանս մարմնոյ և ար'։

* *Ոմանք.* Եւ եղէ առ նոսա ավուրս։

* *Ոմանք.* Այլ որ գրեմ առ։

* *Ոմանք.* Եւ անձանօթ էի երե'։

* *Օրհնակ մի.* Երբեմն խափանէր։

* *Ոմանք.* Ամաց չորեքտասանց... ընդ իս զՏիտոս։

* *Ոմանք.* Չոր քարոզեցի 'ի հեթ'։

* *Ոմանք.* Որ 'ի հեթանոսաց ընդ իս էր։

* *Յօրհնակին.* Մտանել դիմել զա'։ *Ոմանք.* Չմեզ ծառայեցուցանեն։

* *Ոմանք.* Հաստատեսցի 'ի ձեզ։

* *Ոմանք.* Բայց զկարծելոյն թէ իցեն... որպիսիք երբեմն էիք, ինձ չէ փոյթ։

անթվատուրեան, որպէս Պետրոսի ՚ի թլփատուրեան*.⁸ զի որ յաջողեացն Պետրոսի յառաքելութիւն թլփատուրեանն, յաջողեաց և ինձ ՚ի հեթանոսս*:⁹ Իբրև գիտացին զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս, և Կեփաս, և Յոհաննէս, որ կարծեալ սիւնքն էին, ձեռն ետուն հաւանութեան ինձ և Բառնաբայ. զի մեք ՚ի հեթանոսս, և նոքա ՚ի թլփատուրեանն*.¹⁰ Բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք. զոր և ես փութացայ զնոյն առնել:

Գ եդ.¹¹ Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ընդդէմ դարձայ նորա. քանզի զո՞գ իբրև սոգտեալ իմն էր*:¹² Քանզի մինչև եկեալ էին ոմանք առ ՚ի Յակովբայ, ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրև եկին, զատանէր և որոշէր զանձն, երկուցեալ յայնցանէ որ ՚ի թլփատութենէ անտի էին*:¹³ Եւ կեղծաւորեցան ընդ նմա և այլ Յրեայքն. մինչև Բառնաբաս անգամ խոնարհեցաւ ՚ի նոցա կեղծաւորութիւնն*:¹⁴ Այլ իբրև տեսի, թէ ո՛չ ուղիղ գնան ՚ի ճշմարտութիւն աստարանին, ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն. Եթէ դու որ Յրեայդ ես՝ հեթանոսաբար և ո՛չ Յրեաբար կեաս, զիա՞րդ ստիպես հեթանոսաց լինել Յրեարէն*:¹⁵ Ձի մեք բուն Յրեայք ենք, և ո՛չ ՚ի հեթանոսաց մեղաւորք:¹⁶ Ձայս գիտենք, եթէ ո՛չ արդարանայ մարդ ՚ի գործոց օրինաց, եթէ ոչ ՚ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի. և մեք ՚ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարասցուք ՚ի հաւատոցն Քրիստոսի, և ո՛չ ՚ի գործոց օրինաց. զի ՚ի գործոց օրինաց ո՛չ արդարացի ամենայն մարմին*:

Դ¹⁷ Իսկ եթէ մինչ խնդրիցենք արդարանալ ՚ի Քրիստոս, և գտանիցինք մեղաւորք. ապա ուրեմն Քրիստոս մեղա՞ց պաշտօնեայ եղև. քա՛ւ լիցի*:¹⁸ Ձի եթէ զոր քակեցին, զնոյն միւսանգամ շինիցեն. ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երևեցուցանեմ*:¹⁹ Ձի ես օրինօք օրինացն մեռայ, զի Աստուծոյ կեցից, և ընդ Քրիստոսի ՚ի խա՛ջ ելից*.²⁰ և կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս: Եզ. Այլ որ այժմ կեամ մարմնով, հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն վասն իմ*:²¹ Եւ ես ո՛չ անարգեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի՛ էր արդարութիւն, ապա Քրիստոս զո՞ւր մեռաւ*:

3

Գլուխ Գ

Մ¹ Դ՞ անմիտ Գաղատացիք, ո՞նք նախանձ արար զձեզ. որոց գրեթէ առաջի աչա՛ց

* *Ոմանք.* Որպէս և Պետրոսին թլփա՞:

* *Ոմանք.* Ձի զոր յաջող՞:

* *Օրինակ մի.* Եւ իբրև տեսին զշնորհս: *Ոմանք.* Որ կարծեալք սիւնք էին:

* *Ոմանք.* Ընդդէմ դարձան նորա:

* *Ոմանք.* Քանզի մինչև եկեալ:

* *Ոմանք.* Եւ այլ Յրեայքն ընդ նմա:

* *Ոմանք.* Եթէ ոչ ուղիղ գան ՚ի ճշ՞... հեթանոսաբար կեանս և ոչ... լինել Յրեարէն:

* *Ոմանք.* Օրինացն ոչ արդարանայ ամենայն:

* *Ոմանք.* Իսկ արդ մինչ խնդ՞... և գտանիցինք մեք մեղաւոր՞:

* *Ոսկան.* Ձոր քակեցի: *Ոմանք.* Ձանձն ես ինձէն:

* *Ոմանք.* Ձի Աստուծով կեցից:

* *Ոմանք.* Որդւոյն Աստուծոյ կամ... զանձն իւր վասն մեր:

* *Ոմանք.* Անտի է արդարութիւն:

Յիսուս Քրիստոս գրեցաւ ՚ի խաչ ելեալ*։ ²Չայս միայն կամին ուսանել ՚ի ձեռք. ՚ի գործո՞ց օրինաց զՅոգին ընկալարուք՝ թէ ՚ի լրոյ հաւատոց*։ ³Այդչափ անմի՞տ էք. սկսեալ հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք*։ ⁴Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր, եթէ իցէ զուր*։ ⁵Իսկ արդ՝ որ բաշխեաց ՚ի ձեզ զՅոգին, և աջողեաց ՚ի ձեզ զգօրութիւնս. ՚ի գործո՞ց օրինաց է՝ եթէ ՚ի լրոյ հաւատոց*։

Ե ⁶Որպէս Աբրահամ հաւատաց յԱստուած՝ և համարեցաւ նմա յարդարութիւն*։ ⁷Գիտիցէք արդեւք. զի որք ՚ի հաւատոց անտի են, նոքա՛ են որդիք Աբրահամու*։ ⁸Յառաջագոյն գիտէր զիր, եթէ ՚ի հաւատոց՝ անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջագոյն խոստացաւ Աստուած Աբրահամու. թէ ՚ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք*։ ⁹Այսուհետև որք ՚ի հաւատոց անտի են, օրհնի՛ն ընդ հաւատացելոյն Աբրահամու*։

Չ ¹⁰Ձի որ միանգամ ՚ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է, թէ անիծեալ ամենայն մարդ որ ո՛չ կացցէ յամենայն գրեալսն ՚ի գիրս օրինաց՝ առնել զամենայն*։ Վջ ¹¹Ձի օրինօքն ո՛չ ոք արդարանայ առաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի. Արդարն՝ ասէ ՚ի հաւատոց կեցցէ*։ ¹²Բայց օրէնքն չեն ՚ի հաւատոց, այլ որ արասցէ զայն՝ կեցցէ՛ ՚ի նոսին*։ ¹³Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք. զի գրեալ է, թէ անիծեալ ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ կախեալ կայցէ*։ ¹⁴Գի ՚ի հեթանոսս օրհնութիւնն Աբրահամու եղիցի ՚ի Քրիստոս Յիսուս. զի մեք զաւետիս Յոգւոյն Սրբոյ ընկալցուք հաւատովք*։

Է ¹⁵Ըստ մարդկութեան՝ ասեմ, եղբարք. Ապաքէն զմարդկան հաստատեալ կտակ՝ ո՛չ ոք կարէ անարգել, և ո՛չ այլ հրաման ՚ի վերայ այնր տալ. ¹⁶Իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, և զաւակի՛ նորա. և ո՛չ ասէ զաւակաց՝ իբրև բազմաց, այլ իբրև զմիոյ, թէ՛ և զաւակի՛ քում, որ է Քրիստոս*։ ¹⁷Բայց զայս ասեմ. Ձկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ ՚ի Քրիստոս. օրէնքն որ յետ չորեքարեր և երեսուն ամի եդան, ո՛չ կարեն խախտել առ ՚ի խափանելոյ՝ զաւետիսն*։ ¹⁸Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւն. ապա ո՛չ ևս յաւետեացն.

* Ոսկան յաւելու. Արար զձեզ՝ ոչ հնազանդիլ ճշմարտութեան, որոց գրե՛։ Ոմանք.

Գրեցաւ Քրիստոս Յիսուս։

* Բազումք. Եթէ ՚ի լրոյ հաւա՛։

* Ոմանք. Անմիտք էք։

* Ոմանք. Ընդ ձեզ ՚ի զուր։

* Ոմանք. Ով բաշխեաց... և յաջողեաց ՚ի ձեզ զօրութիւն... օրինաց էր թէ ՚ի լրոյն հաւա՛։

* Ոմանք յաւելուն. Որպէս և գրեալ է. թէ Աբրահամ հաւատաց յԱստուած։

* Ոմանք. Գիտացէք արդեւք... ՚ի հաւատոյ անտի են։

* Ի բազումս պակասի. Խոստացաւ Աստուած Աբրա՛։

* Ոմանք. Օրհնէին ընդ հաւա՛։

* Ոմանք. Անիծեալ է ամենայն... ոչ կայցէ յամենայն ՚ի գրեալսն օրինացն։

* Յոմանս պակասի. Արդարն ասէ՛ի։

* Ոմանք. Չեն ՚ի հաւատոց անտի։

* Ոմանք. Եթէ անիծեալ ամենայն... կախեալ կայցէ։

* Ոմանք. Յոգւոյն Սրբոյ առցուք հաւա՛։

* Ոմանք. Իբրև զբազմաց... թէ ՚ի զաւակի քում օրհ՛։

* Ոմանք. Հաստատեալ յԱստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս։ Ի լուս՛. այսր համարոյ գրեթէ ամենայն գրչագիրք համաձայն մերումս նշանակեն զայս. Աբրահամ Յե մինչև ՚ի Ծ ամ. և Իսահակ Կ. Յակոբ ՂԳ. Յովսէփ ԾԺ. Եգիպտոս ԾԽԴ. միանգամայն ՆԼ։

բայց Աբրահամու անտեօ՛ք շնորհեաց Աստուած*։ ¹⁹Իսկ զի՞նչ իցեն օրէնք. յանցուածո՛ց վասն յաւելան, մինչև եկեսցէ զաւակն որում խոստացեալն էր, կարգեալ հրեշտակօք ՚ի ձե՛ռն միջնորդի*։ ²⁰Իսկ միջնորդ՝ միո՛յ ուրուք ո՛չ է, բայց Աստուած մի՛ է։ ²¹Իսկ արդ՝ օրէնքն հակառա՞կ ինչ իցեն անտեացն Աստուծոյ. քա՛ւ լիցի. զի եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարօղ էին կենդանի՛ առնել, ապա հաստա՛տ յօրինա՛ց անտի է արդարութիւն*։ ²²Այլ փակեցին գիրք զամենեսին ընդ մեղօք, զի անտիքն ՚ի հաւատո՛ց անտի Յիսուսի Քրիստոսի տացին հաւատացելոց։ ²³Մինչչև՝ հաւատքն եկեալ էին, ընդ օրինօք փակեալ պահեալք ՚ի հանդերձեալ հաւատսն որ յայտնելոց էին ՚ի մեզ*։ ²⁴Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ՚ի Քրիստոս Յիսուս, զի ՚ի հաւատոցն արդարացուք։ ²⁵Այլ իբրև եկին հաւատքն, ո՛չ ևս ընդ դաստիարակաւ ենք։ ²⁶Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք, հաւատովք ՚ի Յիսուս Քրիստոս*։ ²⁷Որք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չի՞ք խտիր*, ²⁸ո՛չ Յրէի, և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի, և ո՛չ ազատի. ո՛չ արուի, և ո՛չ իգի. զի ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս։ ²⁹Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ անտեացն՝ ժառանգք*։

4

Գլուխ Դ

Ը զկ. ¹Ձայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ է, չէ՛ ինչ առաւել քան զծառայն. թէպէտ և տէր իցէ ամենեցուն*։ ²Այլ ընդ հազարապետօք է՛ և ընդ գաւառապետօք՝ մինչև ՚ի ժամանակակէտ հօրն։ ³Նոյնպէս և մե՛ք մինչ տղայքն էաք, ընդ տարերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք*։ ⁴Այլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղև ՚ի կնօջէ, և եմուտ ընդ օրինօք*։ ⁵Որ զնոսա որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ՛. զի մեք զորդեգրութիւն ընկալցուք*։ ⁶Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՅոգի Որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր, որ աղաղակէ աբբա՛, Յայր*։ ⁷Այսուհետև չե՛ս ծառայ, այլ որդի՛. եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ։ ⁸Այլ յայնժամ մինչ ո՛չ գիտէիք զԱստուած, ծառայէիք այնոցիկ՝ որ ո՛չն էին ՚ի բնէ՛ աստուածք*։ ⁹Այլ այժմիկ ծաներուք զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք իսկ յԱստուծոյ, զիա՞րդ դառնայք միւսանգամ ՚ի տարերս տկարս և յաղքատս, որոց միւսանգամ զանծինս

* Ոմանք. է ժառանգութիւնն... անտեօքն շնոր՛։

* Ոմանք. Իցեն օրէնքն։

* Ոմանք. Ձի թէ տուեալ էին... անտի էր արդարութիւնն։

* Ոմանք. Ընդ օրինօքն փակեալ։

* Օրինակ մի. Ձի ամենեքեան որդիք Աստուծոյ ենք հաւատովք ՚ի Քրիստոս Յիսուս։

* Ոմանք. Որ միանգամ։

* Ոմանք. Ապա թէ դուք... զաւակք էք ըստ։

* Ոսկան. Չէ ինչ անելի քան։

* Ոմանք. Ընդ տարերբք աշխարհիս ՚ի ծառայութիւն կա՛։

* Ոմանք. Լրումն ժամանակի... զորդի իւր։

* Ոմանք. Ձի զորս ընդ օրի՛... և զի մեք։

* Ոմանք. ՁՈգի Որդւոյ ՚ի սիրտս մեր, որով աղաղակէ. կամ՝ որ աղաղակենք աբբա՛։

* Այլք. Մինչ ոչն գիտէիք։ Ոմանք. Ծառայ էիք... որ ոչ էին։

ծառայեցուցանել կամիք*։ ¹⁰Ձաւուրս խտրէք, և զամիսս, և զժամանակս՝ և զտարիս։ ¹¹Երկնչիմ՝ ՚ի ձէնջ, գուցէ՛ թէ՛ ՚ի զուր ինչ վաստակեցի ՚ի ձեզ*։ ¹²Եղբարք՝ իբրև զիս, քանզի և ես իբրև զձեզդ էի։ Եղբարք՝ աղաչեմ զձեզ, չի՞ք ինչ ձեր մեղուցեալ առ իս։ ¹³Գիտէք դուք՝ զի տկարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփորձանսն որ ՚ի մարմնի իմուն էին*, ¹⁴նչ անարգեցէք՝ և ոչ անգոսնեցէք. այլ իբրև զհրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս, իբրև զՔրիստոս Յիսուս*։ ¹⁵Իսկ արդ՝ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայ եմ ձեզ, եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք և տայիք ինձ*։ ¹⁶Արդ՝ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն խօսեցայ*։ ¹⁷Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ՚ի բարի. և արգելուլ կամին զձեզ, զի նոցա նախանձաւորք լինիցիք։ ¹⁸Բայց լաւ է նախանձաւոր լինել ՚ի բարիս յամենայն ժամ, և ոչ միայն յորժամ ՚ի ձերուն միջի իցեմ։ զդ. ¹⁹Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի՛ Քրիստոս ՚ի ձեզ*։ ²⁰Կամէի այժմ գալ առ ձեզ, և փոխել զբարբառ իմ. զի տարակուսեալ եմ ես վասն ձեր։

Թ ²¹Ասէ՞ք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս*։ ²²Ձի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի՛ յաղախնոյն անտի, և մի՛ յազատէն*։ ²³Այլ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյն ծնեալ էր, և որ յազատէն՝ ըստ աւետեացն. ²⁴որ է առակ օրինակի։ Ձի այս ինքն են՝ երկու կտակարանք, մի՛ ՚ի լեռնէ Սինեայ ՚ի ծառայութիւն ծնեալ, որ էր Յազար*։ ²⁵Քանզի Յազար՝ լեռնն Սինայ է յԱրաբիա. հաւասար է այսմ Երուսաղէմի. զի ծառայէ որդւովքն իւրովք հանդերձ*։ ²⁶Այլ վերինն Երուսաղէմ ազաւտ է, որ է մայր մեր ամենեցուն*։ ²⁷Ձի գրեալ է. Ուրախ լեր ամուլ որ ոչ ծնանէիր, զոչեա՛ և աղաղակեա՛ որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ՝ առաւել քան զարամբւոյն*։ ²⁸Այլ մեք եղբարք՝ ըստ Սահակայ՝ աւետեացն որդիք ենք։ ²⁹Այլ որպէս յայնժամ որ ըստ մարմնոյն ծնեալ էր, հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս և այժմ*։ ³⁰Այլ զի՞նչ ասէ գիր. ՚ի բաց հան զաղախինդ և զորդի նորա. զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն՝ ընդ որդւոյն ազատի*։ ³¹Վասն որոյ եղբարք՝ չե՛մք որդիք աղախնոյն, այլ ազատին. ազատութեամբն որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։

* *Ոմանք.* Այլ այժմ ծաներուք զԱստուած... միւսանգամ անդրէն ՚ի տարերսն ՚ի տկարս, և... որոց միանգամ զանձինս ընծայեցուցանել կամիք։

* *Ոմանք.* Գուցէ՛ ՚ի զուր ինչ վաստակեցի ձեզ։

* *Ոմանք.* Գիտէք իսկ զի տկարութեամբ։

* *Ոմանք.* Իբրև զՅիսուս Քրիստոս։

* *Ոմանք.* Ձի թէ հնար ինչ է՝ զաչս։

* *Ոմանք.* Այլ զի թշնամի։

* *Օրինակ մի.* Մինչև նկատեսցի Քրիստոս։

* *Ոսկան.* Ասացէք ինչ ինձ։ *Օրինակ մի.* Որ ընդ օրինօքն կամէի լինել։

* *Օրինակ մի.* Ձի գրեալ է եղբարք՝ եթէ... մինն յաղախնոյ։

* *Ոմանք.* Որ են առակ օրինա՞։ *Ուր ՚ի լուս՝ բազում գրչագրաց համաձայն մերունս նշանակի.* Որ է այլաբանութիւն։ *Ոմանք.* Սինայ ՚ի ծառայութեան ծնեալ։

* *Ոսկան.* Քանզի Սինա լեռնն է յԱրաբիայ՝ հաւասար է այսմ։ *Ոմանք.* Քանզի Յազարն... զի ծառայէ որդւովք իւրովք։

* *Յոմանս պակասի.* Մայր մեր ամենեցուն։

* *Ոմանք.* Որպէս և գրեալ է. Ու՛։

* *Ոմանք.* Ծնեալն էր։

* *Բազումք.* Եւ զորդի դորա... որդի աղախնոյդ ընդ որդւոյ ազատին։

Գլուխ Ե

¹Պի՛նդ կացէք այսուհետև, և մի՛ միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք*:
 Ժ զգ. ²Ահաւասիկ ես Պաւղոս ասե՛ն ձեզ. զի եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ
 ո՛չ օգնէ*:³Վկայե՛ն ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, թէ պարտական է
 զամենայն օրէնսն կատարել: ⁴Խափանեա՛լ էք ՚ի Քրիստոս, որ օրինօքն
 արդարանայք. և անկեա՛լ էք ՚ի շնորհաց անտի: ⁵Ձի մեք Յոգւոյն՝ ՚ի հաւատոց
 յուսոյն արդարութեան ակն ունիմք*:⁶Ձի ՚ի Քրիստոս Յիսուս՝ ո՛չ թլփատութիւն
 ինչ կարօղ է, և ո՛չ անթլփատութիւն. այլ հաւա՛տք սիրով աջողեալք*:⁷Բարւո՛ք
 ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել*:⁸Ձի այն
 հրապոյրք՝ ո՛չ յայնմանէ եմ որ կոչեացն զձեզ*:⁹Փոքր մի խմոր զամենայն
 զանգուածն խմորէ*:¹⁰Այլ ես յուսացեալ եմ ՚ի ձեզ Տերամբ՝ թէ ո՛չ այլազգ ինչ
 խորհիցիք. և որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ դատաստան՝ ո՛ր ոք և իցէ*:¹¹Այլ ես
 ե՛ղբարք՝ եթէ թլփատութիւն քարոզէի, ընդէ՛ր տակաւին հալածիմ. ապա ուրեմն
 խափանեա՛լ իցէ գայթաղութիւն խաչի՛ն*:¹²Երանի՛ թէ մօտակտուր իսկ լինէին,
 որ զձեզն խռովեցուցանեն*:¹³Ձի դուք յազատութիւն կոչեցեալ էք:
 ԺԱ Ե՛ղբարք, միայն զի ազատութիւնն ձեր ո՛չ լինիցի ՚ի պատճառս մարմնոյ.
 այլ սիրով ծառայեցէք միմեանց*:¹⁴Ձի ամենայն օրէնք ՚ի մի՛ բան կատարին. ՚ի
 Սիրեսցեսն զընկեր քո իբրև զանձն քո*:¹⁵Ապա թէ զմիմեանս խաժատիցէք՝ և
 ուտիցէք. զգո՛յշ լերուք՝ գուցէ ՚ի միմեանց սատակիցիք*:¹⁶Բայց զայս ասեմ.
 Յոգւո՛վ գնացէք, և զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք*:¹⁷Ձի մարմին ցանկայ
 հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ. և զի սոքա միմեանց հակառակ
 են, մի՛ զոր կամիցիքն՝ զայն առնիցէք:¹⁸Իսկ եթէ Յոգւո՛վ վարիք, ապա չէք ընդ
 օրինօք*:¹⁹Ձի յայտնի՛ են գործք մարմնոյ. այս ինքն են, շնութիւն,
 պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն*,²⁰կռապաշտութիւն, կախարդութիւն,
 թշնամութիւն, հե՛ռ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք,
 երկպառակութիւնք, հերձուա՛ծք*,²¹չարակնութիւն, սպանութիւնք,
 արբեցութիւնք, անառակութիւնք, և որ ինչ սոցի՛ն նման են. զոր յառաջագոյն
 իսկ ասեմ ձեզ, որպէս և կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն,

* *Ոմանք.* Ծառայութեան մտանիցէք:

* *Ոմանք.* Ձի թէ թլ՝... ձեզ ինչ ոչ օգ՛:

* *Ոմանք.* Ձի մեք Յոգւովն ՚ի հա՛:

* *Ոմանք.* Քանզի ՚ի Քրիստոս Յիսուս ոչ թլ՝... սիրով աջողեալ:

* *Ոմանք.* Ոչ հաւանել:

* *Ոսկան.* Ոչ յայնմանէ էին որ:

* *Ոմանք.* Ձի փոքր մի խմոր:

* *Ոմանք.* Խռովեցուցանեն զձեզ, կրեսցէ դատաստանս ով ոք:

* *Ոմանք.* Թլփատութիւն քարոզեցի, ըն՛... խափան իցէ գայթա՛:

* *Ոմանք.* Իսկ լեալ էին որ զձեզն:

* *Ոսկան ընդ այլ միում օրինակի ընթեռնու.* Կոչեցեալ էք եղբարք. միայն զի:

* *Ոմանք.* Ձի Սիրեսցես զըն՛:

* *Ոմանք.* Ապա եթէ զմի՛:

* *Ոմանք.* Ասեմ եղբարք. Յոգւով:

* *Ոմանք.* Իսկ եթէ մարմնով վարիք:

* *Ոմանք.* Մարմնոյն. այսինքն է... գիջութիւն, պղծութիւն:

* *Ոմանք.* Թշնամութիւնք, հեռ:

զարքայութիւն Աստուծոյ ո՛չ ժառանգեն*։ ²²Իսկ պտուղ Յոզույն այս է. սէ՛ր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, ²³քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օրէնքն չեն հակառակ*։ ²⁴Իսկ որ Քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց ՚ի խա՛ջ հանին կարեօքն և ցանկութեամբք հանդերձ*։ ²⁵Եթէ կեանք Յոզուով, ընդ Յոզույն և միաբանեսցուք։ ²⁶Եւ մի՛ լիցուք սնապարծք՝ միմեանց ձայն տալով, և ընդ միմեանս նախանձելով*։

6

Գլուխ Զ

Էգ. ¹Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի որք ՚ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգևորդ էք՝ հաստատեսցէք զայնպիսիսն հոգևով հեզութեան. զգոյ՛շ լինիցիք անձանց, զի մի՛ և դուք փորձիցիք*։ ²Զմիմեանց բռն բարձէք, և այնպէս կատարեսցէք զօրէնսն Քրիստոսի*։ ³Եթէ համարիցի որք լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր խաբէ*։ ⁴Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւրոք, և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ, և մի՛ առ ընկերաւն*։ ⁵Ձի իւրաքանչիւրոք՝ զիւր բռն բառնալոց է։ ⁶Յաղորդութիւն արասցէ աշակերտն վարդապետին՝ յամենայն բարութիւնս։ ⁷Մի՛ խաբիք, Աստուած ո՛չ արհամարհի։ ⁸Ձի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ՚ի մարմին իւր, ՚ի մարմնոյ անտի հնձեսցէ՝ զապականութիւն. և որ սերմանէ ՚ի Յոզին, ՚ի Յոզույ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից*։ ⁹Այլ զբարիս գործել մի՛ ձանձրասցուք, զի ՚ի ժամանակի՝ իւրում հնձեսցուք առանց լքանելոյ*։ ¹⁰Այսուհետև մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ*։

ԺԲ ¹¹Տեսէք՝ որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ*։ ¹²Ձի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն՝ զի մի՛ զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն*։ ¹³Քանզի և որ թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն ո՛չ պահեն. այլ կամին զի դուք թլփատեսցիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին*։ Վջ ¹⁴Այլ ինձ՝ քա՛ւ լիցի պարծել, բայց միայն ՚ի խա՛ջն

* Ամենայն գրչագիրք համաձայն մերումս ՚ի լուս՝. այսր համարոյ նշանակեն. Աստիկեցի է կանոնս։ *Ոմանք.* Որպէս կանխաւն ա՛... Աստուծոյ ժառանգել ոչ կարեն։

* *Ոսկան յաւելու.* Հաւատ, *հանդարտութիւն*, հեզութիւն, ժուժկալութիւն, *ճնշումն.* այսպիսեաց աս՝։

* *Ոմանք.* Ի խաչ հանիցեն կարեօք։

* *Ոմանք.* Չայն տալոյ, և ընդ միմեանս նախանձելոյ։

* *Օրինակ մի.* Ըմբռնեսցի մարդ որք ՚ի ձէնջ։ *Ոմանք.* Յոզևորդ էք... զայնպիսին հոգ՝... զգոյ՛շ լինիցիք ան՝... փորձիցիք։

* *Ոսկան յաւելու.* Կատարեսցէք *մի ըստ միոջէ* զօր՝։

* *Ոմանք.* Եթէ որք համարիցի։

* *Ոմանք.* Իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ, և ա՛... պարծանս տայցէ։

* *Ոմանք.* Զնոյն և հնձէ... ՚ի մարմին իւր ապականութիւն... զկեանս յաւիտենականս։

* *Ոմանք.* Մի՛ ձանձրանայք, զի։

* *Ոմանք.* Գործեսցուք զբարի... առ ընտանիս հաւատոց։

* *Ոմանք.* Գրեցի ձեզ իմով ձե՛ն։

* *Ոսկան.* Ձի մի՛ զհետ խաչին Քրիստոսի եր՝։

* *Ոմանք.* Քանզի որ թլփատեալքն... դուք թլփատիցիք։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով ինձ աշխարհի ՚ի խաչ ելեալ է, և ես աշխարհի: ¹⁵Ձի ո՛չ թլփատութիւն ինչ է, և ո՛չ անթլփատութիւն. այլ նոր արարածս* : ¹⁶Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ՚ի վերայ նոցա և ողորմութիւն, և ՚ի վերայ Իսրայէլին Աստուծոյ* : ¹⁷Այսուհետև աշխատո՞ղք զիս մի՛ արասցէ. զի ես զչարչարանս Քրիստոսի ՚ի մարմնի իմուն կրեմ* : ¹⁸Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերուն եղբարք. ամէն* :

Առ Գաղատացիս՝ գրեցաւ ՚ի Հռովմէ: Տունք ՄՂԳ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Եփեսացիս Թղթոյն

Ձայս առաքեաց ՚ի Հռովմայ, որպէս թէ ո՛չ էր տեսեալ զնոսա. և է պատճառ թղթիս՝ այս: Եփեսացիքն հաւատացեալք էին ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և ընտանիք էին հաւատոցն որ ՚ի նա, և առ ամենայն սուրբս ունէին զսէր. և կամէին ՚ի Պաւղոսէ հաստատել: Լուեալ յոմանց առաքեալն՝ գրեաց առ նոսա զայս թուղթս՝ զգուշութեամբ. և յառաջն ցուցանէ մի՛ երբէք նոր կարծել զմեր խորհուրդս. այլ իսկզբանէ յառաջ քան զլինել աշխարհի է՛ սա՝ հաճութիւն Աստուծոյ. եթէ Քրիստոս վասն մեր չարչարեցաւ, և զմեզ կեցոյց: Յետ այսորիկ վասն կոչմանն հեթանոսաց ասէ, զի ցուցցէ արժանաւոր զնոսա հաւատոցն. և յայտնէ թէ կոչումն մեր եղև ո՛չ ՚ի մարդկանէ՝ այլ ՚ի Քրիստոսէ, որ է Որդի Աստուծոյ. և յայսմանէ ուսանիք եթէ ո՛չ մարդապաշտ են հաւատացեալքն ՚ի Քրիստոս, այլ ճշմարիտ աստուածապաշտք: Նշանակէ և զինքն՝ թէ վասն այսորիկ առաքեցաւ քարոզել զաւետարանն, և զի վասն այսր զգուշանայ: Յետ այսորիկ ներբողական բանիւք զարս և զկանայս, զհարս և զմանկունս, զտեարս և զծառայս՝ հաստատէ ՚ի թուղթս. և զամենեսեան ըստ ամենայնի յարդարէ ընդդէմ բանսարկուին և դիւաց նորա, առ նոսա ասէ դարձեալ, և բարւոք հաստատեալ և կնքեալ զմիտս ամենեցուն ընդդէմ սատանայական գործոյն. և այսպէս կատարէ զթուղթս:

Գլուխք առ Եփեսացիս Թղթոյն

ա. Վասն Քրիստոսիւ ընտրութեանն մերոյ, և նորընծայութեանն և կատարմանն:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ յաւելու. Ձի ՚ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ... նոր արարած:*

* *Ոմանք. Այսմ կանոնի միաբանին, խա՛:*

* *Յոմանս պակասի. Ձչարչարանս Քրիստոսի ՚ի:*

* *Ոմանք. Ընդ հոգւոյդ ձերուն:*

- բ. Աղօթք վասն գիտութեան Քրիստոսիւ ընծայելոցն ՚ի մեզ բարութեանցն:
- գ. Վասն հեթանոսաց և Հրէից ընտանութեան ընդ Աստուծոյ ՚ի ձեռն Քրիստոսի յուսով ըստ շնորհացն:
- դ. Վասն տուելոյ նմա աստուածեղէն իմաստութեանն ՚ի լուսաւորութիւն հեթանոսաց և յանդիմանութիւն դիւաց:
- ե. Աղօթք վասն եկեղեցւոյ ՚ի զօրութիւն և ՚ի սէրն Աստուծոյ:
- զ. Խրատ վասն սիրոյ միաբանութեան, թեպէտ և շնորհքն վասն պէսպէս շահից բաժանեալ իցեն:
- է. Վասն զգաստութեան և արդարութեան՝ որ աստուածակերպս առնէ զմեզ:
- ը. Վասն արժանաւոր կենաց սրբութեան, և գործովք զչարիսն յանդիմանելոյ. և մի՛ միայն բանիւք՝ այլ և հոգւով լնլոյ, սաղմոսիւք՝ և մի՛ գինւով:
- թ. Պատուէր ընտանեկան պատշաճից իշխանաւորաց, և իշխանաց ըստ Քրիստոսի:
- ժ. Ի կերպարանս վառելոյ վասն ըստ Քրիստոսի զօրութեանն:

ԱՌ ԵՓԵՍԱՅԻՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

ըկ. ¹Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, սրբոց որ են յեփեսոս, և հաւատացելոց ՚ի Քրիստոս*։ ²Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

Ա ³Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս ՚ի Քրիստոս. ⁴որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա՝ սիրով*։ ⁵Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, ՚ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց, ⁶ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով զուարճացոյց զմեզ Սիրելեալն. ⁷որով ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց*։ ⁸որ առաւելաւ ՚ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ: ⁹Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եղ նովաւ*, ¹⁰ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսի՛ն որ ինչ յերկինս՝ և որ ինչ

* Ի վերնագրիս՝ ոմանք. Թուղթ առ Եփեսացիսն. և ոմանք. Թուղթ Եփեսացւոց:

* Ոմանք. Հաւատացելոց որ են ՚ի Քրիստոս Յիսուս:

* Ոմանք. Զլինել աշխարհի:

* Ոմանք. Շնորհացն իւրոց:

* Ոմանք. Զխորհուրդ կամաց իւրոց ըստ հաճութեան իւրոյ:

յերկրի, 'ի նոյն՝: ¹¹Որով և վիճակեցա՛ք յառաջագոյն հրաւիրեալք, ըստ յառաջադրութեանն Աստուծոյ. որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց՝: ¹²Լինել մեզ 'ի գովեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսացելոցս 'ի Քրիստոս: ¹³Որով և դուք իբրև լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ կնքեցայք Յոգւոյն Սրբոյ աւետեաց՝: ¹⁴որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւնն նուաճութեան, 'ի գովեստս փառաց նորա՝:

Բ ըդ. ¹⁵Վասն այնորիկ և ես իբրև լուայ՝ զհաւատսն ձեր որ 'ի Տէր Յիսուս, և զսերն որ ընդ ամենայն սուրբս՝, ¹⁶ո՛չ դադարեմ 'ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս՝: ¹⁷զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ՛ ձեզ զհոգին իմաստութեան և յայտնութեան՝ զհտութեամբն իւրով՝: ¹⁸Լուսաւոր առնել զաչս սրտից, առ 'ի գիտելոյ մեզ՝ զի՞նչ է յոյս կոչման նորա, և զի՞նչ է մեծութիւն փառաց ժառանգութեանն նորա 'ի սուրբս՝: ¹⁹և զի՞նչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա 'ի մեզ հաւատացեալս, ըստ յաջողութեան կարողութեան զօրութեանն իւրոյ՝, ²⁰զոր յաջողեաց 'ի Քրիստոս: Ձի յարոյց զնա՝ 'ի մեռելոց. և նստոյց ընդ աջմէ իւրմէ՝ յերկնաւորս, ²¹'ի վերայ ամենայն իշխանութեան, և պետութեան, և զօրութեան, և տէրութեան, և ամենայն անուան անուանելոյ. ո՛չ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձելո՛ւմն՝: ²²և զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա: Եւ զնա՛ եդ զլուիս 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ՝, ²³որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու:

2

Գլուխ Բ

Գ ¹Եւ դուք որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր և յանցանս՝, ²յորս երբեմն զնայիք ըստ յաւիտենի՝ աշխարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս այսոյ, որ այժմս ընդմտեալ է յորդիսն ապստամբութեան՝: ³յորս և մեք ամենեքեան շրջեաք երբեմն, 'ի ցանկութիւն մարմնոյ մերոյ, և առնեաք զկամս մարմնոյ և զմտաց, և էա՛ք արդարև որդի՛ք բարկութեան իբրև այլքն՝: ըզ. ⁴Այլ Աստուած որ

* Ոսկան. 'ի տնտեսութեան լրման: Ոմանք. Բաւանդակեալ զամենայն:

* Ոմանք. Որով վիճակե՛... ըստ առաջադրութեանն:

* Ոմանք. Որով իբրև դուք լուա՛... որով և հաւա՛:

* Ոմանք. 'ի գովեստ փառաց:

* Ոմանք. Վասն այսորիկ և ես... զձեր որ 'ի Տէր մեր Յիսուս:

* Ոմանք. Ձձեզ յաղօթս իմ:

* Ոմանք. Եւ յայտնութեամբ զհտութեան:

* Ոմանք. Առ 'ի գիտել մեզ... և զինչ մեծութիւն փառաց ժառանգութեան նորա որ 'ի սուրբս:

* Ոմանք. Ձօրութեանն նորա:

* Ոմանք. Իշխանութեանց և պետութեանց... և 'ի վերայ ամենայն անուանելոց, ո՛չ մի՛:

* Ոմանք. Ձի զամենայն հնա՛... ոտից իւրոց... և զնա ետ զլուիս 'ի վերայ ամենայն իրիք եղելոյ:

* Ոմանք. Եւ դուք երբեմն մեռեալքն էիք:

* Ոմանք. Յոր երբեմն զնա՛... օդոյս այսու, որ այժմ:

* Ոմանք. 'ի ցանկութիւնս մարմնոյ... մարմնոյ և մտաց... իբրև զայլսն:

մեծն է ողորմութեամբ, վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեացն զմեզ*.
⁵մինչդեռ մեռեալն էաք ՚ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ ՚ի Քրիստոս. քանզի
 շնորհօք ապրեցաք*.⁶ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս ՚ի
 Քրիստոս Յիսուս: ⁷Ձի ցուցցէ՛ ՚ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զառաւել
 մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ ՚ի մեզ ՚ի Քրիստոս Յիսուս*:⁸Ձի
 շնորհօք նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոցն. և այս՝ ո՛չ ՚ի ձեռն, այլ Աստուծոյ
 պարգև է*.⁹ո՛չ ՚ի գործոց, զի մի՛ որ պարծեսցի*:¹⁰Ձի նորա՛ արարած ենք,
 հաստատեալք Քրիստոսի Յիսուսի ՚ի գործս բարութեան. յորս յառաջագոյն
 պատրաստեաց Աստուած. զի ՚ի նոյն գնասցուք*:¹¹վասն որոյ և դուք յիշեցէք,
 զի երբեմն հեթանոսք էիք մարմնով. որ կոչեցեալն են անթլփատութիւն՝
 յանուանեալ թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին*.¹²զի էիք ՚ի
 ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի, և տարագի՛րք յուխտից ակետեացն, և
 յոյս ինչ ո՛չ ունէիք՝ և անաստուածք էիք յաշխարհի*:¹³Իսկ այժմ՝ ՚ի ձեռն Յիսուսի
 Քրիստոսի, դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք, մերձաւորք եղերուք արեամբն
 Քրիստոսի*:¹⁴Ձի նա՛ է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի. և զմիջնորմ
 ցանկոյն քակեաց, զթշնամութիւն ՚ի մարմնի իւրում*.¹⁵և զօրէնս
 պատուիրանացն՝ հրամանօքն խափանեաց. զի զերկոսին հաստատեսցէ
 ինքեամբ ՚ի մի նոր մարդ, և արասցէ խաղաղութիւն*:¹⁶և հաշտեցուցէ՛
 զերկոսին միով մարմնով ընդ Աստուծոյ խաչի՛ն իւրով: Քանզի սպան
 զթշնամութիւն յանձին իւրում*,¹⁷և եկն ակետարանեաց խաղաղութիւն ձեզ
 հեռաւորաց, և խաղաղութիւն մերձաւորաց*.¹⁸զի նովա՛ւ ունիմք զնուաճութիւն
 երկոքին միով Յոգևով առ Հայր: ¹⁹Ապա այսուհետև ո՛չ էք օտարք և
 պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ*.²⁰շինեալք ՚ի
 վերայ հիման առաքելոց և մարգարէից. որոյ է գլուխ անկեանն Յիսուս
 Քրիստոս*.²¹յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ աճէ ՚ի տաճար
 սուրբ Տերամբ. ²²յորում և դո՛ւք ընդ նմին շինիք ՚ի բնակութիւն Աստուծոյ
 Հոգևով*:^{վջ.}

* *Ոմանք.* Այլ Աստուածն որ մեծն:
 * *Օրինակ մի.* Մինչդեռ մեղաւորք էաք ՚ի մեղս... շնորհօքն ապ*:
 * *Ոմանք.* Ի յաւիտեանցն որ գալոցն:
 * *Ոմանք.* Ձի շնորհօքն նորա... ոչ է ՚ի մեռն, այլ յԱստուծոյ պարգև է: *Ուր օրինակ մի.* Այլ
 Աստուած պարգևէ:
 * *Ոմանք.* Եւ ոչ ՚ի գործոց:
 * *Ոմանք.* Արարածք ենք, հաւատացեալ Յիսուսի Քրիստոսի ՚ի գործս արդարութեան,
 յորս յառաջագոյն հաստատեաց Աստուած զի ՚ի նոյնս գն*:
 * *Ոմանք.* Եւ դուք եղբարք յիշ՞... որ կոչեցեալ են անթլփատութեան ՚ի յանուանեալ թլ՞:
 * *Գրչագիր նոր օրինակ մի միայն յաւելու.* Առանց Քրիստոսի, և օտարացեալք
 յառաքինութենէն Իսրայէլի. և տարա՞: *Ըստ որում դնէ և Ոսկան.* Եւ օտարացեալ էիք
 յառա՞: *Օրինակ մի.* Յուխտին յաւիտեանցն:
 * *Ոմանք.* Իսկ այժմիկ ՚ի ձեռն... հեռաւորն էիք:
 * *Ոմանք.* Ձերկոսին մի, և զմիջնորմն ցան՞... զթշնամութիւնն ՚ի:
 * *Ոմանք.* Ձի երկոսինն հաս՞. ինքեամբ ՚ի նոր մարդն:
 * *Ոմանք.* Ձթշնամութիւն ՚ի մարմնի իւրում:
 * *Ոմանք.* Ձեզ խաղաղութիւն:
 * *Յոմանս պակասի.* Ապա այսուհետև ո՛չ:
 * *Ոմանք.* Որոց է. *կամ՝* որ է գլուխ... Քրիստոս Յիսուս:
 * *Ոմանք.* Ընդ նմա շինիք... Աստուծոյ Հոգևոյն:

Գլուխ Գ

Դ ¹Վասն այսորիկ ես Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի, վասն ձեր հեթանոսաց. ²թերևս լուեալ իցէ ձեր գտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ինձ ՚ի ձեզ*։ ³Ձի ըստ յայտնութեան ցուցաւ ինձ խորհուրդն. որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւութեամբ*։ ⁴առ ՚ի կարօղ լինելոյ ընթեռնուլ և ՚ի միտ առնուլ՝ զիմաստութիւնն իմ ՚ի խորհրդեանն Քրիստոսի*։ ⁵Ձի այլոց ազգաց ո՛չ ցուցաւ որդւոց մարդկան. որպէս և այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց՝ առաքելոց և մարգարէից՝ Յովակիմ*։ ⁶Լինել հեթանոսաց ժառանգակիցս՝ և մարմնակիցս, և հաղորդս աւետեացն ՚ի Քրիստոս Յիսուս՝ աւետարանաւն, ⁷որոյ եղէ ես Պաւղոս սպասաւոր, ըստ պարզեաց շնորհացն Աստուծոյ որ տուան ինձ, ըստ յաջողութեան զօրութեան նորա*։ ⁸Ինձ որ տրուպս եմ ամենայն սրբոց՝ տուան շնորհքս այս ՚ի հեթանոսս, աւետարանել զանքննիմ մեծութիւնն Քրիստոսի. ⁹և լուսաւոր առնել զամենեսին, թէ զի՞նչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանց՝ առ Աստուծոյ որ զամենայն ինչ արար*։ ¹⁰Ձի յայտնեցի՝ արդ իշխանութեանց և պետութեանց՝ որ յերկինս են, ՚ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ*։ ¹¹Ըստ յառաջադրութեան յաւիտեանցն՝ զոր արար ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ¹²որով ունիմք զհամարձակութիւն և զնուաճութիւն յուսով ՚ի ձեռն հաւատոց նորա. ¹³վասն որոյ աղաչեմ մի՛ ձանձրանալ ՚ի նեղութեանս մերում, որ վասն ձեր է. որ է փառք մեր*։

Ե ¹⁴Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*։ ¹⁵ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի. ¹⁶զի տացէ՛ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաստատել զօրութեամբ ՚ի ձեռն Հովակիմ իւրոյ, ՚ի ներքին մարդն* ¹⁷բնակել Քրիստոսի հաւատովք ՚ի սիրտս ձեր. սիրով արմատացեալք, և հաստատեալք*։ ¹⁸Ձի կարօղ լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս, զի՞նչ է լայնութիւն և երկայնութիւն, և բարձրութիւն և խորութիւն*։ ¹⁹ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի. զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ*։ ²⁰Այլ այնմ որ կարօղն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ, քան զոր խնդրեմքն և իմանամք. ըստ

* *Ոմանք*. Լուեալ է ձեր։

* *Ոմանք*. Ըստ յայտնութեանցն ցու՛... որպէս և յառաջագոյն։

* *Ոմանք*. Ձիմաստութիւն զիմ ՚ի խոր*։ *Ուր օրինակ մի*. Ձիմաստութիւնն զմի խորհրդեանն։

* *Ոմանք*. Որպէս այժմ յայտ*։

* *Ի բազումս պակասի*. Ես Պաւղոս սպա*։

* *Ոմանք*. Եթէ զի՞նչ է... խորհրդոցն Քրիստոսի... յաւիտեանցն առ Աստուծոյ։

* *Ոմանք*. Իշխանութեանցն և պե՛... իմաստութիւնն Քրիստոսի։

* *Ոմանք*. Որ է փառք ձեր։

* *Ոմանք*. Վասն այնորիկ դնեմ։

* *Ոմանք*. Հաստատեալ զօրութեամբ։

* *Ոմանք*. Սիրովք արմա՛*։

* *Ոմանք*. Կարօղ լինիցիք հա՛*։

* *Ոմանք*. Գիտութիւն սիրոյն... ամենայն գիտութեամբն Աստուծոյ։

զօրութեանն որ յաջողեալն է ՚ի մեզ. ²¹նմա փառք յեկեղեցւոջն և ՚ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս. ամեն*:

4

Գլուխ Դ

Ձ ¹Արդ՝ աղաչեն զձեզ ես որ կապեալս եմ ՚ի Տէր, արժանի՛ գնալ կոչմանն յոր կոչեցարուք. ²ամենայն խոնարհութեամբ, և հեզութեամբ, և երկայնմտութեամբ՝ անսալ միմեանց սիրով*. ³Վիութալ պահել զմիաբանութիւն Յոգւոյն յօդի խաղաղութեան*։ ⁴Մի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոյ։ ⁵Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն*։ ⁶Մի Աստուած, և Յայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին, և յամենեսին ՚ի մեզ*։ ⁷Այլ իւրաքանչի՛ր ունեք ՚ի մենջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգևացն Քրիստոսի*։ ⁸Վասն որոյ և ասէ. Ել՛ ՚ի բարձունս՝ գերեաց զգերութիւն, և ետ պարգևս մարդկան։ ⁹Որ ելն զի՞նչ է, եթէ ոչ՝ զի էջ նախ ՚ի ստորին կողմ երկրի*։ ¹⁰Որ էջն, նոյն է՝ և որ ելն ՚ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ՛ զամենայն։ ¹¹Եւ նա՛ ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս. ¹²ի հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի*։ ¹³Մինչև հասցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն հաւատոց՝ և գիտութեան Որդւոյն Աստուծոյ. յայր կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի*։ ¹⁴Ձի մի՛ յայսմիտէ իցեմք տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան. խորամանգութեամբ ՚ի խաբէութիւն մոլորութեան*։ ¹⁵Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցուցուք ՚ի նա զամենայն, որ է զլո՛ւիս Քրիստոս*։ ¹⁶Ուստի ամենայն մարմինն յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբերութեան՝ ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչի՛ր մասին՝ զաճո՛ւն մարմնոյ գործէ՛ ՚ի շինած անձին իւրոյ սիրով*։

Է ¹⁷Արդ՝ զայս ասեմ և ուխտեմ ՚ի Տէր. մի՛ ևս ձեզ զնոյն օրինակ գնալ, որպէս և այլ հեթանոսք գնան՝ ունայնութեամբ մտաց իւրեանց. ¹⁸որոց խաւարեալ են սիրտք իւրեանց, և օտարացեալ են ՚ի կենաց անտի Աստուծոյ, վասն տգիտութեանն որ է ՚ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց*։ ¹⁹Որք

* *Ոմանք.* Յեկեղեցւոջ և ՚ի Քրիստոս:

* *Ոմանք.* Յեզութեամբ, երկայնմտ*:

* *Ոմանք.* Յօդի խաղաղութեանն:

* *Ոմանք.* Ձի մի է Տէր, և մի հաւատք:

* *Օրինակ մի.* Եւ Յայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենեցուն և ՚ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին ՚ի մեզ:

* *Ոսկան.* Տուեալ է շնորհ ըստ չափու:

* *Ոմանք.* Կողմն երկրի: *Յօրինակին այսպէս ունէր կէտադրութիւնն համաձայն ոմանց.* Եթէ ոչ զի էջ նախ. ՚ի ստորին կողմ երկրի (10) որ էջն, նոյն է և որ ելն ՚ի վերոյ քան:

* *Ոմանք.* Առ ՚ի հաստատութիւն սր՛... ՚ի շինած մարմն*:

* *Ոմանք.* Եւ ՚ի գիտութիւն Որդւոյն:

* *Ոմանք.* Իցեք տղայք խռ՛*:

* *Ոմանք.* Աճեցուք ՚ի նա զամենայն: *Ուր Ոսկան.* ՚ի նա ամենայնի:

* *Ոմանք.* Տարբերութեան ըստ ազդե՛... մարմնոյ գործոյ ՚ի շինուած:

* *Ոմանք.* Վասն տգիտութեան... վասն կուրութեանն:

զանձանց իւրեանց գյոյսն հատին, և մատնեցին զանձինս գիջութեան, ՚ի գործս ամենայն պղծութեան ազահութեամբ*։ ²⁰Այլ դուք՝ ո՛չ այսպէս ուսարուք զՔրիստոս։ ²¹Քէպտո և լուարուք զնմանէ՝ և նովաւ ուսայք, որպէս է՝ ճշմարտութիւնն Յիսուսի։ ²²Ի բաց մերկանալ ՚ի ձեռք ըստ առաջին գնացիցն զմարդն հին, զապականեալն ցանկութեամբք՝ խաբէութեանն։ ²³և նորոգել Յոգուովն մտաց ձերոց*։ ²⁴և զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է, արդարութեամբ և սրբութեամբ ճշմարտութեանն։ ²⁵Վասն որոյ ՚ի բաց ընկեցէք զստութիւն. խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք*։ ²⁶Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. արեգակն ՚ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ։ ²⁷Եւ մի՛ տայք տեղի Սատանայի։ ²⁸Որ գողանայրն, մի՛ ևս գողասցի, այլ մանաւանդ վաստակեցէ՛ գործել ձեռք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ ում պիտոյ՝ իցէ*։ ²⁹Ամենայն բան տգեղ ՚ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ. այլ որ ինչ բարին է, ՚ի շինած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ որ լսենն*։ ³⁰Եւ մի՛ տրտմեցուցանէք զՅոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան։ ³¹Ամենայն դառնութիւն, և բարկութիւն, և սրտմտութիւն, և աղաղակ, և հայիոյութիւն՝ բարձցի՛ ՚ի ձեռք ամենայն չարութեամբն հանդերձ*։ ³²Լերուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս և Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ։

5

Գլուխ Ե

¹Նմանօրք եղերուք Աստուծոյ, իբրև որդիք սիրելիք*։ ²և գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր, պատարագ և զենունն Աստուծոյ ՚ի հոտ անուշից*։

³Այլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն, կամ ազահութիւն, և անուանեսցի մի՛ ՚ի միջի ձերում, որպէս և վայելէ սրբոց*։ ⁴և զազրութիւն, կամ խօսք յիմարութեան, կամ խեղկատակութիւն, որ ո՛չ վայելէ. այլ մանաւանդ գոհութիւն*։ ⁵Չայս տեղեկացեալ գիտասցիք. թէ ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ազահ, որ է կռապարիշտ՝ ո՛չ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսին և Աստուծոյ*։ ⁶Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնտուովք. զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ ՚ի վերայ որդւոցն անհաւանութեան*։ ⁷Մի՛ այսուհետև լինիք բաժանորդք նոցա։ ⁸Ձի թէպէտ և երբեմն էիք խաւար,

* *Ոմանք.* Չանձինս ՚ի գիջութեան։

* *Ոմանք.* Յոգուով մտաց։

* *Ոմանք.* Իւրաքանչիւր ընկերի։

* *Ոմանք.* Վաստակեսցի ձեռք իւրովք գործել... բաւական լիցի տալ։

* *Ոմանք.* Բարին իցէ. ՚ի շինուած։

* *Ոմանք.* Բարձցի ՚ի մեռն ամենայն։

* *Բազումք.* Եղերուք նմանողք Աստուծոյ։

* *Օրինակ մի.* Աստուծոյ Յօր ՚ի հոտ ա՛։

* *Ոմանք.* Որպէս վայել է սր՞։

* *Ոմանք.* Որ ոչ վայել է սրբոց, այլ։

* *Ոմանք.* Քրիստոսի և Աստուծոյ. *կամ*՝ Աստուծոյն։

* *Ոմանք.* Ձի վասն այնորիկ գայ բարկութիւնն։

արդ՝ լո՛յս էք ՚ի Տէր, իբրև գորդի՛ս լուսոյ գնացէ՛ք. ⁹զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է՝ և արդարութեամբ՝ և ճշմարտութեամբ՝: ¹⁰Փորձեցէ՛ք՝ զի՛նչ է հաճոյ Տեառն՝. ¹¹և մի՛ կցորդ լինիք անպտղութեան գործոցն խաւարի. այլ մանաւանդ յանդիմանեցէ՛ք: ¹²Ձի որ ՚ի ծածուկ ինչ գործի ՚ի նոսա, զայն և խօսել՝ աղտեղի է՝: ¹³Այլ ամենայն ինչ յանդիմանեալ ՚ի լուսոյ՝ յայտնի՛ լինի. զի ամենայն ինչ որ յայտնի է՝ լո՛յս է: ¹⁴Վասն որոյ և ասէ. Արի՛ որ ննջեսդ, և կանգնեաց ՚ի մեռելոց, և լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս՝: թկ. ¹⁵Տեսջի՛ք որպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛ իբրև անիմաստք՝, ¹⁶այլ իբրև իմաստունք. գնեցէ՛ք զժամանակս, զի աւուրքս չարութեան են՝: ¹⁷Վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացարո՛ւք զի՛նչ են կամք Տեառն՝: ¹⁸Եւ մի՛ արբենայք զինուով, յորում զեղխութիւն է. այլ մանաւանդ լցարո՛ւք Յոգևով՝. ¹⁹խօսել ՚ի սիրտս ձեր սաղմոսիւք և օրհնութեամբք, և երգովք հոգևորօք. երգել և սաղմոսել ՚ի սիրտս ձեր Տեառն՝: ²⁰Գոհացարո՛ւք յամենայն ժամ ՚ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Յօ՛րն և Աստուծոյ. ²¹հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի՝:

Թ ²²Կանայք՝ իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև Տեառն՝. ²³զի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է Փրկիչ մարմնոյ՝: ²⁴Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի՝: ²⁵Արք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր. որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա՝. ²⁶զի զնա սրբեսցէ՛ սրբութեամբ աւազանին բանիւ. ²⁷զի կացուցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ, կամ աղտեղութիւն, կամ ա՛յլ ինչ յայսպիսեաց. այլ զի իցէ սո՛ւրբ և անարատ՝: ²⁸Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս, իբրև զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ՝. ²⁹զի ո՛չ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ՝ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի՝. ³⁰զի անդամք ենք մարմնոյ նորա, ՚ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա՝: ³¹Վասն ա՛յսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ

* *Ոմանք.* Ամենայն բարութեան է:

* *Ոմանք.* Հաճոյն է Տեառն:

* *Ոմանք.* Որ ՚ի ծածուկն ինչ... զայն և ասելն իսկ աղ՝:

* *Այլք.* Եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս:

* *Ոմանք.* Որպիսի ճշմարտիւ գնասջիք:

* *Օրհնակ մի.* Քննեցէք զժամանակս, զի աւուրք չարութեան են:

* *Ոմանք.* Վասն այսորիկ մի՛ լինիք անիմաստք... զի՛նչ կամք են Աստուծոյ:

* *Ոմանք.* Լցարուք Յոգևովն: *Ուր Ոսկան.* Յոգևով Սրբով:

* *Այլք.* Երգել և սաղմոս ասել ՚ի սիր՝:

* *Ոմանք.* Յերկիւղն Քրիստոսի: *Ուր օրհնակ մի.* Երկիւղիւն Աստուծոյ:

* *Ոմանք.* Հնազանդ լինիցին:

* *Յօրհնակին.* Գլուխ գնոջ:

* *Ոմանք.* Որպէս եկեղեցի հնա՛... արանցն յամենայնի:

* *Ոմանք.* Մատնեաց զանձն իւր:

* *Ոմանք.* Արատ ինչ... կամ այլ զի՛նչ յայնպիսեաց անտի, այլ զի:

* *Ոմանք.* Ձիւրեանց մարմին:

* *Ոմանք.* Ձի ոչ ոք ատէ զանձն իւր:

* *Յոմանս պակասի.* Մարմնոյ նորա ՚ի մարմնոյ նորա: *Ուր և ոմանք.* Ենք ՚ի մարմնոյ նորա, և ոսկր յոսկերաց նորա:

իւրոյ, և եղիցին երկոքին 'ի մարմին մի': ³²Խորհուրդս այս՝ մե՛ծ է, բայց ես ասեմ իսկ 'ի Քրիստոս, և յեկեղեցի': ³³Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին՝ այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կին երկնչիցի՝ յառնէ իւրմէ՛:

6

Գլուխ Զ

թդ. ¹Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց 'ի Տէր. զի այն է արժանն*:
²Պատուեա՛ զհայր քո և զմայր. որ է առաջին պատուիրան յաւետիսն*. ³զի քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի*: ⁴Հարք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն: ⁵Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց, ահիւ և դողութեամբ և միամտութեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի: ⁶Մի՛ առ ականէ՛ ծառայել իբրև մարդահաճոյք. այլ իբրև ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ*. ⁷սրտի մտօք ծառայել իբրև Տեառն, և մի՛ իբրև մարդկան:
⁸Գիտասջիք թէ իւրաքանչիւրոք՝ որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի 'ի Տեառնէ՛ եթէ ծառայ և եթէ ազատ*: ⁹Եւ դուք տեարք՝ զնոյն առնիջիք առ նոսա. ներելո՛վ առնել զպատուհասն. գիտասջիք՝ թէ և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս. և ակնառութիւն ո՛չ գոյ առաջի նորա*:

Ժ ¹⁰Այսուհետև զօրացարո՛ւք Տերամբ, և կարողութեամբ զօրութեան նորա:
¹¹Եւ զգեցարո՛ւք զսպառազինութիւն Աստուծոյ. զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից Սատանայի*: ¹²Զի ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան որ 'ի ներքոյ երկնից*: թգ. ¹³Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարօ՛ղ լինիցիք 'ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան*: ¹⁴Եւ իբրև զամենայն ինչ կատարիցէք, հաստատո՛ւն կացէք. զտեղի՛ կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և զգեցեալ զգրահսն արդարութեան*, ¹⁵և ազուցեալ զոտս պատրաստութեամբ

* *Ոմանք.* Վասն այնորիկ թողցէ... զհայր իւր և զմայր:

* *Յոմանս պակասի.* Ասեմ *իսկ* 'ի Քրիստոս:

* *Ոմանք.* Մի ըստ միոջէ իւրաք՞. զիւր կինն... և կինն երկնչիցի:

* *Ոմանք.* Զի այնպէս է արժան:

* *Ոմանք.* Առաջին պատուիրան յօրէնսն:

* *Ոմանք.* Բարի՛ լինիցի, և երկայնակեաց եղիցիս 'ի վերայ:

* *Ոմանք.* Որպէս մարդահաճոյք. այլ իբրև Քրիստոսի ծառայք:

* *Օրինակ մի.* Գիտասջիք զի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ: *Ոմանք.* Եթէ իւրաքանչիւրոք զոր ինչ և առնիցէ զբարին, զնոյն և ընդունի. *կամ* ընդունի և 'ի Տեառնէ:

* *Ոմանք.* Գիտասջիք զի և նոցա: *Եւ ոմանք.* Եթէ նոցա և ձեր Տէր:

* *Ոմանք.* Սպառազինութիւնն Աստուծոյ: *Օրինակ մի.* Ընդդէմ հնարից բանասարկուին:

* *Ոմանք.* Ոչ է մեզ մարտ պատերազմի ընդ... և ընդ այսս չարութեան: *Ոսկան.* Որք են 'ի ներքոյ երկ՞:

* *Ոմանք.* Վասն այնորիկ առէք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիջիք...

յաւուր չա՞:

* *Ոմանք.* Հաստատո՛ւն կացէք... պնդել զմէջս... զգեցեալ զգրահ զարդարութիւն:

աւետարանին խաղաղութեան*։ ¹⁶Եւ 'ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց. որով կարող լինիջիք զամենայն նետս մութս չարին շիջուցանել*։ ¹⁷Եւ առէք զսաղաւարտն փրկութեան, և զսուսեր Յոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ*։ ¹⁸Ամենայն աղօթիք և խնդրուածովք՝ աղօթս առնել յամենայն ժամանակի Յոգւով. և 'ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ՝ և խնդրուածովք՝ վասն ամենայն սրբոց*։ ¹⁹Եւ վասն ի՛նչ. զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ, համարձակութեամբ ցուցանել զխորհուրդս աւետարանին*։ ²⁰Վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս. զի նովին համարձակեցայց որպէս և պարտ իցէ ինձ խօսել*։ ²¹Բայց զի գիտիցէք և դուք զինչ զործիցեմ. զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ 'ի Տէր*։ ²²Չոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք դուք զմէնջ, և մխիթարեսջիք*։ ²³Խաղաղութիւն ընդ եղբարս, և սէր հաւատովքն հանդերձ յԱստուծոյ 'ի Հօրէ՛ և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ*։ ²⁴Շնորհք ընդ ամենեսին՝ ոյք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ*։

Առ Եփեսացիս՝ գրեցաւ 'ի Հռովմէ 'ի ձեռն Տիւքիկոսի։ Տունք ՅԺԲ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Փիլիպեցիս Թղթոյն

Ձայս առաքեաց 'ի Հռովմէ. զի տեսեալ էր զնոսա և վարդապետեալ. և է պատճառք թղթոյս՝ այս։ Առաքեցին Փիլիպեցիքն պաշտօնս Պաւղոսի. ոմանք եկեալ և պղծեալ զլսելիս անարատիցն, պատճառս ունելով զստուերական օրէնսն և զթլփատութիւնն, և ասէին առանց սորա ո՛չ կարէք արդարանալ։ Լուաւ առաքեալն՝ և գրէ առ Փիլիպեցիսն, և նախ ընդունի զհաւատս նոցա, և նշանակէ թէ յիշատակէ զնոսա։ Յետ այսորիկ յայտնէ եթէ որպէս պատասխանի արար 'ի Հռովմ. և ոմանք ծանրացան 'ի վերայ նորին կապանացն, և նախանձու շարժէին։ Յետ այսորիկ զսոսա դարձոյց զմիմեանս սիրել. յայտնեաց նոցա և զՓրկչին մարդասիրութիւն, զի Աստուած էր՝ և մարդ եղև վասն մեր։ Յետ այսր զթլփատութիւնն և զհնացեալ օրէնսն ընկեցիկ առնէ, եթէ դադարեալ է թլփատութիւնն, առ յինքն զպատճառսն և ասէ, եթէ այս ամենայն պակասութիւն է առ Քրիստոս. վասն որոյ և վարդապետէ մի՛ ևս թլփատել.

* *Ոմանք.* Աւետարանին խաղաղութեամբ։

* *Ոմանք.* 'ի վերայ այս ամենայնի առէք զվահան հաւատոյ։

* *Ոմանք.* Եւ զսուսերն Յոգ՝։

* *Ոմանք.* Եւ 'ի նոյն տքնիջիք։

* *Ոմանք.* Ձխորհուրդ. *կամ* զխորհուրդն աւե՛։

* *Ոմանք.* Որպէս պարտ իցէ խօսել ինձ։

* *Ոմանք.* Ձինչ զործեմ... Տիւքիկոս սի՛։

* *Այլք.* Ձմէնջ, և մխիթարեսցէ զսիրտս ձեր։

* *Ոմանք.* ՅԱստուծոյ Հօրէ՛ և 'ի Տեառնէ։

* *Ոմանք յաւելուն.* Անեղծութեամբ. *ամէն։*

և ՚ի նոյն նոցին ընդդիմանայ մեղադրանօք՝ և ասէ թէ թշնամիք են խաչին Քրիստոսի. և ընդունի զՓիլիպեցիսն, վասն որոյ նմին հաղորդք եղեն, և դարձուցեալ զնոսա ՚ի սովորութիւնն իւրեանց, կատարէ զթուղթն:

Գլուխք առ Փիլիպեցիս Թղթոյն

- ա. Գոհութիւն վասն Փիլիպեցւոցն առաքինութեան, և աղօթք վասն կատարման նոցա:
- բ. Պատմութիւն իւրոյ պատերազմօղ նահատակութեանն և յօժարութեան:
- գ. Խրատ ըստ Աստուծոյ միաբանութեանն՝ և աստուածամուխ կենաց:
- դ. Վասն Տիմոթեայ և Եպափրոդիտեայ՝ զորս առ նոսայն առաքեաց:
- ե. Վասն հոգևոր վարուց՝ և ո՛չ ևս ըստ մարմնոյ, որ է նմանութիւն մահուն Քրիստոսի:
- զ. Խրատ առանձինն ոմանց՝ և հասարակաց ամենեցուն:
- է. Ընդունելութիւն սպասաւորութեանն որ առաքեցաւ նմա:

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

Ժկ. ¹Պաւլոս և Տիմոթէոս, ծառայք Յիսուսի Քրիստոսի՝ ամենայն սրբոց ՚ի Քրիստոս Յիսուս, որ են ՚ի կողմանս Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք և սարկաւազօք*։ ²Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Զօրէ մերմէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

Ա ³Գոհանամ զԱստուծոյ իմոյ ՚ի վերայ ամենայն յիշատակաց ձերոց. ⁴յամենայն ժամ, յամենայն խնդրուածս իմ՝ վասն ձե՛ր ամենեցուն առնել աղօթքս խնդութեամբ. ⁵վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին, յօրէ՛ յառաջմմէ մինչև ցայժմ։ ⁶Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն ՚ի ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ՛ մինչև յօրն Յիսուսի Քրիստոսի*։ ⁷որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձե՛ր ամենեցուն. վասն ունելոյ՛ ինձ զձեզ ՚ի սրտի ՚ի կապանս իմում, և ՚ի պատասխանատութեան իմում, և ՚ի հաստատութեան աւետարանին. կցորդս ինձ շնորհաց զձե՛զ ամենեսին լինել*։ ⁸Վկայ՛ է ինձ

* ՚ի վերնագրիս՝ ոմանք. Թուղթ առ Փիլիպեցիս: *Իսկ Ոսկան.* Առ Փիլիպեցիսն:

* Ոմանք. Պաւլոս առաքեալ, և Տիմոթէոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, ամենայն սրբոց որ ՚ի Քրիստոս Յիսուս... եպիսկոպոսունք և սարկաւազունք: *Եւ ոմանք.* Զանդերձ եպիսկոպոսօք և սարկաւազօք:

* Ոմանք. Վստահ եմ յայտ, թէ:

* Ոմանք. Ի կապանս իմ, և ՚ի պատասխանատութիւն աւե՛... շնորհացն զձեզ զամենեսեան:

Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովքն Քրիստոսի Յիսուսի*։⁹ Եւ զայն աղօթս առնեմ. զի սէրն ձեր և ս քան զևս առաւել լիցի ՚ի գիտութեան և յամենայն իմաստութեան*։¹⁰ ընտրել ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք և առանց գայթազողութեան ՚ի յաւուրն Քրիստոսի*։¹¹ Լցեալ պտղովք արդարութեան ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, ՚ի փառս և ՚ի գովեստ Աստուծոյ։

Բ ժդ. ¹²Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որ ինչ վասն իմ էր, և ս քան զևս ՚ի յառաջադիմութիւն աւետարանին եկն*։¹³ մինչև կապանաց իմոց յայտնի լինել ՚ի Քրիստոս, յամենայն հրապարակիս, և առ այլս ամենեսեան*։¹⁴ և առ բազում եղբարս ՚ի Տէր. որ վստահ եմ կապանօքս իմովք, առաւել ևս համարձակել՝ առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել*։¹⁵ Ոմանք առ նախանձով և հակառակութեան, և ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն. ¹⁶ և ոմանք ՚ի սիրոյ, քանզի գիտեն եթէ ՚ի պատասխանատութիւն աւետարանին կամ*։¹⁷ և ոմանք առ հետտութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել ՚ի վերայ կապանաց իմոց։¹⁸ Բայց այս զի՛նչ է. որով օրինակաւ և իցէ՛, եթէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութեամբ, Քրիստոս պատմի՛. և ընդ այս խնդամ՝ այլ և ուրախ ևս եղէց*։¹⁹ Չի գիտեն եթէ այս պահի՛ ինձ փրկութիւն ՚ի ձերոց խնդրուածոց, և ՚ի պարզևաց Յոգուոյն Յիսուսի Քրիստոսի*։²⁰ ըստ ակնկալութեան և յուսոյն իմոյ, զի մի՛ իւրք յամօք եղէց. այլ ամենայն համարձակութեամբ՝ որպէս յամենայն ժամ. և այժմ մեծասցի՛ Քրիստոս ՚ի մարմնի իմում, եթէ կենօք՝ և եթէ մահու*։²¹ Չի ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ*։²² Ապա եթէ կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է. և զի՛նչ ընտրեցից, զայն ոչ գիտեմ*։²³ Նեղեալ եմ յերկոցունց՝ զցանկալն, ելանել և ընդ Քրիստոսի լինել, առաւել լաւ համարիմ*։²⁴ և կալ մնալ աստէն ՚ի մարմնի, կարևոր ևս վասն ձեր*։²⁵ Եւ զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ և մնացից՝ ամենեցուն ձեզ, ՚ի ձեր զարգանալ և խրախ լինել ՚ի հաւատս. ²⁶ զի պարծանք ձեր առաւել լինիցին ՚ի Քրիստոս Յիսուս ինն ՚ի միւսանգամ գալստեան իմում առ ձեզ*։ վջ.

Գ ²⁷Միայն թէ արժանի՛ աւետարանին գնայցէք. զի եթէ զայցեմ, և տեսանիցեմ զձեզ. և եթէ հեռի՛ իցեմ, և լսիցեմ զձէնջ. զի հաստատուն կայցէք ՚ի մի հոգի, և

* Ոմանք. Վկայէ ինձ Աստուած առ ձեզ յամենեսին։

* Ոմանք. Եւ զայս աղօթս... առաւել լիցին ՚ի գիտութիւն... իմաստութիւն։

* Ոմանք. ՚ի յաւուրն Քրիստոսի։

* Ոմանք. Կամիմ զի գիտիցէք։

* Ոմանք. Յամենայն հրապարակս, և առ այլս ամենեսին։

* Ոմանք. Կապանօքս իմովք առաւել համար*։ Ուր Ոսկան. Համարձակեալք ա*։

* Ոմանք. ՚ի պատասխանատութեան աւե*։

* Ոմանք. Բայց այս ինչ է... խնդամ և ուրախ եղէց։

* Բազունք. Պահի ինձ ՚ի փրկութիւն։

* Ոմանք. Որպէս և յամենայն ժամ։

* Ոմանք. Եւ մեռանելն ինձ շահ։

* Օրինակ մի. Ապա թէ կեանք մարմնոյս օգուտ գործեսցէ. և զի՛նչ խնդրեցից՝ զայն ոչ գիտեմ։

* Ոմանք. Նեղեալ եմ առ յերկոց*։

* Ոմանք. Եւ կալ և մնալ։

* Ոմանք. Առաւել լիցին... և ՚ի միւսանգամ ՚ի գալստեան։

միով շնչով նահատակիցիք ՚ի հաւատս աւետարանի՞ն*.²⁸ և մի՛ զանգիտիցէք և մի՛ իւիք ՚ի հակառակորդաց անտի. որ է նոցա հանդէս կորստեան, և ձերոյ՝ փրկութեան: ²⁹Եւ այդ՝ յԱստուծոյ է, որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ո՛չ միայն ՚ի նա հաւատալ՝ այլ և վասն նորա չարչարել՝*.³⁰ զնոյն պատերազմ ունել՝ զոր յի՛սն տեսէք, և այժմ լսէ՛ք յինէն՝*:

2

Գլուխ Բ

¹Արդ՝ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ՚ի Քրիստոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն Յոգոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն*.² Լցէ՛ք զխնդութիւնս իմ. զնոյն խորհիցիք, զնոյն սէր յանձին ունիցիք, համաշունչք, միախորհուրդք*.³ մի՛ ինչ ըստ գրգռութեան, և մի՛ ինչ ըստ սնապարծութեան. այլ խոնարհութեանը զմիմեանս լա՛ւ համարել առաւել քան զանձինս՝*.⁴ մի՛ զանձանց և եթ գիտել, այլ իւրաքանչիւրոք զընկերին՝*:⁵ Ձայն խորհեսցի իւրաքանչիւրոք ՚ի ձէնք, որ և ՚ի Քրիստոս Յիսուս.⁶ որ ՚ի կերպարանս Աստուծոյ է, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ*.⁷ այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ ՚ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ.⁸ խոնարհեսցոյց զանձն, լիեալ հնազանդ մահու՛ չափ, և մահու խաչի՞*:⁹ Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն.¹⁰ զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց.¹¹ և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ Յօր՝* ժգ.¹² Այսուհետև սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, մի՛ միայն ՚ի գալստեան իմուն, այլ առաւել ևս ա՛յժմ՝ յորժամ հեռի՛ս եմ ՚ի ձէնք, ահի՛ւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէ՛ք*:¹³ Ձի Աստուած է որ յաջողէ ՚ի մեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան՝*:¹⁴ Ձամենայն ինչ գործեցէք առա՛նց տրտնջելոյ և քրթմնջելոյ.¹⁵ զի եղիցիք անբիծք և անարատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք ՚ի մէջ կամակոր և խեղաթելւոր ազգին. յորոց միջի երկիցիք իբրև լուսաւորք յաշխարհի՞*.¹⁶ զբանն

* *Ոմանք.* Միայն եթէ ար՝... զի թէ գայցեմ: *Ոսկան յաւելու.* Աւետարանին *Քրիստոսի* գնայց՝: *Օրինակ մի.* Եւ միով շնչիւ նահատակիցէք:

* *Ոմանք.* Արդ յԱստուծոյ է, որ ձեզ շնորհեցաւ ոչ միայն ՚ի նա... չարչարել, և նախատինս յանձն առնուլ:

* *Օրինակ մի.* Ձնոյն պատերազմ կրել:

* *Ոմանք.* Գթութիւն և ողորմութիւնք:

* *Ոմանք.* Ձխնդութիւն իմ... զնոյն սէր յանձին ունիցիք, համաշունչք իցէք: *Ոսկան.* Ձի զնոյն խորհիցիք:

* *Ոմանք.* Ընդ միմեանս լաւ համարել քան զան՝:

* *Ոմանք.* Ձանձանց և եթ խնդրէք:

* *Ոմանք.* Որ ՚ի կերպարանսն Աստուծոյ: *Ոսկան.* ՚ի կերպարանս Աստուծոյ էր:

* *Ոմանք.* Ձանձն լինել հնա՛:

* *Ոմանք.* Եթէ Տէր Յիսուս Քրիստոս է:

* *Ոմանք.* Առաւել ևս և այժմ:

* *Յօրինակին.* Փրկութիւն գործիցէք: *Ոմանք.* Որ յաջողէ ՚ի մեզ. *կամ՝* յաջողէ մեզ զկա՛:

* *Ոմանք.* եղիցիք անբիծք... և խեղաթելւոր յազգին:

կենաց ունել յանձինս՝ ՚ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի. զի ո՛չ ընդունայն ինչ ընթացայ, և ո՛չ ընդունայն վաստակեցի*։ ¹⁷Այլ թէպէտ և նուիրիմ ՚ի վերայ պատարագի և պաշտաման հաւատոցն ձերոց, խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր. ¹⁸նոյնպէս և դուք խնդացէ՛ք՝ և ուրախակից եղերուք ինձ։

Դ ¹⁹Բայց յուսամ ՚ի Տէր Յիսուս, զՏիմոթէոս վաղվաղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դէւր լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնց*։ ²⁰Ձի ո՛չ զոք ունիմ համաշունչ, եթէ ընտանեբար՝ հոգայցէ վասն ձեր։ ²¹Ձի ամենեքին զանձանց խնդրեն, և ո՛չ զՅիսուսի Քրիստոսի*։ ²²Բայց զփորձ նորա գիտէք և դուք, զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին*։ ²³Արդ՝ զսա ակնունիմ արձակել, որպէս նոյնհետայն զանձնէ ստուգեցից*։ ²⁴Այլ յուսացեալ եմ ՚ի Տէր՝ թէ և ե՛ս իսկ ընդ հուպ եկից*։ ²⁵Բայց լա՛ւ համարեցայ զԵպափրոդիտոս՝ զեղբայր և զգործակից և զհնուորակից իմ, զձե՛ր առաքեալ, և զպաշտօնեայ ինոց պիտոյից՝ առաքել առ ձեզ*։ ²⁶Քանզի և ի՛նքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին զձեզ. և հոգայր, զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ։ ²⁷Եւ արդարև խօթացաւ մերձ ՚ի մահ. այլ Աստուած ողորմեցաւ նմա. ո՛չ նմա միայն, այլ և ինձ. զի մի՛ տրտմութիւն ՚ի վերայ տրտմութեան կրիցեմ*։ ²⁸Արդ՝ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք. և ես առանց տրտմութեան եղէց*։ ²⁹Ընկալջի՛ք զնա ՚ի Տէր ամենայն խնդութեամբ, և զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. ³⁰զի վասն գործոյ՝ Տեառն մինչև ՚ի մահ մերձեցաւ, զո՛ւն գործեալ ոգւովք չափ. զի լցցէ՛ զձեր պակասութիւն իմոյ սպասաւորութեան*։ վջ.

3

Գլուխ Գ

Ե ¹Այսուհետև եղբարք իմ, ուրախ լերուք ՚ի Տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչ դանդաղելի է, և ձեզ կարի՛ զգուշալի*։ ²Ձգոյ՛ջ եղերուք ՚ի շանց անտի. զգոյ՛ջ եղերուք ՚ի չար մշակաց անտի. զգոյ՛ջ եղերուք ՚ի կրճատութենէ անտի*։ ³Ձի թլփատութիւնն մեք ենք, որ Հոգւովն Աստուծոյ պաշտենք, և պարծիմք ՚ի Քրիստոս Յիսուս, և ո՛չ ՚ի մարմին պանծացեալ ենք*։ ⁴Թէպէտ և ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ և ՚ի մարմնի, եթէ ոք համարիցի այլազգ վստահ լինել ՚ի մարմին, առաւել ևս ես*։ ⁵Թլփատութեամբ ութօրեայ. յազգէ Իսրայէլի, ՚ի ցեղէ՛

* *Ոմանք.* Ձբանս կենաց ու՛... ընդունայն ինչ վաստա՛։

* *Ոմանք.* Բայց ես յուսամ ՚ի... վաղվաղակի առաքել առ ձեզ։

* *Ոմանք.* Ձի ամենեքեան։

* *Ոսկան.* Նորա գիտացէ՛ք և դուք։ *Օրինակ մի.* Ծառայեաց ինձ յաւետա՛։

* *Ոմանք.* Որպէս և նոյն հետայն զանձնէն։

* *Ոմանք.* Այլ յուսամ ՚ի Տէր՝ թէ և։

* *Ոմանք.* Եւ զգիւորակից։

* *Ոմանք.* Խօթացաւ մինչև ՚ի մահ։

* *Ոմանք.* Ուրախ լինիջիք։

* *Ոմանք.* Վասն գործոյն Տեառն մինչ ՚ի մահ մեր՛։

* *Ոմանք.* Ինձ ոչ ինչ դանդա՛։ *Ուր ոմանք.* Ինձ ինչ ոչ դանդա՛։

* *Ոմանք.* Ձգոյ՛ջ լերուք ՚ի շանց... լերուք... լերուք։

* *Ոմանք.* Թլփատութիւն մեք ենք։ *Ոսկան.* Որք Հոգւով զԱստուած պաշտենք։

* *Ոմանք.* Ունիմ ՚ի մարմնի։

Բենիամինի. Եբրայեցի՝ յեբրայեցւոյ. ըստ օրինացն փարիսեցի՝. ⁶ըստ նախանձայոյզ լինելոյ՝ հալածեի՝ զեկեղեցին. ըստ արդարութեան օրինացն լիեալ անարատ՝. ⁷Այլ որ ինչ ինձ շահն էր, զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի՝. ⁸Այլ և համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. վասն որոյ յամենայնէ զրկեցայ՝ և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց՝, ⁹և գտայց ՚ի նմա. իբրև ո՛չ եթէ զիմ ինչ արդարութիւն՝ որ յօրինաց անտի է ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւնն է՝. ¹⁰հաւատովք ճանաչել զնա, և զգօրութիւն յարութեան նորա, և զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահու նորա՝. ¹¹թէ որպէս հասից ՚ի մեռելոցն յարութիւն՝. ¹²Իբր ո՛չ եթէ արդէն առեալ իցէ. կամ արդէն կատարեալ իցեն. զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ ընթրնեալ իսկ իցեն ՚ի Քրիստոսէ Յիսուսէ՝. ¹³Ե՛րբարք՝ ես ո՛չ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեն. բայց մի ինչ է, զի զառ ՚ի յետոյսն մոռացեալ է, և ՚ի յառաջադէմսն նկրտեալ եմ՝. ¹⁴ուշ եղեալ ընթանամ ՚ի կէտ կոչմանն Աստուծոյ, ՚ի Քրիստոս Յիսուս: ¹⁵Այսուհետև՝ որ միանգամ կատարեալքդ էք, զայնս խորհեցարո՛ւք. և եթէ այլ ազգ ինչ խորհիցիք, սակայն և զայն Աստուած ձեզ յայտնեսցէ՝. ¹⁶Բայց յոր ժամանեցա՛քս՝ զսոյն խորհել, և սմին կանոնի միաբան լինել՝. ¹⁷Նմանօրք ինձ եղիջիք ե՛րբարք, և գիտասցի՛ք զայնպիսիսն որ այնպէ՛սն գնայցեն, որպէս ունի՛քդ զմեզ ձեզ օրինակ՝. ¹⁸Ձի բազումք գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ. բայց արդ՝ և լալով իսկ ասեն զթշնամեաց խաչին Քրիստոսի. ¹⁹որոց կատարածն կորո՛ւստ է. որոց աստուած որովայնն իւրեանց է, և փա՛ռք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին՝. ²⁰Այլ մեր առաքինութիւն յերկի՛նս է, ուստի և Փրկչի՛ն ակն ունիմք՝ Տեառն Յիսուսի Քրիստոսի՝. ²¹որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ, կերպարանակից լինել մարմնոյ փառաց նորա, ըստ զօրութեանն՝ առ ՚ի կարօղ լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զամենայն՝:

4

* *Ոմանք.* Նախանձայոյզն լի՛: *Ոսկան ՚ի լուս՝.* Ձեկեղեցին Աստուծոյ:

* *Ոսկան.* Շահն է, զայն: *Ոմանք.* Համարէի վասն Քրիստոսի:

* *Ոսկան.* Յիսուսի Քրիստոսի Տեառն իմոյ:

* *Ոմանք.* Իբր ոչ եթէ զիմ արդարութիւն ինչ, որ յօրինաց անտի ունիցիմ... որ յԱստուծոյ արդարութենէն: *Ոսկան.* Ձհաւատոցն Քրիստոսի Յիսուսի:

* *Ոմանք.* Մահուան նորա:

* *Ոսկան.* Ի մեռելոցն յարութեան:

* *Ոսկան.* Արդէն առեալ իցեն:

* *Օրինակ մի.* Ձառ ՚ի յետսն մոռացեալ և յառաջադէմն նկրտեալ եմ: *Ուր այլ օրինակ մի.* Նկրտիմ: *Ոսկան.* Մոռացեալ եմ, և ՚ի յառաջադէմսն նկրտեմ:

* *Ոմանք.* Ձայն խորհեսցուք. *կամ՝* խորհեսցիք... Աստուած մեզ յայտնեսցէ:

* *Ոմանք.* Կանոնի միաբանել:

* *Ոմանք.* Եւ գիտեսցիք զայնպիսիսն... որպէս և ունիքդ զմեզ:

* *Ոմանք.* Եւ փառքն ամօ՞... որք և զերկրաւորս:

* *Ոմանք.* Առաքինութիւնն յեր՞... ուստի Փրկչին:

* *Ոմանք.* Որ նորոգեաց զմար՞... փառացն իւրոց... ընդ իւր և զամենայն. *կամ՝* ընդ իւրև և զամենայն: *Ի լուս՝.* Փառաց իւրոց. *համաձայն բազմաց ՚ի բնար՝:*

Գլուխ Դ

Ձ ¹Այսուհետև եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ուրախութիւն իմ և պսակ. ա'յսպէս հաստատո՞ւն կացէք 'ի Տէր՝ սիրելիք: ²Յեւոդիա աղաչե՛ն, և զՍիւնտիք աղաչե՛ն զնոյն խորհել 'ի Տէր: ³Այո՛ աղաչե՛ն և զքեզ՝ մտերի՛ն իմ և լծակից, և դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահատակեցան ընդ իս Կղեմա՛ւ հանդերձ, և այլովք գործակցօ՛ք իմովք. որոց անուանքն 'ի դպրութեան կենաց՝: ⁴Ուրախ լերուք 'ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ. Ուրախ լերուք: ⁵Յեզուսին ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան. Տէր մերձ է՝: ⁶Մի՛ ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք, զոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի՛ լիցին առ Աստուած: ⁷Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ 'ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ՛ զսիրտս ձեր և զմիտս 'ի Քրիստոս Յիսուս՝: ակ. ⁸Այսուհետև եղբարք՝ որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զա՛յն խորհիջիք՝: ⁹Ձոր ուսարուքն և ընկալարուք, և լուայք և տեսէք յիս, զա՛յն արարէք. և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ՝:

Է ¹⁰Ուրախ եղէ ես 'ի Տէր յոյժ. զի և դուք զմտաւ ածէք հոգա՛լ ինչ վասն իմ, որպէս և հոգայիքն. բայց բարբարէիք իմն է՝: ¹¹Իբր ո՛չ առ կարօտութեան ինչ ասեմ. զի ես ուսա՛յ՝ որովք կարեմ բաւական լինել՝: ¹²Գիտե՛մ նուազել, գիտե՛մ առաւելուլ. յամենայնի ամենկին խելամո՛ւտ եմ, և յազել, և քաղցեմա՛լ. և առաւելուլ, և նուազել՝: ¹³Յամենայնի կարօ՞ղ եմ, այնու՝ որ զօրացոյցն զիս: ¹⁴Բայց բարւո՛ք արարէք զի կցորդ եղերուք ինձ 'ի նեղութեանս: ¹⁵Գիտէ՛ք և դուք Փիլիպեցիք, զի 'ի սկզբան աստարանին իբրև ելի ես 'ի Մակեդոնիա. և ո՛չ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առնլոյ, բայց միայն դո՛ւք. ¹⁶զի և 'ի Թեսաղոնիկ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ ետուք բերել՝: ¹⁷Իբր ո՛չ եթէ խնդրեմ զտուրսն, այլ խնդրեմ զպտուղն որ յաճախէ 'ի բան ձեր: ¹⁸Այլ իմ առեա՛լ զամենայն, և առաւելեա՛լ եմ. ընկալայ՝ և լի՛ եմ 'ի ձեռն եպափրոդիտեայ, որ է 'ի ձէնջ հոտ անուշից, պատարագ ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ՝: ¹⁹Եւ Աստուած իմ լի՛ արասցէ զամենայն պէտս ձեր, ըստ իւրում մեծութեանն՝ փառօք 'ի Քրիստոս Յիսուս: ²⁰Այլ Աստուծոյ և Յօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: ²¹Ողջոյն տաջիք ամենայն սրբոց՝ 'ի Քրիստոս Յիսուս՝: ²²Ողջոյն տան ձեզ որ ընդ իս եմ եղբարք՝: ²³Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք. մանաւանդ որ 'ի տանէ

* *Ոմանք.* Եւ լծակից իմ... 'ի դպրութիւն կենաց: *Ոսկան.* Որոց անուանքն եմ 'ի դպ՞: *Ուր օրինակ մի.* Անուանքն գրեալ եմ 'ի դպ՞:

* *Ոմանք.* Յեզուսինն ձեր:

* *Ոմանք.* Եւ խաղաղութիւն Աստուծոյ:

* *Ոմանք.* Ձայն խորհեսջիք:

* *Ոմանք.* Ձոր և ուսարուքն:

* *Ոմանք.* Բարբարէիքիմն է:

* *Ոմանք.* Իբր ոչ եթէ առ կա՞:

* *Ոմանք.* Եւ յազել և քաղցնուլ:

* *Ոմանք.* 'Ի Թեսաղոնիկէ միան՞:

* *Ի բազումս պակասի.* Որ է՛ի ձէնջ:

* *Ոսկան.* Սրբոց որք 'ի Քրիստոս:

* *Ոմանք.* Որ ընդիսն եմ:

կայսեր են* : ²⁴Շնորհք Տեառն Յիսուսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն* :

Առ Փրկիպեցիս՝ գրեցաւ ՚ի Հռովմէ՝ ՚ի ձեռն Եպսկոպոսիտեայ : Տունք Մէ :

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Կողոսացիս Թղթոյն

Ձայս առաքէ ՚ի Հռովմէ, մինչ ո՛չ էր տեսեալ զնոսա, այլ լուաւ վասն նոցա. և է պատճառ թղթոյս՝ ա՛յս : Կողոսացիքն խորհէին շրջել յիմաստութիւն Յելլենացւոցն ՚ի հաւատոցն որ ՚ի Քրիստոս, և յօրինական կերակուրսն և ՚ի թլփատութիւնն : Ձայս ամենայն լուեալ առաքեալն՝ գրէ զթուղթս զգուշանալ նոցա : Եւ նախ գոհանայ զԱստուծոյ, նշանակեալ թէ ՚ի խաւարէն զերծայք և եկիք ՚ի լոյսն ճշմարիտ. և ՚ի Քրիստոսն յոր հաւատացիք, պատկեր է Աստուծոյ և բան, որով ամենայնն եղև. և եթէ վայել էր նմա գործել այնպես, և լինել անդրանիկ արարածոց և անդրանիկ ՚ի մեռելոց. զի զերկոսին յառաջեցուցէ, և կենդանացուցէ զամենայն : Նախագաղափարէ նոցա մնալ ՚ի հաւատս. նշանակէ եթէ ինքն Պաւղոս պաշտօնեայ է աւետարանին՝ յորում առաքեցաւ : Յայտնէ և վասն օրինացն և վասն նորին կերակրոցն, և վասն աւուրցն, որ ՚ի նմանէ պատուեցաւ. ցուցանէ եթէ հնացեալ դադարեաց ընդ թլփատութեանն : Խորհրդակցի նոցա մի՛ պատրիլ յիմաստնոցն՝ որք խաբեն ասէ զծեզ : Եւ դարձեալ խրատէ աստ զծնօղսն և զորդիսն. զարսն և զկանայսն, զծառայսն և զտեսարսն, զաղախիսն և զտիկնայսն. և զայլ սովորական խորհուրդն ասացեալ կատարէ զթուղթն. պատուիրելով նոցա, զի յորժամ ընթերցցի ՚ի նոցանէ թուղթն, և ՚ի Լաւողիկեցւոց եկեղեցին զսա ընթերցցին, և զոր առ Լաւողիկեցիսն՝ նոցա ընթեռնուլ :

Գլուխք առ Կողոսացիս Թղթոյն

ա. Գոհութիւն վասն Կողոսացւոց ընտանութեանն ընդ Աստուծոյ յուսով :
բ. Աղօթք վասն նոցա ՚ի խոկումն իմաստութենէ, և յօժարութիւն համբերութեան, հանդերձ գոհութեամբ վասն ընտանութեանն սրբութեամբ :
գ. Վասն Քրիստոսիւ արարածոցս, և նորոգութեան, որ ընդ Աստուծոյն հաղորդութիւն է :
դ. Վասն հեթանոսաց նուաճութեան որ մարմնովն Քրիստոսի և չարչարանօք՝ ՚ի ձեռն հաւատոցն :
ե. Վասն իւրոյ աշխատութեանցն վարդապետութեանն, որ յԱստուծոյ յանդիմանութիւնն հասուցանէ :

* Ոմանք. Որ ՚ի տանէս կայսեր :

* Ոմանք. Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ :

զ. Վասն չխաբելոյ մարդկեղէն իմաստութեամբ, որ Քրիստոսի զիմաստութիւնն ունիցին:
է. Թէ ընդ Աստուծոյ հաղորդութիւնն՝ և զօրինաց ունի հոգեպէս կեալ ընդ Քրիստոսի:
ը. Թէ մարմնաւոր օրինացն՝ օրինակաց մարմնաւորաց պէտք են և ո՛չ հոգևորաց, որ զօրութեամբն Քրիստոսի կեցցեն:
թ. Խրատ սրբութեան, պարկեշտութեան, աստուածսիրութեան, ուսումնասիրութեան, սաղմոսերգութեան, գոհութեան, ըստ աստուածեղէն վարուց գովութեամբ:
ժ. Առ ընտանիս միաբան լինելոյ: թ. Յորում և առ օտարս: գ. Հոգածս և դարմանիչս լինելոյ:

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

աբ. ¹Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր. ²առ Կողոսացիս սուրբս և հաւատացեալս եղբարս՝ ի Քրիստոս*:
³Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ:
Ա Գոհանամ զԱստուծոյ և զՀօրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր աղօթս առնեմ*. ⁴Իբրև լուաք զհաւատսն ձեր՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, և զսէրն որ ընդ ամենայն սուրբս ունիք*. ⁵Վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս. զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան՝ աւետարանին*. ⁶որ եհաս առ ձեզ. որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ՝ և պտղաբերէ՝ որպէս և ՚ի ձերում միջի. յօրէ յորմէ լուարուք և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ*. ⁷որպէս և ուսարուք յեպափրեայ սիրելոյ, ծառայակցէ մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ Յիսուսի*. ⁸որ և պատմեաց մեզ զձեր սէրն Հոգւով*:
Բ ⁹Վասն այնորիկ և մեք յօրէ յորմէ լուաք, ո՛չ դադարեմք վասն ձեր աղօթս առնել, և խնդրուածս մատուցանել. զի լնուցուք զգիտութիւն կամաց նորա, ամենայն իմաստութեամբ և հոգևոր հանճարով*. ¹⁰զնալ ձեզ արժանի Տեառն

* ՚ի վերնագրիս՝ ոմանք. Թուղթ առ Կողոսացիս:

* Ոմանք. Հաւատացեալ եղբարս ՚ի Տէր:

* Ոմանք յաւելուն. Հօրէ մերմէ. և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. գոհանամ: Ոմանք.

Գոհանամք զԱստուծոյ... աղօթս առնել: Իսկ Ոսկան. Առնելով:

* Ոմանք. Ձեր ՚ի Տէր մեր Քրիստոս Յիսուս:

* Ոմանք. Ձորմէ յառաջագոյն լուարուք... ճշմարտութեան աւետարանան:

* Ոմանք. Ձշնորհն Աստուծոյ:

* Ոմանք. Եւ ծառայակցէ:

* Ոմանք. Մեզ զսէրն ձեր:

* Ոմանք. Վասն այսորիկ և մեք... կամացն նորա:

յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան, պտղաբերք և աճեցունք գիտութեամբն Աստուծոյ* .¹¹ ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա. յամենայն համբերութիւն և երկայնմտութիւն. ուրախութեամբ* ագ. ¹²գոհանալ զՅօրէ, որ կոչեացն զձեզ 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս* .¹³ որ փրկեացն զձեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց զձեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելոյ. ¹⁴որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն մեղաց մարմնովն նորա:

Գ ¹⁵Որ է պատկեր աներևութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց. ¹⁶զի նովա՛ւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երևին և որ ո՛չն երևին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ նովա՛ւ և 'ի նոյն հաստատեցաւ. ¹⁷և նա՛ է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովա՛ւ եկաց բովանդակ: ¹⁸Եւ նա է զլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ* .¹⁹զի 'ի նմա՛ հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեանն բնակել. ²⁰և նովա՛ւ հաշտեցուցանել զամենայն 'ի նոյն, արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և որ ինչ յերկինս՝:

Դ ²¹Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալքն էիք, և թշնամիք խորհրդովք 'ի գործսն չարութեան* .²²այժմ աւաղիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ, 'ի ձեռն մահուան իւրոյ յանդիման կացուցանել զձեզ սուրբս՝ և անբիծս՝ և անարատս առաջի նորա* .²³Եթէ կայցէք 'ի հաւատսն արմատացեալք, և հաստատեալք, և անշարժք 'ի յուսոյ աւետարանին, զոր լուարուք քարոզելոյ ընդ ամենայն արարածս 'ի ներքոյ երկնից. որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ:

Ե ադ. ²⁴Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ վասն ձեր. և լնո՛ւն զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի 'ի մարմնի իմուն, վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի* .²⁵որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ, ըստ տնտեսութեանն Աստուծոյ որ տուեալ է ինձ 'ի ձեզ, կատարել զբանն Աստուծոյ* .²⁶զխորհուրդն որ ծածկեալ էր 'ի յաւիտեանցն և յազգաց. որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց* :²⁷Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զի՞նչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա 'ի հեթանոսս. որ է Քրիստոս 'ի ձեզ, յոյսն փառաց* .²⁸զոր մե՛քն քարոզեմք. և խրատեմք զամենայն մարդ, և ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգևոր իմաստութեամբ. զի կացուցուք զամենայն մարդ կատարեալ 'ի Քրիստոս Յիսուս* .²⁹յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ աջողութեան նորա,

* *Յօրինակին պակասէր. Տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործ: Ոմանք.*

Յամենայն հաճութիւն, *կամ՝* ամենայն հաճութեամբ, և յամենայն գործս բա՛:

* *Ոսկան.* Յամենայն համբերութեան և երկայնմտութեան ուրա՛: *Ոմանք.* Եղբարք՝ ուրախութեամբ (12) գոհացարովք զՅօրէ. *և ոմանք.* գոհանալով զՅօրէ: *Ուր Ոսկան յաւելու. զԱստուծոյ Յօրէ:*

* *Բազումք.* Որ կոչեացն զձեզ 'ի մա՛:

* *Ոմանք.* Եւ անդրանիկ մեռելոց:

* *Ոմանք.* Որ ինչ յերկինս... յերկրի:

* *Ոմանք.* Օտարացեալն էիք:

* *Ոմանք.* Այժմ աւասիկ հաշ՛... 'ի ձեռն մահուն իւրոյ... առաջի նորա սիրով:

* *Ոմանք.* Իմ որ վասն ձեր: *Ոսկան.* Նեղութեանն Քրիստոսի:

* *Ոմանք.* Տնտեսութեան Աստուծոյ, որ տուեալ են ինձ:

* *Ոմանք.* Եր յաւիտեանց և:

* *Ոմանք.* Եթէ զինչ է... խորրդոց նորա:

* *Ոմանք.* Զի կեցուցուք զամենայն:

որ աջողեալ է յիս զօրութեամբ*:

2

Գլուխ Բ

Ձ¹Կամիմ զի գիտիցէք դուք՝ ո՛րպիսի ճգնութիւնս ունիմ յանձին վասն ձեր՝ և վասն Լաւողիկեցւոցն, և որոց չիցէ՛ տեսեալ զերեսս իմ մարմնով*.² զի մխիթարեսցի՛ն սիրտք նոցա՝ տեղեկացեալք սիրով. և յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան՝ ՚ի գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս*.³ Երբուն ամենայն գա՛նձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան*:⁴ Այլ զայս ասեմ, զի մի՛ ոք զձեզ զառանցուցէ պատիր բանիւք*:⁵ Ձի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձե՛զ եմ. խնդա՛մ՝ իբրև տեսանեմ զկարգն ձեր, և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ՚ի Քրիստոս Յիսուս*:⁶ Արդ՝ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովի՛ն գնասջի՛ք*,⁷ արմատացեալք՝ և շինեալք ՚ի նա, և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ուսարուքն՝ առաւելեալք ՚ի նմին գոհութեամբ: Վջ.⁸ Չգո՛յշ լերուք, մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարերց աշխարհիս, և ո՛չ ըստ Յիսուսի Քրիստոսի*.⁹ զի ՚ի նմա՛ բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս:¹⁰ Եւ էք դուք նովա՛ւ լցեալք. որ է գլուխ ամենայն իշխանութեան և պետութեան*:

Է¹¹ Որով թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ թլփատութիւնն, ՚ի մերկանալ զանդամս մարմնոյ թլփատութեամբն Քրիստոսի.¹² Թաղեալք ընդ նմին ՚ի մկրտութեանն, որով և ընդ նմին յարեայք հաւատովք՝ Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա ՚ի մեռելոց*:¹³ Եւ զձեզ որ երբեմն մեռեալն էիք ՚ի մեղս՝ և յանթլփատութիւն մարմնոյ ձերոյ, կենդանացոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր*.¹⁴ և ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք. որ կայր մեզ հակառակ, երարծ զայն ՚ի միջոյ՝ և բևեռեաց ընդ խաչափայտին*.¹⁵ մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս. յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին

* *Ոմանք.* Ըստ յաջողութեանն նորա որ յաջողեալն է:

* *Բազումք.* ճգնութիւն ունիմ: *Ոմանք.* Ոչ իցէ. *կամ՝* չիցեն տեսեալ:

* *Ոմանք.* Տեղեկացեալ սիրով ամենայն մեծութիւն լրութեան իմաստութեանն, ՚ի գիտութիւն խորհրդոցն Աստուծոյ ՚ի Քրիստոս: *Ոսկան.* ՚ի գիտութիւն խորհրդոյ Աստուծոյ Դօր ՚ի Քրիստոս Յիսուս:

* *Օրինակ մի.* Յորում ամենեցուն գանձ: *Յօրինակին պակասէր.* Իմաստութեան և գիտութեան ծած՝:

* *Ոմանք.* Ձառանցեցուցէ:

* *Ոմանք.* Ձի ես թէպէտ... հեռի եմ ՚ի ձե՛նջ, հոգւով մերձ եմ ՚ի ձեզ. *կամ՝* ընդ ձեզ:

* *Ոմանք.* ՁՏէր Յիսուս Քրիստոս:

* *Ոմանք.* Ըստ Քրիստոսի Յիսուսի:

* *Ոմանք.* Ամենայն իշխանութեանց և պետութեանց:

* *Ոմանք.* Ընդ նմին մկրտութեանն. և *ոմանք.* մկրտութեամբն ՚ի մահն... ընդ նմին յարեաք հաւատովք Աստուծոյ ազդեցութեամբն:

* *Ոմանք.* Մեռեալքն էիք ՚ի մեղս և յանթլփատութեան:

* *Ոմանք.* Եւ բևեռեաց զնա ընդ խաչա՛:

իւրում 'ի յարութեան իւրում*։ ¹⁶Մի՛ որ այսուհետև զձեզ դատեսցի՝ ուտելով կամ ընպելով, կամ մասամբք տօնից, կամ անսամտիւք կամ շաբաթուք*։ ¹⁷որ են ստուերք հանդերձելոցն. այլ մարմին Քրիստոս է։

Ը ¹⁸Մի՛ որ զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ՝ տեսեալ զրահետ վարել՝ տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ իւրոյ*։ ¹⁹և ո՛չ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօղիւք և խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ*։ ²⁰Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի 'ի տարերց աշխարհիս, զի՞ ևս իբրև զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք. ²¹մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր. ²²որ է ամենայն ինչ 'ի պէ՛տս ապականութեան, ըստ պատուիրանաց և վարդապետութեան մարդկան*։ ²³որ յիմաստութիւն իմն համարէ, ինքնական կրօնիւք, և խոնարհութեամբ, և անխայութեամբ մարմնոյ. և ո՛չ 'ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ*։

3

Գլուխ Գ

¹Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ*։ ²զվերինն խորհեցարո՛ւք, մի՛ զայս որ յերկրի աստ է։ ³Քանզի մեռարուք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած*։ ⁴Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսցիք փառօք։

Թ ⁵Սպանէ՛ք այսուհետև զանդամս ձեր զերկրաւորս. 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց, և զազահութիւն՝ որ է կռապաշտութիւն*։ ⁶վասն որոյ գայ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ որդւոցն անհաւանութեան*, ⁷որովք և դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն էիք 'ի նոսա*։ ⁸Արդ՝ 'ի բաց թօթափեցէք և դուք զայն ամենայն, զբարկութիւն, զստամտութիւն, զչարութիւն, զհայիոյութիւն, զխեղկատակութիւն 'ի բերանոց ձերոց։ ⁹Մի՛ ստէք միմեանց. մերկացարո՛ւք զհին մարդն գործովքն իւրովք*։ ¹⁰և զգեցարո՛ւք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն, ըստ պատկերի Արարչին իւրոյ*։ ¹¹ուր ո՛չ է Յրեայ, և ո՛չ հեթանոս, թլփատութիւն, և անթլփատութիւն, խուժ, դուժ,

* *Ոմանք*. Մերկաց զիշ՞... խայտառակեալ նշաւակեաց... 'ի յարութեանն իւ՞։

* *Ոմանք*. Մի որ զձեզ դատիցի... կամ ընպելովք... կամ անսամտօք կամ շաբաթիւք։

* *Ոմանք*. Որ կամեսցի... զրահետ վարեալ։

* *Ոմանք*. Զգլուխն զՔրիստոս... և խաղալիւք։ *Ոսկան*. Տարբերեալ և խառ՞։

* *Ոմանք*. Ըստ պատուիրանի և վար՞։

* *Ոմանք*. Որ յիմաստութիւն իմն համարեալ են։ *Օրինակ մի*. Յիմաստութիւն իմն հաւասարէ... և անխնայութեամբ մարմ՞։ *Յոմանս պակասի*. Լրութեան մարմնոյ։

* *Ոսկան*. Եթէ յարեայք ընդ Քրիստոսի։

* *Ոմանք*. Ընդ Քրիստոսիւ յԱստուած։

* *Ոմանք*. Զպոռնկութիւնս և զպղծութիւն և զբիծ, և զցանկութիւն։

* *Օրինակ մի*. 'ի վերայ որդւոց անհաւատութեան։

* *Ոմանք*. Որով և դուք. կենդանիք էիք։

* *Ոմանք*. Մերկացուք զհին։

* *Ոմանք*. Նորոգել 'ի գիտութիւն։

Սկիւթացի, ծառայ, ազատ. այլ ամենայն և յամենայնի Քրիստոս*։ ¹²Ձգեցարո՛ւք այսուհետև իբրև ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք, զգո՛ւթ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնատութիւն, ¹³ներե՛լ միմեանց, շնորհե՛լ իրերաց, եթէ ուրուք զունեք տրտունջ ինչ իցէ. որպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս և դուք*։ ¹⁴Եւ ՚ի վերայ ամենայնի զսէ՛րն, որ է զօդ կատարմանն*։ ¹⁵Եւ խաղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի ՚ի սիրտս ձեր, յոր և կոչեցարուքն միով մարմնով։ Եւ գոհացօ՛ղք լինիջիք*։ Եւ ¹⁶զի բանն Քրիստոսի բնակեսցէր ՚ի ձեզ առատապէս. ամենայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս. սաղմոսիւք և օրհնութեամբք, և երգովք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ՚ի սիրտս ձեր զԱստուած*։ ¹⁷Եւ զամենայն զոր և առնիցէք բանի՛ւք և արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացօ՛ղք լինիջիք զԱստուծոյ և զՅօրէ նովաւ*։

Ժ ¹⁸Կանայք՝ հնազանդ լերուք արանց ձերոց. որպէս և վայել է ՚ի Տէր*։ ¹⁹Ա՛րք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր, և մի՛ դառնացուցանէք զնոսա։ ²⁰Ո՛րդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն։ ²¹Յա՛րք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի՛ տրտմեսցին*։ ²²Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի. մի՛ առականէ՛ ծառայութեամբ իբրև մարդահաճոյք. այլ միանտութեամբ սրտի երկնչել ՚ի Տեառնէ*։ ²³Ղոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսցիք իբրև Տեառն, և ո՛չ իբրև մարդկան*։ ²⁴Գիտասջիք զի ՚ի Տեառնէ՛ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք*։ ²⁵Իսկ ապիրատն ընկալցի՛ ըստ իւրում ապիրատութեանն. զի չիք ակնառութիւն առաջի Աստուծոյ*։

4

Գլուխ Դ

¹Տեա՛րք՝ զիրաւունս և զհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէ՛ք. զգիտասջիք զի և ձեր Տէր գոյ յերկինս։ ²Աղօթից ստէ՛պ կացէք. տքնել ՚ի նմին գոհութեամբ*։ ³Աղօթս արարէք միանգամայն և վասն մեր. զի Աստուած բացցէ՛ մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ և կապեալս կամ*։

* *Ոմանք.* Որ ո՛չ է Յրեայ, և։

* *Ոմանք.* Եթէ ոք զունեք տրտունջ ինչ ունիցի, որպէս և Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ։

* *Բազումք.* Եւ ՚ի վերայ այս ամենայնի։ *Ոմանք.* Որ է զարդ կատարման։

* *Ոմանք.* Եւ խաղաղութիւնն Աստուծոյ հաստա՛... կոչեցարուք միով։

* *Ոմանք.* Եւ օրհնութեամբ և եր՛... օրհնել զԱստուած ՚ի սիրտս։

* *Ոմանք.* Բանիւք և գործովք, զամենայն։

* *Ոմանք.* Տերանց ձերոց, որպէս վայել է ՚ի Տէր։

* *Ոմանք.* Ձի մի՛ տրտմիցին։

* *Ոմանք.* Առականէ ծառայել իբրև... սրտիւ. *կամ՝* սրտիւք, երկնչել։

* *Ոմանք.* Եւ ո՛չ որպէս մարդկան։

* *Ոմանք.* Քանզի Տեառն Յիսուսի ծառայ էք։

* *Ոմանք.* Ըստ իւրումն ապիրատութեան, քանզի չիք։

* *Ոմանք.* Տքնեալք ՚ի նոյն գոհ՛։

* *Ոմանք.* Դուռն բանի խօսել մեզ զխորի՛։

⁴զի յայտնի՝ արարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել՝: ազ. ⁵Իմաստութեամբ զնասջիք առ արտաքինսն, զնոց առեալ զժամանակս՝: ⁶Եւ բանն ձեր յամենայն ժամ լի՝ շնորհօք Տեառն, իբրև աղիւ համենեալ լիցի. գիտել զորպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ունեք՝ տալ պատասխանի՝: ⁷Այլ որ ինչ զինէն իցէ, ցուցցէ՝ ձեզ զամենայն Տիւքիկո՛ս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծառայակից ՚ի Տէր՝: ⁸զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք վասն մեր. և մխիթարեսցէ՝ զսիրտս ձեր. ⁹Ոնեսեմա՛ւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ և սիրելեալ՝ որ է ՚ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցէ ձեզ՝ որ ինչ աստ է՝: ¹⁰Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից ին, և Մարկոս եղբօրորդի՝ Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր, եթէ եկեսցէ առ ձեզ՝ ընկալջի՛ք զնա՝: ¹¹և Յիսուս որ անուանեալն է Յուստոս, որք են ՚ի թլփատութենէ անտի. զի դոքա՛ միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք և եղեն իսկ ինձ մխիթարութիւն՝: ¹²Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ ՚ի ձէնջ ծառայ Յիսուսի Քրիստոսի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք և լցեալք յամենայն կամս Աստուծոյ՝: ¹³Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր, և վասն Լաւողիկեցւոցն, և վասն այնոցիկ՝ որ յերապաւլիսն իցեն՝: ¹⁴Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ՝ և սիրելի, և Դեմաս՝: ¹⁵Ողջոյն տաջիք եղբարց՝ որ են ՚ի Լաւողիկեայ, և Նիմփայ, և որ առտնին եկեղեցին է նորա՝: ¹⁶Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ, արասջիք զի և ՚ի Լաւողիկեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. և զառ ՚ի Լաւողիկեցւոցն՝ զի և դուք ընթեռնուցուք՝: ¹⁷Եւ ասասջիք ցԱրքիպպոս. Ձգոյ՛ջ լեր սպասաւորութեանդ, զոր ընկալար ՚ի Տէր, զի զայդ կատարեսցեն՝: ¹⁸Ողջոյնդ՝ ձեռին իմոյ Պաւղոսի է. յո՛ւշ լիցին ձեզ կապանքս ին: Շնորհք ընդ ձեզ՝:

Առ Կողոսացիս՝ գրեցաւ ՚ի Հռովմէ՝ ՚ի ձեռն Տիւքիկոսի և Ոնեսիմայ: Տունք ՍԸ՝:

* *Ոմանք.* Ձի յայտնեալ արարից զնա, որպէս և արժան իցէ ինձ խօ՛ս:

* *Բազունք.* Գնոյ առեալ զժամա՛ն:

* *Ոմանք.* Եւ բան ձեր... լի շնորհօքն՝ իբրև... գիտել և որպէս արժան է:

* *Ոմանք.* Ձինէն է, ցուցցէ:

* *Ոմանք.* Որ ՚ի ձէնջ. և զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ զոր ինչ աստ:

* *Ոմանք.* Եթէ գայցէ առ ձեզ. ըն՝:

* *Ոմանք.* Եւ Յեսուս, որ ան՝... Յոստոս... զի նոքա միայն եղեն ինձ գործա՛ն.

յարքայութիւնն Աստուծոյ: *Ոսկան.* Անուանեցաւ Յոս՝:

* *Ոմանք.* Եպափրեայ, որ է ՚ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի... յամենայն կամսն:

* *Բազունք.* Յերապաւլիսն են:

* *Ոմանք.* Բժիշկ. և սիրելի Դեմաս:

* *Ոմանք.* Որ են ՚ի Լաւողիկիա և Նիմփրա... եկեղեցի է նոցա:

* *Ամենայն գրչագիրք համաձայն մերումս ՚ի լուս՝. այսր համարոյ նշանակեն.* Ձառաջնոյ թղթին. *կամ՝* թղթոյն որ առ Տիմոթէոս ատ:

* *Ոմանք.* ՅԱրքիպպաս:

* *Ոմանք յաւելուն.* Շնորհք ընդ ձեզ. *ամէն:*

* *Ի վախճանի՝ ոմանք.* Ի ձեռն Տիքիկոսի և Ոնեսիմեայ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Թեսաղոնիկեցիս Առաջին Թղթոյն

Չայս առաքել յԱթենայ՝ տեսող յառաջագոյն եղեալ սոցա, և լլկեալ անդ նորա. և է պատճառ թղթոյս՝ ա՛յս: Առաքեալն բազում վիշտս կրեաց ՚ի Բերիա, և ՚ի Փիլիպպոս Մակեդոնացւոց, և ՚ի Կորնթոս. և զի զիտէր անձկալի զինքն Թեսաղոնիկեցւոցն՝ երկեալ զի մի՛ լուիցեն Թեսաղոնիկեցիքն եթէ փորձեցաւ ՚ի փորձողէն՝ և գայթազդեսցին: Լուալ եթէ և որք մեռանին՝ կարծէին եթէ ՚ի կորուստ լինէին, առաքեաց զՏիմոթէոս նախ առ նոսա, և ՚ի վերայ այնր և զթուղթս զայս: Եւ նախ՝ հաստատէ զնոսա ՚ի հաւատս, զի մի՛ շարժեսցին երբէք վասն վշտացն, և ո՛չ յօտարն խորհեսցին ՚ի Զրեութիւնն. զի նորա զՏէրն սպանին. քրիստոնէից շնորհեալ, և նեղութիւն ունիք ասացեալ, բազում անգամ գովէ զնոսա, այսու՝ զի որպէս առին ՚ի նմանէ պահէին: Գրէ վասն ննջեցելոցն միսիթարութիւն նոցա. և վարդապետէ զի մի՛ ծանրացին ընդ այն. զի ո՛չ է մահն կորուստ, այլ ճանապարհ յարութեան: Յետ այսորիկ և վասն ժամանակաց նոցա վարդապետէ. Ջի անհնար է զայս զիտել. այլ հանապազ պատրաստ լիցուք, և մի՛ յունեքէ կարծել ուսանել զայս. այլ զիտասցուք ասէ գալուստն այսպէս. զի որ մնացեալքն են, և որք գտանին յաւուրն յայնմիկ՝ ո՛չ ժամանեն ննջեցելոցն յարութեան. այլ ՚ի միասին լինիցի ամենեցուն փոխումն: Վարդապետէ այսու ևս և օրինակ ատէ նոցա առաւելուլ ՚ի սովորականն հանապազ նոցա, և ուրախ լինել վասն յուսոյն. և աղօթէ և գոհանայ վասն նոցա զՏեառնէ. երդմնեցուցանէ զնոսա ընթեռնուլ զթուղթս զայս ամենայն եղբարց. և այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք առ Թեսաղոնիկեցիս Առաջին Թղթոյն

ա. Գովութիւն վասն Թեսաղոնիկեցւոցն ՚ի վերայ արժանաւոր պատերազմաց առաքելոցն:

բ. Անձուկ նորա և խնդութիւն ՚ի վերայ նոցա, և հոգք թէ ո՛րպէս կատարեալք լինիցին:

գ. Աղօթք առ Աստուած, և Քրիստոս վասն գալստեանն իւրոյ առ նոսա, և աճմանն և հաստատութեան Թեսաղոնիկեցւոց մինչև ՚ի գալուստն Քրիստոսի:

դ. Խրատ ցածութեան և արդարութեան յընտրութիւն եղբայրսիրութեան, իւրաքանչիւր ունեք զիւր գործ գործելոյ:

ե. Վարդապետութիւն վասն մահու լուծելոյ առ կենդանեօք և մեռելովք ՚ի յայտնութեանն Քրիստոսի:

զ. Վասն յանկարծահաս գալստեանն Քրիստոսի, թէ որպէս

պատրաստական գտանել պարտ է, փութով, հաւատովք, յուսով, սիրով, պատուով, խաղաղութեամբ, երկայնմտութեամբ, ուսումնասիրութեամբ:

է. Աղօթք վասն սրբութեան հոգւոյն շնչով և մարմնով:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱԶԻՆ

ԹՈՒՂԹ

1

Գլուխ Ա

բկ. ¹Պաւղոս և Սիղուանոս, և Տիմոթէոս. եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝
յԱստուած Հայր մեր, և ՚ի Տէր Յիսուս Քրիստոս՝: ²Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն:

Ա Գոհանանք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձե՛ր ամենեցուն՝ յիշատակ
առնել յաղօթս մեր անդադար՝. ³յիշել զձեր գործն հաւատոց, և զվաստակ
սիրոյ՝ և զհամբերութեան յուսոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի
Աստուծոյ և Հօր մերոյ: ⁴Գիտէ՛ք եղբարք սիրեցեալք յԱստուծոյ՝ զընտրութիւնն
ձեր՝. ⁵զի աւետարանն մեր՝ ո՛չ եղև առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ՝ և
Հոգւով Սրբով, և լրութեամբ բազմաւ. որպէս և գիտէք իսկ, թէ որպիսի՛ք եղեաք
՚ի միջի ձերում վասն ձեր՝: ⁶Եւ դուք նմանեալք մեզ՝ և Տեառն, ընկալալք զբանն
՚ի բազում նեղութեան խնդութեամբ Հոգւոյն Սրբոյ. ⁷լինել ձեզ օրինակ
ամենայն հաւատացելոց որ են ՚ի Մակեդոնիա՝ և յԱքայիա: ⁸Ձի ՚ի ձե՛նց հնչեաց
բանն Աստուծոյ. ո՛չ միայն ՚ի Մակեդոնիա և յԱքայիա, այլ յամենայն տեղիս
հաւատքն ձեր որ առ Աստուած են սփռեցան. զի այսուհետև ո՛չինչ է պիտոյ մեզ
և խօսել ինչ՝: ⁹Ձի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ ո՞րպէս եղև մեզ մո՛ւտ առ
ձեզ. և ո՞րպէս դարձայք առ Աստուած ՚ի կոռո՛ց անտի, ծառայել Աստուծոյ
կենդանոյ և ճշմարտի՝. ¹⁰և ակն ունել Որդւոյ նորա յերկնից, զոր յարո՛յցն ՚ի
մեռելոց՝ զՅիսուս, որ փրկելոցն է զմեզ ՚ի բարկութենէ անտի որ գալոցն է՝:

2

Գլուխ Բ

բդ. ¹Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն մեր առ ձեզ. զի ո՛չ ընդունա՛յն ինչ
եղև. ²այլ յառաջագո՛յն չարչարեալք և թշնամանեալք, որպէս և դուք իսկ գիտէք
՚ի մեջ Փիլիպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով՝ պատմել ձեզ

* *Ոմանք.* Պաւղոս և Սիղուանոս:

* *Օրինակ մի.* Եւ խաղաղութիւն բազմացի:

* *Ոմանք.* Եւ զվաստակն սիրոյ, և զհամբերութիւն յուսոյ Տեառն մե՛... և Հօր մեր:

* *Օրինակ մի.* ՅԱստուծոյ՝ զանտեսութիւնն ձեր:

* *Ոմանք.* Միայն բանիւք... եթէ որպիսի եղաք:

* *Ոմանք.* Եւ դուք նմանողք մեզ... ՚ի բազում նեղութիւն: *Ուր Ոսկան.* Մեզ եղէք և Տեառն:

* *Ոմանք.* Այլ և յամենայն տեղիս հաւատք ձեր առ Աստուած... ոչ ինչ պիտոյ է մեզ. և

ոմանք. Ոչ է պիտոյ մեզ և խօսել իսկ ինչ:

* *Ոմանք.* Պատմեն վասն ձեր. եթէ որպէս... որպէս և դարձայք:

* *Ոմանք.* Որդւոյն նորա յերկնից... որ փրկելոցն է... ՚ի բարկութենէ որ: *Ուր Ոսկան.* Որ
փրկեաց զմեզ ՚ի բար՝:

զաւետարանն Աստուծոյ մեծա՛ւ պատերազմաւ՝³ Չի մխիթարութիւնն մեր ո՛չ ՚ի մոլորութենէ է, և ո՛չ ՚ի պղծութենէ, և ո՛չ նենգութեամբ՝⁴ այլ որպէս ընտրեցա՛ք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին, նո՛յնպէս և խօսիմք. ո՛չ իբրև մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ որ քննէ զսիրտս մեր՝⁵ Չի ո՛չ երբէք բանիւք ողորանաց եղեաք առ ձեզ, որպէս և դուք իսկ գիտէք. և ո՛չ ՚ի պատճառս ազահութեան, որպէս և Աստուած վկայէ՝⁶ և ո՛չ խնդրեցաք զփառս ՚ի մարդկանէ, ո՛չ ՚ի ձէնջ՝ և ո՛չ յայլոց՝⁷ Կարօ՛ղ էաք որպէս Քրիստոսի առաքեալս ծանրանալ, այլ եղեաք հե՛զք ՚ի միջի ձերում. որպէս դայեակ մի որ սնուցանիցէ մանկունս՝⁸ նո՛յնպէս և մեք գթայաք ՚ի ձեզ. հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ո՛չ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ և զանձի՛նս մեր. քանզի սիրելի՛ք մեր եղերուք՝⁹ Յիշեցէ՛ք եղբարք՝ զվաստակն մեր և զջան. զի զցա՛յգ և զցերեկ գործեաք վասն չծանրանալոյ ումեք ՚ի ձէնջ. և քարոզեա՛ք ձեզ զաւետարանն Աստուծոյ՝¹⁰ Դուք ինքնի՛ն վկայէք՝ և Աստուած, որպէս սրբութեամբ և արդարութեամբ և անբծութեամբ՝ ձե՛զ հաւատացելոցդ եղեաք.¹¹ որպէս և գիտէք իսկ. զի զիրաքանչիւրոք ՚ի ձէնջ՝ իբրև հա՛յր զորդիս՝¹² մխիթարեաք և սփոփեաք, և դնեաք վկայութիւն զնա՛լ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիր արքայութիւնն և ՚ի փառս՝¹³ Վասն այնորիկ և մեք գոհանա՛մք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ՚ի մէնջ՝ ընկալարուք, ո՛չ իբրև զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ. որ և յաջողեալ իսկ է ՚ի ձեզ հաւատացեալսդ՝¹⁴ Չի դուք նմանօ՛ղք եղերուք եղբարք՝ եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են ՚ի Յրեաստանի ՚ի Քրիստոս Յիսուս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք և դուք ՚ի ձերո՛ց ազգականաց, որպէս և նոքայն ՚ի Յրէից՝¹⁵ որք և զՏէրն Յիսուս սպանին և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և Աստուծոյ յաչա՛ց ելին. և ամենայն մարդկան հակառակ եղեն.¹⁶ և արգելոյին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեսցին. զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեա՛լ է ՚ի վերայ նոցա բարկութիւն մինչև ՚ի սպառ՝:

Բ բզ. ¹⁷Այլ մեք եղբարք՝ թեպէտ և ո՛րք մնացաք ՚ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝ և ո՛չ սրտիւք. առաւել՛ ևս փութացաք տեսանել զերեսս ձեր մեծա՛ւ ցանկութեամբ: ¹⁸ Վասն այսորիկ կամեցայ զալ առ ձեզ ես Պաւղոս՝ մի՛ անգամ և երկիցս, և խափանեաց զմեզ Սատանայ: ¹⁹ Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն, կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ՚ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի նորա զալստեանն՝: ²⁰ Չի դուք էք փառք մեր և

* *Ոմանք.* ՚ի մէջ Փիլիպեղոցն:

* *Ոմանք.* Մխիթարութիւն ձեր ո՛չ:

* *Ոմանք.* Որ քննէն զսիրտս:

* *Ոմանք.* Եղաք առ ձեզ:

* *Բազումք.* Եւ ոչ խնդրէաք փառս:

* *Ոմանք.* Էաք իբրև Քրիստոսի առաքեալս... որ սնուցանէ զման՝:

* *Ոմանք.* Գթացաք. *ուր օրինակ մի.* գթացեալք ՚ի ձեզ:

* *Ոմանք.* Յիշէք եղբարք զվաս՛... և քարոզեաք ՚ի ձեզ զա՛: *Օրինակ մի.* Գործեաք առ ՚ի չծանրանալոյ... և քարոզեաք զարքայութիւնն Աստուծոյ:

* *Ոմանք.* Որպէս հայր զորդիս:

* *Ոմանք.* Արժանապէս առաջի Աստուծոյ, որ և կոչեաց:

* *Ոմանք.* Այլ իբրև ճշմարտիւ... որ և աջողեալ է ՚ի:

* *Ոմանք.* Նմանող եղերուք եղ՛... և նոքա ՚ի Յրէից:

* *Ոմանք.* Եւ արգելոյին զմեզ... զմեղսն իւրեանց:

* *Ոմանք.* Եթէ ոչ և դուք ՚ի Տէր:

խնդութիւն:

3

Գլուխ Գ

¹Վասն որոյ ո՛չ ևս ունիմք ժոյժ, զի բարութք թուեցաւ մեզ միայն մնալ յԱթէնս*.
²Եւ առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր մեր և զգործակից աւետարանին Աստուծոյ, և Յորն Քրիստոսի, հաստատել զձեզ՝ և մխիթարել վասն հաւատոցն ձերոց: ՎՋ.
³Զի մի՛ տաղտկայցէք՝ ՚ի նեղութիւնսս յայսոսիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի ՚ի սոյն կամք.
⁴Քանզի մինչ առ ձե՛զն իսկ էաք՝ յառաջագոյն ասեաք ձեզ, թէ նեղութիւնք հասանելոց են ՚ի վերայ մեր. որպէս և եղև իսկ՝ և գիտացէք*:
⁵Վասն այնորիկ և ես զի ոչ ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատսն ձեր. գուցէ՛ արդէք փորձեաց և զձեզ փորձիչն, և ընդունայն լինիցի ջանն մեր*:
⁶Բայց արդ՝ իբրև եկն Տիմոթէոս ՚ի ձէնջ առ մեզ, և ե՛տ մեզ զաւետիս հաւատոցն ձերոյ, և զսիրոյ, զի ունիք ՚ի մտի գիշատակս մեր բարեաց յամենայն ժամ. և ցանկացեալ էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք զձե՛զ*.
⁷Վասն այսորիկ մխիթարեցաք ՚ի ձեզ եղբարք՝ ՚ի վերայ ամենայն վշտաց և նեղութեանց ձերոց, ՚ի ձեռն հաւատոցն ձերոց*.
⁸Զի այժմ՝ կենդանի՛ եմք՝ եթէ դուք հաստատուն կայցէք ՚ի Տէր*:
⁹Զի՞նչ կարենք գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր, ՚ի վերայ ամենայն խնդութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ*.
¹⁰Գցայգ և զցերեկ առաւել ևս աղաչեմ՝ տեսանել զերե՛սս ձեր, և հաստատել զպակասութիւն հաւատոցն ձերոց*:

Գ ¹¹Այլ ինքն Աստուած և Հայր մեր՝ և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ՛ զճանապարհս մեր առ ձեզ: ¹²Եւ զձե՛զ ինքն Տէր բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսիմ՝ որպէս և մեք ՚ի ձեզ. ¹³հաստատել զսիրտս ձեր անարատս ՚ի սրբութիւն առաջի Աստուծոյ և Հոր մերոյ՝ ՚ի գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ հանդերձ ամենայն սրբովք իւրովք*:

4

Գլուխ Դ

Դ գկ. ¹Այսուհետև եղբարք՝ աղաչեմ զձեզ, և մխիթարեմ ՚ի Քրիստոս Յիսուս. զի որպէս ընկալարուք ՚ի մէնջ, թէ ո՞րպէս պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել

* Ոմանք. Ոչ ունիմ ժոյժ... մնալ միայն:

* Ոմանք. Որպէս եղև իսկ՝ և զի՛:

* Ոմանք. Վասն այսորիկ և ես զի ոչ ևս ունէի... փորձեսցէ զձեզ փորձ... ընդունայն լիցի ջանն:

* Ոմանք. Հաւատոցն ձերոց և զսիրոյ, զի ունիք ՚ի... յամենայն ժամ. ցանկացեալ էք:

* Ոմանք. Վասն այնորիկ և մխիթարեցաք... և նեղութեանց մերոց ՚ի ձեռն հաւատոցն ձեր*:

* Յօրինակին. Կենդանի եմ եթէ:

* Ոմանք. խնդութեան զոր խնդմք: Յօրինակին պակասէր. Առաջի Աստուծոյ մերոյ:

* Բազումք. Աղաչեմք տեսանել:

* Ոմանք. Ի սրբութեան առաջի Աստուծոյ: Ոսկան յաւելու. Սրբովք իւրովք. ամէն:

Աստուծոյ. որպէս և գնայք իսկ, զի ևս քան զևս յաւելուցուք ՚ի նոյն*։ ²Եւ գիտէք՝ թէ որպիսի պատուիրանս տուաք ձեզ ՚ի Տէր Յիսուս*։ ³Ձի այս են կամք Աստուծոյ, սրբութիւն ձեր. ՚ի բաց լինել ձեզ ՚ի պոռնկութենէ*, ⁴գիտել իւրաքանչիւրունք ՚ի ձեռք զիւր աման ստանալ սրբութեամբ և պատուով*։ ⁵մի՛ ՚ի ցաւս ցանկութեան՝ որպէս և այլ հեթանոսք որ ոչ գիտեն զԱստուած*։ ⁶Մի՛ զանցանել և զրկել յիրի՛դ յայդմիկ զեղբայր իւր. քանզի վրեժխնդիր է Տէր ՚ի վերայ ամենայնի այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք ձեզ, և եղաք վկայութիւն*։ ⁷Քանզի ոչ կոչեաց զձեզ Աստուած ՚ի պղծութիւն՝ այլ ՚ի սրբութիւն։ ⁸Այսուհետև որ անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝ որ և ետ զՅոգին Սուրբ ՚ի ձեզ*։ ⁹Այլ վասն եղբայրսիրութեան՝ չէ՛ ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք էք՝ առ ՚ի զմիմեանս սիրելոյ*։ ¹⁰Քանզի և առնէք իսկ զդոյն յամենայն եղբարս, որ եմ յամենայն կողմանս Մակեդոնացոց։ Աղաչեմ զձեզ եղբարք՝ առաւել ևս առաւելուլ և առատանալ. հանդարտել*, ¹¹և գործել զիւրաքանչիւր. և գործել ձեռք ձերովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի զնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն, և մի՛ իւիք կարօտեալք իցէք*։ Ե ¹²Ոչ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիջիք որպէս և այլքն որոց ոչ գոյ յոյս*։ ¹³Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ՝ ընդ նմա*։ ¹⁴Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, թէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ ՚ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն*։ ¹⁵Ձի ինքն Տէր հրամանաւ ՚ի ձայն հրեշտակապետի, և ՚ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. և մեռեալք ՚ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն*։ ¹⁶Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ ¹⁷Այսուհետև մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսորիւք։

5

Գլուխ Ե

Ձ գդ. ¹Այլ վասն ժամուց և ժամանակաց եղբարք՝ չէ՛ ինչ պիտոյ գրել առ ձեզ.

* *Ոմանք.* Աղաչեմք զձեզ և մխիթարեմք... եթէ որպէս... որպէս և գնայքդ։
 * *Օրինակ մի.* Որպէս պատուիրանս առաք ձեզ։
 * *Ոմանք.* Կամքն Աստուծոյ՝ սրբութիւնն ձեր։ *Օրինակ մի.* Ձեզ ՚ի յամենայն պոռնկութենէ։
 * *Ոմանք.* Գիտել իւրաքանչիւրոք ՚ի։
 * *Ոմանք.* Մի՛ զանց առնել և զրկել... որպէս յառաջագոյնն ասա՛։
 * *Ոսկան յաւելու.* Այսուհետև որ *զձեզ* անարգէ... զՅոգին *իւր* Սուրբ ՚ի ձեզ։ *Ոմանք.* Որպէս և ետ զՅոգին Սուրբ։
 * *Ոմանք.* Էք առ միմեանս սիրոյ։
 * *Ոմանք.* Առնէք իսկ զնոյն յամենայն... աղաչեմք զձեզ եղ՛... ևս յաւելուլ և առա՛։
 * *Ոմանք.* Ձեռք իւրովք, որպէս պատուիրեցաք։
 * *Ոսկան.* Ոչ կամիմք եղբարք... վասն ննջեցելոց։ *Ոմանք.* Ձի մի տրտմիջիք, որպէս և այնքն ո՛։
 * *Օրինակ մի.* Ի՛ ձեռն Քրիստոսի ածցէ։
 * *Ոմանք.* Ձայս ասեմ Տեառն բանիւ, եթէ... մնացեալ եմք ՚ի գելստեան Տեառն։ *Օրինակ մի.* Բայց զայս գիտեմք Տեառն բա՛։
 * *Ոսկան.* Ձի ինքնին Տէր հրամանաւ և ՚ի ձայն հրեշ՞։

²զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օր Տեառն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասանէ՞: ³Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն՝ որպէս և երկն յղոյ, և մի՛ ապրեսցեն*:
⁴Այլ դուք եղբարք՝ ո՛չ էք ՚ի խաւարի, թէ օրն ձեր իբրև զգող ՚ի վերայ հասանիցէ*:
⁵զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք, և որդիք տունջեան. չենք գիշերոյ՝ չենք խաւարի*:
⁶ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ որպէս և այլքն. այլ արթունք և զուարթունք եղիցուք*:
⁷Ձի որ ննջենն՝ գիշերի՛ ննջեն, և որ արբենանն՝ գիշերի՛ արբենան*:
⁸Այլ մեք զի տուրնջեան ենք, արթունք եղիցուք, և զգեցցուք զգրահսն հաւատոյ և զսիրոյ, և դիցուք զսաղաւարտն յուսոյն փրկութեան*:
⁹Ձի ո՛չ ետ զմեզ Աստուած ՚ի բարկութիւն, այլ ՚ի փրկութիւն կենդանութեան ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*:
¹⁰որ մեռան վասն մեր. զի եթէ արթունք իցենք՝ և եթէ ննջիցենք, նովա՛ւ հանդերձ կեցցուք*:
¹¹վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, և շինեցէք զիրեարս՝ որպէս և առնէք իսկ: զգ. ¹²Աղաչեմ զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր ՚ի Տէր, և զխրատի՛չս ձեր*:
¹³և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն արարէք ընդ միմեանս*:
¹⁴Աղաչեմ զձեզ եղբարք՝ խրատեցէք զստահակս, մխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսին*:
¹⁵Ձգոյ՛շ լերուք՝ գուցէ ոք չարի չար հատուցանիցէ. այլ յամենայն ժամ զբարեաց գիտ երթայք՝ առ միմեանս և առ ամենեսին*:
¹⁶Յամենայն ժամ ուրախ լերուք: ¹⁷Անդադար աղօթս արարէք: ¹⁸Յամենայնի գոհացարուք. զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսի Յիսուսի ՚ի ձեզ*:
¹⁹Ձրոգին մի՛ շիջուցանէք: ²⁰Ձմարգարէութիւնս մի՛ արհամարիէք: ²¹Ձամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք*:
²²Յամենայն իրաց չարաց ՚ի բաց կացէք: ²³Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձեր ոգի, և շունչ, և մարմին՝ անարատ ՚ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի*:
²⁴Հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն*:
²⁵Եղբարք՝ աղօթս արարէք և ՚ի մեր վերայ: ²⁶Ողջոյն տաջիք եղբարց ամենեցուն ՚ի համբոյր սրբութեան: ²⁷Երդմնեցուցանեմ զձեզ ՚ի

* Ոմանք. Ինքնին ստոյգ գիտէք զի օրն Տեառն իբրև զգող ՚ի գիշերի այնպէս հասանիցէ:

* Ոմանք. Հասանէ նոցա սատակումն, որպէս երկն յղ՞:

* Ոմանք. Եթէ օրն ձեր իբրև զգող հասանէ ՚ի վերայ:

* Ոմանք. Չեն գիշերոյ:

* Ոմանք. Մի՛ զքնով անկանիցիք:

* Ոմանք. Ննջեն՝ ՚ի խաւարի ննջեն, և որ արբենանն՝ գիշերի ար՞:

* Ոմանք. Ձգրահսն հաւատոց և սիրոյ... յուսոյ և փրկութեան:

* Ոսկան. Ձի ոչ եղ զմեզ:

* Ոմանք. Ձի թէ արթ՞:

* Ոմանք. Աղաչեմք զձեզ... զվաստակաւորսն:

* Օրինակ մի յաւելու. Եւ համարեսցուք զնոսա... առաւել յաճախութեամբ սիրոյ, վասն գործոյն նոցա:

* Ոմանք. Աղաչեմք զձեզ եղ՞:

* Ոմանք. Գուցէ ունեք չարի չար հատուցանէք:

* Ոմանք. Կամքն Աստուծոյ Քրիստոսի Յիսուսի որ ՚ի ձեզ:

* Ոմանք. Ձի ոգին ընկալարուք:

* Ոմանք. Խաղաղութեան սուրբ պահեսցէ զձեզ. համօրէնս և բովանդակս զձեր հոգի, և զշունչ և զմարմինս... ՚ի գալուստն Տեառն:

* Ոմանք. Հաւատարիմ է Տէր որ:

Տէր, ընթերցող՝ զթուղթդ առաջի ամենայն եղբայրց սրբոց: ²⁸Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ*:

Առ թեսաղոնիկեցիս առաջին թուղթ՝ գրեցաւ յԱթենայ: Տունք ԵՂԳ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ թեսաղոնիկեցիս երկրորդ թղթոյն

Ձայս առաքեաց ՚ի Յռովմէ, և է պատճառ թղթոյս՝ այս: Ոմանք ՚ի թեսաղոնիկեցւոցն անգործք և անխրատք վարէին, և գեղբարցն յափշտակէին, և վասն գալստեան Տեառն անհաստատք էին: Ձայս ամենայն որք լուան՝ պատմեցին առաքելոյս, և զոր ՚ի Յոզուայն լուաւ. և յորժամ զայս ամենայն լուաւ առաքեալս, գրեաց զթուղթս: Եւ նախ ընկալաւ զհաւատս նոցա՝ մեծացուցանելով, և նոքօք պարծէր ՚ի վիշտս զոր կրէր վասն Քրիստոսի. և մխիթարէ զնոսա՝ ՚ի մէջ առեալ զարդարութիւնն Աստուծոյ ՚ի վերայ նոցին որք զնոսին անիրաւէին: Յետ այսորիկ վասն գալստեան Փրկչին վարդապետէ, մի՛ ումեք զնոսա հաւատացուցանել, մի՛ իբրև բանիւ նոցա և մի՛ հոգւով, և մի՛ որպէս գրով նորին, մի՛ նենգել կամ օտարացուցանել զնոսա. զի թէ նախ ո՛չ եկեցէ ապստամբութիւն խռովութեան, և յետ այսորիկ հակառակ Քրիստոսն Որդի կորստեան, որ գայ արուեստիւք և նշանովք ստովք՝ գործակցութեամբն Սատանայի առնել նշանս: Յետ այսորիկ պնդէ զնոսա՝ զօրանալ և պինդ ունել զաւանդութիւնն՝ զոր վարդապետեցան ՚ի նմանէ: Պատուիրէ ո՛չ և մի հաղորդութիւն ունել ընդ անխրատսն, այլ մերժել զնոսա. որք են ՚ի գործս խաբէութեան: Պատուիրեաց նոցա և ամենեցուն՝ մի՛ լսել բանից նոցա, այլ ՚ի վերայ նոցին ժողովել, և աղօթս արարեալ խաղաղութեան՝ կատարեաց զթուղթն, և զողջոյնն ձեռօք իւրովք գրեալ, որ էր նշան յամենայն թուղթս պատուիրէ:

ԳԼՈՒԽՅԸ ԱՌ ԹԵՍԱՊՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ

ա. Գոհութիւն վասն թեսաղոնիկեցւոցն հաւատոց և սիրոյ և համբերութեան, նոցա ՚ի պատիւ՝ և նեղչացն ՚ի տանջանս. և աղօթք վասն փառաւոր կատարման նոցա ՚ի փառս Քրիստոսի:
բ. Վասն վախճանի՝ յորժամ Նեռնն առաքելոց է ՚ի յանդիմանութիւն Յրէից՝ որք ո՛չն հաւատացին ՚ի Քրիստոս:
գ. Գոհութիւն վասն կոչմանն: ա. Յորում յօժարութիւն ժուժկալութեան: բ. Աղօթք առ Քրիստոս և առ Աստուած հաստատութեան նոցա:
դ. Աղաչանք խնդրուածոց վասն իւր և վասն գործոյն: ա. Յորում աղօթք վասն նոցա ՚ի սէրն Աստուծոյ:

* Ոմանք. Ընդ ձեզ ամենեսին: Ոսկան. Ընդ ձեզ. ամէն:

ե. Յօժարեցութիւն գործոյն, և հրաժեշտ վատացն յուլացելոցն
հետաքրքիր լինել:
զ. Աղօթք վասն խաղաղութեանն որ յԱստուծոյ:

ԱՌ ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

դկ. ¹Պաւղոս և Սիղուանոս և Տիմոթէոս՝ եկեղեցւոյ թեսաղոնիկեցւոց՝
յԱստուած Հայր մեր, և ՚ի Տէր Յիսուս Քրիստոս՝: ²Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
Ա ³Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր եղբարք՝ որպէս
և արժան իսկ է. զի և ն քան զևս աճեն հաւատքդ ձեր, և յաճախէ՝ սէր
իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս՝: ⁴Որպէս և մեզ ձեւք պարծել
յեկեղեցիսն Աստուծոյ՝ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց՝ յամենայն
հալածանս ձեր և ՚ի նեղութիւնս, որում դուքն համբերէք՝: ⁵յօրինակ արդար
դատաստանին Աստուծոյ. արժանի՝ լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վասն
որոյ և զճգնութիւնդ կրէք՝: ⁶Եթէ պարտ է առաջի Աստուծոյ՝ հատուցանել
նեղչացն ձերոց նեղութիւնս՝: ⁷Եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ ՚ի
յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի, յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ՝: ⁸
Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ ոյք ոչ ճանաչեն զԱստուած, և որ ոչ
հնազանդին աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի՝: ⁹Որք տայցեն վրէժս ՚ի
սատակումն յաւիտենից՝ յերեսաց Տեառն՝ և ՚ի փառաց զօրութեան նորա՝: ¹⁰
յորժամ զայցէ փառաւոր լինել ՚ի մէջ սրբոց իւրոց, և սքանչելի ՚ի մէջ ամենայն
հաւատացելոց. զի հաւատարիմ եղև վկայութիւնն մեր ՚ի վերայ ձեր յաւուր
յայնմիկ՝: ¹¹Յոր և աղօթս առնենք վասն ձեր յամենայն ժամ. զի զձեզ արժանիս
արասցէ կոչմանն ձերում Աստուած, մինչև լցցէ՝ զամենայն հաճութիւն
բարութեան, և զգործս հաւատոցն զօրութեամբ՝: ¹²Զի փառաւոր լիցի անուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի ձեզ, և դուք ՚ի նմա, ըստ շնորհացն
Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի՝:

* *Ի վերնագրիս՝ ոմանք.* Առ թեսաղոնիկեցիս թուղթ երկրորդ:

* *Ոմանք.* Սիղուսիանոս:

* *Ոմանք.* Հաւատք ձեր... ամենեցուն ձեր:

* *Ոմանք.* Որպէս և մեք ձեւք... յեկեղեցիս Աստուծոյ: *Ոսկան.* Որոց դուքն համ՝:

* *Ոմանք.* Արքայութեան Աստուծոյ... և զճգնութիւնսդ կրէք:

* *Ոմանք.* Թէ պարտ է:

* *Ոմանք.* Ի յայտնութիւն Տեառն Յիսուսի:

* *Ոմանք.* Վրէժս ՚ի նոցանէ որք... և ոչ հնա՞. Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք.* Որք տայցեն վր՞... յերեսաց ահի Տեառն՝ և ՚ի:

* *Ոմանք.* Վկայութիւն մեր... յաւուրն յայնմիկ:

* *Ոսկան յաւելու.* Աստուած մեր մինչև լցցէ զամենայն զհաճութիւն:

* *Ոմանք.* Փառաւոր լինիցի անուն:

Գլուխ Բ

Բ դդ. ¹Աղաչեն զձեզ եղբարք՝ վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մերոյ ժողովելոյն առ նա՝ ²մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ՚ի մտաց՝ և մի՛ զարհուրել, մի՛ հոգւով, և մի՛ բանիւ, և մի՛ թղթովք՝ իբրև թէ՛ ՚ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օր Տեառն՝: ³Մի՛ որ զձեզ խաբեսցէ՝ և մի՛ իւրք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան՝, ⁴հակառակորդն հպարտացեալ ՚ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ Աստուած՝ կան պաշտօն. մինչև նստել նմա ՚ի տաճարին Աստուծոյ, և ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ՝: ⁵Ո՛չ յիշիցէք՝ զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի զայս՝: ⁶Եւ արդ դուք ինքնին գիտէք զայն, որ ունին, յայտնել նմա յիրում ժամանակի՝: ⁷Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ, մինչ ՚ի միջոյ բարձցի՝ որ այժմդ ունի՝: ⁸Եւ ապա՛ յայտնեսցի անօրէնն. զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ՝: ⁹Որոյ գալուստն ըստ ազդեցութեան՝ Սատանայի է, ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք ստո՛վք, ¹⁰և ամենայն պատրանօք անիրաւութեան ՚ի վերայ կորուսելոցն. փոխանակ զի զսէրն ճշմարտութեան ո՛չ ընկալան՝ զի ապրեսցին, և վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն՝: ¹¹Որ դատապարտեսցին ամենեքեան որ ո՛չ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն՝:

Գ ¹²Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ յամենայն ժամ՝ վասն ձեր եղբարք սիրեցեալք ՚ի Տեառնէ. զի ընտրեաց զմեզ Աստուած իսկզբանէ՛ ՚ի փրկութիւն՝ սրբութեամբ Հոգւոյն, և հաւատովքն ճշմարտութեան՝: ¹³յոր և կոչեաց զձեզ աւետարանաւն մերով ՚ի փրկութիւն՝ փառացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝: ¹⁴Այսուհետև եղբարք հաստատուն կացէք՝ և պի՛նդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք, եթէ բանիւ, և եթէ թղթով մերով՝: ¹⁵Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուած Հայր մեր, որ սիրեացն զմեզ՝ և ետ մեզ մխիթարութիւն յաւիտեանի՛ց՝ և յոյս բարեաց շնորհօք՝, ¹⁶մխիթարեսցէ զսիրտս ձեր, և հաստատեսցէ յամենայն բանս և ՚ի գործս բարութեան:

* *Ոմանք.* Աղաչեն զձեզ... վասն գալստեանն Տեառն:

* *Ոմանք.* Եւ մի՛ թղթով... իցէ օրն Տեառն:

* *Ոմանք.* Զի թէ ոչ նախ:

* *Ոմանք.* Նստեալ նմա ՚ի տաճարին, և... եթէ Աստուած իցէ:

* *Ոմանք.* Ոչ յիշէք՝ զի մինչ առ ձեզն իսկ էաք՝ ասէաք:

* *Ոսկան.* Որ ունի յայտնիլ յի՛ն:

* *Ոմանք.* Բայց ցայն ժամ՝ մինչև ՚ի միջոյ:

* *Ոմանք.* Հոգւով բերանով իւ՛ր... գալստեան իւ՛ր:

* *Ոմանք.* Ապրեսցեն. վասն այնորիկ:

* *Ոմանք.* Հաճեցան ընդ անիրաւութիւնն:

* *Ոմանք.* Սրբութեան Հոգւոյն, հաւատովք ճշմարտութեամբ:

* *Ոմանք.* Աւետարանաւ մերով:

* *Ոմանք.* Զաւանդութիւնն զոր... և եթէ թղթովք մերովք:

* *Ոսկան.* Եւ Աստուած և Հայր մեր:

Գլուխ Գ

Դ որդ. ¹Այսուհետև եղբարք՝ աղօթս արարեք ՚ի վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ. և փառաւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզդ*. ²զի ապրեսցուք յանօրինաց և յանգգամաց մարդոց. զի ոչ ամենեցուն են հաւատք*: ³Այլ հաւատարիմ է Տէր, որ և հաստատեսցէ զձեզ, և պահեսցէ ՚ի չարեանսի*: ⁴Վստահ եմք ՚ի ձեզ Տէրամբ, թէ զոր պատուիրեսցաքն ձեզ, և առնէք՝ և առնիցէք*: ⁵Այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ՚ի սէրն Աստուծոյ՝ և ՚ի համբերութիւնն Քրիստոսի*:

Ե ⁶Պատուիրեմ ձեզ եղբարք՝ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, խորշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ստահակսն գնայցեն. և ոչ ըստ աւանդութեանն զոր ընկալարուք ՚ի մենջ*: ⁷Զի դուք ինքնին գիտէք՝ թէ ո՞րպէս պարտ է ձեզ նմանել մեզ. զի ոչ երբէք ստահակեսցաք առ ձեզ*. ⁸և ոչ ձրի զուրուք հաց կերաք. այլ ջանիւ և վաստակով զցայգ և զցերեկ գործեսք՝ վասն չծանրանալոյ ումեք ՚ի ձէնջ. ⁹ոչ եթէ չունեսք իշխանութիւն. այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ նմանօղս լինել մեզ*: ¹⁰Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրեսք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի*: ¹¹Արդ՝ լսեմք զոմանց ՚ի ձէնջ՝ թէ ստահակութեամբ գնան. գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալք հետաքրքիրք շրջին*: ¹²Այնպիսեացն պատուէր տամք՝ և աղաչեմք ՚ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեսցեն՝ և զիւրեանց հաց կերիցեն*: ¹³Այլ դուք եղբարք՝ մի՛ ձանձրանայք զբարիս գործել: ¹⁴Ապա եթէ ոչ որ հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ, դո՛ւք նշանակեսցիք գնա. և մի՛ խառնակեսցիք ընդ նմա, զի պատկառեսցէ*: ¹⁵Բայց մի՛ իբրև զթշնամի համարեսցիք, այլ խրատեսցիք իբրև զեղբայր*:

Զ ¹⁶Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս: Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ: ¹⁷Ողջոյնս՝ իմոյ՝ ձեռին Պաւղոսի է, որ է նշանակ յամենայն թուղթս այսպէս գրեմ: ¹⁸Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ*:

* *Ոմանք.* Եւ ՚ի մեր վերայ... և փառաւոր լիցի... և առ ձեզ:

* *Օրինակ մի.* Յանօրինաց և յապստամբաց մարդոց:

* *Ոմանք.* Այլ և հաւատարիմ է Աստուած որ հաստատեսցէ զձեզ, և պահեսցէ զձեզ ՚ի:

* *Ոմանք.* Վստահ եմ ՚ի ձեզ Տէրամբ՝ եթէ զոր... ձեզ, առնէք և:

* *Ոմանք.* Ուղղեսցէ զձեզ ՚ի... և ՚ի համբերութիւնն Քրիստոսի:

* *Ոմանք.* Ստահակն գնայցեն:

* *Ոմանք.* Եթէ որպէս պարտ իցէ ձեզ նմա՞: *Այլք.* Եւ ոչ երբէք ստա՞:

* *Ոմանք.* Ոչ թէ չունէաք... նմանողք լինել մեզ:

* *Բազումք.* Քանզի մինչդեռ առ ձեզ: *Ոմանք.* Եթէ որ ոչ... գործել, կերիցէ մի:

* *Բազումք.* Յուլացեալ հետաքրքիր շրջին:

* *Ոմանք.* Պատուէր տամ և աղաչեմ ՚ի Տէր Յիսուս, զի... գործիցեն:

* *Ոմանք.* Ապա թէ որ ոչ հնա՞... Եւ մի՛ խառնեսցիք ընդ:

* *Օրինակ մի.* Համարիցիք. այլ մխիթարեսցիք իբրև:

* *Ոսկան յաւելու.* Ընդ ամենեսին ձեզ. *ամեն:*

Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ՝ գրեցաւ յԱթենայ: Տունք ԾԶ:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Տիմոթէոս Առաջին Թղթոյն

Ձայս առաքեաց ՚ի Մակեդոնոյ, և է պատճառ թղթոյս՝ ա՛յս: Յեփեսոսս ոմանք ՚ի Յրեուփին շրջին. և սկսեալ օտար վարդապետութեանն ընդդիմանային պատճառելով զօրէնսն. զայս լուեալ առաքեալն յղեաց զՏիմոթէոս անդ մնալ առ ՚ի յուղղել զնոսա. զրէ և զթուղթս, և յառաջագոյն պատուիրէ Տիմոթէի գիտել զոր ՚ի Քրիստոս զհաւատս: Վարդապետէ նմա և վասն օրինացն, առ ՚ի յարգելու զորս արտաքոյ ուղիղ վարդապետութեանն խօսէին: Սաստէ և նոյն ինքն նոցին, Յիմենեայ և Աղէքսանդրոսի որք նաւակոծեցան ՚ի հաւատս, զոր մատնեաց Սատանայի զի խրատեսցին չհայիոյել: Ձայս պատուիրեալ ևս և սահմանեալ զնոսին, կանոն եկեղեցական, վասն աղօթից. ո՞րպէս և կամ ո՛ւր և կամ վասն ո՛ւմ աղօթել. վասն կանանց սաստէ ուսանել, մանաւանդ յեկեղեցի, և մի՛ վարդապետել: Վասն եպիսկոպոսաց և երիցանց և սարկաւազաց, ո՛րպէս և որոց կայցեն. և որք են ընդ ձեռամբ եկեղեցւոյն, թէ զորքան ամաց պարտ է այրի անուանել, և սոքա որով կոչին և ո՛րպէս զգուշանան: Խրատէ զմանկամարդսն ամուսնանալ, և մի՛ աղտեղութեամբ կեալ: Պատուիրէ և վասն մեծատանց մի՛ ամբարտաւանել, և մի՛ յուսալ ՚ի փարթամութիւն: Յետ այսորիկ ասէ վասն վարդապետաց որ աշխատին. զգուշացուցանէ զնա վարդապետութեամբն գիտել զժամանակն յորում լինին ոմանք խտորեալ ՚ի հաւատոցն: Վարդապետէ նոցա և վասն սրբութեան կերակրոց, և պատուիրէ խորշել յորոց շրջողքն էին, որով ոմանք և յանցաւորք եղեն հաւատոցն, կատարեալ զթուղթն:

Գլուխք առ Տիմոթէոս Առաջին Թղթոյն

ա. Վասն յԱստուծոյ սէրն առաջնորդութեան, որ անկարօտն առնէ առ ՚ի յաւիտենական հարկէն:

բ. Վասն իւրոյ ընտրութեան լինելոյ աւետարանիչ ՚ի հալածչէ՝ ըստ շնորհացն Քրիստոսի:

գ. Պատուէր վասն հաւատոյ և մտադիւր սպասաւորութեան, առանց որոյ շտապ տազնապի կայր ՚ի վերայ:

դ. Վասն աղօթից ՚ի վերայ ամենեցուն, և թէ ամենայն ուրեք

** Ամենայն գրչագիրք մեր՝ ընդ Յելլենական հնագոյն և ընտրելագոյն օրինակաց՝ աստանօր յետ երկրորդ Թեսաղոնիկեցւոցն կարգեն զԹուղթն առ երրայեցիս. և ապա Առ Տիմոթէոս Առաջին, և այլն. աւարտեալ զչորեքտասան թուղթսն առաքելոյն Թղթովն Փիլիմոնի: Ուր Ոսկան ըստ կարգի Լատինականին՝ հուսկ յետոյ եթող զԹուղթն առ երրայեցիս:*

անմեղութեամբ՝ առանց խռովութեան պարկեշտութեամբ:
 ե. Վասն վարդապետաց, թէ արանց օրէն է լինել և ո՛չ կանանց վասն
 բնութեանն և վասն ցաւոցն որ ՚ի պատրանաց անտի մտին, զոր լուծանէ
 ծնունդն Քրիստոսի, և հաւատք նոցա և վարք:
 գ. Վասն առաքինութեան եպիսկոպոսի: *ա.* Յորում վասն սարկաւազաց
 արանց և կանանց:
 է. Վասն աստուածեղէն մարմնանալոյն: *ա.* Յորում վասն հերձուածոցն
 դիւականաց որ լինելոց իցեն:
 ը. Վասն պատերազմի աստուածպաշտութեանն յուսով:
 թ. Վասն խնամոց անձին և եկեղեցւոյ:
 ժ. Վասն պատշաճութեամբ առ իւրաքանչիւրոք մերձենալոյ:
 ժա. Վասն այրեաց հասակի և կարգաց, և դարման տանելոյ:
 ժբ. Վասն երիցանց պատուոյ:
 ժգ. Վասն ՚ի ձեռնադրութիւնսն զգուշանալոյ:
 ժդ. Թէ չի՞ք ինչ գործ որ թաքչիցի:
 ժե. Վասն ծառայից հնազանդութեան:
 ժզ. Հակառակ շահասիրացն ստոցն վարդապետաց:
 ժէ. Պատուէր ահագին վասն սուրբ հնազանդութեան մինչև ցվախճան:
 ժը. Մեծատանց առաջնորդութիւն ՚ի կեանսն ճշմարիտս:

ԱՌ ՏԻՍՈՒԹԵՈՍ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՂԹ*

1

ԳԼՈՒԽ Ա

ակ. ¹Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ հրամանի Փրկչին մերոյ
 Աստուծոյ, և Յիսուսի Քրիստոսի յուսոյն մերոյ* ²Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ
 հաւատովք: Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ՛ և ՚ի Տեառնէ
 մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՛:

Ա ³Որպէս աղաչեցի զքեզ կա՛լ յեփեսոս, մինչ երթային ՚ի Մակեդոնիա. զի
 պատուէր տացես ոմանց չլինել՝ օտարուսմունս* ⁴և չհայել՝ յառասպելս և ՚ի
 տոհմաթիւս անչափս. որ մանաւանդ խնդիրս յուզեն, և ո՛չ զտնտեսութիւն
 Աստուծոյ հաւատովք: ⁵Քանզի գլուխ պատուիրանին՝ սէ՛ր է, ՚ի սուրբ սրտէ, և ՚ի
 մտաց բարեաց, և յանկեղծաւոր հաւատոց. ⁶յորոց ոմանք վրիպեցան
 խտտորեալք յունայնութիւն բանից. ⁷կամին լինել վարդապետք օրինաց.
 ինքեանք ո՛չ իմանան զինչ խօսին, և ո՛չ վասն որոց պնդեալն են* ⁸Գիտենք՝ եթէ

* *Ի վերնագրիս ոմանք.* Առ Տիմոթ՝. թուրք առաջին:

* *Ոմանք.* Եւ Քրիստոսի Յիսուսի յու՛ն:

* *Ոմանք.* Սիրելւոյ որդւոյ:

* *Ոսկան.* Մինչ երթայի ՚ի Մա՛: *Օրինակ մի.* Տացես նոցա չլինել:

* *Ոմանք.* Եւ ինքեանք ոչ ի՛... վասն որոյ պնդեալ են:

բարւո՞ք են օրէնք, եթէ ոք զնոսա օրինօ՞ք կրեսցէ՞: ⁹Բայց զա՛յս գիտասցէ՛ զի ՚ի վերայ արդարոց օրէնք ո՛չ կան, այլ ՚ի վերայ անօրինա՛ց և անհնազանդից, ամպարշտա՛ց և մեղաւորաց, անսրբո՛ց և պղծոց, զհայր և զմայր անարգողա՛ց, մարդասպանա՛ց, ¹⁰պռռնկա՛ց, արուագիտա՛ց, մարդէլուզա՛ց, ստո՛ց, ստերդմանց, և եթէ ա՛յլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս. ¹¹որ ըստ աւետարանի փառաց երանելւո՛յն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ՞: Վջ.

Բ ¹²Շնորհ ունիմ այնմիկ՝ որ զօրացոյցն զիս ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ կարգել ՚ի սպասաւորութիւն. ¹³որ յառաջագոյն հայիոյի՛չն էի՝ և հալածիչ և թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան և յանհաւանութեան գործէի՞. ¹⁴և առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ հաւատո՛վքն և սիրով՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս՞: ¹⁵Հաւատարիմ է բանս, և ամենայն ընդունելութեան արժանի է. զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ե՛ս եմ՞: ¹⁶Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յի՛ս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն. յօրինակ այնոցիկ որ հաւատալոցն իցեն ՚ի նա՝ ՚ի կեանսն յաւիտենից: ¹⁷Այլ թագաւորին յաւիտենից՝ անեղծի և աներևութի, միոյն Աստուծոյ՝ փառք, և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն՞:

Գ ¹⁸Չա՛յս պատուիրան աւանդեմ քեզ որդեա՛կ իմ Տիմոթէս, ըստ կանխելոց ՚ի քեզ մարգարէութեանցն. զի դու զինուորիցիս նոքօք զգեղեցիկ զինուորութիւնն. ¹⁹ունիցիս հաւատս՝ սրբովք մտօք. զոր ոմանց մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւակոծեցան ՚ի հաւատսն՞. ²⁰որոց սակի են Հիմենոս՝ և Աղէքսանդրոս. զորս մատնեցի Սատանայի, զի խրատեսցին չհայիոյել՞:

2

Գլուխ Բ

Դ ¹Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամենայն, առնել աղօ՞թս, խնդրուա՛ծս, պաղատա՛նս, զոհութիւնս վասն ամենայն մարդկան՞. ²մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց. զի խաղաղութեանք և հանդարտութեանք վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեանք և սրբութեանք: ³Ձի ա՛յն է բարի և ընդունելի առաջի Փրկչին մերոյ Աստուծոյ. ⁴որ զամենայն մարդիկ կամի՞ զի կեցցեն՝ և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն՞: ⁵Ձի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս՞. ⁶որ ետ

* *Ոմանք.* Թէ բարիոք են օ՞ր... օրինօքն կրեսցէ:

* *Ոմանք.* Ըստ աւետարանին... որոյ եղէ ես հա՞:

* *Ոմանք.* Եւ յանհաւատութեան գոր՞:

* *Ոմանք.* Շնորհքն Տեառն մերոյ: *Յօրինակիւն.* Եւ սիրոյ որ ՚ի Քրիստոս:

* *Առ Ոսկանայ պակասի.* Արժանի է: *Ոմանք.* Ձի Քրիստոս Յիսուս... որոյ գլուխն:

* *Օրինակ մի.* Միայնոյն. և այլ *օրինակ մի.* Մերոյն Աստուծոյ:

* *Ոսկան.* Սրբօք մտօք: *Ոմանք.* Ձորոց ոմանց մերժ՞:

* *Ոմանք.* Հիմենոս՝ և:

* *Ոմանք.* Գոհութիւնս պաղատ՞:

* *Ոմանք.* Ձամենայն մարդ կամի... ճշմարտութեանն եկես՞:

* *Ոմանք.* Քանզի մի է Աստուած... մարդն Յիսուս Քրիստոս:

զանձն փրկանս ընդ ամենեցուն, վկայութիւն ժամանակաց իւրոց*, 7 յոր եղայ ես քարոզ և առաքեալ: Ճշմարիտ ասեմ ՚ի Քրիստոս և ո՛չ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատո՛վք և ճշմարտութեամբ*: ադ. 8 Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս ՚ի վեր առանց բարկութեան և երկմտութեան*: 9 Նոյնպէս և կանայք ՚ի զարդ խոնարհութեան, ակնածութեամբ և զգաստութեամբ զարդարել զանձինս. մի՛ ՚ի հեւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ՚ի հանդերձս պաճուճեալս*. 10 այլ որպէս վայել է կանանց՝ զաստուածապաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան: Ե 11 Կին մարդ՝ ցածութեամբ ուսցի՛, ամենայն հնազանդութեամբ: 12 Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ո՛չ հրամայեմ, և ո՛չ ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ ՚ի լռութեան կալ: 13 Ձի Ադամ նախ ստեղծաւ և ապա՛ Եւա: 14 Եւ Ադամ ո՛չ պատրեցաւ՝ այլ կի՛նն պատրեցաւ և յանցեաւ. 15 բայց կեցցէ՛ վասն որդեծնութեանն, եթէ կայցեն ՚ի հաւատս և ՚ի սէր, և ՚ի սրբութիւն պարկեշտութեան*:

3

Գլուխ Գ

Զ 1 Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ*: 2 Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, հե՛զ, ցա՛ծ, պարկե՛շտ, հիւրասէ՛ր, ուսուցի՛չ*. 3 մի՛ թշնամանօղ, մի՛ հարկանօղ, այլ հանդարտ. մի՛ կռուօղ, մի՛ արծաթասէր. 4 զի իւրում տանն իսկ բարւո՛ք վերակացու լիեալ իցէ. որդեակս ունիցի որ ՚ի հնազանդութեան կայցեն՝ ամենայն պարկեշտութեամբ: 5 Ապա թէ ոք իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լիցի*: 6 Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ ՚ի դատաստանս Սատանայի անկանիցի: 7 Այլ պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել. զի մի՛ ՚ի նախատինս անկանիցի՝ և յորոգայթս Սատանայի*: 8 Նոյնպէս և զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զաւշաքաղս. 9 այլ ունիցին զխորհուրդս հաւատոցն սուրբ մտօք*: 10 Ինքեանք նախ փորձեսցին, և ապա ՚ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն*: 11 Նոյնպէս և կանայք նոցա պարկե՛շտք. մի՛ չարախօսք, հե՛զք՝ հաւատարիմք յամենայնի: 12 Սարկաւագ լինիցին միոյ կնոջ արք. որոց

* Ոսկան. վկայութեամբ ժամանա՛:

* Յօրհնակին պակասէր. եղայ ես քարոզ: Ոմանք. ճշմարտութեամբ. կամ՝ զճշմարիտն ասեմ ՚ի Քրիստոս:

* Ոմանք. Կացցեն յաղ՛... ձեռս իւրեանց ՚ի վեր:

* Օրհնակ մի. ՚ի հիւս ոսկեհուռս ընդէ՛:

* Ոմանք. Կացցէ վասն որդեծն՛... եթէ կացցեն ՚ի հաւ՛... պարկեշտութեամբ: Ոսկան. Եւ ՚ի սրբութեան պար՛:

* Ոմանք. զ Հաւատարիմ է՝ յարեն ՚ի նախընթացն:

* Ոմանք յաւելուն. Բայց պարտ է... արթուն, հեզ, ցած:

* Ոմանք. Ապա եթէ ոք իւ՛... եկեղեցւոյն Աստուծոյ խնա՛:

* Ոմանք. Ձի մի՛ ՚ի նախատանս և յորոգայթ Սատանայի անկանիցի:

* Ոմանք. Ձխորհուրդ հաւա՛:

* Ոմանք. Փորձիցին... ՚ի պաշտօն մա՛:

որդուց իւրեանց բարութք վերակացու լիեալ իցեն, և տանց իւրեանց* .¹³զի որ բարութքն պաշտիցեն, աշտիճան բարի անձանց իւրեանց շահին, և բազում համարձակութիւն ՚ի հաւատսն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս: վջ.

Է¹⁴Ձայս գրեմ առ քեզ, զի ակնունիմ ՚ի մօտոյ գալ. ¹⁵ապա թէ յամեցից, զի գիտասցեն թէ որպէս պարտ իցէ քեզ ՚ի տան Աստուծոյ շրջել. որ է եկեղեցի՝ Աստուծոյ կենդանոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտութեան* : ¹⁶Եւ յայտնի իսկ մե՛ծ է խորհուրդն աստուածպաշտութեան. որ երևեցաւ մարմնով, արդարացաւ Յոգևով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ՚ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի, և վերացաւ փառօք* :

4

Գլուխ Դ

ազ. ¹Այլ Յոգին Սուրբ յայտնապէս ասէ, թէ ՚ի ժամանակս յետինս՝ քակեսցին ոմանք ՚ի հաւատոցն. և հայեսցին յայսս մոլորութեան, և ՚ի վարդապետութիւնս դիւաց* .²Կեղծաւորութեամբ. ստաբանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց* .³որ արգելուցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն ՚ի կերակրոց՝ զոր Աստուած հաստատեաց ՚ի վայելել հաւատացելոց, և ոյք հասեալ իցեն ՚ի ճշմարտութեանն վերայ* : ⁴Ձի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, և չիք ինչ խտտան. մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին* .⁵զի սրբի՝ բանիւն Աստուծոյ՝ և աղօթիւք: ⁶Ձայս խրատ տուեալ եղբարց, բարութք պաշտօնեալ լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սնանիցիս բանիւք հաւատոց, և բարութք վարդապետութեամբն, զորոյ զհետ իսկ եղեր* : ⁷Այլ ՚ի պիղծ բանից՝ և յառասպելաց պառաւանց հրաժարեսցի՛ր:

Ը Բայց կրթեա՛ զանձն քո յաստուածպաշտութիւն. ⁸զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է. իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կեանց ունի՝ զարդիս և զհանդերձելոյն* : ⁹Հաւատարիմ է բանս՝ և ամենայն ընդունելութեան արժանի է* : ¹⁰Ձի ՚ի սոյն իսկ վաստակիմք՝ և նախատինս յանձն առնումք. զի յուսացեալ ենք յԱստուած կենդանի, որ է Փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց* :

Թ բկ. ¹¹Պատուէ՛ր տաջիր զայդ՝ և ուսուցանիջի՛ր. ¹²զի մի՛ ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ: Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց, բանի՛ւք,

* *Ոմանք.* Սարկաւագք լինիցին: *Ուր Ոսկան.* Սարկաւագունք լի՞... որք որդուց իւրեանց: *Յօրինակին պակասէր.* Արք, որոց որդուց իւ՞:

* *Ոմանք.* Ապա եթէ յա՞... թէ որպէս պարտ է քեզ:

* *Ոմանք.* Խորհուրդ աստուածպաշտութեանն:

* *Ոմանք.* Քակտեսցին ոմանք ՚ի... ՚ի վարդապետութիւն դիւ՞:

* *Ոմանք.* Հարեալք իւրեանց խղճիւ:

* *Ոմանք.* Արգելուն յամուսնա՞. և մեկնին ՚ի կե՞: *Ոսկան.* Եւ այնոցիկ ոյք հասեալք իցեն ՚ի ճշմ՞:

* *Ոմանք.* Եւ չիք ՚ի նմա խո՞: *Ուր Ոսկան.* ՚ի նոսա խո՞:

* *Ոմանք.* Վարդապետութեամբ զորոյ զհետն:

* *Ոմանք.* Առ սակաւիկ ինչ... առ ամենայն ինչ օգուտ է... և զհանդերձելոցն:

* *Առ Ոսկանայ պակասի.* Արժանի է:

* *Բազունք.* Վաստակեմք, և նա՞:

զնացի՛ւք, սիրո՛վ, հաւատո՛վք, սրբութեամբ՝. ¹³մինչև գամ ես. մի՛տ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան՝: ¹⁴Մի՛ անփոյթ առներ զշնորհացո՛ր որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարտութեամբ ՚ի ձեռնադրութենէ երիցութեան: ¹⁵Յայդ խորհեաց՝ և ՚ի դո՛յն կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւն ամենեցո՛ւն յայտնի լիցի՛: ¹⁶Զգո՛յշ լինիջիր անձին և վարդապետութեանդ՝ և ՚ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես՝ և զանձն ապրեցուցես, և զայնոսիկ որ քեզն լսիցեն՝:

5

Գլուխ Ե

Ժ ¹Ձծերն՝ մի՛ պատուհասիցես, այլ մխիթարեսջի՛ր իբրև զհայր. զերիտասարդս իբրև զեղբա՛րս՝, ²զպառաւունս իբրև զմա՛րս, զմանկամարդս իբրև զքո՛րս, ամենայն սրբութեամբ:

ԺԱ ³Ձայրիս պատուեա՛ որ ստոյգ այրիքն իցեն՝: ⁴Ապա թէ ոք այրի՝ որդիս և թռռունս ունիցի, ուսանիցին՝ նախ իւրեանց տանց բարի առնել, և զփոխարէնսն հատուցանել ծնողացն. զի այն է բարի՝ և ընդունելի առաջի Աստուծոյ՝: ⁵Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ, և մեմացեալ յուսացեալ յԱստուած, և կանխեալ յաղօթս և ՚ի խնդրուածս զցայգ և զցերեկ՝: ⁶Իսկ գիրգ այրին՝ կենդանւոյն մեռեալ է: ⁷Ձայս պատուիրեա՛ զի անարատք իցեն: ⁸Իսկ եթէ ոք իւրո՛ց, և մանաւանդ և ընտանեաց խնամ ո՛չ տանիցի, ՚ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատսն է՝: ⁹Այրի՛ ընդ այրիս անուանեսցի, որ չիցէ՛ պակաս ՚ի վաթնամենի՛ց, միո՛յ առն կին լիեալ՝, ¹⁰և ՚ի գործս բարիս վկայեալ. եթէ մանկո՛ւնս սնուցեալ իցէ, եթէ զհելուս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելո՛ց բաւական լիեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ՝: ¹¹Այլ ՚ի մանկամարդաց այրեացն հրաժարեա՛, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ, ամուսնանալ կամին՝. ¹²իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջին հաւատսն արհամարիեսցին: ¹³Միանգամայն և դատարկանձո՛ւնք ուսանին, շրջօ՛ղք տանէ ՚ի տուն. և ո՛չ միայն դատարկք, այլ և փասքո՛ւսք և հետաքրքի՛րք. և խօսին՝ որ ինչ ո՛չ է պիտոյ՝: ¹⁴Կամին զմանկամարդացո՛ր ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել, և մի՛ ինչ պատճառս տալ

* *Օրինակ մի.* Մի ոք իցէ որ զքո մանկ՝... սիրովք, հաւատով:

* *Ոմանք.* Մխիթարութեան և վար՝:

* *Ոմանք.* Կանխիջիր... յառաջադիմութիւնդ յամենայնի յայտնի լինիցի:

* *Յոմանս պակասի.* Առնիցես՝ և զանձն:

* *Ոմանք.* Մի՛ պատուհասեսցես:

* *Ոսկան.* Այրիք իցեն:

* *Յօրինակին.* Ուսուցանիցին՝ նախ իւ՛: *Ոսկան.* Բարիս առնել: *Ոմանք.* Եւ զփոխարէնս հա՛:

* *Ոմանք.* Որ ճշմարիտ այրին իցէ, և մնացեալ յու՛:

* *Ոմանք.* Ի՛ հաւատոյն ուրա՛:

* *Ոսկան.* Եւ այրի ընդ այրիս... որ ոչ իցէ պակաս:

* *Ոմանք.* Եթէ սրբոց զոտս... ամենայն գործոց:

* *Ոմանք.* Հրաժարեաց՝:

* *Ոմանք.* Խօսին որ ոչինչ է պիտոյ:

հակառակորդին՝ ՚ի հայիոյութեան աղագս*։ ¹⁵Ձի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի Սատանայի։ ¹⁶Եթէ որ հաւատացեալ՝ այրիս ունիցի՝ բաւական լիցի նոցա, և մի՛ ծանրասցի եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի։

ԺԲ բդ. ¹⁷Որ բարւոք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ, և վարդապետութեամբ*։ ¹⁸Քանզի ասէ գիր. Մի՛ կապեցես զցռո՛ւկ եզին կալուոյ։ Եւ. Արժանի՛ է մշակն վարձո՛ւ իւրոյ։ ¹⁹Ձերիցուէ չարախօսութիւն՝ մի՛ ընդունիցիս, բայց եթէ երկուք՝ և երկուք վկայիւք*։ ²⁰Իսկ որ մեղանչենն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա՛, զի և այլքն երկիցեն։ ²¹Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի՝ և ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցեն առանց մտահաճութեան. մի՛ ինչ առնել աչառանօք։

ԺԳ ²²Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես, և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սո՛ւրբ պահեսցի՛ր։ ²³Այսուհետև՝ մի՛ ջուր և եթ ըմպիցես, այլ սակաւիկ մի և զինի՛ խառնեսցիր, վասն ստամոքսի՛ և ստէպ հիւանդութեանց*։

ԺԴ ²⁴Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են, և յառաջագոյն հասեալ ՚ի դատաստան, և են՝ որոց զկնի՛ երթան։ ²⁵Նոյնպէս և բարի գործքն՝ յայտնի են. և որ այլազգ ևս ինչ իցեն՝ թաքչել ո՛չ կարեն*։

6

Գլուխ Զ

ԺԵ ¹Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն, զիւրաքանչիւր տեսարս պատուի արժանի՛ համարեսցին. զի մի՛ անունն Աստուծոյ և վարդապետութիւնն հայիոյեսցի*։ ²Իսկ որ հաւատացեալ տեսարս ունիցին, մի՛ արհամարհեսցեն, զի եղբարք են. այլ առաւել՝ ծառայեսցեն, զի հաւատացեալքն են և սիրո՛ւնք. որք զբարերարութիւնն յանձին ունիցին. զայս ուսուցանիցիր՝ և մխիթարեսցի՛ր*։

ԺԶ ³Իսկ եթէ որ այլազգ ինչ ուսուցանիցէ, և ո՛չ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն*։ ⁴այնպիսին հպարտացեալ է, և ոչինչ ո՛չ գիտէ. այլ տապի՛ ՚ի խնդիրս և ՚ի բանս հակառակութեան. ուստի լինի նախանձ, հե՛ռ, հայիոյութիւնք, կարծիք չարեաց*, ⁵խարդախութիւնք ապականելոց մտաց մարդկան, և օտարացելոց ՚ի ճշմարտութենէ անտի, որք շահավաճա՛ռ համարին զաստուածպաշտութիւնն. բայց դու՛ մերժեսցի՛ր յայնպիսեաց անտի*։

* Ոսկան. Կամին մանկամարդացդ։ Ոմանք. Հայիոյութեան աղագաւ։

* Ոմանք. Վերակացու լինիցին ե՛... աշխատիցին բանիւք և։

* Ոմանք. Երկուք կամ երկուք։

* Ոմանք. Սակաւ մի զինի խառ՛... և ստէպ ստէպ հիւ՛։

* Յօրինակին. Թաքչել ոչ կարեն։

* Ոմանք. Պատուոյ արժանի։ Ոմանք. Անուն Աստուծոյ և վարդապետութիւն։

* Ոմանք. Մի՛ արհամարհիցեն՝ զի եղբարքն են... զբարերարութիւնս յանձինս ունի՛։

* Օրինակ մի. Ողջամտութեան բա՛։

* Ոմանք. Եւ ոչ ինչ գիտէ... ուստի լինին նա՛։ Ոմանք. Ի խնդիր և ՚ի... հայիոյութիւն, հակառակութիւնք, կարծիք։

* Ոմանք. Որ շահավա՛... զաստուածպաշտութիւն։

բգ. ⁶Այլ շահավաճաճ մեծ աստուածպաշտութիւնն է՝ բաւականութեամբ հանդերձ: ⁷Ձի ո՛չ բերաք ինչ յաշխարհս, և ո՛չ տանել ինչ կարասցուք*: ⁸Այլ ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք: ⁹Իսկ որք կամինն մեծանալ՝ անկանին ՚ի փորձութիւն, և յորոգայթ, և ՚ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս. որք ընկղմեն զմարդիկ ՚ի սատակումն և ՚ի կորուստ*:

¹⁰Ձի արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ վրիպեցան ՚ի հաւատոցն, և զանձինս արկին ընդ բազում ցաւովք: ԺԷ ¹¹Այլ դու՛ ո՛վ մարդ Աստուծոյ՝ փախիր յայնցանէ, և ե՛րթ զիւտ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան*.

¹²և մարտիր զբարւոք մարտն հաւատոց, և բո՛ւռն հար զկեանցն յաւիտենականաց յոր կոչեցարն, և դաւանեցեր զբարւոք դաւանութիւն առաջի բազում վկայից*:

¹³Պատուիրեն քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի, որ վկայեաց առաջի Պոնտացոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն*, ¹⁴պահել քեզ զպատուիրանն, անբիծ՝ անարատ, մինչև ՚ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*.

¹⁵զոր յիւր ժամանակս ցուցցէ Երանելին, և միայն Յզօր, Թագաւորն թագաւորաց, և Տէր տերանց*.

¹⁶որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ՚ի լոյս անմատոյց. զոր ո՛չ ոք ետես ՚ի մարդկանէ, և ո՛չ տեսանել կարօղ է. որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս. ամէն*:

ԺԸ ¹⁷Մեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէ՛ր տաջի՛ր՝ մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ՚ի մեծութիւն սնտի, այլ յԱստուած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս ՚ի վայելելի*, ¹⁸զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առա՛տս, սիրո՛ւնս, հաղո՛րդս լինել. ¹⁹զանձել անձանց հիմն բարի՛ ՚ի հանդերձեալսն. զի բո՛ւռն հարկանիցեն զճշմարիտ կենացն*:

²⁰Ո՛վ Տիմոթէ՛ պահեա՛ զաւանդն՝ խոտորեալ ՚ի պղծոց և ՚ի նորածայն բանից, և ՚ի հակառակութենէ, և ՚ի մոլարանո՛ւն գիտութենէ*.

²¹զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ՚ի հաւատոց անտի: Շնորհք ընդ քեզ*:

Առ Տիմոթէոս առաջին թուղթ՝ զրեցաւ ՚ի Լաւողիկեայ, որ է մայր քաղաքաց Պակատտիանացոց: Տունք ՍԼ:

* *Ոմանք.* Ձի ոչինչ բերաք յաշխարհ:

* *Ոմանք.* Որ կամին մեծանալ:

* *Ոսկան.* Աստուածպաշ. հաւա. սիրոյ. և այլն:

* *Ոմանք.* Ձբարիոք մարտ հա՛... յորս կոչե՛... դաւանութիւնն առա՛:

* *Օրինակ մի.* Քեզ այսօր առաջի Աստուծոյ: *Ոմանք.* Եւ Քրիստոսի Յիսուսի որ:

* *Ոմանք.* Ամբիծ և անարատ մինչև յայտնութիւն:

* *Ոմանք.* Յիւրում ժամանակի ցուցանէ... Յզօրն, Թագաւորն թա՛. և Տէրն տե՛:

* *Ոմանք.* Բնակեալն ՚ի լոյս:

* *Ոմանք.* Ի մեծութիւնս սնտիս:

* *Ոմանք.* Ձհիմն բարի:

* *Ոմանք.* Խոտորել ՚ի պղ՛:

* *Ոմանք.* Ձոր ոմանք յանձն... վրիպեցան ՚ի հաւատոցն: Շնորհք ընդ ձեզ: *Ոսկան յաւելու.* Ընդ քեզ. ամէն:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Տիմոթեոս Երկրորդ Թղթոյն

Ձայս թուղթս դարձեալ առաքելի Ռոմովմայ. և է պատճառ թղթոյս՝ այն: Որք հաղորդակիցք էին Պաւղոսի՝ թողին զնա, խորհեցաւ առաքեալն զալ Տիմոթէի առ նա, գրեալ զթուղթն, և նշանակել յիշատակեալ զնորին բարեպաշտութիւնն, և զնախածնողաց նորին զհաւատս: Յետ այնորիկ պատմել՝ թէ որք են յԱսիոյ Փիզեղոս և Երմոզենէս՝ դարձուցին զանձինս ՚ի նմանէ. տեսեալ զկապանս նորա Ոնեսիփորոս ՚ի գնալն ՚ի Ռոմ՝ ընկալաւ, և մնաց առ նմա: Պատուիրէ և նմին յանձն առնուլ զչարչարանս: Ի մէջ առնու և զոր Յիմենոս և Փիլետոս յարուցին զամբոխումն. քանզի յամօթ եղեն և յանցաւորք գտան, ասելով թէ յարութիւն մեռելոց այժմ է եղեալ, և զոմանս դարձուցեալ. մանաւանդ և ՚ի կալն ՚ի մէջ նոցա, զգուշացուցանէ զնա ՚ի վարդապետութեանն: Ծանուցանէ թէ եկեցել ժամանակ յորում լինին մարդիկ անձնասէրք, բանասարկուք, անաստուածք. յորժամ տեսանիցես զայս անենայն՝ զգուշացո՛ւ զժողովս զի մի՛ լինիցին կոխան նոցա յայս սովորութիւնս. զի ՚ի մոլար վարդապետութիւնս զբազումս դարձուցանեն: Եւ նշանակել զժամանակ գալստեան նորա. և ևս փութացուցանէ և վկայէ, պատուիրեալ նմա զալ առ ինքն փութով. պատուիրեալ նմա տանել զփիլոնն և զմատեանսն. յԱղէքսանդրոս դարբնէ անձնապահ լինել, զի բազում չարիս եցոյց նմա: Եւ այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք առ Տիմոթեոս Երկրորդ Թղթոյն

- ա. Գովութիւն Տիմոթեայ հաւատոցն, և յօժարեցութիւն համբերութեան՝ ըստ արժանաւորութեան շնորհօք:
- բ. Յորում և ինքն իսկ ասէ ժուժկալ լինել յորժամ վշտանայցէ:
- գ. Վասն պատշաճ տուչութեան աստուածեղէն կրօնից:
- դ. Վասն անհոգ յաստի կեանս լինելոյ առաքինութեամբ՝ յառանց աշխատութեան կերակուրս:
- ե. Վասն ՚ի Քրիստոս հաւատոցն և համբերութեան յուսով ըստ արժանաւոր պատուոյ:
- զ. Վասն ուղիղ վարդապետութեան, և վարուց սրբոց և խաղաղականաց, և ընդդէմ հակառակորդացն:
- է. Կանխասացութիւն վասն չարեաց մարդկան յաճախելոց՝ և յանդիմանելոց խաբէութեանն:
- ը. Յօժարեցութիւն իւր նմանօրս լինելոյ հակառակ անզգամացն հնազանդութեանն Աստուծոյ. և վասն նորածեացն, որոց հակառակ հրամայէ կալ՝ Տիմոթեայ:
- թ. Վասն իւրոյ հանդերձեալ վախճանին ՚ի փառս յաւիտենականս:

ԱՌ ՏԻՄՈԹԵՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

գկ. ¹Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն որ 'ի Քրիստոս Յիսուս*։ ²Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ, շնորհք ողորմութիւն, և խաղաղութիւն յԱստուծոյ Յօրե՝ և 'ի Քրիստոս Յիսուս Տեառնէ մերմէ։

Ա ³Շնորհ ունիմ Աստուծոյ զոր պաշտեմն 'ի նախնեաց մտօք սրբովք, իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ. զցայգ և զցերեկ ⁴ցանկացեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո, զի լցայց ուրախութեամբ*։ ⁵Չմտաւ ածեալ զանխիղճ հաւատսն որ եմ 'ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ 'ի հանոյ քում Լաւողեայ, և 'ի մօր քում Եւնիկեայ. հաստատեալ եմ թէ և 'ի քեզ է*։ ⁶Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ եմ 'ի քեզ 'ի ձեռնադրութենէ իմմէ։ ⁷Ձի ո՛չ ետ մեզ Աստուած հոգի վիատութեան, այլ զօրութեան, և սիրոյ, և զգաստութեան։ ⁸Մի՛ այսուիտև ամօք համարիցիս զվկայութիւնն Տեառն մերոյ, և մի՛ զիս զկապեալ նորա. այլ կցո՛րդ լեր չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեանն Աստուծոյ*, ⁹որ փրկեացն զմեզ, և կոչեաց 'ի կոչումն սուրբ. ո՛չ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն, և շնորհացն որ տուաւ մեզ 'ի Քրիստոս Յիսուս՝ յառաջ քան զժամանակսն յաւիտենից*։ գդ. ¹⁰Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերևել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ խափանեաց զմահ՝ և լուսաւոր արար զկեանս և զանեղծութիւն 'ի ձեռն աւետարանին. ¹¹որոյ եղայ ես քարո՛զ և առաքեալ՝ և վարդապետ հեթանոսաց*։ ¹²Վասն որոյ և զայս չարչարանս կրեմ, այլ ո՛չինչ ամօք համարիմ. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. և հաստատեալ եմ, թէ կարօղ է զաւանդն իմ պահել յաւուրն յայն*։ ¹³Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն զորս յինէն լուար, հաւատովք և սիրով որ 'ի Քրիստոս Յիսուս*։ ¹⁴Ձբարուք աւանդն պահեսցի՛ր 'ի ձեռն Յոգւոյն Սրբոյ 'ի մեզ բնակելոյ*։ Բ ¹⁵Ձայս գիտասցի՛ր՝ զի մեկնեցան 'ի մենջ ամենեքին՝ որ էին յԱսիա, որոց սակի՛ եմ Փիզելոս և Յերմոգենէս*։ ¹⁶Տացէ Աստուած ողորմութիւն տանն Ոնեսիփորայ. զի բազում անգամ հանգոյց զիս, և զկապանս իմ ո՛չ ամօք համարեցաւ. ¹⁷այլ իբրև եկն 'ի Ռոմվմ, պնդագոյնս խնդրեաց զիս՝ և եգիտ. ¹⁸տացէ նմա Տեր ողորմութիւն գտանել 'ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. և որչափ

* 'ի վերնագրիս ոմանք. Թուղթ առ Տիմոթէս երկրորդ։

* Ոմանք. Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի։

* Ոմանք. Յիշատակել զար՞։

* Ոմանք. Չմտաւ ածել... 'ի հանոյ քում Լաւողիա և 'ի մօր քո Եւնիկեայ, և հաստ՞։

* Ոմանք. Չկապեալս նորա։

* Ոմանք. Փրկեաց զմեզ... և շնորհաց, որ... զժամանակն յաւ՞։

* Ոմանք. Յորոյ եղէ ես սպասաւոր և առաքեալ։

* Բազումք. Պահել յաւրն յայն։

* Ոմանք. Եւ սիրով 'ի Քրիստոս Յիսուս։

* Ոմանք. Աւանդոյ պահեսցի՛ր։

* Ոմանք. Պիզելոս և Յերմո՞։

ինչ միանգամ յեփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես*:

2

Գլուխ Բ

¹Այլ դու որդեակ իմ զօրացիր շնորհօքն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս: ²Եւ զոր լուար յինէն բազում վկայիք, զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական իցեն և զայլս ուսուցանել*:

Գ զգ. ³Վշտակից լեր իբրև զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի*:⁴Ո՛չ որ զինուորեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճո՛յ լինիցի*:⁵Եւ եթէ մարտիկ որ իցէ՝ ո՛չ պակի եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ: ⁶Եւ հողագործին աշխատելոյ, պարտ է նախ ՚ի պտղոյն վայելել: ⁷Իմաց զինչ ասեմս. տացէ՛ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի*:

Դ ⁸Յիշեա՛ զՔրիստոս Յիսուս յարուցեալ ՚ի մեռելոց՝ ՚ի զաւակէ Դաւթի, ըստ աւետարանիս իմում*.⁹Երբուն չարչարիմ կապանօք չափ իբրև զչարագործ. այլ բանն Աստուծոյ՝ ո՛չ եթէ կապեալ իցէ*:¹⁰Վասն այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի և նոքա փրկութեանն հասանիցեն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս երկնաւոր փառօքն հանդերձ*:¹¹Հաւատարիմ է բանս. զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին և կեցցուք*.¹²Եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորեսցուք. և եթէ ուրանամք՝ և նա՛ ուրանայ զմեզ*.¹³Եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ո՛չ կարէ*:

Ե *Կիր*. ¹⁴Ձայս յուշ արասցիր՝ վկայութիւն եղեալ առաջի Աստուծոյ. մի՛ բանակնիւ լինել յոչինչ պէտս ՚ի կործանումն լսողաց: ¹⁵Փութացիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ. ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան*:¹⁶Այլ ՚ի պղծոց և ՚ի սնոտի խօսից մերժեսցիր. զի առաւել յառաջ զայցեն յամպարշտութիւնս*.¹⁷Եւ բանք նոցա իբրև զբաղցկե՛ղ ճարակ գտանեն. որոց սակի՛ են Հիմենոս՝ և Փիլետոս*.¹⁸Որք վրիպեցան ՚ի ճշմարտութենէն, և ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. և կործանեն՝ զհաւատս ոմանց*:¹⁹Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի՛ զկնի՛քս զայս, թէ. Ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ ի՛ւրն են: Եւ. ՚ի բաց լիցի

* *Ոմանք*. Յաւուր յայնմիկ, և որ ինչ յեփեսոս: *Ոմանք*. Ինքնին իսկ քաջ գի՛:

* *Ոմանք*. Եւ զայլսն ուսու՛:

* *Ոմանք*. Ձինուոր Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք*. Թէ զօրա՛... լիցի:

* *Ոմանք*. Իմաց զինչ ասեմս:

* *Ոմանք*. ՁՅիսուս Քրիստոս զյարուցեալն ՚ի մեռելոց: *Ոսկան*. Աւետարանիս իմոյ:

* *Ոմանք*. Չարչարիմս կապա՛:

* *Ոմանք*. Համբերեմք վասն... փրկութեան հասանիցեն ՚ի Քրիստոս:

* *Ոմանք*. Ձի թէ ընդ նմին:

* *Ոմանք*. Եւ եթէ համբէ՛:

* *Ոմանք*. Եւ թէ չհաւա՛: *Օրինակ մի*. Ուրանալ զինքն ոչ կարէ:

* *Բազումք*. Փութացիր զանձն քո:

* *Ոմանք*. ՚ի պիղծ և ՚ի սնոտի: *Օրինակ մի*. Յառաջագայցեն յամբա՛:

* *Ոմանք*. Հիւմենոս և Փիլիտոս. և *օրինակ մի*. Հոմերոս և Փիլիտոս:

* *Ոմանք*. ՚ի ճշմարտութենէ, և ասեն թէ յա՛:

յանհրաւութենէ՝ ամենայն որ անուանէ զանուն Տեառն*։ ²⁰Այլ 'ի տան մեծի ո՛չ միայն են անօքք ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցեղէնք. են որ 'ի պատուի՛ են, և են որ յանարգութեան*։ ²¹Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօք պատուական, սրբեալ և պիտանի՛ Տեառն իւրում՝ յամենայն գործս բարութեան պատրաստեալ։ ²²Այլ յերիտասարդական ցանկութեանցն փախի՛ր. և երթ զհետ արդարութեան, զհաւատոց, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան, ընդ այնոսիկ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք*։ ²³Այլ 'ի յիմար և յանխրատ խնդրոց հրաժարեա՛. գիտասջի՛ր՝ թէ անտի ծնանին կռիւք*։ ²⁴Բայց ծառայի Տեառն ո՛չ է պարտ կռուել, այլ հե՛զ լինել առ ամենեսեան, ուսուցի՛չ, անոխակալ՛*։ ²⁵հանդարտութեամբ խրատել զհակառակօղսն. թերևս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն՝ 'ի գիտութիւն ճշմարտութեան*։ ²⁶և սքափեսցի՛ն յորոգայթից Սատանայի, որսացեալք 'ի նմանէ 'ի նորա կամսն*։

3

Գլուխ Գ

Զ *Կիր.* ¹Զայս գիտասջիր, եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք*։ ²զի եղիցին մարդիկ անձնասէ՛րք, արծաթասէ՛րք, հպարտք, ամբարտաւանք, հայիոյի՛չք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք*, ³աննուէ՛րք, անգո՛ւրք, բանսարկո՛ւք, անժոյժք, վէսք, անբարեսէրք, ⁴մատնի՛չք, յանդո՛ւնք, ամպարհաւաճք. ցանկասէրք՝ մանաւանդ քան աստուածասէրք*։ ⁵որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, և 'ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն. և խորշեսջի՛ր 'ի նոցանէ*։ ⁶Զի 'ի նոցանէ՛ են՝ որ մտանեն տանէ 'ի տուն, և գերեն զկանայս շեղակուտեալս մեղօք, վարեալս 'ի պէսպէ՛ս ցանկութիւնս*։ ⁷որ յամենայն ժամ ուսանին, և երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ո՛չ հասանեն*։ ⁸Այլ որպէս Յաննեսն և Յամրես հակառակ կացին Մովսիսի. նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք մտօք, անպիտանք 'ի հաւատս*։ ⁹Այլ ո՛չ երբէք գայցեն յառաջ 'ի լա՛ւ անդր. քանզի անմտութիւն սոցա յայտնի՛ լիցի ամենեցուն, որպէս և նոցայն իսկ եղև*։

* *Ոմանք.* Եթէ ծանեաւ Տէր... և 'ի բաց լինի յանհրաւութենէ անտի:

* *Ոսկան.* Մեծի ոչ են միայն:

* *Ոմանք.* Ցանկութեանց փախի՛ր... սուրբ սրտիւ:

* *Ոմանք.* Այլ յիմար... հրաժարեաց, գիտացիր զի անտի:

* *Ոմանք.* Առ ամենեսին:

* *Ոմանք.* Խրատել զհակառակօղոսն: *Օրինակ մի.* Տէր Աստուած ապաշ՞. 'ի գիտութիւն իմաստութեան:

* *Ոմանք.* Որսացեալքն 'ի նմանէ 'ի նորա կամս:

* *Ոմանք.* Գիտասջիք թէ յա՞... եղիցին ժամանակք:

* *Ոմանք.* Անշնորհք, անսուրբք:

* *Ոմանք.* Ամբարհաւաճք:

* *Ոմանք.* Ուրացեալք են, և խորշիջի՛ր 'ի նոցանէ:

* *Բագու՛մք.* Քանզի 'ի նոցանէ են: *Ոմանք.* Վարեալք 'ի պէսպէս:

* *Ոմանք.* Եւ երբեմն 'ի գիտութիւն ճշմարտութեան:

* *Ոմանք.* Նոյնպէս և նոքա հակա՞:

* *Ոմանք.* Յառաջ գայցեն 'ի լաւ... անմտութիւն նոցա յայտնի լինիցի ամեն*:

Է ¹⁰Այլ դու զհե՛տ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատո՛ց, երկայնմտութեան, սիրո՛յ, համբերութեան*, ¹¹հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղե՛ն ինձ յԱնտիոք, և ՚ի յԻկոնիոն, և ՚ի Լիւստրոս. որպիսի հալածանաց համբերի, և յամենայնէ փրկեաց զիս Տէր*։ ¹²Եւ ամենեքին որ կամիցին աստուածապաշտութեամբ կեալ ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի հալածանս կացցեն*։ ¹³Այլ մա՛րդք չարք և կախարդք, յառա՛ջ եկեսցեն ՚ի չար անդր. մոլորեալք՝ և մոլորեցուցանիցեն։ ¹⁴Այլ դու՝ հաստատուն կաց յոր ուսարդ, և հաւատարի՛մ եղեր. գիտե՛ս ուստի ուսար*։ ¹⁵զի ՚ի մանկութենէ՛ զգիրս սուրբս գիտես, որ կարօղ են իմաստուն առնել զքեզ ՚ի փրկութիւն՝ ՚ի ձեռն հաւատոցն որ ՚ի Քրիստոս Յիսուս*։ ոչ. ¹⁶Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք, ՚ի վարդապետութիւն են՝ և ՚ի յանդիմանութիւն, և յուղղութիւն, և ՚ի խրատ արդարութեան*։ ¹⁷զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ*։

4

Գլուխ Դ

Ը ¹Ձայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ, և Յիսուսի Քրիստոսի, որ դատելո՛ց է զկենդանիս և զմեռեալս ՚ի յայտնութեան իւրում և յարքայութեան*։ ²և դու քարոզեա՛ զբանն, հաս՛ ՚ի վերայ ժամու և տարածամու, յանդիմանեա՛, սաստեա՛, մխիթարեա՛, ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ։ ³Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ո՛չ անսայցեն. այլ ըստ իւրաքանչի՛ր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմնաջելոյ լսելեաց իւրեանց*։ ⁴և ՚ի ճշմարտութենէ՛ անտի դարձուցանիցեն զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին*։ ⁵Այլ դու՝ զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա. զպաշտօնդ քո կատարեալ կալ*։

Թ ⁶Ձի ես՝ այտուհետև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ։ ⁷Զբարուք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի՛, զհաւատսն պահեցի՛։ ⁸Այտուհետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ՛ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն Դատաւոր. ո՛չ միայն ինձ, այլ և ամենեցուն որ սիրեցին զյայտնութիւն նորա։ զշ. Փութասջի՛ր գալ առ իս վաղվաղակի*։ ⁹զի

* Օրինակ մի. Ձհե՛տ եկ վարդա՛։

* Ոմանք. Եւ յԻկոնիոն և ՚ի Լիւստրոս... հալածանաց համբերէի. կամ՝ և համբերեցի, և յամենայնի փրկեաց։ Ուր Ոսկան. Եւ ՚ի Լիւստրայ։ Յայս համար՝ ամենայն զրչագիրք համաձայն մերունս ՚ի լուս՝. նշանակեն՝ զԹեկղի չարչարանսն ասէ։

* Ոմանք. Եւ ամենեքեան... կալ ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի հալածանս կայցեն։

* Ոմանք. Յորս ուսարդ... ուստի ուսարդ։

* Ոմանք. Որ կորողն է իմաս՛։

* Ոմանք. Եւ յանդիմանութիւն։

* Ոմանք. Ձի կատարեալ լիցի։

* Ոմանք. Եւ Քրիստոսի Յիսուսի որ դատելոցն է... ՚ի յայտնութեանն իւ՛։

* Օրինակ մի. Ըստ մարմնաջելոյ լսելեաց։

* Ոմանք. Դարձուցանեն զլս՛։

* Ոմանք. Յամենայնի ճգնեա՛. զգործ աւետարանչին... զպաշտօն քո։

* Ոմանք. Կայ և մնայ ինձ... ինձ յաւուրն յայնմիկ արդար Դատաւորն։ Ոսկան. Եւ ոչ

Դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշխարհ, և գնաց՝ ՚ի Թեսաղոնիկէ*։ ¹⁰Կրեսկէս՝ ՚ի Գալիլեա, Տիտոս ՚ի Դաղմատիա*։ ¹¹Ղուկաս միայն է ընդ իս։ ՉՄարկոս առեալ ընդ քեզ ածիցես, զի է ինձ պիտանի ՚ի սպասաւորութիւն։ ¹²ՉՏիւքիկոս առաքեցի՝ յեփեսոս։ ¹³ՉՓիլոնն թողի՝ ՚ի Տրովադայ առ Կարպիոսի. յորժամ գայցես՝ բերջի՛ր և զգիրսն, մանաւանդ զմատեանսն*։ ¹⁴Աղէքսանդրոս բազում չարչարանս եցոյց ինձ. հատուցէ՛ նմա Տէր ըստ գործս նորա*։ ¹⁵Յորմէ և դո՛ւ անձնապահ լինիջի՛ր. զի շատ հակառակ եկաց բանից մերոց*։ ¹⁶Յառաջնում ատենին, ո՛չ որ ինձ ՚ի թիկունս եկաց, այլ ամենեքին թողին զիս. մի՛ համարեսցի նոցա այն*։ ¹⁷Այլ Տէր օգնեաց ինձ և զօրացոյց զիս, զի ինն՝ քարոզութիւնն հաստատեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք. և ապրեցայ ես ՚ի բերանոյ առիւծուն*։ ¹⁸Փրկեսցէ՛ զիս Տէր յամենայն գործոց չարեաց, և զերծուցէ՛ զիս յարքայութիւն իւր որ յերկինս է, որում փանօք յաւիտեանս յաւիտենից. ամէն*։ ¹⁹Ողջոյն տաջիր Պրիսկեայ և Ակիւղեայ, և Ոնիսիփորայ տանն*։ ²⁰Երաստոս մնաց ՚ի Կորնթոս. զՏրոփիմոս թողի՝ ՚ի Մելիտոս հիւանդագին։ ²¹Փութասջի՛ր յառաջ քան զձմեռն գալ։ Ողջոյն տան քեզ Եւբուդոս և Պուղէս և Ղինոս և Կղաւդիս, և եղբարք ամենեքեան*։ ²²Տէր Յիսուս Քրիստոս ընդ ոգւոյդ քուն։ Շնորհք ընդ քեզ*։

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթ, որ էր Եփեսացոց եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռնադրեալ. գրեցաւ ՚ի Հռովմէ՝ յորժամ երկրորդ անգամ եկաց յատենի Պաւղոս առաջի Ներոնի կայսեր Հռոմայ։ Տունք ԵԴ՝

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Տիտոս Թղթոյն

Չայս առաքեաց ՚ի Նիկոպօլսէ, զի անդ ձմերեաց. և է պատճառ թղթոյս՝

միայն ինձ։

**Ոմանք.* Եւ սիրեաց զաշխարհս։

**Յօրինակին.* Կրկէս ՚ի Գալիլ՝։

**Բազումք.* Առ Կարպոսի. և *ոմանք.* Կարպոսիս։ *Յայս համար ամենայն գրչագիրք համաձայն մերունս ՚ի լուս՝. նշանակեն.* Մատեանք էին Հրէիցն գալարելով. զայնմանէ ասէ։

**Ոսկան յաւելու.* Աղէքսանդրոս *դարբին* բազում չար՝։ *Ոմանք.* Տէր ըստ գործս նորա. և *ոմանք.* Տէր զգործս նորա։

**Ոմանք.* Բանից իմոց։

**Ոմանք.* Յառաջնումն ատենի։

**Յօրինակին պակասէր.* Ապրեցայ ես ՚ի բէ՝։

**Ոմանք.* Եւ փրկեսցէ... գործոց չարաց։

**Բազումք.* Եւ Ոնեսիփորայ։

**Յոմանս պակասի.* Կղաւդիս, և եղբարք ա՞։

**Ոսկան յաւելու.* Ընդ քեզ. ամէն

**Ի վախճանի ոմանք.* Առաջին ձեռնադրեալ եպիսկոպոս... կաց յատէ՛... կայսեր Հռոմոնց։

այս: 'Ի Կրիտէ եթող զՏիտոս, զի հաստատեսցէ յամենայն քաղաքս ժառանգաւորս. բազումք որք անդ կային սկսեալ էին պատճառել զօրէնսն, որով ընդդէմ կային ժողովոյն: Լուաւ Պօղոս և գրէ. և նախ՝ գոհանայ զԱստուծոյ վասն նորա երկիւղածութեանն: Նշանակէ և զորս 'ի Քրիստոս ունի զհաւատսն. մի՛ տղայ լինել, այլ ապառնւոյն զգուշանալ. և պատուիրէ ըստ Աստուծոյ զայս, հաստատել ժառանգաւորս, և զնոսին ուսուցանել՝ ո՞րպէս և ո՞ւմ իցեն նոքա. և սաստէ 'ի նոսա զի ուղղեսցին, որք հակառակքն էին ողջամիտ հաւատոցն. մանաւանդ և որք 'ի թլփատութեանն: Տեսանէ զԿրետացիսն զի անգործք էին, և պատշաճէ նոցին սաստել: Վարդապետէ նոցա զամենայն կերակուրս զի մաքուր է մաքրոցն: Եւ թէ ո՞րպէս լիցին պառաւունքն, զի վայելչապէս իմաստացուսցեն զաղջկունսն: Սահմանէ թէ որպէս ծառայքն լինիցին մտերիմ իւրեանց տերանցն: Եւ 'ի կատարածն յիշեցուցանէ՝ եթէ Փրկչին շնորհ ո՛չ 'ի գործոց զմեզ արդարացոյց, այլ ըստ իւր մարդասիրութեանն: Եւ պատուիրէ զօրինական կռիւսն ընթադրել. և իբրև պատկառելի մեկնէ զայս: Եւ յորժամ առաքեսցէ զԱրտեմաս զի եկեսցէ առ նա, պատուիրէ. և զի իւրքն ուսցին 'ի բարի գործս կալ. և այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք առ Տիտոս Թղթոյն

- ա. Վասն վարդապետաց պիտանեաց 'ի պաշտօն՝ և յանդիմանութիւն անհաւատից:
- բ. Հակառակ այնոցիկ որ մարմնաւոր սրբութեանցն վերակացուք լինին, և վասն հոգևոր առաքինութեան:
- գ. Խրատք՝ զորս պարտ է խրատել ըստ իւրաքանչիւր հասակաց:
- դ. Վասն ծառայից, զի և նոքա Քրիստոսի շնորհացն արժանաւորութեամբ ծառայեսցեն:
- ե. Վասն իշխանաց արժանաւոր հնազանդութեան ըստ Քրիստոսի հեզութեանն:
- զ. Խրատ առ 'ի խտորելոյ 'ի հերձուածողական քննողացն:

ԱՌ ՏԻՏՈՍ

ԹՈՒՂԹ*

1

Գլուխ Ա

Կիր. ¹Պաւղոս ծառայ Աստուծոյ, և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Աստուծոյ, և 'ի գիտութիւն ճշմարտութեան, որ ընդ աստուածապաշտութեանն է*. ²յուսով կենացն յաւիտենից, զոր խոստացաւ

* *Ի վերնագրիս ոմանք.* Թուղթ առ Տիտոս:

* *Ոմանք.* Հաւատոցն ընտրելոց Աստուծոյ, և գիտութիւն... և ընդ աստուածապաշտ:

անտուճակ Աստուած յառաջ քան զժամանակս յաւիտենից* .³ Բայց յայտնեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որոյ եղէ ես հաւատարիմ, ըստ հրամանի Փրկչին մերոյ Աստուծոյ: ⁴Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հաւատոց, շնորհք, և խաղաղութիւն յԱստուծոյ 'ի Զօրէ' և 'ի Քրիստոսէ Յիսուսէ Փրկչէ' մերմէ*:

Ա ⁵Վասն այնորիկ իսկ թողի զքեզ 'ի Կրիտէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես, և կացուցես ըստ քաղաքաց երիցունս, որպէս և ես քեզ պատուիրեցի* .⁶ Եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր, որդեակս ունիցի հաւատացեալս, և ոչ յամբաստանութիւն անառակութեան, կամ անհնազանդս: ⁷Զի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, որպէս և Աստուծոյ տնտեսի. մի՛ յանդուզն, մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ զաւշաքաղ. ⁸այլ՝ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ* .⁹ Վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեան. զի կարող իցէ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն, և զհակառակորդսն կշտամբել:

Բ ¹⁰Քանզի բազումք են անհնազանդք, զրախօսք, և մտախաբք. մանաւանդ որ 'ի թլփատութենէ անտի են* .¹¹ զորս պարտ է ըմբերանել. որք զամենայն տունս կործանեն, և ուսուցանեն՝ զոր չէ՛ արժան, վասն զաւշաքաղութեան: ոչ. ¹²Ասաց ոմն 'ի նոցանէ՛ իւրեանց իսկ մարգարէ. Կրետացիք հանապազասու՛տք, չարածի՛ք, դատարկապո՛րտք* : ¹³Եւ ստոյգ է վկայութիւնս այս. վասն որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի առողջացին 'ի հաւատս. ¹⁴և մի՛ հայեսցին 'ի Զրեական առասպելս, և 'ի պատուէրս մարդկան զառածելոցն 'ի ճշմարտութենէ: ¹⁵Ամենայն ինչ սուրբ է սրբոց, այլ պղծոցն և անհաւատից՝ ոչի՛նչ է սուրբ. այլ պղծեալ են միտք և խորհուրդք նոցա* : ¹⁶Խոստանան զիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրանան. պի՛ղծք և անհաւատք, և յամենայն գործս բարեաց անափտանք* :

2

Գլուխ Բ

¹Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ վարդապետութեան* :

Գարդապետութեանս: ²Օերոց զգաստս լինել, պարկեշտս, ցածունս, ողջամիտս 'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբերութեան, 'ի ժուժկալութեան* :

³Պառաւանց նոյնպէս 'ի զգաստութեան, 'ի սուրբ վայելչութեան, մի՛

* *Ոմանք.* Զոր խոստացան... զժամանակն յաւիտէն:

* *Ոմանք.* ՅԱստուծոյ Զօրէ, և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Փրկչէ:

* *Ոմանք.* Վասն այնորիկ իսկ... 'ի Կրիտէ:

* *Ոմանք յաւելուն.* Բարեսէր, հեզ, ցած:

* *Յօրհնակին.* Անհնազանդ, զրախօս: *Ոմանք.* Պարտ է մեզ ըմբերանել... զոր ոչ է արժան:

* *Յայս համար՝ բազում զրջագիրք համաձայն մերունս 'ի լուս' . նշանակեն.*

Յեպենինդոսէ հարցկէ ըղծութիւն. և *ոմանք.* 'ի Պենինդեայ Կրետացւոց հարցկի հրաման:

* *Բազումք.* Բայց պղծոցն և ան՝:

* *Այլք.* Պիղծք և անհաւանք:

* *Ոմանք.* Վարդապետութեանս:

* *Ոմանք.* Զգաստ լինել... 'ի համբերութիւն, 'ի ժուժկալութիւն:

բանսարկուս, մի՛ գինեմուլս, այլ բարեխրատս*.⁴ զի զգաստացուսցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս*,⁵ ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց. զի մի՛ բանն Աստուծոյ և վարդապետութիւնն՝ հայհոյեսցի*:⁶ Զերիտասարդս նոյնպէս աղաչեսցի՛ր՝ ցածունս լինել, ⁷ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն*,⁸ զբանն ողջմտութեան, անպարսաւ լինել, զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի, և մի՛ ինչ ունիցի ասել զմենջ չարութիւն*:

Դ՞Օ առայից՝ իւրեանց տերանցն հնազանդ լինել՝ և հաճո՛յս յամենայնի, մի՛ հակառակօ՞ղս, ¹⁰մի՛ հատուս. այլ զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի: Վջ.¹¹ Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան. ¹²որ խրատեն զմեզ, զի ուրասցո՛ւք զամպարշտութիւն, և զաշխարհական ցանկութիւնս. զգաստութեամբ, և արդարութեամբ, և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհիս*.¹³ և ակնկալցուք երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ՝ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի*.¹⁴ որ ե՛տ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպիական՝ նախանձաւոր գործոց բարութեան*:¹⁵ Զայ՞դ խօսեաց՝ և մխիթարեա՛ և յանդիմանեա՛ ամենայն սաստիւք. զի մի՛ ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ*:

3

Գլուխ Գ

Ե զշ.¹ Եւ յո՛ւշ արասջիր նոցա, իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել՝ և հպատակ կալ. և ամենայն գործոց բարութեան պատրաստ գտանել.² մի՛ զոք հայհոյել, անկռիւս լինել, հե՛զս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել*:³ Զի էաք երբեմն և մեր անմիտք, անհաւանք, մոլորեալք, ծառայեալք ցանկութեանց և պէսպէ՛ս անառակութեանց. չարութեամբ՝ և նախանձո՛ւ շրջեալք, ատեցեալք՝ և զմիմեանս ատեալք*:⁴ Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ*,⁵ ո՛չ ՚ի գործոց արդարութեան զոր արարաք մեր, այլ ըստ իւրուն ողորմութեան

* Ոմանք. ՚ի զգաստութիւնս, և ՚ի սուրբ վայելչութիւնս:

* Ոմանք. Զգաստացուցանիցեն... այրեսէրս լինել:

* Օրինակ մի. Սուրբս, անարատս, բարե՛:

* Ոմանք. Զանկեղծութիւնն ունել:

* Ոմանք. Զբանն ողջմտութեամբ, անպարսաւանս լինել. զի որ հակառակողն է, յա՛... զմենջ ասել չարութիւն:

* Ոմանք. Որ խրատէ զմեզ, զի ուրացեալք զամբարշտութիւնս, և զաշխարհական ցանկութիւն... կեցցուք յաշխարհի:

* Յոմանս պակաս. Փրկչին մերոյ Յիսուսի:

* Ոմանք. Որ ե՞տ զանձն իւր վասն... գործոց բարութեանց:

* Ոմանք. խօսեա՛, մխիթարեա՛:

* Ոմանք. Անկռիւ լինել... առ ամենայն մարդ ցու՛:

* Ոմանք. Քանզի էաք և մեր երբեմն ան՞... չարակնութեամբ և նախանձ... ատեցեալք զմիմեանս:

* Ոմանք. Քաղցրութիւն ՚ի մարդա՛:

ապրեցոյց զմեզ ՚ի ձեռն աւագանին միւսանգամ ծննդեանն, և նորոգութեամբ Յոգւոյն Սրբոյ*։⁶ զոր եհեղ ՚ի մեզ առատութեամբ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, ⁷ զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց*։⁸ Յաւատարի՛ն է բանս, և ՚ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արացեն բարեաց գործոց վերակացո՛ւ լինել հաւատացեալքն յԱստուած. զի այն է բարի և օգտակար մարդկան*։

Ձ⁹ Այլ գլխմարութեան խնդիրս՝ և գտոհմաթիւս, և զհեռ, և զօրինական կռիւս ՚ի բաց մերժեսջիր. զի անօգուտք են և սնուիք*։¹⁰ Յառնէ հերձուածողէ՝ յետ մի՛ անգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր*։¹¹ զիտասջիր զի թւրեալ է այնպիսին, և մեղանչէ՛ անձամբ զանձն դատապարտեալ*։¹² Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմայ, կամ զՏիքիկոս, փութասջիր գալ առ իս ՚ի Նիկոպալիս. զի անդ եղի ՚ի մտի ձմերել*։¹³ Եւ զՁենոն՝ զօրինական դպիր՝ և զԱպաւղոս՝ փութով արձակեսջիր, զի մի՛ ինչ պակասիցէ նոցա*։¹⁴ Ուսցին և մերքն ևս՝ բարեաց գործոց վերակացո՛ւ լինել ՚ի պէտս կարևորս. զի մի՛ անպտուղք լինիցին։¹⁵ Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ամենեքին։ Ողջոյն տուր սիրելեաց մերոց հաւատովք։ Շնորհք ընդ ձեզ ամենեսին*։

Առ Տիտոս Կրետացւոց եկեղեցւոյն առաջին ձեռնադրեալ եպիսկոպոս, գրեցաւ ՚ի Նիկոպալսէ Սակեդովնացւոց։ Տունք Ղէ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Փիլիմոն Թղթոյն

Ձայս թուղթս առաքէ ՚ի Հռովմէ. և է պատճառ թղթոյս՝ այս. Ոնեսիմոս ծառայ Փիլիմոնի փախեաւ, և եկն առ առաքեալն. և վարժեալ ՚ի նմանէ եղև առ նմա ազնիւ ՚ի պաշտօնն. վասն այսորիկ գրէ առ Փիլիմոն վասն նորա զայս ինչ. վստահացեալ ՚ի նա զՈնեսիմոս, զի զգուշացի ունել զնա ընտանեբար, ո՛չ իբրև զծառայ՝ այլ իբրև զեղբայր։ Դառնայ և կոչէ զտուն նորա օտարընկալ. և զի ՚ի գալն իւր պատրաստեսցէ նմա օթեվանս. և այսպես կատարէ զթուղթն։

Գլուխք առ Փիլիմոն Թղթոյն

* *Ոմանք.* Իւրում ողորմութեանն... աւագանին վերստին ծննդեան՝ և նորոգութեան Հոգւոյն։

* *Ոմանք.* Շնորհօք լիցուք ժա՛... կենացն յաւիտենից։

* *Ոմանք.* Արացես գործոց բարեաց հաւատացելոցն յԱստուած, զի այն է։

* *Ոմանք.* Կռիւսն ՚ի բաց... անօգուտք են, սնուիք։

* *Օրինակ մի.* Եւ երկցս խրատելոյ՝ հրաժարեսջիր։

* *Ոմանք.* Ձանձն դատապարտէ։

* *Ոմանք.* Ձարտեմոն, կամ զՏիքիկոս... ՚ի Նիկոպալիս։

* *Ոմանք.* Պակասեսցէ նոցա։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ յաւելու.* Ընդ ձեզ ամենեսին. *ամէն։*

ա. Գովուքին Փիլիմոնի, և գոհութիւն վասն նորին:
բ. Յանձնարարութիւն Ոնեսիմայ ծառայի փախուցելոյ, և աղաչանք վասն
նորին փրկելոյ ՚ի ձեռն հաւատոցն:

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ԵՒ ԱՌ ԱՐՔԻՊՈՍ ՍԱՐԿԱԲԱԳ ԵՒ ԱՌ ԱՊՓԻԱՍ*

1

¹Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տիմոթէոս եղբայր. Փիլեմոնի՝ սիրելոյ՝ և գործակցի՝ մերոյ*, ²և Ապփեայ՝ քեռ, և Արքիպպեայ՝ զինուորակցի՝ մերոյ, և առտնին եկեղեցւոյդ: ³Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Չօրէ մերմէ՝ և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

Ա՝ ⁴Գոհանան՝ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ, յիշատակեալ յաղօթս իմ վասն քո*, ⁵իբրև լսեմ զքո հաւատսն և զսէր, զոր ունիս առ Տէր Յիսուս՝ և առ ամենայն սուրբս*։ ⁶Գի հաղորդութիւն հաւատոցն քոց՝ արգոյ լինիցի, գիտութեամբ ամենայն բարութեան, որ ՚ի ձեզ է ՚ի Քրիստոս Յիսուս*։ ⁷Խնդութիւն յոյժ ընկալայ, և մխիթարութիւն ՚ի վերայ սիրոյն քոյ. զի գուրք սրբոց՝ քն՝ հանգուցեալ են եղբայր*։

Բ՝ ⁸Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ ՚ի Քրիստոս, հրաման տալ քեզ զարժանն* ⁹վասն սիրոյ. մանաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս և Պաւղոս ծերացեալ, արդ՝ և կապեալ ևս Յիսուսի Քրիստոսի*։ ¹⁰Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ՚ի կապանս իմ, զՈնեսիմոս. ¹¹որ երբեմն անպիտան էր քեզ. բայց արդ՝ քեզ և ինձ պիտանի՝. ¹²զոր յղեցի առ քեզ. և դու՝ զդա՝ ընկալջիր, այսինքն է՝ զիմ աղիս*։ ¹³Ձոր կամէի առ իս արգելուլ, զի ընդ քո՝ ունիցի ինձ սպաս ՚ի կապանս աւետարանին*։ ¹⁴Բայց առանց քո կամաց ոչինչ կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո ՚ի հարկէ լինիցին, այլ կամաւ*։ ¹⁵Եւ թերևս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա. ¹⁶մի՛ ևս իբրև զծառայ, այլ ՚ի վեր քան զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եթէ ինձ այսպէս, որչափ ևս առաւել քեզ մարմնով՝ և Տերամբ*։ ¹⁷Եթէ զիս քեզ հաղորդ

* Ամենայն գրչագիրք՝ համաձայն մերուսն ունին զվերնագիրս, բաց յՈսկանայ. որ դնէ լոկ. Առ Փիլիմոն: Բայց երկու օրինակք գրեն. Արքիպաս սարկաւագուհ. և առ Ապփիա. թուղթ:

* Օրինակ մի. Պաւղոս առաքեալ Յիսուսի... Փիլիմոսի սիրելի: Ուր ոմանք. Փիլիմոնի:

* Ոմանք. Յիշատակել յաղ՝:

* Ոմանք. Ձհաւատսն քո և զսէրն զոր:

* Ոմանք. Ամենայն բարութեանց, կամ՝ բարութեամբ:

* Ոմանք. Ընկալայ, և ուրախութիւն ՚ի վերայ սիրոյն Քրիստոսի... քն են հանգ՝:

* Օրինակ մի. Ունիս ՚ի Քրիստոս:

* Ոմանք. Վասն սիրոյն... այնպէս լինել:

* Օրինակ մի. Ձոր առաքեցի քեզ. և դու զնա ըն՝... աղիսս:

* Ոմանք. Ձոր կամեցայ առ իս:

* Ոմանք. Ձոչինչ կամե՛... բարիքն քո... լինիցի, այլ կամաւ ըստ Աստուծոյ:

* Ոմանք. Քեզ՝ և մարմնով և Տերամբ:

համարիցիս, ընկալ՝ զդա իբրև զիս*։ ¹⁸Եւ եթէ յանցեալ ինչ իցէ՝ կամ պարտիցի, զայն ինձ համարեաց*։ ¹⁹Ես Պաւղոս գրեցի՝ ինով ձեռամբ. ես հատուցից, զի մի՛ ասիցենք եզ՝ թէ դու զանձն քո ինձ պարտիս*։ ²⁰Այո՛ եղբայր՝ ես քո փոխանակ եղէց՝ ի Տէր. հանգո՛ զաղիսդ իմ ՚ի Քրիստոս*։ ²¹Յուսացեալ ՚ի հնազանդութիւնդ քո գրեցի՛ առ քեզ. քանզի գիտեմ թէ առաւել՝ ևս քան զոր ասեմդ՝ առնիցես*։ ²²Միանգամայն և պատրաստեսցի՛ր ինձ վանս. քանզի յուսամ թէ աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ*։ ²³Ողջո՛յն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ ՚ի Քրիստոս Յիսուս. ²⁴և Մարկոս, և Արիստարքոս, և Դեմաս, և Ղուկաս՝ զործակիցք իմ։ ²⁵Շնորհք Տեառն Յիսուսի ընդ ոգւոյդ ձերում*։

Առ Փիլիմովն և Ապփիա տեսարս Ոնեսիմայ. և առ Արքիպպաս սարկաւազ Կողոսացւոց եկեղեցւոյն, գրեցաւ ՚ի Չոբվմէ՝ ՚ի ձեռն Ոնեսիմայ ծառայի։ Տունք ԼԷ։*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առ Եբրայեցիս Թղթոյն

Ձայս առաքեաց յիտալիոյ. և է պատճառ թղթոյն՝ այն։ Չի որք Չրեայք էին՝ կանգնէին զօրէնս և զստուերս. վասն այսորիկ առաքեալն Պաւղոս որ վարդապետ հեթանոսաց եղև, և առ հեթանոսս առաքեցաւ քարոզել զաւետարանն, գրեալ յամենայն հեթանոսս, գրեաց ևս և որք ՚ի թլփատութեանն էին հաւատացելոց Եբրայեցւոցն խրատտութեան թուղթ՝ վասն գալստեանն Քրիստոսի և վասն դադարելոյ ստուերական օրինացն։ Եւ նախ ցուցանէ զմարգարէս վասն այսորիկ առաքեալս, զի վասն Փրկչին աւետարանէին. և յետ նոցա ինքն եկն։ Ծառայս ասէ զմարգարէսն, և պատգամաւորս նորա գալստեանն, զսոյն Քրիստոս՝

* *Ոմանք.* Եւ եթէ... հաղորդ համարիս, *կամ՝* համարեսցես։

* *Ոմանք.* Եւ եթէ յանցուցեալ ինչ։

* *Ոմանք.* Ես հատուցից քեզ... եթէ և դու զանձն։

* *Ոմանք.* Քո փոխան եղէց։

* *Օրինակ մի.* Յուսացեալ եմ ՚ի հնազանդութիւնդ քո, և գրեցի զայդ, զի գիտեմ թէ առաւել քան զոր ասեմն առնես։ *Ոմանք.* Գիտեմ եթէ... զոր ասեմքս առնիցես։

* *Ոմանք.* Յուսացեալ եմ եթէ աղօթիւք։

* *Ոմանք յաւելուն.* Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... ոգւոյդ ձերում. *ամէն։*

* *Ի վախճանի ոմանք.* Եւ առ Ապփիա... և առ Արքիպպոս։ *Աստէն յաւարտ Պաւղոսեան թղթոցս յարեն գրչագիրք այլ ևս կցկտուր ասացուածս ինչ, թերևս եւթաղեայ. ընդ որս և այն թէ.* Ընդօրինակեցան գիրքս այս ընդ Կեսարացւոց օրինակաց, որ կան յարկեղս գրոց սրբոյն Պամփիլեայ՝ իւրովք ձեռօք գրեալ։ *Որպէս ծանուցար ՚ի վեր անդր, օրինակս մեր և եթ աստէն յետ Թղթոյս Փիլիմոնի յարեալ գերորդ թուղթ Կորնթացւոց, նովաւ աւարտէ զմատեանս. յառաջ քան զՊաւղոսեան թուղթսն. դնելով զՅայտնութիւնն. զոր մեր ըստ պատշաճի կարգենք յառաջիկայդ, սովաւ կնքեալ զնոր Կտակարանս։*

Որդի Աստուծոյ ասէ. որով ամենայն եղև. և զի այս Որդիս մարդ եղև. որ իւրով մարմնովն պատարագեալ մերժեաց զմահն. և ո՛չ արեամբ ցլուց և նոխազացն. այլ արեամբն Քրիստոսի եղև փրկութիւն մարդկան: Յուցանէ և զայս եթէ օրէնքն ոչ զոք կատարեաց, այլ զստուերս ունէր հանդերձեալ բարութեանս, և ո՛չ հանգեալ ժողովուրդն. այլ հաղորդս առնու զմեզ զամենեսեան աւուրն հանգստեան: Դարձեալ ցուցանէ՝ զի քահանայապետութեան պատարագն եղաւ ՚ի յԱհարովնէ մինչև ՚ի Քրիստոս՝ որոյ է տիպ Մելքիսեդեկ. և ո՛չ ՚ի Ղևեայ: Հաւատովք արդարութիւն հարցն մեր նշանակէ, և ո՛չ ՚ի գործոց օրինաց. և դարձեալ ՚ի սովորականն դարձուցանէ և զոսսա, և ընդունի զսոցա վասն Քրիստոսի զհամբերութիւնն. և ՚ի պատուել զերիցունսն կատարէ զթուղթն:

Գլուխք առ Երրայեցիս Թղթոյն

Երրայեցւոց թուղթս՝ թուի թէ չիցէ Պաւղոսի վասն նկարագրին և վասն ո՛չ ՚ի գլուխն կարգելոյ զիւր անունն՝ որպէս և յայլ թուղթսն, և վասն ասելոյն, թէ մեք զիա՞րդ կարասցուք ապրել հեղգացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ ՚ի Տեառնէ, և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն ՚ի մեզ հաստատեցաւ վկայութեամբն Աստուծոյ՝ նշանօք և արուեստիւք:

Փոխելոյ նկարագրի թղթոյս յայտնի են պատճառք, զի առ Երրայեցիսն նոցին բարբառովն գրեալ, յետոյ ասեն թարգմանեցաւ, ոմանք թէ ՚ի Ղուկայ, և այլք թէ ՚ի Կղեմայ. զորոյ և զնկարագիրն իսկ ողջ ածէ: Բայց չգրելոյ զանունն ՚ի թղթի աստ, պատճառքն ՚ի դէպ են, զի հեթանոսաց առաքեալ էր Պաւղոս և ո՛չ Յրէից. քանզի ձեռն տուեալ էր Պետրոսի և այլոց առաքելոցն հաւանութեան, զի ինքն Բառնաբաւ հանդերձ ՚ի հեթանոսս, և պետրոսեանք ՚ի թլփատութիւնն: Եւ արդ՝ քանզի հաւանութեան էր քարոզութիւնն, և թեքեալ էին որ ՚ի Յրէից անտի էին, որպէս թէ ապստամբութիւն ինչ ուսուցանիցէ Պաւղոս, յիրաւի՝ ճանաչելոյ վասն զմիաբանութիւնն՝ տայ թուղթս և առ Երրայեցիսն, և ՚ի գրելն առ նոսա, զանուն իւր կարգել ՚ի գլուխ թղթոյն չէր օրէն: Բայց վկայէ ևս յառաջ յաջորդօքն թուղթս թէ Պաւղոսի է, գրելովն թէ. Եւ կապանաց իմոց վշտակիցք եղերուք: Եւ ասելովն թէ. Առաւել ևս աղօթս արարէք զի վաղվաղակի պատսպարեցայց ձեզ: Եւ բազում ևս այլ են որ ցուցանեն մեզ թէ նորա է թուղթս. որպէս և ինքն իսկ ընթերցուածն յառաջ մատուցեալ ուսուցանէ:

ա. Աստուածխօսութիւն Քրիստոսի՝ փառօքն Հօր, և իշխանութիւն, որ ՚ի վերայ ամենեւնցուն հանդերձ սրբութեամբն զոր յերկրի արար. ուստի վերացաւ անդրէն յերկնաւոր փառսն:

բ. Թէ ո՛չ հարկաւոր են փառքն Քրիստոսի, այլ աստուածեղէն և արարչականք. վասն որոյ ո՛չ աստէն յաշխարհի ուր հարկաւորքն են՝ այլ ՚ի հանդերձեալ աշխարհին:

գ. Թէ մարմնացաւ ըստ խնամոյ և ըստ չարչարանացն կցորդ լինելոյ՝ և ըստ ընտանութեանն ընդ մեզ, վասն փրկութեան մարդկան՝ մահուամբն իւրով ընդ իւր ընտանեցուցանելոյ:

դ. Թէ հաւատալ պարտ է Քրիստոսի որպէս Մովսիսին հաւատացին. բայց

ըստ առաւելութեան այնպէս՝ որպէս Աստուծոյ առ մարդ: *ա.* Յորում թէ երկնչել պարտ է յառաջնոցն տարագրութենէ:

ե. Նախանկար օրինակաւ փութալ յառաջագոյն՝ ՚ի գուշակեալ հանգիստն:

զ. Ահ դատաստանին և քաղցրութիւն շնորհաց ըստ քահանայութեան, որով չարչարակիցն եղև մեզ մարդկօրէն:

է. Սաստ՝ որպէս տակաւին կատարելոց նորընծայ վարդապետութեան: *ա.* Յորում յօժարեցութիւն առ ՚ի յաճումն, որպէս թէ չիցէ երկրորդ սկիզբն: *բ.* Մխիթարութիւն գոհութեամբ հանդերձ:

ը. Թէ հաստատուն են աւետիքն Աստուծոյ, և նոյնք երդմամբք հանդերձ:

թ. Վասն Մելքիսեդեկի որ զՔրիստոսի օրինակն ունէր՝ անուամբ և քաղաքաւ, և կենօք, և մահուամբ, և քահանայութեամբ: *ա.* Յորում թէ և քան զԱբրահամ նախամեծար եղև:

ժ. Թէ դադարելոց է Ահարոնի քահանայութիւնն, քանզի երկրաւոր էր, և հաստատելոց է երկնաւորն որ Քրիստոսի է. յայլմէ ազգէ ո՛չ ըստ մարմնոյ, և ո՛չ ըստ մարմնաւոր օրինակի:

ժա. Առաւելութիւն երկրորդ ուխտին քան զառաջնոյն՝ քաւութեամբ և սրբութեամբ:

ժբ. Վասն արեանն Քրիստոսի որով նոր ուխտ է. զի այն իսկ ճշմարիտ սրբութիւն է ՚ի մշտնջենաւորս. և որ ոչն արեամբ անասնոց՝ որ բազում անգամ մատչէին:

ժգ. Վկայութիւնք վասն միոյն սրբութեանն, և նուաճութեան որ առ Աստուած: *ա.* Յորում յօժարեցութիւն ըստ հաւատոցն ճանապարհ գործելոյ:

ժդ. Յօժարութիւն փութոյ առ երկիւղէ մերձեալ դատաստանին:

ժե. Վասն զբարւոք սկիզբն ՚ի բարւոք կատարումն տանելոյ:

ժզ. Վասն հաւատոց որ զառաջինսն փառաւոր եցոյց:

ժէ. Վասն համբերութեան ընդ Քրիստոսի հետոցն վարելոյ:

ժը. Վասն զգաստութեան մինչև ՚ի ժամանակս ուղղութեանն, յորմէ վրիպիցինք, որպէս զԻսաւն որ ո՛չ եգիտ տեղի ապաշխարութեան:

ժթ. Թէ ահագինք են քան առ Մովսիսին հանդերձեալքն. և բազում փութոյ արժանաւոր այժմուքս:

ի. Վասն եղբայրսիրութեան և օտարասիրութեան: *ա.* Յորում վասն զգաստութեան: *բ.* Վասն բաւականութեան: *գ.* Վասն նմանօղ լինելոյ հարցն:

իա. Վասն մի՛ մարմնապէս կալ ըստ օրինացն, այլ հոգեպէս ըստ Քրիստոսի առաքինութեանն:

իբ. Աղօթք առ Աստուած վասն յառաքինութիւն յառաջադիմութեան և տնտեսութեան:

ԱՌ ԵՐՐԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ*

* Ի վերնագրիս՝ ոմանք. Թուղթ առ Երրայեցիսն:

Գլուխ Ա

Ա եկ. ¹Բազում մասամբ, և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիք*. ²Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի. որով և գլխաւտեանսն արար*: ³Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էութեան նորա. որ կրէ՛ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստաւ ընդ աջմէ Մեծութեանն՝ ի բարձունս*: ⁴Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց: ⁵Քանզի ցո՞ երբէք ասաց ՚ի հրեշտակաց. Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ: Եւ դարձեալ թէ. Ես եղէց նմա ՚ի Յայր, և նա եղիցի ինձ յՈրդի*:

Բ ⁶Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ: ⁷Այլ առ հրեշտակսն ասէ. Ո՛ր արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ*: ⁸Իսկ ցՈրդին ասէ. Աթո՛ն քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քոյ*: ⁹Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օճ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան՝ առաւել քան զընկերս քո: ¹⁰Եւ դու Տէր իսկզբանէ զերկիր հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են: ¹¹Նոքա կորնչին՝ և դու կաս և մնաս. ամենեքեան իբրև զձորձս մաշեսցին*, ¹²իբրև զվերարկու. գալարե՛սցես զնոսա իբրև զհանդերձ և գալարեսցին. բայց դու նոյն իսկ ես՝ և ամբ քո ոչ պակասեսցեն*: ¹³Յո՞ երբէք ասաց ՚ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քո*: ¹⁴Ոչ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ առաքին ՚ի սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն*:

Գլուխ Բ

Եդ. ¹Վասն այսորիկ պարտ է մեզ առաւել ևս ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբէք նուաղեսցուք*: ²Ձի եթէ որ ՚ի ձեռն հրեշտակաց

* *Ոմանք.* Ընդ հարս մեր:

* *Ոմանք.* Ձյաւիտեանս արար:

* *Ամենայն գրչագիրք համաձայն մերուսն ՚ի լուս՝. ՚ի վերայ՝ Որ կրէ. նշանակեն.* դարմանէ. խնամէ. տածէ. առաջնորդէ: *Ոմանք.* Ձօրութեամբ իւրով... մեծութեան ՚ի:

* *Ոմանք.* Եւ ես այսօր... նմա Յայր:

* *Ոմանք.* Իւր ՚ի հոգիս... իւր ՚ի բոց հրոյ:

* *Ոմանք.* Գաւազան զօրութեան, գաւազան արքայ՝:

* *Ոմանք.* Ամենեքին իբրև:

* *Ոմանք.* Եւ իբրև զվերարկուս... իբրև զհանդերձս... և ամբ քո ոչ պակասեն: *Ուր ոմանք.*

Քո ոչ անցանեն:

* *Ոմանք.* Յո՞ որ երբէք:

* *Ոմանք.* Ոչ ամենեքին հո՞... ժառանգելոց են:

* *Բազումք.* Վասն այնորիկ պարտ:

խօսեցաւ բանն, հաստատուն եղև, և ամենայն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի*։ ³մեք՝ զհա՞րոյ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ՝ ՚ի Տեառնէ. և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն ՚ի մե՛զ հաստատեցաւ*։ ⁴վկայեալ յԱստուծոյ նշանօք և արուեստիւք, և պէսպէ՛ս զօրութեամբք, և մասամբք Հոգւոյն Սրբոյ՝ ըստ իւրո՛ց կամաց*։ ⁵Ձի ո՛չ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդերձեալ աշխարհն, վասն որոյ և մե՛քս խօսիմք*։ ⁶վկայեա՛ց որ ուրեք՝ և ասէ. Ձի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այ՛ց արասցես նմա*։ ⁷Փո՛քր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառօք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա ՚ի վերայ ձեռակերտաց քոց*։ ⁸զամենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա։ Արդ՝ ՚ի հնազանդեցուցանելն զամենայն, ո՛չ ինչ եթող անհնազանդ ՚ի նմանէ, բայց այժմ ո՛չ ևս տեսանենք հնազանդեալ նմա զամենայն*։

⁹Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս, տեսանենք զՅիսուս՝ վասն չարչարանաց մահուն, փառօք և պատուով պսակեալ. զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճաշակեսցէ*։ ¹⁰Ձի վայել էր իսկ նմա, վասն որոյ ամենայն՝ և որով ամենայն, բազում որդիս ՚ի փառս ածել՝ և զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել*։ վջ. ¹¹Ձի որ սրբէն և որ սրբին, ՚ի միոջէ՛ էին ամենեքեան. վասն որոյ ո՛չ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա, և ասել. ¹²Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, և ՚ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ*։ ¹³Եւ դարձեալ թէ. Ես եղէց յուսացեալ՝ ՚ի նա։ Եւ դարձեալ. Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ե՛տ ինձ Աստուած։ ¹⁴Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զՍատանայ*։ ¹⁵և ապրեսցուցէ՛ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութիւն*։ ¹⁶Քանզի ո՛չ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զգաւակէ՛ն Աբրահամու բուռն հարկանէ*։ ¹⁷Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ՚ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն*։ ¹⁸Ձի որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարօղ է և

* *Ոմանք.* Ձի թէ որ ՚ի... բանն, հաւատարիմ եղև, և ամենայն յանցաւորութիւնն:

* *Ոմանք.* Հեղգացեալքս յայն՝:

* *Ոմանք.* Եւ մասամբ Հոգւոյն՝ ըստ իւրոյ կամացն:

* *Ոմանք.* Աշխարհս, վասն որոյ մեք խօսիմքս:

* *Ոմանք.* վկայեաց ուրեք և ասէ... զի յիշես դու զնա... այց ինչ արասցես դու:

* *Ոմանք.* Փոքր ինչ խոնարհ... ՚ի վերայ ամենայն ձեռա՛:

* *Ոմանք.* ՚ի հնազանդեցուցանել նմա զամենայն... հնազանդել նմա զամենայն:

* *Ոմանք.* Այլ զփոքրն մի խոնարհ... վասն մեր ամենեցուն զմահ: *Ուր օրհնակ մի ընդ*

Ոսկանայ. Այլ փոքր մի խոնարհեալ:

* *Ոմանք.* Փրկութեանց նոցա:

* *Ոմանք.* Իմոց. ՚ի մէջ եկե՛:

* *Ոմանք.* Հաղորդեցին արեանն և... այսինքն՝ Սատանայ:

* *Ոմանք.* Մահուն երկիւղին հանապազ իսկ էին վտարանդեալք ՚ի ծառայութեան:

* *Ոմանք.* Ձի ոչ երբէք: *Ամենայն գրչագիրք համաձայն մերունս ՚ի լուս՝. ՚ի վերայ՝* Բուռն հարկանէ. *նշանակեն.* մեղադիր լինի. բամբասէ. պարտաւորէ:

* *Ոմանք.* Պարտ էր նմա... ողորմած լիցի:

փորձանաւորացն օգնական լինել*:

3

Գլուխ Գ

Դ¹ Ուստի եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն և ընդ Քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս*։² որ հաւատարիմ է Արարչին իւրոյ, որպէս և Մովսէս յամենայն տան նորա*։³ Ձի առաւել ևս փառաց քան զՄովսէս արժանի՛ եղև. որչափ առաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելին*։⁴ Ձի ամենայն տուն կազմի՛ յունէ կազմի. իսկ որ զամենայնն արար, Աստուած է*։⁵ Մովսէս՝ հաւատարիմ է յամենայն տան նորա՝ իբրև զծառայ, առ ՚ի վկայութենէ՛ բանից ասացելոց*։⁶ այլ Քրիստոս իբրև որդի՛ ՚ի վերայ տան իւրոյ. որոյ տունն՝ մեք իսկ ենք. միայն թէ զհամարձակութիւն և զպարծանս յուսոյն՝ մինչև ՚ի վախճան հաստատուն ունիցիմք*։⁷ Վասն որոյ այսպէս ասէ Յոգին Սուրբ. Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք,⁸ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութեանն՝ յաւուրն փորձութեան յանապատի. ⁹ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ և տեսին զգործս իմ զքառասուն ամ. ¹⁰վասն որոյ տաղտկացայ ազգանն այնուիկ, և ասացի. Միշտ մոլորեալ են սրտիւք։ Եւ նոքա ո՛չ ծանեան զճանապարհս իմ*։¹¹ որպէս երդուայ ՚ի բարկութեան իմուն թէ՛ մտցեն ՚ի հանգիստ իմ։ Եզ. ¹²Տեսէք եղբարք՝ զուցէ՛ երբէք լինիցի յունեք ՚ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ լինել յԱստուծոյ կենդանոյ*։¹³ Այլ մխիթարեցէք զմիմեանս զօրհանապագ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ. զի մի՛ ոք խստացի ՚ի ձէնջ՝ խաբէութեամբ մեղաց*։¹⁴ Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի. միայն թէ զսկիզբն հաստատութեանն մինչև ՚ի վախճան պինդ կալցուք*։¹⁵ յասելն. Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութեանն*։¹⁶ Քանզի ոմանք լուան՝ և դառնացուցին, այլ ո՛չ ամենեքեան որ ելեալ էին յեզիպտոսէ ՚ի ձեռն Մովսիսի*։¹⁷ Յունէ՞ տաղտկացաւ զքառասուն ամ. ոչ ապաքէն յանցուցելոցն. որոց ոսկերքն անկան յանապատի անդ*։¹⁸ Ո՞ւմ երդուաւ չմտանել ՚ի հանգիստն իւր, եթէ ոչ անհաւատիցն։¹⁹ Եւ տեսանեմք, զի ո՛չ կարացին մտանել՝ վասն անհաւատութեանն։

* *Ոմանք.* Փորձանաւորացս։

* *Ոմանք.* Ընդ առաքեալ... մերոյ Յիսուս Քրիստոս։

* *Ոմանք.* Որպէս Մովսէս յամենայն ՚ի տան։

* *Ոմանք.* Որչափ ևս առաւել... տանն առնելի։

* *Ոմանք.* Յուն և կազմի... որ զամենայն արար։

* *Ոսկան.* Առ ՚ի վկայութիւն բանիցն։

* *Ոմանք.* Իսկ Քրիստոս իբրև որ՝... միայն եթէ զհամ՝։

* *Ի լուս՝. ՚ի վերայ՝* տաղտկացայ. *նշանակի.* գարշեցայ։

* *Ոմանք.* Յունեքէ ՚ի ձէնջ սիրտ. *և ոմանք.* ունեք ՚ի։

* *Ոմանք.* Առաջի կայ, մի՛ ոք։

* *Օրհնակ մի.* Եղաք Քրիստոսի... սկիզբն համարձակութեանն մինչև։ *Ոմանք.* Մինչև ցվախճան։

* *Ոմանք.* Թէ ձայնի... որպէս ՚ի դառնութեանն։

* *Օրհնակ մի.* Այլ ոչ ամենեքին որ ելանէին յեզ՝։

* *Ոմանք.* Յորմէ՞ տաղտկացաւ զքառասուն ամ, ոչ ապաքէն ՚ի յանցուցելոց։

Գլուխ Դ

Ե ¹Երկիցուրբ այսուհետև, գուցե՝ ի թողուլ զաւետիսն՝ ի մտանելոյ ՚ի հանգիստ նորա, գտանիցի որք ՚ի ձէնջ նուագեալ՝: ²Քանզի եմք աւետարանեալք՝ որպէս և նոքայն. այլ նոցա ո՛չինչ օգնեաց լուր բանին՝ չամոքելոցն ՚ի հնազանդութիւն հաւատոց՝: ³Այլ մեք մտանեմք ՚ի հանգիստն, որք հաւատացաքս՝ որպէս և ասացն, թէ որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ. թէպէտ և արդիւնքն իսկզբանէ աշխարհի լիեալ էին՝: ⁴Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եւթներորդի այսպէս. Եւ հանգեալ Աստուած յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց: ⁵Եւ աստ՝ դարձեալ ասէ՝ թէ՛ մտցեն ՚ի հանգիստ իմ: ⁶Եւ արդ՝ քանզի արգելան ոմանք մտանել ՚ի նա, և որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին վասն անհաւանութեանն: ⁷Դարձեալ այլ օր սահմանէ. Չայսօ՛րն ՚ի Դաւթի: Եւ ասէ. Յետ այնչափ ժամանակաց: Որպէս յառաջագոյն ասաց. Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր՝: ⁸Ձի եթէ զնոսա Յիսուվայ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ՝ աւուր ո՛չ խօսէր յետ այնորիկ՝: ⁹Արդ ուրեմն նուագեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ: ¹⁰Ձի որ եմուտ ՚ի հանգիստն նորա, և նա՛ հանգեալ յիւրոց գործոց անտի. որպէս և Աստուած յիւրայոցն՝: վջ.

Ձ ¹¹Փութասցուրբ այսուհետև մտանել յայն հանգիստ. զի մի՛ որք ընդ նովին օրինակաւ անհաւանութեանն անկանիցի՝: ¹²Ձի կենդանի է բանն Աստուծոյ՝ և ազոջ և հատու՛ բան զամենայն սուր երկսայրի, և անցանէ՛ մինչև ցորոշումն շնչոյ՝ և ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոյ. և քննիչ է մտաց՝ և խորհրդոց սրտից՝: ¹³Եւ չի՞ք արարած աներևոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են: ¹⁴Ունիմք այսուհետև Քահանայապետ մեծ՝ անցեալ ընդ երկինս, զՅիսուս Որդի Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւնն: ¹⁵Քանզի ո՛չ եթէ ունիմք քահանայապետ, որ չիցէ՛ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ, ըստ նմանութեան, առանց մեղաց՝ զկ. ¹⁶Մատիցուրբ այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա. զի ընկալցուք զողորմութիւն, և գտցուք շնորհս ՚ի դէպ ժամանակի՝ օգնականութեան՝:

* *Ոմանք.* ՚ի հանգիստն նորա:

* *Օրինակ մի.* Բանին՝ չեղելոցն ՚ի հնա՛:

* *Ոմանք.* Որք հաւատացաք... ՚ի բարկութեան իմոյ:

* *Ոմանք.* Եւ որք յառաջագոյնն աւե՛... վասն անհաւատութեանն:

* *Օրինակ մի.* Դարձեալ այլ ուր սահմանէ զայս օրն ՚ի Դաւթի, և: *Ոմանք.* Որպէս յառաջագոյնն ա՛:

* *Ոմանք.* Յետվայ հանգուցեալ: *Ուր Ոսկան.* Յետուայ:

* *Ոմանք.* Որպէս Աստուած յիւրայոցն:

* *Ոմանք.* Անհաւատութեանն անկանիցի: *Ուր օրինակ մի.* անհնազանդութեանն անկա՛:

* *Ոմանք.* Քանզի կենդանի է... և յօդից և ուղղոց... և ՚ի խորհրդոց սր՞:

* *Ոմանք.* ՁՅիսուս զՈրդին Աստուծոյ... զխոստովանութեանն:

* *Ոմանք.* Որ ոչ իցէ կարող... տկարութեանցս մերոց:

* *Ոմանք.* Շնորհաց նորա... գտցուք զշնորհս:

Գլուխ Ե

¹Ձի ամենայն քահանայապետ ՚ի մարդկանէ՛ առեալ, վասն մարդկան կայ յաստուածակոյնս կողմն անդր. զի մատուցէ պատարագս, և զո՛հս վասն մեղաց*.² չափով չարչարակից կարող է լինել՝ տգիտաց և մոլորելոց. քանզի և ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է*:³ Վասն այնորիկ հարկ է՝ որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մատուցանել պատարագս վասն մեղաց*:⁴ Եւ ո՛չ եթէ անձամբ ոք առնու պատիւ. այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարոն*:⁵ Նոյնպէս և Քրիստոս, ո՛չ եթէ անձին ինչ շուք եղ լինել քահանայապետ. այլ որ խօսեցան ան առ թէ. Որդի՛ իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ*:⁶ Որպէս և ՚ի միւսումն ասէ. Դո՛ւ ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի*:⁷ Որ յաւուրս մարմնոյ՝ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն որ կարողն էր ապրեցուցանել զնա, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լսելի՛ լինէր առ լաւութեանն*:⁸ Թէպէտ և Որդի է, ուսաւ ՚ի չարչարանաց անտի զհնազանդութիւն*:⁹ Եւ իբրև կատարեցաւ՝ եղև ամենայն հնազանդելոց իւրոց պատճառք փրկութեանն յաւիտենից*.¹⁰ և անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի:

Է զդ. ¹¹ Վասն որոյ բազում են մեզ բանք, և դժուարապատում ՚ի մեկնել. քանզի խօթամիտք եղերուք լսելեօք.¹² Վիոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին. դարձեալ պիտոյ՝ է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են նշանագիրք սկզբան բանիցն Աստուծոյ. և եղերուք կարօտք կաթին, և ո՛չ հաստատուն կերակրոյ*:¹³ Ձի ամենայն որ կաթնկեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ՝ է*:¹⁴ Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց՝ վասն ՚ի չափսն հասանելոյ, ճաշակելիքն կի՛րթ են ընտրութեան բարւոյ և չարի*:

Գլուխ Զ

¹ Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի, ՚ի կատարունն եկեցո՛ւք. մի՛ միւսանգամ հիմն արկանել ապաշխարութեան՝ ՚ի մեռելոտի գործոց անտի, և հաւատոցն որ յԱստուած*,² և մկրտութեանցն վարդապետութեան, և

* *Ոմանք.* Եւ զոհս ըստ մեղաց:

* *Ոսկան.* Չափու չարչարա՞: *Օրինակ մի.* Տկարաց և ընտրելոց:

* *Ոմանք.* Որպէս և վասն ժողո՞... ընդ անձինն պատարագ մատուցանել:

* *Ոմանք.* Որպէս Ահարովն:

* *Ոմանք.* Եթէ Որդի իմ... և ես այ՞:

* *Ոմանք.* Թէ դու ես քահանայապետ յաւիտեան:

* *Ոմանք յաւելուն.* Ապրեցուցանել զնա ՚ի մահուանէ, ուժ՞:

* *Ոմանք.* Ձի թէպէտ:

* *Ոմանք.* Ամենայն հնազանդելոցն... փրկութեան յաւի՞:

* *Օրինակ մի.* Եւ արդ՝ կամիմ զձեզ ուսուցանել, եթէ զինչ... իսկզբան բանիցն Աստուծոյ:

* *Ոմանք.* Ձի տղայ է:

* *Ոմանք.* Կերակուրն... բարւոյն և չարի: *Օրինակ մի.* Կրթեն ընտրութեան:

* *Բազումք.* Արկանել հիմն ա՞:

ձեռնադրութեան ձեռաց, և յարութեան մեռելոց, և դատաստանին յաւիտենից*:
³Եւ արդ՝ արասցուք զայն՝ եթէ Աստուած հրամայեսցէ*:
⁴Քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգևացն, և հաղորդք եղեն Յոգւոյն Սրբոյ*,
⁵և զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակսն ճաշակեցին, և զգորութիւնս հանդերձելոյ՝ աշխարհին*,
⁶և կործանեցին. միւսանգամ նորոգել յապաշխարութիւն. և վերստին՝ ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակել*:
⁷Քանզի երկիր որ ըմպիցէ՝ զանձրև բազում անգամ եկեալ՝ ի վերայ նորա, և ծնանիցի արդիւնս շայեկանս նոցա՝ վասն որոյ գործեցին, ընդունի զօրհնութիւն յԱստուծոյ*.
⁸Իսկ որ բերէ փուշ և տատասկ, անպիտան է՝ և մերձ յանէծս. և վախճան նորա յայրունն*:
⁹Բայց հաստատեալ եմ վասն ձեր սիրելիք՝ ի լաւ անդր, և որ լին է փրկութեամբ. զի թէպէտ և այսպէս խօսիմք*.
¹⁰Ոչ եթէ անհրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր՝ և զսերն զոր ցուցէք յանուն նորա. զի պաշտէիք զսուրբսն՝ և պաշտէք*.
¹¹Եւ մեք ըղծանամք, զի իւրաքանչիւրոք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատութիւն յուսոյն մինչև ցվախճան*.
¹²Ի մի՛ հիւանդամիտք լինիցիք:

Ը Նմանօրք եղերուք այնոցիկ որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն: ¹³Զի Աբրահամու խոստացեալ զաւետիսն Աստուծոյ՝ քանզի յայլ ոք ի մեծ ոչ գոյր երդնուլ*,
¹⁴յանձն իւր երդուաւ, և ասէ. Այո՛ օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից*:
¹⁵Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհան աւետեացն*:
¹⁶Ապաքէն մարդիկ որ ինչ ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն. և ամենայն հակառակութեան նոցա վճիռ ի հաստատութիւն, երդուննն է*:
¹⁷Որով առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդնամբ*:
¹⁸Զի երկու անփոփոխելի՛ իրօքն՝ որովք անհնար իցէ ստել Աստուծոյ, հաստատուն մխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան եղեաք բունն հարկանել զհանդերձեալ յուսոյն*.
¹⁹Զոր իբրև զխարիսխ հաստատուն և անշարժ ունիցիմք անձանց մերոց. որ և մտանիցէ ի ներքին կողմն վարագորին*,
²⁰ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի, եղև քահանայապետ յաւիտենից*:

* *Ոմանք.* Վարդապետութիւն... ձեռնադրութիւն... յարութիւն:
 * *Ոմանք.* եթէ Տէր հրամայեսցէ:
 * *Ոմանք.* Անհնարին է միւսանգամ:
 * *Ոմանք.* ճաշակս ճաշակեցին, և զօրութիւնս:
 * *Ոմանք.* Եւ կործանիցին միլ*:
 * *Ոմանք.* Վասն որոյ գործիցին, ըն՝... զօրհնութիւնսն Աստուծոյ:
 * *Ոսկան.* Չփուշ և զտատ... և մերձ է յանէծս: *Ոմանք.* Նորա յայրունն:
 * *Յօրհնակին պակասէր.* Եւ որ լին է փրկ*:
 * *Ոսկան.* Եւ զսեր զոր ցուցանէք յանուն: *Յօրհնակին.* Պաշտէիք զսուրբն:
 * *Ոսկան.* Եւ մեք ըղծամք:
 * *Ոմանք.* Խոստացեալ էր զաւետ*:
 * *Ոմանք.* Բազմացուցից զքեզ. և *ոմանք.* բազմացուցից զզաւակ քո:
 * *Ոմանք.* Եւ այնչափ երկայնամիտ եղեալ:
 * *Ոսկան.* Եւ ամենայնի հակառակութեան նոցա վճռի հաստատութիւն երդունն է:
 * *Ոմանք.* Առաւել ևս:
 * *Ոմանք.* Որովք անհնարին է... ապաստան եղաք:
 * *Ոմանք.* Ի ներքին կողմ վա*:
 * *Ոմանք.* Ուր վարդապետն մեր Յիսուս:

Գլուխ Է

Թ ¹Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սաղիմայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ. որ ե՛լ ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ՚ի կոտորածէ թագաւորացն՝ և օրհնեաց զնա՞. ²որում և տասանորդս յամենայնէ ետ Աբրահամ. նախ՝ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան՞. ³անհայր, անմայր, չհամարեալ յազգս, որոյ ո՛չ սկիզբն ւաւորց, և ո՛չ կատարած կենաց. նմանեալ Որդւոյն Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր՞: ⁴Արդ՝ տեսէք որպիսի ոք էր սա, որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն՞: ⁵Եւ որք յորդւոցն Ղևեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն՝ ըստ օրինացն. այսինքն է՝ զեղբարս իւրեանց. թպէտ և ելեալ իցեն յերանացն Աբրահամու՞: ⁶Իսկ չհամարեալն յազգս ՚ի նոցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ. և զնա որ զաւետիսն ընկալեալ էր՝ օրհնեաց՞: ⁷Զի առանց ամենայն հակառակութեան, նուազն ՚ի լաւէ՛ անտի օրհնեսցի: ⁸Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն. բայց անդ վկայեցաւ թէ կենդանի՛ է: Եւ որպէս բանից կարգ է ասել, ⁹թէ Աբրահամա՛ն և Ղևի՛ իսկ որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցա՛ւ. ¹⁰զի դե՛ռնս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդառաջ եղև նմա Մելքիսեդեկ՞: ¹¹Իսկ արդ՝ եթէ կատարումնն ՚ի ձեռն Ղևտացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս դրեցա՛ւ, զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այլո՛ւմ քահանայի յառնել, և ո՛չ ասել եթէ ըստ կարգին Ահարովնի՞: ¹²Այլ ՚ի փոփոխել քահանայութեանն, հարկ էր և օրինացն փոփոխումն լինել՞: ¹³Զի զորմէ այսպէսն ասի, յայնմէ ազգէ՛ կալաւ հաղորդութիւն, յորմէ ո՛չ ոք երբէք եղև հաղորդ սեղանոյն՞: ¹⁴Արդ՝ յայտ իսկ է, թէ յազգէ՛ Յուդայ ծագեաց Տէր մեր. յորմէ ազգէ՛ վասն քահանայից Մովսէս ինչ ո՛չ ճառեաց՞: ¹⁵Եւ նս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի՝ յառնելոց է այլ քահանայ՞. ¹⁶որ ո՛չ ըստ մարմնաւոր պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից: ¹⁷Քանզի վկայեցաւ թէ. Դո՛ւ ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի՞: ¹⁸Արհամարհութիւն լինէր առաջին

* *Ոմանք.* էր Շաղեմայ:

* *Ոմանք.* Եւ տասանորդսն ետ յամենայնէ Աբ՞... և ապա թագաւոր Շաղիմայ:

* *Ոմանք.* Չհամարել յազգս... Որդւոյ Աստուծոյ:

* *Ոմանք.* Որպիսի ոք է սա:

* *Ոմանք.* Եւ որ յոր՞:

* *Ոմանք.* Իսկ չհամարելն յազգ՞: *Այլք.* Որոյ զաւետիսն ըն՞:

* *Ոմանք.* Որ և զտասանորդսն:

* *Ոմանք.* Ընդ առաջն եղև նմա:

* *Ոմանք.* Ի ձեռն Ղևտական քահանայութեանցն... յայն օրէնս գրեցաւ... ասել թէ ըստ:

* *Ոմանք.* Ի փոփոխել քահանայիցն:

* *Ոմանք.* Այսպէսն ասէ:

* *Ոմանք.* Մովսէս ոչինչ ճառեաց:

* *Ոմանք.* Յառնելոց էր այլ: *Ուր Ոսկան.* Յայտնելոց է այլ:

* *Ոմանք.* Եթէ դու ես քա՞:

պատուիրանին, վասն նորին տկարութեանն և անշահութեան*.¹⁹ քանզի ո՛չինչ կատարումն գործեցին օրէնքն, և մուտ ազնուական յուսոյն՝ որով մերժեանամք առ Աստուած: ²⁰Եւ այնչափ, զի ո՛չ առանց երդման. զի են ոմանք՝ որ առանց երդման են կացեալ քահանայք: ²¹Բայց սա՛ երդմամբ, ՚ի ձեռն այնորիկ որ ասացն ՚ի նա. Երդուաւ Տէր՝ և ո՛չ ևս զղջացի, դու ես քահանայ յաւիտեան*: ²²Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր Յիսուս*: ²³Եւ բազում են կացեալ քահանայք, վասն մահու արգել լինելոյ ՚ի մշտնջենաւորել: ²⁴Իսկ սա՛ վասն յաւիտեան կելոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն*. ²⁵ուստի և կենդանի՛ առնել համօրէն կարօղ է՝ զմատուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա*: *ա.* ²⁶Ձի այսպիսի՛ իսկ և վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ՚ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս*. ²⁷որում ո՛չ հանապազ հարկ է որպէս այլոց քահանայապետիցն, նախ՝ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել, և ապա՛ վասն ժողովրդեանն: Իսկ սա՛ զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ*: ²⁸Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգածեալս տկարութեամբ. իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈրդի որ յաւիտեան կատարեալ է*:

8

Գլուխ Ը

¹Եւ բանից զլուխ խօսիցս, այսպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ Մեծութեանն աթոռոյն յերկինս*, ²սրբութեանցն պաշտօնեայ, և խորանին ճշմարտութեան՝ զոր Տէրն կանգնեաց՝ և ո՛չ մարդ*: ³Ձի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ՝ զզոհս և զպատարագս կայ. ուստի հարկ է և նմա՛ ունել զոր մատուցանիցէ*: ⁴Ձի թէ էր յերկրէ, թերևս չէր իսկ քահանայ. զի գոյին որ մատուցանէին ըստ օրինացն պատարագ*. ⁵որք առական և օրինական պաշտէին երկնաւորացն. որպէս և հրամայեցաւ Մովսիսի՛ յորժամ գործելոց էր զվրան ժամուն. Տեսչի՛ր՝ ասէ, արասցես՝ս զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ քեզ ՚ի լէրինն: ⁶Բայց արդ՝ առատագոյն ևս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւագոյն ևս ուխտի է՛ միջնորդ՝ որ ՚ի յառաւել աւետիսն օրինադրեցաւ*:

* *Ոմանք.* Արհամարհութիւնն լինէր... տկարութեան և անշ*:

* *Ոմանք.* Որ ասացաւն ՚ի նա... թէ դու ես քա*:

* *Ոմանք.* Եւ այնչափ առաւելագոյն ուխտ*:

* *Բազումք.* Վասն յաւիտեան կալոյ:

* *Ոմանք.* Ձմատուցեալն նո*:

* *Ոմանք.* Վասն զի այնպէս վայել էր: *Ուր Ոսկան.* Ձի այնպիսի իսկ:

* *Ոսկան.* Ձայն միանգամ կատարեաց:

* *Ոմանք.* Քահանայապետ զգացեալ տկարութեամբ... կատարեալն է յաւիտեան:

* *Բազումք.* Այնպիսի ունիմք քա*... մեծութեան աթո*:

* *Օրինակ մի.* Որ բարութեանցն պաշտօնեայ... զոր Տէրն կարգեաց:

* *Ոմանք.* Ձոհս և պատարագս կայ, ուստի և հարկ է նմա: *Բազումք.* Ունել ինչ զոր:

* *Ոմանք.* Ձի եթէ էր յերկրի:

* *Ոմանք.* Առատապէս պաշտ*... որչափ և լաւագոյն ևս... որ յառաւել աւետ*:

ԺԱ ⁷Ձի եթէ առաջինն անարատ էր, ապա երկրորդին տեղի ո՛չ խնդրէր*։ ⁸Նա՛ աւասիկ բամբասէ՛ զնոսա՛ և ասէ. Ահաւասիկ աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր, և կատարեցից ՚ի վերայ տանն Իսրայէլի և ՚ի վերայ տանն Յուդայ՝ ուխտ նոր*։ ⁹ո՛չ ըստ ուխտին զոր եղի ընդ հարս նոցա՛ յաւուրն յորում առի ՚ի ձեռն՝ հանել զնոսա յերկրէն Եգիպտացոց. և զի նոքա ո՛չ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ՛ ասէ Տէր ամենակալ*։ ¹⁰Այլ ա՛յս է ուխտն զոր եղից տանդ Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ Տէր. տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ*։ ¹¹Եւ ո՛չ ես ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր, և ասիցեն թէ ծանիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս ՚ի փոքրկանց մինչև ցնեծամեծս նոցա*։ ¹²զի քաւի՛չ եղէց անօրէնութեանց նոցա. և զմեղս նոցա՛ և զանօրէնութիւնս այլ ո՛չ ես յիշեցից*։ ¹³Արդ՝ ասելովն նոր, հնացոյց զառաջինն. և որ հնանայն և ծերանայ՝ մե՛րձ է յապականութիւն։ ՎՋ.

9

Գլուխ Թ

¹Ունել՝ ունէր և առաջինն՝ իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն*։ ²Ձի խորանն առաջին հանդերձեցաւ ա՛յսպէս. յորում աշտանակն, և սեղանն, և հա՛ցն նուիրաց՝ որ Սրբութիւնն կոչէր*։ ³Եւ յետ երկրորդ վարագուրին խորանն որ կոչէր Սրբութիւն սրբութեանց. ⁴յորում կայր բուրվառն ոսկի, և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկեով. յորում սափորն ոսկի լի՛ մանանայիւ, և գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ, և տախտակք կտակարանացն. ⁵և ՚ի վերայ նորա քրովքէքն փառաց՝ որ հովանի ունէին ՚ի վերայ քաւութեանն. վասն որոյ՝ ո՛չ է այժմ ասել մի ըստ միոջէ*։ ⁶Եւ այն ամենայն իբրև ա՛յնպէս հանդերձեալ կայր, յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կատարել*։ ⁷բայց յերկրորդն՝ մի՛ անգամ ՚ի տարւոջն քահանայապետն. և զայն ո՛չ առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր, և վասն ժողովրդեանն անգիտութեան*։ ⁸Ձայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ՝ մինչև՛ յայտնեալ էր ճանապարհի սրբութեանցն. քանզի դեռ առաջին խորանն ունէ՛ր զհաստատութիւն*։ ⁹որ է առակ ժամանակին որ առաջի կայր.

* *Ոսկան.* Ապա երկրորդն տեղի ոչ:

* *Ոմանք.* Նա աւանիկ բամ՝:

* *Ոմանք.* Յաւուր յորում... Եգիպտացոց. զի նոքա:

* *Բազումք.* Եղից տանն Իսրայէլի: *Ոմանք.* Ինձ ժողովուրդ:

* *Ոմանք.* Մինչև ՚ի մեծամեծս:

* *Ի լուս՝.* Եղէց անիրաւութեանց նոցա. *համաձայն ոմանց ՚ի բնաբ՝:*

* *Ոսկան.* Եւ առաջին իրաւունս պաշտամանն: *Ոմանք.* Եւ առաջին յիրաւունս...

զաշխարհականն սրբութիւն:

* *Ոմանք.* Հանդերձեցաւ այնպէս... և հացն նուիրանաց: *Ոսկան.* Յորում էին աշտան...
նուիրանաց որ սրբութիւն կո՛:

* *Ոմանք.* Եւ ՚ի վերայ նոցա քերոք՝... ՚ի վերայ քաւութեան. վասն որոյ և ոչ:

* *Օրինակ մի.* Քահանայք զպաշտօնսն:

* *Ոմանք.* Ժողովրդեանն անգիտութեանց:

* *Ոմանք.* ճանապարհի սրբութեան:

յորում պատարագքն և զոհք մատչէին, որք ո՛չ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայսն. բայց միայն կերակրովք և ըմպելեօք*, ¹⁰և պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն. որ մինչև ՚ի ժամանակս ուղղութեանն ՚ի վերայ կային*:

ԺԲ ¹¹Այլ Քրիստոս եկեալ Քահանայապետ հանդերձելո՛ցն բարեաց, մեծաւն և կատարելով՝ և անձեռագործ խորանաւն, ա՛յս ինքն է՝ որ ո՛չ յայսց արարածոց*, ¹²և ո՛չ արեամբ նոխազաց և զուարակաց. այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ՚ի սրբութիւնսն յաւիտենականս գտեալ զփրկութիւն*:¹³Չի եթէ արիւն ցլուցն և նոխազաց՝ և մոխիր երնջոցն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ՚ի մարմնոյ սրբութենէ*.¹⁴ո՞րչափ ևս առաւել արիւնն Քրիստոսի, որ ՚ի ձեռն Յոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ՛ զխիղճ մտաց ձերոց ՚ի մեռելոտի՛ գործոց անտի՛ պաշտել զԱստուած կենդանի*:¹⁵Եւ վասն այնորիկ նորո՛յ ուխտիս է միջնորդ. զի յորժամ մա՛հ լինիցի՝ ՚ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ՚ի ժառանգութիւնն յաւիտենից*:¹⁶Քանզի ուր կտակ է, հարկ է զմա՛հ ՚ի մէջ բերել զկտակագրին.¹⁷զի կտակ՝ յետ մահո՛ւ հաստատուն է. ապա թէ ոչ՝ զիա՛րդ իցէ հաստատուն, մինչ կտակագիրն կենդանի՛ է*:¹⁸Ուստի և ո՛չ առաջինն առանց արեան նորոգէր:¹⁹Քանզի իբրև պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն ՚ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն և նոխազացն, ջրով՝ և բրդով՝ կարմրով՝ և զոպայիւ, զկտակարանօքն իսկ և զամենայն ժողովրդեամբն սրսկեաց*,²⁰և ասէ. Ա՛յս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած:²¹Եւ զխորանաւն, և զամենայն կահիւ սպասուն նոյնպէս սրսկեաց զարիւնն*:²²Եւ գրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն. և առանց հեղման արեան չլինէր թողութիւն:²³Ապա հարկ էր օրինաւորացն՝ այնպիսեօքն սրբել. և բո՛ւն իսկ երկնաւորացն՝ առաւել ևս պատարագօք քան զնոյնս*:²⁴Չի ո՛չ եթէ ՚ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն. այլ ՚ի բո՛ւն իսկ յերկինս, յանդիման լինել երեսացն Աստուծոյ վասն մեր*:²⁵Ո՛չ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն որ մտանէր ՚ի սրբութիւն սրբութեանցն ամի ամի արեամբ օտարաւ*.²⁶ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել իսկզբանէ աշխարհի. բայց արդ՝ աւասիկ, մի՛ անգամ ՚ի կատարած յաւիտեանց՝ յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է*:²⁷Եւ զոր

*Ոմանք. Որ էր առակ... և զոհքն մատչէին: Այլք. Կատարել զպաշտամունսն:

*Ոմանք. Մկրտութիւնք մարմնոյ արդարութիւնք, որ:

*Ոմանք. Եկեալ Քահանայապան... կատարելեալն... խորանաւ, այսինքն է՝ ոչ յայսցանէ արարա՛:

*Օրինակ մի. Եմուտ միանգամայն ՚ի:

*Բազումք. Չի թէ արիւն ցլ՛:

*Ոմանք. Չի սրբեսցէ:

*Ոմանք. Ձաւետիսն առցեն... ՚ի ժառանգութիւն յաւի՛:

*Ոմանք. Յետ մահուանն հաս՛:

*Օրինակ մի. Կարմրաւ և զո՛:

*Ոմանք. Եւ զխորանաւն իսկ, և զամենայն կահիւն:

*Ոմանք. Երկնաւորօքն՝ առաւել:

*Ոմանք. Յօրինակս ճմարտութեանցն:

*Ոմանք. ՚ի սրբութիւնս սրբութեանց... արեամբն օտարա՛:

*Ոմանք. Պարտ իսկ էր նմա... ՚ի կատարած յաւիտենական... մեղաց միով

օրինակ կայ մնայ մարդկան մի՛ անգամ մեռանել և յետ այնորիկ դատաստան.
28Նոյնպէս և Քրիստոս մի՛ անգամ մատուցեալ պատարագ առ ՚ի բառնալոյ
զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն
ունիցին նմա հաւատովք ՚ի փրկութիւն*:

10

Գլուխ Ժ

բ. 1Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ո՛չ զնոյն
կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք ո՛չ
են կարող զմատուցեալսն կատարել*. 2ապա թէ ոչ դադարէին ՚ի
մատուցանելոյ, վասն և ո՛չ մի ինչ այնուհետև խիղճ մտաց ունելոյ՝
պաշտօնէիցն մի՛ անգամ սրբեցելոց*. 3այլ անդէն ՚ի նմին ՚ի յիշատակս մեղացն
կային ամի ամի. 4քանզի ո՛չ կարէր արիւն նոխազացն և ցլուցն բառնալ զմեղս*:

ԺԳ 5Վասն որոյ ՚ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ. Ջզոհս և զպատարագս ո՛չ
կամեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ. 6ընդ ողջակէզս և ընդ վասն
մեղացն ո՛չ հաճեցար: 7Յայնժամ ասացի՝ թէ ահա՛ւասիկ եկի. ՚ի ճառս գրոց
գրեալ է վասն իմ, առնել զկամս քո Աստուած*: 8Վերագոյնն ասէ, թէ ընդ զոհս, և
ընդ պատարագս, և ընդ ողջակէզս, և ընդ վասն մեղացն ո՛չ հաճեցար, և ո՛չ
կամեցար, որք ըստ օրինացն մատչէին: 9Ապա ասէ. Ահա՛ւասիկ գամ առնել
զկամս քո Աստուած: Մերժէ զառաջինն, զի զերկրորդն հաստատեսցէ. 10որով
կամօք և մե՛ք սրբեցար՝ ՚ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի
անգամ*: 11Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ ՚ի պաշտաման. և
զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ո՛չ երբէք կարող են
բառնալ զմեղս. 12իսկ սա՝ զմին վասն մեղաց մատոյց պատարագ. և
մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ. 13և այսուհետև ակն ունի՝ մինչև
դիցին թշնամիք իւր ՚ի ներքոյ ոտից իւրոց: 14Քանզի միով պատարագաւ
կատարեաց զսրբեալսն ՚ի մշտնջենաւորս*: 15Այլ վկայէ մեզ և Յոզիմ Սուրբ՝ յետ
ասելոյ յառաջագոյն*, 16թէ. Այս է ուխտն՝ զոր եդից ընդ հարս նոցա, յետ աւուրցն
այնոցիկ՝ ասէ Տէր, տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի խորհուրդս նոցա
գրեցից զնոսա*: 17Ապա ասէ՝ թէ զմեղս նոցա և զանօրէնութիւնս նոցա՝ այլ ո՛չ ևս
յիշեցից*: 18Իսկ ուր թողութիւն է, ո՛չ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ: Վջ.
19Ունիմք այսուհետև եղբարք՝ համարձակութիւն ՚ի մուտս սրբութեանցն

պատարագաւն յայտ՝: *Ոսկան.* Պատարագաւն յայտնեցաւ: Եւ զոր՝:

* *Ոմանք.* Նոյն և Քրիստոս միան՝... ակն ունին նմա հա՛:

* *Ոսկան.* Կերպարան իրացն: *Ոմանք.* Ցանկ: *Երկու նոր օրինակք.* Չմատուցիչսն
կատարել: (2) Իսկ ապա թէ ոչ... մի ինչ այսուհետեւ:

* *Ոմանք.* Պաշտօնէից մի անգամ սրբեցելոցն:

* *Ոմանք.* Ցլուց և նոխազաց:

* *Ոմանք.* Ասացի՝ եթէ ահա՛:

* *Ոմանք.* Որով կամօքն և:

* *Ոմանք.* Կատարեաց զսրբեալս:

* *Ոմանք.* Յետ ասելոյն:

* *Բազումք.* Եթէ այս է ուխտն... տաց զօրէնս իմ ՚ի սիրտս նոցա:

* *Ոմանք.* Եւ զանօրէնութիւնս այլ ոչ:

արեամբն Յիսուսի* .²⁰զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորո՛գ և կենդանի ՚ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնո՛յն իւրոյ* .²¹և քահանայ մեծ ՚ի վերայ տանն Աստուծոյ .²²մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ՚ի խղճէ չարեաց՝ և մկրտեալ զմարմին ՚ի ջուրն սրբութեան* .²³պի՛նդ կալցուք գխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարի՛մ է որ խոստացան:

ԺԴ ²⁴Եւ զգուշացուք միմեանց յորդորմանքք սիրոյ և գործոց բարեաց* .²⁵և մի՛ թողուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք . այլ մխիթարեսցուք, և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերծեալ* :²⁶Ձի կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհետև ո՛չ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ* .²⁷այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառակորդսն:

²⁸Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի, առանց ողորմութեանց՝ առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր* .²⁹իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար . և զարին նորոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով սրբեցան, և զՅոզիբն շնորհաց թշնամանեաց* :³⁰Այլ գիտենք զայն որ ասացն . Իմ են վրէժխնդրութիւնք և են հատուցից՝ ասէ Տէր: Եւ դարձեալ թէ . Դատի Տէր զժողովուրդ իւր* :³¹Ահ մեծ է անկանել ՚ի ձեռս Աստուծոյ կենդանոյ:

ԺԵ ³²Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լուսաւորեալք բազում ճգանց և չարչարանաց համբերէք* .³³մերթ ՚ի նախատինս և ՚ի նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւորացն լինել* :³⁴Քանզի և ընդ կապեալս չարչարեցարուք, և գյափշտակութիւն ընչից՝ ձերոց խնդութեամբ ընկալարուք . քանզի գիտէիք թէ լաւագոյն ևս ստացուածս ունիք անձանց յերկինս, ուր կանն և մնան* :³⁵Արդ մի՛ մերժէք ՚ի ձեռն զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն .³⁶պիտոյ է ձեզ համբերութիւն . զի զկանս Աստուծոյ արարեալ հասցիք աւետեացն: ³⁷Ձի փոքր մեւս ևս քան որչափ, որ գալոցն իցէ՝ եկեսցէ և ո՛չ յամեսցէ* :³⁸Ձի արդարն իմ ՚ի հաւատոց կեցցէ . և եթէ յերկմիտս ոք իցէ, ո՛չ հաճեսցի ընդ նա անձն իմ* :

* *Ոմանք* . Ի մուտս սրբութեան ար՞:

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ* . Որ նորոգեաց մեզ: *Ոմանք* . Մարմնոյ իւրոյ:

* *Ոմանք* . Ճշմարիտ սրտիւ... և մկրտել զմարմինս ՚ի ջուր սր՞:

* *Ոմանք* . Եւ զգուշացարուք միմեանց:

* *Ոմանք* . Եւ մի՛ թողուցուք... որպէս և սովոր են... այլ մխիթարեսցարուք այնչափ առաւել՝ որչափ տեսանէք զօրն:

* *Ոմանք* . Յանցանիցէ ոք յետ ընդունելութեանն և գիտ՞:

* *Ոսկան* . Առանց իրիք ողոր՞: *Ոմանք* . Առանց ողորմութեան՝ առ երկու կամ երեք վկ՞:

* *Ոսկան* . Իսկ արդ որչափ սաս՞: [*Ոմանք*] . Համարիցիք զայն... որով և սրբեցան:

* *Ոմանք* . Այլ գիտեն... իմ է վրէժխնդրութիւն... և դարձեալ եթէ . Դատի Տէր զժողովուրդս իւր:

* *Ոմանք* . Յոր լուսաւ... և չարչարանացն համբերեցէք:

* *Ոմանք* . Մերթ ՚ի նախատանս: *Ոսկան* . Ի նախատինս, և մերթ ՚ի նե՞:

* *Ոմանք* . Գիտէիք եթէ լա՞:

* *Ոմանք* . Որչափ գալոցն է՝ եկեսցէ:

* *Յօրինակի մերում՝ որպէս և յայլ բազում գրչագիրս գրեալ էր այսու եղանակաւ .*

Արդարն ՚ի մի հաւատոց: *Ուր և օրինակ մի* . Արդարն ՚ի հաւատոց: *Ոսկան* . Եթէ երկմիտ ոք իցէ:

³⁹Բայց մեք ո՛չ եթէ երկնտութեանք ենք ՚ի կորուստ. այլ հաւատովք ՚ի փրկութիւն հոգւոց*:

11

Գլուխ ԺԱ

ԺՁ ¹Ձի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելո՛ց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ո՛չն երկին: ²Ձի նովա՛ւ վկայեցան առաջինքն*:
³Հաւատովք իմանանք հաստատեալ գլաւիտեանսն բանիւ Աստուծոյ, յաներևութից գերևելիսս եղեալ*:
⁴Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան զԿայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ՚ի վերայ պատարագացն եղև վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպէտ և մեռաւ ՚ի նմին, սակայն տակաւին խօսի*:
⁵Հաւատովք ենովք փոխեցաւ, զի մի՛ զմահ ճաշակեսցէ. և ո՛չ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած. և յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճո՛յ լինել Աստուծոյ*:
⁶Բայց առանց հաւատոց՝ անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձեցայ առ Աստուած՝ թէ է՛ Աստուած. և որ խնդրեն զնա՝ լինի պարգևատու*:
⁷Հաւատովք առեալ հրաման Նոյի՝ վասն չև ևս երևելեացն՝ զահի՛ հարեալ կազմէր զտապանն ՚ի փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ. և հաւատոցն արդարութեան եղև ժառանգաւոր*:
⁸Հաւատովք՝ որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև ելանել ՚ի տեղին զոր առնլոց էր ՚ի ժառանգութիւն. ել զնաց՝ և ո՛չ գիտէր յով երթիցէ*:
⁹Հաւատովք պանդխտեցաւ յերկիրն անտեսաց՝ իբրև յօտարութեան. խորանօք բնակեաց Սահակաւ և Յակովբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոցին անտեսաց*:
¹⁰Քանզի ակն ունէր հիմանքք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ և արարիչ Աստուած է:
¹¹Հաւատովք և ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր, և ՚ի տարածան հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն*:
¹²Վասն որոյ և ՚ի միոջն ծնանէին, և այն ՚ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմութեանք, և իբրև զաւա՛զ առ ափն ծովու առանց թուղ*:
¹³Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա, և չև՛ ևս ընկալեալ զաւետիսն. այլ ՚ի հեռուստ տեսին զնոսա՝ և ցնծացան, և խոստովան եղեն՝ եթէ օտարք և պանդուխտք են յերկրի*:
¹⁴Ձի որք զայնպիսիսն խօսին, յայտ առնեն՝ եթէ

* *Ոմանք.* Մեք ոչ թէ երկ՛:

* *Ոմանք.* Քանզի նովաւ:

* *Ոմանք.* Հաստատել գլաւի՛: *Օրինակ մի յաւելու.* Հաստատեալ *արարածոց* գլաւ՛:

* *Ոմանք.* Լաւ պատարագ Հաբէլ... եղև նմա վկայութիւն:

* *Ոմանք.* ճաշակեսցէ զմահ...զփոխել նորա:

* *Ոսկան յաւելու.* Հաճոյ լինել *Աստուծոյ:* *Ոմանք.* Եթէ է Աստուած, և որոց խնդրենն զնա:

* *Ոմանք.* Տանն իւրոյ, որով դատեցաւն:

* *Ոմանք.* Ձոր առնելոց էր ՚ի ժառանգութեան... յո՞ երթիցէ:

* *Ոմանք.* Յերկրին անտ՛... խորանօք բնակեցաւ... և Յակոբու հանդերձ ժառանգակցովք նոցին անտեսացն:

* *Ոսկան.* Որ ամուլն կոչեցեալ էր, զօրութիւն առնլոյ: *Ոմանք.* Առնելոյ սերմն որդ՛... զայն զոր խոս՛:

* *Ոմանք.* Եւ այն յանցեալ:

* *Ոմանք.* Եւ չև է ընկալեալ զաւետ՛... տեսին զնա և ցնծացան... թէ օտարք... են յերկիր:

գաւա՛ռ իմն խնդրեմ*։ ¹⁵Ձի եթէ զայն յիշէին ուստի ելինն, գո՛յր ժամանակ դառնալոյ անդրեմ*։ ¹⁶Նա՛ աւանիկ ազնուականի՛ իմն ցանկացեալ են, ա՛յս ինքն է՛ երկնաւորին. վասն որոյ ո՛չ ամօթ համարի Աստուած, կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա քաղաք*։ ¹⁷Հաւատո՛վք մատոյց Աբրահամ ՚ի փորձութեան իւրում զԻսահակ պատարագ. և զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր. ¹⁸որում ասացաւն, թէ Սահակաւ կոչեսցի քեզ զաւակ. ¹⁹եդ ՚ի մտի իւրում, թէ և ՚ի մեռելոց կարօղ է յարուցանել Աստուած. ուստի և յառակս իսկ ընկալաւ զնա*։ ²⁰Հաւատո՛վք վասն հանդերձելոց իրաց՝ օրհնեաց Իսահակ զՅակոբ և զԻսա*։ ²¹Հաւատո՛վք Յակոբ ՚ի մեռանելն իւրում, զհւրաքանչիւրոք յորդոցն Յովսեփու օրհնեաց, և երկի՛ր եպագ ՚ի ծագ գաւազանի իւրոյ*։ ²²Հաւատո՛վք Յովսեփի ՚ի վախճանել իւրում յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, և վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց*։ ²³Հաւատո՛վք՝ զՄովսէս իբրև ծնան, թաքուցաւ ամիսս երիս ՚ի հարց իւրոց. քանզի տեսին կայտառ զմանուկն, և ո՛չ զանգիտեցին ՚ի հրամանէ թագաւորին*։ ²⁴Հաւատո՛վք Մովսէս իբրև աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի*։ ²⁵Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ՚ի մեղս։ ²⁶Կարևոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն զանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման*։ ²⁷Հաւատո՛վք թողոյր զերկիրն Եգիպտացւոց, և ո՛չ երկնչէր ՚ի ցասմանէ թագաւորին. զի զաներևոյթսն իբրև զտեսեալ համբերութեամբ համարեցաւ*։ ²⁸Հաւատո՛վք արար զգատիկն և զհեղումն արեանն. զի մի՛ սատակիչն անդրանկաց մերձենայցէ՛ ՚ի նոսա*։ ²⁹Հաւատո՛վք անցին ընդ ծովն Կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան*։ ³⁰Հաւատո՛վք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զելթն օր*։ ³¹Հաւատո՛վք Ռախաբ պռոնիկ ո՛չ կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսնն խաղաղութեամբ*։ ³²Եւ արդ՝ զի՞նչ ևս ասացից. զի չէ՛ բաւական ժամանակս պատմելոյ, վասն Գեդեովնի՛, Բարակայ՛, Սամփսովնի, Յեփթայայ՛, Դաւթի՛, և Սամուելի՛, և այլոց մարգարէիցն*։ ³³որք հաւատո՛վք պարտեցին զթագաւորութիւնս. զորձեցին զարդարութիւն. հասին աւետեաց. խցին զբերանս առիւծուց*։ ³⁴Հիջուցին զգօրութիւն հրոյ. ապրեցան ՚ի բերանոյ

* *Ոմանք.* Ձի որ զայնպիսիս խօ՞... թէ զգաւառ:

* *Ոմանք.* Անդրէն դառնալոյ:

* *Ոմանք.* Ազնուական իմն... ոչ համարի ամօթ Աստուած:

* *Ոմանք.* Թէ ՚ի մեռելոց... և յառակս ընկալաւ:

* *Ոմանք.* ՁՅակոբ և զԵսաւ:

* *Ոմանք.* Ձիւրաքանչիւր յորդոցն Յովսեփայ:

* *Ոմանք.* Ի վախճանելն իւ՞:

* *Օրինակ մի.* Թաքուցին ամիսս:

* *Ամենայն գրչագիրք համաձայն մերումս ՚ի լուս՞. այսր համարոյ նշանակեն.* Թերմոթս. կամ՝ Թերմոթիս է անուն դստերն փարաւոնի:

* *Ոմանք.* Քանզի հայեցեալ:

* *Ոմանք.* Քանզի զաներև... իբրև տեսեալ:

* *Ոմանք.* Սատակիչ անդրանկացն:

* *Ոմանք.* Որ շուրջ եկեալ:

* *Ոմանք.* Ռախաբ պռոնիկն... զլրտեսնն խաղա՞:

* *Ոմանք.* Ձինչ ասացից... Յեփթայի:

* *Ամենայն գրչագիրք համաձայն մերումս՝ սկսեալ յայսր համարոյ մինչև ց38 ՚ի լուս՞.*

սրոյ. զօրացան՝ ՚ի տկարութենէ. եղեն զօրաւորք ՚ի պատերազմի. առին զբանակս օտարաց. ³⁵ընկալան կանայք ՚ի յարութենէ զմեռեալս իւրեանց: Կէսք կոշկոճեցան՝ և չև՝ ևս ընկալեալ զփրկութիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն* . ³⁶և կէսքն զտանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց և զբանտից* . ³⁷քարկոծեցան սղոցեցան, փորձեցան. սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան լաշկամաշկօք՝ և մորթովք այծենեօք: Կարօտեալք, նեղեալք, չարչարեալք* . ³⁸զորս ո՛չ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք, և ՚ի լերինս, և յայրս, և ՚ի փապարս երկրի* : ³⁹Եւ սոքա ամենեքին վկայեալք ՚ի հաւատոցն, չև՝ ևս ընկալան զաւետիսն* : ⁴⁰Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին:

12

Գլուխ ԺԲ

ԺԷ ¹Այսուհետև և մեք՝ որ այսչափ շուրջ զմեւք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ՚ի բա՛ց ընկեսցուք և զմեղս կարևորս. համբերութեամբ ընթացուք ՚ի պատերազմ որ առաջի կայ մեզ* . ²հայեսցուք ՚ի զօրագլուխն հաւատոց՝ և ՚ի կատարիչն Յիսուս. որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջնէ աթոռոյն Աստուծոյ* : ³Ա՛ղէ՛ աժէ՛ք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն՝ ՚ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատք լինիցիք անձամբք ձերովք՝ և լքանիցիք* : ⁴Ձի չև՝ ևս արեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, ⁵և մոռացարուք զմխիթարութիւնն՝ որ ընդ ձեզ իբրև ընդ որդեակս խօսի.

գ. Որդեակ իմ՝ մի՛ լքանիր ՚ի խրատո՛ւ Տեառն. և մի՛ վիատիցիս յանդիմանեալ ՚ի նմանէ* : ⁶Ձի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ՛ զամենայն որդի զոր ընդունի: ⁷Ի խրատու համբերութեան կայք, իբրև յորդիս մատուցեալ է ՚ի ձեզ Աստուած. ո՞ր որդի է՝ զոր ո՛չ խրատիցէ հայր* : ⁸Ձի եթէ առանց խրատու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն. ապա խո՛րթք իցէք՝ և ո՛չ որդիք* : ⁹Ձի եթէ ՚ի մարմնաւոր հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկառե՛մք, ո՞րչափ ևս

նշանակեն զանուանս նահապետացն և զմարգարէից՝ առ իւրաքանչիւր հատուած բանի: Ոմանք. Գործեցին զարդարութիւնս:

* Ոմանք. Եւ չև ևս ընկալան զփրկ՝:

* Յօրհնակիւն. Եւ զգանից փորձ ա՛: Ոմանք. Եւ զկապանաց:

* Ոմանք. Լեշկմաշկօք. և ոմանք. լաշկմաշկօք: Այլ բազումք համաձայն մերունս, որպէս և եղաք:

* Ոմանք. Ոչ արժէ աշխարհ... մոլորեալք ՚ի լերինս և ՚ի յայրս և ՚ի փա՛:

* Ոմանք. Չև ևս ընկալեալ զաւե՛: Ոմանք. Չաւետիսն Աստուծոյ: (40) Վասն մեր:

* Ոմանք. Այսուհետև մեք... և զմեղսն կարևորս... ՚ի պատերազմն, կամ՝ ՚ի պատերազմի:

* Ոմանք. Հայեցարուք ՚ի զօրագլուխ հաւատոցն: Ոսկան. Փոխանակ մխիթարութեանն որ նմա:

* Ոմանք. Աշխատ լինիցիք:

* Ոմանք. Եւ մի՛ լուծանիցիս յանդիմանեալ:

* Ոմանք. Համբերութեամբ կայք:

* Ոմանք. Խորթ իցէք:

առաւել հնազանդեսցուք Յօրն հոգւոց՝ և կեցցուք*։ ¹⁰Ձի տքա առ սակա՛ւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն. իսկ նա՛ վասն օգտի, առ ՚ի ընդունելո՛յ զսրբութիւն նորա*։ ¹¹Ամենայն խրատ առ ժամանակն ո՛չ ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան. բայց յետոյ պտո՛ւղ խաղաղութեան՝ նովաւ կրթեցելոցն հատուցանէ արդարութիւն*։ ¹²Վասն որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս՝ հաստատեցէ՛ք. ¹³և զշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛ որ կաղն իցէ զլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի*։ ¹⁴Ձխաղաղութեան զհետ երթայք ընդ միմեանս՝ և զսրբութեան. առանց որոյ ո՛չ որ տեսանիցէ զՏէր*։

ԺԸ ¹⁵Ձգո՛յ՛ լերուք, գուցէ որ յետնեա՛լ գտանիցի ՚ի շնորհացն Աստուծոյ. մի՛ որ արմատ դառնութեան ՚ի վեր երևեալ նեղիցէ, և նովաւ բազումք պղծիցին։ ¹⁶Մի՛ որ պոռնիկ և պիղծ իբրև զԵսաւ. որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնսն վաճառեաց*։ ¹⁷Գիտէք՝ զի թեպէտ և յետոյ կամեցաւ ժառանգել զօրինութիւնսն, խոտան գտաւ. զի և ապաշխարութեան տեղի ո՛չ եգիտ. թեպէտ և արտասուօ՛ք խնդրեաց զնա*։

ԺԹ *դ.* ¹⁸Ձի ո՛չ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, որ հրովն վառեալ էր, և միզով, և մառախղով, և խաւարաւ, և մթով*։ ¹⁹Ուր փողն հնչէր և բարբառ պատգամացն. ուստի որք լուանն՝ հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ նոսա բանն. ²⁰քանզի ո՛չ հանդարտէին հրամանին. թեպէտ և զազան մերձեանայր ՚ի լեառնն՝ քարկո՛ծ լինէր*։ ²¹Եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի և Մովսէս ասէր, թէ զահի հարեալ եմ և դողամ*։ ²²Այլ մատուցեալ էք ՚ի Սիովն լեառն, և ՚ի քաղաք Աստուծոյ կենդանոյ յերուսաղէմ՝ յերկինս, և ՚ի բիւրաւոր բանակս հրեշտակաց*, ²³և յեկեղեցի՛ս անդրանկաց գրելոց յերկինս, և առ դատաւորն ամենեցուն Աստուած, և յոգիս արդարոց կատարելոց*։ ²⁴և ՚ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, և ՚ի հեղո՛ւմն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զՅաբելին*։ ²⁵Ձգո՛յ՛ լերուք՝ գուցէ՛ հրաժարիցէք յայնմանէ որ խօսեցան. զի եթէ նոքա ո՛չ կարացին զերծանել, հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր. ո՞րչափ ևս առաւել մեք՝ եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցենք*։ ²⁶Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և ասէ. Միւսանգամ շարժեցից ո՛չ միայն զերկիր՝ այլ և զերկինս*։ ²⁷Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն իբրև զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն*։ ²⁸Վասն որոյ թագաւորութիւն անշարժ ընկալեալ, պինդ կալցուք

* *Ոմանք.* Ձի թէ ՚ի մարմնա՛ն։

* *Ոմանք.* Առ ՚ի յընդունելոյ։

* *Ոմանք.* Խրատ ոչ առ ժամանակն ուրախութիւն թուի, այլ տրտմութիւն... կրթելոցն հատուցանէ արդարութիւն։

* *Ոմանք.* Ուղիղ արարէք... զլորիցէ։

* *Այլք.* Ձհետ երթայք ընդ ամենեսին. *կամ՝* առ ամենեսին։ *Ոմանք.* Ոչ որ տեսանէ զՏէր։

* *Ոմանք.* Պոռնիկ կամ պիղծ... զանդրանկութիւնն վա՛ն։

* *Ոմանք.* Ժառանգել զանդրանկութիւնն... զի ապաշխարութեան։

* *Ոմանք.* Առ լեառնն։

* *Ոմանք.* Մերձանայր ՚ի լեառն։

* *Ոմանք.* Եթէ զահի հար՛ն։

* *Ոմանք.* Աստուծոյ կենդանոյն։

* *Ոմանք.* Անդրանկաց կատարելոց յեր՛... ամենեցունց Աստուած։

* *Ոմանք.* Արեանն նորա։

* *Ոմանք.* Ձի թէ նոքա... թէ յերկնաւոր՛... դարձուցանենք։

* *Ոմանք.* Իբրև զեղելոցն։

զշնորհսն, որով պաշտենք զԱստուած հաճութեամբք՝ ահիւ և դողութեամբք՝
²⁹քանզի Աստուած մեր հո՛ւր ծախիչ է՝:

13

Գլուխ ԺԳ

Ի ¹Եղբայրսիրութիւն հաստատեսցի՝ առ ձեզ: ²Չօտարսիրութիւն մի՛
մոռանայք. զի այնու՛ ոմանք յանգէտս ընկալան զհրեշտակս՝: ³Յո՛ւշ լիցին ձեզ
կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալք իցէք. և չարչարեալքն, որպէս թէ
և դո՛ւք իսկ մարմնաւորք էք՝: ⁴Պատուական է ամուսնութիւն ամենևին, և սո՛ւրբ
անկողինք. բայց զշունս և զպոռնիկս դատի՛ Աստուած՝: ⁵Բարք՝ անարձաթասէրք
լինիցին, բաւական համարել որչափ ինչ՝ ՚ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ ասաց.
Ո՛չ թողից զքեզ՝ և ո՛չ ընդ վայր հարից՝: ⁶Որպէս համարձակ լիցուք ասել. Տէր է
իմ օգնական՝ և ո՛չ երկեայց զի արասցէ ինձ մարդ՝: ⁷Յիշեցէք զառաջնորդս ձեր
որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա, նմանօրբ
եղերուք հաւատոցն՝: ⁸Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նո՛յն և յաւիտեանս՝:
⁹Յուսմունս պէսպէս և յօտարածայնս մի՛ դանդաչէք. զի լա՛ւ է շնորհօք
հաստատել զսիրտս, և ո՛չ կերակրովք. որովք ո՛չ ինչ օգտեցան որք այնպէսն
գնացին՝:

ԻԱ Ե. ¹⁰Ունիմք մեք սեղան, ուստի ո՛չ ունին իշխանութիւն ճաշակել, որք
պաշտեն զպաշտօն խորանին: ¹¹Գի որոց անասնոց մատչէր արիւնն ՚ի
սրբութիւնսն՝ վասն մեղաց ՚ի ձեռն քահանայապետին, նոցուն մարմինք այրէին
արտաքոյ բանակին՝: ¹²Վասն որոյ և Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն
զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ: ¹³Արդ՝ եկայք ելցո՛ւք առ նա
արտաքոյ բանակին, առեալ յանձն գնախատինս նորա: ¹⁴Քանզի ո՛չ եթէ ունիմք
քաղաք որ աստէն մնալոց է, այլ զհանդերձեալսն խնդրենք՝: ¹⁵Արդ՝ ՚ի ձեռն
նորա մատուցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ. այս
ինքն է՝ զպտո՛ղ շրթանց խոստովանելոց յանուն նորա՝: ¹⁶Ձբարերարութիւն և
զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի՛ պատարագս հաճի Աստուած՝:
¹⁷Ունկնդի՛ր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նոքա

* *Ոմանք.* ՁԱստուած հաճութեամբ:

* *Օրինակ մի.* Հուր ծախիցէ:

* *Ոսկան.* Չօտարասիրութիւն:

* *Ոմանք.* Թէ և դուք ընդ նոսա կապեալ իցէք... որպէս և դուք իսկ մարմնաւոր էք:

* *Ոսկան զանց առնէ.* Ամուսնութիւն *ամենևին*, և սուրբ անկողինք. *այլ ՚ի լուս՝. նշանակէ՝*
ամենայնիւ:

* *Ոմանք.* Անարձաթասէր... բաւական համարեալ որչափ և ՚ի ձեռս իցէ... ոչ թողից զձեզ:

* *Ոմանք.* Որպէս զի համար՝... և ես ոչ երկեայց:

* *Ոմանք.* Ձառաջնորդսն որ խօ՛ս:

* *Ոմանք.* Նոյն յաւիտեան:

* *Ոմանք.* Պէսպէս և օտարածայնս... որ այնպէսն գնացեն:

* *Ոմանք.* Անասնոցն մատչէր... նոցին մարմինք այրէին:

* *Ոմանք.* Մնալոց իցէ:

* *Ոմանք.* Պատարագս օրհնութեան... խոստովանելոյ յանուն: *Ուր Ոսկան.*

խոստովանողաց յանուն:

* *Ոմանք.* Պատարագսն հա՛՛:

տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն՝ և մի՛ յոգւոց հանելով. զի այն ո՛չ յօգուտ ձեր է՝: *Կիր.* ¹⁸Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտենք՝ եթէ բարութք միտս ունինք. յամենայնի կամինք բարութք գնացս ցուցանել: ¹⁹Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատասպարեցայց ձեզ՝:

Իբ ²⁰Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան ՚ի մեռելոց զՅովիւն հօտից՝ զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զՏէր մեր Յիսուս՝, ²¹հաստատեսցէ՝ զձեզ ՚ի գործս բարութեան՝ առնել զկամս նորա. և արասցէ ՚ի մե՛զ զհաճոյսն առաջի իւր՝ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն՝: ²²Աղաչեմ զձեզ եղբարք, անսալ բանիս միխթարութեան. քանզի սակաւութք գրեցի առ ձեզ՝: ²³Եւ ճանաչէք զեղբայրն մեր զՏիմոթէոս, զարձակեալն առ ձեզ. ընդ որում, եթէ վաղագոյն զայցէ՝ տեսի՛ց զձեզ: ²⁴Ողջոյն տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց, և ամենայն սրբոց: Ողջոյն տան ձեզ՝ որ ՚ի կողմանս Իտալիացւոց են՝: ²⁵Շնորհք ընդ ամենեսին ձեզ՝:

Առ Եբրայեցիս՝ գրեցաւ յԻտալիայ ՚ի ձեռն Տիմոթեայ: Տունք. 29:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԵՒԹԱՆԵՑՈՒՆՑ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

՚ի փոքունս փոքունքք ինչ յանդգնելոց՝ չէ՛ առանց կասկածանաց. իսկ ես կրտսերս որ ՚ի վերս քան զիս արկի զանձնս յաշխատութիւնս, ո՛չ առաւել ևս իցեմ ընդ տագնապաւ: Չորօրինակ եթէ փոքր մակուկաւ ոք կարծիցէ զհամատարած զծովն հատանել անցանել, և ստահակ հողմոց մրրկացն ժուժկալ լինել հաշուիցի, և սակաւ ինչ շարժեցեալ ալեացն չհանդարտիցէ, փոքր մի շնչելոյ հիւսւսային հողմոյն. այլ անձամբ անձին պէսպէս իրօք, այնուհետև ՚ի հողմակոծելն անձին մե՛զ դնիցէ թշուառականն: Ըստ նմին օրինակի ես այժմ ինքնին իսկ քաջ գիտեմ զանձին տագնապ, այսու զի իմով յանդգնութեամբս յօժարեմ: Բայց այս և եթ զի յօժարիմ. զի արժանաւոր պատասխանատութիւն ՚ի մէջ բերից. վասն ամենեցուն միշտ հնազանդելոյ, յորս և եսս յանդգնիմ. աղաչեմ չլինել ձեզ ինձ մեղադիր: Բայց զի արդարև սիրոյ օրինօք բռնադատեալ ՚ի քէն եղբայր պատուական Աթանասիէ. որպէս զանզօր տկար ոք ՚ի նահատակաց ետու զանձն ՚ի գործ. և ընդ իմոց վաստակոց յամենայն ժամ ունիմ ակն վարձուց ՚ի փրկութիւն. թէ այդպէս իցէ ո՛վ սիրելիդ իմ գլուխ՝ հանապազորդ պարտուց իմոյ հնազանդութեանս մի՛ ժխտօղ լինիցիս. և ՚ի վշտակցութիւն այժմու վշտացս մերոց խոնարհեալ,

* *Ոմանք.* Նոքա տքնէին վասն... համար տալոց են ընդ:

* *Ոմանք.* Եւ առաւել աղաչեմք... զի լաւագոյն պատասպա՛:

* *Ոմանք յաւելուն.* ՉՏէր մեր Յիսուս Քրիստոս:

* *Ոմանք.* Չձեզ յամենայն գործս բարութեան:

* *Բազումք.* Սակաւութք գրեցի ձեզ:

* *Ոմանք.* Որ ՚ի կողմանց Իտալացւոց իցեն:

* *Ոսկան յաւելու.* Ամենեսին ձեզ. ամէն:

զամենայն սեռն և սերտ սիրով հատո՛ւմեզ արդեամբք՝ ածեալ յաղերս զԱստուած վասն մեր. համօրէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, սրբոցն գնդիւք ՚ի միասին գումարելովք, առնել աղօթս անդադար վասն մեր, և լինել բարեխօս: Գիտեն զի լինիցին երախտաւորք ըստ օրինակի նոցա, որոց երբեմն զյարկ տանն քակեալ կախեալ իջուցին զանդամալոյծն առ Յիսուս, իւրեանցնանն հաւատովք՝ յակամայ ցաւոց լլկելոյն շահեցան զբժշկութիւն: Ընկալ՝ այսուհետև ընկալ՝ առ ՚ի մէնջ ախորժելով զքոց հրամանացդ վաճառաշահութիւն՝ աղօթիւք վասն մեր, ընդ մերոյ հնազանդութեանս լինել ցանկ հատուց անօղ: Այլ ես տուն առ տուն կարգաւ զԿաթողիկեայս թուղթսն ընթերցայց, և զգլխակարգութիւնսն, միանգամայն և զաստուածեղէն վկայութիւնսն, ըստ իմուն տկարութեանս կարգեցից:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կաթողիկեայ Թղթոյն Յակորայ

Քանզի ինքն իսկ Յակովբոս գրէ զայս որոց յերկոտասան ազգացն սփռեալք էին հաւատացեալք ՚ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս. գրէ և վարդապետական գթուղթս, և ուսուցանէ յաղագս զանազան փորձութեանց՝ թէ ո՛րք իցէ առ ՚ի յԱստուծոյ, և ո՛ր յինքենէ ՚ի սրտից մարդկան: Եւ թէ ո՛չ բանիւ և եթ, այլ գործով ցուցանել արժան է զհաւատս. և զի ո՛չ ունկնդիրք օրինացն են արդարք, այլ գործօղք օրինացն: Յաղագս մեծատանց պատուիրէ՝ զի մի՛ նախապատուեսցին քան զաղքատսն յեկեղեցիս. և մանաւանդ՝ զի մի՛ իբրև զհպարտս զանեսցեն զնոսա: Եւ ՚ի կատարումն մխիթարէ զանիրաւեալսն, և հրամայէ նոցա երկայնամտել մինչև ՚ի գալուստն Դատաւորին. ուսուցեալ յաղագս համբերութեան ՚ի Յորայ, ախորժելի արարեալ զհամբերութիւնն: Պատուիրէ կոչել զերիցունս առ տկարացեալսն. և փութալ դարձուցանել զմոլորեալսն ՚ի ճշմարտութիւն. և առնուլ նմա վարձս ՚ի Տեառնէ, և քաւութիւն մեղաց. և ա՛յսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք Թղթոյն Յակորայ

ա. Վասն համբերութեան և անխիղճ հաւատոց, և վասն խոնարհութեան մեծատանց: ա. Յորում վասն ՚ի մե՛զ հրոյն, և վասն որ ՚ի նմանէ կարիքն իցեն, եթէ ո՛չ են յԱստուծոյ այնպիսի պատճառք. այլ որ ինչ բարի է ՚ի մե՛զ այն ՚ի նմանէ է:

բ. Վասն հեզութեան և սրբութեան, և գործոց բարեաց, և սրբութեամբ տուրս տալոյ, և վասն ցածութեան և չափով զբանն խօսելոյ:

գ. Վասն առ իւրաքանչիւրոք սէր ունելոյ առանց ակնառութեան ըստ օրինացն:

դ. Եթէ ոչ ՚ի հաւատոց միայն, այլ և ՚ի գործոց, և եթէ ո՛չ առանց միոյ ՚ի նոցանէ արդարանայ մարդ:

ե. Եթէ յանդուզն և անխրատ լեզու սպանանէ զստացօղն, զոր կարճել

պարտ է 'ի փառս և 'ի գովեստս Աստուծոյ: ա. Յորում վասն բարւոք գնացից, և առանց կռուոյ լինելոյ ընդ միմեանս, 'ի փառասիրութենէ մարդկեղէն իմաստութեան: բ. Վասն աստուածեղէն իմաստութեանն: գ. Եթէ 'ի ծուլութենէ և 'ի ցանկասիրութենէ՝ հակառակութիւն և խռովութիւն և թշնամութիւն առ Աստուած լինի: դ. Վասն ապաշխարութեան 'ի փրկութիւն, և վասն չդատելոյ զընկերն: զ. Եթէ ոչ մարդով այլ Աստուծով ուղղին գնացք առն: ա. Յորում վասն ազահութեան մեծատանց, և յաշխարհի փափկութեանց նոցա, և վասն արդարադատութեան Աստուծոյ: բ. Վասն երկայնմտութեան և համբերութեան չարչարանաց, և վասն ճշմարտութեան: գ. Խրատ առանձինն, և իւրաքանչիւրոցն ուրոյն պատճառք հաւատով: դ. Եթէ սպասաւոր պարտ է լինել ընկերին փրկութեան: Յակոբու թուղթս գրեցաւ յերուսաղէմէ առ Եբրայեցիս 'ի սփիւռս:

ԹՈՒՂԹ

ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ԿԱԹՈՂԻԿԷ*

1

Գլուխ Ա

ադ. ¹Յակովբոս Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ. երկոտասան ազգացոյ որ 'ի սփիւռոյ էք՝ ողջոյն*:

Ա ²Ամենայն ուրախութեան արժանի՝ համարիջիք եղբարք, յորժամ 'ի պէսպէս փորձութեանց 'ի մէջ անկանիցիք*. ³Գիտասցիք զի հանդէս ձերոյ հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերութիւն*։ ⁴Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունիցի. զի իցէք ողջանդամք և կատարեալք, և ո՛չինչ իւրք նուազեալք*։ ⁵Ապա թէ որ 'ի ձեռն իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ՝ որ տայն ամենայնի առատապէս՝ և ո՛չ նախատէ. և տացի՝ նմա*։ ⁶Բայց խնդրեսցէ հաւատովք՝ և մի՛ երկմտեսցէ. զի որ երկմտն է՝ նման է հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու*։ ⁷մի՛ ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ. ⁸զի այր երկմիտ՝ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր*։ ⁹Պարծեսցի՛ եղբայր խոնարհ 'ի բարձրութիւն իւր, ¹⁰և որ մեծատունն իցէ 'ի

* Բազումք համաձայն մերումս ունին զվերնագիրս, բաց 'ի սակաւուց ոմանց՝ որք լոկ դնեն. Թուղթ Յակոբու:

* Ոսկան. Եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ոմանք. Որ 'ի սփիւռս. կամ՝ 'ի սփիւռս. և ոմանք. 'ի սփիւռսդ էք:

* Ոմանք. Համարիցիք. կամ՝ համարեսցիք... 'ի պէսպէս փորձութեան 'ի մէջ անկանիցիք:

* Ոմանք. Ձերոց հաւատոցն:

* Ոմանք. Գործ կատարեալ ունի: Ոմանք. Եւ ոչ իւրք նուա՛:

* Ոմանք. Որ տայ ամենայնի:

* Ոմանք. Եւ մի՛ երկմտիցէ. զի երկմտն նմա՛:

* Ոմանք. Յամենայն 'ի ճանապարհս:

խոնարհութիւն իւր. քանզի իբրև զծաղիկ խոտոյ անցանիցէ*։ ¹¹Ձի ծագեաց արև հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց զխոտն, և թօթափեցաւ ծաղիկն նորա, և կորեալ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս և մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք թարշամեսցի*։ ¹²Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Տէր*։ *աե.* ¹³Մի՛ ոք որ ՚ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց. փորձէ նա՝ և ո՛չ զոք*։ ¹⁴Իւրաքանչիւրոք փորձի՛ առ ՚ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ*։ ¹⁵Ապա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի. և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանիմ*։ ¹⁶Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք, ¹⁷զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք՝ ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի Յօրէն լուսոյ. յորում չիք փոփոխումն՝ և կամ շրջելոյ ստուեր*։ ¹⁸Կամեցեալ ծնալ զմեզ բանիւն ճշմարտութեան լինել մեզ պտուղ ինչ ստացուածոց նորա*։ ¹⁹Գիտասջի՛ք եղբարք իմ սիրելիք,

Բ Եղիցի ամենայն մարդ արագ առ ՚ի լսել, և ծանր առ ՚ի խօսել, և ծանր առ ՚ի բարկանալ*։ ²⁰Ձի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ո՛չ գործէ։ ²¹Որով ՚ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւն և գյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջի՛ք զբանն ընտաբոյս. որ կարօղն է կեցուցանել զոգիս ձեր*։ ²²Լինիջի՛ք առնելի՛ք բանին, և մի՛ լսելիք միայն համարեսջիք յանձինս*։ ²³Ձի եթէ ոք լսող միայն իցէ բանին՝ և ո՛չ առնելի, նման է նա մարդոյ որ պշուցեալ հայիցի՛ ընդ երեսս իւր՝ որ ծնանիցին ՚ի հայելուջ*։ ²⁴Գի հայեցեալ ետես զինքն, և զանց արար, և անդէն մոռացալ թէ որպիսի ոք էր։ ²⁵Իսկ որ յառեալ ՚ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի, և ՚ի նմին կացցէ, ո՛չ եղև նա լսող մոռացութեան, այլ առնելի՛ գործոյն. նա՛ յառնելն իւրում լիցի երանելի*։ ²⁶Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել, և ո՛չ սանձահարեսցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւնն*։ ²⁷Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ ՚ի յԱստուծոյ և ՚ի Յօրէն՝ այս է. Այցելու՛ լինել որբոց և այրեաց ՚ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ*։

* *Բազումք.* Խոտոյ անցցէ։

* *Օրինակ մի.* Վայելչութիւն գեղոյ նորա։

* *Ոմանք.* Որ համբերէ փորձութեանց. զի թէ ընտիր ևս գտցի։ *Ի բազումս պակասի.* իւրոց Տէր։

* *Ոմանք.* Ասացէ թէ յԱստուծոյ... անփորձ է ՚ի չարեաց։ *Ոսկան.* Անփորձ է չարաց։

* *Ոմանք.* Առ յիւրոց ցանկութեանցն։

* *Ոմանք.* Եւ մեղք կատարեալք։

* *Օրինակ մի.* Որում չիք... և շրջելոյ ստուերք։

* *Ոմանք.* Բանիւ ճշմարտութեանն, լինել պտուղ ինչ ստացուածոցն նորա։

* *Ոմանք.* Երագ առ ՚ի լսել։

* *Ոմանք.* Թօթափել զամենայն աղտեղութիւնս... զբանն ընդաբոյս... զոգիս ձեր։

* *Ոմանք.* Համարեսջիք զանձինս։

* *Ոմանք.* Ձի թէ ոք լսելի միայն... հայի ընդ երեսս իւր, որ ծնանիցի։

* *Ոմանք.* Յառեալ և ՚ի կատարեալ օրէնսն ազատութեան հայ՝... կայցէ... առնելի գործոյ։

* *Ոմանք.* Եւ ոչ սանձահարիցէ... զբաղեցուցանէ զսիրտն իւր... կրօնաւորութիւն։

* *Ոմանք.* Առ յԱստուծոյ։

Գլուխ Բ

Գ ազ. ¹Եղբարք իմ, մի՛ աչառանօք ունիցիք զհաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Տէրն է փառաց*։ ²Եթէ մտցէ՝ ի ժողովուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի՝ ոսկի և հանդերձս պայծառս, մտանիցէ անդր և աղքատ ոք՝ ի հանդերձս աղտեղիս*, ³հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն պայծառս. և ասիցէք՝ եթէ դու նիստ աստ պատուով. և ցաղքատն ասիցէք՝ եթէ յո՛տն կաց այտի. կամ թէ եկ նիստ առ պատուանդանիս իմում*։ ⁴ո՛չ խղճիցէք յանձինս, և լինիցիք դատաւորք չարացն խորհրդոց*։ ⁵Լուարո՛ւք ինձ եղբարք իմ սիրելիք. ոչ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աշխարհիս, որ են մեծատունք հաւատովք, և ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց*։ ⁶Եւ դուք անարգէ՛ք զաղքատս։ Ոչ մեծատունք յաղթահարեն զձեզ՝ և նոքա՛ քարշեն զձեզ ի դատաստան։ ⁷Ո՛չ նոքա հայիոյեն զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է ՚ի վերայ ձեր*։ ⁸Ապա թէ զօրէնսն կատարիցէք զարքունական ըստ գրոց, եթէ. Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. բարւոք առնէք*։ ⁹Իսկ եթէ աչառիցէք, մե՛ղս գործէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրև օրինագանցք*։ ¹⁰Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ, և միո՛վ իւրք ինչ գթիցէ, եղև ամենայն օրինացն պարտապան*։ ¹¹Ձի որ ասացն՝ թէ Մի՛ սպանանիցես, ասաց թէ և Մի՛ շնայցես. զի եթէ սպանանիցես ո՛չ՝ բայց շնայցես, եղեր յանցաւոր օրինացն*։ ¹²Այնպէս խօսեցարո՛ւք և այնպէս արարէ՛ք, որպէս զի ազատութեան օրինօքն իցէք դատելոց*։ ¹³Ձի անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ո՛չ առնիցէ զողորմութիւն. քանզի բարձրիզլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւն*։

Դ աւ. ¹⁴Ձի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել՝ և գործս ո՛չ ունիցի. միթէ կարիցէ՞ն հաւատքն ասպրեցուցանել զնա։ ¹⁵Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ իցեն մերկք կամ կարօտեալ աւուրն կերակրոյ*, ¹⁶ասիցէ ոք ՚ի ձե՛նջ ցնոսա. երթայք խաղաղութեանք քեռարո՛ւք և յագեցարո՛ւք. և տայցէք ո՛չ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ իցէ*։ ¹⁷Սոյնպէս և հաւատք՝ եթէ գործս ո՛չ ունիցին, մեռեալ են առանձինն*։ ¹⁸Այլ թերևս ասիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս՝ և ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո առանց գործոց, և ես ցուցից քեզ ՚ի

* Ումանք. Մի՛ աչառութեամբ ունիցիք։

* Ումանք. եթէ մտանիցէ ՚ի ժողովուրդս ձեր... մտանիցէ և անդր աղ՞։

* Ումանք. Յո՛տն կաց դու այտի, և կամ։

* Ումանք. Եւ ոչ խղճիցէք ՚ի յանձինս ձեր՝ և լինիցիք... չարեացն խոր՞։

* Ումանք. Ընտրեաց Աստուած։

* Ումանք. Ոչ նոքա են որ հայիոյեն զբարիքն անուն որ։

* Ումանք. Ապա եթէ զօ՞... զարքունականս ըստ... թէ սիր՞... բարիքն առ՞։

* Ումանք. եթէ աչառիցիք։

* Ոսկան. Օրինացն պարտական։

* Ումանք. եթէ մի՛ սպա՞... թէ Մի՛ շնայցես։

* Ումանք. Ազատութեան օրինացն։

* Ումանք. Այնմիկ որ ոչ առնէ ողորմութիւն։ Քանզի բարձրազլուխ պարծեսցի ո՞։

* Ումանք. Մերկ կամ կարօտեալք աւուրն կերակրոց։

* Ումանք. Եւ ասիցէ ոք ցնոսա ՚ի ձե՛նջ... և տայցէք ոչ նոցա։ Ոսկան. Գնացէք

խաղաղութեամբ։

* Ումանք. Նոյնպէս և հաւ՞... մեռեալ իցեն առանձին։

գործոց իմոց զհաւատսն*։ ¹⁹Դու հաւատաս՝ զի մի՛ է Աստուած, բարւո՛ք առնես. և դևք հաւատան՝ և սարսեն։ ²⁰Կամիս գիտել՝ ո՛վ մարդ սնոտի, զի հաւատք առանց գործոց դատարկ են*։ ²¹Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն՝ ՚ի գործոց արդարացաւ՝ հանեալ ՚ի սեղան զորդին իւր զԻսահակ պատարագ։ ²²Տեսանե՞ս՝ զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա. և ՚ի գործոց անտի հաւատքն կատարեցան*։ ²³Եւ կատարեցաւ զիրն՝ որ ասէ. Յաւատաց Աբրահամ յԱստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն. և կոչեցաւ բարեկան Աստուծոյ*։ ²⁴Տեսանե՞ք՝ զի ՚ի գործոց արդարանայ մարդ՝ և ո՛չ ՚ի հաւատոց միայն*։ ²⁵Սոյնպէս և Ռախաբ պոռնիկ՝ ոչ ապաքէն ՚ի գործոց արդարացաւ, ընկալեալ զլրտեսսն՝ և ընդ այլ ճանապարհ արծակեաց*։ ²⁶Ձորօրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են*։

3

Գլուխ Գ

Ե քա. ¹Մի՛ բազում վարդապետս լինել եղբարք իմ, գիտասցիք՝ զի մե՛ծ դատաստան ընդունելոց ենք*։ ²Քանզի բազում ինչ յանցանքնք ամենեքեան։ Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա՛ է մարդ կատարեալ, որ կարողն է սանձահարել զամենայն մարմին իւր*։ ³Տես՝ զի ձիոյ սանձս ՚ի բերան դնենք՝ առ անսալոյ՝ նոցա մեզ, և զամենայն մարմինս նոցա նուաճենք*։ ⁴Ահաւասիկ և նաւք՝ որպիսի՞ ինչ են, և ՚ի սաստիկ հողմոց վարին. և փոքր թևովն շրջին՝ յոր կոյս և միտք ուղղչին կամիցին*։ ⁵Սոյնպէս և լեզու՝ փոքր ինչ անդամ է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սակաւ ինչ հուր զորպիսի՛ անտառս հրդեհէ*։ ⁶Եւ լեզու հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, և վառէ հրով զանիւ ծննդեան, և բորբոքեալ տոչորի՛ ՚ի գեհենի*։ ⁷Ամենայն բնութիւն զազանաց, և թռչնոց, և սողնոց, և որ ՚ի ծովու են, հնազանդեալ է՝ և հնազանդի՛ մարդկեղէն բնութեան*։ ⁸Բայց զլեզու մարդկան ո՛չ ոք կարէ հնազանդել, զչարն և զանկարգն՝ և զլի՛ թունօք մահաբերին*։ ⁹Նովաւ օրհնենք զՏէրն և զՅայր. և նովաւ անիծանք զմարդիկ

* Ոսկան. ՚ի գործոց իմոց զհաւատս իմ։

* Ոսկան. Առանց գործոց մեռեալ են։

* Ոմանք. Գործոցն նորա։

* Ոմանք. Նմա արդարութիւն։

* Ոմանք. Տեսանես զի ՚ի գոր՞։

* Ոմանք. Եւ Ռախաբ պոռնիկն... զլրտեսսն ընդ այլ։

* Ոմանք. Առանց ոգւոյ... նոյնպէս և հաւատք։

* Ոմանք. Վարդապետք լինել եղբարք, զի՞։ Ուր օրհնակ մի. լինիք եղ՞։

* Ոմանք. Յանցանիցենք ամենեքին. թէ ոք... զամենայն մարմինն։

* Ոմանք. Ձի ձիոց սանձս ՚ի բերանս։

* Ոմանք. Փոքր թևովք շր՞։

* Ոմանք. Նոյնպէս և լեզու... և զմեծամեծս բար՞. ահաւասիկ և սակաւ մի հուր։

* Յոմանս պակասի. Եւ վառէ հրով զա՞։

* Ոմանք. Ամենայն բնութիւնք զա՞... բնութեանս։ Ոսկան. Հնազանդեալ են և հնազանդին մար՞։

* Ոմանք. Եւ զանկարգ և զլի թունիւք մա՞։

որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան*։ ¹⁰Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէօք. ո՛չ է պարտ եղբարք իմ այսմ այսպէս լինել*։ ¹¹Միթէ՛ աղբեր անոստին ՚ի միոյ ականէ բղխիցէ քաղցր և դառն*։ ¹²Միթէ՛ մարթ ինչ իցէ եղբարք իմ՝ թգենոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, և ո՛չ աղտաղտին տեղոյ ջուր քաղցր առնել*։ *բբ.* ¹³Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ ՚ի ձեզ, ցուցցէ՛ ՚ի բարուք գնացից իւրոց զգործս իւր հեզութեամբ իմաստութեան*։ ¹⁴Ապա թէ նախանձ՝ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ՚ի սիրտս ձեր, մի՛ պարօհք սուտ առնել զճշմարտութիւն*։ ¹⁵Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ ՚ի վերուստ. այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ և դիւական*։ ¹⁶Ձի ուր հեռ և նախանձ, անդ է անկարգութիւն և ամենայն իրք չարք*։ ¹⁷Իսկ վերին իմաստութիւնն, նախ՝ զի սուրբ է, և ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի՛ ողորմութեամբ և պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորութեան*։ ¹⁸Ատուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։

4

Գլուխ Դ

¹Ուստի՛ պատերազմունք՝ և ուստի՛ կռիւք ՚ի ձեզ. ոչ յայդպիսի՛ ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս ձեր*։ ²Ցանկայք, և ո՛չ ունիք. սպանանէք և նախանձիք, և ո՛չ կարէք հասանել. պատերազմիք կռուիք՝ և ո՛չ ունիք, վասն զի ո՛չ խնդրէք. ³խնդրէք՝ և ո՛չ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն ՚ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք*։ ⁴Շնացողք՝ ոչ գիտէք՝ զի սեր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի՛ առնէ զանձն իւր Աստուծոյ*։ ⁵Կամ թէ վայրապար համարիցիք՝ զոր ասէ գիրն առ նախանձ ինչ, որում փափաքէ՛ հոգին՝ որ բնակեաց ՚ի մեզ*, ⁶տալ զառաւել շնորհսն. վասն որոյ ասէ. Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց*։ *բգ.* ⁷Յնազանդեցայք այսուհետև Աստուծոյ, և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախստական առ ՚ի ձեզ*։ ⁸Մերձեցարուք առ Աստուած, և

*Ոմանք. Նովին օրհնենք զՏէր... և նովին անիծա՛ն։

*Ոմանք. Ոչ պարտ է եղ՛։

*Ոմանք. Միթէ՛ աղբերն անոստին ՚ի միոյ ականէն։

*Ոմանք. Կամ աղտաղտին տեղոյ ջուր քաղցր լինել։

*Ի բազումս պակասի. Գնացից իւրոց։

*Ոմանք. Ապա եթէ նախ... մի՛ պարօհցէք սուտ առ... զճշմարտութիւնն։

*Ոմանք. Եւ դիւական է։

*Ոմանք. Եւ նախանձ է։

*Ոմանք. Սուրբ է, ապա խաղաղա՛ն... ողորմութեամբք։

*Ոմանք. Պատերազմունք ՚ի ձեզ՝ և ուստի կռիւք, ոչ ապաքէն յայնպիսի. կամ՝ յայսպիսի ցան՛։

*Ոմանք. Ցանկանայք և ոչ ու՛ն։

*Ոմանք. Մաշիցիք։

*Յոմանս պակասի. Աշխարհիս այսորիկ թշնամութիւն է յԱստուած... զանձն իւր Աստուծոյ։

*Ոմանք. Ձոր ինչ ասէ գիրն... հոգի որ բնակեսցէ ՚ի մեզ։

*Ոմանք. Եւ տայ շնորհս։

*Բազումք. Յնազանդեցարուք այսուհետև։

մերձեսցի՛ առ ձեզ: Սրբեցէ՛ք զձեռս մե՛ղաւորք, և ուղի՛ղ արարէք զսիրտս՝ երկմիտք՝: ⁹տառապեցարո՛ւք, սգացարո՛ւք, և լացէ՛ք. ծաղր ձեր՝ ՚ի սո՛ւգ դարձցի, և ուրախութիւն ձեր՝ ՚ի տրտմութիւն: ¹⁰Խոնարհեցարո՛ւք առաջի Տեառն՝ և բարձրացուցէ՛ զձեզ: ¹¹Մի՛ բամբասէք զմիմեանս ե՛ղբարք. որ բամբասէ՛ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատիցիս, ո՛չ առնելի օրինացն ես՝ այլ դատաւոր՝: ¹²Մի է Օրէնսդիր և Դատաւոր, որ կարողն է փրկել և կորուսանել. ¹³դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն:

Ձ Ահաւասիկ եմ որ ասեմ. Այսօր և վաղիւ երթիցո՛ւք յայս անուն քաղաք, եղիցո՛ւք անդ տարի մի, վաճառեսցո՛ւք և շահեսցո՛ւք. ¹⁴որք ո՛չ գիտէք զվաղիւն՝, ¹⁵որպիսի՞ ինչ իցեն կեանք ձեր. զի իբրև զմրրիկ էք, որ առ սակաւ մի երևեալ՝ և ապականեալ. փոխանակ զի ասէիք. Եթէ Տէր կամեսցի, կեցցո՛ւք և արասցո՛ւք զայս ինչ՝ կամ զայն՝: ¹⁶Եւ արդ՝ պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այնպիսի պարծանք՝ չարութիւն եմ՝: ¹⁷Որ ոք գիտիցէ՛ զբարիմ՝ և ո՛չ առնիցէ՛, մե՛ղք եմ նմա:

5

Գլուխ Ե

բդ. ¹Արդ՝ այսուհետև մե՛ծատունք՝ լացէք և ողբացէ՛ք ՚ի վերայ թշուառութեանցն, որ գալոց եմ ՚ի վերայ ձեր՝: ²Ձի մեծութիւնդ ձեր՝ յոչինչ է, և հանդերձ ձեր կերակո՛ւր ցեցոյ՝: ³Եւ արծաթ ձեր և ոսկի՝ ժանկահար, և ժանկ նոցա լիցի ձեզ ՚ի վկայութիւն, և կերիցէ՛ զամբիմս ձեր. իբրև զհո՛ւր. զանձեցէք աւուրցն յետնոց՝: ⁴Ահաւասիկ վարձք մշակաց որ գործեն զանդս ձեր՝ առ ձե՛զ եմ. զրկեալն ՚ի ձէնջ աղաղակէ՛, և բողոք հնձողացն եհա՛ս յականջս Տեառն զօրութեանց՝: ⁵Փափկացայք ՚ի վերայ երկրի՝ և զբօսայք. սնուցէք զսիրտս ձեր՝ իբրև աւուր սպանման: ⁶Ձրկեցէք սպանէք զարդարն, որ ո՛չ կայր ձեզ հակառակ՝: ⁷Երկայնամիտ լերուք եղբարք իմ մինչև ՚ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ՝ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ՛ զկանուխ և զանագան՝: ⁸Երկայնամտեցէ՛ք և դո՛ւք, հաստատեցէ՛ք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն մերձեալ է՝: ⁹Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս ե՛ղբարք, զի

* *Ոմանք.* Ձձեռս ձեր մեղաւորք:

* *Ոմանք յաւելուն.* Բամբասէ զեղբայր իւր, կամ դատի զեղ՞... զօրէնսն բամբասէ և զօրէնսն դա՞: *Ոսկան.* Եւ եթէ զօրէնսն... ո՛չ առնող օրինացն ես:

* *Ոմանք.* Դու ո՞վ ես: *Յօրինակին.* Տարիմ մի:

* *Ոմանք.* Որ ոչ գիտեն զվաղուիմ:

* *Ոմանք.* Որպիսի ինչ եմ կեանք ձեր. քանզի իբրև... երևեալ, և ապա ապականեալ... կամեսցի՛ և կեցցո՛ւք, արասցո՛ւք: *Ուր Ոսկան.* Եւ ապա պակասեալ:

* *Ոմանք.* Ամենայն այսպիսի պարծանք չարութեան եմ:

* *Ոմանք.* Որ գալոց է ՚ի վերայ:

* *Ոմանք.* Ձի մեծութիւն ձեր յոչինչ եմ. և հանդերձք ձեր:

* *Ոմանք.* Եւ արծաթ և ոսկի ձեր ժանգահար. և ժանգ նոցա եղիցի ձեզ... աւուրն յետոյ:

* *Ոմանք.* Ահաւաղիկ վարձ մշա՞:

* *Ոմանք.* Ոչ կայր ձեր հակառակ:

* *Յօրինակին պակասէր.* Եղբարք իմ մինչև: *Ոմանք.* Ահաւասիկ մշակ եր՞... պտղոյ երկրիմ... զկանուխն և զանա՞:

* *Ոմանք.* Եւ հաստատեցէ՛ք... զի գալուստ Տեառն:

մի՛ դատիցիք. ահաւասիկ Դատաւորն առ դո՛ւրս կայ: ¹⁰Օրինակ առէք ե՛ղբարք՝
 չարչարանաց և երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսեցան յանուն Տեառն՝:
¹¹Ահաւասիկ երանե՛նք համբերողաց. զհամբերութիւնն Յովբայ լուարուք՝ և
 զկատարումն Տեառն տեսե՛ք. զի բազմագուր է Տէր՝ և ողորմած՝: *բե.* ¹²Յառաջ
 քան զամենայն ինչ ե՛ղբարք իմ, մի՛ երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ
 ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոյն՝ այո՛, և ոչն՝ ոչ. զի մի՛ ՚ի կեղծաւորութիւն ինչ
 անկանիցիք՝: ¹³Վշտանայցէ որ ՚ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրիցի որ, սաղմոս
 ասասցէ՝: ¹⁴Յիւանդանայցէ որ ՚ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, և
 արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, օժցեն իւղով յանուն Տեառն՝: ¹⁵և աղօթքն
 հաւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն, և յարուցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ
 գործեալ՝ թողցին նմա՝: ¹⁶Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և աղօթս
 արարէք ՚ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսցիք. քանզի յո՛յժ զօրաւոր են
 աղօթք արդարոց յօգնականութիւն՝: ¹⁷Եղիայ մարդ էր իբրև զմեզ չարչարելի՛. և
 յաղօթս եկաց, և ոչ տեղեաց յերկիր զերիս անս և զվեց ամիս՝: ¹⁸Եւ դարձեալ
 եկաց յաղօթս՝ և ետուն երկինք զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր:
¹⁹Եղբարք իմ, եթէ որ ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճանապարհէ ճշմարտութեան, և
 դարձուցէ որ զնա՝. ²⁰զիտասցէ՛ զի որ դարձուցէ՛ զմեղաւորն ՚ի մոլորութեան
 ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն
 մեղաց՝:

Տունք ULE՝:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին Թղթոյն Պետրոսի

Ձայս գրէ Պետրոս թուղթ վարդապետական որոց ՚ի սփիռս էին Յրէից
 քրիստոնէայք եղելոց. և զորս ՚ի Յրէիցն հաւատացեալքն էին՝ հաստատ
 զնոսա: Եւ յառաջագոյն պատմէ և ցուցանէ. թէ որ առ ՚ի Քրիստոս
 հաւատք ՚ի մարգարէիցն նախապատմեցաւ, և նոքօք պատմեցաւ

* *Ոմանք.* Ձմարգարէքն որ խօսե՛:

* *Ոմանք.* Ձհամբերութիւն Յոբայ:

* *Ոմանք.* Յառաջ քան զայն ամենայն եղբարք... և մի՛ յերկիր... ձեր բան՝ այոյն այո. և:

* *Ոմանք.* Յաղօթս կացցէ. բերկրեսցի որ, սաղ՛:

* *Ոմանք.* Կոչեսցէ զերի՛. եկեղեցւոյ... և օժցեն իւղով:

* *Ոմանք.* Փրկեսցեն զաշխատեալն... թողցի նմա:

* *Ոմանք.* Խոստովան լերուք... որպէս զի բժշկիցիք... աղօթք արդարոյն յօգ՛:

* *Ոմանք.* Եւ ոչ տեղաց անձրև յերկիր:

* *Ոմանք.* Մոլորիցի ՚ի ճշմարտութեան ճանապարհէ անտի. և դարձուցանիցէք որ: *Ուր
 Ոսկան.* մոլորեալ իցէ ՚ի ճշմար՛:

* *Ոմանք.* Որ դարձուցանէ զմե՛... ճանապարհէ, փրկեսցէ զհոգի նորա ՚ի մահ՛:

* *Ի վախճանի բազումք.* Կատարեցաւ թուղթ Յակովբայ. *կամ՝* Յակոբու. *և ոմանք.*

կատարումն ՚ի Քրիստոս թղթոյն Յակոբայ. *և զկնի ամենեքեան համաձայն մերումս.
 Տունք. և այլն:*

արեամբ նորա փրկութիւն լինել, և նոցա և հեթանոսաց աւետարանեցաւ ամենայն, որում փափաքէին հրեշտակք խորհրդոյն. ապա խորհրդակցի արժանապէս կոչողին՝ լինել փրկելոցն: Հրամայէ և զթագաւորս պատուել. և կանանց և արանց զհամախոհ լինելն պատուիրէ. և ՚ի սովորութիւնն խրատէ սակաւ ինչ: Տուցանէ թէ և ՚ի դժոխքն եղև ՚ի Տեառնէ քարոզութիւն փրկական յարութեանն. և զի յառաջագոյն ննջեցեալքն յարիցեն և դատեսցին մարմնով. և շնորհօք յարութեանն մնան. և զի կատարումն ամենեցուն մերձ է: Եւ պարտ է ամենեցուն պատրաստ լինել, որպէս թէ բան տալոց են դատաւորին. և այսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք Առաջին Թղթոյն Պետրոսի Առաքելոյ

- ա. Վասն Քրիստոսիւ վերստին ծննդեանն և վասն համբերութեան փորձանաց, և վասն փրկութիւնագործ հաւատոցն յառաջագոյն պատմելոյ ՚ի մարգարէիցն:
- բ. Վասն յուսոյ և սրբութեան զոր պարտինք յաղագս որդեգրութեանն՝ զգուշաւոր գնացիւք:
- գ. Վասն արժանի ըստ որդեգրութեանն կեալ ՚ի Քրիստոս, յօգուտ արտաքնոցն ՚ի փառս Աստուծոյ:
- դ. Վասն իշխանաց հնազանդ լինելոյ, և եղբայրսիրութեան և աստուածպաշտութեան: ա. Յորում վասն ծառայից հնազանդութեան, և անոխակալ համբերութեան վասն Քրիստոսի: բ. Վասն հնազանդութեան կանանց, և միաբանութեան ընդ արս, առ ՚ի փրկութիւն հոգւովն՝ յօրինակ Սառայի: գ. Վասն արանց զիրեանց կանամբք գալոյ: դ. Վասն ամենեցուն հեզ և հանդարտ անոխակալութեան, որ յօրինակ առ նոյիւ Աստուծոյ մարդասիրութիւնն. և առ մեւք աւազանաւն Քրիստոսի չարչարակցութիւն:
- ե. Վասն մերկանալոյ զգործ չարութեան, և առնելոյ հոգւով զպտուղս արդարութեան, ըստ ազգի ազգի և պէսպէս շնորհաց:
- զ. Եթէ հաղորդութեամբ ընդ Քրիստոսի յաղթել պարտ է բնական կարեաց, և յուսով նորին համբերել լլկանաց որ յայլոց:
- է. Խրատ երիցանց վասն հօտից տեսչութեան: ա. Յորում վասն հասարակաց ամենեցուն՝ իւրաքանչիւր խոնարհութեամբ յաղթութիւն ընդդէմ հակառակորդին:
- ը. Աղօթք վասն կատարման հաւատոց:

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ*

* Ի վերնագրիս՝ երկու օրինակք և եթ ունին. Թուղթ առաջին Պետրոսի առաքելոյն Կաթուղիկէից: Իսկ մնացելոց մեծ մասն դնեն համաձայն մերումս:

Գլուխ Ա

բզ. ¹Պե՛տրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոց նժդեհից որ ՚ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց, և Կապադովկեցւոց, և Ասիացւոց, և Բիւթանացւոց*, ²ըստ կանոնի գիտութեանն Աստուծոյ Յօր, սրբութեամբ Յոգւոյն, ՚ի հնազանդութիւն և ՚ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի*:

Ա ³Օրհնեալ է Աստուած և Յայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ՚ի յոյսն կենդանի. ՚ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ՚ի մեռելոց*, ⁴յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ՚ի ձեզ*. ⁵որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք ՚ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ ՚ի յետին ժամանակս*. ⁶որով ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալք ՚ի պէսպէս փորձութիւնս*: ⁷Ձի հանդես ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուական է. որ հրով փորձեալ գտաւ, ՚ի գովութիւն և ՚ի փառս և ՚ի պատիւ ՚ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի*: ⁸Ձոր ո՛չն տեսէք՝ և սիրեցէք. ընդ որ այժմ ո՛չ հայեցեալք, բայց հաւատացէք. և ուրախ էք անձառ և փառաւորեալ խնդութեամբն*. ⁹ընկալեալ զկատարումն հաւատոցն ձերոց զոգուցն փրկութիւն*:

¹⁰Վասն որոյ փրկութեան խնդրեցին և քննեցին մարգարէքն. որք վասն որոյ ՚ի ձեզ լինելոց էին շնորհքն՝ մարգարէանային*:

¹¹Քննէին յորում և յորպիսի՝ ժամանակի զուշակէր ՚ի նոսա Յոգին Քրիստոսի. որ նախ՝ չարչարանացն Քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ՝ զփառացն*: ¹²Որոց և յայտնեցաւ իսկ. զի ո՛չ թէ անձանց, այլ մե՛զ մատակարարք լինէին, նոցին՝ որք այժմ պատմեցան, այնոքիւք որք աւետարանեցինն ձեզ Յոգւովն Սրբով որ առաքէրն յերկնից, զոր ցանկային տեսանել զոնեայ ընդ աղօ՛տ հրեշտակք*:

Բ բէ. ¹³Որով անդեալ զմէջս մտաց ձերոց՝ զուարթացեալք, բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ շնորհացն ՚ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի*, ¹⁴իբրև զորդիս հնազանդութեան. մի՛ կերպարանեալք առաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք: ¹⁵Այլ ըստ Սրբոյն որ կոչեաց զձեզ, և դո՛ւք

* *Ոմանք.* Ընտրելոցդ նժդեհից... և Գաղատացւոց. Կապապադովկացւոց, Ասիացւոց:

* *Առ Ոսկանայ պակասի.* Շնորհք ընդ ձեզ:

* *Ոմանք.* Ողորմութեան իւրոյ... ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յարութեան ՚ի մե՛:

* *Ոմանք.* Յանեղծն... յերկինս ձեզ:

* *Ոմանք.* Յայտնել ՚ի յետին:

* *Բազումք.* Տրտմեալ էք ՚ի պէսպէս: *Ոմանք.* ՚ի պէսպէս փորձութեանց:

* *Ոմանք.* Ձերոյ հաւատոց առա՛... և ՚ի պատիւ յայտնութեան Յիսուսի: *Ուր ոմանք.* ՚ի յայտնութիւնն Յիսուսի Քրիստոսի:

* *Ոմանք.* Ձոր ո՛չ տեսէք... ո՛չ հայեցեալ... փառաւորեալ խնդութեամբ:

* *Ոմանք.* Ընկալեալք... հաւատոց ձերոց զոգուցն փրկութեան:

* *Ոմանք.* Որ վասն որոյ... էին շնորհք:

* *Ոսկան.* Եւ յորպիսի ժամանակս: *Ոմանք.* Նախ զչարչարանացն Քրիստոսի վկայէ:

* *Օրհնակ մի.* Որ և յայտնեցաւ... ոչ եթէ: *Ոմանք.* Որ աւետարանեցին ձեզ... զոր ցանկանայինն տեսանել զոնէ... հրեշտակքն:

* *Ոմանք.* Սպասիցէք հասելոյ ձեզ շնորհաց:

սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք*։ ¹⁶Վասն որոյ գրեալ է, եթէ եղերո՛ւք սո՛ւրբ զի ես սուրբ եմ*։ ¹⁷Եւ եթէ Հայր կոչիցէք զայն, որ առանց ակնառութեանն դատի ըստ իւրաքանչիւր գործոց. ապա երկիւղիւ զձերոցն պանդխտութեան ժամանակդ գնասջիք*։ ¹⁸Գիտասջիք, զի ո՛չ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօքն փրկեցարուք ՚ի ձերոց ունայնութեան հայրենատուր գնացիցն*։ ¹⁹այլ պատուական արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գառին. ²⁰որ յառաջծանօթ էր նախ քան զիսկզբանէ աշխարհի։ Եւ երևեցաւ ՚ի վախճան ժամանակաց վասն ձեր*։ ²¹որք նովաւ հաւատացէք յԱստուած, որ յարոյց զնա ՚ի մեռելոց, և ետ նմա փառս. զի հաւատքն ձեր և յոյս իցեն յԱստուած*։ ²²Ձանձինս ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտութեան Հոգւոյն, յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան, ՚ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս*։ ²³Ծնեալք ՚ի վերստին ո՛չ յապականութեան սերմանէն. այլ յանապականացուէն, կենդանի և մշտնջենական բանին Աստուծոյ*։ ²⁴Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է. և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ՝ և ծաղիկն թօթափեցաւ*։ ²⁵և բան Տեառն մնա՛յ յաւիտեան. ա՛յսինքն է՝ բանն որ ՚ի ձե՛զ աւետարանեցաւ*։

2

Գլուխ Բ

Գ զա. ¹Ի բաց թօթափել այսուհետև զամենայն չարութիւն և զամենայն նենգութիւն, և զկեղծաւորութիւնս, և զնախանձ, և զամենայն չարախօսութիւն*։ ²Իբրև զարդի՝ ծնեալ մանկունս խօսունս, և անխարդախ կաթինն փափաքիցէք. զի նովաւ աճիցէք ՚ի փրկութիւն*։ ³Եթէ ճաշակեցէք՝ զի քաղցր է Տէր*։ ⁴Առ որ մատուցեալ էք ՚ի Վեմն կենդանի, որ թէպէտ ՚ի մարդկանէ անարգեալ, այլ առ ՚ի յԱստուծոյ ընտրեալ և պատուական է*։ ⁵և դուք իբրև զվեմն կենդանիս շինիք տաճար հոգևոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևորն

* *Ոմանք.* Յամենայն ՚ի գնացս ձեր։

* *Ոմանք.* Քանզի գրեալ է՝ թէ եղ՞։

* *Ոմանք.* Ակնառութեան դատի... ապա և երկիւղիւ զձերոյ պանդխտութեան ժամանակս զն՞։ *Ուր օրինակ մի.* զձեր պանդխտ՞. և *այլ.* զձերոյ ժամանակ պանդխտ՞։

* *Առ Ոսկանայ պակասի.* Գիտասջիք զի ո՛չ ա՞։ *Յօրինակին.* Ապականացուք արծա՞։

* *Ոմանք.* Որ յառաջծանօթն էր՝ նախ իսկզբանէ աշխ՞։ *Ուր և ոմանք.* Որ յառաջ անծանօթ էր նախքան։

* *Ոմանք.* Որ նովաւ հաւա՞... և յոյսն իցեն առ Աստուած։

* *Յայլս պակասի.* ճշմարտութեան *Հոգւոյն,* յեղ՞։ *Ոմանք.* Յեղբայրսիրութիւնն՝ առանց կեղ՞... սիրել սրտիւ զմիմե՞։

* *Ոմանք.* Ծնեալք վերստին... և մշտնջենաւոր բանին Աստուծոյ։

* *Յոմանս պակասի.* Մարմին *իբրև զխոտ է։*

* *Ոմանք.* Որ ՚ի ձեզն աւետա՞։

* *Ոմանք.* Չարութիւնս... նենգութիւնս... և զնախանձ. և զամենայն խարդախութիւն։

* *Ոմանք.* Խօսուն. և անխարդախ կաթին փափաքից՞։

* *Ոմանք.* Եթէ ճաշակիցէք... է Տէրն։ *Ուր օրինակ մի.* Եթէ ճանաչիցէք։

* *Ոմանք.* Մատուցեալ ՚ի Վեմն կենդա՞. թէպէտ և ՚ի մարդկա՞... առ յԱստուծոյ ըն՞։ *Ուր Ոսկան.* մատուցեալ Վեմն կեն՞։

պատարագս՝ հաճոյ Աստուծոյ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի*։ ⁶Քանզի կայ իսկ ՚ի գրի եթէ. Ահաւասիկ դնեն ՚ի Սիոն վէ՛ն ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ ՚ի նա հաւատասցէ՝ մի՛ ամաչեսցէ։ ⁷Չեզ այսուհետև հաւատացելոցդ՝ վէ՛ն պատուական. իսկ անհաւատիցն, վէ՛նն զոր անարգեցին շինօղքն. նա եղև գլուխ անկեան*։ ⁸և վէ՛ն գլորման և վէ՛ն գայթաղութեան, որ գայթաղին ապստամբեալք ՚ի բանէն՝ յոր և եդան*։ ⁹Այլ դուք ազգ էք ընտիրք, թագաւորութիւն, քահանայութիւն. ազգ սուրբ. ժողովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնսն նուիրիցէք այնմ, որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի՛ լոյսն*։ ¹⁰Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտէք։ ¹¹Սիրելիք՝ աղաչեմ, իբրև զպանդուխտս և զմեղսս ՚ի բաց մերծել ՚ի մարմնաւոր ցանկութեանցն, որ զինուորին ընդդէմ ոգւոց*։ ¹²զվարս ձեր ՚ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել. զի որով բամբասիցեն զձեզ իբրև զչարագործս, ՚ի բարութք գործոցն ձերոց դիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱստուած յաւուրն այցելութեան*։

Դ գբ. ¹³Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագաւորի՝ իբրև առաւել ունեք*, ¹⁴եթէ դատաւորաց՝ իբրև ՚ի նմանէ առաքելոց ՚ի վրէժխնդրութիւն չարագործացն, և ՚ի գովութիւն բարեգործացն*։ ¹⁵Ձի այսպէս են կամք Աստուծոյ. բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մարդոց զանգիտութիւն*։ ¹⁶Իբրև զազատս լինել, և մի՛ իբրև պատրուակ չարութեան ունել զազատութիւնն, այլ իբրև Աստուծոյ ծառայք։ ¹⁷Չամենեսեան պատուեցէք. զեղբայրսիրութիւն սիրեցէք. յԱստուծոյ երկերովք. զթագաւորս պատուեցէք։ ¹⁸Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց, ո՛չ միայն բարերարացն և հեզոցն, այլ և կամակորացն*։ ¹⁹Ձի և այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ են, եթէ բարութք ինչ մտօք տանիցի՝ որ վշտաց յանիրաւի*։ ²⁰Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցէք. այլ եթէ զբարիս գործիցէք՝ չարչարիցիք և համբերիցէք, այն շնորհք յԱստուծոյ են*։ ²¹Քանզի ՚ի դոյնս իսկ կոչեցարութք։ Ձի և Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա*։ ²²Որ ո՛չն արար մեղս, և ո՛չ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա. ²³որ բամբասեալ և ո՛չ փոխարէն բամբասէր. չարչարեալ՝ և ո՛չ պահէր սպառնալիս. բայց իրաւամբք

* *Ոմանք.* Իբրև զվէ՛ն կենդանի... պատարագ հաճոյս. *կամ*՝ ՚ի հաճոյս Աստուծոյ։

* *Ոմանք.* Հաւատացելոց վէ՛ն է պատ՝. և *ոմանք.* Է վէ՛նն պատ՝... վէ՛ն է զոր անարգե՛ն։

* *Ոմանք.* Գայթաղութեանն, որ գայթ՝... յոր եդանն։

* *Բազումք.* Էք ընտիր, թա՛ն։ *Ոմանք.* Թագաւորութեան քահանայութեան, ազգն սուրբ... նուիրեալ այնմ որ զձեզ կոչեաց ՚ի խա՛ն։

* *Ոմանք.* Աղաչեմ զձեզ, իբրև զպան՛ն։

* *Ոմանք.* Ձի որովք բամբասեն զձեզ... ՚ի բարիք գործոց ձերոց դիտեալ, փառաւոր արասցեն զԱստուած։ *Ուր Ոսկան.* Փառաւորեսցեն զԱստուած։

* *Ոմանք.* Ստեղծուածոց վասն։

* *Ոմանք.* Դատաւորի իբրև ՚ի նմանէ առաքելոյ... չարագործաց։

* *Ոմանք.* Ձի այս են կամքն Աստուծոյ... զանզգամ մարդոյ զանգիտութիւնն։ *Ուր օրինակ մի.* Ձի այսպիսի են կամք։

* *Ոմանք.* Հնազանդ լերուք ամենայնի երկիւղիւ։

* *Ի բազումս պակասի.* Ձի և այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ են եթէ։

* *Ոմանք.* Այլ թէ բարիս գործիցէք, և չարչա՛ն։

* *Ոմանք.* Ի՛ դոյն իսկ կո՛ն... վասն մեր մեռաւ, և ձեզ ե՛ն... երթիցէք զհետոց նորա։

մատներ դատաւորին*.²⁴որ գներ մեղսն իւրով մարմնովն վերացոյց ՚ի խաչափայտն. զի լիցուք գերծեալք ՚ի մեղաց անտի, և իցենք արդարութեանն կենակիցք. որոյ վիրօքն բժշկեցաք*:²⁵Քանզի էիք իբրև զոչխարս մուրեալս. այլ այժմ դարձարո՛ւք առ Յովին և Տեսուչ ոգւոց ձերոց:

3

Գլուխ Գ

զգ. ¹Սոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա ապստամբք ՚ի բանէ անտի, յաղագս կանանց գնացից, և առանց բանին իսկ շահեսցին*,²դիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս*:³Որոց լինիցի՝ ոչ արտաքուստ հիւսիւք և ոսկեհուռ ծամակալօք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ*.⁴այլ ծածուկ սրտին մարդն. անեղծութեամբ հնազանդութեան և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ*:⁵Քանզի այսպէս երբեմն և կանայք որ յուսացեալ էին յԱստուած, զարդարէին զանձինս հնազանդել իւրեանց արանց*:⁶Որպէս և Սարրայ՝ զի հնազանդ էր Աբրահամու. և տէր իւր կոչէր զնա. որոյ եղերուքն դուք որդիք. բարեգործք էին, և ոչ կասկածէին՝ և ոչ ՚ի միոջէ ինչ երկիւղէ*:⁷Սոյնպէս և արք իմաստութեամբ բնակեսցեն ընդ նոսա. իբրև տկար անօթոյ առնիցեն պատիւ կանանց՝ և իբրև ժառանգակցաց շնորհացն կենաց. զի մի՛ խափան լիցին աղօթիցն ձերոց*:⁸Եւ գլուխ ամենայնի, զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք, ազնուագութք, խոնարիք*:⁹Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զնորին հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւնն ժառանգիցէք*:¹⁰Ձի որ կամի զկեանս սիրել, և զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան, լռեցուցէ՛ զլեզու իւր ՚ի չարութենէ, և զշրթունս իւր ՚ի չխօսելոյ՝ զնենգութիւն*.¹¹խտտորեսցի՝ ՚ի չարէ, և արասցէ զբարի՛. խնդրեսցէ՛ զխաղաղութիւն, և երթիցէ՛ զհետ նորա*:¹²Ձի աչք Տեառն ՚ի վերայ արդարոց, և ականջք նորա յաղօթս նոցա. երե՛սք Տեառն ՚ի վերայ չարագործաց:¹³Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն

* *Ոմանք.* Եւ ոչ պահէր ռխս. բայց:

* *Ոմանք.* Ձմեր զմեղսն... որոյ վիրօքն բժշկեցայք:

* *Ոմանք.* Սոյնպէս և կանայք: *Ոսկան.* Ձի եթէ են նոքա... գնացից, առանց բա՛:

* *Ոմանք.* Գիտել երկիւ՛:

* *Ոմանք.* Յիւսուք, և ոչ ոսկեհուռ ծամակալեօք, կամ պայճուճեալ զգեստիւք:

* *Ոմանք.* Անեղծութեամբ՝ հեզութեան և հանդարտութեան: *Յօրհնակին պակասէր.* Յնազանդութեան և *հանդարտութեան* հոգ՛:

* *Ոմանք.* Արանց իւրեանց:

* *Ոմանք.* Սառա. և *ոմանք.* Սառա՞ զի հնազանդէր Աբ՛:

* *Ոսկան.* Բնակիցին ընդ նոսա... պատիւս կանանց: *Բազուսք.* Կանանց. իբրև ժա՛... խափան լինիցին:

* *Օրհնակ մի.* Յամակատարք. եղբայրասէրք:

* *Ոմանք.* Այլ զսորին հակառակն օրհնել. զի յայսսիկ կոչեցարուք. զի զօրհնութիւն ժառ՛:

* *Ոմանք.* Որ կամիցի զկեանս սիրել, և տեսանել աւուրս բարութեան... ՚ի խօսելոյ զնեն՛:

* *Ոմանք.* խտտորեսցի ՚ի չարութենէ, և ա՛... խնդրիցէ զխա՛:

նախանձաւորք լինիցիք*։ ¹⁴Այլ թէ և չարչարիցիք ևս վասն արդարութեան, երանելի էք. բայց յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք, և մի՛ խռովեսցիք*։ ¹⁵Այլ զՏէր զնոյն և զՔրիստոս՝ սուրբ ունիջիք՝ ՚ի սիրտս ձեր։ Պատրաստք իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ*։ ¹⁶Այլ հեզութեամբ և երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս. զի որով չարախօսիցեն զձե՛նց՝ յամօթ լիցին, որք բամբասեն զձեր բարւոք գնացս ՚ի Քրիստոս*։ ¹⁷Ձի լա՛ւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել՝ քան չարագործացն*։ ¹⁸զի և Քրիստոս մի անգամ վասն մեղաց ՚ի վերայ ձե՛ր մեռաւ, արդարն ՚ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուցէ՛ առ Աստուած. զի թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի՛ է հոգւով*։ ¹⁹Որով և ոգւոցն որ էին ՚ի բանտին, երթեալ քարոզեաց*, ²⁰երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէ՛ր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր. յորս նուազունք՝ այս ինքն՝ ոգիք իբրև ո՛ւրբ ապրեցան ՚ի ջրոյն*։ ²¹Որ և զձե՛զ ըստ նմին օրինակի, կեցուցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն ՚ի բաց ընկենլով, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած, ՚ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի*։ ²²որ է՝ ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, ՚ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց*։

4

Գլուխ Դ

Ե զե. ¹Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր, և դուք ՚ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի՛ մարմնով դադարէ ՚ի մեղաց*. ²զի մի՛ ևս ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն Աստուծոյ կեցցէ զայլ ևս ժամանակն*։ ³Քանզի բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք գնացին գիջութեամբք, ցանկութեամբք, գինեհարութեամբք, անառակութեամբք, արբեցութեամբք, անօրէ՛ն կռապաշտութեամբք*։ ⁴Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին. ՚ի նոյն անկարգութեան զեղխութիւն, և

* *Ոմանք.* Եւ ո՞վ իցէ որ:

* *Ոմանք.* Այլ թէ չարչարիցիք ևս յաղագս արդա՞:

* *Ոմանք.* ՉՏէր զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ՚ի սիրտս ձեր: *Ոմանք.* Պատրաստ իցէք:

* *Ոմանք.* Չարախօսեսցեն զձե՛նց... բարիոք գնացսդ ՚ի:

* *Ոմանք.* Եթէ կամեսցին ըստ... քան զչարագործացն:

* *Ոմանք.* Քանզի և Քրիստոս... ՚ի վերայ մեր մեռաւ... զի զմեզ մերձեցուցէ առ Աստուած. թէպէտ:

* *Ոմանք.* Որ ՚ի բանտին էին:

* *Ոմանք.* Յաւուրսն Նոյի, յոր զտապանն կազմէր... այս ինքն է՝ իբրև ոգիք... ՚ի ջրոցն, կամ՝ ՚ի ջուրցն:

* *Ոմանք.* Մկրտութիւն, ոչ զմարմնոյն աղտն ՚ի բաց ընկենլով, այլ և զբարիոք մտացն հան՞:

* *Ոմանք.* Հրեշտակաց, իշխանութեանց և պետութեանց:

* *Ոմանք.* Քրիստոս ՚ի չարչարելն վասն. և *ոմանք.* Քրիստոսի չարչարելն վասն:

* *Ոմանք.* Չայլ ևս ժամանակ:

* *Ոմանք.* Որովք գնային գիջութեամբ:

հայիոյեն*։ ⁵Որ տացեն պատասխանի՛ այնմ որ ՚ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմեռեալս*։ ⁶Ձի ՚ի սոյն իսկ և մեռելոց խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով, և կենդանի լիցին ըստ Աստուծոյ հոգւով*։ ⁷Ամենեցուն վախճան մերձեալ է. զգաստացարո՛ւք այսուհետև և լերո՛ւք զուարթո՛ւնք յաղօթս*։ ⁸Նախ քան զամենայն սէր սե՛րտ ունել ընդ միմեանս. զի սէր՝ ծածկէ՛ զբազմութիւն մեղաց։ ⁹Օտարասե՛րք լինել՝ ընդ միմեանս առանց տրտնջելոյ*։ ¹⁰Իւրաքանչիւրք որպէս և ընկալաւ շնորհս ինչ՝ ՚ի միմեանս գնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ*։ ¹¹Եթէ որ խօսիցի՝ իբրև զԱստուծոյ պատգամս. եթէ որ մատակարարիցէ՛ իբրև ՚ի զօրութենէ զոր շնորհէ Աստուած. զի յամենայնի՛ փառաւորեսցի Աստուած ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն*։

Ձ գգ. ¹²Սիրելիք՝ մի՛ օտարոտի համարել զեռանդն ինչ որ ՚ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտա՛ր ինչ իրք ձեզ դիպիցին*։ ¹³այլ իբրև հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինիջիք, զի և ՚ի յայտնութեան փառաց նորացնծացեալ բերկրեսցիք*։ ¹⁴Իսկ եթէ նախատիցիք ևս վասն անուանն Քրիստոսի, երանելի՛ էք. զի փառացն և զօրութեան անուն, և Աստուծոյ Յոգին ՚ի վերայ ձեր հանգուցեալ է*։ ¹⁵Սի՛ որ ՚ի ձեռն չարչարեսցի իբրև զսպանօղ, կամ իբրև զգո՛ղ, կամ իբրև զչարագո՛րծ, կամ իբրև զօտարատեսո՛ւչ։ ¹⁶Ապա թէ իբրև զքրիստոնեայ, մի՛ ամաչեսցէ. այլ փառաւոր առնիցէ զԱստուած անուամբս այսուիկ*։ ¹⁷Ձի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ՚ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ՚ի մէնջ. իսկ զի՞նչ կատարած իցէ այնոցիկ, որ ո՛չ հաւանեցան Աստուծոյ աւետարանին*։ ¹⁸Եւ եթէ արդարն հազի՛ւ կեցցէ, իսկ ամպարիշտն և մեղաւորն ո՛ւր գտանիցի*։ ¹⁹Որպէս զի որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ Յաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք*։

5

Գլուխ Ե

Է գէ. ¹Ձերիցունս այսուհետև աղաչեմ՝ իբրև զերիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ*։

* *Ոսկան.* Ո՛չ վարին ընդ ձեզ։ *Օրինակ մի յաւելու.* Վարին. *այլ եմ՝* ՚ի նոյն անկարգութեան զեղխութիւն, և։

* *Ոմանք.* Որ տայցեն պատասխանի... ՚ի պատրաստութիւն ու՛։

* *Ոմանք.* Եւ կենդանի լինիցին։

* *Ոմանք.* Եւ եղերուք զուար՛։

* *Ոմանք.* Իւրաքանչիւր որպէս ընկա՛... իբրև զբարիք հազարապետ։

* *Ոմանք.* Եթէ որ խօսեսցի... մատակարարեսցէ... յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* *Ոմանք.* Ձեռանդ ինչ որ ՚ի փորձութիւնս ձեր լինիցի, որպէս եթէ... դիպեսցին։

* *Ոմանք.* Փառացն նորա... բերկրիցիք։

* *Ոմանք յաւելուն.* Եւ զօրութեանն անուն է. և Աստուծոյ։ *Ուր օրինակ մի.* անուան է։

* *Ոմանք.* Ապա եթէ... մի՛ ինչ ամաչեսցէ։

* *Ոմանք.* Դատաստանաց ՚ի տա՛... այնոցիկ իցէ. *կամ՝* է. որ ոչ հնազանդեցան աւետարանին Աստուծոյ։

* *Ոմանք.* Ուր գտանիցին։

* *Ոմանք.* Որպէս զի և որ չար՛... ոգին բարերարութեանն։

* *Ոմանք.* Որպէս զերիցակիցս և զվկայս... փառացն յայտնելոց հաղորդս. *կամ՝* հաղորդք։

²արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի՛ իբրև ականայ՝
այլ կամա՛ւ ըստ Աստուծոյ. մի՛ զաւշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ* . ³մի՛
իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին* . ⁴զի յերևել
Յովուսապետին ընդունիջիք զանթառամ փառաց պսակն* : ⁵Սոյնպէս և
երիտասարդք՝ հնազանդ լերուք ծերոց. ամենեքին ընդ միմեանս՝
գխտնարհութիւն ունիցին. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ
շնորհս խոնարհաց* : ⁶Խոնարհեցարո՛ւք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ
բարձրացուցէ՛ ՚ի ժամանակի: ⁷Ձամենայն հոգս ձեր ընկեցէք ՚ի նա, զի նա՛ է որ
հոգայ վասն ձեր:

Ը *դա*. ⁸Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն ձեր Սատանայ իբրև զառեւծ գոչէ,
շրջի և խնդրէ՝ թէ զո՛վ կլանիցէ* : ⁹Որում ՚ի դիմի՛ հարկանիցիք հաստատեալք
հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ
յաշխարհի յանձին կատարեալ* : ¹⁰Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ կոչեաց
զձեզ յիւր ՚ի յաւիտենական ՚ի փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի
եղերուք չարչարակիցք, նա՛ կազդուրեցուցէ, կարողացուցէ, հաստահի՛մն
արասցէ* : ¹¹Նմա իշխանութիւն և փառք յաւիտեանս* : ¹²Ի ձեռն Սեղուհանոսի՛
հաւատարիմ եղբօր, որպէս կարծեն՝ փոքր ՚ի շատ գրեցի ձեզ, մխիթարել, և ՚ի
վերայ սորին վկայել. զի և այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ են՝ յոր
հաստատեալ կայցէք* : ¹³Ողջոյն տայ ձեզ որ ՚ի Բաբելոն ընտրելակիցն եկեղեցի
է. և Սարկոս որդի իմ* : ¹⁴Ողջոյն տաջիք միմեանց ՚ի համբոյր սրբութեան:
Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսեան, որ էք ՚ի Քրիստոս Յիսուս. ամեն* :

Տունք ՄԼԶ :*

Ուր օրինակ մի. Հաղորդ՝ որ յայտնելոցն է ՚ի մեզ. և այլ օրինակ մի. Փառացն հաղորդս
յայտնելոց էք:

* *Ոմանք.* Հօտ է Աստուծոյ. *կամ՝* հօտդ Աստուծոյ է:

* *Ոմանք.* Տիրելով վիճակին. այլ:

* *Ոմանք.* Յերևել հօտապետին... փառացն զպսակ:

* *Ոմանք.* Նոյնպէս և երիտա՛... ամենեքեան... գխտնարհութիւն ունիցիք:

* *Ոմանք.* Եւ սկսեցէք... եթէ զո՞ կլա՛: *Յօրինակին գրեալ էր՝* զի աստիսն ձեր. *ուր մեք ըստ
սովորականին եղաք.* ոսոխն:

* *Օրինակ մի.* Որով ՚ի դիմի հարկա՛... յաշխարհի յանձին կալեալ: *Ոմանք.* Յաշխարհի
յանձինս կատարել:

* *Ոմանք.* Որ և կոչեաց զձեզ յիւր յաւիտենական փառսն Յիսուսիւ Քրիստոսիւ... նա՛
կազդուրացուցէ:

* *Ոմանք յաւելուն.* Յաւիտեանս. *ամեն:*

* *Ոմանք.* Սիղուանոսի. *կամ՝* Սիղուանոսի... որպէս և կարծեն... գրեցի առ ձեզ... և ՚ի
վերայ այսորիկ. *կամ՝* սոցին վկայել... շնորհք Աստուծոյ է՝ որ հաստատեալ կացէք. *կամ՝*
կացցուք:

* *Ոմանք.* Ընտրելակից եկեղեցին է:

* *Ոմանք.* Սրբութեան: Շնորհք ընդ ձեզ ամենեսին:

* *Ի վախճանի՝ ոմանք դնեն.* Պետրոսի թուրքս գրեցաւ ՚ի Հռովմէ: Տունք ՄԿԳ: *Եւ ոմանք.*
Կատարումն Աստուծով առաջին թղթոյն Պետրոսի. *գորովք զանց առնէ օրինակս մեր
ընդ այլոց ոմանց օրինակաց:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ Թղթոյն Պետրոսի

Ձայս դարձեալ ինքն Պետրոս գրէ զթուղթս հաւատացելոցն. և է թուղթս յիշատակ առաջնոյն. վասն զի գիտէր եթէ փութով է լինելոց փոխումն իւր ՚ի մարմնոյ. և փութաց արագ ամենեցուն յիշեցուցանել, վասն որոյ մկրտեցանն՝ լսել զվարդապետութիւն: Եւ նախ՝ յաղագս հաւատոյ պատմէ. ցուցեալ ՚ի մարգարիցն զնա աւետարանեալ. և զի մարգարեութիւնքն որ յաղագս Փրկչին՝ ոչ են մարդկայինք, այլ յԱստուծոյ խօսեցան. ապա պատուիրէ մի՛ միտ առնել խաբեբայիցն որք լինիցին նոցա կորուստ. որպէս յանցուցելոց հրեշտակացն եղև: Պատմէ և ՚ի թուղթս՝ աւուրս լինել յորս խաբեբայք եկեսցեն, և կամիցին պատրել զոմանս ասելով, թէ ունայն ասի ՚ի ձէնջ գալուստ Փրկչին, զի միշտ ասէք գալ՝ և ո՛չ գայ. ՚ի սոցունց մանաւանդ փախչել պատուիրէ. և ուսուցանէ մի՛ լինել կարճամիտ վասն ժամանակաց. զի ամենայն ժամանակք ոչինչ է համարեալ առաջի Տեառն. այլ զմի օրն իբրև զհազար ամ լինել, և զհազար ամն իբրև զմի օր. Միայն պատրաստք ասէ եղերուք աւուր Տեառն: Ձսոյն ստուգէ՝ ցուցանէ և պատուիրէ զգուշանալ ամենեցուն՝ նմա բարուք զործովք. և սիրել զոր յառաքելոց զրեալքն են, և մի՛ ընդունել զորս ո՛չ ընդունին զնոսա. զի զամենայն աստուածային գիրս անարգեն նոքա: Յիշեցուցանէ և վարդապետէ առ ամենայն աստուածային գիրս կանխել, և գիտել զգործս եղելոցն. և պատուիրէ մի՛ անկանել ՚ի զգուշութենէ հաւատոց. և ա՛յսպէս կատարէ զթուղթն:

Գլուխք Երկրորդ Թղթոյն Պետրոսի

ա. Վասն կոչման հաւատովք՝ զործովք առաքինութեան հաստատելովք առ յոյս հանդերձեցելոցն բարութեանց:

բ. Պատուէր առ ՚ի յիշատակէ վարդապետութեանն՝ յետ իւր վախճանելոյն. և թէ զիարդ ՚ի Թաբօր լերինն լուաւ զբարբառն Աստուծոյ վասն Քրիստոսի:

գ. Կանխասացութիւն խաբեութեան որ հասանիցէ ՚ի վերայ հերձուածողաց, և ամպարշտութեան նոցա՝ և տանջանաց հանդերձելոց:
դ. Երկրորդութիւն չարեաց զործոց մարդոց հերձուածողաց: *ա.* Յորում թէ յանկարծահաս գալոց է Քրիստոս ՚ի վախճանի աշխարհիս. և եթէ պատրաստական գտանել ամենայն առաքինութեամբ:

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ Ա

դբ. ¹Շնաւոն Պետրոս ծառայ և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ մեզ հասէրդ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի*։ ²Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղութիւն բազմասցի, գիտութեամբն Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

Ա ³Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ ՚ի կեանս և աստուածպաշտութիւնն շնորհեալ. ՚ի ձեռն գիտութեան այնորիկ որ կոչեացն զմեզ յիւր ՚ի փառսն և ՚ի վայելչութիւն*։ ⁴որովք մեծամեծքն և պատուական անտիք պարգևեալ են մեզ. զի նոքիմք աստուածեղէն բնութեանն հաւատոցն լինիցիմք հաղորդակիցք, փախուցեալք ՚ի ցանկութեանց աշխարհիս և յապականութեանց*։ ⁵Եւ սմին այսմիկ զամենայն փոյթ ՚ի մէջ առեալ՝ ձերովքն հաւատովք մատակարարիցիք զառաքինութիւնն, և առաքինութեամբն զգիտութիւն*։ ⁶և գիտութեամբն զժուժկալութիւն, և ժուժկալութեամբն զհամբերութիւն, և համբերութեամբն զաստուածպաշտութիւն, ⁷և աստուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեամբն զսէր։ ⁸Չայսոսիկ ձեր յանձին կալեալ և ՚ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս և անպտուղս հաստատիցեն զձեզ ՚ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն*։ ⁹Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, կոյր է և զաչացու. ՚ի մոռացո՞նս դարձուցեալ զսրբութիւն առաջնոց իւրոցն յանցանաց*։ ¹⁰Վասն որոյ եղբարք՝ առաւել փութասցիք՝ զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումնն և զընտրութիւն պահիցէք։ Չայս արարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք*։ ¹¹զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ ՚ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ և Փրկչի Յիսուսի Քրիստոսի*։ *դգ.* ¹²Որով պատրաստիցեն միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին, առաւել ևս գիտակացն և հաստատելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտութեանն*։

Բ ¹³Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ ե՞ն ՚ի մարմնի աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք։ ¹⁴Գիտեն թէ վաղվաղակի՛ է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս. որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ*։ ¹⁵Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել. զի յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսոցիկ*։ ¹⁶Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպելեաց զհետ երթեալ ցուցաք

* *Ոսկան.* Սիմոն Պետրոս։ *Ոմանք.* Եւ Փրկչին մերոյ Յիսուսի։ *Յօրինակին.* Մեզ հանդէսքդ հաւատոց։

* *Օրինակ մի.* Մեզ իւրով աստուածային իմաստութեամբն առ ՚ի... շնորհել ՚ի ձեռն։ *Ոմանք.* Չօրութեանն ՚ի կեանս և յաստուածպաշտութիւն... զձեզ յիւր փառսն և վայելչութիւն։

* *Ոմանք.* Որով մեծա՞... բնութեան լինիցիք հաղորդ։ *՚ի բազումս պակասի.* Բնութեանն հաւատոցն լինի՞. *զոր և ոմանք ՚ի լուս.* նշանակեն։

* *Ոմանք.* Եւ ՚ի սմին այսմիկ... ձերովք հաւատովքն մատակարարեսցիք զառաքինութիւն։

* *Ոմանք.* Յանձն կալեալ. և ՚ի սոյնս յաճա՞... զձեզ հաստատիցեն. Յիսուսի Քրիստոսի ՚ի գիտութիւնն։ *՚ի լուս.* ՚ի վերայ՝ գիտութիւնն. *նշանակի.* գալուստն։

* *Ոմանք.* Չսրբութիւնս առաջնոց։

* *Ոմանք.* Եւս առաւել փութասցիք՝ բարեացն գորդ։

* *Ոմանք.* Արքայութիւնն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. որուն փառք յաւիտեանս։

* *Ոմանք.* Որով պատրաստիցենք միշտ յիշե՞... ճշմարտութիւնն։

* *Ոմանք.* Գիտեն եթէ վաղ՞... որպէս Տէր մեր։

* *Ոմանք.* Ձի և յետ իմոյ ե՞։

ծեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զգօրութիւն և զգալուստն. այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն*։ ¹⁷Քանզի առեալ յԱստուծոյ և ՚ի Յօրէ զփառս և զպատիւ. յեկեալ յայնպիսի բարբառոյ՝ մեծվայելչութեան փառաց անտի եթէ. Դա է Որդի իմ սիրելի՛ ընդ որ հաճեցայ*։ ¹⁸Եւ զայս բարբառ մեր իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա՛ իսկ էաք ՚ի սուրբ լերինն։ ¹⁹Եւ ունիմք հաստատագոյն զբանսն մարգարեականսն. որում եթէ անսայցէք՝ բարւո՛ք առնէք. իբրև ճրագի որ տայցէ լոյս ՚ի խաւարչտի՛ն տեղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցէ, և արուեսեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր*։

Գ *դդ.* ²⁰Բայց նախ՝ այսմ գիտակ լինիջիք. զի ամենայն մարգարութիւն իւրոց գրոց լուծումն ո՛չ ունի*։ ²¹Քանզի ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարութիւն երբեք, այլ ՚ի Յօգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ*։

2

Գլուխ Բ

¹Լինէին և սուտ մարգարէք ՚ի ժողովրդեանն, որպէս և այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. որք սպրդեալք մուծանեն հերձուածս կորստեան, և զոր Տէր գնեաց զնոսա ուրացան. ածեն ՚ի վերայ անձանց զարագահասն կորուստ*։ ²Եւ բազմմբ անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայիոյիցի*։ ³Եւ ազահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զծեզ վտարանդի՛ս. որոց դատաստանն ՚ի բնէ ո՛չ դատարկանայ, և կորուստ նոցա ո՛չ նանիր հասցէ*։ ⁴Ձի եթէ ՚ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ո՛չ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ՚ի տարտարոսն՝ ետ պահել ՚ի դատաստան*։ ⁵Նա՛ և ո՛չ իսկզբանն աշխարհիս խնայեաց. բայց զութերորդն զեւոյ՝ զարդարութեանն քարոզ, պահեաց ՚ի ջրհեղեղէ աշխարհի՛՝ անպարշտելոցն ածեալ*։ ⁶Եւ զքաղաքս Սողոմայեցոցն և Գոմորացոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրինակ առ յապայ անպարշտելոցն կացուցանէր*։ ⁷Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յանկարգ

* *Յօրինակին պակասէր. Քանզի ոչ եթէ. այլ ՚ի լուս*՝. *նշանակէր ՚ի ներքս բերել, համաձայն այլոց։ Ոմանք. Պայծուճեալ ինչ առասպելաց։ Ոսկան. Ձիտ երթալ ցու*՝. * *Ոմանք. Առեալ յԱստուծոյ Յօրէ... եկեալ այնպիսի բարբառ ՚ի մեծ վայելչութենէ... ընդ որ ես հաճեցայ։*

* *Ոմանք. Ձբանն մարգարեական. որում թէ ան՝... որ տացէ լոյս... ծագեսցէ ՚ի սիրտս մեր։*

* *Ի լուս*՝. *Լուծումն ոչ լինի. համաձայն ոմանց ՚ի բնաք*՝.

* *Ոմանք. Ըստ մարդկան մտաց տուան մարգարութիւնք երբեք... կրեալ խօսեցան։*

* *Ոմանք. Լինիցին ՚ի ձեզ... սպրդեալ մուծանել հերձ... և զոր Տէրն գնեաց, զնոսա ուրացեալ.. անձանց իւրեանց զերագահասն կո՛ւ։* *Ի լուս*՝. *Մուծանիցեն հերձ. համաձայն ոմանց ՚ի բնաք*՝.

* *Յօրինակին. Եւ բազմաւք անկեալ։*

* *Ոմանք. Եւ ազահութեան... զծեզ վտարանդի... և կորուստն նոցա ոչ նիրհեսցէ. կամ՝ նիրհէ։*

* *Ոմանք. Ի հրեշտակսն յանցեալս... այլ խաւարային կապանօքն... պահել ՚ի դատաստանի։*

* *Ոմանք. Աշխարհի խնայ՝։*

* *Ոմանք. Սողոմայեցոց և զԳոմո՛ւ... առ յապա եղելոցն։*

գիշութեան գնացից՝ փրկեաց՝⁸ քանզի ականատեսն և ակընջալուր արդարն բնակեալ ՚ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ ոգիսն՝ նոցա անօրէն գնացիւքն տանջէր՝ *դե*։⁹ Գիտէ՛ Տէր զաստուածապաշտս փրկել՝ ՚ի փորձութենէ, և զանօրէնս պահել՝ ՚ի տանջանս աւուրն դատաստանի՝¹⁰ Մանաւանդ՝ որ զհետ մարմնոյ պղծալիցն ցանկութեանց իցեն երթեալ. արհամարհօղբ տէրութեանն, ժպի՛րիք, յանդգո՛ւնք, չզանգիտեն զփառսն հայիոյել՝¹¹ ուր հրեշտակք զօրութեամբ և կարողութեամբ քան զնոսա մեծամեծօք՝ չածեն զնոքօք ՚ի Տեառնէ զհայիոյութեանն դատաստանի՝¹² Այլ սոքա իբրև զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծո՛ւմն և յապականութիւն, որոց չենն գիտակ, հայիոյեն յապականութեան իւրեանց, և ապականեսցի՛ն՝¹³ տանջեալք ՚ի վարձուցն անիրաւութեան. որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն համարին. բժկանք, արատաւորք, փափկացեալք ՚ի պատիրս իւրեանց. լիեալ ձեզ խրախճանակի՛ցք՝¹⁴ աչս ունին հանգոյնս պոռնկաց՝ անդադարս ՚ի մեղաց, պատրեն զանձինս յողորդոյաց. որ ունին սիրտ հարեալ զազահութեան, մանկու՛նք անիծից՝¹⁵ Թողեալ զուղորդ ճանապարհն՝ մոլորեցան, զհետ երթեալ ճանապարհին Բաղամայ Բեովրեայ, զվարձս անիրաւութեան սիրեցին՝¹⁶ որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէ՛շն անխօսուն. մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զանօրէնութիւնն՝¹⁷ Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք, և մէ՛զք վարեալք ՚ի մրրկէ. որոց աղջամո՛ւղջք խաւարին յալիտեան պահեալ կան՝¹⁸ Մեծաբանս սնոտեաց բարբառեալ պատրեն գիշութեամբք անառակ ցանկութեամբք մարմնոյ, զայնոսիկ որ ստոյգն փախչիցին յայնցանէ՛ որ ՚ի մոլորութեանն շրջիցին՝¹⁹ նոցա ազատութիւն խոստանան, և ինքեանք ապականութեանն ծառայք են. զի որով իւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայէ՛²⁰ Զի եթէ փախուցեալք ՚ի պղծութեանց աշխարհի, գիտութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, և դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիցին, եղիցին նոցա վախճանն չար քան զառաջինն՝²¹ Զի լաւ էր նոցա՝ թէ բնաւ չէր իսկ ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ. քան զի ծանեան՝ և յետս կացին ՚ի սուրբ պատուիրանէն որ նոցա

* *Ոմանք*. Եւ ականջալուր արդարն բնակեալ էր ՚ի մէջ: *Ոսկան*. Զիւր զսուրբ հոգին՝ նոցա ա՛:

* *Ի լուս*. Եւ զանիրաւս պահել. *համաձայն ոմանց ՚ի բնաբ*՝:

* *Բազումք*. Պղծալից ցանկութեանց:

* *Ոմանք*. Զօրութեամբք... զհայիոյութեան:

* *Ոսկան*. Որոց չենն տեղեակ, հայիոյ՛:

* *Ոսկան*. Որք զցանկութիւն զաւու՛:

* *Ոմանք*. Զանգոյն պոռնկաց... պատրեալ զանձինս յողորդոյաց... զազահութենէ: *Ոսկան*.

Պատրել զանձինս... հարեալ զազահութեամբ:

* *Ոմանք*. Զուղորդ ճանապարհն... Բաղամայ Բեովրեան. *կամ*՝ Բևորեան: *Ուր Ոսկան*.

Բաղամայ Բեօրեանց:

* *Ոմանք*. Եւ կշտամբանս իւրոյ անիրաւութեանն:

* *Ոմանք*. Այնպիսիքն են աղբիւրք ան՛:

* *Ոմանք*. Քանզի մեծաբան սնոտեաց... գիճութեան ցան՛... որ ստոյգ փախ՛: *Ի բազումս պակասի*. Գիշութեամբք *անառակ* ցանկութեամբք: *Ուր և ոմանք*. Գիշութեամբք անառակութեամբք մարմն՛:

* *Ոմանք*. Որով իւիք յաղ՛... և ծառայէ՛:

* *Ոմանք*. Փախուցեալք ՚ի ցանկութեանց աշխարհիս այսորիկ և յապականութեանց, գիտութեամբն... շաղախեալք պարտիցին: *Բազումք*. Եղև նոցա վախ՛:

աւանդեցաւ*։ ²²Եկեալ 'ի դէ'ս նոցա ճշմարիտ առակն զգօնութեան, եթէ Շուն դառնայ անդրէն 'ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ընդ տիղմն թաւալեալ*։

3

Գլուխ Գ

Դ *դգ*. ¹Չայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուրք գրեմ. որով զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն միտս ձեր*, ²յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս 'ի սրբոց մարգարեից, և յառաքելոցն ձերոց՝ զպատուէրս Տեառն և Փրկչին*։ ³Բայց զայս նախ գիտասցիք, զի յաւուրս յետինս եկեացեն արհամարհօղք՝ այսպանօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնայցեն*։ ⁴և ասիցեն. Ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ցնջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ իսկզբանէ արարածոց։ ⁵Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կամին. եթէ երկինք՝ եղեն իսկզբանէ, և երկիր՝ 'ի ջրոց, և ջուրք՝ հաստատեալ կան բանին Աստուծոյ*։ ⁶Վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղա՛ւ ապականեալ կորեալ*։ ⁷Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի, և կորստեան ամպարիշտ մարդկան*։ ⁸Եւ այս ևս մի՛ լիցի 'ի ձեռն ծածկեալ սիրելիք, զի մի օր Տեառն իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի՛ օր*։ ⁹Ո՛չ յամեցուցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամրն համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ո՛չ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն*։ *դէ*. ¹⁰Այլ եկեցէ օր Տեառն իբրև զգոհ. յորում երկինք տազնապա՛ւ անցցեն, և բնութիւնք հրոյ կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ միանգամ 'ի նմա՛ գործք գտանիցին*։ ¹¹Եւ 'ի լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ և աստուածապա՛շտ կարգաւ՝ ակն ունել*, ¹²և փութալ հասանել գալստեան աւուրն Տեառն. յորում երկինք հրայրեացք լուծանիցին, և բնութիւնք հրդեհեալ հալիցին*։ ¹³Նորոյ երկնից՝ և նորոյ երկրի՝ ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք, յորս արդարութիւնն բնակէ*։ ¹⁴Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ սպասեալ, փոյթ

**Ոմանք*. Եթէ բնաւ իսկ չէին... զարդարութեան ճանապարհն, քան թէ ծանեանն... որ նոցայն աւ՛։

**Ոմանք*. ճշմարիտ առակին զգօնութեան՝ թէ. Շուն... ընդ տիղմ թա՛։

**Ոմանք*. Չարթուցից 'ի յիշատակէ. *կամ*՝ յիշատակաւ զհաստա՛։

**Ոմանք*. Յիշել զյառաջասաց պատգամս 'ի սրբոցն մար՛։

**Յոմանս պակասի*. Չայս նախ գիտ՛։

**Ոմանք*. Որ զայսն կամիցին... և երկիրս 'ի վերայ ջրոց. և ջուրք հաստատեալ կայ բանին։ *Յօրինակին պակասէր*. Հաստատեալ *կան* բա՛։

**Ոմանք*. Երբեմն աշխարհս։

**Ոմանք*. Գանձեալ կան։

**Յօրինակին*. Եւ այժմ մի՛ լիցի։ *Ոմանք*. Եւ այս մի ևս լիցի... և հազար ամն իբ՛։

**Բազումք*. Յամր համարին։ *Ոմանք*. Լինիցի առ ձեզ... այլ զի ամենեցուն հաստատել յա՛։

**Ոմանք*. Տազնապաւ անցանեն. *կամ*՝ անցանիցեն... և որ 'ի նմա գործք ըստգտանիցին։

**Ոմանք*. Եւ լուծանել այսպէս այսն ամենայնի, որպէս ինչ պարտ է ձեզ.. կարգաւ ակն ունել։

**Յօրինակին*. Հրարեացք լուծա՛։ *Ոմանք*. Հրդեհեալ լուծցին։

**Ոմանք*. Նորոց երկնից... հայեցեալ սպասիցեմք։

յանձին ունիցիք՝ անբիժք և անարատք գտանել նմա՝ ի խաղաղութիւն* .¹⁵ և զՏեառն երկայնմտութիւնն՝ փրկութիւն համարեսցիք: Ձոր օրինակ և սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ շնորհելոյ իմաստութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ* .¹⁶ որպէս և յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ. յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն և յողորդոքն կամակորեն. որպէս և զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն կորուստ* :¹⁷ Դուք այսուհետև սիրելիք՝ իբրև զկանխագէտս զգուշասցիք, զի մի՛ անառակ մոլորութեամբն զգածեալք՝ անկանիցիք յաստեաց հաստատութեանն* :¹⁸ Աճեցէք շնորհօք և գիտութեամբն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի: նմա փառք՝ և այժմ և յօրն յաւիտենից. ամէն* :

Տունք ԾԾԴ :*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին Թղթոյն Յովհաննու

Քանզի և Յովհաննէս որ զԱւետարանն գրեաց, նա՛ և զայս առաքէ թուղթ. յիշատակելով զհաւատացեալսն ՚ի Տէր: Եւ յառաջագոյն իբրև յԱւետարանին՝ այսպէս և ՚ի թուղթս այս աստուածաբանէ վասն Բանին, ցուցանելով զնա միշտ լինել ընդ Աստուծոյ. և ուսուցանէ զՅայր լոյս գոլ, զի այսպէս գիտիցենք և զԲանն՝ լոյս փառաց ՚ի նմանէ լինել: Աստուածաբանէ և պատմէ՝ մի՛ նոր լինել զխորհուրդս զոր առ մեզ. այլ իսկզբանէ և միշտ լինել զնա: Եւ այժմ երևեալ Տերամբ, որ է կեանք յաւիտենականք և Աստուած ճշմարիտ. և զպատճառս իւրոյ զալստեանն և երևան եղեալ՝ ասէ լինել զայս յաղագս աւարելոյ զգործս Սատանայի, և ազատելոյ զմեզ ՚ի մահուանէ. գիտել մեզ զՅայր և զԼորդի նորա զՏէրն մեր Յիսուս Քրիստոս: Գրէ առ ամենայն հասակս, առ մանկունս, առ երիտասարդս, առ ծերս, թէ Աստուած գիտելի եղև. այսուհետև սատանայական ներգործութիւնն յաղթեալ լինի՝ խափանելով մահու. ապա աստանօր ամենայն թղթովս յաղագս սիրոյ ուսուցանէ, կամելով մեզ զմիմեանս սիրել. և ցուցանէ թէ զմիմեանս սիրելն բարւոք է. վասն զի

* *Ոմանք.* Այսոցիկ սպասելոց փոյթ յանձին ունիցիք անբիժք և անարատք երևել նմա:

* *Ի լուս՝* Համարիցիք. *համաձայն ոմանց: Ոմանք.* Ըստ շնորհելոյ նմա իմաստութեանն գրեաց ձեզ:

* *Ոմանք.* Յամենայն իսկ ՚ի թուղթսն... յորս գտանի ինչ դժուարիմաց, զոր անուսքն և յողորդոքն: *Օրինակ մի.* Յորս գտանի ոչինչ դժուարիմաց, զոր անյոյսքն և յող՝: *Ուր Ոսկան.* գտանին ոչ ինչ դժուարիմացք: *Յօրինակին պակասէր.* Անուսմունքն և յողորդոքն կամա՛:

* *Ոմանք.* Անկանիցիք յաստեաց: *Ոսկան.* Յատեացս հաստատութենէ:

* *Յօրինակին պակասէր.* Տեառն մերոյ, և Փրկչին Յիսուսի... փառք և այժմ: *Ոմանք.* Այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* *Ի վախճանի ոմանք.* Կատարումն Աստուծով երկրորդ թղթոյն Պետրոսի. *այլ բազումք՝ համաձայն մերումս ոչինչ նշանակեն բաց ՚ի թուահամարոյ տանց:*

և Քրիստոս սիրեաց զմեզ: Պատմէ յաղագս զանազան երկիւղի և սիրոյ, և որդւոցն Աստուծոյ և որդւոց Սատանայի. և յաղագս մեղաց որ մահով չափ են, և որ ո՛չ այնպէս. և զզանազանութիւն ոգւոց՝ այնու բաժանէ, թէ ո՛ր ոգի առ ՚ի յԱստուծոյ է, և ո՛ր ՚ի մոլորութենէ. և յո՞րժամ ճանաչենք որդիս Աստուծոյ գոլ զմեզ, և յո՞րժամ Սատանայի. և յաղագս ո՛ր մեղաց պարտ է մեզ աղօթս առնել ՚ի վերայ մեղուցելոյն, և յաղագս որո՛յ ո՛չ է պատշաճ աղօթս առնել. և զի որ ո՛չ սիրէ զընկերն, ո՛չ է ՚ի սուրբ կոչմանն, և ո՛չ կարասցէ ասել թէ Քրիստոսի է: Յուցանէ և զմիութիւն Որդւոյ ընդ Յօր. և թէ որ ուրացեալ է զՈրդի, և ո՛չ զՅայր ունի: Դատէ և ՚ի թուղթս յայս ասելով և զհւրական Նեռինսն լինել, թէ որ ասէ՝ թէ ո՛չ է Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, յայտնի ցուցանէ թէ սուտ է կատարեալ: Խրատէ թղթովս՝ մի՛ տրտմել հաւատացելոց ՚ի Տէր, և թէ ատեսցին յաշխարհէ, այլ խնդալ մանաւանդ. զի ատելութիւն աշխարհիս ցուցանէ զհաւատացեալսն ելեալ յաշխարհէ, և եղեալ այնուհետև յերկնից արքայութիւնն: Եւ ՚ի կատարումն թղթոյս՝ դարձեալ յիշատակէ ասելով, թէ Որդին Աստուծոյ կեանք է յաւիտենական և Աստուած ճշմարիտ, և զի զնա ծառայեսցուք, և մնա սպասեսցուք, և պահեսցուք զանձինս ՚ի կռոց:

Գլուխք Առաջին Թղթոյն Յովհաննու

ա. Աւետարանական աստուածախօսութիւն վասն Քրիստոսի: ա. Յորում վասն խոստովանութեան և վասն զգուշութեան առ ՚ի չմեղանչելոյ. և եթէ պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ զգիտութիւն հաստատեն: բ. Վասն սիրոյ՝ առանց որոյ լինելն ամպարշտութիւն է: ա. Յորում խրատ վասն շնորհաց ըստ իւրաքանչիւր հասակաց: բ. Վասն հրաժեշտի յաշխարհիս սիրոյ:

գ. Վասն սուտ եղբարց աստուածուրացից, և եթէ ՚ի Քրիստոս աստուածպաշտութիւն է Յօր դաւանութիւն, քանզի և Յօր փառաւորութիւն՝ Որդւոյ աստուածօսութիւն է: ա. Յորում վասն աստուածեղէն և հոգևոր շնորհաց սրբութեամբ առ ՚ի յուսոյ ՚ի գիտութիւն Աստուծոյ. և եթէ որ ՚ի Քրիստոս է՝ հեռի է ՚ի մեղաց, և որ մեղանչէն ՚ի Սատանայէ է:

դ. Վասն սիրոյ որ առ ընկերն, և առատատուր խնամոց: ա. Յորում վասն մտաց բարեաց ՚ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի: բ. Վասն ընտրութեան հոգւոցն և դաւանութեան Տեառն մարդանալոյն:

ե. Վասն եղբայրսիրութեան յաստուածպաշտութիւն:

զ. Վասն աստուածօսութեան Որդւոյ ՚ի փառս Յօր: ա. Եւ վասն մեղութեան հակառակորդին և չարի, հաւատովքն Յիսուսի Քրիստոսի ՚ի կեանս:

է. Վասն պատսպարան լինելոյ եղբօր յանցուցելոյ աղօթիւք: ա. Եւ վասն չմեղանչելոյ:

ը. Վասն աստուածօսութեան Որդւոյ ճշմարտին Աստուծոյ: ա. Յորում վասն հեռանալոյ ՚ի դիւական պաշտամանէ:

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՋԻՆ*

1

Գլուխ Ա

Ա եա. ¹Որ էրն իսկզբանէ. գորմէ լուա՛քն, որում ականատեսն իսկ եղեաք. ընդ որ հայեցա՛քն, և ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ Բանի՛ն կենաց*։ ²Եւ կեանքն յայտնեցա՛ն, և տեսա՛ք. և վկայե՛նք, և պատմե՛նք ձեզ գյաւիտենական կենացն, որ էրն առ Յօր՝ և երևեցաւ մեզ*։ ³Ձոր տեսա՛քն և լուաք՝ պատմե՛նք և ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ. և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Յօր՝ և ընդ Որդոյ իւրում Յիսուսի Քրիստոսի*։ ⁴Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ*։ ⁵Եւ այս են աւետիք զոր լուաք առ ՚ի նմանէ՝ և պատմե՛նք ձեզ. զի Աստուած լոյս է, և խաւար ՚ի նմա չի՛ք, և ո՛չ մի*։ ⁶Եթէ ասիցենք՝ եթէ հաղորդութիւն ունինք ընդ նմա, և ՚ի խաւարի շրջիցինք, ստեմք՝ և ո՛չ առնենք զճշմարտութիւնն*։ ⁷Իսկ եթէ ընդ լոյս գնայցենք՝ որպէս նա ՚ի լոյս է, հաղորդութիւն ունինք ընդ միմեանս. և արիւնն Յիսուսի Որդոյ նորա սրբեսցէ՛ զմեզ յամենայն մեղաց*։ ⁸Եթէ ասիցենք՝ եթէ մեղս ինչ մեք ո՛չ ունինք, զանձինս խաբենք. և ճշմարտութիւն ՚ի մեզ ո՛չ գոյ*։ ⁹Ապա եթէ խոստովան լինիցինք զմեղս մեր, հաւատարիմ է նա՛ և արդար՝ առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ*։ *եք.* ¹⁰Եթէ ասիցենք՝ եթէ ոչինչ մեղաք, սո՛ւտ առնենք զնա. և բանն նորա ո՛չ է ՚ի մեզ*։

2

Գլուխ Բ

¹Որդեալք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունինք բարեխօս՝ առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ*։ ²և նա՛ է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ ամենայն աշխարհի*։ ³Եւ յայսմիկ գիտենք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրա՛նս նորա պահիցենք։ ⁴Որ

* Ամենայն գրչագիրք համեմատ մերումն ունին զվերնագիրս։

* Ոմանք. Իսկ եղաք։

* Ոմանք. Որ էր առ Յայր, և։

* Ոմանք. Եւ պատմենք ձեզ։

* Ոմանք. Գրեմ ձեզ... կատարեալ լիցի։

* Օրինակ մի. Աւետիքն, զոր լուարուք առ ՚ի։

* Ոմանք. Եթէ ասենք, եթէ հաղոր՞։

* Ոմանք. Գնայցենք որպէս և նա լոյս է, հաղորդութիւն ունինք ընդ նմա, և արիւնն Յիսուսի... սրբէ զմեզ յամենայն։

* Օրինակ մի. Եւ եթէ ասենք թէ մեղս ինչ։

* Ոմանք. Ապա թէ խոստովան լինինք... առ ՚ի թողուլ զմեղս։ *՚ի լուս՞*։ Յամենայն յանօրէնութենէ. *համաձայն ոմանց ՚ի բնաք՞*։

* Ոմանք. Եւ եթէ ասենք... բան նորա։ *Ոսկան յաւելու*. Ոչ է ՚ի մեզ *բնակեալ*։

* Ոմանք. Եւ եթէ մեղիցէք ուն՞... և զանարատն։

* Ոմանք. Այլ և ամենայն աշխարհի։

ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ո՛չ պահիցէ, սո՛ւտ է, և ճշմարտութիւն ՚ի նմա ո՛չ գոյ: ⁵Իսկ որ պահէ զբան նորա, արդարև ՚ի նմա՝ է կատարեալ սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա՝ ենք*:

⁶Որ ասիցէ ՚ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս նայն գնաց*:

⁷Բ եգ. Սի՛րելիք՝ ո՛չ եթէ նո՛ր պատուիրան ինչ գրեմ ձեզ, այլ զիին պատուիրանն՝ զոր իսկզբանէ ունեաք. և իին պատուիրան՝ բանն է զոր լուարուք*:

⁸Պարծեալ նո՛ր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարտիւ ՚ի նմա՝ և ՚ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի*:

⁹Որ ասէ եթէ ՚ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ասիցէ, սո՛ւտ է՝ և ՚ի խաւարի՝ է տակաւին*:

¹⁰Որ սիրէ զեղբայր իւր, ՚ի լոյս բնակէ՝ և զայթազողութիւն ՚ի նմա չի՛ք*:

¹¹Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ՚ի խաւարի՝ է, և ընդ խաւար շրջի. և ո՛չ գիտէ յո՛ւ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա*:

¹²Գրեմ ձեզ ո՛րդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր՝ վասն անուան նորա: ¹³Գրեմ ձեզ հա՛րք, զի ծանեայք դուք զայն՝ որ իսկզբանէն: Գրեմ ձեզ երիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին*:

¹⁴Գրեցի ձեզ մանկունք, զի ծանեայք դուք զՅայրն: Գրեցի ձեզ հա՛րք, զի ծանեայք դուք զայն որ իսկզբանէն: Գրեցի ձեզ երիտասարդք, զի էք դուք հզօրացեալք, և բանն Աստուծոյ ՚ի ձեզ բնակէ, և յաղթեցէք դուք չարին*:

¹⁵Մի՛ սիրէք զաշխարհս, և մի՛ որ ինչ յաշխարհի է*:

¹⁶Եթէ ոք սիրէ զաշխարհ, ո՛չ է ՚ի նմա սէր Յօր: Զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս. որ չէ՛ առ ՚ի Յօրէ՛ այլ յաշխարհէ՛ աստի է*:

¹⁷Եւ աշխարհս անցանէ՝ և ցանկութիւնն. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ ՚ի յաւիտեան*:

¹⁸Ո՛րդեակք յետին ժամանակ է, և որպէս լուարուք՝ եթէ Նե՛ռն գալոց է, և արդէն իսկ նեռինք բազումք եկեալ են, որով մարթենք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է*:

¹⁹Առ ՚ի մէնջ ելին, այլ ո՛չ էին ՚ի մէնջ. զի եթէ ՚ի մէնջ էին՝ ապա առ մե՛զ մնային. այլ զի յայտնի լինիցին՝ եթէ ո՛չ էին ամենեքեան նոքա ՚ի մէնջ*:

²⁰Եւ դուք օծութիւն ունիք առ ՚ի Սրբոյն, և գիտէք ամենեքին: ²¹Ո՛չ գրեցի ձեզ՝ եթէ ո՛չ գիտէք զճշմարտութիւնն, այլ եթէ գիտէք զնա. և եթէ՝ զի ամենայն ստութիւն ո՛չ է ՚ի ճշմարտութենէ անտի*:

²²Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս չէ՛ Քրիստոսն. նա՛ իսկ է Նեռն, որ ուրանայ զՅայր և զՈրդի*:

²³Ամենայն որ ուրանայ

* *Ոմանք.* Իսկ որ պահիցէ զբան... ՚ի նմա կատարեալ է սէրն:

* *Բազումք.* Որպէս և նայն գնաց:

* *Բազումք.* Նոր ինչ պատուիրան: *Այլք.* Իսկզբանէ ունէիք:

* *Ոսկան.* Զի խաւարն էանց:

* *Ոմանք.* Որ ասիցէ եթէ... և ՚ի խաւար է տակաւին:

* *Ոմանք.* Ի լոյսն բնակէ:

* *Ոմանք.* Իսկ որ ատէ զեղ՞: *Ոսկան.* Եւ ընդ խաւարի շրջի:

* *Բազումք.* Որ իսկզբանէն է: *Ոմանք.* Զի յաղթեցէք դուք չա՞:

* *Ոմանք.* Գրեմ ձեզ մանկ՞... դուք զՅայր:

* *Ոմանք.* Մի սիրէք դուք զաշխարհ:

* *Յօրինակին պակասէր.* Յանկութիւն է մարմն: *Ոմանք.* Ամբարտաւանութիւն է աս՞... որ ոչ է առ ՚ի Յօրէ:

* *Ոսկան.* Աշխարհս անցանէ և ցանկութիւն նորա: *Ոմանք.* Մնայ յաւիտեան:

* *Ոմանք.* Մարթ իցենք իմանալ:

* *Ոմանք.* Ոչ էին առ ՚ի մէնջ... ապա յայտնի լիցին եթէ ոչ էին ամենեքին նոքա ՚ի:

* *Ոմանք.* Ոչ ասացի ձեզ, թէ ոչ... և զի՛ թէ ամենայն ստ՞:

* *Ոմանք.* Իսկ ով է սուտ... նա իսկ է Նեռնն:

զՈրդի, և ո՛չ զՅայր ընդունի. որ խոստովանի զՈրդի, նա և զՅայր ընդունի*:
²⁴Դուք՝ զոր լուարուքն իսկզբանէ՝ ՚ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ՚ի ձեզ բնակեսցէ՝
 զոր իսկզբանէն լուարուք, և դուք յՈրդին և ՚ի Յայր բնակեսցիք*:
²⁵Եւ այս են
 աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտեանականս: *եւ*.
²⁶Ձայս
 գրեցի ձեզ, զի մի՛ որ զձեզ մոլորեցուցանիցէ*:
²⁷Եւ դուք օծութիւնն՝ զոր
 ընկալարուք ՚ի նմանէ, բնակեսցէ ՚ի ձեզ. և չէ՛ ինչ պիտոյ՝ եթէ որ զձեզ ուսուցէ,
 այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի. և ճշմարիտ
 է՝ և չէ՛ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ, կայք ՚ի նմա*:
²⁸Եւ այժմ՝ ո՛րդեակք՝ կացէք ՚ի
 նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն, և մի՛ ամաչեսցուք ՚ի
 նմանէ ՚ի գալստեան նորա*:
²⁹Ձի եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասցիք եթէ
 ամենայն որ առնէ զարդարութիւն՝ առ ՚ի նմանէ՛ է ծնեալ*:

3

Գլուխ Գ

¹Տեսէք՝ որպիսի սեր շնորհեաց մեզ Յայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք մեք.
 վասն այսորիկ աշխարհ ո՛չ ճանաչէ զմեզ, քանզի ո՛չ ծանեաւ զնա*:
եզ.
²Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ ենք, և չն՛ ևս է յայտ՝ եթէ զինչ լինելոց ենք.
 գիտենք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց ենք, զի տեսանելոց ենք
 զնա՝ որպէս և էն*:
³Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ՛ զանձն իւր՝
 որպէս և նայն սուրբ է*:
⁴Ամենայն որ զմեղս գործէ, նա՝ և զանօրէնութիւն առնէ, և
 ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է*:
⁵Եւ գիտենք՝ զի նա յայն սակս յայտնեցաւ՝ զի
 զմեղս բարձցէ, և ՚ի նմա մեղք ո՛չ են: ⁶Ամենայն որ ՚ի նա է հաստատեալ, ո՛չ
 մեղանչէ. և ամենայն որ մեղանչէ, ո՛չ ետես զնա՝ և ո՛չ ծանեաւ զնա*:
⁷Սանկունք
 մի՛ որ զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն, արդար է՝ որպէս և նայն արդար
 է: ⁸Եւ որ առնէ զմեղս՝ ՚ի Սատանայէ՛ է, զի իսկզբանէ Սատանայ մեղանչէ. վասն
 այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ՝ զի լուծցէ զգործս Սատանայի*:
⁹Ամենայն
 որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ո՛չ առնէ, զի սերմն նորա ՚ի նմա՛ մնայ. և ո՛չ կարէ
 մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ*:
¹⁰Այսուիկ յայտնի են ՚ի միմեանց որդիք
 Աստուծոյ՝ և որդիք Սատանայի:

Դ *եւ*. Ամենայն որ ո՛չ առնէ զարդարութիւն՝ չէ՛ նա յԱստուծոյ, և որ ո՛չ սիրէ

* *Ոմանք յաւելուն.* ՁՅայր ընդունի. *իսկ* որ խոս*:

* *Ոմանք.* ՅՈրդի և ՚ի Յայր:

* *Ոմանք.* Ձձեզ մոլորեցուցանէ:

* *Ոսկան.* Ձի չէ ինչ պիտոյ թէ որք... այլ որպէս նորա օծութիւնն: *Ոմանք.* Կայք ՚ի նմին:

* *Ոմանք.* Ունիմք համարձա՞... և մի՛ ամաչեսցուք ՚ի գալստեանն նորա:

* *Ոմանք.* Գիտասցիք՝ զի ամենայն որ առնէ զարդարութիւն՝ ՚ի նմանէ ծնեալ է:

* *Բազունք համաձայն մերումս ունին.* Կոչեսցուք մեք. *կամ*՝ և մեք: *Իսկ երկու օրինակք
 ընդ Ոսկանայ.* Կոչեսցուք և ենք: *Եւ օրինակ մի.* Կոչեսցուք և ենք մեք: *Ոմանք.*

Աշխարհս ոչ ճանաչէ զձեզ:

* *Ոմանք.* Թէ զինչ լինելոց իցենք. գիտենք թէ յորժամ նայն յայտն*:

* *Ոմանք.* Եւ ամենայն որ ունիցի զայս... սրբեսցէ զանձն:

* *Ոմանք.* Ամենայն որ գործէ զմեղս՝ նա և զանօրէնութիւնս առ... անօրէնութիւն են:

* *Ոմանք.* Որ ՚ի նմա է հաստա*:

* *Ոմանք.* Վասն այնորիկ յայտնե՞... զգործսն Սատա*:

* *Բազունք.* Ձի սերն նրա ՚ի սմա մնայ:

զեղբայր իւր. ¹¹զի ա՛յս է պատուիրանն զոր լուարուք իսկզբանէ, զի սիրեսցո՛ւք զմիմեանս*։ ¹²Ո՛չ որպէս Կայէնն՝ ՚ի չարէ անտի էր՝ և սպա՛ն զեղբայրն իւր, և յո՞ր սակս սպան զնա. զի իւր գործքն չար էին, և եղբօրն՝ բարի*։ ¹³Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ։ ¹⁴Մեք գիտենք՝ զի փոխեցաք ՚ի մահուանէ՛ ՚ի կեանս, քանզի սիրենք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ, անդէն՝ ՚ի մահուն կայ*։ ¹⁵Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ո՛չ ունի զկեանս յաւիտենականս յանձին հաստատեալ*։ ¹⁶Այսուիկ գիտացաք զւերն. զի նա՝ զանձն իւր եղ ՚ի վասն մեր. և մեք վասն եղբա՛րց մերոց պարտիմք դնել զանձինս*։ ¹⁷Որ ունիցի՛ զկեանս ինչ զաշխարհիս, և տեսանիցէ՛ զեղբայր իւր կարօտեալ իւիք, և փակիցէ զգութս իւր առ ՚ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ՚ի նմա իցէ բնակեալ*։ *զա.* ¹⁸Ո՛րդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ*։ ¹⁹Եւ ա՛յսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ՚ի ճշմարտութենէ՛ անտի իցենք. և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց*։ ²⁰Եթէ ըստգտանիցեն՝ զմեզ սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս՝ և գիտէ՛ զամենայն*։ ²¹Սի՛րելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ո՛չ ըստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած*։ ²²Եւ զոր ինչ հայցենք՝ առնունք ՚ի նմանէ. զի զպատուիրանս նորա պահենք, և զհաճո՛յս առաջի նորա առնենք*։ ²³Եւ ա՛յս է պատուիրան նորա, զի հաւատասցո՛ւք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ե՛տ մեզ պատուէր*։ ²⁴Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ՚ի նմա՛ է հաստատեալ՝ և նա ՚ի սնա. և յայսմանէ գիտենք եթէ բնակէ՛ ՚ի մեզ ՚ի Յոգւոյ անտի զոր ետ մեզ*։

4

Գլուխ Դ

զբ. ¹Սի՛րելիք՝ մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէ՛ք զհոգիսն եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ*։ ²Եւ մեք այսուիկ ճանաչենք զՅոգին Աստուծոյ։ Ամենայն հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱստուծոյ՛ է նա*։ ³Եւ ամենայն հոգի որ ո՛չ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ՛ նա յԱստուծոյ. և այս

* *Ոմանք.* Ձոր իսկզբանէն լուարուք։ *Ոսկան.* Ձի սիրեսցիք զմիմե՛ն։

* *Ոմանք.* Որպէս Կայէն... և եսպան զեղբայր իւր... և եղբօրն բարիք։

* *Այլք.* Անդէն ՚ի մահու մնայ։

* *Ոմանք.* Որ ատէ զեղբայր... կեանս յաւիտե՛ն։

* *Ոմանք յաւելուն.* Ձսէրն *Աստուծոյ.* զի նա... ետ վասն։ *Այլք.* Ձանձն իւր եղ վասն մեր։

* *Ոմանք.* Որ ունի կեանս ինչ յաշխարհիս, և արգելուցու զգութս իւր ՚ի նմանէ... ՚ի նմա է բնա՛ն։

* *Ոմանք.* Մի՛ բանիւ և լեզուաւ միայն սիրես՛։

* *Ոմանք.* Ձհանդէս սրտից։

* *Ոսկան.* Ձի եթէ ստգտանի՛։ *Բազումք.* Քան զսիրտս մեր, և։

* *Ոմանք.* Ոչ ստգտանեն զմեզ, համար՛։

* *Ոմանք.* Եւ զոր ինչ հայցիցենք, առնուցունք ՚ի։

* *Ոմանք.* Պատուիրանն նորա... յանուն միածնի Որդւոյ նորա։

* *Ոմանք.* Եթէ բնակեալ է ՚ի մեզ։

* *Ոմանք.* Ընտրեցէ՛ք զոգիսն... քանզի բազում սուտ։

* *Ոմանք.* ՁՔրիստոս Յիսուս մարմնով։

Նեռինն է, զորմէ լուարուքն եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է՝ ⁴Դուք յԱստուծոյ էք ո՛րդեակք, և յաղթեցէք նոցա. զի մե՛ծ է որ ՚ի ձեզդ է, քան զայն որ յաշխարհին է: ⁵Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և աշխարհ լսէ՛ նոցա՝: ⁶Մեք յԱստուծոյ ենք, որ զԱստուած ճանաչէ լսէ մեզ, և որ չէ՛ յԱստուծոյ՝ ո՛չ լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զՅոգին ճշմարտութեան, և զհոգին խաբուութեան՝:

Ե *զգ.* ⁷Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՛ յԱստուծոյ է ծնեալ, և ճանաչէ՛ զԱստուած: ⁸Եւ որ ո՛չն սիրէ՛ ո՛չ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է՝: ⁹Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ ՚ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովա կենդանիք՝: ¹⁰Յայսմ է սէրն. ո՛չ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա՛ սիրեաց զմեզ, և առաքեաց զՈրդին իւր ՚ի քաւութիւն մեղաց մերոց՝: ¹¹Սիրելիք՝ եթէ Աստուած այսպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրելի՝: *զդ.* ¹²ՁԱստուած ուրուք երբէք չիք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ՚ի մեզ բնակէ, և սէր նորա ՚ի մեզ կատարեալ է՝: ¹³Այսուիկ գիտեմք եթէ մեք ՚ի նա ենք բնակեալ և նա ՚ի մեզ, զի ՚ի Յոգւոյն իւրմէ ետ մեզ՝: ¹⁴Եւ մեք տեսաք և վկայեմք, զի Յայր առաքեաց զՈրդի իւր Փրկիչ աշխարհի՝: ¹⁵Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ, Աստուած ՚ի նմա՛ բնակէ՛ և նա յԱստուած՝: ¹⁶Եւ մեք հաւատացք, և ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ:

Ձ Աստուած սէր է, և որ կայ ՚ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ՚ի նմա բնակէ՝: ¹⁷Յայսմիկ է կատարեալ սէրն նորա ընդ մեզ. զի համարձակութիւն ունիմք յաւուրն դատաստանի. զի որպէս և նայն է, նոյնպէս և մեք ենք յաշխարհի յայսմիկ՝: ¹⁸Եւ երկեւղ ո՛չ գոյ ՚ի սէր, այլ սէրն կատարեալ ՚ի բաց մերժէ զերկեւղն. զի երկեւղ ընդ տանջանօք է. իսկ որ երկնչին, չէ՛ կատարեալ ՚ի սէրն՝: ¹⁹Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա՛ նախ սիրեաց զմեզ՝: ²⁰Եթէ ոք ասիցէ՛ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ասիցէ, սո՛ւտ է. որ ո՛չ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ո՛չն ետես՝ զհա՞րոյ կարիցէ սիրելի՝:

* *Յօրինակին.* Եւ ամէն հոգի: *Բազումք.* ՁՅիսուս մարմնով եկեալ: *Ոմանք.* Չէ՛ յԱստուծոյ, և այս Նեռին է, զորմէ լուար թէ գա՛: *Ի լուս՝.* ՚ի վերայ՝ Նեռինն, *Նշանակի՝* անտիքրիստոսն:

* *Ոմանք.* Նոքա յաշխարհէ էին:

* *Ոմանք.* Եւ որ ոչ է յԱստուծոյ... ճշմարտութեան, և զհոգին մոլորութեան:

* *Յոմանս պակասի.* Եւ որ ոչն սիրէ ոչ ճանաչէ զԱստուած. զի Աստուած:

* *Ոմանք.* Սէրն նորա ՚ի մեզ. զի... առաքեաց յաշխարհ:

* *Ոմանք.* Այլ զի նախ նա սիրեաց:

* *Ոմանք.* Եթէ Աստուած այնպէս սիրե՛:

* *Ոմանք.* Կատարեալ իցէ:

* *Բազումք.* Ի նմա բնակեալ ենք:

* *Ոմանք.* ՁՈրդին իւր:

* *Ոմանք.* Եթէ Յիսուս Քրիստոս է Որդին Աստուծոյ:

* *Ոմանք.* Բնակէ յԱստուած. և Աստուած ՚ի:

* *Ոմանք.* Յայսմիկ կատարեալ է սէր նորա ՚ի մեզ. զի համարձակութիւն ունիցիմք յաւ՛... որպէս նայն է. *կամ՝* որպէս նա, նոյնպէս և... յաշխարհիս:

* *Յայլս պակասի.* Եւ երկեւղ ո՛չ: *Ոմանք.* Այլ սէր կատարեալ... իսկ որ երկնչի, չէ կատարեալ ՚ի սէր:

* *Ոմանք.* Մեք սիրեցաք զԱստուած. զի նախ նա սիրեաց զմեզ:

* *Ոմանք.* ՁԱստուած զոր ոչ տեսանէ:

²¹Եւ զայս պատուէր ունիմք առ ՚ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ՛ նա և զեղբայր իւր՝:

5

Գլուխ Ե

զե. ¹Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոսն, յԱստուծոյն է ծնեալ. և ամենայն որ սիրէ զծնօղն, սիրէ՛ և զծնեալն ՚ի նմանէ՝: ²Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ և զպատուիրանս նորա արասցուք՝: ³Քանզի այս է սերն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանքն նորա չեն ինչ ծանունք՝: ⁴Ձի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ՛ աշխարհի: Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւանքն մեր՝: ⁵Եւ ո՛ր իցէ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Որդի՛ Աստուծոյ՝: ⁶Սա՛ է որ եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով. և Յոգին է որ վկայէ, զի Յոգին իսկ է ճշմարտութիւն՝: ⁸Սոքա երեքին են որ վկայեն. Յոգին, և ջուրն, և արեւն. և երեքին մի՛ են՝: ⁹Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք. ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մե՛ծ իցէ. այս է վկայութիւն Աստուծոյ, որ վկայեաց ՚ի վերայ Որդւոյն իւրոյ՝: *զգ.* ¹⁰Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի՛ յանձին զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ Որդւոյն Աստուծոյ, սո՛ւտ առնէ զնա. քանզի չհաւատայ վկայութեանն զոր վկայեաց Աստուած ՚ի վերայ Որդւոյն

* *Ոմանք.* Չայս պատուէր:

* *Ոմանք.* ՅԱստուծոյ ծնեալ է:

* *Ոմանք.* Եթէ սիրիցեմք. *կամ՝* սիրեցաք. զՈրդին Աստուծոյ:

* *Ոմանք.* Ձի այս է սերն Աստուծոյ. և պատուիրանք նորա:

* *Ոմանք.* Որ յԱստուծոյ է ծնեալ:

* *Ոմանք.* Եւ ո՛վ է, որ յաղթէ աշխարհ... հաւատացէ՛ թէ Յիսուս Քրիստոս է Որդի:

* *Ոմանք.* Եւ արեամբ. Քրիստոս Յիսուս... իսկ է ճշմարտութիւնն: *Ոսկան որպէս յայլ բազում տեղիս՝ նոյնպէս և աստ առեալ ՚ի Լատինականէն յաւել՝ և այլայլեաց զՀայկական բնաբանս՝ ըստ այսմ օրինակի.* Որ վկայէ **եթէ Քրիստոս է ճշմարտութիւնն:**

7 *Ձի երեք ենք որք վկայեն յերկինս. Հայր. Բանն. և Յոգին Սուրբ. և երեքինս մի են: 8

***Եւ երեք են որք վկայեն յերկրի. Յոգի. ջուր. և արիւն. և երեքինն մի են: 9** *Եթէ զմարդկան: *Այլ իբր յութատասն գրչագիր օրինակաց մերոց ընդ հին և ընդ նոր, զոր ունիմք ՚ի ձեռին, թող զերկուս ևս մեկնիչս Կաթուղիկէից. մին միայն ՚ի նորոց՝ գրեալ ՚ի թուականիս ՌՃԵ (1656). իբր տասն ամօք յառաջ քան զտպագրութիւնն Ոսկանայ, այսպէս դնէ զբնաբանս. Ձի Յոգին իսկ է ճշմարտութիւն: Սոքա երեքին են որ վկայեն յերկինս. Հայր և Բանն և Յոգին Սուրբ. և երեքեանս այս մի են: Եւ երիս են որ վկայեն յերկրի. Յոգին, ջուրն և արիւն: Եթէ զմարդկան ինչ: Եւ թէպէտ գոյր և այլ հնագոյն օրինակ մի, որ ՚ի վերին երեսս յար և նման սմին ունէր գրանն. բայց յայտնապէս երևէր քերեալ առաջինն՝ և մանրագոյն գրութեամբ յայլմէ՛ գրչէ՛ յետոյ յարմարեալ յայնմ միջոցին: Իսկ մնացեալ գրչագիրք մեր առհասարակ, եթէ ՚ի բովանդակութեան Աստուածաշունչ մատենից, և եթէ արտաքոյ ՚ի ճաշոց գիրս, համաձայն բազմաթիւ Հելլենական հնագոյն գրչագրաց՝ միապէս ունին զբնաբանս, ըստ որում և մեր հարկաւորեցաք դնել յառաջիկայոյ:*

* *Ոմանք.* Երեքեանն են... Յոգին, և արիւն, և ջուր, և երեքեանն մի են:

* *Ոմանք.* Վկայութիւնն Աստուծոյ, զոր. *կամ՝* զի վկայեաց ՚ի վերայ Որդւոյն իւրում Յիսուսի Քրիստոսի:

իւրոյ*։ ¹¹Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած. և այս են կեանքն, որ յՈրդին նորա են*։ ¹²Որ ընդունի զՈրդին, ընդունի՛ և զկեանսն. և որ ո՛չ ընդունի զՈրդին Աստուծոյ, և ո՛չ զկեանսն ընդունի*։ *զէ.* ¹³Ձայս գրեցի՝ ձեզ, զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենականս ունիցիք. և զի հաւատայցէ՛ք յանուն Որդւոյն Աստուծոյ*։ ¹⁴Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ՛ մեզ։ ¹⁵Ձի եթէ գիտիցենք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց, ապա՛ գիտենք՝ եթէ առնունք զհայցուածսն՝ զոր հայցենք առ ՚ի նմանէ*։

Է ¹⁶Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ՝ մեղս որ ո՛չ առ ՚ի մահ, խնդրեսցէ՛ և տացէ նմա կեանս մեղուցելոյն ո՛չ առ ՚ի մահ։ Են մեղք՝ որ մահուչափ են, ո՛չ վասն այնորիկ ասեն եթէ խնդրեսցես*։ ¹⁷Ամենայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք որ մահուչափ են*։ ¹⁸Գիտենք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ ո՛չ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ՛ զանձն, և չարն առ նա ո՛չ մերձենայ*։

Ը ¹⁹Գիտենք եթէ յԱստուծոյ ենք, և աշխարհ ամենայն ՚ի չարի՛ կայ։ ²⁰Եւ գիտենք եթէ Որդին Աստուծոյ եկն, և ետ մեզ միտս. զի ծանիցուք զճշմարիտն. և ենք ՚ի ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. զի նա՛ է ճշմարիտ Աստուած՝ և կեանք յաւիտենականք*։ ²¹Որդեակք՝ պահեցէ՛ք զանձինս ՚ի կռապաշտութենէ*։

Տունք ՄԾԴ։*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ Թղթոյն Յովհաննու

Ձայս իբրև զերեց գրէ տէրունոյ եկեղեցւոյն, և որդւոց նորին։ Իսկ պատճառ թղթիս այս է. տեսանել զորդեակսն նորա զի բարուք չրջէին ՚ի հաւատս, և բազում մոլորեցուցիչք եկեալ ասէին, ո՛չ լինել զգալուստն

* *Ոմանք.* ՅՈրդի Աստուծոյ. *կամ՝* Որդւոյ, սուտ առնէ... քանզի ո՛չ հաւատայ վկայութեանն։ *Օրինակ մի.* Որ հաւատայ յՈրդի՛ նա ունի զվկայութիւնս զայս յանձին... քանզի ոչ հաւատաց Աստուծոյ, որ վկայեաց ՚ի վերայ Որդւոյ իւրուն։

* *Ոմանք.* Եւ այս իսկ է վկայութիւն. զի զկեանսն յաւի՛... են կեանք, որ յՈրդւոյ նորա են։

* *Ոմանք.* ՁՈրդի, և ոչ զկեանս ընդունիցի։

* *Բազունք.* Կեանս յաւիտենականս ունիմք։ *Ուր ոմանք.* ունիք, զի հաւատացէք յան՞։

* *Ոմանք.* Ձի եթէ գիտենք... զհայցուածն զոր։

* *Ոմանք.* Մեղս որ ոչ ՚ի մահ... և տայցէ նմա կեանս. *և ոմանք.* Եւ տացի կեանս մեղու՛... թէ խնդ՞։

* *Ոմանք.* Ամենայն անօրէնութիւնք մեղք են։

* *Ոմանք.* Որ յԱստուծոյ ծնեալ է... և չար առ։

* *Ոսկան յաւելու.* Ձճշմարիտն *Աստուած* և *իցենք ՚ի ճշմարիտ Որդի՞։ Ոմանք.* ՚ի ճշմարտի Որդւոյ... ճշմարիտ Աստուած է, և կեանք յաւիտենական։

* *Ոմանք.* Ձանձն ՚ի կռապաշ՞։ *Երկու օրինակք.* Պահեցէ՛ք զձեզ ՚ի պռնկութենէ։

* *Ի վախճանի ոմանք.* Կատարունն Աստուծով Առաջին Թղթոյն Յովհաննու։

Քրիստոսի մարմնով: Գրե՛ք զնոցանէ՛ ՚ի թուղթս. և նախ՝ ընդունի՛ զորդւոց նորա ընթացս. ապա ուսուցանէ՛ ո՛չ նոր լինել զոր առ մեզ խորհուրդ. պատուիրէ՛ դարձեալ վասն սիրոյ. և զի կացցեն յաւանդեալ նոցա վարդապետութիւնն: Եւ յետ այսր ուսուցանէ՛ Նե՛ռն լինել զասացողսն ո՛չ եկեալ մարմնով զՔրիստոս. պատուիրէ՛ զայնպիսիսն ո՛չ ընդունել ՚ի տուն, և ո՛չ տալ նոցա ողջոյն. և այսպէս կատարէ՛ զթուղթն:

Գլուխք Երկրորդ Թղթոյն Յովհաննու

ա. Յետ սկզբանն վասն ուղիղ վարուց սիրովն Աստուծոյ ՚ի ձեռն հաւատոց անփոփոխն աստուածապաշտութեան: ա. Յորում թէ չէ՛ պարտ հերետիկոսի վանս տալ՝ կամ ողջոյն, քանզի մեղք են: բ. Խոստումն զալստեանն իւրոյ առ նոսա յուսով՝ յօգուտ:

ԹՈՒՂԹ

ՅՈՎՅԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ

1

էա. ¹Յերիցուէ առ ընտրեալ Կիւրեայ, և առ որդեա՛կս իւր զոր Ե՛սդ սիրեմ ճշմարտութեամբ. և ո՛չ եթէ ես միայն, այլ և ամենեքեան՝ ոյք զիտա՛կ են ճշմարտութեանն*.² Վասն որոյ ճշմարտութեանն՝ որ ՚ի մեզ հաստատեալ է, զի և ընդ ձե՛զ իցէ. և դուք յաւիտենի՛ց ընդ մեզ իցէք*:³ Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի Յօրէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Յօր, ճշմարտութեամբ և սիրով եղիցի ընդ ձեզ*:

Ա ⁴Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացո՛ք քոց՝ որ գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ՚ի Յօրէ: ⁵Եւ այժմ աղաչեմ զքեզ Կիւրեայ. իբրև ո՛չ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր իսկզբանէ՛ն ունեաք, զի սիրեսցո՛ւք զմիմեանս*:⁶ Եւ այս է սէրն, զի գնասցո՛ւք ըստ պատուիրանաց նորա. և այս է պատուիրանն, զի որպէս լուարուք իսկզբանէ՛ ըստ նմին գնասցիք*:⁷ Ձի բազում մոլորեցուցիչք ելին յաշխարհս. որ ոք ո՛չ խոստովանի զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է՝ և Նե՛ռն*:⁸ էբ. ⁸Զգոյ՛շ լինիջիք անձանց, զի՛ մի՛ կորուսանիցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք բովանդակ զվարձն*:⁹ Ամենայն որ յանցանիցէ՛ և ո՛չ կայցէ ՚ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ո՛չ ճանաչէ. որ կայ ՚ի

* Ոմանք. Առ ընտրեալդ Կիւրիա... որդիսն զոր ես... այլ ամենեքեան:

* Ոսկան. Վասն ճշմարտութեանն:

* Ոմանք. ՅԱստուծոյ Յօրէ... եղիցին ընդ ձեզ:

* Բազումք. Կիւրիա... զոր իսկզբանէ ունեաք:

* Ոմանք. Պատուիրան. զի զոր լուարուք իսկզբանէ, ըստ նմին գնասցուք:

* Ոմանք. Ելին յաշխարհ, որք ոչ խոստովանին... նա է մոլորեցուցիչ և Նեռն:

* Ոմանք. Բովանդակ զվարձս:

վարդապետութեանն, նա՛ և զՈրդին և զՀայր ընդունի՞: ¹⁰Եթէ ոք գայցէ առ ձեզ՝
և զվարդապետութիւնս գայս ո՛չ ունիցի, մի՛ ընդունիք զնա՛ ՚ի տուն, և մի՛ ողջոյն
տայցէք նմա՞: ¹¹Որ ասասցէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարաց գործոց նորա՞:
¹²Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ո՛չ կամեցայ քարտիսիւ և դեղով. զի ական
ունիմ ինձէ՛ն իսկ գալ առ ձեզ, և բերան ՚ի բերան խօսել. զի ուրախութիւնն մեր
իցէ կատարեալ՞: ¹³Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ: Շնորհք ընդ ձեզ:

Տունք L:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Երրորդ Թղթոյն Յովհաննու

Յառաջագոյն ընդունի զԳայիոս. վկայեալ յամենեցունց վասն
օտարսիրութեանն. և հրամայէ մնալ ՚ի յառաջադրութիւնն և աճել. և
յաջողել առ եղբարսն: Դարձեալ և զնուէրս նորա ընդունի, և ցուցանէ և
զԴիոտրեփեայ, իբր թէ պատճառէ՛, և ո՛չ տայ աղքատաց, այլ և զայլսն
խափանէ. և զբազում անգամ ամբաստանեալսն ցուցանէ և աստ՝ թէ
օտար են ՚ի ճշմարտութենէն, և ո՛չ տեսցեն զԱստուած: Իսկ զԴեմետրիոս
ի մէջ առնու, և վկայէ նմա գեղեցիկս:

Գլուխք Երրորդ Թղթոյն Յովհաննու

ա. Աղօթք վասն կատարման, և զովութիւն դաւանութեամբ
հիւրասիրութեան եղբարց վասն Քրիստոսի: ա. Յորում վասն
Դեոտրեփեայ անզգամութեան և եղբայրատեցութեան: բ. Եւ վասն
Դեմետրի որումն վկայէ զգործոց բարեաց: գ. Եւ վասն գալստեանն իւրոյ
առ նոսա մերձ ընդ մերձ՝ յօգուտ:

ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՐՈՐԴ

1

* *Ոմանք.* Որ յանցանէ, ոչ կայ. *կամ՝* կացցէ ՚ի վարդապետութիւնն Քրիստոսի, և
զԱստուած... որ կայ ՚ի վարդապետութիւնն, նա զՈրդի և զՀայր:

* *Բազումք.* Մի՛ ընդունիցիք զնա:

* *Ոմանք.* Կցորդ լինիցի չարաց գործոց:

* *Ոսկան.* Գրել ձեզ... քարտիսիւ և դեղով գրել. զի ական:

* *Ի վախճանի ոմանք.* Կատարումն Երկրորդ Թղթոյն Յովհ:

էգ. ¹Յերիցուէ առ Գայիոս սիրելի. զոր ե՛սդ սիրե՛մ ճշմարտութեամբ*:
 Ա ²Սիրելի՛ վասն ամենայն իրաց քոց աջողութեան և առողջութեան՝ աղօթս
 առնեմ. որպէս է՝ իսկ յաջողութիւն անձինդ քո*:³ Յոյժ ուրախ եղէ ՚ի գալ եղբարց,
 և լինել վկայ քոյո՛յ ճշմարտութեանդ, որպէս գնասդ դու ճշմարտութեամբ*:⁴ Մե՛ծ
 ևս ինչ ուրախութիւն քան զայս ո՛չ ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն
 ճշմարտութեամբ գնան*:⁵ Սիրելի՛ հաւատարիմ գործես զայդ, զոր եթէ առնիցես
 առ եղբարս՝ զդոյն և առ օտարս*.⁶ Թորք վկայեցին քո՛ սիրոյդ առաջի եկեղեցւոյ.
 որոց բարիս արարեալ յուղարկե՛ս արժանիս Աստուծոյ*:⁷ Ձի վասն անուանն
 ելին, և ո՛չ ինչ յումեքէ առնուն զհեթանոսականացն*:⁸ Մեք այսուհետև պարտիմք
 ընդունել զայնպիսիսն, զի գործակի՛ցք լիցուք ճշմարտութեանն: *էդ.*⁹ Գրեցի ինչ
 եկեղեցւոյն. այլ որ յառաջադէմն ՚ի նոցանէ Դիոտրեփէս, ո՛չ ընդունի զմեզ*:
¹⁰ Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցի՛ց զգործս նորա զոր առնէ, բանիւք չարօք
 շատխօսութեան առնէ զմեզ աշխատ. և ո՛չ այսոքիւք շատացաւ, ո՛չ ինքն
 ընդունի զեղբարս, և զայնոսիկ որ ընդունին՝ արգելո՛ւ. նա՛ և յեկեղեցւո՛յ ևս
 հանէ*:¹¹ Սիրելի՛ մի՛ լիցիս նմանօղ չարի՝ այլ բարոյ՛. զի որ զբարին առնէ՝
 յԱստուծոյ է. և որ զչարիս գործէ՝ նա ո՛չ ետես երբէք զԱստուած*:¹² ՁԴեմետրեայ
 վկայեալ է յամենեցունց, և յեկեղեցւոյն և ՚ի ճշմարտութենէն, և մեք վկայեմք. և
 դու գիտես զի ճշմարիտ է մեր վկայութիւնն*:¹³ Բազում ինչ ունէի գրել քեզ. այլ
 ո՛չ կամիմ քարտիսիւ և դեղով գրել*. ¹⁴ զի ակն ունիմ ՚ի մօտո՛յ իսկ տեսանել
 զքեզ, և բերան ՚ի բերան խօսել ընդ քեզ*:¹⁵ Խաղաղութիւն ընդ քեզ: Ողջո՛յն
 տան քեզ սիրելիք: Ողջո՛յն տաջիր սիրելեաց մերոց իւրաքանչի՛ւր յանուանէ*:

Տունք ԼԶ:*

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Թղթոյն Յուդայի Առաքելոյ

-
- * *Ոմանք.* Ձոր ես սիրեմ:
 - * *Ոմանք.* Քոց յաջողութեան:
 - * *Ոմանք.* Որպէս և գնաս դու:
 - * *Ոմանք.* Ձի լսեմ թէ իմ:
 - * *Ոմանք.* Գործես զայս, զի թէ առնի՛... զնոյն և առ օտ՛:
 - * *Բազումք.* Վկայեցին վասն քո սիրոյդ. *և ոմանք.* վկայեցին քոյոյ սի՛. *ևս՝ ոմանք.* Ձքո սիրոյդ... արժանի Աստուծոյ:
 - * *Օրինակ մի.* Վասն անուան նորա ելին:
 - * *Ոմանք.* ՚ի նոցանէ է Դիոտրիփէս:
 - * *Ոմանք.* Վասն այնորիկ չարեօք շատախօսութեամբ... առնէ աշխատ զմեզ: *Բազումք.* Եւ ոչ այսոքիւք շատացեալ... որ ընդ ունինն:
 - * *Ոմանք.* Մի՛ լինիցիս. *կամ՝* մի՛ լինիր... զբարիս առնէ... և որ զչար գործէ:
 - * *Ոսկան.* Վկայեալ յամենե՛ն:
 - * *Ոմանք.* Գրել առ ձեզ. այլ ո՛չ կամէի քարտ՛:
 - * *Ի բազումս պակասի.* Խօսել *ընդ քեզ:*
 - * *Ոմանք.* Խաղաղութիւն ընդ ձեզ... քեզ սիրելիքն: Ողջո՛յն տաջիրք. *կամ՝* տուր սիրելի՛:
 - * *Ի վախճանի ոմանք յաւելուն.* Շնորհք ընդ ձեզ:

Ձայս թուղթս գրե նորոգ հաւատացելոցն. և այս է պատճառն: Վասն զի եկին ոմանք՝ և ուսուցանէին անպատուիաս գոլ զմեղսն, և այս՝ էր ուրացութիւն Տեառն. հարկ եղև վասն այսր գրել և ամրացուցանել զեղբարս. և յառաջագոյն աղաչէ զնոսա ջանալ և ճգնել յաւանդեալ հաւատսն. և ապա յանդիմանէ և որոշէ զնորոգեցուցիչսն. և պատուիրէ մի՛ իւր ինչ հաղորդութիւն ունել ընդ նոսա. զի ո՛չ է բաւական կոչումնս միայն, եթէ ոչ արժանապէս գնասցուք կոչմանն: Քանզի և զառաջինն ասէ՝ ժողովուրդն եհան յեգիպտոսէ Տէր. և ո՛չ մնացեալ ՚ի հաւատս՝ կորեան. և ՚ի հրեշտակս որք ո՛չ պահեցին զկարգ իւրեանց՝ ո՛չ խնայեաց. պատշաճ է ասէ յայսպիսեացս խորշել: Եւ զի Միքայէլ հրեշտակապետն ո՛չ համբերեաց հայիոյութեանն Սատանայի. զկորուստ նոցա իբրեւ զՍողոմացուցն լինել ուսուցանէ: Եւ ապա պատուէր տայ ՚ի բնական սովորութիւնս, և աղօթս առնէ նոցա սերտ մնալ ՚ի հաւատսն Տեառն. յոր և կատարէ զթուղթ:

Գլուխք Թղթոյն Յուդայի Առաքելոյն

- ա. Վասն զգուշութեան հաւատոցն որ ՚ի Քրիստոս, յաղագս յառնելոյ՝ ՚ի վերայ անպարշտաց և ժանտագործ մարդկան: ա. Յորում վասն հանդերձելոց տանջանաց նոցա՝ ըստ նմանութեան առաջնոց մեղաւորացն և չարաց:
- բ. Եղկութիւն նոցա վասն խաբէութեան և անպարշտութեան. և ժանտագործութեան և հայիոյութեան և մտացծնոյց կեղծաւորութեան ՚ի պատրանս կաշառակրծութեան:
- գ. Վասն զգուշութեան նոցա ՚ի հաւատս. վշտակցութեամբ և ակնածութեամբ առ ընկերն ՚ի փրկութիւն սրբութեամբ:
- դ. Աղօթք վասն նոցա ՚ի սրբութիւն, և համարձակութիւն պարկեշտութեամբ հանդերձ փառատրութեամբն Աստուծոյ:

ԹՈՒՂԹ

ՅՈՒՂԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԿԱԹՈՂԻԿԷ*

1

էե. ¹Յուդա Յիսուսի Քրիստոսի ծառայ, և եղբայր Յակոբայ. հեթանոսաց որ յԱստուծոյ Դօրէ եք սիրեցեալք, և Յիսուսի Քրիստոսի պահեալք և ընտրեալք. ²ողորմութիւն ձեզ խաղաղութիւն և սէր բազմասցի*:

* *Բազումք դնեն վերնագիր. Թուղթ Յուդայի եղբոր Յակովբայ. և ոմանք. Թուղթ Յուդայի առաքելոյ. կաթուղիկէ:*

* *Ոմանք. Եւ խաղաղութիւն և սէր:*

ԱՅիքի զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, և աղաչել զի ճգնիցիք՝ ի վերայ հաւատոցն որ միանգամ աւանդեցան սրբոց*։⁴ Քանզի սարդեցին մտին ոմանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ էին ՚ի սոյն դատաստան. ամպարիչտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն գիշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք*։⁵ Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ՝ որ գիտեք զամենայն զի Աստուած միանգամ զժողովուրդն փրկեաց յեգիպտոսէ. երկրորդ անգամ զանհաւատսն կորոյս*։⁶ Եւ զհրեշտակս որ ո՛չ պահեցին զհրեանց իշխանութիւնն, այլ թողին զհրեանց բնակութիւնն, ՚ի դատաստանս մեծի աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց ՚ի խաւարի*։⁷ Որպէս Սողոմոն և Գոմոր, և որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան առաջի օրինակ՝ գլաւիտեանական հրոյն ընկալեալ զդատաստան*։

ԲՆստ նմին օրինակի և սոքա իբրև քնով դանդաչեալք՝ զմարմինն պղծեն, զտէրութիւնս քամահեն, զփառսն հայհոյեն*։⁹ Ուր Միքայէլ հրեշտակապետն յորժամ բանսարկուսն Սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն Մովսիսեանն մարմնոյ, ո՛չ ժպրհեցաւ հայհոյութեանն դատաստանի հանդուրժել. այլ ասէ. Սաստեսցէ՝ ՚ի քեզ Տէր*։¹⁰ Իսկ սոքա զոր ինչ ո՛չն իմանան՝ հայհոյեն. և զայլսն ևս զոր բնութեամբ իբրև զանխօս անասուն գիտեն, ՚ի նոսին ապականեցին*։¹¹ Վայ է նոցա, զի ըստ ճանապարհին Կայենի գնացին, և ըստ մոլորութեանն Բաղամայ զեղխեցան զհետ վարձուց, և ըստ հակառակութեանն Կորիսայ կորեան*։¹² Սոքա են ատեցեալք, շոգմո՛գք, երթեալ զհետ ցանկութեանց իւրեանց. ՚ի սէրս իւրեանց՝ խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք. աներկել զանձինս ճարակեն։ Ամպք անջրդիք, հողմակոծեալք, ծառք պտղակորոյսք, անպտուղք, կրկնամեռք, խլեալք արմատաքի*։¹³ անաստ ալիք ծովու, որ միշտ փրփրեն զհրեանց անձանցն զամօթ. աստեղք մոլարք, որոց վի՛հ խաւարին յաւիտենից պահեալ է*։ էգ. ¹⁴Սարգարեացաւ վասն նոցա և եւթներորդն յԱղամայ ենովք՝ և ասէ. Ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք հրեշտակօք*, ¹⁵առնել դատաստան ըստ ամենայնի, և յանդիմանել զամենայն ամպարիչտս վասն գործոց իւրեանց՝ զոր

* Ոմանք. Աւանդեցան ՚ի սրբոցն։

* Ոմանք. Յառաջագոյն իսկ նկատեալ էին... զշնորհսն դարձուցին յանկարգութիւնն, և զմին միայն իշխանն։

* Ոմանք. Երկրորդ անգամ զժողովուրդ անհաւատիցն կորոյս։

* Ոմանք. Եւ զհրեշտակքն որ... ՚ի դատաստան մեծի ա՛... պահեալ ՚ի խա՛։

* Ոմանք. Որպէս զՍողոմոն և զԳոմոր, և որ շուրջ զնոքօք քաղաքքն... դատաստան։

* Ոմանք. Չմարմինս պղծեն։

* Ոմանք. Հրեշտակապետ, յորժամ բանսարկուսն Սատանայ վի՛... վասն Մովսիսեան մարմնոյն... հայհոյութեան դատաստանին համբերել, այլ։ Ուր Ոսկան. Յորժամ ընդ բանսարկուսին Սատա՛։

* Ոմանք. Եւ զայլն ևս... իբրև զանխօս անասունս գի՛։

* Ոմանք. Մոլորութեանն Բաղամայ։

* Ոմանք. Շոգմոգք երթեալք զհետ ցանկութեան իւրեանց, ընդ սէրս իւրեանց լինին ձեզ ուրախակիցք. աներկիւղ։ Ուր օրինակ մի. Լինին ընդ մեզ ուրա՛։

* Ոմանք. Զիւրեանց զանձանց... յաւիտեան պահեալ է։

* Ոմանք. Եւ վասն նոցա եւթներորդն յԱ՛... Տէր իւրովք հրեշտակօք։

ամպարշտեցին. և վասն ամենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամպարիշտք: ¹⁶Սոքա են տրտնջողք և շոգմո՛գք, երթեալ ըստ իւրեանց անձանց ցանկութեանց. և բերանք նոցա զամբարտաւանս բարբառին. արնուն ակն երեսաց վասն օգտի*:

Գ էէ. ¹⁷Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկանխասաց բանս զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*.¹⁸ զի ասէին ձեզ, եթէ ՚ի յետին ժամանակս եղիցին մարդք արհամարհողք, երթեալք ըստ իւրեանց ամպարշտութեանցն ցանկութեանց*:¹⁹Սոքա են նշաւակեալք շնչաւորք, որ զՌոգին ո՛չ ունիցին:

Գ ²⁰Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շինել զանձինս սրբութեամբն հաւատոց ՚ի Յոգին Սուրբ. կացցուք յաղօթս*,²¹ պահել զանձինս սիրովն Աստուծոյ. ակն ունել ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի կեանսն յաւիտենական*:²² Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք կշտամբիչք*,²³ և զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ ՚ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք երկիւղիւ դատել, և զպատմուճանն որ ՚ի մարմնոյն իցէ աղտեղեալ*:²⁴ Եւ այնմ որ կարողն իցէ պահել զձեզ անարատս և անբիծս, հաստատեալ առաջի իւրոց փառաց աներկևանն ցնծութեամբ*.²⁵ միոյն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք, մեծութիւն, զօրութիւն, և իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեանս, և այժմ և յամենայն յաւիտեանս. ամէն*:

Տունք ԿԸ:*

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յայտնութեան Յոհաննու

* *Ոմանք.* Նոքա են տրտնջողք... անձանցն ցան*:

* *Ոմանք.* Բանս առաքելոցն:

* *Ոմանք.* Եթէ յետին ժա*:

* *Ոմանք.* Այլ և մեք սիրելիք... սրբութեամբ հաւատոցն:

* *Բազումք.* ՚ի կեանսն յաւիտենականս:

* *Ոմանք.* Լինիցիք. կամ՝ լինիցիմք կշտամբիչք:

* *Ոմանք.* Յափշտակել ՚ի հրոյ, և ոմանց ողորմիջիք, երկիւղիւ դատեալ:

* *Ոմանք.* Եւ այն որ կարողն է պահել... հաստատել առաջի իւրոց փառացն աներկևան: *Յօրինակին պակասէր.* Առաջի իւրոց փա*:

* *Ոմանք.* Միոյն Աստուծոյ Փրկչին Յիսուսի Քրիստոսի փառք... յաւիտեանս, այժմ և յաւիտեանս. ամէն:

* *Ի վախճանի ոմանք.* Կատարումն ամենայն թղթոցն կաթուղիկէից: *Ուր և գրեթէ ամենայն գրչագիրք ընդ մերումս օրինակի, աստէն յետ Յուդայի թղթոյն դնեն զԱղերսն Եւթաղի.* Ամենայն իրիք. և այլն. *զոր մեք թողումք կարգել ՚ի յաւելուած մատենիս: Յօրինակի մերում թէպէտ աստանօր՝ զկնի թղթոցն կաթուղիկէից եղեալ էր Յայտնութիւնն Յովհաննու՝ յառաջ քան զթուղթսն Պաւղոսի. այլ պատշաճ ևս թուեցաւ՝ համենատ այլ ամենայն գրչագրաց մերոց, նա և Յունականաց իսկ՝ կարգել զայն ՚ի վախճանի բովանդակ Նոր Կտակարանացս:*

Սրբոյ աւետարանչին Յովհաննու է գիրքս՝ որ կոչի Յայտնութիւն. զոր ետես մարգարեական աչօք զլինելոցսն՝ ի խաչելութենէն Քրիստոսի մինչև ցկատարած: Եւ Յայտնութիւն կոչի, զի բազում ինչ ՚ի հանդերձելոցն լինելոյ քան յայլ գիրս՝ աստուստ լինի գիտելի. և է պատճառ յայտնութեանս այս: Ձի նախ քան յայլոց աստուածեղէն իրաց հաղորդել՝ յԱստուած հաւատն է պիտանացու. և այն Քրիստոսի լինէր տուեալ աշխարհի. վասն որոյ մարգարէքն իբրև հիմն աստուածպաշտութեան զաստուածեղէն տնօրէնութիւնն Քրիստոսի նախ գուշակեցին՝ զոր եկն և կատարեաց. և զնոյն առաքեալքն քարոզեցին՝ թէ Աստուած էր որ մարդացաւ և խաչեցաւ: Յոր իբրև հաստատութեամբ հաւատացին եկեղեցիք. ապա զոր ինչ անտի և յառաջ նեղութիւնք էին գալոց, մանաւանդ յաւուրս Նեռինն՝ յայտնութեամբս կանխագուշակեաց ՚ի զգուշութիւն պատահելոցն ՚ի ժամանակսն: Յորոց աստ ասացելոցս, որ ինչ նախ քան զՆեռնն, և յորոց առ նովաւ, է՛ ինչ զի և ՚ի մարգարէսն յիշի, և յաւետարանսն, և յառաքելական թուղթսն, և է՛ ինչ որ միայն ՚ի գիրս յայս, որպէս վասն անուան Նեռինն, զոր և դրոշմէ ՚ի ճակատս կորուսելոցն. և վասն Ենոքայ և Եղիայի վկայութեամբ կատարմանն, և վասն կապելոյն և արձակմանն Սատանայի. վասն ապակեայ ծովուն. և նորն Երուսաղէմի. և զանազան հարուածոցն զոր ունի գիրս այս: Չորս ըստ օրինի մարգարէութեան զլինելոցն մարմնատիպ կերպարանօք տեսանէ զիւրաքանչիւրսն ՚ի ճահ ըստ խորհրդոյն. ճրագարանս ոսկիս. և ահաւոր կերպարան մարդոյ. և աթոռ, և տեսիլ ականց պատուականաց, և տեսակք հարուածոց, և զորս մի ըստ միոջէ: Եւ նախ զգուշացուցանէ զեկեղեցիս՝ մնալ յառաքինութիւնս ածմամբ, և վերջացելոցն՝ դառնալ ՚ի նոյն. և բացմամբ կնքոց գրոցն ըստ հետևման ժամանակին՝ յայտնէ զդէպսն, ՚ի քարոզելոյ առաքելոցն մինչև ՚ի սաստիկ հալածանսն. յորում անժոյժքն գայթազդին, և քաջքն առաջի Աստուծոյ ցնծան. և զելթն հարուածսն որ նախ քան զկատարածն, յորում և զհատուցումն վրիժապարտիցն՝ ընդ որոյ և զովել սրբոցն զԱստուած: Դառնայ և ՚ի դէմս կնոջն որ երկնէր ծնանել, յայտնէ զպատերազմն վիշապին ընդ եկեղեցւոյ՝ իսկզբանէ Աւետարանին և յառաջ մինչև յեւթնագլուխ վիշապն, որ է Նեռն. և վասն պէսպէս սպասաւորութեան հրեշտակացն, մինչև ՚ի գեհենն արկանել զՆեռն: Դառնայ ասել վասն կապելոյն զՍատանայ խաչին, և լուծանելոյ ՚ի գալ Նեռինն. և դարձեալ արկանելոյ զնա ՚ի ծով հրոյ և ծծմբոյ, և վասն հասարակաց յարութեանն և դատաստանին. և վասն նորոյ երկնին և երկրի՝ զոր ժառանգեն արդարքն:

Գլուխք Յայտնութեանս Յովհաննու

- ա. Յայտնութիւն սրբոյն Յովհաննու Աստուածաբանի, որ եղև առ նա ՚ի ձեռն հրեշտակի:
- բ. Ձի ետես զՏէր ՚ի մէջ ոսկի ճրագարանացն զգեցեալ պճղնաւոր:
- գ. Թէ զի՛նչ գրեաց առ հրեշտակս Եփեսացւոց եկեղեցւոյն:
- դ. Ձի՛նչ և առ հրեշտակս Չմիւռնացւոց եկեղեցւոյն:
- ե. Ձի՛նչ առ Պերգամոյ եկեղեցւոյն հրեշտակս:

զ. Ձի՛նչ և առ Թիւատրացւոց եկեղեցւոյն հրեշտակս:
է. Ձի՛նչ և առ Սարդիացւոց եկեղեցւոյն հրեշտակս:
ը. Ձի՛նչ և առ Փիղադելփեաց եկեղեցւոյն հրեշտակս:
թ. Ձի՛նչ և առ Լաւողիկեցւոց եկեղեցւոյն հրեշտակս:
ժ. Վասն երևելոյ նմա դրանցն երկնից և քսան և չորս երիցանցն:
ժա. Վասն գրոցն կնքելոյ, զոր ո՛չ կարաց բանալ յեղելոցս:
ժբ. Վասն կնքեալ Գառինն, և որ ՚ի կարգին է:
ժգ. Լուծումն առաջին կնքոյն:
ժդ. Լուծումն երկրորդ կնքոյն. և որ ՚ի կարգին:

զվախճան, և վասն ապակեայ ծովուն:
խգ. Ձի յառաջին սկաւառակին հեղուլն՝ եհաս հարուածք ամպարշտաց:
խե. Յերկրորդին՝ հարուածք ՚ի ծովայինս:
խը. Յերրորդին՝ գետք յարին դարձունն:
խթ. Չորրորդին՝ տանջին մարդիկ խորշակաւ:
ծ. Յինգն՝ զթագաւորութիւն գագանին խաւարեցուցանէ:
ծա. Վեցն՝ ճանապարհ տայ ՚ի վերայ Եփրատայ արևելից թագաւորացն:
ծբ. Յեւթն՝ կարկուտ և շարժ ՚ի վերայ մարդկան:
ծգ. Եցոյց հրեշտակն աւետարանչիս զպոռնիկ քաղաքն, և զքակտումն
եւթն գլխոյ և տասն եղջերն:
ծդ. Ձի մեկնեաց հրեշտակն զխորհուրդ պոռնկին:
ծե. Վասն հրեշտակին որ զանկանելն Բաբելոնի յայտնէր, և երկնային
ձայնն փախչել ասէ ՚ի քաղաքէն. և զի անցանեն վայելչութիւնք
քաղաքին:
ծզ. Օրհնաբանեն սուրբք երեքկին ալելուաւք ՚ի քանդելն Բաբելոնի:
ծէ. Վասն խորհրդաւոր հարսանեաց Գառինն և ընթրեաց:
ծը. Տեսանէ աւետարանչիս զՔրիստոս յերիվար բազմութեամբ
հրեշտակօք:
ծթ. Ձի ՚ի գեհենն արկաւ Նեռնն և որք ընդ նմա:
կ. Ձի կապեցաւ Սատանայ ՚ի խաչելութենէն Քրիստոսի մինչև ցվախճան,
և վասն հազար ամին:
կա. Վասն պատրաստեալ բազմականաց անսայթաք զՔրիստոս
խոստովանողացն:
կբ. Ձի՛նչ առաջին յարութիւնն, կամ զի՛նչ երկրորդ մահն:
կգ. Վասն Գոգայ և Մագոգայ:
կդ. Վասն նստելոյն յաթոռն, և հասարակաց յարութեանն և
դատաստանին:
կե. Վասն նոր երկնի և երկրի, և վերինն Երուսաղէմի:
կզ. Վասն ասացուածոց այնր որ յաթոռն նստէր:
կէ. Վասն հրեշտակին որ ցուցանէր նմա զսուրբ քաղաքն դրամբքն
չափելով:
կը. Վասն մաքուր գետոյն որ յաթոռոյն արտաքս հոսեցաւ:
կթ. Ձի Աստուած է մարգարէիցն Քրիստոս և Տէր հրեշտակաց:
հ. Ձի արժանահաւատ է տեսիլս առաքելոյս:
հա. Ձի ո՛չ հրամայեցաւ նմա կնքել, այլ քարոզել զտեսիլս:
հբ. Ձի եկեղեցի և որ ՚ի նմա հոգին ընդունի զՔրիստոսի յայտնութիւնս, և
վասն անիծիցն որոց յաւելուած ՚ի գիրս մուծանեն:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՉԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱԲԵՏԱՐԱՆՉԻ*

* Ի վերնագրիս՝ ոմանք դնեն համառօտիւ. Յայտնութիւն սրբոյ Յովհաննու
Աստուածաբանի:

Գլուխ Ա

Ա՛ 13 այտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ՚ի ձեռն որոյ ե՛տ Աստուած ցուցանել ծառայի՛ց իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվադակի. և նշանակեաց առաքելով՝ ՚ի ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յովհաննէս՝: ²Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, և զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի զոր ետես. որ էր, և որ լինելոցն էր յետ այնորիկ՝: ³Երանի՛ որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր ՚ի նմա՛ գրեալ է. զի ժամանակս մերծեալ է՝:

⁴Ի Յովհաննէ՛ առ եւթն եկեղեցիս՝ որ են յԱսիայ, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ՝ յէէն՝ և որ է՛ն՝ և որ գալոցն է, և յեւթն զօրութեանց Յոգւոյն՝ որ է առաջի աթոռոյն իւրոյ՝. ⁵և ՚ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ՚ի մեռեալս, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով՝. ⁶և արար զմեզ թագաւորս և քահանայս Աստուծոյ և Յոր իւրոյ. որուն փառք և զօրութիւն՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն՝: ⁷Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. և տեսցեն զնա ամենայն ազգք, և տեսցեն զնա ծագք երկրի, և որք խոցեցին զնա՝ ամենեքեան յերկրի, և կոծեսցին ՚ի վերայ նորա. այո՛ ամէն՝: ⁸Ես եմ Այբ, և ես եմ Քէ՛, ասէ Տէր Աստուած, որ է՛ն և որ է՛ և որ գալոցն է՝ Ամենակալ՝: ⁹Ես Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարակից նեղութեան՝ և արքայութեան՝ և համբերութեան որ ՚ի Քրիստոս Յիսուս. եղէ՛ ես ՚ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բանին և վասն վկայութեանն Յիսուսի Քրիստոսի՝:

Բ ¹⁰Եւ եղև յիս Յոգի ՚ի կիրակէի աւուր, և լուայ զձայն զհետ իմ զմեծ իբրև զձայն զփողոյ՝ որ ասեր ցիս. Ես եմ Ալփայ և Ով. Առաջին և Վերջին՝. ¹¹զոր տեսանես՝ գրեա՛ ՚ի գիրս, և տո՛ւր տանել յեւթն եկեղեցիս՝ որ յեփեսոս, և ՚ի Ջմիւռնիա՛, և ՚ի Պերգամոն՝վն, և ՚ի Թիւատրիա, և ՚ի Սարդիկէ, և ՚ի Փիլադելփեա և ՚ի Լաւդիկիա՞: ¹²Եւ դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս. և ՚ի դառնալն

* *Ոմանք.* Որ լինելոց է... առ Յովհաննէ ծառայ իւր:

* *Ոմանք.* Վկայեաց զբանէն Աստուծոյ, և զվկայութիւնն Յիսուսի... և որ էր:

* *Ոմանք.* Երանի որ ընթեռնուն զբանս մարգարէութեանս այսորիկ, և որ լսէ և պահէ զոր ինչ ՚ի սմա գրեալ է:

* *Ոմանք.* Յովհաննէս առ եւթն... որ յԱսիա... և խաղաղութիւն յէէն: *Ոսկան.* Եւ եօթն Յոգւոյն զօրութենէ՛ որ է:

* *Ոմանք.* Եւ ՚ի Յիսուսէ Քրիստոսէ... որ սիրեացն: *Ոմանք.* Անդրանիկ ՚ի մեռելոց:

* *Ոմանք.* Իւրոյ. Նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ահա՛:

* *Ոմանք.* Ընդ ամպս երկնից, և տեսցեն զնա ամենայն աչք, և որք խոցեցինն, և կոծեսցին ՚ի վերայ նորա ամենայն ազգք երկրի, այո ամէն: *Բազումք.* Ձնա ամենայն աչք:

* *Ի լուս՝.* Ես եմ Ալփայ և Ով. *զոր ոմանք ունին ՚ի բնաբանին, և սոքա ՚ի լուս՝. դնեն.* Այբ և Քէ: *Ոսկան Յունական տառիւք եղեալ ունի այսպէս.* Ես եմ a, և w, Առաջին և Վերջին, ասէ Տէր: *Ոմանք.* Է՛ Տէր Ամենակալ:

* *Ոմանք.* Հաւասարակից վշտաց և արքայութեան... Ես ՚ի կղզիս որ կոչի Պատմոս, վասն բանին Աստուծոյ, և վկայութեան:

* *Ոմանք.* Յաւուր կիրակէի, և լուայ զկնի իմ ձայն մեծ իբրև զփողոյ ասելով. (11) Ձոր տեսանեսոյ:

* *Ոմանք.* Տանել առ եւթն եկեղեցիսն. յեփեսոս, և ՚ի Ջմիւ՛... և ՚ի Թիւատիր, և ՚ի Սարդիս, և ՚ի: *Ոսկան յաւելու.* Եկեղեցիսն որք են յԱսիա. յեփեսոս:

իմում տեսի եւթն ճրագարան ոսկի*։ ¹³Եւ ՚ի մէջ եւթն ճրագարանացն նման Որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմունճան պճղնաւոր, և գօտևորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն*։ ¹⁴Եւ գլուխ նորա և հերքն իբրև զասր սպիտակ և որպէս զձիւն. և աչք նորա որպէս բոց հրոյ*։ ¹⁵Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ ՚ի մէջ հնոցի հրաշէկ. և ձայն նորա իբրև զձայն ջուրց բազմաց*։ ¹⁶Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եւթն, և ՚ի բերանոյ նորա ելանէր սուր երկբերանեան. և երեսք նորա իբրև զարեգակն ճառագայթեալ երևէին*։ ¹⁷Եւ իբրև տեսի զնա՝ անկայ՝ առ ոտս նորա իբրև զմեռեալ. և եղ ՚ի վերայ իմ զաջ իւր և ասէ ցիս. Մի՛ երկնչիր, ես եմ Առաջին, և ես եմ Յետին*։ ¹⁸Ես եմ կեանք և ես նոյն որ մեռայ, և եմ կենդանի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ ունիմ զփականս մահու և դժոխց*։ ¹⁹Գրեա՛ զոր տեսանես՝ որ էն, և որ յապա՝ և որ հանդերձեալ է լինել այս*։ ²⁰Գխորհուրդ եւթն աստեղացո՛ զոր տեսերդ յաջ իմ, և զեւթն ճրագարանս ոսկիս. եւթն աստեղքն՝ հրեշտակք եւթն եկեղեցեացն են, և ճրագարանքն եւթն՝ եւթն եկեղեցիքն են*։

2

Գլուխ Բ

Գ ¹Առ հրեշտակ Եփեսացոց եկեղեցւոյն գրեա՛. Այսպէս ասէ կարօղն՝ որ ունի զաստեղս եւթն յաջու ձեռին իւր, և շրջի ՚ի մէջ եւթն աշտանակի ոսկւոյ*։ ²Գիտե՛ն զգործս քո, և զվաստակս քո՛ և զհամբերութիւն քո. և զի ոչ բառնաս զչարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս և ոչ են, և Յերբայեցիս՝ և ստե՛ն*։ ³Եւ համբերեցեր, և վշտացար վասն անուան իմոյ՝ և աշխատեցար*։ ⁴Այլ ասե՛ն առ քեզ, զի գտերն քո զառաջին թողեր*։ ⁵Յիշեա՛ այժմ ուստի անկարն և ապաշաւեա՛, և զառաջին գործսն քո արա՛. ապա թէ ոչ՝ զան՝ ես վաղվաղակի, և շարժեցի՛ց զաշտարակս քո ՚ի տեղւոջէ իւրմէ՛ եթէ ոչ ապաշխարեսցես*։ ⁶Արդ՝

* *Ոմանք.* Որ խօսեր ընդ իս... ՚ի դառնալն իմ տե՛ն։

* *Ոմանք.* Նման որդւոց մարդոց, զգեցեալ պճղնաւոր։

* *Ոմանք.* Եւ հեր որպէս զասր... իբրև զբոց հրոյ։ *Յօրինակին.* Եւ որպէս զձեւն։

* *Ոմանք.* Նորա նման պղնձի ծխելոյ։

* *Ոմանք.* Եւ ունէր յաջ իւր աստեղս եւթն, և ՚ի բերանոյ նորա սուր երկսայրի սրեալ ելանէր, և երեսք նորա... երևէր։

* *Ոմանք.* Նորա որպէս զմեռեալ... և ասէ. Մի՛ երկնչիր, ես եմ Սկիզբն՝ և ես եմ Վախճան։

* *Ոմանք.* Եւ ես եմ որ մեռայն, և ահաւասիկ կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, և ունիմ։

* *Ոմանք.* Ձոր տեսանեսդ, որ էն և որ հանդերձեալ է լինել յետ այնորիկ։

* *Ոմանք.* Եւթն աստեղն զոր տեսեր յաջոյ իմ, և զեւթն ոսկի ճրագարանացն, եւթն աստեղքն եւթն եկեղեցեացն հրեշտակք են, և եւթն աշտանակքն եւթն եկեղեցիքն են։

* *Ոմանք.* Առ հրեշտակս... այսպէս ասէ որ ունի զեւթն աստեղս յաջ իւր... եւթն աշտանակաց ոսկւոյ։

* *Ոմանք.* Տեսի զգործս քո, և զվաստակ և զհամբերութիւն, և զի ոչ կարես բառնալ զչարսն, և փորձեցեր զի ասէին զանձինս առաքեալս գոլ, և ոչ էին. և գտեր զնոսա սուտս, և բարձեր զնոսա։ *Ուր Ոսկան.* Փորձեցեր զնոսա որք ասէին։

* *Առ ոմանս պակասի.* Եւ վշտացար վասն ան՝։

* *Ոմանք.* Ձտեր քո զառաջինն։

* *Օրինակ մի ընդ Ոսկանայ.* Ձաշտանակս քո ՚ի տեղւոջէ։ *Իսկ այլք առհասարակ*

զայս արա՝ զի ատեսցեն զգործսն Նիկոլայոսի, զոր ես ատեամ*։ ⁷Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ՛ զինչ ասէ Յոզիմ Սուրբ առ եկեղեցիս. Որ յաղթեն՝ տա՛ց նմա ուտել՝ ՚ի փայտէն կենաց որ է՝ ՚ի մէջ դրախտին Աստուծոյ՝ ։

⁸Եւ առ հրեշտակ Ջնիւռնացւոց եկեղցւոյն գրեա՛. Այսպէս ասէ Անըսկի՛զբնն և Անվախճանն, որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ՝. ⁹Տեսի՛ զգործս քո՝ և գնեղութիւն և զաղքատութիւն, այլ աղքատութիւն քո՝ մեծութիւն եղիցի. և զհայիոյութիւնն՝ որ ասէին զինքեանս Յրեայս գոլ, և չէին ինչ, այլ ժողով Սատանայի*։ ¹⁰Մի՛ երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա հանդերձէ Բանսարկուն արկանել ՚ի ձէնջ ՚ի բանտ, զի փորձիցի՛ք, և ունիք նեղութիւն աւուրս տա՛սն. լէ՛ր հաւատարիմ մինչև ՚ի մահ, և տաց քեզ զպսակն կենաց*։

¹¹Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ՛ զինչ Յոզիմ Սուրբ ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ, ո՛չ անիրաւի յերկրորդ մահուանէ՛ ։

¹²Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի Պերգամոյ եկեղեցին, գրեա՛. Այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրեալ՝. ¹³Տեսի՛ զգործս քո, և զի բնակեալ ես ուր աթոռն է Սատանայի. և ունիս զանուն իմ, և ո՛չ ուրացար զհաւատս իմ յաւուր յորում Անթիպաս վկայն իմ հաւատարիմ եղև. զի վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացեալ, որ սպանաւ ՚ի ձէնջ որ կայք՝ ուր Սատանայ է բնակեալ*։ ¹⁴Այլ ունիմ առ քեզ սակա՛ւ. զի կայ առ քեզ վարդապետութիւնն Բաղաամու, որ ուսոյց զԲաղակ դնել զայթագղութիւն առաջի որդւոցն Իսրայէլի, ուտել նոցա զոհեալ՝ և պոռնկել*։ ¹⁵Այսպէս և դու՝ ունիս զվարդապետութիւնն Նիկոլայեցեաց՝ զոր ես ատեամ*։ ¹⁶Արդ՝ ապաշխարեա՛, ապա թէ ոչ՝ զա՛մ վաղվաղակի, և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ։ ¹⁷Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ՛ զինչ Յոզիմ ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ՝ տաց նմա ուտել՝ ՚ի մանանայէն թաքուցելոյ, և տա՛ց նմա զգիրն սրբութեան. և գրեալ անուն նոր՝ ՚ի գիրն, զոր ո՛չ ոք գիտէ, բայց միայն որ առնուն*։

¹⁸Եւ առ հրեշտակն որ ՚ի Թիւատրոյ եկեղեցին՝ գրեա՛. Այսպէս ասէ Որդին Աստուծոյ, որոյ աչք իւր են իբրև զբո՛ց հրոյ, և ոտք նորա նման պղնձի՛ ծխելոյ. ¹⁹Տեսի՛ զգործս քո, և զսէր, և զհաւատ, և զպաշտօն քո համբերութեամբ. զի բազում է վաստակ քո վերջինն քան զառաջինն։ ²⁰Այլ ասեմ առ քեզ բազում. զի թողեր զկինն զՅեզաբել. որ ասէր զինքն մարգարէ՛, և ուսուցանէր մոլորութիւն զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհեալ։ ²¹Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ո՛չ ապաշխարեցին*։ ²²Ահաւասիկ ես արկանեմ զնա ՚ի հնո՛ց, և զգործակիցս իւր ընդ որս շնացալ՝ ՚ի նեղութիւնս մեծամեծս. եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի գործոց իւրեանց։ ²³Եւ զորդիս նոցա

համաձայն մերումս ունին՝ զաշտարակս քո:

* *Ոսկան.* Ջոր և ես ատեմ:

* *Ոմանք.* Յոզիմ առ եկե՛... յաղթէ, տաց:

* *Օրինակ մի.* Անսկիզբն և Անկատարածն, որ ե՛:

* *Ոմանք.* Եւ չեն ինչ, այլ ժո՛: *Ուր Ոսկան.* Եւ ոչ են, այլ ժողովք Սա՛:

* *Ոմանք.* Ահա հանդերձեալ է Բան՝: *Ոսկան.* Եւ ունիցիք գնեղութիւն:

* *Ոմանք.* Որ ունի ունկն լսելոյ... Յոզիմ ասէ:

* *Ոսկան.* Ի Պերգամոյ եկեղեցւոյն:

* *Ոմանք.* Եւ ուր բնակեալ ես, որ ա՛:

* *Ոմանք.* Ունիմ ասել առ քեզ... Բաղաամայ որ ուսոյցն:

* *Ոմանք.* Ջոր ես ատեմ:

* *Ոմանք.* Որ ունի ականջս՝ լուիցէ: *Յօրինակին.* Ասէ առ եկեղեցին:

* *Ոմանք.* Ապաշխարելոյ զպոռնկութիւն:

սպանից մահուամբ. և ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ե՛ս եմ որ յանդիմանեն զերիկամունն և զսիրտս. և տա՛ն ձեզ իւրաքանչիւր ըստ զորո՞ց իւրեանց: ²⁴Այլ ձե՛զ ասեն որք ՚ի Թիւատի՛ր էք, և ո՛չ ունիք զվարդապետութիւնս զայս. որ ո՛չ ծանեայք զխորս Սատանայի զոր խօսին. Ո՛չ արկից զձեւք ծանրութիւն* . ²⁵Այլ զոր ունիք պահեցէ՛ք մինչև ե՛ս գամ: ²⁶Եւ որ յաղթէ՛ և պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանութիւն ՚ի վերայ ազգաց* : ²⁷Եւ հովուեսցէ զնոսա զաւազանաւ երկաթեաւ, և իբրև զանօթ բրտի փշրեսցէ զնոսա: ²⁸Որպէս և ես ընկալալ՝ ՚ի Զօրէ իմնէ, և տա՛ց նոցա զաստղն առաւօտուն* : ²⁹Որ ունի ականջս՝ լուիցէ՛ զինչ Զոգին ասէ առ եկեղեցիս* :

3

Գլուխ Գ

Է ¹Եւ առ հրեշտակ Սարդիացւոց եկեղեցւոյն գրեա՛. Այսպէս ասէ՝ որ ունի զեւթն Զոգին Աստուծոյ՝ և զեւթն աստեղս. Տեսի՛ զգործս քո, զի անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ ես* : ²Լե՛ր արթուն, և հաստատեա՛ այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանել. քանզի ո՛չ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ: ³Արդեւք յիշեա՛ թէ ո՛րպէս լուարն, և պահեա՛, և ապաշխարեա՛. ապա թէ ո՛չ զուարթանաս՝ գա՛մ որպէս գող. և ո՛չ ոք իմանայ զգալու՛ստ իմ առ քեզ* : ⁴Ունի՛ս սակաւ մի զանուն Սարդիացւոցն, որք ո՛չ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց. և շրջին ՚ի սպիտակս՝ որում արժանի՛ եղեն* : ⁵Որ յաղթէ՛ այսպէս զգեցցի սպիտակս. և ո՛չ ջնջեսցի անուն նորա ՚ի դպրութենէն կենաց. և խոստովանեցայց զանուն նորա առաջի Զօր իմոյ՝ և առաջի հրեշտակաց* : ⁶Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ՛ զինչ ասէ Զոգին առ եկեղեցիս* :

Ը ⁷Եւ առ հրեշտակն Փիլադելիեաց եկեղեցւոյն գրեա՛. Այսպէս ասէ Սուրբն, Ճշմարիտն, որ ունի զփականս Դաւթի. բանալ՝ և ո՛չ ոք է որ փակէ, և փակէ՛ և ո՛չ ոք է որ բանայ* . ⁸Տեսի՛ զգործս քո. ահա ետու առաջի քո դուռն բացեալ, զոր ո՛չ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և ո՛չ ուրացար զանուն իմ* : ⁹Ահաւասիկ ես տամ քեզ զժողովն Սատանայի, որք ասեն զինքեանս Զրեայս գոլ՝ և ո՛չ են, այլ ստեն. արարից զնոսա՝ զի եկեսցեն և երկիր պազցեն առաջի ոտից քոց, և ծանիցեն զի ե՛ս սիրեցի զքեզ: ¹⁰Ձի

* *Ոսկան.* Ձխորհուրդս Սատանայի զոր: *Ոմանք.* Խօսին, սակայն ոչ արկից զձեւք այլ ծանրութիւն:

* *Ոմանք.* Եւ որ պահէ զգործս:

* *Ոսկան.* Եւ տաց նմա զաստղն:

* *Ոսկան.* Ականջս լսելոյ, լուիցէ:

* *Ոսկան.* Եւ առ հրեշտակս Սարդիկեցւոց ե՛ս:

* *Ոսկան.* Պահեա՛ և ապաշաւեա՛:

* *Ոմանք.* Որ ունիս սակաւ մի: *Յօրինակին.* Ջանուն Սարդացւոցն: *Ուր Ոսկան.* Սարդիոնացւոցն:

* *Ոմանք.* Խոստովանեցից զան՞: *Ոսկան.* Զրեշտակաց նորա:

* *Ոմանք.* Ականջս՝ լուիցէ:

* *Ոմանք.* Առ հրեշտակն եղբայրասիրաց եկե՛ս: *Ոսկան.* Սուրբն և Ճշմարիտն: *Բազումք.* Բանայ, և ոչ ոք է:

* *Ոմանք.* Ձի սակաւազօրութիւն դու, և պահեցեր զբան իմ: *Ուր Ոսկան.* Ձի սակաւ է զօրութիւն քո:

պահեցեր զբան համբերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ ՚ի ժամ փորձութեան քոյ. որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս փորձել զամենայն բնակեալս յերեսս երկրի: ¹¹Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ունիսդ՝ զի մի՛ ոք առցէ զպսակ քո: ¹²Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի, որ իջանելոց է յերկնից Աստուծոյ իմոյ. և անուն նորա նոր՝: ¹³Որ ունի ականջս՝ լուիցէ՛ զինչ ասէ Զոգին առ եկեղեցիս:

Թ ¹⁴Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեալ. Այսպէս ասէ Ամենն՝ Վկայն հաւատարիմ և ճշմարիտ, Սկիզբն սկզբան արարածոց Աստուծոյ*.
¹⁵Գիտեն՝ զգործս քո՝ զի ո՛չ ցուրտ ես՝ և ո՛չ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ: ¹⁶Այլ դու գա՛ղջ ես՝ և ո՛չ ջերմ և ո՛չ ցուրտ, հանդերձեալ ես փսխիլ՝ ՚ի բերանոյ իմնէ: ¹⁷Ձի ասես. Մեծատուն էի՝ և մեծացայ, և ո՛չ իւրք կարօտ եմ. և ո՛չ գիտես՝ եթէ դու ես ողորմելի՛ և հեղձ, և աղքատ, մերկ և կոյր*:
¹⁸Արդ՝ ես խորհրդակից եղէց քեզ. Առ գնեա՛ յինէն ոսկի՝ փորձեալ ՚ի հրոյ՝ զի մեծացիս, և հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի՛ երևեսցի անվայելչութիւն մերկութեան քոյ. և դի՛ր դե՛ղ յաչս քո՝ զի տեսցես: ¹⁹Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ. նախանձեա՛ այժմ, և ապաշխարեա՛: ²⁰Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմուն՝ և բանայցէ զդրունսն, մտի՛ց առ նա՝ և ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս*:
²¹Որ յաղթէ՝ տա՛ց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ Զօր իմոյ*:
²²Որ ունիցի ականջս՝ լուիցէ՛ զինչ ասէ Զոգին առ եկեղեցիս*:

4

Գլուխ Դ

Ժ ¹Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք երկնից բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ խօսէ՛ր ընդ իս և ասէր. Ե՛լ այսր՝ և ցուցից քեզ զինչ լինելոց է յապա՛ ժամանակս*:
²Եւ ժամանեալ յիս Զոգի. և տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս*:
³Եւ ՚ի վերայ աթոռոյն նստէր նման տեսւեան ականց, յասպլոյ և սարդիոնի*:
⁴Եւ քահանայք շուրջ զաթոռովն՝ նմանք տեսւեան զընրըխտի. և շուրջ զաթոռովն՝ աթոռք քսան և չորք, և ՚ի վերայ աթոռոցն նստին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և ՚ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս*:
⁵Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք. և եւթն լամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եւթն Զոգիքն Աստուծոյ:

* Ոսկան. Յերկնից յԱստուծոյ իմոյ, և անուն իմ նոր:

* Ոսկան. Եւ առ հրեշտակս Լա՛... և ճշմարիտ, որ է սկիզբն արարածոց:

* Ոմանք. Եւ ոչ իւրք կարօտեմ:

* Ոսկան. Առ դուրս քո և բաղիս՝: Ոմանք. Եւ բանայ զդրունս:

* Ոսկան. Յաթոռս իմ: Ոմանք. Որպէս ես յաղթեցի:

* Ոմանք. Որ ունի ականջս լսելոյ լուիցէ, զինչ Զոգին ասէ:

* Ոմանք. Եւ յետ այսորիկ տեսի... փողոյն զոր լուայ զառաջինն խօ՛... լինելոց է առ յապայն:

* Ոմանք. Եւ վաղվաղակի եղէ ես Զոգուով, և ահա աթոռ անդ յերկինս:

* Ոմանք. Եւ յաթոռն նստեալ նմանութիւն տեսութեան ականց յասպ՛:

* Ոմանք. Պսակս ոսկեղէնս:

⁶Եւ էր առաջի աթոռոյն ծո՛վ ապակեղէն՝ նման սպիտակութեան սառին, և ՚ի մէջ աթոռոյն չորք կենդանիք՝ և լի՛ էին աչօք առաջոյ և յետոյ*։ ⁷Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին երեւնաւ մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցելոյ*։ ⁸Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ՝ ՚ի նոցանէ վեց թևք շուրջանակի, և ՚ի ներքոյ լի՛ էին աչօք, ո՛չ հանգչէին՝ ո՛չ զտիւ և ո՛չ զգիշեր՝ յասելոյ. Սուրբ Սուրբ Սուրբ, Սուրբ Սուրբ Սուրբ, Սուրբ Սուրբ Սուրբ, Տէր Աստուած Ամենակալ՝ որ էն և ես, և որ գալոց ես*։ ⁹Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նստելոյն ՚ի վերայ աթոռոյն՝ Կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից*։ ¹⁰և դնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասելով*։ ¹¹Արժանի՛ ես Տէր Աստուած մեր սուրբ՝ առնուլ փառս և պատիւ և զօրութիւն, զի դու՛ ստեղծեր զամենայն. և ՚ի կամելն քո ստեղծան՝ և կան հաստատուն*։

5

Գլուխ Ե

ԺԱ ¹Եւ տեսի ՚ի ձեռս աջոյ՝ որ նստէր ՚ի վերայ աթոռոյն գիրք՝ գրեալ՝ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ եւթն կնքով*։ ²Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի ձայն մեծ. Ո՛ւ է արժանի բանալ զգիրս՝ և լուծանել զկնիք նորա*։ ³Եւ ո՛չ ոք կարէր՝ ո՛չ ՚ի յերկինս և ո՛չ յերկիր, և ո՛չ ՚ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրքն, զի ո՛չ տեսին զնա*։ ⁴Եւ ես լայի՛ ուժգին՝ զի ո՛չ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և հայել ՚ի նա*։ ⁵Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Մի՛ լար, ահաւսիկ յաղթեաց Առեւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրքն՝ և լուծանել զեւթն կնիքսն նորա*։

ԺԲ ⁶Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և ՚ի մէջ չորից կենդանեացն, և ՚ի մէջ երիցանցն՝ Գառն կայր զենեալ, որ ունէր եւթն եղջերս, և աչս եւթն՝ որ են եւթն Հոգիք Աստուծոյ. որ են առաքեալ ընդ ամենայն երկիր*։ ⁷Եւ եկն ընկալաւ յաջոյ

*Ոմանք. Եւ առաջի աթո՛... ապակեղէն ՚ի նմանութիւն սպի՛... և ՚ի մէջ աթոռոյն և շուրջ զաթոռովն չորք կենդանիք լի աչովք յետոյ և առաջոյ:

*Ոմանք. Ունէր երես:

*Ոմանք. Վեց թևք շուրջ լցեալ աչովք. և ոչ հանգչէին... յասելոյ. Սուրբ: Ոսկան միայն ըստ Լատինականին ունի երիցս Սուրբ, ուր ամենայն գրչագիրք համաձայն ընտրելագոյն օրինակաց Յունաց դնեն իննիցս Սուրբ:

*Ոմանք. Կենդանիքն զպատիւ և զգոհութիւն... յաւիտենից, ամէն:

*Ոսկան յաւելու. * Անկանեին քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն և երկիր պագանէին Կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. և դնելով զպսակս իւրե՛. որ պակասի յամենայն գրչագիրս մեր: Ոմանք. Եւ դնելով զպս... աթոռոյն՝ ասէին:

*Ոմանք. Արժան է քեզ Տէր Աստուած... զփառս և զպատիւ... զի դու՛ ստացար զամենայն, և ՚ի քո կամելդ ստեղ՛:

*Ոմանք. Եւ տեսի յաջու ձեռինն որ նստէր յաթոռն զի ունէր գիրք գրեալ:

*Ոմանք. Չայնիւ մեծաւ և ասէր. Ո՞վ է ար՛... զգիրքդ... զկնիք դորա:

*Ոմանք. Ոչ յերկինս և ոչ յերկրի: Ոսկան. Բանալ զգիրն, և ոչ նայիլ ՚ի նա:

*Ոմանք. Եւ ողբային բազումք զի ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և ընթեռնուլ զնա, կամ տեսանել զնա:

*Ոմանք. Եւ մի ոմն յերիցանցն ասէ. Մի՛ ողբայք, ահա՛... բանալ զգիրքն և զեւթն:

*Ոմանք. Եւ ՚ի մէջ աթոռոյն և չորից կեն՛... զենեալ, որոյ եւթն եղ՛... Աստուծոյ առաքեալ

ծեռանէ նորա՝ որ նստէր ՚ի վերայ աթոռոյն*։ ⁸Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի Գառնն. և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուրվան ոսկի լի՝ խնկով, որ է աղօթք սրբոցն*։ ⁹Եւ օրհնէին երգս նորս և ասէին. Արժանի՛ ես առնուլ զգիրդ՝ և բանալ զկնիք դորա, զի զենար՝ և զնեցե՛ր զմեզ Աստուծոյ արեամբդ քով՝ յամենայն ազգաց և ՚ի լեզուաց և ՚ի ժողովոց հեթանոսաց*։ ¹⁰Եւ արարե՛ր զսոսա Աստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս՝ թագաւորել ՚ի վերայ երկրի*։ ¹¹Եւ տեսի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և զչորիւք կենդանեօքն և զքահանայիւքն. և է՛ր թիւն նոցա՝ բելքք բիւրուց՝ և հազարք հազարաց. ¹²ասէին ձայնիւ մեծաւ. Արժան է Գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն և զինաստութիւն և զզօրութիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն*։ ¹³Եւ ամենայն արարածք՝ որ են յերկինս և յերկրի, և ՚ի ծովու և որ ՚ի նոսա՝ լուայ զի ասէին. Որ նստի յաթոռն՝ և Գառնն՝ օրհնեալ բարձրացեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից*։ ¹⁴Եւ չորք կենդանիքն ասէին. Ամէն։ Եւ երիցունքն անկանէին առաջի նորա և երկիր պագանէին*։

6

Գլուխ Զ

ԺԳ ¹Եւ տեսի զի եբաց զմին ՚ի կնքոցն, և լուայ ՚ի միոյ ՚ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտման՝ զի ասէր՝ թէ գամ*։ ²Եւ տեսի՝ և ահա ձի՛ սպիտակ, և որ հեծեալն էր ՚ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և եկն յաղթօղն զի յաղթեսցէ՛։

ԺԴ ³Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կենդանւոյն՝ զի ասէր. Գամ*։ ⁴Եւ ել այլ ձի կարմիր. և որ հեծեալն էր ՚ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն. և տուաւ նմա սուր մի մեծ*։

ԺԵ ⁵Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ. և տեսի՝ և ահա ձի՛ սեաւ, և որ նստեալն էր ՚ի վերայ նորա՝ ունէր կշիռք ՚ի ձեռին իւրում*։ ⁶Եւ լուայ ձայնն ՚ի միջոյ չորից կենդանեացն. Կապի՛ճ մի ցորեան դենարի՛ միոջ, և երեք կապի՛ճ զարի դենարի՛ միոջ. և ձեք և զինի մի՛ վնասեսցես։

ԺԶ ⁷Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայնն ՚ի չորրորդ կենդանւոյն՝ զի

ընդ։

*Ոսկան. Եւ եկն և կալաւ յաջոյ։

*Ոսկան. Յորժամ էառ զգիրսն... որք են աղօթք սր՛։

*Ոմանք. Առնուլ զգիրսդ... և ՚ի ժողովրդոց հեթանո՛։

*Ոմանք. Քահանայս և թագաւորս թագաւո՛։

*Ոմանք. Եւ ասէին ձայնիւ մեծաւ. Արժանի է։ Ուր Ոսկան. Որք ասէին։

*Ոսկան. Եւ որք ՚ի ծովու։

*Ոմանք յաւելուն. Նորա, և երկիր պագանէին նմա։ Ոսկան յաւելու. Եւ քսան և չորք երիցունքն անկա՛... երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։

*Օրհնակ մի. Չի եբաց Գառն զմինն եւթն կնքոցն։ Ոմանք. Ասէր. Գամ։

*Ոսկան. Ասէր. Գամ և տես։

*Ոմանք. Յեծեալն էր ՚ի նմա... սուր մեծ։

*Ոմանք. Ասէր գամ։ Ուր Ոսկան. Գամ և տես... ունէր կշիռս ՚ի։

ասէր՝ թէ գամ*։ ⁸Եւ տեսի՝ և ահա ծի շլոռորս (որ է պաւզլախ)։ և որ նստէրն՝ ՚ի վերայ նորա՝ ունէր զՄահ, և Դժոխք երթային զհետ նորա. և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրո՛վ և սովո՛վ և մահուա՛մբ՝ և գազանօք երկրի*։

ԺԷ ⁹Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի՝ ՚ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան զենեալ վասն բանին Աստուծոյ՝ և վասն վկայութեան նորա զոր ունէին*։ ¹⁰Որք ասէին ձայնիւ մեծաւ. Մինչև յե՞րբ Տէր սուրբ և ճշմարիտ՝ ո՛չ դատիս և խնդրես զվրեժ արեան մերոյ ՚ի բնակչաց երկրի*։ ¹¹Եւ տուաւ նոցա արկանելիս սպիտակս, և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչև լցցի՛ն ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ են կատարիլ իբրև զնոսա*։

ԺԸ ¹²Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղև շարժումն մեծ, և արեգակն եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն*։ ¹³Եւ աստեղք երկնից թօթափեցան ՚ի յերկիր, որպէս տերև թզենոյ զի ուժգին շարժիցի ՚ի հողմոյ*։ ¹⁴և երկին իբրև զմազաղաթեայ գիրս գալարէր. և ամենայն լերինք և կղզիք ՚ի տեղոյ իւրեանց շարժեցան*։ ¹⁵Եւ թագաւորք երկրի և իշխանք՝ հազարապետք և մեծամեծք և զօրաւորք՝ և ամենայն ծառայք, և ամենայն ազատք՝ թաքուցին զինքեանս յայրս և ՚ի ծերպս վիմաց։ ¹⁶Եւ ասէին լերանց՝ թէ անկերո՛ւք ՚ի վերայ մեր, և ցբլուրս՝ թէ ծածկեցէ՛ք զմեզ*։ ¹⁷Զի եկն օր մեծ բարկութեան նորա. և ո՞վ կարէ կալ առաջի նորա։

7

Գլուխ Է

ԺԹ ¹Եւ յետ այնորիկ տեսի՝ չորս հրեշտակս զի կային ՚ի չորս անկիւնս երկրի. և ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շնչեցէ հողմ ՚ի վերայ երկրի, և մի՛ ՚ի ծովու՝ և մի՛ ՚ի ծառս։ ²Եւ տեսի այլ հրեշտակ զի ել յարևելից, և ունէր զկնիք Աստուծոյ կենդանոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց առեալ էր իշխանութիւն ապականել զերկիր և զծով. ³և ասէր. Մի՛ վնասէք երկրի՝ մի՛ ծովու՝ մի՛ ծառոց, դադարեցէ՛ք մինչև կնքեցից զծառայս Աստուծոյ իմոյ*։ ⁴Եւ լուայ՝ զթիւ կնքելոցն՝ հարելր քառասուն և չորք հազար՝ կնքեալք յազգէ որդւոցն

* *Ոսկան.* Գամ և տես։

* *Ոմանք զանց առնեն դնել ՚ի բնաբանի, այլ ՚ի լուսանցս և եթ նշանակեն զբացատրութիւն շլոռոսին, այլազգի բարբառովն՝ պաւզլախ, կամ՝ պօզլախ։*

* *Ոմանք.* Ամենայն մարդկան զենեալ վասն։

* *Ոմանք.* Որք ասէին ՚ի ձայն մեծ։

* *Ոմանք.* Փոքր մի ժամանակս։

* *Յօրինակին.* Ձկնիքն վեցերորդն։ *Ոսկան.* Եւ ահա շարժումն մեծ եղև։ *Ոմանք.*

Ձկապերտ այծեաց։ *Բազումք.* Իբրև արիւն։

* *Ոսկան.* Ուժգին հնչեցի ՚ի հողմոյ։

* *Ոմանք.* Եւ երկինք իբրև։

* *Ոսկան յաւելու.* Ձմեզ յերեսաց նստողին ՚ի վերայ աթոռոյն, և ՚ի բարկութենէ Գառին։
Զի եկն։

* *Ոսկան յաւելու.* Եւ ասէ մի՛ վնա՛... զծառայս Աստուծոյ իմոյ ՚ի ճակատս նոցա։ *Ոմանք.*
Եւ մի՛ ծառոց։

Իսրայելի*։ ⁵Յազգէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Ռուբինի՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Գադայ՝ երկոտասան հազար կնքեալ*։ ⁶Յազգէն Ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Մանասի՝ երկոտասան հազար կնքեալ*։ ⁷Յազգէն Շմալոնի՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Ղևեայ՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ*։ ⁸Յազգէն Չաբուդոնի՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ*։

Ի ⁹Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բազում որոց ո՛չ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն և առաջի Գառնին՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս, և արմաւենիս՝ ՚ի ձեռս իւրեանց*։ ¹⁰Աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ և ասէին. Փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի ՚ի վերայ աթոռոյն, և Գառնին։ ¹¹Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն, և զերիցամբքն, և զշորիւք կենդանեօքն, և անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ և երկիր պագանէին Աստուծոյ*, ¹²ասելով. Ամէն. օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ ¹³Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի. Սոքա որ զգեցեալս են զհանդերձս սպիտակս՝ ո՞ք են, և կամ ուստի՞ զան*։ ¹⁴Եւ ասացի ցնա. Տէր՝ դու՛ զիտես։ Եւ ասէ ցիս. Սոքա՛ են որ զան՝ ՚ի վշտաց մեծաց, և լուացին զարկանելիս իւրեանց՝ և սպիտակացուցին արեամբ Գառնին։ ¹⁵Վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ՝ և պաշտեն զնա զտիւ և զգիշեր ՚ի տաճարի նորա. և որ նստի ՚ի վերայ աթոռոյն՝ բնակեալ է ՚ի նոսա։ ¹⁶Ո՛չ քաղցիցեն, և ո՛չ ծարաւիցեն, և ո՛չ ռք մեղիցէ նոցա՝ ո՛չ արեգակն և ո՛չ տօթ*։ ¹⁷Եւ Գառնն ՚ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ՛ զնոսա, և առաջնորդեսցէ նոցա ՚ի կենաց աղբեր ջրոյ կենդանոյ. քանզի եհա՛տ Աստուած զամենայն արտօսր յերեսաց նոցա*։

8

Գլուխ Ը

ԻՎ ¹Եւ յորժամ եբաց զկնիքն եւթներորդ՝ եղև լռութիւն յերկինս՝ որպէս կէս ժամու։ ²Եւ տեսի հրեշտակս եւթն, որ առաջի Աստուծոյ կային. և տուաւ նոցա եւթն փողս։ ³Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և տուաւ նմա խունկ բազում, զի մատուցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ

*Ոմանք. Կնքելոցն զի էին հարիւր և քառա՛։ Ոսկան. Կնքեալք յամենայն ազգէ որդ՛։

*Ոմանք. Կնքեալս։

*Ոմանք. Կնքեալս։

*Ոմանք. Կնքեալս։

*Ոմանք. Կնքեալս։ *Յօրինակին պակասէր. Յազգէն Յովսեփու երկոտասան հազար կնքեալ։*

*Ոմանք. Ոչ գոյր թիւս։

*Ոսկան. Կենդանեօքն, անկանէին։

*Ոմանք. Որ զգեցեալ են։

*Ոմանք. Եւ ոչ ծարաւեսցին։

*Ոմանք. Արտօսր յաչաց նոցա։

ուսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն*։ ⁴Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն՝ ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ։ ⁵Եւ ելից հրեշտակն զխնկանոցն ՚ի հրոյ սեղանոյն, և արկ զնա յերկիր. և եղև որոտո՛ւմն և ձայնք և փայլատակումն և շարժումն մեծ։ ⁶Եւ եւթն հրեշտակքն որ ունէին եւթն փողս՝ պատրաստեցին զհնքեանս առ ՚ի հարկանել*։

ԻԲ ⁷Եւ առաջին հրեշտակն եհա՛ր զփողն, և եղև կարկուտ և հո՛ւր, և արիւն խառնեալ՝ և անկա՛ւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այրեա՛ց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեա՛ց*։

ԻԳ ⁸Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեռն մի մեծ հրդեհեալ անկա՛ւ ՚ի ծով, և եղև երրորդ մասն ծովու արի՛ւն. ⁹և սատակեցա՛ւ երրորդ մասն լաւդակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ*։

ԻԴ ¹⁰Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկա՛ւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զլամբար, և անկա՛ւ յերրորդ մասն գետոց և աղբերաց. ¹¹և եր անուն աստեղն Դառնութիւն. և բազումք մեռան ՚ի դառնութենէ ջուրոցն։

ԻԵ ¹²Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրաւորէր երրորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խաւարէր երրորդ մասն նոցա, և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս*։ ¹³Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ ՚ի մէջ երկնից՝ զի ասէր ՚ի ձայն մեծ. Վա՛յ վա՛յ վա՛յ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն երի՛ցն ևս փողոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել*։

9

Գլուխ Թ

ԻԶ ¹Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և տեսի զի աստղ մի անկա՛ւ յերկնից, և տուաւ նմա բանալի՝ գբոյն անդրնդոց*։ ²և ելանէր ծուխ ՚ի գբոյն որպէս զծուխ հնոցի մեծի. և խաւարեցա՛ւ արեգակն և օդք։ ³Եւ ՚ի գբոյն ելանէր մարախ ՚ի յերկիր. և տուա՛ւ նոցա իշխանութիւն իբրև զխայթոցս կարճի*։ ⁴և ասացա՛ւ նոցա զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, և մի՛ ամենայն ծառոց, բայց միայն մարդոյ՝ երկրայնոյ, որ ո՛չ ունիցին զկնիք ՚ի վերայ ճակատու իւրեանց*։ ⁵Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ. և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ։ ⁶Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի՛ գտցեն. և ցանկան մեռանել՝ և

* *Ոմանք.* Եկն և եկաց առ: *Ոսկան.* Առաջի աթոռոյն Աստուծոյ:

* *Յօրինակին.* Ունէին եւթփողս:

* *Ոսկան.* Եւ ամենայն դալարի խոտ տոչորեցաւ: *Այս հատուած բանի պակասի առ ոմանս:*

* *Ոմանք.* Երրորդ մասն դուղականաց: *Ոսկան յաւելու.* Ապականեցաւ, և երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ:

* *Ոմանք.* Եւ չորրորդ հրեշտակն հարկանէր, և վիրա՛ւ: *Յօրինակին.* Եւ խաւարէր երրորդ մասն նոցա: *Ոսկան.* Մասն նոցա, և աւուր ոչ լուսաւորէր մասն երրորդ և գիշերոյ նոյնպէս:

* *Ոմանք.* Լիցի ձայն ևս երիցն փո՛ւ:

* *Ոմանք.* Աստղ մի անկանէր յերկնից:

* *Ոմանք.* Մարախ յերկիր... խայթոց կարճի:

* *Ոմանք.* Մարդկան երկրայնոց... ճակատուց իւրե՛ւ:

փախիցէ՛ ՚ի նոցանէ մահ՛: ⁷Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ՚ի պատերազմ. և ՚ի վերայ գլխոց նոցա իբրև զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա իբրև զերեսս մարդոյ ⁸. և հերք նոցա իբրև զհերս կնոջ. և ատամուներ նոցա իբրև զառիւծու ⁹: ⁹Եւ ունէին զրահս՝ իբրև զզրահս երկաթի. և ձայն թևոց նոցա իբրև զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն ՚ի պատերազմ ¹⁰: ¹⁰Եւ ունին ազիս ըստ նմանութեան կարծի. և խայթոց յազիս նոցա. և ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիսս հինգ ¹¹: ¹¹Եւ ունին թագաւոր ՚ի վերայ իւրեանց զիրեշտակն դժոխոց. և անուն նորա Եբրայեցերէն Աղբադոն, որ կոչի ՚ի Յայ բարբառ՝ Կորուստ ¹²: ¹²Ահաւասիկ վայ մի էանց, և վայք երկու գալոց են՝:

Իէ ¹³Եւ վեցերորդ իրեշտակն հարկաներ զփողն. և լուայ՝ ձայն՝ ՚ի չորից կենդանեացն որ էին առաջի սեղանոյն Աստուծոյ ¹⁴: ¹⁴Գի ասէր ցիրեշտակն վեցերորդ որ ունէր զփողն. Լոյծ զչորս իրեշտակսն զկապեալս ՚ի վերայ գետոյն մեծի Եփրատայ ¹⁵: ¹⁵Եւ լուծան չորս իրեշտակքն պատրաստեալք ՚ի ժամ և յօր և յամիս և ՚ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան ¹⁶: ¹⁶Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բերք բիւրուց՝ և հազարք հազարաց լուայ զթիւ նոցա: ¹⁷Եւ տեսի ձիս ՚ի տեսլեանն, և հեծեալս ՚ի նոսս՝ որք ունէին զրահս իրեղէնս, և յակինթս իրդեհեալս ծրծմբով. և զլուխք ձիոցն իբրև զգլուխս առիւծուց. և ՚ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ և ծուխ և ծօնւմբ: ¹⁸Եւ ՚ի հարուածոցս յայսցանէ մեռալ երրորդ մասն մարդկան՝ ՚ի հրոյն և ՚ի ծխոյն և ՚ի ծօնբոյն, որ ելանէր ՚ի բերանոյ նոցա. ¹⁹Գի իշխանութիւն ՚ի բերանս է նոցա և յազիս նոցա, և ազիք նոցա նմանութիւն օձի. և ունէին զլուխք՝ որով սատակէին զանիրաւս ²⁰: ²⁰Եւ այլք ՚ի մարդկանէ որ ոչ մեռան ՚ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին և ոչ դարձան ՚ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կռոց՝ յոսկեղինաց և յարծաթեղինաց՝ և ՚ի պղնձոյ և ՚ի քարէ և ՚ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ լսել և ոչ գնալ ²¹: ²¹և ոչ ապաշխարեցին ՚ի մարդասպանութենէ՝ և ՚ի դեղատուութենէ, և ՚ի պոռնկութենէ, և ՚ի գողութենէ իւրեանց ^{*}:

10

Գլուխ Ժ

^{*} *Ոսկան.* Եւ ոչ գտցեն. և ցանկասցին մեռանիլ:

^{*} *Ոսկան.* Ի նմանութիւն ձիոյ... իբրև զպսակս:

^{*} *Ոմանք.* Իբրև զառիւծուց:

^{*} *Ոմանք.* Իբրև զրահս երկաթիս: *Ոսկան.* Կառավարաց ձիոց:

^{*} *Ոմանք.* Եւ ունէին ազիս: *Ոսկան.* Նմանութեան կարծաց:

^{*} *Ոսկան.* Եւ ունէին թագաւոր ՚ի վերայ: *Ոմանք.* Աղբաբովն, որ կո՞:

^{*} *Ոմանք.* Երկու գալոց են:

^{*} *Ոմանք.* Որ են առաջի սե՞:

^{*} *Ոսկան.* Գետոյն մեծի Եփրատ:

^{*} *Ոմանք.* Լուծան չորք իրեշ՞:

^{*} *Ոսկան.* Ի բերանս նոցա է:

^{*} *Յօրինակին պակասէր.* Եւ այլք ՚ի մարդկանէ որ: *Ոսկան.* Եւ ոչ ապաշխար... և ՚ի պղնձոց և ՚ի քա՞:

^{*} *Ոմանք.* Եւ ՚ի դեղատուութենէ:

ԻԸ ¹Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկնից՝ և զգեցեալ էր անա, և ծիածան՝ ՚ի գլուխ նորա. և երեսք նորա իբրև զարեգակն, և ոտք նորա որպէս սիւն հրոյ*։ ²Եւ ունէր ՚ի ձեռին իւրում գրկոյք մի բացեալ. և եղ զոտն իւր զաջ՝ ՚ի վերայ ծովու, և զձախն ՚ի վերայ երկրի*։ ³Եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ գոչեաց իբրև զառեւծ. և յորժամ աղաղակեաց՝ խօսեցան եւթն որոտմունք յիւրեանց ձայնս*։ ⁴Եւ յորժամ խօսեցան եւթն որոտմունքն՝ կամէի գրել. և լուայ ձայն յերկնից՝ զի ասէր. Կնքեա՛ զոր խօսեցան եւթն որոտմունքն՝ և մի՛ գրեր։ ⁵Եւ հրեշտակն զոր տեսի՝ որ եղ զոտն իւր ՚ի վերայ ծովու և զմեւսն ՚ի ցամաքի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս*։ ⁶Եւ երդուաւ ՚ի Կենդանին յաւիտենից, որ հաստատեաց զերկինս՝ և որ ՚ի նմա, և զերկիր և որ ՚ի նմա. զի ո՛չ ևս կայ այլ ժամանակ*։ ⁷Այլ յաւուրս ձայնի եւթներորդ հրեշտակին՝ յորժամ հարցէ՛ զփողն, կատարեսցի՛ խորհուրդն Աստուծոյ՝ որ աւետարանեցաւ ՚ի ծառայից իւրոց մարգարէիցն*։

ԻԹ ⁸Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցաւ ընդ իս՝ և ասէ. Երթ անձ զգրկոյսն՝ զոր ունի հրեշտակն բացեալ ՚ի ձեռին իւրում, և կայ ՚ի վերայ ծովու և ցամաքի*։ ⁹Եւ ես երթեալ առ հրեշտակն խնդրեցի ՚ի նմանէ. և ասէ ցիս. Ա՛ն զսա՛ և կեր զդոյն, և դառնասցի՛ յորովայն քո. այլ ՚ի բերան քո է քաղցր իբրև զմեղր*։ ¹⁰Եւ առի զգրկոյսն բացեալ ՚ի հրեշտակէն՝ և կլայ՛ զնա. և էր ՚ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ կերայ, դառնացաւ որովայն իմ*։ ¹¹Եւ ասէ ցիս. Հասանէ՛ քեզ դարձեալ մարգարէանալ ՚ի ժողովուրդս՝ և ՚ի լեզուս և ՚ի թագաւորս երկրի*։

11

Գլուխ ԺԱ

¹Եւ տուաւ ինձ եղէզն նման գաւազանի. և կայր հրեշտակն՝ և ասէր ցիս. Արի՛ և չափեա՛ զտաճարն Աստուծոյ և զսեղանն՝ և զերկրպագուսն որ ՚ի նմա։ ²Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թո՛ղ զնա՝ և մի՛ չափեր. զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և երկուս*։

Լ ³Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցին աւուրս հազար երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ։ ⁴Սոքա՛ են երկու ձիթենիքն՝ և երկու՛ ճրագք, որ կան առաջի Աստուծոյ յերկրի*։ ⁵Եւ որք կամիցին վնասել նոցա, հո՛ւր ելցէ ՚ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս նոցա. և որք կամիցին մեղանչել նոցա՝ ա՛յսպէս

* *Ոմանք.* Իբրև զսիւն հրոյ։

* *Ոսկան.* Գրկոյկ մի։

* *Ոմանք.* Եւ գոչեաց իբրև... յիւրեանց ձայնսն։

* *Ոսկան.* Եւ զհրեշտակն զոր տե՛։ *Ոմանք.* Եւ զմիւսն ՚ի վերայ ցամաքի։

* *Ոմանք.* Ձերկինս, և զորս ՚ի նմա, և զերկիր և զոր ՚ի նմա։ *Ուր Ոսկան.* Եւ զերկիր և զորս ՚ի նմա է։

* *Ոմանք.* Եւթներորդի հրեշտակին յորժամ հարկանէ զփողն։ *Ոսկան.* Որպէս աւետարանեաց ՚ի ձեռն ծառայից իւրոց մար*։

* *Ոմանք.* Եւ ձայն զոր լու՛... զգրկոյզսն զոր։

* *Ոսկան.* Ի՛ բերան քո եղիցի քաղցր։

* *Ոմանք.* Եւ կլի զնա... որովայն իմ։

* *Ոմանք յաւելուն.* Ի՛ ժողովուրդս, և ՚ի հեթանոսս և ՚ի լեզուս։

* *Ոսկան.* Որ է արտաքոյ տա՛... տուեալ է նա հեթա՛։ *Ոմանք.* Քառասուն և երկու։

* *Ոմանք.* Աստուծոյ ՚ի յերկրի։

սատակեսցին*։ ⁶Սոքա ունին իշխանութիւն փակել՝ զերկինս՝ զի մի՛ տեղասցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ունին իշխանութիւն ՚ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնոսա յարին, և հարկանել զերկիր յամենայն հարուածս՝ քանիցս անգամ և կամիցին*։ ⁷Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ՝ նոցա և սպանցէ՝ զնոսա։ ⁸Եւ դի՛ նոցա անկեալ կայցէ ՚ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սողոմ և Եգիպտոս. ուր և Տէրն նոցա խաչեցաւ*։ ⁹Եւ տեսցեն զնոսա ամենայն ցեղք և ժողովուրդք՝ և ամենայն լեզուք և հեթանոսք, զի դի՛ նոցա անկեալ կայցէ զերիս աւուրս, և ո՛չ տացեն թաղել ՚ի գերեզմանս զոսկերս նոցա*։ ¹⁰Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին և խնդան ՚ի վերայ նոցա, մինչև ընծայս և պատարագս տանել միմեանց. վասն զի սոքա երկրքին մարգարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի*։

ԼԱ ¹¹Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի յԱստուծոյ մտցէ՝ ՚ի նոսա. և յարիցեն կացցեն ՚ի վերայ ոտից իւրեանց. և ա՛հ և երկելոյ մեծ անկաւ՝ ՚ի վերայ ամենեցուն՝ որ սպանին զնոսա*։ ¹²Եւ լուայ՝ զձայն մեծ՝ որ ասէր ցնոսա. Վերացիք ելէք աստ։ Եւ վերացան ելին յերկինս ամպօք. և տեսին զնոսա թշնամիք իւրեանց*։ ¹³Եւ ՚ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղև, և տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և մեռան ՚ի շարժմանէն արք եւթն հազար. և յետ այնորիկ ա՛հ մեծ եղև յամենեսեան, և փա՛ռս տային Աստուծոյ երկնաւորի։

¹⁴Ահաւասիկ վայն երկրորդ էանց, և վայն երրորդ գալոց է վաղվաղակի։

ԼԲ ¹⁵Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն հարկանէր զփողն, եղև ձայն յերկինս՝ և ասէ. Եղև թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ՝ և Յիսուսի Քրիստոսի իւրոյ. և թագաւորեսցէ ՚ի վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից*։ ¹⁶Եւ քսան և չորս երիցունքն որ նստին յաթոռս իւրեանց առաջի Աստուծոյ, անկանէին ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ և երկիր պագանէին Տեառն Աստուծոյ, և ասէին. ¹⁷Գոհանամք զքէն Տէր Աստուած Ամենակալ՝ որ է՛ն և Ե՛ս, և առեր զգորութիւն քո մեծ, և թագաւորեսցէր*։ ¹⁸Եւ հեթանոսք բարկացան, և եկն բարկութիւն քո, և ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին. և տա՛ս վարձս ծառայից քոց մարգարէից, և սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց և մեծամեծաց, և ապականես զապականիչս երկրի։

ԼԳ ¹⁹Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, և երևեցաւ տապանակն Աստուծոյ ՚ի տաճարն իւր. և եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք և շարժումն, և կարկուտ մեծամեծ*։

* *Ոմանք.* Կամեսցին վնասել... ՚ի բերանոց նոցա։

* *Ոմանք.* Մի՛ տեղասցի աւուրս։

* *Ոսկան.* Եւ դիք նոցա անկեալք կայցեն ՚ի մէջ։ *Ոմանք.* Քաղաքի նոցա։

* *Բազունք.* Եւ տեսցեն զնոսա ամենայն։ *Ոսկան.* Զի դիք նոցա անկեալք կայցեն զերիս աւուրս և կէս, և ոչ տայցեն թա՛։

* *Բազունք.* Պատարագս տան տանել։

* *Ոմանք.* Ամենեցուն որ տեսին զնոսա։

* *Ոմանք.* Եւ ելին յերկինս ամպովք... թշնամիք նոցա։

* *Յոմանս պակասի.* Եւ Յիսուսի Քրիստոսի իւ՛ր։ *Ոսկան յաւելու.* Յաւիտենից. ամէն։

* *Ոսկան յաւելու.* Եւ ես, և որ գալոց ես, և առեր։

* *Ոսկան.* Տապանակն Աստուծոյ որ ՚ի տաճարի նորա, և եղեն... և որոտումն։

Գլուխ ԺԲ

¹Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրն զարեգակն, և լուսին ՚ի ներքոյ ոտից նորա. և ՚ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկոտասանից*:
²Եւ էր յղի՝ և ճչէր յերկնելն, և բազում վշտօք մերձ էր ՚ի ծնանել: ³Եւ երևեցաւ այլ նշան յերկինս՝ և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին գլուխք եւթն՝ և եղջերք տասն. և ՚ի վերայ գլխոյ նորա եւթն խոյրք*:
⁴Եւ տուտն նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից, և արկ զնոսա յերկիր. և վիշապն կայր առաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ՛ զնա վիշապն: ⁵Եւ ծնաւ կինն արուն՝ որ հանդերձեալ է հովուել զամենայն հեթանոսս զաւազանաւ երկաթեաւ. և յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած, և առ աթոռ նորա*:
⁶Եւ կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի մնա պատրաստեալ յԱստուծոյ, զի կերակրեսցի՝ անդ աւուրս հազար երկերիւր և վաթսուն:

ԼԴ ⁷Եւ եղև պատերազմ յերկինս, Սիքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին. և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք: ⁸Եւ ո՛չ կարացին կալ ընդդէմ, և տեղի ո՛չ գտաւ նոցա յերկինս: ⁹Եւ անկաւ վիշապն մեծ՝ օ՛ճն առաջին, որ անուանեալ կոչի Բէեղզերուղ և Սատանայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի. և հրեշտակք նորա ընդ մնա անկան: ¹⁰Եւ լուսն ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. Արդ եղև՝ զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ, և իշխանութիւն Օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ՝ զտիւ և զգիշեր*:
¹¹Եւ նոքա յաղթեցին մնա արեամբ Գառնին, և բանիւ վկայութեան նորա. և ո՛չ հաճեցան ընդ վիշապն մինչև ՚ի մահ*:
¹²Վասն այսորիկ ուրախ լիցին երկինք՝ և ամենայն որ բնակեալ են ՚ի մնա: Վայ երկրի և ծովու, զի անկաւ Բանսարկուն առ ձեզ, որ ունի զցասումն բազում. և կացցէ՛ առ սակաւ մի ժամանակս*:

ԼԵ ¹³Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր, զհետ եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու: ¹⁴Եւ տուաւ կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ ՚ի տեղի իւր. ուր կերակրէր անդ՝ ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին*:
¹⁵Եւ եհեղ օձն ՚ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ՛ զնա: ¹⁶Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն ՚ի բերանոյ իւրմէ: ¹⁷Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս Աստուծոյ, և ունէին զվկայութիւնն Յիսուսի*:
¹⁸Եւ կայ՝ ՚ի վերայ

* *Ոսկան.* Արկեալ զիւրեաւ: *Ոմանք.* Պսակ յաստեղաց երկոտասանից:

* *Ոմանք.* ՚ի վերայ գլխոց նորա:

* *Ոմանք.* Ծնաւ կինն որդի արու: *Ոսկան.* Հանդերձեալ էր: *Յօրինակին պակասէր.* Եւ առ աթոռ նորա:

* *Ոմանք.* Որ չարախօսէրն: *Ոսկան.* Աստուծոյ ՚ի տուէ և ՚ի գիշերի:

* *Ոսկան.* Ընդ վիշապին:

* *Ոսկան.* Ամենեքեան ոյք բնակեալ էք ՚ի մնա: *Ոմանք.* Եւ կայցէ առ սակաւ մի ժամանակ:

* *Ոսկան.* Եւ տուան կնոջն: *Ոմանք.* Որ կերակրէր անդ:

* *Ոսկան յաւելու.* Յիսուսի Քրիստոսի:

աւագոյ ծովու*:

13

Գլուխ ԺԳ

ԼԶ ¹Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր գլուխս եւթն՝ և եղջերս տասն, և 'ի վերայ եղջերաց նորա տա՛սն խոյր, և 'ի վերայ գլխոյ նորա անուն հայհոյութեան: ²Եւ գազանն զոր տեսի՝ նման ընծու, և ոտք նորա իբրև զարջու, և բերան նորա որպէս զառիծու. և ետ նմա վիշապն զգօրութիւն իւր՝ և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ*: ³Եւ մի 'ի գլխոց նորա վիրաւորեալ էր 'ի մահ. և վէր մահուան նորա ողջանայր: Եւ զարմացա՛ւ ամենայն երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշապն զթագաւորութիւն իւր*: ⁴Եւ երկիր պագին վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն գազանին, և ասէին. Ո՞վ իցէ նման գազանիս. կամ ո՞վ կարիցէ պատերազմել ընդ դմա*: ⁵Եւ տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս, և զհայհոյութիւն. և տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն և երկու: ⁶Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած, և հայհոյեաց զանուն նորա՝ և զխորանն նորա, և զերկնային խորանն*: ⁷Եւ տուաւ նմա իշխանութիւն 'ի վերայ ամենայն ազգաց և լեզուաց և ժողովրդոց: ⁸Ձի երկրպագեսցեն նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի. որոց ո՛չ են գրեալ անուանք նոցա 'ի դպրութիւն կենաց Գառինն զենլոյ իսկզբանէ աշխարհի*: ⁹Ոյք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն: ¹⁰Ձի են ոմանք՝ որք 'ի գերութիւն վարեսցին, և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպանանեն. աստ է համբերութիւն և հաւատ սրբոց*:

ԼԷ ¹¹Եւ տեսի ա՛յլ գազան զի ելանէր յերկրէ, և ունէր եղջերս երկու՝ նման գառինն, և խօսէր իբրև զվիշապն: ¹²Եւ զիշխանութիւն զամենայն զառաջնոյ գազանին զործէր առաջի նորա. և առնէր զերկիր և զամենայն բնակիչս նորա՝ զի երկիր պագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչև ողջացի վեր մահու նորա: ¹³Եւ առնէր նշանս բազումս, և տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝ առաջի մարդկան*, ¹⁴և մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկիր նշանօքն, որ տուեալ են 'ի ձեռս նորա՝ առնել առաջի գազանին. ասեն ցնա բնակիչք երկրի. Արա՛ զպատկեր գազանին, որ 'ի վիրաց սրոյն եկեաց*: ¹⁵Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին, և զի խօսեսցի պատկերն. և երկիր պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի. և որ ո՛չ պագցէ երկիր պատկերի

* *Օրինակ մի.* Եւ կացի 'ի վերայ աւագոյ ծովու. և տեսի:

* *Ոմանք.* Ընծու: *Ոսկան.* Ձիշխանութիւն իւր մեծ:

* *Ոսկան.* Մահու նորա ողձ:

* *Ոմանք.* Ընդ դմա: *Ուր Ոսկան.* գազանին... ընդ նմա:

* *Ոսկան.* Եւ զխորան նորա, և զայնոսիկ որք յերկնս բնակին: Եւ տուաւ նմա պատերազմիլ ընդ սուրբս և յաղթել նոցա. և տուաւ նմա իշխանութիւն:

* *Ոմանք.* Ձի երկրպագցեն նմա ամենեքեան որ... 'ի դպրութեան կեն': *Ոսկան.* Գառինն զենելոյ:

* *Ոսկան.* 'Ի գերութիւն վարես': *Ոմանք.* Ձանձինս սպանանիցեն:

* *Յօրինակին.* Եւ առնէ նշանս: *Ոմանք.* Յերկնից 'ի յերկիր:

* *Ոսկան.* Բնակեալ են յերկրի: *'Ի լուս.*՝ Որ 'ի վերայ սրոյն եկաց. *համաձայն ոմանց 'ի բնար*՝:

գազանին, սպանցէ զնա*։ ¹⁶Եւ արասցէ զամենայն՝ փոքունս և զմեծամեծս և զմեծատունս և զազատս և զաղքատս և զծառայս, զի տացէ՛ նոցա դրոշմ յաջու ձեռին՝ և ՚ի վերայ ճակատու նոցա*։ ¹⁷Եւ ո՛չ ոք կարասցէ զնել և վաճառել՝ եթէ ո՛չ ունիցի զդրոշմ գրոյն՝ և զանուն գազանին և զթիւ անուան նորա։

ԼԸ ¹⁸Ա՛ստ է իմաստութիւն. որ ունի՛ միտս՝ համարեսցի՛ զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ, և թիւ անուան նորա՝ է ա՛յս. վեց հարիւր վաթսուն և վեց*։

14

Գլուխ ԺԴ

ԼԹ ¹Եւ տեսի՛ և ահա Գա՛ռն կայր ՚ի վերայ լերինն Սիոնի. և ընդ նմա հարելր քառասուն և չորս հազարք, որ ունէին զանուն նորա, և անուն Զօր նորա գրեալ ՚ի վերայ ճակատուց նոցա*։ ²Եւ լուայ ձայն յերկնից որպէս զձայն ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի. և լուայ՝ իբրև զձայն քնարահարաց, զի հարկանէին զքնարս իւրեանց*։ ³Եւ երգէին զերգս նո՛րս առաջի աթոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝ և առաջի երիցանցն. և ո՛չ ոք կարէ գիտել զերգս նոցա. բայց միայն հարելր քառասուն և չորս հազարքն, որք ազատեալ են յերկրէ*։ ⁴Սոքա՛ են՝ որք ընդ կանայս ո՛չ խառնակեցան, և են կուսանք. սոքա զկնի երթան Գառնն ուր և երթիցէ. սոքա ընտրեցան ՚ի մարդկանէ առաջի Աստուծոյ և Գառնն*։ ⁵Եւ ՚ի բերան նոցա ո՛չ գտաւ սուտ, զի անբի՛ծք են*։

Խ ⁶Եւ տեսի ա՛յլ հրեշտակ թուլցեալ ՚ի մէջ երկնից. և ունէր ակտիս յաւիտենական՝ ակտարանել ամենայն ազգաց, և լեզուաց որ բնակեալ են յերկրի*։ ⁷Եւ ասէր ՚ի ձայն մեծ. Երկերո՛ւք յԱստուծոյ՝ և տո՛ւք փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա. և երկիր պագէք Արարչին երկնի և երկրի և ծովու և աղբերաց ջուրց։

ԽԱ ⁸Եւ ա՛յլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա և ասէր. Անկա՛ւ անկա՛ւ Բաբելոն մեծն՝ ՚ի գինւոյ արբեցութենէ՝ ՚ի ցասմանէ՝ ՚ի պոռնկութենէ իւրմէ, որ արբեցոյց զամենայն հեթանոս*։

ԽԲ ⁹Եւ ա՛յլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա՝ և ՚ի ձայն մեծ ասէր. Ո՛վ ոք երկրպագեաց գազանին և պատկերի նորա, և կամ զդրոշմ նշանի՛ նորա ա՛ռ ՚ի ճակատ իւր և կամ ՚ի վերայ աջու ձեռին իւրոյ*, ¹⁰այնպիսին արբցէ՛ ՚ի բաժակէ

* *Ոմանք.* Եւ որ ոչն պագցէ։ *Ոսկան.* Սպանցեն զնա։

* *Ոսկան.* Եւ զծառայս ունիլ զդրոշմ յաջոյ ձե՛։ *Ոմանք.* ճակատուց նոցա։

* *Ոմանք.* Որ ունիցի միտս... և թիւ նորա է այս։ *՚Ի բազում գրչագիրս մեր բառքս՝* վեց հարիւր վաթսուն և վեց, *թուագրով գրին այսպէս՝* ՈԿԶ. *յոր յարեալ յաւելու օրինակս մեր նաև նշանագիրս ինչ մասնաւոր այսպիսի ձևով՝* ԵԶՏ. *զոր ընդօրինակողն բացայայտ ևս ձևացուցանէ զնոյն շղագրովքս՝ ճձտ։*

* *Ոսկան.* Եւ զանուն Զօր։

* *Ոմանք.* Իբրև զձայն ջուրց... զձայն զքնարա՞։ *Ոսկան.* Ջձայն իբրև զքնարա՞. զի հարկանիցեն զքնարս։

* *Ոմանք.* Ջերգս նորա առաջի... զատեալք են յերկ՞։ *Ոսկան.* Աթոռոյն Աստուծոյ և ա՞։

* *Ոմանք.* Ուր և երթայցէ։

* *Ոսկան յաւելու.* Ամբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ։

* *Ոմանք.* Յերկիր։

* *Ոսկան.* Որ արբոյց զամենայն հե՞։

* *Ոմանք.* Եւ ասէր ՚ի ձայն մեծ... և կամ պատկերի նորա... աջոյ ձեռին իւրուն։

ցամանն Աստուծոյ՝ արկելոյ յանապակէ բարկութեան բաժակին. և տանջեսցի՛ հրով և ծծմբով առաջի Աստուծոյ և Գառնին: ¹¹Եւ ծուխ նոցա ելցէ՛ յաւիտեանս յաւիտենից. և ո՛չ ունին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի. և որք երկիր պագին պատկերին, և առին զդրոշմ և զանուն նորա: ¹²Եւ համբերութիւն սրբոցն աստ է. այս որք պահեն զպատուիրանս Աստուծոյ, և զհաւատս Յիսուսի: ¹³Եւ լուայ՝ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. Գրեա՛. Երանի՛ մեռելոցն որք ՚ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս ասէ Յոզիմ, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զիեստ նոցա՛:

ԽԳ ¹⁴Եւ տեսի՛ և ահա ա՛մպ սպիտակ, և ՚ի վերայ ամպոյն նստէր նման Որդւոյ մարդոյ, և ՚ի գլուխ իւր պսակ ոսկի, և ՚ի ձեռին իւրում ունէր գերանդի սրեալ՛: ¹⁵Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր ՚ի ձայն մեծ՝ և ասէր. Որ նստիսդ ՚ի վերայ ամպոյդ՝ առաքեա՛ զգերանդիդ քո՝ և հնձեա՛, զի եկն ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի՛:

ԽԴ ¹⁷Եւ այլ հրեշտակ ելանէր ՚ի տաճարէն որ յերկինս, և ունէր և սա՛ գերանդի սրեալ՛: ¹⁸Եւ այլ հրեշտակ ելանէր ՚ի սեղանոյն, որ ունէր իշխանութիւն ՚ի վերայ հրոյ, և աղաղակեաց ՚ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սրեալ՝ և ասէր. Կթեա՛ զողկոյզս յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ ՚ի դմա՛: ¹⁹Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և կթէր զխաղող նորա, և արկանէր ՚ի հնձանն Աստուծոյ ՚ի մեծ՛: ²⁰Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, և ելանէր ՚ի հնձանէն արիւն միւսն ՚ի սանձս ձիոյն. և երկայնութիւն նորա հազար և վեց հարելր ասպարէս՛:

15

Գլուխ ԺԵ

ԽԵ ¹Եւ տեսի այլ նշան մեծ և սքանչելի. հրեշտակս եւթն՝ որք ունէին եւթն վէրս զկնի. զի նոքօք կատարէր բարկութիւն Աստուծոյ՛: ²Եւ տեսի որպէս ծո՛վ ապակեղէն խառնեալ հրով. և որք յաղթեցին գազանին՝ և թուոյ անուան նորա՝ և պատկերի նորա՝ և դրոշմի նորա, նոքա կային ՚ի վերայ ծովուն ապակեղինի. և ունէին զքնարս Աստուծոյ՛. ³և երգէին զերգս Մովսիսի առաջի Աստուծոյ, և զերգս Գառնին՝ ասելով թէ. Մեծամեծ և սքանչելի՛ են գործք քո՝ Տէր Աստուած Ամենակալ, արդար՝ և ճշմարիտ են ճանապարհք քո, Թագաւոր ամենայն

* Ոսկան. Ձի միայն գործք իւ՛:

* Ոսկան. Եւ ՚ի գլուխ նորա պս՛:

* Օրինակ մի յաւելու. Յունձք երկրի: Եւ արկ որ նստէր ՚ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր յերկիր, և հնձէր զամենայն բնակիչս երկրի: *Ձոր Ոսկան ևս ունի այսպէս հմր. (16) Եւ առաքեաց որ նստիւր ՚ի վերայ ամպոյն զգերանդի իւր, և հնձեցաւ երկիր:*

* [Ոմանք]. Եւ այլ հրեշ՛:

* Ոմանք. Յրեշտակ ել ՚ի սեղա՛... զողկոյզս յայգւոյ երկրի: *Ոսկան յաւելու. Եւ ասէր.*

Առաքեա՛ զգերանդիդ քո սուր և կթեա՛ զող՛:

* Ոմանք. Եւ կթէր զխաղողն ՚ի նմա և արկանէր ՚ի հնձան Աստուծոյ:

* Ոսկան. Ի սանձս ձիոցն... հազար հարիւր և վեց ասպարէզ:

* Ոմանք յաւելուն. Նշան յերկինս մեծ... բարկութիւնն Աստուծոյ:

* Ոմանք. Եւ պատկերի նորա, և թուոյ:

հեթանոսաց*։ ⁴Եւ ո՞վ որ ո՛չ երկիցէ՝ և փառաւորեսցէ զՏէր անուն քո. զի դու միայն ես սուրբ, և արժանի՝ երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո Տէր, յորժամ արդարութիւն քո յայտնեսցի*։ ⁵Եւ յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խորանին վկայութեան՝ որ էր ՚ի յերկինս*։ ⁶Եւ ելանէին եւթն հրեշտակք՝ որք ունէին եւթն հարուածս, և զգեցեալ էին ՚ի տաճարին կտաւս մաքուրս՝ և պայծառս. և գօտնորեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս*։ ⁷Եւ ՚ի չորից կենդանեացն տուաւ եւթն հրեշտակացն՝ եւթն սկաւառակս լի՝ ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։ ⁸Եւ լցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ՝ և զօրութեան նորա. և ո՛չ որ կարէ մտանել ՚ի տաճարն՝ մինչև կատարեսցին եւթն հարուածքն յեւթն հրեշտակացն*։

16

Գլուխ ԺԶ

¹Եւ լուայ՝ ձայն մեծ ՚ի տաճարէն՝ զի ասէր ցեւթն հրեշտակսն. Երթայք հեղէք զեւթն սկաւառակսդ ցասմամբն Աստուծոյ յերկիր*։

ԽԶ ²Եւ գնաց առաջին հրեշտակն, և եհեղ զսկաւառակ իւր յերկիր, և եղեն հարուածք չարաչար ՚ի վերայ մարդկան, որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր պագին պատկերի նորա*։

ԽԷ ³Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ՚ի ծով, և դարձան ջուրքն յարիւն մեռեալ. և ամենայն շունչ կենդանի որ էր ՚ի ծովու՝ սատակեցաւ։

ԽԸ ⁴Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ՚ի գետս՝ և յաղբերս ջուրց, և եղև արիւն։ ⁵Եւ լուայ ՚ի հրեշտակէն՝ զի ասէր. Արդար է՝ որ էնն և է՝, և սուրբ ՚ի գործս իւր՝ զի այսպէս դատեցաւ*։ ⁶Վասն զի զարիւն սրբոց՝ և զարիւն մարգարէիցն հեղին ամպարիշտք. վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն։ ⁷Եւ լուայ ՚ի սեղանոյ անտի զի ասէր. Այո՛ Տէր Աստուած Ամենակալ, արդար և ճշմարիտ են դատաստանք քո*։

ԽԹ ⁸Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ արեգական։ ⁹Եւ տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ հրով. և տապացան մարդիկ ՚ի տա՛պ մեծ, և հայիոյցին զԱստուած՝ որ ունի իշխանութիւն ՚ի վերայ հարուածոցս այսոցիկ. և ո՛չ ապաշխարեցին ՚ի փառս Աստուծոյ։

Ծ ¹⁰Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ աթոռոյ գազանին, և եղև թագաւորութիւն նորա խաւարեալ. և ծամէին զլեզուս իւրեանց

* *Ոսկան.* Ձերգս Սօսէսի ծառայի Աստուծոյ... մեծամեծք և սքանչելիք են։ *՚ի լուս*՝

Արդարև ճշմարիտ։ *Ոմանք.* Եւ ճշմարտութեամբ է ճանապարհք քո։

* *Ոմանք.* Փառաւորեսցէ զսուրբ անուն քո... միայն ես սուրբ։

* *Ոմանք.* Որ է յերկինս։

* *Ոմանք.* Ի տաճարէն՝ կտաւս։

* *Ոմանք.* Եւ զօրութեանն նորա։

* *Ոմանք.* Ցասմանն Աստուծոյ։

* *Ոսկան.* Եղեն հարուածք չարաչարք ՚ի... զդրոշմն գա՞՞։ *Ոմանք.* Ի վերայ մարդկանն... պատկերին նորա։

* *Ոսկան.* Ի հրեշտակէն որ ասէր... և է սուրբ ՚ի գործս։

* *Ոմանք.* Եւ լուայ ձայն ՚ի սեղանոյն զի ասէր։

յախտէ ցաւոցն*, ¹¹և հայիոյեցին զԱստուած երկնից՝ ՚ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ դառնութեանն, և ո՛չ ապաշխարեցին ՚ի գործոց իւրեանց*:

ԾԱ ¹²Եւ վեցերորդ հրեշտակն եհե՛ղ ՚ի սկաւառակէ՛ իւրմէ՛ ՚ի վերայ գետոյն մեծի Եփրատայ, և ցամաքեցան ջուրք նորա, զի պատրաստեցի՛ ճանապարհ թագաւորի ելիցն արևու՛: ¹³Եւ տեսի՛ զի ելանէր ՚ի բերանոյ վիշապին՝ և ՚ի բերանոյ գազանին՝ և ՚ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք երեք անսուրբք իբրև զգորտս: ¹⁴Քանզի նոքա էին՝ ոգիք դիւականք որք առնէին զնշանս՝ և երթային առ թագաւորս ամենայն երկրի՝ ժողովել զնոսա ՚ի պատերազմ, յորն մե՛ծ Տեառն Ամենակալի. քանզի այսպէս ասաց Տէր* . ¹⁵Ահա՛ գա՛ն իբրև զգող, երանի որ իցեն արթունք, և պահեսցեն զհանդերձս իւրեանց. զի մի՛ մերկ շրջեսցին, և երևեսցին ամօթանք իւրեանց* . ¹⁶և ժողովեցից զնոսա ՚ի տեղի մի, որ կոչի Երբայեցերէն Արմաքեդոն*:

ԾԲ ¹⁷Եւ եւթներորդ հրեշտակն եհե՛ղ ՚ի սկաւառակէ իւրմէ՛ ՚ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ յերկնից՝ և յաթոռոյն՝ ասելով. Եղև: ¹⁸Եւ եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք. և եղև շարժումն մեծ՝ որպիսի չի՛ք եղեալ իսկզբանէ՝ յորմէհետէ եղև մարդ ՚ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն մեծ: ¹⁹Եւ եղև քաղաքն մեծ յերիս մասն, և քաղաքք ազգացն անկան. և Բաբելոն մեծ յիշեցա՛ւ առաջի Աստուծոյ, տա՛լ նմա զբաժակն զինւոյ ցասման բարկութեան նորա: ²⁰Եւ ամենայն կղզիք փախեան, և լերինք ՚ի միջոյ բարձան: ²¹Եւ կարկուտ մեծ իբրև կշիռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից՝ ՚ի վերայ մարդկան. և հայիոյեցին մարդիկ զԱստուած յերկինս՝ վասն հարուածոյ կարկտին, զի մե՛ծ էր հարուածն և սաստիկ*:

17

Գլուխ ԺԷ

ԾԳ ¹Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն՝ որք ունէին զեւթն սկաւառակսն. խօսեցա՛ւ ընդ իս՝ և ասէ. Ե՛կ այսր և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի վերայ ջուրց բազմաց*. ²ընդ որում պոռնկեցան թագաւորք երկրի, և արբեցան բնակիչք երկրի ՚ի զինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա: ³Եւ առ տարա՛ւ զիս յանապատ հոգւովն. և տեսի կին մի՝ զի նստէր ՚ի վերայ կարմիր գազանի, և լի՛ էր անուամբ հայիոյութեան. և գազանն զոր տեսի՝ ունէր զլուխս եւթն և եղջերս տասն*: ⁴Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով և մարգարտով և ականքք պատուականօք, ունելով բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում, և լի՛ էր զարշելի և անմաքուր պոռնկութեամբ: ⁵Եւ ՚ի ճակատն նորա գրեալ անուն՝ Խորհրդով. մե՛ծն Բաբելովն՝ մա՛յր պոռնկաց և

* Ոմանք. ՚ի յախտէ ցաւոցն:

* Ոմանք. Եւ հայիոյէին զԱստուած երկնից ՚ի ցաւոցն իւ՛:

* Ոսկան. Յելիցն արևու:

* Ոմանք. Առ ամենայն թագաւորս երկ՛... Տեառն Աստուծոյ Ամենակալի:

* Ոմանք. Մերկս շրջիցին:

* Ոմանք. Եւ ժողովեցին զնոսա ՚ի տե՛: Ոսկան. Արմաքեդոն:

* Ոմանք. Յերիս մասունս... և Բաբելովն մեծն յիշե՛:

* Ոմանք. Կշիռ տաղանդի միոջ... վասն հարուածոց կարկտի:

* Ոսկան. Զդատաստան մեծ:

* Ոմանք. Յանապատ հոգւով: Ոսկան յաւելու. Հայիոյութեամբ բերան նորա:

գարշելեաց երկրի*:

ԾԴ⁶Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ և յարենէ ամենայն վկայիցն. և զարմացալ՝ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ*։ ⁷Եւ ասէ ցիս հրեշտակն. Ընդէ՞ր զարմացար, ե՛ս ասացից քեզ զխորհուրդս կնոջն, և գազանին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեւթն գլուխն՝ և տասն եղջերս*։ ⁸Եւ գազանդ զոր տեսեր՝ որ է՛ր, և չէ՛ր, և հանդերձեալ է ելանել՝ ՚ի դժոխոց՝ և ՚ի կորուստ երթալ. և զարմացան ամենեքեան որ բնակեալ են ՚ի վերայ երկրի. որոց ո՛չ էր գրեալ անուանք նոցա ՚ի գի՛ր կենաց իսկզբանէ աշխարհի. զոր տեսանէիր զգազանն, զի է՛ր՝ և չէ՛, և մերձ է*։ ⁹Ա՛ստ է իմաստութիւն՝ որ ունի միտս. և եւթն գլուխն՝ եւթն լերիքն են, ուր կինն նստեալ էր ՚ի վերայ նոցա. և նոքին թագաւորք են եւթն. և թագաւորք եւթն զուլով*։ ¹⁰Իհնզն անկան, և մին եկաց, և մինն ո՛չ է եկեալ. և յորժամ զայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի*։ ¹¹Եւ գազանն՝ որ է՛ր՝ և չէ՛, և նա ութերորդ է. և է յեւթանց անտի, և ՚ի կորուստ երթալոց է։ ¹²Եւ տասն եղջերսն զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոց չն՛ ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ և կան իշխանք ՚ի մի ժամ. և առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին։ ¹³Սոքա մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան*։ ¹⁴Եւ ընդ Գառնն պատերազմին. և Գառնն յաղթէ նոցա, զի Տէր է նոցա, և Թագաւոր թագաւորաց. և որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք և հաւատացեալք*։ ¹⁵Եւ ասաց ցիս. Եւ զջուրն զոր տեսեր՝ ուր նստէր պռոնիկն, ժողովուրդք են, և բազմութիւնք և ա՛զգք և լեզուք*։ ¹⁶Եւ տասն եղջերքն՝ զոր տեսեր գազանին, նոքա տեսցեն զպռոնիկն՝ և ատեսցեն զնա, և զմարմին նորա կերիցեն՝ և այրեսցեն զնա հրով։ ¹⁷Քանզի Աստուած եղ ՚ի սիրտս նոցա առ ՚ի լինել նոցա մի կամս, և տալ զթագաւորութիւն գազանին՝ մինչև կատարեսցի բանն Աստուծոյ*։ ¹⁸Եւ կինն զոր տեսեր է՝ քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութիւն ՚ի վերայ թագաւորութեանց երկրի:

18

Գլուխ ԺԸ

ԾԵ¹Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիր լուսաւորեցաւ ՚ի փառաց նորա*։ ²Եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ ասելով. Անկա՛ւ Բաբելոն մեծն, որ եղեալ էր բնակութիւն դիւաց, և արգել ամենայն այսոց պղծոց, և բանտ պահպանութեան ամենայն ոգւոց

* *Ոսկան.* Անուն. խորհուրդ. Բաբելոն մեծ՝ մայր պռոնկութեանց և գարշութեանց երկրի:

* *Ոմանք.* ՚ի յարենէ սրբոցն: *Ոսկան.* Վկայիցն Քրիստոսի... տեսեալ զնա զարմացմամբ մեծաւ:

* *Ոմանք.* Եւ զգազանին... զեւթն գլուխս և տասն եղջերս:

* *Ոսկան.* Որոց ոչ են գրեալք: *Ոմանք.* Անուանք իւրեանց ՚ի գիր:

* *Ոմանք.* Միտս. եւթն գլ՛:

* *Ոմանք.* Եւ մինն եկաց... սակաւ մի ժամանակ:

* *Ոսկան.* Եւ զիշխանութիւն իւրեանց գազա՛:

* *Ոսկան.* Եւ Գառնն յաղթեսցէ:

* *Ոմանք.* Եւ ասէ ցիս. Եւ զջուրն: *Ուր Ոսկան.* ջուրքն զորս տէ՛:

* *Ոմանք.* Քանզի ետ Աստուած ՚ի սիրտս... նոցա ՚ի մի կամս:

* *Ոմանք.* Եւ երկիրս լուսաւ՛:

անարբից և ատեցելոց*։ ³Վասն զի ՚ի բարկութենէ զինւոյ պռռնկութեան նորա արբին ամենայն ազգք և թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պռռնկեցան. և վաճառականք երկրի՝ ՚ի նորա զօրութեանն յօրանալոյ մեծացան։ ⁴Եւ լուայ՝ ծայն յերկնից զի ասէր. Ելէք ՚ի միջոյ դորա՝ ժողովուրդ իմ, զի մի՛ հաղորդ լիցիք մեղաց դորա, և մի՛ զհարուածս դորա ընդունիցիք*։ ⁵զի հասին կցեցան մեղք դորա մինչև յերկինս. և յիշեաց Աստուած զամպարշտութիւնս դորա*։ ⁶Եւ հատուցանէ՛ դմա՝ որպէս և հատոյցն մեզ, և առցէ դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. և զբաժակն որով խառնեացն՝ խառնեցէք դմա կրկին։ ⁷Եւ որչափ փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ. զի ՚ի սրտի իւրում ասէր՝ թէ յամենայն ժամ նստայց ես թագուհի՛ և այրի՛ ո՛չ ևս եղէք*։ ⁸Վասն այնորիկ ՚ի միում աւուր եկեցցեն ՚ի վերայ դորա հարուածք՝ մահ, և սո՛ւգ, և սո՛ւվ, և ՚ի հո՛ւր այրեցի. զի հզօր է Տէր Աստուած՝ որ դատեցաւն զդա*։ ⁹և լայցեն՝ և կոծեցին՝ ՚ի վերայ դորա թագաւորք երկրի՝ որք ընդ դմա պռռնկեցան և խաղացին. և հեծեցցեն յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց դորա*։ ¹⁰Ի հեռաստանէ՛ կայցեն վասն երկիւղի տանջանաց դորա՝ և ասասցեն. Վայ քաղաքիդ մեծի Բաբելոնի. քաղաք հզօր՝ զի ՚ի միում ժամու եկին հասին դատաստանք քո*։ ¹¹Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն ՚ի վերայ քո, զի զբեռն նոցա ոչ ո՛ք գնէ*։ ¹²Եւ շահք որ ՚ի քէն՝ ո՛չ ևս իցէ, ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որդան, և ամենայն փայտ խնկոյ՝ և ամենայն անօթ փղոսկրեայ, և ամենայն անօթ ՚ի փայտէ՛ պատուականէ և ՚ի պղնձոյ և յերկաթոյ և ՚ի կճոյ*։ ¹³և կինամոմն, և ամենայն խունկ, և եւղ և կնդրուկ, և գինի և ձէթ, և նաշի՛հ և ցորեան, և ստացուածք ամենայն, արջառ և ոչխար. և երիվարաց և կառաց՝ որ վայել է մարմնոց և ոգւոց մարդկան*։ ¹⁴Եւ ամենայն ցանկութիւն անձին քոյ գնաց ՚ի քէն, և ամենայն լուսափայլ վայելչութիւնն, պարարտն և գէրն և սպիտակն գնաց ՚ի քէն, և ո՛չ ևս գտցես զայդ*։ ¹⁵Եւ ամենայն շահավաճառք այսոքիւք մեծացեալք ՚ի քէն ՚ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց քոց լալով՝ և սուգ առնլով* , ¹⁶ասասցեն. Վայ վայ, քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս և ծիրանիս և որդան, ոսկեզօծս՝ և քարինս պատուականս՝ և մարգարիտս*։ ¹⁷զի ՚ի միում ժամու պակասեցաւ այնչափ մեծութիւն քո. և ամենայն նաւավար՝ և ամենայն որ ՚ի տեղիս տեղիս նաւեն, և նաւա՛զք, և որք միանգամ ուռկանաւ գործեն՝ ՚ի հեռաստանէ՛ կայցեն լալով* , ¹⁸և աղաղակեցցեն՝

* *Ոմանք.* Մեծ՝ ասել. Անկաւ Բաբելոնցն մեծ։ *Ուր Ոսկան.* Անկաւ անկաւ Բաբիլ՝։

* *Առ ոմանս պակասի.* Դորա, և մի՛ զհարուածս դորա ընդունիցիք։

* *Ոսկան.* Քանզի հասին մեղք նորա մին՝... և յիշեաց Տէր զանօրէնութիւնս նորա։

* *Ի լուս՝.* Եւ խայտայ, այնչափ հատուցէք դմա։ *Ոսկան յաւելու.* Ոչ ևս եղէց. և **զսուգ ոչ տեսից**։

* *Ոմանք.* Դատեցաւն զնա։

* *Ոմանք.* Եւ կացցեն և կոծեցին թագաւորք երկրի ՚ի վերայ դորա... կիզման դորա։

* *Ոմանք.* Ի հեռատանէ կացցեն։ *Ոսկան.* Վայ վայ քաղա՛։

* *Ոմանք.* Ձի զբեռինս նոցա ոչ ոք է որ գնէ։

* *Ոսկան.* Եւ շահ որ ՚ի քէն։ *Ոմանք.* Փայտ խնկոց։

* *Ոսկան.* Եւ արջառ և ոչխար, երիվարաց և կա՛։

* *Ոմանք.* Եւ ոչ ևս այլ գտցես։

* *Ոմանք.* Եւ սուգ առնլով ա՛։

* *Ոսկան.* Եւ ասասցեն. Վայ։ *Ոմանք.* Եւ զոսկեզօծս։

* *Ոմանք.* Ի միում ժամու ապականեցաւ այսչափ մե՛... նաւին նաւազք... կացցեն լալով։

տեսանելով զծուխ կիզման նորա, ասելով. Ո՞ր նմանէ քաղաքիս այսմիկ մեծի*:
¹⁹Եւ արկցեն հող՝ ի վերայ գլխոց իւրեանց, և գուժալով ձայնիւ մեծաւ՝ լալով և սգալով ասասցեն, Վայ վայ քաղաք մեծ, որով ամենեքեան մեծանայաք՝ որք ունեաք զնաւս ՚ի ծովս՝ վասն պատուականութեան քոյ. զի՞ ո՞ր միում ժամու ապականեալ կործանեցար*:
²⁰Ուրախ լերուք ՚ի վերայ նորա երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք. զի դատեցաւ Աստուած զդատաստան՝ ձեր ՚ի դմանէ*:
²¹Եւ ա՛ռ հրեշտակն հզօր՝ քար մի իբրև գերկան մեծ, և ընկէ՛ց ՚ի ծով՝ ասելով. Այսպէս յարձակմամբ անկցի Բաբելովն քաղաք մեծ, և այլ ո՛չ ևս գտցի*:
²²Եւ ձայն քնարերգաց և երաժշտականաց՝ արուեստականաց՝ և փողահարաց՝ և թմբկի, այլ ո՛չ ևս լուիցի ՚ի քեզ.
²³և լոյս ճրագի և ձայն երկանի՝ այլ ո՛չ ևս երևեսցի ՚ի քեզ, և ձայն փեսայի և ձայն հարսին՝ այլ ո՛չ ևս լուիցի ՚ի քեզ. և ո՛չ վաճառականք քո փառաւորք և մեծամեծք երկրի, որ զուարճացեալ էին ՚ի քեզ. վասն զի կախարդութեամբ դեղատուութեան քոյ մոլորեցան ամենայն ազգք*:
²⁴Եւ ՚ի քեզ ամենայն արիւն մարգարէից և սրբոց գտաւ, և ամենայն գրելոց յերկրին կենդանեաց:

19

Գլուխ ԺԹ

ԾԶ ¹Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս՝ ասելով. Ալէլուիա, փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն Աստուծոյ մերում*.
²զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա. զի դատեաց զպոռնիկն մեծ ՚ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց զվրժ արեան ծառայից իւրոց ՚ի ձեռաց նորա:
³Եւ կրկին անգամ օրհնեցին՝ և ասացին. Ալէլուիա: Եւ ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից.
⁴և անկան քսան և չորք երիցունքն՝ և չորք կենդանիքն, և երկիր պագին Աստուծոյ՝ որ նստէր յաթոռ փառաց՝ ասելով. Ամէն՝ ալէլուիա*:
⁵Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. Օրհնեցէք զԱստուած ամենայն ծառայք նորա, և որք երկնչիք ՚ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք*:
⁶Եւ լուայ՝ ձայն բազմութեան մեծի՝ իբրև զձայն ջուրոց բազմաց, և իբրև զձայն հզօր որոտման՝ ասելով դարձեալ. Ալէլուիա, վասն զի թագաւորեաց Աստուած Ամենակալ*:
⁷Խնդամք՝ և տամք փառս նմա, զի եկն հարսանիք Գառնին:

ԾԷ Եւ կինն հարսն նորա պատրաստեաց զինքն*.
⁸և տուաւ նմա զգեցնուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է բեհեզն արդարութիւն սրբոցն:
⁹Եւ մի յերիցանցն ասէր ցիս. Գրեա՛ զայդ. Երանելիք են ամենեքեան՝ որ

* Ոսկան. Եւ ասելով:

* Ոսկան. Մեծանային որք ունէին զնաւս ՚ի ծովս:

* Ոսկան. Ձի դատեաց... ձեր ՚ի նմանէ:

* Ոսկան. Եւ էառ հրեշտակ մի հզօր զքար: Ոմանք. Քար մի մեծ իբրև գերկան, և ընկէց:

* Ոմանք. Փեսայի և հարսին ոչ ևս լուիցէ ՚ի քեզ... դեղատուութենէ քո. մոլորեցան ամենայն ազգինք:

* Ոմանք. Եւ յետ այսորիկ լուայ: Ոսկան. Աստուծոյ մերոյ:

* Ոմանք. Քսան և չորս երի... և երկրպագեցին Աստուծոյ որ... յաթոռն:

* Ոմանք. ՁԱստուած մեր ամենայն ծա՛:

* Ոմանք. Հզօր որոտմանց... Աստուած մեր Ամենա՛: Ուր Ոսկան. Տէր Աստուած մեր Ա՛:

* Ոմանք. Խնդամք և ցնծամք, և տամք: Ոսկան. Եւ կին նորա պատրաստ՛:

կոչեցեալ են յընթրիս հարսանեաց Գառնին*։ ¹⁰Եւ ես անկեալ առաջի ոտից նորա, երկիր պագի նմա. և ասէ ցիս. Անսա՛ մի՛ անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք ունին զվկայութիւնն Յիսուսի Քրիստոսի. Տեառն Աստուծոյ միայն երկրպագեա՛. քանզի հաստատութեամբ Յիսուսի՛ է տեսիլդ, և հոգի մարգարէութեանդ. զի վկայութիւն Յիսուսի՛ է՝ Զոգւովն Սրբով՝ որ ՚ի մարգարէսն էր*։

ԾԸ ¹¹Եւ տեսի գերկինս բացեալ, և ահա ձի՛ սպիտակ, որ հեծեալն էր ՚ի նմա՝ Զաւատարիմ և ճշմարիտ, և արդարութեամբ դատի՝ և պատերազմի*։ ¹²և աչք նորա բոց հրոյ, և ՚ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն գրեալ, զոր ո՛չ ոք գիտէ՝ բայց միայն ի՛նքն։ ¹³Եւ արկեալ զիրեւ հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն նորա՝ Բա՛ն Աստուծոյ*։ ¹⁴Եւ զօրավարք երկնից՝ և զօրք երկնից զհետ երթային նորա ձիովք՝ զգեցեալք բեհեզս սուրբս և սպիտակս*։ ¹⁵Եւ ՚ի բերանոյ նորա ելանէր սո՛ւր սրեալ. զի նովա՛ւ հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ. և նա՛ կոխեսցէ զհնծան զինւոյ՝ ցասման բարկութեան Աստուծոյ Ամենակալի։ ¹⁶Եւ ունէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ, և ՚ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ. ԹԱԳԱԻՈՐ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԵՒ ՏԵՐ ՏԵՐԱՆՑ։

ԾԹ ¹⁷Եւ տեսի ա՛յլ հրեշտակ՝ որ կայր ՚ի վերայ արեգական, զի աղաղակեաց ՚ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ*։ ¹⁸և կերիջիք զմարմինս թագաւորաց, և զմարմինս երիվարաց՝ և ամենայն հեծելոց ՚ի նոսա, և զմարմինս ազատաց և ծառայից՝ մեծի և փոքու*։ ¹⁹Եւ տեսի զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ հեծեալն էր ՚ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա։ ²⁰Եւ ըմբռնեցա՛ւ զազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն, որ առնէր զնշանս առաջի նորա, և զորս մոլորեցոյց և ե՛տ առնուլ զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկերի նորա. և կենդանւոյն արկին զնոսա ՚ի լիճ հրոյ այրեցելոյ ծծըմբով*։ ²¹և այլքն մեռան ՚ի սրոյ հեծելոյն ՚ի վերայ ձիոյն՝ յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամենայն թռչունք յազեցան ՚ի մարմնոց նոցա։

20

Գլուխ Ի

Կ ¹Եւ տեսի ա՛յլ հրեշտակ զի իջանէր յերկնից, և ունէր զփականս դժոխոց, և շղթայս մեծ ՚ի ձեռին իւրում*։ ²և ըմբռնեաց զվիշապն զառաջին, որ է Բանսարկուն և Սատանայ, և կապեաց զնա հազար ամ։ ³Եւ արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնքեաց զնա՝ զի այլ մի՛ ևս մոլորեցուցէ

* *Ոմանք.* Ասէ ցիս. Գրեա՛:

* *Ոսկան.* Ոտից նորա, զի երկրպագից նմա. և ասէ ցիս: *Ոմանք.* Յիսուսի է, և Զոգւովն Սրբով:

* *Ոմանք.* Եւ որ հեծեալն էր:

* *Ոմանք.* Արկեալ զիրեւաւ հանդ՛:

* *Ոսկան յաւելու.* Ձիովք սպիտակօք:

* *Ոսկան.* Եւ ժողովեցարուք:

* *Ոմանք յաւելուն.* Թագաւորաց, և զմարմինս հզօրաց, և զմարմինս երիվա՛:

* *Ոմանք.* Եւ ընդ նմա սուտ: *Յօրհնակին.* Արկին զնա ՚ի լիճ:

* *Ոմանք.* Չվիշապն զօճն առաջին... զնա զհազար ամ:

զագգս, մինչև կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ*:

ԿԱ ⁴Եւ տեսի աթոռս, և նստան ՚ի վերայ նոցա. և դատաւորութիւն տուաւ նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեանն Յիսուսի՝ և վասն բանին Աստուծոյ. և զորս ոչն երկիր պագին գազանին, և ոչ առին զդրոշմ նորա ՚ի ճակատս իւրեանց՝ և ոչ ՚ի վերայ աջու ձեռին իւրեանց. և կացին՝ և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ*:

ԿԲ ⁵Եւ յետ ասորիկ ՚ի մեռելոց ոչ ոք եկեաց, մինչև ՚ի կատարել հազար ամին. այս է յարութիւն առաջին: ⁶Երանի սրբոցն, որք ունին բաժին ՚ի յարութեանն առաջնում. ՚ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն. այլ եղիցին քահանայք Աստուծոյ՝ և Տեառն Յիսուսի Քրիստոսի. և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ*:

ԿԳ ⁷Եւ յետ հազար ամին լուծցէ՛ զՍատանայ՝ և հանցէ՛ ՚ի բանտ անտի. ելցէ՛ և մոլորեցուցէ զագգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի. և զԳոգ և զՄագոգ առցէ ՚ի ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն զօրս ՚ի պատերազմ. որոյ թիւ նոցա իբրև զաւազ ծովու*:⁸Եւ ելցեն ՚ի լայնութիւն երկրի, և պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն, և զքաղաքին սիրելոյ*:⁹Եւ իջցէ հուր յերկնից առ ՚ի յԱստուծոյ՝ և կերիցէ՛ զնոսա, և զզօրագլուխն նոցա զՍատանայ՝ որ մոլորեցոյց զնոսա. և արկցէ՛ զնոսա ՚ի ծովն հրոյ և ծօրմբոյ ուր էր գազանն*:¹⁰Եւ սուտ մարգարէն. և չարչարեսցին գտիւ և զգիշեր:

ԿԴ ¹¹Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, և ՚ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին երկինք և երկիր, և տեղի ոչ գտաւ նոցա: ¹²Եւ տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքունս որ կային առաջի աթոռոյն. և գրեանք բանային. և այլ գիրք բացաւ կենաց, և դատեցան մեռեալք ՚ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց*:¹³Եւ ետ ծով զմեռեալս իւր, և մահ և դժոխք զիւրեանց մեռեալս. և դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց: ¹⁴Սահ՝ և դժոխք մատնեցան ՚ի լիճ հրոյն*:¹⁵Եւ որ ոչ ոք գտաւ ՚ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ ՚ի լիճ հրոյն*:

21

Գլուխ ԻԱ

ԿԵ ¹Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր. քանզի առաջինն երկինք և երկիր էանց. և ծով ոչ գոյր*:²Եւ զքաղաքն սուրբ զնորն երուսաղէմ տեսի՝ զի իջանէր

*Ոմանք. Լուծանիլ նմա սակաւ ժամանակս:

*Ոմանք. Ձդրոշմն նորա... ընդ Քրիստոսի մինչև ՚ի հազար ամ:

*Ոմանք. Երկրորդ մահ ոչ: *Յօրինակիւն*. Ընդ նա հազար ամ:

*Ոմանք. Որոց թիւ նոցա իբ՛:

*Ոմանք. ՚ի լայնութիւնս երկ՛: *Ոսկան*. Պատեսցեն զբանակս սրբոցն և զքաղաքն սիրելի:

*Ոմանք. ՚ի յերկնից առ յԱստուծոյ. և կերիցէ զնոսա. և արկցէ զնոսա:

*Ոմանք. Ձմեծամեծս և:

**Ոսկան յաւելու*. Եւ մահ և դժոխք մատնեցան ՚ի լիճն հրոյ. այս է մահն երկրորդ:

*Ոմանք. Եւ որ ոք ոչ գտաւ ՚ի:

**Ոսկան*. Առաջին երկին և եր՛:

յԱստուծոյ և յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ աճն իւրոյ*:

³Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր. Ահաւասիկ խորանն Աստուծոյ՝ ՚ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա. և նոքա ժողովորդ նմա. և սա Աստուած նոցա*:

⁴Եւ ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա. և մահ ո՛չ ևս գոյ, ո՛չ սուգ՝ և ո՛չ աղաղակ, և ո՛չ ցաւք՝ և ո՛չ աշխատանք ո՛չ ևս գոյ, զի առաջինն էանց*:

ԿԶ ⁵Եւ ասաց ցիս՝ որ նստէր ՚ի վերայ աթոռոյն. Ահաւասիկ առնեն զամենայն նոր: Եւ ասէ ցիս. Գրեա՛. այս բանք ճշմարիտ և հաւատարիմք*:

⁶Եւ ասէ ցիս. Եղէ՛ ես Ալփա՛ և Ով, Սկիզբն և Կատարած. Ես ծարաւելոցն տան յաղբերէ ջրոյ կենաց ձրի*:

⁷Որ յաղթէ, ժառանգեսցէ՛ զայս ամենայն. և ես եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ որդիք:

⁸Եւ ծուլացն և անհաւատից՝ սպանողաց և պոռնկաց՝ և կախարդաց և կռապաշտից՝ և դեղատուաց, և ամենայն ստոց՝ ամպարշտաց, որոց բաժինն իւրեանց ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծըմբով. որ է մահն երկրորդ:

ԿԷ ⁹Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն, որք ունէին զեւթն սկաւառակսն լցեալս եւթն վախճանաւ կատարածովք, խօսեցաւ ընդ իս և ասէ. Եկ՛ ցուցից քեզ զհարսնն և զկին Գառինն*:

¹⁰Եւ առ տարաւ զիս ՚ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգւովն, և եցոյց ինձ զքաղաք մեծ և սուրբ՝ Երուսաղէմ, զի իջեալ էր յերկնից առ ՚ի յԱստուծոյ՝,

¹¹և ունէր զփառս Աստուծոյ. և էր ՚ի նմա լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց՝ քար յասպիս սառնատեսակ և կենդանի*:

¹²Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր, և ունէր դրունս երկոտասան. և յերկոտասան դրունսն երկոտասան հրեշտակս, և անուանք իւրաքանչիւրոցն ՚ի վերայ դրանցն գրեալ էին՝ ըստ երկոտասան ցեղիցն Իսրայէլի*:

¹³Յարևելից կողմանէ դրունք երեք և ՚ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, և ՚ի հարաւոյ կողմանէ դրունք երեք, և յարևմտից կողմանէ դրունք երեք:

¹⁴Եւ պարիսպք քաղաքին՝ ունէր հիմունս երկոտասան, և ՚ի նոսա երկոտասան անուանք՝ երկոտասան առաքելոց Գառինն*:

¹⁵Եւ որ խօսէրն ընդ իս՝ ունէր եղէգն ոսկի ՚ի ձեռին իւրում, զի չափեսցէ զքաղաքն և զդրունս նորա՝ և զպարիսպս նորա:

¹⁶Եւ էր քաղաքն քառակուսի. և որչափ երկայնութիւն նորա՝ նոյն չափ և լայնութիւն՝ և բարձրութիւն՝ հաւասար. և էր չափ երկայնութեան նորա՝ երկոտասան հազար ասպարէզս. և լայնութիւն նորա և բարձրութիւն միաչափ կիվաս*:

¹⁷Եւ չափեաց զպարիսպն նորա հարիւր և քառասուն և չորս ասպարէզս. չափ մարդոյ՝ որ է հրեշտակի:

¹⁸Եւ էր շինուած պարսպաց քաղաքին յասպիս. և քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և սպիտակ ապակոյ:

¹⁹Եւ հիմունք քաղաքին յամենայն ականց պատուականաց. հիմն առաջին պարսպին յասպիս, երկրորդն՝

* *Ոմանք.* Որպէս և հարսն առն:

* *Ոսկան.* Ձձայն մեծ յերկնից որ ա՛:

* *Ոսկան.* Ոչ աշխատանք ևս գոյ:

* *Ոմանք.* Նստէրն ՚ի վերայ... և ասէ ցիս. Գրեա՛: *Ոսկան.* ճշմարիտք են և հաւ՛:

* *Ի լուս՛. նշանակի՛* Այբ և Քէ:

* *Ոսկան.* Մի յեթեանց հրեշտա՛... վախճանովք կատարելովք:

* *Ոմանք.* Եւ մեծ՝ հոգւով... զի իջեալ յերկնից առ յԱստուծոյ:

* *Ոսկան.* Եւ ՚ի նմա լուսաւո՛:

* *Ոմանք.* Իւրաքանչիւր ՚ի վերայ դր՛:

* *Բազումք.* Եւ պարիսպ քաղաքին:

* *Ոմանք.* Լայնութիւնն և բարձրութիւնն... հազար ասպարէզ:

չափիղա, երրորդն՝ պղնձագոյն, չորրորդն՝ գնրուխտ*, ²⁰հինգերորդն՝ եղնգնաքար, վեցերորդն՝ սարդիոն, եւթներորդն՝ ոսկեքար, ութերորդն՝ բիւրեղ, իններորդն՝ տպագիոն, տասներորդն՝ քրիստպրասաւս, մետասանն՝ յակինթ, երկուտասանն՝ ամեթովս*։ ²¹Եւ էին երկուտասան դրունք յերկուտասան մարգարտաց՝ միաձև՝։ և իւրաքանչիւրոցն դրունքն էին մի մի դումն՝ ի միոյ միոյ մարգարտէ։ և ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս զապակի՝ պայծառ*։ ²²Եւ տաճար ո՛չ տեսի ՚ի նմա, քանզի Տէր Աստուած Ամենակալ տաճար էր ՚ի նմա՝ և Գա՛ռնն։ ²³Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և ճրագ՝ ՚ի նմա Գա՛ռնն։ ²⁴Եւ գնային հեթանոսք ՚ի լոյս նորա. և թագաւորք երկրի լուսազգեսց լինէին ՚ի փառաց նորա։ ²⁵Եւ դրունք նորա ո՛չ փակէին ՚ի տուէ և ՚ի գիշերի, այլ բաց կային հանապազորդ. և գիշեր՝ ո՛չ ևս լինէր ՚ի նմա. ²⁶այլ փառք և պատիւ ազգաց*։ ²⁷Եւ ո՛չ մտցէ անդ ամենայն չարակամ՝ և պի՛ղծ և ստութիւն, բայց միայն որ գրեալ են ՚ի դպրութիւն կենաց Գառնին։

22

Գլուխ ԻԲ

ԿԸ ¹Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ՝ սառնատեսա՛կ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և Գառնին։ ²Եւ գնայր ՚ի մէջ հրապարակաց քաղաքին. և զեզերք գետոյն աստի՛ և անտի ծա՛ռ կենաց՝ որ բերէր պտուղս երկուտասան. ըստ միոյ միոյ ամսոց տային զպտուղս իւրեանց. և տերև ծառոյն՝ էր բժշկութիւն հեթանոսաց*։ ³Եւ նզովք անդ՝ ո՛չ ևս էին. և աթոռն Աստուծոյ և Գառնին նորա էր ՚ի նմա. և ծառայք նորա պաշտէին զնա. ⁴և տեսանէին զերեսս նորա. և անուն նորա գրեալ էր ՚ի ճակատս նոցա։ ⁵Եւ գիշեր ո՛չ անդ, և չէր ինչ անդ պէտք ճրագի և լուսոյ արեգական. վասն զի Տէր Աստուած լուսաւորէր զնոսա. և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից*։

ԿԹ ⁶Եւ ասէ ցիս. Այս բանք հաւատարիմ է և ճշմարիտ. և Տէր Աստուած մարգարէից սրբոց՝ առաքեաց զիրեշտակ իւր՝ ծառայիդ իւրում ցուցանել զոր լինելոց է վաղվադակի*։ ⁷Երանի՛ որ պահէ զբան մարգարէութեանս զայս*։

Յ ⁸Եւ ես Յովհաննէս լուայ՝ և տեսի զայս ամենայն. և յորժամ լուայ՝ և տեսի, անկայ և երկիր պագի հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն*։ ⁹Եւ ասէ ցիս. Մի՛ անկանիր առաջի իմ՝ և երկիր պագաներ. քանզի և ես ծառայակից քո

* Օրինակ մի. Եւ էր հիմունք քա՛ռ։

* Ոմանք. Եղենգնաքար... բիւրեղ։ ՚Ի լուս՛։ Քրիստպրասաւս. համաձայն ոմանց. այլ ամենայն գրչագիրք ունին համեմատ մերունս։ Ոսկան. Քրիստպրա. մետասաներորդն յակինդ երկուտասաներորդն ամեթոս։

* Ոմանք. ՚Ի միոյ միոյ մարգարտոյ։

* Ոսկան. Եւ պատիւ ազգաց ՚ի նմա։

* Ոմանք. Եւ գնայր ընդ մէջ... և զեզերք գետոյն... ծառս կենաց, որք բերէին պտ՛... միոյ ամսոյ... և տերև ծառոցն էր։

* Ոսկան. Գիշեր ոչ էր անդ, և ոչ էին անդ պէտք։ Ոմանք. Եւ չէին անդ պէտք։

* Ոսկան. Յաւատարիմք են և ճշմարիտք... որ լինելոց է։

* Ոմանք յաւելուն. Ահա գամ վաղվադակի երանի որ պահէ։ Ոսկան. Մարգարէութեանս այսորիկ։

* Ոսկան. Ես Յովհաննէս։

եմ և եղբարց քոց՝ որ պահեսցեն զբան մարգարեութեան գրոյս այսորիկ.
Աստուծոյ երկիր պագ՝:

ՉԱ՝ ¹⁰Եւ ասէ ցիս դարձեալ. Մի՛ կնքեր զբանս մարգարեական գրոցս այսմիկ.
քանզի ժամանակս մերձ է՝: ¹¹Որ ամպարշտելոցն է՝ ամպարշտեսցի՛, և որ
աղտեղանալոցն է՝ աղտեղասցի՛, և որ արդարանալոցն է՝ արդարասցի՛, և որ
սրբելոցն է՝ սրբեսցի՛: ¹²Ահա՛ զամ վաղվաղակի՛ և վարձք իմ ընդ ի՛ս,
հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց՝: ¹³Ե՛ս եմ Ալփա և Ով, Սկիզբն
և Կատարած, Առաջին և Վերջին՝: ¹⁴Երանելի՛ք եմ՝ որ պահեն զպատուիրանս
նորա. նոքա՛ ունին իշխանութիւն ուտել՝ ՚ի փայտէն կենաց՝ և մտանել ընդ
դրունս քաղաքին: ¹⁵Այլ ելցեն արտա՛քս շունք, և դեղատուք, սպանօղք, և
կռապաշտք, և ամենեքեան՝ որ սիրեն զստութիւն՝:

ՉԲ՝ ¹⁶Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ. ե՛ս
արմատ և սե՛ռ ՚ի Դաւթայ, և ասող պայծառ առաւօտին՝: ¹⁷Եւ Յոզի՛ և Փեսայն՝
որ գալոցն եմ. և որ լսէ՛ ասելով թէ՛ ե՛կ, և որ ծարաւի իցէ՛ եկեսցէ՛, և որ ոք կամի
առնուլ զջուրն կենաց ձրի՞: ¹⁸Վկայեմ և ես ամենայնի՛ որ լսէ զբանս
մարգարեութեան գրոցս այսմիկ. թէ ոք յաւելցէ՛ ՚ի սա՛ յաւելցէ՛ Աստուած ՚ի վերայ
նորա զելքն հարուածսն գրեալս ՚ի գիրս յայս՝: ¹⁹Եւ եթէ ոք պակասեցուցէ՛ ՚ի
բանից մարգարեութեան գրոյս այսմիկ՝ պակասեցուցէ՛ և հատցէ Աստուած
զբաժին նորա ՚ի ծառոյն կենաց, և ՚ի քաղաքէն սրբոց՝ որ գրեալ է ՚ի գիրս յայս՝:
²⁰Ասաց՝ որ վկայեացն զայս. Գամ ես վաղվաղակի. ամէ՛ն: Եկն Տէր Յիսուս
Քրիստոս՝: ²¹Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի վերայ ամենայն
սրբոց: Ամէն՝:

*Ոմանք. Ծառայակից եմ քո: Ոսկան. Որք պահեն զբան:

*Ոսկան. Մարգարեական գրոյս այսորիկ:

*Ոմանք. Ահա ես զամ վաղ՝: Ոսկան. Ընդիս է... իւրաքանչիւր զգործս իւրեանց:

*Ի լուս՝. ՚ի վերայ՝ Ալփա և Ով. նշանակի. Այք և Քէ:

*Ոմանք. Եւ սպանողք... ոյք սիրեն զստ՝:

*Ոմանք. Ես եմ յարմատոյ և ՚ի սեռէ Դաւթայ: Ոսկան. ՚ի սեռէ Դաւթի... առաւօտու:

*Ոսկան յաւելու. Գալոցն եմ. և հարսունքն ասեն. Եկ: Եւ որ լսէ ասացէ թէ՛ եկ: Ոմանք.
Ծարաւի է:

*Ոմանք. Վկայեմ ես: Ոսկան. Գրոյս այսորիկ:

*Ոմանք. Գրոցս այսմիկ... և ՚ի քաղաքէն սրբոյ:

*Ոսկան. Ասէ որ վկայեաց զայսոսիկ... Եկ Տէր Յիսուս: Ոմանք. Տէր մեր Յիսուս
Քրիստոս:

*Ոմանք. Տեառն Յիսուսի Քրիստոսի: *՚ի վախճանի գրոցս Յայտնութեան՝ բազումք
յարեն զՅանգիստն Յովի. աւետարանչի. գորով զանց արարեալ օրինակս մեր՝ դնէ
զյիշատակարան Ներսէսի Լամբրոնացւոյն: Յորում ցուցեալ նախնքն ՚ի վկայութենէ
հարց՝ թէ ընկալեալ է գիրս այս յեկեղեցւոյ ՚ի կարգ Աստուածաշունչ Նորոց
Կտակարանաց, յարէ. *Որոց եղեալ և մեր ընթացակից՝ ՚ի սուրբ եկեղեցւոյ մանկունս
աւանդեցաք զսոյն ՚ի դասակարգութիւն առաքելական մատենիցս, որպէս արդարև
առաքելական յայտնութիւն, և ստուգարան արարաւ վերստին երիւրեալ ՚ի
Յելլենացւոցն իմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ, ընդ որ և զքննութեամբ
մեկնութիւն սորին ածի յեկեղեցիս Յայոց||: Ուր և յառաջ ընթացեալ բանիւն՝ ակնարկէ
արարեալ առ ՈԼԶ թուականաւ:*